1327
1328

Կ. Պոլիս
1913

22
Ա-76

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ԳԻՐՔ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԵԲՐԱՑԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐՆԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

1006
29277

A. B. S.

19,000

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՅԱՃԵԱՆ

1913

2001 2010

ՅԱՆԿ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԳԻՐՔ	Գլուխ		Երես
Մենդաց	տե՛ս	50	1
Ելից	»	40	60
Ղեւտացւոց	»	27	109
Թուոց	»	36	144
Երկրորդ Օրինաց	»	34	194
Յեսուայ	»	24	238
Դատաւորաց	»	21	267
Հռութայ	»	4	296
Ա. Թագաւորաց	»	31	300
Բ. Թագաւորաց	»	24	339
Գ. Թագաւորաց	»	22	372
Դ. Թագաւորաց	»	25	410
Ա. Մնացորդաց	»	29	446
Բ. Մնացորդաց	»	36	480
Եզրասայ	»	10	521
Նեհեմեայ	»	13	533
Եսթեր	»	10	550
Յոբայ	»	42	560
Սաղմոսաց	»	150	600
Առակաց	»	31	698
Ժողովողի	»	12	732
Երգ Երգոց	»	8	744

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ			
Եսայեայ	»	66	750
Երեմեայ	»	52	824
Ողբք Երեմեայ	»	5	899
Եզեկիելի	»	48	906
Դանիելի	»	12	967
Ովսեայ	»	14	986
Յովելեայ	»	3	997
Ամովսայ	»	9	1001
Աբդիու	»	1	1010
Յովնանու	»	4	1011
Միքիայ	»	7	1013
Նաւումայ	»	3	1020
Ամբակումայ	»	3	1023
Սոփոնեայ	»	3	1026
Անգեայ	»	2	1029
Զաքարիա	»	14	1031
Մաղաքեայ	»	4	1043

ԱՒԵՏԱՐԱՆ	Գլուխ		Երես
Ըստ Մատթէոսի	տե՛ս	28	1
Ըստ Մարկոսի	»	16	38
Ըստ Ղուկասու	»	24	62
Ըստ Յովհաննու	»	21	102
Գործք Առաքելոց	»	28	132

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ			
Առ Հռովմայեցիս	»	16	171
Առ Կորնթացիս Ա.	»	16	187
Առ Կորնթացիս Բ.	»	13	203
Առ Գաղատացիս	»	6	214
Առ Եփեսացիս	»	6	220
Առ Փիլիպպեցիս	»	4	226
Առ Կողոսացիս	»	4	230
Առ Թեսաղոնիկեցիս Ա.	»	5	234
Առ Թեսաղոնիկեցիս Բ.	»	3	238
Առ Տիմոթէոս Ա.	»	6	240
Առ Տիմոթէոս Բ.	»	4	245
Առ Տիտոս	»	3	249
Առ Փիլիմոն	»	1	251
Առ Եբրայեցիս	»	13	252

ԹՈՒՂԹ			
Յակոբու Ընդհանրական	»	5	264
Պետրոսի Ա. Ընդհանրական	»	3	268
Պետրոսի Բ. Ընդհանրական	»	3	273
Յովհաննու Ա. Ընդհանրական	»	5	276
Յովհաննու Բ.	»	1	280
Յովհաննու Գ.	»	1	281
Յուդայի Ընդհանրական	»	1	281
Յայտնութիւն Յովհաննու	»	22	283

ԱՒԻՐԲ ԳՐՈՑ ՄԻՋՈՑ ՅԻՇՈՒԱԾ ԶԱՓԵՐՈՒՆ, ԿՇԻՒՆԵՐՈՒՆ ԵՒ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՅԱՆԿԸ

1. ԵՐԿԱՑՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ

	Լծ֊ուժ ի 100ջզ	Մէջը ի 100ջզ
Ձողուկ, չորս մատնաչափ,	0·12	0·08
Թիզ, 3 ուղուկ,	0·36	0·23
Կանգուն, 2 թիզ,	0·71	0·46
Դրկայափ, 4 կանգուն,	2·85	1·85
Ղեմփելի եղեգը, 6 կանգուն,	4·27	2·77
Ասպարէզ, 100 գրկայափ,	284·62	184·94
Շաբաթ օրուան Ճամբայ, 6 ասպարէզ,	1,707·71	1,109·62
Մղոն, 8 ասպարէզ,	2,276·95	1,479·50

2. ՀՆԱԼԱՆԻԹԻՑ ԶԱՓԵՐ*

	Օչխ֊ Տր.	Լծ֊ի ի 100ջզ
Ճաշակ,	0 100	0·32
Հիմին, 12 ճաշակ,	3	3·83
Մաք, 6 հիմին,	18	22·97
Քառ. կամ խոռիք, 10 մաք,	180	229·68

3. ԱՐՄՏՆԱՑ ԶԱՓԵՐ*

	Օչխ֊ Տր.	Լծ֊ի ի 100ջզ
Կապիճ,	1	1·27
Օմէր, կամ առատանոզդ, որդւոյն 10ըոզդ մասը,	1 320	2·30
Գիւխ, 6 կապիճ,	6	7·65
Աբդա, 3 գիւխ,	18	22·97
Քառ. կամ խոռիք, 10 աբդա,	180	229·68

4. ԿՇԻՌՆԵՐ

	Օչխ֊ Տր. ի 100ջզ	Կշռ֊ի ի 100ջզ
Կէրատ,	0·23	0·71
Միկզ, 20 կէրատ,	4·68	14·25
Մինաս, 100 միկզ,	1 46·83	1,425·51
Տաղանդ, 3000 միկզ,	33 206·10	42,765·50

5. ԵՐԿԱՑԵՑԻՈՑ ԱՐԾԱԹ ՈՒ ՈՍԿԻ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԿՇԻՌՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԸ

ԱՐԾԱԹԻ

	Դ.ըւ. Փզ.	Ծզ֊ի ի 100ջզ
Միկզ,	12 24	2·86
Մինաս,	1,260 16	286·46
Տաղանդ,	37,812 20	8,593·75

ՈՍԿԻՈՑ

	Դ.ըւ. Փզ.	Ծզ֊ի ի 100ջզ
Միկզ,	201 27	45·83
Մինաս,	20,166 27	4,583·33
Տաղանդ,	605,000	137,500·

6. ՀԻՒՒՄԱՑԵՑԻՈՑ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ԱՐԺԷՔԸ

	Դ.ըւ. Փզ. ի 100ջզ	Ծզ֊ի ի 100ջզ
Լուծայ,	1·57	0·01
Նաքարակիս, 2 լուծայ,	3·15	0·02
Դանկ, 4 նաքարակիս,	12·60	0·07
Դահեկան, 10 դանկ,	3 06	0·72
Երկդահեկան, 2 դահեկան,	6 12	1·43
Սաաեր, 4 դահեկան,	12 24	2·86
Մինաս, 100 դահեկան,	315 00	71·59

*Յիշեալ չափերը, յատկապէս հեղանիւթից և արմաւաց, ամանք աւելի եւս ամանք պակաս կը հաշուեն։

ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑ

ԳԼՈՒԽ Ա

Ակիբրէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց։ 2—Ու երկիր անձև ու պարապ էր. և անդունդին վրայ խաւար կար. և Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր։ 3—Ու Աստուած ըսաւ, Լոյս ըլլայ. ու լոյս եղաւ։ 4—Ու Աստուած տեսաւ լոյսը որ բարի է. ու Աստուած լոյսը խաւարէն զատեց։ 5—Ու Աստուած լոյսին անունը Ցորեկ, և խաւարին անունը Գիշեր դրաւ. և իրիկուն ու առաւօտ ըլլալով՝ առաջին օրը եղաւ։

6—Ու Աստուած ըսաւ, Ջուրերուն մէջտեղը †հաստատութիւն ըլլայ, և ջուրերը ջուրերէն զատէ։ 7—Ու Աստուած հաստատութիւնը, ըսաւ, ու հաստատութեանը տակ եղած ջուրերը հաստատութեանը վրայ եղած ջուրերէն զատեց. ու այնպէս եղաւ։ 8—Ու Աստուած հաստատութիւնը երկինք կոչեց. և իրիկուն ու առաւօտ ըլլալով՝ երկրորդ օրը եղաւ։

9—Ու Աստուած ըսաւ, երկինքի տակ եղած ջուրերը մէկտեղ ժողվուին, ու ցամաքը երեւնայ. և այնպէս եղաւ։ 10—Ու Աստուած ցամաքին անունը երկիր դրաւ, ու ջուրերուն ժողովքը ծովեր կոչեց. և Աստուած տեսաւ որ բարի եղաւ։ 11—Ու ըսաւ Աստուած, Երկիր կանաչ խոտ բուսցնէ, սերմ տուող խոտ, և իր տեսակին պէս պտուղ տուող պտղատու ծառ, որ իր մէջ իր սերմը ունենայ երկրի վրայ. ու այնպէս եղաւ։ 12—Ու երկիր կանաչ խոտ, իր տեսակին պէս սերմ տուող խոտ, և իր տեսակին պէս սերմ ունեցող պտղաբեր ծառ հանեց. ու Աստուած տեսաւ որ բարի եղաւ։ 13—Ու իրիկուն ու առաւօտ ըլլալով՝ երրորդ օրը եղաւ։

14—Ու ըսաւ Աստուած, երկինքի հաստատութեանը մէջ լուսատուներ ըլլան, որպէս զի ցորեկը գիշերէն զատեն. և նշաններու ու ատեններու և օրերու ու տարիներու համար ըլլան. 15—Ու երկինքի հաստատութեանը մէջ լուսատուներ ըլլան, որպէս զի երկրի վրայ լոյս տան. ու այնպէս եղաւ։ 16—Ու Աստուած երկու մեծ լուսատուներ ըրաւ. մեծ լուսատուը ցորեկուան իշխելու համար, ու պզտիկ լուսատուը գիշերուան իշխելու համար. ասոնք ալ ըրաւ։ 17—Ու Աստուած երկինքի հաստատութեանը մէջ դրաւ զանոնք, որպէս զի երկրի վրայ լոյս տան, 18—Ու ցորեկուան ու գիշերուան իշխեն, և լոյսը խաւարէն զատեն. ու Աստուած տեսաւ որ բարի են. 19—Ու իրիկուն ու առաւօտ ըլլալով՝ չորրորդ օրը եղաւ։

20—Ու ըսաւ Աստուած, Ջուրերը կենդանութեան շունչ ունեցող շատ ոզուններ հանեն, և թռչուններ երկրի վրայ, երկինքի հաստատութեանը երեսը, թռչին։ 21—Ու Աստուած սաղտանից մեծամեծ կէտերը, և ամէն ոզոզացող շնչաւոր կենդանին, զորոնք ջուրերը առատ հանեցին անոնց տեսակին պէս, ու ամէն թռչուն թռչունը իր տեսակին պէս. և Աստուած տեսաւ որ բարի են։ 22—Ու Աստուած օրհնեց զանոնք՝ ըսելով, Աճեցէք ու շատցէք և ծովերուն մէջ եղած ջուրերը լեցուցէք. թռչուններն ալ երկրի վրայ շատնան։ 23—Ու իրիկուն ու առաւօտ ըլլալով՝ հինգերորդ օրը եղաւ։

24—Ու ըսաւ Աստուած, Երկիրը իր տեսակին պէս, անասուններ, սոզուններ ու երկրի գազաններ՝ իրենց տեսակին պէս։ և այնպէս եղաւ։ 25—Ու Աստուած երկրի գազանները իրենց տեսակին պէս, և ընտանի անասուններն իրենց տեսակին պէս, ու գետնի ամէն սոզուն-

*Եբր. երեսին վրայ
†Եբր. տարածութիւն

ներբ երկնց տեսակին պէս բրաւ. և Աստուած տեսաւ որ բարի են։

26—Եւ բրաւ Աստուած, Մեք պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ բնենք, և տայցէ տէրկերան ու երկինքի թռչուններուն և անասուններուն ու բոլոր երկրի ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն քով իշխէ։ 27—Եւ Աստուած իր պատկերովը տեղծեց մարդը։ Աստուծոյ պատկերովը տեղծեց զանիկա, արու և էգ տեղծեց զանոնք։ 28—Եւ Աստուած օրհնեց զանոնք, և Աստուած անոնց բաւ, Աճեցէք ու շատցէք ու երկիրը լեցուցէք, և անոր տիրեցէք։ ու տէրկերան ու երկինքի թռչուններուն և երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն իշխեցէք։

29—Եւ բաւ Աստուած, Ահա տէղ տուի բոլոր երկրի վրայ եղած ամէն սերմ տնկցող խոտը, ու ամէն ծառ որուն մէջ սերմ ուտող ծառի պտուղ կայ, տէղի կերակուր պիտի ըլլայ։ 30—Ու երկրի բոլոր գազաններուն ու երկինքի բոլոր թռչուններուն և երկրի վրայ կենդանութիւն ունեցող բոլոր սողուններուն՝ ամէն կանաչ խոտ կերակուրի համար տուի։ ու այնպէս եղաւ։

31—Եւ Աստուած իր ամէն բրածը տեսաւ, և ահա շատ բարի էր։ Եւ իրիկուն ու առաւոտ ըլլալով՝ վեցերորդ օրը եղաւ։

Գլ. Բ

Ե. կատարուեցան երկինք ու երկիր և անոնց ամէն զարդերը։ 2—Եւ Աստուած իր բրած գործերը եօթներորդ օրը լմնցուց, ու եօթներորդ օրը հանգստացաւ իր բրած բոլոր գործերէն։ 3—Եւ օրհնեց Աստուած եօթներորդ օրը, ու սրբեց զանիկա, վասն զի անոր մէջ հանգրստացաւ իր ամէն գործերէն՝ զորոնք Աստուած սկսեցնց ու բրաւ։

4—Ասոնք են երկինքի ու երկրի ծրնունդները՝ անոնց տեղծուած ատեներ, այն օրը որ Տէր Աստուած երկիրն ու երկինքը բրաւ, 5—Ու դաշտին բոլոր բոյսերը՝ դեռ երկրի վրայ չեղած, և դաշտին բոլոր խոտը՝ դեռ չբուսած. քանզի Տէր Աստուած երկրի վրայ տակտին անձրև բերած չէր. ու դեռ մարդ չկար։ 6—Հապա երկրէ *շոգի կ'ելլէր ու դեմքին բոլոր երեսը կը ջրէր։ 7—Եւ Տէր Աստուած դեմքին հողին չինեց մարդը, և անոր անդամներուն կենդանութիւն չունչ փչեց, ու մարդը կենդանի հոգի եղաւ։

8—Եւ Տէր Աստուած արեւելքին կողմը Եդեմի մէջ պարտէզ անկեց, ու իր չինած մարդը հոն դրաւ։ 9—Եւ Տէր Աստուած դեմքէն՝ տեսնելու հաճելի և ուտելու ազնիւ ամէն ծառ, ու պարտէզին մէջտեղը կենաց ծառը, և բարին ու չարը գիտնալու ծառն ալ բուսցուց։ 10—Եւ պարտէզը ջրելու համար Եդեմէ դեմ մը կ'ելլէր, ու անկէ չորս գլխաւոր բաժնուէր։ 11—Մէկուն անունը Փիսան է. սիկա ետիոպի բոլոր երկիրը կը պարսիր, ուր ոսկի կայ։ 12—Եւ այն երկրին ոսկին ազնիւ է. հոնտեղ ու եղինգեաքար կայ հոն։ 13—Ու երկրորդ գետին անունը Գիհոն է. սիկա Քուշի բոլոր երկիրը կը պարսիր։ 14—Ու երրորդ գետին անունը Տիգրիս է. սիկա Ասորեստանի արեւելեան կողմը կ'երթայ։ Ու չորրորդ գետը Եփրատ է։ 15—Եւ Տէր Աստուած առաւ մարդը, ու Եդեմի պարտէզին մէջ դրաւ, որպէս զի զանիկա գործէ ու պահէ։ 16—Եւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն՝ ըսելով, Պարտէզին ամէն ծառէն համաձայակ կեր։ 17—Բայց բարւոյ ու չարի գիտութեան ծառէն մի ուտեր. քանզի այն օրը որ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս։

18—Եւ Տէր Աստուած բաւ, Ադէկ չէ որ †Ադամ մինակ ըլլայ. անոր օգնական մը բնեմ իրեն յարմար։ 19—Եւ Տէր Աստուած դաշտին բոլոր գազաններէն ու երկինքի բոլոր թռչուններէն հողէն չինեց, և Ադամի առջև բերաւ, որպէս զի տեսնէ թէ անոնց ինչ անուն կը դնէ. և Ադամ ինչ անուն որ դրաւ շնչաւոր կենդանիին, այն եղաւ անոր անունը։ 20—Եւ Ադամ բոլոր անասուններուն ու երկինքի թռչուններուն և դաշտի բոլոր գազաններուն անունները դրաւ։ բայց Ադամի իրեն յարմար օգնական մը չգտնուեցաւ։ 21—Եւ Տէր Աստուած խորունկ քուն մը բերաւ Ադամի վրայ, ու անիկա քնացաւ. և անոր կողին ոսկրերէն մէկը առաւ ու տեղը միս լեցուց։ 22—Եւ Տէր Աստուած Ադամէ առած կողին ոսկրէն կին չինեց, ու զանիկա Ադամի բերաւ։ 23—Եւ Ադամ բաւ, Հիմա ոսկրս ոսկրէս ու մարմինս մարմինէս է. սոկին *կին կոչուի, քանզի իր †այրէն առնուեցաւ։ 24—Անոր համար այրը պիտի ձգէ իր հայրը ու իր մայրը, և իր կնոջ պիտի յարի. ու մէկ մարմին պիտի ըլլան։ 25—Ու Ադամ ու իր կինը երկուքն ալ մերկ էին, ու չէին ամչնար։

Գլ. Գ

Ե. Տէր Աստուծոյ բրած գազան բոլոր գազաններէն աւելի խորամանկ էր օձը. ու կնոջ բաւ, Իրաւ Աստուած բա՞ն Քէ Պարտէզին ամէն ծառէն պիտի չուտէք։ 2—Եւ կինը օձին բաւ, Պարտէզին ծառերուն պտուղէն կ'ուտենք. 3—Բայց պարտէզին մէջտեղը եղած ծառին պտուղէն Աստուած բաւ, Անկէ մի ուտէք, և անոր մի դպչիք, որպէս զի չմեռնիք։ 4—Եւ օձը կնոջ բաւ, Ոչ Քէ անշուշտ պիտի մեռնիք։ 5—Վասնզի Աստուած գիտէ Քէ այն օրը որ անկէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուին, և աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով։

6—Եւ կինը տեսնելով որ ծառը ուտելի էր կերակուրի համար, և հաճելի աչքերուն, ու փափաքելի †իմաստուն ընելու համար, առաւ անոր պտուղէն ու կերաւ, և իրեն հետ իր էրկանն ալ առաւ, և անիկա կերաւ։ 7—Ու անոնց երկուքին աչքերը բացուեցան, ու մերկ ըլլալնին գիտցան. և թզենիի տերեւներ կարելցին, ու իրենց ծածկոցներ ըրին։ 8—Եւ օրաւան զով ատեանը պտրաստի Տէր Աստուծոյ ձայնը լսեցին. և Ադամ ու իր կինը Տէր Աստուծոյ երեսէն պտրաստի ծառերուն մէջ պտուեցան։ 9—Եւ Տէր Աստուած Ադամը կանչեց, ու բաւ անոր, Ո՞ր ես։ 10—Եւ անիկա բաւ, Պարտէզին մէջ քու ձայնդ լսեցի, ու վախցայ, վասն զի մերկ էի, ու պտուեցայ։ 11—Եւ Աստուած բաւ, Ո՞վ պատմեց քեզի քու մերկ ըլլալդ։ արդեօք կերա՞ր այն ծառէն՝ որու հետեր քեզի պատուիրեցի որ անկէ չուտես։ 12—Եւ Ադամ բաւ, Այն կինը՝ զոր բնեցիր հետս ըլլալու ատեր, ան բնեց ատաս ծառէն, ու ես կերայ։ 13—Եւ Տէր Աստուած բաւ կնոջ, Ի՞նչ է այս գործածդ։ և կինը բաւ, Օձը զիս խաբեց, ու ես կերայ։ 14—Եւ Տէր Աստուած օձին բաւ, Զայս ընելուդ համար՝ ամէն անասուններէն և գազաններէն ամէն գազաններէն անիծեալ ըլլաս. փորդ վրայ գալիս, ու կեանքիդ բոլոր օրերը հող ուտես։ 15—Ու քու կինէն ու կնոջ միջտեղ, և քու սերունդիդ ու անոր սերունդին միջտեղ քշնամութիւն պիտի դնեմ. ան քու գլուխդ պիտի †ջախչախէ, և դուն անոր գարշապարը պիտի խայթես։ 16—Եւ կնոջ բաւ, Քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի չատցնեմ. ցաւով զաւակ ծնանիս, ու էրկանդ հնազանդ ըլլաս՝, ու անիկա քու վրադ իշխէ։ 17—Եւ Ադամի բաւ, Որովհետեւ դուն կնոջդ խօսքը մերկ ըրիր, և այն ծառէն կերար՝ որուն համար պատուիրեցի քեզի՝ ըսելով, Զանիկա անկէ, երկիրը քու պատճառուդ անիծեալ ըլլայ. կեանքիդ բոլոր օրերուն միջ ձեզիդ քիւեով ուտես անկէ. 18—Եւ փուշ ու աստառակ բուսցնէ քեզի, և դաշտին խոտը ուտես։ 19—Երեսիդ քրտինքովը ուտես հաց, մինչև գետինը դառնալդ, որմէ առնուեցար. քանզի հող էիր դուն, ու հողի պիտի դառնաս։

20—Եւ Ադամ իր կնոջ անունը Եւա

*ՆԷԲ. զարնէ
†ՆԷԲ. զարնես
‡ՆԷԲ. փոփոխ էրկանդ ըլլայ
‖Այլ՝ Եւա, կեանք

*ՆԷԲ. ղօքՔԸ

*ԿՈՄ, ազրիւր
†ՆԷԲ. պռօլսիա
‡ԿՈՄ, մարդը

*ՆԷԲ. Իշա
†ՆԷԲ. Իշ
‡ԿՈՄ, տեսնելու

գրաւ. վասն զի ամէն կենդանութիւն
ունեցողներուն մարմը անիկա էր։ 21—
Ու Տէր Աստուած Ադամի ու անոր կնոջ
կաշիէ հանդերձներ շինեց, ու անոնց
հագցուց։ 22—Ու Տէր Աստուած բաւ,
Ահա Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ՝
բարին ու չարը գիտնալու. և հիմա չըլ-
լայ որ իր ձեռքը երկնցնէ, ու կենաց
ծառէն ալ առնէ և ուտէ ու յաւիտեան
ապրի։ 23—Ուստի Տէր Աստուած
Եդեմի պարտէզէն դուրս բաւ զանի-
կա, որպէս զի երկիրը գործէ, որմէ
առնուեցաւ։ 24 — Այսպէս վռնտեց
Ադամին. ու Եդեմի պարտէզին արեւել-
եան կողմէն փերովբէները ու ամէն
կողմ դարձող բոցկղէն սուրը դրաւ,
կենաց ծառին ճամբան պահելու համար։

Գլ. Դ

Ու Ադամ գիտցաւ իր Եւա կինը,
ու ան յղացաւ, ու *Կայէնը ծնաւ, և
բաւ, Մարդ ստացայ Տէրոջմէն։ 2—
Ու դարձեալ անոր Հաբէլ եղբայրը
ծնաւ. և Հաբէլ ոչխարներու հովիւ
եղաւ, բայց Կայէն երկիրը կը գործէր։
3—Ու եղաւ որ ժամանակի մը ետքը
Կայէն երկրի պտուղէն Տէրոջը ընծայ
բերաւ։ 4—Ու Հաբէլ ինք ալ իր ոչ-
խարներուն առաջնիներէն ու անոնց
պարարտներէն բերաւ. և Տէրը Հաբէլի
ու անոր ընծային նայեցաւ, 5—Բայց
Կայէնի ու անոր ընծային չնայեցաւ.
ուստի Կայէն խիստ բարկացաւ ու երեսը
կախեց։ 6—Ու Տէրը Կայէնի բաւ, Ին-
չո՞ւ բարկացար, ու ինչո՞ւ երեսդ կա-
խեցիր։ 7—Եթէ ապրի ընես, ընդու-
նելի չի՞ լինիր. և եթէ ապրի չընես, †մեղ-
քը դրանը փոյլ պառկած է. և անոնի
քեզի պիտի հնազանդի, ու դուն անոր
պիտի իշխես։

8—Ու Կայէն իր Հաբէլ եղբօրը հետ
խօսեցաւ. ու եղաւ որ երբ անոնք դաշտն էին, Կայէն իր Հաբէլ եղբօրը
վրայ երթալ ու սպաննեց զանիկա։ 9—
Ու Տէրը Կայէնի բաւ, Ո՞ր է քո եղ-
բայրդ Հաբէլ։ Ու անիկա բաւ, Չեմ
գիտեր. միթէ ես իմ եղբօրս պահա-
պանն եմ։ 10—Ու Տէրը բաւ, Ինչ
ըրիր. քու եղբօրդ արիւնին ձայնը գետ-
նէն ինծի կը բողոքէ։ 11—Ու հիմա
դուն անիծեալ ես երկրէ, որ իր բե-
րանը բացաւ եղբօրդ արիւնը քու ձեռ-
քէդ ընդունելու։ 12—Երբ երկիրը գոր-
ծես, այսուհետեւ իր արդիւնքը չտայ
քեզի. երկրի մէջ աստանդական ու
թափառական ըլլաս։ 13—Ու Կայէն
բաւ Տէրոջը, *Իմ մեղքս թողութիւն
գտնելու չափին՝ ատելի մեծ է։ 14—
Ահա դուն այսօր երկրի երեսէն վռնտե-
ցիր, ու ես քու երեսէդ պիտի պահ-
ուիմ, ու երկրի մէջ աստանդական ու
թափառական պիտի ըլլամ. և պիտի
ըլլայ որ ով որ զիս գտնէ, զիս պիտի
մեռցնէ։ 15—Ու Տէրը բաւ անոր, Ու-
րեմն ով որ Կայէնը սպաննի, անկէ
եօթնապատիկ վրէժ առնուի։ Ու Տէրը
նշան մը դրաւ †Կայէնին, որպէս զի պա-
նողիա գտնող մէկը չմեռցնէ զանիկա։

16—Ու Կայէն Տէրոջը առջեւէն ե-
լաւ, ու Եդեմի արեւելեան կողմը, Նո-
դէի երկիրը, բնակեցաւ։ 17—Ու Կա-
յէն իր կինը գիտցաւ, ու անիկա յղա-
ցաւ ու Ենովքը ծնաւ. և քաղաք մը
կը չինէր —ըստ ատենի, ու քաղաքին
անունը իր որդւոյն անունովը պէս Ենովք
դրաւ։ 18—Ու Ենովք ծնաւ Գայի-
դադ, և Գայիդադ ծնաւ Մաիհլը, ու
Մաիհլ ծնաւ Մաթուսայէլը, և Մա-
թուսայէլ ծնաւ Ղամէքը։ 19—Ու Ղա-
մէք իրեն երկու կին առաւ. մէկուն
անունը Ադդա, ու միւսին անունը
Սիլլա էր։ 20—Ու Ադդա ծնաւ Յաբէլը,
որ վրանաբնակներուն ու հովիներուն
հայրն էր։ 21—Ու անոր եղբօրը ա-
նունը Յաբալ էր, որ բոլոր փողահարու-
նեներուն ու արնգահարներուն հայրն էր։
22—Ու Սիլլա ալ ծնաւ Թուբէլկայէնը,
որ պղնձէ ու երկաթէ ամէն գործիք
կը չինէր. և Թուբէլկայէնի քոյրը Նաա-
մա էր։ 23—Ու Ղամէք իր կիներուն,
Ադդայի ու Սիլլայի բաւ, Ձայնս լսե-
ցէք, ով Ղամէքի կիներըդ, ականջ դնէք
իմ խօսքիս. վասն զի ես մարդ մը սպան-
նեցի ինծի վէրք, ու երիտասարդ մը՝
ինծի հարուածք բերելով։ 24—Եթէ
Կայէնի համար եօթնապատիկ վրէժ առ-
նուի, Ղամէքի համար ալ եօթանա-
սունեւեօթն անգամ։

25—Ու Ադամ դարձեալ իր կինը
ճանչցաւ, ու անիկա որդի մը ծնաւ, և
անոր անունը *Սէթ դրաւ. քանզի
ըսաւ, Աստուած ինծի Կայէնի մեռցու-
ցած Հաբէլին տեղ սերմ մը տուաւ։ 26—Ու Սէթ ալ որդի մը ծնաւ,
ու անոր անունը Ենովս դրաւ. այն ատեն
սկսուեցաւ Տէրոջը †անունը կանչել։

Գլ. Ե

Այս է Ադամի ազգաբանութեան
դէրքը։ Այն օրը որ Աստուած մարդը
ստեղծեց, Աստուծոյ պատկերովն ըրաւ
զանիկա։ 2—Արու և էգ ստեղծեց զա-
նոնք և օրհնեց զանոնք, ու անոնց
ստեղծման օրը անոնց անունը ‡Ադամ
դրաւ։

3—Ու Ադամ հարիւր երեսուն տա-
րի ապրեցաւ, և իր նմանութիւնովը՝
իր պատկերին պէս որդի ծնաւ, և ա-
նոր անունը Սէթ դրաւ։ 4—Ու Ադամի
օրերը Սէթը ծնանելէն ետքը ութ հա-
րիւր տարի եղան, և ապրեր ու ազ-
իկներ ծնաւ։ 5—Ու Ադամի կեանքին
բոլոր օրերը ինը հարիւր երեսուն տարի
եղան, ու մեռաւ։

6—Ու Սէթ հարիւր հինգ տարի ապ-
րեցաւ, ու ծնաւ Ենովսը։ 7—Ու Սէթ
Ենովսը ծնանելէն ետքը ութ հարիւր
եօթը տարի ապրեցաւ, և ապրեր ու
ազիկներ ծնաւ։ 8—Ու Սէթի բոլոր
օրերը ինը հարիւր տասներկու տարի
եղան, ու մեռաւ։

9—Ու Ենովս իննսուն տարի ապրե-
ցաւ, և Կայնանը ծնաւ։ 10—Ու Ենովս
Կայնանը ծնանելէն ետքը ութ հարիւր
տասնհինգ տարի ապրեցաւ, և ապրե-
ներ ու ազիկներ ծնաւ։ 11—Ու Ենով-
սի բոլոր օրերը ինը հարիւր հինգ տարի
եղան, ու մեռաւ։

12—Ու Կայնան եօթանասուն տա-
րի ապրեցաւ, ու Ծնաւ Մափալիէլը։
13—Ու Կայնան Մափալիէլը ծնանե-
լէն ետքը ութ հարիւր քառասուն տա-
րի ապրեցաւ, և ապրեներ ու ազիկ-
ներ ծնաւ։ 14— Ու Կայնանի բոլոր
օրերը ինը հարիւր տասը տարի եղան,
ու մեռաւ։

15—Ու Մափալիէլ վեհասունհինգ
տարի ապրեցաւ, ու ծնաւ Յարեդը։
16—Ու Մափալիէլ Յարեդը ծնանելէն
ետքը ութ հարիւր երեսուն տարի ապ-
րեցաւ, և ապրեներ ու ազիկներ ծնաւ։
17—Ու Մափալիէլի բոլոր օրերը ութ
հարիւր իննսունհինգ տարի եղան, ու
մեռաւ։

18—Ու Յարեդ հարիւր վեհասուն-
հարիւր տարի ապրեցաւ, ու ծնաւ
Ենովքը։ 19—Ու Յարեդ Ենովքը ծնա-
նելէն ետքը ութ հարիւր տարի ապրե-
ցաւ, և ապրեներ ու ազիկներ ծնաւ։
20—Ու Յարեդի բոլոր օրերը ինը հա-
րիւր վեհասուներկու տարի եղան, ու
մեռաւ։

21—Ու Ենովք վեհասունհինգ տա-
րի ապրեցաւ, և ծնաւ Մաթուսալան։
22—Ու Ենովք Մաթուսալան ծնանե-
լէն ետքը երեք հարիւր տարի Աստու-
ծոյ հետ քալեց, և ապրեներ ու ազ-
իկներ ծնաւ։ 23—Ու Ենովքի բոլոր
օրերը երեք հարիւր վեհասունհինգ
տարի եղան։ 24—Ու Ենովք Աստուծոյ
հետ քալեց, և չէր գտնուեր, քանզի
Աստուած առաւ զանիկա։

25—Ու Մաթուսալա հարիւր ութ-
սունեւեօթը տարի ապրեցաւ, ու ծնաւ
Ղամէքը։ 26—Ու Մաթուսալա Ղամէ-
քը ծնանելէն ետքը եօթը հարիւր ութ-
սունեւեօթը տարի ապրեցաւ, և ապրե-
ներ ու ազիկներ ծնաւ։ 27—Ու Մա-
թուսալայի բոլոր օրերը ինը հարիւր
վեհասունիններ տարի եղան ու մեռաւ։

28—Ու Ղամէք հարիւր ութսունե-
ւեօթը տարի ապրեցաւ, ու որդի մը
ծնաւ։ 29 — Ու անոր անունը †Նոյ
դրաւ՝ ըսելով, Ասիկա մեզ պիտի հան-

*Այսինքն, սասցուած
†Կամ, մեղքի պատարագը

*Կամ, Իմ պատիժս կրելու կարողու-
թենէս
†Կամ, Կայէնի վրայ

*Այսինքն, գրուած
†Կամ, անունովը
‡Այսինքն, մարդ

*Այսինքն, հանգստութիւն

գրասացնէ մեր գործերն ու մեր ձեռքերուն աշխատութիւնն, զոր Տէրոջը անիծած երկրին պատճառու կը լինէ։ 30—Ես Ղամէք նոյը ծնանելէն հարիւր հինգ հարիւր իննսունհինգ տարի ապրեցաւ, և որդիներ ու աղիկներ ծընաւ։ 31—Ես Ղամէքի բոլոր օրերը եղան հարիւր եօթանասունեօթը տարի եղան, ու մեռաւ։

32—Ես նոյ հինգ հարիւր տարեկան եղաւ. և նոյ ծնաւ Սէմը, Քամը ու Յաբեթը։

Գլ. 2

Եւ եղաւ որ երբ մարդիկ երկրի վրայ շատնալ սկսեցին, ու իրենց աղիկները ծնան, 2—Աստուծոյ որդիները մարդոց աղիկներուն գեղեցիկ լինելը տեսնելով՝ ամէն իրենց ընտրածներէն իրենց կիներ կ'առնէին։ 3—Ես Տէրը ըսաւ, իմ հոգիս միշտ մարդու վրայ պիտի *չմնայ. վասն զի անիկա մարմին է. բայց անոր օրերը հարիւր քսան տարի լինան։ 4—Այն օրերը երկրի մէջ հրեշտականեր կային. և անկէ ետքն ալ երբ Աստուծոյ որդիները մարդոց աղիկներուն կը մտնէին, որոնք անոնց զաւակներ կը ծնանէին, ասոնք ի վաղուց հետէ զօրաւոր ու անատնի մարդիկներ էին։ 5—Ես Տէրը երբ տեսաւ որ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը չատնար, և անոնց սրտին խորհուրդներուն բոլոր գաղափարները միայն չար էին ամէն օր, 6—Տէրը երկրի վրայ մարդը սահմռկելուն զղջաց, ու իր սրտին մէջ արհամարհեցաւ։ 7—Ես Տէրը ըսաւ, երկրի վրայէն ջնջիմ մարդը զոր ստեղծեցի, մարդէն մինչև անասունները և սողուններն ու երկինքի թռչուները, վասն զի զանոնք ստեղծելուս կը զղջամ։ 8—Բայց նոյ Տէրոջը առջև շնորհք գտաւ։

9—†Ասոնք են նոյի պատմութիւնը*. Նոյ իր դարուն մարդոցը մէջ արդար ու կատարեալ մարդ մըն էր. նոյ Աստուծոյ հետ քալեց։ 10—Ես նոյ ծնաւ երեք որդի, Սէմը, Քամը ու Յաբեթը։ 11—Ես երկիրը Աստուծոյ առջև ապականեցաւ. և երկիրը անիրաւութեամբ լեցուեցաւ։ 12—Ես Աստուած երկրի վրայ նայեցաւ, և ահա ապականած էր, վասն զի երկրի վրայ ամէն մարմին իր համբան ապականեր էր։ 13—Ես Աստուած ըսաւ նոյի, Բոլոր մարմիններն վերջը հասած է իմ առջեւս, քանզի երկիրը անոնց †միջոցաւ անիրաւութեամբ լեցուեցաւ. և ահա ես զանոնք երկրի հետ պիտի սրեմ։ 14—Աչք դուն քեզի հեծեծարար փայտ ապտան մը չինէ. սապտանին մէջ խորչեր չինէ, և զանիկա ներսէն ու դրսէն ծիրանով ծեփէ։ 15—Ես այս ձեւով չինես զանիկա. սապտանին երկայնութիւնը երեք հարիւր կանգուն, լայնութիւնը քսան կանգուն, և բարձրութիւնը երեսուն կանգուն ըլլայ։ 16—Տապանին ճեմատեղ չինես, ու զանիկա մէկ կանգուն չափով լեցնես վերէն, և սապտանին դուռը մէկ կողմէն դնես. ներքնատեղով, միջնատեղով ու վերնատեղով չինես զանիկա։ 17—Ես ես ահա երկրի վրայ ջրհեղեղ պիտի բերեմ, երկինքի տակ կենդանութիւն չունի ունեցող բոլոր մարմինը կործնջելու համար. երկրի վրայ ինչ որ կայ՝ պիտի սատկի։ 18—Բայց քեզի հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, ու սապտանը պիտի մտնես դուն ու քու որդիներդ, և կինդ ու որդիներուդ հիները քեզի հետ։ 19—Ես ամէն անասուններէն, ամէն մարմիններէն, ամէնէն երկրիկու հատ սապտանը բերես, որպէս զի քեզի հետ ողջ մնան. արու և էգ բլլան անոնք։ 20—Թռչուններէն իրենց տեսակին պես, և ընտանի անասուններէն իրենց տեսակին պես, երկրի բոլոր սողուններէն իրենց տեսակին պես, ամէնէն երկրիկու հատ քեզի պիտի գան ողջ մնալու համար։ 21—Ես դուն ամէն տեսակ կերակուրներէն որ ի'ուտուին, ու քովդ ժողվէ, որպէս զի քեզի և անոնց ուտելիք ըլլայ։ 22—Ես ըրաւ նոյ Աստուծոյ իրեն բոլոր պատուիրածին պէս, այնպէս ըրաւ։

*ԵԲԲ. չմրկի
†ԵԲԲ. Ասոնք են նոյի ծնունդները

*ԵԲԲ. երեսէն
†ԿԱՖ, նոճիի
‡ԿԱՖ, յարկ

Գլ. 3

Եւ Տէրը բաւ նոյի, Դուն քու բոլոր տունեցիդ տապանը մտիր. վասն զի այս դարուն մարդոց մէջ քեզ իմ առջեւս արդար տեսայ։ 2—Ամէն մաքուր անասուններէն քեզի եօթնեակներ հատ առնես, արու և էգ. իսկ անմաքուր անասուններէն երկուքական հատ՝ արու և էգ։ 3—Երկինքի թռչուններէն ալ եօթնեակներ հատ՝ արու և էգ, բոլոր երկրի վրայ սերունդը ազէ պահելու համար։ 4—Վասն զի եօթը օրէն հետը երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր անձրեւ պիտի բերեմ, և ամէն հակ զոր ըրի, երկրի վրայէն պիտի ջնջեմ։ 5—Ես նոյ Տէրոջը բոլոր իրեն պատուիրածին պէս րրաւ։ 6—Ես չրհեղեղին երկրի վրայ գալած ատենը նոյ վեց հարիւր տարեկան էր։ 7—Ես նոյ ու իր որդիները և իր կինը ու իր որդիներուն կիները իրեն հետ՝ չրհեղեղին չորեքտան պատճառած ատոյնը մտան։ 8—Մաքուր անասուններէն ու անմաքուր անասուններէն, և թռչուններէն ու երկրի վրայ ամէն սողոցողներէն՝ 9—զոյգ զոյգ արու և էգ ապտանին մէջ նոյի գացին, ինչպես Աստուած նոյի պատուիրած էր։ 10—Ես եղաւ որ եօթը օրէն հարք չրհեղեղին չորեքտան երկրի վրայ եկան։ 11—Նոյի կեանքին վեց հարիւրերորդ տարին, երկրորդ ամիսը, ամսուն տասնեւօթներորդ օրը, նոյն օրը մեծ անդունդին բոլոր աղբիւրները ճեղքուեցան, ու երկինքի պատուհանները բացուեցան։ 12—Ես երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր անձրեւ եկաւ։ 13—Ձիշդ նոյն օրը նոյ և նոյի որդիները, Սէմ ու Քամ և Յաբեթ, և նոյի կիները, ու անոր որդիներուն երեք կիները անոնց հետ տապանը մտան։ 14—Անոնք, ու բոլոր գազանները իրենց տեսակին պես, և բոլոր ընտրեալ անասունները իրենց տեսակին պես, ու երկրի վրայ սողացող բոլոր սողոնները իրենց տեսակին պես, և բոլոր թռչունները իրենց տեսակին պես, ամէն տեսակ թեւաւոր թռչուն։ 15—Կենդանութիւն չունեցող ամէն մարմինէն երկուքական հատ նոյի քով տապանը մտան։ 16—Ես ուրուները մտնողները արու և էգ մտան ամէն մարմինէն, ինչպես Աստուած անոր պատուիրեր էր։ և Տէրը անոր ետեւէն փակեց։ 17—Ես երկրի վրայ քառասուն օր չրհեղեղ եղաւ. և չուրերը շատցան ու տապանը վերցուցին, և անիկա երկրէ բարձրացաւ։ 18—Ես չուրերը զօրացան ու իիստ շատցան երկրի վրայ. ու տապանը չուրերուն երեսին վրայ կը պտրեր։ 19—Ես չուրերը երկրի վրայ խիստ շատ զօրացան, ու բոլոր երկինքին տակ եղող ամէն բարձր լեռներըը ծածկուեցան։ 20—Չուրերը տասնհինգ կանգուն վեր բարձրացան, և լեռները ծածկուեցան։ 21—Ես երկրի վրայ չարժող ամէն մարմին, թէ' թռչուն, թէ' անասուն, թէ' գազան և թէ' երկրի վրայ սողացող ամէն սողուն և ամէն մարդ մեռաւ։ 22—Ցամաքի վրայ եղող ամէնը՝ որ ռնգունքներուն մէջ կենդանութեան չունչ ունէր, ամէնն ալ մեռաւ։ 23—Ես երկրի երեսին վրայ եղող ամէն էակ ընկճուեցաւ, մարդէն մինչև անասունը, սողուններն մինչև երկինքի թռչունը. անոնք երկրի ընկճուեցան. ու միայն նոյ մնաց և իրեն հետ տապանին մէջ եղողները։ 24—Ես չուրերը երկրի վրայ հարիւր յիսուն օր *բարձրացած մնացին։

Գլ. 8

Եւ Աստուած յիշեց նոյը ու անոր հետ տապանին մէջ եղած բոլոր գազաններն ու բոլոր անասունները. և Աստուած երկրի վրայ հով մը բերաւ, ու չուրերը դադրեցան։ 2—Նաեւ անդունդին աղբիւրները ու երկինքի պատուհանները գոցուեցան, և երկինքի անձրեւը կասեցաւ։ 3—Ես երկրէն չուրերը երկրի վրայէն կը փախչէին. ու հարիւր յիսուն օրէն հետը չուրերը փչացան։ 4—Ես եօթներորդ ամիսը, ամսուն տասնեւեօթներորդ օրը, տապանը Արարատ լեռներուն վրայ նստաւ։ 5—Ես չուրերը երկրէն կը փչանային մինչև տասներորդ ամիսը. և տասներորդ

*ԵԲԲ. չորեքտասան

ամուն առաջին ՝ըշ լեռներուն գլուխները երևցան։

6—Ու. երբ որ քառասուն օրէն եօթը նոյ իր չինած տապանին պատուհանը բացաւ։ 7—Ես ագռաւը արձակեց, որ ելաւ ու անդին ատին կը պտրտէր՝ մինչև երկրի վրայէն ջուրերուն ցամքիլը։ 8—Ապա նէն ալ գովն արձակեց, որպես զի տեսնէ թէ արդեօք երկրի վրայէն ջուրերը քիչցած են. 9—Բայց ապուռնին իր ոտքին քաթը դնելու տեղ չգտաւ, ու դէպ ի նմ տապանը դարձաւ. վասն զի բոլոր երկրի երեսը ջուրեր կային. այն ատեն իր ձեռքը երկնցուց ու առաւ զանիկա, և իր քով տապանին մէջ բերաւ։ 10—Ու համբը օր ալ սպասեց, և նորէն ապուռնին տապանէն արձակեց. 11—Ու երիկուան գէմ ապուռնին անոր եկաւ, և ահա իր բերանը ձիթենիի նոր փրցուած տերև մը կար. ուստի Նոյ գիտցաւ որ ջուրերը երկրի վրայէն քիչցած են. 12—Ես համբը օր ալ սպասեց, ու նորէն ապուռնին արձակեց, որ ա՛լ անոր չդարձաւ։

13—Ես եղաւ որ Նոյէ ՝ներէն վեց հարիւր ու մէկ տարին, առաջին ամսուն առաջին ՝ըշ ջուրերը երկրի վրայէն ցամքեցան. և Նոյ տապանին ծածկոցը վերցուց ու նայեցաւ, և ահա երկրի երեսը ցամքեր էր։ 14—Ու երկրորդ ամիսը՝ ամսուն քսանըեօթնևորդը օրը երկիր չորցաւ։

15—Ես Աստուած խօսեցաւ Նոյի ու ըսաւ, 16—Ցապանէն դուրս ելիր դուն ու քու կինդ և քու որդիներդ և քու որդիներուդ կիները քեզի հետ։ 17—Բեզի հետ եղող ամէն կենդանին ամէն մարմիններէն՝ թէ՛ թռչուններէ, թէ՛ անասուններէն, և թէ՛ երկրի վրայ սողացող բոլոր սողուններէն՝ քեզի հետ հանէ, որպէս զի երկրի վրայ բազմանան, ու երկրի վրայ աճին ու չոգանան։ 18—Ես Նոյ ու իր որդիները և իր կինը և իր որդիներուն կիները երեն հետ ելան։ 19—Ամէն անասուն, ամէն սողուն ու ամէն թռչուն, երկրի վրայ ամէն չարժողները իրենց տեսակին պէս տապանէն ելան։

20—Ես Նոյ սեղան մը չինեց Տէրունչ, ու ամէն մաքուր անասուններէն և ամէն մաքուր թռչուններէն առաւ, ու սեղանին վրայ ողջակէզներ մատուց. 21—Ես Տէրը անոյշ հոտ հոտուցաց, և Տէրը իր սրտին մէջ ըսաւ, Ալ ասկէ ետև մարդուն համար նորէն երկիրը պիտի չանիծեմ, ՝քանզի մարդուն սրտին խորհուրդը իր մանկութենէն չար է, ոչ ալ նորէն պիտի խորտակեմ ամէն կենդանի հոգիները, ինչպես ըրի։ 22—Բանի որ երկիր կը մնայ, սերմ ու հունձք, ցուրտ ու տաքութիւն, ամառ ու ձմեռ, և ցորեկ ու գիշեր պիտի չդադարին։

Գլ. Թ

Ես Աստուած օրհնեց Նոյը ու անոր որդիները, և ըսաւ անոնց, Աճեցէք ու չոգացէք, ու երկիրը լեցուցէք։ 2—Ես ձեր վախը ու երկիւղը երկրի բոլոր գազաններուն վրայ, ու երկինքի բոլոր թռչուններուն վրայ պիտի ըլլայ. անոնք երկրի վրայ բոլոր չարժողներուն հետ, ու ծովու բոլոր ձուկերուն հետ ձեր ձեռքը արուած են։ 3—Ամէն չարժուն կենդանին ձեզի կերակուր ըլլայ. ամէնը ձեզի բանջարի պէս տուի։ 4—Բայց միսը ոգւովը՝ այսինքն անոր արիւնովը, չուտէք։ 5—Ես անշուշտ ձեր կեանքին համար արիւնիդ պիտի խնդրեմ. ամէն գազանին ձեռքէն ու մարդուն ձեռքէն պիտի խնդրեմ զայն. մարդուն կեանքը եղբօրը ձեռքէն պիտի խնդրեմ։ 6—Ով որ մարդու արիւն թափէ, իր արիւնն ալ մարդէ պիտի թափուի. քանզի Աստուած իր պատկերին պէս ստեղծեց մարդը։ 7—Ես դուք աճեցէք ու չոգացէք, երկրի վրայ բազմացէք ու անոր մէջ չոգացէք։

8—Ես Աստուած խօսեցաւ Նոյի ու անոր որդիներուն անոր հետ՝ ըսելով, 9—Ես ահա ձեզի հետ ու ձեզմէ ետքը ձեր սերունդին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, 10—Ես ձեզի հետ եղող ամէն չոգաւոր կենդանիին հետ, թէ՛ թռչունին, թէ՛ անասունին և թէ՛ ձեզի հետ եղող երկրի ամէն գազանին հետ, տապանէն եղածներուն ամէնուն հետ, ու երկրի բոլոր անասուններուն հետ։ 11—Ես ձեզի հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, որ մէկ մըն ալ ամէն մարմին չկորսուի ջուրերու ջրհեղեղին չկործանի ու ալ երբեք ջրհեղեղ երկիրը ապականելու համար։ 12—Ես ըսաւ Աստուած, Իմ ու ձեր միջեւս, և ձեզի հետ եղող ամէն չոգաւոր կենդանիին միջեւ յաւիտենական դարերու համար դրած ուխտս նշանը այս է. 13—Իմ ազեղս ամպին մէջ պիտի դնեմ, և այն պիտի ըլլայ իմ ու երկրի միջեւ եղած ուխտին նշանը։ 14—Ես պիտի ըլլայ որ՝ երբ երկրի վրայ ամպ բերեմ, ազեղը ամպին մէջ պիտի տեսնուի. 15—Ես իմ ու ձեր միջեւս, ու ամէն մարմինին ամէն չոգաւոր կենդանիին միջեւ եղած իմ ուխտս պիտի յիշեմ. և մէկ մըն ալ ամէն մարմիններ կործանելու համար ջուրերը հեղեղ պիտի չըլլան։ 16—Ես ազեղը ամպին մէջ պիտի ըլլայ, ու անոր պիտի նայիմ, որպէս զի Աստուծոյ՝ ու երկրի վրայ եղող ամէն մարմինէն բոլոր կենդանի անասուններն միջեւ եղած յաւիտենական ուխտը յիշեմ։ 17—Ես Աստուած Նոյի ըսաւ, Ահա ես ուխտին նշանը զոր ես հաստատեցի իմ ու երկրի վրայ եղող ամէն մարմիններն միջեւս։

18—Ես Նոյի որդիները որոնք տապանէն ելան, Սեմ, Քամ ու Յաբեթ էին. և Քամ Քանանացոյրն էր։ 19—Ասոնք երեքը Նոյի որդիներն էին, և ասոնցմէ բոլոր երկիրը սաղթուեցաւ։

20—Ես Նոյ սկսաւ երկիրը գործել, ու այգի տնկեց. 21—Ես գինին խմեց ու գինովցաւ, և իր վրանին մէջ մերկացաւ։ 22—Ու Քանանաց հայրը Քամ իր հօրը մերկութիւնը տեսաւ, ու դուրս ելաւ իր երկու եղբայրներուն պատմեց. 23—Ես Սեմ ու Յաբեթ հանդերձ առին, և իրենց երկուքին ուսերուն վրայ դրին, ու ետ ետ երթալով իրենց հօրը մերկութիւնը ծածկեցին. և իրենց երեսը ետեւնուն դարձած՝ իրենց հօրը մերկութիւնը չտեսան։ 24—Ես Նոյ իր գինիէն արթնցալով՝ իր պզտիկ որդւոյն իրեն բրածը իմացաւ. 25—Ու ըսաւ, Անիծեալ ըլլայ Քանան. ծառաներուն ծառայ ըլլայ իր եղբայրներուն։ 26—Նաև ըսաւ, Օրհնեալ ըլլայ Սեմի Տէր Աստուածը, և Քանան անոր ծառան ըլլայ։ 27—Աստուած Քոզ ընդարձակէ Յաբեթը, ու Սեմի վրանները բնակի, և Քանան անոր ծառան ըլլայ։

28—Ու Նոյ ջրհեղեղէն ետքը երեք հարիւր յիսուն տարի ապրեցաւ։ 29—Ես Նոյի բոլոր օրերը ինը հարիւր յիսուն տարի եղան, ու մեռաւ։

Գլ. Ժ

Ե Նոյի որդիներուն, Սեմի, Քամի ու Յաբեթի, ծնունդներն ասոնք են. ու ջրհեղեղէն ետքը անոնց որդիներ ծնան։

2—Յաբեթի որդիները Գոմեր, Մագոգ, Մադա, Յաւան, Թոբէլ, Մոսոք ու Թիրաս էին. 3—Ես Գոմերի որդիները Աշքանազ, Րիփաթ ու Թորգոմա էին. 4—Ես Յաւանի որդիները Եղիսա, Թարսիս, Կիտացիք ու †Դոդանացիք էին. 5—Ազգերուն կղզիները իրենց երկիրներովը, ամէն մէկը իր լեզուին պէս, ազգերուն մէջ իրենց տոհմերովը տարածուեցան։

6—Ես Քամի որդիները, Քուշ, Մեսրայիմ, Փութ ու Քանան էին. 7—Ես Քուշի որդիները Սաբա, Եւիլա, Սաբթա, Ռեգմա ու Սաբթեքացա էին. Ես Ռեգմայի որդիները Սաբա ու Դեդան էին. 8—Ես Քուշ ծնաւ Նեբրովթը. ասկից սկսաւ երկրի վրայ զօրաւոր ըլլալ. 9—Անկից Տէրոջը առջեւ զօրաւոր որսորդ մըն էր անոր համար կ՚ըսուի, Տէրոջը առջեւ Նեբրովթի պէս զօրաւոր որսորդ։ 10—Ես իր թագաւորութեան սկիզբը Բաբելն ու Արեկ ու Աքքադ և Քալանէ էր Սենաար երկրին մէջ։ 11 Այն երկրէն ‡Ասորեստան գնաց, ու Նինուէն և Ռոբովթ քաղաքը ու Քալան չինեց. 12—Նինուէի ու Քալայի միջեւ Ռեսէնն ալ չինեց. ասիկա մեծ քաղաք մըն էր։ 13—Ես Մեսրայիմ ծնաւ Ղուդացիները, Անամացիները,

*Կամ, անոնց
†Կամ, Ռոդացիք
‡Ընդ. Ասուր

Դարացիները, Նեփիմ ու քացիները, 14—Պաթրոսեացիները ու Քասղոքացիները (ուրկից Փղշտացիք ելան) ու Կափթորացիները՝ 15—ու Քանան ծնաւ իր անդրանիկը Սիդոնը, նաև Քեթը, 16—Եբրուացին, Ամորհացին, Գերգեսացին, 17—Խուացին, Արաղկացին, Սինեացին, 18—Արուադացին, Սամարացին և Ամաթացին. ու ետքը Քանանացւոց ցեղերը սփռուեցան։ 19—Ու Քանանացւոց սահմանը Սիդոնէ Գերարա անցնելով մինչև Գազա, Սոդոմ ու Գոմոր, և Ադմա ու Սեբոյիմ, մինչև Ղասա էր։ 20—Քամի որդիները, իրենց տոհմերովը, իրենց լեզուներովը, իրենց երկիրներուն ու ազգերուն մէջ ասոնք են։

21—Ու Սեմեթի մեծ եղբօրը Սեմի ալ, որ Եբերի բոլոր որդիներուն հայրն էր, ծոռներ ծնան։ 22—Սեմի որդիները Եղամ, Ասուր, Արփաքսադ, Ղուդ ու Արամ էին։ 23—Ու Արամի որդիները Հուս, Հուլ, Գաթեր ու Մաշ էին։ 24—Ու Արփաքսադ ծնաւ Սաղան, և Սաղա ծնաւ Եբերը։ 25—Ու Եբերի երկու որդի ծնան. մէկուն անունը *Փաղեկ էր. քանզի երկիրը անոր օրերը բաժնուեցաւ. և անոր եղբօրն անունը Յոկտան էր։ 26—Ու Յոկտան ծնաւ Եղմոդադը, Սողոփը, Ասարմաթը, Յարքը, 27—Ադորամը, Ուզալը, Դիկղան, 28—Գիբզայը, Աբիմայէլը, Սաբան, 29—Ոփիրը, Եւիլան ու Յոբաբը. ասոնք ամէնն ալ Յոկտանի որդիները եղան։ 30—Ու տունը բնակութիւնը եղաւ Մեսայէ մինչև Սեփեր, արեւելեան լեռը։ 31—Սեմի որդիները, իրենց տոհմերովը, իրենց լեզուներովը, իրենց երկիրներուն մէջ, իրենց ազգերովը ասոնք են։ 32—Նոյի որդիներուն տոհմերը, իրենց ծրնունդներուն ու ազգերուն համեմատ, ասոնք են. և յրհեղեղէն ետքը ազգերը ասոնցմէ սաղթուեցան երկրի վրայ։

*Այսինքն, բաժանուած

Գլ. ԺԱ

Ե. բոլոր երկրի լեզուն մէկ ու խօսուածքը մէկ էր։ 2—Ու եղաւ որ երբ արեւելքէն կը յառնէին, Սենաար երկրին մէջ գտան մը գաւառ ու հոն բնակեցան։ 3—Ու իրարու բսին, Եկէք աղիւսներ չիներնք ու զանոնք կրակով եփենք։ Ու պիւռներդ անոնց փոխանակ եղան, ու ձիւթը անոնց ցեխի տեղ եղաւ։ 4—Ու բսին, Եկէք մեզի քաղաք մը ու աշտարակ մը չիներնք, որուն գլուխը մինչև երկինք հասնի, և մեզի անուն ստանանք, որ չըլլայ թէ բոլոր երկրի վրայ ցրուինք։ 5—Ու Տէրը վար զոյց արդիներուն չիներած քաղաքն ու աշտարակը տեսնելու իջաւ։ 6—Ու Տէրը բսաւ, Ահա ասոնք մէկ ժողովուրդ են, ու ամէնուն լեզուն մէկ է. և ասիկա չիներլու սկսեցին. ու հիմա ինչ որ չիներել կը խորհին, անոնցմէ պիտի չխրտիլ։ 7—Եկէք, իջնենք, և անոնց լեզուն հոն խառնակենք, որպէս զի ամէն մէկը իր րնկերին լեզուն չհասկնայ։ 8—Ու Տէրը անկէ բոլոր երկրի երեսը ցրուեց զանոնք. ու քաղաքը չիներլէն դադրեցան։ 9—Անոր համար անոր անունը *Բաբէլոն կոչուեցաւ, քանզի Տէրը հոն բոլոր երկրի լեզուն խառնակեց. և Տէրը անկէ բոլոր երկրի երեսը ցրուեց զանոնք։

10—Սեմի ծնունդները ասոնք են. Սեմ հարիւր տարեկան էր երբ ծնաւ Արփաքսադը յրհեղեղէն երկու տարի ետքը։ 11—Ու Սեմ Արփաքսադը ծնանելէն ետքը հինգ հարիւր տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 12—Ու Արփաքսադ երեսունհինգ տարի ապրեցաւ, ու ծնաւ Սաղան։ 13—Ու Արփաքսադ Սաղան ծնանելէն ետքը չորս հարիւր երեք տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 14—Ու Սաղա երեսուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Եբերը։ 15—Ու Սաղա Եբերը ծնանելէն ետքը չորս հարիւր երեք տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 16—Ու Եբեր երեսունչորս տարի ապրեցաւ, և ծնաւ Փաղեկը։

*Այսինքն, խառնակութիւն

17—Ու Եբեր Փաղկը ծնանելէն ետքը չորս հարիւր երեսուն տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 18—Ու Փաղկ երեսուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Ռագաւը։ 19—Ու Փաղկ Ռագաւը ծնանելէն ետքը երկու հարիւր ինը տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 20—Ու Ռագաւ երեսունեւմէկ տարի ապրեցաւ, ու ծնաւ Սերուգը։ 21—Ու Ռագաւ Սերուգը ծնանելէն ետքը երկու հարիւր եօթը տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 22—Ու Սերուգ երեսուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Նաքովրը։ 23—Ու Սերուգ Նաքովրը ծնանելէն ետքը երկու հարիւր տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 24—Ու Նաքովր քսանըհինգ տարի ապրեցաւ, ու ծնաւ Թարան։ 25—Ու Նաքովր Թարան ծնանելէն ետքը հարիւր տասնըինը տարի ապրեցաւ, և ուրիշներ ու աղիկներ ծնաւ։ 26—Ու Թարա եօթանասուն տարի ապրեցաւ, ու ծնաւ Աբրամը, Նաքովրը և Առանը։

27—Ու Թարայի ծնունդները ասոնք են. Թարա ծնաւ Աբրամը, Նաքովրը ու Առանը. և Առան ծնաւ Ղոթը։ 28—Ու Առան մեռաւ իր հօրը Թարայի առջև իր ծննդեան երկրին, Քասդէացւոց Ուր քաղաքին, մէջ։ 29—Ու Աբրամ ու Նաքովր իրենց կիներ առին. Աբրամի կնոջ անունը Սարա էր, և Նաքովրի կնոջ անունը Մելքա՝ աղիկի Առանէ, որ Մելքայի ու Ցեսքայի հայրն էր։ 30—Ու Սարա ամուլ էր ու չէր ծնաներ։ 31—Ու Թարա իր որդին Աբրամը ու իր թոռը Առանի որդին Ղոթը և իր որդւոյն Աբրամի կինը, իր հարսը Սարան, առաւ ու անոնց հետ Քասդէացւոց Ուր քաղաքէն ելաւ գնաց որ Քանանու երկիրը երթալու համար. ու եկան մինչև Խառան, և հոն բնակեցան։ 32—Ու Թարայի օրերը երկու հարիւր հինգ տարի եղան. և Թարա Խառանի մէջ մեռաւ։

Գլ. ԺԲ

Ե. Տէրը բսաւ Աբրամի, Քու երկրէդ և քու ազգականներէդ ու քու հօրդ տունէն գնա այն երկիրը՝ զոր ես քեզի պիտի ցուցնեմ. 2—Ու քեզ մեծ ազգ պիտի ընեմ, ու քեզ պիտի օրհնեմ և քու անունդ պիտի մեծցնեմ. ու դուն *օրհնուալ պիտի ըլլաս։ 3—Ու քեզ օրհնողները պիտի օրհնեմ, ու քեզ նախատողը պիտի անիծեմ. ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին։ 4—Ու Աբրամ գնաց ինչպէս Տէրը անոր բսած էր. Ղոթա ալ անոր հետ գնաց ու Աբրամ եօթանասուներկու տարեկան էր երբ Խառանէ ելաւ։ 5—Ու Աբրամ իր կինը Սարան ու իր եղբօրորդին Ղոթը, և իրենց բոլոր ապրուստներուն ժողովը, և իրենց ստացած հոգիները առնելով՝ եկան որ գնանան երկիրը երթան. և գնացին երկիրը եկան։ 6—Ու Աբրամ այն երկրին միջէն անցաւ, մինչև Մորէի տեղը, անցաւ. և այն ատեն գնացողները կային այն երկրին մէջ։ 7—Ու Տէրը երեւցաւ Աբրամի ու բսաւ, Քու սերունդիդ պիտի տամ այս երկիրը։ Ու հոն սեղան չիներց Տէրոջը որ իրեն երեւցաւ։ 8—Ու անկէ գնաց իր բնակելի տեղէն Բեթէլի արեւելեան կողմը հասց վրանը, ու իր վրանը բացաւ Բեթէլը արեւմտեան կողմը ու Գային արեւելեան կողմը. ուրիշներ ալ։ և հոն Տէրոջը սեղան չիներց, ու Տէրոջը անունը կանչեց։ 9—Ու Աբրամ միշտ գնաց ի հարաւ կը չուէր։

10—Ու այն երկրին մէջ սով եղաւ. և Աբրամ Եգիպտոս իջաւ հոն պանդխտանալու համար, քանի որ այն երկրին մէջ սովը սաստիկ էր։ 11—Ու եղաւ որ երբ Եգիպտոս մտնելու մօտեցաւ, իր կնոջ Սարայի բսաւ, Ահա գիտեմ որ դուն գեղեցիկ անձով կին մըն ես։ 12—Ու պիտի ըլլայ որ երբ Եգիպտացիք քեզ տեսնեն, պիտի բսեն, Այիկա անոր կինն է. ու զիս պիտի մեռցնեն, բայց քեզ ողջ թողուն։ 13—Ընդունչ բրէ, բսէ թէ դուն իմ քոյրս ես. որպէս զի քու պատճառով ինծի ողջ ըլլայ, ու քու պատճառով իմ անձս ապրի։ 14—Ու եղաւ որ երբ Աբրամ Եգիպտոս մտաւ, Եգիպտացիք տեսան

*Եբր. օրհնութիւն

կինը, որ չառ դեղեցիկ էր։ 15—Փարաւոնի իշխաններն ալ տեսան, ու գովեցին զանիկա Փարաւոնի առջեւ. և կին տուին Փարաւոնի առնը առնելուցաւ։ 16—Ու անոր համար Աբրամի բարիք ըրաւ. ու անկից ոչխարներ ու արջառներ և էշեր ու ծառաներ և աղախիններ ու ևգ էշեր և ուղտեր ունեցաւ։ 17—Ու Տէրը մեծ հարուածներով զարկաւ Փարաւոնը ու անոր առնը՝ Աբրամի կնոջ Սարայի համար։ 18—Ու Փարաւոն կանչեց Աբրամը, ու ըսաւ, Այս ինչ է զոր ինծի ըրիր. ինչո՞ւ ինծի չյայտնեցիր թէ սա իմ քոյր է։ 19—Ինչո՞ւ համար, Ասիկա քոյրս է, ըսիր. և ես զայ զանիկա ինծի կին պիտի առնէի. բայց հիմա ահա կինդ. առ ու գնա։ 20—Ու Փարաւոն էր մարդոցը պատուիրեց անոր համար. ու զանիկա իր կնոջմով ու իր բոլոր ստացուածքով դրկեցին։

Գլ. ԺԳ

Ու Աբրամ իր կնոջմով ու իր բոլոր ունեցածներով Սկիպտոսէ դեպ ի Քանանա հարաւակողմը ելաւ, ու Ղովթ իրեն հետ։ 2—Ու Աբրամ չատ հարուստ էր անասուններով, արծաթով ու ոսկիով։ 3—Ու իր ուղեւորութիւնները հինգ հարաւային կողմեն մինչեւ Բեթէլ, այն տեղը ուր էր առաջ իր վրանը, Բեթէլի ու Գայիի միջեւը։ 4—Այն սեղանին տեղը որ հոն առաջ չիներ էր. և Աբրամ հոն Տէրոջը անունը կանչեց։

5—Ու Աբրամի հետ գացող Ղովթն ալ ոչխարներ ու արջառներ ու վրաններ ունէր։ 6—Ու այն երկիրը բաւական չէր անոնց որ միասին բնակին. քանզի անոնց ստացուածքը չատ ըլլալով՝ չէին կրնար միասին բնակիլ։ 7—Ու Աբրամի անասուններուն հովիւներուն ու Ղովթի անասուններուն հովիւներուն միջեւ վէճ կար. և այն ատեն Քանանացիները ու Փերեզացիները կը բնակէին այն երկրին մէջ։ 8—Ու Աբրամ ըսաւ Ղովթին, Կ'աղաչեմ քեզի, իմ ու քու միջեւդ, և իմ հովիւներուս ու քու հովիւներուդ միջեւ վէճ չըլլայ. վասն զի մենք եղբայր ենք։ 9—Բոլոր երկիրը քու առջեւդ չէ՞. կ'աղաչեմ, զատուէ ինծմէ. եթէ ձախ կողմը երթաս, ես ալ կողմը կ'երթամ, և եթէ ալ կողմը երթաս, ես ձախ կողմը կ'երթամ։ 10—Ու Ղովթ իր աչքերը վեր վերցուց, ու Յորդանանու ամէն կողմը նայեցաւ՝ որ ամէն տեղ լրուած էր, Տէրը Սոդոմը ու Գոմորը կործանցնելէն առաջ մինչեւ Սեգովր Տէրոջը դրախտին պէս, Եգիպտոսի երկրին պէս էր։ 11—Ու Ղովթ Յորդանանու բոլոր կողմը ընտրեց իբեն, ու Ղովթ դէպ ի արեւելք չուեց. և իրարմէ զատուեցան։ 12—Աբրամ Քանանու երկրին մէջ բնակեցաւ. Ղովթ ալ դաշտի քաղաքներուն մէջ բնակեցաւ, ու իր վրանը Սոդոմի քով բացաւ։ 13—Ու Սոդոմի մարդիկը խիստ չար ու մեղաւոր էին Տէրոջը առջեւ։

14—Ու Տէրը Աբրամի բսաւ, Ղովթի անկէ զատուելէն ետքը. Հիմա աչքերդ վեր վերցուր, ու քու եղած տեղդէն դէպ ի հիւսիս ու հարաւ և դէպ ի արեւելք ու արեւմուտք նայէ։ 15—Վասն զի այդ բոլոր երկիրը զոր կը տեսնես, քեզի ու քու սերունդիդ պիտի տամ յաւիտեան։ 16—Ու քու սերունդդ երկրի փոշիին պէս ընէմ— որ եթէ մարդ կարող ըլլայ երկրի փոշին համրել, քու սերունդդ ալ համրուի։ 17—Ելիր, այդ երկիրը պտրտէ անոր երկայնութեանը ու լայնութեանը. վասն զի քեզի պիտի տամ։ 18—Ու Աբրամ վերցուց իր վրանը, ու եկաւ և բնակեցաւ Մամբրէի կաղնիներուն մէջ, որ Քեբրոնի մէջ է, և հոն սեղան շինեց Տէրոջը։

Գլ. ԺԴ

Ու եղաւ որ Սենաարի Ամրափայ թագաւորին, Եղլասարի Արիովք թագաւորին, Նդամի Քադոդոմոր թագաւորին և Դգիսի Թադգադ թագաւորին ժամանակներն, 2—Անոնք Սոդոմի Բարա թագաւորին հետ և Գոմորի Բարսա թագաւորին հետ, Ադմայի Սենաար թագաւորին հետ և Սեբոյիմի Սեմեբոր թագաւորին հետ ու Բաղայի (այսինքն

*Աչխ.՝ փառանի բեւեռկնին
†Աչխ.՝ դաւառատանի աղբիւր

Սեգովր) թագաւորին հետ պատերազմեցան։ 3—Ասոնք ամէնը Ժողովեցան Սիդիմ ձորին մէջ, որ է Ալի ծովը։ 4—Տասներկու տարի Քադոդոմորի ծառայութիւն ըրին, ու երեքտասաներորդ տարին ապստամբ եղան։ 5—Ու չորեքտասաներորդ տարին Քադոդոմոր գալով ու իրեն հետ եղող թագաւորները հարուածեցին Ռափայիններն ու Համի մէջ Զուզիցիները, և Շաւէ Կարիաթայիմի մէջ Էմիմիները, 6—Ու Փառեցիները իրենց Սէիր լեռան վրայ՝ մինչեւ անապատին քով եղող Էլփառանը զարկին։ 7—Ու դարձան ու եկան Էնմիսափաթ, այսինքն Կադէս. և Ամաղիկացոց բոլոր նահանգը, ու Ասասանթամարի մէջ բնակող Ամորհացիներն ալ զարկին։ 8—Ու Սոդոմի թագաւորը, ու Գոմորի թագաւորը, և Ադմայի թագաւորը, ու Սեբոյիմի թագաւորը, և Բաղայի (այսինքն Սեգովրի) թագաւորը ելլելով, Սիդիմ ձորին մէջ անոնց հետ պատերազմելու չարուեցան, 9—Ելամի Քադոդոմոր թագաւորին հետ, և Գոյիմի Թադգադ թագաւորին հետ, ու Սենաարի Ամրափայ թագաւորին հետ, և Եղլասարի Արիովք թագաւորին հետ, չորս թագաւորը՝ չորսին հետ։ 10—Ու Սիդիմ ձորը նաեւ հորերով լեցուն էր. և Սոդոմի ու Գոմորի թագաւորները փախան, և հոն ինկան. ու մնացածները լեռը փախան։ 11—Ու անոնք Սոդոմի ու Գոմորի ամէն բարիքը, ու անոնց բոլոր պաշարները առին ու գացին։ 12—Ու Սոդոմի մէջ բնակող Աբրամի եղբօրորդին Ղովթ ու անոր բոլոր բարիքը առին ու գացին, որովհետեւ Սոդոմի մէջ բնակող Աբրամի եղբօրորդին Ղովթ էր։

13—Ու փախստական մը եկաւ, ու Եբրայեցի Աբրամի պատմեց. և անիկա նոքաղի ու Անէրի եղբօրը Ամորհացի Մամբրէի կաղնիներուն մէջ կը բնակէր, վասն զի անոնք Աբրամի հետ դաշնակից էին։ 14—Ու Աբրամ երբ իր եղբօրը գերի առնուիլը լսեց, իր տանը մէջ ծնած երեք հարիւր տասնվեցով քաջասարքն հետ պատերազմեցաւ մինչեւ Դան։ 15—Ու ինքն ու իր ծառաները գիշերով գունդ գունդ անոնց վրայ յարձակեցան, ու զարկին զանոնք, և քշեցին զանոնք մինչեւ Քոբա, որ Դամասկոսի հիւսիսակողմն է։ 16—Ու բոլոր բարիքը նոյնպէս բերաւ. և իր եղբօրը Ղովթն ալ ու անոր բարիքը նոյնպէս դարձուց, ու կիները ու ժողովուրդն ալ նոյն բերաւ։

17—Ու ինք՝ Քադոդոմորը ու անոր հետ եղող թագաւորները զարձելէն ու գոհունէն ետքը, Սոդոմի թագաւորը զանիկա դիմաւորելու ելաւ դեպ ի Շաւէ ձորը (այսինքն Թագաւորի ձորը)։ 18—Ու Սաղէմի թագաւորը Մելքիսեդեկ հաց ու գինի հանեց. ու անիկա Բարձրեալ Աստուծոյ քահանան էր։ 19—Ու օրհնեց զանիկա. ու ըսաւ, Օրհնեալ ըլլայ Աբրամ, երկինքի ու երկրի տէրը եղող Բարձրեալ Աստուծմէն։ 20—Ու օրհնեալ ըլլայ Բարձրեալ Աստուածը, որ քու թշնամիներդ քու ձեռքդ մատնեց։ Ու անիկա ամէնէն տասանորդ տուաւ անոր։

21—Ու Սոդոմի թագաւորը ըսաւ Աբրամի, Մարդիկը ինծի տուր, ու բարիքը դուն քեզի առ։ 22—Ու Աբրամ ըսաւ Սոդոմի թագաւորին, Երկինքի ու երկրի տէրը եղող Բարձրեալ Տէր Աստուծոյ վերցուցի իմ ձեռքս, 23—Որ գերձանէ մինչեւ կօշիկի կապ քան մը չառնեմ ինչ որ քուկդ է, որ չըլլայ թէ Աբրամը ես հարստացուցի ըսես, 24—Բաց ի ոտքերուս կերածէն, ու իրենց հետ եկող մարդոցը, որոնք Անէրի ու Եսքոլի ու Մամբրէի բաժիններուն. թող անոնք իրենց բաժինը առնեն։

Գլ. ԺԵ

Ա յս բաներէն ետքը տեսլեան մէջ Տէրոջը խօսքը Աբրամի եղաւ՝ ըսելով, Մի վախնար, ով Աբրամ, ես քեզի վահան եմ, ու քու վարձքդ խիստ չատ պիտի ըլլայ։ 2—Ու Աբրամ ըսաւ, Ով Տէր եհովա, ինծի ի՞նչ պիտի տուն, քանի որ առանց զաւկի կը մնամ, և

*Եբր. ձախ

իմ ասես սիրոյդը այս Դամասկոյի Ելիազարն է։ 3—Նաև բսաւ Աբրամ, Որովհետև ինձի սերունդ չտուիր, ահա իմ ասես *ծառան ինձի ժառանգ կ'ըլլայ։ 4—Եւ ահա Տէրոջը խօսքը անոր եղա՝ ըսելով, Անկնա քեզի ժառանգ պիտի չըլլայ։ բայց ան որ պիտի ըլլայ քու ժառանգդ՝ որ քու մէջիդէն պիտի ելլէ, 5—Եւ զարս հանեց զանիկա, ու բսաւ, Հիմա դէպ ի երկինք նայէ, ու աստղերը հաշուէ, եթէ զանոնք հաշուել կարող ես. և բսաւ անոր, Քու սերունդդ այսպէս պիտի ըլլայ։ 6—Եւ անիկա հաւատաց Տէրոջը, որ անոր արդարութիւն ընդ՚ սեպեց։

7—Եւ բսաւ անոր, Ես եմ Տէրը որ քեզ Քաղդէացւոց Ուր հանեցի՝ այս երկիրը քեզի ժառանգութիւն տալու համար։ 8—Եւ անիկա բսաւ, Ով Տէր Եհովա, ինչպէս գիտնամ թէ ես զանիկա պիտի ժառանգեմ։ 9—Եւ բսաւ անոր, Ինծի երեք տարեկան երինջ մը, ու երեք տարեկան այծ մը, և երեք տարեկան խոյ մը, ու տատրակ մը, և ազաւնիի ձագ մը առ։ 10—Եւ անիկա բոլոր ասոնք առաւ անոր, ու ասոնց մէջտեղէն կրաբեց և ամէն մէկ կտորը իր մտքին հետ դիմացի դիմաց դրաւ։ բայց թռչուններն չկարեց։ 11—Եւ երբ դիակներն վրայ դիւրափէ թռչուններն իջան, Աբրամ վռնտց զանոնք։ 12—Եւ երբ արեւը մտնը կը մնար, Աբրամի վրայ խորտնիկ քուն մը իյնաւ, * և ահա անոր վրայ մեծ մթութիւն տարակոյս մը ինկաւ։ 13—Եւ Տէրը բսաւ Աբրամի, Ասպգ գիտցիր որ քու սերունդդ իրենցը չեղած երկրի մէջ պանդուխտ պիտի ըլլան, և ծառայութիւն պիտի բնեն. ու հոն չորս հարիւր տարի պիտի չարչարուին զանոնք։ 14—Բայց այն ազգը որու պիտի ծառայեն, ես պիտի դատիմ. և անկէ ետքը շատ ստացուածքով պիտի ելլեն։ 15—Եւ դուն խաղաղութեամբ քու հայրերուդ պիտի երթաս. ապէկ մը ծերացած պիտի թաղուիս։ 16—Եւ անոնք չորրորդ ազգին մէջ հոս պիտի դառնան. վասն զի Ամբհացւոց անօրէնութիւնը դեռ լեցուած չէ։ 17—Եւ եղաւ որ երբ արեւը մտաւ մութ ու խաւար եղաւ, ահա մխած հնոց մը ու վառած լապ մը այն կտորներուն միջեւնէն անցաւ։ 18—Այն նոյն օրը Տէրը Աբրամի հետ ուխտ մը բսաւ՝ ըսելով, Քու սերունդիդ տուի այս երկիրը Եգիպտոսի գետէն մինչև մեծ գետը, այսինքն Ափրատ գետը։ 19—Կենեցիները, և կենեզացիները, ու Կեդմոնացիները։ 20—Ու Քետացիները, ու Փերեզացիները, 21—Ու Ռափայիմները, և Ամբհացիները, ու Բանանացիները, և Գերգեսացիները ու Յեբուսացիները։

Գլ. ԻԶ

Եւ Աբրամի կինը Սարա չէր ծնաներ անոր. ու Եգիպտացի ազախին մը ունէր որուն անունը Հազար էր։ 2—Եւ Սարա բսաւ Աբրամի, Ահա հիմա Տէրը արգիլեց զիս ծնանելէն. ուրեմն ազախինիս մտիր, գուցէ անկէ զաւակ ստանամ։ Եւ Աբրամ Սարայի խօսքը մտիկ ըրաւ։ 3—Եւ Աբրամի կինը Սարա իր Եգիպտացի ազախինը Հազարը առաւ, Աբրամի Քանանու երկրին մէջ տասը տարի բնակելէն ետքը, և զանիկա իր ԷՐկանոր Աբրամի առաւ՝ անոր կին ըլլալու։ 4—Ան ալ մտաւ Հազարին որ յղացաւ. և երբ իր յղի ըլլալը խնացաւ, իր տիկինը իր աչքին առջև անարգուեցաւ։ 5—Եւ Սարա բսաւ Աբրամի, Ինծի եղած անիրաւութիւնը քու վրադ ըլլայ. ես իմ ազախինս գրկիդ տուի, ու երբ անիկա խնացաւ իր յղի ըլլալը, ես անոր աչքին առջև անարգուեցայ. Տէրը իմ ու քու միջտեղ դատաստան ընէ։ 6—Եւ Աբրամ բսաւ Սարայի, Ահա ազախինդ քու ձեռքդ է, քու աչքերուդ հաճոյ երեւցածին պես ըրէ անոր. ու երբ Սարա նեղեց զանիկա, անոր երեսէն փախաւ Հազար։ 7—Եւ Տէրոջը հրեշտակը գտաւ զանիկա անապատին մէջ Յուրի ապրիւրի մը քով՝ Սուրի ճանապարհին մէջ եղած ապրիւրին քով։ 8—Եւ բսաւ, Ով Սարայի ազախինը Հազար, ուրկի՞ կու գաս, և ո՞ւր կ'երթաս։ Եւ անիկա ըսաւ, Իմ

*Եբր. որդին
†Եբր. և անոնց

Սարա սիկնոջս երեսէն կը փախչիմ. 9—Եւ Տէրոջը հրեշտակը բսաւ անոր, Դարձիր քու սիկնոջդ, ու անոր ձեռքին տակ հնազանդ եղիր։ 10—Եւ Տէրոջը հրեշտակը բսաւ անոր, Քու սերունդդ խիստ պիտի չսացնեմ, այնպէս որ չսաւքենէն պիտի չհիմրի։ 11—Եւ Տէրոջը հրեշտակը բսաւ անոր, Ահա դուն յղի ես, ու որդի պիտի ծնանիս, և անոր անունը †Իսմայէլ դնես. վասն զի Տէրը քու տառապանդ լսեց։ 12—Ու անիկա վայրենի մարդ մը պիտի ըլլայ. անոր ձեռքը ամէնուն վրայ, ու ամէնուն ձեռքը ալ անոր վրայ պիտի ըլլայ. և անիկա իր բոլոր եղբայրներուն առջև պիտի բնակի։ 13—Եւ անիկա իրեն հետ խօսող Տէրոջը անունը կանչեց՝ ըսելով, Դուն իմ տեսիլքիս Էլ Էրհօյ Աստածն ես. վասնզի բսաւ, Արդեօք †տե՞ղ եմ հո՝ իմ տեսիլքս ետքը։ 14—Անոր համար այն ջրհորին անունը ‡Լահայրոյի Ջրհոր՝ դրաւ. ահա անիկա Կադեսի ու Բարադի միջեւ է։ 15—Եւ Հազար որդի մը ծնաւ Աբրամի. և Աբրամ Հազարի իրեն ծնած որդւոյն անունը Իսմայէլ դրաւ։ 16—Եւ Աբրամ ութսունվեց տարեկան էր, երբ Հազար Իսմայէլը ծնաւ Աբրամի,

Գլ. ԺԷ

Եւ երբ Աբրամ իննսունրիսը տարեկան էր, Տէրը Աբրամի երեւցաւ, ու բսաւ անոր, Ես եմ Ամենակարող Աստուածը. իմ առջեւս քալէ, ու կատարեալ եղիր։ 2—Եւ իմ ու քու միջեւդ իմ ուխտս պիտի դնեմ, ու խիստ պիտի չսացնեմ քեզ։ 3—Եւ Աբրամ իր երեսին վրայ ինկաւ, ու Աստուած անոր հետ խօսեցաւ՝ ըսելով։ 4—Ահա իմ ուխտս քեզի հետ է, և ազգերու բազմութեան հայր պիտի ըլլաս։ 5—Ու այսուհետև քու անունդ ||Աբրամ չըլլայ. վասն զի քեզ ազգերու բազմութեան հայր պիտի դնեմ։ 6—Ու քեզ խիստ պիտի աճեցնեմ, ու քեզ ազգեր պիտի ընեմ. ու քեզմէ թագաւորներ պիտի ելլեն։ 7—Եւ իմ ու քու միջտեղ, ու քեզմէ ետքը քու սերունդիդ միջտեղ իրենց ազգերուն մէջ իմ ուխտս պիտի հաստատեմ, յաւիտենական ուխտ մը, որ քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուած ըլլամ։ 8—Եւ պիտի տամ քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ յաւիտենական ժառանգութեան համար այն երկիրը որ պանդխտած եղար, բոլոր Քանաանու երկիրը. ու անոնց Աստուած պիտի ըլլամ։ 9—Եւ Աստուած բսաւ Աբրահամի, Ուստի դուն ու քեզմէ ետքը քու սերունդդ իրենց ազգերուն մէջ՝ պահէք իմ ուխտս։ 10—Ահա ես իմ ու ձեր միջեւդ, և քեզմէ ետքը քու սերունդիդ միջեւդ եղած իմ ուխտս՝ զոր պիտի պահէք. Ձեզմէ ամէն արու Քիւրատուիր։ 11—Ձեր անթլփատութեան մսրմինը թլփատէք, ու սիկա իմ ու ձեր միջեւդ եղած ուխտին նշանը ըլլայ։ 12—Եւ ձեր ազգերուն մէջ ամէն ութ օրուան արու շրսինիդ, կամ սունը ծրնած, կամ քու սերունդէդ չհղող բոլոր օտարականներէն ասոնով ծախուած անսուածը թլփատուի։ 13—Ուստի ծնածը և ասոնով ծախուած անսուածը անչուշտ պիտի թլփատուի. և իմ ուխտս ձեր մսրմինին մէջ յաւիտենական ուխտ մը ըլլայ։ 14—Եւ անթլփատ արուն՝ որուն անթլփատութեան մսրմինը թլփատուած չէ, այն անձը իր ժողովրդէն պիտի †կորսուի. անիկա իմ ուխտս անարգած է։

15—Եւ Աստուած բսաւ Աբրահամի, Քու կնոջդ Սարայի անունը Սարա մի կանչեր, հապա անոր անունը ‡Սառա ըլլայ։ 16—Ու զանիկա պիտի օրհնեմ, նաև անկէ արդի մը պիտի տամ քեզի. ու պիտի օրհնեմ զանիկա, ու ազգեր բսր հայր պիտի ըլլայ. ժողովուրդներու

*Ասյինուն, Աստուած պիտի լսե
†Եբր. կը տեսնե՞մ
‡Ասյինուն, տեսիլքիս կենդանի Աստուածն Լրհորը
||Ասյինուն, Հայր բարձր

*Ասյինուն, Հայր բազմութեան
†Եբր. կորսուի
‡Ասյինուն, իշխանուհի

թագաւորներ պիտի կըլլեն անկէ։ 17— Ե. Աբրահամ երեսի վրայ բնկաւ ու խնդաց, և իր սրտին մէջ ըսաւ, Հարիւր տարեկան մարդուն զաւակ պիտի ըլլա՞յ արդեօք. և Սառա, որ բնաւին տարեկան է, պիտի ծնանի՞։ 18—Ե. Աբրահամ ըսաւ Աստուծոյ, Թող խոստ.յ.լ ապրի քու առջեւդ. 19—Ե. Աստուած ըսաւ, Այո, քու կինդ Սառա որդի պիտի ծնանի քեզի, ու անոր անունը *Իսահակ պիտի դնես. և անոր հետ ու անկէ ետքը անոր սերունդին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, յաւիտենական ուխտ մը։ 20—Ե. Իսմայէլի համար ալ լսեցի քեզի. ահա օրհնեցի զանիկա, ու պիտի աճեցնեմ զանիկա ու խիստ պիտի շատցնեմ. անիկա տասներկու իշխան պիտի ծնանի, և մեծ ազգ մը պիտի բնեմ զանիկա։ 21—Բայց գալ տարի այս ատեն Սառայի քեզի ծնանելիս Իսահակին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ։

22—Ե. անոր հետ խօսիլը լմնցուց, ու Աստուած Աբրահամի քովէն վեր ելաւ։ 23—Ե. առաւ Աբրահամ իր որդին Իսմայէլը, ու բոլոր իր տուներ ծրնունդներուն, և բոլոր առուով ծախու առնուածներուն, Աբրահամի բնանիքին մէջ գտնուած ամէն արուն, ու նոյն օրը թլփատեց զանոնց անթլփատութեան մարմինը թլփատելով, ինչպէս Աստուած անոր ըսեր էր։ 24—Ե. Աբրահամ բնաւ իննսունչորս տարեկան էր երբ իր անթլփատութեան մարմինը թլփատեցաւ։ 25—Ե. իր որդին Իսմայէլ տասներեք տարեկան էր երբ իր անթլփատութեան մարմինը թլփատեցաւ։ 26—Նոյն օրը թլփատուեցաւ Աբրահամ ու իր որդին Իսմայէլ։ 27—Ե. իր տուներ բոլոր մարդիկը, թէ՛ իր տուներ ծնած և թէ՛ օտարականներէն առուվով ծախու առնուած, իրեն հետ թլփատուեցան։

ԳԼ. ԻԸ

Ե. Տէրը երեւցաւ անոր Մամբրէի կաղնիներուն մէջ, Ը. անիկա օրուան տաք ատենը վրանին դուռը նստեր էր,

*Այսինքն, խնդութիւն

2—Ե. իր աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա երեք մարդիկ կայներ էին իրեն մօտ. ու երբ տեսաւ զանոնք, վրանին դռնէն վազեց զանոնք դիմաւորելու, ու մինչեւ գետինը ծռելով խոնարհութիւն բրաւ, 3—Ե. ըսաւ, Տէր իմ, հիմա եթէ շնորհք գտայ քու առջեւդ, կ'ապաշխի քեզի, քու ծառայիդ քովէն չանցնիս մի անցնիք. 4—կ'ապաշխի ձեզի, փէշ մը լուր բերեն, ու ոտքերնիդ լուացէք, ու ծառին տակ հանգրաուցէք. 5—Ե. պատառ մը հաց բերեմ, ու սիրտերնիդ զօրացուցէք, ետքը անցնէք. քանի որ համար ձեր ծառային քովէ եկաք։ Ե. անոնք ըսին, Ինչպէս բրիր, այնպէս բրէ։ 6—Ե. Աբրահամ արագարագ դէպ ի վրանը Սառայի գնաց, ու ըսաւ, Շուտով երեք դրիր բարակ ալիւր շաղէ ու չորեր չինէ։ 7—Ե. Աբրահամ վազեց արջառներուն, ու մատաղ ու ապիկ որբ մը առաւ ու պատանիի մը տուաւ. ան ալ շուտով պատրաստեց զանիկա։ 8—Ե. կագ ու կաթ ու իր պատրաստած որբը առաւ և անոնց առջեւ դրաւ. ու ինք ծառին տակ անոնց քովէ կայնեցաւ, ու անոնք կերան։ 9—Ե. ըսին իրեն, Ո՞ր է քու Սառա կինդ. ան ալ ըսաւ, Ահա վրանին մէջ է։ 10—Ե. Տէրը ըսաւ, *Դալ տարի անշուշտ քեզի պիտի դառնամ, և ահա քու կինդ Սառա որդի մը պիտի ունենայ. և Սառա մտիկ կ'ընէր վրանին դրանը մէջէ՝ որ Անոր հետեւն էր։ 11—Ե. Աբրահամ ու Սառա ծերացած էին ու օրերնին անցուցած. և Սառայէ պակսած էր կանանց սովորութիւնը մէջէ ըլլալը։ 12—Ե. Սառա իր մէջէն մէջ խնդաց՝ ըսելով, Ես պառաւելս ետքը զուարճութի՞ւն պիտի առնեմ, ակռս ալ ծերացած ըլլալով։ 13—Ե. Տէրը ըսաւ Աբրահամի, Սառա ինչո՞ւ խնդաց՝ ըսելով, Միթէ ես իսկապէս պիտի ծնանի՞մ, որ պառաւեր եմ. 14—Տէրոջը առջեւ գժուարին բան կա՞յ արդեօք. ամէնահաւատ ժամանակին, *դալ տարի՝ քեզի պիտի դառնամ, ու Սառա որդի մը պիտի ունենայ։ 15—Ե. Սառա ուրացաւ ու ըսաւ, Չխնդացի.

°Ներ, կենաց ժամանակին

քանի վախցաւ։ Ե. Անիկա ըսաւ, Ոչ, խնդացիր։

16—Ե. մարդիկը եւան անկէ, ու երեսնին դէպ ի Սոդոմ յառկացին. և Աբրահամ զանոնք ճանապարհ հանելու համար անոնց հետ գնաց։ 17—Ե. Տէրը ըսաւ, Միթէ Աբրահամէ պահե՞մ բնչ որ ընելու եմ. 18—Որովհետեւ Աբրահամ անշուշտ մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի ըլլայ, ու երկրի բոլոր ազգերը անով պիտի օրհնուին։ 19—Զանի գիտեմ զանիկա, որ իր որդիներուն ու իրմէ ետքը իր տանը պիտի պատուիրէ, և անոնք արդարութիւն ու իրաւունք ընելու համար՝ Տէրոջը ճամբան պիտի պահեն. որպէս զի Տէրը Աբրահամի վրայ բերէ բնչ որ խոսեցաւ։ 20—Ե. Տէրը ըսաւ, Որովհետեւ Սոդոմի ու Գոմորի ազազակը չատցաւ, և անոնց մեղքը խիստ ծանրացաւ, 21—Հիմա պիտի իջնեմ տեսնելու՝ թէ բոլորովին բնծի եկած ազազակին պէս ըրե՞ր են. և եթէ ոչ՝ գիտնամ։ 22—Ե. այն մարդիկը անկէ եւան ու գնով ի Սոդոմ գացին. և Աբրահամ տակաւին Տէրոջը առջեւ կայներ էր։

23—Ե. Աբրահամ մօտեցաւ ու ըսաւ, Արդեօք ամբարշտին հետ արդա՞րն ալ պիտի կոտրնցնես. 24—Թերեւս այն քաղաքին մէջ հիսուն արդար ըլլան. արդեօք անոր մէջ եղած հիսուն արդարին համար չխնայելով պիտի կոտրնցնե՞ս այն տեղը. 25—Քա՛ւ. լեցի քեզ այսպիսի բան մը բնել՝ որ արդարը ամբարշտին հետ սպանցնես, ու արդարը ամբարշտի պէս ըլլայ. քա՛ւ լեցի քեզ. միթէ բոլոր երկրի Դատաւորը արդարութիւն պիտի չընե՞ս. 26—Ե. Տէրը ըսաւ, եթէ Սոդոմի մէջ հիսուն արդար գտնեմ քաղաքին մէջ, անոնց համար բոլոր տեղը պիտի խնայեմ. 27—Ե. Աբրահամ պատասխանեց ու ըսաւ, Ահա հիմա, ես որ հող ու մոխիր եմ, Տէրոջը հետ խոսելու սկսեցի. 28—Թերեւս հիսուն արդարէն հինգ պակաս ըլլայ, այն հինգին համար բոլոր քաղաքը պիտի կոտրնցնե՞ս ըսաւ. Անիկա ըսաւ, եթէ հոն քառասունհինգ արդար գտնեմ, չեմ կոտրնցներ։ 29—Ե. դարձեալ խոսեցաւ անոր ու ըսաւ, Թերեւս հոն քառասուն գտնուի։ Ե. Անիկա ըսաւ, Քառասունին համար՝ չեմ ըներ։ 30—Ե. ինչ ըսաւ, Ո՛ն, Տէրը չբարկանայ, ու խօսիմ. Թերեւս հոն երեսուն գտնուի։ Ե. Տէրը ըսաւ, եթէ հոն երեսուն գտնեմ, չեմ ըներ։ 31—Ե. ինչ ըսաւ, Ահա հիմա Տէրոջը հետ խոսելու սկսայ. Թերեւս հոն քսան գտնուի։ Ե. Անիկա ըսաւ, Քառասունին համար՝ չեմ կոտրնցներ։ 32—Ե. ինչ ըսաւ, Ո՛ն, Տէրը չբարկանայ, ու միայն այս անգամ խոսիմ. Թերեւս հոն տասը գտնուի։ Ե. Անիկա ըսաւ, Տասնին համար՝ չեմ կոտրնցներ։ 33—Ե. Տէրը Աբրահամի հետ խոսիլը լմնցուցածին պէս՝ գնաց. Աբրահամ ալ իր տեղը դարձաւ։

ԳԼ. ԺԹ

Ե. այն երկու հրեշտակները իրիկուան դէմ Սոդոմ եկան. ու Ղովտ Սոդոմի դուռը նստեր էր. և Ղովտ տեսնելով՝ զանոնք դիմաւորելու ելաւ, ու իր երեսը մինչեւ գետին ծռելով խոնարհութիւն բրաւ. 2—Ու ըսաւ, Ազէ, իմ տէրերս, կ'ապաշխի, ձեր ծառային տունը դարձէք, և գիշերը հոն կեցէք ու ոտքերնիդ լուացէք. ու առաւուտեն կանուխ ելլէք ու ձեր ճամբան գացէք։ Ե. անոնք ըսին, Ո՛չ, գիշերը փողոցը կը կենանք։ 3—Ե. չատ բանադատեց զանոնք, ու անոր դարձան և անոր տունը մտան. ու անոնց խնճոյք բրաւ և բազարչ եփեց, ու կերան։

4—Բայց անոնց պառկիլէն առաջ քաղաքին մարդիկը, Սոդոմացիք, երիտասարդներէն մինչեւ ծերերը, ամէն կողմէն բոլոր ժողովուրդը տունը պատեցին. 5—Ե. Ղովտ կանչեցին ու անոր ըսին, Ո՞ր են այն մարդիկը որանք այս գիշեր քեզի եկան. զանոնք դուրս հանէ մեզի, ու գիտնանք զանոնք. 6—Ե. Ղովտ գնաւ դուրս եղաւ անոնց քովէ, ու իր հետեւէն դուռը գոցեց, 7—Ե. ըսաւ, Եղբայրներս, կ'ապաշխի ձեզի, չարութիւն մի ընէք։ 8—Ահա հիմա երկու աղիկ ունիմ, որոնք այր մարդ չեն գիտեր.

զանոնք հետս ձեզի դարձ հանեմ, ու ձեր աչքին առնէ ազկէ եղածը բրնէք անոնց. բայց միայն այս մարդոցը բան մը մի ընէք. քանզի անոր համար իմ յարկիս շուքին տակ մտան։ 9—Ու անոնք ըսին, Մեկդի կեցիր. ու բսին ալ, Աթկա գանգատութեան եկաւ, ու դատաստան ընել կ'ուզէ. հետս քեզի անոնցմէ գէշ կ'ընենք։ Ու սատկի բռնադատեցին մարդը, մօտենալ Դաւթի, ու դուռը կոտրելու մօտեցան։ 10—Բայց այն մարդիկը ձեռքերնին երկնցուցին, ու Դաւթը ատոր մէջ քովիրնին առին ու դուռը գոցեցին։ 11—Ու ատոր դուռը կաշած մարդիկը կուրութեամբ զարկին պզտիկէն մինչև մեծը, այնպես որ դուռը գտնելն ի՛նչցան։

12—Ու մարդիկը բսին Դաւթի, Հոս ուրիշ մէկ ունինք. փեսաներէդ ու որդիներդ և աղիկինները, ու քաղաքին մէջ ա՛մէ որ ունինք այս անգին հան՛։ 13—Վասն զի մենք այս անգ պիտի կորնցնենք. քանզի անոնց աղաղակը Տէրոջը առջև մեծ եղաւ. ու Տէրը մեզ զրկեց զանիկա կորնցնելու։ 14—Ու Դաւթ ելաւ, ու իր աղիկիները առնող փեսաներուն խօսեցաւ ու բսաւ, Ելէք ու այս անգէն գացէք, վասն զի Տէրը պիտի կորնցնէ այս քաղաքը. բայց իր փեսաներուն ծաղր բնող մը երեցաւ։

15—Ու առաւոտ եղածին պէս՝ հրեշտակներն արագացուցին Դաւթը բանալ, ելիր, կինդ ու հոս գտնուած երկու աղիկդ առ, որպէս զի քաղաքին *անօրէնութեանը մէջ չկորսուիս։ 16—Ու երբ անիկա կը անտառար, այն մարդիկը բռնեցին անոր ձեռքէն ու անոր կնոջ ձեռքէն և անոր աղիկիներուն ձեռքերնէն, Տէրոջը անոր ողորմելովը, ու հանեցին զանիկա և քաղաքին դուրսերիկն դրին։ 17—Ու եղաւ որ երբ զանոնք դուրս հանեցին, ֆիւը բսաւ, Անձիդ ազատման համար փախիր. հետդ մի նայիր և բոլոր գաւառին մէջ մի կայներ. լեռը փախիր, չըլլայ որ կորսուիս։ 18—Ու Դաւթ բսաւ անոնց, Ոչ, Տէր իմ, չնորհք ըրէ։ 19—Ահա հիմա ծառադ քու աչքերուդ չնորհք գտաւ, ու իմ կեանքս ազատելով ինծի մեծ երախտիք ըրիր. և ես չեմ կրնար լեռը փախչել, չըլլայ որ չարիք հասնի ինծի ու մեռնիմ։ 20—Ահա այս քաղաքը՝ ոչ հան փախչելու մօտ է, ու այն պզտիկ է. չնորհք ըրէ, հան փախչիմ, (չէ՞ որ անիկա պզտիկ է,) և իմ անձս ազ ձեայ։ 21—Ու բսաւ անոր, Ահա այդ բանին մէջ ալ քու ազաչանքդ ընդունեցի, որ այս քաղաքը չկործանեմ՝ որուն համար խօսեցար։ 22—Շուտ ըրէ հան փախիր, քանի դուն մինչև հան չհասնիս, ես բան մը չեմ կրնար ընել։ անոր համար այն քաղաքին անունը *Սեգոր էդրաւ։ 23—Արեը երկրի վրայ կը ծագէր, երբ Դաւթ Սեգոր մտաւ։ 24—Այն ատեն Տէրը Սոդոմի ու Գոմորի վրայ ծծումբ ու կրակ տեղաց Տէրոջը կողմանէ՝ երկինքէն։ 25—Ու այն քաղաքները, ու բոլոր դաշտը, և այն քաղաքներուն բոլոր բնակիչները ու երկրի վրայ բուսածը կործանցուց։ 26—Ու կանէն անոր կինը ետին նայեցաւ, ու աղի արձան եղաւ։

27—Ու Աբրահամ առաւոտնց կանուխ երթալով Տէրոջը առջև կացնած տեղը էն։— 28—Ու Սոդոմի ու Գոմորի ու բոլոր դաշտի երկրին վրայ նայելով տեսաւ որ ահա այն երկրէն հնոցի մխոյի պէս մխոյ կ'ելլէր։

29—Այսպէս եղաւ՝ որ երբ Աստուած այն դաշտին քաղաքները կը կործանցնէր, Աստուած Աբրահամը յիշեցը բերաւ, ու երբ Դաւթի բնակած քաղաքները կը կործանցնէր, այն կործանումին մէջէն Դաւթը հանեց։

30—Ու Դաւթ Սեգորէ ելաւ, ու լեռը բնակեցաւ, և իր երկու աղիկիները իրեն հետ. քանզի Սեգորի մէջ բնակելու կը վխտար. ու սրտի մը մէջ բնակեցաւ ինք ու իր երկու աղիկիները։ 31—Ու մեծ աղիկը պզտիկին բսաւ, Մեր հայրը ծեր է, ու երկրի մէջ մէկը չկայ՝ որ ամէն երկրի սովորութեանը պես մեզի մտնէ։ 32—Եկուր մեր հօրը գինի խմցնենք, ու

*Կամ, պատիժին

*Այսինքն, պզտիկ
†Կամ, դրուեցաւ

իրեն հետ պառկինք, ու մեր հօրմէն սերունդ պահենք։ 33—Ու այն գիշերը իրենց հօրը գինի խմցուցին, ու մեծ աղիկը մտաւ ու իր հօրը հետ պառկեցաւ. և Դաւթ չիմացաւ անոր պառկիլն ու ելլելը։ 34—Ու եղաւ որ հետեւեալ օրը մեծ աղիկը պզտիկին բսաւ, Ահա երէկ գիշեր հօրս հետ պառկեցայ. այս գիշեր ալ անոր գինի խմցնենք, և մտիր ու իրեն հետ պառկէ, ու մեր հօրմէն սերունդ պահենք։ 35—Ու այն գիշերն ալ իրենց հօրը գինի խմցուցին, և պզտիկ աղիկը ելաւ ու անոր հետ պառկեցաւ. և Դաւթ չիմացաւ անոր պառկիլն ու ելլելը։ 36—Այսպէս Դաւթի երկու աղիկիները իրենց հօրմէն յղի մնացին։ 37—Ու մեծը արդի մը ծնաւ, ու անոր անունը Մովաբ դրաւ. ասիկա Մովաբացւոց հայրն է մինչև այսօր։ 38—Ու պզտիկն ալ որդի մը ծնաւ, ու անոր անունը Բենամմի դրաւ. ասիկա Ամմոնացւոց հայրն է մինչև այսօր։

Գլ. Ի

Ու Աբրահամ անկէ գնաց դէպ ի հարաւային երկիրը յաւեց, և կացաւ ու նստաւ մէջտեղ բնակեցաւ, ու Գերարայի մէջ պանդխտաբար եղաւ։ 2—Ու Աբրահամ իր կնոջ Սառայի համար, Ասիկա իմ քոյրս է, բսաւ. և Գերարայի թագաւորն Աբիմելէք մարդ զրկեց, ու առաւ Սառան։

3—Ու Աստուած եկաւ Աբիմելէքի դիշերը երազի մէջ ու բսաւ անոր, Ահա այդ կնոջ համար զոր դուն առիր, պիտի մեռնիս. քանզի անիկա այր ունի։ 4—Բայց Աբիմելէք անոր մտածած չէր, և բսաւ, Ով Տէր, արդար ազգ ալ պիտի մեռցնե՞ս։ 5—Ինք ինծի, Անիկա իմ քոյրս է, չըսա՞ւ. և ատ ալ, Անիկա իմ եղբայրս է, բսաւ. ես այս բանը ուղիղ սրտով ու մաքուր ձեռքերով ըրի։ 6—Ու Աստուած անոր բսաւ երազի մէջ, Ես ալ գիտցայ որ այս բանը ուղիղ սրտով ըրիր, նաև քեզ ինծի դէմ մեղք գործելէ ես պահեցի. անոր համար քեզ չթողուցի որ անդ դպնաս։ 7—Բայց հիմա կինը իր ըրկանը դարձուր. քանզի անիկա մարգարէ է, և

*Բէր. ականջներուն խօսեցաւ

Գլ. ԻԱ

1 Տէրը էր բաժին պէս Սառային այցելութիւն բրաւ. և էր գործեցին պէս բրաւ Տէրը Սառային։ 2—Եւ Սառա յղացաւ, ու ծրդի մը ծնաւ Աբրահամի էր ծերութեան ատենը, այն ծոն ժամանակին՝ որ Աստուած բսեր էր անոր։ 3—Եւ Աբրահամ իրեն ծնած, որմէնքն Սառային իրեն ծնած, էր որդւոյն անունը Իսահակ դրաւ։ 4—Եւ Աբրահամ թլփատեց էր որդին Իսահակը երբ ութ օրուան եղաւ, ինչպէս Աստուած իրեն պատուիրեր էր։ 5—Եւ Աբրահամ հարիւր տասիկան էր երբ էր որդին Իսահակ ծնաւ իրեն։ 6—Եւ Սառա բսաւ, Աստուած զիս խնդացուց. ամէն բոլը ինծի հետ պիտի խնդայ։ 7—Նաև բսաւ, Աբրահամի ո՞վ կ'բսեր որ Սառա տղաքներ պիտի անուցանէ. քանզի էր ծերութեան ատեն իրեն որդի ծնայ։ 8—Եւ տղան մեծցաւ ու կաթէն կտրուեցաւ. և Աբրահամ մեծ խնճոյք բրաւ Իսահակի կաթէն կտրուած օրը։

9—Եւ Սառա տեսնելով որ Եգիպտացի Հագարի որդին, զոր Հէտ Աբրահամի ծնաւ, ծաղր կ'բնէր, 10—Բսաւ Աբրահամի, Վռնտէ այս ազախինը ու անոր որդին. վասն զի այս ազախինին որդին իմ որդւոյս Իսահակի հետ ժառանգ պիտի չըլլայ։ 11—Եւ այս բանը Աբրահամի չատ դժուար երեցաւ՝ էր որդւոյն պատճառաւ։ 12—Եւ Աստուած բսաւ Աբրահամի, Տղուն համար ու ազախինիդ համար՝ այդ բոնը քեզի դժուար չերեւնայ։ Ամէն բան որ Սառան քեզի բսած բոլը խօսքը մտիկ ըրէ, քանզի Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի։ 13—Եւ ազախինին որդին ալ ազգ մը պիտի բնեմ, վասն զի անիկա քու սերունդդ է։ 14—Ու Աբրահամ առաւտուն կանուխ երեւաւ, և հաց ու ափկ մը ջուր առաւ, ու Հագարի տուաւ՝ անոր ուսին վրայ դնելով, և տղան ալ տուաւ, ու դրկեց զանիկա. և գնաց անիկա ու ԲԷրսաբէէի անապատին մէջ անդին ադին կը պտրաւեր։ 15—Եւ ափկին ջուրը հատաւ, ու տղան տակ ձգեց տղան։ 16—Եւ նետընկեցի մը չափ հեռու գնաց ու դիմացը նըստաւ, քանզի բսաւ, Տղան մեռնիլը չտեսնեմ. և դիմացը նստելով իր ձայնը վերցուց ու լացաւ։ 17—Եւ Աստուած տղուն ձայնը լսեց. ու Աստուծոյ հրեշտակը երկինքին կանչեց Հագարը, ու անոր բսաւ, Հագար, քեզի ի՞նչ եղաւ. մի վախնար, վասն զի Աստուած լսեց տղուն ձայնը՝ անոր եղած տեղին։ 18—Ելիր, տղան վերցուր, ու ձեռքդ ազնէ անոր. վասն զի մեծ ազգ մը պիտի բնեմ զանիկա։ 19—Եւ Աստուած Հէրէր աչքերը բացաւ, ու ջրոր մը տեսաւ. և գնաց ու ափկը ջրով լեցուց, ու տղան խմցուց։ 20—Եւ Աստուած տղուն հետ էր, որ մեծցաւ ու անապատը բնակեցաւ և պեղնաւոր եղաւ։ 21—Ու փառանի անապատին մէջ բնակեցաւ. և մայրը անոր կին մը առաւ Եգիպտոսի երկրէն։

22—Ու եղաւ որ այն ատեն Աբիմելէք և իր ազարապետը Փիքող խօսեցան Աբրահամի՝ բսելով, Աստուած քեզի հետ է ամէն բանի մէջ՝ ինչ որ գործես։ 23—Եւ հիմա հոս ինծի երդում բրէ Աստուծով, որ ինծի ու իմ զաւակիս և իմ սերունդիս հետ նենգութեամբ պիտի չվարուիս. հապա իմ քեզի բրած բարութեանս պէս պիտի բնես ինծի ու այս երկրին՝ որուն մէջ բնակեր ես։ 24—Եւ Աբրահամ բսաւ, Ես երդում կ'բնեմ։ 25—Ու Աբրահամ յանդիմանեց Աբիմելէքը ջրհորի մը համար՝ զոր Աբիմելէքի ծառաները բռնութեամբ առած էին։ 26—Եւ Աբիմելէք բսաւ, Այդ բանը ով բնելը չեմ գիտեր. և դուն ալ չիմացուցիր ինծի, ու ես ալ լսած չէի, բայց միայն այսօր։ 27—Ու Աբրահամ ոչխարներ ու արջառներ առաւ ու Աբիմելէքի տուաւ, ու երկուքն ալ ուխտ բրին։ 28—Եւ Աբրահամ ոչխարներէն եօթը հատ էգ գառներ զատ դրաւ։ 29—Ու Աբիմելէք բսաւ Աբրահամի, Ի՞նչ պիտի ըլլան այդ եօթը էգ գառները զորոնք զատ դրիր։ 30—Եւ անիկա բսաւ, Այս եօթը էգ գառները իմ ձեռքս առնես, որպէս զի անոնք ինծի վկայութիւն ըլլան թէ այս հորը ես փորեր եմ։ 31—Անոր համար այն տեղին

անունը *Բերսաբէէ կոչեց. քանզի երկուքն ալ հոն երդում բրին։ 32—Եւ Բերսաբէէ մէջ ուխտ բրին. այն ատեն եղաւ Աբիմելէք ու անոր սպարապետը Փիքող, և Փղշտացւոց երկիրը դարձան։

33—Եւ Աբրահամ ծառը անկեց Բերսաբէէ մէջ. ու հոն յաւիտենական Աստուծոյ, Եհովայի, անունը կանչեց։ 34—Եւ Աբրահամ շատ օրեր պանդխտութիւն բրաւ Փղշտացւոց երկրին մէջ։

Գլ. ԻԲ

1 Եղաւ որ այս բաներէն ետքը Աստուած փորձեց Աբրահամը, ու բսաւ անոր, Ով Աբրահամ. և անիկա բսաւ, Ահա հոս եմ. 2—Ու անիկա բսաւ, Հիմա քու սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը առ, ու Մօրիայի երկիրը գնա, և հոն զանիկա ողջակէզ ըրէ լեռներէն մէկուն վրայ՝ զոր ես քեզի պիտի բսեմ։ 3—Եւ Աբրահամ առաւտուն կանուխ եղաւ, ու էր իշուն հասիւր դրաւ, և իրեն հետ երկու ծառայ ու էր Իսահակ որդին առաւ. և ողջակիզի համար փայտ ճեղքեց, ու եղաւ գնաց այն տեղը զոր Աստուած իրեն բսաւ։ 4—Ու երրորդ օրը Աբրահամ էր աչքերը վեր վերցուց, ու հեռուէն տեսաւ այն տեղը։ 5—Եւ Աբրահամ բսաւ էր ծառաներուն, Դուք իշուն հետ հոս մնացէք. և ես ու տղան մինչև հոն երթանք, ու երկրպագութիւն բնենք, և նորէն ձեզի դառնանք։ 6—Ու Աբրահամ ողջակիզին փայտերն առաւ, ու էր որդւոյն Իսահակի վրայ դրաւ, և ինք էր ձեռքը առաւ կրակը ու դանակը, ու երկուքը միասին գացին։ 7—Եւ Իսահակ էր հօրը Աբրահամի խօսեցաւ ու բսաւ, Հայր իմ. և անիկա բսաւ, Ահա հոս եմ, որդիս։ Ես անիկա բսաւ, Ահա կրակը ու փայտը, բայց ողջակիզ ըլլալու գառը ո՞ր է։ 8—Եւ Աբրահամ բսաւ, Աստուած իրեն ողջակիզ ըլլալու գառը պիտի պատրաստէ, որդեակ իմ։ Այսպէս երկուքը միասին գացին։ 9—Ու եկան այն տեղը զոր Աստուած անոր բսեր էր. և Աբրահամ հոն սեղան չինեց ու փայտերը չարեց, և էր որդին Իսահակը կապեց, ու զանիկա սեղանին վրայ, փայտերուն վրայ, դրաւ։ 10—Եւ Աբրահամ էր ձեռքը երկնցուց, ու դանակը առաւ որպէս զի էր որդին մորթէ։ 11—Եւ Տէրոջը հրեշտակը երկինքէն անոր կանչեց ու բսաւ, Աբրահամ, Աբրահամ. և անիկա բսաւ, Ահա հոս եմ. 12—Եւ բսաւ, Տղուն ձեռք մի դպցնէր, և անոր բան մը մի բնէր. քանզի հիմա գիտցայ որ Աստուծմէ կը վախնաս. որովհետև քու մէկ հատիկ որդիդ ինծմէ չխնայեցիր։ 13—Եւ Աբրահամ էր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ, և ահա էր ետեւը խիտ մացառներուն մէջ եղիջերներէն բռնուած խոյ մը կար. ու Աբրահամ գնաց ու խոյը առաւ, և զանիկա իր որդւոյն տեղ ողջակէզ մատուց։ 14—Եւ Աբրահամ այն տեղին անունը Եհովա-Իրէ կոչեց, որ մինչև այսօր կ'բսուի, Տէրը լեռանը մէջ պիտի երեւնայ։ 15—Ու Տէրոջը հրեշտակը երկրորդ անգամ երկինքէն Աբրահամը կանչեց, 16—Ու բսաւ, Իմ անձիս վրայ երդում ըրէի, կ'բսէ Տէրը, որովհետև այս բանը ըրեր ես ինծի համար քու մէկ հատիկ որդիդ չխնայեցիր, 17—Ինձ օրհնելով պիտի օրհնեմ, ու քու սերունդդ երկինքի աստղերուն պէս խիտ պիտի չատցնեմ. և քու սերունդդ իր թշնամիներուն †քաղաքներէն պիտի ժառանգէ։ 18—Ու երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին, որովհետև իմ ձայնիս ականջ դրիր։ 19—Այսպէս Աբրահամ իր ծառաներուն դարձաւ, ու երթան ու միասին Բերսաբէէ գացին. և Աբրահամ Բերսաբէէի մէջ կը բնակէր։

20—Ու եղաւ որ այս բաներէն ետքը Աբրահամի պատմեցաւ՝ բսելով, Ահա Մեղքա ինք ալ որդիներ ծնաւ քու եղբօրդ Նաքորի. 21—Առաջինին որդին Հուսը, և անոր եղբօրը Բուզը, ու Արամի Հայրը Կամուէլը, 22—Եւ Քեսադը ու Ասսը և Փազդասը ու

*Այսինքն, Տէրը պիտի տեսնէ. կամ, Տէրը պիտի նախախնամէ

†Եբէր. դուռը

*Այսինքն, յրհոր երդման

Ցեղալեռը և Բաթուէլը։ 23—Ս. Բաթուէլ ծնաւ Ռեբեկան. այս ութ որդիս Մեղքա ծնաւ Աբրահամի եղբօրը Նաքովրի։ 24—Ս. անոր հարճը որուն անունը Ռեւումա էր, անիկա ալ ծնաւ Տեբահը ու Գաամը ու Թահաքաս և Մահաքան։

Գլ. ԻԹ

Ե. Սառա հարիւր քսանըեօթը տարի ապրեցաւ. այսչափ էշամ Սառայի կեանքին տարիներըն։ 2—Ս. Սառա մեռաւ Կարեաթ-արբայի մէջ, որ է Ներրան, Քանանաց երկրին մէջ. ու Աբրահամ Սառայի համար սուգ ընելու ու ողալու եկաւ։ 3—Ս. Աբրահամ իր մեռելին ձախէն ելաւ, ու Բնաւ որդիներուն հետ խօսեցաւ՝ ըսելով, 4—Ես ձեր մէջ օտարական ու պանդխտ եմ. ձեր մէջ բնակ գերեզմանի տացուածք տուէք, որպէս զի իմ եբեսս առջևէն մեռելը թաղեմ, 5—Ս. Բնաւ որդիները պատասխան տուին Աբրահամի ու անոր ըսին, 6—Տէր իմ, մեզի ըսկի մեզի, դուն մեր մէջ իշխան Աստուծոյ ես. մեր ամէնէն ընտիր գերեզմանին մէջ թաղ քու մեռելդ. քու մեռելդ թաղելու համար՝ մեզմէ մէկը չմնայեր իր գերեզմանը քեզի տալու։ 7—Ս. Աբրահամ եկաւ, ու Քանանացւոց Բիւն ըսուածին երկրին ժողովրդին, Բնաւ որդիներուն. 8—Ս. անոնց ըսաւ՝ ըսելով, Եթէ կը հաճիք որ ես իմ եբեսս առջևէն մեռելը թաղեմ, ինծի մտիկ ըրէք, և ինծի համար Սահառի որդւոյն Եփրոնի հետ խօսեցէք, 9—Որ իր պարոն ծածրը եղած Մաքփելայի այրը ինծի տայ, անիկա ձեր մէջ ինծի գերեզմանի տացուածք ըլլալու համար ըսուն գնով մայ։ 10—Ս. Եփրոն Բնաւ որդիներուն մէջ կը նստէր։ Եւ Բնաւացի Եփրոն պատասխան տուաւ Աբրահամի ներ իր քաղաքին դուռը մտնող բոլոր Բնաւ որդիներուն կը լսեին, ու ըսաւ, 11—Ոչ, տէր իմ, ինծի մտիկ ըրէ. արտը քեզի կու տամ, և հոն եղած այրն ալ քեզի կու տամ. իմ ժողովրդիս

դէմ որդիներուն առջև զայն քեզի տուի. թաղէ քու մեռելդ։ 12—Ս. Աբրահամ այն երկրին ժողովրդին առջև խոնարհութիւն ըրաւ։ 13—Ս. Եփրոնի խօսեցաւ, երբ այն երկրին ժողովրդը կը լսէին, ու ըսաւ, Բայց ինձի ըսէ՛ եթէ դուն կ՚ուզես, կ՚ուզեմ քեզի, ինծի մտիկ ըրէ. ես արտին սակը տամ. առ ինծմէ, ու ես իմ մեռելս հոն թաղեմ. 14—Ս. Եփրոն պատասխան տուաւ Աբրահամի ու անոր ըսաւ, 15—Տէր իմ, լսէ ինծի. գեաթը չորս հարիւր սիկղ արծաթ է՛ երէք. իմ ու քու մէջտեղ այն ի՞նչ է. ուրեմն թաղէ քու մեռելդ։ 16—Ս. Աբրահամ Եփրոնի մտիկ ըրաւ. ու Աբրահամ կշռեց արծաթը ու տուաւ Եփրոնի, ինչպէս անիկա բեռի որդիներուն առջև խօսեր էր, այսինքն չորս հարիւր սիկղ արծաթ՝ վաճառականներուն մէջ անցած ընդ։ 17—Ս. Եփրոնի արտը որ Մաքփելայի մէջ Մամբրէի դիմաց է, արտը ու հոն եղած այրը, ու անոր բոլորտիքի սահմաններուն մէջ եղած ամէն մէջի բոլոր ծառերը 18—Աբրահամի սեպհականութիւն ըլլալու համար հաստատուեցան, անոր քաղաքին դռնէն մտնող բոլոր բեռի որդիներուն առջև, 19—Ս. անկէ ետքը Աբրահամ իր կինը Սառան թաղեց Մաքփելի դիմաց եղող Մաքփելայի արտին այրին մէջ, որ է Ներրան՝ Քանանաց երկրին մէջ։ 20—Ս. արտը ու հոն եղած այրը բեռի որդիներէն Աբրահամի գերեզմանի սեպհականութիւն ըլլալու համար հաստատուեցան։

Գլ. Ի

Ե. Աբրահամ օրերն անցուցած ու ծերացած էր. ու Տէրը ամէն բանի մէջ օրհնեց Աբրահամը։ 2—Ս. Աբրահամ ըսաւ իր տանը երէց ծառային, որ իր բոլոր ունեցածին վերակացուն էր, Դ՚ադրէի՛ քեզի, ձեռքդ իմ երանգիս տակ դիր։ 3—Ս. քեզ կ՚երդմցնեմ Տէրոջմով, որ երկինքի Աստուածն ու երկրի Աստուածն է, որ իմ որդւոյս կինն չառնես Քանանացւոց աղջիկներէն, որոնց մէջ ես կը բնակիմ. 4—Հապա իմ երկիրս ու իմ ազգականներուս երթաս,

*Այլ՝ Եփրոն, կրկնութիւն

ու իմ որդւոյս Իսահակի համար կին առնես։ 5—Ս. ծառան ըսաւ անոր, Գուցէ կինը իմ հետևէս այս երկիրը գալ չուզի. կ՚ըլլա՞յ որ ես որդիդ այն երկիրը դարձնեմ ուրկէ դուն ելար։ 6—Ս. Աբրահամ ըսաւ անոր, Զգուշացիր որ իմ որդիս հոն չդարձնես. 7—Երկինքի Տէր Աստուածը, որ զիս իմ հօրս տունէն ու իմ ծննդեան երկրէս հանեց, և որ խօսեցաւ ինծի, ու երդում ըրաւ ինծի՛ ըսելով, Այս երկիրը քու սերունդիդ պիտի տամ, անիկա իր հրեշտակը քու առջևդ պիտի դրկի, ու դուն անկէ իմ որդւոյս կին պիտի առնես։ 8—Ս. եթէ կինը քու հետևդ գալ չուզի, այս իմ երդումէս դուն անպարտ կ՚ըլլաս. միայն իմ որդիս հոն չդարձնես։ 9—Ս. ծառան իր տէրոջը Աբրահամի երանգին տակ դրաւ իր ձեռքը, ու այս բանին համար երդում ըրաւ անոր։

10—Ս. ծառան իր տէրոջը ուղեբեռնէն տասը ուղտ առաւ ու գնաց, քանի որ տէրոջը բոլոր բարիքները իր ձեռքն էին. և երթալ ու գնաց ի Մէսոպոտամիա Նաքովրի քաղաքը գնաց։ 11—Ս. քաղաքին դիմացիրն ուղտերը նստեցուց իրմէ մը քով իրիկուան գէմ՝ կինները ելար քաղելու ելած ատենը. 12—Ս. ըսաւ, Ով Տէր, իմ տէրոջս Աբրահամի Աստուածը, կ՚ազատիմ քեզի, յաջողակ ինծի այսօր, և իմ տէրոջս Աբրահամի բարերարութիւն ըրէ. 13—Ահա ես ելար ազբիւրին քով կը կայնիմ. և այս քաղաքին բնակիչներուն աղջիկները ելար հանելու կ՚ելլեն։ 14—Ս. ըլլայ թէ՝ երբ ուղիան ըսեմ, Շնորհք ըրէ, ասփրդի իջնցուր որպէս զի խմիմ, ու անիկա ըսէ թէ խմէ, ու քու ուղեբեռդ ալ խմցնեմ, անիկա ըլլայ քու Իսահակ ծառայիդ համար սահմանածդ. և ասով գիտնամ որ իմ տէրոջս բարերարութիւն ըրիր։

15—Ս. եղաւ որ ասկէ առին իր խօսքը չվերացուցած, ահա Աբրահամի եղբօրը Նաքովրի կնոջ Մեղքայի որդւոյն Բաթուէլի ծնած Ռեբեկան եկաւ, իր ուսին վրայ սափորը ունենալով։ 16—Ս. ազիկը խիստ գեղեցիկ տեսքով կոյս մըն էր, ու այր մարդ մը ճանչկած չէր. և աղիկա իջաւ աղբիւրը, ու իր սափորը լեցուց ու կը դառնար։ 17—Ս. ծառան ընդառաջ գիմաւորելու վազեց, ու ըսաւ, Շնորհք ըրէ, քու սափրիդ քիչ մը ջուր խմցուր։ 18—Ս. անիկա ըսաւ, Խմէ, տէր իմ. ու չտուաւ սափորը իր ձեռքին վրայ իջնցուց, և խմցուց անոր։ 19—Ս. երբ անոր խմցուց լմնցուց, ըսաւ, Ուղտերուդ ալ ջուր քաշեմ, մինչև ամէնը խմեն։ 20—Ս. չտուաւ սափորը ուղտերուն մէջ պարպեց, ու նորէն հորը վազեց ջուր քաշելու, և անոր բոլոր ուղտերուն համար ջուր քաշեց։ 21—Ս. մարդը զարմանալով անոր վրայ՝ լուռ կը մնար, մտածելով թէ արդեօք Տէրը անոր ճամբան յաջո՛ղ թէ ոչ։ 22—Ս. երբ ուղտերը խմելը լմնցուցին, մարդը կէս սիկղ ոսկիէ օղակ մը, և անոր ձեռքերուն համար տասը սիկղ ոսկիէ երկու ապրանքէան հանեց, ու ետ դարձաւ։ 23—Ս. ըսաւ, Դուն որո՞ւն աղիկն ես, կ՚ազատի՞մ, բակ ինծի. քու հօրդ տունը մեզի հանգիստ գիշերը կենալու տեղ կա՞յ։ 24—Ս. անիկա ըսաւ անոր, Ես Մեղքայի որդւոյն Բաթուէլի աղիկն եմ, զոր Մէլքա Նաքովրի ծնաւ, 25—Նաև ըսաւ անոր, Մենք չատ յորեաւ ճարակ ունինք, և գիշերը կենալու տեղ ալ։ 26—Ս. մարդը խոնարհեցաւ ու Տէրոջը երկրպագութիւն ըրաւ. 27—Ս. ըսաւ, Օրհնեալ ըլլայ իմ տէրոջս Աբրահամի Տէր Աստուածը, որ իմ տէրս իր ողորմութենէն ու իր ճշմարտութենէն չզրկեց. քանի որ ես ճամբուս մէջ եմ, Տէրը զիս իմ տէրոջս եղբայրներուն տունը առաջնորդեց։ 28—Ս. ազիկը վազեց, ու այս բաները իր մօրը տունը պատմեց։

29—Ս. Ռեբեկա եղբայր մը ունէր Լաբան անունով. ու Լաբան գուրս վազեց դէպ ի աղբիւրը մարդուն քովՙ. 30—Ս. ան որ տեսնելով օղակը, և իր քրոջը ձեռքերուն վրայի ապրանքները, ու լսելով իր քրոջը Ռեբեկայի խօսքերը, որ կ՚ըսէր Թէ Այն մարդը այսպէս խօսեցաւ ինծի, մարդուն եկաւ. և ահա անիկա ուղտերուն քով աղբիւ-

*Եբր. Արամ Նահարայիմ

բին մեռ կայներ կր։ 31—Ու բաւ ա-
նոր, նկատ, ով Տէրոջը օրհնեալը, ին-
չո՞ւ զուրսը կայներ ես. գանգի տուր
պատրաստեցի, և ուղտերուն համար
ատղ մը։ 32—Ու մարդը տուն եկաւ.
և ուղտերը քակեց, և ուղտերուն յարդ
ու եարակ, և անոր ոտքերը ու անոր
հետ եղող մարդոց ոտքերը լուալու ջուր
տուաւ։ 33—Ու անոր առջև կերակուր
դրուեցաւ. բայց անիկա բաւ։ Մինչև
իմ խօսքերս չպրուցեմ, չեմ ուտեր.
և Լաբան ըսաւ, Զրուցե։ 34—Ու ա-
նիկա բաւ, Ես Աբրահամի ծառան եմ.
35—Ու Տէրը մեծապես օրհնեց իմ
տէրս, ու մեծ հարստ ըլ եղաւ. և անոր
հօտեր ու արջառներ և արծաթ ու ոս-
կի, և ծառաներ ու աղախիններ, և
ուղտեր ու էշեր տուաւ։ 36—Ու իմ
տէրոջս կինը Սառա իր պառաւութեան
ատենը որդի մը ծնաւ իմ տէրոջս, որ
բոլոր ունեցածը անոր տուաւ։ 37—Ու
իմ տէրս ինծի երդում բնել տուաւ՝
ըսելով, Զրկայ որ իմ որդւոյս կին ու-
նենս Քանանացոց աղջիկներէն, որոնց
երկիրը ես կը բնակիմ։ 38—Հապա իմ
հօրս տունը ու իմ ազգատոհմիս եր-
թաս, ու իմ որդւոյս կին առնես։ 39—
Ես ես իմ տէրոջս ըսի, Գուցէ կինը իմ
հետևէս չգայ։ 40—Ու անիկա ինծի
ըսաւ, Տէրը, որուն առջև ես կը քալեմ,
իր հրեշտակը քեզի հետ պիտի դրկէ,
ու քու ճամբադ պիտի յաջողցնէ, և իմ
որդւոյս իմ ազգատոհմիս ու իմ հօրս
տունէն կին պիտի առնես։ 41—Իսկ
դուն այն ատեն իմ երդումէս անպարա
պիտի ըլլաս, երբ իմ ազգատոհմիս եր-
թալով, քեզի չտան, այն ատեն իմ երդումէս անպարա պիտի ըլլաս։
42—Ու այբիւրն եկայ այսօր, ու ըսի,
Ով Տէր, իմ տէրոջս Աբրահամի Աստ-
ուածը, եթէ հիմա այս իմ երթալուս
ճամբան դուն կը յաջողցնես, 43—Ահա
ես կը կենամ այբիւրին քով. կը կայնիմ.
և ըլլայ որ աղջիկը ջուր քաշելու գայ,
և ես անոր ըսեմ Թէ Շնորհք ըրէ, ին-
ծի քու սափորէդ փոչ մը ջուր խմցուր,
44—Ու անիկա ինծի՝ Դուն ալ խմէ, և
ուղտերուդ համար ալ ջուր քաշեմ ըսէ,
Թող անիկա ըլլայ Տէրոջը սահմանած
կինը իմ տէրոջս որդւոյն համար։ 45—
Ու իմ սրտիս մէջ ասկէն խօսքը
չլմնցուցած, ահա Ռեբեկա կ'ելլէր ա-
փերը իր ուսին վրայ ունենալով, և ա-
բիւրը իջաւ ու ջուր քաշեց։ և ըսի ա-
նոր, Շնորհք ըրէ, ինծի ըմպել խմցուր։
46—Ու անիկա շուտավ ափերը իր ու-
սէն վար առաւ ու բաւ, Խմէ, և ուղ-
տերուդ ալ խմցնեմ. ուստի ես խմեցի,
և ուղտերուն ալ խմցուց։ 47—Ու հար-
ցուցի անոր ու ըսի, Դուն որո՞ն ազ-
ջիկն ես. և անիկա բաւ, Մելքայի
Նաքովրի ծնած որդւոյն Բաթուէլի ազ-
ջիկն եմ. այն ատեն մատիկ անոր քիթը
ու ապարանջանները անոր ձեռքերուն
վրայ դրի։ 48—Ու խոնարհեցայ ու Տէ-
րոջը երկրպագութիւն ըրի, և իմ տէ-
րոջս Աբրահամի Տէր Աստուածը օրհնե-
ցի, որ իմ տէրոջս եղբօրը ազջիկը իր
որդւոյն առնելու համար ինծ ուղիղ
ճամբան առաջնորդեց։ 49—Ու հիմա
եթէ իմ տէրոջս ընորհք ու հաւատա-
րիմութիւն պիտի ընէք, ինծի պատմեցէք. և
եթէ ոչ ըսէք ինծի ըսէք, որ ես ալ
կողմ կամ ձախ կողմը դառնամ։ 50—
Լաբան ու Բաթուէլ պատասխան տուին
ու բսին, Այս բանը Տէրոջմէն է, մենք
քեզի դէշ կամ ազէկ չենք կրնար ըսել։
51—Ահա Ռեբեկա քու առջևդ է, առ
ու գնա. և Տէրոջը ըսածին պէս իմ
քու տէրոջդ որդւոյն կին ըլլայ։ 52—
Ու եղաւ որ երբ Աբրահամի ծառան ա-
նոնց խօսքերը լսեց, մինչև գետին խո-
նարհեցաւ երկրպագութիւն ըրաւ Տէ-
րոջը։ 53—Ու ծառան արծաթեղէն
զարդեր ու ոսկեղէն զարդեր և հան-
դերձներ հանեց, ու Ռեբեկայի տուաւ.
և անոր եղբօրը ու մօրը պատուական
բաներ տուաւ։ 54—Ու կերան ու
խմեցին ինք ու իրեն հետ եղող մար-
դիկը, ու գիշերը հոն մնացին, և առ-
աւտուն կանուխ ելան, ու ինք բաւ, Ձես իմ
տէրոջս դրկեցէք։ 55—Ու ազգիկն եղ-
բայրը ու մայրը բսին, Թող ազջիկը քա-
նի մը օր, գոնէ տասը տր, մեր քով կե-
նայ, — ետքը երթայ։ 56—Ու ինք
բաւ անոնց, Ձես ինծի արգիլեք, քանզի
Տէրը իմ ճամբաս յաջողեց. թող տուէք
ես որ տէրոջս երթամ։ 57—Ու ա-
նոնք բսին, Ազջիկը կանչենք ու անոր
բերանը փնտռենք։ 58—Ու կանչեցին

Ռեբեկան ու բսին անոր, Այս մարդուն
հետ կ'երթա՞ս. և անիկա կ'երթամ
բաւ։ 59—Ու իրենց քոյրը Ռեբեկան
ու անոր դայեակը և Աբրահամի ծա-
ռան ու անոր մարդիկը ղրկեցին։ 60—
Ու օրհնեցին Ռեբեկան ու բսին անոր,
Դուն մեր քոյրն ես. հազարաւոր բի-
բիրու՛յր ըլլաս, և քու սերունդդ իր
թշնամիներուն *փազաքները ժառան-
գէ։ 61—Ու Ռեբեկա ու իր ազախին-
ները ելան և ուղտերը հեծան, ու այն
մարդուն հետևեցան գացին. և ծառան
առաւ Ռեբեկան ու գնաց։

62—Ու Իսահակ Լահայրոյի Լրնարէն
գալած կու գար. վասն զի անիկա
հարաւային երկիրը կը բնակէր։ 63—
Ու Իսահակ իրիկուան դէմ գաշտը
ելեր էր †մտածութիւն բնելու. ու իր
աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա
ուղտեր կու գային։ 64—Ու Ռեբեկա
իր աչքերը վերցուց, ու երբ Իսահակը
տեսաւ, ուղտէն վար իյնաւ։ 65—Ու
բսաւ ծառային, դաշտին մէջ դէպ ի
մեզ եկող այդ մարդը ո՞վ է. և ծառան
բսաւ, Իմ տէրս է. ու ինք փոդր առաւ
ու ծածկուեցաւ։ 66—Ու ծառան իր
բոլոր բրած բաներէը պատմեց Իսահակի.
67—Ու Իսահակ զանիկա իր մօրը Սա-
ռայի վրանը տարաւ, ու առաւ Ռեբե-
կան, որ իր կինը եղաւ. ու ինք սիրեց
զանիկա։ Ու Իսահակ մխիթարուեցաւ
իր մօրը ‡վրայով։

ԳԼ. ԻԵ

Ե Աբրահամ նորէն կին մը առաւ,
ու անոր անունը Քետուրա էր։ 2—Ու
անիկա Զեմրանը ու Յեկսանը և Մա-
դանը ու Մադիանը և Յեսբոկը ու Սու-
ային ծնաւ անոր։ 3—Ու Յեկսան ծնաւ
Սարան ու Դեդանը. և Դեդանի որ-
դիներէն Ասուրիմ ու Լատուսիմ և Լը-
ոմիմիմ էին։ 4—Ու Մադիանի որդի-
ները Գեփա ու Ափեր և Ենովք ու Աբի-
դա և Եղդաղա էին. ասոնք ամենը Քե-
տուրայի որդիներն էին։

5—Ու Աբրահամ իր բոլոր ունե-
ցածը Իսահակի առաւ. 6—Բայց Աբ-
րահամի հարճերուն որդիներուն Աբ-
րահամ պարգևներ առաւ, և իր կեն-
դանութեան առնէն զանազի իր որդւոյն
Իսահակի քովէն դէպ ի արևելք՝ ա-
բեւելեան երկիրը ղրկեց։

7—Ու Աբրահամի կեանքին տարի-
ներուն օրերը որ ինք ապրեցաւ, հա-
րիւր եօթանասունհինգ տարի էին։
8—Ու Աբրահամ ալիւր ծերութեամբ
ծերացած ու իր օրերը լիացած՝ ուն-
դեց իր հոգին ու մեռաւ, և իր ժողո-
վրդին բառնուեցաւ։ 9—Ու իր որ-
դիները, Իսահակ ու Իսմայէլ, քովե-
ցին զանիկա Մաքփելայի այրին մէջ, որ
Քեսացի Սահառի որդւոյն Եփրոնի ար-
տին մէջ Մամբրէի դիմաց է։ 10—Այն
արտը որ Աբրահամ Քեթ որդիներէն
ծախու առած էր. հոն թաղուեցաւ
Աբրահամ և իր կինը Սառա։

11—Ու եղաւ որ Աբրահամի մեռ-
նելէն ետքը Աստուած օրհնեց անոր
որդին Իսահակը. և Իսահակ Լահայրոյի
Լրնարէն գալ բնակեցաւ։

12—Ու ասոնք են Աբրահամի որդ-
ւոյն Իսմայէլի ծնունդները, զոր Սա-
ռայի Եգիպտացի ազախինը Հագար
ծնաւ Աբրահամի։ 13—Ու Իսմայէլի
որդւոց անուններուն ասոնք են իրենց
անուններովը ու իրենց ծնունդներովը.
Իսմայէլի անդրանիկը Նաբեւթ, ետքը
Կեդար, Ադբեէլ, Մաբսամ, 14—
Մասմա, Դումա, Մասա, Խոդադ,
15—Թեմա, Յետուր, Նափես ու Կեդ-
մա. 16—Ասոնք են Իսմայէլի որդի-
ները. և իրենց վրաններովը ու իրենց
գիւղերովը իրենց անուններով ասոնք են.
իրենց ազգերուն հաստատուած տասներկու
իշխաններ էին։ 17—Ու Իսմայէլի կեան-
քին օրերը հարիւր երեսունեօթը տա-
րի եղան. և իր հոգին տալով մեռաւ,
ու իր ժողովրդին բառնուեցաւ։
18—Ու Իսմայէլացիք բնակեցան Ես-
խայէ մինչև Սուր, որ Եգիպտոսի դիմաց
Ասորեստան երթալու ճամբուն վրայ է.
բոլորը իր եղբայրներուն առջև *բնա-
կեցաւ։

*ՆԵՐ. դուռը
†կամ, ապօթք
‡կամ, մահուանէն ետև
*ՆԵՐ. ինկաւ

19—Եւ Աբրահամի որդւոյն Իսահակի ծնունդներըս ասանք են. Աբրահամ ծնաւ Իսահակը։ 20—Եւ Իսահակ քառասուն ամեայ էր, երբ *Մէլէքեան Աստր Բաթուէլի աղջիկը, Աստր Լաբանի քոյրը Ռեբեկան, իրեն կին առաւ։ 21—Եւ Իսահակ ազօթից Տէրոջը իր կնոջ համար՝ ամուլ ըլլալուն պատճառաւ, և Տէրը անոր ազաչանքը ընդունեց. ու անոր կինը Ռեբեկա յղացաւ։ 22—Եւ ազգքերը անոր արգանդին մէջ կը կռուէին. ու ըսաւ, Եթէ այսպէս է, ինչո՞ւ եղաւ ինծի ասիկա. և Տէրոջը հարցնելու գնաց։ 23—Ու Տէրը ըսաւ անոր, Երկու ազգ կան արգանդիդ մէջ, և քո զաւակներդ երկու ժողովրդ պիտի զատուի. ու ժողովրդին մէկը միւսէն զօրաւոր պիտի ըլլայ, և մեծը պիտի ծառայէ պզտիկին։ 24—Ու երբ անոր ծնանելու օրերը լեցուեցան, ահա երկուորեակ էին անոր արգանդին մէջ։ 25—Ու առաջինը ելաւ կարմրագոյն, բոլոր մարմինը մազոտ վերարկուի պէս էր. ու անոր անունը Եսաւ դրին։ 26—Ու անկէ ետքը անոր եղբայրը ելաւ, ու անոր ձեռքը Եսաւի գարշապարէն բռնած էր, և անոր անունը Յակոբ դրին. ու անոնց ծնած ատենը Իսահակ վաթսուն տարեկան էր։ 27—Ու մանուկները մեծցան. ու Եսաւ գաշտի մարդ, վարպետ որսորդ եղաւ. իսկ Յակոբ հանդարտ բարքով մարդ էր ու վրաններու մէջ կը բնակէր։ 28—Ու Իսահակ կը սիրէր Եսաւը, վասն զի անոր որսին կ'ուտէր. բայց Ռեբեկա Յակոբը կը սիրէր։

29—Օր մը երբ Յակոբ ապուր կ'եփէր, Եսաւ գաշտէն եկաւ և ուժասպառ կը մնար։ 30—Ու Եսաւ Յակոբի ըսաւ, Շնորհք ըրէ, այդ չիկիթանէն տուր որ ուտեմ, քանզի կը մնարիմ. ուստի անոր անունը ||Եդոմ կոչուեցաւ։ 31—Ու Յակոբ ըսաւ, Վաճառէ ինծի այսօր քու անդրանկութիւնդ։ 32—Ու Եսաւ ըսաւ, Ահա մեռնելու կը մօտենամ, և անդրանկութիւնն ինծի ի՞նչ օգուտ կայ։ 33—Ու Յակոբ ըսաւ, Այսօր ինծի երդում ըրէ. և անիկա երդում ըրաւ անոր, ու իր անդրանկութիւնը Յակոբի ծախեց։ 34—Այն ատեն Յակոբ հաց ու ոսկի ապուր տուաւ Եսաւի. և ուտելէ ետքը ան ելաւ գնաց. այսպէս Եսաւ էր անդրանկութիւնը անարգեց։

Գլ. ԻԶ

1. Երկրին մէջ սով եղաւ, առաջուան սովէն զատ՝ որ Աբրահամի օրերը եղեր էր. և Իսահակ Գերարա գնաց Փղշտացւոց Աբիմելէք թագաւորին։ 2—Ու Տէրը երեւցաւ անոր, ու ըսաւ, Եգիպտոս մի իջնար, բնակէ այն երկրին մէջ զոր քեզի պիտի ըսեմ։ 3—Գտնուստ եղիր այս երկրին մէջ, ու ես քեզի հետ պիտի ըլլամ, և քեզ պիտի օրհնեմ. վասն զի բոլոր այս երկիրներըը քեզի ու քու սերունդիդ պիտի տամ, ու քու հօրդ Աբրահամի երդումն պիտի հաստատեմ։ 4—Ու քու սերունդդ երկինքի աստղերուն չափ պիտի չուռցնեմ, և բոլոր այս երկիրներըը քու սերունդիդ պիտի տամ. ու երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին։ 5—Վասն զի Աբրահամ իմ ձայնիս ականջ դրաւ, և իմ հրամաններս ու պատուիրանքներս, իմ կանոններս ու օրէնքներս պահեց։

6—Ու Իսահակ բնակեցաւ Գերարայի մէջ։ 7—Ու այն տեղին մարդիկը հարցուցին անոր իր կնոջ համար. և անիկա ըսաւ, Իմ քոյրս է. քանզի իմ կինս է, ըսելու վախցաւ. չըլլայ որ, ըսեն, այս տեղին մարդիկը զիս սպանեն Ռեբեկայի համար. վասն զի աղեղնիս տեսքով գեղեցիկ էր։ 8—Ու եղաւ որ երբ հոն շատ տարի կեցաւ, Փղշտացւոց թագաւորը Աբիմելէք պատուհանէն նայեցաւ ու տեսաւ, և ահա Իսահակ իր կնոջ Ռեբեկայի հետ կը խաղար։ 9—Ու Աբիմելէք կանչեց Իսահակը ու ըսաւ, Ահա իրաւցնէ անիկա քու կինդ է, և ինչպէս անիկա իմ քոյրս է,

*Նէբ. փառան արամ
†Այսինքն, մազոտ
‡Այսինքն, գարշապար բռնող, Նախընթաց
||Այսինքն, կարմիր

ըսիր. ու Իսահակ ըսաւ անոր, Քանզի ըսի Թէ Չըլլայ որ անոր պատճառաւ մեռանիմ։ 10—Ու Աբիմելէք ըսաւ, Ինչ է այս քու մեզի ըրածդ. քիչ ընդ ժողովրդէն մէկը քու կնոջդ հետ պառկէր, ու մեր վրայ յանցանք պիտի բերէիր։ 11—Ու Աբիմելէք էր բոլոր ժողովրդին պատուիրեց՝ ըսելով, Ով որ այս մարդուն կամ անոր կնոջ դպչիլ ըլլայ, անշուշտ պիտի սպանուի։

12—Ու Իսահակ այն երկրին մէջ ցանեց, ու այն տարին հարիւրապատիկ արդիւնք գտաւ. և Տէրը օրհնեց զանիկա։ 13—Ու մարդը բարձրացաւ ու երթալով մեծցաւ. այնպէս որ խիստ մեծ եղաւ։ 14—Ու ունէր ոչխարներ ու արջառներ և շատ ծառաներ. ու Փղշտացիք նախանձեցան անոր։ 15—Ու իր հօրը Աբրահամի օրերը իր հօրը ծառաներուն փորած բոլոր ջրհորները Փղշտացիք գոցեցին, ու հողով լեցուցին զանոնք։ 16—Ու Աբիմելէք ըսաւ Իսահակի, Գնա մեզմէ, վասն զի մեզմէ չատ աւելի զօրաւոր եղար։ 17—Ու Իսահակ գնաց անկէ ու իր վրաններըը Գերարայի ձորին մէջ բացաւ, ու հոն բնակեցաւ։

18—Ու Իսահակ նորէն փորեց այն ջրհորներըը, զորոնք իր հօրը Աբրահամի օրերը փորեր էին, ու Աբրահամի մեռնելէն ետքը Փղշտացիք գոցեր էին, և իր հօրը դրած անուններուն պէս անոնց անուններ դրաւ։ 19—Ու Իսահակի ծառաները այն ձորին մէջ փորեցին, ու հոն *վտակ ջուրի հոր գտան։ 20—Ու Գերարայի հովիւներըը Իսահակի հովիւներուն հետ կը կռուէին՝ ըսելով, Ջուրը մերն է. անոր համար այն հորին անունը †Էսէք դրաւ. քանզի անոր հետ կռուեցան։ 21—Ու ուրիշ հոր մը փորեցին. ու անոր համար ալ կռուեցան. և անոր անունը ‡Սիդնա դրաւ։ 22—Ու անկէ յառաջ, և ուրիշ հոր մը փորեց. և անոր համար չկռուեցան. և անոր անունը ||Ռեհովթ դրաւ՝ ըսելով, Հիմա Տէրը մեզ ընդարձակեց, ու երկրի մէջ պտղաբեր պիտի ըլլանք։

23—Ու անկէ Բերսաբէէ եկաւ։ 24—Ու այն գիշերը Տէրը երեւցաւ անոր ու ըսաւ, Ես քու հօրդ Աբրահամի Աստուածն եմ. մի վախնար, վասն զի ես քեզի հետ եմ, և իմ ծառային Աբրահամի համար քեզ պիտի օրհնեմ, ու քու սերունդդ պիտի շատցնեմ։ 25—Ու հոն սեղան մը շինեց ու Տէրոջը անունը կանչեց, և հոն իր վրանը բացաւ. ու Իսահակի ծառաներըը հոր մը փորեցին հոն։

26—Ու Աբիմելէք ու իր բարեկամը Ոքազաթ ու իր պատերազմի փիքօղ Գերարայէն անոր գացին։ 27—Ու Իսահակ ըսաւ անոնց, Ինչ պատճառ բնծի եկաք. որովհետև դուք ատեցիք ու դուք ձեզմէ վռնտեցիք։ 28—Ու անոնք ըսին, Աստղին տեսանք որ Տէրը քեզի հետ է, ու ըսինք. Հիմա մեր մէջ, այսինքն մեր ու քու մէջտեղ, երդում մը ըլլայ, և քեզի հետ ուխտ բնենք, 29—Որպէս զի մեզի գէշութիւն չընես, ինչպէս մենք քեզի բան մը չըրինք, միայն Թէ քեզի բարիութիւն ըրինք, ու քեզ խաղաղութեամբ յառաջիկ ցինք. Դուն հիմա Տէրոջը օրհնեալն ես։ 30—Ու ինք անոնց խնճոյք ըրաւ, ու անոնք կերան ու խմեցին։ 31—Ու առտուանց կանուխ երդում իրարու երդում ըրին. և Իսահակ յետ գրկեց զանոնք, ու անոնք խաղաղութեամբ իրմէ գացին։ 32—Ու եղաւ որ նոյն օրը Իսահակի ծառաները եկան, և անոր պատմեցին իրենց փորած հորին համար, ու ըսին անոր, Ջուր գտանք։ 33—Ու ինք անոր անունը *Սաբէէ դրաւ. անոր համար մինչև այսօր այն քաղաքին անունը †Բերսաբէէ է։

34—Ու Եսաւ քառասուն տարեկան էր երբ իրեն կին առաւ Բեէրի աղջիկը Յուդիթը ու Բեսեմաթ Եղօնի աղջիկը Բասեմաթը։ 35—Ու ասոնք Իսահակի ու Ռեբեկայի սրտի ցաւ եղան։

*Նէբ. կենդանի
†Այսինքն, կռիւ
‡Այսինքն, Թշնամանքին
||Այսինքն, ընդարձակութիւն

*Այսինքն, երդում
†Այսինքն, ջրհոր երդմանի

Գլ. ԻԴ

Ա. Եղաւ որ երբ Իսահակ ծերացաւ, ու իր աչքերը մեռնելու չափ թնձեցան, իր մեծ որդին Եսաւը կանչեց ու բաւ անոր, Որդեակ իմ. և նա ըսաւ, Ահա հա՛ եմ։ 2—Ու ըսաւ, Ահա ես ծերացեր եմ, չեմ գիտեր օրը մեռնելու։ 3—Ուստի հիմա վերցուր, կապարձդ ու ատիդ, ու դաշտը երթ ու բնծի որս մը որսա։ 4—Ու իմ սիրածիս պէս բնծի խորտիկներ ըրէ, ու բնծի բերը որ ուտեմ, որպէս զի մեռնելէս առաջ իմ հոգիս քեզ օրհնէ։ 5—Ու Երբեկա լսեց երբ Իսահակ իր որդւոյն Եսաւի կը զրուցէր. ու Եսաւ դաշտը գնաց որս մը որսալու և բերելու։

6—Ու Երբեկա իր որդւոյն Յակոբի զրուցեց՝ ըսելով, Ահա ես լսեցի երբ քու հայրդ քու եղբօրդ Եսաւի խօսեցաւ ու բաւ, 7—Բնծի որս բեր, ու բնծի համար խորտիկներ ըրէ, որպէս զի ուտեմ ու մեռնելէս առաջ քեզ Տէրոջը առնէմ օրհնեմ։ 8—Ու հիմա, որդեակ իմ, ինչ որ ես քեզի պատուիրեմ, իմ խօսքս մտիկ ըրէ։ 9—Հիմա գնա ի հօտը գնա, ու անկէ բնծի երկու ազնիւ ուլ բեր այծերէն, և պանդք քու հօրդ համար խորտիկներ բնեմ իր սիրածին պէս։ 10—Ու հօրդ տար որ ուտէ, որպէս զի իր մեռնելէն առաջ քեզ օրհնէ։ 11—Ու Յակոբ բաւ իր մօրը Երբեկայի, Ահա իմ եղբայրս Եսաւ մազոտ մարդ մըն է, ու ես լերկ մարդ մըն եմ։ 12—Գուցէ հայրս զիս չօչափէ, ու ես իր աչքին խաբողի մը պէս երեւնամ, և իմ վրաս անէծք բերեմ ու ոչ թէ օրհնութիւն։ 13—Ու իր մայրը բաւ անոր, Որդեակ իմ, քեզի ետ՝ անէծքը իմ վրաս ըլլայ. միայն թէ դուն իմ խօսքս մտիկ ըրէ, ու գնա բնծի բեր ղրկեա։ 14—Ու անկիկ գնաց, ու առաւ և իր մօրը բերաւ. ու մայրը անոր հօրը սիրածին պէս խորտիկներ ըրաւ։ 15—Ու Երբեկա իր մեծ որդւոյն Եսաւի ազնիւ հանդերձները առաւ, որոնք տանը մէջ իր քով էին, ու իր պզտիկ որդւոյն Յակոբի հագցուց։ 16—Ու այծի ուլերուն մորթերը անոր ձեռքերուն ու անոր լերկ պարանոցին վրայ դրաւ։ 17—Ու իր ըրած խորտիկները ու հացը իր որդւոյն Յակոբի ձեռքը տուաւ։

18—Ու անիկա իր հօրը եկաւ, ու բաւ, Ով հայր իմ. ու անիկա ըսաւ, Ահա հա՛ եմ. ո՞վ ես դուն, որդեակ իմ։ 19—Ու Յակոբ իր հօրը բաւ, Ես քու անդրանիկ որդիդ Եսաւ եմ. ինծի բացիդ պէս ըրի. չնորհք ըրէ, կէրէ նստէ և իմ որսէս կեր, որպէս զի քու հոգիդ զիս օրհնէ։ 20—Ու Իսահակ բաւ իր որդւոյն, Ինչպէս այդչափ չատով գտար, որդեակ իմ. ու անիկա բաւ, Քանզի Տէրը քու Աստուածդ իմ առիթս բերաւ։ 21—Ու Իսահակ բաւ Յակոբի, Մօտ եկուր որպէս զի քեզ չօչափեմ, որդեակ իմ, քէ արդեօք դուն իմ որդիս Եսա՞ւ ես, քէ ոչ։ 22—Ու Յակոբ իր հօրը Իսահակի մօտեցաւ, որ չօչափեց զանիկա ու բաւ, Ձայնը Յակոբի ձայնն է, բայց ձեռքերը Եսաւի ձեռքերն են։ 23—Այսպէս չճանչցաւ զանիկա, քանզի անոր ձեռքերը իր եղբօրը Եսաւի ձեռքերուն պէս մազոտ էին. և օրհնեց զանիկա։ 24—Ու բաւ, Դո՞ւն ես իմ որդիս Եսաւ. և անիկա բաւ, Ես եմ. 25—Ու ինք բաւ, Մօտ բեր ինծի, ու իմ որդւոյս որսէն ուտեմ, որպէս զի իմ հոգիս քեզ օրհնէ. և մօտեցուց անոր ու կերաւ. և գինի բերաւ անոր, ու խմեց։ 26—Ու անոր հայրը Իսահակ բաւ անոր, Հիմա մօտեցիր, ու զիս համբուրէ, որդեակ իմ։ 27—Ու ան մօտեցաւ ու համբուրեց զանիկա. և անոր հանդերձին հոտը հոտոտեաց, ու օրհնեց զանիկա և բաւ, Ահա իմ որդւոյս հոտը Տէրոջը օրհնած արտիի հոտին պէս է։ 28—Ուստի Աստուած տայ քեզի երկինքի ցօղէն ու երկրի պարարտութենէն, և ցորենի ու գինիի առատութիւն. 29—Ժող ժողովուրդներ քեզի ծառայեն և ազգեր քեզի խոնարհութիւն բնեն. քու եղբայրներուդ տէրը եղիր, և քու մօրդ որդիները քեզի խոնարհութիւն բնեն. քեզ անիծողը անիծեալ ըլլայ, ու քեզ օրհնողը՝ օրհնեալ։

30—Ու եղաւ որ երբ Իսահակ դադարեցաւ Յակոբը օրհնելէ, ու հազիւ Յակոբ իր հօրը Իսահակի առջևէն ելեր էր, անոր եղբայրը Եսաւ որսէն եկաւ։ 31—Ու անիկա ալ խորտիկներ ըրաւ, ու իր հօրը բերաւ և իր հօրը բաւ, Թող իմ հայրս ելլէ ու իր որդւոյն որսէն ուտէ, որպէս զի քու հոգիդ զիս օրհնէ։ 32—Ու անոր հայրը Իսահակ բաւ անոր, Դուն ո՞վ ես. և անիկա բաւ, Ես քու որդիդ, քու անդրանիկդ, Եսաւ եմ։ 33—Ու Իսահակ խիստ չատ սարսափեցաւ ու բաւ, Այն որսը բռնող ու բնծի բերող ո՞վ էր, որ ես քու գալէդ առաջ ամէնն կերայ, և օրհնեցի զանիկա. ալ անչատ անիկա օրհնեալ պիտի ըլլայ։ 34—Երբ Եսաւ իր հօրը խօսքերը լսեց, խիստ մեծ ու դառն ազաղակով լացաւ, և իր հօրը բաւ, Զիս, ես ալ օրհնէ, ով հայր իմ։ 35—Ու անիկա բաւ, Քու եղբայրդ եկաւ նենգութեամբ ու քու օրհնութիւնդ առաւ։ 36—Ու ինք բաւ, Անոր անունը Յակոբ կոչուելուն համա՞ր է որ այս երկու անգամ զիս խաբեց. իմ անդրանկութեան իրաւունքս առաւ, և ահա հիմա օրհնութիւնս ալ առաւ։ Նաև բաւ, Ինծի համար օրհնութիւն մը չմնացի՞ր։ 37—Ու Իսահակ պատասխան առաւ ու բաւ Եսաւի, Ահա զանիկա քեզի տէր ըրի, և անոր բոլոր եղբայրները իրեն ծառաները ըլլալու ետի, ու զանիկա ցորենով ու գինիով հաստատեցի. ալ հիմա քեզի ի՞նչ բնեմ, որդեակ իմ։ 38—Ու Եսաւ իր հօրը բաւ, Ով հայր իմ, քու օրհնութիւնդ միայն մի՞ կ ե. զիս, զիս ալ օրհնէ, ով հայր իմ։ ու Եսաւ իր ձայնը վերցուց ու լացաւ։ 39—Ու իր հայրը Իսահակ պատասխան առաւ ու բաւ անոր, Ահա քու բնակութիւնդ երկրի պարարտութենէն, ու վերէն՝ երկինքի ցօղէն րլլայ։ 40—Ու քու սրովդ պիտի ապրիս, ու եղբօրդ ծառայութիւն բնես. և ըլլայ որ ան ելլելու ատենդ առանդ անոր լծէդ քու պարանոցդ կոտրես։

41—Ու Եսաւ ատեց Յակոբը այն օրհնութեանը համար՝ որով իր հայրը օրհնեց զանիկա. ու Եսաւ իր սրտին մէջ բաւ, Իմ հօրս սուգին օրերը մօտ են, այն ատեն իմ եղբայրս Յակոբը կը մեռցնեմ։ 42—Ու Երբեկայի պատմեցան իր մեծ որդւոյն Եսաւի խօսքերը. ու իր պզտիկ որդին Յակոբը կանչել տուաւ, ու բաւ անոր, Ահա քու եղբայրդ Եսաւ քեզ մեռցնել խորհելով կը մխիթարէ։ 43—Ու հիմա, որդեակ իմ, իմ խօսքս մտիկ ըրէ, ու ելիր գնա ի Խառան իմ Լաբան եղբօրս փախիր. 44—Ու անոր քով տաեն մը կեցիր, մինչև եղբօրդ բարկութեան անցնիլը, 45—Մինչև եղբօրդ բարկութիւնը քեզմէ անցնի, ու քու անոր ըրածդ մոռնայ. հետը քեզ անկէ բերել կու տամ. ինչո՞ւ ձեր երկուքէն ալ մէկ օրուան մէջ զրկեմ։

46—Ու Երբեկա ըսաւ Իսահակի, Քեզի ապրիկներուն պատճառաւ հոգիս զզուեր եմ. եթէ Յակոբ այս երկրին ապրիկներէն, ասանց պէս Քեթ ապրիկներէն, կին առնէ, ալ այս կեանքս ինչ պէտք է ինծի։

Գլ. ԻԵ

Ա. Իսահակ կանչեց Յակոբը ու օրհնեց զանիկա և անոր պատուիրեց ու բաւ, Քանանու ապրիկներէն կին չառնես։ 2—Ելիր, գնա ի Միջագետք քու մօրդ հօրը Բաթուէլի տունը գնա, և անկէ քու մօրդ եղբօրը Լաբանի ապրիկներէն քեզի կին առ. 3—Ու Ամենակարող Աստուածը քեզ օրհնէ, ու քեզ աճեցնէ, և քեզ չատցնէ. ու չատ ժողովուրդներու հօր ըլլաս։ 4—Ու քեզի Աբրահամի օրհնութիւնը տայ, քեզի ու քեզի հետ քու սերունդիդ. որպէս զի ժառանգես քու պանդխտացած երկիրդ, զոր Աստուած Աբրահամի տուաւ։ 5—Ու Իսահակ զրկեց Յակոբը, և անիկա գնաց դէպ ի Միջագետք Ասորի Բաթուէլի որդւոյն Լաբանի, որ Յակոբի ու Եսաւի մօրը Երբեկայի եղբայրն էր։

6—Ու Եսաւ տեսնելով որ Իսահակ օրհնեց Յակոբը, ու զրկեց զանիկա դէպ ի Միջագետք՝ անկէ իրեն կին առնելու համար, և որ զանիկա օրհնած ատենը պատուիրեց անոր՝ ըսելով, Քանանու ապրիկներէն կին չառնես, 7—Ու որ Յակոբ հնազանդեցաւ իր հօրը ու իր մօրը ու Միջագետք գնաց։ 8—Նաև Եսաւ տեսնելով որ Քանանու ապրիկները իր հօրը Իսահակի հաճելի չեն, 9—Այն

ատան նաև Իսմայելի գնաց, և իր ա-
ղջ-ն կինն առաւ։
10—Եւ Յակոբ ընթացաւ եւ ա-
դեպ ի Խառան գնաց։ 11—Եւ ահա մի
հասաւ ու գիշերը հոն մնաց, որովհետև
արեւը մտած էր։ և այն տեղի քա-
րերէն առաւ ու իր գլուխն ակ դրաւ,
և այն տեղը պառկեցաւ։ 12—Ու երազ
մը տեսաւ, և ահա սանդուխ մը երկրի
վրայ դրուած էր, որուն գլուխը երկինք
կը հասնէր, և ահա Աստուծոյ հրեշտակ-
ները անկէ կ'ելլէին ու կ'իջնէին։ 13—
Եւ ահա Տէրը կանգնեցաւ անոր վրայ ու
բաւ, Ես եմ Եհովա, քու հօրդ Աբրա-
համի Աստուածը ու Իսահակի Աստ-
ուածը։ Այդ երկիրը, որուն վրայ դուն
կը պառկիս, քեզի ու քու սերունդիդ
պիտի տամ։ 14—Եւ քու սերունդդ
երկրի աւազին չափ պիտի ըլլայ,
ու դեպ ի արեւմտեան ու արեւելք, և
դեպ ի հիւսիս ու հարաւ պիտի տա-
րածուիս։ ու երկրի բոլոր ազգերը քեզ-
մով ու քու սերունդովդ պիտի օրհ-
նուին։ 15—Եւ ահա ես քեզի հետ եմ,
ու ամէն տեղ որ երթաս քեզ պիտի
պահեմ, ու քեզ այս երկիրը պիտի
դարձնեմ։ քանզի մինչեւ որ իմ քեզի
ըրածս չտնեմ, քեզ պիտի չթողում։
16— Ու Յակոբ արթնցաւ իր քունէն
ու բաւ, Իրաւցնէ Տէրը այս տեղ է
ղեր, ու ես չգիտցայ։ 17—Ու վախ-
ցաւ ու բաւ, Ինչ ահաւոր է այս տե-
ղը։ այս ուրիշ բան չէ՝ բայց միայն Ա-
ստուծոյ տունը, ու այս է երկինքի դուռ-
ը։ 18—Ու Յակոբ առաւօտեան կանուխ
եղաւ, ու իր գլուխն ակ դրած քարը
առաւ, և զանիկա արձան կանգնեց ու
անոր գլուխը իւղ թափեց։ 19—Ու
այն տեղին անունը *Բեթէլ դրաւ։ բայց
առաջ այն քաղաքին անունը Լուզ էր։
20—Եւ Յակոբ ուխտ բրաւ ու բաւ,
Եթէ Աստուած ինծի հետ ըլլայ, ու այս
երթալուս ճամբուս մէջ զիս պահէ, և
ինծի ուտելու հաց ու հագնելու հան-
դերձ տայ, 21—Ու իմ հօրս տունը խա-
ղաղութեամբ դառնամ, Տէրը ինծի Աս-

ուած ըլլայ։ 22—Ու այս քարը զոր ես
արձան կանգնեցի, Աստուծոյ տունը
ըլլայ։ և այն ամէնէն զոր ինծի տաս,
քեզի տասանորդ տամ։

Գլ. ԻՓ

Ն Յակոբ *ճամբայ եղաւ ու Թաբե-
լեան ժողովրդոց երկիրը եկաւ։ 2—
Ու նայեցաւ ու ահա դաշտին մէջ հոլ
մը կար, և ահա հոն անոր քով ոչխար-
ներու երեք հօտ պառկիր էր։ քանզի
այն հորէն կը խմցնէին հօտերը։ ու հո-
րին բերանը մեծ քար մը կար։ 3—Ե-
րբոր հօտերը հոն կը ժողովէին։ ու
հովիւները հորին բերանէն քարը կը
գլորէին ու հօտերը կը խմցնէին, և
քարը նորէն իր տեղը հորին բերանը կը
դնէին։ 4—Ու Յակոբ բաւ անոնց, Ով
եղբայրներս, ուրկի՞ եք դուք։ և անոնք
բսին, Մենք Խառանէ ենք։ 5—Ու բաւ
անոնց, Նահովրի որդին Լաբանը կը
ճանչնա՞ք։ և անոնք բսին, Կը ճանչ-
նանք։ 6—Ու բաւ անոնց, Ողջ ատ՞ղ
է։ և անոնք բսին, Ողջ է, և ահա անոր
Ռաքել ոչխարնիրուն հետ կու
գայ։ 7—Ու անիկա բաւ, Ահա տակա-
ւին ճերմկուն ըլլալու չատ տեղ կայ,
և հօտերուն ժողովելու տանիք չէ-
ոչխարները խմցուցէք ու դարձէք արա-
ծելեցէք։ 8—Ու անոնք բսին, Մենք
չենք կրնար, մինչեւ բոլոր հօտերը ժո-
ղով չժողովին։ ու երբ հորին բերնի
քարը մէկէն գլորեն, այն ատեն ոչ-
խարները կը խմցնենք։ 9—Ու երբ ան-
կաւին անոնց հետ կը խօսէր, Ռաքել
իր հօրը ոչխարներուն հետ եկաւ։ վասն
զի անիկա էր անոնց հովիւը։ 10—Ու
եղաւ որ երբ Յակոբ իր մօրեղբօրը Լա-
բանի Ռաքել ազիկը, ու իր մօրեղբօրը
Լաբանի ոչխարները տեսաւ, այն ատեն
Յակոբ մտեցաւ, և քարը հորին բեր-
նէն գլորեց, ու իր մօրեղբօրը Լաբանի
ոչխարները խմցուց։ 11—Ու Յակոբ
համբուրեց Ռաքէլը, ու ձայնը վեր-
ցընելով լացաւ։ 12—Ու Յակոբ պատ-
մեց Ռաքելի Թէ ինք անոր հօրը

*Նէբր. ոտքերը վերցուց
†Նէբր արեւելքի որդւոց
‡Նէբր. օրը մեծ կ

*Այլխնդ., Աստուծոյ տունը

ազգականը ու Ռեբեկայի որդին է. ան
ալ վազեց ու իր հօրը պատմեց։ 13—
Ու երբ Լաբան իր քրոջը որդւոյն Յա-
կոբի վրայով լսեց, դանիկա գիմաւոր-
ելու վազեց, և գրկեց ու համբուրեց զա-
նիկա ու իր տունը տարաւ։ և անիկա
պատմեց Լաբանի բոլոր այս բաները։
14—Ու Լաբան ըսաւ անոր, Իրաւցնէ
դուն իմ ոսկրս ու մարմինս ես։ և ա-
նոր հետ լման ամիս մը կեցաւ։
15—Ու Լաբան ըսաւ Յակոբի, Դուն
իմ եղբայրս ըլլալուդ համար ինծի ձրի՞
պիտի ծառայես։ քսի ինծի, ի՞նչ ըլլայ
քու վարձդ։ 16—Ու Լաբան երկու
աղիկ ունէր. մեծին անունը Լիա ու
պզտիկին անունը Ռաքել էր։ 17—Ու
Լիայի աչքերը սակաւ կին, բայց Ռա-
քել գեղքով ու տեսքով գեղեցիկ էր։
18—Ու Յակոբ սիրեց Ռաքէլը, ու բաւ,
Ձու պզտիկ աղիկանդ Ռաքելի համար
ծառայեմ քեզի կը ծառայեմ։ 19—Ու
Լաբան բաւ, Անիկա քեզի տալը ուրիշ
մարդու մը տալէն պզտիկ է. բնակիր ինծի
հետ։ 20—Ու Յակոբ Ռաքելի համար
ծառայեց։ ու զանիկա սի-
րելուն պատճառաւ իրեն քանի մը օրի
չափ երեւցաւ։
21—Եւ Յակոբ ըսաւ Լաբանի, Իմ
կինս տուր, քանզի օրերս լրացած են,
որպէս զի ես անոր մտնեմ։ 22—Ու
Լաբան այն տեղին բոլոր մարդիկը ժող-
վեց ու խնճոյք բրաւ։ 23—Ու եղաւ որ
իրիկունը իր Լիա աղիկը առաւ և ա-
նոր բերաւ. ու անիկա անոր մտաւ։
24—Ու Լաբան իր ադախինը Զելփան
իր աղիկան Լիայի ադախին տուաւ։ 25-
Ու երբ առաւօտ եղաւ, ահա անիկա Լիա
էր։ ու Յակոբ Լաբանի բսաւ, Ի՞նչ է
այս գու բնծի բրածդ։ ես քեզի Ռա-
քելի համար չծառայեցի՞։ ուստի ինձ-
ւես խաբեցիր։ 26—Ու Լաբան բսաւ,
Մեր երկրին մէջ այսպիսի բան չըլլար,
պզտիկը մեծէն առաջ տալ։ 27—Լիան-
դուր տար հարսանեաց չարաքը և ին-
ծի հօրը տարի ալ ծառայելու հա-
մար՝ զոյն ալ քեզի տամ։ 28—Ու
Յակոբ այնպէս բրաւ, ու Լիայի չարաքը
լմնցուց։ և Լաբան իր Ռաքել ազիկը

անոր կին ըլլալու տուաւ։ 29—Ու Լա-
բան իր Բազդա ադախինը իր աղիկան
Ռաքելի ադախին տուաւ։ 30—Ու Յա-
կոբ Ռաքելի ալ մտաւ, ու Ռաքելը
Լիայէ աւելի սիրեց։ և Լաբանի հօրը
տարի ալ ծառայեց։
31—Ու Տէրը երբ Լիայի ատելի ըլ-
լալը տեսաւ, անոր արգանդը բացաւ,
բայց Ռաքել ամուլ էր։ 32—Եւ Լիա
յղացաւ ու որդի մը ծնաւ, և անոր ա-
նունը †Ռուբէն դրաւ. քանզի բսաւ,
Տէրը իմ տառապանքիս նայեցաւ հա-
մար, ասկէ հետև ալ պիտի սիրէ։
33—Ու նորէն յղացաւ ու որդի մը
ծնաւ, ու բսաւ, Որովհետև Տէրը իմ
ատելի ըլլալը լսեց, անոր համար ինծի
այս որդին ալ տուաւ։ ու անոր անունը
†Շմաւոն դրաւ։ 34—Ու գարձեալ
յղացաւ ու որդի մը ծնաւ, ու բսաւ,
Հիմա այս անգամ այրս ինծի հետ պի-
տի միաբերի, քանզի երեք որդի ծնայ
իրեն. անոր համար անունը ‡Ղեւի
դրաւ։ 35—Ու մէյ մըն ալ յղացաւ
ու որդի մը ծնաւ, և բսաւ, Այս ան-
գամ պիտի գոնամամ Տէրոջմէն. անոր
համար անոր անունը ||Յուդա դրաւ։ ու
դադրեցաւ ծննդելէ։

Գլ. Լ

Ե երբ Ռաքել տեսաւ որ ինք Յա-
կոբէն չ---ծնաւ, Ռաքել իր քրոջ
նախանձեցաւ, ու Յակոբի բսաւ, Ինծի
զաւակներ տուր, եթէ ոչ՝ կը մեռնիմ։
2—Եւ Յակոբի բարկութիւնը բորբոքե-
ցաւ Ռաքելի դէմ, ու բսաւ, Մի՞թէ ես
Աստուծոյ տե՞ղ եմ, որ արգանդի պտ-
ուղը քեզմէ արգիլեց։ 3—Ու անիկա
բսաւ, Ահա իմ ադախինս Բազդա, ա-
նոր մտիր. ու անիկա իմ ծնկներուս
վրայ ծնանի, և ես ալ անկէ որդիներ
առնեմ։ 4—Ու իր Բազդա ադախինը
անոր կին ըլլալու տուաւ, և Յակոբ ա-
նոր մտաւ։ 5—Ու Բազդա յղացաւ ու
Յակոբի որդի մը ծնաւ։ 6—Եւ Ռաքել

*Այլխնդ., ահա որդի
†Այլխնդ., լսելը
‡Այլխնդ., միաւորութիւն
||Այլխնդ., գոհութիւն

*Եբր. հղբայրը

բաւ, Աստուած ինծի զաւակտան բրաւ, ու իմ ձայնս ալ լսեց և ինծի որդի մը տուաւ. անոր համար անուանը *Դան դրաւ։ 7—Ու Բաքելի ազախինը Բաղդա զարձեալ յղացաւ ու Յակոբի երկրորդ որդի մը ծնաւ։ 8—Ու Ռաքել բաւ, իմ քրոջս հետ մեծ բմբւյնամարտութիւնով մարձնչեցայ և յաղթեցի. ու անոր անունը †Նեփթաղիմ դրաւ։

9—Երբ Լիա տեսաւ որ ինք ծնանելէ զադարեցաւ, իր ազախինը Զելփան առաւ ու Յակոբի կին ըլլալու տուաւ զանիկա։ 10—Ու Լիայի ազախինը Զելփա Յակոբի որդի մը ծնաւ։ 11—Ու Լիա բաւ, Բաղդս յաջողեցաւ. ու անոր անունը ‡Գադ դրաւ։ 12—Ու Լիայի ազախինը Զելփա երկրորդ որդի մը ծնաւ Յակոբի։ 13—Ու Լիա բաւ, երանելի եմ ես. քանզի ազիւղիները ինծի երանի պիտի ըսեն. ու անոր անունը ||Աշեր դրաւ։

14—Ու Ռուբէն գնաց ցորենի հունձքի օրերը ու արտին մէջ մանդրագորները գտաւ, ու իր մօրը Լիայի բերաւ. ու Ռաքել բաւ Լիայի, կ'ազաչեմ, տուր ինծի որդւոյդ մանդրագորներէն։ 15—Ու անիկա բաւ անոր, իմ այրս առնելդ քիչ եկաւ որ իմ որդւոյս մանդրագորներն ալ պիտի առնես. և Ռաքել բաւ, Ուստի քու որդւոյդ մանդրագորներուն համար այս գիշեր քեզի հետ պառկի։ 16—Ու իրիկունը երբ Յակոբ գաշտէն կու գար, Լիա զանիկա դիմաւորելու ելաւ, ու բաւ, ինծի պիտի մտնես. քանզի իրաւցընէ վարձքով ատի քեզ իմ որդւոյս մանդրագորներովը. և այն գիշերը անոր հետ պառկեցաւ։ 17—Ու Աստուած լսեց Լիայի. ու յղացաւ ու Յակոբի հինգերորդ որդի ծնաւ։ 18—Ու Լիա բաւ, Աստուած ինծի վարձք տուաւ, որովհետև ազախինս իմ էրկանս տուի. և անոր անունը Ցիսաքար դրաւ։ 19—Ու Լիա նորէն յղացաւ ու Յակոբի վեցերորդ որդի ծնաւ։ 20—Ու Լիա բաւ, Աստուած ինծի բարի պարգեւ մը պարգեւեց. այս անգամ այրս ինծի հետ պիտի բնակի, որովհետև իրեն վեց որդի ծնայ, ու անոր անունը *Զաբուղոն դրաւ։ 21—Ու անկէ հետև աղիկ մը ծնաւ, ու անոր անունը †Դինա դրաւ։

22—Ու Աստուած յիշեց Ռաքելը, ու Աստուած լսեց անոր, և անոր արգանդը բացաւ։ 23—Ու յղացաւ ու որդի մը ծնաւ. և բաւ, Աստուած իմ նախատինքս վերցուց։ 24—Ու անոր անունը ‡Յովսէփ դրաւ, ու բաւ, Տէրը ինծի ուրիշ որդի մըն ալ պիտի աւելցնէ։

25—Ու եղաւ որ երբ Ռաքել Յովսէփը ծնաւ, Յակոբ բաւ Լաբանին, Ինձ տուր զիս որ իմ տեղս ու իմ երկիրս երթամ. 26—իմ կիներս ու որդիքներս, որոնց համար քեզի ծառայեցի, տուր ինծի որ երթամ. քանզի քեզի բրած ծառայութիւնս դուն գիտես։ 27—Ու Լաբան բաւ անոր, Եթէ քու առչդ չնորհք գտայ, կ'ազաչեմ քեզի, կ'իմացայ որ Տէրը քեզի համար զիս օրհնեց։ 28—Ու բաւ, Քու վարձքդ ինծի իմացուր ու պիտի վճարեմ։ 29—Ու անիկա բաւ անոր, Դուն գիտես որ ես ինչպէս ծառայեցի քեզի, ու քու անասուններդ ինչպէս կին իմ քովս. 30—վասն զի իմ գալէս առաջ քիչ էր քու ունեցածդ և խիստ չատցաւ, ու Տէրը քեզ օրհնեց իմ գալովս. և հիմա ես ալ իմ տանս համար ե՞րբ պիտի աշխատիմ։ 31—Ու անիկա բաւ, Քեզի ի՞նչ տամ։ Ու Յակոբ բաւ, Ինծի բան մը մի տար. եթէ այս բանը ինծի ընես, նորէն քու հօտերդ կ'արածեմ ու կը պահեմ։ 32—Այսօր քու բոլոր հօտերուդ միջէն անցնիմ, անկէ ամէն պիտակ ու խայտախարիւ ոչխարը, և ամէն ան ոչխարը ու խայտախարիւ և պիտակ այծերը զատեմ, ու իմ վարձքս անոնք

*Աչխ. գաւառ
†Աչխ. ըմբշամարտութիւնս
‡Աչխ. բաղդ
||Աչխ. երանելի
§Աչխ. վարձք

ըլլան։ 33—Ու *ապէն հոս" իմ արդարութիւնս քու առչիդ պիտի յայտնուի երբ իմ վարձքիս հոգ տանիս. իմ քովս գտնուած ամէն պիտակ ու խայտախարիւ չեղած այծ ու սև չեղած ոչխար գողցած սեպուի։ 34—Ու Լաբան բաւ, Եղիզ քու բսածիդ պէս ըլլայ։ 35—Ու այն օրը զատեց բոլորախայտ ու խայտախարիւ նոխազները, և բոլոր պիտակ ու խայտախարիւ եզ այծերը, և ամէն ձերմակ ունեցողը, ու բոլոր սև ոչխարները, և իր որդիներուն ձեռքը տուաւ։ 36—Ու իր ու Յակոբի միջեւը երեք օրուան ճամբայի միջոց գրաւ. և Յակոբ Լաբանի մնացած հօտերը կ'արածէր։

37—Ու Յակոբ իրեն գալար կաղամախի և նուշի ու սօսիի գաւազաններ առաւ, և անոնց կեղևները անդ անդ հանեց, այնպէս որ գաւազաններուն մէջ եղած ճերմակը կ'երեւնար։ 38—Ու իր կեղևած գաւազանները յոլ խմցնելու տաղանդներուն մէջ դրաւ, որպէս զի երբ հօտերը յոլ խմելու գան, ան ֆօռաշնիները ոչխարներուն առչև ըլլան, և անոնք՝ խմելու եկած տաճնին տաքնան։ 39—Ու ոչխարները գաւազաններուն առչև տաքնալով՝ բոլորախայտ, պիտակ և խայտախարիւ ծնանէր կը ծնանէին։ 40—Ու Յակոբ կը զատէր գառները, ու հօտերուն երեսը Լաբանի հօտերուն մէջ եղած բոլորախայտ ու ամէն սև ոչխարներուն կը դարձնէր. և իր հօտերը զատ դրաւ, ու զանոնք Լաբանի հօտերուն քով չդրաւ։ 41—Ու երբ զօրաւոր ոչխարները կը տաքնային, Յակոբ այն գաւազանները ոչխարներուն աչքին առչև՝ տաղաններուն մէջ կը դնէր, որպէս զի գաւազաններուն առչև տաքնան։ 42—Բայց տկար ոչխարներուն չէր դներ. այսպէս տկարները Լաբանին՝ ու զօրաւորները Յակոբին կ'ըլլային։ 43—Ու մարդը խիստ հարստացաւ, ու յոլ հօտեր, և ազախիններ ու ծառաներ, և ուղտեր ու էշեր ունեցաւ։

*Եբր. վաղուան օրը

Գլ. ԼԱ

Ե. լսեց Լաբանի որդւոց զրուցածները, որոնք կ'ըսէին, Յակոբ մեր հօրը բոլոր ունեցածը առաւ, ու բոլոր այս փառքը մեր հօրը առացուածքն ասացաւ։ 2—Ու Յակոբ Լաբանի երեսը տեսաւ, և ահա իրեն երկեւած ու միւս օրուան պէս չէր։ 3—Ու Տէրը բսաւ Յակոբի, Դու հայրերուդ երկիրը ու քու ազգականներուդ գարձիր, ու ես քեզի հետ պիտի ըլլամ։

4—Ու Յակոբ Ռէլը զրկեց, ու Ռաքէլը և Լիան դաշտը իր հօտերուն քով կանչել տուաւ։ 5—Ու բսաւ անոնց, Ես ձեր հօրը երեսը կը տեսնեմ, որ ինծի երկեւած ու միւս օրուան պէս չէ. բայց իմ հօրս Աստուածը ինծի հետ եղաւ։ 6—Ու դուք գիտէք որ ես իմ բոլոր զօրութիւնովս ձեր հօրը ծառայեցի. 7—իսկ ձեր հայրը զիս խաբեց. ու իմ վարձքս տասը անգամ փոխեց. բայց Աստուած չթոյլ տուաւ զանիկա որ ինծի չարս մը բնէ։ 8—Վասն զի եթէ ան ինկա այսպէս բսար, Քու վարձքդ պիտակները ըլլան. այն ատեն բոլոր ոչխարները պիտակ կը ծնանէին. և եթէ այսպէս բսար, Քու վարձքդ բոլորախայտները ըլլան, այն ատեն բոլոր ոչխարները բոլորախայտ կը ծնանէին։ 9—Այսպէս Աստուած ձեր հօրը հօտերը առաւ ու ինծի տուաւ։ 10—Ու եղաւ որ հօտերուն չհրմնցած ատեն, աչքերս վերցուցի ու երազի մէջ տեսայ, և ահա հօտերուն հետ զուգաւորող նոխազները ու խոյերը ամէնն ալ խայտախարիւ, պիտակ և գորչախայտ էին։ 11—Ու Աստուծոյ հրեշտակը բսաւ ինծի երազի մէջ, Ով Յակոբ. ու ես ըսի, Ահա հոս եմ։ 12—Ու բսաւ, Հիմա ոչխերդ վեր վիրցուր, ու հօտերուն հետ զուգաւորող նոխազները նայէ. ամէնը խայտախարիւ, պիտակ ու գորչախայտ են. քանզի Լաբանի բոլոր քեզի բրածները տեսայ։ 13—Ես եմ Բեթէլի Աստուածը, ուր օրձան օծեցիր, և հոն ինծի ուխտ ըրիր. հիմա ելիր գնա այս երկրէն, ու քու ծննդեանդ երկիրը դարձիր։

14—Ու Ռաքէլ ու Լիա պատասխան տուին ու ըսին անոր, Յակոբին մեր հօրը տունը մեզի համար բաժին ու ժառանգութիւն կա՞յ։ 15—Մենք օտարականներ չսեպուեցա՞նք անոր. քանզի մեզ ծախեց, ու մեր սահմն ալ բոլորովին կերաւ։ 16—Վասն զի բոլոր հարստութիւնը զոր Աստուած մեր հօրմէն վերցուց, մերն է ու մեր զաւակներունն է. և հիմա ինչ որ Աստուած քեզի ըսաւ, բրէ։

17—Ուստի Յակոբ եկաւ, ու իր որդիները ու կիները ուղտերուն վրայ հեծցուց։ 18—Ու իր բոլոր անասունները, ու իր բոլոր ապացուածքը զոր ինք ապացաւ, իր ապացած անասունները զոր ինք Միջագետք մէջ ապացաւ, Յամբայ հասնելց Քանաան երկիրը դէպի իր հայհոյ հայրը Երթալու։ 19—Ու Լաբան իր խաչինքը ասրաիսաւ բնելու գացեր էր։ ու Ռաքէլ իր հօրը *կուռքերը գողցաւ։ 20—Ու Յակոբ Ասորի †Լաբանէ գաղտուկ փախաւ, քանզի իր փախչիլը չգիցացուց անոր։ 21—Ասյպէս անիկա իր բոլոր ունեցածովը փախաւ, ու եղաւ ու Գետէն անցաւ, և իր երեսը դէպ ի Գաղաադ լեռը չիակնց։

22—Ու երրորդ օրը Յակոբի փախչիլը Լաբանի պատմուեցաւ։ 23—Ու անիկա իր եղբայրները հետը առնելով, անոր ետևէն եօթը օրուան ճամբայ գնաց, ու անոր հասաւ Գաղաադ լեռը։ 24—Ու Աստուած գիշերուան երազի մէջ Լաբանի եկաւ ու բսաւ անոր, Զգոյշ կեցիր որ Յակոբի ազէկ կամ գէշ չդրուցես։ 25—Ուստի Լաբան հասաւ Յակոբի։ և Յակոբ իր վրանը լեռը կանգներ էր։ ու Լաբան իր եղբայրները հետ Գաղաադ լեռը իջաւ։

26—Ու Լաբան բսաւ Յակոբի, Ի՞նչ է այս քու բրածդ որ ինծի գաղտուկ փախար, և իմ աղիկինները սրով առնուած գերիներու պէս փոխեցիր։ 27—Ինչո՞ւ փախչիլդ գաղտուկ պահեցիր և ինծի փախար, ու ինծի չյմացուցիր, որ ես քեզ ուրախութեամբ ու երգերով, թմբուկներով ու քնարներով ղրկէի։ 28—Ու չթողուցիր զիս որ իմ որդիներս ու աղիկներս համբուրէի. հիմա այս բանը անմտութեամբ բրիր։ 29—Ձեզի չարիք ընելու զօրութիւն ունիմ ձեռքս մէջ, բայց ձեր Հօրը Աստուածը երէկ գիշեր ինծի խօսեցաւ՝ բանալով, Զգոյշ կեցիր որ Յակոբի ազէկ կամ գէշ չդրուցես։ 30—Ու հիմա թէպէտև քու հօրդ տանը չատ փափաքելուդ համար գացիր, Բայց ինչո՞ւ իմ աստուածներս գողցար։ 31—Ու Յակոբ պատասխան տուաւ ու բսաւ Լաբանի, Գէշ†եցա՛ երբ-որ-ովհետև ես վախցայ, քանզի ըսի, Գուցայ որ քու աղիկինդ բռնութեամբ ինծմէ առնես։ 32—Բայց քու աստուածներդ որու քով որ գանես, թող անիկա չապրի. մեր եղբայրներուն առջև քննէ — Նայէ, եթէ իմ քովս քու մէկ բանդ ‡ընես՝ առ. քանզի Յակոբ չէր գիտեր որ Ռաքէլ գողցեր էր զանոնք։ 33—Ու Լաբան Յակոբի վրանը ու Լիայի վրանը և երկու աղախիններուն վրանը մտաւ, բայց չգտաւ. հետը Լիայի վրանէն ելաւ ու Ռաքէլի վրանը մտաւ։ 34—Ու Ռաքէլ առաւ կուռքերը, ու զանոնք ուղտի պատառին մէջ դրաւ, ու վրան նստաւ. և Լաբան բոլոր վրանը փընտռեց, բայց չգտաւ։ 35—Ու անիկա իր հօրը ըսաւ, Իմ տէրոջս աչքերուն ծանր չերևնայ, որ քու առջևդ չեմ կրնար ոտք ելլել. քանզի կանանց սովորութիւնները մէջ եմ։ Այսպէս փնտռեց, բայց կուռքերը չգտաւ։

36—Ու Յակոբ բարկացաւ ու Լաբանի հետ կռիւ բրէ. և Յակոբ պատասխան տուաւ ու բսաւ Լաբանի, Ի՞նչ է իմ յանցանքս, ի՞նչ է իմ մեղքս որ ետևէս իջնով եկար։ 37—Որովհետև իմ բոլոր կարասիքս խուզնեցիր, քու տանդ ունեցի կարասիքէն ինչ որ գտար, հոս իմ եղբայրներուս ու քու եղբայրներուդ առջև դիր, որպէս զի երկուքիս մէջտեղ դատաստան կարեն։ 38—Լման քսան տարի է որ քեզի հետ եմ. ոչխարներդ ու այծերդ ձագ չձգեցին, և քու հօտիդ խոյերը չկերայ։ 39—Գոնէ†ննէրէն գիշատուածը չբերի քեզի, ինծմէ ես կը քաշէի. ցորեկը գողցուածը ու գիշերը գողցուածը իմ ձեռքս կը պահանջէիր։ 40—Այսպէս կէի. ցրեկը ապտը ու գիչերը ցուրտը կը մաչէր ինծ, և աչքերիս քունս կը փախչէր։ 41—Ասյպէս եղայ քսան տարի քու տանդ մէջ. քու երկու աղիկիներուդ համար տասնըչորս տարի ծառայեցի քեզի, և հօտերուդ համար վեց տարի ծ—ա‡էի, և իմ վարձս տասը անգամ փոխեցիր։ 42—Եթէ իմ Հօրս Աստուածը, Աբրահամի Աստուածը և Իսահակի երկիւղը ինծի հետ չըլլար, իրաւցնէ դիս հիմա դատարկ կը ղրրկէիր։ Աստուած իմ տառապանքս ու իմ ձեռքիս աշխատութիւնը տեսաւ, ու երէկ գիչեր ինձ յանդիմանեց։

43—Ու Լաբան պատասխան տուաւ ու բսաւ Յակոբի։ Այս աղիկիները իմ աղիկիներս են, և այս որդիները իմ որդիներս են, և այս հօտերը իմ հօտերս են. և ամէնը զոր կը տեսնես, իմս են. և ինչ բնեմ այսօր այս իմ աղիկիներուս կամ իրենց ծնած զաւակներուն։ 44—Ուստի հիմա եկուր, ես ու դուն ուխտ բնենք, որ իմ ու քու մէջտեղ վկայութեան համար ըլլայ։ 45—Ու Յակոբ քար մը առաւ ու սրձան կանգնեց զանիկա։ 46—Ու Յակոբ իր եղբայրներուն բսաւ, Քարեր ժողվեցէք. և անոնք քարեր առին ու դէզ մը բրին, և հոն դէզին վրայ հաց կերան։ 47—Ու Լաբան անոր անունը *Եգեկարսահատութա դրաւ, բայց Յակոբ անոր անունը †Գաղատդ դրաւ։ 48—Ու Լաբան բսաւ, այս դէզը իմ ու քու մէջտեղ վկայ մրն է այսօր. անոր համար անոր անունը Գաղատդ բսուեցաւ։ 49—Ու ‡Մասփա ալ ը—ո—ց—. քանզի բսաւ, Մէր իրարմէ զատուած ատենը, իմ ու քու մէջտեղ Տէրը դիտէ։ 50—Եթէ իմ աղիկիներս վշտացընես, և կամ եթէ իմ աղիկիներուս վրայ ո—բէչ կիներ առնես, մեզի հետ մէկը չկայ. տես իմ ու քու մէջտեղ վկայ Աստուած է։ 51—Ու Լաբան բսաւ Յակոբի, Ահա այս դէզը, և ահա իմ սրձանը զոր ես կռի եմ ինծի և քեզի մէջտեղ։ 52—Այս դէզը վկայ՝ ու այս սրձանը վկայ է, որ այս դէզին չանցնիմ քեզի քովը, և դուն այս դէզին ու այս սրձանին չանցնիս ինծի քովը, չարիք ընելու համար։ 53—Աբրահամի Աստուածը և Նաքորի աստուածը, անոնց հայրերուն աստուածը մեր մէջ գատաստան ընէ։ Յակոբ իր Հօրը Իսահակի երկիւղովը երդում բրաւ։

54—Ու Յակոբ գոհեր մատուց լեռանդր վրայ, ու իր եղբայրները հաց ուտելու հրաւիրեց և հաց կերան, ու գիչերը լեռը ննացին։ 55—Ու Լաբան առաւտուն կանուխ եղաւ, ու իր որդիները ու իր աղիկիները համբուրեց ու օրհնեց գանոնք. և Լաբան գնաց ու իր տեղը դարձաւ։

ԳԼ. ԼՐ

Ու Յակոբ իր ճամբան գնաց, ու Աստուծոյ հրեշտակները անոր պատահեցան։ 2—Ու Յակոբ երբ անոնք գտնեց, բսաւ, Այս Աստուծոյ բանակն է, և այն տեղին անունը *Մահայիմ դրաւ։

3—Ու Յակոբ իր առջևէն պատգամաւորներ ղրկեց իր եղբօրը Եսաւի գետը ի Սէիր երկիրը, Եդովմի գաւառը. 4—Ու պատուիրեց անոնց՝ բսելով, Իմ տէրոջս Եսաւի այսպէս բսէք, Քու ծառադ Յակոբ այսպէս կ՚բսէ, Լաբանի քով պանդխտութիւն բրի, ու մինչև հիմա մչացայ։ 5—Ու ունիմ արջառներ ու էշեր, հօտեր ու ծառաներ և ապրիճներ. և ղրկեցի իմ տէրոջս իմացնելու, որպէս զի քու առջևդ չնորհք գտնեմ։ 6—Ու պատգամաւորները դարձան Յակոբի ու բսին, Քու եղբօրդ Եսաւի գացինք, ու անիկա ալ չորս հարիւր մարդով քեզ դիմաւորելու կու գայ։

7—Ու Յակոբ խիստ վախցաւ ու խռովեցաւ. և իրեն հետ եղած ժողովուրդը ու հօտերը և արջառները և ուղտերը երկու խումբի բաժնեց, 8—Ու բսաւ, Եթէ Եսաւ մէկ խումբին հասնի, ու զայն զարնելու ըլլայ, միւս խումբը կ՚ազատի։ 9—Ու Յակոբ բսաւ, Ով

*Եբր. Թևերափիներըը

†Եբր. Լաբանի սրտը գողցաւ

*Այսինքն, վկայութեան դէզ (Քուէրէսբէն)

†Այսինքն, վկայութեան դէզ (Եբէսահէդսէն)

‡Այսինքն, դիտանոց

*Այսինքն, երկու բանակներ

իմ հօրս Աբրահամի Աստուածը, ու իմ հօրս Իսահակի Աստուածը, ով Տէր, որ ըսիր ինծի, Քու երկիրդ ու քու հայրենիքդ դարձիր, ու քեզի բարիք ընեմ. 10—Աբրահամ չէմ այն ամէն ողորմութիւններուն և ամէն հաւատարմութիւններուն, զոր դուն քու ծառային ցուցուցիր. քանի իմ գաւազանովս անցայ այս Յորդանանին, և հիմա երկու խումբի դարձայ: 11—Ի՛ազատես քեզի, ազատ ինձ իմ եղբօրս Եսաւի ձեռքէն. որովհետև ես անկէ կը վախնամ, որ չըլլայ թէ գայ ու զարնէ ինծի, մայրը ապուխներով: 12—Ու դուն ըսիր Թէ Անշուշտ քեզի բարիք պիտի ընեմ, ու քու սերունդդ ծովի ատոպին չափ պիտի ընեմ, որ չհաշուիենէն չհամրուիր:

13—Ու այն գիշերը հոն կեցաւ. ու իր ձեռքը զոնեաւածէն իր եղբօրը Եսաւի համար ընծաներ պատրաստեց: 14—երկու հարիւր այծ և քսան նոխազ, երկու հարիւր եղ ոչխար և քսան խոյ: 15—երեսուն ծիծ ուղտ ու իրենց ձագերովը, քսաւսուն կով ու տասը ցուլ, քսան էգ էշ և տասը աւանակ: 16—Ու ամէն մէկ հօտը զատ զատ իր ծառաներուն ձեռքը յանձնեց, ու ըսաւ իր ծառաներուն, Անցնիւս անցէք, ու հօտերը իրարմէ փէշ մը հեռու թողուցէք: 17—Ու առաջինին զացողին պատուիրեց՝ ըսելով, Երբ իմ եղբօրս Եսաւ քեզի պատահի ու քեզի հարցնէ, ըսելով՝ Թէ Դուն որո՞ւն ես և ո՞ւր կ'երթաս, և այս առջի եղածները որո՞ւն են. 18—Ա,յն ատեն ըսէ որ Քու ծառայիդ Յակոբին է. իմ ուրոյն նուէր զրկած ընծան է. և ահա ինք ալ հետևիս է: 19—Ու այսպէս երկրորդին ու երրորդին և հետերուն հետևէն բոլոր զացողներուն պատուիրեց՝ ըսելով, Այս խօսքին պէս պիտի ըսուիցիք Եսաւի երբ զինք գտնէք. 20—Ու ահա քու ծառադ Յակոբ ալ հետևիս է, ըսէք. քանզի ըսաւ, Առջևէս գացող ընծաներով անոր երեսը կը հանդարտցնեմ, և անկէ ետքը անոր երեսը կը տեսնեմ. Թերեւս զիս ընդունի: 21—Այսպէս ընծաները անոր առջևէն զացին, և ինք այն գիշերը հոն Յակոբ բանակին մէջ: 22—Ու այն գիշերը եղաւ, ու իր երկու կիները և իր երկու ազախիններն ու իր տասներկու որդիները առաւ, և Յաբոկի անցքին անցաւ: 23—Ու առաւ զանոնք ու վտակն անցուց, և իր բոլոր ունեցածը անցուց:

21—Ու Յակոբ մինակ մնաց, ու մարդ մը կը գօտեմարտէր անոր հետ մինչև արշալոյս: 25—Ու երբ տեսաւ որ իր վրայ անոր չհասաւ, անոր զաւին ամրախլիւնն դպաւ, և անոր հետ գօտեմարտած ատենը Յակոբի զաւին ամրախլիւը *խախտեցաւ: 26—Ու անիկա ըսաւ, Թող առ ինծի, քանզի արշալոյսը †երեցաւ. և Յ–ն–ը ըսաւ, Չեմ թողուր քեզ մինչև ինծի չօրհնես: 27—Ու անիկա ըսաւ անոր, Ի՞նչ է անունդ. ան ալ ըսաւ, Յակոբ է: 28—Ու անիկա ըսաւ, Այլ ևս մէն ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայէլ. վասն զի Աստուծոյ հետ ու մարդոց հետ մարտնեցար, և յաղթեցիր: 29—Ու Յակոբ հարցուց ու ըսաւ, Ննջորհ ըրէ, անունդ ըսէ ԻՆՁԻ: Ու անիկա ըսաւ, Ինչ՞ իմ անունս կը հարցնես. և հոն օրհնեց զանիկա: 30—Ու Յակոբ այն տեղին անունը ‖Փանուէլ դրաւ. քանզի ըսաւ, Երես առ երես տեսայ Աստուած, ու իմ անձս ազգ մնաց:

31—Ու Փանուէլէ անցածին պէս արեւը անոր վրայ ծագեցաւ. ու իր զաւին-վրայ կը կաղար: 32—Անոր համար Իսրայէլի որդիները զաւին վրայի §Թմրած ջիղը՝ չեն ուտեր մինչև այսօր. որովհետև Յակոբի զաւին **Թմրած ջիղին՝ դպաւ:

ԳԼ. ԼԴ

Ու Յակոբ իր աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա Եսաւ կու գար ու անոր հետ չորս հարիւր մարդ. և էր զաւակները Լիայի ու Ռաքելի ու երկու ազախինները բաժնեց: 2—Ու ազախիններուն և անոնց զաւակներովը առջևը լլաւ, և Լիան իր զաւակներովը ետևը, և Ռաքելը ու Յովսէփը ՚ետևէն եկան: 3—Ու ինք անոնց առջև անցաւ, ու մինչև իր եղբօրը մօտենալուն, գետնին հաւասար եօթը անգամ խոնարհութիւն ըրաւ: 4—Ու Եսաւ զանիկա գիմաւորելու վազեց ու գրկեց զանիկա, և անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա. և լացին: 5—Ու Ե–ս իր աչքերը վեր վերցուց ու տեսաւ կիներն ու զաւակները, և ըսաւ, Աստուած քու ինծի հետ եղած զաւակներն են. և անիկա ըսաւ, Աստուծոյ քու ծառային պարգևած զաւակներն են, 6—Ան ատեն ազախիններն ու անոնց զաւակները մօտեցան ու խոնարհութիւն ըրին: 7—Ու Լիա ալ ու իր զաւակները մօտեցան ու խոնարհութիւն ըրին. և ետքը Յովսէփ ու Ռաքել մօտեցան ու խոնարհութիւն ըրին: 8—Ու Ե–ս ըսաւ, Այս քու բոլոր խումբդ ինչ պիտի ըլլայ, որ ես պատահեցայ. և Յ–ն–ը ըսաւ, Իմ աչքիս առջև շնորհք գտնելու համար է: 9—Ու Եսաւ ըսաւ, Ես չատ ունիմ, եղբայր իմ, քուկդ քեզի ըլլայ: 10—Ու Յակոբ ըսաւ, Ոչ, կ'աղաչեմ քեզի, եթէ հիմա քու աչքիդ շնորհք գտայ, իմ ձեռքիս բնծաս ընդունիլ. քանզի քու երեսդ Աստուծոյ երեսը տեսնելու պէս տեսայ, և ինծի հաճելացար: 11—Ննջորհ ըրէ, քեզի բերուած *բնծաս առ. քանզի Աստուած ողորմեցաւ ինծի, և քանզի ես ամէն բան ունիմ. և սաիպեց անոր, ու ան ալ ընդունեց: 12—Ու անիկա ըսաւ. Կելնենք երթանք. ու ես քու առջևէդ կ'երթամ: 13—Ու Յ–ն–ը ըսաւ անոր, Իմ տէրս գիտէ որ զաւակները մատաղ են, ու ինծի հետ եղած հօտերը ու արջառները ձագերով են. և եթէ մէկ օր բռնութեամբ վարեն զանոնք, բոլոր հօտերը պիտի մեռնին: 14—Ուրեմն թող իմ տէրս իր ծառային առջև անցնի. ու ես կամաց կամաց առջևս եղած անասուններուն ոտքովը ու ազախիններուն ոտքովը կ'երթամ մինչև իմ տէրոջս Սէիր հասնիմ: 15—Ու Եսաւ ըսաւ, Արդ ինծի հետ եղող ժողովուրդէն քու քովդ ձգիմ. և անիկա ըսաւ, Ի՞նչ պէտք է, քանզի իմ տէրոջս առջև շնորհք գտնեմ: 16—Այսպէս Եսաւ այն օրը իր ճամբան գարձաւ գնաց ի Սէիր:

17—Ու Յակոբ Սոկքոթի չուեց, ու իրեն տուն մը չինեց և իր հետևրուն փարախներ չինեց. անոր համար այն տեղին անունը *Սոկքոթի բաւեցաւ:

18—Ու Յակոբ Միչոպոտամ գտնուած ատենը Սիւքեմացոց Սոպէմի քաղաքը եկաւ, որ Քանանու երկրին մէջ է, և քաղաքին առջև բանակեցաւ. 19—Ու իր վրանը կանգնած տեղին համար որ Սիւքեմի հօրը Եմմորի որդիներէն ծախու առաւ †հարիւր կտոր ոսկի՝: 20—Ու հոն սեղան մը չինեց, ու անունը ‡Էլէլոհէ-Իսրայէլ՝ գրաւ:

ԳԼ. ԼԴ

Ու Լիայի Յակոբի ծնած ազիկը Դինա այն երկրին ազիկները տեսնելու ելաւ: 2—Ու այն երկրին իշխանը Խեւացի Եմմորի որդի Սիւքեմ տեսաւ զանիկա, և առաւ ու պառկեցաւ անոր հետ ու պղծեց զանիկա: 3—Ու անոր հոգին Յակոբի Դինա ազիկաը յարեցաւ. ու սիրեց ազիկը, և ազիկան ‖քաղցրութեամբ խօսեցաւ: 4—Ու Սիւքեմ իր հօրը Եմմորի գրուցեց՝ ըսելով, Այս ազիկը ինծի կին առ: 5—Ու Յակոբ լսեց որ անիկա իր Դինա ազիկը պղծեց. բայց իր որդիները իր հօտերուն հետ դաշտն էին, ու մինչև անոնց գալը Յակոբ լռեց հեցաւ:

6—Ու Սիւքեմի հայրը Եմմոր գնաց Յակոբին, որպէս զի անոր հետ խօսի: 7—Ու Յակոբի որդիները լսածնուն պէս՝ դաշտէն եկան. և մարդիկը գժտութեան ու խիստ բարկացան. քանզի Յակոբի ազիկաոր հետ պառկելով՝ Իսրայէլի մէջ անզգամութիւն ըրաւ, որ այսպէս չէր ըրուիր:

*Կամ, Թմրեցաւ.
†Եբր. Լալաւ.
‡Այսինքն, Աստուծոյ հետ մարտնչող
‖Այսինքն, Աստուծոյ երեսը
§Կամ, ամրախլիկը
**Կամ, ամրախլիկին

*Եբր. օրհնութիւնս

*Այսինքն, փարախներ
†Կամ, հարիւր գառնուկի
‡Այսինքն, Աստուած Իսրայէլի Աստուածը
‖Եբր. սրտին

պէս ըլլար չէր։ 8—Ու Եմոր խօսեցաւ անոնց հետ՝ ըսելով, Իմ Սիւքէմ որդւոյս հոգին ձեր աղիկան սիրահարեցաւ. կ'ապչեմ ձեզի, զանիկա անոր կնութեան տուէք։ 9—Ու մեզի հետ խնամութիւն ըրէք. ձեր աղիկները մեզի տուէք ու մեր աղիկները ձեզի առէք։ 10—Ու մեզի հետ բնակեցէք ու այս երկիրը ձեր առջև պիտի ըլլայ. անոր մէջ բնակեցէք ու առուտուր ըրէք, և անոր մէջ կալուածներ սացէք։ 11—Ու Սիւքէմ բաւ ուներ հօրը ու անոր եղբայրներուն, ծոդ ձեր առջև չնորհք գտնեմ, և ինչ որ ինծի ըսէք, կատարեմ։ 12—Խնդրեցէք ինծմէ խիստ շատ աժխա ու ընծայ, ու ինծի բաներուդ պէս պիտի տամ. միայն թէ աղիկը ինծի տուէք։ կին ըլլալու համար։ 13—Ու Յակոբի որդիները խաբեութեամբ պատասխան տուին Սիւքէմի ու անոր հօրը Եմորի, ու ըսին, (քանի անիկա իրենց Դինա քոյրը պղծեց։) 14—Ու ըսին անոնց, Մենք այս բանը չենք կրնար ընել, որ մեր քոյրը անթլփատ մարդու մը տանք. վասն զի այ, մեզի ամօթ բան մըն է։ 15—Բայց միայն ասով կը հաճինք ձեզի, եթէ ձեզմէ ամէն արու թլփատուելով՝ մեզի պէս ըլլաք։ 16—Այն ատեն մեր աղիկները ձեզի կու տանք, և ձեր աղիկները մեզի կառնենք, ու ձեզի հետ կը բնակինք, ու յԱԷ հէտ մէկ ժողովուրդ կ'ըլլանք։ 17—Բայց եթէ մեզի մտիկ չընեք՝ չթլփատուիլ, այն ատեն մենք մեր աղիկը կ'առնենք ու կ'երթանք։ 18—Ու անոնց խօսքը հաճեցաւ Եմորի և Եմորի որդւոյն Սիւքէմի։ 19—Ու այն պատանին այս բանը ընելու չուշացաւ, քանզի Յակոբի աղիկանը գմայլած էր. և իր հօրը ամէն մէջ եղողներուն ամէնէն պատուականն էր անիկա

20—Ու Եմոր և անոր որդին Սիւքէմ իրենց քաղաքին դուռը եկան, ու իրենց քաղաքին մարդոցը հետ խօսեցան՝ ըսելով, 21—Այս մարդիկը խաղաղութեամբ կը վարուին մեզի հետ. ուստի թող այս երկրին մէջ բնակին, ու անոր մէջ առուտուր ընեն, քանզի ահա երկիրը ընդարձակ է անոնց առջև, Եէթ, անոնց աղիկները մեզի կիներ առնենք և մեր աղիկները անոնց տանք։ 22—Բայց այն մարդիկը մեզի հետ բնակելու, մէկ ժողովուրդ ըլլալու համար միայն այս բանով կը հաճին մեզի, որ անոնց թլփատուելն պէս, մեր ամէն արուն թլփատուի։ 23—Անոնց հօտերը ու անոնց սեպհականութիւնը և ամէն անասուններնին մերը չէ՞ն ըլլար. միայն թէ մենք անոնց հաճինք, որ մեզի հետ բնակին։ 24—Ու Եմորի և անոր որդւոյն Սիւքէմի մտիկ ըրին այն ամէնը՝ որ անոր քաղաքին դռնէն դուրս կ'ելլէին. և ամէն արու որ անոր քաղաքին դռնէն դուրս կ'ելլէր, թլփատուեցաւ։

25—Ու եղաւ որ երրորդ օրը երբ անոնք ցաւի մէջ կէին, Յակոբի երկու որդիները, Շմաւոն ու Ղեւի, Դինայի եղբայրները, ամէն մէկը իր սուրը առաւ, ու համարձակ քաղաքը մտան ու սպաննեցին ամէն արուն. 26—Ու Եմորը և անոր որդին Սիւքէմը սուրի բերնէ անցուցին. և Սիւքէմի տունէն առին Դինան ու դուրս եկան։ 27—Յակոբի որդիները սպաննուածներուն վրայ եկան, ու քաղաքը կողոպտեցին իրենց քոյրը պղծելնուն համար։ 28—Անոնց հօտերը ու անոնց արջառները ու էշերը և քաղաքին մէջ եղածը ու դաշտին մէջ եղածը առին. 29—Ու անոնց բոլոր ստացուածքը ու անոնց բոլոր ապրուելուրը ու կիներն գերի առին, և տուներուն մէջ բոլոր գտնուածը կողոպտեցին։ 30—Ու Յակոբ բաւ Շմաւոնի ու Ղեւիի, Ձեր այս երկրին բնակիչներուն, Քանանացոց ու Փերեզացոց, մէջ՝ տասելի բնակուելով՝ ինծ փորձանքի մէջ ձգեցիք, և ինծի հետ փչ մարդիկ ըլլալով՝ անոնք իմ վրաս պիտի հաւաքուին ու ինծ պիտի զարնեն, և ես ու իմ տունս պիտի կորսընչինք։ 31—Ու անոնք ըսին, Հապա մեր քոյրը բոզի պէս գործածել պէտք էր անոր։

ԳԼ. Լ.Ե

Ե. Աստուած բաւ Յակոբի,Ելիր, մեր գնա ի Բեթէլ գնա ու հոն բնակէ,

*Եբր. գարշահոտ

և հոն սեղան մը չինէ Աստուծոյ որ քեզի երեցաւ, քու եղբօրդ Եսաւի երեսէն փախած ատենդ։ 2—Ու Յակոբ իր բնտանիքին ու բոլոր իրեն հետ եղողներուն բաւ, Ձեր մէջ եղող օտար աստուածները վերցուցէք, ու մաքրուեցէք և հանդերձները փոխեցէք. 3—Ու եկէտով դեպ ի Բեթէլ վեր երթանք. ու հոն սեղան մը չինեմ Աստուծոյ, որ իմ նեղութեանս օրը ինծի լսեց, ու իմ գացած ճամբուս մէջ ինծի հետ եր։ 4—Ու իրենց ձեռքը եղած բոլոր օտար աստուածները ու իրենց ականջնները եղած օղերը Յակոբի տուին. և Յակոբ թաղեց զանոնք Սիւքէմի մօտ եղած բլուրին տակ։ 5—Ու ճամբայ ելան. և իրենց բոլորտիքը եղած քաղաքներուն վրայ Աստուծոյ վախը բնկաւ, ու Յակոբի որդիներուն հետևից չհնկան։ 6—Ու Յակոբ գնաննու երկրին մէջ եղող Լուզ, այսինքն Բեթէլ, եկաւ, ինք ու իրեն հետ եղող բոլոր ժողովուրդը։ 7—Ու հոն սեղան մը չինեց, ու այն տեղին անունը Էլ-Բեթէլ դրաւ. քանի որ եղբօրը երեսէն փախած ատենը Աստուած հոն իրեն երեւցեր էր։

8—Ու Ռեբեկային դայեակը Դեբօրա մեռաւ, ու Բեթէլի վարի կողմը կաղնիին տակ թաղուեցաւ. ու անոր անունը †Ալոն-Բաքութ դրուեցաւ։

9—Ու Աստուած նորէն երեւցաւ Յակոբի երբ անիկա Միջագետք դարձեր էր, ու օրհնեց զանիկա։ 10—Ու Աստուած բաւ անոր, Քու անունդ Յակոբ է. ա՛լ մէլ պիտի ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայէլ ըլլայ քու անունդ։ ու անոր անունը Իսրայէլ դրաւ։ 11—Ու Աստուած բաւ անոր, Ես Ամենակարող Աստուած եմ. աճէա ու չատնաս. ազգ ու ազգերու բազմութիւն ըլլայ, և քու ետևէդ թագաւորներ ելլեն։ 12—Ու այն երկիրը զոր Աբրահամի և Իսահակի տուի, քեզի պիտի տամ. ու քեզմէ ետքը քու սերունդիդ պիտի տամ այն երկիրը։ 13—Ու Աստուած այն տեղ ուր անոր հետ խօսեցաւ, անոր քովէն վեր ելաւ։ 14—Ու Յակոբ քարէ սրամած մը կանգնեց այն տեղ՝ ուր Աստուած իրեն հետ խօսեցաւ. և անոր վրայ թափելու նուէր մատուց ու անոր վրայ իւղ թափեց։ 15—Ու Յակոբ այն տեղին անունը ուր Աստուած իրեն հետ խօսեցաւ, Բեթէլ դրաւ։

16—Ու Բեթէլէ մեկնելու ատեն, ու դեռ նեփրաթա չհասած քիչ մը մնացեր Ռաքէլ ծնաւ, և ծնած ատենը չատ դժուարութիւն քաշեց։ 17—Ու եղաւ որ երբ իր ծնանելուն չատ դժուարութիւն կը քաշէր, ծնողիչը թաւ անոր, Մի վախնար, քանզի ասկէ ալ քեզի որդի է։ 18—Ու եղաւ որ երբ անոր հոգին կ'ելլէր, (քանզի մեռաւ,) անոր անունը *Բենոնի դրաւ. բայց անոր հայրը †Բենիամին կուչեց զանիկա։ 19—Ու Ռաքէլ մեռաւ, ու թաղուեցաւ Եփրաթայի ճամբան, որ Բեթղեհէմ է։ 20—Ու Յակոբ անոր գերեզմանին վրայ սրամած մը կանգնեց, որ մինչև այսօր Ռաքէլի գերեզմանին սրամանն է։

21—Ու Իսրայէլ ճամբայ ելաւ, և իր վրանը ‡Միկայոլ-Հադէրի անդին կռմը կանգնեց։ 22—Ու եղաւ որ երբ Իսրայէլ այն երկիրը կը բնակէր, Ռուբէն գնաց ու իր հօրը Բազդա հարճին հետ պառկեցաւ. և Իսրայէլ լսեց։—Ժ։—

Արդ Յակոբի որդիները տասներկու էին. 23—Լէայի որդիները՝ Յակոբի անդրանիկը Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար ու Զաբուղոն. 24—Ռաքէլի որդիները՝ Յովսէփ ու Բենիամին. 25—Ու Ռաքէլի Բազդա ապրիճին որդիները՝ Դան ու Նեփթալիմ. 26—Ու Լէայի Զելփա ապրիճին որդիները՝ Գադ ու Ասեր։ Ասոնք են Յակոբի որդիները, որոնք Միջագետք մէջ ծնան անոր։

27—Ու Յակոբ եկաւ իր հօրը Իսահակի գէղ ի Մամրէ, Արբայի քաղաքը, այսինքն Քեբրոն, ուր Աբրահամ ու Իսահակ պանդխտութեամբ բնակեցան։ 28—Ու Իսահակի օրերը հարիւր

*Ակսինդ., Բենի-Ակառ որդին
†Ակսինդ., ալ ձեռքին որդին
‡Ակսինդ., հօտի աշտարակ

*Ակսինդ., Բեթէլի Ասուածը
†Ակսինդ., կաղնի սգոյ

ա՛թոռն սորի եղան։ 29—Ես Իսահակ ծերացած ու օրերը լիացած՝ ալանդեց հոգին ու մեռաւ, և իր ժողովուրդին խառնուեցաւ. ու անոր որդիները Եսաւ ու Յակոբ թաղեցին զանիկա։

Գլ. ԼԶ

Ե. սոնք են Եսաւ ծնունդները, որ է Եդոմ։ 2—Եսաւ իրեն կիներ առաւ Քանանու աղջիկներէն, Բեեռացի Ելոնի աղջիկը Ադդան, ու Խետացի Սեբեգոնի աղջկանը Անայի աղջիկը Ողիբաման, 3—ու Իսմայէլի աղջիկը, Նաբեոթի քոյրը Բասեմաթը։ 4—Ու Ադդա ծնաւ Եսաւի Եղիփազը, ու Բասեմաթ ծնաւ Ռագուէլը։ 5—Ու Ողիբաման ծնաւ Յեուսը ու Յեղոմը և Կորխը։ սոնք են Եսաւի որդիները որոնք ծնան իրեն Քանանու երկրին մէջ։

6—Ու Եսաւ առաւ իր կիները ու աղաքները և աղջիկները ու իր տաներ բոլոր մարդիկը, և իր հօտերը ու իր բոլոր անասուններըը, և իր բոլոր ստացուածքը զոր Քանանու երկրին մէջ ստացաւ, և իր եղբօրը Յակոբի երեսէն գնաց երկիր մը դնաց։ 7—Քանզի իրենց ստացուածքին չատ բլլալուն համար չէին կրնար միհատ բնակիլ։ և իրենց հօտերուն պատճառաւ իրենց գտնդրեաւթեամբ բնակած երկիրը բաւական չէր իրենց։ 8—Ու Եսաւ Սէիր լեռը բնակեցաւ. Եսաւ Եդոմն է։

9—Ես Սէիր լեռը եղող Եդոմացոց հօրը Եսաւի ծնունդները սոսնք են։ 10—Եսաւի որդւոց անուններըը սոսնք են. Եսաւի կիոջ Ադդայի որդին Եղիփազ, ու Եսաւի կիոջ Բասեմաթի որդին Ռագուէլ։ 11—Ես Եղիփազի որդիները Թեմանն, Օմար, Սեփով և Գեթամ ու Կենէզ էին։ 12—Ես Թամնա Եսաւի որդւոյն Եղիփազի հարճն էր, որ Եղիփազի Ամաղեկը ծնաւ. Եսաւի կիոջ Ադդայի որդիները սոսնք էին։ 13—Ես Ռագուէլի որդիները սոսնք են. Նահաթ, Զարա, Սամմա ու Մէզա. սոսնք էին Եսաւի կիոջ Բասեմաթի որդիները։ 14—Ես Եսաւի կիոջ Սեբեգոնի աղջկանը Անայի աղջկանը Ողիբամայի որդիները սոսնք են. և ծնաւ Եսաւի Յեուսը ու Յեղոմը և Կորխը։

15—Եսաւի որդւոցմէ եղող իշխանները սոսնք են. Եսաւի անդրանկան Եղիփազի որդիները՝ Թեմանի իշխան, Օմար իշխան, Սեփով իշխան, Կենէզ իշխան, 16—Կորխ իշխան, Գոթամ իշխան, Ամաղեկ իշխան. Եղոմի երկրին մէջ Եղիփազէ եղող իշխանները սոսնք են. սոսնք Ադդայի որդիներն էին։ 17—Ու Եսաւի որդւոյն Ռագուէլի որդիները սոսնք են. Նահաթ իշխան, Զարա իշխան, Սամմա իշխան, Մէզա իշխան. Եղոմի երկրին մէջ Ռագուէլէ եղող իշխանները սոսնք են. Եսաւի կնոջ Բասեմաթի որդիները սոսնք էին։ 18—Ու Եսաւի կնոջ Ողիբամայի որդիները սոսնք են. Յեուս իշխան, Յեղոմ իշխան, Կորխ իշխան. Եսաւի կնոջմէ Անայի աղջկոյ եղող Ողիբամայէ իշխանները սոսնք էին։ 19—Սոսնք են Եսաւ, այսինքն Եդոմի որդիները, և սոսնք են անոնց իշխանները։

20—Ես այն երկրին մէջ բնակող Քոռացի Սէիրի որդիները սոսնք են. Ղոտան և Սոբադ ու Սեբեգոն և Անա, 21—Ու Դիսոն ու Եսեր և Դիսան. սոսնք էին Քոռացոց իշխանները, Սէիրի որդիները, Եդոմի երկրին մէջ։ 22—Ու Ղոտանի որդիները Քոռի ու Հեմամ էին, ու Ղոտանի քոյրը Թամնա։ 23—Ես Սոբադի որդիները սոսնք են. Գազաման ու Մանահաթ և Գեբաղ, Սեփով ու Օնամ։ 24—Ես Սեբեգոնի որդիները սոսնք են. Այիա ու Անա. սա այն Անան է, որ իր հօրը Սեբեգոնի էշերը արածած ատենը անապատին մէջ իշերաս կները գտաւ։ 25—Ես Անայի որդիները սոսնք են. Դիսոն, ու Անայի աղջիկը Ողիբամա։ 26—Ես Դիսոնի որդիները սոսնք են. Ամադա ու Եսբան և Յեքրան ու Քառան։ 27—Եսերի որդիները սոսնք են. Բաղդան ու Զաաւան և Ական։ 28—Դիսանի որդիները սոսնք են. Հաւս ու Ահան։ 29—Քոռացոց իշխանները սոսնք են. Ղոտան իշխան, Սոբադ իշխան, Սեբեգոն իշխան, Անա իշխան, 30—Դիսոն իշխան, Եսեր իշխան, Դիսան իշխան. սոսնք են Քոռացոց իշխանները Սէիրի երկրին մէջ՝ իրենց իշխանութեան կարգովը։

31—Ես սոսնք են այն թագաւորները որ Եդոմի երկրին մէջ թագաւորեցին, Իսրայէլի որդիներուն վրայ թագաւորի մը թագաւորելնէն առաջ։ 32—Ես Բեովրի որդին Բալա թագաւորեց Եդոմի մէջ. ու անոր քաղաքին անունը Դենհաբա էր։ 33—Ես Բալա մեռաւ, ու անոր տեղ Բոսրայի Զարայի որդին Յոբաբ թագաւորեց։ 34—Ես Յոբաբ մեռաւ, ու անոր տեղ Թեմանացւոց երկրէն Հուսամ թագաւորեց։ 35—Ես Հուսամ մեռաւ, ու անոր տեղ Բադադի որդին Ադադ թագաւորեց, որ Մովաբի դաշտին մէջ Մադիանացիները կռտարեց. և անոր քաղաքին անունը Աւիթ էր։ 36—Ես Ադադ մեռաւ, ու անոր տեղ Մասրեկացի Սամլա թագաւորեց։ 37—Ես Սամլա մեռաւ, ու անոր տեղ Գետին քով Ռոթովթէ եղող Սաուղ թագաւորեց։ 38—Ես Սաուղ մեռաւ, ու անոր տեղ Աքոբորի որդին Բաղանան թագաւորեց։ 39—Ես Աքոբորի որդին Բաղանան մեռաւ, ու անոր տեղ Ադադ թագաւորեց. և անոր քաղաքին անունը Փագավ էր. ու անոր կնոջ անունը Մեհաբէէլ էր, որ Մէզաբի աղջկանը Մատրէթի աղջիկն էր։

40—Ես իրենց ազգերուն ու իրենց տեղերուն համեմատ իրենց անուններովը՝ Եսաւէ եղած իշխաններուն անուններըը սոսնք են. Թամնա իշխան, Գաղաա իշխան, Յեթաթ իշխան, Ողիբաման իշխան, 41—Էլա իշխան, Փինոն իշխան, Կենէզ իշխան, Թեմանի իշխան, 42—Մագդիէլ իշխան, Իրամ իշխան։ 43—Սոսնք են Եդոմի իշխանները իրենց բնակութեանը համեմատ՝ իրենց տաղաստաքի երկրին մէջ. սա է Եսաւ Եդոմացոց հայրը։

Գլ. ԼԷ

Ե. Յակոբ իր հօրը պանդխտացած երկրին, Քանանու երկրին, մէջ բնակեցաւ։ 2—Սոսնք են Յակոբի ծնունդները. Յովսէփ տասներկու տարեկան էր, երբ իր եղբայրներուն հետ հօտերը կ'արածէր. և պատանի բլլալով՝ էր հօրը կիներուն Բազդպի որդիներուն հետ ու Զիլպպէի որդիներուն հետ էր. և Յովսէփ անոնց չար լուրը անոնց հօրը կը բերէր։ 3—Ես Իսրայէլ իր բոլոր որդիներէն աւելի կը սիրէր Յովսէփը, քանզի իր ծերութեանը որդին էր ատենիկ. և բազմագոյն պատմուճան մը չինեց անոր։ 4—Ես անոր եղբայրները տեսնելով որ իրենց հօրը կը սիրէ զանիկա իր բոլոր եղբայրներէն աւելի, ատեցին զանիկա ու խաղաղութեամբ չէին կրնար խօսիլ անոր հետ։

5—Ես Յովսէփ երազ մը տեսաւ ու իր եղբայրներուն պատմեց. և անոնք աւելի ատեցին զանիկա։ 6—Ու բսաւ անոնց, Ի՛պատիճ ձեզի, մանկ լրէք այս իմ տեսած երազս։ 7—Ահա մենք դաշտին մէջ արաձեր կը կապկինք, և ահա իմ արաձս ելաւ ու չիտակ կանգնեցաւ. և ահա ձեր արաձները անոր բոլորտիքը կայնեցան, ու իմ արաձիս երկրպագութիւն բրին։ 8—Ես անոր եղբայրները բսին անոր, Իրաւցնէ մեր վրայ պիտի թագաւորե՞ս, կամ իրաւցնէ մեր վրայ պիտի տիրե՞ս. և անոր երազներուն ու խօսքերուն համար աւելի ատեցին զանիկա։ 9—Ես ուրիշ երազ մըն ալ տեսաւ, ու զանիկա իր եղբայրներուն պատմեց, ու բսաւ, Ահա երազ մըն ալ տեսայ, և ահա արեգ ու լուսինը ու տասնըմէկ աստղեր ինծի երկրպագութիւն բրին։ 10—Ես իր հօրը ու իր եղբայրներուն պատմեց. և իր հայրը յանդիմանեց զանիկա, ու բսաւ անոր, Ի՞նչ է այս քու տեսած երազդ. միթէ ես ու քու մայրդ և քու եղբայրներդ իրաւցնէ՞ պիտի գանք՝ միշտ գետին փեսի խոնարհութիւն բնելու։ 11—Ու եղբայրները նախանձեցան անոր, բայց հայրը էր գոտը պահեց այս խօսքը։

12—Ես անոր եղբայրները գացին որ իրենց հօրը հօտերը Սիւքէմի մէջ արածեն։ 13—Ու Իսրայէլ բսաւ Յովսէփին, Քու եղբայրներդ Սիւքէմի մէջ չե՞ն արածեր տէրերէրը. եկուր ես քեզ անոնց զրկեմ. ու անիկա բսաւ, Ահա ես հոս եմ։ 14—Ես բսաւ անոր, Գնա, նայէ թէ քու եղբայրներդ ողջ ուա՞ղջ են, և հօտերը ո՞ղջ են, ու բնծի լուր մը բեր. այսպես զրկեց զանիկա Փեր-

բոնի հավիտեան. և ան ալ մի՛ փլիր և-
կաս։ 15—Եւ մարդ մը գաւս դանիկայ,
որ գայլերն մէջ ապրին անդին կը պարա-
կէր. և այն մարդը հարցուց անոր ըսե-
լով, Ինչ կը փնտռես։ 16—Եւ անիկա
բսաւ, Իմ եղբայրներս կը փնտռեմ.
կ'ազաչեմ, ըսէ ինծի, անոնք ո՞ր
կ'արածեն։ 17—Եւ այն մարդը ըսաւ,
Ասկէ հեռու. քանզի լսեցի որ Դոթա-
յիմ երթանք, կ'րսէին։ Եւ Յակոբ
իր եղբայրներուն հետևեցաւ գնաց, ու
գտանէք Դոթայիմի մէջ գաւս։ 18—
Եւ երբ դանիկա հեռուէն տեսան, դեռ
քնաք անոնց չմտածած, դանիկա մեռ-
ցնելու դաւաճանութիւն ըրին։ 19—
Ու իրարու ըսին, Ահա այն *երազ
տեսողը՝ կու գայ։ 20—Ուստի հիմա
եկէք մեռցնենք զանիկա. ու գայլ՛
մը մէջ նետենք, ու ըսենք Քէ Չար
գազան մը կերաւ զանիկա. և տես-
նենք Քէ անոր երազները ի՛նչ պիտի
ըլլան։ 21—Ու Ռուբէն լսածին պէս՝
անոնց ձեռքէն ազատեց զանիկա, ըսե-
լով, Չմեռցնենք զանիկա. 22—Եւ
Ռուբէն ըսաւ անոնց, Արիւն մի թա-
փէք, ի՛յց զանիկա այս գայլը նետե-
ցէք՝ որ անապատին մէջ է, և անոր
ձեռք մի զարնէք. ըսաւ ո՛ր՛ երէ
որպէս զի կարենայ ազատել զանիկա անոնց
ձեռքէն, իր հօրը դարձնելու համար։

23—Ու եղաւ որ Յակոբ իր եղբայր-
ներուն քով եկածին պէս՝ մերկացու-
ցին Յակոբը իր գաւս ճանէն, այ-
սինքն իր վրայի բազմագոյն գաւս
ճանէն։ 24—Եւ առին զանիկա ու
գայլը նետեցին. և գայլը դատարկ էր,
մէջը ջուր չկար։ 25—Եւ նստան հաց
ուտելու. ու իրենց աչքերը վերցուցին
ու տեսան, և ահա Իսմայելացւոց մէկ
կարաւանը կու գար Գաղաադ է, որ ի-
րենց ուղտերը հասնիլներով և բալասա-
նով ու գնահատով բեռնաւորած՝ Եգիպ-
տոս տանելու կ'երթային։ 26—Եւ Յու-
դա ըսաւ իր եղբայրներուն, Ի՞նչ օգուտ
կ'ըլլայ եթէ մեր եղբայրը մեռցնենք,
ու անոր արիւնը ծածկենք։ 27—Եկէք
Իսմայելացիներուն ծախենք զանիկա,
և մեր ձեռքը անոր չդպչի. քանզի ա-

*Եբր. երազներու տէրը

նիկա մեր եղբայրը ու մեր մարմինն է.
և անոր եղբայրները համեցան։ 28—Ու
երբ Մադիանացի վաճառականներ
կ'անցնէին, Յովսէփը գուրէն քաշեցին
ու գուրս հանեցին իր հաբ-տրէրէը, և
Իսմայելացիներուն ծախեցին Յովսէփը
քսան [-ով արծաթի. անոնք ալ Յով-
սէփը Եգիպտոս տարին։ 29—Ու Ռու-
բէն դեզ է գուրը գարձաւ, և ահա
Յովսէփ գուրն մէջ չէր. ու իր հան-
դերձները պատռեց։ 30—Ու գարձաւ
իր եղբայրներուն ու բսաւ, Տղան չկայ,
ու ես ո՛ր երթամ։

31—Ու առին Յովսէփի պատմու-
ճանը, ու այծերուն նոհատ մը մորթե-
ցին և պատմուճանը արիւնր քաշեցին։
32—Ու ղրկեցին բազմագոյն պատ-
մուճանը, ու իրենց հօրը տարին, ու
բսին, Այս գտանք մենք. գիտցիր հի-
մա Քէ տակից որ պատմու-
ճանն է՝ Քէ ոչ։ 33—Ու անիկա ճանչ-
ցաւ զայն, ու բսաւ, Իմ որդւոյս պատ-
մուճանն է, չար գազան մը կերած է
զանիկա. Յովսէփ անշուշտ գիշատուած
ցաւ։ 34—Ու Յակոբ պատռեց իր հան-
դերձները, ու փոքր հագաւ իր մէջքին
վրայ. և իր որդւոյն համար շատ օրեր
սուգ բրաւ։ 35—Ու իր բոլոր որդիները
ու իր բոլոր աղիքները զինք մխի-
թարելու եկան. բայց ինք մխիթարուիլ
չէր ուզեր. ու բսաւ, Ես սուգով պիտի
իջնեմ գերեզմանն՝ իմ որդւոյս քով.
Այսպէս անոր հայրը լացաւ անոր հա-
մար։ 36—Ու Մադիանացիները ծախե-
ցին զանիկա Եգիպտոսի մէջ՝ Փարաւոնի
*Ներքինիին, Պետափրէս գահճապետին։

ԳԼ. ԼԸ

Ու եղաւ որ այն առեն Յուդա իր
եղբայրներուն քովէն իջաւ ու Ադոդա-
մացի Հիրան քով հասնելով անուն
իրաս էր։ 2—Ու Յուդա հոն տես-
նելով Քանանացիի մը աղջիկը անուն,
ու առաւ զանիկա և մտաւ անոր։ 3—Ու
անիկա յղացաւ ու որդի մը ծնաւ, և
անոր անունը Էր դրաւ։ 4—Ու նորէն

*Ա՛յսինքն, պալատականին, [-մ սեռ-
նակապուհն

յղացաւ ու որդի մը ծնաւ, և անոր ա-
նունը Օնան դրաւ։ 5—Ու գարձեալ
որդի մըն ալ ծնաւ, ու անոր անունը
Սելոմ դրաւ. և երբ զանիկա ծնաւ՝
Յուդա Քեզիբի մէջ էր։

6—Ու Յուդա իր առէջինակ որդւոյն
էրի կին մը առաւ, որուն անունն էր
Թամար։ 7—Ու Յուդայի առէջինակը էր
չար էր Տէրոջը առջև. ու Տէրը մեռ-
ցուց զանիկա։ 8—Ու Յուդա բսաւ Օ-
նանի, մտիր քու եղբօրդ կնոջ, ու ապգ-
րութիւնդ իբրաւունքդ կատարէ անոր, և
քու եղբօրդ սերունդ հանէ։ 9—Ու Օ-
նան գիտցաւ որ սերունդը իրենը պիտի
չըլլար. անոր համար երբ իր եղբօրը
կնոջ կը մտնէր, ե՛ր՛չ գետինը կը թա-
փէր, որպէս զի իր եղբօրը սերունդ
չտայ։ 10—Ու այս բրած բանը Տէրոջը
առջև գէշ երեցաւ, ու զանիկա ալ
մեռցուց։ 11—Ու Յուդա իր Թամար
հարսին բսաւ, Որբևայր նստէ քու
հօրդ տունը մինչև իմ Սելոմ որդիս
մեծնայ. քանզի բսաւ, չըլլայ որ ան
ալ իր եղբայրներուն պէս մեռնի. և
Թամար գնաց ու իր հօրը տունը նստաւ։

12—Ու չատ օրերէն ետքը մեռաւ
Շուայի աղջիկը. Յուդայի կինը. և Յու-
դա մխիթարուեցաւ. ու Թամնա գնաց
իր հօտերը ասրակաւոր բնդներուն քով
ու իր բարեկամը Ադոդամացի Հիրաս
13—Ու զրուցուեցաւ Թամարի բսե-
լով, Ահա քու սկեսրայրդ դէպ ի Թամ-
նա կ'ելլէ՝ իր ոչխարները ասրակաւոր
բնելու։ 14—Ան ալ իր զգեստաթա-
թան հանդերձները հանեց իր վրայէն,
ու փոդով մը ծածկուեցաւ ու փաթ-
թուեցաւ, և Թամնայի ճամրան մէջ
եղող Ենայիմի մուտքը նստաւ. քանզի
տեսաւ որ Սելոմ մեծցաւ, ու ինք ա-
նոր կին բլալու չտրուեցաւ։ 15—Երբ
Յուդա տեսաւ զանիկա, բսպ կարծեց,
քանզի իր երեսը ծածկեր էր։ 16—Ու
ճամրան անոր գարձաւ ու բսաւ, Ներէ՛ք
բրէ, քեզի մտնեմ. քանզի չէր գիտեր
Քէ անիկա իր հարսն է։ Ու անիկա
բսաւ, Ինծի ի՞նչ կու տաս Քէ մտնես
ինծի։ 17—Ան ալ բսաւ, Ես ձեզի
այծի ոչ մը կը զրկեմ հօտերէն. և ա-
նիկա բսաւ, Գրաւ մը կու տա՞ս մինչև
զրկելդ։ 18—Ու Յուդա բսաւ, Ի՞նչ

գրաւ տամ քեզի. ու անիկա բսաւ,
Քու կնիքդ ու ժապաւենդ և ձեռքիդ
գաւազանը ՛-ուդ. ան ալ տուաւ անոր
ու մտաւ անոր, և Թամար անկէ յղի
մնաց։ 19—Ու եղաւ ու գնաց, ու իր
վրայէն քողը հանեց ու իր որբևայրու-
թեան հանդերձները հագաւ։ 20—Ու
Յուդա իր բարեկամին, Ոդոդամացիին,
ձեռքով այծին ոչ ը զրկեց, որպէս զի
կնոջ ձեռքէն գրաւը առնէ. բայց չգտաւ
զանիկա։ 21—Ու այն տեղի մարդոց
հարցուց՝ ըսելով, Ջնտրուն վրայ Ենա-
յիմի մէջ եղած բոր ո՛ր է. և անոնք
բսին, Հոս բոզ չկար։ 22—Ու գարձաւ
Յուդայի ու բսաւ, Չգտայ զանիկա, և
այն տեղի մարդիկն ալ բսին Քէ Հոս բոզ
չկար։ 23—Ու Յուդա բսաւ, Իրեն թող
ըլլայ, որպէս զի խայտառակ չըլլանք.
ահա ես այս ոչ ը զրկեցի, ու դուն
չգտար զանիկա։ 24—Ու եղաւ որ երեք
ամիսի չափ ետքը Յուդայի պատմուե-
ցան՝ ըսելով, Քու հարսդ Թամար պոռ-
նկեցաւ, նաև ահա պոռնկութենէն յղի
մնաց. և Յուդա բսաւ, Հանեցէք
զանիկա, ու այրուի։ 25—Երբ զանի-
կա գուրս կը հանէին, ե՛ր՛չ իր
սկեսրայրին զրկեց՝ ըսելով, Ես այս
բաներուն տէրոջմէն յղի եմ. նաև
բսաւ, Ննջեցէք բրէ, գիտցիր Քէ այս
կնիքն ու ժապաւէնը և գաւազանը
որո՞նց են։ 26—Ու Յուդա ճանչցաւ
ու բսաւ, Անիկա իմէ արդար է.
վասն զի զանիկա իմ որդւոյս Սելոմի
չտուի։ Ու ալ նորէն չգիտցաւ
զանիկա։

27—Ու եղաւ որ անոր ծնած ատե-
նը՝ ահա անոր արգանդին մէջ երկու տղա-
կայ էին։ 28—Ու եղաւ որ երբ կը
ծնանէր, ձեռք ձեռքը երկնցուց. և մանե-
կաբարձ տատ ու անոր ձեռքին վրայ
կարմիր դերձան կապեց՝ ըսելով, Ա՛ռաջ
սա ելաւ։ 29—Ու անիկա իր ձեռքը
ետ փաթթեին պէս՝ ահա անոր եղբայրը
ելաւ. և ը-ուէ-ը-ուէը բսաւ, Ինչո՞ւ ցան-
կր պատռեցիր. այս պատառումդ քու
վրագ ըլլայ. անոր համար անոր անունը
*Փարէս դրուեցաւ։ 30—Ու ետքը ձեռ-
քին վրայ կարմիր դերձան ունեցող

*Ա՛յսինքն, պատառումդ

եգիպտոսը եկաւ, և անոր անունը Զաքա դրաւեցաւ։

Լ. ԼԹ

Ո. Յովսէփը նգիպտոս իջեցուցին. և փարաւոնի ներքինին, Եգիպտացի Պետափրէս *զաշտապետը, Ծախու առաւ զանիկա իսմայելացիներուն ձեռքէն, որոնք զանիկա հոն իջեցուցին։ 2—Եւ Տէրը Յովսէփի հետ էր, ու անիկա յաջողակ մարդ մըն էր. ու իր Եգիպտացի տէրոջը տունն էր անիկա։ 3—Եւ անոր տէրը տեսաւ որ Տէրը անոր հետ է. և թէ ինչ որ ընէր, Տէրը կը յաջողէր անոր ձեռքով։ 4—Եւ Յովսէփ շնորհք գտաւ անոր առջեւ ու կը ծառայէր անոր, որ իր տունը վրայ վերակացու բրաւ զանիկա, և իր բոլոր ունեցածը անոր ձեռքը յանձնեց։ 5—Ու եղաւ որ զանիկա իր տունը ու իր բոլոր ունեցածին վրայ վերակացու բրած ժամանակէն՝ Տէրը Եգիպտացիին տունը օրհնեց Յովսէփի համար. և թէ՛ տունը մէջ և թէ՛ դաշտին մէջ անոր բոլոր ունեցածին վրայ Տէրոջը օրհնութիւնը եղաւ։ 6—Ու իր բոլոր ունեցածը Յովսէփի ձեռքը թողուց. ու ինչ որ կար անոր քով՝ չէր գիտեր, իր կերած հացէն զատ։ Եւ Յովսէփ գեղեցիկ էր դէմքով ու գեղեցիկ՝ տեսքով։

7—Ու եղաւ որ այս բաներէն ետքը՝ անոր տէրոջը կինը աչք ունկց Յովսէփի վրայ, ու բսաւ, Գառկի ինծի հետ։ 8—Բայց անիկա չհաճեցաւ, ու իր տէրոջը կնոջ բսաւ, Ահա իմ տէրս տունը մէջ իմ քովս ինչ որ կայ՝ չգիտեր. և իր բոլոր ունեցածը իմ ձեռքս յանձնեց. 9—Աչս տունը մէջ ինծմէ մեծը չկայ. ու բան մը ինծմէ չարգիլեց՝ քէզմէ զատ, վասն զի դուն անոր կինն ես. ուրեմն ես ի՞նչպէս այս մեծ չարութիւնը ընեմ, ու Աստուծոյ դէմ մեղանչեմ։ 10—Ես քանի որ անիկա օրէ օր Յովսէփի կը զրուցէր, անիկա մտիկ չէը ըներ անոր՝ որ հետը պառկի կամ հետը ըլլայ։ 11—Ու եղաւ որ օր մը իր գործին համար տունն եկաւ, և հոն տանը մէջ տանը մարդոցմէն մէկը չկար։ 12—Ու *էնէը բռնեց անոր հանդերձէն՝ բսելով, Գառկի ինծի հետ. և անիկա իր հանդերձը անոր ձեռքը թողուց, ու փախաւ դուրս ելաւ։ 13—Ու երբ տեսաւ որ անիկա իր հանդերձը անոր ձեռքը թողուց ու դուրս փախաւ, 14—իր տանը մարդիկը կանչեց, և զրուցեց անոնց՝ ըսելով, Նայեցէք, մեզի Եբրայեցի մը բերաւ մեզ խայտառակ ընելու համար. անիկա ինծի եկաւ՝ ինծի հետ պառկելու համար, ու ես բարձր ձայնով պոռացի. 15—Ու երբ լսեց իմ բարձր ձայնով պոռալս, իր հանդերձը քովս թողուց, և փախաւ դուրս ելաւ։ 16—Ու մինչև որ անոր տէրը տուն եկաւ, անոր հանդերձը իր քով պահեց։ 17—Ու խօսեցաւ անոր այս խօսքերուն պէս՝ ըսելով, Ան Եբրայեցի ծառան, զոր դուն մեզի բերիր, ինծի խայտառակ ընելու համար եկաւ ինծի։ 18—Ու երբ իմ ձայնս վերցուցի ու պոռացի, իր հանդերձը քովս թողուց ու դուրս փախաւ։

19—Ես եղաւ որ երբ անոր տէրը լսեց իր կնոջ խօսքերը զորոնք զրուցեց իրեն՝ ըսելով, Ես ծառադ ինծի այսպէս ըրաւ, իր բարկութիւնը բորբոքեցաւ։ 20—Ես Յովսէփի տէրը առաւ զանիկա ու բանտը դրաւ, այն տեղը, ուր Թագաւորին բանտարկեալները կապուած էին. և հոն բանտին մէջ մնաց։ 21—Բայց Տէրը Յովսէփի հետ էր, ու ողորմութիւն ցուցուց անոր. և բանտապետին առջև չնորհք գտնել տուաւ անոր։ 22—Ու բանտապետը Յովսէփի ձեռքը յանձնեց բանտին մէջ եղած բոլոր բանտարկեալները. և հոն ամէն գործը տեսնողը անիկա էր։ 23—Բանտապետը անոր ձեռքը եղած մէկ բանին չէը նայեր. վասն զի Տէրը անոր հետ էր, և անոր ամէն ըրածները Տէրը կը յաջողէր։

Գլ. Խ

Ո. եղաւ որ այս բաներէն ետքը՝ եգիպտոսի Թագաւորին մատուռակը ու հացագործը իրենց տէրոջը, եգիպտոսի Թագաւորին, դէմ յանցանք գործեցին։

*Որ կը Թիւնապահապետ

2—Ես փարաւոն բարկացաւ իր երկու ներքինիներուն, այսինքն մատուռապետին ու հացագործապետին։ 3—Ես զանոնք գոնձապետին տանը բանտին մէջ բանտարկեց՝ ուր Յովսէփ բանտարկուած էր։ 4—Ես գոնձապետը Յովսէփի ապագրեց անոնց համար, ու անիկա կը ծառայէր անոնց. և անոնք տասն մը բաւական մնացին։

5—Ես եգիպտոսի թագաւորին մատուռակը ու հացագործը, որոնք բանտին մէջ կապուած էին, երկուքն ալ մէկ գիշեր մէկմէկ երազ տեսան, ամէն մէկն երազին նշանակութեամբ պէս։ 6—Ես Յովսէփ առաւտուն անոնց եկաւ, ու տեսաւ զանոնք որ խռովէր էին։ 7—Ու իր տէրոջը տունը իրեն հետ բանտարկուած փարաւոնի ներքինիներուն հարցուց՝ ըսելով, Ինչո՞ համար ձեր երեսները այսօր այսպէս տրտում են։ 8—Ու անոնք ըսին անոր, Երազ տեսանք, ու զանիկա մեկնող չկայ. և Յովսէփ ըսաւ անոնց, Չէ՞ որ Աստուծոյ կը վերաբերին մեկնութիւնները. պատմեցէք ինծի։

9—Ես մատուռակապետը իր երազը պատմեց Յովսէփի, ու ըսաւ անոր, Երազիս մէջ ահաւասիկ որ առջեւս որթի մը կար։ 10—Ես որթին վրայ երեք ոստ կային, և այն բողբոջելուն պէս ծաղիկ բացաւ, ու անոր ողկոյզները խազող հասցուցին։ 11—Ես փարաւոնի գաւաթը ձեռքս էր. ու խազողները առի և փարաւոնի գաւաթին մէջ ճմլեցի, ու գաւաթը փարաւոնի ձեռքը տուի։ 12—Ես Յովսէփ անոր ըսաւ, Այսր մեկնութիւնը այս է. երեք ոստը երեք օր է։ 13—երեք օրէն հաքը փարաւոն գլուխդ պիտի վերցնէ, ու քեզ նորէն քու պաշտօնիդ պիտի դարձնէ. և փարաւոնի գաւաթը անոր ձեռքը պիտի տաս՝ անոր մատուռակը եղած ատենդ ուառաջուան սովորութեամբ պէս։ 14—Բայց քեզի բարիք եղած ատեն զիս մխիթարէ բեր, և կ'ազաչեմ քեզ, ինծի բարեհաճութիւն ըրէ, և զիս փարաւոնի ուշադրութեան բերէ՝ զիս այս տունէն դուրս հանել։ 15—Քանզի իրաւցընէ գողցուեցայ Եբրայեցւոց երկրէն. և հոս ալ բան մը չըրի որ զիս այս գոբը նետեն։

16—Երբ հացագործապետը տեսաւ որ ազէկ մեկնութիւն տուաւ, բսաւ Յովսէփի, Ես ալ երազիս մէջ տեսայ որ գլխուս վրայ երեք *տերեկ սպիտակ ունէի։ 17—Ես ամենուն վրայի սպիտակին մէջ հացագործի չինած փարաւոնի համար կերակուրներէն կար. ու թռչուններ կ'ուտէին զանոնք գլխուս վրայի սպիտակէն։ 18—Ես Յովսէփ պատասխան տուաւ ու բսաւ, Սորա մեկնութիւնը այս է. 19—երեք սպիտակը երեք օր է. երեք օրէն հաքը փարաւոն վրայէդ պիտի վերցնէ քու գլխուդ, ու փայտ ծառի մը պիտի կախէ. և թռչունները վրայէդ քու մարմինդ պիտի ուտեն։

20—Ու եղաւ որ երրորդ օրը փարաւոնի ծննդեան օրն էր, և իր բոլոր ծառաներուն խնճոյք բրաւ. և իր ծառաներուն մէջ մատուռակապետին ու հացագործապետին գլուխները վերցուց։ 21—Ու գործուց մատուռակապետը իր պաշտօնին, և անիկա գաւաթը փարաւոնի ձեռքը տուաւ։ 22—Բայց հացագործապետը կախել տուաւ, ինչպէս Յովսէփ մեկներ էր անոնց։ 23—Ես մատուռակապետը միտքը չբերաւ Յովսէփը, հապա մոռցաւ զանիկա։

Գլ. ԽԱ

Ո. եղաւ որ լման երկու տարի հաքը, փարաւոն երազին մէջ տեսաւ որ գետին եզերքը կայներ էր։ 2—Ես անա գետէն գեղեցիկ տեսքով ու պարարտ մարմնով եօթը երինջներ ելան, ու †մարգագետնին վրայ կ'արածէին։ 3—Ես անա անոնց ետեւէն գետէն ուրիշ եօթը երինջներ ելան զգիր տեսքով ու նիհար մարմնով, ու ելան երինջներուն քով գետին եզերքը կայնեցան։ 4—Ես զգիր տեսքով ու նիհար մարմնով երինջները կերան եօթը գեղեցիկ տեսքով ու պարարտ երինջները։ Նոքը փարաւոն արթնցաւ։ 5—

*Կամ, վանդակապարտ, Ե Լամ, Նաչիմի †Կամ, պրաւներուն մէջ

նե. քնացաւ, ու երկրորդ անգամ երա-
զին մէջ տեսաւ որ մէկ ծղօտի վրայ
հօքը պարարտ ու ապիկ հասկեր կ'ել-
լէին։ 6—Եւ ահա անոնց հետևէն հօքը
նիհար ու խարշակոծած հասկեր կը
բուսնէին։ 7—Եւ այն նիհար հասկերը
կլլեցին հօքը պարարտ ու լիցուն հաս-
կերը։ Ու փարաւոն արթնցաւ, և ահա
երազ էր։ 8—Ու եղաւ որ առաւօտուն
անոր հոգին նեղացաւ, ու կանչել տուաւ
Եգիպտոսի բոլոր մոգերը և այն տեղի
բոլոր իմաստունները. ու փարաւոն պատ-
մեց անոնց իր երազները, բայց մէկը
չկար որ զանոնք փարաւոնի մեկնէ։

9—Այն ատեն մատուռակապետը
դրուեցաւ փարաւոնի ընդդէմ, ու ըսաւ
իր յանցանքները կը յիշեմ։ 10—փա-
րաւոն բարկացաւ իր ծառաներուն, ու
զիս զահավարժութեան տունը բանտը դրաւ,
զիս ու հացագործապետը։ 11—Ու ես
ու անիկա մէկ գիշեր երազ տեսանք.
ամէն մէկս իր երազին նշանակութեանը
պէս երազ տեսանք։ 12—Ու հոն մեզի
հետ զահավարժութեան ծառան, որ բռնացեալ
պատանի մըն կար, ու անոր պատմե-
ցինք, և անիկա մեկնեց մեզի մեր ե-
րազները. ամէն մէկուն իր երազին
պէս մեկնեց։ 13—Ու ինչպէս անիկա
մեզի մեկնեց, այնպէս եղաւ. զիս իմ
պաշտօնիս դարձուց, ու զանիկա կախեց։

14—Այն ատեն փարաւոն հրաման ղրկե-
ց ու կանչեց Յովսէփը, և շատով
բանէն հանեցին զանիկա. և սափրեց-
նէ ու իր հանգերձները փոխեց ու
փարաւոնի եկաւ։ 15—Ու փարաւոն
ըսաւ Յովսէփին, Երազ տեսայ, ու ոե-
նիկա մեկնող մը չկայ. և քեզի համար
լսեցի որ կ'ըսեն, Թէ լսած երազդ կը
մեկնես։ 16—Ու Յովսէփ պատասխան
տուաւ փարաւոնի ու ըսաւ, Ոչ Թէ ես,
Աստուած պիտի տայ խաղաղութեան
պատասխան փարաւոնին։

17—Ու փարաւոն ըսաւ Յովսէփին,
Երազիս մէջ տեսայ որ գետին եղերքը
կայներ էի։ 18—Ու ահա գետէն հօքը
եղինները հոն պարարտ մսալիով ու
գեղեցիկ տեսքով, և մսագ ագեռներն
վրայ կ'արածեուէին։ 19—Ու ահա ա-
նոնց հետևէն ուրիշ հօքը եղինները
ելան՝ նիհար ու խիստ գազիր տեսքով
և վատ մսալիով, որ անոնց պէս զա-
զիր բնաւ չտեսայ Եգիպտոսի բոլոր երկ-
րին մէջ։ 20—Ու նիհար ու գազիր ե-
ղինները կերան այն առաջուան հօքը
պարարտ եղինները։ 21—Ու անոնց
փորը մտնելէն հաքը՝ չէր գիտցուեր Թէ
անոնք անոնց փորը մտան. հապա ա-
նոնց տեսքը առաջուանին պէս գազիր
էր։ Ես արթնցայ։ 22—Ու դ-ջնե-
երազիս մէջ տեսայ՝ որ ահա մէկ ծղօտի
վրայ հօքը լիցուն ու ապիկ հասկեր
կ'ելլէին։ 23—Ու ահա անոնց հետևէն
հօքը չորս, նիհար — խարշակոծած հաս-
կեր կը բուսնէին։ 24—Ու նիհար հաս-
կերը կլլեցին այն հօքը ապիկ հասկերը։
Ու պատմեցի մոգերուն, բայց մէկը
չկայ որ ինծի մեկնէ։

25—Ու Յովսէփ ըսաւ փարաւոնի,
Մէկ է փարաւոնի երազը. Աստուած իր
բնելիքը յայտնեց փարաւոնի։ 26—հօ-
քը ապիկ երինկները հօքը սարի են,
հօքը ապիկ հասկերը հօքը սարի են.
երազը մէկ է։ 27—Ու անոնց հետևէն
ելած հօքը նիհար ու գազիր երինկները
հօքը սարի են, և հօքը պարապ —
խարշակոծած հասկերը հօքը սարսուռ
սով են։ 28—փարաւոնի վրայ ըսածս
այս է. Աստուած իր բնելիքը փարաւո-
նի ցուցուցեր է։ 29—Ահա բոլոր Եգիպ-
տոսի երկրին մէջ հօքը սարի մեծ ա-
ռատութիւն պիտի գայ։ 30—Ու անոնց
հետևէն հօքը սարի սով պիտի գայ,
ու Եգիպտոսի երկրին մէջ բոլոր առա-
տութիւնը պիտի մոռցուի. և սովը պի-
տի սպառէ երկիրը։ 31—Ու երկրին
մէջ առատութիւնը պիտի չգիտցուի՝
անկէ հետքը գալու սովին պատճառու.
վասն զի խիստ սաստիկ պիտի ըլլայ։
32—Ու երազը երկու անգամ փարա-
ւոնի կրկնուելուն պատճառը այս է որ
այս բանը Աստուծմէ հաստատուելու է,
և Աստուած չատով պիտի բնի գայ։
33—Ուստի հիմա Թող փարաւոն հաս-
ճարեղ ու խելացուն մարդ մը գտնէ,
ու զանիկա Եգիպտոսի երկրին վրայ կե-
ցընէ։ 34—Թող փարաւոն այսպէս բնէ,
ու երկրի վրայ գործակալներ դնէ, ու
Եգիպտոսի երկրին արմնիրքներէն առա-
տութեան հօքը սարիներուն մէջ հին-
գէն մէկը առնէ։ 35—Ու այն գալու

ապիկ սարիներուն բոլոր պաշարը ժողվեն,
ու փարաւոնի ձեռքին տակ ցորեն
դիզեն, և քաղաքներուն մէջ պաշար
պահեն։ 36—Ու Եգիպտոսի երկրին մէջ
ըլլալու հօքը սարսուռ սովին դէմ այս
պաշարը երկրին համար պահեսի, որ-
պէս զի երկիրը սովէն չկորսուի։

37—Ու այս բանը փարաւոնի աչ-
քին ու անոր բոլոր ծառաներուն աչ-
քին ապիկ երեւցաւ։ 38—Ու փարաւոն
ըսաւ իր ծառաներուն, Կրնա՞նք գտնել
ասոր պէս մէկը, որ իր ներսիդին Աս-
տուծոյ Հոգին ունի։ 39—Ու փարաւոն
ըսաւ Յովսէփին, Որովհետև Աստուած
այս ամէնը քեզի գիտցուց, քեզի պէս
հանճարեղ ու իմաստուն չկայ։ 40—
Դուն իմ տունս վրայ կեցիր, և իմ բո-
լոր ժողովուրդս քու բերանդ նային.
ես միայն աթոռով քեզմէ մեծ ըլլամ։
41—Ու փարաւոն ըսաւ Յովսէփին. Ահա
քեզ Եգիպտոսի բոլոր երկրին վրայ կե-
ցուցի։ 42—Ու փարաւոն իր ձեռքէն
մատանին հանեց, ու Յովսէփի ձեռքը
դրաւ, և անոր բիհեզ հագուստներ
հագցուց, ու անոր պարանոցը ոսկի
մանեակ անցուց։ 43—Ու զանիկա իր
երկրորդ կառքը հեծցուց, ու կր պո-
ռային անոր առջեւէն, Ներքոտրիքին
երկրի։ և Եգիպտոսի բոլոր երկրին վրայ
կեցուց զանիկա։ 44—Ու փարաւոն
ըսաւ Յովսէփի, Ես փարաւոն եմ, և
առանց քեզի բնաւ մէկը իր ձեռքը
կամ իր ոտքը չվերցնէ Եգիպտոսի բո-
լոր երկրին մէջ։ 45—Ու փարաւոն
Յովսէփի անուն՝ Փառնիքի անուանեց,
և Ասենաթ փարաւոնի Պետափրա քուր-
մին աղջիկը Առնէքի անոր կին ըլլա-
լու առաւ։ ու Յովսէփ Եգիպտոսի եր-
կիրը պտրաելու ելաւ։

46—Ու Յովսէփ Եգիպտոսի փարա-
ւոն Թագաւորին առջեւ եղած ատենը
երեսուն տարեկան էր։ Ու Յովսէփ փա-
րաւոնի առջեւէն ելաւ, ու Եգիպտոսի
բոլոր երկիրը պտրաեցաւ։ 47—Ու ա-
ռատութեան հօքը սարիներուն մէջ եր-
կիրը խիստ չատ արգիւնք տուաւ։ 48—
Ու Եգիպտոսի երկրին մէջ եղած հօքը

*Այսինքն, երկրին փրկիչը
†ԵԲՐ. Օն ՔՈՂԻՒ

սարիներուն բոլոր պաշարը ժողվե-
ցաւ, ու քաղաքները մէջ դրաւ պաշարը. ա-
մէն քաղաքին բոլորտիքը եղած որ-
տերուն պաշարը նոյն ՔՈՂԻՒ մէջ
դրաւ։ 49—Ու Յովսէփ ծովու ապիկ
չափ խիստ շատ ցորեն դիզեց. այնպէս
որ հաշիւ չգտնուեր համար չափելը
ձգեց։

50—Ու սովին սարիները գալէն
առաջ՝ Յովսէփի երկու որդի ծնան, որ
Ասենաթ փարաւոնի Պետափրա քուրմին
աղջիկը Առնէքի ծնաւ անոր։ 51—Ու
Յովսէփ առջինեկին անուանը *Մանասէ
դրաւ. քանզի ըսաւ, Աստուած ինծի
մոռցուց իմ բոլոր վիշտերս ու իմ
հօրս բոլոր տունը։ 52—Ու երկրորդին
անուանը †Եփրեմ դրաւ. քանզի ըսաւ,
Աստուած իմ տառապանքիս երկրին
մէջ աճեցուց զիս։

53—Ու Եգիպտոսի երկրին մէջ եղած
առատութեան հօքը սարին անցաւ։
54—Ու Յովսէփի բառածին պէս, սովին
հօքը սարին գալ սկսաց. և բոլոր եր-
կիրներուն մէջ սով եղաւ, բայց Եգիպ-
տոսի բոլոր երկրին մէջ հաց կար։ 55—
Ու երբ Եգիպտոսի բոլոր երկիրը սով-
քաշ եղաւ, ժողովուրդը հացի համար փա-
րաւոնի ապաղաչեց. և փարաւոն բոլոր
Եգիպտացիներուն, Յովսէփի գա-
ցէք. ինչ որ ձեզի բսէ, ընէք։
56—Ու երկրի բոլոր երեսին վրայ սով
եղաւ. և Յովսէփ բացաւ բոլոր չանեան-
բաններըր, ու Եգիպտացիներուն պաշար
ծախեց. և սովը սաստկացաւ Եգիպտա-
ցի երկրին մէջ։ 57—Ու բոլոր աշխարհ
Եգիպտոս կու գային՝ Յովսէփ պաշար
ծախու առնելու. վասն զի սովն երկրի
մէջ սաստկացաւ։

ԳԼ. ԽԲ

Ե. երբ Յակոբ իմացաւ Եգիպտոսի
մէջ պաշար ըլլալը, Յակոբ բառ իր որ-
դիներուն, Ինչո՞ւ իրարու կը նայիք։
2—Ու բառ, Ահա լսեցի որ Եգիպտոսի
մէջ պաշար կայ. հոն իջէք ու անկէ
մեզի համար ծախու առէք, որպէս զի

*Այսինքն, մոռցնող
†Այսինքն, պտղաբեր

ոչ՝ մեռանք ու չմեռնինք։ 3—Ու Յակ-
ակիմ ասաց եղբայրներըը իշան՝ Սգիպ-
տաց ցորեն ծախու առնելու։ 4—Բայց
Յակոբ Բենիամինի եղբայրը Ոնիամինը
անոր եղբայրներուն հետ չղրկեց. քանի՞
բան, Չըլլայ որ փորձանք մը պատա-
հի անոր։

5—Ու Իսրայէլի որդիները հոն գա-
ցողներուն հետ պարար ծախու առնե-
լու եկան. քանզի Քանանու երկրին
մէջ սով կար։ 6— Ու Յակոբ այն
երկրին իշխանն էր. և ինք երկրին բո-
լոր ժողովուրդին պարար կը ծախէր.
ու Յակոբի եղբայրներըը եկան, ու ի-
րենց երեսներըը մինչև գետինը խոնար-
հեցին ըրին անոր։ 7—Ու Յակոբ
իր եղբայրները տեսածին պես ճանչ-
ցաւ զանոնք, բայց ինքզինք անոնց
չճանչցուց, ու անոնց հետ խառնիճա-
խուռն խօսեցաւ, և անոնց ըսաւ, Ուրկի՞
կ՚գաք ու անոնք ըսին, Քանանու երկ-
րին կերակուր ծախու առնելու եկած
ենք։ 8—Ու Յակոբի իր եղբայրները ճանչ-
ցաւ, բայց անոնք զինք չճանչցան։ 9—
Ու Յակոբ անոնց վրայով իր տեսած
երազները միտքը բերաւ, ու ըսաւ ա-
նոնց, Դուք լրտեսներ էք. երկրին
*տկարութիւնը տեսնելու եկած էք։
10—Ու ըսին անոր, Ոչ, տէր իմ, հա-
պա քու ծառաներդ կերակուր ծախու
առնելու եկանք։ 11—Մենք ամէնս
մէկ մարդու որդիներ ենք, մենք չիտակ
ճշդութիւն ենք. ծառաներդ լրտեսներ չենք։
12—Ու անոնք ըսին, Մենք քու
ծառաներդ Քանանու երկրին մէջ մէկ
մարդու որդիներն էինք՝ տասներե-
կու եղբայրներ ենք. և ահա ամէնէն
պզտիկը այսօր մեր հօրը քով է, ու
մէւսը չկայ։ 14— Ու Յակոբ ըսաւ
անոնց, Այս է զոր ձեզի պատմեցի՝ ըսե-
լով, Թէ դուք լրտեսներ էք։ 15—
Ասով պիտի փորձուիք. Փարաւոնի կեն-
սագը հասնի՝ դուք ասկէ պիտի չելլէք,
եթէ ձեր պզտիկ եղբայրը հոս չգայ։
16—Ձեզմէ մէկը ձեր եղբայրը բերելու
ղրկեցէք, ու դուք բանտը դրուիք,
որպէս զի ձեր խօսքերը փորձուին, Թէ
արդեօք ձեր մէջ ճշմարտութիւն կա՞յ.
և եթէ ոչ, փարաւոնի կենացը հասնի՝
դուք լրտեսներ էք։ 17—Ու երեք օր
բանտը դրաւ զանոնք։

18—Ու երրորդ օրը Յակոբ ըսաւ
անոնց, Այսպէս րլլաք որպէս զի ապ-
րիք. Ես Աստուծմէ կը վախ-
նամ։ 19—Եթէ դուք ճիտակ *ճշդուիք
էք, ձեր եղբայրներէն մէկը ձեր բան-
տարկուած տանը մէջ արգիլուի. և
դուք գացէք, ձեր տանը անօթու-
թեանը համար պարար տարէք։ 20—
Ու ձեր պզտիկ եղբայրը բնաւ բերէք,
որպէս զի ձեր խօսքերը ճիտակ ելլեն,
ու չմեռնիք։ Ու այնպէս րրին։ 21—
Ու իրարու ըսին, Իրաւցնէ մեր եղբօրը
վրայով յանցաւոր ենք. վասն զի մենք
տեսանք անոր հոգիին նեղութիւնը՝
երբ ինք մեզի ազաչեց, ու մենք չը-
լսինք. անոր համար այս նեղութիւնը
մեր վրայ եկաւ։ 22—Ու Ռուբէն պա-
տասխան տուաւ անոնց՝ ըսելով, Ես
ձեզի չզրուցեցի՞, ըսելով Թէ Տղուն
գէմ մեղք մի գործէք. և դուք մտիկ
չըրիք. և ահա հիմա անոր արիւնը
հեշտ կը պահանջուի։ 23—Ու անոնք
չէին գիտեր որ Յակոբի կը հասկնար.
վասն զի թարգմանով կը խօսէր իրենց
հետ։ 24—Ու անոնցմէ դառնալով ու
լացաւ. և նորէն անոնց գարձաւ, ու
խօսեցաւ անոնց հետ. և անոնցմէ Շմա-
ւոնը առաւ, ու անոնց աչքին առջև
կապեց զանիկա։

25—Ետքը Յակոբի հրաման րրաւ որ
անոնց ամանները ցորենով լեցնեն, ու
ամէն մէկուն սատկը իր փարթին մէջ
դնեն, և անոնց համար պարար տան։
Ու այսպէս րրաւ անոնց։ 26—Ու ա-
նոնք իրենց էշերուն վրայ բեռցուցին
ցորենները, ու անկէ գացին։ 27—Ու
անոնցմէ մէկը իջեւանին մէջ իր էշուն
կեր տալու համար իր փարթը բացա-
ծին պէս՝ իր սատկը տեսաւ, որ ան-
իր փարթին բերանն էր։ 28—Ու իր
եղբայրներուն րսաւ, Իմ սատկս ետ
տրուեցաւ, և ահա հոս իմ փարթիս
մէջ է. ու անոնց սիրտը խռովեցաւ,
ու վախնալով իրարու րսին, Ինչ է այս
զոր Աստուած մեզի րրաւ։

*Նշ. մերկութիւնը

29—Ու հոն գանուած երկիրը ի-
րենց հօրը Յակոբի, և բոլոր իրենց
գլխուն եկածները պատմեցին անոր՝
ըսելով, 30—Այն երկրին տէրը եղոգ
մարդը մեզի խոստութեամբ խօսեցաւ,
ու մեզ երկիրը լրտեսներու տեղ
դրաւ։ 31—Ու ըսինք անոր, Մենք ի-
տակ *ճշդուիմ ենք, լրտեսներ չենք.
32—Մենք, մեր հօրը որդիքը, տասե-
ւերկու եղբայրներ ենք, մէկը չկայ,
և ահա պզտիկը հոն գանուած երկրին
մէջ մեր հօրը քով է այսօր։ 33—Ու
այն երկրին տէրը եղոգ մարդը բսաւ
մեզի, Ձեր ճիտակ *ճշդուիմ ըլլալը տակի
գիտնամ. ձեր եղբայրներէն մէկը իմ
քովս ձգեցէք, և ձեր բնտանիքին անօ-
թութեանը համար գացէք ու
գացէք։ 34—Ու ձեր պզտիկ եղբայրը
բնաւ բերէք, որպէս զի գիտնամ Թէ
դուք լրտեսներ չէք, հապա ճիտակ
*ճշդուիմ էք. այնէ՛ ձեր եղբայրը ձեզի
կու տամ, ու այս երկրին մէջ առա-
ուր ըրէք։ 35—Ու եղաւ որ իրենց
փարթերը պարպած ատենին, ահա ա-
մէն մէկուն սատկին ծրարը իր փարթին
մէջ էր. և իրենք ու իրենց հայրն ալ
սատկին ծրարները տեսածնուն պէս
վախցան։ 36—Ու անոնց հայրը Յակոբ
րսաւ անոնց, Զիս անրոգի թողուցիք.
Յովսէփ չկայ, Շմաւոն չկայ, Բենիամինն
ալ պիտի առնէք. ասոնց ամէնը իմ
գէմս եկաւ։ 37—Ու Ռուբէն խոսե-
ցաւ իր հօրը ու րսաւ, Եթէ ես գան-
կա քեզի չբերեմ, իմ երկու որդիներս
մեռցուր. զանիկա իմ ձեռքս յանձնէ,
ու ես քեզի կա՛ր բերեմ գանիկա։
38—Բայց Ցա-կոբ րսաւ, Իմ որդիս ձե-
զի հետ չիջնէ. վասն զի անոր եղբայրը
մեռած է, ու անիկա միմակ մնաց. և
եթէ ձեր երթալու ճամբուն մէջ անոր
փորձանք մը պատահելու րլլայ, իմ
ճ՛ուտակ մազերս սրտմտութեամբ գերեզ-
ման պիտի իջեցնէք։

Գլ. ԽԳ

Ու սաստկացաւ երկրին մէջ։
2—Ու եղաւ որ երբ Եգիպտոսէ բերած
պաշարնին կերան հատուցին, հայրերը-
նին րսաւ անոնց, Գացէք նորէն մեզի
փոչ մը ուտելիք ծախու առէք։ 3—Ու
Յուդա գրուցից անոր՝ ըսելով, Այն
մարդը մեզի հատուտ վկայութեամբ
խօսելով՝ րսաւ, Եթէ ձեր եղբայրը ձե-
զի հետ չըլլայ, իմ երեսս պիտի չտես-
նէք։ 4—Եթէ մեր եղբայրը մեզի հետ
ղրկես, կ՚իջնենք ու քեզի ուտելիք ծա-
խու կ՚առնենք։ 5—Բայց եթէ չղրկես,
չենք իջներ. վասն զի այն մարդը րսաւ
մեզի, Եթէ ձեր եղբայրը ձեզի հետ չըլ-
լայ, իմ երեսս պիտի չտեսնէք։ 6—Ու
Իսրայէլ րսաւ, Ինչո՞ւ համար չարու-
թիւն ըրիք ինձի՝ այն մարդուն իմացը-
նելով Թէ ուրիշ եղբայր ունիք։ 7—Ու
անոնք ըսին, Այն մարդը մեզի համար
ու մեր ազգականներուն համար հարց-
ուց՝ ըսելով, Ձեր հայրը տակաւին
ո՞ղջ է, ուրիշ եղբայր ունի՞ք. և մենք
այս խօսքերուն համեմատ պատասխան
տուինք անոր. արդեօք մենք կրնայի՞նք
գիտնալ որ անիկա պիտի բսէ Թէ ձեր
եղբայրը իջեցուցէք։ 8—Ու Յուդա իր
հօրը Իսրայէլի բսաւ, Տղան ինձի հետ
ղրկէ, ու հլնինք երթանք, որպէս զի
ոչ՝ մենք ու չմեռնինք, մենք ալ,
դուն ալ, մեր բնտանիքներն ալ։ 9—
Ես երաշխաւոր կ՚րլլամ անոր համար,
գանիկա իմ ձեռքս պահանջէ. եթէ
գանիկա քեզի չբերեմ, ու քու ա-
ջիդ չկանգնեցնեմ, յաւիտեան քեզի
յանցաւոր րլլամ։ 10—Գանզի եթէ
չյապաղէինք, մինչև հիմա երկրորդ
անգամ գարձած կ՚րլայինք։ 11—Ու
անոնց հայրը Իսրայէլ րսաւ անոնց,
Եթէ այդպէս է, հիմա գայս րրէք.
Ձեր ամանները մէջ երկրին ամէնէն
ազնիւ պտուղներէն առէք, ու մարդուն
բնծայ տարէք, փիչ մը բալասան և
փիչ մը մեղր, համեմներ ու գմուռս,
փստաղ ու նռնէ։ 12—Ու ձեռքերնիդ
կրկնապատիկ սակ առէք, ու ձեր
փարթերուն բերանը եղած սակը, որ
ետ բերուեցաւ, ձեռքերնիդ ետ
տարէք. գուցէ սխալմունք եղած էր.
13—Եղբայրնիդ ալ առէք, ու երէք
նորէն այն մարդուն գացէք։ 14—Ու
Ամենակարող Աստուած ձեզի չնորհք
գտնէ տայ այն մարդուն առջև, որպէս
զի ձեր միւս եղբայրը ու Բենիամինը
քով տայ ձեզի. և ես եթէ անզաւակ
ձնայու եմ, թող անզաւակ ձնայի։

15—Ու մարդիկը առին այս բնծաները, ու ձեռքերնին կրկնապատիկ ասակ առին՝ նաև բնեհամինը, ու եղան եպիտասս իշան, և Յակոբի առջև կացնեցան։ 16—Ու երբ Յակոբի բնեհամինը անոնց հետ տեսաւ, իր մանը վերակացուին բսաւ, Յոսէ տար այս մարդիկը, ու *պատրաստ կենդանիներ մորթէ և պատրաստէ. վասն զի այս մարդիկը կէսօրին ինծի հետ պիտի ճաշեն։ 17—Ու այն մարդը Յակոբի բանածին պես բրաւ. ու այն մարդը Յակոբի տունը տարաւ մարդիկը։ 18—Ու մարդիկը վախցան Յակոբի տունը տարուելուն համար, ու բսին, Առաջին անգամին մեր փարձերուն մէջ դարձած ասակին համար կը տարուինք, որ մեր վրայ յարձակի, ու մեր վրայ իյնայ, մեզ ծառաներ առնէ ու մեր էշերը։ 19—Ու Յակոբի մանը վերակացուն եղող մարդուն մտեցան, ու տանը դրանը մէջ խօսեցան անոր, 20—ու բսին, Ո՜ն, ախր, ասկէ առաջ կէսօրուընէ ծախս առնելու իջանք։ 21—Ու եղաւ որ երբ իջևանը եկանք, ու մեր փարձերը բացինք, ահա ամէն մէկուն ասակը իր փարձին բերանն էր, մեր ասակը լման կշռագրոյ. և զանիկա մեր ձեռքը նո բերինք։ 22—Ու ձեռքերնուս մէջ ուրիշ ասակ բերինք, կէսօրուընէ ծախս առնելու համար. չենք գիտեր թէ ո՛վ դրաւ մեր ասակը մեր փարձերուն մէջ։ 23—Ու անոնիկ բսաւ, Խաղաղութիւն ձեզի, մի վախնաք. ձեր Աստուածը և ձեր հօրը Աստուածը ձեզի գանձ ասաւ ձեր փարձերուն մէջ. †ես ասի ձեր ասակը՝ ու Շմաւոնը դուրս հանեց անոնց։

24—Ու այն մարդը Յակոբի տունը տարաւ մարդիկը, և ջուր տուաւ ոտներնուն, ու իրենց ոտքերը լուացին, ու անոնց էշերուն կեր տուաւ։ 25—Ու անոնք բնծաները պատրաստեցին՝ մինչև Յակոբի կէսօրուան գալը. քանզի իմացան որ հոնկէ հաց պիտի ուտեն։ 26—Ու երբ Յակոբի տուն եկաւ, իրենց ձեռքը եղած ընծաները անոր մտուցին մէջ, ու մինչև գետինը Խոնարհ անոր խոնարհութիւն ըրին։ 27—Ու անոնց ողջոյն իւնար հարցուց՝ բսելով, Այն ձեր ծեր հայրը, որուն վրայով խօսեցաք ինձի, ապրո՞ղ է. ատկաւին ա՞ղէ է։ 28—Ու բսին, Քա ծառայ մեր հայրը ապրէ է, ատկաւին ողջ է. և ծունկն ու խոնարհութիւն ըրին։ 29—Ու իր աչքերը վերցուց, ու իր մօրը որդին, իր եղբայրը Բենհամինը, տեսաւ, և բսաւ, Ա՞ս է ձեր պզտիկ եղբայրը, որուն վրայով խօսեցաք ինծի. ու բսաւ Աստուած ողորմի քեզի, որդեակ իմ։ 30—Ու Յակոբ չտեսաւ եղաւ. քանզի իր ապիքը գալարեցաւ իր եղբօրը վրայ, և լալու տեղ կը փնտռէր. ու ներքին սենեակը մտաւ ու հոն լացաւ։ 31—Ու լուաց իր երեսը ու դուրս եկաւ. և զսպեց ինքզինքը, ու բսաւ, Հաց բերէք։ 32—Ու իրեն դաս, ու անոնց դաս, և իրեն հետ ուտող եգիպտացիներուն դաս դրին. քանզի եգիպտացիները Եբրայեցոց հետ հաց չէին կրնար ուտել, վասն զի եգիպտացիներուն զզելի էր։ 33—Ու նստան անոր առջև, անդրանիկը իր անդրանկութեանը պես, և պզտիկը իր պզտիկութեանը պես. և մարդիկը իրարու նայելով կը զարմանային։ 34—Ու անկից իր առջևէն բաժիններ դրկից անոնց. Բայց Բենհամինի բաժինը միւսներուն բաժինին հինգ անգամն էր. և խմեցին ու անոր հետ մկիսեզ զուարթացան։

ԳԼ. ԽԴ

Ե. իր տանը վերակացուին հրաման բրաւ՝ բսելով, Այս մարդոց փարձերը տանել կրցածնուն չափ ուտելիք լեցուր, ու ամէն մէկուն ասակը իր փարձին բերանը դիր։ 2—Ու ոսկեայ պղպտիկին փարձին բերանը իր գաւաթը, արծաթ գաւաթը, ու իր պաշարին ասակը դիր։ Ու անկիա Յակոբի բսած խօսքին պես բրաւ։

3—Ու առաւոտանց լուսցածին պես մարդիկը դրկուեցան, իրենք ու իրենց էշերը։ 4—Անոնք փարձէն ելլելով դեռ չհեռացած, Յակոբ իր տանը վերակացուին բսաւ, Ելիր, այն մարդոց

*ՆԲՐ. մորթելիք
†ՆԲՐ. ձեր ասակը ինծի եկաւ

հասնիս վազ, ու անոնց հասիր և բսիր անոնց, Ինչո՞ւ բարիին փոխարէն չար տուաք դուք. 5—Այս այն չէ՞ որուն մէկին իմ ուբս կը խմէ, ու անով կը հմայէ. այսպես բնելով գիշեր ըրիք։ 6—Ու անկիա հասաւ անոնց, և բսաւ անոնց այս նոյն խօսքերը։ 7—Ու բսին անոր, Ինչո՞ւ իմ ուբս այսպիսի խօսքեր կը դրուցէ. փո՛ւչ իցի որ այս ծառաներդ այսպիսի բան մը բնեն։ 8—Ահա մեր փարձերուն բերանը գտած առակնիս Քանաան երկրէն քեզի նո բերինք. ուրեմն ինչպէս փո՞ւ ուբդ առնէն արծաթ կամ ոսկի պիտի գողնանք. 9—Քա ծառաներդ որո՛ն քով որ գտնուի, մե՛ռ անիկա մեռնի, ու մենք ալ իմ ուբդո ծառաներ ըլլանք։ 10—Ու անիկա բսաւ, Հիմա ձիշդ ձեր բսածին պես մե՛ղ ըլլայ. որուն քով որ գտնուի, ան ինծի ծառայ ըլլայ, ու դուք անպարա ըլլաք։ 11—Ուսաի ամէն մէկը արագութիւ իր փարձը գետինը իջեցուց, ու ամէն մէկը իր փարձը բացաւ։ 12—Ու անիկա մեծէն սկսաւ փնտռել, ու մինչև պզտիկը նայեցաւ. և գտաւ բենհամինի փարձին մէջ գաւաթը։

13—Ան ատեն իրենց հանդերձները պատռեցին. և ամէն մէկը իր էշը բեռցուց ու քաղաքը դարձան։ 14—Ու Յուդա ու անոր եղբայրները Յակոբի տունը եկան, և անկիա տակաւին հոն եր. ու անոր առջև գետինը իյնան։ 15—Ու Յակոբ բսաւ անոնց, Ա՛յս ի՞նչ բան է զոր բրիք. չե՞ք գիտեր որ ինծի պես մարդ մը անչուտ կը հմայէ։ 16—Ու Յուդա բսաւ, Իմ ախրո՛ն ի՞նչ բանը, ի՞նչ խօսինք, կամ ի՞նչպէս արդարացընենք ինքզինքնիս. Աստուած փո՛ւ ծառաներդ չմեղանքը բռնեց. ահա մենք մեր ախրո՛ն ծառաներ ենք, մենք ալ՝ անիկա ալ՝ որուն քով գաւաթը գտնուեցաւ։ 17—Ու անիկա բսաւ, Քա՛ւ լիցի որ ես այդպես բնեմ. հապա այն մարդը որուն քով գաւաթը գտնուեցաւ, անիկա ինծի ծառայ ըլլայ, ու գուք խաղաղութեամբ ձեր հօրը երթաք։

18—Ան ատեն Յուդա մտեցաւ անոր ու բսաւ, Ո՜վ իմ, չնորհք բրէ, քու փո՛ւ ծառադ խօսք մը խօսի իմ ախրո՛ն ականջներուն, ու ծառայիդ վրայ փո՛ւ բարկութիւնդ չբորբոքի. վասն զի դուն փարաւոնի պէս ես։ 19—Իմ ախրո՛ն իր ծառաներուն հարցուց՝ բսելով, Հայր կամ եղբայր ունի՞ք։ 20—Ու մենք բսինք մեր ախրո՛ն, Քէ ծեր հայր մը ունինք, և քէ մանչ՝ էր ծերութեան տիւնը ծնած պզտիկ որդի մը ունի, ու անոր եղբայրը մեռած է, և միայն անիկա իր մօրմէն մնաց, ու անոր հայրը կը սիրէ զանիկա։ 21—Ու փո՛ւ ծառաներուդ բսիր, Ինծի իջեցուցէք զանիկա, որ տեսանեմ. 22—ու իմ ախրո՛ն բսինք, Տղան իր հայրը չկրնար ձգել. քանզի եթէ իր հայրը ձգէր, պիտի մեռնի։ 23—Ու փո՛ւ ծառաներուդ բսիր, Եթէ ձեր պզտիկ եղբայրը ձեզի հետ չիջնէ, իմ երեսս ալ պիտի չտեսնէք։ 24—Ու երբ փո՛ւ ծառադիդ քով հօրս հասնինք, իմ ախրո՛ն խօսքերը պատմեցինք անոր։ 25—Ու մեր հայրը բսաւ, Դարձեք նորէն, ո՛ւթի փիչ մը կերակուր ծախու առէք։ 26—Ու մենք բսինք, Չենք կրնար իջնել. եթէ մեր պզտիկ եղբայրը մեզի հետ ըլլայ, այն ատեն կ'իջնենք. վասն զի պիտի չերեսնանք տեսնել այն մարդուն երեսը, եթէ մեր պզտիկ եղբայրը մեզի հետ չըլլայ։ 27—Ու փո՛ւ ծառադ իմ հայրս բսաւ մեզի, Դուք գիտէք որ իմ կինս երկու *որդի ծնաւ ինծի. 28—ու մէկը փախս եկաւ, ու ես բսի, Անչուշտ ճղճղած է, ու մինչև հիմա զինք չտեսայ։ 29—Ու եթէ սոսկիա ալ փախս առնէք, ու անոր փորձանք մը պատահի, իմ ճերմակ մազերս արտմութիւնով գերեզմանը պիտի իջեցնէք։ 30—Ուսաի հիմա՝ երբ փո՛ւ ծառադիդ իմ հօրս երթամ, ու պատանին մեզի հետ չըլլայ, անոր հոգին պատանոյն հոգւոյն հետ կապուած ըլլալով, 31—երբ տեսնէ թէ պատանն ալ չկայ, պիտի մեռնի. և ծառաներդ փո՛ւ ծառադիդ մեր հօրը ճերմակ մազերը արտմութիւնով գերեզմանը պիտի իջեցնեն։ 32—Վասն զի ծառադ պատանն հետաբար

*ՆԲՐ. աչքս անոր վրայ դնեմ

իմ հօրս երկրաւոր եղայ՝ ըսելով, Սիրէ ես զանկիւն քեզի չքերեմ, իմ հօրս յանխաւսն յանդգնաբար ըլլամ։ 33—Ուստի հիմա կ'ապաշխեմ քեզի, ողորմ ասղ ծառագ իմ ակրոջս ծառայ ըլլայ, և ողորմ իր եղբայրներուն հետ ելլէ։ 34—Բանդի երէկ ողորմ բնդի հետ չէրլայ, թշդրկես ելլեմ իմ հօրս. չէրլայ որ իմ հօրս գալս փորձանքը տեսնեմ։

Գլ. Իե

1—Յաքովբ չէրցաս զայել բնդգինք բոլոր իր քով կայնողներուն ասլէ, ու պատաց, Բովէս գաս հանեցէք բոլոր մարդկէր. և երբ Յաքովբ բնդգինք իր եղբայրներուն հանչցաց, քարի մարդ մը չկեցաս։ 2—Ու ձայնր վերցնելով լացաս. ու Եգիպտացիք լսեցին, ու փարաւոնի տունն ալ լսեց։ 3—Ու Յաքովբ բաս իր եղբայրներուն, Ես Յաքովբն եմ. իմ հայրս ողորմ ա՞ղ է. ու եղբայրները չկրն կրնար պատասխան տալ անոր, վասն զի անոր առջև ապշած մնացին։ 4—Ու Յաքովբ բաս իր եղբայրներուն, Բնդի մօտ եկէք. անոնք ալ մօտ եկան. և բաս, Ես ձեր եղբայրը Յովսէփն եմ, զոր Եգիպտաս ծախեցիք ծախելնիդ. 5—Ուստի հիմա վիս հոս ծախելնիդ համար մի վշտանաք, ու ձեզի ծանր չերեւնայ. վասն զի Աստուած զրկեց զիս ձեր առջեւէն՝ կեանք պահելու համար։ 6—Բանդի երկրիս վրայ սովին երկրորդ տարին է այս. և ողորմ հինգ տարի կայ՝ որ ոչ վարելգան, ոչ ալ հունձք պիտի ըլլայ։ 7—Ու Աստուած զիս ձեր առջեւէն զրկեց՝ որպէս զի երկրի վրայ ձեզի սերմանդ պահէ, և մեծ ազատութիւնով ձեզ ապրեցնէ։ 8—Ու հիմա զիս հոս զրկողը դուք չէք, հապա Աստուած է. ու զիս փարաւոնի հայր, և իր բոլոր տանը տէր, ու Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրաւ։ 9—Շուտով իմ հօրս երթաք, ու բսէք անոր, Այսպէս կ'ըսէ քու Յաքովբ որդիդ, Աստուած բոլոր Եգիպտոսի տէր բրաւ զիս. չուշանաս, բնդի իջնես։ 10—Ու Գեսեմի երկրին մէջ պիտի բնակիս, որպէս զի բնդի մօտ ըլլաս, դուն ու քու որդիներդ, և քու որդիներուդ որդիները, և ոչխարդ ու արջառդ, և քու բոլոր ունեցածդ։ 11—Ու հոն քեզ պիտի սնուցանեմ. վասն զի տակաւին հինգ տարի սով կայ. չըլլայ որ դուն ու քու տունդ և քու բոլոր ունեցածդ չքաւորութիւն փշէք։ 12—Ու ահա ձեր աչքերը ու իմ եղբօրս Բենիամինի աչքերը կը տեսնեն որ ձեզի խօսողը իմ բերանս է։ 13—Ու Եգիպտոսի մէջ իմ ունեցած բոլոր փառքս, ու ձեր բոլոր տեսածը պատմելէք իմ հօրս. և շուտով իմ հայրս հոս բէնցուցէք։ 14—Ու իր եղբօրը Բենիամինի պարանոցին վրայ բնկաւ ու լացաս. Բենիամին ալ անոր պարանոցին վրայ լացաս։ 15—Ու իր բոլոր եղբայրները համբուրեց, ու անոնց վրայ լացաս. և անկէ ետքը իր եղբայրները իրեն խօսեցան։

16—Ու այս լուրը Փարաւոնի տանը մէջ լսուեցաս. Քէ Յովսէփի եղբայրները եկեր են. և Փարաւոն ու անոր ծառաներուն հաճելի եղաս։ 17—Ու Փարաւոն բսաս Յովսէփին, Քու եղբայրներուդ բսէ, Զայս բրէք. ձեր անասունները բեռցուցէք, ու Քանահան երկիրը գացէք. 18—Ու ձեր հայրը ու ձեր ընտանիքները առէք, ու բնդի ինկէք. և Եգիպտոսի երկրին ազէկ տեղը ձեզի տամ, ու երկրին պտուղներն ուտէք։ 19—Ու քեզի հրաման եղաս. զայս բրէք. Ձեր ապրուստներուն համար ու ձեր կիներուն համար Եգիպտոսի երկրէն կառքեր առէք ձեզի, և ձեր հայրը բերէք ու եկէք։ 20—Ու ձեր կարասիքին *մի նայիք. վասն զի բոլոր Եգիպտոսի երկրին բարիքը ձերն է։

21—Ու Իսրայէլի որդիները այնպէս բրին. և Յովսէփ անոնց կառքեր տուաս փարաւոնի խօսքին պէս, ու ճամբու համար պաշար տուաս անոնց։ 22—Անոնց ամէն մէկուն զատ զատ փոխելու հանդերձներ տուաս, բայց Բենիամինի երեք հարիւր արծաթի ու հինգ ձեռք փոխելու հանդերձ տուաս։ 23—Ու իր հօրը ասոր պէս բաներ զրկեց. ասոր էշ Եգիպտոսի բարիքներով բեռցած, և ասոր եգ էշ ցորենով ու հացով և ուտելիքներով բեռցած, իր հօրը ճամբորդութեանը համար։ 24—Այսպէս իր եղբայրները դրկեց, ու գացին. և բսաւ անոնց, Ճամբան մի՛ չխռովիք։

25—Ու անոնք Եգիպտոսէ ելան, ու գնկ ի Քանահան երկիրը իրենց հօրը Յակոբի գացին։ 26—Ու անոր պատմեցին՝ ըսելով, Յովսէփ ապրէ՛ է, ու Եգիպտոսի բոլոր երկրին իշխանը անկէ է. և Յ֊ի֊ի սիրտը մաքեցաս, քանի անոնց չհաւատաց։ 27—Ու անոր պատմեցին Յովսէփի բոլոր խօսքերը զորոնք իրենց բսեր էր. ու երբ անաս Յովսէփի զրկած կառքերը զինք առնելու համար, անոնց հօրը Յակոբի հոգին ազդեցաս։ 28—Ու Իսրայէլ բսաս, Բաւական է. իմ որդիս Յովսէփ ապրէ՛ է. երթամ ու մեռնելէս առաջ անոնէմ զանիկա։

Գլ. Իզ

1—Իսրայէլ իր բոլոր ունեցածով ճամբայ ելաս, ու Բերսաբէէ հկաս, և իր հօրը Իսահակի Աստուծոյն զոհեր մատուցս։ 2—Ու Աստուած գիշերասն տեսիլքի մէջ խօսեցաս Իսրայէլի ու բսաս, Յակոբ, Յակոբ. և անիկա բսաս, Ահա ես հոս եմ։ 3—Ու բսաս անոր, Ես եմ Աստուած, քու հօրդ Աստուածը. եգիպտաս իջնելու մի վխտար, վասն զի հոն մեծ ազգ մը պիտի բնեմ քեզ. 4—Ես քեզի հետ եգիպտաս պիտի իջնեմ, նաև քեզ անշուշտ պիտի հանեմ, ու Յովսէփ պիտի դնէ իր ձեռքը քու աչքերուդ վրայ։ 5—Ու Յակոբ ելաս Բերսաբէէէ, ու Իսրայէլի որդիները տարին իրենց հայրը Յակոբը, ու իրենց ազաքներն ու իրենց կիներուն այն կառքերով, զորոնք Փարաւոն զրկեց զանիկա առնելու համար։ 6—Ու ան֊ի֊ն իրենց անասուններն ու իրենց ապրուստքը զորոնք Քանահան երկրին մէջ ապահոր էին, ու Եգիպտաս հկան Յակոբ ու անոր բոլոր սերունդը իրեն հետ։ 7—Իր որդիները ու իր որդւոց որդիները իրեն հետ, իր աղջիկները ու իր որդւոց աղջիկները և իր բոլոր սերունդը իրեն հետ Եգիպտաս բերաս։

8—Ու ասոնք են Իսրայէլի որդւոց անուններըը որոնք Եգիպտաս եկան. Յակոբ ու անոր որդիները. Յակոբի անդրանիկը Ռուբէն։ 9—Ու Ռուբէնի որդիները՝ Ենովք ու Փաղուս և Եսրոն ու Քարմի։ 10—Ու Շմաւոնի որդիները՝ Յամուէլ ու Յամին և Ովհդ ու Յաքին և Սաւհաւ, ու Քանանացի կնոջ որդին Սաւուղ։ 11—Ու Ղևիի որդիները՝ Գերսոն, Կահաթ ու Մերարի։ 12—Ու Յուդայի որդիները՝ Էր ու Օնան և Սելա ու Փարէս և Զարա. բայց Էր ու Օնան Քանանա երկրին մէջ մեռան. և Փարէսի որդիները՝ Եսրոն ու Համուլ։ 13—Ու Իսաքարի որդիները՝ Թովղա ու Փուա և Յոբ ու Սամրոն։ 14—Ու Զաբուղոնի որդիները՝ Սարէդ ու Ելօն և Յահլէ։ 15—Ասոնք են Լիայի որդիները, զորոնք Միջագետքի մէջ Ծնաս Յակոբի, ու անոր Դինա ազջիկը. անոր բոլոր որդիները ու ազջիկները երեսուն հոգի էին։ 16—Ու Գադի որդիները՝ Սափոն ու Անգէր, Սուհի և Եսբոն, Էրի ու Արոդի և Արելի։ 17—Ու Ասերի որդիները՝ Յեմնա ու Յեսուա և Յեսուի և Բարիա, և անոնց քոյրը Սարա. և Բարիայի որդիները՝ Քաբէր ու Մելգիէլ։ 18—Ասոնք են Զելփայի որդիները՝ զոր Լաբան իր Լիա ազջկան տուաս. և ասոնցմէ Ծնաս ասոնք Յակոբի՝ տասնվեց հոգի։ 19—Յակոբի կնոջ Րաքելի որդիները՝ Յովսէփ ու Բենիամին։ 20—Ու Յովսէփի՝ Եգիպտոսի երկրին մէջ Մանասէ ու Եփրեմ Ծնան, զորոնք Ասենէթ Ասանէթ Ծնաս անոր։ 21—Ու Բենիամինի որդիները՝ Բալա ու Բեքեր և Ասբել, Գերա ու Նեհման, Էհի ու Ռոշ, Մուբիմ և Ովփիմ ու Արեդ։ 22—Ասոնք են Րաքելի որդիները՝ որոնք Ծնան Յակոբի, ամէնը տասնչորս հոգի։ 23—Ու Դանի որդիները՝ Հուսիմ։ 24—Ու Նեփթաղիմի որդիները՝ Յասիել ու Գունի և Եսեր ու Սիլլեմ։ 25—Ասոնք են Բաղդոյի որդիները՝ զոր Լաբան իր Րաքել ազջկան տուաս. ու անոնք Յակոբի ասոնք Ծնաս. ամէնը

*Կամ, Յասուք

*Եթէ ձեր աչքը չխնայէ

Սօքը հագի էին։ 26—Յակոբի հետ ե-
գիպտացի կին բոլոր հոգիները, որ անոր
երանգէն ելած էին, Յակոբի որդւոց
կիներէն զատ՝ ամէնը վեհասունքվեց
հոգի էին։ 27—Եւ Յովսէփի որդիները՝
որ Եգիպտոսի մէջ անոր ծնան, երկու
հոգի էին. Եգիպտոս գացող Յակո-
բի տանը բոլոր հոգիները եօթանա-
սան էին։

28—Եւ անիկա Յուդան իր առջե-
էն դրկեց Յովսէփի, որ Գեսեմի ցա-
ցրնէ իրեն. և անոնք Գեսեմի երկիրը
եկան։ 29—Եւ Յովսէփ իր կառքը պատ-
րաստեց, ու իր հայրը Իսրայէլը դիմա-
ւորելու համար Գեսեմ ելաւ. և երբ
անոր դէմը ելաւ, անոր պարանոցին
վրայ ինկաւ, ու շատ մը ատեն անոր
պարանոցին վրայ լացաւ։ 30—Եւ Իս-
րայէլ ըսաւ Յովսէփի, Հիմա գոնէ երեսդ
տեսնելէս ետքը Քու մեռնիմ, վասն զի
տակաւին ողջ ես։ 31—Եւ Յովսէփ իր
եղբայրներուն ու իր հօրը տանը ըսաւ,
Ելլեմ և Փարաւոնի պատմեմ, ու ըսեմ
անոր, Իմ եղբայրներս ու իմ հօրս բնա-
կութիւնքը՝ որ Քանանա երկրին մէջ էին,
ինծի եկան։ 32—Եւ այն մարդիկը հո-
վիւներ են, վասն զի խաչնդի տէր են,
և իրենց հօտերը ու իրենց արջառները
և իրենց բոլոր ունեցածը բերին։ 33—
Եւ ըլլայ որ երբ Փարաւոն ձեզ կանչէ,
ու ըսէ Քէ ինչ է արհեստդ, 34—
Ըսէք, Քու ծառաներդ մեր մանկու-
թիւնէն մինչև հիմա՝ մենք ալ, մեր
հայրերն ալ, խաչնդի տէր եղանք. որ-
պէս զի Գեսեմի երկրին մէջ բնակիք.
վասն զի ամէն հովիւ եգիպտացւոց ա-
ռջև գարշելի է։

ԳԼ. ԽԶ

Եւ Յովսէփ եկաւ ու պատմեց Փա-
րաւոնի ու ըսաւ, Իմ հայրս ու եղբայր-
ներս, և անոնց հօտերն ու արջառները,
և անոնց բոլոր ունեցածը եկան Քա-
նանա երկրէն, և ահա Գեսեմի երկրին
են. 2—Եւ իր եղբայրներուն մէջէն
հինգ մարդ առաւ, ու զանոնք Փարա-
ւոնի առջև ներկայացուց։ 3—Եւ Փա-
րաւոն ըսաւ անոր եղբայրներուն, Ինչ
է ձեր արհեստդ. և անոնք Փարաւոնի
ըսին, Քու ծառաներդ հովիւներ են, ե-
մենք ալ, մեր հայրերն ալ։ 4—Նաև
ըսին Փարաւոնի, Այս երկրին մէջ պան-
դխտանալու եկանք. վասն զի Քանա-
նա երկրին մէջ սովին սաստկանալուն
համար, քու ծառաներուդ հօտերուն
արածելիք չկայ. ուստի հիմա չնորհ-
րէ, ծառաներդ Գեսեմի երկրին մէջ
բնակինք։ 5—Եւ Փարաւոն խօսեցաւ
Յովսէփի ըսելով, Քու հայրդ ու եղ-
բայրներդ քեզի եկան. 6—Եգիպտոսի
երկիրը առջեդ է. քու հայրդ ու եղ-
բայրներդ երկրին ամենէն ազնիւ տեղը
բնակեցուր. Գեսեմի երկրին մէջ թող
բնակին. և եթէ անոնց մէջ ճարպիկ
մարդիկ ըլլալը գիտես, զանոնք իմ հո-
տերուս վրայ վերակացու ըրէ։

7—Եւ Յովսէփ իր հայրը Յակոբը բե-
րաւ, ու Փարաւոնի առջև հանեց. և
Յակոբ օրհնեց Փարաւոնը։ 8—Եւ Փա-
րաւոն ըսաւ Յակոբի, Քու կեանքիդ
տարիներուն օրերը որչա՞փ են։ 9—Եւ
Յակոբ ըսաւ Փարաւոնի, Իմ պանդխտու-
թեան տարիներուս օրերը հարիւր
երեսուն տարի են. իմ կեանքիս տա-
րիներուն օրերը քիչ ու ցաւագէտ եղան,
ու իմ հայրերուս պանդխտութեան օրե-
րուն մէջ եղած իրենց կեանքին տարի-
ներուն չհասան։ 10—Եւ Յակոբ օրհնեց Փարաւոնը, ու դուրս ելաւ
Փարաւոնի առջևէն։

11—Եւ Յովսէփ Եգիպտոսի երկրին
մէջ իրեն տեղ կտրեց, Ռամսէսի երկրին
մէջ, բնակեցուց իր հայրն ու եղբայր-
ները, և անոնց կարաւածք տուաւ, ինչ-
պէս Փարաւոն հրամայեր էր։ 12—Եւ
Յովսէփ իր հայրն ու եղբայրները և իր
հօրը բոլոր տունը հացով կը սնուցանէր,
մինչև մանուկները։

13—Եւ բոլոր երկրին մէջ հաց չկար,
վասն զի սովը խիստ սաստկացաւ. ու
Եգիպտոսի երկիրը և Քանանա երկիրը
սովին պատճառաւ նուաղեցաւ։ 14—
Եւ Յովսէփ պարար ծախու առնողնե-
րէն Եգիպտոսի երկրին մէջ ու Քանա-
նա երկրին մէջ գտնուած բոլոր ար-
ժոյզը. և Յովսէփ Փարաւոնի տունը
տարաւ։ 15—Եւ երբ Եգիպտոսի
երկրին ու Քանանա երկրին մէջ արծաթ
հատաւ, բոլոր Եգիպտացիները եկան
Յովսէփի ու ըսին, Մեզի հաց տուր.
քանզի ասոնք չերթալուն համար ինչո՞
մեռնինք քու առջևդ։ 16—Եւ Յով-
սէփ ըսաւ, Ձեր անասուններդը բերէք,
և եթէ արծաթ չկայ, ձեր անասուննե-
րուն փոխարէն տամ ձեզի։ 17—Եւ
անոնք իրենց անասունները Յովսէփի
բերին, և Յովսէփ հաց տուաւ անոնց
ձիերուն փոխարէն, ու ոչխարներուն
փոխարէն, և արջառներուն փոխարէն,
ու էշերուն փոխարէն. և այն տարին
զանոնք հացով կերակրեց իրենց բոլոր
անասուններուն փոխարէն։

18—Եւ երբ լմնցաւ այն տարին, հե-
տևեալ տարին եկան անոր ու ըսին,
Մեր ափրոջմէն չենք պահեր որ տակաւ
հատաւ, և Ձէր անասուններն ալ մեր
ափրոջը եղան. ալ բան մը չմնաց մեր
ափրոջը առջև, բայց մեր մարմինը ու
երկիրը։ 19—Ինչո՞ւ համար քու աչ-
քիդ առջև մեռնինք մենք ու մեր եր-
կիրը. մեզ ու մեր երկիրը հացով ծա-
խու առ, և մենք մեր երկիրովը Փա-
րաւոնի ծառաներ ըլլանք. և սերմ
տուր մեզի որպէս զի ապրինք ու չմե-
ռնինք, և երկիրը ամայի չըլայ։ 20—
Եւ Յովսէփ բոլոր Եգիպտոսի երկիրը
Փարաւոնի համար ծախու առաւ. զանա-
զի Եգիպտացւոց վրայ սովին սաստիկ
ըլլալուն համար՝ անոնց ամէն մէկը
իր արտը ծախեց, ու երկիրը Փարաւոնի
եղաւ։ 21—Եւ Եգիպտոսի սահմանին
մէկ ծայրէն մինչև մյուս ծայրը՝ ժողո-
վուրդը *փոպոխ փոպոխ* փոխադրեց։
22—Միայն քահանաներուն երկիրը ծա-
խու չառաւ. վասն զի քահանաները Փարա-
ւոնէ [illegible] բաժին ունէին, ու կ'ու-
տէին իրենց բաժինը, զոր Փարաւոն
կու տար անոնց. անոր համար իրենց
երկիրը չծախեցին։ 23—Եւ Յովսէփ ըսաւ
ժողովուրդին, Ահա այսօր ծախու առի
ձեզ ու ձեր երկիրը Փարաւոնի համար.
արդ ձեզի սերմ [illegible] ու սերմնե-
նեցէք երկիրը։ 24—Եւ էղէք արդիւնք-
ին հինգէն մէկը Փարաւոնի պիտի
տաք, ու չորս մասը ձերը պիտի ըլլայ,
որպէս զի արտին սերմ ու ձեզի և ձեր
տանը մէջ եղողներուն ու ձեր ոգաբե-
նութեան ուտելիք ըլլայ։ 25—Եւ ըսին,

*Նբր. քոպոքներու

Մեզ ապրեցուցիր. քոզ մեր տէրոջը
առջև չնորհք գտանենք, ու Փարաւոնի
ծառաներ ըլլանք։ 26—Եւ Յովսէփ այս
օրէնքը հաստատեց Եգիպտոսի երկրին
մէջ մինչև այսօր՝ որ հինգէն մէկը Փա-
րաւոնի ըլլայ. բաց ի քահանաներուն երկ-
րէն, որ Փարաւոնի չեղաւ։

27—Եւ Իսրայէլ կը բնակէր Եգիպ-
տոսի երկրին մէջ, Գեսեմի երկիրը. ու
հոն կալուածք ստացան, և աճեցան ու
խիստ չատցան։

28—Եւ Յակոբ Եգիպտոսի երկրին
մէջ տասնըեօթը տարի ապրեցաւ. ու
Յակոբի կեանքին տարիներուն օրերը
հարիւր քառասուներեօթը տարի եղան։
29—Ու երբ Իսրայէլի մեռնելու օրերը
մատեցան, կանչեց իր Յովսէփ որդին,
ու ըսաւ անոր, Եթէ հիմա քու առ-
ջևդ չնորհք գտայ, կ'ապահեմ քեզի,
ձեռքդ իմ երանքիս տակ դիր, և ինծի
մարդասիրութիւն ու ճշմարտութիւն
ըրէ. կ'ապահեմ քեզի, գիս Եգիպտոսի
մէջ մի թաղեր։ 30—Հապա իմ հայ-
րերուս հետ պնդիմ, ու զիս Ե-
գիպտոսէ հանես, և գիս անոնց գերեզ-
մանը թաղես։ Ես անիկա ըսաւ, Ես
քու բանիդ պես պիտի ընեմ։ 31—Ես
ինձ ըսաւ, Ինծի երդում ըրէ. և ա-
նիկա երդում ըրաւ անոր։ Ես Իսրայէլ
*անկողնին գլուխն վրայ երկրպագու-
թիւն ըրաւ։

ԳԼ. ԽՀ

Եւ եղաւ որ այս բաներէն ետքը
Յովսէփի ըսուեցաւ, Ահա քու հայրդ
հիւանդ է. և անիկա իր երկու որդի-
ները, Մանասէն ու Եփրեմը, իրեն
հետ առաւ։ 2—Եւ Յակոբի պատմեց-
ան ու ըսուեցաւ, Ահա քու որդիդ
Յովսէփ քեզի կու գայ. և Իսրայէլ ու-
ժովցաւ ու անկողնին վրայ նստաւ։
3—Եւ Յակոբ ըսաւ Յովսէփի, Ամենա-
կարող Աստուած Քանանա երկրին Լու-
զի մէջ երևցաւ ինծի ու օրհնեց զիս.
4—Եւ ըսաւ ինծի, Ահա քեզ պիտի
աճեցնեմ ու չատցնեմ, և քեզ չատ
ժողովուրդներու հաւր պիտի ընեմ. և

*Կամ, գաւազանին

այս երկիրը քեզմէ հոտը քու սերունդիդ յաւիտենական կալուածք ըլլալու պիտի տայ։ 5—Ե. Հիմա քու երկու որդիներդ, որոնք ծնան քեզի Եգիպտոսի երկրին մէջ, քեզի Եգիպտոս գալէս առաջ, իմ են. Եփրեմը ու Մանասէն Հապրոնի ու Շամաանի պէս իմ պիտի ըլլան։ 6— Ու անոնցմէ հետքը քու ծնած որդիներդ քուկդ ըլլան, ու իրենց ժառանգութեանը մէջ իրենց եղբայրներուն անուններովը կանչուին։ 7—Ու երբ Մէլոպեակ կու գայի, Քանանու երկրին մէջ ճամբուն վրայ, որ տակաւին Եփրաթա երթալու քիչ մը տեղ կայ, Ռաքէլ մեռաւ իմ քովս ու զանիկա հոն Եփրաթայի՝ այսինքն Բեթլհեմի ճամբուն մէջ թաղեցի։

8—Ու Իսրայէլ տեսաւ Յովսէփի որդիները, ու ըսաւ, Ասոնք են որ ես առնեմ։ 9—Ու Յովսէփ ըսաւ իր հօրը, Իմ որդիներս են՝ զորոնք Աստուած հոս ինծի տուաւ։ Եւ անիկա ըսաւ, Ետեղէ զանոնք, որպէս զի օրհնեմ։ 10—Ու Իսրայէլի աչքերը ծերութենէն ծանրացած էին, մէնաւ չէր կրնար տեսնել։ Եւ զանոնք մօտեցուց անոր, ու անիկա համբուրեց զանոնք և գրկեց։ 11—Ու Իսրայէլ ըսաւ Յովսէփի, Ես չէի յուսար որ քու երեսդ տեսնեմ, և ահա Աստուած ինծի քու սերունդդ ալ ցուցուց։ 12—Ու Յովսէփ հանեց զանոնք անոր ծունկերէն, և իր երեսը մինչև գետինը խոնարհութիւն բրաւ։ 13—Ու Յովսէփ առաւ անոնց երկուքն ալ, Եփրեմը իր աջ ձեռքով Իսրայէլի ձախ կողմը, և Մանասէն իր ձախ ձեռքով Իսրայէլի աջ կողմը, ու մօտեցուց անոր։ 14—Ու Իսրայէլ իր աջ ձեռքը երկնցուց, ու Եփրեմի գլուխն վրայ դրաւ, որ պզտիկն էր, ու իր ձախ ձեռքը Մանասէի գլուխն վրայ, անիկա խաչդրեալ իր ձեռքերը փոխեց. վասն զի Մանասէ անդրանիկն էր։ 15—Ու օրհնեց Յովսէփը ու ըսաւ, Ա՛յն Աստուածը՝ որուն առջև իմ հայրերս Աբրահամ ու Իսահակ քալեցին, այն Աստուածը, որ ծնած առնէս մինչև այսօր պես կը բարկրեց։ 16—Այն Հրեշտակը, որ պես ամէն չարիքներէ ազատեց, օրհնէ այս տղաքները, և իմ անունս ու իմ հայրերուս Աբրահամի և Իսահակի անունը ասոնց վրայ կանչուի, ու երկրի մէջտեղը խիստ շատանան։ 17—Ու երբ Յովսէփ տեսաւ որ իր հայրը աջ ձեռքը Եփրեմի գլուխն վրայ դրաւ, իրեն հաճելի չեղաւ. և իր հօրը ձեռքը բռնեց, որպէս զի զանիկա Եփրեմի գլխէն Մանասէի գլուխն վրայ դարձնէ։ 18—Ու Յովսէփ ըսաւ իր հօրը, Ոչ այդպէս, հայր իմ. վասն զի անդրանիկը այս է. քու աջ ձեռքդ անոր գլխուն վրայ դիր։ 19—Ու իր հայրը չկամեցաւ ու ըսաւ, Գիտեմ, որդեակ իմ. գիտեմ, ասիկա ալ ժողովուրդ պիտի ըլլայ, և ասիկա ալ մեծ պիտի ըլլայ. բայց անոր պզտիկ եղբայրը անկէ աւելի մեծ պիտի ըլլայ, ու անոր սերունդը խիստ մեծ ազգ պիտի ըլլայ։ 20—Ու այն օրը օրհնեց զանոնք ու ըսաւ, Իսրայէլ քեզմով պիտի օրհնէ, «Աստուած քեզ Եփրեմի պէս և Մանասէի պէս դնէ» ըսելով. ու Եփրեմը Մանասէէ առաջ դրաւ։

21—Ու Իսրայէլ ըսաւ Յովսէփի, Ահա ես կը մեռնիմ. և Աստուած ձեզի հետ պիտի ըլլայ, ու ձեզ ձեր հայրերուն երկիրը պիտի դարձնէ. 22—Ու ես քու եղբայրներէդ մէկ բաժին աւելի առի քեզի, զոր Ամորհացիներուն ձեռքէն իմ սրովս ու աղեղովս առի։

ԳԼ. ԽԹ

Ե. Յակոբ կանչեց իր որդիները ու ըսաւ, Ժողովեցէք, որպէս զի վերջին օրերը ձեր դէմս եղածը պատմեմ ձեզի։ 2—Ժողովեցէք ու ականջ առէք, ով Յակոբի որդիները,
Ու ձեր հօրը Իսրայէլի մտիկ ըրէք։
3—Ով Ռուբէն, իմ անդրանիկս,
Իմ զօրս ու իմ զօրութեանս սկիզբը,
Յարգութեան կատարելութիւնը ու զօրութեան կատարելութիւնը դուն ես։
4—Ջուրի պէս եռացիր, առաջին պիտի չըլլաս.
Վասն զի քու հօրդ անկողինը ելար.
Այն ատեն պղծեցիր ըսելով։ (Իմ անկողինս ելաւ։)

5—Շմաւոն ու Ղեւի եղբայրներ են.
Անոնց սրերնին անիրաւութեան գործիքներ են։
6—Իմ հոգիս անոնց խորհուրդներուն չմտնէ,
Իմ պատիւս անոնց ժողովքին հետ չմիանայ.
Վասն զի իրենց բարկութիւնով մարդ սպաննեցին,
Ու իրենց կամապաշտութիւնով ցուլի ջիղ կտրեցին։
7—Անիծեալ ըլլայ անոնց բարկութիւնը, վասն զի խիստ էր,
Ու անոնց սրտմտութիւնը, վասն զի սաստիկ էր.
Զանոնք Յակոբի մէջ պիտի բաժնեմ,
Ու զանոնք Իսրայէլի մէջ պիտի ցրուեմ։
8—Ով Յուդա, քու եղբայրներդ քեզ պիտի գովեն.
Քու ձեռքդ քու թշնամիներուդ պարանոցին վրայ ըլլայ.
Քու հօրդ որդիները քեզի երկրպագութիւն բնեն։
9—Ցուդա առիւծի ձագ է.
Որդեակ իմ, կողոպտուելն ելար.
Առիւծի պէս ծռնկ կրկնեց, մեռեակ առիւծի պէս պառկեցաւ.
Զանիկա ո՞վ պիտի արթնցնէ։
10—Իշխանութիւնը Յուդայէ պիտի չպակսի,
Ոչ ալ անոր օրէնսդրութեան մէջտեղէն օրէնսդիրը,
Մինչև որ Սիլովը գայ.
Ու ժողովուրդները անոր պիտի հնազանդին։
11—Իր յաւանակը որթին պիտի կապէ.
Ու իր էգ իշուն ձագը ամենէն ազնիկ որթին.
Իր պատմուճանը գինիով պիտի լուայ,
Ու իր հանդերձը խաղողի արիւնով։
12—Իր աչքերը գինիէն կարմիր,
Ու իր ակռաները կաթէն ճերմակ պիտի ըլլան։
13—Զաբուղոն ծովեզրը պիտի բնակի,
Ու անիկա նաւահանգիստ պիտի ըլլայ,
Ու անոր սահմանը մինչև Սիդոն հասնի։
14—Իսաքար ուժեղ էշ մըն է
Որ գոմերուն մէջտեղ կը պառկի,
15—Ու տեսաւ որ հանգստութիւնը ազնիկ էր,
Ու երկիրը՝ որ գեղեցիկ էր,
Իր ուսը բեռցնելու խոնարհեցաւ,
Ու հարկատու ծառայ եղաւ։
16—Դան իր ժողովուրդը պիտի դատէ,
Իսրայէլի ցեղերէն մէկուն պէս։
17—Դան ճամբու վրայ օձ մը պիտի ըլայ,
Ու ճամբու վրայ իժ մը,
Որ ձիուն գարշապարը կը խածնէ,
Այնպէս որ հեծեալը հետ կ'իյնայ։
18—Ով Տէր, քու փրկութեանդ ապասէի։
19—Գադ՝ գունդ մը վրան պիտի յարձակի.
Բայց վերջապէս ինք պիտի յարձակի։
20—Ասերի հացը պարարտ պիտի ըլլայ.
Ու ինք թագաւորի համադամ կերակուրները պիտի տայ.
21—Նեփթաղիմ գեղեցիկ խօսքեր ասող
Ազատ թողած եղջերու մըն է։
22 Յովսէփ պտղաստու ասո մըն է,
Աղբիւրի քով պտղաստու ասո մը,
Որուն բողբոջները պատի վրայ կ'ելլեն.
23—Ագեղնաւորները վշտացուցին զանիկա,
Ու նետահարեցին եւ ատելութեամբ զանիկա
24—Բայց անոր ապեղը զօրաւոր մնաց,
Ու իր ձեռքերուն բազուկները ուժեղացան,
Յակոբի Հզօր Աբիրէնէն ձեռքերվը,
Իսրայէլի վէմը եղող հովիւը անկէ է,
25—Աէլ՝ քու Հօրդ Աստուածմէն է՝ որ քեզի պիտի օգնէ,
Ու Ամենակարողն՝ որ քեզ պիտի օրհնէ,
Վերէն երկինքի օրհնութիւններովը,
Ու վարը պառկող խորութեան օրհնութիւններովը,
Ծիծերուն ու արգանդին օրհնութիւններովը,

---

*Ախիդեն, խաղաղը, կամ, որուն կը վայլէ

26—Քան հօրդ օրհնութիւնները *իմ նախնիքներուս օրհնութիւններէն Մինչև յաւիտենական բլուրներուն գագաթը՝ զօրացան. Յակոբի գլուխն վրայ պիտի բլլան, Ու անոր գագաթին վրայ՝ որ իր եղբայրներէն գերազանց է։

27—Բնիմամին պատառազ գայլ պիտի բլլայ. Առաւուանց զրոը պիտի ուտէ, Ու գիշերը կողոպտար պիտի բաժնէ։

28—Ամէն ասոնք իսրայէլի տասուերկու ցեղերն են. և այս է՝ զոր ատենոց հայրը խօսեցաւ անոնց, ու օրհնեց զանոնք. ամէն մէկուն օրհնութիւնը պէս օրհնեց զանոնք։ 29—Ու պատուիրեց անոնց ու բսաւ, Ես իմ ժողովրդիս պիտի խառնուիմ. իմ հայրերուս հետ այն ս բրին մէջ թաղեցէք զիս, որ Քեւսացի Եփրոնի արտին մէջ է. 30—Այն արտին մէջ՝ որ Քանանու երկրին՝ Մամբրէի դիմաց եղող Մաքփելայի արտին մէջ է, զոր Աբրահամ արտին հետ մէկտեղ գերեզմանի կալուածքի համար Քեւսացի Եփրոնէ ծախու առաւ։ 31—Աբրահամը ու անոր կինը Սառան հոն թաղեցին. Իսահակ ու անոր կինը Ռեբեկան հոն թաղեցին. Ես ալ Լիան հոն թաղեցի։ 32—Այն արտը ու հոն եղած այրը Քեւսի որդիներէն ծախու առնուեցան։ Ու Յակոբ երբ լմնցուց իր որդիներուն պատուէր տալը, իր ոտքերը անկողինին մէջ ժողվեց. ու հոգին ւսւանդեց, և իր ժողովրդին խառնուեցաւ։

Գլ. ՝ծ

Ու Յովսէփ իր հօրը երեսին վրայ ինկաւ, ու լացաւ անոր վրայ, և համբուրեց զանիկա։ 2—Ու Յովսէփ իր բժիշկ ծառաներուն հրամայեց որ իր հայրը զմռսեն. և բժիշկները զմռսեցին Իսրայէլը։ 3—Ու անոր համառասն օրը լմնցաւ. վասն զի զմռսուածներուն օրերը այսպէս կը լմնցնային. և Եգիպտացիք անոր համար երեսուն աւուր բրին։ 4—Ու երբ անոր սուգին օրերը անցան, Յովսէփ զրուցեց Փարաւոնի տանը՝ բսելով, Եթէ հիմա ձեր առջև շնորհք գտայ, կ՝ապաչեմ ձեզի, Փարաւոնի ականջին զրուցեցէք ու բսէք, 5—Իմ հայրս ինծի երդումէ բնել տուաւ՝ բսելով, Ահա ես կը մեռնիմ. իմ գերեզմանիս մէջ, զոր ես ինծի համար Քանանու երկրին մէջ փորեցի, հոն զիս թաղես. և հիմա շնորհք բրէ, իմ հայրս թաղելու ելլեմ, ու նորէն գամ։ 6—Ու Փարաւոն բսաւ, Ելիր ու թաղէ քու հայրդ, ինչպես անիկա քեզի երդումէ բնել տուաւ։

7—Ու Յովսէփ իր հայրը թաղելու ելաւ. և Փարաւոնի բոլոր ծառաները, անոր տանը ծերերը ու Եգիպտոսի երկրին բոլոր ծերերը անոր հետ ելան. 8—Նաև Յովսէփի բոլոր տունը ու անոր եղբայրները և անոր հօրը տունը. միայն իրենց բնտանիքները ու իրենց հօտերը և իրենց արջառները Գեսեմի երկրին մէջ թողուցին։ 9—Ու անոր հետ կառքեր ու ձիաւորներ ելան, ու չատ մեծ բանակ մը եղաւ. 10—Ու հասան Առադի կալը, որ Յորդանանի անդիի կողմն է. հոն մեծ ու խիստ սասիկ լացով մը ողբացին, և իր հօրը համար հօթը օր սուգ բրաւ։ 11—Ու այն երկրին մէջ բնակող Քանանացիները երբ տեսան Առադի կալին մէջ սուգին հանդիսը, բսին, Այս մեծ սուգ մը բլլալու է Եգիպտացիներուն. անոր համար անոր անունը *Աբէլմիսրայիմ դրին, որ Յորդանանի անդիի կողմն է։ 12—Ու անոր որդիները բրին անոր՝ ինչպես պատուիրեր էր։ 13—Ու անոր որդիները Քանանու երկիրը տարին զանիկա, ու թաղեցին զանիկա Մամբրէի դիմաց եղող Մաքփելայի արտին մէջ, զոր Աբրահամ գերեզմանի կալուածքի համար ծախու առաւ արտին հետ մէկտեղ Քեւսացի Եփրոնէ։ 14—Ու Յովսէփ իր հայրը թաղելէն ետև Եգիպտոս դարձաւ, ինք ու իր եղբայրները և այն ամէնը որ իրեն հետ իր հայրը թաղելու ելան։

*Կամ, մէնդիներուս որ լեռներուն օրհնութիւններէն, և յաւիտենական բլուրներուն վայելքներէն

*Այսինքն, սուգ Եգիպտացւոց

15 Ու Յովսէփի եղբայրները տեսնելով որ իրենց հայրը մեռաւ, բսին էրէնց հէլ, Գուցէ Յովսէփ մե պահելով՝ պիտի հատուցանէ մեզի այն ամէն չարիքը զոր բրինք իրեն։ 16—Ու Յովսէփի պատգամատար զրկեցին՝ բսելով, Քու հայրդ մեռնելէն առաջ պատուիրեց դէն ս բսաւ, Յովսէփի այսպէս բսէք. 17—Հիմա շնորհք բրէ, քու եղբայրներուդ յանցանքը ու անոնց մեղքը ներէ, վասն զի քեզի չարութիւն բրին. և հիմա կ՝ապաչենք քեզի, քու հօրդ Աստուծոյն ծառաներուն յանցանքը ներէ։ Ու Յովսէփ լացաւ երբ անոնք խօսեցան իրեն։ 18—Ու անոր եղբայրներն ալ գացին, և անոր առջև ինկան, ու բսին, Ահա մենք քու ծառաներդ ենք։ 19—Ու Յովսէփ բսաւ անոնց, Մի վախնաք, միթէ ես Աստուծոյ տե՞ղն եմ. 20—Ու քիչ մը որ ինծի դէմ չարութիւն խորհեցաք, Աստուած զայն ապէկ դ՝ործել խորհեցաւ. այնպէս որ այս օրս ան եղածին պէս՝ շատ ժողովրդ ապրեցնէ։ 21—Ու հիմա մի վախնաք, ես հոգ ու ձեր ընտանիքներդը պիտի կերակրեմ. Այսպէս մխիթարեց զանոնք *քաջալերելով։

22—Ու Յովսէփ Եգիպտոս բնակեցաւ, ինք և իր հօրը տունը. և Յովսէփ հարիւր տասը տարի ապրեցաւ։ 23—Ու Յովսէփ Եփրեմի որդիները մինչև երրորդ սերունդը տեսաւ, և Մանասէի որդւոյն Մաքիրի որդիները ալ Յովսէփի ծունկերուն վրայ ծնան։

24—Ու Յովսէփ իր եղբայրներուն բսաւ, Ահա ես կը մեռնիմ, ու Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի բնէ, ու ձեզ այս երկրէն պիտի հանէ դէպ ի այն երկիրը՝ որու համար ինք երդում բրաւ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի։ 25—Ու Յովսէփ Իսրայէլի որդիներուն երդում ընել տուաւ՝ բսելով, Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու իմ ոսկորներս ասկէ հանէք։ 26—Ու Յովսէփ հարիւր տասը տարեկան բլլալով մեռաւ. ու զմռսեցին զանիկա, և տապանի մը մէջ դրին Եգիպտոսի մէջ։

*Կամ, մխիթարեց զանոնք *քաջալերեց

ԳԻՐՔ ԵԼԻՑ

ԳԼՈՒԽ Ա

Ե՝ Եգիպտոս գացող Իսրայէլի որդիներուն անուններուն ասոնք են. ամէն մէկը իր տունովը Յակոբի հետ գնաց. 2—Ռուբէն, Շմուէոն, Ղեւի ու Յուդա, 3—Իսաքար, Զաբուղոն և Բենիամին, 4—Դան ու Նեփթաղիմ, Գադ ու Ասեր. 5—Ե՝ Յակոբի երանգին եղած բոլոր հոգիները եօթանասուն հոգի էին. Յովսէփ ալ Եգիպտոս էր. 6—Ե՝ Յովսէփ ու անոր բոլոր եղբայրները և բոլոր այն ազգը մեռան. 7—Ե՝ Իսրայէլի որդիները աճեցան ու բազմացան և շատացան ու խիստ զօրացան. և այն երկիրը անոնցմով լեցուեցաւ.

8—Ուրիշ Եգիպտոսի վրայ նոր թագաւոր մը եկաւ, որ Յովսէփը չէր ճանչնար. 9—Ե՝ անկէ բսաւ իր ժողովրդին, Ահա Իսրայէլի որդիները մեզմէ շատ ու զօրաւոր են. 10—Եկէք խնամութիւն բանեցնենք անոնց դէմ, որ չըլլայ թէ շատնան, ու երբ պատերազմ պատահելու ըլլայ, անոնք ալ մեր թշնամիներուն հետ միանան, ու մեզի դէմ պատերազմին, և այս երկրէն երթան. 11—Անոր համար գործավարներ դրին անոնց վրայ, զանոնք իրենց ծանր գործերովը. և Փարաւոնի շտեմարանի քաղաքները, Փիթոմ ու Ռամսէս, շինեցին. 12—Ե՝ որչափ կը չարչարէին զանոնք, այնչափ ալ աւելի կը շատնային ու կ՝աճէին. և անոնք Իսրայէլի որդիներէն ձանձրացան. 13—Ե՝ Եգիպտացիք բանութեամբ կը ծառայեցնէին Իսրայէլի որդիները. 14—Ե՝ անոնց կեանքը ծանր գործով, կաւով ու պատերով և դաշտին ամէն գործովը կը դառնացնէին. ինչ ծառայութիւն որ անոնց բնել տային՝ բանութեամբ էր.

15—Ե՝ Եգիպտոսի թագաւորը խօսեցաւ Սեպտուագինտայ ժանկաբարձներուն, որոնց մէկուն անունը Սեփրա ու միւսին անունը Փուա էր. 16—Ե՝ բսաւ, Սեպտուագի կիներուն ծագքը առած աեւնիդ՝ նստարաններուն վրայ նայիլիք, եթէ ոգի է՝ մեռցնէք զանիկա, և եթէ ազիկ է՝ թող ազի մեայ. 17—Բայց ժանկաբարձները Աստուծմէ վախցան, ու Եգիպտոսի թագաւորին իրէնց բսածին պէս չըրին. հապա արուները ազի կը թողուին. 18—Ե՝ Եգիպտոսի թագաւորը կանչեց ժանկաբարձներըն, ու բսաւ անոնց, Ինչո՞ւ այս բանը ըրիք, ու արուները ազի թողուցիք. 19—Ե՝ ժանկաբարձները բսին Փարաւոնի, Զանզի Սեպտուագի կիները Եգիպտացի կիներուն պէս չեն. վասն զի առոյգ են. ժանկաբարձը անոնց չգացած՝ կը ծնանին. 20—Անոր համար Աստուած ժանկաբարձներուն բարիք ըրաւ. և ժողովուրդը շատցաւ ու խիստ զօրացաւ. 21—Ե՝ եղաւ որ ժանկաբարձներուն Աստուծմէ վախնալուն համար, անոնց տուներ չմնաց. 22—Ե՝ Փարաւոն իր բոլոր ժողովուրդին հրամայեց՝ բսելով, Ամէն ծնած արուն գետը նետեցէք, և ամէն ազիկը ազի թողուցէք.

ԳԼ. Բ

Ե՝ Ղեւիի տունէն մէկը գնաց, ու Ղեւիի դէն ազիկը կը տանուր. 2—Ե՝ կինը յղացաւ, ու որդի մը ծնաւ. և անոր գեղեցիկ բլլալը տեսնելով՝ երեք ամիս պահեց զանիկա. 3—Ե՝ երբ ա՛լ չէր կրնար պահել զանիկա, պատրաստեց տապանակ մը առաւ անոր համար, և կպրտով ու ձիթոփ ծեփեց, և ոգան մէջը դրաւ, ու գետին եղերքը եղած շտրին մէջ ձգեց. 4—Ե՝ անոր քոյրը հեռու կայնեցաւ, որպէս զի տեսնէ թէ ի՛նչ պիտի պատահի անոր. 5—Ե՝ Փարաւոնի աղջիկը գետ իյաւ լուացուելու, և անոր ազախիններն գետին եղերքը կը պտըտէին. և երբ անիկա տապանակը տեսաւ, իր ազախինը զրկեց, որ բերաւ զանիկա. 6—Ե՝ երբ բացաւ, ոգան տեսաւ, և ահա ոգան կու լար. և խղճաց անոր վրայ, ու բսաւ, Սոկա Սբրայեցւոց ազգերնէն է. 7—Ե՝ քոյրը անոր ըսաւ Փարաւոնի աղջկան, Երթամ ու քեզի Սբրայեցիներէն ծիծ ատող կին մը կանչեմ, որ ոգան սնուցանէ քեզի համար. 8—Ե՝ Փարաւոնի աղջիկը բսաւ անոր, Գնա. և աղջիկը գնաց, ու ոգան մայրը կանչեց. 9—Ե՝ Փարաւոնի աղջիկը բսաւ անոր, Առ այս ոգան՝ որ ինծի սնուցանես ինծի համար, ու ես քու վարձդ կու տամ. և կինը առաւ ոգան ու սնուց զանիկա. 10—Երբ ոգան մեծցաւ, Փարաւոնի աղջկան բերաւ զանիկա, ու անոր որդին եղաւ. և անոր անունը Մովսէս դրաւ, ու բսաւ, Զանի՛ քաշելուն համար զանիկա.

11—Ե՝ այն օրերը երբ Մովսէս մեծցաւ, իր եղբայրներուն ելաւ, ու անոնց ծանր գործերուն նայեցաւ. և տեսաւ Եգիպտացի մը՝ որ իր Սբրայեցի եղբայրներէն մէկը կը ծեծէր. 12—Ե՝ երբ անդին ասդին նայելով տեսաւ որ մարդ չկայ, մեռցուց Եգիպտացին, ու ոգան ծածկ զանիկա. 13—Ե՝ հետևեալ օրը ելաւ, և ահա երկու Սբրայեցի մարդիկ կը կռուէին իրարու հետ, և բսաւ անոր որ իրաւունք չունէր, Ինչո՞ւ քու բնկերիդ կը զարնես. 14—Ե՝ անիկա բսաւ, Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ. դի՞ս ալ մեռցնելու միտք ունիս, ինչպէս Եգիպտացին մեռցուցիր. Ե՝ Մովսէս վախցաւ ու բսաւ, Անշո՛ւշտ այս բանը խնդացած է.

15—Ե՝ երբ Փարաւոն լսեց այս բանը, Մովսէսը մեռցնել կ՝ուզէր, բայց Մովսէս Փարաւոնի երեսէն փախաւ, ու Մադիամա երկիրը բնակեցաւ. և հորի մը քով նստաւ. 16—Ե՝ Մադիամա քուրմը եօթը աղիկ ունէր. ու անոնք եկան և ջուր փչրցնին, ու իրենց հօրը հօտը խմցնելու համար աւազանները լեցուցին. 17—Ե՝ հովիւները եկան ու վռնտեցին զանոնք. և Մովսէս ելաւ ու օգնեց անոնց, և անոնց հօտին ջուր խմցուց. 18—Ե՝ երբ անոնք իրենց հօրը Ռագուէլի եկան, անկէ բսաւ, Այսօր ինչ պատճառ չուտ եկաք. 19—Ե՝ բսին, Եգիպտացի մը մեզ հովիւներուն ձեռքէն ազատեց, ու մեզի ալ չատ ջուր քաշեց, ու հօտին խմցուց. 20—Ան ալ բսաւ իր աղիկներուն, Ե՝ր է անիկա. ինչո՞ւ այն մարդը այդպէս թող ասիք. կանչեցէք զանիկա՝ որպէս զի հաց ուտէ. 21—Ե՝ Մովսէս հանգչուցաւ այն մարդուն հետ բնակիլ, ու անիկա իր Սեպփորա ազիկը Մովսէսի տուաւ. 22—Ե՝ ինք որդի մը ծնաւ, և անիկա անոր անունը *Գերսամ դրաւ. քանզի բսաւ, Պանդխտ եղայ օտար երկրի մէջ.

23—Ե՝ եղաւ որ չատ օրերէն հոգը Եգիպտոսի թագաւորը մեռաւ, և Իսրայէլի որդիները ծառայութեան պատճառաւ հառաչեցին ու ազազակեցին. և ծառայութեան համար անոնց ազազակը Աստուծոյ եկաւ. 24—Ե՝ Աստուած անոնց հեծծութիւնը լսեց. ու Աստուած յիշեց իր ուխտ՝ զոր Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ եդեր էր. 25—Ե՝ Աստուած նայեցաւ Իսրայէլի որդիներուն վրայ, ու Աստուած գիտցաւ անոնց վի՛ճակը.

ԳԼ. Գ

Ե՝ Մովսէս Մադիամա քուրմին իր Յեթրո անունով հօտը կ՝արածէր. ու հօտը անապատին հետև քշելով Աստուծոյ լեռը, Հորեբ, եկաւ. 2—Ե՝ Տէրոջը հրեշտակը կրակի բոցով մորենիին մէջէն երեցաւ անոր. և անիկա տեսաւ որ ահա մորենին կրակով կը վառէր, բայց մորենին չէը ոչնաներ. 3—Ե՝ Մովսէս բսաւ, Հիմա գառնամ ու այս մեծ տեսարանը տեսնեմ՝ թէ ինչո՞ւ համար մորենին չայրիր. 4—Ե՝ Տէրը տեսաւ որ անիկա տեսնելու դարձաւ, Աստուած մորենիին մէջէն կանչեց անոր ու բսաւ, Մովսէս, Մովսէս.

*Այսինքն, Յաւերեն հանուած

*Այսինքն. հոն պանդխտացած

և անիկա բսաւ, Ահա հաս եմ։ 5—Ու Աբրահամ բսաւ, Հաս մի մտանեար։ կաշխիներդ հանէ քու առքերէդ, վասն զի այն տեղը՝ որուն վրայ կայներ ես, սուրբ երկիր է։ 6—Նաև բսաւ ցՆոյ, Ես եմ քու հօրդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը։ և Մովսես իր երեսը պահեց, վասն զի Աստուծոյ նայելու վախցաւ։

7—Ու Տէրը բսաւ, Եգիպտոսի մէջ եղող ժողովրդիս չարչարանքը արդարև տեսայ, և գործակալներուն պատճառաւ անոնց Աբշոշոթ ազաղակը լսեցի։ վասն զի անոնց նեղութիւնները գիտեմ։ 8—Ու զանոնք Եգիպտացւոց ձեռքէն ազատելու, ու զանոնք այն երկրէն ալկ ու լայնարձակ երկիր մը, կաթ ու մեղր բղխող երկիր մը, Քանանացւոց ու Փերեզացւոց և Եւեացւոց ու Եբուսացւոց տեղը, հանելու իջայ։ 9—Ու ահա հիմա Իսրայէլի որդիներուն ազաղակը ինծի հասած է. ու Եգիպտացիներուն անոնց բռած հարատահարութիւնն ալ տեսայ։ 10—Ուստի եկուր հիմա՝ քեզ Փարաւոնի դրկեմ, և իմ ժողովրդս Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հանեես։ 11—Ու Մովսես բսաւ Աստուծոյ, Ես ո՞վ եմ՝ որ Փարաւոնի երթամ, ու Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հանեմ։ 12—Ու բսաւ, Անշուշտ ես քեզի հետ պիտի ըլլամ, և այս ըլլայ քեզի նշան՝ որ ես քեզ դրկեր եմ։ երբ ժողովրդը Եգիպտոսէ հանեես, այս լեռանը վրայ պիտի պաշտէք զԱստուած։

13—Ու Մովսես բսաւ Աստուծոյ, Ահա ես կ'երթամ Իսրայէլի որդիներուն ու կ'բսեմ անոնց, Ձեր հայրերուն Աստուածը զիս ձեզի դրկեց։ և Էէ բսեն ինծի թէ ինչ է անոր անունը, ինչ բսեմ անոնց։ 14—Ու Աստուած բսաւ Մովսեսի, Ես եմ ՈՐ Էնեմ Ես բսաւ, Այսպէս պիտի բսես Իսրայէլի որդիներուն. Զիս ՈՐ էն դրկեց ձեզի։ 15—Ու դարձեալ Աստուած բսաւ Մովսեսի, Այսպէս պիտի բսես Իսրայէլի որդիներուն. Ձեր հայրերուն Եհովա Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը զիս ձեզի դրկեց։ իմ անունս յաւիտեան այս է, և ազգէ ազգ իմ յիշատակս այս է։ 16—Գնա Իսրայէլի ծերերը ժողվէ, ու բսէ անոնց, Ձեր հայրերուն Եհովա Աստուածը, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի Աստուածը, Երեւցաւ ինծի բսելով, Արդարև այցելութիւն ըրի ձեզի, ու Եգիպտոսի մէջ ձեր քաշածը տեսայ։ 17—Ու բսի որ ձեզ Եգիպտոսի չարչարանքէն դէպ ի Քանանացւոց ու Փերեզացւոց և Եբուսացւոց ու Փերեզացւոց և Եւեացւոց ու Յեբուսացւոց երկիրը, կաթ ու մեղր բղխող երկիրը, տանեմ։ 18—Ու անոնք քու ձայնիդ մտիկ պիտի բնեն. և դուն ու Իսրայէլի ծերերը Եգիպտոսի թագաւորին պիտի մտնէք, ու բսէք անոր, Եբրայեցւոց Աստուածը Եհովա մեզի հանդիպեցաւ։ և հիմա կ'ապաչենք, երթք օրուան ճամբայ երթանք դէպ ի անապատը, որպէս զի մեր Եհովա Աստուծոյն զոհ մատուցանենք։ 19—Ու ես գիտեմ որ Եգիպտոսի թագաւորը պիտի չթողու ձեզ որ երթաք, *ոչ ալ զօրաւոր ձեռքով։ 20—Ու ես ձեռքս պիտի երկնցնեմ, ու պիտի զարնեմ Եգիպտոսը իմ ամէն հրաշքներովս զոր բանք անոր մէջ պիտի բնեմ. և անկէ ետքը ձեզ պիտի թողու որ երթաք։ 21—Ու այս ժողովրդին շնորհք պիտի տամ Եգիպտացւոց առջեւ. ու երբ երթաք, դատարկ պիտի չերթաք։ 22—Հապա ամէն կին իր դրացիին ու իր տանը մէջ բնակող կնոջմէն արծաթեղէն զարդեր ու ոսկիեղէն զարդեր ու հանդերձներ պիտի խնդրէ, և ընդ ձեր որդիներուն ու աղջիկներուն վրայ պիտի դնէք. ու Եգիպտոսը պիտի կողոպտէք

Գլ. Դ

Ու Մովսես պատասխան տուաւ ու բսաւ, Բայց ահա անոնք ինծի պիտի չհաւատան, ոչ ալ իմ ձայնս մտիկ պիտի բնեն. քանզի պիտի բսեն Թէ Տէրը քեզի չերեւցաւ։ 2—Ու Տէրը բսաւ անոր, Այդ քու ձեռքիդ մէջ է։ և անիկա բսաւ, Գետաղան։ 3—Ու բսաւ

*կամ, Եթէ ոչ

ընդ, Գետինը ձգէ զայն։ և զանիկա գետինը ձգեց, ու օձ եղաւ։ և Մովսես անոր առջեւէն փախաւ։ 4—Ու Տէրը բսաւ Մովսեսի, Ձեռքդ երկնցուր ու պոչէն բռնէ։ և անիկա իր ձեռքը երկնցուց ու զանիկա բռնեց, և գաւազան եղաւ իր ձեռքին մէջ։ 5—Որպէս զի հաւատան Թէ իրենց հայրերուն Տէր Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը երեւցաւ քեզի։

6—Ու Տէրը դարձեալ բսաւ անոր, Հիմա քու ձեռքդ ծոցդ դիր։ ու անիկա իր ձեռքը ծոցը դրաւ։ և երբ դուրս հանեց, ահա իր ձեռքը ձիւնի պէս ԱԷրմէ բորտա եղաւ։ 7—Ու Տէրը բսաւ, Ձեռքդ նորէն ծոցդ դիր։ և անիկա նորէն իր ձեռքը ծոցը դրաւ, և երբ ծոցէն հանեց, ահա նորէն իր ԲՆԱԿԱՆ մարմինին պէս եղաւ։ 8—Ու բսաւ որ՝ եթէ քեզի չհաւատան ու առաջին նշանին ձայնին մտիկ չընեն, հաւքի նշանին ձայնին պիտի հաւատան։ 9—Իսկ եթէ այս երկու նշաններուն ալ չհաւատան, ու քու ձայնիդ ալ մտիկ չընեն, գետին կ'առնես առ, ու ցամաքը էՒՒՒԸ կ'ըլլայ։ և այն ջուրը որ գետէն առիր, ցամաքին վրայ պիտի ըլլայ։

10—Ու Մովսես բսաւ Տէրոջը, Ո՜հ, Տէր իմ, ես ճարտասան չեմ, ոչ երեկուընէ ու միւս օրուընէ, ոչ ալ ծառայիդ հետ խօսելէդ ետեւ. հապա ես ծանրախօս ու ծանրալեզու եմ։ 11—Ու Տէրը բսաւ անոր, Ո՞վ առաւ մարդուն բերան, կամ ո՞վ բրաւ համր կամ խուլը կամ աչք ունեցողը կամ կուրը. չէ՞ որ ես Տէրս։ 12—Ուստի գնա հիմա, ու ես քու բերնիդ հետ պիտի ըլլամ, և քեզի պիտի սորվեցնեմ թէ որ պիտի խօսիս։ 13—Ու անիկա բսաւ, Ո՜հ, Տէր իմ, կ'աղաչեմ, այս դարձիդ ձեռքով զրկել կ'ուզես՝ զրկէ։ 14—Ու Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ Մովսեսի դէմ, ու բսաւ, Ղեւտացի Ահարոն քու եղբայրդ չէ՞։ ես գիտեմ որ անիկա ճարտասան է. նաև ահա անիկա քեզ դիմաւորելու պիտի ելլէ, և քեզ տեսածին պէս իր սրտին մէջ պիտի ուրախանայ։ 15—Ու անոր խօսիս և զքեզ և զանիկա բերանը բերանին հետ պիտի ըլլամ, ու ձեզի պիտի սորվեցնեմ, թէ որ պիտի ընէք։ 16—Ու քու տեղդ անիկա քու ժողովրդին համար պիտի խօսի, և անիկա քեզի բերնի տեղ ըլլայ, ու դուն անոր Աստուծոյ նման ըլլաս։ 17—Ու այս գաւազանը ձեռքդ առ, որպէս զի անով նշաններըը ընես։

18—Ու Մովսես գնաց ու իր Յեթրոյ անեղբօրը գարձաւ, ու բսաւ անոր, Հիմա երթամ ու Եգիպտոսի մէջ եղող եղբայրներուս գառնամ, և նայիմ թէ տակաւին ա՞ղէ են անոնք։ ու Յեթրո բսաւ Մովսեսի, Գնա խաղաղութեամբ։ 19—Ու Տէրը Մադիամի մէջ բսաւ Մովսեսի, Գնա, Եգիպտոս գարձիր, վասն զի քու կեանքդ փնտռող բոլոր մարդիկը մեռան։ 20—Ու Մովսես իր կիները ու իր որդիները առաւ, և իշուս վրայ հեծցուց գառնալ։ և Եգիպտոսի երկիրը գարձաւ։ և Մովսես Աստուծոյ գաւազանը իր ձեռքը առաւ։ 21—Ու Տէրը բսաւ Մովսեսի, Երբ գառնաս՝ Եգիպտոս երթաս, նայէ որ փարաւոնի առջեւ բոլոր հրաշքները բնես, զորոնք քու ձեռքդ դրի. և ես անոր սիրտը պիտի խստացնեմ, ու ժողովուրդը պիտի չթողու։ 22—Ու բսես Փարաւոնի, Տէրը այսպէս կ'ըսէ, Իսրայէլ իմ որդիս, իմ անդրանիկս է։ 23—Ու քեզի կ'ըսեմ, Իմ որդիս թող ասր, որպէս զի զիս պաշտէ. բայց եթէ զանիկա թող տալ չուզես, ահա ես քու որդիդ, ՀՈՎՀՈՒՆ քու անդրանիկդ, կ'սպաննեմ։

24—Ու եղաւ որ ճամբան իջած տեղը Տէրը անոր պատահեցաւ, և ուզեց սպանել զանիկա։ 25—Ուստի Սեպփորա սուր քար մը առաւ, ու իր որդւոյն անթլփատութիւնը թլփատեց, և անոր ոտքերուն ձգեց, ու բսաւ, Իրաւցնէ դուն ինծի արիւնոտ այր մըն ես։ 26—Այսպէս Տէրը թող առաւ զանիկա. այն ատեն թլփատութեանը համար Սեպփորա բսաւ, Արիւնոտ այր մըն ես։

27—Ու Տէրը բսաւ Ահարոնի, Գնա անապատը Մովսեսը դիմաւորելու։ և անիկա գնաց ու Աստուծոյ լեռանը վրայ պատահեցաւ անոր, և համբուրեց

զանիկա։ 28—Եւ Մովսէս պատմեց Ահարոնի Տէրոջը բոլոր խօսքերը որ ղրկեց ղինք, և բոլոր նշանները զորանք իրեն պատուիրեց։

29—Եւ Մովսէս ու Ահարոն գացին, ու Իսրայէլի արդիներուն բոլոր ծերերը ժողվեցին։ 30—Եւ Ահարոն Տէրոջը Մովսէսի ըսած բոլոր խօսքերը պատմեց անոնց. ու ժողովուրդին առին նշաններն ալ։ 31—Եւ ժողովուրդը հաւատաց. և երբ լսեցին թէ Տէրը այցելութիւն ըրած է Իսրայէլի արդիներուն, և թէ անոնց նեղութիւնները նայած է, խոնարհեցան ու երկրպագութիւն ըրին։

Գլ. Ե

Ետքը Մովսէս ու Ահարոն, փարաւոնի մնան ու ըսին, Իսրայէլի Տէրը Աստուածը այսպէս կ'ըսէ, Իմ ժողովուրդս թող աուր, որպէս զի անապատին մէջ ինծի տօնախմբութիւն ընեն։ 2—Եւ փարաւոն ըսաւ, Տէրոջ ո՞վ է, որ անոր խօսքը մնիկ ընդունի՝ Իսրայէլը թող աուր. Տէրոջն չեմ ճանչնար, և Իսրայէլն ալ չեմ թողուր։ 3—Եւ անոնք ըսին, Եբրայեցոց Աստուածը մեզի հանդիպեցաւ. հրաման տուր որ երեք օրուան ճամբայ անապատը երթանք, ու մեր Տէրոջ Աստուածոյն զոհ մատուցանենք, որ չըլլայ թէ ժանտախտով կամ սրով մեզի դէմ ելլէ։ 4—Եւ Եգիպտոսի թագաւորն ըսաւ անոնց, Ով Մովսէս ու Ահարոն, ինչո՞ւ ժողովուրդը իրենց գործերէն կու կը թողուք. գացէք աշխատեցնեցէք։ 5—Եւ փարաւոն ըսաւ, Ահա հիմա երկրին ժողովուրդը շատ է, ու դուք կը հանդրոսցնէք զանոնք իրենց գործերէն։

6—Եւ փարաւոն այն օրը ժողովուրդին գործակատարներուն ու անոնց վերակացուներուն հրամայեց՝ ըսելով, 7—Երկկոտան ու մլաս օրուան պէս՝ ա՛լ մէչ մրնալ ժողովուրդին չարդ մի տաք պատս չինելու համար. թող իրենք երթան ու իրենց չարդ ժողվեն։ 8—Եւ ապրանքներուն սակը, ինչպես առաջ կը շինէին, անոնց վրայ դրէք, անկէ մի պակսեցնէք. վասն զի ծոյլ են, ասոր համար կ'ըսեն՝ գոհանք ըսելով, ներեցէք մեր Աստուծոյն գոհ մատուցանենք։ 9—Թող գործը այս մարդոց վրայ ծանրանայ, որպէս զի անով աշխատին, ու փուճ խօսքերու մտիկ չընեն։ 10—Ե ժողովուրդին գործավարներն ու վերակացուները ելան, և ժողովուրդին խօսեցան՝ ըսելով, Փարաւոն այսպէս կ'ըսէ, Ես ձեզի չարդ չեմ տար։ 11—Դուք գացէք, ձեզի չարդ առէք, ուր տեղ որ կրնաք գտնել. բայց ձեր գործէն բան մը պիտի չպակսի։ 12—Ամբողջ ժողովուրդը ենգիպտոսի բոլոր երկրին մէջ ցրուեցան՝ չարդի տեղ խոպան ժողվելու համար։ 13—Եւ գործավարները կը սպրդեին՝ ըսելով, Ձեր ամէն օրուան գործը լլկեցուցէք, ինչպէս երբ չարդ առնիք։ 14—Եւ փարաւոնի գործավարները Իսրայէլի արդիներուն վրայ իրենց դրած վերակացուները ծեծեցին ու ըսին, Ձեր վրայ գրուած պիտի անբարան սակը երէկ ու այսօր ինչո՞ւ չլրնցուցիք առպրատան պէս։

15—Եւ Իսրայէլի արդիներուն վերակացուները եկան ու փարաւոնի բազդեցին՝ ըսելով, Ինչո՞ւ քու ծառաներուդ այսպէս կ'ընես։ 16—Քու ծառաներուդ չարդ չեն տար, ու մեզի կ'ըսեն թէ Աղիւսներ չընեցէք. և ահա քու ծառաներդ ծեծ կրեան, ու յանցանքը քու ժողովուրդիդն է։ 17—Եւ անիկա բսաւ, Դուք եք դատ, ծոյլ. անոր համար կ'ըսէք թէ երթանք Տէրոջը զոհ մատուցանենք։ 18—Ուստի հիմա գացէք բանեցէք, ու ձեզի չարդ պիտի չտրուի, բայց ապրանքուան սակը պիտի տաք։ 19—Եւ Իսրայէլի արդիներուն վերակացուները ինքզինքնին փորձանքի մէջ տեսան, երբ բսաւեցան թէ Ամէն օրուան ձեր վրայ դրուած ապրանքուան թիւէն չպակսեցնէք։ 20—Եւ փարաւոնէ դուրս եկած ատեննին հանդիպեցան Մովսէսի ու Ահարոնի, որ դիրքնիք դիմաւորելու կը սպասէին։ 21—Ու բսին անոնց, Տէրը ձեզի նայի ու դատէ. վասն զի գարշելի եղիք մեր հոտը փարաւոնի առջև, ու անոր ծառաներուն առջև, մեզ սպաննելու համար անոնց ձեռքը սուր տալով։

22—Եւ Մովսէս Տէրոջը դարձաւ ու բսաւ, Ով Տէր, ինչո՞ւ այս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեցիր, և ինչո՞ւ ղրկեցիր. 23—վասն զի քանի որ քու անունովդ փարաւոնի դրացիս եկեր եմ, անկէ՝ այս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեց, ու դուն բնաւ չփրկեցիր քու ժողովուրդդ։

Գլ. Զ

Եւ Տէրը բսաւ Մովսէսի, Փարաւոնի ինչ ընելիքս հիմա պիտի տեսնես. որ չէզոր ձեռքով պիտի թողու զանոնք, ու չէզոր ձեռքով պիտի փռնտէ զանոնք իր երկրէն։ 2—Եւ Աստուած խօսեցաւ Մովսէսի ու բսաւ անոր, Ես եմ Եհովա. 3—Ես Աբրահամի, Իսահակի ու Յակոբի Ամենակարող Աստուծոյ անունով երեցայ. բայց իմ Եհովա անունովս անոնց չյայտնուեցայ։ 4—Նաև անոնց հետ իմ ուխտս հաստատեցի, որ անոնց տամ Քանանա երկիրը, անոնց օտարութեան երկիրը, ուր պանդխտացան։ 5—Ես լսեցի ալ Իսրայէլի արդիներուն հառաչանքը, զորոնք Եգիպտացիները ծառայեցնեն. ու իմ ուխտս յիշեցի։ 6—Անոր համար Իսրայէլի արդիներուն բսէ, Ես եմ Եհովա. և ես ձեզ Եգիպտացոց ծանր գործերուն տակէն պիտի հանեմ, ու ձեզ անոնց ծառայութենէն պիտի ազատեմ, և ձեզ երկնցած բազուկով ու մեծ դատաստաններով պիտի փրկեմ. 7—Ես ձեզ ինծի ժողովուրդ պիտի առնեմ, ու ձեզի Աստուած պիտի ըլլամ. և պիտի գիտնաք որ ձեզ Եգիպտացոց ծանր գործերուն տակէն հանող Տէրը, ձեր Աստուածը, ես եմ։ 8—Եւ ձեզ այն երկիրը պիտի տանիմ, զոր Աբրահամ, Իսահակի ու Յակոբի տալու *երդում ըրի՝ ու զայն ձեզի ժառանգութիւն ըլլալու պիտի տամ. ես եմ Տէրը։ 9—Եւ Մովսէս Իսրայէլի արդիներուն այսպէս զրուցեց. բայց անոնք հոգիի նեղութենէն ու գործին ծանրութենէն մնիկ չընդունեցին։

10—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ բսելով, 11—Մտիր խօսէ Եգիպտոսի փարաւոն թագաւորին՝ որ Իսրայէլի արդիները իր երկրէն արձակէ։ 12—Եւ Մովսէս խօսեցաւ Տէրոջը առջև՝ բսելով, Ահա Իսրայէլի արդիները ինծի մնիկ չընդունին, հապա փարաւոն ինծի ինչպես մնիկ պիտի ընէ. որ ես *ծանրալեզու եմ։ 13—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի, ու հրաման առաւ անոնց՝ որ Իսրայէլի արդիներուն ու Եգիպտոսի փարաւոն թագաւորին քով, Իսրայէլի արդիները Եգիպտոսի երկրէն հանելու համար։

14—Անոնց հայրերուն առներուն գլխաւորները սոսկ են. Իսրայէլի անդրանկան Ռուբէնի արդիները՝ Ենովք, Փալդոս, Եսրոն և Քարմի. սոսկ են Ռուբէնի առներուն։ 15—Ու Շմաոնի արդիները՝ Յամուէլ, Յամին, Ոհադ, Յաքին, Սահաւ, և Քանանացի կնոջ արդի Սաւուղ. սոսկ են Շմաոնի առներուն։ 16—Եւ Ղեւիի արդիներուն անուններուն իրենց ծնունդներուն համեմատ սոսկ են. Գերսոն, Կահաթ և Մերարի։ Ու Ղեւիի կեանքին տարիները հարիւր երեսունեւեօթը տարի եղան։ 17—Գերսոնի արդիները իրենց առներուն համեմատ Ղոբնի ու Սիմէի էին։ 18—Եւ Կահաթի արդիները՝ Ամրամ, Իսհառ, Փեբրոն ու Ոզիէլ։ Ու Կահաթի կեանքին տարիները հարիւր երեսուներեքը տարի եղան։ 19—Եւ Մերարիի արդիները՝ Մոսղի ու Մուսի. Ղեւիի առները իրենց ծնունդներուն համեմատ սոսկ են։ 20—Եւ Ամրամ իր հօրեքսորը Յոքաբեդը իրեն կին առաւ, որ ծնաւ իրեն Ահարոնը ու Մովսէսը։ Ու Ամրամի կեանքին տարիները հարիւր երեսուներեքօթը տարի եղան։ 21—Եւ Իսհառի արդիները՝ Կորհ, Նեփեկ և Զիքրի։ 22—Եւ Ոզիէլի արդիները՝ Միսայէլ, Եղիսափան և Սիքրի։ 23—Եւ Ահարոն իրեն կին առաւ Ամմինադաբի աղջիկը, Նաասոնի քոյրը Եղիսաբեթը, և ծնաւ իրեն Նադաբը ու Աբիհուդը, Եղիազարը ու Իթամարը։ 24—Եւ Կորհի արդիները՝ Ասիր, Եղկանա, և Աբիասափ. սոսկ են

*Եբր. ձեռքս վրը վերցուցի

*Եբր. անթլփատ շրթունքներով

հարեանցոց տաճարը։ 25—Եւ Ահարոնի արքին եղիազար փառաւել տղիներին իրեն կին առաւ. և ծնաւ իրեն փինեհես. սոսկ են Ղեւտացոց հայրերուն գլխաներք իրենց տաճարաւն համեմատ։

26—Սոսկ են այն Ահարոնը ու Մովսէսը՝ որոնց ըսաւ Տէրը, Իսրայէլի որդիները իրենց զօրքերով Եգիպտոսի երկրին հանեցէք։ 27—Իսրայէլի որդիներէն Եգիպտոսէ հանելու համար Եգիպտոսի փարաւոն թագաւորին խօսողները սոսկ են. այս Մովսէսը ու Ահարոնը։

28—Եւ այն օրը որ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ Եգիպտոսի երկրին մէջ, 29—Ան սոսկ Տէրը Մովսէսի զրուցեց՝ ըսելով, Ես եմ Տէրը. ամէն ինչ որ քեզի կ'ըսեմ, Եգիպտոսի փարաւոն թագաւորին խօսէ։ 30—Եւ Մովսէս Տէրոջը առջեւ ըսաւ, Ահա ես *ծանրաբեղուեմ, ու փարաւոն ինչպէս մտիկ պիտի ընէ ինծի։

Գլ. Է

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Նայէ, քեզ Փարաւոնի աստուած ըրի, ու քու եղբայրդ Ահարոն քու մարգարէդ ըլլայ։ 2—Դուն խօսիս այն ամէնը որ քեզի կը հրամայեմ, և քու եղբայրդ Ահարոն Թող խօսի Փարաւոնի՝ որ Իսրայէլի որդիները իր երկրէն արձակէ։ 3—Ես ու Փարաւոնի սիրտը պիտի խստացնեմ, ու իմ նշաններս ու հրաշքներս Եգիպտոսի երկրին մէջ պիտի շատցնեմ։ 4—Եւ Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ. ու ես իմ ձեռքս Եգիպտոսի վրայ պիտի ձգեմ, և իմ զօրքերս, իմ ժողովրդս Իսրայէլի որդիները, մեծ դատաստաններով պիտի հանեմ Եգիպտոսի երկրէն։ 5—Ես երբ իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկնցնեմ ու Իսրայէլի որդիները անոնց մէջէն հանեմ, պիտի գիտնան Եգիպտացիք թէ ես եմ Տէրը։ 6—Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը իրենց պատուիրածին պէս ըրին. այնպէս ըրին։ 7—Եւ Մովսէս ութսուն տարեկան էր, ու Ահարոն ութսունեւթը տարեկան էր, երբ փարաւոնի հետ խօսեցան։

8—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 9—Երբ Փարաւոն ձեզի խօսի ու ըսէ, Ձեզի համար հրաշք ցուցուցէք, այն ատեն Ահարոնի ըսես թէ Գաւազանդ առ, ու փարաւոնի առջեւ նետէ. և անիկա վիշապ պիտի ըլլայ։ 10—Ու Մովսէս ու Ահարոն մտան փարաւոնի՝ ու Տէրոջը պատուիրածին պէս ըրին. և Ահարոն իր գաւազանը նետեց փարաւոնի առջեւ ու անոր ծառաներուն առջեւ, և վիշապ եղաւ։ 11—Ու փարաւոն ալ իմաստունները ու կախարդները կանչեց. և Եգիպտոսի մոգերը՝ անոնք ալ իրենց կախարդութիւններով այնպէս ըրին. 12—Ու ամէն մէկը իր գաւազանը նետեց, ու անոնք վիշապներ եղան. բայց Ահարոնի գաւազանը անոնց գաւազաններ կլլեց։ 13—Ու փարաւոնի սիրտը կարծրացաւ, ու անոնց մտիկ չըրաւ, ինչպէս Տէրը ըսեցեր էր։

14—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի սիրտը խստացաւ, ժողովուրդը արձակել չուզեր։ 15—Առաւուանց փարաւոնի գնա. ահա անիկա դէպ ի ջուրը կ'ելլէ. ու դուն գետին եզերքը անոր դիմաց կայնէ, և այն օձ գարձած գաւազանը ձեռքդ առ, 16—Ու ըսէ անոր, Եբրայեցւոց Աստուածը զիս քեզի զրկեց՝ ըսելով, Արձակէ իմ ժողովուրդս, որպէս զի ինծի պաշտօն անապատին մէջ. և ահա մինչեւ հիմա մտիկ չըրիր։ 17—Այսպէս կ'ըսէ Տէրը, Առով գիտնաս թէ ես եմ Տէրը։ Ահա ես իմ ձեռքս եղած գաւազանով գետին մէջի ջուրերուն պիտի զարնեմ, ու արիւն պիտի դառնան. 18—Ու գետին մէջ եղած ձուկերը պիտի մեռնին, ու գետը պիտի գարշի. և եգիպտացիք պիտի զզուին գետէն ջուր խմելու։

19—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Ըսէ Ահարոնի, Գաւազանդ առ, ու ձեռքդ երկնցուր Եգիպտացւոց ջուրերուն վրայ, անոնց առուներուն վրայ, անոնց գետերուն վրայ, ու անոնց լիճերուն վրայ, և անոնց բոլոր ջրակուտակներուն վրայ, որպէս զի արիւն ըլլան. ու

*ԵԲՐ. անթլփատ չրիթաւնքներով

Եգիպտոսի բոլոր երկրին մէջ փայտ ու քար ամաններուն մէջի ջուրերը արիւն ըլլան։ 20—Ու Մովսէս ու Ահարոն Տէրոջը պատուիրածին պէս ըրին. և գաւազանը վերցուց ու փարաւոնի առջեւ և անոր ծառաներուն առջեւ գետին մէջի ջուրերուն զարկաւ, և գետին մէջի բոլոր ջուրերը արիւն դարձան։ 21—Ու գետին մէջ եղած ձուկերը մեռան, ու գետը հառաչեաւ, և Եգիպտացիք չկրնար գետէն ջուր խմել. ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ արիւն կար։ 22—Ու Եգիպտոսի մոգերն ալ իրենց կախարդութիւններով այնպէս ըրին. և փարաւոնի սիրտը կարծրացաւ, ու Տէրոջը բանին պէս անոնց մտիկ չըրաւ։ 23—Ու փարաւոն դարձաւ ու իր առանը եկաւ, ու *այս ալ անոր սրտին չդպաւ։ 24—Ու բոլոր Եգիպտացիք գետին բոլորտիքը փորեցին խմելու ջուր Հաճար. վասն զի գետին ջուրէն չկրնար խմել։ 25—Ու Տէրը գետը զարնելէն եաքը՝ եօթը օրը լմնցաւ։

Գլ. Ը

Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի մօտ գնա, ու ըսէ անոր, Տէրը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս որպէս զի պաշտօն ընեն։ 2—Ու եթէ ղրկելէ արձակել չուզես, ահա ես քու բոլոր սահմաններդ գորտերով պիտի զարնեմ։ 3—Ու գետը շատ գորտեր պիտի հանէ, ու անոնք պիտի ելլեն, ու քու տունդ և անկողնի սենեակիդ ու անկողնիդ, և քու ծառաներուդ տուներուն և քու ժողովուրդիդ, ու քու թանիրներուդ և խմորի տաշտերուդ մէջ պիտի մտնեն։ 4—Ու գորտերը քու վրադ և ժողովուրդիդ վրայ ու բոլոր ծառաներուդ վրայ պիտի ելլեն։

5—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Ահարոնի՝ Ըսէ. Առուներուն վրայ, գետերուն վրայ ու լիճերուն վրայ ձեռքդ երկնցուր քու գաւազանովդ, ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանէ։

*ԵԲՐ. իր սիրտը այս բանին վրայ չդրաւ

6—Ու Ահարոն երկնցուց իր ձեռքը Եգիպտոսի ջուրերուն վրայ. և գորտերը ելան ու Եգիպտոսի երկիրը ծածկեցին։ 7—Ու մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին, ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանեցին։

8—Ու փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը և ըսաւ, Աղաչեցէք Տէրոջը, որ ինծմէ ու իմ ժողովուրդիս վերցնէ գորտերը, ու ժողովուրդը պիտի արձակեմ որպէս զի Տէրոջը զոհ մատուցանեն։ 9—Ու Մովսէս ըսաւ փարաւոնի, Ժ—ո—ւ մը որչէ ինծի, Թէ ե՛րբ քեզի համար ու ծառաներուդ համար և ժողովուրդիդ համար աղաչեմ, որ քեզմէ ու քու առուներիդ գորտերը կորսուին, ու միայն գետին մէջ մնան։ 10—Ու անիկա ըսաւ, Վաղը։ Ու ինք ըսաւ, քու խօսքիդ պէս ըլլայ, որպէս զի գիտնաս Թէ մեր Տէրոջ Աստուածայն պէս չէ։ 11—Ու քեզմէ ու քու առուներէդ և քու ծառաներէդ ու քու ժողովուրդէդ գորտերը պիտի վերնան. միայն գետին մէջ պիտի մնան։ 12—Ու Մովսէս ու Ահարոն փարաւոնի քովէն ելան. ու Մովսէս Տէրոջը աղաղակեց այն գորտերուն համար զորոնք փարաւոնի վրայ բերեր էր։ 13—Ու Տէրը Մովսէսի բանին պէս ըրաւ. ու առուներէն, բակներէն և արտերէն գորտերը մեռան։ 14—Ու զեզ զեզ ժողվեցին զանոնք, ու երկիրը հառաչեաւ։ 15—Բայց երբ փարաւոն հանգստութիւն ըլլալը տեսաւ, իր սիրտը խստացուց ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը բանին պէս։

16—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Ըսէ Ահարոնի, Գաւ գաւազանդ երկնցուր, ու երկրի հողին զարկ, որպէս զի Եգիպտոսի բոլոր երկրին վրայ *մուն ըլլայ։ 17—Ու այնպէս ըրին. քանզի Ահարոն իր գաւազանովը իր ձեռքը երկնցուց ու երկրի հողին զարկաւ, և մարդոց վրայ ու անասուններուն վրայ մուն եղաւ. Եգիպտոսի բոլոր երկրին վրայ երկրին բոլոր հողը մուն եղաւ։ 18—Ու մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին՝ որպէս զի

*ԿԱՐ. ՕՖԻԼ

մաներ հանեն, բայց չկրցան. այսպէս մարդոց ու անասուններուն վրայ մահն եկաւ։ 19—Ես մոգերը բսին փարաւոնի, Այս՝ Աստուծոյ մատն է. բայց փարաւոնի սիրտը կարծրացաւ ու անոնց մասին չլսեց՝ Տէրոջը ըսածին պէս։

20—Ես Տէրը ըսաւ Մովսէսի, Առաւօտուն կանուխ ելլէ, ու փարաւոնի առջեւ կայնէ. (ահա անկից դէպ ի ջուրը կ'ելլէ.) և ըսէ անոր, Տէրը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս որպէս զի ինծի պաշտեն. 21—Հապա եթէ իմ ժողովուրդս չարձակես, ահա ես քեզի վրայ ու քու ծառաներուդ վրայ և քու ժողովուրդիդ վրայ ու քու տուներուդ վրայ չանճաճնճ պիտի ղրկեմ, և Եգիպտացւոց տուները չանճաճնճով պիտի լեցուին, նաև այն գետինը որուն վրայ անոնք կը բ֊ա֊ն։ 22—Ես այն օրը իմ ժողովուրդիս բնակած Գեսեմի երկիրը պիտի որշնմ, ու հոն չանճաճնճ պիտի չըլլայ. որպէս զի գիտնաս թէ երկրի մէջտեղը ես եմ Տէրը։ 23—Ես իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ մէջտեղ խարիսխն պիտի դնեմ. վաղը այս նշանը պիտի ըլլայ։ 24—Ես Տէրը այնպէս ըրաւ. ու փարաւոնի տունը և անոր ծառաներուն տուներուն ու Եգիպտոսի բոլոր երկրին վրայ չատ չանճաճնճ եկաւ, ու չանճաճնճին պատճառաւ երկիրը ապրեցաւ։

25—Ես փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ, Գացէք ձեր Աստուծոյն զոհ մատուցէք այս երկրին մէջ։ 26—Ես Մովսէս ըսաւ, Աբժան չէ այսպէս բնել. վասն զի Եգիպտացւոց գարշելի ե֊ա֊ն֊ը֊ը Տէրոջը մեր Աստուծոյն զոհ պիտի մատուցանենք. եթէ Եգիպտացւոց գարշելի ե֊ա֊ն֊ը֊ը իրենց աչքին առջեւ զոհ մատուցանելու բլլանք, պիտի չքարկոծէին մեզ։ 27—Մենք երեք օրուան ճամբայ պիտի երթանք անապատին մէջ, ու զոհ պիտի մատուցանենք մեր Տէր Աստուծոյն, ինչպես ինք մեզի պատուիրէ։ 28—Ես փարաւոն ըսաւ, Ես ձեզ թող կու տամ որպէս զի երթաք անապատին մէջ ձեր Եհովա Աստուծոյն զոհ մատուցանէք, միայն թէ չատ հեռու չերթաք. ինծի համար աղաչեցէք։ 29—Ես Մովսէս ըսաւ, Ահա ես քու քովիդ կ'ելլեմ ու Տէրոջը կ'աղաչեմ՝ որ վաղը փարաւոնէ, անոր ծառաներէն ու անոր ժողովուրդէն չանճաճնճերն երթայ. բայց փարաւոն մէյ մըն ալ հետ չխաբէ՝ ժողովուրդը թող չաղլվ Տէրոջը զոհ մատուցանելու։ 30—Ես Մովսէս փարաւոնի քովէն ելաւ, ու Տէրոջը աղաչեց։ 31—Ես Տէրը Մովսէսի խօսքին պէս ըրաւ, ու փարաւոնէ, անոր ծառաներէն և անոր ժողովուրդէն չանճաճնճը վերցուց. հատ մըն ալ չմնաց։ 32—Ես փարաւոն այն անգամին ալ իր սիրտը խստացուց ու ժողովուրդը չարձակեց։

Գլ. Ը

1 Տէրը ըսաւ Մովսէսի, Փարաւոնի մօտ մտիր, ու խօսէ անոր, Եբրայեցւոց Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս՝ որպէս զի ինծի պաշտեն. 2—Բայց եթէ դուն արձակել չուզես, ու տակաւին պինդ բռնես զանոնք, 3—Ահա Տէրոջը ձեռքը դաշտին մէջ եղած քու հօտերուդ վրայ բլլալով, ձիերուն, էշերուն, ուղտերուն, արջառներուն ու ոչխարներուն վրայ խիստ սաստիկ կատաղած պիտի բլլայ։ 4—Ես Տէրը խարսխէն հօտերուն ու Եգիպտոսի հօտերուն մէջտեղ պիտի զատէ, և իսրայէլի որդիներուն մէկ ո֊ե֊ն֊ը֊ը պիտի չմեռնի։ 5—Ես Տէրը ժամանակ որոշեց՝ ըսելով, Վաղը Տէրը այս բանը պիտի բնէ երկրի վրայ։ 6—Ես հետեւեալ օրը Տէրը այս բանը րրաւ, ու Եգիպտացւոց բոլոր հօտերը մեռան. բայց իսրայէլի որդիներուն հօտերէն մէկը չմեռաւ։ 7—Ես փարաւոն խրտչ ղրկեց, ու ահա իսրայէլի հօտերէն մէկին ալ մեռած չէր. և փարաւոնի սիրտը խստացաւ ու ժողովուրդը չարձակեց։

8—Ես Տէրը ըսաւ Մովսէսի ու Ահարոնի, Առէք ձեզի ձեռքերնիդ լեցուն հնոցի մխիթ, և Մովսէս դէպ ի երկինք ցանէ զայն՝ փարաւոնի առջեւ։ 9—Ու եգիպտոսի բոլոր երկրին մէջ փոշի պիտի բլլայ, ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ թաղանթ արձակ հանող ուլցքներ պիտի

բլլան։ 10—Ես հնոցի մխիթը առին, ու փարաւոնի առջեւ կայնեցան. և Մովսէս դէպ ի երկինք ցուցուց զայն, ու մարդոց և անասուններուն վրայ խարազաններ հանող ուլցքներ եղան։ 11—Ես մոգերը ուլցքներուն պատճառաւ չկրցան կայնիլ Մովսէսի առջեւ. վասն զի ուլցքները մոգերուն վրայ ալ, ու բոլոր Եգիպտացւոց վրայ ալ եղան։ 12—Ես Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը. ու անոնց մասին չըսաւ, ինչպէս Տէրը Մովսէսի ըսեր էր։

13—Ես Տէրը ըսաւ Մովսէսի, Առաւօտուն կանուխ ելլէ, ու փարաւոնի առջեւ կայնէ, ու անոր ըսէ, Սրբայեցւոց Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Արձակէ իմ ժողովուրդս, որպէս զի ինծի պաշտեն։ 14—Ըանզի այս անգամ իմ բոլոր հարուածներս պիտի ղրկեմ քու վրադ, և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ վրայ. որպէս զի գիտնաս թէ բոլոր երկրի մէջ ինծի պէս չկայ։ 15—Ըանզի հիմա իմ ձեռքս պիտի երկնցնեմ՝ որպէս զի քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ ու երկրէ պիտի կտրատիս։ 16—Ես սասր համար քեզ վերցուցի՝ որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի։ 17—Դուն տակաւին իմ ժողովուրդիս դէմ կեցնալով՝ պիտի չարձակե՞ս զանոնք։ 18—Ահա ես վաղը այս ատեն խիստ սաստիկ կարկուտ պիտի տեղամ, որ անոր պէս Եգիպտոսի մէջ եղած չէ՝ անոր հաստատուած օրէն մինչև հիմա։ 19—Ես հիմա խրտչ ղրկէ ու ժողվէ քու հօտերդ ու ինչ որ ունիս գաշտին մէջ. մարդ ու անասուն որ գաշտին մէջ գտնուի ու տուներ ժողվուած չըլլայ, անոնց վրայ կարկուտ պիտի իջնէ, ու պիտի մեռնին։ 20—Փարաւոնի ծառաներէն ով որ Տէրոջը խօսքէն կը վախնար, իր ծառաները ու հօտերը տուներու մէջ ժողվեց։ 21—Ես ով որ Տէրոջը խօսքին ուշադրութիւն չըրաւ, իր ծառաները ու իր հօտերը դաշտին մէջ թողուց։

22—Ես Տէրը ըսաւ Մովսէսի, Քու ձեռքդ դէպ ի երկինք երկնցուր, ու եգիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց ու անասուններուն վրայ, և Եգիպտոսի երկրին մէջ եղած արտերուն բոլոր խոտին վրայ կարկուտ պիտի գայ։ 23—Ես Մովսէս իր գաւազանը դէպ ի երկինք երկնցուց. ու Տէրը որոտաց և կարկուտ ղրկեց, ու երկրի վրայ կրակ կը վազէր. ու Տէրը Եգիպտոսի երկրին վրայ կարկուտ տեղաց։ 24—Ես կարկուտ՝ ու կարկուտին միջեղը խառնուած կրակ եկաւ. այնպէս ասոր պէս որ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ ազգ բլլալէն հետ անոր պէս եղած չէր։ 25—Ես կարկուտը Եգիպտոսի բոլոր երկրին մէջ, դաշտը եղածին ամէնը, մարդ մինչև անասուն զարկաւ. և կարկուտ գաշտին բոլոր խոտը զարկաւ, ու գաշտին բոլոր ծառերը կտրեց։ 26—Միայն Գեսեմի երկրին մէջ, ուր Իսրայէլի որդիները էը բ֊ն֊էին, կարկուտ չեղաւ։

27—Ես փարաւոն հրէշտ ղրկեց, ու կանչեց Մովսէսը ու Ահարոնը և ըսաւ անոնց, Այս անգամ մեղանչեցի. Եհովա արդար է, և ես ու իմ ժողովուրդս չանցաւոր ենք. 28—Ազաչեցէք Տէրոջը՝ որ Աստուծոյ *որոտաձայները ու կարկուտ որ էդ տրէն. ու ձեզ պիտի արձակեմ, և ալ պիտի չկենաք։ 29—Ես Մովսէս ըսաւ անոր, Քաղաքէն գուրս ելածիս պէս՝ իմ ձեռքերս Տէրոջը պիտի երկնցնեմ, ու որոտաձայները պիտի գադարին, և ալ կարկուտ պիտի չըլլայ, որպէս զի գիտնաս թէ երկիրը Տէրոջն է։ 30—Բայց ես գիտեմ որ դուն ու քու ծառաներդ տակաւին Տէր Աստուածմէ չէք վախնար։

31—Ես քէտանը ու գարին զարնուեցան. վասն զի գարին հասած էր, ու քէտանը սերմի գացած։ 32—Բայց ցորենը ու հաճարը չզարնուեցան, վասն զի ուշ կը բուսնին։

33—Ես Մովսէս փարաւոնի քովէն գաղաքէն գուրս ելաւ, ու իր ձեռքերը Տէրոջը երկնցուց. և որոտաձայները ու կարկուտը գադարեցան, ու երկրին

*ՆԷՔ. սրտիդ վրայ

*ՆԷՔ. Հայներդը
ԹՆԷՔ. հերիք են

վայ անձրև չկաթեցաւ։ 34—Ե. փառաւն երք անձրևին եւ կարկտին և որաւտին գազարիլը տեսաւ, նորին սիզանչեց, ու սիրաը խաղացաւ ինք ու իր ծառաներըն։ 35—Աչտակս փառաւանի սիրաը կարծրացաւ. ու խրաչկի որդինները չարձակեց, ինչպես Տէրը Մովսէսի ձեռքով ըսեր էր։

ԳԼ. Ը

Ե. Տէրը ըսաւ Մովսէսի, Մտեր փառաւնի. վասն զի ես անոր սիրաը ու անոր ծառաներուն սիրաը խաղացուցի, որպես զի այս իմ նշաններս ցուցնեմ անոնց մէջ։ 2—Ե. որպես զի պատմես քու որդիիդ ու քու որդւոյդ որդիին ականջներուն՝ ինչ որ ըրի Եգիպտացւոց մէջ, և իմ նշաններս զորս անոնց մէջ ցուցուցի, որպես զի գիտնաք թէ ես եմ Տէրը։

3—Ե. Մովսէս ու Ահարոն մտան փառաւնի, ու ըսին անոր, Սրբաչեց ոտ Եհովա Աստուածը այսպես կ'ըսէ. Մինչև ե՞րբ պիտի չկամիս խոնարհիլ իմ առջեւս. արձակէ իմ ժողովրդս որպես զի զիս պաշտանին։ 4— վասն զի եթէ իմ ժողովրդս արձակել չուզես, ահա վաղը քու սահմաններուդ վրայ մարախներ պիտի գրկեմ. 5—Ե. երկրի երեսը պիտի ծածկեն, և Ա՛ՀԸ պիտի չկրնայ տեսնել երկիրը. ու կարտեն ապաստած ձեզի ՇԱցածը պիտի ուտեն, և արտին մէջ բուսած ձեր բոլոր ծառերը պիտի ուտեն. 6—Ու քու տուներդ ու քու բոլոր ծառաներուդ տուները և ամէն եգիպտացւոց տուները պիտի լեցուին. զոր ոչ քու հայրերդ, ոչ ալ քու հայրերուդ հայրերը տեսած են, իրենց երկրի վրայ եղած օրէն մինչև այսօր։ Ես դարձաւ ու փառաւնի քովէն դուրս եկաւ։

7—Ե. փառաւնի ծառաները բսին անոր, Մինչև ե՞րբ այս *ՏԷՐԸ մեզի որոգայթ պիտի ըլլայ. արձակէ մարդիկը որ իրենց Եհովա Աստուածը պաշտեն. տակաւին չէ՞ս գիտեր որ Եգիպտոս ապրուեցաւ։ 8—Ե. Մովսէսը ու Ահարոնը փառաւնի դարձուցին. և անոնց ըսաւ անոնց, Գացէք պաշտեցէք ձեր Եհովա Աստուածը. ԲԱյց *ո՞ր՞նք են գացողները։ 9—Ե. Մովսէս ըսաւ, Մեր մանուկներովը ու մեր ծերերովը պիտի երթանք, մեր ոչխարներովը ու մեր ագիւներովը, մեր հաւերովը ու մեր արջառներովը պիտի երթանք, քանզի ասն պիտի պահենք Տէրոջը։ 10—Ե. ըսաւ անոնց, Տէրը այնպէս ձեզի հետ ըլլայ, ինչպես ես ձեզ ու ձեր ոչոխարները կ'արձակեմ. զգաստացէք, քանզի չարիք կան ձեր առջեւ։ 11—Ոչ այդպես, հիմա գացէք այր մարդիկներդ ու Տէրը պաշտեցէք. վասն զի դուք ասիկա կ'ուզէիք. Ե. փառաւնի առջեւէն վռնտուեցան։

12—Ե. Տէրը ըսաւ Մովսէսի, Երկընցուր քու ձեռքդ Եգիպտոսի երկրին վրայ մարախներուն համար, որպես զի Եգիպտոսի երկրին վրայ ելլեն, և երկրին բոլոր խոտը, կարկտաւն բոլոր մնացածը, ուտեն։ 13—Ե. Մովսէս երկընցուց իր գաւազանը Եգիպտոսի երկրին վրայ. ու Տէրը բոլոր այն օրը ու բոլոր գիշերը երկրին վրայ արեւելեան հով փչել տուաւ։ Ե երբ առաւտ եղաւ, արեւելեան հովը մարախները բերաւ։ 14—Ե. մարախները Եգիպտոսի բոլոր երկրին վրայ ելան, ու Եգիպտոսի բոլոր սահմաններուն վրայ իջան. խիստ սաստիկ էին. անոնցմէ առաջ այնպիսի մարախ չեղաւ, ու անոնցմէ ետքն ալ այնպես պիտի չըլլայ։ 15—Ե. բոլոր երկրին երեսը ծածկեցին, ու երկիրը մթնցաւ, ու երկրին բոլոր խոտը և կարկտաւն ՇԱցած ծառերուն ամէն պտուղները կերան. ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ եղած ծառերուն վրայ և արտին խոտերուն վրայ բնաւ կանաչեղէն չմնաց։

16—Ե. սաս փառաւն չտուաւ կանչեց Մովսէսը ու Ահարոնը, և բսաւ, Ձեր Տէր Աստուծոյն ու ձեզի դէմ մեղանչեցի. 17—Ե. հիմա չնորհք ըրէք, միայն այս անգամ ներեցէք իմ յանցանքս, ու ձեր Տէր Աստուծոյն աղաչեցէք, որ իմ վրայէս միայն այս մահը չեղէ, որ իմ վրայէս միայն այս մահը վերցնէ։ 18—Ե. անկից փառաւնի վերջնէ։ 18—Ե. անկից փառաւնի քովէն դուրս եկաւ, ու Տէրոջը աղաչեց։

*ԵՔԵ. ՃՂ և ՃՂ

չեց։ 19—Ե. Տէրը խիստ սաստիկ արեւմտեան հով մը ղրկեց, որ մարախները վերցուց ու կարմիր ծովը ձգեց զանոնք. Եգիպտոսի բոլոր սահմաններուն մէջ մէկ մարախ չմնաց. 20—Բայց Տէրը կաթծրացուց փառաւնի սիրաը, ու անոնք իսրայէլի որդիները չարձակեց։

21—Ե. Տէրը բսաւ Մովսէսի, Ձեռքդ դէպ ի երկինք երկնցուր, որպես զի Եգիպտոսի երկրին վրայ խաւար ըլլայ, չչափելի խաւար մը ըլլայ։ 22—Ե. Մովսէս իր ձեռքը դէպ ի երկինք երկնցուց, ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ թանձր խաւար եղաւ երեք օր. 23—Մէկզմէկ չէին տեսներ, և երեք օր մէկը իր տեղէն չելաւ. բայց իսրայէլի բոլոր որդիները իրենց բնակութիւններուն մէջ լոյս ունէին։

24—Ե. Փառաւն կանչեց Մովսէսը ու բսաւ, Գացէք, պաշտեցէք Եհովան. միայն ձեր հօտերը ու արջառները մնան. ձեր բնտանիքներն ալ ձեզի հետ թող երթան։ 25—Ե. Մովսէս բսաւ, պէտք է որ դուն մեր ձեռքը զոհեր ու ողջակէզներ ալ տաս, որպէս զի մեր Տէր Աստուծոյն մատուցանենք. 26—Ե. մեր հօտերն ալ մեզի հետ պիտի երթան անոնցմէ կճղակ մը չմնայ. վասն զի մեր Տէր Աստուածը պաշտելու համար անոնցմէ պիտի առնենք. ու մենք մինչև որ հոն չերթանք, չենք գիտեր թէ ինչո՛վ պիտի պաշտենք Տէրը։ 27—Ե. Տէրը կաթծրացուց փառաւնի սիրաը, որ չուզեց արձակել զանոնք։ 28—Ե. փառաւն բսաւ անոր, Փախէ դնաս. դպուչիթիւն րրէ քու անձիդ, ևս երես չտեսնեմ. քանզի որ օրը որ իմ երեսս տեսնես, պիտի մեռնիս։ 29—Ե. Մովսէս բսաւ, Ուղիղ ըսիր ևս երեսդ պիտի չտեսնեմ։

ԳԼ. ԺԱ

Ե. Տէրը բսաւ Մովսէսի, Փառաւնի վրայ ու Եգիպտոսի վրայ հարատ մրն ալ պիտի բերեմ, անկէ ետև ձեզ ասկէ պիտի արձակէ, և երբ չէ՛ արձակէ, ձեզ ասկէ բոլորովին դուրս պիտի ընէ։ 2—Հիմա խօսէ ժողովրդին ականջները, ու ամէն մարդ իր դրացիին, և ամէն կին իր դրացիին արծաթէ ղէղներ ու ոսկեղէն զարդեր խնդրէ։ 3—Ե. Տէրը շնորհք տուաւ ժողովրդին Եգիպտացւոց առջեւ. Մովսէս ալ Եգիպտոսի երկրին մէջ փառաւնի ծառաներուն առջեւ ու ժողովրդին առջեւ խիստ մեծ մարդ մրն էր։

4—Ե. Մովսէս ըսաւ, Տէրը այսպես կ'ըսէ. Ես կէսգիշերին Եգիպտոսի մէջտեղը պիտի ելլեմ. 5—Ե. Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը պիտի մեռնի, իր աթոռին վրայ նստող փառաւնի առջինեկէն մինչև ապագրին եաեը եղող ապաթինին առջինեկը և բոլոր անասուններուն առջինեկը։ 6—Ե. Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մեծ ազաղակ պիտի ըլլայ, այնպես որ անոր պես ոչ եղած է, և ոչ ալ նորէն պիտի ըլլայ։ 7—Ե. իսրայէլի որդիներէն մէկուն դէմ, մարդուն մինչև անասուն, չուն մրն ալ պիտի չչարժէ իր լեզուն. որպես զի գիտնաք թէ Տէրը Եգիպտացւոց ու իսրայէլի մէջտեղ տարբերութիւն կը դնէ։ 8—Ե. այս բոլոր քու ծառաներդ ինձի պիտի իջնեն, ու ինձի խոնարհութիւն ընեն՝ ըսելով, Դուն ու բոլոր քեզի հետեւող ժողովրդը ելէք. ու անկէ ետքը պիտի ելլեմ, Ե. Մ-ՀԷ-ոսկի բարկութեամբ փառաւնի քովէն դուրս եկաւ։

9—Ե. Տէրը բսաւ Մովսէսի, Փառաւն ձեզի մտիկ պիտի չընէ, որպես զի իմ հրաչքներս չատցնեմ Եգիպտոսի երկրին մէջ։ 10—Ե. Մովսէս ու Ահարոն այս ամէն հրաչքները փառաւնի առջեւ բրին. և Տէրը կաթծրացուց փառաւնի սիրաը, ու իսրայէլի որդիները իր երկրէն չարձակեց։

ԳԼ. ԺԲ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի Եգիպտոսի երկրին մէջ՝ ըսելով, 2—Ա՛յս ամիսը ձեզի ամիսներուն սկիզբն ըլլայ. ձեզի տարւոյն ամիսներուն առաջինն ըլլայ։ 3—Իսրայէլի բոլոր ժողովքին զրուցեցէք՝ ըսելով, Ա՛յս ամսուն տասներկուին ամէն մէկը իրեն գառ-

նուկ մը առնէ էֆէնց հայրերուն առջը հաւաքուած, այսինքն առն գլուխ մէկ մէկ գառնուկ։ 4—Եւ եթէ մէկ առնը մէկ գառնուկին փիշ կու գայ, այն հոգիէ իր առնը քով եղած գրացին հետ հոգիներուն համրանքին համեմատ առնէ։ գառնուկին վրայով ամէն մէկուն իր կերածին չափ հաշիւ բնէք։ 5—Ձեր գառնուկը անարատ, արու, մէկ տարեկան ըլլայ։ այխարներէն կամ այծերէն առնէք զանոնք։ 6—Եւ մինչեւ այս ամսուն չորեքտասաներորդ օրը պահէք զայն, ու Իսրայէլի ժողովքին բոլոր բազմութիւնը մթերքն զանիկա *երեկոյան վէմ*։ 7—Ու արիւնէն առնեն ու առներուն երկու կողմի դրանդիքներուն ու վերի սեմին վրայ քսեն, ուր զանիկա պիտի ուտեն։ 8—Ու միսը այն գիշերը ուտեն. զանիկա կրակի վրայ խորոված՝ բազարջով — լեզի խառերով պիտի ուտեն. 9—Անկէ՛ հում կամ ջուրի մէջ եփած չուտէք, բայց կրակի վրայ խորոված, անոր գլուխը ոտքերովը ու փորոտիքովը մէկտեղ։ 10—Ու անկէ բան մը չթողուք մինչեւ առաւօտ. ու անկէ ինչ որ առաւօտեան կը մնայ, կրակով այրէք։ 11—Ու այսպէս պիտի ուտէք զայն. ձեր գօտիները մէչքերնիդ ու ձեր կօշիկները ոտքերնիդ և ձեր ցուպերը ձեռքերնիդ բռլալով. զանիկա արագութեամբ ուտէք. Տէրոջը Հզաւորին է այն։ 12—Ու այն գիշերը Եգիպտոսի երկրին պիտի անցնիմ, ու Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինները, մարդէ մինչեւ անասուն, պիտի զարնեմ. Եգիպտոսի բոլոր հաստատածներուն վրայ դատաստան պիտի կատարեմ. ես եմ Տէրը։ 13—Ու արիւնը ձեր եղած տուներուն վրայ նշանի համար ըլլայ. ու երբ արիւնը տեսնեմ, ձեր վրայէն պիտի անցնիմ. և հարուածը ձեր վրայ պիտի չգայ չեզ կորնչեցնելու, երբ Եգիպտոսի երկիրը զարնեմ։ 14—Ու այն օրը ձեզի յիշատակի համար ըլլայ, և զանիկա Տէրոջը տօն պահէք. ձեր

*Նէբ. երկու իրիկուններուն մէջտեղ
†Նէբ. փետրա, այէնձա, անցնիլ
‡Կամ, իշխաններուն

*սերունդին մէջ յաւիտենական կանոնով մը տօն պահէք զայն։ 15—Եօթը օր բազարջ ուտէք. նոյն իսկ առաջին օրը ձեր տուներէն թուրս ձգէք խմորը. վասն զի առաջին օրէն մինչեւ եօթներորդ օրը ով որ խմորեալ հաց ուտէ, այն անձը Իսրայէլի պիտի կորսուի։ 16—Ու առաջին օրը սուրբ ժողով մը ըլլայ, եօթներորդ օրն ալ ձեզի սուրբ ժողով մը ըլլայ. այն երեքը բնաւ գործ մը չգործուի, բայց ամէն մէկուն ուտելիքը, զայն միայն պատրաստէք։ 17—Ու բազարջներուն տօնը պահէք. քանզի այն նոյն օրուան մէջ ձեր զօրքերը Եգիպտոսի երկրէն հանեցի. ուստի ձեր սերունդին մէջ յաւիտենական կանոնով մը այն օրը պահէք։ 18—Առաջին ամսուն չորեքտասաներորդ օրուան իրիկունէն մինչեւ ամսուն քսանըմէկին երեկոյ բազարջ պիտի ուտէք։ 19—Եօթը օր տուներնիդ խմոր չգտնուի. քանզի ով որ խմորեալ հաց ուտէ, այն անձը Իսրայէլի ժողովքէն պիտի կորսուի, թէ՛ օտարական ըլլայ և թէ՛ երկրին բնակիչ։ 20—Խմորեալ բան մը պիտի չուտէք. ձեր բոլոր բնակութիւններուն մէջ բազարջ ուտէք։

21—Եւ Մովսէս կանչեց Իսրայէլի բոլոր ծերերը, ու բաւ անոնց, Ձեր ընտանիքներուն համեմատ բնաւորեցէք, ու առէք ձեզի ձղճիկ գառ, ու զոհեցէք համար մըթերեցէք։ 22—Ու զոհացի փունջ մը ծռեցէք, ու կոնքին մէջ եղած արիւնին թաթխեցէք, և դրանը վրայի սեմին ու երկու փովի դրանդիքներուն վրայ՝ կոնքին մէջ եղած արիւնէն քսեցէք, և մինչեւ առաւօտ ձեզմէ մէ՛կը իր տանը դռնէն դուրս չելլէ։ 23—Քանզի Տէրը եգիպտացիները զարնելու պիտի անցնի, և երբ դրանը վրայի սեմին ու երկու կողմի դրանդիքներուն վրայ արիւնը տեսնէ, Տէրը այն դրանը վրայէն պիտի անցնի, և պիտի չթողու սատակիչը՝ որ ձեր տուները մտնէ չեզ զարնելու համար։ 24—Ու այս բանը քեզի ու քու որդիներուդ կանոն ըլլալու համար պահէք յաւիտեան։ 25—Ու ըլլայ թէ երբ այն երկիրը գաք, զոր Տէրը

*Նէբ. ազգերուն

ձեզի պիտի տայ իր բանին պէս, այս պաշտօնը պահէք։ 26—Ու ըլլայ թէ երբ ձեր որդիները ձեզի ըսեն թէ Այս պաշտօնով ի՞նչ բան կ'ուզէք, 27—Ըսէք որ Աբիկա Տէրոջը զոհին է, որ եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիներուն տուներուն վրայէն անցաւ, երբ նիպտացիները զարկաւ, ու մեր տուները ազատեց։ Ու ժողովուրդը խոնարհեցաւ ու երկրպագութիւն բրաւ։ 28—Ու Իսրայէլի որդիները գացին, ու Տէրոջը Մովսէսի ու Ահարոնի պատուիրածին պէս ըրին. այնպէս ըրին։

29—Ու եղաւ որ կէսգիշերին Տէրը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինները զարկաւ, իր աթոռը նստող փարաւոնի առջինեկէն մինչեւ բանտի մէջ եղած գերիին առջինեկը և ամէն անասունին առջինները։ 30—Ու ինք գիշերը եղաւ փարաւոն ու անոր բոլոր ծառաները և բոլոր Եգիպտացիք, ու Եգիպտոսի մէջ մեծ ազաղակ մը եղաւ. քանզի տուն մը չկար որ անոր մէջ մեռեալ չըլլար։

31—Ու գիշերով կանչեց Մովսէսը ու Ահարոնը և բաւ, Ելէք, ու ելէք իմ ժողովուրդիս մէջէն դուք ալ և Իսրայէլի որդիքն ալ, ու գացէք պաշտեցէք Եհովան՝ ինչպես բսիք։ 32—Նաև ձեր հօտերը ու ձեր արջառները առէք. ինչպես բսիք, ու գացէք. և գիս ալ օրհնեցէք։ 33—Ու Եգիպտացիք բռնադատեցին ժողովուրդը որ չուտով այն երկրէն դուրս զրկեն զանոնք. քանզի բսին, Ամէնքս ալ կը մեռնինք։ 34—Ու ժողովուրդը իրենց զանգուածը դեռ չխմորած, իրենց խմորի աւազանները իրենց լաթերովը փաթթած, ուսերնուն վրայ վերցուցին։ 35—Ու Իսրայէլի որդիները Մովսէսի խօսքին պէս ըրին, ու Եգիպտացիներէն արծաթեղէն զարդեր և ոսկեղէն զարդեր ու հանդերձներ խնդրեցին։ 36—Ու Տէրը ժողովուրդին շնորհք տուաւ Եգիպտացւոց առջև, այնպէս որ նեէլպոշէ անոնց խնդրածը տուին. ու անոնք կողոպտեցին Եգիպտացիները։

37—Ու Իսրայէլի որդիները Թամսէսէ դէպ ի Սոկոթովթ չուեցին. քնաննիքներէն զատ վեց հարիւր հազարի չափ հեռւեւակ այր մարդիկ էին։ 38—Ու անոնց հետ խառն բազմութիւն ալ ելաւ. և ոչխարները ու արջառները խիստ մեծ հօտ էին։ 39—Ու եգիպտոսէ իրենց հանած զանգուածէն անխմոր չորեր եփեցին, վասն զի խմորեալ չէր. քանզի Եգիպտոսէ վռնտուեցան, ու չկրնար ուշանալ. ու իրենց պաշար ալ չէին պատրաստեր։

40—Ու Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիներուն բնակած ժամանակը չորս հարիւր երեսուն տարի էր։ 41—Ու եղաւ որ չորս հարիւր երեսուն տարիներուն վերջը՝ այն նոյն օրը Տէրոջը բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրէն ելան։ 42—Աբիկա Տէրոջը համար պահելու գիշեր մըն է, վասն զի զանոնք Եգիպտոսի երկրէն հանեց. այս այն գիշերն է Տէրոջը համար Իսրայէլի բոլոր որդիներէն իրենց ազգերուն մէջ պահուելու։

43—Ու Տէրը բաւ Մովսէսի ու Ահարոնի, Ասա է զատկին կանոնը. բնաւ օտարական մը անկէ պիտի չուտէ. 44—Բայց ամէն մարդու ստակով ծախած ստած ծառան, երբ զանիկա թլփատես, այն ատեն թող ուտէ անկէ. 45—Օտարականն ու վարձկանը անկէ պիտի չուտեն. 46—Մէկ տան մէջ պիտի ուտուի այն. ատենէն դուրս չհանես այն միսէն, ու անոր մէ՛կ ոսկորը պիտի չկոտրէք. 47—Իսրայէլի բոլոր ժողովքը ընէ զայն. 48—Ու երբ օտարական մը քու քովդ պանդխտանալու ըլլայ, ու Տէրոջը զատիկ ընելու ըլլայ, անոր ամէն արու թող թլփատուի, և այն ատեն գայն ընելու մօտենայ, ու ինք երկրին բնակիչն պէս թող ըլլայ. քանզի անթլփատ մէկը բնաւ անկէ պիտի չուտէ. 49—Երկրացիին ու ձեր մէջ բնակող օտարականին մէկ օրէնք ըլլայ։ 50—Ու Իսրայէլի բոլոր որդիները Տէրոջը Մովսէսի ու Ահարոնի պատուիրածին պէս ըրին. այնպէս ըրին։ 51—Ու եղաւ որ այն նոյն օրը Տէրը Եգիպտոսի երկրէն հանեց Իսրայէլի որդիները իրենց զօրքերովը։

Գլ. ԺԳ

1—Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Սրբէ ինծի ամէն անդրանիկը, Իս-

բայէլի որդիներուն մէջ ամէն արգանդ բացողը, մարդկէն ալ անասուներէն ալ. ան իմ է։ 3—Ու Մովսէս բաւ Ժողովուրդին, Ձիշդեցէք այս օրը որ Եգիպտոսէ, Ծառայութեան տունէն, ելաք, ման դի Տէրը ձեզ ասկէ զօրաւոր ձեռքով հանեց. և խմորեալ հաց պիտի չուտուի։ 4—Հոս դուք այսօր ելաք, Ապիպ ամսուն մէջ։ 5—Ու ըլլայ որ երբ Տէրը առնելու ըլլայ քեզ Քանանացւոց ու Փերեսացւոց և Ամորհացւոց ու Խեւացւոց և Յեբուսացւոց երկիրը, զոր փեղի տալու համար քու հայրերուդ երդուաւ բաւ, այն երկիրը որ կաթ ու մեղր կը բղխէ, այս ամսուն մէջ պիտի կատարես այս պաշտօնը։ 6—Եօթը օր բազարջ պիտի ուտես, և եօթներորդ օրը տօն ըլլայ Տէրոջը։ 7—Անի եօթը օրերուն մէջ բազարջ պիտի ուտուի. ու քովդ խմորեալ հաց պիտի չտեսնուի. ոչ ալ քու քովդ խմոր պիտի տեսնուի քու բոլոր սահմաններուդ մէջ։ 8—Ու այն օրը քու որդւոյդ պիտի պատմես՝ ըսելով, Այս անոր համար է զոր Տէրը բաւ ինծի, երբ ես Եգիպտոսէ ելայ։ 9—Ու ասիկա քեզի նշանի համար պիտի ըլլայ ձեռքիդ վրայ. ու քու աչքերուդ մէջտեղ յիշատակի համար, որպէս զի Տէրոջը օրէնքը քու բերնիդ մէջ ըլլայ. վասն զի Տէրը քեզ զօրաւոր ձեռքով հանեց Եգիպտոսէ։ 10—Ուստի դուն այս կանոնը տարիէ տարի իր ատենին պահես։ 11—Ու ըլլայ որ երբ Տէրը քեզ Քանանացւոց երկիրը տանի, ինչպէս քեզի ու քու հայրերուդ երդուաւ բաւ, ու զանիկա քեզի տայ։ 12—Անի ամէնը որ արգանդ կը բանայ, Տէրոջը համար պիտի զատես. և քու ունեցած անասունիդ ամէն առջինեկ արուները Տէրոջը պիտի ըլլան։ 13—Ու իշուն ամէն առջինեկը ոչխարով մը փրկես. և եթէ չփրկես, անոր վիզը կարես. ու քու որդիներուդ մէջ մարդոց ամէն անդրանիկը պիտի փրկես։ 14—Ու ըլլայ որ երբ քու որդիդ *օր մը՝ քեզի հարցնէ՝ ըսելով, Ինչ է այս. անոր պիտի ըսես թէ Տէրը մեզ Եգիպտոսէ, Ծառայութեան տունէն, զօրաւոր ձեռքով հանեց։ 15—Ու եղաւ որ երբ Փարաւոն խստացաւ ու մեզ արձակել չուզէր, Տէրը Եգիպտոսի երկիրին մէջ ամէն առջինեկը, մարդու առջինեկին մինչև անասունի առջինեկը, մեռցուցաւ. անոր համար ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջը զոհ կ'ընեմ, ու իմ որդիներուս ամէն առջինեկը կը փրկեմ, 16—Ու ասիկա քու ձեռքիդ վրայ նշանի համար, ու աչքերուդ մէջտեղ յիշատակոցի համար ըլլայ, վասն զի Տէրը մեզ Եգիպտոսէ զօրաւոր ձեռքով հանեց։

17—Ու եղաւ որ երբ Փարաւոն Ժողովուրդը արձակեց, Աստուած զանոնք Փղշտացւոց երկրին ճամբային չտարաւ, թէև այն դիմաց մտիկ էր. վասնզի Աստուած բաւ, Չըլլայ որ Ժողովուրդը զղջայ երբ պատերազմ տեսնէ, ու նորէն դառնայ։ 18—Հապա Աստուած Ժողովուրդը կարմիր ծովուն անապատին ճամբային պարտցուց. ու Իսրայէլի որդիները զինեալ գունդ գունդ Եգիպտոսի երկրէն ելան։ 19—Ու Մովսէս Յովսէփի ոսկորները իրեն հետ առաւ. վասն զի անիկա Իսրայէլի որդիները հաստատ երդում ընել տուաւ՝ ըսելով, Աներուշտ Աստուած ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու իմ ոսկորներս ասկէ ձեզի հետ հանեցէք։

20—Ու Սոկովթէ չուեցին, ու Եթամի մէջ անապատին ծայրը իջևան րրին։ 21—Ու Տէրը անոնց առջևէն կ'երթար ցորեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցնելու համար, ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս ատլու համար, որպէս զի ցորեկ ու գիշեր երթան։ 22—Ցորեկը ամպի սիւնը ու գիշերը կրակի սիւնը Ժողովուրդին առջևէն չպակսեցաւ։

Գլ. ԺԴ

Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն՝ որ դառնան ու փեթրոթէի առջև, Միգդոլի ու ծովուն մէջտեղ, բանակ դնեն, Բէէլզեփոնի առջև՝ անոր դիմաց ծովուն քով բանակ դրէք։ 3—Ու Փարաւոն Իսրայէլի որդիներուն համար պիտի ըսէ թէ Երկիրին մէջ *մոլորած են, անապատը անոնց բոլորեցիքը պատեց։ 4—Ու Փարաւոնի սիրտը պիտի կարծրացնեմ, ու անոնց հետևէն պիտի խկնայ. ու ես Փարաւոնի վրայ և անոր բոլոր զօրքերուն վրայ պիտի փառաւորուիմ, ու Եգիպտացիք պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։ Ու անոնք այնպէս ըրին։

5—Ու պատմեցաւ Եգիպտոսի թագաւորին թէ Ժողովուրդը փախաւ, և Փարաւոնի ու անոր Ծառաներուն սիրտը Ժողովուրդին դէմ դարձաւ, ու ըսին, Մենք ինչ՞ ըրինք այս բանը՝ որ Իսրայէլը մեզի ծառայութիւն ընելէն թող տուինք։ 6—Ու իր կառքը պատրաստեց, ու իր Ժողովուրդը իրեն հետ առաւ։ 7—Ու վեց հարիւր ընտիր կառքեր ու Եգիպտոսի բոլոր կառքերը՝ և անոնց ամէն մէկուն վրայ սպիկանները առաւ։ 8—Ու Տէրը Եգիպտոսի Փարաւոն թագաւորին սիրտը կարծրացուց, ու անիկա Իսրայէլի որդիներուն հետևէն բնկաւ. և Իսրայէլի որդիները բարձր ձեռքով ելան։ 9—Բայց Եգիպտացիք անոնց հետևէն բնկան, Փարաւոնի ամէն ձիերը՝ կառքերը և անոր ձիաւորները ու զօրքերը, և Հասան ատնոնց՝ բանակած կին ծովուն մօտ Փիհահիրոթի քով, Բէէլզեփոնի առջև։

10—Ու երբ Փարաւոն մօտեցաւ, Իսրայէլի որդիները իրենց աչքերը վերցուցին, և ահա Եգիպտացիք իրենց հետևէն կու գային, ու խիստ վախցան. և Իսրայէլի որդիները ազազակեցին Տէրոջը։ 11—Ու ըսին Մովսէսի, Եգիպտոսի մէջ գերեզմաններ չկայո՞ւն հոտմար մեզ անապատին մէջ մեռնելու բերիր ՀԻՆՉ է այս մեզի բրածդ որ մեզ Եգիպտոսէ հանեցիր։ 12—Այս չէ՞ր այն խօսքը զոր քեզի պատուհասիկ ընէինք Եգիպտոսի մէջ՝ ըսելով, Թող տուր մեզ՝ որ Եգիպտացւոց ծառայութիւն ընենք. քանզի աւելի ապրիլ է մեզի Եգիպտացւոց ծառայութիւն ընել, քան թէ անապատին մէջ մեռնիլ։ 13—Ու Մովսէս ըսաւ ժողովուրդին, Մի վախնաք, կայնեցէք, ու տեսէք Տէրոջը փրկութիւնը զոր այսօր պիտի ընէ ձեզի. վասն զի այսօրուան ձեր տեսած Եգիպտացիները ալ՝ յաւիտեան ալ պիտի չտեսնէք յաւիտեան։ 14—Տէրը ձեզի համար պիտի պատերազմի, ու դուք լուռ կեցէք։

15—Ու Տէրը բաւ Մովսէսի, Ինչո՞ւ ինծի կ'ապաղաչես. խօսէ Իսրայէլի որդիներուն որ չուեն։ 16—Ու գուն գաւազանդ վերցուր. ու ձեռքդ ծովուն վրայ երկնցուր, ու ճեղքէ զայն. և Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով երթան։ 17—Ու ես ահա Եգիպտացւոց սիրտը պիտի կարծրացնեմ՝ ու անոնց հետևէն պիտի երթան. և ես Փարաւոնի ու անոր բոլոր զօրքերուն վրայ, անոր կառքերուն ու անոր ձիաւորներուն վրայ պիտի փառաւորուիմ, 18—Ու երբ ես Փարաւոնի ու անոր կառքերուն և անոր ձիաւորներուն վրայ փառաւորուիմ, Եգիպտացիք պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

19—Ու Աստուծոյ հրեշտակը, որ Իսրայէլի բանակին առջևէն կ'երթար, ելաւ ու անոնց հետ գնաց. և ամպի սիւնը ելաւ անոնց առջևէն ու անոնց ետին կայնեցաւ. 20—Ու Եգիպտացւոց բանակին ու Իսրայէլի բանակին մէջտեղ եկաւ, ու Եգիպտացւոց ամպ ու խաւար եղաւ, բայց Իսրայէլացւոց գիշերը լոյս կու տար. և բոլոր գիշերը իրարու չմօտեցան։

21—Ու Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, ու Տէրը սաստիկ արեւելեան հովով գարձուց ծովը, բոլոր գիշերը, և ծովը ցամաք բրաւ, ու ջուրերը չետգետացան։ 22—Ու Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով քալեցին. ու ջուրերը անոնց աջ կողմին ու ձախ կողմին պարիսպ եղան։

23—Ու Եգիպտացիք անոնց հետևէն բնկան, ու Փարաւոնի բոլոր ձիերը, կառքերը ու ձիաւորները անոնց հետևէն ծովուն մէջտեղը գացին. 24—Ու եղաւ որ առաւօտեան պահուն Տէրը Եգիպտացւոց բանակին նայեցաւ կրակի ու ամպի սիւնէն, ու Եգիպտացւոց բանակը խռովութեան մէջ ձգեց. 25—Ու անոնց կառքերուն անիւները հանեց, որպէս զի դժուարութեամբ առաջ կ'երթային. այնպէս որ Եգիպտացիք ըսին, Փախչինք Իսրայէլի երեսէն, վասն

*Կամ, չիմացած

զի ահա Նոյա անանց համար Եգիպտացւոց հետ կը պատերազմի։

26—Ես Տէրը ըսաւ Մովսէսի, Ձեռքդ ծովուն վրայ երկնցուր, որպէս զի ջուրերը Եգիպտացւոց վրայ, անոնց կառքերուն ու անոնց ձիաւորներուն վրայ դառնան։ 27—Ես Մովսէս իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց, և առաւօտան դէմ ծովը իր տեղը դարձաւ, ու Եգիպտացիք անոր դիմացին փախան. և Տէրը թօթափեց Եգիպտացիները ծովուն մէջ, 28—ես ջուրերը դարձան ու ծածկեցին փարաւոնի կառքերը ու ձիաւորները և բոլոր զօրքերը՝ որոնք անոնց հետևէն ծովուն մէջ մտան. ու անոնցմէ մէկն ալ չմնաց։ 29—Բայց Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով կ'երթային, և ջուրերը անոնց ալ կողմէն ու ձախ կողմէն անոնց պարիսպ կ'էին։ 30—Ես Տէրը այն օրը Եգիպտացւոց ձեռքէն ազատեց Իսրայէլը. ու Իսրայէլ մեռած տեսաւ Եգիպտացիները ծովուն եզերքը։ 31—Ես Իսրայէլ տեսաւ այն մեծ *գործը որ Տէրը ըրաւ Եգիպտացւոց վրայ. ու ժողովուրդը վախցաւ Տէրոջմէն, ու հաւատաց Տէրոջը և անոր ծառային Մովսէսի։

Գլ. ԺԵ

Այն ատեն Մովսէս ու Իսրայէլի որդիները այս երգը երգեցին Տէրոջը, և խօսեցան՝ ըսելով,

Պիտի երգեմ Տէրոջը, քանզի փառքով փառաւորեալ է.
Ձին ու անոր հեծեալը ծովը նետեց։

2—Տէրն է իմ զօրութիւնս ու իմ գովեստիս,
Ես իմ փրկութիւնս եղաւ.
Անիկա է իմ Աստուածս, ու պիտի փառաւորեմ զանիկա.
Իմ հօրս Աստուածն է, ու պիտի բարձրացնեմ զանիկա։

3—Տէրը հզօր պատերազմող է.
Անոր անունը ԵՀՈՎԱ է։

4—Փարաւոնի կառքերը ու անոր զօրքերը ծովը նետեց.
Ես անոր բնտիր սպարհապետերը կարմիր ծովուն մէջ ընկղմեցան։

5—Անդունդները ծածկեցին զանոնք.
Քարի պէս խորունկը իջան։

6—Քու աջ ձեռքդ, ով Տէր, փառաւորեալ է զօրութեամբ.
Քու աջ ձեռքդ, ով Տէր, խորտակեց թշնամին։

7—Ես քու փառքիդ մեծութիւնովը քեզի դէմ կեցողները կործանեցիր.
Քու բարկութիւնդ ղրկեցիր. ոչ զանոնք յորդի պէս կերաւ։

8—Ես քու չունչիդ փչելովը ջուրերը ժողվուեցան.
Հեղեղները դէզի պէս կայնեցան.
Ծովուն մէջտեղը անդունդները պաղեցան։

9—Թշնամին ըսաւ, Պիտի հալածեմ, պիտի հասնիմ,
Աւարը պիտի բաժնեմ.
Իմ անձս անոնցմէ պիտի կշտանայ.
Իմ սուրս պիտի քաշեմ,
Իմ ձեռքս զանոնք պիտի սրբէ։

10—Քու հովդ փչեցիր, ծովը զանոնք ծածկեց.
Զորաւոր ջուրերուն մէջ կապարի պէս ընկղմեցան։

11—Ով Տէր, աստուածներուն մէջ քեզի պէս ո՞վ կայ.
Սրբութեան մէջ փառաւորեալ, օրհնութեան մէջ սքանչելի,
Հրաշքները ընող՝ ո՞վ կայ քեզի նման։

12—Քու աջ ձեռքդ երկնցուցիր,
Երկիր զանոնք կլլեց։

13—Քու ողորմութիւնովդ առաջնորդեցիր այս ժողովուրդին զոր գուն փրկեցիր.
Քու զօրութիւնովդ տարիր զանոնք քու սուրբ բնակութիւնդ։

14—Ժողովուրդները պիտի լսեն ու սարսափին.
Փղշտացւոց երկրին բնակիչները ցաւ պիտի բռնէ։

15—Այն ատեն Եդոմի իշխանները պիտի ապշնային.
Մոաբի զօրաւորները պիտի դողան.
Քանանու բոլոր բնակիչները պիտի հալին։

16—Անոնց վրայ վախ ու դող պիտի իյնայ.
Քու բազուկիդ մեծութենէն քար պիտի կտրին,

Մինչև անցնի քու ժողովուրդդ, ով Տէր,
Մինչև անցնի այս ժողովուրդը զոր գուն ստացար։

17—Պիտի բերես զանոնք, ու քու ժառանգութեանդ լեռը պիտի տնկես զանոնք,
Ով Տէր, այն տեղը՝ զոր քու բնակութեանդ համար յետնեցիր,
Ով Տէր, այն սրբարանին մէջ՝ զոր քու ձեռքերդ հիմնեցին։

18—Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան յաւիտենից։

19—Քանզի փարաւոնի ձիերը իր կառքերովը ու ձիաւորներովը ծովը մտան, և Տէրը ծովուն ջուրերը անոնց վրայ դարձուց. բայց Իսրայէլի որդիները ծովուն մէջէն ցամաքով գացին։

20—Ես Ահարոնի քոյրը Մարիամ մարգարէուհին թմբուկը իր ձեռքը առաւ. ու բոլոր կիները թմբուկներով ու պարերով անոր հետևէն եղան։ 21—Ես Մարիամ պատասխան առաւ անոնց,
Երգեցէք Տէրոջը, քանզի փառքով փառաւորեալ է.
Ձին ու անոր հեծեալը ծովը նետեց։

22—Ես Մովսէս Կարմիր ծովէն Շուրայ հանեց Իսրայէլը, ու Սուրի անապատը ելան. և երեք օր ատան մէջ գացին անապատին մէջ, ու ջուր չգտան։
23—Ու երբ Մեռա եկան, չկրնար խմել Մեռայի ջուրերէն, վասն զի դառն էին. անոր համար անոր անունը *Մեռա կոչուեցաւ։ 24—Ու ժողովուրդը տրտնջեց Մովսէսի դէմ՝ ըսելով, Ի՞նչ խմենք։ 25—Ես անիկա Տէրոջը աղաղակեց, ու Տէրը անոր փայտ մը ցուցուց, զոր ջուրերուն մէջ դրածին ալ՝ ջուրերը անուշցան. Հոն անոնց կանոն ու դատաստան դրաւ, և հոն փորձեց զանոնք, 26—ես ըսաւ, Եթէ Տէրոջը քու Աստուծոյդ ձայնին ուշադրութեամբ մտիկ ընես, ու ինչ որ անոր առջև չիտակ է՝ ընես, և անոր պատուիրանքներուն ականջ դնես ու անոր բոլոր կանոնները պահես, այն ախտերէն մէկը քու վրադ պիտի չբերեմ, զորոնք Եգիպտացւոց վրայ բերի. քանզի ես եմ Տէրը՝ որ քեզ կը բժշկեմ։

*Այսինքն, դառնութիւն

27—Ես եկան Եղիմ, ու հոն տասներկու ջուրի աղբիւրներ ու եօթանասուն արմաւենիներ կային. և հոն ջուրերուն քով բանակ դրին։

Գլ. ԺԶ

Ես չուեցին Եղիմէ, ու Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովը եկան Սին անապատը որ Եղիմի ու Սինայի մէջտեղ է, անոնց Եգիպտոսէ երկրէն ելլելուն երկրորդ ամսուն տասնհինգերորդ օրը։
2—Ես Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովը անապատին մէջ Մովսէսի ու Ահարոնի դէմ արաւնչ ըրին. 3—ես Իսրայէլի որդիները ըսին անոնց, Երանի՛ թէ Տէրոջը ձեռքով մեռած ըլլայինք Եգիպտոսի երկրին մէջ, երբ մեր կաթսաներուն քով նստած էինք, և կուշտ հաց կ'ուտէինք. քանզի մեզ այս անապատը հանեցիք որ բոլոր այս ժողովուրդը անօթութենէ մեռցնէք։

4—Ես Տէրը ըսաւ Մովսէսի, Ահա ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղամ, և ժողովուրդը պիտի ելլէ ու օրէ օր ժողվէ միայն մէկ օրուան պէտք հացը, որպէսզի փորձեմ զանոնք թէ իմ օրէնքիս համեմատ պիտի քալե՞ն թէ ոչ։ 5—Ես ըլլայ որ վեցերորդ օրը բերածնին պատրաստեն, և անիկա միւս օրուան ժողուածներնուն կրկինը ըլլայ։

6—Ես Մովսէս ու Ահարոն բոլոր Իսրայէլի բոլոր որդիներուն, Այս իրիկուն պիտի գիտնաք որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանողը Եհովա է, 7—ես առաւօտուն պիտի տեսնէք Տէրոջը փառքը, վասն զի Տէրոջը դէմ ձեր բրած արտառնչիդ լսեց, և մենք ո՞վ ենք՝ որ մեզի դէմ կը արտնչէք։ 8—Ես Մովսէս ըսաւ, երբ Տէրը ձեզի իրիկուն միսը տալու մէջ, ու առաւօտուն կշտանալու չափ հաց ասյ, ոչ թէ չէ՞ որ Տէրը լսած է ձեր դէմ բրած արտառնչիդ. և մենք ո՞վ ենք. ձեր արտառնչիդ մեզի դէմ չէ, հապա Տէրոջը դէմ։ 9—Ես Մովսէս ըսաւ Ահարոնի, Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին ըսէ, Տէրոջը առջև մօտեցեք. վասն զի ձեր արտառնչիդը լսեց։

10—Ես եղաւ որ երբ Ահարոն Իս-

բայէլի որդիներուն բոլոր ժողովքին կը խօսէր, անոնք դէպ ի անապատը նայիլցան, և անոնց Տէրոջը փառքը ամպին մէջ երեւցաւ։ 11—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, Իսրայէլի որդիներուն ըսուածնիը լսեցի. խօսք անոնց՝ ըսելով, 12—Երկուսն ալ դէմ մի պիտ ուտիք, ու առաւոտուց հացով պիտ կշտանաք. և պիտ գիտնաք թէ ես եմ Տէրը ձեր Աստուածը։

13—Եւ եղաւ որ երեկոյին լորամարդիներ եկան ու բանակը ծածկեցին. և առաւոտուց բանակին բոլորտիքը ցօղ իջաւ։ 14—Ու երբ իջած ցօղը վերցաւ, ահա անապատին երեսին վրայ մանր թեփաձեւ բան մը կար, եղեամի պէս մանր, գետնին վրայ։ 15—Ու երբ Իսրայէլի որդիները տեսան, իրարու ըսին, *Ի՞նչ է այս. քանի՞ր ինչ ըլլալը չէին գիտեր, ու Մովսէս ըսաւ անոնց, Այս է այն հացը զոր Տէրը ձեզի ուտելու տուաւ։ 16—Տէրոջը պատուիրած բանը այս է. ժողվեցէք անկէ ամէն մէկը իր կերածին չափ. ամէն մէկը իր վրանին մէջ եղողներուն համար, ձեր հոգիներուն համրանքին նայելով, մարդ գլուխ մէկմէկ օմէր առնէք։ 17—Եւ Իսրայէլի որդիները այնպէս ըրին. և ո՛րը շատ և ո՛րը քիչ ժողվեց։ 18—Եւ երբ օմէրով կը չափէին, չատ ունեցողինը չաւելցաւ, ու քիչ ունեցողը չպակսեցաւ. ամէն մէկը իր կերածին չափ ժողվեց։ 19—Եւ Մովսէս ըսաւ անոնց, Մէկը անկէ մինչև առաւօտ չպահէ, 20—Բայց մարդ չլսին Մովսէսի, հապա ոմանք թողուցին անկէ մինչև առաւօտ, և որդնոտեցաւ ու հոտեցաւ, և Մովսէս բարկացաւ անոնց։ 21—Եւ ամէն առաւօտ կը ժողվէին անկէ ամէն մէկը իր կերածին չափ, ու արեւը տաքցածին պէս կը հալէր։

22—Եւ եղաւ որ վեցերորդ օրը կրկնապատիկ ուտելիքը, այսինքն ամէն մէկուն համար երկու օմէր, ժողվեցին. և ժողովքին բոլոր իշխանները եկան ու պատմեցին Մովսէսի։ 23—Եւ անոնց ըսաւ անոնց, Այս է Տէրոջը խօսածը. վաղը հանգստութեան սուրբ շաբաթն է Տէրոջը. ինչ որ պիտի եփէք՝ եփեցէք, և ինչ որ պիտի եռացնէք՝ եռացուցէք, ու ինչ որ կ'ուզենիայ՝ ձեզի համար առաուան պահելու թողուցէք։ 24—Եւ անիկա առաւօտեան թողուցին, Մովսէսի հրամայածին պէս. և ոչ հոտեցաւ, ոչ ալ անոր մէջ որդ եղաւ։ 25—Եւ Մովսէս ըսաւ, Այսօր կերէք զայն, վասն զի այսօր շաբաթ է Տէրոջը. այսօր դաշտին մէջ անկէ պիտի չգտնէք։ 26—Վեց օր պիտի ժողվէք զանիկա. բայց եօթներորդ օրը, որ շաբաթ է, պիտի չգտնուի։ 27—Եւ եղաւ որ եօթներորդ օրը ժողովուրդէն ոմանք ժողվելու ելան, ու չգտան։ 28—Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Մինչև ե՞րբ չէք ուզեր պահել իմ պատուիրանքներս ու օրէնքներս։ 29—Նայեցէք որ Տէրը ատաւ ձեզի շաբաթը, անոր համար վեցերորդ օրը ինք ձեզի երկու օրուան հաց կու տայ. ամէն մէկդ իր տեղը քաղ նստի. մէկդ իր տեղէն չելլէ եօթներորդ օրը։ 30—Եւ ժողովուրդը հանգչեցաւ եօթներորդ օրը։ 31—Եւ Իսրայէլի *որդիները անոր անունը Ման դրին. ու այն գինձի սերմի պէս ճերմակ՝ ու անոր համը մեղրով չիաւոյ գաթայի պէս էր։

32—Եւ Մովսէս ըսաւ, Տէրոջը հրամայած բանը այս է. Անկէ օմէր մը լեցուցէք՝ որպէս զի ձեր ազգերուն մէջ պահուի. որպէս զի անոնք տեսնեն այն հացը, զոր ձեզի կերցուցի անապատին մէջ, երբ ձեզ եգիպտոսի երկրէն հանեցի։ 33—Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի, Սափոր մը առ, ու անոր մէջ օմէր մը լեցուն մանանայ դիր. և զանիկա ձեր ազգերուն մէջ պահուելու համար Տէրոջը առջև դիր։ 34—Ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց, այնպէս Ահարոն վկայութեան առջև դրաւ զանիկա, որպէս զի պահուի։ 35—Եւ Իսրայէլի որդիները քառասուն տարի կերան մանանան, մինչև որ չէն երկիր եկան. մանանան կերան, մինչև որ Քանանու երկրին սահմանը եկան։ 36—Եւ օմէրը երեքտասներորդ մասն է։

*Եբր. Մանհու (ուրկէ կ'ելլէ Մանանայ բառը)

*Եբր. սուրը

Գլ. ԾԲ

Եւ Իսրայէլի որդիները բոլոր ժողովքը Տէրոջը խօսքին պես իրենց գնացքին համեմատ Սին անապատէն չուեցին, և Ռափիդիմ մէջ բանակ դրին. ու ժողովուրդին համար խմելու ջուր չկար։ 2—Եւ ժողովուրդը Մովսէսի հետ վիճեցաւ ու ըսաւ, Մեզի ջուր տուր, որ խմենք. և Մովսէս ըսաւ անոնց, Ինչո՞ւ հետ կը վիճիք. ինչո՞ւ Տէրը կը փորձէք։ 3—Եւ ժողովուրդը հոն ջուրի համար ծարաւեցաւ. ու ժողովուրդը Մովսէսի դէմ արտասնէ ըսաւ ու ըսաւ, Ինչո՞ւ համար մեզ եգիպտոսէ հանեցիր, որ մեզ ու մեր որդիները և մեր հօտերը ծարաւութեամբ մեռցնես։

4—Եւ Մովսէս Տէրոջը աղաղակեց՝ ըսելով, Ի՞նչ ընեմ այս ժողովուրդին. գրեթէ պատրաստ են զիս քարկոծելու։ 5—Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, ժողովուրդին առջև անցիր, ու Իսրայէլի ծերերէն քեզի հետ առ, և քու գաւազանդ, որով գետը զարկիր, ձեռքդ առ ու գնա։ 6—Ահա Քորէբի մէջ ժայռին վրայ՝ հոն քու առջևդ կը կանգնիմ, և ժայռին զարկ, ու անկէ ջուր պիտ ելլէ, և ժողովուրդը պիտ խմէ. եւ Մովսէս այնպէս ըրաւ Իսրայէլի ծերերուն աչքին։ 7—Եւ այն տեղին անունը *Մասա ու Մերիբա՝ դրաւ. վասն զի Իսրայէլի որդիները հոն վիճեցան, և Տէրը փորձեցին՝ ըսելով, Արդեօք Տէրը մեր մէ՞ջ է թէ ոչ։

8—Այն ատեն Ամաղէկ եկաւ, ու Ռափիդիմի մէջ Իսրայէլի հետ պատերազմեցաւ։ 9—Եւ Մովսէս ըսաւ Յեսուի, Մեզի մարդիկ ընտրէ, ու Ամաղէկի հետ պատերազմելու ելլէր. վաղը ես բլուրին գլուխը պիտ կանգնիմ Աստուծոյ գաւազանը ձեռքս առնելով։ 10—Եւ Յեսու Մովսէսի ըսածին պէս ըրաւ, ու Ամաղէկի հետ պատերազմեցաւ. և Մովսէս, Ահարոն ու Ովր բլուրին գլուխը ելան։ 11—Եւ կ'ըլլար որ երբ Մովսէս իր ձեռքերը վեր կը վերցնէր, Իսրայէլ կը յաղթէր, ու երբ իր ձեռքերը վար կ'իջնեցնէր, Ամաղէկ կը յաղթէր։ 12—Եւ Մովսէսի ձեռքերը ծանրանալուն՝ քար մը առին ու անոր տակ դրին, և ինք անոր վրայ նստաւ. ու Ահարոն և Ովր, մէկը մէկ կողմէն ու մէսը մէս կողմէն, անոր ձեռքերը վեր բռնեցին. ու մինչև արեգակին մտնելը անոր ձեռքերը հաստատուն մնացին։ 13—Եւ Յեսու սուրի բերնէ անցուց Ամաղէկը ու անոր ժողովուրդը։ 14—Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Ասիկա յիշատակի համար գիրքի մէջ գրէ, ու Յեսուի *իմացուր՝ որ Ամաղէկի յիշատակը երկինքի տակէն բոլորովին պիտ չնչնի։ 15—Եւ Մովսէս սեղան մը չինեց, ու անոր անունը †Եհովահիսի գրաւ։ 16—Ու ըսաւ, ‡Քանզի Տէրը երդում ըրաւ՝ ըսելով Իր՝ Տէրը ազգ ազգ պիտի պատերազմի Ամաղէկի դէմ։

Գլ. ԾՃ

Եւ Մովսէսի աները, Մադիամի քուրմը Յոթրո, լսեց այն ամէնը զոր Աստուած ըրաւ Մովսէսի ու իր Իսրայէլ ժողովուրդին, և թէ Տէրը եգիպտոսէ հանեց Իսրայէլը։ 2—Եւ Մովսէսի աները Յոթրո առաւ Մովսէսի կինը Սեպփորան, զանիկա ետ զրկելէն ետքը. 3—Եւ անոր երկու որդիները՝ որոնց մէկուն անունը Գերսամ էր. վասն զի ինք ըսեր էր, Օտար երկրի մէջ պանդուխտ եմ. 4—Ու միւսին անունը ||Եղիեզար էր, վասն զի ըսեր էր, Իմ հօրս Աստուածը իմ օգնականս էր, ու զիս Փարաւոնի սուրէն ազատեց։ 5—Եւ Մովսէսի աները Յոթրո անոր որդիներովը ու անոր կնոջմովը եկաւ Մովսէսի դէմ ի անապատը՝ ուր անիկա բանակ դրեր էր Աստուծոյ լեռանը քով. 6—Եւ իմացուց Մովսէսի՝ ըսե-

*Աչքէ անցնելու մէջ դիր

†Եհովան Տէրը իմ գրօշակս է

‡Եբր. Քանզի Տէրը էր աթոռին վրայ ձեռք վերցնելով Երբոհամ ըսաւ, Ին, Որով հետև ձեռք վերցուց Տէրոջը աթոռին դէմ,

||Աչքէնս, իմ Աստուածս օգնական

*Աչքէնս, փորձութիւն ու վիճաբանութիւն

լ֊ը, ես, քա՛ անկրդ Յոթնը, փեղկ կու գամ, նաև քա՛ կինդ իր երկու որդիները իրեն հետ առնելով։ 7— Ե֊ Մովսէս իր աները դիմաւորելու եկաւ, և ֊ոյզ խոնարհութիւն ըրաւ, ու համբուրեց զանիկա. և իրարու ողջոյնին հարցուցին ու վրանը մտան։ 8— Ե֊ Մովսես իր աներոյ պատմեց այն ամենը՝ զոր Տէրը ըրաւ Փարաւոնի ու Եգիպտացիներուն՝ Իսրայէլի համար, և ճամբուն մէջ բոլոր իրենց փորձած աչխատութիւնը, ու Տէրոջը զանոնք ազատելը։ 9—Ե֊ Յոթը ուրախացաւ բոլոր բարութիւններուն համար՝ զորոնք Տէրը ըրաւ Իսրայէլի, փրկելով զանոնք Եգիպտացւոց ձեռքէն։ 10—Ե֊ Յոթը բաւ, Օրհնեալ ըլլայ Տէրը, որ ազատեց ձեզ Եգիպտացւոց ձեռքէն ու Փարաւոնի ձեռքէն. վասն զի ազատեց Ժողովրդը Եգիպտացւոց ձեռքին տակէն։ 11— Հիմա գիտեմ՛ որ Եհովա բոլոր աստուածներէն մեծ է. քանզի ինչ բանի մէջ որ կը հպարտանային, անոնցմէ վեր էր֊։ 12— Ե֊ Մովսէսի աները Յոթրո ողջակէզ ու զոհեր բերաւ Աստուծոյ. և Ահարոն ու Իսրայէլի բոլոր ծերերը Մովսէսի աներոյ հետ Աստուծոյ առջև հաց ուտելու եկան։

13—Ե֊ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէս Ժողովրդը դատելու նստաւ, ու Ժողովրդը առաւօտէն մինչև իրիկուն Մովսէսի քով կայնեցաւ։ 14— Ե֊ Մովսէսի աները երբ տեսաւ ինչ որ կ'ընէր Մովսէս Ժողովրդին, ըսաւ, Ինչ է այս բանը՝ զոր դուն կ'ընես Ժողովրդին. ինչո՞ւ դուն միայնակ կը նստիս, ու բոլոր Ժողովրդը առաւօտէն մինչև իրիկուն քու քովդ կը կայնի։ 15—Ե֊ Մովսէս բաւ իր աներոյ, Զանազի Ժողովրդը կու գայ ինծի՝ Աստուծմէ դատաստան հարցնելու։ 16—Երբ անոնք բան մը ունենան՝ ինծի կու գան, և ես ֊անոնց միջնոր դատաստան կ'ընեմ, ու Աստուծոյ կանոններ և օրէնքները ֊ոյզ կը գիտցնեմ։ 17— Ե֊ Մովսէսի աները բաւ անոր, Քա՛ ըրածդ ապիկ բան չէ։ 18—Իրաւցընկ

֊Եբր. մարգուն ու իր բնակերին

դուն պիտի մաշիս, դուն ալ ու քեզի հետ եղած այս Ժողովրդն ալ. վասն զի այս բանը քեզի չատ ծանր է. դուն միայն չես կրնար բնել մենիկա։ 19— Հիմա մտիկ ըրէ իմ խօսքս. ես քեզի խրատ տամ, ու Աստուած քեզի հետ պիտի ըլլայ. Ժողովրդին համար Աստուծոյ առջև դուն դնա, որպէս զի դատերը դուն ներկայացնես Աստուծոյ. 20—Ե֊ անոնց օրէնքները կանոնները ու օրէնքները, և գիտցը անոնց իրենց քալելու ճամբան ու իրենց բնելու գործը։ 21—Ու սա՛ դուն բոլոր Ժողովրդին կարող մարդիկ, Աստուծմէ վախցող, ճշմարտասէր ֊ ագահութիւնը ատող մարդիկ ընտրէ, ու ֊֊֊

3—Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս։

4—Դուն քեզի կուռք չշինես. ոչ ալ վերը երկինքի մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրի տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը։ 5—Անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես. վասն զի ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ, մինչև անոնց երրորդ ու չորրորդ սերունդը, որ կ'ատեն զիս։ 6—Ու կ'ողորմիմ անոնց մինչև հազար սերունդ, որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն։

7—Տէրոջը, քու Աստուծոյդ, անունը պարապ տեղ բերնիդ չառնես. վասն զի Տէրը չի անունը պարապ տեղ բերնի առնողը անմեղ պիտի չսեպէ։

8—Հանգստութեան օրը միտդ բեր, զանիկա սուրբ պահելու համար։ 9—Վեց օր պիտի աշխատես, ու բոլոր գործդ ընես. 10—բայց եօթներորդ օրը Տէրոջը, քու Աստուծոյդ, հանգստութեան օրն է. ոչ դուն, ոչ քու որդիդ, ոչ քու աղիկդ, ոչ քու ծառադ ու աղախինդ, ոչ քու անասունդ, ոչ ալ *ռանդ մէջ եղած օտարականդ. 11—Քանզի Տէրը վեց օրուան մէջ բոլոր երկինքն ու երկիրը, ծովը ու բոլոր անոր մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա։

12—Պատուէ քու հայրդ ու մայրդ, որպէս զի քու օրերդ երկայն ըլլան այն երկրին վրայ՝ զոր քու Տէր Աստուածդ կու տայ քեզի։

13—Սպանութիւն մի ըներ։

14—Շնութիւն մի ըներ։

15—Գողութիւն մի ըներ։

16—Քու դրացիդդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ։

17—Քու դրացիդդ տանը մի ցանկար. քու դրացիդդ կնոջը, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր եզին, կամ անոր իշուն, և քու դրացիդդ ամենեն-ին մէկ բանին մի ցանկար։

18—Ու բոլոր ժողովուրդը կը տեսնէին որոտաձիները ու կայծակները և փողին ձայնը ու լեռանը մխալը։ Ու երբ ժողովուրդը տեսաւ, նա փախուեցաւ ու հեռու կայնեցաւ։ 19—Ու ըսին Մովսէսի. Դուն խօսէ մեզի հետ, ու մենք կ'ընենք. բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որպէս զի չմեռնինք։ 20—Ու Մովսէս ըսաւ ժողովուրդին Մի վախնաք. վասն զի Աստուած ձեզ փորձելու եկաւ, այնպէս որ անոր վախը ձեր առջև ըլլայ, որպէս զի չմեղանչէք։ 21—Ու ժողովուրդը հեռու կայնեցաւ. ու Մովսէս մտաւ այն թանձր խաւարին՝ ուր Աստուած էր։

22—Ու Տէրը ըսաւ Մովսէսի. Այսպէս պիտի ըսես իսրայէլի որդիներուն, Դուք տեսաք որ ձեզի հետ երկինքէն խօսեցայ։ 23—Ինծի հետ արծաթէ աստուածներ չընէք. ոչ ալ ոսկի աստուածներ չինէք ձեզի։ 24—Ինծի հողէ սեղան մը չինես, ու անոր վրայ քու ոչխարէ զոհերդ ու խաղաղութեան զոհերդ, քու ոչխարներդ ու արջառներդ մատուցանես. և ամէն տեղ, ուր իմ անունս յիշել կու տամ, քեզի պիտի գամ, ու քեզ պիտի օրհնեմ։ 25—Ու եթէ ինծի քարէ սեղան չինելու ըլլաս, աշտած քարէ չշինես. քանզի եթէ անոր վրայ երկաթի գործիք վերցնես, կը պղծես զանիկա։ 26—Ու սանդեանիներով չելլես իմ սեղանս, որպէս զի քու մերկութիւնդ չերեւնայ անոր վրայ։

Գլ. ԻԱ

Ե անոնց առջև դնելու դատաստաններդ ասոնք են. 2—եթէ երբեմն ծառայ մը ծախու առնես, վեց տարի ծառայէ, անկէ վեց տարի պիտի ծառայէ, և եօթներորդ տարին ձրի ազատ պիտի երթայ։ 3—եթէ մինակ մատ, մինակ պիտի երթայ. եթէ կին առեր, կինն ալ իրեն հետ պիտի երթայ։ 4—եթէ իր տէրը իրեն կին առաւ, ու անկէ իրեն որդիներ կամ աղջիկներ ծնաւ է, կինը ու անոր ազատը անոր պիտի ըլլան, ու ինք մինակ պիտի երթայ։ 5—Իսկ եթէ ծառան յայտնի բանալ ըլլայ թէ ես կը սիրեմ իմ տէրս, իմ կինս ու իմ ազատներս, չեմ ուզեր որ երթամ ազատ ըլլա՞յ, 6—Այն ատեն անոր տէրը դատաւորներուն պիտի տանի զանիկա, և դրանը կամ դրանդիքներուն մօտ ցրնէ. ու անոր տէրը անոր ականջը հերիւնով պիտի ծակէ, և անկէ յաւիտեան ծառայ պիտի ըլլայ անոր։

7—Ու եթէ մէկը իր ազիկը ազատին ըլլալու համար ծախէ, անկէ ծառաներուն երթալուն պէս պիտի չելլէ. 8—եթէ անկէ հաճելի չերեւնայ իր տէրոջը աչքին որ զանիկա իրեն նշաներ էր, թող փրկել տայ զանիկա. ի՛յ զանիկա օտար ազգի ծախելու կարող չըլլայ, վասն զի խաբեութիւն ըրաւ անոր։ 9—Ու եթէ զանիկա իր որդւոյն նշանած է, ազիկանց օրէնքին համեմատ պիտի ընէ անոր։ 10—Եթէ իրեն ուրիշ կին առնէ, անոր ուտելիքը, հանդերձը ու ամուսնութիւնը պիտի չկորչէ։ 11—Ու եթէ անոր այս երեք բանը չընէ, այն ատեն անկէ առանց տակի ձրի պիտի երթայ։

12—Մարդ զարնող մեռցնողը անշուշտ պիտի մեռցուի։ 13—Իսկ եթէ դարանամատ չեղաւ, հապա Աստուած ձեռքը փղի տեղ մը պիտի տա՛նի անոր ձեռքը, փղի տեղ մը պիտի տա՛նի, որպէս զի անկիա հոն փախչի։ 14—Բայց եթէ մէկը իր դրացիին ոխ ունենայ, և զանիկա նենգութեամբ մեռցնէ, իմ սեղանէս ալ պիտի առնես զանիկա՝ որպէս զի մեռնի։ 15—Ու իր հօրը կամ մօրը զարնողը անշուշտ պիտի մեռցուի։

16—Ու մարդ գողցողը, թէ՛ զանիկա ծախած ըլլայ, և թէ՛ իր ձեռքը գտնուի, անշուշտ պիտի մեռցուի։

17—Ու իր հայրը կամ մայրը անէծք ալ անշուշտ պիտի մեռցուի։

18—Ու եթէ մարդիկ իրարու հետ վէճ ընեն, ու մէկը միւսին քարով կամ բռունցքով զարնէ, ու անիկա չմեռնի, հապա անկողին պառկի, 19—եթէ ոտքի ելլէ ու ցուպով պարսիր, զարնողը անպատիժ ըլլայ, միայն անոր *կորսնցուցած ժամանակին տրձիչը հատուցանէ, ու բուժովին առողջացնել չտալ։

20—Ու եթէ մէկը գաւազանով իր ծառան կամ իր ազախինը զարնէ, ու անիկա իր ձեռքին տակ մեռնի, անշուշտ պիտի վրէժ պիտի առնուի։ 21—Բայց եթէ օր մը կամ երկու օր ապրի, անկէ վրէժ չառնուի. քանզի անիկա իր սեռկն է։

22—Ու եթէ մարդիկ կռուին, ու յղի կնոջ մը զարնելով՝ անոր ապտն անցնել տան, և ուրիշ վնաս մը չըլլայ, անիկա անշուշտ այն կնոջ ընկէր իր վրայ դրած տոյժը պիտի փշրէ, դատաւորներուն դատաստանին պէս հատուցանելով։ 23—Բայց եթէ վնաս մը ըլլայ, անձի տեղ անձ պիտի տաս, 24—աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռայ, ձեռքի տեղ ձեռք, ոտքի տեղ ոտք, 25—խարտի տեղ խարտ, վիրքի տեղ վիրք, հարուածի տեղ հարուած։

26—Ու եթէ մէկը իր ծառային աչքը կամ իր ազախինին աչքը զարնէ ու կուրցնէ, զանիկա իր աչքին փոխարէն ազատ պիտի արձակէ։ 27—Ու եթէ իր ծառային ակռան կամ իր ազախինին ակռան թափէ, զանիկա իր ակռային փոխարէն ազատ պիտի արձակէ։

28—Ու եթէ եզ մը իր եզին բնաւ մարդ մը կամ կին մը զարնէ մեռցնէ, եզը անշուշտ պիտի քարկոծուի, ու անոր միսը պիտի չուտուի. բայց եզին տէրը անպատիժ ըլլայ։ 29—Հապա եթէ եզը երկուբեն կամ միւս օրուընէ զարնող է, և անոր տէրոջն ալ զգուշացած է, ու զանիկա պահած չէ, եթէ մարդ մը կամ կին մը մեռցնելու ըլլայ, եզը պիտի քարկոծուի, ու անոր տէրն ալ պիտի մեռցուի։ 30—Եթէ փրկանք մը ձգուի անոր վրայ, անիկա իր անձին ազատութեանը համար՝ ինչ որ իր վրայ ձգուի պիտի վճարէ։ 31—Թէ ոտքայ մը և թէ՛ ազիկ մը զարնելու ըլլայ ինչ, այս դատաստանին պէս ընելու անոր։ 32—Եթէ եզը ծառայ մը կամ ազախին մը զարնէ, անոնց տէրոջը երեսուն սիկղ արծաթ պիտի տայ, ու եզը պիտի քարկոծուի։

33—Ու եթէ մէկը փոս մը բանայ, կամ մէկը փոս մը փորէ ու չծածկէ և

*Եբր. դանդաղ

*Եբր. նասիլը

հան եղ մը կամ եշ մը խյնալու ըլլայ, 34—վնասը փոխն ալերը պիտի փուչ, — անոնց ալերոյը սակ պիտի ապ, և մեռածը իրը պիտի ըլլայ։

35—Ու. եթէ մկկուն եղը իր դրացիին եղը զարնէ մեռցընէ, ողջ եղը պիտի ծախեն, ու անոր սակը բաժնեն, և մեռածն ալ բաժնեն։ 36—Իսկ եթէ եղին եբկուընկն էր միա օրուընկ զարնող ըլլալը գիացուած ըլլալով, անոր ալերը զանկիա պահած չէ, անչուշտ եղին տեղը եղ պիտի հատուցանէ, ու մեռածը իրը պիտի ըլլայ։

Գլ. ԻԹ

1 Եթէ մկկը արխատը կամ ոչխար մը գողնայ, ու մորթէ կամ ծախէ զանկիա, մկկ արխատին տեղ հինգ արխատ, ու մկկ ոչխարին տեղ չորս ոչխար պիտի հատուցանէ։ 2—Եթէ գող մը գտնէ ծակելու վրայ դանուի, ու զարնուի մեռնի, անոր համար արիւն չիթափուի։ 3—Եթէ անոր վրայ արեգ ծագէ եր, անոր համար արիւն պիտի թափուի. անկիա ըման կրնար հատուցանել. Եթէ բան մըն ալ չունենար, այն ատեն իր գողցած բանին համար կրնար ծախուիլ։ 4—Եթէ գողցածը իր ձեռքը ողջ գտնուի, թէ՛ եզ ըլլայ, թէ՛ եշ և թէ՛ ոչխար, կրկինը պիտի հատուցանէ։

5—Եթէ մկկը արտ մը կամ այգին մը *վնաս ապ՝, թող տալով իր անասունը ուրիշի մը արտին մէջ արածելու, իր արտին ամէնէն ագիկ –ԸԲՒՀԵՆ ու իր այգիին ամէնէն ապիկ ԲԵՐՀԵՆ պիտի հատուցանէ։ 6—Եթէ կրակ ցաթկէ ու ցանկին փուչերուն փակչի, և դիզուած արմաները կամ չհնձուած ցորենը կամ արտ այրէ, կրակը վառողը այրածին –ԸԲՀԵՐ ըման պիտի հատուցանէ։

7—Եթէ մկկը իր դրացիին սակ կամ ասնիներ ապ պահելու համար, և այն մարդուն առնէն գողցուի, Եթէ գողը գտնուի, անկիա կրկինը պիտի հատուցանէ։ 8—Եթէ գողը չգտնուի, տանուտէրը դատաւորներուն պիտի տարուի, իր ձեռքը իր դրացիին տասուածքին չդպցնելը երդնելու համար։ 9—Ամէն կերպ անիրաւութեան համար, թէ՛ եզի, թէ՛ իշու, թէ՛ ոչխարի և թէ՛ հանդերձի համար, ի՛նչ ասվն կերպ կորսուած քանի համար՝ զոր գէշ կը հասուսուի թէ իրն է, երկու կողմին դատը դատաւորներուն առջև տարուի, — դատաւորները որո՛ն վրայ վճռելու ըլլան, անկիա իր դրացիին կրկինը պիտի հատուցանէ։

10—Եթէ մկկը իր դրացիին եշ մը կամ եզ մը կամ ոչխար մը կամ ինչ-ևիցէ անասուն մը պահելու համար տայ, ու անկիա մեռնի կամ վնասուի կամ *թշնամին առնէ տանի՝ ու մեռնող մը չըլլայ, 11—Այն –ԵՒՆ երկուքին մէջտեղ Տէրոջը երդումն ըլլայ՝ իր դրացիին ապրուստքին ձեռք չդպցընելուն համար. ու անոր ալերը պիտի ընդունի էջդ–ՀԸ, և ինք պիտի չհատուցանէ։ 12—Ու եթէ իրապցընէ իր քովէն գողցուելը է, ինք անոր ալերոյը պիտի հատուցանէ։ 13—Եթէ է–ՂՆԻ պատառուած է, թող բերէ զանկիա՝ վկայութիւն ըլլալու համար. — պատառուածին էջնը պիտի չհատուցանէ։

14—Ու եթէ մկկը իր դրացիէն –ՆԱՒԼ փոխ առնէ, ու անկիա վնասուելու կամ մեռնելու ըլլայ, անոր ալերը իրեն հետ չըլլալով, ինք անչուշտ պիտի հատուցանէ։ 15—Բայց եթէ անոր ալերը իրեն հետ էր, պիտի չհատուցանէ. եթէ վարձքով առնուած էր, վարձքին տեղ սեպուի։

16—Ու եթէ մկկը չնշանուած աղջիկ մը խաբէ, ու անոր հետ պառկի, անչուշտ անոր օժիտը ինք տալով զանիկա իրեն կին պիտի բնէ։ 17—Եթէ անոր հայրը ամենևին չուզէ անոր տալ, անկիա կայսերուն օժիտին չափ տակ պիտի †տայ։

18—Կախարդ կինը չապրեցնես։

19—Ով որ անասնի հետ պառկի, անչուշտ պիտի մեռցուի։

20—Մէկայն Տէրոջմէն զատ ուրիշ աստուածներուն զոհ ընդդ բոլորովին պիտի կոտուի։

*ՆԲԸ. մէջ արածել տայ

*ՆԲԸ. գերութեան փչուի
†ՆԲԸ. կշռի

21—Ու. օտարականը մի չարչարեր, ու զանիկա մի նեղեր. ջան զի դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ օտարական եիք։ 22—Որբ ու այրը բնաւ մի չարչարէք։ 23—Եթէ զանոնք չարչարելէ բնչ-ևիցէ կերպով մը, ու անոնք ինծի բողոքելու ըլլան, անչուշտ պիտի լսեմ անոնց ազազակը. 24—Ու իմ բարկութիւնս պիտի բորբոքի, ու ձեզ սրով պիտի սպանեմ. և ձեր կիներէն այրեր ու ձեր ազաքներէն որբ պիտի ըլլան։

25—Եթէ իմ ժողովրդէս քու քովդ եղած ազգատ ևկան փոխ տակ տաս, վարիս առնողի մը պէս մի ըլլար անոր, ու անոր վրայ վաշխ մի դներ։ 26—Եթէ քու դրացիդ հանդերձը գրաս առնես, արեւը մարը չմտած իրեն դարձնես. 27—Վասն զի այն է միայն անոր ծածկոցը, իր մարմինին հանդերձն է այն. ինչո՞վ պիտի պառկի. և պիտի ըլլայ որ երբ ինծի ազազակի, պիտի լսեմ, քանզի ես ազատսած եմ։

28—Դատաւորներուն մի հայհոյեր, և քու ժողովրդիդ իշխանը մի անիծներ։

29—Ու արմաիքներուդ ու հեղուներէքուդ երախայրիներդ մի ուշացընես. քու որդիներուդ անդրանիկները ինծի պիտի տաս։ 30—Ու եղիդ ու էշդ հանդստանայ, և քու ազախինդ որդին ու օտարականը շունչ առնէ։ 13—Ու բոլոր ձեզի զրուցածներուս մէջ զգուշաւոր ըլլաք, և ուրիշ աստուածներուն անունը չյիշէք. ձեր բերնէն –ՒՉՄ չլսուի։

14—Տարին երեք անգամ ինծի տօն պահէ։ 15—Բաղարջկներաց տօնը պահէ. քեզի պատուիրածիս պէս եօթը օր անխմոր հաց պիտի ուտես Ապիւ ամսուն մէջ սահմանուած ժամանակին, վասն զի այն ամսուն մէջ եգիպտոսէ ելար. և բնաւ ինծի ՅԻ–ՇԸ գաւարկ չերեւնայ իմ առջեւս։ 16—Ու արտին մէջ ցանելու աշխատութիւնդ. հասկայրի պտուղը հնձելու տօնը ու տարւոյն վերջը ժողվելու տօնը դ–ՀԻ–ս, երբ արտէն քու աշխատութիւնդ կը ժողվես։ 17—Տարին երեք անգամ քու ամէն

*կամ, գաւարը

աքաղներդ. Ձեր նշովայի առվել պիտի եղեւնան,

18—իմ զոհս աբրնար խնդրելով հացով չմսաուցանես, ու իմ ասնիս ձաթսը մինչև առաւ պիտի չմնայ. 19—Քան երկրիդ առաջին երախայրիները քու Ձեր Աստուծոյդ տանը տանիս։

Ուլը իր մորը կաթին մէջ չեփես։

20—Ահա քու առջեւդ հրեշտակ մը կը զրկեմ, որ քեզ ճամբուն մէջ պահպանէ, ու իմ պատրաստած տեղս տանի քեզ։ 21—Անկէ զգուշացիր ու անոր խօսքը մտիկ ըրէ, անոր անհնազանդ մի ըլլար. վասն զի անիկա ձեր յանցանքը պիտի չներէ, քանզի իմ անունս անոր վրայ է։ 22—Բայց եթէ ուշադրութեամբ անոր խօսքը մտիկ ընես, ու իմ բոլոր ըսածս ընես, այն ատեն քու թշնամիներուդ թշնամի պիտի ըլլամ, և քու հակառակորդներուդ հակառակորդ. 23—Քանզի իմ հրեշտակս քու առջեւդ պիտի երթայ, և քեզ Ամորհացւոց ու Քեթացւոց և Փերեզացւոց ու Քանանացւոց, Խեւացւոց ու Յեբուսացւոց պիտի տանի, և ես պիտի լարգեմ զանոնք։ 24—Անոնց աստուածներուն երկրպագութիւն կամ ծառայութիւն չընես, ու անոնց գործին պէս չընես. հապա բոլորովին կործանես զանոնք, ու անոնց կուռքերը բոլորովին կոտրտես։ 25—Ու ձեր Ստեր Աստուածը պաշտէք, ու ինք ձեր հացը ու ջուրը պիտի օրհնէ, և ձեր մէջէն հիւանդութիւնը պիտի վերցնեմ։ 26—Քու երկրիդ մէջ վիժող ու ամուլ պիտի չըլլայ. քու օրերուդ թիւը պիտի լեցընեմ։ 27—Իմ երկիւղս քու առջեւդ պիտի զրկեմ, և պիտի կոտրտեմ այն բոլոր ժողովուրդը որու դուն կ'երթաս, ու քու բոլոր թշնամիներուդ կռնակը քեզի պիտի դարձնեմ։ 28—Ու քու առջեւդ իշամեղուն պիտի զրկեմ, որպէս զի Խեւացիները, Քանանացիները ու Քեթացիները քու առջեւդ վռնտէ։ 29—Անոնք քու առջեւդ մէկ տարուան մէջ պիտի չվռնտեմ, որ չըլլայ թէ երկիրը ամայի ըլլայ, ու քու վրադ գազանները չատնան։ 30—Զանոնք քու առջեւդ կամաց կամաց պիտի վռնտեմ, մինչև որ դուն բազմանաս ու երկիրը ժառանգես։ 31—Ու քու սահմաններդ Կարմիր ծովէն մինչև Փղշտացւոց ծովը, ու անապատէն մինչև Եփրատ գետը պիտի դնեմ. վասն զի այն երկրին բնակիչները քու ձեռքդ պիտի տամ. ու զանոնք քու առջեւդ վռնտես։ 32—Անոնց հետ ու անոնց աստուածներուն հետ ուխտ չընես։ 33—Քու երկրիդ մէջ չբնակին, որպէս զի քեզ մեղք գործել չտան ինծի դէմ. վասն զի եթէ անոնց աստուածները պաշտես, անշուշտ այն քեզի որոգայթ պիտի ըլլայ։

Գլ. ԻԴ

Ե. բաւ Մովսէս, Տէրոջը ելիր դուն ու Ահարոն, Նադաբ ու Աբիհուդ, և Իսրայէլի Ծերերէն եօթանասուն հոգի, ու հեռուէն երկրպագութիւն ըրէք։ 2—Ե. միայն Մովսէս մօտենայ Տէրոջը, ու անոնք չմօտենան, ալ ժողովուրդը անոր հետ ելլէ։

3—Ե. Մովսէս եկաւ, ու Տէրոջը բոլոր խօսքերը և բոլոր դատաստանները պատմեց ժողովուրդին. և բոլոր ժողովուրդը միաձայն պատասխան տուին ու ըսին, Տէրոջը զրուցած բոլոր խօսքերը պիտի ընենք։ 4—Ե. Մովսէս Տէրոջը բոլոր խօսքերը գրեց, ու առաւտանց կանուխ ելաւ, ու լեռանը տակ սեղան մը շինեց. ու Իսրայէլի տասներկու ցեղերուն համեմատ տասներկու սրաձան կոնդեցէց։ 5—Ու Իսրայէլի որդիներէն պատանիները զրկեց, ու ողջակէզներ մատուցին և խաղաղութեան զոհերու համար զուարակներ զոհեցին Տէրոջը։ 6—Ե. Մովսէս արիւնին կէսը առաւ ու կոնքերու մէջ դրաւ, և արիւնին կէսը սեղանին վրայ սրսկեց։ 7—Ե. առաւ ուխտին դիրքը ու ժողովրդին ականջներուն կարդաց. և անոնք ըսին, Տէրոջը բոլոր ըսածը պիտի ընենք, ու անոր պիտի հնազանդինք։ 8—Ե. Մովսէս առաւ արիւնը, ու ժողովրդին վրայ սրսկեց ու ըսաւ, Ահա բոլոր այս խօսքերուն համեմատ՝ Տէրոջը ձեզի հետ բրած ուխտին արիւնը։

9—Ա.յն ատեն Մովսէս ու Ահարոն Նադաբ ու Աբիհուդ, և Իսրայէլի Ծեր-

բերէն եօթանասուն հոգի ելան. 10—Ե. Իսրայէլի Աստուածը տեսան. ու անոր ոտքերուն տակ սպիւռքի կատակի պէս շափիւզայ և պայծառութեամբ բան երկինքին պէս էր. 11—Ե. Իսրայէլի որդիներուն ընտրեալներուն վրայ իր ձեռքը չերկնցուց. և զԱստուած տեսան, ու կերան և խմեցին։

12—Ե. Տէրը ըսաւ Մովսէսի, Լեռը ելիր բնայ, ու հոն կայնէ, և պիտի տամ քեզի քարէզէն սահմանները ու իմ դրած օրէնքս և պատուիրանքներ որպէս զի անոնց սորվեցնես։ 13—Ե. Մովսէս ու անոր պաշտամնան Յեսու ելան, և Մովսէս Աստուծոյ լեռը ելաւ. 14—Ե. ըսաւ Ծերերուն, դուք հոս մնաք մեզի սպասեցէք, մինչև որ ձեզի դառնանք. և ահա Ահարոն ու Ովր ձեզի հետ են. եթէ մէկը դատ մը ունենայ, քաղ անոնց երթայ։

15—Ե. Մովսէս լեռը ելաւ, ու ամպը պատեց լեռը։ 16—Ե. Տէրոջը փառքը Սինա լեռանը վրայ հանգչեցաւ, ու ամպը պատեց զանիկա վեց օր. և եօթներորդ օրը Տէրը ամպին մէջէն կանչեց Մովսէսը։ 17—Ե. Տէրոջը փառքը սեւթիլը լեռանը գագաթին վրայ մեղ կրակի պէս էր Իսրայէլի որդիներուն առջեւ։ 18—Ե. Մովսէս ամպին մէջ մտաւ ու լեռը ելաւ, և Մովսէս քառասուն օր ու քառասուն գիշեր լեռը կեցաւ։

Գլ. ԻԵ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2—Զրուցէ Իսրայէլի որդիներուն որ ինծի ընծայ բերեն. ամեն յօժար կամքով տուողէն պիտի առնէք իմ ընծաս։ 3—Ե. ձեր անոնցմէ առնելու ընծան այս է. ոսկի և արծաթ ու պղինձ, 4—Ե. կապուտակ ու ծիրանագոյն և կրկնակի կարմիր ու բարակ քթան և այծի մազ, 5—Ե. կարմիր ներկուած խոյի մորթեր ու քէհաչի մորթեր և Սատիմի փայտեր, 6—Լոյսի համար իւղ, օծանելիքի համար ու անուշահոտ խունկի համար հաճելիներ, 7—ներկնագոյներ ու եփուածին ու լանջապանակին վրայ գամուելու քարեր,

8—Ե. ինծի սրբարան մը շինեն՝ որպէս զի իրենց մէջ բնակիմ։ 9—Ամբարանին օրինակը և անոր բոլոր կարասիքին օրինակը, բոլոր քեզի ցուցացածիս պէս, ձիշդ այնպէս պիտի շինէք։

10—Ե. Սատիմի փայտէ տապանակ մը շինեն. անոր երկայնութիւնը երկու կանգուն ու կէս, և անոր լայնութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ, և անոր բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ։ 11—Ե. զանիկա զուտ ոսկիով պատես, ներսէն ու դուրսէն պատես զայն. և անոր վրայ բոլորտիքը ոսկի չրխանակ մը շինես. 12—Ե. անոր համար չորս ոսկի օղակ ձուլես, ու անոր չորս անկիւնները դնես չորսդին, որպէս զի անոր մէկ կողմը երկու օղակ ու միւս կողմը երկու օղակ ըլլայ։ 13—Ե. Սատիմի փայտէ ձողեր շինես, ու զանոնք ոսկիով պատես։ 14—Ե. ձողերը տապանակին փալերը եղած օղակներուն անցնես, որպէս զի տապանակը անոնցմով վերցուի։ 15—Ձողերը տապանակին օղակներուն մէջ մնան. անկէ չհանուին։ 16—Ե. տապանակին մէջ դնես վկայութիւնը՝ զոր քեզի պիտի տամ։

17—Ե. գութ ոսկիէ՝ քաւութիւն մը շինես, անոր երկայնութիւնը երկու կանգուն ու կէս, և անոր լայնութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ։ 18—Ե. ոսկիէ երկու քերովբէներ շինես քաւութիւնին երկու ծայրին վրայ. հատած շինես զանոնք. 19—Ե. մէկ քերովբէն մէկ ծայրէն ու միւս քերովբէն միւս ծայրէն շինես. 20—Ե. քերովբէները թեւերնին վերէն տարածելով՝ իրենց թեւերով քաւութիւնը պիտի ծածկեն. և անոնց երեսները իրարու դէմ դէպ նային. քերովբէներուն երեսները դէպ քաւութիւնը պիտի ըլլան։ 21—Ե. քաւութիւնը տապանակին վրայ պիտի դնես. և քեզի տալու վկայութիւնս տապանակին մէջ դնես։ 22—Ե. հոն ես քեզի պիտի հանդիպիմ. ու քաւութեանը վրայէն, վկայութեան տապանակին վրայ եղած երկու քերովբէներուն մէջէնքեզի, Իսրայէլի որդիներուն

---

*Կամ, կափարիչ
†Կամ, ճախարակեայ

համար բոլոր փեղի պատուհրելու բանեցած վրայով պիտի խօսիմ փեղի հետ։

23—Ու Սաաիմի փայտէ սեղան մը չինես. անոր երկայնութիւնը երկու կանգուն, և անոր լայնութիւնը մէկ կանգուն, ու անոր բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս պիտի ըլլայ։ 24—Ու զանիկա զուտ ոսկիով պատես. ու անոր բոլորտիքը ոսկի չղլանակ մը չինես։ 25—Ու անոր չորս մատնաչափ ապառաժ մը չինես. ու ապառաժին բոլորտիքը ոսկի չղլանակ մը չինես։ 26—Ու անոր չորս ոսկի օղակ չինես. ու անոր չորս անկիւնը չորս ոտքին քով դնես օղակները։ 27—Օղակները ապառաժին քով պիտի ըլլան, որպէս զի սեղանը վերցնելու համար՝ ձողերուն տեղը ըլլան։ 28—Ու ձողերը Սաաիմի փայտէ չինես, ու զանոնք ոսկիով պատես. և սեղանը անոնցմով պիտի վերցուի։ 29—Ու անոր պետերը, ու անոր խնկամաններն ու բաժակները ու գաւաթները չինես, որպէս զի անոնցմով թափելու նուէր մատուցուի։ զանոնք զուտ ոսկէ չինես։ 30—Ու սեղանին վրայ առաջաւորութեան հացը դնես միշտ իմ առջեւս։

31—Ու զուտ ոսկէ աշտանակ մը չինես. կռածոյ պիտի չինուի աշտանակը, ու անոր բունը, ճիւղերը, սկահակները, գնդակները ու ծաղիկները իրմէ ըլլան։ 32—Ու անոր կողմերէն վեց ճիւղեր ելլեն. աշտանակին մէկ կողմէն երեք ճիւղ, և աշտանակին միւս կողմէն երեք ճիւղ Եւլէ։ 33—Մէկ ճիւղին վրայ նշանէ երեք սկահակ ըլլայ՝ գնդակով ու ծաղիկով, և միւս ճիւղին վրայ նշանէ երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով. աշտանակին եւթը ճիւղերը այսպէս պիտի ըլլան։ 34—Ու աշտանակին վրայ չորս նշանէ սկահակ պիտի ըլլայ իրենց գնդակներովը ու ծաղիկներովը։ 35—Ու աշտանակին եւթը ճիւղերուն՝ երկու ճիւղին տակ իրմէ մէկ գնդակ, ու երկու ճիւղին տակ իրմէ մէկ գնդակ, և երկու ճիւղին տակ իրմէ մէկ գնդակ պիտի ըլլայ։ 36—Անոնց գնդակները ու ճիւղերը իրմէ պիտի ըլլան. ամէնը մէկ կտոր՝ զուտ ոսկիէ կռածոյ պիտի ըլլան։ 37—Ու անոր եօթը ճրագները շինես. ու անոր ճրագները վառած տանեն լոյսը առջեւէ տան։ 38—Ու անոր ունկիները ու անոր բռնմանկալները զուտ ոսկիէ պիտի ըլլան։ 39—Անիկա բոլոր այս գործիքներովը տալանդ մը զուտ ոսկիէ պիտի չինուի։ 40—Ու նայէ որ լեռան քեզի ցուցուած օրինակին պէս չինես ըստնոյ։

Գլ. ԻԶ

Ե խթաներ չինես տասը վարագոյրներով՝ մանուած բարակ քաթանէ ու կապուտակէ և ծիրանագոյնէ ու կրկնակի կարմիրէ. վարպետ գործ չինես զանոնք քերովբէներով։ 2—Մէկ վարագոյրին երկայնութիւնը քսանըութ կանգուն և մէկ վարագոյրին լայնութիւնը չորս կանգուն պիտի ըլլայ. բոլոր վարագոյրներուն չափ մէկ ըլլայ։ 3—Հինգ վարագոյրները իրարու պիտի կցուին, և ձ-- հինգ վարագոյրները իրարու պիտի կցուին։ 4—Ու կցուածքին ծայրի մէկ վարագոյրին եզերքին վրայ կապուտակեայ օղակներ չինես. միւս կցուածքին ծայրի վարագոյրին եզերքն ալ այնպէս ընես։ 5—Մէկ վարագոյրին վրայ հիսուն օղակ չինես, և միւս կցուածքին վրայ եղած վարագոյրին ծայրն ալ հիսուն օղակ չինես. օղակները դիմացկ դիմաց պիտի ըլլան։ 6—Ու հիսուն կարճաձև ոսկի ճարմանդներով կռճկես, և մէկ խթան պիտի ըլլայ։

7—Ու խթաներն վրայ ծածկոց ըլլալու համար այծի մազէ վարագոյրներ շինես. տասներմէկ վարագոյրներ ընես զանոնք։ 8—Մէկ վարագոյրին երկայնութիւնը երեսուն կանգուն, և մէկ վարագոյրին լայնութիւնը չորս կանգուն ըլլայ. տասներմէկ վարագոյրներուն չափ մէկ ըլլայ։ 9—Ու հինգ վարագոյրները զատ ու վեց վարագոյրները զատ կցես. և վեցերորդ վարագոյրը խթանին առջեւի կողմէն երկապատիկ ընես։ 10—Ու կցուածքին ծայրի հիսուն օղակ՝ մէկ վարագոյրին եզերքին եզած մէկ վարագոյրին վրայ հիսուն օղակ, ու միւս կցուածքին ծայրէն եզած վարագոյրին եզերքին վրայ հիսուն օղակ շինես։ 11—Ու պղնձէ հիսուն կարճաձև ճարմանդներ շինես, ու ճարմանդները օղակներուն անցնես, և վրանը կռճկես ու մէկ ըլլայ։ 12—Ու վրանին վարագոյրներուն աւելցած մնացածը, այսինքն վարագոյրին աւելցած կէսը, խթաներին հետևէն կախուած պիտի մնայ։ 13—Ու վրանին վարագոյրներուն երկայնութենէն մէկ կանգուն մէկ կողմէն, ու մէկ կանգուն միւս կողմէն աւելցածը խթաներին քովերը կախուած մնայ՝ զանիկա մէկ կողմէն ու միւս կողմէն ծածկելու համար։ 14—Ու վրանին համար կարմիր ներկուած խոյի մորթերէն ծածկոց մը, ու ըստոր վրայէն թխասիրտ մորթերէն ծածկոց մը չինես։

15—Ու խթաներն սաաիմէ կանգնած ձող. 16—Մէկ սաաիմէն երկայնութիւնը տասը կանգուն, և մէկ սաաիմէն լայնութիւնը մէկ ու կէս կանգուն պիտի ըլլայ։ 17—Ամէն մէկ սաաիմէ երկերկու ագռոցիկ ծայրեր պիտի ունենայ իրարու հաամեհատ. խթաներն բոլոր սաաիմներուն այսպէս ընես։ 18—Ու խթաներն սաաիմները շինես. զէպ ի հարաւ՝ հարաւային կողմը քսան սաաիմ չէ։ 19—Ու քսան սաաիմներուն տակ քառասուն արծաթ խարիսխ շինես. մէկ սաաիմին տակ իր երկու ագռոցիկ ծայրը ըստ իրենց՝ համար երկու խարիսխ, և միւս սաաիմին տակ իր երկու ծայրը ըստ իրենց՝ համար երկու խարիսխ պիտի ըլլայ։ 20—Ու խթաներն միւս կողմին համար հիւսիսային կողմը քսան սաաիմ։ 21—Ու անոնց քառասուն արծաթ խարիսխները. մէկ սաաիմին տակ երկու խարիսխ, ու միւս սաաիմին տակ երկու խարիսխ չէ։ 22—Ու խթաներն եւսէրի կողմին համար արեւմտեան կողմը վեց սաաիմ չինես։ 23—Ու խթաներն անկիւններուն համար եւսէրի կողմը երկու սաաիմ չինես։ 24—Ու պիտի կցուին, և վերէն մէկ օղակով կցուած մէկ պիտի ըլլան. երկու քն ալ այսպէս պիտի ըլլան. անոնք երկու անկիւններուն համար պիտի ըլլան։ 25—

Ու ըստէ՝ ասոնք ութ սաաիմ պիտի ըլլան. ու անոնց արծաթ խարիսխները տասնըվեց խարիսխ պիտի ըլլան. մէկ սաաիմին տակ երկու խարիսխ ու միւս սաաիմին տակ երկու խարիսխ պիտի ըլլայ։ 26—Ու Սաաիմի փայտէ նիգեր շինես. խթաներին մէկ քանի սաաիմներուն համար հինգ նիգ, 27—Ու խթաներին միւս քանի սաաիմներուն համար հինգ նիգ, ու վերջի սաաիմներուն համար հինգ նիգ. ու դէպ ի արեւմուտք խթաներին ետևի կողմի սաաիմներուն համար հինգ նիգ պիտի ըլլայ։ 28—Ու մէջտեղի նիգը, այսինքն սաաիմներուն մէջտեղ հասած, մէկ ծայրէն միւս ծայրը պիտի անցնի։ 29—Ու սաաիմները ոսկիով պատես, ու անոնց օղակները, այսինքն նիգերուն տեղերը, ոսկիէ շինես, և նիգերը ոսկիով պատես։

30—Ու խթաները կանգնես իր ձեւին համաձայն, ինչպես լեռանը վրայ քեզի ցուցուեցաւ։

31—Ու կապուտակէ ու ծիրանագոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քաթանէ վարագոյր մը չինես. անիկա վարպետի գործ քերովբէներով պիտի չինուի։ 32—Ու զանիկա Սաաիմի չորս ոսկիապատ սիւներու վրայ դնես. անոնց գանկերը ոսկի պիտի ըլլան, ու չորս արծաթ խարիսխներու վրայ պիտի ըլլան։ 33—Ու վարագոյրը ճարմանդներէն վար կախես, ու հոն վարագոյրին ներքի կողմը վկայութեան տապանակը բերես. և վարագոյրը ձեզի պիտի բաժնէ սրբութիւնն ու սրբութեանց սրբութիւնն ալ։ 34—Ու քաւութիւնը վկայութեան տապանակին վրայ՝ սրբութեանց սրբութիւնին մէջ դնես։ 35—Ու վարագոյրին գսբոիքին սեղանը, ու սեղանին դիմաց խթաներն հարաւային կողմը աշտանակը դնես. ու սեղանը հիւսիսային կողմը դնես։

36—Ու վրանին դրանը համար կապուտակէ ու ծիրանագոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քաթանէ նկարագործ դրան վարագոյր մը չինես։ 37—Ու դրան վարագոյրին համար Սաաիմէ չորս հինգ սիւն չինես, ու զա-

---

նանք ասկով պատես. և անոնց ճանկերը ասկե ըլլան. ու անոնց համար պղնձէ հինգ խաբխոս ձուլես։

ԳԼ. ԻԲ

Եւ զոհի սեղանը Սասիմի փայտէ չինես, երկայնութիւնը հինգ կանգուն ու լայնութիւնը հինգ կանգուն. սեղանը քառակուսի ըլլայ, և անոր բարձրութիւնը երեք կանգուն ըլլայ։ 2—Ու անոր եղջիւրները անոր չորս անկիւններուն վրայ չինես. անոր եղջիւրները իրմէ ըլլան. ու զանիկա պղնձով պատես։ 3— Ե. անոր մխիթը ժողվելու համար անոր թազաբները ու անոր քիւակները և անոր կանթերը ու անոր մանահանները ու անոր կրակի ամանները չինես. անոր բոլոր գործիքները պղնձէ չինես։ 4—Ու անոր ցանցակերպ կասկաս մը չինես պղնձէ, ու ցանցին վրայ չորս պղնձէ օղակ չինես անոր չորս անկիւններուն վրայ։ 5—Ու զանիկա սեղանին չրջանակին տակ դնես ներքեւէն, որ ցանցը զրնիչ սեղանին մէկ կէսը ըլլայ։ 6—Ու սեղանին համար ձողեր չինես. ձողերը Սասիմէ փայտէ ըլլան, ու զանոնք պղնձով պատես։ 7—Ու անոր ձողերը օղակներուն պիտի անցուին, ու ձողերը սեղանին երկու կողմերը պիտի ըլլան՝ զանիկա վերցնելու համար։ 8—Զանիկա տախտակներէ մէջը դատարկ պիտի չինես. ինչպէս քեզի ցուցուածին պէս՝ այնպես պիտի չինեն զանիկա։

9—Ու խորանին արար չինես. հարաւային կողմին համար արահին վարագոյրները մանուածի բարակ քիւանիվ՝ մէկ կողմի երկայնութիւնը հարիւր կանգուն պիտի ըլլայ։ 10— Ու անոր քսան սիւներն ու անոնց քսան խաբխոսները պղնձէ, և սիւներուն ճանկերը և անոնց կապերը արծաթէ պիտի ըլլան։ 11—Ու նոյնպէս հիւսիսային կողմին համար ալ երկայնութիւնը նայելով՝ վարագոյրները հարիւր կանգուն երկայն պիտի ըլլան. ու անոր քսան սիւներն և անոնց քսան խաբխոսները պղնձէ, սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ պիտի ըլլան։ 12— Ե. արեւմտեան կողմին համար արահին լայնութեանը նայելով՝ վարագոյրները հիսուն կանգուն պիտի ըլլան. անոնց սիւները տասը ու անոնց խաբխոսները տասը պիտի ըլլան։ 13— Ե. արահին արեւելեան կողմին համար՝ անոր լայնութիւնը արեւելեան կողմին հիսուն կանգուն պիտի ըլլայ։ 14—Ու վարագոյրները մէկ կողմին համար՝ անոր լայնութիւնը տասնհինգ կանգուն պիտի ըլլան. անոնց սիւները երեք ու անոնց խաբխոսները երեք։ 15—Ու միւս կողմին վարագոյրները տասնհինգ կանգուն պիտի ըլլան. անոնց սիւները երեք ու անոնց խաբխոսները երեք։ 16—Ու արահին դրանը համար կապուտակէ ու ծիրանագոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուածի բարակ քիւանէ քսան կանգունի նկարագործ վարագոյր մը պիտի ըլլայ. անոնց սիւները չորս ու անոնց խաբխոսները չորս պիտի ըլլան։ 17— Արահին բոլորտիքը եղած բոլոր սիւները արծաթի կապերով, ու անոնց ճանկերը արծաթէ, և անոնց խաբխոսները պղնձէ պիտի ըլլան։ 18— Արահին երկայնութիւնը հարիւր կանգուն ու լայնութիւնը ամէն տեղ հիսուն, և բարձրութիւնը հինգ կանգուն. վերջէրջերը մանուածի բարակ քիւանէ պիտի ըլլան, ու անոնց խաբխոսները պղնձէ պիտի ըլլան։ 19—Խորանին բոլոր գործիքները իր ամէն պաշտօնին համար՝ և անոր բոլոր ցիցերը ու արահին բոլոր ցիցերը պղնձէ պիտի ըլլան։

20—Ու դուն պատուիրես Իսրայէլի որդիներուն՝ որ քեզի *ձիթապտուղէն մաքուր ձէթ բերեն լոյսի համար, որ կանթեղները միշտ վառին։ 21—Ահարոն ու անոր որդիները ժողովքի խորանին մէջ վկայութեան առջեւի վարագոյրին դուրսիդին՝ երեկոյեան առաջ Տէրոջը առջեւ զայն վառարկեն. սահման անոնց յաւիտենական կանոն ըլլայ իրենց ազգերուն մէջ Իսրայէլի որդիներուն կողմանէ։

*Այսինքն, ձեթուած ձիթապտուղէն ինքիմի վազած

ԳԼ. ԻՀ

Եւ դուն քեզի մօտեցուր քու եղբայրդ Ահարոնը ու անոր որդիները իրեն հետ՝ Իսրայէլի որդիներուն միջէն, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն. Ահարոնը և Ահարոնի որդիները, Նադաբը ու Աբիհուդը, Եղիազարը ու Իթամարը։ 2—Ու քու եղբօրդ Ահարոնի սուրբ զգեստներ պիտի չինես պատիւի ու փառքի համար։ 3—Ու դուն բոլ բոլորը իմաստուն միտք ունեցողներուն՝ զորոնք ես իմաստութեան հոգիով լեցուցի, որ Ահարոնի զգեստները չինեն՝ զանիկա օրհնելու համար՝ որպէս զի ինծի քահանայութիւն ընէ։ 4—Ու անոնց չինելու զգեստները ասոնք են. լանջապանակ ու եփուդ ու պատմուճան ու նկարագործ շապիկ, խոյր և գօտի. և սուրբ զգեստներ չինեն քու եղբօրդ Ահարոնի ու անոր որդիներուն, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն։

5—Ու անոնք պիտի առնեն ոսկին ու կապուտակը և ծիրանագոյնը ու կրկնակի կարմիրը և բարակ քիւանը։ 6—Ու ոսկի թել, կապուտակէ ու ծիրանագոյնէ, կրկնակի կարմիրէ և մանուած բարակ քիւանէ վարպետի գործ պիտի չինեն եփուդը։ 7—Անոր երկու ծայրերը երկու կցուած վականներ պիտի ունենան, որպէս զի իւրաքանչիւր միացած ըլլայ։ 8—Ու եփուդին վրայ եղած ժապաւէնը անոր չինուածքին պէս նոյն բանէն պիտի ըլլայ. ոսկիէ, կապուտակէ ու ծիրանագոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քիւանէ պիտի ըլլայ։ 9—Ու երկու եղինձագոհարներ առնես, ու անոնց վրայ Իսրայէլի որդիներուն անուններուն փորագրես։ 10—Անոնց անուններուն վեցը մէկ քարին վրայ, և միւսած վեց անուններուն միւս քարին վրայ, անոնց ծնունդներուն համեմատ։ 11—Ակն երկու քարերուն վրայ Իսրայէլի որդիներուն անուններուն պէս դրոշմագործի գործով՝ այսինքն կնիք փորագրելու պէս փորագրես. ոսկի խարիսխներ մէջ զանոնք։ 12—Ու երկու քարերը եփուդին ուսերուն վրայ պիտի դնես, որպէս զի Իսրայէլի որդիներուն յիշատակի քարեր ըլլան, ու Ահարոն անոնց անուններուն յիշատակի համար իր երկու ուսերուն վրայ պիտի կրէ Տէրոջը առջեւ։ 13—Ու ոսկիէ խարիսխներ պիտի չինես։ 14—Ու զուտ ոսկիէ պարուած հիւսուած՝ երկու չղթաներ պիտի չինես, ու հիւսուած չղթաները խարխրան անցնես։

15—Ու դատաստանի լանջապանակը վարպետի գործ չինես. զանիկա եփուդին պէս չինես. ոսկիէ, կապուտակէ ու ծիրանագոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քիւանէ չինես։ 16—Քառակուսի պիտի ըլլայ երկու փի ծալլուելով. անոր երկայնութիւնը մէկ քիլ ու անոր լայնութիւնը մէկ քիլ ըլլայ։ 17—Ու անոր մէջ ակնդէներու գամուածքին համեմատ չորս կարգ քարեր պիտի գամես. — կարգը սարդիոն, ապտակոն ու զմրուխտ՝ առաջին կարգը պիտի ըլլայ։ 18—Ու երկրորդ կարգը պիտի ըլլայ կարկեհան, շափիւզ ու ագեմանդ։ 19—Ու երրորդ կարգը պիտի ըլլայ գահազմ, ախատ ու մեգոխիկ։ 20—Ու չորրորդ կարգը պիտի ըլլայ ոսկեքար, եղինձագոհար ու յասպիս. ասոնք ոսկի խարիսխով մէջ գամուած պիտի ըլլան։ 21—Ու քարերը Իսրայէլի որդիներուն անուններուն պէս տասներկու պիտի ըլլան, անոնց անուններուն համեմատ. ամէն մէկը իր անուանը պատուականին նման երկու ցեղերուն համեմատ՝ կնիք փորագրողի գործով քարերուն պիտի ըլլան։ 22—Ու լանջապանակին վրայ զուտ ոսկիէ պարուած հիւսուած չղթաներ պիտի չինես։ 23—Ու լանջապանակին վրայ երկու ոսկի օղակներ չինես, ու այն երկու օղակները լանջապանակին երկու ծայրերուն վրայ դնես։ 24—Ու այն երկու հիւսուած ոսկի չղթաները լանջապանակին ծայրը եղած երկու օղակներուն անցնես։ 25—Ու երկու հիւսուած չղթաներուն միւս երկու ծայրերը այն երկու խարիսխներուն անցնես, ու զանոնք եփուդին առջեւի կողմէն ուսերուն վրայ դնես։ 26—Ու երկու ոսկի օղակներ ալ չինես, ու զանոնք լանջապանակին ներսի կողմէն՝ եփուդին կցուած եզերքին

երկու ծայրերը դնեա։ 27—Եւ ---էլ երկու ականկ օգակներ չինեա, ու զանոնք եփուտին երկու ուսերուն վարէն, անոր առջեւի կողմի կցուած-քին մօտ, եփուտին ժապաւէնին վրայէն անցնեա։ 28—Եւ լանջապանակը իր օգակներէն՝ կապուտակէ չէ---ղ լարով եփուտին օգակներէն կապէն, որպես զի եփուտին ժապաւէնին վրայ ըլլայ, ու լանջապանակը եփուտին վրայէն չդաուի։ 29—Եւ Ահարոն երբ սրբարանը մտնէ, իսրայէլի որդիներուն անուները Տէրոջը առջեւ միշտակի համար՝ միշտ իր սրտին վրայ եղած գատաստանի լանջապանակին վրայ պիտի կրէ։ 30—Եւ գատաստանի լանջապանակին մէջ *Ուրիմը ու †Թումիմը դնեա։ Եւ Ահարոնի սրտին վրայ պիտի ըլլան, երբ անկից Տէրոջը առջեւ երթայ. ու Ահարոն Տէրոջը առջեւ միշտ իր սրտին վրայ պիտի կրէ իսրայէլի որդիներուն գատաստանը։

31—Եւ եփուտին պատմուճանը բոլորովին կապուտակի պիտի չինեա։ 32—Ու անոր միջտեղը գլուխ ե---ը---ը ձեղքուածք մը ըլլայ. ձեղքուածքին բոլորտիքը գրահի ձեղքուածքին պէս հիւսուած եղերք ունենայ, որպես զի չպատռի։ 33—Եւ անոր փղանգիներուն վրայ կապուտակի ու ծիրանի-գոյնի և կրկնակի կարմիրէ նուռեր պիտի չինեա փղանգիներուն բոլորտիքը, ու անոնց միջտեղ ոսկիի զանգակներ։ 34-Պատմուճանին փղանգիքին վրայ ոսկիի զանգակ մը ու նուռ մը, ոսկիի զանգակ մը ու նուռ մը պիտի ըլլայ։ 35—Եւ պաշտօնի համար անոր Ահարոնի վրայ պիտի ըլլայ. ու Տէրոջը առջեւ սրբարանը մտած ու եւթէ առնոր անոր ձայնը պիտի լսուի որ չմեռնի։

36—Եւ զուտ ոսկիէ թիթեղ մը պիտի չինեա. ու անոր վրայ կնիք փորագրելու պէս ՏԻՐՈՒԹԻՒՆ ՏԵՄԱՒՆ՝ փորագրեա։ 37—Եւ կապուտակ ժապաւէնով մը անոնց վրայ պիտի դնես, որ միտրին վրայ ըլլայ։ Ե---ի---ն մէջ անոնց դէմ պիտի ըլլայ։ 38—Եւ անոր Ահարոնի ճակտին վրայ պիտի ըլլայ, որ իսրայէլի որդիներուն նուիրած բոլոր սուրբ ընծաներուն անօրհնութիւնը Ահարոն կրէ. ու միշտ իր ճակտին վրայ պիտի ըլլայ, որպես զի անոնք ընդունելի ըլլան Տէրոջը առջեւ։

39—Եւ չափիկը բարակ փիլոնով նկարչին հիւսես, ու խոյրը բարակ փիլոնէ պիտի չինես և գօտին նկարագործ պիտի չինես։

40—Եւ Ահարոնի որդիներուն չափիկներ պիտի չինես, ու անոնց գօտիներ պիտի չինես և պատիւ ու փառքի համար անոնց ապարօշներ պիտի չինես։ 41—Եւ զանոնք քու եղբօրդ Ահարոնի ու իրեն հետ իր որդիներուն պիտի հագցնես. ու զանոնք պիտի օծես և *պիտի օրհնես՝ ու սրբես զանոնք՝ որպես զի ինծի քահանայապէտին բնեն, 42—Եւ անոնց կաւէ անգրպարտիքներ պիտի չինես էջէն մինչեւ ոտները մերկութիւնը ծածկելու համար. 43—Եւ անոնք Ահարոնի ու անոր որդիներուն վրայ պիտի ըլլան՝ երբ ժողովքի խորանը մտնեն, կամ երբ սեղանին մօտենան սրբարանին մէջ պաշտելու համար, որ չըլլայ թէ անօրէնութիւն կրեն ու մեռնին. ասիկա յաւիտենական կանոն մը ըլլայ իրեն ու իրմէ ետքը իր սերունդին։

Գլ. ԻԹ

Եւ այս է զոր անոնց պիտի ընես զանոնք սրբելու համար, որպես զի ինծի քահանայ ըլլան. արջառներէն զուտ մէկ մը ու երկու անարատ խոյ առնես, 2—Ու անխմոր հաց ու իւղով չզուած անխմոր չօրէկ և իւղով օծուած անխմոր լաւաշներ ---ով. ասոնք ցորենի բարակ ալիւրէն չինես։ 3—Եւ ասկաւի մը մէջ դնես. ու զանոնք ասկաւին մէջ, և զուարակը ու երկու խոյերը մատուցանես։ 4—Եւ Ահարոն ու անոր որդիները ժողովքի խորանին գրանը մատուցանես, ու զանոնք լոզով լուասէ։ 5—Ու զգեստները պիտի առնես, ու Ահարոնի վրայ եփուտին պատմուճանը ու եփուտի լանջապանակը Ահարոնի պիտի հագցնես. ու եփուտին ժապաւէնով գօտեւորես զանիկա։ 6—Ու խոյրը անոր գլխուր դնես, ու խոյրին վրայ սուրբ պսակը դնես։ 7—Ու օծման իւղը առնես, ու անոր գլխուն վրայ թափելով՝ օծես զանիկա։ 8—Ու անոր որդիները մատուցնես, ու անոնց չափիկներ հագցնես։ 9—Ու գօտիներով գօտեւորես զանոնք, այսինքն Ահարոնը ու անոր որդիները, ու անոնց էջ---ը---ը ապարօշներ փաթթես. ու քահանայապէտութիւնը անոնց ըլլայ յաւիտենական կանոնով։ Այսպես պիտի օրհնես Ահարոնը ու անոր որդիները։

10—Եւ զուարակը ժողովքի խորանին առջեւ մատուցնես, ու Ահարոն և անոր որդիները իրենց ձեռքը զուարակին գլխուն վրայ դնեն։ 11—Ու ժողովքի խորանին գրանը Տէրոջը առջեւ մորթես զուարակը։ 12—Ու զուարակին արիւնէն առնես, ու մատովդ սեղանին եղիւրներուն վրայ դնես և ---ով բոլոր արիւնը սեղանին ատկովը թափես։ 13—Ու փորոտիքը ծածկող ամէն ճարպը ու լեարդին վրայ եղած թաղանթը և երկու երիկամունքը ու անոնց վրայ եղած ճարպը առնես, և սեղանին վրայ այրես։ 14—Բայց զուարակին միսը ու անոր մորթը և անոր պղպը բանակին դուրսիդին կրակով այրես. այս մեղքի պատարագ է։

15—Ու խոյերուն մէկը առնես, և Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դնեն։ 16—Ու այն խոյը մորթես, ու անոր արիւնը առնես, և սեղանին վրայ չորս անկիւնը սրսկես։ 17—Ու խոյը կտոր կտոր բնես, ու անոր փորոտիքը և անոր ոտքերը լուասս, ու ---ով անոր կտորներուն և գլխուն վրայ դնես։ 18—Ու բոլոր խոյը սեղանին վրայ այրես. այս ողջակէզ է Տէրոջը. անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը։

19—Ու միւս խոյը առնես. ու Ահարոն և անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դնեն։ 20—Ու խոյը մորթես, ու անոր արիւնէն առնես, և Ահարոնի --ի ականջին բլիթին վրայ ու անոր որդիներուն աջ ականջներուն բլիթին վրայ և անոնց աջ ձեռքին մեծ մատին վրայ ու անոնց աջ ոտքին մեծ մատին վրայ դնես. և ---ով արիւնը սեղանին վրայ չորքանակի սրսկես։ 21—Ու սեղանին վրայ եղած արիւնէն ու օծման իւղէն առնես, և Ահարոնի վրայ ու անոր զգեստներուն վրայ և անոր հետ իր որդիներուն վրայ ու իր որդիներուն զգեստներուն վրայ սրսկես. և անիկա ու անոր զգեստները և անոր հետ իր որդիները ու իր որդիներուն զգեստները սուրբ պիտի ըլլան։ 22—Ու խոյէն առնես ճարպը ու գմակը և փորոտիքը ծածկող ճարպը և լեարդին էջ---ի թաղանթը ու երկու երիկամունքը և անոնց վրայ եղած ճարպը ու աջ գիսաւորուած ի վեր. որովհետեւ օրհնութեան խոյն է։ 23—Ու Տէրոջը առջեւ եղած անխմոր հացի սակաւէն մէկ պատ հացի ու մէկ իւղով հացի չօթ և մէկ լաւաշ ---ով, 24—Ու ամէնը Ահարոնի ձեռքը ու անոր որդիներուն ձեռքը դնես, և զանոնք Տէրոջը առջեւ երերցնելու բնծայ *մատուցանես։ 25—Ու անոնց ձեռքէն առնես զանոնք, ու սեղանին վրայի ողջակէզին վրայ այրես Տէրոջը առջեւ անոյշ հաճի համար. ասիկա պատարագ մըն է Տէրոջը։ 26—Ու Ահարոնի օրհնութեան համար պատրաստած խոյէն երբ ժը առնես, ու զանիկա Տէրոջը առջեւ երերցնելու բնծայ մատուցանես. և այն քու բաժինդ ըլլայ։ 27—Ու Ահարոնի համար ու անոր որդիներուն համար եղած օրհնութեան խոյէն երերցնելու երբ ժը և բարձրացնելու ձիսոր սրբես։ 28—Ու ասիկա յաւիտենական կանոնով Ահարոնի ու անոր որդիներուն պիտի ըլլայ Իսրայէլի որդիներուն կողմանէ. վասն զի այս բարձրացնելու բնծայ է, և պիտի ըլլայ բարձրացնելու բնծայ, Իսրայէլի որդիներէն իրենց խաղաղութեան զոհերէն Բոյ իրենց բարձրացնելու բնծան Տէրոջը։

*Եբր. անոնց ձեռքը պիտի լեցնես

*Ա---ն---, լոյսեր (յայտնութիւն)
†Ա---ն---, կատարելութիւններ (ճշմարտութիւն)
‡Ա---ն---, Տէրոջը սրբացած

*Եբր. երերցնես

29—Ու Ահարոնի սուրբ զգեստները իրմէ հագը իր որդիներուն պիտի ըլլան, որպէս զի անոնցմով օծուին, ու անոնցմով օրհնուին։ 30—Ու անիկա որ իր որդիներէն իր տեղ քահանայ ըլլայով սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար ժողովքի խորանը պիտի մտնէ, զանոնք եօթը օր հագնի։ 31—Ու ոչխարէ օրհնութեան խոյը առնուն, ու անոր միսը սուրբ տեղ մը եփուս։ 32—Ու Ահարոն ու անոր որդիները ժողովքի խորանին դրան քով պիտի ուտեն խոյին միսը ու պատառին մէջի հացը։ 33—Ու անոնք պիտի ուտեն այն բաները՝ որ իրենց օրհնութիւն ու սրբութիւն համար անոնցմով քաւութիւն եղաւ. և օտարական մը անոնց պիտի չուտէ, վասն զի անոնք սուրբ են։ 34—Ու եթէ օրհնութենէն միսէն ու հացէն մինչև առաւօտ մնայ, այս ուրիշացածը կրակով այրուս. անիկա պիտի չուտուի, վասն զի սուրբ է։

35—Ու Ահարոնի ու անոր որդիներուն այսպէս ընես, բոլոր քեզի պատուիրածիս պէս. եօթը օրուան մէջ կատարես անոնց օրհնութիւնը։ 36—Ու օրը մէկ զատարակ մեղքի պատարագ ընես քաւութեան համար. ու սեղանին համար քաւութիւն ընելու ատենդ մաքրես զանիկա, և սուրբ ընելու համար օծես զանիկա։ 37—Սեղանին համար եօթը օր քաւութիւն ընես, ու սուրբ ընես զայն. և սեղանը սրբութիւնը պիտի ըլլայ. ինչ որ սեղանին դպչի սուրբ պիտի ըլլայ։

38—Ու սեղանին վրայ ընելու ըստ այս է. միշտ տարին օր մէկ տարեկան երկու գառներ։ 39—Մէկ գառը առաւօտուն մատուցանես, ու միւս գառը իրիկուան դէմ մատուցանես։ 40—Ու մէկ գառին հետ մէկ հինգերորդ ֆեֆուած ձէթով չաղուած մէկ տասներորդ բաթակ ալիւր, և քաֆելու նուէրին համար մէկ հինգերորդ փաղարդ մը գինի մատուցանես։ 41—Ու միւս գառը իրիկուան դէմ մատուցանես ու առաւօտուան հացի ընծային պէս և անոր քաֆելու նուէրին պէս ընես անոր. այս անուշահոտ պատարագ մրն է Տէրոջը։ 42—Անիկա ձեր ազգերուն մէջ մշտնջենաւոր ողջակէզ պիտի ըլլայ Տէրոջը առջև. ժողովքի խորանին դրան քով, ուր ձեզի պիտի հանդիպիմ՝ քեզի հետ խօսելու։ 43—Ու հոն Իսրայէլի որդիներուն պիտի հանդիպիմ, ու խորհուրդ իմ փառքովս սուրբ պիտի ըլլայ։ 44—Ու ժողովքի խորանը ու սեղանը պիտի սրբեմ. Ահարոնը ու անոր որդիներն ալ պիտի սրբեմ, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն։ 45—Ու Իսրայէլի որդիներուն մէջ պիտի բնակիմ, ու անոնց Աստուած պիտի ըլլամ։ 46—Ու պիտի գիտնան թէ անոնց Տէր Աստուածը ես եմ, որ անոնց մէջ բնակիլս համար Եգիպտոսի երկրէն հանեցի զանոնք. ես եմ անոնց Տէր Աստուածը։

Գլ. Ի.

Ու խունկի ծխելու սեղան մը չինես. Սաթիմի փայտէ չինես զանիկա. 2—Անոր երկայնութիւնը կանգուն մը, ու անոր լայնութիւնը կանգուն մը, քառակուսի պիտի ըլլայ, և անոր բարձրութիւնը երկու կանգուն. անոր եղջիւրները իրմէ պիտի ըլլան։ 3—Ու անոր վրայ ու անոր փովերը շուրջանակի՝ և անոր եղջիւրները զուտ ոսկիով պատես. ու շուրջանակի ոսկի պսակ մը չինես անոր։ 4—Ու երկու ոսկի օղակներ չինես անոր. պսակին տակէն՝ անոր երկու փողերը երկու կողմերէն չինես, որպէս զի անոնցմով վերցուելու համար ձողերուն անջրպետը սեղերը ըլլան։ 5—Ու ձողերը Սաթիմի փայտէ չինես, ու զանոնք ոսկիով պատես։ 6—Ու զանիկա դնես վկայութեանը վրայի քաւութիւնին առջև՝ վկայութեան տապանակին քով եղած վարագուրին առջև, ուր ես քեզի պիտի հանդիպիմ։ 7—Ու Ահարոն անոր վրայ անուշահոտ խունկ պիտի ծխէ. առաւօտ ծագողներուն չիրկած ատենը խունկ պիտի ծխէ։ 8—Ու Ահարոն իրիկուան դէմ ճրագներուն վառած ատենը խունկ պիտի ծխէ, որ Տէրոջը առջև մշտնջենաւոր խունկ ըլլայ ձեր ազգերուն մէջ։ 9—Անոր վրայ օտար խունկ, կամ ողջակէզ, կամ հացի ընծայ չմատուցանէք. ոչ ալ անոր վրայ նուէր թափէք։ 10—Ու Ահարոն

տարին անգամ մը անոր եղջիւրներուն վրայ քաւութիւն պիտի ընէ. անիկա քաւութիւններուն ազգի պատարագին արիւնովը անոր վրայ քաւութիւն պիտի ընէ տարին անգամ մը ձեր ազգերուն մէջ. սուրբ անձնասուրբ է Տէրոջը։

11—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով, 12—Երբ Իսրայէլի որդիներուն գումարը առնելու ըլլաս՝ իրենց թիւին նայելով, այն ատեն անոնց ամէն մէկը իր հոգւոյն փրկանքը պիտի տայ Տէրոջը՝ զանոնք հաշուած ատենդ, որպէս զի անոնց մէջ հարատած չըլլայ երբ զանոնք հաշուես։ 13—Անոնք որ պիտի ատես. ամէն մէկը որ կ'անցնի՝ կը հաշուուի, սրբարանին սիկղին հաշուոյ կէս սիկղ ուղղութիւ տրուի Տէրոջը։ 14—Ամէն քսան տարեկանէն վեր եղողը որ կ'անցնի, կը հաշուուի, Տէրոջը պիտի տայ։ 15—Երբ ձեր հոգիներուն քաւութիւն ընելու համար Տէրոջը ընծայ տան, կէս սիկղէն աւելի՝ ու ոչ պզտոյը պակաս պիտի տայ։ 16—Ու Իսրայէլի որդիներէն քաւութեան արծաթը առնես, ու ժողովքի խորանին պաշտօնին տաս, որպէս զի Տէրոջը առջև յիշատակ ըլլայ Իսրայէլի որդիներուն՝ ձեր հոգիներուն քաւութիւն ընելու համար։

17—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ըսելով, 18—Նաև պղնձէ աւազան մը չինես լուացման համար, ու անոր խարիսխն ալ պղնձէ ըլլայ. և ժողովքի խորանին ու սեղանին միջեղ դնես զայն, ու անոր մէջ ջուր լեցնես։ 19—Ու Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը ու ոտքերը պիտի լուան անկէ։ 20—Երբ անոնք ժողովքի խորանը մտնելու ըլլան, կամ երբ սեղանին մօտենալու ըլլան՝ պաշտօն կատարելու և կրակով Տէրոջը զոհ մատուցանելու համար, ջրով լուացուին, որպէս զի չմեռնին։ 21—Այսպէս իրենց ձեռքերը ու ոտքերը լուան, որպէս զի չմեռնին. և սահման իրենց յաւիտենական կանոն պիտի ըլլայ, Թէ՛ իրեն և Թէ՛ իր սերունդին իրենց ազգերուն մէջ։

22—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 23—Առ քեզի պատուական

կամ, ազուած

համար։ 38—Ով որ հոտառելու համար անոր նմանը չհնարէ ըլլայ, իր ժողովուրդին պիտի կորսուի։

ԳԼ. ԼԱ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Ահա Բեզաղէլ ցեղին Ուրի որդւոյն Ուրիի որդին Բեսելիէլը անուանով կանչեցի։ 3—Ու Աստուծոյ Հոգիովը՝ իմաստութիւնով ու հանճարով և գիտութիւնով ու ամէն ի՛նչ շարասարութիւնով լեցուցի զանիկա, 4—Որպէս զի վարպետի գործեր հնարելով ոսկիով ու արծաթով և պղնձով գործէ. 5—Ու գամելու համար քարեր բանելով ու փայտեր քանդակելով ամէն կերպ արհեստ բանի։ 6—Ու ահա Դանի ցեղին Աքիսամայի որդին Ոռղիաբը տուի անոր հետ. ու ամէն խելամուտներն սրտին մէջ խելամտութիւն դրի, որպէս զի բոլոր քեզի պատուիրածս բնանեն. 7—Ժողովքի խորանը, և վկայութեան տապանակը ու անոր վրայ եղած քաւութիւնը, և խորանին բոլոր կահաւոյքները, 8—Ու սեղանը ու անոր անօթներըը, և մաքուր աչտանակը իր բոլոր գործիքներովը, և խունկին սեղանը, 9—Ու ողջակէզին սեղանը իր բոլոր գործիքներովը, և աւազանը ու անոր խարխափը, 10—Ու պաշտօնին զգեստները, ու Ահարան քահանային սուրբ զգեստները, և անոր որդիներուն զգեստները քահանայութիւն բնելու համար, 11—Ու օծման իւղը, ու սրբաբանին համար անուշահոտ խունկը, բոլոր քեզի պատուիրածս պէս պիտի բնեն,

12—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ու ըսաւ, 13—Զրուցէ նաև Իսրայէլի որդիներուն՝ ըսելով, Անշուշտ իմ շաբաթներս պահէք. վասն զի այս նշան մին է իմ ու ձեր մէջտեղ ձեր ազգերուն մէջ, որպէս զի գիտնաք թէ ձեզ սուրբ ընող Տէրը ես եմ, 14—Ուստի շաբաթը պահէք. վասն զի այն ձեզի սուրբ է. ով որ զանիկա պղծէ, անշուշտ պիտի մեռնի. քանզի ամէն ով որ այն օրը գործ մը գործէ, այն անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի։ 15—Վեց օր գործ պիտի գործուի, բայց եօթներորդ օրը, հանգստութեան շաբաթը, սուրբ պիտի ըլլայ Տէրոջմով որ շաբաթ օրը գործ մը գործէ, անշուշտ պիտի մեռցուի։ 16—Անոր համար Իսրայէլի որդիները պիտի պահեն շաբաթը, որպես զի շաբաթը իրենց ազգերուն մէջ յաւիտենական ուխտ մը բնեն։ 17—Անիկա յաւիտենական նշան մին է իմ ու Իսրայէլի որդիներուն մէջտեղ. քանզի Տէրը վեց օրուան մէջ առեղծեց երկինքը ու երկիրը, և եօթներորդ օրը դադարեցաւ ու հանգստացաւ։

18—Ու երբ Սինա լեռանը վրայ Մովսէսի հետ խօսիլը լմնցուց, վկայութեան երկու տախտակները տուաւ անոր, Աստուծոյ մատովը գրուած քարէ տախտակներ։

ԳԼ. ԼԲ

Ե. Ժողովուրդը տեսնելով որ Մովսէս ուշացաւ լեռնէն իջնելու, ժողովուրդը Ահարոնի քով ժողովեցան ու ըսին անոր,Ելիր, մեզի աստուածներ շինէ որոնք մեր առջեւէն երթան. քանզի այն Մովսէսը, մեզ Եգիպտոսի երկրէն հանող մարդը, չենք գիտեր թէ ի՛նչ եղաւ անոր։ 2—Ու Ահարան ըսաւ անոնց, Ձեր կիներուն, ձեր տղաքներուն և ձեր աղիկներուն ականջները եղած ոսկի օղերը հանեցէք ու Ահարանի բերէք։ 4—Ու անոնք ամէնը անոնց ձեռքէն, ու *տիպով մը չինեց, և ձուլածոյ ոջի մը ըրաւ։ Ու ըսին, Ով Իսրայէլ, ասոնք են քու աստուածներդ, որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին, 5—Ու երբ Ահարան տեսաւ՝ անոր առջեւ սեղան մը չինեց. և Ահարան հրատարակիչ ուղարկելով, ըսաւ, Վաղը մեծ է Տէրոջմով։ 6—Ու հետեւեալ առաւօտուն կանուխ ելան, ու ողջակէզներ մատուցին, և խաղաղութեան զոհեր բերին. և ժողովուրդը ուտելու ու խմելու նստան, ու խաղալու ելան։

*կամ, քանդակագործի գրիչով

3—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Գնա իջիր. վասն զի ապականեցաւ քու ժողովուրդդ զոր Եգիպտոսի երկրէն հանեցիր։ 8—Անոնք չուտով խոտորեցան այն ճամբայէն զոր իրենց պատուիրեցի. իրենց ձուլածոյ ոջի չինեցին, և անոր երկրպագութիւն ըրին, ու անոր զոհեր մատուցին, ու ըսին, Ով Իսրայէլ, ասոնք են քու աստուածներդ որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին։ 9—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Ես տեսայ այս ժողովուրդը, և ահա այս խստապարանոց ժողովուրդ մըն է։ 10—Ուստի հիմա թող առը զիս, որպէս զի իմ բարկութիւնս անոնց վրայ բորբոքի, ու փճացնեմ զանոնք, և քեզ մեծ ազգ մը բնեմ. 11—Ու Մովսէս իր Տէր Աստուծոյն առջեւ ազաչեց, ու ըսաւ, Ով Տէր, ինչո՞ւ քու բարկութիւնդ բորբոքի քու ժողովուրդիդ վրայ, զոր Եգիպտոսի երկրէն հանեցիր մեծ զօրութիւնով ու զօրաւոր ձեռքով. 12—ինչո՞ւ համար Եգիպտացիք խօսին ու ըսեն թէ Չարութեան համար հանեց զանոնք՝ որպէս զի լեռներուն մէջ սպաննէ, ու զանոնք երկրի երեսէն փճացնէ. դարձիր քու սաստիկ բարկութենէդ, ու *գազրէ այս չարիքը քու ժողովուրդիդ վրայ։ 13—Յիշէ քու ծառաներդ Աբրահամը, Իսահակը ու Իսրայէլը, որոնց դուն քու անձովդ երդում ըրիր, ու ըսիր անոնց, Ձեր սերունդը երկինքի աստղերուն պէս պիտի չատցնեմ, և բոլոր այս երկիրը՝ որուն վրայով խօսեցայ, ձեր սերունդին պիտի տամ, ու ՆՈՅ պիտի ժառանգեն յաւիտեան։ 14—Ու Տէրը գղջաց այն չարիքին համար՝ զոր ըսեր էր թէ իր ժողովուրդին պիտի բնէ։

15—Ու Մովսէս դարձաւ ու լեռնէն իջաւ, ու վկայութեան երկու տախտակները իր ձեռքն էին. տախտակները իրենց երկու կողմերէն գրուած էին. անոնք մէկ կողմէն ու միւս կողմէն գրուած էին։ 16—Ու տախտակները Աստուծոյ գործն էին. ու տախտակներուն վրայ փորագրուած գիրը Աստուծոյ գրածն էր։ 17—Ու երբ Յեսու ալաղաղ ժողովուրդին ձայնը լսեց, ըսաւ Մովսէսի, Բանակին մէջ պատերազմի ձայն կայ։ 18—Ու անիկա ըսաւ, Այս յաղթականներու ազաղակի ձայն չէ, ու պարտուածներու ազաղակի ձայն է. Հապա խազի ձայն կը լսեմ ես։ 19—Ու եղաւ որ բանակին մօտենալով՝ արձր ու պար բանդակները տեսաւ պէս, Մովսէսի բարկութիւնը բորբոքեցաւ. ու տախտակները իր ձեռքէն նետեց, ու լեռանը վրայ զիս կոտրեց զանոնք։ 20—Ու ածուց իրեն արձրը առաւ ու կրակով այրեց, ու մանր փոշի բրաւ և յորին վրայ ցանեց, ու Իսրայէլի որդիներուն խմցուց։

21—Ու Մովսէս ըսաւ Ահարանի, Այս ժողովուրդը ի՞նչ բրաւ քեզի, որ անոնց վրայ մեծ մեղք մը բերիր։ 22—Ու Ահարան ըսաւ, Թող իմ տէրոջս բարկութիւնը չբորբոքի. դուն գիտես այս ժողովուրդը՝ որ չարին հակամիտ են. 23—Ու ինծի ըսին թէ Մեզի աստուածներ չինէ, որպէս զի մեր առջեւէն երթան, վասն զի այն Մովսէսը, մեզ Եգիպտոսի երկրէն հանող մարդը, չենք գիտեր թէ անոր ի՛նչ եղաւ։ 24—Ու ես ըսի անոնց, Ով որ ոսկի ունի, թող հանէ. ու բերին ինծի. և կրակը ձգեցի զայն, ու այս արձրը ելաւ։

25—Ու երբ Մովսէս ժողովուրդին *անառակութիւնը տեսաւ, (քանզի Ահարան զիրենք առակ եր զանոնք անառակութիւն ընելու† իրենց թշնամիներուն մէջ խայտառակ ըլլալու չափ,) 26—Ապա տուն Մովսէս բանակին դուռը կայնեցաւ, ու ըսաւ, Ով որ Տէրոջը կողմն է, թող ինծի գայ։ Ու Ղեւիի բոլոր որդիները անոր քով ժողովեցան։ 27—Ու ըսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ամէն մարդ իր սուրը թող իր մէջքը դնէ, ու բանակին մէջ դուռէ դուռ անցնին ու դառնան, և ամէն մարդ իր եղբայրը, ու ամէն մարդ իր ընկերը, և ամէն մարդ իր գրացին մեռցնեն։ 28—Ու Ղեւիի որդիները Մովսէսի խօսքին պէս բրին.

*նոյնպէս զղջաց

*կամ, մերկ ըլլալը
†կամ, մերկացուց զանոնք

ու այն օրը ժողովրդին երեք հազար մարդ։ 29—Քանզի Մովսէս ըսեր էր թէ Այսօր ձեզմէ ամէն մէկը իր որդւոյն վրայ ու իր եղբօր վրայ ինքզինք Տէրոջը նուիրէ, որպէս զի ձեր վրայ օրհնութիւն տայ այսօր։

30—Ու եղաւ որ հետեւեալ օր Մովսէս բսաւ ժողովրդին, Դուք մեծ մեղք գործեցիք. ու հիմա Տէրոջը պիտի ելլեմ, թերեւս քաւութիւն մը ընեմ ձեր մեղքին համար։ 31—Ու Մովսէս դարձաւ Տէրոջը ու բսաւ, Ով այս ժողովրդը մեծ մեղք մը գործեց, իրեն ոսկիէ աստուածներ չինելով։ 32—Բայց հիմա եթէ անոնց մեղքերը կը ներես՝ Ընէ, եթէ ոչ՝ կ'ազաչեմ, ասրկ զիս քու գրած գիրքէդ։ 33—Ու Տէրը բսաւ Մովսէսի, Ով որ ինծի դէմ մեղանչեց, զանիկա իմ գիրքիս պիտի ասրեմ։ 34—Ուսոի հիմա գնա, ժողովրդը այն տեղը տար, զոր քեզի բսի. ահա իմ հրեշտակս քու առջեւդ պիտի երթայ. բայց այցելութիւն ընելու օրս անոնց մեղքը իրենց վրայ պիտի բերեմ։ 35—Ու Տէրը զարկաւ ժողովրդը, Ահարոնի չինած ոսկիը չինելնուն համար։

ԳԼ. ԼԳ

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Ելիր ասկէ գնա ու ժողովրդն ալ զոր եգիպտոսի երկրէն հանեցիր, ո՛ գնա այն երկիրը որու համար երդում ըրի Աբրահամի, Իսահակի ու Յակոբի՝ բսելով, Քու սերունդիդ պիտի տամ զայն։ 2—Ու քու առջեւդ հրեշտակ մը պիտի դրկեմ, ու Քանանացին, Ամորհացին, Քետացին, Փերեզացին, Խեւացին ու Յեբուսացին պիտի վռնտեմ։ 3—Կաթ ու մեղր բղխող երկիրը պէտէ Ելայ։ վասն զի *ձեզի հետ՝ պիտի չելլեմ, քանզի դուն խստապարանոց ժողովրդ մըն ես. չըլլայ որ քեզ ճամբուն մէջ բնաջինջ ընեմ։

4—Ու երբ ժողովրդը այս չար խօսքը լսեց, սուգ բրաւ, և մէկը իր զարդը իր վրայ չդրաւ։ 5—Վասն զի Տէրը բսած էր Մովսէսի, Ըսէ իսրայէլի որդիներուն, Դուք խստապարանոց ժողովրդ մըն եք. բոպէ մը ձեր մէջ ելլելու բլլամ, ձեզ բնաջինջ պիտի ընեմ. ուսոի հիմա ձեր վրայէն զարդերնիդ վերցուցէք, որպէս զի ձեզի ընելիքս գիտնամ։ 6—Ու իսրայէլի որդիները իրենց զարդերը հանեցին Խորեբ լեռնան ետև։

7—Ու Մովսէս առաւ խորանը, ու բանակին դուրսիդին՝ բանակէն հեռու կանգնեց զայն, և անոր անունը ժողովրդի խորան դրաւ. և ով որ Տէրը կը խնդրէր, բանակին դուրսիդին եղած ժողովի խորանը կ'ելլէր։ 8—Ու երբ Մովսէս խորանը կ'երթար, բոլոր ժողովրդը կ'ելլէր, ու ամէն մէկը իր վրանին դուռը կը կայնէր, ու Մովսէսի ետևէն կը նայէր, մինչև անիկա խորանը մտնէր։ 9—Ու Մովսէս խորանը մտածին պէս ամպի սիւնը կ'իջնէր, ու խորանին դուռը կը կայնէր, և Տէրը Մովսէսի հետ կը խօսէր։ 10—Ու բոլոր ժողովրդը կը տեսնէր որ ամպի սիւնը խորանին դուռը կը կայնէր. ու բոլոր ժողովրդը կ'ելլէր, և ամէն մէկը իր վրանին դուռը երկրպագութիւն կ'ընէր։ 11—Ու Տէրը կը խօսէր Մովսէսի հետ դէմ առ դէմ, ինչպես մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի. ու Մովսէս նորէն բանակը կը դառնար. բայց անոր ծառան, Նաւէի որդին Յեսու պատանին, խորանին մէջէն չէր հեռանար։

12—Ու Մովսէս բսաւ Տէրոջը, Նայէ դուն կ'ըսես ինծի, Հանէ այս ժողովրդը. ու դուն ինծի չգիացուցիր թէ ո՛վ ինծի հետ պիտի դրկես. ու բսիր թէ անունովդ կը ճանչնամ, ու նաև իմ առջեւս շնորհք գտար։ 13—Ուսոի հիմա կ'ազաչեմ, եթէ քու առջեւդ շնորհք գտայ, ինծի ցուցուր ուրիմն քու ճամբադ՝ որպէս զի ճանչնամ քեզ, այնպէս որ քու առջեւդ շնորհք գտնեմ. ու *մխոքդ բեր՝ որ այս ազգը քու ժողովրդդ է։ 14—Ու անիկա բսաւ, Իմ ներկայութիւնս երէէ հէ՛ պիտի երթայ ու քեզ պիտի հանգստացնեմ։ 15—Ու Մովսէս բսաւ անոր,

*ՆՔԲ. ձեր մէջ

Եթէ քու ներկայութիւնդ հէէ հետ չերթայ, մեզ այս տեղէն մի հաներ։ 16—Քանզի ինչով պիտի գիացուի թէ ես ու քու ժողովրդդ քու առջեւդ շնորհք գտանք. չէ՞ որ քու մեզի հետ երթալովդ. այսպէս ես ու քու ժողովրդդ երկրի երեսին վրայ եղած բոլոր ժողովուրդներէն պիտի զատուինք։

17—Ու Տէրը բսաւ Մովսէսի, Այս բանն ալ պիտի ընեմ զոր դուն ըսիր, վասն զի իմ առջեւս շնորհք գտար, ու ես քեզ անունովդ կը ճանչնամ։ 18—Ու անիկա բսաւ, Կ'ազաչեմ, քու փառքդ ցուցուր ինծի։ 19—Ու Տէրը բսաւ, Իմ բոլոր բարութիւնս քու առջեւդ պիտի անցնեմ, ու Տէրոջը անունը քու առջեւդ պիտի կանչեմ, և որուն որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, ու որու վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ։ 20—Ու բսաւ, Դուն իմ երեսս չես կրնար տեսնել. վասն զի մարդ չկրնար զիս տեսնել ու ապրիլ։ 21—Ու Տէրը բսաւ, Ահա քովս տեղ մը կայ, ու ժայռին վրայ կայնէ. 22—Ու բլլայ որ երբ իմ փառքս անցնելու բլլայ, քեզ ժայռին խոռոչին մէջ դնեմ, ու քեզ իմ ձեռքովս ծածկեմ, մինչև ես անցնիմ. 23—Ետքը իմ ձեռքս պիտի վերցնեմ, ու իմ երես պիտի տեսնես. բայց իմ երեսս պիտի չտեսնուի։

ԳԼ. ԼԴ

Ու Տէրը բսաւ Մովսէսի, Քեզի երկու քարէ տախտակներ կոփէ առաջուանններուն պէս, ու այն տախտակներուն վրայ պիտի գրեմ առաջուան տախտակներուն վրայի խօսքերը զորս դուն կոտրեցիր։ 2— Ու առտուան համար պատրաստ եղիր, ու առտուանց Սինա լեռը ելիր, և հոն լեռանը գլուխը առջեւս կայնէ. 3—Ու մէկը պիտի չելլէ քեզի հետ, և մէկը պիտի չտեսնուի բոլոր լեռանը վրայ, ոչ ալ այդ լեռանը առջեւը ոչխար կամ արջառ պիտի արածուի։

4—Ու առաջուաններուն պէս երկու քարէ տախտակներ կոփեց. ու Մովսէս առաւոտուանց կանուխ ելաւ, ու Տէրոջը իրեն պատուիրածին պէս Սինա լեռը գնաց, և երկու քարէ տախտակները իր ձեռքը առաւ։ 5—Ու Տէրը ամպով իջաւ, ու հոն անոր քով կեցաւ. ու Տէրոջը անունը կանչեց։ 6—Ու Տէրը անոր առջեւէն անցաւ, ու ազատակեց, Տէր, Տէր Աստուած, ողորմած ու բարեբարո, երկայնամիտ և առատ ողորմութիւնով ու ճշմարտութիւնով, 7— Հազարներուն ողորմութիւն ընող, ու նողկութիւնը, յանցանքը ու մեղքը ներող, բայց յ--ը---ը ամենեւին անպատիժ չթողուր, Հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ ու որդւոց որդիներուն վրայ, մինչև երրորդ ու չորրորդ ազգը հատուցանելով։ 8—Ու Մովսէս ամենապարկով մինչև գետինը խոնարհեցաւ ու երկրպագութիւն ըրաւ։ 9—Ու բսաւ, Ով Տէր, եթէ հիմա քու առջեւդ շնորհք գտայ, կ'ազաչեմ, Թող իմ Տէրս մեզի հետ երթայ. *վասն զի ասիկա խստապարանոց ազգ մըն է. և ներէ մեր անօրէնութիւնը ու մեր մեղքերը, և մեզ քու ժառանգութիւնդ ըրէ։

10—Ու Տէրը բսաւ, Ահա ես ուխտ մը կ'ընեմ. քու բոլոր ժողովրդիդ առջեւ այնպիսի սքանչելիքներ պիտի ընեմ, որ բոլոր երկրի վրայ ու բոլոր ազգաց մէջ չեղած. և բոլոր ժողովուրդը, որուն մէջ ես գտն, պիտի տեսնէ Տէրոջը գործը. քանզի հիանալի է այն բանը զոր քեզի պիտի ընեմ, 11—Միթպէ պահէ ինչ որ ես քեզի կը պատուիրեմ այսօր. ահա պիտի վռնտեմ քու առջեւդ Ամորհացին ու Քանանացին և Քետացին ու Փերեզացին և Խեւացին ու Յեբուսացին, 12—Զգուշացիր քու անձիդ, չըլլայ որ քու երթալու երկրիդ բնակիչներուն հետ ուխտ ընես, չըլլայ որ անիկա քու մէջտեղդ որոգայթ բլլայ։ 13—Հապա անոնց բագիններըն կործանէք, ու անոնց կուռքերը փշրէք, և անոնց Աստարովթներուն կտրատէք։ 14—Վասն զի ուրիշ Աստուծոյ երկրպագութիւն պիտի չտեսնես. քանզի Եհովա նախանձոտ կը կոչուի, և նախանձոտ Աստուած է։ 15—Չըլլայ որ այն երկրին բնակիչներուն

*կամ, թէև

բան հետ ուխտ ընես, և անոնք իրենց աստուածներուն եաեւէն երթալով պոռնկութիւն րրած ատեննին ու իրենց աստուածներուն զոհ բրած ատեննին քեզ կանչեն, ու դուն անոնց զոհէն ուտես։ 16—Ու աղջիկներէն քու որդիներուդ կին առնես, ու անոնց աղջիկները իրենց աստուածներուն եաեւէն երթալով պոռնկութիւն րրած ատեննին քու որդիներուդ ալ պոռնկութիւն ընել տան՝ իրենց աստուածներուն եաեւէն։ 17—Ձեզի ձուլածոյ աստուածներ չընես։

18—Բաղարջակերաց տօնը պահես։ Ապիւ ամսուն որոշ ժամանակին մէջ, քեզի պատուիրածիս պէս, եօթը օր բաղարջ պիտի ուտես։ Վասն զի Ապիւ ամսուն մէջ Եգիպտոսէ ելար։

19—Ամէն էգը արգանդը բացողը իմն է։ և քու անասուններուդ մէջ ամէն արու առջինեակը, թէ՛ արջառ րլլայ և թէ՛ ոչխար, էմ ե։ 20—Բայց իշուն առջինեակը գառնուկով փրկես։ և եթէ չես փրկեր, այն ատեն անոր վիզը կարես։ Քու որդիներուդ ամէն առջինեակ փրկես։ ու մէ՛կը իմ առջեւս ձեռնունայն չերեւնայ։

21—Վեց օր պիտի գործես, ու եօթներորդ օրը հանգստանաս։ Թէ՛ վարելու ընելու և թէ՛ հնձելու ատեն հանգստանաս։

22—Ու շաբաթներուն, այսինքն ցորենին հունձքին երախայրիներուն, ոծոր, ու տարւոյն վերջը՝ ժողովելու ոծոր բռնես։

23—Երէք անգամ տարին երեք անգամ իսրայէլի Աստուծոյն, Եհովա Տէրոջը, առջեւ երեւնայ։ 24—Վասն զի քու առջեւէդ ազգերը պիտի վռնտեմ, և քու սահմանիներդ պիտի ընդարձակեմ։ ու տարին երեք անգամ քու Տէր Աստուծոյդ առջեւ երեւնալու երթած ատենդ մէ՛կը քու երկիրդ պիտի չցանկայ։

25—Իմ *զոհերս խմորեալ հացով չնուիրես", ու զատկի ոծոին զոհը մինչեւ առաւօտ չմնայ։ 26—Քու երկրիդ երախայրիներուն առաջինները քու Տէր Աստուծոյդ տանը բերես։

Ուլը իր մօրը կաթին մէջ չեփես։

27—Ու Տէրը բսաւ Մովսէսի, Գրէ այս խօսքերը։ վասն զի այս խօսքերուն համեմատ քեզի հետ ու իսրայէլի հետ ուխտ րրի։ 28—Ու անկում հոն կեցաւ Տէրոջը հետ քառասուն օր ու քառասուն գիշեր։ ոչ հաց կերաւ, ոչ ալ ջուր խմեց։ և սխտաւանները վրայ ուխտին խօսքերը գրեց, այսինքն տասը պատուիրանքները։

29—Ու եղաւ որ երբ Մովսէս Սինա լեռնէն իջաւ, վկայութեան երկու սխտաւանները Մովսէսի ձեռքն էին լեռնէն իջած ատեներ, ու Մովսէս իր երեսին մորթին լուսափայլ րլլալը չէր գիտեր երբ Տէրը իրեն հետ խօսեցաւ։ 30—Ու Ահարան ու իսրայէլի բոլոր որդիները տեսան Մովսէսը, և ահա անոր երեսին մորթը լուսափայլ էր, ու անոր մտանելու վախցան։ 31—Ու Մովսէս կանչեց զանոնք, ու Ահարան ու ժողովքին բոլոր իշխանները դարձան անոր, ու Մովսէս խօսեցաւ անոնց հետ։ 32—Ու անկէ ետքը իսրայէլի բոլոր որդիները մտեցան։ ու պատուիրեց անոնց ամէն ինչ որ Տէրը խօսեր էր իրեն հետ Սինա լեռը։ 33—Ու Մովսէս վերջ առնելու անոնց հետ խօսելը լճացնելէ՝ իր երեսը քող դրաւ։ 34—Բայց Մովսէս Տէրոջը առջեւ, անոր հետ խօսելու մտած ատենը, մինչեւ դուրս ելլելը քողը կը վերցնէր։ ետքը դուրս կ'ելլէր, ու իրեն պատուիրածը իսրայէլի որդիներուն կը խօսէր։ 35—Ու իսրայէլի որդիները Մովսէսի երեսը կը տեսնէին, որ Մովսէսի երեսին մորթը լուսափայլ էր։ ու Մովսէս իր երեսը քողով կը ծածկեր մինչեւ Անոր հետ խօսելու մտնելը։

ԳԼ. ԼԵ

Եւ Մովսէս ժողովից իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը, ու բսաւ անոնց, Ասոնք են այն բաները զորոնք Տէրը պատուիրեց որ գանոնք բնէք։ 2—Վեց օր գործ գործուի, բայց եօթներորդ օրը սուրբ պիտի րլլայ ձեզի, այսինքն հանգստութեան շաբաթ Տէրոջը։ այն որ գործ գործուի պիտի մեռցուի։ 3—Շաբաթ օրը ձեր բոլոր բնակարանները մէջ կրակ պիտի չվառէք։

4—Ու Մովսէս խօսեցաւ իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին՝ ըսելով, Տէրը պատուիրած բանը այս է՝ ըսելով, 5—Ձեր միջէն ընծայ առէք Տէրոջը։ ով որ սրտով կը յօժարի, թող անիկա Տէրոջը ընծան բերէ, ածիլ ու արծաթ և պղինձ, 6—Ու կապուտակ և ծիրանեգոյն ու կրկնակի կարմիր և բարակ քէտան ու այծի մազ, 7—Ու կարմիր ներկուած խոյի մորթեր, ու թէհաշի մորթեր և Սատիմի փայտեր, 8—Ու լոյսի համար ու անուշահոտ խունկի համար ու անուշահոտ խունկի համար հաճելիներ, 9—Ու ուղղնագոգաթեր ու եփուտին համար և լանջապանակին համար գոհարներ։ 10—Ու ձեր միջ ամէն սրտով իմաստուն եղողները գան, ու Տէրոջը բոլոր պատուիրած բաները չինեն։ 11 — Խորանը, անոր վրանը, ու անոր ծածկոցը, անոր ճարմանդները, ու անոր սախտակները, անոր նիգերը, անոր սիւները, և անոր խարիսխները, 12—Տապանակը ու անոր ձողերը, քաւութիւնը, ու ծածկող վարագոյրը, 13—Սեղանը ու անոր ձողերը ու անոր բոլոր անօթները, և առաջաւորութեան հացը, 14—Ու լոյսի աշտանակը ու անոր գործիքները և անոր ճրագները ու լոյսի իւղը, 15—Ու խունկին սեղանը ու անոր ձողերը, ու օծման իւղը, և անուշահոտ խունկը, ու խորանին դրան վարագոյրը, 16—Ողջակիզին սեղանը ու անոր պղնձէ ցանցէ կապարան, անոր ձողերը ու անոր բոլոր գործիքները, աւազանը ու անոր խարխոյը, 17—Սրահին վարագոյրները, անոր սիւները ու խարխոնները, և սրահին դրան վարագոյրը, 18—Խորանին ցիցերը ու սրահին ցիցերը ու անոնց չուաններըը, 19—Գործուածին զգեստները՝ սրբարանին մէջ պաշտելու համար, և Ահարան քահանային սուրբ զգեստները ու անոր որդիներուն զգեստները, որպէս զի քահանայութիւն ընեն։

20—Ու իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Մովսէսի առջեւէն գացին։

21—Ու ամէն յօժարասիրտ եղողը ու ամէն բոլոր հոգիով կամեցողը եկան, ու ժողովքի խորանին գործին համար և անոր բոլոր պաշտօնին համար ու սուրբ զգեստներուն համար Տէրոջը ընծան բերին։ 22—Ու եկան այրեր ու կիներ, որոնք որ սրտով կամեցող կային, — Ճարմանդներ և ականջներ և մատնիներ և *ամանեակներ, ամէն տեսակ ոսկի գարդեր բերին։ ամէն ընծայ բերող ոսկի ընծայ էր— Տէրոջը։ 23—Ու այն ամէնը, որուն քով կը գտնուէր կապուտակ ու ծիրանեգոյն և կրկնակի կարմիր և բարակ քէտան և այծի մազ ու կարմիր ներկուած խոյի մորթեր և թէհաշի մորթեր, բերին։ 24—Ամէն արծաթի ու պղինձ ընծայ տալը Տէրոջը ընծան բերաւ, և որուքով որ պաշտօնին ամէն գործին դէրեն Սատիմի փայտեր կը գտնուէին՝ բերաւ։ 25—Ու ամէն սրտով իմաստուն եղող կիները իրենց ձեռքերովը մանեցին, ու իրենց մանած կապուտակը, ծիրանեգոյնը, կրկնակի կարմիրը ու բարակ քէտանը բերին։ 26—Ու բոլոր սրտով փափաքող և յօժարութիւն ունեցող կիները այծի մազ մանեցին։ 27—Ու իշխանները եղջիւրքարեր ու եփուտին և լանջապանակին համար գոհարներ բերին, 28—Նաև լոյսի համար ու օծման իւղի համար և անուշահոտ խունկի համար՝ հաճելիներ ու իւղ։ 29—Իսրայէլի որդիները յօժարակամ ընծայ բերին Տէրոջը, ամէն մարդ ու կին, որոնք յօժարութիւն ունէին բերելու ամէն իրաց գործի համար, զոր Տէրը Մովսէսի ձեռքով պատուիրեց որ չինուի։

30—Ու Մովսէս բսաւ իսրայէլի որդիներուն, Ահա Տէրը Ցուդայի ցեղէն Ովրի որդւոյն Ուրիի որդին Բեսաղիլը անունովը կանչեց։ 31—Ու Աստուծոյ Հոգիովը՝ իմաստութիւնով, հանճարով և գիտութիւնով ու ամէն իրաց ճարտարութիւնով լեցուց զանիկա, 32—Որպէս զի վարպետի գործեր հնարելով ոսկիի ու արծաթի և պղինձի վրայ բանի։ 33—Ու գաւազան հաստ քարեր

*Կամ, լանջազեղ կամարներ

*Եբր. զոհերուս աբիւնը խմորեալ հացի վրայ չմատնես

բանելով ու վայելք գանգակելով՝ ամէն կերպ վարպետի գործ ընէ։ 34— Եւ անոր որոյն մէջ սորվեցնելու ի-ըոբ-ընէ-ը դրաւ, անորն ալ՝ ու Դանի ցեղէն Ահիսամայի որդւոյն Ոզոիաբի ալ։ 35—Սրտի խնամութիւնով լեցուց զանոնք, որպէս զի ամէն անսակ գործ գործող և հնարքներ հնարող գանգակագործի ու արուեստագործի գործ, նաև կապուտակի ու ծիրանեգոյնի և կրկնակի կարմիրի և բարակ քթանի վրայ նկարագործող և ասպազնակի հիւրձը ընեն։

Գլ. ԼԶ

Ա յն առեն Բեսելիել ու Ոզոիաբ և ամէն արուեստ խնամուն եղողը, որոնց որ Տէրը խնամութիւն ու հանճար տուաւ արքարանին պաշտօնին ամէն կերպ գործերը ընել գիտնալու համար, Տէրոջը բոլոր պատուիրածին պէս գործեցին։ 2—Եւ Մովսես կանչեց Բեսելիելը ու Ոզոիաբը ու ամէն արուեստ խնամուն եղողը, որուն սրտին մէջ Տէրը խնամութիւն դրաւ, այսինքն այն ամէնը՝ որուն սիրտը կը փափաքէր բանելու համար գործի մատնուելու։ 3—Եւ անոնք առին Մովսէսէ բոլոր ընծաները, զորոնք Իսրայէլի որդիները բերին արքարանին պաշտօնին գործը — նուագելով ընելու համար։ Ու անոնք առաւօտուն ամէն առաւօտ կամաւոր ընծաներ կը բերէին անոր։

4—Եւ արքարանին ամէն գործը բանող բոլոր խնամուն մարդիկը՝ ամէն մէկը իր բրած գործէն եկան։ 5—Եւ խօսեցան Մովսէսի՝ ըսելով, ժողովրդը աւելի կը բերէ քան որչափ պէտք է Տէրոջը հնարած գործին համար։ 6—Եւ Մովսէս պատուիրեց, որպէսզի մարդ ոչ ալ կին գործ մը գործեն արքարանին ընծային համար։ Այսպէս ժողովրդը ընծայ բերելէն դադրեցան։ 7—Եւ այն ներածները բոլոր գործը հնարելու համար բաւական էին իրենց, ու աւելի ալ։

8—Եւ խորանին գործը բանողներէն բոլոր սրտով խնամուն եղողները մանուած բարակ քթանէն ու կապուտակէն և ծիրանեգոյնէն ու կրկնակի կարմիրէն ասար վարպետի հնարքով քերովբէներով գործ ըրին։ 9—Մէկ վարագուրին երկայնութիւնը քսանըութ կանգուն, ու մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն էր. ամէն վարագոյրներուն չափը մէկ էր։ 10—Եւ հինգ վարագոյրը իրարու կցեց, ու ը-- հինգ վարագոյրն ալ իրարու կցեց։ 11—Եւ կցուածքին ծայրի մէկ վարագուրին եզերքին վրայ կապուտակի օղակներ շինեց. միւս կցուածքին ծայրի վարագուրին եզերքին ալ այնպէս րրաւ։ 12—Մէկ վարագուրին վրայ հիսուն օղակ շինեց, և միւս կցուածքին վրայ եղած վարագուրին ծայրն ալ հիսուն օղակ շինեց. օղակները դիմացի դիմաց էին։ 13—Եւ հիսուն հատ կարմանեայ ոսկի ճարմանդներ շինեց. ու վարագոյրները ճարմանդներով իրարու հետ կռճկեց, այնպէս որ խորանը մէկ եղաւ։

14—Եւ խորանին վրայի վրանին համար այծի մազէ վարագոյրներ շինեց. զանոնք տասնըմէկ վարագոյր շինեց։ 15—Մէկ վարագուրին երկայնութիւնը երեսուն կանգուն, ու մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն բլլալով տասնըմէկ վարագուրին չափը մէկ էր։ 16—Եւ հինգ վարագոյրները զատ, ու վեց վարագոյրները զատ կցեց։ 17—Եւ կցուածքին ծայրի վարագուրին եզերքին վրայ հիսուն օղակ, ու միւս կցուածքին ծ-ոյրէ վարագուրին եզերքին վրայ հիսուն օղակ շինեց։ 18—Եւ հիսուն հատ կարմանեայ պղինձ ճարմանդներ շինեց, որպէս զի վրանը կռճկէ ու մէկ բլլայ։ 19—Եւ վրանին համար կարմիր ներկուած խոյի մորթերէ ծածկոց մը, ու անոր վրայէն մանիշակագոյն մորթերէ ծածկոց մը շինեց։

20—Եւ խորանին համար Սատիմի փայտէ կանգնած ասխատակներ շինեց։ 21—Մէկ ասխատակին երկայնութիւնը տասը կանգուն, և մէկ ասխատակին լայնութիւնը մէկ ու կէս կանգուն էր։ 22—Անոնք մէկ ասխատակ իրարու հաւասար երկերկու ազուցիկ ծայր ունէր. խորանին բոլոր ասխատակներուն

այսպէս րրաւ։ 23—Եւ խորանին ասխատակները այսոյ- շինեց. դէպ ի հարաւ՝ -ոյր հարաւային կողմին համար քսան ասխատակ չ-ոյ։ 24—Եւ քսան ասխատակներուն տակ քառասուն արծաթի խարիսխ, այսինքն մէկ ասխատակին տակ իր երկու ծայրը -ոյշ-ոյ-- համար երկու խարիսխ, ու միւս ասխատակին տակ իր երկու ծայրը -ոյշ-ոյ-- համար երկու խարիսխ շինեց։ 25—Եւ խորանին միւս կողմին համար դէպ ի հիւսիս քսան ասխատակ շինեց։ 26—Ու անոնց քառասուն արծաթի խարիսխ, մէկ ասխատակին տակ երկու խարիսխ, ու միւս ասխատակին տակ երկու խարիսխ, շ-ոյ։ 27—Եւ խորանին հետեւի կողմին համար դէպ ի արեւմուտք վեց ասխատակ շինեց։ 28—Եւ խորանին հետեւի կողմի անկիւններուն համար երկու ասխատակ շինեց։ 29—Եւ անոնք վարէն կր միանային, ու վերէն ալ մէկ օղակով մէկ-ոեղ կը միանային. երկուքին ալ երկու անկիւններուն այսպէս րրաւ։ 30—Ա-ոյ-էն ութ ասխատակ էին. ու անոնց արծաթի խարիսխները տասնըվեց խարիսխ էին, ամէն մէկ ասխատակին տակ երկերկու խարիսխ րլլալով։ 31—Եւ Սատիմի փայտէ նիգեր շինեց խորանին մէկ կողմի ասխատակներուն համար հինգ, 32—Ու խորանին միւս կողմի ասխատակներուն համար հինգ նիգ, և խորանին դէպ ի արեւմուտք եղած հետեւի կողմի ասխատակներուն համար հինգ նիգ։ 33—Եւ մէջտեղի նիգը այնպէս շինեց, որ ասխատակներուն մէջտեղէն մէկ ծայրէն մինչև միւս ծայրը անցնի։ 34—Եւ ասխատակները ոսկիով պատեց. ու անոնց օղակները ոսկիէ շինեց՝ նիգերուն տեղեր րլլալու համար. նիգերն ալ ոսկիով պատեց։

35—Եւ կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ շինեց վարագոյրը. վարպետի գործ՝ քերովբէներով շինեց զանոնք։ 36—Եւ Սատիմի ֆ-ոյ-ե չորս սիւն շինեց անոր, ու ոսկիով պատեց զանոնք. անոնց Ֆանկերը ոսկի էին. և անոնց չորս արծաթի խարիսխ ձուլեց։ 37—Եւ խորանին դրանը համար կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ նկարագործ գրան վարագոյր մը շինեց։ 38—Եւ անոր հինգ սիւները ու անոնց Ֆանկերը շ-ոյ-ե. և անոնց խարկերը ու անոնց կապերը ոսկիով պատեց. և անոնց հինգ խարիսխները պղնձէ էին։

Գլ. Լէ

Եւ Բեսելիել Սատիմի փայտէ շինեց ապազանակը. անոր երկայնութիւնը երկու կ ու կէս կանգուն, ու անոր լայնութիւնը մէկ ու կէս կանգուն, և անոր բարձրութիւնը մէկ ու կէս կանգուն էր։ 2—Ու ներսէն ու գրտնէն զայն ոսկիով պատեց զանիկա. և անոր բոլորտիքը ոսկի չրխանակ մը շինեց։ 3—Եւ անոր չորս անկիւններուն համար չորս ոսկի օղակներ ձուլեց, այսինքն անոր մէկ կողմին երկու օղակ՝ ու միւս կողմին երկու օղակ։ 4—Եւ Սատիմի փայտէ ձողեր շինեց, ու զանոնք ոսկիով պատեց։ 5—Եւ ձողերը ապազանակին քովերը եղած օղակներուն անցուց, որպէս զի ձ-ոյշ-ոյ ապազանակը վերցնեն։

6—Եւ քաւութիւնը զայր ոսկիէ շինեց. անոր երկայնութիւնը երկու կ ու կէս կանգուն, ու անոր լայնութիւնը մէկ ու կէս կանգուն էր։ 7—Եւ երկու ոսկիէ քերովբէներ շինեց. զանոնք կռած ծայ շինեց քաւութիւնին երկու ծայրերուն։ 8—Մէկ քերովբէն մէկ քովի ծայրէն, ու միւս քերովբէն միւս քովի ծայրէն քաւութիւնին երկու ծայրերէն շինեց։ 9—Եւ քերովբէները էրէ-ոյ թեւերը վերէն տարածելով՝ իրենց թեւերովը քաւութիւնը կը ծածկէին, ու անոնց երեսները իրարու էշ-ոյէն. քերովբէներուն երեսները քաւութիւնին վրայ էին։

10—Եւ սեղանը Սատիմի փայտէ շինեց. անոր երկայնութիւնը երկու կանգուն, ու լայնութիւնը մէկ կանգուն, և բարձրութիւնը մէկ ու կէս կանգուն էր։ 11—Եւ զայն ոսկիով պատեց զայն. ու անոր բոլորտիքը ոսկի չրխանակ մը շինեց։ 12—Եւ անոր բոլորտիքը ալ չորս մատնաչափ ապառուած մը, ու ապառուածին բոլորտիքը ոսկի չրխա-

նակ մը չինեց։ 13—Եւ չորս ոսկի օզակ ձուլեց անոր համար, ու օզակները անոր չորս ոտքերուն փակ չորս անկիւնները դրաւ։ 14— Օզակները ապառաւածին փակ ըլլալով՝ սեղանը վերցնելու համար ձողերուն տեղերն էին։ 15—Եւ սեղանը վերցնելու համար ձողերը Սաւիմի փայտ չինեց, ու զանոնք ոսկիով պատեց։ 16—Եւ սեղանին վրայ եղած անօթներըն, անոր սկուտեղները և խրնկանները և նաև իր մատուցանելու գաւաթները ու բաժակները զուտ ոսկի չինեց։

17—Եւ աշտանակը զուտ ոսկի չինեց. կառոյց չինեց աշտանակը. անոր բունը ու ճիւղերը, անոր սկահակները, գնդակները ու ծաղիկները իրմէ էին։ 18—Ու անոր փայլերէն վեց ճիւղեր կ'ելլէին. աշտանակին մէկ փայլն երեք ճիւղ՝ ու աշտանակին միւս փայլն երեք ճիւղ։ 19—Մէկ ճիւղին վրայ նշաձեւ երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով, և միւս ճիւղին վրայ նշաձեւ երեք սկահակ՝ գնդակով ու ծաղիկով. աշտանակէն ելած վեց ճիւղերը այսպէս էին։ 20—Ու աշտանակին վրայ գնդակներով ու ծաղիկներով չորս նշաձեւ սկահակներ կային։ 21—Ու անկէ ելած վեց ճիւղերուն նայելով՝ երկու ճիւղին տակ իրմէ գնդակ մը, ու երկու ճիւղին տակ իրմէ գնդակ մը, և երկու ճիւղին տակ իրմէ գնդակ մը կային։ 22 — Անոնց գնդակները ու ճիւղերը իրմէ էին. ամէնը մէկ՝ զուտ ոսկի կառոյց էին։ 23—Ու անոր լամպերը ու անոր պարկեշտները ու անոր բազմակալները զուտ ոսկի չինեց։ 24—Զանկիա իր բոլոր գործիքներովը մէկ տալանդ զուտ ոսկի չինեց։

25—Խունկի սեղանը Սաւիմի փայտ չինեց. անոր երկայնութիւնը կանգուն մը, ու անոր լայնութիւնը կանգուն մը, քառակուսի ըլլալով, և անոր բարձրութիւնը երկու կանգուն էր. անոր եղջիւրները իրմէ էին, 26—Ու անոր վրայ ու չորս կողմերը և անոր եղջիւրները զուտ ոսկիով պատեց։ և քաղորտիքը ոսկի չրջանակ մը չինեց անոր։ 27—Ու անոր համար անոր չրջանակին տակէն՝ անոր երկու փայլերը երկու կողմին երկու ոսկի օզակներ չինեց, որ անոնց ձողերուն տեղերը ըլլալով՝ անոնցմով վերցնեն։ 28—Ու ձողերը Սաւիմի փայտ չինեց, ու զանոնք ոսկիով պատեց։ 29—Ու սուրբ օծման իւղը ու մաքուր անուշահոտ խունկը չինեց իւղագործի արհեստով։

ԳԼ. ԼՀ

Ե. ողջակէզի սեղանը Սաւիմի փայտ չինեց. անոր երկայնութիւնը հինգ կանգուն, ու անոր լայնութիւնը հինգ կանգուն, քառակուսի եր։ և անոր բարձրութիւնը երեք կանգուն։ 2—Ու անոր եղջիւրները չորս անկիւններուն վրայ չինեց. անոր եղջիւրները իրմէ էին. ու պղնձով պատեց զայն։ 3—Ու սեղանին բոլոր գործիքները, այսինքն թաղարները և թիակները ու կոնփերը և մսահանները ու կրակի ամաններըչինեց. անոր բոլոր գործիքները պղնձէ չինեց։ 4—Ու սեղանին համար անոր չրջանակին տակէն գրեթէ մէջտեղը պղնձէ ցանցակերպ կասկարայ մը չինեց։ 5—Ու պղնձէ կասկարային չորս անկիւնները չորս օզակներ ձուլեց ձողերուն տեղեր ըլլալու համար։ 6—Ու ձողերը Սաւիմի փայտ չինեց, ու զանոնք պղնձով պատեց։ 7—Ու ձողերը սեղանին փակ եղած օզակներուն անցուց, որպէս զի անոնցմով վերցուի։ զանիկա ամխռակներով չինեց, — մէջը դատարկ։

8—Ու պղնձէ աւազանը ու անոր պղնձէ խարխոյը ժողովի խրանին դուռը խումբերով ժողովուղ կիներուն հայելիներէն չինեց։

9—Ու սրահը չինեց. հարաւային կողմին համար, սրահին վարագոյրները, մանուածք բարակ քթանէ ըլլալով, հարիւր կանգուն էին։ 10—Անոնց սիւները քսան ու անոնց պղնձէ խարխոյները քսան էին. սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ էին։ 11—Ու հիւսիսային կողմին համար Լ-ԻՆ-ԷՆԷԸ հարիւր կանգուն. անոնց քսան սիւները ու անոնց քսան խարխոյները պղնձէ էին. սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ էին։ 12—Ու արեւմտեան կողմին համար՝ վարագոյրները հիսուն կանգուն էին. անոնց սիւները տասը ու անոնց խարխոյները տասն էին. սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ էին։ 13—Ու արեւելեան կողմին համար Լ-ԻՆ-ԷՆԷԸ հիսուն կանգուն էին։ 14—Դ-ՐՆԸ մէկ կողմին վարագոյրները տասնհինգ կանգուն, անոնց սիւները երեք ու անոնց խարխոյները երեք էին։ 15—Ու միւս կողմին համար ալ, այսինքն սրահին դրանը մէկ կողմն ու միւս կողմն, վարագոյրները տասնհինգ կանգուն, անոնց սիւները երեք ու անոնց խարխոյները երեք էին։ 16—Սրահին բոլոր վարագոյրները չրջանակի մանուածք բարակ քթանէ էին։ 17—Ու սիւներուն խարխոյները պղնձէ, սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթէ, և անոնց խոյակները արծաթապատ, ու սրահին բոլոր սիւներն ալ արծաթէ կապերով էին։ 18—Ու սրահին դրանը վարագոյրը նկարագործ էր, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ. երկայնութիւնը քսան կանգուն, և լայնութեանը մէջի բարձրութիւնը, սրահին վարագոյրներուն համեմատ, հինգ կանգուն էր։ 19—Ու անոնց սիւները չորս, ու անոնց պղնձէ խարխոյները չորս էին, անոնց ճանկերը արծաթէ, և անոնց խոյակները արծաթապատ, ու կապերը արծաթէ էին։ 20—Ու խրանին ու չորչանակի սրահին բոլոր ցիցերը պղնձէ էին։

21—Ասիկա է խրանին, այսինքն վկայութեան խրանին, հաշիւը, որ Մովսէսի պատուիրածին պէս՝ Ղեւտացւոց պաշտօնին համար Ահարոն քահանային որդւոյն Իթամարի ձեռքով հաշուեցաւ։ 22—Ու Ցուդայի ցեղէն Ովրի որդւոյն Ուրիի որդին Բեսաղիէլ բրաւ այն ամէնը զոր Տէրը Մովսէսի պատուիրեց։ 23—Ու վարպետ քանդակագործը, և կապուտակով ու ծիրանեգոյնով և կրկնակի կարմիրով ու բարակ քթանով նկարագործողը, Դանի ցեղէն Ախիսամայի որդին Ողիսաբ, անոր հետ էր։

24—Այս չինուածքին համար գործածուած բոլոր ոսկին, այսինքն սրբարանին բոլոր չինուածքին նուիրուած ոսկին, սրբարանին սիկղին համեմատ, քսաներիքը տալանդ ու եօթը հարիւր երեսուն սիկղ էր։ 25—Ժողովքէն համրուածներուն արծաթը, սրբարանին սիկղին համեմատ, հարիւր տալանդ ու հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղ էր։ 26—Քանի տարեկանէն վեր համրուելու անցնողներէն ամէն մէկը պէտք մը, այսինքն սրբարանին սիկղին համեմատ, կէս սիկղ ------, վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն մարդիկ ըլլալով։ 27—Ու սրբարանին խարխոյները ու վարագոյրին խարխոյները ձուլելու համար հարիւր տալանդ արծաթը գնաց. մէկ խարխոյը մէկ տալանդով ըլլալով, հարիւր տալանդին հարիւր խարխոյ եղաւ։ 28—Ու հազար եօթը հարիւր եօթանասունհինգ սիկղէն ճանկերը չինեց, ու անոնց խոյակները պատեց, և զանոնք կապեց։ 29—Ու նուիրուած պղինձը եօթանասուն տալանդ ու երկու հազար չորս հարիւր սիկղ էր։ 30—Ու անով ժողովքի խրանին դրանը խարխոյները ու պղնձէ սեղանը և անոր պղնձէ կասկարան ու սեղանին բոլոր գործիքները։ 31—Ու չրջանակի սրահին խարխոյները ու սրահին դրանը խարխոյները և խրանին բոլոր ցիցերը ու չրջանակի սրահին բոլոր ցիցերը չինեց։

ԳԼ. ԼԹ

Ե. կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ չինեցին պաշտօնի հանդերձներ, սրբարանին մէջ պաշտօն կատարելու համար. և Ահարոնի համար սուրբ զգեստները չինեցին, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

2—Ու եփուդը չինեց ոսկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քթանէ, 3—Ու ոսկին բարակ թիթեղներ ըլլալու ծեծեցին, և թելեր կտրեցին, որպէս զի կապուտակին, ծիրանեգոյնին և կրկնակի կարմիրին ու բարակ քթանին հետ վարպետութեամբ գործեն,

4—կռնակով վակասներ չինեցին անոր, այլ էին Եթրոն, ու երկու ծայրին կը կռնկուէր։ 5—Ու եփուսին վրայ եղած ժապաւէնը նոյն հիւսուածքին էր. անոր գործին համեմատ, ասկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քաշած էր, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

6—Ու ոսկի խարիսխները ու էրեսները գամեցին, — անոնց վրայ Իսրայէլի որդիներուն անուններուն կնիք փորագրելու պէս փորագրեցին։ 7—Ու զանոնք եփուսին ուսերուն վրայ դրաւ, որպէս զի յիշատակի քարեր ըլլան Իսրայէլի որդիներուն, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

8—Ու լանջապանակը հմտութեամբ եփուսին գործին պէս ասկիէ, կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած բարակ քաշած չինեց։ 9—Քառակուսի, երկու քի ծալուած, չինեցին լանջապանակը. մէկ քիթ երկայնութեամբ ու մէկ քիթ լայնութեամբ, երկու քի ծալուած էր։ 10—Ու անոր վրայ չորս կարգ քարեր դամեցին. այս կարգը սարդիոն, ապպիտն ու զմրուխտ՝ առաջին կարգն է։ 11—Ու երկրորդ կարգը կարկեհան, շափիւղայ ու ադամանդ էր։ 12—Ու երրորդ կարգն էր գաճագ, ակատ ու մեկսիկ։ 13—Ու չորրորդ կարգն էր ոսկեքար, եղեղնաքար ու յասպիս. ասոնք ոսկի խարիսխով մէջ գամուած էին։ 14—Ու քարերը Իսրայէլի որդւոց անուններուն համեմատ, անունց անուններուն պէս, տասներկու էին. ամէն մէկուն անունը, տասներկու ցեղերուն համեմատ, կնիք փորագրոյի գործով փորագրուած էր։ 15—Ու լանջապանակին վրայ գուռ ոսկիէ այտուած հիւսուած չղթաներ չինեցին։ 16—Ու երկու ոսկի խարիսխ ու երկու ոսկի օղակ չինեցին. և երկու օղակները լանջապանակին երկու ծայրերը դրին։ 17—Ու լանջապանակին ծայրերը եղած երկու օղակներուն անցուցին երկու ոսկիէ հիւսուած չղթաները։ 18—Ու երկու հիւսուած չղթաներուն ձեռ երկու ծայրերը երկու խարիսխներուն անցուցին ու ասոնք եփուսին ուսերուն վրայ անոր առջեւի կողմը դրին։ 19—Ու երկու ոսկի օղակներ ալ չինեցին, և ընծայ լանջապանակին երկու ծայրերուն եզերքին երկու օղակները եփուսին կցուած եզերքին երկու ծայրերը դրին։ 20—Ու երկու ոսկի օղակներ չինեցին, ու զանոնք եփուսին երկու ուսերուն վարին, անոր առջեւի կողմի կցուածքին մօտ, եփուսին ժապաւէնին վրայէն անցուցին։ 21—Ու լանջապանակը իր օղակներէն՝ կապուտակ չընծայ լարով եփուսին օղակներուն կապեցին, որպէս զի եփուսին ժապաւէնին վրայ ըլլայ, ու լանջապանակը եփուսին վրայէն չպաուի, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

22—Ու եփուսին պատմուճանը ամայնական գործով բոլորովին կապուտակ չինեց։ 23—Ու պատմուճանին մէջտեղը զրահի ճեղքուածքին պէս ճեղքուածք մը կար։ — Ճեղքուածքին բոլորտիքը հիւսուած եզերք մը ունէր, որպէս զի չպատռի։ 24—Ու պատմուճանին փղանոսկրներուն վրայ կապուտակ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ — մանուած բուկլէ նռնակներ չինեցին։ 25—Ու զուտ ոսկիէ զանգակներ չինեցին, ու զանգակները նռնակներուն մէջտեղը, պատմուճանին փղանոսկրներուն վրայ չորքանակի նռնակներուն մէջ, դրին։ 26—Պատմուճանին փղանոսկրներուն վրայ չորքանակի զանգակ մը ու նռնակ մը, զանգակ մը ու նռնակ մը կար, պաշտօնին համար, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

27—Ու Ահարոնի ու անոր որդիներուն համար բարակ քաշած ասայենանկի գործ չափիկներ չինեցին։ 28—Ու խոյրը բարակ քաշած, ու հմտաշէն սպաթէները բարակ քաշած, ու կտաւեղէն անդրաթափքները մանուած բարակ քաշած։ 29—Ու գօտին մանուած բարակ քաշած, կապուտակէ, ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ նկարագործ էր, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

30—Ու սուրբ պսակին քիթեղը զուտ ոսկիէ չինեցին, ու անոր վրայ կնիքի փորագրելու պէս՝ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՒՈՆ գրեցին։ 31—Ու անոր կապուտակ ժապաւէնէ մը անցուցին, որպէս զի վերէն խոյրին վրայ դրուի, Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս։

32—Ուստի խորանին, այսինքն ժողովքի վրանին, բոլոր գործը լմնցաւ. և Իսրայէլի որդիները Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս ըրին. այնպէս ըրին։ 33—Ու խորանը Մովսէսի բերին. վրանը ու անոր բոլոր գործիքները, անոր ձաղանդները, անոր տախտակները, անոր նիգերը և անոր սիւները ու խարիսխները։ 34—Ու կարմիր ներկուած խոյի մորթերէ ծածկոցը, ու քէհէճի մորթերէ եղած ծածկոցը, և ծածկոց վարագոյրը, 35—վկայութեան տապանակը ու անոր ձողերը, և քաւութիւնը, 36—Սեղանը — անոր բոլոր անօթները և առաջաւորութեան հացը, 37—Զուտ ոսկիէ աշտանակը իր ճրագներովը, այսինքն կարգաւ դրուած ճրագներովը ու իր բոլոր գործիքներովը, և լոյսի իւղը, 38—Ու ոսկի սեղանը ու օծման իւղը և անուշահոտ խունկը ու խորանին դրանը վարագոյրը, 39—Պղնձէ սեղանը ու անոր պղնձէ կաճկարանը, անոր ձողերը և անոր բոլոր գործիքները, աւազանը ու անոր խարիսխը, 40—Սրահին վարագոյրները, անոր սիւները ու խարիսխները, և սրահին դրանը վարագոյրը, անոր չանքերը ու ցիցերը, և խորանին, այսինքն ժողովքի վրանին, պաշտօնին համար եղած բոլոր կահաւորները, 41—Սրբարանին մէջ պաշտելու համար՝ պաշտօնին հանդերձները ու Ահարոն քահանային սուրբ զգեստները, և անոր որդիներուն զգեստները, որպէս զի քահանայութիւն ընեն։ 42—Ամէն ինչ ալ որ՝ զորոնք Տէրը Մովսէսի պատուիրեց, այնպէս ըրին Իսրայէլի որդիները ամէն գործը։

43—Ու Մովսէս բոլոր չինուածքին նայեցաւ, և ահա Տէրոջը պատուիրածին պէս ըրին զայն. այնպէս ըրին. և Մովսէս օրհնեց զանոնք։

Գլ. Խ

1. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Առաջին ամսուն առաջին օրը կանգնես խորանը, այսինքն ժողովքի վրանը։ 3—Ու անոր մէջ դնես վկայութեան տապանակը, ու վարագուրովը ծածկես տապանակը։ 4—Ու սեղանը ներս բերես, ու անոր վրայ շարուելիքը շարես և աշտանակը ներս բերես, ու անոր ճրագները վառես։ 5—Ու վկայութեան տապանակին առջեւ դնես խունկին ոսկի սեղանը, ու խորանին դրանը վարագոյրը դնես։ 6—Ու խորանին, այսինքն ժողովքի վրանին, դրանը առջեւ ողջակէզի սեղանը դնես։ 7—Ու ժողովքի վրանին ու սեղանին միջեւ ջուր դնես ու ապաւեր, ու անոր մէջ ջուր դնես։ 8—Ու շրջանակի սրահը կանգնես, ու սրահին դրանը վարագոյրը դնես։ 9—Ու օծման իւղը առնես, ու խորանը և անոր մէջ եղած ամէն բաները օծես, և զանիկա ու անոր ամէն անօթները սրբես, որպէս զի սուրբ ըլլան։ 10—Ու ողջակէզի սեղանը ու անոր բոլոր գործիքները օծես, ու սեղանը սրբես, և սեղանը *ամենասուրբ պիտի ըլլայ։ 11—Ու աւազանը ու անոր խարիսխը օծես, ու սրբես զանիկա։ 12—Ու Ահարոնը ու անոր որդիները ժողովքի խորանին դրանը մօտեցնես, ու զանոնք ջրով լուսես։ 13—Ու Ահարոնի հագցնես սուրբ զգեստները, ու օծես զանիկա, և սրբես զանիկա, որպէս զի ինծի քահանայութիւն ընէ։ 14—Ու անոր որդիներն ալ մօտեցնես, ու անոնց շապիկներ հագցնես։ 15—Ու անոնց հայրը օծածի պէս օծես զանոնք, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն. և անոնց օծումը իրենց ազգերուն մէջ յաւիտենական քահանայութեան համար պիտի ըլլայ։

16—Ու Մովսէս Տէրոջը իրեն բոլոր պատուիրածին պէս ըրաւ. այնպէս ըրաւ։ 17—Ու եղաւ որ երկրորդ տարին, առաջին ամսուն առաջին օրը, խորանը կանգնեցաւ։ 18—Ու Մովսէս կանգնեց խորանը, ու անոր խարիսխները դրաւ, և անոր տախտակները կանգնեց, ու անոր նիգերը անցուց, ու սիւները կանգնեց։ 19—Ու խորանին վրայ տարածեց վրանը, ու վերէն վրանին ծածկոցը անոր վրայ գրաւ

*Եբր. սրբութիւն սրբութեանց

3—Ու անոր մէջ դնես վկայութեան տապանակը, ու վարագուրովը ծածկես տապանակը։ 4—Ու սեղանը ներս բերես, ու անոր վրայ շարուելիքը շարես և աշտանակը ներս բերես, ու անոր ճրագները վառես։ 5—Ու վկայութեան տապանակին առջեւ դնես խունկին ոսկի սեղանը, ու խորանին դրանը վարագոյրը դնես։ 6—Ու խորանին, այսինքն ժողովքի վրանին, դրանը առջեւ ողջակէզի սեղանը դնես։ 7—Ու ժողովքի վրանին ու սեղանին միջեւ ջուր դնես ու ապաւեր, ու անոր մէջ ջուր դնես։ 8—Ու շրջանակի սրահը կանգնես, ու սրահին դրանը վարագոյրը դնես։ 9—Ու օծման իւղը առնես, ու խորանը և անոր մէջ եղած ամէն բաները օծես, և զանիկա ու անոր ամէն անօթները սրբես, որպէս զի սուրբ ըլլան։ 10—Ու ողջակէզի սեղանը ու անոր բոլոր գործիքները օծես, ու սեղանը սրբես, և սեղանը *ամենասուրբ պիտի ըլլայ։ 11—Ու աւազանը ու անոր խարիսխը օծես, ու սրբես զանիկա։ 12—Ու Ահարոնը ու անոր որդիները ժողովքի խորանին դրանը մօտեցնես, ու զանոնք ջրով լուսես։ 13—Ու Ահարոնի հագցնես սուրբ զգեստները, ու օծես զանիկա, և սրբես զանիկա, որպէս զի ինծի քահանայութիւն ընէ։ 14—Ու անոր որդիներն ալ մօտեցնես, ու անոնց շապիկներ հագցնես։ 15—Ու անոնց հայրը օծածի պէս օծես զանոնք, որպէս զի ինծի քահանայութիւն ընեն. և անոնց օծումը իրենց ազգերուն մէջ յաւիտենական քահանայութեան համար պիտի ըլլայ։

16—Ու Մովսէս Տէրոջը իրեն բոլոր պատուիրածին պէս ըրաւ. այնպէս ըրաւ։ 17—Ու եղաւ որ երկրորդ տարին, առաջին ամսուն առաջին օրը, խորանը կանգնեցաւ։ 18—Ու Մովսէս կանգնեց խորանը, ու անոր խարիսխները դրաւ, և անոր տախտակները կանգնեց, ու անոր նիգերը անցուց, ու սիւները կանգնեց։ 19—Ու խորանին վրայ տարածեց վրանը, ու վերէն վրանին ծածկոցը անոր վրայ գրաւ

*Եբր. սրբութիւն սրբութեանց

ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 20—Եւ վկայութիւնը առաւ ու առաջանակին մէջ դրաւ. և ձողերը առաջանակին վրայ անցուց, ու վերէն առաջանակին վրայ քաւութիւնը դրաւ։ 21—Եւ առաջանակը խորանին մէջ բերաւ, ու ծածկող վարագոյրը դրաւ, և վկայութեան առաջանակը ծածկեց, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 22—Եւ ժողովքի վրանին մէջ, խորանին հիւսիսային կողմը, վարագոյրին դուրսիդին դրաւ սեղանը։ 23—Ու անոր վրայ շարուելու հացերը չարեց Տէրոջը առջեւ, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 24—Ու ժողովքի վրանին մէջ, սեղանին դիմաց, խորանին հարաւային կողմը դրաւ աշտանակը։ 25—Ու Տէրոջը առջեւ ճրագները վառեց, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 26—Ու ժողովքի վրանին մէջ վարագոյրին առջեւ դրաւ ոսկի սեղանը։ 27—Ու անոր վրայ անուշահոտ խունկ ծխեց, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 28—Ու խորանին դռանը վարագոյրը դրաւ։ 29—Ու խորանին, այսինքն ժողովքի վրանին, դռանը քով ողջակէզին սեղանը դրաւ. ու անոր վրայ ողջակէզը ու հացի ընծան մատուց, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 30—Ու ժողովքի վրանին ու սեղանին մէջտեղ ջուր ածաղանը, և անոր մէջ լուացուելու համար ջուր դրաւ։ 31—Ու Մովսէս ու Ահարոն և անոր որդիները իրենց ձեռքերը ու ոտքերը անկէ կը լուային։ 32—Ժողովքի վրանը մտած ատեններին, և սեղանին մօտենալու ատեններին կը լուացուէին, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 33—Ու խորանին ու սեղանին բոլորտիքը սպար կանգնեց. և պարսին դռանը վարագոյրը դրաւ։ Այսպէս Մովսէս գործը լմնցուց։

34—Ու ամպ մը ծածկեց ժողովքի վրանը, և Տէրոջը փառքը լեցուց խորանը։ 35—Ու Մովսէս չկրնար մտնել ժողովքի վրանը, վասն զի ամպը անոր վրայ կը կենար, ու Տէրոջը փառքը լեցուցեր կը խորանը։ 36—Ու իսրայէլի որդիները իրենց բոլոր ճամբորդութիւններուն մէջ՝ երբ ամպը խորանին վրայէն վերնար, չէին ուժեն կը չուէին։ 37—Ու եթէ ամպը չվերնար, մինչև անոր վերնալու օրը չէին չուեր։ 38—Քանզի ցորեկը Տէրոջը ամպը խորանին վրայ էր, և գիշերը անոր վրայ կրակ կար, իսրայէլի բոլոր *ժողովրդին առջեւ՝ իրենց ամէն ճամբորդութիւններուն մէջ։

---

*Եբր. տանը

ԳԻՐՔ ՂԵՒՏԱՑԻՈՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Տէրը կանչեց Մովսէսը, ու ժողովքի խորանէն խօսեցաւ անոր՝ ըսելով, 2—Խօսէ իսրայէլի որդիներուն ու բսէ անոնց, Եթէ ձեզմէ մէկը անասուններէն ընծայ մատուցանելու բլլայ Տէրոջը, ձեր ընծան արջառներէն կամ հօտերէն պիտի մատուցանէք։

3—Եթէ անոր ընծան արջառներէն ողջակէզ է, արու անարատ պիտի մատուցանէ. ու ժողովքի խորանին դռանը քով պիտի մատուցանէ զայն, Տէրոջը առջեւ ընդունելի բլլալու համար։ 4—Ու իր ձեռքը ողջակէզին գլխուն վրայ պիտի դնէ, ու այն իրեն քաւութիւն բլլալու համար ընդունելի պիտի բլլայ։ 5—Ու զառաքը պիտի մորթէ Տէրոջը առջեւ. ու Ահարոնի որդիները, քահանաները, արիւնը պիտի մատուցանեն, և ժողովքի խորանին դռանը քով եղած սեղանին վրայ չուրջանակի պիտի սրսկեն արիւնը։ 6—Ու ողջակէզին մորթը պիտի հանէ, ու կտոր կտոր պիտի ընէ։ 7—Ու Ահարոն քահանային որդիները սեղանին վրայ կրակ պիտի դնեն, ու կրակին վրայ փայտեր շարեն. 8—Ու Ահարոնի որդիները, քահանաները, սեղանը եղած կրակին վրայի փայտերուն վրայ պիտի շարեն կտորները, գլուխը ու ճարպը։ 9—Բայց անոր փորոտիքը ու ոտքերը ջրով պիտի լուայ, և քահանան պիտի այրէ ամէնը սեղանին վրայ, ողջակէզ ու Տէրոջը անուշահոտ պատարագ բլլալու համար։

10—Եւ եթէ անոր ողջակէզի ընծան հօտերէն, այսինքն ոչխարներէն կամ այծերէն է, արու անարատ պիտի մատուցանէ։ 11—Ու պիտի մորթէ զանիկա Տէրոջը առջեւ սեղանին հիւսիսային կողմը. ու Ահարոնի որդիները, քահանաները, սեղանին վրայ չուրջանակի պիտի սրսկեն անոր արիւնը։ 12—Ու կտոր կտոր պիտի ընէ զայն գլխովը ու ճարպովը. և քահանան սեղանը եղած կրակին վրայի փայտերուն վրայ պիտի շարէ զանոնք։ 13—Ու փորոտիքը ու ոտքերը ջրով պիտի լուայ. ու քահանան ամէնը պիտի բերէ ու սեղանին վրայ այրէ. ասիկա ողջակէզ ու անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը։

14—Ու եթէ ողջակէզի համար Տէրոջը մատուցանելիք ընծան թռչուններէն է, այն ատեն անիկա իր ընծան առաջանիներէն կամ ազաւնիի ձագերէն պիտի մատուցանէ։ 15—Ու քահանան սեղանին մօտ բերէ զայն ու անոր գլուխը փրցնէ, և սեղանին վրայ պիտի այրէ, ու անոր արիւնը սեղանին հէն քովը քամէ։ 16—Ու անոր կռնատաքը ու աղբը պիտի պատէ, և սեղանին արեւելեան կողմը եղած մոխրատեղը նետէ։ 17—Ու զանիկա թեւերէն պիտի պատռէ առանց պառելու. ու քահանան պիտի այրէ զանիկա սեղանին վրայ, կրակին վրայի փայտերուն վրայ. ասիկա ողջակէզ ու անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը։

ԳԼ. Բ

Ու երբ մէկը հացի ընծայ մատուցանելու բլլայ Տէրոջը, անոր ընծան բարակ ալիւրէ պիտի բլլայ. ու անոր վրայ իւղ պիտի թափէ, և կնդրուկ դնէ վրան. 2—Ու Ահարոնի որդիներուն, քահանաներուն, պիտի բերէ զայն. ու քահանան անկէ իր ձեռքը լեցուն անոր բարակ ալիւրէն ու իւղէն պիտի առնէ բոլոր կնդրուկին հետ միասին, և քահանան յիշատակի համար սեղանին վրայ այրէ՝ Տէրոջը անուշահոտ պատարագ բլլալու համար։ 3—Ու հացի ընծային մնացածը Ահարոնի ու անոր որդիներուն պիտի բլլայ. սուրբ ամենասուրբ պատարագ մըն է Տէրոջը։

4—Ու եթէ թոնիրի մէջ եփած հացի ընծայ մատուցանելու բլլաս, բարակ

ալիւրէ խզով չաղուած անխմոր չօթոր կամ խզով օծուած անխմոր լաւաշներ պիտի բլլայ։

5—Ու եթէ քու ընծադ ասպակի վրայ եփած հացի ընծայ է, բարակ ալիւրէ խզով չաղուած անխմոր պիտի բլլայ։ 6—Կտոր կտոր պիտի կտրանս զայն, ու վրան իւղ թափես. ասիկա հացի ընծայ է։

7—Ու եթէ քու ընծադ սաճի վրայ եփած հացի ընծայ է, բարակ ալիւրէ խզով պիտի չլինի։ 8—Ու ասոնցմէ չինուած հացի ընծան Տէրոջը պիտի բերես, ու քահանային ներկայացնես, և ինք սեղանին մօտեցնէ զայն։ 9—Ու քահանան ընծայէն անոր յիշատակը պիտի առնէ, ու սեղանին վրայ այրէ՝ Տէրոջը անուշահոտ պատարագ բլլալու։ 10—Ու ընծայէն մնացածը Ահարոնի ու անոր որդիներուն պիտի բլլայ. ասիկա ամենասուրբ պատարագ մըն է Տէրոջմէ։

11—Հացի ընծան զոր կը բերէք Տէրոջը պիտի մնասցանէք, քանի խմորեալ պիտի չչինուի. վասն զի պատարագի համար ամէնեւին խմոր կամ մեղր պիտի չկրնէք Տէրոջը։ 12—Առնէք երկն երախայրի պատուական ընծայ մնասցանէք Տէրոջը. բայց սեղանին վրայ պիտի չմրսուին անուշահոտութեան համար։ 13—Ու քու ամէն հացի ընծայիդ աղ պիտի դնես, ու քու հացի ընծայէդ քու Աստուծոյդ ուխտին աղը պակսած չլինիր. քու ամէն ընծայիդ աղ ալ մատուցանես։

14—Ու եթէ առաջին պտուղներուն ընծան մատուցանես բլլաս Տէրոջը, առաջին պտուղներուն ընծային համար՝ կրակով բոխրած թարմ հասկերէն ծեծուած ցորեն մատուցանես. 15—Ու անոր վրայ իւղ պիտի թափես, ու խնկեղէն դնես վրան. ասիկա հացի ընծայ է։ 16—Ու քահանան անոր ծեծուած ցորենէն ու անոր իւղէն, անոր բոլոր խնկեղէնովը անոր յիշատակը պիտի այրէ, Տէրոջը պատարագ բլլալու համար։

Գլ. Գ

Ե. Եթէ անոր ընծան խաղաղութեան զոհ է, երը արջառներէն կը մատուցանէ, թէ՛ արու բլլայ և թէ՛ էգ, Տէրոջը առջև անարատ պիտի մատուցանէ զայն։ 2—Ու իր ձեռքը իր ընծայած ա-ր-ջ-ո-ւ-ն գլխուն վրայ պիտի դնէ, ու Ժողովքի խորանին դուռը մորթէ զայն. և Ահարոնի որդիները, քահանաները, սեղանին վրայ չուրջանակի պիտի արկղն արիւնը։ 3—Ու խաղաղութեան զոհէն պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը՝ այսինքն փառաիքը ծածկող ճարպը ու փորաիքին վրայ եղած բոլոր ճարպը։ 4—Ու երկու երիկամունքը ու կռնչին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լիարդին թաղանթը երիկամունքներով միասին պիտի փրցնէ։ 5—Ու Ահարոնի որդիները սեղանին վրայ եղած կրակին վրայի փայտերուն վրայ ողջակէզին հետ պիտի այրեն զայն, Տէրոջը անուշահոտ պատարագ բլլալու համար։

6—Ու եթէ խաղաղութեան զոհի համար Տէրոջը *ա-ր-ջ-ա-ռ-ն-է-ս ընծան հասաբերէ, թէ՛ արու բլլայ և թէ՛ էգ, անարատ պիտի մատուցանէ զայն։ 7—Եթէ անիկա իր ընծային համար գառ մատուցանէ, Տէրոջը առջև պիտի բերէ զայն, 8—Ու ձեռքը իր ընծային գլխուն վրայ պիտի դնէ, ու Ժողովքի խորանին առջև մորթէ զայն. և Ահարոնի որդիները սեղանին վրայ չուրջանակի պիտի արկղն արիւնը։ 9—Ու խաղաղութեան զոհէն պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը, այսինքն անոր ճարպը ու բոլոր դմակը †ասկէն փրցնելով, և փառաիքը ծածկող ճարպը ու փորաիքին վրայ եղած բոլոր ճարպը, 10—Ու երկու երիկամունքը ու կռնչին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լիարդին թաղանթը երիկամունքներով միասին պիտի փրցնէ։ 11—Ու քահանան սեղանին վրայ պիտի այրէ առնչ՝ Տէրոջը †պատարագ բլլալու համար։

12—Ու եթէ անոր ընծան այծ է,

*ՆԷՔ. ոզնայարէն
†ՆԷՔ. պատարագի հաց

Տէրոջը առջև պիտի բերէ զայն. 13—Ու իր ձեռքը անոր գլխուն վրայ պիտի դնէ, ու Ժողովքի խորանին առջև մորթէ զայն. և Ահարոնի որդիները սեղանին վրայ չուրջանակի պիտի արկղն անոր արիւնը։ 14—Ու անկէ իր ընծային պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը, այսինքն փառաիքը ծածկող ճարպը ու փորաիքին վրայ եղած բոլոր ճարպը, 15—Ու երկու երիկամունքը ու կռնչին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լիարդին թաղանթը երիկամունքներով միասին պիտի փրցնէ։ 16—Ու քահանան սեղանին վրայ պիտի այրէ զանոնք, անուշահոտ պատարագ բլլալու համար. ամէն ճարպը Տէրոջն է։ 17—Ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակութեանցերուն մէջ յաւիտենական կանոն բլլայ, որ ոչ ճարպ ուտէք՝ ոչ ալ արիւն։

Գլ. Դ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Եթէ անձ մը սխալմամբ մեղանչէ, ու Տէրոջը բոլոր արգիլած բաներէն մէկը բնէ, 3—Եթէ օծուած քահանան ժողովուրդը յանցաւոր ընելու մեղք մը գործելու բլլայ, իր գործած մեղքին համար արջառներէն անարատ զուարակ մը մեղքի պատարագ մատուցանէ Տէրոջը։ 4—Ու Ժողովքի խորանին դուռը՝ Տէրոջը առջև պիտի բերէ զուարակը, ու իր ձեռքը զուարակին գլխուն վրայ դնէ, և Տէրոջը առջև մորթէ զուարակը։ 5—Ու օծուած քահանան զուարակին արիւնէն պիտի առնէ ու Ժողովքի խորանը բերէ, 6—Ու քահանան իր մատը արիւնը պիտի թաթխէ, ու Տէրոջը առջև, որբարանին վարագոյրին առջև եօթը անգամ արկղ արիւնէն։ 7—Ու քահանան արիւնէն †իւղ պիտի դնէ Տէրոջը առջև անուշահոտ խունկի սեղանին եղջիւրներուն վրայ, որ Ժողովքի խորանին մէջ է. ու զուարակին ՚ա-ց-ք բոլոր արիւնը Ժողովքի խորանին դրանը քով եղած ողջակէզի սեղանին յատակը թափէ։ 8—Ու մեղքի պատարագ եղած զուարակին բոլոր ճարպը, այսինքն փառաիքը ծածկող ճարպը, ու փորաիքին վրայ եղած բոլոր ճարպը անկէ պիտի վերցնէ։ 9—Ու երկու երիկամունքը ու կռնչին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լիարդին թաղանթը երիկամունքներովը միասին պիտի փրցնէ, 10—Ինչպէս որ փրցուելուն պէս և քահանան ողջակէզի սեղանին վրայ պիտի այրէ զանոնք։ 11—Ու զուարակին մարմինը ու անոր բոլոր միսը գլխովը ու ոտքերովը, և անոր փորաիքը ու պղերը, 12—Ամբողջ բոլոր զուարակը, բանակին դուրսիդին մաքուր տեղ մը, մոխիր թափած տեղը, պիտի հանէ, և փայտերու վրայ կրակով այրէ զայն. մոխիր թափած տեղը այրուի։

13—Ու եթէ Իսրայէլի բոլոր ժողովքը *անդիտաբար սխալին, ու Տէրոջը բոլոր արգիլած բաներէն մէկը ընելով յանցաւոր բլլան, 14—երբ իմացուի այն բուած մեղքերնին, ժողովքը մեղքի պատարագի համար արջառներէն զուարակ մը պիտի մատուցանէ. ու Ժողովքի խորանին առջև բերէ զանիկա։ 15—Ու Ժողովքին ծերերը իրենց ձեռքերը զուարակին գլխուն վրայ պիտի դնեն Տէրոջը առջև, ու զուարակը Տէրոջը առջև պիտի մորթուի։ 16—Ու օծուած քահանան զուարակին արիւնէն Ժողովքի խորանը պիտի բերէ։ 17—Ու քահանան իր մատը արիւնը պիտի թաթխէ, ու Տէրոջը առջև վարագոյրին առջև եօթը անգամ արկէ։ 18—Ու արիւնէն †իւղ մը Ժողովքի խորանին մէջ Տէրոջը առջև եղած սեղանին եղջիւրներուն վրայ պիտի դնէ. ու ՚ա-ց-ք բոլոր արիւնը Ժողովքի խորանին դրանը քով եղած ողջակէզի սեղանին յատակը թափէ։ 19—Ու անոր բոլոր ճարպը պիտի վերցնէ անկէ, ու սեղանին վրայ այրէ։ 20—Ու մեղքի պատարագ եղած զուարակին ինչպես որաւ, այս զուարակին ալ այնպէս պիտի ընէ. ու քահանան անոնց համար քաւութիւն ընէ, ու անոնց Թողութիւն բլլայ։ 21—Ու բանակէն

*ՆԷՔ. սխալի, ու Ժողովքին աչքէն գաղտուկ պահուի բանը

գալս պիտի հանել զանարակը, ու ինչպէս առաջին զանարակը այրել՝ զայս ալ այնպէս պիտի այրէ. Ժողովքին համար մեղքի պատարագ մըն է այս։

22—Երբ Իշխան մը մեղք գործելու ըլլայ, ու իր Տէր Աստուծոյն սրգիլած բաներէն մէկը մեծամտութեամբ ընելով յանցաւոր ըլլայ, 23—եթէ իր ըրած մեղքը իրեն ծանուցուի, իրեն համար այծեամն արու անարատ նախատ մը բնծայ պիտի բերէ. 24—ու իր ձեռքը նախատին գլխուն վրայ պիտի դնէ, ու զանիկա Տէրոջը առջեւ ողջակէզին մորթուելու տեղը մորթէ. մեղքի պատարագ մըն է այս. 25—ու քահանան մեղքի պատարագին արիւնէն իր մատը պիտի առնէ, ու ողջակէզի սեղանին եղջիւրներուն վրայ պիտի դնէ, և անոր ճաշակ արիւնը ողջակէզի սեղանին յատակը թափէ. 26—ու անոր բոլոր ճարպը խաղաղութեան զոհին ճարպին պէս սեղանին վրայ պիտի այրէ. ու քահանան անոր մեղքին համար քաւութիւն ընէ, և թողութիւն ըլլայ անոր։

27—Ու եթէ երկրին ժողովուրդէն մէկը մեծամտութեամբ մեղանչէ, ու Տէրոջը սրգիլած բաներէն մէկը ընելով յանցաւոր ըլլայ, 28—եթէ իր ըրած մեղքը իրեն ծանուցուի, իր ըրած մեղքին համար իր ընծան այծէրկեն անարատ էգ այծ մը պիտի բերէ. 29—ու իր ձեռքը մեղքի պատարագին գլխուն վրայ պիտի դնէ, ու մեղքի պատարագ եղած ՀՕՀաՀՐը ողջակէզներուն ՀրէՒԱՐԵՐ տեղը մորթէ. 30—ու քահանան իր մատովը անոր արիւնէն պիտի առնէ, ու ողջակէզի սեղանին եղջիւրներուն վրայ դնէ, և ճաշակ բոլոր արիւնը սեղանին յատակը թափէ. 31—ու անոր բոլոր ճարպը խաղաղութեան զոհին ճարպի պէս պիտի վրցուի. ու քահանան պիտի այրէ զանիկա սեղանին վրայ անոյշ հոտի համար Տէրոջը առջեւ. և քահանան անոր համար քաւութիւն ընէ, ու անոր թողութիւն պիտի ըլլայ։

32—Ու եթէ մեղքի պատարագի համար գառ մատուցանելու ըլլայ, անարատ էգ մը պիտի բերէ. 33—ու իր ձեռքը մեղքի պատարագին գլխուն վրայ պիտի դնէ, ու ողջակէզներուն մորթուելու տեղը մեղքի պատարագ մորթէ զայն. 34—ու քահանան իր մատովը մեղքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու ողջակէզի սեղանին եղջիւրներուն վրայ դնէ, և ճաշակ բոլոր արիւնը սեղանին յատակը թափէ. 35—ու խաղաղութեան զոհէն գառին ճարպը վրցուելուն պէս՝ ասոր բոլոր ճարպը պիտի վրցնէ. ու քահանան սեղանին վրայ պիտի այրէ զայն՝ Տէրոջը պատարագներուն հետ, և քահանան անոր ըրած մեղքին համար քաւութիւն ընէ, ու թողութիւն ըլլայ անոր։

Գլ. Ե

Ու եթէ անձ մը մեղանչէ, ու երդումի ձայնը լսելով՝ վկայ ըլլայ, կամ բառը անած ըլլայ կամ գիտցած, եթէ չիմացնէ, իր յանցանքը պիտի կրէ. 2—կամ անձ մը անմաքուր բանի մը կամ անմաքուր գազանի մը դիին կամ անմաքուր անասնի մը դիին կամ անմաքուր սողնի մը դիին դպչելու ըլլայ, թէպէտև չգիտնալով, անիկա անմաքուր ու յանցաւոր ելլէ եղէ. 3—կամ մարդու անմաքրութեան, որեւիցէ պիղծ բնով անմաքրութեան, դպչելու ըլլայ չգիտնալով, ինք զայն գիտցած առեն յանցաւոր պիտի ըլլայ. 4—կամ անձ մը չարիք կամ բարիք ընելու համար բերնովը անխորհրդածաբար երդում ընելով երդում ընելու ըլլայ, (ինչպէս մարդիկ երդումով անխորհրդածաբար կը զրուցեն,) եթէ չգիտնալով ըլլայ, ինք զայն գիտցած առեն ասոնց մէկուն մէջ յանցաւոր պիտի ըլլայ. 5—ու եթէ այս բաներէն մէկուն մէջ յանցաւոր ըլլայ, անոր համար իր մեղք գործելը խոստովանի. 6—ու իր ըրած մեղքին համար իր յանցանքին պատարագը, ոճաբերէն էգ մը, այսինքն էգ գառնուկ մը, կամ այծէրկեն էգ ուլ մը, մեղքի պատարագի համար պիտի բերէ Տէրոջը. ու քահանան քաւութիւն ընէ անոր իր մեղքին համար։

7—Ու եթէ ոչխար կամ այծ բերելու կարող չըլլայ, իր ըրած յանցանքին համար երկու տատրակ կամ աղաւնիի երկու ձագեր պիտի բերէ Տէրոջը, մէկը մեղքի պատարագ, և միւսը ողջակէզ ըլլալու համար. 8—ու քահանային պիտի բերէ զանոնք, ու առիկա նախ պիտի մատուցանէ մէկը՝ որ մեղքի պատարագ է, և անոր գլուխը իր վիզէն չկտաւելով փրցնէ. 9—ու մեղքի պատարագին արիւնէն սեղանին դէմ փռելը պիտի արուի, ու մնացած արիւնը սեղանին յատակը պիտի քամուի. մեղքի պատարագ է. 10—ու միսը քան օրինի ողջակէզ պիտի ընէ. ու քահանան անոր քաւութիւն ընէ իր ըրած մեղքին համար, և անոր թողութիւն ընէ, ու թողութիւն ըլլայ անոր։

11—Ու եթէ երկու տատրակ կամ աղաւնիի երկու ձագեր բերելու կարող չըլլայ, այն առեն մեղք գործած իր բնծային համար արդար մը տասներորդ մասը բարակ ալիւր պիտի բերէ մեղքի պատարագի համար. ոչ անոր վրայ իւղ պիտի դնէ, ոչ ալ վրան կնդրուկ դնէ. վասն զի մեղքի պատարագ է այն. 12—ու քահանային պիտի բերէ զայն, ու քահանան անկէ իր ձեռքը լեցուն անոր յիշատակին համար առնէ, ու սեղանին վրայ այրէ Տէրոջը պատարագներուն հետ. մեղքի պատարագ է այն. 13—ու քահանան քաւութիւն պիտի ընէ անոր՝ այս բաներուն մէկուն մէջ ըրած մեղքին համար, ու անոր թողութիւն ըլլայ. և ճաշակը հացի ընծայի պէս քահանային պիտի ըլլայ։

14—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 15—եթէ անձ մը յանցանք մը բնէ ու սխալմամբ Տէրոջը սուրբ բաներէն մէջ մեղք գործէ, իր յանցանքի պատարագին համար սրբարանին սիկղին համեմատ՝ քա. արժեցուցած դիզուած սիկղի արժաթով հօտերէն անարատ խոյ մը պիտի բերէ Տէրոջը։ 16—ու սուրբ բաներուն մէջ իր ըրած վնասը պիտի հատուցանէ, ու անոր վրայ հինգերորդ մաս մըն ալ ուելցնէ, և քահանային տայ զայն. ու քահանան յանցանքի պատարագի խոյովը քաւութիւն ընէ անոր, և թողութիւն ըլլայ անոր։

17—Ու եթէ անձ մը մեղանչէ, ու Տէրոջը բոլոր արգիլած բաներէն մէկը ընէ, թէև անգիտութեամբ, անիկա յանցաւոր է, ու իր անօրէնութիւնը պիտի կրէ. 18—ու քա. արժեցուցած

ծէզ պէս՝ յանցանքի պատարագի համար հօտերէն անարատ խոյ մը պիտի բերէ քահանային. ու քահանան անոր համար քաւութիւն պիտի ընէ՝ անոր գաղտնիութեամբ սխալելուն համար, և անոր թողութիւն պիտի ըլլայ։ 19—Անիկա յանցանքի պատարագ է. անիկա անշուշտ յանցաւոր եղած է Տէրոջը առջեւ։

Գլ. Զ

Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Եթէ անձ մը մեղանչէ, ու Տէրոջը դէմ յանցանք մը ընէ, և իր գրացիին տառապանքն ուրանայ, կամ իր ձեռքը յանձնուած բանի մը համար, կամ գողութեամբ բանի մը համար, կամ իր գրացիին խաղ-աղաքութիւն ընելու ըլլայ. 3—կամ կորսուած բան մը գտնէ, և ուրանալով սուտ ուղ երդումի ընէ, բոլոր այս բաներէն մէկուն մէջ զոր մարդ կրնայ ընել, մեղանչելու ըլլայ. 4—Այն առեն մեղք գործելուն ու յանցաւոր ըլլալուն համար, բռնութեամբ յափշտակած բանը, կամ խաղաղութեամբ առած բանը, կամ իրեն յանձնուած ապանդը, կամ գտած կորսուած նմա պիտի տայ, 5—կամ ամէն բան, որուն համար սուտ ուղ երդումի ըրած է, անիկա լման պիտի հատուցանէ, ու անոր վրայ հինգերորդ մաս մը ուելցնէ, և իր յանցանքի պատարագին օրը, որու որ կը վերաբերէր, անոր պիտի տայ. 6—Ու իր յանցանքի պատարագը Տէրոջը պիտի բերէ, այսինքն հօտերէն անարատ խոյ մը, քա. արժեցուցածիդ համեմատ, քահանային ոչխէ ԲՒԸԷ յանցանքի պատարագի համար. 7—Ու քահանան անոր համար քաւութիւն պիտի ընէ Տէրոջը առջեւ. և ինչ բանի համար որ յանցանք րրած է, թողութիւն պիտի ըլլայ անոր։

8—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 9—Պատուիրէ Ահարոնի ու անոր որդիներուն և ըսէ, Ողջակէզին օրէնքը այս է. ողջակէզը բոլոր գիշերը մինչեւ առաւօտ սեղանը եղած կրակին վրայ պիտի ըլլայ, ու սեղանին կրակը ԳԼՈՒ անոր մէջ վառած պիտի մնայ։ 10—

ու փառնան իր փիանէ պատմուճանը պիտի հագնի, ու չէ փիանէ վարսիքը մազմնին վայրն հագնի, և կրակով այրուած ոզնակին մնացորդը սեզանին վրայէն պիտի վերցնէ, ու սեզանին քով դնէ։ 11—Ու իր զգեստները պիտի հանէ, և ուրիշ զգեստներ հագնի ու մնացորդը բանակէն դուրս մաքուր տեղ մը պիտի հանէ։ 12—Ու սեզանին վրայի կրակը անոր մէջ հնար վառած պիտի ըլլայ — պիտի չմարի։ և քահանան ամէն առաւօտ անոր վրայ փայտեր այրէ, ու անոր վրայ ոզնակը չարէ, և անոր վրայ խաղաղութեան զոհերուն ճարպը պիտի այրէ։ 13—Կրակը սեզանին վրայ միշտ վառած պիտի ըլլայ — պիտի չմարի։

14—Ու հացի ընծային օրէնքը այս է։ Ահարոնի որդիները պիտի մատուցանեն զանիկա Տէրոջը առջեւ՝ սեզանին առջեւ։ 15—Ու իր ձեռքը լեցուն անկէ, այսինքն հացի ընծային բարակ ալիւրէն, ու անոր իւղէն, և հացի ընծային վրայ եղած բոլոր կնդրուկը պիտի վերցնէ, և անոր յիշատակը սեզանին վրայ անոյշ հոտի համար այրէ Տէրոջը։ 16—Ու անկէ մնացածը Ահարոն ու անոր որդիները պիտի ուտեն. անխմոր հացկեր չնուէլ՝ սուրբ տեղը պիտի ուտուի այն. ժողովքի խորանին սրահին մէջ ուտեն զայն։ 17—Խմորով պիտի չթխուի. իմ պատարագներէս անոնց տուի զայն իրենց բաժին ըլլալու. ասիկա մեղքի ու յանցանքի պատարագներու պէս ամենասուրբ է։ 18—Ահարոնի որդիներուն բոլոր արուները պիտի ուտեն զայն. Տէրոջը պատարագներէն ձեր սերունդին մէջ յաւիտենական կանոն ըլլայ այս. ամէն անոնց դպողը սուրբ ըլլայ։

19—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 20—Ահարոնի ու անոր որդիներուն օծուելու օրը Տէրոջը մատուցանելու զոհերնին այս է. արդուին տասնորդաց մասը բարակ ալիւր ամէն օր հացի ընծայի համար, կէսը՝ առաւօտուն ու կէսը երեկոներ։ 21—Տապակի մէջ էֆէլհամարով իւղով պիտի չինուի. *բազմադրեալ պիտի բերես զայն, և հացի ընծային եփած կտորաձեւքը անոյշ հոտի համար Տէրոջը պիտի մատուցանես։ 22—Ու իր որդիներէն իր տեղը օծուելու փառնան պիտի մատուցանէ զայն. սահման Տէրոջը յաւիտենական կանոն ըլլալով՝ բոլորովին պիտի այրուի։ 23—Ու փառնային ամէն հացի ընծան բոլորովին պիտի այրուի, պիտի չուտուի։

24—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 25—Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն և բոլ, Մեղքի պատարագին օրէնքը այս է. Ողջակէզին մորթուած տեղը պիտի մորթի մեղքի պատարագը Տէրոջը առջեւ։ այս ամենասուրբ է։ 26—Մեղքի պատարագը մատուցանող փառնան պիտի ուտէ զայն. սուրբ տեղը, ժողովքի խորանին սրահը, պիտի ուտուի։ 27—Ինչ որ անոր միսին դպչի՝ սուրբ պիտի ըլլայ. և եթէ անոր արիւնէն հանդերձի մը վրայ ցաթքէ, սուրբ տեղը պիտի լուա զայն՝ որուն վրայ ցաթքեր էր։ 28—Ու հողէ անօթը որուն մէջ եռացուցած է այդ, պիտի կոտրուի. ու եթէ պղնձէ անօթի մէջ եռացուցած ըլլայ, պիտի չփայի ու ջրով լուացուի։ 29—Փառնաներուն բոլոր արուները պիտի ուտեն զանիկա. այս ամենասուրբ է։ 30—Ու ամէն մեղքի պատարագ՝ որուն արիւնէն ժողովքի խորանը կը բերուի սուրբ տեղին մէջ փառաբանելու համար, պիտի չուտուի, կրակով պիտի այրուի։

Գլ. Ե

Ու յանցանքի պատարագին օրէնքը այս է. այս ամենասուրբ է։ 2—Ողջակէզը մորթած տեղերնին յանցանքի պատարագը պիտի մորթեն, և անոր արիւնը սեզանին վրայ չորքանկի պիտի սրսկէ։ 3—Ու անկէ բոլոր ճարպը, այսինքն գլանը ու փորաբերը ծածկող ճարպը, պիտի մատուցանէ։ 4—Ու երկու երիկամներն ու կռնչին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին վրայի թաղանթը երիկամներով միասին պիտի փրցնէ։ 5—Ու փառնան անոնք սեզանին վրայ պիտի այրէ ասոնք՝ Տէրոջը պատարագ ըլլալու. ասիկա

*Կամ, կտոր կտոր եղած

յանցանքի պատարագ է։ 6—Քահանաներուն ամէն արուն պիտի ուտի զայն. սուրբ տեղը պիտի ուտուի, ժողովքի խորանին սրահին մէջ պիտի ուտուի։ 7—Մեղքի պատարագը ինչպես որ կ'ըլլայ, յանցանքի պատարագն ալ այնպես ըլլայ. անոնց օրէնքը մէկ է. անոր քահանային պիտի ըլլայ այն։ 8—Ու քահանայ մը որ մէկուն ողջակէզը կը մատուցանէ, այն քահանան իր մատուցած ողջակէզին մորթը իրեն պիտի առնէ։ 9—Ու բոլոր թոնիրի մէջ եփուած՝ ու բոլոր տապակի վրայ չինուած հացի ընծան, զանիկա մատուցանող քահանային պիտի ըլլայ։ 10—Ու ամէն իւղով չզուած կամ *առանց իւղի՝ հացի ընծան Ահարոնի բոլոր որդիներուն պիտի ըլլայ. ամէն մէկուն բաժինը հաւասար պիտի ըլլայ։

11—Ու Տէրոջը մատուցանելու խաղաղութեան զոհին օրէնքը այս է։ 12—Եթէ շնորհակալութեան համար մատուցանէ զայն, այն առէն շնորհակալութեան զոհին հետ իւղով չզուած անխմոր չօթեր ու իւղով օծուած անխմոր լաւաշներ և բարակ ալիւրէ իւղով չզուած բազադրեալ չօթեր պիտի մատուցանէ։ 13—Շնորհակալութեան համար եղած իր խաղաղութեան զոհին չօթերէն զատ՝ խմորեալ հացէ ընծայ մը պիտի մատուցանէ։ 14—Ու անկէ, այսինքն ամէն ընծաներէն, մէկ հատ բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէ Տէրոջը. և ասիկա խաղաղութեան զոհին արիւնը սրսկող քահանային պիտի ըլլայ։ 15—Ու շնորհակալութեան համար՝ իր խաղաղութեան զոհին միսը մատուցուած օրը պիտի ուտուի. անկէ մինչև առաւօտ չմնայ։ 16—Ու եթէ իր ընծան ուխտի համար է կամ կամաւոր զոհ է, զոհը մատուցած օրը պիտի ուտուի, ու մնացածը հետեւեալ օրը պիտի ուտուի։ 17—Ու զոհին միսէն երրորդ օրուան մնացածը կրակով այրուի։ 18—Ու եթէ երրորդ օրը իր խաղաղութեան զոհին միսէն ուտուելու ըլլայ, ընդունելի պիտի չըլլայ, ոչ ալ անոր մատուցանողին նշոյ պիտի սեպուի. պղծութիւն պիտի ըլլայ, ու անկէ ուտող անձը իր անօրէնութիւնը պիտի կրէ։ 19—Ու ամէն պղծուած բանի դպած միսը պիտի չուտուի, կրակով պիտի այրուի. սակայն ամէն մաքուր եղողը պիտի ուտէ Տէրոջը զոհին միսէն։ 20—Բայց այն անձը՝ որ իր անմաքրութիւնը իր վրայ ունենալով, Տէրոջը խաղաղութեան զոհէն միս ուտէ, այն անձը իր ժողովրդէն պիտի կորսուի։ 21—Ու ամէն պղծուած բանի մը՝ թէ՛ մարդու անմաքրութեան, թէ՛ անմաքուր անասունի, և թէ՛ ամէն կերպ անմաքուր *պիղծ բանի՝ մը դպչող անձը եթէ Տէրոջը խաղաղութեան զոհին միսէն ուտելու ըլլայ, այն անձը իր ժողովրդէն պիտի կորսուի։

22—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 23—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Եզան ալիւրած կամ ոչխարի կամ այծի ճարպ չուտէք։ 24—Ու մեռած անասունին ճարպը ու գիշատածին ճարպը ամէն գործի մէջ պիտի գործածուի, բայց անկէ բնաւ պիտի չուտէք։ 25—Քանզի ով որ Տէրոջը պատարագ մատուցելու անասունին ճարպէն ուտէ, այն ուտող անձը իր ժողովրդէն պիտի կորսուի։ 26—Ու ձեր ամէն բնակարանները մէջ բնաւ արիւն պիտի չուտէք, թէ՛ թռչունի ըլլայ և թէ՛ անասունի։ 27—Ամէն անձ որ ինչ-ինչ արիւն ուտէ, այն անձը իր ժողովրդէն պիտի կորսուի։

28—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 29—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Իր խաղաղութեան զոհը Տէրոջը մատուցանողը իր խաղաղութեան զոհէն ընծայ պիտի բերէ Տէրոջը։ 30—Տէրոջը պատարագները իր ձեռքովը պիտի բերէ. երբուծով ճարպը պիտի բերէ, որպէս զի երբուծը երիցկնելու ընծայի համար երիցուի Տէրոջը առջեւ։ 31—Ու փառնան ճարպը պիտի այրէ սեզանին վրայ. բայց երբուծը Ահարոնի ու անոր որդիներուն

*Կամ, սպրանի

*Եբր. չոր

պիտի ըլլայ։ 32—եւ ձեր խաղաղութեան զոհերն ալ միսը քահանային պիտի տաք՝ բարձրացնելու ընծայի համար։ 33—Ահարոնի որդիներէն՝ խաղաղութեան զոհին արիւնը ու ճարպը ով որ մատուցանէ, ալ միսը անոր բաժինը պիտի ըլլայ։ 34—Քանզի անոնց խաղաղութեան զոհերէն երերցնելու երբուծը ու բարձրացնելու դնտար խրայելի որդիներէն առի, և զանոնք յատուկեան կանոնով խրայէլի որդիներէն Ահարոն քահանային ու անոր որդիներուն առի։ 35—Ասիկա Ծերոյը պատարագներէն Ահարոնի և անոր որդիներուն օծման իրաւունքի համար որ—եր—ց—, զանոնք Ծերոյը քահանայութիւն ընելու մատուցած օրը, 36—Զորանք օծած օրը Ծերոյ հրամայեց որ իսրայէլի որդիներէն իրենց ցեղերուն մէջ յատկեան կանոնով անոնց տրուի։

37—Ողջակիզին, հացի ընծային և մեղքի պատարագին և յանցանքի պատարագին ու օրհնութիւններուն և խաղաղութեան զոհին օրէնքը այս է, 38—Զոր Ծերոյ պատուիրեց Մովսէսի Սինա լեռը, այն օրը որ իսրայէլի որդիներուն պատուիրեց իրենց ընծաները Ծերոյը մատուցանելու Սինայի անապատին մէջ։

Գլ. Զ

Եւ Ծերոյ խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով։ 2—Ա՛ռ Ահարոնը ու անոր որդիները իրեն հետ, և զգեստները ու օծման իւղը և մեղքի պատարագին զուարակը ու երկու խոյերը և անխմոր հացին սանտառը։ 3—Եւ ժողվի բոլոր ժողովրդը մէկտեղ ժողովքի խորանին դուռը։ 4—Եւ Մովսէս Ծերոյը իրեն պատուիրածին պէս ըրաւ. ու ժողովքը մէկտեղ ժողովեցաւ ժողովքի խորանին դուռը։ 5—Եւ Մովսէս ըսաւ ժողովքին, Ա՛յս է բանը զոր Ծերոյ պատուիրեց ընելու։ 6—Եւ Մովսէս մտեցուց Ահարոնը ու անոր որդիները, և զանոնք լուաց լուաց։ 7—Եւ անոր հագցուց շապիկը, ու անոր միջբը կապից գօտին, և պատմուճանը հագցուց անոր, ու եփուդը անոր վրայ դրաւ, ու եփուդին ժապաւէնովը փաթթից ու անով գօտեւորեց զանիկա։ 8—Եւ ծանխպատնակը անոր վրայ դրաւ, ու ծանխպատնակին միջ Ուրիմը ու Թաւմիմը դրաւ։ 9—Եւ խոյրը անոր գլուխը դրաւ, ու խոյրին վրայ անոր առջեւի կողմն ոսկի թիթեղը, այսինքն սուրբ պսակը, դրաւ, Ծերոյը Մովսէսի պատուիրածին պէս։

10—Եւ Մովսէս օծման իւղը առաւ, ու խորանը և բոլոր անոր մէջ եղածները օծից ու սրբից զանոնք։ 11—Ու անկէ սեղանին վրայ սրսկից եօթը անգամ. և սեղանը ու անոր բոլոր գործիքները, և աւազանը ու անոր խարիսխը օծից, զանոնք սրբելու համար։ 12—Եւ օծման իւղն Ահարոնի գլխուն վրայ թափելով՝ զանիկա սրբելու համար օծից։ 13—Եւ Մովսէս մտեցուց Ահարոնի որդիները, ու անոնց չափկներ հագցուց, և մէջքերնին գօտի կապից, ու անոնց գլուխը ապարօշներ փաթթից, Ծերոյը Մովսէսի պատուիրածին պէս։

14—Եւ մեղքի պատարագին զուարակը մտեցուց. և Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը մեղքի պատարագ ըլլալու զուարակին գլխուն վրայ դրին։ 15—Եւ մորթից ը—ն։—. և Մովսէս արիւնը առաւ, ու իր մատովը սեղանին եղջիւրներուն վրայ դնելով չորքանակի, մաքրից սեղանը. ու արիւնը սեղանին յատակը թափից. և անոր վրայ քաւութիւն ընելու համար սրբից զայն։ 16—Եւ փորոտիքին վրայ եղած բոլոր ճարպը և լեարդին քառանիքը ու երկու երիկամունքը, և անոնց ճարպը առաւ. ու Մովսէս սեղանին վրայ ծխեցուց։ 17—Բայց զուարակը, այսինքն անոր մորթը և միսը, ու անոր պղորը, բանակին դուրսերդին կրակով այրից, Ծերոյը Մովսէսի պատուիրածին պէս։

18—Եւ ողջակիզին խոյը մտեցուց. և Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դրին։ 19—Եւ մորթից ը—ն։—. և Մովսէս չորքանակի սեղանին վրայ սրսկից արիւնը։ 20—Եւ խոյը կտոր կտոր ըրաւ. ու Մովսէս այրից գլուխը և կտորները ու ճարպը։ 21—Եւ փորոտիքը ու ոտքերը լուաց. և Մովսէս բոլոր խոյը սեղանին վրայ այրից. ասիկա ողջակիզ ա— անուշահոտ պատարագ մըն էր Ծերոյը, ինչպես Ծերոյը Մովսէսի պատուիրեց։

22—Եւ մատեցաւ մէւս խոյը, այսինքն օրհնութեան խոյը. և Ահարոն ու անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դրին։ 23—Եւ մորթից ը—ն։—. ու Մովսէս անոր արիւնէն առաւ, և Ահարոնի աջ ականջին բլթակին վրայ, ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ դրաւ։ 24—Եւ Ահարոնի որդիները մտեցուցի ու Մովսէս այն արիւնէն անոնց աջ ականջներուն բլթակներուն վրայ, և անոնց աջ ձեռքերուն մեծ մատներուն վրայ, ու անոնց աջ ոտքերուն մեծ մատներուն վրայ դրաւ. և Մովսէս սեղանին վրայ չորքանակի սրսկից հ—ր—ծ արիւնը։ 25—Եւ ճարպը, դմակը ու փորոտիքին վրայ եղած բոլոր ճարպը և լեարդին քառանիքը ու երկու երիկամունքը և անոնց ճարպը ու աջ զաւակը առաւ։ 26—Ու Ծերոյը առջեւ եղած անխմոր հացի սանտառէն անխմոր չօթ մը, խզով հացի չօթ մը ու լաւաշ մը առաւ, և ճարպերուն վրայ ու աջ զաւակին վրայ դրաւ։ 27—Եւ ամէնը Ահարոնի ու անոր որդիներուն ձեռքը դնելով՝ զանոնք Ծերոյը առջեւ երերցնելու ընծայ *մատուցից։ 28—Եւ Մովսէս անոնց ձեռքէն առաւ զանոնք, ու սեղանը եղած ողջակիզին վրայ այրից. ասոնք օրհնութեան համար անուշահոտ պատարագ էին Ծերոյը։ 29—Եւ Մովսէս կրծքածը առաւ ու Ծերոյը առջեւ երերցնելու ընծայ մատուցից. ասիկա օրհնութեան խոյէն Մովսէսի բաժինը եղաւ, Ծերոյը Մովսէսի պատուիրածին պէս։ 30—Եւ Մովսէս օծման իւղէն ու սեղանին վրայ եղած արիւնէն առնելով՝ Ահարոնի վրայ ու անոր հագուստներուն վրայ, և անոր հետ անոր որդիներուն վրայ ու անոր որդիներուն հագուստներուն վրայ սրսկից։ և Ահարոնը ու անոր հագուստները և անոր հետ անոր որդիները ու անոր որդիներուն հագուստները սրբից։

*Եբր. երերցուց

31—Եւ Մովսէս ըսաւ Ահարոնի ու անոր որդիներուն, Միսը ժողովքի խառանին դռանը կով եփացուցէք, և հոն օրհնութեան սանտառին մէջի հացերովը կերէք զանիկա, ինչպես ինծի պատուիրեցաւ՝ ըսելով Քէ Ահարոն ու անոր որդիները պիտի ուտեն զանիկա։ 32—Եւ միսն ու հացին ուրիշացածը կրակով այրեցէք։ 33—Եւ եօթը օր ժողովքի խառանին դռանէն դուրս մի ելլէք, մինչև ձեր օրհնութեան օրերուն վերջին օրը. քանի որ ձեր օրհնութիւնը եօթը օր կ'ըլայ։ 34—Այս օրուան եղածին պէս, ձեզի համար քաւութիւն ընելու, Ծերոյ հրաման ըրաւ։—ը—ր—ընել։ 35—Ուստի ցորկիզ ու գիշերը եօթը օր ժողովքի խառանին դռանը քով պիտի նստիք, ու Ծերոյը պահպանութիւնը պիտի ընէք, որպէս զի չմեռնիք. քանզի այսպէս պատուիրած է ինծի։ 36—Եւ Ահարոն ու անոր որդիները Ծերոյը Մովսէսի ձեռքով պատուիրած ամէն բաները ըրին։

Գլ. Թ

Եւ եղաւ որ ութերորդ օրը Մովսէս կանչից Ահարոնը ու անոր որդիները և Իսրայէլի ծերերը. 2—Եւ ըսաւ Ահարոնի, Առ քեզի մեղքի պատարագի համար արջառներէն զուարակ մը, ու ոչխարէն հաստ խոյ մը. անթերատ ըլլան. և Ծերոյը առջեւ մատուցէր։ 3—Եւ Իսրայէլի որդիներուն պիտի խօսիս՝ ըսելով, Մեղքի պատարագի համար այծերէն նոխազ մը, և ոչխարէն հասկ զուարակ մը ու գառնուկ մը առէք. մէկ տարեկան՝ անթերատ ըլլան։ 4—Նաև խաղաղութեան զոհերուն համար Ծերոյը առջեւ զոհելու արջառ մը ու խոյ մը ու իւղով շաղուած հացի ընծայ *ունենալ։ վասն զի այսօր Ծերոյը ձեզի պիտի երեւնայ։ 5—Եւ Մովսէսի պատուիրածը ժողովքի խառանին առջեւ բերին. ու բոլոր ժողովքը մատեցան ու Ծերոյը առջեւ կայնեցան։ 6—Եւ Մովսէս ըսաւ, Այս է Ծերոյը պատուիրած բանը. ասիկա ըրէք, ու Ծերոյը փառ-

*կամ, ես պատուիրեցի

քը ձեզի պիտի երևնայ։ 7—Ես Մովսես ըսաւ Ահարոնի, Սեղանին մօտեցիր, ու քու մեղքի պատարագդ և ողջակէզդ բեր, և քեզի համար ու ժողովուրդին համար քաւութիւն բրէ. և ժողովուրդին ընծան մատուցանելով՝ անոնց համար քաւութիւն բրէ Տէրոջը պատուիրածին պէս։

8—Ուստի Ահարոն սեղանին մօտեցաւ, և իրեն համար եղած մեղքի պատարագին զոհարակը մորթեց։ 9—Ես Ահարոնի որդիները արիւնը մօտեցուցին անոր. ու անիկա իր մատը արիւնը թաթխեց, ու սեղանին եղջիւրներուն վրայ դրաւ, և ճաշակ արիւնը սեղանին յատակը թափեց։ 10—Բայց մեղքի պատարագին ճարպը ու երիկամունքները և լեարդին թաղանթը սեղանին վրայ այրեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 11—Ես միսը ու մորթը բանակին դուրսերկրակով այրեց։ 12—Ես ողջակէզը մորթեց. ու Ահարոնի որդիները արիւնը անոր բերին, և սեղանին վրայ չուրջանակի սրսկեց զայն։ 13—Ես ողջակէզը կտորներով ու գլխովը անոր բերին, և սեղանին վրայ այրեց։ 14—Ես փորոտիքը ու ոտքերը լուացք, ու սեղանին վրայի ողջակէզին վրայ այրեց։

15—Ես ժողովուրդին ընծան մօտեցուց, ու ժողովուրդին համար մեղքի պատարագ բրլոյու նոխազը առաւ, և մորթեց զանիկա, ու մեղքի պատարագ բրաւ առաջուանին պէս։ 16—Ես ողջակէզը մօտեցուց ու բաս օրինի մատուց։ 17—Ես հացի ընծան մօտեցուց, ու անկէ ձեռքը լեցուց և սեղանին վրայ այրեց, առաւօտեան ողջակէզին զատ։ 18—Ես ժողովուրդին խաղաղութեան զոհ բլլալու արջառը ու խոյը մորթեց։ և Ահարոնի որդիները արիւնը անոր բերին, ու սեղանին վրայ չուրջանակի սրսկեց զայն։ 19—Ես արջառին ճարպերը, ու խոյին գլխիկը և էլլոդոխէը ծածկոց ճարպը, ու երիկամունքները ու լեարդին թաղանթը էէլլէ։ 20—Ես ճարպերը երբուծներուն վրայ դրին, ու ճարպերը սեղանին վրայ այրեց։ 21—Ես Ահարոն երբուծները ու այ գիսար Տէրոջը առջև երերցնելու ընծայ մատուց, Մովսէսի պատուիրածին պէս։

22—Ես Ահարոն իր ձեռքերը ժողովուրդին վրայ վերցուց ու օրհնեց զանոնք։ և մեղքի պատարագը ու ողջակէզը և խաղաղութեան զոհերը մատուցանելէն ետքը իջաւ։ 23—Ես Մովսես ու Ահարոն ժողովքի խորանը մտան, և ելլելով ժողովուրդը օրհնեցին. և Տէրոջը փառքը բոլոր ժողովուրդին երեւցաւ։ 24—Ես Տէրոջը առջևէն կրակ եկաւ, ու սեղանին վրայ եղած ողջակէզը և ճարպը այրեց. և բոլոր ժողովուրդը տեսնելով՝ աղաղակեցին ու երեսնուն վրայ ինկան։

Գլ. Ը

Ե Ահարոնի որդիները, Նադաբ ու Աբիհու, ամէն մէկը իր բրաբարը առաւ, ու անոր մէջ կրակ դրին և վրան խունկ դրին, ու Տէրոջը առջև օսար կրակ մատուցին, զոր ինձ պատուիրած չէր անոնց։ 2—Ես Տէրոջը առջևէն կրակ եկաւ, ու ապառնց զանոնք, և Տէրոջը առջև մեռան։ 3—Այն ատեն Մովսես բաս Ահարոնի, Այս է զոր Տէրը խօսեցաւ՝ բսելով, Ինձի մատուցողներուն մէջ սուրբ պիտի սեպուիմ, ու բոլոր ժողովուրդին առջև փառաւորուիմ. և Ահարոն լուռ կեցաւ։ 4—Ես Մովսես կանչեց Ահարոնի հօրեղբօրը Ոզիէլի որդիները, Միսայէլը ու Եղիսափանը, և բաս անոնց, Մատեցէք, ձեր եղբայրներէն սրբարանին առջևէն բանակին դուրսերդին վերցուցէք։ 5—Ես անոնք մատեցան, ու Մովսէսի բսածին պէս՝ զանոնք իրենց չապիկներովնին բանակէն դուրս վերցուցին։

6—Ես Մովսես բաս Ահարոնի ու անոր որդիներուն, Եղիազարի և Իթամարի, Գլուխներդ մի քանաք ու հանդերձներնիդ մի պատռէք, որպէս որ չմեռնիք, և բոլոր ժողովուրդին վրայ բարկութիւն չգայ. բայց ձեր եղբայրները, Իսրայէլի բոլոր տունը, Տէրոջը բրած այրումին վրայ թող լան։ 7—Ես դուք ժողովքի խորանին դռնէն դուրս մի ելլէք, որպէս զի չմեռնիք. վասն զի Տէրոջը օծման իւղը վրանիդ է. և անոնք Մովսէսի բսածին պէս բրին։

8—Ես Տէրը խօսեցաւ Ահարոնի՝ բսելով, 9—Երբ ժողովքի խորանը մտնէք քէ՛ դուն և քէ՛ քու որդիներդ գինի հնա, գինի կամ օղի չխմէք, որպէս զի չմեռնիք. սոյնս ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն բլլայ, 10—որպէս զի սուրբին ու անսուրբին միջևտղ, և անմաքուրին ու մաքուրին միջևտղ տարբերութիւն դնէք. 11—ես որպէս զի Իսրայէլի որդիներուն սովխցնէք բոլոր կանոններըս, զորոնք Տէրը Մովսէսի ձեռքով զրուցած է անոնց։

12—Ես Մովսես խօսեցաւ Ահարոնի ու անոր մնացած որդիներուն, Եղիազարի ու Իթամարի. Տէրոջը պատարագներէն ուելցած հացի ընծան առէք, ու սեղանին քով բաղարջ կերէք. վասն զի անիկա ամենասուրբ է։ 13—Ուրբ տեղ կերէք զանիկա, վասն զի Տէրոջը պատարագներէն քու իրաւունքդ ու քու որդիներուդ իրաւունքն է. քանզի ինծի այպես պատուիրած է։ 14—Ես երերցնելու եդբուծը ու բարձրացնելու զիսար՝ դուն ու քու որդիներդ և քու աղիկներդ քեզի հետ ճաշակ տեղ մը պիտի ուտէք. վասն զի Իսրայէլի որդիներուն խաղաղութեան զոհերէն քու իրաւունքիդ ու քու որդիներուդ իրաւունքին համար արուած են։ 15—Բարձրացնելու զիսար ու երերցնելու եդբուծը ճարպին պատարագներովը Տէրոջը առջև երերցնելու համար պիտի բերուին. և Տէրոջը պատուիրածին պէս քու կդ ու քեզի հետ քու որդիներուդ պիտի բլլայ յաւիտենական կանոնով։

16—Ես Մովսես մեղքի պատարագին նոխազը զգուշութեամբ փնտռեց, և ահա այրուած էր. ուստի Ահարոնի մնացած որդիներուն, Եղիազարի ու Իթամարի, բարկացաւ՝ բսելով, 17—Ինչո՞ մեղքի պատարագը սուրբ տեղը չկերաք. քանզի այս ամենասուրբ է. ու Տէրը ատուաւ ձեզի, որպէս զի ժողովքին անօրէնութիւնը վերցնէք — Տէրոջը առջև անոնց համար քաւութիւն ընէք։ 18—Ահա անոր արիւնը սրբարանին մէջ չբերուեցաւ. դուք իմ պատուիրածիս պէս անպատճառ սուրբ տեղը ուտելու էիք զայն։ 19—Ես Ահարոն բսաւ Մովսեսի, Ահա այսօր իրենց մեղքի պատարագը ու ողջակէզը Տէրոջը առջև մատուցին, ու գլխուս այսպիսի բաներ եկան. և Իրի այսօր մեղքի պատարագը ուտէր բլլայի, Տէրոջը առջև հաճելի պիտի բլլար արդեօք։ 20—Ես երբ Մովսես ասոր լսեց, հաւանեցաւ։

Գլ. ԺԱ

Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ բսելով անոնց, 2—Խօսեցէք Իսրայէլի որդիներուն ու բսէք, Երկրի վրայ եղած բոլոր անասուններէն ձեր ուտելու անասունները սոսկ են. 3—Ամէն ճեղքուած կճղակ ունեցող կրնգաւոկաբաշխ — որոնցմով անասունը պիտի ուտէք։ 4—Բայց որոնցմովնէն կամ կճղակաբաշխ եղածէն սոսկ պիտի չուտէք. ուղտը, վասն զի անիկա թև կ'որօնայ, բայց կճղակաբաշխ չէ, անիկա ձեզի անմաքուր բլլայ։ 5—Ես ճագարը, վասն զի անիկա կ'որօնայ, բայց կճղակաբաշխ չէ, անիկա ձեզի անմաքուր բլլայ։ 6—Ես նապաստակը, որ թև կ'որօնայ, բայց կճղակաբաշխ չէ, անիկա ձեզի անմաքուր բլլայ։ 7—Ես խոզը, որ թև կճղակաբաշխ է և ճեղքուած կճղակ ունի, բայց չորնար, անիկա ձեզի անմաքուր բլլայ։ 8—Անոնց միսէն պիտի չուտէք, ու դիերուն չդպչիք, ձեզի անմաքուր են։

9—Ջուրերուն մէջ բոլոր եղածներէն ասոնք պիտի ուտէք. ջուրերու մէջ, այսինքն ծովերու մէջ և գետերու մէջ, ամէն թև ու թեփ ունեցողը պիտի ուտէք։ 10—Ես ծովերու մէջ ու գետերու մէջ եղած բոլոր անթև ու անթեփ եղածները՝ ջուրերուն բոլոր սեաներուն և ջուրերուն մէջ եղած ամէն տեսակ չունչ ունեցող բոլոր կենդանիներէն՝ պիղծ բլլան ձեզի։ 11—Անոնք ձեզի պիղծ պիտի բլլան. անոնց միսէն պիտի չուտէք, և անոնց դիերէն պիտի զզուիք։ 12—Ջուրերուն մէջ եղած բոլոր անթև ու անթեփ եղածները ձեզի պիղծ բլլան։

13—Ես թռչուններուն մէջ սոսկ պիղծ պիտի սեպէք, պիտի չուտուին. պիղծ են արծիւը և պատկոսը ու գետաբծիւը, 14—Ես ցիներ ու անգղը իր տեսակին պէս, 15—Ես ամէն ագռաւը

իր տեսակին պես, 16—Եւ ջաղաքը ու բառն, և կկուն ու բազէն իր տեսակին պես, 17—Եւ հատապտիղը ու հաղարտղը և քաջահասը, 18—Եւ կարապը, և հաւալուսը, ու սև անգղը, 19—Եւ արագիլը — քաբադրը իր տեսակին պես, և յապոպը, ու չիղէը.

20—Ամէն չորս ոտքի վրայ քալող Թռչող վնասուն ձեզի պիղծ ըլլայ, 21—Սակայն ասոնք պիտի ուտէք. բոլոր չորս ոտքի վրայ քալող Թռչող վնասուններէն՝ երկրի վրայ ցաթկելու համար ոտքերնուն վրայ ազդր ունեցողները, 22—Անոնցմէ ասոնք պիտի ուտէք. մարախը իր տեսակին պես, ու գրամիճը իր տեսակին պես, և խարագուլը իր տեսակին պես, ու ջաբնակը իր տեսակին պես, 23—Բայց ձագ բոլոր չորս ոտքով Թռչող վնասուններդ ձեզի պիղծ ըլլան, 24—Եւ ասոնցմով դուք անմաքուր պիտի ըլլաք. ամէն անոնց դիեքը պիտի ըլլաք. ամէն անոնց դիեքը պզտղող մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ, 25—Եւ ամէն անոնց դիեքը վերցնողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ, 26—Բոլոր անասուններդ որոնք կճղակաբաժին են, բայց կճղակները ճեղքուած չէ, և չեն գրգռար, անմաքուր են ձեզի. ով որ անոնց դիեքը դպչի, անմաքուր պիտի ըլլայ

27—Եւ բոլոր չորս ոտքի վրայ քալող անասուններէն՝ թաթերնուն վրայ քալողներուն ամէնը անմաքուր ըլլայ ձեզի. ամէն անոնց դիեքը դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ, 28—Եւ անոնց դիեքը վերցնողը իր լաթերը պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. անոնք անմաքուր են ձեզի.

29—Եւ երկրի վրայ սողացող սողուններուն մէջ ասոնք անմաքուր ըլլան ձեզի. աքիսը ու մուկը և *տխաւոր իր տեսակին պես, 30—Եւ կոխոդիան ու մողէսը և քամաթօչը ու խամէլեր և գետնասիւծը, 31—Բոլոր սողացողներուն մէջ ձեզի անմաքուր եղածները ասոնք են. ամէն անոնց մեռածին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ,

32—Ու անոնց մէկ մեռածը ինչ բանի վրայ որ իյնայ, թէ՛ փայտ աման ըլլայ կամ հանդերձ կամ մորթ կամ գործ, ի՛նչ տեսակ գործածական աման որ ըլլայ, անմաքուր պիտի ըլլայ. ջուրը պիտի ձգուի այն, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ, և եօթը մաքուր սեպուի. 33—Ու սոնց մէկը ա՛ր հոգ ամանին մէջ իյնալու ըլլայ, ամէն անոր մէջ եղածը անմաքուր պիտի ըլլայ, ու այն ամանը պիտի կոտրիք. 34—Ամէն ուտելիք կերակուրը որուն վրայ *ջուր կայ, — ասանց հէնը հէնը էըն—՝, անմաքուր պիտի ըլլայ. նոյնպես ամէն ամանի մէջ եղած բոլոր խմելու խմիլիքը անմաքուր պիտի ըլլայ. 35—Ու ամէն բան՝ որուն վրայ սոնց դին կ'իյնայ, անմաքուր պիտի ըլլայ. ԹՒ՛ քանիր ըլլայ և թէ՛ վառարան, պիտի ուրխ. սոնք անմաքուր են ու անմաքուր պիտի սեպուին ձեզի. 36—Բայց ազբիւրը կամ հորը, †ալ ժողվուած ջուր կայ, մաքուր պիտի ըլլայ. սակայն անոնց դիեքուն դպչողը անմաքուր ըլլայ. 37—Ու եթէ անոնց դին ցանելու սերմի մը վրայ իյնայ, մաքուր պիտի ըլլայ այն, 38—Բայց եթէ սերմին վրայ ջուր դրուած ըլլայ. ու անոր վրայ անոնց դին իյնայ, այն ձեզի անմաքուր պիտի ըլլայ.

39—Ու եթէ կեր ուտելու կենդանիներէն մէկը մեռնի, անոր դիեն դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. 40—Ու անոր դիեն ուտողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. և անոր դին վերցնողը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ.

41—Ու երկրի վրայ սողացող ամէն սողուն պիղծ է. պիտի չուտուի այն, 42—Երկրի վրայ բոլոր սողացող սողուններէն ամէն իր փորին վրայ քալողը, կամ ամէն չորս ոտքի վրայ պտրտողը, և կամ ամէն բազմոտանի եղած սողը, և կամ ամէն բազմոտանի եղած սողը, որ պիտի չուտեք, վասն զի պիղծ են, 43—Ինքնաբ սողացող սողունով մը անձերնիդ մի պղծէք. ոչ ալ անոնցմով

*կամ, կրնան

*կամ, այսպէս ջուր գայ
†կամ, կամ ջրհաւաքակը

պղծուելով անձերնիդ անմաքուր ընէք. 44—Որովհետև ես եմ ձեր Տէր Աստուածը, ուստի սրբեցէք անձերնիդ ու սուրբ եղէք, վասն զի ես սուրբ եմ. ու բնաւ երկրի վրայ սողացող սողունով մը անձերնիդ մի պղծէք. 45—Քանզի ես եմ Եհովան, որ ձեզ Եգիպտացի երկրէն հանեցի, որպէս զի ձեզի Աստուած ըլլամ. ուստի սուրբ եղէք, վասն զի ես սուրբ եմ.

46—Չորքոտանիներուն և Թռչուններուն ու ջուրերուն մէջ չարժող բոլոր չնչաւոր կենդանիներուն և երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն օրէնքը այս է. 47—Որպէս զի անմաքուրին ու մաքուրին միջեղող և ուտուելու անասունին ու չուտուելու անասունին միջեղող տարբերութիւն դնէք.

ԳԼ. ԺԲ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու բսա, Եթէ կին մը սերմ առնէ ու արու զաւակ ծնանելու ըլլայ, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ՝ իր դաշտանին հետ մաքուր զատուելու օրերուն հաճիատ անմաքուր պիտի ըլլայ. 3—Ու ութերորդ օրը թլփատութեան մարմինը պիտի թլփատուի. 4—Ու անիկա իր մաքրութեան արիւնովը երեսուն երեք օր պիտի նստի. ու մինչև իր մաքրութեան օրերուն լմննալը՝ բնաւ սուրբ բանի մը պիտի չդպչի, ու ալ սրբարանը մտնէ. 5—Բայց եթէ անիկա աղջիկ ծնանելու ըլլայ, երկու շաբաթ անմաքուր պիտի ըլլայ իր դաշտանի ձևովը պես, և վաթսունըվեց օր իր մաքրութեան արիւնովը պիտի նստի.

6—Ու երբ աղայ կամ աղջիկ զաւկի համար իր մաքրութեան օրերը լմննան, ժողովքի խորանին դուռը ոչխարի մը համար մէկ տարեկան գառ, ու մեղքի պատարագի համար ատանիի ձագ մը կամ տատրակ մը պիտի բերէ քահանային, 7—Որ պիտի մատուցանէ զանիկա Տէրոջը առջեւ. ու քաւութիւն ընէ անոր համար, և անիկա իր արիւնին աղբիւրէն պիտի մաքրուի. Ասոնք կամ եգ զաւակ ծնանողին օրէնքը այս է. 8—Ու եթէ գառ բերելու կարող չէ, երկու տատրակ կամ ատանիի երկու ձագ առնէ, մէկը ոչխարի ու միւսը մեղքի պատարագի համար, և քահանան քաւութիւն ընէ անոր համար, ու անիկա մաքրուի.

ԳԼ. ԺԳ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 2—Մարդու մը մարմինին մորթին մէջ ուռեցք կամ փոս կամ պղպջակ ըլլալով՝ անոր մարմինին մորթին մէջ՝ բորոտութեան ախտին պէս նշան մը երեւնալու ըլլայ, այն ատեն անիկա Ահարոն քահանային, կամ անոր որդիներէն, քահանաներէն, մէկուն պիտի բերուի. 3—Ու քահանան պիտի նայի մարմինին մորթին մէջ եղած ախտին նշանին. ու եթէ ախտին մէջի մազերը ճերմակի դառնալով՝ ախտը մարմինին մորթէն խորունկ երեւնայ, բորոտութեան ախտ է այն. և քահանան պիտի նայի անոր, ու *պիտի ժանեցնէ անոր անմաքուր ըլլալը՝. 4—Ապա եթէ անոր մարմինին մորթին մէջ պղպջակը ճերմակ է ու մորթէն խորունկ չերեւնար, և մազն ալ ճերմակի դարձած չէ, այն ատեն քահանան եօթը օր գոցուած պիտի պահէ ախտակիրը. 5—Ու քահանան եօթներորդ օրը պիտի նայի անոր. ու եթէ ախտը դեռ կը կենայ, ու մորթին մէջ ախտը դեռ կը կեռնայ, ու մորթին մէջ տարածուած չէ, այն ատեն քահանան եօթը օր ալ գոցուած պիտի պահէ զանիկա. 6—Ու քահանան եօթներորդ օրը նորէն պիտի նայի անոր, ու եթէ ախտը ջուացած ըլլայ, ու մորթին մէջ տարածուած չըլլայ, քահանան †պիտի ժանեցնէ անոր մաքուր ըլլալը՝. ապիկա ճիշ փոս մըն է, և անիկա իր լաթերը պիտի լուայ, ու մաքուր ըլլայ. 7—Բայց եթէ իր մաքրուելուն համար քահանային նայուելէն ետքը՝ ջաղը մորթին մէջ տարածուի, քահանան նորէն պիտի նայի անոր. 8—Ու քահանային նայած ատենը եթէ ջաղը մորթին մէջ

*ԵԲՐ. զանիկա անմաքուր պիտի ընէ
†ԵԲՐ. զանիկա մաքուր պիտի ընէ

տարածուած է, այն ատեն փահանան անոր անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ. բորոտութիւն է։

9—Երբ մարդու մը վրայ բորոտութեան նախոր ըլլայ, անիկա փահանային պիտի տարուի։ 10—Ու փահանան պիտի նայի. և եթէ մարմին մէջ ճերմակ ուռեցք կայ ու ճերմակին գոյնը է մաղը, և ուռեցքին մէջ ողջ միսի նշան կայ, 11—Անիկա անոր մարմինին մարմնին մէջ հինցած բորոտութիւն է. և փահանան անոր անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ, զոցուած չպահէ զանիկա, վասն զի անմաքուր է։

12—Եթէ բորոտութիւնը մարմնին մէջ տարածուելը է, ու նախակրին բուլը մարմնը գլխէն մինչև ոտքը, այսինքն փահանային աչքերուն բոլոր տեսած տեղը, բորոտութիւնը պատեր է, 13—Ու փահանան տեսնէ որ բորոտութիւնը անոր բոլոր մարմինը պատած է, այն ատեն նախակրին մաքուր ըլլալը ծանուցանէ. Քանի բոլորովին ճերմակի դարձաւ, անիկա մաքուր է։ 14—Բայց երբ անոր վրայ ողջ միս տեսնուի, անիկա անմաքուր պիտի ըլլայ։ 15—Ու փահանան պիտի տեսնէ ողջ միսը, և անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ. ողջ միսը անմաքուր է. բորոտութիւն է։ 16—Իսկ եթէ ողջ միսը փոխուի նորէն ու ճերմակին դառնալու ըլլայ, այն ատեն փահանային պիտի գայ։ 17—Ու փահանան պիտի տեսնէ զանիկա. ու եթէ նախոր ճերմակ դարձեր է, այն ատեն փահանան նախակրին մաքուր ըլլալը ծանուցանէ. անիկա մաքուր է։

18—Ու եթէ մարմինին մարմնին մէջ պարոր ըլլայ ու առողջանայ, 19—Ու պարորին տեղը ճերմակ ուռեցք կամ փխ մը կարմրած ճերմակ պաղպաղ ըլլայ, փահանային պիտի ցուցուի այն։ 20—Ու երբ փահանան տեսնէ որ մարմինէն ցած կ'երեւնայ, և մաղը ճերմակին դարձած է, փահանան անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ. անիկա պարորէ հանած բորոտութեան նախ է։ 21—Ու եթէ փահանան տեսնէ որ ճերմակ մաղ չկայ անոր մէջ, ու մարմինէն ցած չէ՝ բայց չլացած է, այն ատեն փահանան եօթը օր զոցուած պիտի պահէ զանիկա, 22—Ու եթէ մարմնին մէջ տարածուած է, այն ատեն փահանան անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ. անիկա վէրք է։ 23—Բայց եթէ պաղպաղը իր տեղը կը կենայ — չէ տարածուիր, պալարին պէս է. և փահանան անոր մաքուր ըլլալը պիտի ծանուցանէ,

24—Իսկ եթէ մարմինին մարմնին մէջ կրակի այրած ըլլայ, ու *այրածին նշանը՝ փխ մը կարմրած ճերմակ կամ բորբոքին ճերմակ պաղպաղ ըլլայ, 25—Փահանան անոր նայած ատենը՝ եթէ պաղպաղին մէջ մաղը ճերմակի դարձած է, ու մարմնէն խորունկ կ'երեւնայ, անիկա այրածէն առաջ եկած բորոտութիւն է. և փահանան անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ. անիկա բորոտութեան նախ է։ 26—Բայց եթէ փահանային նայած ատենը, պաղպաղին մէջ մաղը ճերմակ չէ, ու մարմնէն խորունկ չէ, հապա չլացած է, այն ատեն փահանան եօթը օր զոցուած պիտի պահէ զանիկա, 27—Ու եօթներորդ օրը փահանան պիտի նայի անոր. եթէ մարմնին մէջ տարածուած է, փահանան անոր անմաքուր ըլլալը ծանուցանէ. անիկա բորոտութեան նախ է։ 28—Ու եթէ պաղպաղը իր տեղը կը կենայ ու մարմնին մէջ տարածուած չէ, հապա չլացած է, անիկա այրածին ուռեցք է. և փահանան անոր մաքուր ըլլալը ծանուցանէ, վասն զի այրածին սպին է։ 29—Ու եթէ մարդու մը կամ կնոջ մը գլուխը կամ կզակը եռա մը ըլլայ, 30—Փահանան պիտի տեսնէ նախոր. և եթէ մարմինն խորունկ երեւնայ, ու անոր մէջ բարակ դեղին մաղ ըլլայ, այն ատեն փահանան անոր անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ. անիկա գնդութիւն է, գլուխի կամ կզակի բորոտութիւն է։ 31—Ու եթէ փահանան գնդութեան նախոր տեսնէ որ մարմինէն խորունկ չերեւնար, ու անոր մէջ ալ մաղ չկայ, այն ատեն փահանան եօթը օր զոցուած պիտի պահէ զանիկա, 32—Ու եօթներորդ օրը փահանան նախակրին պիտի նայի, ու եթէ գնդութիւնը տարածուած չէ, և անոր մէջ դեղին մաղ չկայ, ու գնդութիւնը մարմինն խորունկ չերեւնար, 33—Անիկա պիտի ածիլուի, բայց գնդութիւնը պիտի չածիլէ. և փահանան եօթը օր ալ զոցուած պիտի պահէ գնդութիւնն ունեցողը։ 34—Ու եօթներորդ օրը փահանան գնդութիւնն ունեցողին պիտի նայի. և եթէ գնդութիւնը մարմնին մէջ տարածուած չէ, ու մարմինէն խորունկ չերեւնար, այն ատեն փահանան անոր մաքուր ըլլալը ծանուցանէ. և անիկա իր լաթերը պիտի լուայ, ու մաքուր ըլլայ։ 35—Բայց եթէ իր մաքրուելէն ետքը գնդութիւնը մարմնին մէջ տարածուի, 36—Այն ատեն փահանան պիտի նայի անոր. և եթէ գնդութիւնը մարմնին մէջ տարածուած է, այն ատեն փահանան –՝ դեղին մաղ պիտի չփնտռէ. անիկա անմաքուր է։ 37—Բայց եթէ գնդութիւնը եզածին պէս կը կենայ, և անոր մէջ սև մաղ բուսեր է, գնդութիւնը բժշկուած է. անիկա մաքուր է, ու փահանան անոր մաքուր ըլլալը ծանուցանէ,

38—Ու եթէ մարդ մը կամ կին մը իր մարմինին մարմնին մէջ պաղպաղներ, այսինքն ճերմակ պաղպաղներ, ունենայ, 39—Այն ատեն փահանան պիտի նայի, և եթէ անոնց մարմինները մարմնին մէջ պաղպաղներ չլացած ճերմակ ըլլան, անիկա մարմնին մէջ գոյացած պիսակ է. անիկա մաքուր է։

40—Ու եթէ մարդու մը գլուխն մազը թափելու ըլլայ, անիկա կնատակ է, է–չ մաքուր է։ 41—Ու եթէ անոր երեսին կողմէն գլխուն մազերը ինկած ըլլան, անիկա ճակ է, է–չ մաքուր է։ 42—Հապա եթէ կնատութեան կամ ճակատութեան մէջ փխ մը կարմրած ճերմակ վէրք մը ըլլայ, այն անոր կնատութեան կամ ճակատութեան մէջ գոյացած բորոտութիւն է։ 43—Այն ատեն փահանան պիտի նայի անոր. և եթէ անոր կնատութեան կամ ճակատութեան մէջ, վէրքին ուռեցքը փխ մը կարմրած ճերմակ ըլլայ, մարմինին մարմնին մէջ եզած բորոտութեան երեւոյթին պէս, 44—Այն մարդը բորոտ է, անմաքուր է. փահանան անպատճառ անոր անմաքուր ըլլալը պիտի ծանուցանէ. անոր գլուխն է։

45—Ու այս ունեցող բորոտին հանդերձը պատռուած պիտի ըլլայ, և անոր գլուխը մերկ, ու անոր *չրթունքներուը գլուխի մերկ, ու անոր չրթունքները ծածկուած պիտի ըլլան, և ձայն պիտի տայ թէ Անմաքուր եմ, անմաքուր։ 46—Ամէն իր վրայ եզած բոլոր օրերը անմաքուր պիտի ըլլայ. անիկա անմաքուր է, մինակ պիտի նստի. անոր բնակութիւնը բանակէն դուրս պիտի ըլլայ։

47—Ու այն հանդերձը որուն մէջ բորոտութեան նման կայ, թէ՛ բուրդէ հանդերձ ըլլայ և թէ՛ քէտանէ հանդերձ, 48—Քէտանիէնի կամ բրդիէնի, առէչի կամ թևգանի մէջ կամ մորթի մէջ և կամ մորթէ շինուած ամէն բանի մէջ, 49—Այսինքն՝ եթէ հանդերձի կամ մորթի մէջ, կամ առէչի կամ թևգանի մէջ, կամ մորթէ շինուած ամէն իրէղ բանի մէջ փխ մը կանաչ կամ կարմրած նման նշան բլլայ, բորոտութեան նման է, ու փահանային պիտի ցուցուի։ 50—Ու փահանան պիտի նայի նախին, ու եօթը օր զոցուած պիտի պահէ նախուցհալ բանը։ 51—Ու եօթներորդ օրը նախուցհալ բանին պիտի նայի. եթէ նախին նէշը տարածուած է հանդերձի մը մէջ, կամ առէչի կամ թևգանի մէջ, կամ մորթի մէջ, և կամ գործածուելու համար մորթէ շինուած ամէն բանի մէջ, այս նախոր բորբոքած բորոտութիւն է. անմաքուր է։ 52—Ուստի անիկա պիտի այրէ բրդեղէն կամ քէտանեղէն հանդերձը, կամ առէչը կամ թևգանը, կամ ամէն կերպ մորթէ շինուած բանը որուն մէջ այն նախոր կայ. որովհետև բորբոքած բորոտութիւն է այն, կրակի մէջ պիտի այրուի։ 53—Ու եթէ փահանան տեսնէ որ նախին նէշը հանդերձին մէջ, կամ առէչին կամ թևգանին մէջ, կամ ամէն իրէղ մորթէ շինուած բանին մէջ տարածուած չէ, 54—Այն ատեն փահանան պիտի հրամայէ որ այն նախուցհալ բանը լուան. ու նորէն եօթը օր զոցուած պիտի պահէ զայն։ 55—Ու նախուցհալ բանին լուացուելէն ետքը եթէ փահանան տեսնէ որ նախի նէշը

*կամ, բնչացքը

*կամ, այրածը առնոլանալով

իր գոյնը չէ փոխեր, ու ախտը սաթած-ուած ալ չէ, անիկա անմաքուր է. կրակի մէջ պիտի այրուի զայն. անոր տակ կամ վրայ փաւթիւն կայ։ 56— Ե. եթէ փառանան ականջ որ անոր լուացուելէն ետքը ախտին նշոնը չլացած է, այն տանն այն ախտաւոր ոճուը հանդերձէն կամ մորթէն կամ ածիլչին և կամ թևգանէն պիտի պատռէ։ 57—Ե. եթէ այն հանդերձին մէջ, կամ առէչին կամ թևգանին մէջ, կամ ամէն իբշ մորթէ իշոոճ բանին մէջ նորէն երեւնալ ըլլայ, անիկա սաթած ախտաւոր է. վրան ախտ ունեցող բանը կրակի մէջ այրուի։ 58—Ե. այն հանդերձը, կամ առէչը կամ թևգանը, կամ ամէն իբշ մորթէ իշոոճ բանը, որ լուացուելէն ետքը ախտը անկէ գացած է, նորէն պիտի լուացուի ու մաքուր ըլլայ։ 59—Բայց եթէ կամ քիմանէ հանդերձի մէջ, կամ առէչի կամ թևգանի մէջ, կամ մորթէ իշոոճ ամէն իբշ բանի մէջ երեւցած բարաւթեան ախտին օրէնքը այս է, անոր մաքուր կամ անմաքուր ըլլալը ճանուցանելու համար։

Գլ. ԺԴ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Բարաւին օրէնքը այս է իր մաքրուելու օրը. Անիկա քահանային պիտի տարուի. 3—Ու քահանան բանակէն դուրս պիտի ելլէ, ու քահանան պիտի նայի, ու եթէ բարաւին բարաւթեան ախտը բժշկուած է, 4—Անի ատեն քահանան պիտի հրամայէ որ մաքրուելու մարդուն համար երկու ողջ և մաքուր թռչուն ու եղեւնափայտ ու կրկնակի կարմիրը և զոգաչ ատիւթ։ 5—Ու քահանան պիտի հրամայէ որ թռչուներն մէկը հողէ անօթի մը մէջ *կենդանի ջուրի վրայ մորթուի։ 6—Ու ողջ թռչունը ու եղեւնափայտը և կրկնակի կարմիրը ու զոգան պիտի առնէ, և ատոնք ողջ թռչունին հետ կենդանի ջուրին վրայ մորթուած թռչունին արեանը մէջ պիտի թաթխէ. 7—Ու բարաւթենէն մաքրուելու մարդուն վրայ եօթը անգամ սրսկէ ու մաքրէ զանիկա. և ողջ թռչունը դաշտի դաշտը արձակէ։ 8—Ու մաքրուելու մարդը իր հանդերձները պիտի լուայ, ու իր բոլոր մազերը ածիլէ, և ջրով պիտի լուացուի ու մաքրուի. և անկէ հետ բանակը պիտի մտնէ, ու եօթը օր իր վրանին դուրսիցին պիտի կենայ։ 9—Ու եօթնեորդ օրը իր բոլոր մազերը ածիլէ, իր գլուխը ու մօրուքը և յօնքերը, այսինքն իր բոլոր մազերը, ածիլէ. և իր հագուստները պիտի լուայ, ու իր մարմինը ջրով լուայ ու մաքուր ըլլայ։

10—Ու ութերորդ օրը երկու անարատ արու գառ, ու մէկ տարեկան մէկ անարատ էգ գառ, և հարիւր բնձոյի հատոր խոզով չորուած երկու տասանորդ բարակ ալիւր, ու մէկ ճաշակ իւղ պիտի առնէ։ 11—Ու մաքրող քահանան մաքրուելու մարդը ասոնցմով Տէրոջը առջեւ ժողովքի խարանին դուռը պիտի կացնեցնէ։ 12—Ու քահանան արու գառանն մէկը պիտի առնէ ու մեռցնէ յանցանքի պատարագի համար, ու իւղին ճաշակը ընդոծ ընդոծ, և զանոնք Տէրոջը առջեւ երեւցնելու բնձոյ պիտի բնէ։ 13—Ու գառը պիտի մորթէ մեղքի պատարագին ու ողջակէզին մորթուած տեղը, սուրբ տեղը ընդոծ. վասն զի յանցանքի պատարագը մեղքի պատարագին պէս քահանային է. ամենայն սրբութիւն է։ 14—Ու քահանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու քահանան մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ պիտի դնէ։ 15—Ու քահանան իւղին ճաշակէն ետքը ձախ ձեռքին պիտի առնէ, ու իր ձախ ձեռքին մէջ թաթխէ։ 16—Ու քահանան աջ մատը իր ձախ ձեռքին մէջ եղած իւղին պիտի թաթխէ, ու իր մատովը Տէրոջը առջեւ եօթը անգամ սրսկէ այն իւղէն։ 17—Ու քահանան իր ձեռքին մէջ մնացած իւղն մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի պատարագին արիւնը եղած տեղին վրայ պիտի դնէ։ 18—Ու քահանան իր ձեռքին մէջ մնացած իւղը մաքրուելու մարդուն գլխուն վրայ պիտի դնէ, ու անոր համար քաւութիւն ընծոյով։ 19—Ու քահանան մեղքի պատարագը պիտի մատուցանէ, և իր անմաքրութենէն մաքրուելու մարդուն համար քաւութիւն ընէ, ու անկէ հետ ողջակէզը մորթէ։ 20—Ու քահանան ողջակէզը ու հացի ընծան սեղանին վրայ պիտի մատուցանէ, ու անոր համար քաւութիւն ընէ, և անիկա պիտի մաքրուի։

21—Ու եթէ անիկա ազքատ ըլլայ ու այնչափին իր կարողութիւնը չհասնի, այն ատեն անոր քաւութիւն ընելու համար երեքցնելու յանցանքի պատարագի գառնուկ մը, և հացի ընծայի համար իւղով չորուած տասանորդ մը բարակ ալիւր ու ճաշակ մը իւղ պիտի առնէ. 22—Ու երկու տատրակ կամ պատնէի երկու ձագ, զորն որ գտնէ, և մէկը մեղքի պատարագ ու միւսը ողջակէզ ըլլայ։ 23—Ու ութերորդ օրը իր մաքրուելուն համար զանոնք քահանային պիտի բերէ ժողովքի խարանին դուռը Տէրոջը առջեւ։ 24—Ու քահանան պիտի առնէ յանցանքի պատարագին գառնուկը ու իւղին ճաշակը, և զանոնք Տէրոջը առջեւ երեւցնելու բնծայ պիտի նայեցնէ։ 25—Ու յանցանքի պատարագին գառնուկը պիտի մորթէ, ու քահանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի առնէ, ու մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, և անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ դնէ։ 26—Ու քահանան իւղէն իր ձախ ձեռքին մէջ պիտի թաթխէ. 27—Ու քահանան իր աջ մատովը իր ձախ ձեռքին մէջ եղած իւղէն Տէրոջը առջեւ եօթը անգամ պիտի սրսկէ. 28—Ու քահանան իր ձեռքին մէջ եղած իւղէն մաքրուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ, ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ, և անոր աջ ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի պատարագին արիւնը եղած տեղին վրայ պիտի դնէ. 29—Ու քահանան իր ձեռքին մէջ մնացած իւղը մաքրուելու մարդուն գլխուն վրայ պիտի դնէ՝ Տէրոջը առջեւ անոր համար քաւութիւն ընելով։ 30—Ու առաջիներէն կամ ապաւենի ձագերէն մէկը, զորն որ գտնէ. 31—Այսինքն որ որ իր ձեռքը հասնի, մէկը մեղքի պատարագի համար և միւսը ողջակէզի համար՝ հացի ընծային հետ մէկտեղ պիտի մատուցանէ. և քահանան մաքրուելու մարդուն համար քաւութիւն ընէ Տէրոջը առջեւ, 32—Բարաւթեան ախտ ունեցողին ու իր մաքրուելուն համար կարգաւթիւն չունեցողին օրէնքը այս է։

33—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 34— Երբ հանէք Քանանաց երկիրը՝ զոր ձեզի ստացուած ժառանգութիւն կու տամ, և ձեր ստացուածքը երկրին մէկ տանը մէջ բարաւթեան հարուածը տայ, 35—Այն տանը տէրը պիտի գայ, ու իմացնէ քահանային՝ ըսելով, Ինձի կ'երեւայ որ տանս մէջ ախտ կայ։ 36—Ու քահանան պիտի հրամայէ որ տունը պարպեն, դեռ ինք տեսնելու երթայ, որպէս չի տանը մէջ եղած բաները ամէնն ալ տունէն անմաքուր չըլլայ. և անկէ հետ քահանան տունը տեսնելու պիտի մտնէ. 37—Ու ախտին նշոնները պիտի նայի, ու եթէ ախտը տանը պատերուն վրայ փչէ մը կանաչած կամ կարմրած փոս տեղեր ըլլար է, ու տեսքն պատին երեւէն խորունկ կ'երեւան, 38—Այն տանէն քահանան տունէն պիտի ելլէ տանը դուռը, և եօթը օր տունը պիտի գոցէ։ 39—Ու եօթնեորդ օրը քահանան նորէն պիտի գայ ու նայի. և եթէ ախտը տանը պատերուն վրայ տարածած է, 40—Անի տանէն քահանան պիտի հրամայէ որ ախտացեալ քարերը հանեն, և քաղաքէն դուրս անմաքուր տեղ մը նետեն զանոնք։ 41—Ու տանը ներքեւն չորթնեն փերել պիտի տայ, ու անոնց փետրած հողը քաղաքին դուրսիցին անմաքուր տեղ մը պիտի թափեն. 42—Ու ուրիշ քարեր պիտի առնեն ու այն քարերուն տեղը դնեն, և ուրիշ հող պիտի առնեն ու տունը ծեփեն. 43—Ու եթէ քարերը հանելէ ետքը ու տունը փերելէ և ծեփելէ ետքը ախտը նորէն

*Ա յախճէ, տակ

գայ ու տանը մէջ երեւան կէլէ, 44— Այն տաճն քահանան պիտի գայ ու նայի. և եթէ տխաւ տանը մէջ տարածուած է, տանը մէջ բորոտած բռնուածքն կայ. անմաքուր է այն, 45—ու տուներ, այսինքն անոր քարերը ու փայտերը ու տանը բոլոր հողը, փլցնէ և քաղաքին դուրսիդին անմաքուր տեղ մը հանէ, 46—ու ով որ այն տունը մտնէ անոր բոլոր գոցուած օրերը, մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ, 47—ու այն տունը պառկողը իր հագուկներըը պիտի լուայ, ու այն տանը մէջ հաց ուտողը իր հագուկներըը պիտի լուայ, 48— ու եթէ քահանան գայ ու նայի որ տունը ծեփուելէն հետը տխաւ տանը մէջ տարածուած չէ, այն տունն քահանան այն տանը մաքուր ըլլալը ծանուցանէ, վասն զի տխաւ բժշկուած է. 49—ու տանը մաքրութիւնը համար երկու թռչուն ու եղևնափայտ և կրկնակի կարմիր ու զոպայ պիտի առնէ, 50—ու պիտի մորթէ թռչուններն մէկը հողի ամանի մը մէջ կենդանի յուրի վրայ, 51—ու եղևնափայտը ու զոպան և կրկնակի կարմիրը ու ողջ թռչունը պիտի առնէ, ու զանոնք մորթուած թռչունին արեանը և այն կենդանի յուրին մէջ պիտի թաթխէ, ու եօթը անգամ տանը վրայ սրսկէ. 52—ու թռչունին արիւնովը ու այն կենդանի յուրվ և այն ողջ թռչունով ու եղևնափայտով և զոպայով ու կրկնակի կարմիրով պիտի մաքրէ տունը. 53—ու ողջ թռչունը քաղաքին դուրսիդին դէպ ի դաշտը պիտի արձակէ, ու տանը համար քաւութիւն ընէ. և պիտի մաքրուի այն։

54—Բոլոր բորոտութեան տխաին ու դանձութեան, 55—ու հանդերձի կամ տան մը բորոտութեան, 56—ու ուռնցքի ու փոսի և պղպջակի օրէնքը այս է։ 57—*Թէ ե՛րբ մը ու ե՛րբ տաճն անմաքուր ըլլալը ու ե՛րբ տաճն անոր մաքրուիլը որոշելուն համար՝ բորոտութեան օրէնքը այս է։

*Կամ, Թէ մը ե՛րբ անմաքուր է ու ե՛րբ մաքրուր է, ինչ ըներէ

Գլ. ԺԴ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 2—Խօսեցէք Իսրայէլի որդիներուն ու ըսէք անոնց, Երբ մարդու մը մարմնին ծորում ըլլայ, անոր ծորումը անմաքուր է։ 3—Ու իր ծորումին ժամանակը իր անմաքրութիւնը այս պիտի ըլլայ. Երէ իր մարմինին իր ծորումը վազէ, կամ իր մարմինը իր ծորումին գոցուի, այս է իր անմաքրութիւնը։ 4—Ամէն անկողին՝ որուն վրայ ծորում ունեցողը կը պառկի, անմաքուր է. և ամէն բան՝ որուն վրայ նստի, անմաքուր պիտի ըլլայ։ 5—Ու անոր անկողինին դպչող մարդը իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 6—Ու ծորում ունեցողին նստած բանին վրայ նստողը իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 7—Ու ծորում ունեցողին մարմինին դպչողը իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 8—Ու ծորում ունեցողը մաքուր մարդու մը վրայ թքնելու ըլլայ, անիկա իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 9—Ու ամէն թամբ որուն վրայ ծորում ունեցողը կը հեծնի, անմաքուր պիտի ըլլայ։ 10—Ու ամէն անոր տակ եղած բանին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ. ու զանոնք վերցնողը իր հագուկներըը պիտի լուայ, և ինք ջրով լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։ 11—Ու ծորում ունեցողը իր ձեռքը չլուքը չմաքած՝ որու որ դպչելու ըլլայ, անիկա իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 12—Ու ծորում ունեցողին դպած հողի ամանը պիտի կոտրուի, ու ամէն փայտէ աման ջրով պիտի խոթուի։

13—Ու երբ ծորում ունեցողը իր ծորումէն մաքրուի, իր մաքրուելուն համար եօթը օր պիտի համրէ իրեն, և իր հագուկներըը լուայ, ու իր մարմինը կենդանի ջուրի մէջ լուայ, և մաքուր

պիտի ըլլայ։ 14—Ու ութերորդ օրը երկու տատրակ կամ ազաւնիի երկու ձագ պիտի առնէ իրեն, ու Տէրոջը առջև ժողովքի խորանին դուռը գայ, և զանոնք քահանային տայ։ 15—Ու քահանան անոնց մէկը մեղքի պատարագ, ու միւսը ողջակէզ պիտի ընէ, և քահանան Տէրոջը առջև քաւութիւն ընէ անոր իր ծորումին համար։

16—Ու եթէ մարդու մը զաւակութեան սերմը իրմէ ելլելու ըլլայ, իր բոլոր մարմինը ջրով պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 17—Ու ամէն հագուկ, ու ամէն մորթ՝ որուն վրայ զաւակութեան սերմ կայ, ջրով պիտի լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 18—Ու երբ մարդ մը կնոջը հետ զաւակութիւն համար պառկի, անոնք Երէսուն և ջրով պիտի լուացուին, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլան։

19—Ու եթէ կին մը ծորում ունենայ, — անոր մարմինին ծորումը արիւն է, եօթը օր զատուած պիտի կենայ. և ամէն անոր դպչողը մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 20—Ու անոր զատուած տեղը ինչ բանի վրայ որ պառկի, այն բանը անմաքուր պիտի ըլլայ, և ինչ բանի վրայ որ նստի, այն բանը անմաքուր պիտի ըլլայ։ 21—Ու ամէն անոր անկողինին դպչողը իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 22—Ու ով որ դպչի բանի մը՝ որուն վրայ անիկա նստաւ, իր հագուկներըը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 23—Ու անոր անկողինին դպչողը, կամ բանի մը՝ որուն վրայ անիկա կը նստի, մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։ 24—Ու եթէ մարդ մը անոր հետ պառկի, այնպէս որ անոր պոժութիւնը իրեն դպչի, այն մարդը եօթը օր անմաքուր պիտի ըլլայ, և ամէն անկողին որուն վրայ անիկա պառկի՝ անմաքուր ըլլայ։

25—Ու կին մը՝ եթէ զաւակութեան տեղը չկտած, իր արեանը ծորումը շատ օրեր վազէ, կամ իր զաւակութեան տեղը վազելու ըլլայ, իր անմաքրութեանը ծորումին բոլոր օրերը իր զաւակութեան օրերուն պէս պիտի ըլլայ. անիկա անմաքուր է։ 26—Անոր ծորումին բոլոր օրերը ամէն անկողին, որուն վրայ անիկա կը պառկի, իր զաւակութեան անկողինին պէս պիտի ըլլայ իրեն, և ինչ բանի վրայ որ կը նստի, իր զաւակութեան անմաքրութեանը պէս անմաքուր պիտի ըլլայ։ 27—Ու ամէն անոնց դպչողը անմաքուր պիտի ըլլայ, ու իր հագուկներըը պիտի լուայ, և ինք ջրով լուացուի, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ։ 28—Ու եթէ իր ծորումէն մաքրուի, այն ատեն եօթը օր պիտի համրէ իրեն, ու անկէ ետև մաքուր ըլլայ։ 29—Ու ութերորդ օրը երկու տատրակ կամ ազաւնիի երկու ձագ պիտի առնէ իրեն, ու ժողովքի խորանին դուռը քահանային պիտի բերէ զանոնք։ 30—Ու քահանան մէկը մեղքի պատարագ ու միւսը ողջակէզ պիտի ընէ. և քահանան Տէրոջը առջև քաւութիւն պիտի ընէ անոր իր անմաքրութեանը ծորումին համար։

31 — Այսպէս Իսրայէլի որդիները իրենց անմաքրութենէն պիտի զգուշացնէք. որպէս չի իրենց մէջ եղած իմ խորանս պղծելով՝ իրենց անմաքրութեան պատճառաւ չմեռնին։ 32—Ծորում ունեցողին, և իրմէ զաւակութեան սերմը ելլելով անմաքուր եղողին, 33—Ո. իր զաւակով հիւանդ եղող կնոջ, և ծորում ունեցող մարդու կամ կնոջ, ու անմաքուր կնոջ հետ պառկող մարդու օրէնքը այս է։

Գլ. ԺԵ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ Ահարոնի երկու որդիներուն մեռնելէն ետքը, որովհետև Տէրոջը առջև մօտեցան ու մեռան։ 2—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Խօսէ քու եղբօրդ Ահարոնի որ ամէն ատեն սուրբ տեղը, վարագուրին ներսիդին, տապանակին վրայ եղած քաւութիւնին առջև չմտնէ, որպէս զի չմեռնի. վասն զի ամպի մէջ պիտի երեւնամ քաւութիւնին վրայ։ 3—Ա-

*Նէբ. զատիկ

հարան այս քառնէրով պիտի մանէ արբանը. մեղքի պատարագի համար զատ բակով մը, և ողջակէզի համար խոյով մը։ 4—Կատէ սուրբ շապիկ պիտի հագնի, և իր մարմինին վրայէն կատէ վարտիք անենայ, ու իր մէջքը կատէ գօտի կապէ, և իր գլուխը կատէ խոյր դնէ. ասոնք սուրբ զգեստներ են. ուստի իր մարմինը լոզով պիտի լուայ, ու զանոնք հագնի։ 5—Ու Իսրայէլի որդիներուն ժողովքէն մեղքի պատարագի համար այծեքէն երկու նոխազ, ու ողջակէզի համար մէկ խոյ պիտի առնէ։ 6—Ու Ահարան իր մեղքի պատարագին զոհարակը պիտի մատուցանէ, և իրեն համար ու իր տանը համար քաւութիւն պիտի ընէ։ 7—Ու երկու նոխազը պիտի առնէ, ու Տէրոջը առջև ժողովքի խորանին դուռը կեցնէ, 8—ու Ահարան այն երկու նոխազներուն վրայ վիճակներ պիտի ձգէ. մէկ վիճակը Տէրոջը համար՝ ու մէւս վիճակը ազազ արձակուելու նոխազին համար։ 9—Ու Ահարան պիտի մօտեցնէ այն նոխազը որուն վրայ Տէրոջը վիճակը ելլայ, ու մեղքի պատարագ ընէ զանիկա։ 10—Ու այն նոխազը որուն վրայ ազազ արձակուելու վիճակը ելլայ, Տէրոջը առջև ողջ պիտի կեցնեցնի՝ որպէս զի անով քաւութիւն ընէ, — ազազ արձակելու համար զանիկա անապատը դրկէ։

11—Ու Ահարան իր մեղքի պատարագին զոհարակը պիտի մատուցանէ, և իրեն համար ու իր տանը համար քաւութիւն պիտի ընէ, և իր մեղքի պատարագին զոհարակը մորթէ։ 12—Ու Տէրոջը առջև եղած սեղանին վրայէն բովպատը լեցուն կրակի կայծեր պիտի առնէ, ու բաշակ ծեծուած անուշահոտ խունկին իր ձեռքերը լեցնէ, ու վարագուրին ներսիդին բերէ։ 13—Ու խունկը կրակին վրայ պիտի դնէ Տէրոջը առջև, ու խունկին *մէն իր վկայութիւնին վրայի քաւութիւնը պիտի ծածկէ, որպէս զի չմեռնի։ 14—Ու զոհարակին արիւնէն պիտի առնէ, ու իր մատով քաւութիւնին վրայ արեւելեան կողմը օրսկէ, և իր մատով արիւնէն քաւութիւնին առջև եօթը անգամ օրսկէ։

15—Ու ժողովուրդին համար մեղքի պատարագ ըլլալու նոխազը պիտի մորթէ, ու անոր արիւնը վարագուրին ներսիդին պիտի բերէ. և զոհարակին արիւնովը ըրածին պէս ընէ անոր արիւնովը, այնինչ քաւութիւնին վրայ ու քաւութիւնին առջև օրսկէ զայն։ 16—Ու սրբարանին համար քաւութիւն պիտի ընէ՝ Իսրայէլի որդիներուն անմաքրութիւններուն ու անոնց բոլոր մեղքերուն յանցանքներուն պէտէ՝ նոյնպէս պիտի ընէ ժողովքի խորանին համար ալ, որ անոնց հետ — անոնց անմաքրութիւններուն մէջ կը կենայ։ 17—Ու սրբարանը քաւութիւն ընելու մտած ատենն, մինչև որ իրեն համար ու իր տանը համար և Իսրայէլի բոլոր ժողովքին համար քաւութիւն ընէ ու դուրս ելլէ, ժողովքի խորանին մէջ մարդ մը պիտի չըլլայ։ 18—Եւ քով Տէրոջը առջև եղած սեղանը պիտի ելլէ, ու անոր համար քաւութիւն ընէ. և զոհարակին արիւնէն ու նոխազին արիւնէն առնէ, և սեղանին եղջիւրներուն վրայ չուրջանակի դնէ։ 19—Ու արիւնէն իր մատով եօթը անգամ անոր վրայ պիտի օրսկէ. ու Իսրայէլի որդիներուն անմաքրութիւններէն մաքրէ, ու սուրբ ընէ զայն։

20—Ու սրբարանին ու ժողովքի խորանին և սեղանին համար քաւութիւն ընելը լմնցնելէն եօթը, ողջ նոխազը պիտի մատնէ։ 21—Ու Ահարան իր երկու ձեռքերը ողջ նոխազին գլխուն վրայ պիտի դնէ, ու Իսրայէլի որդիներուն բոլոր անօրէնութիւնները և անոնց բոլոր յանցանքները և բոլոր մեղքերը պիտի խոստովանի անոր վրայ. և զանոնք նոխազին գլխուն վրայ դնելով՝ յարմար մարդու մը ձեռքով անապատը դրկէ։ 22—Ու նոխազը անոնց բոլոր անօրէնութիւնները իր վրայ անբնակ երկիր մը պիտի տանի. և նոխազը անապատին մէջ թող տայ նոխազը։

23—Ու Ահարան ժողովքի խորանը պիտի մտնէ, ու սրբարանը մտնելու ժամանակին հագած կտաւէ հանդերձները հանէ, և զանոնք հոն դնէ։ 24—Ու սուրբ տեղը իր մարմինը ջրով պիտի լուայ, ու իր հանդերձները հագնի, և ելլէ իր ողջակէզը ու ժողովուրդին ողջակէզը մատուցանէ, ու իրեն համար և ժողովուրդին համար քաւութիւն ընէ։ 25—Ու մեղքի պատարագին ճարպը սեղանին վրայ պիտի այրէ։

26—Ու նոխազը ազազ արձակելու տանողը իր հանդերձները պիտի լուայ, ու իր մարմինը ջրով լուայ, և ետքը բանակը մտնէ։

27—Ու այն մեղքի պատարագին զոհարակը ու մեղքի պատարագին նոխազը, որոնց արիւնը քաւութիւն ընելու համար սուրբ տեղը բերուեցաւ, բանակէն դուրս պիտի հանեն, և անոնց մորթերը ու անոնց միսերը և անոնց աղբը կրակով այրեն։ 28—Ու զանոնք այրողը իր հանդերձները պիտի լուայ, ու մարմինը ջրով լուայ, ու ետքը բանակը մտնէ։

29—Ու այս ձեզի յաւիտենական կանոն ըլլայ, որ եօթներորդ ամսուն մէջ՝ ամսուն տասներորդ օրը ձեր անձերը պիտի խոնարհեցնէք, ու բնաւ գործ մը չգործէք, թէ՛ երկրացին և թէ՛ ձեր մէջ գաղուստ օտարականը։ 30—Քանզի այն օրը *հաճոյ ձեզի քաւութիւն պիտի ընէ ձեզ մաքրելու համար, որպէս զի ձեր բոլոր մեղքերէն մաքրուիք Տէրոջը առջև։ 31—Այն ձեզի հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ, և յաւիտենական կանոնով մը պիտի խոնարհեցնէք ձեր անձերը։ 32—Ու իր հօրը տեղ քահանայութիւն ընելու համար օծուած ու օրհնուած քահանան քաւութիւնը պիտի ընէ, և հագնի կատէ հանդերձները, այնինչն սուրբ հանդերձները։ 33—Ու սուրբ տեղին համար քաւութիւն պիտի ընէ, և ժողովքի խորանին համար ու սեղանին համար քաւութիւն ընէ, և քահանաներուն ու ժողովքին բոլոր ժողովուրդին համար քաւութիւն ընէ։ 34—Ու ասիկա ձեզի յաւիտենական կանոն ըլլայ Իսրայէլի որդիներուն համար իրենց բոլոր մեղքերուն քաւութիւն ընելու տարին անգամ մը։ Ու անոնք Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս ըրաւ։

Գլ. ԺԷ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Ահարանի ու անոր որդիներուն և Իսրայէլի բոլոր որդիներուն, ու ըսէ անոնց, Այս է զոր Տէրը պատուիրեց՝ ըսելով, 3—Իսրայէլի տունէն ով որ արջառ մը կամ ոչխար մը և կամ այծ մը բանակին մէջ մորթէ, կամ բանակէն դուրս մորթէ, 4—ու Տէրոջը խորանին առջև չբերէ զանիկա Տէրոջը զոհ մատուցանելու համար Տէրոջը զոհարանին դուռը չբերէ, արիւն պիտի սեպուի այն մարդուն. անիկա արիւն թափած է, ու այն մարդը իր ժողովուրդին մէկէն պիտի կորսուի։ 5—Որպէս զի Իսրայէլի որդիները այն զոհերը զորս հիմա դաշտի մէջ կը մորթեն, Տէրոջը բերեն, այսինքն ժողովքի խորանին դուռը քահանային բերեն, և խաղաղութեան զոհերու համար զանոնք Տէրոջը զոհեն, 6—ու քահանան պիտի օրսկէ արիւնը ժողովքի խորանին դուռը՝ Տէրոջը սեզանին վրայ, ու ճարպը անոյշ հոտի համար այրէ Տէրոջը առջև։ 7—Ու իրենց զոհերը ա՛լ չզոհեն գիւեռնուն, որոնց ետեւէն եբէ՛լ պոռնկութիւն ըրին. ասիկա անոնց յաւիտենական կանոն պիտի ըլլայ իրենց ազգերուն մէջ։ 8—Ու պիտի ըսես անոնց, Իսրայէլի տունէն կամ ձեր մէջ պանդխտացած օտարականներէն մարդ մը ողջակէզ կամ զոհ մատուցանելու ըլլայ, 9—ու զանիկա Տէրոջը մատուցանելու համար ժողովքի խորանին դուռը չբերէ, այն մարդը իր ժողովուրդին մէկէն պիտի կորսուի։

10—Ու Իսրայէլի տունէն կամ ձեր մէջ պանդխտացած օտարականներէն մարդ մը ինչ-ի՛ցէ արիւն ուտելու ըլլայ, իմ երեսս այն արիւն ուտող անձին վրայ պիտի անկեմ, ու զանիկա իր ժողովուրդին մէկէն կորսնցնեմ. 11—վասն զի մարմինին կենդանութիւնը արիւնին մէջ է. և ես ձեզի տուի զայն, որպէս զի սեզանին վրայ ձեր հոգիներուն համար քաւութիւն ընէք. քանզի հոգիին համար քաւութիւն ընողը արիւնն է։ 12—Ասոր համար Իսրայէլի որդիներուն ըսի, Ձեզմէ մի՛կը արիւն

*Եբր. ամպը

*Եբր. ամպը

չուտէ. ձեր մէջ պանդխտացած օտարականն ալ պիտի չուտէ։ 13—Ու խոյերէն ալ արդիւնքին կամ ձեր մէջ պանդխտացած օտարականէն մէկը ուտելու անասունի կամ թռչունի որս որսալու ըլլայ, անոր արիւնը պիտի թափէ, ու հողով ծածկէ զայն։ 14—Վասն զի ամէն մարմինի կենդանութիւնը իր արիւնն է. անոր համար ըսի իսրայէլի որդիներուն թէ, Ձեր մարմինի մը արիւնը պիտի չուտէք, քանզի ամէն մարմինի կենդանութիւնը իր արիւնն է. ով որ ուտէ զայն՝ պիտի կտրատի։ 15—Ու երկրացիներէն կամ օտարականներէն՝ դի կամ գիշատած ուտող ամէն մարդ իր լաթերը պիտի լուայ, ու ինք ջրով լուացուի, և մինչեւ իրիկուն անմաքուր ըլլայ, ու եօթը մաքուր ըլլայ։ 16—Բայց եթէ չլուայ զանոնք, և իր մարմինը չլուայ, այն ատեն իր անօրէնութիւնը պիտի կրէ։

Գլ. ԾԸ

Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Ես եմ Եհովա ձեր Աստուածը։ 3—Ա՛յն ձեր բնակած եգիպտոսի երկրին գործին պէս պիտի չընէք. և Քանանա երկրին գործին պէս՝ ուր ձեզ պիտի առնեմ, պիտի չընէք, ու անոնց կանոններուն համեմատ պիտի չգործէք։ 4—Իմ դատաստաններս պիտի ընէք, և իմ կանոններս պահէք, որպէս զի անոնցմով գոլնք. Ես եմ Տէրը, ձեր Աստուածը։ 5—Ուստի իմ կանոններս ու իմ դատաստաններս պիտի պահէք, զորոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի. Ես եմ Տէրը։

6—Բնաւ մէկը իր մօտ ազգականին չմօտենայ՝ անոր մերկութիւնը բանալու համար. Ես եմ Տէրը։ 7—Քու հօրդ մերկութիւնը կամ քու մօրդ մերկութիւնը չբանաս. անիկա քու մայրդ է, անոր մերկութիւնը չբանաս։ 8—Քու հօրդ կնոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու հօրդ մերկութիւնն է։ 9—Քու հօրդ աղջկան կամ քու մօրդ աղջկան, քու քրոջդ, մերկութիւնը, թէ՛ ատանը մէջ ծնած ըլլայ թէ՛ դուրսը ծնած, անոնց մերկութիւնը չբանաս։ 10—Քու որդւոյդ աղջկան կամ քու աղջկանդ աղջկան մերկութիւնը՝ անոնց մերկութիւնը չբանաս, վասն զի անոնց մերկութիւնը քուկդ է։ 11—Քու հօրդ կնոջ աղջկան մերկութիւնը, քու հօրմէդ ծնած քու քոյրդ ըլլալուէն անոր մերկութիւնը չբանաս։ 12—Քու հօրդ քրոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու հօրդ ազգականն է։ 13—Քու մօրդ քրոջ մերկութիւնը չբանաս, վասն զի անիկա քու մօրդ ազգականն է։ 14—Քու հօրդ եղբօր մերկութիւնը չբանաս, անոր կնոջ չմօտենաս. անիկա քու հօրեքրոջդ է։ 15—Քու հարսդ մերկութիւնը չբանաս. անիկա քու որդւոյդ կինն է, անոր մերկութիւնը չբանաս։ 16—Քու եղբօրդ կնոջ մերկութիւնը չբանաս. անիկա քու եղբօրդ մերկութիւնն է։ 17—Կնոջ մը ու անոր աղջկան մերկութիւնը չբանաս. և անոր որդւոյն աղջիկը կամ անոր աղջկան աղջիկը չառնես՝ անոնց մերկութիւնը բանալու համար, անոնք անոր ազգականներն են. անօրէնութիւն է այն։ 18—Ու կին մը իր քրոջ հետ չառնես ընդդիմանալ իր կենդանութեան ատեն վշտացնելու համար՝ մերկութիւնը բանալով։

19—Ու իր անմաքրութեան ատեն զատուած կնոջ մը չմօտենաս՝ անոր մերկութիւնը բանալու։ 20—Ու զուգաւորութեան համար քու դրացիդ կնոջ հետ չպառկիս, անոր հետ պղծուելով։ 21—Քու սերունդդ Մողոքի համար չանցընելու չափուս, և քու Աստուծոյդ անունը չպղծես. Ես եմ Տէրը։ 22—Ու արու հետ՝ կնոջ հետ պառկիլու պէս չպառկիս՝ պղծութիւն է այն։ 23—Ու բնաւ անասունի մը հետ չզուգաւորուս, անոր հետ պղծուելով։ ու բնաւ կին մը անասունի մը առջեւ չկայնի՝ անոր հետ զուգաւորելու. գարշելութիւն է այն։

24—Ասոնց ամէնովքն ալ բնաւ չպղծուիք, վասն զի բոլոր ասոնցմով պղծուեցան այն ազգերը զորոնք ձեր առջեւէն պիտի վռնտեմ։ 25—Ու այն երկիրն պղծուելով՝ անոր անօրէնութիւնը անոր վրայ պիտի հասցնեմ, ու այն երկիրը իր բնակիչները պիտի փսխէ։ 26—Ուստի դուք իմ կանոններս ու դատաստաններս պահէք, ու այս պղծութիւններէն ամէնքն ալ չընէք, ոչ երկրացին, ոչ ալ ձեր մէջ պանդխտացող օտարականը. 27—Քանզի ձեզմէ առաջ եղած այն երկրին մարդիկը այս բոլոր պղծութիւնները ըրին, ու այն երկիրը պղծուեցաւ։ 28—Որ՝ երկիրը ձեզ ալ զայն փսխէ պղծած ատեննիդ, ինչպես ձեզմէ առաջ եղած ազգերը փսխեց։ 29—Քանզի ով որ այս ամէն պղծութիւններէն մէկը ընելու ըլլայ, զայն ընող անձինք իրենց ժողովուրդին միջէն պիտի կտրատին։ 30—Ուստի իմ հրամաններս պահէք, որպէս զի ձեզմէ առաջ գործուած պիղծ սովորութիւններէն դէպ չընէք, ու անոնցմով չպղծուիք. Ես եմ Տէրը ձեր Աստուածը։

Գլ. ԾՓ

Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովին ու ըսէ անոնց, Դուք սուրբ եղէք, քանզի Ես, ձեր Եհովա Աստուածը, սուրբ եմ։

3—Ձեր ամէն մէկը իր մօրմէն ու իր հօրմէն պիտի վախնայ. և իմ շաբաթներս պիտի պահէք. Ես եմ Տէրը ձեր Աստուածը։

4—Կուռքերուն մի դառնաք, և ձեզի ձուլածոյ աստուածներ մի շինէք. Ես եմ Տէրը ձեր Աստուածը։

5—Ու եթէ խաղաղութեան զոհ մատուցանէք Տէրոջը՝ ընդունելի ըլլայ զայն որ ընդունելի ըլլայ։ 6—Ձեր մատուցած օրերնիդ և հետևեալ օրն ալ պիտի ուտուի. ու երրորդ օրուան մնացածը կրակով պիտի այրուի։ 7—Ու եթէ անկէ երրորդ օրը ուտուելու ըլլայ, անիկա պիղծ է, պիտի չընդունուի։ 8—Ու զանիկա ուտողը իր անօրէնութիւնը պիտի կրէ, վասն զի Տէրոջը սուրբ բանը պղծեց, ու այն անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի։

9—Ու ձեր երկրին հունձքը հնձելու ատեննիդ՝ քու արտիդ եզերքը լման չհնձես, ու քու հունձքիդ բնկած հասկերը չժողվես. 10—Ու քու այգիդ մէջ ձոռաքաղ չընես, այսինքն այգիդ մէջ մնացած ողկոյզները չքաղես. զանոնք ազքատին և օտարականին համար թողուս. Ես եմ Տէրը ձեր Աստուածը։

11—Գողութիւն մի ընէք. սուտ մի ըսուցէք, և մէկզմէկ մի խաբէք։ 12—Ես իմ անունովս սուտ երդումով մի ընէք, ու ձեր Աստուծոյն անունը մի պղծէք. Ես եմ Տէրը։ 13—Քու դրացիդ զրկանք մի ընէր, և յափշտակութիւն մի ընէր. քեզի վարձքով բանուորին ցերեկ վարձքը մինչեւ առաւօտ քու քովդ չմնայ։

14—Խուլին մի հայհոյեր, ու կոյրին առջեւ գայթակղութիւն մի դներ, հապա քու Աստուծմէդ վախցիր. Ես եմ Տէրը։

15—Դատաստանի մէջ անիրաւութիւն մի ընէք. ազքատին աչառութիւն մի ըներ, և մեծը մի չազդուրէր. քու դրացիդ արդարութեամբ դատէ։

16—Քու ժողովրդիդ մէջ չպտրտիս. քու ընկերիդ արիւնը չմտնես. Ես եմ Տէրը։

17—Սղոտուդ քու սրտիդ մէջ չատես. քու դրացիդ անպատճառ յանդիմանես, որպէս զի անոր համար մեղք չկրես։ 18—Վրէժ չառնես, և քու ժողովրդիդ որդիներուն դէմ չպահես, հապա քու ընկերդ քեզ պէս սիրես. Ես եմ Տէրը։

19—Իմ կանոններս պահէք. քու անասունիդ մէկ տեսակը ուրիշ տեսակի հետ զուգաւորել չտաս. քու արտիդ մէջ զանազան սերմ չցանես. և երկու նիթէ գործուած այլախառն հանգերձ չհագնիս։

20—Ու եթէ մէկը կնոջ մը հետ պառկելով զուգաւորութիւն ընէ, ու անիկա մէկու մը նշանածած ազախինն է ու փրկուած չէ, ոչ ալ անոր ազատութիւն արուած, անոնք պիտի պատժուին. անոնք պիտի չմեռնին, վասն զի կինը ազատ չէր։ 21—Ու մարդը իր յանցանքին պատարագը Տէրոջը պիտի բերէ ժողովքի խորանին դուռը, խոյ մը յանցանքի պատարագի համար։ 22—Ու քահանան յանցանքի պատա-

բագին խոյովը Տէրոջը առջև քաւութիւն պիտի ընէ անոր իր բրած մեղքին համար. և անոր բրած մեղքը պիտի ներուի իրեն։

23—Ու երբ այն երկիրը մտնէք, ու ամէն տեսակ ծառեր անկէ՝ ուտելու համար, այն ատեն անոր պտուղը չի վաստակած պէս անմաքուր պիտի սեպէք. անիկա ձեզի երեք տարի չի վաստակած պէս սեպուելով պիտի չուտուի։ 24—Ու չորրորդ տարին անոր բոլոր պտուղը Տէրը փառաւորելու համար սուրբ պիտի ըլլայ։ 25—Ու հինգերորդ տարին անոր պտուղը պիտի ուտէք, որպէս զի իր արդիւնքը ձեզի համար աւելցնէ. ես եմ Տէրը ձեր Աստուածը։ 26—Մի՛ուր արիւնովը չուտէք. չհմայիք և գուշակութիւն չընէք։ 27—Ձեր գլխներուն եղերքի մազերը չկտրէք, ու քու մօրուքիդ եղերքը չաւրնիր։ 28—Ու մեկուն մահուան համար ձեր մարմինին վրայ կտրածներ չընէք, ու ձեր վրայ գիրի նշան չընէք. ես եմ Տէրը։

29—Աղջիկդ պոռնկի ընելով մի պղծեր, որպէս զի երկիրը պոռնկութեան մէջ չիյնայ, ու երկիրը չաւրութիւնով չլեցուի։

30—Իմ սրբարանս պահէք, ու իմ սրբարանս յարգէք. ես եմ Տէրը։ 31—Կհանկիներուն մի նայիք, և հմայողներուն քով մի հարցնէք, որպէս զի անոնցմով չպղծուիք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

32—Մազը ճերմակածին առջև ոտք կռիւը, և ծերը պատուէ, ու քու Աստուծմէդ վախցիր. ես եմ Տէրը։

33—Ու երբ օտարական մը ձեր երկրին մէջ ձեր քով պանդխտանալու գայ, չնեղէք զանիկա։ 34—Ձեր քով պանդխտացող օտարականը ձեր երկրին մէջ տակի պէս ըլլայ ձեզի և քու անդվ պէս սիրես զանիկա, վասն զի դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ օտարական էիք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

35—Դատաստանի մէջ անիրաւութիւն չընէք. կանոնի մէջ, կշռաքարի մէջ ու չափի մէջ այ։ 36—Ձեր կշռաքարները լման, ձեր կշռաքարերը լման, ձեր արդարն լման ու հիմիներ լման պիտի ըլլայ. ձեզ Եգիպտոսի երկրէն հանող Տէրը, ձեր Աստուածը, ես եմ։ 37—Ու սուի իմ բոլոր կանոններս ու իմ բոլոր դատաստաններս պահէք, և ընէք զանոնք. ես եմ Տէրը։

Գլ. Ի

Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Նաև Իսրայէլի որդիներուն ըսու, Իսրայէլի որդիներէն և Իսրայէլի մէջ պանդխտացող օտարականներէն ով որ իր սերունդէն Մողոքի տայ, անշուշտ պիտի մեռցուի. երկրին ժողովուրդը քարկոծով պիտի քարկոծեն զանիկա։ 3—Ու ես իմ երեսս պիտի մարդուն վրայ պիտի անկնիմ, ու զանիկա իր ժողովուրդին մէջէն կորնցնեմ, վասն զի անիկա իր սերունդէն Մողոքի տուած է՝ իմ սրբարանս պղծելու ու իմ սուրբ անունս անարգելու համար։ 4—Ու եթէ այն մարդը իր սերունդէն Մողոքի տուած ատեներ, երկրին ժողովուրդը չտեսնելու գալով, զանիկա չմեռցնեն, 5—Անոնց ատեն ես իմ երեսս պիտի անկնիմ այն մարդուն վրայ ու անոր բնտանիքին վրայ, և զանիկա և Մողոքի հետ պոռնկութիւն ընելու համար այն մարդուն հետևէն բոլոր գացողները իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորնցնեմ։ 6—Ու վհուկներուն ու հմայողներուն հետևէն *երթալու դարձող մարդուն վրայ ալ երեսս պիտի անկնիմ, ու զանիկա իր ժողովուրդին մէջէն կորնցնեմ։ 7—Ուստի սրբեցէք ձեր անձերը ու սուրբ եղէք, զանի ես եմ Տէրը ձեր Աստուածը։ 8—Ու իմ կանոններս պահեցէք, ու րլէք զանոնք. ես եմ Տէրը որ ձեզ կը սրբեմ։

9—Ով որ իր հայրը կամ իր մայրը անիծէ, անշուշտ պիտի մեռցուի. անիծա՛ կա իր հայրը կամ իր մայրը անիծեց, անոր արիւնը իր վրայ ըլլայ։ 10—Ու ով որ ուրիշ մարդու մը կնոջ հետ չնաքութիւն բնէ, իր դրացին կնոջ հետ չնաքութիւն բնողը անշուշտ պիտի մեռցուի. չնացողն ալ չնացեալն ալ պէտք է մեռցուին։ 11—Ու ով որ իր հօրը կնոջ հետ պառկի, իր հօրը ամերկութիւնը բացած

*Նբ. պառնկելու.

է. անշուշտ երկուքն ալ պիտի մեռցուին, անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։ 12—Ու եթէ մարդ մը իր հարսին հետ պառկի, անշուշտ երկուքն ալ պիտի մեռցուին, գարշութիւն բրին, անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։ 13—Ու եթէ մարդ մը կնոջ հետ արուական պէս արու պառկի, երկուքն ալ պղծութիւն բրին. անշուշտ պիտի մեռցուին, անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։ 14—Ու եթէ մարդ մը կին մը ու անոր մայրը առնէ, անօրէնութիւն է. անիկա ալ անձամբ ալ կրակով պիտի այրուին, որպէս զի ձեր մէջ անօրէնութիւն չըլլայ։ 15—Ու եթէ մարդ մը անասունի հետ պառկի, անշուշտ պիտի մեռցուի, ու անասունը պիտի սպանէք։ 16—Ու եթէ կին մը որևիցէ անասունի հետ զուգաւորելու համար անոր մօտենայ, կինն ալ, անասունն ալ պիտի սպանէս. անոնք անշուշտ պիտի մեռցուին. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։ 17—Ու եթէ մարդ մը իր քոյրը առնէ, իր հօրը աղջիկը կամ իր մօրը աղջիկը, ու անոր ամերկութիւնը տեսնէ, ու աղջիկն ալ անոր ամերկութիւնը տեսնէ, չարութիւն է. անոնք իրենց ժողովուրդին աչքին առջև պիտի կորսուին. անիկա իր քրոջ ամերկութիւնը բացաւ. իր անօրէնութիւնը պիտի կրէ։ 18—Ու եթէ մարդ մը իր պաշտօնին մէջ եղող կնոջ մը հետ պառկի ու անոր ամերկութիւնը բանայ, ինք անոր աղբիւրը բացաւ, կինն ալ իր արեան աղբիւրը բացաւ. երկուքն ալ իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսուին։ 19—Ու քու մօրդ քրոջ կամ քու հօրդ քրոջ ամերկութիւնը չբանաս. վասն զի եթէ ամէր քու ազգականին ամերկութիւնը յանդիման ըլլայ, երկուքս ալ իրենց անօրէնութիւնը պիտի կրեն։ 20—Ու եթէ մարդ մը իր հօրեղբօրը կնոջ հետ պառկի, իր հօրեղբօրը ամերկութիւնը բացաւ. անոնք իրենց մեղքը պիտի կրեն. անզաւակ պիտի մեռնին։ 21—Ու եթէ մարդ մը իր եղբօրը կինը առնէ, պղծութիւն է այն. անիկա իր եղբօրը ամերկութիւնը կը բանայ. անզաւակ պիտի ըլլան։

22—Ուստի իմ բոլոր կանոններս և իմ բոլոր դատաստաններս պահէք, ու ընէք զանոնք, որպէս զի այն երկիրը ուր ձեզ պիտի տանիմ հոն բնակելու. դուրս չփսխէ ձեզ։ 23—Ու պիտի չքալէք այն ազգերուն սովորութիւններովը, զորոնք ձեր առջևէն պիտի վռնտեմ. քանզի այս ամէն բաները ըրին անոնք, ու ես զզուեցայ անոնցմէ. 24—Ու ըսի ձեզի, Անոնց երկիրը դուք պիտի ժառանգէք, ու ես զանիկա ձեզի պիտի տամ ուտացուածք ըլլալու, երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը բղխէ. ես եմ Տէրը, ձեր Աստուածը, որ ձեզ ազգերէն զատեցի ձեզ։ 25—Ուստի մտքերը ու անմտքերը անասուններուն միջեւ, և անմաքուր ու մաքուր թռչուններուն միջեւ տարբերութիւն պիտի դնէք. և ձեր անձերը չպղծէք անասուններով կամ թռչուններով կամ գետնի վրայի բոլոր սողուններով, զորոնք ես զատեցի ձեզի իբրև անմաքուր։ 26—Ու դուք սուրբ պիտի ըլլաք ինծի. քանզի ես Տէրս սուրբ եմ, ու ձեզ ուրիշ ազգերէն զատեցի՝ որպէս զի իմ ըլլաք։

27—Կհսկ կամ հմայող եղողը, քէ՛ այր ըլլայ և քէ՛ կին, անշուշտ պիտի մեռցուի. քարերով քարկոծեն զանոնք. անոնց արիւնը իրենց վրայ ըլլայ։

Գլ. ԻԱ

Ե Տէրը րսաւ Մովսէսի, խօսէ Ահարոնի որդիներուն, քահանաներուն, ու րսէ անոնց, Քահանայ մը մեկուն հարազատը համար անմաքուր չըլլայ իր ժողովուրդին մէջ. 2—Բայց միայն իր մօտ ազգականին համար, այսինքն իր մօրը ու իր հօրը և իր որդւոյն ու իր աղջկան և իր եղբօր համար, 3—Ու իր կոյս քրոջ համար որ մօտ է իրեն ու կրկան արուած չէ, կրնայ անմաքուր ըլլալ։ 4—Անիկա իր ժողովուրդին մէջ գլխաւոր մարդ ըլլալով, անմաքուր պիտի չըլլայ՝ ինքզինքը պղծելով։ 5—Անոնք գլուխնին փեսեալով կամ պիտի չգնեն, և իրենց մօրուքին եզերքը չաւրնին, ու իրենց մարմինին վրայ կըտրածներ չընեն։ 6—Սուրբ պիտի ըլլան իրենց Աստուծոյն. և իրենց Աստուածոյն անունը չպղծեն, վասն զի Տէրոջը պա-

տարապետները ու իրենց Աստուծոյն հացը անունք կը մատուցանեն, ուստի սուրբ պիտի ըլլան։ 7—Պոռնիկ կամ պղծուած կին չառնեն, և իր այրէն արձակուած կին մը չառնեն. վասն զի †ահաւոր սուրբ է իր Աստուծոյն։ 8—Ուստի պիտի սրբես զանիկա, վասն զի քու Աստուծոյդ հացը անիկա կը մատուցանէ. անիկա սուրբ պիտի ըլլայ քեզի, քանզի ես Տէրս, որ ձեզ կը սրբեմ, սուրբ եմ։ 9—Ես է՛ր քահանայի մը ազիկը պոռնկութիւն ընելով պղծուելու ըլլայ, իր հայրը կը պղծէ. անիկա կրակով պիտի այրուի։

10—Ու իր եղբայրներէն մեծ եղող քահանան, որուն գլխուն վրայ օծման իւղը թափուած է, ու զգեստները հագնելու օրհնուած, իր գլուխը պիտի չբանայ, և իր լաթերը չպատռէ. 11—ու մեռած մարդու մը քով չերթայ, ոչ ալ իր հօրը կամ իր մօրը համար անմաքուր ըլլայ։ 12—Ու սրբարանէն դուրս չելլէ, ու իր Աստուծոյն սրբարանը չպղծէ, վասն զի իր Աստուծոյն օծման իւղին պսակը իր վրայ է. ես եմ Տէրս։ 13—Ու անիկա կոյս մը իրեն կին պիտի առնէ. 14—Որևէ այրի կամ արձակուած կամ պղծուած կամ պոռնիկ չառնէ. հապա կին ըլլալու համար իր ժողովուրդէն կոյս մը առնէ, 15—որպէս զի իր սերմը չպղծէ իր ժողովուրդին մէջ, վասն զի ես եմ Տէրը որ կը սրբեմ զանիկա։

16—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 17—Խօսէ Ահարոնի ու ըսէ, Քու սերունդիդ իրենց ազգերուն մէջ ով որ իր վրայ արատ մը ունի, Թող չմատնէսյ իր Աստուծոյն հացը մատուցանելու։ 18—Վասն զի քնաւ արատ ունեցող մարդ մը պիտի չմատնէսյ. կոյր մարդը, կաղը, կամ կարճանչը կամ †էր անդամներուն մէջ աւելորդ բան մը ունեցողը", 19—կամ ոտքը կոտրած, կամ ձեռքը կոտրած մարդը 20—կամ սապատուղը, կամ թզուկը, կամ իր աչքին մէջ բիծ ունեցողը, կամ քոսոտը, կամ օրթխնուռը, կամ †փոչտանկը։

21—Ահարոն քահանային սերունդէն արատ մը ունեցող մարդը Տէրոջը պատարագները մատուցանելու պիտի չմօտենայ, †ոչէ արատաւոր ըլլալով՝ իր Աստուծոյն հացը մատուցանելու պիտի չմօտենայ։ 22—Անիկա իր Աստուծոյն հացը պիտի ուտէ, թէ՛ ամենասուրբ բաներէն և թէ՛ սուրբ բաներէն. 23—Միայն վարագոյրին քով պիտի չմտնէ, և սեղանին չմօտենայ, վասն զի արատ ունի, ու իմ սուրբ բաներս չպղծէ քանզի զանոնք սրբող Տէրը ես եմ. 24—Ես Մովսէս խօսեցաւ այս բաները Ահարոնի ու անոր որդիներուն և Իսրայէլի բոլոր որդիներուն։

Գլ. ԻԲ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն՝ որ Իսրայէլի որդիներուն մօտենալէ սուրբ բաներէն *զգոյշ կենան, և իմ սուրբ անունս չպղծեն այն բաներով զորոնք ինծի կը սրբեն. ես եմ Տէրը։ 3—Ըսէ անոնց, Ձեր բոլոր սերունդէն ձեր ազգերուն մէջ՝ ով որ իր անմաքրութիւնը իր վրայ ունենալով մօտենայ այն սուրբ բաներուն զորոնք Իսրայէլի որդիները կը սրբեն Տէրոջը, այն անձը իմ առջևէս պիտի կորսուի. ես եմ Տէրը։ 4—Ով որ Ահարոնի ցեղէն բորոտ ըլլայ, կամ ծորուք ունենայ, սուրբ բաներէն պիտի չուտէ մինչև իր մաքրուիլը. և ով որ մեռելի պղծուած բանի մը դպչի, կամ մարդ մը որուն զուգաւորութեան սերմը իրմէ ելած է, 5—կամ ով որ դպչի որեւիցէ սողունի մը որով կրնայ անմաքուր ըլլալ. կամ մարդու մը որմէ կրնայ անմաքուր ըլլալ, որեւիցէ անմաքրութիւն զոր անիկա ունենայ, 6—Անանց դպչող մարդը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ, և սուրբ բաներէն չուտէ, հապա իր մարմինը ջրով լուայ. 7—Ու երբ արեգակը մարը մտնէ, մաքուր պիտի ըլլայ, ու ետքը սուրբ բաներէն ուտէ, վասն զի անիկա իր հացն է։ 8—Անիկա մեռած կամ գազանաբեկ պիտի չուտէ,

*Կամ, ակնդիմաը

†Կամ, ամորձիքը ճմլուածը, կամ, միորձին

*Եբր. զատ

որպէս զի անով չպղծուի. ես եմ Տէրը։ 9—Ու իմ կարգադրութիւնս պիտի պահեն, որպէս զի անոր համար մեղք չբերեն, ու զայն պղծելուն համար չմեռնին. ես եմ Տէրը որ զանոնք կը սրբեմ։

10—Բնաւ օտարական մը սուրբ բանէ պիտի չուտէ. քահանային հիւրը կամ վարձկանը սուրբ բանէ պիտի չուտէ։ 11—Բայց քահանային իր ստացած ծախու առած անձը ու իր տունը ծնածը անկէ պիտի ուտէ. անոնք անոր կերակուրէն պիտի ուտեն. 12—Եթէ քահանային աղջիկը օտարականի մը հետ ամուսնանայ, անիկա նուիրուած սուրբ բաներէն պիտի չուտէ։ 13—Բայց եթէ քահանային աղջիկը որբևարի կամ արձակուած ըլլայ ու զաւակ չունենայ, և իր հօրը տունը դառնայ, —իր հօրն իր աղջկութեան ժամանակին պէս իր հօրը հացէն պիտի ուտէ. սակայն բնաւ օտարական մը անկէ չուտէ։

14—Ու եթէ մարդ մը անգիտութեամբ սուրբ բանէ մը ուտէ, անոր վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ, ու սուրբ բանովը մեկնող քահանային տայ. 15—Ու Իսրայէլի որդիները չպղծեն Տէրոջը մատուցած սուրբ բաները չպղծեն. 16—Ու իրենց սուրբ բաները ուտելով՝ յանցանքի անօրէնութիւնը իրենց վրայ չբերեն", վասն զի ես եմ Տէրը որ զանոնք կը սրբեմ։

17—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 18—Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն և Իսրայէլի բոլոր որդիներուն, ու ըսէ անոնց, Իսրայէլի տունէն կամ Իսրայէլի մէջ բնակող օտարականներէն անոնց ոզիկին համար Տէրոջը մատուցածը՝ իրենց բոլոր ուխտերուն և բոլոր կամաւոր ընծաներուն համար, իր ըզոր մատուցանող ամէն մարդը։ 19—Արջառներէն, ոչխարներէն կամ այծերէն՝ անարատ արու պիտի մատուցանէ, որպէս զի ձեզի համար ընդունելի ըլլայ։ 20—Բնաւ արատ մը ունեցողը պիտի չմատուցանէք, վասն զի ձեզի համար ընդունելի չըլլար։ 21—Ու ուխտ կատարելու համար կամ կամաւոր ընծայի համար՝ ով որ արջառներէն կամ ոչխարներէն Տէրոջը խաղաղութեան զոհ մատուցանելու ըլլայ, անարատ պիտի ըլլայ այն, որպէս զի ընդունելի բնաւ արատ պիտի չըլլայ անոր վրայ։ 22—Կոյր, կամ ձեռ ւորմէ կամ կարած կամ խոպոպատ ունեցող, կամ քոսոտ կամ օրթխնուռ եղածները Տէրոջը պիտի չմատուցանէք, ոչ ալ սեղանին վրայ պիտի դնէք։ 23—Բայց ունքածերուն ձէ ուելորդութիւնն կամ պակասութիւնն ունեցող զուարակը կամ ոչխարը կամաւոր ընծայի համար մատուցանես, ուկայն ուխտի համար պիտի չընդունուի այն. 24—Ամորչիքը ճմլուածը կամ ճզմուածը կամ փրցուածը կամ կտրուածը չմատուցանէք Տէրոջը, և ձեր երկրին մէջ չընէք այս բաները։ 25—Ու օտարականի մը ձեռքէն ալ՝ ամէն տեսակի ձեր Աստուծոյն պատարագ չմատուցանէք, վասն զի անոնց մէջ խեղութիւն ու արատ կայ. անոնք ձեզի համար ընդունելի պիտի չըլլան։

26—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 27—Երբ զուարակ կամ ոչխար կամ այծ ծնի, եօթը օր իր մօրը կողքին պիտի մնայ. և ութերորդ օրը ու անկէ ետքը Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ պատարագի ընծայի համար։ 28—Ու կովը կամ ոչխարը իր ձագուկ մի՛կ օրուան մի՛ չմորթէք։

29—Ու երբ գոհութեան զոհ մատուցանէք Տէրոջը, —ընդէ՛ պիտի մատուցանէք որ ձեզի համար ընդունելի ըլլայ. 30—նոյն օրը պիտի ուտուի անկէ, անկէ մինչև առաւօտ չթողուք. ես եմ Տէրը։

31—Ուստի իմ պատուիրանքներս պահեցէք և բնաւ զանոնք. ես եմ Տէրը։ 32—Ու իմ սուրբ անունս չպղծէք, որպէս զի ես սրբուիմ Իսրայէլի որդիներուն մէջ. ես եմ Տէրը որ ձեզ կը սրբեմ, 33—Որ ձեզի Աստուած ըլլալու համար՝ ձեզ եգիպտացի երկրէն հանեցի. ես եմ Տէրը։

*Կամ, Ու †ահաւոր անոնց վրայ յանցանքի անօրէնութիւն չբերեն՝ երբ անոնք իրենց սուրբ բաները ուտեն

*Եբր. հաց

Գլ. ԻԳ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Տէրոջը սահմանած տօները զորանք դուք սուրբ ժողով պիտի կոչէք, իմ տօներս սոսկ են. 3—վեց օր գործ գործուի, բայց եօթներորդ օրը հանգստութեան շաբաթը ըլլալով սուրբ ժողով է. բնաւ գործ պիտի չգործէք. Տէրոջը շաբաթ պիտի ըլլայ ձեր բոլոր բնակութիւններուն մէջ։

4—Տէրոջը տօներըս, զորանք իրենց ատենին հասնելու սուրբ ժողովներ պիտի քարոզէք, տօներս են. 5—Առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ Տէրոջը զատիկն է. 6—Ու նոյն ամսուն հնգետասաներորդ օրը բազարջ պիտի ուտէք. 7—Առաջին օրը սուրբ ժողով պիտի ունենաք. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք. 8—Ու եօթը օր պատարագ պիտի մատուցանէք Տէրոջը. եօթներորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ. բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք։

9—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 10—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ մտնէք այն երկիրը զոր ձեզի կու տամ, ու անոր հունձքը հնձէք, ձեր հունձքին երախայրի որայ մը քահանային բերէք. 11—Ան ալ Տէրոջը առջև երերցնելով պիտի մատուցանէ զայն, որպէս զի ձեզի համար ընդունելի ըլլայ. քահանան շաբաթին հետեւեալ օրը պիտի մատուցանէ զայն. 12—Ու զայն մատուցած օրերնիդ ոչխարի համար մէկ տարեկան անարատ գառ մը մատուցանէք Տէրոջը. 13—Ու անոր հացի ընծան իւղով շաղուած երկու տասներորդ բաթակ ալիւր պիտի ըլլայ. սոսկա անուշահոտ պատարագի համար է Տէրոջը. և անոր թափելու գինին հինգերորդ մասը չորրորդ գինի պիտի ըլլայ։ 14—Ու մինչև այն օրը որ ձեր Աստուծոյն ընծան կը մատուցանէք, հաց կամ բորշած ցորեն կամ թարմ հասկեր չուտէք. ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակարաններուն մէջ այս յաւէտ յաւիտենական կանոն պիտի ըլլայ։

15—Ու շաբաթին հետեւեալ օրէն՝ որ դուք նուիրման արան բերիք, եօթը շաբաթ պիտի համրէք ձեզի. 16—Մինչև եօթներորդ շաբաթին հետեւեալ օրը յիսուն օր պիտի համրէք, և նոր հացի ընծայ մատուցանէք Տէրոջը։ 17—Ձեր բնակարաններէն՝ երերցընելու ընծայի համար երկու հաց պիտի բերէք, որոնք երկու տասներորդ բարակ ալիւրէ ըլլալով խմորեալ եփած պիտի ըլլան. սոսկա երախայրի է Տէրոջը։ 18—Ու հացին հետ մէկ տարեկան եօթը հատ անարատ գառներ, և արջառներէն մէկ զատարած ու երկու խոյ պիտի մատուցանէք Տէրոջը, որոնք հացի ընծաներուն ու թափելու նուէրներուն հետ ողջակէզ ըլլան պատարագ պիտի ըլլան Տէրոջը։ 19—Ու մեղքի պատարագին համար այծեղէն մէկ նոխազ, և խաղաղութեան զոհի համար մէկ տարեկան երկու գառներ պիտի մատուցանէք։ 20—Ու քահանան երախայրի հացին հետ երերցնելու ընծայի համար երկու գառները պիտի մատուցանէ Տէրոջը առջև. անոնք սուրբ պիտի ըլլան Տէրոջը, և քահանային պիտի ըլլան։ 21—Ու այն նոյն օրը պիտի փարթղէք որ ձեզի սուրբ ժողով ըլլայ. բնաւ ծառայութեան գործ չգործէք. սոսկա յաւէտ յաւիտենական կանոն ըլլայ ձեր բոլոր բնակարաններուն մէջ ձեր ազգերուն մէջ։

22—Ու երբ ձեր երկրին հունձքը հնձէք, հնձած տեղը արտին եզերքը լման չհնձէք, ու հունձքիդ մնացած հասկերը չժողվես. զանոնք ազքատին ու օտարականին թողուս. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

23—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 24—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, եօթներորդ ամսուն մէկ ամսուն առաջին տօնը ձեզի հանգստութեան օր, փող հնչեցնելուն յիշատակը, սուրբ ժողով պիտի ըլլայ։ 25—Բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք, հապա պատարագ մատուցանէք Տէրոջը։

26—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 27—Նաև այս եօթներորդ ամսուն քաւութեան օրը

տեղը փառաւոր ըլլայ. սուրբ ժողով ըլլայ ձեզի. և պիտի խոնարհեցնէք ձեր հոգիները, ու պատարագ մատուցանէք Տէրոջը։ 28—Ու այն օրը բնաւ գործ չգործէք, վասն զի Տէրոջը ձեր Աստուծոյն առջև ձեզի համար քաւութիւն ընելու՝ որ քաւութիւն ընէ. 29—Քանզի ով որ նոյն օրը չխոնարհի, իր ժողովուրդին միջէն պիտի կտրատի. 30—Ու ով որ նոյն օրը գործ մը գործէ, այն անձը իր ժողովուրդին միջէն պիտի կորսընցնեմ. 31—Բնաւ գործ մը պիտի չգործէք. սոսկա ձեր ազգերուն մէջ ձեր բոլոր բնակարաններուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ. 32—Այս ձեզի հանգստութեան շաբաթ պիտի ըլլայ, և ձեր հոգիները պիտի խոնարհեցնէք. ամսուն իննսերորդ օրուան իրիկունը ձեր շաբաթը պիտի պահէք իրիկունէ մինչև իրիկուն։

33—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 34—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Այս եօթներորդ ամսուն հնգետասաներորդ օրը եօթը օր տաղաւարահաց ան է Տէրոջը։ 35—Առաջին օրը սուրբ ժողով պիտի ըլլայ, բնաւ ծառայութեան գործ պիտի չգործէք. 36—Եօթը օր պատարագ մատուցանէք Տէրոջը. և ութերորդ օրը սուրբ ժողով պիտի ըլլայ ձեզի, և պատարագ մատուցանէք Տէրոջը. ասամբոխութեան օր է այն, բնաւ ծառայութեան գործ չգործէք. 37—Տէրոջը պատարագ, այրիքն ողջակէզ ու հացի ընծայ, զոհ և թափելու նուէրներ՝ ամէն օրուան պէտք եղածը մատուցանելու համար ձեր՝ սուրբ ժողովները կազմելու Տէրոջը ասոնք են, 38—Տէրոջը շաբաթներէն զատ, և ձեր ընծաներէն զատ, ու ձեր բոլոր ուխտերէն զատ, և Տէրոջը տալու ձեր բոլոր կամաւոր ընծաներէն զատ։ 39—Նաև եօթներորդ ամսուն հնգետասաներորդ օրը՝ երկրի արդիւնքը ժողված ատենիդ եօթը օր տօն պիտի պահէք Տէրոջը. առաջին օրը շաբաթ և ութերորդ օրը շաբաթ պիտի ըլլայ։ 40—Ու առաջին օրը ձեզի գեղեցիկ ծառերու պտուղ, արմաւենիներու ոստեր և տերեւախիտ ծառերու ոստեր և ձորի ուռիներու ոստեր պիտի առնէք, ու Տէրոջը ձեր Աստուծոյն առջև եօթը օր ուրախանաք։ 41—Ու այս տօնը տարին եօթը օր պիտի պահէք Տէրոջը. ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ այն. եօթներորդ ամսուն մէջ պիտի բնակիք զայն։ 42—Եօթը օր տապատարներու մէջ բնակիք, Իսրայէլի բոլոր բնակիները տապատարներու մէջ բնակին. 43—Որպէս զի ձեր սերունդներդ գիտնան թէ Իսրայէլի որդիները եգիպտոսի երկրէն հանած ատենս տապատարներու մէջ բնակեցուցի զանոնք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

44—Ու Մովսէս Իսրայէլի որդիներուն պատմեց Տէրոջը տօները։

Գլ. ԻԴ

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Պատուիրէ Իսրայէլի որդիներուն՝ որ ձեթաւած մաքուր ձկի բերեն քեզի լոյսի համար, որպէս զի միշտ ճրագ վառի. 3—Ժողովքի խորանին մէջ, վկայութեանը վարագոյրին դուրսիդին, Ահարոն միշտ պիտի պատրաստէ զայն երեկոյեան մինչև առաւօտ Տէրոջը առջև. ընդհանուր հրամայ, ասիկա ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ։ 4—Ճրագները զուտ ոսկեայ աշտանակին վրայ Տէրոջը առջև միշտ պիտի պատրաստէ։

5—Ու բարակ ալիւր պիտի առնես, ու անով տասներկու չօթ եփես. ամէն մէկ չօթը երկու տասներորդ պիտի ըլլայ։ 6—Ու զանոնք Տէրոջը առջև մաքուր սեղանին վրայ երկու կարգով պիտի դնես, ամէն մէկ կարգը վեց վեց հատ ըլլայ։ 7—Ու ոսկի կարգին վրայ զուտ կնդրուկ պիտի դնես, որպէս զի հացին վրայ պատարագի յիշատակ ըլլայ Տէրոջը։ 8—Իսրայէլի որդիներուն կողմանէ յաւիտենական ուխտով ամէն շաբաթ օր միշտ Տէրոջը առջև զանիկա պիտի կարգադրէ։ 9—Ու անիկա Ահարոնի ու անոր որդիներուն պիտի ըլլայ, ու սուրբ տեղը ուտեն զանիկա. վասն զի այն՝ Տէրոջը պատարագներէն յաւիտենական կանոնով ամենասուրբ է անոր։

10—Ու Իսրայէլի որդիներուն մէջ

Խաչակրացի կնոջ մը որդին եղաւ, որուն հայրը Եգիպտացի էր. ու այն խաչակրացի կնոջ որդին խաչակրացի մարդու մը հետ բանակին մէջ կառնեցաւ. 11—Ես այն խաչակրացի կնոջ որդին հայհոյեց Տէրոջը անունը ու անիծեց. և Մովսէսի բերին զանիկա. ու անոր մօրը անունը Սողոմիթ էր, Դանի ցեղին Դաբրիի աղջիկը. 12—Ես բանտարկեցին զանիկա, մինչև որ Տէրոջը հրամանը յայտնուի իրենց. 13—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի հետ, 14—Ելո՛ւր հայհոյող մարդը բանակին դուրս հանէ, և բոլոր լսողները ձեռքերնին անոր գլխուն դնեն, ու բոլոր ժողովքը քարկոծեն զանիկա. 15—Ու պիտի խօսես Իսրայէլի որդիներուն՝ բսելով, Ով որ իր Աստուածը կ՚անիծէ, իր մեղքը պիտի կրէ. 16—Ես Տէրոջը անունը հայհոյողը անշուշտ պիտի մեռցուի. բոլոր ժողովքը անշուշտ պիտի քարկոծեն զանիկա. Թէ՛ օտարական րլլայ և թէ՛ երկրացին, Տէրոջը անունը հայհոյողը պիտի մեռցուի.

17—Ու ով որ մարդ մը կը սպաննէ, անշուշտ պիտի մեռցուի. 18—Ու ան որ անասուն մը կը մեռցնէ, անասունի տեղ անասուն պիտի հատուցանէ. 19—Ու եթէ մարդ մը իր դրացիին խեղդեցնէ պատճառ րլլայ, իր ըրածին պէս պիտի ընեն իրեն. 20—Ընկճման տեղ ընկճում, աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռայ. ինչպէս անիկա մարդու մը խեղդեցնին պատճառ է, նոյնպէս պիտի րլլայ իրեն. 21—Ու ան նախուն մեռցնողը պիտի հատուցանէ զայն. բայց մարդ մեռցնողը պիտի մեռցուի. 22—Թէ՛ օտարականին համար և թէ՛ երկրացիին համար՝ ձեր օրէնքը մէկ պիտի րլլայ. վասն զի ես եմ Տէրը ձեր Աստուածը.

23—Ու Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդիներուն որ այն անիծող մարդը բանակին դուրս հանեն, և քարկոծեն զանիկա. ու Իսրայէլի որդիները Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս բրին.

Գլ. Իե

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի Սինա լեռը՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ այն երկիրը մտնէք զոր ես ձեզի պիտի տամ, Թող այն երկիրը հանգստութիւն չունենայ մը պահէ Տէրոջը. 3—Վեց տարի քու արտդ պիտի ցանես, և քու այգիդ վեց տարի յօսես, ու անոր արդիւնքը ժողվես. 4—Բայց եօթներորդ տարին երկրին համար հանգստութիւն րլլայ, այսինքն Տէրոջը համար րլլայ. քու արտդ պիտի չցանես, և քու այգիդ չյօսես. 5—Քու *արտիդ ինքիրմէ բուսածը պիտի չհնձես, և քու չյօսած այգիդ խաղողները չժողվես. հանգստութիւն րլլայ անիկա երկրին. 6—Ու երկրին շաբաթը ձեզի կերակուր պիտի րլլայ, քեզի և քու ծառայիդ և քու աղախնիդ ու քու վարձկանիդ, և քու քովդ պանդխտացած օտարականիդ, 7—Ես քու անասուններուդ ու քու երկրիդ մէջ եղած կենդանիներուն կերակուր րլլայ անոր բոլոր արդիւնքը.

8—Ես դուն քեզի համրելու եօթը շաբաթ համրես, այսինքն եօթը անգամ եօթը տարի. ու տարիներուն եօթը շաբաթներուն ժամանակը քառասունրիւնը տարի պիտի րլլայ քեզի. 9—Ես եօթներորդ ամսուն տասներորդ †ը ազդարարութիւնդ փող պիտի հնչեցընես, քու ամբողջ ձեր բոլոր երկրին մէջ պիտի հնչեցնէք փող. 10—Ես յիսներորդ տարին պիտի սրբէք, ու երկրի վրայ անոր բոլոր բնակիչներուն համար ազատութիւն քարոզ կարդալ տաք. ասիկա ձեզի Յոբելեան ‡ը րլլայ. և ձեզմէ ամէն մէկը իր տասցուածքին պիտի դառնայ, ու ձեզմէ ամէն մէկը իր ազգատոհմին դառնայ. 11—Այս յիսներորդ տարին Յոբելեան տարի րլլայ ձեզի. ոչ պիտի ցանէք, ոչ ալ ինքիրմէ բուսածը պիտի հնձէք, և ձեր չխնամած այգիներէն պիտի չժողվէք. 12—Վասն զի Յոբելեան ‡ը է, այն ձեզի սուրբ պիտի րլլայ. արտէն անոր արդիւնքը պիտի ուտէք. 13—Այս Յոբելեան տարին ձեզմէ ամէն մէկը իր տասցուածքին պիտի դառնայ.

14—Ու եթէ քու դրացիդ բան մը ծախելու րլլաս, կամ քու դրացիդ ձեռքէն ծախու առնելու րլլաս, ձեզմէ մէկը իր ընկերին անիրաւութիւն պիտի չընէ. 15—Յոբելեան ‡ էն ետքը դուն տարիներուն հաշիւովը ծախու պիտի առնես քու դրացիդ, անիկա ալ արդիւնքին տարիներուն հաշիւովը պիտի ծախէ քեզի. 16—Տարիներուն շատութեանը նայելով պիտի աւելցնես անոր գինը, և տարիներուն քիչութեանը նայելով պիտի պակասցնես անոր գինը. վասն զի անիկա արդիւնքին հաշիւովը կը ծախէ քեզի. 17—Ու ձեզմէ մէկը իր ընկերին անիրաւութիւն չընէ, ու քու Աստուածդմէ պիտի վախնաս. քանզի ես եմ Տէրը ձեր Աստուածը.

18—Ու իմ կանոններս պիտի բնէք, ու իմ դատաստաններս պահէք և բնէք զանոնք ու այն երկրին մէջ ապահովութեամբ պիտի բնակիք. 19—Ու երկիրը իր արդիւնքը պիտի տայ, ու մինչև կշտանալնիդ պիտի ուտէք. և անոր մէջ ապահովութեամբ պիտի բնակիք. 20—Ու եթէ ըսէք թէ Ի՞նչ պիտի ուտենք. ահա պիտի չցանենք ու մեր արդիւնքները պիտի չժողվենք. 21—Ուրեմն վեցերորդ տարին ձեր վրայ պիտի *զրկեմ իմ օրհնութիւնս, և երեք տարուան արդիւնք պիտի տայ. 22—Ու ութերորդ տարին պիտի ցանէք, ու հին արդիւնքին պիտի ուտէք մինչև իններորդ տարին. մինչև անոր արդիւնքին հասնելը հինէն պիտի ուտէք.

23—Ու երկիրը պիտի չծախուի հաւանականէս վասն զի երկիրը իմս է, ու դուք իմ քովս պանդուխտներ ու հիւրեր էք. 24—Ու ձեր կալուածքին բոլոր երկիրին մէջ փրկանք պիտի տաք երկիրին համար. 25—Եթէ քու եղբայրդ ապքաստանայ և իր տասցուածքին մէկ հատը ծախէ, ու եթէ անոր մօտ ապականանը անոր գայ, անիկա իր եղբօրը ծախածը պիտի փրկէ. 26—Ու եթէ մարդը փրկող մը չունի, ու *ինքիրմէ կարողանայ գայն փրկել, 27—Անոն իր ծախելէն հաշիւ ընէ տարիները, և աւելցածը եա տայ այն մարդուն որու ծախած էր, ու իր տասցուածքին դառնայ. 28—Բայց եթէ անոր եա տալ կարող չէ, այն ատեն իր ծախած բանը ծախու առնողին ձեռքը պիտի մնայ մինչև Յոբելեան տարին, և Յոբելեան †ը պիտի ելլէ, ու ծախուածը իր տասցուածքին պիտի դառնայ.

29—Ու եթէ մէկը պարսպապատ քաղաքի մէջ բնակելու տուն մը ծախէ, զանիկա ծախելէն մինչև լման տարի մը կրնայ փրկել զայն. անոր փրկանքը մէկ տարուան մէջ պիտի րլլայ. 30—Ե. եթէ բոլոր տարուան լմնցնելուն տունիկա չփրկուի, այն տանն պարսպապատ քաղաքին մէջ եղած տունը միշտ ծախու առնողին պիտի մնայ իր ազգերուն մէջ. Յոբելեան †ը պիտի չդառնայ. 31—Բայց բոլորտիքը պարսպապատ չեղած գիւղաքաղաքներուն տունները երկրին արտերուն պէս պիտի սեպուին. անոնք կրնան փրկուիլ, ու Յոբելեան †ը պիտի դառնան. 32—Իսկ Ղեւտացւոց քաղաքներուն մէջ իրենց կալուածքի քաղաքներուն տուները Ղեւտացիները միշտ կրնան փրկել. 33—Ու եթէ մէկը Ղեւտացիներէն †ծախու առնելու րլլայ, այն տանն ‡ին կալուածքը եղած քաղաքին մէջի ծախուած տունը Յոբելեան †ը պիտի դառնայ, վասն զի Իսրայէլի որդիներուն մէջ Ղեւտացւոց քաղաքներուն տուները իրենց կալուածքն են. 34—Բայց իրենց քաղաքներուն արուարձաններուն արտերը պիտի չծախուին, վասն զի անոնց յաւիտենական կալուածքն է այն.

35—Ու եթէ քու եղբայրդ քովդ ապքաստանայ ու անոր ձեռքը ակարանայ, անոր պիտի օգնես օտարականի ու պանդուխտի պէս, որպէս զի քու քովդ ապրի. 36—Անկէ վաշխ ու

*ՆՔԲ. հրամայեմ

*ՆՔԲ. հանձգիր.

*ՆՔԲ. ձեռնհաս րլլալով

†ՆՔԲ. փրկելու

‡ՆՔԲ. ծախուած տունը և իր կալուածքին քաղաքը

ակոսիք պիտի չառնես, հապա քու Աստուծմէդ վախնաս, որպէս զի եղբայրդ քու քովդ ապրի։ 37— Քու սասկդ վաշխով պիտի չտաս անոր, և քու կերակուրդ ակոսիքով չտաս։ 38— Ես եմ Տէրը ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի՝ Քանանու երկիրը ձեզի տալու համար, և ձեզի Աստուած ըլլալու համար։

39— Եւ եթէ եղբայրդ քու քովդ աղքատանայ, ու ինքզինք քեզի ծախէ, զանիկա ծառայի մը պէս պիտի չգործածես. 40— Անիկա քու քովդ վարձականի կամ պանդխտի պէս պիտի ըլլայ, — ծառայի քեզի մինչև Յոբելեան տարին։ 41— Եւ — — քովդէն պիտի երթայ ինք ու իր որդիներն ալ իրեն հետ, և իր ազգատոհմին դառնայ, ու իր հայրերուն կալուածքին դառնայ։ 42— Քանզի անոնք իմ ծառաներս են, զորոնք Եգիպտոսի երկրէն հանեցի. անոնք ծառայի ծախում չըլլան պէս պիտի չծախուին։ 43— Խստութեամբ պիտի չիշխես անոր վրայ, հապա քու Աստուծմէդ վախնաս։ 44— Քու ունենալու ծառայ ու աղախին անոնցմէ կրնաք ձեր բոլորտիքը եղած ազգերէն ըլլան. ծառայ ու աղախին անոնցմէ կրնաք ծախու առնել։ 45— Նաև ձեր քովը բնակող օտարականներուն զաւակներէն, կամ անոնցմէ և կամ ձեր քովը եղող անոնց բնտանիքներէն որոնք ձեր երկիրը ծնած են՝ կրնաք ծախու առնել, որպէս զի ձեր սեպհականութիւն ըլլայ։ 46— Եւ ձեզմէ հետքը ձեր որդիներուն ժառանգութեան սեպհականած ըլլալու համար քեզի զանոնք, որպէս զի միշտ ձեր ծառաները ըլլան. բայց ձեր եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, համար՝ իրարու վրայ խստութեամբ պիտի չիշխէք։

47— Եւ եթէ քու քովդ եղած օտարականը կամ պանդխտութիւնը հարստանայ ու անոր քովը քովդ եղող եղբայրդ աղքատանայ, և քու քովդ պանդխտացած օտարականին, կամ այն օտարականին բնտանեաց ցեղ ազգականին ինքզինք ծախելէն ետքը անոնց փրկութիւն եղբայրներէն մէկը կրնայ փրկել զանիկա։ 49— Անոր հօրեղբայրը կամ հօրեղբօրորդին փրկէ զանիկա, կամ իր ազգատոհմին մէջ իր մօտ ազգականներէն մէկը փրկէ զանիկա։ կամ եթէ կարողանայ, ինքզինք թող փրկէ։ 50— Ես անիկա, ծախու առնողին հետ, ինքզինք անոր ծախած տարիէն մինչև Յոբելեան տարին հաշիւ պիտի ընէ, և իր փրկուելուն տակը տարիներուն համեմատ վարձքը ըլլայ. անոր ժամանակին վարձականի ժամանակին պէս հաշուուի։ 51— Եթէ տակաւին չատ տարի կայ, անոնց նայելով՝ իր ծախած գինէն իր փրկանքը պիտի տայ. 52— Եւ եթէ Յոբելեան տարին քիչ տարի մնացեր է, անոր հետ հաշիւ պիտի բնէ, — իր տարիներուն համեմատ իր փրկանքը տայ։ 53— Ինք անոր քով տարեկան վարձականի պէս պիտի սեպուի. — — Խստութեամբ չիշխել անոր վրայ քու առջեւդ։ 54— Եւ եթէ այս կերպերով չփրկուի, Յոբելեան տարին ինք ալ ու իր որդիներն ալ իրեն հետ պիտի ելլեն։ 55— Վասն զի Իսրայէլի որդիները իմ ծառաներս են. Եգիպտոսի երկրէն իմ հանած ծառաներս են անոնք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

Գլ. ԻԶ

1 Ձեզի չաստուածներ ու կուռքեր պիտի չշինէք, և ձեզի արձաններ պիտի չկանգնէք, և ձեր երկրին մէջ պատկերաւոր կոթող պիտի չդնէք՝ անոր երկրպագութիւն ընելու համար. վասն զի ես եմ Տէրը ձեր Աստուածը։

2— Իմ շաբաթներս պիտի պահէք, ու իմ սրբարանս յարգէք. ես եմ Տէրը։

3— Եթէ իմ կանոններուս քալէք, և իմ պատուիրանքներս պահէք ու զանոնք ի գործ դնէք, 4— Ես ալ ձեզի անձրեւը տուներին պիտի տամ, և երկիրը իր արդիւնքը պիտի տայ, ու դաշտին ծառերը իրենց պտուղը պիտի տան. 5— Ձեր կալը մինչև ողկոյզիքը պիտի հասնի, ու ողկոյզիքը մինչև ցանելու ժամանակ հասնի. և ձեր հացը կուշտ պիտի ուտէք, ու ձեր երկրին մէջ ապահովաբնակ բնակիք։ 6— Ես խաղաղութիւն պիտի տամ երկրին, ու հանդչիք ոչ պատռիք, և վտանգող մը պիտի չըլլայ. ու երկրէն չար գաններ պիտի հատցնեմ, և ձեր երկրին սուր պիտի չանցնի։ 7— Ես ձեր թշնամիները պիտի հալածէք, ու անոնք սրով պիտի իյնան ձեր առջեւ։ 8— Ես ձեզմէ հինգ հոգին հարիւրը պիտի հալածէ, և ձեզմէ հարիւր հոգին բիւրաւորը պիտի հալածէ, ու ձեր թշնամիները սրով պիտի իյնան ձեր առջեւ։ 9— Ես ձեզի պիտի նայիմ, ու ձեզ աճեցնեմ և չատցնեմ, ու ձեզի հետ իմ ուխտս հաստատեմ։ 10— Ես հին պաշարը պիտի ուտէք, ու նորին *տեղ ընելու համար՝ հինը դուրս պիտի հանէք։ 11— Ես իմ խորանս ձեր մէջ պիտի դնեմ, ու իմ հոգիս ձեզմէ պիտի չզզուի։ 12— Ես ձեր մէջ պիտի քալեմ, ու ձեզի Աստուած ըլլամ, և դուք ինծի ժողովուրդ պիտի ըլլաք։ 13— Ես եմ Տէրը ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտացւոց երկրէն հանեցի, որպէս զի անոնց ծառայ չըլլաք, ու ձեր լուծին կապերը խորտակեցի, և ձեզ բարձրագլուխ քալեցուցի։

14— Բայց եթէ ինծի մտիկ չընէք, ու այս բոլոր պատուիրանքներս չկատարէք, 15— Ես իմ կանոններս անարգեցի, ու ձեր հոգին իմ դատաստաններս ղզուի, այնպես որ իմ բոլոր պատուիրանքներս չընէք, ու իմ ուխտս արհետք. 16— Ես ալ ձեզի զայս պիտի ընեմ, այսինքն ձեր վրայ սչք փճացնող և օբրտ մաշեցնող վախը, ծիւրական ախտը ու հրատապնապ տենդը պիտի ղրկեմ, և ձեր սերմը պարապ տեղ պիտի սերմանէք. վասն զի ձեր թշնամիները պիտի ուտեն զայն. 17— Ես իմ երեսս ձեր վրայ պիտի անկնի, ու ձեր թշնամիներուն առջեւ պիտի սպանուիք. ձեզ ատողները պիտի իշխեն ձեր վրայ, ու ձեզ հալածող մը չեղած տաճն պիտի փախչիք։ 18— Ես եթէ տակաւին ալ ինծի մտիկ չընէք, այն տաճն ձեր մեղքերուն համար ձեզ եօթնապատիկ ալ պիտի պատժեմ։ 19— Ես ձեր զօրութեան հպարտութիւնը պիտի խորտակեմ, ու ձեր երկինքը երկաթի պէս և ձեր երկիրը պղինձի պէս պիտի ընեմ։ 20— Ես ձեր ոյժը պարապ տեղ պիտի հատնի, ու ձեր երկիրը իր արդիւնքը պիտի չտայ, և երկրին ծառերը իրենց պտուղը չտան։

21— Եւ եթէ գոչ ինծի հետ հակառակ երթաք ու չուզիք ինծի մտիկ ընել, այն ատեն ձեր մեղքերուն համեմատ եօթնապատիկ հարուածք պիտի աւելցնեմ ձեր վրայ։ 22— Ես ձեր վրայ գազանները պիտի ղրկեմ, ու ձեզ ամբաստան պիտի ընեն, ու ձեր անասունները կարդեն, և ձեզ պիտի փչացնեն. ու ձեր ճամբաները ամայացած պիտի դառնան։ 23— Եւ եթէ ասոնցմով ալ չիրատուիք ինծի, ու ինծի հետ հակառակ երթաք, 24— Այն ատեն ես ալ ձեզի հետ հակառակ պիտի երթամ, և ես ալ ձեր մեղքերուն համեմատ եօթնապատիկ պիտի պատժեմ ձեզ։ 25— Ես ձեր վրայ սուրախ վրէժը առնող սուրը պիտի ղրկեմ, ու ձեր քաղաքներուն մէջ պիտի ժողվուիք, և ձեր մէջ ժանտախտ պիտի ղրկեմ, ու թշնամիին ձեռքը պիտի մատնուիք։ 26— Ձեր հացին ցուպը կոտրած ատենս, տասը կին մէկ թոնիրի մէջ պիտի կթխեն ձեր հացը, և ձեր հացը կշռով պիտի տրուի ձեզի. ու պիտի ուտէք և չկշտանաք։

27— Ես եթէ ասոնցմով ալ ինծի մտիկ չընէք, հապա հակառակ երթաք ինծի հետ, 28— Այն ատեն ես ալ ձեզի հետ հակառակ պիտի երթամ բարկութեամբ, և ձեր մեղքերուն համեմատ եօթնապատիկ պիտի պատժեմ ձեզ։ 29— Ես ձեր ազգականներուն մսը պիտի ուտէք, ու ձեր աղջիկներուն մսը ուտէք։ 30— Ես ձեր բարձր տեղերը պիտի աւերեմ, ու ձեր արեգական կուռքերը կտրատեմ, և ձեր դիերը ձեր կուռքերուն դիերուն վրայ պիտի դնեմ, ու իմ հոգիս ձեզմէ պիտի զզուի։ 31— Ես ձեր քաղաքները աւերակ՝ ու ձեր սուրբ տեղերը ամայի պիտի ընեմ, և ձեր անոյշ հոտը պիտի չհոտուրտամ։ 32— Ես այն երկիրը ամայի պիտի ընեմ, որպէս զի հոն բնակող ձեր թշնամիները զարմանան անոր վրայ։ 33— Ես ձեզ ազգերուն մէջ պիտի ցրուեմ, ու ձեր

*Եբր. երեսն

եաեւէն սուբ պիտի քաշեմ, և ձեր երկիրը ամայի պիտի ըլլայ, ու ձեր քաղաքները աւերակ։ 34—Ա՛յն ատեն երկիրը իր ամայութեան բոլոր օրերը իր շաբաթները պիտի վայելէ, երբ դուք ձեր թշնամիներուն երկիրը ըլլաք. երկիրը այն ատեն հանգիստ ըլլալով՝ իր շաբաթները պիտի վայելէ։ 35—Իր ամայութեան բոլոր օրերը պիտի հանգըստանայ. քանի ձեր շաբաթներուն մէջ չէր հանգստացած, երբ անոր վրայ կը բնակէիք։ 36—Ու ձեզմէ ալ մնացածներուն սրտին դողդոջ պիտի բերեմ իրենց թշնամիներուն երկիրներուն մէջ ու հովին քշուած տերեւին ձայնը պիտի հալածէ զանոնք, և սուրի էնգիծ փախչելու պէս պիտի փախչին անոնք, ու հալածող մը չեղած ատեն պիտի իյնան։ 37—Ու հալածող մը չեղած ատեն՝ սուրի նման է—Է—Լ— պէս իրարու վրայ պիտի իյնան. և պիտի չկրնաք ձեր թշնամիներուն առջեւ կենալու։ 38—Ու ազգերուն մէջ պիտի կորնչիք, ու ձեր թշնամիներուն երկիրը ձեզ պիտի ուտէ։ 39—Ու ձեզմէ մնացածները իրենց անօրէնութիւնովը պիտի հալին ձեր թշնամիներուն երկիրներուն մէջ. նաեւ իրենց հայրերուն անօրէնութիւններովը մէկտեղ պիտի հալին։

40—Ու եթէ խոստովանին իրենց անօրէնութիւնը ու հայրերուն անօրէնութիւնը՝ ինծի դէմ գործած իրենց յանցանքներովը, և թէ իրենց ինծի հետ հակառակ եղած։ 41—Ու նաեւ իմ անոնց հետ հակառակ եղած, ու զանոնք իրենց թշնամիներուն երկիրը բերելս. եթէ այն ատեն անոնց անթլփատ սիրտը խոնարհի, և իրենց անօրէնութեան պատիժը յօժարութեամբ ընդունին, 42—Ա՛յն ատեն պիտի յիշեմ Յակոբի հետ բրած ուխտս, նաեւ Իսահակի հետ բրած ուխտս, և Աբրահամի հետ բրած ուխտս ալ պիտի յիշեմ, ու այն երկիրն ալ պիտի յիշեմ։

43—Ու չէրեւի այն երկիրը պիտի ձգուի անոնցմէ, ու իր շաբաթները պիտի վայելէ, քանի որ անոնցմէ ամայի մնայ. և անոնք իրենց անօրէնութեան պատիժը յօժարութեամբ պիտի ընդունին, քանզի իմ դատաստաններս անարգեցին, ու անոնց հոգիները իմ կանոններէս զզուեցան։ 44—Ա՛յս. ամենայնին, երբ իրենց թշնամիներուն երկիրը ըլլան, զանոնք պիտի չմերժեմ, և զանոնք բոլորովին կորնչելու՝ ու անոնց հետ բրած ուխտս չնկնելու չափ պիտի չզզուիմ անոնցմէ. վասն զի ես եմ Տէրը անոնց Աստուածը։ 45—Բայց անոնց համար պիտի յիշեմ էրէնց նախնիքներուն ուխտը, զորոնք Եգիպտոսի երկրէն հանեցի՝ ազգերուն առջեւ անոնց Աստուած ըլլալու համար. ես եմ Տէրը։

46—Ասոնք են այն կանոնները և դատաստանները ու օրէնքները զորոնք Տէրը սահման իր ու Իսրայէլի որդիներուն միջեւ Սինա լեռը Մովսէսի ձեռքով։

ԳԼ. ԻԷ

Ե Տէրը խոսեցաւ Մովսէսի՝ ըսելով. 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Երբ մէկը ուխտ բնելու ըլլայ, անձերուն էրէՔ քա արժեցուցածին պէս՝ Տէրոջը պիտի ըլլայ։ 3—Ու քա կարելու գինդ —յ—ղ— պիտի ըլլայ. Քանի սարեկանէն մինչեւ վար սուն սարեկան եղող արու էրն կարելու գինդ, սրբարանին սիկղին համեմատ, չիսուն սիկղ արծաթ պիտի ըլլայ։ 4—Ու եթէ էգ է, քա կարելու գինդ եբեսուն սիկղ պիտի ըլլայ։ 5—Ու եթէ հինգ սարեկանէն մինչեւ քսան սարեկան է, այն ատեն արու էրին համար քա կարելու գինդ կարելու գինդ հինգ սիկղ արծաթ պիտի ըլլայ։ 6—Ու եթէ մէկ ամսականէն մինչեւ հինգ սարեկան ըլլայ, այն ատեն արու էրին համար կարելու գինդ հինգ սիկղ արծաթ, ու էգին համար կարելու գինդ երեք սիկղ արծաթ պիտի ըլլայ։ 7—Ու եթէ վաթսուն սարեկանէն վեր ըլլայ, արու էրին համար քա կարելու գինդ սատանջրինդ սիկղ, ու էգին համար սատը սիկղ պիտի ըլլայ։ 8—Ու եթէ քա կարելու գինդ անոր կարողութիւնը չհասնի, անկէ քահանային առջեւ պիտի կենայ, ու անոր գինը քահանան կարէ. քահանան ուխտ բնողին կարողութեանը նայելով՝ անոր գին պիտի կարէ։

9—Ու եթէ էր —ն—ը Տէրոջը զոհ մատուցանելու անասուններէն է, ամէնէնգի ինչ որ Տէրոջը տայ, սուրբ պիտի ըլլայ։ 10—Ինք պիտի չփոխէ զայն, և ապիկը գէշին հետ՝ կամ գէշը ապիկին հետ չփոխէ. և եթէ անասուններ անասնի հետ երբէք փոխելու ըլլայ, այն ատեն այն ընծայուածը ու անոր փոխանակը սուրբ պիտի ըլլայ։ 11—Ու եթէ էր —ն—ը Տէրոջը զոհ չմատուցանելու անասուններէն ըլլայ, այն ատեն քահանային առջեւ պիտի հանէ այն անասունը։ 12—Ու քահանան անոր ապիկութեանը կամ գէշութեանը նայելով՝ գին պիտի կարէ. քահանան ինչ գին որ կարէ, այնպէս Թող ըլլայ։ 13—Իսկ եթէ զանիկա երբէք փրկելու ըլլայ, այն ատեն քա կարած գնդդ վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ։

14—Ու երբ մարդ մը իր տունը Տէրոջը սուրբ ըլլալու համար ընծայէ այն ատեն քահանան անոր ապիկութեանը կամ գէշութեանը նայելով՝ գին պիտի կարէ. քահանան անոր ինչ գին որ կարէ, այնպէս պիտի կենայ։ 15—Ու եթէ ընծայողը իր տունը փրկելու ըլլայ, քա կարած գնդդ սահկին վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ, ու տունը անոր պիտի ըլլայ։

16—Ու եթէ մարդ մը իր կալուածքին սրտէն բնծայելու ըլլայ Տէրոջը, այն ատեն քա կարած գինդ անոր սերմին համեմատ պիտի ըլլայ. մէկ քա գարիի սերմի համար չիսուն սիկղ արծաթ ըլլայ։ 17—Եթէ իր սրտը Յոբելեան սարիէն բնծայէ, քա կարած գնդդ պէս պիտի կենայ։ 18—Ու եթէ իր սրտը Յոբելեան ԳՈՒՐՆԷ ետքը բնծայէ, քահանան անոր հետ սահկը մինչեւ Յոբելեան սարիին ձեռացած սարիները նայելով՝ հաշիւ պիտի բնէ, ու քա կարած գինդդ վար պիտի իջեցընէ։ 19—Իսկ եթէ սրտը բնծայողը երբէք փրկելու ըլլայ զանիկա, այն ատեն քա կարած գնդդ սահկին վրայ հինգերորդ մաս մը աւելցնէ, ու այն ՈՐՊԷՍ պիտի հաստատուի անոր։ 20—Ու եթէ սրտը չփրկէ, կամ սրտը ուրիշի մը ծախած ըլլայ, ալ նորէն պիտի չփրկուի այն։ 21—Հապա սրտը երբ Յոբելեան սարիին մէջ դառնայ, նուիրուած սրտի պէս սուրբ պիտի ըլլայ Տէրոջը. անոր կալուածքը քահանային պիտի ըլլայ։

22—Ու եթէ մէկը Տէրոջը ընծայէ իր ծախու առած սրտը, որ իր կալուածքին սրտէն չէ, 23—Ա՛յն ատեն քահանան անոր հետ քա կարած գնդդ հաշիւը բնէ մինչեւ Յոբելեան սարին, և այն օրը քա կարած գինդ սուրբ բանի պէս պիտի ըլլայ Տէրոջը։ 24—Յոբելեան սարին, սրտը ծախողին, այսինքն որ որ կը վերաբերի գնածի կալուածքը, անոր պիտի դառնայ։ 25—Ու քա բոլոր կարած գինդդ սրբարանին սիկղին համեմատ պիտի բլլան. սիկղը քսան կերաս ըլլայ։

26—Միայն եթէ անասուններուն առջինեկը առջի ծնած ըլլալուն համար Տէրոջը ըլլալով, մէկը պիտի չընծայէ զայն. Թէ՛ արջառ ըլլայ և Թէ՛ ոչխար, Տէրոջն է։ 27—Ու եթէ անմաքուր անասուններէն է, քա կարած գնդդ համեմատ պիտի փրկէ զայն. ու անոր վրայ հինգերորդ մաս մը աւելցնէ. և եթէ չփրկուի, քա կարած գնդդ Թող ծախուի։

28—Բայց մարդու մը իր բոլոր ունեցած մարդոցմէն և անասուններէն ու իր կալուածքին սրտէն Տէրոջը նուիրածը պիտի չծախուի ու չփրկուի. ամէն նուէր ամենասուրբ է Տէրոջը։ 29—Մարդոցմէ նուիրուած նուէր մը բնաւ պիտի չփրկուի, հա— անչուշտ պիտի մեռցուի։

30—Ու երկրին բոլոր սասանորդը, Թէ՛ երկրին հասնելէն և Թէ՛ ծառերուն պտուղէն, Տէրոջն է. անիկա սուրբ է Տէրոջը։ 31—Ու եթէ մարդ մը իր սասանորդներէն երբէք փրկել ուզէ, անոր վրայ հինգերորդ մաս մը պիտի աւելցնէ։ 32—Ու արջառներուն ու ոչխարներուն ամէն սասանորդը, գաւազանին տակէն ամէն անցնողին սասնեղորդը, սուրբ պիտի ըլլայ Տէրոջը։ 33—Ապէկին ու գէշին մէջ մարդ մը չքննէ ու չփոխէ զայն. և եթէ երբէք փոխելու ըլլայ, այն ատեն այն ալ, անոր փոխանակն ալ սուրբ պիտի ըլլայ, պիտի չփրկուի։

34—Տէրոջը՝ Իսրայէլի որդիներուն համար Սինա լեռը Մովսէսի պատուիրած պատուիրանքները ասոնք են։

ԳԻՐՔ ԹՈՒՎՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եւ Ցերը Մովսէսի խօսեցաւ Սինայի անապատը Ժողովքի խորանին մէջ՝ առնոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարին երկրորդ ամսուն առաջին օրը՝ ըսելով, 2—Առէք խարայէլի որդիներուն բոլոր Ժողովքին գումարը իրենց ազգատոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ՝ ամէն մէկ արուն իրենց անուններուն թուովը հաշիւը, 3—Դուն ու Ահարոն խարայէլի մէջ բոլոր պատերազմելու *կարող եղողները՝ զօրքերուն համեմատ պիտի համրէք. 4—Ու ձեզի հետ ամէն ցեղէն մէյմէկ մարդ պիտի ըլլայ. անոնց ամէն մէկը իր հօրը տան իշխանը ըլլայ։

5—Ու ձեզի հետ կենացու մարդոց անունները սանկ են. Ռուբէնէ՝ Սեդիւրի որդին Եղիսուր, 6—Շմաւոնէ՝ Սուրիսադայի որդին Սաղամիէլ, 7—Ծուգայէ՝ Ամմինադաբի որդին Նաասոն, 8—Իսաքարէ՝ Սողդաբի որդին Նաթանայէլ, 9—Զաբուղոնէ՝ Քելոնի որդին Եղիսաբ, 10—Յովսէփի որդիներէն Եփրեմէ՝ Ամիհուդի որդին Եղիսամա, Մանասէէ՝ Փադասուրի որդին Գամալիէլ, 11—Բենիամինէ՝ Գեդէոնիի որդին Աբիդան, 12—Դանէ՝ Ամիսադայի որդին Աքիեզեր, 13—Աշերէ՝ Եքրանի որդին Փագիէլ, 14—Գադէ՝ Դագուէլի որդին Եղիսասափ, 15—Նեփթալիմէ՝ Ենանի որդին Աքիրէ։ 16—Ասոնք էին Ժողովքին կոչեցեալները, իրենց հայրերուն ցեղերուն իշխանները, խարայէլի հազարապետները։

17—Ու Մովսէս ու Ահարոն այս էրկոց անուններովս յիշատակ մարդիկը առին. 18—Ու երկրորդ ամսուն առաջին օրը բոլոր Ժողովքը Ժողվեցին, որոնք իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ՝ քսան տարեկանէն վեր ամէնը մէկ մէկ համրուելով էրկոց անուններուն թուովը արձանագրեցան, 19—Ցերը Մովսէս ինչպես որ պատուիրեց, անիկա Սինայի անապատին մէջ այնպես համրեց զանոնք։

20—Ու Իսրայէլի անդրանիկ որուն Ռուբէնի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 21—Ռուբէնի ցեղէն համրուածները քառասուներկու հազար հինգ հարիւր հոգի էին։

22—Շմաւոնի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 23—Շմաւոնի ցեղէն համրուածները յիսունրիւնը հազար երեք հարիւր հոգի էին։

24—Գադի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 25—Գադի ցեղէն համրուածները քառասներինգ հազար վեց հարիւր յիսուն հոգի էին։

26—Ծուգայի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 27—Ծուգայի ցեղէն համրուածները հօթանասներչորս հազար վեց հարիւր հոգի էին։

28—Իսաքարի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 29—Իսաքարի ցեղէն համրուածները յիսունչորս հազար չորս հարիւր հոգի էին։

30—Զաբուղոնի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 31—Զաբուղոնի ցեղէն համրուածները յիսուներեօթը հազար չորս հարիւր հոգի էին։

32—Յովսէփի որդիներէն Եփրեմի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 33—Եփրեմի ցեղէն համրուածները քառասուն հազար հինգ հարիւր հոգի էին։

34—Մանասէի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 35—Մանասէի ցեղէն համրուածները երեսունեօթը հազար երկու հարիւր հոգի էին։

36—Բենիամինի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 37—Բենիամինի ցեղէն համրուածները երեսունրհինգ հազար չորս հարիւր հոգի էին։

38—Դանի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 39—Դանի ցեղէն համրուածները վաթսունեօթը հազար եօթը հարիւր հոգի էին։

40—Ասերի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, իրենց անուններուն թուովը, 41—Ասերի ցեղէն համրուածները քառասուներմէկ հազար հինգ հարիւր հոգի էին։

42—Նեփթալիի որդիները իրենց սերունդովը, իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները, էրկոց անուններուն թուովը, 43—Նեփթալիի ցեղէն համրուածները յիսուներեքհազար չորս հարիւր հոգի էին։

44—Ասոնք են այն համրուած հոգիները, զորոնք Մովսէս, Ահարոն ու Իսրայէլի իշխանները համրեցին. այս էրեսունհէնգը տասներկու մարդիկ էին, ամէն մէկը իր հայրերուն տանը կոչին։ 45—Այսպես Իսրայէլի որդիներուն ամէնը իրենց հայրերուն տուներուն համեմատ, Իսրայէլի մէջ քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները համրուեցան։ 46—Ու բոլոր համրուածները վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին։

47—Բայց Ղեւտացիները իրենց հայրերուն ցեղովը ասանց հետ չհամրուեցան. 48—Քանզի Տէրը խօսեր էր Մովսէսի՝ ըսելով, 49—Միայն Ղեւտացւոց ցեղը պիտի չհամրես, և Իսրայէլի որդիներուն հետ անոնց գումարը պիտի չառնես. 50—Բայց դուն Ղեւտացիները վկայութեան խորանին ու անոր բոլոր կարասիներուն և անոր վերաբերեալ բոլոր բաներուն վերակացու պիտի դնես. անոնք պիտի վերցնեն խորանը ու անոր բոլոր կարասիները, և անոր սպասաւորութիւնը անոնք պիտի բռնեն. ու խորանին բոլորտիքը անոնք պիտի բանակին։ 51—Ու խորանին չուելուատեն Ղեւտացիները վար պիտի առնեն զայն, ու խորանին իջեւան բնելուատեն Ղեւտացիները պիտի կանգնեն զայն. և ուրիշ մօտեցող օտարականը պիտի մեռցուի։

52—Ու Իսրայէլի որդիները իրենց գունդերովը ամէն մէկը իր բանակին քով ու ամէն մէկը իր դրօշակին քով իջեւան պիտի բնեն։ 53—Բայց Ղեւտացիները վկայութեան խորանին բոլորտիքը պիտի բանակին, որպէս զի Իսրայէլի որդիներուն ժողովքին վրայ բարկութիւն չգայ. ու Ղեւտացիները վկա-

*Եբր. Ելզոնները

յաթեան խորանին պահապանութիւնը պիտի ընեն։ 54—Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը Մովսէսի ամէն պատուիրածին պէս ըրին։ այնպէս ըրին։

ԳԼ. Բ

Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 2—Իսրայէլի որդիներուն ամէն մէկը իր դրօշակին քով իրենց հայրերուն տան նշանով իջեւան պիտի ընեն. ժողովքի խորանին դիմաց շուրջանակի իջեւան ընեն։

3—Ե ա՛լելի կողմը՝ դէպ ի արեւելք իջեւան ընողները Յուդայի բանակին դրօշակը Ամինադաբի որդին Նաասոն Յուդայի որդիներուն հյսիսի պիտի ըլլայ։ 4—(Ե անոր հետ զօրքը եօթանասունըչորս հազար վեց հարիւր հոգի էին։) 5—Ե անոր քով իջեւան ընողները Իսաքարի ցեղը պիտի ըլլայ։ Ե Սովղաբի որդին Նաթանայէլ Իսաքարի որդիներուն հյսիսի պիտի ըլլայ։ 6—(Ե անոր հետ զօրքը յիսունըչորս հազար չորս հարիւր հոգի էին։) 7—Ետքը Զաբուղոնի ցեղը։ Ե Քեղոնի որդին Եղիաբ Զաբուղոնի որդիներուն հյսիսի պիտի ըլլայ։ 8—(Ե անոր հետ զօրքը յիսունըեօթը հազար չորս հարիւր հոգի էին։) 9—Յուդայի բանակին մէջ հետ զօրքերուն համրուածները ամէնը, իրենց գունդերուն համեմատ, հարիւր ութսունըվեց հազար չորս հարիւր հոգի էին)։ Առաջ առնելէն պիտի չուենն։

10—Հարաւային կողմը Ռուբէնի բանակին դրօշակը պիտի ըլլայ իրենց գունդերուն կարգովը։ Ե Ռուբէնի որդիներուն իջեւան՝ Սեդեուրի որդին Եղիսուր պիտի ըլլայ։ 11—(Ե անոր հետ զօրքը վաթսունըվեց հազար հինգ հարիւր հոգի էին։) 12—Ե անոր քով իջեւան ընողները Շիմէոնի ցեղը պիտի ըլլայ։ ու Շիմէոնի որդիներուն իջեւան՝ Սուրիսադայի որդին Սադամիել պիտի ըլլայ։ 13—(Ե անոր հետ զօրքը յիսունըինը հազար երեք հարիւր հոգի էին։) 14—Ե Խուէը Գադի ցեղը և Գադի որդիներուն իջեւան՝ Դագուէլի որդին Եղիասաֆ պիտի ըլլայ։ 15—(Ե անոր հետ զօրքը քառասունըհինգ հազար վեց հարիւր հոգի էին։) 16—Ռուբէնի բանակին մէջ հետ զօրքերուն համեմատ, հարիւր յիսունըմէկ հազար չորս հարիւր հոգի էին։) Ե երկրորդ առնելէ պիտի չուենն։

17—Ապա Ղեւտացւոց բանակին հետ բանակները մէջտեղը ժողովքի խորանը պիտի չուեն, ամէն մարդ իր տեղը իրենց դրօշակներուն քով իջեւան ըլլալով ան պիտի չուենն։

18—Արեւմտեան կողմը Եփրեմի բանակին դրօշակը պիտի ըլլայ իրենց գունդերուն կարգովը։ ու Եփրեմի որդիներուն իջեւան՝ Ամիհուդի որդին Եղիսամա պիտի ըլլայ։ 19—(Ե անոր հետ զօրքը փառասուն հազար հինգ հարիւր հոգի էին։) 20—Ե անոր քով Մանասէի ցեղը, ու Մանասէի որդիներուն իջեւան՝ Փադասուրի որդին Գամալիէլ պիտի ըլլայ։ 21—(Ե անոր հետ զօրքը երեսունըերկու հազար երկու հարիւր հոգի էին։) 22—Ե Խուէը Բենիամինի ցեղը։ Ե Բենիամինի որդիներուն իջեւան՝ Գեդէոնիի որդին Աբիդան պիտի ըլլայ։ 23—(Ե անոր հետ զօրքը երեսունըհինգ հազար չորս հարիւր հոգի էին։) 24—Եփրեմի բանակին մէջ հետ զօրքերուն համեմատ, հարիւր ութ հազար հարիւր հոգի էին։) Ե երրորդ առնելէ պիտի չուենն։

25—Հիւսիսային կողմը Դանի բանակին դրօշակը պիտի ըլլայ իրենց գունդերուն կարգովը։ Ե Դանի որդիներուն իջեւան՝ Ամիսադայի որդին Աքիեզեր պիտի ըլլայ։ 26—(Ե անոր հետ զօրքը վաթսունըերկու հազար եօթը հարիւր հոգի էին։) 27—Ե անոր քով իջեւան ընողները Աշերի ցեղը պիտի ըլլայ։ ու Աշերի որդիներուն իջեւան՝ Եքրանի որդին Փագիէլ պիտի ըլլայ։ 28—(Ե անոր հետ զօրքը քառասունըմէկ հազար հինգ հարիւր հոգի էին։) 29—Ե Խուէը Նեփթաղիմի ցեղը։ ու Նեփթաղիմի որդիներուն իջեւան՝ Ենանի որդին Ահիրէ պիտի ըլլայ։ 30—(Ե անոր հետ զօրքը յիսունըերեք հազար չորս հարիւր հոգի էին։) 31—Դանի բանակին մէջ հետ զօրքերուն ամէնը հարիւր յիսունըեօթը հազար վեց հարիւր հոգի էին։) Ասոնք իրենց դրօշակներովը ամէնուն ետեւէն պիտի չուեն։

32—Իսրայէլի որդիներէն իրենց հայրերուն տուներովը հետզհետէ համրուածները ասոնք են. բանակներուն մէջ հետ զօրքերուն ամէնը իրենց գունդերուն կարգովը վեց հարիւր երեք հազար հինգ հարիւր յիսուն հոգի էին։ 33—Բայց Ղեւտացիները չհետզհետէ Իսրայէլի որդիներուն հետ, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։ 34—Ե Իսրայէլի որդիները Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս ըրին։ այսպէս իրենց դրօշակներովը իջեւան կ՚ընէին, ու այսպէս անոնք ամէն մէկը իրենց տոհմերուն կարգովը և իրենց հայրերուն տուներովը կը չուէին։

ԳԼ. Գ

Ե Ահարոնի ու Մովսէսի ազգաբանութիւնը այս է, Տէրոջը Մովսէսի հետ Սինա լեռանը վրայ խօսած օրը։ 2—Ե Ահարոնի որդիներուն անունները ասոնք են. անդրանիկը Նադաբ, և Աբիուդ, Եղիազար ու Իթամար։ 3—Ասոնք էին Ահարոնի որդիներուն, քահանաներուն, անուններուն, որոնք օծուած օրհնուած էին քահանայութիւն ընելու։ 4—Ե Նադաբ ու Աբիուդ Սինայի անապատին մէջ Տէրոջը առջեւ օտար կրակ մատուցած ատեննին մեռան Տէրոջը առջեւ, ու անոնք որդի չունէին. և Եղիազար ու Իթամար իրենց հօրը Ահարոնի առջեւ քահանայութիւն ըրին։

5—Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 6—Ղեւիի ցեղը մօտեցուր, ու զանոնք Ահարոն քահանային առջեւ կայնեցուր, որպէս զի անոր սպասաւորութիւն ընեն։ 7—Ե անոր պահպանութիւնը ու բոլոր ժողովքին պահպանութիւնը ժողովքի խորանին առջեւ պիտի պահեն խորանին պաշտօնը ընելով։ 8—Ե ժողովքի խորանին բոլոր կարասիները ու իսրայէլի որդիներուն պահպանութիւնը պիտի պահեն՝ խորանին պաշտօնը ընելով։ 9—Ե Ահարոնի ու անոր որդիներուն պիտի տաս Ղեւտացիները. ասոնք Իսրայէլի որդիներէն բոլորովին անոր տրուած են։ 10—Ե Ահարոնը ու անոր որդիները իրենց քահանայական պաշտօնը կատարելու պիտի կարգես. և մօտեցող օտարականը պիտի մեռցուի։

11—Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 12—Ե ես ահա Իսրայէլի որդիներուն միջէն Ղեւտացիները առի, Իսրայէլի որդիներուն մէջ ամէն բուրզ արգանդը բացող առիւծներէն տեղ. ուստի Ղեւտացիները իմ պիտի ըլլան։ 13—Քանզի ամէն առիւծները իմն է. երբ Եգիպտոսի երկրին մէջ բոլոր առիւծներուն զարկի, Իսրայէլի մէջ բոլոր առիւծներուն մարդկէն մինչև անասուն արեւցի բնաջիւ. անոնք իմ պիտի ըլլան. ես Տէր եմ։

14—Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի Սինայի անապատին մէջ՝ ըսելով, 15—Համրէ Ղեւիի որդիները իրենց հայրերուն տուներուն և իրենց ազգատոհմերուն նայելով. ամէն ամսականէն վեր եղող ամէն արու պիտի համրես։ 16—Ե Մովսէս Տէրոջը խօսքին համեմատ համրեց զանոնք, ինչպես իրեն պատուիրուեցաւ։ 17—Ե Ղեւիի որդիները իրենց անուններովը ասոնք էին. Գերսոն և Կահաթ ու Մերարի։ 18—Ե Գերսոնի որդիներուն անուններըը իրենց տոհմերովը ասոնք են. Ղաբնի ու Սեմէի։ 19—Ե կահաթի որդիները իրենց տոհմերովը Ամրամ և Իսհառ, Փերսոն ու Ոզիել էին։ 20—Ե Մերարիի որդիները իրենց տոհմերովը Մահղի ու Մուսի էին. Ղեւտացւոց տոհմերը իրենց հայրերուն տուներուն համեմատ ասոնք են։

21—Գերսոնէ Ղաբնեանց տոհմը և Սեմէեանց տոհմը եղաւ. Գերսոնեանց տոհմերը ասոնք են։ 22—Անոնցմէ համրուածները, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուներուն թիւին համեմատ համրուածները, եօթը հազար հինգ հարիւր հոգի էին։ 23—Գերսոնեանց տոհմերը խորանին ետեւի կողմը դէպ ի

արեւմտեան իջեան պիտի բնեն։ 24— Եւ Գերսոնեանց հօրը տանը իշխանը Լիայէլ որդին Եղիասաբ պիտի ըլլայ։ 25—Եւ Ժողովքի խորանին մէջ Գերսոնի որդիներուն պահպանութեանը յանձնուած բաները՝ խորանը, անոր ծածկոցը և Ժողովքի խորանին դրանը վարագոյրը, 26—խորանին և սեղանին բոլորովիք եղած սրահին վարագոյրները, և սրահին դրանը վարագոյրը, և անոր ամէն գործին համար եղած յանձները։

27—Եւ Կահաթի Ամրամեանց ազգին ու Իսհառեանց ազգին և Քեբրոնեանց ազգին ու Ոզիէլեանց ազգին եղաւ։ Կահաթեանց ազգերը սոսկ են։ 28—Մէկ ամսականէ վեր եղող բոլոր արուները էբէդ թիւին համեմատ՝ ութ հազար վեց հարիւր հոգի էին, որոնք սրբարանին պահպանութիւնը կ՚ընէին, 29—կահաթի որդիներուն ազգերը խորանին հարաւային կողմը իջեան պիտի բնեն։ 30—Եւ կահաթեանց ազգերուն հօրը տանը իշխանը Ոզիէլի որդին Եղիսաման ըլլայ։ 31—Եւ անոնց պահպանութիւնը յանձնուած բաները սեղանը ու սպասները որով սպասաւորեն անոնց հետ, ու վարագոյրը ու անոր վերաբերեալ ամէն բաները։ 32—Եւ Ղեւտացւոց իշխաններուն իշխանը՝ Ահարան քահանային որդին Եղիազար պիտի ըլլայ, որ սրբարանին պահպանութիւնը ընդներուն վրայ վերակացու պիտի ըլլայ։

33—Մերարիէ Մոռզեանց ազգը և Մահլեանց ազգը եղաւ։ սոսկ են Մերարիի ազգերը։ 34—Եւ անոնց համրուածներուն, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուները էբէդ թիւին համեմատ, վեց հազար երկու հարիւր հոգի էին։ 35—Եւ Մերարեանց ազգերուն հօրը տանը իշխանը Աբիհայիլի որդին Սուրիէլ ըլլայ։ սոսկ խորանին հիւսիսային կողմը իջեան պիտի բնեն։ 36—Եւ Մերարիի որդիներուն պահպանութեանը յանձնուած բաները սոսկ են։ խորանին տախտակները, ու անոր նիգերը և սիւներն ու խարխխներն և անոր բոլոր գործիքները ու անոր վերաբերեալ ամէն բաները։ 37—Եւ շուրջանակի սրահին սիւները, ու նոնց խարխխները և ցիցերը ու անոնց չափանները։

38— Եւ խորանին առջեւի կողմը, այսինքն Ժողովքի խորանին առջեւ դէպ ի արեւելք, իջեան բնդները Մովսէս ու Ահարան և անոր որդիները պիտի ըլլան, որ սրբարանին պահպանութիւնը իսրայէլի որդիներուն պահպանութեանը համար պահպանեն. ու մեռեցող օտարականը պիտի մեռցուի։ 39—Ղեւտացւոց բոլոր համրուածները, որոնք իրենց ազգերովը Տէրը խօսքին համեմատ Մովսէս ու Ահարան համրեցին, մէկ ամսականէն վեր եղող բոլոր արուները քսանեւերկու հազար էին։

40—Եւ Տէրը բսաւ Մովսէսի, Իսրայէլի որդիներուն մէկ ամսականէ վեր բոլոր առջինեկ արուները համրէ, ու անոնց անուններուն թիւը առ։ 41—Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր առջինեկներուն փոխարէն՝ Ղեւտացիները պիտի առնես ինծի համար. ես եմ Տէրը։ ու Ղեւտացւոց անասուններն Իսրայէլի որդւոց անասուններուն բոլոր առջինեկներուն տեղ։ 42—Եւ Մովսէս համրեց Իսրայէլի որդիներուն բոլոր առջինեկները, ինչպես Տէրը իրեն պատուիրեց։ 43—Եւ բոլոր առջինեկ արուները էբէդ անուններուն թիւին համեմատ, մէկ ամսականէ վեր համրուածներըք քսանուերկու հազար երկու հարիւր հոգի էին։

44—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ բսելով, 45—Իսրայէլի որդիներուն մէջ ամէն առջինեկներուն տեղ Ղեւտացիները, և անոնց անասուններուն տեղ Ղեւտացւոց անասունները առ, որպէս զի Ղեւտացիները իմ ըլլան. ես եմ Տէրը։ 46—Եւ Ղեւտացւոց էբէդ ազելացած՝ Իսրայէլի որդիներուն երկու հարիւր հոգի անասունեալներուք առջինեկներուն փրկանք ըլլալու համար, 47—Մարդ գլուխ հինգ սիկղ պիտի առնես, սրբարանին սիկղին համեմատ պիտի առնես. մէկ սիկղը քսան կերա է։ 48—Եւ անոնց մէջ ազելացածներուն փրկանքին սոսկը Ահարոնի և անոր որդիներուն տաս։ 49— Եւ Մովսէս Ղեւտացիներով փրկուածներուն ազելացածներէն փրկանքին սոսկը առաւ։ 50—Իսրայէլի որդիներուն առջինեկներէն սրբարանին սիկղին համեմատ, հազար երեք հարիւր վեց հարիւր հոգի արծաթ առաւ։ 51—Եւ Մովսէս Տէրոջը խօսքին պէս՝ փրկուածներուն սոսկը Ահարոնի ու անոր որդիներուն տուաւ, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր։

Գլ. Դ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ բսելով, 2—Գերսոնի որդիներուն մէջէն կահաթի որդիներուն գումարը ա, իրենց ազգերուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ։ 3—երեսուն տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը, Ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ եկող մտնողը հ՚ընէ։ 4— Ժողովքի խորանին մէջ կահաթի որդիներուն պաշտօնը ամենասուրբ բաները պիտի ըլլան։ 5— Եւ երբ բանակը չուելու ըլլայ, Ահարոն ու անոր որդիները պիտի գան, ու ծածկոցին վարագոյրը իջեցնեն, և անով վկայութեան տապանակը ծածկեն։ 6— Եւ թխսւոի մորթերէ ծածկոցը անոր վրայ պիտի դնեն, ու անոր վրայ բոլորովին կապուտակ լաթ մը տարածեն, և անոր ձողերը պիտի անցնեն։ 7—Եւ առաջաւորութեան սեղանին վրայ կապուտակ լաթ մը տարածեն, ու անոր վրայ սկուտեղները և խնկամաններն ու գաւաթները և թափելու նուէր մատուցանելու բաժակները դնեն, ու հանապազօրեայ հացերը անոր վրայ պիտի ըլլան։ 8—Եւ անոնց վրայ կրկնակի կարմիրէ լաթ մը տարածեն, ու թխսւոի մորթերէ ծածխոցով ծածկեն զայն. և անոր ձողերը տնեցնեն։ 9—Եւ կապուտակէ լաթ մը առնեն, ու ծածկեն լոյսի աչառնակը և անոր ճրագները ու անոր աւելիները և բաշմանոցները ու անոր բոլոր իւղի անօթները, որոնցմով կը ծառայեն անոր։ 10—Եւ զանիկա իր ամէն գործիքներովը թխսւոի մորթերէ ծածկոցի մը մէջ դնեն, ու լծակի մը վրայ դնեն զայն։ 11—Եւ ոսկի սեղանին վրայ կապուտակ լաթ մը տարածեն, ու թխսւոի մորթերէ ծածկոցով մը ծածկեն զայն. և անոր ձողերը անցնեն։ 12—Եւ սրբարանին պաշտօնին գործածուած բոլոր գործիքները պիտի առնեն, ու կապուտակ լաթի մը մէջ փաթթեն, և թխսւոի մորթերէ ծածկոցով ծածկեն զանիկա, ու լծակի մը վրայ դնեն։ 13—Եւ ոչխարի սեղանէն մոխիրները հանելով՝ անոր վրայ ծիրանագոյն լաթ տարածեն, 14—Եւ անոր վրայ պաշտօնին համար գործածուած անոր բոլոր գործիքները, այսինքն կրակի մանգաղները, մսահանները ու քիսկներն և կոնքերը (սեղանին բոլոր գործիքները) այն չ-ՐՒՒ վրայ դնեն, ու անոր վրայ թխսւոի մորթերէ ծածկոց մը տարածեն, և անոր ձողերը անցնեն։ 15—Եւ Ահարոն ու անոր որդիները բանակին չուած ատենը՝ սրբարանը ու սրբարանին բոլոր կարասիները ծածկելը լմնցնեն. ու եռաբոր կահաթի որդիները չուելու վերցնելու գան. բայց սուրբ բաներուն չդպչին, որպէս զի չմեռնին. կահաթի որդիներուն բեռներր ասոնք պիտի ըլլան ժողովքի խորանին մէջ։

16—Եւ Ահարոն քահանային որդին Եղիազար լոյսի իւղին ու անուշահոտ խունկին և հանապազօրեայ հացի ընծային ու օծման իւղին վրայ վերակացու պիտի ըլլայ։ և բոլոր խորանին ու անոր մէջի ամէն բաներուն, սրբարանին ու անոր կարասիներուն վրայ վերակացու ըլլայ։

17—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ բսելով, 18— Ղեւտացւոց մէջէն կահաթեանց ազգերուն ցեղը մի կտրեցնէք։ 19—Բայց անոնց այսպէս բրէք որ ամենասուրբ բաներուն մօտեցած ատենները ոչ մեռնին ու չմեռնեն. Ահարոն ու իր որդիները գան, ու անոնց ամէն մէկուն իր պաշտօնը ու իր բեռը որոշեն։ 20—Ու երբ սուրբ բաները կը ծածկեն, անոնք տեսնելու համար ներս չմտնեն, որպէս զի չմեռնին։

21—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ բսելով, 22—Նաև Գերսոնի որդիներուն գումարը առ, իրենց հայրերուն

տուներուն ու իրենց առհմիրուն համա-
ձայնեցան։ 23—երբոր ան ամպիկին վրայ
մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի
խորանին մէջ ծառայութիւն ընելու
համար գունդին մէջ մտնէր ամէն մանդատները
պիտի հարներ։ 24—Գերսոնեանց առհ-
միրուն ծառայելու ու բեռ վերցնելու
պաշտօնը այս է։ 25—Անոնք պիտի
վերցնեն խորանին վարագոյրները ու
ժողովքի խորանը, անոր ծածկոցը ու
անոր վրայի թաղիքէ ծածկոցը, և ժո-
ղովքի խորանին դրանը վարագոյրը։
26—Ու խորանին ու սեղանին բոլոր-
ջիքը եզած պարիսպին վարագոյրները ու
պարէ մնալու դրան վարագոյրը ու
անոնց չուանները և անոնց պաշտօնին
բոլոր գործիքները պէտք է տան։ ու
ասոնց հարկաւոր եզած բոլոր ապա-
տարութիւնները պիտի ընեն։ 27—Գեր-
սոնեանց որդիներուն բոլոր պաշտօն,
իրենց ամէն բեռներուն ու իրենց ա-
մէն պաշտօններուն համար, Ահարոնի
ու անոր որդիներուն հրամանով պիտի
ըլլայ։ և անոնց բոլոր բեռները անոնց
պահպանութեանը յանձնէք։ 28—
Գերսոնեանց որդւոցը առհմիրուն պաշ-
տօնը այս պիտի ըլլայ ժողովքի խորա-
նին մէջ։ և անոնց պահպանութիւնը
Ահարոն քահանային որդւոյն Իթամարի
ձեռքին տակ պիտի ըլլայ։

29—Մերարիի որդիներն ալ համրես,
իրենց առհմիրուն ու իրենց հայրերուն
տուներուն համեմատ։ 30—երբոր ան
տարեկանէ վեր մինչև յիսուն տարե-
կանը՝ ժողովքի խորանին ծառայու-
թիւնը ընելու համար գունդին մէջ
մտնէ նմանդները համրես։ 31—ու ժո-
ղովքի խորանին մէջ անոնց ամէն պաշ-
տօնները համեմատ՝ անոնց յանձ-
նուած բեռները ասոնք են. խորանին
տախտակները, ու անոր նիգերը, և ա-
նոր սիւները և խարխանները, 32—ու
շրջանակի պարէն սիւները, ու ա-
նոնց խարխանները և ցիցերը ու չուան-
ները՝ անոնց ամէն գործիքներովը և
անոնց ամէն պաշտօնովը. անոնց պահ-
պանութեան բեռները եզած գործիք-
ները անուններովը պիտի յանձնէք ա-
նոնց։ 33—Ա՛յս է Մերարիի որդւոյը
առհմիրուն պաշտօնը ժողովքի խորա-
նին մէջ, իրենց բոլոր պաշտօններուն
համեմատ, Ահարոն քահանային որդ-
ւոյն Իթամարի ձեռքին տակ։

34—Ու Մովսէս ու Ահարոն և ժո-
ղովքին իշխանները համրեցին Կահաթ-
եանց որդիները անոնց առհմիրուն ու
անոնց հայրերուն տուներուն համե-
մատ, 35—երբոր ան տարեկանէ վեր
մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խո-
րանին մէջ ծառայութիւն ընելու հա-
մար գունդին մէջ ամէն մտնողները.
36—ու անոնց համրուածները իրենց
առհմիրովը երկու հազար հարիւր
յիսուն հոգի էին։ 37—Ասոնք են ժո-
ղովքի խորանին բոլոր ծառայութիւնը
ընող Կահաթեանց առհմիրուն համ-
րուածները, զորոնք Մովսէս ու Ահա-
րոն համրեցին, ինչպէս Տէրը Մովսէսի
ձեռքով պատուիրեր էր։

38—Ու Գերսոնի որդիներուն համ-
րուածները իրենց առհմիրուն ու իրենց
հայրերուն տուներուն համեմատ, 39—
երբոր ան տարեկանէ վեր մինչև յիսուն
տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծա-
ռայութիւն ընելու համար գունդին
մէջ ամէն մտնողները համրեցին։ 40-
Ու անոնց համրուածները իրենց առհ-
միրուն ու իրենց հայրերուն տուներուն
համեմատ՝ երկու հազար վեց հարիւր
երեսուն հոգի էին։ 41—Ասոնք են ժո-
ղովքի խորանին մէջ բոլոր ծառայու-
թիւն ընող Գերսոնի որդիներուն առհ-
միրուն համրուածները, զորոնք Մովսէս
ու Ահարոն համրեցին Տէրոջը պատու-
իրածին պէս։

42—Ու Մերարիի որդւոց առհմիր-
ուն համրուածները իրենց առհմիրուն
ու իրենց հայրերուն տուներուն համե-
մատ, 43—երբոր ան տարեկանէ վեր
մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խո-
րանին մէջ ծառայութիւն ընելու հա-
մար գունդին մէջ ամէն մտնողները
համրուածները, 44—ու անոնց համրուած-
ները իրենց առհմիրովը երեք հազար
երկու հարիւր հոգի էին։ 45—Ասոնք
են Մերարիի որդւոց առհմիրուն համ-
րուածները, զորոնք Մովսէս ու Ահա-
րոն համրեցին, ինչպէս Տէրը պատուի-
րեր էր Մովսէսի ձեռքով։

46—Ղեւտացւոց բոլոր համրուած-
ներն որ Մովսէս ու Ահարոն և Իսրայէլի իշխանները համրեցին իրենց առհմիրուն ու իրենց հայրերուն տուներուն համեմատ, 47—երբոր ան տարեկանէ վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ պաշտօնը ընելու և բեռ կրելու ծառայութիւնը ընելու համար գունդին մէջ մտնողները, 48—Ա՛յսինքն անոնց համրուածները, որ հազար հինգ հարիւր ութսուն հոգի էին։ 49—Անոնք Տէրոջը պատուիրածին պէս համրուացան Մովսէսի ձեռքով, ամէն մէկը իր պաշտօնին ու իր բեռին նայելով. այ-պէս համրուացան անոնք, ինչպես Տէրը պատուիրեց Մովսէսին։

Գլ. Ե

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Հրամայէ որ Իսրայէլի որդիները ամէն բանակէն դուրս ձգեն ամէն բորոտը, և ամէն ծորամ ունեցողը, ու մեռելի մը ամէն անմաքուր եղողը։ 3—Արուն ալ էգն ալ դուրս ձգեցէք. բանակէն դուրս պիտի ձգէք զանոնք, որպէս զի չպղծեն իրենց բանակները՝ որոնց մէջտեղը ես կը բնակիմ։ 4—Ու Իսրայէլի որդիները այնպես ըրին, ու բանակէն դուրս ձգեցին զանոնք. ինչպես Տէրը Մովսէսի խօսեցաւ, այնպես ըրին Իսրայէլի որդիները։

5—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 6—Խօսէ Իսրայէլի որդիներուն, երբ մարդ մը կամ կին մը մարդոց ամէն մեղքերէն մէկը գործելով՝ Տէրոջը դէմ մեղանչէ, ու այդ անձր յանցաւոր ըլլայ, 7—Ա՛յն ատեն իր ըրած մեղքը պիտի խոստովանի, և անիկա իր ըրած վնասը լման պիտի հատուցանէ, ու անոր վրայ հինգերորդ մաս մը ա-ւելցնէ, ու զանիկա վնասը փաստղին պիտի տայ։ 8—Ու եթէ այն ը-ն-ծ-ղ մարդուն մէկ ազգականն ալ չըլլայ, որու այս վնասը հատուցուի, այն ո-ր-ե-ն եզած վնասը, Տէրոջը հատուցելով, քահանային պիտի ըլլայ բաց է քաւութեան խոյէն, որով այն յ-ն-ծ-ղ-ծ-ղ համար քաւութիւն պիտի ըլլայ։

9—Ու Իսրայէլի որդիներուն բոլոր սուրբ բաներուն ամէն ընծան զոր կը բերեն քահանային, անոր պիտի ըլլայ։ 10—Ու ամէն մէկուն սուրբ բաները անոր պիտի ըլլան. ամէն մարդ ինչ որ այ քահանային, անոր ըլլայ։

11—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 12—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Եթէ մարդու մը կինը խոտորի ու անոր անհաւատարմութիւն ընէ, 13—ու մէկը անոր հետ պառկելով զանգաթը, ու անոր այրը անոր չըլլալով ծ-ն-ծ գաղտնի մնայ, և անոր պղծուած ատենը անհաղ մը չըլլայ, ու կինը չբռնուի, 14—ու է-ն-ծ վրայ նախանձաւորութեան ոգի գայ ու նախանձի, կամ կինը պղծուած չըլլալով է-ն-ծ վրայ նախանձաւորութեան ոգի գայ ու նախանձի, 15—Ա՛յն ատեն այն մարդը իր կինը քահանային պիտի բերէ, և անոր ընծային համար գարիի ալիւրէն տասներորդ քսանինը պիտի բերէ. իւղ պիտի չթափէ անոր վրայ, ու ալ կնդրուկ դնէ վրան, վասն զի նախանձաւորութեան ընծայ մըն է այն, յիշատակի ընծայ որ մեղքը կը յիշատակէ։ 16—Ու քահանան կինը պիտի մօտեցնէ, ու Տէրոջը առջև կայնեցնէ։ 17—Ու քահանան հազի ամանով սուրբ ջուր պիտի առնէ. ու քահանան խոտորին յատակը եզած հողէն պիտի առնէ, և խորբին մէջ դնէ, 18—Ու քահանան Տէրոջը առջև պիտի կայնեցնէ կինը, ու կնոջ գլուխը բանայ, և յիշատակի ընծան, այսինքն նախանձաւորութեան ընծան, անոր ձեռքը պիտի տայ. ու անէծքին լեզի լաւը քահանան իր ձեռքը պիտի առնէ. 19—Ու քահանան անոր երդում ընել պիտի տայ, ու ըսէ կնոջը, Եթէ մարդ մը քեզի հետ չպառկեցաւ, և եթէ դու երկանդ անհաւատարմութիւն ընելով չպղծուեցար, անէծքին այս լեզի լաւը քեզի ազատ մը չընէ. 20—Բայց եթէ դու երկանդ անհաւատարմութիւն ընելով պղծուեցար, և դու այրէդ զատ ուրիշ մարդ մը քեզի հետ պառկեցաւ, 21—(Ա՛յն ատեն քահանան կնոջ անէծքի երդումի բնել պիտի տայ, և քահանան կնոջ պիտի ըսէ,) Տէրը քեզ քու ժողովրդիդ մէջտեղը

անէծք ու երդումի համար պիտի դնէ, երբ Տէրը քու վրադ փանցնէ ու քու փորդ ուռեցնէ. 22—ու այս անէծքին նայը քու ապիքներուդ մէջ պիտի երթայ, որպէս զի *ու փորդ ուռեցնէ, ու *ու վրադ փանցնէ. և կինը պիտի բսէ, Ամէն, ամէն։ 23—ու քահանան այս անէծքները գիրքի մը մէջ պիտի գրէ, ու այն լեղի ջրովը պիտի ապրէ։ 24—ու անէծքին լեղի ջուրը այն կնոջ պիտի խմցնէ. ու անէծքին ջուրը անոր ներսիդին պիտի երթայ՝ լեղի բլլալու համար։ 25—ու քահանան կնոջ ձեռքէն նախանձու որթ թեան ընծան պիտի առնէ, ու Տէրոջը առջև երերցնէ ընծան, և սեզանին մատնցնէ զայն։ 26—ու քահանան ընծայէն իր ձեռքը լեցուն պիտի առնէ յիշատակի համար, ու սեզանին վրայ պիտի այրէ զայն. ու ետքը այն ջուրը կնոջ պիտի խմցնէ։ 27—ու ջուրը անոր խմցնելէն ետև՝ եթէ անիկա պղծուած է, ու իր էրկանը անհաւատարմութիւն րրած է, անէծքին ջուրը լեղի բլլալով՝ երբ մտնէ անոր ներսիդին, անոր փորը պիտի ուռենայ, ու անոր պիտար *փսի, և կինը իր ժողովրդին մէջ անիծեալ պիտի բլլայ։ 28—իսկ եթէ կինը պղծուած չըլլալով մաքուր է, միասս պիտի չկրէ, ու զաւակ պիտի ծնանի։ 29—Նախանձու որթ թեան օրէնքը այս է, երբ կին մը իր էրկանը անհաւատարմութիւն ընելով պղծուի, 30—կամ երբ մարդու մը վրայ նախանձու որթ եան ոգի գայ ու իր կնոջ վրայ նախանձի, Տէրոջը առջև պիտի կացնէ կինը, և քահանան կատարէ այս բոլոր օրէնքը անոր վրայ։ 31—ու այն մարդը ազատ պիտի բլլայ յանցանքէն, և կինը իր յանցանքը պիտի կրէ։

Գլ. Զ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, Եթէ մարդ մը կամ կին մը ինքզինք Տէրոջը նազիրլութիւն† ընելու համար †ուխտելով մեծ ուխտ ընելու բլլայ, 3—գինիէ և օղիէ պիտի զգուշանայ. գինիի քացախ կամ օղիի քացախ չխմէ, և բնաւ խաղողի օշարակ չխմէ, ու խաղող կամ չամիչ չուտէ։ 4—ինքզինք նազիրելուն բոլոր օրերը *որթէն եղած բան մը չուտէ, կուռերէն մինչև կեղեւը, 5—ինքզինք նազիրելու ուխտին բոլոր օրերը իր գլխուն մաճի չդպցնէ մինչև ինքզինք Տէրոջը նազիրած օրերուն լմննալը ինք սուրբ բլլայ. Ն իր գլխու մազերուն վարսքը թող ապ ար աճի։ 6—ինքզինք Տէրոջը նազիրած բոլոր օրերը մեռած †մարմինի մը չմօտենայ. 7—իր հօր համար կամ մօր համար, իր եղբօրը կամ իր քրոջը համար ինքզինք պիտի չպղծէ, երբ անոնք մեռնին, քանզի իր Աստուծոյն ‡նազիրը իր գլխուն վրայ է։ 8—ինքզինք նազիրելուն բոլոր օրերը ինք սուրբ է Տէրոջը։ 9-ու եթէ իր քով յանկարծ մարդ մը մեռնի, ու իր նազիրած գլուխը պղծուի, իր մաքրուելու օրը իր գլուխը պիտի սրէ, ու եօթներորդ օրը պիտի սրէ զայն։ 10—ու ութերորդ օրը ժողովքի խորանին դուռը երկու տատրակ կամ ազաւնիի երկու ձագ բերէ քահանային։ 11—ու քահանան մէկը մեղքի պատարագ ու մէսը ողջակէզ պիտի մատուցանէ, և մեռելին պատճառած եղած մեղքին համար քաւութիւն պիտի ընէ անոր. ու նոյն օրը պիտի սրբէ անոր գլուխը։ 12—ու իր ուխտին օրերը Տէրոջը նազիրէ. ու յանցանքի պատարագի համար մէկ տարեկան գառնուկ մը բերէ. և առաջուան օրերը պիտի չհամրուին, որովհետև իր ուխտը պղծուեցաւ։

13—ու ուխտուորին օրէնքը այս է. երբ ինքզինք նազիրելուն օրերը լմննան, անիկա ժողովքի խորանին դուռը պիտի բերուի. 14—ու իր զոհը Տէրոջը պիտի մատուցանէ, մէկ տարեկան անարատ արու գառնուկ մը ողջակէզի համար, ու մէկ տարեկան անարատ էգ գառնուկ մը մեղքի պատարագի համար, և անարատ խոյ մը խաղաղութեան զոհի համար։ 15—ու առնուռ մը բարակ ալիւրէ խառնուած անխմոր չօքեր, ու իւղով օծուած անխմոր լաւաշներ, և անոնց հացի ընծան ու թափելու նուէրը *ընծայէն։ 16—ու քահանան անոր մեղքի պատարագը ու անոր ողջակէզը Տէրոջը առջև մատուցանելով պիտի մատուցանէ։ 17—ու խոյը խաղաղութեան զոհ պիտի մատուցանէ Տէրոջը՝ անխմոր հացին առկառոյը. ու քահանան անոր հացի ընծան ու թափելու նուէրը մատուցանէ։ 18—ու նազիրը իր նազիրած գլուխը պիտի սրէ ժողովքի խորանին դուռը. ու իր նազիրած գլուխն մազը առնէ և խաղաղութեան զոհին տակ եղած կրակին մէջ դնէ։ 19—ու քահանան խոյին եփած թևը, և սակառէն մէկ անխմոր չօք ու մէկ անխմոր լաւաշ առնէ, և ուխտուորին ձեռքերուն վրայ դնէ մազերուն թափելէն ետքը։ 20—ու քահանան երերցնելու ընծայ մատուցանէ զանոնք Տէրոջը առջև. սոնք երերցնելու նուիրուած ու բարձրացնելու պիտոյք քահանային համար սուրբ են. և անկէ ետև ուխտուորը գինի խմէ։ 21—Ուխտուորի մը *ս անոր նազիրելուն համար Տէրոջը խոստացած իր ընծային օրէնքը այս է, իր ձեռքը հասածէն զատ. անիկա իր ըրած խոստումնքը իր նազիրելուն օրէնքովը պիտի կատարէ։

22—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 23—Խօսէ Ահարոնի ու անոր որդիներուն և ըսէ, Այսպէս պիտի օրհնէք իսրայէլի որդիները՝ ըսելով անոնց, 24—Տէրը օրհնէ քեզ, և պահէ քեզ. 25—Տէրը պայծառացնէ իր երեսը քու վրադ, ու ողորմի քեզի. 26—Տէրը իր երեսը քու վրադ վերցնէ, և խաղաղութիւն տայ քեզի։ 27—Ու իմ անունս իսրայէլի որդիներուն վրայ պիտի դնեն, ու ես պիտի օրհնեմ զանոնք։

Գլ. Է

Եւ եղաւ որ՝ այն օրը որ Մովսէս լմնցուց խորանը կանգնելը, և զանիկա ու անոր բոլոր անօթները օծեց ու սրբեց, և սեզանը ու անոր բոլոր գործիքները օծեց ու զանոնք սրբեց, 2—Ազգ ատեն իսրայէլի իշխանները, իրենց հայրերուն տանը գլուխները, ‡ցղ-ղ-ղ-ղին համրուելուն վրայ վերակացու եղող ցեղերուն իշխանները, ընծաներ տարին։ 3—ու բերին իրենց ընծաները Տէրոջը առջև, վեց ծածկուած սայլեր և տասներկու եզներ. ամէն երկու իշխաններուն մէկ սայլ, և ամէն մէկը մէկ եզ. և մատուցին զանոնք խորանին առջև։ 4—ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 5—Անոնցմէ առ, ու ղեւտացւոց տուր տառնէք՝ ամէն մէկուն իր պաշտօնին նայելով, որպէս զի ժողովքի խորանին պաշտօնին մէկ գործ տատին։ 6—ու Մովսէս առաւ սայլերը ու եզները, ու զանոնք ղեւտացւոց տուաւ. 7—երկու սայլը ու չորս եզը Գերսոնի որդիներուն տուաւ՝ անոնց պաշտօնին նայելով. 8—ու չորս սայլը և ութ եզը Մերարիի որդիներուն տուաւ, Ահարան քահանային որդւոյն իթամարի *վերակացու թեամբ եզած անոնց պաշտօնին նայելով. 9—Բայց Կահաթի որդիներուն չտուաւ. վասն զի սրբարանին պաշտօնը անոնց վրայ բլլալով, իրենց ուսերովը պիտի վերցնէին։

10—Ու սեզանին օծման օրը անոր նազիրման համար իշխանները բերին ընծաները տարին. և իշխանները իրենց ընծաները սեզանին առջև մատուցին։ 11—ու Տէրը բսաւ Մովսէսի, Սեզանին նազիրման համար՝ ամէն մէկ իշխան մէկ մէկ օր իրենց ընծաները մատուցանեն։

12—Ու առաջին օրը իր ընծան մատուցանողը Յուդայի ցեղին էլիաբ Ամմինադաբի որդին Նաասոն էր։ 13—ու այս էր անոր ընծան. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղ մէկ արծաթ կանթ, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառնուած չաղուած բարակ ալիւրով։ 14—Տասը ոսկէ մէկ բնկատան խունկով լեցուն, 15—մէկ զուարակ, մէկ խոյ ու մէկ տարեկան մէկ գառ. ողջակէզի համար, 16—Այծերէն մէկ նոխազ մեղքի

*նէբ. Ձեռքով

զոհի համար։ 17—ու սահմ մը բարակ ալիւրէ խառնուած չաղուած անխմոր չօքեր, ու իւղով օծուած անխմոր լաւաշներ, և անոնց հացի ընծան ու թափելու նուէրը մատուցանէ։ 18—ու նազիրը երերցնելու վրայ վերակացու եղող ցեղերուն իշխանները, ընծաներ տարին։ 19—ու բերին իրենց ընծաները Տէրոջը առջև, վեց ծածկուած սայլեր և տասներկու եզներ. ամէն երկու իշխաններուն մէկ սայլ, և ամէն մէկը մէկ եզ. և մատուցին զանոնք խորանին առջև։ 20—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 21—Անոնցմէ առ, ու ղեւտացւոց տուր տառնէք՝ ամէն մէկուն իր պաշտօնին նայելով, որպէս զի ժողովքի խորանին պաշտօնին մէկ գործ տատին։ 22—ու Մովսէս առաւ սայլերը ու եզները, ու զանոնք ղեւտացւոց տուաւ. 23—երկու սայլը ու չորս եզը Գերսոնի որդիներուն տուաւ՝ անոնց պաշտօնին նայելով. 24—Բայց Կահաթի որդիներուն չտուաւ. վասն զի սրբարանին պաշտօնը անոնց վրայ բլլալով, իրենց ուսերովը պիտի վերցնէին։

25—Ու սեզանին օծման օրը անոր նազիրման համար իշխանները բերին ընծաները սեզանին առջև մատուցին։ 26—ու Տէրը բսաւ Մովսէսի, Սեզանին նազիրման համար՝ ամէն մէկ իշխան մէկ մէկ օր իրենց ընծաները մատուցանեն։

27—Ու առաջին օրը իր ընծան մատուցանողը Յուդայի ցեղին էլիաբ Ամմինադաբի որդին Նաասոն էր։ 28—ու այս էր անոր ընծան. սրբարանին սիկղին համեմատ, հարիւր երեսուն սիկղ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սիկղ մէկ արծաթ կանթ, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառնուած չաղուած բարակ ալիւրով։ 29—Տասը ոսկէ մէկ բնկատան խունկով լեցուն, 30—մէկ զուարակ, մէկ խոյ ու մէկ տարեկան մէկ գառ. ողջակէզի համար, 31—Այծերէն մէկ նոխազ մեղքի

*նէբ. գինիի որթէն
†նէբ. անձի
‡նէբ. նազիրլը

պատարագի համար, 17—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Ամենազօր որդւոյն Նաւասարդի ընծան այս էր։

18—Երկրորդ օրը մատուցանողը Իսաքարի էշխանը Սոմղաբի որդին Նաթանայէլ էր։ 19—Անոր մատուցած ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 20—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 21—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 22—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար. 23—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Սոմղաբի որդւոյն Նաթանայէլի ընծան այս էր։

24—Երրորդ օրը մատուցանողը Զաբուղոնի որդիներուն իշխանը Փելոնի որդին Եղիաբ էր։ 25—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 26—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 27— Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 28—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 29—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Փելոնի որդւոյն Եղիաբի ընծան այս էր։

30—Չորրորդ օրը մատուցանողը Ռուբէնի որդիներուն իշխանը Սեդիւրի որդին Եղիսուր էր։ 31—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 32—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 33—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 34—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 35—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Սեդիւրի որդւոյն Եղիսուրի ընծան այս էր։

36—Հինգերորդ օրը մատուցանողը Շմաւոնի որդիներուն իշխանը Սուրիսադայի որդին Սադումիէլ էր։ 37—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 38— Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 39—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 40—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 41—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Սուրիսադայի որդւոյն Սադումիէլի ընծան այս էր։

42—Վեցերորդ օրը մատուցանողը Գադի որդիներուն իշխանը Դագուէլի որդին Եղիասափ էր։ 43—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 44— Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 45—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 46—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 47—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Գադուէլի որդւոյն Եղիասափի ընծան այս էր։

48—Եօթներորդ օրը մատուցանողը Եփրեմի որդիներուն իշխանը Ամիուդի որդին Եղիսամա էր։ 49—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 50—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 51—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 52—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 53—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Ամիուդի որդւոյն Եղիսամայի ընծան այս էր։

54— Ութերորդ օրը մատուցանողը Մանասէի որդիներուն իշխանը Փագաատուրի որդին Գամաղիէլ էր։ 55—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 56—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 57—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 58—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 59—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Փագաատուրի որդւոյն Գամաղիէլի ընծան այս էր։

60—Իններորդ օրը մատուցանողը Բենիամինի որդիներուն իշխանը Գեդէոնի որդին Աբիդան էր։ 61—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 62—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 63—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 64—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 65—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Գեդէոնի որդւոյն Աբիդանի ընծան այս էր։

66—Տասներորդ օրը մատուցանողը Դանի որդիներուն իշխանը Ամիսադայի որդին Աքիեզեր էր։ 67—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 68—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 69—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 70—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 71—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան մէկ գառներ. Ամիսադայի որդւոյն Աքիեզերի ընծան այս էր։

72—Մէկտասաներորդ օրը մատուցանողը Աշերի որդիներուն իշխանը Եփրանի որդին Փագիէլ էր։ 73—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 74—Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 75—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 76—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 77—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ խոյ, հինգ նոխազ ։ հինգ հատ մէկ տարեկան գառներ. Եփրանի որդւոյն Փագիէլի ընծան այս էր։

78—Երկուասաներորդ օրը մատուցանողը Նեփթաղիմի որդիներուն իշխանը Նաամի որդին Աքիրէեր էր։ 79—Անոր ընծան այս էր. սրբարանին սկիհին համեմատ, հարիւր երեսուն սկիհ մէկ արծաթ սկուտեղ, եօթանասուն սկիհ մէկ արծաթ կանք, երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար խառած չաղուած բարակ ալիւրով, 80 Տասը ։ին։ ոսկիէ մէկ խնկաման խառնկով լեցուն, 81—Մէկ զոհարակ, մէկ խոյ ։ մէկ տարեկան մէկ գառ ողջակէզի համար, 82—Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 83—Ս. խաղաղութեան զոհի համար երկու արջառ, հինգ

խոյ, հինգ նոխազ և հինգ հատ մէկ տարեկան գառներ. ևնանի որդւոյն Աքիւբէի ընծան այս էր։

84—Սեղանին օծուած օրը անոր նուիրման հանդէսին համար իսրայէլի իշխաններէն ՆԱՍՍՈՆԻ ընտրեալը առնէր էին. տասներկու արծաթի սկուտեղ, տասներկու արծաթի կնիք — տասներկու ոսկի խնկաման, 85—Ամէն մէկ արծաթի սկուտեղ հարիւր երեսուն սիկղ և ամէն մէկ կնիք եօթանասուն սիկղ էր. այս ամաններուն բոլոր արծաթը երկու հազար չորս հարիւր սիկղ էր, սրբարանին սիկղին համեմատ. 86—Տասներկու ոսկի խնկաման խունկով լեցուն, ամէն մէկ խնկաման, սրբարանին սիկղին համեմատ, ամանական հինգ ըլլալով, խնկամաններուն բոլոր ոսկին հարիւր քսան հինգ էր։ 87—Ողջակէզի համար բոլոր արջառները տասներկու զուարակ, խոյերը տասներկու, մէկ տարեկան գառները տասներկու էին, իրենց հացի ընծայովը. և մեղքի պատարագի համար այծերէն նոխազները տասներկու։ 88—Եւ խաղաղութեան զոհի համար բոլոր արջառները քսանչորս զուարակ էին, խոյերը վաթսուն, նոխազները վաթսուն, և մէկ տարեկան գառները վաթսուն էին։ Այս էր սեղանին նուիրման հանդէսը՝ անոր օծուելէն ետքը։

89—Եւ երբ Մովսէս ժողովքի խորանը կը մտնէր Անոր հետ խօսելու, այն ատեն իրեն խօսողին ձայնը վկայութեան տապանակին վրայ եղած քաւութիւնէն վրայէն, երկու քերովբէներուն միջինէն, կը լսէր, ու ինք Անոր հետ կը խօսէր։

ԳԼ. Ը

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով 2—Խօսէ Ահարոնի ու ըսէ անոր, երբ ճրագները վառես, եօթը ճրագները աշտանակին առջեւի կողմն լոյս պիտի տան։ 3—Եւ Ահարոն այնպէս ըրաւ. անոր ճրագները աշտանակին առջեւի կողմը վառեց, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեց։ 4—Եւ աշտանակին չինքը այսպէս էր. *կռատոյ ոսկիէ էր. անոր բունէն մինչև անոր ծաղիկները կռատոյ էին. Տէրոջը Մովսէսի ցուցուցած գաղափարին պէս՝ այնպէս չինեց աշտանակը։

5—Ես Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 6—Իսրայէլի որդիներուն միջէն Ղեւտացիները առ, ու մաքրէ զանոնք։ 7—Եւ զանոնք մաքրելու համար այսպէս պիտի ընես անոնց. †մաքրութեան ջուր սրսկես անոնց վրայ, ու անոնք իրենց բոլոր մարմինները քաղ ածելեն, և իրենց հանդերձները լուան ու մաքրուին։ 8—Նաքը զուարակ մը քաղ առնեն ու անոր հացի ընծային համար իւղով չզուաձ բաղարակ ալիւր. դուն ալ ուրիշ զուարակ մը պիտի առնես մեղքի պատարագի համար։ 9—Ու Ղեւտացիները ժողովքի խորանին առջեւ մօտեցնես. և Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը ժողվես։ 10—Ու Ղեւտացիները Տէրոջը առջեւ մօտեցնես, ու Իսրայէլի որդիները իրենց ձեռքերը Ղեւտացիներուն վրայ դնեն։ 11—Ու Ահարոն Իսրայէլի որդիներուն կողմէն՝ Ղեւտացիները Տէրոջը առջեւ էշնծայ պիտի մատուցանէ՝ և անոնք Տէրոջը պաշտօնը կատարելու համար ըլլան։ 12—Ու Ղեւտացիները իրենց ձեռքերը զուարակներուն գլխուն վրայ պիտի դնեն. ու Ղեւտացիներուն քաւութիւն ընելու համար մէկ ՔՕԲԼԻ մեղքի պատարագ, ու միւսը ողջակէզ մատուցանես Տէրոջը։ 13—Ես Ղեւտացիները Ահարոնի ու անոր որդիներուն առջեւ կանգնեցնես, ու զանոնք ընծայ մատուցանես Տէրոջը։ 14—Այսպէս պիտի զատես Ղեւտացիները Իսրայէլի որդիներուն միջէն, ու Ղեւտացիները իմ պիտի ըլլան։ 15—Եւ անկէ ետև Ղեւտացիները ժողովքի խորանին գործը ընելու մտնեն։ Այսպէս պիտի մաքրես զանոնք, և ընծայ մատուցանես զանոնք. 16—Քանզի անոնք բոլորովին ինձի տրուած են Իսրայէլի որդիներուն միջէն. իսրայէլի որդիներուն մէջ մօրը արգանդը բացող բոլոր անդրանիկներուն տեղ ինձի առի զանոնք։ 17—Վասն զի Իսրայէլի որդիներուն բոլոր անդրանիկները, թէ՛ մարդու և թէ՛ անասունի, իմ են. Եգիպտոսի երկրին մէջ բոլոր անդրանիկները զարկած օրէս՝ զանոնք սրբեցի ինձի համար։ 18—Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր անդրանիկներուն տեղ Ղեւտացիները առի։ 19—Ես Իսրայէլի որդիներուն միջէն Ղեւտացիները բոլորովին Ահարոնի ու անոր որդիներուն տուի, որպէս զի ժողովքի խորանին մէջ Իսրայէլի որդիներուն պաշտօնը ընեն, և Իսրայէլի որդիներուն համար քաւութիւն ընեն, որպէս զի Իսրայէլի որդիներուն վրայ հարուած չգայ՝ երբ Իսրայէլի որդիները սրբարանին մօտենան։

20—Եւ Մովսէս ու Ահարոն և Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Ղեւտացւոց վրայով Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս ըրին Ղեւտացիներուն. Իսրայէլի որդիները այնպէս ըրին անոնց. 21—Ու Ղեւտացիները մաքրեցան, և իրենց հագուստները լուացին, և Ահարոն ընծայ մատուց զանոնք Տէրոջը առջեւ. ու Ահարոն անոնց համար քաւութիւն ըրաւ, որպէս զի զանոնք մաքրէ։ 22—Եւ անկէ ետև Ղեւտացիները ժողովքի խորանին մէջ մտան Ահարոնի ու անոր որդիներուն առջեւ իրենց պաշտօնը ընելու համար. Ղեւտացւոց վրայով Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս, այնպէս ըրին անոնց։

23—Ես Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 24—Ղեւտացւոց համար այս է՝ քսանհինգ տարեկանէ վեր ղեւտացիները ժողովքի խորանին պաշտօնը ընելու գունդին մէջ պիտի մտնեն։ 25—Ես հիսուն տարեկան ըլլալէ ետքը պաշտօնին գունդէն պիտի դադարին, ու ալ ծառայելու չեն. 26—Սակայն ժողովքի խորանին մէջ պահպանութիւնը պահելու պիտի օգնեն իրենց եղբայրներուն, և ծառայութիւն պիտի չընեն. այսպէս պիտի ընես Ղեւտացիներուն իրենց պահպանութիւններուն համար։

*Կամ, Ճախարակեայ

†ԵԲՐ. մեղաց, Կամ, մեղքի պատարագի | ցրնէ

‡ԵԲՐ. երերցնելու ընծայ պիտի երեր.

ԳԼ. Թ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի Սինայի անապատին մէջ, անոնց Եգիպտոսի երկրէն ելլելուն երկրորդ տարին առաջին ամսուն մէջ՝ ըսելով, 2—Իսրայէլի որդիները իր որոշուած ժամանակին Քազընեն զատիկը։ 3—Այս ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ պիտի ընէք զայն՝ իր որոշուած ժամանակին. անոր բոլոր կանոններուն ու անոր բոլոր կարգադրութիւններուն համեմատ պիտի ընէք զայն։ 4—Եւ Մովսէս խօսեցաւ Իսրայէլի որդիներուն որ զատիկը ընեն։ 5—Եւ անոնք առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ զատիկը ըրին Սինայի անապատին մէջ. Տէրոջը Մովսէսի բոլոր պատուիրածին պէս՝ Իսրայէլի որդիները այնպէս ըրին։

6—Եւ կային անոնք՝ որ մարդու մեռելէ պղծուած ըլլալով, այն օրը չկրցան զատիկը ընել. և այն օրը Մովսէսի ու Ահարոնի առջեւ եկան. 7—Եւ այն մարդիկը ըսին անոր, Մենք մարդու մեռած մարմնէ պղծուած ենք. ինչո՞ւ համար Իսրայէլի որդիներուն մէջ Տէրոջը պատարագը իր որոշուած ժամանակին մատուցանելէն արգիլուինք։ 8—Եւ Մովսէս բսաւ անոնց, կեցէք, *Նայիմ Տէրը ինչ կը պատուիրէ ձեր վրայով։

9—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 10—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Եթէ ձեզմէ կամ ձեր սերունդէն մէկը մեռած մարմնէ մը պղծուի, կամ հեռաւոր ճամբորդութեան մէջ ըլլայ, անիկա ալ զատիկը պիտի ընէ Տէրոջը. 11—Երկրորդ ամսուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ ընեն զայն, բաղարջով ու լեղի խառնուած ուտեն զայն. 12—Անկէ մինչև առաւօտը բան չթողուն, և անկէ ոսկոր մը չկոտրեն. զատիկին բոլոր կանոններուն համեմատ ընեն զայն։ 13—Բայց եթէ մարդը եղող ու ճամբորդութեան մէջ չեղող մարդը զատիկը ընելը զանց ընէ, այն անձը իր ժողովուրդին միջէն պի-

*ԵԲՐ. մինչ ընեմ

ակ կոտոր, վասն զի Տէրոջը պատրաստը իր պաշտած ժամանակին չմոռաց։ այն մարդը իր մեղքը պիտի կրէ։ 14—Եւ եթէ օտարական մը ձեր մէջ պանդխտանայ, ու զատիկը ընելու ըլլայ Տէրոջը, զատիկին կանոնին և անոր կարգադրութեանը համեմատ պիտի ընէ. քէ՛ օտարականին և քէ՛ երկրին բնակիչին համար մէկ կանոն պիտի ունենաք։

15—Ու այն օրը որ խորանը կանգնուեցաւ, վկայութեան վրանին վրայ ամպը պատեց խորանը. ու իրիկուընէ մինչև առաւօտ խորանին վրայ կրակի երեւութով կը կենար։ 16—Միշտ այսպէս էր. ցերեկը ամպը կը ծածկէր զայն, և գիշերը՝ կրակին երեւոյթը։ 17—Ու երբ ամպը խորանէն կը վերնար, անկէ ետև Իսրայէլի որդիները կը չուէին. և ուր որ ամպը կը կենար, հոն Իսրայէլի որդիները իջևան կ՚ընէին։ 18—Տէրոջը հրամանովը Իսրայէլի որդիները կը չուէին, և Տէրոջը բոլոր հրամանովը իջևան կ՚ընէին. ամբողջ խորանին վրայ որչափ աատն որ կը կենար, անոնք իրենց վրաններուն մէջ կը մնային։ 19—Ու երբ ամպը շատ օրեր խորանին վրայ մնար, Իսրայէլի որդիները Տէրոջը պահպանութիւնը կը պահէին, ու չէին չուեր։ 20—Նոյնպէս ալ երբ ամպը խորանին վրայ քիչ օր կենար, Տէրոջը հրամանին համեմատ իջևան կ՚ընէին, ու Տէրոջը հրամանին համեմատ կը չուէին։ 21—Նոյնպէս ալ երբ ամպը իրիկուընէ մինչև առաւօտ մնար, առաւօտուց ամպին վեր ելած ատեն կը չուէին, թէ՛ ցորեկ ըլլար և թէ գիշեր, ամպին ելած ատենը կը չուէին։ 22—Կամ երկու օր, կամ մէկ ամիս, և կամ մէկ տարի, որ ամպը խորանին վրայ կենալով մնար, Իսրայէլի որդիները իջևան կ՚ընէին ու չէին չուեր. բայց երբ վերնար, կը չուէին։ 23—Տէրոջը հրամանին համեմատ իջևան կ՚ընէին, և Տէրոջը հրամանին համեմատ Տէրոջը պահպանութիւնը կը պահէին։

Ե. Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Քեզի երկու հատ արծաթէ փող չինէ. կռածոյ պիտի չինես զանոնք, որպէս զի ժողովուրդը կանչելու համար ու բանակներուն չուելուն համար գործածուին։ 3—Ու երբ զանոնք հնչեցնեն, բոլոր ժողովուրդ փողի պիտի ժողովին ժողովի խորանին դուռը։ 4—Ու եթէ միայն մէկը հնչեցնեն, իսրայէլի հազարապետները, փողի պիտի ժողովին։ 5—Ու երբ ազդարարութեան համար հնչեցնէք, արեւելեայ իջևան բնող բանակները պիտի չուեն։ 6—Ու երբ երկրորդ անգամ ազդարարութեան ձայն հնչեցնէք, հարաւային կողմը իջևան բնող բանակները պիտի չուեն. անոնց չուելուն համար ազդարարութեան ձայն պիտի հնչեցնեն։ 7—Ու երբ ժողովուրդը ժողվելու ըլլաք ձայն պիտի հնչեցնէք, բայց ազդարարութիւն պիտի չընէք։ 8—Ու փողերը հնչեցնողները Ահարոնի որդիները, քահանաները, պիտի ըլլան. և ասիկա ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ ձեզի։ 9—Ու եթէ պատերազմելու երթաք ձեր երկրին մէջ ձեզի նեղութիւն տուող թշնամիին դէմ, փողերով ազդարարութիւն պիտի ընէք, ու պիտի յիշուիք Տէրոջը ձեր Աստուծոյն առջև, և ձեր թշնամիներէն ազատուիք։ 10—Ու ձեր ուրախութեան օրերուն ու ձեր ժողովներուն և ձեր ամսագլուխներուն մէջ փողերը պիտի հնչեցնէք ձեր ողջակիզներուն վրայ ու ձեր խաղաղութեան զոհերուն վրայ, որպէս զի ձեզի յիշատակի համար ըլլան ձեր Աստուածոյն առջև. ես եմ Տէրը ձեր Աստուածը։

11—Ու եղաւ որ երկրորդ տարին երկրորդ ամսուն քսաներորդ օրը վկայութեան խորանին վրայէն ամպը վեր երաւ։ 12—Ու Իսրայէլի որդիները իրենց գնացքին համեմատ չուեցին Սինայի անապատէն. ու ամպը փառաւորին անապատին մէջ կեցաւ։ 13—Ու առաջ Մովսէսի ձեռքով Տէրոջը

*նէբ. փեզի ըլլան

բոլը հրամանին պէս չուեցին։ 14—Ու առաջ Յուդայի որդիները բանակին դրօշակը ըստ իրենց գունդերուն կարգովը. ու անոր գունդին վրայ Ամինադաբի որդին Նաասոն էր։ 15—Ու Իսաքարի որդիներուն ցեղին գունդին վրայ Սուգարի որդին Նաթանայէլ էր։ 16—Ու Զաբուղոնի որդիներուն ցեղին գունդին վրայ Քեղոնի որդին Եղիաբ էր։ 17—Ու խորանը վար ընկեցին. ու խորանը վերցնող Գերսոնի որդիները և Մերարիի որդիները չուեցին։ 18—Ու Ռուբենի բանակին դրօշակը ըստ իրենց գունդերուն կարգովը. ու անոր գունդին վրայ Սեդիւրի որդին Եղիսուր էր։ 19—Ու Շմաւոնի որդիներուն ցեղին գունդին վրայ Սուրիսադայի որդին Սաղամիէլ էր։ 20—Ու Գադի որդիներուն ցեղին գունդին վրայ Դագուէլի որդին Եղիասաֆ էր։ 21—Ու սրբարանը վերցնող Կահաթացիները չուեցին. ու խորանը կը կանգնուէր մինչև անոնց գալը։ 22—Ու Եփրեմի որդիներուն բանակին դրօշակը ըստ իրենց գունդերուն կարգովը. ու անոր գունդին վրայ Ամիհուդի որդին Եղիսամա էր։ 23—Ու Մանասէի որդիներուն ցեղին գունդին վրայ Փագաատուրի որդին Գամալիէլ էր։ 24—Ու Բենիամինի որդիներուն ցեղին գունդին վրայ Գեդէոնիի որդին Աբիդան էր։ 25—Ու Դանի որդիներուն բանակին դրօշակը իրենց գունդերուն կարգովը բոլոր բանակներուն *հաւքէն չուեց՝. ու անոր գունդին վրայ Ամիսադայի որդին Աքիեզեր էր։ 26—Ու Աշերի որդիներուն ցեղին գունդին վրայ Ոքրանի որդին Փագիէլ էր։ 27—Ու Նեփթալիմի որդիներուն ցեղին գունդին վրայ Ենանի որդին Աքիրէ էր։ 28—Այս էր Իսրայէլի որդիներուն չուելուն կարգը իրենց գունդերուն համեմատ, երբ կը չուէին։

29—Ու Մովսէս իր աներոջ, այսինքն Մադիանացի Ռագուէլի որդւոյն Ոբաբին, ըսաւ, Մենք կը չուենք այն տեղը՝ որուն համար Տէրը ըսաւ որ Ձեզի պիտի տամ. մեզի հետ եկուր, ու բարիք պիտի ընենք քեզի. վասն զի Տէրը Իսրայէլի †բարիք խոստացաւ։ 30—Ու անիկա ըսաւ անոր, Չեմ երթար, այլ իմ երկիրս ու իմ ազգականներուս պիտի երթամ։ 31—Ու ինք ըսաւ, Ճնարհ ըրէ, մեզ մի թողուր. քանզի անապատին մէջ մեր իջևանը գիտնալու տեղերը գիտես, ու մեզի †առաջնորդ կ՚ըլլաս։ 32—Ու եթէ մեզի հետ երթալու ըլլաս, ինչ բարութիւն որ Տէրը մեզի ընէ, մենք ալ քեզի նոյն բարութիւնը կ՚ընենք։

33—Ու անոնք Տէրոջը լեռնէն երեք օրուան ճամբայ չուեցին. ու Տէրոջը ուխտին տապանակը երեք օրուան ճամբայով անոնց առջևէն կ՚երթար, անոնց հանգստանալու տեղ գտնելու համար։ 34—Ու երբ բանակէն կը չուէին, Տէրոջը ամպը ցորեկը անոնց վրայ էր։

35—Ու տապանակին չուելու ատենը Մովսէս կ՚ըսէր, Ելիր, ով Տէր, ու քու թշնամիներդ թող ցրուին, ու քեզ ատողները առջևէդ փախչին։ 36—Ու անոր կենալու ատենը երբ կ՚ըսէր, Ով Տէր, Իսրայէլի հազարաց բիւրաւորներուն դարձիր։

Ե. Ժողովուրդը չարաչար արտասուել կ՚ընէր Տէրոջը ‡ականջին, ու Տէրը լսեց, և իր բարկութիւնը բորբոքեցաւ, ու անոնց մէջ Տէրոջը կրակը վառեցաւ, և բանակին ծայրերը եղողները կլորցուց։ 2—Ու ժողովուրդը ազաղակեց Մովսէսին. ու Մովսէս աղօթեց Տէրոջը, և կրակը դադրեցաւ։ 3—Ու այն տեղին անունը ||Տաբերա դրաւ, Տէրոջը կրակին անոնց մէջ այրելուն համար։ 4—Ու անոնց մէջի խառնիճաղանճը բացակերութիւնը չատ ցանկացան. ու Իսրայէլի որդիներն ալ §դարձեալ լացին, և ըսին, Ո՞վ մեզի ուտելու միս պիտի տայ։ 5—Եգիպտոսի մէջ մեր ձրի կերած ձուկերը, վարունգները ու սեխերը և պրասները ու սոխերը և խըս-

*Եբր. վրայով բարիք խօսեցաւ.
†Եբր. աչք. Ցոր. ԺԲ. 16։
‡Եբր. ականջներուն
||Այսինքն, հրկիզութիւն
§Կամ, նստան

ասրնեերը միաքերնիս կու գան։ 6—Եւ հինս մեր անձր չտրցաւ. մանանայէն զատ ուրիշ բան մը չկայ աչքերնուս առջեւ։ 7—Եւ մանանան գինձի սերմի պէս, ու անոր գոյնը աստղի գոյնի պէս էր։ 8—Ժողովուրդը կը պտրտէր ու կը ժողվէր չոր, և ալաչքի մէջ կ'աղային, կամ անկանի մէջ կը ծեծէին. և պատրհնրու մէջ կ'եփէին, ու անկէ չտքնէր կը շինէին. և անոր համը իւղոտ գաթայներու համին պէս էր։ 9—Ու գիշերը երբ բանակին վրայ ցօղ կ'իջնէր, մանանան ալ անոր վրայ կ'իջնէր։

10—Այն ատեն Մովսես լսեց որ ժողովուրդը իրենց տոհմերովը ամէն մէկը իր վրանին դռանը կու լան. և Տէրոջը բարկութիւնը խիստ բորբոքեցաւ, ու Մովսէսի ալ գէշ երեւցաւ։ 11—Ու Մովսես ըսաւ Տէրոջը, Ինչո՞ւ քու ծառադ չարչարեցիր, ու ինչո՞ւ քու առջեւդ չնորհք չգտայ, որ այս բոլոր ժողովուրդին բեռը իմ վրաս կը դնես։ 12—Միթէ ե՞ս եմ յղացեր այս բոլոր ժողովուրդը, կամ ե՞ս եմ ծներ ատանք, որ ինծի կ'ըսես, Գայեակի մը կաթնկերը տղան էջերէ առնելուն պէս զանոնք գիրկդ առ, — — — մինչև այն երկիրը որ անոնց հայրերուն երդում ըրիր։ 13—Ես ուրկի՞ միս պիտի ունենամ, որ այս բոլոր ժողովուրդին տամ. քանի որ իմ քովերնիս կու լան ու կ'ըսեն, Միս տուր մեզի որ ուտենք։ 14—Ես միայնակ չեմ կրնար կրել այս բոլոր ժողովուրդը, վասն զի այս ինծի չատ ծանր է։ 15—Ու եթէ ինծի այսպէս պիտի րնես, կ'աղաչեմ, ինկէն սպաննէ պու, եթէ չնորհք գտայ քու առջեւդ, որպէս զի իմ չարքաշս չտեսնեմ։ 16—Եւ Տէրը րսաւ Մովսէսի, Ինծի իսրայէլի ծերերէն եօթանասուն հոգի ժողվէ, զորոնք դուն գիտես թէ ժողովուրդին ծերերը ու գլխաւորներն են, և զանոնք ժողովքի խորանը բեր, ու հոն քեզի հետ կայնին։ 17—Ես ալ հոն պիտի իջնեմ ու խօսիմ քեզի հետ. և քու վրադ եղած Հոգիէն պիտի առնեմ, ու անոնց վրայ պիտի դնեմ, որպէս զի ժողովուրդին բեռը վերցնեն քեզի հետ, ու դուն մինակ չկրցնես։ 18—Եւ ըսէ ժողովուրդին, Վաղուան համար սրբուեցէք, ու միս պիտի ուտէք. վասն զի Տէրոջը ականջներուն լացիք՝ բսելով, Ո՞վ մեզի միս պիտի կերցնէ. քանզի եգիպտոսի մէջ ապրկ կ'ապրեինք. ուստի Տէրը մեզի միս պիտի տայ, ու դուք պիտի ուտէք։ 19—Դուք ոչ թէ միայն մէկ օր պիտի ուտէք, և ոչ երկու օր, ոչ հինգ օր, ոչ տասը օր, ոչ ալ քսան օր։ 20—Լման մէկ ամիս մինչև քիթերնէդ դուրս գալը դէպի ե՞ւտէ, այնպես որ զզուիք. որովհետև ձեր մէջ եղող Տէրը արհամարհեցիք, և անոր առջև լացիք րսելով, Ինչո՞ւ մենք եգիպտոսէ ելանք։

21—Ու Մովսես ըսաւ, Այս ժողովուրդը, որոնց մէջ կը գտնուիմ, վեց հարիւր հազար հետեւակ հոգի են, ու դուն րսիր, Ես անոնց միս պիտի տամ, որ լման մէկ ամիս ուտեն։ 22—Անոնց բան ասան բլլալու համար միթէ ֆ-ըէր ոչխարներէը ու արջառներէը մորթուի՞ն. կամ անոնց բաւական բլլալու համար ծովուան բոլոր ձուկերը մէկտեղ հաւաքուի՞ն. 23—Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Միթէ ձախո՞ղ է Տէրոջը ձեռքը. հիմա կը տեսնես թէ քեզի բսածիս պէս պիտի բլլա՞յ թէ ոչ։ 24—Ու Մովսես ելաւ, ու Տէրոջը խօսքերը ժողովուրդին զրացուց. և ժողովուրդին ծերերէն եօթանասուն հոգի ժողվեց, ու զանոնք խորանին բոլորքովը կայնեցուց։ 25—Ու Տէրը ամպի մը մէջ էջաւ, ու անոր հետ խօսեցաւ, և անոր վրայ եղած Հոգիէն առաւ, ու այն եօթանասուն ծերերուն վրայ դրաւ. և երբոր Հոգին անոնց վրայ հանգչելուն՝ մարգարէութիւն բրին, †բայց անկէ ետև չբրին։ 26—Ու երկու հոգի բանակին մէջ մնացին, մէկուն անունը Եղդադ էր ու միւսին անունը Մովդադ. և Հոգին հանգչեցաւ անոնց վրայ, ու անոնք այն գրուածներէն էին, բայց խորանը ելած չէին. և բանակին մէջ մարգարէութիւն կ'ընէին։ 27— Ու պատանի մը վազեց ու պատմեց Մովսէսի և բսաւ, Եղդադ ու Մովդադ մարգարէութիւն կ'ընեն բանակին մէջ։ 28—Ու Նաւէի

*Նբ. կա՞րճ
†Կամ, և չդադարեցան

որդին Յեսու, Մովսէսի *ընտրեալ ծառան, պատասխան առաւ ու բսաւ, Տէր իմ Մովսես, արգիլէ զանոնք։ 29—Ու Մովսես բսաւ անոր, Ինծի՞ համար կը նախանձիս. երանի՛ թէ Տէրոջը բոլոր ժողովուրդը մարգարէներ ըլլային, և Տէրը իր Հոգին անոնց վրայ դնէր։ 30—Ու Մովսես բանակը քաշուեցաւ, ինք ու Իսրայէլի ծերերը։

31—Ու Տէրոջմէն հով մը ելաւ, ու ծովուան կողմէն լորամարգիներ բերաւ, ու բանակին վրայ մէկ օրուան ճամբայ մէկ կողմէն և մէկ օրուան ճամբայ միւս կողմէն՝ բանակին բոլորտիքը տարածեց, երկրի երեսին վրայէն երկու կանգուն չափ բ-ուէր։ 32—Ու ժողովուրդը այն բոլոր օրը ու բոլոր գիշերը և հետեւեալ բոլոր օրը կեցաւ լորամարգիները ժողվեցին. քիչ ժողվողը տասը քոռ ժողվեց. և իրենց համար բանակին բոլորտիքը ը-ըն-ը- փռեցին ը-նե-։ 33—Ու երբ դեռ միսը իրենց ակռաներուն վրայ էր, տակաւին չծամուած՝ Տէրոջը բարկութիւնը ժողովուրդին վրայ բորբոքեցաւ. ու Տէրը խիստ մեծ հարուածով զարկաւ ժողովուրդը։ 34—Ու այն տեղին անունը †կիբրոթ-հաթթաւա դրուեցաւ, վասն զի հոն թաղեցին ցանկացող ժողովուրդը։ 35—Ու կիբրոթ-հաթթաւայէ Ասերովթ չտեց ժողովուրդը, ու Ասերովթի մէջ էշնացին։

ԳԼ. ԻԲ

Ու Մարիամ ու Ահարոն Մովսէսի դէմ խօսեցան՝ անոր առած եթովպացի կնոջը համար, քանզի անիկա Եթովպացի կին մառեր էր։ 2—Ու րսին, Միթէ Տէրը միայն Մովսէսո՞վ ձեռքով խօսեցաւ. չէ՞ որ մեր ձեռքով ալ խօսեցաւ. և Տէրը լսեց։ 3—Ու Մովսես չատ հեզ մարդ մըն էր՝ երկրի վրայ եղած բոլոր մարդոցմէ աւելի։ 4—Ու իսկոյն Տէրը րսաւ Մովսէսի և Ահարոնի ու Մարիամի, Գնաք երեքդ ալ ժողովքի խորանը ելէք. և երեքն ալ ելան։ 5—Ու Տէրը ամպին սիւնովը իջաւ, ու խորանին դուռը կայնեցաւ. և Ահարոն ու Մարիամը կանչեց, ու անոնք երկուքն ալ ելան։ 6—Ու րսաւ, Հիմա իմ խօսքս մտիկ րրէք. եթէ ձեզմէ մէկը մարգարէ բլլայ, ես Տէրս ինքզինքս տեսիլքի մէջ կը ճանչցնեմ անոր, և երազի մէջ կը խօսիմ անոր հետ։ 7—Իմ ծառաս Մովսես այնպէս չէ, որ իմ բոլոր տանս մէջ հաւատարիմ է։ 8—Անոր հետ բերան ի բերան, յայտնապես կը խօսիմ, և ոչ թէ առակով. ու անիկա Տէրոջը կերպարանքը կը տեսնէ. ուստի իմ ծառայիս Մովսէսի դէմ խօսելու բնաւ չվախցաք։ 9—Ու Տէրոջը բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ. ու ինք գնաց։ 10—Ու ամպը վերացաւ խորանէն, ու ահա Մարիամ ձիւնի պէս բորտ եղաւ. և Ահարոն Մարիամի նայեցաւ, և ահա անիկա բորտ էր։ 11—Ու Ահարոն րսաւ Մովսէսի, Ո՛ն, տէր իմ, կ'աղաչեմ, մեր վրայ մեղք մի դներ. քանզի յիմարութիւն րրինք, ու մեղք գործեցինք։ 12—Թող չնմանի այն մեռած փշրած՝ որ իր մօր արգանդէն ելած ատեն մարմինին կէսը ապառուած է։ 13—Ու Մովսես աղաղակեց Տէրոջը՝ րսելով, Կը խնդրեմ քեզմէ, օվ Աստուած, բժշկէ զանիկա։ 14—Ու Տէրը բսաւ Մովսէսի, Եթէ անոր հայրը միայն անոր երեսը թքնելու բլլար, հօթը օր պիտի չամչնա՞ր. թող անիկա հօթը օր բանակին դուրս գոցուած պահուի, ու անկէ ետև ընդունուի։ 15—Ու Մարիամ բանակին դուրս հօթը օր գոցուած մնաց. ու ժողովուրդը չշարժեցաւ մինչև Մարիամի ընդունուիլը։

ԳԼ. ԻԳ

Ես եաթը ժողովուրդը Ասերովթէ չտեցին, ու փառանի անապատը իջեւան րրին։ 2—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ րսելով, 3—Մարդիկ զրկէ որ լրտեսեն Քանանու երկիրը, զոր իսրայէլի որդիներուն պիտի տամ. անոնց ամէն մէկը իշխան բլլալով՝ մէկմէկ մարդ

*Նբ. ընտրեալներէն կամ երիտասարդներէն եղող
†Այսինքն, ցանկութեան գերեզման-
Նբ. երն [ներ

իր հայրերուն ցեղին կողմն ղրկեք։ 4—Եւ Մովսէս Տէրոջը հրամանին հակառակ ղրկեց զանոնք փառանի անապատն. բոլոր այն մարդիկը իսրայէլի որդիներուն գլխաւորներն էին, 5—Որոնց անուններըը ասանք են. 6—Ռուբէնի ցեղին՝ Զաքուրի որդին Սամուս, Շմաւոնի ցեղին՝ Ռուսիի որդին Սափատ, 7—Ցուդայի ցեղին՝ Յեփոնէի որդին Քաղէբ, 8—Իսաքարի ցեղին՝ Յովսէփի որդին Իգալ, 9—Եփրեմի ցեղին՝ Նաւէէի որդին Օսէս, 10—Բենիամինի ցեղին՝ Ռափուի որդին Փագատիէլ, 11—Զաբուղոնի ցեղին՝ Սոդիի որդին Գեդդիէլ, 12—Յովսէփի ցեղին՝ այսինքն Մանասէի ցեղին՝ Սուսիի որդին Գադդի, 13—Դանի ցեղին՝ Գամաղիէլ որդին Ամիէլ, 14—Աշերի ցեղին՝ Միքայէլի որդին Սաթուր, 15—Նեփթաղիմի ցեղին՝ Վաւսիի որդին Նաբի, 16—Գադի ցեղին՝ Մաքիրի որդին Գուէլ։

17—Ասոնք են այն մարդոց անունները զորոնք Մովսէս ղրկեց երկիրը լրտեսելու. և Մովսէս Նաւէէի որդւոյն *Օսէսի անունը †Յեսու դրաւ։ 18—Եւ Մովսէս ղրկեց զանոնք Քանանու երկիրը լրտեսելու, ու բսաւ անոնց, Ձեր հարաւային կողմէն դէպ ի վեր երթալով, լեռը երթաք. 19—Եւ այն երկրին ինչպես ըլլալը ու հոն բնակող ժողովուրդին զօրաւոր կամ անար, փխրուն կամ չաւսաւոր ըլլալը տեսէք. 20—Եւ այն երկիրը ուր անոնք կը բնակին՝ ինչպես է, ապրիկ է թէ գէշ. և ինչպես են այն քաղաքները ուր անոնք կը բնակին, վրաններո՞ւ բակերացած են թէ պարսպաւոր են. 21—Եւ երկիրը ինչպես է, պարո՞ւր է թէ անրեր, մէջը ծառեր կա՞ն թէ ոչ. Եւ ժիր երթաք, ու այն երկրին պտուղներն առէք։ Եւ այն օրերը խաղողին նոր հասած օրերն էին։ 22—Եւ երթն ու այն երկիրը լրտեսեցին Մին անապատէն մինչև Հեբրոն եղած երթալուն։ Հեբրոն եօթը տարի առաջ չինուած էր։ 23—Եւ մինչև Եսքողի ձորը եկան, ու անկէ խաղողի ողկոյզ մը կտրեցին ուռովը մէկտեղ, և երկու հոգի լծակով վերցուցին զանկից. և նռնէներն ու թուզերն ալ տուին։ 24—Իսրայէլի որդիներուն անկէ կտրած ողկուզին համար այն տեղին անունը *Եսքողի ձոր դրուեցաւ։ 25—Եւ քառասուն օրէն հաքը այն երկիրը լրտեսելէն դարձան. 27—Եւ պատմ հասան Մովսէսի ու Ահարոնի և իսրայէլի որդիներուն բոլոր ժողովրդին, փառանի անապատը, Կադէս. և անոնց բոլոր ժողովրդին լուր բերին. և երկրին պտուղը ցուցուցին անոնց։ 28—Եւ պատմեցին անոր ու բսին, Մեզ ղրկած երկիրդ գացինք. իրաւցնէ կաթ ու մեղր կը բղխէ այն, և անոր պտուղը այս է։ 29—Բայց այն երկրին մէջ բնակող ժողովուրդը զօրաւոր է, և քաղաքները պարսպաւոր — խիստ մեծ են. նաև հոն Ենաղի որդիները տեսանք։ 30—Ամաղեկացիք այն երկրին հարաւային կողմը կը բնակին. ու Քետացիք և Յեբուսացիք ու Ամորհացիք լեռները կը բնակին, և Քանանացիք ծովուն քով ու Յորդանանու եզերքը կը բնակին։ 31—Եւ Քաղէբ ժողովուրդը Մովսէսի առջեւ լռեցուց, ու բսաւ, Ագէ, ելլենք, ու ժառանգենք զայն. քանզի մենք անոնցմէ կարող ենք անոր տիրելու։ 32—Բայց անոր հետ ելլող մարդիկը բսին, Մենք այն ժողովուրդին վրայ ելլելու կարող չենք, վասն զի անոնք մեզմէ զօրաւոր են։ 33—Եւ երթնց լրտեսած երկրին համար գէշ լուր բերին իսրայէլի որդիներուն՝ բսելով, Այն երկիրը, որուն միջէնէն անցանք զանիկա լրտեսելու համար, իր բնակիչները ուտող երկիր մըն է. և ամեն մէկը բոլոր ժողովուրդը զոր մենք տեսանք, յոգեհասնալի մարդիկ են։ 34—Եւ հոն տեսանք հսկաներըը, Ենաղի որդիները, որ հսկաներէն են. այնպես որ մենք մեր աչքին մարախի պէս երեւցանք, և այնպես ալ անոնց աչքին երեւցանք։

*Այսինքն, փրկիչ
†Այսինքն, Տէրը փրկէ

*Այսինքն, ողկուզի

Գլ. ԻԴ

Եւ բոլոր ժողովքը ձայնը վերցնելով աղաղակեց. և ժողովուրդը լացաւ այն գիշերը։ 2—Եւ Իսրայէլի բոլոր որդիները տրանջեցին Մովսէսի ու Ահարոնի դէմ. ու բոլոր ժողովքը բսաւ անոնց, Երանի՛ թէ Եգիպտոսի երկրին մէջ մեռած ըլլայինք. կամ երանի՛ թէ այս անապատին մէջ մեռած ըլլայինք. 3—Եւ ի՞նչու համար Տէրը մեզ այս երկիրը բերաւ, որ սրով իյնանք, և մեր կիներըը ու մեր որդիները յափշտակուին. աղէկ չէ՞ ասոր մէջ որ Եգիպտոս դառնանք։ 4—Եւ իրարու բսին, Մէկդի զօրագլուխ մը ընտրենք, ու Եգիպտոս դառնանք։ 5—Եւ Մովսէս ու Ահարոն իրենց երեսին վրայ ինկան իսրայէլի որդիներուն բոլոր ժողովատ ժողովքին առջեւ։ 6—Եւ երկիրը լրտեսողներէն Նաւէէի որդին Յեսու ու Յեփոնէի որդին Քաղէբ իրենց հանդերձները պատռեցին։ 7—Եւ իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին բսեցան՝ բսելով, Այն երկիրը, որուն միջէնէն անցանք զանիկա լրտեսելու համար, խիստ բարի երկիր մըն է. 8—Եթէ Տէրը մեզի հաճի, մեզ այն երկիրը պիտի տանի, և զանիկա մեզի պիտի տայ, որ կաթ ու մեղր բղխող երկիր մըն է։ 9—Միայն թէ Տէրոջը դէմ ապստամբ մի ըլլաք. և այն երկրին ժողովուրդէն մի վախնաք, քանզի անոնք մեր կերակուրն են. անոնց *պաշտպանութիւնը գացած է իրենց վրայէն, ու Տէրը մեզի հետ է. անոնցմէ մի վախնաք։ 10—Եւ բոլոր ժողովքը բսին թէ քարերով քարկոծեն զանոնք. բայց Տէրոջը փառքը ժողովքի խորանին մէջ բոլոր իսրայէլի որդիներուն երեւցաւ։ 11—Եւ Տէրը բսաւ Մովսէսի, Այս ժողովուրդը մինչև ի՞րբ զիս պիտի արհամարհէ, և իրենց մէջ ըրած բոլոր հրաշքներովս ալ մինչև ի՞րբ պիտի չհաւատան ինծի։ 12—Ես զանոնք ժանտախտով պիտի զարնեմ, ու կորսնցնեմ զանոնք. և քեզ անոնցմէ մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի բնեմ, քան զայս։ 13—Եւ Մովսէս բսաւ Տէրոջը, Այն ատեն Եգիպտացիք պիտի լսեն. (քանզի դուն քու կարողութիւնովդ այս ժողովուրդը անոնց մէջէն հանեցիր.) 14—Եւ անոնք պիտի պատմեն այս երկրին բնակիչներուն. Լուեր անոնք ըսած են որ դուն, ով Տէր, այս ժողովուրդին մէջտեղն ես, որ դուն, ով Տէր, դէմ առ դէմ կը տեսնուիս, և որ քու ամպդ անոնց վրայ կը կայնի, և որ ցորեկը ամպի սիւնով ու գիշերը կրակի սիւնով կը քալես անոնց առջեւէն։ 15—Հիմա եթէ այս ժողովուրդը մէկ մարդու պէս մեռցնելու ըլլաս, քու համբաւդ լսող ազգերը պիտի խօսին՝ բսելով, 16—Տէրը այս ժողովուրդը, անոնց երդնուած խոստացած երկիրը տանելու կարող չըլլալուն համար, անապատին մէջ մեռցուց զանոնք։ 17—Եւ հիմա քու իմ Տէրոջս կարողութիւնը մեծ ըլլայ, ինչպէս խօսեցար՝ բսելով, 18—Տէրը երկայնամիտ է, և առատ՝ ողորմութիւնով, անօրէնութիւնը ու յանցանքը ներող. բայց յանցաւորը ամենեւին անպատիժ չձգուր, հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ՝ մինչև երրորդ ու չորրորդ ազգը հասցնելով։ 19—Կ՚աղաչեմ, քու մեծ ողորմութեանդ համեմատ ներէ այս ժողովուրդին անօրէնութիւնը, ինչպէս նաև քեզի այս ժողովուրդին եգիպտոսէ մինչև հոս։ 20—Եւ Տէրը բսաւ, Քու խօսքիդ պէս ներեցի. 21—Բայց կենդանի եմ ես, որ բոլոր երկիր Տէրոջը փառքովը պիտի լեցուի. 22—Քանզի բոլոր այն մարդիկը որոնք Եգիպտոսի մէջ ու անապատին մէջ իմ փառքս ու իմ երած հրաշքներս տեսան, և մինչև հիմա զիս տասը անգամ փորձեցին, ու իմ խօսքս մտիկ չըրին, 23—Պիտի չտեսնեն այն երկիրը զոր իրենց հայրերուն երդում երի. զիս արհամարհողներուն մէ՛կն ալ պիտի չտեսնէ զայն. 24—Բայց որովհետեւ իմ ծառաս Քաղէբ ուրիշ միտք ունեցաւ, ու ինծի *բոլոր սրտով հնազանդեցաւ, ես ալ զանիկա իր գացած երկիրը պիտի տանիմ, և անոր սերունդը պիտի

*Եբր. հովանին. Սաղ. ճիա. 5։ Ես. ը. 2, 3։ Երեմ. խր. 46։

*Եբր. իմ հետեւէս լեցուց

ժառանգէ զայն։ 25—Եւ Ամաղեկացիք ու Քանանացիք ձորերու մէջ կը նստին. վաղը դարձէք, և գնաք ի անապատ կարմիր ծովուն ճամբան չուեցէք։

26—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 27—Մինչև ե՞րբ այս չար ժողովքին ինծի դէմ արձակելուն համբերեմ. ես լսեցի Իսրայէլի որդիներուն արտասանէլը որ ինծի դէմ կը արձակեն, 28—Ըսէ անոնց, Ես կենդանի եմ, ի՛րսկ Տէրը, որ ինչպես դուք իմ ականջներուս խօսեցաք, այնպես պիտի ընեմ ձեզի. 29—Ձեր դիակները այս անապատին մէջ պիտի իյնան. և ձեր բոլոր հաշիւին համեմատ, ձեզմէ ամէն համրուածներդ, քսան տարեկանէ վեր եղողներդ, դուք՝ հէնդ որ ինծի դէմ արձակեցիք, 30—Անշուշտ պիտի չմտնէք այն երկիրը՝ որուն մէջ ձեզ բնակեցնելու *երդուար էրի՛, բաց ի Եփոնէի որդիին Քաղէբ ու Նաւէի որդիին Յեսու. 31—Բայց ձեր որդիները, որոնց համար դուք ըսիք թէ պիտի յափշտակուին, զանոնք պիտի մտնեմ, և ձեր չհաճած երկիրը անոնք պիտի †տեսնեն։ 32—Բայց ձեր դիակները այս անապատին մէջ պիտի իյնան. 33—Եւ ձեր որդիները անապատին մէջ քառասուն տարի պիտի ֆմոլորին, ու ձեր պոռնկութիւնները կրեն, մինչև որ ձեր դիակները անապատին մէջ սպառին։ 34—Ինչպես երկիրը քառասուն օրուան մէջ լրտեսեցիք, այնպես ալ այն օրերուն թիւին համեմատ՝ ամէն մէկ օրուան տեղ մէկմէկ տարի ‡ԵԼԼ՝ քառասուն տարի պիտի կրէք ձեր անօրէնութիւնները, ու իմ չեղբ հեռանալս ճանչնաք։ 35—Ես Տէրս ըսի, Ինծի դէմ ժողովուած բոլոր այդ չար ժողովքին անշուշտ պիտի ընեմ այս բանը. անոնք այս անապատին մէջ պիտի սպառին, ու հոն պիտի մեռնին։ 36—Եւ այն մարդիկը զորոնք Մովսէս զրկեց այն երկիրը լրտեսելու, որոնք դարձան ու երկրին վրայով գէշ լուր հանեցին, 37—Այն մարդիկը որոնք այն երկրին վրայով գէշ լուր հանեցին, հարուածով մեռան Տէրոջը առջև։ 38—Բայց Նաւէի որդին Յեսու և Յեփոնէի որդին Քաղէբ, որոնք երկիրը լրտեսելու գացող մարդոցմէն էին, ողջ մնացին։ 39—Եւ Մովսէս այս խօսքերը ըսաւ բոլոր որդիներուն զոր ցեղ, ու ժողովուրդը մեծ սուգ բռնաւ։ 40—Եւ առաւօտեան կանուխ վեր անոնք գլուխ ելան՝ ըսելով, Ահա մենք ելանք, և Տէրոջը խոստացած տեղը պիտի երթանք. վասն զի մեղք գործեցինք։ 41—Եւ Մովսէս ըսաւ, Ինչո՞ւ այդպես Տէրոջը հրամանէն դուրս կ'երթաք. այդ բանը պիտի չյաջողի։ 42—Մի երթաք, (քանզի Տէրը ձեր մէջ չէ,) չըլլայ որ ձեր թշնամիներուն առջև յարգուիք։ 43—Վասն զի Ամաղեկացիք ու Քանանացիք հոն ձեր առջեւ են, և սրով պիտի իյնաք. դուք Տէրոջմէն ետ դառնալուդ համար՝ Տէրը ձեզի հետ պիտի չըլլայ։ 44—Բայց անոնք յամառութիւն ընելով՝ լեռանը գլուխ ելան. սակայն Տէրոջը ուխտին տապանակը ու Մովսէս բանակին միջէն չդաւաճեցան։ 45—Այն ատեն այն լեռանը վրայ բնակող Ամաղեկացիք ու Քանանացիք իջան, և զարկին զանոնք, ու հալածեցին զանոնք մինչև Հորմա։

Գլ. ԺԵ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսք Իսրայէլի որդիներուն և բսէ անոնց, Երբ մտնէք ձեր բնակութեան երկիրը զոր ձեզի պիտի տամ, 3—Եւ Տէրոջը անոյշ հոտ նուիրելու համար՝ արջառներէն կամ հօտերէն պատարագ պիտի մատուցանէք Տէրոջը, ողջակէզ կամ ուխտ կատարելու զոհ, կամ խոստովանութեան զոհ համար զատարակ մը մատուցանելս Տէրոջը, 9—Այն ատեն զատարակին հետ կէս հիմէն խառնուած երեք տասնորդ բարակ ալիւր հացի ընծայ մատուցանես. 10—Եւ թափելու նուէրի համար կէս հիմէն գինի մատուցանես. սիրկա Տէրոջը անուշահոտ պատարագ մըն է, 11—Այնէն մէկ զատարակի կամ խոյի համար, կամ ոչխարի կամ այծի համար այսպես պիտի ըլլայ. 12—Ձեր պատրաստելու թիւին նայելով՝ անոնց թիւին համեմատ ամէն մէկուն այնպես պիտի ընէք. 13—Երկրին ամէն քնակը այս բաներըը այնպես պիտի ընէ, Տէրոջը անուշահոտ պատարագ մատուցանելու համար։ 14—Եւ եթէ ձեր քով պանդխատացած օտարական, կամ ձեր ազգերուն մէջ ձեր մէջ բնակուած Տէրոջը անուշահոտ պատարագ ընելու ըլլայ, ձեր րրածին պէս անոնք ալ այնպէս պիտի ընեն։ 15—Ով ժողովք, ձեզի համար և ձեր քով պանդխատացած օտարականին համար մէկ կանոն պիտի ըլլայ. ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոնով՝ Տէրոջը առջև ինչպէս եք դուք, այնպէս պիտի ըլլայ օտարականն ալ։ 16—Ձեզի համար և ձեր քով պանդխատացած օտարականին համար մէկ օրէնք ու մէկ կարգադրութիւն պիտի ըլլայ։

17—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 18—Խօսք Իսրայէլի որդիներուն ու բսէ անոնց, Երբ այն երկիրը մտնէք ուր ձեզ պիտի տանիմ, 19—Եւ ըլլայ որ երբ այն երկրին հացէն ուտէք, բարձրացնելու ընծայ մատուցանէք Տէրոջը. 20—Ձեր առաջին խմորէն հոթ մը բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք. կաւի բարձրացնելու ընծան ինչպես կ'ընէք, այս ալ այնպէս պիտի բարձրացնէք. 21—Ձեր առաջին խմորէն մը համար՝ հիմէնի մը երրորդ մասը իւղով շաղուած երկու տասնորդ բարակ ալիւր հացի ընծայ պիտի բերես. 7—Եւ թափելու նուէրի համար հիմէնի մը երրորդ մասը գինի՝ անոյշ հոտի համար Տէրոջը պիտի մատուցանես, 8—Եւ երբ ոչխարի համար, կամ ուխտ կատարելու զոհի համար, կամ խաղաղութեան զոհի համար զատարակ մը մատուցանես Տէրոջը, 9—Այն ատեն զատարակին հետ կէս հիմէն իւղով շաղուած երեք տասնորդ բարակ ալիւր հացի ընծայ մատուցանես. 10—Եւ թափելու նուէրի համար կէս հիմէն գինի մատուցանես. սիրկա Տէրոջը անուշահոտ պատարագ մըն է, 11—Այնէն մէկ զատարակի կամ խոյի համար, կամ ոչխարի կամ այծի համար այսպես պիտի ըլլայ. 12—Ձեր պատրաստելու թիւին նայելով՝ անոնց թիւին համեմատ ամէն մէկուն այնպես պիտի ընէք. 13—Երկրին ամէն քնակը այս բաներըը այնպես պիտի ընէ, Տէրոջը անուշահոտ պատարագ մատուցանելու համար։ 14—Եւ եթէ ձեր քով պանդխատացած օտարական, կամ ձեր ազգերուն մէջ ձեր մէջ բնակուած Տէրոջը անուշահոտ պատարագ ընելու ըլլայ, ձեր րրածին պէս անոնք ալ այնպէս պիտի ընեն։ 15—Ով ժողովք, ձեզի համար և ձեր քով պանդխատացած օտարականին համար մէկ կանոն պիտի ըլլայ. ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոնով՝ Տէրոջը առջև ինչպէս եք դուք, այնպէս պիտի ըլլայ օտարականն ալ։ 16—Ձեզի համար և ձեր քով պանդխատացած օտարականին համար մէկ օրէնք ու մէկ կարգադրութիւն պիտի ըլլայ։

17—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 18—Խօսք Իսրայէլի որդիներուն ու բսէ անոնց, Երբ այն երկիրը մտնէք ուր ձեզ պիտի տանիմ, 19—Եւ ըլլայ որ երբ այն երկրին հացէն ուտէք, բարձրացնելու ընծայ մատուցանէք Տէրոջը. 20—Ձեր առաջին խմորէն հոթ մը բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք. կաւի բարձրացնելու ընծան ինչպես կ'ընէք, այս ալ այնպէս պիտի բարձրացնէք. 21—Ձեր առաջին

*ԵԲԲ. ձեռքս վերցուցի
†ԵԲԲ. գիանան
‡ԵԲԲ. սրածեղ

խմորէն բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը ձեր ազգերուն մէջ։

22—Իսկ եթէ սխալիք ու չընէք այս բոլոր պատուիրանքները՝ զորոնք Տէրը ըսաւ Մովսէսի, 23—Նո՛ւ այն ամէնը զորոնք Տէրը ձեզի պատուիրեց Մովսէսի ձեռքով այն օրէն ի վեր՝ որ Տէրը պատուիրեց ձեր ազգերուն մէջ յաւիտեան. 24—Ըլլայ որ եթէ ժողովքը սխալմամբ յանցանք մը ընէ, այն ատեն բոլոր ժողովքը Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար՝ մէկ զատարակ պիտի մատուցանէ բուս օրինի հացի ընծայով ու թափելու նուէրով, և մեղքի պատարագի համար այծերուն մէկ նոխազ։ 25—Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին համար, ու թողութիւն պիտի ըլլայ անոնց, վասն զի սխալմունք էր. և անոնք իրենց սխալելուն համար իրենց ընծան Տէրոջը պատարագ բերին, ու նաև իրենց մեղքի պատարագը՝ Տէրոջը առջև. 26—Ուստի Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքին ու անոնց մէջ պանդխատացած օտարականներուն թողութիւն պիտի ըլլայ. քանզի բոլոր ժողովուրդը սխալմանմէ էր։

27—Եւ եթէ անձ մը սխալմամբ մեղք գործէ, այն ատեն մեղքի պատարագի համար մէկ տարեկան էգ այծ մը պիտի բերէ. 28—Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ սխալմամբ մեղք գործող անձին համար. երբ Տէրոջը առջև սխալմամբ մեղք գործէ, անոր համար քաւութիւն պիտի ընէ, ու անոր թողութիւն ըլլայ. 29—Սխալմամբ մեղք գործողին համար թէ՛ Իսրայէլի որդիներուն մէջի բնակին համար, և թէ՛ անոնց մէջ պանդխատացած օտարականին համար, մէկ օրէնք պիտի ունենաք։

30—Բայց այն անձը որ *յանդգնութեամբ բսէ մը կ'ընէ, թէ՛ երկրին քնակը ըլլայ և թէ՛ օտարական, անիկա Տէրը կը նախատէ. այն անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի, 31—Տէրոջը խօսքը արհամարհելուն ու անոր պատուիրանքը զանց ընելուն համար այն անձը անշուշտ պիտի կորսուի, անիկա իր անօրէնութիւնը իր վրան պիտի կրէ։

*ԵԲԲ. բարձր ձեռքով

սուբ, անոր անօրէնութիւնը իր վրայ պիտի ըլլայ՝

32—Եւ երբ իսրայէլի որդիները անապատին մէջ էին, մարդ մը գտան որ չորեքշաբթի օրը փայտ կը ժողվէր։ 33—Եւ անոնք որ փայտ ժողվելու վրայ գտան զանիկա, Մովսէսի ու Ահարոնի և բոլոր ժողովքին առջև բերին։ 34— Եւ բանտարկեցին զանիկա, վասն զի անոր ինչ ընելիքին ծանուցուած չէր։ 35— Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, Այն մարդը անպայմանօրէն պիտի մեռցուի. բոլոր ժողովքը քանակին դուրս քարկոզով պիտի քարկոծեն զանիկա։ 36—Եւ բոլոր ժողովքը Տէրոջը Մովսէսի պատուիրածին պէս՝ բանակին դուրս հանեցին զանիկա, և քարկոզով քարկոծեցին, ու մեռաւ։

37—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 38—Խօսէ իսրայէլի որդիներուն ու ըսէ անոնց, որ իրենց ծոպերը շինեն իրենց հանդերձներուն փղանցքներուն վրայ՝ իրենց ազգերուն մէջ. ու փղանցքի ծոպերուն վրայ կապոյտ ժապաւէն մը դնեն. 39—Եւ անիկա ձեզի ծոպ պիտի ըլլայ, որպէս զի դուք տեսնէք զայն ու Տէրոջը բոլոր պատուիրանքները միտքերնիդ բերէք, և ընէք զանոնք. ու ձեր սիրտերուն և ձեր աչքերուն ցանկութեանը չհետեւիք, որոնց հետևէն դուք *կը մոլորիք. 40— Այնպէս որ միտքերնիդ բերէք ու ընէք իմ բոլոր պատուիրանքներս ու սուրբ ըլլաք ձեր Աստուծոյն համար։ 41—Ես եմ ձեր Տէր Աստուածը, որ ձեզի Աստուած ըլլալու համար՝ ձեզ եգիպտացի երկրէն հանեցի. Ես եմ Տէրոջմս ձեր Աստուածը։

Գլ. ԺԶ

Ե Ղէսի որդւոյն Կահաթի որդւոյն Իսհարի որդին Կորհ, և Ռուբէնի որդիներէն Եղիաբ որդիները, Դաթան ու Աբիրոն և Փաղէթի որդին Ովն †էլեան, 2—Եւ իսրայէլի որդիներէն երկու հարիւր յիսուն հոգի ժողովքի քաջերդական գիւաւորներ ու անուանի մարդիկ էրէնց հետ ոտքի ելան, 3—Եւ Մովսէսի ու Ահարոնի վրայ ժողովեցան, ու ըսին անոնց, Աւ հերիք է ըզ-ձէնէ՛ք. վասն զի բոլոր ժողովքը ամէնն ալ սուրբ են, և Տէրը անոնց մէջ է. և ինչո՞ւ Տէրոջը ժողովքին վրայ դուք ձեզ կը բարձրացնէք. 4—Եւ երբ Մովսէս ըլլա լսեց, իր երեսին վրայ ինկաւ. 5—Ու խօսեցաւ Կորհի և անոր բոլոր ժողովքին՝ ըսելով, Վաղը Տէրը պիտի ցուցնէ թէ ո՛րն է իրը, և ո՛րն է սուրբը, ու զ-ինքն իրեն պիտի մօտեցնէ. և ո՛րը որ ինք կ'ընտրէ, իրեն պիտի մօտեցնէ։ 6—Ասիկա ըրէք. առէք ձեզի բարձրացուցիչներ, դուն ով Կորհ, և քու բոլոր ժողովքդ. 7— Ու վաղը անոնց մէջ կրակ դրէք, ու Տէրոջը առջև անոնց վրայ խունկ դրէք. և սուրբը անիկա ըլլայ, ըզը Տէրը կ'ընտրէ. ալ հերիք է ըզ-ձէնէ՛ք, ով Ղևիի որդիներ։ 8—Ու Մովսէս ըսաւ Կորհի, Լսեցէք, ով Ղևիի որդիներ. 9—Գալո՞ք բան կ'երեւնայ ձեզի՝ որ Իսրայէլի Աստուածը ձեզ իրեն մօտեցնելու համար Իսրայէլի ժողովքին զատեց ձեզ, որպէս զի Տէրոջը խորանին պաշտօնը ընէք, և ժողովքին առջև կանգնիք՝ անոնց սպասաւորութիւնը ընելու. 10—Ու քեզ ու քեզի հետ քու բոլոր եղբայրներդ, Ղևիի որդիները, էրէն մօտեցուց, ու դուք քահանայութի՞ւն ալ կը փնտռէ՛ք. 11—Ուրեմն դուն ու քու բոլոր ժողովդդ Տէրոջը դէմ ժողվեցաք. և Ահարոն ի՞նչ է՝ որ անոր դէմ դուք արտունչ կ'ընէ՛ք. 12—Եւ Մովսէս Եղիաբի որդիները, Դաթանը ու Աբիրոնը, կանչելու համար խօսք ղրկեց. և անոնք ըսին, Չենք երթար. 13— Մեզ նապատին մէջ մեռցնելու համար՝ կաթ ու մեղր բղխող երկրէ մը մեզ հանելդ քի՞չ բան է, որ նաև մեր վրայ տիրապետել կ'ուզես։ 14—Եւ մեզ կաթ ու մեղր բղխող երկիր մը չտարիր, ոչ ալ մեզի արտ ու այգիի ժառանգութիւն տուիր. միթէ այս մարդոց աչքո՞ըը պիտի հանես. մենք չենք երթար. 15— Եւ Մովսէս խիստ բարկացաւ, ու ըսաւ Տէրոջը, Մի նայիր անոնց ընծաներուն. անոնցմէ էշ մըն ալ չառի, և անոնց մէկուն չարիք մը չըրի։ 16—Եւ Մովսէս ըսաւ Կորհի, Վաղը դուն ու քու բոլոր ժողովդդ Տէրոջը առջև ներկայանաք, դուն և անոնք ու Ահարոն. 17—Եւ առէք ամէն մէկդ ձեր բարվառները, ու անոնց մէջ խունկ դրէք, և ամէն մէկը իր բարվառը Տէրոջը բերէ, երկու հարիւր յիսուն բարվառներ, դուն ալ ու Ահարոն ամէն մէկդ ձեր բարվառները Տէրոջը առջև մօտեցուցէք։ 18—Եւ ամէն մէկը իր բարվառը առնելով՝ անոնց մէջ կրակ դրին, ու անոնց վրայ խունկ դրին և ժողովքի խորանին դուռը կայնեցան Մովսէսի ու Ահարոնի հետ։ 19— Եւ Կորհ անոնց դէմ ժողովքի խորանին դուռը ժողվեց բոլոր ժողովքը. ու Տէրոջը փառքը բոլոր ժողովքին երեւցաւ։

20—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 21—Այդ ժողովքին մէջէն զատուեցէք, որպէս զի շատով կրծացնեմ զանոնք։ 22—Բայց անոնք երեսնուն վրայ իյնան ու ըսին, Ով Աստուած, բոլոր *մարդոց հոգիներուն Աստուածը, մէկ մարդուն մեղանչելովը՝ բոլոր ժողովքի՞ն վրայ պիտի դայ քու բարկութիւնդ։

23—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 24—Խօսէ ժողովքին ու ըսէ, Կորհի, Դաթանի ու Աբիրոնի բնակութեանը բոլորտիքէն հեռացէ՛ք։ 25—Եւ Մովսէս երթալ ու Դաթանի և Աբիրոնի գնաց, և իսրայէլի ծերերը անոր եռեւէն գացին. 26—Ու խօսեցաւ ժողովքին՝ ըսելով, Այդ չար մարդոց վրանները քովէն հեռացէ՛ք, ու անոնց մէ՛կ բանին մի դպչիք, որպէս զի անոնց բոլոր մեղքերովը չկորսուիք։ 27—Այսպէս անոնք կորհի, Դաթանի ու Աբիրոնի բնակութեանը բոլորտիքէն հեռացան. և Դաթան ու Աբիրոն և անոնց կիներն ու անոնց որդիները և բնտանիքը իրենց վրանները դուռը երան կայնեցան. 28—Եւ Մովսէս ըսաւ, Ասով պիտի գիտնաք թէ Տէրն է զիս ղրկողը բոլոր այս գործերը ընելու, և ոչ թէ ես ինծմէ ըրի զանոնք. 29— Այսինքն՝ եթէ ասոնք ամէն մարդոց մեռնելուն պէս մեռնին, և եթէ ամէն մարդու պատահածը ասոնց ալ պատահի, Տէրը զիս ղրկած չէ. 30—Բայց եթէ Տէրը *հրաչք մը ընէ, և երկիրը իր բերանը բանայ ու զանոնք և անոնց բոլոր ունեցածը կլլէ, ու անոնք ողջ ողջ գ-ծխով իջնեն, այն ատեն պիտի գիտնաք որ այս մարդիկը Տէրը անարգեցին։ 31—Եւ եղաւ որ այս բոլոր խօսքերը խօսիլը լմնցուցած պէս, անոնց տակի գետինը պատռեցաւ. 32— Ու երկիրը իր բերանը բացաւ, ու զանոնք և անոնց առնները ու կորհի ունեցած բոլոր մարդիկը և բոլոր †անդ բնչը կլլեց. 33—Ու անոնք ու բոլոր անոնցները ողջ ողջ գ-ծխով իջան. և երկիրը ծածկեց զանոնք, ու ժողովքին միջէն կորսուեցան. 34—Ու անոնց բոլորտիքը եղած բոլոր իսրայէլը անոնց ձայնին փախան. քանզի ըսին, Չըլլայ որ երկիրը մեզ *ու կլլէ։ 35—Ու Տէրոջմէ կրակ ելաւ, ու խունկ մատուցանող երկու հարիւր յիսուն հոգին սպառեց։

36—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 37—Խօսէ Ահարոն քահանային որդւոյն Եղիազարի, որ բարվառները այն այրուելին միջէն վերցնէ. և դուն անոնց հէլ եղած կրակը անդին ցրուէ. քանզի անոնք սուրբ եղան։ 38—Այդ իրենց հոգիներուն դէմ մեղք գործողներուն բարվառներէն թիթեղներ չինեն սեղանը պատելու համար. վասն զի անոնք Տէրոջը առջև մատուցուելով՝ սուրբ եղած են. և իսրայէլի որդիներուն նշան պիտի ըլլան։ 39—Ու Եղիազար քահանան այն այրուած մարդոց մատուցած պղնձէ բարվառները առաւ. և զանոնք սեղանը պատելու համար թիթեղներ չինեցին. 40—(Իսրայէլի որդիներուն յիշատակ ըլլալու համար, որպէս զի Ահարոնի սերունդէն չեղող օտար մէկը Տէրոջը առջև խունկ մատուցանելու չմօտենայ, և Կորհի պէս ու անոր ժողովքին պէս չըլլայ։) ինչպէս Տէրը ըսաւ անոր՝ Մովսէսի ձեռքով։

41—Ու հետեւեալ օրը իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Մովսէսի դէմ ու Ահարոնի դէմ արտունչ ըրին՝ ըսե-

*Եբ. պռունկութիւն կ'ընէք
†Եբ. առին

*Եբ. մարմինի

*Եբ. ստեղծագործութիւն

լով, Դուք Տէրոջը ժողովուրդը մեռցուցիք։ 42—Եւ եղաւ որ երբ ժողովքը Մովսէսի ու Ահարոնի դէմ ժողոված էին, դէպ ի ժողովքի խորանը նայեցան, և ահա ամպը ծածկեց զայն, ու Տէրոջը փառքը երեւցաւ։ 43—Եւ Մովսէս ու Ահարոն ժողովքի խորանին առջեւ եկան։ 44—Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 45—Այդ ժողովքին միջէն երէց, որպէս զի չուտով սպառեմ զանոնք. և ասոնք երեսնուն վրայ իյնան։ 46—Եւ Մովսէս բսաւ Ահարոնին, Բուբլուած առ, ու մէջը սեդանին վրայէն կրակ դիր, և էֆոտ խունկ դիր, ու չուտով ժողովքը գնա, ու անոնց համար քաւութիւն ըրէ, վասն զի Տէրոջմէ բարկութիւն ելաւ. ժանտախտը սկսաւ։ 47—Եւ Ահարոն Մովսէսի բսածին պէս բուբլուը առաւ, ու ժողովքին միջ վազեց, և ահա ժանտախտը սկսած էր ժողովուրդին մէջ, և էֆոտ խունկ դրաւ, ու ժողովուրդին համար քաւութիւն ըրաւ։ 48—Եւ մեռելներուն ու ողջերուն մէջտեղ կայնեցաւ. ու ժանտախտը դադրեցաւ։ 49—Եւ ժանտախտէն մեռածները տասնըչորս հազար եօթը հարիւր հոգի էին, Կորխի բանին համար մեռածներէն զատ։ 50—Եւ Ահարոն դարձաւ Մովսէսի՝ ժողովքի խորանին դուռը, ու ժանտախտը դադրեցաւ։

Գլ. ԻԷ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Խօսէ իսրայէլի որդիներուն, ու անոնցմէ էբէց հայրերուն տուներուն համեմատ մէկմէկ գաւազան, այսինքն իրենց հայրերուն տուներուն բոլոր իշխաններէն տասնեւերկու գաւազան, առ. ամէն մարդուն անունը իր գաւազանին վրայ գրէ։ 3—Եւ Ահարոնի անունը Ղեւիի գաւազանին վրայ պիտի գրես. վասն զի անոնց հայրերուն տանը իշխանին համար մէկ գաւազան պիտի ըլլայ։ 4—Եւ զանոնք ժողովքի խորանը՝ վկայութիւնին առջեւ դնես, ուր ձեզի պիտի հանդիպիմ։ 5—Եւ պիտի ըլայ որ իմ ընտրած մարդուս գաւազանը պիտի ծաղկի. ու պիտի դադրեցնեմ ինծի իսրայէլի որդիներուն արտունչը՝ որոնք կը արտունչեն ձեր վրայով։

6—Եւ Մովսէս խօսեցաւ իսրայէլի որդիներուն. ու անոնց բոլոր իշխանները իրենց հայրերուն տուներուն համեմատ տասներկու գաւազան տուին անոր, ամէն մէկ իշխանին համար մէկմէկ գաւազան, և Ահարոնի գաւազանը անոնց գաւազաններուն մէջ էր։ 7—Եւ Մովսէս գաւազանները Տէրոջը առջեւ դրաւ վկայութեան խորանին մէջ։ 8—Եւ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէս վկայութեան խորանը մտաւ. և ահա Ղեւիի տանը կողմին ծաղկեցաւ Ահարոնի գաւազանը ծաղկեցաւ ու ծիլեցաւ և ծաղիկ բացաւ ու նուշեր հասցուց։ 9—Եւ Մովսէս բոլոր գաւազանները Տէրոջը առջեւէն դուրս հանեց իսրայէլի բոլոր որդիներուն առջեւ. ու անոնք տեսան, և ամէն մէկը իր գաւազանը առաւ։ 10—Եւ Տէրը բսաւ Մովսէսի, Ահարոնի գաւազանը վկայութեանին առջեւ դարձուր, որպէս զի ապստամբներուն նշան ըլլայ համար պահուի. ու անոնց սրբառնոյը ինծմէ վերցնես, որպէս զի չմեռանին։ 11—Եւ Մովսէս Տէրոջը իրեն պատուիրածին պէս բրաւ, այնպէս բրաւ։ 12—Եւ իսրայէլի որդիները խօսեցան Մովսէսի՝ ըսելով, Ահա կը մեռնինք, կը կորսուինք. մենք ամէնքս կը կորսուինք։ 13—Ամէն ով որ Տէրոջը խորանին մօտենայ՝ կը մեռնի. ամէնքս ալ պիտի մեռնինք։

Գլ. ԻԶ

Եւ Տէրը բսաւ Ահարոնի, Դուն ու քեզի հետ քու որդիներդ և քու հօրդ տունը որբարանին անօրէնութիւնը պիտի կրէք. և դուն ու քեզի հետ քու որդիներդ ձեր քահանայութեան անօրէնութիւնը պիտի կրէք։ 2—Եւ քու հօրդ ցեղէն, այսինքն Ղեւիի ցեղէն, եղող քու եղբայրներդ մօտեցնես, որպէս զի քեզի հետ միանան, ու քեզի սպասաւորութիւն բնեն. և դուն ու քեզի հետ քու որդիներդ վկայութեան խորանին առջեւ պիտի ըլլաք։ 3—Եւ քու պահպանութիւնդ ու բոլոր խորանին պահպանութիւնը պիտի պահեն. միայն թէ սրբարանին անօթներուն ու սեղանին չմօտենան, որպէս զի ոչ անոնք մեռնին՝ ոչ ալ դուք։ 4—Եւ անոնք ձեզի հետ պիտի միանան, ու ժողովքի խորանին պահպանութիւնը պիտի պահեն՝ խորանին ամէն պաշտօնին նայելով. և օտար մէկը պիտի չմօտենայ ձեզի։ 5—Եւ սրբարանին պահպանութիւնը ու սեդանին պահպանութիւնը պիտի պահէք, որպէս զի ալ իսրայէլի որդիներուն վրայ բարկութիւն չըլայ։ 6—Եւ ահա ես իսրայէլի որդիներուն միջէն ձեր եղբայրները, Ղեւտացիները, ձեզ. անոնք ձեզի Տէրոջը համար պարգեւ տրուած են, որպէս զի ժողովքի խորանին պաշտօնը բնեն։ 7—Եւ դուն ու քեզի հետ քու որդիները սեդանին բոլոր բաներուն համար և վարագուրին ներքեւ եղած բաներուն համար ձեր քահանայութիւնը պիտի պահէք, ու պաշտօնը կատարէք. ձեր քահանայութիւնը ձեզի պարգեւ պաշտօն տուի, և մեռնող օտարականը պիտի մեռցուի։

8—Եւ Տէրը խօսեցաւ Ահարոնի, Եւ ես ահա իսրայէլի որդիներուն բոլոր սուրբ բաներէն իմ ընծաներուս պահպանութիւնը քեզի տուի. և անոնք օծման իրաւունքի համար քեզի և քու որդիներուդ տուի յաւիտենական կանոնով։ 9—Ասոնք քեզի պիտի ըլլան ամենասուրբ բաներէն՝ որ չեն այրիր. անոնց ամէն հացի ընծաներուն, անոնց ամէն մեղքի պատարագներուն և անոնց ամէն յանցանքի պատարագներուն բոլոր ընծաները, զորոնք ինծի պիտի հատուցանեն, ամենասուրբ են քեզի ու քու որդիներուդ համար։ 10—Ամենասուրբ տեղին մէջ պիտի ուտես զայն. ամէն արու պիտի ուտէ զայն. անիկա սուրբ պիտի ըլայ քեզի։ 11—Այս ալ քու կդ պիտի ըլայ. անոնց պարգեւներուն բարձրացնելու ընծան, և իսրայէլի որդիներուն բոլոր երերցնելու ընծաները. քեզի և քեզի հետ քու որդիներուդ ու քու աղջիկներուդ տուի յաւիտենական կանոնով. անիկա Տէրոջը տունը քեզի և քեզի հետ քու տեղանդիդ ապրող տան մըն է յաւիտեան։ 12—Եւ Տէրը բսաւ Ահարոնի, Անոնց երկրին մէջ դուն ժառանգութիւն պիտի չունենաս, ու անոնց մէջ բաժին չունենաս. Իսրայէլի որդիներուն մէջ քու բաժինդ ու ժառանգութիւնդ ես եմ,

21—Եւ ահա Իսրայէլի բոլոր տասանորդը Ղեւիի որդիներուն տուի ժառանգութեան համար իրենց պաշտօնին փոխարէն, ժողովքի խորանին պաշտօնը ընելուն համար։ 22—Եւ իսրայէլի որդիները ա՛լ ժողովքի խորանին պիտի չմօտենան, որպէս զի մեղք չգործեն

Ամէնէն ազնիւ իւղին և ամէնէն ազնիւ գինիին ու ցորենին բոլոր երախայրիները, զորոնք Տէրոջը պիտի մատուցանեն, քեզի տուի։ 13—Անոնց երկրին մէջ եղած ամէն բէէրէբուն երախայրիները, զորոնք Տէրոջը պիտի բերեն, քու կդ պիտի ըլլան. քու տանդ մէջ ամէն մաքուր եղողը անկէ պիտի ուտէ։ 14—Իսրայէլի մէջ ամէն նուիրուած բանը քու կդ պիտի ըլլայ։ 15—Ամէն մարմինի ամէն արգանդ բացողը զոր Տէրոջը կ'ընծայեն, թէ՛ մարդ ըլլայ և թէ՛ անասուն, քու կդ պիտի ըլլայ. միայն թէ մարդուն առջինեկը անշուշտ պիտի փրկես. և անմաքուր անասունին առջինեկն ալ պիտի փրկես։ 16—Ու երբ փրկուելու *ՇԷՒԷԼը մէկ ամսուան ըլլան, սրբարանին սիկղին համեմատ հինգ սիկղ արծաթի *գնով պիտի փրկես. *ՀԻՆԳ քսան կերաս է։ 17—Բայց կովին առջինեկը և ոչխարին առջինեկը կամ այծին առջինեկը պիտի չփրկես. անոնք սուրբ են. անոնց արիւնը սեդանին վրայ պիտի սրսկես, ու անոնց ճարպը պիտի այրես անուշահոտ պատարագ ըլլալու Տէրոջը։ 18—Ու անոնց միսը քու կդ պիտի ըլայ, երբ որ ծնեալը երբուժին ու աջ թիակին քու կդ ըլալու պէս։ 19—Սուրբ բաներէն ամէն բարձրացնելու ընծաները, զորոնք Իսրայէլի որդիները Տէրոջը կը մատուցանեն, քեզի և քեզի հետ քու որդիներուդ ու աղջիկներուդ տուի յաւիտենական կանոնով. անիկա Տէրոջը առջեւ քեզի և քեզի հետ քու սերունդիդ ապրող տան մըն է յաւիտեան։ 20—Եւ Տէրը բսաւ Ահարոնի, Անոնց երկրին մէջ դուն ժառանգութիւն պիտի չունենաս, ու անոնց մէջ բաժին չունենաս. Իսրայէլի որդիներուն մէջ քու բաժինդ ու ժառանգութիւնդ ես եմ,

21—Եւ ահա Իսրայէլի բոլոր տասանորդը Ղեւիի որդիներուն տուի ժառանգութեան համար իրենց պաշտօնին փոխարէն, ժողովքի խորանին պաշտօնը ընելուն համար։ 22—Եւ իսրայէլի որդիները ա՛լ ժողովքի խորանին պիտի չմօտենան, որպէս զի մեղք չգործեն

ու չվճռնին։ 23—Եւ Ժողովքի խորանին պաշտօնը Ղեւտացիները պիտի ընեն, ու իրենց անօրինութիւնը իրենք պիտի կրեն. ասիկա ձեր ազգերուն մէջ յաւիտենական կանոն պիտի ըլլայ, որ անոնք Իսրայէլի որդիներուն մէջ ժառանգութիւն չունենան։ 24—Քանզի Իսրայէլի որդիներուն տասանորդը, զոր անոնք Տէրոջը կ'ընծայեն, Ղեւտացւոց ժառանգութիւն տուի. այս պատճառաւ անոնց համար ըսի որ Իսրայէլի որդիներուն մէջ ժառանգութիւն չունենան։

25—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 26— Այսպէս խօսէ Ղեւտացիներուն ու ըսէ անոնց, Երբ Իսրայէլի որդիներէն տասանորդը առնէք զոր անոնց կողմանէ ձեզի ժառանգութեան համար տուի, այն ատեն անկէ տասանորդին տասներորդ մասը բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը։ 27—Ու այս ձեր բարձրացնելու ընծան կալի ցորենի պէս և հնձանի բերքի պէս պիտի սեպուի ձեզի։ 28—Այսպէս Իսրայէլի որդիներէն ձեր առած բոլոր տասանորդներէն դուք ալ բարձրացնելու ընծայ պիտի մատուցանէք Տէրոջը. և անոնցմէ՝ Տէրոջը բարձրացնելու ընծան Ահարոն քահանային պիտի տաք։ 29—Բոլոր ձեզի եղած ընծաներէն Տէրոջը ամէն բարձրացնելու ընծան բոլորովին անոր ամենալաւէն, անոր սուրբ մասէն, պիտի մատուցանէք։ 30—Ուստի պիտի ըսես անոնց, Երբ ան նոր ամենալաւէն մատուցանէք, այն ատեն ձ֊ոցքը կալի արդիւնքի պէս, ու հնձանի արդիւնքի պէս սեպուի Ղեւտացիներուն։ 31—Ու անկէ տեղ պիտի ուտէք զայն դուք ու ձեր ընտանիքները. վասն զի Ժողովքի խորանին մէջ ձեր ընելու պաշտօնին փոխարէն ձեր վարձքն է այն։ 32—Ու անկէ առնելնուն մատուցանելէն ետքը անոր համար մեղք պիտի չկրէք, ու Իսրայէլի որդիներուն սուրբ բաները չպղծէք, որպէս զի չմեռնիք։

Գլ. ԺԹ

Ե Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի՝ ըսելով, 2—Այս է օրէնքին կանոնը զոր Տէրը պատուիրեց՝ ըսելով, Խօսէ Իսրայէլի որդիներուն որ փոկ կարմիր երինջ մը բերեն անարատ ու անբիծ, որուն վրայ լուծ դրուած չըլլայ։ 3—Ու նուիրապետ քահանային պիտի տաք զանիկա, որպէս զի բանակէն դուրս հանեն, ու իր առջեւ մորթեն զանիկա։ 4—Ու նուիրապետ քահանան իր մատովը անոր արիւնէն պիտի առնէ, ու դէպ ի Ժողովքի խորանին առջեւի կողմը եօթը անգամ պիտի սրսկէ անոր արիւնէն։ 5—Նաեւ իր աչքին առջեւ պիտի այրեն երինջը. անոր մորթը ու միսը և անոր արիւնը աղտովը մկուռեղ պիտի այրեն։ 6—Ու քահանան պիտի առնէ եղեւին փայտ, զոպայ ու կրկնակի կարմիր, և երինջին այրուած կրակին մէջ պիտի նետէ։ 7—Ու քահանան իր հանդերձները ու իր մարմինը ջրով պիտի լուայ, ու ետքը բանակը մտնէ. և քահանան մինչեւ իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։ 8—Ու զանիկա այրողը իր հանդերձները ու իր մարմինը ջրով պիտի լուայ, և մինչեւ իրիկուն անմաքուր ըլլայ։ 9—Ու մաքուր մարդ մը երինջին մոխիրը պիտի հաւաքէ, ու բանակին դուրսիդին մաքուր տեղ մը դնէ. և Իսրայէլի որդիներուն Ժողովքին համար պիտի պահուի, մեղաց համար մաքրութեան ջուր ըլլալու։ 10—Ու երինջին մոխիրը Ժողովքը իր հանդերձները պիտի լուայ, ու մինչեւ իրիկուն անմաքուր ըլլայ. և ասիկա Իսրայէլի որդիներուն ու անոնց մէջ պանդխտացող օտարականին համար յաւիտենական կանոն պիտի ըլլայ։

11—Ով որ մեռած մարդու մը մարմինին դպչի, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ։ 12—Անիկա *անով զինք մաքրել պիտի տայ երրորդ օրը, և եօթներորդ օրը մաքուր պիտի ըլլայ. բայց եթէ չմաքրուի երրորդ օրը, եօթներորդ օրը մաքուր պիտի չըլլայ։ 13—Ով որ մեռած մարդու մը մարմինին դպչի՝ ու ինքզինք չմաքրէ, Տէրոջը խորանը կը պղծէ. և այն անձը Իսրայէլէ պիտի կորսուի. անոր վրայ մաքրութեան ջուրը չսրսկուելուն համար անկէ անմաքուր է. իր անմաքրութիւնը տակաւին

*Այսինքն, մաքրութեան ջրով

իր վրայ է։ 14—Վրանի մէջ մեռնող մարդուն համար օրէնքը այս է. այն վրանին մէջ ամէն մտնողը և այն վրանին մէջ ամէն եղողը եօթը օր անմաքուր պիտի ըլլայ։ 15—Ու ամէն բաց ամանը որ իր վրայ կապուած խուփ չունի, անմաքուր պիտի ըլլայ։ 16—Ու ով որ դաշտի վրայ սրով սպանուածի մը, կամ իր հոգւոյն մեռածի մը, կամ մարդու ոսկորի մը և կամ գերեզմանի մը, եօթը օր անմաքուր պիտի ըլլայ։ 17—Ու անմաքուր եղողին համար՝ այն մեղաց համար այրուած էրէնէն մոխիրէն առնելով՝ ամանի մը մէջ վրան կենդանի ջուր դնեն։ 18—Ու մաքուր մարդ մը զոպայ պիտի առնէ, ու զայն ջուրը խօթէ, և վրանին վրայ ու բոլոր ամաններուն վրայ և հոն եղած մարդոց վրայ, ու ոսկորի մը կամ սպանուածի մը կամ մեռածի մը և կամ գերեզմանի մը դպչողին վրայ պիտի սրսկէ։ 19—Ու մաքուր մարդը պիտի սրսկէ անմաքուրին վրայ երրորդ օրը ու եօթներորդ օրը. և եօթներորդ օրը զանիկա պիտի մաքրէ. անիկա ալ իր հանդերձները պիտի լուայ ու ջրով լուացուի, և իրիկունը մաքուր ըլլայ։ 20—Բայց այն մարդը որ անմաքուր ըլլալով չմաքրուիր, այն անձը Ժողովքին մէջէն պիտի կորսուի, վասն զի Տէրոջը սրբարանը պղծեց. անոր վրայ մաքրութեան ջուրը չսրսկուեցաւ, անիկա անմաքուր է։ 21—Ու յաւիտենական կանոն մը ըլլայ անոնց, որ մաքրութեան ջուրը սրսկողը իր լաթերը պիտի լուայ. ու մաքրութեան ջուրին դպչողը մինչեւ իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։ 22—Ու անմաքուր անձը ինչ բանի որ դպչի, այն ալ անմաքուր պիտի ըլլայ. ու անոր դպչող մարդը մինչեւ իրիկուն անմաքուր պիտի ըլլայ։

Գլ. Ի

Ե Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Սին անապատը եկան առաջին ամսուն, ու ժողովուրդը Կադէսի մէջ բնակեան ըրաւ. և Մարիամ հոն վախճանեցաւ, ու հոն թաղուեցաւ։

2—Ու ժողովքին Նիւս֊ ջուր չկար ու Մովսէսի և Ահարոնի վրայ հաւաքուեցան։ 3—Ու ժողովուրդը Մովսէսի հետ վիճելով խօսեցան ու ըսին, Երանի՛ թէ մենք ալ մեռնէինք երբ մեր եղբայրները մեռան Տէրոջը առջեւ։ 4—Ու ինչո՞ Տէրոջը Ժողովուրդը այս անապատը բերիք, որ մենք ու մեր անասունները հոս մեռնինք։ 5—Ու ինչո՞ մեզ Եգիպտոսէ հանեցիք՝ մեզ այս գէշ տեղը բերելու համար. հոս ոչ սերմ շունի՛ տեղ է, ոչ ալ թզենիներու ու այգիներու և նռնենիներու. խմելու ջուր անգամ չկայ։ 6—Ու Մովսէս ու Ահարոն Ժողովքին առջեւէն Էնէլ֊Ժողովքի խորանին դուռը գացին, ու իրենց երեսին վրայ իյնան. և Տէրոջը փառքը անոնց երեւցաւ։

7—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 8—Գաւազանը առ, ու Ժողովքը Ժողվէ դուն ու քու եղբայրդ Ահարոն, և անոնց աչքերուն առջեւ խօսեցէք ապառաժին, ու իր ջուրը պիտի տայ. և դուն ապառաժէն ջուր պիտի հանես անոնց, ու Ժողովքին և անոնց անասուններուն խմցնես։ 9—Ու Մովսէս առաւ գաւազանը Տէրոջը առջեւէն, ինչպէս իրեն պատուիրեց։ 10—Ու Մովսէս ու Ահարոն Ժողովքը ապառաժին առջեւ Ժողվեցին. և ըսաւ անոնց, Լսեցէք հիմա, ով ապստամբներ, ձեզի այս ապառաժէն ջուր հանենք։ 11—Ու Մովսէս իր ձեռքը վերցուց, ու գաւազանովը երկու անգամ ապառաժին զարկաւ. և առատօրէն ջուր ելաւ, և Ժողովքը ու անոնց անասունները խմեցին։

12—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի, Որովհետեւ ինծի չհաւատացիք Իսրայէլի որդիներուն աչքերուն առջեւ զիս փառաւորելու, ուստի հետեւաբար այս Ժողովուրդը զուր պիտի չտանիք այն երկիրը զոր անոնց տուի։ 13—†Մերիպպայի ջուրը այս է. վասն զի Իսրայէլի որդիները Տէրոջը դէմ վիճեցան, և ինք փառաւորուեցաւ անոնց մէջ։

14—Ու Մովսէս կադէսէ դեսպաններ զրկեց Եդոմի թագաւորին ըսելու, Այսպէս կ'ըսէ քու եղբայրդ Իսրայէլ. Դուն մեր բոլոր հոգսերը գիտես։

*Եբր սրբելու։

†Այսինքն, վիճաբանութեան

բայել, Մեղի պատահած բոլոր նեղութիւնը գիտես. 15—Ինչպէս մեր հայրերը եգիպտոս իջան, և բնակեցանք եգիպտոսի մէջ չատ տաեն. և եգիպտացիք չարչարեցին մեզ ու մեր հայրերը; 16—ու երբ մենք Տէրոջը աղաղակեցինք, ըսկ մեր ձայնը. և հրեշտակ մը ղրկեց, ու մեզ եգիպտոսէ հանեց. և ահա մենք քու սահմանիդ ծայրն կագէս քաղաքին մէջ կենք. 17—Ննջեցիք բրէ, անցնինք քու երկիրդ. արտերէն ու այգիներէն պիտի չանցնինք, և հորերէն ջուր պիտի չխմենք. արքունական ճամբային պիտի երթանք, այ կամ ձախ կողմը պիտի չխոտորինք՝ մինչև որ քու սահմանդ անցնինք; 18— ու Եդոմ բսաւ անոր, 'իմ երկրէս պիտի չանցնես, ապա թէ ոչ՝ սրով քու դէմդ կ'ելլեմ'; 19—ու իսրայէլի որդիները ըսին անոր, Մենք մեծ ճամբային կ'անցնինք, և եթէ ես ու իմ անասուններս քու ջուրդ խմենք, անոր գինը կը հատուցանեմ. առանց ուրիշ բան մը ընելու իմ ոտքերով կ'անցնինք; 20—ու անիկա բսաւ, Պիտի չանցնես. և Եդոմ մեծ բազմութիւնով ու հզօր ձեռքով անոնց դէմ ելաւ. 21—Այսպէս Եդոմ իր սահմանէն իսրայէլի ճամբայ տալ չուզեց. ուստի իսրայէլ դարձաւ անկէ.

22—Ու կադէսէ չուեցին, ու իսրայէլի որդիները բոլոր ժողովքը Հոր լեռը եկան. 23—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի ու Ահարոնի Հոր լեռը՝ Եդոմի երկրին սահմանին քով՝ բսելով, 24—Ահարոն իր ժողովուրդին պիտի խառնուի. քանզի Մերիպայի ջուրին քով իմ հրամանիս դէմ ապստամբութիւն ընկնելուդ համար. պիտի չմտնէ այն երկիրը զոր իսրայէլի որդիներուն տուի. 25—Ահարոնը ու անոր որդին եղիազարը առ, ու Հոր լեռը հանէ զանոնք. 26—Ու Ահարոնը իր զգեստներէն մերկացուր, ու անոր որդւոյն եղիազարի հագցուր զանոնք. վասն զի Ահարոն էր ժողովուրդին պիտի խառնուի, ու հոն պիտի մեռնի; 27— Ու Մովսէս Տէրոջը պատուիրածին պէս ըրաւ. ու բոլոր ժողովքին աչքին առջև Հոր լեռը ելան. 28—Ու Մովսէս մերկացուց Ահարոնը իր զգեստներէն, ու անոր որդւոյն եղիազարի հագցուց զանոնք. և Ահարոն հոն լեռանը գլուխը մեռաւ. ու Մովսէս ու եղիազար լեռնէն իջան. 29—Ու երբ բոլոր ժողովքը տեսան որ Ահարոն մեռաւ, իսրայէլի բոլոր տունը Ահարոնի համար երեսուն օր լացին.

Գլ. ԻԱ

Ու հարաւային կողմը բնակող Քանանացի Թագաւորը լսելով որ իսրայէլ Աթարիմի ճամբային կուգայ, իսրայէլի հետ պատերազմեցաւ, և անոնցմէ գերիներ առաւ. 2— Ու իսրայէլ ուխտ բրաւ Տէրոջը ու բսաւ, Եթէ այս ժողովուրդը իմ ձեռքս մատնես, անոնց քաղաքները †բոլորովին պիտի կործանեմ*. 3—Ու Տէրը իսրայէլի ձայնը լսեց, ու Քանանացիները ‡նզոտ յանձնեց. և իրենց բոլորովին կործնեց զանոնք ու անոնց քաղաքները, և այն տեղին անունը †Հորմա դրաւ.

4—Ու Եդոմի երկրին բոլորտիքն անցնելով Հոր լեռնէն կարմիր ծովուն ճամբան չուեցին. ու ճամբուն մէջ ժողովուրդին սիրտը նեղացաւ. 5—Ու ժողովուրդը Աստուծոյ դէմ ու Մովսէսի դէմ խօսեցան՝ ըսելով, Ինչու մեզ եգիպտոսէ հանեցիք՝ որ անապատին մէջ մեռնինք. քանզի հաց չկայ, ջուր չկայ. և այս չնչին հացին մեր սիրտը զզուեր է. 6—Ու Տէրը ժողովուրդին վրայ կիզող օձեր ղրկեց, ու խածին ժողովուրդը, այնպէս որ իսրայէլէ չատ ժողովուրդ մեռաւ. 7—Ու ժողովուրդը Մովսէսի եկան ու բսին, Տէրոջը դէմ ու քեզի դէմ խօսելնիս մեղանչեցինք. աղօթք ըրէ Տէրոջը, որ մեր վրայէն օձերը վերցնէ. և Մովսէս ժողովուրդին համար աղաչեց. 8—Ու Տէրը բսաւ Մովսէսի, Քեզի կիզող օձ մը շինէ, ու զանիկա ձողի

*կամ, բանանիս
†կամ, պիտի նզովեմ
‡Այլեւս, նզովք կամ, խսպառ կործանումի

մը վրայ դիր. և ըլլայ թէ ով որ խածնաւ՝ անոր նայի ու ապրի; 9—Ու Մովսէս պղնձէ օձ մը չինեց, ու զանիկա ձողի մը վրայ դրաւ. և եղաւ որ օձ մը երբ մարդ մը խածնէր, անիկա պղնձէ օձին նայածին պէս կ'առողջանար.

10—Ու իսրայէլի որդիները չուեցին, ու Ովթովթի մէջ իջևան բռնեցին; 11—Ու Ովթովթէ չուեցին, ու Իյէ-աբարիմի մէջ դէպ ի արևելեան կողմը, Մովաբի դիմացի անապատին մէջ, իջևան բռնեցին; 12—Անկէ՝ չուեցին և Զարեդ ձորին մէջ իջևան բռնեցին.

13—Անկէ չուեցին, ու իջևան բռնեցին Առնոնի միւս կողմը այն անապատին մէջ որ Ամորհացւոց սահմանէն կ'ելլէ, վասն զի Առնոն Մովաբացւոց սահմանն է, Մովաբացւոց ու Ամորհացւոց մէջտեղ; 14—Անոր համար Տէրոջը պատերազմներուն գիրքին մէջ կ'բսուի,

Սուփայի մէջ Վահեպը,
Ու Առնոնի գետերը,
15 — Ու Արի կեցած տեղը վազող
Ու Մովաբի սահմանը կսպասող
Գետերուն յորձանքը.

16—Ու անկէ Զրհորը էլ՝ ուր նիկա այն ջրհորն է որու համար Տէրը բսեր էր Մովսէսի, ժողովուրդը ժողվէ, ու ես անոնց ջուր պիտի տամ. 17—Այն ատեն իսրայէլ այս երգը երգեց.

Ով հոր, բղխէ. երգեցէք անոր.
18 — Հորը իշխանները փորեցին,
Ժողովուրդին ազնուականները
օրէնսդրին հրամանովը՝
Իրենց գաւազաններովը փորեցին
զայն.

19—Ու անապատէն դէպ ի Մաթանա, ու Մաթանայէ դէպ ի Նաալիէլ, ու Նաալիէլէ դէպ ի Բամոթ, 20—Ու Բամոթէ Մովաբի դաշտին մէջ դէպ ի Նբոնին նայող փսգայի գագաթը եղած հովիտը ըլլէնէ.

21—Ու իսրայէլ դեսպաններ ղրկեց Ամորհացւոց Սեհոն Թագաւորին՝ ըսելով, 22—Քու երկրիդ անցնինք. արտի կամ այգիի մէջ չենք մտներ, հորի ջուրէ չենք խմեր. մինչև քու սահմանէդ անցնելնիս արքունական ճամբան

*կամ, անապատը

ըսկ կ'երթանք. 23—Ու Սեհոն իր սահմանէն ճամբայ չտուաւ. Իսրայէլին. հապա Սեհոն իր բոլոր ժողովուրդը ժողվեց, և դէպ ի անապատը Իսրայէլի դէմը ելաւ, ու Յասա եկաւ, և Իսրայէլի հետ պատերազմեցաւ. 24—Ու Իսրայէլ սուրի բերնէ անցուց զանիկա, ու տիրեց անոր երկրին, Առնոնէ մինչև Յաբոկ, մինչև Ամմոնի որդիներուն երկիրը. վասն զի Ամմոնի որդիներուն սահմանը դժուարին էր. 25—Ու Իսրայէլ բոլոր այս քաղաքները առաւ. ու Իսրայէլ Ամորհացւոց բոլոր քաղաքներուն մէջ բնակեցաւ, Եսբոնի մէջ ու անոր բոլոր գեղերուն մէջ. 26—Քանզի Եսբոն Ամորհացւոց Սեհոն Թագաւորին քաղաքն էր. վասն զի անիկա Մովաբի առաջուան թագաւորին հետ պատերազմելով, անոր ձեռքէն անոր բոլոր երկիրը մինչև Առնոն առած էր; 27— Անոր համար առակ խօսողները կ'ըսեն.

Եսբոն եկէք.
Թող Սեհոնի քաղաքը չինուի ու պատրաստուի.
28 — Վասն զի Եսբոնէ կրակ ելաւ
Ու Սեհոնի քաղաքէն բոց
Մովաբի Արը այրեց,
Ու Առնոնի բարձր տեղերուն տէրերը.
29 — Վա՛յ քեզ, Մովաբ,
Ով Քամոսի ժողովուրդ, կորսուեցար.
Իր փախած որդիները ու աղջիկները
Ամորհացւոց Սեհոն Թագաւորին գերութեան տուաւ.
30 — Զանոնք նետերով զարկինք.
Եսբոն կորսուեցաւ մինչև Դեբոն,
Ու կործնցուցինք զանոնք
Մինչև Մեդաբայի քով եղած Նոփաս.

31—Այսպէս Իսրայէլ Ամորհացւոց երկիրը բնակեցաւ. 32— Ու Մովսէս հոգ ղրկեց Յազերը լրտեսելու, ու անոր գեղերը առին, և հոն եղած Ամորհացիները վռնտեցին.

33—Ու դարձան ու Բասանի ճամբան եկան. և Բասանի Ովգ Թագաւորը՝ ինք ու իր բոլոր ժողովուրդը անոնց դէմ Եդրայիի մէջ՝ պատերազմի ելան.

34—Եւ Ցերը բառ Մովսէսի, անկէ մի վախնար. քանզի քո ձեռքդ մատնեցի զանիկա ու անոր բոլոր ժողովուրդը և անոր երկիրը. և դուն նմանքի մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն Թագաւորին ըրածիդ պէս պիտի ընես անոր։ 35—Այսպէս զարկին զանիկա և անոր որդիները ու անոր բոլոր ժողովուրդը, այնպէս որ մէկն ալ չմնաց. և անոր երկիրն տիրեցին։

Գլ. ԻԲ

Եւ Իսրայէլի որդիները չուեցին, ու Մովաբի դաշտերուն մէջ Յորդանանու անդիի կողմը Երիքովի դէմ ի բնակեան բրին։

2—Եւ Սեպփորի որդին Բաղակ տեսաւ այն ամէնը զորոնք Իսրայէլ ըրաւ Ամորհացւոց։ 3—Եւ Մովաբ խիստ վախցաւ ժողովուրդէն, վասն զի շատ ար էին. ու Մովաբ Իսրայէլի որդիներուն երեսէն տագնապի մէջ էր։ 4—Եւ Մովաբ Մադիամու Ծերերուն ըսաւ, Հիմա այս ժողովուրդը պիտի լզեն մեր բոլորտիքը ինչպէս արջառը դաշտին խոտը կը լզէ։ Եւ Սեպփորի որդին Բաղակ Մովաբի Թագաւորն էր այն առեն։ 5—*Եւ Բէովրի որդւոյն Բաղաամի դեսպաններ ղրկեց Փաթուր Տաշտը, (որուն ժողովուրդին որդւոց երկիրը, Գետին եղերքն էր՝) զանիկա կանչելու և ըսելու, Ահա Եգիպտոսէ ժողովուրդ մը ելաւ. ահա երկրին երեսը ծածկեց, և իմ դիմացս կը նստի. 6—Ուստի հիմա ի՛ռաջելի՛ր, ինծի համար անիծէ այս ժողովուրդը. քանզի անիկա ինծմէ զօրաւոր է. Թերևս կարող ըլլամ զանիկա զարնել, ու երկրէս վռնտեմ զանիկա. վասն զի գիտեմ որ քու օրհնածդ օրհնեալ է, և քու անիծածդ՝ անիծեալ է։

7—Եւ Մովաբի Ծերերը ու Մադիամու Ծերերը իրենց ձեռքերուն մէջ հմայութեան վարձքերով գացին, և Բաղաամի եկան ու Բաղակի խօսքերը ըսին անոր։ 8—Եւ անիկա ըսաւ անոնց, Այս գիշեր հոս մնացէք. և Տէրը ինչ որ ինծի խօսելու ըլլայ, անոր համեմատ պատասխան պիտի տամ ձեզի. ու Մովաբի իշխանները Բաղաամի քով մնացին։ 9—Եւ Աստուած Բաղաամի եկաւ ու ըսաւ, Ո՞վ են այդ քու քովդ եղած մարդիկը։ 10—Եւ Բաղաամ ըսաւ Աստուծոյ, Մովաբի Թագաւորը Սեպփոր ման Բաղակ ուղարկ ինծի ղրկեց՝ ըսելով, 11—Ահա Եգիպտոսէ ելլող ժողովուրդը երկրին երեսը ծածկեց. հիմա եկուր, անիծէ զանիկա ինծի համար, որ քեզի կարող ըլլամ անոր յաղթել ու զանիկա վռնտել։ 12—Եւ Աստուած ըսաւ Բաղաամի, Առանց հետ չերթաս, ժողովուրդը չանիծես. վասն զի անիկա օրհնեալ է։ 13—Եւ Բաղաամ առաւուընց ելաւ, ու ըսաւ Բաղակի իշխաններուն, Դուք ձեր երկիրը դացէք. վասն զի Տէրը ինձ չհոդուր ձեզի հետ երթալ։ 14—Եւ Մովաբի իշխանները ելան, ու Բաղակի եկան և ըսին, Բաղաամ մեզի հետ գալ չուզեց։

15—Եւ Բաղակ դարձեալ անոնցմէ աւելի շատ ու աւելի պատուական իշխաններ ղրկեց։ 16—Եւ անոնք Բաղաամի եկան ու ըսին անոր. Սեպփորի որդին Բաղակ այսպէս կ'ըսէ, Կ'աղաչեմ չեմ, ինծի գալ մի հրաժարիր։ 17—Քանզի քեզի շատ պատիւ պիտի ընեմ, և ինծի ինչ որ ըսես՝ պիտի ընեմ, ուստի կ'աղաչեմ, եկուր, անիծէ այս ժողովուրդը ինծի համար։ 18—Եւ Բաղաամ պատասխան առաւ ու ըսաւ Բաղակի ծառաներուն, Եթէ Բաղակ իր առունդը լեցուն արծաթ ու ոսկի տայ ինծի, իմ Տէր Աստուծոյս խօսքին չեմ կրնար անցնիլ՝ պզտիկ կամ մեծ բան մը ընելու։ 19—Եւ հիմա ի՛ռաջեցէք, այս գիշեր դուք ալ հոս կեցէք, որպէս զի գիտնամ Թէ Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ ինծի։ 20—Եւ Աստուած գիշերը Բաղաամի եկաւ, ու ըսաւ անոր, Եթէ մարդիկը քեզ կանչելու գան, եկիր, անոնց հետ գնա. բայց ինչ որ քեզի խօսիմ, միայն զայն ընես։

21—Եւ Բաղաամ առաւուանց եղաւ, ու իր իշուն համեցը դրաւ, և Մովաբի իշխաններուն հետ գնաց։ 22—Ու երբ

*Կամ, Եւ Փաթուր Տաշտը դեսպաններ ղրկեց Բէովրի որդւոյն Բաղաամի՝ որուն հայրենիքը Գետին եղերքն էր

Թաղաամ համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ, ու Տէրոջը հրեշտակը ճամբուն վրայ կայնեցաւ իրեն անոր Թշնամի մը. և անիկա իր իշուն վրայ հեծած էր, ու անոր երկու ծառաները իրեն հետ էին։ 23—Ու էշը տեսաւ Տէրոջը հրեշտակը, որ ճամբուն վրայ կայնած էր ու իր ձեռքը մերկ սուր մը ունէր, ու էշը ճամբայէն դարձաւ և արտը մտաւ. ու Բաղաամ էշը ծեծեց, որպէս զի ճամբան դարձնէ զանիկա։ 24—Եւ Տէրոջը հրեշտակը այդ կողմերուն նեղ ճամբուն մէջ կայնեցաւ, որ մէկ կողմն պատ ու միւս կողմն պատ կար։ 25—Ու երբ էշը Տէրոջը հրեշտակը տեսաւ, պատին փակ խթտեցաւ, և Բաղաամի ոտքը պատին փակ ճնշեց. ան ալ նորէն ծեծեց զանիկա։ 26—Եւ Տէրոջը հրեշտակը առաջ գնաց, ու նեղ տեղ մը կայնեցաւ, ուր ալ կամ ձախ կողմը խոտորելու ճամբայ չկար։ 27—Ու երբ էշը Տէրոջը հրեշտակը տեսաւ, Բաղաամի տակ նստաւ. ու Բաղաամի բարկութիւնը բորբոքեցաւ, և գաւազանով ծեծեց էշը։ 28—Եւ Տէրը իշուն բերանը բացաւ, ու անիկա Բաղաամի ըսաւ, Ի՞նչ ըրի քեզի, որ այսչափ երեք անգամ զիս ծեծեցիր։ 29—Եւ Բաղաամ ըսաւ իշուն, Ձիս ծաղր ընելուդ համար. կուանի՛ր թէ ձեռքս սուր մը ըլլար, որպէս զի հիմա քեզ սպանէի։ 30—Ու էշը ըսաւ Բաղաամի, Ես այն քու էշդ չե՞մ, որուն վրայ կը հեծնէիր *քու մանկութենէդ՝ մինչև այսօր. քեզի այսպէս ընել իմ սովորութի՞ւնս էր. ու անիկա ըսաւ, Ոչ։ 31—Այն ատեն Տէրը բացաւ Բաղաամի աչքերը. ու Երը տեսաւ որ Տէրոջը հրեշտակը ճամբուն վրայ կայնած էր, և իր ձեռքը մերկ սուր մը ունէր, իր երեսին վրայ խոնարհեցաւ ու երկրպագութիւն ըրաւ։ 32—Ու Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր, Ինչո՞ւ այսպէս երեք անգամ քու էշդ ծեծեցիր. ահա ես ելայ Թշնամութիւն ընելու համար. վասն զի ճամբադ ուղիղ չէ իմ առջեւս։ 33—Ու էշը զիս տեսաւ, ու այս երեք անգամ է որ իմ առջեւս մեկնեցաւ. եթէ անիկա իմ առջեւս մեկներ չկրնար, հիմա ես քեզ անշուշտ մեռցուցեր ու զանիկա ողջ թողուցեր էի։ 34—Եւ Բաղաամ ըսաւ Տէրոջը հրեշտակին, Մեղք գործեցի, չգիտնալով որ ճամբուն վրայ ինծի դէմ կայներ էիր. ուստի եթէ քեզի անհնար կ'երևնայ՝ ես երթամ, ես գառնամ։ 35—Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ Բաղաամի, Գնա այդ մարդոց հետ, բայց այն խօսքը զոր քեզի պիտի ըսեմ, զայն միայն խօսիր. և Բաղաամ գնաց Բաղակի իշխաններուն հետ։

36—Եւ Բաղակ երբ լսեց որ Բաղաամ կու գայ, զանիկա դիմաւորելու ելաւ իր ասմանքը եղող Առնոն կիրճին մէջ Մովաբացւոց մէկ քաղաքը, որ ասհնաձին ծայրն է։ 37—Եւ Բաղակ ըսաւ Բաղաամի, Քեզ կանչելու չյանկացէ՞ չզրկեցի՞. ինչո՞ւ չեկար ինծի. արդեօք քեզի պատիւ ընելու կարող չե՞մ իմ։ 38—Եւ Բաղաամ ըսաւ Բաղակի, Ահա ես քեզի եկայ. բայց ես քնաւ զորութիւն ունի՞մ բան մը ըսելու, Աստուած իմ բերանս ինչ խօսք որ դնէ, զայն պիտի խօսիմ։ 39—Եւ Բաղաամ Բաղակի հետ գնաց, ու կարթաքհասովի եկան։ 40—Եւ Բաղակ արջառներ ու ոչխարներ մորթեց, ու Բաղաամի և անոր հետ եղող իշխաններուն ղրկեց։

41—Ու երբ առաւօտ եղաւ, Բաղակ առաւ Բաղաամը, և Բահաղի բարձր տեղերը հանեց զանիկա. ու անկէ ժողովուրդին ծայրը տեսաւ։

Գլ. ԻԳ

Եւ Բաղաամ ըսաւ Բաղակի, Ինծի համար հոս եօթը սեղան չինէ, ու հոս ինծի համար եօթը զուարակ և եօթը խոյ պատրաստէ։ 2—Եւ Բաղակ Բաղաամի ըսածին պէս ըրաւ. և Բաղակ ու Բաղաամ ամէն մէկ սեղանին վրայ մէկական զուարակ ու մէկական խոյ մատուցին։ 3—Եւ Բաղաամ ըսաւ Բաղակի, Դուն քու ողջակիզիդիդ քովը կայ՛ր, ու ես երթամ, գուցէ Տէրը իմ դիմացս ելլէ. և ինչ որ ինծի ցուցնէ՝ քեզի պիտի ըսեմ. ու

*Կամ, քուկդ ըլլալէս

*քաջքը տեղ մը եւս։ 4—Ու Աստուած Բազասամի հանդիպեցաւ. ու Բաղաամ ըսաւ անոր, Եօթը սեղան պատրաստեցի, ու ամէն մէկ սեղանին վրայ մէկական զուարակ ու մէկական խոյ մատուցի։ 5—Ու Տէրը Բազասամի բերանը խօսք դրաւ ու ըսաւ, Դարձիր Բազակին եւ այսպէս խօսի։ 6—Ու դարձաւ անոր. եւ ահա անիկա իր ողջակէզին քով կայներ էր, ինք ու Մոաբի բոլոր իշխաններըն։ 7—Ու իր առակը ակսեց ու ըսաւ,

Մոաբէ Բաղակ զիս Արամի,
Արեւելեան լեռներէն, բերաւ, ըսելո՛վ,
Եկո՛ր, Յակոբը անիծէ ինծի,
Եկո՛ր, Իսրայէլը նզովի։
8—Աստուծոյ չանիծածը ի՞նչպէս անիծեմ,
Կամ Տէրոջը չնզովածը ի՞նչպէս նզովեմ։
9—Վասն զի ապառաժներուն գլխէն
կը տեսնեմ զանիկա,
Ու բլուրներէն կը նայիմ անոր.
Ահա այս ժողովուրդը զատ պիտի բնակի,
Ու ազգերուն հետ պիտի չհետպատի։
10—Յակոբի փոշին ո՞վ կրնայ համրել,
Ու Իսրայէլի քառորդը ո՞վ կրնայ հաշուել.
Թող իմ անձս արդարներուն մահովը մեռնի,
Ու իմ վախճանս անոնց վախճանին պէս ըլլայ։
11—Ու Բաղակ ըսաւ Բաղաամին,
Այդ ի՞նչ բրիր ինծի. ես քեզ բերի իմ թշնամիներս անիծելու, և ահա դուն բոլորովին օրհնեցիր։ 12—Ու անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ինչ որ Տէրը իմ բերանս դնէ, զայն խօսելու հոգ տանելու չէ՞մ։
13—Ու Բաղակ ըսաւ Բաղաամին, Ա՛տպաչէմ, ինծի հետ ուրիշ տեղ մը եկո՛ր, որպէս զի զանոնք տեսնես անկէ. անոնց միայն մէկ ծայրը տեսնես, և անոնց ամէնը պիտի չտեսնես. ու անկէ անիծէ զանոնք ինծի համար։
14—Ու տարաւ զանիկա Սոփիմի արտը, †Փասգայի գլուխը, ու եօթը սեղան շինեց, և ամէն մէկ սեղանին վրայ մէկական զուարակ ու մէկական խոյ մատուցի։
15—Ու ըսաւ Բաղակի, դուն հոս քու ողջակիզիդ քով կայնէ, ու ես հոն Տէրը դիմաւորեմ։ 16—Ու Տէրը Բաղաամի դիմաց ելաւ, և անոր բերանը խօսք դրաւ ու ըսաւ, Բաղակի դարձիր ու այսպէս ըսէ։ 17—Ու երբ եկաւ անոր, ահա անիկա իր ողջակէզին քով կայներ էր. Մոաբի իշխաններն ալ անոր հետ էին. և Բաղակ ըսաւ անոր, Տէրը ի՞նչ խօսեցաւ։ 18—Ու անիկա իր առակը ակսեց ու ըսաւ,

Ելիր, ով Բաղակ, ու լսէ.
Ով Սեպփորի որդի, ինծի մտիկ ըրէ։
19—Աստուած մարդ չէ՝ որ ստախօսի,
Ոչ ալ մարդու որդի՝ որ զղջայ։
Ինքը ըսաւ, ու պիտի չընէ՞,
Կամ ինք խօսեցաւ, ու անոր պիտի չկատարէ՞։
20—Ահա հրաման առի օրհնելու. և ինք օրհնեց,
Ու ես չեմ կրնար եւս դարձնել։
21—Յակոբի վրայ անօրէնութիւն մը չդննեց,
Ոչ ալ Իսրայէլի վրայ անզգամութիւն տեսաւ.
Անոր Տէր Աստուածը իրեն հետ է.
Ու անոր մէջ թագաւորի ցնծութեան ձայն կայ։
22—Զանոնք Եգիպտոսէ հանողը Աստուած է.
Անոնք միեղջերուի պէս *ոյժ ունին։
23—Քանզի Յակոբի դէմ կախարդութիւն չկայ,
Ու Իսրայէլի դէմ դիւթութիւն չգտնիր.
Յակոբի ու Իսրայէլի վրայով՝ ժամանակին
Պիտի ըսուի Թէ Աստուած ինչ՛ը բրաւ։
24—Անոնց այս ժողովուրդը մատակ առիւծի պէս պիտի ելլէ,
Ու առիւծի մը պէս պիտի բարձրանայ.
Ո՛ պիտի չպառկի մինչեւ որսը չուտի,
Ու սպաննուածներուն արիւնը չխմի։
25—Ու Բաղակ ըսաւ Բաղաամին,
Ոչ անէծք տուր անոնց, ոչ ալ օրհնութիւն։ 26—Ու Բաղաամ պատասխան տուաւ՝ Բաղակի ըսաւ, Միթէ ես քեզի չխօսեցայ՝ ըսելով, Ինչ որ Տէրը խօսի, զայն պիտի ընեմ։
27—Ու Բաղակ ըսաւ Բաղաամի, Ա՛ռ, ուրիշ տեղ մը տանիմ քեզ, թերեւս Աստուած հաճի, որ անկէ անիծես զանոնք ինծի համար։ 28—Ուստի Բաղակ տարաւ Բաղաամը փոգովրի գագաթը, որ դիմէ ի նախմոն կը նայի։
29—Ու Բաղաամ ըսաւ Բաղակի, Հոս ինծի եօթը սեղան շինէ, ու հոս ինծի եօթը զուարակ ու եօթը խոյ պատրաստէ։ 30—Ու Բաղակ Բաղաամի բանին պէս ըրաւ, ու ամէն մէկ սեղանին վրայ մէկական զուարակ ու մէկական խոյ մատուց։

ԳԼ. ԻԴ

Երբ Բաղաամ տեսաւ որ Տէրը կը հաճի Իսրայէլը օրհնել, միւս անգամներուն պէս հմայքներ փնտռելու չգնաց, այլ իր երեսը դէպ ի անապատը դարձուց։ 2—Ու Բաղաամ իր աչքերը վերցնելով տեսաւ որ Իսրայէլ իր ցեղերուն կարգովը բանակած է. ու Աստուծոյ Հոգին անոր վրայ եկաւ։ 3—Ու իր առակը սկսելով՝ ըսաւ,

Բէովրի որդւոյն Բաղաամի խօսքը,
Ու աչքը *բաց մարդուն խօսքը,
4—Աստուծոյ խօսքերը լսող,
Ու Ամենակարողին տեսիլքը տեսնող,
Գետնաքո՛ւղ ղէո գոհերը ինկող
Ու աչքերը բաց եղողին խօսքը այս է.
5—Ով Յակոբ, քու վրաններդ,
Ու, ով Իսրայէլ, քու խորանները ի՛նչ գեղեցիկ են.
6—Ձորերու պէս տարածուեցան.
Գետերու քով եղող պարտէզներու պէս,
Տէրոջը տնկած հալուէի ծառերուն
Ո՛ր լուրին եղերքը եղող եղեւիններուն պէս են,
7—Անոր դոյներէն ջուր պիտի վազի,
Ու անոր սերմը առատ ջուրերու մէջ պիտի ըլլայ.
Անոր Թագաւորը Ագագ աւելի պիտի բարձրանայ,
Ու Թագաւորութիւնը ածի։
8—Զանիկա Եգիպտոսէ հանողը Աստուած է.

*Կամ, գոց

Մխեղջերուի պէս ոյժ ունի.
Իրեն թշնամի եղող ազգերը պիտի ուտէ,
Անոնց ոսկորները պիտի կոտրատէ, ու նետ իր նետերովը պիտի զարնէ։
9—Առիւծի պէս նստաւ պառկեցաւ,
ու մատակ առիւծի պէս.
Զանիկա ո՞վ պիտի արթնցնէ։
Ով օրհնողները օրհնեալ ըլլան,
Ու քեզ անիծողները՝ անիծեալ։
10—Այն ատեն Բաղակ շատ բարկացաւ Բաղաամի, ու ձեռքերը իրարու զարկաւ. և Բաղակ ըսաւ Բաղաամին, Ես քեզ կանչեցի որպէս զի իմ թշնամիներուս անէծք տաս, և ահա այս երեք անգամ է որ օրհնութիւն տուիր։ 11—Ուստի դուն հիմա փութ տեղդ փախիր. Քեզի չատ պատիւ ընեմ՝ ըսի, բայց ահա Տէրը քեզ պատիւ զրկեց։ 12—Ու Բաղաամ ըսաւ Բաղակին, Ես քու զրկած գեսպաններուդ ալ չխօսեցա՞յ՝ ըսելով, 13—Բաղակ եթէ ինծի իր առնովը լեցուն արծաթ ու ոսկի տայ, ես Տէրոջը խօսքէն չեմ կրնար անցնիլ՝ որ ինքիրմէս ոտկէ կամ գէշ բան մը ընեմ. Տէրը ինչ որ ըսէ, զայն պիտի խօսիմ։ 14—Ու ահա ես հիմա իմ *Հայրենիքս կ՚երթամ. Եկո՛ր, քեզի հասկցնեմ թէ այս ժողովուրդը վերջին օրերը ի՛նչ պիտի ընէ քու ժողովուրդիդ։ 15—Այն ատեն իր առակը սկսելով՝ ըսաւ,

Բէովրի որդւոյն Բաղաամի խօսքը,
Ու աչքը բաց մարդուն խօսքը,
16—Աստուծոյ խօսքերը լսող,
Ու Բարձրեալին գիտութիւնը գիտցող,
Ու Ամենակարողին տեսիլքը տեսնող,
Ու †նետնալո՛ղ ղէո գեսիները ինկող
Ու աչքը բաց եղող մարդուն խօսքը այս է.
17—Զանիկա պիտի տեսնեմ, բայց հիմա չէ.
Զանիկա պիտի զննեմ, բայց մտերիմ չէ.
Յակոբէ Աստղ մը պիտի ծագի,
Ու Իսրայէլէ նետ մը պիտի ելլէ,
Ու Մոաբի †իշխանները պիտի զարնէ,

*Ե՛ք. ժողովուրդիս
† Կամ, ծայրերը

Ու Սեբի բոլոր որդիները քնայինչ պիտի ընէ,

18—Նաև Եգոմի պիտի նաւասի,
Սեբը ալ իր Քշնամիներէն պիտի նաւասի.
Բայց Իսրայէլ քաղցրութիւն պիտի ընէ.

19—Ու Յակոբի Էլոհէն պիտի իշխի,
Ու քաղաքին մէջ մնացորդը պիտի կորսընցնի։

20—Նաբը Ամաղէկի նայեցաւ, ու իր առակը սկսելով՝ ըսաւ,
Ամաղէկ ազգերուն գլխին է,
Բայց վերջը բոլորովին պիտի կորսուի։

21—Ու Կենեցիին նայեցաւ, և իր առակը սկսելով՝ ըսաւ,
Աչքառիւ քու նստած տեղդ անառիկ է,
Ու քու բոյնդ ապառաժի վրայ դրեր ես։

22—Բայց Կենեցին պիտի ապրուի,
Մինչև որ Ասուր քեզ գերի տանի։

23—Նաբը իր առակը սկսելով՝ ըսաւ,
Ախո՜ն, երբ Աստուած այս բաները ընէ, ո՞վ ողջ պիտի մնայ։

24—Ու Դանի կիտացողց եղերքներէն նաւեր պիտի գան,
Ու Ասուրը պիտի չարչարեն, ու Սեբերը չարչարեն.
Բայց անոնք ալ բոլորովին պիտի կորսուին։

25—Նաբը Բաղաամ երթալ գնաց, ու իր տեղը դարձաւ. Բազակ ալ իր ճամբան գնաց։

Գլ. Իե

Ե Իսրայէլ Սաբիմի մէջ բնակեցաւ, ու Ժողովուրդը Մոաբի աղջիկներուն հետ սկսաւ պոռնկութիւն ընել։ 2—Ու անոնք Ժողովուրդը հրաւիրեցին իրենց աստուածներուն զոհերուն. ու Ժողովուրդը ուտելով անոնց աստուածներուն երկրպագութիւն ըրին։ 3—Ու Իսրայէլ Ռեփեզովի յանձնաւ. ուստի Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ։ 4— Ու Տէրը Մովսէսի ըսաւ, Ժողովուրդին բոլոր իշխանները առ, ու զանոնք Տէրոջը առջև արեւին դէմ կախէ, որպէս զի Տէրոջը սաստիկ բարկութիւնը Իսրայէլէ դառնայ։ 5—Ու Մովսէս Իսրայէլի դատաւորներուն ըսաւ, Մեռցուցէք ամէն մէկդ ձեր մարդիկը որոնք Բէլփեգովրի յանձնան։ 6— Ու ահա Իսրայէլի որդիներէն մէկը եկաւ, ու իր եղբայրներուն Մադիանացի կին մը բերաւ՝ Մովսէսի աչքին առջև, ու Իսրայէլի որդիներուն բոլոր Ժողովրդին առջև, երբ անոնք Ժողովրդի խորանին դրանը փակ կու լային։ 7—Ու Ահարոն քահանայի որդւոյն Եղիազարի որդին փինեհես այ բաները տեսնելով՝ Ժողովրդին մէջէն ելաւ, ու ձեռքը գետզուռ մը առաւ, 8—Ու Իսրայէլացի մարդուն հետևէն ոնհակը մտաւ, ու երկուքն ալ, այսինքն Իսրայէլացի մարդը և կինը փորէն խոցեց. ու հարուածը Իսրայէլի որդիներէն դադրեցաւ։ 9—Ու հարուածէն մեռածները քսանչորս հազար հոգի էին։

10—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 11—Ահարոն քահանայի որդւոյն Եղիազարի որդին փինեհես իմ բարկութիւնս Իսրայէլի որդիներէն դարձուց, որովհետև անիկա ինծի հետևեցաւ նախանձ ունենալու անոնց մէջ. այսպէս ես իմ նախանձոտութիւնս Իսրայէլի որդիները բնաջինջ չըրի։ 12— Ասոր համարըսէ որ Ահա ես անոր կու տամ իմ խաղաղութիւնս տալու։ 13— Ու անոր ու անկէ ետքը անոր սերունդին յաւիտենական քահանայութիւնը ունենալու մէջ, որովհետև իր Աստուծոյն նախանձը ունեցաւ, ու Իսրայէլի որդիներուն համար քաւութիւն բրաւ։ 14— Ու Մադիանացի կնոջ հետ գարնուած Իսրայէլացի մարդուն անունը Զամբրի էր, որ Սաղու որդին՝ Շմաւունեանց մէկ տոհմին իշխանն էր։ 15—Ու գարնուած Մադիանացի կնոջ անունը Քազբի էր, որ Մադիամու մէկ ազգատոհմի իշխան եղող Սուրի աղջիկն էր։

16—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 17—Մադիանացւոց Քշնամութիւն ըրէք ու զանոնք զարկէք. 18— Քանզի անոնք իրենց ըրած նենգութիւններովը ձեզի Քշնամութիւն բրին փոգովրի գործին մէջ ու իրենց քրոջ գործին մէջ, այսինքն Մադիանացի իշխանին աղկան Քազբիի, որ հարուածին օրը զարնուեցաւ փոգովրի համար։

Գլ. Իզ

Ու Հարուածէն հաքը Տէրը Մովսէսի և Ահարոն քահանային խօսեցաւ՝ ըսելով, 2—Իսրայէլի որդիներուն բոլոր Ժողովրդին գումարը առէք, անոնց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէ վեր եղողները, այսինքն Իսրայէլի մէջ բոլոր պատերազմելու *կարող եղողները, հ֊ր֊ե֊վ։ 3—Ուստի Մովսէս ու Ողիազար քահանան Մովաբի դաշտերուն մէջ Երիքովի դէմ Յորդանանի մօտ անոնց հետ խօսեցան՝ ըսելով, 4— Քսան տարեկանէ վեր եղողները հ֊ր֊ե֊վ, ինչպես Տէրը Մովսէսի ու Եգիպտոսի երկրէն ելած Իսրայէլի որդիներուն հրամայեց։

5—Ռուբէն, Իսրայէլի անդրանիկը, և Ռուբէնի որդիները. Հնովքէ Հնովքեանց տոհմը, Փալլուա Փալլուացոց տոհմը, 6—Հետրոնէ Հետրոնեանց տոհմը, Քարմիէ Քարմիացոց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 7—Ռուբենեանց տոհմերը ասոնք են. ու անոնց հարուածներէը քառասուներկու հազար հարիւր հոգի էին։ 8—Ու Փալլուի որդին Եղիաբ էր։ 9—Ու Եղիաբի որդիները Նամուէլ, Դաթան ու Աբիրոն էին. այս Դաթանը ու Աբիրոնը Ժողովքին մէջ բռնկեցնողներ էին, ու ասոնք էին որ Տէրոջը դէմ կեցող Կորխի Ժողովքին մէջ Մովսէսի ու Ահարոնի դէմ կեցան. 10— Ու երկիրը իր բերանը բանալով կլլեց զանոնք ու Կորխն ալ, այն Ժողովքին մեռած ատենը, երբ կրակը այն երկու հարիւր հիսուն մարդիկը կերաւ. ու անոնք օրհնած օրինակ եղան։ 11—Բայց Կորխի որդիները չմեռան։

12—Շմաւունի որդիները իրենց տոհմերովը. †Նամուէլէ Նամուելեանց՝ տոհմը, Յամինէ Յամինեանց տոհմը, Յաքինէ Յաքինեանց տոհմը, 13—Զարայէ Զարայեանց տոհմը, Սաւուղէ Սաւուղեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 14— Շմաւունեանց տոհմերը ասոնք են, քսանուերկու հազար երկու հարիւր հոգի։

15—Գադի որդիները իրենց տոհմերովը. Սափոնէ Սափոնեանց տոհմը, Անգէի Անգեանց տոհմը, Սունիէ Սունեանց տոհմը, 16—Ազնիէ Ազնեանց տոհմը, Էրիի Էրեանց տոհմը, 17—Արոդէի Արոդեանց տոհմը, Արելիէ Արելիեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 18—Գադի որդիներուն տոհմերը ասոնք են. ու անոնց հարուածներէը քառասուն հազար հինգ հարիւր հոգի էին։

19—Յուդայի որդիները էր ու Օնան էին. բայց էր ու Օնան Քանանա երկրին մէջ մեռան։ 20—Ու Յուդայի որդիները իրենց տոհմերով ասոնք էին. Սելոմէի Սելոմեանց տոհմը, Փարէսէ Փարեսեանց տոհմը, Զարայէ Զարայեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 21— Ու Փարեսի որդիները ասոնք էին. Նարոնէ Նարոնեանց տոհմը, Համուլէ Համուլեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 22—Յուդայի տոհմերը ասոնք են. անոնց հարուածներէը եօթանասներվեց հազար հինգ հարիւր հոգի էին։

23—Իսաքարի որդիները իրենց տոհմերովը. Թովղայէ Թովղայեանց տոհմը, Փուայէ Փուայեանց տոհմը, 24—Յասուբէ Յասուբեանց տոհմը, Սամրոնէ Սամրոնեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 25— Իսաքարի տոհմերը ասոնք են. անոնց հարուածներէը վաթսունչորս հազար երեք հարիւր հոգի էին։

26—Զաբուղոնի որդիները իրենց տոհմերովը. Սարեդէ Սարեդեանց տոհմը, Եղոնէ Եղոնեանց տոհմը, Յաղլէէ Յաղլէեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 27— Զաբուղոնի տոհմերը ասոնք են. անոնց հարուածներէը վաթսուն հազար հինգ հարիւր հոգի էին։

28—Յովսէփի որդիները իրենց տոհմերովը Մանասէ ու Եփրեմ էին։ 29— Մանասէի որդիները. Մաքիրէ Մաքիրեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ ու Մաքիր ծնաւ Գաղաադը, ու Գաղաադէ Գաղաադեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 30— Գաղաադի որդիները ասոնք են. Իեզերէ Իեզերեանց տոհմը, Փեղեգէ Փեղեգեանց տոհմը, 31—Ու Ասրիէլէ Ասրիէլեանց տոհմը, ու Սիւքեմէ Սիւքեմեանց տոհմը, 32—Ու Սեմիդայէ Սեմիդեանց տոհմը, Ու Սեբի բոլոր որդիները քնայինչ պիտի ընէ,

18—Նաև Եգոմի պիտի նաւասի,
Սեբը ալ իր Քշնամիներէն պիտի նաւասի.
Բայց Իսրայէլ քաղցրութիւն պիտի ընէ.

19—Ու Յակոբի Էլոհէն պիտի իշխի,
Ու քաղաքին մէջ մնացորդը պիտի կորսընցնի։

20—Նաբը Ամաղէկի նայեցաւ, ու իր առակը սկսելով՝ ըսաւ,
Ամաղէկ ազգերուն գլխին է,
Բայց վերջը բոլորովին պիտի կորսուի։

21—Ու Կենեցիին նայեցաւ, և իր առակը սկսելով՝ ըսաւ,
Աչքառիւ քու նստած տեղդ անառիկ է,
Ու քու բոյնդ ապառաժի վրայ դրեր ես։

22—Բայց Կենեցին պիտի ապրուի,
Մինչև որ Ասուր քեզ գերի տանի։

23—Նաբը իր առակը սկսելով՝ ըսաւ,
Ախո՜ն, երբ Աստուած այս բաները ընէ, ո՞վ ողջ պիտի մնայ։

24—Ու Դանի կիտացողց եղերքներէն նաւեր պիտի գան,
Ու Ասուրը պիտի չարչարեն, ու Սեբերը չարչարեն.
Բայց անոնք ալ բոլորովին պիտի կորսուին։

25—Նաբը Բաղաամ երթալ գնաց, ու իր տեղը դարձաւ. Բազակ ալ իր ճամբան գնաց։

Գլ. Իե

Ե Իսրայէլ Սաբիմի մէջ բնակեցաւ, ու Ժողովուրդը Մոաբի աղջիկներուն հետ սկսաւ պոռնկութիւն ընել։ 2—Ու անոնք Ժողովուրդը հրաւիրեցին իրենց աստուածներուն զոհերուն. ու Ժողովուրդը ուտելով անոնց աստուածներուն երկրպագութիւն ըրին։ 3—Ու Իսրայէլ Ռեփեզովի յանձնաւ. ուստի Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ։ 4— Ու Տէրը Մովսէսի ըսաւ, Ժողովուրդին բոլոր իշխանները առ, ու զանոնք Տէրոջը առջև արեւին դէմ կախէ, որպէս զի Տէրոջը սաստիկ բարկութիւնը Իսրայէլէ դառնայ։ 5—Ու Մովսէս Իսրայէլի դատաւորներուն ըսաւ, Մեռցուցէք ամէն մէկդ ձեր մարդիկը որոնք Բէլփեգովրի յանձնան։ 6— Ու ահա Իսրայէլի որդիներէն մէկը եկաւ, ու իր եղբայրներուն Մադիանացի կին մը բերաւ՝ Մովսէսի աչքին առջև, ու Իսրայէլի որդիներուն բոլոր Ժողովրդին առջև, երբ անոնք Ժողովրդի խորանին դրանը փակ կու լային։ 7—Ու Ահարոն քահանայի որդւոյն Եղիազարի որդին փինեհես այ բաները տեսնելով՝ Ժողովրդին մէջէն ելաւ, ու ձեռքը գետզուռ մը առաւ, 8—Ու Իսրայէլացի մարդուն հետևէն ոնհակը մտաւ, ու երկուքն ալ, այսինքն Իսրայէլացի մարդը և կինը փորէն խոցեց. ու հարուածը Իսրայէլի որդիներէն դադրեցաւ։ 9—Ու հարուածէն մեռածները քսանչորս հազար հոգի էին։

10—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 11—Ահարոն քահանայի որդւոյն Եղիազարի որդին փինեհես իմ բարկութիւնս Իսրայէլի որդիներէն դարձուց, որովհետև անիկա ինծի հետևեցաւ նախանձ ունենալու անոնց մէջ. այսպէս ես իմ նախանձոտութիւնս Իսրայէլի որդիները բնաջինջ չըրի։ 12— Ասոր համար ըսէ որ Ահա ես անոր կու տամ իմ խաղաղութիւնս տալու։ 13— Ու անոր ու անկէ ետքը անոր սերունդին յաւիտենական քահանայութիւնը ունենալու մէջ, որովհետև իր Աստուծոյն նախանձը ունեցաւ, ու Իսրայէլի որդիներուն համար քաւութիւն բրաւ։ 14— Ու Մադիանացի կնոջ հետ գարնուած Իսրայէլացի մարդուն անունը Զամբրի էր, որ Սաղու որդին՝ Շմաւունեանց մէկ տոհմին իշխանն էր։ 15—Ու գարնուած Մադիանացի կնոջ անունը Քազբի էր, որ Մադիամու մէկ ազգատոհմի իշխան եղող Սուրի աղջիկն էր։

16—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 17—Մադիանացւոց Քշնամութիւն ըրէք ու զանոնք զարկէք. 18— Քանզի անոնք իրենց ըրած նենգութիւններովը ձեզի Քշնամութիւն բրին փոգովրի գործին մէջ ու իրենց քրոջ գործին մէջ, այսինքն Իսրայէլացի իշխանին աղկան Քազբիի, որ հարուածին օրը զարնուեցաւ փոգովրի համար։

---

*Նբ֊ե֊ղկղները

†Կամ, Յամուէլէ Յամուելեանց

Գլ. Իզ

Ու Հարուածէն հաքը Տէրը Մովսէսի և Ահարոն քահանային խօսեցաւ՝ ըսելով, 2—Իսրայէլի որդիներուն բոլոր Ժողովրդին գումարը առէք, անոնց հայրերուն տուներուն համեմատ, քսան տարեկանէ վեր եղողները, այսինքն Իսրայէլի մէջ բոլոր պատերազմելու *կարող եղողները, հ֊ր֊ե֊վ։ 3—Ուստի Մովսէս ու Ողիազար քահանան Մովաբի դաշտերուն մէջ Երիքովի դէմ Յորդանանի մօտ անոնց հետ խօսեցան՝ ըսելով, 4— Քսան տարեկանէ վեր եղողները հ֊ր֊ե֊վ, ինչպես Տէրը Մովսէսի ու Եգիպտոսի երկրէն ելած Իսրայէլի որդիներուն հրամայեց։

5—Ռուբէն, Իսրայէլի անդրանիկը, և Ռուբէնի որդիները. Հնովքէ Հնովքեանց տոհմը, Փալլուա Փալլուացոց տոհմը, 6—Հետրոնէ Հետրոնեանց տոհմը, Քարմիէ Քարմիացոց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 7—Ռուբենեանց տոհմերը ասոնք են. ու անոնց հարուածներէը քառասուներկու հազար հարիւր հոգի էին։ 8—Ու Փալլուի որդին Եղիաբ էր։ 9—Ու Եղիաբի որդիները Նամուէլ, Դաթան ու Աբիրոն էին. այս Դաթանը ու Աբիրոնը Ժողովքին մէջ բռնկեցնողներ էին, ու ասոնք էին որ Տէրոջը դէմ կեցող Կորխի Ժողովքին մէջ Մովսէսի ու Ահարոնի դէմ կեցան. 10— Ու երկիրը իր բերանը բանալով կլլեց զանոնք ու Կորխն ալ, այն Ժողովքին մեռած ատենը, երբ կրակը այն երկու հարիւր հիսուն մարդիկը կերաւ. ու անոնք օրհնած օրինակ եղան։ 11—Բայց Կորխի որդիները չմեռան։

12—Շմաւունի որդիները իրենց տոհմերովը. †Նամուէլէ Նամուելեանց՝ տոհմը, Յամինէ Յամինեանց տոհմը, Յաքինէ Յաքինեանց տոհմը, 13—Զարայէ Զարայեանց տոհմը, Սաւուղէ Սաւուղեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 14— Շմաւունեանց տոհմերը ասոնք են, քսանուերկու հազար երկու հարիւր հոգի։

15—Գադի որդիները իրենց տոհմերովը. Սափոնէ Սափոնեանց տոհմը, Անգէի Անգեանց տոհմը, Սունիէ Սունեանց տոհմը, 16—Ազնիէ Ազնեանց տոհմը, Էրիի Էրեանց տոհմը, 17—Արոդէի Արոդեանց տոհմը, Արելիէ Արելիեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 18—Գադի որդիներուն տոհմերը ասոնք են. ու անոնց հարուածներէը քառասուն հազար հինգ հարիւր հոգի էին։

19—Յուդայի որդիները էր ու Օնան էին. բայց էր ու Օնան Քանանա երկրին մէջ մեռան։ 20—Ու Յուդայի որդիները իրենց տոհմերով ասոնք էին. Սելոմէի Սելոմեանց տոհմը, Փարէսէ Փարեսեանց տոհմը, Զարայէ Զարայեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 21— Ու Փարեսի որդիները ասոնք էին. Նարոնէ Նարոնեանց տոհմը, Համուլէ Համուլեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 22—Յուդայի տոհմերը ասոնք են. անոնց հարուածներէը վաթսունեօթը հազար հինգ հարիւր հոգի էին։

23—Իսաքարի որդիները իրենց տոհմերովը. Թովղայէ Թովղայեանց տոհմը, Փուայէ Փուայեանց տոհմը, 24—Յասուբէ Յասուբեանց տոհմը, Սամրոնէ Սամրոնեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 25— Իսաքարի տոհմերը ասոնք են. անոնց հարուածներէը վաթսունչորս հազար երեք հարիւր հոգի էին։

26—Զաբուղոնի որդիները իրենց տոհմերովը. Սարեդէ Սարեդեանց տոհմը, Եղոնէ Եղոնեանց տոհմը, Յաղլէէ Յաղլէեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 27— Զաբուղոնի տոհմերը ասոնք են. անոնց հարուածներէը վաթսուն հազար հինգ հարիւր հոգի էին։

28—Յովսէփի որդիները իրենց տոհմերովը Մանասէ ու Եփրեմ էին։ 29— Մանասէի որդիները. Մաքիրէ Մաքիրեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ ու Մաքիր ծնաւ Գաղաադը, ու Գաղաադէ Գաղաադեանց տոհմը յ֊ե֊լ Իւ֊։ 30— Գաղաադի որդիները ասոնք են. Իեզերէ Իեզերեանց տոհմը, Փեղեգէ Փեղեգեանց տոհմը, 31—Ու Ասրիէլէ Ասրիէլեանց տոհմը, ու Սիւքեմէ Սիւքեմեանց տոհմը, 32—Ու Սեմիդայէ Սեմիդեանց տոհմը,

դայեանց առնմբ, ու Ոփեր Ոփերեանց առնմբ յ---լ Ի--: 33—Ու Ոփերի որդին Սալպաագ տղաքներ չունեցաւ, միայն աղջիկներ --Ի յ---: ու Սալպաագի աղջիկներուն անունները Մաալա, Նուա, Էգղա, Մեղքա ու Թերսա էին: 34—Մանասէի առնմբը ասունք են, ու անոնց համրուածները յիսունուերկու հազար եօթը հարիւր հոգի էին:

35—Եփրեմի որդիները իրենց առնմերովը ասունք են. Սուտաղայէ Սուտաղայեանց առնմբը, Բաքեր Բաքերեանց առնմբը, Թաանեանց առնմբը յ---լ Ի--: 36—Ու Սուտաղայի որդիները ասունք են. *Էրանէ Էրանեանց առնմբ՝ յ---լ Ի--: 37— Եփրեմի որդիներուն առնմերը ասունք են. անոնց համրուածները երեսունուերկու հազար հինգ հարիւր հոգի էին: Յովսէփի որդիները իրենց առնմերովը ասունք են:

38—Բենիամինի որդիները իրենց առնմերովը. Բադայէ Բադայեանց առնմբը, Ասբէլ Ասբէլեանց առնմբը Աքիրամի Աքիրամեանց առնմբը, 39—Սուփամի Սուփամեանց առնմբը, Ոփիմի Ոփիմեանց առնմբը յ---լ Ի--: 40—Ու Բադայի որդիները Արեգ ու Նէեման էին. Արեգեանց առնմբը, Նէեմանէ Նէեմանեանց առնմբը յ---լ Ի--: 41—Բենիամինի որդիները իրենց առնմերովը ասունք են. ու անոնց համրուածները քառասունըհինգ հազար վեց հարիւր հոգի էին:

42—Դանի որդիները իրենց առնմերովը ասունք են. Սուհամի Սուհամեանց առնմբը յ---լ Ի--: Դանի առնմները իրենց առնմերովը ասունք են: 43—Սուհամեանց բոլոր առնմերուն համրուածները վաթսունըչորս հազար չորս հարիւր հոգի էին:

44—Ասերի որդիները իրենց առնմերովը. Յեմնայի Յեմնայեանց առնմբը, Յեսուէի Յեսուէեանց առնմբը, Բարիայի Բարիայեանց առնմբը: 45—Բարիայի որդիներէն Քաբէրի Քաբէրեանց առնմբը, Մեղքիէլի Մեղքիէլեանց առնմբը յ---լ Ի--: 46—Ու Ասերի աղջկան անունը Սարա էր: 47— Ասերի որդիներուն առնմերը ասունք են. անոնց համրուածները յիսունեւերեք հազար չորս հարիւր հոգի էին:

48—Նեփթաղիմի որդիները իրենց առնմերովը. Յասիէլէ Յասիէլեանց առնմբը, 49— Գունիէ Գունեանց առնմբը, Յասերի Յասերեանց առնմբը, Սիլլեմի Սիլլեմեանց առնմբը յ---լ Ի--: 50—Նեփթաղիմի առնմերը իրենց առնմերովը ասունք են. ու անոնց համրուածները քառասունըհինգ հազար չորս հարիւր հոգի էին:

51—Այս է Իսրայէլի որդիներուն գումարը, վեց հարիւր ու մէկ հազար եօթը հարիւր երեսուն:

52—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 53—Այն երկիրը ժառանգութեան համար ասոնց բաժնուի՝ էրէնց անուններուն թիւին համեմատ: 54—Շատուր եղողին՝ ժառանգութիւնը չատ տաս, ու փիչուր եղողին՝ ժառանգութիւնը փիչ տաս. ամէն մէկուն իր համրանքին համեմատ ժառանգութիւն տրուի: 55—Բայց երկիրը վիճակով բաժնուի, ու իրենց նահապետաց ցեղերուն անուններուն համեմատ ժառանգեն: 56-Շատուորի ու փիչուորի մէջ ժառանգութիւնը վիճակով բաժնուի:

57—Ու Ղեւացւոց համրուածները իրենց առնմերովը ասունք են. Գերսոնէի Գերսոնեանց առնմբը, Կահաթէ Կահաթեանց առնմբը, Մերարիէ Մերարեանց առնմբը յ---լ Ի--: 58—Ղեւացւոց առնմերը ասունք են. Ղոբնեանց առնմբը, Քեբրոնեաց առնմբը, Մահղիանց առնմբը, Մուսեանց առնմբը ու Կորխեանց առնմբը: 59—Ու Կահաթ ծնաւ Ամրամը: Ու Ամրամի կնոջ անունը Յոքաբեդ էր, Ղեւիի աղջիկը, որուն Յայրը զանիկա Եգիպտոսի մէջ ծնաւ Ղեւիի. ու անիկա Ամրամի ծնաւ Ահարոնը ու Մովսէսը և անոնց քոյրը Մարիամը: 60—Ու Ահարոնի նադաբ և Աբիհու, Եղիազար ու Իթամար ծնան: 61—Բայց Նադաբ ու Աբիհու Տէրոջը առջև օտար կրակ մատուցած ատեննին մեռան: 62—Արդ ասոնցմէ համրուածները, այսինքն մէկ ամսականէ վեր եղող բոլոր արուները, քսանուերեք հազար հոգի էին. քանզի անոնք իսրայէլի որդիներուն հետ չհամրուեցան, իսրայէլի որդիներուն մէջ անոնց ժառանգութիւն չտրուելուն համար:

63— Մովսէսի դաշտերուն մէջ, երիքովի դէմ՝ Յորդանանու մօտ, իսրայէլի որդիները հաշիւի անցընող Մովսէսէ ու եղիազար քահանային համրածները ասունք են: 64— Ու ասոնց մէջ բնաւ մարդ մը չկար իսրայէլի որդիներուն --Լ--: համրուածներէն, զորոնք Մովսէս ու Ահարոն քահանան Սինայի անապատին մէջ համրեցին: 65—Քանզի Տէրը անոնց համար ըսեր էր որ Անշուշտ անապատին մէջ պիտի մեռնին. ուստի անոնցմէ մարդ մը չմնաց, բաց ի Յեփոնեան Քաղէբէ ու Նաւեան Յեսուէ:

ԳԼ. ԻԷ

Ա. Յովսէփի որդւոյն Մանասէի ասմերուն՝ Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադու որդւոյն Ոփերի որդւոյն Սալպաագի աղջիկները մտան. ու աղջիկներուն անունները ասունք են. Մաալա, Նուա, Էգղա, Մեղքա ու Թերսա: 2—Ասոնք Մովսէսի և եղիազար քահանային ու իշխաններուն և բոլոր Ժողովքին առջև, կայնեցան Ժողովքի խորանին դուռը, ու ըսին, 3—Մեր Հայրը անապատին մէջ մեռաւ. ու անիկա Տէրոջը դէմ Ժողուածներուն Ժողովքին մէջ, Կորխի Ժողովքին մէջ, չէր, բայց անիկա իր մեղքովը մեռաւ. ու տղաքներ չունէր: 4—Ինչո՞ւ համար մեր հօրը անունը իր ասմին մէջէն վերնայ տալ չունենալուն համար. մեզի կալուածք տուէք մեր հօրը եղբայրներուն մէջ: 5— Ու Մովսէս անոնց դատը Տէրոջը առջև դրաւ: 6—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 7—Սալպաագի աղջիկները չիտակ խօսեցան. անպատճառ անոնց ժառանգութեան կալուածք տաս իրենց հօրը եղբայրներուն մէջ, ու անոնց հօրը ժառանգութիւնը իրենց վրայ դարձնես. 8—ու իսրայէլի որդիներուն խօսիս ու ըսես. Եթէ մարդ մը մեռնի, ու տղայ չունենայ, անոր ժառանգութիւնը իր աղջիկան վրայ դարձընէք. 9—ու եթէ անիկա ալ չունենայ, այն ատեն անոր ժառանգութիւնը իր եղբայրներուն տաք. 10— ու եթէ եղբայրներ ալ չունենայ, այն ատեն անոր ժառանգութիւնը իր օրհղբայրներուն տաք. 11— Ու եթէ հօրեղբայրներ ալ չունենայ, անոր ժառանգութիւնը իր ասմին մէջ իր ամէնէն մօտ ազգականին տաք, ու ան ըլայ անոր ժառանգը. և ասիկա իսրայէլի որդիներուն դատաստանի կանան ըլլայ, ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեց:

12— Ետքը Տէրը Մովսէսի ըսաւ, Այդ Աբարիմի լեռըելիր, ու տես այն երկիրը, զոր իսրայէլի որդիներուն պիտի տամ. 13— ու զայն տեսնելէդ ետքը, դուն ալ քու Ժողովրդիդ պիտի խառնուիս, ինչպես քու եղբայրդ Ահարան խառնուեցաւ. 14—Որովհետև դուք իմ հրամանիս դէմ ապստամբութիւն ըրիք Սին անապատին մէջ՝ Ժողովքին հակառակութիւն ըրած ատենը, ու անոնց առջև զիս *չիստատուիք՝ այն ջուրին քով: (Այս է կադէսի Մերիպայի ջուրը Սին անապատին մէջ:)

15—Ու Մովսէս խօսեցաւ Տէրոջը ու ըսաւ, 16—Տէրը, բոլոր մարդոց հոգիներուն Աստուածը, այս Ժողովուրդին վրայ մարդ մը կեցնէ, 17—Որպէս զի անիկա անոնց առջևէն ելլէ ու մտնէ, ու զանոնք հանէ ու մտցնէ, որպէս զի Տէրոջը Ժողովքը անհովիւ ոչխարներու պէս չըլլայ:

18—Ու Տէրը ըսաւ Մովսէսի, Առքեզի Նաւէի որդին Յեսուն, որուն վրայ Հոգի կայ, ու անոր վրայ ձեռքդ դիր: 19—Ու զանիկա եղիազար քահանային ու բոլոր Ժողովքին առջև կայնեցուր, և անոնց աչքին առջև անոր պատուէր տուր. 20— Ու քու փառքդ անոր վրայ դիր, որպէս զի իսրայէլի որդիներուն բոլոր Ժողովքը անոր հնազանդութիւն բնեն. 21—Ու անիկա եղիազար քահանային առջև պիտի կայնի, ու Տէրոջը առջև Ուրիմին կառնդատիւնը իր որոշման վրայ դարձընէ. անոր հրամանով պիտի ելլեն անիկա և բոլոր իսրայէլի որդիները և բոլոր ժողովքը անոր հետ պիտի մտնէ:

*Կամ, էդենէ էդենեանց

*Եբր. չսրբեցիք

նոնամը *անոր պիտի հարցնէ՝ անոր խօսքովը պիտի լլլէն, ու անոր խօսքովը մտնեն, ինք և իրեն հետ բոլոր իսրայէլի որդիները ու բոլոր ժողովուրդ։ 22—Ու Մովսէս այնպէս բրաւ, ինչպէս Տէրը անոր հրամայեր էր. առաւ Ցեսոնն, ու զանիկա նիշապար փառնայրն ու բոլոր ժողովքին առջև կայնեցուց։ 23—Ու իր ձեռքերը անոր վրայ դնելով՝ անոր պատուէր տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի ձեռքով խօսեր էր։

Գլ. ԻՀ

Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Պատուիրէ իսրայէլի որդիներուն ու անոնց ըսէ, իմ անուշահոտ պատարագներուս ընծայուած հացը՝ որոշուած ատեն ինծի մատուցանելու զգուշութիւն ընէք։ 3—Ու անոնց ըսես, Ատոնք են այն պատարագները զորոնք Տէրոջը պիտի մատուցանէք. Օրը երկու հատ մէկ տարեկան անարատ գառներ մշտնջենապէս ողջակէզի համար։ 4—Մէկ գառը առտուընց մատուցանես, ու միւս գառը իրիկուան դէմ մատուցանես։ 5—Ու մէկ արդուիին տասնորդ մասը բարակ ալիւրով հացի ընծայ ընես, որ շաղուած պիտի բլլայ հինինի մը քառորդ ծեծուած իւղով, 6—Անիկա Սինա լեռանը վրայ հաստատուած մշտնջենապէս ողջակէզ է, Տէրոջը անուշահոտ պատարագ բլլալու համար։ 7—Ու անոր թափելու նուէրը մէկ գառին համար՝ հինինի մը չորրորդ մասն բլլայ. ողին սուրբ տեղին մէջ թափելու նուէր ընես Տէրոջը։ 8—Ու միւս գառը իրիկուան դէմ մատուցանես. ա՛ռաւտեան հացի ընծային ու անոր թափելու նուէրին պէս ընես, Տէրոջը անուշահոտ պատարագ բլլալու։

9—Բայց շաբաթ օրը մէկ տարեկան երկու անարատ գառներ, ու իւղով շաղուած երկու տասնորդ բարակ ալիւր հացի ընծայի համար, ու անոր թափելու նուէրը ալէխ *հատ՝ անոր համար պիտի հարցնէ

†ԵՒԷ. եղած

10—Ասիկա մշտնջենաւոր ողջակէզին ու անոր թափելու նուէրին զատ ամէն շաբաթ ուրոյն ողջակէզը պիտի բլլայ։

11—Ու ձեր ամսագլուխներուն մէջ Տէրոջը ողջակէզ մատուցանէք երկու զուարակ, մէկ խոյ — եօթը հատ մէկ տարեկան անարատ գառներ։ 12—Ու ամէն մէկ զուարակին համար իւղով շաղուած երեք տասնորդ բարակ ալիւր հացի ընծայ, և մէկ խոյին համար իւղով շաղուած երկու տասնորդ բարակ ալիւր հացի ընծայ, 13—Ու ամէն մէկ գառին համար իւղով շաղուած մէկմէկ տասնորդ բարակ ալիւր հացի ընծայ իբրև հոտաւէտ պատարագ Տէրոջը ողջակէզ — անուշահոտ պատարագ բլլալու։ 14—Ու անոնց թափելու նուէրները՝ ամէն մէկ զուարակին համար կէս հինին, ու մէկ խոյին համար հինինին երրորդ մասը, և ամէն մէկ գառին համար հինինին չորրորդ մասը գինի պիտի բլլայ. ասիկա տարւոյն ամիսներուն համար ամէն ամիս ընելու ողջակէզն է։ 15—Ու մշտնջենաւոր ողջակէզին զատ՝ մեղքի պատարագի համար այծերէն նոխազ մը իր թափելու նուէրովը Տէրոջը մատուցանէք։

16—Ու առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը զատիկ է Տէրոջը։ 17—Ու այն ամսուն հնգետասաներորդ օրը տօն է. եօթը օր բազարջ ուտուի։ 18—Առաջին օրը սուրբ ժողով պիտի բլլայ, բնաւ ծառայական գործ մը չընէք. 19—Ու Տէրոջը պատարագ — ողջակէզ մատուցանէք, երկու զուարակ, մէկ խոյ ու եօթը հատ մէկ տարեկան գառներ. անարատ բլլան ձեզի։ 20—Ու անոնց հացի ընծային իւղով շաղուած բարակ ալիւր բլլայ. ամէն մէկ զուարակին համար երեք տասնորդ, ու մէկ խոյին համար երկու տասնորդ։ 21—Եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէկմէկ տասնորդ մատուցանէք. 22—Ու ձեզի քաւութիւն ընելու համար մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ոջ֊ն֊ն։ 23—Ասոնք մշտնջենաւոր ողջակէզ եղող առաւուան ողջակէզէն զատ պիտի մատուցանէք։ 24—Այն եօթը օրերուն ամէն մէկ օրը ասոնց պէս Տէրոջը անուշահոտ *պատարագ ընէք. մշտնջենաւոր ողջակէզէն զատ ասիկա ու անոր թափելու նուէրը պիտի մատուցուին։ 25—Ու եօթներորդ օրն ալ սուրբ ժողով պիտի բլլայ ձեզի. բնաւ ծառայական գործ մը չընէք։

26—Ու երթայուրնեռուն օրը, երբ ձեր չաբաթներուն փոխն ի՛լ Տէրոջը նոր հացի ընծայ կը մատուցանէք, սուրբ ժողով բլլայ ձեզի. բնաւ ծառայական գործ մը չընէք։ 27—Ու Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար երկու զուարակ, մէկ խոյ — մէկ տարեկան եօթը հատ գառներ մատուցանէք. 28—Ու անոնց հացի ընծան՝ ամէն մէկ զուարակին համար երեք տասնորդ, մէկ խոյին համար երկու տասնորդ, 29—եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէկմէկ տասնորդ իւղով շաղուած բարակ ալիւր Տ֊ոջ֊ն֊ն։ 30—Ու ձեզի քաւութիւն ընելու համար այծերէն մէկ նոխազ Տ֊ոջ֊ն֊ն։ 31—Մշտնջենաւոր ողջակէզէն ու անոր հացի ընծայէն զատ, ուրիշ իրենց թափելու նուէրներովը մատուցանէք. անարատ բլլան ձեզի։

Գլ. ԻԹ

Ու եօթներորդ ամսուն մէկ ամսուն առաջին ՚ՀԸ սուրբ ժողով բլլայ ձեզի, բնաւ ծառայական գործ մը չընէք. փող հնչեցնելու օր բլլայ ձեզի։ 2—Ու Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար մէկ զուարակ, մէկ խոյ — եօթը հատ մէկ տարեկան գառներ մատուցանէք. 3—Ու անոնց հացի ընծան մէկ զուարակին համար երեք տասնորդ, — մէկ խոյին համար երկու տասնորդ, 4—Ու եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէկմէկ տասնորդ իւղով շաղուած բարակ ալիւր բլլայ. 5—Ու ձեզի քաւութիւն ընելու համար այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ոջ֊ն֊ն։ 6—Ասոնք Տէրոջը անուշահոտ պատարագ Տ֊ոջ֊ն֊ն, ամսամուտի ողջակէզը ու անոր հացի ընծան, և մշտնջենաւոր ողջակէզը ու անոր հացի ընծան, և անոց թափելու նուէրները իրենց կանոնովը Տ֊ոջ֊ն֊ն֊ի՛ զատ։

7—Ու այս եօթներորդ ամսուն տասներորդ ՚ՐԸ սուրբ ժողով բլլայ ձեզի. ու ձեր անձերը պիտի խոնարհեցնէք, — ամենևին գործ մը չընէք։ 8—Ու Տէրոջը անուշահոտ ողջակէզի համար մէկ զուարակ, մէկ խոյ — եօթը հատ մէկ տարեկան գառներ մատուցանէք. անարատ ձեզի անարատ բլլան. 9—Ու անոնց հացի ընծան մէկ զուարակին համար երեք տասնորդ, մէկ խոյին համար երկու տասնորդ, 10—Եօթը գառներէն ամէն մէկ գառին համար մէկմէկ տասնորդ իւղով շաղուած բարակ ալիւր բլլայ, 11—Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ոջ֊ն֊ն, բացի քաւութեան ՚ՐԸ Տ֊ոջ֊ն֊ն֊ի մեղքի պատարագէն ու մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու անոնց թափելու նուէրներէն։

12—Ու եօթներորդ ամսուն հնգետասաներորդ ՚ՐԸ սուրբ ժողով բլլայ ձեզի, բնաւ ծառայական գործ մը չընէք, ու եօթը օր Տէրոջը տօն պահէք։ 13—Ու Տէրոջը ողջակէզ — անուշահոտ պատարագի համար տասներեք զուարակ, երկու խոյ — մէկ տարեկան տասներկուս գառներ մատուցանէք. անոնք անարատ պիտի բլլան. 14—Ու անոնց հացի ընծան տասներեք զուարակներէն ամէն մէկ զուարակին համար երեք տասնորդ, — երկու խոյերէն ամէն մէկ խոյին համար երկու տասնորդ, 15—Ու տասներկուս գառներէն ամէն մէկ գառին համար մէկմէկ տասնորդ իւղով շաղուած բարակ ալիւր բլլայ. 16—Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ոջ֊ն֊ն֊ի բացի մշտնջենաւոր ողջակէզէն ու անոր հացի ընծայէն և թափելու նուէրէն։

17—Ու երկրորդ օրը տասներեք զուարակ, երկու խոյ — մէկ տարեկան տասներկուս անարատ գառներ Տ֊ոջ֊ն֊ն։ 18—Ու անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զուարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, ըստ օրինի պիտի բլլան. 19—Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ոջ֊ն֊ն֊ի, բացի

*ՆԵՒ. պատարագի հաց

մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրներէն։

20—Եւ երրորդ օրը ասանդիկ զատ բակ, երկու խոյ — մէկ սաթեկան տասնորդօրս անարատ գառներ Տ֊ռ֊ցանէ։ 21—Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զատարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, բան օրինի պիտի ըլլան։ 22—Ու մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ռ֊ցանէ, բայց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն։

23—Եւ չորրորդ օրը տասը զատ բակ, երկու խոյ — մէկ սաթեկան տասնորդօրս անարատ գառներ Տ֊ռ֊ցանէ։ 24—Անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զատարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, բան օրինի պիտի ըլլան։ 25—Ու այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ռ֊ցանէ, բայց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն։

26—Եւ հինգերորդ օրը ինը զատ բակ, երկու խոյ — մէկ սաթեկան տասնորդօրս անարատ գառներ Տ֊ռ֊ցանէ։ 27—Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զատարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, բան օրինի պիտի ըլլան։ 28—Ու մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ռ֊ցանէ, բայց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն։

29—Եւ վեցերորդ օրը ութ զատ բակ, երկու խոյ — մէկ սաթեկան տասնորդօրս անարատ գառներ Տ֊ռ֊ցանէ։ 30—Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զատարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, բան օրինի պիտի ըլլան։ 31—Ու մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ռ֊ցանէ, բայց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրներէն։

32—Եւ եօթներորդ օրը եօթը զատ բակ, երկու խոյ — մէկ սաթեկան տասնորդօրս անարատ գառներ Տ֊ռ֊ցանէ։ 33—Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զատարակներուն, խոյերուն ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, բան օրինի պիտի ըլլան։ 34—Ու մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ռ֊ցանէ, բայց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն։

35-Ութերորդ օրը ձեզի ասանձնաթիւն ըլլայ. բնաւ ծառայական գործ մը չընէք։ 36—Եւ Տէրոջը ողջակէզ — անուշահոտ պատարագի համար, մէկ զատարակ, մէկ խոյ — մէկ սաթեկան եօթը անարատ գառներ մատուցանէք։ 37—Եւ անոնց հացի ընծան ու թափելու նուէրները, զատարակին, խոյին ու գառներուն համար, իրենց թիւին համեմատ, բան օրինի պիտի ըլլան։ 38—Ու մէկ նոխազ մեղքի պատարագ Տ֊ռ֊ցանէ, բայց ի մշտնջենաւոր ողջակէզէն և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն։

39—Ձեր ասներուն մէկ ասանք պիտի մատուցանէք Տէրոջը, ձեր ուխտերուն ու ձեր կամաւոր ընծաներուն ողջակէզներուն, հացի ընծաներուն, թափելու նուէրներէն ու խաղաղութեան զոհերէն զատ։

40—Եւ Մովսէս Իսրայէլի որդիներուն պատմեց այն ամէնը զոր Տէրը Մովսէսի պատուիրեր էր։

Գլ. Լ

Եւ Մովսէս Իսրայէլի որդւոց ցեղերու իշխաններուն խօսեցաւ՝ ըսելով, 2—Տէրոջը պատուիրած բանը այս է. եթէ մարդ մը Տէրոջը ուխտ ընէ, կամ երդումով ընդելով իր անձը կապելու ըլլայ, իր խօսքը պարապ չհանէ. բոլոր իր բերնէն ելածին պէս ընէ։

3—Ու եթէ կին մը Տէրոջը ուխտ ընէ, ու իր մանկութեան աեղը իր հօրը տանը մէջ չէած կապելու ըլլայ, 4—Ու անոր հայրը անոր ուխտը ու անձին վրայ կապած կապը լսէ, և անոր հայրը բան մը չըսէ անոր, այն ատեն անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին, ու անձին վրայ կապած բոլոր կապերն ալ պիտի հաստատուին։ 5—Բայց եթէ անոր հայրը իր լսած օրը զանիկա արգիլէ, այն ատեն անոր բոլոր ուխտերը ու անձին վրայ կապած կապերը անփառ պիտի ըլլան. և Տէրը անոր կներէ, քանի որ հայրը արգիլեր է։

6—Ու եթէ ուխտ ըրած կամ իր չբծախօսելու համար անձը կապած անխորհրդածաբար մը ելած ըլլայ ամուսնոջ, 7—Ու անոր այրը լսէ, և լսած օրը անոր բան մը չըսէ, այն ատեն անոր ուխտերը պիտի հաստատուին, ու իր անձին վրայ կապած կապերն ալ պիտի հաստատուին։ 8—Բայց եթէ անոր այրը իր լսած օրը զանիկա արգիլէ, այն ատեն անոր վրայ եղած ուխտը ու չբծախօսելուն համար անխորհրդածաբար ելած խօսքը որով իր անձը կապեր էր՝ անվաւեր կ'ընէ, և Տէրը անոր կներէ։

9—Բայց որբևէրիի կամ արձակուածի մը ուխտը — իր անձին վրայ կապած ինչ-որ բան իր վրայ հաստատ պիտի մնայ։ 10—Ու եթէ անիկա իր էրկանը տանը մէջ ուխտ ըրած էր, կամ երդումով իր անձին վրայ կապ կապեր էր, 11—Ու անոր այրը լսելով բան մը ըսած չէր անոր և զանիկա արգիլած չէր, այն ատեն անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին, ու իր անձին վրայ կապած կապերը հաստատ պիտի մնան։ 12—Բայց եթէ անոր այրը իր լսած օրը զանոնք խափանեց, այ ուխտ ուխտ ընելու ու իր անձը կապելու համար անոր բերնէն ելած բոլոր խօսքերը անվաւեր պիտի ըլլան, ւնդէ անոր այրը խափանեց զանոնք. և Տէրը անոր կներէ։ 13—Ինչ Հ ամէն ուխտ ու անձը խոնարհեցնելու համար ըրած կապող երդումը անոր այրը կրնայ հաստատել, ու անոր այրը կրնայ խափանել։ 14—Եւ եթէ անոր այրը օրէ օր անոր բան մը չըսէ, այն ատեն անոր ամէն ուխտերը ու վրան եղած ամէն կապերը կը հաստատէ. իր լսած օրը անոր բան մը չըսելուն համար զանոնք հաստատած կ'ըլլայ։ 15—Բայց եթէ լսած օրէն հետը կերպով մը խափանէ զանոնք, այն ատեն ինք պիտի կրէ անոր անօրէնութիւնը։

16—Էրկան մը ու անոր կնոջ միջեւ, և հօր մը ու մանկութեան ատեն իր հօրը տանը քովէն աղջկան մէջեղ դատաստանը կանոնները ասանք են, զորանք Տէրը Մովսէսի պատուիրեց։

Գլ. ԼԱ

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Մադիանացիներէն Իսրայէլի որդիներուն վրէժը առնես. ու ետքը քու ժողովրդիդ խառնուիս։ 3—Եւ Մովսէս ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ, Ձեզմէ մարդիկ պատրաստուին պատերազմի համար, ու Մադիամ վրայ երթան, որ Մադիամի Տէրոջը վրէժը առնեն։ 4—Իսրայէլի բոլոր ցեղերուն ամէն մէկէն հազարական մարդ պատերազմի զրկէք։ 5—Եւ Իսրայէլի հազարաւորներէն ամէն մէկ ցեղէն հազարական մարդ ընտրուեցաւ. այսինքն տասնհրկու հազար հոգի պատերազմի համար պատրաստուած։ 6—Եւ Մովսէս պատերազմի զրկեց զանոնք, ամէն մէկ ցեղէն հազարական մարդ, ու անոնց հետ Եղիազար քահանային որդին Փենհէսը պատերազմի զրկեց, որուն ձեռքն էին սուրբ անօթները ու ազդարարութեան փողերը։ 7—Եւ Մադիանացւոց դէմ պատերազմեցան, ինչպէս Տէրը Մովսէսի հրամայեր էր. ու ամէն արու մարդիկը մեռցուցին. 8—Եւ անոնց ոպանները սպաննուածներուն հետ Մադիանու թագաւորներն ալ, Եւին, Րեկոմ, Սուրը, Ուրը և Ռեբէն, Մադիանու հինգ թագաւորները, սպաննեցին, ու Բէովրի որդին Բաղաամը սրով մեռցուցին։ 9—Եւ Իսրայէլի որդիները Մադիանացւոց կիները ու ոպաղները գերի տարին, ու նոնց բոլոր անասուններն և հօտերը ու ապրանքները բոլորը աւար առին։ 10—Եւ անոնց բնակած բոլոր քաղաքները ու բոլոր գիղերը կրակով այրեցին։ 11—Եւ բոլոր աւարը ու բոլոր կողոպուտը առին մարդէ մինչև անասուն։ 12—Եւ գերիները ու կողոպուտը և աւարը Մովսէսի, եղիազար քահանային ու Իսրայէլի որդիներուն ժողովին, բանակը բերին, որ Երիքովի դէմ Յորդանանու մօտ Մովաբի դաշտերուն մէջ էր։

13—Եւ Մովսէս ու եղիազար քահանան և ժողովքին բոլոր իշխանները բանակէն դուրս ելան զանոնք դիմաւորելու։ 14—Եւ Մովսէս պատերազմէն դարձող զօրաց իշխաններուն, հազարապետներուն ու հարիւրապետներուն սրդողեցաւ։ 15—Եւ Մովսէս անոնց ըսաւ, Արդեօք բոլոր կիները ո՞ղ թողուցիք։ 16—Ահա Բաղաամի *խրատովը ասոնք պատճառ եղան, որ Իսրայէլի որդիները Տէրոջը դէմ մեղանչեցին փագովրի գործին մէջ. և Տէրոջը ժողովքին վրայ այն հարուածը եկաւ։ 17—Ուստի հիմա տղաքներէն ամէն արուն մեռցուցէք, ու բոլոր կիները որոնք այր մարդ դիպցած են արուի հետ պառկելով՝ մեռցուցէք։ 18—Եւ կիներէն այն բոլոր մանկահասակ աղջիկները որոնք այր մարդ դիպցած չեն արուի հետ պառկելով՝ ձեզի ողջ թողուցէք։ 19—Եւ դուք եօթը օր բանակին դուրսը մնացէք. ով որ մարդ մեռցուցեր է, ու ով որ մեռածի դիպեր է, երրորդ օրը ու եօթներորդ օրը թող ձեզ պահեն, թէ՛ դուք և թէ՛ ձեր գերիները։ 20— Ու ամէն հանդերձ, ու ամէն մորթէ չնուած աման, և այծի մազէ չինուած ամէն բան, ու ամէն փայտեղէն աման մաքրեցէք։

21—Եւ եղիազար քահանան պատերազմի գացող զօրքերուն ըսաւ, Ահաւասիկ այս օրէնքին կանոնը՝ զոր Տէրը Մովսէսի հրամայեց։ 22—Միայն ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը, անագը ու կապարը, 23—Ամէն կրակը մտնելու բանը կրակէ անցնէք, ու մաքուր պիտի ըլլայ, բայց մաքրութեան լրով մաքրուին. սակայն կրակը չմտնող ամէն բան ջուրէ անցնէք։ 24— Ու եօթներորդ օրը ձեր հանդերձները լուայք և մաքուր ըլլաք, ու ետքը բանակին մէջ մտնէք։

25-Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 26— Դուն եղիազար քահանային ու ժողովքին նահապետութեանց իշխաններուն հետ՝ առնուած կողոպուտին գումարը առ, մարդէ մինչև անասուն։ 27—Եւ այն կողոպուտը պատերազմի գացող պատերազմողներուն ու բոլոր ժողովքին հաւասարապէս բաժնես։ 28—Եւ պատերազմի գացող պատերազմողներէն Տէրոջը հասը առնես, հինգ հարիւրէն մէկը՝ թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն և թէ՛ ոչխարներէն։ 29—Անոնց կէս բաժինէն պիտի առնես, ու եղիազար քահանային տաս իբրև Տէրոջը ընծայ։ 30—Եւ Իսրայէլի որդիներուն կէս բաժինէն յիսունէն մէկը առնելով, թէ՛ մարդոցմէն, թէ՛ արջառներէն, թէ՛ էշերէն, թէ՛ ոչխարներէն և թէ՛ ամէն անասուններէն. ու զանոնք Տէրոջը խորանին պահապանութիւնը ընդող Ղեւտացիներուն տաս։ 31—Եւ Մովսէս ու եղիազար քահանան Տէրոջը Մովսէսի հրամայածին պէս ըրին։

32—Եւ կողոպուտը, այսինքն պատերազմող զօրքին առած աւարին *գումարը այս էր. վեց հարիւր եօթանասունըհինգ հազար ոչխար, 33—եօթանասունուերկու հազար արջառ, 34—Ու վաթսունըմէկ հազար էշ։ 35—Եւ մարդոցմէն՝ այր մարդու անկողին չգիտցող կիներուն ամէնը երեսունուերկու հազար հոգի էին։

36—Եւ պատերազմի գացողներուն կէս—ը կէս բաժինը այս էր. ոչխարները թիւը երեք հարիւր երեսունըեօթը հազար հինգ հարիւր էր. 37—Ու ոչխարներէն Տէրոջը հասը վեց հարիւր եօթանասուներհինգ եղաւ. 38—Եւ արջառները երեսունըվեց հազար էին՝ անոնցմէ Տէրոջը հասը եօթանասուներկու. 39—Եւ էշերը երեսուն հազար հինգ հարիւր էին՝ անոնցմէ Տէրոջը հասը վաթսունըմէկ էր եղաւ. 40— Եւ մարդիկը տասնըվեց հազար հոգի էին՝ անոնցմէ Տէրոջը հասը երեսունուերկու հոգի եղաւ։ 41—Եւ Մովսէս Տէրոջը նուիրած հասը եղիազար քահանային տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի հրամայեր էր։

42—Եւ Իսրայէլի որդիներուն կէս բաժինէն ալ, զոր Մովսէս պատերազմողներէն զատեր էր, Տէրոջը հասը ա-

*Եբր. խօսքովը

— 43—Եւ ժողովքին կէս բաժինը երեք հարիւր երեսունըեօթը հազար հինգ հարիւր ոչխար, 44—երեսունըվեց հազար արջառ, 45—երեսուն հազար հինգ հարիւր էշ, 46—Ու տասնըվեց հազար հոգի էր։ 47—Եւ Մովսէս Իսրայէլի որդիներուն կէս բաժինէն, թէ՛ մարդէն, թէ՛ անասունէն, յիսուներէն մէկը առնելով, Տէրոջը խորանին պահապանութիւնը ընդող Ղեւտացիներուն տուաւ, ինչպէս Տէրը Մովսէսի հրամայեր էր։

48—Եւ զօրքին հազարապետները վերակացուները, այսինքն հազարապետները ու հարիւրապետները, Մովսէսի մօտեցան. 49—Ու Մովսէսի ըսին, Քու ծառաներդ մեր ձեռքին տակ եղող պատերազմողներուն գումարը ուրիշ, ու մեզմէ մարդ մը պակաս չէ. 50—Ուստի մեն մեկս ինչ որ գտանք՝ Տէրոջը ընծայ բերինք, ոսկիէ զարդեր, չղթաներ, ապարանջաններ, մատնիներ, օղեր ու *մանեակներ, որ Տէրոջը առջեւ մեր հոգիներուն քաւութիւնը ընենք։ 51—Եւ Մովսէս ու եղիազար քահանան անոնցմէ ոսկին առին, ամէն այ բանուած զարդեր էին. 52— Ու հազարապետներէն ու հարիւրապետներէն Տէրոջը մատուցուած ընծային բոլոր ոսկին տասնըվեց հազար եօթը հարիւր յիսուն սիկղ էր։ 53—Պատերազմողներուն ամէն մէկը իրեն համար կողոպուտ առեր էր։ 54—Եւ Մովսէս ու եղիազար քահանան հազարապետներէն ու հարիւրապետներէն ոսկին առին, և ժողովքի խորանը բերին, որպէս զի Տէրոջը առջեւ Իսրայէլի որդիներուն յիշատակի ըլլայ։

ԳԼ. ԼՒ

1 Ռուբէնի որդիները ու Գադի որդիները խիստ շատ անասուններ ունէին. ուստի Յազերի երկիրը ու Գաղաադու երկիրը տեսնելով, որ հոն այն տեղը անասուն պահելու յարմար տեղ մըն է, 2—Գադի որդիները և Ռուբէնի որդիները գացին, ու Մովսէսի, եղիազար քահանային և ժողովքի իշխաններուն հետ խօսելով՝ ըսին, 3—Ատարովթ, Դիբոն, Յազեր, Նմրա, Եսբոն, Եղէալէ, Սեբամ, Նեբու ու Բէաոն, 4—Այսինքն Տէրոջը Իսրայէլի ժողովքին առջեւ զարկած երկիրը, անասուն պահելու յարմար երկիր մըն է, ու քու ծառաներդ անասուններ ունին. 5—Եւ ըսին, Եթէ մեզի քու առջեւդ չնորհք գտանք, այս երկիրը քու ծառաներուդ կալուածքի համար սրբուսի. մեզ Յորդանանէ մի անցներ։

6—Եւ Մովսէս Գադի որդիներուն և Ռուբէնի որդիներուն ըսաւ, Ձեր եղբայրները պատերազմի երթան, ու դուք այս տեղ նստիք։ 7—Եւ ինչո՞ւ համար Իսրայէլի որդիներուն սիրտը կը թուլցնէք, որ չանցնին այն երկիրը զոր Տէրը անոնց տուած է։ 8—Ձեր հայրերն այսպէս ըրին, երբ զանոնք կադէս-բառնէայէ զրկեցի երկիրը լրտեսելու համար։ 9—Քանզի անոնք մինչև Եշքողի ձորը երթան ու երկիրը տեսան, և Իսրայէլի որդիներուն սիրտը թուլցուցին, որպէս զի չմտնեն այն երկիրը զոր Տէրը անոնց տուեր էր։ 10—Ուստի այն օրը Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ, ու երդում ընելով՝ ըսաւ, 11—Եգիպտոսէ ելած մարդիկը, քսան տարեկանէ վեր եղողները, բոլոր սրտով ինծի չյետագնդունեն համար, բնաւ պիտի չտեսանեն այն երկիրը, որուհամար Աբրահամի, Իսահակի ու Յակոբի երդում ըրի թէ— 12—Բացի Կենեզեան Յեփոնէի որդիէն Քաղէբէ ու Նաւէի որդիէն Յեսուէ, որոնք կատարեալ կերպով Տէրոջը հետեւեցան։ 13—Եւ Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք քառասուն տարի անապատին մէջ պտըտցուց, մինչև որ Տէրոջը առջեւ չարութիւն ընող ազգը բոլորովին սպառեցաւ։ 14—Եւ ահա դուք ձեր հայրերուն տեղը հոսք մեղաւոր մարդոց զաւակներու պէս, որպէս զի Տէրոջը սաստիկ բարկութիւնը Իսրայէլի վրայ նորէն աւելցնէք։ 15—Վասն զի եթէ դուք անկէ խառնիք, ան ալ նորէն այս ժողովուրդը անապատին մէջ պիտի ձգէ. ու դուք պիտի բոլոր ժողովուրդին կորուստին պատճառ պիտի ըլլաք։

*կամ, ձեռագործը, և կամ, քաղմունքիները

*կամ, շանկագեղ կամարներ

16—Եւ անոնք մեռեցան անոր ու ըսին, Մենք այս անդ մեր անասնոցը համար փարախներ, ու մեր ընտանիքներուն համար քաղաքներ չինենք. 17—բայց մենք զինքերնիս առնենք, ու չտասով Իսրայէլի որդիներուն առջեւէն երթանք, մինչեւ որ զանոնք իրենց տեղերը առնինք. և մեր ընտանիքը պարսպատոր քաղաքներու մէջ բնակին երկրիս բնակիչներուն պատճառաւ. 18—Ու մինչեւ որ Իսրայէլի որդիներուն ամէն մէկը իր ժառանգութիւնը չժառանգէ, մենք մեր առները չդառնանք. 19—Իսկ մենք Յորդանանեն անդին կողմը անոնց հետ ժառանգութիւն պիտի չառնենք. վասն զի մեր ժառանգութիւնը Յորդանանեն առջի կողմը դէպ ի արեւելք բնակած է։

20—Եւ Մովսէս բսաւ անոնց, Եթէ այս բանը ընէք, ու Տէրոջը առջեւ պատերազմի համար վրանիդ զինք առնէք, 21—Ու Տէրոջը առջեւ զօք ամէնդ ալ զինքերով Յորդանանէ անցնիք, մինչեւ որ անիկա իր թշնամիները իր առջեւէն վռնտէ, 22—Ու այն երկիրը Տէրոջը առջեւ նուաճի, անկէ ետև երբ կրնաք դառնաք, Տէրոջը առջեւ ու Իսրայէլի առջեւ անվեղ պիտի ըլլաք. և այս երկիրը Տէրոջը առջեւ ձեզի կալուածք պիտի ըլլայ. 23—Բայց եթէ այսպես չընէք, ահա Տէրոջը դէմ մեզք գործեցիք. ու գիտցէք որ ձեր մեզքը ձեզ պիտի գտնէ։ 24—Շինեցէք ձեր ընտանիքներուն համար քաղաքներ, ու ձեր հօտերուն համար փարախներ շինեցէք, ու ձեր բերնէն ելածը ըրէք։

25—Եւ Գադի որդիները և Ռուբենի որդիները խօսեցան Մովսէսի՝ ըսելով, Ծառաներդ մեր տէրոջը պատուիրածին պէս պիտի ընեն։ 26—Մեր զաւակները, մեր կիները, մեր հօտերը ու մեր բոլոր անասունները հոս Գաղաադ քաղաքներուն մէջ մնան. 27—Բայց ծառաներդ մեր տէրոջը բանակին պէս՝ ամէնս ալ զէնդ գունդ պատրաստուինք, ու Տէրոջը առջեւէն անցնինք պատերազմի համար։

28—Ա,յն առեն Մովսէս եղիազար քահանային ու Նաւէի որդւոյն Յեսուի և Իսրայէլի որդւոցը ցեղերուն նահապետաց իշխաններուն այս պատուէրը առաւ անոնց վրայով. 29—Ու Մովսէս ըսաւ անոնց, Եթէ Գադի որդիները և Ռուբենի որդիները Տէրոջը առջեւ ամէնն ալ պատերազմի համար պատրաստուած՝ ձեզի հետ Յորդանանէ անցնին, ու այն երկիրը ձեր առջեւ նուաճին, այն առեն Գաղաադ երկիրը անոնց կալուածք տաք։ 30—Բայց եթէ պատրաստուած ձեզի հետ չանցնին, անոնց կալուածքը ձեզի հետ Քանանու երկրին մէջ բլլայ. 31—Իսկ Գադի որդիները և Ռուբենի որդիները պատասխան առին ու ըսին, Տէրը ինչ ծառաներուդ խօսեցաւ՝ այնպէս պիտի ընենք. 32—Մենք զինքերնիս պատերազմի համար Տէրոջը առջեւէն Քանանու երկիրը պիտի անցնինք. բայց մեր ժառանգութեան կալուածքը Յորդանանեն առջի կողմը բլլայ։ 33—Ուստի Մովսէս անոնց, այսինքն Գադի որդիներուն և Ռուբենի որդիներուն և Յովսեփեան Մանասէի կէս ցեղին, ասաւ Ամորհացւոց Սիհոն թագաւորին թագաւորութիւնը, ու Բասանի Ովգ թագաւորին թագաւորութիւնը, երկիրը իր քաղաքներովը — երկրին քաղաքներուն բոլորտիքը եղած սահմաններովը։

34—Եւ Գադի որդիները պարսպաւոր քաղաքներ չինեցին, այսինքն Դիբոն, Աատարովթը ու Արոէրը, 35—Ու Ատրոթ-սովփանը, Յազերը ու Յոգբեհան, 36—Ու Բեթ-Նամրան ու Բեթ-արանը, և հօտերու փարախներ ալ չինեցին։

37—Ռուբենի որդիները ալ Եսեբոնը, Եղէալէն ու Կարիաթեմը չինեցին. 38—Ու Նաբաւը և Բէէլմէոնը, (որոնց անունները փոխեցին,) ու Սիբման. ու իրենց շինած քաղաքներուն *էբէնց անուններըը դրին։

39—Եւ Մանասէան Մաքիրի որդիները Գաղաադ գացին. ու առին զանոնք, և անոր մէջ բնակող Ամորհացիները վռնտեցին. 40— Եւ Մովսէս Գաղաադը տուաւ Մանասէան Մաքիրի, որ հոն բնակեցաւ։ 41—Ու Մանասէան Յայիր գնաց անոնց գիւղաքաղաքները առաւ, ու զանոնք †Հաւօթ-յայիր՝ անուանեց։ 42—Եւ Նոբահ գնաց, ու Կենաթը ու անոր գիղերը առաւ, և զանոնք իր անունովը Նոբահ կոչեց։

*կամ, ոոբէն անուններ

Գլ. Լգ

Մովսէսի ու Ահարոնի ձեռքով Տիրոջմէ երկրէն իրենց զբօսքերովը եղած իսրայէլի որդիներուն իջեւանները ասոնք են։ 2—Ու Մովսէս Տէրոջը հրամանովը անոնց իջեւանները համեմատ անոնց գնացքները գրեց. ու անոնց գնացքներուն համեմատ անոնց իջեւանները ասոնք են։ 3—Առաջին ամսուն մէջ, այսինքն առաջին ամսուն հնգետասանեերորդ օրը, Յունկոտ չաւշին. զատկին հետևեալ օրը Իսրայէլի որդիները բարձր ձեռքով ելան բոլոր Եգիպտացւոց աչքերուն առջեւ. 4—Ու Եգիպտացիք էբէնց գ-ԻՆԻԲԸ կը թաղէին, Տիրոջմէ Տէրը անոնց բոլոր անդրանիկները խրտեց. և Տէրը անոնց աստուածներուն վրայ դատաստան բրաւ։

5—Եւ Իսրայէլի որդիները Ռամեսէս չտելով՝ Սոկոթովթ իջեւան ըրին։ 6—Ու Սոկոթովթէ չտելով՝ անապատին ծայրը եղած Ոթամ իջեւան ըրին։ 7—Եւ Ոթամէ չտելով՝ դէպ ի Փիհիրոթ դարձան, որ Բէեզեփոնի դիմացն է, ու Մագդոդի առջեւ իջեւան ըրին։ 8—Եւ Փիհիրոթի առջեւէն չտելով, ու ծովուն մէջէն անցնելով՝ անապատը էյ-Եթ, և Ոթամի անապատին մէջ երեք օրուան ճամբայ քալելով՝ Մեռա իջեւան ըրին։ 9—Ու Մեռայէ չտելով՝ Եղիմ եկան. ու Եղիմի մէջ տասներկու յորի աղբիւր ու եօթանասուն արմաւենի կային. ու հոն իջեւան ըրին։ 10—Եւ Եղիմէ չտելով՝ Կարմիր ծովուն քով իջեւան ըրին։ 11—Ու Կարմիր ծովէն չտելով՝ Սին անապատը իջեւան ըրին։ 12—Եւ Սին անապատէն չտելով՝ Դափկա իջեւան ըրին։ 13—Եւ Դափկայէ չտելով՝ Եղուս իջեւան ըրին։ 14—Ու Եղուսէ չտելով՝ Ռափփիմ իջեւան ըրին. ու հոն ժողովուրդին համար խմելու ջուր չկար։ 15—Եւ Ռափփիմէ չտելով՝ Սինայի անապատը իջեւան ըրին։ 16—Ու Սինայի անապատէն չտելով՝ Կիբրոթ-Հաթթաւա իջեւան ըրին։ 17—Եւ Կիբրոթ-Հաթթաւայէ չտելով՝ Հասերոթի իջեւան ըրին։ 18—Ու Հասերոթէ չտելով՝ Ռիթմա իջեւան ըրին։ 19—Եւ Ռիթմայէ չտելով՝ Ռիմմոն-փարէս իջեւան ըրին։ 20—Ու Ռիմմոն-փարէսէ չտելով՝ Լիբնա իջեւան ըրին։ 21—Եւ Լիբնայէ չտելով՝ Ռիսսա իջեւան ըրին։ 22—Ու Ռիսսայէ չտելով՝ Կհէլաթա իջեւան ըրին։ 23—Եւ Կհէլաթայէ չտելով՝ Սեփար լեռը իջեւան ըրին։ 24—Ու Սեփար լեռնէն չտելով՝ Քարադա իջեւան ըրին։ 25—Եւ Քարադայէ չտելով՝ Մաքհելոթ իջեւան ըրին։ 26—Ու Մաքհելոթէ չտելով՝ Թահաթ իջեւան ըրին։ 27—Եւ Թահաթէ չտելով՝ Թարա իջեւան ըրին։ 28—Ու Թարայէ չտելով՝ Մաւակա իջեւան ըրին։ 29—Եւ Մաւակայէ չտելով՝ Համոնա իջեւան ըրին։ 30—Ու Համոնայէ չտելով՝ Մաւերոթ իջեւան ըրին։ 31—Եւ Մաւերոթէ չտելով՝ Բանէ-յաական իջեւան ըրին։ 32—Ու Բանէ-յաականէ չտելով՝ Հօրգադգադ իջեւան ըրին։ 33—Ու Հօրգադգադէ չտելով՝ Եաթբաթա իջեւան ըրին։ 34—Ու Եաթբաթայէ չտելով՝ Եբրոնա իջեւան ըրին։ 35—Ու Եբրոնայէ չտելով՝ Գասիոն-գաբեր իջեւան ըրին։ 36—Եւ Գասիոն-գաբերէ չտելով՝ Սին անապատը, այսինքն Կադէս, իջեւան ըրին։

37—Եւ Կադէսէ չտելով՝ Հոր լեռը իջեւան ըրին, որ Եդոմի երկրին ծայրն է։ 38—Ու Ահարոն քահանան Տէրոջը հրամանովը Հոր լեռը ելաւ, և հոն մեռաւ, Իսրայէլի որդիներուն Եգիպտոսի երկրէն ելլելուն քառասներորդ տարին՝ հինգերորդ ամսուն առաջին *օր։ 39—Եւ Ահարոն Հոր լեռանը վրայ մեռած ատեն հարիւր քառասուն տարեկան էր։

40—Եւ Քանանու երկրին հարաւային կողմը բնակող Արադի *Քանանիա

*կամ, Քանանացի

քաղաւորը Իսրայէլի որդիներուն գալը լսեց,

41—ու Հովը լեռնէն չուելով՝ Սելմանա կիլան բրին։ 42—Ու Սելմոնայէ չուելով՝ փունան կիլան բրին։ 43—Ու փունանէ չուելով՝ Ովթի կիլան բրին։ 44—Ու Ովթիէ չուելով՝ Մոավբի սահմանին մէջ եղող Իյէ-աբարիմ կիլան բրին։ 45—Ու Իյէ-էէրիմ չուելով՝ Դիբոն-գադ կիլան բրին։ 46—Ու Դիբոն-գադէ չուելով՝ Գելմոն-դեբլաթէմ կիլան բրին։ 47—Գելմոն-դեբլաթէմէ չուելով՝ Նաբաւի առջև Աբարիմի լեռներուն կիլան բրին։ 48—Ու Աբարիմի լեռներէն չուելով՝ Երիքովի դիմաց Յորդանան մօտ՝ Մոավբի դաշտերուն մէջ կիլան բրին։ 49—Ուսկից անոնք Յորդանան մօտ Մոավբի դաշտերուն մէջ կիլան բրին։ Բեթ-եսիմոթէ մինչև Աբէլ-սատիմ։

50—Ու Տէրը Մոավբի դաշտերուն մէջ Երիքովի դիմաց Յորդանան մօտ խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 51—Իսրայէլի որդիներուն խօսէ ու անոնց ըսէ, երբ Յորդանանէ գանանացւոց երկիրը անցնիք, 52—Անոր երկրին բոլոր բնակիչները ձեր առջևէն վռնտէք, ու անոնց բոլոր պատկերները կոթողները կործանէք, և անոնց բոլոր թաւթուփ կուռքերը կործանէք, ու անոնց բոլոր բարձր տեղերը փլցնէք։ 53—Ու այն երկիրը ձեր իշխանութեան տակ ընդունելով՝ անոր մէջ բնակիք. քանզի այն երկիրը ձեզի տուի որպես զի ժառանգէք։ 54—Ու այն երկիրը վիճակով ժառանգէք ձեր տոհմերուն համեմատ. շատերուդ եղողին ժառանգութիւնը շատ պիտի տաք, ու փոքրուդ եղողին ժառանգութիւնը փոքր պիտի տաք. ուր ոեղի մը վիճակը որա՛ որ ելլէ, անոր ըլլայ [*]ե՛ր-ա՛ն-ա՛ե։ Ձեր հայրերուն ցեղերուն համեմատ ժառանգէք։ 55—Բայց եթէ այն երկրին բնակիչները ձեր առջևէն չվռնտէք, այն ատեն անոնցմէ որ թողուցածնիդ ձեր աչքերուն փուշեր ու ձեր կողերուն տատասկներ պիտի ըլլան. ու ձեր բնակած երկրին մէջ ձեզի թշնամութիւն պիտի ընեն։ 56—Ու պիտի ըլլայ որ ինչ որ անոնց ընելու մտածեր էի, ձեզ ալ պիտի ընեմ ձեզի։

Գլ. ԼԴ

Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Իսրայէլի որդիներուն պատուիրէ ու անոնց ըսէ, երբ դուք Քանանու երկիրը մտնէք, ձեզի ժառանգութիւն իյնալու երկիրը այս պիտի ըլլայ, Քանանու երկիրը իր սահմաններովը։ 3—Ու ձեր հարաւային սահմանը Սին անապատէն մինչև Եդոմի ըլլայ, և Աղի ծովուն ծայրէն *սկսի։ 4—Ու ձեր հարաւային սահմանը Ակրաբբիմի վառ ի վեր պտրակելով մինչև Սին հասնի, ու Կադէս-բառնեայի հարաւային կողմը ելլի, և Ասար-ադարէ անցնելով՝ Ասէմոն հասնի։ 5—Ու Ասէմոնէ մինչև Եգիպտոսի հեղեղատը պտրտնի, ու ծովուն մէջ վերջանայ սահմանը։

6—Իսկ ձեր արեւմտեան սահմանը մեծ ծովն ըլլայ. ձեզի արեւմտեան սահման այն ըլլայ։

7—Ու ձեր հիւսիսային կողմի սահմանը այս ըլլայ. մեծ ծովէն մինչև Հոր լեռը նշանակէք. 8—Հովը լեռնէն մինչև Եմաթ նշանակէք, ու անկէ սահմանը մինչև Սեդադ հասնի. 9—Ու այն սահմանը մինչև Զեփրոն ելլի, ու Ասար-Ենանի մէջ վերջանայ. ձեր հիւսիսային սահմանը այս ըլլայ։

10—Ու ձեր արեւելեան սահմանին համար Ասար-Ենանէ մինչև Սեփամ նշանակէք. 11—Ու այս սահմանը Ասլինի արեւելեան կողմին՝ Սեփամէ Ռիբղա իջնի. ու այս սահմանը արեւելքի կողմին երեսովի՝ մինչև Քինեռեթի ծովին հասնի։ 12—Ու այս սահմանը Յորդանան իջնի, ու Աղի ծովուն մէջ վերջանայ։ Երկիրը իր շրջակայ սահմաններովը ձեզի այս ըլլայ։

13—Ու Մովսէս Իսրայէլի որդիներուն պատուիրեց ու ըսաւ, Ասիկա է երկիրը զոր դուք վիճակով պիտի ժառանգէք, ինչպես Տէրը հրամայեց իննը ու կէս ցեղի տալու համար։ 14—Քանզի Ռուբէնի որդիներուն ցեղը իրենց հայրերուն տուներուն համեմատ, ու Գադի որդիներուն ցեղը իրենց հայրերուն տուներուն համեմատ, և Մանասէի կէս ցեղը իրենց ժառանգութիւնը առին։ 15—Այս երկուք ու կէս ցեղը իրենց ժառանգութիւնը առին Երիքովի դիմաց Յորդանան, ագիի կողմը դէպ ի արեւելք։

16—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 17—Ասոնք են այն մարդոց անունները՝ որոնք երկիրը ժառանգութեան համար ձեզի պիտի բաժնեն. Ղեղազար քահանան ու Նաւէի որդին Յեսու։ 18—Ու ամեն ցեղէն ալ մէյմէկ իշխան առնէք, այն երկիրը ժառանգութեան բաժնելու։ 19—Ու այն մարդոց անունները ասոնք են. Յեփոնէի ցեղէն Յեփոնէի որդին Քաղեբ, 20—Շմաւոնի որդիներուն ցեղէն Ամիհուդի որդին Սամուէլ, 21—Բենիամինի ցեղէն Քասլոնի որդին Ելիդադ, 22—Դանի որդիներուն ցեղէն իշխան՝ Եգղիի որդին Բոկկի, 23—Յովսէփի որդիներէն Մանասէի որդիներուն ցեղէն իշխան՝ Եփոտի որդին Անիէլ, 24—Ու Եփրեմի որդիներուն ցեղէն իշխան՝ Սափթանի որդին Կամուէլ, 25—Ու Զաբուղոնի որդիներուն ցեղէն իշխան՝ Փառնակի որդին Եղիսափան, 26—Ու Իսաքարի որդիներուն ցեղէն իշխան՝ Ազանի որդին Փալտիէլ, 27—Ու Ասերի որդիներուն ցեղէն իշխան՝ Սելոմիի որդին Աքիուդ, 28—Ու Նեփթաղիմի որդիներուն ցեղէն իշխան՝ Ամիուդի որդին Փադայէլ։ 29—Ասոնք են այն [*]ՐԷՐԻԼ՝ որոնց Տէրը հրամայեց որ Քանանու երկրին մէջ Իսրայէլի որդիներուն ժառանգութիւն բաժնեն։

[*]Եբր. ըլլայ

Գլ. ԼԵ

Ու Տէրը Մոավբի դաշտերուն մէջ Երիքովի դիմաց Յորդանան մօտ խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 2—Պատուիրէ Իսրայէլի որդիներուն, որ իրենց ժառանգութենէն կալուածքին Ղեւտացւոց բնակելու քաղաքներ տան. նաև քաղաքներուն բոլորտիքը եղած արուարձանները Ղեւտացւոց տաք։ 3—Ու քաղաքները բնակութեան համար ըլլան անոնց, ու արուարձանները անոնց արջառներուն. հօտերուն ու բոլոր անասուններուն համար ըլլան։ 4—Ու Ղեւտացւոց տալու քաղաքներուն արուարձանները քաղաքին պարիսպէն գրսը չափնիք հազարական կանգուն ընդ չո՛ր-ի՛ն-ի՛ն ա՛ե՛ի՛ն-ն։ 5—Ուստի քաղաքին գրսէն արեւելեան կողմին երկու հազար կանգուն, հարաւային կողմին երկու հազար կանգուն, արեւմտեան կողմին երկու հազար կանգուն, ու հիւսիսային կողմին երկու հազար կանգուն չափիք. և քաղաքը մէկտեղ պիտի ըլլայ. անոնց քաղաքներուն արուարձանները այսպէս ըլլան։

6—Ու ձեր Ղեւտացւոց տալու քաղաքներէն վեցը ապաստանի քաղաք ըլլան որոնցիկ, որպես զի սպանողը հոն փախչի. ու անոնց քաղաքներուն կից քառասուներկու քաղաք տաք։ 7—Ղեւտացւոց տալու քաղաքներուն ամենը քառասուներկու քաղաք ըլլայ. զանոնք իրենց արուարձաններովը տաք։ 8—Ու այն քաղաքները որոնք Իսրայէլի որդիներուն կալուածքէն պիտի տաք, շատուր եղողէն շատ՝ ու քիչուր եղողէն քիչ առնէք. ամեն մէկը իր ունած ժառանգութենէն չափովը իր քաղաքներէն Ղեւտացւոց պիտի տայ։

9—Ու Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով, 10—Իսրայէլի որդիներուն խօսէ ու անոնց ըսէ, երբ Յորդանանէ Քանանու երկիրը անցնիք, 11—Ձեզի քաղաքներ որոշէք, որոնք ապաստանի քաղաքներ ըլլան ձեզի, որպես զի սխալմամբ մարդ զարնող սպանողը հոն փախչի. 12—Ու այն քաղաքները ձեզի ապաստանարան ըլլան սրեւէ վրէժխնդիրէ եղողէն, ու սպանողը դատաստանի համար ժողովքին առջև կեցած չմեռնի. 13—Ու ձեր տալու քաղաքներէն վեցը ձեզի ապաստանի քաղաք ըլլան։ 14—Քաղաքներէն երեքը Յորդանանու տակէն կողմը տաք, ու քաղաքներէն երեքը Քանանու երկրին մէջ տաք, և անոնք ապաստանի քաղաքներ ըլլան։ 15—Այս վեց քաղաքները Իսրայէլի որդիներուն ու օտարականին և ձեր մէջ բնակող պանդխտին

[*]Եբր. ապաստանի քաղաքին

ան ապաստանարան ըլլան, և ով որ սխալմամբ մարդ սպանէ՝ հոն փախչի։

16—Իսկ եթէ երկաթէ գործիքով մէկը զարնէ, անիկա մարդասպան է. մարդասպանը անպատճառ պիտի սպանուի։ 17— Կամ եթէ ձեռքով գործածուելու վայրկեան մահաբեր գործիքով մը զարնէ՝ որ մեռնի, անիկա մարդասպան է. մարդասպանը անպատճառ պիտի սպանուի։ 18— Կամ եթէ ձեռքով գործածուելու վայրկեան մահաբեր գործիքով մը զարնէ՝ որ մեռնի, անիկա մարդասպան է. մարդասպանը անպատճառ պիտի սպանուի։ 19—Արեան վրէժխնդիրը պիտի սպանէ մարդասպանը. երբ անոր հանդիպի՝ զայն սպանէ։ 20—Կամ եթէ թշնամութեամբ հրէ մէկը, ու նենգութեամբ վրան բան մը նետելով՝ զանիկա սպանելու ըլլայ, 21—կամ թէ թշնամութեան պատճառու ձեռքովը զարնէ ան՝ որ մեռնի, զարնողը անպատճառ սպանուի. անիկա մարդասպան է. արեան վրէժխնդիրը երբ մարդասպանին հանդիպի՝ զանիկա սպանէ։

22—Բայց եթէ յանկարծ ու առանց թշնամութեան հրէ, կամ թէ առանց նենգութեան անոր վրայ գործիք մը նետէ, 23—կամ թէ առանց տեսնելու անոր վրայ ինչ-ինչ մահաբեր քար մը ձգէ՝ որ մեռնի, և անիկա անոր թշնամին չէր, ու անոր չարիքը չէր ուզեր, 24—Այն ատեն ժողովքը պաշտպանին ու արեան վրէժխնդրին միջեւ այս օրէնքներուն համեմատ դատաստան ընէ։ 25—Ու ժողովքը պիտի ազատէ սպանողը արեան վրէժխնդրին ձեռքէն, ու ժողովքը զանիկա նորէն իր ապաւինած ապաստանի քաղաքը դարձնէ. ու անիկա հոն պիտի բնակի, մինչև որ սուրբ իւղով օծուած քահանայապետը մեռնի։ 26— Բայց եթէ սպանողը իր ապաւինած ապաստանի քաղաքին սահմանէն երբեք դուրս ելլէ, 27—Ու արեան վրէժխնդիրը զանիկա իր ապաստանի քաղաքին սահմանէն դուրս գտնէ, և արեան վրէժխնդիրը սպանողը մեռցնելու ըլլայ, մահապարտ չըսուի։ 28— Քանզի ան՝ նիկա իր ապաստանի քաղաքը նստելու էր, մինչև որ քահանայապետը մեռնէր. բայց քահանայապետին մեռնելէն ետքը սպանողը իր կալուածքին երկիրը դառնայ։ 29— Ասոնք ձեզի դատաստանի կանոններ ըլլան ձեր ազգերուն մէջ՝ ձեր բոլոր բնակութիւններուն մէջ։

30—Ով որ մարդ կը մեռցնէ, սպանողը վկաներուն բերնով մեռցուի. բայց մարդ մը մեռցնելու համար՝ դէմ մէկ վկայի վկայութիւնը բաւական չըլլայ։ 31— Ու մահապարտ սպանողին կեանքին համար փրկանք չառնէք. քանզի անիկա անպատճառ մեռցուելու է։ 32— Ու ապաստանի քաղաքը փախչողին համար փրկանք չառնէք, որպէս զի անիկա իր քաղաքը դառնայ նստի քահանայապետին մահէն առաջ։ 33—Ուստի ձեր բնակած երկիրը չպղծէք. քանզի արիւնը կը պղծէ երկիրը. ու անոր միջի թափուած արիւնին համար երկրին քաւութիւն չըլլար, բայց եթէ՝ զանիկա թափողին արիւնովը։ 34—Ուրեմն ձեր բնակած երկիրը չպղծէք, որուն միջտեղը ես պիտի բնակիմ. քանզի ես Տէրս կը բնակիմ Իսրայէլի որդիներուն միջ։

ԳԼ. ԼԶ

Ե Յովսէփի որդիներուն տոհմերէն Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադայ որդիներուն տոհմին իշխանները մտան, ու Մովսէսի առջեւ և Իսրայէլի որդիներուն նահապետաց իշխաններուն առջեւ խօսեցան, 2—Ու ըսին, Տէրը մեր ագրոյ հրամայեց, որ երկիրը Իսրայէլի որդիներուն վիճակով ժառանգութիւն տայ. ու Տէրը մեր ագրոյ հրամայեց, որ մեր եղբօրը Սալպհադի ժառանգութիւնը անոր աղջիկներուն տայ։ 3—Արդ եթէ անոնք Իսրայէլի որդիներուն ուրիշ ցեղի մը որդւոց կին ըլլան, անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն ժառանգութենէն պիտի վերնայ. ու ո՛ր ցեղէ մարդոց որ կին ըլլան, այն ցեղին ժառանգութեանը պիտի խառնուի, ու մեր ժառանգութեան վիճակէն պիտի վերնայ։ 4—Ու Իսրայէլի որդիներուն Յոբելեանն ծագին՝ անոնց ժառանգութիւնը

նը իրենց այրերուն ցեղին ժառանգութեանը պիտի խառնուի. ու այսպէսով անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն ցեղին ժառանգութենէն պիտի վերնայ։

5—Ու Մովսէս Տէրոջը հրամանով Իսրայէլի որդիներուն պատուիրեց ու ըսաւ, Յովսէփի որդիներուն ցեղը ճիշտ կը խօսի։ 6—Սալպհադի աղջիկներուն վրայով Տէրոջը հրամայած ա՝ բանը խօսքը այս է. Որոնց որ կը հաճին անոնք, թող անոնց կին ըլլան, միայն թէ իրենց հօրը ցեղին եղդներուն կին ըլլան։ 7—Որպէս զի Իսրայէլի որդիներուն ժառանգութիւնը մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի. քանզի Իսրայէլի որդիներուն ամէնն ալ իրենց հայրերուն ցեղին ժառանգութեանը պիտի յարին։ 8—Ու ամէն աղջիկ՝ որ Իսրայէլի որդւոց ցեղերուն մէջ կալուածքի մը ժառանգ կ՚ըլլայ, իր հօրը ցեղին հզող մէկուն կին ըլլայ, որպէս զի Իսրայէլի որդիներուն ամէն մէկը իր հայրերուն ժառանգութիւնը ժառանգէ. 9—Ու ժառանգութիւնը մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի, բայց Իսրայէլի որդւոց ցեղերուն ամէն մէկը իր ժառանգութեանը յարի։

10—Ե՝ Տէրը Մովսէսի ինչպէս հրամայեց, Սալպհադի աղջիկները այնպէս ըրին։ 11—Ռանդի Սալպհադի աղջիկները, Մահլա, Թերսա, Էգդա, Մեզքա ու Նոաա, իրենց հօրեղբօրորդիներուն հետ ամուսնացան։ 12—Այսպէս Յովսէփեան Մանասէի որդիներուն տոհմերէն եղդոներու կին եղան, ու անոնց ժառանգութիւնը իրենց հօրը ցեղին և ազգատոհմին մէջ մնաց։

13—Ասոնք են այն պատուիրանքները ու դատաստանները, զորանք Տէրը Մովսէսի դաշտերուն մէջ Երիքովի դէմ Յորդանանու ափը՝ Մովսէսի ձեռքով Իսրայէլի որդիներուն պատուիրեց։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Առանք են այն խօսքերը զորոնք Մովսէս բոլոր Իսրայէլի զրուցեց Յորդանանու ապիւր կողմը անապատին մէջ, որ Սուփ զիմացի գաւազ՝ Փառանի, Տոփէլի, Վաբանի, Հազերովթի ու Տիզահաբի մէջտեղն է։ 2— (Երեքեր մինչև Կադէսբառնէայ տասնըմէկ օր է Սէիր լեռնան ճամբայով։) 3— Արդ քառասներորդ տարին մեռտասներորդ ամսուն առաջին ։ըշ՝ Մովսէս Իսրայէլի որդիներուն պատուիրեց ինչ որ Տէրը անոր պատուիրեր էր անոնց համար, 4— ետքերնէն մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորը և Աստարովթի — Եդրայիի մէջ բնակող Բասանի Ովգ թագաւորը զարնելէն ետքը։ 5—Յորդանանու ապիւր կողմը Մովաբի երկրին մէջ Մովսէս սկսաւ այս օրէնքը յայտնել՝ ըսելով,

6— Մեր Տէր Աստուածը Քորէբի վրայ մեզի խօսեցաւ ու ըսաւ, Այս լեռը կինաղիով հերիք է։ 7—Դարձէք, չուեցէք ու գացէք Ամորհացւոց լեռը և անոր ամէն չրջակայ տեղերը, դաշտերը, լեռները ու հովիտները, և հարաւային կողմը ու ծովեզերքը, Փառնացւոց երկիրը ու Լիբանան, մինչև մեծ գետը, Եփրատ գետը։ 8— Ահա այն երկիրը ձեր առջև դրի։ գացէք ու ժառանգեցէք այն երկիրը, զոր Տէրը ձեր հայրերուն, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի, երդում ըրաւ որ տայ անոնց ու անոնցմէ ետքը անոնց զաւակներուն։

9—Ես այն ատեն ես ձեզի խօսեցայ ու ըսի, Ես մինակ չեմ կրնար ձեզ տանիլ։ 10—Ձեր Տէր Աստուածը ձեզ շատցուց, և ահա դուք այսօր երկինքի աստղերուն չափ շատ եք։ 11— Ձեր հայրերուն Տէր Աստուածը ձեր եղածէն հազարապատիկ աւելցնէ ձեզ, ու ձեզի բսածին պէս ձեզ օրհնէ։ 12—Ես մինակ ինչպէս կրնամ ձեր նեղութիւնը, ձեր բեռը ու հակառակութիւնը կրել։ 13—Դուք ձեր ցեղերէն իմաստուն ու հանճարեղ և անուանի մարդիկ առէք, ու ես զանոնք ձեր վրայ իշխաններ կնշանեմ։ 14— Իսկ դուք ինծի պատասխան տուիք ու ըսիք, Այդ բսած խօսքդ բնելը ազէկ է։ 15—Ուստի ես ձեր ցեղերուն երեւելիները, իմաստուն ու անուանի մարդիկ, առի, և զանոնք ձեր վրայ իշխաններ կարգեցի, սրինգներ ձեր ցեղերուն մէջ հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ և տասնապետներ ու տասիկաններ։

16—Ես այն ատեն ձեր դատաւորներուն պատուիրեցի՝ ըսելով, Ձեր եղբայրներուն դատերը մտիկ ըրէք, ու ամէն մարդուն դատը, թէ՛ իր եղբօրը հետ ըլլայ և թէ՛ օտարականի հետ, արդարութեամբ դատեցէք։ 17—Դատաստանի մէջ աչառութիւն չընէք, պզտիկին մեծի պէս մտիկ ընէք, բնաւ մարդէ մը երեսէ չդաչտիք. քանզի դատաստանը Աստուծոյ է. ու ձեզի դժուար երեւցած դատը ինծի ներկայացուցէք, որպէս զի զանիկա մտիկ ընեմ։ 18—Ես այն ատեն ձեր ամէն ընելու բաները ձեզի պատուիրեցի։

19—Ետքը Քորէբէ չուեցինք, ու ինչպէս մեր Տէր Աստուածը մեզի պատուիրեր էր, Ամորհացւոց լեռանը ճամբով՝ այն ձեր տեսած բոլոր մեծ ու ահագին անապատէն անցանք, ու մինչև Կադէս-բառնէայ հասանք։ 20—Ես ձեզի ըսի, Դուք Ամորհացւոց լեռը հասաք, զոր մեր Տէր Աստուածը մեզի կու տայ։ 21—Նայէ, քու Տէր Աստուածդ երկիրը քու առջևդ դրաւ. ելլէ, ժառանգէ զանիկա, ինչպէս քու հայրերուդ Տէր Աստուածը քեզի բսաւ. մի վախնար ու մի զարհուրիր։

22—Ես դուք ամէնդ իմ քովս եկաք, ու ինծի ըսիք, Մեզմէ առաջ մարդիկ դրկենք, որպէս զի երկիրը լրտեսեն մեզի համար, ու մեզի դան պատասխան թիւնը, ձեր ելած ճամբով հոն պիտի ելլենք, ու ի՛նչ քաղաքներու մէջ պիտի մտնենք։ 23—Ես այս խօսքը ինծի հաճոյ թուելով, ձեզմէ տասներկու մարդ առի, ամէն մէկ ցեղէն մէկական մարդ։ 24—Ես անոնք գացին՝ լեռը ելան, ու մինչև Եշքոլի ձորը հասան, ու այն երկիրը լրտեսեցին։ 25—Ես այն երկիրն պատղին ձեռքերնին առնելով մեզի բերին, ու մեզի զրուցեցին՝ ըսելով, Ազէկ է այն երկիրը զոր մեր Տէր Աստուածը մեզի կու տայ։ 26—Բայց դուք չուզեցիք ելլել, ու ձեր Տէր Աստուծոյն հրամանին դէմ դրիք։ 27—Ես ձեր վրաններուն մէջ արտնչելով ըսիք, Տէրը մեզ ատելուն համար Եգիպտացի երկրէն մեզ գուրս հանեց, որպէս զի մեզ Ամորհացւոց ձեռքը մատնէ, ու մեզ կորնցնէ։ 28—Ո՞ր պիտի ելլենք. մեր եղբայրները մեր սիրտերը *թուլցուցին, որավհետև բսին, Այն ազգը մեզմէ մեծ ու բարձրահասակ է, քաղաքները մեծ ու մինչև երկինք պարսպատար են, ու հոն նաև Ենակի որդիները տեսանք։ 29— Ես ձեզի ըսի, Մի զարհուրիք ու անոնցմէ մի վախնաք։ 30— Ձեր Տէր Աստուածը որ ձեր առջևէն կ'երթայ, անիկա ձեզի համար պիտի պատերազմի, ինչպես Եգիպտացի մէջ ձեր աչքերուն առջև ձեզի ըրաւ։ 31— Ու անապատին մէջ ալ տեսար որ, ինչպես մարդ մը իր զաւակը կը տանի, քու Տէր Աստուածդ ալ քու բոլոր գացած ճամբաներուդ մէջ մինչև այս տեղ գալդ քեզ այնպէս տարաւ։ 32— Ես սակայն ալ ձեր Տէր Աստուածոյն չհաւատացիք։ 33—Որ ճամբուն մէջ ձեր առջևէն կ'երթար ձեզի իջեւանելու տեղ փնտռելու համար, գիշերը կրակի մէջ երթալու ճամբանիդ ձեզի ցուցնելով, ու ցորեկն ալ ամպի մէջ։ 34—Ես Տէրը ձեր խօսքերուն ձայնը լսելով բարկացաւ, ու երդում ընելով՝ բսաւ, 35—Այս մարդացեղին, այս անօրէն ազգէն, քնաւ մարդ մը պիտի չտեսնէ այն բարի երկիրը, զոր ձեր հայրերուն տալու երդում ըրի։ 36— Բայց միայն Յեփոնէի որդին Քաղէբ պիտի տեսնէ զայն, ու անոր կոխած երկիրը իրեն ու իր որդիներուն պիտի տամ, որովհետև անիկա կատարելապէս Տէրոջը հետևեցաւ։ 37—Ձեզի համար Տէրը բնծէ ալ բարկացաւ, ու բսաւ, Դուն ալ հոն պիտի չմտնես. 38—Այլ քու *սպասաւորդ, Նաւէի որդին Յեսու, անիկա հոն պիտի մտնէ, զօրացուր զանիկա, վասն զի այն Իսրայէլ անիկա պիտի ժառանգեցնէ Իսրայէլի։ 39—Ես այն ձեր պզտիկ տղաքը, որոնց համար կ'րսէիք թէ աւար պիտի ըլլան, ու այն ձեր որդիները որոնք այսօր գիտկը ու գէշը չեն ճանչնար, անոնք պիտի մտնեն հոն. անոնց պիտի տամ այն Իսրայէլ, ու անոնք պիտի ժառանգեն զայն։ 40—Բայց դուք ես գարձէք, ու կարմիր ծովուն ճամբայէն դէպ ի անապատը չուեցէք։

41—Եաթը դուք պատասխան տուիք ու ինծի ըսիք, Մենք Տէրոջը առջև մեղք գործեցինք. մենք պիտի ելլենք պատերազմինք, ինչպես մեր Տէր Աստուածը մեզի պատուիրեց. ու ամէն մեկդ իր պատերազմական զէնքը առնելով, *թիթեռնատեսը ուզեցիք՝ լեռը ելլել։ 42—Ես Տէրը ինծի ըսաւ, Անոնց ըսէ, Մի ելլէք ու մի պատերազմիք, քանզի ես ձեր մէջ չեմ. չըլլայ որ ձեր թշնամիներուն առջև յաղթուիք։ 43—Ես ալ ձեզի խօսեցայ, բայց դուք մտիկ չըրիք, հապա Տէրոջը հրամանին դէմ դրիք, և յամառաբեւն ընելով լեռը ելաք։ 44—Ու այն լեռանը վրայ բնակող Ամորհացիները մեղուներու պէս ձեր դէմ ելլելով ձեզ հալածեցին, ու Սէիրի մէջ ձեզ զարկին մինչև Հորմա։ 45—Ես դառնալով Տէրոջը առջև լացիք, սակայն Տէրը ձեր ձայնը չլսեց ու ձեզի ականջ չդրաւ։ 46—Ու կայէսի մէջ չատ օրեր կեցաք, որչափ օրեր որ հոն կեցաք։

---

*Եբր. հալեցուցին

*Եբր. առջևդ կացնողը †Կամ, ժողովուեցաք, ԵՒ յոմ, պատրաստուելով թիւն ուսաք

ԳԼ. Բ

Ա ՅՆ ատեն եհաս դարձանք ու կար-միր ծովուն ճամբային դէպ ի անա-պատը չուեցինք, ինչպէս Տէրը ինծի բսեր էր, ու շատ օրեր Սէիր լեռանը բոլորտիքը պտտեցանք։ 2—Ու Տէրը ինծի խօսեցաւ ու ըսաւ, 3—Ահ հերիք է այդ լեռանը բոլորտիքը պտտելնիդ. հիւսիսային կողմը դարձէք։ 4—Ու ժո-ղովուրդին պատուիրէ ու ըսէ, Դուք հիմա Սէիր բնակող ձեր եղբայրներուն, Եսաւի որդիներուն, սահմանին պիտի անցնիք. անոնք ձեզմէ պիտի վախնան, բայց դուք մեծապէս զգուշացէք. 5—Անոնց հետ մի ծեծկռտիք. քանի՜ ես ձեզի անոնց երկիրէն ոչ ոտնաչափ տեղ ալ տալու չեմ, որովհետեւ Սէիր լեռը Եսաւի ժառանգութիւն տուեր եմ։ 6—Կերակուրը տակաւ ծախու առնէք անոնցմէ ու ուտէք, և ջուրն ալ տակաւ ծախու առնէք անոնցմէ ու խմէք։ 7—Քանի՜ որ Տէր Աստուածդ ձեռքիդ տակին գործերուն մէջ օրհնեց քեզ. անիկա գիտէ որ դուն այս մեծ անապատին մէջ կը պտրտիս։ Տէր Աստուածդ այս քառասուն տարին քեզի հետ էր, ու բանի մը պակաւութիւն չքաշեցիր։

8—Ուստի մենք մեր եղբայրներուն, Եսաւի որդիներուն, քովէն, որոնք Սէիր կը բնակէին, դաշտի ճամբային, Ելաթէ ու Գասիոն-գաբերէ անցանք. ու դէպ ի քառասուն Մոաբի անապատն անցանք։ 9—Ու Տէրը ինծի բսաւ, Մոաբացւոց թշնամա-թիւն մի ընէր, ու անոնց հետ պա-տերազմ մի ընէր. քանի՜ անոնց երկրէն քեզի ժառանգութիւն տալու չեմ, որովհետեւ Աբր Դավթի որդիներուն ժառանգութիւն տուի։ 10—(Ա՛յն ատեր առաջ Էմիմները կը բնակէին, որոնք մեծ ու շատ ու երկայնահասակ ազգ մըն էին. 11—Ա-նոնք ալ Ենակիմներուն պէս հսկաներ կը սեպուէին. ու Մոաբացիք զանոնք Էմիմ կը կոչէին. 12—Ու Սէիրի մէջ առաջ Քառեցիներ կը բնակէին, բայց Ե-սաւի որդիները զանոնք վռնտելով ու երկրէն ապրելէն զանոնք ջարդելով՝ անոնց տեղը բնակեցան. ինչպէս Իսրա-յէլացիք երկրին իրենց ժառանգութեանը երկրին, զոր Տէրը անոնց տուաւ։) 13—Հիմա եկէք Զարեդ ձորէն անցէք։ ու մենք Զարեդ ձորէն անցանք։

14—Մեր պտրտած օրերը, Կադէս բառնեալ եկած միջև Զարեդ ձորէն անցնելնիս, երեսուներկու տարի եղաւ. մինչև որ բանակին մէջէն պատերազ-մող մարդոց այն բոլոր ազգը հատաւ, ինչպէս Տէրը անոնց երդում ըրեր էր։ 15—Ու ձեռնը բանակին մէջէն բնա-ջինջ ընելու համար՝ Տէրոջը ձեռքն ալ անոնց վրայ էր, մինչև որ անոնք հատան։

16—Ու երբ բոլոր պատերազմող մարդիկը ժողովուրդին մէջէն մեռան ու հատան, 17—Տէրը ինծի խօսեցաւ՝ ըսելով. 18—Դուն այսօր Մոաբի սահ-մանը եղած Արէն պիտի անցնիս, 19—Ու Ամմոնի որդիներուն դէմ ի մօտ երթալդ ատեն անոնց թշնամութիւն մի ըներ, և անոնց հետ մի ծեծկռտիր. քանի՜ Ամմոնի որդիներուն երկրէն քեզի ժառանգութիւն տալու չեմ, որովհետեւ զանիկա Դավթի որդիներուն ժառանգութիւն տուի։ 20—(Ա՛յն ալ հսկաներու երկիր կը սեպուէր. առաջ այն տեղը հսկաներ կը բնակէին, ու Ամմոնացիք զանոնք Զամզումիմ կը կոչէին. 21—Որոնք Ենակիմներուն պէս մեծ ու շատ ու երկայնահասակ ազգ մըն էին. բայց Տէրը զանոնք բնաջինջ ըրաւ անոնց առջեւէն, որոնք վռնտեցին զանոնք, և անոնց տեղը բնակեցան. 22—Ինչպէս Սէիր բնակող Եսաւի որդիներուն համար ալ ըրաւ, երբ Քառեցիները բնաջինջ ըրաւ անոնց առջեւէն. և զանոնք վռնտեցին, ու անոնց տեղը բնակեցան մինչև այսօր։ 23—Ու Աւացիները, որոնք մինչեւ Գազա †գիւղաքաղաքները մէջ կը բնակէին, զանոնք ալ Կափթարէ ելլող Կափթարացիք ջարդեցին, ու անոնց տեղը բնակեցան։) 24—Եւ ես չուեցէք ու Առնոն ձորէն անցէք. ահա Եսբոնի թագաւորը, Ամորհացի Սեհոնը, ու անոր երկիրը քու ձեռքդ տուի. սկսէ

*ՆԲԳ. դիմաց
†կամ, Աւերիմի

ընդլ– ժառանգել, ու անոր հետ պա-տերազմ բրէ։ 25—Այսօր քու ես-նէդ վախը ու սասկումը բոլոր երկինքի տակ եղող ազգերուն վրայ պիտի սկսիմ դնել, այնպէս որ քու համբաւդ լսող-ները քու երեսէդ դողան ու ապգնային։

26—Ես Կադեմթի անապատէն Սե-հոն Եսբոնի թագաւորին խաղաղու-թեան խօսքերով դեսպաններ զրկեցի՝ ըսելով, 27—Անցնիմ քու երկրէդ, *մեծ ճամբայէն պիտի երթամ, ո՛չ կամ ձախ կողմը չեմ խոտորիր։ 28—Կերակուրը ինծի ասեկով ծախէ որ ուտեմ, ու ջուրն ալ ինծի ասեկով տուր որ խմեմ. միայն թէ ոտքերովս անցնիմ։ 29—Ինչպէս Սէիր բնակող Եսաւի որդիները ու Ար բնակող Մո-վաբացիք ինծի ըրին, մինչև որ ես Յոր-դանէն անցնիմ դէպ ի այն երկիրը զոր մեր Տէր Աստուածը մեզի պիտի տայ։ 30—Բայց Եսբոնի Սեհոն թագա-ւորը չուզեց որ մենք անկէ անցնինք. վասն զի քու Տէր Աստուածդ անոր հո-գին խստացուցեր էր ու սիրտը կարծ-րացուցեր էր, որպէս զի զանիկա քու ձեռքդ տայ, ինչպէս այսօր կը դիտես։ 31—Ու Տէրը ինծի բսաւ, Ահա Սեհոնը ու անոր երկիրը սկսայ քու ձեռքդ տալ։ սկսէ անոր տիրել, որպէս զի ա-նոր երկիրը ժառանգես։

32—Ուստի Սեհոն ինք իր բոլոր ժո-ղովուրդովը Յասայի մէջ մեր դէմ ե-լաւ, որպէս զի մեզի հետ պատերազմի։ 33—Ես մեր Տէր Աստուածը զանիկա մեր ձեռքը մատնեց, ու մենք զանիկա և անոր որդիները ու անոր բոլոր ժողո-վուրդը զարկինք. 34—Ես նոյն ատեն անոր բոլոր քաղաքները առինք, ու անոր բոլոր քաղաքներուն մէջ եղած այր մարդիկը, կիներն ու ազգքները կործանեցինք, անոնցմէ մէ՛կ ալ չմնացուցինք. 35—Միայն անասուններն ու առած քաղաքներուս աւարները մեզի առինք. 36—Առնոն ձորին եղերք-ը եղած Արոէրէն ու ձորին մէջ եղած քաղաքէն մինչև Գաղաադ բնաւ մեզի դէմ դնող քաղաք մը չեղաւ. մեր Տէր Աստուածը ամէնն ալ մեր ձեռքը մատ-նեց։ 37—Միայն թէ Ամմոնի որդիներուն երկրին, ու բոլոր Յաբոկ ձորին կողմերուն և լեռնային քաղաքներուն, ու մեր Տէր Աստուածդ բոլոր մեզի ար-գիլած տեղերուն չմօտեցաւ։

ԳԼ. Գ

Ա ՆԿէ դարձանք Բասանի ճամբան ելանք, ու Բասանի Ովգ թագաւորը ինք, իր բոլոր ժողովուրդովը Եդրէյիի մէջ մեր դէմ ելաւ պատերազմելու համար։ 2—Ու Տէրը ինծի բսաւ, Անկէ մի վախնար, վասն զի զանիկա ու անոր բոլոր ժողովուրդը ու երկիրը քու ձեռքդ կու տամ. ու անոր ալ եհե-րոնի մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորին րըածիդ պէս րբէ։ 3—Ես մեր Տէր Աստուածը Բասանի Ովգ թա-գաւորն ալ ու անոր բոլոր ժողովուրդը մեր ձեռքը տուաւ. և մենք այնպէս յարդեցինք *զանոնք, որ անոնցմէ մէ՛կ ալ ազ չմնաց։ 4—Ես նոյն ատեն ա-նոր բոլոր քաղաքները առինք. ո՛ք քա-ղաք մըն ալ չմնաց, զոր անոնցմէ ա-ռած չըլլանք. վեթսունը քաղաք այրկնքի բոլոր Արգովբի գաւառը, Բասանի մէջ Ովգի թագաւորութիւնը։ 5—Ասոնց ա-մէնն ալ բարձր պարիսպներով, դռնե-րով ու գաւազանկներով ամրացած քա-ղաքներէ էին, անպարիսպ գաղաքնե-րէն զատ, որոնք խիստ շատ էին։ 6—Ես զանոնք բնաջինջ ըրինք, ինչպէս Եսբոնի Սեհոն թագաւորը ըրինք, ա-մէն քաղաքներու մէջ մարդիկը, կի-ները ու ազգքները կործանելով. 7—Սակայն բոլոր անասուններն ու քա-ղաքներուն աւարները մեզի առինք։ 8—Ես այն նոյն ժամանակին՝ Յորդա-նանս անդիի կողմը եղող Ամորհացւոց երկու թագաւորներուն ձեռքէն առինք երկիրը, Առնոն ձորէն մինչև Հերմոն լեռը։ 9—(Սիդոնացիք Հերմոնի Սարիօն կ'ըսէին, բայց Ամորհացիք զա-նիկա Սանիր կը կոչէին։ 10—Բոլոր դաշտի քաղաքները, բոլոր Գաղաադը ու բոլոր Բասանը մինչև Սելքա ու Եդ-

*ՆԲԳ. ճամբայէն ճամբայէն

*ՆԲԳ. զանիկա, անոր ծառացող չթո-ղելու չափ

բայի, Բասանի մէջ եղած Ովգի թագաւորութեան քաղաքները —ՀԵ։
11— Բանդի հակառակութեան *Մեացարգին միայն Բասանի Ովգ թագաւորը մնացեր էր։ ահա անոր մահիճը, որ երկաթէ մահճի մըն է, Ամմոնի որդիներուն Ռաբբային մէջ կ՚երեսայ։ երկայնութիւնը ինը կանգուն է, ու լայնութիւնը չորս կանգուն է մարդու կանգունով։
12— Ու նոյն ժամանակին մէջ այս մեր առած երկիրը, Առնոն ձորին վրայ եղող Արոէրէն մինչև Գաղաադ լեռանը կէսը, իր քաղաքներովը Ռուբենացիոց ու Գադացիոց տուի։ 13— Ու Գաղաադի մնացածը ու բոլոր Բասանը, այսինքն Ովգի թագաւորութիւնը —բոլոր Արգովբի գաւառը, բոլոր Բասանի հետ, որ հակառակ երկիրը կ՚ըսուէր, Մանասէի կէս ցեղին տուի։
14— Ու Մանասեան Յայիր բոլոր Արգովբի գաւառը առաւ մինչև Գեսուրացւոց ու Մաաքաթացւոց սահմանը, ու զանոնք իր անունովը մինչև այսօր †Բասան-Հաւօթ-Յայիր՝ կոչեց։ 15— Ա.յագիս Գաղաադը Մաքիրի տուի։
16— Ու Գադացւոց մինչև Առնոն ձորը, (այսինքն ձորին մէջտեղը որ սահմանն է,) ու մինչև Ամմոնի որդիներուն սահմանը եղած Յաբոկ ձորը, Ռուբենացոց ու Գադացոց տուի։ 17— Նաև դաշտը Յորդանանու սահմանովը Քինէրեթէ մինչև դաշտային ծովը, այսինքն մինչև Աղի ծովը, արեւելեան կողմը եղած Աշեդովթ-փասգայի տակ։
18— Ու այն ատեն ձեզի պատուիրեցի ու ըսի, Ձեր Տէր Աստուածը այս երկիրը ձեզի ժառանգութիւն տուաւ. ասադէ դուք ամէնդ որ կորիճներ էք, պէնջերնիդ առէք, ու իսրայէլի որդիներուն, ձեր եղբայրներուն առջև անցէք։ 19— Բայց ձեր կիները, ձեր որդիները ու ձեր անասուններուն, (որովհետև ձեր անասուններուն չատ բլլալը գիտեմ,) թող միայն ձեր քաղաքներուն մէջ, զորոնք ես ձեզի տուի, 20— Մինչև որ Տէրը ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգստացնէ, ու մինչև որ անոնք ալ ժառանգեն այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը Յորդանանու անդիի կողմը անոնց պիտի տայ։ ու հետքը ձեզմէ ամէն մէկը դառնայ իր ժառանգութիւնը զոր ես ձեզի տուի։
21— Այն ատեն Յեսուի պատուիրեցի՝ ըսելով, Քու աչքերդ տեսան ինչ որ ձեր Տէր Աստուածը այս երկու թագաւորներուն բրաւ. այնպէս —ը պիտի ընէ Տէրը այն ամէն թագաւորութիւններուն, *որոնց վրայ դուն պիտի երթաս, 22—Անոնցմէ չվախնաս. վասն զի ձեր Տէր Աստուածը ինք կը պատերազմի ձեզի համար։ 23— Ու այն ատեն Տէրոջը աղաչեցի ու ըսի, 24— Ով Տէր Եհովա, դուն սկսեցիր քու մեծութիւնդ ու քու զօրաւոր ձեռքդ քու ծառայիդ ցուցնելու. վասն զի երկինքի մէջ կամ երկրի վրայ ո՞վ է այն աստուածը, որ քու գործերուդ ու քու զօրութեանդ պէս ընէ՞ր հը ընելու կարող բլլայ։ 25— Ընորհք բրէ որ անցնիմ, ու Յորդանանու անդիի կողմի բարի երկիրը, այն բարի լեռը ու Լիբանանը, տեսնեմ։ 26— Բայց Տէրը ձեր պատճառու բնաւ սրդոդուելով՝ իմ խնդիրքս չընդունեց. և Տէրը ինծի ըսաւ, Ալ հերիք է քեզի. մէկմէն ալ այդ բանը ինծի չդրուագես. 27— Փսգայի գագաթը երթալ, ու դէպ ի արեւմուտք, հիւսիս, հարաւ ու արեւելք աչքերդ վերցուր, ու քու աչքերովդ դիտէ. քանզի դուն այս Յորդանանէն պիտի չանցնես։ 28— Ու Յեսուի պատուէր տուիր զանիկա զօրացուր, ու անոր սիրտ ատր. քանզի անիկա պիտի անցնի այս ժողովուրդին առջև, և քու դիտելու երկիրը անիկա պիտի ժառանգեցնէ ատնոնց։ 29— Ու սահ մնաք հովիտին մէջ Բեթ-փեգովրի դիմաց նստանք։

Գլ. Դ

Եւ հիմա, ով Իսրայէլ, իմ քեզի սորվեցուցած կանոններս ու դատաստաններս մտիկ ըրէ, որպէս զի զանոնք ընելով ողջ մնաք, ու մտնէք ժառանգէք այն երկիրը զոր ձեր հայրերուն

*ԿամՀ, բազմաթիւներն
†Այսինքն, Յայիրի դիւղաքաղաքներուն Բասանը

*ԲԲր. որ դուն հոն կ՚անցնիս

Տէրը Աստուածը ձեզի կու տայ։ 2— Ձեզի պատուիրած խօսքիս վրայ բան մը չաւելցնէք, ու անկէ բան մը չպակասցընէք, այլ ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքները պահէք, զորոնք ես ձեզի կը պատուիրեմ։ 3— Ձեր աչքերը տեսան ինչ որ Տէրը Բեէլփեգովրի բրաւ. վասն զի քու Տէր Աստուածդ Բեէլփեգովրի հետևէն գացող բոլոր մարդիկը ձեր միջէն կորնցուց։ 4— Բայց դուք որ ձեր Տէր Աստուածոյն յարեցաք, ամէնդ այսօր ողջ էք։ 5— Ահա ձեզի կանոններ ու դատաստաններ սորվեցուցի, ինչպես իմ Տէր Աստուածս ինծի պատուիրեց, որպես զի զանոնք ի գործ դնէք այն երկրին մէջ, ուր պիտի մտնէք ժառանգելու համար։ 6— Ուստի դուք ղննէ պահեցէք ու բրէք. վասն զի ձեր իմաստութիւնը ու հանճարը այս պիտի բլլայ ազգերուն առջև, որոնք այս բոլոր կանոնները լսելով պիտի ըսեն, Իրաւցնէ այս մեծ ազգը իմաստուն ու հանճարեղ ժողովուրդ մըն է։ 7— Քանզի ո՞ր ազգը այնչափ մեծ է, որ իր աստուածները իրեն մօտ բլլան, ինչպես մեր Եհովա Աստուածը ԴՂ մտ է ամէն բանի մէջ զոր անկէ կը խընդրենք։ 8— Ու ո՞ր ազգը այնչափ մեծ է, որ իր այսօր ձեր առջև դրած այս բոլոր օրէնքիս նման արդար կանոններ ու դատաստաններ ունենայ։ 9— Միայն քեզ ազէկ նայէ, ու քու հոգւոյդ չատ զգուշութիւն բրէ, որ չլլլայ թէ աչքերուդ տեսած բաները մոռնաս, և չլլլայ թէ կեանքիդ բոլոր օրերուն մէջ քու սրտէդ ելլեն. այլ զանոնք քու որդիներուդ ու որդւոցդ որդիներուն սորվեցնես։ 10— Այն օրը որ դուն Քորէբ քու Տէր Աստուծոյդ առջեւ կեցեր էիր, Տէրը ինծի ըսաւ, Ժողովուրդը ինծի ժողվէ, ու իմ խօսքերս լսել պիտի տամ անոնց, որպէս զի սորվին ինծի վախնալը արչաւ օրեր որ երկրի վրայ պիտի ապրին, ու իրենց որդիներուն ալ սորվեցնեն։ 11— Ու դուք մտանելով՝ լեռանը տակ կայնեցաք. ու լեռը խաւարով, ամպով ու մառախուղով ծածկուած, *մինչև երկինքի կրակով կը

*ԲԲր. մինչև երկինքի սիրտը

բորբոքէր։ 12— Ու Տէրը կրակին միջէն ձեզի խօսեցաւ. դուք ձայը խօսքերուն ձայնը լսեցիք. ու նմանութիւն մը չտեսաք, բայց միայն ձայն լուեցէք։ 13— Ու իր ուխտը, զոր պատուիրանքները, ձեզի իմացուց, ու պատուիրեց որ զանոնք ընէք. և զանոնք երկու հատ քարէ տախտակներու վրայ գրեց։ 14— Ու այն ատեն Տէրը ինծի պատուիրեց, որ ձեզի կանոններ ու դատաստաններ սորվեցնեմ, որպէս զի զանոնք ի գործ դնէք այն երկրին մէջ, ուր պիտի մտնէք ժառանգելու համար։
15— Ուրեմն ձեր հոգիներուն ազէկ զգուշութիւն բրէք. որովհետև այն օրը որ Տէրը Քորէբ լեռէն երկինքին մէջէն ձեզի խօսեցաւ, բնաւ նմանութիւն մը չտեսաք։ 16— Չրլլայ որ անօրինէք, ու ձեզի կուռք մը կամ պատկեր *բանի պատկերը, քէ՛ արու և քէ՛ էգի նմանութիւնը, 17— կամ երկրի վրայ եղող անասունի մը նմանութիւնը, կամ օդին մէջ թռչող թեւաւոր թռչնի մը նմանութիւնը, 18— կամ երկրի վրայ սողալի սողունի մը նմանութիւնը, կամ երկրի տակ ջուրերու մէջ եղող ձուկ մը նմանութիւնը չինէք. 19— Նաև չբլլայ որ աչքերդ երկինքը վերցընելով, ու արեւը կամ լուսինը կամ աստղերը —երկինքի բոլոր զօրքը տեսնելով խաբուիս, ու անոնց երկրպագութիւն ընես, և զանոնք պաշտես. զորս Տէր Աստուածդ զանոնք բոլոր երկինքի տակ եղող ազգերուն համար կարգաւորեց։ 20— Բայց Տէրը ձեզ առաւ, ու ձեզ երկաթի հնոցէն, եգիպտոսէ, հանեց, որպէս զի իրեն †սեպհական ժողովուրդ բլլաք, ինչպես այսօր կ՚ըլլաք։
21— Ու Տէրը ձեր պատճառու ինծի զգուշութիւն բրաւ որ Յորդանան չանցնիմ, ու չմտնեմ այն բարի երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ ժառանգելու համար։ 22— Արդ ես այս երկրին մէջ պիտի մեռնիմ, ու Յորդանան պիտի չանցնիմ. բայց դուք պիտի անցնիք ու այն բարի

*ԲԲր. նմանութեան
†ԲԲր. ժառանգութեան

երկիրը պիտի ժառանգէք։ 23—Զգոյշ կեցէք, չըլլայ որ ձեր Տէր Աստուծոյն ձեզի հետ ըրած ուխտը մոռնաք, ու ձեզի կուռք մը կամ պատկեր քանի մը նմանութիւնը չնկէք զոր ձեր Տէր Աստուածդ քեզի արգիլեց։ 24—Քանզի ձեր Տէր Աստուածդ մաղդ կրակ է. անիկա նախանձոտ Աստուած է։

25—Երբ դուք որդիներ ու որդւոց որդիներ ծնանիլը ըլլաք, և այն երկրին մէջ հոս տասն նստելը ըլլաք, այն ատեն եթէ անօրինէք, և կուռք մը կամ պատկեր քանի նմանութիւնը շինէք, ու ձեր Տէր Աստուծոյն աչքին չարութիւնն ընէք ու զանիկա բարկացընէք, 26—Այսօր երկինքը ու երկիրը ձեզի վկայ կը բռնեմ, որ դուք անպատճառ շուտով պիտի կորսուիք այն երկրէն զոր Յորդանանէ անցնելով պիտի ժառանգէք. այն տեղը կանգիցիդ երկար պիտի չըլլայ, այլ բոլորովին բնաջինջ պիտի ըլլաք։ 27—Ու Տէրը ձեզ ազգերուն մէջ պիտի ցրուէ, ու դուք սակաւաթիւ պիտի մնաք այն ազգերուն մէջ, ուր Տէրը ձեզ պիտի քշէ։ 28—Ու հոն մարդու ձեռքով շինուած քարէ ու փայտէ աստուածներ պիտի պաշտէք, որոնք ոչ կը տեսնեն, ոչ կը լսեն, ոչ կ'ուտեն ու ոչ կը հոտուըտան։ 29—Ու հոն քու Տէր Աստուածդ պիտի փնտռես ու եթէ զանիկա բոլոր սրտովդ և բոլոր հոգւովդ փնտռելը ըլլաս, պիտի գտնես։ 30—Երբ քու վրադ նեղութիւն գայ ու այս բոլոր բաները վերջին օրերը քեզի պատահին, եթէ քու Տէր Աստուածդ դառնաս ու անոր խօսքը մտիկ ընես, 31—Քու Տէր Աստուածդ, զորմած Աստուած ըլլալուն համար, քեզ պիտի չթողու, ու քեզ չկորնչեցնէ, ու նաև քու հայրերուդ երդումը բրած ուխտը պիտի չմոռնայ։

32—Արդ քեզմէ առաջ եղած առաջին օրերուն համար, այսինքն Աստուծոյ մարդը երկրի վրայ ստեղծած օրէն ի վեր, երկինքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը հարցուր, թէ արդեօք ասոր պէս մեծ բան մը եղա՞ծ է, ու ասոր պէս բան մը լսա՞ած է։ 33—Արդեօք ազգ մը կրակին մէջէն խօսող Աստուծոյն ձայնը քու լսածիդ պէս ըսեր ու ողջ մնացե՞ր է։ 34—կամ թէ Աստուած մէկ ազգը *ուրիշ ազգի մը մէջէն իրեն ամենալու համար փորձերով, հրաշքներով, զարմանալի գործերով, պատերազմով, զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով և մեծ սարսափելիութիւններով զալ *ոգի՞ր է, ինչպես ձեր Տէր Աստուածը Եգիպտոսի մէջ ձեզի համար այս բոլոր բաները քու ձեր աչքերուն առջև։ 35—Ասիկա քեզի ցուցուեցաւ, որպէս զի գիտնաս թէ Եհովա ինք Դ՚ Աստուած է. անկէ ուրիշ Աստուած չկայ։ 36—Քեզ խրատելու համար իր ձայնը երկինքէն լսել տուաւ քեզի, ու երկրի վրայ իր մեծ կրակը քեզի ցուցուց, ու անոր խօսքերը կրակին մէջէն լսեցիր։ 37—Ու քու հայրերդ սիրելուն համար անոնցմէ ետքը անոնց սերունդը ընտրեց, ու իր ներկայութեամբ մեծ զօրութեամբ քեզ Եգիպտոսէ հանեց։ 38—Որպէս զի քեզմէ մեծ ու զօրաւոր ազգեր քու առջևէդ վռնտէ, ու քեզ անոնց երկիրը քեզի ժառանգութիւն տալու, ինչպես այսօր կ՚երևի։ 39—Ու այսօր գիտցիր ու սրտիդ մէջ դիր, որ վերը երկինքի մէջ ու վերը երկրի վրայ Եհովա ինք Դ՚ Աստուած է, ուրիշ մը չկայ։ 40—Ուստի անոր կանոնները ու պատուիրանքները պահես, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, որպէս զի քեզի ու քեզմէ ետքը քու որդիներուդ աղեկ ըլլայ, ու նաև քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ յաւիտենապէս։

41—Այն ատեն Մովսես Յորդանանէ մսպին կողմը դէպի ի արեւելք երեք քաղաք զատեց։ 42—Որպէս զի երկրասպան ու միւս օրսընկէ սաեալութիւն չունեցող, ու անգիտութեամբ իր դրացին մեռցնող մարդասպանը հոն փախչի, ու այս քաղաքներէն մէկուն մէջ փախչելով ազի մնայ։ 43—Ռուբենեանց համար դաշտային երկրի վրայ անապատին մէջ Բասորը, և Գադեանց համար Գաղաադացւոց մէջ Ռամոթը, ու

*Եբր. փորձելը

Մանասեանց համար Բասանի մէջ Գաւլոնը։

44—Աւրկա է այն օրէնքը զոր Մովսես Իսրայէլի որդիներուն առջև դրաւ. 45—ու ասոնք են այն վկայութիւնները, կանոնները և դատաստանները, զորոնք Մովսես Իսրայէլի որդիներուն խօսեցաւ, անոնց Եգիպտոսէ ելած ատենը, 46—Յորդանանու ապտի կողմը Բեթփեղովրի դիմացի հովիտին մէջ, Եսբոնի մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորին երկրին մէջ, զոր Մովսես ու Իսրայէլի որդիները զարկին իրենց Եգիպտոսէ ելած ատենը։ 47—Ու անոր երկիրը ու Բասանի Ովգ թագաւորին երկիրը, այսինքն Յորդանանու ապտին արեւելեան կողմը Ե՚ոՒ Ամորհացւոց երկու թագաւորներուն էրէը։ 48—Ասոնց ձորէն հզերքը հղող Արնոնէն մինչև Սիօն լեռը որ Հերմոն կ՚ըսուի, 49—Ու Յորդանանու ապտին արեւելեան կողմը եղած բոլոր դաշտը մինչև Ասեղովփասգայի ներքև դաշտի ծովեզրը քովէ ժառանգեցին։

Գլ. Ե

Ե. Մովսես բոլոր Իսրայէլը կանչեց ու անոնց ըսաւ, Լսէ, ով Իսրայէլ, այս կանոնները ու դատաստանները զորոնք ես այսօր ձեր ականջներուն կը խօսիմ. սորվիցէք զանոնք և զգուշութեամբ ի գործ դրէք։ 2—Մեր Տէր Աստուածը Քորէբի վրայ մեզի հետ ուխտ ըրաւ։ 3—Տէրը այս ուխտը մեր հայրերուն հետ չըրաւ, հապա մեզի հետ, որ մենք ամենս այսօր հոս ողջ ենք. 4—Տէրը լեռանը վրայ կրակին մէջէն մեզի հետ դէմ առ դէմ խօսեցաւ։ 5—(Ու ես այն ատեն Տէրոջը ու ձեր մէջտեղ կայնեցայ, որպէս զի Տէրոջը խօսքերը ձեզի պատմեմ. վասն զի դուք կրակէն վախնալով լեռը չելաք.) և բսաւ,

6—Ես եմ Եհովա քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեցի։

7—Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս։

8—Դուն քեզի կուռք չշինես, ոչ ալ վերը երկինքի մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրի տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը։ 9—Անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես. վասն զի ես, քու Տէր Աստուածդ, նախանձոտ Աստուած եմ, որ կը հատցնեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ, մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը, որոնք կ՚ատեն զիս։ 10—Ու կ՚ողորմիմ անոնց մինչև հազար ազգը, որոնք կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն։

11—Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղ Բէր-ն չառնես. վասն զի Տէրը իր անունը պարապ տեղ Բէր-ն առնողը անմեղ պիտի չսիպէ։

12—Հանգստութեան օրը զգուշութիւն ըրէ սուրբ պահելու, ինչպես քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց։ 13—Վեց օր պիտի աշխատիս ու բոլոր գործդ ընես. 14—Բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. —ոչ *ըէ գործ մը չգործես, ոչ դուն, ոչ քու որդիդ, ոչ քու աղիկդ, ոչ քու ծառադ ու ազախինդ, ոչ քու եզդ ու էշդ, ոչ քու ամէն անասունդ, ոչ ալ քու տանդ մէջ եղած օտարականդ, որպէս զի քու ծառադ ու ազախինդ ալ քեզի պէս հանգստանայ։ 15—Ու միտդ բերես որ դուն Եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր, ու քու Տէր Աստուածդ զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով քեզ անկէ հանեց. անոր համար քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց որ հանգստութեան օրը պահես։

16—Պատուէ՛ք քու հայրդ ու մայրդ, ինչպես քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց, որպէս զի քու օրերդ երկար ըլլան, ու քեզի աղեկ ըլլայ այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ։

17—Սպանութիւն մի ըներ։

18—Ու շնութիւն մի ըներ։

19—Ու գողութիւն մի ըներ

20—Ու քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ։

21—Ու քու դրացիիդ կնոջ մի ցանկար. քու դրացիիդ տանը, կամ անոր արտին, կամ անոր ծառային, կամ անոր ազախնին, կամ անոր եզին, կամ

անոք խլեան, և քու դպացիդ ամենևին մէկ բանին մի ցանկար։

22—Տէրը այս խօսքերը լեռանը վրայ կրակին, անկեն ու մանաւանդ ինչն բարձր ձայնով ձեր բոլոր ժողովքին ըսաց, և ուրիշ բան չաւելցուց։ ու երկու հատ քարէ տախտակի վրայ գրեց զանոնք, ու ինծի տուաւ։ 23—իսկ լեռանը կրակով վառած ատենը, երբ [1]տարաբին ինչին անոր ձայնը լսեցիք, ու քովս եկաք դուք, այսինքն ձեր ցեղերուն բոլոր դլխաւորները և ձեր ծերերը, ու բսիք, 24—Ահա մեր Տէր Աստուածը իր փառքը ու մեծութիւնը մեզի ցուցուց, ու ձանոր ձայնը կրակին մէջէն լսեցինք։ այսօր տեսանք որ Աստուած մարդու հետ խօսելու, ու [2]էէը ողջ մնաց, 25—ես հիմա մենք ինչո՞ մեռնինք։ (քանի այս մեծ կրակը մեզ պիտի ոսպառէ։) եթէ մենք մեր Տէր Աստուծոյն ձայնը մեյնէն ալ լսելու ըլլանք, պիտի մեռնինք։ 26—Վասն զի բոլոր մարմնէն մի՞ է որ կրակի մէջէն խօսող կենդանի Աստուծոյն ձայնը մեզի պես լսեց ու ողջ մնաց։ 27—Դուն մտանելիր և մեր Տէր Աստուծոյն բոլոր բսելու խոստէը լսէ, ու մեր Տէր Աստուածը քեզի հետ ինչ որ խօսի, դուն մեզի բսէ։ մենք մտիկ կ'ընենք ու կը կատարենք։ 28—Ե Տէրը ձեր խօսքերուն ձայնը լսեց, երբ դուք ինծի կը խօսէիք, ու Տէրը ինծի բսաւ, Ա՛յս ժողովրդին քեզի բսած խօսքերուն ձայնը լսեցի։ անոնց ամէն բսածը չիտակ է։ 29—Ուրանի՛ թէ անոնց սիրտն ալ այնպես ըլլար, որ ինծմէ վախնալով իմ բոլոր պատուիրանքներս միշտ պահէին, որպէս զի իրենց ազգն ալ յաւիտեան։ 30—Գնա անոնց բսէ, Դուք ձեր վրաններդ դարձէ՛ք։ 31—Բայց դուն հոս ինծի հետ կեցիր, ու բոլոր անոնց սորվեցնելու պատուիրանքներդ, կանոններդ ու դատաստաններդ քեզի բսեմ, որպէս զի զանոնք կատարեն այն երկրին մէջ զոր ես անոնց կու տամ ժառանգութեան համար։

32—Ուրդ դդույշ եղէք ձեր Տէր Աստուծոյն ձեզի պատուիրածին պէս ընելու, ու ոչ դէն կամ ձախ դին չխտա-

րէք։ 33—Ձեր Տէր Աստուծոյն ձեզի պատուիրած բոլոր ճամբաներուն մէջ քալէք, որպէս զի ապրիք, ու ձեզի աղէկ ըլայ, և ձեր ժառանգելու երկրին մէջ երկայնակեաց ըլլաք։

Գլ. Զ

Ե. ատանք են այն պատուիրանքները, կանոնները ու դատաստանները, զորանք ձեր Տէր Աստուածը [1]ինձ պատուիրեց ձեզի սորվեցնելու համար, որպէս զի ձեր մանելու ու ժառանգելու երկրին մէջ ի գործ դնէք զանոնք։ 2—Որպէս զի քու Տէր Աստուածդ վախնաս, ու անոր ամէն կանոնները ու պատուիրանքները, զորանք ես քեզի կը պատուիրեմ, քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ պահես, թէ՛ դուն, թէ՛ քու որդիդ և թէ՛ քու որդւոյդ որդին, որպէս զի քու օրերդ երկար ըլլան։ 3—Արդ, ով Իսրայէլ, մտիկ ըրէ, ու զգուշութիւն ըրէ զանոնք կատարելու, որպէս զի քեզի աղէկ ըլայ, և կամ ու մեզր բազում երկրին վրայ խիստ շատնաս, ինչպէս քու հայրերուդ Տէր Աստուածը քեզի խոստացաւ։

4—Ով Իսրայէլ, մտիկ ըրէ։ մեր Տէր Աստուածը [2]մի միայն՝ Տէր է։ 5—Ու քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգւովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես։ 6—Ե այս խօսքերը զորանք ես այսօր քեզի պատուիրեցի, քու սրտիդ մէջ ըլլան։ 7—Ու զանոնք քու որդիներուդ կրկին և կրկին անգամ սորվեցնես։ և թէ՛ տանդ մէջ նստած ատենդ, թէ՛ ճամբայ քալած ատենդ, և թէ՛ պառկելու ու ելլելու ատենդ անոնց վրայով խօսիս։ 8—Ե զանոնք նշանի համար ձեռքիդ վրայ կապես, ու ճակատնոցի համար աչքերուդ մէջ-տեղը ըլլան։ 9—Նաև զանոնք քու տանդ դրանդիքներուն վրայ և դուներուդ վրայ գրես։

10—Ու երբ քու Տէր Աստուածդ քեզ տանի այն երկիրը, որուն համար քու հայրերուդ, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի, երդում բրաւ, որ քեզ

[1]Նբէ. մէկ

զի մեծ ու գեղեցիկ քաղաքներ ապ, կերը ապ մեզի, 24—Ուստի Տէրը մեզի պատուիրեց որ այս բոլոր կանոնները ի գործ դնենք, ու մեր Տէր Աստուածին վախնանք, որպէս զի մեզի ազէկ ըլայ միշտ, ու ազ պահէ մեզ, ինչպէս ենք այսօր։ 25—Ու եթէ մեր Տէր Աստուածոյն առջև այս բոլոր պատուիրանքները զգուշութեամբ կատարենք, ինչպէս ինք մեզի պատուիրեց, այն ատենդարդարութիւն պիտի սեպուի։

Գլ. Է

Երբ քու Տէր Աստուածդ տանի քեզ այն երկիրը, ուր պիտի մտնես ժառանգելու համար, ու քու առջևէդ չատ ազգեր հալածէ, այսինքն Քեթացիները, Գերգեսացիները, Ամորհացիները, Քանանացիները, Փերեզացիները, Խեւացիները ու Յեբուսացիները, այս եօթը ազգերը, որոնք քեզմէ մեծ ու զօրաւոր են, 2—ու երբ քու Տէր Աստուածդ զանոնք քու ձեռքդ տայ, զանոնք զարնես ու բոլորովին կորնչցնես. անոնց հետ ուխտ չընես ու անոնց չողորմիս. 3—ոչ ալ անոնց հետ խնամութիւն ընես. քու աղջիկդ անոր տուն չտաս, ու անոր աղջիկը քու տղուդ չառնես։ 4—Վասն զի քու տղաքներդ իմ ծառայութենես պիտի դարձնեն օտար աստուածներ պաշտելու. ու Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ բորբոքելով ձեզ չուռազ պիտի կորսընցնէ։ 5—Սակայն անոնց այսպես ըրէք. անոնց սեղանները կործանեցէք. անոնց սրճանչները խորտակեցէք, ու անոնց Աստորմիները կտրեցէք, ու անոնց փորագրած կուռքերը կրակով այրեցէք։ 6—Քանզի դուն քու Տէր Աստուածդ սուրբ ժողովրդն ես. և քու Տէր Աստուածդ երկրի երեսին վրայ եղող բոլոր ազգերուն մէջէն քեզ ընտրեց, որպէս զի դուն անոր սեպհական ժողովրդ ըլլաս։ 7—Տէրը որ ձեզ սիրեց ու ընտրեց, ամէն ազգերէն չատուոր ըլլալնուդ համար չէ, քանզի դուք ամէն ազգերէն փիսուր էիք։ 8—Այլ Տէրը ձեզ սիրելուն համար, ու ձեր հայրերուն բրած երդումը պատհելու համար, Տէրը ձեզ զօրաւոր ձեռ-

[2]Նբէ. չար

քավ ծառայութեան առնէն հանեց, և եգիպտացւոց փարաւոն թագաւորին ձեռքէն ազատեց։ 9—Արդ գիտցիր որ քու Տէր Աստուածդ ինքն է Աստուած, հաւատարիմ Աստուածը, որ զինք սիրողներուն ու իր պատուիրանքները պահողներուն մինչև հազար ազգը ուխտ ու ողորմութիւն կը պահէ. 10—ու զինքատողներուն ալ իրենց երեսին դէմ պատիժը կու տայ, ու զանոնք կը կորնչցնէ. զինք ատողին դադրիլ չուշացներ, անոր երեսը կու տայ։ 11—Ուրեմն պահէ դուն այն պատուիրանքները, կանոնները ու դատաստաններդ զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, որպէս զի զանոնք ընես։

12—Ուստի եթէ այս դատաստաններդ լսելով զանոնք պահես ու ի գործ դնես, քու Տէր Աստուածդ ալ քեզի համար քու հայրերուդ երդում ըրած ուխտը ու ողորմութիւնը պիտի պահէ. 13—նաև քեզ պիտի սիրէ և քեզ օրհնէ ու քեզ շատցնէ. և քու որովայնիդ պտուղը, քու երկիրդ պտուղը, քու ցորենդ, քու գինիդ, քու ձիւղդ, կովերուդ ծնունդը ու ոչխարներուդ հօտերը պիտի օրհնէ այն երկրին վրայ զոր Տէրը քու հայրերուդ երդում ըրաւ քեզի տալու։ 14— Դուն ամէն ազգերէն առելի օրհնեալ պիտի ըլլաս. ու ձեր մէջ և ձեր անասուններուն մէջ, թէ՛ արուներէն և թէ՛ էգերէն, ամուլ պիտի չգտնուի։ 15—Ու Տէրը ամէն հիւանդութիւնները քեզմէ պիտի վերցնէ. ու այն եգիպտացւոց դէշ ցաւերը զորոնք դուն գիտես, քեզ քու վրադ պիտի չբերէ, այլ զանոնք քու բոլոր թշնամիներուդ վրայ պիտի դրկէ։ 16— Ու դուն պիտի ուտաս այն բոլոր ազգերը, զորոնք քու Տէր Աստուածդ քու ձեռքդ պիտի տայ. ու քու աչքդ անոնց չխնայէ, ու անոնց աստուածներուն չպաշտես, վասն զի այն քեզի որոգայթ պիտի ըլլայ։ 17—Եթէ սրտիդ մէջ ըսես թէ այն ազգերը ինծմէ շատ ուժգին են, ես ի՛նչպէս կրնամ զանոնք հալածել։ 18—Անոնցմէ մի վախնար, այլ միտդ բեր ինչ որ քու Տէր Աստուածդ ըրաւ փարաւոնի ու բոլոր եգիպտացիներուն։ 19—Այն մեծ ծանուած փորձերը որոնց դուն ականատես եղար, այն նշանները ու հրաշքները, այն զօրաւոր ձեռքը ու բարձր բազուկը, որոնցմով քու Տէր Աստուածդ քեզ հանեց. քու Տէր Աստուածդ այնպէս պիտի ընէ այն բոլոր ազգերուն, որոնցմէ դուն կը վախնաս։ 20—Ու նաև քու Տէր Աստուածդ առնոց վրայ իշամեղու պիտի դրկէ, որպէս զի ծածկուածները ու քու երեսէդ պահուըտողները կորսուին։ 21— Ուրեմն անոնց երեսէն մի վախնար. քանզի քու Տէր Աստուածդ, այն զօրաւոր ու ահարկու Աստուածը, ձեր մէջ է։ 22— Ու քու Տէր Աստուածդ այն ազգերը քու առջևէդ կամաց կամաց պիտի վռընտէ. զանոնք չես կրնար մէկէն հատցնել, որ չըլլայ թէ գազանին գազաններդ վրադ չաճեցնէ։ 23 —Ու քու Տէր Աստուածդ զանոնք քու ձեռքդ պիտի մատնէ, ու զանոնք մեծ կործանումով պիտի կործանէ, մինչև որ բնաջինջ ըլլան։ 24—Նաև անոնց թագաւորները քու ձեռքդ պիտի տայ, և անոնց անունները երկինքի տակէն սրնջացնես. ու քնաւ մէկը պիտի չկրնայ քեզի դէմ կենալ, մինչև զանոնք կորնչցնես։ 25—Անոնց աստուածներուն քանդակուած կուռքերը կրակով այրես. ու անոնց վրայ եղած ոսկին ու արծաթին աչք անկիլով՝ զանոնք քեզի չառնես, որպէս զի անոնցմով որոգայթի չբռնուիս. վասն զի անիկա քու Տէր Աստուածդայ ատելի գարշելի են։ 26— Արդ գարշելի բան մը մտնէդ մի տաներ, որպէս զի դուն ալ անոր պէս նզովուած չըլլաս. անկէ բոլորովին զզուիս, ու զանիկա խիստ գարշելի սեպես, վասն զի նզովուած է այն։

Գլ. Ը

Ամէն պատուիրանքները զորոնք ես այսօր կը պատուիրեմ ձեզի, զգոյշ եղէք որ ընէք, որպէս զի ապրիք ու շատնաք ու մտնէք ժառանգէք այն երկիրը, զոր Տէրը ձեր հայրերուն երդումով խոստացաւ։ 2—Ու միտդ պահէ այն բոլոր ճամբան, որ քու Տէր Աստուածդ այս քառասուն տարին քեզ անապատին մէջ պտըտցուց, քեզ խոնարհեցնելու, փորձելու ու սրտիդ մէջինը իմանալու համար, թէ արդեօք դուն անոր պատուիրանքները պիտի պահե՞ս թէ ոչ։ 3— Ու Տէրը քեզ խոնարհեցուց, անօթեցուց և մանանայով կերակրեց, զոր ոչ դուն կը ճանչնայիր և ոչ քու հայրերդ, քեզի իմացնելու համար թէ ոչ միայն հացով կ՚ապրի մարդ, հապա մարդը Տէրոջը բերնեն ելած ամէն խոսքէն կ՚ապրի։ 4—Այս քառասուն տարին քու վրայդի լաթերդ չհինցան, ու ոտքերդ չուռցան։

5—Ու սրտիդ մէջ գիտնաս որ ինչպես մարդ մը կը խրատէ իր որդին, քու Տէր Աստուածդ ալ քեզ ուսուցանէ կը խրատէ։ 6—Ուրեմն քու Տէր Աստուածդ պատուիրանքները պահես, որպէս զի անոր ճամբաներուն մէջ քալես, ու անկէ վախնաս։ 7—Քանզի քու Տէր Աստուածդ ազնիւ երկիր մը կը տանի քեզ, —հոն երկիր մը՝ որ գայլաւերկ ու լեռներէ բղխող գետերով, աղբիւրներով ու խորունկ յորդերով լեցուն է. 8—Հոն երկիր մը՝ որ ցորենով, գարիով, այգիներով, թզենիներով և նռնենիներով լեցուն է. իւղ ուսող ձիթենիներու ու մեղրի երկիր. 9—Հոն երկիր մը՝ ուր հաց ուտելս պիտի ուտես, ու անոր մէջ բնաւ բան մը պիտի չպակսի քեզի. երկիր մը՝ որուն քարերը երկաթ են, ու անոր լեռներէն պղինձ պիտի հանես։

10—Ուստի երբ ուտես ու կշտանաս, քու Տէր Աստուածդ օրհնես այն ազնիւ երկիրը քեզի տալուն համար։ 11—Զգուշ անձիդ զգուշութիւն ըրէ, չըլլայ որ քու Տէր Աստուածդ մոռնաս ու չպահես անոր պատուիրանքները, դատաստաններն ու կանոնները զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ։ 12—Ուստի երբ ուտես ու կշտանաս, և գեղեցիկ տուներ չինես ու բնակիս անոնց մէջ, 13—ու երբ արջառներդ և հօտերդ չատնան, ու նաև արծաթդ ու ոսկիդ չատնայ, և քու ամէն ունեցածդ չատնայ, 14—Զըլլայ որ սիրտդ հպարտանայ, և քու Տէր Աստուածդ մոռնաս, որ ելդիպտացւոց երկրէն, ծառայութեան տունէն, քեզ հանեց, 15—ու այն մեծ ու ահագին, և կիզող օձերով ու կարիճներով լեցուն, չոր ու անջուր անապատին մէջ քեզ պըտցուց, ու քեզի ապառաժ քարէն ջուր հանեց. 16—Ու անապատին մէջ քու հայրերուդ չճանչցած մանանայովը քեզ կերակրեց, որպէս զի քեզ խոնարհեցնէ ու փորձէ, և վերջը քեզի բարիք ընէ. 17—Ու սրտիդ մէջ չըսես թէ Ա՛յս հարստութիւնը իմ կարողութիւնովս ու իմ ձեռքս ուժովը վաստկեցայ։ 18—Հապա քու Տէր Աստուածդ յիշես, քանզի հարստութիւն ստանալու համար քեզի այժ տալը ան է, որպէս զի քու հայրերուդ իր երդումով ըրած ուխտը հաստատէ, ինչպես այսօր կ՚երևի։

19—Ու եթէ քու Տէր Աստուածդ մոռնալով ուրիշ աստուածներու երթաս երթաս, զանոնք պաշտես ու անոնց երկրպագութիւն ընես, ես այսօր ձեզի կը վկայեմ որ դուք բոլորովին պիտի կորնչիք։ 20—Այն ազգերուն պէս զորոնք Տէրը ձեր առջևէն պիտի կորնչցնէ, այնպես որ պիտի կորսուիք, վասն զի ձեր Տէր Աստուածդայն խօսքը մտիկ չըրիք։

Գլ. Թ

Ով Իսրայէլ, մտիկ ըրէ. Դուն այսօր Յորդանանէ կ՚անցնիս, որպէս զի երթաս քեզմէ մեծ ու զօրաւոր ազգեր, ու մինչև երկինք պարսպաւոր մեծ քաղաքներ ժառանգես, 2—Այն մեծ ու երկայնահասակ ազգը, ենականիներուն որդիները, զորոնք դուն կը ճանչնաս, ու նաև լսեր ես թէ ենակի որդիներուն դէմ կրնայ դիմել։

3—Արդ դուն այսօր գիտցիր որ քու Տէր Աստուածդ ինք քու առջևդ կ՚անցնի էրբէ մաշող կրակ մը, ու զանոնք պիտի կորնչցնէ, և քու առջևէդ զանոնք պիտի հնազանդէ, և դուն զանոնք պիտի հալածես ու չուտով կորնչցնես, ինչպես Տէրը քեզի ըսաւ։ 4—Երբ քու Տէր Աստուածդ զանոնք քու առջևէդ հալածէ, սրտիդ մէջ չըսես թէ Տէրը իմ արդարութեանս համար զիս այս երկիրը բերաւ որպէս

°ՆԷբ. առանց չգաւորութեան

զի ժառանգեմ. քանզի Տէրը այս ազգերը էրենց անօրէնութեանը համար քու առջեւդ կը վռնտէ։ 5— Ոչ թէ քու արդարութեանդ ու սրտիդ ուղղութեանը համար կը մտնես անոնց երկիրը ժառանգելու. այլ քու Տէր Աստուածդ այն ազգերուն անօրէնութեանը համար զանոնք քու առջեւդ կը վռնտէ, և որպէս զի հաստատէ այն խօսքը՝ որ համար քու հայրերուդ՝ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի, երդում ըրաւ։ 6—Ուստի գիտցիր որ քու արդարութեանդ համար չէ որ քու Տէր Աստուածդ այս բարի երկիրը քեզի ժառանգել կուտայ. քանզի դուն խըստասրտանոց ժողովուրդ մըն ես։

7—Մխիթդ պահէ՝ ու մի մոռնար որ դուն քու Տէր Աստուածդ անապատին մէջ բարկացուցիր. Եգիպտոսի երկրէն ելած օրեդ մինչև հոս եկած օրդ Տէրոջը անհնազանդ եղաք։ 8—Որեբի մէջ ալ Տէրը բարկացուցիք. և Տէրը ձեզ կորնչնելու համար ձեզի բարկացաւ։ 9—երբ ես լեռը ելայ, որպէս զի քարերուն տախտակները առնեմ, այսինքն Տէրոջը ձեզի հետ բրած ուխտին տախտակները, քառասուն օր ու քառասուն գիշեր լեռը կեցայ. ոչ հաց կերայ և ոչ ջուր խմեցի։ 10—ԵՒ այն Տէրը տուաւ ինծի Աստուծոյ մատովը գրուած երկու քարերուն տախտակները. ու անոնց վրայ էր՝ ըստ բոլոր այն խօսքերը զորոնք Տէրը ձեզի ըսաւ ժողովին օրը լեռանը վրայ կրակին միջէն Տէրը ձեզի դրուցեց։ 11—Աւրդ քառասուն օրէն ու քառասուն գիշերէն ետքը Տէրը երկու քարերուն տախտակները, այսինքն ուխտին տախտակները, ինծի տուաւ։ 12—Ու Տէրը ինծի ըսաւ, թէ՝ չուտով ասկէ վար իջիր, քանզի ապականեցաւ քու ժողովուրդդ զոր եգիպտոսի երկրէն հանեցիր. իմ պատուիրած ճամբայէս չուտով խոտորեցան, իրենց ձուլածոյ կուռք չինեցին։ 13—Ու նաև Տէրը ինծի հետ խօսելով՝ ըսաւ, թէ՝ այս ժողովուրդին նայեցայ, և ահա խըստասրտանոց ժողովուրդ մըն է ան։ 14—Թող տուր ինծ որ զանոնք կորսընցնեմ, ու անոնց անունը երկինքի տակէն քանդիմ. և քեզ անոնցմէ զօրաւոր ու բազմաթիւ ազգ մը պիտի ընեմ։

15—Այն ատեն ես դարձայ, լեռնէն վար իջայ ու լեռը կրակով կ՚այրէր. և ուխտին երկու տախտակները երկու ձեռքերուս վրայ էին։ 16—Եւ թէ նայեցայ ահաւասիկ որ ձեր Տէր Աստուծոյն դէմ մեղք գործելով՝ ձեզի ձուլածոյ ոչխար չիներ էիք, Տէրոջը ձեզի պատուիրած ճամբայէն չուտով խոտորեր էիք։ 17—Այն ատեն այն երկու տախտակները բռնեցի, ու իմ երկու ձեռքերուս վրայէն վար նետեցի, և ձեր աչքերուն առջև զանոնք կտորեցի։ 18—Եւ թէ առաջուան պէս Տէրոջը առջև՝ ութսունչորս օր ու քառասուն գիշեր. ոչ հաց կերայ ոչ ալ ջուր խմեցի, ձեր գործած բոլոր մեղքին համար. վասն զի Տէրոջը առջև չարութիւն ընելով զանիկա բարկացուցեր էիք։ 19—Քանզի վախցայ այն սոսկալի բարկութենէն՝ որով Տէրը ձեր վրայ բարկացաւ ձեզ կորնչնելու համար. սակայն Տէրը այն անգամին ալ լսեց։ 20—Ու Տէրը Ահարոնի վրայ քու կատաղութիւնդ վրայի խօսքերը պիտի գրեմ, ու զանոնք ապականիչի մէջ դնեմ։ 3—Ուստի ես Աստիմի փայտէ տապանակ մը չինեցի, ու առաջուանին պէս երկու հատ քարէ տախտակներ կոփեցի, ու այն երկու տախտակները ձեռքս ելլելով լեռը ելայ։ 4—Ու տախտակներուն վրայ առաջուան գրուածքին պէս այն տասը խօսքերը գրեց, զորոնք Տէրը ձեզի լեռանը վրայ կրակին միջէն խօսեցաւ ժողովին օրը, և Տէրը զանոնք ինծի տուաւ։ 5—Անկ դառնալով լեռնէն վար իջայ, ու տախտակները չինած տապանակիս մէջ դրի, որպէս որ Տէրը ինծի պատուիրեց։

6—Ու Իսրայէլի որգիները Բերոթբանէ-յականէ Մոսերա չուեցին հոն մեռաւ Ահարոն, ու հոն թաղուեցաւ, և անոր որդին Եղիազար անոր տեղ քահանայ եղաւ։ 7—Անկէ Գադգադ, ու Գադգադէ Յոթբի առուներու երկիրը, նահանջ չուեցին։

կրանցներ քու ժողովրդդ ու ժառանգեմ զոր քու մեծութենովդ ազատեցիր, ու զօրաւոր ձեռքով եգիպտոսէ հանեցիր։ 22—Քու ծառաներդ, Աբրահամը, Իսահակը ու Յակոբը, յիշէ, և այս ժողովրդին խստասրտութեանը, անօրէնութեանը ու մեղքին մի նայիր։ 28—Գըլլայ որ այն երկրին, ուրկէ մեզ հանեցիր, բե՛ւ ընէ զանոնք քանի Տէրը կարող չըլլալով զանոնք առնելու այն երկիրը զոր անոնց խոստացաւ և որովհետև անոնք քու ժողովրդդ ու ժառանգութիւնդ են, զորոնք դուն քու մեծ զօրութենովդ ու բարձր բազուկովդ հանեցիր։

Գլ. Ժ

Այն ատեն Տէրը ինծի ըսաւ, քեզի առաջուաններուն պէս երկու հատ քարէ տախտակներ կոփէ, ու լեռը ինծի ելլէ, ու նաև փայտէ տապանակ մը չինէ։ 2—Ու տախտակներուն վրայ քու կոտրած առաջուան տախտակներուդ վրայի խօսքերը պիտի գրեմ, ու զանոնք տապանակին մէջ դնես։ 3—Ուստի ես Աստիմի փայտէ տապանակ մը չինեցի, ու առաջուանին պէս երկու հատ քարէ տախտակներ կոփեցի, ու այն երկու տախտակները ձեռքս ելլելով լեռը ելայ։ 4—Ու տախտակներուն վրայ առաջուան գրուածքին պէս այն տասը խօսքերը գրեց, զորոնք Տէրը ձեզի լեռանը վրայ կրակին միջէն խօսեցաւ ժողովին օրը, և Տէրը զանոնք ինծի տուաւ։ 5—Անկ դառնալով լեռնէն վար իջայ, ու տախտակները չինած տապանակիս մէջ դրի, որպէս որ Տէրը ինծի պատուիրեց։

6—Ու Իսրայէլի որգիները Բերոթբանէ-յականէ Մոսերա չուեցին հոն մեռաւ Ահարոն, ու հոն թաղուեցաւ, և անոր որդին Եղիազար անոր տեղ քահանայ եղաւ։ 7—Անկէ Գադգադ, ու Գադգադէ Յոթբի առուներու երկիրը, նահանջ չուեցին։

8—Այն ատեն Տէրը Ղևիի ցեղը զատեց, որպէս զի Տէրոջը տապանակը կրէ, Տէրոջը առջև կենայ որպէս զի անոր ծառայութիւն ընէ, ու անոր անունովը օրհնէ, մինչև այսօր։ 9—Ասոր պատճառու Ղևի իր եղբայրներուն հետ բաժին ու ժառանգութիւն չունի. անոր ժառանգութիւնը Տէրն է, ինչպես քու Տէր Աստուածդ անոր բաւ։

10—Ու ես առաջուան օրերուն հետևմատ քառասուն օր ու քառասուն գիշեր լեռանը վրայ կեցայ, ու Տէրը այս անգամին ալ ինծի մտիկ ընելով չուզեց քեզ կորնչնել։ 11—Ու Տէրը ինծի ըսաւ, ելիր ու ժողովրդին առջևէն չուէ, որպէս զի մտնեն ու ժառանգեն այն երկիրը զոր անոնց հայրերուն երդում ըրի անոնց տալու համար։

12—Ու հիմա, ով Իսրայէլ, հիմա քու Տէր Աստուածդ քեզմէ ինչ կը պահանջէ. միայն թէ քու Տէր Աստուածդմէ վախնաս, անոր ամէն ճամբաներուն մէջ քալես և զանիկա սիրես, ու նաև քու բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ քու Տէր Աստուածդ պաշտես, 13—ու Տէրոջը պատուիրանքները ու կանոնները պահես, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, որպէս զի քեզի յաջող ըլլայ։ 14—Ահա երկինք ու երկինքներուն երկինքը, դաշտ երկիրը ու բոլոր անոր մէջ եղածը քու Տէր Աստուածդդ է։ 15—Միայն թէ Տէրը քու հայրերուդ հաճեցաւ ու զանոնք սիրեց, և անոնցմէ ետքը անոնց զաւակները, այսինքն ձեզ, բոլոր ազգերուն մէջէն, ինչպես այսօր է։ 16—Ուստի ձեր սիրտերուն անթլփատութիւնը թլփատեցէք, ու ձեր պարանոցները մ՚ի խստացնէք։ 17—Քանզի ձեր Տէր Աստուածը աստուածներուն Աստուածը ու տէրերուն Տէրն է. մեծ, հզօր ու ահեղ Աստուածն է, որ աչառութիւն չըներ ու կաշառք չառներ։ 18—Անիկա որբին ու այրեւարիին իրաւունք կ՚ընէ, պանդխտին կը սիրէ, ու անոր հաց ու հանդերձ կու տայ։ 19—Ու քեզի պանդխտաբար սիրեցէք. քանզի դուք ալ եգիպտացւոց երկրին մէջ պանդխտա

Եւ 20—Քու Տէր Աստուծմէդ վախնաս, — զանիկա պաշտես, և անոր յարիս, ու անոր անունովը երդնուս բնես։ 21—Քու պարծանքդ անիկա է, և քա Աստուածդ անիկա է, որ քեզի համար այս մեծ ու ազանդելի բաներն ըրաւ, զորոնք դուն քա աչքերովդ տեսար։ 22—Քու հայրերդ եօթանասուն հոգի էին երբ եգիպտոս իջան. ու հիմա քա Տէր Աստուածդ քեզ երկինքի աստղերուն պէս շատցուց։

ԳԼ. ԺԱ

1 Ուրեմն դուն քա Տէր Աստուածդ սիրես, ու միշտ անոր պատուիրած բաները, կանոնները, դատաստանները ու պատուիրանքները պահես։ 2—Ու այսօր գիտցէք, որ ձեր որդիներուն չէ խօսիլ, որովհետև անոնք չեն գիտեր, ու չտեսան ձեր Տէր Աստուծոյն խրատը, անոր մեծութիւնը, զօրաւոր ձեռքը ու բարձր բազուկը, 3—եգիպտոսի մէջ եգիպտացւոց Փարաւոն թագաւորին ու անոր բոլոր երկրին վրայ ըրած նշանները ու գործերը։ 4— Ու ինչ որ ըրաւ եգիպտացւոց զօրքերուն, ձիերուն ու կառքերուն. ու երբ անոնք ձեր հետևէն իյնային, Ի՛նչպէս Տէրը կարմիր ծովուն ջուրերը անոնց վրայ *պատճառց ու զանոնք կորնցուց մինչև այսօր։ 5—Ու ինչ որ ըրաւ ձեզի անապատին մէջ մինչև ձեր հոս գալը։ 6—Ու ինչ որ ըրաւ Ռուբենեան Եղիաբի որդիներուն, Դաթանի ու Աբիրոնի, ըրաւ. Ի՛նչպէս երկիրը իր բերանը բացաւ, ու զանոնք իրենց ընտանիքներովը, իրենց վրանները ու իրենց ամէն առարկաները բոլոր Իսրայէլի մէջին կլլեց։ 7—Սակայն Տէրոջը ըրած բոլոր մեծ գործերը աներացար ձեր աչքերն են։ 8—Ուրեմն պահեցէք այն ամէն պատուիրանքները զորոնք ես այսօր ձեզի կը պատուիրեմ, որպէս զի զօրանաք, ու մտնէք ժառանգէք այն երկիրը, ուր կ'երթաք զանիկա ժառանգելու. 9—Ու ձեր օրերը երկար ըլլան այն երկրին վրայ զոր Տէրը ձեր հայրերուն երդում ըրաւ՝ անոնց և անոնց սերունդին տալու, այնպիսի երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ։

10—Քանզի այն երկիրը, ուր դուն պիտի մտնէք զանիկա ժառանգելու համար, եգիպտոսի երկրին պէս չէ, ուրկէ ելաք. ուր երբ սերմ կը ցանէիր, բանջարի պարտէզի պէս ոտքովդ ջուր կու տայիր. 11—Այլ ձեր մտնելու ու ժառանգելու երկիրը լեռներու ու հովիտներու երկիր մըն է. երկինքի անձրեւին ջրովը կը յորեր. 12—Այնպիսի երկիր մըն է, զոր քա Տէր Աստուածդ կը դարմանէ. քա Տէր Աստուածդ աչքը տարւոյն սկիզբէն մինչև վերջը միշտ անոր վրայ է։ 13—Ուստի եթէ ուշադրութեամբ մտիկ բնէք իմ պատուիրանքներս, զորոնք այսօր ձեզի կը պատուիրեմ, ու ձեր Տէր Աստուածը սիրէք, և զանիկա ձեր բոլոր սրտովը ու բոլոր հոգւովը պաշտէք, 14—Ան ատեն ձեր երկրին անձրեւը, առաջինն ու վերջինն անձրեւը, իրենց ատենին պիտի տամ, և քա ցորենդ, քա գինիդ ու քա իւղդ պիտի ժողվես։ 15—Ու նաև քա արտիդ մէջ խոտ պիտի տամ անասուններուդ համար, որպէս զի ուտես ու կշտանաս։ 16—Շէք անձերնուն զգուշութիւն բրէք, չըլլայ որ ձեր սիրտը խաբուի, ու դուք չեղո՛ք ճամբէն խոտորելով օտար աստուածները պաշտէք, ու անոնց երկրպագութիւն բնէք. 17—Ու Տէրը ձեզի դէմ բարկանալով երկինքը գոցէ, որպէս զի անձրեւ չըլլայ ու երկիրը իր պտուղը չտայ, և Տէրոջը ձեզի տուած բարի երկրէն չուտով կորսուիք։

18—Այս իմ խօսքերս ձեր սրտին ու հոգւոյն մէջ դրէք, ու զանոնք նշանի համար ձեր ձեռքերուն վրայ կապեցէք, ու ճակատնոցի համար ձեր աչքերուն մէջտեղ բերան. 19—Ու զանոնք ձեր զաւակներուն սորվեցուցէք, ու անոնց նստած ատենդ, ճամբան քալած ատենդ և պառկելու ու կեցնելու ատենդ զանոնք խօսիս. 20—Ու զանոնք քա տանդ դրանդիքներուն վրայ ու դրներուդ վրայ գրէս. 21—Որպէս զի այն երկրին վրայ, զոր Տէրը ձեր հայրերուն երդում ըրաւ անոնց տալու, ձեր օրերը ու ձեր որդիներուն օրերը չատնան իրենց երկրի օրերը վրայ՝

22—Քանզի եթէ այս իմ ձեզի պատուիրած բոլոր պատուիրանքներս զգուշութեամբ պահէք ու կատարէք, և ձեր Տէր Աստուածը սիրէք, ու անոր բոլոր ճամբաներուն մէջ քալէք և անոր յարիք, 23—Տէրն ալ այս ամէն ազգերը ձեր առջեւէն պիտի վռնտէ, և դուք ձեզմէ մեծ ու զօրաւոր ազգեր վրայ պիտի տիրէք. 24—Ձեր ոտքին ամէն կոխած տեղը ձերը պիտի ըլլայ. ձեր սահմանը անապատէն ու Լիբանանէ, գետէն, —Եփրատ մեծ գետէն, մինչև *արեւմտեան ծովը պիտի ըլլայ. 25—Քնաւ մէկը պիտի չկարենայ ձեզի դէմ դնել. ձեր Տէր Աստուածը ձեր ամէն կոխած երկրին վրայ ձեզմէ վախ ու սոսկում մը պիտի բերէ, ինչպես ձեզի բսաւ։

26—Ահա ես այսօր ձեր առջեւ օրհնութիւն ու անէծք կը դնեմ. 27—Օրհնութիւնը՝ եթէ հնազանդութիւն ընէք ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքներուն, զորոնք ես այսօր ձեզի կը պատուիրեմ. 28—Ու անէծքը՝ եթէ ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքներուն չհնազանդիք, ու խոտորիք այն ճամբայէն զոր ես այսօր ձեզի կը պատուիրեմ, ու ձեր չճանչցած օտար աստուածներուն հետևիլ երթաք. 29—Ուստի երբ քա Տէր Աստուածդ քեզ տանի այն երկիրը, ուր պիտի մտնես ու ժառանգես, օրհնութիւնը Գարիզին լեռանը վրայ, ու անէծքը Գեբալ լեռանը վրայ տաս։ 30—*Ահա տանիք Յորդանանայ անդին կողմը արեւմտեան ճամբան վրայ, Մօրէի կաղնիներուն մօտ, Գաղգաղայի գիմացի հովիտին մէջ բնակող Քանանացւոց երկրին մէջ են, 31— Որովհետև դուք Յորդանանէ պիտի անցնիք, որպէս զի մտնէք ու ժառանգէք այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը ձեզի պիտի տայ, ու զանիկա պիտի ժառանգէք և անոր մէջ պիտի բնակիք։ 32— Ուրեմն զգուշութեամբ ի գործ դրէք այն ամէն կանոնները ու դատաստանները, զորոնք ես այսօր ձեր առջեւ կը դնեմ։

*ԵԲԲ. յորգեղ տուաւ

ԳԼ. ԺԲ

1 Ասոնք են այն կանոնները ու դատաստանները, զորոնք դուք պահելու և ընելու եք այն երկրին վրայ զոր ձեր հայրերուն Տէր Աստուածը ձեզի պիտի տայ ժառանգելու համար, որչափ ժամանակ որ երկրի վրայ ապրիք. 2—Այն բոլոր տեղերը, ուր ձեր յաղթելու ազգերը բարձր լեռներու վրայ, բլուրներու վրայ ու ամէն տերեւալից ծառերու տակ իրենց աստուածները պաշտած են, բոլորովին կործանէք. 3—Նաև անոնց սեղանները փլցնէք, և անոնց արձանները կոտրէք, անոնց Աստարովթներուը կրակով այրէք, ու անոնց աստուածներուն կուռքերը կոտր կոտր ընէք, և անոնց անուններն այն տեղէն աւերացնէք.

4— Իսկ ձեր Տէր Աստուածդ այսպէս պիտի չընէք. 5— Հապա դուք պիտի փնտռէք այն տեղը, զոր ձեր Տէր Աստուածը ձեր ամէն ցեղերուն միջէն պիտի ընտրէ իր անուանը բնակութեան համար, ու հոն պիտի երթաք. 6—Ու ձեր ողջակէզները, ձեր զոհերը, ձեր տասանորդները, *ձեր բարձրացնելու ընծաները, ձեր ուխտերը, ձեր կամաւոր ընծաները ու ձեր արջառներուն ու ոչխարներուն առջինները հոն տանիք. 7— Ու հոն ձեր Տէր Աստուծոյն առջև ուտէք, և ձեր Տէր Աստուածը ձեզ օրհնելուն համար՝ ձեր ամէն ձեռք զարկած բաներուն մէջ ուրախանաք, Թէ՛ դուք և Թէ՛ ձեր ընտանիքը։

8—Մի ընէք այն ամէնուն համեմատ, զոր մենք այսօր այս տեղ կ'ընենք, այսինքն ամէն մարդ իր աչքերուն հաճոյ եղածին պէս. 9—Քանզի մինչև հիմա չհասաք այն հանգստութեանը ու ժառանգութեանը զոր ձեր Տէր Աստուածը ձեզի պիտի տայ. 10— Բայց դուք Յորդանան պիտի անցնիք, ու պիտի բնակիք այն երկրին մէջ զոր ձեր Տէր Աստուածը ձեզի պիտի տայ, ու ձեր բոլոր չբնակուած թշնամիներէն ձեզ պիտի հանգստացնէ, ու ապահովութեամբ պի-

†ԵԲԲ. ՀԵՒԵՒ ‡ԵԲԲ. ՀԵ՛ ՈՐ

*ԵԲԲ. ՀԵՒԵՔԵՐՆԵՐ

տի բնակիք։ **11**— Եւ այն ատեն ըսէ ձեր Տէր Աստուածը պիտի ընարէ իր անունը բնակութեանը համար, բոլոր ձեզի պատուիրածներս հոն տանիք, ձեր ողջակէզները, ձեր զոհերը, ձեր տասանորդները, ձեր բարձրացնելու ընծաները ու ձեր բոլոր ուխտերուն ընտիր ընծաները, զորոնք Տէրոջը պիտի ուխտիք։ **12**— Ու ձեր Տէր Աստուածին առջեւ ուրախութիւն ընէք, Դ՛ուք, Դ՛ուք ձեր որդիները ու աղջիկները, ձեր ծառաները ու աղախինները. և Դ՛ուք ձեր դռներուն եղող Ղեւտացին, վասն զի անոր բաժին ու ժառանգութիւն չունիր։

13—Զգոյշ կեցէր, չըլլայ որ ամէն տեսած տեղդ քու ողջակէզներդ մատուցանես։ **14**— Այլ քու ողջակէզներդ այն տեղը մատուցանես զոր Տէրը քու ցեղերէդդ մէկուն մէջ պիտի ընարէ, ու հոն իմ բոլոր պատուիրած բաներս կատարես։ **15**— Սակայն քու ամէն *քաղաքներուդ մէջ սրտիդ ուժերին պէս անասուններդ մորթես, ու միս ուտես, որչափ որ քու Տէր Աստուածդ քեզի օրհնութիւն տուեր է. ու զանկիս անմաքուր ու մաքուր մարդը այծեամի ու եղջերուի պէս ուտեն։ **16**— Բայց արիւնը չուտես. զանիկա չուրի պէս գետինը թափես։

17— Ցորենիդ, գինիիդ ու իւղիդ տասանորդները, արջառներուդ ու հօտերուդ արձիւնները, բոլոր ուխտ րած ուխտերդ, և կամաւոր ու բարձրացնելու ընծաները զոր դուներուդ մէջ պիտի չկրնաս ուտել։ **18**— Այլ զանոնք քու Տէր Աստուածդայդ առջեւ Տէր Աստուածդայդ ընտրած տեղը ուտես, Դ՛ուն, Դ՛ու քու ազադ ու աղիկիդ, Դ՛ու ծառայ ու ազախինդ, և Դ՛ու դուներդ եղող Ղեւտացին. և քու Տէր Աստուածդայդ առջեւ քու բոլոր ձեռքդ զարկած բաներուդ վրայ ուրախանաս։ **19**—Զգոյշ կեցէր, չըլլայ որ Ղեւտացին անտես ընես, քանի որ ոտի կոս քու երկրիդ վրայ։

20—Ու երբ քու Տէր Աստուածդ քեզի լսածին պէս քու սահմանդ ժեծցնէ, ու միրագ միս ուտել ուզելով՝ Միս ուտեմ ըսես, սրտիդ բոլոր ցանկութեանը պէս միս ուտես։ **21**—Եթէ քեզմէ հեռու ըլլայ այն տեղը զոր քու Տէր Աստուածդ պիտի ընարէ իր անունը հոն դնելու համար, քեզի պատուիրածիս պէս քու արջառներէդ ու ոչխարներէդ տրուիս, զորոնք Տէրը քեզի պիտի ասյ, ու քու սրտիդ բոլոր ցանկութեանը պէս քու քաղաքներուդ մէջ ուտես։ **22**— Ս. այծեամը ու եղջերուն ինչպէս կ՛ուտուի, զանոնք ալ այնպէս ուտես. անմաքուրը ու մաքուրը մարդը անխտրաբար ուտեն։ **23**— Բայց ազիկ զգուշացիր որ արիւնը չուտես. վասն զի արիւնը ոգին է, ու ոգին միսն հետ չուտես։ **24**— Զանիկա չուտես, այլ չուրի պէս գետինը թափես։ **25**— Զանիկա մի ուտեր, որպէս զի քեզի ու քեզմէ ետքը քու որդիներուդ ազիկ ըլլայ՝ Տէրոջը առջեւ ուղիղ սեպուածը ընելովդ։ **26**— Բայց քու նուիրելու բաներդ և ուխտերդ առնես, ու Տէրոջը ընտրած տեղը երթաս։ **27**— Ու քու ողջակէզներդ, միսը ու արիւնը, քու Տէր Աստուածդայդ սեղանին վրայ մատուցանես. բայց քու զոհերուդ արիւնը քու Տէր Աստուածդայդ սեղանին վրայ թափես, ու միսը ուտես։

28—Զգոյշ եղիր հնազանդելու այս բոլոր խօսքերուն զորոնք քեզի պատուիրեցի, որպէս զի քու Տէր Աստուածդայդ առջեւ ազէկ ու հաճոյ եղածը ընելովդ՝ քեզի ու քեզմէ ետքը քու որդիներուդ յաւիտեան ազէկ ըլլայ։

29—Երբ քու Տէր Աստուածդ քու առջեւէդ կարդէ այն ազգերը որոնց երկիրը դուն ժառանգելու պիտի երթաս, ու երբ զանոնք ժառանգես ու անոնց երկրին մէջ բնակիս, **30**—Զգոյշ կեցէր, չըլլայ որ անոնց քու առջեւէդ ընաջինջ ըլլալէն ետքը անոնց հետեւելով որոգայթի մէջ իյնաս, և չըլլայ որ անոնց աստուածներուն վրայով հարցուփորձ ընես՝ ըսելով, Ա՛յս ազգերը ինչպէս իրենց աստուածները կը պաշտեին, ես ալ այնպէս ընեմ։ **31**— Դուն քու Տէր Աստուածդայդ այնպէս չընես, քանզի անոնք Տէրոջը ատելի եղած բոլոր գարշելի բաները իրենց աստուածներուն կ՛ընէին. որովհետև անոնք իրենց աստուածներուն գոփ- ընելու համար մինչև անգամ իրենց աղջիկները ու աղլիկները կրակով կ՛այրէին։ **32**— Ես ինչ որ կը պատուիրեմ, զգուշացիր զայն ընելու. անոր վրայ բան մը չաւելցնես, ու անկէ բան մը չպակսեցնես

Գլ. ԺԳ

Եթէ ձեր մէջէն մարգարէ մը կամ երազահաս մը ելլէ, ու ձեզի նշան մը կամ հրաշք մը ասյ, **2**— Ու ձեզի բուած նշանը կամ հրաշքը կատարի, ու ձեզի ըսէ Թէ երթանք ուրիշ աստուածներու պաշտենք, զորոնք դուք չէք ճանչցած, **3**— Այն մարգարէին կամ երազահասին խօսքը մտիկ մի ընէք. քանզի ձեր Տէր Աստուածդ ձեզ կը փորձէ, որպէս զի հասկնայ Թէ արդեօք դուք ձեր Տէր Աստուածը ձեր բոլոր սրտովը ու բոլոր հոգիովը կը սիրէ՛ք։ **4**— Ձեր Տէր Աստուածդայն հետեւիլ ըլլաք ու անկէ վախնաք, անոր պատուիրանքները պահէք ու անոր խօսքին հնազանդութիւն ընէք, զանիկա պաշտէք ու անոր յարիք։ **5**— Ու այն մարգարէն կամ երազահասը պիտի մեռցուի, վասն զի ձեզ Եգիպտոսի երկրէն հանող ու ձեզ ծառայութեան առնէն ազատող ձեր Տէր Աստուածդայն դէմ ապստամբութիւն խօսեցաւ, որպէս զի ձեզ խոտորեցնէ այն ճամբայէն զոր ձեր Տէր Աստուածը ձեզի պատուիրեց որ անոր մէջ քալէք. այսպէս չարութիւնը ձեր մէջէն վերցնէք։

6—Եթէ քու մօրդ տղան, քու եղբայրդ, կամ քու տղադ, կամ աղջիկդ, կամ ծոցիդ կինը, և կամ քու բարեկամդ զոր քու անձիդ պէս կը սիրես, գնդ գոր անձիդ պէս կը սիրես, գնդ մոլորեցնել ուզելով ծածկարար ըսէ, երթանք և օտար աստուածներ պաշտենք, զորոնք ոչ դուն ճանչցար, ոչ ալ քու հայրերդ, **7**—Ձեր բոլորտիքը եղող ազգերուն աստուածներէն, Թէ՛ ձեզի մօտ ըլլան, և Թէ՛ ձեզմէ հեռու, երկրի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը, **8**—Անոր հաւանութիւն չտաս, ոչ ալ անոր մտիկ ընես. քու աչքդ անոր չխնայես, ոչ ալ անոր վրայ գութ ունենալով պահես զանիկա. **9**—Այլ անշուշտ մեռցնես. ու զանիկա մեռցնելու համար նախ քու ձեռքդ անոր վրայ ըլլայ, ու ետքը բոլոր ժողովուրդին ձեռքը. **10**—Քարերով քարկոծես զանիկա, որպէս զի մեռնի. քանզի ուզեց քեզ ապստամբեցնել քու Տէր Աստուածէդդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեց։ **11**— Ե. բոլոր Իսրայէլ լսելով վախնայ, ու ասյնի ալ ձեր մէջ ասոր պէս չարութիւն մը չընեն։

12-Եթէ քու Տէր Աստուածդ՝ բնակութեան համար քեզի ասած քաղաքներէն մէկուն վրայով լսես, որ կ՛ըսեն Թէ **13**— Ձեր մէջէն քանի մը *չար մարդիկ՝ ելան, ու իրենց քաղաքին բնակիչները ապստամբեցուցին, ըսելով, երթանք ձեր չճանչցած օտար աստուածները պաշտենք, **14**— Ա՛յն ատեն ազէկ մը քննես ու հարցափորձ ընես, ու երբ տեսնես որ ըսուած բանը ճշմարիտ ու ասյդ է, և այն գարշելի բանը ձեր մէջ եղած է, **15**— Ա՛յն քաղաքին բնակիչները անպատճառ սուրի բերնէ անցնես, Թէ՛ զայն և Թէ՛ անոր մէջ եղած բոլոր բաները նզովելով. անասուններն ալ սուրի բերնէ անցնես. **16**— Ե. անոր բոլոր աւարը անոր հրապարակին մէջ ժողվես, ու այն քաղաքը և անոր բոլոր աւարը քու Տէր Աստուածդայդ համար բոլորովին կրակով այրես. ու անիկա յաւիտեան աւերակ ըլլայ, ետքն ալ չշինուի. **17**— Ես այն նզովածէն ձեռքդ մէջ բան մը չմակչի. որպէս զի Տէրը իր սաստիկ բարկութենէն դառնայ, քեզի ողորմութիւն ու գթութիւն ընէ, և քեզ չատցնէ, ինչպէս քու հայրերուդ երդում ըրաւ, **18**—Եթէ դուն քու Տէր Աստուածդայդ ձայնին հնազանդութիւն ընելով անոր բոլոր պատուիրանները պահես, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, ու Տէր Աստուածդայդ առջեւ ուղիղ եղածն ընես։

ԳԼ. ԾԲ

Ոչ-ՀԵՒՈՒ դուք ձեր Տէր Աստուծոյն սրգիներն էք, ուստի համար ձեր մարմինին վրայ կարածներ չընէք, ու ձեր աչքերուն մէջտեղի մազերը չխիւեցէք։ 2—Քանզի դուն քու Տէր Աստուծոյդ սուրբ ժողովրդին ես։ և Տէրը երկրի վրայ եղած բոլոր ժողովրդներուն մէջէն քեզ ընտրեց, որպէս զի իրեն սեպհական ժողովուրդ ըլլաս։ 3—Ինաս պիղծ բան մը չուտես։

4—Ասոնք են ձեր ուտելու անասուններդ։ արջառ, ոչխարը ու այծը, 5—եղջերուն, այծեամը, վիթը, խարտեաղը, այծքաղը, յամրերը ու անասութը։ 6—Ու չորքոտաններուն մէջ ամէն կէզակաբաշխ (այսինքն կէզակը երկուքի բաժնուած) ու գրանցող անասուններդ ուտէք։ 7—Բայց գրանցողներէն կամ կէզակաբաշխ եղողներէն ասոնք չուտէք։ ուղտը, նապաստակը ու ճագարը, քանզի գրանց թէպէտև կ'գրանցեն, բայց կէզակաբաշխ չեն. անոնք ձեզի անմաքուր ըլլան։ 8—Ու խոզը, որ թէև կէզակաբաշխ է, բայց չգրանցեր, անոնց ձեզի անմաքուր ըլլայ։ Անոնց միսը չուտէք, ու սատկածներուն չդպչիք։

9—Ջուրերուն մէջ բոլոր եղածներէն ասոնք ուտէք։ ամէն թև ու թեփ ունեցողը ուտէք։ 10—Բայց ամէն թև ու թեփ չունեցողը չուտէք։ անոնք ձեզի անմաքուր ըլլայ։

11—Ամէն մաքուր թռչունը ուտէք։ 12—Ու ձեր չուտելու ԲՆԱՒՈՐԸՆԵՐԸ ասոնք են։ արծիւը և պատկառը ու գետափրը, 13—Ու ցինը ու անգղը և ուրուբը իր տեսակին պէս, 14—Ու ամէն ագռաւը իր տեսակին պէս, 15—Ու ջայլամը ու բուն և կկուն ու բազէն իր տեսակին պէս, 16—Ու հուապարը ու քաչահաւը և կարապը, 17—Ու հնամարտաւը ու սև անգղը և հնդամոպը, 18—Ու արագիլը ու քարադրը իր տեսակին պէս, և յապալը ու չիղլը։ 19—Ու ամէն թռչող զեռուններդ ձեզի անմաքուր ըլլան. անոնք պիտի չուտուին։ 20—Ամէն մաքուր թռչուններդ ուտէք։

21—Ինքիրմէ մեռածը քնաս չուտէք. զանիկա քու դռներդ եղող պանդուխտին տաս որպէս զի ուտէ, կամ օտարազգիի մը ծախես. քանզի դուն քու Տէր Աստուծոյդ սուրբ ժողովրդն ես։

Ուլը իր մօրը կաթին մէջ չեփես։

22—Տարիէ տարի քու ցորենէդ սերմիդ ԸՐՏՒՆՔԸ, որուն եկած ամէն արմտիքներէն, անպատճառ տասանորդ տաս։ 23—Ու քու ցորենիդ, գինիիդ ու իւղիդ տասանորդը, ու արջառներուդ և ոչխարներուդ առաջինները քու Տէր Աստուծոյդ առջև ուտես, այն տեղը զոր ինք իր անունը բնակութեանը համար պիտի ընտրէ. որպէս զի միշտ քու Տէր Աստուծմէդ վախնալ սորվիս։ 24—Ու եթէ քու Տէր Աստուծոյդ քեզ օրհնելուն համար ճամրան քեզի հեռու իյնայ, և այն տեղը, զոր քու Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր անունը հոն դնելու համար, քեզմէ հեռու ըլլալով կարող չըլլաս զանոնք հոն տանիլ։ 25—Այն ատեն զանոնք սակ բընես, ու սակը ձեռքովդ ձեռքդ առնես, և քու Տէր Աստուծոյդ ընտրելու տեղը երթաս։ 26—Ու այն սակը արծիւ բոլոր ցանկացած բաներուն, արջառներու կամ ոչխարներու, գինիի կամ օղիի, ու սրտիդ ուզած բաներուն տաս։ և հոն քու Տէր Աստուծոյդ առջև ուտես և ուրախանաս դուն և քու ընտանիքդ։ 27—Ու քու դռներդ եղող Ղեւտացին ալ զանոնց չընես, քանզի անոնց քեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի։

28—Ամէն երեք տարին վերջը այն նոյն տարին արմտիքներուն բոլոր տասանորդը հանես, և զանիկա քու քաղաքներուդ մէջ պահես։ 29—Ու Ղեւտացին, որ քեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի, և դռներդ եղող օտարականը, որբը ու որբեւայրին գան և ուտեն կշտանան որպէս զի քու Տէր Աստուածդ քեզ օրհնէ քու ձեռքիդ բոլոր ամէն գործերուն մէջ։

ԳԼ. ԾԳ

Ամէն հօթներորդ տարին թողութիւն ընես։ 2—Ու թողութեան կա-

նոնը այս է. Ամէն պարտատէր որ իր դրացիին բան մը փոխ առած է, զանիկա պիտի թողու. իր դրացիին կամ եղբօրմէն պիտի չպահանջէ ըլլայ, վասն որ Թողութիւն փարզատած է Տէրոջը։ 3—Օտարազգիին պիտի պահանջես, բայց քու եղբօրմէդ առնելիքդ պիտի թողուս։ 4—*Մինչև որ քու փովդ աղքատ չգտնուի. վասն որ Տէրը անշուշտ քեզ պիտի օրհնէ այն երկրին մէջ, զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն պիտի տայ, որպէս որ անոր սրբես։ 5—Միայն եթէ քու Տէր Աստուածդ խօսքին ամէն կերպով հնազանդիս, ու այս բոլոր պատուիրանքներդ, զորանք ես այսօր քեզի կը պատուիրեմ, զգուշութեամբ ի գործ դնես։ 6—Քու Տէր Աստուածդ ալ քեզի ըսածին պես քեզ պիտի օրհնէ, և դուն շատ ազգերու փոխ պիտի տաս, բայց դուն փոխ պիտի չառնես, ու դուն շատ ազգերու վրայ պիտի սիրես, բայց անոնք քու վրադ պիտի չիրենն։

7—Քու Տէր Աստուածդ քեզի տուած երկրին մէջ, քու քաղաքներէդ մէկ կամ մէջ, եթէ եղբայրներէդ մէկը աղքատ ըլլայ, խստասրտութիւն չընես ու աղքատ եղբօրդ ձեռքդ չգոցես։ 8—Հապա անպատճառ ձեռքդ պիտի բանաս անոր, ու անոր կարօտութեանը բաւական ըլլալու չափ անոր փոխ տաս։ 9—Զգոյշ կեցիր, չըլլայ որ սրտիդ մէջէն չար խորհուրդ մը անցնես, ու եօթներորդ տարին, թողութեան տարին, մօտ է՝ ըսելով, աղքատ եղբօրդ վրայ †անգութ աչքով նայիս ու անոր ձեռ չտաս. և ան ալ քեզի դէմ Տէրոջը պաղատակ, ու դուն մեղքի տէր ըլլաս։ 10—Անպատճառ անոր պիտի տաս, ու անոր տալու ատենդ սիրտդ չնեղուի. վասն զի քու Տէր Աստուածդ այս պատճառաւ քու ամէն գործերուդ ու ամէն ձեռք զարկած բաներուդ մէջ քեզ պիտի օրհնէ։ 11—Որովհետև երկրին մէջէն աղքատ պակաս պիտի չըլլայ, անոր համար քեզի կը պատուիրեմ ու կ'ըսեմ, քու երկիրդ մէջ եղած ազգատ ու չքաւոր եղբօրդ ձեռքդ բաց ըլլայ։

12—Ու եթէ քու եղբայրներէդ Եբրայեցի մարդ մը կամ կին մը քեզի ծախուի, անիկա վեց տարի քեզի ծառայութիւն պիտի ընէ, ու եօթներորդ տարին զանիկա քու քովէդ ազատ պիտի արձակես։ 13—Ու քու քովէդ ազատ արձակելու ատենդ զանիկա պարապ չարձակես։ 14—Քու ոչխարներէդ, քու կալէդ և քու հնձանէդ անպատճառ պարգեւ տաս անոր. քու Տէր Աստուածդ ինչպես քեզ օրհնեց, նոյնիսկ պիտի տաս անոր։ 15—Ու միտքդ բերես որ դուն ալ Եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր, ու քու Տէր Աստուածդ քեզ †ինչ փրկեց. այս պատճառաւ այսօր քեզի կը պատուիրեմ այս բանը։ 16—Բայց եթէ քեզ և քու տունդ սիրելուն համար, ու անիկա քու քովդ հանգիստ ըլլալուն համար, ինքիդ չիմ ելլեր ըսէ, 17—Այն ատեն հերսուն մը առնես ու անոր ականջը դրանը վրայ ծակես, և անիկա քեզի յաւիտեան ծառայ ըլլայ. աղախինիդ ալ այսպէս ընես։ 18—Չանիկա քու քովէդ ազատ արձակելդ դժուար չերեւնայ քեզի. վասն զի քեզի վեց տարի ծառայութիւն բրաւ, ‒ը վարձկանի մը վարձքին կրկնապատիկ ‒ԸՒՆ։ ու քու Տէր Աստուածդ ամէն գործերուդ մէջ քեզ պիտի օրհնէ։

19—Քու արջառներուդ ու հօտերուդ ծնած ամէն արու առաջնեկները քու Տէր Աստուածդ պիտի նուիրես. արջառներուդ առաջինեկներովը չգործես, ու առջինեկ ոչխարներուդ բու բդը չկերես։ 20—Տարիէ տարի քու Տէր Աստուածդ առջև, Տէրոջը ընտրած տեղը, պիտի ուտես զանիկա դուն և քու բնտանիքդ։ 21—Բայց եթէ անոնք արատաւոր ըլլան, կաղ կամ կոյր ըլլան, կամ ինչ†իցէ ‒ԻՑԷ գէշ արատ մը ‒ԸՆԴՈՒՆԱՒ, զանոնք քու Տէր Աստուածդ չզոհես։ 22—Աչխոյիսին քու քաղաքներուդ մէջ պիտի ուտես. անմաքուրը ու մաքուր եղողները անխտրաբար ‒ՈՒՆ այծեամի ու եղջերուի պէս։ 23—Միայն անոր արիւնը չուտես, ջուրի պէս գետինը թափես զայն։

*Կամ, Այնպէս
†Եբր. չար

Գլ. ԺԶ

Ասիպ ամսուն զգուշանալով նայիլ, որպէս զի զատիկը ընես քու Տէր Աստուածդդ. վասն զի քու Տէր Աստուածդդ Ասիպ ամսուն մէջ գիշերով հանեց քեզ Եգիպտոսէ. 2—Զատիկին համար քու Տէր Աստուածդդ ոչխարներ ու արջառներ մորթես այն տեղը զոր Տէրը պիտի ընտրէ իր անուանը բնակութիւնը համար. 3—Անոր հետ խմոր՝ նալ հաց չուտես, եօթը օր նեղութեան անխմոր հաց պիտի ուտես անոր հետ, վասն զի նեղութեան երկրէն ատենապով ելար. որպէս զի քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ Եգիպտոսի երկրէն ելած օրդ մտքդդ բերես. 4—Ու քու բոլոր սահմաններուդ մէջ եօթը օր բնաւ խմոր չերեւնայ քովդ. ու առաջին օրուան իրիկունը մորթած միսդդ մինչև առաւօտ չմնայ. 5—Քու Տէր Աստուածդդ քեզի տուած քու քաղաքներդդ մէկուն մէջ բնաւ կարող չըլլաս զատիկը մորթել. 6—Հապա միայն այն տեղ՝ զոր քու Տէր Աստուածդդ պիտի ընտրէ իր անուանը բնակութեանը համար, հոն պիտի մորթես զատիկը իրիկուան դիմ արեւին մտած ատենը, Եգիպտոսէ ելած ժամանակդդ. 7—Ու քու Տէր Աստուածդդ ընտրած տեղը պ֊ղ֊ւ֊ելու ես ուտես. և առաւօտուն դառնաս՝ *ուտելու երթաս. 8—Վեց օր բաղարջ ուտես. ու եօթներորդ օրը քու Տէր Աստուածդդ համար ժողովարանի օր ըլլայ, և գործ մը չընես.

9—Դուն քեզի եօթը շաբաթ համրես. սա այս եօթը շաբաթը հունձքերուն մէջ մանգաղ դրած ատենէդ պիտի սկսես համրել. 10—Եւ քու Տէր Աստուածդդ շաբաթներուն ուղղ ընելով, քու Տէր Աստուածդդ քեզի տուած օրհնութեանը համեմատ, ձեռքէդ եկած կամաւոր ընծան պիտի տաս. 11—Ու այն տեղ զոր քու Տէր Աստուածդդ պիտի ընտրէ իր անուանը բնակութեանը համար, հոն քու Տէր Աստուածդդ առջև ուրախութիւն ընես դուն ու քու որդի և աղջիկդ, քու ծառայ ու ազախինդ, ու քու *քաղաքներդդ եղող Ղեւտացին, և ձեր մէջ գտնուած օտարականը, որբը ու այրեւարին. 12—Ու նկատելով մէջ ծառայ ըլլալդ միտդդ բերելով՝ այս կանոնները զգուշութեամբ ի գործ դնես.

13—Քու կալիդ ու հնձանիդ էրէտէ ժողվելէդ եօթը եօթը օր տաղաւարաց ուղղ պահես. 14—Ու տօնիդ մէջ ուրախութիւն ընես դուն ու քու որդի և աղջիկդ, քու ծառայ ու ազախինդ, և քաղաքներդ եղող Ղեւտացին, օտարականը, որբը ու այրեւարին. 15—Քու Տէր Աստուածդդ քու բոլոր բերքերդդ ու ձեռքիդ բոլոր գործերը օրհնելուն համար, Տէրոջը ընտրած տեղը քու Տէր Աստուածդդ եօթը օր տօն պահելով ուրախութիւն ընես.

16—Տարին երեք անգամ, այսինքն բաղարջակերաց տօնին, շաբաթներու տօնին ու տաղաւարահաց տօնին, քու առջև արուներդդ քու Տէր Աստուածդդ առջև պիտի երեւնան այն տեղ զոր ինք պիտի ընտրէ. ու Էէ֊ը Տէրոջը առջև չ֊երեւնայ. 17—Այլն մէկը, քու Տէր Աստուածդդ քեզի տուած օրհնութեանը համեմատ, ձեռքէն եկածին չափ պ֊էտ էէրէ.

18—Քու Տէր Աստուածդդ քեզի տուած ամէն քաղաքներուն մէջ քու ցեղերուդդ համեմատ քեզի դատաւորներ ու ատիկաններ կարգես, ու անոնք արդար դատաստանով ժողովուրդը դատեն. 19—Իրաւունքը չդարձնես, աչառութիւն չընես ու կաշառք չառնես. վասն զի կաշառքը իմաստուններուն աչքը կը կուրցնէ, ու արդարներուն խօսքը սուտ կը հանէ. 20—Արդարութեան, արդարութեան հետեւիլ ըլլաս, որպէս զի ապրիս և քու Տէր Աստուածդդ քեզի տալու երկիրը ժառանգես.

21—Քու Տէր Աստուածդդ համար չընելու սեղանիդ քով ինչեւիցէ ծառէ *անուտ չանկես քեզի, 22—Արձան ալ չկանգնես քեզի, որմէ քու Տէր Աստուածդդ կը զզուի.

*Եբէր. վրաններդ

*Կամ՝ տունդ. Եբէր. դռներդդ †Այլեւներն, երբև կռոց հոլաձի

Գլ. ԺԷ

Աքսոտ մը կամ ինչևիցէ *պակասութիւն մը ունեցող արջառ կամ ոչխարը քու Տէր Աստուածդդ զոհ չընանցանես. վասն զի այս բանը քու Տէր Աստուածդդ առջև պիղծ է.

2—Եթէ քու Տէր Աստուածդդ քեզի տուած քաղաքներէն մէկուն մէջ ձեզմէ ոեւէ մարդ մը կամ կին մը գտնուի, որ քու Տէր Աստուածդդ առջև չարութիւն ընելով ու անոր ուխտը չպահելով, 3—Իմ հրամանիս դէմ երթայ ուրիշ աստուածներու, արեգակին կամ լուսնին և կամ երկինքի ոբւիքէ *զարդերուն ծառայութիւն ու երկրպագութիւն ընէ. 4—Ու այս բանը քեզի պատմուի, ու գուն լսելէդ ետքը ամէնէ մը քննութիւն ընես, և ահա բանը ճշմարիտ ու ապտ է, որ Իսրայէլի մէջ այնպիսի պղծութիւն մը եղած է. 5—Այն ատեն այս չարութիւնը ընող մարդը կամ կինը գուռերդ հանես, և այն մարդը կամ կինը քարերով քարկոծես, ու մեռնի. 6—Ե֊այն մահապարտ երկու կամ երեք վկայի բերնովը մեռնի. մէկ վկայի բերնովը չմեռնի. 7—Զանիկա մեռցնելու համար, առաջ վկաները ձեռքը անոր վրայ պիտի բլլայ, ու անկէ ետքը բոլոր ժողովուրդին ձեռքը. այս կերպով չարութիւնը ձեր մէջէն վերցնես.

8—Երբ էզանազան տեսակ արիւնհոզութիւններու, դատերու կամ վէրքերու վրայով՝ քու քաղաքներդդ մէջ եղած վէճերուն վճռաստանութիւնը խիստ դժուար երեւնայ քեզի, այն ատեն ելլես և քու Տէր Աստուածդդ ընտրած տեղը երթաս, 9—Ու Ղեւտացի քահանաներուն և այն ժամանակի դատաւորներուն մօտենալով Եոհոսէբ հարցնես ու անոնք դատաստանին վճիռը քեզի պիտի բանեն. 10—Ու պիտի ընես այն վճռին համեմատ զոր Տէրոջը ընտրած տեղը քե֊ի կ֊ըսեն, ու ինչ որ քեզի սորվեցնեն՝ զգուշութեամբ ի գործ դնես. 11—Անոնց քեզի սորվեցուցած օրէնքը ու քեզի զրուցած դատաստանը պիտի կատարես. անոնց քեզի յայտնած խօսքէն չխոտորիս ոչ աջ կողմ և ոչ ձախ կողմ. 12—Բայց եթէ մարդ մը յանդգնութիւն ընելով, քու Տէր Աստուածդդ հոն պաշտելու կեցող քահանային կամ դատաւորին Եւոէը մարկ չընէ, այն մարդը պիտի մեռնի, ու չարութիւնը Իսրայէլէ վերցնես. 13—Ու բոլոր ժողովուրդը լսելով վախնայ, ու ուրիշն ալ յանդգնութիւն չընէ.

14—Երբ քու Տէր Աստուածդդ քեզի տուած երկիրը մտնես, ու անոր սիրելով հոն բնակիս, ու ըսես, Իմ բոլորիքս եղող ամէն ազգերուն պէս ես ալ իմ վրաս թագաւոր մը դնեմ. 15—Անպատճառ քու Տէր Աստուածդդ ընտրած Եոէէը վրադ թագաւոր դնես. քու եղբայրներէդ մէկը վրադ թագաւոր դնես. քու եղբայրդ չեզող օտարականը դնելու կարող չըլլաս. 16—Սակայն չըլլայ որ անիկա իրեն համար ձիեր չատնէ, ոչ ալ չատ ձիեր ժողվելու համար ժողովուրդը Եգիպտոս դարձնէ. որովհետև Տէրը ձեզի բսաւր Մէյմէն ալ այն ճամբան չդառնաք. 17—Նաև անիկա իրեն կիներ չչատնէ, որպէս զի սիրտը չխոտորի. ու իրեն համար խիստ չատ արծաթ ու ոսկի չժողվի. 18—Ու իր թագաւորութեան աթոռին վրայ նստած ատեն, այս օրինաց էէբէէն օրինակը Ղեւտացի քահանաներուն քով եղած էէր֊ի֊էն իրեն համար գիրքի մը մէջ գրէ. 19—Ու անիկա իր քով ձլայ, ու իր կեանքին բոլոր օրերուն մէջ կարդայ. որպէս զի իր Տէր Աստուածմէն վախնալ սորվի, և այս օրէնքին բոլոր խօսքերը ու այս կանոնները զգուշութեամբ ի գործ դնէ. 20—Որպէս զի իր սիրտը իր եղբայրներուն վրայ չհպարտանայ, ու այս պատուիրանքներէն ալ դին կամ ձախ դին չխոտորի. որպէս զի իր թագաւորութեանը վրայ երկար կեանք մը վարելէ Իսրայէլի մէջ Ք֊ իր ինք և Ք֊ իր որդիները

*Եբէր. գեշ բան †Եբէր. զօրքին Եբէր. արեան ու արեան մէջտեղ, դատի ու դատի մէջտեղ, կամ վէրքի ու վէրքի մէջտեղ

Գլ. ԾՀ

Ղեւտացի քահանաները, Ղևիի բոլոր ցեղը, Իսրայէլի հետ բաժին ու ժառանգութիւն չունենան. Տէրոջը պատարագները ու անոր ժառանգութիւնը ուտեն։ **2**—Ուստի որով անունք իրենց եղբայրներուն մէջ ժառանգութիւն չունենան. անոնց ժառանգութիւնը Տէրը ինք է, ինչպես ան նոնց բաւ,

3—Ու այս պիտի ըլլայ քահանաներուն իրաւունքը ժողովուրդին կողմէն երբ զոհ կը մատուցանեն, թէ՛ արջառ ըլլայ այն և թէ՛ ոչխար. թեր, ծնօտները ու փորիքերը քահանային պիտի տան։ **4**—Ու ցորենիդ, գինիիդ ու իւղիդ երախայրիները, ու նաև ոչխարներուդ առաջին բուրդը անոր պիտի տաս. **5**—Ուստի որ քու Տէր Աստուածդ քու բոլոր ցեղերուդ մէջէն զանիկա ընտրեց, որպէս զի Տէրոջը անուանովը ծառայութիւն ընելու միշտ կենան ինք ու իր որդիները։

6—Ու երբ Ղեւտացի մը քու քաղաքներէդ մէկէն, այսինքն բոլոր Իսրայէլի մէջ իր պանդխտացած տեղէն, գայ, ու իր սրտին բոլոր փափաքովը Տէրոջը ընտրած տեղը գայ. **7**—Ան ատեն հոն Տէրոջը առջև կեցող բոլոր իր Ղեւտացի եղբայրներուն պէս իր Տէր Աստուծոյն անունովը ծառայութիւն ընէ. **8**—Ու միւսներուն հետ հաւասար բաժին պիտի ուտէ, իր հայրենական *ժառանգութենէն զիներէն՝ զատ։

9—Երբ քու Տէր Աստուածդ քեզի տուած երկիրը մտնես, այն ազգերուն գարշելի գործերուն պէս չընել չսորվիս։ **10**—Ձեր մէջ չգտնուի այնպիսի մարդ մը, որ իր տղան կամ աղջիկը կրակի անցնել կամ բաղդ նայի կամ գուշակութիւն կամ հմայութիւն և կամ դիւթութիւն ընէ. **11**—Նաև կախարդ կամ վհուկ կամ նշանագէտ կամ մեռելահարց չիջոնէ։ **12**—Վասն զի ով որ այս բաները կ՚ընէ, Տէրոջը ատելի գարշելի է. ու այս գարշելի բաներուն համար քու Տէր Աստուածդ քու առջևէդ կը հալածէ զանոնք։ **13**—Քու Տէր Աստուածդ առջև կատարեալ ըլլաս։ **14**—Վասն զի այն ազգերը որոնց դուն պիտի տիրես, գուշակներուն ու բաղդ նայողներուն մտիկ կ՚ընեն. բայց քու Տէր Աստուածդ քեզի այսպէս ընելը հրաման չտուաւ։

15—Քու Տէր Աստուածդ *քու եղբայրներուդ մէջէն՝ ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ քեզի. անոր մտիկ ըրէք։ **16**—Ինչպէս Որեբը չէիր ժողովին օրը քու Տէր Աստուածդ խնդրեցիր՝ ըսելով, Իմ Տէր Աստուածոյս ձայնը ևս այլևս չլսեմ, ու այս մեծ կրակը ևս այլևս չտեսնեմ, որպէս զի չմեռնիմ։ **17**—Ու Տէրը ինծի ըսաւ, Ըսածի խօսքերնին լաւ է։ **18**—Քեզի պէս մարգարէ մը պիտի հանեմ անոնց իրենց եղբայրներուն մէջէն, և իմ խօսքերս անոր բերանը պիտի դնեմ. ու ինչ որ անոր պատուիրեմ, անոնց պիտի ըսէ։ **19**—Ու ով որ մտիկ չընէ իմ խօսքերս, զորոնք անիկա իմ անունովս պիտի խօսի, այն մարդէն ես վրէժ պիտի խնդրեմ։

20—Իսկ եթէ մարգարէ մը յանդգնի իմ չպատուիրած խօսքս իմ անունովս ըսելու, կամ օտար աստուածներու անունով բան մը ըսելու, այն մարգարէն պիտի մեռնի։ **21**—Ու եթէ դուն քու սրտիդ մէջ ըսես Թէ Տէրոջը չխօսած բանը ի՛նչպէս գիտնանք։ **22**—Եթէ մարգարէ մը Տէրոջը անունովը բան մը ըսէ, ու այն բանը իրօք չկատարուի, Տէրոջը չըսած խօսքը այն է. այն մարգարէն յանդգնութեամբ զրուցեր է զայն. անկէ չվախնաս։

Գլ. ԾԹ

Երբ քու Տէր Աստուածդ բնաջինջ ընէ այն ազգերը որոնց երկիրը քու Տէր Աստուածդ քեզի պիտի տայ, և դուն զանոնք վռնտելով՝ անոնց քաղաքներուն ու տուներուն մէջ բնակիս, **2**—Քեզի երեք քաղաք զատես քու երկրիդ մէջ, զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ ժառանգելու։ **3**—Քեզի ճամբ

*Պահ, Եկամտանկէն

*Նէբ. քու մէջէդ, եղբայրներէդ,

որպէս զի մեռնի։ **13**—Քու աչքդ ան նոր չխնայէ. ու Իսրայէլի մէջէն անմեղ արիւնը վերցնես, որպէս զի քեզի ազէկ ըլլայ։

14—Քու կալուածդ քեզի մէջ, զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն տուած երկրին մէջ պիտի ժառանգես, չլլայ որ փոխես քու դրացիիդ սահմանը զոր *ըն նախահայրերդ հաստատեցին։

15—Մարգու մը որևէ իզէ անօրէնութեան ու մեղքին համար, որով կրնայ յանցաւոր ըլլալ, մէկ վկայ *բաւական չհամարիր. երկու կամ երեք վկաներու բերնով հաստատութիւն բան։

16—Եթէ մարդու մը դէմ սուտ վկայ ելլէ, ու անոր վրայով անօրէնութեան մը համար վկայէ, **17**—Ան ատեն այն երկու մարդիկը, որոնց մէջտեղ այս հակառակութիւնը կայ, Տէրոջը առջև՝ այն ժամանակի քահանաներուն ու դատաւորներուն առջև կանգնին. **18**—Ու դատաւորները ազէկ մը քննեն. և եթէ այն վկան սուտ վկայ ըլլալով իր եղբօրը դէմ սուտ վկայութիւն ըրեր է, **19**—Այն ատեն, ինչպես անիկա իր եղբօրը ընել խորհեցաւ, նոյնը ըրէք անոր, ու չարութիւնը ձեր մէջէն վերցուցէք. **20**—Ու ուրիշները ալ լսելով վախնան, ու մէկմէկ ալ ձեր մէջ այնպիսի գէշ բան մը չընեն. **21**—Քու աչքդ չխնայես. անձի տեղ անձ, աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռայ, ձեռքի տեղ ձեռք, ոտքի տեղ ոտք գէտ տրուի։

Գլ. Ի

Երբ քու թշնամիներուդ դէմ պատերազմելու ելլես, ու ձիեր և կառքեր ու քեզմէ շատուր ժողովուրդ տեսնես, անոնցմէ չվախնաս. վասն զի քեզ եգիպտացոց երկրէն հանող քու Տէր Աստուածդ քեզի հետ է. **2**—Ու երբ պատերազմի մօտենաս, քահանան մօտենալով՝ ժողովուրդին պիտի խօսի, **3**—Ու անոնց ըսէ, Ով Իսրայէլ, մտիկ ըրէք. այսօր դուք ձեր թշնամիներուն դէմ պատերազմելու կը մօտենաք.

*Եբէր, Հելէ, Յոր, Հիճայ

սիրաբնիդ չքնուլնայ, մի վախնաք, մի զարհուրիք, ու անոնց երեսին մի դառնաք։ 4—Վասն զի ձեր Տէր Աստուածը ձեզի հետ կ'երթայ, ձեզի համար ձեր թշնամիներուն դէմ պատերազմելու Ե ձեզ ազատելու։

5—Այն ատեն ոստիկանները ժողովուրդին խօսելով՝ պիտի ըսեն, Ով որ նոր տուն չուներ ե ու անոր նուագարանիքը չէ բերը, երթայ իր տունը դառնայ, չըլլայ որ պատերազմին մէջ մեռնի, և ուրիշ մէկը նուագարանիքը բնակ. 6—Ու ով որ այգի անկեր է ու անոր պտուղը չէ կերած, երթայ իր տունը դառնայ. չըլլայ որ պատերազմին մէջ մեռնի, ու անոր առաջին պտուղը ուրիշ մարդ մը ուտէ։ 7—Ու ով որ կնոջ մը նշանուած է ու զանիկա չէ առած, երթայ իր տունը դառնայ. չըլլայ որ պատերազմին մէջ մեռնի, ու զանիկա ուրիշ մարդ մը առնէ։ 8—Ու ոստիկանները իրենց խօսքը շարունակելով պիտի ըսեն ժողովուրդին, Ով որ վախկոտ ու թուլասիրտ է, թող երթայ իր տունը դառնայ. չըլլայ որ իր եղբայրներուն սիրտն ալ իր սրտին պէս թուլցնէ։ 9—Ու երբ ոստիկանները ժողովուրդին առջև իրենց խօսքը լմնցընեն, "ժողովուրդին վրայ զօրապետներ կարգեն"։

10—Երբ քաղաքի մը կը մօտենաս անոր հետ պատերազմելու համար, զանիկա խաղաղութեան հրաւիրէ։ 11—Եթէ քեզի խաղաղութեան պատասխան տալու ըլլայ, ու բանբէը քեզի բանայ, մէջը գտնուած բոլոր ժողովուրդը քեզի հարկատու ըլլան, ու քեզի ծառայութիւն ընեն։ 12—Բայց եթէ քեզի հետ խաղաղութիւն ընել չուզէ ու պատերազմի բնէ, այն ատեն զանիկա պաշարեա։ 13—Ու երբ քու Տէր Աստուածդ քու ձեռքդ մատնէ զանիկա, անոր բոլոր արուները սուրի բերնէ անցնես։ 14—Բայց կիները, տղաքները ու անասունները և ինչ որ կայ այն քաղաքին մէջ, անոր բոլոր աւարը, քեզի համար առնես. և քու Տէր Աստուածդ քեզի մատնած քու թշնամիներուդ աւարը ուտես։ 15—Ահա այսպէս պիտի ընես քեզմէ խիստ հեռու եղող ամէն քաղաքներուն, որոնք այս ազգերուն քաղաքներէն չեն։ 16—Սակայն քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն որուած այս ազգերուն քաղաքներուն մէջ՝ բնաւ շունչ ունեցող մը ողջ չթողուս։ 17—Վասն զի Քեռացիները, Ամորհացիները, Քանանացիները, Փերեզացիները, Խեւացիները ու Երբուսացիները բոլորովին պիտի կորնչցնես, ինչպէս քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց։ 18—Որպէս զի ձեզի չսորվեցնեն իրենց բոլոր գարշութիւններուն համեմատ ընել, ինչպէս անոնք իրենց աստուածներուն կ'ընեն. ու դուք Տէրոջը ձեր Աստուածդ առջև մեղք չգործէք։

19—Երբ քաղաքի մը դէմ պատերազմիս, ու զանիկա առնելու համար երկար ժամանակ պաշարելու ըլլաս, անոր ծառերուն տապար չդարնես ու զանոնք չտրեպս, վասն զի անոնցմէ պիտի ուտես. ուրեմն զանոնք չկտրես. քանզի դաշտին ծառը *մարդ է որ քու երեսէդ պաշարման մէջ մտնէ՞։ 20—Բայց այն ծառերը զորոնք կը ճանչնաս թէ ուտելու պտուղ չեն բերեր, զանոնք սրտես ու կտրես, և քեզի հետ պատերազմող քաղաքին դիմաց ամրոց պատնէշներ չընես, մինչև անիկա նուաճի։

ԳԼ. ԻԱ

Եթէ քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն տուած երկրին մէջ դաշտի վրայ մեռած սպանցած մէկը մը գտնուի, ու զանիկա զարնողը չգիտցուի։ 2—Այն ատեն քու ծերերդ ու դատաւորներդ ելլեն, և մեռցուած մարմնոյն չորս կողմերուն մինչև որ քաղաքները չափեն։ 3—Ու մեռցուածին մօտ եղող քաղաքին ծերերը արջառներէն չգործածուած սպանի տակ չնուած երինջ մը առնեն։ 4—Ու այն քաղաքին ծերերը երինջը չհերկուած ու չցանուած ապառաժ ձոր մը իջեցընեն, ու այն ձորին մէջ երինջին վիզը կտրեն։ 5—Ու Ղեւիի որդիները, քահանաները, մօտենան, վասն զի քու Տէր Աստուածդ զանոնք ընտրեց իրեն ծառայութիւն ընելու, ու Տէրոջը անունովը օրհնելու համար. և ամէն վէճ ու ամէն վերք անոնց խօսքովը պիտի դատուի։ 6—Ու այն մեռցուածին մօտ եղող քաղաքին բոլոր ծերերը ձորին մէջ վիզը կտրած երինջին վրայ ձեռքերնին լուան. 7—Ու պատասխան տալով ըսեն, Մեր ձեռքերը չթափեցին այս արիւնը, ու մեր աչքերը չտեսան. 8—Ով Տէր, քու ժողովրդիդ որ դուն փրկեցիր, ու անմեղ արիւնը քու Իսրայէլ ժողովուրդիդ մի սեպեր. այսպէս այն արեանը համար քաւութիւն պիտի ըլլայ անոնց. 9—Իսկ դուն Տէրոջը առջև ուղիղ եղածը ընելով՝ անմեղ արիւնը քեզմէ վերցնես։

10—Երբ քու թշնամիներուդ դէմ պատերազմի ելլես, և քու Տէր Աստուածդ զանոնք քու ձեռքդ տայ, ու անոնցմէ գերիներ առնես, 11—Ու գերիներուն մէջէն գեղեցիկ տեսքով կին մը տեսնես, ու զանիկա սիրելով քեզի կին առնելու ըլլաս, 12—Ջանիկա քու տունդ տանիս, և անիկա իր գլուխը ածիլէ ու իր ըղուանդները կտրէ. 13—Ու իր վրայէն գերութեան լաթերը հանէ ու քու տունդ նստի, և ամբողջ ամիս մը իր հօրը ու մօրը համար լայ. ու անկէ ետև անոր մտնես, և դուն անոր այրը ըլլաս, ան ալ քու կինդ ըլլայ։ 14—Եթէ անկէ զոհ չըլլաս, զանիկա ազատ պիտի արձակես. բայց ամենևին բնաւ չծախես, ոչ ալ ծառայեցնես, որովհետև լկեցիր զանիկա։

15—Եթէ մարդ մը երկու կին ունենայ, ու մէկը սիրելի և միւսը ատելի ըլլայ. ու սիրելին ալ և ատելին ալ անոր զաւակներ ծնանին, և եթէ անդրանիկ զաւակը ատելի կնոջմէն ծնած է, 16—իր ստացուածքը որդիներուն բաժնելու օրը կարող չըլլայ սիրելիին զաւակը անդրանկացնելու, ու ատելիէն ծնած անդրանիկը երեսէ ձգելու. 17—Հապա ատելիին զաւակը անդրանիկ ճանչնալով՝ բոլոր իր ձեռքը գըտնուածէն երկու բաժին տայ անոր, վասն զի իր զօրութեան սկիզբը անիկա է. անդրանկութեան իրաւունքը անոր կը վերաբերի։

18—Եթէ մարդ մը ստամբակ ու անհնազանդ ազգ մը ունենայ, որ իր հօրը ու մօրը խօսքը բնաւ մտիկ չըներ, ու երբ զանիկա խրատեն անոնց չհնազանդիր. 19—Այն ատեն անոր հայրը ու մայրը զանիկա բռնելով, քաղաքին ծերերուն ու անոր բե–ի–թ տեղին գուռը հանեն. 20—Ու քաղաքին ծերերուն ըսեն, Այս մեր տղան ստամբակ ու անհնազանդ է, մեր խօսքը մտիկ չըներ, որկրամոլ ու գինեմոլ է. 21—Այն ատեն անոր քաղաքին բոլոր մարդիկը քարերով քարկոծեն զանիկա, որպէս զի մեռնի. ու չարութիւնը ձեր մէջէն վերցնես. և բոլոր Իսրայէլ լսելով վախնան։

22—Ու երբ մարդ մը մահու արժանի մեղք մը գործէ, և զանիկա մեռցնելու համար ծառէ մը կախես, 23—Անոր մարմինը ծառին վրայ գիշերը չմնայ, հապա նոյն օրը անպատճառ թաղես զանիկա. վասն զի կախուածը Աստուծոյ անիծածն է. ու չպղծես այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի կտակ ժառանգելու համար։

ԳԼ. ԻԲ

Երբ տեսնես որ եղբօրդ եզը կամ ոչխարը իր ճամբայէն խոտորեր է, զանոնք անտես չընես. անպատճառ զանոնք քու եղբօրդ դարձնես։ 2—Բայց եթէ քու եղբայրդ քեզի մօտ չէ, կամ զանիկա չես ճանչնար, այն ատեն քու տունդ առնես զայն, ու մինչև քու եղբօրդ զանիկա փնտռելը քու քովդ թող կենայ. ետքը զանիկա անոր դարձնես։ 3—Անոր իշուն ալ այսպէս ընես, զգեստին ալ այսպէս ընես. նաև եղբօրդ առիւն կորսուած բան զոր գտնես կը գտնես, այսպէս ընես. չըլլայ որ զանոնք անտես ընես։

4—Երբ տեսնես որ եղբօրդ էշը կամ եզը ճամբուն վրայ ինկեր է, զանոնք

անաս չընկալավ անպատճառ անոր հետ վերջնեաւ

5—Կնոջ մը վրայ այր մարդու հագուստ չըլլայ, ու այր մարդը կնոջ հագուստ չհագնի. քանզի ամէն որ առնէք կ'ընէ, քա. Տէր Աստուծոյդ առելի պիղծ է։

6—Եթէ ճամբան ծառի մը վրայ կամ գետնի վրայ ձագերով կամ հաւկիթներով թռչուն մը բոյն հանդիպի քա. առիւծ, ու մայրը ձագերուն կամ հաւկիթներուն վրայ նստած ըլլայ, մայրը իր ձագերով մի կալեր չառնիս. 7—Անպատճառ մայրը արձակես, ու ձագերը քեզի առնես. որպէս զի ազի ըլլայ քեզի, ու կեանքդ երկայն ըլլայ։

8—Նոր տուն չինած առնդ առնիքդ ընդ կտուր չդնանակ մը չինես, որպէս զի չըլլայ թէ մեկը անկէ վար իյնայ, ու քա. առնդ արեան պարտական ընես։

9—Այգիդ մէջ այլեւայլ սերմեր չցանես, որպէս զի ցանած սերմիդ արդիւնքը ու այգիդ բերքը չպղծուի։

10—Ցլ մը ու էշ մը միկտեղ երկիր հերկելու չդործածես։

11—Բանդով ու քթանով գործուած պլանաան հանդերձ չհագնիս։

12—Հագած հանդերձիդ չորս ծայրը ծոպեր չընես։

13—Եթէ մարդ մը կին առնէ, ու անոր մտնելնէն ետքը զանիկա ատէ, 14—ու անոր վրայ զրպարտութեան խօսքեր դնելով անոր անունը գէշ հանէ, ու ըսէ, Ես այս կինը առի, բայց երբ անոր մտերցայ, անոր վրայ կուսութիւն չգտայ· 15—Այն առնէն աղջկան հայրը ու մայրը աղջկան կուսութեան նշանը առնեն, և դուռը հանեն քաղաքին ծերերուն առջեւ. 16—Ու աղջկան հայրը ծերերուն պիտի ըսէ, Իմ աղջիկս այս մարդուն կին տուի, ու ատելով զանիկա, 17—Ահա անոր վրայ զրպարտութեան խօսքեր կը դնէ, ըսելով Թէ Ես քա. աղջկանդ վրայ կուսութիւն չգտայ· բայց ահա իմ աղջկանս կուսութեան նշանը. և լսէր քաղաքին ծերերուն առջեւ պիտի փռեն։ 18—Նա քը այն քաղաքին ծերերը այն մարդը առնեն ու զանիկա *պատժեն, 19—և իսպաիլացի հայս աղջկան անունը աւելցուն հանոր անկէ հարիւր *ռիւ արծաթ ազգ առնեն, ու աղջկան հօրը տան. և անիկա անոր կինն ըլլայ, ու իր բոլոր կեանքին մէջ կարող չըլլայ զանիկա արձակելու։ 20—Բայց եթէ այս բանը սուտ է, ու աղջկան վրայ կուսութիւն չէ գտնուեր, 21—Ապա առնեն աղջիկը իր հօրը տանը դուռը հանեն, ու անոր քաղաքին մարդիկը քարերով քարկոծեն զանիկա որպէս զի մեռնի. որովհետև իսրայէլի մէջ անպատեհութիւն ընելով իր հօրը տունը պոռնկութիւն ընելով չարութիւնը ձեր մէջէն վերցնես։

22—Եթէ մէկը այր ունեցող կնոջ մը հետ պառկած գտնուի, այն առնէն երկուքն ալ մեռնին, քէ՛ այն կնոջ հետ պառկող մարդը և քէ՛ այն կինը. ու իսրայէլի չարութիւնը վերցնես։

23—Եթէ կոյս աղջիկ մը մարդու մը նշանուած ըլլայ, ու մարդ մը քաղաքի մէջ գտնելով զանիկա՝ անոր հետ պառկի, 24—Երկուքն ալ այն քաղաքին դուռը հանէք, ու զանոնք քարերով քարկոծէք որպէս զի մեռնին. աղջիկը՝ քանզի քաղաքին մէջ †ձայն-ելով չկանչուրատաց, և մարդը՝ քանզի իր դրացին կինը լկեց. ու չարութիւնը ձեր մէջէն վերցնես։

25—Բայց եթէ մարդ մը նշանուած աղջիկ մը գտնի մէջ գաշտ, ու զանիկա բռնադատելով անոր հետ պառկի, այն առնէն անոր հետ պառկող մարդը մեռնի. 26—Ու աղջկան բան մը չընես. աղջիկը մահու արժանի չանցանք մը չունի. վասն զի ինչպէս մէկը իր դրացին վրայ կը յարձակի ու զանիկա կը մեռցնէ, այս դիպուածն ալ այնպէս է։ 27—Քանզի դաշտի մէջ գտաւ զանիկա. ու թէև նշանուած աղջիկը կանչուրատաց, բայց ոեւէք ազատող մը չկար։

28—Եթէ մարդ մը չնշանուած կոյս աղջիկ մը գտնի, և զանիկա բռնադատելով անոր հետ պառկի, ու †բռնէ զանուրն

*Կամ, չանդիմանէն

†Եբր. գտնուին

պառկող մարդը աղջկան հօրը չիսուն *ռիւ արծաթ պիտի տայ, ու անիկա իր կինն ըլլայ. որովհետև լկեց զանիկա, իր բոլոր կեանքին մէջ զանիկա արձակելու կարող չըլլայ։

30—Ըլլայ որ մարդ մը իր հօրը կինը առնէ, ու իր հօրը փղանցքը բանայ։

Գլ. ԻԳ

Ամբէքը ձգտած կամ կարատած մարդը Տէրոջը ժողովքը չմտնէ։ 2—Պառնկորդին Տէրոջը ժողովքը չմտնէ, ու անոր ը---ւը մինչև տասներորդ ազգը Տէրոջը ժողովքը չմտնէ։

3—Ամմոնացին ու Մոաբացին Տէրոջը ժողովքը չմտնեն, ու մինչև -ռնդ տասներորդ ազգը անոնց ը---ւը Տէրոջը ժողովքը չմտնէ յաւիտեան. 4—Քանզի ճրը դուք եգիպտոսէ ելլած, ճամբուն մէջ հացով ու ջրով ձեզ չդիմաւորեցին. ու Միւոգեամ փաթուր ւ---ւին Բէաովրի որդին Բաղաամը վարձքով բերել տուին, որպէս զի քեզ անիծէ. 5—Բայց քա. Տէր Աստուածդ չուզեց Բաղաամի մտիկ բնել, հապա քա. Տէր Աստուածդ անէծքը քեզի օրհնութեան դարձուց, որովհետև քա. Տէր Աստուածդ քեզ սիրեց։ 6—Քու բոլոր կեանքիդ մէջ անոնց խաղաղութիւնը ու աղէկութիւնը չփնտռես յաւիտեան։

7—Ըդղէմ որ եդեմացիին տուես, քանզի անիկա քա. եղբայրդ է։ Եգիպտացին -ւ չտաես, քանզի անոր երկրին մէջ պանդխտեր էիր. 8—Անոնց ծնած զաւակներուն երրորդ ազգը Տէրոջը ժողովքը թող մտնեն։

9—Երբ թշնամիներուդ դէմ բանակով կ'երթաս, ամէն չար բանէ զգուշանաս. 10—Եթէ ձեր մէջ մարդ մը երազախտութեան պատճառաւ մաքուր չէ, թող բանակէն դուրս ելլէ, ու բանակին մէջ չմտնէ. 11—Ու իրիկուան դէմ ջրով լուացուի, ու արեւը մտածին պէս բանակին մէջ մտնէ։ 12—Նաև բանակէն դուրս տեղ մը ունենաս, որպէս զի հոն դուրս ելլես. 13—Ու զէնքերուդ մէջ ցից մը ունենաս, որպէս զի երբ դուրսը նստելու ելլաս, անով փորես, ու դառնաս քա. յաւելուածդ ծածկես։ 14—Քանզի քա. Տէր Աստուածդ, քեզ ազատելու համար ու քա. թշնամիներդ քա. ձեռքդ մատնելու համար, քա. բանակիդ մէջ կը քալէ. ուստի քա. բանակդ մաքուր ըլլայ, որպէս զի անիկա քա. վրադ ապտղութիւն մը տեսնելով քեզմէ հետ չդառնայ։

15—Ծառայ մը որ տէրոջմէն †-ւէ-ը-վ քա. քովդ ապաստանած է, իր տէրոջը ձեռքը չմատնես. 16—Քեզ քովդ հետ բնակի իր հաւնած տեղը քու քաղաքներէդ մէկուն մէջ ուր ինչ կ'ուզէ, և զանիկա չնեղես։

17—Իսրայէլի աղջիկներէն բող չըլլայ, ու իսրայէլի ազգէն իգացեալ չըլլայ։ 18—Որեւիցէ ուխտի համար բոզի վարձքը կամ չունի գինը քա. Տէր Աստուածդ տուն չտանիս. քանզի քա. Տէր Աստուածդ ատելի երկուքն ալ պիղծ են։

19—Ատակը կամ ուտելիքը և կամ որեւիցէ բան որ չտնով կրնայ տրուիլ քա. եղբօրդ չտնով չտաս. 20—Օտարականէն չտ ուտես, բայց քա. եղբօրմէդ չտ չուտես, որպէս զի քա. Տէր Աստուածդ քա. ամէն ձեռքդ զարկած գործերուդ մէջ քեզ օրհնէ այն երկրին վրայ, ուր պիտի մտնես զանիկա ժառանգելու համար։

21—Երբ քա. Տէր Աստուածդ ուխտ մը բնես, առանց ուշացնելու կատարես, քանզի քա. Տէր Աստուածդ անպատճառ զանիկա քեզմէ պիտի պահանջէ, ու մեղքի տէր պիտի ըլլաս. 22—Բայց եթէ ուխտ բնել չուզես, այն քեզի մեղք չըլլար։ 23—Ինչ որ բերնովդ կը խոստանաս ու քա. կամքովդ քա. Տէր Աստուածդ կ'ուխտես, քա. շրթունքներդ ելածը զգուշութեամբ կատարես։

24—Երբ քա. դրացիդ այգին կը մտնես, ուզածիդ չափ խաղող ուտես ու կշտանաս, բայց տանիդ մէջ չդնես։ 25—Երբ քա. դրացիդ հունձքին մէջ կը մտնես, ձեռքովդ հասկերը փրցնես, բայց դրացիդ հունձքին մանգաղ չդպընես։

Գլ. Ի

ԵԹԷ մէկը կին մը առնէ ու անոր այրը ըլլայ, և անոր վրայ անարգութեան բան մը գտնելուն համար անիկա իր աչքին հաճոյ չըլլայ, այն առնէն անոր արձակման թուղթ մը գրէ ու անոր ձեռքը տայ, և իր տունէն ճամբէ։ 2—Ու երբ անկից առնէն ելլելով երթայ ուրիշ երկան մը կ՚երթայ, 3—եթէ հոգի այրն ալ զանիկա առելով արձակման թուղթ մը գրէ, ու անոր ձեռքը տալով՝ իր տունէն ճամբէ, կամ եթէ անոր հետ կարգուած հոգի այրը մեռնի, 4—Առաջին այրը, որ զանիկա ճամբեր էր, կարող չըլլայ զանիկա դարձեալ իրեն կին առնել, անոր պղծուելէն հոգը. քանզի Տէրոջը առջև պղծութիւն է այս բանը. և այսպէս դուն մեղքով չընծանես այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն կու տայ։

5—Նոր ամուսնացած մարդը պատերազմի չերթայ, ու անոր բնաւ պաշտօն մը չտրուի. տարի մը իր տանը մէջ ազատ թող նստի, ու իր առած կինը ուրախացնէ։

6—Չըլլայ որ ՛ոբբ մը ազօրիքը կամ անոր վերի քարը գրաւ առնէ. քանզի էր ընդերքն կեանքը գրաւ առած կ՚ըլլայ։

7—ԵԹԷ մարդ մը գտնուի, որ իր եղբայրներէն, այսինքն իսրայէլի որդիներէն, մէկը գողնալով զանիկա ծառայեցուցեր է կամ ծախեր է, այն գողը թող մեռնի. ու ձեր միջէն չարութիւնը վերցնես։

8—Բորոտութեան ախտին համար զգուշութիւն ըրէք, Ղեւտացի քահանաներուն բոլոր ձեզի սորվեցուցած բաները ձշդիւ պահելու և ընելու. ինչ որ անոնց պատուիրեր եմ զգուշութեամբ ի գործ դրէք։ 9—Մխիթ բեր ինչ որ քու Տէր Աստուածդ Մարիամի ըրաւ ճամբուն մէջ՝ Եգիպտոսէ ելած ատեննիդ։

10—Երբ քու դրացիդ բան մը փոխ տայ, գրաւն առնելու համար անոր տունը չմտնես. 11—Դուրսը կեցնես ու փոխ առնող մարդը գրաւը քեզի գուրս բերէ։ 12—Ու եթէ այն մարդը աղքատ է, անոր գրաւովը չպառկիս. 13—Արեւը մտածին պէս անպատճառ անոր գրաւը դարձուր, որպէս զի անկիա իր հանդերձովը պառկի ու քեզ օրհնէ. և քու Տէր Աստուածդ առջև ՚ի բ՚նէ քեզի արդարութիւն սեպուի։

14—Աղքատ ու կարօտ վարձկանին զրկանք չընես, ԽՒ՛ քու եղբայրներէդ և ԿՒ՛ քու երկրիդ մէջ գտնուող օտարականներէն ըլլայ. 15—Նոյն օրը արեւը չմտած անոր վարձքը հատուցանես, քանզի անկիա աղքատ է, ու անոր խելքը միտքը անոր վրայ է. չըլլայ որ քեզի համար Տէրոջը դոռոգէ, ու մեղքի տէր ըլլաս։

16—Տղոց յ՚ոգնէն համար հայրերը չմեռցուին, ու հայրերուն յ՚ոգնէն համար տղաքը չմեռցուին. ամէն մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի։

17—Օտարականին ու որբին իրաւունքը չծռես, ու որբին հանդերձը գրաւ չառնես։ 18—Ու միտդ բեր որ գուն Եգիպտոսի մէջ ծառայ էիր, ու քու Տէր Աստուածդ քեզ անկից ազատեց. անոր համար ես քեզի կը պատուիրեմ որ այս բանը ընես։

19—Երբ քու արտիդ մէջ հունձքդ հնձես, ու արտին մէջ որայ մը մոռցած ըլլաս, զանիկա առնելու ծամար ետ չդառնաս. անիկա օտարականին, որբին և որբևարիին թող ըլլայ. որպէս զի քու Տէր Աստուածդ գուն ձեռքերուդ ամէն գործին մէջ քեզ օրհնէ։ 20—Ձիթենիդ թօթուելդ ետքը ՛ճոցծ՚ենիրը ետեւ ետեւ չքննաս. անիկա օտարականին, որբին ու որբևարիին թող ըլլայ։ 21—Ու զգիրիդ խաղողները ժողովելդ ետքը ձեռքդ չընես. անիկա օտարականին, որբին ու որբևարիին թող ըլլայ։ 22—Ու միտդ բեր որ եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր. անոր համար ես քեզի կը պատուիրեմ որ այս բանը ընես։

Գլ. ԻԵ

ԵՐԲ մարդոց մէջ վէճ մը ըլլայ և դատաստանի երթան, դատաւորները անոնց գործը մտիկ բնելով իրաւունք անեցողը արդարացնեն, ու յանցաւորը դատապարտեն։ 2—Ու յանցաւոր եղողը եթէ ծեծի արժանի է, դատաւորը գետնիկա պառկեցնէ, ու անոր յանցանքին համեմատ իր առջև ծեծել տայ զանիկա թուով։ 3—Քառասունէ աւելի զարնել չտայ. չըլլայ որ ասկէ աւելի զարնելովը՝ եղբայրդ քու աչքիդ առջև անարգուի։

4—Կալին մէջ աշխատող եզին դունչը չկապես։

5—Երբ եղբայրներ միասին բնակին, ու անոնց մէկը առանց զաւկի մեռնի, մեռնողին կինը դուրսը օտար մարդու հետ չկարգուի. տագրը անոր մօտենայ և զանիկա իրեն կին առնէ, ու տագրութեան պարտաւորութիւնը անոր հատուցանէ. 6—Ու անոր ծնած առաջնեկ տղան մեռնող եղբօրը անունովը *կոչուի, որ չըլլայ թէ անոր անունը Իսրայէլէ ընկճի։ 7—Ու եթէ այն մարդը իր հարսը առնել չուզէ, այն առեն հարսը դուռը ելլէ ծերերուն ու ըսէ, Իմ տագրս Իսրայէլի մէջ իր եղբօրը անունը հատատաւելէն կը հրաժարի. տագրութեան պարտաւորութիւնը ինծի հատուցանել չուզեր։ 8—Ան առեն անոր քաղաքին ծերերը զանիկա պիտի կանչեն, ու անոր խօսին. և եթէ անիկա հաստատ կենալով ըսէ թէ Ասիկա չեմ ուզեր առնել, 9—Ան առեն հարսը անոր պիտի մօտենայ ծերերուն առջև, և անոր ոտքէն կօշիկը հանէ, ու անոր երեսը թքնէ, և խօսելով պիտի ըսէ, Իր եղբօրը տունը չհինել չուզող մարդուն այսպէս կ՚ըլլայ։ 10—Ու անոր անունը Իսրայէլի մէջ կօշիկը հանուած մարդուն տունը բսուի։

11—Երբ երկու մարդիկ իրարու հետ կը ծեծկռտին, և մէկուն կինը՝ զարնողին ձեռքէն իր այրը ազատելու համար մօտենայ ու ձեռքը երկնցնելով անոր ամօթոյքը բռնէ, 12—Ան առեն ան նոր ձեռքը կտրես, և քու աչքդ բնաւ ետեւ չխնայես։

13—Մախաղիդ մէջ տեսակ տեսակ մեծ ու պզտիկ կշռաքար չբլլայ։ 14—Տանդ մէջ տեսակ տեսակ մեծ ու պզտիկ արդուներ չըլլան։ 15—Քու կշռաքարդ կատար ու արդար ըլլայ, քու արդուդ ըլլան ու արդար ըլլայ, որպէս զի քու օրերդ երկար ըլլան այն երկրին վրայ զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ։ 16—Զանզի ամէն այս բաները ընողը, ամէն անիրաւութիւն ընողը, քու Տէր Աստուածդ առջև պիղծ է։

17—Եգիպտոսէ ելած ատենդ ճամբան Ամաղէկի քեզի ըրածը մտիկդ պահէ։ 18—Հանդիպ մէջ ի՚նչպէս քեզ դիմաւորեց, և քու հետեւիդ եղող բոլոր տկարները կատրեց, երբ գուն աչխատած ու յոգնած էիր, ու Աստուծմէ չվախցաս։ 19—Ուստի երբ քու Տէր Աստուածդ քու բոլոր չրջակայ թշնամիներէդ քեզ հանգստացնէ այն երկրին մէջ զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն կու տայ որպէս զի անոր տիրես, այն առեն Ամաղէկի յիշատակը երկինքի տակէն բոլորովին վերցնես. չըլլայ որ մոռնաս։

Գլ. ԻԶ

ԵՐԲ մտնես այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն կու տայ, և զանիկա ժառանգես ու հոն բնակիս, 2—Այն առեն երկրին ամէն պտուղներուն երախայրիներէն պիտի առնես, զորանք քու Տէր Աստուածդ քեզի տուած երկրէն ժողվեր ես, ու կողովի մը մէջ դնելով երթաս այն տեղը զոր քու Տէր Աստուածդ պիտի ընտրէ իր անունը հոն դնելու համար. 3—Ու այն օրերը եղող քահանային երթաս բսես, Ես այսօր քու Տէր Աստուածդ —ՒՆ— կը խոստովանիմ որ ես մտայ այն երկիրը, որու համար Տէրը մեր հայրերուն երդում ըրեր էր մեզի տալու։ 4—Ետքը քահանան կողովը քու ձեռքէդ առնելով՝ զանիկա քու Տէր Աստուածդ սեղանին առջև պիտի դնէ. 5—Ու գուն պատասխան տալով՝ քու Տէր Աստուածդ առջև բսես, Իմ հայրս, Թափառական Ասորի մը ըլլալով, ես գիպտոս իջաւ, ու հոն քիչ հոգիներով պանդխտութիւն ընելով մէկ մեծ, զօրաւոր ու չատ ազգ մը եղաւ. 6—Ու եգիպտացիք մեզ չարչարեցին, մեզ

*ՆԷՐ. կհնայ

նեղեցին և մեր վրայ ծանր ծառայութիւններ դրին։ 7—Ու մենք մեր հայրերուն Տէր Աստուծոյն ազաղակեցինք. և Տէրը մեր ձայնը լսելով մեր նեղութիւնը, աշխատութիւնը ու մեզի եղած ղրկանքը տեսաւ։ 8—Ու Տէրը զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով, մեծ սարհուրթիւններով, նշաններով ու հրաշքներով մեզ Եգիպտոսէ հանեց. 9—ու մեզ այս տեղը բերաւ, ու մեզի այս երկիրը, կաթ ու մեղր բղխող երկիրը, տուաւ։ 10—Ու արդ, ով Տէր, ինծի տուած երկրիդ պտուղներուն երախայրիները բերի։ Ու զանոնք քու Տէր Աստուծոյդ առջև դնելով՝ Տէր Աստուծոյդ առջև երկրպագութիւն ընես. 11—ու քու Տէր Աստուծոյդ բերի ու քու տանդ տուած բոլոր բարիքներովը ուրախանաս ընես, դուն ալ, Ղեւտացին ալ, և ձեր մէջ եղող օտարականն ալ։

12—Երբորդ տարին տասանորդի տարի ըլլալով, երբ դուն քու արդիւնքներուդ բոլոր տասանորդները զատես լմնցնես, և զանոնք Ղեւտացիին, օտարականին, որբին ու այրեւարին տաս, որպէս որ անոնք ալ քու քաղաքներուդ մէջ ուտեն կշտանան։ 13—Ա՛յն ատեն քու Տէր Աստուծոյդ առջև ըսես, Սուրբ եղած բանը բոլորովին տունէս հանեցի, և քու բոլոր հրամայած պատուիրանքներուդ համեմատ զանիկա Ղեւտացիին, օտարականին, որբին ու այրեւարին տուի. քու պատուիրանքներդ զանց չըրի, ու ջնջուած չսնցայ։ 14—Ու գէշ ցերեկոյ մէջ անիկ չկերայ, ու անմաքուր բանի մը չգործածեցի, և անկէ մեռելի համար չտուի. իմ Տէր Աստուծոյս խօսքը մտիկ ըրի. ինծի ինչ որ պատուիրեցիր, անոր համեմատ ըրի։ 15—Նայէ երկինքին քու սուրբ բնակարանէդ, և օրհնէ քու Իսրայէլ ժողովուրդդ, ու այն երկիրը զոր տուր մեզի, ինչպէս մեր հայրերուն երդնուելով ըրած էիր թողլոր, երկիրը մը որ կաթ ու մեղր կը բղխէ։

16—Այսօր քու Տէր Աստուածդ քեզի կը պատուիրէ որ այս կանոնները ու դատաստանները ի գործ դնես. ուստի բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ պահես ու կատարես զանոնք։ 17—Դուն այսօր Տէրոջը խօսք կու տաս, որ անիկա քեզի Աստուած ըլլայ, ու դուն անոր ճամրաներուն մէջ քալես, և անոր կանոնները, պատուիրանքները ու դատաստանները պահես, ու խօսքը մտիկ ընես. 18—Տէրն ալ այսօր քեզի խօսք կու տայ, որ դուն իրեն սեպհական ժողովուրդ ըլլաս, ինչպէս քեզի ըսաւ, որպէս զի անոր բոլոր պատուիրանքները պահես. 19—Ու բոլոր իր ստեղծած ազգերէն գերազանց բնէ քեզ գովաբանիս, համբաւով ու փառքով, որպէս զի սուրբ ժողովուրդ մը ըլլաս քու Տէր Աստուածդ՝ իր բանին պէս։

Գլ. ԻԷ

Եւ Մովսէս իսրայէլի ծերերուն հետ ժողովուրդին պատուիրելով՝ ըսաւ, Պահեցէք այն բոլոր պատուիրանքները զոր ես այսօր ձեզի կը պատուիրեմ։ 2—Ու Յորդանանէ քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկիրը անցած օրդ՝ քեզի մեծ քարեր կանգնես, ու զանոնք կիրով ծեփես. 3—ու այս օրէնքին բոլոր խօսքերը անոնց վրայ գրես, երբ անցնիս ու մանես այն երկիրը զոր քու Տէր Աստուածդ քեզի կու տայ, երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխէ, ինչպէս քու հայրերուդ Տէր Աստուածը քեզի ըսաւ։ 4—Ուստի երբ Յորդանանէ անցնիս, այս օրհասն քեզի պատուիրածս պէս՝ այս քարերը Գերզիմ լեռան վրայ կանգնես, ու զանոնք կիրով ծեփես։ 5—Ու հոն քու Տէր Աստուածդ սեզան մը շինես, քարերէ չինուած սեզան մը. անոնց վրայ երկաթ չդպցնես։ 6—Ամբողջ քու Տէր Աստուածդ սեզանը ամբողջ քարերէ շինես, ու անոր վրայ քու Տէր Աստուծոյդ ողջակէզներ մատուցանես. 7—ու խաղաղաբերման զոհեր մատուցանելով՝ հոն ուտես, ու քու Տէր Աստուծոյդ առջև ուրախանաս. 8—ու այս օրէնքին բոլոր խօսքերը քարերուն վրայ խիստ պարզ կերպով մը գրես։

9—Ու Մովսէս Ղեւտացի քահանաներուն հետ բոլոր Իսրայէլի խօսելով՝ ըսաւ, Ով Իսրայէլ, լուռ կեցիր ու մտիկ ըրէ. Դուն այսօր քու Տէր Աստուծոյդ ժողովուրդը եղար. 10—Ուստի քու Տէր Աստուծոյդ խօսքը մտիկ ընելով ի գործ դնես անոր պատուիրանքները ու կանոնները, զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ։

11—Ու նոյն օրը Մովսէս ժողովուրդին պատուիրելով՝ ըսաւ, 12—երբ Յորդանանէ անցնիք, ժողովուրդը օրհնելու համար Գարիզիմ լեռան վրայ առանձ քով կայնին. Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Յովսէփ ու Բենիամին. 13—ու անէծքի համար Գեբալ լեռան վրայ առանձ քով կայնին. Ռուբէն, Գադ, Ասեր, Զաբուղոն, Դան ու Նեփթաղիմ.

14—Ու Ղեւտացիք խօսելով՝ բոլոր մարդոցը հետ խօսելով՝ բարձր ձայնով պիտի ըսեն, 15—Անէծքեալ ըլլայ այն մարդը՝ որ արուեստաւորի ձեռագործ, ու Տէրոջը ատելի պիղծ իւղուած փորուած կամ ձուլածոյ կուռք կը չինէ, ու գաղտուկ տեղ մը կը դնէ. և բոլոր ժողովուրդը պատասխան տալով՝ Ամէն պիտի ըսէ։ 16—Անէծքեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կամ մօրը դէմ հայհոյութիւն կ'ընէ և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 17—Անէծքեալ ըլլայ ան՝ որ իր դրացիին սահմանը կը փոխէ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 18—Անէծքեալ ըլլայ ան՝ որ կոյրը իր ճամբայն կը խոտորեցնէ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 19—Անէծքեալ ըլլայ ան՝ որ պանդուխտին, որբին ու այրեւարիին իրաւունքը կը ծռէ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 20—Անէծքեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կնոջ հետ կը պառկի. քանի որ իր հօրը ծոցածոցը կը բանայ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 21—Անէծքեալ ըլլայ ան՝ որ ոեւէ անասունի հետ կը պառկի. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 22—Անէծքեալ ըլլայ ան՝ որ իր հօրը աղջիկը կամ իր մօրը աղջիկը եղող իր քրոջ հետ կը պառկի. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 23—Անէծքեալ ըլլայ ան՝ որ իր զոքանչին հետ կը պառկի. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 24—Անէծքեալ ըլլայ ան՝ որ իր դրացին գաղտուկ կը մեռցնէ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 25—Անէծքեալ ըլլայ ան՝ որ անմեղ մարդը մեռցնելու համար կաշառք կ'առնէ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։ 26—Անէծքեալ ըլլայ ան՝ որ այս օրէնքին ամէն խօսքերուն մէջ չհնազանդ որ զանոնք կատարէ. և բոլոր ժողովուրդը Ամէն պիտի ըսէ։

Գլ. ԻԸ

Եւ եթէ քու Տէր Աստուածդդ խօսքը ուշադրութեամբ մտիկ ընելով՝ զգուշութեամբ ի գործ դնես անոր բոլոր պատուիրանքները զորոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, քու Տէր Աստուածդ երկրի բոլոր ազգերուն գերազանց պիտի ընէ քեզ. 2—ու եթէ քու Տէր Աստուածդդ խօսքին հնազանդիս, այս բոլոր օրհնութիւնները քու վրադ գալով քեզի պիտի հասնին. 3—Քաղաքի մէջ օրհնեալ, ու գաշի մէջ օրհնեալ պիտի ըլլաս. 4—Քու որովայնիդ պտուղը, քու երկրիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը, կովերուդ ծնունդը ու ոչխարներուդ հօտերը օրհնեալ պիտի ըլլան. 5—Քու կողովդ ու աստյադ օրհնեալ պիտի ըլլան. 6—Մտած ատենդ օրհնեալ, ու ելած ատենդ օրհնեալ պիտի ըլլաս։ 7—Տէրը քու առջեւէդ ջարդել պիտի տայ քու վրադ եղող թշնամիներդ. անոնք քեզի դէմ մէկ ճամբով պիտի գան, և քու առջեւէդ եօթը ճամբով պիտի փախչին. 8—Տէրը քու չաներամբարանդ ու ամէն ձեռք զարձնելու բաներուդ մէջ օրհնութիւն պիտի դրկէ քեզի. և քու Տէր Աստուածդդ քեզի տուած երկրին մէջ քեզ պիտի օրհնէ. 9—եթէ քու Տէր Աստուածդդ հրամանները պահելով՝ անոր ճամբաներուն մէջ քալես, Տէրը քեզի երդնուած ծին պէս քեզ իրեն սուրբ ժողովուրդ պիտի հաստատէ. 10—Ու երկրի ամէն ժողովուրդները պիտի տեսնեն որ Տէրոջը անունը քու վրադ կը կոչուի, ու քեզմէ պիտի վախնան. 11—Ու Տէրը բարիքներով քեզ պիտի լեցնէ, քու որովայնիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը, ու քու երկրիդ պտուղը լոծդնէլով այն երկրին վրայ զոր Տէրը

քու հայրերուդ երդում բրաւ քեզի տալու։ 12—Տէրը իր բարութեան գանձը, այսինքն երկինքը, քեզի պիտի բանայ, որպէս զի քու երկրիդ անձրեւը ատենովը տայ, ու քու ձեռքիդ ամէն գործը օրհնէ. և դուն շատ ազգերու փոխ պիտի տաս, բայց դուն փոխ պիտի չառնես։ 13—Տէրը ⁂-ը-ը-ը

նած զաւակներուն ծառա աչքով պիտի նայի. քանզի պաշտաման առեն, ու քու ինամիդ քու քաղաքներուդ մէջ քեզ նեղը ձգած առենը, ամէն բանին պահպանուն համար զանոնք ծածկաբար պիտի ուտէ։

58—Եթէ դուն այս գիրքին մէջ գրուած այս օրինքին ամէն խօսքերը զգուշութեամբ չկատարես, և այս ԲՈՒՆ ԵՒ ՈԱՏԱԿԱԻՐԴ, պատուական ու ահաւոր անունէն չվախնաս, 59—Տէրն ալ անսովոր հարուածներով, մեծ ու երկարատև հարուածներով, դէշ ու երկարն հիւանդութիւններով պիտի զարնէ քեզ և քու սերունդդ։ 60—Ու Եգիպտոսի բոլոր հիւանդութիւնները՝ որոնցմէ դուն կը վախնաս, քու վրադ պիտի դարձնէ. ու անոնք քեզի պիտի փակչին։ 61—Նաև այս օրինաց գիրքին մէջ չգրուած ամէն հիւանդութիւնը ու ամէն հարուածը Տէրը քու վրադ պիտի բերէ, մինչև որ դուն բնաջինջ ըլլաս։ 62—Ու քու Տէր Աստուծոյդ խօսքին հնազանդութիւն չընելուդ համար, դուք որ չատութեան կողմանէ երկինքի աստղերուն պէս էիք, խիստ սակաւաթիւ պիտի մնաք։ 63—Ու ինչպես Տէրը ձեզի ուրախութիւն ընելով ու ձեզ չատցնելով ձեր վրայ ուրախացաւ, այնպէս ալ ձեզ կորնչցնելով ու բնաջինջ ընելով ձեր վրայ պիտի ուրախանայ, և պիտի ջնջուի այն երկրին վրայէն, ուր հիմա կ'երթաք զանոնք ժառանգելու։ 64—Ու Տէրը երկրի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը բոլոր ժողովրդներուն մէջ պիտի ցրուի քեզ, ու հոն ծառայութիւն պիտի ընես օտար աստուածներու, փայտի ու քարի, զորոնք ոչ դուն ճանչցեր էիր՝ ոչ ալ քու հայրերդ։ 65—Ու այն ազգերուն մէջ հանգստութիւն պիտի չգտնես, ու ոտքիդ թաթին հանգչելու տեղ պիտի չըլլայ. և հոն Տէրը քեզի դողացող սիրտ, աչքի նուազում ու հոգիի տրտմութիւն պիտի տայ։ 66—Ու քու կեանքդ քու առջեւդ կախուած մէջ պիտի ըլլայ, ու գիշեր ցորեկ պիտի վախնաս, և քու կեանքիդ վրայ ապահով պիտի չըլլաս։ 67—Ո՜ սրտիդ ահաւոդողին և աչքերուդ տեսած բաներէն, առաւօտուն պիտի ըսես, Երանի՛ թէ իրիկուն ըլլար, ու իրիկունն ալ պիտի ըսես, Երանի՛ թէ առաւօտ ըլլար։ 68—Ու Տէրը նաւերով Եգիպտոս պիտի դարձնէ քեզ այն ճամբայով, որու համար քեզի ըսի թէ զանիկա մէյմըն ալ պիտի չտեսնես. և հոն ծառաներ ու աղախիններ ըլլալու պիտի ծախուիք ձեր թշնամիներուն, և ծախող առնող պիտի չըլլայ։

ԳԼ. ԻԹ

Ասոնք են այն ուխտին խօսքերը, զորոնք Տէրը Մովսէսի հրամայեց խրատելի որդիներուն հետ ընելու Մովաբի երկրին մէջ, անոնց հետ Քորէբի վրայ բրած ուխտէն զատ։

2—Ու Մովսէս բոլոր Իսրայէլը կանչելով՝ անոնց ըսաւ, Դուք տեսաք այն ամէնը՝ զոր Տէրը ձեր աչքերուն առջեւ Եգիպտոսի երկրին մէջ բրաւ Փարաւոնի, և անոր բոլոր ծառաներուն, ու անոր բոլոր երկրին. 3—Այսինքն այն մեծ փորձութիւնները, նշանները ու մեծ հրաշքները, զորոնք դուն քու աչքերովդ տեսար. 4—Ու Տէրը մինչև այսօր չտաւ ձեզի սիրտ ուղիղ մը որ իմանաք, և ոչ աչքեր որ տեսնէք, ոչ ալ ականջներ որ լսէք։ 5—Ու ես քառասուն տարի անապատին մէջ ձեզ պարուցուցի. ձեր վրայի զգեստները չհնացան, ու ոտքերնուդ կօշիկները չմաշեցան։ 6—Հաց չկերաք ու գինի կամ օղի չխմեցիք, որպէս զի գիտնաք թէ ես ձեր Տէր Աստուածն եմ։ 7—Ու երբ այս տեղ եկաք, Եսբոնի Սեհոն Թագաւորը և Բասանի Ովգ Թագաւորը մեր առջեւ ելան մեզի հետ պատերազմելու, ու մենք զարկինք զանոնք. 8—Ու անոնց երկիրը առինք, ու զանիկա Ռուբենեանց, Գադեանց ու Մանասէի կէս ցեղին ժառանգութիւն տուինք։ 9—Ուստի այս ուխտին խօսքերը պահեցէք ու կատարեցէք, որպէս զի ձեր ամէն գործին մէջ յաջողութիւն գտնէք։

10—Այսօր դուք ամէնդ ձեր Տէր Աստուծոյն առջեւ կը կայնիք. ձեր *ցեղերուն իշխանները, ձեր ծերերը, ձեր ոստիկանները՝ բոլոր Իսրայէլի մարդիկը, 11—Ձեր ազգքերը, ձեր կիներնիր, և քու բանակիդ մէջ եղող օտարականը, քու փայտ կարդիդ մինչև քու ջրկիրդ։ 12—Որպէս զի քու Տէր Աստուածդ ուխտին ու անոր երդումին մէջ մտնես, զոր այսօր քու Տէր Աստուածդ քեզի հետ կ'ընէ, 13—Որպէս զի քեզ այսօր իրեն ժողովրդ հաստատէ, և ինք քեզի Աստուած ըլլայ, ինչպէս քեզի ըսաւ, ու ինչպէս քու Հայրերուդ, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի, երդումբրաւ։ 14—Ու ես այս ուխտը և այս երդումը միայն ձեզի հետ չեմ ըներ, 15—Հապա այսօր մեզի հետ մեր Տէր Աստուծոյն առջեւ հոս կայնողներուն հետ, և այսօր մեզի հետ հոս չեզոզներուն հետ ալ։ 16—Քանզի դուք գիտէք թէ ինչպես բնակեցանք Եգիպտոսի երկրին մէջ, և ինչպես անցանք այն ազգերուն մէջէն որ գուք անցաք. 17—Ու անոնց քով եղած անոնց գարշելի բաները, և անոնց փայտ, քար, արծաթէ ու ոսկիէ կուռքերը տեսաք։ 18—Չըլլայ որ ձեր մէջ այր մարդ կամ կին մարդ կամ ազգատոհմ կամ ցեղ մը գտնուի, որ իր սիրտը այսօր մեր Տէր Աստուծմէն խոտորեցնելով, երթայ այն ազգաց աստուածներուն ծառայութիւն ընէ. չըլլայ որ ձեր մէջ թոյն ու գառնութիւն բերող արմատ մը գտնուի. 19—Ու չըլլայ որ հէնց այս անէծքին խօսքերը լսելով՝ սրտին մէջ իրեն օրհնութիւն տալով ըսէ, Թէև իմ սրտիս յամառութեանը մէջ քալեմ, ինծի խաղաղութիւն կ'ըլլայ, և այպէս անկիա իր ծարաւութեանը վրայ գինովութիւն աւելցնէ. 20—Տէրը պիտի չհամի անոր խնայել, հապա այն ատեն Տէրոջը բարկութիւնը ու նախանձը այն մարդուն վրայ պիտի բորբոքի, և այս գիրքին մէջ գրուած ամէն անէծքը անոր վրայ պիտի իջնէ, ու Տէրը անոր անունը երկինքի տակէն բնաջինջ պիտի ընէ. 21—Ու Տէրը այս օրինաց գիրքին մէջ գրուած ուխտին ամէն անէծքներուն համեմատ անոր վրայ չարիք հատցնելու համար՝ զանիկա Իսրայէլի բոլոր ցեղերէն պիտի զատէ, 22—Ու պիտի ըսէ յետագայ ազգը, այսինքն ձեզմէ հաքը եկող զաւակներդիդ, ու հեռու երկրէ եկող օտարականը, երբ անոնն այն երկրին հարուածները ու անոր հիւանդութիւնները, որոնցմով Տէրը զանիկա պիտի նեղէ. 23—Ու երբ ծծումբ, ազ ու պրած ըլլալով, հան բան մը չցանուիր, ու պատղ մը չբերեր, և խոտ մը չբուսանիր՝ Սոդոմի, Գոմորի, Ադմայի ու Սեբոյիմի աւերումին պէս, զորոնք Տէրը իր բարկութիւնովը ու սրտմտութիւնովը բնաջինջ ըրաւ։ 24—Նաև ամէն ազգերը պիտի ըսեն, Ինչո՞ւ համար Տէրը այս երկրին այսպէս ըրաւ. այս մեծ սրտմտութեան ու բարկութեան պատճառը ի՞նչ է։ 25—Ու անոնց պիտի ըսեն, Պատճառը այս է՝ որ անոնք մերժեցին իրենց Հայրերուն Տէր Աստուծոյն ուխտը, զոր անոնց հետ ըրեր էր՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանած առեն, 26—Ու գացին ուրիշ աստուածներու ծառայեցին, ու անոնց երկրպագութիւն ըրին, այնպիսի աստուածներու՝ զորոնք իրենք բնաւ չէին ճանչցած, և զորոնք Տէրը որոշած չէր անոնց։ 27—Ուստի Տէրոջը բարկութիւնը այն երկրին դէմ բորբոքեցաւ, որ այս գիրքին մէջ գրուած ամէն անէծքները անոր վրայ բերէ. 28—Ու Տէրը բարկութեամբ, սրտմտութեամբ ու մեծ զայրացմամբ զանոնք իրենց երկրէն արմատախիլ ըրելով՝ ուրիշ երկիր մը նետեց, ինչպես այսօր կը տեսնուի։ 29—Ծածուկ բաները մեր Տէր Աստուածոյն կը վերաբերին, բայց յայտնուած բաները մեզի ու մեր որդիներուն յաւիտեան կը յատկանան, որպէս զի այս օրինաց գրոց խօսքերը կատարենք։

ԳԼ. Լ

Ու երբ այս բոլոր բաները քեզի գուցուցած բարիքներս, քու առջեւդ դրած անէծքներս, քու վրադ գան, ու դուն ղրկութեան քու սրտիդ մէջ նորէն յիշես այն բոլոր ազգերուն մէջ, ուր քու Տէր Աստուածդ քեզ պիտի վռնտէ, 2—Ու դուն քու Տէր Աստուածդ դառնաս, և բոլոր սրտիդ ու բոլոր հոգիովդ

*ԵԲՐ. ձեր իշխանները, ձեր ցեղերը

ւոմդ անոր խօսքին հնազանդիս, թէ՛ դուն և թէ՛ քու որդիներդ, ինչպէս ես այսօր քեզի պատուիրեցի, 3—Որ Տէր Աստուածդ ալ քեզ երանելի դարձնելով պիտի աշխարհի քեզի, ու նորին պիտի ժողվի քեզ այն ամէն ազգերէն, որոնց մէջ որ Տէր Աստուածդ քեզ ցրուեր էր։ 4—Եթէ մինչև երկինքին ծայրը վռնասած ալ ըլլաս, քու Տէր Աստուածդ քեզ անկէ պիտի ժողվէ, ու անկէ պիտի առնէ քեզ։ 5—Ու քու Տէր Աստուածդ քու հայրերուդ ժառանգած երկիրը պիտի դարձնէ քեզ, ու դանիկա պիտի ժառանգես, և քեզի աղկութիւն ընելով քու հայրերէդ աւելի պիտի չատնէ քեզ։ 6—Ու քու Տէր Աստուածդ քու սիրտդ և քու զրկնիներուդ սիրտը պիտի թլփատէ, որպէս զի քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ սիրես որպէս զի ապրիս։ 7—Ու քու Տէր Աստուածդ այս բոլոր անէծքները քու թշնամիներուդ վրայ, քեզ ատողներուն ու հալածողներուն վրայ, պիտի դարձնէ։ 8—Ու դուն պիտի դառնաս, ու Տէրոջը խօսքին հնազանդիս, ու կատարես անոր բոլոր պատուիրանքները զորանք ես այսօր քեզի կը պատուիրեմ։ 9—Ու քու Տէր Աստուածդ քու ձեռքերուդ բոլոր գործերը, որովայնիդ պտուղը, անասուններուդ պտուղը ու երկրիդ պտուղը չատնելով քեզի յաջողութիւն պիտի տայ. քանզի Տէրը աղկութիւն ընելով նորէն պիտի ուրախանայ քու վրադ, ինչպէս քու հայրերուդ վրայ ուրախացաւ, 10—երբ դուն քու Տէր Աստուածդ խօսքին հնազանդիս, ու այս օրինաց գիրքին մէջ գրուած անոր պատուիրանքները ու կանոնները պահես, և բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ քու Տէր Աստուածդ դառնաս։

11—Քանզի այս պատուիրանքը զոր ես այսօր քեզի կը պատուիրեմ, քեզի անիմանալի չէ, ու քեզմէ հեռու ալ չէ։ 12—Անիկա երկինքը չէ, որ ըսես թէ Մեզի համար ո՞վ պիտի ելլէ երկինքը, և զանիկա մեզի պիտի բերէ որպէս զի լսենք ու ընենք։ 13—Ու անիկա ծովուն անդին կողմն ալ չէ, որ ըսես թէ Մեզի համար ծովուն անդին կողմը ո՞վ պիտի անցնի, ու զանիկա մեզի պիտի բերէ որպէս զի լսենք ու ընենք։ 14—Քանզի այս խօսքը քեզի չատ մօտ է, քու բերնիդ ու սրտիդ մէջ է, որպէս զի դուն զանիկա կատարես։

15—Նայէ, ես այսօր կեանքը ու բարին, մահը ու չարը քու առջեւդ դրի։ 16—Որովհետև ես այսօր քեզի կը պատուիրեմ որ քու Տէր Աստուածդ սիրես, անոր ճամբաներուն մէջ քալես, ու անոր պատուիրանքները, կանոնները ու դատաստանները պահես, որպէս զի ապրիս ու չատնաս, և քու Տէր Աստուածդ քեզ օրհնէ այն երկրին մէջ, ուր կ'երթաս ժառանգելու համար։ 17—Բայց եթէ քու սիրտդ դառնայ, ու հնազանդութիւն չընես, հապա մոլորելով ուրիշ աստուածներու երկրպագութիւն ընես ու զանոնք պաշտես, 18—Քեզի այսօր կը ծանուցանեմ որ անչուշտ պիտի կորսուիք, — երկար կեանք պիտի չունենաք այն երկրին վրայ, ուր մանելու և զանիկա ժառանգելու համար Յորդանան կ'անցնիք։ 19—Այսօր երկինքը ու երկիրը վկայ կը բռնեմ ձեզի, որ կեանքը ու մահը, օրհնութիւնը ու անէծքը ձեր առջեւ դրի. ուրեմն կեանքը ընտրէ որպէս զի ապրիս դուն և քու սերունդդ։ 20—Որ Տէր Աստուածդ սիրելով՝ անոր խօսքին հնազանդութիւն ընես, ու անոր չարիս, (վասն զի քու կեանքդ ու օրերուդ երկայնութիւնը ան է,) որպէս զի դուն բնակիս այն երկրին՝ զոր Տէրը քու հայրերուդ, Աբրահամի, Իսահակի ու Յակոբի, երդումը բրաւ անոնց տալու։

ԳԼ. ԼԱ

Եւ Մովսէս գնաց բոլոր Իսրայէլի զրուցեց այս խօսքերը։ 2—Ու անոնց ըսաւ, Ես այսօր հարիւր քսան տարեկան եմ. ալ ելլելու ու մտնելու կարողութիւն չունիմ. և Տէրը ինծի ըսաւ, Դուն այս Յորդանանէն պիտի չանցնիս։ 3—Քու Տէր Աստուածդ ինք քու առջեւդ պիտի անցնի, ու այս ազգերը քու առջեւդ ինք պիտի կորսնցնէ, և դուն անոնց ժառանգութիւնը պիտի տիրես. — Տէրոջը ըսածին պէս Յեսու պիտի անցնի քու առջեւդ։ 4— Ու Տէրը անոնց այնպէս պիտի ընէ, ինչպէս Ամորհացւոց Սեհոն ու Ովգ թագաւորներուն և անոնց երկրին ըրաւ, զանոնք բնաջինջ ընելով։ 5—Ես Տէրը զանոնք ձեր ձեռքը պիտի տայ, ու իմ ձեզի բոլոր պատուիրածիս պէս պիտի ընէք անոնց։ 6— Ուժգնցէք ու քաջ եղէք, մի վախնաք ու անոնց երեսէն մի զարհուրիք. քանզի քու Տէր Աստուածդ ինք քեզի հետ կ'երթայ. անիկա քեզ չմարտր ու քեզ երեսէ չձգեր։

7—Ու Մովսէս Յեսուն կանչեց, ու բոլոր Իսրայէլի առջեւ անոր ըսաւ, Ուժգնցիր ու քաջ եղիր. քանզի այս ժողովուրդը դուն պիտի տանիս այն երկիրը զոր Տէրը անոնց տալու, ու դանիկա դուն պիտի ժառանգեցնես անոնց։ 8—Ու քու առջեւդ գացողը նոյն ինքն Տէրն է. անիկա քեզի հետ պիտի ըլլայ. անիկա քեզ պիտի չթողու ու քեզ երեսէ պիտի չձգէ. մի վախնար ու մի զարհուրիր։

9—Արդ Մովսէս այս օրէնքը գրեց, և զանիկա Տէրոջը տապանակը վերցնող Ղեւտացի քահանաներուն, ու Իսրայէլի բոլոր ծերերուն տուաւ. 10—Ու Մովսէս անոնց պատուիրելով՝ ըսաւ, Ամէն եօթներորդ տարին, Թողութեան տարիին տաճնը, տաղաւարահարաց տօնին, 11—երբ բոլոր Իսրայէլ կու գայ քու Տէր Աստուածդ առջեւ երևնալու անոր ընտրած տեղը, այն օրէնքը բոլոր Իսրայէլի առջեւ այս օրէնքը պիտի *կարդաս, որպէս զի լսեն, 12—†Ժողվեցէք ժողովուրդը. այրերը, կիները, տղաքները ու քաղաքներդ եղող օտարականդ, որպէս զի լսեն, և սորվելով՝ ձեր Տէր Աստուածնին վախնան, ու այս օրէնքին բոլոր խօսքերը պահեն ու կատարեն. 13—Ու անոնց չգիտցող տղաքները լսելով՝ ձեր Տէր Աստուածնին վախնալ սորվին, բոլոր այն օրերուն մէջ որչափ որ պիտի ապրիք այն երկրին

*ՆԷԲ. կարդաս
†ՆԷԲ. ժողվե

դուն անոնց ժառանգութիւնը պիտի տիրես. — Տէրոջը ըսածին պէս Յեսու պիտի անցնի քու առջեւդ։ 4— Ու Տէրը անոնց այնպէս պիտի ընէ, ինչպէս Ամորհացւոց Սեհոն ու Ովգ թագաւորներուն և անոնց երկրին ըրաւ, զանոնք բնաջինջ ընելով։ 5—Ես Տէրը զանոնք ձեր ձեռքը պիտի տայ, ու իմ ձեզի բոլոր պատուիրածիս պէս պիտի ընէք անոնց։ 6— Ուժգնցէք ու քաջ եղէք, մի վախնաք ու անոնց երեսէն մի զարհուրիք. քանզի քու Տէր Աստուածդ ինք քեզի հետ կ'երթայ. անիկա քեզ չմարտր ու քեզ երեսէ չձգեր։

7—Ու Մովսէս Յեսուն կանչեց, ու բոլոր Իսրայէլի առջեւ անոր ըսաւ, Ուժգնցիր ու քաջ եղիր. քանզի այս ժողովուրդը դուն պիտի տանիս այն երկիրը զոր Տէրը անոնց տալու, ու դանիկա դուն պիտի ժառանգեցնես անոնց։ 8—Ու քու առջեւդ գացողը նոյն ինքն Տէրն է. անիկա քեզի հետ պիտի ըլլայ. անիկա քեզ պիտի չթողու ու քեզ երեսէ պիտի չձգէ. մի վախնար ու մի զարհուրիր։

9—Արդ Մովսէս այս օրէնքը գրեց, և զանիկա Տէրոջը տապանակը վերցնող Ղեւտացի քահանաներուն, ու Իսրայէլի բոլոր ծերերուն տուաւ. 10—Ու Մովսէս անոնց պատուիրելով՝ ըսաւ, Ամէն եօթներորդ տարին, Թողութեան տարիին տաճնը, տաղաւարահարաց տօնին, 11—երբ բոլոր Իսրայէլ կու գայ քու Տէր Աստուածդ առջեւ երևնալու անոր ընտրած տեղը, այն օրէնքը պիտի *կարդաս, որպէս զի լսեն, 12—†Ժողվեցէք ժողովուրդը. այրերը, կիները, տղաքները ու քաղաքներդ եղող օտարականդ, որպէս զի լսեն, և սորվելով՝ ձեր Տէր Աստուածնին վախնան, ու այս օրէնքին բոլոր խօսքերը պահեն ու կատարեն. 13—Ու անոնց չգիտցող տղաքները լսելով՝ ձեր Տէր Աստուածնին վախնալ սորվին, բոլոր այն օրերուն մէջ որչափ որ պիտի ապրիք այն երկրին

վրայ զոր Յորդանանէն անցնելու համար Յորդանան կ'անցնիք։

14—Ու Տէրը Մովսէսի ըսաւ, Ահա մեռնելու օրերդ մօտեցան. Յեսուն կանչէ, ու Ժողովքի խորանին մէջ ներկայացէք, որպէս զի անոր պատուէր տամ. Ուստի Մովսէս ու Յեսու գացին Ժողովքի խորանին մէջ ներկայացան։ 15—Ու Տէրը ամպի սիւնով խորանին մէջ երևցաւ, ու ամպի սիւնը խորանին դրանը վրայ կայնեցաւ։ 16— Ու Տէրը Մովսէսի ըսաւ, Ահա դուն քու հայրերուդ հետ պիտի ննջես, ու այս ժողովուրդը պիտի ելլէ, ու իր գացած երկրին օտար աստուածներուն հետևէն երթալով՝ անոր մէջ չնութիւն պիտի ընէ, և զիս պիտի թողու, ու իրեն հետ ըրած ուխտս պիտի խափանէ։ 17—Ու այն օրը իմ բարկութիւնս անոնց վրայ բորբոքելով՝ զանոնք պիտի մերժեմ, ու երեսս անոնցմէ պիտի ծածկեմ, ու բնաջինջ պիտի ըլլան. և չատ չարիքներու ու նեղութիւններու հանդիպելով՝ այն օրը պիտի ըսեն, Մեր Աստուածը մեր մէջ չըլլալուն համար չէ՞ որ մենք այս չարիքները կը կրենք։ 18—Ու այն օրը ես իմ երեսս բոլորովին պիտի ծածկեմ անոնց ըրած բոլոր չարութիւնը համար, որովհետև ուրիշ աստուածներու դարձան։ 19— Ուստի հիմա այս երգը գրեցէք, ու Իսրայէլի որդիներուն սորվեցուցէք, զանոնք անոնց բերանը դնելով, որպէս զի այս երգը Իսրայէլի որդիներուն մէջ ինծի վկայութեան համար ըլլայ։ 20— Քանզի զանոնք պիտի տանիմ այն կաթ ու մեղր բղխող երկիրը, որու համար ես անոնց հայրերուն երդում ըրի. և անոնք պիտի ուտեն ու կշտանան և գիրնան. ու Է՛ուր ուրիշ աստուածներու դառնալով և անոնց ծառայութիւն ընելով՝ զիս պիտի արհամարհեն, ու իմ ուխտս պիտի խափանեն։ 21— Իսկ երբ անոնք չատ չարիքներու ու նեղութիւններու հանդիպին, այս երգը անոնց առջեւ վկայութիւն պիտի տայ. որովհետև անոնց զաւակներուն բերնէն պիտի չմոռցուի. վասն զի գիտեմ անոնց խորհուրդը՝ զոր այսօր կ'ընեն, քանի որ դեռ իմ երդումով խոստա-

ցած Երկիրս տարած չեմ զանոնք։
22—Ու սաք Մովսէս նոյն օրը այս երգը գրեց, ու Իսրայէլի որդիներուն սորվեցուց զանիկա։

23—Ու Տէրը Նաւէի որդւոյն Յեսուի պատուիրելով ըսաւ, Զօրացիր ու քաջ եղիր. քանզի Իսրայէլի որդիները դուն պիտի մտնես այն Երկիրը, որու համար անոնց երդուայ ըրի. ու ես քեզի հետ պիտի ըլլամ։

24—Ու երբ Մովսէս այս օրէնքին բոլոր խօսքերը գիրքի մը մէջ գրեց լմնցուց, 25—Տէրոջը տապանակը վերցնող Ղեւտացիներուն պատուիրեց Մովսէս ու ըսաւ, 26— Այս օրէնքին գիրքը առէք, ու զանիկա Տէր Աստուծոյն ուխտի տապանակին քով դրէք, որպէս զի հոն քեզի դէմ վկայութեան համար ըլլայ։ 27— Քանզի ես քու ապստամբութիւնդ ու քու պարանոցիդ խստութիւնը գիտեմ. ահա այսօր, որ մինչ ես ձեզի հետ ողջ եմ, դուք Տէրոջը դէմ ապստամբեցիք կ'ընէք. ալ մ'ըսչափ աւելի իմ մեռնելէս ետքը։ 28—Ձեր ցեղերուն բոլոր ծերերը ու ձեր դատաւորները իմ առջեւս ժողվեցէք, որպէս զի անոնց այս խօսքերը պատգնեմ, որ լսեն. և երկինքը ու երկիրը վկայ բռնեմ անոնց։ 29—Քանզի գիտեմ որ իմ մեռնելէս ետքը դուք անշուշտ *անօրէնութիւն պիտի ընէք, ու իմ ձեզի պատուիրած ճամբայէս պիտի խոտորիք. ու ետքի օրերը չարիքներու պիտի հանդիպիք. որովհետեւ Տէրոջը առջեւ չարութիւն պիտի ընէք, ու ձեր ձեռքերուն գործերովը զանիկա պիտի սրդողնեք։

30—Ու Մովսէս այս երգին խօսքերը Իսրայէլի բոլոր ժողովին ականջներուն մէջ պրաց։

ԳԼ. ԼՒ

1 Ով երկինք, ականջ դրէք որ խօսիմ.
Ու երկիր իմ բերնիս խօսքերը թող մտիկ ընէ։

2—Իմ խրատս անձրեւի պէս պիտի կաթի.
Իմ խօսքս ցօղի պէս պիտի իջնէ.
Անձրեւի պէս կանանչեղէնի վրայ,
Ու առատ անձրեւներու պէս խոտի վրայ։
3—Քանզի Տէրոջը անուանը պիտի կանչեմ.
Մեր Աստուծոյն պատիւ տուէք։
4—*Աստուծոյ գործը կատարեալ է.
Քանզի անոր ամէն ճամբաները իրաւունք են.
Աստուած հաւատարիմ է, ու անիրաւութիւն չունի.
Անիկա արդար և ուղիղ է։
5—Անոնք ապականեցան, իրենց արատը անոր որդիներուն չէ.
Ամբիկա խոտոր ու ծռած ազգ մըն է։
6—Տէրոջը երած հատուցումիդ տա՞կ է,
Ով յիմար ու անմիտ ժողովուրդ,
Անիկա քու Հայրդ չէ՞, որ քեզ առաջուցուր,
Քեզ սեղծեց ու քեզ հաստատեց։
7—Հին օրերը միտդ բեր,
Անցած գարերուն տարիները մտածէ.
Քու հօրդ հարցուր, ու քու փեղի պատմէ.
Քու ծերերուդ հետքը, ու քու փեղի ըսեն.
8—Երբ Բարձրեալը ազգերուն ժառանգութիւն բաժնեց,
Ու Ադամի որդիները տարածեց,
Ազգերուն սահմանները
Իսրայէլի որդիներուն թիւովը դրաւ.
9—Քանզի Տէրոջը բաժինը իր ժողովուրդն է,
Ու իր ժառանգութեան վիճակը Յակոբ է։
10—Զանիկա ամայի երկրի մէջ,
Անկոխ ու ահագին անապատի մէջ գտաւ.
Զանիկա ֆպուշապանեց, խրատեց,
Ու իր աչքին բիբին պէս պահեց։
11—Ինչպէս արծիւը իր բոյնիկը գրգռէ,
Կը չարժի իր ձագերուն վրայ,
Իր թեւերը կը տարածէ, զանոնք վրան կ'առնէ

*ԵԲՐ. պիտի ապականիք

*ԵԲՐ. վկայութիւն. բ Թագ. իբ. 3, իդ. 3, Սաղ. ժբ. 2, 31, 46, Առակ. ա. 12։ †կամ, հոգացող ‡կամ, պարտաւոր

Ու իր երեսը կը վերցնէ,
12—Անդրէն Տէրը միայն զանիկա պարտաւոր է,
Ու անոր հետ օտար աստուած չկար։
13—Զանիկա երկրի բարձր տեղերուն վրայ *հանեց,
Որպէս զի արտերուն պատղը ուտէ.
Ու անոր՝ վէմէն մեղր,
Ու ապառաժ վէմէն խիղ ձեթել տուաւ.
14—Ագռ կովերու խիղ ու ոչխարներու կաթ ‡իջուցաւ,
Գառներու ու Բասանի խոյերու և նոխազներու ճարպով,
Ու ցորենի էրնեքր ալիւրով.
Ու խաղողին արիւնը՝ գինի խմեցիր։
15—Ու †Իսրայէլ գերեզմանով աթացաւ.
(Դիրցար, հաստացար, խղ կապեցիր.)
Ու իր Արարիչ Աստուածը թողուց,
Ու իր փրկու Քարան վէմը արհամարհեց։
16—Օտար աստուածներով անոր նախանձը գրգռեցին,
Ու գարչելի բաներով զանիկա սրդողցուցին։
17—Դեւերուն զոհ մատուցին, և ոչ Աստուծոյ,
Իրենց չգիացած աստուածներուն,
Նոր — մտերս եզոզներուն,
Որոնցմէ ձեր հայրերը չվախցան։
18—Զաւն փեղ ծնանող վէմը մոռցար,
Ու քեզ սեղծող Աստուածը միտդէդ հանեցիր։
19—Ու Տէրը տեսնելով դզուեցաւ
Որովհետեւ իր տղաքները ու աղիկները զինք սրդողցուցին։
20—Ու բաւ, Անոնցմէ երեսս ծածկեմ,
Ու տեսնեմ թէ անոնց վերջը ինչ պիտի ըլլայ.
Վասն զի անոնք ծուռ ազգ մըն են,
Անհաւատարիմ որդիներ են։
21—Անոնք չաստուածներով իմ նախանձս գրգռեցին,
Ու իրենց անառի բաներովը զիս սրդողցուցին.
Ես ալ անպիտան ժողովրդով մը անոնց նախանձը պիտի գրգռեմ,

*ԵԲՐ. հեծցուց
†ԵԲՐ. երկհամառնքներուն Տարպով
‡ԵԲՐ. Յեսուրուն. Գլ. լգ. 5, 26։ Ես. խա. 2։

Ու անմիտ ազգով մը զանոնք պիտի սրդողցնեմ։
22—Քանզի իմ բարկութենէս կրակ վառեցաւ,
Ու գոհոքին մինչև ներքին անդերը պիտի այրէ.
Երկիրը և անոր արմտիքը պիտի ուտէ,
Ու լեռներուն հիմերը պիտի բռնկցնէ։
23—Անոնց վրայ չարիքներ պիտի գիզեմ,
Իմ նետերս անոնց վրայ ծերեցնեմ պիտի հատցնեմ։
24—Անօթութեամբ պիտի մաշին,
Ու *հրատագնապ անդամով՝ և գառն ժանտախտով պիտի հատնին,
Ու անոնց վրայ գազաններուն ակռաները
Ու գետնի վրայ սողացողներուն թունը պիտի զրկեմ։
25—Դուրսէն սուրը ու †ներսէն վախը
Երիտասարդները ու կոյս աղիկները,
Կաթնկեր տղաքները
Ու ալեւոր ծերերը պիտի չարգնեն։
26—Ըսի որ զանոնք երէսէ ամէն կողմը ցրեմ,
Անոնց յիշատակը մարդոց մէջէն վերցընեմ,
27—Միայն թէ թշնամիին բարկութենէն վախցայ,
Զրլլայ որ անոնց հակառակորդները ուրանան,
Զրլլայ որ ըսեն թէ Այս բոլոր բանը ընդոր
Մեր բարձր ձեռքն է, և ոչ թէ Տէրը,
28 — Քանզի անոնք խորհրդակորոյս ազգ մըն են,
Ու անոնց մէջ խոհեմութիւն չկայ։
29—Երանի՛ թէ խոհեմ ըլլային, ու այս բանը հասկնային,
Ե՛ր իրենց վախճանը մտածէին։
30—Մարդ մը հազարը ի՞նչպէս կը հալածէր,
Ու երկու մարդ տասը հազարը ի՞նչպէս կրնար փախցնել,
Եթէ անոնց Վէմը զանոնք չծախեր,
Ու Տէրը զանոնք չմատնէր։
31—Քանզի անոնց վէմը մեր Վէմին պէս չէ,

*կամ, կայծակով
†ԵԲՐ. սենեակներէն

Ու մեր թշնամիները այս բոլոր
աստուածները,
32—Վասն զի անոնց որթը Սոդոմի որ-
թէն է,
Ու Գոմորի արտէն է.
Անոնց խաղողները թունաւոր խաղող-
ներ են,
Ո՛ր անոնց ողկոյզները դառն են.
33—Անոնց գինին վիշապներուն *ժան-
տութիւնը
Ու խժերուն մահաբեր թոյնն է։
34—Աւրկա իմ քովս պահուած,
Ո՛ր իմ չտեսնաններուս մէջ կնքուած
չէ՞ արդեօք,
35—Իմն է վրէժխնդրութիւնը ու հա-
տուցումը.
Անոնց ոտքը սահի՜ր ժամանակին
պիտի գլորի.
Վասն զի անոնց կորստեան օրը մօտ է,
Ու անոնց գլուխը գալիքները կ'արագ-
բան։
36—Քանզի Տէրը իր ժողովուրդը պի-
տի դատէ,
Ու իր ծառաներուն վրայ պիտի գթայ,
Որովհետեւ պիտի տեսնէ ձեռքերուն
թուլութիւնը,
Երբ գոցուած ու ձգուած չկայ.
37—Ու պիտի ըսէ, Ո՞ր են անոնց
աստուածները,
Ան վէմը՝ որուն վրայ իրենց յոյսը
դրեր էին,
38—Անոնց զոհերուն ճարպը ուտող-
ները,
Ու թափելու նուէրներուն գինին խմող-
ները.
Թող ելլեն ու ձեզի օգնեն,
Ու ձեզի պաշտպան ըլլան։
39—Հիմա նայեցէք, որ †միայն Ես եմ",
Ու ինծմէ ուրիշ Աստուած չկայ.
Ես կը մեռցնեմ ու ես կ'ապրեցնեմ.
Ես կը զարնեմ ու ես կը բժշկեմ,
Ու իմ ձեռքէս ազատող մը չկայ։
40—Քանզի ձեռքս երկինք վերցնելով
կ'ըսեմ,
Ես յաւիտեան կենդանի եմ,
41—Եթէ փայլակի պէս սուրս սրեմ,
Ու ձեռքս դատաստանի երկնցնեմ,
Իմ թշնամիներուս վրէժխնդրութիւն
պիտի ընեմ,
Ու ինծի առողներուս հատուցում ընեմ,
42—Սպաննուածներուն ու գերիներուն
արիւնէն,
Թշնամեաց իշխաններուն գլխէն
Իմ նետերս արիւնով պիտի արբե-
ցընեմ,
Ու իմ սուրս միս պիտի ուտէ,
43—Ով ազգեր, անոր ժողովուրդին
ուրախանաք եղէք,
Քանզի իր ծառաներուն արեան վրէժը
պիտի խնդրէ.
Իր թշնամիներէն վրէժ պիտի առնէ,
Ու իր երկրին ու ժողովուրդին քաւու-
թիւն պիտի ընէ։

44—Ուստի Մովսէս Նաւեան ՅԻ-
սուի հետ եկաւ, ու այս երգին բոլոր
խօսքերը ժողովուրդին ականջներուն
զրուցեց։ 45—Ու երբ Մովսէս այս ա-
մէն խօսքերը բոլոր Իսրայէլի զրուցեց
լմնցուց, 46—Անոնց ըսաւ, Ձեր սրտին
մէջ դրէք այն ամէն խօսքերը զորոնք
այսօր ձեզի վկայութիւն բերի, որպէս
զի զանոնք ձեր ազգ պատուիրէք, որ
այս օրէնքին ամէն խօսքերը պահեն ու
կատարեն։ 47—Քանզի ասիկա ձեզի
պարապ բան մը չէ, որովհետեւ ձեր
կեանքն է. ու այս բանով երկայնա-
կեաց պիտի ըլլաք այն երկրին վրայ,
որու համար Յորդանանէ կ'անցնիք
զանիկա ժառանգելու։

48—Ու Տէրը նոյն օրը խօսեցաւ
Մովսէսի՝ ըսելով, 49— Այդ Աբարիմ
լեռը ելիր, Մովաբի երկրին մէջ եղող
Երիքովի դիմացի Նեբաւ լեռը, ու
տես Քանանու երկիրը զոր Իսրայէլի
որդիներուն կալուածք պիտի տամ.
50—Ու դուն այն ըստ ելած լեռանդ
վրայ մեռնիս, ու քու ժողովուրդիդ
խառնուիս, ինչպէս քու եղբայրդ Ա-
հարոն Հոր լեռան վրայ մեռաւ, ու
իր ժողովուրդին խառնուեցաւ. 51—
Որովհետեւ Իսրայէլի որդիներուն մէջ,
Մին անապատը, Կադէսի հակառա-
կութեան ջուրերուն վրայ Ինծի ան-
հնազանդ եղաք. քանզի Իսրայէլի որ-
դիներուն մէջ ինծ *չսեպհականեցիք,

*Այսինքն, Թոյնը
†Եբէր. ես՝ ես եմ

*Եբէր. Չսրբեցիք

52—Ուստի այն երկիրը *հեռուէն պի-
տի տեսնես, բայց դուն հոն պիտի
չմտնես, այն երկիրը զոր ես Իսրայէլի
որդիներուն կու տամ։

ԳԼ. ԼԳ

Եւ այս է այն օրհնութիւնը, որով
Աստուծոյ մարդը Մովսէս իր մեռնե-
լէն առաջ Իսրայէլի որդիները օրհնեց.
2—Ու բսաւ,
Տէրը Սինայէ եկաւ,
Ու Սէիրէ անոնց երեցաւ,
Ե՛ Փառան լեռնէն փայլեցաւ,
Ու բիւրաւոր սուրբերով եկաւ.
Անոր աջ ձեռքին օրէնքին կրակը Ի՛ր
անոնց.
3—Այո, անիկա ժողովուրդները կը
սիրէ.
Բոլոր սուրբերը քու ձեռքդ են.
Ու անոնք քու խօսքերդ ընդունելու
համար
Քու ոտքերուդ քովէ կը նստին.
4—Մովսէս մեզի առաւ օրէնքը,
Ցակոբի ժողովրին ժառանգութիւնը։
5—Ու երբ ժողովուրդին գլխաւորները
Իսրայէլի ցեղերուն հետ ժկտեզ ժո-
ղովեցան,
Ինք †Իսրայէլի մէջ Իշխան՝ եղաւ։
6—Ռուբէն թող ապրի ու չմեռնի,
Ու անոր ժողովուրդը չսակաւ ըլլայ։
7—Ու Յուդայի համար այս բանը
բսաւ,
Ով Տէր, Յուդայի ձայնը լսէ,
Ու զանիկա իր ժողովուրդին տար.
Անոր ձեռքերը իրեն բաւական ըլլան,
Ու անոր Թշնամիներուն դէմ օգնա-
կան եղիր։
8—Ու Ղեւիի համար բսաւ,
Քու Թումմիդ և Ուրիմդ քու սուրբ
մարդուդ ըլլայ,
Զոր Մասսայի մէջ փորձեցիր,
Ո՛ր Մերիպայի ջուրին վրայ անոր հետ
վիճեցար։
9—Ան որ իր հօրը ու մօրը համար
Ջանիկա չսեպեց՝ բսաւ,
Ու իր եղբայրները չճանչցաւ,
Ու իր որդիները չգիտցաւ.
Քանզի անոնք քու խօսքիդ զգուշա-
ցին ըրին,
Ու քու ուխտդ պահեցին։
10—Քու դատաստաններդ Յակոբի,
Ու քու օրէնքդ Իսրայէլի անոնք պիտի
սորվեցնեն.
Քու աւանդ խունկ պիտի մատուցանեն,
Ու քու սեղանիդ վրայ ողջակէզ։
11—Ով Տէր, անոր զօրութիւնը օրհնէ,
Ու անոր ձեռքին գործը ընդունէ.
Անոր վրայ ելլուզներուն ու անոր Թշնա-
միներուն մէջը կոտրէ,
Որպէս պի մէյմին ալ չելլեն։
12—Բենիամինի համար բսաւ,
Տէրոջը սիրելին անոր քով ապահովու-
թեամբ բնակի.
Ա՛ռ-ո՜ւ-ծ միշտ զանիկա պաշտպանէ,
Ու անոր *ուսերուն մէջ բնակի։
13—Ու Յովսէփի համար բսաւ,
Անոր երկիրը Տէրոջմէն օրհնեալ ըլլայ
Երկինքի ընծիր պարգեւներովը, ցօ-
ղովը,
Ու վարը պառկող անդունդներովը,
14—Ես արեգակէն յառաջ եկած ըն-
ծիր բերքերովը,
Ու †ամիսներուն ընծիր արդիւնքնե-
րովը,
15—Ու հին լեռներուն ‡ընծիր պտուղ-
ներովը՝
Ու մշտնջենաւոր բլուրներուն ընծիր
պարգեւներովը,
16—Ես երկրի ու անոր առատութեանը
ընծիր պարգեւներովը,
Ու մորենիին մէջ բնակողին բարեհա-
ճութիւնովը.
Ա՛ռ-ո՜ւ Յովսէփի գլուխն վրայ,
Իր եղբայրներուն մէջ երեւելի եղողին
գագաթին վրայ, Թող գան։
17— Անիկա իր ցուլին առջինեկին պէս
գեղեցկութիւն ունի,
Ու իր եղջիւրները միեղջերուի եղջիւր-
ներուն կը նմանին.
Անոնցմով պիտի զարնէ ժողովուրդները
Մինչեւ երկրի ծայրերը.

*Կամ, սահմաններուն
†Եբէր. լուսիններուն
‡Եբէր. գլխովը

Ամենք են Եփրեմի բերքատուները
Ու Մանասէի հազարապետները։
18—Ես Զաբուղոնի համար ըսաւ,
Ուրախացիր, ով Զաբուղոն, քու ելած առներդ,
Ու դուն, ով Իսաքար, քու վրաններդուդ մէջ։
19—Ժողովուրդները լեռը հրաւիրելով՝
Հոն արդարութեան զոհեր պիտի մատուցանեն.
Քանզի անոնք ծովերուն առատութիւնը
Ու աւազին ծածուկ գանձերը պիտի ծծեն։
20—Ու Գադի համար ըսաւ,
Գադը բնդարձակողը օրհնեալ ըլլայ.
Մատակ առիւծի պէս կը նստի,
Ու թեւեր և գլուխներ կը գիշատէ.
21—Ու անիկա էրէչէն առաջին մասը
Իրեն յաշխատ տեսաւ.
Քանզի հոն օրէնսդրին փառաւոր բաժինն
Մէջ պահուեցաւ,
Ես ժողովուրդին գլխաւորներովը գալով՝
Տէրոջը արդարութիւնը ու անոր դատաստանները
Իսրայէլի հետ ի գործ դրաւ։
22—Ես Դանի համար ըսաւ,
Դան առիւծի ձագ է,
Անիկա Բասանէ պիտի ցաթկէ։
23—Ու Նեփթաղիմի համար ըսաւ,
Նեփթաղիմ Աստուծոյ չնորհքովը կշտացած,
Ու Տէրոջը օրհնութիւնովը լցուած,
Արեւմուտքը ու հարաւը պիտի ժառանգէ։
24—Ու Ասերի համար ըսաւ,
Ասեր որդիներէ օրհնուած.
Իր եղբայրներուն հաճոյ ըլլայ,
Ու ոտքը իւղի մէջ թաթխէ։
25—Քու *կօշիկներդ երկաթէ ու պղնձէ ըլլան,
Ես քու †օրերուդ չափ ըլլայ,
26—ՀԻսրայէլի Աստուծոյն պէս չկայ,
Անիկա քեզի օգնութիւն բնելու համար
Իր մեծվայելչութիւնովը երկինքներու
Ես ամպերու վրայ կը նստի։
27— Յաւիտենական Աստուածը †եղէ ապաւէն է,
Ու ‡ներս յաւիտենական բազուկները *եղէ պաշտպան են.
Քանզի թշնամիները քու առջեւդ պիտի վռնտէ,
Ու Ջնջէ՛ կսպէ՛ պիտի ըսէ,
28—Ես Իսրայէլ ապահովութեամբ առանձին պիտի բնակի.
Յակոբի աղբիւրը ցորենի ու գինիի երկրին մէջ պիտի ըլլայ.
Ու անոր երկինքէն ցօղ պիտի կաթի։
29—Երանի՛ քեզ, ով Իսրայէլ. ո՞ր ժողովուրդը քեզի պէս
Տէրոջը ձեռքով փրկուած է.
Վահ՛ դէ քու օգնութեանդ սպառը
Ու յաղթութեանդ սուրը անիկա է.
Քու թշնամիներդ քեզի պիտի ծխնելուին,
Ու անոնց բարձր տեղերը պիտի կոխես։

Գլ. ԼԴ

Ես Մովսէս Մովաբի դաշտերէն Նեբոյ լեռանը վրայ Երիքովի դիմացի Փասգայի գագաթը ելաւ. և Տէրը անոր ցուցուց բոլոր Գաղաադ երկիրը մինչև Դան, 2— Նաև բոլոր Նեփթաղիմը, ու Եփրեմի և Մանասէի երկիրը, ու Յուդայի բոլոր երկիրը մինչև արեւմտեան ծովը, 3— Ես հարաւային կողմը ու Երիքովի հովիտին դաշտը, Սոարայենոց քաղաքը մինչև Սեգովր։ 4—Ես Տէրը անոր ըսաւ, Այս է այն երկիրը՝ որուն համար Աբրահամի, Իսահակի ու Յակոբի երդում ըրի՝ ըսելով, Քու սերունդիդ պիտի տամ զանիկա. ահա քու աչքերուդ ցուցուցի, բայց դուն հոն պիտի չանցնիս։

5—Ուստի Տէրոջը ծառան Մովսէս հոն Մովաբի երկրին մէջ Տէրոջը բանին պէս մեռաւ. 6— Ես զանիկա Բեթփեգովրի դիմաց, Մովաբի երկիրը ձորի մը մէջ թաղեց. ու մինչև այսօր անոր գերեզմանը մարդ մը չդիտցաւ։ 7— Ես Մովսէս իր մեռած ատենը հարիւր քսան տարեկան էր. անոր աչքերը չկարացան, ու անոր այժը չպնացաւ։ 8— Ես Իսրայէլի որդիները Մովաբի դաշտերուն մէջ Մովսէսի համար երեսուն օր լացին. ու Մովսէսի համար սուգի լացին օրերը լմնցան։

9—Ես Նաւէի որդին Յեսու իմաստութեան հոգւով լեցուեցաւ, որովհետև Մովսէս իր ձեռքերը անոր վրայ դրեր էր. ու Իսրայէլի որդիները անոր հնազանդութիւն ըրին, և Տէրը ինչ որ Մովսէսի պատուիրեր էր, այնպէս ըրին։

10—Ես անկէ ետև Տէրոջը երես առերես ճանչցած Մովսէսին պէս՝ Իսրայէլի մէջ մարգարէ մը չելաւ։ 11— Այն բոլոր նշաններով ու հրաշքներով, զորոնք Տէրը զրկեց զանիկա ընդիպատի երկրին մէջ ընելու. Փարաւոնի ու անոր ամէն ծառաներուն և անոր բոլոր երկրին, 12— Ու այն բոլոր զօրաւոր ձեռքով և բոլոր մեծ սոսկումով՝ զոր Մովսէս ըրաւ բոլոր Իսրայէլի աչքին առջեւ։

*Կամ, կղպարներդ
†Կամ, հանգիստդ
‡Եբր. Յեսուբունք

*Եբր. տակն են
†Կամ, ատեն

ԳԻՐՔ ՅԵՍՈՒԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը Ծառային Մովսէսի մեռնելէն ետքը Տէրը Մովսէսի սպասաւորին Նաւէի որդւոյն Յեսուի հետ խօսեցաւ՝ ըսելով, 2— Իմ Ծառաս Մովսէս մեռաւ. հիմա եղ — անցիր այդ Յորդանանէն դուն և այս բոլոր ժողովուրդը՝ այն երկիրը որ ես իսրայէլի որդիներուն կու տամ։ 3—Ձեր ոտքին բոլոր կոխած տեղերը ձեզի պիտի տամ, ինչպէս Մովսէսի ըսի։ 4— Անապատէն ու այս Լիբանանէն մինչև մեծ գետը, այսինքն Եփրատ գետը, Քեթացւոց բոլոր երկիրը մինչև մեծ ծովը արեւմտեան կողմը ձեր սահմանը ըլլայ։ 5— Քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ մա՛րդ մը չկարենայ քեզի դէմ դնել. ինչպէս Մովսէսի հետ էի, քեզի հետ ալ պիտի ըլլամ. քեզ պիտի չթողում ու քեզ անտես պիտի չընեմ։ 6—Զօրացիր ու քաջասիրտ եղիր. քանզի այս ժողովուրդին դուն պիտի ժառանգեցընես այն երկիրը, որու համար ատանց հայրերուն երդում ըրի ատոնց տալու։ 7—Միայն թէ զօրացիր ու խիստ քաջ եղիր, որպէս զի իմ Ծառայիս Մովսէսի բոլոր քեզի պատուիրած օրէնքը պահես ու ընես. անկէ ալ կամ ձախ կողմ չխոտորիս, որպէս զի քու ամէն երթալու տեղդ *յաջողութիւն գտնես։ 8—Այս օրէնսդիրքը քու բերնէդ չպառնայ, հապա գիշեր ցորեկ անոր վրայ մտածես, որպէս զի բոլոր անոր մէջ գրուածները պահես ու կատարես. քանզի այն ատեն քու գործերդ յաջողակ կը ատնիս, և այն ատեն յաջողութիւն կը գտնես։ 9— †Ահա քեզի կը պատուիրեմ, Զօրացիր ու քաջասիրտ եղիր, մի վախնար ու մի զարհուրիր. քանզի քու ամէն երթալու տեղերդ քու Տէր Աստուածդ քեզի հետ է։

10—Անկէ ետքը Յեսու Ժողովուրդին ատենադպիրներուն պատուիրեալ՝ ըսաւ, 11— Բանակին միջէն անցէք, ու ժողովուրդին ապսպրեցէք՝ ըսելով, Ձեզի պաշար պատրաստեցէք. քանզի երեք օրէն հետ դուք այս Յորդանանէն պիտի անցնիք, որպէս զի երթաք ժառանգէք այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը ձեզի ժառանգութիւն կու տայ։

12— Ու Ռուբենեանց ու Գադեանց և Մանասէի կէս ցեղին Յեսու խօսեցաւ ու ըսաւ, 13—Մխիթարնիդ ըրէք այն խօսքը, զոր Տէրոջը ծառան Մովսէս ձեզի պատուիրեց՝ ըսելով, Ձեր Տէր Աստուածը ձեզ հանգստացուց, ու այս երկիրը ձեզի տուաւ։ 14—Ձեր կիները, ձեր ազգայնները և ձեր անասունները Յորդանանէն այն կողմը բնակին այն երկրին մէջ զոր Մովսէս ձեզի տուաւ. Յորդանանու ապրիլ կողմը. բայց դուք ամէնդ որ զինուոր կարճներ եք, *սպառազինեալ ձեր եղբայրներուն առջև անցնելով, անոնց օգնութիւն ընէք, 15—Մինչև որ Տէրը ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգրուսցնէ, և անոնք ալ ժառանգեն այն երկիրը զոր ձեր Տէր Աստուածը անոնց կու տայ. ու էք ձեր ժառանգութեան երկիրը դառնաք, և ժառանգէք զանիկա զոր Տէրոջը ծառան Մովսէս ձեզի տուաւ Յորդանանու ատելի կողմը դէպ ի արեւելք։

16—Ու անոնք Յեսուի պատասխան տուին ու ըսին, Քու ամէն պատուիրածներդ պիտի ընենք, և ուր որ մեզ զրկես՝ պիտի երթանք։ 17— Ինչպէս Մովսէսի հնազանդութիւն կ'ընէինք, այնպէս ալ քեզի հնազանդութիւն պիտի ընենք. միայն թէ քու Տէր Աստուածդ քեզի հետ ըլլայ, ինչպէս Մովսէսի հետ էր։ 18—Ամէն մարդ որ քու հրամանիդ դէմ դնէ, և ամէն ինչ որ անոր պատուիրես՝ քու խօսքերդ մտիկ չընէ, պիտի մեռցուի. միայն թէ զօրացիր ու քաջասիրտ եղիր։

*կամ, խելացութեամբ վարուիս. բ Օր. իթ. 9։

†Եբր. Չի՞ որ

*կամ, գունդ գունդ

ԳԼ. Բ

Եւ Նաւէի որդին Յեսու Սատիմէ երկու մարդ զրկեց՝ ծածկաբար երկիրը լրտեսելու համար, ու ըսաւ ցանոնց, Գացէք այն երկիրը ու Երիքովը տեսէք. և անոնք գացին ու Խաւաբ անուն պոռնիկ կնոջ մը տունը մտան, և հոն *հանգչին։ 2— Այն ատեն Երիքովի թագաւորին լուր տրուեցաւ՝ ըսելով, Ահա այս գիշեր երկիրը լրտեսելու համար Իսրայէլի որդիներէն մարդիկ եկեր են հոս։ 3—Ու Երիքովի թագաւորը Խաւաբի †ըսել զրկեց՝ ըսելով, Քեզի եկող ու ատենդ մտնող մարդիկը դուրս հանէ. քանզի անոնք այս բոլոր երկիրը լրտեսելու եկեր են։ 4— Ու կինը այն երկու մարդը առած պահեց, ու ըսաւ, Իրաւ այն մարդիկը ինծի եկան, բայց ուրկէ ըլլալնին չգիտցայ. 5— Ու դռնէրան գոցուելու ատենը, մութ ատեն, այն մարդիկը դուրս ելան. և այն մարդոց ուր երթալը չիմ գիտեր. լաւ՝ անոնց հետէն ինկէք, որպէս զի անոնց հասնիք։ 6— Իսկ ինք տանիքը հանելով զանոնք, պահեր էր քթիանի եղէգներուն մէջ՝ զորոնք տանիքին վրայ դիզուած ունէր։ 7— Ու անոնք մարդիկը Յորդանանու ճամբով մինչև անցքերը անոնց հետէն ինկան, և անոնց հետէն ինկողները դուրս ելլելէ ետքը դուռը գոցեցին։

8—Ու երբ անոնք դեռ չէին քնացած, կինը տանիքին վրայ անոնց քով ելաւ, 9—Ու մարդոցը ըսաւ, Ես գիտեմ որ Տէրը այս երկիրը ձեզի տուաւ, ու ձեր վախը մեր վրայ ինկաւ, և ձեր պատճառաւ այս երկրին բոլոր բնակիչները հալեցան։ 10— Քանզի մենք լսեցինք թէ ի՛նչպէս Տէրը ձեր Եգիպտոսէ ելած ատենը Կարմիր ծովուն ջուրերը ձեր առջևէն ցամքեցուց. նաև

*Եբր. պառկեցան

ինչ որ դուք երկու Յորդանանու անդին կողմը Էմորհացւոց երկու թագաւորներուն, Սեհոնի ու Ովգի, զորոնք բնաջինջ ըրէք։ 11— Ու ասիկա ալ իմ լսածնուս պէս սիրտերնիս հալեցաւ, ու ձեր երեսէն վեհանոտութիւն մնաց վրայ *համարձակութիւն չմնաց քանզի ձեր Եհովա Աստուածը վերը երկինքին մէջ ու վարը երկրի վրայ Աստուած անիկա է։ 12— Հիմա կ'ապաւէմ, Տէրոջմով երդում ըրէք ինծի, որ ես ձեզի ողորմութիւն ընծեցուս համարը, դուք ալ իմ հօրս տանը ողորմութիւն ընէք. և ինծի †ճշմարիտ նշան մը տուէք, 13—Որ իմ հայրս, մայրս, եղբայրներս, քոյրերս, ու բոլոր անոնց վերաբերեալները ողջ պիտի թողուք, և մեր անձը մահուանէ պիտի ազատէք։ 14—Ու այն մարդիկը անոր ըսին, Եթէ այս մեր բանը չյայտնէք, ձեր տեղը մեր անձերը մեռնին. ու երբ Տէրը այս երկիրը մեզի տայ, քեզի ողորմութիւն ու հաւատարմութիւն պիտի ընենք։ 15—Նոքը պատնէշ չունեցող մը պատուհանէն վար իջեցուց. (քանզի իր տունը բերդին պարսպին վրայ էր, ու ինք պարսպին վրայ կը բնակէր.) 16— Ու անոնց ըսաւ, Լեռը գացէք, չըլլայ որ հալածողները ձեզի հանդիպին, ու հոն երեք օր պահուռեցէք, մինչև որ հալածողները ետ դառնան, անկէ ետև ձեր ճամբան գացէք։ 17—Ու այն մարդիկը անոր ըսին, Ահա մենք այդ մեզի ըրած երդումէդ ազատ ենք՝ եթէ դուն մեր այս երկրին վրայ կապես, ուրկէ մեզ իջեցուցիր. և քու հայրդ, մայրդ, եղբայրներդ ու քու հօրդ բոլոր տունը քու քովդ այս տանը մէջ ժողվես։ 19— Ու անոնցմէ ով որ քու տանդ դռնէն դուրս ելլէ, անոր արիւնը իր գլուխն վրայ ըլլայ. մենք անպարտ ենք, բայց քու քովդ այս տանը մէջ բոլոր եղողներուն եթէ ձեռք մը դպչի, ա-

*Եբր. հոգի

*Այսինքն, ապահովութեան նշան համաձայնութեան

նոնց արիւնը մեր գլուխն վրայ լլայ։ **20**—Եւ եթէ այս մեր բանը ձեզ հաճոյանայ, այն ատեն քու մեզի բնակուտուածդ երդումիդ անպատա կ՚ըլլանք։ **21**—Ու կինը ըսաւ, Ձեր խօսքերուն պէս՝ այնպէս թող ըլլայ։ և Յոզուց զանոնք, ու անոնք գացին։ և այն կարմիր չուանը պատուհանին վրայ կապեց։

22—Ու անոնք անկէ լեռնակողմը գացին, ու հոն երեք օր նստան, մինչև որ հալածողները կա դարձան։ ու հալածողները զանոնք ամէն ճամբու մէջ փնտռտցին, բայց չգտան։ **23**—Ան ատեն այն երկու մարդիկը կա դառնալով՝ լեռնէն վար իջան, և անցնելով՝ Նաւէի որդւոյն Յեսուի գացին, ու իրենց պատահած բոլոր բաները անոր պատմեցին։ **24**—Ու Յեսուի բսին, Իրաւցընէ Տէրը այն բոլոր երկիրը մեր ձեռքը տուաւ, ու այն երկրին բոլոր բնակիչները մեր երեսէն հալեցան։

Գլ. Գ

Ու Յեսու առաւուտանց կանուխ եղաւ. և ինք ու բոլոր Իսրայէլի որդիները Սատիմէ չուեցին, ու մինչև Յորդանան եկան։ և անցնելէ առաջ հոն իջևան ըրին։ **2**—Ու երեք օրէն հոսթականները բանակին մէջէն անցան։ **3**—Ու ժողովրդին պատուիրելով՝ ըսին, Երբ ձեր Տէր Աստուածդն ու խոնին տապանակը տեսնէք, ու Ղեւտացի քահանաները՝ որոնք զանիկա կը տանին, դուք ալ ձեր տեղերէն ելէք, ու անոր հետևէն գացէք։ **4**—Բայց ձեր ու անոր մէջտեղ երկու հազար կանգունի չափ միջոց պիտի ըլլայ։ անոր չմտանիք, որպէս զի երթալու ճամբանիդ գիտնաք. քանզի առէջ առաջ այս ճամբայէն անցած չէք։ **5**—Ու Յեսու ժողովրդին ըսաւ, Սրբեցէք ձեր անձերը. քանզի Տէրը վաղը ձեր մէջ հրաշքներ պիտի բնէ։ **6**—Անկէ ետև Յեսու քահանաներուն խօսեցաւ՝ ըսելով, Ուխոնի տապանակը վերցուցէք, ու ժողովրդին առջև անցէք։ Ուստի անոնք ուխոնի տապանակը վերցուցին, ու ժողովրդին առջևէն գացին։

7—Ու Տէրը ըսաւ Յեսուի, Այսօր պիտի սկսիմ բոլոր Իսրայէլի աչքին առջև քեզ մեծցնել, որպէս զի գիտնան թէ ինչպէս Մովսէսի հետ եմ, քեզի հետ ալ պիտի ըլլամ։ **8**—Հիմա դուն ուխոնի տապանակը վերցնող քահանաներուն պատուիրելով՝ ըսա, Երբ Յորդանանու ջուրին եզերքը հասնիք, Յորդանանու մէջ կայնեցէք։

9—Ու Յեսու Իսրայէլի որդիներուն ըսաւ, Հոս մտեցէք, և ձեր Տէր Աստուծոյն խօսքերը մտիկ ըրէք։ **10** Ու Յեսու ըսաւ, Ասով պիտի գիտնաք, որ կենդանի Աստուածը ձեր մէջ է, ու ձեր առջևէն Քանանացիները, Փեռացիները, Խեւացիները, Փերեզացիները, Գեղգեսացիները, Ամորհացիները ու Յեբուսացիները բոլորովին պիտի վռնտէ։ **11**—Ահա բոլոր երկրի Տէրոջը ուխոնին տապանակը ձեր առջև պիտի անցնի Յորդանանու մէջ։ **12**—Ու հիմա դուք Իսրայէլի ցեղերէն տասներկու մարդ առէք. ամէն ցեղէն մէյմէկ մարդ։ **13**—Ու երբ բոլոր երկրի Տէրոջը տապանակը վերցնող քահանաներուն ոտքերը Յորդանանու ջուրին մէջ մտնեն, Յորդանանու ջուրը պիտի կտրի, ու վերէն իջնող ջուրը կարկառակոյտի մը պէս պիտի կայնի։

14—Ու երբ ժողովրդը Յորդանանէ անցնելու համար իրենց վրաններէն չուեցին, ուխոնին տապանակը վերցընող քահանաները ժողովրդին առջևէն կ՚երթային։ **15**—Ու տապանակը վերցնողները մինչև Յորդանան հասնելով՝ տապանակը վերցնող քահանաներուն ոտքերը ջուրին եզերքը մտաւ ածին պէս՝ (վասն զի հունձքի բոլոր ժամանակը Յորդանանու կողքը առատանալով իր բոլոր եզերքները կը կոխէ,) **16**—Ան ատեն վերէն իջնող ջուրը կայնեցաւ, ու Սարթանի քով եղող Ադամ քաղաքին շատ հեռու կարկառակոյտ մը պէս բարձրացաւ. ու գաշտի ծովը, այսինքն Ադի ծովը, իջնողը լլկացաւ կարկեցաւ. և ժողովրդը Երիքովի դիմաց անցաւ։ **17**—Ու Տէրոջը ուխոնի տապանակը վերցնող քահանաները Յորդանանու մէջ ցամաքի վրայ հաստատ կայնեցան. ու բոլոր Իսրայէլ ցամաքով անցաւ, մինչև որ բոլոր ժողովրդին Յորդանանէ անցնիլը լմնցաւ։

Գլ. Դ

Ու երբ բոլոր ժողովրդին Յորդանանէ անցնիլը լմնցաւ, Տէրը խօսեցաւ Յեսուի ու ըսաւ, **2** — ժողովրդին տասներկու մարդ առէք, ամէն ցեղէն մէյմէկ մարդ, **3**—Ու անոնց պատուիրելով ըսէք, Ասկէ Յորդանանու մէջէն, քահանաներուն ոտքերուն տակէն պնդացած տեղէն, ձեզի տասներկու քար վերցուցէք, և զանոնք ձեզի հետ տարէք, ու դրէք այն տեղը՝ ուր այս գիշեր իջևան պիտի բնէք։ **4**—Ու Յեսու Իսրայէլի որդիներէն իր պատրաստ տասներկու մարդիկը կանչեց, ամէն ցեղէն մէյմէկ մարդ։ **5**—Ու Յեսու անոնց ըսաւ, Յորդանանու մէջ ձեր Տէր Աստուածոյն տապանակին առջև անցէք, ու Իսրայէլի որդիներուն ցեղերուն թիւովը՝ ամէն մէկդ ձեր ուսերուն վրայ մէյմէկ քար վերցուցէք։ **6**—Որպէս զի ասիկա ձեր մէջ նշան ըլլայ. երբ վաղը ձեր որդիները չէ՞ հարցնելու ըլլան ու ըսեն թէ Ձեզ քարերը ինչ պիտի ըլլան ձեզի, **7**—Անոնց ըսէք, Քանզի Տէրոջը ուխոնի տապանակին առջևէն Յորդանանու ջուրը կտրուեցաւ. երբ անիկա Յորդանանէ կ՚անցնէր Յորդանանու ջուրը կտրուեցաւ. ու այս քարերը Իսրայէլի որդիներուն մէջ յիշատակի համար պիտի ըլլան յաւիտեան։ **8**—Ու Իսրայէլի որդիները Յեսուի պատուիրածին պէս ըրին. ու Յորդանանու մէջէն տասներկու քար առին, Իսրայէլի որդիներուն ցեղերուն թիւովը, ինչպես Տէրը Յեսուի հրամայեր էր, և զանոնք իրենց հետ իջևանի տեղը տարին, ու հոն դրին։ **9**—Ու Յեսու ուրիշ տասներկու քար ալ կանգնեց Յորդանանու մէջ, ուխոնի տապանակը վերցնող քահանաներուն ոտքերուն կեցած տեղը, ու մինչև այսօր հոն են։ **10**—Ու տապանակը վերցնող քահանաները Յորդանանու մէջ կայնեցան, մինչև որ լմնցաւ այն բոլոր խօսքը զոր Տէրը Յեսուի պատուիրեց՝ ժողովրդին ըսէ, ինչպես Մովսէս Յեսուի պատուիրեր էր։ և ժողովրդը արագաւելով անցաւ։ **11**—Ու երբ բոլոր ժողովրդին անցնիլը լմնցաւ, այն ատեն Տէրոջը տապանակը ու քահանաները ժողովրդին առջև անցան։

12—Ու Ռուբէնի որդիները ու Գադի որդիները և Մանասէի կէս ցեղը սպառազինեալ՝ Իսրայէլի որդիներուն առջև անցան, ինչպէս Մովսէս անոնց ըսեր էր։ **13**—Քառասուն հազարի չափ պատրաստուած զօրք Տէրոջը առջև՝ պատերազմի համար երիքովի դաշտը անցան։

14—Նոյն օրը Տէրը բոլոր Իսրայէլի աչքերուն առջև Յեսուն մեծցուց, ու անոր կեանքին բոլոր օրերուն մէջ՝ Մովսէսի վախցածներուն պէս անկէ կը վախնային։ **15**—Ու Տէրը խօսեցաւ Յեսուի՝ ըսելով, **16**—Վկայութիւն սպառնակը վերցնող քահանաներուն հրամայէ որ Յորդանանէ ելլեն։ **17**—Ուստի Յեսու քահանաներուն հրամայեց ու ըսաւ, Յորդանանէ ելէք։ **18**—Ու երբ Տէրոջը ուխոնի տապանակը վերցնող քահանաները Յորդանանու մէջէն ելան, և քահանաներուն ոտքերուն թաթիերը ցամաքի վրայ կոխեցին, Յորդանանու ջուրը իր տեղը դարձաւ, ու առաջուան պէս իր բոլոր եզերքներուն վրայ գալեց։

19—Ու առաջին ամսուն տասներորդը ժողովրդը Յորդանանէ դուրս ելլելով, Գաղգաղայի մէջ երիքովի արեւելեան կողմը իջևան ըրին։ **20**—Ու այն տասներկու քարը զորոնք Յորդանանէ առեր էին, Յեսու Գաղգաղայի մէջ կանգնեց։ **21**—Ու Իսրայէլի որդիներուն խօսեցաւ՝ ըսելով, Վաղը եթէ ձեր որդիները իրենց հայրերուն հարցընելու ըլլան ու ըսեն թէ Այս քարերը ինչ են, **22**—Ձեր ազգ իմացնէք՝ ըսելով, Իսրայէլ այս Յորդանանէն ցամաքով անցաւ։ **23**—Որովհետև ձեր Տէր Աստուածը ձեր առջևէն Յորդանանու ջուրերը ցամքեցուց մինչև որ դուք անցաք, ինչպես ձեր Տէր Աստուածը Կարմիր ծովուն մէջ ալ բրաւ, զոր ցամքեցուց մեր առջևէն մինչև որ մենք անցանք։ **24**—Որպէս զի երկրի ամէն ազգերը գիտնան որ Տէրոջը ձեռքը զօրաւոր է, և դուք ձեր Տէր Աստուծմէն միշտ վախնաք։

Գլ. Ե

Ա. Երբ լսեցին Ամորհացւոց բոլոր թագաւորները, որոնք Յորդանանա ափին արեւմտեան կողմը [ը բ-ի-է], ու Քանանացւոց բոլոր թագաւորները, որոնք ծովեզերքին քով [ը բ-ի-է], թէ Տէրը Իսրայէլի որդիներուն առջեւէն, մինչեւ անոնց անցնիլը, Յորդանանա յորիերը ցամքեցուցեր է, անոնց սիրտ հալեցաւ ու Իսրայէլի որդիներուն երեսէն անոնց վրայ համարձակութիւն չմնաց։

2—Այն ատեն Տէրը Յեսուի ըսաւ, Քեզի *դայլամազէ դանակներ չինէ, ու դարձեր Իսրայէլի որդիները նորէն քլիփաուէ։ 3—Ու Յեսու իրեն գայլամազէ դանակներ չինեց, ու Գիբ ա-նիք-փաուքեանց [ը-ը-ը-ծ թէ-էզ Իսրայէլի որդիները քլիփաուեց։ 4—Ու այս է պատճառը, որու համար Յեսու զ-ան-ե քլիփաուեց։ Եգիպտոսէ ելած բոլոր ժողովուրդին արուները, ամէն պատերազմող մարդիկը, Եգիպտոսէ ելլելէ ետքը անապատին մէջ ճամբան մեռան։ 5—Ու բոլոր ելած ժողովուրդը քլիփաուած էր. բայց Եգիպտոսէ ելլելէ ետքը անապատին մէջ ճամբան ծնած բոլոր ժողովուրդը չքլիփաուեցին։ 6—Քանի որ Իսրայէլի որդիները քառասուն տարի անապատին մէջ պտրաեցան, մինչեւ որ Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընող բոլոր ազգը, այսինքն Եգիպտոսէ ելլող պատերազմական մարդիկը, սպառեցան. որովհետեւ Տէրը անոնց երդում ըրաւ որ քնաւ անոնց չցուցնէ այն երկիրը, այն կաթ ու մեղր բղխող երկիրը, զոր Տէրը անոնց հայրերուն երդում ըրեր էր մեզի տալու։ 7—Ու սահ անոնց տեղ անոնց զաւակները հանեց, ու զանոնք քլիփաուեց Յեսու. քանզի անքլիփաւ էին, որովհետեւ ճամբան մէջ քլիփաուած չէին զանոնք։ 8—Ու երբ բոլոր ժողովուրդին քլիփաուիլը բընցաւ, բանակին մէջ իրենց տեղը նրստան մինչեւ որ առողջացան։ 9—Այն ատեն Տէրը Յեսուի ըսաւ, Այսօր նզովասպ նախատինքը ձեր վրայէն *վերցուցի. ուստի այն տեղին անունը մինչեւ այսօր †Գաղգաղա ըսուեցաւ։ 10—Ու Իսրայէլի որդիները Գաղգաղա մէջ բանակեցան. ու ամսուն չորեքտասանիներորդ օրը իրիկուան դէմ Երիքովի դաշտերուն մէջ զատիկը ըրին։ 11—Ու զատիկին հետեւեալ օրը այն երկրին պտուղէն բաղարջ կերան, ու նոյն օրը բոլոր ցորեն ալ [էբ-ե։

12—Ու հետեւեալ օրը երբ այն երկրին պտուղէն կերան, մանանան դադրեցաւ. ու անկէ ետքը Իսրայէլի որդիներուն համար ա՛լ մանանայ չեր գտնուեր. և այն տարին Քանանու երկրին պտուղէն կերան։

13—Ու երբ Յեսու Երիքովի *դէմ էր, աչքերը վերցնելով անոր ահա իր դիմաց մարդ մը կայներ էր և անոր ձեռքը մերկ սուր մը կար. ու Յեսու անոր մօտենալով՝ անոր ըսաւ, Մե՞զմէ՞ ես թէ մեր թշնամիներէն ես։ 14—Ու անիկա ըսաւ, Ոչ, այլ ես Տէրոջը զօրախումբին եմ, — հիմա եկայ։ Ու Յեսու երեսի վրայ գետինը ինկաւ ու երկրպագութիւն ըրաւ, և անոր ըսաւ, Իմ ա՛րբ իր ծառային ի՞նչ կը հրամայէ։ 15—Ու Տէրոջը զօրավարը Յեսուի ըսաւ, Ոտքերիդ կօշիկները հանէ, քանզի կայնած տեղդ սուրբ է։ և Յեսու այնպէս ըրաւ։

Գլ. Զ

Ա. Երիքով Իսրայէլի որդիներուն †պատճառաւ ամուր կերպով մը փակուած էր. ելլող ու մտնող չկար։ 2—Ու Տէրը Յեսուի ըսաւ, Նայէ, Երիքովը ու անոր թագաւորը Ե զօրաւոր կորձեղները քու *ձեռքդ տուի։ 3—Ուստի ամէն պատերազմական մարդիկը քաղաքին բոլորտիքը դառնալով՝ մէկ անգամ քաղաքին բոլորտիքը պտրաեք. վեց օր այսպէս ընես։ 4— Ու տասնակին առջեւ եօթը քահանայ եօթը ||Յոբելեան փողերը առնեն. ու եօթներորդ օրը քաղաքին բոլորտիքը եօթը անգամ պտրաեք, և քահանաները փողերը հնչեցնեն։ 5—Ու երբ Յոբելեան եղջիւրները երկար հնչեցնեն, և դուք փողերուն ձայնը լսէք, բոլոր ժողովուրդը մեծ ազաղակ մը հանէ. և քաղաքին պարիսպները վար պիտ իյնան, ու ժողովուրդին ամէն մէկը չխոակ յառաջ երթ-ւ-ւ ներս պիտ մտնէ։

6—Ու Նաւէի որդին Յեսու քահանաները կանչեց ու անոնց ըսաւ, Ուխտին սպասնակը վերցուցէք, ու Տէրոջը տապանակին առջեւէն եօթը քաջ հանայ եօթը Յոբելեան փողեր առնեն։ 7—Նաքը ժողովուրդին ըսաւ, Անցէք ու քաղաքին բոլորտիքը պտրաեցէք, և զինուորները Տէրոջը տապանակին առջեւ անցնին։ 8—Ու երբ Յեսու ժողովուրդին պատուիրեց, եօթը քահանաները, որոնք եօթը Յոբելեան փողերը ունէին, Տէրոջը առջեւ անցնելով փողերը հնչեցուցին, ու Տէրոջը ուխտին տապանակը անոնց ետեւէն կ'երթար։

9—Ու զինուորները փողերը հնչեցընող քահանաներուն առջեւէն կ'երթային, բայց վերջապահները՝ տապանակին ետեւէն. — ե-հ-ե-ն-ե-ր-ը փողերը հնչեցնելով կ'երթային։ 10—Ու Յեսու ժողովուրդին պատուիրելով՝ ըսաւ, Բ-ո-ը աղաղակ մի հանէք, և ձայներնիդ չլսուի, ու ձեր բերնէն խօսք մը չելլէ, մինչեւ այն օրը որ ես ձեզի ըսեմ Թէ Աղաղակ հանեցէք. այն ատեն աղաղակեցէք։ 11—Ուստի Տէրոջը տապանակին քաղաքին բոլորտիքը մէկ անգամ պտրաեցին հետ բանակը դարձան, ու գիշերը բանակին մէջ մնացին։

12—Ու Յեսու առաւօտեան կանուխ ելաւ, ու քահանաները Տէրոջը տապանակը վերցուցին։ 13—Ու եօթը Յոբելեան փողերը կրող եօթը քահանաները Տէրոջը տապանակին առջեւէն կ'երթային փողերը հնչեցնելով, ու զինուորները անոնց առջեւէն կ'երթային, ու վերջապահները՝ Տէրոջը տապանակին ետեւէն. Ե-հ-ե-ն-ե-ր-ը փողերը հնչեցնելով կ'երթային։ 14—Երկրորդ օրն ալ քաղաքին բոլորտիքը մէկ անգամ պտրաեցին բանակը դարձան, վեց օր այսպէս ըրին։ 15—Ու եօթներորդ օրը կանուխ ելան՝ արշալոյսին ծագած ատենը, ու քաղաքին բոլորտիքը եօթը անգամ պտրաեցան նոյն կերպով. միայն թէ այն օրը քաղաքին բոլորտիքը եօթը անգամ պտրաեցան։ 16—Ու եօթներորդ անգամին երբ քահանաները փողերը հնչեցուցին, Յեսու ժողովուրդին ըսաւ, Աղաղակեցէք, քանզի Տէրը այս քաղաքը ձեր ձեռքը տուաւ։ 17—Ու քաղաքը ու բոլոր անոր մէջ եղածը Տէրոջմէ նզովուած ըլլան, միայն Ռահաբ պոռնիկը մեր ղրկած լրտեսները պահելուն համար ողջ մնայ, Թէ՛ ինք և Թէ՛ իրեն հետ տանը մէջ բոլոր եղողները։ 18—Բայց դուք ամէն կերպով զգուշանաք նզովուածէն. չըլլայ որ նզովուածէն առնելով դուք —ւ նզոված ըլլաք, ու Իսրայէլի բանակը նզովքի մէջ ձգելով՝ զանիկա նեղութեան հանդիպցնէք։ 19—Ու բոլոր արծաթը ու ոսկին և պղնձէ ու երկաթէ սպասները Տէրոջը համար սուրբ ըլլան. Տէրոջը գանձը մտնեն։

20—Ուստի ժողովուրդը աղաղակեց, որովհետեւ փողերը հնչեցուցին. ու երբ ժողովուրդը փողերուն ձայնը լսեց, ու ժողովուրդը բարձրաձայն աղաղակեց, պարիսպները վար ինկան. և ժողովուրդին ամէն մէկը չխոակ յառաջ քաղաքը մտնելով՝ քաղաքը առին։ 21—Ու բոլոր քաղաքին մէջ եղողը, այր և կին, երիտասարդ և ծեր, արջառ, ոչխար ու էշ սուրի բերնէն ո-ջ-ն-ջ-ե-լ կորչեցուցին։ 22—Ու Յեսու այն երկիրը լրտեսող երկու մարդոցն ըսաւ, Այն պոռնիկ կնոջ տունը գացէք, ու ինչպէս անոր երդում ըրիք, կինը ու անոր ամէն ունեցածը անկէ դուրս հանեցէք։ 23—Ուստի այն լրտես երիտասարդները գացին, ու Ռահաբը և անոր հայրը ու մայրը ու եղբայրները և անոր ամէն ունեցածը դուրս հանեցին, ու անոր բոլոր ազգատոհմն ալ դուրս հանեցին, և զանոնք Իսրայէլի բանակին դուրս կեցուցին։ 24—Ու քաղաքը և բոլոր անոր մէջ եղածը կրակով այրեցին, միայն արծաթը ու ոսկին և պղնձէ ու երկաթէ սպասները Տէրոջը տանը գանձին մէջ դրին։ 25—Այսպէս Յեսու ողջ պահեց Ռահաբ պոռնիկը ու

*կամ, սուր. Տես նաև գ ՕԵ.

*Նէբ. գլորեցի
†Այլն՝ գլորուր
‡Նէբ. երեսին
||Կամ, խոսք եղջիւրի

անոր հօրը մուն եւ անոր ամէն ունեցածը, ու անկից Իսրայէլի մէջ բնակեցաւ մինչեւ այսօր. քանզի անկից պատճառ այն *լրտեսները զրկած Յեսու զրկեր էր երկրը լրտեսելու համար։

26—Եւ այն ատեն Յեսու երդում ընելով՝ ըսաւ, Տէրոջը առջեւ անիծեալ ըլլայ այն մարդը՝ որ ելլէ ու այս Երիքով քաղաքը չինէ. իր անդրանիկով անոր հիմերը դնէ, ու անոր դռներն ալ իր պզտիկ ազգ կանգնէ։

27—Ու Տէրը Յեսուի հետ էր. ու անոր համբաւը բոլոր երկրին մէջ տարածուեցաւ։

Գլ. Խ

Բայց Իսրայէլի որդիները նզովքի վրայով յանցանք գործեցին. քանզի Յուդայի ցեղէն Զարայի որդւոյն †Զաբդիի որդւոյն Քարմիի որդին Ակար նզովածէն առաւ, ու Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի որդիներուն վրայ բորբոքեցաւ։

2—Ու Յեսու Երիքովէ մարդիկ զրկեց դէպ ի Գայի, որ Բեթաւանի մօտ է՝ Բեթէլէ արեւելեան կողմը, և խօսեցաւ անոնց՝ ըսելով, Ելէք ու այն մարդիկը լրտեսեցէք. և այն մարդիկը ելան ու Գային լրտեսեցին։ 3—Ու Յեսուի դարձան ու անոր ըսին, Բոլոր ժողովուրդը չելլէ, հոն երկու կամ երեք հազար մարդու չափ ելլեն ու Գային զարնեն. բոլոր ժողովուրդը հոն տանելով մի յոգնեցներ. քանզի անոնք քիչ-ուր են։ 4—Ուստի ժողովուրդէն երեք հազարի չափ մարդ հոն ելան, բայց Գայիի մարդոց առջեւէն փախան. 5—ու Գայիի մարդիկը անոնցմէ երեսունըվեց մարդու չափ զարկին, քանզի դռնէն դրանը առջեւէն մինչեւ Սեբարիմ հալածեցին, ու զառիվայրին վրայ զանոնք զարկին. ուստի ժողովուրդին սիրտը հալեցաւ ու ջուրի պէս եղաւ։

6—Ու Յեսու իր հանդերձները պատառելով Տէրոջը տապանակին առջեւ երեսին վրայ գետինը ինկաւ մինչեւ իրիկուն, թէ՛ ինք և թէ՛ Իսրայէլի ծերերը, ու իրենց գլուխն վրայ հող ցանեցին։ 7—Ու Յեսու ըսաւ, Ո՜հ, Տէր Եհովա, ինչո՞ համար այս ժողովուրդը Յորդանանու ապրի կողմը անցուցիր, որպէս զի մեզ Ամորհացւոց ձեռքը մատնես ու մեզ կորսնցնես. երանի՛ թէ Յորդանանու անդին կողմը գոհ ըլլայինք։ 8—Ո՜հ, Տէր, Իսրայէլ իր թիկնամիներուն առջեւ կռնակ դարձնելէն ետեւ՝ այլ ես ի՞նչ ըսեմ։ 9—Որովհետեւ Քանանացիները ու երկրին բոլոր բնակիչները լսելով՝ մեզ պիտի պաշարեն, ու մեր անունը երկրի վրայէն բոլորովին պիտի վերցնեն. այն ատեն քու մեծ անունդ ի՞նչ պիտի ընես։

10—Ու Տէրը Յեսուի ըսաւ, Ոտքի վրայ ելիր. ինչո՞ համար այսպէս երեսիդ վրայ ինկեր ես։ 11—Իսրայէլ մեղք գործեց, և իմ անոնց հրամայած ուխտս զանց ըրին. քանզի նզովածէն առին, ու գողցան ու ստա պրեցին, ու նաև իրենց կարասիներուն մէջ դրին. 12—Ուստի Իսրայէլի որդիները պիտի չկրնան իրենց թիկնամիներուն առջեւ կենալ. իրենց թիկնամիներուն առջեւ կռնակ պիտի դարձնեն, քանզի նզովածի եղան. և ալ ձեզի հետ պիտի չըլլամ, եթէ դուք նզովածը ձեր մէջէն բնաջինջ չընէք։ 13—Ելիր, ժողովուրդը սրբէ, ու ըսէ, Վաղուան համար սրբուեցէք. քանզի Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ, Ով Իսրայէլ, ձեր մէջ նզովածի կայ. մինչեւ որ նզովածը ձեր մէջէն չվերցնէք, քու թիկնամիներուդ առջեւ պիտի չկրնաս կենալ։ 14—Ուստի առաւօտնց ձեր ցեղերով մօտենաք, ու Տէրը ո՛ր ցեղը վիճակով բռնելու ըլլայ, անկիս իր ազգաւորներով մօտենայ. և Տէրը ո՛ր ազգաւորը բռնելու ըլլայ, անկիս իր առներով մօտենայ. ու Տէրը ո՛ր առնը բռնելու ըլլայ, անկիս իր մարդոցմով մօտենայ։ 15—Ու ով որ նզովածով բռնուի, կրակով պիտի այրուի, թէ՛ ինք և թէ՛ իր ամէն ունեցածը. քանզի Տէրոջը ուխտը զանց ըրաւ, ու Իսրայէլի մէջ անզգամութիւն ըրաւ։

*Եբր. պատգամաւորները
†Կամ, Զամբրիի. ա Մն. բ. 6։

16—Ուստի Յեսու առաւօտուց կանուխ ելաւ, ու Իսրայէլը իր ցեղերովը մօտեցուց, և Յուդայի ցեղը բռնուեցաւ։ 17—Ու Յուդայի ազգաւորները մօտեցուց, և Զարայանց ազգաւորը բռնուեցաւ. ու Զարայանց ազգաւորը իր մարդոցմովը մօտեցուց, և Զաբդի բռնուեցաւ։ 18—Եւ անոր առնը իր մարդոցմովը մօտեցուց, և Յուդայի ցեղէն Զարայի որդւոյն Զարդիի որդւոյն Քարմիի որդին Ակար բռնուեցաւ։ 19—Ան ատեն Յեսու Ակարի ըսաւ, Որդիս, հիմա Իսրայէլի Տէր Աստուծոյն փառք տուր, ու †ու դէպ անոր խոստովանէ և քու ըրածդ հիմա ինծի յայտնէ, ինծմէ մի պահեր։ 20—Ու Ակար պատասխան տուաւ Յեսուի և ըսաւ, Իրաւցընէ ես Իսրայէլի Տէր Աստուծոյն դէմ մեղք գործեցի, ու այսպիսի այսպիսի բան մը ըրի։ 21—Աչքիս առարին մէջ ազուոր Բաբելոնի վերարկու մը, ու երկու հարիւր սիկղ արծաթ, և յիսուն սիկղի ծանրութեամբ ոսկի լեզու մը տեսայ, ու անոնց ցանկալով առի. և ահա անոնք իմ վրանիս մէջ հողին տակ պահուած են, ու արծաթը անոր տակ է։ 22—Ուստի Յեսու լրաբերներ զրկեց. ու անոնք վրանը վազեցին. և ահա վրանին մէջ պահուած էր այն, ու արծաթը անոր տակ էր։ 23—Ու զանոնք վրանին մէջէն առնելով Յեսուի ու բոլոր Իսրայէլի որդիներուն բերին, և զանոնք Տէրոջը առջեւ դրին։

24—Ան ատեն Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլ՝ Զարայեան Ակարը ու այն արծաթը և վերարկուն ու ոսկի լեզուն և անոր աղաքը, ոչխիկները, արջառները, էշերը, ոչխարները, վրանը ու անոր ամէն բանը առին, և զանոնք Աքովրի ձորը հանեցին։ 25—Ու Յեսու ըսաւ, Ինչո՞ւ համար դուն մեզ նեղեցիր. Տէրը այսօր քեզ պիտի նեղէ. ուստի բոլոր Իսրայէլ զանիկա քարերով քարկոծեցին, ու զանոնք քարերով քարկոծէլէ ետեւ կրակով այրեցին։ 26—Ետքը անոր վրայ մեծ քարակոյտ մը դիզեցին, որ կը կենայ մինչեւ այսօր։ Ու Տէրը իր սաստիկ բարկութենէն դադարեցաւ. այս պատճառաւ այն տեղին անունը՝ Աքովրի ձոր ըսուեցաւ մինչեւ այսօր։

Գլ. Ը

Ետ Տէրը Յեսուի ըսաւ, Մի վախնար ու մի զարհուրիր. բոլոր պատերազմող մարդիկը քեզի հետ առ, ու ելիր գնա ի Գայի գնա. տես Գայիի թագաւորը ու անոր ժողովուրդը և անոր քաղաքը ու անոր երկիրը քու ձեռքդ մատի։ 2—Ետ երիքովի ու անոր թագաւորին ըրածդ պէս Գայիի ու անոր թագաւորին ալ ընես, միայն թէ անոր աւարը ու անասուններուը ձեզի առնէք. Քաղաքին հետեւի կողմն դարանները պատրաստես։ 3—Ուստի Յեսու ու բոլոր պատերազմող մարդիկը ոտք ելան, որպէս զի Գայիի վրայ երթան. ու Յեսու երեսուն հազար զօրաւոր մարդ ընտրեց, ու զանոնք գիշերով զրկեց։ 4—Ետ անոնց պատուիրելով՝ ըսաւ, Նայեցէք, դուք քաղաքին հետեւէն այն քաղաքին համար դարանի մէջ պիտի նստիք. քաղաքէն չատ մի հեռանաք, և ամէնդ ալ պատրաստ ըլլաք։ 5—Ու ես ինծի հետ եղող բոլոր ժողովուրդով քաղաքին պիտի մտնեմ. ու երբ անոնք առաջին անգամին պէս մեզի դէմ ելլեն, անոնց առջեւէն պիտի փախչինք։ 6—Ու անոնք մեր հետեւէն պիտի ելլեն, մինչեւ որ զանոնք քաղաքէն զատենք. որովհետեւ անոնք պիտի ըսեն թէ Մեր առջեւէն փախան առաջին անգամին պէս. ու մենք անոնց առջեւէն պիտի փախչինք։ 7—Այն ատեն դուք դարանէն ելլէք ու քաղաքը առնէք, քանզի ձեր Տէր Աստուածը զանիկա ձեր ձեռքը պիտի տայ։ 8—Ու երբ քաղաքը առնէք, քաղաքը կրակով այրէք. Տէրոջը պէս ընէք. ահա ձեզի պատուիրեցի։ 9—Ետ Յեսու զանոնք զրկեց, ու անոնք գացին դարանը նստան Բեթէլի ու Գայիի միջեւտղ, Գայիի արեւմտեան կողմէն. և Յեսու այն գիշերը ժողովուրդին մէջ մնաց։

10—Ու Յեսու առաւօտուն կանուխ

*Այսինքն, նեղութեան, կամ, խառնուածքեան

եւս ու ժողովուրդը աչքէ անցուց, և ինք Իսրայէլի ծերերուն հետ ժողովուրդին առջեւէն դէպի Գայի գնաց։ 11— Ե։ իրեն հետ եղող բոլոր պատերազմական մարդիկն ալ եւան, ու մօտենալով քաղաքին առջեւ գացին, ու Գայիի հիւսիսային կողմը բանակեցան. և անոնց ու Գայիի միջեւող ձոր մը կար։ 12—Ե։ հինգ հազարի չափ մարդ առաւ, ու զանոնք դարանի մէջ նստեցուց Բեթէլի ու Գայիի միջեւող *քաղաքին արեւմտեան կողմը։ 13— Ու ժողովուրդը քաղաքին հիւսիսային կողմը դրին բոլոր բանակը, ու քաղաքին արեւմտեան կողմը՝ դարանը. և Յեսու այն գիշերը ձորին մէջ գնաց։

14—Ու երբ Գայիի թագաւորը տեսաւ, քաղաքին մարդոցմով շուտով ու կանուխ դուրս եկաւ, որպէս զի ինք ու իր բոլոր ժողովուրդը որոշ ժամանակով մը դաշտի վրայ Իսրայէլի դէմ պատերազմին, ու չէր գիտեր որ քաղաքին հետեւը իրեն համար դարան պատրաստուած էր։ 15—Ե։ Յեսու ու բոլոր Իսրայէլ անոնց առջեւ ձեւ բերնեք զարնուածի պէս ցուցնելով անապատին ճամբան փախան։ 16—Ու քաղաքին մէջ եղող բոլոր ժողովուրդը ժողովուեցաւ որպէս զի զանոնք հալածեն, ու Յեսուի հետեւէն իյնալով քաղաքէն զատուեցան։ 17—Ե։ Գայիի ու Բեթէլի մէջ մարդ չմնաց՝ որ Իսրայէլի հետեւէն չելլէ. ուստի քաղաքը բաց թողուցին, ու Իսրայէլի հետեւէն իյնան։

18—Ե։ Տէրը Յեսուի ըսաւ, Ձեռքդ հոգած նիզակը դէպ ի Գայի երկնցուր, քանզի զանիկա քու ձեռքդ պիտի տամ։ և Յեսու ձեռքը հոգած նիզակը դէպ ի քաղաքը երկնցուց։ 19—Ու դարանակալները շուտով իրենց տեղէն ելան, և անիկա իր ձեռքը երկնցուցածին պէս, վազելին քաղաքը մտան ու առին զանիկա, և շուտով մը քաղաքը կրակով բռնկեցուցին։ 20—Ու Գայիի բնակիչները հետեւեալ դարձան տեսան որ ահա քաղաքին ծուխը մինչև երկինք կ'ելլէր. և անոնք հոս կամ հոն փախչելու կարողութիւն չունէին. ու անապատը փախչող ժողովուրդն ալ իր հետեւէն ինկողներուն վրայ դարձաւ։ 21—Ե։ Յեսու ու բոլոր Իսրայէլ երը տեսան որ դարանակալները քաղաքը առին, ու քաղաքին ծուխը վեր կ'ելլէր, իրենք ալ ետ դարձան ու Գայիի մարդիկը զարկին։ 22—Միւսներն ալ քաղաքէն անոնց դէմը ելան. ուստի մէկ կողմանէ ասոնք՝ ու միւս կողմանէ ալ անոնք բռլալով, Գայէ Հրէիէ իսրայելացւոց մէջեղ մնացին. ու զանոնք զարկին մինչև որ ազնգմէ մարդ մը ողջ չմնաց ու չազատեցաւ։ 23—Ե։ Գայիի թագաւորը ողջ բռնեցին, ու զանիկա Յեսուի բերին։

24—Ու երբ Իսրայէլացիք Գայիի բոլոր բնակիչները, դիրենք հալածողները, դաշտին ու անապատին մէջ խորտնեցին, ու անոնց ամէնն ալ սուրի բերնէ իյնալով հատան, բոլոր Իսրայէլացիք Գայի դարձան, ու զանիկա սուրի բերնէ անցուցին։ 25—Ե։ այն օրը ինկածներուն ամէնը, Բէ՛ այր մարդ և Բէ՛ կին մարդ, տասներկու հազար էր, այսինքն Գայիի բոլոր մարդիկը։ 26— Ու Յեսու նիզակով երկնցուցած ձեռքը հետ չքաշեց մինչև որ Գայիի բոլոր բնակիչները բնաջինջ ըրաւ։ 27—Բայց Իսրայէլացիք անասուններն ու քաղաքին ասոր իրենց առին, Տէրոջը Յեսուի հրամայած խօսքին համեմատ։ 28— Ե։ Յեսու Գային այրեց, ու զանիկա մշտնջենաւ ասերականութեան դէզ ըրաւ մինչև այսօր։ 29— Ե։ Գայիի թագաւորը ծառի մը կախեց մինչև իրիկուն. ու արեւին մանելու ատենը՝ Յեսու հրամայեց որ անոր մեռած մարմինը ծառէն վար իջեցնեն, և զանիկա քաղաքին դրանը առջեւ նետեցին, ու անոր վրայ մեծ քարակոյտ մը դիզեցին, որ կը կայ մինչեւ այսօր։

30—Ա։ ատեն Յեսու Իսրայէլի Տէր Աստուծոյն սեղան մը շինեց Գերազ լեռան վրայ, 31—ինչպես Տէրոջը ծառան Մովսէս Իսրայէլի որդիներուն պատուիրեր էր. — Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուածին պէս՝ Յեսու այս սեղանը ամբողջ քարերէ չէ՛ն շինած, որոնց վրայ երկաթ չէր դպած. և անոր վրայ Տէրոջը ողջակէզներ ու խաղաղութեան

*Կամ, Գայիի

զոհեր մատուցին։ 32—Ե։ հոն այն քարերուն վրայ գրեց Մովսէսի օրինաց էէրէն օրինակը զոր Իսրայէլի որդիներուն առջեւ գրեց։ 33—Ու բոլոր Իսրայէլ և անոնց ծերերը ու սահմանակները և դատաւորները սասպանակին մէկ կողմն ու միւս կողմին՝ Տէրոջը ուխտին տապանակը վերցնող Ղեւտացի քահանաներուն առջեւէն կ'երթային, Բէ՛ օտարականները և Բէ՛ բնակիները. անոնց կէսը Գարիզին լեռանը կողմը՝ ու կէսն ալ Գեբալ լեռանը կողմը իյնալով, ինչպես Տէրոջը ծառան Մովսէս պատուիրեր էր առաջ որ Իսրայէլի ժողովուրդը օրհնեն։ 34— Ե։ անկէետեւ օրէնքին բոլոր խօսքերը կարդաց, Բէ՛ օրհնութիւնները և Բէ՛ անէծքները, ինչ որ գրուած էր օրինաց գիրքին մէջ։ 35— Մովսէսի բոլոր պատուիրածներէն բնաւ խօսք մը չմնաց, որ զանիկա Յեսու Իսրայէլի բոլոր ժողովրդին և անոնց կիներուն ու ազգականներուն և անոնց մէջ պտըտող օտարականին առջեւ չկարդայ։

Գլ. Ը

Ո։ երբ Յորդանանեւ ափերի կողմը եղող բոլոր Բագաւորները, Ցուխ լեռան վրայ, դաշտի վրայ ու մեծ ծովուն բոլոր եզերքը մինչև Լիբանանի դիմաց կը Բնակէին, այսինքն Հետացիք, Ամորհացիք, Քանանացիք, Փերեզացիք, Խեւացիք ու Յերեբուսացիք, այս Բաները լսեցին, 2— Միաբանութեամբ ժողվուեցան որպէս զի Յեսուի ու Իսրայէլի դէմ պատերազմին։

3—Բայց Գաբաւոնի բնակիչները երբ լսեցին ինչ որ Յեսու Երիքովի ու Գայիի ըրեր էր, 4—իրենք ալ վարպետութիւն մը բանեցուցին. գացին պատրաստեցին, ու իրենց էշերուն վրայ հին քուրձեր ու հին, պատռուած ու *կարկատած գինիի տիկեր դրին, 5— Ե։ իրենց ոտքերուն կօշիկները հինցած ու կարկատած էին, ու վրանին ալ հին լաթեր ուխտ. և բոլոր իրենց պաշար —ուած հացը չորցած ու

*Եբր. կապուած

մկլած էր։ 6—Ու բանակը գացին Յեսուի՝ Գաղգաղայի մէջ, և անոր ու Իսրայէլի մարդոցն ըսին, Մենք հեռու երկրէ կու գանք. ուստի հիմա մեզի հետ դաշնակցութիւն ըրէք։ 7— Այն ատեն Իսրայէլի մարդիկը այն Խեւացիներուն ըսին, Գուցէ դուք մեր մէջ կը բնակիք, ու ձեզի հետ ի՞նչպես գաշնակցութիւն բնենք։ 8— Բայց անոնք Յեսուի ըսին, Մենք քու ծառաներդ ենք. և Յեսու անոնց ըսաւ, Դուք ո՞վ էք ու որկի՞ կու գաք։ 9— Ու անոր ըսին, Քու ծառաներդ խիստ հեռու երկրէ եկած են քու Եհովա Աստուծոյդ անուանը համար, քանզի անոր համբաւը ու Եգիպտոսի մէջ բոլոր ըրածները լսեցինք. 10—Ու նաև Յորդանանեւ անդին կողմը Բէսեխոն Ամորհացւոց երկու Բագաւորներուն, Եսբոնի Սեհոն Բագաւորին ու Աստարովթի Բէսեխոն Բասանի Ովգ Բագաւորին, դէմ բոլոր ըրած բաները լսեցինք։ 11— Ե։ մեր ծերերը ու մեր երկրին բոլոր բնակիչները մեզի խօսացան ու ըսին. Ձեզ ծառայելու համար պաշար առէք, և զանոնք դիմաւորելու գացէք, ու անոնց ըսէք, Մենք ձեր ծառաներն ենք, հիմա մեզի հետ դաշնակցութիւն ըրէք։ 12—Այն օրը որ մենք եկանք ձեզի գտնելու համար, այս պաշարի հացերնիս մեր տուներէն տաք առինք, և ահա հիմա չորցած ու մկլած են. 13— Ե։ այս գինիի տիկերը նոր էին, երբ լեցուցինք, բայց ահա պատռուած են. ու այս մեր հագնելիքները և կօշիկները ճամբուն խիստ երկայնութենէն հնացան։ 14—Ու *անոնց պաշարին նայելով՝ այն մարդիկը բնդունեցին, ու Տէրոջը չհարցուցին։ 15— Ե։ Յեսու անոնց հետ խաղաղութիւն ըրաւ, ու անոնց ուխտեց որ զանոնք ապրեցնէ. և Ժողովքին իշխաններն ալ անոնց երդում ըրին։

16—Ու անոնց հետ գաշնակցութիւն ընէլէ երեք օր եւաքը լսեցին որ անոնք իրենց դրացիներն են, ու իրենց մէջ կը բնակին։ 17— Ե։ Իսրայէլի որդիները

*Կամ, Իսրայէլի մարդիկը անոնց պաշարին ուշ նայեցան

չուեցուք՝ երթալով երկրին զոր ետ Տէրն մեզ, զի ետ Տէրն մեզ զերկիրն, եւ մեք ելեալ ժառանգեսցուք զայն, զոր խոստացաւ հարցն մերոց։ 4—Եւ ոչ ոք կայր որ կարասցէ կալ առաջի նոցա ամենայն աւուրս կենաց իւրոց։ Որպէս եղէ ընդ Մովսէս, նոյնպէս եղէց եւ ընդ քեզ, եւ ոչ թողից զքեզ եւ ոչ լքանիցեմ ի քէն։ 5—Արի առ եւ զօրացիր, զի դու տացես զերկիրն զոր երդուայ տալ հարցն մերոց։ 6—Միայն արի եւ զօրացիր յոյժ, զի պահեսցես եւ առնիցես զամենայն օրէնս զոր պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ։ Մի խոտորեսցիս ի նոցանէ ոչ յաջմէ եւ ոչ յահեկէ, զի յաջողեսցի քեզ ընդ ամենայն ուր երթիցես։ 7—Եւ գիրքս օրինացս զայս մի պակասեսցի ի բերանոյ քումմէ, այլ խորհեսցիս ի նոսա աւուր եւ գիշերի, զի պահեսցես եւ առնիցես զամենայն որ գրեալ է ի նոսա, զի յաջողեսցի ճանապարհ քո, եւ զի յաջողեսցի քեզ։ 8—Ոչ հեռասցի գիրքս օրինացս զայս ի բերանոյ քումմէ, այլ խորհեսցիս ի նոսա աւուր եւ գիշերի, զի պահեսցես եւ առնիցես զամենայն որ գրեալ է ի նոսա, զի յաջողեսցի ճանապարհ քո, եւ զի յաջողեսցի քեզ։ 9—Ոչ պատուիրեցի քեզ զայս, զի զօրացիր եւ արի, մի երկնչիր եւ մի զարհուրիր, զի ընդ քեզ է Տէր Աստուած քո յամենայն ուր երթիցես։

10—Եւ պատուիրեաց Յեսու զգրագրացն ժողովրդեան, եւ ասէ ցնոսա։ 11—Անցէք ընդ միջոց բանակին, եւ պատուիրեցէք ժողովրդեանն, եւ ասասցեն, եւ ասասցեն ցմեզ։ Ընդ երեսս երեք աւուր անցանիցեն զՅորդանան, եւ ելանիցեն զՅորդանան, եւ ելանիցեն զՅորդանան, եւ ել

լը հոգիները սուրի բերնէ անցուցին, — մ՛կը ողջ չթողուցին. և անոր թագաւորին այնպէս ըրին, ինչպէս Երիքովի թագաւորին ըրած էին։

31—Եւ Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլ Լեքնայէ Լաքիս անցան, և անոր դէմ պատերազմեցան. 32—Եւ Տէրը Լաքիսը Իսրայէլի ձեռքը մատնեց, և երկրորդ օրը առնելով, զանիկա ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, ինչպէս Լեքնայի ըրած էին։

33—Այն ատեն Գազերի Հօրամ թագաւորը Լաքիսի օգնութիւն ընելու եկաւ. և Յեսու զանիկա ու անոր ժողովուրդը կոտրեց, այնպէս որ անոնցմէ մ՛կը ողջ չմնաց։

34—Նաեւ Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Լաքիսէ Եգղոն անցան, և անոր դէմ բանակելով, անոր դէմ պատերազմ ըրին. 35— Եւ զանիկա նոյն օրը առնելով սուրի բերնէ անցուցին. ու Յեսու նոյն օրը անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորնչուցուց, ինչպէս Լաքիսի ըրած էր։

36—Նաեւ Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլ Եգղոնէ Քեբրոն եկան, ու անոր դէմ պատերազմ ըրին. 37— Եւ զանիկա առնելէ ետքը սուրի բերնէ անցուցին զանիկա ու անոր թագաւորը, և անոր բոլոր քաղաքները ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները, և մ՛կը ողջ չթողուցին, ինչպէս Եգղոնի ըրին. այսպէս զանիկա ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորնչուցուց։

38—Նաեւ Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Դաբիր դարձան, ու անոր դէմ պատերազմեցան. 39— Եւ զանիկա ու անոր թագաւորը և անոր բոլոր քաղաքները առին, ու զանոնք սուրի բերնէ անցուցին. և անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորնչուցուցին, — մ՛կը ողջ չթողուցին. ինչպէս Քեբրոնի ըրաւ, և ինչպէս Լեքնայի ու անոր թագաւորին ըրաւ, նոյնպէս ալ Դաբիրի ու անոր թագաւորին ըրաւ։

40—Եւ Յեսու բոլոր լեռնային, հարաւային, դաշտային ու լեռներուն տակ եղած երկիրները և անոնց բոլոր թագաւորները զարկաւ, — մ՛կը ողջ չթողուց, հապա ամէն շնչաւորը մեռցուց, ինչպէս Իսրայէլի Տէր Աստուածը պատուիրեր էր։ 41— Եւ Յեսու կոտրեց զանոնք Կադես-բառնեայէ մինչև Գազա, ու բոլոր Գոսեմի երկիրը մինչև Գաբաւոն զանոնք զարկաւ։ 42— Եւ այս բոլոր թագաւորները ու անոնց երկիրը Յեսու մէկէն առաւ. քանզի Իսրայէլի Համար Իսրայէլի Տէր Աստուածը պատերազմ կ՛ընէր։ 43— Եւ Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլ Գաղգաղա բանակը դարձան։

ԳԼ. ԺԱ

Եւ Հասորի Յաբին թագաւորը երբ այս բաները լսեց, Մադոնի Յոբաբ թագաւորին և Սամրոնի թագաւորին ու Աքսափի թագաւորին, 2— Եւ հիւսիսային լեռները ու Քիներեթի հարաւային դաշտը ու հովիտը և արեւմտեան կողմը՝ Դովրի գաւառներուն մէջ եղող թագաւորներուն, 3— Արեւելեան ու արեւմտեան կողմը եղող Քանանացիներուն, Ամորհացիներուն, Քետացիներուն, Փերեզացիներուն ու լեռնաբնակ Յեբուսացիներուն, և Հերմոնի տակ Մասփայի երկիրը եղող Խեւացիներուն հետ դրկեց։ 4—Ուստի անոնք իրենց բոլոր բանակներովը — շատ ժողովուրդով եկան, որոնք ծովուն եզերքը եղող աւազին չափ բազմաթիւ էին, և էրինց հետ խոտ շատ ձիեր ու կառքեր —։ 5— Եւ այս բոլոր թագաւորները միաբանելով ժողով գացին՝ Մաւոնի յորին քով բանակեցան, որպէս զի Իսրայէլի հետ պատերազմին։

6—Եւ Տէրը Յեսուի բսաւ, Անոնց երեսէն մի վախնար, քանզի վաղը այս ատեն ես անոնց ամէնը Իսրայէլի առջև կոտրելու պիտի մատնեմ. անոնց ձիերուն ջղերը պիտի կարես, ու անոնց կառքերն ալ կրակով պիտի այրես։ 7— Ուստի Յեսու և իրեն հետ բոլոր պատերազմական ժողովուրդը յանկարծակի Մաւոնի յորին քով անոնց դէմ եր-թալով վրանին յարձակեցան։ 8— Եւ Տէրը զանոնք Իսրայէլի ձեռքը առաւ, ու զանոնք զարկին, և մինչև մեծ Սիդոն ու Մասրեփօթ-մայիմ, և մինչև Մասփայի հովիտը դէպ ի արեւելք հալածեցին, ու զանոնք զարկին՝ մինչև որ անոնցմէ մ՛կը չազատեցաւ։ 9— Եւ Յեսու անոնց այնպէս ըրաւ, ինչպէս Տէրը իրեն ըսեր էր. անոնց ձիերուն ջղերը կարեց, ու անոնց կառքերը կրակով այրեց։

10—Եւ նոյն ատեն Յեսու դարձաւ՝ Հասորը առաւ, ու անոր թագաւորը սրով մեռցուց. քանզի Հասոր առաջ այս բոլոր թագաւորութիւններուն գլուխն էր։ 11—Եւ անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, ու բնաջինջ ըրին. բնաւ շնչաւոր մը չմնաց. ու Հասորը կրակով այրեց։ 12—Ուստի Յեսու այս թագաւորներուն բոլոր քաղաքները ու անոնց բոլոր թագաւորները առաւ, և զանոնք սուրի բերնէ անցընելով բնաջինջ ըրաւ, ինչպես Տէրոջը Յաուն Մովսէս պատուիրեր էր։ 13—Բայց Իսրայէլ չայրեց այն քաղաքները՝ որոնք իրենց հողաբլուրներովը կը կենային, բայց միայն Հասորը՝ զոր Յեսու այրեց։ 14—Եւ այս քաղաքներուն բոլոր աւարը ու անասունները Իսրայէլի որդիները իրենց առին, բայց բոլոր մարդիկը սուրի բերնէ անցուցին, մինչև որ զանոնք բնաջինջ ըրին, — բնաւ շնչաւոր մը չթողուցին։ 15—Ինչպէս Տէրը իր Մովսէս Յաուային պատուիրեր էր, նոյնպէս ալ Մովսէս Յեսուի պատուիրեց, ու Յեսու ալ այնպէս ըրաւ. և ինչ որ Տէրը Մովսէսի պատուիրեր էր, բնաւ անոնց մէ՛կը զանց չըրաւ։

16—Ուստի Յեսու այն բոլոր երկիրը առաւ, լեռնակողմը ու բոլոր հարաւային կողմը և բոլոր Գոսեմի երկիրը, հովիտը ու դաշտը, և Իսրայէլի լեռը ու անոր հովիտը, 17—Սէիր կ՚ելլող Քալակ լեռնէն մինչև Հերմոն լեռանդր տակ Լիբանանու հովտին մէջ եղող Բաղգադ, և անոնց բոլոր թագաւորները բռնեց ու զանոնք զարկաւ մեռցուց։ 18—Յեսու այս բոլոր թագաւորներուն հետ չատ օրեր պատերազմ ըրաւ։ 19— Գաբաւոնի մէջ բնակող Խեւացիներէն զատ Իսրայէլի որդիներուն հետ հաշտութիւն ընող քաղաք մը չկար. ամէնն ալ պատերազմով առին։ 20—Քանզի անոնց սրտին կարծրանալը ու պատերազմով Իսրայէլի դէմ գնալը Տէրոջմէն եղաւ, որպէս զի անոնց ոչրմաբերին չլլլալով զանոնք կործանէ ու բնաջինջ ընէ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր։

21—Եւ այն ատեն Յեսու գնաց, ու լեռներէն, Քեբրոնէ, Դաբիրէ, Անաբէ ու Յուդայի բոլոր լեռներէն, և Իսրայէլի բոլոր լեռներէն Ծնկիճները կոտրեց. Յեսու զանոնք իրենց քաղաքներով մէկտեղ կործանեց։ 22—Եւ Իսրայէլի որդիներուն երկրին մէջ Ենակիմներէն գ՛ոչ չմնաց, բայց միայն Գազայի, Գէթի ու Ասեդոմի մէջ մնացին։

23—Ու Յեսու բոլոր երկիրը առաւ, ինչպէս Տէրը Մովսէսի պատուիրեր էր, և Յեսու զանիկա Իսրայէլի ժառանգութիւն տուաւ, անոնց ցեղերուն բաժիններուն համեմատ. ու երկիրը պատերազմէն հանգստացաւ։

ԳԼ. ԺԲ

Ասոնք են այն երկրին թագաւորները՝ զորոնք Իսրայէլի որդիները զարկին ու անոնց երկիրները առին, Յորդանանու անդիի կողմը դէպ ի արեւելք, Առնոն ձորէն մինչև Հերմոն լեռը՝ արեւելեան կողմին բոլոր գաւազովը։ 2—Եսեբոնի մէջ բնակող Ամորհացոց Սեհոն թագաւորը, որ Առնոն ձորին եզերքը եղող Արոէերէն, և ձորին մէջ-տեղէն, ու Գազաագի կէսէն մինչև Ամմոնի որդիներուն սահմանը եղած Յաբոկ ձորը, 3—Նաեւ դաշտին, արեւելեան կողմին մինչև Քինեռեթի ծովը, ու արեւելեան կողմէն Բեթ-եսիմոթի ճամբան, ու հարաւային կողմէն Աեդոթ-փասգայի տակ՝ մինչև գաշտի ծովը, այսինքն մինչև Ադի ծովը, կը տիրէր։ 4—Ու հակառակն Յաուդագագ, և անոնց բոլոր թագաւորները բռնեց ու զանոնք զարկաւ մեռցուց։ Յաուդագագ Բասանի Ովգ թագաւորին սահմանը, որ Աստարոթի ու Եդրայիի մէջ կը բնակէր, 5—Եւ կը տիրէր Հերմոն լեռանը, ու Սելքայի և բոլոր Բասանի մինչև Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը, ու մինչև Գաղաադի կէսը, որ Եսեբոնի Սեհոն թա-

գաւարին սահմանն էր։ 6— Ասնդ Յեբոսէս Յաբուսացւոյ սրդիներուն հետ զարկաւ, ու ասոնց Երուսաղէմէն Յերոսէս Յաբուսացին Մոավացի մինչև Բեթ-Բառան, Թագեանց ու Մանասէի կէս ցեղին Յաբաանգադ Թեղն տուաւ։

7— Եւ ասոնք են երկրին Թագաւորները, զորոնք Յեսու ու իսրայէլի որդիները զարկին Յորդանանու ապէի կողմը գէպ ի արեւմուտք, Լիբանանու հովտին մէջ եղող Բաալգադէն մինչև Թարակ լեռը, որ Սէիր կ'ելլէ։ Եւ Յեսու անոնց Երուսաղէմը իսրայէլի ցեղերուն Յաբաանգադ Թեղն տուաւ իրենց վիճակներուն համեմատ։ 8— Լեռներուն ու հովիտներուն և դաշտերուն մէջ ու լեռներուն ստորոտները և անապատը ու հարաւային կողմը Քեթացիները, Ամորհացիները, Բանահացիները, Փերեզացիները, Եբուսացիները ու Եեբուսացիները։ 9— Երիքովի Թագաւորը մէկ, Բեթէլի քով եղող Գայէի Թագաւորը մէկ, 10— Երուսաղէմի Թագաւորը մէկ, Քեբրոնի Թագաւորը մէկ, 11— Յերմութի Թագաւորը մէկ, Լաքիսի Թագաւորը մէկ, 12— Եգղոնի Թագաւորը մէկ, Գազերի Թագաւորը մէկ, 13— Դաբերի Թագաւորը մէկ, Գադերի Թագաւորը մէկ, Եորմայի Թագաւորը մէկ, 14— Հորմայի Թագաւորը մէկ, Արադի Թագաւորը մէկ, 15— Լիբնայի Թագաւորը մէկ, Ադոզամի Թագաւորը մէկ, 16— Մակեդացի Թագաւորը մէկ, Բեթէլի Թագաւորը մէկ, 17— Թափուայի Թագաւորը մէկ, Ափերի Թագաւորը մէկ, 18— Ափեկի Թագաւորը մէկ, Լասարոնի Թագաւորը մէկ, 19— Մադոնի Թագաւորը մէկ, Հասորի Թագաւորը մէկ, 20— Սամբոնմասաքի Թագաւորը մէկ, Աքսափի Թագաւորը մէկ, 21— Թանաքի Թագաւորը մէկ, Մակեդդոյի Թագաւորը մէկ, 22— Կադեսի Թագաւորը մէկ, Կարմելոս եղած Յեզնեամի Թագաւորը մէկ, 23— Դոյրի գաւառին մէջ Դոյրի Թագաւորը մէկ, Գադդացի Գոյիմի Թագաւորը մէկ, 24— Թերսացի Թագաւորը մէկ. այս Թագաւորներուն ամէնը երեսուներկու էին։

Գլ. ԺԲ

Ա երը Յեսու ծերացաւ ու տարիքը առաւ, Տէրը անոր ըսաւ, Դուն ծերացար ու տարիքդ առիր. և քալելիք խիստ շատ երկիր մնաց Ժառանգելու. 2— Մնացած երկիրը սակայն է. Փղշտացւոց ամէն սահմանները, ու բոլոր Գեսուրը, 3— Եգիպտոսի դիմաց եղող Սիվորէն մինչև Քանանացւոյ սահմանած Ակկարոնի սահմանին հիւսիսային կողմը, Գղշտացւոց հինգ նախարարութիւնները, այսինքն Գազացւոց, Ազոտացւոց, Աշկաղոնացւոց, Գեթացւոց ու Ակկարոնացւոց, նաև Աւացւոց երկիրը։ 4— Հարաւային կողմէն՝ Քանանացւոց բոլոր երկիրը ու Սիդոնացւոց Մէարան, մինչև Ափեկ մինչև Ամորհացւոց սահմանը։ 5— Եւ Գեբացւոց երկիրը ու արեւելեան կողմէն բոլոր Լիբանան, Հերմոն լեռան տակ եղող Բաալգադէ մինչև Եմաթի մուտքը, 6— Բոլոր լեռնաբնակները՝ Լիբանանէ մինչև Մասրեփոթ-մայիմ, բոլոր Սիդոնացիները. զանոնք իսրայէլի որդիներուն առջէն ես պիտի վռնտեմ. միայն քէ դուն իսրայէլի ժառանգութիւն բաժնէ այն երկիրը, ինչպէս քեզի պատուիրեցի։

7— Եւ հիմա այս երկիրը ժառանգութիւն բաժնէ իր ցեղին, ու Մանասէի կէս ցեղին։ 8— Քանի Ռուբենեանք ու Գադ եանք անոր հետ առին իրենց ժառանգութիւնը զոր Մովսէս Յորդանանու անդի կողմը գէպ ի արեւելք անոնց տուաւ, Տէրոջը ծառային Մովսէսի տուածին պէս։ 9— Առնոն ձորին եզերքին վրայ եղող Արոէրէն, ու ձորին մէջ եղող քաղաքէն, Մեդաբայի բոլոր դաշտավը, մինչև Դիբոն. 10— Ու Եսեբոնի մէջ Թագաւորող՝ Ամորհացւոց Սիհոն թագաւորին բոլոր քաղաքները, մինչև Ամմոնի որդիներուն սահմանը. 11— Եւ Գաղաադը ու Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը և բոլոր Հերմոն լեռը ու բոլոր Բասանը մինչև Սելքա. 12— Բասանի մէջ Ովգի բոլոր Թագաւորութիւնը, որ Աստարովթի ու Եդրայիի մէջ կը Թագաւորէր. և հսկաներուն

մնացորդէն անիկա մնացեր էր. բայց Մովսէս զանոնք զարկաւ ու վռնտեցաւ։ 13— Եւ իսրայէլի որդիները Գեսուրացիները ու Մաքաթացիները չվռնտեցին. և Գեսուրացիները ու Մաքաթացիները մինչև այսօր իսրայէլի մէջ բնակեցան։ 14— Միայն Ղեւիի ցեղին ժառանգութիւն չտուաւ. անոր ժառանգութիւնը իսրայէլի Տէր Աստուծոյն ճաշերուն պատարագներն են, ինչպես անոր ըսեր էր։

15— Եւ Մովսէս Ռուբենի որդիներուն ցեղին, անոնց ազգատոհմներուն համեմատ, ժառանգութիւն տուաւ։ 16— Ու անոնց սահմանը Արոէր եղաւ Առնոն ձորին եզերքին վրայ եղող Արոէրէն ու ձորին մէջ եղող քաղաքէն Մեդաբայի փավ եղած բոլոր դաշտը, 17— Եսեբոն ու անոր բոլոր դաշտային քաղաքները, Դիբոն Բամոթ-Բահոդ ու Բեթբէէլէմն, 18— Ես Յասա, ու Կադեմոթ, ու Մեփաաթ, 19— Ես Կարիաթայիմ, ու Սիբմա, և Սարեթ-սահառ Եմակ լեռան վրայ, 20— Ու Բեթ-փեգոր, և Ասեդոթ-փիսգա, ու Բեթ-Եսիմոթ, 21— Ես դաշտին ամէն քաղաքները, ու Եսեբոնի մէջ Թագաւորող՝ Ամորհացւոց Սիհոն Թագաւորին բոլոր Թագաւորութիւնը, զոր Մադիամ իշխանները, Եւին, Բեկոմն, Սուրը, Ուրը ու Ռեբէն, այն երկրին մէջ բնակող Սիհոնի նախարարները, Մովսէս զարկաւ։ 22— Եւ Իսրայէլի որդիները Բէովրեան Բաղաամ հարցուկն ալ սրով մեռցուցին գերասպանուածներուն հետ։ 23— Ու Ռուբենի որդիներուն սահմանը Յորդանան և ասոր սահմանը եղաւ. Ռուբենի որդիներուն ազգատոհմներուն ժառանգութիւնը ասիկա է, այս քաղաքները ու ասոնց գեղերը։

24— Եւ Մովսէս Գադի ցեղին, Գադի որդիներուն, իրենց ազգատոհմներուն համեմատ ժառանգութիւն տուաւ։ 25— Ու անոնց սահմանը ասիկա եղաւ. Յազեր ու բոլոր Գաղաադի քաղաքները, և Ամմոնի որդիներուն երկրին կէսը մինչև Արոէր, որ Ռաբբայի դիմաց է, 26— Ու Եսեբոնէ մինչև Մասփայի Ռամաթը ու Բատանիմ, և Մանայիմէ մինչև Դաբիրի սահմանը։ 27— Ու հովիտի մէջ՝ Բեթ-Առամ ու Բեթ-Նամրա, Սոկքովթ ու Սափոն՝ Եսեբոնի Սիհոն Թագաւորին Թագաւորութեան մնացորդը, Յորդանան ու անոր սահմանը, մինչև Քենէրեթի ծովուն եզերքը, Յորդանանու անդի կողմը գէպ ի արեւելք ժառանգութիւն տուաւ։ 28— Գադի որդիներուն ժառանգութիւնը իրենց ազգատոհմներուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու ասոնց գեղերը։

29— Եւ Մովսէս Մանասէի կէս ցեղին ալ ժառանգութիւն տուաւ, որ Մանասէի որդիներուն կէս ցեղին եղաւ իրենց ազգատոհմներուն համեմատ։ 30· Ու անոնց սահմանը ասիկա եղաւ. Մանայիմէ Բասանի Ովգ Թագաւորին բոլոր Թագաւորութիւնը, բոլոր Բասան, ու Բասանի մէջ եղող Յայրի բոլոր գիւղաքաղաքները, վաթսուն քաղաք։ 31— Ու Գաղաադի կէսը, և Աստարովթ ու Եդրայի, Բասանի մէջ Ովգի Թագաւորութեան քաղաքները, Մանասեան Մաքիրի որդիներուն եղան, այսինքն Մաքիրի որդիներուն կէսին՝ իրենց ազգատոհմներուն համեմատ։

32— Ասոնք են այն ժառանգները, զորոնք Մովսէս Մովաբի գաշտերուն մէջ՝ Երիքովի դէմ ի Յորդանանու անդի կողմը գէպ ի արեւելք ժառանգութիւն տուաւ։ 33— Բայց Մովսէս Ղեւիի ցեղին ժառանգութիւն չտուաւ. անոնց ժառանգութիւնը Իսրայէլի Տէր Աստուածն է, ինչպես անոնց ըսաւ։

Գլ. ԺԳ

Ա Յանանաց երկրին մէջ Իսրայէլի որդիներուն ժառանգած գիւղերը անոնք են, զորոնք Եղիազար քահանան և Նաւեան Յեսու ու Իսրայէլի որդւոց ցեղերուն նահապետութեան իշխանները ժառանգեցուցին անոնց։ 2— Ինչ ու կէս ցեղերուն վիճակով գրեցաւ անոնց ժառանգութիւնը, ինչպես Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեր էր։ 3— Քանզի Մովսէս երկուքէ ու կէս ցեղերուն Յորդանանու անդիի կողմը ժա-

ամանգութիւն տուեր էր. քայց անոնց մէջ՝ Դևտացիներուն ժառանգութիւն տուած չէր։ 4— Որովհետև Եովսէփի որդիները երկու ցեղ էին, Մանասէ ու Եփրեմ. ու երկրին մէջ Դևտացւոց բաժին չտուին, բայց միայն քաղաքներ՝ բնակելու համար, ու արուարձաններն ալ՝ անոնց խաշիքներուն և ստացուածքներուն համար։ 5— Ինչպես Տէրը Մովսէսի պատուիրեր էր, իսրայէլի որդիները այնպես ըրին, ու երկիրը բաժնեցին։

6— Ու Յուդայի որդիները Գադեսի մէջ Յեսուէ մօտեցան, ու Կենեզեան Յեփոնէի որդին Քաղէբ անոր ըսաւ, Դուն գիտես այն խօսքը որ Տէրը Կադէս-բառնեայի մէջ Աստուծոյ մարդուն Մովսէսի հետ խօսեցաւ ինծի ու քեզի համար։ 7— Երբ Տէրոջը Ծառան Մովսես զիս կադէս-բառնեայէ զրկեց երկիրը լրտեսելու համար, ես քառասուն տարեկան էի. ու սրտիս մէջ եղածին պէս անոր լուր բերի։ 8— Սակայն ինծի հետ եկող եղբայրներս Ժողովուրդին սիրտը քիւրացուցին, բայց ես *իմ բոլոր սրտով իմ Տէր Աստուծոյս հնազանդեցայ։ 9— Ու Նոյն օրը Մովսես երդում ըրաւ՝ ըսելով, Այն քու տաքիդ կոխած երկիրը անպատճառ քեզի ու քու որդիներուդ յաւիտեան ժառանգութիւն պիտի ըլլայ. որովհետև իմ Տէր Աստուծոյս քու բոլոր սրտովդ հնազանդեցար իրիր։ 10— Արդ անա Տէրը իր ըսածին պէս այս քառասուն հինգ տարին իմ կեանքս պահեց, այն ժամանակէն ի վեր՝ որ Տէրը այս խօսքը Մովսէսի ըսաւ, քանի որ Իսրայէլ անապատին մէջ կը պտրտէր. և անա ես այսօր ութսունհինգ տարեկան եմ։ 11— Ու այսօր տակաւին ուժով եմ, ինչպես էի Մովսէսի դիս զրկած օրը. այն ատեներ զօրութիւնս ինչպէս էր, հիմակուան զօրութիւնս ալ այնպես է՝ պատերազմելու, և ելլելու ու մտնելու կողմանէ։ 12— Ուստի հիմա ինծի տուր այն լեռը, որու համար Տէրը այն օրը խօսեցաւ. քանզի դուն այն օրը լսեցիր որ Ենակիմներն հոն էը եղան, ու մեծ պարսպատոյ քաղաքներ ունէին. Թերեւս Տէրը ինծի հետ ըլլայ, ու ես զանոնք վռնտեմ, ինչպես Տէրը ըսաւ։ 13— Ու Յեսու զանոնկա օրհնեց, ու Յեփոնեան Քաղէբի բերքրանը ժառանգութիւն տուաւ։ 14— Ասոր համար Քերբրան Կենեզեան Յեփոնէի որդւոյն Քաղէբի ժառանգութիւնը եղաւ մինչև այսօր, որովհետև իսրայէլի Տէր Աստուծոյն բոլոր սրտով հնազանդեցաւ։ 15— Ու Քերբրանի անունն առաջ *Կարիաթ-արբա էր. — այն Աբբա Ենակիմներուն մէջ մեծ մարդ մըն էր։

Ու երկիրը պատերազմէն հանգստացաւ։

Գլ. ԺԵ

Եւ Յուդայի որդիներուն ցեղին վիճակը իրենց տոհմերուն համեմատ մինչև Եդովմայեցւոց սահմանը կը հասնէր. հարաւային կողմն Սին անապատը մինչև հարաւային ծայրն էր։

2— Ու անոնց հարաւային սահմանը այս եղաւ. Ագի ծովուն ծայրէն, այսինքն հարաւ ակոզոր նայող ծոցէն, †Խէսլովի, 3— Ու հարաւային կողմն Ակրաբբիմի զառ ի վեր ելլելով Սին կ'անցնէր, ու հարաւային կողմն Կադէս-բառնեայ ելլելով Եսրոն կ'անցնէր. հոպը դէպ ի Ադդար ելլելով Կարկայի կողմը կը պտրտի. 4— Նոպը Ասմոնի անցնելով Եգիպտոսի հեղեղատը կ'ելլէ, ու այս սահմանը ծովուն մէջ կը վերջանայ. Ձեր հարաւային սահմանը այս է։

5— Ու արեւելեան սահմանը Ագի ծովն է մինչև Յորդանանու ծայրը։

Ու հիւսիսային կողմի սահմանը Յորդանանու ծայրը եղող ծոցէն էը †Խէս. 6— Ու այս սահմանը մինչև Բեթ-ագլա կ'ելլէ, ու Բեթ-արաբայի հիւսիսային կողմին կը պտրտի. և այս սահմանը մինչև Ռուբենեան Բոհանի վէմը կ'ելլէ. 7— Նոպը այս սահմանը Աքորի ձորէն Դաբիր կ'ելլէ, ու հիւսիսային կողմն Գադգատ կը դառնայ, որ այն ձորին հարաւակողմը եղող Էդոմմինի զառ ի վերին դիմաց է. և այս սահմանը Ենսամիսի ջուրին կ'անցնէ, ու Ռոգելի աղբիւրը կը վերջանայ. 8— Ու այս սահմանը Ենովմի որդւոյն ձորը՝ հարաւային կողմն Յեբուսի, այսինքն Երուսաղէմ, քով կ'ելլէ. հոպը այս սահմանը մինչև այն լեռան գլուխը կ'ելլէ, որ արեւմտեան կողմն Ենովմի ձորին դիմաց է, ու հիւսիսային կողմն Ռափայիմներուն ձորին ծայրն է. 9— Ու այս սահմանը լեռանը գլխէն մինչև Նեփթովայի ջուրին աղբիւրը կը հասնի, ու Եփրոն լեռանը քաղաքները կ'ելլէ. հոպը այս սահմանը մինչև Բաալա, այսինքն Կարիաթ-արիմ, կը հասնի. 10— Ու այս սահմանը Բաալայէ դէպ ի արեւմտեան Սէիր լեռը կը պտրտի, ու հիւսիսային կողմն Յարիմ լեռանը քովէն կ'անցնի, որ Քեսաղոն է. անկէ Բեթ-սամիս կ'իջնէ, ու Թամնա կ'անցնի. 11— Ու այս սահմանը Ակկարոնի քով կ'ելլէ դէպ ի հիւսիս, ու այս սահմանը Սաքարոն հասնելով՝ Բաալա լեռանէն կ'անցնի, ու Յաբնէլ կ'ելլէ. և այս սահմանը ծովուն մէջ կը վերջանայ։

12— Ու արեւմտեան սահմանը մեծ ծովուն եզերքն է. Յուդայի որդիներուն սահմանը չորս կողմանէ իրենց տոհմերուն համեմատ այսքա է։

13— Ու Յեփոնեան Քաղէբի՝ Յեփոնէի որդիներուն մէջ Եհոկի Հօրը Արբայի քաղաքը, այսինքն Քերբրոնը բաժին տուաւ, ինչպես Տէրը Յեսուի հրամայեր էր։ 14— Ու Քաղէբ անկէ Եհոկի երեք որդիները, Սէսին ու Ախիմանը և Թալմին, Եհոկի որդիները, վռնտեց. 15— Ու անկէ Դաբիրի բնակիչներուն վրայ գնաց. (ու Դաբիրի) անունը առաջ Կարիաթ-սեփեր էր։) 16— Ու Քաղէբ ըսաւ, Ով որ Կարիաթ-սեփերը զարնէ ու առնէ, իմ Աքսա աղջիկս անոր կնութեան պիտի տամ։ 17— Ու Քաղէբի եղբօրը Կենեզի որդին Գոթոնիէլ առաւ զանիկա. ու Քաղէբ իր Աքսա աղջիկը անոր կնութեան տուաւ։ 18— Ու երբ †նոր կ'երթար, չանիկա յորդորեց որ իր հօրմէն ագարակ մը ուզէ. և իջաւն վրայէն վար իջաւ. ու Քաղէբ անոր ըսաւ, Ինչ եղաւ քեզի։ 19— Ու ալ իկը ըսաւ, Ինծի օրհնութիւն տուր. որովհետև ինծի Հարաւային երկիր մը տուիր, ինծի *Ջուրի աղբիւրներ* ալ տուր. ասոր անոր՝ վերի աղբիւրները ու վերի աղբիւրները տուաւ։

20— Յուդայի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկա է։

21— Ու Եդովմի սահմանին քով Հարաւային կողմը Յուդայի որդիներուն ցեղին վերջին քաղաքները սասնք են, Կաբեսէէլ, Եդեր, Յագուր, 22— Կինա, Դիմոնա, Ադադա, 23— Կադէս, Հասոր, Յիթնան, 24— Զիփ, Տելէմ, Բեաղոթ, 25— Հասոր-ադաթա, †Կարիօթ, Եսրոն՝ որ է Հասոր, 26— Ամամ, Սեմա, Մոլադա, 27— Ասար-գադդա, Եսեմոն, Բեթ-փալէթ, 28— Ասար-սուալ, Բերսաբէէ, Բագոթիա, 29— Բաալա, Իյիմ, Ասէմ, 30— Էլթոլադ, Քեսիլ, Հորմա, 31— Սիկեղակ, Մադմաննա, Սանսաննա, 32— Լեբաովթ, Սելհիմ, Ային ու Ռեմոն. ամէնը քսանըինը քաղաք է, ու անոնց գեղերը։

33— Դաշտավայրի մէջ Եսթաուղ, Սարաա, Ասնա, 34— Զանովհ, Ենգաննիմ, Թափուա, Ենայիմ, 35— Յարիմութ, Ոդոդադ, Սոքով, Ազեկա, 36— Սագարիմ, Ադիթայիմ և Գեդերա (ու Գադերոթայիմ). տասնըչորս քաղաք և անոնց գեղերը։ 37— Սէննան, Ադասա, Մագդագադգադ, 38— Դղաման, Մասփա, Յոկթէվէլ, 39— Լաքիս, Բոզկաթ, Լէգղոն, 40— Քաբբոն, Լահմաս, Քիթլիս, 41— Գեդերոթ, Բեթ-դագոն, Նահմա ու Մակեդա. տասնըվեց քաղաք և անոնց գեղերը։ 42— Լիբնա, Եթեր, Ասան, 43— Յեփթա, Ասնա, Նեսիբ, 44— Կէիլա, Աքեզիբ և Մարեսա. ինը քաղաք ու անոնց գեղերը։ 45— Ակկարոն իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը։ 46— Ակկարոնէ մինչև ծով, Աշդովթի քովի բոլոր †ազատները իրենց գեղերովը։ 47— Աշդովթ իր գիւղաքաղաքներովը ու գեղերովը։ Գազա իր գիւղաքաղաքներով

*Եբր. իմ Տէր Աստուծոյս ետեւէն լեցուցի

*Այսինքն, Արբայի քաղաքը

*Կամ, Լրտեսականը

†Կամ, Կարիօթեսրոն

բովը ու գեղեբովը մինչև Եգիպտոսի հեղեզաորը ու մինչև մեծ Ծովը իր սահմաններովը։

48—Եւ լեռնադաշտի վրայ՝ Սամիր, Յաթիր, Սոքով, 49— Դաննա, Կաբրաթ-սաննա, այսինքն Դաբիր, 50— Անաբ, Եսթեմով, Անիմ, 51— Գոսոմ Քոզոն ու Գեզոն. տասնըմեկ քաղաք ու անոնց գեղերը։ 52—Երբեր, Դումա, Եսան, 53— Յանում, Բեթթափուա, Ափեկա, 54— Քամմուտա, Կարբաթ-արբա, այսինքն Քեբբոն, ու Սիմոր. ինը քաղաք և անոնց գեղերը։ 55—Մաոն, Կարմելոս, Զիփ, Յեուտա, 56—Յեզրեկլ, Յեկդաամ, Զանով, 57—Կային, Գաբաա ու Թամնա. տասը քաղաք ու անոնց գեղերը։ 58—Ադուդ, Բեթանաբ, Գեդոլիս. 59—Մաաթի, Բեթանոթի ու Եկեկոն. վեց քաղաք ու անոնց գեղերը։ 60—Կարբաթ-բաալ, այսինքն Կարբաթարիմ ու Թաբբա. երկու քաղաք ու անոնց գեղերը։

61—Անապատին մէջ Բեթարաբա, Մադդին, Սեքաքա, 62— Նեբսան, Աղի քաղաքը ու Ենգադդի. վեց քաղաք ու անոնց գեղերը։

63—Բայց Յեւբուսի որդիները կարող չեղան Երուսաղէմի մէջ բնակող Յեբուսացիները վռնտել. ուստի Յեբուսացիները Յուդայի որդիներուն հետ Երուսաղէմի մէջ կը բնակին մինչև այսօր։

Գլ. ԻԶ

Եւ Յովսէփի որդիներուն վիճակը այսպէս եղաւ. անոնց սահմանը Երիքովի ջուրէն արեւելեան կողմին այն անապատը կ'երթայ, որ Երիքովէ լեռնակողմը՝ Բեթէլ կ'ելլէ, 2—Ու Բեթէլէ Լուզ կ'ելլէ, և Արքիւսացիներուն սահմանէն կ'անցնի, 3—Ու արեւմտեան կողմէն Յեփղետիի սահմանը կ'իջնէ, մինչև վարի Բեթհորոնին սահմանը ու մինչև Գազեր, և Ծովը մէջ կը վերջանայ։ 4— Եւ Յովսէփի որդիները, Մանասէ ու Եփրեմ, ժառանգութիւն առին։

5—Ու Եփրեմի որդիներուն սահմանը իրենց տոհմերուն համեմատ այս եղաւ. այսինքն անոնց ժառանգութեան սահմանը արեւելեան կողմին Ատարօթ-ադար եղաւ մինչև վերի Բեթհորոնը։ 6— Եւ այս սահմանը հիւսիսային կողմէն դէպ ի Մաքմեթաթ՝ Ծովը կ'ելլէ, ու այս սահմանը արեւելեան կողմէն մինչև Թէնեթհսելով կը պտտի, ու հոկը արեւելեան կողմէն Յանովէ կը մտնէ, 7— Եւ Յանովէ Ատարովթ ու Նաարա կ'իջնէ, ու Երիքովի քովէն անցնելով Յորդանան կ'ելլէ։ 8— Եւ այս սահմանը Թափուայէ կանաս հեղեզաոր կ'երթայ արեւմտեան կողմէն, ու Ծովուն մէջ կը վերջանայ։ Եփրեմի որդիներուն ցեղին ժառանգութիւնը ըստ տոհմերուն հասեսա այսպէս է։ 9—Նաև Եփրեմի որդիներուն համար զատուած քաղաքները Մանասէի որդիներուն ժառանգութեան մէջ են, բոլոր քաղաքները իրենց գեղերովը։

10—Եւ անոնք Գազերի մէջ բնակող Քանանացիները չվռնտեցին. ու Քանանացիները մինչև այսօր Եփրեմի մէջ բնակելով, հարկատու ծառաներ եղան։

Գլ. ԻԷ

Եւ ասիկա եղաւ Մանասէի ցեղին վիճակը, քանզի անիկա Յովսէփի անդրանիկն էր. Մանասէ անդրանիկը Մաքիր, Գաղաադի հայրը, պատերազմող մարդ մը ըլլալուն համար, Գաղաադ ու Բասան անոր եղան։ 2— Եւ Մանասէի մնաց որդիներն ալ, Աբիեզերի որդիները, Քեզեքի որդիները, Ասրիէլի որդիները, Սիքեմի որդիները, Ոփերի որդիները, ու Սեմիդայի որդիները իրենց տոհմերուն համեմատ ժառանգեցին. Յովսէփեան Մանասէի արու զաւակները իրենց տոհմերուն համեմատ ասոնք էին։ 3— Եւ Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադի որդւոյն Ոփերի որդին Սալպատ տղաքներ չունէր, բայց միայն աղջիկներ, ու անոր աղջիկներուն անուններն ասոնք են. Մաալա, Նոա, Եգլա, Մելքա ու Թերսա, 4— Ասոնք եղիազար քահանային առջեւ, Նաւեան Յեսուի առջեւ, ու իշխաններուն առջեւ ներկայանալով՝ ըսին, Տէրը Մովսէսի հրամայեց որ մեր եղբայրներուն մէջ մեզի ժառանգութիւն տրուի։ Եւ Յեսու Տէրոջը հրամանով անոնց հօրը եղբայրներուն մէջ անոնց ժառանգութիւն տուաւ։ 5— Եւ Մանասէի Յորդանանէն զատ եղող Գաղաադի ու Բասանի երկիրն զատ տասը բաժին եղաւ։ 6—Քանզի Մանասէի աղջիկները անոր տղոցը մէջ ժառանգութիւն առին, ու Գաղաադ երկիրը Մանասէի միւս որդիներուն եղաւ։

7—Ու Մանասէի սահմանը ասկից եղաւ։ *Ասերէ մինչև Մաքմեթաթ՝ որ Սիքեմի դիմաց է, ու այս սահմանը աջ կողմէ դառնալով՝ մինչև Թափուայի ազբիւրին տէվ բնակողներուն կը հասնի։ 8—Թափուայի երկիրը Մանասէի եղաւ, ու Մանասէի սահմանին մէջ եղող Թափուա տէ՞ր Եփրեմի որդիներուն եղաւ։ 9— Եւ այս սահմանը կանաս հեղեզաոր կ'իջնէ, հեղեզաոին հարաւային կողմէն։ Մանասէի քաղաքներուն մէջ տասնը Եփրեմի քաղաքներն են. և Մանասէի սահմանը հեղեզաոին հիւսիսային կողմն է, ու ծովուն մէջ կը վերջանայ։ 10— Հարաւային կողմը Եփրեմի, ու հիւսիսային կողմը Մանասէի ըլլալով, անոնց սահմանը Ծովը եղաւ։ Եւ հիւսիսային կողմէն Ասերի, ու արեւելեան կողմէն Իսաքարի հետ կը միանան։ 11— Եւ Իսաքարի ու Ասերի սահմանէն մէջ Բեթսան ու անոր գիւղաքաղաքները, և Յեբղամի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, և Դովրի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, և Ենգովրի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, և Թանաքի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները, Մակեդովի բնակիչները ու անոր գիւղաքաղաքները. այս երեք գաւառը Մանասէի եղաւ։ 12— Եւ Մանասէի որդիները չկրցան այս քաղաքներուն բնակիչները դուրս վռնտել. ու Քանանացիները կամակոր թնամբ այն երկրին մէջ բնակեցան։ 13— Ու Իսրայէլի որդիները երբ ուժգնան՝ հարկատու ըրին Քանանացիները, բայց զանոնք չվռնտեցին իսպառ։

14—Եւ Յովսէփի որդիները Յեսուի հետ խօսեցան ու ըսին, Ինչո՞ւ համար

*Կամ, Ասեր-մաքմեթաթէ

ինծի դուն մէկ վիճակ ու մէկ բաժին ժառանգութիւն տուիր, ու ես բազմաթիւ ժողովուրդ մըն եմ. քանզի Աստուած մինչև հիմա զիս օրհնեց։ 15—Եւ Յեսու անոնց ըսաւ, Եթէ դուն բազմաթիւ ժողովուրդ ես, անտառը երթը ու զանիկա կարէ, և Փերեզացւոց ու Թափայինները՝ երկրին մէջ քեզի տէ՞ղ շէ՞ր, որովհետև Եփրեմի լեռը քեզի նեղ կու գայ։ 16—Եւ Յովսէփի որդիները ըսին, Լեռը մեզի հասար չէ. ու հովիտի երկրին մէջ՝ Բեթսանի մէջ ու անոր գիւղաքաղաքներուն մէջ, և Յեզրեկլէի հովիտին մէջ բնակող բոլոր Քանանացիները երկաթէ կառքեր ունին։ 17—Ու Յեսու Յովսէփի տանը, այսինքն Եփրեմի ու Մանասէի, հետ խօսելով՝ ըսաւ, Դուն բազմաթիւ ժողովուրդ ես, ու չատ այժ ունիս. քեզի դուն մէկ վիճակ չըլլայ։ 18—Լեռը քովդ ըլլայ. և որովհետև անիկա անտառ է, զանիկա կարէ, ու մինչև ծայրը քովդ ըլլայ. քանզի դուն Քանանացիները անկէ պիտի վռնտես, թէև անոնք երկաթէ կառքեր ունենան ու զօրաւոր ըլլան։

Գլ. ԻՀ

Եւ Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Սիլովի մէջ ժողովուեցան, և հոն ժողովքի խորանը կանգնեցին, ու երկիրը անոնց առջեւ նուաճեցաւ։

2—Ու Իսրայէլի որդիներուն մէջ եօթը ցեղ մնացեր էր, որոնք իրենց ժառանգութիւնը առած չէին։ 3—Եւ Յեսու Իսրայէլի որդիներուն ըսաւ, Մինչև ե՞րբ անհոգութիւն պիտի ընէք, ու պիտի չերթաք ժառանգելու այն երկիրը զոր ձեր Տայրերուն Տէր Աստուածը ձեզի տուաւ։ 4—Ամէն ցեղէն մարդ *բնտրեցէք, ու զրկեմ, որպէս զի երթայ այն երկրին մէջ պտրտին, ու զանիկա իրենց ժառանգութեանը համեմատ գրեն, ու էրթը ինծի դառնան։ 5—Ու զանիկա եօթը մասերու բաժնեն. Յուդա իր սահմանին մէջ հարաւային կողմը կենայ, ու Յովսէփի տունը իրենց սահման-

*Նբր. տուէք

Ներքուն մէջ հիւսիսային կողմը կենան։ 6—Ու դուք երկիրը եօթը բաժին գրեցէք, ու հոս ինծի քաշեք և մեր Տէր Աստուծոյն առջև հոս ձեզի համար վիճակ ձգեմ. 7—Քանզի Ղեւտացիները ձեր մէջ բաժին չունին, որովհետև անոնց ժառանգութիւնը Տէրոջը քահանայութիւնն է. և Գադ ու Ռուբէն և Մանասէի կէս ցեղը Յորդանանու անդիի կողմը դէպ ի արեւելք իրենց ժառանգութիւնները առին, զորոնք Տէրոջը Ծառան Մովսես անոնց տուաւ։

8—Ու այն մարդիկը երթալ գացին. ու Ցեսու այն երկիրը գրելու գացողներուն պատուիրեց՝ ըսելով, Գացէք և այն երկրին մէջ պարեւելով գրեցէք. եւ քաղ դարձէք, որպէս զի հոս Սիլովի մէջ Տէրոջը առջև ձեզի համար վիճակ ձգեմ. 9—Ու այն մարդիկը գացին, ու այն երկրին մէջ պարեւեցան, և զանիկա էշ քաղաքներովը եօթը բաժին ընելէ՝ գիրքի մը վրայ գրեցին, ու Սիլով, բանակը, եկան Ցեսուի։ 10—Ու Ցեսու Սիլովի մէջ Տէրոջը առջև անոնց համար վիճակ ձգեց. ու Ցեսու հոն երկիրը բաժնեց իսրայէլի որդիներուն՝ իրենց բաժիններուն համեմատ։

11—Ու Նահ Բենիամինի որդիներուն ցեղին վիճակը ելաւ իրենց տոհմերուն համեմատ. ու իրենց վիճակին սահմանը Յուդայի որդիներուն ու Յովսէփի որդիներուն միջեւերը եղաւ։ 12—Ու անոնց հիւսիսային կողմի սահմանը Յորդանանէ եղաւ. ու այս սահմանը հիւսիսային կողմին Երիքովի քով կ'ելլէ, և դէպ ի արեւմտեան լեռը վեր կ'ելլէ, ու Բեթաւենի անապատին մէջ կը վերջանայ։ 13—Ու սահմանը անկէ Լուզ կ'անցնի, Լուզի, այսինքն Բեթէլի, հարաւային կողմէն. եւ այս սահմանը Աատարոթ-ադար կ'իջնէ, որ մօտ Բեթորոնին հարաւային կողմը եղող լեռներ քով է։ 14—Ու այս սահմանը արեւմտեան ծայրը հանեւելով, դէպ ի հարաւ կը դառնայ հարաւային կողմին Բեթորոնի դիմացի լեռներէն, ու կը վերջանայ Կարիաթ-բաալի մէջ, որ է Կարիաթարիմ, Յուդայի որդիներուն քաղաքը։ Արեւմտեան ծայրը արեւմուտք է։ 15—Ու հարաւային կողմը Կարիաթարիմի ծայրէն սկսելով, սահմանը դէպ ի արեւմուտք կ'երթայ, ու Նեփթոախի ջուրին աղբիւրը կ'ելլէ։ 16—Ու այս սահմանը Բենիամինեանոց հովիտին մէջ, հիւսիսային կողմը եղող Ենոմի որդւոյն Հոգիի դիմացի լեռանը եզերքը կ'իջնէ, ու Ռեփայիմ փովին դէպ ի հարաւ Ենոմի ձորէն իջնելով Յեւուսէի ազբիւրը կ'իջնէ։ 17—Ու հիւսիսային կողմէն նշան կոթելով Ենամիս կ'ելլէ, ու Գղիլովի դառն իջովմին դիմաց եղող Գաղիլովի կ'ելլէ, և Ռուբենեան Բոհանի վէմը կ'իջնէ։ 18—Ուսկ Աբարայի դիմացի կողմէն դէպ ի հիւսիս անցնելով Աբարա կ'իջնէ։ 19—Ուսկ այս սահմանը դէպ ի հիւսիս Բեթհոգլայի փովին կ'անցնի, ու այս սահմանը Աղի ծովուն հիւսիսային ծոցը՝ Յորդանանու հարաւային ծայրը կը վերջանայ։ Հարաւային սահմանը սա է։ 20—Ու արեւելեան կողմի սահմանը Յորդանան է։ Բենիամինի որդիներուն ժառանգութիւնը չորս կողմանի իր սահմաններովը անոնց տոհմերուն համեմատ սա էր։

21—Ու սոսկ են Բենիամինի որդիներուն ցեղին քաղաքները իրենց տոհմերուն համեմատ. Երիքով, Բեթհոգլա, Եմեկկասիս, 22—Բեթարաբա, Սեմարիմ, Բեթէլ, 23—Աւիմ, Փարա, Եփրա, 24—Քեփարհամմոնա, Հոփնի ու Գաբա. սուտ երկու քաղաք և անոնց գեղերը։ 25—Գաբաոն, Ռամա, Բեերոթ, 26—Մասփա Կեփիրա, Մոսա, 27—Ռեկեմ, Յեփթէլ, Թարալա, 28—Սելա, Էլէփ, Յեբուս, այսինքն Երուսաղէմ, Գաբաաթ ու Կարիաթ. տասներկու քաղաք և անոնց գեղերը։ Բենիամինի որդիներուն ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ սա էր։

ԳԼ. ԺԹ

Ու երկրորդ վիճակը Շմաւոնի ելաւ, Շմաւոնի որդիներուն ցեղին իրենց տոհմերուն համեմատ. ու անոնց ժառանգութիւնը Յուդայի որդիներուն ժառանգութեան մէջ եղաւ։ 2—Ու ժառանգութիւնին մէջ Բերսաբէէ, (Սաբէէ,) Մօղադա, 3—Ասերսուսա, Բալա, Ասէմ, 4—Էլթողադ, Բաթուէլ, Հորմա, 5—Սիկեղակ, Բեթմարքաբովթ, Ասերսուսա, 6—Բեթլեբաովթ և Սարուհեն. տասներեք քաղաք ու անոնց գեղերը։ 7—Ային, Ռեմոն, Եթէր և Ասան. չորս քաղաք ու անոնց գեղերը։ 8—Ու այս քաղաքներուն բոլոր գիւղերը՝ մինչև Բաղաղբեէր — Հարաւային Ռամաթ։ Շմաւոնի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ սա էր։ 9—Շմաւոնի որդիներուն ժառանգութիւնը Յուդայի որդիներուն բաժինէն եղաւ, քանզի Յուդայի որդիներուն բաժինը չատ էր իրենց. անոր համար Շմաւոնի որդիները անոնց ժառանգութեանը մէջ ժառանգութիւն առին։

10—Ու երրորդ վիճակը Զաբուղոնի որդիներուն ելաւ իրենց տոհմերուն համեմատ. և անոնց ժառանգութեանը սահմանը մինչև Սարիդ եղաւ։ 11—Ու անոնց սահմանը դէպ ի ծով ու Մարալա կելլէ, և Դաբասեթ կը հասնի, ու Յեկնեամի դիմաց եղող ձորը կը հասնի, 12—Ու Սարիդէ դէպ ի արեւելեան կողմը՝ Քասղովթ-Թաբօրին սահմանը կը դառնայ, ու Դաբարաթէ կելլէ՝ վեր Յաֆիէ կ'ելլէ, 13—Ու անկէ դէպ ի արեւելք անցնելով Գեթքափեր և Իթազասին կ'անցնի, ու Ռեմոն-մեթօար է Նեա կ'ելլէ։ 14—Ուսկ այս սահմանը հիւսիսային կողմէն Նաթօն կը պարսի, ու Յեփթախելի ձորին մէջ կը վերջանայ։ 15—Ու Կատաթ ու Նաալոլ և Սամրօն ու Յագեղա և Բեթլեհէմ. տասներկու քաղաք ու անոնց գեղերը։ 16—Զաբուղոնի որդիներուն ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ սա էին այս քաղաքները ու անոնց գեղերը։

17—Չորրորդ վիճակը Իսաքարի ելաւ, Իսաքարի որդիներուն իրենց տոհմերուն համեմատ. 18—Ու անոնց սահմանը սա էր. Յեզրաելի ու Քասղոթ-Թաբօր կը դառնայ, ու անկէ Խոկոկ կ'ելլէ. և Հարաւային կողմէն մինչև Զաբուղոն կը հասնի, ու արեւմտեան կողմէն մինչև Ասեր, և արեւելեան կողմէն մինչև Յուդա ու Յորդանան։ 19—Ու Ափեզեմ և Սիհան, 20—Ու Ռաբբիթ ու Կեսիօն ու Աբես, 21—Ու Ռեմաթ ու Ենգաննիմ և Ենգադդա ու Բեթփասես. 22—Ու այս սահմանը Թաբօր, Սահսիմա ու Բեթսեմես կը հասնի, ու անոնց սահմանը Յորդանանու մէջ կը վերջանայ. տասներվեց քաղաք ու անոնց գեղերը։ 23—Իսաքարի որդիներուն ցեղի ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ սա էին այս քաղաքները ու անոնց գեղերը։

24—Ու հինգերորդ վիճակը Ասերի որդիներուն ցեղին ելաւ իրենց տոհմերուն համեմատ։ 25—Ու անոնց սահմանը սա էր. Փղղեաթ ու Ալի և Բետէն ու Աքսափ, 26—Ու Ալամելէք ու Ամադ և Մասալ. ու արեւմտեան կողմէն մինչև Կարմելոս և Սիհոր-Լիբնաթ կը հասնի, 27—Ու արեւելեան կողմէն դէպ ի Բեթդագոն կը դառնայ, ու հիւսիսային կողմէն Զաբուղոն, Եփթախէլի ձորը, Բեթէմեկ ու Նէիէլ կը հասնի, և ձախ կողմէն Քաբուղ կ'ելլէ, 28—Ու Եբրոն և Րոհոբ ու Համմոն և Կանա, մինչև մեծ Սիդոն. 29—Ուսկ այս սահմանը Ռամա կը դառնայ մինչև Տիւրոս ամուր քաղաքը, և այս սահմանը Ուսա դառնալով ծովուն մէջ՝ Աքզեղիբի վիճակին մէջ կը վերջանայ. 30—Ու Ումմա և Աֆէկ ու Րոհոբ. քսան և երկու քաղաքներ ու անոնց գեղերը։ 31—Ասերի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ սա էին այս քաղաքները ու անոնց գեղերը։

32—Վեցերորդ վիճակը Նեփթաղիմի որդիներուն ելաւ, այսինքն Նեփթաղիմի որդիներուն իրենց տոհմերուն համեմատ։ 33—Ու անոնց սահմանը սա էր. Հելեփէ — Աբսնէ մինչև Սանանիմ, ու Ադամի-Նեգեբ և Յաբնէլ մինչև Լակում, ու ելքերը Յորդանանի մէջ կը վերջանայ. 34—Ու այս սահմանը արեւմտեան կողմէն Ազնովթ-Թաբօր կը դառնայ, ու անկէ Հուկոկ կ'ելլէ. և հարաւային կողմէն մինչև Զաբուղոն կը հասնի, ու արեւմտեան կողմէն մինչև Ասեր, և արեւելեան կողմէն մինչև Յուդա ու Յորդ-

*Կամ, Բաղդէթ-բէլեր-ռամման հարաւային կողմէն

իրենց ժառանգութեան մէջ ...ը-ը-ը-

գանան կը հանէ. 35—Ու պարսպաւոր քաղաքները՝ Ասեդիմ, Սէր, Ամաթ, Ռեկկաթ, 36—Քենէրեթ, Ադամա, Ռաման, Հասոր, 37—Կադես, Եդրայէ, Ինհասոր, Յարօն, 38—Մակդալիէլ, Հարէմ, Բեթանաթ ու Բեթսամիւս. տասներկուքը քաղաք և անոնց գիւղերն են, 39— Նեփթալիմի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գիւղերը,

40—Յօթներորդ վիճակը Դանի որդիներուն ցեղին ալ իրենց տոհմերուն համեմատ, 41— Ու անոնց ժառանգութեան սահմանը ասիկա եղաւ. Սաբաա ու Եթթաւուղ և Իրսամէս, 42—Ու Սաղաբբին և Այէղոն ու Յեթլա, 43— Ու Թաննաթա և Ակկարոն, 44— Ու Եղթեկէ և Գաբաթոն ու Բաալոթ, 45— Ու Եհուդ և Բանէ-բարակ ու Գեթրեմոն, 46— Ու Մէարիան ու Ռակկոն, Յոպպէի դիմացը եղած սահմանովը մկսեդ. 47— Ու Դանի որդիներուն սահմանը իրենց դուրէն եկաւ. ուստի Դանի որդիները ասոր եկան, ու Լէսէմը հետ պատերազմեցան, և զանիկա առնելէ ետքը սուրի բերնէն անցուցին, ու զանիկա ժառանգելով անոր մէջ բնակեցան, և Լէսէմը իրենց հօրը Դանի անունովը Դան կոչեցին. 48—Դանի որդիներուն ցեղին ժառանգութիւնը իրենց տոհմերուն համեմատ ասիկա է, այս քաղաքները ու անոնց գիւղերը։

49— Ու երկիրը իր սահմաններովը բաժնելը լմնցնելէն ետքը, Իսրայէլի որդիները Նաւեան Յեսուի իրենց մէջ ժառանգութիւն տուին. 50— Տէրոջը հրամանով անոր ուզած քաղաքը, Թամնաթ-սարան, իրեն տուին Եփրեմի լեռանը վրայ. ու անիկա քաղաքը շինեց, և անոր մէջ բնակեցաւ։

51—Ասոնք են այն ժառանգութիւնները զորոնք Եղիազար քահանան և Նաւեան Յեսու ու Իսրայէլի որդիներուն ցեղերուն նահապետները Սիլոյի մէջ Տէրոջը առջև, ժողովքի խորանին դրանը քով, վիճակով բաժնեցին. ու երկիրը բաժնելը լմնցուցին։

Գլ. Ի

Ե Տէրը խօսեցաւ Յեսուի՝ ըսելով, 2—Խօսէ Իսրայէլի որդիներուն ու ըսէ, Մովսէսի ձեռքով այն իմ ձէզի համար պատսպարի քաղաքները ձեզի համար որոշեցէք. 3—Որպէս զի սխալմամբ ու անգիտութեամբ մարդ զարնող սպանողը հոն փախչի. ու անոնք ձեզի արիւնահարան ըլլան արեան վրէժխնդիր եղողին. 4—Ու երբոր մէկը անոնցմէ այն քաղաքներէն մէկուն մէջ թող փախչի, ու քաղաքին դուռը կայնի, և այն քաղաքին ծերերուն իր իրաւունքը խօսի, որպէս զի լսեն, ու անոնք զանիկա քաղաքին մէջ իրենց քով առնելով՝ անոր տեղ մը տան, որպէս զի իրենց հետ բնակի. 5— Ու երբ արեան վրէժխնդիրը անոր ետևէն հնայ, սպանողը անոր ձեռքը չտան. քանի անիկա իր դրացին անգիտութեամբ մեռցուցեր է, և առաջուընէ անոր դէմ թշնամութիւն մը չունէր. 6— Ու անիկա այն քաղաքին մէջ պիտի բնակի, մինչև որ դատաստանի համար ժողովքին առջև կայնի, ու մինչև որ այն օրերը եղող քահանայապետը մեռնի. ետքը սպանողը թող դառնայ, իր քաղաքը ու իր տունը երթայ, այսինքն այն քաղաքը ուրկէ փախեր էր։

7—Ուստի Գալիլեայի մէջ կազէսը *զատեցին Նեփթալիմի լեռնակողմը, Սիքեմը՝ Եփրեմի լեռնակողմը, և Կարիաթ-արբան՝ այսինքն Քեբրոնը՝ Յուդայի լեռնակողմը. 8— Ու երիքովի դէմ՝ Յորդանանէ անդին կողմը դէպի արեւելք՝ Բեսէրը անապատին դաշտին մէջ Բեսորը, և Գադի ցեղէն՝ Գաղաադ մէջ Ռամոթը, ու Մանասէի ցեղէն՝ Բասանի մէջ Գովլանը տուին։ 9—Բոլոր Իսրայէլի որդիներուն համար ու անոնց մէջ բնակող օտարականին համար որոշուած քաղաքները ասոնք են. որպէս զի ամէն ով որ սխալմամբ մարդ մեռցնէ, հոն փախչի, ու արեան վրէժխնդիրին ձեռքով չմեռնի, մինչև որ ժողովքին առջև չկայնի։

*կամ, սրբեցին

Գլ. ԻԱ

Ա Ղեւտացւոց նահապետները եղիազար քահանային, Նաւեան Յեսուի և Իսրայէլի որդւոց ցեղերուն նահապետներուն մօտեցան, 2—Ու Քանանացի երկիրը Սիլոյի մէջ խօսեցան անոնց՝ ըսելով, Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեց որ մեզի բնակելու համար քաղաքներ, ու մեր անասուններուն համար անոնց արուարձանները տուրն, 3—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը հրամանով իրենց ժառանգութիւններէն այս քաղաքները ու անոնց արուարձանները Ղեւտացւոց տուին։

4—Ու ահաւասիկ վիճակը կահաթեանց ազգատոհմներուն եղաւ. ու Ղեւտացիներէն Ահարոն քահանային որդիներուն վիճակով տասներեք քաղաք եղաւ, Յուդայի ցեղէն, Շիմէոնի ցեղէն ու Բենիամինի ցեղէն։ 5— Ու Կահաթի միւս որդիներուն՝ Եփրեմի ցեղին ազգատոհմներէն ու Դանի ցեղէն և Մանասէի կէս ցեղէն վիճակով տասը քաղաք տրուեցաւ։ 6—Ու Գերսոնի որդիներուն՝ Իսսաքարի ցեղին ազգատոհմներէն և Ասէրի ցեղէն ու Նեփթալիմի ցեղէն և Բասանի մէջ եղող Մանասէի կէս ցեղէն վիճակով տասներեք քաղաք տրուեցաւ։ 7—Մերարիի որդիներուն իրենց տոհմերուն համեմատ՝ Ռուբէնի ցեղէն, Գադի ցեղէն ու Զաբուղոնի ցեղէն տասներկու քաղաք տրուեցաւ։ 8—Ու Իսրայէլի որդիները այս քաղաքները ու անոնց արուարձանները վիճակով Ղեւտացւոց տուին, ինչպես Տէրը պատուիրեր էր Մովսէսի ձեռքով։

9—Ու Յուդայի որդիներուն ցեղէն ու Շիմէոնի որդիներուն ցեղէն այս իրենց անունովը յիշուած քաղաքները տուին, 10—Ու Ահարոնի որդիներուն եղան, որոնք Ղեւիի որդիներէն եղող կահաթեանց ազգատոհմներէն էին. քանզի առաջին վիճակը անոնցն էր։ 11—Ու անոնց Յուդայի լեռանը վրայ եղող Կիրիաթ-արբայի քաղաքը, այսինքն Քեբրոնը, ու անոր չրջակայ արուարձանները. 12— Ու քաղաքին պարակները ու գեղերը Յեփոնեան Քալէբի կալուածք տուին։ 13—Ուստի Ահարոն քահանային որդիներուն՝ ապաստանի համար սպաստանի քաղաք ըլլալու Քեբրոնը տուին իր արուարձաններովը, նաև Լիբնան իր արուարձաններովը, 14— Ու Յաթիրը իր արուարձաններովը, ու Եշթեմովը իր արուարձաններովը, 15—Ու Քոլոնը իր արուարձաններովը, ու Դաբիրը իր արուարձաններովը, 16— Ու Այինը իր արուարձաններովը, ու Յեմուտ իր արուարձաններովը, ու Բեթսամիսը իր արուարձաններովը, Ս իննը քաղաք ինը ցեղին։ 17—Ու Բենիամինի ցեղէն՝ Գաբաւոնը իր արուարձաններովը, Գաբան իր արուարձաններովը, 18—Անաթովթը իր արուարձաններովը, ու Գալմոնը իր արուարձաններովը, չորս քաղաք չորս։ 19—Ահարոնի որդիներուն, քահանաներուն, բոլոր քաղաքները տասներեք քաղաք էին՝ ու անոնց արուարձանները։

20—Ու Կահաթի որդիներէն մնացած Ղեւտացի կահաթեանց ազգատոհմներէն ալ Եփրեմի ցեղէն վիճակով քաղաքներ ստացան։ 21—Ու անոնց՝ Եփրեմի լեռնակողմը ապաստանի համար ապաստանի քաղաք ըլլալու Սիքեմը տուին իր արուարձաններովը, նաև Գազերը իր արուարձաններովը, 22— Ու Կիբսայիմ իր արուարձաններովը, ու Բեթհորոնը իր արուարձաններովը, չորս քաղաք չորս։ 23— Ու Դանի ցեղէն՝ Եղթեկէն իր արուարձաններովը, Գաբաթ-օնը իր արուարձաններովը, 24—Այէղոնը իր արուարձաններովը, ու Գեթրեմոնը իր արուարձաններովը, չորս քաղաք չորս։ 25—Ու Մանասէի կէս ցեղէն Թաննաքը իր արուարձաններովը, ու Գեթրեմոնը իր արուարձաններովը, երկու քաղաք երկու։ 26—Կահաթի որդիներուն մնացած ազգատոհմներուն բոլոր քաղաքները տասն էին, և անոնց արուարձանները։

27—Ու Ղեւտացւոց ազգատոհմներէն եղող Գերսոնի որդիներուն՝ Մանասէի կէս ցեղէն ապաստանի համար ապաստանի քաղաք ըլլալու Բասանի մէջ Գովլանը իր արուարձաններովը, նաև Բեհեսթարան իր արուարձաններովը, երկու քաղաք երկու։

28—Ե. Իսաքարի ցեղին՝ Կեսթոնը իր արուարձաններովը, Դաբարաթը իր արուարձաններովը, 29—Յարմութը իր արուարձաններովը, Ենգանիմը իր արուարձաններովը, Չորս քաղաք Բ—Ի։ 30—Ե. Ասերի ցեղին՝ Մասողը իր արուարձաններովը, 31—Աբդոնը իր արուարձաններովը, Քեզղիաքը իր արուարձաններովը, և Բոորը իր արուարձաններովը, Չորս քաղաք Բ—Ի։ 32—Ե. Նեփթաղիմի ցեղին՝ սպանողի համար ապաստանի քաղաք ԸԼԼ—ՈՂԼ—Ի Գալիլեայի մէջ Կադեսը իր արուարձաններովը, Նաև Եմաթ-դավրը իր արուարձաններովը, ու Կարթանը իր արուարձաններովը, Երեք քաղաք Բ—Ի։ 33—Գերսոնեանց բոլոր քաղաքները անոնց ազգաւոհմիներուն համեմատ ասսոր իրենց քաղաք էին՝ ու անոնց արուարձանները։

34—Ե. Մեռարիի որդիներուն ազգաւոհմիներուն, Զաբուղոնի ցեղին Ցեկնամը իր արուարձաններովը, Կարթան իր արուարձաններովը, 35—Դիմման իր արուարձաններովը — Նահալոլը իր արուարձաններովը, Չորս քաղաք Բ—Ի։ 36—Ե. Ռուբէնի ցեղին՝ Բոսորը իր արուարձաններովը, ու Ցասան իր արուարձաններովը, 37—Կադեմոթը իր արուարձաններովը, ու Մեփհայաթը իր արուարձաններովը, Չորս քաղաք Բ—Ի։ 38—Ե. Գադի ցեղին սպանողի համար ապաստանի քաղաք ԸԼԼ—ՈՂԼ—Ի Գաղաադի մէջ Ռամոթը իր արուարձաններովը, նաև Մահանայիմը իր արուարձաններովը, 39—Եսեբոնը իր արուարձաններովը, Յազերը իր արուարձաններովը, — Ցաղերը իր արուարձաններովը, ամէնը Չորս քաղաք Բ—Ի։ 40—Դիւացաւոց ազգաւոհմիներէն մնացած Մերարիի որդիներուն բոլոր քաղաքները իրենց ազգաւոհմիներուն համեմատ իրենց վիճակովը տասներկու քաղաք եղան։

41—Իսրայէլի որդիներուն կալուածքներուն մէջ Դիւացաւոց բոլոր քաղաքները քառասուներեք քաղաք էին՝ ու անոնց արուարձանները։ 42—Այս քաղաքներուն ամէն մէկը իր բոլորտիքը արուարձաններ ունէր. այս քաղաքներուն ամէնն ալ այնպէս էին։

43—Ե. Տէրը Իսրայէլի տուաւ այն բոլոր երկիրը զոր անոնց հայրերուն տալու երդում ըրեր էր. և զանիկա ժառանգեցին ու անոր մէջ բնակեցան։ 44—Ե. Տէրը զանոնք ամէն կողմէն հանգստացուց, ինչպես անոնց հայրերուն երդում ըրեր էր. ու անոնց բոլոր թշնամիներէն քեզ մէկը չկրցաւ անոնց դէմ դնել. Երեք Տէրը անոնց ամէն թշնամիները անոնց ձեռքը տուաւ։ 45—Ե. Տէրը Իսրայէլի տանը համար որչափ բարի խօսքեր որ ըրեր էր, անոնցմէ բան մը չպակսեցաւ. ամէնն ալ կատարեցան։

ԳԼ. ԻԲ

Այն ատեն Յեսու էբէն կանչեց Ռուբենեանները, Գադեանները ու Մանասէի կէս ցեղը, 2—Ե. անոնց բսաւ, Տէրոջը ծառան Մովսէս ինչ որ ձեզի հրամայեր էր, դուք անոնց ամէնն ալ պահեցիք. ու իմ խօսքս մարիկ ըրիք ամէն բանի մէջ զոր ձեզի պատուիրեցի. 3—Այսչափ շատ օրեր մինչև այսօր ձեր եղբայրները չթողուցիք, և ձեր Տէր Աստուծոյն *պատուիրանքները ամրողջ պահեցիք. 4—Ե. հիմա ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրները հանգստացուց, ինչպէս անոնց բսաւ. ուստի հիմա դարձէք, ձեր վրաններուն — ձեր կալուածքի երկիրը գացէք զոր Տէրոջը ծառան Մովսէս Յորդանանու անկի կողմը ձեզի տուաւ։ 5—Միայն ի՛ք ազէկ զգուշանաք ընէք ի գործ դնելու այն պատուիրանքը ու օրէնքը զոր Տէրոջը ծառան Մովսէս ձեզի պատուիրեց, որ ձեր Տէր Աստուածը սիրէք, և անոր ամէն ճամբաներուն մէջ քալէք, ու անոր պատուիրանքները պահէք, և անոր յանձին ու ձեր բոլոր սրտովը և բոլոր հոգւովը զանիկա պաշտէք։ 6—Ե. Յեսու օրհնեց զանոնք և արձակեց. ու անոնք իրենց վրանները գացին։ 7—Ե. Մանասէի կէս ցեղին Մովսէս Բաշանի մէջ ու ժ— կէսին Յեսու, անոնց եղբայրներուն հետ, Յորդանանու ապահի կողմը տուաւ. դէպ ի արեւմտեան։ Ե. երբ Յեսու զանոնք իրենց վրանները դրկեց, զանոնք օրհնեց. 8—Ե. անոնց խօսեցաւ՝ ըսելով,

*ՆԲԸ. պատուիրանքին պահպանութիւնը

Շատ հարստութիւնով ու խիստ շատ անասուններով, արծաթով, ոսկիով, պղինձով, երկաթով ու խիստ շատ հանդերձներով ձեր վրանները դարձէք, — ձեր թշնամիներուն աւարը ձեր եղբայրներուն հետ բաժնեցէք։

9—Ռուբէնի որդիները, Գադի որդիները ու Մանասէի կէս ցեղը դառնալու երկիրը Սելովի մէջ Իսրայէլի որդիներէն զատուեցան գացին, որպէս զի իրենց ժառանգութեան երկիրը, այնինքն Գաղաադ երկիրը, երթան, զոր Մովսէսի ձեռքով Տէրոջը հրամանով տեր էին։

10—Ե. երբ Յորդանանու մօտ տեղերը եկան, այն կողմը որ Քանանու երկրին մէջ է, Ռուբէնի որդիները, Գադի որդիները ու Մանասէի կէս ցեղը հոն Յորդանանու քով սեղան մը չինեցին, երեւութով մեծ սեղան մը։ 11—Ե. Իսրայէլի որդիները լսեցին *որ ահա Ռուբէնի որդիները, Գադի որդիները և Մանասէի կէս ցեղը Քանանու երկրին կողմը Յորդանանու մօտ, ուր Իսրայէլի որդիները անցեր էին, սեղան մը չիներ են։ 12—Ե. երբ Իսրայէլի որդիները լսեցին, Իսրայէլի որդիներուն բոլոր ժողովքը Սելովի մէջ ժողովեցան, որպէս զի անոնց վրայ երթան պատերազմելու համար։ 13—Ե. Իսրայէլի որդիները Ռուբէնեանց, Գադեանց ու Մանասէի կէս ցեղին՝ Գաղաադ երկիրը զրկեցին Եղիազարի որդի Փենհէս քահանան, 14— Ե. անոր հետ տասը իշխան, այսինքն Իսրայէլի ամէն ցեղերուն նահապետութիւններէն մէկական իշխան, որոնց ամէն մէկը Իսրայէլի հազարաւորներուն նահապետութեանց իշխանները էին։ 15— Ե. անոնք Գաղաադ երկիրը գացին Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի կէս ցեղին, և անոնց հետ խօսեցան՝ ըսելով, 16—Տէրոջը բոլոր ժողովքը այսպէս կ'ըսէ. Այդ ի՞նչ մեղք է, զոր դուք Իսրայէլի Աստուծոյն դէմ գործեցիք՝ այսօր Տէրոջմէ խոտորելով, և այսօր Տէրոջը դէմ ապստամբութիւն ընելու համար ձեզի սեղան չինեցիք։

*ՆԲԸ. ըսելով, Ահա

17—Մի՞թէ Փոգովրի անօրէնութիւնը պարզ բան մըն է մեզի, որմէ մինչև այսօր չմաքրուեցանք, ու Տէրոջը ժողովքին վրայ այն հարուածը եկաւ. 18—Ե. դուք այսօր Տէրոջմէ խոտորեցաք. ուստի եթէ դուք այսօր Տէրոջմէ ապստամբիք, ան ալ վաղը Իսրայէլի բոլոր ժողովքին վրայ պիտի բարկանայ։ 19—Սակայն եթէ ձեր կալուածքի երկիրը անմաքուր կը համարէք, Տէրոջը կալուածքի երկիրը անցէք, ուր Տէրոջը խորանը կանգնած է, ու մեր մէջ ժառանգութիւն ունէք. և մեր Տէր Աստուծոյն սեղանէն զատ ձեզի սեղան չշինելով Տէրոջը ապստամբ մի ըլլաք, ու մեզմէ ալ մի ապստամբիք։ 20—Երը Զարայեան Աքար նզովուածէն †անէլէվ մեզի գործեց, մի՞թէ Տէր-Էը բարկութիւնը Իսրայէլի բոլոր ժողովքին վրայ չեկաւ, ու այն մարդը իր անօրէնութեանը մէջ մինակ չմեռաւ։

21—Ե. Ռուբէնի որդիները, Գադի որդիները ու Մանասէի կէս ցեղը պատասխան տուին. ու Իսրայէլի հազարապետներուն ըսին, 22— *Աստուածներուն Տէրովա Աստուածը, աստուածներուն Տէրովա Աստուածը՝ ինք գիտէ. ու Իսրայէլ ալ թող գիտնայ, եթէ յա Բ—ը մեղքի ապստամբութեան համար, կամ Տէրոջը դէմ յանցանք գործելու համար ըրէ՛ն, մեզ այսօր †ապրեցնէ։ 23—Ե՛ն մեզի սեղան չինեցինք Տէրոջմէ ետ դառնալու համար, կամ անոր վրայ ողջակէզ ու հացի ընծայ մատուցանելու համար, և կամ անոր վրայ խաղաղութեան զոհեր ընելու համար, Տէրը ինք քննութիւն ընէ։ 24— Այլ մեզի ասիկա մեր վախէն չինեցինք, մտածելով որ գուցէ վաղը ձեր որդիները մեր որդիներուն խօսքն ու բսեն թէ Դուք Իսրայէլի Տէր Աստուածոյն հետ ի՞նչ ունիք. 25— Ով Ռուբենեանք ու Գադեանք, Տէրը մեր ու ձեր մէջ Յորդանանը սահման դրաւ, Դուք Տէրոջմէ բնաւ բաժին չունիք. և այս

*կամ, Աստուածներուն Աստուածը եհովան է, աստուածներուն Աստուածը եհովան է. ք Օր. ժ. 17։

†ԲԸ. մի սպրեցներ

ի՛ երթալ ձեր որդիները մեր որդիներին Տէրոջը երկիւղը վերցնեն. 26— Այս պատճառաւ ըսինք, Հիմա մեզի սեղան մը չինենք, ի՛սյ ոչ թէ ողջակէզի համար, ոչ ալ զոհի համար, 27— Այլ որպէս զի անիկա մեր ու ձեր մէջ, և մեզմէ ետքը մեր սերունդներուն մէջ վկայութիւն ըլլայ, որպէս զի մեր ողջակէզներովը, մեր պատարագներովը ու մեր խաղաղութեան զոհերովը Տէրոջը ծառայութիւնը Անոր առջև ընենք, ու վաղը ձեր որդիները մեր որդիներուն չըսեն թէ Դուք Տէրոջմէ բաժին չունիք. 28—Ու ըսինք, Եթէ մեզի կամ մեր սերունդին վաղը այս ը՛նը ըսելու ըլլան, պիտի ըսենք թէ Տեսէ՛ք Տէրոջը սեղանին օրինակը, զոր մեր հայրերը չինեցին, ոչ թէ ողջակէզի համար կամ զոհի համար, հապա մեր ու ձեր մէջ վկայութիւն մը ըլլալու համար։ 29— Քա՛ւ լիցի որ մենք Տէրոջմէ ապստամբենք, ու այսօր Տէրոջմէ կո դառնալով, խորանին առջև եղող մեր Տէր Աստուծոյն սեղանէն զատ ողջակէզի համար, հացի ընծայի համար և զոհի համար սեղան չինենք.

30—Ու երբ Փենհէհէս քահանան և անոր հետ եղող ժողովքին իշխանները, ու Իսրայէլի հազարապետները որ եղեր էին որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի որդիներուն բաժ խօսքերը լսեցին, իրենց հաճոյ երեւցաւ. 31— Ու Եղիազարի որդին Փենհէհէս քահանան Ռուբէնի որդիներուն, Գադի որդիներուն ու Մանասէի որդիներուն բաժ, Այսօր գիտցանք որ Տէրը մեր մէջ է, որովհետեւ դուք Տէրոջը դէմ այս յանցանքը չգործեցիք, և Իսրայէլի որդիները Տէրոջը ձեռքէն ազատեցիք.

32—Այսպէս Եղիազարի որդին Փենհէհէս քահանան և իշխանները Ռուբէնի որդիներուն և Գադի որդիներուն քովէն, Գաղաադ երկրէն, Քանանի երկիրը Իսրայէլի որդիներուն դարձան, և անոնց լուր բերին. 33—Ու այս բանը Իսրայէլի որդիներուն հաճոյ երեւցաւ, և Իսրայէլի որդիները զԱստուած օրհնեցին, և Ռուբէնի որդիներուն և Գադի որդիներուն բնակած երկիրը կործանելու համար անոնց վրայ երթ ընք պատերազմինք չըսին. 34— Ռուբէնի որդիները ու Գադի որդիները այն սեղանին անունը Վկա՛յ-Ընէ՛ դրին, որովհետեւ ըսին, Անիկա մեր մէջ վկայ է, որ Դէ՛ Աստուածը Եհովան է։

Գլ. ԻԴ

Ե. չատ օրերէն ետքը՝ որ Տէրը հանգըստացուցեր էր Իսրայէլը անոր բոլորիքը եղած ամէն թշնամիներէն, Յեսու ծերացած ու տարիքը առած էր։ 2—Ու Յեսու կանչեց բոլոր Իսրայէլը, անոր ծերերը, իշխանները, դատաւորները ու ոստիկանները, և անոնց ըսաւ, Ես ծերացայ ու տարիքս առած է. 3—Ու դուք տեսաք այն ամէնը, զոր ձեր Տէր Աստուածը ձեր առջեւ բրաւ այս բոլոր ազգերուն. քանզի ձեր Տէր Աստուածը ինք ձեզի համար պատերազմ ըրաւ։ 4— Նայեցէ՛ք, ես ձեզի այս մնացած ազգերը վիճակով ժառանգութիւն բաժնեցի ձեր ցեղերուն համեմատ, Յորդանանէ, իմ կտրած բոլոր ազգերովս մինչեւ մեծ ծովը դէպ ի արեւմտեան։ 5—Ու ձեր Տէր Աստուածը ինք ձեր առջեւէն պիտի հալածէ զանոնք ու պիտի վռնտէ, և անոնց երկիրը դուք պիտի ժառանգէք, ինչպես ձեր Տէր Աստուածը ձեզի բաւ։ 6— Ուստի խիստ ժիր եղէ՛ք, որպէս զի Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած բոլոր բաները զգուշութեամբ ի դործ դնէ՛ք, ու անոր աջ կողմը ու ձախ կողմը չխոտորի՛ք. 7—Որպէս զի ձեր քով մնացած այս ազգերուն *հետ չխառնուի՛ք, ու անոնց աստուածներուն անուններուն չյիշէ՛ք, և անոնցմով երդում չընէ՛ք, ու անոնց չծառայէ՛ք և անոնց երկրպագութիւն չընէ՛ք. 8—Հապա ձեր Տէր Աստուածդն յարեցէ՛ք, ինչպես մինչեւ այսօր բրի՛ք։ 9— Ու Տէրը ձեր առջեւէն մեծ ու զօրաւոր ազգեր վռնտեց, ու մինչեւ այսօր բնաւ մէկը չկրցաւ ձեզի դէմ դնել։ 10—Հազա՛ր հատ ձեզմէ հարիւրը պիտի հալածէ, քանզի ձեր Տէր Աստուածը ինք ձեզի համար կը պատերազմի, ինչպես ձեզի ըսաւ։

11—Ուստի ձեր անձերուն ազէկ զգուշութիւն ընէ՛ք, որպէս զի ձեր Տէր Աստուածը սիրէ՛ք։ 12—Բայց եթէ ան-

*Եբր. մէկ չմնի՛ք

դին դառնալու ըլլա՛ք, ու ձեր քով մնացած այս ազգերու մնացորդին յարի՛ք, և անոնց հետ խնամութիւն ընէ՛ք, ու դուք անոնց հետ խառնուի՛ք, և անոնք ալ ձեզի հետ, 13—Յատկապէ՛ս որ ձեր Տէր Աստուածը մի՛ յուսեր ալ այս ազգերը ձեր առջեւէն պիտի չվռնտէ. հապա անոնք ձեզի որոգայթ ու գայթակղութիւն պիտի ըլլան, և ձեր կողերուն խթաններ, ու ձեր աչքերուն փուշեր, մինչեւ որ բնաջինջ ըլլա՛ք այս բարի երկրէն վրայէն զոր ձեր Տէր Աստուածը ձեզի տուաւ. 14—Ես ահա ես այսօր ամէն երկրին ճամբան կ'երթամ, ու դուք ձեր բոլոր սրտովը ու բոլոր հոգւովը գիտէ՛ք որ ձեր Տէր Աստուածը ձեզի համար որ՛եւէ բարի խօսքեր որ ըսաւ, անոնցմէ բան մը չպակսեցաւ. ամէնը ձեզի համար եկաւ, անոնցմէ բնաւ խօսք մը գետինը չինկաւ։ 15—Ու ինչպես ձեր Տէր Աստուածդն ձեզի համար բրած ամէն բարի խօսքերը ձեր վրայ կատարուեցան, նոյնպես Տէրը ամէն չար խօսքերը ձեր վրայ պիտի բերէ, մինչեւ որ բնաջինջ ընէ ձեզ այս բարի երկրին վրայէն, զոր ձեր Տէր Աստուածը ձեզի տուաւ։ 16— Եթէ ձեր Տէր Աստուածդն ձեզի պատուիրած ուխտը զանց ընէ՛ք, ու երթա՛ք օտար աստուածներ պաշտէ՛ք, և անոնց երկրպագութիւն ընէ՛ք, Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ պիտի բորբոքի, ու այն ձեզի տուած բարի երկրին վրայէն չուտով պիտի կորսուի՛ք։

Գլ. ԻԹ

Ե. Յեսու Իսրայէլի ամէն ցեղերը Սիքէմի մէջ ժողվեց, ու Իսրայէլի ծերերը, իշխանները, դատաւորները և ոստիկանները կանչեց. ու անոնք Աստուծոյ առջեւ կայնեցան. 2—Ու Յեսու բոլոր ժողովուրդին ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Առաջ ձեր հայրերը, Աբրահամի հայրը ու Նաքովրի հայրը Թարա, *Գետին անդին կողմը բնակեցան, և օտար աստուածներ պաշտեցին։ 3—Ու ես ձեր հայրը Աբրահամը Գետին անդին կողմէն առի, ու զանիկա Քանանա բոլոր երկրին մէջ պտըտցուցի, և անոր սերունդը չատցուցի, ու Իսահակը անոր տուի. 4—Ու Իսահակի ծակորը ու Եսաւը տուի, ու Եսաւու Սէիր լեռը ժառանգութիւն տուի. և Յակոբ ու անոր որդիները Եգիպտոս իջան. 5—Ու Մովսէսը ու Ահարոնը դրկեցի, և Եգիպտոսը զարկի, (ինչպես անոր մէջ ըրի,) հետը ձեզ հանեցի. 6— Ուստի ես ձեր հայրերը Եգիպտոսէ հանեցի, և դուք ծովը եկաք. ու Եգիպտացիները կառքերով ու ձիաւորներով մինչեւ Կարմիր ծովը ձեր հայրերուն հետեւեցան հինան. 7—Ան ատեն անոնք Տէրոջը աղաղակեցին, և անիկա ձեր ու Եգիպտացւոց մէջտեղ խաւար ձգեց, ու ծովը անոնց վրայ բերելով զանոնք ծածկեց. և ձեր աչքերը Եգիպտոսի մէջ բրած բաները տեսան. ու չատ ժամանակ անապատին մէջ բնակեցաք։ 8— Ու քովը ձեզ բերի Յորդանանայ անդին կողմը բնակող Ամորհացւոց երկիրը, ու ձեզի հետ պատերազմ ըրին. և զանոնք ձեր ձեռքը տուի, ու անոնց երկիրը ժառանգեցիք. և զանոնք ձեր առջեւէն բնաջինջ ըրի. 9—Ու Մովաբի Թագաւորը Սեպփորեան Բաղակ եկաւ, ու Իսրայէլի դէմ պատերազմ ըրաւ, և Բէովրեան Բաղաամը կանչելու, որպէս զի ձեզ նզովէ. 10—Բայց չուզեցի Բաղաամի մտիկ ընել. ու անիկա ձեզ բարովին օրհնեց, և անոր ձեռքէն ձեզ ազատեցի. 11—Ու Յորդանան անցնելով Երիքով եկաք, ու Երիքովի բնակիչները, Ամորհացիները, Փերեզացիները, Քանանացիները, Քետացիները, Գերգեսացիները, Խեւացիները ու Յեբուսացիները ձեզի դէմ պատերազմ ըրին, ու զանոնք ձեր ձեռքը տուի. 12—Ու ձեր առջեւէն իշամեղուները ղրկեցի, որոնք զանոնք, այս ինքն Ամորհացւոց երկու Թագաւորները, ձեր առջեւէն վռնտեցին. ոչ թէ սրովդ և ոչ թէ աղեղովդ։ 13— Ու ձեզի երկիր մը տուի, որուն մէջ դուք չյիմասեցաք, և քաղաքներ' զորոնք դուք չշինեցիք, ու անոնց մէջ

*Այ-Ինէ՛, Եփրատ

կը բնակիք. Ե կ'ուտէք այն ապրիներէն ու ձիթենիներէն զորանք դուք չտնկեցիք։

14—Ուստի հիմա դուք Տէրոջմէն վախցէք, և անոր հաւատարմութեամբ ու ճշմարտութեամբ ծառայութիւն բերէք, և այն աստուածները, որոնց ձեր հայրերը Գետին անդին կողմը ու Եգիպտոսի մէջ ծառայութիւն բրին, մէկդի ձգեցէք, և Տէրը պաշտեցէք։ **15**—Բայց եթէ Տէրոջը ծառայութիւն բնելը ձեզի համազ չերեւնայ, ձեզի բնտրեցէք այսօր թէ ո՛վ պիտի պաշտէք. Գետին անդին կողմը ձեր հայրերուն պաշտած աստուածները, թէ Ամորհացւոց աստուածները որոնց երկրին մէջ դուք կը բնակիք. բայց ես ու իմ տունս Տէրոջ պիտի պաշտանք։

16—Ու ժողովուրդը պատասխան տուաւ ու բսաւ, Քա՛ւ լիցի՛ որ մենք Տէրոջ թողնենք և ուրիշ աստուածներ պաշտենք։ **17**—Քանզի *Տէրս բինքն է մեր Աստուածը, որ մեզ ու մեր հայրերը Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեց, և բինք մեր աչքերուն առջեւ այս մեծ նշաններն բրաւ, ու մեզ պահեց մեր ամէն գացած ճամբուն մէջ և ամէն ազգերուն մէջ, որոնց միջէն անցանք։ **18**—Ու Տէրս բոլոր ազգերը ու այս երկրին մէջ բնակող Ամորհացիները մեր առջեւէն վռնտեց. մենք ալ Տէրոջ պիտի պաշտենք, որովհետև մեր Աստուածը բինքն է։

19—Ու Ցեսու ժողովուրդին բսաւ, Դուք չէք կրնար Տէրոջ պաշտել, քանզի անիկա սուրբ Աստուած է. ու անիկա նախանձոտ Աստուած բլլալով ձեր յանցանքները ու մեղքերը չներէ։ **20**—Քանզի երբ Տէրոջ թողուք ու ա՜նաբ աստուածները պաշտէք, այն ատեն պիտի դառնայ, ու ձեզի բարիք †ընելու տեղ՝ ձեզ չարչարելով բնաջինջ պիտի ընէ։

21—Ու ժողովուրդը Ցեսուի բսաւ, Ոչ, հապա մենք Տէրոջ պիտի պաշտենք։

22—Ու Ցեսու ժողովուրդին բսաւ, Դուք ձեր անձերուն վկայ էք, որ դուք ձեզի Տէրոջ բնտրեցիք՝ զանիկա պաշտելու համար։ (ու անոնք ըսին, Վկայ ենք։) **23**—Ուրեմն հիմա ձեր մէջ եղած օտար աստուածները վերցուցէք, և ձեր սիրտը Իսրայէլի Տէր Աստուծոյն դարձուցէք։ —**24**—Ու ժողովուրդը Ցեսուի ըսաւ, Մենք մեր Տէր Աստուածը պիտի պաշտանք, ու անոր խօսքը մտիկ ընենք։

25—Ու նոյն օրը Ցեսու ժողովուրդին հետ ուխտ բրաւ, ու Սիւքեմի մէջ անոր կանոն ու դատաստան դրաւ։ **26**—Ու Ցեսու այս խօսքերը Աստուծոյ օրինաց գիրքին մէջ գրեց, ու մեծ քար մը առաւ, և զանիկա Տէրոջը սրբարանին քով եղած բեւեհինին ստակ կանգնեց։ **27**—Ու Ցեսու բոլոր ժողովուրդին ըսաւ, Ահա այս քարը մեզի վկայ բլլայ, քանզի ասիկա Տէրոջը մեզի հետ խօսած բոլոր խօսքերը լսեց. ուստի ասիկա ձեզի վկայ բլլայ, որպէս զի չբլլայ թէ ձեր Աստուածը ուրանաք։ **28**—Ցեսու ժողովուրդը արձակեց, — ամէն մարդ իր ժառանգութիւնը։

29—Ու այս բաներէն ետքը Տէրոջը ծառան Նաւեան Ցեսու մեռաւ, հարիւր տասը տարեկան բլլալով։ **30**—Ու զանիկա իր ժառանգութեանը սահմանին մէջ Գասու լեռան հիւսիսային կողմը՝ Եփրեմի լեռը Թամնաթ-սարայի մէջ թաղեցին։

31—Ու Ցեսուի բոլոր օրերուն մէջ, ու Ցեսուէ ետքը ողջ մնացող և Իսրայէլի համար Տէրոջը բրած ամէն գործերը գիտցող ծերերուն բոլոր օրերուն մէջ, Իսրայէլ Տէրոջը ծառայութիւն բրաւ։

32—Ու Յովսէփի ոսկորները, զորանք Իսրայէլի որդիները Եգիպտոսէ հաներ էին, Սիւքեմի մէջ Քամիդին ագարակին այն մասին մէջ զոր Եակոբ Սիւքեմի հօրը Եմմորի որդիներէն հարիւր †կտոր արծաթի՝ ծախու առեր էր. ու անիկա Յովսէփի որդիներուն ժառանգութիւն եղաւ։

33—Ահարոնի որդին Եղիազար ալ մեռաւ. ու զանիկա Եփրեմի լեռը, անոր որդւոյն Փենեհէսի տրուած բլուրին վրայ թաղեցին։

*Կամ՝ մեր Տէրոջ Աստուածը բինքն է

†Եբր. բրած բլլալէն ետքը

*Կամ՝ գառնուկ

ԳԻՐՔ ԴԱՏԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Ե Ցեսուի մեռնելէն ետքը Իսրայէլի որդիները Տէրոջը հարցուցին ու ըսին, Մեզի համար Քանանացւոց վրայ առաջ ո՞վ ելլէ՝ անոնց հետ պատերազմելու։ **2**—Ու Տէրը բսաւ, Յուդա թող ելլէ. ահա երկիրը անոր ձեռքը տուի։ **3**—Ու Յուդա իր եղբօրը Շմաւոնի ըսաւ, Ինծի հետ իմ վիճակս ելլէ, ու Քանանացւոց հետ պատերազմինք, և ես ալ քեզի հետ քու վիճակդ երթամ ու Շմաւոն անոր հետ գնաց։ **4**—Ու Յուդա ելաւ, ու Տէրը Քանանացիները ու Փերեզացիները անոնց ձեռքը տուաւ. ու անոնցմէ Բեզեկի մէջ տասը հազար մարդ կոտրեցին։ **5**—Ու Բեզեկի մէջ Ադոնիբեզեկը գտնելով անոր հետ պատերազմեցան, ու Քանանացիները և Փերեզացիները զարկին։ **6**—Ու Ադոնիբեզեկ փախաւ. բայց անոնք անոր հետեւէն իյնալով զանիկա բռնեցին, ու անոր ձեռքերուն ու ոտքերուն մեծ մատները կտրեցին։ **7**—Ու Ադոնիբեզեկ բսաւ, Չորեքտասն ու ոտքերուն մեծ մատները կտրուած եօթանասուն թագաւորներ իմ սեղանիս տակ կէտ էբ-ըն-էրէբը կը ժողվեին. ես ինչպես բրի, Աստուած ալ ինծի այնպէս հատուցում բրաւ։ Ու զանիկա Երուսաղէմ տարին, ու հոն մեռաւ։

8—Ու Յուդայի որդիները Երուսաղէմի հետ պատերազմ բնելով զանիկա առին, ու սուրի բերնէ անցընելով քաղաքը կրակով այրեցին։

9—Անկէ ետեւ Յուդայի որդիները վար իջան, որպէս զի լեռնականը ու հարաւային կողմը ու դաշտի մէջ բնակող Քանանացւոց դեմ պատերազմին։ **10**—Ու Յուդա Բեբրոնի մէջ բնակող Քանանացիներուն վրայ գնաց։ (ու Բեբրոնի անունը առաջ Կարիաթ-արբա էր։) և անոնք Սեսին, Աքիմանը ու Թողմին զարկին։ **11**—Ու անկէ Դաբիրի բնակիչներուն վրայ գնաց։ (ու Դաբիրի անունը առաջ Կարիաթ-սեփեր էր։) **12**—Ու Քաղէբ բսաւ, Ով որ Կարիաթ-սեփերը զարնէ ու առնէ, իմ աղջիկս Աքսան անոր կնութեան պիտի տամ։ **13**—Ուստի Քաղէբի պզտիկ եղբօրը Կենազի որդին Գոթնիէլ զ՚ընէ՝ առաւ զանիկա. և Քաղէբ իր աղջիկը Աքսան անոր կնութեան տուաւ։ **14**—Ու երբ աղջիկը ՀՆԴ կ՚երթար, զանիկա յորդորից որ իր հօրմէն ագարակ մը ուզէ, և էշէն վար իյնաւ. ու Քաղէբ բսաւ անոր, Քեզի ի՞նչ եղաւ։ **15**—Ու աղջիկը անոր բսաւ, Ինծի օրհնութիւն տուր, որովհետև ինծի հարաւային երկիր մը տուիր, ինծի ջուրի աղբիւրներ ալ տուր։ Ուստի Քաղէբ վերի աղբիւրները ու վարի աղբիւրները տուաւ անոր։

16—Ու Մովսէսի աներոջ կենեցիին որդիները Յուդայի որդիներուն հետ Արմաւենեաց քաղաքէն Արադի հարաւային կողմը եղող Յուդայի անապատը կան, ու գացին ժողովուրդին հետ բնակեցան։

17—Ու Յուդա իր եղբօրը Շմաւոնի հետ գնաց. ու Սեփաթի մէջ բնակող Քանանացիները զարկին, և զանիկա նզովեցին, ու այն քաղաքին անունը *Հորմա կոչեցին։ **18**—Նաեւ Յուդա Գազան ու անոր սահմանը, և Ասկաղոնը ու անոր սահմանը, և Ակկարոնը ու անոր սահմանը առին։ **19**—Ու Տէրը Յուդայի հետ էր, ու անիկա լեռանդր տիրեց, բայց հովիտներուն բնակիչները չկրցաւ վռնտել, քանզի անոնք երկաթէ կառքեր ունէին։ **20**—Ու Քեբրոնը Քաղէբի տուին, ինչպես Մովսէս բսեր էր. ու անկէ Ենակի երեք որդիները վռնտեց։

21—Ու Բենիամինի որդիները Երուսաղէմի մէջ բնակող Յեբուսացիները չվռնտեցին. ու Յեբուսացիք Բենիամինի

*Այսինքն, նզովք։

որդիներուն հետ երուսաղէմի մէջ բնակեցան մինչեւ այսօր։

22—Եւ Ռովսէփի տունն ալ Բեթէլի վրայ եկան, ու Տէրը անոնց հետ էր։ 23—Եւ Ռովսէփի տունը Բեթէլը լրտեսեցին. (ու այն քաղաքին անունը առաջ Լուզ էր։) 24—Եւ պահակացածները մարդ մը տեսան որ այն քաղաքէն կ'ելլէր, ու անոր ըսին, Շնորհք ըրէ, քաղաքը մեզի ցուցուր, ու քեզի ողորմութիւն կ'ընենք։ 25—Եւ անիկա քաղաքը մտնելու կողմը ցուցուց անոնց. ու քաղաքը սուրի բերնէ անցուցին, բայց այն մարդը եւ անոր բոլոր ազգատոհմը թող տուին։ 26—Ու այն մարդը Քեթացւոց երկիրը գնաց, և հոն քաղաք մը շինեց, ու անոր անունը Լուզ կոչեց։ Ե մինչեւ այսօր անոր անունը այս է։

27—Եւ Մանասէ Բեթսանը և անոր գիւղաքաղաքները, Թաանաքը ու անոր գիւղաքաղաքները, Դովրի բնակիչները և անոր գիւղաքաղաքները, Յեզրեամի բնակիչները ու անոր գիւղերը, Մակեդովի բնակիչները և անոր գիւղաքաղաքները չտիրեց. և Քանանացիք կամակորութեամբ այս երկրին մէջ բնակեցան։ 28—Ու երբ Իսրայէլ ուժովցաւ, Քանանացիները հարկատու ըրաւ, բայց զանոնք բոլորովին չվռնտեց։

29—Եփրեմ ալ Գազերի մէջ բնակող Քանանացիները չվռնտեց. ու Քանանացիք անոր հետ Գազերի մէջ բնակեցան։

30—Զաբուղոն կեթրոնի բնակիչները և Նահալոլի բնակիչները չվռնտեց. ու Քանանացիք անոնց մէջ բնակելով հարկատու եղան։

31—Ասեր Ակկովի բնակիչները, ու Սիդոնի, Ահլաբի, Աքզիբի, Ելբայի, Աֆիկի ու Բոռոի բնակիչները չվռնտեց. 32— Հապա Ասերեանք այն երկիրը բնակող Քանանացւոց մէջ բնակեցան, որովհետեւ զանոնք չվռնտեցին։

33—Նեփթաղիմ Բեթսամիսի բնակիչները ու Բեթանաթի բնակիչները չվռնտեց, հապա այն երկիրը բնակող Քանանացւոց մէջ բնակեցաւ. և Բեթսամիսի ու Բեթանաթի բնակիչները անոր հարկատու եղան։

34—Եւ Ամաւհացիք Դանի որդիները լեռան վրայ նեղը ձգեցին, քանզի անոնց թող չտուին որ հովիտները իջնեն։ 35—Ու Ամաւհացիք կամակորութեամբ Հարբիս լեռը, Այեղոնի ու Սալաբինի մէջ, բնակեցան. բայց երբ Յովսէփի տունը ձեռքը ուժովցաւ, անոնք հարկատու եղան։ Ու Ամաւհացւոց սահմանը Ակրաբբիմի զառիվերէն, Վէմէն, ի վեր էր։

Գլ. Բ

Եւ Տէրոջ հրեշտակը Գողգոթայէ Բոքիմ եկաւ ու ըսաւ, Ձեզ Եգիպտոսէ հանեցի, և ձեզ այն երկիրը բերի, որու համար ձեր հայրերուն երդում ըրեր էի. ու ըսի որ ձեզի հետ ըրած ուխտս յաւիտեան պիտի չյարեմ։ 2—Եւ այս երկրին բնակիչներուն հետ դաշնակցութիւն մի ընէք, անոնց սեղանները փլցուցէք. բայց դուք իմ խօսքս հնազանդութիւն չըրիք. ինչո՞ւ համար այս բանը ըրիք։ 3—Ես ալ ըսի, Զանոնք ձեր առջեւէն պիտի չվռնտեմ, հապա անոնք ձեզի թշնամի, ու անոնց աստուածներն ալ ձեզի որոգայթ պիտի ըլլան։ 4—Ու երբ Տէրոջ հրեշտակը բոլոր Իսրայէլի որդիներուն այս խօսքերը ըսաւ, ժողովուրդը ձայնը վերցընելով լացաւ։ 5—Ու այն տեղին անունը Բոքիմ կոչեցին. ու հոն Տէրոջը զոհ մատուցին։

6—Ու երբ Յեսու ժողովուրդը արձակեց, Իսրայէլի որդիները ամէն մէկը իր կալուածքը գնաց՝ երկիրը ժառանգելու համար։ 7—Եւ ժողովուրդը, Յեսուի բոլոր օրերուն մէջ, ու Յեսուէ հոգը ոտի մնացող և Իսրայէլի համար Տէրոջը րրած ամէն մեծ գործերը տեսնող ծերերուն բոլոր օրերուն մէկ, Տէրոջը ծառայութիւն ըրին։ 8—Եւ Տէրոջը ծառան Յեսու Նաւեան հարիւր տասը տարեկան մեռաւ։ 9— Ու զանիկա իր ժառանգութեանը սահմանին մէջ Թամնաթ-Սարայի լեռանը հիւսիսային կողմը, Եփրեմի լեռը, †Թաաշաթ-Հարեսի մէկ,

*Այեղոն, յայդոններ

†Ոմ Յեսու. ժբ. 50 և իդ. 30 Թամնաթ-սարա

Թագեցին։ 10-Եւ այն գարուն բոլոր մարդիկը իրենց հայրերուն խառնուեցան. ու անոնցմէ ետքը ուրիշ ազգ մը եղաւ, որ Տէրը ու Իսրայէլի համար անոր ըրած գործերը չէանչցան։

11—Եւ Իսրայէլի որդիները Տէրոջը առջեւ չարութիւն ըրին ու Բահալիմը պաշտեցին. 12— Ու Բաղուցին իրենց հայրերուն Տէր Աստուածը, որ զիրենք Եգիպտոսի երկրէն հաներ էր, ու օտար աստուածներու ետեւէ գացին, այսինքն իրենց բովրտիքը եղող ազգերուն ժէն մը աստուածներուն, ու անոնց երկրպագութիւն ըրին, և Տէրը սրդոզցուցին։ 13—Եւսոի Տէրը Բաղուցին և Բահալը ու Աստարովթը պաշտեցին։ 14—Ու Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք կողոպտիչներու ձեռքը մատնեց, ու զանոնք կողոպտեցին. և զանոնք չրլակով թշնամիներուն ծախեց, ու ալ չկրնար իրենց թշնամիներուն առջեւ կայնիլ։ 15—Ուր որ երթային՝ Տէրոջը ձեռքը անոնց վրայ էր չարիք ըրէ՛ս հատար, ինչպես Տէրը ըսեր էր, և ինչպէս անոնց երդում ըրեր էր. ու խիստ մեծ նեղութեան մէջ էին։

16—Ու Տէրը դատաւորներ հանեց, որոնք կողոպտիչներուն ձեռքէն ազատեցին զանոնք։ 17—Սակայն իրենց դատաւորներուն ալ մտիկ չըրին, ու օտար աստուածներու ետեւէ էրթալով պոռնկութիւն ըրին, ու անոնց երկրպագութիւն ըրին. չուտով խոտորեցան այն ճամբայէն՝ որուն մէջ իրենց հայրերը կը քալէին Տէրոջը հրամաններուն հնազանդելով. Բայց ասանք այնպես չըրին։ 18—Ու երբ Տէրը անոնց դատաւորներ կը հաներ, Տէրը դատաւորին հետ ըլլալով, դատաւորին բոլոր օրերը զանոնք իրենց թշնամիներուն ձեռքէն կ'ազատեր. քանզի անոնց նեղութիւն ատողներուն ու չարչարողներուն երեսէն անոնց հեծութիւններուն համար Տէրը կը զղջար։ 19—Ու երբ այն դատաւորը մեռնէր, կը դառնային նորէն օտար աստուածներու ետեւէ կ'երթային, զանոնք կը պաշտէին եւ անոնց երկրպագութիւն կ'ընէին, ու իրենց հայրերէն աւելի անօրէնութիւն կ'ընէին. իրենց ըղ գործերէն ու իրենց *ծուռ ճամբայէն չէին դառնար։ 20—Ուստի Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքելով ըսաւ, Որովհետեւ այս ազգը իրենց հայրերուն պատուիրած ուխտս զանց ընելով, իմ ձայնիս հնազանդութիւն չըրին, 21— ես ալ այսուհետեւ անոնց առջեւէն բնաւ մէկը պիտի չվռնտեմ այն ազգերէն զորոնք Յեսու իր մեռած ատեն թողուց։ 22—Որպէս զի անոնցմով իսրայէլը փորձեմ թէ արդեօք իրենց հայրերուն պէս զգուշութիւն պիտի ընե՞ն Տէրոջը ճամբան քալելու, թէ ոչ։ 23—Ուստի Տէրը այս ազգերը թող տուաւ, և չուտով չվռնտեց, ու զանոնք Յեսուի ձեռքը չմատնեց։

Գլ. Գ

Եւ ասոնք են այն ազգերը զորոնք Տէրը թող տուաւ, որպէս զի անոնցմով Իսրայէլը, այսինքն Քանանացւոց բոլոր պատերազմները ամէն չգիտցողները, փորձէ. 2—(Միայն ասոր համար՝ որ Իսրայէլի որդիներուն սերունդը, մանաւանդ առաջուրնէ չգիտցողները, պատերազմ տարվին ու գիտնան.) 3—Փղշտացւոց հինգ նախարարութիւնները, և բոլոր Քանանացիները ու Սիդոնացիները, Լիբանան լեռը բնակող Խեւացիները, Բահալհերմոն լեռնէն մինչեւ Եմմաթի մուտքը։ 4— Ասոնցմով պիտի փորձէր Իսրայէլը որպէս զի գիտնայ թէ արդեօք պիտի հնազանդի՛ն Տէրոջը պատուիրանքներուն, զորոնք Մովսէսի ձեռքով անոնց հայրերուն հրամայեր էր։

5—Ու Իսրայէլի որդիները Քանանացւոց, Քետացւոց, Ամորհացւոց, Փերեզացւոց, Խեւացւոց ու Յեբուսացւոց մէջ բնակեցան. 6— Ու անոնց աղջիկները իրենց կին առին, ու իրենց աղջիկները ալ անոնց տղոցը տուին, և անոնց աստուածները պաշտեցին։ 7—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը առջեւ չարութիւն ըրին, և իրենց Տէր Աստուածը մոռնալով Բահալիմը ու Աստարովթը պաշտեցին։ 8—Ու Տէրոջը բարկութիւ-

*Եբր. կարծր

նը Իսրայէլի վրայ բարբառեցաւ, ու զանոնք Մելխագեմի հուսարաթեամ թագաւորին ձեռքը մատնեց. և Իսրայէլի որդիները ութ տարի ծառայութիւն ըրին հուսարաթեամին։

9—Նաքը Իսրայէլի որդիները Տէրոջը ազաղակեցին. ու Տէրը Իսրայէլի որդիներուն փրկիչ մը հանեց, Քաղէբի պզտիկ եղբօրը կենեզի որդին Գոթոնիէլը, որ զանոնք ազատեց։ 10—Ու Տէրոջը Հոգին անոր վրայ բլլալով Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ'ընէր. ու երբ պատերազմի ելաւ, Տէրը Մելխագեմ հուսարաթեամի թագաւորը անոր ձեռքը տուաւ, և անոր ձեռքը հուսարաթեամի դէմ զօրացաւ։ 11— Ու երկիրը քառասուն տարի հանգստացաւ. և կենեզեան Գոթոնիէլ մեռաւ։

12—Ու Իսրայէլի որդիները նորէն Տէրոջը առջեւ չարութիւն ըրին. և Տէրոջը առջեւ չարութիւն ընելնուն համար Տէրը Մովաբի Եգղոն թագաւորը Իսրայէլի դէմ ուժեղցուց։ 13—Ու անիկա Ամմոնի ու Ամաղեկի որդիները իր քով ժողվեց, և գնաց Իսրայէլը զարկաւ ու Արմաւենեաց քաղաքին տիրեց։ 14—Ու Իսրայէլի որդիները Մովաբի Եգղոն թագաւորին տասնըվեց տարի ծառայութիւն ըրին։

15—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը ազաղակեցին, և Տէրը անոնց փրկիչ մը հանեց, Բենիամինեան Գերայի որդին Ահուդը որ *ահեկագործ էր. ու Իսրայէլի որդիները անոր ձեռքով Մովաբի Եգղոն թագաւորին ընծայ դրկեցին։ 16—Ու Ահուդ մէկ †կանդնացած երկսայրանի երկայնութեամբ սուր մը շինեց իրեն, ու զանիկա ըսքեռնեն տակին իր ազ ազդրին վրայ կապեց։ 17— Ու ընծան Մովաբի Եգղոն թագաւորին տարաւ. (ու Եգղոն խիստ գէր մարդ մըն էր։) 18—Ու երբ ընծան տուած լմնցուց, ընծան կրող մարդիկը ետ դրկեց։ 19—Ու ինք Գաղգաղայի մօտ եղած էքսրահանգէրն ետ դարձաւ ու ըսաւ, Ով թագաւոր, քեզի ծածուկ խօսք մը ունիմ. և անիկա ըսաւ, Լուռ *կեցիր. ու բոլոր անոր քովն եղողները դուրս ելան։ 20—Ու Ահուդ անոր քովն մտնեցաւ, ու անիկա նստեր էր իրեն յատկացեալ ամառնային վերնատունը մէջ։ և Ահուդ անոր ըսաւ, Քեզի Աստուծոյ կողմանէ խօսք մը ունիմ. ու անիկա աթոռեն վրայէն ելաւ։ 21— Ու Ահուդ իր ձախ ձեռքը երկնցնելով սուրը իր աջ ազդրին վրայէն քաշեց ու անոր փորը խոթեց, 22—Այնպէս որ երկաթին նետէն կոթն ալ ներս մտաւ. ու գիրացը երկաթը բռնեց, այնպէս որ սուրը անոր փորէն չկրցաւ հանել, ու աղբը դուրս ելաւ։ 23— Ու Ահուդ սրահն ելաւ ու վերնատունը դռներուն կղպաւած էին. ու ըսին, Անիկա անսարակայս իր ամառնային սենեակին մէջ †հարկաւորութեան գացած է։ 25—Ու անոնք ապասեցին՝ մինչեւ որ ամչցան, բայց ահա վերնատունը դռները չէր բանար. ու բանալին առին բացին, և ահա իրենց տէրը գետնի վրայ ինկած մեռած էր։ 26—Ու փախի որ անոնք կը անտնային՝ Ահուդ փախաւ, և քարահանգէրն անցնելով ազ առաղ Սեիրա հասաւ։

27—Ու երբ հասաւ, Եփրեմի լեռանը վրայ փող հնչեցուց, և Իսրայէլի որդիները անոր հետ այն լեռնէն վար իջան, ու ինք անոնց առջեւն կ'երթար։ 28—Ու անոնց ըսաւ, Իմ հետեւիս եկէք, քանզի Տէրը ձեր թշնամիները, Մովաբացիները, ձեր ձեռքը տուաւ. ուստի անոր հետեւեցան իջան, և Մովաբի ‡‡‡ վադանները անցքերը բռնեցին, ու Քով չտուին որ մարդ մը անցնի։ 29— Ու այն ժամանակ Մովաբէ տասը հազարի չափ մարդ կոտրեցին, ոչ‑ոք ազատ չեղաւ։ Մովաբ այնպէս հնազանդեցաւ Իսրայէլի ձեռքին տակ։ Ու երկիրը ութսուն տարի հանգստացաւ։

*ԲԲՐ. ալ ձեռքը զոգուած մարդ
†ՕՀ, թաղնուած
‡ԿՀ, փորուած ժայռերէն

*ԿՀ, կեցէք
†ԲԲՐ. ոտքերը ծածկած է
‡ԿՀ, Մովաբի Երիւերը Երիւղաս

31—Ու անկէ հետ Անաթի որդին Սամեգար եղաւ, ու եզնեփալ մը փղշտացիներէն վեց հարիւր մարդ կոտրեց. և ասիկա ալ Իսրայէլը ազատեց։

Գլ. Դ

Ե. Ահուդի մեռնելէն հետը Իսրայէլի որդիները Տէրոջը առջեւ նորէն չարութիւն ըրին. 2—Ու Տէրը մատնեց զանոնք Քանանացւոց Յաբին թագաւորին ձեռքը, որ Հասորի մէջ կը թագաւորէր. և անոր զօրագլուխը Սիսարա էր, ու ազգաց Արիսաթին մէջ կը բնակէր։ 3—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը ազաղակեցին. քանզի անիկա իր հարիւր երկաթէ կառքեր ունէր, ու անիկա քսան տարի Իսրայէլի որդիները սաստիկ նեղեց։

4—Ու այն ատեն Դեբորա մարգարէուհին, Ղաբիդոթի կինը, Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ'ընէր։ 5—Ու անիկա Եփրեմի լեռանը վրայ, Ռամայի ու Բեթէլի մէջտեղ, Դեբորայի արմաւենիին տակ կը բնակէր, և Իսրայէլի որդիները դատաստանի համար անոր կ'ելլէին։ 6—Ու Դէբէր Հոդէ ղրկեց, և Նեփթաղիմի Կադէսէն Աբինոամի որդին Բարակը կանչեց, ու անոր ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը †է չհրամայե՞ց՝ ըԷլէ, գնա, թաբոր լեռը կելլէ, ու Նեփթաղիմի որդիներէն և Զաբուղոնի որդիներէն քեզի հետ տասը հազար մարդ առ, 7—Ու ես Յաբինի զօրագլուխը Սիսարան, և անոր կառքերը ու ղէրաց բազմութիւնը քու դիմացդ պիտի հանեմ Կիսոն հեղեղատին քովն, ու զանիկա քու ձեռքդ պիտի մատնեմ։ 8—Ու Բարակ անոր ըսաւ, Եթէ գոն‑ըԼինեմ հետ երթաս, կ'երթամ. բայց եթէ ինծի հետ չերթաս, չեմ երթար։ 9—Ու անիկա ըսաւ, Անշուշտ ես քեզի հետ պիտի երթամ, բայց քու երթալուդ ճամբուդ մէջ դուն փառք մը չես ստանար. քանզի Տէրը Սիսարան կնոջ մը ձեռքը պիտի մատնէ։ Ու Դեբորա եղաւ Բարակի հետ կադէս գնաց։ 10—Ու Բարակ Զաբուղոնը ու Նեփթաղիմը մը կադէսի մէջ *ժողվեց, և տասը հազար *մարդով ելաւ, Դեբորա ալ անոր հետ ելաւ։

11—(Ու Մովսէսի աներոջ Յոթորի որդիներէն կենեցի Քաբեր կենեցիներէն զատուեր էր, ու իր վրանը Կադէսի մօտ Սաանամիմի կաղնիին քով կանգներ էր։)

12—Ալն ատեն Սիսարայի իմացուցին որ Աբինոամի որդին Բարակ Թաբոր լեռը ելեր է։ 13—Ու Սիսարա իր բոլոր կառքերը, ինը հարիւր երկաթէ կառքերը, ու իրեն հետ եղող բոլոր զօրքը ազգաց Արիսաթէն Կիսոն հեղեղատը ժողվեց։

14—Ու Դեբորա ըսաւ Բարակի, Ոտք ելիր, քանզի Տէրը այսօր Սիսարան քու ձեռքդ մատնեց. միթէ Տէրը քու առջեւդ չելաւ։ Ու Բարակ Թաբոր լեռնէն իջաւ, և իրեն հետ տասը հազար մարդ կար։ 15—Ու Տէրը Սիսարան և բոլոր կառքերը ու բոլոր բանակը Բարակի առջեւ սուրի բերնով խորտակեց և Սիսարա կառքէն վար իջաւ ու ոտքով փախաւ։ 16—Ու Բարակ կառքերը ու բանակը մինչեւ ազգաց Արիսաթը հալածեց, ու Սիսարայի բոլոր բանակը սուրի բերնով իյնաւ, ու մարդ մը չմնաց։

17—Ու Սիսարա ոտքով կենեցի Քաբերի կնոջ Յայէլի վրանը փախաւ. քանզի Հասորի Յաբին թագաւորին ու կենեցի Քաբերի տանը մէջտեղ խաղաղութիւն կար։ 18—Ուստի Յայէլ Սիսարան դիմաւորելու ելաւ ու անոր ըսաւ, Տէր իմ դարձիր, ինծի գարձիր, մի վախնար։ Ուստի անիկա դէպ ի վրանը անոր դարձաւ, և կինը զանիկա վերմակով մը ծածկեց։ 19—Ու անիկա կնոջը ըսաւ, Շնորհք ըրէ, ինծի քիչ մը ջուր տուր որ խմեմ, քանզի ծարաւած եմ։ Ան ալ կաթին սրիկ բացաւ, ու անոր խմցուց. ետքը զանիկա ծածկեց։ 20—Ու անիկա կնոջը ըսաւ, Վրանին դուռը կեցիր, ու եթէ մարդ մը գայ, քեզի հարցնէ ու ըսէ Թէ Այս տեղ մարդ կա՞յ, Ձկայ ըսէ։ 21—Ու Քաբերի կինը Յայէլ վրանին մէկ ցիցը առաւ, և ուռն ալ ձեռքը բռնելով՝ կամացուկ մը անոր քով գնաց, ու ցիցը

*ԲԲՐ. կանչեց

*ԲԲՐ. մարդ իր ատքը

անոր ծամելիքը մեկտով մինչեւ գետինը գամեց, և անիկա յոգնած ըլլալուն համար խորունկ քունի մէջ էր. այսպէս մեռաւ։ 22—Եւ ահա Բարակ Սիսարայի հետեւէն կը վազէր, և Յայէլ դաշնիկա դիմաւորելու ելաւ. ու անոր ըսաւ, Եկուր, քու փնտռած մարդդ քեզի ցուցնեմ. ու անիկա կնոջը հետ տնաւ, և ահա Սիսարա մեռած պառկեր էր, ու ցիցը անոր ծամելիքին մէջ էր։

23—Ու Աստուած այն օրը Քանանացւոց Յաբին Թագաւորը Իսրայէլի որդիներուն առջեւ կորագլուխ ըրաւ։ 24—Ու Քանանացւոց Յաբին Թագաւորին դէմ Իսրայէլի որդիներուն ձեռքը օրէ օր կը զօրանար, մինչեւ որ Քանանացւոց Յաբին Թագաւորը բնաջինջ ըրին։

Գլ. Ե

Ե. այն օրը Դեբբորա ու Աբինոամի որդին Բարակ երգեցին ու ըսին,

2—Իսրայէլի զօրավարներուն առաջնորդելուն
Ո՛ ժողովուրդին յօժարակամ անձնանուէր ըլլալուն համար՝
Տէրը օրհնեցէք։
3—Ով թագաւորներ, մտիկ ըրէք,
Ով նախարարներ, ականջ դրէք։
Ես Տէրոջը պիտի երգեմ,
Իսրայէլի Տէր Աստուծոյն ազգաւ պիտի բսեմ։
4—Ով Տէր, երբ դուն Սեիրէ ելար,
Ու Եդոմի դաշտէն չուեցիր,
Երկիրը շարժեցաւ, երկինք անձրեւ տեղաց,
Ամպերն ալ կաթիլ կաթիլ ցնդեցին։
5—Տէրոջը երեսէն լեռները հալեցան,
Իսրայէլի Տէր Աստուծոյն երեսէն Սինա ալ հալեցաւ։
6—Անաթի որդւոյն Սամգարի օրերը,
Յայէլի օրերը,
Մեծ ճամբաները *անկոխ էին՝
Ու ճանապարհորդները խոտորնակ ճամբաներէ կ'երթային։
7—Իսրայէլի մէջ զօրավարներ չմնացին,
Մինչեւ որ ես Դեբբորա ելայ,
Մինչեւ որ ելայ Իսրայէլի մէջ մայր ըլլալու։
8—Նոր աստուածներ ընտրեցին.
Այն ատեն էրէսց դարպասին մէջ պատերազմ եղաւ.
Արդեօք Իսրայէլի քառասուն հազար զրէյն մէջ
Վահան կամ նիզակ երեւցաւ։
9—Իմ սիրտս Իսրայէլի իշխաններուն վրայ է.
Ով ժողովուրդին անձնանուէր եղողներ,
Տէրը օրհնեցէք։
10—Ձերմակ էշերու վրայ հեծնողներ,
Դատաստանի աթոռներ նստողներ,
Ու ճամբու վրայ պտըտողներ, զրուցեցէք,
11—*Աղեղնաւորներուն ձայնին ալեւոր՝
Ջուր հանելու տեղերուն մէջ,
Հոն Տէրոջը արդարութիւնները,
Ո՛ Իսրայէլի մէջ անոր զօրավարներուն արդարութիւնները պատմեն.
Այն ատեն Տէրոջը ժողովուրդը դարձեալ իջան։
12—Արթնցիր, արթնցիր, ով Դեբբորա,
Արթնցիր, արթնցիր ու երգ ըսէ.
Ով Բարակ, ելիր.
Ով Աբինոամի որդի, քու գերութիւնդ գերի ըրէ։
13—Այն ատեն փախստականները
Ժողովուրդին զօրաւորներուն վրայ յարձակեցան.
Տէրը ինծի հետ
Զօրաւորներուն դէմ իջաւ։
14—Եփրեմի արմատէն եղողները Ամաղեկի վրայ ելան.
Բենիամին քու հետեւդ քու ժողովուրդիդ մէջ ելաւ.
Մաքիրէ իշխաններ,
Ու Զաբուղոնէ գրչի գրիչ բռնողներ իջան։
15—Ես իսաքար զօրավարները Դեբբորայի հետ,
Ու իսաքար ալ Բարակի պէս
Անոր հետեւէն հովիտը զրկուեցաւ.

*Եբր. պակսեցան

*Կամ, Աւազ բաժնողներուն, և կամ, ժողովուրդներուն

Ռուբէնի *առհասրան մէջ
Մեծ յուզմունք կար։
16—Ինչո՞ւ համար փարախներուն մէջ նստար,
Որ †հօտերուն մայլէլը լսես։
Ռուբէնի առհասրան մէջ
Մեծ տարակուսանք կար։
17—Գաղաադ Յորդանանս անդին կողմը կը բնակէր.
Ու Դան ինչո՞ւ համար նաւերու մէջ պանդխտաց մնաց։
Ասեր Ծովուն եզերքը կը նստէր,
Ու իր նաւահանգիստներուն քով կը բնակէր։
18—Զաբուղոն ու Նեփթաղիմ այդպէս ժողովրդ մըն է,
Որ դաշտին բարձր տեղերը զինք մահուան վտանգի մէջ կը դնէ։
19—Թագաւորները եկան, պատերազմ ըրին.
Այն ատեն Քանանացւոց Թագաւորները
Մահեդդովի Լուրին քով Թանաքի մէջ պատերազմ ըրին.
Սակայն չշահեցան։
20—Երկինքէն պատերազմ ըրին.
Աստղերը իրենց շրջաններէն
Սիսարայի դէմ պատերազմ ըրին։
21—Կիսոն հեղեղատը, այն հին հեղեղատը,
Կիսոն հեղեղատը զանոնք քշեց տարաւ։
Ով իմ անձս, ուժդ զօրութիւնը կոխեցիր։
22—Այն ատեն ձիերուն սմբակները
Սաստիկ վազելուն համար կատր կատր եղան,
Զօրաւորներուն վազցնելովը։
23—Տէրոջը հրեշտակը ըսաւ, Մարովզը նզովեցէք,
Անոր բնակիչները սաստիկ նզովեցէք
Քանզի Տէրոջը օգնութեան,
Զօրաւոր իշխաններուն դէմ Տէրոջը օգնութեան, չեկան։
24—Կենեզի Բարեբերի կինը Յայէլ
Կիներուն մէջ օրհնեալ եղիր
Վրանները մէջ քովոլ կիներէն
Աւելի օրհնեալ ըլլայ։

*Կամ, հեղեղատներուն
†Կամ, հօտերուն մէջ սրինգի ձայնը

25—Սիսարա ջուր ուզեց. կաթ տուաւ,
Իշխաններուն ամանովը կոգի մատուց։
26—Անիկա իր ձեռքը ցիցին,
Ու իր ս ձեռքը հիւսի ուռին երկնցուց,
Ու Սիսարայի գլուխը ճեղքեց.
Ու ջիշը անոր ծամելիքը մխելով խոցեց,
27—Անիկա ծռեցաւ, ծոխէն ոտքերուն մէջ ինկաւ փռուեցաւ.
Ոտքերուն մէջ ծռեցաւ ինկաւ.
Ուր որ ծռեցաւ, հոն մեռած ինկաւ։
28—Սիսարայի մայրը պատուհանէն նայեցաւ,
Ու վանդակին ետեւէն ազաղակեց.
Ինչո՞ւ համար անոր կառքը կ'ուշանայ գալու,
Ինչո՞ւ անոր կառքերուն քայլերը ետ կը մնան։
29—Անոր իմաստուն տիկիններէն անոր պատասխան տուին,
Ինք ալ իր խօսքերուն պատասխանը իրեն կու տայր,
30—Անշուշտ անոնք աւար գտան,
Զանիկա բաժնելու վրայ են.
Ամէն կարճէն համար մէկ կամ երկու աղջիկ,
Իսկ Սիսարայի համար գունդգունդ աւար մը,
Գունդգունդ նկարագործ աւար մը,
Երկու կողմը բանուած ու գունդգունդ վզնոցներ աւար տուած ղէրէ ըլլան։
31—Ով Տէր, քու թշնամիներդ
Այսպէս կորսուին.
Իսկ քեզ սիրողները
Իր զօրութիւնովը ելլող արեւուն պէս ըլլան։
Ու երկիրը քառասուն տարի հանգստացաւ։

Գլ. Զ

Ե. Իսրայէլի որդիները Տէրոջը առջեւ չարութիւն ըրին, ու Տէրը զանոնք եօթը տարի Մադիանացւոց ձեռքը մատնեց։ 2—Ու Մադիանացւոց ձեռքը Իսրայէլի վրայ ուժգնացաւ, ու Իսրայէլի որդիները Մադիանացւոց պատճառաւ իրենց համար լեռներու մէջ խոռոչներ, քարայրներ և պատնէշներ շինեցին։ 3—Ու երբ Իսրայէլացիք սերմ կը ցանէին, Մադիանացիք անոնց վրայ

կ'ելլէին. և Ամաղեկացիք ու արձելքի բնակիչներն ալ կ'ելլէին. 4— Եւ անոնց դէմ բանակ կազմելով գետնին բերրը կ'աւերէին մինչև Գազա, ու իսրայէլի ազգութա մը չէին ձգեր, ոչ ոխեար, ոչ արջառ և ոչ էշ. 5— Քանզի անոնք իրենց հօտերովը ու վրաններովը կ'ելլէին, և մարախի պէս բազմութեամբ կու գային. Թէ՛ անոնք և թէ՛ անոնց ուղտերը չկրնային հարուածը. ու Իշմայէլէ երկիրը կու գային զանիկա աւերելու համար. 6— Եւ Իսրայէլ Մադիանացւոց պատճառաւ չատ ազքատացաւ. ու իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին.

7— Ու երբ Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին Մադիանացւոց պատճառաւ, 8— Տէրը Իսրայէլի որդիներուն մարգարէ մը ղրկեց. ու անոնիկ ըսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ես ձեզ եգիպտոսէ հանեցի, ու ձեզ ծառայութեան տունէն դուրս բերի, 9— Եւ ձեզ եգիպտացւոց ձեռքէն, ու բոլոր ձեզի նեղութիւն տուղներուն ձեռքէն ազատեցի, և դանոնք ձեր առջեւէն վռնտելով անոնց երկիրը ձեզի տուի. 10— Ու ձեզի ըսի, Ես եմ ձեր Եհովա Աստուածդ. մի վախնաք Ամորհացւոց աստուածներէն, որոնց երկրին մէջ կը բնակիք. բայց դուք իմ խօսքս մտիք չընդի.

11— Եւ Տէրոջը հրեշտակը եկաւ, ու Աբիեզերեան Յովասի թեւենիին տակ նստաւ, որ Եփրայի մէջ էր. ու անոր որդին Գեդէօն հնձանին մէջ ցորեն կը ծեծէր՝ Մադիանացւոց երեսէն փախցընելու համար. 12— Եւ Տէրոջը հրեշտակը անոր երեւցաւ, ու ըսաւ, Ով զօրաւոր կարիճ, Տէրը քեզի հետ է. 13— Ու Գեդէօն անոր ըսաւ, Ով, տէր իմ, եթէ Տէրը մեզի հետ է, ինչո՞ւ համար այս բոլոր բաները մեր գլուխը եկան. և ո՞ւր են անոր ամէն հրաշքները, զորոնք մեր հայրերը մեզի կը պատմին՝ ըսելով թէ Տէրը մեզ եգիպտոսէ հանեց. բայց հիմա Տէրը մեզ երեսէ ձգից, ու մեզ Մադիանացւոց ձեռքը մատնեց. 14— Եւ Տէրը անոր նայեցաւ ու ըսաւ, Այդ քու զօրութիւնովդ գնա, որպէս զի Իսրայէլը Մադիանացւոց ձեռքէն ազատես. չէ՞ որ ես քեզ ղրկեցի. 15— Ու անոնիկ անոր ըսաւ, Ով, Տէր իմ, Իսրայէլը ինչո՞վ ազատեմ. ահա իմ ազգատոհմն Մանասէի չէզնէ ամէնէն աղքատն է, ու ես իմ հօրս տունը ամէնէն պզտիկն եմ. 16— Ու Տէրը անոր ըսաւ, Ես անշուշտ քեզի հետ պիտի ըլլամ, ու Մադիամը մէկ մարդու պէս պիտի զարնես. 17— Ու անոնիկ անոր ըսաւ, Կ'ազաչեմ, եթէ ես քու աչքիդ առջեւ շնորհք գտայ, ինծի նշան մը ցուցուր, որպես զի էդիտ ես ինծի հետ խօսողը դուն ես. 18— Կ'ազաչեմ որ ասկէ չերթաս, մինչեւ ես քեզի գամ իմ ընծան բերեմ ու քու առջեւդ դնեմ. Ու անոնիկ ըսաւ, Ես կը սպասեմ մինչեւ դուն դառնաս. 19— Ու Գեդէօն ներս մտաւ, այծերէն ուլ մը և մէկ արդու ալիւրէ բաղարջ չօթեր պատրաստեց. մսոը սակառի մը մէջ դրաւ, ու արգանակն ալ պատկի մը մէջ դրաւ, և անոր առջեւ հանեց բեւեհիին տակ ու ծառս մատուց. 20— Ու Աստուծոյ հրեշտակը անոր ըսաւ, Մսոը ու բաղարջ չօթերը առ, այս վէմին վրայ դիր, ու արգանակը թափէ. Ու անոնիկ այդպէս ըրաւ. 21— Եւ Տէրոջը հրեշտակը իր ձեռքի գաւազանին ծայրը երկնցուց, ու մսոին և բաղարջ չօթերուն դպաւ. ու վէմէն կրակ ելլելով մսոը և բաղարջ չօթերը այրեց. ու Տէրոջը հրեշտակը անոր աչքերուն առջեւէն գնաց. 22— Ու Գեդէօն տեսաւ որ հրեշտակ Տէրոջը հրեշտակն է. ու Գեդէօն ըսաւ, Ով, Տէր Եհովա, որ Տէրոջը հրեշտակը երես առ երես տեսայ. 23— Բայց Տէրը անոր ըսաւ, Խաղաղութիւն ըլլայ քեզի, մի վախնար. պիտի չմեռնիս.

24— Ու Գեդէօն հոն Տէրոջը սեղան մը շինեց, ու անոր անունը Եհովա-շալոմ կոչեց, որ մինչեւ այսօր Աբիեզերեանց Եփրային մէջ կեցած է.

25— Ու այն գիշերը Տէրը անոր ըսաւ, Քու հօրդ զուարակը, հօրը տարիքն երկրորդ զուարակը, առ, և քու հօրդ ունեցած Բահաղի սեղանը փլցուր, ու անոր քովի Աստարովթը կտրէ. 26— Ու այս ապառաժ քարին գլխուր օրինաւոր կերպով՝ քու Տէր Աստուծդ սեղան մը չընէ, ու երկրորդ զուարակը առ, և քու կտրած Աստարովթիդ փայտերովը ողջակէզ ըրէ. 27— Ու Գեդէօն իր ծառաներէն տասը մարդ առաւ, և Տէրոջը իրեն ըսածին պէս ըրաւ. ու իր հօրը տունէն, և քաղաքին մարդոցմէն վախնալով՝ այդ բանը ընելու՝ գիշերը ըրաւ.

28— Ու երբ քաղաքին մարդիկը առաւօտուն կանուխ ելան, ահաւասիկ Բահաղի սեղանը փլած, և անոր քովի Աստարովթը կտրած, ու երկրորդ զուարակը չընուած սեղանին վրայ ողջակէզ եղած էր. 29— Ուստի իրարու ըսին, Այս բանը ո՞վ ըրաւ. և փնտռեցին ու քննեցին. ու բան եղաւ թէ Այս բանը Յովասի որդին Գեդէօն ըրաւ. 30— Ուստի քաղաքին մարդիկը Յովասի ըսին, Որդի դուրս հանէ որպէս զի մեռնի, քանզի Բահաղի սեղանը փլցուցեր, ու անոր քովի Աստարովթը կտրեր է. 31— Ու Յովաս իր վրայ եկող բոլոր մարդոցն ըսաւ, Մի՞թէ Բահաղի երեսունքը դո՞ւք պիտի պաշտպանէք, կամ թէ զանիկա դո՞ւք պիտի ազատէք. ով որ անոր իրաւունքը պաշտպանէ, թող մեռցուի մինչև առաւօտ. եթէ անիկա աստուած է, թող ինք իր իրաւունքը պաշտպանէ անոր դէմ, իր սեղանը փլցնելուն համար. 32— Ուստի անոր այդ օրը զանիկա "Յերոբաալ անուանեց, քանզի ըսաւ, Թող Բահաղ իր իրաւունքը պաշտպանէ անոր դէմ, իր սեղանը փլցնելուն համար.

33— Ու բոլոր Մադիանացիները, Ամաղեկացիները ու արեւելքի բնակիչները միկտեղ ժողվուեցան, ու Յորդանանէն անցնելով՝ Յեզրէլի հովիտին մէջ բանակեցան. 34— Ու Տէրոջը Հոգին Գեդէօնի վրայ հանգչեցաւ, ու անիկա փող հնչեցուց, և Աբիեզերեանք անոր եռաւէն ժողովուեցան. 35— Ու բոլոր Մանասէի պատգամաւորները ղրկեց, ան ալ անոր եռաւէն ժողովուեցան. և Ասերի, Զաբուղոնի ու Նեփթաղիմի ալ պատգամաւորներ ղրկեց, ու անոնք գացին զանոնք գիմաւորել.

36— Ու Գեդէօն Աստուծոյ ըսաւ, Եթէ ըսածիդ պէս Իսրայէլը իմ ձեռքովս ազատելու ես, 37— Ահա ես կալկանը մէջ բուրդէ գզաթ մը կը դնեմ. եթէ միայն գզաթին վրայ ցօղ, ու բոլոր գետնին վրայ չորութիւն ըլլայ, այն ատեն պիտի գիտնամ որ ըսածիդ պէս Իսրայէլը իմ ձեռքովս պիտի ազատես. 38— Ու այնպէս եղաւ. վասն զի առաւօտուն կանուխ ելաւ, ու գզաթը քամեց, և գզաթէն ցօղը հանեց, որ կոնք մը լեցուն ջուր եղաւ. 39— Այն ատեն Գեդէօն Աստուծոյ ըսաւ, Քու բարկութիւնդ իմ վրաս չբորբոքի, ու միայն այս անգամ ալ խօսիմ. միայն այս անգամ գզաթովը փորձեմ. հիմա միայն գզաթին վրայ չորութիւն՝ ու բոլոր գետնին վրայ ցօղ ըլլայ. 40— Ու այն գիշերը Աստուած այնպէս ըրաւ. միայն գզաթին վրայ չորութիւն՝ ու բոլոր գետնին վրայ ցօղ եղաւ.

Գլ. Է

Ու Ցերոբաալ, այսինքն Գեդէօն, ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը կանուխ ելան, Հարոդի աղբիւրին քով բանակեցան. ու Մադիանու բանակը անոր հիւսիսային կողմը, դեպ ի Մօրէի բլուրը, հովիտին մէջ էր. 2— Եւ Տէրը ըսաւ Գեդէօնի, Քեզի հետ եղող ժողովուրդը չատ է. չի՛ տալիս Մադիամը անոնց ձեռքը տալ, չըլլայ որ Իսրայէլ ինծի դէմ պարծենայ ու ըսէ թէ իմ ձեռքս զիս ազատեց. 3— Ուստի հիմա փարոզ կարդալ տուս որպէս զի ժողովուրդը լսէ, ու ըսես, Ով որ վախկոտ ու երկչոտ է, թող եւս գառնայ, և չուտով Գաղաադ լեռնէն երթայ. ու ժողովուրդէն քսանուերկու հազար հոգի եւս գարձան, ու տասը հազար ծնգի եւս գոյութեան. 4— Ու Տէրը ըսաւ Գեդէօնի, Ժողովուրդը տակաւին չատ է. լուրերն քով քովու ըրէը տանիւրն չատ է. լուրերն քով քովու ըրէը զանոնք, ու հոն քեզի համար լիճցուր զանոնք, ու որո՛ւ համար քեզի ըսեմ թէ Ասիկա քեզի հետ երթայ, անիկա քեզի հետ թող երթայ. ու

---

*Եբր. հազարաւորս. տես։ Միք. ե. 2։ †Այսինքն, Տէր խաղաղութիւն, կամ, խաղաղութիւն Տեառն

*Կամ, այս ամրոցին գլխուն բաց տեղը

*Այսինքն, Բահաղ Լաւագովութիւն Թող ընէ

որո՛ւ համար քեզի ըսեմ քե Աւրկա քեզի հետ չերթայ, անկա քու չերթայ, 5—Ուստի ժողովուրդը Լուբէն քով էլլեցուց. և Ցերը Գեդէօնի ըսաւ, Ով որ չունի լափելուն պես Լուբը լեզուովը լափէ, զանկա զա կայնեցնես. ու ով որ խմելու համար իր ծունկերուն վրայ ծռի, զանկա ա՛ղ զա նե-նեցնես։ 6—Ու ձեռքը բերանը դնելով լափողներուն քիւը երեք հարիւր մարդ էր, և բոլոր մնացած ժողովուրդը իրենց ծունկերուն վրայ ծռեցան Լուբ խմելու համար։ 7—Ու Ցերը Գեդէօնի ըսաւ, Այն երեք հարիւր մարդուցմով, որոնք Լուբը լափեցին, ձեզ պիտի ազատեմ, և Մադիամը քու ձեռքդ պիտի մատնեմ. ու բոլոր Հ-ց-ի ժողովուրդը, ամէն մարդ, իր տեղը երթայ։ 8—Ուստի ժողովուրդը իրենց ձեռքը պաշար առին և իրենց փողերն ալ։ Ու Գեդէօն Իսրայէլի բոլոր մարդիկը, ամէն մէկը, իր վրանը դրկեց, բայց այն երեք հարիւր մարդը իր քով պահեց. ու Մադիամու բանակը անոր տակ հովիտին մէջ էր։

9—Ու նոյն գիշերը Ցերը անոր ըսաւ, Ոտք ելլիր ա՛ս բանակը իջիր, քանզի զանկա քու ձեռքդ մատնեցի։ 10—Ու եթէ դուն իջնելու կը վախնաս, նախ դուն քու ծառայիդ Փուրայի հետ բանակը իջիր. 11—Ու պիտի լսես թէ անոնք ի՛նչ կը խօսին. անկէ ետև քու ձեռքերդ պիտի ուժովնան, որպես զի բանակը իջնես։ Ուստի ինք և իր ծառան Փուրա բանակին մէկ զինեալը եկան։ 12—Ու Մադիամ և Ամաղէկ ու բոլոր արեւելցիները մարախներու պես բազմութեամբ հովիտին մէջ պառկեր էին, և անոնց ուղտերը անթիւ էին, ա՛ծովուն եղերքը եղող աւազին չափ չատ էին։ 13—Ու Գեդէօն հո՛ն երթալով՝ լսեց որ մարդ մը իր ընկերին երազ կը պատմէր ու կ'ըսէր, Ես երազ մը տեսայ, և ահա գարեղէն հաց մը դէպ ի Մադիամա բանակը կը գլորուէր, և վրանին հասնելով զանկա զարկաւ որ ինկաւ, ու գլխիվայր դարձուց, և վրանը ինկաւ։ 14—Ու անոր ընկերը պատասխան տուաւ և ըսաւ, Ասիկա ուրիշ բան չէ, բայց միայն Իսրայէլացի Յովասի որդւոյն Գեդէօնի սուրը. Աստուած Մադիամը ու բոլոր բանակը անոր ձեռքը մատներ է։

15—Ու երբ Գեդէօն երազին պատմութիւնը ու անոր մեկնութիւնը լսեց, Ցերէ՛ր երկրպագութիւն ըրաւ, և Իսրայէլի բանակը դարձաւ ու ըսաւ. Ոտք ելլէք, քանի Ցերը Մադիամու բանակը ձեր ձեռքը տուեր է։ 16—Ու այն երեք հարիւր մարդը երեք գունդի բաժնելով, ամէնուն ձեռքը փողեր ու պարապ սափորներ տուաւ, և սափորներուն մէջ ալ ջահեր դրաւ։ 17—Ու անոնց ըսաւ, Ինձի նայիցէք և այնպես ըրէք. ու երբ բանակին եզերքը հասնիմ, ես ինչպէս որ ընեմ, դուք ալ այնպես ընէք։ 18—Ու երբ ես ու բոլոր ինծի հետ եղողները փողը հնչեցնենք, այն ատեն դուք ալ բոլոր բանակին չորս կողմը փողերը հնչեցուցէք, և ըսէք, Ցերոջը ու Գեդէօնի սո՛ւրը։

19—Ու Գեդէօն ու անոր հետ եղող հարիւր մարդը կէս գիշերուան պահուն սկիզբը, երբ պահապանները նոր դրած էին, բանակին եզերքը հասան, և փողերը հնչեցնելով ձեռքերնուն մէկ եզած սափորները կոտրտեցին։ 20—Այն ատեն երեք գունդն ալ փողերը հնչեցուցին ու սափորները կոտրտեցին, ու ձախ ձեռքով ջահերը, ու ալ ձեռքով փողերը բռնելով հնչեցնելու համար կը պոռային ա՛ ի՛ըհէ՛ն, Ցերոջը ու Գեդէօնի սո՛ւրը։ 21—Ու ամէն մարդ բանակին բոլորտիքը իր տեղը կայներ էր. ու բոլոր բանակը վազելով և աղաղակելով կը փախչէին։ 22—Ու երբ այն երեք հարիւր մարդը էրէ՛ց փողերը հնչեցուցին, Ցերը բոլոր բանակին մէջ ամէն մարդուն սուրը իր ընկերին վրայ դարձուց. և զօրքը մինչև Բեթասետա դէպ ի Սարերա, ա՛ մինչև Աբէլմեուղայի սահմանը և Տաբէթ փախաւ։

23—Ու Իսրայէլացիք Նեփթաղիմ, Ասերէ և բոլոր Մանասէ ժողովուեցան, ու Մադիանացւոց հետևէն ինկան։ 24—Ու Գեդէօն Եփրեմի բոլոր լեռնակողմը պատգամաւորներ դրկեց՝ ըսելով, Մադիանացիները դիմաւորելու իջէ՛ք և անոնց առջևէն ջուրերը բռնեցէ՛ք մինչև Բեթբարա, նաև Յորդանանը։ Ուստի Եփրեմի բոլոր մարդիկը ժողովուեցան, ու ջուրերը բռնեցին մինչև Բեթբարա, նաև Յորդանանը։ 25— Ու Մադիամու երկու իշխանները, Օրէբը ու Զէբը, բռնեցին. Օրէբը Օրէբի վէմին քով մեռցուցին, ու Զէբը Զէբի հնձանին քով մեռցուցին. և Մադիանացիները հալածեցին, ու Օրէբի և Զէբի գլուխները Գեդէօնի բերին Յորդանանու անդիի կողմէն։

Գլ. Ը

Ու Եփրեմացիք անոր ըսին, Այս մեզի ըրած բանդ ի՞նչ պիտի ըլլայ որ Մադիամու դէմ պատերազմելու գացիր, և մեզ չկանչեցիր. ու անոր հետ սաստիկ վէճ ըրին։ 2— Ու անկա անոնց ըսաւ, Ես հիմա ձեզի պես ի՞նչ բան ըրի. Եփրեմի ճառագայթիներէն Աբիեզերի ողկոյզներէն լաւագո՞ն չէ արդեօք։ 3—Աստուած Մադիամու իշխանները, Օրէբը ու Զէբը, ձեր ձեռքը տուաւ. ես ձեզի պես ի՞նչ բան կրցայ ընել Այս խօսքը ըսածին պես անոր վրայով անոնց սիրտը հանդարտեցաւ։

4—Ու Գեդէօն Յորդանան եկաւ, ու ինք և իրեն հետ եղող երեք հարիւր մարդիկը անցան. թէպետև նուազած էին, բայց Ը՛շ-ին կը հալածէին։ 5— Ու Սոկքովթի մարդոցը ըսաւ, Ներկայ ըրէք, խնդրեմ հետս եղող ժողովուրդին հացի նկանակներ տուէք, քանզի նուազած են. ու ես Մադիամու Թագաւորներուն, Զեբեհի ու Սալմունային, հետևէն Է՛շէր կը հալածեմ։ 6— Ու Սոկքովթի իշխանները ըսին, Մի՞թէ Զեբեհի ու Սալմունայի ձեռքը արդէն քու ձեռքիդ մէ՞ջ է, որ մենք քու զօրքիդ հաց տանք։ 7—Ու Գեդէօն ըսաւ, Ուրեմն երբ Տէրը Զեբեհն ու Սալմանան իմ ձեռքս տայ, ձեր մարմինները անապատի փուշերովը ու տատասկներովը պիտի ծեծեմ։ 8— Ու անկէ Փանուէլ ելաւ, ու անոնց ալ այնպես ըսաւ. բայց Փանուէլի մարդիկը Սոկքովթի մարդոցը տուած պատասխանին պես պատասխան տուին։ 9—Ու Փանուէլի մարդոցն ալ խօսեցաւ՝ ըսելով, Երբ խաղաղութեամբ դառնամ, այդ աշտարակը պիտի փլցնեմ։

10—Ու Զեբեհ ու Սալմանա և անոնց հետ անոնց բանակը ա՛ր-ւելքի բնակիչներուն բոլոր բանակէն մնացած չորս՝ ամէնը տասնըհինգ հազարի չափ մարդ, կարկաբ մէջ էին. ու ինկած մեռածներէը հարիւր քսան հազար սուսերամարկ մարդիկ էին։ 11— Ու Գեդէօն նոբահի ու Յոգբեհացիի արեւելեան կողմէն վրանաբնակներուն ճամբով ելաւ, ու բանակը զարկաւ, քանզի բանակը անհոգ կը կենար։ 12— Ու Զեբեհ ու Սալմանա փախան. ու Գեդէօն անոնց հետևէն խյնալով, Մադիամու երկու թագաւորները, Զեբեհն ու Սալմանան, բռնեց, ու բոլոր բանակը ահաւոր վրայ բերաւ։

13—Ու Յովասի որդին Գեդէօն "ա-րեւը չերեւի" պատերազմէն ետ դարձաւ։ 14— Ու Սոկքովթի մարդոցմէն երիտասարդ մը բռնեց, և անոր հարցուց. ու անկա Սոկքովթի իշխանները ու ծերերը, եօթանասունըեօթը մարդ, գրեց ա՛ռաւ անոր։ 15—Ու Գեդէօն Սոկքովթի բնակիչներուն եկաւ, ու ըսաւ, Ահա Զեբեհ ու Սալմանա, որոնց համար դուս նախատեցիք՝ ըսելով, Մի՞թէ Զեբեհի ու Սալմանայի ձեռքը արդէն քու ձեռքիդ մէ՞ջ է, որ մենք քու նուազած մարդոցդ հաց տանք։ 16—Ուստի քաղաքին ծերերը առաւ, և անապատին փուշեր ու տատասկներ հանեց, և անոնցմով Սոկքովթի մարդիկը պատժեց։ 17—Ու Փանուէլի աշտարակը փլցուց, և քաղաքին մարդիկը կոտրեց։

18—Ու Զեբեհի ու Սալմանայի ըսաւ, Թաբօրի մէջ մեռցուցած մարդիկնիդ ի՞նչպես մարդեր էին։ Ու անոնք ըսին, Ինչպես դուն, անոնք ալ այնպես էին. ամէն մէկը թագաւորի տղու կը նմանէր։ 19— Ու անկա ըսաւ, Անոնք իմ եղբայրներս, մօրս տղաքներն էին, կենդանի է Տէր, եթէ դուք զանոնք ողջ թողուիք, ես ձեզ չէի մեռցներ։ 20— Ու իր անդրանիկ տղան Յեթերի ըսաւ, Ելիր, զանոնք մեռցուր։ Բայց պատանին իր սուրը չքաշեց. քանզի մանկահասակ ըլլալով վախ-

---

*Կամ, Արեւի զառ ի վերեն

ցաւ։ 21—Ուստի Չերէէ ու Սապհանա ըսին, Դուն կիջ որ մեզ զարնես, քանզի մարգուս ոյժը իր հասկէն համեմատ կ'ըլլայ. և Գեդէօն ոտք եղաւ, ու Չերէէն և Սապհանան մեռցուց. և անոնց ուղտերուն պարանոցին վրայ եղած մանիկները առաւ։

22—Ու Իսրայէլի մարդիկը Գեդէօնէ ըսին, Մեր վրայ թագաւորէ դուն ու քու որդեկ և քու որդւոյդ որդին, որովհետեւ մեզ Մադիամու ձեռքէն ազատեցիր։ 23—Ու Գեդէօն անոնց ըսաւ, Ես ձեր վրայ չեմ թագաւորեր, ոչ ալ իմ որդիս ձեր վրայ պիտի թագաւորէ. ձեր Թագաւորը Տէրը ըլլայ։

24—Նաբը Գեդէօն անոնց ըսաւ, Հնդամ մը պիտի խնդրեմ. ամէն մարդ իր ուլարին օղերը։ (Քանզի անոնք Իսմայէլացի ըլլալով ոսկի զարդ ունէին։) 25—Ու անոնք ըսին, Պարզ պատով կու տանք. ուստի լաթ մը փռեցին, ու ամէն մարդ իր աւարին օղերը հոն ձգեց։ 26—Ու այն իր ուզած ոսկի օղերուն կշիռքը հազար հարիւր սիկղ ոսկի եղաւ, մահիկներէն, դինաբէրէն ու Մադիամու Թագաւորներուն վրայէ ծիրանի պատմուճաններէն, և անոնց ուղտերուն պարանոցին վրայ եղած մանեակներէն զատ։ 27—Ու Գեդէօն անոնցմով եփուած մը չինեց, և իր ծիրտ քաղաքին մէջ դրաւ, ու բոլոր Իսրայէլ հոն անոր եւսեէն եբղնալով պոռնկեցաւ. և Գեդէօնի ու անոր տանը որոգայթ եղաւ։

28—Այսպէս Մադիամ Իսրայէլի որդիներուն առջեւ նուաճեցաւ, եւ այեւս հէրս չկրցաւ գլուխ վերցնել. ու Գեդէօնի օրերը երկիրը քառասուն տարի հանգստացուց։

29—Ու Յոաղաի որդին Յերոբաալ գնաց, ու իր տանը մէջ նստաւ։ 30—Ու Գեդէօն եօթանասուն ազգ ունէր իր երանքէն ելած, քանզի շատ կիներ ունէր։ 31—Ու Սիւքեմի մէջ ունեցած հարճն ալ անոր ազգ մը ծնաւ, և անոր անունը Աբիմելէք դրաւ։ 32—Ու Յոաղաի որդին Գեդէօն բարի ծերութեամբ մեռաւ, և Աբիեզերեան եփրայիմի մէջ իր հօրը Յոաղաի գերեզմանը թաղուեցաւ։

33—Ու Գեդէօն մեռածին պէս՝ Իսրայէլի որդիները դարձան ու բանդալիմ եեեէ–լ պոռնկեցան, ու Բահադ-բերիթը իրենց աստուած ըրին։ 34—Ու Իսրայէլի որդիները չյիշեցին իրենց Տէր Աստուածը, որ զիրենք ազատեր էր իրենց բոլորտիքը եղած ամէն թշնամիներուն ձեռքէն։ 35—Ու Յերոբաալի (այսինքն Գեդէօնի) տանը, անոր Իսրայէլի ըրած բոլոր բարութեանը համեմատ, գթութիւն չըրին։

Գլ. Թ

Ու Յերոբաալի որդին Աբիմելէք Սիւքեմ իր մօրը եղբայրներուն գնաց, և անոնց հետ ու իր մօրը հօրը բոլոր ազգատոհմին հետ խօսեցաւ՝ ըսելով, 2—Շնորհք ըրէք, Սիւքեմի բոլոր *քնանկիներուն ականջներուն զրուցեցէք թէ Չերի՞ը ազկ է. Յերոբաալի բոլոր որդիներուն, եօթանասուն մարդոց, ձեր վրայ թագաւորի՞լը, թէ մէկ մարդուն ձեր վրայ թագաւորի՞լը. և միտքերնիդ բերէք, որ ես ձեր ոսկրն ու ձեր մարմինն եմ։ 3—Ուստի իր մօրը եղբայրները անոր վրայով ամէն այս խօսքերը Սիւքեմի բոլոր բնակիչներուն ականջները զրուցեցին. ու անոնց սիրտը Աբիմելէքի դարձաւ, քանզի ըսին Թէ Անոնք մեր եղբայրն է։ 4—Ու բահադ-բերիթի տաճարէն եօթանասուն կոտ արծաթ տուին անոր, ու Աբիմելէք անոնցմով դատարկակաց ու սրիկայ մարդիկ վարձքով բռնեց, և անոր եւսեէն գացին։ 5—Ու Եփրայի մէջ իր հօրը տունը գնաց, և իր եղբայրները, Յերոբաալի որդիները, եօթանասուն հոգի, մէկ քարի վրայ սպաննեց. բայց Յերոբաալի պզտիկ որդի Յոաթամ պահուելով ողջ մնաց։ 6—Նաբը բոլոր Սիւքեմի բնակիչները և Մելլոյի բոլոր տունը միևնոյն ժողովեցան, ու գացին Սիւքեմի մէջ †պահապանաց կաղնիին քով Աբիմելէքը թագաւոր ըրին։

7—Ու երբ այս բանը Յոաթամի իմացուցին, անիկա գնաց Գարիզին լեռանը գլուխը կայնեցաւ, եւ ձայնը

*Եբր. այր մարդոց †Կամ, սրբազանի

վերցնելով պոռաց ու անոնց ըսաւ, Ով Սիւքեմի բնակիչներ, լսեցէք ինձի մեկ ըրէք, եւ Աստուած ձեզի մեկ ընէ։ 8—Ծառերը գացին որ իրենց համար թագաւոր մը օծեն, ու ձիթենիին ըսին, Մեր վրայ թագաւոր եղիր։ 9—Բայց ձիթենին անոնց ըսաւ, Իմ պարարտութիւնս թողում, *որ ինձմով զԱստուած ու մարդիկը կը պատուեն՝ ու երթամ ծառերուն վրայ իշխա՞ն ըլլամ։ 10—Ու ծառերը թզենիին ըսին, Դուն եկուր մեր վրայ թագաւոր եղիր։ 11—Ու Թզենին անոնց ըսաւ, Իմ քաղցրութիւնս ու ազկ պտուղս թողում, ու երթամ ծառերուն վրայ իշխա՞ն ըլլամ։ 12—Այն ատեն ծառերը որթին ըսին, Դուն եկուր մեր վրայ թագաւոր եղիր։ 13—Որթն ալ անոնց ըսաւ, ԶԱստուած ու մարդիկը ուրախացնող գինիս թողում, ու երթամ ծառերուն վրայ իշխա՞ն ըլլամ։ 14—Այն ատեն ամէն ծառերը գէնիկին ըսին, Դուն եկուր մեր վրայ թագաւոր եղիր։ 15—Ու գէնիկը ծառերուն ըսաւ, Եթէ դուք իրաւցնէ ձիս ձեր վրայ թագաւոր կ'օծէք, եկէք իմ հովանիիս տակ նստէք, եթէ ոչ գէնիկին կրակ թող ելլէ, ու Լիբանանու եղեւինները այրէ։ 16—Ու հիմա եթէ դուք Աբիմելէքը թագաւոր ընելով ճշմարտութեամբ ու արդարութեամբ վարուեցաք, և եթէ Յերոբաալի ու անոր տանը բարութիւն ըրիք, և եթէ անոր գործերուն համեմատ անոր հատուցում ըրիք։ 17—(Քանզի իմ հայրս ձեզի համար պատերազմեր ըրաւ, ու իր անձը վտանգի մէջ դրաւ, և ձեզ Մադիամու ձեռքէն ազատեց. 18—իսկ դուք այսօր իմ հօրս տանը դէմ ոտք ելաք, ու անոր որդիները, եօթանասուն մարդ, մէկ քարի վրայ սպաննեցիք, ու անոր աղախինին տղան Աբիմելէքը, ձեր եղբայրը ըլլալուն համար, Սիւքեմի բնակիչներուն վրայ թագաւոր ըրիք։) 19—Ուստի եթէ այսօր Յերոբաալի ու անոր տանը վրայով

*Կամ, որուն համար Աստուած ու մարդիկ զիս կը պատուեն
†Եբր. երեսո՞մ
‡Եբր. առվկը ձգեց

ճշմարտութեամբ ու արդարութեամբ վարուեցաք, Աբիմելէքի վրայ ուրախացեք, ան ալ ձեր վրայ Թող ուրախանայ. 20—Ապա Թէ ոչ՝ Թող Աբիմելէքէ կրակ ելլէ և Սիւքեմի բնակիչներէ ու Մելլոյի տունէն այրէ. և Սիւքեմի բնակիչներէն ու Մելլոյի տունէն կրակ ելլէ և Աբիմելէքը այրէ։ 21—Նաբը Յոաթամ փախաւ ազատեցաւ, ու Բէեր գնաց, և իր Աբիմելէք եղբօրմէն վախնալուն համար հոն բնակեցաւ։

22—Ու Աբիմելէք Իսրայէլի վրայ երեք տարի Թագաւորեց։ 23—Ու Աստուած Աբիմելէքի և Սիւքեմի բնակիչներուն մէջ չար ոգի մը ղրկեց, ու Սիւքեմի բնակիչները Աբիմելէքի հնազանդութեամբ վարուեցան. 24—Որպէս զի Յերոբաալի եօթանասուն որդիներուն եղած անիրաւութիւնը գայ, և անոնց Նախշած արիւնը անոնց եղբօրը Աբիմելէքի վրայ հասնի, որ զանոնք սպաններ էր, ու Սիւքեմի բնակիչներուն վրայ՝ որոնք անոր ձեռքերը ժողցուցեր էին իր եղբայրները սպաննելու։ 25—Ուստի Սիւքեմի բնակիչները լեռներուն գլուխները անոր դարաններ պատրաստեցին, և ճամբան իրենց գտնվեն ամէն անցողները կը թալչէին. ատ-որ Բ-ոնէ Աբիմելէքի իմացուցին։ 26—Ու Արեդի որդին Գաալ ու անոր եղբայրները եկան, Սիւքեմի մէջ մտան. և Սիւքեմի բնակիչները անոր ապաւինեցան։ 27—Ու դաշտը ելլելով իրենց այգիներուն խաղողները քաղեցին, և կոխելով ուրախութիւն ըրին, ու իրենց աստուծոյն տունը մտնելով կերան ու խմեցին, և Աբիմելէքը անիծեցին. 28—Ու Արեդեան Գաալ ըսաւ, Աբիմելէք ո՞վ է, և Սիւքեմ ո՞վ է որ մենք անոր ծառայ ըլլանք. անիկա Յերոբաալի տղան չէ՞, ու Զեբուղ անոր փոխանորդը չէ՞, Սիւքեմի հօրը Եմմորի մարդոցի ծառայութիւն ըրէք. ու մենք ինչո՞ւ համար անոր պիտի ծառայենք։ 29—Երանի՛ Թէ այս ժողովուրդը իմ ձեռքս տակ անցնէր, ու հա Աբիմելէքը վերցնէի. և Աբիմելէքի բսաւ, Զօրքերդ չատցուր ու ելիր։

30—Ու քաղաքին իշխանը Զեբուղ երբ Աբեդեան Գաալի խօսքերը լսեց,

խիտ բարկացաւ. 31— ու. Ծածուկ
կերպով մը Աբիմելէքի պատգամաւորները ղրկեց՝ ըսելով, Ահա Աբեզեան
Գաաղ ու իր եղբայրները Սիւքէմ կուգան, և ահա անոնք քեզի դէմ քաղաքը ուզք կը հանեն, 32—Ուստի հիմա դուն գիշերով ելլէր, ու դաշտը դարանի մէջ նստի քեզի հետ եղող ժողովուրդով. 33—ու առաւօտուն արեւը ծագածին պէս կանուխ ելլէր, ու յարձակելով քաղաքին վրայ յարձակէր, և ահա անոնք ու անոր հետ եղող ժողովուրդը քեզի դէմ պիտի ելլեն. այն ատեն ձեռքէդ եկածը ընես անոր։

34—Ուստի Աբիմելէք և անոր հետ եղող բոլոր ժողովուրդը գիշերով ելան, ու չորս գունդի բաժնուեցան՝ Սիւքէմի դէմ դարանի մէջ նստան։ 35—Ու Աբեզեան Գաաղ ելաւ ու քաղաքին դրանը առջև կայնեցաւ. և Աբիմելէք իրեն հետ եղող ժողովուրդով դարանէն դուրս ելաւ. 36—Ու Գաաղ այն ժողովուրդը տեսնելով Զեբուղի ըսաւ, Ահա լեռներուն գլխէն ժողովուրդ կ'իջնէ։ Ու Զեբուղ անոր ըսաւ, Լեռներուն չուքը քեզի մարդոց պէս կ'երեւնայ։ 37—Ու Գաաղ դարձեալ խօսեցաւ ու ըսաւ, Ահա երկրին *բարձր տեղերէն ժողովուրդ կ'իջնէ, և գունդմըն ալ Մէօնենիմի կաղնիին ճամբով կու գայ։ 38—Ու Զեբուղ անոր ըսաւ, Ո՞ր է այն քու բերանդ, որով կ'ըսէիր Թէ Աբիմելէք ո՞վ է՝ որ մենք անոր ծառայութիւն ընենք. քու վար զարկած ժողովուրդդ տեսիա չէ՞. հիմա ելիր ու անոր հետ պատերազմ բրէ։ 39—Ուստի Գաաղ Սիւքէմի բնակիչներուն առջեւէն ելլելով՝ Աբիմելէքի հետ պատերազմ բրաւ։ 40—Ու Աբիմելէք զանիկա հալածեց, ու անիկա անոր առջեւէն փախաւ, ու մինչեւ դրանը առջեւ շատերը մեռած ինկան։ 41—Ու Աբիմելէք Արուման մէջ նրստաւ, ու Զեբուղ Գաաղը և անոր եղբայրները վռնտեց, որպէս զի ա՛լ Սիւքէմի մէջ չթնակին։ 42—Ու հետեւեալ օրը ժողովուրդը դաշտը ելաւ. ու երբ Աբիմելէքը իմացաւ, 43—իր ժողովուրդը առաւ, երեք գունդի բաժնեց, և դաշտին մէջ դարանամաւ եղաւ. ու երբ տեսաւ որ ժողովուրդը քաղաքէն դուրս կ'ելլէ, անոնց վրայ յարձակելով զանոնք զարկաւ։ 44—Ու Աբիմելէք ու անոր հետ եղող գունդը յարձակելով քաղաքին դրանը առջև կայնեցան. ու երկու գունդերը բոլոր դաշտին մէջ եղողներուն վրայ յարձակելով զանոնք զարկին։ 45—Ու Աբիմելէք այն բոլոր օրը քաղաքին հետ պատերազմեցաւ ու քաղաքը առաւ, և մէջը եղող մարդիկը կոտրեց, ու քաղաքը փլցուց և հոն աղ ցանեց։

46—Ու Սիւքէմի աշտարակին բոլոր բնակիչները երբ այս բանը լսեցին, Բերիթի տաճարծոյն տունը բերդը մտան։ 47— Ու Աբիմելէքի իմացուցին Թէ Սիւքէմի աշտարակին բոլոր բնակիչները ժողովուած են։ 48—Այն ատեն Աբիմելէք իրեն հետ եղող բոլոր ժողովուրդով Սեղմոն լեռը ելաւ. ու Աբիմելէք տապարը ձեռքը առնելով ծառի ոստ մը կտրեց, ու զանիկա վերցուց իր ուսին վրայ դրաւ, և իրեն հետ եղող ժողովուրդին ըսաւ, Ահա տեսաք ինչ որ ես ըրի, չտեսաք դուք ալ ինծի պէս ըրէք։ 49—Ուստի ժողովուրդին ամէնն ալ մէկմէկ ոստ կտրեցին, ու Աբիմելէքի հետեւէն գացին, և ոստերը բերդին քով դրին, ու անոնցմով բերդը կրակով այրեցին. այսպէս Սիւքէմի աշտարակին բոլոր մարդիկն ալ, որոնք հազարի չափ այր ու կին մարդիկ էին, մեռան։

50—Ու Աբիմելէք Թեբես գնաց, ու ու Թեբեսը պաշարեց ու զանիկա առաւ։ 51—Ու քաղաքին մէջտեղը ամուր աշտարակ մը կար. ու քաղաքին բոլոր բնակիչները, Թէ՛ այր և Թէ՛ կին մարդիկ, հոն փախան, դուռը ներսէն գոցեցին ու աշտարակին տանիքը ելան։ 52—Ու Աբիմելէք մինչեւ աշտարակը գնաց ու անոր հետ պատերազմ բրաւ, և աշտարակին դրանը մօտեցաւ որպէս զի զանիկա կրակով այրէ։ 53— Ու կին մը Աբիմելէքի գլխուն վրայ երկանքարի կտոր մը նետեց, և անոր գլխաթը կտրեց։ 54—Ու անիկա չուտով իր զէնքերը կրող երիտասարդը կանչեց և անոր ըսաւ, Սուրդ քաշէ ու զիս մեռցուր, չըլլայ որ ինծի համար ըսեն Թէ Զանիկա կին մը մեռցուց։ Ու երիտասարդը զանիկա սրով խոցեց, ու մեռաւ։ 55— Ու Իսրայէլի մարդիկը Աբիմելէքի մեռնիլը տեսնելով՝ ամէն մարդ իր տեղը գնաց։

56—Այսպէս Աստուած Աբիմելէքի էջ. ը դարձուց այն չարութիւնը զոր անիկա իր հօրը ըրեր էր իր եօթանասուն եղբայրները սպաննելով։ 57—Ու Սիւքէմի մարդոցը բոլոր չարութիւնը Աստուած անոնց գլխուն դարձուց։ ու Յերոբաալի որդւոյն Յովաթամի անէծքը անոնց վրայ եկաւ։

Գլ. Ժ

Ե Աբիմելէքէ ետքը Իսաքարեան Դոդովայի որդւոյն Փուայի որդին Թովղա ելաւ Իսրայէլը ազատելու համար. ու անկիա Եփրեմի լեռը Սամիրի մէջ կը բնակէր։ 2—Ու Իսրայէլի մէջ քառասուներկու տարի դատաւորութիւն ըրաւ, ու մեռաւ և Սամիրի մէջ թաղուեցաւ։

3—Ու անկէ ետեւ Գաղաադացի Յայիր ելաւ, և Իսրայէլի մէջ քսանուերկու տարի դատաւորութիւն ըրաւ։ 4— Ու անկիա երեսուն որդի ունէր, որոնք երեսուն աւանակի վրայ կը հեծնէին. և անոնք Գաղաադա երկրին մէջ երեսուն քաղաք ունէին, որոնք մինչեւ այսօր Յայիրի գիւղաքաղաքները կ'րսուին։ 5— Ու Յայիր մեռաւ ու կամոնի մէջ թաղուեցաւ։

6—Ու Իսրայէլի որդիները նորէն Տէրոջը առջեւ չարութիւն ըրին, ու Բահաղիմը և Աստարովթը ու Ասորոց աստուածները և Սիդոնի աստուածները ու Մոաբի աստուածները և Ամմոնի որդիներուն աստուածները ու Փղշտացոց աստուածները պաշտեցին. և Տէրը թողուցին ու անոր ծառայութիւն չըրին։ 7—Ու Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք Փղշտացոց ձեռքը ու Ամմոնի որդիներուն ձեռքը մատնեց։ 8—Ու անոնք այն տարին մինչեւ տասնուերկու տարի Իսրայէլի որդիները նեղեցին ու հարստահարեցին, այսինքն բոլոր Իսրայէլի որդիները, որոնք Յորդանանա անդիի կողմը, Գաղաադա մէջ, Ամորհացոց երկրին մէջ էին։ 9—Նաև Ամմոնի որդիները Յորդանանէ անցան, որպէս զի Յուդայի հետ, Բենիամինի հետ ու Եփրեմի տանը հետ ալ պատերազմ ընեն. ու Իսրայէլ խիստ մեծ նեղութեան մէջ էր։

10—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին ու ըսին, Քեզի դէմ մեզ գործեցինք, քանզի մեր Աստուածը թողուցինք ու Բահաղիմը պաշտեցինք։ 11—Ու Տէրը Իսրայէլի որդիներուն ըսաւ, Չէ՞ որ Յէգիպտէն Եգիպտացիներէն, Ամորհացիներէն, Ամմոնի որդիներէն ու Փղշտացիներէն, 12—Նաև երբ Սիդոնացիները, Ամաղեկացիները ու Մաոնացիները ձեզ նեղեցին, ու դուք ինծի աղաղակեցիք, ես ձեզ անոնց ձեռքէն ազատեցի։ 13—Բայց դուք զիս թողուցիք և ուրիշ աստուածներու ծառայեցիք ըրիք. անոր համար ես ալ այլ մըն ալ ձեզ պիտի չազատեմ։ 14— Գացէք ձեր ընտրած աստուածներուն աղաղակեցէք. ձեր նեղութեան ատենը թող անոնք ձեզ ազատեն։ 15—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը ըսին, Մեզք գործեցինք. քու աչքիդ առջեւ ինչ որ հաճելի է, զայն ըրէ մեզի. բայց միայն կ'ազատենք, ազատ մեզ այսօր։ 16— Ուստի իրենց մէջէն օտար աստուածները վերցուցին, ու Տէրոջը ծառայեցին ըրին. և անոր սիրտը ելաւ Իսրայէլի նեղութեանը համար։

17—Ու Ամմոնի որդիները ժողովեցան, ու Գաղաադա մէջ բանակեցան. Իսրայէլի որդիներն ալ ժողովեցան, ու Մասփայի մէջ բանակեցան։ 18— Ու ժողովուրդը ու Գաղաադա իշխանները իրարու ըսին, Ով որ Ամմոնի որդիներուն հետ պատերազմի բնելու սկսի, անիկա Գաղաադա բոլոր բնակիչներուն գլուխ ըլլայ։

Գլ. ԺԱ

Ե Գաղաադացի Յեփթայէ զօրաւոր ու կարճ մարդ մըն էր, ու անիկա պոռնիկ կնոջ մը զաւակ էր։ ու Յեփթայէի հայրը Գաղաադ էր։ 2—Ու Գա-

խիտ բարկացաւ. 31— ու ծածուկ
կերպով մը Աբիմելէքի պատգամաւորները ղրկեց՝ ըսելով, Ահա Աբեդեան
Գաղ ու իր եղբայրները Սիւքեմ կուգան, և ահա անոնք քեզի դէմ քաղաքը ուզած կը հանեն, 32—Ուստի հիմա դուն գիշերով ելիր, ու դաշտը դաբանի մէջ նստէ քեզի հետ եղող ժողովուրդով. 33—ու առաւօտուն արեւը ծագածին պէս կանուխ ելիր, ու Եհովայ քաղաքին վրայ յարձակէ. և ահա անիկա ու անոր հետ եղող ժողովուրդը քեզի դէմ պիտի ելլեն. այն ատեն ձեռքէդ եկածը ընէս անոր։

34—Ուստի Աբիմելէք և անոր հետ եղող բոլոր ժողովուրդը գիշերով ելան, ու չորս գունդի ընդ-ընդ Սիւքեմի դէմ դարանի մէջ նստան. 35—ու Աբեդեան Գաղ ելաւ ու քաղաքին դրանը առջև կայնեցաւ. և Աբիմելէք իրեն հետ եղող ժողովուրդով դարանէն դուրս ելաւ. 36—ու Գաղ այն ժողովուրդը տեսնելով Զեբուղի ըսաւ, Ահա լեռներուն գլխէն ժողովուրդ կ'իջնէ։ Ու Զեբուղ անոր ըսաւ, Լեռներուն ստուերը քեզի մարդոց պէս կ'երեւնայ. 37—Նէ Գաղ դարձեալ խօսեցաւ ու ըսաւ, Ահա երկրին *բարձր տեղերէն ժողովուրդ կ'իջնէ, և գունդմըն ալ Մէօնենիմի կաղնիին ճամբով կու գայ. 38—Ուր է Զեբուղ անոր ըսաւ, Որ է այն քու բերանդ, որով կ'ըսէիր Թէ Աբիմելէք ո՞վ է՝ որ մենք անոր ծառայութիւն ընենք. քու մարդկանդ ժողովուրդդ ատիկա չէ՞. հիմա ելիր ու անոր հետ պատերազմ բրէ. 39—Ուստի Գաղ Սիւքեմի բնակիչներուն առջևէն ելլելով՝ Աբիմելէքի հետ պատերազմ բրաւ. 40—Ու Աբիմելէք զանոնք հալածեց, ու անոնք անոր առջևէն փախաւ, ու մինչև դրանը առջև շատերը մեռած ինկան. 41—Ու Աբիմելէք Արումայի մէջ նստաւ, ու Զեբուղ Գաղը և անոր եղբայրները վռնտեց, որպէս զի ա՛լ Սիւքեմի մէջ չբնակին. 42—Ու հետեւեալ օրը ժողովուրդը դաշտը ելաւ, ու երբ Աբիմելէք իմացաւ, 43—իր ժողովուրդը առաւ, երեք գունդի բաժնեց, և դաշտին մէջ դարանամուտ եղաւ. ու երբ տեսաւ որ ժողովուրդը քաղաքէն դուրս կ'ելլէ, անոնց վրայ յարձակելով զանոնք զարկաւ. 44—Ու Աբիմելէք ու անոր հետ եղող գունդը յարձակելով քաղաքին դրանը առջև կայնեցան. ու երկու գունդերը բոլոր դաշտին մէջ եղողներուն վրայ յարձակելով զանոնք զարկին. 45—Ու Աբիմելէք այն բոլոր օրը քաղաքին հետ պատերազմեցաւ ու քաղաքը առաւ, և մէջը եղող մարդիկը կոտրեց, ու քաղաքը փլցուց և հոն աղ ցանեց։

46—Ու Սիւքեմի աշտարակին բոլոր բնակիչները երբ ա֊ի֊ բ֊ը լսեցին, Բերիթի աստուծոյն տանը բերդը մտան. 47— Ու Աբիմելէքի իմացուցին Թէ Սիւքեմի աշտարակին բոլոր բնակիչները ժողովուած են. 48—Ան ատեն Աբիմելէք իրեն հետ եղող բոլոր ժողովուրդով Սալմոն լեռը ելաւ. ու Աբիմելէք տապարը ձեռքը առնելով ծառի ոստ մը կտրեց, ու զանիկա վերցուց իր ուսին վրայ դրաւ, և իրեն հետ եղող ժողովուրդին ըսաւ, Ահա տեսաք ինչ որ ես ըրի, շուտով դուք ալ ինծի պէս ըրէք. 49—Ուստի ժողովուրդին ամէնն ալ մէկմէկ ոստ կտրեցին, ու Աբիմելէքի հետեւեցան դացին, և ոստերը բերդին քով դրին, ու անոնցմով բերդը կրակով այրեցին. այսպէս Սիւքեմի աշտարակին բոլոր մարդիկն ալ, որոնք հազարի չափ այր ու կին մարդիկ էին, մեռան։

50—Ու Աբիմելէք Թեբես գնաց, ու Թեբէսը պաշարեց ու զանիկա առաւ. 51—Ու քաղաքին մէկ ամուր աշտարակ մը կար. ու քաղաքին բոլոր բնակիչները, թէ՛ այր և թէ՛ կին մարդիկ, հոն փախան, դուռը ներսէն գոցեցին ու աշտարակին տանիքը ելան. 52—Ու Աբիմելէք մինչեւ աշտարակը գնաց ու անոր հետ պատերազմ բրաւ, և աշտարակին դրանը մտնեցաւ որպէս զի զանիկա կրակով այրէ. 53— Ու կին մը Աբիմելէքի գլխուն վրայ երկանաքարի կոտր մը նետեց, և անոր գանգուրը կոտրեց. 54—Ու անկից շուտով իր զէնքերը կրող երիտասարդը կանչեց և անոր ըսաւ, Սուրդ քաշէ ու զիս մեռցուր, չըլլայ որ ինծի համար ըսեն Թէ Զանիկա կին մը մեռցուց։ Ու երիտասարդը զանիկա սրով խոցեց, ու մեռաւ. 55— Ու Իսրայէլի մարդիկը Աբիմելէքի մեռնիլը տեսնելով՝ ամէն մարդ իր տեղը գնաց։

56—Այսպէս Աստուած Աբիմելէքի ե֊ը֊ը գործուց այն չարութիւնը որ անիկա իր հօրը ըրեր էր իր եօթանասուն եղբայրները սպաննելով. 57— Ու Սիւքեմի մարդոցը բոլոր չարութիւնը Աստուած անոնց գլխուը դարձուց։ ու Երոբաալի որդւոյն Յովաթամի անէծքը անոնց վրայ եկաւ։

Գլ. Ժ

Ե Աբիմելէքէ ետքը Իսաքարեան Դովդայի որդւոյն Փուայի որդին Թովղա ելաւ Իսրայէլը ազատելու համար. ու անիկա Եփրեմի լեռը Սամիրի մէջ կը բնակէր։ 2—Ու Իսրայէլի մէջ քսան ու երեք տարի դատաւորութիւն ըրաւ, ու մեռաւ և Սամիրի մէջ թաղուեցաւ։

3—Ու անկէ ետեւ Գաղաադացի Յայիր ելաւ, և Իսրայէլի մէջ քսան ու երկու տարի դատաւորութիւն ըրաւ։ 4— Ու անկից երեսուն որդի ունէր, որոնք երեսուն աւանակի վրայ կը հեծնէին. և անոնք Գաղաադ երկրին մէջ երեսուն քաղաք ունէին, որոնք մինչեւ այսօր Յայիրի գիւղաքաղաքները կ'ըսուին։ 5— Ու Յայիր մեռաւ ու Կամոնի մէջ թաղուեցաւ։

6—Ու Իսրայէլի որդիները նորէն Տէրոջը առջև չարութիւն ըրին, ու Բահաղիմը և Աստարովթը ու Ասորոց աստուածները և Սիդոնի աստուածները ու Մոաբի աստուածները և Ամմոնի որդիներուն աստուածները ու Փղշտացւոց աստուածները պաշտեցին. և Տէրը թողուցին ու անոր ծառայութիւն չըրին։ 7—Ու Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք Փղշտացւոց ձեռքը ու Ամմոնի որդիներուն ձեռքը մատնեց։ 8—Ու անոնք այն տարին մինչեւ տասնուրեք տարի Իսրայէլի որդիները նեղեցին ու տառապատուեցուցին, այսինքն բոլոր Իսրայէլի որդիները, որոնք Յորդանանէ անդին կողմը, Գաղաադացի մէջ, Ամորհացւոց երկրին մէջ էր։ 9—Նաև Ամմոնի որդիները Յորդանանէ անցան, որպէս զի Յուդայի հետ, Բենիամինի հետ ու Եփրեմի տանը հետ ալ պատերազմ ընեն. ու Իսրայէլ խիստ մեծ նեղութեան մէջ էր։

10—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը աղաղակեցին ու ըսին, Քեզի դէմ մեղք գործեցինք, քանզի մեր Աստուածը թողուցինք ու Բահաղիմը պաշտեցինք. 11—Ու Տէրը Իսրայէլի որդիներուն ըսաւ, Չէ՞ որ յԵգիպտացիներէն, Ամորհացիներէն, Ամմոնի որդիներէն ու Փղշտացիներէն, 12—Նաև երբ Սիդոնացիները, Ամաղեկացիները ու Մաոնացիները ձեզ նեղեցին, ու դուք ինծի աղաղակեցիք, ես ձեզ անոնց ձեռքէն ազատեցի. 13—Բայց դուք զիս թողուցիք և ուրիշ աստուածներու ծառայեցիք։ Ուստի ես ձեզ ա՛լ մը ալ ձեզ պիտի չազատեմ։ 14— Գացէք ձեր ընտրած աստուածներուն աղաղակեցէք. ձեր նեղութեան ատենը թող անոնք ձեզ ազատեն։ 15—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը ըսին, Մեղք գործեցինք. քու աչքիդ առջեւ ինչ որ հաճելի է, ըսկ ըրէ մեզի. բայց միայն կ'ազատենք, ազատէ մեզ այսօր։ 16— Ուստի իրենց մէջէն օտար աստուածները վերցուցին, ու Տէրոջը ծառայեցին։ Ու Անոր սիրտը իյնաւ Իսրայէլի նեղութեանը համար։

17—Ու Ամմոնի որդիները ժողովեցան, ու Գաղաադ մէջ բանակեցան. Իսրայէլի որդիներն ալ ժողովեցան, ու Մասփայի մէջ բանակեցան։ 18— Ու ժողովուրդը ու Գաղաադ իշխանները իրարու ըսին, Ով որ Ամմոնի որդիներուն հետ պատերազմ բնելու սկսի, անիկա Գաղաադ բոլոր բնակիչներուն գլուխ ըլլայ։

Գլ. ԺԱ

Ե Գաղաադացի Յեփթայէ զօրաւոր ու կարճէ մարդ մըն էր, ու անիկա պառնիկ կնոջ մը զաւակ էր. ու Յեփթայէի հայրը Գաղաադ էր։ 2—Ու Գա-

զաւրի կին՝ը անոր զաւակները ծնաւ. ու երբ կնոջը զաւակները մեծցան, Յեփթայէն վանեցին, ու անոր ըսին, Դուն մեր հօրը տանը մէջ ժառանգութիւն պիտի չունենաս, քանզի դուն օտար կնոջ մը զաւակ ես։ 3—Ու Յեփթայ իր եղբայրներուն երեսէն փախչելով՝ Տոբի երկրին մէջ բնակեցաւ. և Յեփթայէի քով սրիկայ մարդիկ ժողովեցան ու անոր հետ կը պտըտէին։

4—Ու եղաւ որ առնէն մը ետքը Ամմոնի որդիները իսրայէլի հետ պատերազմ ըրին։ 5—Ու երբ Ամմոնի որդիները իսրայէլի հետ պատերազմ կ'ընէին, Գաղաադու ծերերը գացին որ Յեփթայէն Տոբի երկրէն առնեն։ 6—Ու Յեփթայէի ըսին, Եկուր, մեզի զօրագլուխ եղիր, որպէսզի Ամմոնի որդիներուն հետ պատերազմ ընենք։ 7—Ու Յեփթայ Գաղաադու ծերերուն ըսաւ, Ա՛ռա դուք զիս ատեցիք և իմ հօրս տունէն զիս վռնտեցիք, ու հիմա որ նեղութեան մէջ եք, ինչո՞ւ համար ինծի եկաք։ 8—Ու Գաղաադու ծերերը Յեփթայէի ըսին, Անոր համար հիմա քեզի դիմեցինք, որ մեզի հետ երթաս ու Ամմոնի որդիներուն դէմ պատերազմ ընես, և մեզի, Գաղաադու բոլոր բնակիչներուն, գլուխ ըլլաս։ 9—Ու Յեփթայ Գաղաադու ծերերուն ըսաւ, Եթէ դուք զիս դարձնէք Ամմոնի որդիներուն դէմ պատերազմ ընելու համար, ու Տէրը զանոնք իմ ձեռքս մատնէ, ես ձեզի գլուխ ըլլա՞մ։ 10—Ու Գաղաադու ծերերը Յեփթայէի ըսին, Տէրը մեր միջ վկայ ըլլայ *որ ըսածիդ պէս պիտի ընենք՝։ 11—Ու Յեփթայ Գաղաադու ծերերուն հետ գնաց, և ժողովուրդը զանիկա իրենց վրայ գլուխ ու զօրապետ դրին. ու Յեփթայ Մառիսայի մէջ Տէրոջը առջև իր բոլոր խօսքերը պրտցից։

12—Ու Յեփթայ Ամմոնի որդիներուն թագաւորին պատգամաւորներ ղրկեց՝ ըսելով, Դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս, որ ինծի եկար իմ երկրիս մէջ պատերազմ ընելու համար։ 13—Ու Ամմոնի որդիներուն թագաւորը Յեփթայէի պատգամաւորներուն ըսաւ, Որովհետև Իսրայէլ Եգիպտոսէ ելած ատենը Արնոնի մինչև Յաբոկ ու մինչև Յորդանան իմ երկիրս առաւ. հիմա զանիկա խաղաղութեամբ ետ դարձուր։ 14—Ու Յեփթայէ Ամմոնի որդիներուն թագաւորին նորէն պատգամաւորներ ղրկեց, 15—ու անոր ըսաւ, Յեփթայէ այսպէս կ'ըսէ. Իսրայէլ Մովաբի երկիրը ու Ամմոնի որդիներուն երկիրը չառաւ. 16—Քանզի Եգիպտոսէ ելած ատենը Իսրայէլ մինչև կարմիր ծովը անապատէն գնաց, ու Կադէս եկաւ։ 17—Ու Իսրայէլ Եդոմի թագաւորին դեսպաններ ղրկեց՝ ըսելով, Շնորհք ըրէ, քու երկրիդ անցնիմ. բայց Եդոմի թագաւորը մտիկ չըրաւ. այնպես ալ Մովաբի թագաւորին ղրկեց, ան ալ կամ չուզաւ. ու Իսրայէլ Կադէսի մէջ մնաց։ 18—Ու անապատին մէջէն գնաց, ու Եդոմի երկրին ու Մովաբի երկրին բոլորտիքը պտըտեցաւ. և Մովաբի երկրին արեւելեան կողմէն երթալով Առնոնի անդէի կողմը բանակեցաւ, բայց Մովաբի սահմանին մէջ չմտաւ. քանզի Մովաբի սահմանը Առնոն էր։ 19—Ու Իսրայէլ դեսպաններ ղրկեց Ամորհացոց Սեհոն թագաւորին, (որ Եսբոնի թագաւորն էր,) և Իսրայէլ անոր ըսաւ, Շնորհք ըրէ, քու երկրիդ անցնիմ, որպէս զի իմ տեղս երթամ։ 20—Բայց Սեհոն Իսրայէլի *հրաման չտուաւ՝ որ իր սահմանէն անցնի ու Սեհոն իր բոլոր ժողովուրդը ժողվեց, և Յասայի մէջ բանակեցան, ու անիկա Իսրայէլի դէմ պատերազմ ըրաւ։ 21—Ու Իսրայէլի Տէր Աստուածը Սեհոնը ու անոր բոլոր ժողովուրդը Իսրայէլի ձեռքը մատնեց, ու զանոնք զարկին. և Իսրայէլ այն երկրին մէջ բնակող Ամորհացոց բոլոր երկիրը առաւ։ 22—Ու Յաբոկէ Ամորհացոց բոլոր սահմանը, Առնոնէ մինչև Յաբոկ, ու անապատէն մինչև Յորդանան ժառանգեց։ 23—Ուստի հիմա որ Իսրայէլի Տէր Աստուածը Ամորհացիները իր Իսրայէլ ժողովուրդին առջեւէն վռնտեր է, դո՞ւն պիտի ժառանգես այն երկիրը։ 24—

*ԵԲՐ. ԵԹԷ ԱՅՆպէս քու ըսածիդ պէս չընենք

*ԵԲՐ. ԼՎատահեցաւ

Քու աստուածդ Քամոսի քեզի ժառանգութիւն տուածը դուն չի՞ ժառանգեր. մենք ալ մեր Տէրոջմէ Աստուածդ մեր առջեւէն վռնտած *երթերուն երկիրը կը ժառանգենք։ 25—Ու հիմա դուն Մովաբի Բագաղարձն, Սեպփորեան Բաղակ, աւելի *զօրաւոր ես. միթէ անիկա բնաւ Իսրայէլի հետ ծեծկեցաւ, կամ անոնց հետ պատերազմ ըրա՞ւ, 26—Իսրայէլ Եսբոնի ու անոր գեղերուն մէջ, Արոէրի ու անոր գեղերուն մէջ, և Առնոնի եզերքին վրայ եղող բոլոր քաղաքներուն մէջ երեք հարիւր տարի է որ կը բնակի. և ինչո՞ւ համար վերստին այնքան ատենի մէջ չազատեցիք։ 27—Ուստի ես քեզի դէմ յանցանք մը չեմ ըրած, և դուն ինծի հետ պատերազմ ընելով ինծի չարութիւն կ'ընես. այսօր Իսրայէլի զօրավարն ու Ամմոնի որդիներուն մէջ Դատաւոր եղող Տէրը Քոգ դատաստան ընէ։ 28—Բայց Ամմոնի որդիներուն թագաւորը Յեփթայէի ղրկած խօսքերը մտիկ չըրաւ։

29—Այն ատեն Յեփթայէի վրայ Տէրոջը Հոգին եկաւ. ու անիկա Գաղաադէ ու Մանասէ անցաւ, Գաղաադու Մատիսայէն ալ անցաւ, ու Գաղաադու Մատիսայէն Ամմոնի որդիներուն վրայ գնաց։ 30—Ու Յեփթայէ Տէրոջը ուխտ ըրաւ ու բսաւ, Եթէ Ամմոնի որդիները բոլորովին իմ ձեռքս մատնես, 31—Ու Ամմոնի որդիներէն խաղաղութեամբ ետ դառնամ, այն ատեն իմ տունս դռներէն զիս դիմաւորելու ելլողը Տէրոջը Քոգ ըլլայ, ու զանիկա ողջակէզ մատուցանեմ։ 32—Ու Յեփթայէ Ամմոնի որդիներուն վրայ գնաց, որպէս զի անոնց հետ պատերազմ ընէ, ու Տէրը անոր ձեռքը մատնեց զանոնք։ 33—Ու Արոէրէ մինչեւ Մինննիթ, քսան քաղաք, ու մինչև Աբելքերամիմի սաստիկ կատորածով չարաչար զարկին. ու Ամմոնի որդիները Իսրայէլի որդիներուն առջև նուաճեցան։

34—Ու Յեփթայէ Մառիսա իր տունը եկաւ. ու ահա անոր աղջիկը թմբուկներով և պարերով անոր դիմաւորելու կ'ելլէր. և անիկա անոր միակ զաւակն էր, ու անկէ զատ ուրիշ կամ աղջիկ չունէր։ 35—Ու Յեփթայ երբ զանիկա տեսաւ, իր հագերը պատռեց, ու ըսաւ, Ո՛ւ, աղջիկս, դուն զիս բոլորովին նկուն ըրիր, և դուն ինծի իմ նեղիչներս մէկը եղար. քանզի ես բերանս բացի Տէրոջը, ու չեմ կրնար ետ դառնալ։ 36—Ու աղջիկը անոր բսաւ, Ով հայր իմ, Է՛ն Տէրոջը բերանդ բացիր, բերնէդ ելածը ըրէ ինծի. քանզի Տէրը քու թշնամիներէդ, Ամմոնի որդիներէն, քեզի համար վրէժխնդրութիւն ըրաւ։ 37—Ու իր հօրը բսաւ, Միայն այս բանն ըրէ ինծի. Զիս երկու ամիս թող տուր որպէս զի լեռներուն վրայ երթամ ու իջնեմ, ու ես իմ ընկերներուով իմ կուսութիւնը լացամ։ 38—Ու անիկա բսաւ, Գնա. ու զանիկա երկու ամիս թող տուաւ. և անիկա իր ընկերներով գնաց, ու լեռներուն վրայ իր կուսութիւնը լացաւ։ 39—Ու երկու ամսուն լրանալէն ետքը իր հօրը դարձաւ, ու անիկա իր ըրած ուխտը անով կատարեց. և անիկա այր մարդ չճանչցաւ։ 40—Ու Իսրայէլի մէջ սովորութիւն եղաւ, որ աղջիկները երթան, ու Գաղաադացի Յեփթայէի աղջիկը համար տարին չորս օր լան։

ԳԼ. ԺԲ

1 Ու Եփրեմի մարդիկը ժողվուեցան, և գէպ ի հիւսիսային կողմը անցան, ու Յեփթայէի բսին, Ինչո՞ւ համար Ամմոնի որդիներուն հետ պատերազմելու գացած ատենդ մեզ չկանչեցիր, որպէս զի քեզի հետ երթայինք. հիմ հիմ ու քու տունդ քու վրադ կրակով պիտի այրենք։ 2—Ու Յեփթայէ անոնց բսաւ, Ես ու իմ ժողովուրդս Ամմոնի որդիներուն հետ մեծ կռիւներ ունեցանք, և ձեզ կանչեցի, բայց դուք զիս անոնց ձեռքէն չազատեցիք։ 3—Ես ալ երբ տեսայ որ դուք զիս չէք ազատեր, հոգիս ձեռքիս մէջ դնելով Ամմոնի որդիներուն վրայ գացի, ու Տէրը զանոնք իմ ձեռքս մատնեց. և ինչո՞ւ համար դուք այսօր ինծի դէմ պատերազմ

*ԵԲՐ. ազի՞կ

ընձէրլու եկաք։ 4—Ու Ցեփթայէ Գաղաադայ բոլոր մարդիկը ժողվելով Սփրեմի հետ պաահրաման բրաւ, և Գաղաադայ մարդիկը Եփրեմեանները զարկին. քանզի ըսեր էին թէ Դուք, Գաղաադացիք, Սփրեմի մէջ ես Մանասէի մէջ Սփրեմի փախստականներն էք։ 5—Ու Գաղաադացիք Սփրեմի *Ց-ին Յորդանանու անցքերը բռնեցին, ու երբ Սփրեմի փախստական մը ըսէ՝ թող ու էք անցնիմ՝ ըսէր, Գաղաադա մարդիկը անոր կ'ըսէին, Սփրեմեա՞ն ես. ու անիկա Ոչ՝ կ'ըսէր։ 6—Ու անոնք անոր կ'ըսէին, Ուրեմն *Շիպպոլէթ ըսէ. ու անիկա Սիպպոլէթ կ'ըսէր, (քանզի չէր կրնար չիտակ արտաբերել.) ուստի զանիկա կը բռնէին, և Յորդանանու անցքերուն մէջ կը սպաննէին. ու այն ատեն Եփրեմի քառասունհազարկու հազար մարդ ինկաւ։

7—Ու Ցեփթայէ Իսրայէլի մէջ վեց տարի դատաստան բրաւ. ու Գաղաադացի Ցեփթայէ մեռաւ, և Գաղաադա քաղաքներէն Ղէ՛՛ մէջ թաղուեցաւ։

8—Ու անկէ ետև Իսրայէլի մէջ Բեթղեհեմացի Աբեսան դատաստան բրաւ։ 9—Ու անիկա երեսուն ազգ ունէր, ու երեսուն աղիկ, զորոնք դուրս առաւ, ու դուրսէն ալ իր ազգը երեսուն աղիկ ներս առաւ. ու ինք Իսրայէլի մէջ եօթը տարի դատաստան բրաւ։ 10—Ու Աբեսան մեռաւ, ու Բեթղեհեմի մէջ թաղուեցաւ։

11—Ու անկէ ետև Զաբուղոնացի Ելօն Իսրայէլի դատաստան եղաւ, ու Իսրայէլի մէջ տասը տարի դատաստան բրաւ։ 12—Ու Զաբուղոնի Ելօն մեռաւ, ու Զաբուղոնի երկիրը՝ Այեղոնի մէջ թաղուեցաւ։

13— Ու անկէ ետև Փարաթոնացի Հէլլելի որդին Աբդօն Իսրայէլի դատաստան եղաւ։ 14—Ու անիկա քառասուն ազգ ու երեսուն թոռ ունէր, որոնք եօթանասուն ուռանակներու վրայ կը հեծնէին. և ինք Իսրայէլի մէջ ութ տարի դատաստան բրաւ։ 15—Ու Փարաթոնացի Հէլլելի որդին Աբդօն մեռաւ, և Ամաղեկացւոց լեռանը վրայ, Եփրեմի երկիրը, Փարաթոնի մէջ թաղուեցաւ։

Գլ. ԺԳ

Ու Իսրայէլի որդիները նորէն Տէրոջ առջև չարութիւն ըրին. ու Տէրը զանոնք քառասուն տարի Փղշտացւոց ձեռքը մատնեց։

2—Ու Դանի ցեղէն Մանուէ անուն Սարեացի մարդ մը կար, ու անոր կինը ամուլ էր և զաւակ չէր ծնանէր։ 3— Ու Տէրոջը հրեշտակը այս կնոջ երեւցաւ և անոր բսաւ, Ահա դուն հիմա ամուլ ես ու չես ծնանիր, բայց պիտի յղանաս ու որդի մը ծնանիս։ 4—Ուստի հիմա զգոյշ կեցիր, չըլլայ որ գինի կամ օղի խմես, ոչ ալ անմաքուր բան մը ուտես. 5—Քանզի ահա դուն պիտի յղանաս և որդի մը ծնանիս, ու անոր գլխուն վրայ մաճկալ պիտի չըլլայ. քանզի այն տղան էր ՂէՐԸ արգանդէն Աստուծոյ ուխտաւորը պիտի ըլլայ, և անիկա Իսրայէլը Փղշտացւոց ձեռքէն ազատելու պիտի սկսի։ 6—Ու կինը գնաց և իր երկանը պատմեց՝ ըսելով, Աստուծոյ մարդ մը ինծի եկաւ, ու անոր դէմքը Աստուծոյ հրեշտակի դէմքին պէս խիստ ահարկու էր. և անոր ուրկէ ըլլալը չհարցուցի, ոչ ալ անիկա իր անունը ինծի պատմեց. 7—Ու ինծի ըսաւ, Ահա դուն պիտի յղանաս ու որդի մը ծնանիս, և հիմա գինի ու օղի չխմես, ու անմաքուր բան մը չուտես. քանզի այն տղան էր ՂէՐԸ արգանդէն մինչև իր մահուան օրը Աստուծոյ ուխտաւորը պիտի ըլլայ։

8—Ու Մանուէ Տէրոջը պաղատելով՝ ըսաւ, Ո՛պաղատիմ, ով Տէր, այն Աստուծոյ մարդը, զոր դուն ղրկեցիր, նորէն մեզի գայ, ու մեզի սորվեցնէ թէ այն ծնանելու ազգն ի՛նչ ընենք։ 9—Ու Աստուած Մանուէի ձայնը լսեց, ու Աստուծոյ հրեշտակը նորէն կնոջը եկաւ. երբ անիկա արտին մէջ նստեր էր. ու անոր այրը Մանուէ անոր հետ չէր։ 10—Ու կինը չուտով վազեց, ու իր երկանը պատմեց և անոր բսաւ, Ահա այն օրը ինծի եկող մարդը նորէն

ինծի երեւցաւ։ 11—Ու Մանուէ ելաւ իր կնոջ հետևէն գնաց, և այն մարդուն քով մտնելա ու անոր բսաւ, Կնոջ հետ խօսող մարդը դո՞ւն ես. ու անիկա բսաւ, Ես եմ։ 12—Ու Մանուէ բսաւ, Երբ քու ըսածդ ըլլայ, տղուն պէտք եղածը ի՞նչ է, ու *ինչ ընելու է՞։ 13—Ու Տէրոջը հրեշտակը Մանուէի բսաւ, Կինը ամէն ըսածէս թող զգուշանայ։ 14—Որթէն եկած բան մը բնաւ չուտէ և գինի ու օղի չխմէ, և անմաքուր բան մը բնաւ չուտէ, ու իմ ամէն պատուիրածս պահէ։

15—Ու Մանուէ Տէրոջը հրեշտակին բսաւ, Կ'աղաչեմ, քիչ մը մեր քովնատէ, ու այծերքէն ուլ մը պատրաստենք ու քու առջևդ դնենք։ 16—Ու Տէրոջը հրեշտակը Մանուէի բսաւ, Թէ քու քովդ նատիմ ալ քու հացդ պիտի չուտեմ. բայց եթէ ողջակէզ պիտի ընես, զանիկա Տէրոջը ընծայէ. քանզի Մանուէ չգիտցաւ թէ անիկա Տէրոջը հրեշտակն է։ 17—Ու Մանուէ Տէրոջը հրեշտակին բսաւ, Անունդ ի՞նչ է, որպէս զի երբ խօսքդ կատարուի, քեզ պատուենք։ 18—Ու Տէրոջը հրեշտակը անոր բսաւ, Իմ անունս ինչո՞ւ այսպէս կը հարցնես, որովհետև անիկա սքանչելի է։ 19—Ու Մանուէ ուլը ու հացի ընծան առաւ, և ապառաժին վրայ Տէրոջը ընծայեց. ու հրեշտա՛ն Մանուէի և անոր կնոջը աչքերուն առջև հրաշք մը ըրաւ։ 20—Քանզի երբ բոցը սեղանէն դէպ ի երկինք վեր կ'ելլէր, Տէրոջը հրեշտակն ալ սեղանին բոցովը վեր ելաւ. և Մանուէ ու իր կինը կը նայէին, ու երեսի վրայ գետինը ինկան։ 21—Ու Տէրոջը հրեշտակը մէյմըն ալ Մանուէի ու անոր կնոջ չերեւցաւ. այն ատեն Մանուէ հասկցաւ որ անիկա Տէրոջը հրեշտակն է։ 22—Ու Մանուէ իր կնոջ ըսաւ, Անշուշտ պիտի մեռնինք, քանզի զԱստուած տեսանք։ 23—Ու կինը անոր բսաւ, Եթէ Տէրը մեզ մեռցնել ուզէր, մեր ձեռքէն ողջակէզը ու հացի ընծան չէր ընդունիր, ու բոլոր այս բաները մեզի չէր ցուցներ, և այս միջոցին մեզ այսպիսի խօսքեր մեզի լսել չէր տար։

24—Ու կինը որդի մը ծնաւ, և անոր անունը Սամփսան կոչեց. ու տղան մեծցաւ, և Տէրը զանիկա օրհնեց։ 25—Ու Տէրոջը Հոգին Սարեայի ու Եսթաւեղի մէջ *Դանի բանակին մէջ՝ սկսաւ անոր վրայ գալ։

Գլ. ԺԴ

Ու Սամփսան Թամնաթա իջաւ, ու Թամնաթայի մէջ փղշտացւոց աղիկներուն կին մը տեսաւ։ 2—Ու նորէն երթալ, ու իր հօրը և մօրը պատմեց ու բսաւ, Թամնաթայի մէջ փղշտացւոց աղիկներուն կին մը տեսայ. ու հիմա զանիկա բնծի կին առէք։ 3—Ու անոր հայրը ու մայրը անոր բսին, Մի՞թէ քու եղբայրներուդ աղիկներուն մէջ, ու իմ բոլոր ժողովուրդիս մէջ կին չկա՞յ որ դուն անթլփատ փղշտացիներէն կին առնելու պիտի երթաս. բայց Սամփսան իր հօրը բսաւ, Զանիկա բնծի առ, քանզի իմ աչքերուս անիկա հաճելի է։ 4—Ու անոր հայրը ու մայրը չէին գիտեր որ այս բանը Տէրոջմէն է, քանզի անիկա Փղշտացիներէն առիթ մը կը փնտռէր. ու այն ատեն Փղշտացիները Իսրայէլի վրայ կ'իշխէին։

5—Ու Սամփսան իր հօր ու մօրը հետ Թամնաթա իջաւ, ու մինչև Թամնաթայի այգիները եկան, և ահա առիւծի կորիւն մը մռնչելով անոր գէմ եկաւ. 6—Ու Տէրոջը Հոգին անոր վրայ գալով՝ ուլ մը ճեղքելա պէս զանիկա ճեղքեց, ու ձեռքին մէջ բան մը չկար. և երած բանը իր հօրը ու մօրը չպատմեց։ 7—Ու իջաւ ու կնոջ հետ խօսեցաւ. և կինը Սամփսանի աչքերուն հաճելի երեւցաւ։

8—Ու ժամանակ մը ետքը երբ դարձաւ կինը առնելու, առիւծին դին տեսնելու համար էր ճամբայէն խոտրեցաւ. և ահա առիւծին դիին մէջ մեղուներու գունդ մը մեղր կար։ 9—Ու զանիկա ձեռքը առաւ և ուտելով կ'երթար, ու իր հօրը ու մօրը գնաց, և անոնց ալ տուաւ, ու կերան. բայց անոնց չըսաւ թէ մեղրը առիւծին դիէն հանեց։

10—Ե. անոր հայրը այն կնոջ քով իջաւ, ու Սամփսոն հոն խնճոյք մը ըրաւ, քանզի երիտասարդները այսպէս կ'ընէին։ 11—Ու երբ զանիկա տեսան, երեսուն ընկեր բերին, որպէս զի անոր հետ ըլլան։

12—Ե. Սամփսոն անոնց ըսաւ, Հիմա ձեզի հանելուկ մը պիտի ըսեմ. եթէ զանիկա այս խնճոյքին եօթը օրուանը մէջ ինծի բացատրէք ու գտնէք, ես ալ ձեզի երեսուն *շապիկ ու երեսուն ձեռք փոխելու հանդերձ մաք. և անոր ըսին, Դուն հանելուկդ մեզի ըսէ, որպէս զի լսենք։ 14—Ու անոնց ըսաւ, Կերակրէն կելաւ կերակուր ելաւ, ու հզօրէն անոյշ ելաւ։ Ե անոնք այս հանելուկը երեք օրուան մէջ չկրցան բացատրել։ 15—Ու եւթներորդ օրը Սամփսոնի կնոջ ըսին, Այրդ խաբէ որպէս զի հանելուկը մեզի բացատրէ, որ չըլլայ թէ քեզ ու քու հօրդ տունը կրակով այրենք. մեզ թալլելո՞ւ համար կանչեցիք այնպէս չէ՞։ 16—Ե. Սամփսոնի կինը անոր քով լալով՝ ըսաւ, Անշուշտ դուն ինծի ատեցիր ու ինծի չսիրեցիր. իմ ժողովրդիս որդիներուն հանելուկ մը ըսիր, ու ինծի չբացատրեցիր։ Ե. անիկա ըսաւ անոր, Ահա իմ հօրս ու մօրս չբացատրեցի, ու քեզի՞ պիտի բացատրեմ։ 17—Ե. իրենց խնճոյքին եօթը օրուանը մէջ անոր քով լացաւ. ու Սամփսոն եօթներորդ օրը անոր բացատրեց, քանզի իրեն նեղութիւն կու տար. անիկա ալ իր ժողովրդին որդիներուն բացատրեց հանելուկը։ 18—Ե. քաղաքին մարդիկը եօթներորդ օրը արեւին մանչելեն առաջ անոր ըսին, Մեղրէն անոյշ՝ ու առիւծէն զօրաւոր ի՞նչ կայ։ Ե. անիկա ըսաւ անոնց, Եթէ դուք իմ երինձովս չհերկէիք, իմ հանելուկս չէիք կրնար գտնել։ 19—Ու Տէրոջը Հոգին անոր վրայ եկաւ, և. անիկա Ասկաղոն իջաւ ու անոնցմէ երեսուն մարդ մեռցուց, և անոնց հանդերձները առաւ ու հանելուկը բացատրողներուն տուաւ, և սաստիկ բարկանալով իր հօրը տունը եկաւ։ 20—Ու Սամփսոնի կինը անոր բարեկամը եղող ընկերին տրուեցաւ։

Գլ. ԺԵ

Ե. եղաւ որ ժամանակ մը հունձքի օրերը՝ Սամփսոն այծերուն ուլ մը առաւ, ու իր կնոջ այցելութեան գնաց ու ըսաւ, Ներքին սենեակին մէջ կնոջս քով մտնեմ. բայց կնոջը հայրը զանիկա չթողուց որ մտնէ։ 2—Ե. անոր հայրը ըսաւ, Իրաւցընէ կարծեցի որ դուն զանիկա բոլորովին ատեցիր, ու զանիկա քու ընկերիդ տուի. ահա անոր պզտիկ քոյրը անկէ գեղեցիկ է, հիմա անոր տեղ անիկա քեզի ըլլայ։ 3—Ե. Սամփսոն *անոնց համար ըսաւ, Այս անգամ Փղշտացւոցմէ անպարտ պիտի ըլլամ, եթէ անոնց չարութիւն մը ընեմ։ 4—Ու Սամփսոն գնաց երեք հարիւր ոտիւս բռնեց, և ջահեր առաւ, ու ոտիւսները պոչ պոչի զարձուց, ու երկու պոչերուն մէջտեղ չոչ մը դրաւ։ 5—Ե. ջահերը կրակով բռնկեցնելէն ետքը՝ զանոնք Փղշտացւոց հունձքերուն մէջ ձրգեց, ու դիզուած և չկարուած հունձքերը ու մինչև անգամ այգիները սոսկեցուց։ 6—Ե. Փղշտացիք ըսին, Այս բանը ո՞վ ըրաւ։ Ու ըսին, Թամնացիին փեսան Սամփսոն. քանզի անոր կինը առաւ և անոր ընկերին տուաւ։ Ու Փղշտացիք եկան և կինը ու անոր հայրը կրակով այրեցին։ 7—Իսկ Սամփսոն անոնց ըսաւ, Թէև դուք այսպէս ըրիք, բայց ես վրէժ պիտի առնեմ ձեզմէ, ու ետքը պիտի դադրիմ։ 8—Ե. զանոնք սրունքէն մինչև երանքը մեծ հարուածով մը զարկաւ. ու իջաւ Սոսմ ապառաժին խոռոչը բնակեցաւ։

9—Ե. Փղշտացիք եկան ու Յուդայի մէջ բանակեցան, ու Լեքիի մէջ տարածուեցան։ 10—Ե. Յուդայեանք ըսին, Ինչո՞ւ համար մեր վրայ եկաք։ Անոնք ալ ըսին, Սամփսոնը կապելու

*Կամ, անոնց

եկանք, որպէս զի մեզի ըրածին պէս մենք ալ անոր ընենք։ 11—Ու Յուդայէ երեք հազար մարդ Սոսմ ապառաժին խոռոչը իջան, և Սամփսոնի ըսին, Չի՞ս գիտեր որ Փղշտացիք մեր վրայ կ'իշխեն. ինչո՞ւ համար այս բանը մեզի ըրիր։ Ու անիկա անոնց ըսաւ, Անոնք ինծի ինչպէս ըրին, ես ալ անոնց այնպէս ըրի։ 12—Ե. անոր ըսին, Մենք իջանք որ քեզ կապենք ու Փղշտացւոց ձեռքը տանք։ Ե. Սամփսոն անոնց ըսաւ, Ինծի երդում ըրէք որ դուք զիս պիտի չմեռցնէք։ 13—Ե. անոնք անոր հետ խօսեցան ու ըսին, Ոչ, բայց հիմա քեզ պիտի կապենք ու անոնց ձեռքը տանք, և քեզ պիտի չմեռցնենք. և զանիկա երկու նոր չուանով կապեցին և ապառաժէն դուրս հանեցին։

14—Երբ անիկա Լեքի եկաւ, Փղշտացիք ազաղակելով զանիկա դիմաւորեցին. և Տէրոջը Հոգին անոր վրայ գալով անոր բազուկներուն վրայ եղող չուաններըը կրակով այրուած քթանի պէս եղան, ու կապերը ձեռքերէն փակուեցան։ 15—Ե. իշոյ ծնօտ մը գտաւ ան դեռ չորցած չէր, ու ձեռքը երկնցուց զանիկա առաւ և անով հազար մարդ մեռցուց։ 16—Ու Սամփսոն ըսաւ, Իշոյ ծնօտով գէզ գէզ յէէ՛ղ ըրի՛, իշոյ ծնօտով հազար մարդ մեռցուցի։ 17—Ու երբ իր խօսքը լմնցուց, ծնօտը ձեռքէն նետեց, և այն տեղին անունը, *Ռամաթ-լեքի կոչեց։

18—Ե. խիստ չատ ծարաւելով Տէրոջը աղաղակեց ու ըսաւ, Դուն քու ծառայիդ ձեռքով այս մեծ փրկութիւնը չտվողեցիր. և հիմա ծարաւի՞ մեռնեմ, ու անթլփատներուն ձե՞ռքը իյնամ։ 19—Ե. Ասոյած †Լեքիի մէջ եղած փոսը բացաւ, ու անկէ կուր ելաւ. և ա՛ֆեցաւ խմեց, ու ոգին իրեն դարձաւ, և ապրեցաւ. անոր համար անոր անունը էնհաքօրէ ըսուեցաւ, որ Լեքիի մէջ է մինչեւ այսօր։

*Այսինքն, ծնօտի բլուր
†Կամ, ծնօտին
‡Այսինքն, կանչողին ադբիւրը. Սաղ. ԼԴ. 6։

20—Ու անիկա Փղշտացւոց օրերը իսրայէլի մէջ քսան տարի դատաւորութիւն ըրաւ։

Գլ. ԺԶ

Ե. Սամփսոն Գազա գնաց, ու հոն պոռնիկ կին մը տեսաւ և անոր մտաւ։ 2—Ու Գազացւոց ըսուեցաւ թէ Սամփսոն հոս եկեր է։ Ե. պաշարեցին, ու բոլոր գիշերը անոր դարպասակալ եղան քաղաքին դրանը քով, ու բոլոր գիշերը լուռ կեցան և ըսին, Առաւօտուն կանուխ զանիկա կը մեռցնենք։ 3—Ու Սամփսոն մինչեւ կէսգիշեր քնացաւ, և կէսգիշերուն ելաւ, ու քաղաքին դրանը փեղկերը երկու սեմերովը բռնեց, և զանոնք նիգովը մկինդ փրցուց, ու կռնակը առնելով զանոնք Քեբրոնի դիմացի լեռանը գլուխը տանեց։

4—Ե. անկէ ետքը Սորեկ հեղեզաձոր Եւթէր բնակուէ կին մը սիրեց, ու անոր անունը Դալիլա էր։ 5—Ե. Փղշտացւոց նախարարները կինոջ քով ելան ու անոր ըսին, Զանիկա խաբէ, ու տեսնէ հսկայիր քէ անոր մեծ զօրութիւնը ինչո՞ւն է, և քէ ինչո՞վ կրնանք անոր յաղթել, որպէս զի զանիկա կապենք ու հնազանդեցնենք. և մենք քեզ ամէն մէկ հազար հարիւր ւոսր արծաթ կու տանք։ 6—Ե. Դալիլա Սամփսոնի ըսաւ, Կ'աղաչեմ, յայտնէ ինծի, քէ քու մեծ զօրութիւնդ ինչո՞ւն է, և քեզ հնազանդեցնելու համար ի՛նչ բանով կապել պէտք է։ 7—Ու Սամփսոն անոր ըսաւ, Եթէ դին եօթը հատ *թարմ կիպերով՝ կապեն, կը տկարանամ, և ուրիշ մարդոց մէկուն պէս կ'ըլլամ։ 8—Ու Փղշտացւոց նախարարները անոր եօթը հատ չչորցած թարմ կիպեր բերին. ու զանիկա անոնցմով կապեց։ 9—Ու անոր քով ներքին սենեակին մէջ դարանակալներ նստեր էին։ Ու կինը անոր ըսաւ, Ով Սամփսո՛ն, Փղշտացիք քու վրադ կո՛ գան. այն ատեն անիկա կիպերը կրակի հոտէն փըրթած խծուծի լաթի պէս փրցուց, ու անոր ոյժը չհասկցուեցաւ։ 10—Ե. Դա-

*Կամ, գլաքր ասեղներով

լիլա ըսաւ Սամիսոնի, Ահա դիս խաբեցիր ու ինծի սուտ դրուցեցիր. հիմա կ՚ազաչեմ, յայտնէ ինծի Թէ ինչո՛վ կը կապուիս։ 11—Ու անոր ըսաւ, Եթէ դիս նոր ու չգործածուած չուաններով ազիկ մը կապեն, այն ատեն կը ակաբանանամ, և ուրիշ մարդոց մէկուն պէս կ՚ըլլամ։ 12—Ու Դալիլա նոր չուաններ առաւ, և անոնցմով զանիկա կապեց, ու անոր ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ կ՚են էօ։ (և դարանակալները ներքին սենեակին մէջ նստեր էին։) այն ատեն զանոնք իր Թեւերէն մէկ դերձանի պէս փրցուց։ 13—Ու Դալիլա ըսաւ Սամիսոնի, Մինչեւ հիմա դիս խաբեցիր և ինծի սուտ դրուցեցիր. բայց ինծի Թէ ինչո՛վ կը կապուիս։ Ու անոր ըսաւ, Եթէ գլխուս եօթը բաժին մազերը ազդով հիւսես։ 14—Ու անոր այդպէս ըրաւ, ու էօթծաբէնին ցեղովը ամրցուց, ու անոր ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ կ՚են էօ։ Ու անիկա քունէն արթնցաւ, ու սասուային ցեղը ազդովը մէկտեղ քաշեց գոբա։ 15—Այն ատեն Դալիլա անոր ըսաւ, Դու սիրտդ ինծի հետ չէ, ու ինչպէս կ՚ըսես Թէ դեղ կը սիրեմ. հիմա այս երեք անգամ է որ դիս խաբեցիր, ու ինծի չպրուցեցիր Թէ քու մեծ զօրութիւնդ ինչի՛ն է։ 16—Ու որովհետեւ ամէն օր իր խօսքերովը անոր նեղութիւն կու տար, ու զանիկա կը բռնադատէր, այնպէս որ անոր սիրտը մինչեւ մահուան ածչէն նեղացաւ, 17—Ոտլը իր սրտին մէջ եղածը անոր դրուցեց, ու ըսաւ անոր, Իմ գլխուս վրայ ածէլը չէ եկած. քանզի իմ մօրս արգանդէն ես Աստուծոյ ուխտաւոր եմ. եթէ ածիլուիմ, իմ ոյժս ինծմէ կ՚երթայ ու կը սկաբանամ, և ամէն մարդոց պէս կ՚ըլլամ։ 18—Ու երբ Դալիլա տեսաւ որ անիկա բոլոր իր սրտին մէջ եղածը իրեն դրուցեց, Փղշտացոց նախաթարքները կանչել տուաւ ու ըսաւ, Այս անգամ ելէք. քանզի բոլոր իր սրտին մէջ եղածը ինծի դրուցեց։ Այն ատեն Փղշտացոց նախաթարքները անոր գալ եկան, ու արծաթն ալ իրենց *հետ բերին։ 19— Ու Դալիլա զանիկա իր ծունկերուն վրայ քնացուց, ու մարդ մը կանչեց, և անոր գլխուն եօթը բաժին մազերը ածիլել տուաւ, ու սկսաւ զանիկա նեղել. և անոր այժը իրմէ գնաց։ 20—Ու կինը ըսաւ, Ով Սամիսոն, Փղշտացիք քու վրադ կ՚են էօ. և անիկա քունէն արթնցուով՝ ըսաւ, Ելլեմ, ու առաջուան անգամներուն պէս Թօթուիմ. և անիկա չէր գիտեր որ Տէրը իրմէ գացեր է։ 21—Ու Փղշտացիք զանիկա բռնեցին և անոր այգերէն փոքրեցին, ու զանիկա Գազա իջեցուցին և առնակապերով կապեցին. ու բանտին մէջ աղօրիքի գոր կը դարձնէր։

22—Ու անոր գլխուն մազը, ածիլուելէն ետքը, բուսնել սկսաւ։ 23—Ու Փղշտացոց նախաթարքները ժողովեցան, որպէս զի իրենց աստուծոյն Դագոնի մեծ զոհ մատուցանեն և ուրախութիւն ընեն. ու ըսին, Մեր աստուածը մեր ձեռքը մատնեց մեր Թշնամին Սամիսոնը։ 24—Ու ժողովուրդը զանիկա տեսնելով՝ իրենց աստուածը գովեցին. քանզի ըսին, Մեր աստուածը մեր ձեռքը մատնեց մեր Թշնամին, մեր երկիրը աւրողը և մեր մեռելներէն շատացնողը։ 25— Ու երբ անոնց սիրտը ուրախ էր, ըսին, Սամիսոնը կանչեցէք որ մեր առջեւ խաղայ։ Ուստի Սամիսոնը բանտէն կանչեցին, ու անոնց առջեւ խաղաց. և զանիկա սիւներուն մէջտեղ կայնեցուցին։ 26—Ու Սամիսոն իր ձեռքին բռնող պատանիին ըսաւ, Թո՛ղ տուր դիս, որ այս տունը վերցնող սիւները բռնեմ, ու անոնց վրայ կրնաքրնիմ։ 27—Ու տունը այր և կին մարդիկներով լեցուն էր. ու Փղշտացոց բոլոր նախաթարքները հոն էին. և տանիքին վրայ երեք հազարի չափ մարդիկ ու կիներ կային, որոնք Սամիսոնի խաղալը կը դիտէին։ 28—Ու Սամիսոն Տէրոջը աղաղակելով ըսաւ, Ով Տէր Եհովա, կ՚ազաչեմ, դիս յիշէ. Ով Աստուած, միայն այս անգամ ալ դիս ուժովցուր, որպէս զի Փղշտացիներէն իմ երկու աչքերուս վրէժը մէկէն առնեմ։ 29—Ու Սամիսոն այն տունը վերցնող երկու մկրին սիւները, մէկը ալ ձեռքովը ու միւսը ձախ ձեռքովը բռնեցուց։ 30—Ու Սամիսոն ըսաւ, Իմ անձս Փղշտացիներուն հետ մեռնի. ու ջանքը ուժգին ծռեցուց, և տունը նախաթարքներուն ու ամէն հոդող բոլոր ժողովուրդին վրայ իյնալու։ և իր մեռած ատեն մեռցուցածները իր կենդանութեան ատենը մեռցուցածներէն աւելի էին։ 31—Ու անոր եղբայրները և բոլոր հօրը տունը իջան, ու զանիկա վերցուցին. և հանեցին իր հօրը Մանուէի գերեզմանը Քաղցին զանիկա Սարաայի ու Եշթաուղի միջտեղ, ու անիկա Իսրայէլի մէջ քսան տարի դատաւորութիւն ըրաւ։

Գլ. ԺԷ

Ու Եփրեմի լեռնէն Միքա անուն մարդ մը կար։ 2—Ու անիկա իր մօրը ըսաւ, Քեզմէ առնուած այն հազար հարիւր չորս արծաթը, որու համար անէծք ատիր ու իմ ականջս զրուցեցիր, ահա այն արծաթը իմ գովս է, զանիկա ես առի. ու մայրը անոր ըսաւ, Որդեակ իմ, Տէրը քեզ օրհնէ։ 3—Ու անիկա հազար հարիւր չորս արծաթը իր մօրը դարձուց. բայց անոր մայրը ըսաւ, Ես այն արծաթը իմ ձեռքէս բոլորովին Տէրոջը նուիրեցի իմ տղուս համար, անով քանդակած ու թափծու կուռք չինելու համար. ուստի հիմա զանիկա քեզի եա կու տամ։ 4—իսկ Մէյ մ այն արծաթը իր մօրը դարձուց. և մայրը երկու հարիւր չորս արծաթ առաւ, ու զանոնք ոսկերչին տուաւ, ան ալ անոնցմով քանդակած ու թափծու կուռք չինեց. և անոնք Միքայի տունը *դրուեցան։ 5—Ու այս մարդը Միքա՝ աստուածներու տուն մը ունեցաւ. ու եփուտ և թերափիմ չինեց, ու իր տղոցը մէկը օրհնեց որ իրեն քահանայ եղաւ։ 6—Այն օրերը Իսրայէլի մէջ թագաւոր չկար, ամէն մարդ իր աչքին հաճելի եղածը կ՚ընէր։

7—Ու Յուդայի ազգատոհմէն այ Յուդայի Բեթլեհէմէն պատանի մը կար. և անիկա Ղեւտացի էր, ու հոն կը բնակէր պանդուխտի պէս։ 8—Ու այս մարդը Յուդայի Բեթլեհէմէ քաղաքէն ելաւ, որպէս զի տեղ-տեղ գտած տեղը պանդխտութիւն բնէ, ու ճամբորդութիւն ընելով՝ մինչեւ Եփրեմի լեռը հասաւ մինչեւ Միքայի տունը եկաւ։ 9—Ու Միքա անոր ըսաւ, Ուրկէ՞ կու գաս։ Ու անիկա անոր ըսաւ, Ես Ղեւտացի եմ՝ Յուդայի Բեթլեհէմէն կ՚երթամ, և տեղ-տեղ գտած տեղս պանդխտանալու կ՚երթամ։ 10—Ու Միքա անոր ըսաւ, Իմ գովս բնակէ, և ինծի հայր ու քահանայ եղիր. և ես քեզի տարեկան տարի տասը հատ արծաթ, ձեռքդ մը հագուստ հանդերձ ու քու ուտելիքդ կու տամ։ Ուստի Ղեւտացին հոն գնաց։ 11—Ու Ղեւտացին այն մարդուն հետ բնակելու հաւանութիւն տուաւ. և այս պատանին անոր որդիներէն մէկուն պէս եղաւ անոր։ 12—Ու Միքա Ղեւտացին օրհնեց, և պատանին անոր քահանան եղաւ, ու Միքայի տունը կը բնակէր։ 13—Ու Միքա ըսաւ, Հիմա գիտեմ որ Տէրը ինծի բարիք պիտի ընէ, քանզի այս Ղեւտացին իմ քահանան եղաւ։

Գլ. ԺԸ

Այն օրերը Իսրայէլի մէջ թագաւոր չկար. ու այն օրերը Դանի ցեղը իրեն ժառանգութիւն մը կը փնտռէր բնակելու համար. քանզի մինչեւ այն օրը Իսրայէլի ցեղերուն մէջ անոր ժառանգութիւն ընկած չէր։ 2—Ու Դանի որդիները իրենց ազգատոհմներէն իրենց սահմաններէն, մարդասէր ու քաջ տասը մարդ զրկեցին, որպէս զի երկիրը լրտեսեն ու քննեն. և անոնք ըսին, Գացէք երկիրը քննեցէք. ու անոնք Եփրեմի լեռը մինչեւ Միքայի տունը եկան, և գիշերը հոն ճնացին։ 3—Ու երբ անոնք Միքայի տանը քով էին, Ղեւտացի պատանիին ձայնը ճանչցան, և հոն գարձան ու ըսին, Ո՞վ քեզ հոս բերաւ, և դուն հոս ի՞նչ կ՚ընես, ու *ինչո՞ւ համար հոս կեցեր ես։ 4—Ու անիկա ըսաւ անոնց, Միքա ինծի այսպես ու այսպես ըրաւ, ու դիս վարձքով բռնեց, որպէս զի անոր քահանայ

*Նէբ. ձեռքը

*Նէբ. եղաւն

*Նէբ. ի՞նչ ունիս հոս

ըլլար։ 5—Եւ անոր ըսին, Հիմա Աստուծոյ հարցուր, որպէս զի գիտանանք թէ արդեօք մեր գացած ճամբան մեզի պիտի յաջղի։ 6—Ու փահանան անոնց ըսաւ, խաղաղութեամբ գացէք. ձեր երթալու ճամբան Տէրոջը առջեւ է։

7— Ա֊ն տաեն այն հինգ մարդիկը գացին Լայիս մտան, և անոր մէջ բնակող Ժողովուրդը տեսան, որ Սիդոնացոց պէս անհոգութեամբ հանդիստ ու ապահով կը բնակէին, և այն երկրին մէջ ոչնա տուղ մը չկար՝ որ իշխէր անոնց վրայ. ու՝ Սիդոնացիներէն հեռու ըլլալով՝ բնաւ մարդու մը հետ գործ չունէին։ 8— Ու այն հինգ հարիւր Սարաս ու եսթաուղ դարձան իրենց եղբայրներուն. և անոնց եղբայրները անոնց ըսին, Դուք ինչ ըսիք։ 9—Ու անոնք ըսին, Ելէք, անոնց վրայ երթանք, քանզի մենք երկիրը տեսանք, և ահա շատ ազիկ է. ու դուք քա՞յլ կը կենաք. երթալու ու երկիրը ժառանգելու համար հոն մտնելու անհոգութիւն մի ընէք։ 10— երբ հոն մտնէք, անհոգ Ժողովուրդի մը ու շատ ընդարձակ երկրի մը մէջ պիտի մտնէք, որ Աստուած զանիկա ձեր ձեռքը տուեր է. ու այնպիսի տեղ մըն է՝ որ հոն երկրի վրայ եղող բաներէն մէ՛կը պակաս չէ։

11—Ու Դանի ազգատոհմէն, անկէ՝ այսինքն Սարասէ ու եսթաուղէ, վեց հարիւր սպառազինեալ մարդիկ գացին։ 12—Ու երթ ու ճուդայի Կարիաթարիմը բանակեցան. անոր համար այն տեղը մինչեւ այսօր †Մահանէ֊դան կ'ըսուի. ահա անիկա Կարիաթարիմի հետեւն է։ 13—Եւ անկէ եփրեմի լեռը անցան, ու մինչեւ Միքայի տունը եկան։ 14—Ու Լայիսի երկիրը լրտեսելու գացող այն հինգ մարդը պատասխան տալով՝ իրենց եղբայրներուն ըսին, Գիտէ՞ք որ այս տուներուն մէջ եփուտ, թերափիմ և քանդակուած ու թափծու կուռք կայ. ու հիմա ձեր ընելը բանը գիտցէք։ 15—Ա֊յն տաեն անոնք դէպ ի հոն դառնալով այն Ղեւտացի պատանիին տունը, Միքայի տունը, մտան, ու անոր ողջոյնը հարցուցին։ 16—Ու Դանի որդիներէն եղող այն վեց հարիւր սպառազինեալ մարդիկը դրանը բերանը կայնեցան։ 17—Ու երկիրը լրտեսելու գացող այն հինգ մարդիկը հոն մտան, և քանդակուած կուռքը, եփուտը, թերափիմը ու թափծու կուռքը առին. և փահանան այն վեց հարիւր սպառազինեալ մարդոց հետ դրանը բերանը կայնէր։ 18—Ու երբ անոնք Միքայի տունը մտան, եւ քանդակուած կուռքը, եփուտը, թերափիմը ու թափծու կուռքը առին, փահանան անոնց ըսաւ, Դուք ինչ կ'ընէք։ 19—Ու անոնք ըսին անոր, Լուռ կեցիր, ձեռքդ բերնիդ վրայ դիր ու մեզի հետ եկուր, և մեզի հայր ու փահանայ եղիր. քեզի մէկ մարդու տունը փահանայ ըլլալ աղեկ է, թէ Իսրայելի մէկ ցեղին ու մէկ ազգատոհմին փահանայ ըլլալը։ 20—Ու փահանան սրտին մէջէն ուրախանալով՝ եփուտը, թերափիմը և քանդակած կուռքը առաւ ու ժողովրդին մէջ մտաւ։ 21— Ու անոնք դարձան գացին, ու ընտանիքները և անասունները ու թանկագին կարասիները իրենց առջեւ դրին։

22—Երբ անոնք Միքայի տունէն հեռացան, Միքայի տանը մօտ եղող տուներուն մարդիկը ժողովեցան, ու Դանի որդիներուն էդիւեն հասան։ 23—Ու Դանի որդիներուն էդիւեն կանչուրտուեցին, որոնք երեսնին դարձուցին ու Միքայի ըսին, ինչ ինչ եղաւ որ այսպէս †բազմութիւնով կու գաս։ 24—Ու անիկա ըսաւ, Իմ չինած աստուածներս ու փահանան առիք գացիք, և ասկէ հետեւ ինծի ինչ կը մնայ. ու ինծի ինչպէ՞ս համար կ'ըսէք թէ ինչ եղաւ։ 25— Ու Դանի որդիները անոր ըսին, Մեր մէջ քու ձայնդ չլսուի. չըլլայ որ բարկասիրտ մարդիկ քու վրադ յարձակին, ու քու կեանքդ և քու ընտանիքիդ կեանքը կորնչեցնեն։ 26—Ու Դանի որդիները իրենց ճամբան գացին. և Միքա տեսնելով որ անոնք իրմէ զօրաւոր են, դարձաւ իր տունը գնաց։

27—Ու անոնք Միքայի չինածները և անոր փահանան առին, ու Լայիսի վրայ, հանգիստ և անվնաս կեցող ժողովուրդի մը վրայ, գացին, ու զանոնք սուրի բերնէ անցընելով՝ քաղաքը կրակով այրեցին։ 28—Ու անոնք Սիդոնէ հեռու ըլլալուն ու մարդու մը հետ գործ չունենալուն համար, ըլլալէ ազատող մը չկար. և այն †ռեհոբ իրեթրարի հովիտին մէջ էր. ու քաղաքը շինեցին եւ անոր մէջ բնակեցան։ 29— Ու քաղաքին անունը իրենց հօրը Իսրայելեան Դանի անունովը Դան կոչեցին, բայց քաղաքին անունը առաջ Լայիս էր։ 30— Ու Դանի որդիները քանդակուած կուռքը կանգնեցին իրենց. ու Մանասէի որդւոյն Գերսոնի որդին Յովնաթան, ինք ու իր որդիները, մինչեւ երկրին գերութեան օրը Դանի ցեղին քահանաներն էին։ 31— Ուստի անոնք Միքայի չինած կուռքը իրենց պահեցին, որչափ ժամանակ որ Աստուծոյ տունը Սելովի մէջ էր։

Գլ. ԺԹ

Եւ եղաւ որ (այն օրերը որ Իսրայէլի մէջ Թագաւոր չկար.) Եփրեմի լեռանը կողմերը բնակող պանդուխտ Ղեւտացի մը կար, ու անիկա Յուդայի Բեթլեհեմէն հարճ մը առաւ իրեն։ 2—Ու անոր հարճը անոր դէմ չնութիւն ընելով՝ անկէ իր հօրը տունը, Յուդայի Բեթլեհեմը, գնաց, ու չորս ամիսի չափ հոն կեցաւ։ 3—Ու այրը ելաւ անոր հետեւէն գնաց, որպէս զի քաղցրութեամբ խօսի անոր հետ, ու զանիկա հետ բերէ. և իրեն հետ ՈՒԲԷ էր իր ծառան ու երկու էշ. ու կինը զանիկա իր հօրը տունը տարաւ. և աղիկան հայրը երբ զանիկա տեսաւ, ուրախութեամբ զանիկա դիմաւորեց։ 4—Ու աղիկան հայրը, անոր աները, զանիկա ներս առաւ, և երեք օր անոր հետ նստաւ. կերան խմեցին ու գիշերները հոն մնացին։

5—Ու չորրորդ օրը երբ առաւօտեան կանուխ ելան, անիկա ուզ ելաւ որպէս զի երթայ. բայց աղիկան հայրը իր փեսային ըսաւ, կառը մը հաց կեր որպէս զի սիրտդ ուժգնայ, ու ետքը կ'երթաք։ 6—Ու նստան ու երկուքը միասին կերան ու խմեցին. ու աղիկան հայրը պատուիրեց ու ըսաւ, կ'ազաչեմ, այս գիշեր ալ հոս կեցիր, ու սիրտդ զուարճանայ։ 7—Ու այն մարդը ելաւ որ երթայ, բայց անոր անկրկ զանիկա բանադատելուն համար գարձաւ գիշերը հոն մնաց։ 8—Ու հինգերորդ օրը առաւօտուն կանուխ ելաւ որ երթայ. և աղիկան հայրը ըսաւ, կ'ազաչեմ, սիրտդ ուժգնացուր. և ուշացան մինչեւ կէսօրուան անցնելը, ու երկուքը ճաշ կերան։ 9—Ու այն մարդը ելաւ, ինք, իր հարճը ու իր ծառան, ոտքի որ երթալու համար. բայց անոր աները, աղիկան հայրը ըսաւ անոր, Ահա օրը իրիկուն ըլլալու վրայ է. կ'ազաչեմ, գիշերը հոս մնացէք. ահա օրը կ'իջնէ, գիշերը հոս կեցիր, ու սիրտդ զուարճանայ. և վաղը կանուխ ոտքի որ երթաք եւ ձեր վրանը գացէք։ 10— Ու այն մարդը գիշերը մնալ չուզեց, ու ելաւ գնաց, ու մինչեւ Յեբուս, այսինքն Երուսաղէմ, գիմաց եկաւ, և իրեն հետ երկու հասկուած էշ ունէր, ու իր հարճն ալ իրեն հետ էր։

11—Ու երբ Յեբուսի մօտերցան, օրուան շատ անցած ըլլալուն համար, ծառան իր տէրոջը ըսաւ, եկուր այս Յեբուսացոց քաղաքը խոտորինք, ու գիշերը հոն մնանք։ 12—Բայց տէրը անոր ըսաւ, Իսրայէլի որդիներէն չեղող օտարազգիներուն քաղաքը չխոտորինք, հապա մինչեւ Գաբաա անցնինք։ 13— Ու իր ծառային ըսաւ, Ելի կաը այն տեղերէն մեզի մօտենանք, ու գիշերը Գաբաայի կամ Ռամայի մէջ մնանք։ 14— Ու անցան գացին. ու երբ Բենիամինի Գաբաային մօտեցան՝ արեւը մտաւ։ 15—Ու հոն գաբաան որպէս զի Գաբաա մտնեն ու գիշերը հոն մնան. և գնաց քաղաքին հրապարակին մէջ նստաւ. ու մարդ մը չկար որ զանոնք իր տունը առնէր՝ գիշերը անցընելու համար։

16—Ու ահա իրիկունը տարէն ծեր մարդ մը կուգար՝ իր գործէն դառնալով. ու անիկա եփրեմի լեռնէն էր, և

Գաբաայի մէջ պանդխտացեր էր. իսկ այն տեղին բնակիչները Բենիամինեանք էին։ 17—Ու երբ անոնք աչքերը վերցուց և Ամաղեկ մարդը քաղաքին հրապարակին մէջ տեսաւ, ծեր մարդը բսաւ, Ո՞ւր կ'երթաս, և ուրկի՞ կուգաս. 18—Ու անոնք ըսաւ, Մենք Յուդայի Բեթլեհէմին մինչև Եփրեմի լեռանը կողմերը կ'անցնինք. ես այն տեղացի եմ, ու մինչև Յուդայի Բեթլեհէմը գացեր, և հիմա Տէրոջը տունը կ'երթամ. ու ովս իր տունը ընդունող մարդ մը չկայ. 19—բայց մեր էշերուն համար չորդ ու հաբակ կայ. և ինծի համար, քու աղախնիդ համար ու քու ծառաներուդ հետ եղող մանչուն համար հաց ու գինի անիմ. բնաւ բան մը պակաս չէ։ 20—Ես այն ծեր մարդը բսաւ, Խաղաղութիւն քեզի. քու ամէն պակասութիւնդ հոգը իմ վրաս ըլլայ. բայց գիշերը հրապարակին մէջ մի մնար։ 21—Ու զանիկա իր տունը տարաւ, և էշերուն կերը տուաւ. ու անոնք ոտքերնին լուալէն ետքը կերան և խմեցին։

22—Ու երբ անոնց սիրտը կը զուարճանար, ահա քաղաքին քաջակիչներէն չար մարդիկ տունը չորս կողմը պաշարեցին, ու դուռը ձեռք առին. և տանը տէրոջը, այն ծեր մարդուն, հետ խօսեցան ու բսին, Ցունդ եկող մարդը հանէ, որպէս զի զանիկա գիտնանք։ 23—Ես այն տանուտէր մարդը անոնց ելաւ, ու անոնց բսաւ, Ոչ, եղբայրներս. կ'ազաչեմ, գիշերութիւն մի ընէք. այս մարդուն իմ տունս մտնելէն ետքը այս անզգամութիւնը մի ընէք. 24—Ահա իմ կոյս աղջիկս, ու այն մարդուն հարճը հիմա ձեզի հանեմ, և զանոնք լլկեցէք, ու ձեր ուզածը ըրէք անոնց, և այս մարդուն այս անզգամութեան գործը մի ընէք. 25—Բայց այն մարդիկը չուզեցին անոր խօսքը մտիկ ընել. ու այն մարդը իր հարճը բռնեց դուրս հանեց անոնց, և անոնք զանիկա գիտցան, ու բոլոր գիշերը զանիկա լլկեցին մինչև առաւօտ. ու երբ արշալոյսը ծագեցաւ, զանիկա թող տուին որ երթայ։ 26—Ու այն կինը առաւուան դէմ գնաց, ու ինկաւ այն մարդուն տանը դրանը առջև, ուր իր տէրը հոն էր մինչև որ լուսցաւ հոն ձոյլ։ 27—Ու անոր տէրը առաւօտուն ելաւ, տանը դռներուն բացաւ, որպէս զի ելլէ իր ճամբան երթայ. և ահա կինը, իր հարճը, տանը դրանը առջև ինկեր էր, և ձեռքերը սեմին վրայ էին։ 28—Ու անոր բսաւ, Ելիր երթանք. բայց պատասխան տուող չկար։ Այն ատեն զանիկա իր էշուն վրայ դրաւ, ու մարդը ելաւ իր տեղը գնաց։ 29—Ու երբ իր տունը հասաւ, դանակ մը առաւ, ու իր հարճը բռնեց և զանիկա ոսկորներովը տասներկու կտորի բաժնեց, ու Իսրայէլի ամէն սահմանները ղրկեց։ 30—Ու ամէն տեսնողները կ'ըսէին թէ Իսրայէլի որդիներուն Եգիպտոսի երկրէն ելած օրէն մինչև այսօր այսպիսի բան մը ոչ եղեր է, ոչ ալ տեսնուեր է. ասոր վրայ մտածեցէք, խորհուրդ ըրէք ու խօսեցէք։

Գլ. Ի

Այն ատեն բոլոր Իսրայէլի որդիները ելան, ու ժողովքը մէկ մարդու պէս Դանէ մինչև Բերսաբէէ և Գաղաադ երկիրը, Մասփայի մէջ, Տէրոջը առջև ժողվուեցան։ 2—Ու բոլոր ժողովուրդին, Իսրայէլի բոլոր ցեղերուն, գլխաւոր մարդիկը չորս հարիւր հազար սուր քաշող հետեւակ զօրք բլլալով, Աստուծոյ ժողովուրդին ժողովքին մէջ ներկայացան։ 3—Ու Բենիամինի որդիները լսեցին որ Իսրայէլի որդիները Մասփա ելեր են։ Ու Իսրայէլի որդիները ըսին, Մեզի պատմեցէք թէ այս չարութիւնը ի՛նչպէս եղաւ։ 4—Ես այն Ղեւտացի մարդը, մեռցուած կինոջ այրը, պատասխան տուաւ ու բսաւ, Ես ու իմ հարճս Բենիամինի Գաբաան եկանք, որպէս զի գիշերը հոն մնանք. 5—Ես Գաբաայի բնակիչները ինծի դէմ ոտք ելան, ու գիշերով իմ հոգ տունս պաշարեցին, և զիս մեռցնել կ'ուզէին, ու իմ հարճս լլկեցին և մեռուաւ. 6—Ես ալ իմ հարճս առի ու զանիկա կտոր կտոր ըրի, և Իսրայէլի ժառանգութեան բոլոր երկիրը ղրկեցի. քանի որ անոնք Իսրայէլի մէջ մեծ յանցանք ու անգթամութիւն ըրին։ 7—Ահա

զուք ամէնդ ալ Իսրայէլի որդիները էք, հոս ձեր մէջ խօսեցէք ու խորհուրդ ըրէք։ 8—Ու բոլոր ժողովուրդը մէկ մարդու պէս ոտք ելաւ, ու բսաւ, Մեզմէ բնաւ մեկը իր վրանը պիտի չերթայ, ու բնաւ մեկը իր տունը չդառնայ։ 9—Ու հիմա Գաբաայի ընելու բանին համար ասիկա է. Անոր վրայ վիճակով երթանք։ 10—Ու Իսրայէլի ամէն ցեղերէն հարիւրէն տասը, և հազարէն հարիւր, ու տասը հազարէն հազար մարդ առնենք, որպէս զի ժողովուրդին պաշար տանին. անոնք ալ Բենիամինի Գաբաան մտնելով, անոր բո-ւիւնէրուն Իսրայէլի մէջ ըրած բոլոր անզգամութեանը փոխարէնը հատուցանեն։ 11—Ու այն քաղաքին վրայ երթ-ւը հաւաբ' Իսրայէլի բոլոր մարդիկը մէկ մարդու պէս միաբանութեամբ ժողվուեցան։

12—Ու Իսրայէլի ցեղերը Բենիամինի բոլոր ցեղին մարդիկ ղրկեցին ու բսին, Այս ի՞նչ չարութիւն է որ ձեր մէջ եղաւ։ 13—Ու հիմա Գաբաայի մէջ եղող այն չար մարդիկը տուէք, որպէս զի զանոնք մեռցնենք, ու չարութիւնը Իսրայէլէ վերցնենք. Բայց Բենիամինեանք իրենց եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, խօսքը մտիկ ընել չուզեցին։ 14—Ու Բենիամինի որդիները Իսրայէլի որդիներուն դէմ պատերազմ ընելու համար, իրենց քաղաքներէն Գաբաայի մէջ ժողվուեցան։ 15—Ու այն օրը իրենց քաղաքներէն իվ-ւ Բենիամինի որդիները համրուեցան. ու քաղաքէն հազար սուր քաշող մարդ էդո-ւբ-ցաս, բայց ի Գաբաայի բնակիչներէն, որոնք եօթը հարիւր ընտիր մարդիկ համրուեցան։ 16—Ասոնց բոլոր ժողովուրդին մէջ եօթը հարիւր ընտրուած աջեակազործ մարդիկ կային, որոնց ամէնն ալ պարսաւիկով մազի վրայ քար կը նետէին առանց վրիպելու։ 17—Ու Իսրայէլի մարդիկն ալ համրուեցան. ու Բենիամինէ զատ չորս հարիւր հազար սուր քաշող մարդ էդո-ւբ-ցաս. ասոնք ամէնն ալ պատերազմող մարդիկ էին։

18—Ու գացին *Բեթէլ ելան. և Իսրայէլի որդիները Աստուծոյ հարցուցին ու ըսին, Բենիամինի հետ պատերազմելու համար ո՞վ մեզի առաջնորդ ըլլայ. և Տէրը բսաւ, Յուդա առաջնորդ ըլլայ. 19—Ու Իսրայէլի որդիները առաւօտուն ելան և Գաբաայի դիմաց բանակեցան. 20—Ու Իսրայէլացիք Բենիամինի հետ պատերազմ ընելու ելան. և Իսրայէլացիք Գաբաայի քով անոնց դէմ չարաչեցան պատերազմի համար. 21—Ու Բենիամինի որդիները Գաբաայէ ելան, և այն օրը Իսրայէլի քառասուներկու հազար մարդ գետինը փռեցին։ 22—Ու ժողովուրդը, այսինքն Իսրայէլացիք, ուժ ժողցան, և նորէն գացին պատերազմելու համար չարաչեցան նոյն տեղը, ուր առջի օրը չարաչեր էին. 23—(Ու Իսրայէլի որդիները եկան, և Տէրոջը առջև մինչև իրիկուն լացին, ու Տէրոջը հարցնելով ըսին, Մեր եղբօրը Բենիամինի հետ պատերազմելու համար նորէն ելլե՞նք։ Ու Տէրը բսաւ, Անոր դէմ ելէք։) 24—Ու երկրորդ օրը Իսրայէլի որդիները Բենիամինի որդիներուն մօտեցան. 25—Ու երկրորդ օրը Բենիամինեանք Գաբաայէ անոնց դէմ ելան դ-ոթէ-չ-ւբ հոմբ. և Իսրայէլի որդիներէն նորէն տասնըեւթ հազար մարդ գետինը փռեցին. ասոնց ամէնն ալ սուր քաշող մարդիկ էին։

26—Այն ատեն բոլոր Իսրայէլի որդիները, այսինքն բոլոր ժողովուրդը, եկան *Բեթէլ գացին, ու հոն Տէրոջը առջև նստան լացին, և այն օրը մինչև իրիկուն ծոմ պահեցին, ու Տէրոջը առջև ողկակիզներ և խաղաղութեան զոհեր մատուցին. 27—Ու Իսրայէլի որդիները Տէրոջը հարցուցին. (Ու այն օրերը Աստուծոյ ուխտին տապանակը հոն էր. 28—Ու այն օրերը անոր առջև Ահարոնեան Եղիազարի որդին Փենէհէս կը կայնէր.) ու բսին, Մեր եղբօրը Բենիամինի որդիներուն հետ պատերազմելու համար նորէն մէկ՞մը ալ ելլե՞նք, թէ հետ քաշուինք։ Ու Տէրը բսաւ, Ելէք, քանի վաղը զանոնք ձեր ձեռքը պիտի մատնեմ։

*Կամ, Աստուծոյ տունը. տես հմմ. 23, 26։

*Կամ, Աստուծոյ տունը

29—Ու Իսրայէլացիք Գաբաայի բոլորտիքը դաբաններ շինեցին. 30—ու Իսրայէլի որդիները երրորդ օրը Բենիամինի որդիներուն վրայ գացին, ու միւս անգամներուն պէս Գաբաայի դիմաց չարաչեցան։ 31—Այն ատեն Բենիամինի որդիները ժողովուրդին դիմաց ելան, և քաղաքէն զատուեցան, ու առաջին անգամներուն պէս սկսան ժողովուրդը զարնել, ու երեսունի չափ Իսրայէլացիք սպանցին այն ճամբաներուն մէջ՝ որոնց մէկը Բեթէլ կ'ելլէր ու միւսը դաշտի Գաբաան։ 32—Ու Բենիամինի որդիները ըսին, Ահա անոնք մեր առջեւ առաջին անգամներուն պէս կը կատրուին։ Ու Իսրայէլի որդիները ըսին, Փախչինք ու զանոնք քաղաքէն դուրս ճամբաները հանենք։ 33—Ու Իսրայէլի բոլոր մարդիկը իրենց տեղէն ելան, ու Բաալ-Թամարի առջեւ չարաչեցան։ Ու Իսրայէլի դաբանակալները յանկարծ իրենց տեղէն, Գաբաայի դաշտէն, դուրս ելան։ 34—Ու Գաբաայի առջեւ բոլոր Իսրայէլէ ասոր հաղար ընտրուած մարդ եկան, և պատերազմը սաստկացաւ. ու անոնք չէին գիտեր որ իրենց վրայ չարիք հասեր է։ 35—Ու Տէրը Իսրայէլի առջեւ Բենիամինը զարկաւ. ու այն օրը Իսրայէլի որդիները Բենիամինէ քսանըհինգ հազար հարիւր մարդ կոտրեցին. անոնց ամէնն ալ սուր քաշող մարդ էին։ 36—Ու Բենիամինի որդիները իրենց յաղթուիլը տեսան. քանզի Իսրայէլացիք Գաբաայի բոլորտիքը դրած դաբանակալներուն ապաւինելով՝ Բենիամինեանց տեղ տուին։ 37—Ու դաբանակալները չուտով Գաբաայի վրայ յարձակեցան, ու դաբանակալները ջրհոսի տարածուեցան, և բոլոր քաղաքը սուրի բերնէ անցուցին։ 38—Ու Իսրայէլացիք դաբանակալներուն հետ *ժամանակ մը որոշեր էին, որպէս զի քաղաքէն մեծ կրակով ծուխ հանեն։ 39—Այն ատեն Իսրայէլի մարդիկը պատերազմին մէջ փախստա ցուցին. ու Բենիամինեանք սկսան Իսրայէլացիները զարնել, ու երեսուն մարդու չափ մեռցուցին. քանզի ըսին թէ Անտարակոյս անոնք մեր առջեւ առաջին պատերազմին պէս կը կոտրուին։ 40—Բայց երբ քաղաքէն կրակին ծուխը սիւնի պէս բարձրանալ սկսաւ, Բենիամինեանք եւեւէնին դառնալով՝ նայեցան որ քաղաքին հրդեհը երկինք կ'ելլէր։ 41—Ու երբ Իսրայէլացիները նորէն դարձան, Բենիամինեանք ապշեցան մեծապէս, քանզի տեսան որ չարիքը իրենց վրայ հասեր էր։ 42—Ուստի առջեւնին Իսրայէլացւոց առջեւէն դէպ ի անապատին ճամբան դարձան. բայց պատերազմը անոնց հասաւ, ու քաղաքներէն ելլողները զանոնք իրենց մէջ մեռցուցին։ 43—Այսպէս Բենիամինեանները պաշարեցին, զանոնք հալածեցին, — զանոնք դիւրութեամբ մինչեւ Գաբաայի դիմաց արեւելեան կողմէն զարկին։ 44—Ու Բենիամինէ տասնըութ հազար մարդ ինկաւ. անոնց ամէնն ալ զօրաւոր մարդիկ էին։ 45—Ու Հոյծ-ծներէը դարձան դէպ ի անապատը Ռիմոնի վէմը փախան. անոնցմէ ճամբաներուն մէջ հինգ հազար մարդ ճռաքաղ ըրին. և զանոնք մինչեւ Գեդոմ հալածելով՝ անոնցմէ երկու հազար մարդ զարկին։ 46—Ու Բենիամինէ այն օրը բոլոր ինկածները քսանըհինգ հազար սուր քաշող մարդ էին, անոնց ամէնն ալ զօրաւոր մարդիկ էին։ 47—Ու վեց հարիւր մարդ դարձան ու անապատը, Ռիմոնի վէմը, փախան, ու Ռիմոնի վէմը չորս ամիս կեցան։ 48—Ու Իսրայէլացիք Բենիամինի որդիներուն դառնալով՝ զանոնք սուրի բերնէ անցուցին, քաղաքներուն մէկի մարդոցմէ մինչեւ անասուններըը, ու ինչ որ գտնուեցաւ. ու բոլոր գտնուած քաղաքներն ալ կրակով այրեցին։

Գլ. ԻԱ

Ե Իսրայէլի մարդիկը Մասփայի մէջ երդում ըրեր էին, ու ըսեր էին թէ Մէկուն մէն բնակ մարդ մը իր աղջիկը Բենիամինի կին ըլլալու չտայ։ 2—Ու ժողովուրդը *Բեթէլ երթալով՝ հոն Աստուծոյ առջեւ մինչեւ իրիկուն նստան. ու ձայներնին վերցնելով՝ մեծ լացով մը լացին, 3—ու ըսին, Ով Իսրայէլի Տէր Աստուածը, ինչո՞ւ համար այս բանը Իսրայէլի մէջ պատահեցաւ, որ այսօր Իսրայէլէ ցեղ մը պակսի։ 4—Ու հետեւեալ օրը ժողովուրդը կանուխ ելաւ, ու հոն սեղան մը շինեցին, ու ողջակէզներ և խաղաղութեան զոհեր մատուցին։

5—Ու Իսրայէլի որդիները ըսին, Իսրայէլի ամէն ցեղերէն ժողովքին հետ Տէրոջը առջեւ չելլողը ո՞վ է. քանզի Տէրոջը առջեւ Մասփա չելլող մարդուն համար մեծ երդումի ըրեր էին՝ ըսելով թէ Անիկա անպատճառ պիտի մեռնի։ 6—Ան ատեն Իսրայէլի որդիները իրենց եղբօրը Բենիամինի համար ցաւելով ըսին, Այսօր Իսրայէլէ ցեղ մը բնաջինջ եղաւ։ 7—Ան ատեններուն ի՞նչ ընենք, որ մեզի կիներ տանիք. քանզի մենք Տէրոջը անունովը երդում ըրինք որ մեր աղջիկներէն անոնց կին չտանք։ 8—Ու ըսին, Իսրայէլի ցեղերէն ո՞վ է որ Տէրոջը առջեւ Մասփա չելլաւ. և ահա Գաղատացւոց Յաբէսէ բնաւ մարդ մը եկած չէր բանակը ժողովքին։ 9—Ու ժողովուրդը աչք անցուցին. և ահա անոնց մէջ Գաղատացւոց Յաբէսի բնակիչներէն մարդ մը չգտնուեցաւ։ 10—Ան ատեն ժողովքը խիստ զօրաւորներէն հոն տասուերկու հազար մարդ ղրկեցին, ու անոնց պատուիրելով՝ ըսին, գացէք, ու Գաղատացւոց Յաբէսի բնակիչները սուրի բերնէ անցուցէք, կիներն ալ ու մանուկներն ալ։ 11—Ու ձեր ընելու բանը այս է. Ամէն այր մարդը ու այր մարդու անկողին գիտցող ամէն կիները կորնչուցէք։ 12—Ու Գաղատացւոց Յաբէսի բնակիչներուն մէջ չորս հարիւր կոյս աղջիկներ գտան, որոնք արու հետ պառկած չէին, ու այր մարդ չէին գիտեր, և զանոնք Քանանու երկրին մէջ Սելովի բանակը բերին։ 13—Ու բոլոր ժողովքը խօսք ղրկելով, Ռեմոնի վէմը եղող Բենիամինի որդիներուն խօսեցան, և զանոնք խաղաղութեան հրաւիրեցին։ 14—Ու Այն ատեն Բենիամինեանք դարձան. և անոնց այն կիները որ ազատուած էին, զորոնք Գաղատացւոց Յաբէսի կիներէն ողջ թողուցեր էին. բայց անոնց բաւական չեղան։ 15—Ու ժողովուրդը Բենիամինի համար ցաւեցաւ. քանզի Տէրը Իսրայէլի ցեղերուն մէջ խզում ըրեր էր։

16—Ու ժողովքին ծերերը ըսին, Մնացածներուն ի՞նչ ընենք կիներ գտնելու համար. որովհետեւ Բենիամինի չէզն կիները կորսուեցան։ 17—Ու ըսին, Ողջ մնացող Բենիամինեանց ժառանգութիւն երթայ, որպէս զի Իսրայէլէ ցեղ մը բնաջինջ չըլլայ։ 18—Ու մենք անոնց մեր աղջիկներէն կին չենք կրնար տալ, քանզի Իսրայէլի որդիները երդումի ըսելով ըսին թէ Բենիամինի կին տուողը անիծեալ ըլլայ։ 19—Ու ըսին, Ահա տարեկ տարի Տէրոջը տօնախմբութիւն կ'ըլլայ Սելովի մէջ, — որ Բեթէլէ հիւսիսային կողմը, ու Բեթէլէ Սիքեմ ելլող ճամբուն արեւելեան կողմը, և Ղեբօնայի հարաւային կողմը կ'կայնայ։ 20—Ու Բենիամինի որդիներուն պատուիրելով՝ ըսին, Գացէք, այդիներուն մէջ պահուռտեցէք։ 21—Ու երբ տեսնէք որ Սելովի աղջիկները պար բռնելով խաղալու ելլեր են, այն ատեն այդիներէն ելէք, և ամէն մէկդ Սելովի աղջիկներէն ձեզի մէկ-մէկ կին յափշտակեցէք, ու Բենիամինի երկիրը գացէք։ 22—Ու երբ անոնց հայրերը կամ եղբայրները մեզի գալով գանգատ բնեն, անոնց կ'ըսենք թէ մեր սիրոյն համար չնորհք ըրէք անոնց. քանզի մենք պատերազմին մէջ անոնց ամէնուն մէկ-մէկ կին չպահեցինք. ու հիմա դուք չատէք անոնց որ յանցաւոր ըլլաք։ 23—Ու Բենիամինի որդիները այնպէս ըրին, ու իրենց թիւին չափ պար բռնողներէն կիներ յափշտակելով՝ առին ու գացին իրենց ժառանգութիւնը դարձան, ու քաղաքները շինեցին և անոնց մէջ բնակեցան։ 24—Ու այն ատեն Իսրայէլի որդիները՝ անկէ ամէն մարդ իր ցեղին ու իր ազգատոհմին գնաց, և ամէն մարդ անկէ իր ժառանգութեանը ելաւ։ 25—Այն օրերը Իսրայէլի մէջ թագաւոր չկար. ամէն մարդ իր աչքին հաճելի եղածը կ'ընէր։

*կամ, նշան

*կամ, Աստուծոյ առանը. Գլ.ի. 18,26։

ԳԻՐՔ ՀՌՈՒԹԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Դատաւորաց կառավարութեան օրերը երկրին վրայ սով եղաւ. և Յուդայի Բեթլեհէմէն մարդ մը իր կնոջմով ու երկու որդիներով Մովաբի երկիրը պանդխտանալու գնաց. 2— Ու այն մարդուն անունը Ելիմելէք, ու կնոջը անունը Նաեմի, ու երկու որդիներուն անունները Մաալոն ու Քեղիոն էին. անոնք Եփրաթացի էին Յուդայի Բեթլեհէմէն, և Մովաբի երկիրը գացին ու հոն բնակեցան. 3—Ու Նաեմիի այրը Ելիմելէք մեռաւ. ու անիկա իր երկու որդիներովը մնաց. 4— Որոնք իրենց Մովաբացի կիներ առին. մէկուն անունը Որփա, ու միւսին անունը Հռութ էր. և անոնք հոն տասը տարի չափ նստան. 5—Ու Մաալոն ու Քեղիոն երկուքն ալ մեռան, և կինը իր երկու որդիներէն ու այրէն զուրկ մնաց։

6—Ու անիկա իր երկու հարսերովը ելաւ, որ Մովաբի երկրէն դառնայ. քանզի Մովաբի երկրին մէջ լսեր էր որ Տէրը իր ժողովուրդին այցելութիւն ըրեր է՝ անոնց հաց տալով։ 7—Ու անիկա իր եղած տեղէն իր երկու հարսերուն հետ ելաւ, և Յուդայի երկիրը դառնալու համար ճամբորդութիւն կ'ընէին. 8—Ու Նաեմի իր երկու հարսերուն ըսաւ, Գացէք, և ամէն մէկդ իր մօր տունը դառնայ. — Տէրը ձեզի ողորմութիւն ընէ, ինչպէս դուք մեռածներուն ու ինծի ըրիք. 9—Տէրը ձեզի տայ որ ամէն մէկդ իր երկրանը տունը հանգստութիւն գտնէ. ու զանոնք համբուրեց, և անոնք ձայներնին վերցնելով լացին։ 10—Ու անոր ըսին, Մենք անպատճառ քեզի հետ քու ժողովուրդիդ կը դառնանք։ 11— Բայց Նաեմի ըսաւ, Ով իմ աղիկիներս, ետ դարձէք. ինչո՞ւ համար ինծի հետ պիտի երթաք. միթէ իմ արգանդիս մէջ ուրիշ տղաքներ կա՞ն, որ ձեզի այր ըլլան։ 12—Ետ դարձէք, իմ աղիկիներս, — գացէք. քանզի ես պառաւ եմ, ու նորէն պիտի չկարգուիմ. եթէ յոյս ունիմ ըսելով՝ այս գիշեր կարգուելու ըլլայի, ու տղաքներ ալ ծնանէի, 13— Դուք մինչեւ անոնց մեծնալը պիտի սպասէի՞ք, և դուք ասոր համար պիտի չկարգուէիք ու այլո՞ւ պիտի մնայիք. ոչ, աղիկիներս, քանզի *ձեզի համար շատ՝ կը ցաւիմ. որովհետեւ Տէրոջը ձեռքը իմ վրաս †ծանրացաւ։ 14— Ու անոնք նորէն ձայներնին վերցնելով լացին։ Ու Որբա իր կեսուրը համբուրեց, բայց Հռութ անկէ չզատուեցաւ։ 15—Սակայն Նաեմի ըսաւ, Ահա քու նեղդ իր ժողովուրդին ու իր աստուածներուն դարձաւ. դուն ալ ներսիդ եւ ետեւէն եա դարձիր։ 16—Ու Հռութ ըսաւ, Իմ վրաս մի խնդար որ քեզ թողում, ու քեզմէ դառնամ քանզի ուր որ երթաս՝ հոն պիտի երթամ և ուր որ մնաս՝ հոն պիտի մնամ. քու ժողովուրդդ իմ ժողովուրդս ըլլայ, ու քու Աստուածդ իմ Աստուածս ըլլայ. 17— Ուր որ մեռնիս՝ ես ալ հոն պիտի մեռնիմ ու հոն թաղուիմ. Տէրը ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ միայն քեզմէ մահս անջատէ։ Բան մը չըսաւ։ 18—Երբ Նաեմի տեսաւ որ անիկա միտքը դրեր է իրեն հետ գալու, ալ չխօսեցաւ անոր։

19—Ու երկուքը †իւրէ գացին, մինչեւ որ Բեթլեհէմ հասան. ու երբ Բեթլեհէմ մտան, ամբողջ քաղաքը չարժեցաւ, ու կ'ըսէին, Արդեօք Նաեմի սա՞կը է. 20—Ու անոնց ըսաւ, Ինծ Քնաեմի մի կանչէք, ինծ ‖Մարա կանչեցէք. քանզի Ամենակարողը դառնութեամբ լեցուց զիս. 21—Ես լեցուն գացի, ու Տէրը զիս պարապ դարձուց. ինչո՞ւ զիս Նաեմի կը կանչէք. քանզի Տէրը *ինծի դէմ վկայութիւն տուաւ, ու Ամենակարողը զիս վշտացուց։ 22—Այսպէս Նաեմի իր հարսին, Մովաբացի Հռութին, հետ Մովաբի երկրէն եա գարձաւ. ու գարնան հնձոց սկիզբը Բեթլեհէմ հասան։

ԳԼ. Բ

Ե. Նաեմի իր էրկանը կողմանէ ազգական մը ունէր. անիկա Ելիմելէքի ազգատոհմէն էր, ու շատ հարուստ մարդ մըն էր, և անոր անունը Բոաս էր։ 2—Ու Մովաբացի Հռութ Նաեմիի ըսաւ, Արտերը երթամ, և որուն աչքին առջեւ ողորմութիւն գտնելու ըլլամ, անոր ետեւէն երթամ։ — Հասկեր ժողվէ՛, նէ, անիկա ըսաւ անոր, Գնա, աղիկս։ 3—Ու անիկա գնաց, և արաւ մը մէջ մտնելով հնձողներուն ետեւէն հաւաքէ։ Հասկ կը ժողվէր. ու այնպէս պատահեցաւ որ անիկա Ելիմելէքի ազգատոհմէն եղող Բոասի արտին մէջ գտնուեցաւ։

4—Ու ահա Բոաս Բեթլեհէմէ եկաւ, ու հնձողներուն ըսաւ, Տէրը ձեզի հետ ըլլայ։ Ու անոնք ըսին, Տէրը քեզ օրհնէ։ 5—Ու Բոաս հնձողներուն վրայ կեցող իր մանչուն ըսաւ, Այս աղիկը որո՞ւնն է։ 6—Ու հնձողներուն վերակացուն, մանչը պատասխան տուաւ ու ըսաւ, Նաեմիի հետ Մովաբի երկրէն դարձող Մովաբացի աղիկին է. 7—Ու ինքն ըսաւ, Ի՛նդրեմ, որաներուն մէջ հնձողներուն հետեւէն հաւաքեմ ու ժողվեմ. ու անիկա առաւոտեն կանուխ եկաւ, ու մինչեւ հիմա կեցաւ, դո՞ւն է հիմա փիչ մը տունը նստաւ։

8—Ու Բոաս ըսաւ Հռութի, Մաիկ ըրէ, աղիկս. հաւ ժողվելու համար ուրիշին արտը չերթաս, ու այս տեղէն ալ չզատուիս, հապա հոս իմ աղիկներուս փոյ կենաս. 9—Որ աչքերդ անոնց հնձած արտին վրայ ըլլան, ու անոնց հետեւէն գնաս. ահա մանչերուն ապսպրեր եմ որ քեզի չդպչին. ու երբ ծարխ՝ ամաններուն փոյ գնաս, ու մանչերուն քաշած ջուրէն խմէ։ 10— Ու աղիկը երեսի վրայ իյնալ, ու գետնէն երկրպագութիւն ընելով՝ անոր ըսաւ, Ինչո՞ւ է որ ես քու աչքերուդ առջեւ շնորհք կը գտնեմ, ու դուն ինծի հետ ծանօթութիւն կ'ընես. ու բովհետեւ ես օտար կին մըն եմ։ 11— Ու Բոաս պատասխան տուաւ ու անոր ըսաւ, Քու էրկանդ մեռնելէն եաքը դուն քու կեսոջդ ինչ որ ըրիր՝ բոլորն ալ պատմեցին ինծի, և թէ ի՛նչպէս քու հայրդ ու մայրդ և ծննդեանդ երկիրը թողուցիր, ու եկար այն ժողովուրդին՝ զոր առաջուընէ չէիր ճանչնար։ 12—Քու գործդ փոխարէն Տէրը հատուցում ընէ, և քու վարձքդ Իսրայէլի Տէր Աստուծմէն կոմանէ առատապէս արաբ, քանզի դուն եկար որպէս զի անոր թեւերուն տակ ապաստանարան մը գտնես։ 13—Ու անիկա ըսաւ, Ով տէր իմ, քու աչքերուդ առջեւ շնորհք գտնեմ. քանզի դուն զիս մխիթարեցիր, ու քու աղախինդ քաղցրութեամբ խօսեցար, թէպէտեւ ես քու աղախիններուդ մէկուն պէս ալ չեմ։ 14—Ու Բոաս կերակուրի առեն անոր ըսաւ, Հոս եկուր, ու հացէն կեր և պատառդ քացախին մէջ թաթխէ։ Ուստի անիկա հնձողներուն քով նստաւ. ու անոր բովրած ցորեն տուաւ, ան ալ կերաւ, կշտացաւ և աւելցուցը պահեց։ 15— Ու երբ հասկ ժողվելու ելաւ, Բոաս իր մանչերուն պատուիրելով՝ ըսաւ, Թող որաներուն մէջէն ալ ժողվէ, ու զանիկա մի ամչցնէք։ 16— Ու խուրձերէն ալ անոր համար գեւրնը ձգեցէք, ու թող տուէք որ ժողվէ, և զանիկա մի յանդիմանէք։ 17— Ու անիկա մինչեւ իրիկուն այն արտին մէջ հաւել հասկ ժողվեց. ու երբ ժողվածը ծեծեց, մէկ արդուի չափ գարի եղաւ։ 18— Ու զանիկա առաւ ու քաղաքը մտաւ, և կեսուրը անոր ժողվածը տեսաւ. ու Հռութ հանեց այն իր կշտացածէն աւելցածը անոր տուաւ։

19— Ու կեսուրը անոր ըսաւ, Այսօր ուրկէ՞ հաւ ժողվեցիր, և ո՞ւր բանեցար. քեզի ճանչնութիւն ընողը օրհնեալ ըլլայ։ Ան տեղ անիկա իր

---

*Կամ, ձեզմէ աւելի
†Եբր. Էյաս.
‡Այսինքն, հաճելի
‖Այսինքն, դառն

*Կամ, զիս խոնարհեցուց

կեսօրվ իմացուց Թէ որո՛ւ փավ բաներէ, ու ըսաւ, Աչն մարդը, որուն փավ ես այսօր բանեցայ, Բոոս կը կոչուի։ 20—Ու Նաեմի իր հարսին ըսաւ, Անիկա Տէրոջմէն օրհնեալ ըլլայ, որ կենդանիներէն ու մեռածներէն իր ողորմութիւնը չկտրեց. և Նաեմի անոր ըսաւ, Աչն մարդը մեր ազգականմէն է, անիկա մօտ ազգական է մեզի։ 21—Ու Մաաբացի Հառութ ըսաւ, Անիկա նաեւ ինծի ըսաւ Թէ իմ մանչերուս փալէն չզատուիս, մինչեւ որ անոնք իմ բոլոր հունձքս լմցնեն։ 22—Ու Նաեմի իր հարսին Հառութի ըսաւ, Ադեկ է, աղջիկս, որ դուն անոր աղիկներուն հետ ելլես, ու քեզ ուրիշ արտի մը մէջ չտեսնեն։ 23—Ու անիկա Բոոսի աղիկներուն չզատուեցաւ. ու մինչեւ գարնան հունձքին և ցորենին հունձքին լմնալը հետ ժողվեց, ու իր կեսօրվ փավ կը բնակէր։

Գլ. Գ

Ու անոր կեսուրը Նաեմի անոր ըսաւ, Աղջիկս, քեզի հանգստութիւն չփնտռե՞մ, որպէս զի քեզի աղեկ ըլլայ։ 2—Հիմա Բոոս մեր ազգականը չէ՞, որուն աղիկներուն փավ կեցար դուն. ահա անիկա այս գիշեր կալին մէջ գարին կը հռսէ։ 3—Ու դուն լուացուէ ու խոզով օծուէ, և լաթերդ հագիր ու կալը իջիր. և մինչեւ որ ուտելը ու խմելը չլմցնէ, այն մարդուն մի յայտնուիր։ 4—Ու երբ քնանայ, անոր պառկած տեղը իմացիր, և դուն անոր ոտքերուն կողմին ծածկոցը բաց ու պառկէ, և անիկա քեզի պիտի իմացնէ Թէ ի՛նչ ընելու ես։ 5—Ու Հառութ անոր ըսաւ, Ամէն ինծի ապսպրածներդ պիտի ընեմ։

6—Ու կալը իջաւ, ու կեսրոջը ամէն ապսպրածին պէս ըրաւ։ 7—Ու Բոոս ուտելէն, խմելէն ու սիրտը զուարճանալէն ետքը՝ դիզուած ցորենին կզակը պառկելու գնաց. և Հառութ ալ կամաց-կամ մը գնաց, ու անոր ոտքերուն կողմին ծածկոցը բացաւ և պառկեցաւ։ 8—Ու կէսգիշերուն մարդը վախցաւ, ու ծռելով տեսաւ որ անա իր ոտքերուն քովՙ կին մը պառկեր էր։ 9—Ու ըսաւ, Դուն ո՞վ ես։ Ու անիկա ըսաւ, Ես քու աղախինդ Հառութ եմ. և քու փայանդ քու աղախինիդ վրայ տարածէ, քանզի դուն մօտ ազգականս ես։ 10—Ան ալ ըսաւ, Դուն Տէրոջմէ օրհնեալ ըլլաս, աղջիկս. քու ետքի ազեկութիւնդ առաջուընէն մեծ է, որովհետեւ աղքատ կամ հարուստ երիտասարդներուն ետեւ չես գացիր։ 11—Ես հիմա, ով աղջիկս, մի վախնար, դուն ինծի ինչ որ ըսես, քեզի պիտի ընեմ. քանզի իմ ՙքաղաքիս բոլոր ժողովուրդը՚ գիտէ որ դուն առաքինի կին մըն ես։ 12—Ու հիմա իրաւցնէ ես ես ազգականդ եմ, բայց ինծմէ մօտ ուրիշ ազգական՝ կայ։ 13—Այս գիշեր հո՛ կեցիր, ու եթէ անիկա առաւօտուն իր ազգականութիւնը պարտաւորութիւնը քեզի հատուցանել ուզէ, ադեկ, քոդ հատուցանէ. բայց եթէ անիկա ազգականութեան պարտաւորութիւնը քեզի հատուցանել չուզէ, այն ատեն ես կը հատուցանեմ, կենդանի է Տէրը. մինչեւ առաւօտ հո՛ պառկի։

14—Ու առի մինչեւ առաւօտ անոր ոտքերուն քովՙ պառկեցաւ. ու յառնեաւ, երբ մարդիկ դեռ չկրնար մեկզմեկ ճանչնալ, եըսաւ. և Բոոս ըսաւ, Մարդ չգիտցայ որ կալին մէջ կին մտեր է։ 15—Նաեւ ըսաւ, վրայի ծածկոցդ բեր, ու դնիկա բռնէ։ Ու Հառութ դնիկա բռնեց. ու անոր վեց չափ գարի չափեց, ու անոր վրայ բեռնաւորեց. և անիկա քաղաքը գնաց։ 16—Ու Հառութ իր կեսրոջ դարձաւ, որ անոր ըսաւ, Ով աղջիկս, ի՞նչպէս ես. ու անիկա անոր պատմեց ինչ որ այն մարդը բրաւ իրեն։ 17—Ու ըսաւ, ինծի այս վեց չափ գարին տուաւ՝ ըսելով, Դու կեսրոջդ պարապ չերթաս։ 18—Ու Նոեմի ըսաւ, Աղջիկս, նստէ, մինչեւ որ գիտնաս Թէ այս գործը ի՛նչպէս պիտի լմնայ. քանզի այն մարդը մինչեւ որ այս գործը այսօր չլմցնէ չհանգստանար։

*ՆԷԲ. չհանդիպին

*ՆԷԲ. ժողովուրդիս բոլոր դուռը ԹԿՕ, ՀՎ

Գլ. Դ

Ու Բոոս դուռը ելաւ ու հոն նստաւ. և ահա այն Բոոսի ըսած ազգականը կ՚անցնէր. ու Բոոս անունովը կանչեց զանիկա ու ըսաւ, Նկատը, հոս նստէ. և անիկա դարձաւ ու նստաւ։ 2—Ան առնն անիկա քաղաքին ծերերէն տասը մարդ առաւ, ու ՚ՆՆԵ՚ ըսաւ, Ա՛ս տեղ նստեցէք. և անոնք նստան։ 3—Ետքը այն ազգականին ըսաւ, Մաւաբի երկրին դարձող Նաեմին մեր եղբօրը Եղիմելէքի արտին բաժինը ծախելու վրայ է. 4—Ու ես մտածեցի որ քեզի իմացնեմ ու ըսեմ, Զանիկա այս նստողներուն առջեւ ու իմ ժողովրդիս ծերերուն առջեւ ծախա՛ ա՛. եթէ ազգականութեան իրաւունքով զանիկա ծախու առնել կ՚ուզես, ծախա՛ ա՛. բայց եթէ ծախու առնել չես ուզեր, ինծի իմացուր որպէս զի գիտնամ. քանզի քեզմէ զատ ազգականութեան իրաւունքով կասարելու մեկը չկայ, ու քեզմէ ետքը ես եմ։ Ես անիկա ըսաւ, Ես ազգականութեան իրաւունքը կը կատարեմ։ 5—Ու Բոոս ըսաւ, Դուն Նաեմիի ձեռքին արտը ծախու առած օրդ՝ մեռածին կնոջմէն, Մաւաբացի Հառութէ, ալ ծախու առնելու ես, որպէս զի մեռածին անունը պահես իր ժառանգութեանը մէջ։ 6—Ու ազգականը ըսաւ, Ես իմ ազգականութեանս իրաւունքը չեմ կրնար կատարել, չըլլայ որ իմ ժառանգութիւնս ապրեմ. իմ ունեցած ազգականութեանս իրաւունքը դուն կատարէ, քանզի ես չեմ կրնար կատարել։ 7—Ու իսրայէլի մէջ առաջ այս սովորութիւնը կար փրկելու ու ծախու առնելու գործերուն մէջ ամէն բան հաստատելու համար, մարդը իր կօշիկը կը հանէր ու իր ընկերին կուտար. և ասիկա իսրայէլի մէջ վկայութիւն կ՚ըլլար։ 8—Ուստի ազգականը Բոոսի ըսաւ, Դուն ծախու առ. ու իր կօշիկը հանեց։

9—Ու Բոոս ծերերուն ու բոլոր ժողովուրդին ըսաւ, Դուք այսօր վկայ եք, որ ես Եղիմելէքի բոլորը առացուածքը, ու Քեղղոնի և Մաալոնի բոլորը առացուածքը Նաեմիի ձեռքէն ծախու առի. 10—Ու Մաալոնի կինը, Մաւաբացի Հառութը, ալ ինծի կին առի, որպէս զի մեռածին անունը պահեմ իր ժառանգութեանը մէջ, ու մեռածին անունը իր եղբայրներէն ու իր բնակարանին դռնէն չվերնայ. դուք այ՚սՙնէն հո՛ր այսօր վկայ եք։ 11—Ան առեն դուռը եղող բոլոր ժողովուրդը ու ծերերը ըսին, Վկայ ենք. Տէրը քու առնդ մտնող կինը Ռաքէլի ու Լիայի պէս ընէ, որոնք երկուքը Իսրայէլի առունը չինեցին. և դուն եփրաթայի մէջ ուժգնցիր, ու Բեթլէհէմի մէջ անուն վաստակէ։ 12—Ու քու առնդ Փարէսի տունը պէս ըլլայ, զոր Թամար Ծնաւ Յուդայէն, այն սերունդով՝ զոր Տէրը պիտի տայ քեզի այս ջահրածնակ կնոջմէն։

13—Ու Բոոս Հառութը առաւ, որ իրեն կին եղաւ, ու անոր մտաւ. և Տէրոջը ողորմութիւնով յղացաւ ու որդի մը Ծնաւ։ 14—Ու կիները Նաեմիէ ըսին, Օրհնեալ ըլլայ Տէրը, որ այսօր քեզ առանց մօտ ազգականի չթողուց, որպէս զի անոր անունը Իսրայէլի մէջ յիշո՛ւի։ 15—Ու ասիկա քու հոգիդ պիտի թարմացնէ ու ծերութեանդ ՙգաւազանը ըլլայ. քանզի զանիկա քեզ սիրող հարս ծնաւ, որ քեզի եօթը որդիէ ալ աղեկ է։ 16—Ու Նաեմի ազան առաւ՝ իր գիրկը գրաւ, և անոր դայեակը եղաւ։ 17—Ու գրացի կիները անոր անուն դրին՝ ըսելով, Նաեմիի որդի մը ծնաւ, և անոր անունը Ովբեդ կոչեցին. ասիկա Դաւիթի հօրը Յեսսէի հայրն էր։

18—Ու Փարէսի ծնունդները ասոնք են. Փարէս ծնաւ Ետրոնը, 19—Ու Ետրոն ծնաւ †Արամը, և Արամ՚ ծնաւ Ամինադաբը, 20—Ու Ամինադաբ ծնաւ Նաասոնը, և Նաասոն ծնաւ Սալմոնը, 21—Ու Սալմոն ծնաւ Բոոսը, և Բոոս ծնաւ Ովբեդը, 22—Ու Ովբեդ ծնաւ Յեսսէն, և Յեսսէ ծնաւ Դաւիթը։

*ՆԷԲ. իմնամղու Թիւնը †կՕ, Բամը, և Բամ՚

ՍԱՄՈՒԵԼ Բ

ԳԼՈՒԽ Ա

Ա Սիկղեմի լեռնէն †Արիմաթեմտաիմի Եղկանա անուանվ Եփրաթացի մարդ մը կար, որ Սուփիի սերունդն Թոհուի սերունդն Եղկանայ սերունդն Ցեռոամ սերնդին էր։ 2—Եւ անոր երկու կին ունէր. մէկուն անունը Աննա, ու միւսին անունը Փեննանա էր. ու Փեննանա զաւակներ ունէր, բայց Աննա զաւակ չունէր։ 3—Ու այն մարդը տարուէ տարի իր քաղաքէն կ'ելլէր, որպէս զի Սեղովի մէջ զօրութեանց Տէրոջը երկրպագութիւն ու զոհ մատուցանէ. և հոն Հեղիի երկու որդիները, Ովինի ու Փենհէհես, Տէրոջը քահանայներն էին։ 4—Ու Եղկանա իր զոհ մատուցած օրը իր կնոջ Փեննանայի և անոր ազգականներուն ու աղիկներուն մէյմէկ բաժին տուաւ. 5—իսկ Աննայի էկրկին բաժին տուաւ, քանզի անիկա Աննան կը սիրէր. բայց Տէրը անոր արգանդը գոցեր էր։ 6—Ու անոր նախանձոտը փեննանա զանիկա կսկծեցնելու համար խիստ վշտացուց. որովհետև Տէրը անոր արգանդը գոցեր էր։ 7—Ու Աննա տարէ տարի Տէրոջը տունը երթած ատենը նէ՛նա այնպէս կ'ընէր. փեննանա ալ նոյնպէս Աննան կը վշտացընէր, ու անիկա կուլար և չէր ուտեր։ 8—Ու այրը Եղկանա անոր ըսաւ, Աննա, ինչո՞ւ կուլաս և ինչո՞ւ չես ուտեր, ու ինչո՞ւ համար սիրտդ ա՛յդպէս տրտում է. միթէ ես քեզի տասը որդիէ լաւ չե՞մ։

9—Ու Աննա Սեղովի մէջ ուտելէն ու խմելէն ետքը ոտք եկաւ. (ու Հեղի քահանան Տէրոջը տաճարին սեմերուն քով աթոռի մը վրայ նստեր էր.) 10—եւ տրտմալից հոգւով Տէրոջը առջև աղօթք ըրաւ ու խիստ լացաւ։ 11—Ու ուխտ ընելով՝ ըսաւ, Ով Տէր զօրութեանց, եթէ քու աղախինդ նեղութեանը նայես ու զիս յիշես, և քու աղախինդ չմոռնալով՝ քու աղախինդ *որու զաւակ մը՝ տուս, զանիկա Տէրոջը պիտի նուիրեմ իր կեանքին բոլոր օրերուն մէջ, ու անոր գլուխն վայ ածելի պիտի չելլէ։ 12—Ու երբ անիկա Տէրոջը առջև իր աղօթքը չատցուց, Հեղի անոր բերնին կը նայէր։ 13—Ու Աննա իր սրտին մէջէն կը խօսէր. միայն անոր շրթունքները կը շարժէին, բայց ձայնը չէր լսուեր. անոր համար Հեղի զանիկա գինով կարծեց։ 14—Ու Հեղի անոր ըսաւ, Մինչև ե՞րբ գինովութիւն պիտի ընես. քու գինիդ հրամարէ։ 15—Ու Աննա պատասխանեան ուսաւ ու ըսաւ, Ով տէր իմ, ա՛յդպէս չէ. ես վշտացած սրտով կին մըն եմ, և գինի կամ օղի չեմ խմած. սակայն Տէրոջը առջև †իմ սիրտս բացի՛։ 16—Քու աղախինդ չսեպես կին մը մի կարծեր, քանզի իմ վշտութիւս ու նեղութեանս չափովը հոգիս մինչև հիմա խօսեցայ։ 17—Այն ատեն Հեղի պատասխան ուսաւ ու ըսաւ, Գնա խաղաղութեամբ, և Իսրայէլի Աստուածը քու խնդրուածքդ †ելլէ ասոր՝ ինչ որ անկէ խնդրեցիր։ 18—Ու անիկա ըսաւ, Քու աղախինդ քու աչքերուդ շնորհք գտնէ. և կինը իր ճամբան գնաց, ու կերաւ, ու երեսը մէյմին ալ չտրտմեցաւ։

19—Ու անոնք առաւօտուն կանուխ երան, ու Տէրոջը առջև երկրպագութիւն ըրին, և Ռամա գացան ու իրենց տունը գացին։ Ու Եղկանա իր Աննա կնոջ մօտեցաւ. և Տէրը զանիկա յիշեց։ 20—Ու Աննա յղացաւ, և երբ ժամանակը հասաւ, ատոչ մը ծնաւ, ու անոր անունը *Սամուէլ կոչեց՝ ըսելով, քանզի զանիկա Տէրոջմէն խնդրեցի։

21—Ու Եղկանա այրը եղկանա իր բոլոր ընտանիքովը Սեղովի երթալ զոհին Տէրոջը առջև տարեկան զոհը մատուցանէ, ու իր ուխտը կատարէ։ 22—Բայց Աննա չգնաց. քանզի իր էրկանը ըսաւ, Մինչև ատոչն կաթի կարուիլը կը դադրի. եւ զանիկա կը տանիմ, որպէս զի Տէրոջը առջև երեւնայ, ու միշտ հոն կենայ։ 23—Ու այրը Եղկանա անոր ըսաւ, Ա՛յդպէս հաճելի եղածը ըրէ. մինչև զանիկա կաթէն կարես նաև. միայն թէ Տէրը իր խօսքը հաստատէ. ուստի կինը նստաւ, ու մինչև իր ատան կաթէն կարելը զանիկա կը անուցանէր։

24—Ու զանիկա կաթէն կարածին պէս էրեն հետ առաւ, ու երեք զուարակով, մէկ արդա ալիւրով ու մէկ սիկ գինիով զանիկա Տէրոջը տունը տարաւ, որ Սեղովի մէջ էր. ու ատոն փոքրիկ էր։ 25—Ու հէ՛ զուարակը մորթեցին, ու ատոն Հեղիի տարին։ 26—Ու Աննա ըսաւ, Ո՛ՀԵ, տէր իմ, քու անձդ կենդանի է. ես այն կինն եմ, որ հոս քու քովդ կայնեցայ Տէրոջը աղօթք ընելու համար։ 27—Ես այս ատոն համար աղօթք ըրի, ու Տէրը իմ խնդրուածքս ինծի տուաւ՝ ինչ որ անկէ խնդրեցի։ 28—Ասկից ես ալ զանիկա Տէրոջը փոխ կու տամ. անիկա իր բոլոր կեանքին մէջ Տէրոջը փոխ արուած ըլլայ. ու անիկա հոն Տէրոջը երկրպագութիւն ըրաւ։

ԳԼ. Բ

Եւ Աննա աղօթք ըրաւ ու ըսաւ,
Իմ սիրտս Տէրոջմով ուրախացաւ,
Իմ եղջիւրս Տէրոջմով բարձրացաւ.
Բերանս իմ թշնամիներուս վրայ բացուեցաւ,
Քանզի քու փրկութիւնովդ ուրախացայ։
2—Տէրոջը պէս սուրբ չկայ, քանզի քեզմէ ուրիշ չկայ,

*Կամ, ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՍԱՄՈՒԵԼԻ †Ոջ Ի՝ Ռամա. տես հմր. 19։
‡Կամ, Եբեւեկի

*Եբէր. մարդոց սերունդ
†Եբէր. իմ հոգիս թափեցի

Ու մեր Աստուծոյն պէս վէմ չկայ։
3—Ալ սակէ եաեւ հպարտութիւնով մի պարծենաք,
Ու ձեր բերնէն ամբարտաւանութիւն չելլէ,
Քանզի Տէրը գիտութեանց Աստուածն է,
Ու անիկա †ինքն գործը կը կշռէ։
4—Զօրաւորներուն աղեղները կոտրեցան,
Ու տկարները ոյժ հագան։
5—Կուշտ եղողները հացի համար վարձկան եղան,
Ու անօթի եղողները կըշտացան։ Մինչեւ որ սանուր եօթը ջրածոյ ծնաւ,
Ու շատ զաւակ ունեցողը տկարացաւ։
6—Մեռցնողը ու ազատողը,
Գերեզմանը իջեցնողը ու վեր հանողը Տէրն է։
7—Աղքատացնողը ու հարստացնողը,
Ցածցնողը ու բարձրացնողը Տէրն է։
8—Անիկա ազգաստը փոշիէն կը վերցնէ,
Ու կարօտը աղբիւրէն կը հանէ,
Որպէս զի իշխաններուն հետ նստեցնէ,
Ու փառաց աթոռը անոնց ժառանգեցընէ.
Քանզի երկրի հիմերը Տէրոջն են,
Ու աշխարհը անոնց վրայ հաստատեց։
9—Անիկա իր սուրբերուն ոտքերը կը պահէ,
Ու չարագործները մութին մէջ պիտի *կորսուին.
Քանզի մարդ էր ուժովը յաղթող չըլլար։
10—Տէրոջը գէմ հակառակողները պիտի կործանին,
Երկինքին անոնց վրայ պիտի որոտայ.
Տէրը երկրի ծայրերը պիտի դատէ,
Եւ իր թագաւորին ոյժ պիտի տայ,
Ու իր օծեալին եղջիւրը պիտի բարձրացնէ։

11—Ու Եղկանա Ռամա իր տունը գնաց. և Ս—ՈՒԼ մանուկը Հեղի քահանային առջեւ Տէրոջը ծառայութիւն կ'ընէր։ 12—Ու Հեղիի որդիները չար մարդիկ ըլլալով՝ Տէրը չէին ճանչնար։ 13—Ու քահանաներուն սովորութիւնը այս էր, որ երբ ժողովուրդին մէկը զո՞

*Աչսէֆ, Աստուածոյ լսածը, կամ, Աստուածոյ անունը

*Եբէր. լուռ կենան

մասուցանէր, մինչեւ եփած առնէը քաշհանային ապասաւորը ձեռքը երեք-ժամնէ մնահան մը առած կուգար։ 14— Ու զանիկա կթ՝ապչին կամ առնին կամ եփարանին կամ պատկին մէջ կը խոթէր, ու մահացնը ինչ որ հանելու ըլլար, քահանան զանիկա էրեն կ՝առնէր։ Անոնք Սելովի մէջ բոլոր հոն եկող իսրայէլացիներուն այսպէս կ՝ընէին։ 15— Նաեւ ճարպը այրելէ առաջ քահանային ապասաւորը կու գար ու զոհ ընդ մարդուն կ՝ըսէր, քահանային համար խորովելու մի տար, քանզի անիկա քեզմէ եփած մի չառնէր, այլ հում։ 16—Ու այն մարդը երբ ըսեր թէ Թող հիմա ճարպը այրին, ու էդ՝ետը պարիկ ուզածին չափ առ։ այն առնն կ՝ըսէր, Ոչ, հիմա տար։ եթէ ալ՝ բառնի կ՝առնէր։ 17—Ապագէս այն երիտասարդներուն մեզքը Տէրոջը առջեւ շատ մեծ էր, քանզի մարդիկ Տէրոջը զոհը կ՝արհամարհէին։

18—Ու Սամուէլ մանուկը քթանէ եփուած հագած՝ Տէրոջը առջեւ ծառայութիւն կ՝ընէր։ 19— Ու անոր մայրը էֆոէ պզտիկ պատմուճան կը չինէր անոր, ու տարուէ տարի երբ իր էրկանը հետ տարեկան զոհը ընելու կ՝ելլէր, անոր կը տանէր։ 20—Ու Ելղի Նղլանան ու անոր կինը օրհնելով՝ ըսաւ, Տէրը քեզի այս կնոջմէն զաւակներ տայ, Տէրոջը տրուած փոխին տակ։ ու անոնք իրենց տեղը գացին։ 21—Ու Տէրը այցելութիւն ըրաւ Աննային, որ յղացաւ, ու երեք տղայ ու երկու աղջիկ ծնաւ։ Սամուէլ մանուկն ալ Տէրոջը առջեւ մեծցաւ։

22—Ու Ելղի խիստ ծերացեր էր։ ու անոր որդիները ինչ որ կ՝ընէին բոլոր իսրայէլին, և ի՛նչպէս անոնք Ժողովքի խորանին առջեւ խոնարհութիւն Ժողովուած կիներուն հետ կը պառկէին, ամէնն ալ կը լսէր։ 23—Ու անոնց ըսաւ, Ինչո՛ւ համար այսպիսի բաներ կ՝ընէք։ քանզի ես այս բոլոր Ժողովուրդին բերնէն ձեզի համար զէշ խօսքեր կը լսեմ։ 24—Մի ընէք, տղաքս, քանզի ազէկ չեն այն լուրերը զորոնք ես կը լսեմ։ դուք Տէրոջը Ժողովուրդը կը մոլորեցնէք։ 25—Եթէ մարդ մը մարդու դէմ մեղք գործէ, *անոր դատաւորը Աստուած կը կարէ։ բայց եթէ մարդ մը Տէրոջը դէմ մեղք գործէ, անոր համար ո՞վ աղաչանք պիտի ընէ։ Սակայն անոնք իրենց հօրը խօսքը մեկ չէին ըներ, քանզի Տէրը զանոնք մեռցնել կ՝ուզէր։ 26—Ու Սամուէլ մանուկը օրէ օր կը մեծնար, և Տէրոջը ու մարդոց հաճոյ էր։

27—Ու Աստուծոյ մէկ մարդը Ելղիի եկաւ, ու անոր ըսաւ, Տէրը ծայռն կ՝ըսէ։ Քու հօրդ տանը յայտնապէս երեւցայ, երբ անոնք Եգիպտոսի մէջ Փարաւոնի տանը ծո՜ոյ էին։ 28—Ու Իսրայէլի բոլոր ցեղերէն զանիկա ինծի քահանայ ընտրեցի, որպէս զի իմ սեղանիս վրայ զոհ մատուցանէ, խունկ ծխէ, ու իմ առջեւս եփուած հագնի։ և Իսրայէլի որդիներուն բոլոր պատրաստները քու հօրդ տանը տուի։ 29—Ո՞ւ համա՛ն համար պատրաստած զոհերս ու ընծաները ինչո՞ւ կ՝անարգէք, և քու որդիներդ ինծմէ աւելի կը փառաւորես, որպէս զի իմ Ժողովրդիս Իսրայէլի ընծաը զոհերովը ձեզ գերցընէք։ 30—Անոր համար Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ՝ըսէ, Իրաւցընէ ըսեր էի որ քու տունդ ու քու հօրդ տունը յաւիտեան իմ առջեւս պարբերեն. բայց հիմա Տէրը կ՝ըսէ, Քա՛ւ լիցի. քանզի ես զիս փառաւորողները պիտի փառաւորեմ, ու զիս արհամարհողները պիտի անարգուին։ 31—Ահա օրեր պիտի գան, որ քու թեւդ ու քու հօրդ տանը թեւը պիտի կտրեմ, որպէս զի քու տանդ մէջ ծեր չգտնուի։ 32—Ու Իսրայէլի ամէն տեսակ բարութիւն վայելած տաճկին, դուն չ՝տեսնս մէջ դժբաղդութիւն պիտի տեսնես, ու քու տանդ մէջ բնաւ ծեր պիտի չգտնուի։ 33—Ու քու տէրտէրէդ հատած մարդը ըզբ իմ սեղանիս չեմ կտրեր, քու աչքերդ նուաղեցնելու ու քու սիրտդ վշտացնելու համար պիտի ջարդ։ և քու տանդ բոլոր զաւակները դերասանութեան մէջ՝ պիտի մեռնին։ 34—Ու քու երկու որդիներուդ, Ոփնիի ու Փենհէսի, գլուխը գալիքը քեզի նշան ըլլայ, այսինքն երկուքին ալ մէկ օրը տան մէջ պիտի մեռնին։ 35— Ու ինծի հաւատարիմ քահանայ մը պիտի հանեմ որ բոլոր իմ սրտիս ու հոգւոյս մէջ եղածը կատարէ։ և անոր հաստատուիմ տուն մը պիտի չինեմ, ու միշտ իմ օծեալս առջեւ պիտի պարսէ։ 36— Ու քու տունէդ ով որ մնայ, կուր մը արծաթի համար ու նկանակ մը հացի համար պիտի գայ անոր երկրպագութիւն ընէ, ու ըսէ, Կ՝աղաչեմ, զիս քահանայական պաշտօնի մը վրայ դիր, որպէս զի պատառ մը հացուտեմ։

Գլ. Գ

Ու Սամուէլ մանուկը Ելղիի առջեւ Տէրոջը ծառայութիւն կ՝ընէր. և այն օրերը Տէրոջը խօսքը հազուագիւտ էր ու յայտնի տեսիլք չկար։ 2—Ու *օր մը՝ Ելղի իր տեղը պառկեր էր. (և անոր աչքերը սկսեր էին ծանրանալ, ու չէր կրնար տեսնել.) 3—Ու Աստուծոյ կանթեղը տակաւին մարած չէր, ու Սամուէլ Տէրոջը տաճարին մէջ կը քընանար, ուր Աստուծոյ տապանակը կար։ 4—Ու Տէրը կանչեց Սամուէլը. ու անիկա Ահա եմ ըսաւ։ 5—Ու Ելղիի վազելով, ըսաւ, Ահա հոս եմ. քանզի զիս կանչեցիր։ Ու անիկա ըսաւ, Ես չկանչեցի. դարձիր պառկէ. Ան ալ դարձաւ պառկեցաւ։ 6—Ու Տէրը մէյմըն ալ Ով Սամուէլ կանչեց. ու Սամուէլ կրկի Ելղիի գնաց ու ըսաւ, Ահա հոս եմ. քանզի զիս կանչեցիր։ Ու անիկա ըսաւ, Որդեակ իմ ես չկանչեցի. դարձիր պառկէ։ 7—Ու Սամուէլ տակաւին Տէրոջը չէր ճանչնար, ու Տէրոջը խօսքը դեռ անոր յայտնուած չէր։ 8—Ու նորէն երրորդ անգամ Տէրը կանչեց, Ով Սամուէլ. ու Սամուէլ կրկի Ելղիի գնաց, ու ըսաւ, Ահա հոս եմ. քանզի զիս կանչեցիր։ Ես Ելղի իմացաւ որ մանուկը կանչողը Տէրն է. 9—Ու Ելղի Սամուէլի ըսաւ, Գնա պառկէ, ու եթէ Դ՝ըսէ ալ քեզ կանչէ, ըսէս, Ով Տէր, խօսէ, քանզի քու ծառադ մտիկ կ՝ընէ։ Ու Սամուէլ գնաց իր տեղը պառկեցաւ։ 10—Ու Տէրը եկաւ կայնեցաւ, ու առաջին անգամներուն պէս Սամուէլ, Սամուէլ, կանչեց. ու Սամուէլ ըսաւ, Խօսէ, Տէր, քանզի քու ծառադ մտիկ կ՝ընէ։ 11—Այն ատեն Տէրը Սամուէլի ըսաւ, Ահա ես Իսրայէլի մէջ Դ՝ըդէ՛ն բան մը պիտի ընեմ, որ զանիկա ամէն լսողին երկու ականջները պիտի խօսին։ 12—Այն օրը Ելղիի վրայ պիտի կատարեմ ամէն ինչ որ անոր տանը վրայով խօսեր եմ. պիտի սկսեմ ու պիտի լմընցնեմ։ 13—Ու իրեն իմացուցեր եմ որ անոր տունը պիտի գտամ մինչեւ յաւիտեան, իր գիտցած անօրէնութեանը համար. քանզի անոր որդիները իրենց վրայ անէծք կը բերեն, ու անիկա չյանգիմանեց զանոնք։ 14—Այս պատճառաւ Ելղիի տանը համար երդում ըրի, որ Ելղիի տանը անօրէնութեանը՝ զոհերով ու ընծաներով յաւիտեան քաւութիւն չըլլայ։

15—Ու Սամուէլ մինչեւ առաւոտ պառկեցաւ, ու եռաքը Տէրոջը տանը դռներուն բացաւ. և Սամուէլ վախցաւ այն տեսիլքը Ելղիի պատմելու։ 16—Բայց Ելղի Սամուէլը կանչեց ու ըսաւ, Որդեակ իմ Սամուէլ։ ու անիկա ըսաւ. Ահա հոս եմ. 17—Ու անիկա ըսաւ, Քեզի ըսած խօսքը ի՞նչ է. խնդրեմ մի պահեր. Աստուած քեզի այսպէս ու աւելի ընէ, եթէ քեզի պրսցած բոլոր խօսքերէն մէկ խօսք ինծմէ պահես։ 18—Ու Սամուէլ բոլոր խօսքերը անոր պատմեց, անկէ չպահեց։ Ու Ելղի ըսաւ, Անիկա Տէրն է. իր աչքերուն հաճոյ երեւցածը թող ընէ։

19—Ու Սամուէլ մեծցաւ, ու Տէրը անոր հետ էր, և իր ըսած խօսքերէն մէ՛կը գետինը չձգեց։ 20—Ու Դանէ մինչեւ Բերսաբէէ բոլոր Իսրայէլ իմացաւ, որ Սամուէլ *հաստատուած է Տէրոջը մարգարէ ըլլալու։ 21—Ու Տէրը Սելովի մէջ նորէն երեւցաւ. քանզի Տէրը Սելովի մէջ Սամուէլի կը յայտնուէր Տէրոջը խօսքովը։ Ու բոլոր Իսրայէլի մէջ Սամուէլի խօսքը կը տարածուէր։

*Եբր. այն օրը

*կամ, հաւատարիմ

*կամ, անոր համար քաւութիւն կ՝ընայ Աստուծոյ առջեւ.

†Եբր. մարդ ըլլա՞ն պիտի՝

Գլ. Դ

Եւ Իսրայէլ պաւերազմով փղշտացիները դիմաւորելու եղաւ, ու Աբենեզերի մէջ բանակեցաւ, ու փղշտացիք Ափեկի մէջ բանակեցան։ 2—Ու փղշտացիք Իսրայէլի դիմաց չարաչարեցան. ու պաւերազմը տարածուեցաւ, և Իսրայէլ յաղթուեցաւ. փղշտացւոց առջև, որոնք պաւերազմի ասպարէզին մէջ յոլս հազար մարդու չափ կոտրեցին։ 3—Ու ժողովուրդը բանակը դարձաւ. և Իսրայէլի ծերերը ըսին, Ինչո՞ւ համար Տէրը փղշտացւոց առջև կոտրեց մեզ այսօր. Տէրոջը ուխտին տապանակը Սեղովէ մեր գով առնենք, ու մեր մէջ գանուի, ու մեզ ազատէ մեր թշնամիներուն ձեռքէն։ 4— Ուստի ժողովուրդը հղկեց դէպ ի Սեղով, և քերովբէներուն վրայ նստող զօրութեանց Տէրոջը ուխտին տապանակը անկէ վերցուցին. ու Հեղիի երկու որդիները, Ոփնի ու Փենէհէս, հոն Աստուծոյ ուխտին տապանակին հետ էին։ 5—Ու երբ Տէրոջը ուխտին տապանակը բանակին մէջ մտաւ, բոլոր Իսրայէլ մեծ ձայնով մը ազաղակեց, ու գետինը ձայն տուաւ։ 6—Ու փղշտացիք այն ազաղակի ձայնը լսելով՝ ըսին, Եբրայեցւոց բանակին մէջ այս բարձրաձայն ազաղակը ի՞նչ պիտի ըլլայ. ու իմացան որ Տէրոջը տապանակը բանակը եկեր է։ 7—Ու փղշտացիք վախցան, քանզի ըսին, Աստուած բանակին մէջ եկաւ. ու նաև ըսին, Վա՜յ մեզի, քանզի մինչև հիմա այսպիսի բան եղած չէ։ 8—Վա՜յ մեզի, այս զօրաւոր Աստուածներուն ձեռքէն ո՞վ մեզ պիտի ազատէ.ասոնք այն Աստուածներն են, որ եգիպտացը ամէն հարուածներով գարիին անապատին մէջ։ 9—Ուժովցէք ու կորիճ եղէք, ով Փղշտացիք, չըլլայ որ Եբրայեցւոց ծառայ ըլլաք, ինչպես անոնք ձեզի ծառայ եղան. ուստի կորիճ եղէք և մեծ հէտ պաւերազմեցէք։ 10—Ու երբ Փղշտացիք պաւերազմեցան, Իսրայէլ յաղթուեցաւ և ամէն մարդ իր վրանը փախաւ, ու շատ մեծ կոտորած եղաւ, և Իսրայէլէ երեսուն հազար հեւեակ զօրք ինկաւ։ 11—Նաև Աստուծոյ տապանակը առնուեցաւ. և Հեղիի երկու որդիները, Ոփնի ու Փենէհէս, մեռան։

12—Ու բենիամինեան մարդ մը բանակէն վազելով՝ նոյն օրը Սեղով հասաւ, ու իր լաթերը պատառ էր, և իր գլուխն վրայ հող դրեր էր։ 13—Ու երբ հոն հասաւ, ահա Հեղի աթոռով մը ճամբուն վրայ նստած կը սպասէր, քանզի Աստուծոյ տապանակին համար սիրտը կը դողար։ Ու երբ այն մարդը քաղաքը մտնելով՝ բան բերը պատմեց, բոլոր քաղաքը ազաղակեց։ 14— Ու Հեղի այն ազաղակին ձայնը լսելով՝ ըսաւ, Այս ազմուկին ձայնը ի՞նչ պիտի ըլլայ։ Ու այն մարդը չուտով վազեց ևկաւ, ու Հեղիի պատմեց։ 15—Ու Հեղի իննսունըմի տարեկան էր, ու աչքերը այնպես *տկարացած էին, որ չէր կրնար տեսնել։ 16—Ու այն մարդը Հեղիի ըսաւ, Ջորքին մէջէն եկայը ես եմ, և պատերազմէն այսօր փախայ. ու ան ինչ ըսաւ, Որդեակ, ի՞նչ եղաւ։ 17—Ու լուր բերողը պատասխան տուաւ ու ըսաւ, Իսրայէլ փղշտացւոց առջեէն փախաւ, ու ժողովուրդին մէջ մեծ կոտորած եղաւ, և որ երկու որդիներդ, Ոփնի ու Փենէհէս, մեռան, ու Աստուծոյ տապանակը առնուեցաւ։ 18—Ու երբ անիկա Աստուծոյ տապանակը յիշեց, Հեղի աթոռէն կռնակի վրայ ինկաւ դրանը քով, և †վիզին ոսկորը կոտրեցաւ ու մեռաւ, քանզի ծեր ու ծանրացած մարդ մըն էր. և անիկա Իսրայէլի մէջ քառասուն տարի դատաւորութիւն ըրած էր։

19—Ու անոր հարսը, փենէհէսի կինը, յղի ու ծննդեան մօտ ըլլալով, երբ Աստուծոյ տապանակին առնուեցաւն և իր կեսրայրին ու էրկանը մեռնելուն լուրը լսեց, ծունկ ծռելով ծնաւ, քանզի ցաւերը անոր վրայ կոխեցին։ 20—Ու երբ կը մեռնէր, գովը կանգնող կիներըն անոր ըսին, Մի վախնար, վասն զի գուռ ծնած տղայ է. բայց անիկա պատասխան չտուաւ և ուշադրութիւն չըրաւ։ 21—Ու տղան անունը *Իքաբոդ կոչեց, ըսելով, Իսրայէլէ փառքը վերցաւ. (քանզի Աստուծոյ տապանակը առնուեցաւ, և անոր կեսրայրը ու այրը հետն.) 22—Անոր համար ըսաւ, Աստուծոյ տապանակին առնուելուն համար Իսրայէլէ փառքը վերցաւ։

*Եբր կեցած
†Կամ, կռնակին

Գլ. Ե

Եւ Փղշտացիք Աստուծոյ տապանակը առին, ու զանիկա Աբենեզերէ †Ազովտոս տարին։ 2— Ու Փղշտացիք Աստուծոյ տապանակը առին, ու զանիկա Դագոնի տունը տարին, և Դագոնի քով դրին։ 3—Ու հետեւեալ օրը Ազովտացիք առաւօտուն կանուխ ելլելով, տեսան որ Դագոն Տէրոջը տապանակին առջև երեսի վրայ գետինը ինկեր էր. ու անոնք Դագոնը վերցուցին իր տեղը դրին։ 4—Ու հետեւեալ օրը դ-էյ-ւ առաւօտուն կանուխ ելան, ու տեսան որ Դագոն Տէրոջը տապանակին առջև երեսի վրայ գետինը ինկեր էր, և Դագոնի գլուխը ու ձեռքերուն երկու թաթերը կտրած՝ սեմնին վրայ էին։ Ե միայն ‡Դագոնի մարմինը" մնացեր էր։ 5—(Այս պատճառաւ Դագոնի քուրմերը ու Դագոնի տունը բոլոր մտնողները մինչև այսօր Ազովտոս եղող Դագոնի սեմնին վրայ չեն կոխեր։) 6—Անկ եաև Տէրոջը ձեռքը Ազովտացւոց վրայ ծանրացաւ, ու զանոնք կործանեցուց, և զանոնք Ազովտոսի ու անոր սահմաններուն մէջ բանջրի ուռեցքներով զարկաւ։

7—Ու Ազովտոսի բնակիչները այսպէս ըլլալը տեսնելով՝ ըսին, Իսրայէլի Աստուծոյ տապանակը մեր քով չկենայ. քանզի անոր ձեռքը մեր վրայ ու մեր Աստուծոյն Դագոնի վրայ ծանրացաւ։ 8—Ու ղրկեցին, ու Փղշտացւոց բոլոր նախարարները իրենց քով ժողվեցին, ու ըսին, Իսրայէլի Աստուծոյն տապանակը ի՞նչ ընենք. ու ըսին, Իսրայէլի Աստուծոյն տապանակը Գէթ փոխադրուի։ Իսրայէլի Աստուծոյն տապանակը Գէթ փոխադրեցին։ 9—Ու զանիկա հոն փոխադրելէ ետքը, Տէրոջը ձեռքը այն քաղաքին վրայ ըլլալով՝ մեծ խռովութիւն եղաւ. ու քաղաքին մարդիկը պզտիկէն մինչև մեծը զարկաւ. և անոնց վրայ թանչքի ուռեցքներ երեւցան։

10—Ու Աստուծոյ տապանակը Ակկարոն ղրկեցին. ու երբ Աստուծոյ տապանակը Ակկարոն մտաւ, Ակկարոնացիք կանչըռտելով ըսին, Իսրայէլի Աստուծոյն տապանակը մեզի բերին՝ որպէս զի մեզ ու մեր ժողովուրդը մեռցընեն։ 11—Ու ՛ղրկելով՝ փղշտացւոց բոլոր նախարարները ժողվեցին, ու ըսին, Իսրայէլի Աստուծոյն տապանակը թող ուրեք երթայ և իր տեղը գառնայ, որպէս զի մեզ ու մեր ժողովուրդը չմեռցնէ. քանզի բոլոր քաղաքին մէջ մահաւէտ սոսկում մը կար ու հոն Աստուծոյ ձեռքը խիստ ծանրացեր էր։ 12—Ու չմեռած մարդիկը թանչքի ուռեցքներով զարնուեցան, ու քաղաքին աղաղակը երկինք եղաւ։

Գլ. Զ

Եւ Տէրոջը տապանակը փղշտացւոց երկրին մէջ եօթը ամիս մնաց։ 2—Ու փղշտացիք էրէց քուրմերը ու բախտ նայողները կանչեցին ու ըսին, Ս՛ովոյի տապանակին ի՞նչ ընենք. մեզի խնդացեցէք թէ զանիկա ինչո՛վ իր տեղը դրկենք։ 3—Անոնք ալ ըսին, Եթէ Իսրայէլի Աստուծոյն տապանակը ղրկէք, զանիկա պարապ չղրկէք, հապա անպատճառ յանցանքի պատարագ տուէք անոր. այն ատեն կը բժշկուիք, ու ձեզի յայտնի կ՛ըլլայ թէ ինչո՛ւ համար անոր ձեռքը ձեր վրայէն չերթար։ 4— Ու անոնք ըսին, Անոր ի՞նչ տեսակ պատարագ մատուցանենք։ Ու անոնք ըսին, Փղշտացւոց նախարարներուն թիւովը հինգ ոսկեղէն թանչքի ուռեցքներ ու հինգ ոսկի մուկ ըստ թուի քանի ձեր ամէնուն վրայ և ձեր նախարարներուն վրայ մեռնողին հարուա-

*Այսինքն, անպատիւ.
†Ոմն Ե Ասեդովթ
‡Կամ, ձուկը. Եբր. Դագոն

ծր եղաւ։ 5—Ու հիմա ձեր Թանչքի ուռնգքներուն պահակները, ու ձեր երկիրը ապրող մուկերուն պահակները չինեցէք, ու Իսրայէլի Աստուծոյն փառք ատէք։ կարելի է որ իր ձեռքը ձեր վրայէն, ձեր աստուածներուն վրայէն ու ձեր երկրին վրայէն *վերցնէ։ 6—Ու ինչո՞ւ համար ձեր սիրտերը կը խստացնէք, ինչպես Եգիպտացիք ու Փարաւոն իրենց սիրտերը խստացուցին. չի՞ որ Աստո՞ծ անոնց մէջ հրաշալի գործեր ընելէն ետքը՝ զանոնք թող ատին որպէս զի երթան։ 7—Հիմա նոր սայլ մը շինեցէք, ու երկու հատ կաթնատու երինջ առէք, որոնց վրայ բնաւ լուծ դրուած չըլլայ. ու երինջները սայլին լծեցէք, և անոնց ձագերը անոնց հետէն տուն դարձուցէք։ 8—Ու Եհովայի տապանակը առէք, և զանիկա սայլին վրայ դրէք, ու այն ոսկիէղէն †պատկերները զորանք դուք յանցանքի համար անոր ընծայ պիտի ատաք, պզտիկ արկղով մը անոր մէկ կողմը դրէք, ու զանիկա ղրկեցէք որպէս զի երթայ։ 9—Ու նայեցէք, եթէ իր սահմանին ճամբովը Բեթսամիս ելլէ, այս մեծ չարիքը մեզի ընողը անիկա է. ապա թէ ոչ՝ գիտնանք որ անոր ձեռքը չէ՝ մեզի դպած չէ, հա՛ այս բանը դիպուածով պատահեցէ մեզի։

10—Ու այն մարդիկը այսպէս ըրին. երկու հատ կաթնատու երինջ առին, ու զանոնք սայլին լծեցին, և անոնց ձագերը տան մէջ գոցեցին։ 11—Ու Տէրոջը տապանակը, և ոսկի մուկերուն ու իրենց Թանչքի ուռնգքներու պատկերները պզտիկ արկղը սայլին վրայ դրին։ 12—Ու երինջները շիտակ Բեթսամիսի ճամբան բռնեցին, ու մեծ ճամբայն քառասնելով կ'երթային, և ալ կամ ձախ կողմը չխոտորեցան. ու փղշտացւոց նահապարները մինչև Բեթսամիսի սահմանը անոնց հետէն գացին։ 13—Ու Բեթսամիսացիք հովիտին մէջ ցորեն հունձք կը հնձէին, ու իրենց աչքերը վերցնելով տապանակը տեսան, ու տեսնելնուն համար ուրախացան։ 14—Ու սայլը Բեթսամիսացի Յեհոսի արտը մտաւ ու հոն կայնեցաւ, ուր մեծ քար մը կար. ու սայլին փայտերը ձեղքեցին, և այն երինջները Տէրոջը ողջակէզ մատուցին։ 15—Ու Ղեւտացիք Տէրոջը տապանակը և անոր հետ եղող ոսկի պատկերները պզտիկ արկղը վար իջեցուցին, ու այն մեծ քարին վրայ դրին. և այն օրը Բեթսամիսի մարդիկը Տէրոջը ողջակէզներ ու զոհեր մատուցին։ 16—Ու փղշտացւոց հինգ նախարարները —այս ՔՒՐՈՆը տեսնելէ ետքը՝ նոյն օրը Ակկարան դարձան։ 17—Ու այն ոսկիզէն Թանչքի ուռնգքները, զորոնք փղշտացիք յանցանքի համար Տէրոջը ընծայ ատին, ասոնք էին. Մէկ հատ Ազոտոսի համար, մէկ հատ Գազայի համար, մէկ հատ Ասկաղոնի համար, մէկ հատ Գէթի համար — մէկ հատ Ակկարոնի համար։ 18—Ու ոսկի մուկերը փղշտացւոց հինգ նախարարութիւններուն բոլոր քաղաքներուն թիւովը էին, պարսպաւոր քաղաքէն մինչև անպարիսպ գեղը, ու մինչև այն մեծ քարը՝ որուն վրայ Տէրոջը տապանակը դրուեցաւ։ — մինչև այսօր — այդ դաշտը Բեթսամիսացի Յեհոսի արտին մէջ կը կենայ։

19—Ու Տէրը Բեթսամիսի մարդիկը զարկաւ, քանի՛ անոնք Տէրոջը տապանակին մէջ նայեցան. ու ժողովուրդէն յիսուն հազար հօթանասուն մարդ զարկաւ. և Տէրը ժողովուրդին մէջ կոտորած ընելուն համար ժողովուրդը սուգ բռնեց։ 20—Ու Բեթսամիսի մարդիկը ըսին, Ա՛յս սուրբ Տէր Աստուծոյն առջև ո՞վ կրնայ կայնիլ. ու մեր քովէն որո՞ւ կելլէ։ 21—Ու կարիաթարիմի բնակիչներուն պատգամաւորներ ղրկեցին՝ ըսելով, Փղշտացիք Տէրոջը տապանակը կա բերին. իջէք ու զանիկա ձեր քով հանեցէք։

ԳԼ. Ի

Ու կարիաթարիմի մարդիկը գացին, ու Տէրոջը տապանակը առնէ հանեցին, և զանիկա աբրին Աբինադաբի տունը որ բլուրին վրայ էր. ու անոր որդին Եղիազարը †որաշեցին որպէս զի Տէրոջը տապանակին պահպանութիւնը ընէ։ 2—Ու տապանակը կարիաթարիմի մէջ դրուած օրէն հազը չատ օրեր անցան, ու քսան տարի եղաւ և Իսրայէլի բոլոր տունը Տէրոջը հառաչեցին։

3—Այն ատեն Սամուէլ Իսրայէլի բոլոր տանը խօսեցաւ՝ ըսելով, Եթէ դուք ձեր բոլոր սրտովը Տէրոջը դարձի կ'ըլլաք, ձեր մէջէն օտար աստուածները ու Աստարովթը վերցուցէք, և ձեր սիրտերը Տէրոջը պատրաստեցէք, ու միայն զանիկա պաշտեցէք. ու անիկա փղշտացւոց ձեռքէն ձեզ պիտի ազատէ։ 4—Ու Իսրայէլի որդիները Բահաղիմը ու Աստարովթը վերցուցին, ու միայն Տէրոջը ծառայութիւն ըրին. 5—Ու Սամուէլ ըսաւ, Բոլոր Իսրայէլը Մասփայի մէջ ժողվեցէք, ու ձեզի համար Տէրոջը աղօթք ընեմ։ 6—Ու Մասփայի մէջ ժողվուեցան, ու ջուր քաշեցին և Տէրոջը առջև թափեցին. ու այն օրը ծոմ բռնեցին, և հոն ըսին, Տէրոջը դէմ մեղք գործեցինք։ Ու Սամուէլ Մասփայի մէջ Իսրայէլի որդիներուն դատաւորութիւն բրաւ։

7—Ու երբ փղշտացիք լսեցին որ Իսրայէլի որդիները Մասփայի մէջ ժողվուեր են, փղշտացւոց նախարարները Իսրայէլի դէմ ելան. ու Իսրայէլի որդիները չ֊ո՞ ըսելով՝ փղշտացւոց երեսէն վախցան։ 8—Ու Իսրայէլի որդիները Սամուէլի ըսին, Անդադար մեր Տէր Աստուծոյն աղաղակէ մեզի համար, որպէս զի մեզ փղշտացւոց ձեռքէն ազատէ։ 9—Ու Սամուէլ կաթնակեր գառնուկ մը առաւ, ու զանիկա բոլորովին ողջակէզ րրաւ Տէրոջը. և Սամուէլ Իսրայէլի համար Տէրոջը աղաղակելով —չըխ՛ ըբ— ու Տէրը անոր պատասխան տուաւ։

10—Ու երբ Սամուէլ ողջակէզը կը մատուցանէր, փղշտացիք մօտեցան որպէս զի Իսրայէլի դէմ պատերազմ ընեն. և Տէրը նոյն օրը փղշտացւոց վրայ մեծ ձայնով մը որոտաց, ու զանոնք խռովեցուց. ու Իսրայէլի առջև զարնուեցան։ 11—Ու Իսրայէլի մարդիկը Մասփայէ ելլելով փղշտացիները հալածեցին, ու մինչև Բեթքարի տակ զանոնք կատրեցին։ 12—Այն ատեն Սամուէլ քար մը առաւ, և Մասփայի ու Սենի միջտեղ կանգնեց, ու անոր անունը Աբենեզեր կոչեց, ըսելով, Տէրը մինչև այստեղ մեզի օգնեց։ 13—Ու փղշտացիք կատղելու եղան, ու ալ Իսրայէլի սահմանին մէջ չմտան. ու Սամուէլի բոլոր օրերը Տէրոջը ձեռքը փղշտացւոց վրայ էր։ 14—Ու փղշտացիք Իսրայէլէ առնած քաղաքները որ առէր էին, Ակկարոնէ մինչև Գէթ, Էկրոնէ ու Իսրայէլի ետ տուեցան ու Իսրայէլ անոնց սահմանները փղշտացւոց ձեռքէն ազատեց. և Իսրայէլի ու Ամորհացւոց մէջտեղ խաղաղութիւն կար։

15—Ու Սամուէլ իր կեանքին բոլոր օրերուն մէջ Իսրայէլը դատեց։ 16—Ու տարէ տարի Բեթէլ, Գազգատ ու Մասփա կ'երթար կը պտրտէր, և բոլոր այն տեղերը Իսրայէլը կը դատէր։ 17—Ու †Հռմա կը դառնար, քանզի իր տունը հոն էր. և հոն կը դատէր Իսրայէլը, ու հոն Տէրոջը սեղան չինեց։

ԳԼ. Կ

Ու երբ Սամուէլ ծերացաւ, իր որդիները Իսրայէլի վրայ դատաւոր դրաւ։ 2—Ու իր անդրանիկ որդւոյն անունը Յովէլ, ու երկրորդին անունը Աբիա էր, ու Բերսաբէէի մէջ դատաւորութիւն կ'ընէին։ 3—Ու անոր որդիները անոր ճամբաներուն մէջ չգացին, հապա ագահութեան եաեւէ խնդալով՝ կաշառք կ'առնէին, և իրաւունքը կը ծռէին։

4—Ու Իսրայէլի ամէն ծերերը ժողվուեցան, ու Ռամա Սամուէլի գացին, 5—Ու անոր ըսին, Ահա դուն ծերացեր ես, ու քու որդիներդ քու ճամբաներուդ մէջ չեն քալեր. ասոր հիմա մեր վրայ թագաւոր մը դիր, որպէս զի ամէն ազգերուն պէս մեզ †կատարէ։ 6—Ու այս բանը Սամուէլի աչքին դէշ երեւցաւ, որ ըսին թէ Մեզի թագաւոր մը տուր, որպէս զի մեզ կատարե-

*Եբր. Թեթեւցնէ

†Եբր. անօթներըը

*Եբր. որբեցին

†Այինպէս, օգնութեան քար

†Եբր. դատէ

րէ. ու Սամուէլ Տէրոջը ազօթք ըրաւ։ **7**—Ու Տէրը Սամուէլի ըսաւ, Ժողովուրդին խօսքը ու անոնց ձեզի ամէն ըսածը մարիլ ըրէ. քանզի անոնք ձեզ չեն մերժեր, այլ ինծ կը մերժեն, որպէս զի անոնց վրայ չիթագաւորեմ։ **8**—Զանոնք եգիպտոսէ հանած օրէս մինչեւ այսօր ինչ որ ըրին, ինծ թող ասլով և ուրիշ աստուածներու ծառայելով ընելով, նոյնը ձեզի ալ կ'ընեն։ **9**—Ու հիմա դուն անոնց խօսքը մարիլ ըրէ. բայց անոնց յայտնի վկայութիւն ընես, ու անոնց վրայ իշխելու թագաւորին վարմունքը անոնց իմացնես։

10—Ու Սամուէլ Տէրոջը բոլոր խօսքերը իրմէ թագաւոր ուզող ժողովուրդին զրուցեց։ **11**—Ու ըսաւ, Ձեր վրայ իշխելու թագաւորին վարմունքը ասիկա պիտի ըլլայ. ձեր ազաքը պիտի առնէ, ու զանոնք իրեն համար իր կառքերուն ու ձիերուն վրայ պիտի դնէ. և իր կառքերուն առջեւէն պիտի վազեն։ **12**—Ու իրեն հազարապետներ ու հիւնտապետներ պիտի ընէ, եւ իր արտերը պիտի հերկեն, ու հունձքերը հնձեն, եւ իր պատերազմական զէնքերը ու կառքերուն գործիքները շինեն։ **13**—Ու ձեր աղիկները պիտի առնէ, որպէս զի իւղագործ, խոհարար ու հացթփեաց ըլլան։ **14**—Ու ձեր ընտիր արտերը, այգիները ու ձիթենիները առնելով իր ծառաներուն պիտի տայ։ **15**—Ու ձեր հունտերուն ու ձեր այգիներուն տասանորդը պիտի առնէ, ու զանիկա իր ներքինիներուն ու ծառաներուն պիտի տայ։ **16**—Ու ձեր ծառաները ու աղախինները, ու ձեր ամէնէն ազնիւ կործճները, և ձեր էշերը պիտի առնէ ու իր ծառայութեանը գործածէ։ **17**—Ձեր հօտերուն տասանորդը պիտի առնէ, ու դուք անոր ծառաներ պիտի ըլլաք։ **18**—Ա՛յն օրը դուք ձեր ընտրած թագաւորին պատճառաւ պիտի աղաղակէք, բայց Տէրը այն օրը ձեզի պատասխան պիտի չտայ։

19—Սակայն ժողովուրդը Սամուէլի խօսքը մարիլ ընել չուզելով ըսին, Ոչ, անպատճառ մեր վրայ թագաւոր մը ըլլայ։ **20**—Ու մենք ալ բոլոր ազգերուն պէս ըլլանք, և մեր թագաւորը մեզ կառավարէ. անիկա մեր առջեւէն ելլէ, ու *մեր պատերազմներուն մէջ առաջնորդութիւն ընէ։ **21**—Ու Սամուէլ ժողովուրդին բոլոր խօսքերը լսեց, ու զանոնք Տէրոջը ականջներուն զրուցեց։ **22**—Ու Տէրը Սամուէլի ըսաւ, Անոնց խօսքը մարիլ ըրէ, ու անոնց վրայ թագաւոր մը դիր։ Ա՛յն ատեն Սամուէլ Իսրայէլի մարդոցն ըսաւ, Թող ամէն մարդ իր քաղաքը երթայ։

Գլ. Թ

Ու Բենիամինի սպիւնէրէն կիս առնունով զօրաւոր մարդ մը կար. ու անոր Բենիամինեան Ափիայի որդւոյն Բեքորաթի որդւոյն Սերօրի որդւոյն Արիելի որդին էր։ **2**—Ու անոր որդի մը ունէր, որուն անունը Սաուղ էր. անիկա կարճ ու գեղեցիկ էր, ու իսրայէլի որդիներուն մէջ անկէ գեղեցիկ մարդ չկար. բոլոր ժողովուրդէն ուսէն վեր երկայն էր։

3—Ու Սաուղի հօրը կիսի էշերը կորսուեցան. ու կիս իր որդւոյն Սաուղի ըսաւ, Մանչերէն մէկը քեզի հետ առ, ու ելլէր դնա էշերը փնտռէ։ **4**—Ան ալ Եփրեմի լեռնէն անցաւ, և Սալիսա երկրէն ալ անցնելով՝ զանոնք չգտան. հոքը Սալիմի երկրէն անցան, ու հոն ալ չէին. անկէ Բենիամինեանց երկիրը անցնելով՝ հոն ալ զանոնք չգտան։ **5**—Ու երբ անոնք †Սուփի երկիրը հկան, Սաուղ իրեն հետ եղող մանչուն ըսաւ, Եկուր հա դառնանք, չըլլայ որ իմ հայրս էշերուն հոգը թողու ու մեզի համար հոգայ։ **6**—Բայց անիկա անոր ըսաւ, Ահա այս քաղաքին մէջ Աստուծոյ մարդը կայ, ու անիկա պատուաւոր մարդ մըն է, անոր ամէն ըսածը անշուշտ կը կատարուի. հիմա հոն երթանք, թերեւս մեր երթալու ճամբան մեզի իմացնէ։ **7**—Ու Սաուղ իր մանչուն ըսաւ, Բայց եթէ երթալու ըլլանք, այն մարդուն ի՞նչ տանինք. քանզի մեր անօթներէն հացը պակսեցաւ, ու Աստուծոյ մարդուն տանելու ընծայ մը չունինք. մեր քով ի՞նչ ունինք։ **8**—Ու մանչը նորէն Սաուղի պատասխան տուաւ ու ըսաւ, Ահա իմ քովս մէկ սիկղին չորրորդ մասը արծաթ կայ. զանիկա Աստուծոյ մարդուն կու տամ, որպէս զի մեր ճամբան մեզի իմացնէ։ **9**—(Առաջ Իսրայէլի մէջ մարդ մը երբ Աստուծոյ հարցընելու կ'երթար, այսպէս կ'ըսէր, Եկուր տեսանողին երթանք. քանզի այսօր մարգարէ ըսուածը առաջ տեսանող կ'ըսուէր։) **10**—Ու Սաուղ իր մանչուն ըսաւ, Ազէկ ըսիր, եկուր երթանք. ու Աստուծոյ մարդուն բնակած քաղաքը գացին։ **11**—Ու երբ անոնք զառ ի վերէն դէպ ի քաղաքը կ'ելլէին, քանի մը աղիկներ գտան, որոնք լուր հանելու ելլեր էին, ու անոնց ըսին, Տեսանողը հո՞ն է։ **12**—Ու աղիկները անոնց պատասխան տուին ու ըսին, Հո՛ն է, ահա քու առջեւդ է. հիմա չուտ ըրէ, քանզի ժողովուրդին այսօր բարձր տեղին վրայ զոհ ընելուն համար, անիկա այսօր քաղաքը եկաւ։ **13**—Քաղաքը մտնելնուդ պէս զանիկա հոն կը գտնէք, քանի որ անիկա բարձր տեղը ելած չէ կերակուր ուտելու համար. քանզի մինչեւ անոր գալը ժողովուրդը կերակուր չուտեր, որովհետեւ անիկա կ'օրհնէ զոհը, ու անկէ ետքը հրաւիրուածները կ'ուտեն, հիմա ելէք, քանզի հիմա կը գտնէք զանիկա։ **14**—Ու անոնք քաղաքին մէջ կը մտնէին, ահա Սամուէլ բարձր տեղը երթալով՝ անոնց դէմը ելաւ։

15—Ու Սաուղի գալէն օր մը առաջ Տէրը Սամուէլի յայտներ էր, ու ըսեր էր թէ **16**—Վաղը այս ատեն բենիամինի երկրէն քեզի մարդ մը պիտի ղրկեմ, և զանիկա իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ իշխան օծէս, որպէս զի անիկա իմ ժողովուրդս Փղշտացւոց ձեռքէն ազատէ. քանզի ժողովուրդիս դէպ՚ի՚ինծ նայեցայ, որովհետեւ անոր աղաղակը ինծի հասաւ։ **17**—Ու երբ Սամուէլ Սաուղը տեսաւ, Տէրը անոր ըսաւ, Ահա՛ այս է քեզի ըսածս մարդս. ասիկա իմ ժողովուրդիս վրայ պիտի իշխէ։ **18**—Ու Սաուղ դրանը մէջտեղը Սամուէլի մօտեցաւ, ու ըսաւ, Տեսանողին տունը ո՞ւր է, կ'ազաչեմ, ինծի ցուցուր։ **19**—Ու Սամուէլ պատասխան տուաւ Սաուղի ու ըսաւ, Տեսանողը ես եմ. իմ առջեւէս բարձր տեղը ելիր, քանզի այսօր ինծի հետ կերակուր պիտի ուտէք. և վաղը քեզ կը ղրկեմ, ու բոլոր սրտիդ մէջ եղածը քեզի կը պատմեմ։ **20**—Ու քու երեք օրուընէ ի վեր կորսուած էշերուդ համար մի հոգար, քանզի անոնք գտնուած են. ու Իսրայէլի բոլոր *փափաքը որո՞ւ է, քեզի ու քու հօրդ բոլոր տանը չէ՞, **21**—Ու Սաուղ պատասխան տուաւ ու ըսաւ, Ես Իսրայէլի ցեղերուն ամէնէն պզտիկին Բենիամինեան չե՞մ, ու իմ ազգատոհմս Բենիամինի ցեղին բոլոր ազգատոհմերուն պզտիկը չէ՞, ուստի ինչո՞ւ համար ինծի այդպիսի խօսք զրուցեցիր։ **22**—Ու Սամուէլ առաւ Սաուղը ու անոր մանչը, ու զանոնք ներս տարաւ, և զանոնք կոչնականներուն գլուխը նստեցուց, որոնք երեսուն մարդու չափ էին։ **23**—Ու Սամուէլ խոհարարին ըսաւ, Բեր այն բաժինը զոր քեզի տուի, ու քեզի պահուիրեցի որ զանիկա քովդ պահես։ **24**—Ու խոհարարը ազդրը վրայի հատը վերցնելով, զանիկա Սաուղի առջեւ դրաւ։ Ու Սա՛մուէլ ըսաւ, Ահա՛ասիկ մնացածը, զանիկա առջեդ դիր ու կեր. քանզի երբ ըսի որ ժողովուրդը †հրաւիրեր եմ՚, այն վկայեականէն ի վեր անիկա քեզի համար պահուած է. ու այն օրը Սաուղ Սամուէլի հետ կերաւ։

25—Ու բարձր տեղէն քաղաքը իջան, ու Սա՛մուէլ էր տանը տանիքին վրայ Սաուղի հետ խօսեցաւ։ **26**—Ու առաւօտուն կանուխ էրան, ու լուացածին պէս Սամուէլ Սաուղը տանիքը կանչեց ու ըսաւ, Ելիր ու քեզ պիտի ղրկեմ։ Ու Սաուղ ելաւ, ու ինք և Սամուէլ միւսներ ելան։ **27**—Երբ անոնք քաղաքին ծայրը կ'իջնէին, Սամուէլ ըսաւ Սաուղին, Մանչուն ըսէ որ մեր առջեւ անցնի. (և անիկա անցաւ։)

*Եբր. պատերազմները պատերազմի †Կամ, Մօիփմի. տես Գլ. Ա. 1։

*Կամ, վայելչութիւնը †Կամ, հրաւիրեմ

ու հիմա դուն հոս կեցիր, որպէս զի Աստուծոյ պատգամը քեզի իմացնեմ։

ԳԼ. Ծ

Եւ Սամուէլ իւղին շիշը առաւ, ու անոր գլխուն վրայ թափեց, և զանիկա համբուրեց ու ըսաւ, Չի՞ որ Տէրը քեզ իր ժառանգութեանը վրայ իշխան օծեց։ 2—Այսօր ինծի գացած ատենդ Բենիամինի սահմանը Սելսահի մէջ՝ Ռաքելի գերեզմանին քով երկու մարդ պիտի գտնես, ու քեզի պիտի ըսեն, Գտնուեցան այն էշերը զորոնք փընտռելու գացած էիր։ և ահա քու հայրդ էշերուն հոգը թողուց, ու ձեզի համար կը հոգայ, ու կ'ըսէ, Ցդուս համար ի՞նչ ընեմ։ 3—Ու երբ անկէ անդին երթաս և Թափորի կաղնին հասնիս, հոն երեք մարդ քեզի պիտի հանդիպին, որոնց մէկը երեք ուլ, մէկը երեք հացի նկատակ ու մէկն ալ տիկ մը գինի տանելով՝ Աստուծոյ կ'ելլեն դէպ ի Բեթէլ։ 4—Ու քու ողջութիւնդ հարցնելով՝ քեզի երկու հաց պիտի տան, դուն ալ անոնց ձեռքէն պիտի առնես։ 5—Անկէ ետքը Աստուծոյ բլուրը պիտի երթաս, ուր փղշտացոց բերդապահ զօրքը կը կայ։ ու երբ հոն քաղաքը մտնես, բարձր տեղէն իջնող մարգարէներու դունդի մը պիտի հանդիպիս, որոնք երեսնց առջևէն տաւիղ, թմբուկ, սրինգ ու քնար ունենալով մարգարէութիւն պիտի ընեն։ 6—Ու քու վրադ Տէրոջը Հոգին պիտի գայ, ու անոնց հետ մարգարէութիւն պիտի ընես. և դուն պիտի փոխուիս, ուրիշ մարդ մը պիտի ըլլաս։ 7—Ու երբ այս նշանները քու վրադ գան, ձեռքէդ եկածը ընես, քանի Աստուած քեզի հետ է։ 8—Ու ինծմէ առաջ գաղգաղա իջնես. և ահա ես քեզի պիտի իջնեմ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցանելու համար. և դուն եօթը օր սպասես, մինչև որ ես քեզի գամ, ու քու ընելու գործդ քեզի իմացնեմ։

9—Ու երբ անկից իր կռնակը դարձուց՝ Սամուէլի քովէն երթալու համար, Աստուած անոր ուրիշ սիրտ մը տուաւ. և նոյն օրը այս բոլոր նշանները կատարուեցան։ 10—Ու երբ հոն բլուրը եկան, ահա մարգարէից գունդը անոր առջև ելաւ. և անոր վրայ Աստուծոյ Հոգին եկաւ, ու անոնց մէջ մարգարէութիւն ըրաւ։ 11—Ու ամէն անոնք որ զանիկա առաջուընէ կը ճանչնային, երբ տեսան որ անիկա մարգարէներուն հետ մարգարէութիւն կ'ընէ, ժողովուրդը իրարու ըսին, Այս ի՞նչ բան է որ Կիսի որդւոյն հանդիպեր է. միթէ Սաուէլ ալ մարգարէներուն մէջ է։ 12—Ու այն տեղի մարդացէմ մէկը պատասխան տուաւ ու ըսաւ, Հապա անոնց հայրը ո՞վ է։ Անոր համար ասկից առակ մը եղաւ, Միթէ Սաուէլ ալ մարգարէներուն մէջ է։ 13—Ու երբ մարգարէութիւն ընելը լմնցուց, բարձր տեղը եկաւ։

14—Ու Սաուղի հօրեղբայրը անոր ու անոր մանչուն ըսաւ, Ո՛ր գացիք։ Ու անիկա ըսաւ, Էշերը փնտռելու. բայց երբ տեսանք որ չկան, Սամուէլի գացինք։ 15—Ու Սաուղի հօրեղբայրը ըսաւ, Սամուէլ ձեզի ի՞նչ չըսուցց, պատմէ ինծի։ 16—Ու Սաուղ իր հօրեղբօրը ըսաւ, Էշերուն գտնուիլը մեզի յայտնապէս իմացուց։ Բայց թագաւորութեան վրայով Սամուէլի ըսած խօսքը անոր չյայտնեց։

17—Ու Սամուէլ ժողովուրդը Մասփայի մէջ Տէրոջը առջև ժողվեց։ 18—Ու Իսրայէլի որդիներուն ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Ես Իսրայէլը Եգիպտոսէ հանեցի, ու ձեզ Եգիպտացւոց ձեռքէն և ձեզի նեղութիւն տուող բոլոր թագաւորութեանց ձեռքէն ազատեցի։ 19—Ու դուք այսօր ձեր Աստուածը մերժեցիք, որ ձեր ամէն չարիքներէն ու նեղութիւններէն ձեզ ազատեց, ու անոր ըսիք, Անպատճառ մեր վրայ թագաւոր մը դիր։ Ուրեմն հիմա ձեր ցեղերովը ու հազարաւորներովը Տէրոջը առջև կայնեցէք։ 20—Ու երբ Սամուէլ Իսրայէլի ամէն ցեղերը մօտեցուց, վիճակը Բենիամինի ցեղին ելաւ։ 21—Ետքը Բենիամինի ցեղը ազգատոհմերովը մօտեցուց, ու վիճակը Մատրիի ազգատոհմին ելաւ. եւ ետքը Կիսի որդւոյն Սաուղի ելաւ. բայց երբ զանիկա փընտռեցին, անիկա չգտնուեցաւ։ 22—Ու նորէն Տէրոջը հարցուցին, Թէ Արդեօք այն մարդը հոս կու գայ։ ու Տէրը ըսաւ, Ահա անիկա կարասիներուն մէջ տեղը պահուած է։ 23—Ու վազելով՝ զանիկա անկէ առին, ու ժողովուրդին մէջտեղը կայնեցաւ. և բոլոր ժողովուրդէն ուսէն վեր երկայն էր։ 24—Ու Սամուէլ բոլոր ժողովուրդին ըսաւ, Տէրոջը ընտրած մարդը տեսա՞ք, որ բոլոր ժողովուրդին մէջ անոր պէս չկայ. և բոլոր ժողովուրդը աղաղակեց ու ըսաւ, Կեցցէ՛ արքայ։ 25—Ու Սամուէլ թագաւորութեան կանոնները ժողովուրդին զրուցեց, ու զանոնք գիրքի մը մէջ գրեց, ու Տէրոջը առջև դրաւ. և Սամուէլ բոլոր ժողովուրդը արձակեց, ուրեմն ի՛ւրաքանչիւրը իր տունը երթալով։ 26—Սաուղ ալ Գաբաա իր տունը գնաց. ու խումբ մը մարդիկ անոր հետ գացին, որոնց սիրտը Աստուած դպրեցուցած էր։ 27—Բայց չար մարդիկ ըսին, Ասիկա մեզ ի՞նչպէս պիտի ազատէ. ուստի զանիկա քաամհրեցին, ու անոր ընծայ մը չտարին. բայց անիկա լուռ կեցաւ։

ԳԼ. ԺԱ

Եւ Ամմոնացի Նաասա ելաւ, ու Գաղաադու Յաբէսի դէմ բանակեցաւ. և Յաբէսի բոլոր բնակիչները Նաասի ըսին, Մեզի հետ դաշնակցութիւն ըրէ, ու քեզի ծառայենք։ 2—Բայց Ամմոնացի Նաասա անոնց ըսաւ, Ձեզի հետ այս պայմանով դաշնակցութիւն կ'ընեմ, որ ձեր ամէնուն ալ կողմի աչքը փորեմ, ու այս բանը բոլոր Իսրայէլի վրայ նախատինք դնեմ։ 3—Ու Յաբէսի ծերերը անոր ըսին, Մեզի եօթը օր ժամանակ տուր, որպէս զի Իսրայէլի բոլոր սահմաններուն պատգամաւորներ ղրրկենք, ու եթէ մեզ ազատող չըլլայ, այն ատեն քեզի «անձնատուր կ'ըլլանք»։

4—Ուստի պատգամաւորները Սաուղի Գաբաան գացին, և ժողովուրդին ականջներուն այս խօսքերը զրուցեցին. ու բոլոր ժողովուրդը ձայներնին վերցնելով լացին։ 5—Ու ահա Սաուղ արտէն կու գար էզներուն հետևէն. ու Սաուղ ըսաւ, Ժողովուրդին ի՞նչ եղաւ որ կու լայ. ու Յաբէսի բնակիչներուն խօսքերը անոր պատմեցին։ 6—Ու այս խօսքերը երբ լսեց, Աստուծոյ Հոգին Սաուղի վրայ եկաւ, ու անոր բարկութիւնը խիստ բորբոքեցաւ։ 7—Ու զոյգ մը եզ առաւ, ու զանոնք կոտոր կոտոր ըրաւ, ու պատգամաւորներուն ձեռքով Իսրայէլի բոլոր սահմաններուն զրկեց՝ ըսելով, Ով որ Սաուղի հետևէն ու Սամուէլի հետևէն չգայ, անոր եզներուն այսպէս պիտի ընեն։ Ու ժողովուրդին վրայ Տէրոջը վախը իյնաց, ու՝ Հէնց մէկ մարդու պէս ելան։ 8—Ու Բեզեկի մէջ համրեց զանազի, ու Իսրայէլի որդիները երեք հարիւր հազար, և Յուդայի մարդիկը երեսուն հազար էին։ 9—Ու եկող պատգամաւորներուն ըսին, Գաղաադու Յաբէսի բնակիչներուն այսպէս ըսէք. Վաղը երբ արեւը տաքնայ, ձեզի ազատութիւն պիտի ըլլայ։ Ուստի երբ պատգամաւորները գացին և Յաբէսի բնակիչներուն այս խօսքը իմացուցին, անոնք ուրախացան։ 10—Ու Յաբէսի բնակիչները ըսին Ամմոնացիներուն, Վաղը ձեզի անձնատուր կ'ըլլանք, ու ձեր աչքերուն ինչ որ հաճելի ըլլայ, զայն ըրէք մեզի։ 11—Ու հետևեալ օրը Սաուղ ժողովուրդը երեք գունդի բաժնեց, ու առաւօտեան պահուն բանակին մէջ մտան. ու մինչև որ օրը տաքցաւ, Ամմոնացիները զարկին. և մնացածներուն այնպէս ցրուեցան որ առնոյշ երկու մարդ միասին չմնաց։

12—Այն ատեն ժողովուրդը Սամուէլի ըսաւ, Սաուղ մեր վրայ թագաւոր պիտի ըլլայ՝ ըսողը ո՞վ է։ այն մարդիկը տուէք որպէս զի սպանենք։ 13—Ու Սաուղ ըսաւ, Այսօր մարդ մը չսպանուի, քանի որ այսօր Տէրը Իսրայէլի համար փրկութիւն ըրաւ։

14—Ու Սամուէլ ժողովուրդին ըսաւ, Եկէք Գաղգաղա երթանք, ու հոն թագաւորութիւնը նորէն հաստատենք։ 15—Ուստի բոլոր ժողովուրդը Գաղգաղա գացին, ու հոն Գաղգաղայի մէջ

---

*Եբր. թագաւորութիւններուն

*Եբր. կ'ելլենք

Տէրոջը ասէև Սաուղը Թագաւոր ըրին, և հոն Տէրոջը առջև խաղաղութեան զոհեր մատուցին, ու Սաուղ և բոլոր Իսրայէլի մարդիկը հոն մեծ ուրախութիւն ըրին։

Գլ. ԺԲ

Եւ Սամուէլ բոլոր Իսրայէլի ըսաւ, Ահա դուք ինձի ինչ որ պատուիրեցիք, ես ձեր խօսքը մտիկ ըրի, ու ձեր վրայ Թագաւոր դրի։ 2—Ու ահա հիմա ձեր առջեւէն Թագաւորը կ'երթայ. բայց ես ծերացայ ու մազերս ճերմկեցան. և ահա իմ որդիներս ձեզի հետ են. ու ես իմ մանկութենէս մինչև այսօր ձեր առջև քալեցի։ 3—Ահա ես հոս եմ։ Տէրոջը առջև ու անոր օծեալին առջև ինձի համար յայտնապես պատասխան բերէք, թէ ես որո՞ւն եզը առի, ու որո՞ւն էշը առի, որո՞ւ զրկանք կամ անիրաւութիւն ըրի, ու որո՞ւն ձեռքէն կաշառք առի և անով իմ աչքերս գոցեցի. ու ես ձեզի ետ դարձնեմ։ 4—Ու ըսին, Մեզի զրկանք կամ անիրաւութիւն ըրած չես, ու բնաւ մարդե՛ն ձեռքէ բան մը առած չես։ 5—Ու անոնց ըսաւ, Այսօր Տէրը ու անոր օծեալը ձեզի վկայ բլլան, որ դուք իմ ձեռքիս մէջ բան մը չգտաք։ Ու անոնք ըսին, Վկայ բլլան։

6—Ա՛յն ատեն Սամուէլ ժողովուրդին ըսաւ, Մովսէսը ու Ահարոնը *ընտրողը, և ձեր հայրերը Եգիպտոսի երկրէն հանողը Տէրն է։ 7—Ու հիմա առաջ եկէք, և ձեզի հետ Տէրոջը առջև քննեմ այն բոլոր արդարութիւնները զորոնք Տէրը ձեզի ու ձեր հայրերուն ըրաւ։ 8—Երբ Յակոբ Եգիպտոս գնաց, հոն ձեր հայրերը Տէրոջը աղաղակեցին. և Տէրը Մովսէսը ու Ահարոնը ղրկեց, որոնք ձեր հայրերը Եգիպտոսէ դուրս հանեցին, ու զանոնք այս տեղ բնակեցուցին։ 9—Բայց անոնք իրենց Տէր Աստուածը մոռցան. ու նէ՛ինկ ալ զանոնք Հասորի զօրագլուխը Եաբինի ձեռքը ու Փղշտացոց ձեռքը և Մովաբ Թագաւորին ձեռքը մատնեց, ու անոնց հետ պատերազմ ըրին։ 10—Ու Տէրոջը աղաղակելով՝ ըսին, Մենք մեզ գործեցինք, քանզի Տէրը թողցինք, և Բահաղիմի ու Աստարովթի ծառայութիւն ըրինք. և հիմա մեզ մեր թշնամիներուն ձեռքէն ազատէ, ու քեզի ծառայութիւն պիտի ընենք։ 11—Ուստի Տէրը Ցերոբաաղը, Բեդանը, Ցեփթայէն ու Սամուէլը ղրկեց, և ձեր չորս կողմի թշնամիներուն ձեռքէն ձեզ ազատեց, ու ապահովութեամբ բնակեցաք։ 12—Ու երբ տեսաք որ Ամմոնացոց Թագաւորը Նաաս ձեր վրայ կուգայ, ինձի ըսիք, Ոչ, անպատճառ մեր վրայ Թագաւոր մը բլլայ. թէպէտև ձեր Թագաւորը ձեր Տէր Աստուածն էր։ 13—Ըս հիմա ահա այն Թագաւորը զոր ընտրեցիք և ուզեցիք. ահա Տէրը ձեր վրայ Թագաւոր մը դրաւ։ 14—Եթէ Տէրոջմէ վախնաք, ու անոր ծառայութիւն ընէք, և անոր խօսքին հնազանդ բլլաք, ու Տէրոջը պատերազմին դէմ չկենանք, այն ատեն թէ՛ դուք և թէ՛ ձեր Թագաւորը որ ձեր վրայ կը Թագաւորէ, ձեր Տէր Աստուծոյն հետևէն պիտի երթաք։ 15—Բայց եթէ Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընէք, ու Տէրոջը հրամանին դէմ կենաք, այն ատեն Տէրոջը ձեռքը ձեր վրայ ու ձեր հայրերուն վրայ պիտի բլլայ։ 16—Ըս հիմա կացնեցէք ու տեսէք այն մեծ բանը՝ զոր Տէրը ձեր աչքերուն առջև պիտի ընէ։ 17—Այսօր ցորենի հունձքի ժամանակ չէ՞. ես Տէրոջը պիտի աղաղակեմ, և անիկա որոտաւմ ու անձրև պիտի ղրկէ, որպէս զի հասկնաք ու տեսնէք թէ դուք Տէրոջը առջև մեծ չարութիւն ըրիք՝ ձեզի Թագաւոր ուզելով։

18—Ա՛յն ատեն Սամուէլ Տէրոջը աղաղակեց, ու Տէրը նոյն օրը որոտաւմ ու անձրև տուաւ. և բոլոր ժողովուրդը Տէրոջմէն ու Սամուէլէ խիստ վախցաւ։ 19—Ու բոլոր ժողովուրդը Սամուէլին ըսաւ, Քու Տէր Աստուածդ աղօթք ըրէ քու ծառաներուդ համար որպէս զի չմեռնինք. քանզի մեր ամէն մեղքերուն վրայ այս չարութիւնն ալ աւելցուցինք որ մեզի Թագաւոր ուզեցինք։

*Եբր. ընտրեց

20—Ըս Սամուէլ ժողովուրդին ըսաւ, Մի վախնաք. դուք ըՆէ այս բոլոր չարութիւնը ըրիք, սակայն Տէրոջմէ մի խոտորիք, ու բոլոր սրտիվերջ Տէրոջը ծառայութիւն ըրէք. 21—ըս դէպի մի խոտորիք. քանզի ոչինչ բաներու համար է՛ղ՚ե՛ն՚ էլ՚ե՛ւ, որոնք չեն օգուտ մը ընելու ու չեն ազատելու կարող չեն, վասն զի անոնք ոչինչ են։ 22—Քանզի Տէրը իր մեծ անունը համար իր ժողովուրդը չի՛ձգուր. որովհետև Տէրը ուզից ձեզ իրեն ժողովուրդ ընել։ 23—Բայց ես ալ՝ լեզի որ Տէրոջը դէմ մեղք գործեմ, ձեզի համար աղօթք բնելէ ետ կենալով. հապա ես ձեզի ուղիղ ու յիման ճամբան պիտի սորվեցնեմ. 24—Միայն թէ Տէրոջմէն վախցէք, և ճշմարտութեամբ ու բոլոր սրտովիդ անոր ծառայութիւն ըրէք. քանզի տեսաք որ անիկա ձեզի համար ի՛նչ մեծ բաներ ըրաւ։ 25 — իսկ եթէ չարութիւն ընէլը չարունակէք, թէ՛ դուք և թէ՛ ձեր Թագաւորը պիտի կորսուիք։

Գլ. ԺԳ

Եղէ՛ այս է՛ն՚ե՛ւ էր՚ն՚, Սաուղ մէկ տարեան Թագաւոր էր։ ու երբ Իսրայէլի վրայ երկու տարի Թագաւորութիւն ըրաւ, 2—Սաուղ Իսրայէլէ երեք հազար մարդ ընտրեց իրեն համար. երկու հազարը Սաուղի հետ Մաքմաս ու Բեթէլի լեռն էին, և հազարն ալ Յովնաթանի հետ Բենիամինի Գաբաան էին. ու մնացած ժողովուրդը, ամէն մարդ իր վրանը ղրկեց։

3—Ըս Յովնաթան Գաբայի մէջ եղող փղշտացոց պահապան զօրքերը զարկաւ, ու փղշտացիք լսեցին. Այն ատեն Սաուղ բոլոր երկրին մէջ փող հնչեցընել տուաւ՝ ըսելով, Եբրայեցիները թող լսեն։ 4—Ըս բոլոր Իսրայէլ լսեց որ Սաուղ փղշտացոց պահապան զօրքերը զարկաւ, և Իսրայէլ փղշտացոց առջև առելի եղաւ. ու ժողովուրդը Գողգոթայի մէջ Սաուղի քով ժողվուեցան։ 5—Ըս փղշտացիք ալ ժողվուեցան, որպէս զի Իսրայէլի դէմ պատերազմ ընեն. և անոնք երեսուն հազար կառք ու վեց հազար ձիաւոր ունէին, և ժողովուրդը ծովուն եզերքը եղող աւազին չափ էր. ու եկան և Բեթաւենի արեւելեան կողմը Մաքմասի մէջ բանակեցան։ 6—Ու Իսրայէլի մարդիկը վիրենք նեղութեան մէջ տեսան, և ժողովուրդը ապգնապէտ ըլլալով՝ այրերու, քարափներու, ժայռերու, աշտարակներու ու փոսերու մէջ պահուեցան։ 7—Ու Եբրայեցիք Յորդանան գագի ու Գադացիի երկիրը անցան. բայց Սաուղ դեռ Գողգոթայի մէջ էր, ու բոլոր ժողովուրդը դողդողալով անոր հետևէն կ'երթայր։

8—Ու անիկա Սամուէլի որոշած ժամանակին չափ եօթը օր սպասեց, բայց Սամուէլ Գողգոթա չեկաւ, ու ժողովուրդը անոր քովէն ցրուեցաւ։ 9—Ու Սաուղ ըսաւ, Ողջակէզը և խաղաղութեան զոհը ինձի մօտ բերէք. ու ինք ողջակէզը մատուցանեց։ 10—Ու երբ անիկա ողջակէզը մատուցանելը լմնցուց, այն ատեն Սամուէլ եկաւ. և Սաուղ ելաւ զանիկա դիմաւորելու. ու բարեւելու։ 11—Ու Սամուէլ ըսաւ, Ի՞նչ ըրիր։ Ու Սաուղ ըսաւ, Տեսայ որ ժողովուրդը իմ քովէս կը ցրուի, ու դուն եօ՛ր որոշած օրերուդ մէջ չեկար, ու Փղշտացիք Մաքմասի մէջ ժողված են, 12—ու ըսի, Փղշտացիք հիմա իմ վրաս Գողգոթա պիտի իջնեն, ու ես Տէրոջը առջև աղօթք ըրած չեմ. ուստի *հանդրգնութիւն ընելով՝ ողջակէզը մատուցի։ 13—Ու Սամուէլ ըսաւ Սաուղի, Յիմարութիւն ըրիր, որ քու Տէր Աստուածդ քեզի պատուիրած պատուիրանքը չպահեցիր. քանզի հիմա Տէրը քու Թագաւորութիւնդ Իսրայէլի վրայ յիշնէ. յաւիտեան պիտի հաստատէր։ 14—Բայց հիմա քու Թագաւորութիւնդ հաստատ պիտի չըլլայ. Տէրը իրեն համար իր սրտին համեմատ մարդ մը կը փնտռէ, զոր Տէրը իշխան պիտի կարգէ իր ժողովուրդին վրայ. քանզի դուն Տէրոջը քեզի պատուիրած հրամանը չպահեցիր։

15—Ետքը Սամուէլ եղաւ, ու Գողգոթայէ Բենիամինի Գաբաան գնաց։

*Եբր. ինքզինքս ստիպելով

նէ Սաւուղ իր քով գանուող ժողովուրդը համրեց, ու տեղ հարիւրի չափ մարդ եղին։ 16—Ու Սաւուղ և անոր որդին Յոնաթանն ու անոնց հետ գտնուող մարդիկը բնակամիներ էգաբաան կը նստէին. ու փղշտացւոց բանակը Մաքմասի մէջ էր։

17—Ու փղշտացւոց բանակէն երեք գունդ ասպատակ ելաւ. գունդին մէկը դէպ ի Եփրայի ճամբան, Սաւուղի երկիրը, դարձաւ. 18—ու գունդին մէկը դէպ ի Բեթհորոնի ճամբան դարձաւ. ու գունդին մէկն ալ դէպ ի անապատը դարձաւ, — Սեբոյիմի հովիտը նայող սահմանին ճամբան էն։

19—Ու Իսրայէլի բոլոր երկրին մէջ դարբին մը չէր գտնուեր, քանզի փղշտացիք ըսեր էին թէ Հրէայ որ սրբատկիք սուր կամ նիզակ չինեն։ 20—Ու բոլոր Իսրայէլացիք՝ ամէն մէկը իր բրիչը, խոփը, տապարը ու քանը չինակեւ համար փղշտացւոց էրէէրը կ'իջնէին, 21—Բայց բրիչներուն, խոփերուն, եռաժանի գործիքներուն ու տապարներուն համար և խթաններուն սրելու համար խարտոցներ ունէին։ 22—Ուստի այնպես եղաւ որ պատերազմին օրը՝ Սաւուղի ու Յոնաթանի հետ եղող բոլոր ժողովուրդին ձեռքը սուր կամ նիզակ չէր գտնուեր. միայն Սաւուղի ու անոր որդւոյն Յոնաթանի քով կը գտնուէր։

23—Ու փղշտացւոց պահապան զօրքը Մաքմասի կիրճը ելան։

Գլ. ԺԴ

Ե եղաւ որ օր մը Սաւուղի որդին Յոնաթան իր զէնքերը կրող պատանիին ըսաւ, Եկուր, անդին կողմը փղշտացւոց պահապան զօրքին անցնինք. բայց իր հօրը չյիմացուց։ 2—Ու Սաւուղ Գաբաայի ծայրը՝ Մագրոնի մէջ եղող նռնենիին տակ կը նստէր. և անոր հետ եղող ժողովուրդը վեց հարիւր մարդու չափ էր։ 3—Ու Հեղիի որդւոյն փինհէսի որդւոյն Իքաբոդի եղբօրը Աքիտոբի որդին Աքիա Սելոյի մէջ Տէրոջը քահանան էր, որ եփոտ կը հագներ. ու ժողովուրդը Յոնաթանի երթալը չէր գիտեր։ 4—Ու այն կիրճերուն մէջ, ուրկից Յոնաթան փղշտացւոց պահապան զօրքին անցնիլ կ'ուզէր, մէկ կողմնակ քարաժայռ մը ու միւս կողմնակ քարաժայռ մը կար, որոնց մէկուն անունը Բազէս ու միւսին անունը Սենա էր։ 5—Այս քարաժայռներէն մէկը հիւսիսային կողմը Մաքմասի դիմաց ցցուած էր, ու միւսը հարաւային կողմը՝ Գաբաայի դիմաց։ 6—Ու Յոնաթան իր զէնքերը կրող պատանիին ըսաւ, Եկուր այս անթլփատներուն պահապան զօրքին անցնինք, գուցէ որ Տէրը մեզի համար բան մը ընէ. քանզի չաս մարդով կամ փոքր մարդով ազատելու կռնչ արգելք մը չկայ Տէրոջը առջեւ։ 7—Ու իր զէնքերը կրողը անոր ըսաւ, Ըրէ՛ ինչ որ սրտիդ մէջ եղածը ըրէ. յառաջ գնա, ես քեզի հետ եմ՝ ինչ որ ուզածդ պես։ 8—Ու Յոնաթան ըսաւ, Հիմա մենք այն մարդոց անցնինք, ու անոնց երեւնանք. 9—եթէ մեզի այսպէս ըսէն, Կայնեցէք, մինչեւ մենք ձեզի գանք, այն տեղ մեր տեղը կայնինք ու անոնց չելլենք։ 10—Բայց եթէ այսպէս ըսեն, Մեզի եկէք, այն տեղը ելլենք, քանզի Տէրը զանոնք մեր ձեռքը տուած է. ու սրկա մեզի նշան ըլլայ։ 11—Ու երբ երկուքը փղշտացւոց պահապան զօրքին երեւցան, փղշտացիք ըսին, Ահա Եբրայեցիք իրենց պահատած ծակերէն դուրս կ'ելլեն։ 12—Ու պահապան զօրքերը Յոնաթանի ու անոր զէնքերը կրողին պատասխան տուին ու ըսին, Մեզի եկէք, ու ձեզի բան մը իմացնենք. և Յոնաթան իր զէնքերը կրողին ըսաւ, Իմ հետեւէս ելլէր, քանզի Տէրը զանոնք Իսրայէլի ձեռքը կու տայ։ 13—Ու Յոնաթան ձեռքերովը ու ոտքերովը վեր ելաւ, և անոր զէնքերը կրողն ալ անոր հետեւէն, ու Յոնաթանի առջեւ իյնան, անոր զէնքերը կրողն ալ անոր հետեւէն կը սպաննէր։ 14—Ու Յոնաթան ու անոր զէնքերը կրողը այս առաջին կոտորածին մէջ քսան մարդու չափ սպանին։

†Կամ, Գաբան, հմմ. 3։

*Կամ, Գաբայի

15—Ու բանակին մէջ, գաշտին մէջ ու բոլոր ժողովուրդին մէջ խռովութիւն եղաւ. պահապան զօրքերը ու ասպատակներն ալ զարհուրեցան, ու երկիրը դողաց, այնպէս որ Աստուծոյ էշ-ՇՇՇ վախ մը իյնաւ։

16—Ու Բենիամինի Գաբաայէն Սաւուղի դիտերը տեսան որ ահա այն բազմութիւնը *միջ չփոթութեան մէջ է՝ ու երթալով կը ցրուի։ 17—Ու Սաւուղ իրեն հետ եղող ժողովուրդին ըսաւ, Ազգէ անցուցէք, ու նայեցէք որ մեզմէ ո՛վ գացեր է. ուստի անոնք ազգէ անցուցին, և ահա Յոնաթան ու անոր զէնքերը կրողը չկար։ 18—Այն ատեն Սաւուղ Աքիային ըսաւ, Աստուծոյ տապանակը մօտեցուր. քանզի այն ատեն Աստուծոյ տապանակը Իսրայէլի որդիներուն հետ էր։ 19—Ու երբ Սաւուղ քահանային հետ կը խօսէր, փղշտացւոց բանակին մէջի աղմուկը երթալով կը շատնար. և Սաւուղ ըսաւ քահանային, Ձեռքդ քաշէ։ 20—Ու Սաւուղ և իրեն հետ եղող բոլոր ժողովուրդը մէկտեղ ժողվուեցան, ու մինչեւ պատերազմին դիւղը գացին. և ահա սուրն մարդ իր սուրը իր ընկերին վրայ դարձուցեր էր, ու շատ մեծ խռովութիւն մը կար։ 21—Ու այն եբրայեցիները որոնք առաջ փղշտացւոց հետ էին, ու շրջակայ էրէէրէրէն անոնց հետ բանակը ելեր էին, անոնք ալ Սաւուղի ու Յոնաթանի հետ եղող Իսրայէլի հետ միացան։ 22—Ու եփրեմի լեռան վրայ պահռւրատած Իսրայէլի բոլոր մարդիկը փղշտացւոց փախչիլը լսելով, անոնք ալ անոնց հետեւէն պատերազմին մէջ մտան։ 23—Ու այն օրը Տէրը ազատեց Իսրայէլը. ու պատերազմը Բեթաւեան անցաւ։

24—Ու այն օրը Իսրայէլի մարդիկը տագնապեցան. քանզի Սաւուղ ժողովուրդին երդումով ըսել տուեր էր, ըսելով, Ով որ մինչեւ իրիկուն հաց ուտէ՝ անիծեալ ըլլայ, որպէս զի իմ թշնամիներէս վրէժ առնեմ։ Ու բոլոր ժողովուրդը բերանը հաց չդրաւ։ 25—Ու բոլոր *ժողովուրդը անտառ մը մտաւ, ու գետնի երեսին վրայ մեղր կար։ 26—Ու երբ ժողովուրդը անտառը մտաւ, տեսաւ որ մեղր կը վազէր. բայց ձեռքը բերանին մօտեցնող չկար, քանզի ժողովուրդը երդումէն վախցաւ։ 27—Ու Յոնաթան չլսեց երբ իր հայրը ժողովուրդին երդումով ընել տուաւ, Ուստի իր ձեռքի գաւազանին ծայրը երկնցուց, ու զանիկա մեղրին խորիսխին մէջ խոթեց. ու իր ձեռքը բերանը տանելով՝ աչքերը բացուեցան։ 28—Ան ատեն ժողովուրդին մէկը պատասխան տուաւ ու ըսաւ, Քու հայրդ ժողովուրդին մեծ երդումով ընել տուաւ՝ ըսելով, Այսօր հաց ուտող մարդը անիծեալ ըլլայ։ Ու ժողովուրդը նուաղած էր։ 29—Ու Յոնաթան ըսաւ, Իմ հայրս ժողովուրդը նեղութեան մէջ ձգեց. նայեցէք, այս մեղրէն քիչ մը ուտելուս պէս աչքերս բացուեցան. 30—Ալ ո՛րչափ աւելի՝ եթէ ժողովուրդը այսօր իր թշնամիներէն գտած աւարը կշտանալով ուտէր. քանզի հիմա փղշտացւոց մէջ դաւելի մեծ կոտորած կ'ըլլար։

31—Ու այն օրը անոնք փղշտացիները Մաքմասէ մինչեւ Այիղոն զարկին. ու ժողովուրդը խիստ նուաղեցաւ։ 32—Ու ժողովուրդը աւարին վրայ ինկաւ. ու ոչխարները, արջառները և որթերը առին, ու գետնի վրայ մորթեցին. ու ժողովուրդը արիւնովը կերաւ։ 33—Ու Սաւուղի իմացուցին ու ըսին, Ահա ժողովուրդը Տէրոջը դէմ կը մեղանչէ, քանզի արիւնով կ'ուտէ։ Ու անիկա ըսաւ, Անօրէնութիւն ըրիք. հիմա ինծի մեծ քար մը գլորեցէք։ 34—Ու Սաւուղ ըսաւ, Ժողովուրդին մէջ ցրուեցէք, և անոնց ըսէք, Ամէն մարդ իր արջառը ու իր ոչխարը ինծի մօտեցնէ, ու հոս մորթէ և ուտէ, ու արիւնով ուտելով Տէրոջը դէմ մեղք չգործէ։ Ուստի բոլոր ժողովուրդը, ամէն մարդ իր ձեռքովը, այն գիշերը իր արջառը մօտեցուց, ու հոն մորթեց։ 35—Ու Սաւուղ Տէրոջը սեղան չշինեց։

*Եբր. կը հալի

*Եբր. երկիրը. տես բ Օր. Բ։ 28։ Մատ. գ։ 5։

†Կամ, չատ մեծ կոտորած չեղաւ։

այս էր Տէրոջը համար Սաուղ չինած առաջին սեղանը։

36—Ու Սաուղ բսաւ, Գիշերով փղշտացւոց հետեւին իջնենք, ու մինչև որ առաւօտը ծագի՝ զանոնք թալանենք, ու անոնցմէ մարդ մը չթողունք. և անոնք ըսին, Ինչ որ հաճոյ է՝ քեզի ըրէ։ Ու քահանան ըսաւ, Հոս մօտենանք Աստուծոյ մասին։ 37—Ու Սաուղ Աստուծոյ հարցուց՝ ըսելով, Փղշտացւոց հետեւին իջնե՞մ. զանոնք Իսրայէլի ձեռքը պիտի տա՞ս։ Բայց այն օրը պատասխան չտուաւ անոր։ 38—Ան ատեն Սաուղ ըսաւ, Հոս մօտենաք, Ժողովրդին բոլոր իշխաններըն, և հասկնաք ու տեսնք թէ այսօր այս մեղքը որո՞ւնն է։ 39—Քանզի Իսրայէլը ազատող Տէրը կենդանի է որ թէև իմ որդւոյս Յոնաթանին ալ ըլլայ, անպատճառ պիտի մեռնի։ Ու բոլոր Ժողովուրդին մէկ անոր պատասխան արաւ մը չկար։ 40—Ան ատեն անիկա բոլոր Իսրայէլի ըսաւ, Դուք մէկ կողմը կայնեցէք, ու ես և իմ որդիս Յոնաթան մէյ մը կողմը կայնինք. ու Ժողովուրդը Սաուղի ըսաւ, Ինչ որ քեզի հաճոյ երեւցածը ըրէ։ 41—Ու Սաուղ Իսրայէլի Տէր Աստուծոյն ըսաւ, Ճշմարտութիւնը յայտնէ՞. և Յոնաթան ու Սաուղ վիճակ բռնուեցան, ու Ժողովուրդը ազատ մնաց։ 42—Ու Սաուղ ըսաւ, Իմ վրաս ու որդւոյս Յոնաթանի վրայ վիճակ ձգեցէք. ու Յոնաթան բռնուեցաւ։ 43—Ու Սաուղ Յոնաթանի ըսաւ, Ինծի խնացար թէ ի՞նչ ըրիր. ու Յոնաթան անոր խնացուց ու ըսաւ, Ձեռքիս գաւազանին ծայրովը քիչ մը մեղր կերայ եմ. ահա ես պիտի մեռնի՞մ։ 44—Ու Սաուղ ըսաւ, Աստուած ինձի այսպէս ու ասկէ աւելի բան ալ անյագ պիտի մեռնիս, Յոնաթան։ 45—Բայց Ժողովուրդը Սաուղի ըսաւ, Յոնաթան պիտի մեռնի՞, ան որ այսօր Իսրայէլի մէջ այս մեծ փրկութիւնը բրաւ. Հա՛ւ լեցի. կենդանի է Տէր, որ անոր գլխուն մէկ մազը գետինը պիտի չիյնայ. քանզի այսօր Աստուծով յաղթութիւն բրաւ։ Այսպէս Ժողովուրդը Յոնաթանը ազատեց, ու անիկա չմեռաւ։ 46—Ու Սաուղ Փղշտացիներէն ետ դարձաւ, ու Փղշտացիք իրենց տեղը գացին։

47—Ուսաի Սաուղ ակսաւ Իսրայէլի վրայ թագաւորել. ու բոլոր չորեքակող թշնամիները հետ, այսինքն Մովաբի հետ, և Ամմոնի որդիներուն հետ, Եդոմի հետ, Սոբայի թագաւորներուն հետ, ու Փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ. և ո՛ր կողմը որ դարձաւ՝ յաղթութիւն ըրաւ։ 48—Ու ՙգործ ըրաւ՚ ընդով՚ Ամաղեկը զարկաւ, և ազատեց Իսրայէլը իր կողոպտիչներուն ձեռքէն։

49—Ու Սաուղի որդիները Յոնաթան, Յեսուի ու Մեղքիսուէ էին. և անոր երկու աղիկներուն անուններըՙ՝ առաջինին անունը Մերովբ, ու պզտիկին անունը Մեղքղ էր։ 50—Ու Սաուղի կնոջ անունը Աքինոամ էր, Աքիմասի աղիկը, ու անոր զօրավարին անունը Աբնններ էր. Սաուղի հօրեղբօրը՝ Ների որդին։ 51—Ու Կիս, Սաուղի հայրը, ու Աբննների հայրը Ներ Աբիէլի որդիներն էին։

52—Ու Սաուղի բոլոր օրերը Փղշտացւոց դէմ սաստիկ պատերազմ կար. ու Սաուղ ամէն տեսած զօրաւոր մարդը և ամէն ուժի տեր եղողը իր քով կը ժողվէր։

Գլ. ԺԵ

Ու Սամուէլ բսաւ Սաուղի, Տէրը զիս իր Իսրայէլ ժողովրդին վրայ քեզ թագաւոր օծելու զրկեց. ու հիմա Տէրոջը խօսքերուն ձայնը մանկ ըրէ։ 2—Զօրաց Տէրը այսպէս կ՚ըսէ, Միտքս բերի ինչ որ Ամաղեկ ըրաւ Իսրայէլի, անոր Եգիպտոսէ ելած ատենը՝ ճամբուն մէջ անոր դէմ դնելով։ 3—Հիմա գնա ու Ամաղեկը զարկ, և անոր բոլոր ունեցածը նզովածի պէս քանդեցէք ըրէք, ու անոր չխնայես. և այր մարդէն մինչև կիներ մարդը ու տղայէն մինչև կաթնակերը, արջառէն մինչև ոչխարը և ուղտէն մինչև էշը մեռցնես։

4—Ուսաի Սաուղ ժողովրդը կանչեց, ու Տեզայիմի մէջ զանոնք համրեց, որոնք երկու հարիւր հազար հետեւակ զօրք էին, ու Յուդայեանք ալ տասը հազար։ 5—Ու Սաուղ մինչև Ամաղեկացւոց մէկ քաղաքը գնաց, ու հեղեղատին մէջ դարանակալ եղաւ։ 6—Ու Սաուղ Կենեցիներուն ըսաւ, Գացէք, դաշուեցէք ու Ամաղեկացւոց մէջէն իջէք, չըլլայ որ ձեզ անոնց հետ մեռցնեմ. քանզի դուք բոլոր Իսրայէլի որդիներուն ողորմութիւն ըրիք՝ անոնց Եգիպտոսէ ելած ատենը։ Ուսաի Կենեցիները Ամաղեկացւոց մէջէն դաշուեցան։ 7—Ու Սաուղ Եւիլատ մինչև Եգիպտոսի դիմացի Սուրը Ամաղեկը զարկաւ։ 8—Ու Ամաղեկի թագաւորը Ագագ ողջ բռնեց, ու բոլոր Ժողովուրդը սուրի բերնով խրտեց։ 9—Բայց Սաուղ Ժողովրդին հետ Ագագը, և ոչխարներուն ու արջառներուն ազէկները ու *գերբերը և գառները ու ամէն պատուական բաները խնայեցին, և չուզեցին զանոնք խրտել, հապա բոլոր անարգ ու անպիտան անասունները խրտեցին։

10—Ու Տէրոջը խօսքը Սամուէլի եղաւ՝ ըսելով, 11—Սաուղը թագաւոր ընելուս զղջացի. քանզի ինծմէ ետ դարձաւ, ու իմ խօսքերս չկատարեց։ Ու Սամուէլ տրտմեցաւ, ու բոլոր գիշերը Տէրոջը աղաղակեց։ 12—Ու Սամուէլ առաւօտուն կանուխ ելաւ, որպէս զի Եղբայ Սաուղը դիմաւորէ. և Սամուէլի խնացուցին ու ըսին, Սաուղ Կարմէղոս եկաւ, և ահա իրեն համար †յաղթութեան նշան՝ կանգնեց, ու անկէ դառնալով անցաւ, ու Գաղգաղա իջաւ։

13—Ու Սամուէլ Սաուղի քով գնաց. ու Սաուղ անոր ըսաւ, Դուն Տէրոջմէն օրհնեալ ըլլաս. Տէրոջը խօսքը կատարեցի։ 14—Ու Սամուէլ ըսաւ, Հապա այդ ոչխարներուն ձայնը ի՞նչ պիտի ըլլայ՝ որ իմ ականջիս կու գայ, ու արջառներուն ձայնը՝ զոր ես կը լսեմ։ 15—Ու Սաուղ ըսաւ, Զանոնք Ամաղեկացիներէն բերին. քանզի ժողովրդը ամէնէն ազէկ ոչխարները ու արջառները ողջ խրտեցին, որպէս զի զանոնք քու Տէր Աստուածդ զոհ մատուցանեն. սակայն մնացածները չարգելցինք։ 16—Այն ատեն Սամուէլ ըսաւ Սաուղի, Կեցիր որ քեզի պատմեմ ինչ որ Տէրը այս գիշեր ինծի խօսեցաւ։ Ան ալ անոր ըսաւ, Խօսէ։ 17—Ու Սամուէլ ըսաւ Սաուղի, Ահա գուն *որ քու աչքերուդ պզտիկ կ՚երեւնայիր, Իսրայէլի որդւոցը ցեղերուն գլուխ եղար, ու Տէրը քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեց։ 18—Ու Տէրը քեզ ճամբայ մը զրկեց՝ ըսելով, Գնա, ու այն մեղաւոր Ամաղեկացիները նզովածի պէս չարդէ, և անոնց դէմ պատերազմ ըրէ, մինչև որ զանոնք բնաջինջ ընես։ 19—Իսկ դուն ինչո՞ւ համար Տէրոջը ձայնին հնազանդութիւն չըրիր, ու աւարին վրայ խնայելով՝ Տէրոջը աչքին չարութիւն ըրիր։ 20—Ու Սաուղ ըսաւ Սամուէլին, Ահա ես Տէրոջը ձայնին հնազանդութիւն ըրի, ու Տէրը զիս ա՛ր ճամբան որ զրկեց, այն ճամբան գացի, և Ամաղեկի թագաւորը Ագագը բերի, ու Ամաղեկը նզովածի պէս բնաջինջ ըրի։ 21—Սակայն Ժողովուրդը այն աւարէն ոչխարներ ու արջառներ առաւ, նզովածներէն ամէնէն ազէկները՝ որպէս զի Գաղգաղայի մէջ քու Տէր Աստուածդ զոհ ընեն։ 22—Ու Սամուէլ ըսաւ, Միթէ Տէրոջը ամէն ոչխկերգներուն ու զոհերուն. Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ հաճոյ են. ահա հնազանդութիւնը զոհէն, ու խոյի մորի ընելը խոյերուն ճարպին աղէկ է։ 23—Քանզի ապստամբութիւնը կախարդութեան մեղքին պէս, ու կամակորութիւնը †կռապաշտութեան պէս է. որովհետեւ դուն Տէրոջը խօսքը մերժեցիր, անիկա ալ քեզ մերժեց՝ որպէս զի թագաւոր չըլլաս։

24—Ու Սաուղ ըսաւ Սամուէլին, Մեղք գործեցի՝ որ Տէրոջը հրամանը ու քու խօսքերդ զանց ըրի. քանզի ժողովրդէն վախնալուս համար անոնց խօսքը մտիկ ըրի։ 25—Ու հիմա կ՚աղաչեմ, իմ յանցանքս ներէ, և ինծի

*Կամ, երկրորդականները
†Բեր. ձեռք

*Եբր. Թէև
†Եբր. ունայնութիւն ու թերապիմ

*Եբր. կատաքելութիւն տուր

*Կամ, զօրք ժողվելով

հետ դարձիր, որպէս զի Տէրոյը երկրպագութիւն ընեմ։ 26—Եւ Սամուէլ ըսաւ Սաւուղի, Ես քեզի հետ չեմ դառնար. քանզի դուն Տէրոյը խօսքը մերժեցիր, Տէրն ալ քեզ մերժեց՝ որպէս զի իսրայէլի վրայ թագաւոր չըլլաս։ 27—Ու Սամուէլ դարձաւ որ երթայ. բայց անիկա անոր վերարկուին ծայրէն բռնեց, որ պատառեցաւ։ 28—Այն ատեն Սամուէլ անոր ըսաւ, Տէրը այսօր քու վրայէդ իսրայէլի թագաւորութիւնը պատառեց, ու զանիկա քեզմէ աղեկ եղող ընկերիդ տուաւ։ 29—Եւ Իսրայէլի Ապաւէնը սուտ չըլլուցեր ու չղղար. քանզի անիկա մարդ չէ՝ որ ղղլայ։ 30—Եւ Սօռա ըսաւ, Մեղք գործեցի. կ'աղաչեմ. հիմա իմ ժողովուրդիս ծերերուն առջև ու Իսրայէլի առջև զիս պատուէ, և ինծի հետ դարձիր, որպէս զի քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընեմ։ 31—Ու Սամուէլ Սաւուղի ետևէն դարձաւ, և Սաւուղ Տէրոյը երկրպագութիւն ըրաւ։

32—Նաքը Սամուէլ ըսաւ, Ամաղէկի թագաւորը Ագագը ինծի բերէք. ու Ագագ քաղցրութեամբ անոր մտեցաւ. և Ագագ ըսաւ, Անշուշտ մահուան դառնութիւնը անցած է։ 33—Բայց Սամուէլ ըսաւ, Ինչպէս քու սուրդ կիները անզաւակ թողուց, նոյնպէս քու մայրդ կիներուն մէջ անզաւակ մնայ։ Ու Սամուէլ Գաղգաղայի մէջ Տէրոյը առջև կտոր կտոր ըրաւ Ագագը։

34—Եւ Սամուէլ Ռամա գնաց, ու Սաւուղ իր տունը՝ Սաւուղի Գաբաան եկաւ։ 35—Եւ Սամուէլ մինչեւ իր մահուան օրը մէյմըն ալ Սաւուղը չտեսաւ. բայց Սամուէլ Սաւուղի համար սուգ կ'ընէր. և Տէրը Իսրայէլի վրայ թագաւոր ընելուն ղղլայ։

ԳԼ. ԺԶ

Եւ Տէրը Սամուէլի ըսաւ, Մինչև ե՞րբ Սաւուղի համար սուգ կ'ընես. որովհետեւ ես զանիկա մերժեցի, որպէս զի Իսրայէլի վրայ չթագաւորէ. եղկլիդը իւղով լեցուր. ու եկուր քեզ Բեթլեհեմացի Յեսսէի ղրկեմ. քանզի անոր որդիներուն մէկը ինծի թագաւոր ընտրեցի։ 2—Ու Սամուէլ ըսաւ, Ի՞նչպէս երթամ. Սաւուղ լսէ, զիս կը մեռցընէ. և Տէրը ըսաւ, Եզիզի հետ երթիլ մը առ, ու ըսէ թէ Տէրոյը զոհ ընելու եկայ։ 3—Ու Յեսսէն զոհին հրաւիրէ. ու քու ընելու բանդ ես քեզի կը հասկըցնեմ. և ինծի քսւսոոր օծես այն մէկը զոր քեզի պիտի ըսեմ։

4—Ու Սամուէլ Տէրոյը ըսածը ըրաւ, ու Բեթլհեմ գնաց։ Ու քաղաքին ծերերը դողդողալ զանիկա դիմաւորեցին. ու ըսին, Արդեօք խաղաղութեամբ եկար։ 5—Ու անիկա ըսաւ, Խաղաղութեամբ. Տէրոյը զոհ ընելու եկայ. սրբուեցէք ու ինծի հետ զոհի եկէք. և Յեսսէն ու անոր որդիները սրբել տուաւ, և զանոնք զոհի հրաւիրեց։ 6—Ու երբ անոնք եկան, Եղիաբը տեսնելով ըսաւ, Իրաւ որ Տէրոյը օծեալը իր առջև է։ 7—Բայց Տէրը Սամուէլի ըսաւ, Անոր երեւութին ու հասակին երկայնութեանը մի նայիր, քանզի ես զանիկա անարգեցի. որովհետեւ մարդուն նայիլը չըլլար. քանզի մարդը էերեւոյթին կը նայի, բայց Տէրը սրտին կը նայի։ 8—Ու Յեսսէ Աբինադաբը կանչեց, ու զանիկա Սամուէլի առջեւէն անցուց. և Սամուէլ ըսաւ, Տէրը սոյնիկա ալ չընտրեց։ 9—Ու Յեսսէ Սամաան անցուց. և Սամուէլ ըսաւ, Տէրը սոյնիկա ալ չընտրեց։ 10—Ու երբ Յեսսէ Սամուէլի առջեւէն իր եօթը որդիները անցուց, Սամուէլ Յեսսէի ըսաւ, Տէրըասոնցմէ Ա՛ոնք չընտրեց։ 11—Ու Սամուէլ Յեսսէի ըսաւ, տղաքներդ ամբողջովի՞ն են։ Ու անիկա ըսաւ, Տակաւին ամենէն պզտիկը մնաց, և ահա անիկա ոչխարները կ'արածէ։ Ու Սամուէլ Յեսսէի ըսաւ, Մարդ ղրկի ու զանիկա բերել տուր. քանզի մինչև որ անիկա հոս չգայ, մենք սեղանի պիտի չնստինք։ 12—Ուստի մարդ ղրկեց ու զանիկա բերել տուաւ. և անոնիկա կարմիր էր ու աղուոր աչքեր ունէր, ու դէմքն ալ գեղեցիկ էր։ Ա՛ն

*ՆԲԷ. տեսայ
†ՆԲԷ. Զեռքդ
‡ՆԲԷ. աչքերուն

ասեն Տէրը ըսաւ, Նէիր, ասիկա օծէ, քանզի ասիկա է։ 13—Ու Սամուէլ իւղին եղկիւրը առաւ, ու զանիկա իր եղբայրներուն մէջ օծեց. ու այն օրէն եւթը Տէրոյը Հոգին Դաւիթի վրայ եկաւ. ու Սամուէլ եղաւ Ռամա գնաց։

14—Ու Տէրոյը Հոգին Սաւուղէ հեռացաւ. ու Տէրոյը կողմանէ չար ոգի մը *անոր նեղութիւն կու տար։ 15—Ու Սաւուղի ծառաները անոր ըսին, Ահա Աստուծոյ կողմանէ չար ոգի մը քեզի նեղութիւն կու տայ։ 16—Մեր տէրը իր առջև եղող ծառաներուն պրսպէ որ ազէկ փնարահար մը փնտռեն, ու երբ Աստուծոյ կողմանէ այն չար ոգին քու վրադ գայ, անիկա իր ձեռքով †նուագէ զարնէ, ու դուն հանգստանաս։ 17—Ու Սաւուղ իր ծառաներուն ըսաւ, Հիմա ինծի ազէկ փնարահար մը գտէք, ու զանիկա ինծի բերէք։ 18—Ու ծառաներէն մէկը պատասխան առաւ ու ըսաւ, Ահա ԲեթլհեմացիՅեսսէի մէկ որդուն տեսայ, որ քնար զարնելը գիտէ, ու անիկա զօրաւոր, պատերազմող, ճարտասան, ու չեզոքցիկ տեսքով կարճ մըն է, և Տէրը անոր հետ է։ 19—Ու Սաւուղ Յեսսէի պատգամաւորներ ղրկեց ու ըսաւ, Ոչխարներուն քովէ գտնուղ տղադ Դաւիթը ինծի ղրկէ։ 20—Ու Յեսսէ ‡ոմէկ հաց, սիկի մը գինի, ու այծերէն ուլ մը առնելով՝ իշու վրայ էֆոոդէրէց, ու զանոնք իր տղուն Դաւիթի ձեռքով Սաւուղի ղրկեց։ 21—Ու Դաւիթ Սաւուղի եկաւ, ու անոր առջև կայնեցաւ. ու Սաւուղ զանիկա չատ սիրեց, ու Դաւիթ անոր կապարճակիրը եղաւ։ 22—Ու Սաւուղ Յեսսէի հրէշտ ղրկեց՝ ըսելով, Դաւիթ թող իմ առջեւս կայնի, քանզի անիկա իմ աչքիս շնորհք գտաւ։ 23—Ու երբ Աստուծմէ չար ոգին Սաւուղի վրայ կու գար, Դաւիթ փնարը կ'առնէր, ու իր ձեռքով կը զարնէր. և Սաւուղ կը հանգստանար ու կը զուարճանար, և չար ոգին անոր վրայէն կ'երթար։

*ԿՄ, զանիկա կը զարհուրեցնէր
†ՆԲԷ. քեզի ազէկ ըլլայ

ԳԼ. ԺԷ

Եւ Փղշտացիք իրենց զօրքերը ժողվեցին պատերազմելու համար, և Ժուդայի Սոքովին մէջ ժողվուեցան. և Սոքովի ու Ազեկայի միջեւ Ափեսդամմին բանակեցան։ 2—Ու Սաւուղ ու Իսրայէլի մարդիկը ժողվուեցան, ու Էլայի հովիտին մէջ բանակեցան. և Փղշտացւոց դէմ պատերազմ ընելու համար կարգ ընուեցան։ 3—Ու Փղշտացիք մէկ կողմանէ լեռան մը վրայ կայներ էին, ու Իսրայէլացիք միւս կողմանէ լեռան մը վրայ կայներ էին. ու հովիտը անոնց միջեղ էր։ 4—Ու Փղշտացւոց բանակէն Գողիաթ անուանով, Գէթացի անոյեան մը ելաւ. 5—Անոր գլուխը պղնձէ սաղաւարտ կար, ու հիւսուած զրահ մը հագեր էր. ու անոր պղնձէ զրահին ծանրութիւնը հինգ հազար սիկղ էր։ 6—Ու սրունքներուն վրայէն պղնձէ առնպաններ, և ուսերուն մէջեղ պղնձէ *գեղարդ մը առեր։ 7—Անոր նիզակին բունը մասայունկերուն գլանին պէս էր, ու նիզակին սէգը վեց հարիւր սիկղ երկաթէ էր. և անոր վահանը կրզը անոր առջեւէն կ'երթար։ 8—Անիկա եւ†ոյ կայնեցաւ, ու Իսրայէլի գունդերուն կանչելով՝ անոնց ըսաւ, Ինչո՞ւ համար դէմ դէմ պատերազմի ընելու ելեր էք. ու գունդերով չորեւէր էք. միթէ ես փղշտացի չե՞մ, ու դուք Սաւուղի ծառաները չե՞ք. ձեր մէջէն մարդ մը ընտրեցէք, որպէս զի իջնէ ինծի հետ հե‡ամարտի։ 9—Եթէ կարող ըլլայ ինծի հետ ծեծկռտելու, ու զիս սպաննէ, այն ատեն մենք ձեզի ծառայ ըլլանք. բայց եթէ ես յաղթեմ ու զանիկա սպաննեմ, այն ատեն դուք մեզի ծառայ ըլլաք ու մեզի ծառայութիւն ընէք։ 10—Ու այն փղշտացին ըսաւ, Ես այսօր Իսրայէլի գունդերը նախատեցի. ինծի մարդ մը տուէք, որպէս զի իրարու հետ ծեծկռտինք։ 11—Ու երբ Սաւուղ ու բոլոր Իսրայէլ փղշտացիին այս խօսքերը լսեցին, զարհուրեցան ու խիստ վախցան։

*ԿՄ, ասպար

12—Ե. Դաւիթ եփրաթացի, այսինքն Յուդայի Բեթլհեհացի, Յեսսէ անունով մարդու մը որդի էր. անիկա ութ որդի ունէր, ու անիկա Սաուղի օրերը մարդոց մէջ ծեր մարդ կը սեպուէր։ 13—Ե. Յեսսէի երեք մեծ որդիները երթ էին ելլելով, Սաուղի եւ անոր պատերազմի գացեր էին. և պատերազմի գացող երեք որդիներուն անուններուն՝ անդրանկանը Նդհաս, երկրորդինը Աբինադաբ, և երրորդինը Սամա էր։ 14—Ու Դաւիթ ինք ամէնին պզտիկն էր. և երեք մեծերը Սաուղի եւ եւ գացին։ 15—Բայց Դաւիթ Սաուղի քովէն ելլելով Բեթլհեհէմ դարձեր էր, որպէս զի իր հօրը ոչխարները արածէ։ 16—Ե. այն փղշտացին քառասուն օր առաւ ու իրիկուն կը մօտենար, ու ըննդ հնձոմբոթ-ընէ հրատէբէլ կը կայնէր։

17—Ե. Յեսսէ իր որդւոյն Դաւիթի ըսաւ, Քու եղբայրներուդ համար այս մէկ արդս բռնած ցորենը ու այս տասը հացը առ, բանակը վազէ եղբայրներուդ տուր։ 18—Ե. այս տասը գլուխ պանիրը ալ հազարապետին տար, ու նայէ թէ եղբայրներդ ողջ առ՞ողջ են, ու անոնցմէ նշան առ։ 19—Ե. Սաուղ ու անոնք ու բոլոր իսրայէլի մարդիկը Էլայի հովիտին մէջ փղշտացւոց հետ պատերազմ կ՚ընէին։

20—Ե. Դաւիթ առաւօտուն կանուխ ելաւ, ոչխարները պահապան հովիւին թողուց, ու այն բեռնէզ առաւ գնաց, ինչպես Յեսսէ իրեն պատուիրեր էր. ու երբ կառքերուն սեղը հասաւ, զօրքերը կարգաս կը շարուէին, ու պատերազմի համար բարձր ձայնով կ՚աղաղակէին. 21—Քանզի իսրայէլ ու փղշտացիք զօրք զօրքի դէմ գունդեր շարեր էին։ 22—Ե. Դաւիթ իր վրայէն ումանները Լեր առնելով՝ ումաններու պահապանին ձեռքը յանձնեց, և դէպ ի գունդը վազեց, ու գնաց իր եղբայրներուն ողջոյնը հարցուց։ 23—Ու երբ անիկա անոնց հետ կը խօսէր, ահա այն փղշտացի ախոյեանը Գողիաթ անունով, որ Գէթ էր՝ պատէնեն էր, փղշտացւոց գունդերէն ելաւ, և այն առաջուան խօսքերուն պէս դրուցեց. ու Դաւիթ լսեց։ 24—Ե. Իսրայէլի բոլոր մարդիկը երբ այն մարդը տեսան, անոր երեսէն փախան ու զարհուրեցան. 25—Ե. Իսրայէլի մարդիկը ըսին, Այս ելլող մարդը տեսա՞ք, որ Իսրայէլը նախատելու կ՚ելլէ. ալ որ զանիկա մեռցնէ, թագաւորը մեծ հարստութեամբ պիտի հարստացնէ զանիկա, ու իր աղջիկը անոր պիտի տայ, և անոր հօրը տունը Իսրայէլի մէջ ազատ պիտի բնէ։ 26—Ու Դաւիթ իր քով եղող մարդոցը հետ խօսեցաւ ու ըսաւ, Այս Փղշտացին մեռցընող և Իսրայէլէ նախատինքը վերցրնող մարդուն ի՞նչ պիտի ըլլայ. քանզի այս անթլփատ փղշտացին ո՞վ է՝ որ կենդանի Աստուծոյն զօրքերը նախատէ։ 27—Ու ժողովուրդը նոյն խօսքերը զրուցեց անոր ու ըսաւ, Զանիկա մեռցընող մարդուն այնպէս պիտի ըլլայ։ 28—Ե. անոր մեծ եղբայրը Նդհաբ երբ լսեց անոր խօսիլը այն մարդոց հետ, սաստիկ բարկութեամբ Դաւիթի սրդոհեցաւ եղիաբ, ու ըսաւ, Դուն ինչո՞ւհա իջար, և այն փիչ ոչխարները անապատին մէջ որո՞ւ ձգեցիր. ես քու հպարտութիւնդ ու սրտիդ չարութիւնը գիտեմ. անտարակոյս դուն պատերազմը տեսնելու իջեր ես։ 29—Ե. Դաւիթ ըսաւ, Հիմա ի՞նչ ըրի. այս *խօսք չէ՞։ 30—Ու անոր քովէն ուրիշ մարդու մը դարձաւ, և նոյն խօսքերը զրուցեց, ու ժողովուրդն ալ առաջուան խօսքերուն պէս պատասխան տուին անոր։

31—Ե. Դաւիթի ըսած խօսքերը լսուեցան, ու երբ Սաուղի առջև պատմեցին, Սաուղ իր ետև բերել տուաւ զանիկա։ 32—Ե. Դաւիթ Սաուղի ըսաւ, Ասոր պատճառաւ քնաւ մարդու մը սիրտ չհատրի. քու ծառադ պիտի երթայ, ու այն փղշտացիին հետ ձեռնկուի։ 33—Ե. Սաուղ Դաւիթի ըսաւ, Դուն չես կրնար այն փղշտացիին վրայ երթալ, ու անոր հետ ձեռնկուիլ, քանզի դուն մանուկ ես, ու անիկա իր մանկութենէն ի վեր պատերազմող մարդն է։ 34—Ե. Դաւիթ ըսաւ Սաուղի, Քու ծառադ երբ իր հօրը ոչխարները կ՚արածէր, ու առիւծ կամ արջ կու գար, և հօտէրէն ոչխար կը տանէր, 35—Ես անոր ետևէն երթալով՝ զանիկա կը զարնէի, ու անոր բերնէն կ՚ազատէի. ու երբ անիկա իմ վրաս յարձակէր, զանիկա մօրուքէն կը բռնէի, կը զարնէի ու կը մեռցնէի։ 36—Քու ծառադ առիւծ ալ մեռցուցած է՝ արջ ալ. ու այս անթլփատ փղշտացին ալ անոնցմէ մէկուն պէս պիտի ըլլայ. քանզի կենդանի Աստուծոյն զօրքերը նախատեց։ 37—Ե. Դաւիթ ըսաւ, Առիւծին ու արջին ձեռքէն զիս ազատող Տէրը այս փղշտացիին ձեռքէն ալ պիտի ազատէ։ Ես Սաուղ Դաւիթի ըսաւ, Գնա, ու Տէրը քեզի հետ ըլլայ։ 38—Ես Սաուղ իր հանդերձները Դաւիթի հագցուց, ու անոր գլխուն պղնձէ սաղաւարտ մը դրաւ, ու անոր պահ ալ հագցուց։ 39—Ես Դաւիթ հանդերձները վրայէն Սաուղի սուրը մէջքը կապեց, ու սկսաւ քալել, քանզի սորված չէր։ ու Դաւիթ Սաուղի ըսաւ, Ասոնցով չեմ կրնար քալել, քանզի սորված չեմ. ուստի Դաւիթ զանոնք իր վրայէն հանեց։

40—Ես իր ցուպը ձեռքը առաւ, ու հեղեղատէն իրեն համար հինգ հատ գլաքարեր քաղեց, ու զանոնք իր հովուական ամանին, այսինքն մախաղին, մէջ դրաւ, ու պարսը ձեռքը ի՛նդ֊ել֊ փղշտացիին մօտեցաւ։ 41—Ես փղշտացին ալ եկաւ ու Դաւիթի մօտեցաւ. և անոր վահանը վերցնող մարդը անոր առջև էր։ 42—Ու երբ փղշտացին նայեցաւ ու Դաւիթը տեսաւ, զանիկա արհամարհեց. քանզի անիկա կարմիր գունով ու գեղեցիկ դէմքով պատանի մըն էր։ 43—Ես փղշտացին ըսաւ Դաւիթին, Միթէ ես չո՞ւն եմ որ իմ վրաս ցուպով կու գաս։ ու փղշտացին իր աստուածներովը Դաւիթը նզովեց։ 44—Ես փղշտացին ըսաւ Դաւիթին, Ինծի եկուր, ու քու մսերդիդ երկինքի թռչուններուն ու դաշտի գազաններուն տամ։ 45—Ես Դաւիթ ըսաւ փղշտացիին, Դուն ինծի սրով, նիզակով ու գեղարդով կու գաս, բայց ես զօրութեանց Տէրոջը, քու նախատած Իսրայէլի զօրքերուն Աստուծոյն, անուանով քեզի կու գամ։ 46—Այսօր Տէրը քեզ

*կամ, իրաւունքով

*իմ ձեռքս պիտի մատնէ՝. ու ես քեզ պիտի մեռցնեմ, ու վրայէդ գլուխդ պիտի առնեմ. և փղշտացւոց բանակին դիակները այսօր երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն պիտի տամ. որպէս զի բոլոր երկիրը գիտնայ որ Իսրայէլի Աստուած կայ. 47—Ես այս բոլոր ժողովքը գիտնան որ Տէրը սրով և նիզակով չազատեր. քանզի պատերազմը Տէրոջն է, ու անիկա ձեզ մեր ձեռքը պիտի մատնէ։ 48—Ու երբ փղշտացին ելաւ ու եկաւ Դաւիթի մօտեցաւ, Դաւիթ ալ չուտով պատերազմի ապարէզը վազեց փղշտացին դիմաւորելու։ 49—Ես Դաւիթ իր ձեռքը իր մախաղին մէջ խոթեց, ու անկէ քար մը առաւ, և ջնդի֊ պարսով նետեց, ու փղշտացիին ճակատը զարկաւ. և քարը անոր ճակատին մէջ մտաւ, ու անիկա երեսի վրայ գետինը ինկաւ։ 50—Այսպէս Դաւիթ պարսով ու քարով փղշտացիին յաղթեց. և զարկաւ փղշտացին ու մեռցուց զանիկա. բայց Դաւիթի ձեռքը սուր չկար։ 51—Ես Դաւիթ վազելով փղշտացիին վրայ կանգնեցաւ. ու անոր սուրը առաւ, պատեանէն հանեց, ու զանիկա մեռցնելէն ետքը գլուխը անով կտրեց։ Ես փղշտացիք իրենց զօրաւոր մարդուն մեռնիլը տեսնելով՝ փախան։ 52—Այն տեղ Իսրայէլի ու Յուդայի մարդիկը ելան, և ազաղակներով մինչև հովիտը ու մինչև Ակկարոնի դռները փղշտացիները հալածեցին. և փղշտացւոց մեռցուածները Սագարիմի ճամբուն վրայ, ու մինչև Գէթ ու Ակկարոն ինկան։ 53—Ես Իսրայէլի որդիները փղշտացիները հալածելէն ետ դարձան, ու անոնց բանակը կողոպտեցին։ 54—Ես Դաւիթ փղշտացիին գլուխը առաւ, ու զանիկա Երուսաղէմ տարաւ. բայց անոր զէնքերը իր վրանին մէջ դրաւ։

55—Ու երբ Սաուղ Դաւիթը տեսաւ, որ փղշտացիին դէմ ելեր է, էր զօրավարին, Աբեններին, ըսաւ, Ով Աբեններ, այս պատանին որո՞ւն տղան է։ Ու Աբեններ ըսաւ, կենդանի է քու անձդ, ով թագաւոր, որ չեմ գիտեր,

*նէէ. իմ ձեռքիս մէջ պիտի գոցէ

56—Եւ Թագաւորը բսաւ, Հարցուր Թէ այս պատանին որո՞ւն տղան է։ 57—Ու երբ Դաւիթ փղշտացին մեռցնելէն ետ դարձաւ, Աբեններ առաւ զանիկա ու Սաւուղի առջեւ տարաւ. ու փղշտացիին գլուխը անոր ձեռքն էր։ 58—Եւ Սաւուղ բսաւ անոր, Որո՞ւն տղան ես դուն, պատանի՛ր։ Ու Դաւիթ բսաւ, Ես ծառայիդ Յեսսէի տղան եմ։

ԳԼ. ԻԸ

Ու երբ Սաւուղի հետ խօսիլը լմընցուց, Յովնաթանի սիրտը Դաւիթի սրտին հետ կապուեցաւ, ու Յովնաթան իր անձին պէս սիրեց զանիկա։ 2—Եւ Նոյն օրը Սաւուղ զանիկա առաւ, ու թոդ չտուաւ որ իր հօրը տունը դառնայ։ 3—Եւ Յովնաթան Դաւիթի հետ ուխտ բսաւ, քանզի իր անձին պէս կը սիրէը զանիկա։ 4—Ու Յովնաթան իր վրայի վերարկուն հանեց, և զանիկա ու հանդերձներըը, մինչև իր սուրը, իր աղեղը ու իր գօտին Դաւիթի տուաւ։ 5—Եւ Դաւիթ ամէն տեղ կ'երթար՝ ուր որ Սաւուղ զանիկա կը ղրկէր, ու խմաստութեամբ կը վարուէր։ և Սաւուղ զանիկա պատերազմական մարդոց վրայ կեցուց, ու բոլոր ժողովրդին ու Սաւուղի ծառաներուն ալ հաճոյ եղաւ։

6—Ու երբ Դաւիթ փղշտացին մեռցընելէն կը դառնար, ու ղբէ՛երը կու գային, Իսրայէլի բոլոր քաղաքներէն կիներըը երգելով ու պար բռնելով, թմբուկներով ուրախութեամբ ու ծընծաղներով Սաւուղ Թագաւորը դիմաւորելու ելան։ 7—Եւ պար բռնող կիներըը պատասխան տալով կ'երգէին ու կ'ըսէին,

Սաւուղ իր հազարաւորներըը զարկաւ,
Ու Դաւիթ իր բիւրաւորներըը։

8—Եւ Սաւուղ խիստ բարկացաւ ու այս խօսքին համար դժուարացաւ, ու բսաւ, Բիւրաւորներըը Դաւիթի տուին, ու հազարաւորներըը ինծի տուին. ու հիմա Թագաւորութենէ ուրիշ չ՚ըլ՚ա՛ Հաց անոր։ 9—Եւ այն օրէն ի վեր Սաւուղ ծուռ աչքով կը նայէր Դաւիթին։

10— Ու հետեւեալ օրը Սաւուղի վրայ Աստուծմէ չար ոգի եկաւ, ու տունը մէջ մարգարէութիւն ըրաւ և Դաւիթ ուրիշ անգամներու պէս իր ձեռքով գոռ կը զարնէր. ու Սաւուղի ձեռքը նիզակ կար։ 11—Ու Սաւուղ նիզակը նետեց՝ ըսելով, Դաւիթը պատին վրայ պիտի գամեմ. բայց Դաւիթ անոր իմացուցին ու բսին, Դաւիթ այսպէս խօսեցաւ։ 25—Ու Սաւուղ բսաւ, Դաւիթի այսպէս ըսէ՛ք, Թագաւորը ոչ ըէէ օժիտ չուզեր, բայց միայն Փղշտացւոց հարիւր անթլփատութիւնը, որպէս զի Թագաւորին թշնամիներէն վրէժ առնուի։ (ու Սաւուղ կը խորհէր Դաւիթը Փղշտացւոց *ձեռքը մատնել։) 26—Ու երբ անոր ծառաներըը այս խօսքերը Դաւիթի իմացուցին, այս բանը Դաւիթի աչքերուն ազէկ երեւցաւ որ Թագաւորին փեսայ ըլլայ։ 27—Ուստի օրերուն լլնելէն առաջ Դաւիթ եղաւ, ու իր մարդոցմով գնաց, և Փղշտացիներէն երկու հարիւր մարդ մեռցուց. ու Դաւիթ անոնց անթլփատութիւններըը բերաւ, ու զանոնք լման Թագաւորին տուին, որպէս զի Թագաւորին փեսայ ըլլայ։ Ու Սաւուղ իր Մեղբոյ աղջիկը կին տուաւ անոր։ 28—Ու Սաւուղ երբ տեսաւ ու հասկցաւ որ Տէրը Դաւիթի հետ է, ու Սաւուղի Մեղբոյ աղջիկը զանիկա կը սիրէ, 29—Սաւուղ ա՛լ աւելի վախցաւ Դաւիթէ. և Սաւուղ յաբունակ Դաւիթի թշնամի եղաւ։ 30—Ու փղշտացւոց իշխանները ելան, ու անոնց ելլելէն ետքը Դաւիթ Սաւուղի ամէն ծառաներէն աւելի խմաստութեամբ կը վարուէր. ու անոր անունը շատ հռչակաւոր եղաւ։

ԳԼ. ԻԹ

Ես Սաւուղ իր որդւոյն Յովնաթանի ու իր ամէն ծառաներուն բսաւ որ Դաւիթը մեռցնեն։ Բայց Սաւուղի որդին Յովնաթան Դաւիթը շատ կը սիրէր. ու Յովնաթան Դաւիթի իմացուց ու բսաւ, Իմ հայրս Սաւուղ քեզ մեռցընել կ'ուզէ. ուրեմն հիմա մինչև առաւօտ զգոյշ կինայ, ու ծածուկ տեղ մը նստի ու պահուէ. 3—Ու ես ելլեմ, և քու նստած արտիդ մէջ հօրս քով կայ-

*կամ, երկու աղջիկներուս մէկովը

†կամ, ձեռքովը կորսնցնել

*ԵԲր. թերափիմ

նիմ, ու քեզի համար իմ հօրս հետ խօսիմ, և ինչ որ իմանամ՝ քեզի պատմեմ։ 4—Ու Յովնաթան Դաւիթի վրայով աղէկ Խօսէը զրուցեց իր հօրը Սաւուղի, և անոր բսաւ, Ով Թագաւոր, քու ծառայիդ Դաւիթի դէմ մեղք մի գործեր. քանզի անիկա քեզի դէմ մեղք մը չըրաւ, ու անոր գործերը քեզի շատ ազէկ են։ 5—Վասն զի իր հոգին ձեռքին մէջ դրաւ, ու փղշտացին զարկաւ, և Տէրը բոլոր Իսրայէլի մեծ փրկութիւն մը ընորհեց. դուն տեսար և ուրախացար. և ինչո՞ւ համար Դաւիթը առանց պատճառի մեռցնելով՝ անմեղ արեան մեղք պիտի մտնես։ 6—Ու Սաւուղ Յովնաթանի խօսքը մտիկ ըրաւ, ու Սաւուղ երդում ըրաւ՝ ըԸ՚ըսվ, Տէրը կենդանի է որ անիկա պիտի չմեռցուի։ 7—Եւ Յովնաթան Դաւիթը կանչեց, ու Յովնաթան այս բոլոր խօսքերը անոր պատմեց. և Յովնաթան Դաւիթը Սաւուղի տարաւ, ու անիկա առաջուան պէս անոր առջեւ կը կայներ։

8—Եւ նորէն պատերազմ եղաւ. ու Դաւիթ ելաւ Փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ, ու անոնց մէջ մեծ կոտորած մը ըրաւ. և անոնք անոր առջեւէն փախան։ 9—Ու Սաւուղի վրայ Տէրոյմէ չար ոգի եկաւ. և անիկա իր տունը կը նստէր, ու նիզակը իր ձեռքն էր. Դաւիթ ալ իր ձեռքով նուագ բանը կը զարնէր։ 10—Եւ Սաւուղ ուզեց որ Դաւիթը նիզակով զարնէ ու պատին վրայ խոթ. բայց անիկա Սաւուղի երեսէն մէկզի քաշուեցաւ, և Սաւուղ նիզակը պատին զարկաւ. ու Դաւիթ փախաւ, և այն գիշերը ազատեցաւ։ 11—Բայց Սաւուղ Դաւիթի տունը մարդիկ ղրկեց, որպէս զի զանիկա պաշարեն ու առաւօտուն մեռցընեն։ Սակայն Դաւիթի կինը Մեղբոյ անոր իմացուց ու բսաւ, Եթէ այս գիշեր քու անձդ չապրեցնես, վաղը քեզ պիտի մեռցնեն։ 12—Ուստի Մեղբոյ Դաւիթը պատուհանէն վար իջեցուց, և անիկա գնաց, փախաւ ու ազատեցաւ։ 13—Ու Մեղբոյ *արձան մը առաւ, և զանիկա անկողինին մէջ դրաւ, ու ա-

նոր գլխուն տակ այծի մազէ բարձ մը դրաւ, և գանկիկ ծածկոցով մը ծածկեց։ 14—Ու երբ Սաւուղ մարդիկ ղրկեց Դաւիթը բռնելու համար, անիկա ըսաւ, Հիւանդ է։ 15—Եւ Սաւուղ նորէն մարդիկ ղրկեց Դաւիթը տեսնելու համար, ու ըսաւ, Գանկիկ անկողինովը բնէ բերէք, որպէս զի մեռցնեմ։ 16—Ուստի այն մարդիկը եկան. և ահա անկողինին մէջ արձան մը կար, ու գլխուն տակ այծի մազէ բարձ մը։ 17—Ու Սաւուղ Մեղքոզի ըսաւ, Ձիս ինչո՞ւ համար այսպէս խաբեցիր, ու իմ թշնամիս Թող տուր ու ազատեցաւ։ Ու Մեղքոզ Սաւուղի ըսաւ, Անկիա բնէի ըսաւ, Թող տուր ինս որպէս զի երթամ։ ինչո՞ւ մեռցնեմ քեզ։

18—Այսպէս փախաւ Դաւիթ ու ազատեցաւ, և Ռամա գնաց Սամուէլի քովն, ու անոր պատմեց այն ամէնը որ Սաւուղ ըրեր էր իրեն։ Նաքը անիկա Սամուէլի հետ գնաց, ու Նայաթի մէջ բնակեցան։ 19—Ու Սաւուղի իմացուցին ու ըսին, Ահա Դաւիթ Ռամայի Նայաթին մէջ է։ 20—Անոր ետեւ Սաւուղ մարդիկ ղրկեց որպէս զի Դաւիթը բռնեն, ու անոնք մարգարէութիւն ընող մարգարէներուն ժողովքը և անոնց վրայ կեցող Սամուէլը երբ տեսան, Աստուծոյ Հոգին Սաւուղի ղրկած մարդոց վրայ եկաւ, ու անոնք ալ մարգարէութիւն ըրին։ 21—Ու երբ Սաւուղի իմացուցին, ուրիշ մարդիկ ղրկեց, և անոնք ալ մարգարէութիւն ըրին։ Ու Սաւուղ նորէն երրորդ անգամ մարդիկ ղրկեց, և անոնք ալ մարգարէութիւն ըրին։ 22—Ան ատեն ինք ալ Ռամա գնաց, ու մինչև Սոկքովի մեծ ջրհորը գալով, հարցուց ու ըսաւ, Սամուէլ ու Դաւիթ ո՞ւր են։ Եւ Տէրէ՛ն ըսաւ, Ահա անոնք Ռամայի Նայաթին են։ 23—Ուստի Ռամայի Նայաթը գնաց. և անոր վրայ ալ Աստուծոյ Հոգին եկաւ, ու մինչև Ռամայի Նայաթը հասնիլը ճամբան երթալով մարգարէութիւն կ'ընէր։ 24—Եւ անիկա ալ իր լաթերը հանեց, ու Սամուէլի առջև անիկա ալ մարգարէութիւն կ'ընէր, և այն բոլոր օրը ու բոլոր գիշերը մերկ ինկաւ։ Անոր համար կ'ըսեն Թէ Սաւո՞ւղ ալ մարգարէներուն մէջ է։

Գլ. Ի

Եւ Դաւիթ Ռամայի Նայաթէն փախաւ, ու գնաց Յովնաթանի առջև ըսաւ, Ես ի՞նչ ըրեր եմ, յանցանքս ի՞նչ է, ու ի՞նչ մեղք գործեր եմ քու հօրդ առջև, որ անիկա ինս մեռցնել կ'ուզէ։ 2—Ու Յովնաթան ըսաւ անոր, Բա՛ւ լինի, դուն պիտի չմեռնիս. ահա իմ հայրս մեծ կամ պզտիկ բան մը չընէր առանց *ինծի յայտնելու. ու իմ հայրս ինչո՞ւ համար այդ բանը ինծմէ պիտի պահէ. այդպիսի բան չկայ։ 3—Ու Դաւիթ երդում ալ ըրաւ ու ըսաւ, Քու հայրդ աղէկ գիտէ որ ես քու աչքերդ չնորհք գտեր եմ. անոր համար կ'ըսէ Թէ Յովնաթան այս բանը չգիտնայ, չըլլայ որ վշտանայ. բայց կենդանի է Տէր ու կենդանի է քու անձդ, որ իմ ու մահուան մէկտեղ միայն մէկ քայլ մնացեր է։ 4— Եւ Յովնաթան ըսաւ Դաւիթի, †Սրտիդ ուզած բանը ինձի ըսէ, ու ես քեզի ընեմ։ 5—Ու Դաւիթ ըսաւ Յովնաթանի, Ահա վաղը ամսագլուխ է, ու պէտք է որ ես թագաւորին հետ կերակուր ուտելու համար թլդը նստիմ. սակայն զիս թող տուր, որ մինչև երրորդ օրուան իրիկունը դաշտին մէջ պահուխիմ. 6—Եթէ քու հայրդ զիս փնտռելու ըլլայ, ըսես որ Դաւիթ ինծի չատ աղաչեց որ արագութեամբ իր քաղաքը Բեթղեհէմ երթայ. քանզի հոն էր բոլոր ազգատոհմին տարեկան զոհը կ'ըլլայ։ 7—Եթէ այսպէս ըսէ, Աղէկ, քու ծառային խաղաղութիւն է. բայց եթէ խիստ բարկանայ, գիտցիր որ անիկա որոշեր է չարութիւն ընել։ 8—Ու ծառայիդ ողորմութիւն ըրէ, քանզի դուն քու ծառայիդ հետ Տէրոջը ուխտով ուխտ ըրիր. ու եթէ իմ վրաս յանցանք մը կայ, դուն մեռցուր զիս. ինչո՞ւ համար զիս քու հօրդ տանիս։ 9—Ու Յովնաթան ըսաւ, Բա՛ւ լիցի որ ես ստոյգ գիտնալով Թէ իմ հօրս կողմանէ քեզի համար չարիք որոշուած է, քեզի չիմացնեմ։ 10—Ու Դաւիթ ըսաւ Յովնաթանի, Հապա եթէ քու հայրդ քեզի խստութեամբ պատասխան ապա, ինծի ո՞վ պիտի իմացնէ։ 11—Ու Յովնաթան ըսաւ Դաւիթի, Եկուր, դաշտը ելլենք. ու երկուքը դաշտը ելան։ 12-Ու Յովնաթան ըսաւ Դաւիթի, Վկա՛յ է Իսրայէլի Տէր Աստուածը. եթէ վաղը այս ատեն կամ միւս օր իմ հայրս քըննելով տեսնեմ Թէ Դաւիթի համար աղէկութիւն մը կայ, և նոյն ատեն ո՛չրէտ չղրկեմ ու քեզի չյայտնեմ, 13—Տէրը Յովնաթանի այսպէս ու ասկէ աւելի ընէ. բայց եթէ իմ հայրս քեզի չարութիւն մը ընել ուզէ, ընդդիմ ու քեզի պիտի յայտնեմ, ու քեզ պիտի արձակեմ, որպէս զի խաղաղութեամբ երթաս, ու Տէրը քեզի հետ ըլլայ, ինչպէս իմ հօրս հետ էր։ 14—Եւ ոչ միայն իմ կենդանութեանս ատեն դուն ինծի Տէրոջը ողորմութիւնը ընես՝ որպէս զի ես չմեռնիմ, 15—Մանաւանդ քու ողորմութիւնդ իմ տունէս յաւիտեան չկտրես, ոչ ալ այն ատեն երբ Տէրը Դաւիթի բոլոր թշնամիները երկրի վրայէն վերցնէ։ 16—Ու Յովնաթան Դաւիթի տանը հետ դաշնակցութիւն ըրաւ, ու ըսաւ, Տէրը Դաւիթի թշնամիներէն վրէժ առնէ։ 17—Ու Յովնաթան Դաւիթի նորէն երդում ընել տուաւ՝ զանիկա սիրելուն համար. քանզի զանիկա իր անձին պէս կը սիրէր։ 18—Ու Յովնաթան անոր ըսաւ, Վաղը ամսագլուխ է, ու դուն պիտի փընտռուիս, քանզի քու տեղդ պարապ պիտի մնայ։ 19—Ու երրորդ օրը չուտով իջնես, և գաս այն տեղ՝ ուր գործին օրը պահուեցար, ու Եզելի քարին քով նստիս։ 20—Ու ես երեք քով նշանի մը նետելու պէս՝ երեք նետ պիտի նետեմ։ 21—Ու ահա մանչը պիտի ղրկեմ՝ ըսելով, Գնա, նետերը գտիր. ու եթէ մանչուն ըսեմ, Ահա նետերը քեզմէ այդին են, զանոնք առ. այն ատեն գաս, քանզի քեզի խաղաղութիւն է, և Տէրը կենդանի է որ բան մը չկայ։ 22—Բայց եթէ մանչուն այսպէս ըսեմ, Ահա նետերը քեզմէ անդին են. այն ատեն երթաս, քանզի Տէրը քեզ կը ղրկէ։ 23—Ու այս խօսքին համար զոր ես ու դուն խօսեցանք, ահա Տէրը իմ ու քու մէջտեղ յաւիտեան վկա՛յ ըլլա՛յ։

24—Ուստի Դաւիթ դաշտին մէջ պահուեցաւ. և ամսագլուխը հասնելով՝ թագաւորը կերակուր ուտելու համար թլդը նստաւ։ 25—Ու թագաւորը իր սովորութեանը պէս իր աթոռը, պատին †–ր–ն–ե–ն աթոռը, նստաւ. ու Յովնաթան ոտք ելաւ, և Սաւուղ քով Աբենները նստաւ. ու Դաւիթի տեղը պարապ մնաց։ 26—Ու Սաւուղ այն օրը բան մը չխօսեցաւ, քանզի ըսաւ, Անոր բան մը պատահեր է. անիկա մաքուր չէ, անաւարակոյս մաքուր պիտի չըլլայ։ 27—Ու հետեւեալ օրը, ամսուն երկրորդ օրն ալ, Դաւիթի տեղը պարապ էր. ուստի Սաւուղ իր որդւոյն Յովնաթանի բսաւ, Ցեսսէի որդին ինչո՞ւ համար երէկ ու այսօր սեղան չեկաւ։ 28—Ու Յովնաթան Սաւուղի պատասխան տուաւ, Դաւիթ ինծի չատ աղաչեց որ Բեթղեհէմ երթայ, 29—Ու ըսաւ, Շնորհք ըրէ, զիս ղրկէ, քանզի այն քաղաքին մէջ մեր ազգատոհմը զոհ կ'ընէ, ու իմ եղբայրս ինծի պատուիրած է. և եթէ քու աչքերուդ առջև շնորհք գտեր եմ, կ'ազատիմ, զիս թող տուր որ երթամ ու եղբայրներս տեսնեմ. այս պատճառաւ թագաւորին սեղանը չեկաւ։ 30—Ու Սաւուղի բարկութիւնը բորբոքեցաւ Յովնաթանի դէմ, ու անոր ըսաւ, Ով ապստամբ ու չար զաւակ, ես չե՞մ գիտեր որ դուն Ցեսսէի որդին ընտրեցիր *քեզ ու մայրդ խայտառակելու՝ համար։ 31—Քանզի քանի որ Ցեսսէի որդին երկրի վրայ ողջ է, դուն պիտի չհաստատուիս, ոչ ալ քու թագաւորութիւնդ. ուստի հիմա մարդ ղրկէ ու զանիկա ինծի բեր, քանզի անիկա մահու †արժանի է։ 32—Ու Յովնաթան իր հօրը Սաւուղի պատասխան տուաւ ու ըսաւ, Ինչո՞ւ համար պիտի մեռցուի, անիկա ի՞նչ բրաւ։ 33—Ու Սաւուղ նիզակը նետեց անոր, որպէս զի զանիկա զարնէ. այն ատեն Յովնաթան իմացաւ որ իր հայրը որոշեր է Դաւիթը սպաննել։ 34—Ուստի Յովնաթան բարկութեամբ սեղանէն վեր կեցաւ, ու ամսուն երկրորդ օրը ուտելիք չկերաւ, քանզի իր հօրը համար կը տրտմէր, որովհետեւ անոր Դաւիթին համար ամօթ բրեր էր։ 35—Ու առտուն Յովնաթան դաշտը ելաւ Դաւիթի որոշած ատենը, ու պզտիկ տղայ մը անոր հետ էր։ 36—Ու իր տղուն ըսաւ, Վազէ, նետերը գտիր որ կը նետեմ։ Տղան վազելու ատեն նետ մը անդին նետեց։ 37—Ու տղան նետին եկած տեղը հասաւ, Յովնաթան տղուն ետեւէն գոռաց ու ըսաւ, Նետը անդին չէ՞։ 38—Ու Յովնաթան տղուն ետեւէն գոռաց, Շուտ արագ մի՛ կենար։ Ու Յովնաթանի տղան նետերը հաւաքեց ու իր տիրոջը եկաւ։ 39—Բայց տղան բան մը չգիտցաւ. միայն Յովնաթան ու Դաւիթ գիտէին գործին։ 40—Ու Յովնաթան իր զէնքերը տղուն տուաւ, ու անոր ըսաւ, Գնա, տար քաղաքը։ 41—Տղան գնալուն պէս, Դաւիթ հարաւային կողմէն ելաւ, ու երեսի վրայ գետին երկրպագեց երեք անգամ, ու իրարու համբուրեցին ու լացին միասին, մինչև Դաւիթ աւելի լացաւ։ 42—Ու Յովնաթան Դաւիթի ըսաւ, Խաղաղութեամբ գնա, որովհետեւ մենք երկուքս ալ Տիրոջը անունովը երդում ըրինք՝ ըսելով, Տէրը ինծի ու քու զաւակիդ ու զաւակիս մէջտեղ յաւիտեան վկա՛յ ըլլայ։ Ու Դաւիթ վեր կեցաւ ու գնաց, և Յովնաթան քաղաքը մտաւ։

*Եբր. քո ականջին հմմ. 12։ Գլ.Բ.15։
†Եբր. ինչ որ քու անձդ ինծի ըսէ,

*Եբր. քու ամօթիդ և մօրդ մերկութեանը ամօթին
†Եբր. որդի

չէր է Դաւիթը մեռցնել։ 34—Ո՛ Յովնաթան առաջիկ բարեմիտութեամբ սեզաննէն եղաւ, ու ամաուն երկրորդ օրը կեղակուր չկերաւ. քանզի Դաւիթի համար սիրտը կոտրեցաւ, որովհետեւ իր հայրը զանիկա անարգեց։

35— Ե՛ Յովնաթան առաւօտուն դաշտը ելաւ, ինչպէս Դաւիթի հետ ժամանակ որոշեր էր, ու իրեն հետ պզտիկ մանչ մը կար։ 36—Ու իր մանչուն ըսաւ, վազէ ու այս իմ նետերը նետարձակ փարթ. ու մանչուն վազած ատենը անիկա նետը անկէ անդին նետեց։ 37—Ու երբ մանչը Յովնաթանի նետած նետին տեղը գնաց, Յովնաթան մանչուն ետեւէն կանչելով ըսաւ, Ահա նետը քեզմէ անդին է։ 38—Ու Յովնաթան մանչուն ետեւէն կանչեց, Շուտ ըրէ, արագցիր, մի կենար։ Ու Յովնաթանի մանչը նետերը ժողվեց, իր տէրոջը եկաւ։ 39—Բայց մանչը բան մը չէր գիտեր. այս բանը միայն Յովնաթան ու Դաւիթ գիտէին։ 40—Ու Յովնաթան իր զործիքները իր մանչուն տուաւ ու ոնոր ըսաւ, Գնա, քաղաքը տար։ 41—Ու մանչուն գացածին պէս Դաւիթ հարաւային կողմէն ելաւ, ու երեսի վրայ գետինը ինկաւ ու երեք անգամ երկրպագութիւն ըրաւ. և միմիկի համբուրեցին ու իրարու վրայ լացին, մինչեւ որ Դաւիթ չափէ դուրս լացաւ։ 42—Ու Յովնաթան Դաւիթի ըսաւ, Գնա խաղաղութեամբ, ինչպես երկուքս ալ Տէրոջը անունովը երդուան ըրինք ու ըսինք, Տէրը իմ ու քու մէջտեղ, և իմ սերունդիս ու քու սերունդիդ մէջտեղ միշտ կայնի։ Եւ ինքը վազելով գնաց։

ԳԼ. ԻԱ

Ու Դաւիթ Նոբ գնաց Ախիմելէք քահանային. և Ախիմելէք զարհուրելով Դաւիթը դիմաւորեց, ու անոր ըսաւ, ինչո՞ւ համար մինակ ես ու քեզի հետ մարդ չկայ։ 2—Ու Դաւիթ Ախիմելէք քահանային ըսաւ, Թագաւորը ինծի բան մը հրամայեց ու ինծի ըսաւ, Մարդ մը չգիտնայ այն բանը որու համար քեզ կը ղրկեմ, ու ինչ որ քեզի հրամայեցի. ու ես մանչերուն մէկմէկ տեղ որոշեր եմ։ 3—Հիմա ի՞նչ կայ ձեռքիդ տակ. ինծի հինգ հաց տուր, կամ ինչ որ կը գտնուի։ 4—Ու քահանան Դաւիթի պատասխան տուաւ ու ըսաւ, Ձեռքս տակ հասարակ հաց չկայ, միայն սուրբ հաց կայ. եթէ մանչերը գոնէ կիներէ զգուշացած են։ 5—Ու Դաւիթ քահանային պատասխան տուաւ ու անոր ըսաւ, Իրաւցընէ կիները մեզմէ հեռու են իմ ճամբայ ելած օրէս, այսինքն երկկընէ ու միւս օրն ընէ. և մանչերուն անաւնները մաքուր են. և այս ալ *հասարակ հաց կրնայ սեպուիլ, մանաւանդ որ այսօր անաւներուն մէջ ---էէւ հաց կը սրբագործուի։ 6—Ուստի քահանան սուրբ հաց տուաւ անոր. քանզի հոն ուրիշ հաց չկար, բայց միայն առաջաւորութեան հացը, որ Տէրոջը առջեւէն կը վերցուէր, ու վերցուած օրը տաք հաց կը դրուէր։ 7—Ու այն օրը Սաուղի ծառաներէն մէկը հոն Տէրոջը առջեւ սրդիւած եր, ու անոր անունը Դոէգ Եդոմացի Դուվէի էր. անիկա Սաուղի հովիւներուն գլուխն էր։ 8—Ու Դաւիթ Ախիմելէքի ըսաւ, Այստեղ քու ձեռքիդ տակ նիզակ մը կամ սուր մը չկա՞յ. քանզի թագաւորին գործին ատիպողականն ըլլալուն համար իմ սուրս ու զէնքերս ինծի հետ չառի։ 9—Ու քահանան ըսաւ, Ահա փղշտացի Գողիաթի սուրը՝ զոր Իլոյի հովիտին մէջ մեռցուցիր, անիկա եփուածին ետեւը լաթի մը մէջ փաթթուած կը կենայ. եթէ կ'ուզես զանիկա առնել՝ առ, քանզի հոս անկէ ուրիշ չկայ. ու Դաւիթ ըսաւ, Անոր նմանը չկայ. զանիկա ինծի տուր։

10—Ու այն օրը Դաւիթ ելաւ ու Սաուղի երեսէն փախաւ, և Գէթի Անքուս Թագաւորին գնաց։ 11—Ու Անքուսի ծառաները անոր ըսին, Երկիրն Թագաւորը Դաւիթ ասկա չէ՞. ասոր համար չէ՞ր որ պարբ բռնողները պատասխան տալով կ'երգէին ու կ'ըսէին,

Սաուղ իր հազարաւորները զարկաւ,
Ու Դաւիթ իր բիւրաւորները։

*Նէբ. կերպով մը հասարակ է

12—Ու Դաւիթ այս խօսքերը իր սրտին մէջ դրաւ, ու Գէթի Թագաւորին Անքուսի երեսէն չատ վախցաւ։ 13—Ու անոնց առջեւ իր դէմքը փոխելով անոնց ձեռքին տակ ցինք խենդ ձեւացուց. դռներու փեղկերուն վրայ նշաններ կը գծէր, ու լորձունքները մօրուքին վրայ կը վազցնէր։ 14—Ու Անքուս իր ծառաներուն ըսաւ, Ահա այս մարդուն խենդ ըլլալը տեսաք, զանիկա ինչո՞ւ համար ինծի բերիք։ 15—Միթէ ես խենդերու կարօ՞տ եմ, որ ասիկա իմ առջեւս բերիք խենդութիւն ընելու համար. ասիկա իմ տո՞ւնս մտնէ։

ԳԼ. ԻԲ

Ու Դաւիթ անկէ գնաց, ու ազիւ առազի Ոդոդամի քարայրը հասաւ. ու իր եղբայրները և իր հօրը բոլոր տունը լսեցին, ու հոն անոր իջան։ 2—Ու բոլոր նեղութեան մէջ եղող պարտք ունեցող ու *սիրտը վիրաւորուած՝ մարդիկը անոր քով ժողվուեցան, և անիկա անոնց վրայ զօրագլուխ եղաւ. ու անոր քով չորս հարիւր չափ մարդ եղան։

3—Ու Դաւիթ անկէ Մոաբի Մասփան գնաց, ու Մոաբի թագաւորին ըսաւ, Կ'աղաչեմ, իմ հայրս ու մայրս ձեր քով †կենան. մինչև որ գիտամ թէ Աստուած ինծի ի՛նչ պիտի ընէ, 4—ու զանոնք Մոաբի թագաւորին առջեւ բերել տուաւ. և անոնք անոր քով բնակեցան որչափ ժամանակ որ Դաւիթ բերդին մէջ կեցաւ։

5—Ու Գադ մարգարէն Դաւիթի ըսաւ, Բերդին մէջ մի նստիր, երթը Յուդայի երկիրը գնա։ Ու Դաւիթ գնաց Հարեթի անտառը մտաւ։

6—Ու Սաուղ լսեց որ Դաւիթ ու անոր հետ եղող մարդիկը գտնուեր են. ու Սաուղ Գաբաայի մէջ Ռամայի էֆռաթին տակ նստեր էր, ու նիզակը իր ձեռքն էր, և իր ամէն ծառաներն ալ իր բոլորտիքը կայներ էին։ 7—Ու Սաուղ իր քով կայնող ծառաներուն ը-

*Նէբ. գառնահոգի
†Նէբ. երթեն
‡Կամ, մղայրեն

սաւ, Ով արդիք Բենիամինի, մանիկ բրէք. Միթէ Յեսսէի որդին ամէնուդ ալ արտեր ու այգիներ պիտի տայ, ամէնդ ալ հազարապետներ ու հարիւրապետներ պիտի ընէ, 8—որ ամէնդ ինծի դէմ միաբաներ էք. ու Յեսսէի որդւոյն իմ որդւոյս հետ ըրած գաշնակցութիւնը իմ ականջիս լսող մը չկայ. և ձեր մէջ մարդ մը չկայ որ ինծի համար ցաւի, ու ինծի յայտնէ թէ իմ որդիս իմ ծառաս ինծի դէմ սաք հանեց, որպէս զի գաբաանամուտ ըլլայ, ինչպես գ--ւ այսօր կ'երեւի։

9—Ու Սաուղի ծառաներուն վերակացուն, եդոմացի Դոէգ, պատասխան տուաւ ու ըսաւ, Յեսսէի որդին տեսայ, որ Նոբ եկաւ Ախիտովբի որդւոյն Ախիմելէքի. 10—ու անիկա անոր համար Տէրոջը հարցուց, ու անոր պաշար տուաւ, և անոր Փղշտացի Գողիաթի սուրը տուաւ։

11—Այն ատեն Թագաւորը հ--էր զրկեց, ու Ախիտովբի որդին Ախիմելէք քահանան ու անոր հօրը բոլոր տունը, Նոբի մէջ եղող քահանաները, կանչեց. ու ամէնն ալ Թագաւորին եկան։ 12—Ու Սաուղ ըսաւ, Ով արդի Ախիտովբայ, մտիկ ըրէ. ու անիկա ըսաւ, Ահա հոս եմ, տէր իմ։ 13—Ու Սաուղ անոր ըսաւ, Ինչո՞ւ համար դուն ու Յեսսէի որդին ինծի դէմ միաբանեցաք, ու դուն անոր հաց ու սուր տուիր, և անոր համար Աստուծոյ հարցուցիր, որպէս զի անիկա ելլէ ինծի գաբաանամուտ ըլլայ, ինչպես այսօր կ'երեւի։

14—Ու Ախիմելէք պատասխան տուաւ Թագաւորին ու ըսաւ, Քու բոլոր ծառաներուդ մէջ ո՞վ հաւատարիմ է Դաւիթի պէս, որ Թագաւորի փեսայ, քու *առաջնորդ վերակացուն՝, ու քու տանդ մէջ պատուաւոր է։ 15—Միթէ այսօ՞ր սկսայ անոր համար հարցնելու. քա՛ւ լիցի. Թագաւորը իր ծառային վրայ ոճ իմ հօրս բոլոր տանը վրայ ---ուիէ բան մը չդնէ, քանզի քու ծառադ այս բոլոր բաներէն պզտիկ կամ մեծ բան մը չէր գիտեր։ 16—Ու Թագաւորը ըսաւ,

*Կամ, առաջնադ մանող, և ի՛մ, հրամաններուիդ գացող

Ով Աբիմելէք, անպատճառ պիտի մեռ-
նիս, թէ՛ դուն և թէ՛ քու հօրդ բոլոր
տունը։ 17—Ու թագաւորը իր քով
կայնող սուրհանդակներուն բսաւ, Դար-
ձէք, Տէրոջը քահանաները մեռցուցէք,
քանզի անոնց ձեռքն ալ Դաւիթի հետ
է, և որովհետև անոր փախչիլը գիտ-
նալով՝ ինծի չյայտնեցին. բայց թա-
գաւորին ծառաները չուզեցին իրենց
ձեռքը երկնցնել՝ Տէրոջը քահանաները
զարնելու։ 18—Ու թագաւորը Դոեղին
բսաւ, Դուն դարձիր ու քահանաները
զարկ։ Ու Եդոմացիին Դոեղ դարձաւ
և քահանաները զարկաւ, ու այն օրը
անկաս ութսունըհինգ մարդ մեռցուց,
որոնք քթանէ եփուտ կը հագնէին։
19—Ու քահանաներուն Նոբ քաղաքը
սուրի բերնէ անցուց. այր մարդն ու մին-
չև կին մարդը, աղային մինչև կաթնկերը
մանուկը, ու մինչև արջառը, էշը ու
ոչխարը սուրի բերնէ անցուց։

20—Ու Աբիաթարեան Աբիմելէքի
մէկ որդին, որուն անունը Աբիաթար
էր, ազատեցաւ ու փախաւ Դաւիթի
ետևէն եղաւ։ 21—Ու Աբիաթար Դա-
ւիթին պատմեց թէ Սաուղ Տէրոջը քա-
հանաները մեռցուց։ 22—Ու Դաւիթ
Աբիաթարի բսաւ, Ես այն օրը գիտէի
որ Եդոմացի Դոեղ հոն գտնուելով՝
անշուշտ Սաուղի պիտի պատմէ. քու
հօրդ տանը բոլոր մարդոց մահուանը
ես պատճառ եղայ։ 23—իմ քովս նայէ,
մի վախնար. քանզի իմ հոգիս փնտռողը
քու հոգիդ ալ կը փնտռէ, բայց դուն
իմ քովս ապահով ես։

Գլ. ԻԳ

Ու Դաւիթին իմացուցին՝ ըսելով,
Ահա Փղշտացիք կռիւ են Կէիլայի հետ
պատերազմ կ'ընեն, ու կալերը կը կողոպտեն։
2—Ու Դաւիթ Տէրոջը հարցուց ու բսաւ,
Երթամ այս Փղշտացիները զարնե՞մ։
Ու Տէրը Դաւիթին բսաւ, Գնա Փղշտա-
ցիները զարկ ու Կէիլան ազատէ։ 3—
Ու Դաւիթին մարդիկը անոր բսին, Ահա
մենք հոս Յուդայի մէջ կը վախնանք.
ալ ո՛րչափ աւելի՝ երթ Կէիլա երթանք
Փղշտացւոց գունդերուն դէմ։ 4—Ու
Դաւիթ նորէն մէկմէկ ալ Տէրոջը հար-
ցուց. և Տէրը անոր պատասխան տուաւ
ու բսաւ,Ելիր, Կէիլա իջիր, քանզի ես
Փղշտացիները քու ձեռքդ կու տամ։
5—Ու Դաւիթ իր մարդոցմով Կէիլա
գնաց, ու Փղշտացւոց հետ պատերազմ
ըրաւ. ու անոնց անասունները առաւ,
և զանոնք մեծ հարուածով մը զար-
կաւ. ու Դաւիթ Կէիլայի բնակիչները
ազատեց։ 6—Ու Աբիմելէքի որդին Ա-
բիաթար Դաւիթի քով Կէիլա փախած
ատեն եփուտը ձեռքը բե՛ր իջաւ։

7—Ու երբ Սաուղի իմացուցին թէ
Դաւիթ Կէիլա մտեր է, Սաուղ ըսաւ,
Աստուած իմ ձեռքս մատներ է զա-
նիկա, քանզի դռներ ու նիգեր ունե-
ցող քաղաքի մը մէջ մտեր գոցուեր է։
8—Ու Սաուղ բոլոր ժողովուրդը պա-
տերազմի կանչեց, որպէս զի Կէիլա իջ-
նէ, ու Դաւիթը և անոր մարդիկը պա-
շարէ։ 9—Իսկ Դաւիթ իմացաւ որ Սա-
ուղ իրեն համար գաղտուկ չարտիքին
մը կը հնարէ, ու Աբիաթար քահանա-
յին բսաւ, Եփուտը մօտեցուր։ 10—Ու
Դաւիթ ըսաւ, Ով Տէր Աստուած Իսրա-
յէլի, քու ծառադ մտիդ լսեց որ Սա-
ուղ Կէիլայի վրայ գալ կ'ուզէ, որպէս
զի քաղաքը իմ պատճառաւս աւերէ.
11—Արդեօք Կէիլայի բնակիչները զիս
անոր ձեռքը պիտի մատնե՞ն, — ծա-
ռայիդ լսածին պէս Սաուղ հոս պիտի
իջնէ՞. ով Տէր Աստուած Իսրայէլի,
կ'աղաչեմ, ծառայիդ յայտնէ։ Ու Տէրը
ըսաւ, Պիտի իջնէ։ 12—Ու Դաւիթ
ըսաւ, Կէիլայի բնակիչները զիս ու իմ
մարդիկս Սաուղի ձեռքը պիտի մատ-
նե՞ն։ Ու Տէրը ըսաւ, Պիտի մատնեն։
13—Ուստի Դաւիթ ու անոր մարդիկը,
վեց հարիւր մարդու չափ, ելան Կէի-
լայէ գացին, և ուր որ կրնային երթալ
կ'երթային. ու երբ Դաւիթի Կէիլայէ
դուրս ելլելը Սաուղի իմացուցին, հոն երթա-
լէն ետ կեցաւ։

14— Ու Դաւիթ անապատին մէջ
ամուր տեղեր կը նստէր. ու Զիփի ա-
նապատին մէջ լեռան մը վրայ նստաւ։
Ու Սաուղ ամէն օր զանիկա կը փընտ-
ռէր, բայց Աստուած անոր ձեռքը
չմատնեց զանիկա։ 15—Ու Դաւիթ տես-
աւ որ Սաուղ իր անձը փնտռելու

ելեր է. և Դաւիթ Զիփի անապատը
անտառի մը մէջ էր։

16—Ու Սաուղի որդին Յովնաթան
ելաւ անտառը գնաց Դաւիթի, ու ա-
նոր ձեռքը Աստուծով զօրացուց. 17—
Ու անոր ըսաւ, Մի վախնար, քանզի
իմ հօրս Սաուղի ձեռքը քեզ պիտի
չգտնէ, ու դուն իսրայէլի վրայ թա-
գաւոր պիտի ըլլաս, ու ես քու երկ-
րորդդ պիտի ըլլամ. և այս բանը իմ
հայրս Սաուղ ալ գիտէ։ 18—Ու եր-
կուքը Տէրոջը առջև ուխտ ըրին. և Դա-
ւիթ անտառին մէջ մնաց, բայց Յով-
նաթան իր տունը դարձաւ։

19—Ու Զիփացիք Գաբաա ելան Սա-
ուղի ու բսին, Ահա Դաւիթ մեր քով
ամուր տեղերը անտառին մէջ, Եքեղա
բլուրին վրայ, Եսիմոնի հարաւային կող-
մը պահուած է։ 20—Հիմա, ով թա-
գաւոր, ինչպես քու անձդ իջնելու կը
փափաքի իջիր, ու զանիկա թագաւո-
րին ձեռքը մատնելը մեզի մնայ։ 21—
Ու Սաուղ բսաւ, Դուք Տէրոջմէն օրհ-
նեալ ըլլաք, որ ինծի ցաւակից եղաք։
22—Ուրեմն գացէք — աւելի ապէկ
դիտեցէք և անոր ոտքին կոխած տեղը
դիտեցէք ու ետևէս, Ե՞ր ո՛վ զանի-
կա հոն տեսեր է. քանզի ինծի բսած
են թէ անիկա չատ խորամանկ է։ 23—
Ուստի նայեցէք ու անոր բոլոր պահ-
ուելու տեղերը իմացէք, և այլևս
ապահովելով ինծի դարձէք, և ձեզի հետ
երթամ. ու եթէ անիկա այն երկրին
մէջ է, զանիկա Յուդայի բոլոր հազա-
րաւորներուն մէջ ազէկ մը պիտի փընտ-
ռեմ։ 24—Ու անոնք ելան և Սաուղի
առջևէն Զիփ գացին. ու Դաւիթ իր
մարդոցմով Մաոնի անապատը գաղտին
մէջ, Եսիմոնի հարաւային կողմը, Յոդէր
էր։ 25—Ու Սաուղ իր մարդոցմով
ղրկուելու գնաց. ու երբ Դա-
ւիթի իմացուցին՝ վէմը իջաւ և Մաոնի
անապատին մէջ նստաւ. ու Սաուղ
լսեց, ու Դաւիթի ետևէն Մաոնի անա-
պատը վազեց։ 26—Ու Սաուղ լեռանը
այս կողմէն կ'երթար, Դաւիթ ալ իր
մարդոցմով լեռանը անդիի կողմէն կ'եր-
թար. ու Դաւիթ կը փութար որ Սա-
ուղի երեսէն փախչի, բայց Սաուղ ու
իր մարդիկը Դաւիթի ու անոր մարդոցը
չորս կողմը պատեցին, որպէս զի զանոնք
բռնեն։ 27—Ու լրաբեր մը եկաւ Սա-
ուղի ու բսաւ, Շուտով եկուր, քանզի
փղշտացիք երկիրը կոխեցին։ 28—Ուս-
տի Սաուղ Դաւիթը հալածելէն դար-
ձաւ գնաց, որպէս զի Փղշտացւոց դէմ
գնէ, անոր համար այն տեղին անունը
*Սելա-մահլէգօթ ըսուեցաւ։

Գլ. ԻԴ

Ու Դաւիթ անկէ ելաւ ու Ենգադ-
դիի ամուր տեղերը նստաւ։ 2—Ու երբ
Սաուղ Փղշտացիներէն ետ գարձաւ,
անոր իմացուցին ու ըսին, Ահա Դաւիթ
Ենգադդիի անապատին մէջ է։ 3—Ու
Սաուղ բոլոր Իսրայէլէ երեք հազար
ընտրուած մարդիկ առաւ, ու գնաց որ-
պէս զի Դաւիթը ու անոր մարդիկը փընտ-
ռէ այծեաժեներու ժայռերուն վրայ։
4—Ու ճամբան վրայ եղող ոչխարնե-
րուն փարախները եկաւ, ու հոն քարայր
մը կար. ու Սաուղ Էհարկաւորութեան
համար ներս մտաւ. և Դաւիթ իր մարդ-
ոցմով քարայրին ներսիդին նստեր էր։
5—Ու Դաւիթի մարդիկը անոր բսին,
Ահա Տէրոջը քեզի ըսած օրը սպիա է,
Թէ Ես թ՚ընամիդ քու ձեռքդ պիտի
մատնեմ, և քու այգերուդ հաճոյ ե-
րեւցածը ըրէ անոր։ Ու Դաւիթ ելաւ
և Սաուղի վերարկուին ծայրը գաղ-
տուկ կտրեց։ 6—Բայց անկէ ետքը Դա-
ւիթի սիրտը խղճաց, Սաուղի Վէր-
ւոն ծայրը կտրելուն վրայ։ 7—Ու իր
մարդոցը ըսաւ, Աստուած չքնէ որ Տէ-
րոջը օծեալին, իմ տէրոջս, այս բանը
ընեմ, ձեռքս անոր վրայ երկնցնելով.
քանզի անիկա Տէրոջը օծեալն է։ 8—
Ու Դաւիթ այս խօսքերով իր մարդիկը
զսպեց, ու զանոնք չթողուց որ Սաուղի
վրայ յարձակին։ Ու Սաուղ քարայրէն
դուրս ելաւ ու իր ճամբան գնաց։

9—Անկէ ետև Դաւիթ ալ քարայ-
րէն դուրս ելաւ, ու Սաուղի ետևէն
կանչելով՝ ըսաւ, Ով տէր իմ թագա-
ւոր։ Ու երբ Սաուղ ետին նայեցաւ,
Դաւիթ երեսը գետինը ծռելով երկրբո-

*Այսինքն, վէմ բաժանումց
ԵՒԵՐ. ուրքերը ծածկելու. Դատ. գ. 24։

պագութիւն բրաւ։ 10—Եւ Դաւիթ բրաւ Սաւուղի, Ինչո՞ւ համար մարդոց խօսքը մտիկ կ'ընես, որոնք ե՛ւս կ'ըսեն Թէ Ահա Դաւիթ քեզի չարութիւն ընդ-դ- կը ջանայ։ 11—Ահա այսօր քու աչքերդ կը տեսնեն, որ Տէրը այսօր փորայրին մէջ քեզ իմ ձեռքս մատնեց. ու ըսին որ քեզ սպանցնեմ, բայց ես քեզի խնայեցի, ու ըսի, Ես իմ ձեռքս իմ տէրոջս չեմ երկնցներ, քանզի անիկա Տէրոջը օծեալն է։ 12—Ու տես, հայր իմ, տես քու վերարկուիդ ծայրը իմ ձեռքս մէջ է. ու ես քու վերարկուիդ ծայրը կարելով՝ քեզ չսպանցի. —ւէ հասկցիր ու տես, որ իմ ձեռքս մէջ չարութիւն ու անօրէնութիւն չկայ, ու քեզի յանցանք մը չեմ բրած, բայց դուն *զիս սպանելու կ'ուշադրես՝։ 13—Տէրը դատաստան ընէ իմ ու քու մէջտեղ, ու Տէրը իմ վրէժս քեզմէ առնէ. բայց իմ ձեռքս քու վրադ չըլլայ։ 14—Ինչպէս հին առակը կ'ըսէ, Անօրէններէն անօրէնութիւն կ'ելլէ. բայց իմ ձեռքս քու վրադ չըլլայ։ 15—Իսրայէլի թագաւորը որո՞ւն հետևէն ելեր է, ու զո՞ւն որո՞ւն հետևէն կ'երթ կը հալածես. մեռած շան մը հետևէ, լու մը հետևէ ես։— 16—Ուստի Տէրը դատաւոր ըլլայ, և իմ ու քու մէջտեղ դատաստան ընէ. և տեսնէ ու պաշտպանէ զիս, և քու ձեռքէդ ազատէ։

17—Ու երբ Դաւիթ այս խօսքերը Սաւուղի խօսելը լմնցուց, Սաւուղ բրաւ, Որդեակ իմ Դաւիթ, տեսիկա քո՞ ձայնդ է. և Սաւուղ իր ձայնը վերցուց ու լացաւ։ 18—Ու Դաւիթի ըսաւ, Դուն ինծի արդար եւս. քանզի դուն ինծի բարիք հատուցիր, բայց ես քեզի չարիք հատուցի։ 19—Ու դուն այսօր քու ինծի ըրած ազնութիւնդ յայտնեցիր, որովհետև Տէրը զիս քու ձեռքդ մատնեց, ու դուն զիս չսպանցուիր։ 20—Վասն զի մարդ մը իր թշնամին գտնէ՝ ողջ թողու՞ կու տայ որ խաղաղութեամբ երթայ. ուստի այսօր քու ինծի ըրածիդ փոխարէն Տէրը քեզի բարիք հատուցանէ։ 21—Եւ հիմա ահա գիտեմ որ դուն անշուշտ թագաւոր պիտի ըլլաս, ու իսրայէլի թագաւորութիւնը քու ձեռքիդ մէջ պիտի հաստատուի։ 22—Ու հիմա Տէրոջմով ինծի երդում ըրէ՝ Թէ ինծի ետքը իմ սերունդս պիտի չվերացնես, ու իմ հօրս տունէն իմ անունս բնաջինջ պիտի չընես։ 23—Ու Դաւիթ Սաւուղի երդում ըրաւ։ Եւ Սաւուղ իր տունը գնաց, ու Դաւիթ իր մարդոցմով մսեր տեղը ելաւ։

Գլ. Իե

Ե Սամուէլ մեռաւ, ու բոլոր Իսրայէլ ժողվուեցան ու անոր համար սուգ ըրին, ու զանիկա Ռամայի մէջ իր տունը թաղեցին։ Ու Դաւիթ ելաւ փառանի անապատը իջաւ։

2—Ու Մաոնի մէջ մարդ մը կար, ու անոր *գործը Կարմէղոսի մէջ էր. և անիկա խիստ մեծ մարդ էր, ու երեք հազար ոչխար և հազար այծ ունէր. ու իր ոչխարները սպասկաւոր ընելու համար Կարմէղոսի մէջ կը գտնուէր։ 3—Ու այն մարդուն անունը Նաբաղ էր, ու անոր կնոջ անունը Աբիգեա. և կինը խոհեմամիտ ու գեղեցկադէմ էր, բայց այրը խստաբարոյ ու չարագործ էր, ու անիկա †Քաղէբեան էր։

4—Ու Դաւիթ անապատին մէջ լսեց որ Նաբաղ իր ոչխարները սպասկաւոր կ'ընէ։ 5—Ու Դաւիթ տասը մանչ ղրկեց, և Դաւիթ մանչերուն ըսաւ, Կարմէղոս ելէք ու Նաբաղի գացէք, և իմ անունովս անոր ողջոյնիս հարցուցէք. 6—Ու ե՛ւ այսպէս ըսէք, Ողջ կեցիր. քեզի և քու տանդ ու քու բոլոր ստացուածքիդ խաղաղութիւն ըլլայ։ 7—Ես հիմա լսեցի որ ոչ՛-ը՛-ը՛ դ՛ սպասկաւոր կ'ընես. քու հովիւներդ մեզի հետ էին. անոնց վնաս մը չտուինք, ու անոնք Կարմէղոսի մէջ որչափ ատեն որ կեցան, անոնց մի՛կ բանը չկորսուեցաւ։ 8—Քու մանչերուդ հարցուր, ու քեզի Թող ըսեն. ուստի այս մանչերը քու աչքերուդ առջև շնորհք Թող գտնեն, քանզի բարի օր եկանք, շնորհք բրէ, քու ծառաներուդ ու քու որդւոյդ Դաւիթի ձեռքդ եկածը տուր։ 9—Ու Դաւիթի մանչերը գացին, ու այս բոլոր խօսքերուն համեմատ Դաւիթի անունովը Նաբաղի զրուցեցին ու կացեցան։ 10—Ու Նաբաղ Դաւիթի ծառաներուն պատասխան տուաւ ու բրաւ, Դաւիթ ո՞վ է, ու Յեսսէի որդին ո՞վ է. այս օրերս իրենց տէրերուն բնէն փախչող ծառաները չատցեր են։ 11—Ես իմ հացս, ջուրս ու ասպակաւոր ընդղներուս համար մորթած անասուններս առնեմ՝ ու †ի՛-ը՛-ի՛ մարդոց տամ, որոնց ուրկէ ըլլալը չեմ գիտեր։ 12—Ու Դաւիթի մանչերը իրենց ճամբան դարձան, ու գացին այս բոլոր խօսքերը անոր պատմեցին։ 13—Ու Դաւիթ իր մարդոցը բրաւ, Ամէն մարդ իր սուրը մէջքը կապէ. ու ամէն մարդ իր սուրը մէջքը կապեց, և Դաւիթ ալ իր սուրը մէջքը կապեց. ու Դաւիթի հետևէն չորս հարիւրի չափ մարդ ելաւ, ու երկու հարիւր մարդ հաց կատաբներուն քով մնացին։

14—Ու ծառաներէն մէկը Նաբաղի կնոջ Աբիգեայի իմացուց ու բրաւ, Ահա Դաւիթ անապատէն մարդիկ ղրկեց մեր տէրը օրհնելու համար. իսկ անիկա *խոսի խօսեցաւ անոնց հետ։ 15—Բայց այն մարդիկը մեզի հետ չատ աղէկ էին, ու մեզի վնաս մը չտուին. և դաշտի մէջ որչափ ատեն որ անոնց հետ պտրտեցանք, մեզմէ բան մը չկորսուեցաւ։ 16—Անոնք մեզի պարիսպ էին, Թէ՛ գիշերը և Թէ՛ ցորեկը, որչափ ատեն որ անոնց քով ոչխարները կ'արածեցինք։ 17—Ու հիմա գիտցիր ու տես Թէ ի՛նչ պիտի ընես, քանզի մեր տէրոջը վրայ և անոր բոլոր տան վրայ չարիքը հատած է. որովհետև անիկա այնպիսի չար մարդ մըն է, որ անոր հետ մարդ չկրնար խօսիլ։

18—Ու Աբիգեա չուտով երկու հարիւր հաց, ու երկու ափի գինի, և հինգ †եփած ոչխար, ու հինգ գրիւ բոհրած ցորեն, հարիւր ողկոյզ չամիչ, ու երկու հարիւր չորոց Թուզ առաւ ու զանոնք էշերու վրայ դրաւ։ 19—Ու իր ծառաներուն բսաւ, Առջև անցէք, ահա ես ձեր ետևէն կու գամ. բայց իր էրկանը Նաբաղի չիմացուց։ 20—Ու երբ կինը իշու վրայ հեծած՝ լեռանը գոգ տեղէն կ'իջնէր, ահա Դաւիթ ու անոր մարդիկը անոր առջև կ'իջնէին. ու անիկա անոնց հանդիպեցաւ։ 21—Ու Դաւիթ ըսեր էր, Ուրեմն անապատին մէջ այս մարդուն բոլոր ունեցած բաները պարապ տեղը պահեր եմ, ու անոր բոլոր ունեցածէն բան մը չկորսուեցաւ. և անիկա ինծի ազնութեան փոխարէն գէշութիւն ըրաւ։ 22—Աստուած Դաւիթի թշնամիներուն այպէս ու ասկէ աւելի ընէ, երբ մինչև վաղը առաւոտ անոր մարդոցմէն *այր մարդ՝ մը ողջ թողուի։

23—Ու Աբիգեա Դաւիթը տեսածին պէս չուտով իշուն վրայէն իջաւ, և Դաւիթի առջև երեսի վրայ իյնալով մինչև գետինը երկրպագութիւն ըրաւ։ 24—Ու անոր ոտքը իյնաւ ու բսաւ, Ով տէր իմ, յանցանքը իմ վրաս ըլլայ. բայց հրաման տուր որ քու աղախինդ քու առջևդ խօսի, և քու աղախնիդ խօսքերը մտիկ ըրէ։ 25—Կ'աղաչեմ, որ իմ տէրս այս չար մարդուն նաբաղի հետևը սրտին մէջ չդնէ. քանզի իր անունին պէս ինք ալ այնպէս է. անոր անունը †Նաբաղ է, ու անզգամութիւնը իրեն հետ է. բայց ես, քու աղախինդ, իմ տէրոջս ղրկած մանչերը չտեսայ։ 26—Ու հիմա, ով տէր իմ, Տէրը կենդանի է ու քու հոգիդ ալ կենդանի է, որ Տէրը քեզ չթողուց որ արիւն մտնես, ու քու վրէժդ քու ձեռքովդ առնես. և հիմա քու թշնամիներդ ու իմ տէրոջս գէշութիւն ուզողները Նաբաղի պէս ըլլան։ 27—Ու հիմա այս բնածն զոր քու աղախինդ իմ տէրոջս բերաւ, Թող իմ տէրոջս հետևէն եկող մանչերուն տրուի։ 28—Կ'աղաչեմ, քու աղախնիդ յանցանքը ներէ. քանզի Տէրը իմ տէրոջս անպատճառ հաստատ տուն պիտի

*ԵՔԲ. իմ անձս կ'որսաց զանիկա առնելու. Գլ. իզ. 20։

*ԿՄ, ստացուածքը
†ԿՄ, չնաբարոյ

*ԵՔԲ. անոնց վրայ յարձակեցաւ
†ԵՔԲ. եղած

*ԵՔԲ. պատի վրայ միզող. գ Թագ. ԺԴ. 10։ իս. 21։ դ Թագ. Ը. 8։
†Աքիքէն, անզգամ

չինէ, որովհետեւ իմ տէրս Տէրոջը պատրաստեցաւ, ու քու օրերուդ մէջ քու վրադ չարութիւն մը չգտնուեցաւ։ 29—Բայց թէև քեզ հալածելու ու քու հոգիդ փնտռելու համար մարդ մը ոտք ելած է, իմ տէրոջս հոգին քու Տէր Աստուածդ առ՚ի կենաց ծրարին մէջ ծրարած պիտի ըլլայ. բայց Անիկա քու թշնամիներուդ հոգիները պարսատիկի մէջէն ՚ի՞ր պիտի նետէ։ 30—Ու երբ Տէրը բոլոր քեզի համար ըսած աղէկութիւններուը իմ տէրոջս ընէ, ու քեզ Իսրայէլի վրայ թագաւոր դնէ, 31—Անիկա քեզի դայթակղութիւն մը ու իմ տէրոջս սրբտին խիղճ մը չըլլայ, թէ առանց պատճառի արիւն թափեցիր, կամ թէ իմ տէրս իր վրէժը ինք առաւ. ու երբ Տէրը իմ տէրոջս բարութիւն ընէ, քու աղախինդ միտքդ բերիս։

32—Ու Դաւիթ ըսաւ Աբիգէայի, Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ այսօր քեզ ղրկեց ինծի դիմաւորելու։ 33—Ու քու խոհեմութիւնդ օրհնեալ ըլլայ, և դուն ալ օրհնեալ ըլլաս, որ այսօր զիս արդիլեցիր որ արիւն չթնեմ, ու իմ վրէժս ձեռքովս չառնեմ։ 34—Բայց Իսրայէլի Տէր Աստուածը՝ որ զիս արդիլեց քեզի չարութիւն ընելէ, կենդանի է, եթէ դուն չուտով չգայիր ու առջեւս չելլէիր, մինչև վաղը առտու Նաբալի մէկ այր մարդը չէր մնար։ 35—Ու Դաւիթ անոր բերած ընծաները ձեռքէն առաւ. ու անոր ըսաւ, Խաղաղութեամբ տունդ դնա. ահա խօսքդ մտիկ ըրի ու քու *խնդիրդդ ընդունեցի։

36—Ու Աբիգէա Նաբալի գնաց, ու ահա անոր իր տունը մէջ թագաւորական կոչունքի պէս կոչունք կ՚ընէր. և Նաբալի սիրտը զուարթացեր էր, ու անիկա շատ գինովցեր էր. ուստի կինը մինչև առաւօտեան լոյսը պզտիկ կամ մեծ բան մը չպատմեց անոր։ 37—Ու առաւօտուն երբ Նաբալ գինուէն զգաստացաւ, —որ ոտքն անոր լէնը այս բաները անոր պատմեց. ու անոր սիրտը իր ներսիդին մեռաւ, ու քարի պէս եղաւ։ 38—Ու տասը օրէ չափ անցնելէն եաև Տէրը զարկաւ Նաբալը, որ մեռաւ։

39—Ու Դաւիթ Նաբալի մեռնիլը լսելով՝ ըսաւ, Օրհնեալ է Տէրը, որ Նաբալի ձեռքէն *նախատանքիս դատաստանը ինք դատեց, ու իր ծառան չարութենէն ետ պահեց. և Տէրը Նաբալի չարութիւնը անոր գլխուն դարձուց։ Ու Դաւիթ *ղրկեց և Աբիգէային խօսեցաւ, որ զանիկա իրեն կին առնէ։ 40—Ու Դաւիթի ծառաները Կարմէղոս գացին Աբիգէայի, ու անոր հետ խօսեցան ու ըսին, Դաւիթ մեզ քեզի ղրկեց, որպէս զի քեզ իրեն կին առնէ։ 41—Ու անիկա ելաւ ու երեսի վրայ մինչեւ գետինը երկրպագութիւն ըրաւ, ու ըսաւ, Ահա քու աղախինդ իմ տէրոջս ծառաներուն ոտքերը լուալու համար սարկաւթիւն քաղ ըլլի։ 42—Ու Աբիգէա չուտով ոտք ելաւ, ու էրեն սպասաւորութիւն ընդ հինգ աղջիկներու հետ եկաւ հետ, ու Դաւիթի պատգամաւորներուն ետեւէն գնաց, և անոր կինը եղաւ։

43—Ու Դաւիթ Յեզրաելէ ալ Աքինոամը առաւ. ու սոսնց երկուքն ալ անոր կիներ եղան։ 44—Բայց Սաւուղ իր Մեղբոյ աղջիկը, որ Դաւիթի կինն էր, Գաղղիմացի Լայիսի որդւոյն Փալտիէլի տուաւ։

Գլ. ԻԶ

Ու Զիփացիք Գաբաա գացին Սաւուղի, ու ըսին, Ահա Դաւիթ Եսիմոնի դիմաց Եքեղայի բլուրին վրայ պահուըր է։ 2—Ու Սաւուղ ելաւ Զիփի անապատը իջաւ Իսրայէլի երեք հազար ընտրուած մարդոցմով, որպէս զի Զիփի անապատին մէջ Դաւիթը փնտռէ։ 3—Ու Սաւուղ Եսիմոնի դիմաց Եքեղայի բլուրը՝ ճամբուն վրայ բանակեցաւ։ Դաւիթ ալ անապատին մէջ նստեր էր. ու երբ տեսաւ որ Սաւուղ իր ետեւէն անապատը կու գայ, 4—Դաւիթ լրտեսներ ղրկեց, ու Սաւուղի ստոյգ գալը իմացաւ։

5—Ու Դաւիթ *ելաւ և Սաւուղի բանակ դրած տեղը եկաւ. ու Դաւիթ Սաւուղի ու անոր զօրավարին, Ներեան Աբեննէրի, պառկած տեղը

տեսաւ. բայց Սաւուղ կառքերուն մէջտեղը պառկեր էր, ու *ժողովուրդը անոր բոլորտիքը բանակեր էին։ 6—Ու Դաւիթ պատասխան տուաւ ու Փեսացի Աքիմելէքի ու Յովաբի եղբօրը Շարուհեան Աբեսսայի ըսաւ, Ո՞վ իմ*ի հետ Սաւուղի փով բանակը կ՚իջնէ։ Ու Աբեսսա ըսաւ, Ես քեզի հետ կ՚իջնեմ։ 7—Ու Դաւիթ Աբեսսայի հետ գիշերով *ժողովուրդին մէջ մտաւ. և ահա Սաւուղ կառքերուն մէջտեղը պառկեր կը քնանար. անոր նիզակը գլխուն փով գետինը ցցուած էր, և Աբեններ ու *ժողովուրդը անոր բոլորտիքը պառկեր էին։ 8—Ու Աբեսսա Դաւիթի ըսաւ, Աստուած այսօր քու թշնամիդ քու ձեռքդ մատնեց. ու հիմա թող տուր որ նիզակով մէկ անգամին գետինը *ցցեմ զանիկա, ու չկրկնեմ հ-ըս-ոնէ։ 9—Բայց Դաւիթ Աբեսսայի ըսաւ, Զանիկա մի մեռցներ. քանի Տէրոջը օծեալին ո՞վ կրնայ ձեռք երկնցնել ու անմեղ ըլլալ։ 10—Ու Դաւիթ ըսաւ, Տէրը կենդանի է որ զանիկա Տէրը պիտի զարնէ, կամ անոր աւուրը պիտի գայ ու մեռնի, կամ թէ պատերազմի մէջ պիտի մտնէ ու մեռնի։ 11—Աստուած չընէ որ Տէրոջը օծեալին դէմ ձեռք երկնցնեմ. մյայն թէ հիմա անոր գլխուն փովի նիզակը ու լուրին կուժը առ ու երթանք։ 12—Ու Դաւիթ Սաւուղի գլխուն փովին նիզակը ու լուրին կուժը առաւ ու գացին. և մեռնող չկար, խմացող չկար ու արթնցող չկար. որովհետեւ ամէնը կը քնանային քանի Տէրոջը կողմանէ անոնց վրայ խորունկ քուն մը իկներ էր։

13—Ու Դաւիթ անդին կողմը անցաւ, ու լեռանը գլխուն վրայ հեռուանց կայնեցաւ, *ս անոնց մէջտեղ մեծ միջոց կար։ 14—Ու Դաւիթ *ժողովուրդին ու Ներեան Աբեններուն կանչելով՝ ըսաւ, Ով Աբեններ, պատասխան չե՞ս տար. ու Աբեններ պատասխան տուաւ ու ըսաւ, Դուն ո՞վ ես որ թագաւորին կը կանչես։ 15—Ու Դաւիթ Աբեններուն ըսաւ, Դուն այր մարդ չե՞ս, ու Իսրայէլի մէջ քեզի պէս ո՞վ կայ. և ինչո՞ւ համար քու տէրոջդ, թագաւորին, պահպանութիւն չըրիր. քանի *ժողովուրդէն մէկը քու տէրդ, թագաւորը, մեռցընելու եկաւ։ 16—Այդ քու ըրած բանդ ապիկ չէ. կենդանի է Տէրը, որ դուք մեռնելու արժանի էք, քանի որ Տէրոջը օծեալին, ձեր տէրոջը, պահպանութիւն չըրիք. ու հիմա նայէ, թագաւորին նիզակը ու անոր գլխուն փովի լուրին կուժը ո՞ւր է։ 17—Այն ատեն Սաւուղ Դաւիթի ձայնը ճանչցաւ ու ըսաւ, Որդեակ իմ Դաւիթ, այսիկ քու ձայնդ է. ու Դաւիթ ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, իմ ձայնս է։ 18—Ու ըսաւ, Իմ տէրս ինչո՞ւ համար այդպէս իր ծառային եաեւէն իներեր է. քանի ի՞նչ ըրի, ու ձեռքիս մէջ ի՞նչ չարութիւն կայ։ 19—Ու հիմա իմ տէրս, թագաւորը, իր ծառային խօսքերը թող մտիկ ընէ. եթէ Տէրը քեզ իմ վրաս ոտք հանեց, թող զոհ մը *ընդունի. բայց եթէ մարդոց որդիները *ա՛ռ հանէին, անոնք Տէրոջը առջեւ անիծեալ ըլլան, քանի որ այսօր վռնտեցին՝ որպէս զի Տէրոջը ժառանգութեանը հետ չխառնամ, ու Էնդէ ըսին, Գնա օտար աստուածներու ծառայութիւն ըրէ։ 20—Ու հիմա Տէրոջը առջեւ իմ արիւնս գետինը չիյնայ. քանի Իսրայէլի թագաւորը լու մը փնտռելու եկաւ, ինչպես մարդ մը լեռներու վրայ կաքաւի մը եաեւէ կ՚իյնայ։

21—Ու Սաւուղ ըսաւ, Մեղք գործեցի. դարձիր, որդեակ իմ Դաւիթ. իմ հոգիս այսօր քու աչքերուդ պատուական երեւնալուն համար՝ քեզի մէյ մըն ալ չարութիւն պիտի չընեմ. ահա յիմարութիւն ըրի ու մեծապէս սխալեցայ։ 22—Ու Դաւիթ պատասխան տուաւ ու ըսաւ, Ահա թագաւորին նիզակը. մանչերէն մէկը թող գայ ու զանիկա առնէ։ 23—Ու Տէրը ամէն մարդու իր արդարութիւնը ու իր հաւատարմութիւնը փոխարէնը հատուցանէ. որովհետեւ Տէրը քեզ այսօր իմ ձեռքս տուաւ, բայց ես Տէրոջը օծեալին ձեռքս երկնցնել չուզեցի։ 24—Ու ահա ինչ-

*ԵՔԲ. Երեսդ

*ԵՔԲ. զարնեմ

*ԵՔԲ. հոտուըտայ։ Ծն. ը։ 21։ Ղև. իդ։ 31։

պէս քու հոգիդ այսօր իմ աչքերուս պատուական եղեւցաւ, իմ հոգիս ալ Տէրոջը առջեւ այնպէս պատուական եըլնայ, ու զիս ամէն նեղութենէ ազատէ։ 25—Ու Սաւուղ Դաւիթի ըսաւ, Որդեակ իմ Դաւիթ, օրհնեալ ըլլաս *քու գործերուդ մէջ յաղողակ պիտի ըլլաս, ու նաև յաղթող պիտի ըլլաս։ Ու Դաւիթ իր ճամբան գնաց, ու Սաւուղ իր տեղը դարձաւ։

ԳԼ. ԻԵ

Ու Դաւիթ իր սրտին մէջ ըսաւ, Վերջապէս օր մը Սաւուղի ձեռքով պիտի կորսուիմ. ինծի փղշտացւոց երկիրը փախչելէն աղէկը չկայ, որպէս զի Սաւուղ ինծմէ յոյսը կտրէ, ու զիս մէյմըն ալ իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ չփնտռէ. այսպէս անոր ձեռքէն կ'ազատիմ։ 2—Ու Դաւիթ իրեն հետ եղող վեց հարիւր մարդոյ ելաւ, ու Գէթի թագաւորին Մաոքի որդւոյն Անքուսի քով գնաց։ 3—Ու Դաւիթ ինք ու իր մարդիկը, իւրաքանչիւր մարդ իր անովը, Դաւիթ ալ իր երկու կիներովը, Եզրաբէլացի Աքինոամի հետ ու Կարմելացի Նաբալի կնոջ Աբիգեայի հետ, Անքուսի քով Գէթի մէջ քնակեցան։ 4—Ու երբ Սաւուղի իմացուցին թէ Դաւիթ Գէթ փախեր է, մէյմըն ալ դանիկա չփնտռեց։

5—Ու Դաւիթ Անքուսի ըսաւ, Կ'աղաչեմ, եթէ քու առջեւդ շնորհք գտայ, դիւղաքաղաքներէն մէկուն մէջ ինծի տեղ տուր՝ որպէս զի հոն նստիմ. քաղաքի քու ծառադ ինչո՞ւ համար քեզի հետ թագաւորանիստ քաղաքին մէջ նստի։ 6—Ու այն օրը Անքուս Սիկլակը տուաւ անոր. այս պատճառաւ Սիկլակ մինչեւ այսօր Յուդայի թագաւորներուն եղաւ։ 7—Ու փղշտացւոց երկրին մէջ Դաւիթի նստած օրերուն թիւը մէկ տարի ու չորս ամիս եղաւ։

8—Ու Դաւիթ ու անոր մարդիկը ելան, և Գեսուրացւոց, †Գաղերացւոց ու Ամաղեկացւոց վրայ յարձակեցան. քանզի անոնք չատոնցմէ ի վեր այն երկրին մէջ կը բնակէին, մինչեւ Եգիպտոսի երկիրը։ 9—Ու Դաւիթ այն երկիրը զարկաւ, ու ամենեւին այր մարդ մը կամ կին մարդ մը ողջ չթողուց. և ոչխարները ու արջառները ու էշերը և ուղտերը ու հանդերձները առաւ, և դարձաւ Անքուսի եկաւ։ 10—Ու Անքուս ըսաւ, Այսօր ո՞ր կողմը յարձակեցաք։ Ու Դաւիթ ըսաւ Յուդայի հարաւային կողմը, Յերամեէլացւոց հարաւային կողմը, ու Կենեզացւոց հարաւային կողմը։ 11—Ու Դաւիթ մէկ այր կամ կին մարդ ողջ չթողուց, որ Գէթ չբերէ. քանզի ըսաւ, Չըլլայ որ մեզի համար պատմեն ու ըսեն թէ Դաւիթ *այսպէս ըրաւ։ Ու անոր սովորութիւնը այսպէս էր, քանի որ փղշտացւոց երկրին մէջ կը նստէր։ 12—Ու Անքուս Դաւիթի հաւատալով՝ ըսաւ, Այ ՅԻՐԸ՝ իր ժողովուրդին, Իսրայէլի, քով ինքզինք խիստ †ատելի ընելուն համար, ինծի յաւիտեան ծառայ պիտի ըլլայ։

ԳԼ. ԻԶ

Ու այն օրերը փղշտացիք իրենց զօրքերը ժողվեցին, որպէս զի ելլեն Իսրայէլի հետ պատերազմին. և Անքուս Դաւիթի ըսաւ, Գիտցած ըլլաս որ դուն քու մարդոցմովդ ինծի հետ բանակը պիտի ելլես։ 2—Ու Դաւիթ Անքուսի ըսաւ, Ուրեմն ծառայիդ ընելու գործը պիտի տեսնես. և Անքուս Դաւիթի ըսաւ, Անոր համար քեզ միշտ ինծի անձնասպահ պիտի ընեմ։

3—Իսկ Սամուէլ մեռած էր. և բոլոր Իսրայէլ անոր համար սուգ ըրեր էին, ու զանիկա իր քաղաքին, Ռամային, մէջ թաղեր էին։ Սաւուղ ալ վհուկները ու նշանագէտները երկրէն վերցուցեր էր։ 4—Ու փղշտացիք ժողվուեցան ու եկան Սունեմի մէջ բանակեցան. Սաւուղ ալ բոլոր Իսրայէլը ժողվեց, ու Գեղբուէի մէջ բանակեցան։

*կամ, այսպէս ըրաւ. ու անոր սովորութիւնը այսպէս պիտի ըլլայ՝ քանի որ փղշտացւոց երկրին մէջ կը նստի

†ԵԲԲ. դարշահատ

5— Ու Սաւուղ Փղշտացւոց բանակը տեսնելով՝ վախցաւ, ու սիրտը շատ դողաց։ 6—Ու Սաւուղ Տէրոջը հարցուց. բայց Տէրը թէ՛ երազներով, թէ՛ Ուրիմով և թէ՛ մարգարէներով անոր պատասխան չտուաւ։ 7—Այն ատեն Սաւուղ իր ծառաներուն ըսաւ, Ինծի վհուկ կին մը փնտռեցէք՝ որպէս զի երթամ անոր հարցնեմ։ Ու ծառաները անոր ըսին, Ահա Ենգեդիի մէջ վհուկ կին մը կայ։

8—Ու Սաւուղ իր հանդերձները փոխելով՝ ուրիշ հանդերձներ հագաւ, և իրեն հետ եղող երկու մարդով գնաց, ու գիշերով այն կնոջ քով հասան։ Ու Սաւուղ ըսաւ, Շնորհք ըրէ, ինծի վհուկի ոգւով գիտութիւն ըրէ, ու քեզի ըսելու խօսքս ինծի վեր հանէ։ 9—Ու կինը անոր ըսաւ, Ահա դուն Սաւուղի ըրած բանը գիտես, թէ ի՛նչպէս անկիա վհուկները ու նշանագէտները երկրէն բնաջինջ ըրաւ. ուրեմն ինչո՞ւ զիս մեռցնելու համար իմ անձիս որոգայթ կը պատրաստես։ 10—Ու Սաւուղ Տէրոջմով երդումով ըրաւ անոր ու ըսաւ, Տէրը կենդանի է որ այս բանէն քեզի պիտի մը պիտի չպատահի։ 11—Այն ատեն կինը ըսաւ, Քեզի ո՞վ վեր հանեմ. ու անիկա ըսաւ, Սամուէլը հանէ ինծի։

12—Ու կինը Սամուէլը տեսնելով՝ մեծ ձայնով մը գոռաց. ու կինը Սաւուղի խօսեցաւ ու ըսաւ, Ինչո՞ւ զիս խաբեցիր. քանզի դուն Սաւուղն ես։ 13—Ու թագաւորը անոր ըսաւ, Մի վախնար. բայց ի՞նչ տեսար։ Ու կինը Սաւուղի ըսաւ, Գետնէն ելլող աստուածներ տեսայ։ 14—Ու Սաւուղ անոր ըսաւ, Անոր կերպարանքը ի՞նչպես է։ Ու կինը ըսաւ, Ահա ծեր մարդ մը կ'ելլէ, ու վերարկու մը հագած է։ Ու Սաւուղ հասկաց որ անիկա Սամուէլն է. ու երեսը գետնին ծռելով՝ ուխտ երկրպագութիւն ըրաւ։ 15—Ու Սամուէլ ըսաւ Սաւուղի, Ինչո՞ւ համար ինծի նեղութիւն տուիր ու զիս վեր հանեցիր։ Ու Սաւուղ ըսաւ, Ես մեծ նեղութեան մէջ եմ, որովհետև փղշտացիք ինծի հետ պատերազմ կ'ընեն, ու Աստուած ինծմէ հեռացաւ, և ինծի թէ՛ մարգարէներու միջոցով և թէ՛ երազներով պատասխան չտաւ. անոր համար քեզ կանչեցի, որ ինծի իմացնես թէ ի՛նչ ընեմ։ 16—Ու Սամուէլ ըսաւ, Ինչո՞ւ համար ինծի կը հարցնես, տիրա որ Տէրը քեզմէ հեռացաւ ու քեզի թշնամի եղաւ։ 17—Ու Տէրը իմ *բերնովս պրոցածին պէս ըրաւ, ու Տէրը քու ձեռքէդ թագաւորութիւնը պատառեց, և զանիկա քու ընկերդ Դաւիթի տուաւ։ 18—Քանզի դուն Տէրոջը խօսքը մտիկ չըրիր, ու Ամաղեկի վրայ անոր սաստիկ բարկութիւնը ի գործ չդրիր, անոր համար այսօր Տէրը քեզի այս բանը ըրաւ։ 19—Ու Տէրը քեզի հետ իսրայէլն ալ փղշտացւոց ձեռքը պիտի մատնէ. ու վաղը դուն ու քու որդիներդ իմ քովս պիտի ըլլաք. և Տէրը իսրայէլի բանակն ալ փղշտացւոց ձեռքը պիտի մատնէ։

20—Այն ատեն Սաւուղ չուռով ինկաւ ու գետնի վրայ փռուեցաւ, և Սամուէլի խօսքերուն շատ վախցաւ, ու ուժերէն վրան այժ չմնաց. քանզի բոլոր օրը ու բոլոր գիշերը հաց կերած չէր։ 21—Ու կինը Սաւուղի քով գնաց, ու անոր չափազանց սոսկումը տեսնելով անոր ըսաւ, Ահա քու աղախինդ քու խօսքդ մտիկ ըրաւ. և իմ հոգիս ձեռքիս մէջ գնելով՝ ինծի բած խօսքերուդ հնազանդութիւն ըրի։ 22—Ու հիմա, կ'աղաչեմ, դուն ալ քու աղախինդ խօսքը մտիկ ըրէ, ու քու առջեւդ պատառ մը հաց դնեմ, ու կեր որպէս զի այժ առնես, քանզի ճամբայ պիտի երթաս։ 23—Բայց անիկա չուզեց, ու ըսաւ՝ Չեմ ուտեր՝ ըսաւ։ սակայն անոր իր ծառաները ու կինն ալ զանիկա բռնադատեցին, անոնց խօսքը մտիկ ըրաւ, ու գետնէն ելլելով անկողինին վրայ նստաւ։ 24—Ու կինը էր տանը մէջ անասնի արի մը ունէր. չուռով զանիկա մորթեց, ու ալիւր առաւ չուզեց, և անով բաղարչ հացեր եփեց. 25—Ու Սաւուղի առջեւ և անոր ծառաներուն առջեւ դրաւ, ու կերան, ու ելան նոյն գիշերը գացին։

*ԵԲԲ. ձեռքովս

†ԵԲԲ. իրեն համար ըրաւ

Գլ. ԻԹ

Եւ փղշտացիք իրենց բոլոր բանակները Ափեկի մէջ ժողվեցին. ու Իսրայէլացիք Յեզրայելի մէջ եղող աղբիւրին քով բանակեցան։ 2—Ու փղշտացւոց նախարարները էրէց հարիւրապետներովը ու հազարապետներովը կ'անցնէին. և Դաւիթ ու իր մարդիկը անոնց հետևէն Անքուսի հետ կ'անցնէին։ 3—Ու փղշտացւոց իշխանները ըսին, Այս Եբրայեցիները ի՞նչ պիտի ըլլան։ Ու Անքուս փղշտացւոց իշխաններուն ըսաւ, Աւելի խարտեաշ Յեսուդէի՞ն չէ՞, որ այսչափ օրեր՝ կամ մանաւանդ այսչափ տարիներ ի վեր իմ քովս է. ու էնդէ ինկած օրէն մինչև այսօր անոր վրայ ամենևին չտեսայ մը չգտայ։ 4—Ու փղշտացւոց իշխանները անոր դէմ բարկացան, ու փղշտացւոց իշխանները անոր ըսին, Այդ մարդը դա՛ղրկէ, ու երթայ իր տեղը, ուր որ անիկա դրիր. ու մեզի հետ պատերազմի մէջ չյանէ, չըլլայ որ պատերազմին մէջ մեզի թշնամի ի՛նք ըլլի. քանզի անիկա ինչո՞վ պիտի հաշտուի իր տերոջը հետ, չէ՞ որ այս մարդոց գլուխներովը։ 5—Աւիկա այն Դաւիթը չէ՞, որու համար կիները պար բռնելով ու պատասխան տալով կ'ըսէին,

Սաւուղ իր հազարապետները զարկաւ,
Ու Դաւիթ իր բիւրաւորները։

6—Ու Անքուս Դաւիթը կանչեց, ու անոր ըսաւ, Ցերը կենդանի է որ դուն շիտակ մարդ մըն ես, և ինծի հետ բանակին մէջ մտնելդ ու ելլելդ իմ աչքիս առջև կ'երեւնայ. քանզի ինծի եկած օրեդ մինչև այսօր քու վրադ չարութիւն մը չգտայ. բայց դուն նախարարներուն աչքին առջև չես երեւնար։ 7—Ուստի հիմա դարձիր և խաղաղութեամբ գնա, ու փղշտացւոց նախարարներուն աչքին գէշ երեւցածը մի ըներ։ 8—Ու Դաւիթ Անքուսի ըսաւ, Բայց ես ի՞նչ ըրի, ու քու առջևդ կացած օրէս մինչև այսօր ծառայիդ վրայ ի՞նչ գտար, որ ես չերթամ ու իմ տէրոջս, թագաւորին, թշնամիներուն հետ պատերազմ չընեմ։ 9—Ու Անքուս պատասխան առաւ ու Դաւիթի ըսաւ, Գիտեմ որ դուն իմ աչքերուս Աստուծոյ հրեշտակին պէս աղեկ կ'երեւնաս. բայց փղշտացւոց իշխանները ըսին թէ Անիկա մեզի հետ պատերազմի չելլէ։ 10—Ուստի առաւօտուն կանուխ ելլէր դուն ու քու տէրոջդ ծառաները որոնք քեզի հետ եկան, առաւօտուն կանուխ ելլէք ու լուսցածին պէս գացէք։ 11—Ու Դաւիթ ինք ու իր մարդիկը առաւօտուն կանուխ ելլան որպէս զի երթան, ու փղշտացւոց երկիրը դառնան. իսկ փղշտացիք Յեզրայել ելլան։

Գլ. Լ

Ու երբ Դաւիթ ու իր մարդիկը երբորդ օրը Սիկեղակ մտան, *ահա Ամաղեկացիք հարաւային երկրին ու Սիկեղլակի վրայ յարձակեր էին. և Սիկեղլակը զարնելով՝ զանիկա կրակով այրեր էին։ 2—Ու հոն եղած կիներէն գերի առեր էին. պզտիկէն մինչև մեծը մարդ մը չէին մեռցուցեր, հապա ղեռնէ իրենց հետ տանելով՝ ճամբանին գացեր էին։ 3—Ու երբ Դաւիթ ու իր մարդիկը փազաքը հասան, ահա անիկա կրակով այրուած էր. ու իրենց կիները, տղաքները ու աղիկները գերի առնուած էին։ 4—Ուստի Դաւիթ ու իրեն հետ եղող ժողովուրդը ձայներնին վերցուցին ու լացին, մինչև որ անոնց վրայ այ՛ժ չմնաց լալու։ 5—Ու Դաւիթի երկու կիները, Յեզրայելացի Աքինոամ ու Կարմելացի Նաբալի կինը Աբիգեա ալ գերի առնուած էին։ 6—Ու Դաւիթ մեծ տագնապի մէջ էր, քանզի ժողովուրդը զանիկա քարկոծել կ'ուզէր. որովհետև բոլոր ժողովուրդին ամէն մէկուն սիրտը կը կսկծար իր տղոցը ու աղիկներուն համար. բայց Դաւիթ իր Տէր Աստուծովը զօրացաւ։ 7—Ու Դաւիթ Աբիմելէքի որդւոյն, Աբիաթար քահանային, ըսաւ, Եփուդը մօտեցուր ինծի. ու Աբիաթար եփուդը Դաւիթի մօտեցուց։ 8—Ու Դաւիթ Տէրոջը հարցուց ու ըսաւ, Այս գունդին հետևէն իյնա՞մ. անոնց կը հասնի՞մ. ու Տէրը ըսաւ անոր, Եհետևէն ինկիր, քանզի անշուշտ պիտի հասնես ու ամէն բանը պիտի ազատես։

9—Ու Դաւիթ ինք ու իրեն հետ եղող վեց հարիւր մարդիկը գացին, ու մինչև Բսոր հեղեղատը եկան. ու հոն մնացողները հոն կայնեցան։ 10—Ու Դաւիթ չորս հարիւր մարդով իրենց հալածեց. (սակայն երկու հարիւր մարդիկը չատ յոգնած ըլլալնուն համար՝ Բսոր հեղեղատին սպիի կողմը մնացին, ու չկրցան անցնիլ։) 11—Ու դաշտին մէջ Եգիպտացի մարդ մը գտան, և զանիկա Դաւիթի բերին. ու անոր հաց տուին, ու կերաւ, ու անոր ջուր խմցուցին. 12—ու անոր փէչ մը չոր թուզ ու երկու ազխտ չամիչ տուին, որ կերաւ ու ոգին վրան եկաւ. քանզի երեք օր ու երեք գիշեր հաց չէր կերած ու ջուր չէր խմած։ 13—Ու Դաւիթ անոր ըսաւ, Դուն որո՞ւն մարդն ես, և ուրկէ՞ ես։ Ու անիկա ըսաւ, Ես Եգիպտացի պատանի մըն եմ, — Ամաղեկացի մարդուս մը ծառայ. ու հիմա երեք օր է որ հիւանդ ըլլալուս համար իմ տէրս զիս հո՛ թողուց։ 14—Մենք Քերեթի հարաւային կողմը՝ Յուդայի կողմերը ու Քաղէբի հարաւային կողմերը յարձակեցանք, ու Սիկեղլակը կրակով այրեցինք։ 15—Ու Դաւիթ անոր ըսաւ, Չես այն գունդին կրնա՞ իջեցնել ու անիկա ըսաւ, Դուն ինծի Աստուծով երդուիր ըրէ որ զիս պիտի չմեռցնես, ու զիս իմ տէրոջս ձեռքը պիտի չտաս, ես ալ քեզ այն գունդին կ'իջեցնեմ։

16—Ու զանիկա հոն իջեցուց, ու ահա անոնք բոլոր գետնին երեսին վրայ ցրուած էին. կ'ուտէին ու կը խմէին, և փղշտացւոց երկրէն ու Յուդայի երկրէն առած այն բոլոր մեծ աւարին համար ուրախութիւն կ'ընէին։ 17—Ու Դաւիթ *արշալոյսէն մինչև հետևեալ օրուան իրիկունը՝ զանոնք զարկաւ, ու անոնցմէ մարդ չազատեցաւ, բայց միայն չորս հարիւր երիտասարդներ, որոնք ուղտերու վրայ հեծան ու փախան։ 18—Ու Դաւիթ Ամաղեկացւոց առած բոլոր բաները ազատեց. ու Դաւիթ իր երկու կիներն ալ ազատեց։ 19—Ու իրենց մէկ բանը պակաս չէր պզտիկէն մինչև մեծը, թէ՛ տղայ, թէ՛ աղիկ և թէ՛ աւար, ինչ որ անոնք առեր տարեր էին. Դաւիթ ամէնն ալ հետ բերաւ։ 20—Ու Դաւիթ բոլոր ոչխարներն ու արջառները առաւ, և զանոնք էրէնց հօտերուն առջևէն կը տաներին, ու կ'ըսէին, Դաւիթի աւարը ասիկա է։

21—Ու Դաւիթ այն երկու հարիւր մարդոցը եկաւ, որոնք չատ յոգնած ըլլալնուն համար չէին կրցեր Դաւիթի հետևէն երթալ ու զանոնք Բսոր հեղեղատը նստեցուցեր էր. և անոնք ելան Դաւիթը ու անոր հետ եղող ժողովուրդը դիմաւորելու. ու Դաւիթ երբ ժողովուրդին մօտեցաւ, անոնց ողջոյնը հարցուց։ 22—Ու Դաւիթի հետ գացող մարդոցմէն բոլոր չար ու անզգամ մարդիկը պատասխան առին ու ըսին, Ասոնց մեզի հետ չգալնուն համար՝ մենք ալ անոնց մեր ազատած աւարէն չենք տար. ամէն մարդ միայն իր կինը ու տղաքները առնէ ու երթայ։ 23—Բայց Դաւիթ ա՛նոնց ըսաւ, Այդպէս մի ընէք, եղբայրներս, որովհետև Տէրը մեզի տուաւ սակայ, և ինք մեզ պահեց ու մեր վրայ եկող գունդը մեր ձեռքը մատնեց։ 24—Ու այս բանին մէ՛վ ձեզի մարկ կ'ընէ. քանզի կռիւին քով նստողներուն բաժինին պատերազմի գացողներուն բաժինին հետ հաւասար պիտի ըլլայ. հաւասարապես պիտի բաժնեն։ 25—Ու այն օրէն ի վեր ասկա Իսրայէլի մէջ կանոն ու օրէնք դրաւ, որ է՛ մինչև մինչև այսօր։

26—Ու Դաւիթ Սիկեղլակ եկաւ, ու այն աւարէն Յուդայի ծերերուն, իր բարեկամներուն, ղրկեց՝ ըսելով, Ահա ձեզի **պ**եշկաշ ի՛նչ մը **պ**արգևեցի Տէրոջ թշնամիներուն աւարէն։ *ընծայ է՛ղ ղրկեց։ 27—Այսինքն Բեթէլի մէջ եղողներուն, Հարաւային Ռամոթի մէջ եղողներուն, Յաթիրի մէջ եղողներուն, 28—Արոէրի մէջ եղողներուն, Սեփամոթի մէջ եղողներուն, Եսթեմոայի մէջ եղողներուն, 29—Բա-

*Կամ, հետևեալ օրուան արշալոյսէն մինչև իրիկունը

*Եբր. և

*Եբր. օրհնութիւն. Ծն. լգ. 11։ Գլ. ի՛ե. 27։

քալի մէջ եղողներուն, Ցերամէլացւոց քաղաքներուն մէջ եղողներուն, կենեզացւոց քաղաքներուն մէջ եղողներուն, 30—Հորմայի մէջ եղողներուն, Քորաշանի մէջ եղողներուն, Աթաքի մէջ եղողներուն, 31—Քեբրոնի մէջ եղողներուն, և այն ամէն տեղերը ուր Դաւիթ իր մարդոցմով պտըտեր էր։

Գլ. ԼԱ

Ու Փղշտացիք Իսրայէլի հետ պատերազմ կ'ընէին. և Իսրայէլի մարդիկը Փղշտացւոց առջեւէն փախան, ու Գեղբուէ լեռանը վրայ սպաննուած իներ։ 2—Ու Փղշտացիք Սաւուղի ու անոր որդիներուն հետեւէն հասան, ու Փղշտացիք Սաւուղի որդիները, Յոնաթանը, Աբինադաբը ու Մելքիսուէն, զարկին։ 3—Ու պատերազմը Սաւուղի վրայ սաստկացաւ, ու աղեղնաւորները զանիկա գտան. ու աղեղնաւորներէն *սաստիկ վիրաւորուեցաւ։ 4—Ու Սաւուղ իր կապարճակիրին ըսաւ, Սուրդ քաշէ ու անով զիս խոցէ. չըլլայ որ այս անթլփատները գան ու զիս խոցեն, և զիս ծաղր ընեն. բայց կապարճակիրը չուզեց, քանզի շատ վախցաւ։ Ու Սաւուղ սուրը առաւ ու անոր վրայ ինկաւ։ 5—Ու անոր կապարճակիրը Սաւուղի մեռնիլը տեսնելով՝ ան ալ իր սուրին վրայ ինկաւ ու անոր հետ մեռաւ։ 6—Ու Սաւուղ ու անոր երեք որդիները, ու կապարճակիրը և անոր բոլոր մարդիկը նոյն օրը միասին մեռան։

7—Ու հովիտին անդիի կողմը և Յորդանանէ անդիի կողմը եղող Իսրայէլի մարդիկը Իսրայէլացւոց փախչիլը ու Սաւուղի և անոր որդիներուն մեռնիլը տեսնելով՝ քաղաքները թողուցին ու փախան. և Փղշտացիք եկան ու անոնց մէջ բնակեցան։

8—Ու հետեւեալ օրը Փղշտացիք եկան որ մեռելները մերկացնեն. ու Սաւուղը և անոր երեք որդիները Գեղբուէ լեռան վրայ ինկած գտան։ 9—Ան տուն անոր գլուխը կարեցին, ու անոր վէրքէ զէնքերը հանեցին. և Փղշտացւոց երկրին չորս կողմը իրենց կռապաշտներուն ու ժողովուրդին՝ յղեալ ուղղկեցին։ 10—Ու անոր զէնքերը Աստարովթի տունը դրին, ու անոր մարմինը Բեթսանի պարիսպէն կախեցին։

11—Ու Գաղաադու Յաբէսի բնակիչները երբ լսեցին ինչ որ Փղշտացիք Սաւուղի բրած էին, 12—Ոտլոր այծի տէր մարդիկը ոտք եղան, ու բոլոր գիշերը գացին, ու Բեթսանի պարիսպէն Սաւուղի մարմինը ու անոր որդիներուն մարմինները առին, և Յաբէս եկան ու հոն զանոնք այրեցին. 13—Ու անոնց ոսկորները առին, ու Յաբէսի մէջ *Թամարին տակ թաղեցին, ու եօթը օր ծոմ պահեցին։

*կամ, խթան վախցաւ

*կամ, մռայլին

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Սաւուղի մեռնելէն ետքը, երբ Դաւիթ Ամաղեկացիները զարնելէն դարձեր էր, ու երկու օր Սիկլակի մէջ նստեր էր, 2—երրորդ օրը ահա բանակէն, Սաւուղի քովէն, մէկը եկաւ, որուն հանդերձները պատառուած էին ու գլուխն վրայ հող կար. և անիկա Դաւիթի քով գալով՝ գետինը ինկաւ ու երկրպագութիւն ըրաւ։ 3—Ու Դաւիթ ըսաւ անոր, Ուրկէ՞ կու գաս Ու անիկա ըսաւ անոր, Ես Իսրայէլի բանակէն փախայ։ 4—Ու Դաւիթ ըսաւ անոր, Բանը ի՞նչպէս եղաւ, պատմէ ինծի. Ու անիկա ըսաւ, Ժողովուրդը պատերազմէն փախաւ, ու ժողովուրդէն շատ *մըդէլ ինկան մեռան. նաև Սաւուղ ու անոր որդին Յոնաթան մեռան։ 5—Ու Դաւիթ իրեն լուր բերող պատանիին ըսաւ, Սաւուղի ու անոր որդւոյն Յոնաթանի մեռնիլը ուրկէ՞ գիտես։ 6—Ու անոր լուր բերող պատանին ըսաւ, Դիպուածով Գեղբուէ լեռան վրայ գտնուեցայ, և ահա Սաւուղ իր նիզակին վրայ կռթներ էր, ու կառքերը և ձիաւորները անոր վրայ կը հասնէին։ 7—Ան տուն եռաւ դառնալով զիս տեսաւ, ու զիս կանչեց. ես ալ ըսի Ահա հոս եմ։ 8—Ու անիկա ինծի ըսաւ, Դուն ո՞վ ես։ ես ալ անոր ըսի Թէ Ամաղեկացի եմ։ 9—Ու անիկա ինծի ըսաւ, Կ'աղաչեմ, իմ վրաս կեր ու զիս մեռցուր. քանզի վրաս թմրութիւն մը եկաւ, բայց տակաւին հոգիս վրաս է։ 10—Ան տուն անոր վրայ եկայ ու զանիկա մեռցուցի. քանզի ես հասկցայ որ անիկա իյնալէն ետքը պիտի չապրի. ու անոր գլխուն վրայի թագը և անոր թեւին վրայ եղած †պարանոյնը առի, ու զանոնք հոս իմ տէրոջս բերի։ 11—Ան տուն Դաւիթ իր հանդերձները բռնեց պատռեց, նոյնպէս ալ անոր հետ եղող բոլոր մարդիկը։ 12—Ու անոնք Սաւուղի համար, ու անոր որդւոյն Յոնաթանի համար, և Տէրոջը ժողովուրդին համար, ու Իսրայէլի տանը համար սուգ բռնեցին ու լացին, ու մինչև իրիկուն ծոմ բռնեցին անոնց սրով իյնալուն համար։

13—Ու Դաւիթ երեն լուր բերող պատանիին ըսաւ, Դուն ո՞ր տեղացի ես։ Ու անիկա ըսաւ, Ես պանդուխտ Ամաղեկացիի մը զաւակ եմ։ 14—Ու Դաւիթ անոր ըսաւ, Ի՞նչպէս չվախցար ձեռդ երկնցնելու և Տէրոջը օծեալը մեռցնելու։ 15—Ու Դաւիթ մանչերէն մէկը կանչեց ու ըսաւ, Մօտեցիր, ասիկա մեռցուր. և զանիկա զարկաւ, որ մեռաւ։ 16—Ու Դաւիթ անոր ըսաւ, Քու արիւնդ քու գլուխդ ըլլայ, քանզի քու բերանդ քեզի համար վկայութիւն տուաւ՝ ըսելով, Տէրոջը օծեալը ես մեռցուցի։

17—Ու Դաւիթ Սաւուղի վրայ ու անոր որդւոյն Յոնաթանի վրայ այս ողբը ըսաւ։ 18—Ու պատուիրեց որ *Ազեղը Ցուդայի որդիներուն սորվեցընեն. ահա անիկա Ուղիղին գիրքին մէջ գրուած է։

19—Ով Իսրայէլի փառքը,
Քու բարձր տեղերուդ վրայ վիրաւորուած Ւնկաւ։
Զօրաւորները ի՞նչպէս ինկան։
20—Գէթի մէջ մի պատմէք,
Ասկազոնի ճամպաներուն մէջ աւետիս մի տաք.
Չըլլայ որ փղշտացւոց աղիկները ուրախանան,
Չըլլայ որ անթլփատներուն աղիկները ցնծութիւն ընեն,
21—Ով Գեղբուէի լեռներ,
Ձեր վրայ ոչ ցօղ էջայ և ոչ անձրև,
Ու էրնէայէի ընծաներու անդաստաններ չէղնուին.

*կամ, ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՍԱՄՈՒԵԼԻ
†կամ, չղթան

*երգիս անունն է

Քանզի զօրաւորներուն վրանը հոն
ձգուեցաւ.
Սաւուղի վրանը [illegible] իւղով
չէր օծուած։
22—Վիրաւորուածներուն արիւնէն ու
զօրաւորներուն ճարպէն՝
Յոնաթանի աղեղը ետ չդարձաւ,
Ու Սաւուղի սուրը պարապ չդարձաւ։
23—Սաւուղ ու Յոնաթան
Իրենց կենդանութեան ատենը շատ սի-
րելի ու հաճելի ըլլալով,
Իրենց մահուան ժամանակ ալ իրարմէ
չդատուեցան.
Արծիւներէն աւելի թեթեւաչարժ՝
Ու առիւծներէն աւելի զօրաւոր էին։
24—Ով իսրայէլի աղիկներ, լացէք
Սաւուղի համար,
Որ ձեզի վայելուչ կարմիրներ կը հագ-
ցընէր,
Ու ձեր հանդերձներուն վրայ ոսկիէ
զարդեր կը դնէր։
25— Պատերազմին մէջ զօրաւորները
ի՛նչպէս իյնան,
Ով Յոնաթան, քու բարձր տեղերուդ
վրայ մեռցուեցար։
26—Քեզի համար շատ կը ցաւիմ,
Ով եղբայր իմ Յոնաթան.
Դուն ինծի խիստ սիրելի էիր.
Քու սէրդ ինծի զարմանալի էր,
Կանանց սէրէն աւելի էր։
27—Զօրաւորները ի՛նչպէս իյնան,
Ու պատերազմի զէնքերը կորսուեցան։

Գլ. Բ

Եւ ասկէ ետև Դաւիթ Տէրոջը հար-
ցուց ու ըսաւ, Յուդայի քաղաքներէն
մէկը գլա՞մ։ Եւ Տէրը անոր ըսաւ, Ե-
լիր։ Ու Դաւիթ ըսաւ, Ո՞ր գլամ։ Ու
Տէրը ըսաւ, Քեբրոն։ 2—Ու Դաւիթ իր
երկու կիները, այսինքն Յեզրաելացի
Աբինոամը ու Կարմելացի Նաբալի կինը
Աբիգեան, իրեն հետ առնելով հոն ե-
լաւ։ 3—Եւ Դաւիթ իրեն հետ եղող
մարդիկն ալ՝ ամէն մէկը իր ընտանի-
քովը տարաւ. ու Քեբրոնի քաղաք-
ներուն մէջ բնակեցան։ 4—Ու Յուդայի
մարդիկը եկան, ու հոն Դաւիթը Յու-
դայի տանը վրայ թագաւոր օծեցին։
Ու Դաւիթի պատմեցին ու ըսին Թե-
գաղատու Յաբէսի բնակիչները Սա-
ւուղը թաղեցին։ 5—Ու Դաւիթ գա-
ղատու Յաբէսի բնակիչներուն պատ-
գամաւորներ ղրկեց ու անոնց ըսաւ,
Դուք Տէրոջմէն օրհնեալ ըլլաք, որ ձեր
տէրոջը Սաւուղի այս ողորմութիւնն
ըրիք, ու զանիկա թաղեցիք։ 6—Ու
հիմա Տէրը ձեզի ողորմութիւն ու ճըշ-
մարտութիւն ընէ. ու այս բանը ընել-
նուդ համար՝ ես ալ ձեզի այս աղիկու-
թեան [illegible] պիտի հատուցանեմ։
7—Ուրեմն ձեր ձեռքը ուժովցայ ու
զօրաւոր կորձնեք էղէք. քանզի ձեր
տէրը Սաւուղ մեռաւ, և Յուդայի տուա-
նը ղիս իրենց վրայ թագաւոր օծեցին։

8—Իսկ Սաւուղի զօրավարը, Ներ-
եան Աբիններ, Սաւուղի որդին Յեբուս-
թէն առաւ, ու զանիկա Մանայիմ ան-
ցուց, 9—Ու զանիկա Գաղատու վրայ,
Ասուրիի վրայ, Յեզրաելի վրայ, Եփ-
րեմի վրայ, Բենիամինի վրայ, ու բոլոր
Իսրայէլի վրայ թագաւոր ըրաւ։ 10—
Երբ Սաւուղի որդին Յեբուսթէ Իսրա-
յէլի վրայ թագաւոր եղաւ, քառասուն
տարեկան էր, ու երկու տարի թագա-
ւորութիւն ըրաւ. միայն Յուդայի տունը
Դաւիթի *հպատակ եղաւ։ 11—Ու Յու-
դայի տանը վրայ Քեբրոնի մէջ Դաւիթի
թագաւորութիւն ըրած ժամանակը եօ-
թը տարի ու վեց ամիս էր։

12—Ու Ներեան Աբիններ և Սա-
ւուղի որդւոյն Յեբուսթէի ծառաները
Մանայիմէ Գաբաւոն ելան։ 13—Ու
Շարուհեայի որդին Յոաբ ու Դաւիթի
ծառաները ինքնին ելան, ու Գաբա-
ւոնի ալագաղին քով անոնց հանդի-
պեցան. և մեկը ալագաղին մէկ կող-
մէ՝ ու անոնք ալագաղին միւս կողմը
նստան։ 14—Ու Աբիններ Յոաբի ը-
սաւ, Թող կարձները ելլեն ու մեր առ-
ջև խաղան։ Ու Յոաբ ըսաւ, Թող ել-
լեն։ 15—Ուստի անոնք թիւով ելան,
ու Բենիամինէ ու Սաւուղի որդւոյն Յե-
բուսթէի կողմէն տասներկու մարդ, և
Դաւիթի ծառաներէն տասներկու մարդ
անցան։ 16—Ու ամէն մէկը իր ընկե-
րին գլխէն բռնեց, և իր սուրը իր ըն-
կերին կողը խոթեց, ու մէկտեղ իյնան.

*Եբր. եռեւէն

*Ա՛յնէ՛ն, սուրերուն արտ
դեամ, փորեն

ու այն տեղին անունը *Հեղկաթ-ասուռ-
իմ ըսուեցաւ, որ Գաբաւոնի մէջ է։

17—Ու այն օրը խիստ սաստիկ պա-
տերազմ եղաւ. ու Աբիններ Իսրայէլի
մարդոց հետ Դաւիթի ծառաներուն
առջև յաղթուեցաւ։ 18—Ու Շարուհե-
այի երեք որդիները, Յոաբ, Աբեսա
ու Ասայէլ հոն էին. ու Ասայէլ դաշտի
այծեամի պէս ոտքով թեթև էր։ 19—
Ու Ասայէլ Աբինների եռեւէն ինկաւ,
ու Աբինների եռեւէն աջ կամ ձախ
կողմը չխոտորեցաւ։ 20—Ու Աբիններ
եռեւը դարձաւ ու ըսաւ, Ասայէլ դո՞ւն
ես Ու պիտի ըսաւ, ես եմ։ 21—Ու
Աբիններ անոր ըսաւ, Քու աջ կամ
ձախ կողմդ խոտորէ, ու կորիճներէն
մէկը բռնէ, ու անոր զէնքերը քեզի
առ։ բայց Ասայէլ անոր եռեւէն դառ-
նալ չուզեց։ 22—Ու Աբիններ նորէն
մէկմէն ալ Ասայէլի ըսաւ, Եռեւէս
դարձիր. քեզ ինչո՞ւ համար գետինը
զարնեմ. այն ատեն ի՞նչպէս երեսս վեր-
ցընեմ քու եղբօրդ Յոաբի Նայէ։ 23—
Բայց անիկա *ետ էտ-էն դառնալ
չուզեց։ Ու Աբիններ նիզակին եռեւէն
ծայրովը փոնակուչէն զարկաւ զանի-
կա, ու նիզակը անոր կռնակէն ելաւ.
և հոն ինկաւ ու նոյն տեղը մեռաւ. և
ով որ Ասայէլի իյնած ու մեռած տեղը
կու գար՝ կանգ կ'առնէր։ 24—Ու Յո-
աբ ու Աբեսա Աբինների եռեւէն ին-
կած կը հալածէին ղ-նէ-։ ու երբ ա-
նոնք Գիայի դիմաց Գաբաւոնի անա-
պատին ճամբան եղող Ամմայի բլուրը
եկան, արեւը մտաւ։

25—Ու Բենիամինի որդիները Աբեն-
ների եռեւէն ժողովուեցան, գունդ մը
եղան, ու բլուրի մը գլուխը կայնեցան։
26—Ու Աբիններ Յոաբի պոռալով ը-
սաւ, Միթէ սուրը անդադա՞ր պիտի
ուտէ. չե՞ս գիտեր որ ասոր վերջը դառն
կ'ըլլայ. մինչև ե՞ր ժողովուրդին պիտի
չհրամայես որ իրենց եղբայրները հալա-
ծելէն ետ դառնան։ 27—Ու Յոաբ ը-
սաւ, կենդանի է Աստուած, երթ դուն
ըրուցած չըլլայիր, ժողովուրդին ամէն

մէկը առաւոտնէ ի վեր իր եղբայրները
հալածելէն ետ պիտի դառնար։

28—Այն ատեն Յոաբ փող հնչե-
ցուց, ու բոլոր ժողովուրդը կանգ ա-
ռաւ, ու ալ Իսրայէլի եռեւէն չկնան,
ու մէյմըն ալ պատերազմ չըրին։ 29—
Ու Աբիններ ու անոր մարդիկը այն բո-
լոր գիշերը դաշտին միջէն երթալով՝
Յորդանանէ անցան, ու բոլոր Բեթրոնը
քալելով՝ Մանայիմ եկան։ 30—Ու Յո-
աբ Աբիններէ դարձաւ, ու բոլոր ժո-
ղովուրդը ժողվեց. և Դաւիթի ծառա-
ներէն տասնըինը մարդ ու Ասայէլ կը
պակսէին։ 31—Բայց Դաւիթի ծառա-
ները Բենիամինէ ու Աբիններուն մար-
դոցմէն երեք հարիւր վաթսուն մարդ
զարկին, որոնք մեռան։ 32—Ու Ասա-
յէլը վերցուցին, ու զանիկա Բեթղէհէմի
մէջ իր հօրը գերեզմանը թաղեցին։ Ու
Յոաբ և անոր մարդիկը բոլոր գիշերը
քալեցին, ու արշալոյսին Քեբրոն հասան։

Գլ. Գ

Եւ Սաւուղի տանը ու Դաւիթի տանը
մէջտեղ երկայն պատերազմ եղաւ. ու
Դաւիթ երթալով կը զօրանար, բայց
Սաւուղի տունը երթալով կը տկարանար։

2—Ու Քեբրոնի մէջ Դաւիթի որդի-
ներ ծնան. և անոր անդրանիկը Յեզ-
րաելացի Աբինոամէ Ամնոն էր։
3—Ու անոր երկրորդը Կարմելացի Նա-
բալի կնոջմէն Աբիգեայէ Քէ-ր Քիլաբն
էր, ու երրորդը Գեսուրի թագաւորին
Թոլմիի աղիկան Մաաքայի որդին Աբիսա-
ղոմ էր։ 4—Ու չորրորդը Ագգիթի որդին
Ադոնիա էր, ու հինգերորդը Աբիսալի որ-
դին Սափատիա էր։ 5—Ու վեցերորդը Դա-
ւիթի կնոջմէն Եգդոյէ Քէ-ր Յեբրաէր էր։
Քեբրոնի մէջ Դաւիթի ասոնք ծնան։

6—Եւ Սաւուղի տանը ու Դաւիթի
տանը մէջտեղ քանի որ պատերազմ կար,
Աբիններ Սաւուղի տանը քիւնէնքէն էր։
7—Ու Սաւուղ հարճ մը ունէր որուն
անունը Ռեսփա էր, ու Այիայի աղիկն
էր. Ու Յեբո-շէթ Աբիններուն ըսաւ, Ի՛մ
հօրս հարճին ինչո՞ւ մօտեցար։ 8—Ու
Աբիններ Յեբուսթէի խօսքերուն համար
խիստ բարկացաւ, ու ըսաւ, Միթէ ես
շան գլո՞ւխ եմ որ Յուդայի դէմ՝ քու

հօրդ Սաուղի տանը, անոր եղբայրներուն ու բարեկամներուն այսօր ողորմութիւն ըրի, ու քեզ Դաւիթի ձեռքը չմատնեցի, և դուն այսօր այս կնոջ հետը միս կը մեղադրես։ 9—Աստուած Աբեններուն այսպես ու ասկէ աւելի ընէ, եթէ Դաւիթի չընեմ ինչ որ Ցերը անոր երդում ըրաւ։ 10—Այսինքն Թագաւորութիւնը Սաուղի տունէն վերցնեմ, ու Դաւիթի աթոռը Իսրայէլի վրայ և Յուդայի վրայ հաստատեմ՝ Դանէ մինչև Բերսաբէէ։ 11—Ու Ցեհոովան մեղմութեան ալ չկրցաս Աբենններուն պատասխան տալ՝ անկէ վախնալուն համար։

12—Ես Աբենններ իր կողմանէ Դաւիթի պատգամաւորները ղրկեց՝ ըսելով, Այս երկիրը որո՞ւնն է։ ու ըսաւ, ինծի հետ դաշնակցութիւն ըրէ, և ահա իմ ձեռքս քեզի հետ պիտի ըլլայ՝ բոլոր Իսրայէլը քեզի դարձնելու համար։ 13—Ու անկիկ ըսաւ, Այդկ, ես քեզի հետ դաշնակցութիւն կ'ընեմ։ բայց քեզմէ բան մը կը պահանջեմ, որ իմ երեսս տեսնելու եկած ատենդ՝ եթէ Սաուղի աղջիկը Մեղբողը ինծի չբերես, իմ երեսս չտեսնես։ 14—Ես Դաւիթ Սաուղի որդւոյն, Ցեբուսթէի դեսպաններ ղրկեց՝ ըսելով, իմ կինս Մեղբողը ինծի տուր, զոր փդշացուց հարիւր անթլփատութիւններով ատի։ 15—Ու Ցեբուսթէ Հոդ ղրկեց, ու զանիկա անոր այրէն, Լայիսեան Փալտիելէ, առաւ։ 16—Ես անոր այրը լալով մինչեւ Բաւուրիմ անոր ետեւէն գնաց։ Ու Աբեններ անոր ըսաւ, Գնա դարձիր։ ու անիկա դարձաւ։

17—Ես Աբեններ Իսրայէլի Ծերեբուն հետ խօսեցաւ ու ըսաւ, Երէկ ու միւս օր կ'ուզէիք որ Դաւիթ ձեր վրայ Թագաւոր ըլլայ։ 18—Ուրեմն հիմա ըրէք։ քանզի Տէրը Դաւիթի համար խօսեցաւ՝ ըսելով, Իմ Ժողովուրդս Իսրայէլը փղշտացւոց ձեռքէն ու անոր բոլոր Թշնամիներուն ձեռքէն՝ իմ Ծառայս Դաւիթի ձեռքով պիտի ազատեմ։ 19—Ես Աբեններ նաև Բենիամինի հետ խօսեցաւ։ անկէ ետքը Աբենններ Քեբրոն գնաց, որպէս զի Իսրայէլի ու Բենիամինի բոլոր տանը հաճոյ երեւցածը Դաւիթի ալ պատմէ։ 20—Ու Աբեններ քսան մարդ ունենալով։ Ես Դաւիթ Աբենններուն ու անոր հետ եղող մարդոց խնջոյք ըրաւ։ 21—Ու Աբենններ Դաւիթի ըսաւ, Ելլեմ երթամ, և բոլոր Իսրայէլը իմ տէրոջս, Թագաւորին, քով ժողվեմ, որպէս զի քեզի հետ դաշնակցութիւն ընեն, ու դուն սրտիդ ամէն ուզածին պէս Թագաւորութիւն ընես։ Ես Դաւիթ Աբեննները ղրկեց, որ խաղաղութեամբ գնայ։

22—Ես ահա Դաւիթի Ծառաները ու Յովաբ *ապատակութենէ եւ դարձան, ու բերնց հետ խիստ շատ աւար բերին։ իսկ Աբենններ Դաւիթի քով Քեբրոնի մէջ չէր։ քանզի Դ—ն զանիկա ղրկեր էր։ ու անիկա խաղաղութեամբ գացեր էր։ 23—Ու երբ Յովաբ և անոր հետ եղող բոլոր զօրքը եկան, Յովաբի պատմեցին ու ըսին, Ներեան Աբենններ Թագաւորին եկաւ։ ան ալ զանիկա ղրկեց, ու խաղաղութեամբ գնաց։ 24—Ա՛յն ատեն Յովաբ Թագաւորին գնաց ու ըսաւ, Ի՞նչ ըրեր։ ահա Աբենններ քեզի եկեր է։ ինչո՞ւ համար զանիկա Թող տուեր ես, ու ան ալ գացեր է։ 25—Դուն էչի՞ս գիտեր՝ որ Ներեան Աբենններ քեզ խաբելու, քու ելլելու ու մտնելու դէղդ հասկնալու, ու քու ամէն գործդ իմանալու համար եկաւ։ 26—Ես Յովաբ Դաւիթի քովէն ելաւ, ու Աբենններ ետեւէն պատգամաւորներ ղրկեց, ու զանիկա Սիրայի ջրհորէն ետ դարձուցին։ և Դաւիթ չէր գիտեր։ 27—Ու երբ Աբենններ Քեբրոն դարձաւ, Յովաբ զանիկա դրանը ներսիդէն քաշեց, անոր հետ ծածուկ խօսակցութիւն ընելու համար, ու զանիկա հոն, իր եղբօրը Ասայէլի արիւնը համար, անհակառակին զարկաւ ու սպիկա մեռաւ։

28—Ես անկէ ետեւ Դաւիթ լսեց, ու ըսաւ, Ես ու իմ Թագաւորութիւնս Ներեան Աբենններուն արիւնէն յաւիտեան անպարտ ենք Տէրոջը առջեւ։ 29—Յովաբի գլխուն վրայ, ու անոր հօրը բոլոր տան վրայ հասնի։ ու Յովաբի տունէն սերմնակաթ, բորոտ, ցուպի կռթնող, սրով խնդող ու հացի կարօտ պակաս չըլլայ։ 30—Այսպէս Յովաբ ու անոր եղբայրը Աբեսա Աբենններ մեռցուցին, քանզի անիկա անոնց եղբայրը Ասայէլը պատերազմի ժամանակ Գաբաւոնի մէջ մեռցուցեր էր։

31—Ես Դաւիթ Յովաբի ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդին ըսաւ, Հանգերձներդ պատառեցէք ու քուրձեր հագէք, և Աբենններ առջեւէն լացէք։ Ու Դաւիթ Թագաւորը դագաղին հետեւէն գնաց։ 32—Ես Աբենններ Քեբրոնի մէջ Թագեցին։ ու Թագաւորը ձայնը վերցուց ու Աբենններ գերեզմանին վրայ լացաւ։ բոլոր ժողովուրդն ալ լացաւ։

33—Ես Թագաւորը Աբենններ համար ողբաց ու ըսաւ,

Մի՞թէ Աբենններ այնպէ՞ս մեռաւ, ինչպես անզգամ մարդ մը կը մեռնի։ 34—Քու ձեռքերդ կապուած չէին, ու ոտքերդ կապանքի մէջ դրուած չէին. Անօրէններուն առջեւ ինկողի մը պէս ինկար։

Ու բոլոր ժողովուրդը նորէն անոր վրայ լացաւ։ 35—Ես գնին որ ցորեկ էր, բոլոր ժողովուրդը եկաւ որ Դաւիթի հաց կերցնեն. բայց Դաւիթ երդում ըրաւ ու ըսաւ, Աստուած ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ արեւին մտնելէն առաջ հաց կամ ուրիշ բան մը ճաշակեմ։ 36—Ես բոլոր ժողովուրդը ուշադրութիւն ըրաւ, ու այ Ե—ն բերնց աչքին հաճոյ երեւցաւ, ինչպես Թագաւորին ամէն ըրածը բոլոր ժողովուրդին աչքերուն հաճոյ կ'երեւնար։ 37—Ես այն օրը բոլոր Ժողովուրդը ու բոլոր Իսրայէլ հասկցաւ որ Ներեան Աբենններուն մեռցուիլը Թագաւորէն չէր։ 38—Ես Թագաւորը իր Ծառաներուն ըսաւ, Չէ՞ք գիտեր որ այսօր Իսրայէլի մէջ մեծ զօրավար մը ինկաւ։ 39—Ու ես այսօր ակար եմ, թէեպէտև Թագաւոր օծուեցայ։ ու այս մարդիկը, Շարուհեայի որդիները, ինծի համար խիստ են. Տէրը հատուցանէ չարութիւն ընողին անոր չարութեանը համեմատ։

Գլ. Դ

Ես Սաուղի որդին Ցեհոովայի երբ Աբենններ Քեբրոնի մէջ մեռնիլը լսեց, ձեռքերը թուլցան, ու բոլոր Իսրայէլ ապշահատեցաւ։ 2—Ես Սաուղի որդին երկու գնդապետ ունէր, մէկուն անունը Բաանա, ու միւսին անունը Ռեքաբ էր։ սոոնք Բենիամինի ցեղէն Բերովթացի Ռեմմոնի որդիներն էին։ (քանզի Բերովթ ալ Բենիամինեանց *ըլլէր կը սեպուէր։ 3—Ու Բերովթացիները Գիթթայիմ փախան, և հոն մինչև այսօր պանդուխտ պէս բնակեցան)։ 4—Ու Սաուղի որդին Յոնաթան ոտքերը կոտ ատյ մը ունէր։ որ երբ Սաուղի ու Յոնաթանի համբաւը լուրը ծերբայելէ եկաւ, անիկա հինգ տարեկան էր։ և անոր դայեակը զանիկա առաւ փախաւ։ ու երբ փախչելու կը փութար, ըլլաւ ինկաւ կոտ եղաւ։ և անոր անունը Մեմփիբոսթէ էր։ 5—Ու Բերովթացի Ռեմմոնի որդիները, Ռեքաբ ու Բաանա, գացին, ու ցորեկուան տաք տաքնը Յեբուսթէի տունը մտան, և անիկա կէսօրուան տաքն պառկեր կը քնանար։ 6—Ու անոնք մինչև ստանը մէջտեղը մտան, էչէ ընէ ցորեն պիտի առնէին. և զանիկա անակռ չտէն զարկին, ու Ռեքաբ և անոր եղբայրը Բաանա ՚ի փախան։ 7—Այս կերպով տունը մտան։ ու երբ անիկա ներքին սենեակը իր անկողնին մէջ կը քնանար, զանիկա զարկին մեռցուցին, և անոր գլուխը կտրեցին, ու գլուխ առնելով՝ բոլոր գիշերը գաշտին ճամբովը գացին։ 8—Ես Յեբուսթէի գլուխը Քեբրոն տարին Դաւիթի, ու Թագաւորին ըսին, Ահա քու Թշնամիդ, քու կեանքդ փնտռող Սաուղի, որդւոյն Յեբուսթէի գլուխը։ և Տէրը Սաուղի ու անոր սերունդէն այսօր վրէժխնդրութիւն առաւ մեր Թագաւոր տէրոջը։ 9—Ես Դաւիթ Բերովթացի Ռեմմոնի որդիներուն, Ռեքաբի ու անոր եղբօր Բաանային, պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Իմ հոգիս ամէն նեղութենէ ազատող Տէրը կենդանի է, 10—Որ ան որ ինծի պատմեց ու ըսաւ թէ Սաուղ մեռաւ, կարծելով թէ աւետիս տուող մը պիտի երեւնայ ինծի, զանիկա բռնեցի ու Սիկեղակի մէջ զանիկա մեռցուցի, և անոր տուած աւետիսին վարձքը այս եղաւ։ 11—Ո՛րչափ աւելի նոյն վոյնէս կը վայ այն չար մարդոց, որոնք

---

*կամ, ասպատակներու վրայ յարձակեցան
†ՆԷբ. գիտես

արդար մարդ մը իր տանը մէջ իր անկողնին վրայ մեռցուցին. և հիմա անոր արիւնը անյուշտ ձեր ձեռքէն պիտի պահանջեմ, ու ձեզ երկրիս վրայէն պիտի վերցնեմ։ 12—Ա՛յնատեն Դաւիթ իր մանչերուն հրամայեց, ու զանոնք մեռցուցին, և անոնց ձեռքերը ու ոտքերը կտրեցին, ու Քեբրոնի ա՛ւազանին վրայ կախեցին; իսկ Ցեբաւութէի գլուխը առին, ու Քեբրոնի մէջ Աբեններէի գերեզմանը թաղեցին։

Գլ. Ե

Եւ Իսրայէլի բոլոր ցեղերը Քեբրոն եկան Դաւիթի, ու ՙՒոբ ըսին, Ահա մենք քու ոսկորդ ու քու մարմինդ ենք։ 2—Ու ՙասկէ առաջ ալ երբ Սաուղ մեր վրայ թագաւոր էր, Իսրայէլը դուրս հանողը ու ներս բերողը դուն էիր. և Տէրը քեզի բսաւ, Իմ ժողովուրդս Իսրայէլը դուն հովուես, ու Իսրայէլի վրայ իշխան ըլլաս։ 3—Ու Իսրայէլի բոլոր ծերերը Քեբրոն եկան Թագաւորին ու Դաւիթ Թագաւորը Քեբրոնի մէջ Տէրոջը առջև անոնց հետ դաշնակցութիւն բրաւ. ու անոնք Դաւիթը Իսրայէլի վրայ Թագաւոր օծեցին։

4—Դաւիթ երեսուն տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու քառասուն տարի Թագաւորութիւն ըրաւ։ 5—Քեբրոնի մէջ Յուդայի վրայ եօթը տարի ու վեց ամիս Թագաւորութիւն ըրաւ, ու Երուսաղէմի մէջ բոլոր Իսրայէլի ու Յուդայի վրայ երեսունուերեք տարի Թագաւորութիւն ըրաւ։

6—Ու Թագաւորը իր մարդոցմով Երուսաղէմ գնաց, այն երկիրը բնակող Եբուսացիներուն վրայ. ու Դաւիթի խօսեցան՝ ըսելով, Եթէ կոյրերը ու կաղերը չվերցնես, հոս պիտի չմտնես. կարծելով թէ Դաւիթ չկրնար հոն մտնել։ 7—Բայց Դաւիթ առաւ Սիոնի բերդը, (որ Դաւիթի քաղաքը կը կոչուի)։ 8—Ու Դաւիթ այն օրը ըսաւ, Ով որ Եբուսացիները զարնէ, ու լրանցքը հասնելով Դաւիթի առեալի եղող կաղերը ու կոյրերը վերցնէ, ՙոյն՝ զբօսնողը պիտի

*Նէբ. երեկ ու միւս օր

ըլլայ. անոր համար կ՚ըսեն, կոյրը ու կաղը տունը չմտնէ։ 9—Ու Դաւիթ այն բերդին մէջ նստաւ, ու զանիկա Դաւիթի քաղաքը անուանեց. և Դաւիթ աւնոր չորս կողմը Մելոնէն դէպ ի ներս վՙեւէր չինեց։ 10—Ու Դաւիթ երթալով կը մեծնար, ու զօրաց Տէր Աստուածը անոր հետ էր։

11—Ու Տիւրոսի Թագաւորը Քիրամ Դաւիթի դեսպաններ ղրկեց, նաև եղևնափայտեր ու հիւսեր ու պատշգամբներ, որոնք Դաւիթի տուն չինեցին։ 12—Ա՛յն ատեն Դաւիթ իմացաւ որ Տէրը զինք իսրայէլի վրայ Թագաւոր հաստատեց, ու իր ժողովուրդին Իսրայէլի համար իր Թագաւորութիւնը բարձրացուցեր։ 13—Ու Դաւիթ Քեբրոնի գալէն ետքը Երուսաղէմի ուրիշ հարճեր ու կիներ ալ առաւ. ու Դաւիթի ուրիշ աղջիկներ ու աղլիկներ ալ ծնան։ 14—Ու Երուսաղէմի մէջ անոր ծնած աղոցը անուններըը ասոնք են. Սամմաս, Սովբաբ, Նաթան, Սողոմոն, 15—Ցեբաար, Նեղիսուա, Նաֆեկ, Յաֆիէ, 16—Եղիսամա, Եղիադա ու Եղիփաղետ։

17—Ու Փղշտացիք Դաւիթի Իսրայէլի վրայ Թագաւոր օծուիլը լսելով բոլոր Փղշտացիք ելան որպէս զի Դաւիթը փնտռեն. երբ Դաւիթ այս բանը լսեց, բերդը իջաւ։ 18—Ու Փղշտացիք եկան և Րափայիմներուն հովիտին մէջ տարածուեցան։ 19—Ու Դաւիթ Տէրոջը հարցուց ու ըսաւ, Փղշտացւոց դէմ ելլե՞մ, զանոնք իմ ձեռքս պիտի մատնե՞ս։ Ու Տէրը Դաւիթի ըսաւ, Ելիր, քանզի Փղշտացիները անշուշտ քու ձեռքդ պիտի մատնեմ։ 20—Ա՛յն ատեն Դաւիթ Բաղփարասին գնաց. ու Դաւիթ զանոնք հոն զարկաւ, ու ըսաւ, Տէրը իմ թշնամիներս իմ ձեռքովս պատռեց, ինչպէս ջուրերը խոչոնդոտը կը պատռեն։ անոր համար այն տեղին անունը ՙԲաղփարասին բսուեցաւ։ 21—Ու փղշտացիք հոն թողուցին իրենց կուռքերը, ու Դաւիթ և իր մարդիկը զանոնք առին։

22—Ու Փղշտացիք նորէն ելլելով ելան, և Րափայիմներուն հովիտին մէջ տարածուեցան։ 23—Ու երբ Դաւիթ

*Այլ՝ Ռեփայիմներու

Տէրոջը հարցուց, ՙոբ ըսաւ, Չելլես. հո՛ դէպ ի անոնց եաւէտ կողմը դառնալով՝ *Բքենիներուն կողմէն անոնց վրայ երթաս։ 24—Ու երբ Բքենիներուն գլուխը քալուածքի մը ձայնը լսես, այն ատեն չարժիս. քանզի այն ատեն Տէրը քու առջեւդ պիտի ելլէ Փղշտացւոց բանակը զարնելու համար։ 25—Ու Դաւիթ այնպէս ըրաւ, ինչպէս Տէրը իրեն հրամայեց. ու Գաբայէ մինչև Գազեր Փղշտացիները զարկաւ։

Գլ. Զ

Եւ Դաւիթ նորէն Իսրայէլի բոլոր ընտրուած մարդիկը ժողվեց, որոնք եօթսուն հազար հոգի էին։ 2—Ու Դաւիթ իրեն հետ եղող բոլոր ժողովուրդով եղաւ, և Ցուդայի Բաալը գնաց, որպէս զի անկէ Աստուծոյ տապանակը վեր հանէ, որուն վրայ քերովբէներուն վրայ նստող զօրութեանց Տէրոջը անունը կոչուած է։ 3—Ու Աստուծոյ տապանակը նոր սայլի մը վրայ դրին, ու զանիկա Բլուրի Աբինադաբի տունէն վերցուցին. ու Աբինադաբի որդիները, Ոզա ու Ախիով, այն նոր սայլը կը վարէին։ 4—Ու զանիկա Աստուծոյ տապանակին հետ Բլուրի Աբինադաբի տունէն հանեցին. ու Ախիով տապանակին առջևէն կ՚երթար։ 5—Ու Դաւիթ ու Իսրայէլի բոլոր տունը մայր փայտէ չէֆոթ՚ ամէն տեսակ նուագարաններով, քնարներով, տաւիղներով, թմբուկներով, դափերով ու ծնծղաներով Տէրոջը առջև կը խաղային։

6—Ու երբ Նաքոնի կալը եկան, Ոզա էր յ՚ուէը Աստուծոյ տապանակին երկրնցուց, ու զանիկա բռնեց, քանզի եզները զՙէլ՚ ժեր էին։ 7—Ու Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ Ոզայի դէմ, ու Աստուած զանիկա հոն այս յանցանքին համար զարկաւ. և նոյն տեղը Աստուծոյ տապանակին քով մեռաւ։ 8—Ու Դաւիթ տրտմեցաւ, քանզի Տէրը հարուածով Ոզան զարկաւ. ու այն տեղին անունը մինչև այսօր †Փարէս-Ոզա

*Նէբ. պէ-քեանեներուն
†Այլ՝ Ոզայի հարուածը, կամ, Ոզայի խրամատութիւնը

բսուեցաւ։ 9—Ու Դաւիթ այն օրը Տէրոջմէ վախցաւ, ու ըսաւ, Տէրոջը տապանակը ի՛նչպես իմ քովս մտնէ։ 10—Ու Դաւիթ Տէրոջը տապանակը իր քովՀ, Դաւիթի քաղաքը, չուզեց տանիլ. ու Դաւիթ զանիկա Գեթացի Աբդեդոմի տունը խոտորցուց։ 11—Ու Տէրոջը տապանակը Գեթացի Աբդեդոմի տունը երեք ամիս մնաց. ու Տէրը Աբդեդոմը ու անոր բոլոր տունը օրհնեց։

12—Ու Դաւիթ Թագաւորին պատմեցին ու ըսին, Աստուծոյ տապանակին համար Տէրը Աբդեդոմի տունը ու անոր ամէն ունեցածը օրհնեց։ Ու Դաւիթ գնաց, ու Աստուծոյ տապանակը Աբդեդոմի տունէն ուրախութեամբ Դաւիթի քաղաքը հանեց։ 13—Ու երբ Տէրոջը տապանակը վերցնողները վեց քայլ առաջ գացին, արջառներ ու պարարտ ոչխարներ զոհեց։ 14—Ու Դաւիթ Տէրոջը առջև բոլոր ուժովը կը խաղար, ու Դաւիթ քՀանէ եփուած հագեր էր։ 15—Ու Դաւիթ ու Իսրայէլի բոլոր տունը Տէրոջը տապանակը ուրախութեամբ ու փողերու ձայներով կը տանէին։ 16—Ու երբ Տէրոջը տապանակը Դաւիթի քաղաքը եկաւ, Սաուղի աղլիկը Մեղվող պատուհանէն նայելով՝ տեսաւ որ Դաւիթ Թագաւորը Տէրոջը առջև ցաւկըռտելով կը խաղայ, ու զանիկա իր սրտին մէջ անարգեց։ 17—Ու Տէրոջը տապանակը բերին, ու զանիկա իր տեղը դրին այն վրանին մէջ զոր Դաւիթ անոր համար կանգներ էր. և Դաւիթ Տէրոջը առջև ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուց։ 18—Ու Դաւիթ երբ ողջակէզները ու խաղաղութեան զոհերը մատուցանելը լմնցուց, զօրաց Տէրոջը անունովը ժողովուրդը օրհնեց։ 19—Ու Իսրայէլի բոլոր բազմութեանը, այր մարդէն մինչև կին մարդը, բոլոր ժողովուրդին ամէն մէկուն մէկ նկանակ, կտոր մը միս ու կարկանդակ մը բաշխեց. ու բոլոր ժողովուրդը ամէն մէկը իր տունը գնաց։

20—Ու Դաւիթ անկէ գարձաւ իր տունը օրհնելու համար, ու Սաուղի աղլիկը Մեղվող Դաւիթը դիմաւորելու եկաւ, ու ըսաւ, Իսրայէլի Թագաւորը այսօր ի՛նչ փառաւոր էր, որ այսօր

իր ծառաներուն ազախիններուն առջև. ինքզինք մերկացուց, ինչպես սրիկաներէն մէկը ինքզինք կը մերկացնէ։ 21—Եւ Դաւիթ Մեղքոլի ըսաւ, Ես այն Տէրոջը առջև Ը֊ՂՃ֊Ե, որ ինձ քու հօրդ ու անոր բոլոր տունէն առելի ընտրեց, ու ինձ Տէրոջը ժողովուրդին իսրայէլի վրայ իշխան դրաւ. այո, ես այն Տէրոջը առջև կը խաղամ։ 22—Նաև ինձ աւելի անարգ երեւցընելով՝ իմ աչքերուս առջև. Նուաստ պիտի ըլլամ. իսկ այն քու ըսած աղախիններուդ առջև պիտի փառաւորուիմ։ 23—Եւ Սաուղի աղջիկը Միքեղ մինչև իր մահուան օրը զաւակ չծնաւ։

Գլ. Է

Ու երբ թագաւորը իր տունը նստաւ, ու Տէրը զանիկա իր բոլորտիքը եղող ամէն թշնամիներէն ՚ՂՃ֊ԻՂ֊Վ հանգըստացուց, 2—Թագաւորը Նաթան մարգարէին ըսաւ, Ահա ես եղեւնափայտէ Ը֊Ո֊Ն տան մը մէջ կը բնակիմ, ու Աստուծոյ տապանակը վրանի մէջ կեցեր է։ 3—Եւ Նաթան ըսաւ թագաւորին, Գնա, բոլոր սրտիդ մէջ եղածը ըրէ, քանզի Տէրը քեզի հետ է։

4—Ու նոյն գիշերը Տէրոջը խօսքը Նաթանի եղաւ՝ ըսելով, 5—Գնա, իմ ծառայիս Դաւիթի ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Դուն ինծի բնակելու համար տուն պիտի չշինես. 6—Որովհետև իսրայէլի որդիները եգիպտոսէ հանած օրէս մինչև այսօր տան մէջ չբնակեցայ, այլ վրաններով ու խորաններով պտտեցայ։ 7—Իսրայէլի բոլոր որդիներուն հետ որչափ տեղ որ պտտեցայ, միթէ բան մը խօսեցայ Իսրայէլի *ցեղերէն մէկուն հետ, որոնց իմ ժողովրդիս իսրայէլը հովուելու հրաման տուր էի, ու ըսի Թէ ինչո՞ւ համար ինծի եղեւնափայտէ տուն մը չշինեցիք։ 8—Եւ հիմա իմ ծառայիս Դաւիթին այսպէս ըսես, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ես քեզ փարախէն, ոչխարներուն ետեւէն, առի, որպէս զի իմ իսրայէլ ժողովրդիս վրայ առաջնորդ ըլլաս։ 9—Եւ ուր որ կ'երթայիր՝ քեզի հետ էի. և քու առջևէդ բոլոր թշնամիներդ կտրեցի, ու երկրի վրայ եղող մեծերուն անուանը պէս քու անունդ մեծցուցի։ 10—Եւ իմ ժողովրդիս իսրայէլի ալ տեղ մը պիտի որոշեմ, ու զանիկա պիտի տնկեմ, ու իր տեղը պիտի բնակի, ալ պիտի չտրտմի. և անիրաւութեան որդիները առաջուան պէս մէյմըն ալ պիտի չնեղեն զանիկա, 11—ինչպէս իմ ժողովրդիս իսրայէլի վրայ դատաւորներ դրած օրէս ի վեր եղաւ. ու քեզ քու ամէն թշնամիներէդ պիտի հանգստացընեմ։ Եւ Տէրը քեզի կ'իմացնէ որ Տէրը քեզի տուն պիտի չնէ։ 12—Երբ քու օրերդ լեցուին, ու դուն քու հայրերուդ հետ քնանաս, քեզմէ ետքը քու երանքէդ ելլող զաւակդ պիտի բարձրացընեմ, ու անոր թագաւորութիւնը պիտի հաստատեմ։ 13—Անիկա իմ անունս տուն պիտի շինէ, ու անոր թագաւորութեան աթոռը յաւիտեան պիտի կանգնեմ։ 14—Ես անոր հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի որդի պիտի ըլլայ. Երբ անիկա անիրաւութիւն ընէ, ես զանիկա մարդոց գաւազանովը ու մարդոց որդիներուն հարուածներովը պիտի պատժեմ։ 15—Բայց իմ ողորմութիւնս անկէ պիտի *չվերցնեմ, ինչպես Սաուղէ վերցուցի, ու զանիկա քու առջևէդ վռնտեցի։ 16—Եւ քու տունդ ու քու թագաւորութիւնդ քու առջևէդ յաւիտեան ապահով պիտի ըլլան, քու աթոռդ յաւիտեան հաստատ պիտի մնայ։ 17—Ու Նաթան այս բոլոր խօսքերը ու այս բոլոր տեսիլքը մի քատ միջէ Դաւիթի ղրկեց։

18—Եւ Դաւիթ թագաւորը գնաց, Տէրոջը առջև նստաւ, ու ըսաւ, Ով Տէր Եհովա, ես ո՞վ եմ, ու իմ տունս ի՞նչ է, որ ինծի մինչև հոս բերիր։ 19—Սակայն սա՛կ ալ քու աչքերուդ պզտիկ երեւցաւ, ով Տէր Եհովա, ու քու ծառայիդ տանը վրայով հեռաւոր ժամանակի համար ալ խօսեցար։ Մարդոց սովորութիւնը ասիկա՞ է արդեօք, ով Տէր Եհովա։ 20—Եւ Դաւիթ նորէն ինչ մըն

*ԿՀ, դատաւորներէն. տես ա Մն. ժէ. 6։

*ԲԷՐ. չվերնայ

ալ քեզի ինչ՞ ըրուցէ. քանզի դուն, ով Տէր Եհովա, քու ծառադ կը ճանչնաս։ 21—Ա֊յս բոլոր մեծ բաները քու խօսքիդ համար ու քու սրտիդ պէս ըրիր, որպէս զի ծառայիդ գիտցնես։ 22—Ասոր համար մեծ երեւցար, ով Տէր Աստուած. քանի քեզի պէս ո֊՛՛չ֊Ի մէկը չկայ, ու քեզմէ զատ Աստուած չկայ՝ մեր ականջներովը բոլոր լսածներնուս համեմատ։ 23—Եւ ո՞ր ազգը երկրի վրայ քու ժողովրդիդ Իսրայէլի պէս է, որու համար Աստուած երթայ իրեն ժողովուրդ ընելու, ու իրեն Դ֊ՅՆ անուն վաստկելու, *և քու երկրիդ մէջ այս մեծ ու սոսկալի բաները ընելու, քեզի համար եգիպտոսէ ազատած ժողովուրդիդ առջևէն ազգերը ու անոնց աստուածները Ը֊Ո֊Ի֊Վ։ 24—Եւ քու ժողովուրդդ Իսրայէլը յաւիտեան քեզի ժողովուրդ հաստատեցիր, ու դուն, ով Տէր, անոնց Աստուած եղար։ 25—Եւ հիմա, ով Տէր Աստուած, քու ծառայիդ համար ու անոր տանը համար ըսած խօսքդ յաւիտեան հաստատէ, ու ըսածիդ պէս ըրէ։ 26—Եւ քու անունդ յաւիտեան մեծ ճանչցուի, ու ըսեն Թէ Զօրաքեանց Տէրը Իսրայէլի վրայ Աստուած է. ու քու ծառայիդ Դաւիթի տունը քու առջևդ հաստատ մնայ։ 27—Քանզի դուն, ով Տէր զօրաքեանց, Աստուած Իսրայէլի, քու ծառայիդ յայտնեցիր ու ըսիր, Քեզի տուն պիտի շինեմ. ասոր համար քու ծառադ իր սրտին մէջ հ֊ո֊գ֊ւ֊ն֊ո֊ւ֊թ֊ի֊ւ֊ն գտաւ այս աղօթքը քեզի ընելու։ 28—Եւ հիմա, ով Տէր Եհովա, այն Աստուածը դուն ես, ու քու խօսքերդ ճշմարիտ են, և քու ծառայիդ այս աղէկութիւնը խոստացար։ 29—Ուստի հիմա †կամք ըրէ՝ քու ծառայիդ տունը օրհնելու, որպէս զի յաւիտեան քու առջևդ ըլլայ. քանզի, ով Տէր Եհովա, դուն զրուցեցիր, ու քու օրհնութիւնովդ ծառայիդ տունը յաւիտեան օրհնեալ ըլլայ։

*ՆԷՐ. և ձեզի համար
†ԿՀ, սկսէ

Գլ. Ը

Անկէ ետև Դաւիթ փղշտացիները զարկաւ, ու զանոնք նուաստեց. և Դաւիթ փղշտացւոց ձեռքէն Մեթեկհամման առաւ. 2—Նաև Մոաբը զարկաւ, ու գետինը պառկեցնելով զանոնք լարով չափեց. երկու լարով մեռցնելու չափեց, ու էն ամբողջ լարով ապրեցնելու. ու Մոաբացիք Դաւիթի հարկատու ծառաներ եղան։ 3—Եւ Դաւիթ Սոբայի թագաւորը, Ռեհոբի որդին Ադրազարը, զարկաւ, երբ Եփրատ գետին վրայ իր *իշխանութիւնը հաստատելու՝ կ'երթար։ 4—Ու Դաւիթ անկէ հազար եօթը հարիւր ձիաւոր ու քսան հազար հետեւակ զօրք բռնեց. Եւ Դաւիթ բոլոր †կառքի ձիերուն լիզերը կարեց, ու անոնցմէ միայն հարիւր ձի էջէն հ֊ա֊ր պահեց։ 5—Եւ Դամասկոսի Ասորիները Սոբայի թագաւորին Ադրազարի օգնութիւն ընելու եկան. ու Դաւիթ Ասորիներէն քսաներկու հազար մարդ զարկաւ։ 6—Եւ Դաւիթ Դամասկոսի Ասորւոց մէջ բերդապահ զօրքեր դրաւ. ու Ասորիները Դաւիթի հարկատու ծառայ եղան. ու Դաւիթ ուր որ կ'երթար՝ Տէրը անոր յաջողութիւն կու տար։ 7—Եւ Դաւիթ Ադրազարի ծառաներուն ոսկիէ վահանները առաւ, ու զանոնք Երուսաղէմ բերաւ։ 8—Եւ Ադրազարի քաղաքներէն, Բեթահէ ու Բերոթայէ, Դաւիթ թագաւորը խիստ շատ պղինձ առաւ։

9—Ու Եմաթի թագաւորը Թովու երբ լսեց որ Դաւիթ Ադրազարի բոլոր զօրքերը ջարդեր է, 10—Թովու իր որդին Յ֊ՁՈՐամը Դաւիթ թագաւորին ղրկեց, որպէս զի անոր բարև ընէ ու զանիկա օրհնէ, Ադրազարի դէմ պատերազմ ընելուն ու զանիկա ջարնելուն համար. (քանզի Ադրազար Թովուի հետ պատերազմներ կ'ընէր) Ու Ը֊ՎԸ֊Դ ձեռքը տարաբե֊ր անօթներ, ոսկիէ անօթներ ու պղնձէ անօթներ կային։ 11—Դաւիթ թագաւորը զանոնք ալ

*ՆԷՐ. ձեռքը գարձնելու
†ԿՀ, կառքերը քակեց, ու անոնցմէ միայն հարիւր կառք պահեց
‡ԿՀ, Ադրամը. տես ա Մն. ժը. 10։

ցերոջը նուիրեց, դա՛ նուիրած արծաթին ու ոսկիին հետ, ըղձա՛ծ բոլոր իր յաղթած ազգերէն առնէր էր։ 12—Ասորիներէն, Մովաբ, Ամմոնի որդիներէն, Փղշտացիներէն, Ամաղեկէ, և Սուբայի թագաւորէն, Ռեւբ որդւոյն Ադրազարի, ուսաբէն։ 13—Ու Դաւիթ երբ Աղի ձորին մէջ տասնըւութ հազար *Ասորիները կոտրեց ու եւս դարձաւ, հռչ անուն վաստկեցաւ։ 14—Ու նշանմի մէջ բերդապահ զօրքեր դրաւ. բոլոր Եդոմի երկրին մէջ բերդապահ զօրքեր դրաւ, և բոլոր Եդոմացիք Դաւիթի ծառայ եղան. ու Դաւիթ ուր որ կ'երթար, Տէրը անոր յաղթութիւն կու տար։

15—Ու Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ. ու Դաւիթ իր բոլոր ժողովուրդին իրաւունք ու արդարութիւն կ'ընէր։ 16—Ու Շարուհայի որդին Յովաբ զօրքերուն վրայ էր. ու Աքիտուդի որդին Յովսափատ յիշատակաց դպիր էր։ 17—Ու Աքիտոբէլի որդին Սադովկ ու Աբիաթարի որդին Աբիմելէք քահանաներ էին. ու ԹՍարայիա առենադպիր էր։ 18—Ու Յովիադայի որդին Բանիա Քերեթիներուն ու Փելեթիներուն վրայ էր. ու Դաւիթի որդիները նախաթաոներ էին։

Գլ. Ը

Ու Դաւիթ ըսաւ, Արդեօք Սաուղի տունէն մնացած մարդ մը կա՞յ, որ Յովնաթանի սիրոյն համար անոր բարերարութիւն ընեմ։ 2—Ու Սաուղի տունէն Սիբա անունով ծառայ մը կար, ու զանիկա Դաւիթի կանչեցին. և թագաւորը անոր ըսաւ, Սիբան դո՞ւն ես. ու անիկա ըսաւ, Ծառադ եմ։ 3—Ու թագաւորը ըսաւ, Սաուղի տունէն մնացած մարդ մը չկա՞յ, որպէս զի անոր Աստուծոյ ողորմութիւնը ընեմ։ Ու Սիբա ըսաւ թագաւորին, Յովնաթանէ ոտքերը կաղ որդի մը մնաց։ 4—Ու թագաւորը անոր ըսաւ, Անիկա ո՞ւր է։ Ու Սիբա ըսաւ թագաւորին, Ահա անիկա Լադաբարի մէջ Ամիէլի որդւոյն Մաքիրի տունն է։ 5—Ու Դաւիթ թագաւորը ղ-ղր զրկեց, ու զանիկա Լադաբարէ Ամիէլի որդւոյն Մաքիրի տունէն առաւ։ 6—Ու Սաուղի որդւոյն Յովնաթանի որդին Մեմփիբոսթէ երբ Դաւիթի եկաւ, երեսի վրայ ինկաւ ու խոնարհութիւն ըրաւ։ Ու Դաւիթ ըսաւ, Ով Մեմփիբոսթէ. ու անիկա ըսաւ, Ահա քու ծառադ։ 7—Ու Դաւիթ անոր ըսաւ, Մի վախնար, քանզի քու հօրդ Յովնաթանի սիրոյն համար քեզի անշուշտ բարերարութիւն պիտի ընեմ, ու քու հօրդ Սաուղի բոլոր արտերը քու վրադ պիտի դարձնեմ. ու դուն միշտ իմ սեղանս հաց պիտի ուտես։ 8—Ու անիկա խոնարհութիւն ըրաւ ու ըսաւ, Քու ծառադ ո՞վ է, որ ինծի պէս մեռած շան մը վրայ նայիցար։ 9—Իսկ թագաւորը Սաուղի ծառան Սիբան կանչեց, ու անոր ըսաւ, Սաուղի ու անոր տանը բոլոր ստացուածքը քու ա՛երոջդ որդւոյն տուի։ 10—Ու դուն ու քու որդիներդ ու ծառաներդ անոր համար երկիրը գործեցէք, ու ա՛որ պտուղը էլլեն բերես, որպէս զի քու ա՛երոջդ որդին ուտելու հաց ունենայ. և քու ա՛երոջդ որդին Մեմփիբոսթէ միշտ իմ սեղանս հաց պիտի ուտէ։ Ու Սիբա տասնըհինգ որդի ու քսան ծառայ ունէր։ 11—Ու Սիբա ըսաւ թագաւորին, Իմ թագաւոր տէրս քու ծառայիդ ինչ որ հրամայեց, քու ծառադ այնպէս պիտի ընէ։ Բայց Մեմփիբոսթէ (ըսաւ Դ՛ԷՒ,) թագաւորին որդիներէն մէկուն պէս՝ իմ սեղանս հաց պիտի ուտէ։ 12—Ու Մեմփիբոսթէ պզտիկ տղայ մը ունէր, ու անոր անունը Միքա էր և Սիբայի տունը բոլոր բնակողները Մեմփիբոսթէի ծառաներն էին։ 13—Ու Մեմփիբոսթէ Երուսաղէմի մէջ բնակեցաւ, քանզի միշտ թագաւորին սեղանը հաց կ'ուտէր. ու անիկա իր երկու ոտքերովը կաղ էր։

Գլ. Թ

Ու անկէ ետև Ամմոնի որդիներուն թագաւորը մեռաւ, ու անոր որդին Ա-

*Կամ, Եդոմայեցիները. տես ա Մն. ժբ. 12։

†Կամ, Մուսա. տես ա Մն. ժբ. 18։

նոն անոր տեղ թագաւոր եղաւ։ 2—Ու Դաւիթ ըսաւ, Նահաս որդւոյն Անոնի մարդասիրութիւն ընեմ, ինչպէս անոր հայրը ինծի մարդասիրութիւն ըրաւ։ ու Դաւիթ իր ծառաները անոր զրկեց, որպէս զի զանիկա իր հօրը վրայով մխիթարեն. ու Դաւիթի ծառաները Ամմոնի որդիներուն երկիրը գացին։ 3—Ու Ամմոնի որդիներուն իշխանները իրենց տէրոջը Անոնի ըսին, Միթէ Դաւիթ քու հայրդ քու առջեդ պատուհա՞ր համար քեզի մխիթարիչներ զրկեց։ չէ՞ որ Դաւիթ իր ծառաները քեզի զրկեց, որպէս զի քաղաքը աչքէ անցնեն ու լրտեսեն, որպէս զի էրթէ զանիկա կործանէ։ 4—Ու Անոն Դաւիթի ծառաները առաւ, ու անոնց մօրուքին կէսը ածիլեւ տաւ, ու անոնց հանդերձներուն ալ կէսը մինչև նստոյ տեղը կարել տաւ, և ղրկեց զանոնք։ 5—Ու երբ Դաւիթը պատմեցաւ, զանոնք դիմաւորելու մարդ զրկեց, քանզի այն մարդիկը շատ անարգուած էին. ու թագաւորը ըսաւ, Երիքովի մէջ նստէք մինչև որ մօրուքնիդ աճի, ու էրթէ դարձէք։

6—Ու Ամմոնի որդիները տեսնելով որ Դաւիթի հետ աւրուեցան, Ամմոնի որդիները ղ-ղր զրկեցին, ու Բեթ-բոսրի Ասորիներէն և Սուբայի Ասորիներէն քսան հազար հեծեալ, ու Մաաքայի թագաւորէն հազար մարդ, և *Իսթովբէ տասնեւերկու հազար մարդ վարձքով բռնեցին։ 7—Ու երբ Դաւիթ զայն լսեց, Յովաբը ու բոլոր զօրաւոր զօրքերը զրկեց։ 8—Ու Ամմոնի որդիները ելլան, ու †պատրաստ դրանը առջև կարգաւ պատերազմի շարուեցան. բայց Սուբայի և Բոռոբի Ասորիները, ու †Իսթովբէ ու Մաաքա՞ գաշտի մէջ զատ կայներ էին։ 9—Ու Յովաբ երբ տեսաւ որ պատերազմը առջևէն ու ետևէն իր վրայ կը հասնի, Իսրայէլի բոլոր ընտրուած մարդոցմէն ընտրեց, ու Ասորւոց դէմ պատերազմի շարեց։ 10—Ու մնացած զօրքը իր եղբօրը Աբեսսայի յանձնեց, որպէս զի Ամմոնի որդիներուն դիմաց չարէ։ 11—Ու ըսաւ, Եթէ Ասորիները զիս յաղթելու ըլլան, ինծի օգնութեան հասնիս. և եթէ Ամմոնի որդիները քեզ յաղթելու ըլլան, ես քեզի օգնութեան պիտի հասնիմ։ 12—Քաջալերա՛ եղիր, ու մեր ժողովուրդին համար և մեր Աստուծոյն քաղաքներուն համար ուժովպատերազմինք, ու Տէրը իր աչքին հաճոյ երեւցածը թող ընէ։ 13—Ու Յովաբ իրեն հետ եղող զօրքով Ասորիներուն մօտեցաւ, որպէս զի անոնց դէմ պատերազմ ընէ. ու անոնք անոր առջևէն փախան։ 14—Ու Ամմոնի որդիները Ասորիներուն փախչիլը տեսնելով, անոնք ալ Աբեսսայի առջևէն փախան ու քաղաքը մտան։ Ու Յովաբ Ամմոնի որդիներէն դարձաւ, ու Երուսաղէմ եկաւ։

15—Երբ Ասորիները տեսան որ իրենք Իսրայէլի առջև կոտրուեցան, մէկտեղ ժողովեցան։ 16—Ու Ադրազար ղ-ղր զրկեց, և Գետին անդիի կողմը եղող Ասորիները ոտք հանեց, ու Խլամ եկան. և անոնց առջևէն Ադրազարի զօրապետը Սովաք Է'խէՆ-ը։ 17—Ու երբ Դաւիթի պատմեցին, ամենիկա բոլոր Իսրայէլը ժողվեցավ՝ Յորդանան անցաւ ու Խլամ հասաւ. և Ասորիները Դաւիթի դիմաց գունդերով շարուեցան, ու անոր հետ պատերազմ բռնին։ 18—Ու Ասորիները Իսրայէլի առջևէն փախան. ու Դաւիթ Ասորիներէն եօթը հարիւր կառք ու քառասուն հազար ձիաւոր կոտրեց, ու անոնց զօրապետը Սովաքը զարկաւ, որ հոն մեռաւ։ 19—Ու Ադրազարի հպատակ եղող բոլոր թագաւորները երբ տեսան որ Իսրայէլի առջև յաղթուեցան, Իսրայէլի հետ հաշտութիւն ըրին, ու անոր ծառայ եղան. և Ասորիները անկէ ետքը Ամմոնի որդիներուն օգնելու կը վախնային։

Գլ. ԺԱ

Ու հետևեալ տարին, թագաւորները պատերազմի ելլելու ատենը, Դաւիթ Յովաբը ու անոր հետ իր ծառաները ու բոլոր Իսրայէլը զրկեց, որոնք Ամմոնացիները կոտրեցին, ու Րաբբան

*Կամ, Յովաբի մարդոցմէն. տես Դատ. ժա. 3, 5։

†Կամ, Յովաբ ու Մաաքայի մարդիկը

պաշաբեցին. բայց Դաւիթ երաւազէմ կը նստեր։ 2—Ու ։ը ՀԸ իրիկուան դէմ Դաւիթ իր անկողինն ելլելով պաշտոն տանիքին վրայ կը պաըահեր, և տանիքին վրայէն կին մը տեսաւ որ կը լուացուէր, ու այն կինը տեսքով խիստ գեղեցիկ էր։ 3—Ու Դաւիթ ։ԸՀԸ ղրկեց, ու այն կինը համար հարցուց. ու Հէլ ըսաւ, Ասիկա Բեսաբէ Ուրիայի կինը, *Հիւիամ աղջիկը, †Հիբրաւթ է։ 4—Ու Դաւիթ պատգամաւորներ ղրկեց, ու զանիկա առաւ, ու երբ կինը անոր եկաւ, Դ—ԼԸ անոր հետ պառկեցաւ. ու անիկա իր անմաքրութենէն ։Ը—Ն–ը մաքրուած էր. եաքը կինը իր տունը գնաց 5—Ու կինը յղացաւ, ու Դաւիթի լուր ղրկեց՝ ըսելով, Ես յղի եմ, 6—Ու Դաւիթ Յովաբի հը—Ն–ղրկեց, ու ըսաւ, Բեսաբէ Ուրիան ինծի ղրկէ։ Յովաբ ալ Ուրիան Դաւիթի ղրկեց։ 7—Ու երբ Ուրիա անոր եկաւ, Դաւիթ Յովաբի ողջոյթիւնը ու զօրքին ողջոյթիւնը ու պատերազմին վիճակը հարցուց։ 8—Ու Դաւիթ Ուրիայի ըսաւ, Ցունդ իջիր ու ոտքերդ լուա։ Ու Ուրիա թագաւորին պալատէն ելածին պէս, անոր եուէնն թագաւորէն էպարգև գնաց։ 9—Բայց Ուրիա իր տէրոջը բոլոր ծառաներուն հետ պալատին դուռը պառկեցաւ, ու իր տունը չիջաւ։ 10—Ու Դաւիթի պատմեցին ու ըսին թէ Ուրիա իր տունը չիջաւ։ Ու Դաւիթ Ուրիայի ըսաւ, Դուն ճամբայէ չիՀ եկիր, ինչո՞ւ համար քու տունդ չես իջներ։ 11—Ու Ուրիա ըսաւ Դաւիթի, Տապանակը ու Իսրայէլ ու Յուդա վրանները մէջ կը նստին, և իմ տէրս Յովաբ ու իմ տէրոջս ծառաները բաց դաշտի մէջ կը բանակին, ու ես ուտելու ու խմելու և կնոջս հետ պառկելու համար իմ տունս երթամ. դուն կենդանի ես, ու քու հոգիդ կենդանի է՝ որ ես այդ բանը չեմ ըներ։ 12—Ու Դաւիթ Ուրիայի ըսաւ, Այսօր ալ հոս մնացիր, ու վաղը քեզ կը ղրկեմ։ Ու Ուրիա այն օրը ու հետեւեալ օրը երեսս

*կամ, Ամիելի. ա Մն. գ. 5։
†ԵԲՐ. Բեթսաբէ

‡կամ, կեբգակուբի բաժին

ապզէմի մէջ Յովաբ։ 13—Ու Դաւիթ հրաւիրեց զանիկա, որ անոր առջեւ կերաւ խմեց. ու Դ—ԼԸ զանիկա գինովցուց. իսկ Ո—ՀԸ իրիկունը ելաւ՝ ու իր տէրոջը ծառաներուն քով իր անկողինն մէջ պառկեցաւ. բայց իր տունը չիջաւ։ 14—Եւ առաւօտուն Դաւիթ նամակ մը գրեց Յովաբի, և Ուրիայի ձեռքով ղրկեց։ 15—Ու նամակին մէջ գրեց ու ըսաւ, Ուրիան խիստ սաստիկ պատերազմին դիմաց դրէք, ու դուք ետ փաչուեցէք, որպէս զի սպանուի ու մեռնի։ 16—Ու երբ Յովաբ քաղաքը պաշարեց, Ուրիան այնպիսի տեղ մը դրաւ՝ ուր զօրաւոր մարդոց գտնելը գիտէր։ 17—Ու քաղաքին մարդիկը ելան ու Յովաբի հետ պատերազմ բռնին. և զօրքին, Դաւիթի ծառաներէն, ինկան, ու Բեսաբէ Ուրիա ալ մեռաւ։ 18—Ես Յովաբ պ–է–ո–որ Հը ղրկեց, ու պատերազմին բոլոր պարագաները Դաւիթի խնացու։ 19—Ու պատգամաւորին պատուիրելով՝ ըսաւ, Պատերազմին բոլոր դէպքերը թագաւորին պատմէլդ եաքը, 20—եթէ թագաւորին բարկութիւնը ելլէ, ու քեզի ըսէ թէ Ինչո՞ւ պատերազմելու համար քաղաքին մօտեցաք. չէի՞ք գիտեր որ պարսպէն նետ կը նետեն։ 21—*Ցերոբաալի որդին Աբիմելէքը ի՞նչ մեռցուց. չի՞ որ կին մը պարսպին վրայէն երկանաքարի կտոր մը նետեց անոր վրայ, որ անիկա Թեբէսի մէջ մեռաւ. պարսպին ինչո՞ւ մօտեցաք. այն ատեն դուն ըսես, Քու ծառադ Բեսաբէ Ուրիա ալ մեռաւ։ 22—Ու պատգամաւորը գնաց, ու Յովաբի բոլոր իրեն պատուիրածը Դաւիթի պատմեց։ 23—Ու պատգամաւորը Դաւիթի ըսաւ, Ան մարդիկը մեր վրայ ուժգնացան, ու մեզի դէմ դաշտը ելան. բայց մենք մինչև քաղաքին դուռը †հալածեցինք զանոնք։ 24—Ու աղեղնաւորները պրծրսպին վրայէն քու ծառաներուդ նետը նետեցին, ու թագաւորին ծառա-

*ՆԲԷ. Ցերոբեսեթ, որ ըսիլ է՝ Աստիքայից բանը Թող Լատագովբիւն ընէ. տես Դատ. ը. 32։
†ԵԲՐ. անոնց վրայ էինք

ներէն մէկ քանիները մեռան, և քու ծառադ Բեսաբէ Ուրիա ալ մեռաւ։ 25—Ան ատեն Դաւիթ պատգամաւորին ըսաւ, Յովաբի այսպէս ըսես, Այս բանը քու աչքերուդ գէշ չերեւնայ. քանի սուրը երբեմն ասիկա կ'ուտէ ու երբեմն անիկա. քաղաքին վրայ պատերազմը սաստկացուր, և զանիկա փլուցուր. դուն ալ քաջալերէ զանիկա։ 26—Ու Ուրիայի կինը իր երկանը Ուրիայի մեռնիլը լսելով՝ իր երկանը համար սուգ բրաւ։ 27—Ու երբ սուգը անցաւ, Դաւիթ ։ԸՀԸ ղրկեց, ու զանիկա իր տունը առաւ, և անիկա անոր կինը եղաւ, ու անոր որդի մը ծնաւ։ Բայց Դաւիթի այս բրած բանը Տէրոջը աչքերուն գէշ երեւցաւ։

ԳԼ. ԺՒ

Ն. Տէրը Նաթանը Դաւիթի ղրկեց. ու անոր եկաւ և անոր ըսաւ, Քաղաքի մը մէջ երկու մարդ կար, մէկը հարուստ ու միւսը աղքատ։ 2—Հարուստը խիստ շատ հօտեր ու արջառներ ունէր, 3—Բայց աղքատը ուրիշ բան մը չունէր, միայն թէ էգ գառնուկ մը, զոր ծախու առեր էր ու կը սնուցանէր. և ։—Ն–ը անոր հետ ու անոր տղոցը հետ միասին մեծցաւ. անոր պատառէն կ'ուտէր ու անոր գաւաթէն կը խմէր, և անոր ծոցը կը պառկէր, ու անոր՝ աղկան մը պէս էր։ 4—Ես ճամբորդ մը եկաւ այն հարուստ մարդուն. ան ալ խնայելով իր հօտերէն ու արջառներէն առնելու, ու իրեն եկող ճամբորդին Լբ–ո–որ պատրաստելու, էնաց այն աղքատ մարդուն էգ գառնուկը առաւ, ու զանիկա իրեն եկող մարդուն համար պատրաստեց։

5—Ան ատեն Դաւիթի բարկութիւնը այն մարդուն դէմ սաստիկ բորբոքեցաւ, ու Նաթանի ըսաւ, Տէրը կենդանի է որ այդ բանը ընող մարդը մեռնելու արժանի է։ 6—Ու այն գառնուկը չորեքպատիկ պիտի հատուցանէ, քանզի այս բանը րրաւ ու գութ չունեցաւ։ 7—Ան ատեն Նաթան Դաւիթի ըսաւ, Ան մարդը դուն ես. Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Քեզ Իսրայէլի վրայ ես թագաւոր օծեցի, ու քեզ Սաուղի ձեռքէն ես ազատեցի. 8—Ու տէրոջդ տունը քեզի՝ ու տէրոջդ կիներըդ քու ծոցդ տուի, և Իսրայէլի ու Յուդայի տունը քեզի տուի. ու եթէ քիչ Լ'Ը–ը–ը, քեզի *ասոնցմէ աւելի բաներ կու տայի՝։ 9—Ինչո՞ւ համար Տէրոջը խօսքը անարգեցիր՝ անոր աչքերուն առջեւ չարութիւն ընելով. Բեսաբէ Ուրիան սրով մեռցուցիր, ու անոր կինը քեզի կին առիր, ու զանիկա Ամմոնի որդիներուն սրովը սպաննեցիր։ 10—Ու հիմա ալ սուր անարգելուդ համար, ու Բեսաբէ Ուրիայի կինը քեզի կին առնելուդ համար, քու տունէդ սուրը յաւիտեան պակաս պիտի չըլլայ։ 11—Ու Տէրը այսպէս կ'ըսէ, Ահա ես քու տունէդ քեզի դէմ չարիք մը պիտի հանեմ. ու քու աչքերուդ առջեւ քու կիներդ պիտի առնեմ, և ընծէ քու դրացիդ պիտի տամ. ու անիկա այս արեգակին առջեւ քու կիներուդ հետ պիտի պառկի։ 12—Քանզի դուն ծածկաբար ըրիր, Բայց ես այս բանը բոլոր Իսրայէլի առջեւ ու արեգակին առջեւ պիտի ընեմ։ 13—Ու Դաւիթ Նաթանի ըսաւ, Տէրոջը դէմ մեղք գործեցի. ու Նաթան Դաւիթի ըսաւ, Տէրն ալ քու մեղքդ էներից, պիտի չմեռնիս։ 14—Բայց որովհետեւ այս բանով Տէրոջը թշնամիներուն հայհոյութիւն ընելու առիթ տուիր, անոր համար այս քեզի ծնած տղան անշուշտ պիտի մեռնի։

15—Ու Նաթան իր տունը գնաց։ Ու Տէրը զարկաւ այն մանուկը զոր Ուրիայի կինը Դաւիթի ծներ էր, ու սաստիկ հիւանդացաւ։ 16—Ու Դաւիթ մանուկին համար Աստուծոյ աղաչեց. ու Դաւիթ ծամ պահեց ու գնաց բոլոր գիշերը գետնի վրայ պառկեցաւ։ 17—Ու անոր տան ծերերը անոր էքով գացին՝, որպէս զի զանիկա գետնէն վերցնեն. բայց անիկա չուզեց, ու անոնց հետ հաց չկերաւ։ 18—Ու եօթներորդ

*ՆԲԷ. այսինչ ու այսինչ բաները կ'ուէլցնէի
†ԵԲՐ. անցուց
‡ԵԲՐ. վրայ եկան

օրը մանուկը մեռաւ. և Դաւիթի ծառաները մանուկին մեռնիլը անոր ըսելու վախցան, քանզի ըսին, Ահա քանի որ մանուկը դեռ կր՝ անոր զրուցեցինք, ու անկիա մեր խօսքը մտիկ չդրաւ. և ինչպէս անոր ըսնք թէ Մանուկը մեռաւ, որ գէշ բան մը ընէ։ 19—Բայց Դաւիթ իր ծառաներուն չգտնիլը տեսնելով՝ իմացաւ որ մանուկը մեռեր է. ու Դաւիթ իր ծառաներուն ըսաւ, Մանուկը մեռա՞ւ. ու անոնք ըսին, Մեռաւ։ 20—Ան ատեն Դաւիթ գետնէն ելաւ, լուացուեցաւ, օծուեցաւ, հանդերձները փոխեց, ու Ցերոյը տունը մտնելով՝ երկրպագութիւն ըրաւ. ետքը իր տունը դարձաւ, և ուզեց ու անոր առջև հաց դրին ու կերաւ. 21—Ու ծառաները անոր ըսին, Այս ըրած բանդ ինչ պիտի ըլլայ. քանի որ մանուկը ողջ էր, անոր համար ծոմ պահեցիր ու լացիր. իսկ մանուկը մեռաւ ին պէս ելար հաց կերար։ 22—Ու Դաւիթ ըսաւ, Գանի որ մանուկը ողջ էր, ծոմ պահեցի ու լացի. քանզի ըսի, Ո՞վ գիտէ, Եհերեւս Աստուած ինծի ողորմի, ու մանուկը առողջանայ։ 23—Բայց հիմա անկիա մեռած է, ինչո՞ւ համար ծոմ պահեմ. միթէ ես կրնա՞մ զանիկա ետ դարձնել. ես անոր պիտի երթամ, բայց անիկա ինծի պիտի չդառնայ։

24—Ու Դաւիթ իր կինը Բերսաբէն մխիթարեց, ու անոր քով մտաւ, և անոր հետ պառկեցաւ. ու անիկա որդի մը ծնաւ, ու անոր անունը Սողոմոն դրաւ. և Ցերը զանիկա սիրեց։ 25—Ու նաթան մարգարէին ձեռքով դրկեց. և անոր անունը Ցերոյը համար *Ցեդիդիա կոչեց։

26—Ու Յովաբ Ամմոնի որդիներուն Ռաբբային դէմ պատերազմ ըրաւ, ու թագաւորանիստ քաղաքը առաւ։ 27-Ու Յովաբ Դաւիթի պատգամաւորներ դրկեց, ու ըսաւ, Ռաբբայի դէմ պատերազմ ըրի ու կուրերուն քաղաքը առի։ 28—Ու հիմա ժողովուրդը ժողվէ. ու քաղաքին դիմաց բանակ դիր և զանիկա առ. չըլլայ որ քաղաքը ես առնեմ, ու անոր վրայ իմ անունս դրուի։ 29—Ուստի Դաւիթ բոլոր ժողովուրդը ժողվեց ու Ռաբբա գնաց, և անոր դէմ պատերազմելով՝ զանիկա առաւ. 30—Ու անոնց թագաւորին գլխին թագը առաւ, որ տալանդ մը ոսկիի ծանրութիւն ունէր՝ պատուական քարերով ը֊ը֊ը֊ը֊ը֊։ և անիկա Դաւիթի գլխուը դրուեցաւ. ու Դ֊էր քաղաքին խիստ շատ աւար առաւ։ 31—Ու անոր մէջ եղած ժողովուրդը հանեց, ու զանոնք սղոցներու ու երկաթէ կամեսայլներու ու երկաթէ տապարներու տակ դրաւ, և զանոնք աղիւսի փուռէ անցուց. ու Ամմոնի որդիներուն բոլոր քաղաքներուն այսպէս ըրաւ. ու Դաւիթ բոլոր ժողովուրդով Երուսաղէմ դարձաւ։

Գլ. ԺԲ

Ու անկէ ետքը՝ Դաւիթի որդւոյն Աբիսողոմի մէկ գեղեցիկ քոյրը կար, որուն անունը Թամար էր. ու զանիկա Դաւիթի որդին Ամնոն սիրեց։ 2—Ու Ամնոն իր քրոջ Թամարի *էդդն համար հիւանդանալու չափ նեղացաւ. քանզի անիկա կոյս աղջիկ ըլլալուն համար՝ անոր բան մը ընել Ամնոնի աչքերուն դժուար կ'երեւնար։ 3—Ու Ամնոն Յովնադաբ անունով բարեկամ մը ունէր, որ Դաւիթի եղբօրը Սամասայի որդին էր. ու Յովնադաբ խիստ խորագէտ մարդ մըն էր։ 4—Ու անոր ըսաւ, Ով թագաւորի տղայ, դուն ինչո՞ւ համար այդպէս օրէ օր կը հալիս. ը֊ը֊ը֊ը֊ը֊ ինծի չե՞ս յայտներ։ Ու Ամնոն անոր ըսաւ, Ես իմ եղբօրս Աբիսողոմի քրոջ Թամարի սիրահարած եմ։ 5—Ու Յովնադաբ անոր ըսաւ, Անկողինդ մէջ պառկէ ու քեզ հիւանդ ձեւացուր. ու երբ քու հայրդ քեզ տեսնելու գայ, անոր ըսէ, Ի՛նդրեմ որ իմ քոյրս Թամար ինծի գայ, ու ինծի հաց կերցնէ, ու իմ աչքերուս առջև կերակուր չինէ, որպէս զի տեսնեմ ու անոր ձեռքէն ուտեմ։ 6—Ու Ամնոն պառկեցաւ ու ինքզ հիւանդ ձեւացուց. ու երբ թագաւորը զանիկա տեսնելու եկաւ, Ամնոն թագաւորին ըսաւ, Ի՛նդրեմ, իմ

*Այսինքն, Ցերոյը սիրելին

քոյրս Թամար թող գայ, ու իմ աչքերուս առջև երկու բլիթ չինէ, ու անոր ձեռքէն ուտեմ։ 7—Ու Դաւիթ Թամարի *ղրկեց տունը՝ ըսելով, Ամնոն եղբօրդ տունը գնա ու անոր կերակուր չինէ։ 8—Ու Թամար իր եղբօրը Ամնոնի տունը գնաց. ու անիկա պառկած էր. և ալիւրկը խմորը առաւ չոգնեց, ու անոր աչքերուն առջև բլիթներ չինեց ու եփեց. 9—Ու տապակը առաւ ու անոր առջև պարպեց. բայց անիկա ուտել չուզեց. ու Ամնոն ըսաւ, Տուէք ամէն մարդը դուրս հանեցէք. ու ամէն մարդ անոր քովէն դուրս ելան։ 10—Ու Ամնոն Թամարի ըսաւ, Կերակուրը սենեակը ներս բեր, որպէս զի ձեռքէդ ուտեմ։ Ու Թամար չիմած բլիթները առաւ, ու իր եղբօրը Ամնոնի՝ սենեակը տարաւ. և անոր մօտեցաւ որպէս զի ուտէ։ 11—Իսկ Ահան զանիկա բռնեց ու անոր ըսաւ, Եկուր, քոյրս, ինծի հետ պառկէ. 12—Ու անիկա ըսաւ անոր, Ոչ, եղբայրս, զիս մի բռնադատեր. քանզի Իսրայէլի մէջ այդպիսի բան չըլլար. այդ անզգամութիւնը մի ըներ։ 13—Ու ես իմ նախատինքս ո՞ւր տանիմ. դուն ալ Իսրայէլի մէջ անզգամներէն մէկուն պէս պիտի ըլլաս. և հիմա ի՛նդրեմ, թագաւորին զրուցէ, ու անիկա զիս քեզմէ չմերժիլեր։ 14—Բայց Ահան անոր խօսքը մտիկ ընել չուզեց. հապա անկէ զօրաւոր ըլլալով՝ զանիկա բռնադատեց ու անոր հետ պառկեցաւ։ 15—Ու Ամնոն զանիկա խիստ շատ ատեց, այնպէս որ ունեցած ատելութիւնը ը֊ը֊ը֊ը֊ ունեցած սիրէն աւելի մեծ էր. և Ամնոն անոր ըսաւ, Ելի գնա։ 16—Ու անիկա անոր ըսաւ, *Պատճառ չկայ. զիս վռնտելուդ չարութիւնը միւս ինծի ըրածէդ աւելի մեծ է. բայց Ահան անոր մտիկ ընել չուզեց։ 17—Ու իրեն ծառայող ինծին ընող մանչը կանչեց ու ըսաւ, Ասիկա քովէս դուրս †հանէ, ու եւեւէն դուռը կղպէ։ 18—(Եւ աղջկան վրայ զարմանալի պատմուճան մը կար. քանզի Թագաւորին կոյս աղիկները այսպիսի պատմուճան կը հագնէին) Ու անոր ծառան զանիկա դուրս հանեց, ու եւեւէն դուռը կղպեց։ 19—Ու Թամար մոխիր առաւ ու իր գլխուն վրայ ցանեց, ու իր վրայի բազմագոյն պատմուճանը պատռեց, և ձեռքը իր գլխուն վրայ դրաւ ու լալով գնաց։ 20—Ու անոր եղբայրը Աբիսողոմ անոր ըսաւ, Միթէ եղբայրդ Ամնոն քեզի հե՞տ եղաւ. ու հիմա, քոյրս, լուռ կեցիր, անիկա քու եղբայրդ է, ասիկա սիրտդ մի դընեներ, և Թամար իր եղբօրը Աբիսողոմի տունը անմխիթար կը նստէր։ 21—Ու Դաւիթ թագաւորը այս ամէն բաները լսելով խիստ *բարկացաւ։ 22—Ու Աբիսողոմ Ամնոնի հետ ոչինչ կամ գէշ խօսք մը չխօսեցաւ, քանզի Աբիսողոմ Ամնոնը կ'ատէր՝ իր քոյրը Թամարը լըէկեցուցած համար։

23—Ու երկու տարի անցնելէն ետքը, երբ Աբիսողոմի ոչխարները եփրեմի մօտ եղած Բազատասրին մէջ ասրակուսը կ'ընէին, Աբիսողոմ՝ թագաւորին բոլոր որդիները հրաւիրեց։ 24—Ու Աբիսողոմ թագաւորին գնաց ու ըսաւ, Ահա քու ծառայիդ ոչխարները սրտակուսը կ'ընեն. չնորհք ըրէ, թագաւորը ու անոր ծառաները քու ծառայիդ հետ երթան։ 25—Ու թագաւորը Աբիսողոմի ըսաւ, Ոչ, որդիս, ամէնս չերթանք, որպէս զի քու վրադ ծանրութիւն չըլլանք. ու զանիկա ստիպեց, բայց Դ֊էր երթալ չուզեց, ու զանիկա օրհնեց։ 26—Ու Աբիսողոմ ըսաւ, Եթէ ոչ՝ գոնէ իմ եղբայրս Ամնոն մեզի հետ գայ. ու թագաւորը անոր ըսաւ, Անիկա ինչո՞ւ քեզի հետ երթայ։ 27—Բայց Աբիսողոմ զանիկա ստիպելուն համար՝ Ամնոնը ու թագաւորին բոլոր որդիները անոր հետ դրկեց։ 28—Ու Աբիսողոմ իր մանչերուն պատուիրեց ու ըսաւ, Նայեցէք, երբ Ամնոնի սիրտը գինիէն զուարճանայ, ու ես ձեզի Ամնոնը զարկէ՛ ըսեմ, զանիկա սպանեցէք. մի վախնաք. չէ՞ որ ես ձեզի հրամայեցի. քաջնայրտ ու զօրաւոր կորիճներ եղէք։ 29—Ու Աբիսողոմի մանչերը Աբիսողոմի պատուիրածին պէս ըրին Ամնոնի. ու թագաւորին բո-

*Կ՛ար, Մի ըներ այդ բանը

†Եբր. հանեցէք

*Կ՛ար, արտևեցաւ.

լոր որդիները ոաք ելան, և ամէն մէկը իր ֆրին հեծնելով փախան։ 30—Ու անոնք դեռ ճամբան ըլլալով, Դաւիթի լուր բերին ու ըսին, Աբիսողոմ թագաւորին բոլոր որդիները մեռցուց, ու անոնցմէ մէ՛կը չմնաց։ 31—Ու թագաւորը ոաք ելաւ, իր հանդերձները պատռեց, ու գետինը պառկեցաւ. ու անոր բոլոր ծառաները հանդերձներնին պատռած ՚ներ ԷԼՂԲՏՒԷԸ կը կայնէին։ 32—Ու Դաւիթի եղբօր Սամասայի որդին Յովնադաբ պատասխան առաւ ու ըսաւ, Իմ տէրս չկարծէ որ բոլոր երիտասարդները, թագաւորին որդիները, մեռցուցին, քանզի միայն Ամնոն մեռած է. վասն զի այս բանը Աբիսողոմի բերնովը որոշուած էր՝ անոր քոյրը Թամարը լուռ կած օրէն ի վեր։ 33—Ուրեմն իմ թագաւոր տէրս իր սրտին մէջ այս բանը չդնէ, կարծելով Թէ թագաւորին բոլոր որդիները մեռան, քանզի միայն Ամնոն մեռած է։ 34—Ու Աբիսողոմ փախաւ։ Ու երբ Դ֊ԷՐՒՆ պատանին, դէսը, այդքերը վերցուց նայեցաւ, տեսաւ որ իր հետևէն լեռանը ճամբէն խիտ շատ ժողովուրդ կու գար։ 35— Այն ատեն Յովնադաբ թագաւորին ըսաւ, Ահա թագաւորին որդիները կու գան. ծառայիդ խօսքը ելաւ։ 36—Ու անկիս իր խօսքը լմնցուցածին պէս՝ ահա թագաւորին որդիները եկան, ու ձայներնին վերցուցին ու լացին. և թագաւորն ալ ու անոր բոլոր ծառաները խիտ մեծ լացով մը լացին։

37—Իսկ Աբիսողոմ փախաւ, ու Գեսուրի թագաւորին, Ամմուդի որդւոյն Թոլմիի, գնաց. բայց Դ֊ԷՐ ամէն օր իր որդւոյն համար սուգ կ՛բներ։ 38—Ու Աբիսողոմ փախաւ, ու Գեսուր գընաց, ու հոն երեք տարի մնաց։ Ու Դաւիթ թագաւորը Աբիսողոմի հետևէն կը փափաքէր, քանզի մեռնող Ամնոնի վրայով մխիթարուեր էր։

Գլ. ԺԴ

Ե Շարուհեայի որդին Յովաբ խնդացաւ որ թագաւորին սիրտը Աբիսողոմի վրայ է։ 2—Ու Յովաբ Թեկուէ ՚ղրկեց, և անկէ խելացի կին մը բերել տաւաւ, ու անոր ըսաւ, Կ'ապաչեմ, քեզ սգաւոր ձեւացուր, ու սուգի հանդերձներ հագիր, և ոդ մի օծուիր, ու մեռելի մը համար չառանցմէ սուգ բռնող կնոջ մը պէս եղիր։ 3—Ու թագաւորին մօտը, ու անոր այս կերպով խօսէ. և Յովաբ անոր բերանը խօսքեր դրաւ։ 4—Ու այն Թեկուացի կինը թագաւորին *մտաւ խօսելու համար՝ ու երեսի վրայ գետինը խոնարհելով անոր խոնարհութիւն ըրաւ, ու ըսաւ, Ով թագաւոր, օգնէ ինծի։ 5—Ու թագաւորը անոր ըսաւ, Քեզի ի՞նչ եղաւ։ Ու կինը ըսաւ, Ո՛ն, ես որբևարի կին մըն եմ ու իմ այրս մեռած է. 6—Ու քու ազախինդ երկու որդի ունէր, ու երկուքը դաշտի մէջ իրարու հետ ծեծկուեցան. և ապանոնց մէջ հաչուեցնող մը չըլլալուն համար մէկը միւսը զարկաւ ու զանիկա մեռցուց։ 7—Ու ահա բոլոր ազգատոհմը քու ազախինդ դէմ ոաք ելան ու ըսին, Իր եղբայրը մեռցնողը տուր, որպէս զի զանիկա մեռցնենք իր մեռցուցած եղբօրը կեանքին համար, ու ժառանգն ալ կորսնցնենք. և ինծի մնացած կայծը պիտի մարեն, երկրի վրայ էրկանս անունը ու մնացորդը չպահելով։ 8—Ու թագաւորը կնոջը ըսաւ, Տունդ դնաս, ու ես քեզի համար կը պատուիրեմ։ 9—Ու Թեկուացի կինը թագաւորին ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, մեղքը իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ, բայց թագաւորը ու անոր աթոռը անպարտ ըլլայ։ 10—Ու թագաւորը ըսաւ, Որ քեզի բան մը ըսող ըլլայ, զանիկա ինծի բեր, ու մէկ մըն ալ քեզի չդպչիր։ 11—Ու անիկա ըսաւ, Թագաւորը չնորհք ընէ, իր Տէր Աստուածը յիշէ, ու չթողու որ արեան վրէժխնդիրները չատնան ապականելու, որ իմ որդիս մեռցնեն։ Ու անիկա ըսաւ, Տէրը կենդանի է որ քու որդւոյդ գլխէն մազ մը գետինը պիտի չիյնայ։ 12—Այն ատեն կինը ըսաւ, Թող քու ազախինդ իմ տէրոջս, թագաւորին, խօսք մը ըրուցէ. ու անիկա Ձրուցէ ըսաւ։ 13—Ու կինը ըսաւ, Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին վրայ ինչո՞ւ համար այդպիսի բան կը մտածես. որովհետև թագաւորը քանի որ իր աքսորածը ետ չդարձնէ, այս խօսքերը խօսելով յանցաւոր պէս կ՛ըլլայ։ 14—Քանզի մենք ի հարկէ պիտի մեռնինք, ու գետինը թափուած ջրերն կը նմանինք, որ ետ չեն ժողվուիր. և Աստուած ՚ոչ՝՚՚ մը հոգին չառներ, հապա միջոցներ կը հնարէ, որպէս զի աքսորածը իրմէ աքսորուած չմնայ։ 15—Ու հիմա ես անոր համար իմ թագաւոր տէրոջս այս խօսքը ըսելու եկայ, քանզի ժողովուրդը զիս վախցուց. ու քու ազախինդ ըսաւ, Հիմա թագաւորին հետ խօսիմ, թերեւս թագաւորը իր ազախինին խօսքը կատարէ։ 16—Որովհետև թագաւորը մտիկ ընելով իր ազախինը պիտի ազատէ այն մարդուն ձեռքէն, որ զիս ու իմ որդիս միասին Աստուծոյ ժառանգութենէն ջնջել կ՚ուզէ։ 17—Ու քու ազախինդ ըսաւ, Իմ թագաւոր տէրոջս խօսքը մխիթարութիւն պիտի ըլլայ. քանզի իմ թագաւոր տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս է, ՚՚ բարին ու չարը կը հասկնայ։ և քու Տէր Աստուածդ քեզի հետ *ըլլայ։ 18—Ու թագաւորը պատասխան առաւ ու հնդիր ըսաւ, Քեզի հարցնելու բանս ինծմէ մի պահեր։ Ու կինը ըսաւ, Իմ թագաւոր տէրս խնդրէ։ 19—Ու թագաւորը ըսաւ, Արդեօք այս ամէն բանին մէջ Յովաբի ձեռքը քեզի հետ է. ու կինը պատասխան առաւ ու ըսաւ, Ով տէր իմ թագաւոր քու անձդ կենդանի է որ իմ թագաւոր տէրոջս ըսածը բոլոր խօսքերէն բնաւ մէկը ալ դին կամ ձախ դին չկրնար խտացրել քանդի քու ծառադ Յովաբ է ինծի պատուիրողը, ու այս բոլոր խօսքերը քու աղախինդ բերանը գնդը անիկա է. 20—Այս խօսքին ձեւը զարձնելու համար՝ քու ծառադ Յովաբ այս բանը ըրաւ. ու իմ տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս խնամուն է՝ բոլոր երկրի վրայ եղած բաները գիտնալու։

21—Ու թագաւորը Յովաբի ըսաւ, Ահա հիմա այս բանը ըրի. գնա Աբիսողոմ պատանին ետ դարձու։ 22—Այն ատեն Յովաբ երեսի վրայ գետինը խոնարհեցաւ ու օրհնեց թագաւորը. և Յովաբ ըսաւ, Քու ծառադ այսօր գիտցաւ որ քու աչքերուդ մէջ շնորհք գտայ, ով տէր իմ թագաւոր, քանզի թագաւորը իր ծառային խօսքը կատարեց։ 23—Ու Յովաբ ելաւ Գեսուր գնաց, ու Աբիսողոմը Երուսաղէմ բերաւ։ 24—Ու թագաւորը ըսաւ, Թող իր տունը գառնայ, ու իմ երեսս չտեսնէ. Ու Աբիսողոմ իր տունը գարձաւ, ու թագաւորին երեսը չտեսաւ։

25—Ու բոլոր Իսրայէլի մէջ Աբիսողոմի պէս գեղեցիկ ու գովելի մարդ մը չկար. անկից ոտքին թաթէն մինչև գլուխն գոգաթը արատ մը չունէր։ 26—Ու երբ իր մազերը կը կարէր, (որովհետև տարին անգամ մը մազերը կը կարէր, քանզի իր վրայ ծանրութիւն կ՚ըլլային,) իր գլխուն մազերը կը կշռէր, ՚՚ թագաւորական կշիռքով երկու հարիւր սիկղ ՚՚ էր։ 27—Ու Աբիսողոմի երեք որդի եղաւ ու Թամար անուն աղիկ մը ծնաւ, անիկա տեսքով գեղեցիկ կին մըն էր։

28—Ու Աբիսողոմ Երուսաղէմի մէջ լման երկու տարի նստաւ, ու թագաւորին երեսը չտեսաւ։ 29—Ու Աբիսողոմ Յովաբի *ղրկեց, որպէս զի զանիկա թագաւորին ղրկէ. բայց անիկա չուզեց անոր երթալ. ու նորէն երկրորդ անգամ *ղրկեց. ու անիկա երթալ չուզեց։ 30—Այն ատեն Աբիսողոմ իր ծառաներուն ըսաւ, Տեսէք Յովաբի արտը որ իմ *՚՚ մօտ է, ու անիկա հոն գարի ունի. գացէք զանիկա կրակով այրեցէք։ Ու Աբիսողոմի ծառաները այն արտը կրակով այրեցին։ 31—Ու Յովաբ ելաւ Աբիսողոմի տունը գնաց, և անոր ըսաւ, Ինչո՞ւ համար քու ծառաներդ իմ արտս կրակով այրեցին։ 32—Ու Աբիսողոմ Յովաբի ըսաւ, Ահա քեզի *ղրկեցի ու ըսի, Հոս եկուր, քեզ թագաւորին ղրկեմ, որպէս զի ըսես Թէ Գեսուրէ ինձի ապէկ էր. և հիմա թագաւորին երեսը տեսնեմ, ու եթէ իմ վրաս չարութիւն մը կայ, Թող զիս մեռցնէ։ 33—Ու Յովաբ թագաւորին գնաց ու *յո ԲՈՒՆ

*Նէբ. խօսեցաւ

*Կամ, պիտի ըլլայ

անոր իմացուց. և անիկա Աբիսողոմը կանչեց. ու Թագաւորին քով գնաց, և Թագաւորին առջև երեսի վրայ իյնա-
ա- մինչև գետինը խոնարհութիւն բրաւ. ու Թագաւորը Աբիսողոմը հարցուբեց,

ԳԼ. ԺԴ

Եւ անկէ ետքը Աբիսողոմ իրեն համար կառքեր, ձիեր ու իր առջևէն վազող յիսուն սուրհանդակ մարդ պատրաստեց։ 2— Եւ Աբիսողոմ կանուխ կ'ելլէր ու դրանը ճամբուն մէկ կողմը կը կայներ. և Աբիսողոմ ամէն դատ ունեցող ու դատաստանի համար Թագաւորին եկող մարդը կը կանչէր ու կ'ըսէր, Դուն ո՞ր քաղաքէն ես. ու երբ անիկա, Ծառադ Իսրայէլի ցեղերէն մէկէն եմ, կ'ըսէր, 3—Աբիսողոմ անոր կ'ըսէր, Նայէ, քու դատդ *բանաւոր և ուղիղ է, բայց Թագաւորին կողմանէ քեզի մարկ ընող չկայ։ 4—Եւ Աբիսողոմ կ'ըսէր, Երանի՛ թէ զիս այս երկրին վրայ դատաւոր դնէին. ու ամէն վէճ կամ դատ ունեցող մարդը ինծի գար, և անոր իրաւունք ընէի։ 5—Ու երբ մարդ մը մօտենար անոր խոնարհութիւն ընելու, անկէ ձեռքը կ'երկընցնէր, զանիկա կը բռնէր ու կը համբուրէր։ 6—Եւ Աբիսողոմ դատաստանի համար Թագաւորին եկող բոլոր Իսրայէլի այսպէս ընելով, Իսրայէլի մարդոց սիրտը իրենն դարձուց։

7—Ու չորս տարուան լրնալէն հետք Աբիսողոմ րսաւ Թագաւորին, Շնորհք բրէ, երթամ ու Տէրոջը բրած ուխտս Քեբրոնի մէջ կատարեմ։ 8—Քանի՛ ծառադ երբ Ասորւոց Գեսուրը կը բնակէի. ուխտ բրի ու ըսի, Եթէ Տէրը զիս Երուսաղէմ դարձնէ, Տէրոջը ծառայութիւն ընեմ։ 9—Եւ Թագաւորը անոր րսաւ, Գնա խաղաղութեամբ։ Ու անիկա ելաւ Քեբրոն գնաց։ 10— Եւ Աբիսողոմ Իսրայէլի բոլոր ցեղերուն լրտեսներ զրկեց, ու ըսաւ, Փողին ձայնը լսեցնուդ պէս, Աբիսողոմ Քեբրոնի մէջ Թագաւոր եղաւ, ըսէք։ 11—Ու Աբիսողոմի հետ Երուսաղէմէ երկու հարիւր մարդ գնաց հրաւիրուած. անոնք միամտութեամբ գացին, ու ամենևին բան մը չէին գիտեր։ 12—Եւ Աբիսողոմ զոհերն բրած ատենը Դաւիթի խորհրդակիցը, Գեղոնացի Աքիթոփելը, իր Գիղոն քաղաքէն կանչել տուաւ. և դաւաճանութիւնը զօրացաւ, ու ժողովուրդը երթալով կը չատնար Աբիսողոմի քով։

13—Եւ Դաւիթի լրտեսը մը եկաւ ու ըսաւ, Իսրայէլի մարդոց սիրտը Աբիսողոմի †հետ մէկ եղաւ։ 14—Անոնց ատեն Դաւիթ Երուսաղէմի մէկ իրեն հետ եղող բոլոր ծառաներուն ըսաւ, Ելէք փախչինք, քանզի Աբիսողոմի երեսէն մեզի ազատութիւ չկայ. չուտ բրէք գացէք, չըլլայ որ անիկա չուտով մեզի հասնի, ու մեր վրայ չարիք հասցնէ, ու քաղաքը սուրի բերնէ անցնէ։ 15—Եւ Թագաւորին ծառաները Թագաւորին ըսին, Մեր տէր Թագաւորը ինչ որ որոշէ հարմար, ահա քու ծառաներդ պատրաստ են։

16—Ու Թագաւորը և անոր †տունէն անոր բոլոր տունը ելաւ. ու Թագաւորը իր հարճերէն տասը կին Թողուց, որպէս զի տանը մէջ պահպանութիւն ընեն։ 17—Եւ Թագաւորը ու անոր տունէն բոլոր ժողովուրդը ելաւ, ու անոնք հեռու ‡տեղ մը կայնեցան։ 18—Եւ անոր բոլոր ծառաները ու բոլոր Քերեթիները և բոլոր Փելեթիները անոր քովէն կ'անցնէին. ու անոր հետ Գէթէ եկած բոլոր Գեթացիները, վեց հարիւր մարդ, Թագաւորին առջևէն կ'անցնէին։ 19—Եւ Թագաւորը Գեթացի Իթթիի ըսաւ, Ինչո՞ւ համար դուն ալ մեզի հետ պիտի երթաս. դարձիր ու Թագաւորին հետ նստաւ, քանզի դուն օտարական ես, ու նաև եղած տեղդ պանդխտած ես։ 20—Դուն երէկ եկար, ու այսօր ես քեզ տեղդ խախտե՞մ, որպէս զի ինծի հետ երթաս. ահա ես կ'երթամ ուր որ պիտի երթամ. դուն

*ՆԷՐ. բարի
†ՆԷՐ. գողցաւ
‡Իմ՝ տունդ, չորս

*ՆԷՐ հեռէն
†ՆԷՐ. ուրբը
‡ՆԷՐ. տուն

դարձիր ու քու եղբայրներդ ալ դարձուր. ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քեզի հետ ըլլան։ 21—Ու Իթթի Թագաւորին պատասխան տուաւ ու ըսաւ, Տէրը կենդանի է, ու իմ Թագաւորս ալ կենդանի է, որ իմ Թագաւորս ուր որ ըլլայ, Թէ՛ մահուան մէջ և Թէ՛ կենդանութեան մէջ, քու ծառադ ալ հոն պիտի ըլլայ։ 22—Եւ Դաւիթ Իթթիի ըսաւ, Ո՛րթն եկուր անցիր. ու Գեթացի Իթթի իրեն հետ եղող բոլոր մարդացմամբ ու բոլոր ընտանիքներով անցաւ։ 23—Ու բոլոր երկիրը մեծ ձայնով կու լար, ու բոլոր ժողովուրդը կ'անցնէր. և Թագաւորը կեդրան հեղեղատէն կ'անցնէր, ու բոլոր ժողովուրդը դէպ ի անապատին ճամբան կ'անցնէին։

24—Եւ ահա Սադովկ ալ ու անոր հետ բոլոր Ղեւտացիները Աստուծոյ ուխտին տապանակը կը տանէին. և Աստուծոյ տապանակը կայնեցուցին, ու մինչև որ բոլոր ժողովուրդը քաղաքէն ելած լմնցաւ, Աբիաթար *ետ կը մատուցանէր։ 25—Ու Թագաւորը Սադովկի ըսաւ, Աստուծոյ տապանակը քաղաքը դարձուր. եթէ Տէրոջը առջև շնորհք գտնեմ, այն ատեն զիս ետ պիտի դարձընէ, ու զանիկա ու անոր բնակարանը ինծի պիտի ցուցնէ. 26—Բայց եթէ ինծի այսպէս ըսէ, Քեզի չեմ հաճիր, ահա ես ւ-ւ-ւ-ւ Ի՛ր։ իր աչքին հաճոյ երևցածին պես թող ընէ ինծի։ 27—Ու Թագաւորը Սադովկ քահանային ըսաւ, Դուն տեսանող չ՛ա- խաղաղութեամբ քաղաքը դարձիր, ու քու որդիդ Աքիմաաս ու Աբիաթարի որդին Յովնաթան, ձեր երկու որդիները, ձեզի հետ։ 28—Ահա ես անապատին դաշտերուն մէջ պիտի սպասեմ, մինչև որ ձեզմէ լուր մը առնեմ։ 29—Ու Սադովկ ու Աբիաթար Աստուծոյ տապանակը Երուսաղէմ դարձուցին, ու անոնք հոն մնացին։

30—Ու Դաւիթ Ձիթենեաց լեռնէն վեր կ'ելլէր ու կ'ելլելով կու լար, և գլուխը ծածկեր էր, ու անիկա բոկոտն կը քալէր. և անոր հետ եղող բոլոր ժողովուրդն ալ, ամէնը իրենց գլուխը ծածկեր էին, ու լալով կ'ելլէին։ 31— Ու Դաւիթի պատմեցին ու ըսին, Աքիտոփել Աբիսողոմի հետ դաւաճանութիւն ընդհանրան մէջ է։ Ու Դաւիթ ըսաւ, Ով Տէր, կ'աղաչեմ, Աքիտոփելի խորհուրդը *խափանէ։ 32—Ու երբ Դաւիթ այն բլուրը հասաւ, ուր Աստուծոյ երկրպագութիւն ըրաւ, ահա Արքացի Քուսի հանդերձները պատառած ու գլուխն վրայ հող †ը-ր՝ զանիկա դիմաւորեց։ 33—Ես Դաւիթ անոր ըսաւ, եթէ ինծի հետ գաս, ինծի բեռ կ'ըլլաս։ 34—Բայց եթէ քաղաքը դառնաս, ու Աբիսողոմի ըսես, Ով Թագաւոր, ես քու ծառադ պիտի ըլլամ. առաջ քու հօրդ ծառան էի, ու հիմա քու ծառադ եմ. այն ատեն Աքիտոփելի խորհուրդը ինծի համար կրնաս ցրուել։ 35—Եւ ահա Սադովկ ու Աբիաթար քահանաները հոն քեզի հետ են. ու Թագաւորին տունէն ինչ որ լսես, Սադովկ ու Աբիաթար քահանաներուն պատմեա։ 36—Ահա հոն անոնց երկու որդիները, Սադովկի ‡ը-ր Աքիմաաս ու Աբիաթարի ‡ը-ր Յովնաթան, իրենց հետ են. ու ամէն բան ինծի իմացուցէք անոնց ձեռքով ինծի իմացուցէք։ 37—Եւ Դաւիթի բարեկամը Քուսի քաղաքը մտաւ, ու Աբիսողոմ ալ Երուսաղէմ †մտաւ։

ԳԼ. ԺԶ

Ու երբ Դաւիթ վ-ո-ն գլուխէն փիչ մը անցեր էր, ահա Մեմփիբոսթէի ծառան Սիբա զանիկա դիմաւորեց, էշէն հետ երկու էշ սա-խ-ւ-լ-ւ, որոնց վրայ երկու հարիւր հաց, հարիւր ողկոյզ չամիչ, ու հարիւր ‡ամառնային պտուղ՝ ու սիկ մը գինի բեռցուցած էր։ 2—Եւ Թագաւորը Սիբայի րսաւ, Ասոնք ||ի՞նչ պիտի ընես՝ Ու Սիբա րսաւ, Էշերը Թագաւորին տանը համար են, որպէս զի անոնց վրայ հեծ-

*ՆԷՐ. յիմարեցուր
†Կ-Ա, կը մնանէ
‡Կ-Ա, չարոց չոր Թուզ
||ՆԷՐ. ի՞նչ են քեզի

նեն. և հացը ու ամանեղային պատրաստները մանչերուն համար են, որպէս զի ուտեն. ու գինին անապատին մէջ նուագածներուն համար է, որպէս զի խմեն։ 3—Ու Թագաւորը ըսաւ, Հապա քու ախերդդ որդին ո՞ւր է։ Ու Սիբա Թագաւորին ըսաւ, Ահա անիկա Երուսաղէմ կը նստի, քանզի ըսաւ Թէ Այսօր Իսրայէլի տունը իմ հօրս Թագաւորութիւնը կը դարձնէ։ 4—Ապա Թագաւորը Սիբայի ըսաւ, Ահա Մեմփիբոսթէի ամէն ունեցածը քեզի ըլլայ։ Ու Սիբա ըսաւ, Ով ակը իմ Թագաւոր, խնդակալ եմ, Թող քու առջեւդ չնորհք գտնեմ։

5—Ու Դաւիթ Թագաւորը մինչեւ Բահուրիմ եկաւ. և ահա անկէ Սաւուղի տանը ազգատոհմին Գերայի որդի Սեմէի անունով մարդ մը ելաւ, ու ելլելով կ'անիծէր, 6—Ու Դաւիթի ու Դաւիթի Թագաւորին բոլոր ծառաներուն քար կը նետէր. և բոլոր ժողովուրդը ու բոլոր զօրաւոր մարդիկը ի՛ւ-ւ-ւրէ՛ն աջ դիին ու ձախ դիին կ'իյնէին։ 7—Ու Սեմէի խօսք անէծք ուաւ տաւն այսպես կ'ըսէր, Ելիր, ելիր, ով արիւնահեղ մարդ, ով անօրէն մարդ։ 8—Տէրը Սաւուղի տանը բոլոր արիւնը քու վրադ դարձուց, որ անոր տեղ Թագաւոր եղար. ու Տէրը Թագաւորութիւնը քու որդւոյդ Աբիսողոմի ձեռքը տուաւ. և ահա քու չարիքդ քեզի հասաւ, քանզի դուն արիւնահեղ մարդ մըն ես։ 9—Ու Շարուհեայի որդին Աբեսա Թագաւորին ըսաւ, Ասա մեռած շունը ինչո՞ւ համար իմ աերոջս, Թագաւորին, անէծք ասայ. Թող ուր անցնիմ ու անոր գլուխը առնեմ։ 10—Բայց Թագաւորը ըսաւ, ով Շարուհեայի որդիներ, դուք ինծի հետ ի՞նչ բան ունիք. Թող ուր անէծք որ այսպես անէծք ասայ, քանզի Տէրը ըսաւ անոր, Դաւիթը անիծէ. ու ո՞վ կրնայ ըսել Թէ ինչո՞ւ համար այդպես ըրիր։ 11—Ու Դաւիթ Աբեսայի ու իր բոլոր ծառաներուն ըսաւ, Ահա իմ որովայնէս ելլող որդիս իմ հոգիս կը փնտռէ, ո՞ւր մնաց այս Բենիամինեան. Թող ուր անէծք զանիկա որ անիծէ, քանզի Տէրը ըսաւ անոր։ 12—Թերեւս Տէրը իմ նեղութեանս նայի, ու այսօրուան անոր ուրուած անէծքին տեղ Տէրը ինծի բարիք հատուցանէ։ 13—Ու Դաւիթ իր մարդոցը հետ ճամբան կ'երթար, ու Սեմէի դիմացին լեռանը քովէն կ'երթար, և անէծք ասելով, քարեր նետելով ու հող ցանելով կ'երթար։ 14—Ու Թագաւորը ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը յոգնած եկան ու հոն հանգչեցան։

15—Ու Աբիսողոմ ու բոլոր ժողովուրդը, Իսրայէլի մարդիկը, Երուսաղէմ մտան, ու Աքիտոփէլ անոր հետ էր։ 16—Ու երբ Դաւիթի բարեկամը Արաքացի Քուսի Աբիսողոմի քով գնաց, Քուսի ըսաւ Աբիսողոմի, կեցցէ արքայ, կեցցէ արքայ։ 17—Ու Աբիսողոմ Քուսիի ըսաւ, Բարեկամիդ վրայ ունեցած սէրդ ատիկա՞ է. ինչո՞ւ բարեկամիդ հետ չգացիր։ 18—Ու Քուսի ըսաւ Աբիսողոմի, Ոչ, հապա Տէրոջը ու այս ժողովուրդին և Իսրայէլի բոլոր մարդոց ընտրածը ով որ ըլլայ, ես անոր պիտի ըլլամ ու անոր հետ պիտի նստիմ։ 19—Մէկմըն ալ՝ ես որո՞ծ ծառայութիւն պիտի ընեմ, անոր որդւոյն չէ՞. ինչպէս քու հօրդ առջեւ ծառայեցի, այնպէս ալ քու առջեւդ պիտի ըլլամ։

20—Ու Աբիսողոմ ըսաւ Աքիտոփէլի, Խորհուրդ բրէք Թէ ի՛նչ ընենք։ 21—Ու Աքիտոփէլ ըսաւ Աբիսողոմի, Քու հօրդ հարճերուն մնաց, զորոնք անիկա տանը պահպանելու համար ձգեց։ Բոլոր Իսրայէլ կ'որ քեզ Թէ Աբիսողոմի հետէն կ'ազատ Ժողովուրդը կոպրեր է։ 10—Այն ատեն առիւծի պէս սիրտ ունեցող զօրաւոր մարդը անգամ բոլորովին պիտի Թուլնայ, քանզի բոլոր Իսրայէլ գիտէ որ քու հայրդ զօրաւոր է, ու անոր հետ եղողները ուժի տէր մարդիկ են, 11—Այս պատճառաւ ես քեզի խորհուրդ կու տամ, որ բոլոր Իսրայէլը Դանէ մինչեւ Բերսաբէէ, ծովեզերքը եղող աւազին պէս բազմութեամբ քու գլուխ ժողովուրդ. դուն ալ անձամբ անոնց մէջ պատերազմ երթաս։ 12—Ու այսպէս անոր վրայ երթանք, անիկա ուր տեղ որ գտնուի, ու անոր վրայ հանդիպինք, ինչպէս ցօղը գետնի վրայ կ'իյնէ, և անկէ ու անոր հետ եղող բոլոր մարդոցմէն մէ՛կը ողջ չմնայ։ 13—Ու եթէ քաղաքի մը մէջ գոցուի, այն քաղաքը բոլոր Իսրայէլ չուանններ տանի, ու զանիկա մինչեւ հեղեղատը քաշեն, այնպէս որ հոն պզտիկ քար մը անգամ չմնայ։ 14—Ու Աբիսողոմ ու բոլոր Իսրայէլի մարդիկը ըսին, Արաքացի Քուսիի խորհուրդը Աքիտոփէլի խորհուրդէն աղէկ է։ Քանզի Տէրը Աքիտոփէլի աղէկ խորհուրդը ցրուելու հրաման տուեր էր, որպէս զի Տէրը Աբիսողոմի վրայ չարիք հասցնէ։

15—Ու Քուսի Սադովկ ու Աբիաթար քահանաներուն ըսաւ, Աքիտոփէլ Աբիսողոմի ու Իսրայէլի ծերերուն այս ինչ խորհուրդը տուաւ, ես ալ այս ինչ խորհուրդը տուի։ 16—Հիմա չուտով մարդ ղրկեցէք ու Դաւիթի իմացուցէք ու ըսէք, Գիշերը անապատին դաշտերուն մէջ մի կենար, հապա չուտով անցիր. չըլլայ որ Թագաւորը ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը ջանկարծ զարնուին։ 17—Ու Յոնաթան ու Աքիմաաս Ռոգելի աղբիւրին քով կայներ էին, քանզի չէին կրնար քաղաքը մտնել ու երեւնալ. և աղախինը գնաց ու անոնց պատմեց, և անոնք գացին ու Դաւիթ Թագաւորին իմացուցին։ 18—Ու պատանի մը տեսաւ զանոնք ու Աբիսողոմի պատմեց. բայց անոնք երկուքը մէկտեղ չուտով գացին ու Բահուրիմ մարդու մը տունը մտան. և անիկա իր գոմիրին մէջ ջրհոր մը ունէր, ու անոնք հոն իջան։ 19—Ու կինը ծածկոց մը առաւ, ջրհորին բերանին վրայ փռեց, ու անոր վրայ ձաւար տարածեց, ու բանը չէ՛ս գիտցուեցաւ։ 20—Ու Աբիսողոմի ծառաները այն կնոջ տունը մտան ու ըսին, Աքիմաաս ու Յոնաթան ո՞ւր են։ Ու կինը անոնց ըսաւ,

*ՆԵՐ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ Կ'ԸՆԵՄ

Գլ. ԺԷ

Ու Աքիտոփէլ ըսաւ Աբիսողոմի, Հիմա տասներկու հազար մարդ ընտրեմ ու ելլեմ, և այս գիշեր Դաւիթի հետեւէն իյնամ։ 2—Ու անիկա քանի որ յոգնած ու ձեռքերը թուլցած է, անոր վրայ հասնիմ ու վախցնեմ զանիկա, որպէս զի անոր հետ եղող ժողովուրդը փախչի. ու միայն Թագաւորը զարնեմ 3—Այսպէս բոլոր ժողովուրդը քեզի պիտի դարձնեմ. քանզի քու փնտռած մարդդ չի՛-ւ-ր ո՛ն-ն-իւ-ղ՝ ամէնը ձեռքդ անցած կը սեպուի, ու բոլոր ժողովուրդը խաղաղութեան մէջ կ'ըլլայ։ 4—Ու այս խօսքը Աբիսողոմի աչքին ու Իսրայէլի բոլոր ծերերուն աչքին *հաճոյ երեւցաւ։

5—Ու Աբիսողոմ ըսաւ, Հիմա Արաքացի Քուսին ալ կանչեցէք, †որպէս զի անոր խորհուրդն ալ լսենք։ 6—Ու երբ Քուսի Աբիսողոմի քով եկաւ, Աբիսողոմ անոր հետ խօսեցաւ ու ըսաւ, Աքիտոփէլ այսպիսի բան մը ըսաւ. մեզ եօթ անոր խօսքը ի՛ընե՞նք՝ Թէ ոչ դուն խօսէ։ 7—Ու Քուսի Աբիսողոմի ըսաւ, Աքիտոփէլի տուած խորհուրդը այս անգամ աղէկ չէ։ 8—Ու Քուսի ըսաւ, Դուն գիտես որ քու հայրդ ու անոր մարդիկը զօրաւոր են, ու արտերնին այրած է՝ դաշտի մէջ ձագերը կորսընցուցած արջու պէս. և քու հայրդ պատերազմող մարդ մըն է, ու գիշերը ժողովուրդին հետ չկենար։ 9—Ես հիմա անիկա կա՛մ փոսի մը մէջ կա՛մ ուրիշ տեղ մը պահուած է. ու եթէ առաջին անգամ սասնցմէ իյնալու ըլլան, ամէն լսողը պիտի ըսէ Թէ Աբիսողոմի հետեւէն գացող ժողովուրդը կոտրուեր է։ 10—Այն ատեն առիւծի պէս սիրտ ունեցող զօրաւոր մարդը անգամ բոլորովին պիտի Թուլնայ, քանզի բոլոր Իսրայէլ գիտէ որ քու հայրդ զօրաւոր է, ու անոր հետ եղողները ուժի տէր մարդիկ են, 11—Այս պատճառաւ ես քեզի խորհուրդ կու տամ, որ բոլոր Իսրայէլը Դանէ մինչեւ Բերսաբէէ, ծովեզերքը եղող աւազին պէս բազմութեամբ քու գլուխ ժողովուրդ. դուն ալ անձամբ անոնց մէջ պատերազմ երթաս։ 12—Ու այսպէս անոր վրայ երթանք, անիկա ուր տեղ որ գտնուի, ու անոր վրայ հանդիպինք, ինչպէս ցօղը գետնի վրայ կ'իյնէ, և անկէ ու անոր հետ եղող բոլոր մարդոցմէն մէ՛կը ողջ չմնայ։ 13—Ու եթէ քաղաքի մը մէջ գոցուի, այն քաղաքը բոլոր Իսրայէլ չուաններ տանի, ու զանիկա մինչեւ հեղեղատը քաշեն, այնպէս որ հոն պզտիկ քար մը անգամ չմնայ։ 14—Ու Աբիսողոմ ու բոլոր Իսրայէլի մարդիկը ըսին, Արաքացի Քուսիի խորհուրդը Աքիտոփէլի խորհուրդէն աղէկ է։ Քանզի Տէրը Աքիտոփէլի աղէկ խորհուրդը ցրուելու հրաման տուեր էր, որպէս զի Տէրը Աբիսողոմի վրայ չարիք հասցնէ։

15—Ու Քուսի Սադովկ ու Աբիաթար քահանաներուն ըսաւ, Աքիտոփէլ Աբիսողոմի ու Իսրայէլի ծերերուն այս ինչ խորհուրդը տուաւ, ես ալ այս ինչ խորհուրդ տուի։ 16—Հիմա չուտով մարդ ղրկեցէք ու Դաւիթի իմացուցէք ու ըսէք, Գիշերը անապատին դաշտերուն մէջ մի կենար, հապա չուտով անցիր. չըլլայ որ Թագաւորը ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը ջանկարծ զարնուին։ 17—Ու Յոնաթան ու Աքիմաաս Ռոգելի աղբիւրին քով կայներ էին, քանզի չէին կրնար քաղաքը մտնել ու երեւնալ. և աղախինը գնաց ու անոնց պատմեց, և անոնք գացին ու Դաւիթ Թագաւորին իմացուցին։ 18—Ու պատանի մը տեսաւ զանոնք ու Աբիսողոմի պատմեց. բայց անոնք երկուքը մէկտեղ չուտով գացին ու Բահուրիմ մարդու մը տունը մտան. և անիկա իր գոմիրին մէջ ջրհոր մը ունէր, ու անոնք հոն իջան։ 19—Ու կինը ծածկոց մը առաւ, ջրհորին բերանին վրայ փռեց, ու անոր վրայ ձաւար տարածեց, ու բանը չէ՛ս գիտցուեցաւ։ 20—Ու Աբիսողոմի ծառաները այն կնոջ տունը մտան ու ըսին, Աքիմաաս ու Յոնաթան ո՞ւր են։ Ու կինը անոնց ըսաւ,

*ՆԵՐ. ուղիղ. ա. Թագ. ԺԲ. 20։
†ՆԵՐ. ու ինչ որ կայ անոր բերանը ՀԿՄ, ընենք Թէ ոչ՝ դուն ա՛ խօսէ

*ՆԵՐ. ԿԼՈՒԵՑՆ

*Ջուբին անդիի կողմը անցան։ Ու առնանք փնտռելին ու չգտան, ու երուսաղէմ դարձան։ 21—Ու անոնց երթալէն եւաքը լրտեղն եկան, ու գացին Դաւիթ Թագաւորին իմացուցին, և Դաւիթի ըսին, Ելիք ու չուտով չուրէն անցէք, քանզի Աքիտոփել ձեզի համար այսպիսի խորհուրդ մը բրաւ։ 22—Ու Դաւիթ ու անոր հետ եղող բոլոր ժողովուրդը ելան ու Յորդանանի անցան. ու մինչև առաւօտեան լոյսը Յորդանանէ չանցած մնաց չմնաց։

23—Ու Աքիտոփել երբ տեսաւ որ իր խորհուրդը չկատարուեցաւ, իր էշուն հասիրը դրաւ ու ելաւ իր քաղաքը ու իր տունը գնաց. և իր տանը համար պատուէր տուաւ, ու ինքզինքը խեղդեց ու մեռաւ, և իր հօրը գերեզմանը թաղուեցաւ։

24—Ու Դաւիթ Մանայիմ հասաւ, Աբիսողոմ ալ բոլոր Իսրայէլի մարդոցը հետ Յորդանանէ անցաւ։ 25—Ու Աբիսողոմ Յովաբի տեղ Ամեսային դրաւ զօրքին վրայ։ ու Ամեսայի Ցիթէր անունով Իսրայելացիի մը որդի էր. ան նիկա Յովաբի մօրը Շարուհեայի քոյրը, Նահաս ազիկը Աբիգեան, ամէր էր։ 26—Ու Իսրայէլ Աբիսողոմի հետ Գաղաադ երկիրը բանակեցաւ։

27—Ու երբ Դաւիթ Մանայիմ եկաւ, Ամմոնի որդիներուն Իսբբոսքէն Նաասի որդին Սոբի, ու Լադաբարէ Ամմիէլի որդին Մաքիր, և Հոլկելիմէ Գաղաադացի Բերզելի 28— Անկողիններ, կոնքեր, հողէ անօթներ, ցորեն, գարի, ալիւր ու բոշրած ցորէն ու բակլայ և ոսպ ու բոշրած սխտոր, 29—Ու մեղր և կագի ու ոչխարներ և կովու պանիր՝ Դաւիթի ու անոր հետ եղող ժողովուրդին բերին որպէս զի ուտեն. քանզի ըսին, ժողովուրդը անապատին մէջ անօթի, յոգնած ու ծարաւած է։

Գլ. ԺԸ

Ու Դաւիթ իրեն հետ եղող զօրքը համրեց, ու անոնց վրայ հազարապետներ ու հարիւրապետներ դրաւ։ 2—Ու Դաւիթ զօրքին երրորդ մասը Յովաբի ձեռքը, ու երրորդ մասը Յովաբի եղբօրը Շարուհեան Աբեսսայի ձեռքը, ու երրորդ մասը Գեթացի Իթթէի *ձեռքը յանձնեց՝. և թագաւորը ժողովուրդին ըսաւ, Անպատճառ ես ալ ձեզի հետ պիտի ելլեմ։ 3—Բայց ժողովուրդը ըսաւ, Մի ելլեր, քանզի եթէ մենք փախչելու ըլլանք, անոնք մեզի համար հոգ չեն ըներ. ու թէև մեր կէսը մեռնի, անոնք զանիկա բանի մը տեղ չեն դներ. բայց դուն մեր տասը հազարին չափ ես. ու հիմա ազիկը այն է որ դուն մեզի քաղաքէն օգնութիւն ընես։ 4—Ու Թագաւորը անոնց ըսաւ, Ձեր աչքերուն հաճոյ երեւցածը պիտի ընեմ։ ու թագաւորը դրանը քով կայնեցաւ, և բոլոր զօրքը հարիւրներով ու հազարներով կ'ելլէին։ 5—Ու թագաւորը Յովաբի ու Աբեսսայի ու Իթթէի պատուիրելով բաւ, Ինծի համար Աբիսողոմ պատանիին խնայեցէք։ Ու երբ թագաւորը Աբիսողոմի համար բոլոր զօրավարներուն պատուիրեց, բոլոր զօրքը լսեցին։

6—Ու զօրքը դաշտը ելաւ Իսրայէլի դէմ դնելու համար, ու պատերազմը Եփրեմի անտառին մէջ եղաւ։ 7—Ու հոն Իսրայէլի զօրքերը Դաւիթի ծառաներուն առջև յաղթուեցան. ու հոն այն օրը մեծ կոտորած եղաւ՝ ըսան հազար մարդ էին։— 8—Ու հոն պատերազմը բոլոր երկրին վրայ տարածուեցաւ, ու այն օրը անտառը աւելի ժողովուրդ կորզեց, քան սուրին կորզածէն աւելի ժողովուրդ կորզեց։ 9—Ու Աբիսողոմ Դաւիթի ծառաներուն հանդիպեցաւ. ու Աբիսողոմ կորիի վրայ հեծեր էր, և կորին մեծ բեւեհներէն մէ թաւ ոստերուն տակ մտաւ, ու անոր գլուխը բեւեհներէն բռնուեցաւ ու երկինքի ու երկրի մէջ կախուած մնաց. և կորին տակէն անցաւ գնաց։ 10—Ու մարդ մը տեսնելով՝ Յովաբի պատմեց ու բաւ, Ահա Աբիսողոմը բեւեհներէ մը կախուած տեսայ։ 11—Ու Յովաբ իրեն լուր բերող մարդուն բաւ, Որովհետև տեսար, ինչո՞ւ համար զանիկա հոն գետին չզարկիր. այն ատեն քեզի տասը հատ արծաթ ու գօտի մը կու տայի։ 12—Ու այն մարդը Յովաբի բաւ, Եթէ իմ ափս հազար հատ արծաթ կշռելով ալ առնեմ դրուէր, թագաւորին որդւոյն ձեռքս չէի երկնցներ. քանզի մենք լսեցինք՝ երբ թագաւորը քեզի ու Աբեսսայի ու Իթթէի պատուիրեց՝ բաւելով, Ամէն մէկդ Աբիսողոմ պատանիին հոգ տարէք։ 13—Եթէ ոչ †պատրաստ տեղը իմ կեանքս վտանգի մէջ պիտի դնէի՝. քանզի բնաւ բան մը թագաւորէն գաղտուկ չմնար. ու դուն ալ ինձի դէմ պիտի կենայիր։ 14—Ու Յովաբ բաւ, Ես քու առջևդ այսպես ժամանակ չեմ անցներ. ու իր ձեռքը երեք գեղարդ առաւ, ու անոնցմով Աբիսողոմի սիրտը խոցեց, երբ անիկա տակաւին բեւեհներին վրայ ողջ էր։ 15—Ու Յովաբի զինակիրները, տասը պատանիներ, չորս կողմը պաշարելով՝ Աբիսողոմը զարկին ու զանիկա մեռցուցին։ 16—Ու Յովաբ փող հնչեցուց, ու զօրքը իսրայէլը հալածելէն ետ դարձաւ, քանզի Յովաբ զօրքը զսպեց։ 17—Ու Աբիսողոմը առին և զանիկա անտառին մէջ մեծ փոսի մը մէջ նետեցին, ու անոր վրայ խիտ մեծ քարակոյտ մը դիզեցին. և բոլոր Իսրայէլ փախաւ, ամէն մէկը իր վրանը։

18—Ու Աբիսողոմ իր կենդանութեան ատեն արձան մը առեր էր, ու զանիկա իրեն համար Թագաւորի հովիտին մէջ կանգներ էր, ըսելով Թէ Որդի չունիմ որ իմ անունս յիշատակը պահէ. ու այն արձանը իր անունովը կոչեր էր, և անիկա մինչև այսօր Աբիսողոմի Էարձանը կ'ըսուի։

19—Ու Սադովկի որդին Աքիմաաս բաւ, Հիմա վազեմ ու թագաւորին աւետիս տանիմ, որ Տէրը անոր իրաւունք բրաւ, ու ղՆէյէ՝ իր թշնամիներուն ձեռքէն ազատեց։ 20—Ու Յովաբ անոր բաւ, Դուն այսօր աւետիս պատէ՝ ու մարդ չես. դուն ուրիշ օր մը աւետիս տար, բայց այսօր աւետիս մի տաներ, քանզի թագաւորին որդին մեռաւ։ 21—Ու Յովաբ Քուսիի բաւ, Գնա տեսածդ թագաւորին պատմէ. ու Քուսի Յովաբի խոնարհութիւն բրաւ, և վազելով գնաց։ 22—Ու Սադովկի որդին Աքիմաաս նորէն Յովաբի բաւ, Ինչևիցէ հրաման առ որ ես ալ Քուսիի ետևէն վազեմ. Ու Յովաբ բաւ, Ինչո՞ւ վազես, որդիս, որովհետև աւետիս մը չունիս տանելու։ 23—Ու †ինչ-ե՞ր-ոս, Ինչևիցէ վազեմ. ու անոր բաւ, Վազէ։ Ես Աքիմաաս դաշտին ճամբովը վազեց, ու Քուսիէ անցաւ։ 24—Ու Դաւիթ երկու գռներուն մէջ կը նստէր. ու դէսը դրանը տանիքին վրայ գէպ ի պարիսպը գնաց, և աչքերը վերցնելով տեսաւ որ ահա մարդ մը մինակ կը վազէր։ 25—Ան ատեն դէսը բարձր ձայնով Թագաւորին խնդացուց. ու Թագաւորը բաւ, Եթէ մինակ է, անոր բերանը աւետիս կայ։ Ու անիկա կու գար ու կը մօտենար։ 26—Ու դէսը ուրիշ վազող մարդ մը տեսաւ. ու դէսը գռնապանին բարձր ձայնով բաւ, Ահա ուրիշ մարդ մըն ալ մինակ կը վազէ։ Ու Թագաւորը բաւ, Ան ալ աւետաւոր է։ 27—Ու գէսը բաւ, Առաջինին ընթացքը Սադովկի որդւոյն Աքիմաասի ընթացքին պէս կ'երեւնայ ինծի։ Ու Թագաւորը բաւ, Անիկա բարի մարդ է, ու բարի աւետիսով կու գայ։ 28—Ու Աքիմաաս պատուով բաւ Թագաւորին, Ողջոյն. ու երեսի վրայ գետինը երկրպագ խոնարհութիւն բրաւ Թագաւորին, ու բաւ, Օրհնեալ ըլլայ քու Տէր Աստուածդ, որ իմ տէրոջս, Թագաւորին, դէմ ձեռք վերցնողները †ու չխոցեց մատնեց։ 29—Ու Թագաւորը բաւ, Աբիսողոմ պատանին ո՞ղջ է։ Ու Աքիմաաս բաւ, Երբ Յովաբ՝ Թագաւորին ծառան ու ինձ, քու ծառադ, զրկեց, մեծ խուճապ մը տեսայ, բայց ինչ ըլլալը չիմացայ։ 30—Ու Թագաւորը բաւ, Դարձիր ու հոս կայնէ։ Ու անիկա դարձաւ ու կայնեցաւ։ 31—Ու ահա Քուսի եկաւ, ու Քուսի բաւ, Իմ տէրոջս, Թագաւորին, աւետիս ՚ու՞ր, որ բոլոր քու վրադ ելլողներուն ձեռքէն Տէրը այսօր †իր ըզ-ու՞ր-էց, ու-

*Եբէր. Ջուբի առուին
†Կամ, Իսմայելացիի. տես. ամՊ.բ.17

*Եբէր. ձեռքովը ղրկեց

*Կամ, Ինծի համար
†Եբէր. Իմ կեանքիս դէմ ունայնութիւն բրած պիտի ըլլայի
‡Եբէր. ձեռքը

քեզի իրաւունք ըրաւ։ 32—Ե Թագաւորը պատասխանեց ու Սիմէիին ըսաւ, Ահա դուն գիտես ամէն չարիքը զոր իմ սրտիս մէջ գործեցիր՝ զոր Դաւիթ իմ հօրս ըրիր. ուստի Տէրը քու չարութիւնդ քու գլխուդ պիտի դարձնէ։ 33—Բայց Սողոմոն օրհնեալ պիտի ըլլայ, ու Դաւիթին գահը յաւիտեան հաստատուն պիտի մնայ Տէրոջմէ առաջ։ 34—Ուստի Յովնադաբայ որդի Բնայիա ելաւ ու զարկաւ զանիկա որ մեռնի, ու սպաննուեցաւ անապատին մէջ։ 35—Եւ թագաւորը Յովիադայ որդի Բնայիան անոր տեղ զօրավար կարգեց, ու Սադովկ քահանան թագաւորը Աբիաթարի տեղ կարգեց։ 36—Ու թագաւորը մարդ դրկեց ու Սեմէի կանչել տուաւ, ու անոր ըսաւ, Շինէ քեզի տուն Երուսաղէմ ու հոն բնակէ, ու հոնկէ դուրս մի՛ երթար հոս ու հոն։ 37—Որովհետեւ որ օրը որ դուրս երթաս ու Կեդրոն գետը անցնիս, գիտցիր որ անպատճառ պիտի մեռնիս. քու արիւնդ քու գլխուդ պիտի ըլլայ։ 38—Սեմէի թագաւորին ըսաւ, Բարի է խօսքը. ինչպէս որ տէրս թագաւորը ըսաւ, այնպէս ծառայդ պիտի ընէ։ Սեմէի շատ օրեր Երուսաղէմ բնակեցաւ։ 39—Երեք տարի վերջը պատահեցաւ որ Սեմէիի երկու ծառաները Գէթացի Մաքայի որդի Աքիսի քով փախան։ Ու Սեմէիի պատմեցին ըսելով, Ահա քու ծառաներդ Գէթի մէջ են։ 40—Սեմէի ելաւ իր էշը հարկաւորեց ու իր ծառաներուն հետեւելու համար Գէթ գնաց Աքիսի քով։ Սեմէի գնաց ու իր ծառաները Գէթէն բերաւ։ 41—Ու Սողոմոնի պատմեցին ըսելով, Սեմէի Գէթէն դարձաւ։ 42—Ուստի թագաւորը դրկեց ու Սեմէին կանչել տուաւ, ու անոր ըսաւ, Ես քեզ երդմամբ չտարայ ու քեզի չհաստատեցի՞ ըսելով, Գիտցիր որ որ օրը որ դուրս երթաս ու հոս ու հոն երթաս, անպատճառ պիտի մեռնիս. ու դուն ինծի ըսիր, Բարի է խօսքը զոր լսեցի։ 43—Ուրեմն ինչո՞ւ չպահեցիր Տէրոջ երդումը ու քեզի պատուիրած պատուէրը։ 44—Թագաւորը նաեւ Սեմէիին ըսաւ, Դուն գիտես ամէն չարիքը զոր սրտիդ մէջ գիտես որ իմ հայրս Դաւիթին ըրիր. Տէրը քու չարութիւնդ քու գլխուդ դարձուցած է։ 45—Բայց Սողոմոն օրհնեալ պիտի ըլլայ, ու Դաւիթին գահը Տէրոջմէ առաջ յաւիտեան հաստատուն պիտի մնայ։ 46—Ուստի Յովնադաբայ որդի Բնայիա ելաւ ու զարկաւ զանիկա որ մեռնի, ու սպաննուեցաւ։ Ու թագաւորութիւնը Սողոմոնի ձեռքը հաստատուեցաւ։

Գլ. ԺԳ

3 Ու Սողոմոն պատմեցաւ Եգիպտոսի թագաւորին Փարաւոնին հետ, ու անոր աղջիկը առաւ ու իր քաղաքը Դաւթի քաղաքը բերաւ, մինչեւ որ իր տունը ու Տէրոջ տունը ու Երուսաղէմի շուրջի պարիսպը շինեց։ 2—Բայց ժողովուրդը բարձր տեղերու վրայ կ՚զոհէր, որովհետեւ մինչեւ այն օրերը Տէրոջ անունին համար շինուած տուն չկար։ 3—Ու Սողոմոն Տէրոջ սիրեց՝ իր հայր Դաւիթին հրամանները պահելով, միայն բարձր տեղերու վրայ կ՚զոհէր ու կ՚ընծայ կ՚ընէր։ 4—Ու թագաւորը Գաբաւոն գնաց զոհ մատուցանելու համար, որովհետեւ հոն մեծ բարձր տեղ մը կար։ Սողոմոն հազար ողջակէզ մատուցանեց այն զոհասեղանին վրայ։ 5—Գաբաւոնի մէջ Տէրը գիշերը երազի մէջ Սողոմոնին երեւցաւ, ու Աստուած ըսաւ, Խնդրէ՛ ինչ որ կուզես որ քեզի տամ։ 6—Սողոմոն ըսաւ, Դուն քու ծառայիդ հայր Դաւիթին մեծ ողորմութիւն ըրիր, որովհետեւ ինք քու առջեւդ ճշմարտութեամբ ու արդարութեամբ ու սրտի ուղղութեամբ քեզի հետ հաստատ գացած է. դուն անոր համար այս մեծ ողորմութիւնը պահեցիր, որ անոր որդի մը տուիր որ անոր աթոռին վրայ նստի, ինչպէս այսօր կ՚ըլլայ։ 7—Հիմա, Տէր Աստուած իմ, դուն քու ծառայդ թագաւոր ըրիր իմ հայրս Դաւիթին տեղ, բայց ես մանուկ մը միայն եմ. չեմ գիտեր ելլել ու մտնել։ 8—Ու քու ծառայդ քու ընտրեալ ժողովուրդիդ մէջ է, որ չի կրնար հաշուել ու համրել՝ բազմութեան համար։ 9—Ուստի քու ծառայիդ հասկցող սիրտ տուր, որ քու ժողովուրդդ դատէ, որ կարենայ լաւ ու չար զատել. որովհետեւ ո՞վ կրնայ դատել այս քու այնքան մեծ ժողովուրդդ։ 10—Ու Տէրոջ աչքին դուր եկաւ որ Սողոմոն այս բանը խնդրեց։ 11—Ու Աստուած անոր ըսաւ, Որովհետեւ այս բանը խնդրեցիր, ու երկար կեանք չխնդրեցիր, ու հարստութիւն չխնդրեցիր, ու քու թշնամիներուդ հոգին չխնդրեցիր, հապա դատաստան հասկնալու համար քեզի լսողութիւն խնդրեցիր, 12—ահա ըրի քու խօսքիդ համեմատ. ահա քեզի իմաստուն ու հասկցող սիրտ տուի, որ քեզմէ առաջ քու նմանդ եղած չէ ու քեզմէ ետքն ալ քու նմանդ պիտի չելլայ։ 13—Ու նաեւ զոր չխնդրեցիր՝ հարստութիւն ու փառք ալ տուի քեզի, որ քու օրերդ թագաւորներէն մէկուն նման չըլլայ։ 14—Ու եթէ իմ պատուիրանքներուս մէջ քալես, ինչպէս քու հայրդ Դաւիթ քալեց, երկար օրեր պիտի տամ քու կեանքիդ։ 15—Սողոմոն արթնցաւ, ու ահա երազ էր։ Ու Երուսաղէմ եկաւ ու Տէրոջ ուխտին տապանակին առջեւ կայնեցաւ, ողջակէզներ մատուցանեց ու խաղաղութեան զոհեր մատուցանեց, ու իր բոլոր ծառաներուն հարսանիք մը ըրաւ։

16—Այն ատեն երկու պոռնիկ կիներ թագաւորին մօտ եկան ու անոր առջեւ կայնեցան։ 17—Ու առաջինը ըսաւ, Ո՛վ տէր իմ, ես ու այս կինը մէկ տունի մէջ կը բնակէինք, ու տան մէջ եղած ատեն ես ծնայ։ 18—Ու երրորդ օրը ես ծնայ, ու այս կինն ալ ծնաւ. մենք միասին էինք, ու մեզի հետ տան մէջ ուրիշ մարդ չկար, միայն մենք երկուքս տան մէջ էինք։ 19—Ու այս կնոջ որդին գիշեր ատեն մեռաւ, որովհետեւ անոր վրայ պառկեցաւ։ 20—Ու կէս գիշերին ելաւ ու իմ որդիս իմ կողքէս առաւ, մինչ աղախինդ քնացած էր, ու զայն իր գիրկը դրաւ, ու իր մեռած որդին իմ գիրկս դրաւ։ 21—Ու առտուն կանուխ որ ես իմ որդիս կերակրելու ելայ, ահա մեռած էր. բայց առտուն լաւ նայեցայ, ու ահա իմ ծնած որդիս չէր։ 22—Ուրիշ կինը ըսաւ, Ոչ, հապա ողջ որդիս իմ է, ու մեռածը քուկդ է։ Առաջինն ալ ըսաւ, Ոչ, հապա մեռածը քուկդ է, ու ողջ որդիս իմ է։ Այսպէս առջեւ թագաւորին խօսեցան։ 23—Ու թագաւորը ըսաւ, Այս կինը կ՚ըսէ, Ողջ որդիս իմ է, ու մեռածը քուկդ է։ Ու միւսը կ՚ըսէ, Ոչ, հապա մեռածը քուկդ է, ու ողջ որդիս իմ է։ 24—Թագաւորը ըսաւ, Սուր մը ինծի բերէք։ Ու սուրը թագաւորին առջեւ բերին։ 25—Ու թագաւորը ըսաւ, Կենդանի որդին երկուքի կտրեցէք, ու կէսը մէկուն ու կէսը միւսին տուէք։ 26—Ուստի որուն որդին կենդանի էր, անոր սիրտը իր որդիին համար շարժեցաւ, ու թագաւորին ըսաւ, Ո՛վ տէր իմ, կենդանի որդին անոր տուէք, ու անպատճառ մի՛ սպաննէք զայն։ Բայց միւսը ըսաւ, Ո՛չ ինծի ալ ո՛չ քեզի, կտրեցէք։ 27—Թագաւորը պատասխանեց ու ըսաւ, Կենդանի որդին առջի կնոջ տուէք, ու անպատճառ մի՛ սպաննէք զայն. անոր մայրն է։ 28—Ու բոլոր Իսրայէլ թագաւորին դատաստանին համբաւը լսեցին, ու թագաւորէն վախցան. որովհետեւ տեսան որ Աստուծոյ իմաստութիւնը իր մէջն է՝ դատաստան ընելու համար։

4 Ու Սողոմոն թագաւոր էր բոլոր Իսրայէլի վրայ։ 2—Ու անոր պաշտօնեաները այս էին. Սադովկ քահանայապետ էր։ 3—Սիսայի որդիները Եղիորեփ ու Աքիա դպիրներ էին. Աքիղուդի որդի Յովսափատ յիշատակարան էր։ 4—Յովիադայի որդի Բնայիա զօրավար էր. Սադովկ ու Աբիաթար քահանայապետներ էին։ 5—Նաթանի որդի Ազարիա նահանգապետներուն վրայ էր. Նաթանի որդի Զաբուդ քահանայ ու թագաւորին բարեկամ էր։ 6—Ու Աքիսամաքայի որդի Ահիսար պալատին վրայ էր. Աբդայի որդի Ադոնիրամ հարկապահանջներուն վրայ էր։ 7—Ու Սողոմոն տասներկու նահանգապետներ ունէր Իսրայէլի բոլոր երկրին վրայ, որոնք թագաւորին ու անոր տանը համար ուտելիք կը հայթայթէին. տարին մէկ ամսուան համար հոգ կը տանէին։ 8—Ու անոնց անունները այս են. Ուրի որդի Բենհուր Եփրեմի լերինքին մէջ։ 9—Դեկերի որդի Բենդեկեր Մակազի ու Սաղաբինի ու Բեթսամեսի ու Եղոնբեթանանի մէջ։ 10—Խեսեդի որդի Բենհեսեդ Արուբոթի մէջ. Սոքով ու Եփերի բոլոր երկիրը անոր էր։ 11—Աբինադաբայի որդի Բենաբինադաբ Նափեթդորի բոլոր գաւառին մէջ. Սողոմոնի դուստրը Թափաթ անոր կին էր։ 12—Ախիղուդի որդի Բաանա Թաանաքի ու Մեգիդոյի ու Բեթսանի բոլոր երկրին մէջ, որ Սարթանայի քովն է Յեզրաելի տակ, Բեթսանէն մինչեւ Աբելմեհողա ու Յոկմեամի անդին։ 13—Գեբերի որդի Բենգեբեր Ռամովթգաղաադի մէջ. Մանասէի որդի Յայիրի տաղաւանները անոր էին, որ Գաղաադի մէջ է. Արգոբի գաւառը անոր էր, որ Բասանի մէջ է, վաթսուն մեծ քաղաքներ՝ պարիսպներով ու պղնձեայ նիգերով։ 14—Ադդոյի որդի Ախինադաբ Մանայիմի մէջ։ 15—Ահիմաաց Նեփթաղիի մէջ. ինք ալ Սողոմոնի աղջիկը Բասեմաթ առած էր։ 16—Խուսայի որդի Բաանա Ասերի ու Բեաղովթի մէջ։ 17—Փարուայի որդի Յեսափատ Իսաքարի մէջ։ 18—Եղայի որդի Սեմեի Բենիամինի մէջ։ 19—Ուրի որդի Գեբեր Գաղաադի երկրին մէջ, Սեհոնի թագաւոր Ամովրհացիին ու Օգ Բասանի թագաւորին երկրին մէջ. ու անոր մէկ միայն նահանգապետ կար որ երկրին վրայ էր։ 20—Յուդա ու Իսրայէլ ծովի աւազի պէս շատ էին, կերան ու խմեցին ու ուրախացան։ 21—Ու Սողոմոն բոլոր թագաւորութիւնները Եփրատ գետէն մինչեւ Փղշտացւոց երկիրը ու Եգիպտոսի սահմանը կը տիրացնէր. անոնք ընծաներ կը մատուցանէին ու Սողոմոնի ծառայեցին իր կեանքին բոլոր օրերը։ 22—Ու Սողոմոնի օրական կերակուրը երեսուն գրուանք նուրբ ալիւր ու վաթսուն գրուանք ալիւր 23—տասը նախրի գոմէշ ու քսան արօտի անասուն ու հարիւր ոչխար, զատ եղջերու ու վայրի այծեամ ու գազան ու թռչուն։ 24—Որովհետեւ ինք Թափսահայ մինչեւ Ազա բոլոր երկրին վրայ կը տիրէր, այն կողմի բոլոր թագաւորներուն վրայ. ու ամէն կողմէ խաղաղութիւն ունէր։ 25—Ու Սողոմոնի օրերը Յուդա ու Իսրայէլ ամէն մարդ իր որթատունկին ու իր թզենիին տակ, Դանէն մինչեւ Բերսաբէ, Սողոմոնի բոլոր օրերը ապահով կը բնակէին։ 26—Ու Սողոմոն քառասուն հազար ձիու ախոռներ ունէր իր կառքերուն համար, ու տասներկու հազար ձիաւոր։ 27—Ու այն նահանգապետները Սողոմոն թագաւորին ու անոր սեղանին մօտեցող բոլոր մարդոց համար ուտելիք կը հայթայթէին, իւրաքանչիւրը իր ամսուան մէջ. ոչինչ պակսեցուցին։ 28—Գարի ու յարդ ալ իրենց հրամանին համեմատ կը բերէին իրենց պաշտօնի տեղը։

29—Ու Աստուած Սողոմոնի իմաստութիւն ու շատ խելք տուաւ, ու ծովեզերքի աւազի պէս ընդարձակ միտք։ 30—Ու Սողոմոնի իմաստութիւնը Արեւելեայց բոլոր որդիներուն ու Եգիպտոսի բոլոր իմաստութենէն աւելի էր։ 31—Ու ամէն մարդոց աւելի իմաստուն էր, Եզրահացի Եթանէն ու Մաքոլի որդիներ Հեման ու Քաղքոլ ու Դարդա էին. ու անոր անունը բոլոր ազգերուն մէջ հռչակուեցաւ։ 32—Ու երեք հազար առակ խօսեցաւ, ու անոր երգերը հազար հինգ էին։ 33—Ու Լիբանանի մէջ եղած մայրիէն մինչեւ պատէն բուսած զոպայ խոտը խօսեցաւ, ու անասուններու ու թռչուններու ու սողունի ալ խօսեցաւ, ու ձուկերու ալ խօսեցաւ։ 34—Ու բոլոր երկրներու թագաւորներէն եկան Սողոմոնի իմաստութիւնը լսելու, որոնց կողմէ որ բոլոր երկրներու թագաւորներուն լուր եղած էր անոր իմաստութեան համար։

5 Ու Տիւրոսի թագաւոր Քիրամ իր ծառաները Սողոմոնի դրկեց, երբ լսեց որ զինք իր հօրը տեղ թագաւոր օծած են, որովհետեւ Քիրամ միշտ Դաւթի բարեկամ էր։ 2—Ու Սողոմոն Քիրամի դրկեց ըսելով, 3—Դուն գիտես իմ հայրս Դաւիթ չկրցաւ շինել տունը իր Աստուծոյ անունին համար, պատերազմներուն պատճառաւ որ զինք շրջապատեցին, մինչեւ որ Տէրը զանոնք իր ոտքերուն տակ դրաւ։ 4—Հիմա իմ Տէր Աստուածս ինծի ամէն կողմէ հանգստութիւն տուաւ, չկայ հակառակորդ ու չարաբաստիկ դէպք մը։ 5—Ահա կ՚ուզեմ շինել տունը իմ Տէր Աստուածիս անունին համար, ինչպէս Տէրը իմ հօրս Դաւթի ըսաւ, ըսելով, Քու որդիդ որ քու տեղդ իմ գահուս վրայ նստեցնեմ, ինք պիտի շինէ տունը իմ անունիս համար։ 6—Հիմա դուն հրամայէ որ Լիբանանէն մայրիներ կտրեն ինծի համար, ու իմ ծառաներս քու ծառաներուդ հետ պիտի ըլլան, ու քու ծառաներուդ վարձքը ես քեզի պիտի տամ ինչ որ ըսես. որովհետեւ դուն գիտես որ մեր մէջ չկայ մարդ որ սիդոնացիներու պէս ծառ կտրելու գիտնայ։ 7—Ու եղաւ որ երբ Քիրամ Սողոմոնի խօսքերը լսեց, շատ ուրախացաւ ու ըսաւ, Այսօր Տէրը օրհնեալ ըլլայ, որ այս մեծ ժողովուրդին վրայ իմաստուն որդի մը տուաւ։ 8—Ու Քիրամ Սողոմոնի դրկեց ըսելով, Ինչ որ ինծի դրկեցիր՝ լսեցի. ես քու ամէն ուզածդ կտրելու եմ մայրիի ու նոճիի փայտերուդ համար։ 9—Իմ ծառաներս Լիբանանէն ծովեզերքը պիտի իջեցնեն, ու ես զանոնք պիտի կապեմ ծովուն վրայ՝ քու ուզած տեղդ, ու հոն պիտի քակեմ, ու դուն պիտի առնես. ու դուն ինծի համար ուտելիք հայթայթելով պիտի կատարես իմ ուզածս։ 10—Այսպէս Քիրամ Սողոմոնի տուաւ մայրիի ու նոճիի փայտերուն համար ամէն ինչ որ ուզեց։ 11—Ու Սողոմոն Քիրամի քսան հազար գրուանք ցորեն տուաւ ուտելիք ընելու համար իր տան, ու քսան գրուանք մաքուր ձէթ. Սողոմոն ամէն տարի Քիրամի կուտար։ 12—Ու Տէրը Սողոմոնի իմաստութիւն տուաւ, ինչպէս որ անոր խոստացած էր. ու Քիրամի ու Սողոմոնի միջեւ խաղաղութիւն կար, ու երկուքը միասին ուխտ կապեցին։ 13—Ու Սողոմոն թագաւոր բոլոր Իսրայէլի վրայ զօրք հաւաքեց, ու զօրքը երեսուն հազար մարդ էր։ 14—Ու զանոնք Լիբանան տասը հազար մարդ ամսական հերթով կը դրկէր. մէկ ամիս Լիբանանի մէջ կ՚ըլլային, երկու ամիս տունէ կը մնային. Ադոնիրամ զօրքերուն վրայ էր։ 15—Ու Սողոմոն եօթանասուն հազար բեռնակիր ու լերան մէջ ութսուն հազար կտրիչ ունէր, 16—զատ Սողոմոնի գործակատարներուն վրայ կարգուած երեք հազար երեք հարիւր հոգի որ գործին վրայ կը տիրէին։ 17—Ու թագաւորը հրամայեց ու մեծ քարեր, թանկագին քարեր կտրեցին, որ տան հիմերը տաշած քարերով դնեն։ 18—Ու Սողոմոնի շինողները ու Քիրամի շինողները ու Գեբալացիները կտրեցին ու տաշեցին ու տան շինելու համար փայտ ու քարեր պատրաստեցին։

6 Ու եղաւ չորս հարիւր ութսուներորդ տարին Իսրայէլի որդիները Եգիպտոսէն ելլելէն ետքը, Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարին Զիւ ամսուն, որ երկրորդ ամիսն է, որ Սողոմոն Տէրոջ տունը շինել սկսաւ։ 2—Ու Սողոմոն թագաւորը Տէրոջ շինած տունը վաթսուն կանգուն երկայն, քսան կանգուն լայն ու երեսուն կանգուն բարձր էր։ 3—Ու տաճարին առջեւի սրահը տան լայնութեան համեմատ քսան կանգուն էր, ու տունէն տասը կանգուն դուրս կ՚ելլէր։ 4—Ու տան համար ցանցաւոր պատուհաններ շինեց։ 5—Ու տաճարին պատին շուրջը, տաճարին ու սրբարանին պատերուն շուրջը, կողմնակալ շէնքեր շինեց։ 6—Ներքինի կողմնակալը հինգ կանգուն լայն էր, ու միջինը վեց կանգուն լայն էր, ու երրորդը եօթը կանգուն լայն էր. որովհետեւ տան արտաքին կողմը ներսի կողմէն պատեր ունէր շուրջանակի, որ կողմնակալ շէնքերուն փայտերը չդպչին։ 7—Ու տունը շինելու ատեն տաշած քարով շինուեցաւ, ու շինելու ատեն տան մէջ մուրճ ու կացին ու երկաթէ ոեւէ գործիք չլսուեցաւ։ 8—Կողմնակալ շէնքին դուռը տան աջ կողմն էր, ու պտուտիկներով վեր կ՚ելլէին միջին շէնքը, ու միջինէն երրորդը։ 9—Ուստի տունը շինեց ու վերջացուց, ու տունը մայրիի տախտակներով ու գերաններով ծածկեց։ 10—Ու տան շուրջը հինգ կանգուն բարձրութեամբ պատեր շինեց, ու մայրիի գերաններով տունին միացուց։ 11—Ու Տէրոջ խօսքը Սողոմոնի եղաւ ըսելով, 12—Այս տունը որ դուն կը շինես, եթէ իմ հրամաններուս մէջ գնաս ու իմ իրաւունքներս գործադրես ու իմ բոլոր պատուիրանքներուս պահելով անոնց մէջ գնաս, քու հօրդ Դաւթի ըսած խօսքս քեզի պիտի հաստատեմ։ 13—Ու Իսրայէլի որդիներուն մէջ պիտի բնակիմ, ու իմ ժողովուրդս Իսրայէլ չպիտի լքեմ։ 14—Ուստի Սողոմոն շինեց տունը ու վերջացուց։ 15—Ու տան պատերը ներսի կողմէն մայրիի տախտակներով շինեց, տան յատակէն մինչեւ վերի պատերը ներսի կողմէն փայտով ծածկեց, ու յատակը նոճիի տախտակներով ծածկեց։ 16—Ու տան ետեւի կողմը քսան կանգուն երկայնութեամբ տախտակներով շինեց յատակէն մինչեւ վերի պատերը, ու ներսի կողմը՝ սրբարանի համար, որ Սրբոց Սրբութիւն է, շինեց։ 17—Ու տունը, որ ներսի կողմը՝ սրբարանին առջեւ էր, քառասուն կանգուն էր։ 18—Ու տան ներսի կողմը մայրիի վրայ կոկոններ ու բացուած վարդեր փորագրուած էին. ամէնը մայրի էր, քար չէր երեւնար։ 19—Ու տան մէջ սրբարանը պատրաստեց, որ հոն Տէրոջ ուխտին տապանակը դնէ։ 20—Ու սրբարանին ներսի կողմը քսան կանգուն երկայն, քսան կանգուն լայն ու քսան կանգուն բարձր էր, ու զայն մաքուր ոսկիով պատեց, ու մայրիէ զոհասեղանը պատեց։ 21—Ու Սողոմոն տունը ներսի կողմէն մաքուր ոսկիով պատեց, ու ներսի սրբարանին առջեւ ոսկի շղթաներ քաշեց, ու զայն ոսկիով պատեց։ 22—Ու ամբողջ տունը բոլորովին վերջացուց, տան բոլոր կողմնակալ շէնքերն ալ։ Ու սրբարանին համար շինած զոհասեղանը ամբողջ ոսկիով պատեց։ 23—Ու սրբարանին մէջ տասը կանգուն բարձրութեամբ երկու քերովբէ շինեց, ձիթենիի փայտէ։ 24—Մէկ թեւը հինգ կանգուն էր, ու միւս թեւը հինգ կանգուն էր. տասը կանգուն էր մէկ թեւէն մինչեւ միւս թեւը։ 25—Ու միւս քերովբէն ալ տասը կանգուն էր. երկու քերովբէներն ալ նոյն չափ ու նոյն ձեւ էին։ 26—Մէկ քերովբէին բարձրութիւնը տասը կանգուն էր, ու միւս քերովբէն ալ նոյնպէս։ 27—Ու քերովբէները տան ներսի մասը դրաւ. ու քերովբէներուն թեւերը տարածուած էին, այնպէս որ մէկ քերովբէին թեւը մէկ պատին դիպչէր, ու միւս քերովբէին թեւը միւս պատին դիպչէր, ու թեւերը տան մէջտեղ իրարու դիպչէին, թեւ թեւի։ 28—Ու քերովբէները ոսկիով պատեց։ 29—Ու տան բոլոր պատերը ներսի ու դուրսի կողմէ քերովբէներ, արմաւենիներ ու բացուած վարդեր փորագրուած էին։ 30—Ու տան յատակը ներսի ու դուրսի կողմէ ոսկիով պատեց։ 31—Ու սրբարանին դրան համար ձիթենիի փայտէ դռներ շինեց, որ սեմն ու հինգ կողմ ունէին։ 32—Ձիթենիի փայտէ երկու դռներ ալ շինեց, ու քերովբէներ, արմաւենիներ ու բացուած վարդեր փորագրեց, ու զանոնք ոսկիով պատեց, ոսկին քերովբէներուն ու արմաւենիներուն վրայ տարածեց։ 33—Նոյնպէս ալ տաճարին դրան համար ձիթենիի փայտէ չորս կողմ սեմ շինեց։ 34—Ու եղեւնիի փայտէ երկու դռներ ալ, որ երկու կողմ ունէին, մէկ դռնի երկու կողմերը դարձուածք էին, ու միւս դռնի երկու կողմերը դարձուածք էին։ 35—Ու զանոնք քերովբէներով, արմաւենիներով ու բացուած վարդերով փորագրեց, ու ոսկիով պատեց, որ փորագրութեան վրայ ճշտիւ տարածուի։ 36—Ու ներսի բակը երեք շարք տաշած քարով ու մէկ շարք մայրիի գերաններով շինեց։ 37—Չորրորդ տարին Զիւ ամսուն հիմը դրուեցաւ Տէրոջ տունը։ 38—Ու տասնմէկերորդ տարին Բուլ ամսուն, որ ութերորդ ամիսն է, տունը իր բոլոր պատրաստութեանց ու հրամանին համեմատ վերջացաւ։ Ուրեմն եօթը տարի շինեց զայն։

7 Ու Սողոմոն տասներեք տարի շինեց իր տունը, ու իր բոլոր տունը վերջացուց։ 2—Ու Լիբանանի անտառի տունը շինեց, որուն երկայնութիւնը հարիւր կանգուն էր, ու լայնութիւնը յիսուն կանգուն, ու բարձրութիւնը երեսուն կանգուն, չորս շարք մայրիի սիւներու վրայ, սիւներուն վրայ մայրիի գերաններ։ 3—Ու սիւներուն վրայ որ չորս շարք էին, տասնըհինգ սրահներով ու քսան ծառաներով էր, ու թագաւորին առջեւ։ 4—Ու երեք շարք պատուհաններ կային, ու լոյսը երեք շարք դիմացի դիմացի կը տրուէր։ 5—Ու բոլոր դռները ու սեմերը քառակուսի էին, ու դռները նոյնպէս. այն ատեն բոլոր զօրքին պատմեցին ու ըսին, Ահա թագաւորը դուռը նայեր է. ու բոլոր զօրքը թագաւորին առջեւ եկան, բայց Իսրայէլի մարդիկը իրենց վրանները փախեր էին։

9—Ու Իսրայէլի ամէն ցեղերուն մէջ բոլոր ժողովուրդը կը վիճէին ու կ՚ըսէին, Մեր թշնամիներուն ձեռքէն մեզ փրկողը թագաւորն է, ու փղշտացւոց ձեռքէն մեզ ազատողը անիկա է. և հիմա Աբիսողոմի պատճառաւ այս երկրէն փախաւ։ 10—Ու Աբիսողոմ, զոր մեր վրայ [illegible] օծեցինք, պատերազմի մէջ մեռաւ. և հիմա դուք թագաւորը կամ դարձնելու վրայով ինչո՞ւ բան մը չէք խօսիր։

11—Ու Դաւիթ թագաւորը Սադովկի ու Աբիաթար քահանաներուն ՙոբդ դրկեց՝ ըսելով, Ծուգայի ծերերուն հետ խօսեցէք ու ըսէք, Թագաւորը իր տունը դարձնելու ինչո՞ւ. կամ կը մնաք. քանի որ բոլոր Իսրայէլի խօսքը թագաւորին հասաւ մինչեւ անոր տունը։ 12—Դուք իմ եղբայրներս, ոսկորս ու մարմինս եք. ու թագաւորը չէ դարձնելու ինչո՞ւ. կամ կը մնաք։ 13—Ու Ամասային ըսէք, Դուն իմ ոսկորս ու մարմինս չէ՞ս. Աստուած ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ Յովաբի տեղ միշտ իմ առջեւս զօրապետ չըլլաս։ 14—Ու Ծուգայի բոլոր մարդոց սիրտը մէկ մարդու պէս էրէն դարձուց. ու թագաւորին դարձ ՙոբդ դրկեցին՝ ըսելով, Դարձիր դուն ու քու բոլոր ծառաներդ։ 15—Ու Իսրայէլ գնաց Երուսաղէմ, ու իր տունը գնաց։ 16—Ու Գեդրայի մարդին Բաանա բրնձենի Բենհամինեան Սեմէի արտօրալով՝ Ծուգայի մարդոցը հետ Դաւիթ թագաւորը դիմաւորելու ինչո՞ւ. 17—ու անոր հետ Բենհամինէ հազար մարդ կար. ու Սաւուղի տանը ծառան Սիբա իր տասնըհինգ որդիներովը և քսան ծառաներովը եկաւ, ու թագաւորին առջեւ Յորդանանի հասան։ 18—Ու թագաւորին առջեւը անցընելու համար ու տանը աչքերուն հաճոյ երեւցածը ընելու համար նաւակ մը անցաւ. ու երբ թագաւորը Յորդանանէ անցաւ, Գերայի որդին Սեմէի թագաւորին առջեւ ինկաւ, 19—ու թագաւորին ըսաւ, իմ տէրս ինծի չանցնցանք չսեպէ, ու իմ թագաւոր տէրոջս երուսաղէմէ ելած օրը ծառայիդ ըրած անօրէնութիւնը չյիշէ. ու թագաւորը զանիկա իր սրտին մէջ չդնէ. 20—Քանզի քու ծառադ գիտցայ որ մեղք գործեցի. և ահա այսօր Յովսէփի բոլոր տունէն առաջ ես եկայ, որպէս զի իմ թագաւոր տէրս դիմաւորելու իջնեմ։ 21—Ու Շարուհեայի որդին Աբիսա պատասխան տուաւ ու ըսաւ, Միթէ Սեմէի սաստ համար պիտի չմեռնի՞, որ Տէրոջը անէծք տվեց։ 22—Բայց Դաւիթ ըսաւ, Դուք ինծի հետ ի՞նչ բան ունիք, ով Շարուհեայի որդիներ, որ այսօր ինծի թշնամութիւն կ՚ընէք. միթէ այսօր Իսրայէլէ մարդ մը պիտի մեռնի՞. որովհետեւ գիտեմ որ ես այսօր Իսրայէլի վրայ թագաւոր եմ։ 23—Ու թագաւորը Սեմէիի ըսաւ, Պիտի չմեռնիս. ու թագաւորը անոր երդում ըրաւ։

24—Ես Սաւուղի որդին Մեմփիբոսթէ թագաւորը դիմաւորելու եկաւ. ու անիկա թագաւորին գացած օրէն մինչեւ անոր խաղաղութեամբ եկած օրը ոտքերը չէր դարմաներ, ու մօրուքը չէր չիտկեր, և լաթերը չէր լուացեր։ 25—Ու երբ Բաանա թագաւորը դիմաւորելու համար Երուսաղէմ եկաւ, թագաւորը անոր ըսաւ, Ով Մեմփիբոսթէ, ինչո՞ւ ինծի հետ չգացիր։ 26—Ու անիկա ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, իմ ծառաս զիս խաբեց. քանզի քու ծառադ ըսաւ, Էշը պատրաստեմ, որպէս զի վրան հեծնեմ ու թագաւորին հետ երթամ. վասն զի ծառադ կաղ է։ 27—Ու անիկա քու ծառադ իմ թագաւոր տէրոջս առջեւ բամբասեց. բայց իմ թագաւոր տէրս Աստուծոյ հրեշտակի մը պէս է. ուստի քու աչքերուդ հաճոյ երեւցածը ըրէ։ 28—Քանզի թէպեւ իմ հօրս բոլոր տունը իմ թագաւոր տէրոջս առջեւ միայն մեռնելու մարդիկ էին, բայց դուն քու ծառադ քու սեղանդ կերակուր առողներուն կարգը դրիր. ուստի ալ ասկէ եւս ի՞նչ իրաւունք ունիմ թագաւորին բողոքելու։ 29—Ու թագաւորը անոր ըսաւ, Ալ ինչո՞ւ քու բաներուդ վրայ կը խօսիս. ես ըսի որ դուն ու Սիբա արտերը ձեր մէջ բաժնեցէք։ 30—Ու Մեմփիբոսթէ թագաւորին ըսաւ, Թող անիկա ամէնն ալ առնէ, որովհետեւ իմ թագաւոր տէրս խաղաղութեամբ իր տունը եկաւ։

31—Ու Գաղաադացի Բերզիլի Իովգելիմէ իջաւ, ու թագաւորին հետ Յորդանանէ անցաւ, որպէս զի զանիկա Յորդանանէ յաղագրէ։ 32—Ու Բերզիլի խիստ ծեր էր, ութսուն տարեկան մարդ էր. և նա թագաւորը Մանայիմի մէջ կեցուց, քանզի ինք կերակրեց, քանզի խիստ մեծ մարդ մըն էր։ 33—Ու թագաւորը Բերզիլիի ըսաւ, Ինծի հետ անցիր, և քեզ իմ քովս Երուսաղէմի մէջ կերակրեմ։ 34—Ու Բերզիլի թագաւորին ըսաւ, Իմ կեանքիս տարիներուն օրերը ո՞րչափ պիտի ըլլան՝ որ թագաւորին հետ Երուսաղէմ ելլեմ. 35—ես այսօր ութսուն տարեկան եմ. միթէ ազէկը ու գէշը կրնա՞մ որոշել. միթէ ծառադ իր կերածին ու խմածին համը կրնա՞յ առնել. և ասկէ ետքը խաղ կանչող մարդերուն կամ կիներուն ձայնը կրնա՞մ լսել. ու քու ծառադ իմ թագաւոր տէրոջս ալ ինչո՞ւ համար բեռ ըլլայ։ 36—Քու ծառադ թագաւորին հետ քիչ մը Յորդանան պիտի անցնի. ու թագաւորը ինչո՞ւ ինծի այսպէս փոխարէն մը հատուցանէ։ 37—Թող ծառադ դառնամ, ու իմ քաղաքիս մէջ իմ հօրս ու մօրս գերեզմանին քով մեռնիմ. ահա քու ծառադ Քամաամ իմ տէրոջս, թագաւորին, հետ անցնի. ու քու աչքերուդ հաճոյ երեւցածը ըրէ անոր։ 38—Ու թագաւորը ըսաւ, Թող Քամաամ ինծի հետ անցնի, ու ես քու աչքերուդ հաճոյ երեւցածը պիտի ընեմ անոր. և

*նէբ. սրտին. Ծն. լդ. 8։

*նէբ. վերջիններէն կ՚ըլլաք

*կամ, Յորդանան անցան

ինձմէ ինչ որ խնդրես՝ քեզի պիտի ընեմ։ 39—Ու բոլոր ժողովուրդը Ցորդանանէ անցաւ։ Թագաւորն ալ անցաւ։ Եւ Թագաւորը Բերզելլին համբուրեց ու զանիկա օրհնեց. ան ալ իր տեղը դարձաւ։ 40—Ու Թագաւորը Գաղգալա անցաւ, ու Քամհամ անոր հետ անցաւ. այսպէս Ցուդայի բոլոր ժողովուրդը ու Իսրայէլի ալ կէս ժողովուրդը Թագաւորը անցուցին։

41—Ու ահա բոլոր Իսրայէլի մարդիկը Թագաւորին եկան, ու Թագաւորին ըսին, Ինչո՞ւ համար մեր եղբայրները, Ցուդայի մարդիկը, քեզ գողցան, ու Թագաւորը և անոր տունը ու անոր հետ Դաւիթի բոլոր մարդիկը Ցորդանանէ անցուցին։ 42—Եւ Ցուդայի բոլոր մարդիկը Իսրայէլի մարդոցը պատասխան տուին ու ըսին, Թագաւորը մեզի մօտ ազգական է, ու այս բանին համար ինչո՞ւ այսպէս կը նեղանաք. միթէ Թագաւորէն բան մը կերա՞ծք, կամ թէ անիկա մեզի պարգև մը տուա՞ւ։ 43—Ու Իսրայէլի մարդիկը Ցուդայի մարդոցը պատասխան տուին ու ըսին, Մենք Թագաւորին քով տասը բաժին ունինք, ու նաև Դաւիթին վրայ ալ մեզի աւելի է ունինք. և ինչո՞ւ համար մեզ անարգեցիք, ու մեր Թագաւորը նա դարձնելու համար առաջ *մեզմէ խորհուրդ չհարցուցիք՞. բայց Ցուդայի մարդոց խօսքը Իսրայէլի մարդոց խօսքէն աւելի խիստ էր։

Գլ. Ի

Ու հոն Բենիամինի ցեղէն Բոքորեան Սաբէէ անունով անօրէն մարդ մը գտնուեցաւ. և անիկա փող հնչեցուց ու ըսաւ, Մենք Դաւիթի քով բաժին՝ ու Յեսսէի որդւոյն քով ժառանգութիւն չունինք. ով Իսրայէլ, ամէն մարդ իր վրանը գնա՛։ 2—Ուստի Իսրայէլի բոլոր մարդիկը Դաւիթէ զատուեցան, ու Բոքորեան Սաբէէի հետևէն գացին. բայց Ցուդայի մարդիկը Ցորդանանէ մինչև Երուսաղէմ իրենց Թագաւորին յարեցան։

3—Ու Դաւիթ Երուսաղէմ իր տունը եկաւ. ու Թագաւորը իր տասը պահանութեանը համար Թողուցած տասը հարճերը առաւ, ու զանոնք տան մը մէջ պահել տուաւ և զանոնք կը կերակրէր, բայց անոնց չմտաւ. և անոնք մինչև իրենց մեռնելու օրը պահուած մնացին, ու որբևայրի պէս ապրեցան։

4—Ետ Թագաւորը Ամասայիի ըսաւ, Մէնէվ երեք օր Ցուդայի մարդիկը ինծի կանչէ, ու դուն ալ հոս ներկայ եղիր։ 5—Ուստի Ամասայի Ցուդան կանչելու գնաց, ու Դ--էի դրած ատենէն աւելի ուշացաւ։ 6—Ան ատեն Դաւիթի Աբեսային ըսաւ, Հիմա Բոքորեան Սաբէէ Աբիսողմէ աւելի չարութիւն պիտի ընէ մեզի. --էի դուն քու ակրոնդ ծառաները տէրէ հե- առ ու անոր հետևէն ինկիր, չըլլայ որ իրեն պարսպաւոր քաղաքներ գտնէ ու մեր աչքին անյայտ ըլլայ։ 7—Ասկէ ետև Յովաբի մարդիկը ու Քերեթիները ու Փելեթիները և բոլոր զօրաւորները անոր հետևէն ելան, ու Բոքորեան Սաբէէն հալածելու համար Երուսաղէմէ ելան։

8—Երբ անոնք Գաբաւոնի մէջ եղող մեծ քարին քով էին, Ամասայի անոնց դիմաց ելաւ. և Յովաբ իր հագած հանդերձը գօտեւորած էր, ու անոր վրայէն --էէ գօտիով մէկը սուր մը կապած էր պատեհութիւն մեկուկ. ու երբ անիկա կ'երթար՝ --էը դ-ի-ն-էն ինկաւ։ 9—Ու Յովաբ Ամասայիի ըսաւ, Եղբայրս, ողջ առո՞ղջ ես, ու Յովաբ Ամասային համբուրելու համար ալ ձեռքովը անոր մօրուքէն բռնեց, 10—Ու Ամասայի Յովաբի ձեռքը եղած սուրէն չզգուշացաւ. ու անով Յ-ո-ի անակնյայտ զարկաւ զանիկա և անոր աղիքները գետինը թափեց, ու անոր երկու անգամ չզարկաւ. ու անիկա մեռաւ։ Ես Յովաբ ու անոր եղբայրը Աբեսա Բոքորեան Սաբէէի հետևէն ինկան։ 11—Ան ատեն Յովաբի պատանիներէն մէկը անոր քով կայնեցաւ ու ըսաւ, Ով որ Յովաբը կը սիրէ, ու ով որ Դաւիթի կողմէն է, Յովաբի հետևէն երթա՛։ 12—Ես Ամասայի Ճամբուն վրայ էր արիւնին մէջ կը թաւալէր։ Ու այն մարդը երբ

*ՆԵՐ. մեր խօսքը չեղաւ

տեսաւ որ բոլոր զօրքը կայնեցաւ Ամասային Ճամբուն վրայէն վերցուց, սարսի մը մէջ չէէ, և անոր վրայ լաթ մը ծածկեց. քանզի տեսաւ որ ամէն անոր քով եկողը կանգ կ'առնէ։ 13—Ու զանիկա Ճամբուն վրայէն վերցուցած պէս՝ ամէն մարդ Յովաբի հետևէն գնաց Բոքորեան Սաբէէն հալածելու համար։ 14—(Բայց անիկա Իսրայէլի բոլոր ցեղերէն մինչև Աբէլ ու Բեթմաաքա անցեր էր բոլոր Բերացիներուն հետ, որոնք անոր քով ժողովուեցվ՝ անոր հետևէն գացեր էին) 15—Ու անոնք եկան, ու Բեթմաաքայի Աբէլի մէջ զանիկա պաշարեցին. ու քաղաքին առջև հողաբլուր մը չինեցին, որ պարսպին մօտ կանգնուեցաւ. և Յովաբի հետ եղող բոլոր զօրքը պարիսպը փլցնելու *կ'աշխատէին։

16—Ու խմաստուն կին մը քաղաքէն կանչեց, Լսեցէ՛ք, լսեցէ՛ք, չնորհ ըրէ՛ք, Յովաբի ըսէ՛ք, Հոս մտեցիր, որպես զի քեզի հետ խօսիմ։ 17—Ու Յ-ո-ի անոր մտաւ. ու կինը ըսաւ, Յովաբը դո՞ն ես։ Ես անիկա ըսաւ, Ես եմ։ Ու կինը անոր ըսաւ, Քու աղախինդ խօսքերը մտիկ ըրէ՛. ու անիկա ըսաւ, Ահա մտիկ կ'ընեմ։ 18—Ու կինը խօսեցաւ ու ըսաւ, Հին ատենը սովորաբար կ'ըսէին, Թող Աբէլի †երթան հարցնեն՛, ու այնպէս լմնցնեն։ 19—Ես Իսրայէլի մէջ խաղաղասէր ու հաւատարիմ †ա-ո- մըն եմ. ու դուն կը ջանաս սրել ‡-ո-ւէ քաղաք մը՝ որ Իսրայէլի մէջ մայրաքաղաք մըն է՞. Տէրոջը ժառանգութիւնը ինչո՞ւ կ'ընես։ 20—Ու Յովաբ պատասխան տուաւ ու ըսաւ, Հա՛ւ լիցի, քա՛ւ լիցի, որ ես ընայինջ ընեմ կամ սրեմ։ 21—Բանը այդպէս չէ. հապա Եփրեմի լեռնէն Բոքորեան Սաբէէ անունով մարդ մը իր ձեռքը Դաւիթ Թագաւորին դէմ վերցուց. միայն զանիկա տուէք ու այս քաղաքէն երթամ։ Ու կինը Յովաբի ըսաւ, Ահա անոր գլուխը պարսպին վրայէն քեզի պիտի նետուի։ 22—Ու կինը բոլոր ժողովուրդին գնաց, իր խմաստութեամբ Է-ե-ց--. Ու Բոքորեան Սաբէէի գլուխը կարեցին ու Յովաբի նետեցին։ Այն ատեն անիկա փող հնչեցուց, ու ամէն մարդ այն քաղաքէն իր վրանը քաշուեցաւ. Յովաբ ալ Երուսաղէմ Թագաւորին դարձաւ։

23—Ու Յովաբ Իսրայէլի բոլոր զօրքերուն վրայ էր. ու Յովհադայի որդին Բանեա Քերեթիներուն ու Փելեթիներուն վրայ էր։ 24—Ու Ադորամ Հարկերուն վրայ. ու Աբիլուդի որդին Յովսափատ յիշատակագրի էր։ 25—Ու Սուսա ատենադպիր էր. ու Սադոկ ու Աբիաթար քահանաներ էին։ 26—Ու Յայրացի Իրա ալ Դաւիթի նախարարն էր։

Գլ. ԻԱ

Ու Դաւիթի օրերը երեք տարի սով եղաւ. ու Դաւիթ Տէրոջը *հարցուց։ Ու Տէրը ըսաւ, Սաւուղի ու անոր արիւնահեղ տանը համար է, քանզի անիկա Գաբաւոնացիները մեռուցած։ 2—Ու Թագաւորը Գաբաւոնացիները կանչեց ու անոնց խօսեցաւ. (և Գաբաւոնացիք Իսրայէլի որդիներէն չէին, այլ Ամորհացւոց մնացորդէն էին. ու Իսրայէլի որդիները անոնց երդում ըրեր էին. բայց Սաւուղ Իսրայէլի ու Ցուդայի որդիներուն համար նախանձախնդրութիւն ընելով զանոնք զարնել ուզեր էր) 3—Ու Դաւիթ Գաբաւոնացիներուն ըսաւ, Ձեզի ի՞նչ ընեմ, ու ինչո՞վ քաւութիւն ընեմ որպես զի Տէրոջը ժառանգութիւնը օրհնէք։ 4—Ու Գաբաւոնացիք անոր ըսին, Սաւուղէ ու անոր տունէն արծաթի կամ ոսկի չենք ուզեր, ու Իսրայէլէ մարդ մը մեռցնել չենք ուզեր։ Եւ անիկա ըսաւ, Ինչ որ ըսէք՝ ձեզի պիտի ընեմ։ 5—Ու անոնք Թագաւորին ըսին, Այն մարդը որ մեզ ջարդեց, ու մեզ այնպէս կորնդնել ուզեց, որպես զի ամենեւին Իսրայէլի սահմաններուն մէջ չգտնուինք, 6—Անոր որդիներէն մեզի եօթը մարդ արքուի, ու զանոնք Տէրոջը բնտրեալ Սաւուղի Գաբաւային մէջ Տէրոջը համար

*ՆԵՐ. կ'աւերեին
†ԵՐ. հարցնելով հարցնեն
‡ԵՐ. քաղաք և մայր Իսրայէլի մէջ

*ՆԵՐ. երեսը փնռաւեց

կախեցաւ եւ քաղաւորը կու սատ բռաւ։

7 — Բայց թագաւորը Սաուղեան Յոնաթաններ որդւոյն Մեմփիբոսթէի խնայեց, Սաուղի որդւոյն Յոնաթանի ու Դաւիթի միջեւ եղած Տէրոջը երդումին համար։ 8—Բայց թագաւորը Այիայի աղջկան Ռեսփայի երկու որդիները զորս Սաուղի ծներ էր, այսինքն Արմոնին ու Մեմփիբոսթէին, և Սաուղի աղջկան *Մերաբայի հինգ որդիները, զորս Մաուլացի Բերզելիի որդւոյն Եդրիելի ծներ էր, առաւ։ 9— Ու զանոնք Գաբաւնացւոց ձեռքը առաւ. ու զանոնք Տէրոջը առջեւ լեռանը վրայ կախեցին, և եօթն ալ միանգամ մեռան. և անոնք հնձոց առաջին օրերը, գարիի հնձոց սկիզբը, մեռցուեցան։

10—Ու Այիայի աղջիկը Ռեսփա փոքր մը առաւ, ու զանիկա իրեն համար պատուժի մը վրայ փռեց, հնձոց սկիզբեն մինչեւ անոնց վրայ երկինքէն անձրեւ գալը. ցորեկը երկինքի թռչուններըը, ու գիշերը անապատին գազաններըը չէը թողուր որ անոնց դպչին։ 11—Ու Սաուղի հարճին, Այիայի աղջկան Ռեսփային, ըրածը Դաւիթի պատմեցին։ 12—Ու Դաւիթ գնաց, և Սաուղի ու անոր որդւոյն Յոնաթանի ոսկորները առաւ Գաղատացւոց Յաբիսի քնակիչներէն, որոնք բնթանի հրապարակէն զանոնք գողցեր էին. վասն զի Փղշտացիք զանոնք հոն կախեր էին այն օրը որ Փղշտացիք Գիղբուէի վրայ Սաուղը մեռցուցեր էին։ 13—Ու Սաուղի ոսկորները ու անոր որդւոյն Յոնաթանի ոսկորները անկից վերցուց. ու կախաժողովրդեան ոսկորներն ալ ժողվեցին։ 14—Ու Սաուղի ու անոր որդւոյն Յոնաթանի ոսկորները Բենիամինի երկիրը՝ Սելայի մէջ անոր հօրը կիսի գերեզմանը թաղեցին, ու թագաւորին բոլոր պատուիրածը ըրին. ու անկէ ետքը Աստուած երկրին համար եղած աղօթքը ընդունեց։

15—Ու Փղշտացիք նորէն իսրայէլի հետ պատերազմ ըրին. և Դաւիթ ու իր ծառաները իրեն հետ իջան ու փղշտացւոց հետ պատերազմ ըրին ու Դաւիթ ուժէ կարեցաւ։ 16—Ու Յեսբիբենոբ, որ Ռափայի սրդիներէն էր, ու երկաթ Տարբը *էլէդ ծանրութեամբ պղնձէ նիզակ մը ունէր, ու մէկը նոր սուր հը կապեր էր, ուզեց որ Դաւիթը զարնէ։ 17—Բայց Շարուհեայի որդին Աբեսսա անոր օգնութեան հասաւ, ու փղշտացին զարկաւ ու զանիկա մեռցուց։ Այն ատեն Դաւիթի մարդիկը անոր երդում ըրին ու ըսին, Ասկէ ետքը դուն մեզի հետ պատերազմի չելլես, որպէս զի Իսրայէլի ծագը չմարես։

18—Ու ասկէ ետքը նորէն Փղշտացւոց հետ պատերազմ եղաւ Գոբերի մէջ. այն ատեն Ովսացի Սոփրաք Խափայի սրդիներէն եղող Սեփեան մեռցուց։

19—Ու նորէն Փղշտացւոց հետ պատերազմ եղաւ Գոբերի մէջ ու Բեթլեհեմացի Արեովրդիմի որդին Ելհանան Գեթացի Գողիաթի եղբօրը զարկաւ, որուն նիզակին բունը սատայնանկներու գլանին պէս էր։

20—Ու նորէն Գէթի մէջ պատերազմ եղաւ. ու երկայնահասակ մարդ մը կար, որուն ձեռքերուն մատերը ու ոտքերուն մատերը վեց վեց հատ էլլեւլով՝ քսանչորս հատ ունէր. անիկա ալ Ռափայի սրդիներէն էր։ 21 — Ու անիկա Իսրայէլը նախատեց բայց Դաւիթի եղբօրը Սամայի սրդին Յոնաթանն անիկա զարկաւ։ 22—Ա յս չորսը Գէթի մէջ Ռափայ ծներ էին, և Դաւիթի ձեռքով ու անոր ծառաներուն ձեռքով ինկան։

Գլ. ԻԲ

Ե Դաւիթ, այն օրը որ Տէրը զանիկա իր բոլոր թշնամիներուն ձեռքէն ու Սաուղի ձեռքէն ազատեց, այս երգին խօսքերը Տէրոջը խօսեցաւ, 2— Ու ըսաւ,

Տէրը իմ վէմս, ամրութիւնս ու փրկիչս է.

3—իմ Աստուածս իմ *պարիսպս է, ես անոր կը յուսամ.

Անիկա իմ վահանս ու իմ փրկութեանս եղջիւրը,

*Մերովբ. տես ա Թագ. ժը. 19։

*Եբր. Ժայռս

իմ աշտարակս, իմ ապաւէնս ու ազատիչս է.

Ջիս անիրաւութենէ դուն կ'ազատես։

4—Օրհնեալ Տէրը կը կանչեմ,

Ու իմ թշնամիներէս կ'ազատիմ.

5—Քանզի մահուան ալիքները իմ բովտիս առին,

Ու անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին.

6—Գերեզմանին լարերը զիս պաշարեցին,

Ու մահուան որոգայթները իմ առջեւս առին։

7—Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի,

Ու իմ Աստուծոյս ազաղակեցի.

Ու իր տաճարէն իմ ձայնս լսեց,

Ու իմ ազաղակս անոր ականջներուն հասաւ։

8—Այն ատեն երկիրը սասանեցաւ ու դողաց.

Երկինքի հիմերը շարժեցան ու սասանեցան,

Քանզի անիկա բարկացաւ։

9—Անոր քիթէն ծուխ ելաւ,

Ու բերնէն մաշող կրակ,

Անկէ կայծակներ բռնկեցան։

10—Ու անիկա երկինքը խոնարհեցուց ու իջաւ,

Ու անոր ոտքերուն տակ մառախուղ կար.

11—Ու քերովբէի վրայ հլաւ ու թռաւ,

Ու հովին թեւերուն վրայ երեւցաւ։

12—Ու խաւարը ու թանձր ջուրերը

Ու երկինքի ամպերը իր բոլորտիքը վրաքողր ըրաւ։

13—Անոր առջեւ եղող ճառագայթէն

Կրակի կայծակներ բռնկեցան։

14—Տէրը երկինքէն որոտաց,

Ու Բարձրեալը իր ձայնը լսել տուաւ։

15—Ու նետեր զրկեց ու զանոնք ցրուեց,

Կայծակներ ղրկեց ու զանոնք խռովեցուց։

16—Ու Տէրոջը յանդիմանութենովը

Ու անոր բարկութեան հովին փչելովը

Ծովուն յատակները երեւցան,

Ու աշխարհիս հիմերը յայտնուեցան։

17—Բարձրէն ղրկեց ու զիս բռնեց,

Ու ջուրերէն զիս հանեց։

18—Իմ զօրեղ թշնամիէս ու զիս ատողներէն ազատեց զիս,

Վասն զի ինծի զօրաւոր էին։

19—Իմ նեղութեանս օրը իմ առջեւս եկան,

Բայց Տէրը ինծի հովտապնդիչ եղաւ։

20—Ու զիս լայնարձակ տեղ մը հանեց,

Ու զիս ազատեց, վասն զի ինծի հաճեցաւ։

21—Տէրը իմ արդարութեանս պէս ինծի փոխարէն կու տայ.

Իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ հատուցում կ'ընէ ինծի.

22—Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի,

Ու իմ Աստուծոյս դէմ ամբարշտութիւն չըրի,

23—Քանզի անոր ամէն դատաստանները իմ առջեւս էին,

Ու անոր օրէնքներէն չհեռացայ։

24—Ու անոր առջեւ կատարեալ եղայ,

Ու իմ անօրէնութենէս զգուշացայ։

25—Ու Տէրը ինծի հատուցում ըրաւ իմ արդարութեանս համեմատ,

Իմ չէ՜ւերս՝ մաքրութեանը համեմատ, որ անոր աչքերուն առջեւ է։

26—Ողորմածին հետ ողորմած կ'ըլլաս,

Կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս.

27—Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս,

Ու ծուռին հետ կը ծռիս։

28—Ու վշտացած ժողովուրդը դուն կ'ազատես.

Ու քու աչքերդ ամբարտաւաններուն վրայ են որպէս զի ցածցընես։

29—Քանզի իմ ճրագս դուն ես, ով Տէր,

Ու իմ խաւարս Տէրը կը լուսաւորէ։

30—Վասն զի քեզմով գունդի մը վրայ կը վազեմ,

Ու իմ Աստուածովս պարիսպ կ'անցնեմ։

31—Աստուծոյ ճամբան կատարեալ է.

Տէրոջը խօսքերը փորձուած են.

Անիկա ամէն բերան յուսացողներուն ապար է։

32—Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուած,

Կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ.

33—Իմ զօրաւոր բերդս Աստուած է,

Ու իմ ճամբան կատարեալ կ՚ընէ։
34—Իմ ոտքերս եղջերուի ոտքերո՛ւն պէս կ՚ընէ,
Ու իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցնէ։
35—Ձեռքերս պատերազմի կը վարժէ,
Ու իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը լարեն՝
36—Ինծի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր,
Ու քու գաղթրդութիւնդ զիս մեծցուց։
37—Իմ քալելու ճամբաս նեղցուցիր,
Ու իմ ոտքիս յօդուածները չսասանեցան։
38—Իմ թշնամիներս հալածեցի ու զանոնք կարդեցի,
Ու հա չդարձայ մինչև զանոնք հատցուցի։
39—Ու զանոնք հատցուցի, գետինը զարկի, որպէս զի չկանգնին.
Անոնք իմ ոտքերուս տակ ինկան։
40—Ու պատերազմի համար ինծի զօրութիւն հագցուցիր.
Ու իմ վրաս եղողները տակս ձգեցիր։
41—Ու իմ թշնամիներուս †կռնակը ինծի դարձուցի՛ր, ատիր՝
Որպէս զի զիս ատողները ջարդեմ։
42—‡Աղաղակեցին, բայց ազատող չկար.
Տէրո՛ւր —ողո՛ւխէն, բայց անոնց պատասխան չտուաւ։
43—Ա՛յն ատեն զանոնք երկրի փոշիին պէս մանրեցի.
Ջանոնք փողոցներուն ցեխին պէս կոխեցի ու ճմլեցի։
44—Ու իմ ժողովրդիս կռիւներէն զիս ազատեցիր,
Ո՛ւ զիս պահեցիր, որպէս զի ազգերու գլուխ ըլլամ։
Ո՛ւ իմ չգիտցած ժողովուրդս ինծի ծառայեց։
45—Օտարները ինծի ||խոնարհութիւն ըրին՝։

*Կամ, բազուկներուս պղնձէ աղեղ մը կը կոտրուի

†Կամ, վիզը ինծի տուիր. Ծն. խթ. 8։ Ել. իգ. 27։ Ցես. ժ. 24։

‡Կամ, Նայեցան

||Եբր. տեղերին

Իբե՛ն ալանիներովը լսածնուն պէս՝ ինծի հնազանդեցան։
46—Օտարները ակաթացան,
Ու իրենց պահպրուած տեղերէն դողացին։
47—Տէրը կենդանի է, ու իմ վէմս օրհնեալ ըլլայ,
Ու իմ փրկութեանս վէմը Աստուած բարձր ըլլայ։
48—Աստուած է որ իմ վրէժս կը խնդրէ,
Ու ժողովուրդները ինծի կը հնազանդեցնէ,
49—Իմ թշնամիներէս զիս հանելով
Չէս իմ վրաս եղողներէն ալ բարձրացուցիր,
Ու բռնաւոր մարդէն ազատեցիր։
50—Ասոր համար, ով Տէր, ազգերուն մէջ քեզ պիտի գովեմ,
Ու քու անուանդ սաղմոս պիտի երգեմ։
51—Իր թագաւորին փրկութիւններ մեծցնողը,
Ու իր օծեալին, Դաւիթի, ու անոր սերունդին
Ցաւիտեան ողորմութիւն ընողը Ա՛ն է։

ԳԼ. ԻԹ

Ե՛ Դաւիթի վերջին խօսքերը ասոնք են,
Յեսսէի որդին Դաւիթ կ՚ըսէ,
Ա՛յն մարդը որ բարձրացաւ,
Յակոբայ Աստուծոյն օծեալը,
Ու Իսրայէլի վայելուչ երգերը չարտրուղը կ՚ըսէ,
2—Տէրոջը Հոգին ինծմով խօսեցաւ,
Ու անոր խօսքը իմ լեզուիս վրայ էր։
3—Իսրայէլի Աստուածը ըսաւ,
Ո՛ւ Իսրայէլի վէմը ինծի խօսեցաւ,
Իշխե՛ւ, Մարդոց վրայ իշխողը արդար ըլլայ,
Ու Աստուծոյ վախովը իշխէ,
4—Ա՛յն ատեն անիկա առաւօտեան լոյսին կը նմանի,
Որ արեւուն ծագած առենը կ՚երթեւեկայ,
Ա՛յնպիսի առաւօտ մը՝ որ առանց ամպի է,
Ու —բէ՜— ճառագայթին՝
Որ անձրեւէն ետքը գետնէն կանանչ խոտը կը բուսցնէ։
5—Թէև իմ տունս Աստուծոյ քով այս պէս չէ,

*Կամ, թէև չծագկեցնէ

†Եբր. պիտի լեցուի

‡Կամ, աբեռը նաազ

||Կամ, իր նիզակը վերցուց ուր հարիւր մարդոց վրայ ու զանոնք մէկէն մեռցուց

§Կամ, Քայլի մէջ ժողովեցան

Սակայն ինծի հետ յաւիտենական ուխտ մը ըրաւ,
Որ ամէն բանի մէջ պատրաստ ու հաստատ է.
Քանզի իմ բոլոր փրկութիւնս ու իմ բոլոր բաղձանքս այ՛ս է.
*Ու պիտի չծագկեցնէ՞ զայն։
6—Բայց բոլոր անօրէնները
Փուշ նետուած փուշերու պէս պիտի ըլլան.
Քանզի անոնք ձեռքով չեն բռնուիր։
7—Ու անոնց դպչելու մարդը
Երկաթը ու նիզակին բունը †իրեն զէնք պիտի ընէ՝.
Ու իրենց եղած տեղը
Բոլորովին կրակի մէջ պիտի այրին։
8—Դաւիթի զօրաւոր մարդոցը անուններուն ասոնք են. ‡Յոսէբ-բասեբեթ Թահքմոնացին, որ զօրավարներուն գլխաւորն էր. անիկա է ||Ադինոն, որ —էֆ-մ հը ութ հարիւր մարդը մէկէն մեռցուց՝։
9—Ու անկէ ետքը Ագուքացի Դովդոյի որդին Եղիազար, որ Դաւիթի հետ եղող երեք զօրաւորներէն մէկն էր, երբ անոնք պատերազմելու համար հոն ժողոված Փղշտացիները նախատեցին, ու Իսրայէլի մարդիկը փախան.
10— Անիկա ելաւ ու Փղշտացիները զարկաւ, մինչև որ ձեռքը յոգնեցաւ, ու ձեռքը իր սուրին վրայ փակաւ, և Տէրը այն օրը մեծ փրկութիւն ըրաւ, ու ժողովուրդը անոր ետևէն դարձաւ՝ միայն կողոպտելու առնելու համար։
11—Ու անկէ ետքը Արարացի Ագէի որդին Սամմա էր. ու Փղշտացիք Ղեհաղմի կազմեցին՝. ու հոն ոսպով լեցուն ագարակ մը կար. և ժողովուրդը Փղշտացոց առջևէն փախաւ. 12—Բայց անիկա ագարակին մէջտեղը կայնեցաւ, զանիկա պաշտպանեց ու Փղշտացիները զարկաւ. և Տէրը մեծ փրկութիւն ըրաւ։
13—Ու երեսուն *զօրավարներուն երեքը իջան, և հունձքի ատեն Ոգոդոմի քարայրը Դաւիթի եկան. ու Փղշտացոց մէկ գունդը Թափայիններուն հովիտին մէջ բանակեր էր։ 14—Ու այն ատեն Դաւիթ բերդին մէջ էր. ու այն ատեն Փղշտացիք Բեթլէհեմի մէջ բերդապահ զօրք ունէին։ 15—Ու Դաւիթ փափաքելով՝ ըսաւ, Բեթլէհեմի դուռը եղող ջրհորէն ո՞վ ինծի խմել կը խմցնէ։ 16—Ա՛յն ատեն այս երեք զօրաւորները Փղշտացոց բանակը ձեղքեցին անցան, ու Բեթլէհեմի դուռը եղող ջրհորէն խմբ քաշեցին, ու առին Դաւիթի տարին. բայց անկիա չուզեց անկէ խմել, հապա զանկիա Թափելով՝ Տէրոջը †-էէ։ 17—Ու ըսաւ, Ով Տէր, քա՛զ լեցի որ ես այս բանը ընեմ. իրենց կեանքը վտանգի մէջ դնելով գացող մարդոց արի՞ւնը Խմ. ու անկէ խմել չուզեց։ Ասոնք են այն երեք զօրաւոր մարդոց ըրածները։
18—Ու Շարուհեան Յովաբի եղբայրը Աբիսա այն երեք մարդոց գլխաւորն էր. ու անիկա իր նիզակը ասպանդց ղ-ած. ու անկիա երեքին մէջ անուանի էր։ 19—Ու անկիա երեքէն աւելի համարում ունենալուն համար, անոնց գլխա եղաւ. բայց —ա՛ն երեքին ատ-ն չհասաւ։
20—Ու մեծ գործեր գործող Կաբսէելացի զօրաւոր մարդու մը որդւոյն Յովիադայի որդին Բանեա Մոաբի երկու զօրաւոր մարդիկը մեռցուց. նաև ձիւնի ժամանակ իջաւ ու գուբին մէջ առիւծը մեռցուց։ 21—Ա՛ւիկա սեւադէմ երեսվեղ եգիպտացի մարդ մը ալ մեռցուց. ու եգիպտացիին ձեռքը նիզակ մը կար, բայց Բանե՛ա ցուպով մը անոր վրայ իջաւ, ու եգիպտացիին ձեռքէն նիզակը յափշտակեց, և զանիկա անոր նիզակովը մեռցուց։ 22—Յովիադայի որդին Բանեա այս բաները ըրաւ, ու երեք զօրաւորներուն մէջ անուանի եղաւ։ 23—Երեսունէն աւելի պատիւ ունէր, բայց —ա՛ն երեքին ատ-ն չհասաւ. ու Դաւիթ զանիկա իր առաջնորդին վերակացու դրաւ։

*Կամ, գլխաւորներուն

24—Ցոփաբէ Եղբայրը Ասպէլ Երեսունէն էր. Նա՝ Բիթլէհեմացի Դավթայի որդին Ելիանան, 25—Հաթօդացի Սամմա, Հաթօդացի Եղիկա, 26—*Փելտացի Բեղդէս, Թեկուացի Եկկեսի որդին Իրաս, 27—Անաթոթացի Աբիեզէր, Ուսաթացի Մեբունայ, 28—Աքսաքացի Սելմոն, Նետոփաթացի Մահրայ, 29—Նետոփաթացի Բաանայի որդին Ագաբ, Բենիամինի որդիներուն Գաբաայէն՝ Ռիփայի որդին Իթթիւ, 30—Փիրաթոնացի Բանեա, Գասաի ձորերէն Ագդայի, 31—Աբաաթացի Աբիէլբոն, Բարաւմացի Ազմաթ, 32—Սաղաբիներացի Եղիաբա, Յասենի որդիներէն՝ Յովնաթան, 33—Արարացի Սամմա, Արարացի Սարարի որդին Աքիամ, 34—Մաքաթիի որդւոյն Ահասբայի որդին Եղիփաղէտ, Գեղոնացի Աքիտոփելի որդին Եղիամ, 35—Կարմէլացի Հասրէ, Արբացի Փաասբայ, 36—Մոբացի Նաթանայի որդին Իգալ, Գադացի Բանի, 37—Ամմոնացի Սելեկ, Շարաւհեան Ցոփաբի կապարձակիրը Բերոթացի Նահարա, 38—Յեթերացի Իրաս, Յեթերացի Գարեբ, 39—Քեթացի Ուրիա. ամէնը երեսունէն երեօքն էին։

Գլ. ԻԹ

Եւ Տէրոջը բարկութիւնը նորէն բորբոքեցաւ. ու Դաւիթը անոնց դէմ գրգռեց, ըսելով, Գնա, Իսրայէլը ու Յուդան համրէ։ 2—Եւ թագաւորը իր քով եղող Յովաբ զօրապետին ըսաւ, Իսրայէլի բոլոր ցեղերուն մէջ, Դանէ մինչև Բերսաբէէ, պատէ, ու ժողովուրդը համրեցէք, որպէս զի ժողովուրդին թիւը գիտնամ։ 3—Եւ Յովաբ ըսաւ թագաւորին, Թո՛ Տէր Աստուածդ, ժողովուրդը որչափ որ է, հարիւրապատիկ աւելցնէ, ու իմ թագաւոր տէրոջս աչքերը տեսնեն. բայց իմ թագաւոր տէրս ինչո՞ւ համար այս բանին կը ցանկայ։ 4—Ու երբ թագաւորին խօսքը Յովաբի ու զօրավարներուն վրայ ստակացաւ, Յովաբ զօրավարներուն հետ թագաւորին առջեւէն ելաւ, որպէս զի Իսրայէլի ժողովուրդը համրէ։ 5—Եւ Յորդանանէ անցան, ու Գադի ձորին մէջ եղող քաղաքին աջ կողմէ՝ Արոէր բանակեցան. հետքը Յազեր, 6—Եւ Գաղաադ ու Թախթիմհադսի երկիրը եկան, անկէ *Դանեական, ու Միդոնի չրջակաները եկան։ 7—Եւ Սիւդի Տիւրոսի ամրոցը ու Եւացւոց ու Քանանացւոց ամէն քաղաքները գացին. և Յուդայի հարաւային կողմը ելան։ 8—Ու բոլոր երկիրը պտրտեցան. և ինը ամիսէն ու քսան օրէն հետքը նորէն դարձան։ 9—Եւ Յովաբ ժողովուրդին համրանքին ցուցակը թագաւորին տուաւ։ Ու Իսրայէլի մէջ տիսհարիւր հազար սուր քաշող պատերազմական մարդ կար. և Յուդայեանք հինգ հարիւր հազար մարդ էին։

10—Եւ Դաւիթի ժողովուրդը համրելէն հետքը իր խղճմտանքը զինք գրգռեց. ու Դաւիթ Տէրոջը ըսաւ, Չ՚ընելով մեծ մեղք գործեցի. ով Տէր, հիմա քու ծառայիդ այս մեղքը ներէ. քանզի մեծ յիմարութիւն ըրի։ 11—Ու երբ Դաւիթ առաւօտուն ելաւ, Տէրոջը խօսքը Դաւիթի տեսանողին, Գադ մարգարէին, եղաւ՝ ըսելով, 12—Գնա ու Դաւիթի ըսէ, Տէրը այսպէս կ՚ըսէ. Ես քեզի երեք բան կ՚առաջարկեմ. անոնցմէ մէկը ընտրէ որ քեզի ընեմ։ 13—Եւ Գադ Դաւիթի գալով անոր պատմեց, ու անոր ըսաւ, Եթէ տարի քու երկիրդ վրայ սո՞վ գայ, կամ երեք ամիս քու թշնամիներուդ երեսէն փախչո՞ս, ու անոնք քեզ հալածեն, կամ թէ երեք օր քու երկրիդ վրայ ժանտա՞խտ գայ։ հիմա մտածէ ու տես թէ ի՛նչ պատասխան առնեմ զիս ղրկողին։ 14—Եւ Դաւիթ Գադի ըսաւ, Խիստ մեծ նեղութեան մէջ եմ. հիմա Տէրոջը ձեռքը իյնանք, քանզի անոր գթութիւնը շատ է, ու մարդու ձեռք չիյնամ։

15—Եւ Տէրը այն առաւօտէն մինչև որոշուած ժամանակը Իսրայէլի վրայ ժանտախտ ղրկեց. ու Դանէ մինչև Բերսաբէէ ժողովուրդէն եօթանասուն հազար մարդ մեռաւ։ 16—Եւ Ահա՜ծ հրեշտակը ձեռքը երուսաղէմի վրայ երկնցուց որպէս զի զանիկա ջնջէ. ու այս չարիքին վրայ Տէրոջը սիրտը իջաւ, ու ժողովրդը ջնջող հրեշտակին ըսաւ, Հերիք է, ալ ձեռքդ քաշէ. ու Տէրոջը հրեշտակը Յեբուսացի Ոռնայի կալին քով էր։ 17—Եւ Դաւիթ ժողովուրդը զարնող հրեշտակը տեսնելով Տէրոջը ըսաւ, Ահա ե՛ս մեղանչեցի ու ե՛ս անօրէնութիւն ըրի, բայց այս ոչխարները ի՞նչ ըրին. կ՚աղաչեմ, քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ։

18—Եւ նոյն օրը Գադ Դաւիթի եկաւ, ու անոր ըսաւ, Ելիր, Յեբուսացի Ոռնայի կալին մէջ Տէրոջը սեղան մը կանգնէ։ 19—Եւ Դաւիթ Գադի ըսածին համեմատ վեր ելաւ, ինչպէս Տէրը պատուիրեր էր։ 20—Ու Ոռնա նայեցաւ, ու երբ տեսաւ որ թագաւորը և անոր ծառաները իրեն կու գան, Ոռնա ելաւ ու երեսը մինչև գետինը խոնարհութիւն ըրաւ թագաւորին։ 21—Եւ Ոռնա ըսաւ, Արդեօք ի՞նչ պատճառաւ իմ թագաւոր տէրս իր ծառային եկաւ։ Ու Դաւիթ ըսաւ, Այո՛ կալը քեզմէ ծախու առնելու, ու Տէրոջը սեղան մը չինելու համար, որպէս զի ժողովուրդին վրայէն հարուածը վերցնայ։ 22—Եւ Ոռնա ըսաւ Դաւիթին, Իմ թագաւոր տէրս ընդունի՝ առնէ, ու իր աչքերուն համայ երեւցածին պէս զոհ ընէ. ահա եզները ողջակէզի համար, կամեսայրները ու եզներուն գործիքները փայտի համար բլլան։ 23—Ասոնց ամէնը *Ոռնա թագաւորի մը պէս՝ թագաւորին տուաւ. ու Ոռնա՝ թագաւորին ըսաւ, Թո՛ Տէր Աստուածդ քեզ ընդունի։ 24—Բայց թագաւորը Ոռնայի ըսաւ, Ոչ. հապա ես վճարէ քեզմէ անչուշտ սահակով ծախու պիտի առնեմ, ու ձրի ---ը իմ Տէր Աստուածոյս ողջակէզ պիտի չմատուցանեմ, ես Դաւիթ կալը ու եզները հինգսուն սիկղ արծաթի ծախու առաւ։ 25—Ու Դաւիթ հոն Տէրոջը սեղան շինեց, ու ---ով ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուց. և Տէրը լսեց ---ով աղօթքը երկիրին համար, ու Իսրայէլի վրայէն հարուածը վերցաւ։

*Եբր. Ոռնա թագաւորը

*Կամ, Դանի անասուն. տես Ցես. ԺԶ. 47։ Դատ. ԺԸ. 29։

* ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Դաւիթ Թագաւորը ծերացած ու տարիքը առած ըլլալով, զանիկա հանդերձներով կը ծածկէին, բայց չէր տաքնար։ 2—Եւ ծառաները անոր ըսին, Մեր Թագաւոր տէրոջը համար կոյս աղջիկ մը փնտռեն՝ որ Թագաւորին առջեւ կայնի, զանիկա գաթմանէ ու անոր ծոցը պառկի, որպէս զի մեր Թագաւոր տէրը տաքնայ։ 3—Ու Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ գեղեցիկ աղջիկ մը փնտռեցին, և Սունամացի Աբիսագը գտան, ու զանիկա Թագաւորին բերին։ 4—Եւ այն աղջիկը խիստ գեղեցիկ էր. ու անիկա Թագաւորը կը գաթմանէր ու անոր սպասաւորութիւն կ'ընէր. բայց Թագաւորը զանիկա չգիտցաւ։

5—Այն ատեն Ադոնիա որդին Ագիթի Հպարտացաւ ու ըսաւ, Ես Թագաւոր ըլլամ. և իրեն համար կառքեր ու ձիաւորներ պատրաստեց, և հիսուն մարդ՝ որպէս զի իր առջեւէն վազեն։ 6—Եւ անոր հայրը անոր կեանքին մէջ ամենեւին յանդիմանած չէր զանիկա, ըսելով Թէ ինչո՞ւ այսպէս ըրիր. և անիկա տեսքով խիստ գեղեցիկ էր, ու անոր յաջորդ զանիկա Աբիսագին հետ էր։ 7—Եւ անիկա խօսք մէկ ըրաւ Յովաբին որդւոյն Յովաբի հետ ու Աբիաթար քահանային հետ, որոնք Ադոնիայի հետեւելով՝ անոր օգնութիւն կ'ընէին։ 8—Բայց Սադովկ քահանան ու Յովիադայի որդին Բանեա և Նաթան մարգարէն ու Սեմէի և Ռէի ու Դաւիթի զօրաւոր մարդիկը Ադոնիայի հետ չէին։ 9—Եւ Ադոնիա Ռոգէլի աղբիւրին մօտ եղող Զոհղեղիթ քարին քովՙ ոչխարներ, արջառներ ու գեր անասուններ մորթեց. և իր ամէն եղբայրները, Թագաւորին որդիները, ու Յուդայի բոլոր մարդիկը, Թագաւորին ծառաները, հրաւիրեց։ 10—Բայց Նաթան մարգարէն ու Բանեան և զօրաւորները ու իր Սողոման եղբայրը չհրաւիրեց։

11—Եւ Նաթան Սողոմանի մօրը Բերսաբէի հետ խօսեցաւ ու ըսաւ, Չլսեցի՞ր որ Ագիթի որդին Ադոնիա Թագաւոր եղաւ, ու մեր տէրը Դաւիթ չիմացաւ։ 12—Ուրեմն հիմա եկուր քեզի խրատ մը տամ, որպէս զի քու կեանքդ ու քու որդւոյդ Սողոմանի կեանքը ազատես։ 13—Երթի, Դաւիթ Թագաւորին քովՙ գնա, ու անոր ըսի, Ով տէր իմ Թագաւոր, դուն քու աղախինիդ երդում չըրի՞ր ու չըսի՞ր որ ինծմէ ետքը քու որդիդ Սողոման Թագաւոր պիտի ըլլայ, և իմ աթոռս անիկա պիտի նստի. ու ինչո՞ւ համար Ադոնիա Թագաւոր եղաւ։ 14—Ահա դուն այն տեղը Թագաւորին հետ խօսած ատենդՙ ես ալ ետեւէդ կու գամ, ու քու խօսքերդ կը լրացնեմ։

15—Եւ Բերսաբէ ներքին սենեակը մտաւ Թագաւորին քովի և Թագաւորը շատ ծերացած էր, ու Սունամացի Աբիսագ Թագաւորին սպասաւորութիւն կ'ընէր։ 16—Եւ Բերսաբէ գլուխը ծռեց, ու Թագաւորին խոնարհութիւն ըրաւ։ Ու Թագաւորը ըսաւ, Ինչ կ'ուզես։ 17—Եւ անիկա ըսաւ անոր, Ով տէր իմ, դուն քու աղախինիդ քու Տէր Աստուծոյդ անունովը երդում ըրիր՝ ըսելով, Ինծմէ ետքը քու որդիդ Սողոման Թագաւոր պիտի ըլլայ, ու իմ աթոռս ան պիտի նստի։ 18-Եւ ահա հիմա Ադոնիա Թագաւոր եղած է, ու դուն չիմացար, ով տէր իմ Թագաւոր։ 19—Եւ անիկա շատ արջառներ ու գեր անասուններ ու ոչխարներ մորթեց, և Թագաւորին բոլոր որդիները ու Աբիաթար քահանան և Յովաբ զօրապետը հրաւիրեց, բայց քու ծառադ Սողոմանը չհրաւիրեց։ 20—Հիմա, ով տէր իմ Թագաւոր, բոլոր Իսրայէլի աչքերը քու վրադ են, որպէս զի անոնց իմացնես թէ իմ Թագաւոր տէրոջս աթոռը իրմէ ետքը ո՛վ պիտի նստի։ 21—Երթէ ոչՙ երբ իմ Թագաւոր տէրս իր հայրերուն հետ քնանայ, ես ու իմ որդիս Սողոման յանցաւոր պիտի սեպուինք։

22—Ու երբ անիկա Թագաւորին հետ կը խօսէր, Նաթան մարգարէն եկաւ։ 23—Եւ Թագաւորին իմացուցին ու ըսին Թէ Ահա Նաթան մարգարէն է՛։ ու անիկա ներս մտաւ Թագաւորին առջեւ, ու երեսը մինչև գետինը ծռելով Թագաւորին խոնարհութիւն ըրաւ։ 24—Եւ Նաթան ըսաւ, Ով տէր իմ Թագաւոր, դո՞ւն ըսիր որ ինծմէ ետքը Ադոնիա Թագաւոր պիտի ըլլայ, ու իմ աթոռս անիկա պիտի նստի. 25—Քանզի անիկա այսօր իջաւ, և շատ արջառներ ու գեր անասուններ ու ոչխարներ մորթեց. և Թագաւորին բոլոր որդիները, զօրավարները ու Աբիաթար քահանան հրաւիրեց. և ահա անոնք անոր առջեւ կ'ուտեն, կը խմեն ու կ'ըսեն, Կեցցէ արքայ Ադոնիա։ 26—Բայց ինծ քու ծառադ ու Սադովկ քահանան և Յովիադայի որդին Բանեան ու քու ծառադ Սողոմանը չկանչեց։ 27—Այս բանը արդեօք իմ Թագաւոր տէրոջս ձեռքո՞վ եղաւ, ու քու ծառայիդ չգիտցուցիր Թէ քեզմէ ետքը իմ Թագաւոր տէրոջս աթոռը ո՞վ պիտի նստի։

28—Եւ Դաւիթ Թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Բերսաբէն ինծի կանչեցէք։ Եւ անիկա Թագաւորին առջեւ եկաւ ու Թագաւորին առջեւ կայնեցաւ։ 29—Եւ Թագաւորը երդում ըրաւ ու ըսաւ, Իմ անձս ամէն նեղութենէ ազատող Տէրը կենդանի է որ, 30—ինչպէս քեզի Իսրայէլի Տէր Աստուածովը երդում ըրի, ու ըսի Թէ ինծմէ ետքը քու որդիդ Սողոման Թագաւոր պիտի ըլլայ, ու իմ տեղս իմ աթոռիս վրայ անիկա պիտի նստի, Ահա այսօր այնպէս պիտի ընեմ. 31—Այն ատեն Բերսաբէ երեսը մինչև գետինը ծռելով Թագաւորին խոնարհութիւն ըրաւ ու ըսաւ, Իմ տէրս Դաւիթ Թագաւորը յաւիտեան ողջ կենայ։

32—Եւ Դաւիթ Թագաւորը ըսաւ, Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն և Յովիադայի որդին Բանեան ինծի կանչեցէք։ Ու անոնք Թագաւորին առջեւ եկան։ 33—Եւ Թագաւորը անոնց ըսաւ, Ձեր տէրոջը ծառաները ձեզի հետ առէք, ու իմ որդիս Սողոմանը իմ Ջորիիս վրայ հեծցուցէք, ու զանիկա Գեհոն իջեցուցէք. 34—Եւ Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն հոն զանիկա Իսրայէլի վրայ Թագաւոր օծեն. ու փող հնչեցուցէք ու ըսէք, Կեցցէ արքայ Սողոման. 35—Եւ անոր ետեւէն ելէք, ու անիկա գայ ու իմ աթոռս նստի, և իմ տեղս անիկա Թագաւոր ըլլայ. քանզի ես հրամայեցի զանիկա Իսրայէլի վրայ ու Յուդայի վրայ իշխան ըլլայ։ 36—Այն ատեն Յովիադայի որդին Բանեա Թագաւորին պատասխան տուաւ ու ըսաւ, Ամէն. իմ Թագաւոր տէրոջս Տէր Աստուածն ալ այդպէս ըսէ։ 37—Ինչպէս Տէրը իմ Թագաւոր տէրոջս հետ էր, Սողոմանի հետ ալ այնպէս ըլլայ, ու անոր աթոռը իմ տէրոջս Դաւիթ Թագաւորին աթոռէն մեծ ընէ։ 38—Այն ատեն Սադովկ քահանան, Նաթան մարգարէն ու Յովիադայի որդին Բանեան, և Քերեթիները ու Փելեթիները իջան ու Սողոմանը Դաւիթ Թագաւորին ջորին վրայ հեծցուցին, ու զանիկա Գեհոն տարին։ 39—Եւ Սադովկ քահանան խորանէն իւղին եղիւրը առաւ ու Սողոմանը օծեց. և փողը հնչեցուցին, ու բոլոր ժողովուրդը կ'ըսէր, Կեցցէ արքայ Սողոման։ 40—Եւ բոլոր ժողովուրդը անոր ետեւէն կ'ելլէին. ու ժողովուրդը սրինգներ հնչեցնելով մեծ ուրախութեամբ մը կ'ուրախանային, այնպէս որ անոնց ձայնէն գետինը կը դղրդէր։

41—Եւ Ադոնիա ու անոր բոլոր բազմականները լսեցին. ու անոնք կերուկուրէն ելէր էին. և Յովաբ փողին ձայնը լսելով՝ ըսաւ, Ինչ պիտի ըլլայ այս դղրդման ձայնը որ քաղաքէն կ'ելլէ։ 42—Երբ անիկա տակաւին կը խօսէր, ահա Աբիաթար քահանային որդին Յովնաթան եկաւ. ու Ադոնիա ըսաւ, Եկուր, քանզի դուն քալ մարդ մըն ես, ու բարի աւետիս պիտի տաս։ 43—

---

*կամ, ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

*ԲՋԲ. կը ճեղքուէր

եւ Յովնաթան պատասխան առաւ ու Ադոնիայի ըսաւ, Շեմաակը այս է որ մեր ակերը, Դաւիթ Թագաւորը, Սողոմոնը Թագաւոր բրաւ. **44**—Ու Թագաւորը Սադոկի քահանան և Նաթան մարգարէն ու Յովհադայի որդին Բանեան, և Քերեթհիները ու Փելեթհիները անոր հետ դրկեց. ու զանիկա Թագաւորին ջորիին վրայ հեծուցին. **45**—Ու Սադոկ քահանան ու Նաթան մարգարէն զանիկա Գիհոնի մէջ Թագաւոր օծեցին, ու անկէ ուրախութեամբ ելան, ու քաղաքը դղրդեցաւ. Ե՛ձեր լսած ձայնը այս է։ **46**—Նաև Սողոմոն Թագաւորը Թագաւորութեան աթոռին վրայ նստաւ. **47**—Ու Թագաւորին ծառաներն ալ մեր տէրը, Դաւիթ Թագաւորը, օրհնելու եկան, ու ըսին, Քու Աստուածդ Սողոմոնի անունը քու անունէդ աւելի մեծցընէ, ու անոր աթոռը քու աթոռէդ աւելի բարձրացնէ։ Ու Թագաւորը իր անկողնին վրայ երկրպագութիւն բրաւ **48**—Նաև Թագաւորը այսպէս ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը օրհնեալ ըլլայ, որ այսօր իմ աթոռիս վրայ նստող մը տուաւ, ու իմ աչքերս տեսան։ **49**—Ու Ադոնիայի բոլոր կոչնականները զարհուրեցան, ու ելան և ամէն մէկը իրենց ճամբան գացին։

50—Ու Ադոնիա Սողոմոնի երեսէն վախցաւ, ու ելաւ գնաց ու սեղանին եղջիւրները բռնեց։ **51**—Ու Սողոմոնի պատմեցին ու ըսին, Ահա Ադոնիա Սողոմոն Թագաւորէն վախցաւ, և ահա անիկա սեղանին եղջիւրները բռնեց ու ըսաւ, Սողոմոն Թագաւորը այսօր ինծի երդումով ընէ որ իր ծառան սրով պիտի չսպանէ։ **52**—Ու Սողոմոն ըսաւ, Եթէ անիկա առաքինի ըլլայ, անոր մէկ մազը գետինը պիտի չիյնայ, բայց եթէ անոր վրայ չարութիւն գտնուի, այն ատեն պիտի մեռնի։ **53**—Ու Սողոմոն Թագաւոր դրկեց, ու զանիկա սեղանէն վար իջեցուցին։ Ու անիկա եկաւ ու Սողոմոն Թագաւորին խոնարհութիւն բրաւ. ու Սողոմոն անոր ըսաւ, Տունդ գնա։

Գլ. Բ

Ու երբ Դաւիթի մեռնելու օրերը մօտեցան, իր որդւոյն Սողոմոնի պատուէր առաւ՝ ըսելով, **2**—Ահա ես ամէն երկրին ճամբան կ'երթամ, իսկ դուն ուժովցիր ու *քաջասիրտ եղիր։ **3**—Ու քու Տէր Աստուածդ պահպանութիւնը պահէ, որպէս զի անոր ճամբաներուն մէջ քալես, ու անոր կանոնները, պատուիրանքները, դատաստանները ու վկայութիւնները պահես, ինչպէս Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած է. որպէս զի ինչ որ ընես, և ուր որ երթաս գործածես, յաջողութիւն գըտնես։ **4**—Որպէս զի Տէրը իր խօսքը հաստատէ, զոր ինծի համար խօսեցաւ՝ ըսելով, Եթէ քու որդիներդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն, ու իմ առջեւս բոլոր սրտով, բոլոր հոգւով ու ճշմարտութեամբ քալեն, Իսրայէլի Թագոռին վրայէն քեզմէ մարդ պակաս պիտի չըլլայ։ **5**—Ու դուն գիտես ինչ որ Շարուհեայի որդին Յովաբ ինծի ըրաւ, — ինչ որ Իսրայէլի երկու զօրավարներուն, Ներեանն Աբենների ու Յեթերեան Ամեսայիի, որ. քաղի զանոնք մեռցուց, ու խաղաղութեան ատեն պատերազմի արիւն թափեց, և իր մէջքի գօտիին ու ոտքի կօշիկներուն վրայ պատերազմի արիւն արկից։ **6**—Ուրեմն դուն քու իմաստութիւնդ ի գործ գնէս, ու անոր ճերմակ մազերը խաղաղութեամբ գերեզմանը չիջեցնես։ **7**—Բայց Գաղաադացի Բերզելիի որդիներուն ողորմութիւն ընես, ու քու սեղանիդ ուտողներուն հետ ըլլան. քանզի երբ քու եղբօրդ Աբիսողոմի երեսէն փախայ, ինծի այնպէս մատուցան։ **8**—Ու ահա Բաւուրիմացի Բենիամինեան Գերայի որդին Սեմէի քու քովդ է. ու անիկա Մանայիմ գացած օրս ինծի ծանր նզովք մատուց. բայց երբ անիկա ինծի դիմաւորելու համար Յորդանան իջաւ, Տէրոջմով երդուար ըրի անոր՝ ու ըսի, Քեզ սրով չեմ մեռցներ։ **9**—Ու հիմա զանիկա անմեղ չսեպես, քանզի դուն խելացի մարդ ես ու անոր ինչ ընելիքդ

*ՆԷԲ. այր

գիտես. և անոր ճերմակ մազերը արիւնով գերեզմանը իջեցնես։

10—Ու Դաւիթ իր հայրերուն հետ քնացաւ, ու Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ. **11**—Ու Դաւիթի Իսրայէլի վրայ Թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի էին. Հեբրոն տարի Քերբռնի մէջ Թագաւորութիւն ըրաւ, ու երեսուներիք տարի Երուսաղէմի մէջ Թագաւորութիւն ըրաւ։

12—Ու Սողոմոն իր հօրը Դաւիթի աթոռը նստաւ, ու անոր Թագաւորութիւնը չատ հաստատ եղաւ։

13—Ու Ագգիթի որդին Ադոնիա Սողոմոնի մօրը Բերսաբէի գնաց. ու Բերսաբէ անոր ըսաւ, Արդեօք խաղաղութի՞մբ եկար. ու անիկա ըսաւ, Խաղաղութեամբ. **14**—Ու ըսաւ, Քեզի խօսք մը ունիմ. ու անիկա ըսաւ. Խօսէ. **15**—Ու անիկա ըսաւ, Դուն ազէկ գիտես որ Թագաւորութիւնը իմ էր, ու բոլոր Իսրայէլի երեսը իմ վրաս էր որպէս զի Թագաւոր ըլլամ. բայց Թագաւորութիւնը դարձաւ ու իմ եղբօրս եղաւ, քանզի անոր Տէրոջմէ եղաւ։ **16**—Ու հիմա ես քեզմէ խնդիրք մը կը խնդրեմ, *ինծի ըլ չըսես։ Ու Բերսաբէ անոր ըսաւ, Խօսէ։ **17**—Ու անիկա ըսաւ, Կ'աղաչեմ, Սողոմոն Թագաւորին ըսէ, (քանզի անիկա քեզի ոչ չըսեր,) որ Սունամացի Աբիսագը ինծի կին տայ։ **18**—Ու Բերսաբէ ըսաւ, Ազէկ, ես քեզի համար Թագաւորին կը խօսիմ։

19—Ու Բերսաբէ Սողոմոն Թագաւորին գնաց, որպէս զի Ադոնիայի համար անոր հետ խօսի. ու Թագաւորը զանիկա դիմաւորելու համար ոտք եկաւ ու անոր խոնարհութիւն ըրաւ. ու երը իր աթոռը նստաւ, Թագաւորին մօրը համար ալ աթոռ դնել տուաւ, և անիկա անոր աջ կողմը նստաւ։ **20**—Ու ըսաւ, Ես քեզմէ պզտիկ խնդիրք մը կը խնդրեմ, ինծի ոչ չըսես։ Ու Թագաւորը անոր ըսաւ, Խնդրէ, մայր իմ, քանզի քեզի ոչ պիտի չըսեմ։ **21**—Ու անիկա ըսաւ, Սունամացի Աբիսագը եղբօրդ Ադոնիայի կին տրուի։ **22**—Ու Սողոմոն Թագաւորը պատասխան առաւ ու իր մօրը ըսաւ, Դուն ինչո՞ւ Ադոնիայի համար Սունամացի Աբիսագը կը խնդրես. անոր համար Թագաւորութիւնն ալ խնդրէ, (քանզի անիկա իմ մեծ եղբայրս է,) անոր ու Աբիաթար քահանային և Շարուհեան Յովաբի համար։ **23**—Ու Սողոմոն Թագաւորը Տէրոջմով երդում ըրաւ, ու ըսաւ, Աստուած ինծի այսպէս ու աւելի աւելի ընէ, որ Ադոնիա այդ խօսքը իր կեանքին դէմ խօսեր է։ **24**—Ու հիմա ինչ հաստատուղը, ու ինծ իմ հօրս Դաւիթի աթոռը նստեցնողը, և իր բանին պէս ինծի տուն չինող Տէրը կենդանի է որ Ադոնիա այսօր պիտի մեռցուի։ **25**—Ու Սողոմոն Թագաւորը Յովհադայի որդին Բանեան դրկեց. ու զարկաւ զանիկա, որ մեռաւ։

26—Ու Թագաւորը Աբիաթար քահանային ըսաւ, Անաթովթ, քու ագարակդ, գնա, քանզի դուն մեռնելու արժանի ես, բայց այսօր քեզ չեմ մեռցներ. որովհետեւ իմ հօրս Դաւիթի առջեւ Տէր Եհովայի տապանակը վերցուցիր. ու իմ հօրս ամէն քաշած նեղութիւններուն մասնակից եղար։ **27**—Ու Սողոմոն Աբիաթարը Տէրոջմէ քահանայութենէն հանեց, որպէս զի Սիլովի մէջ Հեղիի տանը համար Տէրոջմէ ըսած խօսքը կատարէ։

28—Ու այս լուրը մինչեւ Յովաբի հասաւ. (քանզի Յովաբ Թէպետեւ Աբիսողոմի հետեւող չէր, բայց Ադոնիայի հետեւող եղաւ.) ու այն ատեն Յովաբ Տէրոջը խորանը փախաւ, ու սեղանին եղջիւրները բռնեց։ **29**—Ու Սողոմոն Թագաւորին իմացուցին Թէ Յովաբ Տէրոջը խորանը փախաւ, և ահա անիկա սեղանին քով է. ու Սողոմոն Յովհադայի որդին Բանեան դրկեց ու ըսաւ, Գնա զարկ զանիկա. **30**—Ու Բանեա Տէրոջը խորանը Յովաբէն գնաց, ու անոր ըսաւ, Թագաւորը այսպէս կ'ըսէ, Դուրս ելիր. ու անիկա ըսաւ, Ոչ, ես հոս պիտի մեռնիմ. ու Բանեա Թագաւորին պատմեց ու ըսաւ, Յովաբ այսպէս ըսաւ, ու ինծի այսպէս պատասխան առաւ։ **31**—Ու Թագաւորը

*ՆԷԲ. իմ երեսս մի դարձներ. Սաղմ. 10։

անոր բաւ, Անոր բանէին պէս ըրէ, ու զանիկա մեռցուր և զանիկա Թագի, որպէս զի իմ վրայէս ու իմ հօրս տանը վրայէն Յովաքի Թագած անմեղ արիւնը վերցնեու։ 32—Ու Տէրը անոր խ֊ֆ֊ճ արիւնը անոր գլուխը դարձնէ. որովհետև անիկա առանց իմ հօրս Դաւիթի գիտութեանը երկու իրկէ արդար ու ազէկ մարդոց, Իսրայէլի սպարապետին Ներեան Աբեննէրի, ու Յուդայի սպարապետին, Յեթերեան Ամեսայիի, վրայ յարձակեցաւ, ու զանոնք սրով մեռցուց։ 33—Ուստի անոնց արիւնը Յովաքի գլուխը ու անոր սերունդին գլուխը դառնայ յաւիտեան. բայց Դաւիթի ու անոր սերունդին և անոր տանը ու անոր աթոռին՝ Տէրոջը կողմանէ յաւիտեան խաղաղութիւն ըլլայ։ 34—Ու Յովիադայի որդին Բանեա ելաւ ու անոր վրայ յարձակեցաւ, ու զանիկա մեռցուց. և անիկա անապատին մէջ իր տունը թաղուեցաւ։ 35—Ու թագաւորը անոր տեղ զօրքերուն վրայ Յովիադայի որդին Բանեան դրաւ. ու թագաւորը Սադովկ քահանան Աբիաթարի տեղ դրաւ։

36—Ու թագաւորը խրկեց, Սեմէին կանչից ու անոր բաւ, Քեզի Երուսաղէմի մէջ տուն մը շինէ ու հոն նստի, ու անկէ տագին կամ անդին չելլես. 37—Բանդի աղէկ գիտնաս որ եթէ ելլես ու Կեդրոն հեղեղատը անցնես, նոյն օրը անպատճառ պիտի մեռնես. ու քու արիւնդ քու գլուխդ պիտի ըլլայ։ 38—Ու Սեմէի թագաւորին ըսաւ, Այս խօսքդ բարի է. իմ թագաւոր տէրս ինչպէս բաւ՝ քու ծառադ այնպէս պիտի ընէ։ Ուստի Սեմէի շատ օրեր Երուսաղէմի մէջ նստաւ։

39—Ու երեք տարիէն հասքը Սեմէիի երկու ծառաներէն Գէթի թագաւորին Մաաքայի որդւոյն Ականսի քով փախան. ու Սեմէիի իմացուցին՝ ըսելով, Ահա քու ծառաներդ Գէթի մէջ են։ 40—Ու Սեմէի ելաւ ու իր իշուն հասնելով գնաց, ու իր ծառաները փընտռելու համար Գէթ գնաց Ականսի քովէն. և Սեմէի գնաց ու իր ծառաները Գէթէն բերաւ։ 41—Ու երբ Սեմէիի Երուսաղէմէն Գէթ երթալը ու դառնալը Սողոմոնի պատմուեցաւ, 42—Ա՛ն ատեն թագաւորը խ֊ղ֊ ղրկեց, ու Սեմէին կանչեց ու անոր բաւ, Չէ՞ որ քեզի Տէրոջմով երդուցի ընել տուի, և քեզի վկայութիւն ըրի ու ըսի Թէ պղէկ գիտնաս որ նէ֊ռ֊ե֊ելած ու ապրելն կամ անդին գացած օրդ անպատճառ պիտի մեռնիս. ու դուն ինծի՝ լաւ խօսքս բարի է, ըսիր. 43—Ու բնչո՞ւ համար Տէրոջը երդումին ու քեզի տուած պատուէրս հնազանդութիւն չըրիր։ 44—Ու թագաւորը Սեմէիի բաւ, Դուն իմ հօրս Դաւիթի դէմ քու բրած բոլոր չարութիւնդ գիտես, որ֊ քու սիրտդ ~ը կը վկայէ՞. ուստի Տէրը քու չարութիւնդ քու գլուխդ պիտի դարձնէ. 45—Բայց Սողոմոն թագաւորը օրհնեալ, ու Դաւիթի աթոռը Տէրոջը առջև յաւիտեան հաստատ պիտի ըլլայ։ 46—Ու թագաւորը Յովիադայի որդւոյն Բանեայի հրաման տուաւ, ու անիկա ելաւ ու զարկաւ զանիկա, որ մեռաւ։ Ու թագաւորութիւնը Սողոմոնի ձեռքին մէջ հաստատուեցաւ։

Գլ. Գ

Ե Սողոմոն եգիպտոսի փարաւոն թագաւորին հետ խնամութիւն բրաւ, ու փարաւոնի աղջիկը առաւ, ու զանիկա Դաւիթի քաղաքը բերաւ, մինչև որ իր տունը ու Տէրոջը տունը ու Երուսաղէմի չորկոյ պարիսպը չշինց լմնցուց։ 2—Սակայն ժողովուրդը բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէր, քանզի մինչև այն օրերը Տէրոջը անուանը տուն չշինուած չէր։

3—Ու Սողոմոն Տէրը կը սիրէր, ու իր հօրը Դաւիթի կանոններուն կը քալէր. միայն Թէ բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէր ու խունկ կը ծխէր։ 4—Ու թագաւորը Գաբաոն գնաց, որպէս զի հոն զոհ մատուցանէ, քանզի մեծ բարձր տեղը անիկա էր. Սողոմոն այն տեղացին վրայ հազար ողջակէզ զոհեց։ 5—Ու Գաբաոն մէջ Տէրը Սողոմոնի երևցաւ գիշերուան երազով. և Աստուած բաւ, Բան մը խնդրէ որ

*ՆԷԲ. զոր փա՛ սիրտդ գիտէ

քեզի տամ։ 6—Ու Սողոմոն բաւ, Դուն քու ծառայիդ, իմ հօրս Դաւիթի, մեծ ողորմութիւն ըրիր, ինչպէս անիկա քու առջեդ ճշմարտութեամբ, արդարութեամբ, և ուղիղ սրտով քեզի հետ քալեց, ու անոր՝ այս մեծ ողորմութիւնը պահեցիր, ու իր աթոռը նստող որդի մը տուիր անոր, ինչպէս այսօր կ՚երևի։ 7—Ու հիմա, ով Տէր Աստուած իմ, դուն քու ծառադ իմ հօրս Դաւիթի տեղ թագաւոր ըրիր. բայց ես պզտիկ ազայ մըն եմ, չեմ գիտեր մուտքս ու ելքս։ 8—Ու քու ծառադ քու ընտրած ժողովուրդիդ մէջ է, որ չսասրուր, անթիւ ու անհամար ժողովուրդ մըն է։ 9—Ուստի քու ծառայիդ *խնամասուն սիրտ տուր, որպէս զի քու ժողովուրդդ դատէ, և բարին ու չարը որշէ. քանզի այս քու մեծ ժողովուրդդ ո՞վ կրնայ դատել։ 10—Ու այս խօսքը, այսինքն Սողոմոնի այս բանը խնդրելը, Տէրոջը աչքերուն հաճոյ երեւցաւ։ 11—Ու Աստուած անոր բաւ, Որովհետև այս բանը խնդրեցիր, ու քեզի չսա օրեր չխնդրեցիր, ու քեզի հարստութիւն չխնդրեցիր, ու քու թշնամիներուդ հոգին չխնդրեցիր, հապա իրաւունքը ւիմանալու խնամասութիւն խնդրեցիր. 12—Ահա քու խօսքիդ պէս ըրի. ահա քեզի իմաստուն ու հանճարեղ սիրտ տուի, այնպէս որ քեզմէ առաջ քեզի պէս մէկը եղած չէ, ու քեզմէ ետքն ալ քու նմանդ պիտի չելլէ։ 13—Նաև քու չխնդրածդ ալ քեզի տուի, թէ՛ հարստութիւն և թէ՛ փառք, այնպէս որ քու կեանքդ բոլոր օրերուն մէջ թագաւորներուն մէջ քեզի պէս մէկը չզտնուի։ 14—Ու եթէ իմ ճամբաներուս մէջ քալես՝ իմ հրամաններս ու պատուիրանքներս պահելով, ինչպէս քու հայրդ Դաւիթ քալեց, այն ատեն քու օրերդ պիտի չսացնեմ։ 15—Ու Սողոմոն արթնցաւ. և ահա երազ էր. ու Երուսաղէմ գնաց, ու Տէրոջը ուխտին տապանակին առջև կայնեցաւ, և ողջակէզներ մատուց ու խաղաղութեան զոհեր բրաւ, ու իր բոլոր ծառաներուն կոչումներ բրաւ։

*ՆԷԲ. լսող †ՆԷԲ. լսելու

16—Այն ատեն երկու պառնիկ կիներ թագաւորին եկան, ու անոր առջև կայնեցան. 17—Ու կիներէն մէկը բաւ, Ով տէր իմ, ուշադրէ ինծի. ես ու այս կինը մէկ տան մէջ կը բնակինք, ու նոյն տանը մէջ տալ փավ ծնայ. 18—Ու իմ ծնանելուս երրորդ օրը այս կինն ալ ծնաւ. ու մենք մէկտեղ էինք. տանը մէջ մեզի հետ օտար մարդ չկար, հապա տանը մէջ մենք երկու փ֊ներ էինք. 19—Ու այս կնոջ տղան գիշերով մեռաւ, քանզի ասիկա անոր վրայ պառկեցաւ. 20—Ու կէս գիշերուն ելաւ, և քու աղախնիդիդ քընացած ատենը՝ իմ տղա փավիս առաւ ու զանիկա իր փազը պառկեցուց, ու իր մեռած տղան իմ ծոցս պառկեցուց. 21—Ու երբ առաւօտուն ելայ որպէս զի տղուս ծիծ տամ, ահա անիկա մեռած էր. ու առաւօտուն մանրազննութեամբ անոր նայեցայ, և ահա անիկա իմ ծնած տղաս չէր. 22—Իսկ միւս կինը բաւ, Ոչ, հապա ազէ եղողը իմ որդիս է, ու մեռածը քու տղադ է. ու առիկա բաւ, Ոչ, հապա մեռածը քու տղադ է, ու ազէ եղողը իմ տղաս է. ու այսպէս խօսեցան թագաւորին առջև. 23—Այն ատեն թագաւորը բաւ, Ասիկա կ՚ըսէ, իմ տղաս այս ազէ եղողն է, ու մեռածը քու տղադ է, ու անիկա կ՚ըսէ, Ոչ, հապա մեռածը քու տղադ է, ու ազէ եղողը իմ տղաս է. 24—Ու թագաւորը բաւ, Ինծի սուր մը բերէք. ու թագաւորին առջև սուր մը բերին. 25—Ու թագաւորը բաւ, Ազէ եղող տղան կարեցէք, երկու կտոր ըրէք, ու կէսը մէկուն ու կէսն ալ միւսին տուէք. 26—Այն ատեն ազէ տղուն մայրը եղող կինը թագաւորին պատասխան տուաւ, ու իր տղուն վրայ ալէքը գալարուելուն համար՝ այսպէս բաւ, Ով տէր իմ, ուշադրէ ինծի. ազէ տղան անոր տուէք, ու զանիկա մի մեռցնէք. Բայց միւսը բաւ, Ոչ ինծի ըլլայ, ոչ քեզի. կտրէք ճեղքեցէք. 27—Ու թագաւորը պատասխան տուաւ ու բաւ, Ազէ տղան այս կնոջ տուէք, ու չըլլայ որ զանիկա մեռցնէք, *ուրկէ անոր մայրը ասիկա է. 28—Ու բոլոր Իսրայէլ թագաւորին կրած դատաստանը լսելով թագաւո-

բէն վախցան. քանզի տեսան որ անոր վրայ Աստուծոյ իմաստութիւնը կայ գատաստան ընելու համար։

Գլ. Դ

Եւ Սողոմոն թագաւորը բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր էր։ 2—Ու անոր իշխաններուն սոսկը էին. Սադոկին որդին Ազարիա քահանայ էր։ 3—*Սիսայի որդիները Եղիբորէթ ու Աբիա սուենագրիչներ էին. և Աբիղուդի որդին Յոսափատ յիշատակաց գրիչ էր։ 4—Ու Յոյադայի որդին Բանեա զօրքերուն վրայ էր. և Սադոկ ու Աբիաթար քահանաներ էին. 5—Ու Նաթանի որդին Ազարիա դ–ը–ր–ց դարձակալներուն վրայ էր. ու Նաթանի որդին Զաբուդ նախարար ու թագաւորին բարեկամն էր։ 6—Ու Աքիսար սանեկ հրամանատարն էր. ու Աբդայի որդին Ադոնիրամ հարկերուն վրայ էր։

7—Ու Սողոմոն բոլոր Իսրայէլի վրայ տասներկու գործակալներ ունէր, ու անոնք թագաւորը ու անոր տունը կը կերակրեին. — կերակրելը ամէն մէկուն տարին մէկ ամիս կրնար։ 8—Ու անոնց անուններն սոսկը են. Եփրեմի լեռան մէջ՝ †Բենհուր. 9—Մաքսոսի, Սաղաբինի, Բեթսամիսի ու Ելոնբեթանանի մէջ՝ ‡Բենդեքակար. 10—Արաբովթի մէջ՝ ||Բենհեսեդ, որու §Ս–Ո–Խ–Ե–Ի–Ե–Ր Սոքով ու բոլոր Ոփերի երկիրը. 11—Բոլոր Դոմրի գաւառին մէջ՝ Ցրհենաբինադաբ Սողոմոնի աղջիկը Տափաթ սոսը կինն էր. 12—Թանաքի ու Մաղեդոմի մէջ, ու Յեզրայէլի տակ՝ Սաբթանի քով եղող բոլոր Բեթսանի մէջ, — Բեթսանէ մինչև Աբէլմսուլա, — մինչև Յեկմեամ անդին կողմը՝ Աբիդուդի որդին Բանան. 13—Ռամոթգաղաադի մէջ՝ **Բենգաբեր. Գադացիի մէջ եղող Մանասեան Յայիրի գիւղաքաղքերը. ու Բասանի մէջ եղող Արգոբի նահանգը՝ վաթսուն մեծ պարսպապատ ու պղնձանիգ փաղաքներ անոր էր Ս–Ր–Բ–Ե–Ի–Ե–Ի։ 14—Մանայիմի մէջ՝ Ադդովի որդին Աբինադաբ. 15—Նեփթալիի մէջ՝ Աբիմաաս. ասիկա ալ Սողոմոնի աղջիկը Բասեմաթը կին առաւ. 16—Ասերի ու Բաալոթի մէջ՝ Բուսթի որդին Բանան. 17—Իսաքարի մէջ՝ Փարուախի որդին Յոսափատ. 18—Բենիամինի մէջ՝ Էլայի որդին Սեմէի. 19—Գաղաադի երկիրը ու Ամորհացւոց Սիհոն թագաւորին ու Բասանի Ովգ թագաւորին երկիրը՝ Ուրիի որդին Գաբեր. ու այն երկրին մէջ գ–ր–ծ մէկ գործակալ կար։

20—Յուդա ու Իսրայէլ շատ բազմութեան կողմանէ ծովուն եզերքը եղող աւազին չափ շատ էին. կ'ուտէին, կը խմէին և ուրախութիւն կ'ընէին։ 21—Ու Սողոմոն Եփրատ գետէն մինչև Փղշտացւոց երկիրը ու մինչև Եգիպտոսի սահմանը՝ բոլոր թագաւորութիւններուն վրայ կ'իշխէր. և †–ներ ընծաներ կը բերէին ու Սողոմոնի ծառայութիւն կ'ընէին՝ անոր կեանքին բոլոր օրերուն մէջ։

22—Ու Սողոմոնի մէկ օրուան հացին սայ էր. երեսուն քոռ նաշխ ու վաթսուն քոռ ալիւր, 23—Տասը գեր արջառ ու քսան արօտական արջառ ու հարիւր ոչխար, բայց է եղջերուներէն, այծեամներէն, *վիճերէն ու գիրցուած թռչուններէն։ 24—Քանզի անիկա Թեմսէն բոլոր ստգիի կողմի՝ Թափսախ մինչև Գազա՝ Թեմսէն ստգիի կողմը եղող բոլոր թագաւորներուն վրայ կ'իշխէր. ու իր բոլորտիքը եղողներուն հետ խաղաղութիւն ունէր։ 25—Ու Սողոմոնի բոլոր օրերուն մէջ՝ Յուդա ու Իսրայէլ, Դանէ մինչև Բերսաբէէ, իւրաքանչիւրը մերդ իր որթին տակ ու իր թզենիին տակ ապահովո|թեամբ կը նստէր։

26—Ու Սողոմոն իր կառքի ձիերուն համար քառասուն հազար ախոռ ունէր, ու տասներկու հազար ձիաւոր։ 27—Ու այն գործակալները, ամէն մէկը իր ամսուն մէջ, Սողոմոն թագաւորը ու Սողոմոնի Թագաւորին սեղանը բոլոր մօտեցողները կը կերակրէին՝ բան մը պակաս չընելով։ 28—Նաև ձիերուն ու արվարաներուն համար, անոնց եղած տեղը, ամէն մէկը իր վրայ դրուած հարկին չափովը գարի ու յարդ կը բերէին։

29—Ու Աստուած Սողոմոնի իմաստութիւն ու խիստ շատ հանճար և սրտի լայնութիւն տուաւ. ծովուն եզերքը եղող աւազին չափ։ 30—Ու Սողոմոնի իմաստութիւնը բոլոր արեւելցիներուն իմաստութենէն ու Եգիպտացւոց բոլոր իմաստութենէն աւելի էր։ 31—Ու անիկա ամէն մարդոցմէ իմաստուն էր. Եզրահացի Եթանէ, ու Մաուղի որդւոցմէն, Եմանէ, Քալքոլէ ու Դարդայէ, է–թ–ա–ց–ւ–ե–ր էր. ու բոլոր չրջակայ ազգերուն մէջ անուանի եղաւ։ 32—Ու անիկա երեք հազար առակ խօսեցաւ, ու անոր է–ր–գ–ե–ր երգերը հազար ու հինգ էին։ 33—Ու անիկա ծառերուն վրայ խօսեցաւ, Լիբանանի եղեւնին մինչև պատի վրայ բուսնող զոպան, ու նաև անասուններու վրայ, թռչուններու վրայ, սողուններու վրայ ու ձկներու վրայ խօսեցաւ։ 34—Ու ամէն ժողովուրդներէն, — անոր իմաստութեան համբաւը լսող երկրի բոլոր թագաւորներէն՝ Սողոմոնի իմաստութիւնը մարդ ընելու կու գային։

Գլ. Ե

Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը իր ծառաները Սողոմոնի դրկեց, քանզի լսեր էր որ անոր հօրը տեղ զանիկա թագաւոր օծեր են. վասն զի Քիրամ միշտ Դաւիթը կը սիրէր։ 2—Սողոմոն ալ Քիրամի †–ղրկեց ու բսաւ, 3—Դուն գիտես որ իմ հայրս Դաւիթ չկրցաւ իր Տէր Աստուծոյն անուանը տուն չինել, այն պատերազմներուն պատճառաւ՝ որոնք անոր բոլորտիքը պատեր էին, մինչև որ Տէրը զանոնք անոր ոտքերուն թաթխուն տակ դրաւ։ 4—Բայց հիմա իմ Տէր Աստուածս ամէն կողմանէ ինծի հանգստութիւն տուաւ. թշնամի չկայ, ու ձախորդ պատահար մը չկայ։ 5—Ու ահա ես կ'ըսեմ որ իմ Տէր Աստուծոյս անուանը տուն մը չինեմ, ինչպես Տէրը իմ հօրս Դաւիթի հետ խօսեցաւ՝ ըսելով, Քու որդիդ, զոր քու տեղդ քու աթոռիդ վրայ պիտի նստեցնեմ, անիկա իմ անուանս տուն պիտի չինէ։ 6—Ու հիմա հրաման ըրէ որ ինծի համար Լիբանանէ եղևինները կտրեն. ու իմ ծառաներս քու ծառաներուդ հետ ըլլան. և քու ծառաներուդ վարձքը քու ամէն բաժիդ պէս քեզի կու տամ. քանզի դուն գիտես որ մեր մէջ Սիդոնացւոց պէս փայտ կտրող վարպետ մարդ չկայ։

7—Ու երբ Քիրամ Սողոմոնի խօսքերը լսեց՝ շատ ուրախացաւ, ու ըսաւ, Այս մեծ ժողովուրդին վրայ Դաւիթի իմաստուն որդի սուղ Տէրը այսօր օրհնեալ ըլլայ։ 8—Ու Քիրամ Սողոմոնի †–ղրկեց՝ ըսելով, Ինծի ղրկած է–ե–ք լսեցի. ես եղևնափայտի ու մայր փայտի համար քու ամէն կամքդ պիտի կատարեմ։ 9—Իմ ծառաներս Լիբանանի ծովը իջեցնեն. ու ես զանոնք լաստեր չ–ի–ւ–լ մինչև իմ ցուցուցած տեղը ծովին տանիմ, և հոն զանոնք քակեմ, ու դուն վերցնես. դուն ալ իմ տանս պաշար տալով՝ իմ կամքս կատարես։ 10—Ու Քիրամ Սողոմոնի ուզածին չափ եղևնափայտ ու մայր փայտ կու տար։ 11—Ու Սողոմոն Քիրամի տանը համար քսան հազար քոռ ցորեն, ու *երկու հարիւր մար մաքուր իւղ պատրաստ կու տար։ Սողոմոն Քիրամի տարեկան այսպէս կու տար։ 12—Ու Տէրը Սողոմոնի իմաստութիւն տուաւ, ինչպէս անոր խոստացեր էր. ու Քիրամի ու Սողոմոնի մէջինդ խաղաղութիւն կար, ու երկուքը դաշնակցութիւն ըրին։

13—Ու Սողոմոն թագաւորը բոլոր Իսրայէլէ †մարդ ժողվեց, ու ժողվածը երեսուն հազար մարդ եղաւ։ 14—Ու զանոնք յօրդորաբար՝ ամիսը տասնական հազար հոգի Լիբանան կը ղրկէր, որոնք մէկ ամիս Լիբանան կը կեծային, ու երկու ամիս իրենց տունը։ Ադոնիրամ այս մարդահարկին վրայ էր։ 15—Ու Սողոմոն եօթանասուն հազար բեռնակիր, ու լեռը ութսուն հազար

*Կամ, Սուսայէ. տես ա Մն. ժբ. 16։
†Այսինքն, Ովբի որդին
‡Այսինքն, Դեկաբի որդին
||Այսինքն, Հեսեդի որդին
§Այսինքն, Աբինադաբի որդին
**Այսինքն, Գաբերի որդին

*Կամ, գոմիշներէն

*Եբր. քսան քոռ ձեթաւած իւղ
†Կամ, մարդահարկ

փայտ կարող ունէր, 16—Բաց ի Սողոմոնի երեք հազար երեսիւր գլխաւոր գործակալներէն՝ որոնք գործը բանող ժողովուրդին վրայ կ՚իշխէին, 17—Ու թագաւորը հրամայեց որ մեծ ու պատուական քարեր կարին, որպէս զի տանը հիմը տաշուած քարերով դնեն, 18—Ու Սողոմոնի վարպետները ու Քիբլայի վարպետները և Գեբալացիք փայտերը ու քարերը տաշեցին ու պատրաստեցին՝ տանը շինութեանը համար։

Գլ. Զ

1 Ու Իսրայէլի որդիներուն եգիպտոսի երկրէն ելլելուն չորս հարիւր ութսուներորդ տարին, — Սողոմոնի Իսրայէլի վրայ թագաւորելուն չորրորդ տարին, Զիւս ամսուն, այսինքն երկրորդ ամսուն, մէկ Տէրոջը տանը *շինել սկսաւ։

2 Ու Սողոմոն թագաւորին՝ Տէրոջը համար շինած տանը երկայնութիւնը վաթսուն կանգուն, լայնութիւնը քսան ու բարձրութիւնը երեսուն կանգուն էր։ 3 Ու տանը առաջին սրահը քսան կանգուն երկայնութիւն ունէր, որ տանը լայնութեանը չափ էր, ու անոր լայնութիւնը տանը առջևէն տասը կանգուն էր։ 4 Ու տանը †վանդակապատ պատուհաններ շինեց։ 5 Ու տանը պատին բոլորտիքը տանը պատին կցուած դասիճոններ շինեց, Թէ՛ տաճարին և Թէ՛ դարբիրին բոլորտիքը, և *շուրջանակի սենեակներ շինեց։ 6 Վարի կարգին լայնութիւնը հինգ կանգուն, ու միջին [*]բէյէն լայնութիւնը վեց կանգուն, ու երրորդին լայնութիւնը եօթը կանգուն էր. քանզի դուրսէն տանը բոլորտիքը միջոցներ ձգեց ճէրեռնէրը հէնցնելու համար, որպէս զի տանը պատին մէջ չմտնեն։ 7 Ու երբ տանը կը շինուէր, քարահանքին մէջ պատրաստուած քարերով կը շինուէր, այնպէս որ անոր շինուած ատեանը մուրճի կամ տապարի և կամ ուրիշ երկաթէ գործիքի մը ձայն չլսուեցաւ տանը մէջ։ 8 Մէջտեղի կարգին դուռը տանը *ա՛ջ կողմն էր, ու չրխնաելուստ անոր ներքեւով միջին կարգը, ու միջինէն կարգին երրորդ կարգը կ՚ելլէին։ 9 Ու տանը շինեց ու զանիկա լմնցուց, ու տանը ձեղունը եղեւնափայտի տախտակներով գրատագործ շինեց։ 10 Ու բոլոր տանը վրայ †սենեակները կարգը հինգ կանգուն բարձրութեամբ շինեց, ու եղեւնափայտերով տանը կցուած էր։

11 Ու Տէրոջը խօսքը Սողոմոնի եղաւ՝ ըսելով, 12 Հիմա որ դուն այս տանը կը շինես, եթէ իմ կանոններովս քալես, ու իմ դատաստաններս ի գործ դնես, ու իմ բոլոր պատուիրանքներս պահես՝ անոնց մէջ քալելով, այն ատեն քու վրադ պիտի հաստատեմ այն խօսքը զոր քու հօրդ Դաւիթի խօսեցեր եմ։ 13 Ու Իսրայէլի որդիներուն մէջ պիտի բնակիմ, ու իմ ժողովուրդս Իսրայէլը պիտի չթողամ։

14 Ու Սողոմոն տանը շինեց ու զանիկա լմնցուց։ 15 Ու տանը պատերը անոր ներսիդիւն, յատակին մինչև պատերուն վերի ծայրը, եղեւնափայտի տախտակներով շինեց. *շուրջ ներսիդին փայտով ծածկեց. ու տանը յատակը մայր փայտի տախտակներով պատեց։ 16 Ու տանը հետև կողմին քսան կանգունը, յատակէն մինչև պատին ծայրը, եղեւնափայտի տախտակներով շինեց. ու այն ներքի միջոցը դարբիրին, այսինքն սրբութեանց սրբութիւնին, համար շինեց։ 17 Բայց տանը, այսինքն առջևի տաճարը, քառասուն կանգուն էր։ 18 Ու տանը մէջ եղող եղեւնափայտերուն վրայ գընդակներ ու բացուած ծաղիկներ փորագրուած էին. ու ամէնը եղեւնափայտ էր՝ ամէնէն քար մը չէր երեւնար։ 19 Ու դարբիրը ներքին տանը մէջ պատրաստեց, որպէս զի հոն Տէրոջը ուխտին տապանակը դնէ։ 20 Ու դարբիրին երեսը քսան կանգուն երկայն էր, և անոր լայնութիւնը քսան կանգուն՝ ու բարձրութիւնը քսան կանգուն էր. և զանիկա մաքուր ոսկիով պատեց. եղեւնափայտէ սեղանն ալ պատեց։ 21 Ուստի Սողոմոն տանը ներսի կողմը մաքուր ոսկիով պատեց. ու գաբիրին առջև ոսկի չղխաներով [†]ծէր մը անցուց, և զանիկա ոսկիով պատեց։ 22 Ու բոլոր տանը ոսկիով պատեց առանց տեղ մը ձգելու, և գաբիրին քովի բոլոր սեղանն ալ ոսկիով պատեց։

23 Ու գաբիրին մէջ *իւզալի փայտէ՝ երկու քերովբէներ շինեց, — ամէնոյն երկայնութիւնը տասը կանգուն էր։ 24 Ու քերովբէներէն մէկ թեւը հինգ կանգուն, ու քերովբէին միւս թեւը հինգ կանգուն էր. մէկ թեւին ծայրէն մինչև միւս թեւին ծայրը տասը կանգուն էր։ 25 Ու միւս քերովբէինն ալ տասը կանգուն էր, երկու քերովբէներուն չափը ու ձեւը մէկ էր։ 26 Մէկ քերովբէին բարձրութիւնը տասը կանգուն էր, ու միւս քերովբէինն ալ նոյնչափ էր։ 27 Ու քերովբէները ներքին տանը մէջ դրաւ. ու քերովբէները իրենց թեւերը կ՚երկնցնէին. մէկուն թեւը մէկ պատին կը դպչէր, ու միւս քերովբէին թեւը միւս պատին կը դպչէր. և անոնց †— թեւերը տանը մէջտեղը թեւ թեւի կը դպչէին։ 28 Ու քերովբէները ոսկիով պատեց։

29 Ու տանը բոլոր պատերուն վրայ քերովբէներ, արմաւենիներ ու բացուած ծաղիկներ քանդականաձև փորագրեց, Թէ՛ ներսի կողմը և Թէ՛ դուրսի կողմը։ 30 Ու տանը ներսի ու դուրսի յատակը ոսկիով պատեց։

31 Ու դարբիրին դրանը իւզալի փայտէ փեղկեր շինեց, որոնք դրանդիքներով մէկտեղ ո՟ւրն հինգերորդ մասն էին։ 32 Ու իւզալի փայտէ շինուած երկու փեղկերուն վրայ քերովբէներ, որ հաւերներ ու բացուած ծաղիկներ փորագրեց, և զանոնք ոսկիով պատեց, քերովբէներուն ու արմաւենիներուն վրայ ալ ոսկին տարածելով։

33 Նոյնպէս ալ տաճարին դրանը չորրորդ մասն էին, իւզալի փայտէ դրանդիքներ շինեց, որոնք ո՟ւրն չորրորդ մասն էին։ 34 Ու գրանը երկու փեղկերը մայր փայտէ էին. մէկ փեղկը երկու կռատի ըլլալով կը ծալուէր, ու միւս փեղկը երկու կռատի ըլլալով կը ծալուէր։ 35 Ու անոնց վրայ քերովբէներ, արմաւենիներ ու բացուած ծաղիկներ փորագրեց, և գրատագործուն վրայ չափազանց ոսկիով պատեց։

36 Ու ներքին գաւիթը երեք կարգ տաշուած քարերով ու մէկ կարգ եղեւնափայտի †հէծաններով շինեց։

37 Տէրոջը տանը հիմը չորրորդ տարին Զիւս ամսուն մէջ դրուեցաւ։ 38 Ու մեսասաներորդ տարին Բուլ ամսուն, այսինքն ութերորդ ամսուն, մէջ տանը իրեն վերաբերեալ ամէն բանովը լմնցաւ։ Այսպէս եօթը տարուան մէջ շինեց զանիկա։

Գլ. Է

1 Սողոմոն իր տունը տասներեք տարուան մէջ շինեց, ու *չորեքհարիւր լմնցուց իր բոլոր տունը։

2 Ու Լիբանանի անտառին տունն ալ շինեց. երկայնութիւնը հարիւր կանգուն, ու լայնութիւնը յիսուն կանգուն, ու բարձրութիւնը երեսուն կանգուն. չորս կարգ եղեւնափայտէ սիւներու վրայ չէին, ու սիւներուն վրայ եղեւնափայտէ հէծաններ զետեղ։ 3 Ու նաև եղեւնափայտէ յարկ մը շինեց այն գերաններուն վրայ, որոնք քառասուներհինգ սիւներու վրայ էին. ու տանց կարգը տասներհինգ էր։ 4 Ու երեք կարգ երեսու դիմացի դիմաց չորս անկեալատ պատուհաններ կային։ 5 Ու բոլոր դռները ու դրանդիքները քառակուսի էին, և վանդակաւոր պատուհանները երեսու դիմացի դիմաց երեք կարգ էին։

6 Ու սիւներուն սրահ շինեց, երկայնութիւնը յիսուն կանգուն ու լայնութիւնը երեսուն կանգուն. ու անոնց առջև սրահ մը, ու անոնց առջև սիւներ ու †սանդուխ մը կային։ 7 Նաև աթոռի սրահ մը շինեց որ դատի սրահ էր, ու անիկա ոտքէ մինչև գլուխ եղեւնափայտով ծածկեց։ Ու անոր հակառակ կողմը իր տունը որ ուրիշ բակի մը մէջ էր, նոյնպիսի գործ մը եղաւ։ Նաև Փարաւոնի դստեր համար որ Սողոմոն առեր էր, տուն մը շինեց նոյն սրահին պէս։

8 Այս բոլորը քարերէ թանկագին քարերէ էին, որոնք ներսէն ու դուրսէն ճարտարապետի գործի պէս ճշտիւ կտրտուած էին։ Նաև հիմէն մինչև ծայրը ու դուրսի մեծ բակին կողմը։ 9 Այս բոլորը թանկագին քարերէ էին, ներսէն ու դուրսէն ճշտիւ կտրտուած, ու ներսէն ու դուրսէն սղոցուած։ 10 Հիմերը թանկագին քարերէ էին, մեծ քարեր, տասը կանգունանոց քարեր ու ութ կանգունանոց քարեր։ 11 Ու վերէն թանկագին քարեր, ճշտիւ կտրտուած, ու եղեւնափայտ։ 12 Ու մեծ բակին շուրջը երեք կարգ տաշուած քարերով ու մէկ կարգ եղեւնափայտի †հէծաններով շինեց։ Ինչպէս Տէրոջը տանը ներսի սրահը ու տանը սրահը։

13 Ու Սողոմոն թագաւոր մարդ ղրկեց ու Տիւրոսէն Քիրամ բերել տուաւ։ 14 Ան այրիի մը որդի էր Նեփթաղիմի ցեղէն, ու հայրը Տիւրոսացի մարդ մըն էր, պղինձի գործակատար մը, ու իմաստութիւն, հանճար ու գիտութիւն ունէր պղինձի ամէն գործ ընելու համար։ Ան եկաւ թագաւոր Սողոմոնի մօտ ու անոր ամէն գործը ըրաւ։

15 Ան ձուլեց երկու սիւն պղինձէ, մէկ սիւնը տասնութ կանգուն բարձր էր, ու տասներկու կանգունանոց չափ մը կը պատէր զայն. ու միւս սիւնն ալ նոյնպէս էր։ 16 Ու սիւներուն վրայ դնելու համար երկու գլուխ ձուլեց պղինձէ, հինգ կանգուն մէկ գլուխը, ու հինգ կանգուն միւս գլուխը։ 17 Ցանցեր ալ եղան սիւներուն գլուխներուն վրայ, շղթայի գործ, եօթը մէկ գլուխին համար, ու եօթը միւս գլուխին համար։ 18 Ուստի սիւները շինեց, ու ցանցերուն վրայ շուրջ երկու շարք նուռներ, մէկ գլուխին համար, ու միւս գլուխին համար։ 19 Ու սիւներուն վրայ եղող գլուխները սրահին մէջ շուշանի գործ էին, չորս կանգուն։ 20 Ու գլուխները սիւներուն վրայ էին, նաև ցանցերուն քովը, որ նուռներ էին, երկու հարիւր նուռ շուրջանակի ամէն գլուխին համար։ 21 Ու սիւները տաճարին սրահին առջև կանգնեց, ու աջ կողմի սիւնը կանգնեց ու անոր անունը Յաքին դրաւ, ու ձախ կողմի սիւնը կանգնեց ու անոր անունը Բոոզ դրաւ։ 22 Ու սիւներուն գլուխը շուշանի գործ էր։ Ուստի սիւներուն գործը լմնցաւ։

23 Ու ձուլածոյ ծովը շինեց, տասը կանգուն մէկ կողմէն մինչև միւս կողմը, կլոր էր, ու հինգ կանգուն բարձր էր, ու երեսուն կանգուն չափ մը կը պատէր զայն շուրջանակի։ 24 Ու անոր եզերքին տակ շուրջանակի կոճղեր կային, տասը կանգունի մէջ տասը կոճղեր, որոնք ծովուն շուրջանակի կը պատէին, երկու շարք կոճղեր ձուլածոյ էին։ 25 Ան կեցած էր տասներկու եզներու վրայ, երեքը հիւսիսի կողմը կը նայէին, երեքը արեւմուտքի կողմը կը նայէին, երեքը հարաւի կողմը կը նայէին, երեքը արեւելքի կողմը կը նայէին, ու ծովը անոնց վրայ էր, ու անոնց ամէն ետեւի մասերը ներսի կողմը էին։ 26 Ու անոր հաստութիւնը մատնաչափ մը էր, ու անոր եզերքը գաւաթի եզերքի պէս էր, շուշանի ծաղկի պէս։ Երկու հազար բաթ կը տեղաւորէր։

27 Ու տասը պղինձէ տակառներ շինեց, չորս կանգուն տակառ մը, ու տասը կանգուն բարձր էր։ 28 Ու տակառները այսպէս էին. կողերը կային, ու կողերը շրջանակներուն մէջ էին։ 29 Ու շրջանակներուն վրայ որ կային, առիւծներ, եզներ ու քերովբէներ էին, ու շրջանակներուն վրայ ալ վերէն ու վարէն կային առիւծներ ու եզներ, կախուած գործ։ 30 Ու տակառ մը ունէր չորս պղինձէ անիւներ ու պղինձէ առանցքներ, ու չորս անկիւնները ուսեր կային։ Ուսերը տակառին տակ ձուլուած էին, ամէն մէկ ուսին դէմ ծաղկեղէն գործ մը կար։ 31 Ու անոր բերանը գլխուն մէջ ու վերեւ կանգուն մը էր, ու անոր բերանը կլոր էր, հիմի պէս կանգուն մէկ ու կէս, ու անոր բերանին վրայ ալ փորագրութիւններ կային, ու անոր կողերը քառակուսի էին, շրջանակներ չէին, ոչ ալ կլոր էին։ 32 Ու չորս անիւները կողերուն տակ էին, ու անիւներուն առանցքները տակառին մէջ էին, ու անիւներուն բարձրութիւնը կանգուն մէկ ու կէս էր։ 33 Ու անիւները կառքի անիւներու պէս էին, անոնց առանցքները, գանակները, շրջանակները, ու ուսերը ամէնը ձուլածոյ էին։ 34 Ու չորս ուսերը չորս անկիւնները տակառին էին, ուսերը տակառին հետ մէկ կտոր էին։ 35 Ու տակառին վերեւ կանգուն կէս մը բարձրութեամբ կլոր շրջանակ մը կար, ու տակառին վերեւ անոր ուսերը ու շրջանակները անոր հետ մէկ կտոր էին։ 36 Ու անոր ուսերուն ու շրջանակներուն վրայ, ամէն մէկ ազատ տեղին վրայ, քերովբէներ, առիւծներ ու արմաւենիներ փորագրեց, ամէն կողմէ շուրջանակի։ 37 Ասանկ տասը տակառ շինեց, ամէնքն ալ մէկ ձուլուածքով, մէկ չափով, մէկ ձեւով։

38 Ու տասը պղինձէ աման շինեց, չորս հարիւր աման կը տեղաւորէր, չորս կանգուն աման, տասը տակառներէն մէկ աման։ 39 Ու տակառները հինգ հինգ դրաւ տանը աջ կողմը, ու հինգ տակառները տանը ձախ կողմը, ու ծովը տանը աջ կողմը դրաւ, արեւելեան կողմը, հարաւին դիմաց։

40 Ու Քիրամ ամաններ, բահեր ու ցանկեր շինեց։ Ուստի Քիրամ Սողոմոն թագաւորին համար Տէրոջը տանը համար շինելու գործը լմնցուց։

41 Երկու սիւները, ու սիւներուն վրայ եղող գլուխներուն երկու գնդակները, ու սիւներուն վրայ եղող գլուխներուն երկու գնդակները ծածկող երկու ցանցերը, 42 ու ցանցերուն չորս հարիւր նուռները, ցանցերուն երկու շարք նուռները, սիւներուն վրայ եղող գլուխներուն գնդակները ծածկելու համար, 43 ու տասը տակառները ու տակառներուն վրայ տասը ամանները, 44 ու ծովը ու ծովուն տակ եղող տասներկու եզները, 45 ու կճուճները, բահերը ու ցանկերը, Տէրոջը տանը համար Քիրամ Սողոմոն թագաւորին համար շինած այս բոլոր ամանները պղինձէ էին։ 46 Ցորդանանի դաշտին մէջ, Սուքքովթի ու Սարեդաթայի միջև, կաւի կաղապարներու մէջ ձուլեց զանոնք թագաւորը։ 47 Ու Սողոմոն չկշռեց այս բոլոր ամանները, որովհետև շատ շատ էին, պղինձին կշիռը չգիտցուեցաւ։

48 Ու Սողոմոն շինեց Տէրոջը տանը բոլոր կահերը, ոսկիէ խունկի սեղանը, ոսկիէ սեղանը որուն վրայ հացի երեսները կային, 49 ու մաքուր ոսկիէ ճրագակալները, հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը ներքինի առջև, ոսկիէ ծաղիկները, ճրագները ու մկրատները, 50 ու մաքուր ոսկիէ գաւաթները, մոմակալները, կճուճները, ջամբռները ու խունկի ամանները, ոսկիէ դռնակները, տանը ներքին սրբութեանց սրբութեան դռներուն համար, ու տանը դռներուն համար, այսինքն տաճարին դռներուն համար։

51 Ուստի Սողոմոն թագաւորին շինած ամէն գործը լմնցաւ։ Ու Սողոմոն իր հօրը Դաւիթի նուիրած բաները մտցուց, արծաթը, ոսկին ու ամանները, ու դրաւ Տէրոջը տանը գանձարանին մէջ։

Գլ. Ը

1 Այն ատեն Սողոմոն Երուսաղէմի մէջ ժողվեց Իսրայէլի երէցները ու ցեղերուն բոլոր իշխանները, Իսրայէլի որդիներուն հայրերուն տոհմերուն գլխաւորները, Տէրոջը ուխտին տապանակը Դաւիթի քաղաքէն՝ որ Սիոն է, բարձրացնելու համար։ 2 Ու Իսրայէլի բոլոր մարդիկը ժողվեցան Սողոմոն թագաւորին քովը Եթանիմ ամսուն մէջ, որ եօթներորդ ամիսն է, տօնին։ 3 Ու Իսրայէլի բոլոր երէցները եկան, ու քահանաները տապանակը բարձրացուցին։ 4 Ու Տէրոջը տապանակը, ժողովին վրանը ու վրանին մէջ եղող բոլոր սրբազան կահերը բարձրացուցին, քահանաները ուՂեւտացիները զանոնք բարձրացուցին։ 5 Ու Սողոմոն թագաւորը ու անոր քովը ժողվուած Իսրայէլի բոլոր ժողովուրդը տապանակին առջև էին, ու անհամար ոչխարներ ու եզներ զոհեցին, որոնք չհաշուուեցան ու չհամրուեցան։ 6 Ու քահանաները Տէրոջը ուխտին տապանակը իր տեղը տարին, տաճարին ներքին սրահը, Սրբութեանց սրբութեան տեղը, քերովբէներուն թեւերուն տակ։ 7 Որովհետև քերովբէները թեւերը տապանակին տեղին վրայ կը տարածէին, ու քերովբէները տապանակն ու անոր ձողերը վերէն կը ծածկէին։ 8 Ու ձողերը այնպէս երկար էին, որ ձողերուն ծայրերը տաճարին առջևէն տապանակին քովէն կը տեսնուէին, բայց դուրսէն չէին տեսնուէր. ու մինչև այսօր հոն են։ 9 Տապանակին մէջ ոչինչ կար, միայն երկու տախտակ որ Մովսէս Քորէբի մէջ դրած էր, հոն երբ Տէրոջը ուխտը Իսրայէլի որդիներուն հետ դրաւ, Եգիպտոսէն ելլելնուն վրայ։ 10 Ու քահանաները սրբութենէն դուրս ելլելուն, ամպ Տէրոջը տունը լեցուց, 11 ու քահանաները ամպին պատճառով չկրցան կենալ սպասաւորելու համար, որովհետև Տէրոջը փառքը Տէրոջը տունը լեցուցած էր։

12 Այն ատեն Սողոմոն ըսաւ, Տէրը ըսաւ որ խաւարին մէջ բնակի։ 13 Ես քեզի բարձր տուն մը շինեցի, քու յաւիտենական բնակարանդ տեղ մը։

14 Ու թագաւորը դարձաւ ու Իսրայէլի բոլոր ժողովին երեսը օրհնեց, ու Իսրայէլի բոլոր ժողովը ոտքի կեցած էր։ 15 Ու ըսաւ, Օրհնեալ է Տէրը Իսրայէլի Աստուածը, որ իր բերանովը խօսեցաւ հօրս՝ Դաւիթի, ու իր ձեռքովը կատարեց՝ ըսելով, 16 Ես իմ ժողովուրդս Իսրայէլը Եգիպտոսէն հանելու օրէն ի վեր ո՛չ մէկ քաղաք ընտրեցի Իսրայէլի բոլոր ցեղերուն մէջէն որ տուն մը շինուի անոր մէջ, որ իմ անունս հոն ըլլայ, բայց Դաւիթը ընտրեցի որ իմ ժողովուրդս Իսրայէլի վրայ ըլլայ։ 17 Ու հայրս Դաւիթ սրտին մէջ ունէր Տէրոջը անունին համար տուն մը շինել։ 18 Բայց Տէրը հօրս Դաւիթի ըսաւ, Որովհետև սրտիդ մէջ ունեցար իմ անունիս համար տուն մը շինել, լաւ ըրիր որ սրտիդ մէջ ունեցար։ 19 Բայց դուն տուն մը պիտի չշինես, հապա քու որդիդ որ քու մէջքէդ պիտի ելլէ, ան պիտի շինէ իմ անունիս համար տունը։ 20 Ու Տէրը իր ըսած խօսքը հաստատեց, ու հօրս Դաւիթի տեղը ելայ ու Իսրայէլի գահին վրայ նստայ, ինչպէս Տէրը ըսած էր, ու Տէրոջը անունին համար տունը շինեցի Իսրայէլի Աստուծոյ։ 21 Ու հոն տապանակին համար տեղ մը պատրաստեցի, որուն մէջ Տէրոջը ուխտը կայ, որ հայրերնիս Եգիպտոսի երկրէն հանելու ատեն անոնց հետ դրաւ։

22 Ու Սողոմոն Տէրոջը սեղանին առջև, Իսրայէլի բոլոր ժողովին առջև, կեցաւ ու երկինքի կողմը ձեռքերը տարածեց, 23 ու ըսաւ, Տէր Իսրայէլի Աստուած, վերի երկինքին ու վարի երկրին վրայ քու նմանդ Աստուած չկայ, որ ուխտը ու ողորմութիւնը պահես քու ծառաներուդ՝ որ քու առջևդ իրենց բոլոր սրտովը կ՚երթան, 24 որ պահեցիր քու ծառայիդ՝ հայրս Դաւիթին, ինչ որ անոր ըսած էիր. այո, բերանովդ խօսեցար ու ձեռքովդ կատարեցիր, ինչպէս այսօր կը տեսնուի։ 25 Հիմա, Տէր Իսրայէլի Աստուած, պահէ քու ծառայիդ՝ հայրս Դաւիթին, ինչ որ անոր ըսած էիր՝ ըսելով, Իմ առջևս քալելու համար քու մէջքէդ ելլող մարդ մը չպակսի Իսրայէլի գահին վրայ նստելու համար, միայն եթէ քու որդիներդ ուշադրութիւն ընեն իրենց ճամբուն, որ իմ առջևս քալեն ինչպէս դուն իմ առջևս քալեցիր։ 26 Հիմա, Իսրայէլի Աստուած, թող հաստատուի քու ըսած խօսքդ որ ծառայիդ՝ հայրս Դաւիթին ըսած էիր։

27 Բայց Աստուած իսկապէս երկրի վրայ պիտի բնակի՞։ Ահա երկինքն ու երկնքի երկինքը չեն կրնար քեզ պարունակել, որչափ ալ այս տունը որ շինեցի։ 28 Ուրեմն, Տէր իմ Աստուած, դարձի՛ր ծառայիդ աղաչանքին ու անոր խնդրուածքին, Տէր իմ Աստուած, որ ծառայիդ այսօր առջևդ աղաչած աղաչանքին ու պաղատանքին լսես։ 29 Որ քու աչքերդ գիշեր ու ցերեկ այս տանը վրայ բացուած ըլլան, այն տեղին վրայ որուն մասին ըսիր թէ անունս հոն պիտի ըլլայ, որ ծառայիդ այս տեղին մէջ ընծայած աղաչանքին լսես։ 30 Ու ծառայիդ ու քու ժողովուրդդ Իսրայէլի աղաչանքին լսէ, երբ որ այս տեղին մէջ աղաչեն, ու դուն երկինքին մէջ՝ ուր որ բնակիս, լսէ՛ ու ներէ՛։

31 Եթէ մարդ մը իր ընկերոջը դէմ մեղանչէ, ու անկէ երդում առնելու համար երդում մը դնեն, ու երդումը քու տունիդ այս տաճարին մէջ եղող զոհասեղանիդ առջև գայ, 32 ինքն ալ երկինքէն լսէ՛, ու ըրէ՛ ու դատէ՛ քու ծառաներդ, դատապարտելով ամբարիշտը, անոր գլխուն վրայ իր ըրածը բերելով, ու արդարը արդարացնելով, անոր արդարութեանը համեմատ վարձատրելով։

33 Երբ որ ժողովուրդդ Իսրայէլ թշնամիին առջև պարտուելու ըլլայ, որովհետև քեզի մեղանչեցին, ու դառնան ու քու անունդ խոստովանին, ու այս տանը մէջ քեզի աղաչեն ու պաղատին, 34 ինքն ալ երկինքէն լսէ՛, ու ներէ՛ քու ժողովուրդդ Իսրայէլի մեղքը, ու դարձուր զանոնք այն երկրին որ անոնց հայրերուն տուիր։

35 Երբ որ երկինքը գոցուի ու անձրեւ չգայ, որովհետև քեզի մեղանչեցին, ու այս տեղին մէջ աղաչեն ու քու անունդ խոստովանին, ու իրենց չարչարելուդ համար իրենց մեղքերէն դառնան, 36 ինքն ալ երկինքէն լսէ՛, ու ներէ՛ քու ծառաներդ, քու ժողովուրդդ Իսրայէլի մեղքը, որ ուսուցանես անոնց ճամբան որ պէտք է քալեն, ու անձրեւ տուր քու երկրիդ վրայ որ ժառանգութիւն տուիր քու ժողովուրդիդ։

37 Եթէ երկրին մէջ սով ըլլայ, եթէ մահտելի ըլլայ, եթէ ցորենի ու հողմի տապալում ըլլայ, եթէ մորեխ ու ճիւղ ըլլայ, եթէ թշնամին անոնց երկրին դռները պաշարէ, ինչ տեսակ որ հարուած ու ինչ տեսակ որ ցաւ ըլլայ, 38 ամէն աղաչանք ու ամէն պաղատանք որ ամէն մարդ մը կամ քու ամբողջ ժողովուրդդ Իսրայէլ ընէ, որոնք իրենց սրտին ցաւը գիտնան ու իրենց ձեռքերը այս տանը կողմը տարածեն, 39 ինքն ալ երկինքէն լսէ՛, որ քու բնակարանդ տեղն է, ու ներէ՛ ու ըրէ՛, ամէն մարդու իր ճամբաներուն համեմատ հատուցանելով, որուն սիրտը գիտես, որովհետև դուն միայն դուն մարդոց որդիներուն սիրտը գիտես, 40 որպէս զի քեզմէ վախնան ամէն օր որ երկրի վրայ կ՚ապրին՝ որ մեր հայրերուն տուիր։

41 Նաև օտարականին համար որ քու ժողովուրդդ Իսրայէլէն չէ, հապա քու անունիդ համար հեռաւոր երկրէ մը պիտի գայ, 42 որովհետև քու մեծ անունդ ու հզօր ձեռքդ ու երկարած բազուկդ պիտի լսեն, երբ որ գայ ու այս տանը կողմը աղաչէ, 43 ինքն ալ երկինքէն լսէ՛, որ քու բնակարանդ տեղն է, ու ամէն բանի համար որ օտարականը քեզի աղաչէ՝ որպէս զի երկրիս բոլոր ժողովուրդները քու անունդ գիտնան, քու ժողովուրդդ Իսրայէլի պէս քեզմէ վախնան, ու գիտնան որ այս տունը որ շինեցի քու անունիդ համար կոչուած է։

44 Երբ որ ժողովուրդդ իր թշնամիներուն դէմ պատերազմի ելլէ, ո՛ր ճամբայ որ զինք դրկես, ու Տէրոջը ընտրած այս քաղաքին կողմը ու քու անունիդ համար շինած տանը կողմը աղաչեն, 45 ինքն ալ երկինքէն անոնց աղաչանքն ու պաղատանքը լսէ՛, ու անոնց իրաւունքը տես։

46 Երբ որ մեղանչեն քեզի, (որովհետև մեղանչող մարդ չկայ), ու դուն անոնց վրայ բարկանաս ու թշնամիին մատնես, որ գերի տանի զանոնք հեռաւոր կամ մօտաւոր երկիր մը, 47 ու անոնք գերութեան երկրին մէջ իրենց սրտին մէջ դառնան ու ապաշխարեն, ու գերութեան երկրին մէջ քեզի աղաչեն ու ըսեն, Մեղանչեցինք, անիրաւեցինք, ամբարշտութիւն ըրինք, 48 ու գերութեան երկրին մէջ որ զիրենք գերի տարին, անոնք իրենց բոլոր սրտովը ու բոլոր հոգիովը քեզի դառնան, ու իրենց հայրերուն տուած երկրին կողմը, քու ընտրած քաղաքին կողմը ու քու անունիդ համար շինած տանը կողմը աղաչեն, 49 ինքն ալ երկինքէն, որ քու բնակարանդ տեղն է, անոնց աղաչանքն ու պաղատանքը լսէ՛, ու անոնց իրաւունքը տես, 50 ու ներէ՛ քու ժողովուրդդ որ քեզի մեղանչեցին, ու անոնց ըրած բոլոր յանցանքները որ քեզի ըրին, ու գթութիւն գտնել տուր անոնց գերողներուն առջև, որ անոնց գթան, 51 որովհետև քու ժողովուրդդ ու քու ժառանգութիւնդ են որ հանեցիր Եգիպտոսէն, երկաթի հնոցին միջէն։

52 Որ քու աչքերդ բացուած ըլլան քու ծառայիդ աղաչանքին ու քու ժողովուրդդ Իսրայէլի աղաչանքին, որ անոնց լսես ամէն անգամ որ քեզի աղաչեն։ 53 Որովհետև դուն զանոնք երկրի բոլոր ժողովուրդներուն միջէն քեզի ժառանգութիւն ընտրեցիր, ինչպէս խօսեցար Մովսէս ծառայիդ միջոցով, երբ որ հայրերնիս Եգիպտոսէն հանեցիր, Տէր Աստուած։

54 Ու եղաւ որ Սողոմոն Տէրոջը այս բոլոր աղաչանքն ու պաղատանքը ըսելէ վերջացուցած ատեն, որ Տէրոջը զոհասեղանին առջև, ծունկի եկած էր ու ձեռքերը երկինքի կողմը տարածած էր, 55 ոտքի կեցաւ ու բարձր ձայնով Իսրայէլի բոլոր ժողովին օրհնեց՝ ըսելով, 56 Օրհնեալ է Տէրը որ իր ըսած բոլոր խաղաղութեան խօսքերուն համեմատ հանգստութիւն տուաւ իր ժողովուրդ Իսրայէլին։ Իր ծառայ Մովսէսի ձեռքովը ըսած բոլոր բարի խօսքերէն մէկ խօսքն անգամ չանցաւ։ 57 Մեր Տէր Աստուածը մեր հայրերուն հետ եղաւ, ինչպէս եղած է, ան մեզ չթողուց ու չուրացաւ մեզմէ։ 58 Հապա մեր սրտերը իրեն դարձուցանէ, որ իր բոլոր ճամբաներուն մէջ քալենք ու իր պատուիրանները, կանոնները ու դատաստանները պահենք, որոնք հրամայեց մեր հայրերուն։ 59 Ու այս խօսքերս որ Տէրոջը առջև աղաչանքով ըսի, մեր Տէր Աստուածը ցերեկ ու գիշեր մօտ ըլլան, որ ինքն ալ իր ծառային ու իր ժողովուրդ Իսրայէլին իրաւունքը տեսնէ, ամէն օրուան գործը անոր օրը, 60 որպէս զի երկրի բոլոր ժողովուրդները գիտնան որ Տէրը միայն ինքն է Աստուած, ուրիշ չկայ։ 61 Ուրեմն ձեր սրտերը ամբողջապէս մեր Տէր Աստուածնիդ ըլլան, որ անոր կանոններուն մէջ քալէք ու անոր պատուիրանները պահէք, ինչպէս այսօր կ՚ընէք։

62 Ու թագաւորը ու անոր հետ ամբողջ Իսրայէլ Տէրոջը առջև զոհեցին։ 63 Ու Սողոմոն խաղաղութեան զոհեցին զոհեց որ Տէրոջը մատուցանեց, քսան ու երկու հազար եզ ու հարիւր քսան հազար ոչխար։ Ուստի թագաւորն ու բոլոր Իսրայէլի որդիները Տէրոջը տունը նուիրեցին։ 64 Նոյն օրը թագաւորը Տէրոջը տանը առջևի բակին մէջտեղը սրբեց, որովհետև հոն այրական զոհերը ու խաղաղութեան զոհերուն ճարպերը մատուցանեց, որովհետև պղինձէ զոհասեղանը որ Տէրոջը առջև էր, այրական զոհերուն ու հացի ընծաներուն ու ճարպերուն համար չէր բաւեր։

65 Ուստի Սողոմոն ատեն մը տօնը ինքն ու անոր հետ ամբողջ Իսրայէլ, մեծ ժողով մը, Եմաթի մտքէն մինչև Եգիպտոսի գետակը, մեր Տէր Աստուածնիս առջև եօթը օր ու եօթը օր, տասնչորս օր տօնեցին։ 66 Ութերորդ օրը ժողովուրդը արձակեց, ու անոնք թագաւորը օրհնեցին ու իրենց վրանները գացին, ուրախ ու սրտով բարի Տէրոջը իր ծառայ Դաւիթին ու իր ժողովուրդ Իսրայէլին ըրած բոլոր բարութեանցը համար։

Գլ. Թ

1 Ու եղաւ որ Սողոմոն Տէրոջը տունը ու թագաւորին տունը ու Սողոմոնի ուզած ամէն բանը շինելէ վերջացուցած ատեն, 2 Տէրը երկրորդ անգամ երեւցաւ անոր, ինչպէս Գաբաւոնի մէջ երեւցաւ անոր։ 3 Ու Տէրը ըսաւ անոր, Ես քու աղաչանքդ ու պաղատանքդ լսեցի որ առջևս ըրիր, ու այս տունը որ շինեցիր, անոր մէջ իմ անունս յաւիտեան դնելու համար սրբացուցի, ու աչքերս ու սիրտս հոն միշտ պիտի ըլլան։ 4 Ու դուն եթէ քու հայրդ Դաւիթ քալելու ըլլայ իմ առջևս ինչպէս ինքն քալեց, սրտի ուղղութեամբ ու ուղղամտութեամբ, ու ամէն բան ընելու ըլլայ ինչ որ պատուիրեցի քեզի, ու իմ կանոններս ու դատաստաններս պահելու ըլլայ, 5 ես ալ քու հայրդ Դաւիթի ըսած խօսքս պիտի հաստատեմ, որ ըսի թէ Իսրայէլի գահին վրայ նստող մարդ մը քու մէջքէդ պիտի չպակսի։ 6 Բայց եթէ դուն ու քու որդիներդ ինձմէ դառնաք ու չպահէք իմ պատուիրանքներս ու կանոնները զոր ձեզի դրի, ու երթաք ուրիշ աստուածներու ծառայեցէք ու անոնց երկրպագէք, 7 ես ալ Իսրայէլը երկրիս երեսէն պիտի կտրեմ զոր տուի անոնց, ու այս տունը որ սրբացուցի իմ անունիս համար, իմ առջևէս պիտի նետեմ, ու Իսրայէլ բոլոր ազգերուն մէջ առած ու ծաղրուած պիտի ըլլայ։ 8 Ու այս տունը որ բարձր էր, ամէն մարդ որ անկէ պիտի անցնի պիտի զարհուրի ու պիտի սուլէ, ու պիտի ըսեն,

քառասն սրահը չինեց, ուր դատաստան կ'ընէր, — անիկա առեանն սրահ կ'ըսէր։ ու անիկա յատակէն մինչև *ձեղունը եղեւնափայտով ծածկուած էր։

8—Եւ իր նստած տանը —Լ— այս գործին պէս ուրիշ գաւիթ մը կար տանը ու սրահին մէջտեղը. ու փարաւոնի աղջկան համար, զոր Սողոման իրեն կնութեան էր, այս սրահին պէս տուն մը չինեց։ 9—Ասոնց ամէնը ներսէն ու դուրսէն, և հիմէն մինչև առաստաղը, ու գաւթի կողմէն մինչև մեծ գաւիթը սաչուած քարերու չափով՝ սրոցած սղոխ քարերով չէ—ո—ւթ էր։ 10—Հիմն ալ թանկագին քարերէ էր, մեծ քարերէ, տասը կանգուն քարերէ և ութ կանգուն քարերէ էր։ 11—Ու վերը սաչուած քարերուն չափովը սղոխ ու եղեւնափայտ էր։ 12—Եւ մեծ գաւթին չորս կողմ ու Տէրոջը տանը ներքին գաւթը և տանը սրահը երեք կարգ սաչուած քարերով ու մէկ կարգ եղեւնափայտ հնծանիներով չէ—ո—ւթ էր։

13—Եւ Սողոման թագաւորը խ—ըդ ղրկեց, ու Տիրոսէ Քիրամը բերել տուաւ։ 14—Անիկա Նեփթալիմի ցեղէն որբեւաբի կնոջ մը որդին էր, ու անոր հայրը Տիրացի պղնձագործ մըն էր։ և այս խ—ըդը պղնձէ ամէն տեսակ գործերը գործելու մեծ հմտութիւն, խնամութիւն ու գիտութիւն ունէր։ և Սողոման թագաւորին եկաւ, ու անոր ամէն գործը կատարեց։ 15—Եւ ասիկա պղնձէ երկու սիւն ձուլեց. մէկ սիւնին երկայնութիւնը տասներիք կանգուն ու չրջափաւրը տասներկու կանգուն էր։ —Այնպես նէ երկրորդ սիւնն —Լ։ 16—Ու սիւներուն գլուխը դնելու համար պղնձէ երկու խոյակ ձուլեց. մէկ խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն ու միւս խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն էր։ 17—Ու սիւներուն գլուխը եղող խոյակներուն համար՝ մէկ խոյակին համար եօթը՝ ու միւս խոյակին համար եօթը ցանցակերպ — չղթայագործ հիւսուած գործեր չէին։ 18—Ա,յսպէս սիւները չինեց, ու մէկ ցանցակերպ գործին վրայ չորրնանկի երկու կարգ նռներ չորեցէ, որպէս զի ութնէն գլուխը եղած խոյակը նուռերով ծածկուի. միւս խոյակին ալ այնպէս ըրաւ։ 19—Եւ սրահին մէջ սիւներուն գլուխը եղող խոյակները չորս կանգուն էին չորսնառէն չինուած քով։ 20—Ու երկու սիւներուն վրայ՝ խոյակներուն՝ ու ցանցակերպ գործին մօտ եղող փորին վրայէն ալ նռներ կային։ ու *երկու խոյակներուն՝ վրայ կարգով չորեսուն երկու հարիւր նուռ կար։ 21—Եւ սիւները տաճարին սրահին մէջ կանգնեց. ու այ կողմին սիւնը կանգնելով անոր անունը †Յաքին կոչեց, ու ձախ կողմի սիւնը կանգնելով անոր անունը ‡Բոազ կոչեց։ 22—Եւ սիւներուն գլխուն վրայ շուշանաձև գործ կար. այսպէս սիւներուն գործը լլնցաւ։

23—Եւ ծովը ձուլածոյ չինեց, ու մէկ շրթունքէն մինչև միւս շրթունքը տասը կանգուն էր, ու բոլորաձև էր. և անոր բարձրութիւնը հինգ կանգուն՝ ու անոր չրխպատար երեսուն կանգուն էր։ 24—Ու անոր շրթունքին տակ շուրջանակի ամէն կողմէն գնդակներ չորստասը էին. ծովուն բոլորտիքը մէկ կանգունի մէջ տասնական էդ—ւներ կային, — գնդակները երկու կարգ էին, որոնք ձուլած տաեներ ձուլուեր էին։ 25—Անիկա տասներկու եզներու վրայ կը կենար, երեքը դէպ ի հիւսիս, երեքը դէպ ի արեւմուտք, երեքը դէպ ի հարաւ ու երեքը դէպ ի արեւելք կը նայէին, ու ծովը անոնց վրայ էր, և ամէնուն հետեւի կողմը դէպ ի ներս ծ—ըն—ած էր։ 26—Ու անոր թանձրութիւնը չորս մատնաչափ էր, և շրթունքը գաւաթի շրթունքի պէս էր, ու վրան շուշանի ծաղիկներ չէ—ո—ւթ էին. երկու հազար մար ի՛տառներ կը չորեցէ։

27—Եւ պղնձէ տասը ||մեքենովթ չինեց, ամէն մէկ մեքենովթին երկայնութիւնը չորս կանգուն, ու լայնութիւնը չորս կանգուն, և բարձրութիւնը չորս կանգուն էր։ 28—Ու մեքենովթները այսպէս չինուած էին. տանդ սպառազէններ ունէին, և սպառազէնները եզերքներուն մէջտեղն էին։ 29—Ու եզերքներուն մէջտեղը եղող սպառազէններուն վրայ առիւծներ, եզներ ու քերովբէներ կային. ու եզերքներուն վրայ վերի կողմը *խարիսխան էր. ու առիւծներուն ու եզներուն տակ կախուած գործեր կային։ 30—Ու ամէն մէկ մեքենովթ պղնձէ չորս անիւ ու պղնձէ առանցքներ ունէր, ու չորս տաքերը ուսեր էին անոնց. ու ամէն կախուած գործին քով աւազանին տակ ձուլածոյ ուսեր կային։ 31—Եւ անոր բերանը խոյակին մէջէն դէպ ի վեր մէկ կանգուն էր, ու անոր բերանը խարիսխի գործի պէս բոլորաձև էր, ու մէկուկէս կանգուն էր. և բերնին վրայ ալ փանդակներ ու սպառազէններ կային՝ քառակուսի և ոչ բոլորաձև։ 32—Ու սպառազէններուն տակ չորս անիւ կար, և անիւներուն առանցքները մեքենովթին վրայ էին—ո—ւթ էդ։ ու անիւն մէկ անիւին բարձրութիւնը մէկուկէս կանգուն էր։ 33—Եւ անիւներուն շինուածքը կառքի անիւներուն շինուածքին պէս էր, ու անոնց առանցքները, շրջանակները, շառաւիղները ու գունտերը բոլորը ձուլածոյ էին։ 34—Ու ամէն մէկ մեքենովթին չորս անկիւններուն վրայ չորս ուս կար, և ուսերը նոյն՝ մեքենովթէն էին։ 35—Ու մեքենովթին գլուխը կէս կանգուն բարձրութեամբ բոլորակ մը կար, ու մեքենովթին գլխուն վրայ եղող եզերքը ու սպառազէնները իրմէ էին։ 36—Ու եզերքներուն տախտակներուն վրայ ու սպառազէններուն վրայ քերովբէներ, առիւծներ ու արմաւենիներ քանդակուած էին, ամէն մէկ տեղին չարմարութեանը համեմատ, ու ամէնը բոլորտիքը կախուած գործեր կային։ 37—Տասը մեքենովթներն ալ այսպես բրաւ. ամէնուն ձուլուածքը, չափը ու ձեւը մէկ էր։

38—Ու տասը հատ պղնձէ աւազան չինեց, ամէն մէկ աւազան քառասուն մարով կը լեցուէր, — ամէն մէկ աւազան չորս կանգուն էր, — տասը մեքենովթներէն վրայ մէկմէկ աւազան կար։ 39—Եւ հինգ մեքենովթը տանը աջ կողմը՝ ու հինգ դէ—ռ—ւթը տանը ձախ կողմը դրաւ, ու ծովը տանը աջ կողմը դարաւ դէմ դէպի արեւելք դրաւ։

40—Եւ Քիրամ աւազանները, թիակները ու կանվակները չինեց. ու Քիրամ կատարեց այն բոլոր գործերը՝ զորոնք Տէրոջը տանը համար Սողոման թագաւորին կը չինէր։ 41—Այսինքն երկու սիւները, ու սիւներուն գլուխը եղող խոյակներուն երկու գունտերը, և սիւներուն գլուխը եղող խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար երկու ցանցակերպ զարդերը, 42—Ու երկու ցանցակերպ զարդերուն չորս հարիւր նուռերը, այսինքն սիւներուն վրայի խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար՝ ամէն մէկ ցանցակերպ զարդին վրայ երկու կարգ նռներ։ 43—Եւ տասը մեքենովթները ու մեքենովթներուն վրայի տասը աւազանները, 44—Ու մէկ ծովը ու ծովին տակի տասներկու եզները, 45—Եւ կոթանները ու թիակները ու կոնքերը. և այս բոլոր կարասիները զորոնք Քիրամ Սողոման թագաւորին չինեց Տէրոջը տանը համար, փայլուն պղնձէ էին։ 46—Թագաւորը զանոնք Յորդանան գաւառին մէջ թանձր հողի մէջ վրայ ձուլել տուաւ Սոկքովթի ու Սարթանի մէջտեղ։ 47—Եւ Սողոման այս կարասիները —ո—ւնչ կշռեցաւ, ձգեց, վասն զի խիստ շատ էին, այնպէս որ պղնձին կշիռը համրանքի չէր գար։

48—Եւ Սողոման Տէրոջը տանը բոլոր կարասիները չինեց. ի—ո—ւնէն ոսկի սեղանը ու վրան առաջաւորութեան հաց դրուելու ոսկի սեղանը, 49—Ու գաւթին առջեւի զուտ ոսկիէ աչտանակները, որոնց հինգը աջ կողմն էին ու հինգը ձախ կողմը, և ոսկիէ ծաղիկները ու ճրագները և մանկիները, 50—Եւ զուտ ոսկիէ գաւաթները, քաղամկալները՝ կոնքերը, խնկամաններ և բուրվառները, ու ներքին տանը, այսինքն սրբութեանց սրբութիւնին, գանոնք ու տանը, այսինքն տաճարին, գռներուն ոսկի ծղնխներըը։

*Եբր. յատակը

*Կամ, երկրորդ խոյակին
†Այ—ինքն, պիտի հաստատէ
‡Այ—ինքն, անոր մէջ զօրութիւն
||Այ—ինքն, խարիսխ, կամ, խարսխաձև պատուանդան

*Կամ, նոյնպէս

51—Ա յսպէս Տէրոջը ասաբրին համար Սողոմոն թագաւորին բոլոր չինած գործերը լմնցան. ու Սողոմոն իր հօրը Դաւիթին նուիրած բաները, արծաթը ու ոսկին ու անօթները, տարաւ, Տէրոջը տանը գանձերուն մէջ դրաւ։

ԳԼ. Ը

Ա յն ատեն Սողոմոն Իսրայէլի ծերերը ու ցեղերուն բոլոր իշխաններըը, Իսրայէլի որդիներուն նահապետները, Սողոմոն թագաւորին քով Երուսաղէմ ժողվեց, որպէս զի Տէրոջը ուխտին տապանակը Դաւիթի քաղաքէն, այսինքն Սիօնէ, հանեն։ 2—Ու Իսրայէլի բոլոր մարդիկը եօթներորդ ամսուն, Անթանի ամսուն մէջ, տօնին առնը Սողոմոն թագաւորին քով ժողվուեցան։ 3—Ու Իսրայէլի բոլոր ծերերը եկան, ու քահանաները տապանակը վերցուցին։ 4—Ու Տէրոջը տապանակը ու Ժողովքի խորանը և խորանին մէջ եղած բոլոր սուրբ անօթները հանեցին. ու զանոնք քահանաները ու Ղեւացիները հանեցին։ 5—Ու Սողոմոն թագաւորը ու անոր քով Ժողոված Իսրայէլի բոլոր ժողովքը անոր հետ տապանակին առջև ըլլալով՝ ոչխարներ ու արջառներ կը զոհէին, այնչափ չատ՝ որ անհիւ ու անհամար էին։ 6—Ու քահանաները Տէրոջը ուխտին տապանակը ներս տարին իր տեղը տանը դաբիրը, սրբութիւն սրբութեանցը, ա՛ֆ փերովբէներուն թեւերուն տակ դրէ։ 7—Քանզի փերովբէները տապանակին տեղն վրայ էրէց թեւերը կը տարածէին, ու փերովբէները վերէն կը ծածկէին տապանակը ու անոր ձողերը։ 8—Ու ձողերը երկնցուցին, այնպէս որ ձողերուն ծայրերը սրբութիւնէն կ'երևնային դարբիրի առջև, բայց դուրսէն չէին երևնար. ու մինչև այսօր հոն են։ 9—Տապանակին մէջ ուրիշ բան չկար, բայց միայն այն երկու քարէ տախտակները՝ զորոնք Մովսէս Քորէբի մէջ հոն դրաւ, երբոր Տէրը Իսրայէլի որդիներուն հետ, անոնց եգիպտոսի երկրէն ելած ատենը, ուխտ ըրաւ։ 10—Ու երբ քահանաները սրբութիւնէն ելան, ամպը լեցուց Տէրոջը տունը։ 11—Ու ամպին պատճառաւ քահանաները չկրցան հոն կենալ՝ որ ծառայեն, վասն որ Տէրոջը փառքը Տէրոջը տունը լեցուցեր էր։

12—Այն ատեն Սողոմոն ըսաւ, Տէրը ըսաւ որ ինք մառախուղի մէջ կը բնակի։ 13—Անշուշտ քեզի բնակութեան համար տուն, — յաւիտեան քու նստելուդ համար տեղ չինեցի։ 14—Ու թագաւորը իր երեսը դարձուց, ու Իսրայէլի բոլոր ժողովքը օրհնեց. ու Իսրայէլի բոլոր ժողովքը *կայուն կեցաւ։ 15—Ու անկից ըսաւ, Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ իր բերնով իմ հօրս Դաւիթի խօսք տուաւ, ու իր ձեռքով կատարեց. քանզի ըսաւ, 16—Իմ ժողովրդիս Իսրայէլը եգիպտոսէ հանած օրէս ի վեր, Իսրայէլի բոլոր ցեղերէն քնաւ քաղաք մը չընտրեցի տուն չինելու համար, որպէս զի իմ անունս հոն ըլլայ. բայց Դաւիթը ընտրեցի, որպէս զի իմ ժողովրդիս Իսրայէլի վրայ [illegible] ըլլայ։ 17—Ու իմ հայրս Դաւիթ միտք ունէր որ Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը տուն մը չինէ։ 18—Բայց Տէրը իմ հօրս Դաւիթի ըսաւ, Որովհետև դուն միտքդ դրիր որ իմ անուանս տուն չինես, ազէկ ըրիր որ այս բանը միտքդ դրիր։ 19—Սակայն տունը դուն պիտի չչինես, հապա քու որդիդ՝ որ քու երանքէդ պիտի ելլէ, անիկա իմ անուանս՝ տունը պիտի չինէ։ 20—Ու հիմա Տէրը իր ըսած խօսքը կատարեց, ու ես իմ հօրս Դաւիթի տեղ յաջորդեցի, ու Տէրոջը ըսածին պէս Իսրայէլի աթոռը նստայ, ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը այս տունը չինեցի։ 21—Ու հոն տեղ մը պատրաստեցի տապանակին համար, որուն մէջ կ[illegible]ե Տէրոջը ուխտը, զոր մեր հայրերուն հետ ըրաւ, երբ զանոնք եգիպտոսի երկրէն դուրս հանեց։

22—Ու Սողոմոն Տէրոջը սեղանին առջև Իսրայէլի բոլոր ժողովքին դիմաց կանգնելով՝ ձեռքերը դէպ ի երկինք տարածեց, 23—Ու ըսաւ, Ով Տէր Աստուած Իսրայէլի, վերը երկինքը ու վարը երկրի վրայ քեզի պէս Աստուած չկայ, որ քու ուխտդ ու ողորմութիւնը կը պահես։ 24—Դուն քու ծառայիդ, իմ հօրս Դաւիթին, ըրած խոստումնդդ պահեցիր, ու բերնովդ ըսածդ ձեռքովդ կատարեցիր, ինչպէս այսօր կ'երևայ։ 25—Ու հիմա, ով Տէր Աստուած Իսրայէլի, պահէ այն խոստումնդդ, զոր քու ծառայիդ, իմ հօրս Դաւիթին, ըրիր ու ըսիր, իմ առջևս Իսրայէլի աթոռին վրայ նստող մարդ քեզմէ պակաս պիտի չըլլայ. միայն թէ քու որդիներդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն իմ առջևս քալելով, ինչպէս դուն իմ առջևս քալեցիր։ 26—Ու հիմա, ով Աստուած Իսրայէլի, թող քու ծառայիդ, իմ հօրս Դաւիթին, ըսած խօսքդ հաստատուի։

27—Բայց միթէ Աստուած իրաւցընէ երկրի վրայ պիտի բնակի՞. ահա երկինքը ու երկնից երկինքը քեզ չեն կրնար պարունակել. ա՛յր կը մնայ այս իմ չինած տունս։ 28—Սակայն, ով Տէր Աստուած իմ, քու ծառայիդ աղօթքին ու ինդրուածքին նայէ, որպէս զի քու ծառայիդ այսօր քու առջևդ ըրած պաղատանքը ու աղօթքը լսես։ 29—Որպէս զի այս տանը վրայ գիշեր ցորեկ քու աչքերդ բաց ըլլան, այն տեղին վրայ՝ որու համար ըսիր թէ իմ անունս հոն պիտի ըլլայ. այնպէս որ այս տեղ քու ծառայիդ ըրած աղօթքը լսես։ 30—Ուրեմն քու ծառայիդ և քու Ժողովրդիդ Իսրայէլի այս տեղ ըրած աղօթքները լսես. այո, քու բնակութեանդ տեղէն, երկինքէն, լսես, ու լսած ատենդ ներես։

31—Եթէ մեկը իր ընկերին դէմ մեղանչէ, ու անոր ալ երդում ընել տալու համար՝ անոր երդում ուտելիք հասնի՝ այս տունը քու սեղանիդ առջև գայ, 32—Ա յն ատեն դուն երկինքէն լսես ու կատարես, ու քու ծառայիդ դատես, և յանցաւորը դատապարտես ու անոր *ըրածը անոր գլխուն բերես, և արդարը արդարացնես ու անոր արդարութեան չափովը անոր հատուցում ընես։

*ՆԲՔ. ճամբան

33—Ու եթէ քու Ժողովրդիդ Իսրայէլ քեզի դէմ մեղանչելնուն համար իրենց թշնամիներուն առջև յաղթուին, ու քեզի դառնան և քու անունդ փառք տան, ու այս տան մէջ քեզի աղօթք ու աղաչանք ընեն, 34—Ա յն ատեն դուն երկինքէն լսես, և քու Ժողովրդիդ Իսրայէլի մեղքը ներես, ու անոնց հայրերուն տուած երկիրը զանոնք դարձնես։

35—Եթէ անոնց քեզի դէմ մեղք գործելուն համար երկինքը գոցուի ու անձրև չգայ, ու անոնք այս տեղ քեզի աղօթք ընեն, և քու անունդ փառք տան, ու զանոնք նեղելուդ համար իրենց մեղքերէն դառնան, 36—Ա յն ատեն դուն երկինքէն լսես և քու ծառաներուդ ու քու Ժողովրդիդ Իսրայէլի մեղքը ներես, որպէս զի անոնց սորվեցնես այն ուղի Ճամբան՝ որուն մէկ պիտի քալեն, ու քու Ժողովուրդիդ ժառանգութիւն տուած երկիրդ վրայ անձրև տաս։

37—Եթէ երկրի վրայ սով, կամ ժանտախտ, կամ խորշակահարութիւն, կամ ջրհեղեղ, կամ մարախ, կամ թրթուր ըլլայ, կամ անոնց թշնամիները զանոնք իրենց *բնակած երկրին մէջ նեղեն, կամ որեւիցէ հարուած կամ հիւանդութիւն ըլլայ, 38—Քու բոլոր Ժողովրդիդ Իսրայէլէ որեւիցէ մարդ աղօթք մը ու խնդրուածք մը ընելու ըլլայ, և իւրաքանչիւր մարդ իր սրտին սխալը ճանչնալով՝ ձեռքերը դէպ ի այս տունը երկնցնէ, 39—Ա յն ատեն դուն երկինքէն, քու բնակութեանդ տեղէն, լսես ու ներես, և բնես. և ամէն մարդու իր բոլոր ճամբաներուն համեմատ հատուցում ընես, անոր սիրտը գիտնալուդ համար. վասն զի բոլոր մարդոց որդիներուն սիրտը միայն դուն գիտես. 40—Որպէս զի քեզմէ վախնան երկնից բոլոր օրերուն մէջ, որչափ ժամանակ որ մեր հայրերուն տուած երկիրդ վրայ պիտի ապրին։

41—Ու քու Ժողովրդիդ Իսրայէլէ չեղող և հեռուէր երկրէ մը քու անունդ համար եկող օտարականն ալ,

*ՆԲՔ. դռներուն

42—(Վասն զի քու մեծ անունդ ու զօրաւոր ձեռքդ ու երկնցած բազուկդ պիտի լսեն,) եթէ գայ ու այս տանը մէջ աղօթք ընէ, 43—Դուն երկինքէն, քու բնակութեանդ տեղէն, լսես, և օտարականին քեզի բրած ամէն խնդրուածքը կատարես, որպէս զի երկրի ամէն ժողովուրդները քու անունդ ճանչնան, ու քու ժողովուրդիդ Իսրայէլի պէս քեզմէ վախնան, և գիտնան թէ այս իմ շինած տանս վրայ քու անունդ կոչուած է։

44—Երբ քու ժողովուրդդ իր թշնամիին դէմ պատերազմի երթայ այն ճամբով՝ որ դուն պիտի ղրկես զանոնք, եթէ անոնք այս քու ընտրած քաղաքիդ, ու քու անուանդ համար այս իմ շինած տանս կողմը Դ‌ՅԼ՚Ի՝ Տէրոջը աղօթք ընեն, 45—երկինքէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես, և անոնց իրաւունք ընես։

46—Երբ քեզի դէմ մեղք գործեն, (քանզի մեղք չգործող մարդ չկայ,) ու անոնց բարկանալով զանոնք թշնամիին ձեռքը մատնես, ու անոնց գերեվարները թշնամիին հեռու կամ մօտ երկիրը գերի տանին զանոնք, 47—եթէ այն իրենց գերութեան երկրին մէջ ղեկդի գան ու գառնան, և իրենց գերեվարներուն երկրին մէջ քեզի աղաչեն ու ըսեն, Մեղք գործեցինք, անօրինութիւն ու անիրաւութիւն ըրինք։ 48—Ու Էրէ դանոնք գերի տանող թշնամիներուն երկրին մէջ իրենց բոլոր սրտովը ու իրենց բոլոր հոգովը քեզի դառնան, ու իրենց երկրին, զոր իրենց հայրերուն տուիր, և քու ընտրած քաղաքիդ, ու քու անուանդ համար իմ շինած տանս կողմը Դ‌ՅԼ՚Ի՝ քեզի աղօթք ընեն, 49—Դուն երկինքէն, քու բնակութեանդ տեղէն, անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես, ու անոնց իրաւունք ընես, 50—Ու քու ժողովուրդիդ քեզի դէմ բրած մեղքը ու բոլոր յանցանքը ներես, ու այնպէս ընես որ անոնց գերեվարները անոնց վրայ գթան, և անոնց ողորմութիւն ընեն։ 51—Քանզի անոնք քու ժողովուրդդ ու քու ժառանգութիւնդ են, զորոնք Եգիպտոսէ, երկաթի հնոցին միջէն, հանեցիր։ 52—Ու քու ծառայիդ խնդրուածքին ու քու ժողովուրդիդ Իսրայէլի խնդրուածքին քու աչքդ թող-լինի՝ լսելու բոլոր որպէս զի անոնց քեզի բրած ամէն աղաղակը լսես։ 53—Քանզի երկրի ամէն ժողովուրդներէն դուն զատեցիր զանոնք, որպէս զի քու ժառանգութիւնդ ըլլան, ինչպէս քու ծառայիդ Մովսէսի ձեռքով խօսեցար երբ մեր հայրերը Եգիպտոսէ հանեցիր, ով Տէր Նէովա։

54—Երբ Սողոման այս բոլոր աղօթքը ու խնդրուածքը Տէրոջը բրաւ լմնցուց, Տէրոջը սեղանին առջևէն ելաւ, որ ձեռքերը դէպ ի երկինք տարածած ծունկ կրկներ էր։ 55—Ու անթի վրայ կայնելով՝ Իսրայէլի բոլոր ժողովրդը բարձր ձայնով օրհնեց ու բսաւ։ 56—Օրհնեալ ըլլայ Տէրը, որ իր բոլոր բսածին համեմատ իր Իսրայէլ ժողովուրդին հանգստութիւն տուաւ, ու իր ծառային Մովսէսի ձեռքով խօսած ամէն բարի խօսքերէն բնաւ խօսք մը դետինը չինկաւ։ 57—Մեր Տէր Աստուածը մեզի հետ ըլլայ, ինչպէս մեր հայրերուն հետ էր։ ու մեզ չթողու ու մեզ երեսէ չդգե։ 58—Ու մեր սիրտը իրեն դարձընէ, որպէս զի իր բոլոր ճամբաներուն մէջ քալենք, ու պահենք իր պատուիրանքները, կանոնները ու իրաւունքները զորոնք մեր հայրերուն պատուիրեց։ 59—Ու Տէրոջը առջև մատուցած այս պատառանքի խօսքերս ցորեկ ու գիշեր մեր Տէր Աստուծոյն մօտենան, որպէս զի օրէ օր պատահած գործերուն մէջ իր ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին իրաւունք ընէ։ 60—Որպէս զի երկրի ամէն ժողովուրդները դիտնան թէ Եհովա ինքն է Աստուած, և ուրիշ մը չկայ։ 61—Ու ձեր սիրտը մեր Տէր Աստուծոյն առջև ուղիղ ըլլայ, որպէս զի այսօրուան պէս անոր կանոններուն մէջ քալէք, ու անոր պատուիրանքները պահէք։

62—Ու թագաւորը ու բոլոր Իսրայէլ անոր հետ Տէրոջը առջև զոհեր մատուցին։ 63—Ու Սողոման Տէրոջը մատուցած խաղաղութեան զոհին համար՝ քսանուերկու հազար արջառ ու հարիւր քսան հազար ոչխար զոհ բրաւ։ Եւ

թագաւորը ու բոլոր Իսրայէլի որդիները Տէրոջը տանը նաւակատիքը բրին։ 64—Այն օրը թագաւորը Տէրոջը տանը առջև եղող գաւիթին մէջտեղը սրբեց, քանզի էր ողջակէզները, հացի ընծաները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց, վասն զի Տէրոջը առջեւի պղնձէ սեղանը պզտիկ կու գար այս ողջակէզները, հացի ընծաները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը ընդունելու։

65—Ու այն ատեն Սողոման ու անոր հետ բոլոր Իսրայէլ, մեծ ժողով մը, Եմաթի մուտքէն մինչև Եգիպտոսի հեղեղատը մեր Տէր Աստուծոյն առջև եօթը օր ու եօթը օր ևս, այսինքն տասներկուքօր օր, տօն բրին։ 66—Ու Ութերորդ օրը ժողովուրդը արձակեց, որոնք թագաւորը օրհնեցին, ու իրենց վրանները գացին, զուարթ սրտով մը ու բարանալով այն բոլոր բարիքներուն համար, զորոնք Տէրը իր Դաւիթ ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին բրաւ։

Գլ. Թ

Երբ Սողոման Տէրոջը տունը ու թագաւորական տունը և իր սրտին բոլոր ուզած բաները չինեց լմնցուց, 2—Տէրը Սողոմանի նորէն երեւցաւ՝ ինչպես Գաբաւոնի մէջ երեւցեր էր։ 3—Ու Տէրը անոր բսաւ, Իմ առջև բրած աղօթքդ ու պաղատանքդ լսեցի. Ե այս չինած տունդ սրբեցի, որպէս զի իմ անունս յաւիտեան հոն դնեմ, ու իմ աչքերս ու սիրտս միշտ հոն պիտի ըլլան։ 4—Ու եթէ դուն իմ առջևս քու հօրդ Դաւիթի քալածին պէս՝ կատարեալ սրտով և ուղղութեամբ քալես, ու բոլոր քեզի պատուիրածներս ընես ու իմ կանոններս ու դատաստաններն պահես, 5—Այն ատեն քու թագաւորութեանդ գահը Իսրայէլի վրայ յաւիտեան պիտի հաստատեմ, ինչպես քու հօրդ Դաւիթի խօսեցայ՝ ըսելով, Իսրայէլի աթոռին վրայ քեզմէ մարդ պակաս պիտի չըլլայ։ 6—Եթէ դուք կամ ձեր որդիները ինձմէ խոտորիք, ու ձեր առջև դրած պատուիրանքներս ու կանոններս չպահէք, ու երթաք ուրիշ աստուածներու ծառայութիւն ընէք և անոնց երկրպագութիւն ընէք, 7—Այն ատեն Իսրայէլը պիտի ջնջեմ այն երկրին վրայէն զոր իրենց տուի. ու իմ անուանս համար այս սրբած տունս երեսէս պիտի ձգեմ. և Իսրայէլ բոլոր ազգերուն մէջ առակ ու կատակ պիտի ըլայ։ 8—Ու այս բարձր տանը համար ամէն ք‌ովէն անցնողը պիտի զարմանայ, ու սուլելով պիտի ըսէ, Տէրը ինչո՞ւ համար այս երկրին ու այս տանը այսպէս ըրաւ։ 9—Ու պիտի ըսեն, Վասն զի անոնք իրենց Տէր Աստուածը թողուցին, որ անոնց հայրերը Եգիպտոսի երկրէն հաներ էր, և ուրիշ աստուածներու յարեցան և անոնց երկրպագութիւն ու ծառայութիւն ըրին. այս պատճառաւ Տէրը անոնց վրայ այս բոլոր չարիքները բերաւ։

10—Ու Սողոման երկու տունը, Տէրոջը տունը ու թագաւորական տունը, քսան տարուան մէջ չինելէն ետքը, 11—Տիւրոսի Թագաւորը Քիրամ եղեւնափայտերով, մայր փայտերով ու ոսկիով անոր ամէն ուզածին համեմատ Սողոմանի օգնութիւն ընելուն համար, Սողոման Թագաւորն ալ այն տասն Քիրամի քսան քաղաք տուաւ Գալիլեայի երկրին մէջ։ 12—Ու Քիրամ Տիւրոսէ ելաւ՝ որպէս զի Սողոմանի իրեն տուած քաղաքները տեսնէ, և իր աչքերուն հաճոյ չերեւցան։ 13—Ու բսաւ, Եղբայր, այս ի՞նչ քաղաքներ են զորոնք ինծի տուիր. ու անոնց անունը *Քաբօլ երկիր կոչուց մինչեւ այսօր։ 14—Ու Քիրամ՝ Թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի ղրկեց։

15—Ու Սողոման Թագաւորին գրած հարկին պատճառը այս էր՝ որ Տէրոջը տունը, իր տունը ու Միլօոյ ու Երուսաղէմի պարիսպը, Հասորը, Մաղեդդօն ու Գազերը չինէ։ 16—(Քանզի Եգիպտոսի Փարաւոն Թագաւորը ելլելով՝ Գազերը առեր, ու զանիկա կրակով այրեր էր, և այն քաղաքին մէջ բնակող Քանանացիները մեռցնելով, զանիկա իր աղջկան, Սողոմանի կնոջ, օժիտ տուեր էր։) 17—Ու Սողոման Գազերը ու վերի Բեթորոնը չինեց, 18—Նաև Բաա-

*Այսինքն, անհամայ, խմ, կապակ

զԼիք ու Թագաւորը երկրին անապատին մէջ, 19—Եւ Սողոմոնի բոլոր չաւեմբանի քաղաքները, ու կառքերուն քաղաքները, ու ձիաւորներուն քաղաքները, և այն բոլոր չէնքերը, զորանք Սողոմոն ուզեց չինել Երուսաղէմի մէջ, Լիբանանի մէջ ու իր տէրութեան բոլոր երկրին մէջ,

20—Այն բոլոր Ժողովրդները, որոնք Ամորհացիներէն, Քետացիներէն, Փերեզացիներէն, Եւեւացիներէն ու Յեբուսացիներէն մնացեր էին, և Իսրայէլի որդիներէն չէին, 21—Այսինքն անոնց զաւակները, որոնք անոնցմէ ետքը այն երկրին մէջ մնացեր էին, ու Իսրայէլի որդիները չէին կրցեր զանոնք բնաջինջ ընել, Սողոմոն զանոնք հարկատու ծառայ ըրաւ մինչև այսօր։ 22—Բայց Սողոմոն Իսրայէլի որդիներէն իրեն ծառայ չըրաւ. հապա անոնք էր պատերազմական մարդիկը, իր *պալատականները, իշխանները, զօրավարները, ու իր կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներն էին։ 23— Սողոմոնի գործին վրայ հինգ հարիւր յիսուն գլխաւոր իշխաններ կային, որոնք բանուոր Ժողովուրդին վրայ կ'իշխէին։

24—Իսկ Փարաւոնի աղջիկը Դաւիթի քաղաքէն ելաւ, ու ։ի իր տունը որ Սողոմոն անոր համար չիներ էր. այն ատեն Մելօնը չինեց։

25—Ու Սողոմոն տարին երեք անգամ Տէրոջը համար չինած սեղանին վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր կը մատուցանէր, և Տէրոջը առջևի սեղանին վրայ խունկ կը ծխէր։

26—Ու Եղբ տունը լմնցուց, Սողոմոն Թագաւորը նժոյգի երկրին մէկ կարմիր Ժողովուրդի երկրէն՝ Նլաթի քով եղող Գաբեոնգաբերի մէջ նաւեր չինեց։ 27—Ու Քիրամ Սողոմոնի ծառաներուն հետ, ծովու ճմբորդութիւն ընելու եղող իր նաւերուր ծառաները այն նաւերով ղրկեց։ 28—Ու անոնք Ոփիր գացին, և անկէ չորս հարիւր քսան տալանդ ոսկի առին, ու Սողոմոն Թագաւորին բերին։

*Եբր. ծառաները

Գլ. Ժ

Եւ Սաբայի Թագուհին Սողոմոնի համբաւը ու Տէրոջը անունը լսեց, ու եկաւ որպես զի իրեն հարցումներով զանիկա փորձէ։ 2—Ու անիկա Երուսաղէմ եկաւ խիստ շատ հանդէսով, իւնկեր ու խիստ շատ ոսկի ու պատուական քարեր բեռցած ուղտերով. և Սողոմոնի քով գնաց, ու բոլոր իր սրտին մէջ եղածը անոր պատմեց։ 3—Ու Սողոմոն անոր բոլոր հարցումները բացատրեց. ու բնաւ այնպիսի խօսք մը չկար, զոր Թագաւորը չհասկնայ ու չբացատրէ անոր։ 4— Ու Սաբայի Թագուհին Սողոմոնի բոլոր իմաստութիւնը, ու անոր չինած տունը, 5—Ու անոր սեղանին կերակուրները, ու անոր ծառաներուն *բնակարանները, և սպասաւորներուն կայնուածքը, ու անոնց հագուստները, և անոր մատուռականները, ու †Տէրոջը տունը երթալու սանդուխը՝ տեսնելով՝ խելքը գլխէն գնաց։ 6—Ու Թագաւորին ըսաւ, Քու վիճակիդ ու իմաստութեանդ վրայով իմ երկրիս մէջ լսած խօսքերս ճշմարիտ են եղեր։ 7—Բայց ես այն խօսքերուն չհաւատացի, մինչև որ ինչ-եկայ ու իմ աչքերովս տեսայ, և ահա ինծի ասոր կէսը չպատմեցին. քու իմաստութիւնդ ու երջանկութիւնդ իմ լսած համբաւս առելի է։ 8—Երանի՛ քու մարդոցդ, երանի՛ այս քու ծառաներուդ՝ որոնք միշտ քու առջևիդ կայնելով քու իմաստութիւնդ կը լսեն։ 9—Քու Եհովա Աստուածդ օրհնեալ ըլլայ, որ քեզի հաճեցաւ ու քեզ Իսրայէլի աթոռին վրայ դրաւ. Եհովա Իսրայէլը յաւիտեան սիրելուն համար՝ քեզ Թագաւոր ըրաւ, որպէս զի իրաւունք ու արդարութիւն ընես։ 10—Ու Թագաւորին հարիւր քսան տալանդ ոսկի ու խիստ շատ խունկեր ու պատուական քարեր տուաւ։ Ալ անկէ ետև այնչափ շատ խունկ չեկաւ, որչափ Սաբայի Թագուհին Սողոմոն Թագաւորին տուաւ։

11—Ու Քիրամի նաւերը, որոնք

*կամ, ժողովը

†կամ, Տէրոջը տանը մէջ ըրած ողջակէզները

Ոփիրէ ոսկի կը բերէին, Ոփիրէ խիստ շատ արմաւկ փայտեր ու պատուական քարեր ալ բերին։ 12—Ու Թագաւորը արմաւկ փայտէն յենարաններ չինեց՝ Տէրոջը տանը ու Թագաւորական տանը համար, և քնարներ ու տաւիղներ՝ երգեցողներուն համար. այսպիսի արմաւկ փայտ բնաւ չեկաւ ու չերեւցաւ մինչև այսօր։

13—Ու Սողոմոն Թագաւորը Սաբայի Թագուհիին բոլոր ուզած ու խնդրած բաները տուաւ, Սողոմոն Թագաւորին իր *առատաձեռնութեամբ անոր տուածէն զատ։ Եւ անիկա իր ծառաներուն հետ դարձաւ իր երկիրը գնաց։

14—Ու մէկ տարուան մէջ Սողոմոնի եկած ոսկիին կշիռքը վեց հարիւր վաթսունըվեց տալանդ ոսկի էր։ 15—Աւազատուր ընդներէն ու վաճառականներէն և †Արաբացւոց բոլոր Թագաւորներէն ու երկրին նախարարներէն ։։։։ զատ։

16—Ու Սողոմոն Թագաւորը կռածոյ ոսկիէ երկու հարիւր վահան չինեց, ։։ ամէն մէկ վահանին համար վեց հարիւր ։։։։ ոսկի գնաց։ 17—կռածոյ ոսկիէ երեք հարիւր ասպար ալ չինէց, ։։ ամէն մէկ ասպարին երեք մնաս ոսկի գնաց։ Ու Թագաւորը Լիբանանի անտառին տունը դրաւ զանոնք։

18—Ու Թագաւորը փղոսկրէ մեծ աթոռ մը չինեց, ու զուտ ոսկիով պատեց զանիկա։ 19—Այս աթոռը վեց աստիճան ունէր. ու աթոռին վերի ծայրը հետևն բոլորչի էր, և նստելու տեղը մէկ կողմն ու միւս կողմն յենարաններ ունէր, ու յենարաններուն քով երկու առիւծներ կը կայնէին։ 20—Ու հոն վեց աստիճաններուն վրայ մէկ կողմէն ու միւս կողմէն տասներկու առիւծներ կը կայնէին. բոլոր Թագաւորութիւններուն մէջ այսպիսի բան մը չինուած չէր։

21—Ու Սողոմոն Թագաւորին բոլոր խմելիքի անմանները ոսկի էին, և Լիբանանի անտառին տանը բոլոր անմանները զուտ ոսկի էին, արծաթէ չկար. ։։ անիկա Սողոմոնի օրերը բանի մը տեղ չէր սեպուեր։ 22—Վասն զի Թագաւորը ծովու վրայ Քիրամի նաւերուն հետ Թարսեացի նաւեր ունէր. Թարսեացի նաւերը երեք տարին անգամ մը ոսկիով, արծաթով, փղոսկրով և կապիկներով ու սիրամարգներով բեռնաւորուած կու գային։

23—Ու Սողոմոն Թագաւորը հարստութեան ու իմաստութեան կողմանէ երկրի բոլոր Թագաւորներէն մեծ եղաւ։ 24—Ու բոլոր երկիրը կը փափաքէր Սողոմոնի երեսը տեսնել՝ և անոր իմաստութիւնը լսելու, զոր Աստուած անոր սրտին մէջ դրեր էր։ 25—Ու անոնց ամէնը տարէ տարի իրենց բնծաները կը բերէին, այսինքն արծաթէ անօթներ, ոսկիէ անօթներ, հագուստներ, զէնքեր, խունկեր, ձիեր ու ջորիներ։

26—Ու Սողոմոն կառքեր ու ձիաւորներ ժողվեց, ու անիկա հազար չորս հարիւր կառք ու տասներկու հազար ձիաւոր ունեցաւ. ու զանոնք կառքերու քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի մէջ Թագաւորին քով տեղաւորեց։ 27—Ու Թագաւորը Երուսաղէմի մէջ արծաթը քարերու պէս հասարակ բան մը ըրաւ, ու եղեւնափայտը շառաւիղներէն՝ դաշտի մէջ եղող մեծաթիւ սիկամորներու պէս բերաւ։ 28—Ու Սողոմոնի ձիերը Եգիպտոսէ կու գային, ու Թագաւորին վաճառականներուն կարաւանը որոշուած գնով մը չէր։ ։։ Երամակներ ծախու կ'առնէին։ 29—Ու Եգիպտոսէ կառք մը դուրս ելլելուն՝ վեց հարիւր արծաթով վեր կու գար, ու մէկ ձին՝ հարիւր յիսուն ։։։։

ալ ձեր քով չմնանեն, որպէս զի ձեր սիրտերը իրենց աստուածներուն չդարձընեն. Սողոմոն սիրով անոնց կառչեցաւ։ 3—Եւ անոր եօթը հարիւր իշխանուհւոյն կին ու երեք հարիւր հարճ ունէր. ու անոր կիները անոր սիրտը խոտորցուցին։ 4—Եւ Սողոմոնի ծերութեան ժամանակը անոր կիները անոր սիրտը օտար աստուածներու դարձուցին, ու անոր սիրտը իր Տէր Աստուծոյն հետ իր հօրը Դաւիթին սրտին պէս կատարեալ չէր։ 5—Եւ Սողոմոն Սիդոնացւոց աստուածոյն Աստարովթի եւ Ամմոնացւոց գարշելի Մեղքոմին եւուէն գնաց։ 6—Եւ Սողոմոն Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ, ու Տէրոջը եւուէն իր հօրը Դաւիթին պէս կատարեալ *չդարձաւ։ 7—Ա՛յն ատեն Սողոմոն Երուսաղէմի դիմաց եղող լեռանը վրայ Մովաբացւոց գարշելի Քամոսին համար բարձր տեղ մը չինեց, ու Ամմոնացւոց գարշելի Մողքին համար ալ։ 8—Եւ իր բոլոր օտարազգի կիներուն համար ալ այնպէս ըրաւ, որոնք իրենց աստուածներուն խունկ կը ծխէին ու զոհ կը մատուցանէին։

9—Ու Տէրը Սողոմոնի բարկացաւ, վասն զի անոր իր սիրտը խոտորցուց Իսրայէլի Տէր Աստուծմէն, որ երկու անգամ իրեն երեւցաւ, 10—Ու այս բանին համար պատուիրեց որ ուրիշ աստուածներու եւուէ չերթայ. բայց անոր Տէրոջը պատուէրը չպահեց։ 11-Ե Տէրը Սողոմոնի ըսաւ, Որովհետեւ *դուն այսպէս ըրիր՝, և իմ ուխտս ու քեզի պատուիրած կանոններս չպահեցիր, *դո՛ թագաւորութիւնդ անշուշտ քեզմէ պիտի պատռեմ, ու զանիկա քու ծառային պիտի տամ։ 12—Միայն թէ այս բանը քու օրերուդ մէջ չեմ ըներ՝ քու հօրդ Դաւիթի համար, Բայց զանիկա քու որդւոյդ ձեռքէն պիտի պատռեմ։ 13—Սակայն բոլոր թագաւորութիւնը պիտի չպատռեմ, հապա իմ ծառային Դաւիթի համար ու իմ ընտրած Երուսաղէմս համար քու որդւոյդ ցեղ մը պիտի տամ։

14—Ու Տէրը Սողոմոնի դէմ Թշնամի մը հանեց, այսինքն Եդոմի Թագաւորին սերունդէն Եդոմացի Ադադը։ 15—Վասն զի Դաւիթ Եդոմի մէջ եղած ատենը, երբ Յովաբ զօրագլուխը մեռցուածները թաղելու համար ելաւ, ու Եդոմի մէջ բոլոր արուները մեռցուց, 16—(Որովհետեւ Յովաբ բոլոր Իսրայէլի հետ հոն վեց ամիս նստաւ, մինչև որ Եդոմեցիոց բոլոր արուները մեռցուց,) 17—Ա՛յն ատեն Ադադ իր հօրը գործի մը Եդոմացի ծառաներուն հետ փախաւ որպէս զի Եգիպտոս երթայ. ու Ադադ դեռ պզտիկ տղայ էր։ 18—Ու անոնք Մադիամէ ելան ու Փառան եկան, և Փառանէ իրենց հետ մարդիկ առին, ու Եգիպտոս եկան Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին, որ անոր տուն տուաւ, ու անոր հացին կարգ դրաւ, ու անոր երկիր տուաւ։ 19—Ու Ադադ Փարաւոնի առջեւ շատ շնորհք գտաւ. ու Փարաւոն իր կնոջ քոյրը, Թահփենէս Թագուհիին քոյրը, անոր կին տուաւ։ 20—Ու Թահփենէսի քոյրը Ա՛բգէ որդի մը ծնաւ, *ը Գանեբաթ Լ՛ըւէյաս. ու Թահփենէս զանիկա Փարաւոնի տանը մէջ մեծցուց. ու Գանեբաթ Փարաւոնի տունը Փարաւոնի որդիներուն մէջ էր։ 21—Ու երբ Ադադ Եգիպտոսի մէջ լսեց Թէ Դաւիթ իր հայրերուն հետ քնացեր է, ու Յովաբ զօրապետը մեռեր է, Ադադ Փարաւոնի ըսաւ, Արձակէ զիս, որպէս զի իմ երկիրս երթամ։ 22—Ու Փարաւոն անոր ըսաւ, Իմ քովս քու ի՞նչդ պակաս է, որ քու երկիրդ երթալ կ՛ուզես։ Ու անիկա ըսաւ, Ո՛չ, Բա՛ն մը Լ՛ըթ՛ոթ՛ը՛ն Լ՛ըն՛է, բայց անպատճառ արձակէ զիս։

23—Ու Աստուած անոր դէմ *Էլէ Թշնամի մը հանեց, այսինքն Եղիադային որդին Ռեզոնը, որ իր տէրոջը, Սուբայի Ադրազար Թագաւորին, փախէն վազեր էր։ 24—Ու անիկա իր քով մարդիկ ժողվեց և գնդապետ եղաւ. ու երբ Դաւիթ զանոնք կոտրեց, Դամասկոս գացին ու հոն բնակեցան, ու Դամասկոսի մէջ թագաւորութիւն ըրին։ 25—Ուստի Ի՛սրայէլի Սողոմոնի բոլոր օրերուն մէջ Իսրայէլի թշնամի եղաւ, Ադադի ըրած չարութենէն զատ, ու Իսրայէլի ներքին կռւ տար, և Ասորւոց վրայ կը թագաւորէր։

26—Ու Սողոմոնի ծառան, Սարեդայէ Եփրաթացի Նաբատի որդին Յերոբովամ ալ, որուն մայրը որբեւարի կին մըն էր Սարեայ անունով, թագաւորին դէմ ձեռք վերցուց։ 27—Ու թագաւորին դէմ ձեռք վերցնելուն պատճառը այս էր. երբ Սողոմոն Մելոնը չինեց, և իր հօրը Դաւիթի քաղաքին փլած տեղը գոցեց, 28—Յերոբովամ խիստ ուժեղ մարդ մը ըլլալով ու Սողոմոն տեսնելով որ տիկա գործունեայ կարճ մըն է, զանիկա Յովսէփի տանը բոլոր բեռներուն վրայ դրաւ։ 29—Ու եղաւ որ այն ժամանակ Յերոբովամ Երուսաղէմէ դուրս ելաւ. ու Տաճարեան մէջ Սիլոնացի Աքիա մարգարէն անոր հանդիպեցաւ, և անիկա նոր վերարկու մը հագեր էր, ու դաշտին մէջ երկու քով մինակ էին։ 30—Ու Աքիա անոր վրայի նոր վերարկուն բռնեց, ու զանիկա տասներկու կտոր պատռեց։ 31—Ու Յերոբովամի ըսաւ, Տասը կտորը քեզի առ. քանզի Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ՛ըսէ, Ահա Սողոմոնի ձեռքէն Թագաւորութիւնը պիտի պատռեմ, ու տասը ցեղը քեզի պիտի տամ։ 32—Ու իմ ծառային Դաւիթի համար, ու Իսրայէլի բոլոր ցեղերէն ընտրած Երուսաղէմ քաղաքիս համար, ցեղ մը անոր ըլլայ։ 33—Որովհետեւ զիս թողուցին, ու Սիդոնացւոց աստուծոյն Աստարովթի և Մովաբացւոց աստուծոյն Քամոսի ու Ամմոնի որդիներուն աստուծոյն Մեղքոմի երկրպագութիւն ըրին, և իմ ճամբաներուս մէջ չգալեցին, որ իր հօրը Դաւիթի պէս իմ աչքիս ուղիղ եղածը ու իմ կանոններս ու դատաստաններս ի գործ դնեն։ 34—Սակայն անոր ձեռքէն բոլոր Թագաւորութիւնը պիտի չառնեմ, ու զանիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ իշխան պիտի թողում՝ իմ պատուիրանքներս ու կանոններս պատճառով իմ ընտրած ծառային Դաւիթի համար։ 35—Բայց անոր որդւոյն ձեռքէն Թագաւորութիւնը պիտի առնեմ ու տասը ցեղը քեզի պիտի տամ։ 36—Ու անոր որդւոյն ցեղ մը պիտի տամ որպէս զի իմ ծառայ Դաւիթ իմ առջեւս միշտ Տրագ մը ունենայ Երուսաղէմ քաղաքին մէջ՝ զոր ընտրեցի իմ անունս հոն դնելու համար։ 37—Ու քեզ պիտի առնեմ և որովհետեւ բոլոր ուզածին պէս Թագաւորութիւն պիտի ընես, ու Իսրայէլի վրայ Թագաւոր պիտի ըլլաս։ 38—Ու եթէ իմ բոլոր քեզի պատուիրածներուս հնազանդութիւն ընես, ու իմ ճամբաներուս մէջ քալես, և իմ ծառային Դաւիթի ըրածին պէս՝ իմ կանոններս ու պատուիրանքներս պահելով՝ իմ առջեւս ուղիղ եղածը ընես, այն ատեն ես քեզի հետ պիտի ըլլամ, ու քեզի Յաւուն տուն պիտի չինեմ, ինչպէս Դաւիթի չինեցի, ու Իսրայէլը քեզի պիտի տամ։ 39—Ու սասր հասար Դաւիթի սերունդը պիտի չարչարեմ, բայց ոչ Թէ միշտ։ 40—Ու Սողոմոն Յերոբովամը մեռցնել ուզեց, բայց Յերոբովամ ելաւ Եգիպտոս փախաւ, *ը Եգիպտոսի Սիսակ Թագաւորին քով *ը՛, ու մինչև Սողոմոնի մահը Եգիպտոս մնաց։

41—Ու Սողոմոնի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածները ու անոր իմաստութիւնը՝ ահա Սողոմոնի պատմութեան գիրքին մէջ գրուած են։ 42—Ու Սողոմոնի Երուսաղէմի մէջ բոլոր Իսրայէլի վրայ Թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի եղան։ 43—Ու Սողոմոն իր հայրերուն հետ քնացաւ, և իր հօրը Դաւիթի քաղաքին մէջ Թաղուեցաւ. ու անոր որդին Ռոբովամ անոր տեղը Թագաւոր եղաւ։

ԳԼ. ԺԲ

Ու Ռոբովամ Սիւքեմ գնաց, վասն զի բոլոր Իսրայէլ զանիկա Թագաւոր ընելու համար Սիւքեմ գացեր էր։ 2—Ու Նաբատեան Յերոբովամ, որ Սողոմոն Թագաւորին երեսէն փախած՝ Եգիպտոս կը բնակէր, դեռ Եգիպտոսի մէջ էր երբ այս բանը լսեց։ 3—Ու *ղրկելով զանիկա կանչեցին. ու Յերոբովամ և Իսրայէլի բոլոր ժողովքը եկան, ու Ռոբովամի հետ խօսեցան ու ըսին, 4—Քու հայրդ մեր վրայ ծանր լուծ մը դրաւ. դուն հիմա քու հօրդ խիստ ծառայութիւնը ու մեր վրայ դրած ծանր լուծը թե-

*Եբր. ասիկա քու քովդ եղաւ

թե ես ըսի, ու քեզի ծառայութիւն ընեն։ 5—Ես անիկա ըսաւ անոնց, Գացէք, ու երիք օրէն եկէք ինծի դարձեալ։ ու Ժողովուրդը դնաց։

6—Ես Ռոբովամ Թագաւորը խորհուրդ հարցուց այն ծերերուն որոնք իր հօրը Սողոմոնի առջև կը կայնէին երբ անիկա ողջ էր, ու ըսաւ, Դուք ինծի ինչ խորհուրդ կու տաք, որ այս ժողովուրդին պատասխան տամ։ 7—Ես անոր խօսեցան ու ըսին, եթէ դուն այսօր այս Ժողովուրդին ծառայ ըլլաս ու անոնց ծառայութիւն ընես, և անոնց բարի խօսքեր ըսելով պատասխան տաս, այն ատեն անոնք քեզի միշտ ծառայ կ'ըլլան։ 8—Բայց անիկա ծերերուն խրատն որ անոնք իրեն տուած խորհուրդը մերժեց, ու իր առջև կայնող երիտասարդներուն խորհուրդ հարցուց։ 9—Ես անոնց ըսաւ, Դուք ինչ խորհուրդ կու տաք, որ այս ժողովուրդին պատասխան տանք։ քանի անոնք ինծի խօսեցան ու ըսին, Թո՛ւ հօրդ մեր վրայ դրած լուծը թեթևցուր։ 10—Ես անոր հետ մեծցած երիտասարդները անոր հետ խօսեցան ու ըսին, Թո՛ւ հայրդ մեր լուծը ծանրացուց, ու դուն մեր վրայէն թեթևցուր՝ ըսող Ժողովուրդին այսպէս խօսիս, ու անոնց այսպէս բաս, իմ պզտիկ մատս իմ հօրս մէջքէն հաստ է։ 11—Իմ հայրս ձեր վրայ ծանր լուծ դրեր է, բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացնեմ։ իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է, բայց ես ձեզ կարճներով պիտի խրատեմ։

12—Ես Ցերոբովամ ու բոլոր Ժողովուրդը երրորդ օրը Ռոբովամի եկան, ինչպէս Թագաւորը ըսեր էր թէ երրորդ օրը ինծի եկէք։ 13—Ես Թագաւորը Ժողովուրդին խստութեամբ պատասխան տուաւ, և ծերերուն իրեն տուած խրատը մերժելով, 14—երիտասարդներուն խորհուրդին պէս անոնց հետ խօսեցաւ ու ըսաւ, Իմ հայրս ձեր լուծը ծանրացուցեր է, բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացնեմ։ իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է, բայց ես ձեզ կարճներով պիտի խրատեմ։ 15—Ես Թագաւորը Ժողովուրդին խօսէը մտիկ չըրաւ, վասն զի այս բանը Ցերոբովամին եղաւ, որպէս որ Տէրը Սիլոնացի Ահիայի ձեռքով Նաբատեան Ցերոբովամի ըսած խօսքը հաստատէ։ 16—Ես երբ բոլոր Իսրայէլ տեսան որ Թագաւորը իրենց մտիկ չըրաւ, Ժողովուրդն ալ Թագաւորին պատասխան տուին ու ըսին, Մենք Դաւիթի փայ ի՞նչ բաժին ունինք, ու Յեսսէի որդւոյն քով ժառանգութիւն չունինք։ ով Իսրայէլ, ձեր վրանները դէ՛ղէ՛ե։ ով Դաւիթ, հիմա դուն քու տունդ հոգա։ ու Իսրայէլ իրենց վրանները գացին։ 17—Բայց Յուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի որդիներուն վրայ Ռոբովամ Թագաւոր եղաւ։ 18—Ես Ռոբովամ Թագաւորը երբ հարկահան վրայ եղող Ադորամը զրկեց, բոլոր Իսրայէլ զանիկա քարերով քարկոծեցին, ու մեռաւ։ Ես Ռոբովամ Թագաւորը արտարապով կառքը հեծաւ, որպէս զի Երուսաղէմ փախչի։ 19—Այսպէս Իսրայէլ Դաւիթի տունէն ապստամբեցաւ մինչև այսօր։

20—Ես բոլոր Իսրայէլ Ցերոբովամի դառնալը լսելով ՚ղրկեցին ու զանիկա Ժողովուրդին մէջ կանչեցին, և զանիկա բոլոր Իսրայէլի վրայ Թագաւոր դրին, ու Յուդայի ցեղէն զատ Դաւիթի տանը ուրիշ հետեւող մը չկար։ 21—Ես Ռոբովամ Երուսաղէմ մտաւ, ու բոլոր Յուդայի տունէն ու Բենիամինի ցեղէն հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմողներ ժողվեց, որ Իսրայէլի տանը հետ պատերազմին, ու Թագաւորութիւնը Սողոմոնի որդւոյն Ռոբովամի դարձնեն։

22—Ես Աստուծոյ մարդուն Սեմայիայի Աստուծոյ խօսքը եղաւ՝ ըսելով, 23—Սողոմոնի որդւոյն Յուդայի Ռոբովամ Թագաւորին ու բոլոր Յուդայի տանը ու Բենիամինի և միւսոյդ Ժողովուրդին խօսիս, ու ըսես, 24—Տէրը այսպէս կ'ըսէ, Մի ելլէք, ու Իսրայէլի որդիներուն, ձեր եղբայրներուն, հետ մի պատերազմիք։ ամէն մարդ թող իր տուները դառնայ, վասն զի այս բանը ինծմէ եղաւ։ Ես Տէրոջը խօսքը մտիկ ըրին, ու Տէրոջը ըսածին պէս *նոր դարձան։

25—Ու Ցերոբովամ Եփրեմի լեռանը վրայ Սիւքէմը շինեց ու հոն բնակեցաւ. և անկէ ելաւ, փանուէլը շինեց։

*կամ, երթալէն

26—Ու Ցերոբովամ իր սրտին մէջ ըսաւ, Հիմա Թագաւորութիւնը Դաւիթի տանը պիտի դառնայ։ 27—եթէ այս ժողովուրդը նբուսաղէմ Տէրոջը տունը ելլէ զոհ ընելու համար, այն ատեն այս ժողովուրդին սիրտը իրենց տէրոջը, Յուդայի Ռոբովամ Թագաւորին, պիտի դառնայ, և ինծ պիտի մեռցնեն, ու Յուդայի Ռոբովամ Թագաւորին պիտի դառնան։ 28—Ես Թագաւորը խորհուրդ ըրաւ, ու երկու հատ ոսկէ որթ չինեց։ ու անոնց ըսաւ, *Ահկէ հետև ձեզի նբուսաղէմ ելլել պէտք չէ՞. ով Իսրայէլ, ահա քու աստուածներդ՝ որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին։ 29—Ու մէկը Բեթէլի մէջ դրաւ, ու միւսն ալ Դանի մէջ դրաւ։ 30—Ես այս բանը մեղքի պատճառ եղաւ. վասն զի Ժողովուրդը մինչև Դան կ'երթար՝ որ երէցէն մէկուն առջև երկրպագէ։ 31—Ու բարձր տեղերու վրայ կառուցուներ չինեց, ու Ժողովուրդին ցեղ մարդացնէն գոյ բերը ըրաւ, որոնք Ղևիի որդիներէն չէին։

32—Ու Ցերոբովամ ութերորդ ամսուն մէջ, ամսուն տասնըհինգերորդ օրը, Յուդայի մէջ պահոյ տօնին պէս տօն սահմանեց, ու սեղանին վրայ †զոհեր մատուց՝ Բեթէլի մէջ այսպէս ըրաւ, ու իր չինած օրթերուն զոհեր մատուց։ և բարձր տեղերուն համար ըրած գոյ բերը Բեթէլի մէջ դրաւ։ 33—Ու իր մեքէն հնամած ամսուն մէջ, այսինքն ութերորդ ամսուն տասնըհինգերորդ օրը, Բեթէլի մէջ իր չինած սեղանին վրայ զոհեր մատուցի, ու Իսրայէլի որդիներուն ծոն սահմանեց, ու սեղանին վրայ ‡զոհեր մատուցանելով խունկ ծխեց՝։

ԳԼ. ԺԳ

Ու երբ Ցերոբովամ խունկ ծխելու համար սեղանին քով կը կայներ, ահա Աստուծոյ մարդ մը Տէրոջը խօսքովը

*կամ, Ալ հերիք է ձեր երուսաղէմ ելլելը

†կամ, ելաւ

‡կամ, խունկ ծխելու ելաւ

Ցուդայէ Բեթէլ եկաւ։ 2—Ես Տէրոջը խօսքովը սեղանին կանչեց ու ըսաւ, Ով սեղան, ով սեղան, Տէրը այսպէս կ'ըսէ, Ահա Դաւիթի տանը որդի մը պիտի ծնանի Յովսիա անունով, և քու վրադ խունկ ծխող բարձր տեղերուն գոյ բերը քու վրադ պիտի զոհէ, ու քու վրադ մարդոց ոսկորներ պիտի այրեն։ 3—Ես նոյն օրը նշան մը տալով՝ ըսաւ, Տէրոջը խօսելուն նշանը այս է. Ահա սեղանը պիտի պատռի, ու վրայի մխիթը պիտի թափի։

4—Ու երբ Թագաւորը Աստուծոյ մարդուն Բեթէլի մէջ սեղանին համար կանչած խօսքը լսեց, Ցերոբովամ սեղանին վրայէն ձեռքը երկնցուց, ու ըսաւ, Ա՛ս ՚ղրկը բռնեցէք. և անոր վրայ երկնցուցած ձեռքը չորցաւ, ու զանիկա իրեն գարձնելու կարող չեղաւ։ 5—Ես Աստուծոյ մարդուն Տէրոջը խօսքովը տուած նշանին պէս՝ սեղանը պատռեցաւ ու մխիթը սեղանէն թափեցաւ։ 6—Ես Թագաւորը Աստուծոյ մարդուն պատասխան տուաւ ու ըսաւ, Քու Տէր Աստուածդ աղջև աղաչէ ու ինծի համար աղօթք ըրէ, որ ձեռքս ինծի դառնայ։ Այն ատեն Աստուծոյ մարդը Տէրոջը աղջև աղաչեց, և Թագաւորին ձեռքը իրեն դարձաւ ու առաջուան պէս եղաւ։ 7—Ես Թագաւորը Աստուծոյ մարդուն ըսաւ, Ինծի հետ տուն եկուր, և *քիչ մը կերակուր կեր՝, ու քեզի պարգև տամ։ 8—Ես Աստուծոյ մարդը Թագաւորին ըսաւ, եթէ ինծի քու տանդ կէսն ալ տաս, քեզի հետ պիտի չերթամ, ու այս տեղ հաց պիտի չուտեմ, ոչ ալ ջուր խմեմ. 9—վասն զի Տէրը իր խօսքովը ինծի այսպէս պատուիրեց ու ըսաւ, Հաց չուտես ու ջուր չխմես, ու գացած ճամբադ չդառնաս։ 10—Ուստի անիկա ուրիշ ճամբով գնաց ու Բեթէլ գացած ճամբովը չդարձաւ։

11—Ես Բեթէլի մէջ ծեր մարգարէ մը կը բնակէր. ու անոր որդիները եկան, ու Աստուծոյ մարդուն նոյն օրը Բեթէլի մէջ բոլոր ըրած գործերը անոր պատմեցին, և անիկա Թագաւորին ինչ

*ՅԲեր. ուրտ զօրացուր

խօսքեր որ զրուցեր էր՝ զանոնք ալ իրենց հօրը պատմեցին։ 12—Ու անոնց հայրը անոնց ըսաւ, Որ Ճամբային գնաց, նէ անոր որդիները Յուդայէ եկող Աստուծոյ մարդուն գացած Ճամբան *տեսեր էին։ 13—Ու իր որդիներուն ըսաւ, Էշը պատրաստեցէք ինծի. և անոնք անոր համար էշը պատրաստեցին, ու անոնց վրան հնծաւ։ 14—Ու Աստուծոյ մարդուն ետևէն գնաց ու զանիկա բլուրներուն մէ տակ նստած գտաւ, ու անոր ըսաւ, Յուդայէ եկող Աստուծոյ մարդը դուն ես ու. և անոնց ըսաւ, Ես եմ։ 15—Ու անոր ըսաւ, Ինծի հետ տուն եկուր ու հաց կեր։ 16—Ու անոնց ըսաւ, Քեզի հետ չեմ կրնար դառնալ ու քու դռնէդ մտնել. ոչ ալ այս տեղ քեզի հետ հաց պիտի ուտեմ, ու ոչ ջուր խմեմ։ 17—Վասն զի Տէրոջը խօսքովը ինծի ըսուեցաւ, Հոն հաց չուտես, ջուր ալ չխմես, ու գացած Ճամբայդ չդառնաս։ 18—Բայց անոնց ըսաւ անոր, Ես ալ քեզի պէս մարգարէ եմ. ու հրեշտակ մը ինծի հետ Տէրոջը խօսքովը խօսեցաւ ու ըսաւ, Զանոնք քեզի հետ քու տունդ դարձու՛ր, որպէս զի հաց ուտէ ու ջուր խմէ. *նէ՝ սուտ զրուցեց անոր։

19—Այն տունն անոր հետ գարձաւ, և անոր տունը հաց կերաւ ու ջուր խմեց։ 20—Ու երբ անոնք սեղան նստեր էին, Տէրոջը խօսքը զանիկա գարձնող մարգարէին եղաւ։ 21—Ու անիկա Յուդայէ եկող Աստուծոյ մարդուն կանչելով՝ ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ, Որովհետև դուն Տէրոջը խօսքին անհնազանդութիւն ըրիր, ու քու Տէր Աստուծոյդ քեզի պատուիրած պատուէրը չպահեցիր, 22—Ու գարձար, ու հաց կերար ու ջուր խմեցիր այն տեղը որուհամար քեզի ըսած էր որ հաց չուտես ու ջուր չխմես, քու մեռելդ քու հայրերու գերեզմանը պիտի չմտնէ։

23—Ու հաց ուտէլէն ու կուշ խմելէն եաքը անիկա իր էշ գարձուցած մարգարէին էշը պատրաստեց։ 24—Ան ալ գնաց, ու ճամբուն մէջ առիւծ մը գտաւ զանիկա ու մեռցուց. և անոր մեռելը ճամբուն վրայ փռուած մնաց, ու էշը անոր քով կայներ էր, առիւծն ալ մեռելին քով կայներ էր։ 25—Ու, ահա անոնք քանի մը մարդիկ անցնելով՝ ճամբուն վրայ փռուած մեռելը ու մեռելին քով կայնող առիւծը տեսան ու գացին այն ծեր մարգարէին քնա. կած քաղաքին մէջ պատմեցին։ 26—Ու զանիկա ճամբայէն դարձնող մարգարէն երբ լսեց՝ ըսաւ, Անիկա Տէրոջը խօսքին անհնազանդութիւն ընդ. Աստուծոյ մարդն է. ու Տէրը զանիկա առիւծին տուեր է, որ զանիկա պատառատ. լով մեռցուցեր է՝ Տէրոջը անոր ըսած խօսքին համեմատ։ 27—Ու իր որդիներուն խօսեցաւ ու ըսաւ, Ինծի համար էշը պատրաստեցէք, ու անոնք պատրաստեցին։ 28—Ու գնաց անոր մեռելը գտաւ, որ ճամբուն վրայ փռած էր. ու էշը և առիւծը մեռելին քով կայներ էին. առիւծը մեռելը կերած չէր, ոչ ալ էշը պատառեր էր։ 29—Ու այն մարգարէն Աստուծոյ մարդուն մեռելը վերցուց ու զանիկա էշուն վրայ դրաւ ու զանիկա գարձուց. և ծեր մարգարէն քաղաքը մտաւ, որպէս զի ողբ ընէ ու զանիկա թաղէ. 30—Ու անոր մեռելը իր գերեզմանին մէջ դրաւ, ու վա՜յ եղբայր, ըսելով, անոր վրայ ողբ ըրին։ 31—Ու զանիկա թաղելէն եաքը իր որդիներուն խօսեցաւ ու ըսաւ, Երբ ես մեռնիմ, ինծ Աստուծոյ մարդուն թաղած գերեզմանին մէջ թաղեցէք, իմ ոսկորներուս անոր ոսկորներուն քով դնեցէք։ 32—Վասն զի ըներկելի մէջ եղող սեղանին համար, ու Սամարիայի քաղաքներուն մէջ եղող ամէն բարձր տեղերու կառուցուներուն համար, անոր Տէրոջը խօսքովը կանչած խօսքը անպատճառ պիտի կատարուի։

33—Այս բանէն եաքը Յերոբովամ իր չար ճամբայէն չդարձաւ. մանաւանդ նորէն ժողովուրդին ցած մարդ ոցմէն բարձր տեղերուն քահանաներ կ'ընէր, ամէն ուզողը կ'օրհնէր, ու անիկա բարձր տեղերուն քահանայ կ'ընկար։ 34—Ու այս բանը Յերոբովամի տունը մեղքի պատճառ եղաւ, նաև անոր երկրի երեսէն կորսուելուն ու բնաջինջ ըլլալուն։

*Կամ, ցուցուցին

ԳԼ. ԺԳ

Այն առեն Յերոբովամ որդին Աբիա հիւանդացաւ։ 2—Ու Յերոբովամ իր կնոջ ըսաւ, Ելիր, կերպարանքդ փոխէ, այնպէս որ Յերոբովամի կինը ըլլալդ չգիտցուի, ու Սիլով գնա. ահա Աքիա մարգարէն հոն է. անիկա էր որ ինծի համար ըսաւ թէ այս ժողովուրդին վրայ թագաւոր պիտի ըլլամ. 3—Ու ձեռքդ տասը հաց և բլիթներ ու մէկ սափոր մեղր առ, ու անոր գնա. անիկա քեզի պիտի պատմէ թէ որ տղան պիտի պատահի։ 4-Ու Յերոբովամի կինը այնպէս ըրաւ, ու ելաւ Սիլով գնաց, և Աքիայի տունը մտաւ. բայց Աքիայէ աչքերը ծերութենէն ակարացեր էին, ու չէր կրնար տեսնել։

5—Ու Տէրը Աքիայի ըսաւ, Ահա Յերոբովամի կինը իր տղան հարցնելու կու գայ, վասն զի անիկա հիւանդ է. անոր այսպէս ու այսպէս խօսա. ու անիկա գալու ատենը անծանօթ կերպարանքով †էր։ 6—Ու երբ անիկա դռնէն ներս կը մտնէր, Աքիա անոր ոտքերուն ձայնը լսածին պէս ըսաւ, Ով Յերոբովամի կինը, եկուր. դուն ինչո՞ւ այդպիսի անծանօթ կերպարանք մտեր ես. բայց ես քեզի խիստ լուր մը տալու ղրկուեցայ։ 7—Գնա, Յերոբովամի ըսէ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ, Որովհետև քեզ ժողովուրդին մէջէն բարձրացուցի, ու քեզ իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ իշխան ըրի, 8—Ու թագաւորութիւնը Դաւիթի տունէն պատառեցի, ու զանիկա քեզի տուի. ու դուն իմ պատուիրանքներս պահող ու իմ առջեւս ուղղութիւն ընելու համար իր բոլոր սրտովը *ինծի հնազանդ եղող՝ իմ Դաւիթ ծառայիս պէս չեղար. 9—Մանաւանդ բոլոր քեզմէ առաջ եղողներէն աւելի չարութիւն ըրիր, ու գնա բարկացնելու համար գացիր քեզի ուրիշ աստուածներ ու ձուլածոյ կուռքեր չինեցիր, ու զիս ետիդ նետեցիր։ 10—Ասոր համար ահա Յերոբովամի տունը վրայ չարիք պիտի բերեմ, ու Յերոբովամի մնացորդ պատմութիւնը՝ թէ ի՛նչպէս պատերազմ ըրաւ, և թէ ի՛նչպէս թագաւորեց, ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։ 20—Ու Յերոբովամի թագաւորութիւն ըրած օրերը քառասունհինգ տարի եղան, ու իր հայ-

*Եբր. իմ ետեւէս եկող

վամի առեն այր մարդիկը, ու նաև Իսրայէլի մէջ գոյացածը ու ձգուածը պիտի կոտորեմ, և Յերոբովամի տունը պիտի ալեմ՝ ինչպէս ապրը կ'ալէ, մինչև որ հասնի։ 11—Յերոբովամէ քաղաքի մէջ մեռնողը շուները պիտի ուտեն, ու դաշտի մէջ մեռնողը երկինքի թռչուները պիտի ուտեն, քանզի Տէրը խօսեցաւ։ 12—Ու դուն ելիր, քու տունդ գնա. ու քու ոտքերուդ քաղաքին մէջ մտած ատենը տղան պիտի մեռնի։ 13—Ու բոլոր Իսրայէլ ողբալով զանիկա պիտի թաղեն, վասն զի Յերոբովամէ միայն անիկա գերեզման պիտի մտնէ. որովհետև Իսրայէլի Տէր Աստուծոյն տալիս Յերոբովամի տանը մէջ բարի բան մը դիւրս անոր վրայ գտնուեցաւ։ 14—Ու Տէրը իրեն համար Իսրայէլի վրայ թագաւոր մը պիտի հանէ, որ *նոյն օրը Յերոբովամի տունը պիտի հատորէ. ու ալ ինչ ձա՞յ, գրեթէ հիմա դէ՛ւ է՛. 15—Ու Տէրը Իսրայէլը պիտի զարնէ, ու Իսրայէլը պիտի խլէ այս բարի երկրին երեսէն, զոր անոնց հայրերուն տուեր էր, ու զանոնք Գետին անդիի կողմը պիտի ցրուէ, որովհետև Տէրը բարկացնելով՝ իրենց †Աստարովթի կուռքեր չինեցին. 16—Ու Իսրայէլը էբէ՛ պիտի ձգէ, Յերոբովամի ըրած մեղքերուն համար ու Իսրայէլի ալ մեղանչել տալուն համար։

17—Այն առեն Յերոբովամի կինը ելաւ գնաց ու Թերսա մտաւ, ու անիկա տանը դռնէն ներս մտածին պէս՝ տղան մեռաւ։ 18—Ու զանիկա թաղեցին, ու բոլոր Իսրայէլ անոր վրայ ողբացին Տէրոջը խօսքին համեմատ՝ զոր իր ծառային Աքիա մարգարէին ձեռքով խօսեր էր։

19—Ու Յերոբովամի մնացորդ պատմութիւնը՝ թէ ի՛նչպէս պատերազմ ըրաւ, և թէ ի՛նչպէս թագաւորեց, ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։ 20—Ու Յերոբովամի թագաւորութիւն ըրած օրերը քառասունհինգ տարի եղան, ու իր հայ-

*Կամ, այսօր

†Կամ, անտառներ

բերան հետ քնացաւ. ու անոր տեղ ա-
նոր որդին Նադաբ թագաւոր եղաւ։

21—Եւ Սողոմոնի որդին Ռոբոամ
Գուդայի մէջ թագաւորեց. Ռոբոամ
քառասունըմէկ տարեկան էր երբ թա-
գաւոր եղաւ, և տասնըեօթը տարի
Թագաւորութիւն ըրաւ Երուսաղէմի մէջ,
այսինքն այն քաղաքին մէջ զոր Տէրը
Իսրայէլի ամէն ցեղերէն ընտրեց իր ա-
նունը հոն դնելու համար. ու անոր
մայրը Ամմինացի էր Նահամա անունով։
22—Եւ Գուդայեանք ալ Տէրոջը առջև
չարութիւն ըրին, ու իրենց ըրած մեղ-
քերովը իրենց հայրերուն բոլոր ըրածէն
աւելի զանիկա բարկացուցին։ 23—Եւ
անոնք ալամէն բարձր բլուրներուն վրայ,
ու ամէն կանանչ ծառերուն տակ բարձր
տեղեր ու արձաններ և Աստարովթի
կուռքեր չինեցին։ 24—Ու երկրին մէջ
Սոդոմական մեղք ալ գործողներ կա-
յին, ու Տէրոջը Իսրայէլի որդիներուն
առջեւէն վռնտած ազգերուն բոլոր
գարշելի բաներուն նման կ՚ընէին։

25—Եւ Ռոբոամ Թագաւորին հին-
գերորդ տարին Եգիպտոսի Սիսակ Թա-
գաւորը Երուսաղէմի վրայ եկաւ. 26—
Ու Տէրոջը տանը գանձերը ու Թագա-
ւորին տանը գանձերը առաւ. ամէնն
ալ առաւ. Սողոմոնի չինած բոլոր ոս-
կեայ սպարներն ալ առաւ։ 27—Եւ Ռո-
բոամ Թագաւորը անոնց տեղ պղնձէ սա-
պարներ չինեց, ու զանոնք Թագաւորա-
կան տանը դուռը պահպանութիւն ընող
սուրհանդակաց ռասխականներուն ձեռքը
յանձնեց։ 28—Ու երբ Թագաւորը Տէ-
րոջը տաճարը կ՚երթար՝ սուրհանդակները
զանոնք կը կրէին, ու Նորէ զանոնք սուր-
հանդակներուն խուցը կը դարձնէին։

29—Եւ Ռոբոամի միացորդ պատ-
մութիւնը ու անոր ամէն ըրածը ասո
Գուդայի Թագաւորներուն յիշատակաց
գիրքին մէջ գրուած է։ 30—Ու Ռոբո-
ամի և Երոբոամի միջեւ միշտ պա-
տերազմ կար։ 31—Եւ Ռոբոամ իր
հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրե-
րուն հետ Դաւիթի քաղաքին մէջ թաղ-
ուեցաւ. և անոր մայրը Ամմինացի էր
Նաամա անունով, ու անոր տեղ անոր
որդին *Աբիա Թագաւոր եղաւ։

*Եբր. Աբիամ

ԳԼ. ԺԵ

Եւ Նաբատեան Երոբոամի Թագա-
ւորութեան տասնըութերորդ տարին՝
Աբիա Գուդայի վրայ Թագաւորեց։ 2—
Անիկա երուսաղէմի մէջ երեք տարի
Թագաւորութիւն ըրաւ. ու անոր մօրը
անունը Մաաքա էր, ու Աբիսողոմի աղ-
ջիկն էր։ 3—Եւ անիկա իրմէ առաջ իր
հօրը ըրած բոլոր մեղքերուն հետեւե-
ցաւ. ու անոր սիրտը իր Տէր Աստուծոյն
հետ կատարեալ չէր՝ իր հօրը Դաւիթի
սրտին պէս։ 4—Բայց Դաւիթի սիրոյն
համար անոր Տէր Աստուածը Երուսա-
ղէմի մէջ անոր ծագ մը տուաւ, անկէ
ետքը անոր որդին նստեցնելով ու Երու-
սաղէմը հաստատելով. 5— Որովհետև
Դաւիթ Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ,
ու իր կեանքին բոլոր օրերուն մէջ բնաւ
անոր պատուիրանքներէն չխոտորեցաւ՝
Բեթսացի Ուրիայի բանէն զատ։ 6—Եւ
Ռոբոամի ու Երոբոամի մէջեղ պա-
տերազմ կար՝ անոր կեանքին բոլոր օ-
րերուն մէջ։

7—Ու Աբիայի միացորդ պատմու-
թիւնը և անոր բոլոր ըրածը ասո Գու-
դայի Թագաւորներուն յիշատակաց
գիրքին մէջ գրուած է. ու Աբիայի ու
Երոբոամի մէջեղ պատերազմ կար։
8—Եւ Աբիա իր հայրերուն հետ քնա-
ցաւ, ու զանիկա Դաւիթի քաղաքին
մէջ թաղեցին, և անոր տեղ անոր որ-
դին Ասա Թագաւոր եղաւ։

9—Իսրայէլի Երոբոամ Թագաւո-
րին քսաներորդ տարին Ասա Գուդայի
վրայ Թագաւոր եղաւ. 10—Ու երու-
սաղէմի մէջ քառասունըմէկ տարի Թա-
գաւորութիւն ըրաւ, և անոր *մօրը ա-
նունը Մաաքա էր ու Աբիսողոմի աղ-
ջիկն էր։ 11—Եւ Ասա իր հօրը Դաւի-
թի պէս Տէրոջը առջև ուղղութիւն ը-
րաւ։ 12—Ու Սոդոմական մեղք գոր-
ծողները երկրէն վերցուց, և իր հայրե-
րուն չինած բոլոր կուռքերը բնաջինջ
ըրաւ։ 13—Ու իր մայրը Մաաքան տիկ-
նութենէն հանեց, քանզի անիկա Աս-
տարովթի կուռք մը չիներ էր. և Ասա
անոր կուռքը կոտրեց ու Կեդրոն հե-

*Այսինքն, մեծ մօրը. տես հմր. 2։

ղեղաձին մէջ այրեց։ 14—Բայց բարձր
տեղերը չվերցուցին, սակայն Ասայի սիրտը
իր կեանքին բոլոր օրերուն մէջ Տէրոջը
հետ կատարեալ էր։ 15—Եւ իր հօրը
նուիրած բաները ու իր նուիրած բա-
ները, արծաթը ու ոսկին ու անօթնե-
րը, Տէրոջը տունը տարաւ։

16—Եւ Ասայի ու Իսրայէլի Բասա
Թագաւորին միջեւ, անոնց բոլոր օրե-
րուն մէջ, պատերազմ կար։ 17—Ու Ի-
սրայէլի Թագաւորը Բասա Գուդայի
դէմ ելաւ, և Ռաման չինեց, որպէս զի
Գուդայի Ասա Թագաւորին ելլող մանող
դուրս չթողու։ 18—Ուստի Ասա Տէ-
րոջը տանը գանձերուն մէջ ու Թագա-
ւորական տանը գանձերուն մէջ մնացած
բոլոր արծաթը ու ոսկին առաւ, և իր
ծառաներուն ձեռքը տուաւ, ու Ասա
Թագաւորը Դամասկոս բնակող Ասորւոց
Թագաւորին, Իշխոնի որդւոյն Տաբրե-
մոնի որդւոյն Բենհադադի, ղրկեց զա-
նոնք, ու ըսաւ, 19—Իմ ու քու մէջ-
տեղ, և իմ հօրս ու քու հօրդ մէջտեղ
դաշնակցութիւն կայ. ահա քեզի ար-
ծաթ ու ոսկի ընծայ ղրկեցի. արի, Ի-
սրայէլի Բասա Թագաւորին հետ ունե-
ցած դաշնակցութիւնդ արէ, որպէս զի
անիկա իմ վրայէս ետ քաշուի։ 20—Ու
Բենհադադ Ասա Թագաւորին Կուէտ մարիկ
ըրաւ, և իր զօրքերուն իշխանները Ի-
սրայէլի քաղաքներուն վրայ ղրկեց. ու
Իյոնը, Դանը, Աբել-բեթմաքան ու
բոլոր Քինոերթը ու բոլոր Նեփթալիմի
երկիրը զարկաւ։ 21—Եւ Բասա այ-
ըեաը լսելով Ռաման չինելէն ետ կե-
ցաւ ու Թերսայի մէջ նստաւ։ 22—Ա յն
ատեն Ասա Թագաւորը բոլոր Գուդայի
մարդիկը կանչեց առանց մէկը ձգելու,
որոնք Բասայի չինած Ռամային փա-
րերը ու փայտերը վերցուցին, և Ասա
Թագաւորը անոնցմով Բենիամինի Գա-
բան ու Մասփան չինեց։

23—Եւ Ասայի բոլոր միացորդ պատ-
մութիւնը, ու անոր բոլոր զօրութիւնը
ու բոլոր ըրածը, և անոր չինած քա-
ղաքները ասո Գուդայի Թագաւորնե-
րուն յիշատակաց գիրքին մէջ գրուած
են. բայց անիկա իր ծերութեան ատե-
նը ոտքերու ցաւ ունէր։ 24—Ու Ասա
իր հայրերուն հետ քնացաւ, և իր հայ-
րերուն հետ իր հօրը Դաւիթի քաղա-
քին մէջ թաղուեցաւ. ու անոր տեղ
անոր որդին Յովսափատ Թագաւոր
եղաւ։

25—Եւ Գուդայի Ասա Թագաւորին
երկրորդ տարին Երոբոամի որդին Նա-
դաբ Իսրայէլի վրայ Թագաւոր եղաւ,
ու անիկա Իսրայէլի վրայ երկու տարի
Թագաւորութիւն ըրաւ։ 26—Ու Տէրո-
ջը առջև չարութիւն ըրաւ, ու իր հօրը
Ճամբան մէջ գալով, ու անոր ըրած
մեղքին մէջ որով Իսրայէլի մեղանչել
տուաւ։ 27—Եւ Իսաքարի տունէն Ախի-
այի որդին Բասա անոր դէմ դաւ սար-
քեց, ու Բասա զանիկա Գեբեթոնի
վերցուց. ու Բասա զանիկա Գեբեթո-
նէց Գոբաթինին քով կարկաս, երբ Նա-
դաբ բոլոր Իսրայէլի հետ Գեբեթոնը
պաշարեր էր։ 28—Եւ Գուդայի Ասա
Թագաւորին երրորդ տարին Բասա
մեռցուց զանիկա, ու անոր տեղ Թա-
գաւոր եղաւ։ 29—Եւ ինք Թագաւոր
եղածին պէս Երոբոամի բոլոր տունը
զարկաւ. ու Տէրոջը խօսքին համեմատ,
զոր իր ծառային Սիլոնացի Ախիա մար-
գարէին ձեռքով խօսեր էր, Երոբոամ-
ի բնաւ շնչաւոր մը ողջ չթողուց, ու
զանիկա բնաջինջ ըրաւ, 30—Երոբո-
ամի մեղքերուն համար՝ որոնցմով մե-
ղանչեր էր, ու Իսրայէլի մեղանչել
տուեր էր՝ Իսրայէլի Տէր Աստուածը
բարկացնելով։

31—Եւ Նադաբի միացորդ պատմու-
թիւնը ու անոր բոլոր ըրածը՝ ահա Իս-
րայէլի Թագաւորներուն յիշատակաց
գիրքին մէջ գրուած են։ 32—Ու Աս-
այի ու Իսրայէլի Բասա Թագաւորին
միջեւ, անոնց բոլոր օրերուն մէջ, պա-
տերազմ կար։

33—Գուդայի Ասա Թագաւորին եր-
րորդ տարին Ախիայի որդին Բասա
Թերսայի մէջ բոլոր Իսրայէլի վրայ Թա-
գաւոր եղաւ, ու քսանըչորս տարի Թա-
գաւորեց։ 34—Եւ անիկա Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, ու Ե-
րոբոամի ճամբուն մէջ քալեց, և անոր
մեղքին մէջ որով անիկա Իսրայէլի մե-
ղանչել տուեր էր։

Գլ. ԺԶ

Եւ Բաասայի համար Տէրոջը խօսքը Անանիի որդւոյն Եհուի եղաւ՝ ըսելով, 2—Որովհետեւ քեզ փոշիէն բարձրացուցի, ու քեզ իմ ժողովրդիս Իսրայէլի վրայ իշխան դրի, և դուն Երոբոամի ճամբան գացիր, ու իմ ժողովուրդս Իսրայէլը մեղանչել ստիպեր, ու անոնց մեղքերովը զիս բարկացուցիր, 3—Ահա ես *Բաասան ու անոր տունը՝ քեզի պիտի ընեմ, և քու տունդ Նաբատեան Երոբոամի տանը պէս պիտի ընեմ։ 4—Բաասայէ փաղաքի մէջ մեռնողը չուները պիտի ուտեն, ու դաշտի մէջ մեռնողը երկինքի թռչունները պիտի ուտեն։

5—Ու Բաասայի մնացորդ պատմութիւնը ու անոր ըրածը ու զօրութիւնը՝ ասոնք Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 6—Ու Բաասա իր հայրերուն հետ քնացաւ ու Թերսայի մէջ թաղուեցաւ, և անոր տեղ անոր որդին Ելա թագաւոր եղաւ։ 7—Նաև Անանիի որդւոյն Եհու մարգարէին ձեռքով Տէրոջը խօսքը եղաւ Բաասայի ու անոր տանը վրայ այն ամէն չարիքներուն համար, զորոնք ինք Տէրոջը առջև ըրած էր, զանիկա իր ձեռքերուն գործովը բարկացնելով — Երոբոամի տանը պէս ըլլալով, նաև զանիկա սպաննելուն համար։

8—Ցուդայի Ասա թագաւորին քսանըվեցերորդ տարին Բաասայի որդին Ելա Թերսայի մէջ Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ, — երկու տարի [*]տիրեց։ 9—Անոր երբ Թերսայի մէջ Թերսայի տանը հազարապետին Արսայի տունը խմիր ու գինովցեր էր, անոր ծառան Զամբրի, որ [*]կառքերուն կէսին վրայ իշխան էր, անոր դէմ դաւ վերցուց։ 10— Ու Զամբրի ներս մտնելով՝ զանիկա զարկաւ սպաննեց, և անոր տեղ ինք թագաւոր եղաւ՝ Ցուդայի Ասա թագաւորին քսանըսերորդ տարին։ 11—Ու երբ թագաւոր եղաւ ու իր աթոռը նստաւ, խլեց Բաասայի բոլոր տունը, թէ՛ անոր ազգականները և թէ՛ բարեկամները, մեռցուց, ու անոր ա՛ր ոչ մարդը ողջ չթողուց։ 12—Ըստ Զամբրի Բաասայի բոլոր տունը բնաջինջ ըրաւ, Բաասայի վրայով Եհու մարգարէին ձեռքով Տէրոջը ըսած խօսքին համեմատ, 13—Բաասայի բոլոր մեղքերուն համար ու անոր որդւոյն Իլայի մեղքերուն համար, որոնցմով իրենք մեղանչեցին և Իսրայէլին մեղանչել տուին, ու իրենց անպատշաճութիւններովը Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուցին։

14—Ու Իլայի մնացորդ պատմութիւնը և անոր բոլոր ըրածը՝ ասոնք Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։

15 — Ցուդայի Ասա թագաւորին քսանըեօթներորդ տարին Զամբրի Թերսայի մէջ եօթը օր թագաւորեցաւ։ բայց ժողովուրդը Փղշտացոց Գաբաթոնին դէմ բանակեր էր։ 16— Ու բանակին մէջ եղող ժողովուրդը լսելով որ Զամբրի դաւ ըրաւ վերցուցեր է, ու նաև թագաւորը մեռցուցեր է, նոյն օրը բոլոր Իսրայէլ բանակին մէջ Ամրի զօրավարը Իսրայէլի վրայ թագաւոր դրին։ 17—Ու Ամրի ու անոր հետ բոլոր Իսրայէլ Գաբաթոնէ եալն ու Թերսան պաշարեցին։ 18—Ու երբ Զամբրի քաղաքին առնուիլը տեսաւ, թագաւորական տանը *նեբան կողմը մտաւ, և իր վրայ թագաւորական տունը կրակով այրեց ու մեռաւ, 19—Իր գործած մեղքերուն համար, որոնցմով Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, ու քալեց Երոբոամի ճամբան մէջ ու անոր ըրած մեղքին մէջ, որով անիկա Իսրայէլի մեղանչել տուեր էր։

20—Ու Զամբրի մնացորդ պատմութիւնը ու անոր ըրած դաւաճանութիւնը ասոնք Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։

21— Այն առեն Իսրայէլի ժողովուրդը երկու փառ բաժնուեցաւ. ժողովրդին կէսը Գինաթի որդւոյն Թիբնիի հետեւեցաւ գնաց, որպէս զի զանիկա թագաւոր դնեն, ու կէսն ալ Ամրիի հետեւեցաւ գնաց։ 22— Ու Ամրիի հետեւեցող ժողովուրդը Գինաթեան Թիբնիի հետեւեցող ժողովուրդէն զօրաւոր գտնուեցաւ. ու Թիբնի մեռաւ, և Ամրի թագաւոր եղաւ։ 23— Ցուդայի Ասա թագաւորին երեսունըմէկերորդ տարին Ամրի Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ, — տասներկու տարի [*]Թ֊ի֊ր֊ց֊ի֊ ը֊ր֊։ վեց տարի Թերսայի մէջ թագաւորեցաւ ըրաւ։ 24—Ու Սամարիա երկու տաղանդ արծաթով Սամարիայի լեռը Ծախու առաւ, ու լեռանը վրայ [*]ա֊շ֊ի֊ չինեց, և չինած քաղաքին անունը այն լեռանը տէրոջը Սամարի անունով կոչեց։

25—Ու Ամրի Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, և բոլոր իրմէ առաջ եղողներէն աւելի չար եղաւ։ 26—Քանի անիկա Նաբատեան Երոբոամի բոլոր ճամբան մէջ քալեց, ու անոր մեղքին մէջ՝ որով Իսրայէլի մեղանչել տուաւ։ այնպէս որ իրենց անպատշաճութիւններովը Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուցին։

27— Ու Ամրիի ըրած գործերուն մնացորդ պատմութիւնը ու անոր ըրած զօրութիւնը՝ ասոնք Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 28—Ու Ամրի իր հայրերուն հետ քնացաւ ու Սամարիայի մէջ թաղուեցաւ։ ու անոր տեղ անոր որդին Աքաաբ թագաւոր եղաւ։

29—Ու Ամրիի որդին Աքաաբ Ցուդայի Ասա թագաւորին երեսունըութերորդ տարին Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ։ ու Ամրիի որդին Աքաաբ Իսրայէլի վրայ Սամարիայի մէջ քսանուերկու տարի թագաւորութիւն ըրաւ։ 30—Ու Ամրիի որդին Աքաաբ բոլոր իրմէ առաջ եղողներէն աւելի Տէրոջը առջև չարութիւն ըրաւ։ 31—Ու Նաբատեան Երոբոամի մեղքերուն մէջ քալելը [*]ո֊չ֊ինչ բան մը սեպուելով, Սիդոնացւոց Եթբաալ թագաւորին աղջիկը Եզաբէլը կին առաւ, և գնաց Բահաղի ծառայութիւն ըրաւ ու անոր երկրպագութիւն ըրաւ։ 32— Ու Սամարիայի մէջ՝ իր չիճած Բահաղի տանը մէջ Բահաղի սեղան մը կանգնեց, 33—Ու Աքաաբ Աստարովթի կուռք մը չինեց. և Աքաաբ իր ըրած գործերովը իրմէ առաջ եղող Իսրայէլի բոլոր թագաւորներէն աւելի Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուց։

34—Անոր օրերը Բեթելացի Ցիել Երիքովը չինեց. ու իր անդրանիկ տղովը Աբիրոնով անոր հիմը դրաւ, և իր պզտիկ տղովը Սեգոբով անոր դռները կանգնեց՝ Նաւեան Ցեսուի ձեռքով Տէրոջը ըսած խօսքին համեմատ։

Գլ. ԺԷ

Եւ Գաղաադա բնակիչներէն Թեզբացի Եղիա Աքաաբի ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը, որուն առջև կը կայնիմ, կենդանի է որ այս տարիներուն մէջ ցօղ ու անձրև պիտի չըլլայ, բայց եթէ իմ խօսքովս։

2—Ու Տէրոջը խօսքը անոր եղաւ ըսելով, 3—Ասկէ գնա, ու դէպ ի արեւելք դառնալով՝ Երդրանանու գիմաց եղող Քերիթ հեղեղատին քով պահուէ։ 4 — Դուն այն հեղեղատէն կը պիտի խմես. ու ագռաւներուն հրամայեր եմ որ հոն քեզ կերակրեն։ 5—Ու անիկա գնաց ու Տէրոջը բանին պէս ըրաւ. ու գնաց Երդրանանու գիմաց եղող Քերիթ հեղեղատին քով նստաւ։ 6—Ու ագռաւները առաւօտուց անոր հաց ու միս՝ ու իրիկուան ալ հաց ու միս կը բերէին, ու անիկա հեղեղատէն կը կը խմէր։ 7—Ու ժամանակ մը հաւը հեղեղատը ցամքեցաւ, վասն զի երկրին վրայ անձրև չեկաւ։

8—Ու Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով, 9—Ելիր, Սիդոնացւոց Սարեփթան գնա, ու հոն նստէ. ահա հոն որ բեւռ կինոջ մը հրամայեր եմ որ քեզ կերակրէ։ 10—Ու անիկա ելաւ Սարեփթա գնաց. ու քաղաքին դռնէն հասնելով՝ տեսաւ որ որբեւռի կին մը փայտ կը ժողվէր. ու զանիկա կանչեց ու ըսաւ, Կ՚աղաչեմ, ինձի անմանով քիչ մը ջուր բեր որպէս զի խմեմ։ 11—Ու երբ անիկա բերելու գնաց, Եղիա անոր հետեւէն կանչեց ու ըսաւ, Ձեռքդ պատառ մըն ալ հաց ես — ինձի բեր։ 12—Ու կինը ըսաւ, Քու

*Եբր. Բաասայի հետեւէն ու անոր տանը հետեւէն

*կամ, պալատը

Տէր Աստուածդ կենդանի է որ նկանակ չուտեմ, բայց միայն կարասին մէջ մկկ քառասի չափ ալիւր կայ, ու կուժին մէջ ալ փոչ մը իւղ կայ. և ահա երկու կոտ փայտ կը ժողվեմ, որպէս զի երթամ զանիկա ինձի ու իմ տղուս համար եփեմ, և ուտենք, ու էլ մեռնինք։ 13—Ու Եղիա անոր ըսաւ, Մի վախնար, գնա ըստիդ պէս ըրէ. բայց անկէ նախ ինձի համար պզտիկ չօթ մը շինէ ու ինձի բեր, և քեզի ու քու տղուդ համար ետքը շինէ. 14—Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Կարասէն ալիւրը պիտի չհատնի, ու կուժէն իւղը պիտի չպակսի՝ մինչև այն օրը որ Տէրը երկիրը վրայ անձրև տայ։ 15—Եւ կինը գնաց ու Եղիայի բանածին պէս ըրաւ. ու անիկա և ինք ու իր ընտանիքը շատ մը տաեն կերան։ 16—Կարասէն ալիւրը չհատաւ, ու կուժէն իւղը չպակսեցաւ, Տէրոջը՝ Եղիայի ձեռքով ըրուցած խօսքին համեմատ։

17—Ու եղաւ որ այս բաներէն ետքը տանը տիրոջ որդին հիւանդացաւ, ու անոր հիւանդութիւնը շատ ծանր էր՝ մանաւանդ որ անոր վրայ չունչ չմնաց։ 18—Ու կինը Եղիայի ըսաւ, Մարդ Աստուծոյ, ինծի հետ ի՞նչ ունիս, մինչ եմ մեղքս յիշեցնելու ու իմ տղուս մեռցընելո՞ւ համար ինծի եկար։ 19—Ու անիկա անոր ըսաւ, Տղադ ինծի տուր. ու զանիկա անոր ծոցէն առաւ, և իր բնակած վերնատունը հանեց, ու զանիկա իր անկողնին մէջ պառկեցուց։ 20—Ու Տէրոջը աղաչակելով ըսաւ, Ով Տէր Աստուած իմ, իրաւցընէ այս որբեւորի կինն ալ, որուն քով ես պանդրնատեղութեամբ կը բնակիմ, չարչարեցի՞ր անոր տղան մեռցնելով։ 21—Ու տղուն վրայ երեք անգամ երկննալով ու Տէրոջը աղաչակելով ըսաւ, Ով Տէր Աստուած իմ, կ'աղաչեմ որ այս տղուն հոգին իր մարմնին դառնայ։ 22—Ու Տէրը Եղիայի ձայնը լսեց, ու տղուն հոգին իր մարմնին դարձաւ, և անիկա կենդանացաւ։ 23—Ու Եղիա տղան առաւ, ու զանիկա վերնատունէն տունը իջնեցուց, և անոր մօրը տուաւ. ու Եղիա ըսաւ, Նայէ, տղադ կենդանի է։ 24—Ու կինը Եղիայի ըսաւ, Հիմա ասով գիտցայ որ դուն Աստուծոյ մարդն ես, ու քու բերնիդ մէջ Տէրոջը խօսքը ճշմարիտ է։

ԳԼ. ԺԸ

Ե՛ւ շատ տաեն անցնելէն ետքը Տէրոջը խօսքը երրորդ տարին Եղիայի եղաւ՝ ըսելով, Գնա, Աքաաբի երեսը ցոյց, ու երկրի վրայ անձրեւ պիտի տամ։ 2—Ու Եղիա Աքաաբի երեւնալու գնաց. և Սամարիայի մէջ սաստիկ սով կար։

3—Ու Աքաաբ իր տանը անտեսը Աբդիան կանչեց. (ու Աբդիա Տէրոջմէ շատ կը վախնար. 4—Ու երբ Յեզաբէլ Տէրոջը մարգարէները սպաննեց, ես Տէրոջը մարգարէներէն հարիւր մարդ, յիսուն յիսուն, քարայրներու մէջ պահեցի, ու զանոնք հացով ու ջրով կերակրեցի։ 14—Ու հիմա դուն կ'ըսես, Գնա ու տէրոջդ ըսէ, Թէ Ահա Եղիա է։ ու անիկա ձես պիտի մեռցնէ։ 15—Ու Եղիա ըսաւ, Զօրաւոր Տէրը, որուն առջև կը կայնիմ, կենդանի է որ այսօր անոր պիտի երեւնամ։

16—Ու Աբդիա Աքաաբի առջև եղաւ ու անոր պատմեց. ու Աքաաբ Եղիան դիմաւորելու գնաց։ 17—Ու Աքաաբ Եղիան տեսածին պէս՝ Աքաաբ անոր ըսաւ, Իսրայէլը նեղո՞ւթեան մէջ ձգողը դո՞ւն ես։ 18—Ու անիկա ըսաւ, Իսրայէլը ես չնեղեցի, հապա դուն ու քու հօրդ տունը. քանզի Տէրոջը պատուիրանքները թողուցիք, ու Բահաղիմի եռեւէն գացիք։ 19—Ու հիմա ղրկէ, ու բոլոր Իսրայէլը և Բահաղի չորս հարիւր յիսուն մարգարէները, ու Յեզաբէլի սեղանէն ուտող Աստարովթի չորս հարիւր մարգարէները Կարմէղոս լեռան վրայ իմ քովս ժողվէ։ 20—Ու Աքաաբ բոլոր Իսրայէլի որդիներուն հաղորդ ղրկեց, ու մարգարէները Կարմէղոս լեռը ժողվեց։

21—Ու Եղիա բոլոր ժողովուրդին մօտեցաւ, ու ըսաւ, Դուք մինչև ե՞րբ երկու մտքի վրայ կը կաղաք. եթէ Տէրը Աստուած է՝ անոր եռեւէն գացէք, իսկ եթէ Բահաղ Աստուած է՝ անոր եռեւէն գացէք. և ժողովուրդը բնաւ պատասխան մը չտուաւ անոր։ 22—Ու Եղիա ժողովուրդին ըսաւ, Տէրոջը մարգարէն ես միայն մնացի, և Բահաղի մարգարէները չորս հարիւր յիսուն մարդիկ են։ 23—Ուրեմն մեզի երկու զուարակ տրուի. ու զուարակին մէկը անոնք իրենց համար ընտրեն, ու կտոր կտոր ընեն, և փայտերու վրայ դնեն, բայց կրակ չդնեն. ու միւս զուարակը ես պատրաստեմ, ու փայտերու վրայ դնեմ, բայց կրակ չդնեմ։ 24—Ու դուք ձեր աստուծոյն անունը կանչեցէք, ես ալ Եհովայի անունը կանչեմ. ու կրակով պատասխան տուող աստուածը՝ Աստուած անիկա է. և բոլոր ժողովուրդը պատասխան տուին ու ըսին, Այս խօսքը բարի է։

25—Ու Եղիա Բահաղի մարգարէները ըսաւ, Ձեզի զուարակներէն մէկը ընտրեցէք ու առաջ դուք ըրէք, վասն զի դուք շատեր էք. ու ձեր աստուածոյն անունը կանչեցէք, բայց կրակ մի դնէք։ 26—Ու անոնք իրենց տրուած զուարակը առին ու պատրաստեցին. և առաւօտեն մինչև կէսօր Բահաղի անունը կանչեցին ու ըսին, Ով Բահաղ, մեզի պատասխան տուր. բայց ձայն չկար ու պատասխան տուող չկար. և անոնք իրենց շինած սեղանին *քով կը ցատկտէին։ 27—Ու երբ կէսօր եղաւ, Եղիա զանոնք ծաղր ընելով՝ ըսաւ, Բարձր ձայնով կանչեցէք, քանզի անիկա աստուած է. Թերեւս †խոսակցութիւն մը ունի, կամ զբաղած է, կամ ճամբորդութիւն կ'ընէ, կամ թերեւս քնացած է՝ ու պէտք է որ արթնայ։ 28—Ու անոնք բարձր ձայնով կը պոռային, ու իրենց սովորութեանը պէս գանակներով ու գեղարդներով իրենց մարմինները կը կտրէին, մինչև որ իրենց վրայէն արիւն կը վազէր։ 29—Ու երբ կէսօրը անցաւ, մինչև էրէւոտ զոհին տանը մարգարէութիւն ըրին. ու ձայն չկար ու պատասխան տուող չկար, ու մարիկ ընող չկար։

30—Այն տաեն Եղիա բոլոր ժողովուրդին ըսաւ, Ինծի մօտեցէք. ու բոլոր ժողովուրդը մօտեցաւ. և ան նիկա Տէրոջը փլած սեղանը նորոգեց։ 31—Ու Եղիա տասներկու քար առաւ, ծակոքի որուց ցեղերուն թիւովը, որու Տէրոջը խօսքը եղաւ՝ ըսելով, Քու անունդ Իսրայէլ ըլլայ։ 32—Ու այն քարերով Տէրոջը անունան սեղան շինեց, ու սեղանին բոլորտիքը փոս մը բրաւ, որ երկու գրիւ չափ հունտ կ'առնէր։ 33— Ու փայտերը շարեց, ու զուարակը կոտր կոտր բրաւ և փայտե-

*Կամ, վրայ
†Կամ, մտածմունք

բան վրայ դրաւ։ 34—Ու ըսաւ, Զօրս ասիքը լեցուն ջուր բերէք, և ոչխարի վրայ ու փայտերուն վրայ թափեցէք։ ու ըսաւ, երկրորդ անգամ այնպես ըրէք, ու երկրորդ անգամ այնպես ըրին։ ու ըսաւ, երրորդ անգամ այնպես ըրէք, ու երրորդ անգամ այնպես ըրին։ 35—Ու ջուրը սեղանին բոլորտիքը փալեց, ու փոսն ալ ջրով լեցուեցաւ։

36—Ու էղիա՝ն զոհին մատուցուելու ատենը Եղիա մարգարէն մտաւ ու ըսաւ, Ով Եհովա Աստուած Աբրահամու, Իսահակայ և Իսրայէլի, այսօր դիտցուի որ Իսրայէլի մէջ Աստուած դուն ես, ու ես քու ծառադ եմ, և այս բոլոր բաները քու խօսքովդ ըրի։ 37—Ինծի պատասխան ասա, ով Տէր, ինծի պատասխան ասա, ու այս ժողովուրդը գիտնայ թէ դուն ես Աստուած, ով Տէր, և թէ անոնց սիրտը ետ դարձնողը դուն ես։ 38—Ա՛յն ատեն Տէրոջմէ կրակ իջաւ, և ողջակէզը ու փայտերը և քարերը ու հողը այրեց, ու փոսին մէջի ջուրն ալ լմնցուց։ 39—Ու բոլոր ժողովուրդը *յե՛ Բ՚նը տեսնելով՝ երեսի վրայ ինկան, ու ըսին, Եհովա է Աստուած, Եհովա է Աստուած։

40—Ու Եղիա անոնց ըսաւ, Բահաղի մարգարէները բռնեցէք, ո՛ անոնցմէ մարդ մը չազատի։ և զանոնք բռնեցին, ու Եղիա զանոնք կիսոն հեղեղատը իջեցուց, և հոն զանոնք մեռցուց։

41—Ու Եղիա Աքաաբի ըսաւ, Վեր ելիր, կեր ու խմէ, վասն զի *անձրեւի ոռնաձայն՚ կայ։ 42—Ու Աքաաբ ուտելու ու խմելու ելաւ, ու Եղիա կարմելոս վե՛ռն գլուխը ելաւ, ու գետինը ծռեցաւ, ու երեսը ծունկերուն մէջ դրաւ։ 43—Ու իր մանչուն ըսաւ, Հիմա ել, ո՛ր ե՛ղիր նայէ։ և անիկա ելաւ նայեցաւ, ու ըսաւ, Բան մը չկայ։ ու ե՛ս ո՛ր անգամ՝ ՚նըրբին, գնաս ըսաւ։ 44—Ու եօթնևրորդ անգամին ըսաւ, Ահա ծովին մարգագիտի չափ պզտիկ ամպ մը կ՚ելլէ։ ու անիկա ըսաւ, Ելիր, Աքաաբի ըսէ, կառքդ լծէ ու իջիր, որպէս զի անձրեւի չգտնուիս։ 45—Ու մինչև ատեն անդին ե՛ռ՚՚՚նը երկինքը ամպերով մթնցաւ և հով կաթ, ու մեծ անձրեւ եղաւ։ Ու Աքաաբ հեծաւ, Յեզրայէլ գնաց։ 46—Ու Տէրոջը ձեռքը Եղիայի հետ եղաւ։ ու անիկա իր մէջքը պնդեց, ու մինչև Յեզրայէլի մուտքը Աքաաբի առջևէն վազեց։

Գլ. ԺՔ

Ե Աքաաբ Եղիայի բոլոր ըրածը, ու անոր՝ բոլոր մարգարէները սրով մեռցնելը Յեզաբելի պատմեց։ 2—Ու Յեզաբել պատգամաւոր մը ղրկեց Եղիայի՝ ըսելով, Աստուածները այսպես ու ասկէ աւելի ընեն ինծի, եթէ վաղը այս ատեն քու անձդ անոնց մէկուն անձին պէս չդնեմ։

3—Ու Եղի՝ա *այս Բ՚՚՚նը տեսնելով՝ ելաւ իր անձին ե՛ղ՚՚՚Բ՚՚՚նը համար գնաց, և Յուդայի Բերսաբէէն մնաց, ու իր մանչը հոն ձգեց։ 4—Ու ինք առանձաին մէկ մէկ օրուան ճամբայ գնաց, ու գիհիի մը տակ նստաւ։ և սրտանց մեռնիլ ուզեց, ու ըսաւ, Ալ հերիք է, ով Տէր, առ իմ հոգիս, քանզի ես իմ հայրերէս լաւ չեմ։ 5—Ու գիհիի մը տակ պառկեցաւ քնացաւ։ և ահա հրեշտակ մը անոր դպաւ ու անոր՝ ըսաւ, Ելիր կեր։ 6—Ու Եղի՝ա նայեցաւ, և ահա գլխուն քով †մխիրի տակ եփած չօ՚՚՚Բ՚՚՚ մը ու մէկ կուժ ջուր կար։ ու կերաւ խմեց, ու նորէն պառկեցաւ։ 7—Ու Տէրոջը հրեշտակը դարձաւ երկրորդ անգամ անոր դպաւ ու անոր ըսաւ, Ելիր կեր, քանզի է՛քս էբ՚՚՚ճամբադ՚՚՚ չատ է։ 8—Ու անիկա ելաւ, կերաւ ու խմեց։ և այն կերակուրին ուժովը քառասուն օր ու քառասուն գիշեր գնաց, ե՛ մինչև Քորէբ, Աստծոյ լեռը, հասաւ։

9—Ու հոն քարայրը մտաւ ու գիշերը հոն մնաց։ և ահա Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով, Ով Եղիա, հոս ի՞նչ բան ունիս։ 10—Ու անիկա ըսաւ,

*Կամ, վախնալով
†Բէբր. կայծելու չօթ
‡Բէբր. ճամբան քեզմէ

Զօրաց Տէր Աստուածոյն համար մեծ նախանձաւորութիւն ունեցայ, քանզի Իսրայէլի որդիները քու ուխտդ թողուցին, քու սեղաններդ փլցուցին ու քու մարգարէներդ սրով մեռցուցին. ու միայն ես մնացեր եմ, և իմ անձս ալ կը փնտռեն՝ որպէս զի զանիկա վերցընեն։ 11—Ու ե՛՚՚՚ր ըսաւ, Ելիր ու լեռը Տէրոջը առջև կայնէ։ Եւ ահա Տէրը կ՚անցնէր. ու Տէրոջը առջևէն լեռները փշրող ու ապառաժները կոտրող մեծ ու սաստիկ հով եղաւ, Բ՚՚յց Տէրը այն հովին մէջ չէր. և հովին եաեւէն գետնաշարժ եղաւ, Բ՚՚յց Տէրը գետնաշարժին մէջ չէր. 12—Ու գետնաշարժին եաեւէն կրակ եղաւ, Բ՚՚յց Տէրը կրակին մէջ չէր. և կրակին եաեւէն մեղմ ե՛՚՚՚ բարակ ձայն մը լ՚՚՚ե՛՚՚։ 13—Ու եղիա ը՚՚՚նլ՚՚՚ լսածին պէս՝ իր վերարկուովը երեսը ծածկեց, ու ելաւ քարայրին բերանը կայնեցաւ. ու ահա ա՛՚՚նոր ձայն մը ե՛՚՚՚ ու ըսաւ, Ով եղիա, հոս ի՞նչ բան ունիս։ 14—Ու անիկա ըսաւ, Զօրաց Տէր Աստուածոյն համար մեծ նախանձաւորութիւն ունեցայ, քանզի Իսրայէլի որդիները քու ուխտդ թողուցին, քու սեղաններդ փլցուցին ու քու մարգարէներդ սրով մեռցուցին. ու միայն ես մնացեր եմ, և իմ անձս ալ կը փնտռեն՝ որպէս զի զանիկա վերցընեն։ 15—Ու Տէրը անոր ըսաւ, Գնա, քու ճամբադ դարձիր, և Դամասկոսի անապատին ճամբան երթալով՝ Ազահէլը Ասորւոց վրայ թագաւոր օծէս։ 16—Ու Նամեսիի որդին Յեհուն Իսրայէլի վրայ թագաւոր օծէս. ու Աբէլմասւըլէ եղող Սափատի որդին եղիսէն քու տեղդ մարգարէ օծէս։ 17—Ու պիտի ըլլայ թէ ով որ Ազահէլի սուրէն ազատի, Յեհու պիտի մեռցնէ ը՚՚նլ՚՚՚, ու ով որ Յեհուի սուրէն ազատի, եղիսէ պիտի մեռցնէ ը՚՚նլ՚՚՚։ 18—Բայց ես Իսրայէլէ եօթը հազար մարդ *պահեցի, այսինքն բոլոր անոնք որ Բահաղի առջև ծունկ կրկնած չեն, ու զանիկա բերնով պագած չեն։

19—Ու անկէ գնաց ու Սափատի որդին եղիսէն գտաւ, որ արտ կը վարէր՝

*Կամ, պիտի պահեմ

Իր առջև տասներկու զոյգ եզներ տանելով, ու ինք երկտասաներորդին հետ էր. ու եղիա անոր քովէն անցնելով՝ իր վերարկուն անոր վրայ ձգեց։ 20—Ա՛յն ատեն եղիսէ եզները թողուց ու եղիայի հետևէն վազեց, ու ըսաւ, Հրամայէ՛ տուր՝ որ Բ՚՚՚ր՚՚՚ հայրս ու մայրս համբուրեմ, ու քու հետևդ գամ. ու եղի՝ա անոր ըսաւ, Գնա, դարձիր, քանզի ես քեզի ի՛նչ ըրի։ 21—Ու անոր քովէն դարձաւ, ու եզներուն մէկ զոյգը բռնեց մորթեց, ու եզներուն զարդերովները անոնց միսը եփեց, և ժողովուրդին տուաւ, ու կերան։ և ինք ելաւ եղիայի հետևէն գնաց ու անոր ծառայութիւն կ՚ընէր։

Գլ. Ի

Ա Ասորւոց բենհադադ թագաւորը իր բոլոր զօրքերը ժողվեց, և իրեն հետ երեսունուերկու թագաւոր կար, ու ձիերով ու կառքերով ելաւ Սամարիան պաշարեց, և անոր հետ պատերազմ բրաւ։ 2—Ու Իսրայէլի Աքաաբ թագաւորին դեսպաններ ղրկեց քաղաքին մէջ, 3—ու անոր ըսաւ, բենհադադ այսպես կ՚ըսէ. Քու արծաթդ ու ոսկիդ իմն է, ու քու կիներդ ու գեղեցիկ որդիներդ իմն են։ 4—Ու Իսրայէլի թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, քու բանիդ պէս ես ալ քուկդ եմ ու իմ ամէն ունեցածս ալ։

5—Ու դեսպանները նորէն հասան ըսին, բենհադադ այսպես կ՚ըսէ. Ես քեզի հարկ ղրկեցի ու ըսի որ քու արծաթդ, քու ոսկիդ, քու կիներդ ու քու որդիներդ ինծի տաս. 6—Բայց վաղը այս ատեն իմ ծառաներս քեզի պիտի ղրկեմ. և քու տունդ ու քու ծառաներուդ տուները ազէկ մը ա՛յբ պիտի անցնեն. և քու աչքերուդ առջև պատուական ամէն բաները պիտի առնեն։ 7—Ա՛յն ատեն Իսրայէլի թագաւորը երկրին բոլոր ծերերը կանչեց ու ըսաւ, Հիմա գիտցէք ու տեսէք, որ ասիկա չարու-

*Բէբր. ձեռքերնուն մէջ դնելով

Թիւն կ'ուզէ ընէլ. վասն զի իմ կինս բուս ու որդիներուս ու արծաթիս և ոսկիիս համար ինծի *չէդ ղրկեց, ու ես անոր ոչ չըսի։ 8—Ես բոլոր ծերերը ու բոլոր ժողովուրդը անոր ըսին, Ականջ մի դներ ու յանձնառու մի ըլլար։ 9—Անիկա ալ Բենադադի դեսպաններուն ըսաւ, Իմ թագաւոր տէրոջս ըսէք, Առաջին անգամին զոր ծառայիդ ինչ հրամայեցիր որ ղրկեցիր՝ զանիկա պիտի ընեմ, բայց այս բանը չեմ կրնար ընել. ու դեսպանները գացին և այս պատասխանը տարին անոր։

10—Ու Բենադադ *չէդ ղրկեց անոր ու ըսաւ, Աստուածները ինծի այսպես ու ասկէ աւելի ընեն, եթէ Սամարիայի հողը իմ հետեւակ եկող բոլոր զօրքերուս սիներուն օգտէ։ 11—Ու Իսրայէլի թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ, Անոր այսպէս ըսէք. Իր զէնքը մէկքը կապողը ընէլ՝ մէկքէն հանողի պէս չպարծի։ 12—Ու անիկա երբ հէտ եկաւ թագաւորներուն հետ վրաններու մէջ կը խմէր. ու այս խօսքը լսածին պէս իր ծառաներուն ըսաւ, Պատրաստ չորուեցէք. ու քաղաքին դիմաց պատրաստ չորուեցան։

13—Ու ահա մարգարէ մը Իսրայէլի Աքաաբ թագաւորին մօտեցաւ ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Բոլոր այս մեծ բազմութիւնը տեսա՞ր. ահա ես այսօր զանիկա քու ձեռքդ պիտի տամ, որպէս զի գիտնաս թէ Տէրը ես եմ։ 14—Ու Աքաաբ ըսաւ, Որո՞ւն ձեռքով. ու անիկա ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Գաւառաց իշխաններուն մանչերուն ձեռքովն ես ըսաւ, պատերազմը ո՞վ սկսի. ու անիկա ըսաւ, Դուն։ 15—Ու գաւառաց իշխաններուն մանչերը համրեց, ու երկու հարիւր երեսունուերկու հոգի էին. և անոնցմէ ետքը բոլոր ժողովուրդը, բոլոր Իսրայէլի որդիները, համրեց, ու եօթը հազար հոգի էին։ 16—Ես տռնկ կէսօրին ելան. բայց Բենադադ ինք ու անոր օգնական թագաւորներըը, այն երեսունուերկու թագաւորներըը, վրաններու մէջ խմելով կը գինովնային։ 17—Ու առաջ գաւառաց իշխաններուն մանչերը ելան. ու Բենադադ *չէդէն ղրկեց, որոնք անոր պատմեցին թէ Սամարիայէ մարդիկ ելան։ 18—Ու անիկա ըսաւ, Եթէ անոնք խաղաղութեան համար ելան՝ զանոնք ողջ բռնեցէք, ու եթէ պատերազմելու ելան՝ զանոնք ողջ բռնեցէք։ 19—Ու այս գաւառաց իշխաններուն մանչերը ու անոնց հետեւէն գացող զօրքը քաղաքէն դուրս ելան. 20—ու ամէն մարդ իր *դիմաց կ'ելլողը զարկաւ, ու Ասորիները փախան. ու Իսրայէլ զանոնք հալածեց, ու Ասորւոց Բենադադ թագաւորը ձիու վրայ հէծած՝ †հետ մը ձիաւորներով ազատեցաւ։ 21—Ու Իսրայէլի թագաւորը ելաւ ու ձիերը ու կառքերը զարկաւ, ու Ասորիները մեծ կոտորածով մը զարկաւ։

22—Ու մարգարէն Իսրայէլի թագաւորին մօտեցաւ, ու անոր ըսաւ, Գնա, ուժովցիր, ու գիտցիր ու տես թէ ի՛նչ պիտի ընես, վասն զի հետդ տարի Ասորւոց թագաւորը քու վրադ պիտի գայ։

23—Ու Ասորւոց թագաւորին ծառաները անոր ըսին, Անոնց աստուածները լեռներու աստուածներ են, անոր համար մեզի յաղթեցին. բայց եթէ անոնց հետ դաշտի մէջ պատերազմինք, անաստուածս անոնց կը յաղթենք։ 24—Ուրեմն այս բանը ըրէ. թագաւորները ամէն մէկը իր տեղէն հանէ, ու անոնց տեղ նահապարները դիր։ 25—Ու դուն քեզմէ կորսուած զօրքին չափ զօրք, ու ձիերուն չափ ձիեր, ու կառքերուն չափ կառքեր †պատրաստէ քեզի, և անոնց հետ դաշտի մէջ պատերազմինք. անաստուածս անոնց կը յաղթենք, ու անիկա անոնց խօսքը մտիկ ընելով այնպէս ըրաւ։ 26—Ու հետեւեալ տարին Բենադադ Ասորիները համրեց, ու Ափեկ եկաւ Իսրայէլի հետ պատերազմելու համար։ 27—Իսրայէլի որդիներն ալ համրուեցան ու էպատրաստուեցան, ու զանոնք դիմաւորելու գացին. և Իսրայէլի որդիները անոնց դիմաց այծերու երկու երամակներու պէս բանակ կազմեցին, բայց Ասորիները երկիրը լեցուցին։

28—Ու Աստուծոյ մարդը եկաւ, ու Իսրայէլի թագաւորին հետ խօսեցաւ ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Որովհետեւ Ասորիները ըսին թէ Եհովա լեռներու Աստուած է, ու հովիտներու Աստուած չէ, ասոր համար բոլոր այս մեծ բազմութիւնը քու ձեռքդ պիտի մատնեմ, որպէս զի գիտնաք թէ ես եմ Տէրը։ 29—Ու իրարու դէմ եօթը օր բանակեցան. ու եօթներորդ օրը պատերազմ եղաւ, և Իսրայէլի որդիները մէկ օրուան մէջ Ասորիներէն հարիւր հազար հետեւակ զօրք զարկին. 30—Ու միւսացածները Ափեկ քաղաքը փախան. և այն միւսացած քառասնեօթը հազար մարդոցը վրայ պարիսպը ինկաւ։ Ու Բենադադ փախաւ ու քաղաքին մէջ սենեակէ սենեակ մտաւ։

31—Ու անոր ծառաները անոր ըսին, Ահա մենք լսեր ենք որ Իսրայէլի տանը թագաւորները ողորմած թագաւորներ են. հիմա մէջքերնիս քուրձեր ու գլխանոց չուաններ դնենք, և Իսրայէլի թագաւորին առջև ելլենք, թերեւս քու անձդ ապրեցնէ. 32—Ու մէջքերնին քուրձեր՝ ու գլխանոց չուաններ կապեցին, և Իսրայէլի թագաւորին գացին ու ըսին, Քու ծառադ Բենադադ կ'ըսէ, Կ'աղաչեմ, թող անձս ապրի։ Ու անիկա ըսաւ, Տակաւին ո՞ղջ է. անիկա իմ եղբայրս է։ 33—Ու այն մարդիկը ասիկա յաջողութիւն սեպելով, անոր բերնէն այս խօսքը առածնուն պէս՝ չուռով պատասխան տուին, Քու եղբայրդ Բենադադ հո՛ կ'ըսէ։ Ու անիկա ըսաւ, Գացէք զանիկա բերէք։ Ու երբ Բենադադ անոր եկաւ, զանիկա իր կառքին մէջ առաւ։ 34—Ան ալ անոր ըսաւ, Իմ հօրս քու հօրմէդ առած քաղաքները կու տամ, ու դուն Դամասկոսի մէջ քեզի համար հրապարակներ ունենաս, ինչպես իմ հայրս Սամարիայի մէջ ունեցաւ։ Ու Աքաաբ ըսաւ, Ես ալ այս դաշինքով քեզ կ'արձակեմ։ Ուստի անոր հետ դաշնակցութիւն ըրաւ ու զանիկա արձակեց։

35—Ու մարգարէներուն որդիներէն մէկը Տէրոջը խօսքովը իր ընկերին ըսաւ, Զիս զարկ։ Ու այն մարդը զանիկա զարնել չուզեց։ 36—Ու անիկա ըսաւ անոր, Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընելուդ համար՝ ահա իմ քովէս գացածիդ պէս՝ քեզ առիւծ մը պիտի մեռցնէ։ Ու անիկա անոր քովէն գնաց, ու առիւծ մը զանիկա գտաւ ու մեռցուց։ 37—Ուրիշ անիկա ուրիշ մարդ մը գտաւ, ու ըսաւ, Զիս զարկ։ Ու այն մարդը զանիկա զարկաւ, ու զարնելով վիրաւորեց։ 38—Ու այն մարգարէն գնաց ճամբան վրայ թագաւորին սպասեց, ու չճանչցուելու համար աչքերուն վրայ *ծածկոց մը դրաւ։ 39—Ու երբ թագաւորը անցաւ կ'աղաղակէր թագաւորին աղաղակելով ըսաւ, Քու ծառադ պատերազմին մէջ գնաց, և ահա մարդ մը †դէրէնէն դուրս ելլելով ինծի մարդ մը բերաւ, ու ըսաւ, Այս մարդը պահէ. եթէ ասիկա կերպով մը կորսուելու ըլլայ, քու անձդ անոր անձին տեղ պիտի ըլլայ, կամ տաղանդ մը արծաթ պիտի †վճարես։ 40—Ու երբ ծառադ ասդին անդին գործով զբաղեր էր, անիկա կորսուեցաւ։ Ու Իսրայէլի թագաւորը անոր ըսաւ, Քու դատաստանդ այդպէս է, ինքդ դուն ‡ոտ բերիր վճռեցիր։ 41—Ու անիկա չուռով մը ծածկոցը աչքերուն վրայէն հանեց, ու Իսրայէլի թագաւորը իմացաւ որ անիկա մարգարէներէն մէկն է։ 42—Ու անիկա ըսաւ անոր, Տէրը այսպէս կ'ըսէ. Որովհետեւ դուն իմ նզոված մարդս ‡ոտ ձեռքդ ազատ արձակեցիր, անոր համար քու անձդ անոր անձին տեղ, ու քու ժողովուրդդ անոր ժողովուրդին տեղ պիտի ըլլայ։ 43—Ու Իսրայէլի թագաւորը տրտում կոտրած ու նեղացած՝ իր տունը դարձաւ, ու Սամարիա եկաւ։

ԳԼ. ԻԱ

Ե ւ այս բաներէն ետքը Յեզրայելացի Նաբովթ Սամարիայի Աքաաբ թագաւորին պալատին քով Յեզրայելի մէջ այգի մը ունէր։ 2—Ու Աքաաբ Նաբովթի հետ խօսեցաւ ու ըսաւ, Քու այգիդ ինծի տուր, որպէս զի ինծի բանջարի պարտեզ ըլլայ, քանզի իմ տանս

*Կամ, մտիկը
†Բէբ. կշռես

*Բէբ. մարդը
†Բէբ. համբե
‡Կամ, պալար առին

մեռ է. և անոր տեղ անկէ ապէկ այլ մը տամ քեզի. [–՞ ևթէ կ'ուզես՝ անոր գինը տակով վճարեմ քեզի: 3—Ու Նաբովթի Աքաաբի բսաւ, Տէրը ինծի չցուցնէ որ իմ հայրերուս ժառանգութիւնը քեզի տամ:

4—Ու Աքաաբ Յեզրայէլացի Նաբովթի ըսած խօսքին համար, որ բսաւ թէ իմ հայրերուս ժառանգութիւնը քեզի չեմ տար, սիրտը կոտրած ու նեղացած իր տունը գնաց, և իր անկողինին վրայ պառկեցաւ ու երեսը դարձուց ու հաց չկերաւ: 5—Ու անոր կինը Յեզաբէլ անոր քով գնաց ու բսաւ, Ինչո՞ւ համար սիրտդ այդպէս նեղացած է ու հաց չես ուտեր: 6—Ու անոր բսաւ անոր, Վասն զի Յեզրայէլացի Նաբովթի հետ խօսեցայ ու անոր բսի, Տու այգիդ ինծի տակով տուր, կամ եթէ կը հաճիս, անոր տեղ քեզի ուրիշ այգի մը տամ. բայց անիկա՝ իմ այգիս քեզի չեմ տար բսաւ, 7—Այն ատեն անոր կինը Յեզաբէլ անոր բսաւ, Դուն հիմա Իսրայէլի վրայ թագաւորութիւն պիտի ընես. ելիր հաց կեր, ու սիրտդ ի՛նդ զուարճանայ. Յեզրայէլացի Նաբովթի այգին ես քեզի տամ:

8—Ու անոնք Աքաաբի անունովը նամակներ գրեց, ու զանոնք անոր կնիքովը կնքեց, և այն նամակները Նաբովթի քաղաքակից ծերերուն ու ազնուականներուն ղրկեց: 9—Ու նամակներուն մէջ այսպէս գրեր էր. Ժամասրան մը քարոզեցէք, ու Նաբովթը ժողովրդին գլուխը նստեցուցէք. 10—Ու անոր դիմաց երկու անօրէն մարդիկ նստեցուցէք, որոնք անոր համար վկայութիւն տան ու բսեն թէ Դուն Աստուծոյ ու թագաւորին դէմ հայհոյութիւն բրիր. ու զանիկա հանեցէք ու քարկոծեցէք որպէս զի մեռնի:

11—Ու անոր քաղաքակիցները, ազնուականները, Յեզաբէլի իրենց ապրած քրին պէս բրին, ինչպէս անոր ղրկած նամակներուն մէջ գրուած էր: 12—Անոնք ծոմապահութիւն քարոզեցին, և Նաբովթը ժողովրդին գլուխը նստեցուցին: 13—Ու երկու անօրէն մարդիկ գացին անոր դիմաց նստան. և այն անօրէն մարդիկը ժողովրդին առջև Նաբովթի համար վկայութիւն տուին ու բսին թէ Նաբովթ Աստուծոյ ու թագաւորին դէմ հայհոյութիւն բրաւ. ուստի զանիկա քաղաքէն դուրս հանեցին և քարերով քարկոծեցին, ու մեռաւ: 14—Ու Յեզաբէլի լուր ղրկեցին՝ բսելով, Նաբովթ քարկոծուեցաւ ու մեռաւ:

15—Ու երբ Յեզաբէլ Նաբովթի քարկոծուիլը ու մեռնիլը լսեց, Յեզաբէլ Աքաաբի բսաւ, Ելիր ժառանգիէ Յեզրայէլացի Նաբովթի այգին զոր ինք քեզի ծախելով տալ չուզեց. քանզի Նաբովթ ողջ չէ, հապա մեռաւ: 16—Ու երբ Աքաաբ Նաբովթի մեռնիլը լսեց, Աքաաբ ոտք ելաւ որ Յեզրայէլացի Նաբովթի այգին իջնէ, ու ժառանգէ:

17—Ու Տէրոջը խօսքը Թեզբացի Եղիայի եղաւ՝ բսելով, 18—Ելիր, Սամարիա բնակող Իսրայէլի Աքաաբ թագաւորը դիմաւորելու իջիր. ահա անոնիկա Նաբովթի այգիին մէջ է, ուր իջեր է զանիկա ժառանգելու համար. 19—Ու անոր խօսիս ու բսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Մեռցուցիր ու կը ժառանգէ՞ս ալ. նաև անոր խօսելով՝ բսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Այն տեղը ուր չուները Նաբովթի արիւնը լափեցին, հո՛ չուները քու արիւնդ ալ պիտի լափեն: 20—Ու Աքաաբ Եղիայի բսաւ, Ով իմ թշնամիս, դիս գտա՞ր. ու անկիա բսաւ, Գտայ. որովհետև դուն քեզ ծախեցիր Տէրոջը առջև չարութիւնն ընելու համար. 21—Ահա ես քու վրադ չարիք պիտի բերեմ, ու *քեզ հալածելով՝ պիտի ջնջեմ, և Աքաաբի Իւղէր այր մարդիկը ու Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը պիտի կորնչեցնեմ: 22—Ու քու տունդ Նաբատի որդւոյն Երոբոամի տանը պէս՝ ու Աքիայի որդւոյն Բաասայի տանը պէս պիտի ընեմ. ուրովհետև զիս բարկացուցիր, ու Իսրայէլի մեղք գործել տուիր: 23—Ու Տէրը Յեզաբէլի համար ալ խօսեցաւ ու բսաւ, Յեզաբէլը Յեզրայէլի պարսպին քով չուները պիտի ուտեն: 24—Աքաաբի՝ քաղաքին մէջ մեռնողը չուները պիտի ուտեն, ու դաշտի մէջ մեռնողը երկինքի թռչունները պիտի ուտեն:

25—Բայց Աքաաբի պէս բնաւ [–––՞ հը եղած չէր, որ ինք ծախեի Տէրոջը առջև չարութիւն ընելու համար, զոր անոր կինը Յեզաբէլ գլխի հանեց: 26—Ու անիկա կռապերուն եաեւէն երթալով չատ գարշելի եղաւ, –– բոլոր Ամորհացւոց ըրածներուն նը––, զորոնք Տէրը Իսրայէլի որդիներուն առջեւէն վռնտեց:

27—Ու Աքաաբ այս խօսքերը լսածին պէս՝ իր հանդերձները պատռեց, ու մարմինն վրայէն փութ հագաւ, ու ծոմ պահեց. և փութով կը պառկէր, ու կամաց կը քալէր: 28—Ու Տէրոջը խօսքը Թեզբացի Եղիայի եղաւ՝ բսելով, 29—Կր տեսնե՞ս որ Աքաաբ իմ առջեւս խոնարհութիւն կ'րնէ. անոր իմ առջեւս խոնարհութիւն ընելուն համար, անոր օրերուն մէջ այն չարիքը պիտի չբերեմ. անոր որդւոյն օրերը այն չարիքը անոր տանը վրայ պիտի բերեմ:

ԳԼ ԻՒ

Ու երեք տարի անցաւ՝ և Ասորիներուն ու Իսրայէլի միջեւ պատերազմ չեղաւ: 2—Ու երրորդ տարին Յուդայի Յովսափատ թագաւորը Իսրայէլի թագաւորին իջաւ: 3—Ու Իսրայէլի թագաւորը իր ծառաներուն բսաւ, Գիտէք որ Ռամովթ-գաղաադ մերն է, ու մենք զանիկա Ասորւոց թագաւորին ձեռքէն առնելու հոգ չենք տաներ: 4—Ու Յովսափատ բսաւ, Ինծի հետ Ռամովթ-գաղաադ պատերազմելու կ'երթա՞ս: Ու Յովսափատ Իսրայէլի թագաւորին բսաւ, Ես քեզի պէս եմ, իմ ժողովրդս՝ քու ժողովրդիդ պէս, –– իմ ձիերս քու ձիերուդ պէս են:

5—Ու Յովսափատ Իսրայէլի թագաւորին բսաւ, Հիմա Տէրոջը խօսքը փորձուռ: 6—Ու Իսրայէլի թագաւորը մարգարէները ժողվեց, որոնք չորս հարիւր

*Կ՚ըսէ, քու սերունդդ. ՆԲԲ. քու հօտիդ

*ՆԲԲ. Գրա՞ք

չափ մարդիկ էին, ու անոնց բսաւ, Ռամովթ-գաղաադի վրայ պատերազմելու երթա՞մ, թէ ետ կենամ. ու անոնք բսին, Գնա, վասն զի Տէրը ը––՝ թագաւորին ձեռքը պիտի տայ: 7—Ու Յովսափատ բսաւ, Այս տեղ Տէրոջը ուրիշ մարգարէ մըն ալ չկա՞յ՝ որ անոր հարցնենք: 8—Ու Իսրայէլի թագաւորը Յովսափատի բսաւ, Կայ ուրիշ մարդ մըն ալ, որուն միջոցով [ը––ե Տէրոջը հարցնել, բայց ես զանիկա կ'ատեմ. քանզի ինծի համար աղէկ մարգարէութիւն չըներ, հապա գէշ. անիկա Եհոլայի որդին Միքիա է: Ու Յովսափատ բսաւ, Թագաւորը այդպէս չպրսի:

9—Ու Իսրայէլի թագաւորը ներքինի մը կանչեց ու բսաւ, Եհոլայի որդին Միքիան չուտով հը– բեր: 10—Ու Իսրայէլի թագաւորը ու Յուդայի Յովսափատ թագաւորը Սամարիայի դրանը առջեւի հրապարակին մէջ՝ ամէն մէկը [––––՞ զգեստներ հագած, իր աթոռին վրայ նստեր էր. ու բոլոր մարգարէները անոնց առջև մարգարէութիւն կ'րնէին: 11—Ու Քնանային որդին Սեդեկիա իրեն երկաթէ եղջիւրներ չինեց, ու բսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ասորիները ասոնցմով պիտի զարնես՝ մինչև որ զանոնք բնաջինջ ընես: 12—Բոլոր մարգարէներն ալ այնպէս կը մարգարեանային ու կ'ըսէին, Ռամովթ-գաղաադ ելիր, ու յաջողութիւն պիտի ունենաս, և Տէրը ը––ի– թագաւորին ձեռքը պիտի տայ:

13—Ու Միքիան կանչելու գացող մարդը խօսեցաւ անոր՝ բսելով, Ահա՛ն մարգարէները մէկ բերնով թագաւորին համար բարութիւն խօսեցան. Թող քու խօսքդ ալ անոնց մէկուն խօսքին պէս ըլլայ, ու բարութիւն խօսէ: 14—Իսկ Միքիա բսաւ, Տէրը կենդանի է որ Տէրը ինծի ինչ որ բսէ՝ զայն պիտի խօսիմ:

15—Ու երբ անիկա թագաւորին եկաւ, թագաւորը անոր բսաւ, Ով Միքիա, Ռամովթ-գաղաադ պատերազմելու երթա՞նք. Թէ հո կենանք: Ու անիկա անոր բսաւ, Ելիր ու յաջողութիւն պիտի ունենաս, ու Տէրը ը––ի– թագաւորին ձեռքը պիտի տայ: 16—Ու թա-

գաւորը անոր ըսաւ, Մինչև քա՞նի անգամ երդմնցնեմ քեզ, որպէս զի Տէրոջը անունովը ճշմարիտը միայն խօսիս ինծի։ 17—Ու անիկա ըսաւ, Բոլոր Իսրայէլը հովիւ չունեցող ոչխարներու պէս լեռներու վրայ ցրուած տեսայ. և Տէրը ըսաւ, Ասոնք տէր չունին, ամէն մարդ խաղաղութեամբ թող իր տունը դառնայ։ 18—Ու Իսրայէլի թագաւորը Յովսափատ ըսաւ, Չեզի չըսի՞ որ անիկա ինծի համար ազէկ մարգարէութիւն չըլլար՝ հապա գէշ։ 19—Ու Միւռ- ըսաւ, Ուրեմն Տէրոջը խօսքը մտիկ ըրէ. Տէրը իր աթոռին վրայ նստած տեսայ, ու երկինքի բոլոր զօրքերը անոր բոլորտիքը, աջ կողմը ու ձախ կողմը, կայներ էին. 20—Ու Տէրը ըսաւ, Աքաաբը ո՞վ կըրնայ խաբել, որ Ռամոթ-գաղաադ երթ ու կորսուի։ ու մէկը այսպէս ու միւսը այնպէս ըսաւ։ 21—Ու ոգի մը ելաւ և Տէրոջը առջև կայնեցաւ, ու ըսաւ, Զանիկա ես կը խաբեմ։ 22—Ու Տէրը անոր ըսաւ, Ի՛նչ միջոցով. Ես անիկա ըսաւ, Ելայ ու անոր բոլոր մարգարէներուն բերանը սուտ ոգի ըլլամ ու Տէրը անոր ըսաւ, Դուն պիտի խաբես ու պիտի յաջողիս. ելիր ու այնպէս ըրէ։ 23—Ու հիմա ահա Տէրը այս քու բոլոր մարգարէներուդ բերանը սուտ ոգի դրեր է, բայց Տէրը քեզի համար չարիք խօսեցաւ։

24—Այն ատեն Քանանայի որդին Սեդեկիա մօտեցաւ, ու Միքիայի ծնօթին զարկաւ ու ըսաւ, Տէրոջը Հոգին ի՛նչպէս իմ քովէս ելաւ՝ քեզի հետ խօսելու համար։ 25—Ու Միքիա ըսաւ, Դուն ալ պիտի տեսնես այն օրը որ պահուելու համար սենեակէ սենեակ մտնես։

26—Ու Իսրայէլի թագաւորը ըսաւ, Միքիան առ, ու զանիկա Ամոն քաղաքապետին և Թագաւորի որդւոյն Յովաս եօա տար, 27—Ու ըսէ, Թագաւորը այսպէս կ'ըսէ. Այիկա բանտը դրէք, ու մինչև որ ես խաղաղութեամբ դառնամ, զանիկա նեղութեան հացով ու նեղութեան ջրով կերակրեցէք։ 28—Ու Միքիա ըսաւ, Եթէ բնաւ խաղաղութեամբ դառնաս, Տէրը ինծմէ խօսած չըլլայ. ու ըսաւ, Ով ժողովուրդներ, ամէնդ լսեցէ՛ք։

29—Ու Իսրայէլի թագաւորը ու Յուդայի Յովսափատ թագաւորը Ռամոթ-գաղաադ ելան։ 30—Ու Իսրայէլի թագաւորը Յովսափատի ըսաւ, Կերպարանքս պիտի փոխեմ ու պատերազմի պիտի մտնեմ, բայց դուն քու հագուստդ հագիր։ և Իսրայէլի թագաւորը իր կերպարանքը փոխեց, ու պատերազմին մէջ մտաւ։ 31—Ու Ասորւոց թագաւորը իր երեսունուերկու կառապետներուն պատուիրեց ու ըսաւ, Պզտիկի կամ մեծի հետ մի պատերազմիք, բայց միայն Իսրայէլի թագաւորին հետ։ 32—Ու երբ կառապետները Յովսափատը տեսան, Իսրայէլի թագաւորը անշուշտ սա՛ն է ըսելով, անոր վրայ պատերազմելու դարձան և Յովսափատ աղաղակեց։ 33—Ու երբ կառապետները տեսան որ անիկա Իսրայէլի թագաւորը չէ, անկէ ետ դարձան։ 34—Ե՛ մարդ մը *առանց դիտելու† իր աղեղը քաշեց, ու Իսրայէլի թագաւորը †զրահին օղակներուն մէջէն‡ զարկաւ. այն ատեն անիկա իր կառապարին ըսաւ, Ձեռքդ դարձուր ու զիս բանակէն հան, Նէ, քանի վիրաւորուեցայ։ 35—Ու այն օրը պատերազմը սաստկացաւ, ու թագաւորը Ասորւոց դիմաց իր կառքին մէջ կեցաւ, և իրիկուան դէմ մեռաւ ու վիրքին արիւնը կառքին մէջ վազեց։ 36—Ու երբ արեւը կը մտնէր, բանակին մէջ մեռնեմիկ պոռնեցաւ ու ըսաւ, Ամէն մարդ իր քաղաքը ու ամէն մարդ իր երկիրը դարձի՛։ 37—Ու թագաւորը մեռաւ, ու Սամարիա բերուեցաւ, ու թագաւորը Սամարիայի մէջ թաղեցին։ 38—Ու կառքը Սամարիայի աւազանին քով լուացին, ու չուները անոր արիւնը լափեցին. ‡—ոջ զէնքերն ալ հո՛ր լուացին՝ Տէրոջը բառն խօսքին համեմատ։

39—Ու Աքաաբի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր բրածը, և փղոսկրով շինած տունը ու բոլոր շինած քաղաքները ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 40—Ու Աքաաբ իր հայրե-

*Կ՚ը, ուժով մը

†ԵԲԲ. յօդուածներուն ու զրահին միջևէն

‡Կ՚ը, բոզերն ալ հոն լուացուեցան

բուն հետ քնացաւ, ու անոր տեղ անոր որդին Ոքոզիա թագաւոր եղաւ։

41—Ու Իսրայէլի Աքաաբ թագաւորին չորրորդ տարին Յուդայի վրայ Ասայի որդին Յովսափատ թագաւոր եղաւ։ 42—Յովսափատ երեսունըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ քսանըհինգ տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ազուբա էր ու Սալհիի աղջիկն էր։ 43—Ու անիկա իր հօրը Ասայի բոլոր ճամբուն մէջ քալեց, անկէ չխոտորեցաւ, ու Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ։ 44—Բայց բարձր տեղերը չվերցան. ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհեր կը մատուցանէր ու խունկ կը ծխէր։ 45—Ու Յովսափատ Իսրայէլի թագաւորին հետ խաղաղութիւն ըրաւ։

46—Ու Յովսափատի մնացորդ պատմութիւնը և անոր ըրած քաջութիւնը ու պատերազմները՝ ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 47—Ու անիկա իր հօրը Ասայի ժամանակէն մնացած Սոդոմական մեղք գործողները երկրէն բնաջինջ ըրաւ։

48—Այն ատեն Եդովմի մէջ թագաւոր չկար, փոխարքայ մը կար։

49—Ո՞ Յովսափատ Թարսիսի նաւեր պատրաստեց, որպէս զի Ոփիր երթան ոսկի հնոց, բայց չգացին՝ քանզի նաւերը Գասիոն-գաբերի մէջ կոտր կոտր եղան։ 50—Այն ատեն Ախաաբի որդին Ոքոզիա Յովսափատի ըսաւ, Իմ ծառաներս քու ծառաներուդ հետ նաւերով երթան. բայց Յովսափատ չկամեցաւ։ 51- Ու Յովսափատ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ իր հօրը Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ. և անոր տեղ անոր որդին Յովրամ թագաւոր եղաւ։

52—Յուդայի Յովսափատ թագաւորին տասնըութներորդ տարին Իսրայէլի վրայ Ախաաբի որդին Ոքոզիա թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, ու Իսրայէլի վրայ երկու տարի թագաւորութիւն ըրաւ։ 53—Ու Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, ու իր հօրը ճամբան և իր մօրը ճամբան ու Իսրայէլ մեղանչել տուող Նաբատեան Երոբովամի ճամբան բռնեց։ 54—Ու Բահաղի ծառայութիւն ըրաւ ու անոր երկրպագութիւն ըրաւ. և իր հօրը բոլոր ըրածին պէս ընդդէմ Իսրայէլի Տէր Աստուածը բարկացուց։

*Կ՚ը, երբայ ոսկի համար, բայց չգնաց

ՍԱՄՈՒԷԼ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ*

ԳԼՈՒԽ Ա.

Եւ Աբեսաղոմ մեռանելէն ետքը Մովաբ իսրայէլի դէմ ապստամբեցաւ։

2—Ու Ոքոզիա Սամարիայի մէջ իր վերնատան վանդակապատէն վար ինկաւ ու հիւանդացաւ. ու պատգամաւորներ ղրկեց՝ անոնց ըսելով, Գացէք Ակկարոնի Բահաղ-Ջաճէնիկ աստուծոյն հարցուցէք, Թէ արդեօք այս հիւանդութենէն պիտի առողջանա՞մ 3—Եւ Տէրոջը հրեշտակը Թեղբացի Եղիայի ըսաւ, Ելիր, Սամարիայի թագաւորին պատգամաւորները դիմաւորելու գնաս, ու անոր ըսէ, Մի՞թէ Իսրայէլի մէջ Աստուած չկա՞յ, որ դուք Ակկարոնի Բահաղ-Ջաճէնիկ աստուծոյն հարցնելու կ՚երթաք. 4—Անոր համար Տէրը այսպէս կ՚ըսէ, Դուն ելած անկողինդ վար պիտի չիջնես, հապա անշուշտ պիտի մեռնես. ու Եղիա գնաց։

5—Եւ պատգամաւորները անոր դարձան. ու Ինքը անոնց ըսաւ, Ինչո՞ւ համար կը դարձաք։ 6—Եւ անոր ըսին, Մեր դիմաց մարդ մը ելաւ ու մեզի ըսաւ, Գացէք ձեզ ղրկող թագաւորին դարձէ՛ք ու անոր ըսէք, Տէրը այսպէս կ՚ըսէ. Մի՞թէ Իսրայէլի մէջ Աստուած չկա՞յ, որ Ակկարոնի Բահաղ-Ջաճէնիկ աստուծոյն հարցնելու կը ղրկես. անոր համար դուն ելած անկողինդ վար պիտի չիջնես, հապա անշուշտ պիտի մեռնիս։ 7—Ու անոնց ըսաւ անոնց, Ձեզ դիմաւորող ու այս խօսքերը ձեզի ղրկուցող մարդը ի՞նչպէս մարդ էր։ 8—Ու անոր ըսին, Անիկա մազոտ մարդ մըն էր, ու մէջքը մազիկներէն գօտի մը կապած էր։ Եւ Թեզբացի ըսաւ, Անիկա Թեզբացի Եղիան է։

9—Ու անոր՝ յիսուն մարդով յիսնապետ մը ղրկեց, և անիկա Եղիայէ քով ելաւ, ու Եղիա լեռան գլուխը նստած էր։ և յիսնապետը անոր ըսաւ, Մարդ Աստուծոյ, Թագաւորը կ՚ըսէ որ վար իջնես։ 10—Ու Եղիա պատասխան տուաւ ու յիսնապետին ըսաւ, Եթէ ես Աստուծոյ մարդն եմ, երկինքէն կրակ թող իջնէ, և քեզ ու քու յիսուն մարդդ ուտէ։ Ու երկինքէն կրակ իջաւ, և զանիկա ու անոր յիսուն մարդը կերաւ։

11—Եւ անոր նորէն յիսուն մարդով ուրիշ յիսնապետ մը ղրկեց. ու անիկա խօսեցաւ ու անոր ըսաւ, Մարդ Աստուծոյ, Թագաւորը այսպէս կ՚ըսէ, Շուտով վար իջիր։ 12—Ու Եղիա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ, Եթէ ես Աստուծոյ մարդն եմ, երկինքէն կրակ Թող իջնէ, և քեզ ու քու յիսուն մարդդ ուտէ։ Ու երկինքէն Աստուծոյ կրակը իջաւ, և զանիկա ու անոր յիսուն մարդը կերաւ։

13—Ու նորէն յիսուն մարդով երրորդ յիսնապետ մը ղրկեց, ու այն երրորդ յիսնապետը վեր ելաւ, ու գնաց Եղիայի առջև ծունկ կրկնեց, և անոր աղաչեց ու ըսաւ, Մարդ Աստուծոյ, Թող իմ հոգիս ու այս յիսուն ծառաներուդ հոգիները քու աչքերուդ առջև պատուական ըլլան։ 14—Ահա երկինքէն կրակ իջաւ, ու այն առաջնոյն երկու յիսնապետները և անոնց յիսուն մարդիկը կերաւ. բայց հիմա իմ հոգիս քու աչքիդ առջև Թող պատուական ըլլայ։

15—Ու Տէրոջը հրեշտակը Եղիայի ըսաւ, Անոր հետ իջիր, անոր վրեհսէն մի վախնար. ու նէ՚ ելաւ անոր հետ Թագաւորին իջաւ։ 16—Եւ անոր ըսաւ, Տէրը այսպէս կ՚ըսէ. Որովհետև Ակկարոնի Բահաղ-Ջաճէնիկ աստուծմէն հարցընելու համար պատգամաւորներ ղրկեցիր, Իբր Թէ Իսրայէլի մէջ Աստուած չկար որ անոր բան հարցնէիր, անոր համար այդ քու ելած անկողինդ վար պիտի չիջնես, հապա անշուշտ պիտի մեռնիս։

17—Եւ անիկա մեռաւ Տէրոջը խօսքին համեմատ զոր Եղիա խօսեր էր. և որովհետև անիկա որդի չունէր, անոր տեղը Յովրամ Թագաւոր եղաւ՝ Յուդայի Յովսափատեան Յովրամ Թագաւորին երկրորդ տարին։ 18—Եւ Ոքոզիայի ըրած գործերուն մնացորդը պատմութիւնը ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։

ԳԼ. Բ

Ու երբ Տէրը Եղիան մրրիկով երկինք պիտի վերցնէր, Եղիա ու Եղիսէ Գաղգաղայէ գացին։ 2—Ու Եղիա ըսաւ Եղիսէի, Դուն հոս նստէ, քանզի Տէրը զիս Բեթէլ ղրկեց։ Ու Եղիսէ ըսաւ, Տէրը կենդանի է, ու քու անձդ կենդանի է, որ ես քեզ չեմ Թողուր. ու Բեթէլ իջան։ 3—Եւ Բեթէլի մէջ գտնուող մարգարէից որդիները Եղիսէի ելան, ու անոր ըսին, Գիտէ՞ս որ այսօր Տէրը քու ակրդ քու գլխեդ պիտի առնէ։ Եւ ան ալ գիտեմ, լուռ կեցէք։ 4—Ու Եղիա անոր ըսաւ, Ով Եղիսէ, դուն հոս նստէ, քանզի Տէրը զիս Երիքով ղրկեց։ Եւ անիկա ըսաւ, Տէրը կենդանի է, ու քու անձդ կենդանի է, որ ես քեզ չեմ Թողուր. ու Երիքով գացին։ 5—Ու Երիքովի մէջ գտնուող մարգարէից որդիները Եղիսէի մօտեցան, ու անոր ըսին, Գիտէ՞ս որ այսօր Տէրը քու ակրդ քու գլխեդ պիտի առնէ։ Եւ անիկա ըսաւ, Ես ալ գիտեմ, լուռ կեցէք։ 6—Ու Եղիա անոր ըսաւ, Դուն հոս նստէ, քանզի Տէրը զիս Յորդանան ղրկեց։ Եւ անիկա ըսաւ, Տէրը կենդանի է, ու քու անձդ կենդանի է, որ ես քեզ չեմ Թողուր. ու երկուքը գացին։ 7—Եւ մարգարէից որդիներէն յիսուն մարդ գացին դիմացը՝ հեռուանց կայնեցան. ու անոնք երկուքը Յորդանանու քով կայնեցան։ 8—Ու Եղիա իր վերարկուն առաւ ծալլեց և յորդուան զարկաւ, ու մէկ կողմը ու միւս կողմը բաժնուեցան, ու երկուքը ցամաքով անցան։

9—Ու երբ անոնք անցան, Եղիա ըսաւ Եղիսէի, Խնդրէ, ի՛նչ ընեմ քեզի՝ քանի որ քեզմէ վերցուած չեմ։ Ու Եղիսէ ըսաւ, Քու ոգիիդ կրկնապատիկը ինձ տուր։ 10—Եւ անիկա ըսաւ, Դժուար բան խնդրեցիր. Բայց եթէ քեզմէ վերցուելու ատենս զիս տեսնես՝ քեզի այնպէս ըլլայ, ապա Թէ ոչ՝ չըլլայ։

11—Ու երբ անոնք խօսելով կ՚երթային, ահա հրեղէն կառք մը և հրեղէն ձիեր էջեացն, ու զանոնք իրարմէ զատեցին. ու Եղիա մրրիկով երկինք ելաւ։ 12—Ու Եղիսէ կը տեսնէր, ու աղաղակեց, Հայր իմ, հայր իմ, Իսրայէլի կառքը ու անոր ձիաւորները. ու ալ չտեսաւ զանիկա. և իր հանդերձները բռնեց ու զանոնք երկու կտորի պատռեց։ 13—Ու Եղիայի վրայէն ինկած վերարկուն վերցուց, և գարձաւ Յորդանանու եզերքը կայնեցաւ։ 14—Ու Եղիայի վրայէն ինկած վերարկուն առաւ, Լուրերուն զարկաւ և ըսաւ, Եղիայի Տէր Աստուածը ո՞ւր է հիմա, ու երբ Լուրերուն զարկաւ, մէկ կողմը ու միւս կողմը բաժնուեցան, ու Եղիսէ անցաւ։

15—Ու Երիքովի մարգարէից որդիները զանիկա դիմացէն տեսանելով՝ ըսին, Եղիայի ոգին Եղիսէի վրայ հանգչեցաւ. և զանիկա դիմաւորելու գացին ու գետնէն անոր խոնարհութիւն ըրին։ 16—Եւ անոր ըսին, Ահա քու ծառաներուդ հետ յիսուն զօրաւոր մարդիկ կան. Թող երթան ու քու տէրդ փնտռեն. կարելի է Տէրոջը Հոգին զանիկա վերցուց, ու լեռան մը վրայ կամ ձորի մը մէջ ձգեց. ու անիկա ըսաւ, Մի ղրկէք։ 17—Բայց անոնք բռնադատեցին զանիկա մինչև որ ամչցաւ, ու ըսաւ, Ղրկեցէք։ Ու յիսուն մարդ ղրկեցին, որոնք երեք օր փնտռեցին, բայց զանիկա չգտան։ 18—Ու անոր դարձան, և անիկա Երիքով կը նստէր, ու անոնց ըսաւ, Ես ձեզի չըսի՞ որ Մի երթաք։

19—Ու քաղաքին մարդիկը Եղիսէի ըսին, Ահա քաղաքիս բնակութիւնը ազնիւ է, ինչպէս տէր կը տեսնէ, բայց ջուրերը գէշ ու երկիրը անպտուղ է։ 20—Ու անիկա ըսաւ, Ինծի նոր կուժ մը բերէք, ու աղը ալ դրէք։ Եւ անոր բերին։ 21—Ու անիկա ջուրերուն աղբիւրը ելաւ ու հոն աղ նետեց,

*Կամ, ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

*Կամ, բաժակ

ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ա՛յս ևս ըրբը բժշկեցի, մէյմըն ալ ասկէ մահ ու անպտղութիւն չըլլայ։ 22—Ու այն ևս ըրբը բժշկուեցան մինչև այսօր՝ ներելէն ետքը խօսքին համեմատ։

23—Ու անկէ Բեթէլ ելաւ. ու երբ ճամբային վրը կ'ելլէր, քաղաքէն պզտիկ տղաքներ եկան, և ան՛նկա ծաղր կ'ընէին ու կ'ըսէին, Ելիր կ՛նայ՝ ելիր կ՛նայ։ 24—Ու երեսն դարձաւ ու զանոնք տեսաւ, և Տէրոջը անունովը զանոնք անիծեց։ Ու անտառէն երկու մատակ արջ ելան, ու անոնցմէ քառասունհուերկու տղայ պատառեցին։ 25—Ու անկէ Կարմէղոս լեռը գնաց, ու անկէ Սամարիա դարձաւ։

Գ

Ու Աքաաբի որդին Յովրամ Յուդայի Յովսափատ թագաւորին տասնուերկրորդ տարին՝ Սամարիայի մէջ Իսրայէլի վրայ թագաւոր եղաւ, ու տասներկու տարի թագաւորեց։ 2—Ու անկա՛ Տէրոջը աչքին չարութիւն ըրաւ, բայց ոչ իր հօրը ու իր մօրը պէս, քանզի անկա՛ իր հօրը չինած Բահալի կուռքը վերցուց։ 3—Բայց Նաբաթեան Երոբովամի մեղքերուն յարեցաւ, անոնցմէ չդառնալով։

4—Ու Մովաբի Մեսա թագաւորը հօտերու տէր ըլլալով՝ Իսրայէլի թագաւորին հարիւր հազար գառ ու հարիւր հազար գեղմնաւոր խոյ կու տար։ 5—Բայց Աքաաբի մեռնելէն ետքը Մովաբի թագաւորը Իսրայէլի թագաւորին դէմ ապստամբեցաւ։ 6—Ու այն օրը Յովրամ թագաւորը Սամարիայէ ելաւ ու բոլոր Իսրայէլը համրեց։ 7—Ու գնաց, և Յուդայի Յովսափատ թագաւորին խրկեց՝ ըսելով, Մովաբի թագաւորը ինծի դէմ ապստամբեցաւ։ Ինծի հետ Մովաբի վրայ պատերազմելու կ'երթա՞ս։ Ու անկա՛ ըսաւ, կ'երթամ. ես քեզի պէս եմ, իմ ժողովրդս քու ժողովրդիդ պէս՝ ու ձիերս քու ձիերուդ պէս են։ 8—Ու անկա՛ ըսաւ, Ո՛ր ճամբայէն երթանք։ Ան ալ ըսաւ, Եդոմի անապատին ճամբայէն։ 9—Ու Իսրայէլի թագաւորը, Յուդայի թագաւորը ու Եդոմի թագաւորը գացին, ու եօթը օրուան ճամբայ պտտեցան. և անոնց հետ եղող բանակին ու անասուններուն համար ջուր չկար։

10—Ան ատեն Իսրայէլի թագաւորը ըսաւ, Ափսո՛ս, Տէրը այս երեք թագաւորները Մովաբի ձեռքը տալու կանչեր է։ 11—Ու Յովսափատ ըսաւ, Այս տեղ Տէրոջը մարգարէ մը չկա՞յ, որպէս զի անոր միջոցով Տէրոջը հարցընենք։ Ու Իսրայէլի թագաւորին ծառաներէն մէկը պատասխան տուաւ ու ըսաւ, Եղիսայէ ձեռքերուն ջուր լցնող Սափատան Եղիսէ հոս է։ 12—Ու Յովսափատ ըսաւ, Անոր քով Տէրոջը խօսքը կայ. ու Իսրայէլի թագաւորը և Յովսափատ ու Եդոմի թագաւորը անոր իջան։ 13—Ու Եղիսէ Իսրայէլի թագաւորին ըսաւ, Դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս. դուն քու հօրդ մարգարէներուն ու քու մօրդ մարգարէներուն գնա։ Ու Իսրայէլի թագաւորը անոր ըսաւ, Ո՛չ, վասն զի Տէրը այս երեք թագաւորը Մովաբի ձեռքը մատնելու կանչեր է։ 14—Ու Եղիսէ ըսաւ, Զօրաց Տէրը, որուն առջև կը կայնիմ, կենդանի է որ, եթէ Յուդայի Յովսափատ թագաւորին վրայ համարում չունենայի, բնաւ քու էրէսդ պիտի չնայէի, ու քեզ պիտի չտեսնէի։ 15—Ու հիմա ինծի նուագածուն մը բերէք. ու երբ նուագածուն նուագարանը կը զարնէր, անոր վրայ Տէրոջը ձեռքը եղաւ. 16—Ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ա՛յս հեղեղատը փոս փոս ըրէք. 17—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ. Հով պիտի չտեսնէք ու անձրև պիտի չտեսնէք. բայց այս հեղեղատը ջրով պիտի լեցուի, և պիտի խմէք դուք ու ձեր հօտերը ու ձեր անասունները։ 18—Սակայն ասիկա Տէրոջը առջև պզտիկ բան մը ըլլալով, Մովաբն ալ ձեր ձեռքը պիտի մատնէ։ 19—Ու ամէն պարսպաւոր քաղաք ու ամէն ընտիր քաղաքը պիտի զարնէք, և ամէն աղնիւ ծառերը կտրէք, ու ամէն ջուրի աղբիւրները գոցէք, ու ամէն ընտիր արտերը քարերով ապրէք։ 20—Ու առաւօտուն զոհին մատուցուած ատեներ՝ ահա Եդոմի ճամբայէն ջուր եկաւ, ու երկիրը ջրով լեցուեցաւ։

21—Ու երբ բոլոր Մովաբացիք լսեցին որ թագաւորները ելեր են իրենց հետ պատերազմելու, ամէն գօտի կապելու կարողութիւն ունեցողները ժողվուեցան, ու սահմանագլուխը կայնեցան։ 22—Ու առաւօտուն կանուխ ելան, ու արեւուն ճառագայթները ջուրերուն վրայ զարկած ըլլալով՝ Մովաբացիք դիմացէն այն ջուրերը արիւնի պէս կարմիր տեսան, 23—Ու ըսին, Ասիկա արիւն է. անտարակոյս թագաւորները իրարու հետ կռուեր են, ու մէկզմէկ զարկեր են. հիմա, ով Մովաբացիք, աւարը ժողվենք։ 24—Ա՛յսպէս անոնք Իսրայէլի բանակը գացին, ու Իսրայէլացիք ելան Մովաբացիները զարկին, որոնք անոնց երեսէն փախան. ու Իսրայէլացիք Մովաբացիները զարնելով՝ անոնց էրկիրը մտան։ 25—Ու քաղաքները կործանեցին, ու ամէն ընտիր արտերու մէջ ամէն մարդ իր քարը նետեց, ու զանոնք լեցուցին, և ամէն ջուրի աղբիւրները գոցեցին, ու ամէն աղնիւ ծառերը կտրեցին, այնպէս որ միայն կիրհարեսէթի քարերը թողուցին. ու պարսաւորները զանիկա պաշարեցին ու զարկին։ 26—Ու Մովաբի թագաւորը երբ տեսաւ որ պատերազմը իր վրայ աւտակացաւ, իրեն հետ եօթը հարիւր սուսերամերկ զօրք առաւ, որպէս զի մինչև Եդոմի թագաւորը ճեղքէն անցնին, բայց չկրցան։ 27—Ուստի առաւ իր անդրանիկ որդին որ իր տեղ պիտի թագաւորէր, ու զանիկա պարսպին վրայ ողջակէզ ըրաւ. և խռովութիւն դէմ մեծ բարկութիւն եղաւ. ու անոր վրայէն ետ քաշուեցան, ու էրէնց երկիրը դարձան։

Գլ. Դ

Ու մարգարէից որդիներուն կիներէն կին մը Եղիսէի աղաղակելով՝ ըսաւ, Քու ծառադ այրս մեռաւ. ու դուն քու ծառայիդ ստուգածավախ ըլլալը գիտես. և պարտատէրը եկաւ որպէս զի իմ երկու որդիներս իրեն ծառայ առնէ։ 2—Ու Եղիսէ անոր ըսաւ, Քեզի ի՞նչ ընեմ. ըսէ ինծի տունը ի՞նչ ունիս ըսէ։ Ու անիկա ըսաւ, Քու ազախինդ տանը մէջ *աման մը՝ իւղէն զատ ուրիշ բան մը չունի։ 3—Ու Եղիսէ ան՛նկա ըսաւ, Գնա, դուրսէն քու բոլոր դրացիներդ քեզի պարապ ամաններ ուզէ, ու քիչ մի ուզեր։ 4—Ու դո՛ւռդ մտիր, ու վրայիդ ու քու որդիներուդ վրայէն դուռը գոցէ, և էն էղէր այն բոլոր ամաններուն մէջ պարպէ, ու լեցուածը վերցուր։ 5—Ու անկա՛ անոր քովէն գնաց, ու իր վրայէն ու իր որդիներուն վրայէն դուռը գոցեց. անոնք անոր կը մօտեցնէին, ու անիկա կը լեցընէր։ 6—Ու երբ այն ամանները լեցուեցան, իր որդւոյն ըսաւ, Ինծի ուրիշ աման մօտեցուր. ու անիկա ըսաւ անոր, Ուրիշ աման չկայ. այն ատեն իւղը կայնեցաւ։ 7—Ու կինը գնաց Աստուծոյ մարդուն պատմեց. ու անիկա ըսաւ, Գնա իւղը ծախէ ու պարտքդ վճարէ, և աւելցածովը դուն ու քու որդիներդ ապրեցէք։

8—Ու օր մը երբ Եղիսէ Սունամէ կ'անցնէր, հոն երեւելի կին մը կար, որ զանիկա հաց ուտելու ստիպեց, և էրթը քանի որ անկէ կ'անցնէր, հաց ուտելու համար հոն կ'իյնէր։ 9—Ու այն կինը իր երկանը ըսաւ, Ահա գիտեմ որ ասիկա Աստուծոյ մէկ սուրբ մարդն է, որ միշտ մեր քովէն կ'անցնի։ 10—Հիմա պզտիկ վերնատուն մը չինենք պատին վրայ, ու հոն անոր համար անկողին, սեղան, աթոռ ու աչտանակ դնենք, որպէս զի երբ մեզի գայ, հոն իյնէ։ 11—Ու եղաւ որ օր մը անիկա հոն եկաւ, ու վերնատունը մտաւ ու հոն պառկեցաւ։ 12—Ու իր ծառային Գեհազիի ըսաւ, Սունամացի կինը կանչէ. ու զանիկա կանչեց. և անոր առջև կայնեցաւ։ 13—Ու անիկա իր ծառային ըսաւ, Անոր ըսէ, Ահա դուն մեզի համար այս բոլոր աշխատանքը քաշեցիր. քեզի ի՞նչ ընեմ. թագաւորին կամ զօրագլուխին բանի մը ունի՞ս. և անիկա ըսաւ, Ես իմ ժողովրդիս մէջ կը բնակիմ։ 14—Ու Եղիսէ ըսաւ, Անոր ի՞նչ կրնանք ընել. ու Գեհազի

*Կամ, օժանդակ մը չափ

ըսաւ, Իրաւացրնէ անիկա զաւակ չունի, ու անոր այրը ծերացեր է։ 15—Ու Եղէ-
ւէ ըսաւ, Զանիկա կանչէ. և զանիկա
կանչեց. ու դռանը մէջ կայնեցաւ։ 16—
Ու Եղիւէ ՚ին ըսաւ, *Գալ տարի՝ այս
ատեն գիրկդ որդի մը պիտի ունենաս։
Ու անիկա ըսաւ, Ոչ, ով աէր իմ, մարդ
Աստուծոյ, քու աղախինդ սուտ մի
ըներ։ 17—Ու կինը յղացաւ ու հե-
տեւեալ տարին նոյն ատեն որդի մը
ծնաւ, ինչպես Եղիսէ անոր ըսեր էր։

18—Ու տղան մեծցաւ, ու օր մը իր
հօրը գնաց հնձողներուն քովէ։ 19—Ու
իր հօրը ըսաւ, Գլո՛ւխս, գլո՛ւխս. ան
ալ մանչուն ըսաւ, Աիկա իր մօրը տար։
20—Ու զանիկա վերցուց, ու անոր մօ-
րը տարաւ. և անիկա մինչև կէսօր ա-
նոր ծունկերուն վրայ նստաւ, ու մե-
ռաւ։ 21—Ու կինը վեր ելաւ, ու զա-
նիկա Աստուծոյ մարդուն անկողինին
մէջ պառկեցուց, ու դ՚՚՚՚ւռը վրայէն գո-
ցեց ու ելաւ։ 22—Ու իր այրը կանչեց
ու ըսաւ, Կ՚աղաչեմ, ինծի մանչերէն
մէկուն հետ եշ մը զրկէ, որպես զի չա-
փով մինչեւ Աստուծոյ մարդուն քով
երթամ ու ետ դառնամ։ 23—Ու անի-
կա ըսաւ, Ինչ կայ որ դուն այսօր ա-
նոր պիտի երթաս. ամսագլուխ չէ, շա-
բաթ չէ։ Ու անիկա ըսաւ, Ողջո՛ւթիւն։
24—Ու էշը պատրաստել տուաւ, և
մանչուն ըսաւ, Քշէ գնաս, ու մինչև որ
քեզի չըսեմ, քշելէն ետ մի կենար ինծի
համար։ 25—Ու կարմելոս լեռը եր-
թալով Աստուծոյ մարդուն քով գնաց։
Ու երբ Աստուծոյ մարդը զինմացէն զա-
նիկա տեսաւ, իր մանչուն Գեհազիի ը-
սաւ, Ահա Սունամացի կինը ՚՚՚ է՚՚։
26—Հիմա վազէ, դիմաւորէ զանիկա,
ու անոր ըսէ, Ողջ առո՞ղջ ես, այրդ
ողջ առո՞ղջ է, տղան ալ ողջ առո՞ղջ է։
Ու անիկա ըսաւ, Ողջ առողջ ենք։ 27—
Ու կինը լեռը Աստուծոյ մարդուն եկաւ,
և անոր ոտքերուն փաթթուեցաւ. ու
Գեհազի մօտեցաւ որպես զի զանիկա ետ
քաշէ, Բայց Աստուծոյ մարդը ըսաւ,
Թող տուր զանիկա, քանզի անոր սիր-
տը ցաւած է. ու Տէրը ինծմէ պահեց
ու ինծի չյայտնեց։ 28—Ու կինը ըսաւ,
Ես իմ տէրոջմէս որդի խնդրեցի՞. ես
չըսի՞ որ Զիս մի խաբեր։ 29—Ու անի-
կա Գեհազիի ըսաւ, Մէկդի գօտի կապ,
և իմ գաւազանս ձեռքդ առ ու գնա,
և եթէ մարդու մը հանդիպիս՝ անոր
բարև մի տար, ու եթէ մարդ մը քե-
զի բարև տայ՝ պատասխան մի տար, և
իմ գաւազանս տղուն երեսին վրայ դիր։
30—Իսկ տղուն մայրը ըսաւ, Տէրը կեն-
դանի է, ու քու անձդ կենդանի է, որ
քեզ պիտի չթողում։ Ու եղէ՚՚ ելաւ ա-
նոր եռելէն գնաց։ 31—Բայց Գեհազի
անոնց առջև անցաւ, ու գաւազանը
տղուն երեսին վրայ դրաւ, սակայն ոչ
ձայն կար և ոչ զգացում. ուստի զա-
նիկա դիմաւորելու դարձաւ, և անոր
պատմեց ու ըսաւ, Տղան չարթնցաւ։
32—Ու երբ եղիսէ տունը մտաւ, անա
տղան մեռած ու իր անկողինին վրայ
պառկած էր։ 33—Ու ներս մանելով՝
երկուքնուն վրայէն դուռը գոցեց, և
Տէրոջը աղօթք ըրաւ։ 34—Ու ելաւ
տղուն վրայ պառկեցաւ. և իր բերանը
անոր բերնին վրայ՝ ու իր աչքերը անոր
աչքերուն վրայ՝ ու իր թաթերը անոր
թաթերուն վրայ դրաւ, և անոր վրայ
կծկեցաւ, ու տղուն մարմինը տաքցաւ։
35—Ու դարձաւ տունը մէկ մէկ մը այս
կողմն ու մէկ մը այն կողմն պտռտեցաւ,
ու ելաւ անոր վրայ կծկեցաւ. և տղան
եօթը անգամ փռնգաց, ու տղան
աչքերը բացաւ։ 36—Ան տանն Գեհա-
զին կանչեց ու ըսաւ, Սունամացի կինը
կանչէ. ու զանիկա կանչեց. և անոր
եկաւ. ու եղէ՚՚ ՚՚ըը ըսաւ, Տղադ առ։
37—Ու կինը ներս մտնելով՝ անոր ոտ-
քերը ինկաւ, ու գետնին խոնարհու-
թիւն ըրաւ, և իր տղան առնելով
դուրս ելաւ։

38—Ու Եղիսէ Գաղգաղա դարձաւ. և
այն երկրին մէջ սով կար, ու մարգա-
բէից որդիները անոր առջև կը նստէին.
ու անիկա իր ծառային ըսաւ, Մեծ
կաթսան էրէ՚՚ էշ դիր, և մարգա-
բէից որդիներուն ապուր եփէ։ 39—Ու
մէկը դաշտը ելաւ որպես զի խոտեր
ժողվէ, ու վայրենի բոյս մը գտաւ, և
անկէ հանդերձը լեցուն վայրենի վա-
ղուններ ժողվեց, ու եկաւ զանոնք ա-

*ՆԷԲ. Կհնաց ժամանակին. Ծն. ԺԸ. 10, 14։

պուրին կաթսային մէջ մանրեց, քանզի չէին ճանչնար։ 40—Ու այն մար-
դոց առջև դրին որպես զի ուտեն. ու
երբ այն ապուրէն կերան՝ պոռալով
ըսին, Կաթսային մէջ մահ կայ, ով
մարդ Աստուծոյ. ու չկրցան ուտել։
41—Ու անիկա ըսաւ, Ալիւր բերէք.
ու զանիկա կաթսային մէջ նետեց, ու
ըսաւ, Ժողովուրդին առջև դիր, որպես
զի ուտեն. այն ատեն կաթսային մէջ
վնասակար բան մը չկար։

42—Ու բանաղաւիսայէ մարդ մը
եկաւ, ու Աստուծոյ մարդուն երախայ-
րիներէ չ՚՚՚՚ն հացեր, քսան հատ
գարեղէն հաց, ու թաղամ հասկեր բե-
րաւ իր պարկովը։ Ու անիկա ըսաւ,
Ժողովուրդին տուր որպես զի ուտեն։
43—Ու անոր ծառան ըսաւ, Այս ինչ
է որ հարիւր մարդոց առջև դնեմ.
բայց անիկա ըսաւ, Ժողովուրդին տուր
որպես զի ուտեն, քանզի Տէրը այսպես
կ՚ըսէ. Պիտի ուտեն ու պիտի աւելցայ
44—Ու անոնց առջև դրաւ, ու կերան,
և Տէրոջը ըսածին պէս աւելցաւ։

Գլ. Ե

Ե Ասորւոց թագաւորին զօրագլուխը Նեեման իր տէրոջը առջև մեծ ու յարգելի մարդ մըն էր, քանզի Տէրը անոր ձեռքով Ասորւոց փրկութիւն տուեր էր. ու այս մարդը զօրաւոր կորիճ մըն էր, բայց բորտ էր։ 2—Ու Ասորւոց գունդերը ելլելով՝ Իսրայէլի երկրէն գերի աղջիկ մը գերի առեր էին, ու անիկա Նեեմանի կնոջ քով էր։ 3—Ու անիկա իր տիկնոջ ըսաւ, Երանի՛ թէ իմ տէրս Սամարիա եղող մարգարէին առջև ըլլար, այն ատեն զանիկա իր բորտութենէն կը բժշկէր։ 4—Ու Նեեման՚՚ գնաց իր տէրոջը պատմեց, ու ըսաւ, Իսրայէլի երկրէն եղող աղջիկը այսպես ու այսպես խօսեցաւ։ 5—Ու Ասորւոց թագաւորը ըսաւ, Գնա ուրեմն, ես Իսրայէլի թագաւորին նամակ կը զրկեմ։ Ու անիկա գնաց, և իր ձեռքը տասը տալանդ արծաթ ու վեց հազար ոսկի ու տասը ձեռք փոխելու հանդերձ առաւ։ 6—Ու Իսրա-
յէլի թագաւորին բերաւ նամակը, որ այսպէս գրուած էր։ Արդ երբ այս նամակը քեզի հասնի, դիտցած ըլլաս որ՝ իմ ծառաս Նեեմանը քեզի կը զրկեմ, որպէս զի զանիկա իր բորտութենէն բժշկես։ 7—Ու երբ Իսրայէլի թագաւորը նամակը կարդաց՝ իր հանդերձները պատռեց, ու ըսաւ, Միթէ ես մեռցնելու ու ապրեցնելու ՚՚րը՚՚՚՚ՐՒ՚՚՚՚ Աստուա՞ծ եմ, որ ասկա ինծի մարդ մը զրկեր է՝ իր բորտութենէն բժշկելու համար. ուսի՛ ուզէկ գիտցէք ու տեսէք, որ ասկա ինծի պատճառ մը կը փնտռէ։

8—Ու երբ Աստուծոյ մարդը եղիսէ լսեց՝ որ Իսրայէլի թագաւորը իր հանդերձները պատռեր է, թագաւորին հետ զրկեց ու ըսաւ, Ինչո՞ւ հանդերձները պատռեցիր. թող անիկա ինծի գայ, ու գիտնայ թէ Իսրայէլի մէջ մարգարէ կայ։ 9—Ու Նեեման իր ձիերովը ու կառքովը գնաց, ու եղիսէի տունը դուռը կայնեցաւ։ 10—Ու եղիսէ մարդ մը զրկեց անոր՝ ըսելով, Գնա Յորդանանու մէջ եօթը անգամ լուացուէ, և մարմինդ քեզի կը դառնայ, ու կը մաքրուիս։ 11—Ու Նեեման բարկացաւ ու գնաց՝ ըսելով, Ահա ես կ՚ըսէի որ անիկա անպատկառօր իմ քովս պիտի գայ ու կայնի, և իր Եհովա Աստուծոյն անունը պիտի կանչէ, ու ձեռքը այն տեղին վրայ պիտի երերցնէ, ու բորտութիւնը բժշկէ։ 12—Դամասկոսի Աբանա ու փարփար գետերը Իսրայէլի բոլոր ջուրերէն աղեկ չէ՞ն, միթէ չե՞մ կրնար անոնց մէջ լուացուիլ ու մաքրուիլ։ և դարձաւ բարկութիւնով գնաց։ 13—Իսկ անոր ծառաները մօտեցան, ու անոր խօսեցան՝ ըսելով, Ովկ հայր, էրէ մարգարէն քեզի մեծ բան մը ըսէր՝ պիտի չընե՞իր։ ա՞լր ինչ որ անիկա քեզի, Լուացուէ ու պիտի մաքրուիս, ըսաւ։ 14—Այն ատեն անիկա չջաւ, ու Աստուծոյ մարդուն խօսքին համեմատ եօթը անգամ Յորդանանու մէջ լուացուեցաւ. ու անոր մարմինը պզտիկ տղու մը մարմնին պէս եղաւ, ու մաքրուեցաւ։

*ՆԷԲ. ըսելով †ՆԷԲ. ահա

15—Եւ անիկա իր բոլոր բանակովը Ասուածոյ մարդուն դարձաւ, ու գնաց անոր առջեւ կայնեցաւ, ու ըսաւ, Ահա հիմա գիտցայ որ բոլոր երկրի վրայ Ասուած չկայ, բայց միայն Իսրայէլի մէջ. ուստի հիմա, կ'ազաչեմ, քու ծառայէդ ընծայ մը ընդունէ։ 16—Բայց անիկա ըսաւ, Ցերը, որուն առջեւ կը կայնիմ, կենդանի է որ պիտի չընդունիմ. ու զանիկա սաստիկ որ ընդունի, բայց անիկա չհաճեցաւ։ 17—Ու Նեեման ըսաւ, Ուրեմն քու ծառայիդ ⁻ա էղէր հողէն երկու ջորիի բեռ չափ[ա]. քանզի քու ծառադ մէկմէն ալ ուրիշ աստուածներու ողջակէզ կամ զոհ պիտի չընէ, բայց միայն Եհովային։ 18—Ցերը այս բանին համար քու ծառայիդ թողութիւն տայ, այսինքն երբ իմ տէրս Ռեմոնի տաճարը մտնէ հոն երկրպագութիւն ընելու համար, և անոր իմ ձեռքիս վրայ կռթնելովը, ես ալ Ռեմոնի տաճարը մէջ ծռիմ, այս բանին, այսինքն Ռեմոնի տաճարը մէջ իմ ծռելուս համար Ցերը քու ծառայիդ թողութիւն տայ։ 19—Ու Եղիսէ անոր ըսաւ, Գնա խաղաղութեամբ. և անիկա անոր քովէն գնաց, ⁻ա քիչ մը ճամբայ ⁻ա։

20—Եւ Ասուածոյ մարդուն Եղիսէի ծառան Գեհազի ըսաւ, Ահա իմ տէրս այս Ասորի Նեեմանի խնայեց, ու անոր ձեռքէն անոր բերածը չառաւ. Ցերը կենդանի է որ ես անոր ետեւէն կը վազեմ, և անկէ բան մը կ'առնեմ։ 21—Ու Գեհազի Նեեմանի ետեւէն վազեց. ու Նեեման երբ տեսաւ որ անկիա իր ետեւէն կը վազէ, իր կառքէն իջաւ զանիկա դիմաւորելու, ու ըսաւ, Ողջո՞ւն է։ 22—Ես անիկա ըսաւ, Ողջո՞ւն է իմ տէրս ղս ղրկեց ու կ'ըսէ, Ահա հիմա եփրեմի լեռնէն մարգարէից որդիներէն երկու պատանի եկան ինծի. ընորհք ըրէ, անոնց համար տասդնդ մը արծաթ ու երկու ձեռք փոխելու հանդերձ տուր։ 23—Ու Նեեման ըսաւ, Շնորհք ըրէ, երկու տասդնդ առ. և զանիկա բանդագաւոց, ու երկու պարկի մէջ երկու տասդնդ արծաթ դրաւ, ու երկու ձեռք ալ փոխելու հանդերձ ծրաց, և իր ծառաներէն երկուքին առաւ, որոնք անոր առջեւէն տարին։ 24—Ու երբ՝ բլուրը եկաւ՝ անոնց ձեռքէն առաւ ու տանը մէջ պահեց, և այն մարդիկը ճամբեց, ու գացին։ 25—Ու ինք նէրս գնաց իր տէրոջը առջեւ կայնեցաւ. ու Եղիսէ անոր ըսաւ, Ովվ Գեհազի, ուրկի՞ ⁻ա ⁻ա. և անիկա ըսաւ, Ծառադ տե՛ղ մը չգնաց։ 26—Ու Եղիսէ ըսաւ անոր, Երբ այն մարդը իր կառքէն քեզ դիմաւորելու դարձաւ, միթէ իմ հոգիս հոն չգնաց՞ ⁻ա հիմա արծաթ առնելու, և հանդերձներ ու ձիթենիներ և ոչխարներ և արջառներ ու ծառաներ և աղախիններ առնելու ատե՞ն է։ 27—Ուրեմն Նեեմանի բորոտութիւնը քեզի ու քու սերունդիդ փակչի յաւիտեան։ Եւ անկիա անոր առջեւէն ձիւնի պէս բորոտաթել եղաւ։

Գլ. Ը

Եւ մարգարէից որդիները Եղիսէի ըսին, Ահա այս տեղը, ուր մենք քու առջեւդ կը նստինք, մեզի նեղ է։ 2—Երթանք ուրեմն մինչև Յորդանան, ու այն տեղէն ամէն մէկս մէյմէկ գերան առնենք, ու հոն մեզի բնակելու տեղ չինենք։ Եւ անկիա ըսաւ, Գացէք։ 3—Ու ⁻ա⁻ն մէկը ըսաւ, Շնորհք ըրէ, քու ծառաներուդ հետ եկուր։ և անիկա՝ կու գամ ըսաւ։ 4—Ու անոնց հետ գնաց։ և Յորդանան հասնելով ծառեր կտրեցին։ 5—Ու երբ մէկը գերան մը կը կտրէր, ⁻ո⁻ըէն երկաթը ջուրին մէջ ինկաւ։ ուստի անկիա պոռալով՝ ըսաւ, Ոհ, տէր իմ, այն ալ փոխ առնուած էր։ 6—Ես Ասուածոյ մարդը ըսաւ, Ո՞ւր ինկաւ։ ու անկիա այն տեղը ցուցուց անոր։ Ու Եղիսէ փայտ մը կտրեց ու հոն նետեց, ու երկաթը ջուրին երեսը եկաւ։ 7—Ես ⁻ոը ըսաւ, Ջոկէ՛ վերցուր, ան ալ ձեռքը երկնցուց ու զանիկա առաւ։

8—Եւ Ասորւոց թագաւորը Իսրայէլի դէմ պատերազմ կ'ընէր, ու իր ծառաներուն հետ խորհուրդ ըրաւ ու ըսաւ, Ահա ինչ կամ այն ինչ տեղը բանակ

*կամ՝ առանձին տեղը

դնեմ։ 9—Եւ Աստուծոյ մարդը Իսրայէլի թագաւորին ⁻ըէ ղրկեց՝ ըսելով, Զգուշացիր որ այն տեղէն չանցնիս, վասն զի Ասորիները հոն իջած են։ 10—Ու Իսրայէլի թագաւորը Աստուծոյ մարդուն ըսած տեղը ⁻ըէ ղրկելով տեղեկացաւ, ու անկէ զգուշացաւ. *չատ անգամ։ 11—Ու այս բանին համար Ասորւոց թագաւորին սիրտը նեղսալով՝ իր ծառաները կանչեց ու անոնց ըսաւ, Չի՞ք ձեզմէ մէկը որ Իսրայէլի թագաւորին ըէ չի՞ղ կ'ընէ։ 12—Ու ծառաներէն մէկը ըսաւ, Ոչ իմ տէր իմ թագաւոր. հապա Իսրայէլի մէջ եղող Եղիսէ մարգարէն՝ քու պառկելու սենեակիդ մէջ խօսած խօսքերդ Իսրայէլի թագաւորին կը յայտնէ։ 13—Եւ անիկա ըսաւ, Գացէք ու անոր ուր ըլլալը տեսէք, որպէս զի զանիկա բռնել տամ։ Ես անոր պատմեցին ու ըսին, Ահա անիկա Դոթայիմի մէջ է։

14—Ուստի անիկա ձիեր ու կառքեր և բազմաթիւ զօրքեր ղրկից հոն, որոնք գիշերով գացին և քաղաքը պաշարեցին։ 15—Եւ Աստուծոյ մարդուն ծառան առաւօտուն կանուխ կելաւ ու դուրս գնաց. և ահա զօրքեր, ձիեր ու կառքեր քաղաքը պաշարած էին. ու ծառան անոր ըսաւ, Ոհ, տէր իմ, ի՞նչ ընենք։ 16—Ու Եղիսէ ըսաւ, Մի վախնար, քանզի մեզի հետ եղողները անոնց հետ եղողներէն չատ աւելի են։ 17—Ու Եղիսէ աղօթք ըրաւ ու ըսաւ, Ովվ Տէր, սաղ աչքերը բաց որպէս զի տեսնէ։ Ցերը ծառային աչքերը բացաւ. տեսաւ որ ահա լեռը Եղիսէի չորս կողմը հրեղէն ձիերով ու կառքերով լեցուն էր։ 18—Ու երբ անոնք եղեռնէ փակ իջան, Եղիսէ Տէրոջը աղօթք ըրաւ ու ըսաւ, Կ'աղաչեմ, այս ազգը էկուրեհատիք գարի։ և Տէրը զանոնք կուրութեամբ գարկաւ Եղիսէի խօսքին համեմատաւ։ 19—Ան ատեն Եղիսէ անոնց ըսաւ, Ճամբան այս չէ ու քաղաքը ասկիա չէ, ետեւէս եկէք որպէս զի ձեզ ձեր փնտռած մարդուն առնիմ. և զանոնք Սամարիա տարաւ։

*Եբր. ոչ մէկ ու ոչ երկու էկար, չլացուրեհատիք

*կը կարծուի թէ տեսակ մը ընդեղէն է

20—Ու երբ Սամարիա եկան, Եղիսէ ըսաւ, Ովվ Տէր, սասդց աչքերը բաց որպէս զի տեսնեն։ Ցերը անոնց աչքերը բացաւ, ու տեսան, և ահա Սամարիայի մէջ էին։

21—Եւ Իսրայէլի թագաւորը զանոնք տեսնելով՝ Եղիսէի ըսաւ, Ովվ հայր իմ, զարնե՞մ, զարնե՞մ։ 22—Ես անիկա ըսաւ, Մի զարներ. միթէ քու սրովդ ու աղեղովդ գերի բռնածներդ կը զարնե՞ս. անոնց առջեւ հաց ու ջուր դիր, որպէս զի ուտեն, խմեն ու իրենց տէրոջը երթան։ 23—Ես անոնց մեծ կարգ չունեք մը ըրաւ, ու կերան խմեցին, ու զանոնք ետ ղրկեց, ու իրենց տէրոջը գացին. և Ասորւոց գունդերը մէկմէն ալ Իսրայէլի երկիրը չեկան։

24—Եւ անկէ ետքը Ասորւոց Բենհադադ թագաւորը իր բոլոր բանակը ժողվեց, ու ելաւ Սամարիան պաշարեց։ 25—Ես Սամարիայի մէջ մեծ սով եղաւ, քանզի զանիկա պաշարեր էին, այնպէս որ մէկ իշու գլուխը ութսուն ⁻ինէ արծաթի էր, ու մէկ կապուտին չորրորդ մասը *աղաւնիի աղբը՝ հինգ ⁻ինէ արծաթի ծախուեցաւ։ 26—Ու երբ Իսրայէլի թագաւորը պարսպին վրայէն կ'անցնէր, կին մը անոր ազաղակեց ու ըսաւ, Ովվ տէր իմ թագաւոր, օգնէ ⁻է։ 27—Ես անիկա ըսաւ, Եթէ Տէրը քեզի չօգնէ, ես քեզի ուրկի՞ օգնեմ, կալէն թէ հնձանէն։ 28—Ու թագաւորը անոր ըսաւ, Քեզի ի՞նչ եղաւ։ Ես անիկա ըսաւ, Ահա կինը ինծի ըսաւ. որ քու տղադ տուր, ու այսօր զանիկա ուտենք, և իմ տղաս վաղը ուտենք։ 29—Ուստի իմ տղաս եփեցինք և զանիկա կերանք. ու երկրորդ օրը անոր ըսի, Տղադ տուր որպէս զի ուտենք, բայց անիկա իր տղան պահեց։ 30—Ես թագաւորը այն կնոջ խօսքը լսածին պէս իր հանդերձները պատռեց, ու պարսպին վրայէն անցած ատենը՝ ժողովուրդը տեսաւ որ ահա ներսէն անոր մարմինին վրայ փուրձ կար։ 31—Ես անիկա ըսաւ, Աստուած ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ, եթէ այսօր Սափատեան Եղիսէի գլուխը իր վրայ մնայ։

32—Ու եղիսէ իր տունը կը նայէր, ու Ծերերը անոր հետ կը նայէին. և Խազայէլ իր առջևէն մարդ մը ղրկեց անոր. ու պատգամաւորը դեռ չհասած՝ եղէսէ Ծերերուն ըսաւ, կը տեսնէ՞ք որ այս մարդասպանի որդին գլուխս առնելու համար ղրկեց. նայեցէք, այն մարդը եկածին պես դռանը գոցեցէք, ու զանիկա դռանը քով բռնեցէք. միթէ անոր տէրոջը ոտքերուն ձայնը անոր ետևէն չէ՞։ 33—Ու երբ անոնց հետ կը խօսէր, ահա այն պատգամաւորը անոր քով իջաւ. ու *ըսաւ, Ահա այս չարիքը Տէրոջմէն է. ալ ասկէ ետև Տէրոջմէն ինչ պիտի յուսամ։

ԳԼ. Է

Ու եղիսէ ըսաւ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք. Տէրը այսպէս կ'ըսէ. Վաղը այս ատեն Սամարիայի դռանը մէջ մէկ գրիւ բարակ ալիւրը մէկ սիկղ ցորեան, ու երկու գրիւ գարին մէկ սիկղ դէռ ծախուհաս։ 2—Եւ այն զօրավարը՝ որուն ձեռքին վրայ թագաւորը կը կռթնէր, Աստուծոյ մարդուն պատասխան տուաւ ու ըսաւ, Եթէ Տէրը երկինքը պատուհաններ ալ շինէ, միթէ ատիկա ըլլա՞ր բան է։ Ու անիկա ըսաւ, Դուն քու աչքերովդ պիտի տեսնես, բայց անկէ պիտի չուտես։

3—Ու դրանը առջև չորս բորոտ մարդիկ կային, և անոնք իրարու ըսին, ինչո՞ւ հոս նստինք մինչև որ մեռնինք. 4—եթէ ըսենք թէ քաղաքը մտնենք, քաղաքին մէջ սով կայ, ու հոն պիտի մեռնինք. և եթէ հոս մնանք, նոյնպէս պիտի մեռնինք. ուրեմն եկէք Ասորւոց բանակը գիմենք. եթէ մեզ ողջ թողուն՝ կ'ապրինք, ու եթէ մեզ մեռցընեն՝ կը մեռնինք։ 5—Ու մութ առեն երան որպէս զի Ասորւոց բանակը երթան. ու մինչև Ասորւոց բանակին ծայրը գացին, և ահա հոն մարդ մը չկար. 6—Քանզի Տէրը Ասորւոց բանակին մէջ կառքերու ձայն ու ձիերու ձայն, մեծ զօրքի մը ձայն լսել տուաւ, և իրարու ըսին, Ահա Իսրայէլի թագաւորը Քեթացւոց թագաւորները ու Եգիպտացւոց թագաւորները վարձքով բռնեց որպէս զի մեր վրայ գան։ 7—Ու երեն մութին փախան, և իրենց վրանները ու ձիերը ու էշերը՝ բանակը եղածին պէս թողացին, ու իրենց անձը ազատելու համար փախան։ 8—Ու այս բորոտները մինչև բանակին ծայրը գացին, ու վրան մը մտնելով կերան ու խմեցին. և անկէ արծաթ ու ոսկի ու հանդերձներ վերցուցին ու գացին պահեցին. ու նա դառնալով՝ ուրիշ վրան մը մտան, և անկէ ալ վերցուցին ու գացին պահեցին։ 9—Ետքը իրարու ըսին, Ազնիւ չէ մեր ըրածը. այսօր աւետեաց օր է, ու մենք լուռ կեցեր ենք. եթէ մինչև առաւօտեան լոյսը սպասենք, *դէր անօրէնութիւնը պատիժը պիտի կրենք՝. ուստի հիմա եկէք երթանք ու թագաւորին տունը պատմենք։ 10—Ու գացին դարպասին դրապահներուն պոռացին, ու անոնց պատմեցին ու ըսին, Մենք Ասորւոց բանակը մտանք, և ահա հոն մարդ կամ մարդու ձայն չկայ, բայց միայն ձիերը կապուած ու էշերը կապուած, ու վրաններն ալ այնպէս իրենց են։ 11—Ու դռնապանները պոռացին, ու թագաւորին տունը ներսը իմացուցին։

12—Ու թագաւորը գիշերով եղաւ և իր ծառաներուն ըսաւ, Ասորիներուն մեզի ըրած բանը ես ձեզի պատմեմ. Անոնք մեր անօթի ըլլալը գիտնալով՝ բանակին եղած են, ու դաշտին մէջ պահուած են՝ ըսելով, Երբ անոնք քաղաքէն դուրս ելլեն, զանոնք ողջ բռնենք ու քաղաքը մտնենք։ 13—Ու անոր ծառաներէն մէկը պատասխան տուաւ ու ըսաւ, Թող մնացած ձիերէն հինգը առնեն՝ որոնք հոս մնացած են. ահա անոնք բոլոր Իսրայէլի բազմութեանը պէս եղան, [որոնք հոս մնացած են. ահա անոնք բոլոր Իսրայէլի բազմութեանը պէս եղան,] որ հասնին ու տեսնեն։ 14—Ուստի կառք մը ձիերուն վրայ էր. և Տէրը զրկեց Ասորւոց բանակին ետևէ՝ ըսելով, Երթանք ու տեսնենք։ 15—Ու անոնք մինչև Յորդանան անոնց հետևէն գացին, և ահա բոլոր ճամբան լեցուն էր հանդերձներով ու ամանեղէնով՝ զորօք Ասորիները պատրաստելով փախած ատենին ձգեր էին։ Ու պատգամաւորները դառնալով պատմեցին թագաւորին։

16—Այն ատեն ժողովուրդը ելաւ ու Ասորւոց բանակը կողոպտեց. ու Տէրոջը խօսքին համեմատ մէկ գրիւ բարակ ալիւրը մէկ սիկղ ցորենին, ու երկու գրիւ գարին մէկ սիկղ *ծախուեցաւ։ 17—Ու թագաւորը զրանը վերակացու դրաւ այն զօրապետը՝ որուն ձեռքին վրայ ինք կը կռթնէր. ու ժողովուրդը զրանը մէջ զանիկա կոխկրտեցին, ու մեռաւ, Աստուծոյ մարդուն խօսքին համեմատ որ խօսեր էր՝ թագաւորին անոր քով իջած ատենը։ 18—Ու եղաւ՝ ինչպես Աստուծոյ մարդը թագաւորին խօսեր էր՝ ըսելով, Վաղը այս ատեն Սամարիայի դրանը մէջ երկու գրիւ գարին մէկ սիկղ ցորենին, ու մէկ գրիւ բարակ ալիւրը մէկ սիկղի պիտի ծախուի։ 19—Ու այն զօրապետը Աստուծոյ մարդուն պատասխան տուեր ու ըսեր էր, Եթէ Տէրը երկինքը պատուհաններ ալ շինէ, միթէ ատիկա ըլլա՞ր բան է։ ու Ատեն ըսեր էր, Ահա դուն քու աչքերովդ պիտի տեսնես, բայց անկէ պիտի չուտես։ 20—Այսպէս եղաւ անոր, քանզի ժողովուրդը զանիկա դրանը մէջ կոխկրտեցին, ու մեռաւ։

ԳԼ. Ը

Ու եղիսէ խօսեցաւ այն կնոջ որուն որդին ողջացուցեր էր, ու ըսաւ, Ելիր դուն քու ընտանիքովդ գնա, և ուր որ կրնաս՝ հոն պանդխտութիւն ըրէ, վասն զի Տէրը սով կանչեց. և ահա կու գայ եօթը տարի այս երկրին վրայ հասնելու։ 2—Ու այն կինը ելաւ ու Աստուծոյ մարդուն ըսածին պէս ըրաւ. և ինք իր ընտանիքովը գնաց ու փղշտացւոց երկրին մէջ եօթը տարի պանդխտութիւն ըրաւ։

3—Ու եօթը տարուան լմննալէն ետքը այն կինը փղշտացւոց երկրէն դարձաւ, և իր տանը համար ու իր արտին համար թագաւորին կը պոռար։ 4—Ու թագաւորը Աստուծոյ մարդուն ծառային Գէհազիի հետ խօսեցաւ ու ըսաւ, Եղիսէի ըրած բոլոր մեծ գործերը ինծի պատմէ։ 5—Ու երբ անիկա թագաւորին կը պատմէր, թէ ինչպես անիկա մեռած տղան ողնցուց, ահա այն կինը՝ որուն տղան ողնցուցեր էր, իր տանը համար և իր արտին համար թագաւորին կը բողոքէր. ու Գէհազի ըսաւ, Ով տէր իմ թագաւոր, այս է այն կինը, ու այս է անոր տղան զոր Եղիսէ ողնցուց։ 6—Ու թագաւորը կնոջ հարցուց, ու անիկա անոր պատմեց։ Ու թագաւորը ներքինի մը տուաւ անոր ու ըսաւ, Անոր ամէն ստացուածքը, նաև երկիրը թողած օրէն մինչև հիմա իր արտին բոլոր արդիւնքը իրեն դարձուր։

7—Ու եղիսէ Դամասկոս գնաց. ու Ասորւոց Բենհադադ թագաւորը հիւանդացեր էր. ու անոր պատմեցին ու ըսին թէ Աստուծոյ մարդը հոս եկաւ։ 8—Ու թագաւորը Ազայէլի ըսաւ, Ձեռքդդ ընծայ առ ու գնա Աստուծոյ մարդուն դիմաւորէ. ու անոր միջոցով Տէրոջը հարցուր թէ արդեօք այս հիւանդութենէն պիտի առողջանա՞մ. 9—Ու Ազայէլ զանիկա դիմաւորելու գնաց. ու ձեռքը ընծայ առաւ, այսինքն Դամասկոսի բոլոր բարիքներէն ուղտասան ուղտ բեռնաւորած, ու գնաց և անոր առջև կայնեցաւ ու ըսաւ, Քու որդիդ Ասորւոց Բենհադադ թագաւորը զիս քեզի ղրկեց՝ ըսելով, Արդեօք այս հիւանդութենէն պիտի առողջանա՞մ։ 10—Ու եղիսէ անոր ըսաւ, Գնա անոր ըսէ, Անշուշտ պիտի առողջանաս բայց Տէրը ինծի ցուցուց, որ անիկա անշուշտ պիտի մեռնի։ 11—Ու աչքերը անթարթ կերպով անկից մինչև որ անիկա ամչցաւ։ ու Աստուծոյ մարդը լացաւ։ 12—Ու Ազայէլ ըսաւ, Իմ տէրս ինչո՞ւ կու լայ։ Ու անիկա ըսաւ, Անոր համար

*Հասանելոն է՝ թագաւորը ըսաւ

*Եբր. անօրէնութիւնը մեզ պիտի հասնի, երկու զոյգ ձիեր առին [գանե

*Եբր. եղաւ

որ Իսրայէլի որդիներուն ընելու չարաբաՀիւնը գիտեմ. անոնց ամրոցները կրակով պիտի այրես, ու անոնց կարճնները սրով պիտի մեռցնես, և անոնց պզտիկ ազգքը գերիները պիտի գարնես, ու յղի կիները պիտի ճեղքես։ 13—Ու Ակսէլ ըսաւ, քու ծառայ ինչ չուն է՝ որ այդ մեծ բաները ընէ։ Ու եղիսէ ըսաւ, Տէրը ինծի ցուցուց՝ որ դուն Ասորւոց վրայ թագաւոր պիտի ըլլաս։ 14—Ես անկից եղիսէի գացին եւ ան իր տէրոջը գնաց. ու անկից անոր ըսաւ, Եղիսէ քեզի ինչ ըսաւ. և անկից ըսաւ, Ինծի ըսաւ որ անչուշտ պիտի առողջանաս։ 15—Ու հետեւեալ օրը անկից *հաստ լաթ մը առաւ, չուրը թաթխեց ու անոր երեսին վրայ փռեց. և անկից մեռաւ, ու Ազայէլ անոր տեղ թագաւոր եղաւ։

16—Եւ Իսրայէլի թագաւորին Աքաաբեան Յովրամի հինգերորդ տարին երբ Յովսափատ դէ= Յուդայի վրայ կը թագաւորէր, Յուդայի Յովսափատ թագաւորին որդին Յովրամ թագաւոր եղաւ. 17—Անիկա երեսունեւերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմ մէջ ութ տարի թագաւորեց։ Ին ըրաւ, 18—Ու ասիկա Աքաաբի տանը ըրածին պէս՝ Իսրայէլի թագաւորներուն ճամբան բռնեց. քանզի Աքաաբի աղջիկը անոր կին եղաւ. ու ասիկա Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։ 19—Սակայն Տէրը Յուդան կորնցնել չուզեց՝ իր Դաւիթի ծառային սիրոյն համար, ինչպես անոր խոսք տուեր էր, որ Ի՛ր անոր և Ի՛ր անոր որդիներուն միշտ ճրագ մը տայ։

20—Անոր օրերը Եդովմայեցիք Յուդայի ձեռքին տակէն ապստամբեցան ու իրենց վրայ թագաւոր մը դրին։ 21—Ու Յովրամ էր բոլոր կառքերը իրեն հետ առաւ ու Սայիր անցաւ. և գիշերով երաւ, ու իր չորս կողմը առնող եդովմայեցիները ու կառքերու իշխանները զարկաւ. և Ժողովուրդը իրենց վրաննները փախան։ 22—Բայց եդովմայեցիք Յուդայի ձեռքին տակէն ապստամբեցան մինչև այսօր։ Ան ատեն Լիբնա ալ ապստամբեցաւ։

23—Ու Յովրամի միացորդ պատմութիւնը ու բոլոր ըրածները ասո՞ Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 24—Ու Յովրամ իր հայրերուն հետ քնացաւ ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ. և անոր որդին *Ոքոզիա անոր տեղը թագաւոր եղաւ։

25—Իսրայէլի Աքաաբեան Յովրամ թագաւորին երկոտասաներորդ տարին Յուդայի Յովրամ թագաւորին որդին Ոքոզիա թագաւոր եղաւ։ 26—Ոքոզիա քսանուերկու տարեկան էր՝ երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմ մէջ մէկ տարի թագաւորեց։ Ին ըրաւ, և անոր մօր անունը Թաթալիա էր, որ Իսրայէլի Ամրի թագաւորին աղջիկն էր։ 27—Ու անիկա Աքաաբի տանը ճամբան մէջ քալեց, ու Աքաաբի տանը պէս Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ, քանզի Աքաաբի տանը փեսան էր։ 28—Ու անիկա Աքաաբեան Յովրամի հետ Ասորւոց Ազայէլ թագաւորին վրայ Ռամոթ-գաղաադ գնաց պատերազմելու համար, և Ասորիք Յովրամը վիրաւորեցին։ 29—Ու Յովրամ թագաւորը դարձաւ որպէս զի Ցեզրայէլի մէջ բժշկուի՝ այն վէրքերէն զորոնք Ասորիները անոր տուեր էին †Ռամոթի մէջ՝ Ասորւոց Ազայէլ թագաւորին հետ պատերազմելու ատեն։ ու Յուդայի թագաւորը Յովրամի որդին Ոքոզիա Ցեզրայէլ իջաւ՝ անիկա հիւանդ էր։

Գլ. Թ

Ու եղիսէ մարգարէին մարգարէից որդիներէն մէկը կանչեց, ու անոր ըսաւ, Գօտիդ մէջդդ կապէ, ու այս իւղին շիշը ձեռքդ առ, և Ռամոթ-գաղաադ գնա։ 2—Ու երբ հոն երթաս Նամեսեան Յովսափատի որդին Եհուն ֆգտիր, ու մտնելով՝ զանիկա իր եղբայրներուն մէջէն վերցուր, և զանիկա ներքին սենեակ մը տար։ 3—Ու իւղին շիշը առ և

*բ Մն. իր. 6 ի՛ըսւ Ագարիա, Ն բ Մն. իա. 17, ու իր. 23 ի՛ըսւ Յովսեբագ։

†ԵԲԲ. Ռամոյի ‡ԵԲԲ. տես

անոր գլխոր թափէ, ու ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեցի. ու դուռը բանաս ու փախչիս, չսպասես։ 4—Ու այն պատանին, նոյնասակ մարգարէն, Ռամոթ-գաղաադ գնաց։

5—Ու երբ հոն հասաւ, ահա զօրաց իշխանները նստեր էին. և անիկա ըսաւ, Ով իշխան, քեզի խօսք մը ունիմ. ու Եհու ըսաւ, Մեր ամէնէն որո՞ւ. ու անիկա ըսաւ, Քեզի, ով իշխան։ 6—Ու Եհու ելաւ, նեղս մտաւ. ու անիկա իւղը անոր գլխոր թափեց, ու անոր ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Քեզ Տէրոջը Ժողովուրդին, Իսրայէլի, վրայ թագաւոր օծեցի. 7—Ու դու տէրոջդ Աքաաբի տունը զարնես, որպէս զի իմ ծառաներուս, մարգարէներուն, արիւնին համար ու Տէրոջը բոլոր ծառաներուն արիւնին համար Յեզաբելի ձեռքէն վրէժ առնեմ։ 8—Ու Աքաաբի բոլոր տունը բնաջինջ պիտի ըլլայ. և Աքաաբի Բ=ԼՐ այր մարդկը, ու Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը պիտի կորնցնեմ. 9—Ու Աքաաբի տունը Նաբատի որդւոյն Երոբովամի տանը պէս, ու Աբիայի որդւոյն Բաասայի տանը պէս պիտի ընեմ։ 10—Ու Յեզաբելը Յեզրայէլի ագարակին մէջ շուներն պիտի ուտեն, ու ՀՈՒՂ= թաղող չըլլայ։ Նաբը դուռը բացաւ ու փախաւ։

11—Ու Եհու իր տէրոջը ծառաներուն ելաւ, ու անոր ըսին, Ողջո՞ւ է. այս անմիտը ինչո՞ւ քեզի եկաւ։ Ու անիկա անոնց ըսաւ, Դուք այն մարդը ու անոր խօսքերը գիտէք։ 12—Ու անոնք ըսին, Սուտ է. պատմէ մեզի հիմա. ան ալ ըսաւ, Անիկա ինծի այսպէս ու այսպէս խօսեցաւ՝ ըսելով, Տէրը այսպէս կ'ըսէ. Քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեցի։ 13—Ան ատեն շուտով ամէն մարդ իր հանդերձը առաւ, ու սանդախին գլխուն վրայ անոր տակ դրին, ու փող հնչեցնելով ըսին, Եհու թագաւոր եղաւ։ 14—Այսպէս Նամեսեան Յովսափատի որդին Եհու Յովրամին դէմ դաւ սարքեց (իսկ Յովրամ բոլոր Իսրայէլի հետ Ասորւոց Ազայէլ թագաւորին երեսէն Ռամոթ-գաղաադ կը պահպանէր. 15—Սակայն Յովրամ թագաւորը Ասորւոց Ազայէլ թագաւորին հետ պատերազմ ըրած ատենը Ասորիները առած վէրքերէն առողջանալու համար Յեզրայէլ դարձեր էր) Ու Եհու ըսաւ, Եթէ կը հաճիք, փախստական մը այս քաղաքէն դուրս չելլէ, որ երթայ =ՅՈՒ Ե=Ը Յեզրայէլի մէջ պատմէ։

16—Ու Եհու հեծաւ ու Յեզրայէլ գնաց, քանզի Յովրամ հոն պառկած էր. և Յուդայի Ոքոզիա թագաւորը Յովրամը տեսնելու իջեր էր։ 17—Ու Յեզրայէլի մէջ աշտարակին վրայ դէտ մը կայներ էր, որ Եհուի գունդին գալը տեսնելով՝ ըսաւ, Ես գունդ մը կը տեսնեմ. և Յովրամ ըսաւ, Ձիաւոր մը առ ու անոնց դիմաց ղրկէ, ու Թող ըսէ, Խաղաղութի՞ւն է։ 18—Ու ձիաւորը գանիկա դիմաւորելու գնաց ու ըսաւ, Թագաւորը այսպէս կ'ըսէ. Խաղաղութի՞ւն է. ու Եհու ըսաւ, Դուն խաղաղութիւնը ի՞նչ պիտի ընես. հոս անցիր։ Եւ գէտը պատմեց ու ըսաւ, Պատգամաւորը մինչև անոնց փով գնաց, բայց չդարձաւ։ 19—Ու ուրիշ ձիաւոր մը ղրկեց. անիկա ալ անոնց գնաց ու ըսաւ, Թագաւորը այսպէս կ'ըսէ. Խաղաղութի՞ւն է. և Եհու ըսաւ, Դուն խաղաղութիւնը ի՞նչ պիտի ընես. հոս անցիր։ 20—Ու գէտը պատմեց ու ըսաւ, Մինչև անոնց փով գնաց, բայց չդարձաւ. և այս ընթացքը Նամեսեան Եհուի ընթացքին կը նմանի, քանզի կատաղաբար կը քշէ։

21—Այն ատեն Յովրամ ըսաւ, կո=՝ =Ը պատրաստէ. ու անոր կառքը պատրաստեցին, և Իսրայէլի թագաւորը Յովրամ, ու Յուդայի թագաւորը Ոքոզիա, ամէն մէկը իր կառքովը Եհուն դիմաւորելու ելան, ու զանիկա Յեզրայէլացի Նաբովթի ագարակին մէջ գտան։ 22—Ես Յովրամ Եհուն տեսնելուն պէս ըսաւ, Ով Եհու խաղաղութի՞ւն է. ու անիկա ըսաւ, Ի՞նչպէս խաղաղութիւն կ'ըլլայ, քանի որ քու մօրդ Եզեբելի պոռնկութիւնները ու կախարդութիւնները կը տանան։ 23—Ու Յովրամ ձեռքերը դարձուց ու փախաւ, ու Ոքոզիայի ըսաւ, Ով Ոքոզիա, դաւաճանութիւն կայ։ 24—Ու Եհու *ԵՐ ազեղը ուժով քա-

*ԵԲԲ. ազեղով իր ձեռքը լեցուց

չեց՝ ու Ծովրամը ուսերուն ու ձիւնազէն զարկաւ, ու նետը անոր սրտէն ելաւ, և անիկա իր կառքին մէջ կծկեցաւ։ 25—Ու Ցե— իր զօրագլուխին Բաղեկարի ըսաւ, Ասիկա վերցուր, Ցեզրաքէլացի Նաբովթի կալուածքի ագարակին մէջ նետ։ քանզի միտքդ բեր որ երբ ես ու դուն անոր հօրը Աքաաբի եաեւէն չէ— վր— հեծած՝ քովի քով կ'երթայինք, Տէրը անոր դէմ այս *վճիռը ասաւ։ 26—Տէրը կ'ըսէ որ Իրաւցընէ երէկ Նաբովթի արիւնը ու անոր որդիներուն արիւնը տեսայ, ու քեզի այս ագարակին մէջ պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը։ Անոր համար հիմա վերցուր զանիկա, այս ագարակին մէջ նետէ, Տէրոջը բանին համեմատ։

27—Ու Յուդայի Ոքզիա թագաւորը այ— բ—ը տեսնելով՝ պարտէզի տանը ճամբային փախաւ։ ու Ցեհու ան նոր հասնելէն իյնալով՝ ըսաւ, Ասիկա ալ կառքին վրայ զարկէք։ այս եղաւ Ցեզրաամի քով եղող Գուր բլուրին վրայ։ ու Ոքզի— Մակեդովի փախաւ, ու հոն մեռաւ։ 28—Ու անոր ծառաները զանիկա կառքով Երուսաղէմ տարին, ու զանիկա Դաւիթի քաղաքը իր գերեզմանին մէջ իր հայրերուն հետ թաղեցին։

29—Ու Ոքզիա Աքաաբի որդւոյն Յովրամի մեռաւանիերորդ տարին Յուդայի վրայ թագաւոր եղեր էր։

30—Ու Ցեհու Ցեզրաքէլ եկաւ։ ու երբ Ցեզաբէլ լսեց՝ իր աչքերուն ծաբոյը դրաւ և իր գլուխը զարդարեց, ու պատուհանէն կը նայէր։ 31—Ու երբ Ցեհու դռնէն ներս կը մտներ, անիկա ըսաւ, Մի՞թէ իր տէրը մեռցնող Զամբրի յա՞ղ— ի— 32—Ու Ցե— իր երեսը դէպ ի պատուհանը վերցուց, ու ըսաւ, Ինծի հետ ո՞վ կայ, ո՞վ։ ու երկու երեք ներքինիներ անոր նայեցան։ 33—Անոր ասոնն ըսաւ, Զանիկա վար նետեցէք։ ու զանիկա վար նետեցին, և անոր արիւնէն պատին ու ձիերուն վրայ ցօղկեց։ ու կոխկռտեց զանիկա։ 34—Ու ինք ներս մտաւ ու կերաւ խմեց, ու ըսաւ, Էհմա այս անիծուած կնոջ հոգ տարէք ու զանիկա թաղեցէք, քանզի թագաւորի աղիկ է։ 35—Ու զանիկա թաղելու գացին, բայց անոր գանգաթէն ու ոտքերէն ու ձեռքերուն թաթերէն զատ ուրիշ բան մը չգտան։ 36—Ու դարձան անոր պատմեցին։ ու անիկա ըսաւ, Ա՛յս է Տէրոջը խօսքը՝ զոր իր ծառային Թեզբացի Եղիայի ձեռքով խօսեցաւ՝ ըսելով, Ցեզաբէլի մարմինը Ցեզրաէլի ագարակին մէջ շուներուն պիտի ուտեն։ 37—Ու Ցեզաբէլի դիակը Ցեզրաէլի ագարակին մէջ արտի երեսի վրայ եղող ապրի պէս պիտի ըլլայ, այնպէս որ չըսուի թէ Ա՛յնիկա Ցեզաբէլն է։

ԳԼ. Ժ

Ու Աքաաբ Սամարիայի մէջ եօթանասուն որդի ունէր։ ու Ցեհու նամակ մը գրեց, և Սամարիա զրկեց Ցեզրաէլի իշխաններուն ու ծերերուն և Աքաաբի որդիներուն հոգաբարձուներուն՝ ու ըսաւ, 2—Երբ այս նամակը ձեզի հասնի, ահա ձեր տէրոջ որդիները ձեր քով են, ու կառքեր ու ձիեր և պարսպատոր քաղաք ու զէնքեր ալ ունիք։ 3—Ուրեմն ձեր տէրոջ որդիներէն ա՛րը որ ազէկ ու յարմար կը գտնէք՝ ը—ի— իր հօրը աթոռին վրայ նստեցուցէք, ու ձեր տէրոջ տանը համար պատերազմ ըրէք։ 4—Ու անոնք խիստ չատ վախցան, ու ըսին, Ահա երկու թագաւորներ չկրցան անոր առջև կայնիլ, ու մենք ինչպէս պիտի կայնինք։ 5—Ու պալատին հազարապետը ու քաղաքապետ ու ծերերը և հոգաբարձուները Ցեհուի խրդ ղրկեցին ու ըսին, Մենք քու ծառաներդ ենք, ու մեզի ինչ որ հրամայես՝ պիտի ընենք։ քեզ մեկը թագաւոր պիտի չընենք։ քու աչքերուդ ազէկ երեւցածը ըրէ։

6—Ու անոնց նորէն նամակ մը գրեց՝ ըսելով, Եթէ դուք ինծի հետ էք ու իմ խօսքս մտիկ կ'ընէք, ձեր տէրոջ որդիներուն գլուխները առէք, ու վաղը այս ատեն ինծի Ցեզրաէլ եկէք։ ու թագաւորին որդիները եօթանասուն հոգի էին, ու զանոնք մեծցնող քաղաքի մեծերուն քով էին։ 7—Ու նամակը անոնց հասածին պէս՝ թագաւորին որդիները բռնեցին, ու եօթանասուն հոգի մորթեցին, և անոնց գլուխները կողովներու մէջ դրին, և անոր զրկեցին Ցեզրաէլ։ 8—Ու լուրբեր մը եկաւ, ու անոր պատմեց՝ ըսելով, Թագաւորին որդիներուն գլուխները բերին։ Ու անիկա ըսաւ, Զանոնք մինչև առտու դռան քով դրէք երկու դէզ ընէլէ։ 9—Ու առտուանց դուրս ելաւ կայնեցաւ, և բոլոր ժողովուրդին ըսաւ, Դուք արդար էք։ ահա ես իմ տէրոջս դէմ դրաւ վերցուցի ու զանիկա մեռցուցի, բայց ասոնք ամէնը ո՞վ մեռցուց։ 10—Հիմա գիտցէք որ Տէրոջը խօսքէն բնաւ բան մը գետինը պիտի չիյնայ, զոր Տէրը Աքաաբի տանը համար խօսեցաւ։ ու Տէրը իր ծառային Եղիայի ձեռքով ըսածը ըրաւ։ 11—Ու Ցեհու Ցեզրաէլի մէջ Աքաաբի տունէն բոլոր մնացածները, ու անոր բոլոր մեծ նախարարները և մտերիմ բարեկամները, ու քուրմերը մեռցուց, այնպէս որ անոր մնացորդ մը չթողուց։

12—Անկէ եօքը եկաւ Սամարիա գնաց։ — Ճամբուն վրայ հովիւներու *բեթաակադին հա—ե—վ, 13 — Ցեհու Յուդայի Ոքզիա թագաւորին եղբայրները գտաւ, ու անոնց ըսաւ, Դուք ո՞վ եք։ Ու անոնք ըսին, Ոքզիայի եղբայրներն ենք, ու թագաւորին որդիները ու թագուհիին որդիները ողջունելու իջանք։ 14—Ա՛յն ատեն անիկա ըսաւ, Ասոնք ողջ բռնեցէք։ ու զանոնք ողջ բռնեցին, և բեթակադի ջրհորին քով մեռցուցին զանոնք, որ քառասուներկու հոգի էին. ու անոնց մէ՛կը ողջ չմնաց։

15—Ու անկէ գնաց։ ու իր դիմաց ելլող Ռեքաբի որդին Յովնադաբը գըտաւ, ու անոր բարև տուաւ։ ու ըսաւ, Ինչպէս իմ սիրտս քու սրտիդ հետ ա— ղէղ է, արդեօք քու սիրտդ ալ —ինպէս ա՞ղի՞ղ է։ և Յովնադաբ բսաւ, Ա՛յո՛ Ուրիա՛ձեռքդ տուր։ ու անիկա ձեռքը տուաւ, ու զանիկա կառքին մէջ իր քով առաւ։ 16—Ու ըսաւ, Ինծի հետ եկուր, ու Տէրոջը համար ունեցած նախանձաւորութիւնս տես։ այսպէս անոր կառքը հեծցուցին զանիկա։ 17—Ու Սամարիա գնաց, ու Սամարիայի մէջ Աքաաբէ բոլոր մնացածները զարկաւ, մինչև որ զանիկա բնաջինջ ըրաւ՝ այն խօսքին համեմատ զոր Տէրը Եղիա— յի խօսեր էր։

18—Ու Ցեհու բոլոր ժողովուրդը ժողվեց, ու անոնց ըսաւ, Աքաաբ քիչ ծառայութիւն ըրաւ, Ցեհու անոր չատ ծառայութիւն պիտի ընէ։ 19—Ու հիմա Բաղեկի բոլոր մարգարէները, բոլոր ծառաները ու բոլոր քուրմերը ինծի կանչեցէք, — մա՛րդ մը պակաս չըլլայ, քանզի Բաղեկի մեծ զոհ *պիտի ընեմ՝ ամէն հոն չգտնուողը պիտի չապրի։ — ո— Ցեհու խաբէութեամբ ըրաւ, որպէս զի Բաղեկի ծառայութիւն ընողները բնաջինջ ընէ։ 20—Ու Ցեհու ըսաւ, Բաղեկի համար ժողովութիւն մը դասնշանեցէք։ ու ծառուցաւ ըրին։ 21—Ու Ցեհու բոլոր Իսրայէլի ը—ր—ո—ր—ր ղրկեց, ու Բաղեկի բոլոր ծառայութիւն ընողները եկան, ու չկոկղ մարդ չմնաց։ և Բաղեկի տունը եկաւ, ու Բաղեկի տունը ծայրէ ծայր լեցուեցաւ։ 22—Ու հանդերձապահին ըսաւ, Բաղեկի բոլոր ծառայութիւն ընողներուն պատմաճաններ հանէ։ ու պատմաճանները հանեց անոնց։ 23—Ու Ցեհու Ռեքաբի որդւոյն Յովնադաբի հետ Բաղեկի տունը մտաւ, ու Բաղեկի ծառայութիւն ընողներուն ըսաւ, Փնտռեցէք նայեցէք չըլլայ որ հոս ձեզի հետ եհովայի ծառաներէն մ—ր— գտնուի, բայց միայն Բաղեկի ծառայութիւն ընողները։ 24—Ու զոհեր ու ողջակէզներ ընելու մտան. ու Ցեհու իրեն համար դուրսը ութսուն մարդ կայնեցուց, ու —ն—ը ըսաւ, Ով որ ձեր ձեռքը տուած մարդոցմէս ձեր ազատէ, իր անձը անոր անձին տեղ պիտի ըլլայ։ 25—Ու երբ ողջակէզը ըրաւ լմնցուց, Ցեհու սուրհանդակներուն ու զօրապետներուն ըսաւ, Գացէք, սառնք մեռցուցէք, մա՛րդ մը դուրս չելլէ։ Ու զանոնք սուրէ անցուցին, և սուրհանդակները ու զօրապետները ը—

*Կամ, սորակատար ընելու տուները

*Եբր. բեռը

*Եբր. ունիմ

†Եբր. սրբեցէք

Նահ+ նետեցին. ու եռաքը Բահաղի տանը քաղաքը մնաց. 26—Ու Բահաղի տանը պաշտօնեները հանեցին, ու զանոնք կրակով այրեցին։ 27— Ու Բահաղի պաշտանը կործանեցին, ու Բահաղի տանը փլցուցին ու զանիկա արտաքնոց ըրին մինչև այսօր։ 28—Այսպէս Յէու Իսրայէլի բնաջինջ ըրաւ Բահաղը։ 29— Սակայն Յէու Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յերոբովամի մեղքերէն, այսինքն Բեթէլի ու Դանի մէջ եղող ոսկիէ զրաթերէն, հա չկեցաւ։

30—Ու Տէրը Յէուի ըսաւ, Որովհետև դուն իմ աչքերուս առջև ուղիղ եղածը լաւ գործ դնելով ալ ինչ որ իրս, — Աքաաբի տանը բոլոր իմ սրտիս մէջ եղածին համեմատ ըրիր, քու որդիներդ մինչև չորրորդ ազգը Իսրայէլի աթոռին վրայ պիտի նստին։ 31—Բայց Յէու Իսրայէլի Տէր Աստուծոյն օրէնքին մէջ բոլոր սրտով քալելու զգուշութիւն չըրաւ, — Իսրայէլի մեղանչել տուող Յերոբովամի մեղքերէն հա չկեցաւ։

32—Ա,ին օրերը Տէրը սկսաւ Իսրայէլը կտրել։ Ե Ազայէլ Իսրայէլացոց բոլոր սահմաններուն մէջ զանոնք զարկաւ, 33—Յորդանանի դէպ ի արեւելք բոլոր Գաղաադ երկիրը, այսինքն Գադհանները, Ռուբենհանները ու Մանասեհանները՝ Արնոն ձորին վրայ եղող Արոէրէն մինչև Գաղաադ ու Բասան։

34—Ու Յէուի միւսոյդ պատմութիւնը ու ամէն ըրածը ու բոլոր զօրութիւնը, ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 35—Ու Յէու իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա Սամարիայի մէջ թաղեցին։ Ե անոր որդին Յովահազ անոր տեղ թագաւոր եղաւ։ 36—Ու Յէուի Իսրայէլի վրայ Սամարիայի մէջ թագաւորութիւն ըրած օրերը քսանըութ տարի էին։

ԳԼ. ԺԱ

Ե Ոթոզիայի մայրը Գոթողիա իր որդւոյն մեռնելով, եկաւ բոլոր թագաւորական սերունդը բնաջինջ ըրաւ։ 2—Բայց Յովրամ թագաւորին աղջիկը, Ոթոզիայի քոյրը Յոսաբէհ, Ոթոզիայի որդին Յովաշը առաւ, ու թագաւորին սպանուած որդիներուն միջէն գողցաւ զանիկա ու անոր դայեակը. և Գոթողիայի երեսէն անկողիններու սենեակին մէջ պահեցին զանիկա, ու չմեռցաւեցաւ։ 3—Ու անիկա անոր հետ վեց տարի Տէրոջը տանը մէջ պահուեցաւ. ու երկրին վրայ Գոթողիա թագաւորութիւն կ'ընէր։

4—Ու եօթներորդ տարին Յովհադա հարէ զրկեց, և հարիւրապետները, թիկնապահները ու սուրհանդակները կանչեց, և զանոնք իր քով Տէրոջը տանը բերաւ, ու անոնց հետ ուխտ ըրաւ, ու Տէրոջը տանը մէջ անոնց երդում ընել տուաւ, ու թագաւորին որդին անոնց ցուցուց։ 5—Ու անոնց պատուիրելով՝ ըսաւ, Ձեր ընելը բանը այս է. ձեր երրորդ մասը՝ որ շաբաթ եղած պիտի մտնեն, թագաւորին տանը պահպանութիւն ընեն. 6—Ու երրորդ մասը՝ Սուրի դուռը, ու երրորդ մասն ալ սուրհանդակներու ետեւի դուռը կ'ըլլի. և այսպէս տանը պահպանութիւնը ընէք որպէս զի մարդ չմտնի։ 7—Ու ձեզմէ երկու զունդը, այսինքն այն ամէնը որ շաբաթ եղած պիտի ելլեն, թագաւորին բոլորտիքը Տէրոջը տանը պահպանութիւնը ընեն։ 8—Ու ամէն մարդ իր զէնքերը ձեռքը՝ թագաւորին չորս կողմը սառնէք. ու կռպգերէն ներս մտնողը սպանուի. ու թագաւորին հետ ըլլաք անոր երթած ու մտած տեղը։

9—Ու հարիւրապետները Յովհադա քահանային բոլոր պատուիրածները ըրին. ու ամէն մէկը իր մարդիկը առաւ, թէ՛ շաբաթ եղած մտնողները և թէ՛ շաբաթ եղածները քով եկան։ 10—Ու քահանան Տէրոջը տունը եղած Դաւիթ թագաւորին նիզակները ու վահանները հարիւրապետներուն տուաւ։ 11—Ու սուրհանդակները ամէն մարդ իր զէնքը ձեռքը՝ տանը աջ կողմէն մինչև ձախ կողմը՝ սեղանին ու տանը քով թագաւորին բոլորտիքը կայնեցան։ 12—Ու թագաւորին որդին հանեց, ու անոր վրայ թագը ու վկայութիւնը դրաւ. և զանիկա թագաւոր ըրին ու օծեցին, ու ծափ զարնելով՝ ըսին, կեցցէ արքայ։

13—Ու Գոթողիա երբ լսեց վազող ժողովուրդին ձայնը լսեց, Տէրոջը տունը ժողովուրդին եկաւ։ 14—Ու ահա որ ահա թագաւորը բան սովորութեան պէս Նեղ քով կայներ էր, և զօրապետները ու փողերը թագաւորին քով էին, ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախանալով փողեր կը հնչեցնէին. այն ատեն Գոթողիա իր հանդերձները պատռեց ու պռոաց, Դաւաճանութիւն է, դաւաճանութիւն, 15—Ու Յովհադա քահանան զօրքերուն վրայ եղող հարիւրապետներուն հրամայեց, ու անոնց ըսաւ, Ասկա կարգերուն միջէն հանեցէք, ու ասոր հետեւէն գացողը սրով մեռցուցէք, (քանզի քահանան ըսեր էր որ Տէրոջը տանը մէջ չմեռցուի) 16—Ու անոր վրայ ձեռքերնին երկնցուցին. ու երբ անկիա թագաւորական տունը մտնող ձիերուն ճամբային կ'երթար, հոն մեռցուեցաւ։

17—Ու Յովհադա Տէրոջը ու թագաւորին ու ժողովուրդին միջնեղ ուխտ ըրաւ, որպէս զի Տէրոջը ժողովուրդը ըլլան. նաև թագաւորին ու ժողովուրդին միջնեղ։ 18—Ու երկրին բոլոր ժողովուրդը Բահաղի տունը մտան, և զանիկա կործանեցին, և անոր սեղանները ու կուռքերը կոտոր ըրին, և Բահաղի քուրմը Մատթանը սեղաններուն առջև սպաննեցին. ու քահանան Տէրոջը տանը մէջ պաշտօնեաներ դրաւ։ 19—Ու հարիւրապետները, թիկնապահները ու սուրհանդակները, ու երկրին բոլոր ժողովուրդը առաւ, և թագաւորը Տէրոջը տունէն իջեցուցին, ու սուրհանդակներուն դրանը ճամբայէն թագաւորին տունը մտան. և անիկա թագաւորներուն աթոռին վրայ նստաւ։ 20— Ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախացաւ, ու քաղաքը հանդարտութեան մէջ էր, իսկ Գոթողիան թագաւորական տանը մէջ սրով մեռցուցին։ 21—Յովաս եօթը տարեկան էր, երբ թագաւոր եղաւ։

*Եբր. Ծայրատել

ԳԼ. ԺԲ

Յէուի եօթներորդ տարին Յովաս թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ քառասուն տարի թագաւորութիւն ըրաւ, ու անոր մօրը անունը Սաբիա էր՝ Բեերսաբէէ։ 2—Ու Յովաս Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ այն բոլոր օրերուն մէջ՝ որ Յովհադա քահանան անոր կը սորվեցնէր։ 3—Բայց բարձր տեղերը չվերցան. ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէին ու խունկ կը ծխէին։

4—Ու Յովաս քահանաներուն ըսաւ, Տէրոջը տունը բերուած սուրբ բաներուն բոլոր տակը, հաշուած մարդոց տակը, գինը կռպուած անձերուն տակը, և այն բոլոր տակը՝ զոր մարդ մը Տէրոջը տունը բերելու կամք կ'ընէ, 5—քահանաները՝ ամէն մարդ իրենց ճանչնալոներէն առնեն, ու տանը փլած տեղերը իրենք նորոգեն, ուր որ փլած տեղ մը գտնուի։

6—Սակայն Յովաս թագաւորին քսանուհրեքերորդ տարին՝ քահանաները տանը փլած տեղերը չնորոգեցին։ 7—Ու Յովաս թագաւորը չէն կանչեց Յովհադա քահանան ու հ-- քահանաները, և անոնց ըսաւ, Տանը փլած տեղերը ինչ չէք նորոգեր. ու հիմա ձեր ճանչնալոներէն դէնջ ալ տակ մի առնէք, հապա զանիկա տանը փլած տեղերուն համար տաէք։ 8—Ու քահանաները հաւանեցան տալ, որ իրենք տակ չառնեն ժողովուրդէն, ոչ ալ տանը փլած տեղերը նորոգեն։ 9—Ու Յովհադա քահանան անառակ մը առաւ, ու անոր վրայ ծակ մը ծակեց, ու զանիկա սեղանին քով՝ Տէրոջը տունը մտնողներուն ալ կողմը դրաւ. և գուռը պահող քահանաները Տէրոջը տունը բերուած բոլոր տակը հոն կը դնէին։ 10—Ու երբ կը տեսնէին որ անառակին մէջ տակը շատցեր է, թագաւորին գրագիրը ու մեծ քահանան կ'ելլէին, ու Տէրոջը տունը գտնուած տակը համրելով կը ծրարէին. 11—Ու պատրաստուած

*Կամ, առանց նորոգելու տանը փլած տեղերը

*Կամ, սուրհանդակներուն հա

սասակ Տէրօնը տանը Ֆ-ՐՃՒ վրայ դրուած բանաւորներուն ձեռքը կը տային, որպէս զի անոնք Տէրօնը տանը մէջ գործով հիւսերուն ու չինողներուն **12**—Ու պրմնագիրներուն ու քարտնաներուն վճարին. նաև Տէրօնը տանը փլած տեղերը նորոգելու համար փայտեր ու տաշուած քարեր ծախու առնին, և տանը նորոգութեանը համար բոլոր պէտք եղած բաներուն ծախք ընին։ **13**—Բայց Տէրօնը տանը բերած սասկէն՝ Տէրօնը տանը համար արծաթէ գաւաթներ, բաժնիկներ, կոնքեր, փողեր ու ասիկի ամաններ կամ արծաթէ ամաններ ամենևին չշինուեցան. **14**—Քանզի բանաւորներուն կը տային զանիկա, որպէս զի անով Տէրօնը տանը նորոգին։ **15**—Ու որոնց ձեռքը որ կը յանձնէին այն սասկը՝ բանաւորներուն տալու համար, անոնցմէ հաշիւ չէին առներ. քանզի անոնք հաւատարմութեամբ կ'աշխատէին։ **16**—Յանցանքի սասկը ու մեղքի սասկը Տէրօնը տանը չէր մտներ, անիկա քահանաներուն կ'ըլլար։

17—Ա յն ատեն Ասորւոց Ազայէլ Թագաւորը ելաւ Գէթի դէմ պատերազմ ըրաւ, ու զանիկա առաւ. եւ երբ Ազայէլ իր երեսը դարձուց, որպէս զի Երուսաղէմի վրայ ելլէ։ **18**—Ու Յուդայի Թագաւորը Յովաս՝ իր հայրերուն, Յուդայի Թագաւորներուն, Յոսափաթի ու Յովրամի և Ոքոզիայի, նուիրած բոլոր սուրբ բաները, ու իր նուիրածը, և Տէրօնը տանը ու Թագաւորական տանը գանձերուն մէջ գտնուած բոլոր ոսկին առաւ, ու Ասորւոց Ազայէլ Թագաւորին դրկեց, այսպէս անիկա Երուսաղէմէ վրայէն *նահ գայաւ։

19—Ու Յովասի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ **20**—Ու անոր ծառաները ասոնք եղան, ու ՈՒՐ դէմ դաւաճանու թիւն ըրին. ու Յովասը զարկին Մելօնի տանը մէջ, որ Սիլլայի գնալի վայրին վրայ է։ **21**—Ու անոր ծառաները, Սաւեթի որդին Յովաքատը ու Սոմերի որդին Յովազապատ, զանիկա զարկին, ու մեռաւ. և զանիկա իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին. ու անոր տեղ անոր որդին Ամասիա թագաւոր եղաւ։

*նէբ. եկաւ

Գլ. ԻԴ

Յուդայի Թագաւորին, Ոքոզիայի որդւոյն Յովասի, քսանուրեքերորդ տարին Իսրայէլի վրայ Յեհու որդին Յովաքազ Թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, տասնեւեօթը տարի Ր-ՃՒ-ՐԻԵ։ **2**—Ու Տէրօնը առջև չարութիւն ըրաւ, ու Իսրայէլի մեղանչել տուղ Նաբատեան Երոբովամի մեղքերուն հետեւողեղաւ, անոնցմէ եա չկեցաւ։ **3**—Ու Տէրօնը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ, ու զանոնք չարաւնակ Ասորւոց Ազայէլ Թագաւորին ձեռքը, ու Ազայէլի որդւոյն Բենադադի ձեռքը մատնեց։

4—Ու Յովաքազ Տէրօնը աղօթք ըրաւ, ու Տէրը անոր մտիկ ըրաւ. քանզի տեսաւ Իսրայէլի նեղութիւնը, որով Ասորւոց Թագաւորը զանոնք նեղեց։ **5**—Ու Տէրը Իսրայէլի փրկիչ մը տուաւ, ու Ասորւոց ձեռքին տակէն ելան. և Իսրայէլի որդիները երկնատան ու միւս օրուան պէս իրենց վրաններուն մէջ կը նստէին։ **6**—Բայց Իսրայէլի մեղանչել տուղ Երոբովամի տանը մեղքերէն եա չկեցան, հապա անոնց մէջ քալեցին. ու Աստարթիի կուռքն ալ Սամարիայի մէջ կը կենար։ **7**—Իսկ Յովաքազի ժողովրդէն զօրք չթողուց, բայց միայն յիսուն ձիաւոր, տասը կառք ու տասը հազար հեծեալ զօրք. վասն զի Ասորւոց Թագաւորը զանոնք բնաջինջ ըրեր էր, ու զանոնք կոխատած հողի պէս ըրեր էր։

8—Ու Յովաքազի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ու զօրութիւնը ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ **9**—Ու Յովաքազ իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա Սամարիայի մէջ թաղեցին. և անոր տեղ անոր որդին Յովաս Թագաւոր եղաւ։

10—Յուդայի Յովաս Թագաւորին երեսունեօթներորդ տարին՝ Իսրայէլի վրայ Յովաքազի որդին Յովաս Թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, -- տասնվեց տարի Ր-ՃՒ-ՐԻԵ։ **11**—Ու Տէրօնը առջև չարութիւն ըրաւ, -- Իսրայէլի մեղանչել տուղ Նաբատեան Երոբովամի բոլոր մեղքերէն եա չկեցաւ, հապա անոնց մէջ քալեց։

12—Ու Յովասի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը, և Յուդայի Ամասիա Թագաւորին հետ պատերազմ ըրած առեն իր քաջութիւնը ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ **13**—Ու Յովաս իր հայրերուն հետ քնացաւ, և անոր աթոռը Երոբովամ նստաւ. ու Յովաս Իսրայէլի Թագաւորներուն հետ Սամարիայի մէջ թաղուեցաւ։

14—Ու Եղիսէ իր մահուընէ հիւանդութիւնովը հիւանդացաւ, և Իսրայէլի Թագաւորը Յովաս անոր իջաւ, ու անոր երեսին վրայ լացաւ ու ըսաւ, Հա՛յր իմ, հա՛յր իմ, Իսրայէլի կառքը ու անոր ձիաւորները։ **15**—Ու Եղիսէ անոր ըսաւ, Աղեղ մը ու նետեր առ. և անիկա աղեղ մը ու նետեր առաւ։ **16**—Ու Իսրայէլի Թագաւորին ըսաւ, Ձեռքդ աղեղին վրայ հեծցուր, և անիկա ձեռքը հեծցուց. ու Եղիսէ իր ձեռքերը Թագաւորին ձեռքերուն վրայ դրաւ, **17**—Ու ըսաւ, Արեւելեան կողմի պատուհանը բաց. ան ալ բացաւ. ու Եղիսէ ըսաւ, Նետէ. ան ալ նետեց։ Ան ՈՒՐ Եղիսէ ըսաւ, Տէրոջը փրկութեան նետը, ու Ասորւոց դէմ փրկութեան նետը. քանզի Ասորիները Ափեկի մէջ պիտի զարնես մինչև որ հատցնես։ **18**—Նաև ըսաւ, Նետերը առ. ու անիկա առաւ. և Իսրայէլի Թագաւորին ըսաւ, Գետինը զարկ. ու անիկա երեք անգամ զարկաւ ու կեցաւ։ **19**—Ու Աստուծոյ մարդը անոր բարկանալով՝ ըսաւ, Եթէ հինգ կամ վեց անգամ զարնէիր, այն ատեն Ասորիները պիտի զարնէիր ու պիտի հատցնէիր. բայց հիմա Ասորիները Ձ-ՃՒ երեք անգամ պիտի զարնես։

20—Ու Եղիսէ մեռաւ, և զանիկա թաղեցին. Ու հետեւեալ տարին Մովաբացւոց գունդերը երկրին վրայ եկան։ **21**—Ու երբ մարդ մը կը թաղէին, ահա գունդ մը տեսան, ու մարդը Եղիսէի գերեզմանը նետեցին. և այն մարդը Եղիսէի ոսկորներուն դպաւ պէս կենդանացաւ ու իր ոտքերուն վրայ կայնեցաւ։

22—Ու Ասորւոց Ազայէլ Թագաւորը Յովաքազի բոլոր օրերուն մէջ Իսրայէլը նեղեց։ **23**—Բայց Տէրը Աբրահամի, Իսահակի ու Յակոբի հետ իր ըրած ուխտին համար անոնց ողորմեցաւ ու գթութիւն ըրաւ, և անոնց նայեցաւ. զանոնք կորնչնել չուզեց, ու զանոնք դեռ իր երեսէն չձգեց։

24—Ու Ասորւոց Ազայէլ Թագաւորը մեռաւ, ու անոր տեղ անոր որդին Բենադադ Թագաւոր եղաւ։ **25**—Ու Յովաքազի որդին Յովաս Ազայէլի որդւոյն Բենադադի ձեռքէն եա առաւ. այն քաղաքները, զորոնք Ազայէլ անոր հօրը Յովաքազի ձեռքէն պատերազմով առեր էր. Յովաս զանիկա երեք անգամ զարկաւ, ու Իսրայէլի քաղաքները եա առաւ։

Գլ. ԻԳ

Իսրայէլի Թագաւորին, Յովաքազեան Յովասի, երկրորդ տարին Յուդայի Թագաւորին Յովասի որդին Ամասիա Թագաւոր եղաւ։ **2**—Անիկա քսանըհինգ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ քսաներիններ տարի Թագաւորեցաւ։ Ու անոր մօրը անունը Յովադան էր ու Երուսաղէմցի էր։ **3**—Ու Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ, բայց ոչ իր հօրը Դաւիթին պէս. իր հօրը Յովասի բոլոր ըրածներուն համեմատ ըրաւ։ **4**—Սակայն բարձր տեղերը չվերցան. ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէին ու խունկ կը ծխեին։ **5**—Ու երբ Թագաւորութիւնը անոր ձեռքին մէջ հաստատուեցաւ՝ իր ծառաները սպաննեց, որոնք իր հայրը, Թագաւորը, սպաններ էին։ **6**—Բայց սպաննողներուն որդիները չսպաննեց, ինչպէս Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած է, որ Տէրը պատուիրեց ըսելով, Հոդ չսպաննուին հայրերուն համար, ու հայրերուն չսպաննուին հանար ալ հոդ չսպաննուին, հապա ամէն

մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի։ 7—Ահիա Ադի ձորին մէջ տասը հազար եգիպտացի զարկաւ, ու Վէմը պատերազմով առաւ, և անոր անունը Եհովիվէլ կոչեց մինչև այսօր։

8—Այն տաեն Ամասիա Իսրայէլի Թագաւորին, Յեհուի որդւոյն Յովաքազի որդւոյն Յովասի, դեսպաններ ղրկեց՝ ըսելով, Եկուր, երես երեսի տեսնուինք։ 9—Ու Իսրայէլի Յովաս Թագաւորը Յուդայի Ամասիա Թագաւորին Խբդ ղրկեց ու ըսաւ, Լիբանանի փուշը Լիբանանի եղեւնատեսային պոռթմ ղրկեց՝ ըսելով, Քու աղջիկդ իմ տղուս կին տուր. բայց Լիբանանի մէջ եղող գազանը անցաւ, ու փուշը կոխկռտեց։ 10—Իրաւ, Եդոմացիները զարկիր, ու քու սիրտդ քեզ հպարտացուց. *քու փառքովդ գոհ եղիր՝ ու տունդ նստիր. քանի՞ ինչո՞ւ համար չարութեան խառնուիս, որ իյնաս դուն ու քեզի հետ Յուդա ալ։ 11—Բայց Ամասիա մտիկ չըրաւ։ Ուստի Իսրայէլի Յովաս Թագաւորը եկաւ, և ինք ու Յուդայի Ամասիա Թագաւորը Յուդայի Բեթսամիւսին մէջ երես երեսի տեսնուեցան։ 12—Ու Յուդա Իսրայէլի առջեւ յաղթուեցաւ, ու ամէն մարդ իր վրանը փախաւ։ 13—Ու Իսրայէլի Յովաս Թագաւորը՝ Ոքոզիայի որդւոյն Յովասի որդին Ամասիան, Յուդայի Թագաւորը, Բեթսամիսի մէջ բռնեց, ու Երուսաղէմ եկաւ, ու Եփրեմի դռնէն մինչև Անկեան դուռը Երուսաղէմի պարսպին չորս հարիւր կանգունը փլուցաւ։ 14—Ու բոլոր ոսկին ու արծաթը՝ ու Տէրոջը տանը մէջ ու Թագաւորին տանը գանձերուն մէջ գտնուած բոլոր մանուածքը առաւ, և պատանդներ ալ առաւ, ու Սամարիա դարձաւ։

15—Ու Յովասի գործերուն մնացորդ պատմութիւնը ու անոր զօրութիւնը և Յուդայի Ամասիա Թագաւորին հետ ըրած պատերազմը ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 16—Ու Յովաս իր հայրերուն հետ քնացաւ, և Իսրայէլի Թագաւորներուն հետ Սամարիայի մէջ թաղուեցաւ. ու անոր տեղ անոր որդին Յեր-

*Եբր. փառաւորուէ

ոբոամ Թագաւոր եղաւ։

17—Ու Յուդայի Թագաւորը, Յովասի որդին Ամասիա, Իսրայէլի Թագաւորին, Յովաքազի որդւոյն Յովասի, մեռնելէն հետը տասնըհինգ տարի ապրեցաւ։ 18—Ու Ամասիայի մնացորդ պատմութիւնը ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։ 19—Անոր դէմ Երուսաղէմի մէջ դաւաճանութիւն ըրին, և անիկա Լաքիս փախաւ. բայց անոր ետեւէն Լաքիս հոգ ղրկեցին, ու զանիկա հոն մեռցուցին։ 20—Ու զանիկա ձիերով վերցուցին, ու Երուսաղէմ իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ Թաղուեցաւ։ 21—Ու բոլոր Յուդայի ժողովուրդը *Ազարիան առին, որ տասնըվեց տարեկան էր, ու զանիկա իր հօրը Ամասիայի տեղ Թագաւոր դրին։ 22—Ահիկ ելաթը չինեց, ու Թագաւորին իր հայրերուն հետ քնանալէն ետքը զանիկա Յուդայի ետ դարձուց։

23—Յուդայի Թագաւորին, Յովասի որդւոյն Ամասիայի, տասնըհինգերորդ տարին Իսրայէլի Յովաս Թագաւորին որդին Երոբոամ Սամարիայի մէջ Թագաւոր եղաւ, և քառասունըմէկ տարի Խէսէրէբէյ։ 24—Ու Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ, և Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Երոբոամի բոլոր մեղքերուն ետ չկեցաւ։ 25—Ահիա Իսրայէլի սահմանը Եմաթի մուտքէն մինչև Ադաւայի ծովը ետ դարձուց՝ Իսրայէլի Տէր Աստուծոյն խօսքին համեմատ, որ իր ծառային Գեթքափերացի Ամաթեան Յունան մարգարէին ձեռքով խօսեր էր։ 26—Քանզի Տէրը տեսաւ Իսրայէլի խիստ սաստիկ տառապանքը, որ ոչ գոցուած ու ոչ ձգուած կար, ու Իսրայէլ օգնական ալ չունէր։ 27—Ու Տէրը չըսաւ որ Իսրայէլի անունը երկինքին տակէն բնջինլի ընէ. ուստի Յովասեան Երոբոամի ձեռքով զանոնք ազատեց։

28—Ու Երոբոամի մնացորդ պատմութիւնը, և անոր բոլոր ըրածը, ու պատ-

*Կամ, Ոզիան. տես գլ. Ժէ. 13։ ե Մն. ին. 1։

տերազմական քաջութիւնը, և Դամասկոսը ու *Եմաթը Յուդայի ետ դարձնելը Իսրայէլի մէջ՝ ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 29—Ու Երոբոամ իր հայրերուն, Իսրայէլի Թագաւորներուն, հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին Զաքարիա Թագաւոր եղաւ։

Գլ. ԺԵ

Իսրայէլի Երոբոամ Թագաւորին քսանըեօթներորդ տարին Յուդայի Ամասիա Թագաւորին որդին Ազարիա Թագաւոր եղաւ։ 2—Անիկա տասնըվեց տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ յիսունըերկու տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Եկոլիա էր, ու Երուսաղէմցի էր։ 3—Ու անիկա Տէրոջը առջեւ ուղղութիւն ըրաւ՝ իր հօրը Ամասիայի բոլոր ըրածին պէս։ 4—Բայց բարձր տեղերը չվերցան. ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կու մատուցանէին ու խունկ կը ծխէին։ 5—Ու Տէրը Թագաւորը զարկաւ, ու մինչև իր մահուան օրը բորոտած էր, և զատ տան մը մէջ կը բնակէր. ու պալատին վրայ էր Խոտը Թագաւորին որդին Յովաթամ էր, ու անիկա կը դատէր երկրին ժողովուրդը։

6—Ու Ազարիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 7—Ու Ազարիա իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ Թաղուեցաւ. և անոր տեղ անոր որդին Յովաթամ Թագաւոր եղաւ։

8—Յուդայի Ազարիա Թագաւորին երեսունըութերորդ տարին Իսրայէլի վրայ Երոբոամի որդին Զաքարիա Թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, և վեց ամիս Խէսէրէբէյ։ 9—Ու անիկա իր հայրերուն ըրածին պէս Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ, և Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Երոբոամի մեղքերէն ետ չկեցաւ։ 10—Ու Յաբէսի որդի Սեղղում անոր դէմ դաւեր կազմեց, և զանիկա ժողովուրդին առջեւ զարկաւ սպաննեց, ու անոր տեղ ինք Թագաւոր եղաւ։

11—Ու Զաքարիայի մնացորդ պատմութիւնը ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։ 12—Ահիա Տէրոջը խօսքն է որ Յեհուի խօսեր էր՝ ըսելով, Իսրայէլի Թագոռին վրայ քու որդիներդ մինչև չորրորդ ազգը պիտի նստին. ու այնպէս եղաւ։

13—Յարէսի որդին Սեղղում Յուդայի Ոզիա Թագաւորին երեսունըմէկերորդ տարին Թագաւոր եղաւ, ու Սամարիայի մէջ մէկ ամիս Թագաւորութիւն ըրաւ։ 14—Ու Գադդիի որդին Մանահէմ Թերսայէ եկաւ, ու Սամարիա եկաւ. և Սամարիայի մէջ Յաբէսի որդին Սեղղումը զարկաւ մեռցուց, ու անոր տեղ ինք Թագաւոր եղաւ։

15—Ու Սեղղումի մնացորդ պատմութիւնը ու ըրած դաւաճանութիւնը ահա Իսրայէլի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 16—Այն տաեն Մանահէմ Թափսան ու բոլոր անոր մէջ եղողները, ու անոր սահմանը զարկաւ. *մինչև Թերսա՝ և չբանալնուն համար զարկաւ — հոն եղող բոլոր յղի կիներէն ծեղքեց։

17—Յուդայի Ազարիա Թագաւորին երեսունըհինգերորդ տարին Իսրայէլի վրայ Գադդիի որդին Մանահէմ Թագաւոր եղաւ, — Սամարիայի մէջ տասը տարի Խէսէրէբէյ։ 18—Ու անիկա Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ, — իր բոլոր օրերուն մէջ Իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Երոբոամի մեղքերէն ետ չկեցաւ։

19—Ու Ասորեստանի Փուղ Թագաւորը երկրին վրայ եկաւ. ու Մանահէմ հազար տաղանդ արծաթ տուաւ Փուղին, որպէս զի †անիկա իրեն օգնական ըլլայ՝ Թագաւորութիւնը իր ձեռքին մէջ հաստատելու համար։ 20—Ու Մանահէմ այս արծաթը Ասորեստանի Թագաւորին տալու համար Իսրայէլի բոլոր

*Կամ, Յուդայի Եմաթը Իսրայէլի ետ դարձնելը

*Եբր. Թերսայէ

†Եբր. անոր ձեռքը իրեն հետ ըլլայ

հարեւտանեաւն վրայ հարկ դրաւ, — ամէն մէկէն յիսունական սիկղ արծաթ —։ և Աւորհատանի թագաւորը եւս դարձաւ ու այն երկրին մէջ չկեցաւ։

21—Ու Մանայեմի մնացորդ պատմութիւնը և անոր ամէն ըրածը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 22—Ու Մանայեմ իր հայրերուն հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին փակէհ թագաւոր եղաւ։

23—Յուդայի Ազարիա թագաւորին յիսունհերորդ տարին Իսրայէլի վրայ Մանայեմի որդին փակէհ թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, — երկու տարի Իշէ—։ 24—Ու Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, — Իսրայէլի մեղանչել տուղ Նաբատեան Յերոբոամի մեղքերէն եւս չկեցաւ։ 25—Ու անոր զօրավարը Ռոմելեայի որդին փակէհ անոր դէմ դալով վերցաւ, ու իրեն հետ Արգաղբը՝ ու Արիէն, ու Գաղաադացիներէն հետ հարիւր —։ Սամարիայի մէջ թագաւորին տունը *ներսի կողմը՝ զինկա զարկաւ մեռցաւ, ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ։

26—Ու փակէհայի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։

27—Յուդայի Ազարիա թագաւորին հարիւրհերորդ տարին Իսրայէլի վրայ Ռոմելեայի որդին փակէհ թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, — քսան տարի Իշէ—։ 28—Ու Տէրոջը առջև չարութիւն ըրաւ, — Իսրայէլի մեղանչել տուղ Նաբատեան Յերոբոամի մեղքերէն եւս չկեցաւ։ 29—Իսրայէլի փակէհ թագաւորին օրերը Աւորհատանի Թագղաթ-փազասար թագաւորը եկաւ, ու Իյոնը և Աբէլ-բեթ-մաաքան ու Յանոախին և Կադէսը ու Յասորը և Գաղաադը և Գալիլեան և Նեփթալիմի բոլոր երկիրը առաւ, ու անոնց Քո—ւէնէրը Աւորհատան գերի տարաւ։ 30—Ու Էլայէլի որդին Ովսէհ Ռոմելեայի որդւոյն փակէհի դէմ դաւաճանութիւն ըրաւ, և զանիկա զարկաւ մեռցուց, ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ Ուզիայի որդւոյն Յոթամի քսաներորդ տարին։

31—Ու փակէհի մնացորդ պատմութիւնը և անոր բոլոր ըրածը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։

32—Իսրայէլի թագաւորին, Ռոմելեայի որդւոյն փակէհի, երկրորդ տարին Յուդայի թագաւորին Ուզիայի որդին Յոթամ թագաւոր եղաւ։ 33—Անիկա քսանըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասնըվեց տարի թագաւորութիւն ըրաւ։ և անոր մօրը անունը Յերուսա էր, որ Սադոկի աղջիկն էր։ 34—Ու անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ։ իր հօրը Ուզիայի բոլոր ըրածին պէս ըրաւ։ 35—Բայց բարձր տեղերը չվերցան. ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէին ու խունկ կը ծխեին։ Անիկա Տէրոջը տունը ամէնէն բարձր դուռը չինեց։

36—Ու Յոթամի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 37 Ա՛յն օրերը Տէրը Ասորւոց Ռասին թագաւորը ու Ռոմելեայի որդին փակէհն Յուդայի վրայ զրկել սկսաւ։ 38—Ու Յոթամ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ իր հօրը Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ։ ու անոր տեղ անոր որդին Աքազ թագաւոր եղաւ։

ԳԼ. ԻԶ

Ռոմելեայի որդւոյն փակէհի տասներեօթներորդ տարին Յուդայի թագաւորին Յոթամի որդին Աքազ թագաւոր եղաւ։ 2—Աքազ քսան տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասնըմէկ տարի թագաւորեցաւ։ և իր հօրը Դաւիթի պէս իր Տէր Աստուծոյն առջև ուղղութիւն չըրաւ։ 3—Հապա Իսրայէլի թագաւորներուն ճամբան մէջ քալեց, ու իր որդին ալ կրակի անցուց՝ այն ազգերուն գարշելի սովորութիւններուն համեմատ, զորոնք Տէրը Իսրայէլի որդիներուն առջեէն վռնտեց։ 4—Ու քարձր տեղերը ու բլուրներու վրայ և ամէն կանանչ ծառերու տակ զոհ կը մատուցանէր ու խունկ կը ծխէր։

*կամ, պալատը

5—Ա՛յն ատեն Ասորւոց Ռասին թագաւորը ու Իսրայէլի թագաւորը, Ռոմելեայի որդին փակէհ, Երուսաղէմ վրայ պատերազմելու եկան, ու Աքազը պաշարեցին, բայց պատերազմը չկրնացին կերպել։ 6—Ա՛յն ատեն Ասորւոց Ռասին թագաւորը Եղոթը Ասորիներուն դարձուց, և Յուդայեցիները Եղոթէ վռնտեց, ու Ասորիք Եղոթ կուգան ու հոն բնակեցան մինչև այսօր։

Աքազ Ասորեստանի Թագղաթ-Գագաւորին դեսպաններ զրկեց քով ծառայ ու որդի ըսել տուաւ Ասորւոց թագաւորին ձեռքէն ու Իսրայէլի թագաւորին ձեռքէն, որոնք իմ վրաս եղեր են։ 8—Ու Աքազ Տէրոջը տանը մէջ ու թագաւորին տանը գանձերուն մէջ գտնուած արծաթը ու ոսկին առաւ, և Ասորեստանի թագաւորին ընծայ զրկեց։ 9—Ու Ասորեստանի թագաւորը անոր մտիկ ըրաւ, և Ասորեստանի թագաւորը Դամասկոսի վրայ գընաց, ու զանիկա առաւ, և անոր բնակիչները կիր գերի տարաւ, ու Ռասինը մեռցուց։

10—Ու Աքազ թագաւորը Ասորեստանի Թագղաթ-փազասար թագաւորը դիմաւորելու համար Դամասկոս գնաց, ու Դամասկոսի մէջ եղած սեղանը տեսաւ. և Աքազ թագաւորը այն սեղանին օրինակը ու ձեւը՝ անոր բոլոր շինուածքին համեմատ Ուրիա քահանային զրկեց։ 11—Ու Ուրիա քահանան Աքազ թագաւորին Դամասկոսէ զրկած ⁺օրինակին նման սեղան մը չինեց. մինչև Աքազ թագաւորին Դամասկոսէ գա[illegible] եղան անոնք պատրաստ բրաւ։ 12—ու Տէրոջը առնը մէջէն քալեց, ու զանիկա նոր սեղանին քով դրաւ դէպ ի հիւսիս։ 13—Ու Աքազ թագաւորը Ուրիա քահանային հրամայեց՝ ըսելով, Մեծ սեղանին վրայ առաւսան ողջակէզը ու իրիկուան հացի ընծան, և թագաւորին ողջակէզը ու անոր հացի ընծան, ու երկրին բոլոր ժողովուրդին ողջակէզը և անոնց հացի ընծան ու անոնց նուէրները մատուցանես. ու ողջակէզներուն բոլոր արիւնը, և զոհերուն բոլոր արիւնը անոր վրայ սրսկես, ու պղնձէ սեղանը իմ ըլլայ՝ հոն հարցնելու համար։ 16—Ու Ուրիա քահանան Աքազ թագաւորին բոլոր հրամայածին պէս ըրաւ։ 17—Ու Աքազ թագաւորը մեքենովիներուն սպառազէնները կտրեց, ու աւազանները անոնց վրայէն վերցուց, ծովը ալ իր տակ եղող պղնձէ եզներուն վրայէն իջեցուց, ու զանիկա քարայատակի մը վրայ դրաւ։ 18—Ու Տէրոջը տանը մէջ չինուած շաբաթին ծածկոցը ու թագաւորին գուրսի ճամբան Ասորեստանի թագաւորին պատճառաւ Տէրոջը ⁺տանը դարձուց։

19—Ու Աքազի գործերուն մնացորդ պատմութիւնը ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։ 20—Ու Աքազ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ և անոր տեղ անոր որդին Եզեկիա թագաւոր եղաւ։

ԳԼ. ԺԵ

Յուդայի Աքազ թագաւորին երկուտասաներորդ տարին Իսրայէլի վրայ Ելայի որդին Ովսէհ թագաւոր եղաւ Սամարիայի մէջ, — ինը տարի Իշէ—։ 2—Ու Տէրոջը առջև չարութիւն [illegible] ոչ իրմէ առաջ եղող Իսրայէլի թագաւորներուն պէս։ 3—Ասոր [illegible]

ներ զրկեր էր, ու Աստիսաանի թագաւորին ամէն ապրանք պէս-պէս վնասած չէր. անոր համար Աստիսաանի թագաւորը զանիկա քանդց ու քանի մէկ կազմեց։ 5—Ու Աստիսաանի թագաւորը բոլոր երկրին վրայ եկաւ. Սամարիայի վրայ ալ եկաւ, ու զանիկա երեք տարի պաշարեց։

6—Ողջերէն իննեըորդ տարին Աստիսաանի թագաւորը Սամարիան առաւ, ու Իսրայէլը Աստիսաան փոխադրեց, և զանոնք Գոզանի գետին քով Քաղայի ու Քաբորի մէջ ու Մարաց քաղաքներուն մէջ բնակեցուց։ 7—Քանզի Իսրայէլի որդիները երեխոյ Եգիպտոսի երկրէն, Եգիպտոսի փարաւոն Թագաւորին ձեռքին տակէն, հանող իրենց Տէր Աստուծոյն դէմ մեղք գործեցին, և ուրիշ աստուածներէն վախցան. 8—Ու Տէրոջը Իսրայէլի որդիներուն առջեւէն վռնտած ազգերուն կանոններուն հաճելիսաւ՝ և Իսրայէլի Թագաւորներուն ըրած կանոններուն հաճելիսաւ քալեցին։ 9—Ու Իսրայէլի որդիները իրենց Տէր Աստուծոյն առջեւ ուղիղ չեղած բաները գաղտուկ ըրին, և իրենց ամէն քաղաքներուն մէջ, պահապանոց աշտարակէն մինչեւ պարսպաւոր քաղաքը, իրենց բարձր տեղերը չինեցին։ 10—Ու անոնք ամէն բարձր բլուրներու վրայ և ամէն կանանչ ծառերու տակ իրենց արձանները ու *Աստարտիվի կռւածքերը՝ կանգնեցին։ 11—Ու հոն ամէն բարձր տեղերու վրայ խունկ ծխեցին՝ Տէրոջը առջեւէն վռնտած ազգերուն պէս, ու չար գործեր ըրին ու Տէրը բարկացուցին։ 12—Ու կուռքերու ծառայութիւն ըրին, որոնց համար Տէրը անոնց ըսեր էր Թէ Այդ բանը մի ընէք։

13—Ու Տէրը բոլոր մարգարէներուն՝ ու բոլոր տեսանողներուն ձեռքով [illegible] Յուդայի վկայութիւ[illegible] [illegible] ամէն ճամ[illegible] Բայց անոնք մտիկ չըրին, հապա իրենց պարանոցը իրենց Տէր Աստուծոյն չհաւատացող իրենց հայրերուն պարանոցին պէս խստացուցին։ 15—Ու անոր կանոնները ու իրենց հայրերուն հետ անոր րրած ուխտը և անոր տուած վկայութիւնները մէկդի ձգեցին, ու սնոտապաշտութեան եհեւ գացին ու սնոտապաշտ եղան, և իրենց չորս կողմը գտնուած ազգերուն հետեւեզ եղան, որոնց մասր Տէրը իրենց պատուիրեր [illegible] նանց պէս չընեն։ 16—Բայ[illegible] Աստուծոյն բոլոր պատուիրանքներն[illegible] զուցին, և իրենց երկու [illegible] որթ չինեցին, ու [illegible] չինեցին, ու երկինքի բոլոր զօրութիւններուն երկրպագութիւն ըրին, և Բահաղի ծառայեցին. 17—Ու իրենց որդիքները ու աղջիկները կրակի անցուցին, և կախարդութիւն ու հմայութիւն ըրին, և ղիրենք ծախեցին Տէրոջը առջեւ չարութիւն ընելու համար զանիկա բարկացնելու։ 18—Ուստի Տէրը Իսրայէլի վրա բարկացաւ, ու զանոնք իր երեսէն ձգեց. [illegible] [illegible] [illegible]

8—Եւ Ռափսակ դարձաւ, ու Ասորեստանի Թագաւորը գաւա՝ որ Լաքիսէն հետ կը պատերազմէր, վասն զի լսած էր որ Լաքիսէ չուներ է։ 9—Ու Եզեկիա Թագաւորին համար լսեց, որ կ'ըսէին, Ահա անիկա գեղի հետ պատերազմելու ելեր է. ու նորէն Եզեկիայի դեսպաններ ղրկեց՝ ըսելով, 10—Յուդայի Եզեկիա Թագաւորին այսպես խօսիք ու ըսէք, Ալն քու Աստուածդ, որուն դուն ապաւինիր ես, Թող գեղ չյաջէ՝ ըսելով, Երուսաղէմ Ասորեստանի Թագաւորին ձեռքը պիտի չմատնի։ 11—Ահա դուն լսեցիր ինչ որ Ասորեստանի Թագաւորները բոլոր երկիրներուն ըրին, ու ի՞նչպես զանոնք բոլորովին կորնչեցուցին, ու հէ՞ս դո՞ւն պիտի ազատիս։ 12—Միթէ իմ հայրերուս կորնչանած ազգերուն, այսինքն Գոզանին, Խառանի, Ռեսեփի ու Թէլասարի մէջ եղող Եդեմի որդիներուն աստուածները զանոնք ազատեցի՞ն։ 13—Ո՞ւր է Եմաթի Թագաւորը ու Արփադի Թագաւորը, ու Սեփարուիմ քաղաքին՝ Անայի և Աւայի Թագաւորը։

14—Ու Եզեկիա նամակը ղեսպաններուն ձեռքէն առաւ ու զանիկա կարդաց, և Տէրոջը տունը եկաւ, ու Եզեկիա Տէրոջը առջև *բացաւ զանիկա։ 15—Ու Եզեկիա Տէրոջը առջև աղօթք ըրաւ ու ըսաւ, Ով Տէր Աստուած Իսրայէլի, որ քերովբէներուն վրայ կը նստիս, երկրի ամէն Թագաւորութիւններուն վրայ Աստուած միայն դուն ես. երկինքը ու երկիրը դուն ստեղծեցիր։ 16—Ով Տէր, ականջդ խոնարհեցուր ու լսէ. ով Տէր, աչքերդ բաց ու նայէ, և լսէ Սենեքերիմի խօսքերը, որ ղրկեց կենդանի Աստուածը նախատելու համար։ 17—Ով Տէր, իրաւցընէ Ասորեստանի Թագաւորները ազգերը ու անոնց երկիրը աւերեցին, 18—Եւ անոնց աստուածները կրակի տուին, վասն զի անոնք Աստուած չէին, հապա մարդու ձեռագործ, փայտ ու քար, էին. անոր համար զանոնք կորնչեցուցին։ 19—Եւ հիմա դուն, ով Տէր Աստուած մեր, ազատէ մեզ անոր ձեռքէն, որպէս զի երկրի բոլոր թագաւորութիւնները գիտենան, որ Տէր Աստուած միայն դուն ես։

20—Ու Ամովսի որդին Եսայի Եզեկիայի *ղրկեց՝ ըսելով, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ասորեստանի Սենեքերիմ Թագաւորին համար ինծի բրած աղօթքդ լսեցի։ 21—Անոր վրայով Տէրոջը բուած խօսքը այս է.

Սիոնի կոյս աղջիկը քեզ անարգեց, քեզ ծաղր բրաւ.
Երուսաղէմի աղջիկը քու հառեւդ գլուխ շարժեց։

22—Դուն զո՞վ նախատեցիր ու հայհոյեցիր,
Ու որո՞ւ վրայ ձայնդ վերցուցիր.
Եւ աչքերդ Իսրայէլի Սուրբին դէմ վեր վերցուցիր։

23—Քու դեսպաններուդ ձեռքով Տէրը նախատեցիր՝ ըսելով,
Իմ կառքերուս շատութիւնովը լեռներուն քարձրութիւնը,
Լիբանանու փովերը, ելայ,
Ու անոր բարձր եղէւ ինները
Ե՛ ընտիր մայրերը *պիտի կտրեմ.
Ու անոր վերջին բնակութիւնը
Անոր †Կարմելոսին անտառը էպիտի մտնեմ։

24—Ես փորեցի ու օտար ջուրերը խմեցի,
Ու ||պաշարուած ովկերուն՝ բոլոր գետերը
Ոտքերուս թաթերովը ցամքեցուցի։

25—Միթէ լսած չե՞ս որ ասկից շատմունցմէ ես կռմռեցի,
Ու առաջուան օրերէն ի վեր ձեւակերպեցի.
Հիմա հասուցի,
Որպէս զի դուն պարսպալոր քաղաքները աւերակի հողակոյտներու դարձնես։

26—Ուստի անոնց բնակիչներուն ձեռքը կարճ ըլլալուն համար
Զարհուրեցան ու ամչցան.
Անոնք դաշտի խոտի պէս
Ու կանանչ բանջարի պէս,

*կամ, տարածեց

*կամ, կորեցի
†կամ, պղպեղոր ագարակին.ես. ժ. 18։
‡կամ, մասց
||կամ, եգիպտոսի

Տանիքի խոտի պէս
Ու դեռ չհասած ու խորշակէն զարնուած հնձանքի պէս եղան։

27—Բայց ես քու բնակութիւնդ, ելլելդ ու մտնելդ,
Ու ինծի ունեցած սրամտութիւնդ գիտեմ։

28—Որովհետեւ ինծի ունեցած սրամտութիւնդ
Ու քու ամբարտաւանութիւնդ իմ ականջներուս եկաւ,
Ես ալ իմ կարթս քու քիթդ՝
Ու իմ սանձս քու բերանդ պիտի դնեմ,
Ու քու եկած ճամբադդ քեզ եւս պիտի դարձնեմ։

29—Եւ ասիկա քեզի նշան ըլլայ.
Այս տարի ինքիրմէ բուսածը,
Ու երկրորդ տարին ինկած հասերէնն բուսածը պիտի ուտէք.
Ու երրորդ տարին ցանեցէք ու հնձեցէք,
Եւ այգիներ անկեցէք ու անոր պտուղը կերէք։

30—Ու Յուդայի տանը ազատուած մնացորդը
Վարէն արմատ պիտի արձակէ,
Ու վերէն պտուղ պիտի տայ,
31—Քանզի Երուսաղէմէ մնացորդ
Ու Սիոն լեռնէն ազատուած պիտի ելլէ.
Ասիկա զօրաց Տէրոջը նախանձը պիտի ընէ։

32—Ասոր համար Ասորեստանի Թագաւորին վրայով Տէրը այսպէս կ'ըսէ.
Անիկա այս քաղաքը պիտի չմտնէ,
Ու անոր նետ պիտի չձգեմ,
Ու անոր առջև վահանով պիտի չգայ,
Ու անոր դէմ պատնէշ պիտի չկանգնէ.
33—Իր եկած ճամբայէն ետ պիտի դառնայ,
Ու այս քաղաքը պիտի չմտնէ, կ'ըսէ Տէրը։

34—Ու այս քաղաքը պիտի պաշտպանեմ.
Ու զանիկա ազատեմ ինծի համար
Ու իմ ծառային Դաւիթի համար։

35—Ու եղաւ որ այն գիշերը Տէրոջը հրեշտակը ելաւ, և Ասորեստանի բանակին մէջ հարիւր ութսունհինգ հազար մարդ զարկաւ. ու երբ առաւօտուն կանուխ եղան, ահա անոնց ամէնը մեռած մարմիններ էին։ 36—Ու Ասորեստանի Սենեքերիմ Թագաւորը չուեց գնաց, ու դարձաւ Նինուէի մէջ նստաւ։ 37—Ու երբ անիկա իր աստուծոյն Նիսրոքի տանը մէջ երկրպագութիւն կ'ընէր, անոր որդիները Ադրամելէք ու Սարասար զանիկա սրով զարկին, ու Արարադի երկիրը փախան. և անոր տեղ անոր որդին Ասորդան Թագաւոր եղաւ։

Գլ. Ի

Այն օրերը Եզեկիա մահուան ապտական հիւանդացաւ։ Ու Ամովսի որդին Եսայի մարգարէն անոր եկաւ, ու անոր ըսաւ, Տէրը այսպես կ'ըսէ. Տանդ համար պատուէր տուր, քանզի դուն մեռնելու ես ու պիտի չապրիս։ 2—Ես ալ նկիս իր երեսը պատին դարձուց, ու Տէրոջը աղօթք ըրաւ՝ ըսելով, 3—Ով Տէր, կ'աղաչեմ, քու առջեւդ ճշմարտութեամբ ու կատարեալ սրտով քալելս, և քու աչքիդ առջեւ բարի եղածը ընելս յիշէ. ու Եզեկիա մեծ լացով մը լացաւ։

4—Ու Եսայի տակաւին միջին գաւիթէն չելած՝ Տէրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով, 5—Դարձիր, ու իմ ժողովուրդս իշխանին Եզեկիայի, ըսէ, Քու հօրդ Դաւիթի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Քու աղօթքդ լսեցի, քու արտասուքդ տեսայ. ահա քեզ պիտի բժշկեմ, — երրորդ օրը Տէրոջը տունը պիտի ելլես. 6—Ու քու օրերուդ վրայ տասնհինգ տարի պիտի աւելցնեմ, ու քեզ ու այս քաղաքը Ասորեստանի Թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ, և այս քաղաքին պաշտպանութիւն պիտի ընեմ ինծի համար ու իմ ծառային Դաւիթի համար։ 7—Ու Եսայի ըսաւ, Քանի մը չոր թուզ առէք. ու առին և վերքին վրայ դրին, ու ողջացաւ։

8—Ու Եզեկիա Եսայիի ըսաւ, Տէրոջը այս բժշկութիւնն ու երրորդ օրը Տէրոջը տունը ելլելուս նշանը ի՞նչ ըլլայ։ 9—Ու Եսայի ըսաւ, Ասիկա քեզի Տէրոջմէ նշան ըլլայ՝ թէ Տէրը իր ըսած խօսքը պիտի կատարէ. Սաւուերը կա՛մ տասը աստիճան առաջ երթայ, կա՛մ տասը աստիճան ետ դառնայ։ 10—Ու Եզեկիա

ըսաւ, Սաուղէին տասը տասիճան առաջ երթալը դիւրին է. ա՛չ, հապա տասերը տասը տասիճան ետ դառնայ։ **11**— Ու Նասայի մարգարէն Տէրոջը աղաղակեց. ու տասը տասիճան ետ դարձուց տասերը այն տասիճաններէն որ Աքազի աբեւու ժամացուցին վրայ իջած էր։

12—Այն ատեն Բաբելոնի թագաւորը, Բաղադանի որդին *Մարովդաքբաղադան, նամականիներ ու ընծաներ ղրկեց Եզեկիայի, քանզի Եզեկիայի հիւանդ ըլլալը լսեր էր։ **13**—Ու Եզեկիա հանդուց մտիկ ըրաւ, և Թանկագին բաներուն բոլոր տունը, արծաթը ու ասկին ու խունկերը և պատուական իւղը, ու իր զինուքերուն բոլոր մունը և իր գանձերուն մէջ բոլոր գտնուածը ցուցուց. իր տանը մէջ և իր բոլոր տէրութեանը մէջ բան մը չմնաց, զոր Եզեկիա անոնց չցուցնէ։

14—Ու Նասի մարգարէն Եզեկիա Թագաւորին եկաւ, ու անոր ըսաւ, Այս մարդիկը ի՞նչ ըսին, և ուրկէ՞ եկան քեզի։ ու Եզեկիա ըսաւ, Հեռու տեղէ, Բաբելոնէ, եկան։ **15**—Ըս անիկա ըսաւ, Ի՞նչ տեսան ի Եզեկիա ըսաւ, Տունս մէջ ինչ որ կար՝ տեսան, ես գանձերուս մէջ անոնց չցուցուցած բանս չմնաց։ **16**—Այն ատեն Նասի Եզեկիայի ըսաւ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ։ **17**—Ահա օրեր կու գան, որ քու տունդ մէջ ինչ որ կայ՝ ու քու հայրերդ մինչև այսօր ինչ որ ժողվեցին՝ Բաբելոն պիտի տարուին. բան մը պիտի չմնայ, կ'ըսէ Տէրը։ **18**—Ու քեզմէ կ'ելլեն՝ քու ծնանելու որդիներդ պիտի առնեն, և անոնք Բաբելոնի Թագաւորին պալատին մէջ ներքինիներ պիտի ըլլան։ **19**—Ու Եզեկիա Նասիի ըսաւ, Տէրոջը խօսքը զոր դուն ըսիր, բարի է. նաև ըսաւ, Բաբէ չէ՞, պրավ հետև իմ օրերուս մէջ խաղաղութիւն ու ապահովութիւն պիտի ըլլայ։

20—Ու Եզեկիայի մնացորդ պատմութիւնը, և անոր բոլոր զօրութիւնը, ու չինած աւազանը ու խմուղը, և քաղաքը բերած ջուրը՝ ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ **21**—Ու Եզեկիա իր հայրերուն հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին Մանասէ Թագաւոր եղաւ։

Գլ. ԻԱ

Մանասէ տասներկու տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երեսաղէմի մէջ յիսունըհինգ տարի Թագաւորութիւն ըրաւ, ու անոր մօրը անունը Խփսիբա էր։ **2**—Ու անիկա Տէրոջը խորհրդի օրդիներուն ատելի վճռուած ազգերուն գարշելի գործերուն պէս՝ Տէրոջը աչքը չարութիւն ըրաւ։ **3**—Ու անիկա իր հօրը Եզեկիայի կործանած բարձր տեղերը նորէն չինեց, ու Բահաղի սեղաններ կանգնեց, և Աստարովթի կուռք մը չինեց իսրայէլի Աքաաբ Թագաւորին ըրածին պէս, ու երկինքի բոլոր զօրութիւններուն երկրպագութիւն ըրաւ և անոնց ծառայութիւն ըրաւ։ **4**—Ու սեղաններ չինեց Տէրոջը տանը մէջ, որուն համար Տէրը ըսած էր Թէ իմ անունս երեսաղէմի մէջ պիտի դնեմ, **5**—Ու Տէրոջը տանը երկու գաւիթներուն մէջ երկինքի բոլոր զօրութիւններուն սեղաններ չինեց։ **6**—Ու իր որդին կրակէ անցուց, և գուշակութիւն ու հմայութիւն կ'ընէր, և վհուկներ ու նշանագէտներ *ունէր. և Տէրոջը առջև չատ չարութիւն ըրաւ ու զայրկեան բարկացուց։ **7**—Ու իր չինած Աստարովթի կուռքը այն տանը մէջ դրաւ, որուն համար Տէրը Դաւիթի ու անոր որդւոյն Սողոմոնի ըսեր էր, իմ անունս այս տանը մէջ, ու իսրայէլի բոլոր ցեղերէն իմ ընտրած երեսաղէմի մէջ պիտի դնեմ յաւիտեան։ **8**—Ու իսրայէլի ոտքը մէկ մըն ալ պիտի չշարժիմ այդ երկրէն, զոր անոնց հայրերուն տուի. միայն թէ անոնք իմ ամէն պատուիրանքներս ու իմ Մովսէս ծառայիս անոնց պատուիրած բոլոր օրէնքը զգուշութեամբ ի գործ դնեն։ **9**—Բայց անոնք մտիկ չըրին, ու Մանասէ այնպէս մոլորեցուց զանոնք, որ

*Եբր. Բարովդաք բաղադան

†Կամ, անոնց վրայ ուրախացաւ. տես նաև ԼԹ. 2։

*Եբր. կ'ըներ

Տէրոջը Իսրայէլի որդիներուն աչքերէն կորնցուցած ազգերէն աւելի չարութիւն ըրին։

10—Ու Տէրը իր ծառաներուն, մարգարէներուն, ձեռքով խօսեցաւ՝ ըսելով, **11**—Որովհետև Յուդայի Մանասէ Թագաւորը այս գարշութիւնները ընելով՝ իրմէ առաջ եղող Ամորհացւոց բոլոր ըրածներէն աւելի չարութիւն ըրաւ, ու իր կուռքերովը Յուդան ալ մեղք գործել տուաւ, **12**—Անոր համար Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ահա ես երեսաղէմի վրայ ու Յուդայի վրայ այդպէս չարիք մը պիտի դրկեմ, որ ամէն լսողին երկու ականջը պիտի խօսի։ **13**—Ու երեսաղէմի վրայ Սամարիայի լարը և Աքաաբի տանը գնդակը պիտի երկնցնեմ, ու երեսաղէմը պիտի սրբեմ, ինչպես մէկը ամանը մը կը սրբէ, ու սրբելէն ետև երեսն ի վար կը դարձնէ։ **14**—Ու իմ ժառանգութեանս մնացորդը պիտի մերժեմ, ու զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը պիտի տամ, ու անոնք իրենց բոլոր թշնամիներուն աւար ու յափշտակութիւն պիտի ըլլան։ **15**—Որովհետև իմ աչքերս չարութիւն ըրին, ու իրենց հայրերուն Եգիպտոսէ եկած օրէն մինչև այսօր զիս բարկացուցին։ **16**—Նաև Մանասէ խիստ շատ անմեղ արիւն Թափեց, այնպէս որ Երեսաղէմը ծայրէ ծայր լեցուց. բայց ի սյն իր մեղքէն՝ որով Տէրոջը աչքին Յուդան մեղանչելուն ու չարութիւն ընելուն պատճառ եղաւ։

17—Ու Մանասէի մնացորդ պատմութիւնը ու ամէն ըրածը և անոր գործած մեղքը՝ ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ **18**—Ու Մանասէ իր հայրերուն հետ քնացաւ, և իր տանը պարտէզին մէջ, Ոզայի պարտէզին մէջ, Թաղուեցաւ. ու անոր տեղ անոր որդին Ամոն Թագաւոր եղաւ։

19—Ամոն քսանուերկու տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երեսաղէմի մէջ երկու տարի Թագաւորութիւն ըրաւ, ու անոր մօրը անունը Մեսոդամիթ էր, ու Եոտբացի Արուսի աղջիկն էր։ **20**—Ու անիկա իր հօրը Մանասէի ըրածին պէս Տէրոջը աչքին չարութիւն ըրաւ. **21**—Ու իր հօրը քալած բոլոր ճամբան մէջ քալեց, և իր հօրը պաշտած կուռքերը պաշտեց ու անոնց երկրպագութիւն ըրաւ. **22**—Ու իր հայրերուն Տէր Աստուածը թողուց ու Տէրոջը ճամբան մէջ չքալեց։

23—Ու Ամոնի ծառաները անոր դէմ դաւադրութիւն ըրին, ու Թագաւորը իր տանը մէջ սպանցին։ **24**—Ու երկրին ժողովուրդը Ամոն Թագաւորին դէմ դաւադրութիւն ընողներուն ամէնը սպաննցին. ու երկրին ժողովուրդը անոր որդին Յովսիան անոր տեղ Թագաւոր դրին։

25—Ու Ամոնի ըրած գործերուն մնացորդ պատմութիւնը ահա Յուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած է։ **26**—Ու զանիկա Ոզայի պարտէզը՝ իր գերեզմանին մէջ Թաղեցին. և անոր տեղ անոր որդին Յովսիա Թագաւոր եղաւ։

Գլ. ԻԲ

Յովսիա ութ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երեսաղէմի մէջ երեսունմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ, և անոր մօրը անունը Եզիդիա էր, ու Բոզկաթացի Ադայեայի աղջիկն էր։ **2**—Ու անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ, ու իր հօրը Դաւիթի բոլոր ճամբան մէջ քալեց, ու ալ կամ ձախ չխոտորեցաւ։

3—Ու Յովսիա Թագաւորին տասներեքերորդ տարին Թագաւորը Մեսուզամի որդւոյն Սափանի որդին Սափան գպիրը Տէրոջը տանը ղրկեց՝ ըսելով, **4**—Քեզի կիլկիա քահանայապետին գնա, ու անիկա Տէրոջը տանը բերուած տասակը Թող հատնի, զոր դրան պահապանները ժողովուրդէն ժողվեցին. **5**—Ու զանիկա Տէրոջը տանը Է-րգձէն վրայ գրուած բանուորներուն տան, ու տանը փլած տեղերը չինելու համար Տէրոջը տանը մէջի գործը բանուորներուն տան զանիկա, **6**—Հիւսերուն, չինողներուն ու որմնադիրներուն. նաև փայտ ու տաշուած քարեր ծախու առնեն տանը նորոգելու համար։ **7**—Բայց անոնց ձեռքը որուած տասակին հաշիւը չէին հար-

ցիներ, քանզի անոնք հաւատամուտ-Թեամբ կը գործէին։ 8—Եւ Բեղկիա քահանայապետը Սափան դպրին բսաւ, Տէրոջը տանը մէջ օրինաց գիրք մը գտայ։ ու Բեղկիա այն գիրքը Սափանի տուաւ, ու զանիկա կարդաց։ 9— Եւ Սափան դպիրը Թագաւորին եկաւ, ու Թագաւորին պատասխան բերաւ ու բսաւ, Քու ծառաներդ տանը մէջ գտնուած առակը հանեցին, ու Տէրոջը տանը էրջէն վրայ գրուած բանաւորներուն ձեռքը տուին։ 10—Ե՛ Սափան դպիրը Թագաւորին պատմեց ու բսաւ, Բեղկիա քահանան ինծի գիրք մը տուաւ։ և Սափան զանիկա Թագաւորին առջև կարդաց։ 11—Ու Թագաւորը օրինաց գիրքին խօսքերը լսածին պէս իր հանդերձները պատռեց։ 12—Ե՛ Թագաւորը Բեղկիա քահանային ու Սափանի որդւոյն Աքիկամի ու Միքիայի որդւոյն Աքբորի և Սափան դպիրին ու Թագաւորի ծառային Ասայիայի պատուիրեց ու բսաւ, 13—Գացէք, ինծի համար ու ժողովուրդին համար ու բոլոր Ցուդայի համար՝ այս գտնուած գիրքին խօսքերուն վրայով։ Տէրոջը հարցուցէք։ քանզի մեր վրայ Տէրոջը մեծ բարկութիւնը բորբոքեր է, որովհետև մեր հայրերը այս գիրքին խօսքերուն հնազանդութիւն չըրին, ու մեզի համար ամէն գրուած բաները ի գործ չդրին։

14—Ու Բեղկիա քահանան և Աքիկամ ու Աքբորը և Սափան ու Ասայիա Աբաան որդւոյն Թեկուայի որդւոյն Սեղդամ հանդերձապահին կնոջ Ողդա մարգարէին գացին, ու անիկա Երուսաղէմ՝ Մասենայի մէջ կը բնակէր, ու անոր հետ խօսեցան։ 15—Ու անիկա բսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ։ Ձեզ ինծի ղրկող մարդուն այսպէս ըսէք, 16—Տէրը այսպէս կ'ըսէ։ Ահա ես այս տեղին ու անոր բնակիչներուն վրայ չարիք պիտի բերեմ, այսինքն Ցուդայի Թագաւորին կարդացած գիրքին ամէն խօսքերը։ 17—Ո-բովհետև զիս Թողուցին և ուրիշ աստուածներու խունկ ծխեցին, որպէս զի իրենց ձեռքերուն բոլոր գործերովը զիս բարկացնեն, ուստի այս տեղին վրայ իմ բարկու Թիւնս պիտի բորբոքի ու պիտի չմարի։ 18—Բայց Տէրոջը հարցնելու համար ձեզ ղրկող Ցուդայի Թագաւորին այսպէս ըսէք։ Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ։ 19—Լսած խօսքերուդ համար, որովհետև քու սիրտդ կոմկցաւ, ու Տէրոջը առջև խոնարհեցար երբ լսեցիր իմ խօսքս, Թէ այս տեղին վրայ ու անոր բնակիչներուն վրայ ան-րաւ ու անէծք պիտի ըլլայ, և քու հանդերձներդ պատռեցիր ու իմ առջևս լացիր, ես ալ լսեցի, կ'ըսէ Տէրը։ 20—Անոր համար անա ես քեզ քու հայրերուդ պիտի խառնեմ, ու խաղաղ Թեամբ քու գերեզմանիդ մէջ պիտի ամիրափաս։ և այս տեղին վրայ իմ բերելու բոլոր չարիքները քու աչքերդ պիտի չտեսնեն։ Ու անոնք Թագաւորին պատասխան բերին։

Գլ. ԻԳ

Եւ Թագաւորը ղրկեց, ու Ցուդայի ու Երուսաղէմի բոլոր ծերերը անոր քով ժողովեցան։ 2—Ու Թագաւորը ու անոր հետ Ցուդայի բոլոր մարդիկը ու Երուսաղէմի բոլոր բնակիչները, ու քահանաները և մարգարէները, ու պզտիկէն մինչև մեծը բոլոր ժողովուրդը Տէրոջը տաւնը ելան։ և Տէրոջը տանը մէջ գտնուած ուխտի գիրքին բոլոր խօսքերը անոնց *առջև կարդաց։ 3—Ե՛ Թագաւորը սիւնին քով կայնեցաւ ու Տէրոջը առջև ուխտ բրաւ, որ այն գիրքին մէջ գրուած ուխտին խօսքերը հաստատելու համար Տէրոջը հետևէն երթայ, և անոր պատուիրանքները ու վկայութիւնները ու կանոնները բոլոր սրտով ու բոլոր հոգւով պահէ. և բոլոր ժողովուրդը ուխտին հաստատութիւնը տեսաւ։ 4—Ու Թագաւորը Բեղկիա քահանայապետին ու երկրորդ աստիճանի քահանաներուն և դրան պահապաններուն հրամայեց, որ Բահովի համար ու Աստարովթի համար ու երկինքի բոլոր զօրութիւններուն համար շինուած գործիքները ամէնը Տէրոջը

*Այլ՝ երկրորդ մասին

տաճարէն դուրս հանեն. ու զանոնք Երուսաղէմի դուրս կեդրոնի դաշտավայրին մէջ այրեց, ու անոնց մխերը Բեթէլ տարաւ։ 5—Ե՛ Ցուդայի Թագաւորներուն՝ Ցուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի բոլորտիքը բարձր տեղերու վրայ դրած խունկ ծխող քուրմերը, և Բահովի ու արեգակին ու լուսնին և գաւազանիս- կենդանակերպներուն ու երկինքի բոլոր զօրութիւններուն խունկ ծխողները վերցուց։ 6—Ե՛ Աստարովթի կուռքը Տէրոջը տունէն Երուսաղէմի դուրսը կեդրոն հեղեղաձորը հանեց, ու զանիկա կեդրոն հեղեղաձորին մէջ այրեց, ու ծեծեց փոչի ըրաւ, ու փոչին ժողովուրդին որդւոցը գերեզմաններուն վրայ ցանեց։ 7—Ե՛ Տէրոջը տանը մէջ գտնուղ Սոդոմական մեղքը գործողներուն տաւները փլցուց, ուր կիները Աստարովթի *վարագոյներ կը գործէին։ 8—Ու Ցուդայի քաղաքներէն բոլոր քահանաները ետ-բերաւ, ու Գաբայէ մինչև Բերսաբէէ պղծեց այն բարձր տեղերը, որոնց մէջ քահանաները խունկ կը ծխէին. և քաղաքի իշխանին Ցեսուէի դրանը բերանը՝ քաղաքին դրանը ձախ կողմը եղող դրան-ներուն բարձր տեղերը փլցուց։ 9—Բայց բարձր տեղերուն քահանաները Երուսաղէմ եղող Տէրոջը սեղանը չէին ելլեր, հապա իրենց եղբայրներուն մէջ բաղարջ կ'ուտէին։ 10—Ու ենովմի որդւոյն Ամրին մէջ եղող Տոփեթը պղծեց, որպէս զի մարդ մը իր տղան կամ աղջիկը Մողոքի համար կրակէ չանցնէ։ 11—Ու նաև վերցուց Տէրոջը տանը դրանը առջևէն այն ձիերը զորանք Ցուդայի Թագաւորները արեգակին նըւիրեր էին, և անոնք փարուրիմ եղող Նաթանմելէքը ներքինին սենեակին քով էին, ու արեգական կառքերը կրակով այրեց։ 12—Ե՛ Աքազի վերնատունը ահազին վրայ Ցուդայի Թագաւորներուն չինած սեղաններր, ու Տէրոջը տանը երկու գաւիթներուն մէջ Մանասէի չինած սեղանները Թագաւորը փլցուց, ու անկէ բնաջինջ ըրաւ, և անոնց հողը կեդրոն հեղեղաձորը նետեց։ 13—Ու Երուսաղէմի դիմաց, Ապականութեան լեռան աջ կողմը, Իսրայէլի Սողոմոն Թագաւորին Աշդոնացւոց գարշելիին, Աստարովթի, Համար ու Մոաբացւոց գարշելիին, Քամոսի, Համար ու Ամմոնի որդւոց գարշելիին, Մեղքայի, Համար չինած բարձր տեղերը Թագաւորը պղծեց։ 14—Ու արձանները խորտակեց ու Աստարովթի կուռքերը կտրատեց, ու անոնց տեղը մարդու ոսկորներով լեցուց։

15—Ու Բեթէլի սեղանն ալ, և իսրայէլի մեղանչել տուող Նաբատեան Յեբրոնամի չինած բարձր տեղը (այն սեղանը ու բարձր տեղն ալ) փլցուց, և բարձր տեղը այրեց ու փոչի դարձուց, ու Աստարովթի կուռքը այրեց։ 16—Եւ Յովսիա դարձաւ ու հոն լեռանը վրայի գերեզմանները տեսաւ, և ղրկեց, գերեզմաններուն մէջի ոսկորները առաւ, ու սեղանին վրայ այրելով զանիկա պղծեց, Տէրոջը խօսքին համեմատ, զոր այս բաները խօսող Աստուծոյ մարդը բարձր ձայնով խօսեր էր։ 17—Ե՛ Ը-ը-ը-ը-ը ըսաւ, Ի՞նչ պիտի ըլլայ այս կոթողը զոր ես կը տեսնեմ։ ու քաղաքին մարդիկը անոր ըսին, Անիկա Աստուծոյ մարդուն գերեզմանն է, որ Յուդայէ եկաւ, ու Բեթէլի սեղանին վրայ այս քու ըրած բաներդ *խօսեցաւ։ 18—Ե՛ Ը-ը-ը-ը-ը ըսաւ, Զանիկա թողուցէք, անոր ոսկորները մարդ մը տեղէն չշարժէ. ուստի անոր ոսկորները Սամարիայէ եկող մարգարէին ոսկորներուն հետ թող տուին։ 19—Ու Յովսիա Սամարիայի քաղաքներուն մէջի բոլոր բարձր տեղերուն տաւներն ալ վերցուց, զորանք Իսրայէլի Թագաւորները բարկացուցեր էին. ու Բեթէլի մէջ բոլոր ըրածին պէս անոնց ալ ըրաւ։ 20—Ե՛ հոն գտնուած բարձրտեղերուն բոլոր քուրմերը սեղաններուն վրայ մորթեց, ու անոնց վրայ մարդու ոսկորներ այրեց. հետը Երուսաղէմ դարձաւ։

21—Ե՛ Թագաւորը բոլոր ժողովուրդին պատուիրեց՝ ըսելով, Ձեր Տէր Աստուծոյն զատիկ ըրէք, ինչպես այս ուխտի գիրքին մէջ գրուած է։ 22—Քանզի

*Եբր. տաւներ

*Եբր. կանչեց

Իսրայէլը գաւառ դաւառս երկրին օրէնքն ի վեր, և Իսրայէլի Թագաւորներուն ու Ցուդայի Թագաւորներուն բոլոր օրերն ալ այս զաւակին պէս եղած չէր։ 23—Բայց Յովսիա Թագաւորին տասներեքերորդ տարին այս զաւակը Տէրոջը եղաւ նրուաղէմի մէջ։

24—Ու նաև Յովսիա վհուկները, նյանոգեհաները ու Թերափիմները ու կուռքերը, և Ցուդայի երկրին մէջ ու Երուսաղէմի մէջ երեւցած բոլոր գարշելիները վերցուց, որպէս զի Քեղկիա քահանային՝ Տէրոջը տունը գտած գիրքին մէջ գրուած օրէնքին խօսքերը հաստատէ։ 25—Ու անկէ առաջ անոր նման Թագաւոր մը չեղաւ, որ իր բոլոր սրտովը ու բոլոր հոգւովը ու բոլոր զօրութիւնովը Տէրոջը դառնայ՝ Մովսէսի բոլոր օրէնքին համեմատ. ոչ ալ անկէ ետքը անոր նման եղաւ։ 26—Բայց Տէրը Ցուդայի վրայ բորբոքած իր մեծ ու սաստիկ բարկութենէն ետ չդարձաւ՝ այն բոլոր *չար գործերուն համար, որոնցմով Մանասէ զանիկա բարկացուցեր էր։ 27—Ու Տէրը ըսաւ, Ցուդան ալ իմ երեսէս պիտի ձգեմ, ինչպէս Իսրայէլը ձգեցի. ու պիտի մերժեմ այս քաղաքը, իմ ընտրած Երուսաղէմս, ու այս տունը՝ որուն համար ըսի Թէ իմ անունս հոն ըլլայ։

28—Ու Յովսիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ասոնց Ցուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 29—Անոր օրերը Եգիպտոսի Թագաւորը, Փարաւոն Նեքաոսանի Թագաւորին վրայ Եփրատ գետը եկաւ. ու Յովսիա Թագաւորը անոր դէմ ելլելու գնաց, ու անիկա Յովհաննէս տեսածին պէս՝ զանիկա մեռցուց Մակեդոնի մէջ։ 30—Ու անոր ծառաները անոր մարմինը Մակեդոնէ կառքով երուսաղէմ բերին, ու զանիկա իր գերեզմանին մէջ Թաղեցին. ու երկրին ժողովրդը Յովսիայի որդին Յովաքազը առին ու օծեցին, և զանիկա իր հօրը տեղ Թագաւոր դրին։

31—Յովաքազ քսանեւրեք տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երեք ամիս Թագաւորեցաւ Երուսաղէմի մէջ։ Եւ անոր մօրը անունը Ամիտաղ էր, ու Լբնացի Երեմիայի աղջիկն էր։ 32—Ու անիկա իր հայրերուն բոլոր ըրածին պէս Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։ 33—Ու Փարաւոն Նեքաով զանիկա Եմաթի երկիրը՝ Երիքովի մէջ բանտարկեց, որպէս զի երուսաղէմի մէջ Թագաւորութիւն չընէ. ու երկրին վրայ հարիւր տաղանդ արծաթ ու տասնդ մը ոսկի հարկ դրաւ։ 34—Ու Փարաւոն Նեքաով Յովսիայի որդին Եղիակիմը անոր հօրը Յովսիայի տեղ Թագաւոր դրաւ, ու անոր անունը փոխեց՝ Յովակիմ կոչեց. բայց Յովաքազը առաւ եգիպտոս տարաւ. ու անիկա հոն մեռաւ։ 35—Ու Յովակիմ այն արծաթը ու ոսկին Փարաւոնի տուաւ, բայց երկրին վրայ հարկ դրաւ՝ այն արծաթը Փարաւոնի պատուիրածին պէս տալու համար. ու երկրին ժողովրդէն, ամէն մարդուն վրայ դրուած հարկին համեմատ, արծաթը ու ոսկին տուաւ, որպէսզի Փարաւոն Նեքաովի տայ։

36—Երբ Յովակիմ Թագաւոր եղաւ՝ քսանհինգ տարեկան էր, ու երուսաղէմի մէջ տասնմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ։ Եւ անոր մօրը անունը Զաբդիա էր, ու Ռումացի Փադայիայի աղջիկն էր։ 37—Ու անիկա իր հայրերուն բոլոր ըրածին պէս Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։

Գլ. ԻԴ

1 Անոր օրերը Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը եկաւ. ու Յովակիմ երեք տարի անոր ծառայ եղաւ, ու ետքը դարձաւ անոր դէմ ապստամբեցաւ։ 2—Ու Տէրը անոր վրայ Քաղդեացոց գունդերը ու Ասորոց գունդերը և Մովաբացոց գունդերը ու Ամմոնի որդիներուն գունդերը ղրկեց. զանոնք Ցուդայի վրայ ղրկեց, որպէս զի զանիկա կործանէ Տէրոջը խօսքին համեմատ՝ զոր իր ծառաներուն, մարգարէներուն, ձեռքով խօսեր էր։ 3—Իրաւցընէ ասիկա Տէրոջը հրամանովը եղաւ Ցուդայի, որպէս զի վռնտէ իր առջեւէն մինչեւ Մանասէի ըրած բոլոր մեղքերուն համար, 4—Ու նաև անոր Թափած անմեղ արեանը համար, քանզի Երուսաղէմը անմեղ արիւնով լեցուց. ու Տէրը չուզեց որ ներէ։

5—Ու Յովակիմի մնացորդ պատմութիւնը ու անոր բոլոր ըրածը ահա Ցուդայի Թագաւորներուն յիշատակաց գիրքին մէջ գրուած են։ 6—Ու Յովակիմ իր հայրերուն հետ քնացաւ, և անոր տեղ անոր որդին *Յովաքին Թագաւոր եղաւ։

7—Ու եգիպտոսի Թագաւորը անկէ ետքը ելլելէն ալ իր երկրէն չելաւ, քանզի Բաբելոնի Թագաւորը Եգիպտոսի հեղեղատէն մինչեւ Եփրատ գետը՝ եգիպտոսի Թագաւորին ամէն ունեցածը առեր էր։

8—Յովաքին տասներեք տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ երեք ամիս Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Նեհուսթա էր, ու երուսաղէմացի Եղնաթանի աղջիկն էր։ 9—Ու անիկա իր հօրը բոլոր ըրածին պէս Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։

10—Ա՛յն ատեն Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ծառաները երուսաղէմ եկան, ու քաղաքը պաշարուեցաւ։ 11—Ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը քաղաքին վրայ եկաւ, երբ անոր ծառաները զանիկա պաշարեր էին։ 12—Ու Ցուդայի Թագաւորը Յովաքին իր մօրը ու իր ծառաներուն և իշխաններուն ու ներքինիներուն հետ Բաբելոնի Թագաւորին ելաւ. ու Բաբելոնի Թագաւորը իր Թագաւորութեանը ութերորդ տարին զանիկա բռնեց։ 13—Ու անկէ Տէրոջը տաճարը բոլոր գանձերը ու Թագաւորին տանը գանձերը հանեց. ու կտրտեց այն ամէն ոսկեզէն անօթներուն, զորս Իսրայէլի Սողոմոն Թագաւորը Տէրոջը տաճարին համար չիներ էր Տէրոջը ըսածին համեմատ։ 14—Ու բոլոր երուսաղէմը, ու ամէն իշխանները և ամէն զօրաւոր մարդիկը, տասը հազար գերի, ու ամէն հիւսները ու դարբիններ փչեց տարաւ. երկրին ժողովրդներուն աղքատներէն զատ մարդ մը չմնաց։ 15—Ու Յովաքինը Բաբելոն փոխադրեց, ու Թագաւորին մայրը ու Թագաւորին կիներն և անոր ներքինիները ու երկրին զօրաւորները երուսաղէմէ Բաբելոն գերի տարաւ։ 16—Ու բոլոր զօրաւոր մարդիկը եօթը հազար մարդ, ու հազար հինւ ու դարբին, որոնց ամէնն ալ պատերազմող կորիճներ էին, Բաբելոնի Թագաւորը գանոնք Բաբելոն գերի տարաւ։ 17—Ու Բաբելոնի Թագաւորը անոր տեղ անոր հօրեղբայրը Մաթանիան Թագաւոր դրաւ, ու անոր անունը Սեդեկիայի փոխեց։

18—Սեդեկիա քսանըմէկ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ տասնըմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ամիտաղ էր, ու Լբնացի Երեմիայի աղջիկն էր։ 19—Ու անիկա Յովակիմի բոլոր ըրածին պէս Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։ 20—Քանզի Տէրոջը բարկութիւնը երուսաղէմի ու Ցուդայի վրայ էր, մինչեւ որ զանոնք իր երեսէն ձգէ. անոր համար Սեդեկիա Բաբելոնի Թագաւորէն ապստամբեցաւ։

Գլ. ԻԵ

1 Ու եղաւ որ անոր Թագաւորութեանը իններորդ տարին տասներորդ ամիսը՝ ամսուն տասներորդը՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը իր բոլոր զօրքովը Երուսաղէմի վրայ եկաւ, ու անոր դիմաց բանակեցաւ. և անոր դէմ չորքանակի պատնէշներ չինեցին։ 2—Ու մինչև Սեդեկիա Թագաւորին մեռտասաներորդ տարին քաղաքը պաշարման մէջ էր։ 3—Ու ամսուն իններորդը քաղաքին մէջ սաստիկ սով կար, ու երկրին ժողովրդը հաց չունէր։ 4—Ու քաղաքին պարիսպը ճեղքուեցաւ, ու բոլոր պատերազմողները գիշերով Թագաւորի պարտէզին քով եղող երկու պարսպին մէջի դրանը ճամբային կողմէն փախան. ու Քաղդեացիք քաղաքին բոլորտիքը կեցեր էին. ու Խաչաբերը դաշտին ճամբային գնաց։ 5—Ու Քաղդեացոց զօրքը Թագաւորին հետեւեցի

*Եբր. զայրացութիւններուն

*ա Մն. գ. 16 Յ՚ԶԵՍՈՒ ՅԵՀՈՆԻԱ

ինկան, ու երիթովի դաշտերուն մէջ անոր հասան. և անոր բոլոր զօրքը՝ անոր փովին ցրուեցաւ, **6**—Ու Թագաւորը բռնեցին ու զանիկա Ռեբղա տարին Բաբելոնի Թագաւորին, և անոր դատաստանը տեսան։ **7**—Ու Սեդեկիայի ը զոյգը իր աչքերուն առջև մարթ ընդին, ու Սեդեկիայի աչքերը կուրացուցին, և զինքը շղթաներով կապեցին ու Բաբելոն տարին։

8—Ու Բաբելոնի Թագաւորին, Նաբուզոդոնոսոր Թագաւորին, տասնըմէկերորդ տարին հինգերորդ ամիսը, ամսուն ևօթներորդ ը՚ը Բաբելոնի Թագաւորին ծառան Նաբուզարդան գահճապետը երուսաղէմ եկաւ, **9**—Ու Տէրոջը տունը և Թագաւորին տունը այրեց, ու երուսաղէմ բոլոր տուները ու ամէն մեծ տուները կրակով այրեց։ **10**—Ու գահճապետին հետ եղող Քաղդէացւոց բոլոր զօրքերը երուսաղէմ չորս կողմէ պարիսպները փլուցին։ **11**—Ու քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը, ու Բաբելոնի Թագաւորին կյնող փախստականները ու մնացած բազմութիւնը Նաբուզարդան գահճապետը գերի տարաւ։ **12**—Ու գահճապետը երկրին աղքատներէն Թողուց այգեգործներ ու երկրագործներ ըլլալու համար։

13—Ու Քաղդէացիք Տէրոջը տունը մէջ եղող պղնձէ սիւները ու մեքենոյթները, ու Տէրոջը տունը մէջ եղող պղնձէ ծովը կոտր կոտր ըրին, ու անոնց պղինձը Բաբելոն տարին։ **14**—Ու թասրները ու թիակները և բազմակայնները ու խնկամաններ ու պաշտօնի համար գործածուած բոլոր պղնձէ անօթները առին։ **15**—Ու գահճապետը *ոսկիէ ու արծաթէ բաներուն ու կոնքերը առաւ։ **16**—Նաև Սողոմոնի Տէրոջը տանը համար չինած երկու սիւները, մէկ ծովը ու մեքենոյթները. բոլոր այս գործիքներուն պղինձը կշռելի չէր գար։ **17**—Մէկ սիւնին բարձրութիւնը տասնըութ կանգուն էր, և անոր վրայ պղնձէ խոյակ կար, ու խոյակին բարձրութիւնը երեք կանգուն էր. և խոյակին վրայ չորս շրջանակի ցանցակերպ գործ ու նռնաձեր կային, ամէնն ալ պղնձէ էին. ու միւս սիւնն ալ ցանցակերպ գործով այնպէս էր։

18—Ու գահճապետը առաջին քահանան Սարայիան ու երկրորդ քահանան Սոփոնիան ու երեք դռնապանները առաւ։ **19**—Ու քաղաքէն ներքինի մը առաւ, որ պատերազմող մարդոց զօրագլուխն էր. ու Թագաւորին *առջև կայնողներէն" քաղաքին մէջ գտնուած հինգ մարդ, ու երկրին ժողովուրդը զինուորութեան գրող՝ զօրքին մեծ գրագիրը, և քաղաքին մէջ գտնուած երկրին ժողովուրդէն վաթսուն մարդ ----։ **20**—Ու Նաբուզարդան գահճապետը զանոնք առաւ, ու Բաբելոնի Թագաւորին՝ Ռեբղա տարաւ։ **21**—Ու Բաբելոնի Թագաւորը զանոնք զարկաւ, ու Եմաթի երկրին Ռեբղային մէջ զանոնք մեռցուց։ Այսպէս Յուդա իր երկրէն գերի տարուեցաւ։ **22**—Բայց Յուդայի երկրին մէջ մնացած ժողովուրդը՝ զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը հո՛ Թողուցեր էր, անոնց վրայ Սափանեան Աքիկամի որդին Գոդոդոլիան կուսակալ դրաւ։

23—Ու զօրաց բոլոր իշխանները իրենց մարդոցմով երբ լսեցին որ Բաբելոնի Թագաւորը Գոդոդոլիան կուսակալ բրեր է, Գոդոդոլիայի՝ Մասիա եկան, այսինքն Նաթանիայի որդին Իսմայէլ, կարէհի որդին Յոհանան, ու Թանհումեթի որդին Նետոփաթացի Սարայիա, ու Մաաքաթիի որդին Յեզոնիա, Թէ՛ իրենք և Թէ՛ իրենց մարդիկը։ **24**—Ու Գոդոդոլիա անոնց ու անոնց մարդոցը երդումբրաւ, ու անոնց բաւ, Քաղդէացիներուն †ծառայութիւն ընելէն" մի վախնաք. այս երկրին մէջ բնակեցէք, և Բաբելոնի Թագաւորին ծառայութիւն բրէք, ու ձեզի պիտի բլլայ։

25—Ու եղաւ որ եօթներորդ ամիսը Թագաւորներուն սերունդէն եղող Եղիսամայի որդւոյն Նաթանիայի որդին Իսմայէլ տասը մարդով եկաւ, ու Գոդոդոլիան զարկին ու մեռաւ, նոյնպէս ալ

*Կամ, բազմաւորները ու կոնքերը առաւ, ինչ որ ոսկիէ էր էբրէ ոսկի, ու ինչ որ արծաթէ էր էբրէ արծաթ

*Եբր. երեսը տեսնողներէն. Եսթ. ա. 14։ †Կամ, ծառաներէն

անոր հետ Մասփա եղող Քաղդէացիները ու **26**—Ու բոլոր ժողովուրդը, պզտիկէն մինչև մեծը, ու զօրքերուն իշխանները ելան Եգիպտոս գացին, քանզի Քաղդէացիներէն վախցան։

27—Ու եղաւ որ Յուդայի Յոյաքին Թագաւորին գերութեանը երեսունևօթներորդ տարին երկոտասաներորդ ամիսը, ամսուն քսանևօթներորդ ը՚ը, Բաբելոնի Եվմարովդաք Թագաւորը, իր Թագաւոր եղած տարին. Յուդայի Յոյաքին Թագաւորին գլուխը բարձրա-



ցուց -- ը՚ՆԻ՚- բանտէն հանէց. **28**—Ու անոր հետ քաղցրութեամբ խօսեցաւ, ու անոր աթոռը Բաբելոնի մէջ իրեն հետ եղող Թագաւորներուն աթոռէն վեր դրաւ։ **29**—Ու անոր բանտի հագները փոխեց, ու անիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ միշտ անոր առջև հաց կ՚ուտէր։ **30**—Ու անոր առտիկը մշտական առտիկ ըլլալով, անոր կեանքին բոլոր օրերուն մէջ Թագաւորին կողմէն օրէ օր անոր կը տրուէր։

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Ադամ, Սեթ, Ենովս, **2**—Կայնան, Մաղաղիել, Յարեդ, **3**—Ենովք, Մաթուսաղա, Ղամէք, **4**— Նոյ, Սէմ, Քամ ու Յաբեթ։

5—Յաբեթի որդիները Գամէր, Մագոգ, Մադայ, Յաւան, Թոբէլ, Մոսոք ու Թիրաս էին։ **6**—Եւ Գամերի որդիները Աշքանազ, *Րիփաթ ու Թոգոմա էին։ **7**—Եւ Յաւանի որդիները Եղիսա, Թարսիս, Կիտացիք ու †Դոդացիք էին։

8—Քամի որդիները Քուշ, Մեսրայիմ, Փուտ ու Քանան էին։ **9**—Եւ Քուշի որդիները Սաբա, Եւիլա, Սաբաթա, Ռեգմա ու Սաբաթաքա էին։ Եւ Ռեգմայի որդիները Սաբա ու Դեդան էին։ **10**—Եւ Քուշ ծնաւ Նեբրովիմը. ասիկա սկսաւ երկրի վրայ զօրաւոր ըլլալ։ **11**—Եւ Մեսրայիմ ծնաւ Ղուդացիները, Անամացիները, Ղաբացիները, Նեփթուքացիները, **12**—Պաթրուսացիները ու Քասղուքացիները, (ուրկէ Փղշտացիք ելան,) ու Կափթորացիներն ալ։ **13**—Եւ Քանան ծնաւ իր անդրանիկը Սիդոնը, նաև Քեւոր, **14**—Եբրուսացին, Ամորհացին, Գերգեսացին, **15**— Խեւացին, Արուկեցին, Ասենացին, **16**—Արուադացին, Սամարացին ու Ամաթացին։

17—Սէմի որդիները, Եղամ, Ասուր, Արփաքսադ, Ղուդ, Արամ, Հուս, Հուլ, Գաթեր ու Մոսոք էին։ **18**—Եւ Արփաքսադ ծնաւ Սաղան, և Սաղա ծնաւ Եբերը. **19**—Ու Եբերի երկու որդի ծնան. մէկուն անունը ‡Փաղէկ էր, քանզի երկիրը անոր օրերը բաժնուեցաւ. և անոր եղբօրը անունը Յեկտան էր։ **20**—Ու Յեկտան ծնաւ Նեղմադադ, Սաղափը, Ասարմաթը, Յարաքը, **21**—Ադորամը, Ուզալը, Դեկղան, **22**—Գեբալը, Աբիմեէլը, Սաբան, **23**—Ոփիրը, Եւիլան ու Յոբաբը. ամէն ասոնք Յեկտանի որդիներն էին։

24—Սէմ, Արփաքսադ, Սաղա, **25**· Եբեր, Փաղէկ, Ռագաւ, **26**—Սերուգ, Նաքովր, Թարա, **27**—Աբրամ, այսինքն Աբրահամ։

28—Աբրահամի որդիները Իսահակ ու Իսմայէլ էին։ **29**—Անոնց ծնունդները ասոնք են. Իսմայէլի անդրանիկը՝ Նաբէոթ, եաքը Կեդար, Ադբեէլ, Մաբսամ, **30**—Մասմա, Դումա, Մասսէ, Քադադ, **31**— Թեմա, Յետուր, Նաֆիս ու Կեդմա։ Իսմայէլի որդիները ասոնք էին։

32—Եւ Աբրահամի հարճին Քետուրայի որդիները. անիկա ծնաւ Զեմրանը, Յոկսանը, Մադանը, Մադիանը, Յեսբոկը ու Սուհէն։ Ու Յոկսանի որդիները Սաբա ու Դեդան էին։ **33**—Եւ Մադիանի որդիները Գեփա, Ափեր, Ենովք, Աբիդա ու Եղդաա էին. ասոնք ամէնը Քետուրայի որդիներն էին։

34—Եւ Աբրահամ ծնաւ Իսահակը։ Իսահակի որդիները Եսաւ ու Իսրայէլ էին։ **35**—Եսաւի որդիները եղիփազ, Ռագուէլ, Յեուս, Յեղդոմ ու Կորհ էին։ **36**—Եղիփազի որդիները Թեման, Օմար, Սեփոյ, Գոթամ, Կենէզ, Թամնա ու Ամաղէկ էին։ **37**— Ռագուէլի որդիները Նահաթ, Զարա, Սամմա ու Մզա էին։ **38**—Ու Սէիրի որդիները Ղոտան, Սոբաղ, Սեբէգօն, Անա, Դիսաօն, Եսէր ու Դիսան էին։ **39**—Եւ Ղոտանի որդիները Քոռի ու Հեմամ էին. և Թամնա Ղոտանի քոյրն էր։ **40**— Սոբաղի որդիները Գաղուան, Մանահաթ, Գեբաղ, Սեփով ու Օնամ էին։ Ու Սեբէգօնի որդիները Այեա ու Անա էին։ **41**— Անոյի որդին Դիսօն, ու Դիսօնի որդիները Ամրան, Եսբան, Յեթրան ու Քառան էին։ **42**—Եսէրի որդիները Բաղդան, Զաւան ու Յականան էին։ Դիսանի որդիները Հուս ու Առան էին։

43—Ու ասոնք են այն թագաւորները որոնք Եդոմի երկրին մէջ թագաւորեցին՝ Իսրայէլի որդիներուն վրայ թագաւորի մը թագաւորելէն առաջ. Բեղորի որդին Բալա, ու անոր քաղաքին անունը Դենհաբա էր։ **44**—Ու Բալա մեռաւ, ու անոր տեղ Բոսրացի Զարայի որդին Յոբաբ թագաւորեց։ **45**—Եւ Յոբաբ մեռաւ, ու անոր տեղ Թեմանացւոց երկրէն Հուսամ թագաւորեց։ **46**—Ու Հուսամ մեռաւ, ու անոր տեղ Բադադի որդին Ադադ թագաւորեց, որ Մովաբի գաշտին մէջ Մադիանացիները կոտորեց. և անոր քաղաքին անունը Աւիթ էր։ **47**—Ու Ադադ մեռաւ, ու անոր տեղ Մասրեկացի Սամղա թագաւորեց։ **48**—Ու Սամղա մեռաւ, և անոր տեղ Գետին գտնուած Հոռովթ եղող Սաւուղը թագաւորեց։ **49**— Ու Սաւուղ մեռաւ, ու անոր տեղ Աքբորի որդին Բաալհանան թագաւորեց։ **50**— Ու Բաալհանան մեռաւ, ու անոր տեղ Ադադ թագաւորեց. և անոր քաղաքին անունը Փաւվով էր, ու անոր կնոջ անունը Մեհաբաբէել էր, որ Մէզահաբի աղջիկան Մատրեթի աղջիկն էր։

51—Ու Ադադի մեռնելէն եաքը Եդոմի իշխանները եղան, Թամնա իշխան, Գաղուա իշխան, Յեթեթ իշխան, **52**—Ողիբամա իշխան, Էլա իշխան, Փինոն իշխան, **53**—կենէզ իշխան, Թեմանի իշխան, Մաբզար իշխան, **54**—Մագդիէլ իշխան, Իրամ իշխան. Եդոմի իշխանները ասոնք էին։

ԳԼ. Բ

Իսրայէլի որդիները ասոնք են. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Զաբուղոն, **2**—Դան, Յովսէփ, Բենիամին, Նեփթաղիմ, Գադ ու Ասեր։

3—Յուդայի որդիները էր, Օնան ու Սելա էին. այս երեքը Քանանացի Շուայի աղջիկէն ծնան անոր. ու Յուդայի անդրանիկը էր Տէրովը ատկի չար ըլլալուն համար՝ Տէրը զանիկա մեռցուց։ **4**—Եւ անոր հարսը Թամար՝ Փարէսը ու Զարան ծնաւ անոր։ Յուդայի բոլոր որդիները հինգ էին։

5—Ու Փարէսի որդիները Եսրոն ու Համուլ էին։ **6**—Եւ Զարայի որդիները Զամբրի, Եթան, Եման, Քալքօլ ու *Դարա. ամէնը հինգ էին։ **7**—Եւ Քարմիի որդին Ախար էր, որ նզովածով մեղք գործեց, ու Իսրայէլը նեղութեան մէջ ձգեց։ **8**—Ու Եթանի որդին Ազարիա էր։ **9**—Ու Եսրոնի որդիները՝ որոնք անոր ծնան, Յերամէլ, †Ռամ ու ‡Քեղուբայ էին։

10—Եւ Ռամ ծնաւ Ամինադաբը, ու Ամինադաբ ծնաւ Յուդայի որդիներուն իշխանը Նաասոնը։ **11**—Եւ Նաասոն ծնաւ Սալմոնը, ու Սալմոն ծնաւ Բոոզ։ **12**—Եւ Բոոզ ծնաւ Ովբէդ, ու Ովբէդ ծնաւ Յեսսէ։ **13**—Եւ Յեսսէ ծնաւ իր անդրանիկը Եղիաբը, ու երկրորդը Աբինադաբը, ու երրորդը Սիմաան, **14**—Չորրորդը Նաթանայէլը, հինգերորդը Հադդային, **15**—Վեցերորդը Ասոմ ու եօթներորդը Դաւիթ։ **16**—Ու անոնց քոյրերը Շարուհիա ու Աբիգէա էին։ Ու Շարուհիայի որդիները երեք էին. Աբեսա, Յովաբ ու Ասայէլ։ **17**—Եւ Աբիգէա ծնաւ Ամեսային, ու Ամեսային հայրը Իսմայէլացի Յեթեր էր։

18—Ու Եսրոնի որդին Քաղէբ կնոջմէն Ազուբայէ ու Յերիովթէ որդիներ ծնաւ. և ասոր որդիները ասոնք են. Յասեր Սովբաբ ու Արդոն։ **19**—Ու երբ Ազուբա մեռաւ, Քաղէբ իրեն կին ուներ Եփրաթը, որ անոր ծնաւ Ովրը։ **20**—Եւ Ովր ծնաւ Ուրին, և Ուրի ծնաւ Բեսալէէլը։

21—Եւ ետքը Եսրոն Գաղաադացի Յորը Մաքիրի աղջկան մօտ ուզանիկա մաւ, և ինք վաթսուն տարեկան էր. ու անիկա Սեգուբը ծնաւ անոր։ **22**—Ու Սեգուբ ծնաւ Յայիրը, ու ասիկա Գաղաադայ երկրին մէջ քսանեւերեք քաղաք ունէր։ **23**—Ու ||Գեսուրը և Արամը՝ Յայիրի գիւղա-

*Կամ, Դիփաթ
†Կամ, Ռոդացիք
‡Այլ՝ Քաժանուած. Ես. ժ. 25։

*Կամ, Դարգա †Եէբ. Բամ
‡Կամ, Քաղէբ. տես Հմր. 18, 42։
||Կամ, Գեսուրացւոց ու Ասորացոց երկրէն

քաղաքները, կանաթը ու անոր գեղերը, վաթսուն քաղաք, առաւ ա-նոնցմէ. ասոնց ամէնը Գազաւդա հօրը Մաքիրի որդիներուն էին։ 24—Ու *Եսրոն Բազէբ-եփրաթայի մէջ մեռնելէն ետքը, Եսրոնի կինը Աբիա՝ անոր ծնաւ Թեկուէէի հայրը Ասքուրը։

25—Ու Եսրոնի անդրանկան Յերահմէլի որդիները ասոնք էին. անդրանիկը Համ, Բաւնա, Օրէն, Ասոմ — Աբիա։ 26—Ու Յերահմէլ ուրիշ կին մը ունէր, ու անոր անունը Ատարա էր. անիկա Օնամի մայրը եղաւ։ 27—Ու Յերահմէլի անդրանկան Համի որդիները ասոնք էին. Մաաս, Յամին ու Ակեր։ 28—Ու Ոնամի որդիները Սամայի ու Յադա էին։ Ու Սամայիի որդիները Նադաբ ու Աբիսուր էին։ 29—Ու Աբիսուրի կնոջ անունը Աբիհայիլ էր, որ անոր ծնաւ Աքբանը ու Մոլոիդը։ 30—Ու Նադաբի որդիները Սաղադ ու Ափփիմ էին. ու Սաղադ անորդի մեռաւ։ 31—Ու Ափփիմի որդին Յեսսի, ու Յեսսիի որդին Սեսան, ու Սեսանի որդին Աղայի էր։ 32—Ու Սամայիի եղբօրը Յադայի որդիները Յէթէր ու Յոնաթան էին. ու Յէթէր անորդի մեռաւ։ 33—Ու Յոնաթանի որդի-ները փաղէթ ու Զազա էին։ Յերահմէլի որդիները ասոնք էին։

34—Ու Սեսան տղաքներ չունեցաւ, բայց միայն աղջիկներ։ Ու Սեսան Յարքա անունով եգիպտացի ծառայ մը ունէր։ 35—Ու Սեսան իր աղջիկը իր Յարքա ծառային կին առաւ. որ անոր Եթթին ծնաւ։ 36—Ու Եթթի ծնաւ Նաթանը, և Նաթան ծնաւ Զաբաթը, 37—Ու Զաբաթ ծնաւ Ոփղադը, և Ոփ-ղադ ծնաւ Ովբէդը։ 38—Ու Ովբէդ ծնաւ Յէհուն, և Յէհու ծնաւ Ազա-րիան, 39—Ու Ազարիա ծնաւ Քելղէսը, և Քելղէս ծնաւ Եղեասան, 40—Ու Եղեասա ծնաւ Սասոմն, և Սա-սոմէ ծնաւ Սեղղումը, 41—Ու Սեղ-ղում ծնաւ Յեկամիան, և Յեկամիա ծնաւ Եղիսաման։

42—Ու Յերահմէլի եղբօրը Քաղէբի որդիները. անոր անդրանիկը Մեսա՝ Զիփի Հայրն էր, ու Քեբրոնի Հայրը Մարեսայի որդին էր։ 43—Ու Քեբրոնի որդիները կարգ ու Թափուա և Բակամ ու Սեմա էին։ 44—Ու Սեմա ծնաւ Հաւամը՝ Յարկաամի Հայրը, ու Թա-կամ ծնաւ Սամային։ 45—Ու Սամայիի որդին Մաոն էր. ու Մաոն Բեթսուրի Հայրն էր։ 46—Ու Քազէբի հարճը Գեփա ծնաւ Հաասեր, Մաոան ու Գա-զէզը. և Հաան ծնաւ Քազէզը։ 47—Ու Յադայիի որդիները Համոլէմ, Յո-վաթամ, Գեսան, Փաղէտ, Գեփա ու Սագաֆ էին։ 48—Ու Քազէբի հարճը Մաահա ծնաւ Սեբերը ու Թարանան։ 49—Նաև ծնաւ Մաքմաննայի Հայրը Սագաֆը, ու Մաքբաքենայի Հայրը ու Գարասայի Հայրը Շուան. և Քազէբի աղջիկը Աքսա էր։

50 — Եփրաթի անդրանկան Ովբի որդւոյն Քազէբի որդիները ասոնք էին. Կարիաթարիմի Հայրը Սոբալ, 51 — Բեթլեհէմի Հայրը Սալման, Բեթգա-դերի Հայրը Հարեփ։ 52—Ու Կարիա-թարիմի Հօրը Սոբալի որդիները Հարօէ — Մանահաթացւոց կէսն էին։ 53— Ու Կարիաթարիմի առնիները Յեթերա-ցիք, Փութացիք, Սամաթացիք ու Մա-սարացիք էին. Սարաացիք ու Եսթա-ուաղցիք ասոնցմէ ելան։ 54—Սալ-մայի որդիները Բեթլեհէմ, Նետոփա-թացիք, Աւտարովթ, Յուաբովթ ուռնը ու Մանահաթացւոց կէսը — Սարացիք էին։ 55— Ու Գաբէսի մէջ բնակող դպիրներուն առնիները Թարգաթացիք, Սամաթացիք, Յուկաթացիք. ասոնք Ռեքաբի ռանը հօրմէն ելլող Կենեցիք էին։

ԳԼ. Գ

Ու Դաւիթի Քեբրոնի մէջ ծնած որդիները ասոնք էին. անդրանիկը Ամ-նոն՝ Յեզրաելացի Աքինոամէ, երկրորդը Դանիէլ՝ Կարմելացի Աբիգեայէ, 2— երրորդը Աբիսողոմ՝ Գեսուրի Թագաւո-րին Թալմիի աղջկանը Մաաքայի որդին, չորրորդը Ադոնիա՝ Ագգիթի որդին, 3—Հինգերորդը Սափատիա՝ Աբիտալէ, վեցերորդը Յեթրաամ՝ իր կնոջմէն Եգ-լայէ։ 4—Այս վեցը անոր ծնան Քեբ-րոնի մէջ. և հոն եօթը տարի ու վեց ամիս Թագաւորութիւն ըրաւ, ու երու-սաղէմի մէջ երեսունեւերեք տարի Թա-գաւորութիւն ըրաւ։

5—Ու երուսաղէմի մէջ ասոնք ծնան անոր. Սամմուա, Սովբաբ, Նաթան ու Սա-ղոմոն. այս չորսը Ամիէլի աղջիկէն, Բէր-սաբէէ, [illegible]։ 6—Ու Յեբհաար ու *Եղիսամա ու Եղիփազէտ, 7—Ու Նոգա ու Նափեկ և Յափիէ, 8—Ու Եղիսամա ու Եղիադա ու Եղիփազէտ. ասոնք իննն էին։ 9—Այսենն ալ Դաւիթի որդիներն էին, Հարճերուն որդիներէն ու անոնց քրոջմէն, Թամարէ, զատ։

10—Ու Սողոմոնի որդին Ռոբովամ էր. անոր որդին Աբիա, անոր որդին Ասա, անոր որդին Յոսափատ, 11— Անոր որդին Յովրամ, անոր որդին Ոքո-զիա, անոր որդին Յովաս, 12—Անոր որդին Ամասիա, անոր որդին Ազարիա, անոր որդին Յոսափատ, 13—Անոր որ-դին Աքազ, անոր որդին Եզեկիա, անոր որդին Մանասէ, 14—Անոր որդին Ա-մոն, անոր որդին Յոսիա։ 15—Ու Յոսիայի որդիները՝ անդրանիկը Յոհա-նան, երկրորդը Յովակիմ, երրորդը Սե-դեկիա, չորրորդը Սեղղում էր։ 16—Ու Յովակիմի որդիները՝ անոր որդին Յե-քոնիա, անոր որդին Սեդեկիա էր։ 17— Ու Յեքոնիայի որդիները՝ Ասիր, անոր որդին Սաղաթիէլ. 18—Նաև Մելքի-բաամ, Փադայիա, Սանէսար, Յեկամիա, Ոսամա ու Նեդաբիա էին։ 19—Ու Փադայիայի որդիները Զօրաբաբէլ ու Սեմէի էին. ու Զօրաբաբէլի որդիները՝ Մեսուղամ ու Անանիա. ու անոնց քոյ-րը Սաղոմիթ էր. 20—Նաև Ասուբա ու Ոհել և Բարաքիա ու Ասադիա և Յով-սաբեսեդ՝ հինգ էին։ 21—Ու Անանիայի որդիները փաղատիա ու Եսայի էին. †Հռափայիայի որդիները, Ռոնայի որ-դիները, Աբդիայի որդիները, Սեքե-նիայի որդիները։ 22—Ու Սեքենիայի որդին Սեմայիա էր, ու Սեմայիայի որ-դիները Հետտուս և Իգալ ու Բերիա և Նաարիա ու Սափատ՝ վեց հոգի։ 23—Ու Նաարիայի որդիները Եղիովենայի ու Եզեկիա ու Եզրիկամ՝ երեք էին։ 24— Ու Եղիովենայի որդիները Ովդուիա ու Եղիասիբ և Փաղայիա ու Ակկուբ և Յո-հանան ու Դալայի և Անանի՝ եօթն էին։

ԳԼ. Դ

Յուդայի որդիները Փարէս, Եսրոն ու Քարմի և Ուր ու Սոբալ էին։ 2— Ու Սոբալի որդին Ռէայիա Յեթը ծնաւ. ու Յեթ Աքիմայիի ու Ղաադը ծնաւ. Սարաացւոց առնիները ասոնք են։ 3—Ու Էտամի *հօրմէն ասոնք եղան. Յեզրա-յէլ ու Յեսմա ու Յեզրաս. և անոնց քրոջը անունը Նեսղելփօն էր։ 4—Ու Գեդովրի հայրը Փանուէլ, և Ովսայի հայրը Եզեր էր. ասոնք Բեթլեհէմի հօ-րը, Եփրաթի, անդրանկան Ովբի որ-դիներն էին։

5—Ու Թեկուէի հայրը Ասքուր եր-կու կին ունէր, Եղաա ու Նաարա. 6— Ու Նաարա անոր ծնաւ Ոքզոամը, Ոփե-բր, Թեմանը ու Ահաստարին. Նաարայի որդիները ասոնք էին։ 7—Ու Եղաայի որդիները Սարէթ, Սահաա ու Եթնան էին։ 8—Ու Կոս ծնաւ Ենովբը, Սոբե-բան, ու Հարումի որդւոյն Ահարհէլի առնիները։

9—Ու Գաբես իր եղբայրներէն փա-ռաւոր էր. ու անոր մայրը անոր անունը †Գաբես դրաւ՝ ըսելով, Զանիկա սըրտա-մաբեամբ ծնայ։ 10—Ու Գաբես Իս-րայէլի Աստուծոյն աղաղակեց ու ըսաւ, եթէ՝ Թէ ամէն կզմանէ զիս օրհնես ու իմ սահմանս մեծցնես, և քու ձեռքդ ինծի հետ ըլլայ, ու զիս չարէն ազատես, որպէս զի ինծի տրտմութիւն չըլլայ։ Եւ Աստուած անոր խնդիրքը կատարեց։

11—Ու Սահայի եղբայրը Քեղուբ Մաքիրը ծնաւ, որ Եսթոնի հայրն էր։ 12—Ու Եսթոն Բեթռափան ու Փասէն և Իրնահասի հայրը Թահան. ա-սոնք Հռեքայի մարդիկն էին։ 13—Ու

*կամ, եղիսաւա. ր. Թագ. ե. 15։
†կամ, անոր որդին Հռափայիա, անոր որդին Ռոնա, անոր որդին Աբդիա, անոր որդին Սեքենիա

*կամ, որդիները
†Այսինքն՝ տրտմութիւն

կենէզի որդիները Գոթոնիէլ ու Սաբայիա էին, և Գոթոնիէլի որդին Աթաթ էր։ 14—Ու Մաոնաթայի ծնաւ Եփրան. և Սաբայիա ծնաւ Յովաբը, *Գեղարասիմի հայրը. (քանզի անոնք արհեստաւորներ էին) 15—Ու Յեփոնեան Քաղէբի որդիները Իրու, Լէա ու Նաամ էին. ու Լէայի որդին կենէզ էր։ 16—Ու Յալէլէլի որդիները Զիփ, Զիբա, Թիրիա ու Ասարէլ. 17—Ու Եզրայի որդիները Յեթէր, Մօրադ, Ափէր ու Յաղոն էին. ու =՚՚՚՚ կինը ծնաւ Մարիամը և Սամային ու Եսթեմոյի հայրը Յեսբան. 18—Ու անոր կինը Յուդիա ծնաւ Գեդովրի հայրը Յարեդը, Սոքովի հայրը Խաբերը ու Զանոյի հայրը Յեկթիէլը. և Մօրադի առած փարաւոնի աղջկան, Բեթիայի, որդիներըասոնք էին։ 19—Ու =՚՚՚՚ կնոջ Նայեմի քոյրը, Ովդեայի, որդիները Կեիլայի հայրը Գարմի, ու Մաքաթացի Եսթեմոյի էր։ 20—Ու Սիմոնի որդիները Ամնոն, Հաբինա, Բենհանան ու Թիղոն էին. ու Յեսսեյի որդիները Զոհէթ ու Բենզոհէթ էին։

21—Ու Յուդայի որդւոյն Սելայի որդիները՝ Ղեքայի հայրը էր, ու Մարեսայի հայրը Ղասդա, և Աբէլայի տունը, բեհեզագործներուն տունը, տոհմերն էին։ 22—Նաև Յովակիմ և Քոզեբայի մարդիկը ու Յովաս և Սարափ, որոնք Մոլաբի մէջ տասզուած ունեցան, ու Յասուբի-Լեհէմ. իսկ ասոնք հին բաներ են։ 23—Ասոնք բրուտներ էին և Նեթայիմի ու Գադերայի մէջ կը բնակէին. թագաւորին գով անոր գործին համար հոն կը բնակէին։

24—Շմաւոնի որդիները Նամուէլ, Յամին, Յարիբ, Զարա ու Սաուղ. 25—Անոր որդին Սեղղում, անոր որդին Մարասա, անոր որդին Մասմա։ 26—Ու Մասմայի որդիները, անոր որդին Ամուէլ, անոր որդին Զաքուր, անոր որդին Սեմէի։ 27—Ու Սեմէի տասնըվեց տղայ ու վեց աղջիկ ունէր, բայց անոր եղբայրները շատ տղաքներ չունէին. ու անոնց բոլոր տոհմերը Յուդայի որդիներուն չափ չշատցան։ 28—Ու անոնք Բեերսաբէէի ու Մօղադայի ու Ասեր-սուաղի, 29—ու Բաղայի ու Ասեմի և Թուղադի, 30—ու Բաթուէլի ու Հորմայի և Սիկեղլակի, 31—ու Բեթմարքաբոթի և Ասեր-սուսիմի ու Բեթբարէթիի և Սաղարիմի մէջ բնակեցան. մինչև Դաւիթի թագաւոր եղած տունը տասնք էին անոնց քաղաքները։ 32—Ու անոնց գեղերը՝ Նո՚ եթամ, Ային, Ռեմոն, Թոքան ու Ասան, հինգ քաղաք։ 33—Ու այս քաղաքներուն բոլորտիքը եղած բոլոր գեղերը մինչև Բաալ, անոնց բնակութիւնները ու տոհմաճանները տասնք էին։ 34—Ու Մոսոբաբ և Ամլէք ու Ամասիայի որդին Յոսա, 35—ու Յովէլ ու Ասէելի որդւոյն Սարայիայի որդւոյն Յոսաբիայի որդին Յէու, 36—Ու Եղիվէնայի ու Յեկեբա և Յասուխա ու Ասայիա և Ադիէլ ու Յեսիմիէլ ու Բանեա, 37—Ու Սեմայիայի որդւոյն Սամարիի որդւոյն Յեդայիայի որդւոյն Ազոնի որդւոյն Սեփեի որդին Զիզա։ 38—Այս անուններով յիշուածները իրենց տոհմերուն մէջ իշխաններ էին, ու անոնց ազգաւոհմները խիստ շատցան։ 39—Ու իրենց անասուններուն համար արօտ փնտռելով՝ Գեդովրի մուտքը գացին մինչև ձորին արեւելեան կողմը։ 40—Ու առաւտ ու ազէկ արօտ գտան. ու այն երկիրը ընդարձակ էր, և խաղաղութեան ու հանդարտութեան մէջ էր. քանզի առաջ Քամ եղողները հոն կը բնակէին։ 41—Ու այս անուններով գրուածները Յուդայի Եզեկիա թագաւորին օրերը գացին, ու անոնց վրանները և հոն գտնուած բնակարանները զարկին, ու զանոնք բնաջինջ ըրին մինչև այսօր, և անոնց տեղը բնակեցան. վասն զի հոն իրենց հօտերուն համար արօտ կար։ 42—Ու անոնցմէ, այսինքն Շմաւոնի որդիներէն, հինգ հարիւր մարդ Սեիր լեռը գացին, իրենց վրայ Յեսսիի որդիները Փալտիան, Նեարիան, Հռափայիան ու Ոզիէլը իշխան ունենալով. 43—ու Ամաղկի փախրատական մնացորդները զարկին, ու մինչև այսօր հոն բնակեցան։

*Այսինքն՝ արհեստաւորաց ձորին

*կամ, ազգաբանութիւնները

Գլ. Ե

Ե Իսրայէլի անդրանկան Ռուբէնի որդիները. (քանզի անդրանիկը անիկա էր. բայց իր հօրը անկողինը պղծելուն համար՝ իր անդրանկութեան իրաւունքը Իսրայէլի որդւոյն Յովսէփի որդիներուն արուեցաւ. ու ազգաւոհմային մէջ անդրանիկի պէս չգրուեցաւ։ 2—Իսկ Յուդա իր եղբայրներէն զօրաւոր եղաւ, ու անկէ իշխաններ ելան, բայց անդրանկութեան իրաւունքը Յովսէփին էր։) 3—Իսրայէլի անդրանկան Ռուբէնի որդիները Ենովք, Փալլու, Եսրոն ու Քարմի էին։ 4—Յովէլի որդիները. անոր որդին Սեմայիա, անոր որդին Գոգ, անոր որդին Սեմէի, 5—Անոր որդին Միքա, անոր որդին Ռեայիա, անոր որդին Բաալ, 6—Անոր որդին Բէերա, զոր Ասորեստանի Թագլաթ-փաղասար թագաւորը գերի տարաւ. անիկա Ռուբենեանց իշխանն էր։ 7—Ու անոր եղբայրները իրենց տոհմերուն կրե ազգաւոհմային մէջ գրուելացան, =՚՚՚՚ գլխաւորը Յեհիէլ էր, Եզրէ Զաքարիա, 8—Ու Յովէլի որդւոյն Սեմայի որդւոյն Ագազի որդին Բաղա, Ասիկա Արոերի մէջ, ու =՚՚՚՚ մինչև Նաբաւ ու Բէելմոն բնակեցաւ. 9—Ու արեւելեան կողմը՝ Եփրատ գետէն մինչև անապատը բնակեցաւ, քանզի անոնց անասունները Գաղաադու երկրին մէջ չատցեր էին։ 10—Ու Սաուղի օրերը անոնք պատերազմ ըրին Հագարացւոց հետ, որոնք իրենց ձեռքը ինկան. ու Գաղաադու բոլոր արեւելեան կողմերը՝ անոնց վրաններուն մէջ բնակեցան։

11—Ու Գադի որդիներըասոնց դիմաց Բասանու երկրին մէջ բնակեցան մինչև Սելքա. 12—Գլխաւորը Յովէլ, ու երկրորդը Սափամ, եաքը Յանայի ու Սափատ՝ Բասանի մէջ։ 13—Ու անոնց եղբայրները իրենց ազգաւոհմիներուն համեմատ՝ Միքայէլ, Մեսուլամ, Սաբէէ, Յովքէ, Յաքան, Զիա ու Եբեր՝ եօթն էին։ 14—Ասոնք Բուզի որդւոյն Յահդոյի որդւոյն Յեհոսայի որդւոյն Միքայէլի որդւոյն Գաղաադի որդւոյն Յարոայի որդւոյն Հուրիի որդւոյն Աբիքայէլի որդիներն էին։ 15—Անոնց ազգաւոհմիներուն իշխանը Գաւնիի որդւոյն Աքդիէլի որդին Ահի էր։ 16—Ու անոնք Գաղաադ ու Բասանի ու անոր գիւղաքաղաքներուն մէջ, ու Սարոնի բոլոր արտարձաններուն մէջ՝ մինչև անոնց սահմանները բնակեցան։ 17—Ամէն ասոնք Յուդայի Յովաթամ թագաւորին օրերը, ու Իսրայէլի Յերոբովամ թագաւորին օրերը ազգաւոհմերին մէջ գրուեցան։

18—Ռուբէնի որդիները ու Գադեանք ու Մանասէի կէս ցեղը՝ քաջասանձնչուռս հազար եօթը հարիւր վաթսուն զօրաւոր, վահան ու սուր կրող, և աղեղ քաշող, պատերազմ սորված, ու պատերազմի ելլող մարդիկ էին։ 19—Ու անոնք Հագարացւոց, Յետուրացւոց, Նափեսացւոց ու Նոդաբացւոց հետ պատերազմ ըրին։ 20—Ու անոնց յաղթեցին. ու Հագարացիք և բոլոր անոնց հետ եղողները անոնց ձեռքը արուեցան. քանզի անոնք պատերազմի մէջ Աստուծոյ աղաղակեցին, ու անոնց լսեց, վասն զի անոր ապաւինեցան։ 21—Ու անոնց անասուններէն, յիսուն հազար ուղտ, ու երկու հարիւր յիսուն հազար ոչխար, ու երկու հազար էշ, և հարիւր հազար մարդ գերի բրին։ 22—(Քանզի շատերը մեռած ինկան. վասն զի այս պատերազմը Աստուծմէ էր.) ու մինչև գերութիւնը անոնց տեղը բնակեցան։

23—Ու Մանասէի որդիներուն կէս ցեղը այն երկրին մէջ բնակեցան, Բասանէ մինչև Բաալհերմոն, Սանիր ու Հերմոն լերան, =՚՚՚՚ բազմաթիւ էին։ 24—Ու անոնց ազգաւոհմիներուն իշխանները ասոնք էին. Ափէր, Յեսքի, Եղիէլ, Եզրիէլ, Երեմիա, Ոզդուխ ու Յաքդիէլ, որոնք զօրաւոր, քաջ ու անուանի մարդիկ էին, ու իրենց ազգաւոհմիներուն իշխաններն էին։

25—Ու իրենց հայրերուն Աստուծոյն դէմ ապստամբեցան, ու այն երկրին ազգերուն աստուածներուն հետևելէն երբ պոռնկեցան, զորոնք Աստուած անոնց առջևէն բնաջինջ ըրած էր։ 26—Ու Իսրայէլի Աստուածը Ասորեստանի Փուղ թագաւորին հոգին ու Ասորեստանի Թագլաթ-փաղասար թա-

գաւառին հոգին գրգռեց, ու Իսբաղնեանները, Գադեանները ու Մանասէի կէս ցեղը գերի բռաւ, և զանոնք Գազա ու Քաքովը ու Հարա ու Գովզան գետը տարաւ մինչև այսօր։

Գլ. Զ

1 Ղևիի որդիները Գերսոն, Կահաթ ու Մերարի էին։ 2 Ու Կահաթի որդիները Ամրամ, Իսհառ, Քեբրոն ու Ոզիել էին։ 3 Ու Ամրամի որդիները Ահարոն, Մովսէս ու Մարիամ էին։ Ու Ահարոնի որդիները Նադաբ, Աբիհու, Եղիազար ու Իթամար էին։ 4 Եղիազար Փենհէսը, Փենհէսն Աբիսուան, 5 Աբիսուա Բակկին, Բակկի Ոզին, 6 Ոզի Զարհիան, Զարհիա Մարիոթը, 7 Մարիոթ Ամարիան, Ամարիա Ծրնաւ Աքիտոբը, 8 Աքիտոբ Ծրնաւ Սադովկը, Սադովկ Աքիմաասը, 9 Աքիմաաս Ազարիան, Ազարիա Յովհանանը, 10 Յովհանան Ազարիան։ (Ասիկա էր որ Սողոմոնի Երուսաղէմ շինած տաճարին մէջ քահանայութիւն բրաւ։) 11 Ազարիա Ամարիան, Ամարիա Աքիտոբը, 12 Աքիտոբ Սադովկը, Սադովկ Սեղլումը, 13 Սեղլում Քեղկիան, Քեղկիա Ազարիան, 14 Ազարիա Սարայիան, Սարայիա Յովսեդեկը։ 15 Յովսեդեկ գնաց, երբ Տէրը Յուդան ու Երուսաղէմը Նաբուգոդոնոսորի ձեռքով փոխադրեց։

16 Ղևիի որդիները Գերսոն, Կահաթ ու Մերարի էին։ 17 Ու Գերսոնի որդիներուն անունները սոսկ էին Ղաբնի ու Սեմէի։ 18 Ու Կահաթի որդիները Ամրամ, Իսհառ, Քեբրոն ու Ոզիել էին։ 19 Մերարիի որդիները Մողի ու Մուսի էին։ ԵՒ ասոնք են Ղևտացւոց տոհմերը իրենց հայրերուն համեմատ։

20 Գերսոնի որդին Ղաբնի, անոր որդին Զեթ, անոր որդին Զամմա, 21 Անոր որդին Յովաբ, անոր որդին Ադդով, անոր որդին Զերա, անոր որդին Յաթրի էր։

22 Կահաթի որդիները. անոր որդին Ամինադաբ, անոր որդին Կորհ, անոր որդին Ասիր, 23 Անոր որդին Եղկանա, անոր որդին Աբիասաբ, անոր որդին Ասիր, 24 Անոր որդին Թահաթ, անոր որդին Ուրիէլ, անոր որդին Ոզիա ու անոր որդին Սաւուղ էր։ 25 Ու Եղկանայի որդիները Ամեսայի, Աքիմոթ 26 Ու Եղկանա էին. Եղկանայի որդիները. անոր որդին Սոփի, ու անոր որդին Նահաթ, 27 Անոր որդին Եղիաբ, անոր որդին Երոհամ, անոր որդին Եղկանա էր։ 28 Ու Սամուէլի որդիները. անոր անդրանիկը Յոէլ, ու երկրորդը Աբիա էր։

29 Մերարիի որդիները Մողի, անոր որդին Ղաբնի, անոր որդին Սեմէի, անոր որդին Ոզա, 30 Անոր որդին Սամաա, անոր որդին Անգիա, անոր որդին Ասայիա էր։

31 Ու ասոնք են զորոնք Դաւիթ երգեցողութեան պաշտօնին վրայ դրաւ Տէրոջը տանը մէջ տապանակին հանգրուանելէն ետքը։ 32 Ու անոնց պաշտօնը ժողովքի խորանին առջև օրհնութիւն երգել էր, մինչև որ Սողոմոն երուսաղէմի մէջ Տէրոջը տունը չհնեց. ու իրենց կարգին համեմատ իրենց պաշտօնին վրայ կը կենային։

33 Ու իրենց որդիներով կեցողները ասոնք են. Կահաթեանց որդիներէն երգեցող Եմանը, Յովէլի որդին, որ Սամուէլի որդին, 34 Որ եղկանայի որդին, որ Յերոհամի որդին, որ Եղիէլի որդին, որ Թովայի որդին, 35 Որ Սուփի որդին, որ եղկանայի որդին, որ Մահաթի որդին, որ Ամասայիի որդին, 36 Որ եղկանայի որդին, որ Յովէլի որդին, որ Ազարիայի որդին, որ Սոփոնիայի որդին, 37 Որ Թահաթի որդին, որ Աքիրի որդին, որ Աբիասաբի որդին, որ Կորհի որդին, 38 Որ Իսհառի որդին, որ Կահաթի որդին, որ Ղևիի որդին, որ Իսրայէլի որդին էր։ 39 Ու անոր ալ կողմը կայնող իր եղբայրը

·ԵԲՐ· տանը

Ասաֆ էր, — Ասաֆ՝ Բարաքիայի որդին, որ Սամաայի որդին, 40 Որ Միքայէլի որդին, որ Բասէայի որդին, որ Մելգիայի որդին, 41 Որ Աթնաիի որդին, որ Զարայի որդին, որ Ադայիայի որդին, 42 Որ Եթանի որդին, որ Զամմայի որդին, որ Սեմէիի որդին, 43 Որ Ցեթի որդին, որ Գերսոնի որդին, որ Ղևիի որդին էր։ 44 Ու անոնց եղբայրները, Մերարիի որդիները, ձախ կողմը էն յարէին. Եթան՝ Կիսեայի որդին, որ Աբդիի որդին, որ Մալուքի որդին, 45 Որ Ասաբիայի որդին, որ Ամասիայի որդին, որ Քեղկիայի որդին, 46 Որ Ամսիի որդին, որ Բանիի որդին, որ Սամերի որդին, 47 Որ Մողղիի որդին, որ Մուսիի որդին, որ Մերարիի որդին, որ Ղևիի որդին էր։ 48 Ու անոնց եղբայրները, Ղևտացիք, Աստուծոյ տանը խորանին ամէն ծառայութեանը նուիրուած էին։

49 Բայց Ահարոն ու անոր որդիները աղչակէզի սեղանին վրայ ծխելէին ու խունկի սեղանին վրայ խունկ կը մատուցանէին, սրբութեանց սրբութիւնին ամէն գործը կատարելով, ու Իսրայէլի համար քաւութիւն ընելով, այն ամենուն համեմատ զոր Աստուծոյ ծառան Մովսէս պատուիրեր էր։ 50 Ու Ահարոնի որդիները ասոնք էին. Անոր որդին Եղիազար, անոր որդին Փենհէսը, անոր որդին Աբիսուա, 51 Անոր որդին Բակկի, անոր որդին Ոզի, անոր որդին Զարհիա, 52 Անոր որդին Մարիոթ, անոր որդին Ամարիա, անոր որդին Ախիտոբ, 53 Անոր որդին Սադովկ, անոր որդին Աքիմաաս։

54 Ու կահաթի տոհմին, Ահարոնի որդիներուն, բնակութիւնները ասոնք էին իրենց գեղերովը ու իրենց սահմաններովը, քանզի այն վիճակը անոնց եղաւ։ 55 Ու Յուդայի երկրին մէջ Քեբրոնը ու անոր չրջակայ արուարձանները անոնց տուին։ 56 Բայց այն քաղաքին արտերը ու անոր գեղերը Յեփոնեան Քաղէբի տուին։ 57 Ու Յուդայի քաղաքներէն Ահարոնի որդիներուն Քեբրոնը տուին (որ ապաստանի *քաղաք էր), ու Լիբնան իր արուարձաններովը, և Յաթիրը ու Եսթեմոա իր արուարձաններովը, 58 Ու Քիլէնը իր արուարձաններովը, ու Դաբիրը իր արուարձաններովը, 59 Ու Ասանը իր արուարձաններովը, ու Բեթսամիսը իր արուարձաններովը, 60 Ու Բենիամինի ցեղէն Գաբան իր արուարձաններովը, ու Գաղեմքիը իր արուարձաններովը, և Անաթովքը իր արուարձաններովը։ Անոնց տոհմերուն ամէն քաղաքները տասներեք քաղաք էին։

61 Ու այս ցեղին տոհմերէն մնացած կահաթի որդիներուն՝ Մանասէի կէս ցեղէն վիճակով տասը քաղաք տրուեցաւ։

62 Ու Գերսոնի որդիներուն՝ իրենց տոհմերուն համեմատ Իսաքարի ցեղէն, Ասերի ցեղէն ու Նեփթաղիմի ցեղէն ու Բասանի մէջ Բաշանէ Մանասէի ցեղէն տասներեք քաղաք տրուեցաւ։

63 Մերարիի որդիներուն՝ իրենց տոհմերուն համեմատ Ռուբէնի ցեղէն ու Գադի ցեղէն և Զաբուղոնի ցեղէն վիճակով տասներկու քաղաք տրուեցաւ։

64 Ու Իսրայէլի որդիները այս քաղաքները իրենց արուարձաններովը Ղեւտացիներուն տուին։ 65 Ու Յուդայի որդիներուն ցեղէն ու Շմաւոնի որդիներուն ցեղէն ու Բենիամինի որդիներուն ցեղէն վիճակով՝ այս անուններով յիշուած քաղաքները տուին։ 66 Ու կահաթի որդիներուն ճոխ տոհմերուն *կալուածքի քաղաքները Եփրեմի ցեղէն էին։ 67 Ու անոնց Եփրեմի լեռնային վրայ Սիւքեմը տուին, (որ ապաստանի քաղաքներէն էր,) ու անոր արուարձանները, և Գազերը իր արուարձաններովը, 68 Ու Յեկմամը իր արուարձաններովը, և Բեթորոնը իր արուարձաններովը, 69 Ու Այյեղոնը իր արուարձաններովը, և Գեթրեմմոնը իր արուարձաններովը, 70 Ու Մանասէի կէս ցեղէն Աները իր արուարձաններովը, և Յեթղաամը իր արուարձաններովը կահաթի որդիներուն մնացած տոհմին տուին։

71 Գերսոնի որդիներուն Մանասէի կէս ցեղին տոհմէն Բասանի մէջ Գովզոնը իր արուարձաններովը ու Աստարովթը իր արուարձաններովը։ 72 Ու

·ԵԲՐ· սահմանին։

Իսաքարի ցեղին կագէլը իր արուարձաններովը, Դաբարաթը իր արուարձաններովը, 73—Ուն Իմամովը իր արուարձաններովը, և Անամը իր արուարձաններովը, 74—Ու Ասերի ցեղին Մաասաղը իր արուարձաններովը, և Արդոնը իր արուարձաններովը, 75—Ու Հուկոկը իր արուարձաններովը, և Բոսորը իր արուարձաններովը, 76—Ու Նեփթաղիմի ցեղին Գալիլեայի մէջ Կագէսը իր արուարձաններովը, և Համմոնը իր արուարձաններովը, ու Կարիաթայիմը իր արուարձաններովը չորս։

77—Ու Մեռարհներուն, այսինքն Մերարիի որդիներուն, Զաբուղոնի ցեղին Ռիմմոնը իր արուարձաններովը, Թաբորը իր արուարձաններովը. 78—Ու Երիքովի Յորդանանու անդիի կողմը, Յորդանանու արեւելեան կողմը, Ռուբէնի ցեղին անապատի մէջ Բասորը իր արուարձաններովը, ու Յասան իր արուարձաններովը, 79—Ու Կադէմովթը իր արուարձաններովը, ու Մեփաաթը իր արուարձաններովը. 80—Ու Գադի ցեղին Գաղաադի մէջ Իմամովթը իր արուարձաններովը, ու Մահանայիմ իր արուարձաններովը, 81—Ու Նեբրոնը իր արուարձաններովը, և Յազերը իր արուարձաններովը չորս։

Գլ. Ի

Եւ Իսաքարի որդիները, Թովղա ու Փուա և Յասուբ ու Սամրոն, չորս էին։ 2—Ու Թովղայի որդիները, Ոզնի ու Հափայիա և Յերիէլ ու Ցեմայի և Յեբսամ ու Սամուէլ, իրենց հօրը Թովղայի տունը իշխանները — իրենց ազգին մէջ զօրաւոր կարիճներ էին. Գաւիթի օրերը անոնց թիւը քսանուերկու հազար վեց հարիւր էր։ 3—Ու Ոզնիի որդիները, Յեզրիա ու Յեզերիայի որդիները Միքայէլ և Աբդիա ու Յոէլ — Յեսու, հինգ էին, և ամէնն ալ իշխաններ էին։ 4—Ու անոնց հետ անոնց ցեղին ու ազգատոհմին մէջ պատերազմի չարուող երեսուներկու հազար զօրք կար. քանզի անոնց կիները ու որդիները չատուած էին։ 5—Ու անոնց եղբայրները Իսաքարի բոլոր տոհմերուն մէջ զօրաւոր կարիճներ ըլլալով՝ իրենց ազգահամարին համեմատ ամէնը ութսունըեօթը հազար էին։

6—Բենիամինի որդիները, Բաղա, Բաքեր ու Յեդիէլ, երեք էին։ 7—Ու Բաղայի որդիները, Եսբոն, Ոզի, Ոզիէլ, Յերիմոթ ու Իրի, իրենց ազգատոհմին իշխանները ու զօրաւոր կարիճները, հինգ էին. և անոնց ազգահամարին մէջ գրուածները քսանուերկու հազար երեսունըչորս հոգի էին։ 8—Ու Բաքերի որդիները Զամիրա, Յոաս, Եղիազար, Եղիովինայի, Ամրի, Յերիմոթ, Աբիա, Անաթոթի ու Գազեմէթ էին. ասոնք ամէնը Բաքերի որդիներն էին։ 9—Ու անոնց ազգահամարին մէջ իրենց ազգատոհմներուն իշխանները — զօրաւոր կարիճներ ըլլալով, քսան հազար երկու հարիւր հոգի կար։ 10—Ու Յեդիէլի որդին Բաղղան, ու Բաղղանի որդիները Յեուս, Բենիամին, Ասէվդ, Քանանա, Զեթան, Թարսիս ու Ախիսահր էին։ 11—Ասոնք ամէնը, Յեդիէլի որդիները, էրէց տոհմերուն իշխանները ու զօրաւոր կարիճներ էին. — տասնըեօթը հազար երկու հարիւր պատերազմի ելլող մարդիկ էին։ 12—Ու Սուփիմ ու Ոփիմ Իրիի որդիներն էին, Հուսիմ ալ Ահերի որդին էր։

13—Նեփթաղիմի որդիները՝ Յասիէլ, Գունի, Յասեր ու Սեղդամ՝ Բաղղայի որդիներն էին։

14—Մանասէի որդիները. Ասբիէլ, զոր էր Կինէ Ծնաւ. — անոր Ասորի հարճը Գաղաադի հայրը Մաքիրը Ծնաւ։ 15—Ու Մաքիր իրեն կին առաւ Ոփիմի ու Սուփիմի քոյրը, որուն անունը Մաաքա էր, ու երկրորդին անունը Սալպաադ էր. և Սալպաադի աղջիկները Ծնան, 16—Ու Մաքիրի կինը Մաաքա որդի մը Ծնաւ, և անոր անունը Փարէս կոչեց. ու անոր եղբօրը անունը Սարես էր, և անոր որդիները Ուղամ ու Բակոմ էին։ 17—Ու Ուղամի որդին Բեդան էր. Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադի որդիները ասոնք էին։ 18—Ու անոր քոյրը Մաղոքեթ Ծնաւ Իսուհը, Աբիեզերը ու Մահաղա։ 19—Ու Սեմիդայի որդիները Աքիան, Սիւքեմ, Ղակէի ու Անիամ էին։

20—Ու Եփրեմի որդիները Սուտաղա, (և անոր որդին Բաքադ, ու անոր որդին Թահաթ, ու անոր որդին Եղիադա, և անոր որդին Թահաթ, 21—Ու անոր որդին Զաբադ, և անոր որդին Սուտաղա,) նաև եզեր ու Եղիադ էին. ու զանոնք այն երկրին մէջ ծնած Գէթացիք մեռցուցին, քանզի անոնց անասունները առնելու էկան։ 22—Ու անոնց հայրը Եփրեմ շատ օրեր սուգ բռնեց, ու անոր եղբայրները զանիկա մխիթարելու գացին։ 23—Ու անիկա իր կնոջ մտաւ, ու անիկա յղանալով որդի մը Ծնաւ. և անոր անունը *Բարիա կոչեց, վասն զի իր տանը վրայ չարիք եկած էր։ 24—Ու անոր աղջիկը Սէրա էր. ասիկա վարի ու վերի Բեթորոնը ու Ոզան-սէէրան չինեց։ 25—Ու անոր որդին Հափէ ու Հասէփ, ու անոր որդին Թահէ, և անոր որդին Թահան, 26—Անոր որդին Ղասդան, անոր որդին Ամիուդ, անոր որդին Եղիսամա, 27—Անոր որդին Նաւէ — անոր որդին Յեսու էր։ 28—Ու անոնց կալուածքները ու բնակութիւնները ասանք էին. Բեթէլ ու անոր գեղերը, ու արեւելեան կողմէն Նաարան, և արեւմտեան կողմէն Գազեր ու անոր գեղերը, և Սիւքեմ ու անոր գեղերը, մինչև Գազա ու անոր գեղերը, 29—Ու Մանասէի որդիներուն սահմաններուն քով Բեթսան ու անոր գեղերը, Թաանաք ու անոր գեղերը, Մակեդդով ու անոր գեղերը, Դոր ու անոր գեղերը. Իսրայէլի որդւոյն Յովսեփի որդիները ասոնց մէջ կը բնակէին։

30—Ասերի որդիները Յեմնա, Յեսուա, Յեսուի ու Բարիա, և անոնց քոյրը Սարա էր։ 31—Ու Բարիայի որդիները Բաքեր ու Մեղքիէլ էին. ասիկա Բասայիթի հայրն էր. 32—Ու Բաքեր Ծնաւ Յափղեթը, Սոմերը և Քողեմը, ու անոնց քոյրը Սովղան։ 33—Ու Յափղեթի որդիները փասաք, Բասայէլ ու Ասուպ էին. Յափղեթի որդիները ասանք էին։ 34—Ու Սովմերի որդիները Ախի, Հաուգա, Ոբա ու Արամ էին։ 35—Ու անոր եղբօրը Հելեմի որդիները Սոփա, Յամնա, Սելես և Ամաղ էին։ 36—Սոփայի որդիները Սուա, Առնափար, Սուալ, Բաբի, Յեսրա, Բասար, 37 — Ովղ, Սամմա, Սաղիսա, Յեթրան, և Բէերա։ 38—Ու Յեթերի որդիները Յեփունէ, Փասպա և Արա էին։ 39—Ու Ովղայի որդիները Աբահ, Անիէլ ու Հասոթպա էին։ 40—Ասոնք ամէնը Ասերի որդիներն էին, ու էրէց ազգատոհմներուն իշխաններն էին, ընտիր ու զօրաւոր կարիճներ և գլխաւոր իշխաններ էին. ու անոնց ազգահամարին մէջ պատերազմական զօրաց թիւը քսանըվեց հազար մարդ էր։

Գլ. Ը

Ու Բենիամին ծնաւ իր անդրանիկը Բաղան, երկրորդը Ասբէլը, երրորդը Ահրան, 2—Չորրորդը Նովան, ու հինգերորդը Ռափան։ 3—Ու Բաղայի որդիները *Ադար, Գերա, Աբիուդ, 4—Աբիսուա, Նեհեման, Ահոա, 5—Գերա, Սեփան և Փիւրամ էին։ 6—Ու Ահուդի որդիները ասանք էին, և Գաբայի բնակիչներուն իշխաններն ասանք էին, ու զանոնք Մանահաթ փոխադրեցին. 7—Ու Նեհեման ու Ախիա ու զանոնք փոխադրողը Գերա, սակայ Ոզան ու Ախիուդը Ծնաւ։ 8—Ու Սաարիմ զանոնք ղրկելէն հաքը Մովաբի երկրին մէջ — †ին Ծնաւ. — անոր կիները Հուսիմ ու Բաարա էին. 9—Ու իր կնոջմէն, Յովնեէն, Ցոբաբը, Սաբիան, Մեսան, Մելքամը, 10—Յեուսը, Սեքիան ու Մարսան Ծնաւ. ասանք անոր որդիները — տոհմերու իշխաններ էին։ 11—Ու Հուսիմէ Աբիտովբը ու Եղփաաղը Ծնաւ։ 12—Ու Եղփաաղի որդիները Եբեր, Մեսաամ ու †Սամեր, (ասիկա Ոնովը, Ղովզը ու անոր գեղերը չինեց,) 13—Ու Բարիա ու Սեմա էին. ասանք Այիղոն բնակող տոհմերուն իշխաններն էին, — ասանք վռնտեցին Գէթի բնակիչները։ 14—Ու ‡Աբիով, Սափսեկ, Յերիմոթ, 15—Զաբադիա,

*Կամ, Արիգ. Ծն. խզ. 21։
†Կամ, Սամեդ
‡Կամ, անոր եղբայրները

Աբագ, Եգեր, 16—Միքայէլ, Ցեփա ու Ցոլքա Բարխայի որդիներն էին։ 17—Եւ Զաքադիա, Մեսուզամ, Ագակի, Բարեր, 18—Ցեսամաբէ, Ցեզղիա և Ցոբաբ Եղփաալի որդիներն էին, 19—Եւ Ցակիմ, Զիքրի, Զաբդի, 20—Եղիենայի, Սաղթի, Եղիել, 21—Ադայիա, Բաղաա և Սամարաթ Սեմէիի որդիներն էին։ 22—Ու Ցեսփան, Եբեր, Եղիել, 23—Աբդօն, Զիքրի, Անան, 24—Անանիա, Եղամ, Անթոթիքիա, 25—Ցեփադիա ու Փանուէլ Սոփեկի որդիներն էին։ 26—Եւ Սամսարի, Սաարիա, Գոթողիա, 27—Ցերասիա, Եղիա և Զիքրի Ցերոամի որդիներն էին։ 28—Այոնք իրենց տոհմերուն համեմատ նահապետներ ու իշխաններ էին, ու Երուսաղէմի մէջ կը բնակէին։

29—Եւ Գաբաւոնի մէջ Գաբաւոնի հայրը կը բնակէր. ու անոր կնոջ անունը Մաաքա էր։ 30—Եւ անոր անդրանիկ որդին Աբդոն էր. հետքը Սուր, Կիս, Բաալ, Նադաբ, 31—Գեդովր, Աքիով ու Զաքար էին։ 32—Եւ Մակղոթ Ծնաւ Սամաան. ու ասոնք ալ իրենց եղբայրներուն դիմաց Երուսաղէմի մէջ իրենց եղբայրներուն հետ բնակեցան։

33—Եւ Ներ Ծնաւ Կիսը, ու Կիս Ծնաւ Սաուղը, և Սաուղ Ծնաւ Ցովնաթանը, Մեղքիսուէն, Աբինադաբը ու Եսբաալը։ 34—Եւ Ցոլիաթանի որդին Մերիբաալ էր. ու Մերիբաալ Ծնաւ Միքան։ 35—Եւ Միքայի որդիները փիթօն, Մելէք, Թարէ ու Աբազ էին։ 36—Եւ Աբազ Ծնաւ Ցոլքան, ու Ցոլքա Ծնաւ Գազմոթը, Ազմաթը ու Զամբրին. և Զամբրի Ծնաւ Մոսան, 37—Ու Մոսա Ծնաւ Բանաան. անոր որդին Թոփա, անոր որդին Եղեասա։ անոր որդին Եսէլ էր։ 38—Ու Եսէլ վեց որդի ունէր, և անոնց անունները ասոնք են. Եզրիկամ, Բոքերու, Իսմայէլ, Սաարիա, Աբդիա ու Անան. ասոնք ամէնը Եսէլի որդիներն էին։ 39—Եւ անոր եղբօրը Եսեկի որդիները՝ անդրանիկը Ուղամ, երկրորդը Ցեուս, երրորդը Եղիփաղետ էր։ 40—Եւ Ուղամի որդիները զօրաւոր կարճեներ ու աղեղնաւորներ էին, և անոնք շատ որդիներ ու թոռներ ունէին հարիւր հիսունը։ ասոնք ամէնը Բենիամինի որդիներն էին։

Գլ. Ը

Ամբակէս բոլոր Իսրայէլացիք արձանագրուած էին, և ահա Իսրայէլի ու Ցուդայի թագաւորաց գիրքին մէջ գրուած էին։ ԵՒ իրենց անօրէնութեանը համար Բաբելոն գերի տարուեցան։

2—Եւ անոնց կալուած քաղաքներուն մէջ անոնց քաղաքներուն մէջ առաջ բնակողները՝ Իսրայէլացիներէն, քահանաներէն, Ղեւտացիներէն և Նաթանայիմիներէն եղան։ 3—Ու Երուսաղէմի մէջ Ցուդայի որդիներէն, Բենիամինի որդիներէն, Եփրեմի ու Մանասէի որդիներէն բնակեցան. 4—Ցուդայի որդւոյն Փարեսի որդիներէն՝ Բանիի որդւոյն Իմրիի որդւոյն Ամիւդի որդին Ոմթայի։ 5—Եւ Սելոմեաններէն՝ անոր անդրանիկը Ասայիա ու անոր որդիները։ 6—Եւ Զարայի որդիներէն՝ Ցեհիէլ ու անոնց եղբայրները՝ վեց հարիւր իննսունմարդ։ 7—Ու Բենիամինի որդիներէն՝ Ասանուայի որդւոյն Ոզզուիայի որդւոյն Մեսուզամի որդին Սալլու, 8—Եւ Ցերոամի որդին Ցեբնիա, ու Միքրիի որդւոյն Ոզիի որդին Իլա, ու Ցեբնիայի որդւոյն Ռագուէլի որդւոյն Սափատիայի որդին Մեսուզամ, 9—Եւ անոնց եղբայրները իրենց ցեղերուն համեմատ՝ինը հարիւր հիսունըվեց մարդ։ ասոնք ամէնը իրենց տոհմերուն նահապետներն էին։

10—Ու քահանաներէն՝ Ցեդայիա, Ցոյարիբ ու Ցաքին, 11—Եւ Ասարիա Ցողոթի որդին Մերայոթի որդւոյն Սադոկի որդւոյն Մեսուզամի որդւոյն Ցեղկիայի որդին Ազարիա, 12—Ու Մեզքիայի որդւոյն Փասուրի որդւոյն Ցերոամի որդին Ադայիա, ու Եմմերի որդւոյն Մեսեզաբէլի որդւոյն Մեսուզամի որդւոյն Եզիրայի որդւոյն Ադիէլի որդին Մասէ, 13—Եւ անոնց եղբայրները, իրենց տոհմերուն իշխաններ, հազար եօթը հարիւր վաթսուն զօրաւոր կըռիւներ, Աստուծոյ տանը գործին ծառայութեանը մէջ էին։

14—Ու Ղեւտացիներէն, Մերարիի որդիներէն, Ասաբիայի որդւոյն Եզրիկամի որդւոյն Ասուբի որդին Սեմայիա, 15—Եւ Բակբակար ու Արէս և Գալաղ ու Ասաֆի որդւոյն Զիքրիի որդւոյն Միքայի որդին Մաթանիա, 16—Եւ Իդիթունի որդւոյն Գալալի որդւոյն Սեմայիայի որդին Աբդիա, ու Եղկանայի որդւոյն Ասայի որդին Բարսքա, որ Նետոփաթացւոց գեղերուն մէջ կը բնակէր։ 17—Ու գռնապաններ, Սեզղոմ, Ակկուբ, Տեղմոն և Ախիման ու անոնց եղբայրները. Սեզղոմ վերակացու Սեզղում էր։ 18—Մինչեւ հոս թագաւորին դուռը իջեր էին, որ արեւելեան կողմն է. ասոնք Ղեւիի որդիներուն բանակներուն դրան նայողներն էին։ 19—Եւ Կորխի որդւոյն Աբիասափի որդւոյն Կորխի որդին Սեզղոմ, ու անոր եղբայրները, անոր հօրը տունէն եղող Կորխացիները, ծառայութեան գործին վրայ էին, ու խոնարհին աեմբուան պահպանութիւնը կ'ընէին. և անոնց հայրերը Տէրոյը բանակին մէջ դրան պահպանութիւնը կ'ընէին։ 20—Ու եղիազարի որդին փենեհես առաջ անոնց վրայ իշխան էր, ու Տէրը անոր հետ էր։ 21—Մասեղամիայի որդին Զաքարիա ժողովքի խորանին դրանը պահապան էր։ 22—Դռներուն մէջ ընտրեալները երկու հարիւր տասուերկու հոգի էին. ասոնք իրենց գեղերուն մէջ ազգահամարի մէջ գրուեցան. Դաւիթ ու Սամուէլ տեսանողը զանոնք իրենց պաշտօնին վրայ գրին։ 23—Եւ անոնք ու անոնց որդիները Տէրոյը տանը, այսինքն խորանի տանը, դռներուն քով փոխանակ. պահպանութիւն կ'ընէին։ 24—Դռնապանները չորս կողմերը կը կային, արեւելեան, արեւմտեան, հիւսիսային ու հարաւային կողմերը։ 25—Եւ գեղերու մէջ եղող անոնց եղբայրները ամեն ատեն եօթ օր կուգային, ու հօբնական օր անոնց հետ կ'ելլէին։ 26—Քանի մը Ղեւտացիները, այն չորս գլխաւոր

*Կամ, Սիլօնացիներէն

*Կամ, հիմա

գռնապանները, միշտ էրէից պաշտօնին մէջ՝ սենեակներուն վրայ ու Աստուծոյ տանը գանձերուն վրայ էին։ 27—Ու գիշերը Աստուծոյ տանը բոլորտիքը կը կեննային, քանզի պահպանութիւնը անոնց վրայ էր. և առտու զանիկա անոնք պիտի բանային։ 28—Ու պաշտօնի սպասներուն վերակացուները անոնցմէ էին, քանզի զանոնք համրանքով ներս կը բերէին, ու համրանքով դուրս կը հանէին։ 29—Ու սրբարանին ու սրբարանին բոլոր գործիքներուն, և նաբխին ու գինիին ու իւղին և կնդրուկին ու հաճիներուն վերակացուները անոնցմէ էին։ 30—Եւ հաճիներուն բաղադրութիւնովը իւղը չինողները քահանաներուն որդիներէն էին։ 31—Ու Ղեւտացիներէն՝ Կորխացի Սեզղումի անդրանիկը Մատաթիա տապակի գործին վերակացու էր։ 32—Եւ ասոնք աւետաւորութեան հացին վերակացուները անոնց եղբայրներէն, Կահաթացւոց որդիներէն, էին, որպէս զի զանիկա չաբաթ չաբաթ պատրաստեն։ 33—Ու ասոնք, այսինքն Ղեւտացւոց տոհմերուն իշխանները, երգեցողներ էին. և սենեակներուն մէջ ի նորին. և ուրիշ գործ մը չունէին, քանզի ցորեկ ու գիշեր այս պաշտօնով զբաղած էին։ 34—Այս Ղեւտացւոց տոհմերուն իշխանները իրենց ցեղերուն համեմատ իշխաններ էին. անոնք Երուսաղէմի մէջ կը բնակէին։

35—Եւ Գաբաւոնի մէջ Գաբաւոնի հայրը Ցեհիէլ կը բնակէր. ու անոր կնոջ անունը Մաաքա էր։ 36—Եւ անոր անդրանիկ որդին Աբդօն էր. հետքը Սուր, Կիս, Բաալ, Ներ, Նադաբ, 37—Գեդովր, Աքիով, Զաքարիա և Մակղոթ էին։ 38—Ու Մակղոթ Ծնաւ Սամաամը. ու ասոնք ալ իրենց եղբայրներուն դիմաց՝ Երուսաղէմի մէջ իրենց եղբայրներուն հետ բնակեցան։

39—Եւ Ներ Ծնաւ Կիսը, ու Կիս Ծրնաւ Սաուղը, և Սաուղ Ծնաւ Ցովնաթանը, Մեղքիսուէն, Աբինադաբը ու Եսբաալը։ 40—Եւ Ցոլիաթանի որդին Մերիբաալ էր. ու Մերիբաալ Ծնաւ Միքան։ 41—Եւ Միքայի որդիները փիթօն, Մելէք, Թարէ ու Աբազ էին։

42—Եւ Աբգայ Ծնաւ Յովգան, ու Յովգաթ Ծնաւ Գաղեմէլիթ, Ազամաթը ու Զամբրին. և Զամբրի Ծնաւ Մոսան.
43—Ու Մոսա Ծնաւ Բանասան. անոր որդին Թոփայիա, անոր որդին Եզեկաս, ու անոր որդին Նահէլ էր։ 44—Ու Նահէլ վեց որդի ունէր, և անոնց անունները սանդ են. Եղրիկամ, Բոքերաս, Իսմայէլ, Սաարիա, Աբդիա ու Անան. Նահէլի որդիները սանդ էին։

Գլ. Ժ

Եւ Փղշտացիք Իսրայէլի հետ պատերազմ ըրին, ու Իսրայէլի մարդիկը Փղշտացւոց առջեւէն փախան. ու Գելբուէի լեռանը վրայ սպաննուած ինկան։ 2—Եւ Փղշտացիք Սաուղի ու անոր որդիներուն եհտեւէն հասան. ու Փղշտացիք Սաուղի որդիները, Յոնաթանը, Աբինադաբը ու Մելքիսուէն զարկին։ 3—Եւ պատերազմը Սաուղի վրայ սաստկացաւ. ու աղեղնաւորները զանիկա գտան, ու աղեղնաւորներէն վիրաւորուեցաւ։ 4—Եւ Սաուղ իր կապարճակիրին ըսաւ, Սուրդ քաշէ ու անով զիս խոցէ, չըլլայ որ այս անթլփատները գան ու զիս ծաղր ընեն. բայց կապարճակիրը չկամեցաւ, քանզի շատ վախցաւ։ Եւ Սաուղ սուրը առաւ ու անոր վրայ ինկաւ։ 5—Եւ անոր կապարճակիրը Սաուղի մեռնիլը տեսնելով՝ ան ալ իր սուրին վրայ ինկաւ ու մեռաւ։ 6—Այսպէս մեռան Սաուղ ու անոր երեք որդիները. անոր բոլոր տունն ալ մէկտեղ մեռաւ։

7—Ու հովիտին մէջ եղող բոլոր Իսրայէլի մարդիկը անոնց փախչիլը, և Սաուղի ու անոր որդիներուն մեռնիլը տեսնելով՝ իրենց քաղաքները թողուցին փախան. և Փղշտացիք եկան ու անոնց մէջ բնակեցան։

8—Եւ հետեւեալ օրը Փղշտացիք եկան զոհս ու մեռելները մերկացնելու, ու Սաուղը և անոր որդիները Գելբուէի լեռան վրայ ինկած գտան. 9—Ու զանիկա մերկացուցին, և անոր գլուխը ու զէնքերը առին. ու Փղշտացւոց երկրին չորս կողմը իրենց կուռքերուն ու ժողովրդին այս Բառնէրան աւետիսը տալու համար հաղորդ ղրկեցին։ 10—Եւ անոր զէնքերը իրենց աստուծոյն տաճարը դրին, ու անոր գլուխը Դագոնի տաճարը մէջ գամեցին։

11—Ու Գաղաադու Յաբիսի բոլոր բնակիչները երբ լսեցին այն ամէնը որ Փղշտացիք Սաուղի ըրած էին, 12—բոլոր զօրաւոր մարդիկը ոտք եղան, և Սաուղի մարմինը ու անոր որդիներուն մարմինները վերցուցին, և զանոնք Յաբիս բերին. և անոնց ոսկորները Յաբիսի մէջ բեւեկնիին տակ թազեցին, ու եօթը օր ծոմ պահեցին։

13—Այսպէս մեռաւ Սաուղ Տէրոջը դէմ ըրած ապստամբութեան համար. որովհետեւ Տէրոջը խօսքը չպահեց, ու նաև վհուկ փնտռեց բան հարցընելու համար, 14—Ու Տէրոջը չհարցուց. ուստի Տէրը զանիկա մեռցուց, ու Թագաւորութիւնը Յեսսէի որդւոյն Դաւիթի դարձուց։

Գլ. ԺԱ

Եւ բոլոր Իսրայէլ Դաւիթի քով Քեբրոնի մէջ ժողովուեցան, ու ըսին, Ահա մենք քու ոսկորդ ու քու մարմինդ ենք։ 2—Եւ ասկէ առաջ ալ երբ Սաուղ Թագաւոր էր, Իսրայէլը դուրս հանողը ու ներս բերողը դուն էիր. ու քու Տէր Աստուածդ քեզի ըսաւ, Իմ ժողովուրդս Իսրայէլը դուն պիտի հովուես, ու իմ ժողովուրդս Իսրայէլի վրայ դուն իշխան պիտի ըլլաս։ 3—Եւ Իսրայէլի բոլոր ծերերը Քեբրոն եկան Թագաւորին, ու Դաւիթ Քեբրոնի մէջ Տէրոջը առջեւ անոնց հետ դաշնակցութիւն ըրաւ. ու անոնք Դաւիթը Իսրայէլի վրայ Թագաւոր օծեցին, ինչպես Տէրը Սամուէլի ձեռքով խօսեր էր։

4—Եւ Դաւիթ բոլոր Իսրայէլի հետ Երուսաղէմ, այսինքն Յեբուս, գնաց. ու հոն այն երկրին բնակիչները, Յեբուսացիք, էը ԲՈՒՆԷՐ։ 5—Եւ Յեբուսի բնակիչները Դաւիթի ըսին, Հոս պիտի չմտնես. բայց Դաւիթ առաւ Սիոնի բերդը, (որ Դաւիթի քաղաքը էը ԼՈՒԷ) 6—Ու Դաւիթ ըսաւ, Ով որ Յեբուսացիները առաջ զարնէ, անիկա իշխան ու զօրավար պիտի ըլլայ. և առաջ Շարուհեայի որդին Յոաբ ելաւ, ու անիկա զօրավար եղաւ։ 7—Եւ Դաւիթ այն բերդին մէջ բնակեցաւ. անոր համար անոնք Դաւիթի քաղաքը կոչեցան։ 8—Ու Դաւիթ քաղաքը չինեց չորս կողմէն, այսինքն Միլոնը ու անոր չրջակայ տեղերը. ու Յոաբ քաղաքին մնացորդը նորոգեց։ 9—Եւ Դաւիթ երթալով կը մեծնար, ու զօրաց Տէրը անոր հետ էր։

10—Եւ ասոնք են Դաւիթի գլխաւոր զօրաւորները, որոնք անոր թագաւորութեանը համար անոր օգնութիւն ըրին բոլոր Իսրայէլի հետ, որպէս զի զանիկա Թագաւոր հաստատեն՝ Տէրոջը Իսրայէլի վրայով ըսած խօսքին համեմատ։ 11—Եւ Դաւիթի զօրաւոր մարդոց թիւը սոսկա է. Հաքեմոնիի որդին Յաշաբաամ՝ զօրավարներուն գլուխը, որ իր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցուց ու մէկէն զանոնք մեռցուց։

12—Եւ անկէ հետքը Աքոհացի Դովդոյի որդին Եղիազար՝ որ երեք զօրաւորներէն էր։ 13—Անիկա երբ Ափեսդամմինի մէջ Դաւիթի հետ էր, Փղշտացիք հոն ժողվուեցան պատերազմելու համար, և արաի մը մէկ մասը գարիով լեցուն էր, ու ժողովուրդը փղշտացւոց երեսէն փախաւ։ 14—Իսկ սոսկա արտին մէջտեղը կայնեցան, և զանիկա ապահեցին ու փղշտացիները զարկին. և Տէրը մեծ փրկութիւն ըրաւ։

15—Ու երեսուն զօրավարներէն երեքը Ոդոդոմի քարայրը՝ Դաւիթի քով վար իջան. և փղշտացւոց բանակը Ռափայիմներուն հովիտին մէջ բանակեր էր։ 16—Եւ այն ատեն Դաւիթ բերդին մէջ էր. ու այն ատեն փղշտացիք Բեթլեհեմի մէջ բերդապահ զօրք ունէին։ 17—Եւ Դաւիթ փափաքելով, ըսաւ, Բեթլեհեմի դուռը եղող ջրհորէն ո՞վ ինծի ջուր կը խմցնէ։ 18—Այն ատեն այս երեք մարդիկը փղշտացւոց բանակը ճեղքելին անցան, ու Բեթլեհեմի դուռը եղող ջրհորէն ջուր քաշեցին և ատին Դաւիթի տարին. բայց Դաւիթ զանիկա խմել չուզեց, հապա զանիկա Թափելով Տէրոջը Նուէրէց, 19—Ու ըսաւ, Իմ Աստուածս չցուցնէ ինծի՝ որ ես այս բանը ընեմ. միթէ ես այն մարդոց արիւնը իրենց կեանքո՞վը պիտի խմեմ. վասն զի իրենց կեանքին վտանգէն այս ջուրը բերին. ու անկէ խմել չուզեց։ Ասոնք են այն երեք զօրաւոր մարդոց գործերը։

20—Եւ Յովաբի եղբայրը Աբեսսա այն երեք մարդոց գլխաւորն էր. ու անիկա իր նիզակը երեք հարիւր մարդոց վրայ վերցնելով՝ սպաննեց զանոնք, ու անիկա երեքին մէջ անուանի էր. 21—Եւ երեքին երկուքէն աւելիհամարումներ նալուն համար անոնց գլուխ եղաւ, բայց ---ին երեքին --ոչ-ն չհասաւ։

22—Ու մեծ գործեր գործող Կաբսէելացի զօրաւոր մարդու մը որդւոյն Յոյադայի որդին Բանեա Մոաբի երկու զօրաւոր մարդիկը մեռցուց. նաև ձիւնի ժամանակ իջաւ ու գուբին մէջ առիւծը մեռցուց։ 23—Անիկա Եգիպտացի մարդը, այն հինգ կանգուն բարձր մարդը, մեռցուց. ու Եգիպտացիին ձեռքը ոստայնանկներու գլանին պէս նիզակ մը կար. բայց Բանեա ցուպով մը անոր վրայ իջաւ, ու Եգիպտացիին ձեռքէն նիզակը յափշտակեց, և զանիկա անոր նիզակովը մեռցուց։ 24—Յովիադայի որդին Բանեա այս բաները ըրաւ, ու երեք զօրաւորներուն մէջ անուանի եղաւ։ 25—Անիկա ահա երեսունէն աւելի պատիւ ուներ, բայց ---ին երեքին --ոչ-ն չհասաւ, ու Դաւիթ զանիկա իր տանեանին վերակացու դրաւ։

26—Եւ իր զօրքերուն զօրաւորները --անդ էին. Յովաբի եղբայրը Ասայէլ, Բեթլեհեմացի Դովդոյի որդին Էլհանան, 27—Արոփացի Սամմաթ, Փելոնացի Հեղրես, 28—Թեկուացի Եկգեսի որդին Իրաս, Անաթովթացի Աբիեզեր, 29—Ովսացի Սովբաքի, Աքոհացի Եղի, 30—Նետոփաթացի Մահրայ, Նետոփաթացի Բանասի որդին Ալեդ, 31—Բենիամինի որդւոց Գաբայէլէն Իրիթայի որդին Եթթի, Փարաթոնացի Բանեա, 32—Գաասի ձորերէն Հուրայ, Արաբաթացի Աբիէլ, 33—Բաարումացի Ազամաթ, Սաալբոնացի Եղրիաբա, 34—Գեզոնացի Հաշեմ որ-

դիներէն՝ Աբարացի Մագէլ որդին Ցովնաթան, 35—Աբարացի Սաքարի որդին Աքիամ, Ոմրի որդին Եղիփաղ, 36—Մեքերաթացի Ոփեր, Փելոնացի Աքիա, 37—Կարմելացի Ասաբէ, Ազբիացի որդին Նաասայ, 38—Նաթանի եղբայրը Ցովել, Ագարայի որդին Մաբար, 39—Ամմոնացի Սելեկ, Շարուհեան Ցոաբի կապարճակիրը Բերովթացի Նաարա, 40—Ցեթերացի Իրաս, Ցեթերացի Գարեբ, 41—Փեւատացի Ուրիա, Ախլայի որդին Զաբատ, 42—Ռուբենեանց գլուխը, Ռուբենեան Սիզայի որդին Ադինա, ու անոր հետ եւս եօթանաս մարդ կար։ 43—Մաաքացի որդին Անան, Մաթթանացի Ցոսափատ, 44—Աստարոթացի Ոզիա, Արոերացի Խոթամի որդիները, Սամա ու Եղիէլ, 45—Սամարիի որդին Ցեդիէլ ու անոր եղբայրը Թիտացի Ցովքա, 46—Մահաւացի Եղիէլ, Եղնամի որդիները, Ցարիթացի և Ցոսուէա, Մոաբացի Ցեթմա, 47—Եղիէլ, Ոբեդ ու Մեսոբացի Ցեսիէլ։

ԳԼ. ԺԲ

Եւ ասոնք են որ Սիկելակ եկան Դաւիթի քով՝ երբ անիկա դեռ կը կենար Սաւուղի երեսէն պահուած էր, ու ասոնք զօրաւորներէն ըլլալով՝ պատերազմի մէջ օգնութիւն կ'ընէին։ 2—Բոնդի աղեղնաւորներ էին, ու պարտէզքարերը ու ապեղով նետերը Ներեէ-Բէ՛ աչ և Բէ՛ ձախ ձեռքերնին կը գործածէին. անոնք Սաւուղի եղբայրներէն, Բենիամինեաններէն, էին։ 3—Ահէզ գլուխը Ախիեզեր էր, եւոքը Ցոաս, Գաբաացի Սամայայի որդիները, և Ցեզիէլ ու Փալտ, Ազմաթի որդիները, և Բարաքա ու Անաթոթիացի Ցեհու, 4—Ու երեսունին մէջ զօրաւոր՝ ու երեսունին վերակացուն Գաբաւոնացի Իսմայիա, ու Երեմիա ու Յահիէլ և Ցոհանան ու Գադերացի Ցովզաբադ, 5—Եղիոզայ ու Յերիմոթի և Բաալիա ու Սամարիա և Յարուփացի Սափատիա, 6—Եղկանա, Ցեսիա, Ազարիէլ, Ցովեզեր ու Ցեսբաամ՝ Կորխացիք, 7—Ու Գեդովրացի, Յերոամի որդիները, Յոելա ու Զաբադիա։

8—Ու Գադեանները ալ Դաւիթի քով՝ անապատին մէջ բերդը քաշուելուն զօրաւոր, քաջ, պատերազմական, վահան ու նիզակ գործածող մարդիկ. անոնց դէմքը առիւծի դէմքի կը նմանէր, ու լեռները վազի այծեամներուն պէս թեթեւաշարժ էին։ 9—Առաջինը Եզեր, երկրորդը Աբդիա, երրորդը Ելիաբ, 10—Զորրորդը Մասմանա, հինգերորդը Երեմիա, 11 — վեցերորդը Թթիի, եօթներորդը Եղիէլ, 12—Ութերորդը Յոհանան, իններորդը Եղզաբաթ, 13—Տասներորդը Երեմիա, մեսասաներորդը Մաքբանայ էր։ 14—Ասոնք Գադի որդիներէն զօրքին իշխաններն էին. պզտիկներէն մէկը հարիւրի վրայ, ու մեծերէն մէկը հազարի վրայ էր։ 15—Ասոնք են որ առաջին ամսուն մէջ Յորդանանէ անցան՝ երբ Ցորը իր բոլոր եզերքները կոխեր էր, և դէպ ի արեւելք ու արեւմուք բոլոր հովիտի բնակիչները փախցուցին։

16—Ու բերդը Դաւիթի քով Բենիամինի ու Ցուդայի որդիներէն ալ եկան։ 17—Ու Դաւիթ անոնց առջեւ ելաւ ու պատասխան տուաւ անոնց՝ ըսելով, Եթէ խաղաղութեամբ ինծի օգնութիւն ընելու եկեր էք, իմ սիրտս ձեզի հետ պիտի ըլլայ. բայց եթէ խաբէութեամբ դիս իմ թշնամիներուս ձեռքը մատնելու համար էիր ե՛ւ, (որ իմ ձեռքերուս մէջ անօրէնութիւն մը չկայ,) մեր հայրերուն Աստուածը տեսնէ ու յանդիմանէ։ 18—Ու իշխաններուն գլուխը Ամեսայի Հոգեով լեցուեցաւ, ու ըսաւ,

Մենք քուկդ ենք, ով Դաւիթ,
Ու քեզի հետ պիտի ըլլանք, ով Ցեսսեի որդի.
Խաղաղութիւն, խաղաղութիւն քեզի,
Ու քու օգնականներուդ խաղաղութիւն ըլլայ,
Քանզի քու Աստուածդ քեզի օգնական է։

Ան ատեն Դաւիթ զանոնք ընդունեց, ու զանոնք էր գունդին իշխաններուն մէջ դրաւ։

19—Մանասէ ալ Դաւիթի անցան, երբ անիկա փղշտացւոց հետ Սաւուղի

վրայ պատերազմելու գնաց, բայց անոնց օգնութիւն *չըրին, քանզի փղշտացւոց նախարարները խորհրդով պահեկա՛ս զրկեցին՝ ըսելով, Անիկա մեր գլուխներո՛ւն †ուով, իր Տէրոջը, Սաւուղին, պիտի անցնի։ 20—Երբ անիկա Սիկելակ կ'երթար, Մանասէէ Մանասէի հազարապետները, Եդնա, Ցովզաբադ, Եհդիէլ, Միքայէլ, Ցովզաբադ, Եղիհու ու Սաղթի անոր անցան. 21—Եւ ասոնք Դաւիթի օգնութիւն ըրին †ոգոտ-Խերո՛ւն գունդին վրայ յոյժ-ի՛ւլ՛ւ֊ քանի՛ ամէնն ալ զօրաւոր կրնբիմներ էին, ու զօրաց իշխաններ եղան. 22—Վասն զի այն ատեն օր օր Դաւիթի կու գային անոր օգնութիւն ընելու համար, մինչև որ Աստուծոյ բանակին պէս մեծ բանակ մը եղաւ։

23—Եւ ասոնք են այն սպառազինեալ էզօրքերուն համարձակները՝ որոնք Քեբրոն եկան Դաւիթին, որպես զի Տէրոջը խօսքին համեմատ անոր դարձնեն Սաւուղի թագաւորութիւնը։ 24—Ցուդայի որդիներէն վահան ու նիզակ կրող վեց հազար ութ հարիւր սպառազինեալ զօրք։ 25—Շմաւոնի որդիներէն եօթը հազար հարիւր պատերազմական զօրաւոր կարիճներ։ 26—Ղեւիի որդիներէն չորս հազար վեց հարիւր։ 27—Ու Ահարոնեաններուն առաջնորդը Ցովիադա, ու անոր հետ երեք հազար եօթը հարիւր մարդիկ։ 28—Եւ զօրաւոր կարիճ Սադոկ երիտասարդը, ու անոր հօրը տունէն քսանուերկու իշխան։ 29—Ու Սաւուղի եղբայրներէն, Բենիամինի որդիներէն, երեք հազար մարդիկ. քանզի մինչև այն ատեն անոնց չատը Սաւուղի տանը պահպանութիւնը կ'ընէին։ 30—Ու Եփրեմի որդիներէն անոնց ազգատոհմներուն անուանի մարդիկը քսան հազար ութ հարիւր զօրաւոր կարիճներ։ 31—Եւ Մանասէի կէս ցեղէն տասնեւութ հազար մարդիկ, որոնք էրէ՛ց անուններովը որոշուեցան երթալու՝ ու Դաւիթը թագաւոր դնելու։ 32—Եւ

*կամ, չըրաւ
†կամ, անոր գունդին վրայ դր՛ո֊ելո՛վ
‡կամ, զօրաց իշխաններուն. եբր.զօրաց գլուխներուն

իսաքարի որդիներէն երկու հարիւր իմաստուն իշխաններ, որոնք ժամանակներուն հասկացան գիտէին թէ Իսրայէլ ի՛նչ ընելու է. ու անոնց բոլոր եղբայրները անոնց բերանը կը նայէին 33—Զաբուղոնի պատերազմի ելլող և ամէն տեսակ պատերազմական գործիքներով պատերազմող չիտուն հազար մարդիկ, որոնք *մէկ սրտով՝ կարգաւ կը չարուէին. 34—Ու Նեփթաղիմէ հազար իշխան, և անոնց հետ երեսուներեօթը հազար վահանաւոր ու նիզակաւոր մարդիկ. 35—Ու Դանեանները քսանուէ հազար վեց հարիւր պատերազմական մարդիկ. 36—Եւ Աներէ քսաուսան հազար պատերազմի գացող զօրք. 37—Ու Ցորդանանէ անդին կողմէն, Ռուբենեաններէն ու Գադեաններէն և Մանասէի կէս ցեղէն, ամէն տեսակ պատերազմական գործիքներով պատերազմող հարիւր քսան հազար մարդիկ։ 38—Բոլոր այս գունդով չարուող պատերազմական մարդիկ անկեղծ սրտով Քեբրոն եկան՝ Դաւիթը բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր դնելու համար. ու Իսրայէլի բոլոր մնացորդն ալ մէկ սրտով էր՝ Դաւիթը թագաւոր ընելու։ 39—Եւ հոն Դաւիթի հետ ուտելով ու խմելով երեք օր կեցան. քանզի անոնց եղբայրները անոնց համար պատրաստութիւն տեսեր էին։ 40—Եւ անոնց մօտ եղողներն ալ, մինչև անգամ Իսաքար, Զաբուղոն ու Նեփթաղիմ էշերով, ուղտերով, ջորիներով ու եզներով հաց բերին. հաւ ուտելիքի համար չատ ալիւր, չոր թուզ, չամիչ, գինի, իւղ, արջառներ ու ոչխարներ. քանզի Իսրայէլի մէջ ուրախութիւն կար։

ԳԼ. ԺԳ

Եւ Դաւիթ հազարապետներուն ու հարիւրապետներուն և բոլոր իշխաններուն հետ խորհուրդ ըրաւ։ 2—Ու Դաւիթ բոլոր Իսրայէլի ժողովին բսաւ, Եթէ ձեզի հաճոյ կ'երեւնայ, ու այս բանը մեր Տէր Աստուծմէն է, Իսրայէլի բոլոր երկիրներուն մէջ ծնացած մեր

*եբր. ոչ սրտով ու սրտով. Մաղ. ժբ.2ե

եղբայրներուն, ու անոնց հետ քահանաներուն ու Ղեւտացիներուն, իրենց քաղաքները ու արուարձանները, *Հէբր որ կ'ըսէ՝ որպես զի մեր քով ժողովուին։ 3—Ու մեր Աստուծոյն տապանակը մեր քով փոխադրենք. քանզի Սաուղի օրերը զանիկա չխնդրեցինք։ 4—Ու բոլոր ժողովուրդը այսպես ընելու համաձայն տուաւ. քանզի այս խօսքը բոլոր ժողովուրդին աչքերուն ուղիղ երեցաւ։ 5—Ու Դաւիթ Եգիպտոսի Սիհորէն մինչեւ Եմաթի մտաքը բոլոր Իսրայէլը ժողվեց, Աստուծոյ տապանակը Կարիաթիարիմէ բերելու համար։ 6—Ու Դաւիթ բոլոր Իսրայէլի հետ Բաղ, այսինքն Յուդայի Կարիաթարիմը, երթաս, որպէս զի անկէ՝ քերովբէից վրայ նստող Եհովա կոչուած Աստուծոյն տապանակը մեր հանէ։ 7—Ու Աստուծոյ տապանակը Աբինադաբի տունէն Վերշէլով նոր սայլի մը վրայ դրին. ու Ոզա ու Ախիով այն սայլը կը վարէին։ 8—Ու Դաւիթ ու բոլոր Իսրայէլ բոլոր ուժով Աստուծոյ առջեւ կը խաղային օրհնութիւններով, քնարներով, տաւիղներով, թմբուկներով, ծնծղաներով ու փողերով։

9—Ու մինչեւ Քիդոնի կալը եկան. և Ոզա իր ձեռքը երկնցուց որպէս զի տապանակը բռնէ. քանզի եղնները ըստ†ծռեր էին։ 10—Ու Տէրոջը բարկութիւնը Ոզայի դէմ բորբոքեցաւ և ձեռքը տապանակին երկնցնելուն համար զանիկա զարկաւ. ու անիկա հոն Աստուծոյ առջեւ մեռաւ։ 11—Ու Դաւիթ տրտմեցաւ, քանզի Տէրը հարուածով Ոզան զարկաւ, ու այն տեղին անունը մինչեւ այսօր †Փարէս-Ոզա րսուեցաւ։ 12—Ու Դաւիթ այն օրը Աստուծմէ վախցաւ, ու ըսաւ, Աստուծոյ տապանակը ի՛նչպէս քովս բերեմ։ 13—Ու Դաւիթ տապանակը իր քով, Դաւիթի քաղաքը, չբերաւ. հապա զանիկա Գեթացի Աբդեդոմի տունը խոտորցուց։ 14—Ու Աստուծոյ տապանակը Աբդեդոմի քով անոր տանը մէջ երեք ամիս մնաց. ու Տէրը Աբդեդոմի տունը ու անոր բոլոր ստացուածքը օրհնեց։

*Եբր. տարածենք ու՝ դրկենք

†Այսինքն, Ոզայի խրտնուածութիւնը

Գլ. ԺԴ

Ե. Տիրոսի Քիրամ թագաւորը Դաւիթի դեսպաններ դրկեց, ու եղեւնափայտեր, որմնադիրներ ու հիւսեր, որպէս զի անոր տունը շինեն։ 2—Ան ատեն Դաւիթ խնացաւ որ Տէրը զինք իսրայէլի վրայ թագաւոր հաստատեց, վասն զի իր ժողովուրդին Իսրայէլի համար անոր թագաւորութիւնը բարձրացաւ։

3—Ու Դաւիթ Երուսաղէմի մէջ ուրիշ կիներ ալ առաւ, ու Դաւիթ ուրիշ աղաքներ ու աղջիկներ ալ ծնաւ։ 4—Ու երուսաղէմի մէջ անոր ծնած սոցոր անուններն որոնք են. Սամաա, Սովբար, Նաթան, 5—Սողոմոն, Ցեբհար, Եղիսուա, 6—Նեփեղ, Նոքա, Նափեկ, 7—Յափիէ, Եղիսամա, Բաղիադա ու Եղիսափաղէտ։

8—Ու Փղշտացիք երբ լսեցին Դաւիթի բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր օծուիլը, բոլոր Փղշտացիք ամբ եկան որպէս զի Դաւիթը փնտռեն. երբ Դաւիթ‑այ բանը լսեց անոնց դիմաց ելաւ։ 9—Ու Փղշտացիք եկան և Ռափայիմներուն հովիտին մէջ տարածուեցան։ 10—Ու Դաւիթ Աստուծոյ հարցաց ու ըսաւ, Փղշտացւոց դէմ ելլե՞մ, ու զանոնք իմ ձեռքս պիտի մատնե՞ս։ Եւ Տէրը անոր ըսաւ, ելիր, ու զանոնք քու ձեռքդ պիտի մատնեմ։ 11—Ու անոնք Բաալ‑փարասին եկան, ու Դաւիթ զանոնք հոն զարկաւ. ու Դաւիթ ըսաւ, Աստուած իմ թշնամիներս իմ ձեռքովս պատռուեց, ինչպես ջուրերը կ'պատռուին. անոր համար այն տեղին անունը Բաալ‑փարասին կոչեցին։ 12—Ու փղշտացիք հոն թողուցին իրենց աստուածները. ու Դաւիթ հրամայեց ու զանոնք կրակով այրեցին։

13—Ու փղշտացիք նորէն մէկ‑մէն ալ հովիտին մէջ տարածուեցան։ 14—Ու Դաւիթ նորէն Աստուծոյ հարցուց. և Աստուած անոր ըսաւ, Անոնց ետեւէն չելլես, հապա անոնց բոլորտիքը պտրտելով՝ թթենիներուն կողմէն անոնց վրայ երթաս։ 15—Ու երբ թթենիներուն գլուխը քալած‑քի մը ձայն լսես, այն ատեն պատերազմելու ելլես, քանզի Աստուած քու առջեւդ պիտի ելլէ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ 463

փղշտացւոց բանակը զարնելու համար։ 16—Ու Դաւիթ այնպէս բրաւ՝ ինչպէս Աստուած իրեն հրամայեց, ու Փաթաւոնէ մինչեւ Գազեր փղշտացւոց բանակը զարկին։ 17—Ու Դաւիթի անունըամէն երկիրներու մէջ տարածուեցաւ, և Տէրը ամէն ազգերուն վրայ անոր վախը ձգեց։

Գլ. ԺԵ

Ե. անիկա իրեն համար Դաւիթի քաղաքին մէջ տուներ շինեց, ու Աստուծոյ տապանակին համար տեղ մը պատրաստեց, և անոր համար վրան մը կանգնեց։ 2—Այն ատեն Դաւիթ ըսաւ, Աստուծոյ տապանակը վերցնել *Հէբր չէ, բայց միայն Ղեւտացիները. քանզի Տէրը զանոնք ընտրեց որ Աստուծոյ տապանակը վերցնեն, ու յաւիտեան անոր ծառայութիւն ընեն։

3—Ու Դաւիթ բոլոր Իսրայէլը Երուսաղէմի մէջ ժողվեց, որպէս զի Տէրոջը տապանակը անոր համար պատրաստած տեղը հանէ։ 4—Ու Դաւիթ Ահարոնի որդիները ու Ղեւտացիները ժողվեց։ 5—Կահաթի որդիներէն Ուրիէլ իշխանը ու անոր եղբայրները հարիւր քսան հոգի։ 6—Մերարիի որդիներէն Ասայիա իշխանը ու անոր եղբայրները երկու հարիւր քսան հոգի։ 7—Գերսոնի որդիներէն ալ՝ Իւէլ իշխանը ու անոր եղբայրները հարիւր երեսուն հոգի։ 8—Եղիսափանի որդիներէն Սեմայիա իշխանը ու անոր եղբայրները երկու հարիւր հոգի։ 9—Քեբրոնի որդիներէն Եղիէլ իշխանը ու անոր եղբայրները ութսուն հոգի։ 10—Ոզիէլի որդիներէն Ամինադաբ իշխանը ու անոր եղբայրները հարիւր տասներկու հոգի։

11—Ու Դաւիթ Սադովկ ու Աբիաթար քահանաները, ու Ղեւտացիներէն Ուրիէլը, Ասայիան, Յոէլը, Սեմայիան, Եղիէլը ու Ամինադաբը կանչեց, 12—Ու անոնց ըսաւ, Դուք Ղեւտացւոց տոհմերուն իշխաններն էք. սրբե՛ք զձեզ ու ձեր եղբայրները սրբեցեք, որպէս զի Իսրայէլի Տէր Աստուծոյն տապանակը հանեք‑ա՛ր տեղը՝ զոր ես անոր համար պատրաստեր եմ։ 13—Վասն զի դուք առաջին անգամին հոն չգտնուելնուդ համար, մեր Տէր Աստուածը մեր մէջ հարուած բրաւ, քանզի զանիկա կանոնաւոր կերպով չխնդրեցինք։ 14—Ու Իսրայէլի Տէր Աստուծոյն տապանակը հանելու համար քահանաները ու Ղեւտացիները սրբուեցան։ 15—Ու Ղեւտացւոց որդիները Աստուծոյ տապանակը ձողերովը իրենց ուսերուն վրայ վերցուցին, ինչպես Մովսէս Տէրոջը խօսքովը պատուիրեր էր։

16—Ու Դաւիթ Ղեւտացւոց իշխաններուն պատուիրեց որ իրենց եղբայրներէն՝ նուագարաններով, տաւիղներով, քնարներով ու ծնծղաներով երգեցողները կանչեցնեն, որպէս զի ուրախութեան ձայներ վերցնելով հնչեցնեն։ 17—Ուստի Ղեւտացիները Յոէլի որդին Եմանը, և անոր եղբայրներէն Բարաքիայի որդին Ասափը, ու անոնց եղբայրներէն Մերարիի որդիներէն Կիսայի որդին Եթանը կանչեցուցին. 18—Ու անոնց հետ երկրորդ դասէն, անոնց եղբայրները, զաձայնները, Զաքարիան, Բենը, Յազիէլը, Սեմիրամովթը, Եհիէլը, Ունննի, Եղիաբը, Բանեան, Մաասիան, Մատաթիան, Եղիփալէն, Մաքենիան, Աբդեդոմը ու Յեհիէլ։ 19—Արդ Եման, Ասափ ու Եթան երգեցողները պղնձէ ծնծղաներ կը զարնէին։ 20—Ու Զաքարիա, Ազիէլ, Սեմիրամովթ, Ցեհիէլ, Ունննի, Եղիաբ, Մաասիա ու Բանեա տաւիղներով Ալամոթի եղանակին վրայ էին։ 21—Ու Մատաթիա, Եղիփալէ, Մաքենիա, Աբդեդոմ, Ցեհիէլ ու Ազազիա քնարներով Շեմինիթի եղանակով կ'առաջնորդէին։ 22—Ու Քանանիա Ղեւտացիներուն երգեցողութեան առաջնորդը բլլալով՝ երգելու կը վարժէր, որովհետեւ հանճարեղ էր։ 23—Ու Բարաքիա ու Եղկանա տապանակին դռնապաններն էին։ 24—Ու Սեբանիա ու Յոսափատ և Նաթանայէլ ու Ամեսայի և Զաքարիա ու Բանեա ու Եղիեզար, քահանաները, Աստուծոյ տապանակին առջեւ փողեր կը հնչեցնէին. և Աբդեդոմ ու Ցեհիա տապանակին դռնապաններն էին։

25—Այսպէս Դաւիթ և Իսրայէլի ծերերը ու հազարապետները Տէրոջը

ուխտին տապանակը Աբրահամ տուեր նէ ուրախութեամբ հանելու գացին։
26—Ու երբ Աստուած Տէրոջը ուխտին տապանակը վերցնող Ղեւտացիներուն օգնութեան բրաւ, եօթը զուարակ ու եօթը խոյ զոհ ըրին։ 27—Ու Դաւիթ բեհեզէ պատմուճան հագեր էր. նոյնպէս ալ տապանակը վերցնող բոլոր Ղեւտացիները ու երգեցողներուն երգոց իշխանը Քոնոնիա. և Դաւիթի վրայ ճիպոտ կար։ 28—Ու բոլոր Իսրայէլ Տէրոջը ուխտին տապանակը ուրախութեան աղաղակով, շեփորի ձայնով, փողերով ու ծնծղաներով, տաւիղներ ու քնարներ զարնելով վեր կը հանէին։ 29—Ու երբ Տէրոջը ուխտին տապանակը մինչև Դաւիթի քաղաքը եկաւ, Սաւուղ աղիկը Միղքող պատուհանէն նայեցաւ, ու Դաւիթ թագաւորին կաքաւելը ու խաղալը տեսնելով՝ զանիկա իր սրտին մէջ անարգեց։

Գլ. ԺԶ

Եւ Աստուծոյ տապանակը տարին, ու զանիկա այն վրանին մէջ դրին, զոր Դաւիթ անոր համար կանգներ էր. և Աստուծոյ առջև ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցին։ 2—Ու Դաւիթ երբ ողջակէզները ու խաղաղութեան զոհերը մատուցանելը լմընցուց, Տէրոջը անունով ժողովուրդը օրհնեց։ 3—Ու Իսրայէլի բոլոր մարդոց՝ այր մարդէն մինչև կին մարդ՝ ամէն մէկուն մէկ նկանակ հաց, կտոր մը միս ու կարկանդակ մը բաշխեց։

4—Ու Տէրոջը տապանակին առջև Ղեւտացիներէն պաշտօնեաներ դրաւ՝ Իսրայէլի Տէր Աստուածը յիշելու, օրհնելու ու փառաւորելու համար. 5—Գլխաւորը Ասաֆ էր, ու անոր երկրորդը Զաքարիա, Նաե Ցեհիէլ, Սեմիրամովթ, Ցեհիէլ, Մատաթիա, Եղիաբ, Բանեա, Աբդեդոմ ու Ցեհիէլ տաւիղներու ու քնարներու նուագարաններ կը ղարնէին. բայց Ասաֆ ծնծղաներ կը զարնէր։ 6—Ու Բանեա ու Յազիէլ քահանաները Աստուծոյ ուխտի տապանակին առջև միշտ փողեր կը հնչեցնէին։

7—Ու այն նոյն օրը Դաւիթ առաջինանգամ այս յիշատակը առաւ Ասաֆի ու անոր եղբայրներուն ձեռքը, որպէս զի Տէրոջը գոհութիւն ասեն։

8—Գոհացէք Տէրոջմէն, անոր անունը կանչեցէք,
Անոր գործերը ժողովրդներուն մէջ պատմեցէք։
9—Երգեցէք անոր, սաղմոս ըսէք անոր,
Պատմեցէք անոր բոլոր հրաշքները։
10—Անոր սուրբ անունովը պարծենցէք,
Տէրը խնդրողներուն սիրտը թող ուրախ ըլլայ։
11—Տէրը ու անոր զօրութիւնը խնդրեցէք,
Անկէ ժամանակ անոր երեսը փնտռեցէք։
12—Յիշեցէք անոր ըրած հրաշքները,
Անոր նշանները ու բերնին դատաստանները։
13—Ով անոր ծառային Իսրայէլի սերունդը,
Ով Յակոբի որդիները, անոր ընտրեալները։
14—Եհովա ինք է մեր Աստուածը,
Անոր դատաստանները բոլոր երկրի մէջ են։
15—Անոր ուխտը յաւիտեան յիշեցէք,
Անոր պատուիրած խօսքը մինչև հազար ազգ։
16—Այն ուխտը զոր Աբրահամի հետ բրաւ,
Ու իր երդումը զոր Իսահակի ըրաւ։
17—Յակոբի ալ հաստատեց զանիկա՝ օրէնք մը ըլլալու,
Ու Իսրայէլի՝ էբէր յաւիտենական ուխտ մը,
18—Ըսելով, Քեզի պիտի տամ Քանանու երկիրը,
Քեր ժառանգութեան վիճակը.
19—Երբ դուք սակաւաթիւ էիք,
Եւ քիչուոր ու պանդուխտ՝ անոր մէջ,
20—Ու անոնք մէկ ազգէ ուրիշ ազգի գացին,
Ու մէկ թագաւորութենէ ուրիշ ժողովուրդի։
21—Անոնիկա մեկո՛ւն թող չտուաւ որ զանոնք նեղէ.
Թագաւորներ ալ յանդիմանեց անոնց համար,
22—Բո՛ւլէ, իմ օծեալներուս մի դպչիք,
Ու իմ մարգարէներուս չարութիւն մի ընէք։
23—Երգեցէք Տէրոջը, ով բոլոր երկիր,
Օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք։
24—Անոր փառքը ազգերու մէջ պատմեցէք,
Ո՛ անոր հրաշքները՝ ամէն ժողովուրդներու մէջ.
25—Քանի Տէրը մեծ է ու խիստ գովելի,
Անիկա ամէն աստուածներուն վրայ ահաւոր է։
26—Վասն զի ազգերուն ամէն աստուածները *կուռքեր են,
Բայց Եհովա երկինքը ստեղծեց։
27—Փառք ու վեհութիւն կայ անոր առջև,
Զօրութիւն և ուրախութիւն՝ անոր բնակութեանը մէջ.
28—Տէրոջը տուէք, ով ժողովրդոց տոհմերը,
Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն։
29—Տէրոջը տուէք իր անունովը փառքը.
Ընծայ տուէք ու անոր առջև եկէք.
Սուրբ հանդէսով Տէրոջը երկրպագութիւն ըրէք։
30—Ով բոլոր երկիր, անոր երեսէն վախցէք.
Աշխարհս ալ պիտի հաստատուի
Ու պիտի չսասանի.
31—Երկինք թող ուրախանայ, ու երկիր ցնծայ,
Ու ազգերուն մէջ ըսեն թէ Տէրը կը թագաւորէ։
32—Ծովը իր լիութեամբ թող գոռայ,
Դաշտը ու բոլոր անոր մէջ եղողները թող ուրախանան,
33—Այն ատեն անտառին ծառերը Տէրոջմէ առջև ցնծան,
Քանզի երկիրն դատաստան ընելու կուգայ,
34—Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,
Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է,

*Կամ, ունայնութիւններ

35—Նաև ըսէք, Ով մեր փրկութեան Աստուածը, մեզ փրկէ,
Ու մեզ ժողվէ և մեզ ազգերէն ազատէ,
Որպէս զի քու սուրբ անունդ գոհութիւն մատուցանենք,
Ու քու օրհնութիւնովդ պարծենանք։
36—Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը,
Յաւիտենից յաւիտեանց,
Ու բոլոր ժողովուրդը Ամէն ըսելով՝ Տէրը օրհնեցին։
37—Ու հոն Տէրոջը ուխտի տապանակին առջև Ասաֆ ու անոր եղբայրները թողուց, որպէս զի շարունակ ամէն օրուան պաշտօնը կատարեն տապանակին առջև։ 38—Ու Աբդեդոմը ու անոր վաթսունեւեօթ եղբայրները և Իդիթունի որդին Աբդեդոմ և Ուսան դռնապաններ դրաւ։ 39—Ու Սադովկ քահանան ու անոր քահանայ եղբայրները Գաբաւոնի բարձր տեղին վրայ Տէրոջը խորանին առջև Խոտոր, 40—Որպէս զի միշտ առտու ու իրիկուն ողջակէզի սեղանին վրայ Տէրոջը ողջակէզներ մատուցանեն, ու Տէրոջը Իսրայէլի պատուիրած օրէնքին մէջի ամէն գրուածը կատարեն։ 41—Ու անոնց հետ Եմման ու Իդիթունը և ուրիշ ընտրուածները՝ որոնք անունով յիշուեցան, որպէս զի Տէրոջը գոհութիւն մատուցանեն, քանզի անոր ողորմութիւնը յաւիտեան է։ 42—Ու անոնց, այսինքն Եմանի ու Իդիթունի, հետ եղող նուագածուներուն փողեր ու ծնծղաներ կային, նաև Աստուծոյ երգերուն նուագարանները. ու Իդիթունի որդիները դրանը պահապան էին։ 43—Ու բոլոր ժողովուրդը գնաց՝ ամէն մէկը իր տունը. Դաւիթ ալ իր տունը օրհնելու դարձաւ։

Գլ. ԺԷ

Ու երբ Դաւիթ իր տանը մէջ բնակեցաւ, Դաւիթ Նաթան մարգարէին ըսաւ, Ահա ես եղեւնափայտէ չքնաղ տան մէջ կը բնակիմ, բայց Տէրոջը ուխտին տապանակը վրանի տակ է։ 2—Ու Նաթան Դաւիթի ըսաւ, Բոլոր սրտիդ մէջ եղածը ըրէ, քանզի Աստուած քե-

զի հետ է։ 3—Ու նոյն գիշերը Աստուած յայտնեցաւ Նաթանի եղբայր բնակչի, 4—Գնա իմ ծառայիս Դաւիթի ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Իմ քնակելու տունս դուն պիտի չշինես. 5—Քանզի իսրայէլը ես ելոց-ոտ հանած օրէս մինչև այսօր տան մէջ չբնակեցայ, հապա վրանի վրան ու խորանի ։։-ոն պատեցայ։ 6—Բոլոր իսրայէլի հետ որչափ տեղ որ պատեցայ, միթէ բան մը խօսեցա՞յ իսրայէլի դատաւորներուն մէկուն հետ՝ որոնց իմ ժողովուրդս հովուելու հրաման տուի, ու ըսի՝ Ինչո՞ւ համար շինած չեղեւնափայտէ տուն մը չշինեցիք։ 7—Ու հիմա իմ ծառայիս Դաւիթի այսպէս ըսես, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ես քեզ փարախէն, ոչխարներուն ետեւէն, առի, որպէս զի իմ իսրայէլ ժողովուրդիս առաջնորդ ըլլաս։ 8—Ու ուր որ կ'երթայիր՝ քեզի հետ եղայ, և քու առջեւէդ բոլոր թշնամիներդ կտրեցի. ու քու անունդ երկրի վրայ եղող մեծերուն անուանը պէս ըրի։ 9—Ու իմ ժողովուրդիս իսրայէլի ալ տեղ մը պիտի որոշեմ, ու զանիկա պիտի անկեմ. ու իր տեղը պիտի բնակի, ալ պիտի չշարժի. և անիրաւութեան որդիները առաջուան պէս մէյմըն ալ պիտի չնեղչեն զանիկա։ 10—Ինչպէս իմ ժողովուրդիս իսրայէլի վրայ դատաւորներ դրած օրէս ի վեր եղան. ու քու ամէն թշնամիներդ պիտի նուաճեմ. ու քեզի կ'իմացնեմ որ Տէրը քեզի տուն պիտի շինէ։ 11—Ու երբ քու օրերդ լեցուին և քու հայրերուդ խառնուիս, քեզմէ ետքը քու սերունդդ, քու որդիներէդ մէկը, պիտի բարձրացընեմ, ու անոր թագաւորութիւնը պիտի հաստատեմ։ 12—Անիկա ինծի տուն պիտի շինէ. ու անոր աթոռը յաւիտեան պիտի կանգնեմ. 13—Ես անոր հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի որդի պիտի ըլլայ. ու իմ ողորմութիւնս անկէ պիտի չվերցնեմ, ինչպես քեզմէ առաջ եղողէն վերցուցի։ 14—Ու զանիկա յաւիտեան իմ տանս մէջ ու իմ թագաւորութեանս մէջ պիտի հաստատեմ, ու անոր աթոռը յաւիտեան հաստատ պիտի ըլլայ։ 15—Ու Նաթան այս բոլոր խօսքերը ու այս բոլոր տեսիլքը մի՛ բան մի՛նչ Դաւիթի զրուցեց։

16—Ու Դաւիթ թագաւորը գնաց՝ Տէրոջը առջեւ նստաւ, ու ըսաւ, Ով Տէր Աստուած, ես ո՞վ եմ, ու իմ տունս ի՞նչ է, որ դուն մինչև հոս բերիր։ 17—Սակայն ասիկա քու աչքերուդ պզտիկ երեւցաւ, ով Աստուած, ու քու ծառայիդ տանը վրայով հեռաւոր ժամանակի համար խօսեցար, ու ինծի, ով Տէր Աստուած, բարձր աստիճանի մարդու պէս նայեցար։ 18-Ու քու ծառայիդ փառքին համար Դաւիթ՝ ալ աւելի ի՞նչ խօսի. դուն քու ծառադ կը ճանչնաս։ 19—Ով Տէր, քու ծառայիդ *-էրն համար՝ ու քու սրտիդ *-ովէն պէս այս բոլոր մեծ բաները ըրիր, որպէս զի այս բոլոր մեծ բաները գիացնես։ 20—Ով Տէր, քեզի պէս ։։-էնէ մէկը չկայ, ու քեզմէ զատ Աստուած չկայ՝ մեր ականջներովը բոլոր լսածնիդնուս համեմատ։ 21—Ու երկրի վրայ ա՞ր ազգը քու ժողովուրդիդ Իսրայէլի պէս է, որու համար Նոյն Աստուած եկաւ ։։-ին- փրկելու, իրեն ժողովուրդ ընելու։։. որ եգիպտոսէ ազատած ժողովուրդիդ առջեւէն ազգեր վռնտելով՝ քեզի մեծ ու երեւելի անուն ստացար։ 22—Ու քու ժողովուրդդ Իսրայէլը յաւիտեան քեզի ժողովուրդ ըրիր, ու դուն, ով Տէր, անոնց Աստուած եղար։ 23—Ու հիմա, ով Տէր, քու ծառայիդ ու անոր տանը համար ըսած խօսքդ հաստատուի, ու ըսածիդ պէս ըրէ. 24—Թող հաստատուի, ու քու անունդ յաւիտեան մեծ ճանչցուի, ու ըսուն թէ Զօրութեանց Տէրը Իսրայէլի Աստուածն է, Աստուած Իսրայէլի. ու քու ծառայիդ Դաւիթի տունը քու առջեւդ հաստատ ըլայ։ 25—Քանզի դուն, ով Աստուած իմ, քու ծառայիդ յայտնեցիր, որ անոր տուն պիտի շինես. անոր համար քու ծառադ էր *-ին հզ հոգ-ոյ-ո-ի-ւ գտաւ քու առջեւդ այս աղօթքը ընելու։ 26—Ու հիմա, ով Տէր, այն Աստուածդ դուն ես, ու քու ծառայիդ այս ազէկութիւնը խոստացար։ 27—Ու հիմա *կամք ըրէ՝ քու ծառա-

*Կամ, սկսեցիր

յիդ տունը օրհնելու, որպէս զի յաւիտեան քու առջեւդ ըլլայ. քանզի դուն օրհնեցիր, ով Տէր, ու յաւիտեան օրհնեալ է։

Գլ. ԺԸ

Անկէ ետև Դաւիթ փղշտացիները զարկաւ ու զանոնք նուաճեց, և Գէթը ու անոր գիղերը փղշտացւոց ձեռքէն առաւ։ 2—Նաքը Մոաբը զարկաւ, ու Մոաբացիք Դաւիթի հարկատու ծառաներ եղան։ 3—Ու Դաւիթ Սուբայի Ադրազար թագաւորը ետևէն կոզները զարկաւ, երբ եփրատ գետին վրայ իր *իշխանութիւնը հաստատելու կ'երթար։ 4—Ու Դաւիթ անկէ հազար կառք ու եօթը հազար ձիաւոր ու քսան հազար հետեւակ զօրք բռնեց. և Դաւիթ բոլոր †կառքի ձիերուն կիզիչը կարեց, ու անոնցմէ միայն հարիւր ձի չէրէն հո-ը պահեց։ 5—Ու Դամասկոսի Ասորիները Սուբայի թագաւորին Ադրազարի օգնութիւն ընելու եկան. ու Դաւիթ Ասորիներէն քսաներկուհազար մարդ զարկաւ։ 6—Ու Դաւիթ Դամասկոսի Ասորւոց մէջ էէրը-ո-ո-ն զբաւ, ու Ասորիները Դաւիթի հարկատու ծառայ եղան. ու Դաւիթ ուր որ կ'երթար՝ Տէրը անոր յաջողութիւն կու տար։ 7—Ու Դաւիթ Ադրազարի ծառաներուն վրայ եղող ասկիլ վահանները առաւ, ու զանոնք Երուսաղէմ բերաւ։ 8—Ու Ադրազարի քաղաքներէն, Տեբաթէ ու Քունէ, Դաւիթ խիստ շատ պղինձ առաւ. անկէ չինեց Սողոմոն պղնձէ ծովը ու սիւները ու պղնձէ գործիքները։

9—Ու երբ Թովու Եմաթի թագաւորը լսեց որ Դաւիթ Սուբայի Ադրազար թագաւորին բոլոր զօրքերը կարեց է, 10—Իր որդին Ադորամը Դաւիթ թագաւորին ղրկեց, որպէս զի անոր բարև ընէ ու †զանիկա օրհնէ՝ Ադրազարի դէմ պատերազմ ընելուն ու զանիկա զարնելուն համար. (քանզի Ադրազար թա-

*Եբր. ձեռքը
† Կամ, կառքերը քակեց, ու անոնցմէ միայն հարիւր կառք պահեց
‡Կամ, չնորհաւորութիւն ընէ անոր

վուի հետ պատերազմներ կ'ընէր։) ու անոր ամէն տեսակ արծաթէ ու պղնձէ անօթներ չէին։ 11—Դաւիթ թագաւորը զանոնք ալ Տէրոջը նուիրեց՝ այն արծաթով ու ոսկիով մէկտեղ, զոր ամէն ազգերէն, Եդովմ, Մոաբ, Ամմանի որդիներէն, Փղշտացիներէն ու Ամաղեկէ առեր էր։ 12—Ու Շարուհեայի որդին Աբիսա Աղի ձորին մէջ տասնըութ հազար Եդովմացի զարկաւ։

13—Ու Եդովմի մէջ բերդապահ զօրքեր դրաւ, ու բոլոր Եդովմացիք Դաւիթի ծառայ եղան. ու Դաւիթ ուր որ կ'երթար, Տէրը անոր յաջողութիւն կու տար։

14—Ու Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ, ու իր բոլոր ժողովուրդին իրաւունք ու արդարութիւն կ'ընէր։ 15—Ու Շարուհեայի որդին Յովաբ զօրքերուն վրայ էր. ու Աքիլուդի որդին Յովսափատ յիշատակագիր էր։ 16—Ու Աքիտոբի որդին Սադովկ ու Աբիաթարի որդին Աբիմելէք քահանաներ էին. և Սուսա ատենադպիր էր։ 17—Ու Յովիադայի որդին Բանեա Քերեթհիներուն ու Փելեթհիներուն վրայ էր. և Դաւիթի որդիները թագաւորին քով նախարարներ էին։

Գլ. ԺԹ

Ու անկէ ետքը Ամմոնի որդւոց թագաւորը նաաս մեռաւ, ու անոր տեղ անոր որդին թագաւոր եղաւ։ 2—Ու Դաւիթ ըսաւ, Նաահ որդւոյն Անոնի մարդասիրութիւն ընեմ, քանզի անոր հայրը ինծի մարդասիրութիւն ըրաւ։ ու Դաւիթ դեսպաններ ղրկեց, որպէս զի զանիկա իր հօրը վրայով մխիթարէ։ ու Դաւիթի ծառաները Ամմոնի որդիներուն երկիրը Անոնի գացին, զանիկա մխիթարելու համար։ 3—Ու Ամմոնի որդիներուն իշխանները Անոնի ըսին, Միթէ Դաւիթ քու հօրդ քու առջեւդ պատուհասիլը համար քեզի մխիթարիչներ ղրկեց. միթէ անոր ծառաները այս երկիրը քննելու, տակնուվրայ ընելու, լրտեսելու համար չեկա՞ն քեզի։ 4—Ու Անոն Դաւիթի ծառաները բռնեց, ու զանոնք մէյ մէյ եղ, և անոնց հագուստները կրունկ մը կէսը մինչև նստոց տեղը կարել

տուաւ, և այլեւս զրկեց զանոնք։ 5— Ու գացին այն մարդոց երեսէն Դաւիթի պատմեցին. ան ալ զանոնք դիմաւորելու ղրկեց, քանզի այն մարդիկը շատ անարգուած էին. ու թագաւորը ըսաւ, Երիքովի մէջ նստիլ մինչեւ որ մօրուքնիդ աճի, ու դարձեալ գաք։

6—Ու Ամմինի որդիները տեսնելով որ Դաւիթի հետ ատելացան, Անոն ու Ամմինի որդիները հազար տաղանդ արծաթ զրկեցին, որպէս զի Միջագետացի Ասորիներէն ու Մաաքայի Ասորիներէն ու Սուբայէ վարձքով կառքեր ու ձիաւորներ բռնեն։ 7—Ու անոնք իրենց վարձքով բռնեցին երեսուներկու հազար կառք, ու Մաաքայի թագաւորը և անոր զօրքը, որոնք գացին Մեհտբայի առջեւ բանակեցան. Ամմինի որդիներն ալ իրենց քաղաքներէն ժողվուեցան, ու պատերազմելու գացին։

8—Ու երբ Դաւիթ լսաւ լսեց, Ցոաբը ու բոլոր զօրաւոր զօրքերը զրկեց։ 9—Ու Ամմինի որդիները ելան ու քաղաքին դրանը առջեւ կարգաւ պատերազմի շարուեցան, ու ՙէլ-Ռէհոբ եկող Թագաւորները դաշտի մէջ զատ կացին էին։ 10—Ու Ցոաբ երբ տեսաւ որ պատերազմը առջեւէն ու եետեւէն իր վրայ կը հասնի, Իսրայէլի բոլոր ընտրուած մարդոցմէ ընտրեց. ու Ասորւոց դէմ պատերազմի շարեց։ 11—Ու մնացած զօրքը իր եղբօրը Աբեսսայի յանձնեց. ու անոնք Ամմինի որդիներուն դիմաց շարուեցան. 12—Ու ըսաւ, Եթէ Ասորիները ինծի յաղթելու ըլլան, ինծի օգնութեան հասնիս. ու եթէ Ամմինի որդիները քեզ յաղթելու ըլլան, ես քեզի օգնութեան պիտի հասնիմ։ 13—Քաջալերս եղիր, ու մեր ժողովուրդին համար և մեր Աստուծոյ քաղաքներուն համար ՙուժով պատերազմինք՚. և Տէրը իր աչքին հաճոյ երեւցածը թող րնէ։ 14—Ու Ցոաբ իրեն հետ եղող զօրքով Ասորիներուն մօտեցաւ, որպէս զի անոնց դէմ պատերազմի բնէ. ու անոնք անոր առջեւէն փախան։ 15—Ու Ամմինի որդիները Ասորւոց փախչիլը տեսնելով, իրենք ալ անոր եղբօրը Աբեսսայի առջեւէն փախան, ու քաղաքը մտան։ Ու Ցոաբ Երուսաղէմ եկաւ։

16—Երբ Ասորիները տեսան որ իրենք Իսրայէլի առջեւ կատրեցան, դեսպաններ զրկեցին, ու Գետէն ետիի կողմը եղող Ասորիները ոտք հանեցին. և անոնց առջեւէն Ադրազարի զօրագլուխը Սոփաքն էր՝ՙ։ 17—Ու երբ Դաւիթի պատմեցին, անիկա բոլոր Իսրայէլը ժողվելով՝ Յորդանան անցաւ, ու անոնց վրայ գնաց, և անոնց դէմ գունդեր շարեց. ու երբ Դաւիթ Ասորիները պատերազմով դիմաւորելու համար գունդեր շարեց, անոնք անոր հետ պատերազմ բրին։ 18—Ու Ասորիները Իսրայէլի առջեւէն փախան. ու Դաւիթ Ասորիներէն եօթը հազար կառքի զէր, ու քառասուն հազար հետեւակ զօրք կատրեց, ու Սոփաքն զօրագլուխն ալ մեռցուց։ 19—Ու Ադրազարի ծառաները երբ տեսան որ Իսրայէլի առջեւ յաղթուեցան, Դաւիթի հետ հաշտութիւն բրին, ու անոր ծառայ եղան. և Ասորիները անկէետքը Ամմինի որդիներուն օգնել չուզեցին։

Գլ. Ի

Ու հետեւեալ տարին, թագաւորներուն պատերազմի ելլելու ատենը, Ցոաբ զօրքերուն բաղդ գունդերը հանեց, և Ամմինի որդիներուն երկիրը աւերեց, ու գնաց Ռաբբան պաշարեց, բայց Դաւիթ Երուսաղէմ կը նստէր. ու Ցոաբ Ռաբբան զարկաւ ու քանդեց կործանեց։ 2—Ու Դաւիթ անոնց թագաւորին թագը անոր գլխուն վրայէն առաւ, ու զանիկա գտաւ ոսկւոյ մէ ատկիի ծանրութիւն ունէր, և անոր վրայ պատուական քարեր կային. ու Դաւիթի գլխուն դրուեցաւ. և Քաղաքէն խիստ շատ աւար առաւ։ 3—Ու անոր մէջ եղած ժողովուրդը հանեց, ու ՙշ-նէտ սղոցներով, երկաթէ կամեսայլներով ու տապարներով կտրեց. և Դաւիթ Ամմինի որդիներուն բոլոր քաղաքներուն այսպէս ըրաւ. ու Դաւիթ բոլոր ժողովուրդով Երուսաղէմ դարձաւ։

4—Ու ասկէ ետքը Գազերի մէջ բնաստայի առջեւէն փախան, ու քաղաքը մտան։ Ու Ցոաբ Երուսաղէմ եկաւ։

16—Երբ Ասորիները տեսան որ իրենք Իսրայէլի առջեւ կատրեցան, դեսպաններ զրկեցին, ու Գետէն ետիի կողմը եղող Ասորիները ոտք հանեցին. և անոնց առջեւէն Ադրազարի զօրագլուխը Սոփաքն ՙէլ-Ռէհոբ՝ ։ 17—Ու երբ Դաւիթի պատմեցին, անիկա բոլոր Իսրայէլը ժողվելով՝ Յորդանան անցաւ, ու անոնց վրայ գնաց, և անոնց դէմ գունդեր շարեց. ու երբ Դաւիթ Ասորիները պատերազմով դիմաւորելու համար գունդեր շարեց, անոնք անոր հետ պատերազմ բրին։ 18—Ու Ասորիները Իսրայէլի առջեւէն փախան. ու Դաւիթ Ասորիներէն եօթը հազար կառքի զէր, ու քառասուն հազար հետեւակ զօրք կատրեց, ու Սոփաքն զօրագլուխն ալ մեռցուց։ 19—Ու Ադրազարի ծառաները երբ տեսան որ Իսրայէլի առջեւ յաղթուեցան, Դաւիթի հետ հաշտութիւն բրին, ու անոր ծառայ եղան. և Ասորիները անկէ ետքը Ամմինի որդիներուն օգնել չուզեցին։

Գլ. Ի

Եւ Սաւանայ Իսրայէլի գէմ ելաւ, ու Դաւիթը գրդռեց որ Իսրայէլը համրէ։ 2—Ու Դաւիթ Ցոաբի ու ժողովրդին իշխաններուն ըսաւ, Գացէք, Իսրայէլը համրեցէք Բերսաբէէ մինչեւ Դան, ու հաշիւը բնէք բերէք որպէս զի գիտնամ։ 3—Ու Ցոաբ ըսաւ, Տէրը, իր ժողովուրդը որչափ որ է, հարիւրապատիկ աւելցնէ. ով տէր իմ թագաւոր, միթէ անոնց ամէնը իմ տէրոջս ծառաները չեն. իմ տէրս ինչո՞ւ այս բանը կը փընտռէ, ինչո՞ւ համար այս բանը Իսրայէլի յանցանքի պատճառ ըլլայ։ 4—Բայց երբ թագաւորին խօսքը Ցոաբի վրայ սաստկացաւ, Ցոաբ ելաւ ու բոլոր Իսրայէլի մէջ պտրտեցաւ, ու Երուսաղէմ եկաւ։ 5—Ու Ցոաբ ժողովրդին համրանքին ցուցակը Դաւիթի տուաւ. ու Իսրայէլի ամէնը հազար անգամ հազար ու հարիւր հազար սուր քաշող մարդ էր, և Ցուդա չորս հարիւր եօթանասուն հազար սուր քաշող մարդ էր։ 6—Սակայն Ղեւտացիները ու Բենիամինեանները անոնց մէջ չհամրեց, քանզի թագաւորին այս հրամանը Ցոաբի զզուելի էր։

7—Ու այս բանին Աստուծոյ առջեւ գէշ երեւնալուն համար Իսրայէլը զարկաւ. 8—Ու Դաւիթ Աստուծոյ ըսաւ, Այս բանը ընելովս մեծ մեղք գործեցի, ու հիմա, կ՚ազաչեմ, քու ծառայիդ մեղքը ներէ, քանզի մեծ յիմարութիւն ըրի։

9—Ու Տէրը Դաւիթի տեսանողին Գադի խօսեցաւ ու ըսաւ, 10—Գնա ու Դաւիթի խօսէ՝ ըսելով, Տէրը այսպէս կ՚ըսէ. Ես քեզի երեք բան կ՚առաջարկեմ. անոնցմէ մէկը ընտրէ որպէս զի քեզի ընեմ։ 11—Ու Գադ Դաւիթի եկաւ ու անոր ըսաւ, 12—Տէրը այսպէս կ՚ըսէ. Ընտրէ քեզի՝ կա՛մ երեք տարուան սով կա՛մ երեք ամիս քու թշնամիներուդ երեսէն փախչիս, ու քու թշնամիներուդ սուրը տեւէ հասնի, և կա՛մ երեք օր Տէրոջը սուրը, այսինքն Ժանտախտ, ըլլայ երկրիս մէջ, ու Տէրոջը հրեշտակը Իսրայէլի բոլոր սահմաններուն մէջ կատրած ըլէ. և հիմա տես, ինչ զրկողին ինձ պատասխան տանիմ։ 13—Ու Դաւիթ ըսաւ Գադի, խիստ մեծ նեղութեան մէջ եմ. հիմա Տէրոջը ձեռքը իյնամ, քանզի անոր գթութիւնը խիստ շատ է, ու մարդու ձեռք չիյնամ։ 14—Ու Տէրը Իսրայէլի վրայ ժանտախտ զրկեց, ու Իսրայէլէ եօթանասուն հազար մարդ իյնաւ։ 15—Ու Աստուած հրեշտակ մը զրկեց Երուսաղէմ, որպէս զի զանիկա կործանէ. ու երբ կը կործանէր, Տէրը նայեցաւ ու այս չարիքին վրայ սիրտը իյնաւ, և կոտորած ընող հրեշտակին ըսաւ, Հերիք է, այլ ձեռքդ քաշէ. ու Տէրոջը հրեշտակը Յեբուսացի Ոռնոյի կալին քով կայներ էր։ 16—Ու Դաւիթ իր աչքերը վերցուց ու Տէրոջը հրեշտակը տեսաւ, որ երկրի ու երկինքի մէջտեղ կայներ էր, ու ձեռքը մերկ սուր մը կար, զոր Երուսաղէմի վրայ երկնցուցեր էր. այն ատեն Դաւիթ ու ծերերը քրտներ հագած՝ երեսնուն վրայ իյնան։ 17—Ու Դաւիթ Աստուծոյ ըսաւ, Ահա ե՛ս պատուիրեցի որ ժողովուրդը համրեն, ու ե՛ս եմ որ մեղանչեցի ու մեծ չարութիւն ըրի. բայց այս ոչխարները ինչ ըրին, ով Տէր Աստուած իմ, քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ. բայց քու ժողովրդիդ վրայ չըլլայ ՙզանիկա բնաջինջ ընելու համար՚։

18— Ու Տէրոջը հրեշտակը Գադի

փղշտացւոց հետ պատերազմ եղաւ. այն ատեն Ովսացի Սոփքայ որդի Սիբքէրէն եղող Սիբքիան մեռցուց, ու ասոնք նուաճեցան։

5—Ու նորէն փղշտացւոց հետ պատերազմ եղաւ. և Յայիրի որդին Ելհանան Գեթացի Գողիաթի եղբայրը Ղէհմին զարկաւ, որուն նիզակին բունը ոստայնանկներու գլանին պէս էր։

6—Ու նորէն Գէթի մէջ պատերազմ եղաւ. ու երկայնահասակ մարդ մը կար, որուն մատները վեց վեց ըլլալով՝ քսանչորս հատ ունէր. անիկա ալ Ռափայի որդիներէն էր։ 7—Ու անիկա Իսրայէլը նախատեց, բայց Դաւիթի եղբօրը Սամմայի որդին Յովնաթան զանիկա զարկաւ։ 8—Ասոնք Գէթի մէջ Ռափայէ ծներ էին, և Դաւիթի ձեռքով ու անոր ծառաներուն ձեռքով իյնան։

Գլ. ԻԱ

Եւ Սատանայ Իսրայէլի գէմ ելաւ, ու Դաւիթը գրդռեց որ Իսրայէլը համրէ։ 2—Ու Դաւիթ Ցոաբի ու ժողովրդին իշխաններուն ըսաւ, Գացէք, Իսրայէլը համրեցէք Բերսաբէէ մինչեւ Դան, ու հաշիւը բնէք բերէք որպէս զի գիտնամ։ 3—Ու Ցոաբ ըսաւ, Տէրը, իր ժողովուրդը որչափ որ է, հարիւրապատիկ աւելցնէ. ով տէր իմ թագաւոր, միթէ անոնց ամէնը իմ տէրոջս ծառաները չեն. իմ տէրս ինչո՞ւ այս բանը կը փընտռէ, ինչո՞ւ համար այս բանը Իսրայէլի յանցանքի պատճառ ըլլայ։ 4—Բայց երբ թագաւորին խօսքը Ցոաբի վրայ սաստկացաւ, Ցոաբ ելաւ ու բոլոր Իսրայէլի մէջ պտրտեցաւ, ու Երուսաղէմ եկաւ։ 5—Ու Ցոաբ ժողովրդին համրանքին ցուցակը Դաւիթի տուաւ. ու Իսրայէլի ամէնը հազար անգամ հազար ու հարիւր հազար սուր քաշող մարդ էր, և Ցուդա չորս հարիւր եօթանասուն հազար սուր քաշող մարդ էր։ 6—Սակայն Ղեւտացիները ու Բենիամինեանները անոնց մէջ չհամրեց, քանզի թագաւորին այս հրամանը Ցոաբի զզուելի էր։

7—Ու այս բանին Աստուծոյ առջեւ գէշ երեւնալուն համար Իսրայէլը զարկաւ. 8—Ու Դաւիթ Աստուծոյ ըսաւ, Այս բանը ընելովս մեծ մեղք գործեցի,

*ՆՔԲ. քաջութիւն ընենք

*ՆՔԲ զօրութիւնը

*ՆՔԲ. հարուածէ համաք

ըսաւ, Դաւիթի ըսես որ ելլէ, ու ճեղքուածքի Ոռնայի կալին մէջ Տէրոջը սեղան մը կանդնէ։ 19—Ու Դաւիթ վեր ելաւ՝ Գադի Տէրոջը անունովը բսած խօսքին համեմատ։ 20 — Ու Ոռնա դարձաւ ու հրեշտակը տեսաւ, և իր չորս որդիները իրեն հետ պահուեցան։ (քանզի Ոռնա ցորեն կը ծեծէր։) 21—Ու Դաւիթ Ոռնայի եկաւ. և Ոռնա նայեցաւ, ու Դաւիթը տեսնելով՝ կալէն ելաւ, ու երեսը մինչև գետինը Դաւիթի խոնարհութիւն բրաւ։ 22—Ա֊ն ատեն Դաւիթ Ոռնայի ըսաւ, Այս կալին տեղը ինծի տուր, որպէս զի հոն Տէրոջը սեղան մը շինեմ, (զանիկա լեցուն դնով տուր ինծի,) ու ժողովուրդին վրայէն հարուածը վերնայ։ 23—Ու Ոռնա Դաւիթի ըսաւ, Զանիկա քեզի առ, ու իմ տէրս թագաւորը իր աչքին ազեկ երեւցածը թող ընէ. ահա եզները ողջակէզի համար, ու կամաստալները փայտի համար, ու ցորենը հացի ընծայի համար կու տամ, ամէնն ալ կու տամ։ 24—Ու Դաւիթ թագաւորը Ոռնայի ըսաւ, Ոչ, հապա զանոնք անշուշտ լեցուն գնով ծախու պիտի առնեմ. քանզի քու կրկ֊ եղածը Տէրոջը համար պիտի չառնեմ, ոչ ալ ձրի ասածս ողջակէզ մատուցանեմ։ 25—Ու Դաւիթ այն տեղին համար կըշռադրամ մը հարիւր սիկղ ասիլ տուաւ Ոռնայէն։ 26—Ու Դաւիթ հոն Տէրոջը սեղան շինեց, ու անոր վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցց, և Տէրոջը ադաչեց. ու երկինքէն կրակով ողջակէզի սեղանին վրայ անոր պատասխան տուաւ։ 27—Ու Տէրը հրեշտակին խօսեցաւ, ու անիկա սուրը իր պատեանը դարձուց։

28—Ա֊ն ատեն Դաւիթ տեսնելով որ Տէրը ճեղքուածքի Ոռնայի կալին մէջ իրեն պատասխան տուաւ, այն տեղը զոհեր մատուց։ 29—Իսկ Մովսէսի՝ անապատին մէջ շինած Տէրոջը խորանը ու ողջակէզի սեղանը այն ատեն Գաբաւոնի բարձր տեղն էր։ 30—Բայց Դաւիթ Աստուծոյ հարցնելու համար չկրցաւ անոր առջև երթալ, քանզի Տէրոջը հրեշտակին սուրին երեսէն վախցաւ։

Գլ. ԻԲ

Եւ Դաւիթ ըսաւ, Աստիկա է Տէր Աստուծոյ տունը, ու ասիկա է Իսրայէլի ողջակէզին սեղանը։ 2— Ու Դաւիթ հրամայեց որ Իսրայէլի երկրին մէջ գտնուող օտարազգիները ժողվեն. ու Աստուծոյ տունը շինելու համար քարտահաններ գրաւ, որպէս զի տաշուած քարեր պատրաստեն։ 3—Ու Դաւիթ դռան փեղկերուն եղունգներուն համար ու յարմարներուն բերանները համար խիստ շատ երկաթ պատրաստեց, և այնչափ շատ պղինձ՝ որ կշռելէն չէր գար։ 4—Ու ՚ՀԱՐԱԿԱՅ եղեւնափայտին համրանքը չկար, քանզի Սիդոնացիք և Տիւրացիք Դաւիթին շատ եղեւնափայտեր կը բերէին։

5—Ու Դաւիթ ըսաւ, Իմ որդիս Սողոմոն փափուկ տղայ մըն է, ու Տէրոջը շինուելու տունը մեծ, բարձր, ու անկն երկիրներուն մէջ անուանի ու փառաւոր պիտի ըլլայ, հիմա անոր համար պատրաստութիւն տեսնեմ. և Դաւիթ իր մեռնելէն առաջ խիստ շատ պատրաստութիւն տեսաւ։ 6—Ետքը իր որդին Սողոմոնը կանչեց, ու անոր պատուիրեց որ Իսրայէլի Տէր Աստուծոյ տուն չշինէ։

7—Ու Դաւիթ Սողոմոնի ըսաւ, Որդեակ իմ, սրտիս մէջ ունէցայ որ իմ Տէր Աստուծոյս անուանը տուն շինեմ։ 8—Բայց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, Դուն շատ արիւն թափեցիր ու մեծ պատերազմներ բրիր. դուն իմ անուանս տուն պիտի չշինես, քանզի իմ առջեւս գետնի վրայ շատ արիւն թափեցիր։ 9—Ահա քեզի որդի մը պիտի ծնանի, անիկա հանգստութեան մարդ պիտի ըլլայ. և զանիկա իր ամէն չրջակայ թշնամիներէն պիտի հանգչեցնեմ. քանզի անոր անունը *Սողոմոն պիտի ըլլայ, ու անոր օրերուն մէջ Իսրայէլի խաղաղութիւն ու հանգստութիւն պիտի տամ։ 10—Անիկա իմ անուանս տուն պիտի շինէ. ու անիկա ինծի որդի պիտի ըլլայ, ու ես անոր հայր պիտի ըլլամ. և անոր թագաւորութեան աթոռը Իսրայէլի մէջ յաւիտեան պիտի

*Այսինքն, խաղաղարար

հաստատեմ։ 11 — Ուրեմն, որդեակ իմ, Տէրը քեզի հետ ըլլայ, ու յաջողութիւն գտնես և քու Տէր Աստուծոյդ տուն շինես, ինչպես քեզի համար խօսեցաւ։ 12—Միայն թէ Տէրը քեզի խոհմտութիւն ու հանճար տայ, և քեզ Իսրայէլի վրայ հաստատէ, որպէս զի քու Տէր Աստուծոյդ օրէնքը պահես։ 13—Այն ատեն յաջողութիւն կը գտնես, երբ զգուշութիւնով ի գործ դնես այն կանոնները ու դատաստաններըն, զորոնք Տէրը Մովսէսի պատուիրեց Իսրայէլի համար։ զօրացիր ու քաջասիրտ եղիր, մի վախնար ու մի զարհուրիր։ 14—Ու ահա ես իմ *նեղութիւններուս մէջ՝ Տէրոջը տանը համար՝ հարիւր հազար տաղանդ ոսկի ու հազար անգամ հազար տաղանդ արծաթ պատրաստեցի. իսկ պղինձը ու երկաթը չափուածէն շատ համար կշռելէ չգար. փայտեր ու քարեր ալ պատրաստեցի, ու անոնց վրայ դուն ալ աւելցնես։ 15—Ու դուն քու քովդ խիստ շատ արուեստաւորներ, քարահաններ, որմնադիրներ, հիւսներ ու ամէն գործի համար ամէն տեսակ վարպետ մարդիկ ունիս։ 16—Ոսկիին, արծաթին, պղնձին ու երկաթին համրանքը չկայ.ելիր ու գործին ձեռք զարկ, ու Տէրը քեզի հետ ըլլայ։

17—Ու Դաւիթ Իսրայէլի բոլոր իշխաններուն պատուիրեց, որ իր որդւոյն Սողոմոնի ձեռնտու ըլլան։ 18—Ո֊ըսաւ, Ահա ձեր Տէր Աստուածը ձեզի հետ է, և անիկա ձեզ ամէն կողմանէ հանգստացուց. որովհետև այս երկրին բնակիչները իմ ձեռքս տուաւ, ու երկիրը Տէրոջը առջև ու անոր ժողովուրդին առջև նուաճեցաւ։ 19—Ա֊ հիմա ձեր սիրտը ու ձեր հոգին ձեր Տէր Աստուածը խնդրելու տուէք, ու ելէք Տէր Աստուածոյն սրբարանը շինեցէք, որպէս զի Տէրոջը ուխտին տապանակը ու Աստուծոյ սուրբ անօթները Տէրոջը անունանը համար շինուած տունը տանիքը

*Կամ, ազգաստութեամբս
†ՆԵԲ. ըրե

Գլ. ԻԳ

Եւ Դաւիթ ծերացած ու օրերը լեցուած ըլլալով, իր որդին Սողոմոնը Իսրայէլի վրայ թագաւոր դրաւ։ 2—Ու Իսրայէլի բոլոր իշխանները նաև քահանաները ու Ղեւտացիները ժողվեց։ 3—Ու Ղեւտացիները, որոնք երեսուն տարեկանէն վեր եղող այր մարդիկը, մէկիկ մէկիկ համրուելով, անոնց թիւը երեսունըմէկ հազար էր։ 4—Ու ՚ԴԱՒԻԹ ըսաւ, Ասոնցմէ քառասուներս հազարը՝ Տէրոջը տանը գործին վրայ, ու վեց հազարը ոստիկաններ ու գաւառապետներ ըլլան։ 5—Ու չորս հազարը գռնապաններ, ու չորս հազարը օրհնելու համար չինած նուագարաններովս Տէրոջը օրհնիչներ ըլլան։ 6—Ու Դաւիթ զանոնք բաժնեց, Ղեւիի որդիներուն, Գերսոնի, Կահաթի ու Մերարիի գասակարգութիւններուն ՚ըստ։

7—Գերսոնեաններէն Ղագան ու Սեմէի էին։ 8—Ղագանի որդիները, առաջինը Ցեհիէլ, երկրը Զեթամ ու Ցոէլ, երեք էին։ 9—Սեմէիի որդիները, Սաղոմոթ, Ազիէլ ու Ամրան, երեք էին. ասոնք Ղագանի տուներուն իշխանները էին։ 10—Ու Սեմէիի որդիները Ցեհի, Զիզա, Ցեուս ու Բարիա էին. ասոնք Սեմէիի որդիները, չորս հոգի էին։ 11-Ու առաջինը Ցեհի, ու երկրորդը Զիզա էր. բայց Ցեուս ու Բարիա չատ որդիներ չունեցնելուն համար մէկ ազգատոհմ համրուեցան։

12—Կահաթի որդիները, Ամրամ, Իսահառ, Փեբրոն ու Ոզիէլ, չորս էին։ 13— Ամրամի որդիները Ահարոն ու Մովսէս էին. և Ահարոն ինք ու իր որդիները յաւիտեան օրհնութիւն ամէնասուրբ բաներուն նուիրուելու կատարելու, Տէրոջը առջև խունկ ծխելու, անոր ծառայութիւն ընելու ու անոր անունովը յաւիտեան օրհնելու համար։ 14—Ու Աստուծոյ մարդուն Մովսէսի որդիները Ղեւիի ցեղին հետ *համրուեցան։ 15—Մովսէսի որդիները Գերսոմ ու Եղիազար էին։ 16—Գերսոմի որդիներէն, առաջինը Սուբայէլ էր։ 17—

*ՆԵԲ. կոչուեցան

Ո. Եղիազարի որդիները, առաջինը Հաբրա էր. ու Եղիազար ուրիշ որդիներ չունէր. բայց Հաբրայի որդիները խիստ շատացան։ 18—Իսահառի որդիները, առաջինը Սաղոմէթ էր։ 19—Ջերբոնի որդիները, առաջինը Ցերիա, երկրորդը Ամարիա, երրորդը Ցաղիէլ, չորրորդը Ցեկամամ էր։ 20—Ոզիէլի որդիները, առաջինը Միքա, երկրորդը Ցեսիա էր։

21—Մերարիի որդիները Մողի ու Մուսի էին. Մողիի որդիները Եղիազար ու Կիս էին։ 22—Ու Եղիազար մեռաւ. անիկա որդիներ չունէր, հապա միայն աղջիկներ ունէր. ու զանոնք իրենց եղբայրները, կիսի որդիները, առին։ 23—Մուսիի որդիները, Մողիի, Եդեր ու Ցերիմոթ, երեք էին։

24—Ասոնք Ղեւիի որդիներն էին իրենց ազգատոհմիներուն համեմատ, ու անունով մէկիկ մէկիկ համրուած քանի սարեկանէն վեր՝ Տէրոջը ամէն սպասաւորութիւնը կատարողներուն տոհմապետներն էին։ 25—Քանզի Դաւիթ ըսեր էր, Իսրայէլի Տէր Աստուածը իր ժողովուրդը հանգստացուց, ու յաւիտեան Երուսաղէմի մէջ պիտի բնակի։ 26—Ու Ղեւեացիք ալ խորանը ու անոր պաշտօնին ամէն անօթները՝ ալ այսուհետեւ պիտի չկրեն։ 27—Քանզի Դաւիթի վերջին խօսքերովը՝ Ղեւիի որդիներէն քանի սարեկանէն վեր եղողները համրուեցան։ 28—Որովհետեւ անոնց պաշտօնը՝ Տէրոջը տանը ծառայութեանը մէջ Ահարոնի որդիներուն օգնութիւն ընել, գաւիթներու ու սենեակներու վերակացու ըլլալ, բոլոր սուրբ բաներուը մաքրել, ու Աստուծոյ տանը ծառայութիւնը կատարել էր։ 29—Նաեւ առաջաւորութեան հացին, ու հացի ընծայի նաշիհին, և անխմոր լաւաշներուն, ու տապակի մէջ եփուած և տապկուած բաներուն, ու բոլոր չափերուն վերակացութիւնը ընել, 30—ու ամէն առաւօտ ու իրիկուն Տէրը օրհնելու ու գովելու համար ոտքի վրայ կայնիլ, 31—Ու շաբաթ օրերը և ամսագլուխները ու մեծ տօներու մէջ Տէրոջը բոլոր ողջակէզները, իրենց թիւովը ու իրենց օրէնգիրքը, միշտ Տէրոջը առջեւ մատուցանել, 32—Ու Տէրոջը տանը ծառայութիւնը համար ժողովքի խորանին պահպանութիւնը, և սրբարանին պահպանութիւնը, ու իրենց եղբայրներուն, Ահարոնի որդիներուն, պահպանութիւնը ընել էր։

Գլ. Իդ

Եւ Ահարոնի որդիներուն դասակարգութիւնները ասոնք են. Ահարոնի որդիները, Նադաբ, Աբիուդ, Եղիազար ու Իթամար էին։ 2—Եւ Նադաբ ու Աբիուդ իրենց հօրը առջեւ մեռան, ու անոնք որդիներ չունէին. ու Եղիազար ու Իթամար քահանայ եղան։ 3—Ու Դաւիթ ու Եղիազարի որդիներէն Սադոկի ու Իթամարի որդիներէն Աբիմելէք զանոնք բաժնեցին՝ անոնց համեմատութեամբ անոնց պաշտօնին համար։ 4—Ու Եղիազարի որդիներուն մէջ գլուխնուած իշխանները Իթամարի որդիներուն մէջ եղածներէն չատ էին. ու զանոնք այսպէս բաժնեցին. Եղիազարի որդիներուն համար ասանդվից իշխան՝ իրենց ազգատոհմիներուն համեմատ, ու Իթամարի որդիներուն համար ութ իշխան՝ իրենց ազգատոհմիներուն համեմատ։ 5—Ու ասոնք ու անոնք վիճակով բաժնուեցան, քանզի սրբարանին իշխանները ու Աստուծոյ դռնը իշխանները Եղիազարի որդիներէն ու Իթամարի որդիներէն էին։ 6—Ու Ղեւտացիներէն, Նաթանայէլի որդին Սեմայիա դպիրը, թագաւորին ու իշխաններուն և Սադոկ քահանային ու Աբիաթարի որդւոյն Աբիմելէքի և քահանաներուն ու Ղեւտացւոց նահապետներուն առջեւ մէկ ազգատոհմ Եղիազարէ առնելով ու ՈՒՉԻՈՒՀՄ մը Իթամարէ առնելով՝ գանազ գրեց։

7—Ու առաջին վիճակը Յոյարիբի ելաւ, երկրորդը Ցեդայիայի, 8—երրորդը Հարիմի, չորրորդը Սէորիմի, 9—Հինգերորդը Մելքիայի, վեցերորդը Միյամինի, 10—Եօթներորդը Ակկուսի, ութերորդը Աբիայի, 11—Իններորդը Ցեսուէ, տասներորդը Սեքենիայի, 12—Մէտասաներորդը Եղիասիբի, երկուտասաներորդը Յակիմի, 13—Երեքտասաներորդը Ոփփայի, չորեքտասաներորդը Ցեսբէաբի, 14—Հնգետասաներորդը Բիղգայի, վեչտասաներորդը Եմմերի, 15—Եօթնետասաներորդը Եզիրի, ութուտասաներորդը Ափսեսեմ, 16—Իննուտասաներորդը Փեթախիայի, քսաներորդը Եզեկիէլի, 17—Քսանըմէկերորդը Յաքինի, քսանուերկուերորդը Գամուլի, 18—Քսաներիրքերորդը Դազայիայի, քսաներչորսերորդը Մաազիայի, 19—Այս է անոնց կարգադրութիւնը իրենց պաշտամունքին համար ու Տէրոջը տանը մտնելու համար՝ իրենց հօրը Ահարոնի ձեռքով իրենց տրուած օրէնքին համեմատ, ինչպես Իսրայէլի Տէր Աստուածը անոր պատուիրեր էր։

20—Ու Ղեւիի որդիներուն մնացորդները ասոնք էին. Ամրամի որդիներէն՝ Սուբայէլ. Սուբայէլի որդիներէն՝ Յազդիա. 21—Հաբրիայի, այսինքն Հաբրիայի որդիներէն, առաջինը Ցեսիա. 22—Իսահառի որդիներէն Սաղոմէթ. Սաղոմէթի որդիներէն Ցեթ. 23—Ու Բէբրէի որդիներէն ---ԼԻՆ Ցերիա, Երկրորդը Ամարիա, երրորդը Ցաղիէլ, չորրորդը Ցեկամամ. 24—Ոզիէլի որդիներէն, Միքա. Միքայի որդիներէն, Սամիր. 25—Միքիայի եղբայրը Ցեսիա. Ցեսիայի որդիներէն Զաքարիա. 26—Մերարիի որդիները Մողի ու Մուսի էին. Ցաղիայի որդին Բենով. 27—Մերարիի որդիները Ցաղիայէ Բենով, Սոհամ, Զաքուր ու Երբրի էին։ 28—Մողիէ եղիազար Ջ-ոն, ու անիկա որդիներ չունէր։ 29—Կիսէ, այսինքն Կիսի որդիներէն, Ցերամէլ էր. 30—Մուսիի որդիները Մողի, Եդեր ու Ցերիմոթ էին։ Ղեւտացւոց որդիները իրենց տոհմերուն համեմատ ասոնք էին։ 31—Ու ասոնց համար ալ, իրենց եղբայրներուն Ահարոնի որդիներուն պէս, Դաւիթ թագաւորին ու Սադոկի ու Աբիմելէքի և քահանաներուն ու Ղեւտացւոց տոհմապետներուն առջեւ վիճակ ձգեցին, թէ՛ տոհմապետներուն և թէ՛ անոնց պզտիկ եղբայրներուն համար։

Գլ. Իե

Եւ Դաւիթ ու զօրքին իշխանները Ասափ, Եմանէ ու Իդիթունէի որդիները՝ քնարներով, աւազաններով ու ծնծղաներով մարգարէութիւն ընողները որոշեցին այս պաշտօնին համար, ու իրենց պաշտօնին համեմատ՝ այս ծառայութիւնը ընող մարդոց հետեւեալը ասիկա էր. 2—Ասափի որդիներէն Թագուրին վրայ մարգարէութիւն ընող Ասափի ձեռքին տակ Ասափի որդիները Զաքուր, Յոսէփ, Նաթանիա և Ասարելա էին։ 3—Իդիթունէ Իդիթունի որդիները, Գեդալիա, Եզրի, Եսայի, Սեդէի, Ասարիա ու Մատաթիա, վեց էին, ու ասոնք իրենց հօրը Իդիթունի ձեռքին տակ էին, որ քնարով Տէրոջը գոհութիւն ու օրհնութիւն երգելով մարգարէութիւն կ'ընէր։ 4—Եմանէ Եմանի որդիները Բուկիա, Մաթանիա, Ոզիէլ, Սուբայէլ, Ցերիմոթ, Անանիա, Անանի, Եղիաթա, Գիդալթի, Ռոմամթիէզեր, Ցեսբակասա, Մալղիի, Ցոզբը ---Մաղոթի էին։ 5—Ասոնց ամէնը Եմանի որդիները էին, որ թագաւորին տեսանողն էր՝ Աստուծոյ խօսքերուն մէջ եղջիւրը վերցնելու. ու Աստուած Եմանի տասնըչորս տղայ ու երեք աղջիկ տուեր էր։ 6—Ասոնք ամէնը Աստուծոյ տանը պաշտօնին համար ծնծղաներով, տաւիղներով ու քնարներով՝ իրենց հօրը ձեռքին տակ Տէրոջը տանը երգերը կ'երգէին. Ասափ, Իդիթունն ու Եման թագաւորին ձեռքին տակ էին։ 7—Ու անոնց թիւը՝ Տէրոջը երգերը սորված իրենց եղբայրներուն հետ, այսինքն բոլոր հանճարեղներուն երկու հարիւր ութսունըութ էր։

8—Ու իրենց յաջորդական պաշտօնին համար՝ պզտիկը ու մեծը, վարպետը ու աշակերտը մէկտեղ վիճակ ձգեցին։ 9—Ու առաջին վիճակը Ասափի որդւոյն Ցոսէփի ելաւ. երկրորդը Գեդալիայի. ինք ու իր եղբայրները ու որդիները տասներկու մարդ էին։ 10—Երրորդը Զաքուրի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասներկու մարդ

•Կամ, Ազարիէլ. տես հմր. 18։

էր։ 11—Զորբորդը Նղբիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 12—Հինգերորդը Նաթանայէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 13—Վեցերորդը Բալգիայէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 14—Եօթներորդը Ցեսարեէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 15—Ութերորդը Եսայէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 16—Իններորդը Մաթանիայէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 17—Տասներորդը Սեմէիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 18—Մեհտասաներորդը Ազարէէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 19—Երկոտասաներորդը Ասաբիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 20—Երեքտասաներորդը Սուբայէլ, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 21—Զորեքտասաներորդը Մատաթիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 22—Հնգետասաներորդը Ցերիմոթի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 23—Վեցտասաներորդը Անանիայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 24—Եօթնետասաներորդը Ցեսբակասայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 25—Ութետասաներորդը Անանիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 26—Իննետասաներորդը Մեղոթիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 27—Քսաներորդը Եղիաթայի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 28—Քսանմեկերորդը Օթիրի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 29—Քսաներկուերորդը Գեթոզաթիի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 30—Քսաներեքերորդը Մազիոթի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։ 31—Քսաներչորսերորդը Թոմաթիեղերի, որ իր որդիներովը ու եղբայրներովը տասնհինգ մարդ էր։

Գլ. ԻԶ

Դռնապաններուն դասակարգութիւնները. Կորխանացիներն, Ասաբի որդիներէն, Կովրէի որդին Մասելեմիա էր։ 2—Ու Մասելեմիայի որդիները, անդրանիկը Զաքարիա, երկրորդը Եդիդիէլ, երրորդը Զաբադիա, չորրորդը Յաթնիէլ, 3—Հինգերորդը Եղամ, վեցերորդը Յոհանան, եօթներորդը Եղիոենայի էին։ 4—Ու Աբդեդոմի որդիները, անդրանիկը Սեմայիա, երկրորդը Յովզաբադ, երրորդը Յովախ, չորրորդը Սաքար, հինգերորդը Նաթանայէլ, 5—վեցերորդը Ամիէլ, եօթներորդը Իսսաքար, ութերորդը Փեղաթի. քանզի Աստուած *զանիկա օրհներ էր։ 6—Ու անոր որդւոյն Սեմայիայի որդիներ ծընանան, որոնք իրենց հօրը տանը իշխանները եղան, քանզի անոնք զօրաւոր կրնբիճներ էին։ 7—Սեմայիայի որդիները Ոթնի, Ռափայէլ, Ովէդ, Եղզաբադ, †Աքիով, Բնհնայիլ՝, եղեուս ու Սամաքիա էին։ 8—Ասոնք ամէնը Աբդեդոմի որդիներէն էին, — իրենց ու իրենց որդիները և իրենց եղբայրները, ծառայութեան համար զօրաւոր ու կարիճ մարդիկ Աբդեդոմէ վաթսունևուերկու էին։ 9—Ու Մասելեմիա տասնըութ զօրաւոր որդիներ ու եղբայրներ ունէր։ 10—Ու Մերարիի որդիներէն Ովսա որդիներ ունէր. գլխաւորը Սամրի էր, քանզի թէպետև անիկա անդրանիկ չէր, բայց անոր հայրը զանիկա գլուխ բրաւ։ 11—Երկրորդը Քեղկիա, երրորդը Տաբաղիա, չորրորդը Զաքարիա էր։ Ութսայի բոլոր որդիները ու եղբայրները տասնըերեք էին։ 12—Դռնապաններուն դասակարգութիւնները տասնց *ԳՐՈՒՆՔ ԷՔԼ գլխաւոր մարդոց, որպէս զի իրենց եղբայրներուն հետ պահպանութիւն ընելով՝ Տէրոջը տանը մէջ ծառայեն։ 13—Ու պզտիկը ու մեծը հաւասարապէս վիճակ ձգեցին իրենց ազգատոհմներուն համեմատ՝ ամէն մէկ դրան համար։ 14—Ու արեւելեան կողմին վիճակը Սելեմիայի եղաւ. եւաքը անոր որդւոյն, խելացի ու խորհրդական Զաքարիայի, համար վիճակ ձգեցին, ու անոր վիճակը հիւսիսային կողմը եղաւ։ 15—Աբդեդոմի հարաւային կողմը, ու անոր որդիներուն՝ Ընթասափիմ։ 16—Սափիմի և Ուսայի՝ արեւմտեան կողմը եւ — Սալեքեթի դրանը քով՝ վեր ելլող ճամբան վրայ. ու մէկ պահպանութիւնը միւս պահպանութեանը դիմաց էր։ 17—Արեւելեան կողմը վեց Ղեւտացի, հիւսիսային կողմը օրը չորս, հարաւային կողմը օրը չորս, ու Ասափիմի կողմը երկերկու էին։ 18—Փարպարի կողմը դէպ ի արեւմուտք վեր ելլող ճամբան չորս, — փարպար երկու դ-ն-ո-ւ-ն կար։ 19—Կորխանց որդիներէն ու Մերարիի որդիներէն եղող դռնապաններուն գասակարգութիւնները ասանք էին։

20—Ու Ղեւտացիներէն՝ Աստուծոյ տանը գանձերուն ու նուիրական գանձերուն վրայ Աքիա էր։ 21—Գերսոնացի Ղադանի ազգատոհմներուն իշխաններն, Գերսոնացի Ղադանի որդիներէն, Եհիելի էր։ 22—Եհիելի որդիները Զեթամ ու անոր եղբայրը Յոէլ Տէրոջը տանը գանձերուն վրայ էին։ 23—Ամրամեացիներէն, Իսհարեացիներէն, Քերբրոնեացիներէն ու Ոզիելեացիներէն ասանք էին։ 24—Մովսէսի որդւոյն Գերսոմի որդին Սուբայէլ գանձերուն վերակացուն էր։ 25—Ու անոր եղբայրները եղիազարի *ՐԷՒՒԷԼ. անոր որդին Հռափիա, անոր որդին Եսայի, անոր որդին Յոռամ, անոր որդին Զիքրամ, ու անոր որդին Սաղոմոթ էր։ 26—Այս Սաղոմոթը ու անոր եղբայրները Դաւիթ թագաւորին ու տոհմերու իշխաններուն ու հազարապետներուն և հարիւրապետներուն ու զօրաց իշխաններուն նուիրած ամէն սուրբ գանձերուն վրայ էին, 27—Որ†՝ պատերազմներէն ու աւարէն Տէրոջը *տանը շինութեանը՝ համար նուիրեր էին։ 28—Նաև Սամուել տեսանողին ու Կիսեան Սաւուղի ու Ների որդի Աբեններէի ու Շարուհեան Յովաբի նման իրած բոլոր նուէրները Սաղոմոթի ու անոր եղբայրներուն ձեռքին տակ էին։

29—Իսահառեացիներէն՝ Քնանիա ու անոր որդիները արտաքին գործերուն համար, Իսրայէլի վրայ տարիականներ ու դատաւորներ էին։ 30—Քերբրոնեացիներէն՝ Ասաբիա ու անոր եղբայրները, հազար եօթը հարիւր զօրաւոր մարդիկ, Յորդանանու տափղի կողմը դէպ ի արեւմուտք, Տէրոջը ամէն գործին համար ու թագաւորին ծառայութեանը համար Իսրայէլի վրայ վերակացու էին։ 31—Քերբրոնեացիներէն՝ Քերբրոնեացիներուն †ազգատոհմին իշխանը Յերիա էր. Դաւիթի թագաւորութեանը քառասնեերորդ տարին անոնք Հարուեացիներ, ու Գաղաադու Յազերի մէջ անոնցմէ զօրաւոր կարճներ գտնուեցան։ 32—Ու անոր եղբայրները երկու հազար եօթը հարիւր զօրաւոր մարդիկ — տոհմերու իշխանները էին. և Դաւիթ թագաւորը զանոնք Ռուբենեացց, Գադեացց ու Մանասեացց կէս ցեղին վրայ գրաւ՝ Աստուծոյ և թագաւորին ամէն գործին համար։

Գլ. ԻԷ

Ու Իսրայէլի որդիներէն իրենց հարիւրավոր ազգատոհմի նահապետներէն ու հազարապետներէն և հարիւրապետներէն ու անոնց ատիկաններէն, դատակարգութեանց ամէն գործին մէջ թագաւորին ծառայութիւն ընդներուն, և տարւոյն ամէն ամիսներուն մէջ ամէն ամիս մտնողներուն ու ելլողներուն ամէն մէկ դասը քսանըչորս հազար մարդ էր։ 2—Առաջին ամսուն համար առաջին գասին վրայ Զաբդիէլի որդին Յեսբաամէր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 3—Առաջին ամսուն ամէն զօրավարներուն իշխանը Փարէսի որդիներէն էր։ 4—Ու երկրորդ ամսուն դասին վրայ Ահոհացի Դոդիա էր. ու Մակղոթ անոր դասին իշխանն էր, ասոր դասն ալ քսանըչորս հազար մարդ էր։ 5—Երրորդ ամսուն համար երրորդ զօրապետը

*ՆԷՔ. առաւնը հասատուելու.

†ՆԷՔ. սերուհդոմը հայրերուն

Ցովիադա քահանային որդին Բանեա գլխաւորն էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 6—Այս Բանեան երեսունէն զօրաւոր էր ու երեսունին վրայ էր, և անոր որդին Ամիզաբադ անոր դասին մէջ էր։ 7—Զորրորդ ամսուն համար չորրորդ ընդ-ե-ւոծ Ցովաբի եղբօրը Ասայէլ, ու անկէ ետքը անոր որդին Զաբադիա էր, և անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 8-Հինգերորդ ամսուն համար հինգերորդ զօրապետը Ցեզրացի Սամհուվթ էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 9—Վեցերորդ ամսուն համար վեցերորդ ընդ-ե-ւոծը Թեկուացի Եկեսի որդին Իրաս էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 10—Եօթներորդ ամսուն համար եօթներորդ ընդ-ե-ւոծ Եփրեմի որդիներէն Փելոնացի Բենդէս էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 11—Ութերորդ ամսուն համար ութերորդ ընդ-ե-ւոծը Զարայականց Ոլմացի Սոփքաի էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 12—Իններորդ ամսուն համար իններորդ ընդ-ե-ւոծը Բենիամինեանններէն Անաթովթացի Աբիեզեր էր, և անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 13—Տասներորդ ամսուն համար տասներորդ ընդ-ե-ւոծը Զարայեանց Նետոփաթացի Մահարա էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 14—Մէտասաներորդ ամսուն համար մէտասաներորդ ընդ-ե-ւոծը Եփրեմի որդիներէն Փարաթոնացի Բանեա էր, և անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։ 15—Երկոտասաներորդ ամսուն համար երկոտասաներորդ ընդ-ե-ւոծը Գոթնիելի «Բ-ը-ն-դ-է» Նետոփաթացի Ալդա էր, ու անոր դասը քսանըչորս հազար մարդ էր։

16— Եւ Իսրայէլի ցեղերուն վրայ տուածք էին. Ռուբէնի ՅԵՂԷՆ Իշխան Զիքրիի որդին Եղիազար, Շիմէոնի ՅԵՂԷՆ՝ Մաասքայի որդին Սափատիա, 17-Ղեւիի ՅԵՂԷՆ՝ Կամուէլի որդին Ասաբիա, Ահարոնի «Ը-Ի-Ե-Ռ-Ե-Ն» Սադովկ, 18—Ցուդայի ՅԵՂԷՆ՝ Դաւիթի եղբայրներէն, *Եղիուս, Իսաքարի ՅԵՂԷՆ՝ Միքայէլի որդին Ամրի, 19—Զաբուղոնի ՅԵՂԷՆ՝ Աբդիայի որդին Իսմայիա, Նեփթաղիմի ՅԵՂԷՆ՝ Եղրիէլի որդին Ցերիմովթ, 20—Եփրեմի որդիներուն՝ Ազազիայի որդին Ովսէէ, Մանասէի կէս ցեղին՝ Փադայիայի որդին Ցովէլ, 21—Գաղաադ երկրայ Մանասէի կէս ՅԵՂԷՆ՝ Զաքարիայի որդին Ցեդդով, Բենիամինի ՅԵՂԷՆ՝ Աբենների որդին Ցեսիէլ, 22—Դանի ՅԵՂԷՆ՝ Ցերոամի որդին Ազարիէլ։ Իսրայէլի ցեղերուն իշխանները սոսկ էին։

23—Եւ Դաւիթ զսան սաբեկանէն վար եղողները չհամրեց, վասն զի Տէրը ըսեր էր որ Իսրայէլը երկինքի աստղերուն չափ պիտի չացնէ։ 24—Շարուհ Եայի որդին Ցովաբ սկսաւ համրել, բայց չվերջացուց։ ու անոր համար իսրայէլի վրայ բարկութիւն եկաւ։ և այն համրանքը Դաւիթ Թագաւորին յիշատակաց գիրքին մէջ չմտաւ։

25 — Ու Թագաւորին գանձերուն վրայ Ադիէլի որդին Ազմաթ էր. և դաշտը — քաղաքները և գեղերը ու աշտարակները եղող չուխմարանները վրայ Ոզիայի որդին Ցովնաթան էր։ 26—Ու արտը բանող երկրագործներուն վրայ Քեղուբի որդին Եզրի էր։ 27—Ու այգիներուն վրայ Աբիսմաթացի Սեմէի էր։ ու այգիներուն *բերքերուն — գինիի չուխմարաններուն վրայ Սեփամացի Զաբդի էր։ 28—Ու ձիտենիներուն ու մոլեռ զեխենիներուն վրայ Գադերացի Բաալանան էր։ ու իւղի չուխմարաններուն վրայ Ցովաս էր։ 29—Ու Սարոնի մէջ եղող արօտական արջառներուն վրայ Սարոնացի Սետրա էր։ ու հովիտներու մէջ եղող արջառներուն վրայ Ադղիի որդին Սափատ էր։ 30—Ու ուղտերուն վրայ Իսմայէլացի Ոբիլ էր։ ու էշերուն վրայ Մերոնոթացի Ցադայիա էր։ 31—Ու հօտերուն վրայ Հագարացի Ցազիզ էր։ ասոնք ամէնը Դաւիթ Թագաւորին ստացուածքներուն վերակացուներն էին։

32—Ու Դաւիթի հօրեղբայրը Ցովնաթան խորհրդական էր. անիկա խելացի ու †գիտուն մարդ էր։ և Հաքե-

*կամ, եղբաք. ա Թագ. ժգ. 6։

*ԲԲԷ. ձէթի բաներուն
†ԲՔԷ. գոլքը

մոնիի որդին Ցեքմէլ Թագաւորին որդիներուն հետ էր։ 33—Ու Աքիտոփէլ Թագաւորին խորհրդականը, և Արաքացի Քուսի Թագաւորին բարեկամն էր։ 34— Ու Աքիտոփէլէն ետքը Բանեայի որդին Ցովիադա ու Աբիաթար էին. ու Թագաւորին զօրագլուխը Ցովաբ էր։

ԳԼ. ԻԸ

Եւ Դաւիթ Իսրայէլի բոլոր իշխանները, ցեղերուն իշխանները ու Թագաւորին ծառայութիւն ընող գասերուն իշխանները, և հազարապետները ու հարիւրապետները, և Թագաւորին ու անոր որդիներուն բոլոր ստացուածքներուն ու ինչքերուն վերակացուները, ներքինիները, զօրաւորները ու զօրքին բոլոր կարիճները Երուսաղէմի մէջ Ժողվից։ 2—Եւ Դաւիթ Թագաւորը ոտքի վրայ կայնեցաւ, ու բսաւ, Ով իմ եղբայրներս ու իմ ժողովուրդս, լսեցէք մտիկ ըրէք։ Իմ սրտիս մէջ ունեցայ որ Տէրոջը ուխտի տապանակին, ու մեր Աստուծոյն ոտքերուն պատուանդանի համար հանգստեան տուն մը շինեմ, ու շինելու պատրաստութիւն տեսայ։ 3— Բայց Աստուած ինծի բսաւ, Դուն իմ անունս տուն պիտի չշինես, քանզի դուն պատերազմի մարդ ես ու *չատ արիւն Թափեցիր։ 4—Ու Իսրայէլի Տէր Աստուածը իմ հօրս բոլոր տունէն դիս ընտրեց, որպէս զի յաւիտեան Իսրայէլի վրայ Թագաւոր ըլլամ. քանզի առաջնորդը Ցուդայէ, ու Ցուդայի տունէն իմ հօրս տունը ընտրեց. ու իմ հօրս որդիներուն մէջէն ինծի հաճեցաւ, որպէս զի զիս բոլոր Իսրայէլի վրայ Թագաւոր ընէ։ 5—Ու իմ բոլոր որդիներէս, (որովհետև Տէրը ինծի չատ որդիներ տուաւ,) իմ որդիս Սողոմոնը ընտրեց, որպէս զի Իսրայէլի վրայ Տէրոջը Թագաւորութեան աթոռը նստի։ 6—Ու ինծի բսաւ, Քու որդիդ Սողոմոն՝ ինք պիտի շինէ իմ տունս ու իմ սրահներս, քանզի զանիկա ինծի որդի ընտրեցի, ու ես անոր հայր պիտի ըլլամ. 7—Ու անոր Թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ, եթէ այսօրուան պէս իմ հրամաններս ու դատաստաններս ի գործ դնելու մէկ յարատեւէ։ 8—Ու հիմա բոլոր Իսրայէլի՝ Տէրոջը ժողովքին առջև ու մեր Աստուծոյն լսելովը ՅԵՂԷ Ի՞ՐԵՆ, Ձեր Տէր Աստուծոյն բոլոր պատուիրանները պահեցէք ու գտուչութեամբ սորվեցէք, որպէս զի այս բարի երկիրը ժառանգեք, ու ձեզմէ ետքը ձեր որդիներուն ժառանգութիւն Թողուք յաւիտեան։

9—Ու դուն, որդեակ իմ Սողոմոն, գիտցիր հօրդ Աստուածը ճանչցիր, ու անոր կատարեալ սրտով ու յօժար կամքով ծառայութիւն ըրէ. քանզի Տէրը ամէն սիրտերը կը քննէ, ու ամէն մտացխորհուրդները կը ճանչնայ. եթէ զանիկա փնտռես՝ *պիտի գտնես», և եթէ զանիկա Թողուս՝ ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ։ 10—Հիմա նայէ որ Տէրը քեզ ընտրեց էր սրբարանին հաստատուն մը շինելու. զօրացիր ու այդ էրէՅԷՔ կատարէ։

11—Ու Դաւիթ իր որդւոյն Սողոմոնի՝ սրահին, ու անոր սենեակներուն, և անոր գանձարաններուն, ու անոր վերնատուններուն, և անոր ներքին չուխմարաններուն ու քաւութիւնին տանը գաղափարը տուաւ. 12—Ու †հոգիին ազդեցութիւնովը իրեն յայտնուած բոլոր բաներուն՝ Տէրոջը տանը գաւիթներուն, ու բոլորտիքը եղող ամէն սենեակներուն, և Աստուծոյ տանը չուխմարաններուն, ու նուիրուած բաներուն գանձարաններուն գաղափարը տուաւ. 13 — Նաև քահանաներուն ու Ղեւտացւոց դասակարգութիւններուն համար, ու Տէրոջը տանը պաշտօնին ամէն գործերն համար, և Տէրոջը տանը ծառայութիւններ ամէն անօթներուն համար պատուիրեց տուաւ. 14— Ու ամէն պաշտօններուն ամէն ոսկի անօթներուն կշիռքով, ու ամէն արծաթէ անօթներուն ու ամէն պաշտօնի անօթներուն ալ կշիռքը, 15—Ու ամէն ոսկիէ աչատնակներուն ու անոնց ամէն ոսկիէ

*ԲԲԷ. պիտի գտնուի քեզի
†կամ, իր մտքին մէջ ունեցած

*ԲԲԷ. աբիւններ

ծրագներուն կչեռքը, և ամէն արծաթէ աչառանակին ու անոր ծրագներուն, ամէն մէկ աչառանակին գործածութեանը համեմատ կչեռքը ՟ռ---. 16—Եւ առաջաւորութեան սեղաններուն ամէն մէկ սեղանին համար ոսկիին կչեռքը, ու արծաթէ սեղաններուն համար արծաթին կչեռ՟ը: 17—Ու մնացեր ոսկիէ մանահաններուն ու կանչերուն և բաժակներուն ու ոսկիէ սպասներուն համար՝ ամէն մէկ սպասին կչեռքը, և արծաթէ սպասներուն համար ամէն մէկ սպասին կչեռ՟ը ՟ռ-Ս՟: 18—Ու խունկի սեղանին համար կչեռքով մանրուր ոսկի, և էէՒ՟Ց ՆԻ՟ԻԸԸ սարածող ու Տէրոջը ուխտին սասպանակը ծածկող քերովբէներուն կառքին գաղափարին համար ոսկի ՟ռ-Ս՟: 19—Այս բոլոր բաները, այս գաղափարին բոլոր գործերը, Տէրը իր ձեռքին գրովը ինծի յայտնեց՝ ը---.

20—Ու Դաւիթ իր որդւոյն Սողոմոնի ըսաւ, Զօրացիր ու քաջասիրտ եղիր, ու ՟յս ՟ԸՐՅԸ կատարէ. մի վախնար ու մի զարհուրիր, քանզի Տէր Աստուած, իմ Աստուածս, քեզի հետ է. անլիակ քեզ պիտի չձգէ, մինչև որ Տէրոջը տանը ծառայութեանը բոլոր գործերը լրընդցնես: 21—Ու ահա քահանաներուն ու Ղեւտացւոց դասերը Աստուծոյ տանը բոլոր ծառայութեանը համար են. ու ամէն ծառայութեան համար՝ ամէն գործի մէջ ամէն յօժարակամ իմաստունները քեզի հետ են. և իշխանները ու բոլոր ժողովուրդը քու ամէն հրամանիդ կը ծառչեն:

Գլ. ԻՓ

Եւ Դաւիթ թագաւորը բոլոր ժողովրդին ըսաւ, Իմ որդիս Սողոմոն, զոր միայն ընտրեց Աստուած, փափուկ ոտայ մըն է, ու գործը մեծ է. քանզի այս պալատը մարդու համար չէ, հապա Տէր Աստուծոյ համար է: 2—Ուստի ես իմ բոլոր կարողութիւնովս իմ Աստուածոյս տանը համար՝ ոսկիէ բաներուն համար ոսկի, ու արծաթեղէններուն համար արծաթ, և պղնձեղէններուն համար պղինձ, ու երկաթեղէններուն համար երկաթ, և փայտեղէններուն համար փայտ, ու եղնգնաքարեր, գամմելու ֆ---ԸԸ, ու զարդի համար գոյնզգոյն քարեր, և ամէն տեսակ պատուական քարեր ու մարմարիոն քարեր առատօրէն պատրաստեցի: 3—Ու նաև իմ Աստուածոյս տանը վրայ մեծ սէր ունենալուս համար՝ սրբարանին տանը համար ամէն պատրաստած բաներս զատ՝ իմ յատուկ գանձս մէջ եղած ոսկին ու արծաթին ալ իմ Աստուածոյս տանը համար տուի, 4—Ոփիրի ոսկիէն՝ երեք հազար տաղանդ ոսկի, ու եօթը հազար տաղանդ մաքուր արծաթ՝ որպէս զի անոնցմով տաներուն սրմերը պատեն. 5—Ոսկի բաներուն համար ոսկի, ու արծաթեղէններուն համար արծաթ, ու արուեստաւորներուն ձեռքով բոլոր ամէն տեսակ գործին համար հ---ԸԸ Ե---Ը ՟ռ-Ս՟. և այսօր ՅՀՂՏ իր կամքովը Տէրոջը ՝ընծայ տալու՞ ո՞վ կայ:

6—Այն ատեն տոհմերուն իշխանները, ու Իսրայէլի ցեղերուն իշխանները, և հազարապետները ու հարիւրապետները, և թագաւորին գործին վերակացուները յօժար կամքով ընծայ բերին: 7—Ու Աստուծոյ տանը գործին համար հինգ հազար տաղանդ և տասը հազար դրամ ոսկի, ու տասը հազար տաղանդ արծաթ, և տասնուվեց հազար տաղանդ պղինձ, ու հարիւր հազար տաղանդ երկաթ տուին: 8—Ու որուն քով որ գոհարներ գտնուեցան, Գերսոնացի Յեհիէլի ձեռքով Տէրոջը տանը գանձին ընծայեցին: 9—Ու ժողովուրդը անոնց կամաւոր ընծաներ մատուցանելուն համար ուրախացան, քանզի կամաւոր ընծան բոլոր սրտով մատուցին Տէրոջը. ու Դաւիթ թագաւորն ալ խիստ չատ ուրախացաւ:

10—Ու Դաւիթ բոլոր ժողովուրդին աչքին առջև Տէրը օրհնեց. ու Դաւիթ ըսաւ, Ով Տէր, մեր հօրը Իսրայէլի Աստուածը, յաւիտենից մինչև յաւիտեան օրհնեալ ես: 11—Ով Տէր, մեծութիւնը, զօրութիւնը, փառքը, պայծառութիւնը ու վեհութիւնը քուկդ

*ՆԲԳ. իր ձեռքը լեցնող

լով՝ Տէրոջը ու Թագաւորին երկրպագութիւն ըրին: 21—Ու հետեւեալ օրը զոհեր ու ողջակէզներ մատուցին Տէրոջը, հազար զաւրական, հազար խոյ, հազար գառ՝ անոնց թափելու նուէրներովը, ու բոլոր Իսրայէլի համար չատ զոհեր հ---ՅՀ՟: 22—Ու այն օրը Տէրոջը առջև մեծ ուրախութիւնով կերան խմեցին, ու Դաւիթի որդին Սողոմոնը նորէն Թագաւոր ըրին. ը---Ի՟— Տէրոջը համար Թագաւոր՝ ու Սադոկը քահանայ օծեցին: 23—Ու Սողոմոն իր հօրը Դաւիթի տեղ Տէրոջը աթոռին վրայ Թագաւոր նստաւ, ու չյաջողութիւն գտաւ և բոլոր Իսրայէլ անոր հնազանդեցաւ: 24—Ու ամէն իշխանները ու զօրաւորները, և Դաւիթ Թագաւորին բոլոր որդիներն ալ Սողոմոն Թագաւորին ՝հնազանդեցան: 25—Ու Տէրը բոլոր Իսրայէլի առջև Սողոմոնը խիստ մեծցուց, և անոր այնպէս Թագաւորութեան փառք տուաւ, որ անկէ առաջ Իսրայէլի վրայ Թագաւոր եղողի մը ամենևին եղած չէր:

26—Այսպէս Յեսսէի որդին Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ Թագաւորութիւն ըրաւ. 27—Ու անոր Իսրայէլի վրայ Թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի եղան. Քեբրոնի մէջ եօթը տարի Թագաւորութիւն ըրաւ, ու Երուսաղէմի մէջ երեսունեւերեք տարի Թագաւորութիւն ըրաւ: 28—Ու բարի ծերութեամբ մեռաւ, կեանքին, մեծութիւնէն ու փառքէն իր բաղձանքը առած, և անոր տեղ անոր որդին Սողոմոն Թագաւոր եղաւ: 29—Ու Դաւիթ Թագաւորին առաջին ու վերջին գործերը ահա Սամուէլ տեսանողին գիրքին մէջ, ու Նաթան մարգարէին գիրքին մէջ, և Գադ տեսանողին գիրքին մէջ գրուած են, 30—Նաև անոր բոլոր Թագաւորութիւնը ու քաջութիւնը ու Թ՝ անոր Թ՝ Իսրայէլի և Թ՝ ՈՐԻՒ երկիրներուն ամէն Թագաւորութիւններուն պատահած դիպուածները:

*ՆԲԳ. ձեռք տուին. տես ՏՆ. խդ. 2։ խ. 29։ բ ՄՆ.Լ. 8։ եղեկ. ԺԲ. 18։

†ՆԲԳ. փու. ձեռքդ
‡ԿՄ՟, հաստատէ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Դաւիթի որդին Սողոմոն իր թագաւորութեանը մէջ զօրացաւ. ու անոր Տէր Աստուածը անոր հետ էր, ու զանիկա խիստ մեծցուց։ 2—Եւ Սողոմոն բոլոր Իսրայէլին, այսինքն հազարապետներուն, հարիւրապետներուն, դատաւորներուն ու բոլոր Իսրայէլի ամէն տոհմապետներուն, իսկոյն ալ 3—Եւ Սողոմոն ու բոլոր ժողովքը անոր հետ Գաբաւոնի բարձր տեղը գացին. քանզի Տէրոջը ծառային, Մովսէսի, անապատին մէջ շինած* Աստուծոյ ժողովքի խորանը հոն էր. 4—Մինչ թէ Դաւիթ Աստուծոյ տապանակը կարթաթարիմէ իր պատրաստած տեղը հաներ էր. քանզի Երուսաղէմի մէջ անոր վրան մը կանգներ էր. 5—Սակայն Ուրիան Ուրիի որդւոյն Բեսաղէլէլի շինած պղնձէ սեղանը հոն Տէրոջը խորանին առջեւ էր. և Սողոմոն ու ժողովքը զանիկա փնտռեցին, 6—Եւ Սողոմոն հոն Տէրոջը առջեւ ժողովքի խորանին պղնձէ սեղանին* քով ելաւ, ու անոր վրայ հազար ողջակէզ մատուց։

7—Ա՛յն գիշերը Աստուած Սողոմոնի երեւցաւ, ու անոր ըսաւ, Խնդրէ, քեզի ի՛նչ տամ. 8—Եւ Սողոմոն Աստուծոյ ըսաւ, Դուն իմ հօրս Դաւիթի մեծ ողորմութիւն ըրիր, ու զիս անոր տեղ թագաւոր ըրիր. 9—Հիմա, ով Տէր Աստուած, իմ հօրս Դաւիթի ըրած խոստումնդ հաստատ ըլայ. քանզի դուն զիս երկրի հողին չափ շատ ժողովրդի վրայ թագաւոր ըրիր։ 10—Հիմա իմաստութիւն ու գիտութիւն տուր ինծի, որպէս զի այս ժողովրդին առջեւ ելլեմ ու մտնեմ. վասն զի այս քու մեծ ժողովրդդ ո՞վ կրնայ դատել։ 11—Եւ Աստուած Սողոմոնի ըսաւ, Որովհետեւ քու սրտիդ մէջ սա՛կիս եղաւ, ու հարստութիւն, ստացուածք, փառք և քու թշնամիներուդ հոգին չխնդրեցիր, ու երկար կեանք ալ չխնդրեցիր, հապա քեզի իմաստութիւն ու գիտութիւն խնդրեցիր, որպէս զի դատես իմ ժողովրդս՝ որուն վրայ քեզ թագաւոր ըրի, 12—Ո՛ւրեմն իմաստութիւն ու գիտութիւն սորուն քեզի, և հարստութիւն, ստացուածք ու փառք ալ պիտի տամ քեզի. այնպէս որ քեզմէ առաջ եղող թագաւորներուն այնպէս եղած չէ, ու քեզմէ ետքը ելնողներուն ալ այնպես պիտի չըլլայ։ 13—Եւ Սողոմոն Գաբաւոնի բարձր տեղէն՝ ժողովքի խորանին առջեւէն Երուսաղէմ դարձաւ, ու Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրաւ։

14—Եւ Սողոմոն կառքեր ու ձիաւորներ ժողվեց. ու անիկա հազար չորս հարիւր կառք ու տասներկու հազար ձիաւոր ունեցաւ, և զանոնք կառքի քաղաքներուն մէջ ու թագաւորին քով Երուսաղէմի մէջ պահատուեցաւ։ 15—Եւ թագաւորը Երուսաղէմի մէջ արծաթը ու ոսկին քարերու պէս ըրաւ, ու եղեւնափայտը շատութենէն՝ դաշտի մէջ եղող մալաթզենիներուն պէս ըրաւ։ 16—Եւ Սողոմոնի ձիերը եգիպտոսէ կու գային. ու թագաւորին վաճառականներուն կարաւանը որոշուած գնով մը չէիր՝ եր առնէին. 17—Ու եգիպտոսէ կառք մը վեց հարիւր արծաթով վեր կը հանէին, ու ձի՝ հարիւր քսանը։ ու Հիւթացւոց բոլոր թագաւորներուն համար, և Ասորւոց բոլոր թագաւորներուն համար ալ՝ անոնց ձեռքով այնպես կը հանէին։

ԳԼ. Բ

Եւ Սողոմոն *տնօրէն դրաւ՝ որ Տէրոջը անուանը տան՝ ու իր թագաւորութեանը տուն չինէ։ 2—Ու Սողոմոն եօթանասուն հազար բեռնակիր, ու լեռը

*կամ, վրայ մատուց

*նէբ. ըսաւ

ՏԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ 181

է՜յ կարող ութսուն հազար մարդ *ընտրեց, և անոնց վրայ երեք հազար վեց հարիւր վերակացու դրաւ։

3—Ու Սողոմոն Տիւրոսի թագաւորին Փիրամի հետ զրկեց, ու ըսաւ, Ինչպես իմ հօրս Դաւիթի ըրիր, ու անոր եղեւնափայտեր զրկեցիր որպէս զի իրեն բընակելու համար տուն չինէ, 4—Ահա ես իմ Տէր Աստուծոյս անունան տուն կը չինեմ, որպէս զի անոր նուիրուի, անոր առջեւ անուշահոտ խունկ ծխուի, ու միշտ առաջաւորութեան հացը դրուի, և առտու ու իրիկուն, շաբաթները և նոր ամսոյ տօներուն ու մեր Տէր Աստուծոյն տներուն հրէշտ ողջակէզներ, յաւիտենական պարտաւորութիւն է, 5—Ու այս տունը զոր ես կը չինեմ, մեծ ըլլալու է. քանզի մեր Աստուածը ամէն աստուածներէն մեծ է. 6—Ու անոր տուն չինելու ո՞վ կրնայ է. քանզի երկինքը ու երկնից երկինքը չեն կրնար պարունակել զանիկա. ուրեմն ես ո՞վ եմ, որ անոր տուն չինեմ. միայն թէ անոր առջեւ խունկ ծխելու համար գիւղ մը շինեմ։ 7—Ու հիմա ինծի խմաստուն մարդ մը զրկէ, որ ոսկին, արծաթը, պղինձը, երկաթը, ծիրանեգոյնը, կարմիրը և կապուտակը բանիլ գիտնայ, ու քանդակագործութիւն ալ գիտնայ, որպէս զի իմ քովս Յուդայի ու Երուսաղէմի մէջ եղող իմ հօրս Դաւիթի պատրաստած խմաստուններուն հետ ըլլայ։ 8—Ես ինծի Լիբանանէ եղեւնափայտեր, մայր փայտեր ու արմավ փայտեր զրկէ. քանզի ես գիտեմ որ քու ծառաներդ Լիբանանէ փայտ կտրելը գիտեն. և ահա իմ ծառաներս քու ծառաներուդ հետ ըլլան, 9—Ու ինծի խիստ շատ փայտեր պատրաստեն. քանզի իմ չինելու տունս մեծ ու փառաւոր ըլլալու է։ 10—Եւ ահա ես քու ծառաներուդ, փայտ կտրող բանուորներուն, քսան հազար քոր ծեծուած ցորեն, ու քսան հազար քոր գարի, ու քսան հազար մար գինի ու քսան հազար մար իւղ կու տամ։

11—Եւ Տիւրոսի Փիրամ թագաւորը Սողոմոնի նամակ զրկեց ու ըսաւ, Տէրը

*նէբ. համբեց

իր ժողովրդը սիրելուն համար քեզ անոնց վրայ թագաւոր դրաւ։ 12—Եւ Փիրամ ըսաւ, Երկինքը ու երկիրը ստեղծող Իսրայէլի Տէր Աստուածը օրհնեալ ըլլայ, որ Դաւիթ թագաւորին խոհեմութիւն ու գիտութիւն ունեցող իմաստուն որդի մը տուաւ, որ Տէրոջը տուն, ու իր թագաւորութեանը տուն պիտի չինէ։ 13—Եւ հիմա իմ *վարպետս Փիրամը կը զրկեմ, որ հանճարեղ ու իմաստուն մարդ մըն է։ 14—Անիկա Դանի աղջիկներէն եղող կնոջ մը որդի է, ու անոր հայրը Տիւրացի է. անիկա ոսկի, արծաթի, պղինձի, երկաթի, քարեր ու փայտեր, նաեւ ծիրանեգոյնի, կապուտակի, բեհեզի և կարմիրի վրայ բանելու կգտնէ, ու ամէն տեսակ քանդակը քանդակելու կգտնէ յօժարակ է. և քու իմաստուններուդ հետ, ու քու հօրդ Դաւիթի, իմ տէրոջս, իմաստուններուն հետ իրեն ամէն առաջարկած բանին հնարքը կը գտնէ։ 15—Եւ հիմա իմ տէրս իր ըսած ցորենը ու գարին, իւղը ու գինին իր ծառաներուն թող զրկէ. 16—Ու մենք Լիբանանէ քեզի հարկաւոր եղածին չափ փայտեր կը կտրենք, և զանոնք ծովէն լաստեր չինելով՝ Յոպպէ կը բերենք քեզի, ու դուն զանոնք Երուսաղէմ հանէ։

17—Ու Սողոմոն Իսրայէլի երկրին մէջ եղող բոլոր օտարազգի մարդիկը իր հօրը Դաւիթի համրելէն ետքը համրեց. և անոնք հարիւր չիսունտ իրենք հազար վեց հարիւր մարդ գտնուեցան. 18—Ու անոնցմէ եօթանասուն հազար բեռնակիր, ու լեռը կտրող ութսուն հազար, ու զանոնք բանեցնելու համար երեք հազար վեց հարիւր վերակացու ըրաւ։

ԳԼ. Գ

Եւ Սողոմոն սկսաւ Տէրոջը տունը չինել Երուսաղէմի մէջ, Մօրիա լեռանը վրայ, ուր Տէրը անոր հօրը Դաւիթի երեւցեր էր, այն տեղը զոր Դաւիթ Յեբուսացի Ոռնայի կալին մէջ պատրաստեր էր։ 2—Ու իր թագաւորութեանը չորրորդ տարին, երկրորդ ամսուն երկ-

*նէբ. հայրս

բորդ էջը սկսաւ ընդ[1]— չինել, 3—Ու Աստուծոյ տանը չինելու համար Սողոմոնի դրած հիմը սախկ էր. առաջուան չափով վաթսուն կանգուն երկայն, ու քսան կանգուն լայն էր։ 4 — Եւ դիմացը եղող սրահին երկայնութիւնը՝ տանը լայնութիւնովը քսան կանգուն, ու բարձրութիւնը հարիւր քսան [2]էնէ-ն էր. ու զանիկա ներսէն մաքուր ոսկիով պատեց։ 5 — Ու մեծ տունը մայր փայտով ծածկեց, ու զանիկա մաքուր ոսկիով պատեց, ու անոր վրայ արմաւենիներ ու չղթաներ *փորագրեց։ 6—Ու չքեղութեան համար տունը պատուական քարերով զարդարեց. ու ոսկին Փարուիմի ոսկի էր։ 7—Ու տանը գերանները, սեմերը, պատերը ու դռնները ոսկիով պատեց. ու պատերուն վրայ քերովբէներ քանդակեց։

8— Ու սրբութեանց սրբութիւնին տունը չինեց. անոր երկայնութիւնը տանը լայնութեանը պէս՝ քսան կանգուն, ու լայնութիւնը քսան կանգուն էր. և զանիկա վեց հարիւր տաղանդ չափ մաքուր ոսկիով պատեց։ 9—Ու բիւռեռներուն կշիռը հինգ սիկղ ոսկի էր. ու վերնատներնը ոսկիով պատեց։ 10-Ու սրբութեանց սրբութիւնին տանը մէջ երկու քանդակագործ քերովբէներ չինեց, ու զանոնք ոսկիով պատեց։ 11— Ու քերովբէներուն թեւերը քսան կանգուն երկայնութիւն ունէին. մէկ թեւը հինգ կանգուն էր ու տանը պատին կը դպչէր, և միւս թեւը հինգ կանգուն էր ու միւս քերովբէին թեւին կը դպչէր. 12—Միւս քերովբէնին ալ մէկ թեւը հինգ կանգուն էր ու տանը պատին կը դպչէր, ու միւս թեւը հինգ կանգուն էր ու միւս քերովբէին թեւին կը դպչէր. 13—Այս քերովբէներուն տարածած թեւերուն երկայնութիւնը քսան կանգուն էր. ու անոնք իրենց ոտքերուն վրայ կայնած էին, ու անոնց երեսը դէպ ի տունը կը նայէր։

14—Ու վարագոյրը կապոյտ ոսկի, ծիրանիէ, կարմիրէ ու բեհեզէ չինեց, ու անոր վրայ քերովբէները գործեց։

15—Ու տանը առջև երեսուն հինգ կանգուն երկայնութեամբ երկու սիւն չինեց, ու ամէն մէկուն վրայի խոյակը հինգ կանգուն էր։ 16—Ու դաբիրին մէջ [3]ընէ-ներուն պէս շղթաներ չինեց, ու սիւներուն վրայ դրաւ. և հարիւր նուռ չինեց ու շղթաներուն անցուց։ 17—Ու սիւները տաճարին առջև կանգնեց, մէկը աջ կողմին ու միւսը ձախ կողմին. և աջ կողմը եղողին անունը Յաքին, ու ձախ կողմը եղողին անունը Բոազ կոչեց։

Գլ. Դ

Ու պղնձէ սեղան մը չինեց, երկայնութիւնը քսան կանգուն, և լայնութիւնը քսան կանգուն ու բարձրութիւնը տասը կանգուն։

2—Ու ձուլածոյ ծովը չինեց. — մէկ շրթունքէն մինչև միւս շրթունքը տասը կանգուն էր, ու բոլորաձև էր և անոր բարձրութիւնը հինգ կանգուն էր, ու անոր չրջապատը երեսուն կանգուն էր։ 3—Ու անոր տակ չուրչանակի ամէն կողմէն եղներու նմանութիւններ կային. ծովուն բոլորտիքը մէկ կանգունի մէջ տասնական էջմէջ էին. — եղները երկու կող էին, որոնք ձուլածոյ տասնոնին ձուլելէ էին։ 4—Ասիկա տասուերկու եղներու վրայ կը կենար, որոնց երեքը դէպ ի հիւսիս, երեքը դէպ ի արեւմուտք, երեքը դէպ ի հարաւ, ու երեքը դէպ ի արեւելք կը նայէին, ու ծովը անոնց վրայ էր, և ամէնուն հետի կողմը դէպ ի ներս դարձած էր։ 5—Ու անոր թանձրութիւնը չորս մատնաչափ էր. և չրթունքը գաւաթի չրթունքի պէս էր, ու վրան շուշանի ծաղիկներ էջմէջ էին, ու երեք հազար մար կ'առնէր։

6 — Ու տասը սեղան չինեց, ու հինգը աջ կողմը ու հինգն ալ ձախ կողմը դրաւ լուացման համար. *ողջակէզները անոնց մէջ կը լուային. բայց ծովը քահանաներուն համար էր, որպէս զի հոն լուացուին։

7—Ու տասը ոսկեղէն աչտանակները չինեց իրենց օրինակին համեմատ, ու զանոնք տաճարին մէջ դրաւ, հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը։

8—Ու տասը սեղան չինեց, ու զանոնք տաճարին մէջ դրաւ, հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը. ու հարիւր ոսկեղէն կոնքեր չինեց։

9—Ու քահանաներուն գաւիթը ու մեծ գաւիթը և գաւիթին դռները չինեց, ու անոնց փեղկերը պղնձով պատեց։ 10—Ու ծովը աջ կողմը հարաւի դէմ դէպ ի արեւելք դրաւ։

11—Ու Քիրամ կաթսաները, թիակները ու կոնքերը չինեց. և Քիրամ կատարեց այն բոլոր գործերը զորոնք Աստուծոյ տանը համար Սողոմոն թագաւորին կը չինէր. 12—Այսինքն երկու սիւները ու գունաերը ու երկու սիւներուն գլուխը եղող խոյակները, և սիւներուն գլուխը եղող խոյակներուն երկու գունաերը ծածկելու համար երկու ցանցակերպ զարդերը, 13—Ու երկու ցանցակերպ զարդերուն չորս հարիւր նռաձերը, այսինքն սիւներուն վրայի խոյակներուն երկու գունաերը ծածկելու համար՝ ամէն մէկ ցանցակերպ զարդին վրայ երկու կարգ նռաձեր։ 14—Ու մեքենաները չինեց, ու մեքենաներուն վրայի աւազանները չինեց. 15—Մէկ ծովը ու անոր տակի տասներկու եղները, 16—Ու կաթսաները ու թիակները ու մսահանները և անոնց բոլոր գործիքները՝ Տէրոջը տանը համար Սողոմոն թագաւորին՝ փայլուն պղնձէ չինեց անոր վարպետ Քիրամ։ 17—Թագաւորը զանոնք Յորդանանու դաշտին մէջ Թանձր հողի մը վրայ ձուլել տուաւ Սակթովիթի ու *Սարեդայի մէջտեղ։ 18-Ու Սողոմոն այս բոլոր կարասիները խիստ շատ չինեց, քանզի պղինձը կշռած չէր գար։ 19—Ու Սողոմոն Աստուծոյ տանը բոլոր կարասիները չինեց. նաև Ե[4]ոհ-ի սեղանը, ու այն սեղանները՝ որոնց վրայ առաջաւորութեան հացը [5]էր դնուէր, 20 — Ու մաքուր ոսկիէ աչտանակները ու անոնց ճրագներըն, զարիբին առջև վառելու համար բուռ սովորութեան, 21—Ու զուտ ոսկիէ ծաղիկները ու ճրագները և մխելիքները։ 22—Ու մաքուր ոսկիէ բազմակողերը, սաչառները, խնկամանները ու բուրվառները, և տանը դռները, այսինքն սրբութեանց սրբութիւնին ներսի դռանը փեղկերը, և տանը, այսինքն տաճարին, դռանը փեղկերը ոսկիէ չինեց։

Գլ. Ե

Ե Սողոմանի Տէրոջը տանը համար չինած բոլոր գործը լմնցաւ. ու Սողոման իր հօրը Դաւիթի նուիրած բաները, և արծաթը ու ոսկին ու բոլոր անօթները առաւ, և Աստուծոյ տանը գանձերուն մէջ դրաւ։

2—Այն ատեն Սողոման Իսրայէլի ծերերը, ու ցեղերուն բոլոր իշխանները, Իսրայէլի որդիներուն նահապետները, Երուսաղէմի մէջ Ժողվեց, որպէս զի Տէրոջը ուխտին տապանակը Դաւիթի քաղաքէն, այսինքն Սիոնէ, հանեն։ 3—Ու Իսրայէլի բոլոր մարդիկը եօթներորդ ամսուն տօնին առջև բազաւորին քով Ժողովեցան։ 4—Ու Իսրայէլի բոլոր ծերերը եկան. ու Ղեւտացիները տապանակը վերցուցին 5—Ու տապանակը ու Ժողովքի խորանը և խորանին մէջ եղած բոլոր սուրբ անօթները հանեցին, զանոնք քահանաները — Ղեւտացիները հանեցին։ 6—Ու Սողոման թագաւորը ու անոր քով Ժողոված Իսրայէլի բոլոր Ժողովքը տապանակին առջև ըլլալով՝ ոչխարներ ու արջառներ կը զոհէին, այնչափ չատ՝ որ անհամար էին։ 7—Ու քահանաները Տէրոջը ուխտին տապանակը ներս տարին իր տեղը, տանը դարիրը, սրբութիւն սրբութեանցը, — քերովբէներուն թեւերուն տակ դրին։ 8—Ու քերովբէները տապանակին տեղին վրայ էջէնց թեւերը կը տարածէին, և քերովբէները տապանակը ու անոր ձողերը վերէն կը ծածկէին։ 9—Ու ձողերը երկնցուցին, և ձողերուն ծայրերը տապանակէն դարիրին առջև կ'երեւնային, բայց դուրսէն չէին երեւնար. ու մինչև այսօր հոն է։ 10—Տապանակին մէջ ուրիշ բան չկար, բայց միայն երկու սաթաւաներըն, զորոնք Մովսէս Քորէբի մէջ հոն դրաւ, որոնցմով Տէրը Իսրայէլի որդիներուն հետ [6]եղաւ բրաւ՝ անոնց եգիպտոսէ ելած ատեներն։

11—Ու երբ քահանաները սուրբ տեղէն

*Եբր. հանեց †Կամ, ներս

*Եբր. ողջակէզի գործը

*Կամ, Սարթանի. գ Թագ. է. 16։

եան, (վասն զի բոլոր հաւ գանուղդ փառաւորները սրբեալք էին, ոչ թէ իրենց յաջողական կարգը պահելով։ **12**—Ու երբեմն Ղեւտացիներուն բոլորը Ասափին, եմանի՝ Իդիթունի և անոնց որդիներուն ու եղբայրներուն հետ բեհեզներ հագած, ծնծղաներով, սաւխրներով ու քնարներով սեղանին արեւելեան կողմը կայնեցան. և անոնց հետ հարիւր քսան քահանայ փող կը հնչեցնէին.) **13**—Ու երբ փող հնչեցնողները ու երգեցողները միաբերան մէկ ձայնով Տէրը կ'օրհնէին ու կը գովէին, և փողերով, ծնծղաներով ու երգոց նուագարաններով ձայներնին վերցնելով՝ Տէրը կ'օրհնէին, ըսելով, Թէ—յեր Տէր—ովն, վասն զի բարի է, վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է, այն ատեն Տէրոջը տունը ամպով լեցուեցաւ։ **14**—Եւ ամպին պատճառաւ քահանաները չկրնան կայնար հոն կենալ, որ էրէից պաշտօնը կատարեն. քանզի Տէրոջը փառքը Աստուծոյ տունը լեցուցեր էր։

ԳԼ. Զ

Այն ատեն Սողոմոն ըսաւ, Տէրը ըսաւ որ ինք մառախուղի մէջ կը բնակի։ **2**—Բայց ես քեզի բնակութեան համար տուն, ու յաւիտեան քու նստելուդ համար տեղ չինեցի։ **3**—Եւ թագաւորը իր երեսը դարձուց, ու Իսրայէլի բոլոր ժողովը օրհնեց. ու Իսրայէլի բոլոր ժողովը ոտքի վրայ կայներ էին։ **4**—Ու անոնք ըսաւ, Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ իր բերնով իմ հօրս Դաւիթի խօսք տուաւ, ու իր ձեռքով կատարեց. քանզի ըսաւ, **5**—Իմ ժողովուրդս Եգիպտոսի երկրէն հանած օրէս ի վեր՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն քնաւ քաղաք մը չընտրեցի տուն չինելու համար, որպէս զի իմ անունս հոն ըլլայ, ու մարդ մը չընտրեցի, որպէս զի իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ իշխան ըլլայ. **6**—Հապա Երուսաղէմը ընտրեցի, որպէս զի իմ անունս հոն ըլլայ, ու Դաւիթը ընտրեցի, որպէս զի իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ [ի—ֆ—ուբ ըլլայ։ **7**—Եւ իմ հայրս Դաւիթ միտք ունէր որ Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը տունը չինէ։ **8**—Բայց Տէրը իմ հօրս Դաւիթի ըսաւ, Որովհետեւ դուն միտք դրիր որ իմ անունս տուն չինես, աղեկ ըրիր որ այս բանը միտք դրիր։ **9**—Սակայն տունը դուն պիտի չշինես. հապա քու որդիդ որ քու ազանգէդ պիտի ելլէ, անիկա իմ անունս՝ տունը պիտի չինէ։ **10**—Ու հիմա Տէրը իր ըսած խօսքը կատարեց, ու ես իմ հօրս Դաւիթի տեղ յաջորդեցի, ու Տէրոջը ըսածին պէս Իսրայէլի աթոռը նստայ, ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը՝ այս տունը չինեցի։ **11**—Եւ հոն դրի տապանակը, որուն մէջ է Տէրոջը ուխտը զոր Իսրայէլի որդիներուն հետ բռաւ։

12—Ու Տէրոջը սեղանին առջեւ՝ Իսրայէլի բոլոր Ժողովքին դիմաց կայնելով, ձեռքերը տարածեց։ **13**—(Քանզի Սողոմոն պղնձէ *խարիսխ մը չինելով՝ զանիկա գաւիթին մէջտեղը դրեր էր. անոր երկայնութիւնը հինգ կանգուն, ու լայնութիւնը հինգ կանգուն, ու բարձրութիւնը երեք կանգուն էր. և ինք անոր վրայ կայնեցաւ, ու Իսրայէլի բոլոր Ժողովքին առջեւ ծունկ կրկնեց, և ձեռքերը դէպ ի երկինք տարածեց։)

14—Ու ըսաւ, Ով Տէր Աստուած Իսրայէլի, երկինքի մէջ ու երկրի վրայ քեզի պէս Աստուած չկայ, որ քու ուխտիդ եւ ողորմութիւնդ հետ ու ողորմութիւն կը պահես։ **15**—Դուն քու ծառայիդ, իմ հօրս Դաւիթի, ըրած խոստումնդրդ պահեցիր, ու բերնովդ ըսածդ ձեռքովդ կատարեցիր, ինչպէս այսօր կ'երեւայ։ **16**—Ու հիմա, ով Տէր Աստուած Իսրայէլի, պահէ այն խոստումնդրդ զոր քու ծառայիդ իմ հօրս Դաւիթի ըրիր, ու ըսիր, Իմ առջեւս Իսրայէլի աթոռին վրայ նստող մարդ քեզմէ պակաս պիտի չըլլայ. միայն թէ քու որդիներդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն, ու իմ օրէնքիս մէջ քալեն, ինչպէս դուն իմ առջեւս քալեցիր։ **17**—Ու հիմա, ով Տէր Աստուած Իսրայէլի, թող քու ծառայիդ Դաւիթի ըսած խօսքդ հաստատուի։

18—Բայց միթէ Աստուած իրաւ ըլնէ երկրի վրայ մարդոց հետ պիտի բնակի,

*կամ, բեմ

ահա երկինք ու երկնից երկինք քեզ չեն կրնար պարունակել. ա՛ր կը մնայ այս իմ շինած տունս։ **19**—Սակայն, ով Տէր Աստուած իմ, քու ծառայիդ աղօթքին ու խնդրածքին նայէ, որպէս զի քու ծառայիդ այսօր քու առջեւդ ըրած պաղատանքը ու աղօթքը լսես. **20**—որպէս զի այս տաճը վրայ ցորեկ ու գիշեր քու աչքերդ բաց ըլլան, այն տեղին վրայ՝ որուն համար ըսիր Թէ քու անունդ հոն պիտի գտնես. այնպէս որ այս տեղ քու ծառայիդ ըրած աղօթքը լսես։ **21**—Ու բնակութեան տեղէն, լսես ու ներես. և ամէն մարդու իր բոլոր ճամբաներուն համաձայնութեան համեմատ բնես, անոր սիրտը գիտնալուդ համար. վասն զի մարդոց որդիներուն սիրտը միայն դուն գիտես. **31**—որպէս զի քեզմէ վախնան ու քու ճամբաներուդ մէջ քալեն բոլոր երկիր երիցս օրերուն մէջ, որպէս ժամանակ որ մեր հայրերուն տուած երկիրդ վրայ պիտի ապրին։

32—Ու քու Ժողովուրդդ Իսրայէլէ չեզող, և հեռուէր երկրէ մը քու մեծ անունդ համար և զօրաւոր ձեռքիդ համար ու բարձր բազուկիդ համար եկող օտարականն ալ եթէ գայ ու այս տանը մէջ աղօթք բնէ, **33**—դուն երկինքէն, լսես, և օտարականին քեզի ըրած ամէն խնդրածքը կատարես, որպէս զի երկրի ամէն ժողովուրդները քու անունդ ճանչնան, ու քու Ժողովուրդիդ Իսրայէլի պէս քեզմէ վախնան, և գիտնան Թէ այս իմ շինած տանս վրայ քու անունդ կոչուած է։

34—Երբ քու Ժողովուրդդ իր թշնամիին դէմ պատերազմի երթայ այն ճամբով որ դուն պիտի զրկես զանոնք, եթէ անոնք այս քու ընտրած քաղաքիդ, ու քու անուանդ համար այս իմ շինած տանս կողմն Նայելով՝ քեզի աղօթք բնեն, **35**-երկինքէն անոնց աղօթք ու խընդրածքը լսես, և անոնց իրաւունք ընես։

36—Երբ քեզի դէմ մեղք գործեն, (քանզի մեղք չգործող մարդ չկայ,) ու անոնց բարկանալով զանոնք թշնամիին ձեռքը մատնես, ու անոնց գերեվարողները հեռու կամ մօտ երկիր մը գերի տանին

*Եբր. գռներուն

զանոնք, 37—եթէ այն իրենց գերութեան երկրին մէջ վնդվի դան ու դառնան, և իրենց գերութեան երկրին մէջ փղձի ապաչին ու ըսեն, Մեզ զործածցինք, անօրէնութիւն ու անիրաւութիւն բրինք· 38—ես էրէ անոնք իրենց գերութեան երկրին մէջ, ուր գերի տարուած են, իրենց բոլոր սրտովը ու իրենց բոլոր հոգւովը դառնան ու իրենց երկրին, զոր իրենց հայրերուն տուի, և քու ընտրած քաղաքիդ, ու քու անունդ համար իմ չինած տանս կողմը դարձի՛ղ ընեն, 39-Դուն երկինքին, քու բնակութեանդ տեղն, անոնց ապօթքը ու խնդրուածքը լսես, ու անոնց իրաւունք ընես, և քու ժողովուրդիդ փղձի դէմ բրած մեղքը ներես, 40—Հիմա, ով Աստուած իմ, այս տեղ հագացուցած ապօթքին թող քու աչքերդ բաց ըլլան, ու քու ականջներդ մտիկ ընեն, 41—ես հիմա, ով Տէր Աստուած, քու հանգստութեանդ տեղը ելիր, դուն ու քու զօրութեանդ տապանակը. ով Տէր Աստուած, քու քահանաներդ փրկութիւն հագնին, և քու սուրբերդ բարութիւնով ուրախանան· 42—Ով Տէր Աստուած, քու օծեալիդ երեսը մի նարդիր, հապա քու ծառայիդ Դաւիթի ըռճի ողորմութիւններդ յիշէ։

Գլ. Ի

Ու երբ Սողոմն իր ապօթքը լմնցուց, երկինքէն կրակ իջաւ, ու ողկակիզները և զոհերը ոպառեց, ու Տէրոջը փառքը տանը լեցուց։ 2—Ու քահանաները չկրնար Տէրոջը տանը մտնել, քանզի Տէրոջը փառքը Տէրոջը տանը լեցուցեր էր։ 3—Ու բոլոր Իսրայէլի որդիները կրակին իջնելը և տանը վրայ Տէրոջը փառքին հանդիպելը կը տեսնէին. ու երեսի վրայ գետինը իյնալով՝ քարայատակին վրայ երկրպագութիւն բրին, ու Տէրը օրհնեցին, վասն զի բարի է, վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է։ 4— Ես թագաւորը ու բոլոր ժողովուրդը Տէրոջը առջև զոհեր կը մատուցանէին։ 5—Ես Սողոմն թագաւորը քանոներկու հազար արջառ ու հարիւր քսան հազար ոչխար զոհ բրաւ, այսպէս թագաւորը ու բոլոր ժողովուրդը Աստուծոյ տանը նաւակատիքը բրին։ 6—Ես քահանաները իրենց պահպանութեանը համեմատ կը կայնէին, ու Ղեւտացիները Տէրոջը երգոց նուագարաններովը, զորոնք Դաւիթ թագաւորը չիներ էր Տէրը գովելու համար, վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է, *երբ Դաւիթ անոնց ձեռքով Տէրը օրհնեց՝· ու քահանաները անոնց դիմաց փողերը կը հնչեցնէին, ու բոլոր Իսրայէլ ոտքի վրայ կային եր։

7—Ես Սողոմն Տէրոջը տանը առջև եղող գաւիթին մէջտեղը սրբեց, քանզի ողկակիզները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց· որովհետև Սողոմնի չինած պղնձէ սեղանը՝ ողկակիզները ու հացի ընծաները ու ճարպերը չէր կրնար պարունակել։ 8—Ես այն տանն Սողոմն ու անոր հետ բոլոր Իսրայէլ, խիստ մեծ ժողով մը, Եմաթի մուտքէն մինչև Եգիպտոսի հեղեղատը եօթը օր ատեն բրին։ 9—Ու ութերորդ օրը մեծ ժողովք բրին. քանզի եօթը օր սեղանին նուագարանը ուեօթը օր ատեր կատարեցին։ 10—Ու եօթներորդ ամսուն քսանուհինգերորդ օրը ժողովուրդը արձակեց, որպէս իրենց վրանները գնալէն, ուրախ և սրտով մը բարիներուն համար՝ զորոնք Տէրը Դաւիթի, Սողոմնի ու իր Իսրայէլ ժողովուրդին բրեր էր։

11—Ես Սողոմն Տէրոջը տանը ու թագաւորական տանը լմնցուց. ու Տէրոջը տանը մէջ և իր տանը մէջ Սողոմնի սիրտը ինչ որ չինել ուզից ամէնն ալ յաջողցաւ։

12—Ու Տէրը գիշերով Սողոմնի երեւցաւ, և անոր ըսաւ, Քու ապօթքդ լսեցի, ու այս տեղը ընտրեցի, որպէս զի ինծի զոհի տան ըլլայ· 13—եթէ երկինքը գոցեմ որպէս զի անձրև չըլլայ, և եթէ մարախին պատուիրեմ որպէս զի երկիրը ուտէ, կամ եթէ իմ ժողովուրդիս մէջ ժանտախտ զրկեմ, 14—Ու իմ անունովս կոչուած ժողովուրդս եթէ խոնարհին ու ապօթք ընեն, ու իմ երեսս խնդրեն և իրենց չար ճամբաներէն

*Կամ, Դաւիթի օրհնութիւնը իրենց ձեռքը ոանհնալով

դառնան, ես ալ երկինքէն պիտի լսեմ ու անոնց մեղքը ներեմ, ու անոնց երկիրը պիտի բժշկեմ· 15—Հիմա այս տեղ ‹աչքերս բաց› ու ականջներս մտիկ ընող պիտի ըլլան· 16—Ու հիմա այս տանը ընտրեցի ու սրբեցի, որպէս զի իմ անունս յաւիտեան հոն ըլլայ. ու իմ աչքերս ու սիրտս միշտ հոն պիտի ըլլան· 17—Ու եթէ դուն իմ առջևս քու հօրդ Դաւիթի քալածին պէս քալես, ու բոլոր զիտ պատուիրածներս ընես, և իմ կանոններս ու դատաստաններս պահես, 18—Ես տանն քու թագաւորութեանդ աթոռը պիտի հաստատեմ, ինչպէս քու հօրդ Դաւիթի հետ ուխտ բրի՝ ըսելով, Քեզմէ Իսրայէլի վրայ իշխող մարդ պակաս պիտի չըլլայ· 19—Բայց եթէ դուն նայ, ու ձեր առջև դրած կանոններս ու պատուիրանքներս թողուք, ու երթաք ուրիշ աստուածներու ծառայութիւն ընէք, և անոնց երկրպագութիւն ընէք· 20—Ես տանն *ձեզ արմատից պիտի խլեմ այն երկրին վրայէն զոր †ձեզի տուի. և այս տունը զոր իմ անունս համար սրբեցի, երեսէս պիտի ձգեմ, ու զանիկա բոլոր ազգաց մէջ առակ ու կատակ պիտի ընեմ· 21—Ես այս բարձր տանը համար անոր գտնվիլն անցնողը պիտի զարմանայ ու պիտի ըսէ, Տէրը ինչո՞ւ համար այս երկրին ու այս տանը այսպէս ըրաւ· 22—Ես պիտի ըսեն, Վասն զի իրենց հայրերուն Տէր Աստուածը թողուցին, որ զանոնք Եգիպտոսի երկրէն հաներ էր, և ուրիշ աստուածներու յարեցան, և անոնց երկրպագութիւն ու ծառայութիւն ըրին. այս պատճառաւ անոնց վրայ այս բոլոր չարիքները բերաւ։

Գլ. Ը

Ես Սողոմն Տէրոջը տունը ու իր տունը քսան տարի ան մէջ չինելէն հետքը, 2—Սողոմն այն քաղաքներն ալ չինեց, զորոնք Քիրամ Սողոմնի տուեր էր, ու հոն Իսրայէլի որդիները բնակեցուց։ 3—Ես Սողոմն Սուբայի Եմաթը գնաց, ու

*Եբր. զանոնք †Եբր. անոնց

անոր տիրեց։ 4—Ես անապատին մէջ Թագմորը չինեց, ու այն բոլոր չափազանի քաղաքները՝ զորոնք Եմաթի էրէրին մէջ չինեց։ 5—Ու վերի Բեթ-օրոնը և վարի Բեթ-օրոնը պարիսպներով, դռներովը ու նիգերով ամրացած քաղաքներ չինեց։ 6—Նաև Բաալաթը, ու Սողոմնի բոլոր չափազանի քաղաքները, ու կառքերուն բոլոր քաղաքները, ու ձիաւորներուն քաղաքները, և այն բոլոր *չինելքերը՝ զորոնք Սողոմն ուզեց չինել Երուսաղէմի մէջ, Լիբանանի մէջ ու իր տէրութեանը բոլոր երկրին մէջ։

7—Այն բոլոր ժողովրդականները որոնք Քետացիներէն, Ամորհացիներէն, Փերեզացիներէն, Խեւտացիներէն ու Յեբուսացիներէն մնացեր էին, և Իսրայէլի որդիներէն չէին, 8—Այսինքն անոնց զաւակները որոնք անոնցմէ ետքը այն երկրին մէջ մնացեր էին, ու Իսրայէլի որդիները զանոնք բոլորովին կորնդացուցած չէին, Սողոմն զանոնք հարկատու բրաւ մինչև այսօր։ 9—Ես Սողոմն իր գործին համար Իսրայէլի որդիներէն ծառաներ չբրաւ. հապա անոնք պատերազմական մարդիկ, ու իր զօրավարներուն իշխաններն, և իր կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներն էին։ 10—Ես Սողոմն թագաւորին գլխաւոր իշխաններն երկու հարիւր յիսուն մարդիկ էին, որոնք ժողովուրդին վրայ կ'իշխէին։

11—Ու Սողոմն փարաւոնի աղջիկը Դաւիթի քաղաքէն անոր համար չինած տունը հանեց. վասն զի ըսաւ, Իմ կինս Իսրայէլի թագաւորին, Դաւիթի, տունը չնստի, վասն զի Տէրոջը տապանակին մտած տեղերը սուրբ են։

12—Այն ատեն Սողոմն սրահին առջև չինած Տէրոջը սեղանին վրայ ողկակիզներ մատուց Տէրոջը։ 13—Ես Մովսէսի պատուիրածին համեմատ ամէն օրուան օրչուածը՝ շաբաթներու, ամանորներու ու հանդիսաւոր ատեներուն մէջ, տարին երեք անգամ, այսինքն բազարկակերաց ատենն, շաբաթներու ատենն ու տապստարտարաց ատենն կը մատուցանէր։ 14—Ես իր հօրը Դաւիթի կանոնովը քահանաներուն դասերը ի-

*Եբր. փափաքը

բինց պաշտօններուն վրայ, ու Ղեւտացիները իրենց պահպանութիւններուն վրայ, ամէն օրուան պարտաւորին պէս, քահանաներուն առջեւ օրհներգու ատենները ընելու համար, և դռնապաններն ալ իրենց դասերուն կարգովը ամէն մէկ դռան դրան. քանզի այսպէս էր Աստուծոյ մարդուն Դաւիթի հրամանը։ 15—Ու քահանաներուն ու Ղեւտացիներուն համար, և գանձարաններուն համար, ամէն բանի մէջ Թագաւորին հրամանէն զատ չէրան։ 16—Ու Սողոմոնի ամէն գործը, Տէրոջը տունը հիմը դրուած օրէն մինչև անոր լրընալը, *պարապատած էր Այտիս կատարեալ տունը։

17—Այն ատեն Սողոմոն եգիպտի երկրին մէջ՝ Ծովեզերքը եղող Գասիոնգաբերը ու Նլաթը գնաց։ 18—Ու Փիրամ իր ծառաներուն ձեռքով նաւեր ու ծովու †ճշդիզդուներ հմուտ եղող ծառաներ ղրկեց անոր. ու Սողոմոնի ծառաներուն հետ Ոփիր գացին, և անկէ չորս հարիւր յիսուն տաղանդ ոսկի առին, ու Սողոմոն Թագաւորին բերին։

Գլ. Թ

Ե Սաբայի Թագուհին Սողոմոնի համբաւը լսեց, ու Սողոմոնը խրթին հարցմունքերով փորձելու համար Երուսաղէմ եկաւ խիստ շատ հանդիսաւ, և ուղտերը ու շատ ոսկի և պատուական քարեր բեռցած ուղտերով, և Սողոմոնի գալ գնաց, ու բոլոր իր սրտին մէջ եղածին վրայով անոր հետ խօսեցաւ։ 2—Ու Սողոմոն անոր բոլոր հարցմունքերը բացատրեց. ու քնաւ այնպիսի խօսք մը չէրար զոր Սողոմոն չհասկնայ ու չբացատրէ անոր։ 3—Ու Սաբայի Թագուհին Սողոմոնի իմաստութիւնը, ու անոր շինած տունը, 4—Ու անոր սեղանին կերակրութիւնը, ու անոր ծառաներուն †բնակարաններն, և պատուարներուն կացնուածքը, ու անոնց հագուստներն, և անոր մատուռականները, ու անոնց հագուստներն, ու Տէրոջը տունը ելլելու սանդուխը տեսնելով՝ խելքը գլխէն գնաց։ 5—Ու Թագաւորին ըսաւ, Քու վիճակիդ ու իմաստութեանդ վրայով իմ երկրիս մէջ լսած խօսքերս ճշմարիտ են եղեր։ 6—Բայց ես այն խօսքերուն չհաւատացի, մինչև-ՀԷ-մը եկայ ու իմ աչքերովս տեսայ. և ահա քու իմաստութեանդ չափովը կէսը ինծի չպատմեցիր. դուն գերազանց ես ի-ՀամբաւէդՂ զոր ես լսեցի։ 7—Երանի՛ քու մարդոցդ, ու երանի՛ այս քու ծառաներուդ որոնք միշտ քու առջեւդ կայնելով քու իմաստութիւնդ կը լսեն։ 8—Քու Եհովա Աստուածդ օրհնեալ ըլլայ, որ քեզի հաճեցաւ, ու քեզ իր աթոռին վրայ դրաւ, որպէս զի քու Տէր Աստուածդ համար Թագաւոր ըլլաս. քու Աստուածդ Իսրայէլը սիրելուն համար ու զանիկա յաւիտեան հաստատելու համար, քեզ անոնց վրայ Թագաւոր դրաւ, որպէս զի իրաւունք ու արդարութիւն ընես։ 9—Ու Թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի ու խիստ շատ խունկեր և պատուական քարեր տուաւ. ու Սաբայի Թագուհիին՝ Սողոմոն Թագաւորին տուած խունկերուն պէս չէրար։

10—Ու Փիրամի ծառաները ու Սողոմոնի ծառաները, որոնք Ոփիրէ ոսկի կը բերէին, սրմակ փայտեր ու պատուական քարեր ալ բերին։ 11—Ու Թագաւորը սրմակ փայտին՝ Տէրոջը տունը ու Թագաւորական տանը աստիճաններ, ու երգեցողներուն համար քնարներ ու տաւիղներ չինեց. և անոնց պէս անկէ առաջ Ցուդայի երկրին մէջ չէր երեւցած։

12—Ու Սողոմոն Թագաւորը Սաբայի Թագուհիին բոլոր ուզած ու խնդրած բաները տուաւ, այն բաներէն զատ՝ զորոնք անիկա Թագաւորին բերաւ. և ան նոյնպէս իր ծառաներուն հետ դարձաւ իր երկիրը գնաց։

13—Ու մէկ տարուան մէջ Սողոմոնի եկած ոսկիին կշիռքը վեց հարիւր վաթսունվեց տաղանդ ոսկի էր։ 14—Առուտուր ընողներուն, ու վաճառականներուն, և Արաբացւոց բոլոր Թագաւորներուն, ու երկրին նախարարներուն՝ Սողոմոնի բերած ոսկիին ու արծաթին պատ։

15—Ու Սողոմոն Թագաւորը կառուցած ոսկիէ երկու հարիւր վահան չինեց. ու ամէն մէկ վահանին համար վեց հարիւր դրամ ոսկի գնաց։ 16—Կառուցած ոսկիէ երկու հարիւր տապար ալ չինեց, ու ամէն մէկ տապարին երեք հարիւր ոսկի գնաց. ու Թագաւորը Լիբանանի անտառին տունը դրաւ զանոնք։

17—Ու Թագաւորը փղոսկրէ մեծ աթոռ մը չինեց, ու զանիկա մաքուր ոսկիով պատեց։ 18—Ու աթոռը վեց աստիճան ու ոսկիէ պատառանդան մը ունէր, որոնք աթոռին կից էին. և նստելու տեղը մէկ կողմէն ու միւս կողմէն չեներաններ ունէր, ու չեներաններուն քով երկու առիւծներ կը կայնէին, 19—Ու հոն վեց աստիճաններուն վրայ՝ մէկ կողմէն ու միւս կողմէն տասներկու առիւծներ կը կայնէին. քնաւ մէկ Թագաւորութեան մէջ այսպիսի բան մը չինուած չէր։

20—Ու Սողոմոն Թագաւորին բոլոր խմիչքի անոթները ոսկի էին. և Լիբանանի անտառին տունը բոլոր անոթները զուտ ոսկի էին, արծաթէ չկար. Վասն զի անիկա Սողոմոնի օրերը բան մը տեղ չէր սեպուներ։ 21—Քանզի Թագաւորին նաւերը Փիրամի ծառաներուն հետ Թարսիս կ'երթային. Թարսիսի նաւերը երեք տարին անգամ մը ոսկիով, արծաթով, փղոսկրով, կապիկներով ու սրբատաղերով բեռնաւորուած կու գային։

22—Ու Սողոմոն Թագաւորը հարբուսութեան ու իմաստութեան կողմանէ երկրի բոլոր Թագաւորներէն մեծ եղաւ։ 23—Ու երկրի բոլոր Թագաւորները կը փափաքէին Սողոմոնի երեսը տեսնել, և անոր իմաստութիւնը լսելու, զոր Աստուած անոր սրտին մէջ դրեր էր։ 24—Ու անոնց ամէնը տարէ տարի իրենց բնաձները կը բերէին, այրիքն արծաթէ պատկեր, ոսկիէ անօթներ, հանդերձներ, զէնքեր, խունկեր, ձիեր ու ջորիներ։

25—Ու Սողոմոն ձիերու ու կառքերու համար չորս հազար մատռ ունէր, ու տասներկու հազար ձիաւոր, ու զանոնք կառքերու քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի մէջ Թագաւորին քով տեղաւորեց։ 26—Ու եփրատ գետէն մինչև Փղշտացւոց երկիրը ու մինչև եգիպտոսի սահմանը՝ բոլոր Թագաւորներուն վրայ կ'իշխէր։ 27—Ու Թագաւորը նոյնչափ արծաթ Երուսաղէմի մէջ քարերու պէս հաստատեց ու եղեւնափայտը շատ թեներէն դաշտի մէջ եղող մատթըղենիներուն պէս բերաւ։ 28—Ու Սողոմոնի համար եգիպտոսէ ու ամէն երկիրներէ ձիեր կը հանէին։

29—Ու Սողոմոնի առաջին ու վերջին պատմութեանը մնացորդը՝ Նաթան մարգարէին գիրքին մէջ ու Սիլովնացի Աքիայի մարգարէութեանը մէջ և Ադդովի տեսանողին՝ Նաբատեան Երոբովամի վրայով երազներուն մէջ գրուած են։ 30—Ու Սողոմոն բոլոր Իսրայէլի վրայ Երուսաղէմի մէջ քառասուն տարի Թագաւորութիւն ըրաւ։ 31—Ու Սողոմոն իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա իր Հօրը Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին. և անոր տեղ անոր որդին Ռոբովամ Թագաւոր եղաւ։

Գլ. Ժ

Ե Ռոբովամ Սիւքեմ գնաց. վասն զի բոլոր Իսրայէլ զանիկա Թագաւոր ընելու համար Սիւքեմ գացեր էր։ 2—Ու Նաբատեան Երոբովամ որ, Սողոմոն Թագաւորին երեսէն փախած, Եգիպտոս կը բնակէր, այս բանը լսելով Եգիպտոսէ դարձաւ։ 3—Ու ղրկելով զանիկա կանչեցին. ու Երոբովամ և բոլոր Իսրայէլ եկան, ու Ռոբովամի հետ խօսեցան ու ըսին, 4—Քու հայրդ մեր վրայ ծանր լուծ մը դրաւ. ու հիմա դուն հօրդ խիստ ծառայութիւնը ու մեր վրայ դրած ծանր լուծը թեթեւցուր, ու քեզի ծառայութիւն ընենք։ 5—Ու անկից քսան անոնց, երեք օրէն եւս գալ ինծի դարձէ՛ք. ու ժողովուրդը գնաց։

6—Ու Ռոբովամ Թագաւորը խորհուրդ հարցուց այն ծերերուն, որոնք իր հօրը Սողոմոնի առջեւ կը կայնէին երբ անիկա ողջ էր, ու ըսաւ, Դուք ինծի ինչ խորհուրդ կու տաք, որ այս ժողովուրդին պատասխան տամ։ 7—Ու անոր խօսեցան ու ըսին, Եթէ այս ժողովուրդին հետ քաղցրութիւնէ վարուս ու անոնց հաճելի ըլլաս, ու անոնց բարի խօսքեր դրուցես, այն ատեն անոնք միշտ քեզի ծառայ կ'ըլլան։ 8—Բայց անոնիկ ծերերուն իրեն տուած խորհուրդը

*Կամ, կարգաւորուած †Կամ, Ժողովը

մերժեց, ու իր առջև կոչող ոչ՝ իրեն հետ մնացած երիտասարդներուն խորհուրդ հարցուց. **9**—Ես անոնց ըսաւ, Դուք ինչ խորհուրդ կու տաք, որ այս ժողովուրդին պատասխան տամ. քանզի անոնք ինծի խօսեցան ու ըսին, Քու հօրդ մեր վրայ դրած լուծը թեթևցուր։ **10**—Ու անոր հետ մնացած երիտասարդները անոր խօսեցան ու ըսին, Քու հայրդ մեր լուծը ծանրացուց, ու դուն մեր վրայէն թեթևցուր՝ ըսող ժողովուրդին այսպէս խօսիս, ու անոնց այսպէս ըսես. Իմ պզտիկ մատս իմ հօրս մէջքէն հաստ է. **11**—Ես հիմա իմ հայրս ձեր վրայ ծանր լուծ դրեր է, բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացնեմ. իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է, բայց ես չէ՛ կարծեններով դէմ էջ-պրէ՛։

12—Ես Ցերոբովամ ու բոլոր ժողովուրդը երրորդ օրը Ռոբովամի եկան, ինչպէս թագաւորը ըսեր էր թէ երրորդ օրը գիծի դարձէք։ **13**—Ու թագաւորը անոնց խստութեամբ պատասխանատուաւ, և Ռոբովամ թագաւորը ծերերուն խորհուրդը մերժելով, **14** — երիտասարդներուն խորհուրդին պէս անոնց հետ խօսեցաւ ու ըսաւ, Իմ հայրս ձեր լուծը ծանրացուցեր է, բայց ես զանիկա աւելի պիտի ծանրացնեմ. իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է, բայց ես չէ՛ կարծեններով դէմ էջ-պրէ՛։ **15**—Ես թագաւորը ժողովուրդին չէ՛ լսեր մնիկ չէրաւ. վասն զի այս բանը Աստուծմէ եղաւ, որպէս զի Տէրը Սիլոնացի Ահիայի ձեռքով Նաբատեան Ցերոբովամի բան խօսքը հաստատէ։

16—Ու երբ բոլոր Իսրայէլ տեսաւ որ թագաւորը իրենց մնիկ չէրաւ, ժողովուրդն ալ թագաւորին պատասխան տուին ու ըսին, Մենք Դաւիթի քով բնչ բաժին ունինք. ու Յեսսէի որդւոյն քով ժառանգութիւն չունինք, ով Իսրայէլ, քոց ամէն մարդ իր վրանը գնա՛։ Ով Դաւիթ, հիմա դուն քու տունդ հոգա։ Ու բոլոր Իսրայէլ իրենց վրանները գացին։ **17**—Բայց Յուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի որդիներուն վրայ Ռոբովամ թագաւոր էր։ **18**—Ես Ռոբովամ թագաւորը երբ հարկերուն վրայ եղող Ադորամը դրկեց, Իսրայէլի որդիները զանիկա քարերով փգրկեցին, ու մեռաւ։ Ես Ռոբովամ թագաւորը արագորէն կառքը հեծաւ, որպէս զի Երուսաղէմ փախչի։ **19**—Այսպէս Իսրայէլ Դաւիթի տունէն ապստամբեցաւ մինչև այսօր։

ԳԼ. ԺԲ

Ես Ռոբովամ Երուսաղէմ եկաւ, ու Յուդայի և Բենիամինի տունէն հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմողներ ժողվեց, որպէս զի Իսրայէլի հետ պատերազմ բնեն, ու թագաւորութիւնը Ռոբովամի դարձնեն։ **2**—Բայց Աստուծոյ մարդուն Սեմայիայի Տէրոջը խօսքը եղաւ՝ ըսելով, **3**—Սողոմոնի որդւոյն, Յուդայի Ռոբովամ թագաւորին, ու Յուդայի ու Բենիամինի մէջ եղող բոլոր Իսրայէլացիներուն խօսիս ու ըսես, **4**—Տէրը այսպէս կ'ըսէ. Մի երթաք ու ձեր եղբայրներուն հետ մի պատերազմիք. ամէն մարդ իր տունը դառնայ, վասն զի այս բանը ինծմէ եղաւ։ Ես Տէրոջը խօսքը մնիկ բրին, ու Յերոբովամի վրայ երթալէն կեցուցին։

5—Ես Ռոբովամ Երուսաղէմ բնակեցաւ, ու Յուդայի մէջ պարսպաւոր քաղաքներ չինեց։ **6**—Բեթլէհէմ, Ետամը, Թեկուէն, **7**—Բեթսուրը, Սոքովը, Ոդոդամը, **8**—Գէթը, Մարեսան, Զիփը, **9**—Ադորայիմը, Լաքիսը, Ազեկան, **10**—Սարաան, Այեղոնը ու Քերրոնը չինեց, որոնք Յուդայի ու Բենիամինի մէջ պարսպաւոր քաղաքներ էին։ **11**—Ես պարիսպները ամրացուց, ու անոնց մէջ զօրապետներ, ու կերակուրի ու իւղի և գինիի չեմարանները, **12**—Ու ամէն մէկ քաղաքին մէջ վահաններ ու նիզակներ դրաւ. և զանոնք խիստ շատ ամրացուց, ու Յուդա և Բենիամին անոր հպատակ էին։

13—Ես բոլոր Իսրայէլի մէջ եղող քահանաները ու Ղեւտացիները իրենց բոլոր սահմաններէն անոր քով ժողվեցան։ **14**—(Քանզի Ղեւտացիք իրենց արտարձանները ու կալած փնները թողուցին և Յուդայի Երիսէրը ու Երուսաղէմ գացին, վասն զի Յերոբովամ ու անոր որդիները զանոնք Տէրոջը քահանայութենէն մերժեցին։ **15**—Ես անիկա բարձր տեղերուն համար ու գետերու համար ու իր չինած օրիերուն համար իրեն քահանաներ դրաւ։) **16**—Ես անոնց ետևէն՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն Իսրայէլի Տէր Աստուծոյ *սրտանց փընտռողները իրենց հայրերուն Տէր Աստուծոյն զոհ ընելու համար Երուսաղէմ կ'երթային։ **17**—Ու Յուդայի թագաւորութիւնը զօրացուցին, և Սողոմոնի որդին Ռոբովամը երեք տարուան մէջ ուժովցուցին, քանզի երեք տարի Դաւիթի ու Սողոմոնի ճամբովը քալեցին։

18—Ես Ռոբովամ Դաւիթի որդւոյն Յերիմովթի աղջիկը, Մայելէթը, իրեն կին առաւ. Եւ Յեսսէի որդւոյն Եղիաբի աղջիկը Աբիքէլը։ **19**—Ու անիկա որդիներ ծնաւ անոր, Յեուս, Սամարիան ու Զաամը։ **20**—Ես անկէ ետքը Աբիսողոմի աղջիկը Մաաքան առաւ, որ անոր Ծնաւ Աբիան, Նթթին, Զիզան ու Սաղոմիթը։ **21**—Ես Ռոբովամ Աբիսողոմի աղջիկը Մաաքան իր բոլոր կիներէն ու հարճերէն աւելի կը սիրէր. (վասն զի տասնըութ կին ու վաթսուն հարճ առեր էր. և քառասուն ազգ ու վաթսուն ազգիկ ծնաւ)։ **22**—Ես Ռոբովամ Մաաքային որդին Աբիան գլուխ դրաւ, այսինքն իր եղբայրներուն վրայ իշխան. քանզի զանիկա թագաւոր ընելու դիտառնէր։ **23**—Ու խելացութիւն ընելով, իր բոլոր տղաքները բոլոր Յուդայի ու Բենիամինի գաւառներուն մէջ, բոլոր պարսպաւոր քաղաքներուն մէջ ցեղաւորեց, և անոնց առատ ապրուստ կուտար. ու շատ կիներ փնտռեց։

ԳԼ. ԺԳ

Ու երբ Ռոբովամի թագաւորութիւնը հաստատուեցաւ, ու ինք զօրացաւ, Տէրոջը օրէնքը թողուց, ու անոր հետ բոլոր Իսրայէլ ալ։

2—Ես Ռոբովամ թագաւորին հինգերորդ տարին Եգիպտոսի Սիսակ թագաւորը Երուսաղէմի վրայ եկաւ. (քանզի Տէրոջը դէմ ապստամբութիւն ըրեր էին.) **3**—Այն՝ հազար երկու հարիւր կառքով ու վաթսուն հազար ձիաւորով էր... ու անոր հետ եգիպտացի եկած ժողովուրդը անթիւ էր, այսինքն Լիբեացիք, *Սովկիացիք ու Եթէավացիք։ **4**—Ես Յուդայի պարսպաւոր քաղաքները առաւ, ու մինչև Երուսաղէմ եկաւ։ **5**—Ես Սեմայիա մարգարէն եկաւ Ռոբովամի ու Յուդայի իշխաններուն, որոնք Սիսակի երեսէն Երուսաղէմ ժողվուեր էին, ու անոնց ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Դուք զիս թողուցիք, ու ես ալ ձեզ Սիսակի ձեռքը կը թողում։ **6**—Ես Իսրայէլի իշխանները ու թագաւորը խոնարհեցան ու ըսին, Տէրը արդար է։ **7**—Ու երբ Տէրը անոնց խոնարհիլը տեսաւ, Տէրոջը խօսքը Սեմայիայի եղաւ՝ ըսելով, Անոնք խոնարհեցան. պիտի չկորսնցնեմ զանոնք, հապա անոնց քիչ մը ազատութիւն պիտի տամ, ու իմ բարկութիւնս Սիսակի ձեռքով Երուսաղէմի վրայ պիտի չթափի։ **8**—Սակայն անոր ծառաները պիտի ըլլան, որպէս զի իմ ծառայութեանս ու երկրի թագաւորներուն ծառայութեանը տարբերութիւնը գիտնան։ **9**—Ու Եգիպտոսի Սիսակ թագաւորը Երուսաղէմի վրայ եկաւ, և Տէրոջը տանը գանձերը ու թագաւորին տանը գանձերը առաւ, ամէնն ալ առաւ. Սողոմոնի չինած ոսկիէ ասպարներն ալ առաւ։ **10**—Ես Ռոբովամ թագաւորը անոնց տեղ պղնձէ ասպարներ չինեց, ու զանոնք թագաւորական տանը դուռը պահապանութիւն ընող սուրհանդակաց ստիկաններուն ձեռքը յանձնեց։ **11**—Ու երբ թագաւորը Տէրոջը տունը կ'երթար, սուրհանդակները կու գային, զանոնք կը կրէին, ու Եւ՛ը զանոնք սուրհանդակներուն խուցը կը դարձընէին։ **12**—Ու սոր անոր խոնարհելուն համար Տէրոջը բարկութիւնը անկէ դարձաւ, ու ՚ամէն՛ բոլորովին չկորնցուց, նաև Յուդայի մէջ ալ՝ բաներ կային։

13—Ես Ռոբովամ թագաւորը Երուսաղէմի մէջ զօրացաւ, ու թագաւորութիւն ըրաւ, ու երբ Ռոբովամ թագաւորեց, քառասունըմէկ տարեկան էր,

*ԵԲԲ. փնտռելու համար իրենց սիրտը սուսղները †ԵԲԲ. ցուցեց

*կամ, Տրոգղոդացիք

ու տասներեքեր տարի թագաւորութիւն ըրաւ Երուսաղէմի մէջ, այսինքն այն քաղաքին մէջ՝ զոր Տէրը իսրայէլի ամէն ցեղերէն ընտրեց՝ իր անունը հոն դնելու համար. ու անոր մայրը Ամմինադայի էր Նաամա անունով։ 14—Ու անիկա չարութիւն ըրաւ, քանզի իր սիրտը չկազմեց որ Տէրը փնտռէ։ 15—Ու Որոբոամի առաջին ու վերջին գործերը ահա Ամիայեա մարգարէին գիրքին մէջ ու Ադդոյ տեսանողին ազգաբանութեանը մէջ գրուած են։ Ու Որոբոամի ու Ներոբոամի մէջտեղ միշտ պատերազմ կար։ 16—Ու Որոբոամ իր հայրերուն հետ քնացաւ, և Դաւիթի քաղաքին մէջ թաղուեցաւ. ու անոր տեղ անոր որդին Աբիա թագաւորեց։

Գլ. ԺԴ

Ներոբոամի թագաւորին տասներեքերորդ տարին Ուզիայի վրայ Աբիա թագաւորեց։ 2—Անիկա երուսաղէմի մէջ երեք տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Միքայիա էր, որ Գաբաայի Ուրիէլի աղջիկն էր։ ԵՒ Աբիամի ու Ներոբոամի մէջտեղ պատերազմ կար։ 3—Ու Աբիա զօրաւոր ու պատերազմող զօրքերով՝ չորս հարիւր հազար ընտիր մարդոցմով պատերազմելու պատրաստուեցաւ։ Ներոբոամ ալ անոր դիմաց *եղաւ ութ հարիւր հազար ընտիր, զօրաւոր ու պատերազմող մարդոցմով։

4—Ու Աբիա Եփրեմի լեռնակողմը Սեմարիմ լեռան վրայ կայնեցաւ ու ըսաւ, Ով Ներոբոամ ու բոլոր իսրայէլ, լսեցէք մինչ ըրէք։ 5—Դուք գիտնալու չէ՞ք որ իսրայէլի Տէր Աստուածը իսրայէլի վրայ թագաւորեալը՝ յաւիտեան Դաւիթի ու անոր որդիներուն տուած է աղի ուխտով։ 6—Ներոբոամ որդւոյն Նաբատին Ծառան Եաբաւեան Ներոբոամի ոտք եղաւ, ու իր Տէրոջմէն ապստամբեցաւ. 7—Ու անոր քով դատարկակաց ու անօրէն մարդիկ ժողովուեցան, ու Սողոմոնի որդւոյն Որոբոամի դէմ կեցան, քանզի Որոբոամ մանկահասակ ու փափկասիրտ բլլալով՝ անոնց դէմ չդրաւ։

8—Ու հիմա դուք չատուր բլլալնուդ համար, ու Ներոբոամի ձեզի չինած աստուածներուն, այն ոսկիէ որթերուն, ձեր քով բլլալուն համար, Դաւիթի որդիներուն ձեռքը եղող Տէրոջը թագաւորութիւնը դէմ կենալ կը մտածէք։ 9—Միթէ դուք Տէրոջը քահանաները, Ահարոնի որդիները, ու Ղեւտացիները դուրս չըրի՞ք, և ուրիշ երկիրներուն ժողովուրդներուն պէս ձեզի քուրմեր չըրի՞ք այն բոլոր մարդիկը, որոնք ինկ զուարակով ու եօթը խոյերով կու գային ղերնիք նուիրելու, օրպէս զի չաստուածներու քուրմ բլլան։ 10—Բայց մեր Աստուածը եհովա է, ու մենք զանիկա չմոռցուցինք. և Տէրոջը ծառայութիւն ընող քահանաները Ահարոնի որդիներն են. ու Ղեւտացիները էրէից պաշտօնին վրայ են. 11—Ու անոնք առաւոտ ու ամէն իրիկուն Տէրոջը ողջակէզներ և հոտաստուեն, ու անուշահոտ խունկ կը ծխեն, ու մաքուր սեղանին վրայ առաջաւորութեան հացերը կը շարեն, և ամէն իրիկուն վառելու համար ոսկիէ աշտանակը ու անոր ճրագները կը պատրաստեն. քանզի մենք մեր Տէր Աստուծոյն պահպանութիւնը կը պահենք, բայց դուք զանիկա մերժեցիք։ 12—Ու ահա Աստուած ինք մեզի հետ է՝ գլուխնիս բլլալու. նաև անոր քահանաները ազդարարութեան փողերով, որպէս զի ձեզի դէմ հնչեցնեն. Ո՛վ Իսրայէլի որդիներ, ձեր հայրերուն Տէր Աստուածոյն հետ մի պատերազմիք. քանզիդուք չյաջողութիւնի՞ չգտնիք։

13—Բայց Ներոբոամ դարանակալները դարձուց որպէս զի անոնց հետևէն գան. ու Իսրայէլացիք Ուզիայեանց առջև էին, ու դարանակալները անոնց հետևէն էին։ 14—Ու Ուզիայեանք դարձան նայեցան որ պատերազմը իրենց առջևէն ու հետևէն էր, ու Տէրոջը աղաղակեցին, և քահանաները փողերը հնչեցուցին. 15—Ու Ուզիայի մարդիկը ազազակ վերցուցին. ու երբ Ուզիայի մարդիկը ազազակեցին, Աստուած Ներոբոամը ու բոլոր Իսրայէլը Աբիայի ու Ուզիայի առջև զարկաւ։ 16—Ու Իսրայէլի որդիները Ուզիայի առջևէն փախան. ու Աստուած անոնց ձեռքը

*Եբր. պատերազմը չարեց

մատնեց զանոնք։ 17—Ու Աբիա ու իր զօրքը մեծ կոտորած ըրին անոնց մէջ, ու իսրայէլ հինգ հարիւր հազար ընտիր մարդիկ սպանուած իներան։ 18—Այն ատեն իսրայէլի որդիները նուաճեցան, ու Ուզիայի որդիները իրենց հայրերուն Տէր Աստուծոյն ապաւինելուն համար յաղթ գացին։ 19—Ու Աբիա Ներոբոամին հալածեց, ու անկէ քաղաքներ առաւ, այսինքն Բեթէլը ու անոր գեղերը, և Յեսանան ու անոր գեղերը, և Եփրոնը ու անոր գեղերը։ 20—Ու Ներոբոամ Աբիայի օրերուն մէջ մէկմէկ չկրցաւ այծ գանել, ու Տէրը զանիկա զարկաւ, ու մեռաւ։

21—Ու Աբիա ուժովցաւ, ու իրեն տասներկուս կին առաւ, և քառասունիկա տղայ ու տասներվեց աղիկ ծնաւ։ 22—Ու Աբիայի մնացորդ պատմութիւնը, և անոր գործերը ու խօսքերը Ադդոյ մարգարէին յիշատակարանին մէջ գրուած են։

Գլ. ԺԳ

Ե՛ւ Աբիա իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին. և անոր տեղ անոր որդին Ասա թագաւոր եղաւ.ասոր օրերը երկիրը տասը տարի հանգստութիւն գտաւ։ 2—Ու Ասա իր Տէր Աստուծոյն առջև բարի և ուղիղ եղածը ըրաւ. 3—Ու օտար ատրոթներուն սեղանները ու բարձր տեղերը վերցուց և արձանները կոտրեց, ու Աստղաշէմի կուռքերը կտոր կտոր ըրաւ. 4—Ու Ուզիայի հրամայեց որ իրենց հայրերուն Տէր Աստուածը փնտռեն, ու օրէնքը ու պատուիրանքները կատարեն։ 5—Ու Ուզիայի ամէն քաղաքներէն բարձր տեղերը, ու արեգական կուռքերը վերցուց. ու իր առջև թագաւորութիւնը հանգիստ էր։ 6—Ու անիկա Ուզիայի մէջ պարսպատ քաղաքներ չինեց. քանզի այն տարիներուն մէջ երկիրը հանգըստութիւն կը վայելէր, ու անոր հետ պատերազմ ընող չկար, վասն զի Տէրը անոր հանգստութիւն տուաւ։ 7—Ու Ասա Ուզիայի բռնաւ. Այս երկիրը քանի որ մերն *իշխանութեան տակ է՝ այս քաղաքները չինենք, ու զանոնք պարիսպներով, աշտարակներով, դռներով ու նիգերով չրջապատենք. քանզի մենք մեր Տէր Աստուածը փնտռեցինք, — փնտռեցինք նաև համար ամէն կողմնակ մեզի հանգստութիւն տուաւ։ Ու չշինեցին ու յաջողութիւն գտան։ 8—Ու Ասա Ուզիայէ՝ վհատ ու նիզակ կրող երեք հարիւր հազար զօրք, ու Բենիամինէ՝ ասպար կրող ու աղեղ քաշող երկու հարիւր ութսուն հազար զօրք ունէր, ատոնք ամէն զօրաւոր կարիճներ էին։

9—Ու Եթէովպացի Զարա հազար հազարի զօրքով և երեք հարիւր կառքով անոնց վրայ եկաւ, ու մինչև Մարեսա եկաւ։ 10—Ու Ասա անոր դիմաց եկաւ. ու Մարեսայի Սեփաթա ձորին մէջ պատերազմի շարուեցան։ 11—Ու Ասա իր Տէր Աստուծոյն ապրակեց, ու ըսաւ, Ով Տէր, քու աչքիդ տարբերութիւն մը չկայ թէ՛ շատով և թէ՛ †քիչով օգնութիւն ընելու մէջ. մեզի օգնութիւն ըրէ, ով Տէր Աստուած մեր, որովհետև քեզի ապաւինեցանք, ու այս բազմութեան վրայ քու անունովդ եկանք. ով Տէր, մեր Աստուածը գուն ես. մի թզուր որ մարդը քեզի դէմ զօրանայ։ 12—Ու Տէրը Եթէովպացիները Ասայի ու Ուզիայի առջև զարկաւ. ու Եթէովպացիք փախան։ 13—Ու Ասա ու անոր հետ եղող ժողովուրդը զանոնք մինչև Գերարա հալածեցին. ու Եթէովպացիք իներան, և անոնց վրայ կենդանի թիւն չմնաց. քանզի Տէրոջը առջև ու անոր բանակին առջև խորտակեցան. ու խիստ չատ աւար առին։ 14—Ու Գերարայի բոլորտիքը եղող ամէն քաղաքները զարկին. քանզի անոնց վրայ Տէրոջը վախը իներա. ու ամէն քաղաքները կողոպտեցին, վասն զի անոնց մէջ չատ աւար կար։ 15—Ու ‡հօտերուն վրաններն ալ զարկին, ու խիստ չատ ոչխար և ուղտ առին, ու Երուսաղէմ դարձան։

*Եբր. առջև է

†Եբր. ոչխարով

‡Այլն՝ հովիւներուն

Գլ. ԺԹ

Ո. Ովզեդէ արգասն Ազաբիայի վրայ Աասուժոյ Հոգին եկաւ. **2**—եւ Աասի առջև երկրավ՝ բաւ անոր, Ով Աա ու բոլոր Ցուդա ու Բենիամին, ինձի մեկ բրէք. Տէրը ձեզի հետ ի՛ըլլայ, քանի որ դուք անոր հետ էք. ու եթէ զանիկա փնտռէք, զանիկա կը գանէք. բայց եթէ զանիկա Թողուք, անիկա ալ ձեզ պիտի Թողու։ **3**—եւ Իսրայէլ երկար ժամանակ առանց ճշմարիտ Աասուծոյ, առանց սորվեցնող քահանայի, ու առանց օրէնքի մնացեր էր։ **4**—Բայց իրենց նեղութեանը մէջ Իսրայէլի Տէր Աասուծոյն դարձան, ու զանիկա փնտռելով գտան։ **5**—եւ այն առեներէն երկրին ու մրնողին ապահովութիւն չկար. քանզի երկիրներուն բոլոր բնակիչներուն մէջ չատ խռովութիւններ կային. **6**—եւ ազգ ազգի հետ ու քաղաք քաղաքի հետ կը զսպնուէր. Աա զի Աասուած ամէն նեղութիւններով զարհուրեցուց զանոնք։ **7**—եւ հիմա դուք զօրացէք, ու ձեռքերնիդ չթուլնայ. Աա զի ձեր գործին վարձքը կայ։

8—Եւ Աա այս խօսքերը ու *Ովզեդ մարգարէին մարգարէութիւնը լսելով՝ զօրացաւ, և Ցուդայի ու Բենիամինի բոլոր երկրէն, ու Եփրեմի լեռնէն իր առած քաղաքներէն պղծութիւնները վերցուց, ու Տէրոջը գոմէջէն սրահին առջև եղող Տէրոջը սեղանը նորոգեց. **9**—Ե բոլոր Ցուդան ու Բենիամինը, ու Եփրեմի և Մանասէի ու Շմաւունէ անոնց քով գանուած պանդուխտները ժողվեց. քանզի Իսրայէլէ չատ մարդիկ անոր կողմը անցան, տեսնելով որ անոր Տէր Աասուածը անոր հետ է։ **10**—Ե անոնք Աասի Թագաւորութեանը տասնհինգերորդ տարւոյն երրորդ ամիսը Երուսաղէմի մէջ ժողվուեցան. **11**—Ու այն օրը իրենց բերած աւարէն Տէրոջը զոհ ըրին, հօթը հարիւր արջառ ու հօթը հազար ոչխար. **12**—Եւ ուխտ ըրին որ իրենց հայրերուն Տէր Աասուածը բոլոր սրտով ու բոլոր հոգիով խնդրեին։ **13**—Եւ ով որ Իսրայէլի Տէր Աասուածը չխնդրէ, Թէ՛ պզտիկ և Թէ՛ մեծ, Թէ՛ այր մարդ և Թէ՛ կին ըլլայ՝ մեռցուի։ **14**—Ու մեծ ձայնով և ցնծութեան աղաղակով ու փողերով ու չեփորներով Տէրոջը երդում ըրին։ **15**—Ե բոլոր Ցուդա այն երդումին վրայ ուրախացան. քանզի իրենց բոլոր սրտովը երդում ըրին, ու իրենց բոլոր կամքովը խնդրեցին՝ գտան զանիկա. ու Տէրը ամէն կողմանէ հանգստացուց զանոնք։

16—Ու Աա Թագաւորը իր *մայրը Մաաքան ալ սիրնաբեղէն հանեց, վասն զի անիկա Աասարովիթի կուռք չիներ էր. իսկ Աա անոր կուռքը կտրեց ու փչրեց, ու կեդրան հեղեղատին մէջ այրեց։ **17**—Բայց բարձր սեղերը Իսրայէլէ չվերցան. սակայն Աասի սիրտը իր կեանքին բոլոր օրերուն մէջ ուղիղ էր։ **18**-Ե իր հօրը նախրած ու իր նախրած բաներըզ արծաթը ու ասկին ու անօթները, Աասուծոյ տունը տարաւ։ **19**-Ու մինչև Աասի Թագաւորութեան երեսունհինգերորդ տարին պատերազմ չեղաւ։

Գլ. ԺԶ

Աասի Թագաւորութեան երեսունվեցերորդ տարին Իսրայէլի Բաասա Թագաւորը Ցուդայի դէմ եկաւ, ու Ռաման չինեց, որպէս զի Ցուդայի Աա Թագաւորին եկող մնող մէկը չթողու։ **2**—Ե Աա Տէրոջը տանը ու Թագաւորին տանը գանձերէն արծաթ ու ասիք հանեց, ու Դամասկոս բնակող Ասորոց Թագաւորին, Բենհադադ, զրկից՝ ըսելով՝ **3**—Իմ ու քու մէջտեղ, և իմ հօրս ու քու հօրդ մէջտեղ դաշնակցութիւն կայ. ահա քեզի արծաթ ու ասիք կը զրկեմ. եկուր, Իսրայէլի Բաասա Թագաւորին հետ ունեցած դաշնակցութիւնդ աւրէ, որպէս զի անիկա իմ վրաչէս ետ քաշուի։ **4**—Ու Բենհադադ Աա Թագաւորին խօսքը մտիկ ըրաւ. և իր զօրագլուխները Իսրայէլի քաղաքներուն վրայ զրկեց. ու Իյօնը, Դանը, Աբէլմայիմը ու Նեփթազիմի բոլոր շահմարանի

*Բառ. Լաթ. և Աասբ. Խութ. Ովզեդի արգասն Ազաբիա

*Աչխէնէն, մեծ մայրը. տես գ. Թագ. ԺԵ. 2, 10։

քաղաքները զարկին։ **5**—Ու Բաասա այս բանը լսելով՝ Ռաման չինելէն ետ կեցաւ, ու գործը դադրեցուց։ **6**—Ուստի Աա Թագաւորը բոլոր Ցուդան առաւ, ու Բաասայի չինած Ռամայի քարերը ու փայտերը վերցուցին. ու անոնցմով Գաբան ու Մասփան չինեց։

7—Ու այն առեն Անանի տեսանողը Ցուդայի Աա Թագաւորին եկաւ, ու անոր ըսաւ, Որովհետև դուն Ասորոց Թագաւորին ապաւինեցար, ու քու Տէր Աասուածդ չապաւինեցար, անոր համար Ասորոց Թագաւորին զօրքը քու ձեռքէդ ազատեցաւ։ **8**—Միթէ եթէովպացիք ու Լիբեացիք խիստ չատ կառքերով ու ձիաւորներով բազմաթիւ զօրք չէին. բայց որովհետև դուն Տէրոջը ապաւինեցար, զանոնք քու ձեռքդ մատնեց. **9**—Քանզի Տէրոջը աչքերը բոլոր երկիրը *կը դիտեն, որպէս զի իրեն ուղիղ սրտով չարդներդը ուժովցնէ. դուն այս բանին մէջ անմտութիւն ըրիր. ասկէ ետքը պատերազմներ պիտի ունենաս։ **10**—Եւ Աա այն տեսանողին սրդողեցաւ, ու զանիկա բանտը դրաւ. վասն զի այս բանին համար խիստ բարկացաւ անոր. ու այն առեն Աա ժողովուրդին մէկ քանիներ հարատահարեց։

11—Ե Աասի առաջին ու վերջին պատմութիւնը ահա Ցուդայի ու Իսրայէլի Թագաւորներուն գիրքին մէջ գրուած է։ **12**—Ե Աա իր Թագաւորութեանը երեսունիններորդ տարին ոտքի ցաւով հիւանդացաւ. ու անոր հիւանդութիւնը ծանրացաւ. և իր հիւանդութեանը մէջ ալ Տէրը չխնդրեց, հապա բժիշկները։ **13**—Ե Աա իր հայրերուն հետ քնացաւ, ու անիկա իր Թագաւորութեան քառասունըմիկերորդ տարին մեռաւ։ **14**—Ու զանիկա Դաւիթի քաղաքին մէջ իրեն համար փորած գերեզմանը Թաղեցին. և զանիկա խունկերով ու իւղագործի արուեստին զանազան բաղադրութիւններով լեցուն անկողնի մը մէջ պառկեցուցին, ու անոր վրայ խիստ չատ խունկ ծխեցին։

*Եբր. կը պառկին

Գլ. ԺԷ

Ե անոր տեղ անոր որդին Յովսափատ Թագաւոր եղաւ, ու իսրայէլի դէմ զօրացաւ։ **2**—Ե Ցուդայի ամէն պարսպաւոր քաղաքներուն մէջ զօրքեր դրաւ. Ցուդայի երկրին մէջ ու անոր հօրը Աասայի տասած եփրեմի քաղաքներուն մէջ բերդապահ զօրքեր դրաւ։ **3**—Ե Տէրը Յովսափատի հետ էր. քանզի անիկա իր հօրը Դաւիթի առաջուան ճամբաներուն մէջ քալեց, ու Բահաղիմ չփնտռեց։ **4**—Հապա իր հօրը Աասուածը փնտռեց, անոր պատուիրանքներուն մէջ քալեցաւ, և ոչ թէ Իսրայէլի ըրածին պէս ընթացաւ։ **5**—Ե Տէրը Թագաւորութիւնը անոր ձեռքին մէջ հաստատեց. ու բոլոր Ցուդա Յովսափատի բնծաներ կուտար, և անոր հարստութիւնը ու փառքը չատցաւ։ **6**—Ու անոր սիրտը Տէրոջը ճամբաներուն մէջ բարձրացաւ. և անիկա բարձր տեղերը ու Աասարովիթի կուռքերն ալ Ցուդայէ վերցուց։

7—Ե իր Թագաւորութեան երրորդ տարին իր իշխաններըն, Բենհոյիլը, Աբդիան, Զաքարիան, Նաթանայէլը ու Միքիան, զրկեց, որպէս զի Ցուդայի քաղաքներուն մէջ սորվեցնեն. **8**—Ե անոնց հետ էին Սեմայիա, Նաթանիա, Զաբադիա, Ասայէլ, Սեմիրամիթ, Յովնաթան, Ադոնիա, Տոբիա ու Տոբադոնիա Ղեւտացիները. նաև անոնց հետ՝ եղիսամա ու Յովրամ քահանաները։ **9**—Ու Ցուդայի մէջ կը սորվեցնէին, ու Տէրոջը օրինաց գիրքը անոնց հետ էր, և Ցուդայի ամէն քաղաքները կը պտըտէին ու ժողովուրդին կը սորվեցնէին։

10—Ե Ցուդայի բոլորտիքը եղող երկիրներուն բոլոր Թագաւորութիւնները վրայ Տէրոջը վախը իյնար. ու Յովսափատի հետ պատերազմ չբռնեն. **11**—Ե փղշտացիներէն ալ Յովսափատի բնծաներ ու հարկի ասակ կը բերէին. և Արաբացիներն ալ հօտերէն հօթը հազար հօթը հարիւր խոյ, ու հօթը հազար հօթը հարիւր նոխազ կը բերէին անոր։ **12**—Ե Յովսափատ երթալով խիստ մեծցաւ, ու Ցուդայի մէջ բերդեր ու չահմարանի քաղաքներ չինեց։ **13**—

եւ անկա Յուդայի քաղաքներուն մէջ շատ գործեր ունէր, ու երբ ադէմի մէջ զօրաւոր կռիւներ ու պատերազմ մղէին մարդիկ։ 14—եւ այս էր անոնց Քիւրը իրենց ազգատոհմներուն համեմատ. Յուդայի հազարապետները՝ Եդնա իշխան, ու անոր հետ երեք հարիւր հազար զօրաւոր կռիւներ։ 15—եւ անկէ ետքը Յոհանան իշխան, ու անոր հետ երկու հարիւր ութսուն հազար մարդիկ։ 16—եւ անկէ ետքը Զիքրիի որդին Ամասիա, որ Տէրոջը *ուխտատուրն էր, ու անոր հետ երկու հարիւր հազար զօրաւոր կռիւներ։ 17—Ու Բենիամինէ՝ զօրաւոր կռիւ Եղիադա, ու անոր հետ երկու հարիւր հազար պահպանուած ու ապաքաւոր մարդիկ։ 18—Ու անկէ ետքը Յովզաբադ, ու անոր հետ հարիւր ութսուն հազար պատրաստեալ մարդիկ։ 19—Ասոնք էին թագաւորին ծառայութիւն ընողները, բացի յն մարզպետներէն՝ զորոնք թագաւորը բոլոր Յուդայի պարսպաւոր քաղաքները մէջ դրաւ։

ԳԼ. ԻԸ

Ու Յովսափատ խիստ շատ հարստութիւն ու փառք ունեցաւ. և Աքաաբի հետ խնամութիւն րրաւ։ 2—Ու մէկ քանի տարիէն ետքը Սամարիա իջաւ Աքաաբի. և Աքաաբ անոր ու անոր հետ եղող ժողովուրդին խիստ շատ ոչխարներ ու արջառներ մորթեց, ու զանիկա համոզեց որ Ռամոթ-գաղաադ ելլէ։ 3—Ու Իսրայէլի Աքաաբ թագաւորը Յուդայի Յովսափատ թագաւորին րսաւ, Ինձի հետ Ռամոթ-գաղաադ կ'երթա՞ս. ու անոր անոր րսաւ, Ես քեզի պէս եմ, ու իմ ժողովուրդս քու ժողովուրդիդ պէս է. ու քեզի հետ պատերազմի կ'երթա՞ս։

4—Ու Յովսափատ Իսրայէլի թագաւորին րսաւ, Հիմա Տէրոջը խօսքը փնտռէ։ 5—Ու Իսրայէլի թագաւորը մարգարէները ժողվեց, որոնք չորս հարիւր հոգի էին, ու անոնց րսաւ, Ռամոթ-գաղաադ վրայ պատերազմելու երթա՞նք, թէ ետ կենամ. ու անոնք րսին, Գնա. Աստուած զայն Արքային ձեռքը պիտի տայ։ 6—Ու Յովսափատ րսաւ, Այս տեղ Տէրոջը ուրիշ մարգարէն ալ չկա՞յ, որմէ զի անոր հարցնենք։ 7—Ու Իսրայէլի թագաւորը Յովսափատի րսաւ, Կայ ուրիշ մարդ մը այրուձիով, Յոզեվէլ Յեհոնէի Տէրոջը հարցնել, բայց ես զանիկա կ'ատեմ, քանզի բնաւ հաճոյ ազէկ մարգարէութիւն չըներ, հապա միշտ գէշ. անիկա Յեհոյի որդին Միքիա է։ Ու Յովսափատ րսաւ, Թագաւորը այդպէս չդրուցէ։

8—Ու Իսրայէլի թագաւորը ներքինի մը կանչեց, ու րսաւ, Յեհոյի որդին Միքիան չուտով հոս բեր։ 9—Ու Իսրայէլի թագաւորը ու Յուդայի Յովսափատ թագաւորը, Սամարիոյ դրանը առջեւի հրապարակին մէջ, ամէն մէկը իր գահոյքին վրայ նստեր էը. ու բոլոր մարգարէները անոնց առջեւ մարգարէութիւն կ'ընէին։ 10—Ու Քանանայի որդին Սեդեկիա իրեն երկաթէ եղջիւրներ չինեց, ու րսաւ, Տէրը այսպէս կ'րսէ. Ասորիները ասոնցմով պիտի զարնես, մինչև որ զանոնք բնաւիրնչ ընես։ 11—Բոլոր մարգարէներն ալ այնպէս կը մարգարէանային ու կ'րսէին, Ռամոթ-գաղաադ ելլէր, ու յաջողութիւն պիտի ունենաս, և Տէրը Արքային թագաւորին ձեռքը պիտի տայ։

12—Ու Միքիան կանչելու գացող մարդը խօսեցաւ անոր՝ րսելով, Ահա մարգարէները մէկ բերնով թագաւորին համար բարութիւն խօսկցան. Քու խօսքդ ալ անոնց մէկուն խօսքին պէս րլլայ, ու բարութիւն խօսէ։ 13—Իսկ Միքիա րսաւ, Տէրը կենդանի է որ իմ Աստուածս ինչ որ րսէ, զայն պիտի խօսիմ։

14—Ու երբ անիկա Թագաւորին եկաւ, Թագաւորը անոր րսաւ, Ով Միքիա, Ռամոթ-գաղաադ պատերազմելու երթա՞նք, Թէ ետ կենամ։ Ու անիկա րսաւ, Ելէք, ու յաջողութիւն պիտի ունենաք. ու ձեր ձեռքը պիտի տրուին։ 15—Ու Թագաւորը անոր րսաւ, Մինչև քանի՞ անգամ երդմնցնեմ քեզ, որպէս զի Տէրոջը անունովը ճշմարիտը միայն խօսիս ինձի։ 16—Ու անիկա րսաւ, Բոլոր Իսրայէլը հովիւ չունեցող ոչխարներու պէս լեռներու վրայ ցրուած տեսայ. և Տէրը րսաւ, Աստոնք տէր չունին. ամէն մարդ խաղաղութեամբ Թող իր տունը դառնայ։ 17—Ու Իսրայէլի Թագաւորը Յովսափատի րսաւ, Ինչի չըսի՞ որ անիկա ինձի համար ազէկ մարգարէութիւն չըներ, հապա գէշ։ 18—Ու Միքիա րսաւ, Ուրեմն Տէրոջը խօսքը մանկ րրէք. Տէրը իր աթոռին վրայ նստած տեսայ, ու երկինքի բոլոր զօրքերը անոր ալ կողմն ու ձախ կողմը կայներ էին։ 19—Ու Տէրը րսաւ, Իսրայէլի Աքաաբ Թագաւորը ելլայ կռնայ խաղայ, որպէս զի Ռամոթ-գաղաադ ելլէ, ու կոտուի. և մէկը այսպէս՝ ու միւսը այնպէս րսաւ։ 20—Ու ոգի մը ելաւ և Տէրոջը առջեւ կայնեցաւ, ու րսաւ, Զանիկա ես կը խաբեմ. Ու Տէրը անոր րսաւ, Ի՞նչ միջոցով։ 21—Ու անիկա րսաւ, Ելլեմ, ու անոր բոլոր մարգարէներուն բերանը սուտ ոգի րլլամ. և Տէրը ՝ըսաւ, Դուն պիտի խաբես ու պիտի յաջողիս. ելիր ու այնպես րրէ։ 22—Ու հիմա ահա Տէրը այս քու մարգարէներուդ բերանը սուտ ոգի դրեր է. բայց Տէրը քեզի համար չարիք խօսեցաւ։

23—Այն ատեն Քանանայի որդին Սեդեկիա մտեցաւ, ու Միքիայի ծնօտին զարկաւ, ու րսաւ, Տէրոջը Հոգին ի՞նչպես իմ քովէս ելաւ՝ քեզի հետ խօսելու համար։ 24—Ու Միքիա րսաւ, Դուն ալ պիտի տեսնես այն օրը որ պահուելու համար անեղակի սենեակ մտնես։

25—Ու Իսրայէլի Թագաւորը րսաւ, Միքիան առէք, ու զանիկա Ամոն քաղաքապետին և Թագաւորի որդւոյն Յովսի տարէք, 26—Ու րսէք, Թագաւորը այսպէս կ'րսէ. Ասիկա բանտը դրէք. ու մինչև որ ես խաղաղութեամբ դառնամ, զանիկա նեղութեան հացով ու նեղութեան ջրով կերակրեցէք։ 27—Ու Միքիա րսաւ, Եթէ երբեք խաղաղութեամբ դառնաս, Տէրը ինծմով խօսած չըլլայ. ու րսաւ, Ով ժողովուրդներ, ամէնդ ալ լսեցէք։

28—Ու Իսրայէլի Թագաւորը ու Յուդայի Յովսափատ Թագաւորը Ռամոթ-գաղաադ ելան։ 29—Ու Իսրայէլի Թագաւորը Յովսափատի րսաւ, Կերպարանքս պիտի փոխեմ, ու այնպէս պատերազմի պիտի մտնեմ. բայց դուն քու հագուստդ հագիր. և Իսրայէլի Թագաւորը իր կերպարանքը փոխեց, ու պատերազմին մէջ մտան։ 30—Ու Ասորւոց Թագաւորը իր կառապետներուն պատուիրեց ու րսաւ, Զպահկի կամ մեծի հետ մի պատերազմիք, բայց միայն Իսրայէլի Թագաւորին հետ։ 31—Ու երբ կառապետները Յովսափատը տեսան, Իսրայէլի Թագաւորը ասիկա է՝ ըսելով, անոր վրայ պատերազմելու գացին. և Յովսափատ աղաղակեց. ու Տէրը անոր օգնեցաւ եւ Աստուած զանոնք անկէ դարձուց։ 32—Ու երբ կառապետները տեսան որ անկից Իսրայէլի Թագաւորը չէ, անկէ ետ դարձան։ 33—Ու մարդ մը *տանից դիպեցաւ՝ իր պզոյզ փայտից, ու Իսրայէլի Թագաւորը †զրահին օգնկերան մէյնի՝ զարկաւ. այն տան անկիա իր կառավարին րսաւ, Ձեռքդ դարձը ու զիս բանակէն հանէ, քանզի վիրաւորեցայ։ 34—Ու այն օրը պատերազմը ատակացաւ. ու Իսրայէլի Թագաւորը մինչև իրիկուն Ասորւոց դիմաց իր կառքին մէջ կեցաւ, ու արեւուն մտած տանը մեռաւ։

ԳԼ. ԻԹ

Ու Յուդայի Յովսափատ Թագաւորը խաղաղութեամբ Երուսաղէմ իր տունը դարձաւ։ 2—Ու Անանիի որդին Եհու տեսանողը անոր դիմաց ելաւ, ու Յովսափատ Թագաւորին րսաւ, Պէ՞տք էր որ ամբարիշտին օգնէիր, ու Տէրը ատելները սիրէիր. ահա սոսր համար Տէրոջը երեսէն քու վրադ բարկութիւն կայ։ 3—Բայց քու վրադ բարի բաներ գրտնուեցան. քանզի Աստարովթի կուռքերը երկրէն քանդեցիր րրէիր, ու քու սիրտդ զԱստուած խնդրելու պատրաստեցիր։

4—Ու Յովսափատ Երուսաղէմի մէջ կը բնակէր. ու նորէն ելաւ. Ժողովուրդին մէջ պտըտեցաւ, Բերսաբեէն մինչև Եփրեմի լեռը, ու զանոնք իրենց Տէր Աստուածին դարձուց։ 5—Ու երկրին մէջ քաղաք քաղաք դատաւորներ դրաւ, Յուդայի ամէն պարսպա-

*Կամ, ուժով մը

†Եբր. յօդուածներուն ու զրահին միջեւ

ւոր քաղաքներուն մէջ, 6—եւ գաղաւարներուն բաւ, նայեցէք ի՛նչ կ՚ընէք քանզի ձեր տեսնելու դատաստանը մարդու չվերաբերիր, հապա Տէրոջը՝ որ դատաստանի մէջ ձեզի հետ է. 7—Ուրեմն Տէրոջը վախը ձեր վրայ ըլլայ. զգուշութեամբ բան տեսէք. քանզի մեր Տէր Աստուծոյն քով անիրաւութիւն, ազգաւթիւն ու կաշառք առնել չկայ։

8—Եւ Յոսափատ Երուսաղէմի մէջ ալ Ղեւտացիներէն ու քահանաներէն ու Իսրայէլի նահապետներէն դրաւ՝ Տէրոջը իրաւունքին համար ու դատերու համար. ու Երուսաղէմ դարձան։ 9—Ու անոնց պատուէր տուաւ ու ըսաւ, Այսպէս ընէք Տէրոջը վախով, հաւատարմութեամբ և ուղիղ սրտով։ 10—Ու երբ իրենց քաղաքներուն մէջ բնակող ձեր եղբայրներէն գաւ մը գայ ձեր առջև՝ Ե՛ւ արեան և արեան միջեւով, Ե՛ւ օրէնքի ու պատուիրանքի միջեւով, Ե՛ւ կանոններու ու դատաստաններու միջեւով, անոնց խրատ տուէք, որ Տէրոջը դէմ յանցանք չգործեն. որպէս զի ձեր վրայ ու ձեր եղբայրներուն վրայ բարկութիւն չգայ. այսպէս ըրէք որպէս զի յանցաւոր չըլլաք։ 11—Ու ահա Տէրոջը ամէն գործին համար Ամարիա մեծ քահանան ձեր վրայ ---ընդ է, ու Թագաւորին ամէն գործին համար Ծուդայի տանը իշխանը Իսմայէլի որդին Զաբադիա, ու ձեր առջեւէն Ղեւտացիները ասպիկաններ են. զօրացէք ու այնպէս ըրէք, և Տէրը բարիին հետ ըլլայ։

Գլ. Ի

Ետ ասկէ եղաւ Մոաբի որդիները ու Ամմոնի որդիները, ու անոնց հետ Ամմոնացիներէն ալ Յոսափատի վրայ պատերազմելու եկան։ 2—Ուստի գացին, ու Յոսափատի պատմեցին ու ըսին, Քու վրադ Ծովուն անդիի կողմէն Ասորւոց մէկէն մեծ բազմութիւն կու գայ. և ահա անոնք Ասասոնթամարի (այսինքն Ենգադդիի) մէջ են։ 3—Ու Յոսափատ վախցաւ, ու Տէրը փնտռելու *եաեւէ եղաւ՝. և բոլոր Ծուդայի մէջ Ծոմապահութիւն քարոզեց։ 4—Ու Ծուդայեանք ժողովեցան որպէս զի Տէրոջմէ *ջնուխ խնդրեն. ու Ծուդայի բոլոր քաղաքներէն ալ Տէրը խնդրելու եկան։ 5—Ու Յոսափատ, Տէրոջը տանը մէջ նոր գաւիթին առջև, Ծուդայի ու Երուսաղէմի ժողովրդին մէջ կայնեցաւ, 6—Ու ըսաւ, Ով մեր հայրերուն Տէր Աստուածը, դուն այն Աստուածը չի՞ս որ երկինքը կը բնակիս, ու բոլոր ազգաց թագաւորութիւններուն վրայ կը տիրես, և քու ձեռքիդ մէջ այնպիսի զօրութիւն և ոյժ մը կայ, որ բնաւ մէկը չկրնար քեզի դէմ դնել։ 7—Չի՞ որ դուն, ով մեր Աստուածը, այս երկիրին բնակիչները քու Իսրայէլ ժողովրդիդ առջեւէն վռնտեցիր, ու զանիկա յաւիտեան քու սիրելիիդ, Աբրահամի, սերունդին տուիր։ 8—Ու անոնք հոն բնակեցան, ու հոն քու անունդ համար քեզի սրբարան մը շինեցին, ու ըսին, 9—Եթէ մեր վրայ չարիք, սուր, դատաստան, ժանտախտ, կամ սով գայ, մենք այս տանը առջև ու քու առջեւդ կայնինք, (վասն զի այս տանը մէջ քու անունդ կայ,) ու մեր նեղութեան առածնէդ քեզի աղաղակենք, այն ատեն լսես ու ծէշ ազատես։ 10—Ու հիմա ահա Ամմոնի ու Մոաբի որդիները, ու Սէիր լեռանը բնակիչները, որոնց մէջ մտնելու հրաման չտուիր Իսրայէլի որդիներուն իրենց Եգիպտացի երթալնէն, հապա անոնցմէ խոտորեցան, ու զանոնք չկորնչցուցին, 11—Ահա անոնք մեզի հատուցումի ընելու համար՝ կու գան մեզ վռնտելու քու ժառանգութենէդ զոր մեզի տուիր։ 12—Ով մեր Աստուածը, անոնց դատաստան չի՞ս ըներ. քանզի մեր վրայ եկող այս մեծ բազմութեանը դէմ դնելու զօրութիւն չունինք, ու չենք գիտեր ի՛նչ ընելու ենք. հապա մեր աչքերը քու վրադ են։ 13—Ու բոլոր Ծուդայեանք իրենց ընտանիքներովը կիներովը ու տղաքներովը Տէրոջը առջև կայներ էին։

*Ըստ ոմանց Խաբէ. Սրտաւորմի բնաւկիչները գաւերու համար՝

†Կամ, Մոաւացիներէն. տես հմր. 10, և Գլ. իզ. 7։

*Եբր. երեսը դրաւ։

14—Ան ատեն Ասափի որդիներէն Ղեւտացի Մաթանիայի որդւոյն Յեհիէլի որդւոյն Բանեայի որդւոյն Զաքարիայի որդւոյն Ասպհէլի վրայ Տէրոջը Հոգին եկաւ ժողովին մէջ։ 15—Ու անիկա ըսաւ, Ով բոլոր Ծուդա ու Երուսաղէմի բնակիչներ, ու դուն, Յոսափատ թագաւոր, մտիկ ըրէք. Տէրը ձեզի այսպէս կ՚ըսէ. Դուք մի վախնաք, ու այս մեծ բազմութեանը երեսէն մի զարհուրիք. քանզի պատերազմը ձերը չէ, հապա Աստուծոյ է։ 16—Վաղը անոնց վրայ իջէք. ահա անոնք Ասիսի զառ ի վերը պիտի ելլեն. ու զանոնք հեղեղատի ծայրը, Յերուէլի անապատին առջև, պիտի գտնէք։ 17—Այս դ---ջ---ին մէջ դուք պիտի չպատերազմիք. դուք երեցէք ու կայնեցէք, որպէս զի Տէրոջը ձեզի ըրած փրկութիւնը տեսնէք, ով Ծուդա ու Երուսաղէմ. մի վախնաք ու մի զարհուրիք. վաղը անոնց դիմաց ելէք, ու Տէրը ձեզի հետ պիտի ըլլայ։ 18—Ան ատեն Յոսափատ երեսը գետինը ծռեց. ու բոլոր Ծուդա ու Երուսաղէմի բնակիչները Տէրոջը առջև երեսի վրայ իյնալով, ու Տէրոջը երկրպագութիւն ըրին։ 19—Ու Կահաթացոց որդիներէն ու Կորհացոց որդիներէն եղող Ղեւտացիները Իսրայէլի Տէր Աստուածը խիստ բարձր ձայնով օրհնելու ելան։

20—Ու առաւօտուն կանուխ ելան, ու Թեկուէի անապատը գացին. ու անոնց երթալուն առեջը Յոսափատ կայնեցաւ, ու ըսաւ, Ով Ծուդա ու Երուսաղէմի բնակիչներ, ինձի մտիկ ըրէք. ձեր Տէր Աստուծոյն հաւատացէք, ու ապահով պիտի ըլլաք. անոր մարգարէներուն հաւատացէք, ու յաջողութիւն պիտի ունենաք։ 21—Ու ժողովուրդին հետ խորհուրդ ըրաւ, ու Տէրոջը երգեցողները որոշեց, որպէս զի զօրքին առջեւէն ելլեն, ու Տէրոջը սուրբ փառքը օրհնեն ու ըսեն, Գոհացէք Տէրոջմէն, վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է։

22—Ու երբ անոնք ցնծութեան երգը ու օրհնութիւնը սկսան, Ծուդայի վրայ եկող Ամմոնի ու Մոաբի որդիներուն ու Սէիր լեռանը բնակիչներուն դէմ Տէրը դարանակալներ հանեց. և անոնք կոտրուեցան։ 23—Քանզի Ամմոնի ու Մոաբի որդիները Սէիր լեռանը բնակիչներուն վրայ ելան, որպէս զի ջնջեն ու բնաւինջ ընեն. ու երբ Սէիր բնակիչները հատուցին, մէկզմէկ կոտրելու եկան։ 24—Ու Ծուդայեանք անապատին մէկ եզր դիտացոցը հասնելով, այն բազմութեանը նայեցան, և ահա անոնց դիերը գետնի վրայ փռուած էին, ու ազատուած մը չկար։ 25—Ան ատեն Յոսափատ ու անոր ժողովուրդը անոնց աւարը ժողվելու գացին. ու դիերուն մէջ շատ ապրանք ու պատուական ամաններ գտան, ու իրենց համար կողոպտեցին, մինչև որ ալ չէին կրնար տանիլ. ու աւարը երեք օր ժողվեցին, վասն զի էր-ոտ շատ էր։

26—Ու չորրորդ օրը Օրհնութեան հովիտը ժողվուեցան, քանզի հոն Տէրը օրհնեցին. անոր համար այն տեղին անունը Օրհնութեան հովիտ կոչեցին մինչև այսօր։ 27—Ու բոլոր Ծուդայի ու Երուսաղէմի մարդիկը ու անոնց առաջնորդը Յոսափատ ուրախութեամբ Երուսաղէմ դարձան. քանզի Տէրը զանոնք իրենց թշնամիներէն ուրախացուցեր էր։ 28—Ու տաւիղներով, քնարներով ու փողերով Երուսաղէմ Տէրոջը տանը գացին։ 29—Ու ամէն երկիրներուն թագաւորութիւնները վրայ Աստուծոյ վախը բնկաւ, երբ լսեցին որ Տէրը Իսրայէլի թշնամիներուն հետ պատերազմեցաւ։ 30—Ու Յոսափատի թագաւորութիւնը խաղաղ էր. ու անոր Աստուածը զանիկա ամէն կողմանէ հանգստացուց։

31—Ու Յոսափատ Ծուդայի վրայ թագաւորութիւն բրաւ. երեսունհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու քսանհինգ տարի Երուսաղէմի մէջ թագաւորեց. և անոր մօրը անունը Ազուբա էր, ու Սալհի աղջիկն էր։ 32—Ու անիկա իր հօրը Ասայի ճամբուն մէջ քալեց, ու անկէ չխոտորեցաւ՝ Տէրոջը առջև ուղղութիւն ընելով, 33 — Բայց բարձր տեղերը չվերցուն. ու ժողովուրդը տակաւին սիրտերնին չէին հնակած իրենց հայրերուն Աստուծոյն։ 34—Ու Յոսափատի միւսորդ պատմութիւնը, առաջինը ու վերջինը, ահա Իսրայէլի թագաւորներուն գիրքին մէջ յիշուած

Ամանիի որդւոյն Ցեւալ պատմեցեալոյն մէջ գրուած է։

35—Եւ ասիկ եղաք Յուդայի Յովսափատ Թագաւորը՝ չարութիւն ընող Իսրայէլի Ոգոզիա Թագաւորին հետ միաբանեցաւ, 36—Ու անոր հետ ընկերութիւն ըրաւ, որպէս զի Թարսիս երթայու նաւեր չինեն. ու Գասիոնգաբերի մէջ նաւեր չինեցին, 37—Եւ Մարիսացի Դոդիայի որդին Եղիազար Յովսափատի վրայ մարգարէութիւն ըրաւ, ու ըսաւ, Որովհետեւ դուն Ոգոզիայի հետ ընկերացար, Տէրը քու գործդ ապրեց։ Ու նաւերը խորտակեցան, ու չկրցան Թարսիս երթալ։

Գլ. ԻՆ.

Եւ Յովսափատ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջ Թաղուեցաւ. և անոր տեղ անոր որդին Յովրամ Թագաւոր եղաւ։ 2—Ու անոր եղբայրները, Յովսափատի որդիները, Ազարիա, Եհիէլ, Զաքարիա, Ազարիա, Միքայէլ ու Սափատիա էին. ասոնք ամէնը Իսրայէլի Թագաւորին Յովսափատի որդիներն էին։ 3—Ու անոնց հայրը արծաթ ու ոսկի ու թանկագին բաներ, շատ պարգեւներ, ուստա անոնց, նաև Յուդայի մէջ պարսպապատ քաղաքներ, բայց Թագաւորութիւնը Յովրամի տուաւ, քանի անդրանիկը ան էր։ 4—Ու երբ Յովրամ իր հօրը Թագաւորութեան աթոռը նրաստաւ ու զօրացաւ, իր բոլոր եղբայրները ու Իսրայէլի իշխաններէն մէկ քանիները սրով մեռցուց։

5—Յովրամ երեսուներկու տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ ութ տարի Թագաւորութիւն ըրաւ։ 6—Ու անիկա Աքաաբի տանը ըրածին պէս Իսրայէլի Թագաւորներուն ճամբուն մէջ քալեց, (քանի Աքաաբի աղջիկը անոր կինն էր,) ու Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ։ 7—Բայց Տէրը, Դաւիթի հետ ըրած ուխտին համար, և անոր ու անոր որդիներուն միշտ ճրագ մը տալու խոստումնալին համար, Դաւիթի տունը կորնչցնել չուզեց։

8—Անոր օրերը եդոմացիք Ցուդայի ձեռքին տակէն ապստամբեցան, ու իրենց վրայ Թագաւոր մը դրին։ 9—Ու Յովրամ իր իշխաններովը ու բոլոր կառքերովը գնաց, ու գիշերով ելաւ, և իր շրջապատող եդոմացիները ու կառքերու իշխանները զարնաւ։ 10—Բայց եդոմացիք Ցուդայի ձեռքին տակէն ապստամբեցան մինչեւ այսօր. այն ատեն Լիբնա ալ անոր ձեռքին տակէն ապստամբեցաւ, քանի որ անիկա իր հայրերուն Տէր Աստուածը Թողեցեր էր։ 11—Անիկա Ցուդայի լեռներուն վրայ բարձր տեղեր ալ չինեց. ու Երուսաղէմի բնակիչները պոռնկութիւն ընել տուաւ, և Ցուդան գլխէ հանեց։

12—Ու եղիա մարգարէէն անոր Թուղթ եկաւ, որ կ'ըսէր, Քու հօրդ Դաւիթի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Որովհետեւ քու հօրդ Յովսափատի ճամբաներէն, ու Ցուդայի Ասա Թագաւորին ճամբաներէն չգնացիր, 13—Հապա Իսրայէլի Թագաւորներուն ճամբաներէն գնացիր, և Ցուդան ու Երուսաղէմի բնակիչները պոռնկութիւնն ընել տուիր, ու նաև քեզմէ աղեկ եղող եղբայրներդ, քու հօրդ *որդիները, մեռցուցիր, 14—Ահա Տէրը քու ժողովուրդդ, քու որդիներդ ու կիներդ, և քու բոլոր ստացուածդ մեծ հարուածով պիտի զարնէ. 15—Ու դուն չարաչար պիտի հիւանդանաս փորի հիւանդութիւնով, մինչեւ որ փորոքիդ դուրս պիտի գայ ձեռքին տակէն հիւանդութեան պատճառաւ, որ օրէ օր պիտի սաստկանայ։

16—Ու Տէրը Յովրամի դէմ գրգռեց փղշտացիները, ու Եթիովպացւոց մօտերը բնակող Արաբացիները. 17—Ու անոնք Ցուդայի վրայ ելան ու զանիկա †կողոպտեցին. և Թագաւորին տանը մէջ գտնուած բոլոր ստացուածքը, ու անոր որդիները ու կիներն ալ քշեցին տարին. ու անոր որդիներէն միայն անոր պզտիկ որդին Յովաքազ մնաց։

18—Եւ այս բոլոր բաներէն ետքը՝ Տէրը զանիկա այնպիսի փորոքիքի հիւանդութեամբ մը զարկաւ, որ անբժշկելի եղր։ 19—Ու շատ մը օրերէն ետքը, այսինքն երկու տարիի չափ ժամանակ անցնելէն ետքը, իր հիւանդութենէն փորոքիքը դուրս թափեցաւ, ու չարաչար հիւանդութիւնով մեռաւ. Եւ ժողովուրդը անոր վրայ խունկ չթափեցին, ինչպես անոր հայրերուն վրայ ըրեր էին։ 20—Անիկա Թագաւոր եղած ատենը երեսուներկու տարեկան էր. և ութ տարի Երուսաղէմի մէջ Թագաւորութիւն ըրաւ. և անիկա †մեռաւ առանց future ափսոս ըլլալուն*. ու զանիկա Դաւիթի քաղաքին մէջ Թաղեցին, բայց ոչ թէ Թագաւորաց գերեզմաններուն մէջ։

Գլ. ԻԲ

Ու Երուսաղէմի բնակիչները անոր տեղ անոր պզտիկ որդին Ոգոզիան Թագաւոր ըրին. քանզի Աբաբացւոց հետ բանակը եկող գունդերը բոլոր մեծերը մեռցուցեր էին. այսպէս Ցուդայի Յովրամ Թագաւորին որդին Ոգոզիա Թագաւորեց։ 2—Ոգոզիա †քսաւսանուերկու տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ մէկ տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Գոթոդիա էր, ու Ամրիի աղջիկն էր։ 3—Անիկա ալ Աքաաբի տանը ճամբաներուն մէջ քալեց. քանզի անոր մայրը չարութիւն ընելու խորհուրդ կուտար անոր։ 4—Ու անիկա Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ Աքաաբի տանը պէս. վասն զի իր հօրը մեռնելէն ետքը անոնք էին իր խորհրդականները՝ իր կործանման համար։ 5—Ու անոնի անոնց խորհրդովը գնաց, ու Աքաաբեան Յովրամին, Իսրայէլի Թագաւորին, հետ Ասորւոց Ազոխէլ Թագաւորին վրայ Ռամոթ-գաղաադ պատերազմելու գնաց. ու Ասորիները Յովրամը զարկին։ 6—Ու անիկա դարձաւ որպէս զի Յեզրայէլի մէջ բժշկուի այն վէրքերէն զորոնք Ասորիները անոր տուեր էին †Ռամաթի մէջ, Ասորւոց Ազոխէլ Թագաւորին հետ պատերազմ ըրած ատենը. ու Ցուդայի Թագաւորը Յովրամի որդին *Ազարիա Յեզրայէլ իջաւ՝ Աքաաբի որդին Յովրամը տեսնելու, վասն զի անիկա հիւանդ էր։ 7—Ու Ոգոզիայի կործանումը Աստուծմէ եղաւ՝ Յովրամի գալ երթալովը. վասն զի երբ անիկա հոն գնաց, Յովրամի հետ Նամեսեան Ցեհուն դիմաւորելու ելաւ, զոր Տէրը օծեր էր Աքաաբի տունը բնաջինջ ընելու համար։ 8—Ու երբ Ցեհու Աքաաբի տանը վրայ Աստուածային վճիռը ի գործ կը դնէր, Ցուդայի իշխանները և Ոգոզիայի ծառայութիւն ընող Ոգոզիայի եղբօրորդիները գտաւ, ու զանոնք մեռցուց։ 9—Ու Ոգոզիան ալ փնտռեց, որ Սամարիայի մէջ պահուած էր. ու զանիկա բռնեցին և Ցեհուի բերելով մեռցուցին, ու զանիկա Թաղեցին, քանզի ըսին, Անիկա Տէրը բոլոր սրտով խնդրող Յովսափատի որդին է։ Ու Ոգոզիայի տունէն Ղեւկար որ Թագաւորութիւնը պահելու կարող ըլլար։

10—Իսկ Ոգոզիայի մայրը Գոթոդիա իր որդւոյն մեռնիլը տեսնելով՝ ելաւ, ու Ցուդայի տանը բոլոր Թագաւորական սերունդը բնաջինջ ըրաւ։ 11—Բայց Թագաւորին աղջիկը Յոսաբեէ Ոգոզիայի որդին Յովսը առաւ, ու Թագաւորին սպանուած որդիներուն միջէն գողցաւ զանիկա, և անոր դայեակին հետ անկողիններու սենեակին մէջ դրաւ զանիկա. ու այսպէս Յովրամ Թագաւորին աղջիկը, Յովհադա քահանային կինը Յոսաբեէ, Ոգոզիայի քոյրը ըլլալով՝ Գոթոդիայի երեսէն պահեց, որ զանիկա չմեռցուցէ։ 12—Եւ Ցեհու անոնց հետ վեց տարի Աստուածոյ տանը մէջ պահուեցաւ. ու երկրին վրայ Գոթոդիա Թագաւորութիւն կ'ընէր։

Գլ. ԻԳ

Ու եօթներորդ տարին Յովհադա ուժովցաւ, դաշնադրութիւնը իրեն հետ առնելով հարիւրապետները, Ցեհրամի որդին Ազարիան, և Յոհանանի որդին

*Եբր. առանց փոխաբի գնաց
†Իսկ Աստ. Ն Աբբ. Խոբէ. քսանուերկու. տես նաև դ Թագ. ը. 26։
‡Եբր. Ռամայի

*Կամ, Ոգոզիա. հմր. 1. Ն ֆամ, Յովսաբադ. Գլ. իա. 17։

իսմայելը, ու Ովբէդի որդին Ազարիան, և Ադայիայի որդին Մաասեան, ու Զիքրիի որդին Եղիասափաթ։ 2—Եւ անոնք Յուդայի մէջ պարեցան, ու Յուդայի ամէն քաղաքներէն Դաւիթներ ու Իսրայէլի առհասարակ իշխաններ Ժողվեցան, ու Երուսաղէմ եկան։ 3—Եւ բոլոր Ժողովքը Աստուծոյ տանը մէջ Թագաւորին հետ դաշնակցութիւն ըրին. ու Յեհոնադաբ անոնց ըսաւ, Ահա Թագաւորին որդին Թագաւոր պիտի ըլլայ, ինչպէս Տէրը Դաւիթի որդիներուն համար ըսաւ։ 4—Ձեր ընելու բանը այս է. Ձեր երրորդ մասը, Քէ՛ քահանաներն և Քէ՛ Ղեւտացիներէն, չաբաթ օրը մտնողներդ, դռներուն պահպանութիւնը ընեն. 5—Ու Ձէր երրորդ մասը Թագաւորին տունը, ու երրորդ մասը հիման դուռը ըլլան. բայց բոլոր Ժողովուրդը Տէրոջը տանը գաւիթներուն մէջ կ՚ըլլէ։ 6—Իսկ Տէրոջը տունը՝ քահանաներէն ու ծառայութիւն ընող Ղեւտացիներէն զատ ոբէն մարդ չմտնէ. անոնք Թող մտնեն, քանզի անոնք սուրբ են. և բոլոր Ժողովուրդը Տէրոջը պահպանութիւնը պահեն։ 7—Ու Ղեւտացիք ամէն մարդ իր զէնքը ձեռքը բռնած՝ Թագաւորին բոլորտիքը կայնին, ու ոտնը մտնողը մեռցուի. և Թագաւորին հետ ըլլաք անոր մտած ատեններ։ 8—Ու Ղեւտացիք ու բոլոր Յուդա Ժողովուրդը քահանայից բոլոր պաշտօնութիւնը ըրին, ու ամէն մէկը իր մարդիկը առաւ, Քէ՛ չաբաթ օրը մտնողները և Քէ՛ չաբաթ օրը ելլողները. քանզի Ժողովուրդ քահանան դասակարգութիւնները չարձակեց։ 9—Եւ Ժողովուրդ քահանան Դաւիթ Թագաւորին նիզակները, ասպարները ու վահանները, որոնք Աստուծոյ տանը մէջ էին, հարիւրապետներուն տուաւ։ 10—Եւ բոլոր Ժողովուրդը, ամէն մարդ իր զէնքը ձեռքը, սանր ալ կողմին մինչև ձախ կողմը, սեղանին ու տանը քով Թագաւորին բոլորտիքը կայնեցուցին։ 11—Եւ Թագաւորին որդին հանեցին, ու անոր վրայ գրին Թագը ու վկայութիւնը, ու զանիկա Թագաւոր ըրին. և Յողիադա ու անոր որդիները զանիկա օծեցին, ու ըսին, կեցցէ արքայ։

12—Իսկ Գոթողիա, լսելով Ժողովուրդին ձայնը, որոնք կը վազէին ու Թագաւորը կ՚օրհնէին, Տէրոջը տունը Ժողովուրդին եկաւ։ 13—Ու տեսաւ որ ահա Թագաւորը իր սիւնին քով էր՝ մուտքը կայներ էր, և զբօսականները ու փողերը Թագաւորին քով էին, ու երկրին բոլոր Ժողովուրդը ուրախանալով՝ փողեր կը հնչեցնէին ու երգեցողները երգի նուագարաններով ու Ժամանակներուն օրհնութիւններ կ՚ներգեին, այն ատեն Գոթողիա իր հագուստները պատռեց, ու ըսաւ, Դաւաճանու՛թիւն է, դաւաճանու՛թիւն։ 14—Ու Յողիադա քահանան զօրքին վրայ եղող հարիւրապետները հանեց, ու անոնց ըսաւ, Ասկից կարգերուն միջէն հանեցէ՛ք, ու սուր եաւէն գացողը սրով մեռցուի։ (քանզի քահանան ըսեր էր, Զանիկա Տէրոջը տանը մէջ մի մեռցընէ՛ք։) 15—Եւ անոր վրայ ձեռք բերին երկնցուցին ու երբ անիկա Թագաւորական տանը ձիերու դռնէն ներս կը մտնէր, զանիկա հոն մեռցուցին։

16—Եւ Յողիադա իրեն ու բոլոր Ժողովուրդին ու Թագաւորին միջնեղ դաշնակցութիւն ըրաւ, որպէս զի Տէրոջը Ժողովուրդը ըլլան։ 17—Եւ բոլոր Ժողովուրդը Բահաղի տանը գնաց, ու զանիկա կործանեցին, և անոր սեղանները ու կուռքերը կոր կոր ըրին, ու Բահաղի քուրմը, Մաթթանը սեղաններուն առջև սպաննեցին։ 18—Եւ Յողիադա Ղեւտացի քահանաներուն ձեռքով Դաւիթի Տէրոջը տանը վրայ որոշած Տէրոջը տանը պաշտօնականները դրաւ, որպէս զի Մովսէսի օրէնքին մէջ գրած է՝ Տէրոջը ողջակէզներ մատուցանեն ուրախութեամբ ու երգով, ինչպէս Դաւիթի սահմաներ էր։ 19—Ու դռնապանները Տէրոջը տանը դռները կայնեցուց, որպէս զի ինչևիցէ կերպով անմաքուր եղող չ՚ըլլայ մը չմտնէ։ 20—Ու անիկա հարիւրապետները ու ազնուականները և Ժողովուրդին իշխանները ու երկրին բոլոր Ժողովուրդը առաւ, ու Թագաւորը Տէրոջը տունէն իջեցուց. և բարձր դռնէն Թագաւորին տունը մտան, ու Թագաւորը նստեցուցին Թագաւորութեան աթոռին վրայ։ 21—Ու երկրին բոլոր Ժողովուրդը ուրախացաւ, և քաղաքը հանգիստ եղաւ Աթալիայի մէջ էր. ու Գոթողիան սրով մեռցուցին։

*Եբր. ուսուցիչները

Գլ. ԻԴ

Ցոաս եօթը տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ քառասուն տարի Թագաւորութիւն ըրաւ. ու անոր մօրը անունը Սաբիա էր՝ Բերսաբէէ էր։ 2—Եւ Ցոաս Յովհոյադա քահանային բոլոր օրերուն մէջ Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ։ 3—Ու Յովհոյադա անոր երկու կին առնել տուաւ, ու որդիներ ու աղջիկներ ծնաւ։

4—Եւ ասկէ ետքը Ցոաս ուզեց որ Տէրոջը տունը նորոգէ։ 5—Ու քահանաները ու Ղեւտացիները Ժողվեց, և անոնց ըսաւ, Ցուդայի քաղաքները ելէք, ու ձեր Աստուծոյն տունը նորոգելու համար բոլոր Իսրայէլէ տարեկ տարի տասկ Ժողվեցէք, ու այս գործը չուտուվ ըրէք։ բայց Ղեւտացիք չուտուվ չըրին։ 6—Ու Թագաւորը Յովհոյադա իշխանը կանչեց, ու անոր ըսաւ, Տէրոջը ծառային, Մովսէսի, ու Իսրայէլի Ժողովքին վկայութեան խորանին համար դուք չէ՞ք տուրքը բնչո՞ւ համար Ղեւտացիներէն չպահանջեցիք, որ Ցուդայէ ու Երուսաղէմէ բերուին։ 7—(Քանզի աներկրեն Գոթողիա ու անոր որդիները Աստուծոյ տունը ապրեր էին, ու Տէրոջը տանը բոլոր սուրբ բաները Բահաղիմի նուիրեր էին։) 8—Ու Թագաւորը հրամայեց. ու անոնք մի չինեցին, ու զանիկա Տէրոջը տանը դրանը դուրսի կողմը դրին։ 9—Ու Ցուդայի մէջ ու Երուսաղէմի մէջ մանկտիկ կանչել տուին, որ Աստուծոյ ծառային, Մովսէսի, անապատին մէջ Իսրայէլի դրած տուրքը Տէրոջը բերեն։ 10—Եւ բոլոր իշխանները ու բոլոր Ժողովուրդը ուրախացան, ու բերին մտաւկին մէջ ձգեցին, մինչև որ անիկա լեցուեցաւ։ 11—Ու երբ անոնք Ղեւտացւոց ձեռքով Թագաւորին վերակացուներուն կը տանէր, և անոնք կը տեսնէին որ առակը շատցեր է, Թագաւորին գրագիրը ու մեծ քահանային վերակացուն կու գար, և մտաւկը կը պարպէին, ու զանիկա վերջնելով իր տեղը կը դարձնէին. օրէօր այսպես կ՚ընէին, ու շատ առակ Ժողվեցին։ 12—Ու Թագաւորը ու Յովհոյադա զանիկա Տէրոջը տանը ծառայութեան գործը ընդունողներուն կու տային, ու անոնք Տէրոջը տանը նորոգելու համար՝ վարձքով քարասեաններ ու հիւսեր կը բռնէին. ու Տէրոջը տունը ամրացնելու համար՝ երկաթագործներուն ու պղնձագործներուն ալ։— 13—Ու բանաւորները կ՚աշխատէին. ու նորոգութեան գործը անոնց ձեռքով կատարուեցաւ. ու Աստուծոյ տունը իր ձեւին բերելով՝ զանիկա ամրացուցին։ 14—Ու երբ Նորոգութիւնը լմնցուցին, մնացած առակը Թագաւորին ու Յովհոյադայի առջև բերին. ու անով Տէրոջը տանը համար անօթներ, պաշտօնին ու ողջակէզներուն համար սամաններ ու խնկամաններ, և ոսկէ ու արծաթէ սամաններ չինեցին. ու Յովհոյադայի բոլոր օրերը Տէրոջը տանը մէջ միշտ ողջակէզներ կը մատուցանէին։

15—Ու Յովհոյադա ծերացած ու օրերը լեցուած ըլլալով մեռաւ. ու մեռած ատենը հարիւր երեսուն տարեկան էր։ 16—Եւ զանիկա Դաւիթի քաղաքին մէջ Թագաւորներուն հետ Թաղեցին. քանզի անիկա Իսրայէլի մէջ Աստուծոյ ու անոր տանը համար ապրեցուած էր։

17—Ու Յովհոյադայի մեռնելէն ետքը Ցուդայի իշխանները եկան, ու Թագաւորին խոնարհութիւն ըրին. այն ատեն Թագաւորը անոնց մտիկ ըրաւ։ 18—Ու իրենց հայրերուն Տէր Աստուծոյն տունը Թողացին, և Աստարովթի կուռքերուն ու չաստաւածներուն ծառայութիւն ըրին. և Ցուդայի ու Երուսաղէմի վրայ բարկութիւն եկաւ իրենց այս յանցանքին համար։ 19—Վասն զի անոնց մարգարէներ զրկեց, որպէս զի զանոնք Տէրոջը դարձնեն. ու անոնց վկայութիւն ըրին, բայց անոնք մտիկ չըրին։

20—Եւ Յովհոյադա քահանային որդւոյն Զաքարիայի վրայ Աստուծոյ Հոգին եկաւ, ու անիկա Ժողովուրդին մէջ բարձր տեղ մը կայնեցաւ, ու անոնց ըսաւ, Աստուած այսպէս կ՚ըսէ, Դուք

ինչո՞ համար Տէրոջը պատուիրանքները կը խոտորիք. զուք քնաւ յաջողութիւն պիտի չգտնէք, քանզի զուք Տէրը մերժեցիք, ան ալ ձեզ պիտի մերժէ։ **21**—Եւ անոնք անոր դէմ միաբանեցան, ու զանիկա Թագաւորին հրամանովը Տէրոջը տանը գաւիթին մէջ քարերով քարկոծեցին։ **22**—Եւ Յովաս Թագաւորը անոր հօրը Յոյդային երկնցրած բարեբարութիւնը չյիշելով՝ անոր որդին սպաննեց. ու անիկա մեռած ատենը ըսաւ, Տէրը տեսնէ ու *դատէ։

23—Եւ հետեւեալ տարին Ասորւոց զօրքը անոր դէմ ելլելով Յուդայի ու Երուսաղէմի վրայ եկան, ու ժողովուրդին բոլոր իշխանները սպաննեցին, ու անոնց բոլոր աւարը Դամասկոս Թագաւորին ղրկեցին։ **24**—Ասորւոց զօրքը փիչ մարդոցմով եկաւ, բայց Տէրը խոտ չատուար եղող զօրքը անոնց ձեռքը մատնեց, քանզի անոնք իրենց հայրերուն Տէր Աստուածը թողուցեր էին, Աչապես Ասրէիէրը Ասրուձայ դատաստանը ի գործ դրին Յովասի վրայ։ **25**—Ու երբ անոնք գացին անկէ, մեծ հիւանդութիւններու մէջ ձգելով զանիկա, անոր ծառաները անոր դէմ դաւաճանութիւն ըրին Յովհաքա քահանային որդիներուն սրեալներ համար, ու զանիկա իր անկողնին մէջ սպաննեցին, ու մեռաւ. ու զանիկա Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին. բայց Թագաւորաց գերեզմաններուն մէջ չթաղեցին։ **26**—Եւ անոր դէմ դաւաճանութիւն ընողները սոսնձ էին. Աչիմոնացի կնոջ Սաւեթի որդին Զաբադ, ու Մոաբացի կնոջ Սամարիթի որդին Յովզաբադ։ **27**—Եւ անոր որդիներուն համար, ու իր վրայ Թագաւորութիւնը հաստատուելուն համար, ու Աստուծոյ տաճարը չինուելուն համար, ու Աստուծոյ տանը Հիներոգութիւնները համար՝ ահա Թագաւորաց գիրքին յիշատակարանին մէջ գրուած է։ Ու անոր տեղ անոր որդին Ամասիա Թագաւոր եղաւ։

Գլ. ԻԵ

Ամասիա քսանըհինգ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երեսուներկու

*Եբր. Խնդրէ †Եբր. հինները

մէջ քսանըինը տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Յովադան էր, ու Երուսաղէմացի էր։ **2**—Եւ Տէրոջը առջեւ ուղղութիւն ըրաւ, բայց ոչ կատարեալ սրտով։

3—Ու երբ Թագաւորութիւնը անոր վրայ հաստատուեցաւ՝ իր ծառաները սպաննեց, որոնք իր հայրը Թագաւորը սպաններ էին։ **4**—Բայց անոնց որդիները չմեռցուց, ինչպէս Մովսէսի օրինաց գիրքին մէջ գրուած է. ու Տէրը պատուիրեց՝ ըսելով, Հոգ չեն պիտի հայրերուն համար հայրերը չմեռցուին, ու հայրերուն չեն համար հոգ չեն մեռցուին, հապա ամէն մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի։

5—Եւ Ամասիա Յուդան ժողվեց, ու անոնց տոհմերուն վրայ հազարապետներ ու հարիւրապետներ դրաւ բոլոր Յուդայի ու Բենիամինի մէջ, և զանոնք քան տասներեք տարեկան եւ աւելի համրեց, ու պատերազմի ելլող և նիզակ ու վահան կրող երեք հարիւր հազար ընտիր զօրք գտաւ։ **6**—Ան ալ հարիւր տալանդ արծաթով իսրայէլէ հարիւր հազար զօրաւոր կարճ վաճառով բռնեց։ **7**—Եւ Աստուծոյ մարդ մը եկաւ անոր ու ըսաւ, Ով Թագաւոր, Իսրայէլի զօրքը քեզի հետ չերթայ. քանզի Տէրը Իսրայէլի հետ, այսինքն բոլոր Եփրայիմի որդիներուն հետ, չէ։ **8**—Բայց եթէ գուն երթալ կ'ուզես, ուժով ըրէ, ու պատերազմի համար ուժգնիր, Բայց Աստուած քեզմէ պիտի կործանէ թշնամիին առջեւ. քանզի Աստուած օգնելու ու կործանելու զօրութիւնը Աստուծոյ ձեռքն է։ **9**—Եւ Ամասիա Աստուծոյ մարդուն ըսաւ, Հապա ի՞նչպէս ընենք այն հարիւր տալանդը զոր ես Իսրայէլի զօրքին տուի. ու Աստուծոյ մարդը ըսաւ, Տէրը քեզի անկէ աւելին կրնայ տալ։ **10**—Եւ Ամասիա Եփրեմէ իրեն եկող գունդերը զատեց, որպէս զի իրենց տեղը երթան. ու անոնք Յուդայի վրայ խիստ սրտմտեցան, ու տասածի բարկութեամբ իրենց տեղը դարձան։

11—Եւ Ամասիա ուժգնաց ու իր զօրքը հանեց, ու Աղի ձորը գնաց, և Սէիրի որդիներէն տասը հազարը զարկաւ։ **12**—Ու տասը հազարն ալ Յուդայի որդիները ողջ գերի առին, և քա-

րաժայռին գլուխը տարին, և զանոնք քարաժայռին գլխէն վար ձգեցին, ու ամէնն ալ կտոր կտոր եղան։

13—Եւ այն զօրքերը՝ զորոնք Ամասիա հետ դրկեց, որպէս զի իրեն հետ պատերազմի չերթան, Յուդայի քաղաքներուն վրայ յարձակեցան՝ Սամարիայէ մինչև Բեթհորոն, ու անոնցմէ երեք հազար մարդ սպաննեցին, և չատ աւար առին։

14—Ու երբ Ամասիա եդոմացիները չարդելէն դարձաւ, Սէիրի որդիներուն աստուածները բերաւ. ու զանոնք կանգնեց, որպէս զի իրեն աստուածներ ըլլան. և անոնց առջև երկրպագութիւն կ'ընէր, ու անոնց խունկ կը ծխէր։ **15**—Ու Տէրոջը բարկութիւնը Ամասիայի վրայ բորբոքեցաւ, և անոր մարգարէ մը դրկեց՝ ըսելով, Դուն ինչո՞ւ փնտռեցիր այն Թագաւորին աստուածները՝ որոնք չկրցան իրենց ժողովուրդը քու ձեռքէդ ազատել։ **16**—Ու երբ անոր հետ կը խօսէր, Խ—ը—ը ըսաւ անոր, Մինչ քեզ Թագաւորի խորհրդական ը դրին. լուռ կեցիր, *չրէլսյ որ քեզ պզտնեն եւ մարգարէն լռեց. ու ըսաւ, Ահէ դիտեմ որ Աստուած որոշեր է քեզ կորնչնել, որովհետև իմ խրատս մտիկ չընելով՝ այդ բանը ըրիր։

17—Եւ Յուդայի Ամասիա Թագաւորը խորհուրդ ըրաւ, ու Իսրայէլի Թագաւորին, Յեհու որդւոյն Յովահազի որդւոյն Յովասի, Հրէր ղրկեց՝ ըսելով, Եկուր, երես երեսի տեսնուինք։ **18**—Եւ Իսրայէլի Յովաս Թագաւորը Յուդայի Ամասիա Թագաւորին Հրէր ղրկեց ու ըսաւ, Լիբանանի փուշը Լիբանանի եղեւնատունին պատգամ ղրկեց՝ ըսելով, Քու աղջիկդ իմ տղուս կին տուր. բայց Լիբանանի մէջ եղող գազան գազանը անցաւ, ու փուշը կոխկռտեց։ **19**—Դուն, Ահա եդոմին զարկիր ըսիր, ու քու սիրտդ քեզ բարձրացնելով հպարտացուց. հիմա քու տունդ նստիլ. քանզի ինչո՞ւ համար չարաբաստիանիս խառնուիս, որ իյնաս գուն ու քեզի հետ Յուդա ալ։ **20**—Բայց Ամասիա մտիկ չընաւ. քանզի աստիճ Աստուծմէ եղաւ, որպէս զի զանոնք Էդեմէ ընծաներուն ձեռքը մատնէ, եդոմացւոց աստուածները փնտռելնուն համար։ **21**—Ուստի Իսրայէլի Յովաս Թագաւորը ելաւ. և ինք ու Յուդայի Ամասիա Թագաւորը Յուդայի Բեթսամիսի մէջ երես երեսի տեսնուեցան։ **22**—Եւ Յուդա Իսրայէլի առջև յաղթուեցաւ, ու ամէն մարդ իր վրանը փախաւ։ **23**—Եւ Իսրայէլի Յովաս Թագաւորը՝ Յովհազի որդւոյն Յովասի որդին Ամասիան, Յուդայի Թագաւորը, Բեթսամիսի մէջ բռնեց, ու զանիկա Երուսաղէմ տարաւ, ու Եփրեմի գանէն մինչև Անկեան գուռը՝ Երուսաղէմի պարսպին չորս հարիւր կանգունը փլցուց։ **24**—Եւ բոլոր ոսկին ու արծաթը, և Աստուծոյ տանը մէջ գտնուեսած՝ Աբդեդոմի քովի բոլոր սանդներըը, ու Թագաւորին տանը գանձերը, և պատանդներ ալ ———, ու Սամարիա դարձաւ։

25—Եւ Յուդայի Թագաւորը, Յովասի որդին Ամասիա, Իսրայէլի Թագաւորին Յովհազի որդւոյն Յովասի մեռնելէն հետը տասնըհինգ տարի ապրեցաւ։ **26**—Ու Ամասիայի մնացորդ պատմութիւնը, սասկիները ու վերջինը, ահա Յուդայի ու Իսրայէլի Թագաւորներուն գիրքին մէջ գրուած է։ **27**—Եւ Ամասիա երբ Տէրոջը հետեւելէն խոտորեցաւ, անոր դէմ Երուսաղէմի մէջ դաւաճանութիւն ըրին. ու անիկա Լաքիս փախաւ, բայց անոր ետեւէն Լաքիս ղրկեցին, և զանիկա հոն մեռցուցին։ **28**—Ու ձիերով վերցուցին, ու զանիկա իր հայրերուն հետ *Յուդայի քաղաքին մէջ թաղեցին։

Գլ. ԻԶ

Եւ բոլոր Յուդայի ժողովուրդը Ոզիան առին, որ տասնըվեց տարեկան էր, ու զանիկա իր հօրը Ամասիայի տեղ Թագաւոր դրին։ **2**—Այիկա ելաթը չինեց, ու Թագաւորին իր հայրերուն հետ քնանալէն ետքը՝ զանիկա Յուդայի հետ դարձուց։ **3**—Ոզիա տասնըվեց տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու Երու-

*Կամ, Ինչո՞ւ

*Կամ, Դաւիթի։ ը Թագ. Ժգ. 20։

սաղէմի մէջ յիսունհազարկու տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօր անունը Ցեքբելիա էր, ու երուսաղէմացի էր։ 4—Եւ անիկա Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ, իր հօրը Ամասիայի բոլոր ըրածին պէս։ 5—Ու Աստուծոյ տեսիլքներուն հմուտ եղող Զաքարիայի օրերը զնամած կը խնդրէր. և Տէրը խնդրած օրերը Աստուած անոր յաջողութիւն կու տար։ 6—Ու կըսե փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ. և Գէթի պարիսպը, Յաբնէի պարիսպը ու Ազոտասի պարիսպը փլցուց. և Ազոտասի և ուրիշ մէջ ու փղշտացւոց տէրէն երկրին մէջ քաղաքներ շինեց։ 7—Ու Աստուած անոր օգնութիւն ըրաւ փղշտացւոց դէմ, ու Գուրբահոյ բնակող Արաբացւոց դէմ ու Մաանացւոց դէմ։ 8—Ու Ամմոնացիք Ոզիայի ընծաներ կու տային. ու անոր անունը մինչև Եգիպտոսի մուտքը տարածուեցաւ, քանզի անիկա խիստ ուժգնացաւ։ 9—Ու Ոզիա երուսաղէմի մէջ Անկիւնադրանը վրայ, ու Ձորի դրանը վրայ և պարսպին դարձուածքին վրայ աշտարակներ շինեց, ու զանոնք ամրացուց։ 10—Ու անապատին մէջ աշտարակներ շինեց, ու շատ ջրհորներ փորեց. քանզի անիկա դաշտի մէջ ու հովիտի մէջ շատ անասուններ, ու լեռնակոզմն նաև կարմելցոց վրը երկրագործներ ու այգեգործներ ունէր. քանզի երկրագործութիւնը կը սիրէր։ 11—Ու Ոզիա՝ ճկիել զաղապետին ու Մաասիա ոստիկանին ձեռքով համրուած թիւին համեմատ, թագաւորին իշխաններէն Անանիայի ձեռքին տակ՝ գունդով պատերազմի ելլող զօրքեր ունէր։ 12—Որոց զօրաւոր կորձներուն տոհմապետներուն թիւը երկու հազար վեց հարիւր էր։ 13—Ու անոնց ձեռքին տակ երեք հարիւր հօթը հազար հինգ հարիւր պատերազմող մարդ կար, որոնք մեծ ուժով կը պատերազմէին, ու թշնամիին դէմ թագաւորին օգնութիւն կ'րնէին։ 14—Ու Ոզիա այն բոլոր զօրքին համար վահաններ, նիզակներ, սաղաւարտներ, զրահներ, աղեղներ ու քարերու համար պարսիր պատրաստեց։ 15—Ու անիկա երուսաղէմի մէջ արուեստաւորներուն ճարտարութիւնովը մեքենաներ շինեց, որպէս զի նետեր ու մեծ քարեր նետելու համար՝ աշտարակներուն վրայ և անկիւններուն վրայ կենան. ու անոր անունը հեռու տեղեր տարածուեցաւ, վասն զի անիկա զարմանալի օգնութիւններ գտաւ, մինչև որ ուժգնացաւ։ 16—Բայց երբ ուժգնացաւ, անոր սիրտը հպարտանալով *չարութիւն ըրաւ, և իր Տէր Աստուծոյն դէմ յանցանք գործեց. ու Տէրոջը տաճարը մտաւ, որպէս զի խունկի սեղանին վրայ խունկ ծխէ. 17—Ու անոր ետեւէն Ազարիա քահանան մտաւ, ու անոր հետ Տէրոջը ութսուն քահանաները՝ որոնք զօրաւոր մարդիկ էին. 18—Ու անոնք Ոզիա թագաւորին դէմ կեցան, ու անոր ըսին, Ով Ոզիա, քեզի չկրնար որ Տէրոջը խունկ ծխես, հապա Ահարոնեան քահանաները՝ որոնք խունկ ծխելու համար սրբուած են. սրբարանէն դուրս ելիր, քանզի յանցանք գործեցիր. ու այս քեզի համար Տէր Աստուծմէ պատիւ պիտի չառնես։ 19—Ու Ոզիա բարկացաւ, ու անոր ձեռքը խունկ ծխելու համար բռնված կար. ու երբ քահանաներուն բարկացաւ, քահանաներուն առջև, Տէրոջը տանը մէջ խունկի սեղանին քով, անոր ճակատին վրայ բորոտութիւն կար, ու զանիկա չուսում անկէ հանեցին. ու անիկա ալ հլլելու արտորայ, քանզի Տէրը զանիկա զարկեր էր։ 21—Ու Ոզիա թագաւորը մինչև իր մահուան օրը բորոտած էր, ու զատ տան մը մէջ բորոտած կը նստէր, վասն զի Տէրոջը տանէն արգիլուելուս, ու անոր որդին Յոաթամ, թագաւորին տանը վրայ իշխելով, երկրին ժողովուրդը կը դատէր։

22—Ու Ոզիայի միւսորդ պատմութիւնը, առաջինը ու վերջինը, Ամովսի որդին Եսայի մարգարէն գրեր։ 23—Ու Ոզիա իր հայրերուն հետ քնացաւ ու զանիկա իր հայրերուն հետ թագաւորաց գերեզմանները դաշտին մէջ թաղեցին, վասն զի ըսին, Անիկա բորոտ է։ Ու անոր որդին Յոաթամ անոր տեղ թագաւորեց։

*ՆԵՐ. ապականութիւն

ԳԼ. ԻԵ

Յոաթամ քսանըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ տասնըվեց տարի թագաւորութիւն ըրաւ. և անոր մօր անունը Յերուսա էր, ու Սադոկին աղջիկն էր։ 2—Ու իր հօրը Ոզիայի բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև ուղղութիւն ըրաւ. բայց Տէրոջը տաճարը չմտաւ. ու ժողովուրդը տակաւին ապականած էր։ 3—Անիկա Տէրոջը տանը ամէնէն բարձր դռանը շինեց, ու Ոփլի պարսպին վրայ շատ բաներ շինեց։ 4—Ու Ցուդայի լեռնակոզմը քաղաքներ, ու անտառներու մէջ բերդեր ու աշտարակներ շինեց։ 5—Ու անիկա Ամմոնի որդիներուն թագաւորին հետ պատերազմ ըրաւ, ու զանոնք յաղթեց. և Նոյն տարին Ամմոնի որդիները հարիւր տաղանդ արծաթ, ու տասը հազար քոռ ցորեն, և տասը հազար *ոռ գարի տուին անոր. այսպէս երկրորդ ու երրորդ տարին ալ Ամմոնի որդիները բերին անոր։ 6—Ու Յոաթամ զօրացաւ, վասն զի իր ճամբաները իր Տէր Աստուծոյն առջև չիակեց։

7—Ու Յոաթամի միւսորդ պատմութիւնը ու անոր բոլոր պատերազմները ու ճամբաները ահա իսրայէլի ու Ցուդայի թագաւորաց գիրքին մէջ գրեւած են։ 8—Անիկա թագաւոր եղած տասներք քսանըհինգ տարեկան էր, ու տասնըվեց տարի Երուսաղէմի մէջ թագաւորութիւն ըրաւ։ 9—Ու Յոաթամ իր հայրերուն հետ քնացաւ, ու զանիկա Դաւիթի քաղաքին մէջ թաղեցին և անոր որդին Աքազ անոր տեղ թագաւորեց։

ԳԼ. ԻԶ

Աքազ քսան տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ տասնվեց տարի թագաւորութիւն ըրաւ. և իր հօրը Դաւիթի պէս Տէրոջը առջև ուղղութիւն չըրաւ։ 2—Հապա իսրայէլի թագաւորաց ճամբաներուն մէջ քալեց, ու Բահաղիմի ձուլածոյ կուռքեր շինեց։ 3—Ու անիկա Ենոմի որդւոյն ձորին մէջ խունկ կը ծխէր, ու իր որդիները կրակով այրեց՝ այն ազգերուն գարշելի սովորութիւններուն համեմատ, զորոնք Տէրը իսրայէլի որդիներուն առջևէն վռնտեց։ 4—Ու բարձր տեղերը, ու բլուրներու վրայ, և ամէն կանաչ ծառերու տակ զոհ կը մատուցանէր ու խունկ կը ծխէր։

5—Ու անոր Տէր Աստուածը զանիկա Ասորւոց թագաւորին ձեռքը մատնեց, ու զանիկա զարկին, և անկէ խիստ շատ գերիներ առին, ու Դամասկոս տարին. նաև Իսրայէլի թագաւորին ձեռքը մատնուեցաւ, որ զանիկա մեծ հարուածով զարկաւ։ 6—Ու Թովմելայի որդին Փեկէհ մէկ օրուան մէջ Ցուդայէ հարիւր քսան հազար *ոռ մեռցուց, որոնց ամէնն ալ զօրաւոր կռիւներ էին. քանզի իրենց հայրերուն Տէր Աստուածը թողուցեր էին։ 7—Ու Եփրեմէ Զիքրի անուն զօրաւոր մարդ մը թագաւորին որդին Մաասիան և պալատին հազարապետը Եղրիկամը ու թագաւորին փոխանորդը Եղկանան մեռցուցին։ 8—Ու Իսրայէլի որդիները իրենց եղբայրներէն, կիներ ու աղաքներ ու աղջիկներ, երկու հարիւր հազար գերի առին. և անոնցմէ շատ աւարներ առին, ու աւարը Սամարիա տարին։

9—Ու հոն Տէրոջը մէկ մարգարէն կար Ովդեդ անունով, որ Սամարիա եկող զօրքին դիմաց ելլաւ ու անոնց ըսաւ, Ահա ձեր հայրերուն Տէր Աստուածը Ցուդայի վրայ բարկանալուն համար՝ զանոնք ձեր ձեռքը մատնեց, ու մեռցուցիք զանոնք այնպէս բարկութեամբ որ մինչև երկինք հասաւ։ 10—Ու հիմա կը մտածէք որ Ցուդայի ու Երուսաղէմի որդիները ձեզի ծառաներ ու աղախիններ ընէք. չէ՞ որ ձեր Տէր Աստուածդան առջև միայն դուք յանցաւոր կ'ըլլաք։ 11—Ու հիմա լսեցէք իմ ձայնիս, ու դարձուցէք այն գերիները զորոնք ձեր եղբայրներէն առիք. քանզի Տէրոջը սաստիկ բարկութիւնը ձեր վրայ է։ 12—Ու Եփրեմի որդիներուն իշխաններէն Յոհանանի որդին Ազարիա, Մեսեղոմ Եքեկիա ու Ագդիայի Սեդղոմի որդին Եղկիա ու Ագդիայի որդին Ամասայի պատերազմին եկողներուն դէմ կեցան, 13—Ու անոնց ըսին, գերիները հոս մի բերէք. քանզի մենք

Տէրոջը առջև յանցաւոր ըլլալով՝ գուք կ'ուզէք սպրլ ձեզի մեր մեղքերուն ու մեր յանցանքներուն վրայ աւելցնել. վասն զի մեր յանցանքը շատ է, ու խրատելի վրայ սաստիկ բարկութիւն կայ։ 14—Ան ատեն պատուիրագիտակները իշխաններուն ու բոլոր ժողովին ըսին. Թոզուցին գերիները ու ապրին։ 15—Ու իրենց անուններովը յիշուած մարդիկը կանգնեցան ու գերիները առին, ու բոլոր մերկ եղողները զգեցուցին, անոնց հանգերձներ ու կօշիկներ հագցուցին, զանոնք կերցուցին խմցուցին ու իւղով օծկցին. և բոլոր ակրնները էշերու վրայ հնծցնելով՝ Երիքովայ քաղաքը բերին իրենց եղբայրներուն քով, ու իրենք Սամարիա դարձան։

16—Ան ատեն Աքազ Թագաւորը Ասորեստանի Թագաւորներուն դեսպան զրկեց, որպէս զի իրեն օգնութիւն ընեն. 17—վասն զի Եդոմացիները նորէն եկեր էին, ու Յուդան զարնելով գերիներ տարեր էին։ 18—փղշտացիք ալ, դաշտի մէջ ու Յուդայի հարաւային կողմը եղող քաղաքներուն վրայ յարձակելով, Բեթսամիսը, Այիղոնը, Գադերոթը, Սոքովը ու անոր գեղերը, Թամնան ու անոր գեղերը և Գամզոր ու անոր գեղերը առեր ու հոն բնակեր էին։ 19—Վասն զի Տէրը Իսրայէլի Թագաւորին Աքազի պատճառաւ Յուդան նկուն բրաւ. որովհետև անիկա Յուդան *գլխ հանեց՝, ու Տէրոջմէ ապստամբեցաւ։ 20—Ու Ասորեստանի Թագլաթփաղասար Թագաւորը անոր եկաւ, ու զանիկա նեղեց. բայց անոր օգնութիւն չբրաւ։ 21—Քանզի Թէպէտև Աքազ Տէրոջը տաճարէն ու Թագաւորին և իշխաններուն տաճարներէն դրամներ առաւ, ու Ասորեստանի Թագաւորին տուաւ, բայց անիկա օգնութիւն չբրաւ անոր։

22—Ու իր նեղութեանը մէջ՝ ա՛լ աւելի Տէրոջը դէմ մեղք կը գործէր. այսպիսի †գէտ էր Աքազ Թագաւորը. 23—Ու անիկա զոհեր կը մատուցանէր Դամասկոսի աստուածներուն՝ որոնք զինք զարկեր էին, փանդի ըսաւ, Ասորւոց Թագաւորներուն աստուածներուն անոնց օգնութիւն ընելուն համար՝ անոնց զոհ մատուցանեմ, որպէս զի ինծի օգնութիւն ընեն. բայց անոնք իրեն ու բոլոր Իսրայէլի աւերումին պատճառ եղան։ 24—Ու Աքազ Աստուծոյ տանը անօթները ժողվեց, ու զանոնք կտրատեց, և Տէրոջը տանը դռները գոցեց, ու երուսաղէմ ամէն անկիւնները իրեն սեղաններ չինեց։ 25—Ու Յուդայի ամէն քաղաքներուն մէջ բարձր սեղեր չինեց, որպէս զի ուրիշ աստուածներու խունկ ծխէ, ու իր հայրերուն Տէր Աստուածը սրդոյցուց։

26—Ու անոր մնացորդ պատմութիւնը ու բոլոր վարմունքը, առաջինը ու վերջինը, ահա Յուդայի ու Իսրայէլի Թագաւորներուն գիրքին մէջ գրուած են։ 27—Ու Աքազ իր հայրերուն հետ քնացաւ. ու զանիկա երուսաղէմ քաղաքը թաղեցին, բայց Իսրայէլի Թագաւորներուն գերեզմանները չտարին և անոր որդին Եզեկիա անոր տեղ Թագաւոր եղաւ։

ԳԼ. ԻԹ

Եզեկիա քսանըհինգ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ քսանըինը տարի Թագաւորութիւն բրաւ. և անոր մօր անունը Աբիա էր, ու Զաքարիայի աղջիկն էր։ 2—Ու անիկա իր հօրը Դաւիթին բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև ուղղութիւն բրաւ։

3—Անիկա իր Թագաւորութեան առաջին տարւոյն առաջին ամիսը Տէրոջը տանը դռները բացաւ, ու զանոնք նորոգեց։ 4—Ու քահանաները ու Ղեւտացիները բերել տուաւ, ու զանոնք արեւելեան հրապարակին մէջ ժողվեց, 5—Ու անոնց բսաւ, Ինծի մտիկ ըրէք, ով Ղեւտացիներ, հիմա սրբուեցէք, ու ձեր հայրերուն Տէր Աստուծոյն տունը սրբեցէք, և պղծութիւնը սրբատանէն դուրս հանեցէք։ 6—Քանզի մեր հայրերը ապստամբեցան, ու մեր Տէր Աստուծոյն առջև չարութիւն ըրին, ու զանիկա թողուցին, և իրենց երեսը Տէրոջը խորանէն դարձուցին, ու *արհամարհեցին զ-նէ-ն։ 7—Սրահին դռնները ալ գոցեցին, ճրագները մարեցին, խունկ չծխեցին ու սուրբ տեղը Իսրայէլի Աստուծոյն աղջակէզ չմատուցին։ 8—Անոր համար Յուդայի ու Երուսաղէմի վրայ Տէրոջը բարկութիւնը եկաւ, ու զանոնք խռովութեան, ապերանս ու խայտառակութեան մէջ ձգեց, ինչպէս հիմ ձեր աչքերովը կը տեսնէք։ 9—Ու այս պատճառաւ ահա մեր հայրերը սրով իյնան, ու մեր տղաքները և աղիկները ու կիները գերութեան մէջ են։ 10—Հիմա իմ սրտիս մէջ դ-ն-է ունիմ, որ Իսրայէլի Տէր Աստուծոյն հետ ուխտ ընեմ, որպէս զի իր սաստիկ բարկութիւնը մեզմէ դառնայ։ 11—Արդ, որդեակք իմ, անհոգութիւն մի ընէք. վասն զի Տէրը ձեզ ընտրեց, որպէս զի իրեն ծառայութիւն ընելու համար իր առջև կայնիք, իրեն ծառաստրներ ըլլաք ու խունկ ծխէք։

12—Ան ատեն առ եկան Ղեւտացիները, այսինքն Կահաթի որդիներէն Ամեսայիի որդին Մահաթ, ու Ազարիայի որդին Յովէլ. և Մերարիի որդիներէն՝ Աբդիի որդին Կիս, ու Յահղէլի որդին Ազարիա. ու Գերսոնեաններէն՝ Զամմայի որդին Յովաբ, և Յովաբի որդին Եդէն. 13—Ու եղիսափանի որդիներէն՝ Սամրի ու Յեհիէլ. և Ասափի որդիներէն՝ Զաքարիա ու Մահատ. 14—Ու Եմանի որդիներէն՝ Յեհիէլ ու Սեմէի. և Իդիթունի որդիներէն՝ Սեմայիա ու Ոզիէլ. 15—Ու իրենց եղբայրները ժողվեցին ու սրբուեցան. և թագաւորին հրամանովը ու Տէրոջը խօսքովը Տէրոջը տունը մաքրելու գացին. 16—Ու քահանաները, մաքրելու համար, Տէրոջը տանը ներսի կողմը մտան, ու Տէրոջը սրահին մէջ գտնուած բոլոր պղտորութիւնը Տէրոջը տանը գաւիթը հանեցին, ու Ղեւտացիները զանիկա վերցուցին, որպէս զի դուրսը կեդրոն հեղեցուցը տանին։ 17—Ու առաջին ամսուն առաջին օրը սկսան սրբել, ու ամսուն ութերորդ օրը Տէրոջը սրահը եկան, ու Տէրոջը տունը ութ օրուան մէջ սրբեցին. և առաջին ամսուն տասնվեցերորդ օրը լմնցուցին։ 18—Ու ներկայ թագաւորին քով գացին ու ըսին, Տէրոջը բոլոր տունը, ու աղջակէզի սեղանը ու անոր բոլոր գործիքները, և առաջաւորութեան հացին սեղանը ու անոր բոլոր գործիքները մաքրեցինք։ 19—Ու նաև պատրաստեցինք ու սրբեցինք այն բոլոր առաններները, զորոնք Աքազ թագաւորը իր թագաւորութեանը իր անօրէնութեանը առեն պղծեց. և ահա անոնք Տէրոջը սեղանին առջև են։

20—Ու եղեկիա թագաւորը կանխելաւ, ու քաղաքին իշխանները ժողվելով Տէրոջը տունը գնաց. 21—Ու երեք թագաւորութեանը ու սրբարանին ու Յուդայի համար եօթը զատրակ, եօթը խոյ ու եօթը գառ, ու մեղքի պատարագ ըլլալու համար եօթը նոխազ բերին. և անիկա Ահարոնի որդիներուն, քահանաներուն, հրամայեց որ զ-ն-է-ն Տէրոջը սեղանին վրայ մատուցանեն։ 22—Ու զատրակները մորթեցին, և քահանաները արիւնը առին ու սեղանին վրայ սրսկեցին. և խոյերն ալ մորթեցին ու արիւնը սեղանին վրայ սրսկեցին. և գառներն ալ մորթեցին, ու արիւնը սեղանին վրայ սրսկեցին։ 23—Ու մեղքի պատարագի նոխազները թագաւորին ու ժողովրդին առջև բերին. և անոնք ձեռքերնին անոնց վրայ դրին։ 24—Ու քահանաները զանոնք մորթեցին, և անոնց արիւնը սեղանին վրայ *սրսկեցին բոլոր Իսրայէլի քաւութիւն ընելու համար. վասն զի թագաւորը ըսեր էր որ ողջակէզը ու մեղքի պատարագը բոլոր Իսրայէլի համար †գ-ո-յ-ն-է։ 25—Ու Ղեւտացիները ծնծղաներով, տաւիղներով ու քնարներով Տէրոջը տանը մէջ կայնեցուցին, ինչպէս Դաւիթ ու Գ-է-ր Թագաւորին տեսանողը Գադ և Նաթան մարգարէն պատուիրեր էին. վասն զի Տէրը իր մարգարէներուն ձեռքով յ-ս-ղ-ա հրամայեր էր։ 26—Ու Ղեւտացիները Դաւիթի նուագարաններովը՝ և քահանաները փողերով կայնեցան։ 27—Ու եղեկիա համայեց որ ողջակէզը սեղանին վրայ մատուցին։

*Եբր. կռնակ դարձուցին

*Եբր. մեղքի պատարագի պես մատուցին

*կամ, Թող տուու անառակութիւն ընելու եղ. լր. 25։
†կամ, ինչ որ կար

զանին վրայ մասաւցանեն. ու աղջակ-
ին սկսած սանը Տէրոջը օրհնութիւնն
ալ փոխուով ու Իսրայէլի Թագաւորին
Դաւիթի նուագարաններովը սկսաւ։ 28—
Ու մինչև աղջակ զին լմնալը բոլոր ժո-
ղովքը երկրպագութիւն կ'ընէր, երգէ-
ցողները օրհնութիւն կ'երգէին, և ի-
հոնոիները փողերը կը հնչեցնէին։ 29—
Ու երբ աղջակ զ մասուցանելը լմնցու-
ցին, Թագաւորը և բոլոր գոմը գըտ-
նուղները ծունկը եռվով երկրպագութիւն ը-
րին։ 30—Ու Եզեկիա Թագաւորը ու իշ-
խանները Ղեւտացւոց ըսին որ Տէրոջը
օրհնութիւն երգեն Դաւիթի ու Ասաֆ
տեսանողին խօսքերովը. անոնք ալ ու-
րախութեամբ երգեցին, ու խոնարհե-
լով երկրպագութիւն ըրին։

31—Ու Եզեկիա պատասխան տուաւ
ու ըսաւ, Հիմա ինքզինքնիդ Տէրոջը
նուիրեցիք. մօտեցէք ու Տէրոջը տուա-
նը զոհեր ու օրհնութեան ընծաներ
բերէք։ Եւ ժողովքը զոհեր ու օրհնու-
թեան ընծաներ բերաւ. և ամէն յօժա-
րութիւն ունեցողը աղջակ զներ բէրաւ։
32—Ու ժողովքին բերած աղջակ զներ-
ուն թիւը այս էր. ևօթանասուն ար-
ջառ, հարիւր խոյ — երկու հարիւր
գառ. ասոնց ամէնը Տէրոջը աղջակ զը-
լալու համար էին։ 33—Ու նուիրուած-
ները վեց հարիւր արջառ ու երեք հա-
զար ոչխար էին։ 34—Բայց քահանա-
ները փիչուր ըլլալնուն համար՝ բոլոր
աղջակ զներուն մորթելը հանելու կա-
րող չեղան, ու մինչև այս գործին բլնե-
նալը, ու մինչև ևս քահանաներուն
սրբուելը, իրենց Ղեւտացի եղբայրները
իրենց օգնութիւն ըրին. քանզի Ղեւ-
տացիք քահանաներէն աւելի յօժարու-
թեամբ սրբուեցան։ 35—Ու նաև ղ-
ջակ զները խաղաղութեան զոհերուն
ճարպովը և աղջակ զներուն թափելու
նուէրներովը մէկտեղ շատ էին։ Այսպէս
Տէրոջը տանը պաշտօնը կարգի դրու ե-
ցաւ։ 36—Ու Եզեկիա և բոլոր ժողո-
վուրդը ուրախացան՝ որ Աստուած ժո-
ղովուրդը պատրաստեց. քանզի
այս բանը յանկարծ եղաւ։

Գլ. Լ.

Ու Եզեկիա բոլոր Իսրայէլի և Յու-
դայի համար ղրկեց. ու Եփրեմի ու Մա-
նասէի ալ նամակներ գրեց, որպես զի
նրաւագէմ Տէրոջը տանը գան, ու Իս-
րայէլի Տէր Աստուծոյն զատիկ բնեն։
2—Ու թագաւորը ու անոր իշխանները
ու բոլոր ժողովքը նրաւագէմի մէջ խոր-
հուրդ ըրին, որ զատիկը երկրորդ ա-
սուն մէջ բնեն. 3—վասն զի այն ատեն
կարող չէին զանիկա ընելու, քանզի
բաւական քահանաներ սրբուած չէին,
ու ժողովուրդը նրաւագէմ ժողովուած
չէր։ 4—Ու այս բանը թագաւորին ա-
ռջև ու բոլոր ժողովքին առջև հաճոյ ե-
ղաւ։ 5—Ու այնպէս որոշեցին, որ
բոլոր Իսրայէլի մէջ Բերսաբէէ մինչև
Դան լսը ղրկուի, որպես զի գան ու Ե-
րուսաղէմի մէջ Իսրայէլի Տէր Աստու-
ծոյն զատիկ բնեն. քանզի շատ ատենէ
ի վեր գրուածին պէս բրած չէին։

6—Ու սուրհանդակները թագաւորին
ու իշխաններուն նամակներովը բոլոր
Իսրայէլի ու Յուդայի գացին, ու Թա-
գաւորին հրամանին համեմատ ըսին,
Ով Իսրայէլի որդիներ, Աբրահամի,
Իսահակի ու Իսրայէլի Տէր Աստուծոյն
դարձէք, ու ան ալ պիտի դառնայ
ձեզի, որ Ասորեստանի Թագաւորնե-
րուն ձեռքէն ազատուով՝ չէ Էլլէէը
մնացեր ես։ 7—Ու ձեր հայրերուն պէս ու
ձեր եղբայրներուն պէս մի ըլլաք, որոնք
իրենց հայրերուն Տէր Աստուծմէն ապոս-
տամբեցան. ան ալ զանոնք կործանման
մատնեց, ինչպէս դուք կը տեսնէք։
8—Ուրեմն ձեր հայրերուն պէս ձեր
պարանոցը մի խստացնէք. *Հնազան-
դեցէք Տէրոջը, ու եկէք անոր սրբա-
րանը զոր ինք յաւիտեան սրբած է. ու
ձեր Տէր Աստուծոյն ծառայութիւն ը-
րէք, որպէս զի անոր սաստիկ բարկու-
թիւնը ձեզմէ դառնայ։ 9—Քանզի եթէ
դուք Տէրոջը դառնաք, ձեր եղբայրնե-
րը ու ձեր որդիները գերիներ գերի տա-
նողներուն երեսէն գթութիւն պիտի
գտնեն, և այս երկիրը պիտի դառնան.
վասն զի ձեր Տէր Աստուածը ողորմած

*ՆԲԷ. ձեռք տուէք

ու գթած է. ու եթէ անոր դառնաք,
ձեզմէ երես պիտի չդարձնէ։

10—Ու սուրհանդակները Եփրեմի
ու Մանասէի երկիրը փոգաբէ փոգաբ
պարտելով, մինչև Զաբուղոն ։ Բայց
անոնք ծաղր կ'ընեին ու կ'արհամարհէին։ 11—Սակայն Ասերէ ու
Մանասէ ու Զաբուղոնէ մարդ խոնարհեցան ու Երուսաղէմ գացին։ 12—Յու-
դայի վրայ ալ Աստուծոյ ձեռքը կար, որ
անոնց մէկ սիրտ տայ, որպէս զի Թագա-
ւորին ու իշխաններուն՝ Տէրոջը խօս-
քին համեմատ պատուիրածը կատարեն։

13—Ու Երուսաղէմի մէջ բազմաթիւ
ժողովուրդներ հաւաքուեցան երկրորդ
ամսուն մէջ բազմաբնակերաց ժողո-
վուրդը մեծ ժողովք եղաւ։ 14—Ու անոնք
ելան ու Երուսաղէմի մէջ եղող զոհի սեղանները ու բոլոր
խունկի սեղանները վերցուցին, ու կեդ-
րոնի հովտատար նետեցին։ 15—Ու երկ-
րորդ ամսուն չորեքտասաներորդ օրը
պատրիկ մորթեցին. և քահանաները ու
Ղեւտացիները ամչցան ու սրբուեցան,
ու Տէրոջը տունը աղջակ զներ բերին։
16—Ու Աստուծոյ մարդուն Մովսէսի
օրէնքին համեմատ, իրենց սահմա-
նին պես, իրենց տեղը կայնեցան.
քահանաները Ղեւտացւոց ձեռքէն ա-
րիւնը ընդունելով՝ ցանեցին։ 17—
Քանզի ժողովքին մէջ չսրբուածները
շատ էին. ու բոլոր մաքուր չեղողներուն
համար զատիկ գառը Ղեւտացիները կը
մորթէին, որպէս զի Տէրոջը սրբ-
բեն։ 18—Վասն զի ժողովուրդին շա-
տերը, այսինքն Եփրեմէ, Մանասէէ,
Իսսաքարէ ու Զաբուղոնէ չսրբուած շա-
տերը, մաքուր չէին. այսու ամենայնիւ
զատիկը կերան՝ բայց ոչ թէ գրուածին
համեմատ. իսկ Եզեկիա անոնց համար
աղօթք բրաւ ու ըսաւ, Բարերար Տէրը
քաւութիւն ընէ այն բոլոր մարդոց
19—որոնք սիրտերնին ուղղեցին Տէր
Աստուածը, իրենց հայրերուն Աստուածը,
փնտռելու, թէև անոնք սրբարանին մաք-
րութեանը համեմատ չսրբուած չըլլան։
20—Ու Տէրը Եզեկիայի ականջ դրաւ, ու
*ժողովուրդին ողջունեց։

*ՆԲԷ. ժողովուրդը բժշկեց

21—Ու երուսաղէմի մէջ գտնուղ
Իսրայէլի որդիները մեծ ուրախութեամբ
եօթը օր բազարջակերաց տօնը կատա-
րեցին. ու Ղեւտացիները և քահանա-
ները ամէն օր բարձրաձայն նուա-
գարանները Տէրոջը հնչեցնելով՝ Տէրը
կօրհնէին։ 22—Ու Եզեկիա քաղցրու-
թեամբ խօսեցաւ Տէրոջը բարի հանճարը
*իմացող բոլոր Ղեւտացիներուն. և ու-
նին եօթը օրը խաղաղութեան զոհեր
մատուցանելով ու իրենց հայրերուն Տէր
Աստուածն գոհութիւն տալով կ'ուտէին։

23—Ու բոլոր ժողովքը խորհուրդ ը-
րին որ ուրիշ եօթը օր ալ տօն դնեն,
ու եօթը օր ալ մեծ ուրախութիւն ըրին։
24—Քանզի Յուդայի Եզեկիա Թագա-
ւորը ժողովքին հազար զուարակ ու եօթը
հազար ոչխար պարգեւեցին. իշխաններն
ալ ժողովքին հազար զուարակ ու տասը
հազար ոչխար պարգեւեցին. ու չատ
քահանաներ սրբուեցան։ 25—Ու բոլոր
Յուդայի ժողովքը, ու քահանաները, ու
Ղեւտացիները, և Իսրայէլէ եկողներուն
բոլոր ժողովքը, ու Իսրայէլի երկրէն ե-
ղող և Յուդայի մէջ բնակող պանդխտ-
ները ուրախացան։ 26—Ու Երուսաղէմի
մէջ մեծ ուրախութիւն եղաւ. քանզի
Իսրայէլի Թագաւորին, Դաւիթի որդւոյն
Սողոմոնի, օրերէն ի վեր Երուսաղէմի մէջ
այսպիսի ուրախութիւն մը եղած չէր։
27—Անկէ ետքը Ղեւտացի քահա-
նաները ելան ու ժողովուրդը օրհնեցին.
և անոնց ձայնը լսուեցաւ, ու անոնց ա-
ղօթքը Աստուծոյ սուրբ բնակարանը,
երկինք, հասաւ։

Գլ. ԼԱ

Ու երբ այս ամէնը լմնցաւ, հե-
գնուղ բոլոր Իսրայէլացիք Յուդայի
քաղաքները ելան, և բոլոր Յուդայի,
Բենիամինի, Եփրեմի ու Մանասէի մէջ
եղող սրճանները կոր կոր ըրին, Աս-
տարոթի կուռքերը կտրտեցին, և
բարձր սեղերը ու սեղանները փլցու ցին,
այնպես որ բան մը չմնացին. ետքը Իս-
րայէլի որդիները, ամէն մարդ իր ժառան-

*Կամ, սորվեցնող. ե Օր. լգ. 10. Գ Ե-
ժէ. 9. լե. 3.

գաբաթներ, իրենց քաղաքներ, գաբաձեւ։

2—Եւ եղեւիա քահանաներան ու Ղեւտացիներան գաւերը հատուածեց իրենց կարգերան համեմատ, թէ՛ քահանաներուն և թէ՛ Ղեւտացիներուն, ամէն մէկուն գործին նայելով, զէնիկէզներու ու խաղաղաթեան զոհերու հատար, ու Տէրոջը սպասներան գալներան մէջ պաշտելու, գովելու ու օրհնաբանելու երգելու համար։ **3**—Նաև իր սեպհական ունկէկիզներան համար, այսինքն, Տէրոջը օրինաց գիրքին մէջ գրուածին պէս, առաւաւտան ու երեկոյեան ողջակիզներուն համար, և նաև բաթիներուն ու ամսագլուխներուն ու հանդիսաւոր ատներուն ողջակիզներան համար, թագաւորին բաժինը որոշեց։ **4**—Ու նրուսաղէմի մէջ բնակող ժողովուրդին հրամայեց որ քահանաներուն ու Ղեւտացիներուն բաժինը տան, որպէս զի անոնք Տէրոջը օրէնքը [1]—ր—բէ—ր մէջ զօրանան։ **5**—Ու երբ այս հրամանը հրատարակուեցաւ, իսրայէլի որդիները ցորենին, գինիին, իւղին, մեղրին և բոլոր անդաստանց բերքերուն երեսաչորեակը առատապէս բերին, **6**—Ու Յուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի ու Յուդայի որդիները՝ անոնք ալ արջառներուն ու ոչխարներուն տասանորդները, և իրենց Տէր Աստուծոյն նուիրած սուրբ բաներուն տասանորդները բերին ու դիզեցին։ **7**—Անոնք երրորդ ամսուն մէջ սկսան դիզել, և եօթներորդ ամսուն մէջ լմնցուցին։ **8**—Ու եղեկիա ու իշխանները եկան, ու երբ այն դէզերը տեսան՝ Տէրը ու անոր խորհրդ Ժողովուրդը օրհնեցին։ **9**—Ու եղեկիա այն դէզերուն համար քահանաներուն ու Ղեւտացիներուն հարցուց։ **10**—Ու Սադոկի տունէն եղող մեծ քահանան Ազարիա անոր պատասխան տուաւ ու բսաւ, Քանի որ ընծաները Տէրոջը տունը բերելու սկսան՝ կերանք, կշտացանք ու խիստ շատ ուելցաւ, վասն զի Տէրը իր ժողովուրդը օրհնեց. ու ուելցածը այս առատութիւնն է։ **11**—Ու եղեկիա հրամայեց որ Տէրոջը տանը մէջ չաեմարաններ պատրաստեն. ու պատրաստեցին։ **12**—Ու ընծաները ու տասանորդները ու սուրբ բաները հաւատարմութեամբ ներս տարին. և անոնց վերակացուն Ղեւտացի Քանանիա էր, ու անոր եղբայրը Սեմէի՝ երկրորդն էր։ **13**—Ու Յեհիէլ, Ազազիա, Նահաթ, Ասայէլ, Երիմոթ և Յովզաբադ, Եղիէլ, Ցեսմաքիա, Մահաթ ու Բանեա՝ Քանանիայի ու անոր եղբօրը Սեմէիի ձեռքին տակ՝ եղեկիա թագաւորին ու Տէրոջը տանը առաջնորդին, Ազարիայի, հրամանով վերակացուներ էին։ **14**—Ու արեւելեան կողմի դռնապանը, Ղեւտացի Յեմնայի որդին Կորէ, Տէրոջը բարձրացրելու ընծաները ու ամենասրբ բաները բաժնելու համար՝ Աստուծոյ կամաւոր ընծաներուն վրայ էր։ **15**—Ու անոր հրամանին տակ քահանայից քաղաքներուն մէջ՝ Եդենի, Մինիամինի, Ցեսուէ, Սեմայիայի, Ամարիայի ու Սեքենիայի յանձնուած էր, իրենց եղբայրներուն, մեծին ու պզտիկին, դասակարգութեանց նայելով ընծէ—ր բաժնելու։ **16**—Նաև տղայահամարին մէջ գրուած երեք տարուընէ վեր եղող բոլոր արուներուն, որոնք օրէ օր Տէրոջը տունը կը մտնէին իրենց պահանջութիւններուն մէջ, իրենց դասակարգութիւններուն համեմատ իրենց ծառայութիւնը [1]—ր—բէ—ր համար։ **17**—Ու նաև տղայահամարին մէջ գրուած քահանաներուն, իրենց տղայասնմութեան համեմատ, ու քսան տարեկանէն վեր եղող Ղեւտացիներուն, իրենց պահպանութիւններուն մէջ՝ իրենց դասակարգութիւններուն մէջ։ **18**—Նաև տղայահամարին մէջ գրուած անոնց ամէն ընտանիքներուն, կիներուն, տղաքներուն ու աղջիկներուն, այսինքն ընդ բոլոր Ժողովուրդին. քանզի հաւատարմութեամբ կը սրբուէին։ **19**—Ու անոնց քաղաքներուն արուարձանաց պատերուն մէջ եղող Ահարոնի որդիներուն, քահանաներուն, համար՝ ամէն քաղաքի մէջ էջէնց անուններովը յիշուած մարդիկ կային, որպէս քահանաներուն բոլոր արուներուն ու Ղեւտացոց ազգատոհմերուն մէջ բոլոր գրուածներուն բաժիններ կու տային։ **20**—Ու եզեկիա բոլոր Յուդայի մէջ այսպէս ըրաւ, և իր Տէր Աստուծոյն առջեւ բարի, ուղիղ ու ճշմարիտ եղածը ըրաւ։

21—Ու իր ամէն ձեռք զարկած գործը, թէ՛ Աստուծոյ տանը ծառայութեանը համար և թէ՛ օրէնքին ու պատուիրանքին համար, իր բոլոր սրտովը իր Աստուածը փնտռելով ըրաւ ու յաջողեցաւ։

ԳԼ. ԼԲ

Այս [2]բաներէն ու այս ճշմարտութենէն* ետքը Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը եկաւ, ու Յուդայի էրկիրը մտնելով՝ պարսպաւոր քաղաքներուն դէմ բանակեցաւ, ու միտքը դրաւ էր որ զանոնք բռնութեամբ իրեն առնէ։ **2**—Ու եզեկիա տեսնելով որ Սենեքերիմ եկեր է, ու երուսաղէմի դէմ պատերազմել կ'ուզէ, **3**—իր իշխաններուն ու զօրաւորներուն հետ խորհուրդ ըրաւ, որ քաղաքէն դուրս եղող աղբիւրներուն ջուրերը գոցէ. և անոնք անոր օգնութիւն ըրին։ **4**—Ու շատ ժողովուրդ ժողվուեցաւ, ու բոլոր աղբիւրները ու երկրին միջէն անցնող հեղեղատը գոցեցին՝ ըսելով, Ինչո՞ւ համար Ասորեստանի թագաւորները գան, ու առատ ջուր գտնեն։ **5**—Ու եղիւ—զինք ուժովցուց, և ամէն փլած պարիսպները չինեց, ու աշտարակները բարձրացուց, ու դուրսէն ուրիշ պարիսպ մըն ալ չինէց. և Դաւիթի քաղաքին մէջ եղող Մելոնը նորոգեց, ու շատ [3]նիզակներ ու ասպարներ չինեց։ **6**—Ու ժողովուրդին վրայ պատերազմի զօրապետներ դրաւ, ու զանոնք քաղաքին դրանը հրապարակին մէջ իր քով ժողվեց, և անոնց հետ քաղցրութեամբ խօսեցաւ՝ ըսելով, **7**—Զօրաւոր ու քաջասիրտ եղէք. Ասորեստանի թագաւորին երեսէն, ու անոր հետ եղող բոլոր բազմութեանը երեսէն մի վախնաք ու մի զարհուրիք. վասն զի մեզի հետ եղողները անոր հետ եղողներէն շատ են։ **8**—Անոր հետ մարմնեղէն բազուկ կայ, բայց մեզի հետ Եհովա մեր Աստուածն է, որ պիտի օգնէ մեզի, ու մեր [4]պատերազմներուն մէջ առաջնորդութիւն պիտի ընէ։ Ու ժողովուրդը Յուդայի եզեկիա թագաւորին խօսքերէն սիրտ առաւ։

9—Ակի ետև Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը, երբ ինք ու իր բոլոր էշխաններն Լաքիսի վրայ էին, իր ծառաները Երուսաղէմ զրկեց Յուդայի եզեկիա թագաւորին ու Նրուսաղէմ եղող բոլոր Յուդայի՝ ըսելով, **10**—Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը այսպէս կ'ըսէ. Դուք որո՞ւ ապաւինելով Երուսաղէմ [5]պաշարման մէջ կը նստիք. **11**—Չէ՞ որ եզեկիա ձեզ գլխէ կը հանէ. որպէս զի ձեզ անօթութեամբ ու ծարաւով մեռնելու մատնէ, ըսելով թէ Մեր Տէր Աստուածը մեզ Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատէ։ **12**—Ասիկա նոյն եզեկիան չէ՞, որ անոր բարձր տեղերը ու սեղանները վերցուց, և Յուդայի ու Երուսաղէմի [6]Եհովիէ—ր—ռ ըսաւ, Միայն մէկ սեղանի առջեւ երկրպագութիւն ըրէք, ու անոր վրայ խունկ ծխեցէք։ **13**—Չէ՞ք գիտեր թէ երկիրներուն ամէն ժողովուրդներուն ի՛նչ ըրի ես ու իմ հայրերս. միթէ այն երկիրներուն ազգաց աստուածները իրենց երկիրները կրցա՞ն իմ ձեռքէս ազատել։ **14**—Իմ հայրերուս քանի՞ին ըրած ազգերուն բոլոր աստուածներուն մէջը իր ժողովուրդը իմ ձեռքէս ազատելու կարող եղաւ, որ ձեր Աստուածը ձեզ իմ ձեռքէս ազատելու կարող ըլլայ։ **15**—Ու հիմա եզեկիա ձեզ չխաբէ, ու ձեզ այդպէս գլխէ չհանէ, անոր մի հաւատաք. վասն զի ոչգի մը կամ թագաւորութեան մը բնաւ մէկ աստուածը իր ժողովուրդը իմ ձեռքէս ու իմ հայրերուս ձեռքէն չկրցաւ ազատել. ա՛լ ընչ որ ձեր Աստուածը ձեզ իմ ձեռքէս ազատէ։ **16**—Ու անոր ծառաները Տէր Աստուծոյ դէմ ու անոր ծառային եզեկիայի դէմ աւելի խօսքեր ալ ըսին։ **17**—Ու Սենեքերիմ Իսրայէլի Տէր Աստուածը մեր Տէրը պատերազմներուն մէջ առաջնորդութիւն պիտի ընէ՝ ու մեր [7]պատերազմներուն մէջ առաջնորդութիւն պիտի ընէ՝ ու ժողովուրդը Յուդայի եզեկիա թագաւորին խօսքերէն սիրտ առաւ։

---

*ՆԵԲ, բանակին

*ԿՈՀ, հաւատարմութեամբ ըրած գործերուն

†ԿՈՀ, սուրբը

‡ԿՈՀ, զօրքը ||ԿՈՀ, ամրոցին

ուածը հայհոյելով ու անոր դէմ խօսելով նամակ գրեց ու բսաւ, ինչպէս երկիներուն ազգաց աստուածները իրենց ժողովրդները իմ ձեռքս չկրցան ազատել, այնպէս Եզեկիայի Աստուածը իր ժողովուրդը իմ ձեռքս պիտի չազատէ։ 18—Ես պարսից վրայ եղող ըրած սաղէմ ժողովուրդին՝ բարձր ձայնով երբայերէնին պատգին, զանոնք վախցընելու ու չխօսելու համար։ 19—Ու երուսաղէմի Աստուծոյն դէմ խօսեցան՝ իբրև երկրի ժողովրդոց աստուածներուն դէմ, որոնք մարդու ձեռագործ են։

20—Ու Եզեկիա թագաւորը և Ամոսի որդին Եսայի մարգարէն այս բանին համար դէպ ի երկինք աղաղակելով աղօթք ըրին։ 21—Ու Տէրը հրեշտակ մը դրկեց, ու Ասորեստանի թագաւորին բանակին մէջ ամէն զօրաւոր կարճիք ու իշխանք ու զօրագլուխը զարկաւ։ և ան նիկա ամօթով իր երկիրը դարձաւ։ ու իր աստուծոյն տունը մտաւ, և իր երանելին եղած որդիները զանիկա հոն սրով սպանցուցին։ 22—Ա յսպէս Տէրը Եզեկիան ու Երուսաղէմի բնակիչները Ասորեստանի Սինեքերիմ թագաւորին ձեռքէն և ամէնուն ձեռքէն ազատեց, ու զանոնք ամէն կողմանէ պաշտպանեց։ 23—Ես շատերը Տէրոջը ընծաներ կը բերէին Երուսաղէմ, ու Ծեզտայի Եզեկիա թագաւորին ալ պատուական բաներ։ ու անկէ ետքը անիկա բոլոր ազգերուն առջև բարձրացաւ։

24—Այն օրերը Եզեկիա մահուան ապրճան հիւանդացաւ, ու Տէրոջը աղօթք ըրաւ։ և Տէրը խօսեցաւ անոր, ու *հրաշք մը ըրաւ անոր։ 25—Ու Եզեկիա իր ընդունած բարիքին փոխարէն չհատուցանեց, վասն զի անոր սիրտը հպարտացաւ։ ուստի անոր վրայ և Ծեզտայի ու Երուսաղէմի վրայ բարկութիւն եկաւ։ 26—Բայց Եզեկիա իր սրտին հպարտու թիւնը համար խոնարհեցաւ, թէ՛ ինք և թէ՛ Երուսաղէմի բնակիչները։ անոր համար Տէրոջը բարկութիւնը Եզեկիայի օրերը անոնց վրայ չեկաւ։

27—Ու Եզեկիա խիստ շատ հարստութիւն ու փառք ունեցաւ։ և անիկա իրեն արծաթի, ականի, պատուական քարերու, խունկերու, ապարանքներու ու ամէն տեսակ ցանկալի անօթներու համար գանձարաններ չունեց։ 28—Ու ցորենի ու գինիի ու իւղի բերքերուն համար չտեսմարաններ, և ամէն տեսակ անասուններու համար ախոռներ, ու հօտերու համար փարախներ չունեց։ 29—Ու քաղաքներ չունեց իրեն, ու շատ ոչխարներ ու արջառներ ստացաւ։ վասն զի Աստուած խիստ շատ ստացուածք տուաւ անոր։ 30—Ու այս Եզեկիան Գեհոնի վերի ջրանցքը գոցեց, ու զանիկա գետ ի վար Դաւիթի քաղաքին արեւմտեան կողմը տղեց։ ու Եզեկիա իր բոլոր գործերուն մէջ յաջողութիւն գտաւ։

31—Բայց երբ Բաբելոնի իշխաններուն դեսպանները անոր ղրկուեցան՝ երկրին մէջ եղած հրաշքը հարցնելու համար, Աստուած զանիկա թողուց որպէս զի փորձէ, ու բոլոր անոր սրտին մէջ եղածը գիտնայ։

32—Ու Եզեկիայի մնացորդ պատմութիւնը ու անոր բարեպաշտութիւնը՝ ահա Ամոսի որդւոյն Եսայի մարգարէին մարգարէութեանը մէջ՝ Ն Ծեզտայի ու Իսրայէլի թագաւորներուն գիրքին մէջ գրուած են։ 33—Ու Եզեկիա իր հայրերուն հետ քնացաւ։ ու զանիկա Դաւիթի որդիներուն ամէնէն բարձր գերեզմաններուն մէջ թաղեցին։ և բոլոր Ցուդա ու Երուսաղէմի բնակիչները պատիւ բրին անոր իր մահուան ատեն։ ու անոր տեղ անոր որդին Մանասէ թագաւոր եղաւ։

ԳԼ. ԼԳ

Մանասէ տասներկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ յիսունհինգ տարի թագաւորութիւն բրաւ։ 2—Ես անիկա Տէրոջը իսրայէլի որդիներուն առջևէն վռնտած ազգերուն գարշելի գործերուն պես Տէրոջը առջև չարութիւն բրաւ։ 3—Ու անիկա իր հօրը Եզեկիայի կործանած բարձր տեղերը նորէն չինեց, ու Բահաղիմի սեղաններ կանգնեց, և Աստարովթի կուռքեր չինեց։ ու երկինքի բոլոր

*Կամ, հրաշալի նշան մը տուաւ

զօրութիւններուն երկրպագութիւն ըրաւ, և անոնց ծառայութիւն բրաւ։ 4—Ու տեղաններ չինեց Տէրոջը տանը մէջ, որուն համար Տէրը ըսած էր թէ իմ անունս յաւիտեան Երուսաղէմի մէջ պիտի ըլլայ։ 5—Ու Տէրոջը տանը երկու գաւիթներուն մէջ երկինքի բոլոր զօրութիւններուն տեղաններ չինեց։ 6—Ու անիկա Ենովմի որդւոյն ձորին մէջ իր որդիները կրակի անցուց, ու գուշակութիւն, հմայութիւն և դիտութիւն կ՚ընէր, և վհուկներ ու նշագէտներ ունէր։ Ն Տէրոջը առջև չատ չարութիւն բրաւ, ու զանիկա բարկացուց։ 7—Ու իր չինած քանդակեալ կուռքը Աստուծոյ տունը դրաւ, որուն համար Աստուած Դաւիթի ու անոր որդւոյն Սողոմոնի ըսեր էր, Իմ անունս այս տունը մէջ ու Իսրայէլի բոլոր ցեղերէն իմ ընտրած Երուսաղէմս մէջ պիտի դնեմ յաւիտեան։ 8—Ես Իսրայէլի ոտքը մէյմըն ալ պիտի չտարժեմ այդ երկրէն որ ես հայրերը հաստատեցի։ միայն թէ անոնք զգուշութեամբ իմ գործ դնեն այն բոլոր օրէնքը, կանոնները, ու պատուիրանները զորանք Մովսէսի ձեռքով անոնց պատուիրեցի։ 9—Բայց Մանասէ Ցուդան ու Երուսաղէմի բնակիչները այնպես մոլորցուց, որ Տէրոջը Իսրայէլի որդիներուն առջևէն կորնչացուցած ազգերէն աւելի չարութիւն ըրին։ 10—Ես Տէրը Մանասէի ու անոր ժողովրդին խօսեցաւ, բայց անոնք մտիկ չըրին։

11—Ես Տէրը անոնց վրայ Ասորեստանի թագաւորին զօրագլուխները բերաւ։ ու Մանասէն կարթերով բռնեցին, և զանիկա ոտնակապերով կապեցին ու Բաբելոն տարին։ 12—Ու անիկա իր նեղութեան ատենը իր Տէր Աստուծոյն երեսը խնդրեց, և իր հայրերուն Աստուծոյն առջև մեծապես խոնարհեցաւ։ 13—Ու անոր աղօթք ըրաւ։ և Տէրը անոր աղօթքը ընդունեց ու աղաչանքը լսեց, ու զանիկա Երուսաղէմ իր թագաւորութեանը գարձուցի։ Այն ատեն Մանասէ խնդացաւ որ Եհովա է Աստուած։ 14—Ես ասկէ ետքը Դաւիթի քաղաքին դուրսը, Գեհոնի արեւմտեան կողմը հեղեղատին մէջ, ու մինչև Ձկան գրանը բերանը պարիսպ մը չինեց, Ոփային ալ մէկը առնելով, ու զանիկա չատ բարձրացուց, և Ցուդայի բոլոր պատպատուր քաղաքներուն մէջ զօրքի իշխաններ գրաւ։ 15—Ու օտար աստուածները ու կուռքը Տէրոջը տունէն վերցուց, ու Տէրոջը տանը լեռանը վրայ ու Երուսաղէմի մէջ իր չինած բոլոր սեղանները Ա֊ր֊ց և քաղաքէն դուրս նետեց։ 16—Ու Տէրոջը սեղանը չինեց, և անոր վրայ խաղաղութեան ու շնորհակալութեան զոհեր մատուց, և Ցուդայի պատուիրեց որ Իսրայէլի Տէր Աստուծոյն ծառայութիւն ընեն։ 17—Սակայն ժողովուրդը տակաւին բարձր տեղերը վրայ զոհ կը մատուցանէին, Ի֊ր միայն իրենց Տէր Աստուծոյն։

18—Ես Մանասէի մնացորդ պատմութիւնը, ու իր Աստուծոյն ըրած աղօթքը, ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անունովը անոր խօսող տեսանողներուն խօսքերը ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց ԷԲ֊ԻՒ֊Ն մէջ գրուած են։ 19—Ու անոր աղօթքը և ընդունելը ու անոր բոլոր մեղքը ու յանցանքը, և այն տեղերը՝ ուր իր գարձի գաւազանները կանգնեց, ու քանդակուած կուռքեր կանգնեց, ահա *Հոզայի ժամանակագրութեան մէջ գրուած են։ 20—Ես Մանասէ իր հայրերուն հետ քնացաւ։ ու զանիկա իր տանը մէջ թաղեցին։ և անոր տեղ անոր որդին Ամոն թագաւոր եղաւ։

21—Ամոն քսանևերկու տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ երկու տարի թագաւորութիւն բրաւ։ 22—Ու Տէրոջը առջև չարութիւն բրաւ իր հօրը Մանասէի բրածին պէս։ և իր հօրը Մանասէի չինած բոլոր կուռքերուն Ամոն զոհ մատուց, ու անոնց ծառայութիւն բրաւ։ 23—Բայց Տէրոջը առջև չխոնարհեցաւ, ինչպէս իր հայրը Մանասէ խոնարհեր էր։ մանաւանդ այս Ամոնը աւելի չանցանք գործեց։ 24—Ու իր ծառաները գաւաճանութիւն ընելով իրեն դէմ, ու զանիկա իր տանը մէջ սպանցուցին։ 25—Ու երկրին ժողովուրդը

*Կամ, տեսանողներուն

վու[ր]դը Աման թագաւորին դէմ դաւաճանութիւն ընդդէմ Իսրայէլի. ու երկրին Ժողովուրդը անոր որդին Յովսիան անոր տեղ թագաւոր դրին։

ԳԼ. ԼԴ

Յովսիա ութ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ երեսունըմէկ տարի թագաւորեց։ **2**—Ու անիկա Տէրոջը առջեւ ուղղութիւն բրաւ, ու իր հօրը Դաւիթի ճամբաներուն մէջ գնաց, ու ալ կամ ձախ դարձի չխոտորեցաւ։

3—Ու իր թագաւորութեանը ութերորդ տարին երբ դեռ ինք պատանի էր, իր հօրը Դաւիթի Աստուածը խնդրել սկսաւ. ու երկուտասաներորդ տարին՝ Յուդան ու Երուսաղէմը բարձր տեղերէն, Աստարովթի կուռքերէն և քանդակուած ու ձուլածոյ կուռքերէն մաքրել սկսաւ։ **4**—Ու Բահաղիմի սեղանները անոր առջեւ կործանեցին. ու անոնց վրայի արեգական կուռքերը կոտրտեց, և Աստարովթի կուռքերը ու քանդակուած և ձուլածոյ կուռքերը մանրուց ու փշրեց, ու անոնց գոհ մատուցանողներուն գերեզմաններուն վրայ ցանեց։ **5**—Ու քուրմերուն ոսկորները անոնց սեղաններուն վրայ այրեց, ու Յուդան ու Երուսաղէմը մաքրեց։ **6**—Ու Մանասէի ու Եփրեմի ու Շմաւոնի քաղաքներուն մէջ մինչև Նեփթաղիմ, *և անոնց բոլորտիքը եղած աւերակ տեղերը Նայեցէք ըսա՝։ **7**—Ու սեղանները և Աստարովթի կուռքերը կործանեց, ու քանդակուած կուռքերը մանրեց ու փշրեց, և Իսրայէլի բոլոր երկրին մէջ եղող բոլոր արեգական կուռքերը կտրտեց, ու Երուսաղէմ գնաւ։

8—Ու իր թագաւորութեանը տասներութերորդ տարին երբ երկիրը ու էբ տաճարը մաքրեց, Եսելիայի որդին Սափանը ու քաղաքին իշխանը Մասեան ու Յովախազի որդին Յովախը, յիշատակագիրը, զրկեց, որպէս զի իր Տէր Աստուծոյն տաճարը նորոգեն։ **9**—Ու անոնք Բեզկիա քահանայապետին եկան ու Աստուծոյ տաճարը բերուած ոսկիը *առին, զոր Ղեւտացիները, դրան պահապանները, Մանասէի ու Եփրեմի ձեռքէն և Իսրայէլի բոլոր մնացորդէն ու բոլոր Յուդայէ ու Բենիամինէ ու Երուսաղէմի բնակիչներէն ժողվեր էին։ **10**—Ու Տէրոջը տանը էբէնէն վրայ գրուած բանուորներուն ձեռքը տուին. անոնք ալ Տէրոջը տանը մէջ գործող բանուորներուն տուին զանիկա՝ տունը նորոգելու ու չինելու համար։ **11**—Այսինքն հիւսներուն ու չինողներուն տուին, որպէս զի Յուդայի թագաւորներուն ապրած տունները չինելու համար տաշուած քարեր, ու գերաններու համար վայտեր ծախու առնեն։ **12**—Ու այն մարդիկը գործը հաւատարմութեամբ կը բանեցնէին. ու էբէնէը յառաջ տանելու համար անոնց վրայ կեցողները Մերարիի որդիներէն՝ Ղեւտացի Յեթ ու Աբդիա, և Կահաթեանց որդիներէն Զաբարիա և Մեսուղամ էին. նաև Ղեւտացիները, երգող նուագարաններուն տղէտ մեծ եղողներուն ամէն։ **13**—Նաև բեռնակիրներուն ու ամէն տեսակ գործը բանողներուն վերակացուներն էին, և դպիրներըն, ոստիկաններըն ու դռնապաններըն Ղեւտացիներէն էին։

14—Ու երբ Տէրոջը տունը բերուած սոսկը կը հանէին, Բեզկիա քահանան Մովսէսի ձեռքով տրուած Տէրոջը օրինաց գիրքը գտաւ. **15**—Ու Բեզկիա պատասխան տուաւ ու Սափան դպիրին բսաւ, Տէրոջը տանը մէջ օրինաց գիրք մը գտայ. ու Բեզկիա այն գիրքը Սափանին տուաւ։ **16**—Ու Սափան գիրքը թագաւորին տարաւ, ու թագաւորին պատասխան բերաւ՝ բսելով, Ձու ծառաներդ իրենց յանձնուած բոլոր էբէնէը կը կատարեն. **17**—Ու Տէրոջը տանը մէջ գտնուած սոսկը հանեցին, ու զանիկա վերակացուներուն ձեռքը ու գործը բանողներուն ձեռքը տուին։ **18**—Ու Սափան դպիրը թագաւորին պատմեց ու բսաւ, Բեզկիա քահանան ինծի գիրք մը տուաւ. ու Սափան անոր մէկէն թագաւորին առջեւ կարդաց։ **19**—Ու թագաւորը օրինաց խօսքերը լսածին պէս

*Կամ, չուրջանակի անոնց տաւները փնտռեց

*Եբր. տուին

իր հանդերձները պատռեց։ **20**—Ու թագաւորը Բեզկիայի, ու Սափանի որդւոյն Աքիկամի, ու Միքայի որդւոյն Աբդոնի, և Սափան դպիրին, ու թագաւորի ծառային Ասայիայի պատուիրեց ու բսաւ, **21**—Գացէք ինծի համար, և Իսրայէլի ու Յուդայի մնացորդներուն համար այս գտնուած գիրքին խօսքերուն վրայով Տէրոջը հարցուցէք վասն զի մեր հայրերուն Տէրոջը խօսքը չպահելուն համար, և այս գիրքին մէջ բոլոր գրուածները չկատարելուն համար մեր վրայ թափուած Տէրոջը բարկութիւնը մեծ է։ **22**—Ու Բեզկիա և թագաւորին մարդիկը Աբայի որդւոյն Թեկուայի որդւոյն Սեղգամ հանդերձապահին կնոջ, Ողդա մարգարէուհիին, գացին. և անիկա Երուսաղէմ Մասենայի մէջ կը բնակէր. ու անոր հետ այնպէս խօսեցան։

23—Ու անիկա բսաւ անոնց, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ձեզ ինծի ղրկող մարդուն բսէք, Տէրը այսպէս կ'ըսէ. **24**—Ահա ես այս տեղին ու անոր բնակիչներուն վրայ չարիք պիտի բերեմ, այսինքն այն բոլոր անէծքները, որոնք Յուդայի թագաւորին առջեւ կարդացած գիրքին մէջ գրուած են. **25**—Որովհետեւ զիս թողուցին և ուրիշ աստուածներու համար ծխեցին, որպէս զի իրենց ձեռքերուն բոլոր գործերովը զիս բարկացնեն. ուստի այս տեղին վրայ իմ բարկութիւնս պիտի թափի ու պիտի չմարի։ **26**—Բայց Տէրոջը հարցնելու համար ձեզ ղրկող Յուդայի թագաւորին այսպէս բսէք, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ նամ խօսքերուդ համար. **27**—Որովհետեւ քու սիրտդ կակղացաւ, ու Աստուծոյ առջեւ խոնարհեցար, երբ այս տեղին վրայ ու անոր բնակիչներուն վրայ անոր ըսած խօսքերը լսեցիր, և իմ առջեւս խոնարհեցար, ու հանդերձներդ պատռեցիր ու իմ առջեւս լացիր, ես ալ լսեցի, Ի'րսէ Տէրը։ **28**—Ահա ես քեզ քու հայրերուդ պիտի խառնեմ, ու խաղաղութեամբ քու գերեզմանիդ մէջ պիտի ամիրափես. և այս տեղին վրայ ու անոր բնակիչներուն վրայ իմ բերելու բոլոր չարիքներս քու աչքերդ պիտի չտեսնեն։ Ու անոնք թագաւորին պատասխան բերին։

29—Ու թագաւորը ղրկեց, ու Յուդայի ու Երուսաղէմի բոլոր ծերերը ժողվեց։ **30**—Ու թագաւորը ու Յուդայի բոլոր մարդիկը ու Երուսաղէմի բնակիչները և քահանաները և Ղեւտացիները ու բոլոր ժողովուրդը, մեծէն մինչև պզտիկը, Տէրոջը տունը ելան. և Տէրոջը տանը մէջ գտնուած ուխտի գիրքին բոլոր խօսքերը անոնց *առէնք կարդաց։ **31**—Ու թագաւորը իր տեղը տաքի վրայ կայնեցաւ, ու Տէրոջը առջեւ ուխտ ըրաւ, որպէս զի այն գիրքին մէջ գրուած ուխտին խօսքերը կատարելու համար Տէրոջը եսեւէն երթայ, և անոր պատուիրանքները ու վկայութիւնները ու կանոնները բոլոր սրտով ու բոլոր հոգիով պահէ։ **32**—Ու Երուսաղէմի ու Բենիամինի մէջ բոլոր գտնուղները կացնեցուց. ու Երուսաղէմի բնակիչները Աստուծոյ, իրենց հայրերուն Աստուծոյն, ուխտին պէս ըրին։ **33**—Ու Յովսիա Իսրայէլի որդիներուն ամէն երկիրներէն բոլոր գարշութիւնները վերցուց, ու բոլոր Իսրայէլի մէջ գտնուղներուն իրենց Տէր Աստուծոյն ծառայութիւն ընել տուաւ. անոր կենդանի բոլոր օրերուն մէջ իրենց հայրերուն Տէր Աստուծմէն չխոտորեցան։

ԳԼ. ԼԵ

Ու Յովսիա Երուսաղէմի մէջ Տէրոջը զատիկ բրաւ. ու զատիկը առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը մորթեցին։ **2**—Ու քահանաները իրենց պաշտօնութիւնը վրայ կայնեցուց, ու զանոնք Տէրոջը տանը ծառայութիւնը ընելու քաջալերեց։ **3**—Ու բոլոր Իսրայէլի սրբեցնող ** Տէրոջը նուիրուած Ղեւտացիներուն բսաւ, Սուրբ տապանակը Իսրայէլի Թագաւորին, Դաւիթի որդւոյն Սողոմոնի, չինած տունը դրէք, ձեր ուսերուն վրայ բեռ չըլլայ. ** հիմա ձեր Տէր Աստուծոյն ու անոր ժողովուրդին Իսրայէլի ծառայութիւն ըրէք։ **4**—Ու ձեր ազգատոհմիներովը ու ձեր դասերովը՝ Իսրայէլի Թագաւորին Դաւիթի գրուածին պէս ու անոր որդւոյն Սողոմոնի

*Եբր. ականջներուն

գրածին պէս պատրաստ եղէք։ 5—Եւ ձեր եղբայրներուն, Ժողովուրդին որդւոցը ասմէրուն, որոշուն քներուն հաւատամատ ու Ղեւտացւոց ազգատոհմներուն բաժանմունքներուն համեմատ սրբարարանին մէջ կայնեցէք։ 6—Եւ զատիկը մորթեցէք ու սրբացեցէք ու ընկերներ ձեր եղբայրներուն համար պատրաստեցէք, որպէս որ անոնք Տէրոջը Մովսէսի ձեռքով ըսած խօսքին պէս բնան։ 7—Եւ Յովսիա բոլոր հոն գտնուող Ժողովուրդին որդիներուն՝ հօտերէն երեսուն հազար գառ ու այծի ձագ պարգեւեց, ամէնն ալ զատկի համար, նաև երեք հազար արջառ։ասոնք թագաւորին սեպհականէն էին։ 8—Իր իշխաններն ալ Ժողովուրդին, քահանաներուն ու Ղեւտացիներուն յօժարութեամբ պարգեւ տուին։ Աստուծոյ տանը իշխաններըն, Քեղկիա, Զաքարիա ու Եհիէլ, զատկի համար երկու հազար վեց հարիւր գառ ու երեք հարիւր արջառ քահանաներուն տուին։ 9—Եւ Քոնոնիա ու անոր եղբայրները, Սեմայիա ու Նաթանայէլ, ու Ղեւտացւոց իշխանները, Ասաբիա, Եհիէլ և Յովզաբադ, զատկի համար Ղեւտացիներուն հինգ հազար գառ ու հինգ հազար արջառ պարգեւեցին։

10—Եւ պաշտօնը պատրաստուեցաւ, ու թագաւորին հրամայածին պէս, քահանաները իրենց կարգին համեմատ ու Ղեւտացիները իրենց դասերուն համեմատ կայնեցան։ 11—Եւ զատիկը կը մորթէին, ու քահանաները անոնց ձեռքէն արիւնը սրսկելով կը պահէին. իսկ Ղեւտացիները մորթը կը հանէին, 12—Եւ ողջակէզ ըլլալու համբէը կը զատէին, ու զանազան ժողովուրդին որդիներուն, ազգատոհմներուն համեմատ, կը բաժնէին, որպէս որ Տէրոջը մատեանին Մովսէսի գիրքին մէջ գրուածին պէս։ արջառներուն ալ այսպէս կ'ընէին։ 13—Եւ զատիկը ըստ սովրութեան կրակով խորովեցին։ բայց նուիրուած բաները կաթսաներով, ամաներով ու ապակիներով եփեցին, ու չուռով բաժնեցին զանոնք բոլոր ժողովուրդին որդիներուն։ 14—Եւ իրենց ու քահանաներուն համար եարը պատրաստեցին. քանզի Ահարոնի որդիները, քահանաները, մինչև գիշեր ողջակէզները ու ճարպերը մատուցանելու զբաղած էին. ուստի Ղեւտացիները իրենց համար և Ահարոնի որդիներուն, քահանաներուն, համար պատրաստեցին։ 15—Իսկ Ասաբի որդիները, երգեցողները, Դաւիթի ու Ասաբի ու Եմանի և թագաւորական տեսանող Իդիթունի պատուիրածին համեմատ իրենց տեղը՝ ու դռնապաններն ամէն մէկ դուռը կ'այրէր էին. պէտք չեղաւ որ իրենց պաշտօնէն զատուին. վասն զի անոնց համար անոնց եղբայրները, Ղեւտացիները, կը պատրաստէին։ 16—Եւ Յովսիա թագաւորին հրամայածին պէս՝ այն օրը Տէրոջը ամէն պաշտօնը կարգի դրուեցաւ, զատիկը ընելու ու ողջակէզները Տէրոջը սեղանին վրայ մատուցանելու համար։ 17—Եւ այն ատեն հոն գտնուող Իսրայէլի որդիները զատիկը ու բաղարջակերաց տօնը եօթը օր ըրին։ 18—Եւ Սամուէլ մարգարէին օրերէն ի վեր Իսրայէլի մէջ ասոր պէս զատիկ մը չեղաւ. ու Յովսիայի ու քահանաներուն ու Ղեւտացիներուն և բոլոր հոն գտնուող Յուդայի ու Իսրայէլի ու Երուսաղէմի բնակիչներուն ըրած զատիկին պէս Իսրայէլի բոլոր թագաւորները ըրած չէին։ 19—Այս զատիկը Յովսիայի թագաւորու թեան տասնըութերորդ տարին եղաւ։

20—Այս ամէն բաներէն ետքը, ու Յովսիայի տաճարին էրբէսըրէ՛ն հաստատուելէն ետքը, Եգիպտոսի Նեքաւով թագաւորը Եփրատ գով Քարքամիս քաղաքին դէմ պատերազմելու եկաւ. ու Յովսիա զանիկա դիմաւորելու գնաց։ 21—Իսկ անիկա դեսպաններ ղրկեց անոր ու բսաւ, Ով Յուդայի թագաւոր, դուն ինծի հետ ի՞նչ գործ ունիս. ես այսօր քեզի դէմ եկած չեմ, հապա ինծի հետ պատերազմ ընող տանը դէմ. ու Աստուած ինծի հրամայեց որ չուտով ընեմ. ինծի հետ եղող Աստուածմէն հոս կեցիր, որպէս զի քեզ չկորնչեցնէ։ 22—Բայց Յովսիա իր երեսը անկէ չդարձուց հապա անոր հետ պատերազմելու *հնարքներ իր հագուստը փոխեց՝ ու մարկ չբաւ Նեքաւովի խօսքը, որ Աստուծոյ բերնէն էր, ու Մակիդդովի հովիտը պատերազմելու գնաց։ 23—Եւ ուղղնաւորները Յովսիա թագաւորը նետով զարկին, ու թագաւորը իր ծառաներուն բսաւ, Ձես վիրաւորեցէք ՚ւէ, վասն զի ասոնք վիրաւորուեցայ։ 24—Եւ իր ծառաները զանիկա կառքէն հանեցին, ու իր երկրորդ կառքը հեծցնելով երուսաղէմ տարին. և անիկա մեռաւ, ու իր հայրերուն գերեզմաններուն մէջ թաղուեցաւ. և բոլոր Յուդա ու Երուսաղէմ Յովսիայի վրայ սուգ ըրին։ 25—Ու Երեմիա Յովսիայի վրայ ողբ ըսաւ. ու բոլոր երգեցողները, այրեր և կիներ, մինչև այսօր իրենց ողբերուն մէջ Յովսիան կը յիշեն, ու զանոնք Իսրայէլ սովրութիւնը իսրայէլի մէջ սեպհական եղան։ և ահա ողբերուն մէջ գրուած են։

26—Եւ Յովսիայի մնացորդ պատմութիւնը, ու անոր՝ Տէրոջը օրէնքին մէջ գրուածին համեմատ ըրած բարեգործութիւնը, 27—Եւ անոր առաջին ու վերջին պատմութիւնը ահա Իսրայէլի ու Յուդայի թագաւորներուն գիրքին մէջ գրուած են։

ԳԼ. ԼԶ

Ու երկրին ժողովուրդը Յովսիայի որդին Յովահազ առին, ու զանիկա իր հօրը տեղ Երուսաղէմի մէջ թագաւոր դրին։ 2—Յովահազ քսանուերեք տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ երեք ամիս թագաւորութիւն ըրաւ։ 3—Ու Եգիպտոսի թագաւորը զանիկա Երուսաղէմի մէջ ՚ւէնէն վար առաւ, ու երկրին վրայ հարիւր տաղանդ արծաթ ու մէկ տաղանդ ոսկի հարկ դրաւ։ 4—Ու Եգիպտոսի թագաւորը անոր եղբայրը Եղիակիմը Յուդայի ու Երուսաղէմի վրայ թագաւոր դրաւ, և անոր անունը Յովակիմի փոխեց. ու Նեքաւով անոր եղբայրը Յովսիայը առաւ ու Եգիպտոս տարաւ։

5—Յովակիմ քսանըհինգ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասնըմէկ տարի թագաւորութիւն ըրաւ. և անիկա իր Տէր Աստուծոյն առջև չարութիւն բրաւ։ 6—Անոր վրայ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը գաւորը եկաւ, ու զանիկա բաբելոն տանելու համար առնուկապերով կապեց։ 7—Եւ Նաբուգոդոնոսոր Տէրոջը տանը անօթներէն առաւ, ու Բաբելոն տարաւ, ու զանոնք Բաբելոն իր տաճարին մէջ դրաւ։ 8—Եւ Յովակիմի մնացորդ պատմութիւնը, ու անոր ըրած գարշութիւնները, և անոր վրայ գտնուածը ահա Իսրայէլի ու Յուդայի թագաւորներուն գիրքին մէջ գրուած են. ու անոր տեղ անոր որդին Յովքին թագաւոր եղաւ։

9—Յովքին տասնըութ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ երեք ամիս ու տասը օր թագաւորեց. և անիկա Տէրոջը առջև չարութիւն ըրաւ։ 10—Ու հետեւեալ տարին Նաբուգոդոնոսոր թագաւորը ղրկ՚ զրկեց, ու զանիկա Տէրոջը տաճարին պատուական սպասներովը Բաբելոն բերել տուաւ. և Յուդայի ու Երուսաղէմի վրայ անոր հօրը եղբայրը Սեդեկիան թագաւոր դրաւ։

11—Սեդեկիա քսանըմէկ տարեկան էր երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասնըմէկ տարի թագաւորութիւն ըրաւ։ 12—Եւ անիկա իր Տէր Աստուածոյն առջև չարութիւն ըրաւ. ու Տէրոջը բերնէն Եր՚՚ղ երեմիա մարգարէին առջև չխոնարհեցաւ։ 13—Ու նաև ապըստամբեցաւ Նաբուգոդոնոսոր թագաւորին, որ անոր երդումով ընել տուեր էր Աստուծով ՚՚ռ՚՚ռ՚՚վը, ու իր պարանոցը խստացուց ու իր սիրտը կարծրացուց՝ որպէս զի Իսրայէլի Տէր Աստուածոյն չդառնայ։ 14—Գլխաւորները բոլոր իշխանները ու ժողովուրդն ալ ազգերուն բոլոր գարշութիւններուն հետեւելով՝ խիստ շատ անօրէնութիւններ ըրին, ու Տէրոջը երուսաղէմի մէջ սրբած տունը պղծեցին։ 15—Ու անոնց հայրերուն Տէր Աստուածը՝ իր Ժողովուրդին ու իր բնակարանին խնայելուն համար, իր պատգամաւորներուն ձեռքով *յոյժ փութով՝ ա՚՚ր՚՚ր՚՚ր՚՚ն՚՚ռ՚՚ղ կը ղրկէր. 16—Բայց անոնք Աստուծոյ ղ՚՚ճ պատգամաւորները կ'անարգէին, անոր խօսքերը կ'արհամարհէին ու անոր մարգարէները ծաղր կ'ընէին. մինչև որ Տէրոջը բարկութիւնը

*Կամ, փնտռեց

*Եբր. կանուխ եւ ղրկելով

իր ժողովուրդին վրայ բարձրացաւ, այնպէս որ ա՛լ բժշկութիւն չմնաց։ 17—Եւ անոնց վրայ Բաղդէացւոց Թագաւորը հանեց. անոնք ալ անոնց երիտասարդները անոնց սրբարանին մէջ սրով մեռցուց. ու երիտասարդին ու կոյսին, ծերին ու ալեւորին չխնայեց. ամէնն ալ Տէրը անոր ձեռքը մատնեց։ 18—Ու Աստուծոյ տանը բոլոր մեծ ու պզտիկ անօթները, ու Տէրոջը տանը գանձերը, և Թագաւորին ու անոր իշխաններուն գանձերը՝ ամէնն ալ Բաբելոն տարաւ։ 19—Ու Աստուծոյ տունը այրեցին, ու Երուսաղէմի պարիսպը վկլցուցին, ու անոր պալատները կրակով այրեցին, ու բոլոր գեղեցիկ բաները աւերեցին։ 20—Ու սուրէն փախած մնացորդները Բաբելոն գերի տարաւ. ու անոնք ու անոր որդիները իրեն ծառաներ եղան, 21—մինչեւ որ Պարսից թագաւորութիւնը տիրեց։ Տէրոջը խօսքը կատարուի, մինչեւ երկիրը իր շաբաթները վայելէ։ Ինչ ատեն բոլոր օրերը շաբաթ պահեց՝ մինչեւ եօթանասուն տարիին լմննալը։

22—Ու Պարսից Կիւրոս Թագաւորին առաջին տարին, որպէսզի բերանով Տէրոջը խօսքին *կատարուելուն համար՝ Տէրը Պարսից Կիւրոս Թագաւորին հոգին արթնցուց. ու անիկա իր բոլոր Թագաւորութեանը մէջ հրատարակել տուաւ, ու նաև գրով՝ ըսելով.

23—Այսպէս կ՚ըսէ Կիւրոս, Պարսից Թագաւորը. Երկինքի Եհովա Աստուածը երկրի բոլոր Թագաւորութիւնները ինծի տուաւ. ու անիկա ինծի պատուիրեց որ Ցուդայի Երուսաղէմի մէջ անոր տուն մը շինեմ։ Ձեր մէջ ով որ անոր բոլոր ժողովուրդէն է, իր Աստուածը իրեն հետ ըլլայ, ու ելլէ։

*կամ, կատարուելուն պէս

ԳԻՐՔ ԵԶՐԱՍԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Եւ Պարսից Կիւրոս Թագաւորին առաջին տարին, Երեմիայի բերնով ըսուած Տէրոջը խօսքին *կատարուելուն համար՝ Տէրը Պարսից Կիւրոս Թագաւորին հոգին արթնցուց. ու անիկա իր բոլոր Թագաւորութեանը մէջ հրատարակել տուաւ, ու նաև գրով՝ ըսելով.

2—Այսպէս կ՚ըսէ Կիւրոս, Պարսից Թագաւորը. Երկինքի Եհովա Աստուածը երկրի բոլոր Թագաւորութիւնները ինծի տուաւ. ու անիկա ինծի պատուիրեց որ Ցուդայի Երուսաղէմի մէջ անոր տուն մը շինեմ։ 3—Ձեր մէջ ով որ անոր բոլոր ժողովուրդէն է, իր Աստուածը իրեն հետ ըլլայ, ու Ցուդայի Երուսաղէմը ելլէ, և Իսրայէլի Եհովա Աստուածին, այն Երուսաղէմի մէջ եղող Աստուածին, տունը շինէ։ 4—Ու անոր քաղաքացիները, այսինքն բոլոր մնացողները, իրենց պանդխտութեանը տեղէն արծաթով, ոսկիով, ապրանքով ու անասուններով անոր օգնութիւն ընեն, Երուսաղէմի մէջ եղող Աստուածին տանը համար պրոյէ կամաւոր ընծաներէն զատ։

5—Այն ատեն Ցուդայի ու Բենիամինի տոհմերուն իշխանները, և քահանաները ու Ղեւտացիները ոտք ելան այն բոլոր հոգիին հետ որոնց հոգին Աստուած արթնցուցեր էր, որպէս զի ելլեն ու Երուսաղէմ եղող Տէրոջը տունը շինեն։ 6—Ու անոնց բոլորտիքը եղողները ամէնը բոլոր կամաւոր ընծաներէն զատ արծաթէ անօթներով, ոսկիով, ապրանքով ու անասուններով և պատուական պարգեւներով անոնց †օգնութիւն բրին։

7—Ու Կիւրոս Թագաւորը Տէրոջը տանը անօթները հանեց, զորոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէ հանելով՝ իր աստուծոյն տունը դրեր էր։ 8—Պարսից Կիւրոս Թագաւորը զանոնք Միթրիդատ գանձապետին ձեռքով հանել տուաւ, ու զանոնք համրանքով Ցուդայի Սանբասար նախարարին յանձնեց։ 9—Ու այս էր անոնց թիւը. ոսկեայ տասը կոնձ, հազար արծաթեղէն կոնձ, քսանըինը դանակ։ 10—ոսկեայ տասը, չորս հարիւր տասը արծաթի տասը՝ երկրորդ կարգէն, և հազարաւոր ուրիշ անօթներ։ 11—Բոլոր ոսկիէ ու արծաթէ սպասները հինգ հազար չորս հարիւր էին։ Ասոնց ամէնը Սանբասար Բաբելոնի գերութենէն Երուսաղէմ ելլողներուն հետ հանեց։

ԳԼ. Բ

Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին Բաբելոն տարած գերիներէն ելլող գաւառի բնակիչները ատոնք էին, որոնք Երուսաղէմ ու Ցուդա դարձան, ամէն մէկը իր քաղաքը։ 2—Ու Զօրաբաբելի, Յեսուի, Նէեմիայի, Սարայիայի, Հռէելիայի, Մուրդքէի, Բաղսանի, Մասփարի, Բագուէի, Հռէումի ու Բաանայի հետ եկան։ Ու այս էր իսրայէլի ժողովուրդին մարդոցը թիւը. 3—Փոռոսի որդիները երկու հազար հարիւր եօթանասուներկու. 4—Սափատիայի որդիները երեք հարիւր եօթանասուներկու. 5—Արահի որդիները եօթը հարիւր եօթանասունհինգ. 6—Փահաթ-Մոաբի որդիները, Յեսուի ու Յովաբի որդիներէն, երկու հազար ութ հարիւր տասներկու. 7—Ելդամի որդիները հազար երկու հարիւր չիսունչորս. 8—Զաթուի որդիները ինը հարիւր քառասունհինգ. 9—Զաքքայի որդիները եօթը հարիւր վաթսուն. 10—Բանիի որդիները վեց հարիւր քառասուներկու. 11—Բեբայի որդիները վեց հարիւր քսանուրեք. 12—Ազգադի որդիները

†Եբր. ձեռքերը ուժովցուցին

հազար երկու հարիւր քսանուերկու. 13—Ագանիկամի որդիները վեց հարիւր վաթսունվեց. 14—Բագուէի որդիները երկու հազար յիսունվեց. 15—Ադինի որդիները չորս հարիւր յիսունչորս. 16—Աատերի որդիները Եզեկիայէ իննսունմեր. 17—Բեսէյի որդիները երեք հարիւր քսաներեք. 18—Յորայի որդիները հարիւր տասներկու. 19—Հասումի որդիները երկու հարիւր քսանուերեք. 20—Գաբերի որդիները իննսունհինգ. 21—Բեթղէհէմի որդիները հարիւր քսաներեք. 22—Նետոփայի մարդիկը յիսունվեց. 23—Անաթովթի մարդիկը հարիւր քսանութ. 24—Ազմաթի որդիները քառասունեւերկու. 25—Կարիաթարիմի, Կեփիրայի ու Բեէրովթի որդիները եօթը հարիւր քառասունեւերկու. 26—Ռամայի ու Գաբայի որդիները վեց հարիւր քսանվեց. 27—Մագմասի մարդիկը հարիւր քսաներկու. 28—Բեթէլի ու Գայէի մարդիկը երկու հարիւր քսան հոգի. 29—Նաբոսի որդիները յիսունեւերկու. 30—Մագբիսի որդիները հարիւր յիսունվեց. 31—Միւս Եղամի որդիները հազար երկու հարիւր յիսունչորս. 32—Հարիմի որդիները երեք հարիւր քսան. 33—Ղոդի, Ագիդի ու Ովնովի որդիները եօթը հարիւր քսաներհինգ. 34—Երիքովի որդիները երեք հարիւր քառասունհինգ. 35—Սենասայի որդիները երեք հազար վեց հարիւր երեսուն։

36—Քահանաները, Յեսուի տունէն Յեդայիայի որդիները ինը հարիւր եօթանասունեւերեք. 37—Իմմերի որդիները հազար յիսունեւերկու. 38—Փասուրի որդիները հազար երկու հարիւր քառասունեւօթը. 39—Հարիմի որդիները հազար տասնեւօթն էին։

40—Ղեւտացիները, Ովդովայի որդիներէն, Յեսուէ ու Կադմիէլի որդիները եօթանասունչորս էին։

41—Երգեցողները, Ասափի որդիները, հարիւր քսաներեք էին։

42—Դռնապաններուն որդիները, Սեղղումի որդիները, Աատերի որդիները, Յեղմոնի որդիները, Ակկուբի որդիները, Ատիտայի որդիները, Սուբայի որդիները՝ ամէնը հարիւր երեսունվեցին էին։

43—Նաթինացիները՝ Սիհայի որդիները, Ասուփայի որդիները, Տաբաոթի որդիները, 44—Կերոսի որդիները, Սիայի որդիները, Փադոնի որդիները, 45—Ղեբանայի որդիները, Ագաբայի որդիները, Ակկուբի որդիները, 46—Ագաբի որդիները, Սաղմայի որդիները, Անանի որդիները, 47—Գեդդէլի որդիները, Գաազի որդիները, Ռեայիայի որդիները, 48—Ռասինի որդիները, Նեկոդայի որդիները, Գազամի որդիները, 49—Ոզայի որդիները, Փասեէի որդիները, Բասիի որդիները, 50—Ասենայի որդիները, Մաւնիմի որդիները, Նեփուսիմի որդիները, 51—Բակբուկի որդիները, Ակուփայի որդիները, Արսուրի որդիները, 52—Բասղոթի որդիները, Մեհիդայի որդիները, Արսայի որդիները, 53—Բարկոսի որդիները, Սիսարայի որդիները, Թամայի որդիները, 54—Նեսիայի որդիները, Ատիփայի որդիները, 55—Սողոմոնի ծառաներուն որդիները, Սոտէի որդիները, Սոփերաթի որդիները, 56—Փարիդայի որդիները, Յեղայի որդիները, Դերկոնի որդիները, 57—Գեդդէլի որդիները, Սափփատիայի որդիները, Ատտիլի որդիները, Փոքրաթ-ասեփայիմի որդիները, Ամիի որդիները։ 58—Բոլոր Նաթինայիմները ու Սողոմոնի ծառաներուն որդիները երեք հարիւր իննսունեւերկու էին։

59—Ու Թելմելոյէ, Թելղարսայէ, Քերուբ, Ադդանէ ու Եմմերէ հկղզնները սասնք էին, և իրենց հայրերուն տունը ու իրենց սերունդը, այսինքն Իսրայէլէ ըլլալնին, ցուցնելու կարող չէղան, 60—Գազայիայի որդիները, Տոբիայի որդիները ու Նեկոդայի որդիները վեց հարիւր յիսունեւերկու մարդ։ 61—Ու քահանաներուն որդիներէն՝ Ասայայի որդիները, Ակկոսի որդիները, Բերզելլի որդիները, որ Գաղաադացի Բերզելլիի աղջիկներէն կին առնելով՝ անոնց անունովը կոչուեցաւ։ 62—Ասոնք իրենց ազգաբանութեան գիրքը փնտռեցին, բայց չգրցան գտնել. ու անհաբէր սեպուելով՝ քահանայութենէ արգիլուեցան։ 63—Ու *Աթարատան ըսաւ, Մինչև որ Ուրիմով ու Թումիմով քահանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ բաներէն չուտեն։

64—Բոլոր ժողովքը միասին քառասունեւերկու հազար երեք հարիւր վաթսուն հոգի էր. 65—բաց ի անոնց ծառաներէն ու աղախիններէն, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսունեւեօթն էին. ու անոնց մէջ երկու հարիւր այր և կին երգեցողներ կային։ 66—Անոնց ձիերը եօթը հարիւր երեսունվեց, ջորիները երկու հարիւր քառասունհինգ, 67—ուղտերը չորս հարիւր երեսունհինգ ու էշերը վեց հազար եօթը հարիւր քսան էին։

68—Ու առնելու իշխաններէն մէկուն երբ նուիրեցին եղող Տէրոջը տունը գացին, Աատուծոյ տանը կանգուր ընծաները տունն, որպէս զի զանիկա իր *տեղը հաստատեն։ 69—Անոնք իրենց կարողութեանը չափ վաթսունվեմկ հազար դրամ ոսկի, ու հինգ հազար մնաս արծաթ, ու հարիւր քահանայական պատմուճան տուին գործաւորութեան գանձին։ 70—Ու քահանաները ու Ղեւտացիները ու ժողովուրդէն եղողները, երգեցողները, դռնապաններն և Նաթինայիմները իրենց քաղաքներուն մէջ, ու բոլոր Իսրայէլ իրենց քաղաքներուն մէջ բնակեցան։

Գլ. Զ

Ու երբ եօթներորդ ամիսը հասաւ, Իսրայէլի որդիները էրէոց քաղաքներուն մէջ էին. ու ժողովուրդը մէկ մարդու պէս Երուսաղէմի մէջ ժողովեցան։ 2—Ու Յովսեդեկեան Յեսուա ու անոր քահանայ եղբայրները, և Սաղաթիէլեան Զօրաբաբէլ ու անոր եղբայրները ելան, ու Իսրայէլի Աատուծոյն սեղանը չինեցին, որպէս զի անոր վրայ ողջակէզներ մատուցանեն, ինչպես Աատուծոյ մարդուն Մովսէսի օրինաց էէրէն *մէջ գրուած է։ 3—Ու սեղանը իր տեղը չինեցին. վասն զի այն երկիրներուն ժողովուրդներէն կը վախնային. և անոր վրայ Տէրոջը ողջակէզներ մատուցին, առաւօտեան ու երեկոյեան ողջակէզները։ 4—Ու տաղաւարատաց տօնը գրուածին պէս կատարեցին. ու ամէն օրուան ողջակէզները էէնէց թիւովը օր օր հրամայուածին պէս մատուցին։ 5—Ու անկէ ետքը մշտնջենաւոր ողջակէզը, ու ամսագլուխներու ու Տէրոջը ամէն սուրբ տօներուն ողջակէզները մատուցին. նաև այն կամաւոր ընծաները՝ զորեղ ամէն մարդ յօժար սրտով Տէրոջը կը մատուցանէր։ 6—Եօթներորդ ամսուն առաջին օրն Տէրոջը ողջակէզներ մատուցանելու սկսան. բայց Տէրոջը տաճարին հիմը գովուխն դրուած չէր։ 7—Ու քարհատներուն ու հիւսերուն տակի, ու Սիդոնացւոց և Տիւրացւոց ուտելիք ու խմելիք ու իւղ տուին, որպէս զի Լիբանանէ ծովով եղեւնափայտեր Յոպպէ բերեն, ինչպես Փարսից կիւրոս Թագաւորը անոնց արտօնեցին։

8—Ու անոնց Երուսաղէմ՝ Աատուծոյ տունը գալուն երկրորդ տարին երկրորդ ամսուն մէջ, Սաղաթիէլեան Զօրաբաբէլ, ու Յովսեդեկեան Յեսուա, և անոնց միւս եղբայրները, քահանաները ու Ղեւտացիները, ու գերութենէն բոլոր Երուսաղէմ դարձողները գործը սկսան, և քսան տարեկանէ վեր եղող Ղեւտացիները Տէրոջը տանը գործին վրայ վերակացու դրին։ 9—Ու Յեսուա և անոր որդիները ու եղբայրները, և Կադմիէլ ու անոր որդիները, *Յուդայի որդիները՝ նաթինացիները ու անոնց որդիները ու եղբայրները, Ղեւտացիները, գործաւորներուն վրայ վերակացութիւն ընելու համար մէկ մարդու պէս։

10—Ու երբ շարաբապետները Տէրոջը տաճարին հիմը դրին, քահանաները իրենց զգեստները հագած՝ փող բռնած, ու Ղեւտացիները, Ասափ որդիները, ծնծղաներով, Տէրը օրհնելու համար կայնեցուցին՝ Իսրայէլի Դաւիթ թագաւորին կարգադրութեանը համեմատ։ 11—Ու փոխադարձ կ'երգէին՝ Տէրոջմէ գոհանալով ու անոր չնորհակալութիւն մատուցանելով, վասն զի բարի է, վասն զի անոր ողորմութիւնը

*Կամ, կառավարիչը

*Կամ, առաջնոյն կացութեանը մէջ

*Կամ, Ովդովայի. տես. գլ. բ. 40։

Իսրայէլի վրայ յաւիտեան է. ու բոլոր ժողովուրդը մեծաձայն ադաղակելով Տէրը օրհնեցին Տէրոջը առջեւ հիմին դուռը լուսնալուն համար։

12—Ու քահանաներէն ու Ղեւտացիներէն ու տոհմերու իշխաններէն շատերը, որոնք ծեր ըլլալով Տէրոջը առաջուան տունը տեսած էին, երբ իրենց աչքին առջեւ այս տանը հիմը դրուեցաւ, մեծ ձայնով լացին, ու շատերը էրէց-ուրախութենէն ձայներնին վերցնելով աղաղակեցին։ **13**—Ու ժողովուրդը ուրախութեան աղաղակին ձայնը ու բազմութեան լալուն ձայնը իրարմէ չէր կրնար որոշել. վասն զի բազմութիւնը մեծ ցնծութեան ձայնով կ'աղաղակէր, ու ձայներնին մինչև հեռու տեղեր կը լսուէր։

Գլ. Դ

Եւ Յուդայի ու Բենիամինի թշնամիները երբ լսեցին որ "գերութենէ ելլողները" Իսրայէլի Տէր Աստուծոյն տաճարը կը շինեն, **2**—Զօրաբաբէլի ու նահապետներուն մօտեցան, ու անոնց ըսին, Մենք ալ ձեզի հետ շինենք. քանզի մենք ալ ձեզի պէս ձեր Աստուածը կը խնդրենք, ու մեզ հոս բերող Ասորեստանի Ասորգան թագաւորին օրերէն ի վեր անոր զոհ կը մատուցանենք։ **3**—Բայց Զօրաբաբէլ ու Յեսուա և Իսրայէլի միւս նահապետները անոնց ըսին, Ձեզի պէս ձեզի ու մեզի որ Դէյոդէ մեր Աստուածոյն տունը չենք շիներ. հապա Իսրայէլի Տէր Աստուածոյն տունը մենակ մենք պիտի շինենք, ինչպէս Պարսից Թագաւորը, կիւրոս Թագաւորը, մեզի հրամայեց։ **4**—Եւ այն երկրին ժողովուրդը Յուդայի ժողովուրդին ձեռքերը կը թուլցնէին, ու զանոնք չէին ելլէր կը խափանէին։ **5**—Ու անոնց խորհուրդը խափանելու համար՝ վարձքով անոնց դէմ խորհրդականներ բռնեցին Պարսից Կիւրոս Թագաւորին բոլոր օրերը, ու մինչև Պարսից Դարեհ Թագաւորին Թագաւորութեանը ժամանակը։ **6**—Եւ Աստերոսի Թագաւորութեան առեն, անոր Թագաւորութեան սկիզբը, Յուդայի ու Երուսաղէմի բնակիչներուն դէմ ամբաստանութեան գիր գրեցին։

7—Ու Արտաշէսի օրերը Բիսլեամ, Միթրիդատ, Տաբէել ու անոնց ուրիշ ընկերները Պարսից Արտաշէս Թագաւորին գրեցին. ու նամակին գիրը *Ասորերէն գրուած էր, ու Ասորերէն էր։ **8**—Հաէմ հրամանատարը ու Սամսայ դպիրը Երուսաղէմի դէմ այս կերպով նամակ մը գրեցին Արտաշէս Թագաւորին։

9—Այն առեն Հաէմ հրամանատարը ու Սամսայ դպիրը և անոնց ուրիշ ընկերները, Դինացիք, Ափարսաթքացիք, Տարփաղեցիք, Ափերսացիք, Արքուեցիք, Բաբելընացիք, Շուշանացիք, Դաւեցիք, Եղամացիք **10**—ու Մեծաց ազգերը զորենք մեծ ու պատուական Ասենափարը փոխադրեց ու Սամարիայի քաղաքներուն մէջ բնակեցուց, ու միւսները որոնք Գետին ադիի կողմը կը գտնուին, և այլն։ **11**—Այս է այն նամակին օրինակը՝ զոր Արտաշէս Թագաւորին ղրկեցին.

Գետին ադիի կողմը բնակող քուծառաներդ, և այլն։ **12**—Թագաւորիդ յայտնի ըլլայ որ ձեր կողմանէ մեզի վրը եկող Հրեաները Երուսաղէմ եկան ու պարիսպները կանդնելով ու հիմերը ձգելով՝ այն ապատամբ ու անիրաւ քաղաքը կը շինեն։ **13**—Հիմա Թագաւորիդ յայտնի ըլլայ, որ եթէ այս քաղաքը նորէն շինուի, ու անոր պարիսպները կանգնուին, անոնք հարկ, տուրք ու մաքս պիտի չտան. և այս պատճառաւ Թագաւորներուն վնաս տուած պիտի ըլլաս։ **14**—Ու մեր †առճիկին պալատին ըլլալուն համար՝ մեզի չվայելեր որ Թագաւորին վնասը տեսնենք. անոր համար այս նամակը ղրկեցինք, ու Թագաւորիդ իմացու ցինք։ **15**—Որպէս զի քու հայրերուդ յիշատակաց գիրքին մէջ փնտռուի, որպէս զի այն յիշատակաց գիրքին մէջ գտնես ու իմանաս Թէ այն քաղաքը ապստամբ, և Թագաւորներուն և գաւառներուն վնասակար քաղաք մը եղած է, և Թէ հին տեղը անոր մէջ դաւճանութիւն ըրած են, ու անոր համար այս քաղաքը կործանուեր է։ **16**—Մենք Թագաւորիդ կ'իմացնենք որ եթէ այս քաղաքը չշինուի ու անոր պարիսպները հաստատուին, այս պատճառաւ Գետին ադիի կողմը բաժին պիտի չունենաս։

17—Իսկ Թագաւորը Հաէմ հրամանատարին և Սամսայ դպիրին ու Սամարիայի մէջ բնակող անոնց միացած ընկերներուն, ու Գետին անդիի կողմը եղող միացածներուն հրամայական ղրկեց այս խօսքերով.

18—Ողջոյն, և այլն։ Մեզի ղրկած նամակնիդ իմ առջեւս յայտնապէս կարդացուեցաւ. **19**—Ու ես հրաման ըրի, ու փնտռեցին և գտան որ այն քաղաքը հին ատենէն ի վեր Թագաւորներու դէմ դրեր է, ու անոր մէջ ապստամբութիւն ու դաւճանութիւն եղեր է։ **20**—Ու Երուսաղէմի մէջ զօրաւոր Թագաւորներ եղած են, որոնք բոլոր Գետին անդիի կողմը եղողներուն վրայ կը տիրէին. ու անոնց հարկ, տուրք ու մաքս կը տրուէր։ **21**—Հիմա պատուիրէ տուէք որ այն մարդիկը արգիլուին. ու քաղաքը չշինուի, մինչև իմ կողմանէս հրամայական մը տրուի։ **22**—Ու զգոյշ եղէք որ այս բանին անհոգութիւն չընէք. չըլլայ որ չարութիւնը չաճայ, ու Թագաւորներուն վնաս տան։

23—Ու երբ Արտաշէս Թագաւորին նամակին օրինակը Հաէմի ու Սամսայ դպիրին և անոնց ընկերներուն առջեւ կարդացուեցաւ, պատրաստ երուսաղէմ գացին Հրեաներուն, և զանոնք բռնութեամբ չէնէլեն արգիլեցին։ **24**—Այն առեն Երուսաղէմ եղող Աստուծոյ տունը գործը արգիլուեցաւ. ու մինչև Պարսից Դարեհ Թագաւորին Թագաւորութեանը երկրորդ տարին արգիլուած մնաց։

Գլ. Ե

Եւ Անգէ մարգարէն ու Ադադոյի որդին Զաքարիա մարգարէն Իսրայէլի Աստուծոյն անունովը մարգարէութիւն բերին Յուդայի ու Երուսաղէմի մէջ եղող Հրեաներուն։ **2**—Այն առեն Սաղաթիէլեան Զօրաբաբէլ ու Յոսեդեկեան Յեսուա կանգնեցան, ու Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը շինելու սկսան, և Աստուծոյ մարգարէները անոնց հետ ըլլալով՝ անոնց օգնութիւն կ'ընէին։

3—Այն առեն Եփրատ գետին մօտ գտնուող իշխանը Թաթանայ ու Սաթրաբուզան իրենց ընկերներովը անոնց եկան, և այսպէս ըսին. Ո՞վ ձեզի հրաման տուաւ որ այս տունը շինէք, ու այս պարիսպները կանգնէք։ **4**—Այն առեն անոնց ըսինք թէ այս շինող մարդոց անունները էրէվ գրենք։ **5**—Բայց Հրեից ծերերուն վրայ իրենց Աստուծոյն աչքը ըլլալով զանոնք չարգիլեցին, մինչև բանը Դարեհի հասնի, ու անկէ այս բանին համար հրովարտակ բերել տան։

6—Այս է այն նամակին օրինակը զոր Գետին ադիի կողմի իշխանը Թաթանայ ու Սաթրաբուզան, ու Գետին ադիի կողմը եղող անոնց ընկերները Ափարսաքացիք Դարեհ Թագաւորին ղրկեցին։ **7**—Ու իրենց անոր ղրկած նամակին մէջ այսպէս գրուած էր.

8—Դարեհ Թագաւորին չատ բարեւ. Թագաւորիդ յայտնի ըլլայ որ Հրեաստանի գաւառը, մեծ Աստուծոյն տունը գացինք. ու անիկա մեծ քարերով կը շինուի, և անոր պատերուն մէջ փայտեր կը դրուին, ու գործը չուտով կը բանուի, ու անոնց ձեռքով կը յաջողուի։ **9**—Ես այն ծերերուն հարցուցինք, ու անոնց այսպէս ըսինք. Ո՞վ ձեզի հրաման տուաւ որ այս տունը շինէք, ու այս պարիսպները կանգնէք։ **10**—Ու քեզի իմացնելու համար անոնց անուններն ալ հարցուցինք, որպէս զի անոնց առաջնորդ եղող մարդոց անունները էրէվ գրենք։ **11**—Ես անոնք մեզի այսպէս պատասխան տուին ու ըսին, Մենք երկինքի ու երկրի Աստուծոյն ծառաներն ենք. ու չատ տարիներէ առաջ շինուած տունը կը շինենք, զոր Իսրայէլի մէկ մեծ Թագաւորը շինեց ու լմնցուց։ **12**—Բայց մեր հայրերուն երկինքի Աստուածը բարկացնելուն համար, զանոնք Բաբելոնի Թագաւորին, Քաղդեացի Նաբուգոդոնոսորի, ձեռքը մատնեց, ան ալ այս տունը աւերեց, ու ժողովուրդը Բաբելոն գերի տարաւ։ **13**—Բայց Բաբելոնի Կիւրոս Թագաւորին առաջին տարին Կիւրոս Թագաւորը այս Աստուծոյ տունը շինելու հրաման

տուրիդ կ'իմացնենք որ եթէ այս քաղաքը չշինուի ու անոր պարիսպները հաստատուին, այս պատճառաւ Գետին ադիի կողմը բաժին պիտի չունենաս։

17—Իսկ Թագաւորը Հաէմ հրամանատարին և Սամսայ դպիրին ու Սամարիայի մէջ բնակող անոնց միացած ընկերներուն, ու Գետին անդիի կողմը եղող միացածներուն հրովարտակ ղրկեց այս խօսքերով.

18—Ողջոյն, և այլն։ Մեզի ղրկած նամակնիդ իմ առջեւս յայտնապէս կարդացուեցաւ. **19**—Ու ես հրաման ըրի, ու փնտռեցին և գտան որ այն քաղաքը հին ատենէն ի վեր Թագաւորներու դէմ դրեր է, ու անոր մէջ ապստամբութիւն ու դաւճանութիւն եղեր է։ **20**—Ու Երուսաղէմի մէջ զօրաւոր Թագաւորներ եղած են, որոնք բոլոր Գետին անդիի կողմը եղողներուն վրայ կը տիրէին. ու անոնց հարկ, տուրք ու մաքս կը տրուէր։ **21**—Հիմա պատուիրէ տուէք որ այն մարդիկը արգիլուին. ու քաղաքը չշինուի, մինչև իմ կողմանէս հրամայական մը տրուի։ **22**—Ու զգոյշ եղէք որ այս բանին անհոգութիւն չընէք. չըլլայ որ չարութիւնը չաճայ, ու Թագաւորներուն վնաս տան։

23—Ու երբ Արտաշէս Թագաւորին նամակին օրինակը Հաէմի ու Սամսայ դպիրին և անոնց ընկերներուն առջեւ կարդացուեցաւ, պատրաստ գացին Հրեաներուն, և զանոնք բռնութեամբ չէնէլեն արգիլեցին։ **24**—Այն առեն Երուսաղէմ եղող Աստուծոյ տունը գործը արգիլուեցաւ. ու մինչև Պարսից Դարեհ Թագաւորին Թագաւորութեանը երկրորդ տարին արգիլուած մնաց։

Գլ. Ե

Եւ Անգէ մարգարէն ու Ադադոյի որդին Զաքարիա մարգարէն Իսրայէլի Աստուծոյն անունովը մարգարէութիւն բերին Յուդայի ու Երուսաղէմի մէջ եղող Հրեաներուն։ **2**—Այն առեն Սաղաթիէլեան Զօրաբաբէլ ու Յոսեդեկեան Յեսուա կանգնեցան, ու Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը շինելու սկսան, և Աստուծոյ մարգարէները անոնց հետ

*Եբր. գերութեան որդիները

*Կամ, Քաղդէացին †Բառդ. աղին

տաւաւ։ **14**—Եւ Աստուծոյ տանը ոսկերչին ու արծաթագործին անօթներն ալ, զորոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէ տաճարէն հանելով՝ Բաբելոնի տաճարը տարեր էր, կիւրոս Թագաւորը Բաբելոնի տաճարէն հանեց, ու Սասբասար անունով մէկուն յանձնեց, զոր նախապարի ըրաւ։ **15**—Ու անոր ըսաւ, Ա՛ս անօթները առ, գնա զանոնք Երուսաղէմ եղող տաճարը տար, ու Աստուծոյ տունը իր տեղը շինուի։ **16**—Ա՛յն ատեն Սասբասար եկաւ, ու Երուսաղէմ եղող Աստուծոյ տանը հիմը ձգեց. և այն ատենէն մինչև հիմա կը շինուի, բայց չ՚լլեցած։ **17**—Ու հիմա եթէ Թագաւորը կը հաճի, հոն Բաբելոնի եղող Թագաւորին գանձատունը մէջ փնտռուի, թէ արդեօք կիրոս Թագաւորը հրաման տուա՞ր է որ Երուսաղէմի մէջ այս Աստուծոյ տունը շինուի, ու Թագաւորը այս բանին վրայով իր կամքը մեզի *հասկընէ։

Գլ. Զ

1 Այն ատեն Դարեհ Թագաւորը հրաման ըրաւ, ու հոն Բաբելոնի դիւանին մէջ փնտռտցին, ուր գանձերը կը պահուէին։ **2**—Ու Մարաց գաւառին մէջ եղող †Եկբատանայի պալատին մէջ ոտնմը գտնուեցաւ, որուն մէջ այս կերպով գրուած յիշատակարան մը կար։

3—Կիւրոս Թագաւորին առաջին տարին, կիւրոս Թագաւորը Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տանը համար հրաման տուաւ, որ այն տունը շինուի, ուր զոհ կը մատուցանեն. և անոր հիմերը ամուր ըլլան. անոր բարձրութիւնը վաթսուն կանգուն ու լայնութիւնը վաթսուն կանգուն, **4**—երեք կարգ մեծ քարերէ ու մէկ կարգ նոր փայտէ ըլլայ. ու անոր ծախքը Թագաւորին տունէն տրուի։ **5**—Ու Նաբուգոդոնոսորի Երուսաղէմի տաճարէն հանած ու Բաբելոն բերած՝ Աստուծոյ տանը ոսկիէն ու արծաթէն անօթներն ալ նո՛ւ տրուին, ու Երուսաղէմ եղող տաճարը, իրենց տեղը, տարուին, ու Աստուծոյ տունը դրուին։

6—Ե՛ս հիմա, Դեհոն անդիի կողմի իշխանը Թաթնայի, Սաթրաբուզան, ու Դեհոն անդիի կողմը եղող անոնց ընկերները, Ափարսաքացիք, անկէ հա՛ս քաշուեցէք։ **7**—Ա՛յս Աստուծոյ տանը գործը Թող տուէք։ Հրէից նախապարը ու Հրէից ծերերը այս Աստուծոյ տունը Թող իր տեղը շինեն։ **8**—Ե՛ս այս հրամանը կու տամ, որպէս զի ընեք թէ Հրէից ծերերուն ի՛նչ պիտի ընէք այս Աստուծոյ տանը շինութեանը համար, այսինքն արքունի գանձէն, Գետին անդիի կողմէն ֆռվնոյ հարկին, այն մարդոցը ծախքը չուտուի արաւ, որպէս զի արգելք մը չըլնենան։ **9**—Ե՛ւ անոնց ի՛նչ որ պէտք ըլլայ, թէ՛ զաւարակներ, թէ՛ խաչեր և թէ՛ գառներ՝ երկինքի Աստուծոյն ողջակիզներու համար, հնձ ցորեն, աղ, գինի ու իւղ ամէն օր առնոյ տրուի անպակաս՝ Երուսաղէմի մէջ եղող քահանաներուն խօսքովը։ **10**—Որպէս զի երկինքի Աստուծոյն անուշ հոտ զոհեր մատուցանեն, և Թագաւորին ու անոր որդիներուն կեանքին համար աղօթք ընեն։ **11**—Ու ես կը հրամայեմ որ ով որ այս խօսքին դէմ կենայ, անոր տունէն փայտ մը քակուելով անկեն, ու այն մարդը անոր վրայ գամուի. ու այս բանին համար անոր տունը աղբանոց ըլլայ։ **12**—Ե՛ւ այն Աստուածը՝ որ իր անունը հոն դրեր է, Թող կործանէ ամէն Թագաւորը ու ժողովուրդ, որ ձեռք կ՚երկնցնէ այս հրամանը դէմ կենալու, ու Երուսաղէմի մէջ եղող Աստուծոյ տունը աւերելու։ Ես Դարեհս այս հրամանը ըրի։ Թող չուտուի ի գործ դրուի։

13—Այն ատեն Գետին անդիի կողմի իշխանը Թաթնայի, Սաթրաբուզան և անոնց ընկերները Դարեհ Թագաւորին ղրկած հրամանը չուտուի կատարեցին։ **14**—Եւ Հրէից ծերերը կը չինէին ու կը յաջողէին՝ Անգէ մարգարէին ու Ադդովի որդւոյն Զաքարիայի մարգարէութիւնովը։ Ու անոնք իսրայէլի Աստուծոյն հրամանովը և Պարսից կիւրոս ու Դարեհ և Արտաշէս Թագաւորներուն հրամանովը չինեցին լմնցուցին։ **15**—Ու այս տունը Ադար ամսուն երկրորդ օրը, Դարեհ Թագաւորին Թագաւորութեան վեցերորդ տարին լմնցաւ,

*Բառ. զրկէ †Բառ. Ախմեթայի

16—Ու Իսրայէլի որդիները, քահանաները ու Ղեւտացիները ու միւս գերութենէն եկողները, ուրախութեամբ Աստուծոյ տանը նաւակատիքը ըրին։ **17**—Ու Աստուծոյ տանը նաւակատիքին համար՝ հարիւր զաւարակ, երկու հարիւր խոյ, չորս հարիւր գառ, ու բոլոր Իսրայէլի ազգին պատճառաւ ըլլալու համար՝ Իսրայէլի ցեղերուն թիւովը այծերէն տասներկու նոխազ մատուցին։ **18**—Ու Երուսաղէմի մէջ Աստուծոյ ծառայութեանը վրայ՝ քահանաները իրենց կարգերուն մէջ ու Ղեւտացիները իրենց դասերուն մէջ կայնեցուցին, ինչպես Մովսէսի գիրքին մէջ գրուած է։

19—Ու գերութենէն եկողները առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը զատիկը ըրին։ **20**—Քանզի քահանաները ու Ղեւտացիները մէկտեղ սրբուեցան, ո՛ր ամէնն ալ մաքուր եղան. ու բոլոր գերութենէն եկողներուն համար, և իրենց եղբայրներուն, քահանաներուն, համար, ու իրենց համար զատիկը մորթեցին։ **21**—Ու գերութենէն դարձող Իսրայէլի որդիներըը, ու Իսրայէլի Տէր Աստուածը փնտռելու համար անոնց երկրին ազգերուն պղծութենէն զատուած երեր՝ ամէնն ալ կերան։ **22**—Ու եօթը օր բազմոթակոց ուրախացին ու բան թեամբ. վասն զի Տէրը զանոնք ուրախացուց, ու Ասորեստանի Թագաւորին սիրտը անոնց դարձուց, որպէս զի Աստուծոյ, Իսրայէլի Աստուծոյն, տանը գործին մէջ անոնց ձեռքը ուժովցնէ։

Գլ. Է

1 Ե՛ւ այս բաներէն ետքը, Պարսից Թագաւորին Արտաշէսի Թագաւորութեան ատեն, Եզրաս, Սարայիայի որդին, որ Ազարիայի որդին, որ Հեզկիայի որդին, **2**—որ Սեղդումի որդին, որ Սադդուկի որդին, որ Աբիտուբի որդին, **3**—որ Ամարիայի որդին, որ Ազարիայի որդին, որ Մարիոթի որդին, **4**—որ Զարհիայի որդին, որ Ողիի որդին, որ Բոկկիի որդին, **5**—որ Աբիսուայի որդին, որ Փենէհէսի որդին, որ Եղիազարի որդին, որ մեծ քահանային Ահարոնի որդին էր, **6**—Այս Եզրասը Բաբելոնէ ելաւ. ու անիկա Իսրայէլի Տէր Աստուծոյն տուած Մովսէսի օրէնքին արագագիր դպիրն էր, ու իր Տէր Աստուծոյն ձեռքը իր վրայ ըլլալուն համար՝ ամէն խնդրածը Թագաւորը անոր կու տար։ **7**—Ե՛ւ Երուսաղէմ եղող քանի մը Իսրայէլի որդիներէն, քահանաներէն ու Ղեւտացիներէն ու երգեցողներէն և դռնապաններէն ու Նթինայիմներէն մէ՛նչ Երուսաղէմ ելան։ **8**—Ու անիկա հինգերորդ ամսուն մէջ՝ Թագաւորին եօթներորդ տարին Երուսաղէմ եկաւ. **9**—Քանզի առաջին ամսուն առաջին օրը Բաբելոնէ ելլելու սկսաւ. ու Աստուծոյ բարի ձեռքը անոր վրայ ըլլալով՝ հինգերորդ ամսուն առաջին օրը Երուսաղէմ եկաւ։ **10**—Վասն զի Եզրաս իր սիրտը պատրաստեց՝ որպէս զի Տէրոջը օրէնքը փնտռէ ու կատարէ, ու Իսրայէլի մէջ օրէնք ու դատաստան սորվեցնէ։

11—Ու սա՛ւկ է այն նամակին օրինակը զոր Արտաշէս Թագաւորը տուաւ Եզրաս քահանային ու դպիրին, որ Տէրոջը Իսրայէլի *պատուիրանքներուն և օրինաց խօսքերուն գրչի էր։

12—Թագաւորաց Թագաւորը Արտաշէս, Եզրաս քահանային, կրկինքի Աստուծոյ օրէնքին կատարեալ գրչին, և այլն։ **13**—Հրաման կու տամ որ իմ Թագաւորութեանս մէջ եղող Իսրայէլի ժողովուրդին ու անոր քահանաներէն ու Ղեւտացիներէն ամէն իրենց կամքովը Երուսաղէմ երթալ ուզողները քեզի հետ երթեն։ **14**—Վասն զի դուն Թագաւորին ու անոր եօթը խորհրդականներուն կողմանէ կը ղրկուիս, որպէս զի քու ձեռքդ եղող քու Աստուծոյդ օրէնքովը ճշդեսն ու Երուսաղէմը քննես, **15**—Ու տանիս այն արծաթը ու ոսկին, զոր Թագաւորը ու անոր խորհրդականները իրենց կամքովը ընծայ տուին Իսրայէլի Աստուծոյն, որուն բնակութիւնը Երուսաղէմի մէջ է։ **16**—Նաև Բաբելոնի բոլոր գաւառին մէջ գտած բոլոր արծաթդ ու ոսկիդ, զոր ժողովուրդը ու քահանաները Երուսաղէմի մէջ եղող իրենց Աստուծոյն տանը համար կամաւոր ընծայի պէս պիտի մատուցանեն, **17**—Որպէս զի այն տուակով անպատճառ զուարակներ, խոյեր,

գառներ, ու անոնց հացի ընծաները ու թափելու նուէրները ծախու առնես, ու զանոնք նրանաղէմ եղող ձեր Աստուծոյն տանը սեղանին վրայ մատուցանես. **18**—ես միացած արծաթով ու ոսկիով՝ քեզի ու քու եղբայրներուդ ինչ որ պատշաճ կ'երեւնայ ընել, ձեր Աստուծոյն կամքին համեմատ ընէք. **19**—ես այն անօթները, որոնք քու Աստուծոյդ տանը պաշտօնին համար քեզի տրուեցան, ջնջած նրանաղէմի Աստուծոյն առջեւ դուբ յանձնես։ **20**—ես ուրիշ ինչ որ քու Աստուծոյդ տանը համար պէտք ըլլայ, զոր քեզի կը վայլէ տալ, զանիկա թագաւորին գանձատունէն տաս։ **21**—ու ես Արտաշէս թագաւոր ձեզի, Գեհոն անդիի կողմը եղող բոլոր գանձապետներուդ, հրաման կու տամ, որ Եզրաս քահանան, երկնիքի Աստուծոյն օրէնքին դպիրը, ինչ որ ձեզմէ ուզէ, անմիջապես *արած. **22**—մինչեւ հարիւր տաղանդ արծաթ, մինչեւ հարիւր քոռ ցորեն, ու մինչեւ հարիւր մար գինի ու հարիւր մար իւղ, ու ազ առանց †չափը որոշելու։ **23**—երկնիքի Աստուածը ինչ որ կը հրամայէ, չքառով է գործ դրուի երկնիքի Աստուծոյն տանը համար, որպէս զի չըլլայ թէ թագաւորին ու անոր որդիներուն թագաւորութեանը վրայ բարկութիւն գայ։ **24**—ես ձեզի յայտնի ըլլայ որ բոլոր քահանաներէն, Ղեւտացիներէն, երգիչցողներէն, դռնապաններէն, Նաթանայիմներէն, և այս Աստուծոյ տանը սպասաւորներէն, հարկ, տուրք ու մաքս առնելու հրաման չկայ։ **25**—ես դուն, ով Եզրաս, քու Աստուծոյդ իմաստութիւնովդ զոր դուն ունիս, դատաւորներ ու իշխաններ դիր, որոնք Գեհոն անդիի կողմը եղող բոլոր ժողովրդոյն, այսինքն քու Աստուծոյդ օրէնքը ամէն գիտցողները, դասեն. ու չգիտցողներուն սորվեցուցէք։ **26**—ես ով որ քու Աստուծոյդ օրէնքին հնազանդ ու թագաւորին օրէնքին հնազանդ չընէ, անյապաղ անոր դատաստանը ի գործ դրուի՝ կա՛մ մահուամբ, կա՛մ աքսորով, կա՛մ տուգանքով և կա՛մ բանտարկութեամբ։

27—Մեր հայրերուն Տէր Աստուածը օրհնեալ ըլլայ, որ երուսաղէմի մէջ եղող Տէրոջը տանը փառաւորելու համար՝այս բանը թագաւորին սրտին մէջ դրաւ։ **28**—ու թագաւորին ու անոր խորհրդականներուն ու թագաւորին բոլոր զօրաւոր իշխաններուն առջեւ ինծի չնորհք գտնել տուաւ. և իմ Տէր Աստուծոյս ձեռքին իմ վրաս ըլլալուն համար զօրացայ, ու Իսրայէլէ իշխաններ ժողվեցի, որպէս զի ինծի հետ ելլեն։

Գլ. Ը

Ե Արտաշէս թագաւորին թագաւորութեան տասներորդ ինծի հետ Բաբելոնէ ելլողներուն ազգաբանութիւնները ու համբարքը ասանք են. **2**—Փենհէսէի որդիներէն Գերսոն, Իթամարի որդիներէն Դանիէլ, Դաւիթի որդիներէն Քեատուս, **3**—Սեքենիայի որդիներէն՝ Փարոսի որդիներէն Զաքարիա, ու անոր հետ հարիւր հիսուն այր մարդ համբարեցան. **4**—Փահաթ-Մոաբի որդիներէն Զարհիայի որդին Եղհոէհնայի, ու անոր հետ երկու հարիւր այր մարդ. **5**—Սեքենիայի որդիներէն Յազիէլի որդին, ու անոր հետ երեք հարիւր այր մարդ. **6**—Ադինի որդիներէն Ովհաթանի որդին Աբեդ, ու անոր հետ հիսուն այր մարդ. **7**—Ու Եղամի որդիներէն Գոթոնիայի որդին Եսայի, ու անոր հետ եօթանասուն այր մարդ. **8**—Սափատիայի որդիներէն Միքայէլի որդին Զաբադիա, ու անոր հետ ութսուն այր մարդ. **9**—Յովաբի որդիներէն՝ Յեհիէլի որդին Աբդիա ու անոր հետ երկու հարիւր տասնըութ այր մարդ. **10**—Ես Աղգադի որդիներէն Յոսեփիայի որդին, ու անոր հետ հարիւր վեցտասն այր մարդ. **11**—Ես Բեբայիի որդիներէն Բեբայիի որդին Զաքարիա ու անոր հետ քսանըութ այր մարդ. **12**—Ես Ազգադի որդիներէն Ախատանի որդին Յովհանան, ու անոր հետ հարիւր տասը այր մարդ. **13**—Ես Ադոնիկամի որդիներէն վերջիններըն՝ որոնց անունները ասանք էին. Եղիփազատ, Յեհիէլ ու Սեմայիա, և անոնց հետ վեցտասն այր մարդ. **14**—Ես Բագուէի որդիներէն Ութայի ու Զաբուդ, ու անոնց հետ եօթանասուն այր մարդ։

15—Ես ասոնք Ահավա վազող գետին եզերքը ժողվեցին, ու հոն երեք օր իջեւան ըրինք. և ժողովուրդը ու քահանաները աչքէ անցուցի, ու հոն Ղեւտացւոց որդիներէն ո՛չքը չգտայ։ **16**—Ա՛յն ատեն Եղիեզար, Արիէլ, Սեմայիա, Եղնաթան, Հարիպ, Եղնաթան, Նաթան, Զաքարիա ու Մեսուղամ իշխաններըր, ու Յովարիբ ու Եղնաթան իմաստուններըն կանչել տուի. **17**—Ես զանոնք Քասիփիա ըսուած տեղը եղող Ադդոզի իշխանին պատուէրներով դրկեցի, ու Քասիփիա ըսուած տեղը եղող Ադդոզի, ու անոր եղբայրներուն, Նաթանայիմներուն, զրացուելու խօսքերը անոնց բերանը դրի, որպես զի մեր Աստուծոյն տանը համար մեզի պաշտօնեաներ բերեն։ **18**—Ու մեր Աստուծոյն բարի ձեռքին մեր վրայ ըլլալուն համար՝ իսրայէլեան Ղեւիի որդւոյն Մոողիի որդիներէն հանճարեղ մարդ մը, այսինքն Սարաբիան, ու անոր որդիները ու եղբայրները, տասնըութ մարդ, բերին մեզի. **19**—Նաև Ասաբիան, ու անոր հետ Մերարիի որդիներէն Եսային ու անոր եղբայրները, ու անոնց որդիները, քսան մարդ. **20**—Ու Նաթանայիմներէն, զորոնք Դաւիթ ու իր իշխանները Ղեւտացւոց ծառայութեանը տուեր էին, ամէնը իրենց անուններովը յիշուած՝ երկու հարիւր քսան Նաթանայիմներ։

21—Ես հոն Ահավայի գետին քով ծոմապահութիւն քարոզեցի, որպէս զի խոնարհինք մեր Տէր Աստուծոյն առջեւ, ու անկէ յօժոդ ճամբորդութիւն խնդրենք մեզի ու մեր ընտանիքներուն և մեր բոլոր ստացուածքին համար. **22**—Վասն զի ճամբան մէջ մեզ թշնամիներէն պաշտպանելու համար թագաւորէն զօրք ու ձիաւորներ ուզելու ամչցայ, որովհետեւ թագաւորին ըսեր էինք թէ մեր Աստուծոյն ձեռքը բոլոր զանիկա փնտռողներուն վրայ է բարութեամբ, ու անոր զօրութիւնը ու բարկութիւնը ամէն անոնց վրայ՝ որոնք զանիկա կը թողուն։ **23**—Ուստի ծոմ բռնեցինք, ու այս բանին համար մեր Աստուծմէն ջերմեռանդ խնդրեցինք. ու անիկա մեր խնդրուածքը ընդունեց։

24—Ես քահանաներուն իշխաններէն տասներկուսը մարդ զատեցի, այսինքն Սարաբիան ու Ասաբիան ու անոնց հետ իրենց եղբայրներէն տասը մարդ, **25**—Ես արծաթը ու ոսկին ու անօթները, նաև թագաւորին ու անոր խորհրդականներուն ու իշխաններուն, և հոն գտնուող բոլոր Իսրայէլի մեր Աստուծոյն տանը համար առուած բնծաները կշռեցուալ անոնց յանձնեցի, **26**—Ու վեց հարիւր յիսուն տաղանդ արծաթ, և հարիւր տաղանդ արծաթէ անօթներ ու հարիւր տաղանդ ոսկի, **27**—ես քսան ոսկի տասը հազարական դրամէ, ու մաքուր ու փայլուն և ոսկիի պէս պատեւական պղնձէ երկու անօթ՝ կշռեցուալ անոնց յանձնեցի, **28**—Ու ասոնց ըսի, Դուք Տէրոջը նուիրուած եք, այս անօթներն ալ նուիրուած են, և արծաթը ու ոսկին ձեր հայրերուն Տէր Աստուծոյն կամաւոր ընծայ մըն է. **29**—Արթուն կեցէք ու պահեցէք, մինչեւ որ ջնջած երուսաղէմ Տէրոջը տանը սենեակներուն մէջ՝ քահանաներուն ու Ղեւտացւոց իշխաններուն ու Իսրայէլի տոհմապետներուն առջեւ կշռեք. **30**—Ես քահանաները ու Ղեւտացիները արծաթը ու ոսկին ու անօթները կշռեցուալ առին, որպէս զի երուսաղէմ մեր Աստուծոյն տունը տանին։

31—Ես առաջին ամսուն երկոտասաներորդ օրը Ահավայի գետեն չուեցինք երուսաղէմ երթալու համար, ու մեր Աստուծոյն ձեռքը մեր վրայ էր, ու մեզ ճամբան թշնամիին ու դարանակալին ձեռքէն ազատեց. **32**—Ու երուսաղէմ եկանք և հոն երեք օր նստանք. **33**—Ու չորրորդ օրը արծաթը ու ոսկին ու անօթները, մեր Աստուծոյն տանը մէջ, Ուրիա քահանային որդւոյն Մերեմոթի ձեռքով կշռուեցան, որու հետ էր Փենհէսէի որդին Եղիազար. ու անոնց հետ Յեսուէի որդին Յովզաբադ ու Բանուիի որդին Նոադիա Ղեւտացիները կային։ **34**—Ամէնը թիւով ու կշռուելով յայտնուեցաւ, ու այն ատեն բոլոր կշռուածքը գրուեցաւ։

*Բազդ. կատարեալ
†Բազդ. գրելու

35—Գերութեան որդիները, որոնք գերութենէ դարձած էին, խրայէլի Աստուծոյն ողջակէզներ մատուցին. բոլոր Իսրայէլի համար տասներկու զատարկ, իննսունըվեց խոյ, եօթանասունըեօթը գառ, — մեղքի պատարագի համար տասներկու նոխազ. ասոնց ամենը Տէրոջը ողջակէզ էր։ 36—Եւ անոնք թագաւորին հրովարտակը Պարսից սատրէպներուն ու իշխաններուն տուին, անոնք ալ ժողովուրդին ու Աստուծոյ տանը ձեռնտու եղան։

Գլ. Թ

1 Երբ այս բաները կատարուեցան, իշխանները ինծի մօտեցան ու ըսին, Իսրայէլի ժողովուրդը ու քահանաները ու Ղեւտացիները այս երկիրներուն ժողովուրդներէն չզատուեցան, հետս Քանանացւոց, Քետացւոց, Փերեզացւոց, Յեբուսացւոց, Ամմոնացւոց, Մովաբացւոց, Եգիպտացւոց ու Ամորհացւոց պղծութիւններուն պէս կ՚ընեն. 2—ուստի զի իրենց համար ու իրենց որդիներուն համար անոնց աղջիկներէն կ՚ինծի առին. և սուրբ սերունդը այս երկիրներուն ժողովուրդներուն հետ խառնուեցաւ. ու իշխանները ու սատիկներուն այս մեղքը գործելու մէջ առաջիններն եղան։ 3—Ես այս բանը լսածիս պէս հանդերձս ու վերարկուս պատռեցի, և գլուխս ու մօրուքիս մազերը փետռեցի, ու ապշած նստայ։ 4—Ա՛յն ատեն գերութենէ դարձողներուն յանցանքին պատճառաւ Իսրայէլի Աստուծոյն խօսքերէն բոլոր վախցողները իմ քովս ժողովուեցան. ու ես մինչև իրիկուան զոհին ուրնը ապշած նստայ։ 5—Ու իրիկուան զոհին ուրնը ոտքերէնիս ելայ, ու պատռած հանդերձներովս ու վերարկուներովս ծունկի վրայ եկայ, ու ձեռքերս իմ Տէր Աստուծոյս առջև տարածեցի, 6—ու ըսի, Ով Աստուած իմ, կ՚ամչնամ, ու իմ երեսս քեզի վերցնելու չեմ համարձակիր, ով Աստուած իմ. վասն զի մեր անօրէնութիւնները մեր գլխէն վեր բարձրացան, ու մեր յանցանքը մինչև երկինք եղաւ։ 7—Մեր հայրերուն օրերէն ի վեր մինչև այսօր. ու մեր անօրէնութիւններուն համար մենք, մեր թագաւորները և մեր քահանաները երկիրներու թագաւորներուն ձեռքը՝ սուրի, գերութեան, յափշտակութեան ու երեսի սեւութեան արուեցանք, ինչպէս այսօր կ՚երեւայ։ 8—Ես հիմա քիչ մը առեն մեր Տէր Աստուծմէն ողորմութիւն եղաւ, որպէս զի մեզի փրկութիւն շնորհէ, ու իր սրբութեան տեղին մէջ *մեզ հաստատէ՝, որպէս զի մեր Աստուածը մեր աչքերը լուսաւորէ, ու մեր ծառայութեանը մէջ մեզի քիչ մը հանգստութիւն տայ։ 9—Վասն զի մենք ծառայ էինք, բայց մեր Աստուածը մեզ երբեակ չձգեց մեր ծառայութեանը մէջ. հապա մեզի հանգստութիւն տուաւ, ու մեր Աստուծոյն տունը կանգնելու, և անոր աւերակները նորոգելու, ու մեզի Յուդայի մէջ ու Երուսաղէմի մէջ պարսպապատ տեղ մը տալու համար՝ Պարսից թագաւորներուն առջև մեզի շնորհք գտնել տուաւ։ 10—Եւ հիմա, ով Աստուած մեր, ասկէ ետքը ի՞նչ բանանք, քանզի քու պատուիրանդ թողուցինք, 11—Զորոնք քու ծառաներուդ, մարգարէներուն, ձեռքով պատուիրեցիր՝ ըսելով, Այն երկիրը ուր որ պիտի մտնէք զանիկա ժառանգելու համար, գաւրչի երկիր մըն է, երկիրներու ազգերուն գաւրչի պղծութիւններովը լեցոն. որովհետև զանիկա ծայրէ ծայր իրենց անմաքրութիւնովը լեցուցեր են։ 12—Ուրեմն ձեր աղիկները անոնց որդիներուն չտաք, ու անոնց աղիկները ձեր որդիներուն համար չառնէք, և յաւիտեան անոնց խաղաղութիւնը ու երջանկութիւնը չխնդրէք, որպէս զի զօրաւոր ու այն երկրին բարիքը ուտէք, ու զայն քաջ որդիներուն յաւիտենական ժառանգութիւն թողուք։ 13—Ու մեր չար գործերուն համար ու մեր մեծ յանցանքին համար այս բոլոր բաներուն մեր վրայ գալէն ետքը, (Թէպէտև դուն, ով Աստուած մեր, մեղ չպատժեցիր մեր մեղքերուն չափ, հապա մեզի այսպէս փրկութիւն տուիր)

*ԵԲՐ. մեզի բևեռ մը տայ. ես. ԽՐ. 23։

14—պէ՞տք է որ նորէն քու պատուիրանքներդ զանց ընէնք, և այս գարշելի ազգերուն հետ խնամութիւն ընէնք. միթէ դուն մեզի պիտի չզրդռնչիր, ու մեզ պիտի չպատկիճիր, մինչև որ հրէն մնացորդ ու ազատուած մը չլլար։ 15—Ով Տէր Աստուած Իսրայէլի, դուն արդար ես, վասն զի մենք մինչև այսօր ազատուած մնացինք. ահա մենք մեր յանցանքովը քու առջեւդ ենք, թէպետև այս պատճառաւ քու առջեւդ չենք կրնար կայնիլ։

Գլ. Ժ

1 Երբ Եզրաս լալով, ու Աստուծոյ տանը առջև գետինը ինկած այս աղօթքը ու խոստովանութիւնը կ՚ընէր, Իսրայէլէ խիստ շատ բազմութիւն, այր և կին մարդիկ ու տղաքներ, անոր քովն ժողովուեցան. և ժողովուրդը խիստ շատ լացաւ։ 2—Ու եղամի որդիներէն Յեխոնիէլի որդին Սեքենիա եղբարք պատասխան տուաւ ու ըսաւ, Մենք մեր Աստուծոյն դէմ մեզ գործեցինք, ու երկրին ժողովուրդներէն օտար կիներ առինք. բայց հիմա այս բանին մէջ ալ Իսրայէլի համար յոյս կայ։ 3—Ես հիմա մեր Աստուծոյն առջև ուխտ ընենք, որ բոլոր կիները ու անոնցմէ ծնածները իր տէրոջմս ու մեր Աստուծոյն հրամանէն վախցողներուն խրատովը հանենք, և այս ձորձը օրէնքին համեմատ թող ըլլայ։ 4—Ելիր, վասն զի այս գործը քեզի կ՚կրնայ. մենք ալ քեզի հետ կ՚ըլլանք. զօրացիր ու բրէ։

5—Ու Եզրաս ելաւ, և քահանայից իշխաններուն, Ղեւտացիներուն ու բոլոր Իսրայէլի երդում ընել տուաւ որ այս խօսքին պէս ընեն. և անոնք երդում բրին։ 6—Ու Եզրաս Աստուծոյ տանը առջեւէն ելաւ, ու Եղիասիբի որդւոյն Յոհանանի սենեակը գնաց. և հոն մնալով հաց չկերաւ ու ջուր չխըմեց, վասն զի գերութենէ ելածներուն յանցանքին համար սուգ կը բանէր։ 7—Ու Յուդայի և Երուսաղէմի մէջ մնացեալ կանչել տուին, որ բոլոր գերութենէ ելածները Երուսաղէմ ժողովին. 8—ու մինչև երեք օր ալ որ չգար՝ իշխաններուն ու ծերերուն հրամանին համեմատ, անոր բոլոր տասցուածքը †նզովուած պիտի ըլլար, ու ինք գերութենէ դարձողներուն ժողովքէն պիտի զատուէր։ 9—Ես Յուդայի ու Բենիամինի բոլոր մարդիկը այն երեք օրուան մէջ, այսինքն իններորդ ամսուն քսաներորդ ըը, Երուսաղէմի մէջ ժողովուեցան. և բոլոր ժողովուրդը այս գործին համար, ու սատիկ անձրեւներուն համար, գալով նստան Աստուծոյ տանը հրապարակին մէջ։ 10—Ու Եզրաս քահանան ելաւ ու անոնց ըսաւ, Դուք մեզ գործեցիք, և օտար կիներ առնելով՝ Իսրայէլի յանցանքը աւելցուցիք։ 11—Ու հիմա ձեր հայրերուն Տէր Աստուծոյն —Ը՝ ՅԲ ԴՂԸ խոստովանեցէք, և անոր հաճոյ եղածը ըրէք, ու երկրիս ժողովուրդներէն ու օտար կիներէն զատուեցէք։

12—Ամէն ատեն բոլոր ժողովքը պատասխան տուին ու բարձր ձայնով ըսին, Մեր †պարտքն է որ այնպէս քու ըսածիդ պէս ընենք. 13—Բայց ժողովուրդը շատ է, ու ժամանակը անձրեւատ է, ու դուրս տեղ չենք կրնար կայնիլ. և ասիկա մէկ օրուան կամ երկու օրուան գործ չէ, քանզի շատերնիս այս բանին մէջ յանցաւոր ենք։ 14—Հիմա մեր իշխանները բոլոր ժողովքին համար կայնին, ու մեր քաղաքներուն մէջ բոլոր օտար կին առնողները որոշուած ժամանակներու մէջ գան. և ամէն մէկ քաղաքին ծերերը ու դատաւորները անոնց հետ ըլլան, մինչև որ այս բանին համար մեր Աստուծոյն սաստիկ բարկութիւնը մեզմէ դառնայ։

15—Հրէսաի Ասայէլի որդին Յոնաթան, ու Թիկուայի որդին Յահիա այս գործին վրայ կայնեցան, ու Մեսուլամ ու Ղեւտացի Սաբեթա անոնց օգնութիւն բրին։ 16—Ու գերութենէ ելածները այնպէս բրին. ու Եզրաս քահանան, ու քանի մը տունմայրեր իրենց տուներուն համեմատ (ամէնն ալ էրէնց անուններով) ընտրուեցան, ու տասներորդ ամսուն առաջին օր այս գործը

*Կամ, գրաւեալ †ԵԲՐ. վրայ
‡Կամ, Միայն

քննելու նստան. 17—եւ բոլոր օսար կին առնող մարդոց էջերը առաջին ամսուն առաջին օրը լինցուցին։

18—Ու քահանաներուն որդիներէն օսար կին առնողներ ասոնք գտնուեցան. Յովսեդեկեան Յեսուէ որդիներէն ու եղբայրներէն Մասեհ, Եղիեզար, Յարիբ ու Գոդողիա. 19—եւ իրենց կիներըը արձակելու *խօսք տուին. ու յանցաւոր ըլլալով՝ իրենց յանցանքին համար հօտերէն մէյ մէկ խոյ զոհեցին։ 20—Ու Իմմերի որդիներէն Անանի ու Զաբադիա. 21—Ու Հարիմի որդիներէն Մասեհ, Եղիա, Սեմայիա, Յեհիէլ ու Ոզիա. 22—եւ Փասուրի որդիներէն Եղիովէնայի, Մասեհ, Իսմայէլ, Նաթանայէլ, Յովզաբադ ու Եղեասա. 23—Ու Ղեւտացիներէն Յովզաբադ, Սեմէի, Կողդիա, այսինքն Կողդիտա, Փեթահիա, Ուդա ու Եղիեզար. 24—Ու երգեցողներէն Եղիասիբ. ու դռնապաններէն Սեղղում, Տելեմ և Ուրի. 25—Ու Իսրայէլէ, Փարոսի որդիներէն, Ռամիա, Յեզիա, Մելգիա, Միամին, Եղիազար, Մելգիա ու Բանեա. 26—Ու Եղամի որդիներէն Մաթանիա, Զաքարիա, Յեհիէլ, Աբդի, Յերիմոթ ու Եղիա. 27—ու Զաթուէ որդիներէն Եղիովէնայի, Եղեասիբ, Մաթանիա, Յերիմոթ, Զաբադ ու Ազիզա. 28—Ու Բեբայէի որդիներէն Յոհանան, Անանիա, Զաբբայ ու Աթղէ. 29—ու Բանիի որդիներէն Մեսուղամ, Մալուք, Ադայիա, Յասուբ, Սասդ ու Ռամոթ. 30—Ու Փահաթ-Մովաբի որդիներէն Եդնա, Քաղէլ, Բանեա, Մասեհա, Մաթանիա, Բեսաղէլ, Բանուի ու Մանասէ. 31—Ու Նաբիմի որդիներէն Եղիազար, Յեհսի, Մեղքիա, 32—Սեմայիա, Շմաւոն, Բենիամին, Մալուք ու Սամարիա. 33—Հասումի որդիներէն Մաթանայ, Մասեհա, Զաբադ, Եղիփղէտ, Յերեմի, Մանասէ ու Սեմէի. 34—Բանիի որդիներէն Մաադայ, Ամրամ, 35—Ուէլ, Բանեա, Բադայիա, Քեղուհայ, 36—Ուանիա, Մերեմոթ, Եղիասիբ, 37—Մաթանիա, Մաթանայ, Յասաու, 38—Բանի, Բանուի, Սեմէի, 39—Սելեմիա, Նաթան, Ադայիա, 40—Մաքնադբայ, Սասայ, Սարայ, 41—Ազարէէլ, Սելեմիա, Սամարիա, 42—Սեղղում, Ամարիա ու Յովսեփ. 43—Նաբաւի որդիներէն Յեհիէլ, Մատթիա, Զաբադ, Զերբենիա, Յադայի, Յովէլ ու Բանեա։ 44—Ասոնք ամէնը օսար կիներ առեր էին. ու անոնցմէ ոմանք զաւակ ծնած կիներ ունէին։

*Եբր. ձեռքերնին

ԳԻՐՔ ՆԵԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Աքսոփայի որդւոյն Նեեմիայի խօսքերը։

Ու եղաւ որ Քասղև ամսուն մէջ, Արտաշէս Բ–––րէն քառասներորդ տարին, երբ ես Շուշան մայրաքաղաքն էի, 2—Անանի –––ով եղբայրներէս մէկը, ու քանի մը Յուդայի մարդիկ ինձի եկան. և անոնց՝ գերութենէ ազատուած ու մնացած Հրեաներուն վրայով ու Երուսաղէմի վրայով հարցուցի։ 3—Ու ինծի ըսին, Գերութենէ ազատուած մնացածները հոն գաւառին մէջ մեծ նեղութեան ու անարգութեան մէջ են, ու Երուսաղէմի պարիսպը փլած և անոր դռնները կրակով այրուած են։

4—Ու երբ ես այս խօսքերը լսեցի, նստայ լացի. ու քանի մը օր սուգ բռնեցի, և ծոմ պահելով երկինքի Աստուծոյն առջև աղօթք բրի, 5—Ու ըսի, Ո՛հ, Տէր Աստուած երկնից, որ մեծ ու ահեղ Աստուած ես, ու քեզ սիրողներուն և քու պատուիրանքներդ պահողներուն ուխտ ու ողորմութիւն կը պահես. 6—կ'աղաչեմ, քու ականջներդ թող մտիկ ընեն, ու աչքերդ բաց ըլլան, որպէս զի լսես քու ծառայիդ աղօթքը զոր քու ծառաներուդ, իսրայէլի որդիներուն, համար, հիմա ցորեկ ու գիշեր քեզի կը մատուցանեմ, խոստովանելով իսրայէլի որդիներուն մեղքը, որով քեզի դէմ մեղանչեցինք. քանզի Թէ՛ ես և Թէ՛ իմ հօրս տունը մեղք գործեցինք, 7—Արդարև մենք քու առջեւդ անօրէնութիւններ բրինք, ու քու ծառայիդ Մովսէսի տուած պատուիրանքներդ, կանոններդ ու դատաստաններդ չպահեցինք։ 8—Սակայն, կ'աղաչեմ, յիշէ այն խօսքը, զոր քու ծառայիդ Մովսէսի պատուիրեցիր՝ ըսելով, Երէ յանցանք ընէք, ես ձեզ ազգերու մէջ պիտի ցրուեմ. 9—իսկ երէ ինծի դառնաք, ու իմ պատուիրանքներս պահէք ու զանոնք կատարէք, ձեզմէ ցրուածները թէև *երկրի ծայրը ըլլան, զանոնք անկէ պիտի ժողվեմ, ու այն տեղը պիտի տանիմ՝ զոր ընտրեցի իմ անունս հոն դնելու համար։ 10—Ու հիմա ասոնք քու մեծ ուժովդ ու զօրաւոր ձեռքովդ ազատած ծառաներդ ու ժողովուրդդ են։ 11—Ո՛հ, Տէր, հիմա քու ծառայիդ ազօթքը, ու քու անունդդ վախնալու փափաք ունեցող ծառաներուդ ազօթքը քու ականջդ թող լսէ. և այսօր քու ծառայիդ յաջողութիւն տուր, ու այս մարդուն առջև ինծի չնորհք գտնել տուր։ Վասն զի ես թագաւորին մատուռակն էի։

ԳԼ. Բ

Ու եղաւ որ Նիսան ամսուն մէջ, Արտաշէս թագաւորին քսաներորդ տարին, անոր առջև գինի կար, և գինին առի ու թագաւորին տուի. ու անոր առջև բնաւ տրտում չէի եղեր։ 2—Ու թագաւորը ինծի ըսաւ, Ինչո՞ւ երեսդ տրտում է, որովհետև հիւանդ չես. ասիկա ուրիշ բան չէ, բայց եթէ սրտի տրտմութիւն. ու ես խիստ շատ վախցայ։ 3—Ա՛յն ատեն թագաւորին ըսի, Թագաւորը յաւիտեան ողջ կենայ. ինչպէս իմ երեսս տրտում չըլլայ, որ իմ հայրերուս գերեզմաններուն տեղը եղող քաղաքը աւերակ՝ ու անոր դռնները կրակով այրուած են։ 4—Ու թագաւորը ինծի ըսաւ, Դուն ինչ բ՞ոնչ կը խնդրես այս բանին վրայով։ Ա՛յն ատեն երկինքի Աստուծոյն աղօթք բրի։ 5—Ու թագաւորին ըսի, Եթէ թագաւորին հաճոյ կ'երեւնայ, ու եթէ քու ծառադ քու աչքերուդ չնորհք գտաւ, զիս Հրեաստան ղրկես իմ հայրերուս գերեզմաններուն քաղաքը, որպէս զի զանիկա չինեմ։ 6—Ու թագաւորը ինծի ըսաւ,

*Եբր. երկինքի

(ու Թագաւորին անոր քով նստած էր,) ինչ ճամբորդութիւնդ պիտի ըլլայ ատեն պիտի գնէ, ու ե՛րբ պիտի դառնաս. և Թագաւորին հաճոյ երեցաւ որ ինք զրկէ. ես ալ անոր ժամանակ որոշեցի։ **7**—Ու Թագաւորին ըսի, Եթէ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ. ինծի նամակներ տրուին Գետին միւս կողմը եղող իշխաններուն, որպէս զի անոնք մինչև որ Հրէաստան երթամ, **8**—Ու Նասակ մը Ասափ՝ որ Թագաւորական անտառին պահապանն է, որպէս զի ինծի փայտ տայ, Ա՛ստ-ա՛ծոյ տանը աշտարակին դռներուն և քաղաքին պարիսպը ու մանելուս տունս չինելու համար։ Ու Թագաւորը ինծի տուաւ, ըստ որ իմ Աստուծոյս բարի ձեռքը իմ վրաս էր։

9—Ու Գետին միւս կողմը եղող իշխաններուն գացի, ու Թագաւորին նամակները անոնց տուի. և Թագաւորը ինծի հետ զօրապետներ ու ձիաւորներ ղրկեց։ **10**—Ու երբ Սանաբաղատ Որոնացին ու Ամմոնացի ծառան Տոբիա լսեցին, չատ նեղացան, որ Իսրայէլի որդիներուն աղէկութիւնը փնտռելու հասար մէկ եկաւ։ **11**—Ու Երուսաղէմ գացի և հոն երեք օր մնացի։

12—Ու ես քանի մը մարդով հետ գիշերով ելայ. ու ինչ որ իմ Աստուծոյս սրտիս մէջ դրեր էր Երուսաղէմի համար ընելու, գանկիս մարդու չզրուցեցի. և ինծի հետ իմ հեծած անասունէս զատ ուրիշ անասուն մը չկար։ **13**—Ու գիշերով Ձորի դռնէն, Վիշապի աղբիւրին առջեւէն, Աղբեց դուռը ելայ, ու Երուսաղէմի փլած պարիսպները ու կրակէն այրուած դռները զննեցի։ **14**—Ու Աղբիւրի դուռը ու Թագաւորին աւազանը անցայ. ու տակս եղող անասունին անցնելու տեղ չկար։ **15**—Ու գիշերով հեղուստէն վեր ելայ ու պարիսպը զննեցի. ու դարձայ, Ձորի դռնէն մտայ, ու այսպէս նորէն էմ տեղս եկայ։ **16**—Ու ոստիկանները իմ ու երթալու ու ինչ ընելս չգիտցան. ու Հրեաներուն կամ քահանաներուն կամ ազնուականներուն կամ ոստիկաններուն և կամ ուրիշներուն, որոնք գործը կ'ընէին, մինչև հիմա չզրուցեցի։

17—Եւ անոնց ըսի, Դուք կը տեսնէք այս թշուառութիւնը որուն մէջ կը գտնուինք, և Թէ Երուսաղէմ աւերակ՝ ու անոր դռները կրակով այրուած են. եկէք երուսաղէմի պարիսպը չինենք, որպէս զի այսու հետեւ նախատինք չըլլանք։ **18**—Ու իմ Աստուծոյս բարի ձեռքը իմ վրաս ըլլալը. ու Թագաւորին ինծի ըսած խօսքերն ալ անոնց պատմեցի. ու անոնք ըսին, Ելլենք չինենք. և իրենց ձեռքերը ամրացուցին այս բարի գործին համար։

19—Բայց Որոնացի Սանաբաղատ ու Ամմոնացի ծառան Տոբիա և Արաբացի Գեսամ լսելով՝ մեզ ծաղր ըրին, ու մեզ քամահրելով ըսին, Այս ձեր ըրած գործը ի՞նչ պիտի ըլլայ. միթէ դուք Թագաւորէն ապստամբի՞ կ'ուզէք։ **20**—Ու անոնց պատասխան տուի ու ըսի, Երկինքի Աստուածը ինք մեզի յաջողութիւն պիտի տայ, ու մենք որ անոր ծառաներն ենք, պիտի ելլենք ու չինենք, բայց դուք Երուսաղէմի մէջ բաժին, իրաւունք ու յիշատակ չունիք։

ԳԼ. Գ

Աե մեծ քահանան Եղիասիբ և անոր քահանայ եղբայրները ելան ու Ոչխարաց դուռը չինեցին. անոնք զանիկա նուիրեցին և անոր փեղկերը կանգնեցին. ու զանիկա մինչև Մէային աշտարակը, մինչև Անանէելի աշտարակը նուիրեցին։ **2**—Ու անոր քով Երիքովի մարդիկը չինեցին, ու անոնց քով Իմբրիի որդին Զաքքուր չինեց։ **3**—Ու Ձկնոց դուռը Ասենայի որդիները չինեցին. ատոնք զանիկա չինեցին, ու անոր փեղկերը, փականքը ու նիգերը անցուցին։ **4**—Ու անոնց քով Ակկոսի որդւոյն Ուրիայի որդին Մերամոթ նորոգեց, ու անոնց քով Մաասիզերէլի որդւոյն Բարաքիայի որդին Մեսուզամ նորոգեց. և անոնց քով Բաանային որդին Սադոկ նորոգեց։ **5**—Ու անոնց քով Թեկոա մարդիկ նորոգեցին, բայց անոնց մեծերը իրենց Տէրոջը գործին իրենց վիզ չդնեցին։ **6**—Ու Հին դուռը Փասէի որդին Յովիադա ու Բասոդեայի որդին Մեսուզամ նորոգեցին. անոնք զանիկա չինեցին, ու անոր փեղկերը, փականքը ու նիգերը անցուցին։ **7**—Ու անոնց քով Գաբաւանացի Մելատիա ու Մերոնոթացի Յադոն և Գաբաւոնի ու Մասփայի մարդիկը չինեցին՝ մինչև Գետին այս կողմը եղող իշխանին աթոռը։ **8**—Անոր քով ոսկերիչներէն Հարհայիայի որդին Ոզիէլ նորոգեց. ու անոր քով դեղագործներուն որդին Անանիա նորոգեց. ու Երուսաղէմը մինչև լայն պարիսպը թողացին։ **9**—Ու անոնց քով Երուսաղէմի կէս մասին իշխանը, Ովրի որդին Հասփայիա, նորոգեց։ **10**—Ու անոնց քով ու իր առջեւ դիմաց Հարումափի որդին Յեդայիա նորոգեց. ու անոր քով Ասբանիայի որդին Հաттուս նորոգեց։ **11**—Միւս բաժինը ու Փուռէրու աշտարակը Հարիմի որդին Մեղքիա ու Փահաթ-Մոաբի որդին Ասուբ նորոգեցին։ **12**—Ու անոր քով Երուսաղէմի կէս մասին իշխանը, Ալոհեսի որդին Սեղդում, ինք ու իր աղիքները նորոգեցին։ **13**—Ձորի դուռը Անոն ու Զանովի բնակիչները նորոգեցին. անոնք զանիկա չինեցին, ու անոր փեղկերը, փականքը ու նիգերը անցուցին. ու պարիսպին հազար կանգուն չինէին մինչև Աղբիւ դուռը։ **14**—Ու Աղբիւ դուռը Բեթ-քաբրամայի կողմերու իշխանը, Ռեքաբի որդին Մեղքիա, նորոգեց. զանիկա ան չինեց, ու անոր փեղկերը, փականքը ու նիգերը անցուցին։ **15**—Ու Աղբիւրի դուռը Մասփայի կողմերու իշխանը Քոլոզէի որդին Սեղդում նորոգեց. զանիկա ան չինեց ու ծածկեց, և անոր փեղկերը, փականքը ու նիգերը անցուցին. ու Թագաւորի պարտէզին մօտ եղող Սիլոյամի աւազանին պարիսպը մինչև Դաւիթի քաղաքէն իջնող ասիճանները չէին։ **16**—Անկէ ետքը Բեթսուրի կէս մասին իշխանը, Ազբուքի որդին Նէեմիա, նորոգեց մինչև Դաւիթի գերեզմանները դիմաց, ու մինչև չինծաւ աւազանը, ու մինչև Բեթհագարաբին։ **17**—Անկէ ետքը Ղեւտացիք նորոգեցին. Բանիի որդին Հռեում. անոր քով Կէիլայի կէս մասին իշխանը Ասաբիա իր սահմանը նորոգեց։ **18**—Անկէ ետքը անոնց եղբայրները, Կէիլայի կէս մասին իշխանը, Ենադադի որդին Բաւայի, նորոգեց։ **19**—Ու անոր քով Մասփայի իշխանը, Ցեսուի որդին Եզեր, միւս բաժինը նորոգեց, այսինքն Ղ-ր-ղ-ի դարձուածքը, որ զինաքանը ելլելու ճ-մ-ը-ն դիմաց է։ **20**—Անկէ ետքը միւս բաժինը, Ղ-ր-ղ-ի գարձուածքէն մինչև մեծ քահանային Եղիասիբի տանը դուռը, Զաբբայի որդին Բարուք փութով նորոգեց։ **21**—Անկէ ետքը միւս բաժինը, Եղիասիբի տանը ծայրը, Ակկոսի որդւոյն Ուրիայի որդին Մերամոթ նորոգեց։ **22**—Ու անկէ ետքը քահանաները, դաշտի բնակիչները, նորոգեցին։ **23**—Ու անկէ ետքը Բենիամին ու Ասուբ Որհենոն տուներուն առջեւ նորոգեցին. անկէ ետքը Անանիայի որդւոյն Մասայիայի որդին Ազարիա իր տանը դիմաց նորոգեց։ **24**—Անկէ ետքը միւս բաժինը, Ազարիայի տունէն մինչև Ղ-ր-ղ-ի գարձուածքը, մինչև անկիւնը, Ենամդափ որդին Բանուի նորոգեց։ **25**—Ուզայի որդին Փաղաղ Ղ-ր-ղ-ի գարձուածքին դիմաց ու բանտի գաւիթին քով եղող Թագաւորին վերի պալատին դարպասի աշտարակը չէին։ — անոր ետեւէն Փարոսի որդին Փագաթիա չէին։ **26**—Ու Նաթանայիմները, որ Ոփազ կը բնակէին, մինչև արեւելեան կողմը եղող Ջուրի դրանը դիմաց ու դուրսի աշտարակը Ն-ր-թ-չ-ն։ **27**—Անկէ ետքը միւս բաժինը, դուրսի մեծ աշտարակին դիմացէն մինչև Ոփազի պարիսպը, Թեկուացիք նորոգեցին։ **28**—Ձիերու դրանէն վեր քահանաները նորոգեցին, այ-ի-ն մարդ իր տանը դիմաց։ **29**—Անկէ ետքը Եմմերի որդին Սադոկ իր տանը դիմաց նորոգեց. ու անկէ ետքը արեւելեան դրանը պահապանը, Սեքեհնիայի որդին Սեմայիա, նորոգեց։ **30**—Անկէ ետքը միւս բաժինը Սելեմիայի որդին Անանիա ու Սեղեփի վեցերորդ որդին Անոն նորոգեցին. անկէ ետքը Բարաքիայի որդին Մեսուզամ իր սենեակին դիմաց նորոգեց։ **31**—Անկէ ետքը Ոյարեփի որդին Մեղքիա, մինչև Նաթանայիմներուն ու վաճառականաց տունը Մափկաթի դրանը դիմաց ու մինչև Ֆանկիանը ելլելու տեղը, նորոգեց։ **32**—

*կամ, ոսկերչի

†կամ, անկեան վերնատունը

եւ անկիւնը կղզւոյ սեղէն մինչեւ ՚Ոչխարաց դուռը՝ սակերիչները ու վաճառականները նորոգեցին։

Գլ. Դ

Ա ԵՐԲ Սանաբազատ լսեց որ մենք պարիսպը կը չինենք, սիրեալ նեղացաւ, ու չատ սրդողելով Հրեաները ծաղր ըրաւ։ 2—Եւ իր եղբայրներուն ու Սամարիայի զօրքին առջեւ խօսեցաւ ու ըսաւ, Այս ակոր Հրեաները ի՞նչ կը չինեն. մի՛թ Թլսաւսիթիւն կ՚ըլլա՞յ անոնց. մի՛թ զոհ պիտի զոհեն, ու այսօ՞ր լմնցնեն. մի՛թ այրուած քարերը փոշիի դէպերէն պիտի կենդանացնի՞ն։ 3—Եւ Ամմոնացի Տոբիա անոր քովէ էր, ու ըսաւ, Եթէ ագուէս մըն ալ ելլէ անոնց չինածին վրայ, անոնց քարէ պարիսպը պիտի փլցնէ։

4—Ով մեր Աստուածը, լսէ, վասն զի նախատուեցանք. ու անոնց նախատինքը իրենց գլխուը դարձուր, ու զանոնք գերութեան երկրի մէջ աւար ըլլալու մատնէ։ 5—Եւ անոնց անօրէնութիւնը մի ծածկեր, ու քու առջեւէդ անոնց մեղքը չջնջուի. քանզի չինողներուն առջեւ բարկացուցին։

6—Եւ պարիսպը չինեցինք, ու բոլոր պարիսպը մինչեւ կէսը *հասաւ. վասն զի ժողովրդը գործելու սիրտ ունէր։

7—Ու երբ Սանաբազատ ու Տոբիա և Արաբացիք ու Ամմոնացիք ու Ազովտացիք լսեցին, որ երուսաղէմի պարսպներուն նորոգութիւնը յառաջ կ՚երթայ, ու փլած տեղերը սկսեր են չինուիլ, չատ սրդողեցան։ 8—Եւ ամէնը միտքերնին խօսք ըրին, որ գան երուսաղէմի դէմ պատերազմ բնեն, ու անոր վնաս տան։ 9—Բայց մենք մեր Աստուծոյն աղօթք ըրինք, ու †ՓԷ անոնցմէ պահապան հաստ՚ ցորկ ու գիշեր անոնց դէմ պահապաններ դրինք։ 10—Եւ Յուդա ըսաւ, Բեռնակիրներուն ոյժը հատաւ, ու հողը չատ է. մենք պիտի չկրնանք պարիսպը չինել։ 11—Ու մեր թշնամիները կ՚ըսէին, Չգիտնան ու չտեսնեն, մինչեւ մենք անոնց մէջ մտնենք ու զանոնք սպաննենք, և ածանց գործը խափանենք։ 12—Ու եղաւ որ անոնց քով բնակող Հրեաները մեզի եկան, և տասը անգամ մեզի ըսին թէ Ամէն կողմանէ ուր որ դառնաք, մեր վրայ դէրէ յարձակին։

13—Ուստի ցած տեղերը՝ պարսպին ետեւը, *ու բարձր տեղերը՝ ժողովրդը իրենց ազգատոհմներուն համեմատ բանակով կացնեցուցի, ու իրենց սուրերովը, նիզակներովը ու աղեղներովը կացնեցուցի։ 14—Ես նայեցայ ու ելայ, և իշխաններուն ու ասպիկաններուն ու մնացած ժողովրդին ըսի, Անոնց երեսէն մի վախնաք. յիշեցէք Տէրը որ մեծ ու սքանչ է, և ձեր եղբայրներուն, որդւոցիդ աղջիկներուն, կիներուն ու տուներուն համար պատերազմ բրէք։

15—Ու երբ մեր թշնամիները լսեցին որ մենք իմացեր ենք, և Աստուած անոնց խորհուրդը ցրուեցուց, մենք ամէնս պարիսպը չինելու դարձանք, ամէն մէկը իր գործին։ 16—Եւ այն օրէն ի վեր իմ մարդոցս կէսը կ՚աշխատէին, ու կէսն ալ նիզակներ, ասպարներ, աղեղներ ու զրահներ կը բռնէին. ու իշխանները Յուդայի բոլոր †ազգատոհմիներուն հետեւ կը կ՚երթէին։ 17—Պարիսպը չինողները ու բեռնակիրները՝ բեռցնողները, մէկ ձեռքով կը բանէր, ու մէկ ձեռքովը զէնքը կը բռնէր։ 18—Եւ չինողներուն ամէն մէկը իր սուրը մէկ‌դի կապած կը գործէր. ու փողահարը իմ քովս էր։ 19—Եւ ազնուականներուն ու ասպիկաններուն ու մնացած ժողովրդին ըսի, Աչս գործը մեծ ու ընդարձակ է, ու մենք պատերին վրայ ցրուած ենք, և իրարմէ հեռու կ՚երթանք։ 20—Ո՞ւրէ փողին ձայնը ուր անգ որ լսէք, հոն մեր քով ժողովուիք. մեզի համար մեր Աստուած պատերազմի պիտի բնէ։ 21—Ու մենք այսպէս գործը կ՚ընէինք. և ՀՀէսկ կէսը, արշալոյսին ծագած ատենէն մինչեւ աստղերուն երեւցած ատենը, նիզակները բռնած կը կենային։ 22—Եւ այն ատեն ժողովրդին ըսի, Ամէն մարդ իր ծառային հետ գիշերները երուսաղէմի մէջ մնայ, որպէս զի գիշերը մեզի համար պահապանութիւն բնէ ու ցորկը գործէ։ 23—Ու ես ու իմ եղբայրներս և իմ ծառաներս ու իմ հետ էս ակոզ պահապան մարդկէ՛ ամենեւին մեր հանդերձները չէինք հաներ՝ *լուացուելու ատենէն զատ։

*ՆԲԲ. կապուեցաւ.
†ՆԲԲ. անոնց երեսէն

*ԿՀ, չոր տեղը, Ե ՀՀ, յարկերուտակ †ՆԲԲ. տանը

Գլ. Ե

ԵՒ ժողովրդը ու անոնց կիները իրենց եղբայրներուն, Հրեաներուն, դէմ մեծ գանգատ ըրին։ 2—Եւ ոմանք կ՚ըսէին, Մենք մեր տղաքներովը ու աղջիկներովը չատ ենք. և ուտելիք ծախու առնենք, որպէս զի ուտենք ու ապրինք։ 3—Ոմանք ալ կ՚ըսէին, Մենք մեր արտերը, այգիները ու տուները գրաւ կը դնենք, որպէս զի սովի համար ուտելիք ծախու առնենք։ 4—Եւ ոմանք կ՚ըսէին, Թագաւորին հարկ տալո՛ համար մեր արտերուն ու այգիներուն վրայ ոսկի փոխ առինք. 5—Ու հիմա մեր մարմինը մեր եղբայրներուն մարմինին պէս է, ու մեր որդիները՝ անոնց որդիներուն պէս. և ահա մենք մեր աղջիկները ու աղջիկները ծառայութեան դէմ ծախենք. և արդէն մեր աղջիկներէն ազախին ըլլալու ֆծախուածներ կան, ու մեր ձեռքը կարողութիւն չկայ. որովհետեւ մեր արտերը ու այգիները ուրիշներուն չէ՛ՀՀ են։

6—Ու երբ ես անոնց ազազակը ու այս խօսքերը լսեցի, խիստ դժուարացայ։ 7—Եւ մտքիս մէջ խորհրդի եմ՚, ազնուականները ու ասպիկանները յանդիմանեցի, ու անոնց ըսի, Դուք ամէնդ ալ ձեր եղբայրներէն վարկ կ՚առնէք. ու անոնց դէմ մեծ ժողով ըրի։ 8—Ա՛յն ատեն անոնց ըսի, Մենք հեթանոսներու ծախուած մեր Հրեայ եղբայրները մեր կարողութեանը չափ ծախու առինք, ու հիմա դուք ձեր եղբայրները կը ծախէ՞ք, կամ անոնք մեզի ծախուի՞ն. և անոնք լռեցին ու չկրցան պատասխան տալ։ 9—Ու ըսի, Ա՛յդ ձեր ըրածը ազէկ բան չէ. պէտք չէ՞ որ մեր Աստուծոյն վախովը քալէք, որպէս զի մեզի թշնամի եղող ազգերուն նախատինք չբլլանք։ 10—Ես ալ՝ իմ եղբայրներս ու ծառաներս ալ սաակ ու ցորեն փոխ տուած ենք անոնց, Բայց հիմա այս պարտքը անոնց չներենք։ 11—Ե՛ս ձեզի կ՚ազաչեմ, որ այսօր անոնց ետ դարձնէք անոնց արտերը, այգիները, ձիթենիները ու տուները. նաև սաակին, ցորենին, գինիին ու իւղին հարիւրէն մէկը որ անոնցմէ կը պահանջէք։ 12—Եւ անոնք ըսին, Ետ պիտի դարձնենք, ու անոնցմէ բա՛ն մը պիտի չպահանջենք. ինչպես ըսիր՝ այնպես պիտի ընենք։ Այն ատեն քահանաները կանչեցի, ու անոնց երդում ընել տուի որ այսպես ընեն։ 13—Նաև *հանդերձս թօթվեցի ու ըսի, Ով որ այս բանը չկատարէ, իր տունէն ու իր վաստակէն Աստուած այսպէս թօթվեսի, ու այսպէս թօթուած ու դատարկ ըլլայ։ Եւ բոլոր ժողովը Ամէն ըսին, ու Տէրը օրհնեցին. ու ժողովրդը այս բանը կատարեց։

14—Եւ ՅուդայՀՀի երկրին մէջ անոնց իշխանը եղած օրէ՛ն՝ Արտաշէս թագաւորին քսաներորդ տարիէն մինչեւ երկոտասնուերկուերորդ տարին, տասներկու տարի, Թէ՛ ես և Թէ՛ իմ եղբայրներս հիշխանութեան ռաճիկը չկերինք։ 15—Բայց իմ առաջ եղող նախորդ իշխանները ժողովրդին բեռ կ՚ըլլային, ու անոնցմէ հաց ու գինի կ՚առնէին՝ քառասուն սիկղ արծաթէն զատ. անոնց ծառաներն ալ ժողովրդին բռնութիւն կ՚ընէին. բայց ես Աստուծմէ վախնալով՝ այնպես չըրի։ 16—Ու նաև այս պարսպին գործին մէջ աշխատեցայ, ու մենք արտ ծախու չառինք. և իմ բոլոր ծառաներս հոն ժողվուած էին այն գործին համար։ 17—Ու Հրեաներէն ու ասպիկաններէն հարիւր հիսուն մարդ, ու չրջակայ ազգերէն մեզի եկողները իմ սեղանիս կ՚ուտէին։ 18—Եւ ամէն օրուան համար այս էր. արջառ մը ու վեց ընտիր ոչխար, և ինծի համար թռչուններ ալ կը պատրաստուէին, ու տասը

*ՆԲԲ. ծոցս
†ՆԲԲ. իշխանի հացը չկերանք

օրը անգամ մը առաւոտ թեամբ ամէն տեսակ գինիէն կ՚ելլէր։ այսու ամենայնիւ իշխանութեան առձիկը չպահանջէցին, վասն զի այս ժողովուրդին վրայ եղած ծառայութիւնը ծանր էր։ **19**—Ով Աստուած իմ, այս ժողովուրդին բոլոր ըրածներուս համեմատ զիս ի բարին յիշէ։

Գլ. Զ

Ու երբ Սանաբաղատ, Տուբիա ու Արաբացի Գեսամ ու մեր միւս թշնամիները լսեցին որ ես պարիսպը չինեցի, ու հոն վրան անդ մը չմնաց, (թէպետև մինչև այն ատեն դռներուն փեղկերը դրած չէին,) **2**—Սանաբաղատ ու Գեսամ ինծի խոսք դրկեցին ու ըսին, Եկուր, Ովնովի գաւառին գեղերուն մէջ իրարու հետ տեսնուինք։ բայց անոնք ինծի չարութիւն ընել կը խորհէին։ **3**—Ես անոնց պատգամաւորներ դրկեցի ու ըսի, Ես մեծ գործով մը զբաղած եմ, ու չեմ կրնար իջնել։ ինչու համար գործը դադրի, երբ զանիկա թողում ու ձեզի իջնեմ։ **4**—Ես անոնք ինծի չորս անգամ այսպիսի խօսքեր դրկեցին, ես ալ անոնց նոյն պատասխանը տուի։ **5**—Ու հինգերորդ անգամին Սանաբաղատ նոյն խօսքերով իր մանչը ինծի դրկեց՝ ձեռքը բաց թուղթով մը, **6**—Որուն մէջ այսպէս գրուած էր։ Ազգաց մէջ լսուեցաւ, ու Գեսամ կ՚ըսէ որ դուն ու Հրեաները ապստամբել կը խորհիք. դուն անոր համար կը չինես պարիսպը, որ անոնց թագաւոր ըլլաս, *ինչպես կ՚ըսուի՝ **7**—Ու նաև Երուսաղէմի մէջ մարգարէներ հաստատեցիր, որպես զի քարոզեն ու քեզի համար ըսեն, Թէ Անիկա Հրէաստանի թագաւոր է. ու հիմա այս խօսքերը թագաւորին ականջը պիտի հասնին. ուրեմն եկուր որ միասին խորհուրդ բնենք։ **8**—Բայց ես անոր ղրկեցի ու ըսի, Բանը քու ըսած խօսքերուդ պէս չէ, հապա ատոնք դուն քու սրտիդ հնարեցիր։ **9**—(Վասն զի անոնց ամէնը մեզ կը վախցնէին՝ ըսելով, Թող անոնց ձեռքը այն գործէն թուլնայ, որպես զի չկատարուի։ Ու հի-

*Եբր. այս խօսքերուն համեմատ

մա, ով Տէր, իմ ձեռքերս ուժովցուր)

10—Ու ես Մեետաբէելի որդւոյն Դալայիայի որդւոյն Շեմայիայի տունը մտայ. և անիկա փակը ինձ գոցուած էր, ու ըսաւ, Եկուր մեկտեղ Աստուծոյ տունը, տաճարին մէջ, երթանք, ու տաճարին դռնները գոցենք, վասն զի գիշ մեզ սպանելու կու գան. ու անոնք գիշերով պիտի գան քեզ սպանելու։ **11**—Ու ես ըսի, Միթէ ինծի պէս մարդը կը փախչի. և թէ կայ ինծի պէս որ տաճարը մտնէ ապրելու համար։ չեմ մտներ։ **12**—Ու աղէկ հասկցայ որ զանիկա Աստուած ղրկած չէր, հապա իմ վրաս այս մարգարէութիւնը խօսեցաւ. վասն զի Տոբիա ու Սանաբաղատ զանիկա վարձքով բռներ էին։ **13**—Ես ասոր համար վարձքով բռներ էին զանիկա, որպես զի ես վախնամ, ու այսպէս ընելով մեղանչեմ, որպես զի ինձ բամբասելու ու իմ անունս տրտմելու պատճառ մը ունենան։ **14**—Ով Աստուած իմ, Տոբիան ու Սանաբաղատը այս իրենց գործերուն համեմատ, ու Նոադիա մարգարէուհին, ու ինձ վախցնող միւս մարգարէները յիշէ։

15—Ու պարիսպը հինգ հարիւր քսանհինգերորդ օրը կատարուեցաւ։ **16**—Ու երբ մեր թշնամիները լսեցին, մեր բոլորտիքը եղող ամէն ազգերը վախցան ու շատ ամչցան, ու իմացան որ այս գործը մեր Աստուծոյն ձեռնհասութեամբ կատարուեցաւ։

17—Եւ այն օրերը Յուդայի ազնուականներէն Տոբիայի շատ նամակներ կ՚երթային, Տոբիայէ ալ անոնց կու գային. **18**—Վասն զի Յուդայի շատ մարդիկը անոր հետ երդումով միաբաներ էին. քանզի անիկա Արահեան Սեքենիայի փեսան էր, ու անոր որդին Յոհանան Բարաքիայի որդւոյն Մեսուլամի աղջիկը առեր էր։ **19**—Նաև իմ առջեւս անոր ազնիւութիւնները կը գրուցէին, ու իմ խօսքերս անոր կը հասցընէին. և Տոբիա նամակներ կը ղրկէր զիս վախցնելու համար։

Գլ. Է

Ու երբ պարիսպը լմնցաւ, և դռնները փեղկերը անցուցի ու դռնապանները, երգեցողներ ու Ղեւտացիները դրուեցան, **2**—իմ եղբայրս Անանին, ու աշտարակին իշխանը Անանիան (որ Հեւտաարիմ ու չաւերէն աւելի Աստուածմէ վախցող մարդ մըն էր) Երուսաղէմի վրայ դրի, **3**—Ու անոնց ըսի, Մինչև որ արեւը չտաքցնայ, Երուսաղէմի դռները բացուածեն. և իրենց ներկայութիւնովր դռները գոցեն ու նիգերը դնեն, ու Երուսաղէմի բնակիչներէն պահապաններ կարգեն, ամէն մէկը իր պահպանութեանը մէջ, ու ամէն մէկը իր տանը դիմաց։

4—Քաղաքը ընդարձակ ու մեծ էր, բայց մէջի ժողովուրդը փիչ էր, ու տուներ չինուած չէին. **5**—Ես իմ Աստուածս իմ սրտիս մէջ դրաւ, որ ազնուականները, ատեաններն ու ժողովուրդը ազգերով որպես զի արձանագրուին. ու առաջին անգամ ֆէրուէրնէն ելլողներուն մէկ ազգաբանութեան գիրքը գտայ, ու անոր մէջ այսպէս գրուած գտայ.

6—Բաբելոնի Նաբուգոդոնոսր թագաւորին տարած գերիներէն ելլող գաւառի բնակիչները ատենք էին, որոնք Երուսաղէմ ու Յուդա գարձան, ամէն մէկը իր քաղաքը. **7**—Ու Զորաբաբէլին, Յեսուի, Նէեմիայի, Ազարիայի, Ռաամիայի, Նաամանիի, Մարդքեքէի, Բաղսանի, Մասիրաթի, Բագուէի, Նեհումի ու Բաանայի հետ եկան։ Ես այս Իսրայէլի ժողովուրդին մարդոցը թիւը. **8**—Փարոսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասունեւերկու. **9**—Սափատիայի որդիները՝ երեք հարիւր եօթանասունեւերկու. **10**—Արահի որդիները՝ վեց հարիւր յիսունեւերկու. **11**—Փահաթմովաբի որդիները՝ Յեսուի ու Յովաբի որդիներէն՝ երկու հազար ութ հարիւր տասներութ. **12**—Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս. **13**—Զաթուի որդիները՝ ութ հարիւր քառասունհինգ. **14**—Զաքքայի որդիները՝ եօթը հարիւր վաթսուն. **15**—Բանուի որդիները՝ վեց հարիւր քառասունեւերկու. **16**—Բեբայիի որդիները՝ վեց հարիւր քսանութ. **17**—Ազգադի որդիները՝ երկու հազար երեք հարիւր քսանեւերկու. **18**—Ադոնիկամի որդիները՝ վեց հարիւր վաթսունեւօթը. **19**—Բագուէի որդիները՝ երկու հազար վաթսունեւօթը. **20**—Ադինի որդիները՝ վեց հարիւր յիսունչորս. **21**—Ատերի որդիները Եզեկիայէ՝ իննսունեւութ. **22**—Հասումի որդիները՝ երեք հարիւր քսաներութ. **23**—Բեսէյի որդիները՝ երեք հարիւր քսաներչորս. **24**—Արիփի որդիները՝ հարիւր տասներերկու. **25**—Գաբաոնի որդիները՝ իննսունչորսինգ. **26**—Բեթլեհեմի ու Նետոփայի մարդիկը՝ հարիւր ութսունեւութ. **27**—Անաթոթի մարդիկը՝ հարիւր քսաներութ. **28**—Ազմաւթի տանը մարդիկը՝ քառասունեւերկու. **29**—Կարիաթարիմի, Կեփիրայի ու Բեերովթի մարդիկը՝ եօթը հարիւր քառասունեւերեք. **30**—Ռամայի ու Գաբայի մարդիկը՝ վեց հարիւր քսաներմէկ. **31**—Մաքմասի մարդիկը՝ հարիւր քսաներերկու. **32**—Բեթէլի ու Գայիի մարդիկը՝ հարիւր քսաներերեք. **33**—Միւս Նաբաւի մարդիկը՝ յիսունեւերկու. **34**—Միւս Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս. **35**—Հարիմի որդիները՝ երեք հարիւր քսան. **36**—Երիքովի որդիները՝ երեք հարիւր քառասունհինգ. **37**—Ղովդի, Ադիդի ու Ովնովի որդիները՝ եօթը հարիւր քսաներմէկ. **38**—Սենասայի որդիները՝ երեք հազար ինը հարիւր երեսուն։

39—Քահանաները՝ Յեսուի տունէն Յեդայիայի որդիները՝ ինը հարիւր եօթանասունեւերեք. **40**—Եմմերի որդիները՝ հազար յիսունեւերկու. **41**—Փասուրի որդիները՝ հազար երկու հարիւր քառասունեւեօթը. **42**—Հարիմի որդիները՝ հազար տասներեօթն էին։

43—Ղեւտացիները՝ Ովդուիայի որդիներէն Յեսուի ու Կադմիէլի որդիներ եօթանասունչորս էին։

44—Երգեցողները, Ասափի որդիները, հարիւր քառասունեւութ էին։

45—Դռնապաններ, Սեղդումի որդիները, Ատերի որդիները, Տելմոնի որդիները, Ակկուբի որդիները, Ատիտայի որդիները, Սուբայի որդիները հարիւր երեսունեւութ էին։

46—Նաթանայիմները սանք էին. Սիսայի որդիները, Ասուփայի որդիները, Տաբաոթի որդիները, 47—կերոսի որդիները, Սիայի որդիները, Փադոնի որդիները, 48—Ղաբանայի որդիները, Ագաբայի որդիները, Սաղամէի որդիները, 49—Անանի որդիները, Հեդդէլի որդիները, Գաազի որդիները, 50—Ռէայիայի որդիները, Ռասինի որդիները, Նեկոդայի որդիները, 54—Գազամի որդիները, Ողզի որդիները, Փասէի որդիները, 52—Բասիի որդիները, Մաոնիմի որդիները, Նեփուսիմի որդիները, 53—Բակբուկի որդիները, Ակուփայի որդիները, Աբուրի որդիները, 54—Բասղոթի որդիները, Մէխիդայի որդիները, Աբայայի որդիները, 55—Բարկոսի որդիները, Սիսարայի որդիները, Թամայի որդիները, 56—Նեսիայի որդիները, Ասէփայի որդիները, 57—Սողոմոնի ծառաներուն որդիները, Սոտէի որդիները, Սոփերեթի որդիները, Փարիդայի որդիները, 58—Ցեղայի որդիները, Դերկոնի որդիները, Գիդդէլի որդիները, 59—Սափատիայի որդիները, Ասուիլի որդիները, Փաքարեթ-ասեբայիմի որդիները, Ամոնի որդիները. 60—Բոլոր Նաթանայիմները ու Սողոմոնի ծառաներուն որդիները երեք հարիւր ինսունեուերկու էին։

61—Ու Թէղմեղայէ, Թէղարսայէ, Քերուբ, Ադդոնէ ու Իմմերէ ելլողները ասոնք էին, և իրենց հայրերուն տունը ու իրենց սերունդը, այսինքն Իսրայէլէ ըլլալնին ցուցնելու կարող չեղան. 62—Գաղայիայի որդիները, Տուբիայի որդիները, Նեկոդայի որդիները՝ վեց հարիւր քառասունեուերկու հոգի. 63—ու քահանաներէն՝ Աբայայի որդիները, Ակկուսի որդիները, Բերզելլիի որդիները, որ Գաղաադացի Բերզելլիի աղջիկներէն կին առնելով՝ անոնց անունովը կոչուեցաւ. 64—Ասոնք իրենց ազգաբանութեան գիրքը փնտռեցին, բայց չկրցան գտնել. ու անմաքուր սեպուելով՝ քահանայութենէ արգիլուեցան. 65—ու Նէհեմիա անոնց ըսաւ, մինչև որ Ուրիմով ու Թումմիմով քահանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ բաներէն չուտեն։

66—Բոլոր ժողովուրդը մէկտեղ քառասունեուերկու հազար երեք հարիւր վաթսուն հոգի էր, 67—բացի ի անոնց ծառաներէն ու աղախիններէն, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսունեօթն էին. ու անոնց մէջ երկու հարիւր քառասունըհինգ այր և կին երգեցողներ կային, 68—Անոնց ձիերը եօթը հարիւր երեսունըվեց, ջորիները երկու հարիւր քառասունըհինգ, 69—ուղտերը չորս հարիւր երեսունըհինգ, — էշերը վեց հազար եօթը հարիւր քսան էին։

70—Ու տոհմերու իշխաններէն ոմանք գործին համար ընծայ տուին. Աթարատիան հազար դրամ ասկի, յիսուն սկսուական — հինգ հարիւր երեսուն քահանայական պատմուճան տուաւ գանձին։ 71—Ես տոհմերու իշխաններէն ոմանք գործաւորութեան գանձին քսան հազար դրամ ասկի, ու երկու հազար երկու հարիւր մնաս արծաթ տուին։ 72—Ես մնացած ժողովուրդին տուածները քսան հազար դրամ ասկի, ու երկու հազար մնաս արծաթ, ու վաթսունըեօթը քահանայական պատմուճան էին։ 73—Ես քահանաները ու Ղեւտացիները և դռնապաններն ու երգեցողները և ժողովուրդէն եղողները, ու Նաթանայիմները և բոլոր Իսրայէլ իրենց քաղաքներուն մէջ բնակեցան. ու երբ եօթներորդ ամսոր հասաւ, Իսրայէլի որդիները իրենց քաղաքներուն մէջ էին։

Գլ. Ը

Ես բոլոր ժողովուրդը մէկ մարդու պէս Ջուրի դրան առջև եղող հրապարակին մէջ ժողովեցան, ու Եզրաս դպիրին ըսին, որ Մովսէսի օրինաց գիրքը բերէ, զոր Տէր Իսրայէլի պատուիրած էր։ 2—Ու եօթներորդ ամսուն առաջին օրը Եզրաս քահանան օրինաց գիրքը ժողովին առջև բերաւ, որ այր ու կին մարդոցմէ, ու ամէն լսելու ու հասկնալու կարողութիւն ունեցողներէ բաղկացած էր։ 3—Ու զանիկա Ջուրի դրանը առջև եղող հրապարակին մէջ առաւտընէ մինչև կէսօր այր ու կին մարդոց ու հասկցողներուն առջև կարդաց. և բոլոր ժողովուրդը իրենց ականջները օրինաց գիրքին դուխ էր։ 4—Ու Եզրաս գիրքը յատուկ սասր հնուած փայտեղէն բեմին վրայ կանգնած. ու անոր քով այ կողմը Մատաթիա, Սեմա, Անանիա, Ուրիա, Քեղկիա ու Մասէիա, և ձախ կողմը Փադայիա, Միսայէլ, Մեղքիա, Հասում, Ասբադանա, Զաքարիա — Մեսուղամ կայնեցան։ 5—Ու Եզրաս գիրքը բացաւ բոլոր ժողովուրդին աչքերուն առջև, վասն զի ինք բոլոր ժողովուրդէն բարձր էր. ու զանիկա բացածին պես բոլոր ժողովուրդը ոտքի վրայ եղաւ։ 6—Այն ատեն Եզրաս նէհեմ մեծ Աստուածը օրհնեց. ու բոլոր ժողովուրդը ձեռքերնին վերցուցին, ու Ամէն, Ամէն՝ բսին. և իրենց երեսին վրայ գետինը ծռելով Տէրոջը երկրպագութիւն ըրին։ 7—Ու Յեսուա, Բանի, Սաբաբիա, Յամին, Ակկուբ, Սաբեթա, Ոզիա, Մասեխա, Կելիտա, Ազարիա, Յովզաբադ, Անան, Փադայիա ու Ղեւտացիք օրէնքը ժողովուրդին կը հասկցնէին. և ժողովուրդը իրենց կարգովը կայներ էին։ 8—Անոնք Աստուծոյ օրինաց գիրքը յատուկ կերպով կարդացին, ու ակնկութիւնը տալով կարդացածնին հասկցուցին։

9—Ու Նէհեմիա Աթարատիան ու եզբաս քահանան — գրիչը և ժողովուրդին հասկցնող Ղեւտացիները բոլոր ժողովուրդին ըսին, Այս օրը ձեր Տէր Աստուածոյն սուրբ ը հ է. սուգ մի ընէք ու մի լաք. վասն զի բոլոր ժողովուրդը կուլային երբ օրէնքին խօսքերը կը լսէին։ 10—Ու անոնց ըսաւ, Գացէք պարարտ բաներ կերէք ու անոյշ բաներ խմեցէք, ու պատրաստութիւն չունեցողներուն բաժիններ ղրկեցէք, քանզի այս օրը մեր Տէրոջը սուրբ ը հ է. ու մի տրտմիք. վասն զի Տէրոջը ուրախութիւնը ձեր զօրութիւնն է։ 11—Այն ատեն Ղեւտացիք բոլոր ժողովուրդը լռեցուցին՝ ըսելով, Լռուա կեցէք, քանզի սրբի սուրբ օր է, ու մի տրտմիք։ 12—Ու բոլոր ժողովուրդը ուտելու ու խմելու, ու բաժիններ ղրկելու և մեծ ուրախութիւն ընելու գացին. վասն զի իրենց բացատրուած խօսքերը հասկցան։

13—Ու երկրորդ օրը բոլոր ժողովրդին առաջնահայրերը, քահանաները ու Ղեւտացիները Եզրաս գպիրին քով ժողվուեցան, որպէս զի օրէնքին խօսքերը հասկնան։ 14—Ու օրինաց էջերէն մէջ գրուած գտան որ Տէրը Մովսէսի ձեռքով հրամայեր է, որ եօթներորդ ամսուն տաներ Իսրայէլի որդիները տաղաւարներու մէջ բնակին, 15—նաև իրենց ամէն քաղաքներուն մէջ ու երուսաղէմի մէջ հրատարակեն ու քարոզեն՝ ըսելով, Լեռը ելէք ու ձիթենիի ոստեր, խզի ծառի ոստեր ու մրտենիի ոստեր և արմաւենիի ոստեր ու տերեւախիտ ծառերու ոստեր բերէք, որպէս զի տաղաւարներ շինէք, ինչպէս գրուած է։ 16—Ու ժողովուրդը ելաւ ու բերաւ. ու ամէնն իրենց տանիքին վրայ ու իր գաւիթին մէջ և Աստուծոյ տանը գաւիթներուն մէջ ու Ջուրի դրանը հրապարակին մէջ՝ ու Եփրեմի դրանը հրապարակին մէջ՝ իրենց տաղաւարներ չինեցին։ 17—Ու գերութենէ դարձողներուն բոլոր ժողովը տաղաւարներ չինեցին, ու տաղաւարներու մէջ նստան. վասն զի Իսրայէլի որդիները՝ Նաւեան Յեսուայէ օրերէն մինչև այն օրը՝ այնպես բրած չէին. ու խիստ մեծ ուրախութիւն եղաւ։ 18—Ես առաջին օրէն մինչև վերջին օրը ամէն օր Աստուծոյ օրինաց գիրքը կարդացուեցաւ. եօթը օր տաճն ըրին, և ութերորդ օրը հանդիսաւոր ժողով եղաւ, ինչպես հրամայուած էր։

Գլ. Թ

Ես այս ամսուն քսանըչորսերորդ օրը Իսրայէլի որդիները ծոմով, քուրձերով ու վրանին հող ցռնած ու ժողովեցան։ 2—Ես Իսրայէլի որդիները բոլոր օտարազգիներէն զատուեցան, ու ելած՝ իրենց մեղքերը ու իրենց հայրերուն անօրէնութիւնները խոստովանեցան. 3—Ես իրենց տեղը կայնելով՝ օրուան չորրորդ մասը իրենց Տէր Աստուծոյն օրինաց գիրքէն կարդացին, ու չորրորդ մասը իրենց Տէր Աստուծոյն խոստովանութիւն ու երկրպագութիւն ըրին։

4—Ու Յեսուա, Բանի, Կադմիէլ, Սաբ-

*Այսինքն, կառավարիչը. տես գլ. ը. 9, ժբ. 26։

բանիա, Բաւնի, Սաթաբիա, Բանի և Բենինի Ղեւտացիները *բեմին վրայ եղան, ու իրենց Տէր Աստուածին բարձր ձայնով աղաղակեցին։ 5—Ու Յեսու, Կադմիէլ, Բանի, Ասաբանիա, Սաբաբիա, Ովդիա, Սաքանիա ու Փեթահիա Ղեւտացիները ըսին, Ելէք, ձեր Տէր Աստուածը յաւիտանս յաւիտենից օրհնեցէք։

Օրհնեալ ըլլայ քու փառաւոր անունդ. ու ամէն օրհնութենէ ու գոհութենէ բարձր ըլլայ։ 6—Դուն, միայն դուն Տէր ես. երկինքը, երկինից երկինքը և անոր բոլոր զօրքերը, երկիրը ու բոլոր անոր վրայ եղածը, ծովերը ու բոլոր անոց մէջ եղածը, դուն առնիդեցեր, և ամէնուն դուն կենդանութիւն կու տաս. ու երկինքի զօրքերը քեզի երկրպագութիւն կ'ընեն։ 7—Դուն ես այն Տէր Աստուածը՝ որ Աբրամը ընտրեցիր, և զանիկա Քաղդէացւոց Ուր տաղտէն հանեցիր, ու անոր անունը Աբրահամ դրիր։ 8—Ու անոր սիրտը քու առջեւդ հաւատարիմ գտար, ու անոր հետ ուխտ ըրիր որ Քանանացւոց, Քետացւոց, Ամորհացւոց, Փերեզացւոց, Յեբուսացւոց ու Գերգեսացւոց երկիրը անոր սերունդին տաս. ու քու խօսքդ հաստատեցիր, վասն զի արդար ես։

9—Ու Եգիպտոսի մէջ մեր հայրերուն նեղութիւնը նայեցար, ու Կարմիր Ծովուն վրայ անոնց աղաղակը լսեցիր։ 10—Ու փարաւոնի ու անոր բոլոր ծառաներուն, ու անոր երկրին բոլոր ժողովրդին նշաններ ու հրաշքներ ցուցուցիր, վասն զի գիտցար որ անոնց վրայ հպարտացան. ու այսօրուան պէս քեզի անուն վաստկեցար։ 11—Ու ծովը անոնց առջեւ պատռեցիր, այնպես որ ծովուն մէջէն ցամաքով անցան, և զանոնք հալածողները խորունկ ջուրերու մէջ նետուած քարի պես անդունդը նետեցիր։ 12—Ու ցորեկը ամպի սիւնով, ու գիշերը անոնց գացած ճամբան լուսաւորելու համար՝ կրակի սիւնով առաջնորդեցիր անոնց։

13—Նաև Սինա լեռանը վրայ իջար, ու անոնց հետ երկինքէն խօսեցար. և անոնց ուղիղ դատաստաններ, ճշմարիտ օրէնքներ ու բարի կանոններ ու պատուիրանքներ տուիր։ 14—Ու քու սուրբ շաբաթդ անոնց գիտցուցիր, ու քու ծառային Մովսէսի ձեռքով անոնց պատուիրանքներ, կանոններ ու օրէնքներ հրամայեցիր։ 15—Ու երբ անօթեցան՝ անոնց երկինքէն հաց տուիր, ու երբ ծարաւցան՝ անոնց ապառաժէն ջուր հանեցիր. և անոնց ըսիր որ մտնեն ու ժառանգեն այն երկիրը զոր անոնց տալու համար *ձեռքդ վերցուցիր"։

16—Բայց անոնք, այսինքն մեր հայրերը, հպարտացան, և իրենց պարանոցը խստացուցին, և քու պատուիրանքներուդ հնազանդութիւն չըրին, 17—Ու չուզեցին մտիկ ընել, և անոնց մէջ ըրած հրաշքներդ չյիշեցին. հապա իրենց պարանոցը խստացուցին, ու իրենց ապստամբութիւնովը իրենց ծառայութեանը դառնալու †գլուխ դրին", բայց դուն ներող, ողորմած, գթած, երկայնամիտ ու բազումողորմ Աստուած ըլլալովդ՝ զանոնք երեսկ չձգեցիր։ 18—Մանաւանդ երբ անոնք իրենց ձուլածոյ որթ չինեցին, ու ինչ, եգիպտոսէ հանող Աստուածդ, ասիկա է՝ ըսելով էդ մեծապէս անարգեցին, 19—Դուն քու մեծ ողորմութիւնովդ զանոնք անապատին մէջ երեսկ չձգեցիր. ճամբան անոնց առաջնորդութիւն ընելու համար՝ ցորեկը ամպի սիւնը, ու գիշերը անոնց գացած ճամբան լուսաւորելու համար կրակի սիւնը անոնց վրայէն չվերցուցիր։ 20—Նաև զանոնք խնամելու ընելու համար քու բարի Հոգիդ տուիր, ու անոնց բերնէն քու մանանադ չպակասեցուցիր, ու անոնց ծարաւի առնելը անոնց ջուր տուիր։ 21—Ու զանոնք քառասուն տարի անապատին մէջ կերակրեցիր. ասնոնց բան մը չպակսեցաւ, անոնց հանդերձները չմաշեցան ու անոնց ոտքերը չուռեցան։ 22—Ու անոնց թագաւորութիւններ ու ժողովուրդներ տուիր, ու անոնց սահմաններ որոշեցիր. ու Սեհոնի երկիրը, այսինքն Եսեբոնի թագաւորին երկիրը, ու Բասանի Ովգ թագաւորին երկիրը ժառանգեցին։ 23—Նաև որդիները երկինքի աստղերուն չափ չատցուցիր. ու տարիր զանոնք այն երկիրը զոր անոնց հայրերուն խոստացեր էիր, թէ անոնք հոն պիտի մտնեն ու ժառանգեն։ 24—Ու անոնց որդիները երկինքի աստղերուն չափ չատցուցիր. ու տարիր զանոնք այն երկիրը զոր անոնց հայրերուն խոստացեր էիր, թէ անոնք հոն պիտի մտնեն ու ժառանգեն։ 24—Ու անոնց որդիները մտան ու այն երկիրը ժառանգեցին. և այն երկրին մէջ բնակող Քանանացիները անոնց առջեւ նուաճեցուցիր, ու զանոնք ու անոնց թագաւորները ու երկրին ժողովուրդը անոնց ձեռքը տուիր, որպէս զի ուզածնուն պէս վարուին անոնց հետ։ 25—Ու պարսպապատ քաղաքներ ու պարարտ երկիր մը առին. ու ամէն բարիքով լեցուն տուներ, փորուած քարհանքներ, այգիներ, ձիթենիներ ու պտղաբեր ծառեր առատօրէն ժառանգեցին. ու կերան, կշտացան ու գիրցան, և քու մեծ բարիքներովդ զու արձացան։

26—Սակայն քեզի անհնազանդութիւն ու ապստամբութիւն ըրին, և քու օրէնքդ իրենց կռնակին, ու քու մարգարէներդ ալ մեռցուցին, որ զանոնք քեզի դարձնելու համար *անոնց վկայութիւն կու տային". և խիստ անարգեցին։ 27—Ու զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը մատնեցիր որ զանոնք նեղեցին. ու երբ իրենց նեղութեան ատենը քեզի աղաղակեցին, դուն երկինքէն լսեցիր, և քու առատ ողորմութեանդ համեմատ անոնց ազատիչներ տուիր. ու ազատեցին զանոնք իրենց թշնամիներուն ձեռքէն։ 28—Բայց երբ հանգստութիւն գտան, նորէն քու առջեւդ չարութիւն ըրին, ու զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը թողցիր, որոնք անոնց վրայ տիրեցին. ու երբ նորէն քեզի աղաղակեցին, դուն երկինքէն լսեցիր, և քու ողորմութեանդ համեմատ շատ անգամ զանոնք ազատեցիր։ 29—Ու քու օրէնքիդ դարձնելու համար անոնց վկայութիւն ըրիր. բայց անոնք հպարտացան, ու քու հրամաններուդ հնազանդութիւն չըրին, և քու պատուիրանքներուդ դէմ մեղք գործեցին, (զորոնք պահող մարդը անոնցմով կ'ապրի) ու իրենց ուսերը չխոնարհեցուցին, հապա իրենց պարանոցը խստացուցին ու հնազանդութիւն չըրին։ 30—Ու շատ տարիներ անոնց երկայնմտութիւն ըրիր, ու քու Հոգիովդ, քու մարգարէներուդ ձեռքով անոնց վկայութիւն ըրիր. բայց անոնք մտիկ չըրին. ուստի զանոնք երկիրներուն ժողովրդներուն ձեռքը մատնեցիր։ 31—Սակայն քու մեծ ողորմութիւնովդ զանոնք բոլորովին չկորնցուցիր ու չմերժեցիր, վասն զի դուն ողորմած ու գըթած Աստուած ես։

32—Ու հիմա, ով Աստուած մեր, որ ուխտ ու ողորմութիւն պահող, մեծ, զօրաւոր ու ահեղ Աստուած ես, Ասորեստանի թագաւորներուն օրերէն մինչեւ այսօր մեզի, մեր թագաւորներուն, մեր իշխաններուն, մեր քահանաներուն, մեր մարգարէներուն, մեր հայրերուն և քու բոլոր ժողովրդիդ՝ ամէն պատահած նեղութիւնները քու առջեւդ փէշ չերեւնան։ 33—Սակայն բոլոր մեզի պատահած բաներուն մէջ դուն արդար ես. քանզի դուն ճշմարտութեամբ ըրիր. բայց մենք անօրէնութիւն ըրինք։ 34—Ու մեր թագաւորները, իշխանները, քահանաները ու հայրերը քու օրէնքդ չպահեցին, ու քու պատուիրանքներդ ու անոնց ըրած վկայութիւններդ մտիկ չըրին։ 35—Ու անոնք իրենց թագաւորութեան ատենը, ու անոնց շատ բարիքներ տուած ատենդ, և այն ընդարձակ ու պարարտ երկրին մէջ զոր անոնց տուիր քեզի ծառայութիւն չըրին, ու իրենց չար գործերէն չդարձան։ 36—Ահա մենք այսօր ծառայ ենք. մանաւանդ այն երկրին մէջ զոր մեր հայրերուն տուիր, որպէս զի անոր պտուղները ու բարիքները ուտեն, ահա մենք հոն ծառայ ենք։ 37—Ու այն երկիրը հոն ծառայ ենք։ 37—Ու այն երկիրը շատ պտուղ կու տայ այն թագաւորներուն զորոնք մեր մեղքերուն համար մեր վրայ դրիր, ու անոնք մեր մարմինին վրայ ու մեր անասուններուն վրայ իրենց ուզածին պէս կը տիրեն. ու մենք մեծ նեղութեան մէջ ենք։ 38—Ու այս ամէնուն համար մենք հաստատ ուխտ մը կ'ընենք ու կը գրենք, ու մեր իշխանները, մեր Ղեւտացիները ու մեր քահանաները զանիկա կը կնքեն։

*Կամ, ապտիճաններուն

*Այսինքն, երդում ըրիր։ Թուղ. 30։
†Այսինքն, իշխան կարգեցին

*Կամ, զանոնք կը յանդիմանէին

Գլ. Ժ

Եւ հնգտղներըն ասանք էին. Աբրահամայ որդին Նեհեմիա, Աթարաթան, Սեզեկիա, 2—Սարայիա, Ազարիա, Երեմիա, 3—Փաշհուր, Ամարիա, Մելգիա, 4—Հետտուս, Սեբանիա, Մալուք, 5—Հարիմ, Մերամոթ, Աբդիա, 6—Դանիէլ, Կանաթոն, Բարուք, 7—Մեսուղամ, Աբիա, Միամին, 8—Մաազիա, Բելգա ու Սեմայիա. ասանք քահանաներն էին։ 9—Ու Ղեւտացիները. Ազանեայի որդին Յեսուա, Բանուի ու Կադմիէլ, 10—Ու անոնց եղբայրները՝ Սաբանիա, Ովդիա, Կողիտա, Փազայիա, 11—Անան, Միքա, Բոռը, Ասաբիա, 12—Զաքուր, Սերաբիա, Սաբանիա, 13—Ովդիա, Բանի ու Բանինու, 14—Ժողովրդին իշխանները, Փարոս, Փահաթ-Մովաբ, Եղամ, 15—Զաթթու, Բանի, Բունի, Ազգադ, 16—Բեբայի, Ադոնիա, Բագուե, Ադոնի, 17—Ատեր, Եզեկիա, Ազուր, 18—Ովդիա, Հասում, Բեսէի, 19—Արիփ, Անաթովթի, Նոբայ, 20—Մագպիաս, Մեսուղամ, Նզիր, 21—Մեսեզաբէլ, Սադոկ, Յադդուա, 22—Փելտայիա, Անան, Անանիաս, 23—Ովսէե, Անանիա, Ասուբ, 24—Ալոհես, Պղես, Սոբէկ, 25—Հաեհոհ Ասաբանա, Մասսիա, 26—Ահիա, Անան, Ոնան, 27—Մալուք, Հարիմ ու Բաանա։

28—Եւ մնացած Ժողովրդը, քահանաները, Ղեւտացիները, դռնապանները, երգեցողները, Նթինեացիները, ու երկիրներու Ժողովրդներէն Աստուծոյ օրէնքին հետեւելու համար բոլոր զաւակները, իրենց կիները, տղաքները ու աղջիկները, այսինքն ամէն անոնք որ կրնային հասկնալ, 29—իրենց երեւելի եղբայրներուն հետ միաբանեցան, ու անէծքով երդում ըրին, որ Աստուծոյ Մովսէսի ձեռքով արուած Աստուծոյ օրէնքին մէջ քալեն, ու մեր Տէռնա Յեսուա Յեհովա ըրբոջը բոլոր պատուիրանքները ու դատաստանները և կանոնները պահեն ու կատարեն։ 30—Եւ էսկ որ մեր աղջիկները երկրին Ժողովրդներուն չառնանք, և անոնց աղջիկները մեր տղոցը չառնեն։ 31—Ու երկրին Ժողովրդներուն շաբաթ օրը ծախելու համար բերած ապրանքները և ամէն տեսակ ուտելիքը՝ շաբաթ օրը կամ սուրբ օրերը՝ անոնցմէ չառնենք. ու եօթնեւրդ տարին, ու ամէն պարտքի պահանջումները թողունք։ 32—Ու մեզի կանոն դրինք, որ մեր Աստուծոյ տանը ծառայութեանը համար ամէն տարի մէկ սիկղին երրորդ մասը տանք։ 33—Առաջաւորութեան հացին համար, մշտնջենաւոր հացի ընծային համար, մշտնջենաւոր ողջակէզին համար, շաբաթներուն համար, ամսագլուխներուն համար, ասնեւոր համար, սուրբ բաներուա համար, ու խորակէլի քաւութիւն ընելու մեղքի պատարագներուն համար, ու մեր Աստուծոյ տանը ամէն գործին համար, 34—(Ու փայտի ընծային համար՝ քահանաներուն, Ղեւտացիներուն ու Ժողովրդին վիճակ ձգեցինք, որ գան մեր Տէր Աստուծոյ սեղանին վրայ վառելու համար, տարեկ տարի՝ որոշուած տուներնիս ըստ ազգատոհմից մեր Աստուծոյ տանը բերելնիս, ինչպես օրէնքին մէջ գրուած է.) 35—Ու մեր երկրին առաջին պտուղները, և ամէն ծառին ամէն առաջին պտուղները տարուէ տարի Տէրոջը տանը տանինք. 36—Ու մեր որդիներուն ու մեր անասուններուն առջինեկները՝ ինչպես օրէնքին մէջ գրուած է, ու մեր արջառներուն ու ոչխարներուն առջինեկները մեր Աստուծոյ տանը տանինք՝ մեր Աստուծոյ տանը մէջ պաշտօն կատարող քահանաներուն. 37—Ու մեր խմորներնիս երախայրիները, և մեր ընծաները, այսինքն ամէն ծառի պտուղը, գինի ու իւղ տանինք քահանաներուն, մեր Աստուծոյ տանը սենեակները, ու մեր երկրին տասանորդը Ղեւտացիներուն տանք, ու Ղեւտացիները մեր բոլոր երկրագործութեան քաղաքներուն մէջ տասանորդները առնեն։ 38—Ու Ահարոնի որդին, քահանան, Ղեւտացւոց տասանորդին մէջ Ղեւտացւոց մասնակից ըլլայ, ու Ղեւտացիք տասանորդին տասանորդը մեր Աստուծոյ տունը, գանձատանը սենեակները, տանին. 39—Վասն զի Իսրայէլի որդիները ու Ղեւտի որդիները ցորենին ու գինիին ու իւղին ուր որքարանին անօթները ու պաշտօն կատարող քահանաները ու դռնապանները ու երգեցողները կը կենան. ու մեր Աստուծոյ տանը վրայով անհոգ պիտի չըլլանք։

Գլ. ԺԱ

Եւ Ժողովրդին իշխանները երուսաղէմի մէջ բնակեցան. ու մնացած Ժողովրդը վիճակ ձգեցին, որպէս զի տաներն մէկը բերեն երուսաղէմ սուրբ քաղաքը բնակելու, ու միւս ինը բաժինը՝ ուրիշ քաղաքներու մէջ բնակին։ 2—Ու Ժողովրդը օրհնեց այն ամէն մարդիկը՝ որոնք յօժար կամքով իրենց անձը ընծայեցին երուսաղէմի մէջ բնակելու։ 3—Ու երուսաղէմի մէջ բնակող գաւառին իշխանները ասանք էին. (սակայն Յուդայի քաղաքներուն մէջ՝ Իսրայէլը, քահանաները, Ղեւտացիները, Նթինեացիները ու Սողոմոնի Ծառաներուն որդիները, ամէն մարդ իրենց կալուածքին մէջ, իրենց քաղաքներուն մէջ բնակեցան) 4—Ու երուսաղէմի մէջ Յուդայի որդիներէն ու Բենիամինի որդիներէն բնակեցան։

Յուդայի որդիներէն՝ Մաղաղիէլի որդւոյն Սահասիայի որդւոյն Ամարիայի որդւոյն Զաքարիայի որդւոյն Ոզիայի որդին Աթայիա, որ Փարէսի որդիներէն էր։ 5—Ու Սիլեղնի որդւոյն Զաքարիայի որդւոյն Յոձարիբի որդւոյն Ադայիայի որդւոյն Ազայիայի որդւոյն Քոլոզէի որդւոյն Բարուքի որդին Մասսիա։ 6—Երուսաղէմի մէջ բնակող Փարէսի որդիներուն ամէնը չորս հարիւր վաթսունեւութ զօրաւոր մարդիկ էին։

7—Ու Բենիամինի որդիները ասանք էին. Նասայէի որդւոյն Իթիէլի որդւոյն Մասսիայի որդւոյն Կովղիայի որդւոյն Փադայիայի որդւոյն Ցոլամի որդւոյն Մեսուղամի որդին Սալլու։ 8—Ու անոնք ետքը Գեբբէի, Սելլէի, Ե՝այ, ինը հարիւր քսանութ հոգի։ 9—Ու անոնց վրայ իշխան՝ Զիքրիի որդին Յովէլ էր. ու Սենուայի որդին Յուդա քաղաքին վրայ սեղակալ էր։

10—Քահանաներէն՝ Յոձարիբի որդին Յեդայիա, Յաքին, 11—Ասարեայ ասնը վերակացուն, Աբիտուվրիի որդւոյն Մարիովթի որդւոյն Սադովկի որդւոյն Մեսուղամի որդւոյն Զադոկի որդին Սարայիա, 12—Ու անոնց եղբայրները, որոնք Ասարեայ ասնը գործը կը բանէին, ուր հարիւր քսանուերկու էին. ու Մելգիայի որդւոյն Փաշհուրի որդւոյն Զաքարիայի որդւոյն Ամասիի որդւոյն Փազազիայի որդւոյն Յերոամի որդին Ադայիա, 13—Ու անոր եղբայրները, առնմնապետները, երկու հարիւր քսանուերկու էին. ու Իմմերի որդւոյն Մեսեղամոթի որդւոյն Ազարէլի որդին Ամասսի, 14—Ու անոնց եղբայրները հարիւր քսանըութ զօրաւոր կարիճներ էին. ու անոնց վրայ իշխան Ագեդղոլիմի որդին Զաբդիէլ էր։

15—Ու Ղեւտացիներէն՝ Բունիի որդւոյն Ասարիայի որդւոյն Եզրիկամի որդւոյն Ասուբի որդին Սեմայիա, 16—Նաև Սաբեթա ու Յովզաբադ, որոնք Ղեւտացւոց իշխաններէն էին, Աստուծոյ տանը արտաքին գործին վրայ էին։ 17—Ու Ասափի որդւոյն Զաբդիի որդւոյն Միքայի որդին Մաթանիա Երէբ-Յուդէրէ գլխաւորն էր, ու աղօթքին գոհաբանութեանը նախ սկիզբ կը սկսէր Երէբէ. և անոր եղբայրներէն Բակբակիա երկրորդն էր, ու անկէ եւաքը Իդդիթունի որդւոյն Գաղաղի որդւոյն Սամուայի որդին Աբդա էր։ 18—Սուրբ քաղաքին մէջ Ղեւտացիները ամէնը երկու հարիւր ութսունըչորս էին։

19—Ու դռնապանները՝ Ակկուբ ու Տէղմոն, ու անոնց եղբայրները, դռնեբուն պահապանները, հարիւր եօթանասունեւերկու էին։

20—Ու Իսրայէլի, քահանաներուն ու Ղեւտացիներուն մնացորդը, Յուդայի բոլոր քաղաքներուն մէջ, ամէն մարդ իր ժառանգութեանը մէջ էր։ 21—Բայց Նաթինայիները Ոփղի մէջ կը բնակէին. և Սիա ու Գիսփա Նաթինայիմներուն վրայ էին։ 22—Ու երուսաղէմի մէջ Ղեւտացւոց վերակացուն՝ Միքայէլ որդւոյն Մաթանիայի որդւոյն Ասաբիայի որդւոյն, Բանիի որդին Ոզի էր, Ասափի որդիներէն, երգեցողներէն, որոնք Աստուծոյ տանը գործին վրայ էին։ 23—Վասն զի անոնց համար թա-

գաւառը հրաման տուեր էր, որ երգեցողներուն օրէ օր առձիկ արուի։ 24—Ու Յուդայեան Զաբայի որդիներէն Մանսիվերելի որդին Փեթհայիա Ժողովուրդին ամէն գործին մէջ թագաւորին դործակալն էր։

25—Ու Յուդայի որդիներէն գեղերու ու արտերու մէջ բնակելոցն, այսինքն Կարքաթ-արբայի ու անոր գեղերուն մէջ, Դեբօնի ու անոր գեղերուն մէջ, Կաբսեէլի ու անոր գեղերուն մէջ, 26—Ու Յեսուայի ու Մօլադայի ու Բեթ-փաղեթի, 27—Ես Ասեր-սուալի ու Բերսաբեէի ու անոր գեղերուն մէջ, 28—Ես Սիկեղակի, ու Մեքոնայի և անոր գեղերուն մէջ, 29—Ու Ենհռիմմոնի, Սբոյայի, Յերիմութի, 30—Զանովի, Ոդոդոմի ու անոնց գեղերուն մէջ, Լաքիսի ու անոր արտերուն մէջ, Ազեկայի ու անոր գեղերուն մէջ, ու Բերսաբէէ մինչև Ենոմմի ձորը բնակեցան։

31—Ու Բենիամինի որդիները՝ Գաբայէ մինչև Մաքմաս, Այիա, ու Բեթէլ ու անոր գեղերուն մէջ, 32—Անաթոթի, Նոբ, Անանիա, 33—Հասոր, Ռամա, Գեթթայիմ, 34—Հադիդ, Սեբոյիմ, Նեբալատ, 35—Ղոդէ, Ովնով ու Գեղբաասիմ էր-Իէյ-ն։

36—Ու Ղեւտացիներէն մանր Յուդայէն ու Բենիամինի մէջ բաժնուած էին։

Գլ. ԻԲ

Եւ Սաղաթիէլեան Զօրաբաբէլի ու Յեսուայի հետ եկող քահանաները ու Ղեւտացիները ասոնք են. Սարայիա, Երեմիա, Եզրաս, 2—Ամարիա, Մալուք, Քեատուս, 3—Սեքենիա, Հռեհում, Մերեմոթ, 4—Ադդով, Կանաթոն, Աբիա, 5—Միամին, Մոադիա, Բելգա, 6—Սեմայիա, Յոյարիբ, Յեդայիա, 7—Սալլու, Ամոկ, Քեղկիա, Յեդեիա։ Յեսուի օրերը ասոնք էին քահանաներուն իշխանները իրենց եղբայրներովը։

8—Ու Ղեւտացիք, Յեսուա, Բանուի, Կադմիէլ, Սարեբիա, Յուդա ու Մաթանիա. ասիկա իր եղբայրներուն հետ օրհնութիւններուն վրայ էր։ 9—Ես անոնց եղբայրները, Բակբակիա և Ունոնի, անոնց դիմաց իրենց կարգին մէջ կը կայնէին։

10—Ու Յեսուա Յոնան Յոյակիմը, և Յոյակիմ Յոնան Եղիասիբը, ու Եղիասիբ Յոնան Յոյիադան, 11—Ես Յոյիադա Յոնան Յոնաթանը, ու Յոնաթան Յոնան Յադդուան։

12—Ես Յոյակիմի օրերը առնմնապետ քահանաները ասոնք էին։ Սարայիայէ Մարայիա, Երեմիայէ Անանիա, 13—Եզրասէ Մեսուղամ, Ամարիայէ Յոհանան, 14—Մալուքէ Յոնաթան, Սբանիայէ Յոսեփ, 15—Հարիմէ Եդնա, Մարիոթէ Հելգիա, 16—Ադդովէ Զաքարիա, Կանաթոնէ Մեսուղամ, 17—Աբիայէ Զեքրի, Մինիամինէ, Մոադիայէ Փաղտի, 18—Բելգայէ Սամուա, Սեմայիայէ Յոնաթան, 19—Յոյարիբէ Մաթանայ, Յեդայիայէ Ոզի, 20—Սալլայէ Կալլայ, Ամոկէ Եբեր, 21—Քեղկիայէ Ասարիա, Յեդայիայէ Նաթանայէլը

22—Եղիասիբի, Յոյիադայի, Յոհանանի ու Յադդուայի օրերը Ղեւտացիք, այսինքն առնմնապետները, գրուեցան, նաև քահանաները՝ մինչև Պարսից Դարեհի թագաւորութիւնը։ 23—Ղեւիի որդիներուն առնմնապետները մինչև Եղիասիբեան Յոհանանի օրերը ժամանակագրութեան գիրքին մէջ գրուեցան։ 24—Ու Ղեւտացւոց իշխանները Ասաբիա, Սաբաբիա, ու Կադմիէլի որդին Յեսուա էին. և անոնց եղբայրները անոնց առջեւ էր կայնէին դաս դասի դէմ, որպէս զի Աստուծոյ մարդուն Դաւիթի հրամայածին պէս օրհնութիւն ու գոհութիւն մատուցանեն։ 25—Մաթանիա, Բակբակիա, Արդիա, Մեսուղամ, Տեղմոն ու Ակկուբ գրան չափասաններուն մէջ պահապանութիւն ընող դռնապաններն էին։ 26—Յոյարիբէկեան Յեսուի որդւոյն Յոյակիմի օրերը, ու Եզրասի կառավարչին ու եղբայս քահանային ու գպիրին օրերը ասոնք էին։

27—Ու երուսաղէմի պարսպին նաւակատեաց ատեն Ղեւտացիները փընտռեցին իրենց բոլոր տեղերէն, որպէս զի զանոնք երուսաղէմ բերեն, ու նաւակատիքը ուրախութեամբ, գոհութեամբ, օրհնութիւններով, Յնդզանրով, տաւիղներով ու քնարներով կատարեն։ 28—Ու երգեցողներուն որդիները երուսաղէմի չրջակայ տեղերէն, ու Նետոփաթացւոց գիղերէն, 29—Ես Գաղգազայի տունէն ու Գաբայէ ու Ազմաթի պատերէն Ժողովեցան. վասն զի երգեցողները երուսաղէմի բոլորտիքը իրենց գեղը չիներ էին։ 30—Ու քահանաները ու Ղեւտացիները սրբեցան, ու Ժողովրդը ու գռնները ու պարիսպը սրբեցին։

31—Ես Յուդայի իշխանները պարսպին վրայ հանեցի, ու գոհութիւն երգող երկու մեծ դաս կարգեցի. Ձախ պարսպին վրայ աջ կողմը գնաց Աղրից դուռը էն-Իէյ-ը։ 32—Ես անոր ետեւէն Ովսէիա ու Յուդայի իշխաններուն կէսը գացին. 33—Նաև Ազարիա, Եզրաս, Մեսուղամ, Յուդա, 34—Բենիամին, Սեմայիա ու Երեմիա. 35—Ես փողերով, քահանաներուն որդիներէն, Ասաֆի որդւոյն Զաքարի որդւոյն Միքքիայի որդւոյն Մաթանիայի որդւոյն Սեմայիայի որդւոյն Յոնաթանի որդին Զաքարիա։ 36—Ու անոր եղբայրները՝ Սեմայիա, Ազարիէլ, Միլալայ, Գիլալայ, Մայ, Նաթանայէլ, Յուդա ու Անանի Աստուծոյ մարդուն Դաւիթի երգոց նուագարանովը էն-Իէյ-ի, ու անոնց առջեւէն եզրա գրիչը։ 37—Ես իրենց առջեւ եղող Աղբիւրի դռուր էն-ն, ու Դաւիթի քաղաքին ասիճաններէն պատրոսին ասիճանը գացին, Դաւիթի տունը վրայէն դէպի արեւելք մինչև Ջուրի դուռը։

38—Ես գոհութիւն երգողներուն միւս դասը դիմացէն կ'երթայիր. ու ես՝ Ժողովրդին կէսին հետ պարսպին վրայ՝ Փուռերուն աշտարակէն մինչև լայն պարիսպը։ 39—Ու Եփրեմի դռանը վրայէն, և Հին դռանը վրայ, ու Ձկանց դռանը, և Անանէլի աշտարակին ու Մէային աշտարակին վրայ, մինչև Ոչխարաց դուռը անոնց եռանէն էն-Իէյ-ի։ Ու Բանտի դուռը կայնեցան. 40—Ես գոհութիւն երգողներուն երկու դասը Աստուծոյ տանը մէջ կայնեցան. Նոյնպէս ալ ես ու տասիկաններուն կէսը՝ որոնք ինծի հետ էին. 41—Նաև քահանաները, Եղիակիմ, Մաասիա, Միննիամին, Միքքա, Եղիովէնայի, Զաքարիա ու Անանիա՝ փողերով. 42—Ես Մաասիա, Սեմայիա, Եղիազար, Ոզի, Յոհանան, Մեղքիա, Եղամ ու Եզեր։ Այն տաեն երգեցողները իրենց վերակացուին Յեզրեիայի հետ յայտնապէս վերցուցին։ 43—Ես այն օրը մեծ զոհեր մատուցին և ուրախութիւն ըրին, վասն զի Աստուած մեծ ուրախութիւնով ուրախացուց զանոնք. ու կիները և տղաքներն ալ ուրախութիւն ըրին, ու Երուսաղէմը ուրախութիւնը մինչև հեռու տեղեր լսուեցաւ։

44—Ես այն օրը անձնակներուն վրայ գանձերուն համար, ընծաներուն համար, երախայրի պատղիներուն համար ու տասանորդներուն համար մարդիկ որոշուեցան, որպէս զի քաղաքներուն ագարակներէն քահանաներուն ու Ղեւտացւոց օրինաւոր բաժիններուն հաւաքին. քանզի Յուդա՝ կայնող քահանաներուն ու Ղեւտացւոց վրայ ուրախացաւ. 45—Վասն զի անոնք իրենց Աստուծոյն հրամանը ու սրբութեան հրամանը կը պահէին, Նոյնպէս ալ երգեցողները և դռնապաններն՝ Դաւիթի և անոր որդւոյն Սողոմոնի պատուիրածին համեմատ։ 46—Վասն զի առաջ Դաւիթի ու Ասափի օրերը երգեցողներու գլխաւորներ կային, և զԱստուած օրհնելու ու գովելու երգեր։ 47—Ու բոլոր Իսրայէլ Զօրաբաբէլի օրերը և Նէեմիայի օրերը երգեցողներուն ու դռնապաններուն օրէ օր առձիկ կու տային. և սուրբ բաները Ղեւտացւոց կու տային, Ղեւտացիք ալ Ահարոնի որդիներուն կու տային։

Գլ. ԻԳ

Այն օրը Մովսէսի գիրքէն *կարդացուեցաւ ու Ժողովուրդը լսեց՝ ու հոն գրուած գտնուեցաւ որ Ամմոնացիք ու Մովաբացիք Աստուծոյ ժողովին մէջ յաւիտեան չմտնեն. 2—Որովհետեւ անոնք իսրայէլի որդիները հացով ու ջրով չդիմաւորեցին, հապա Բաղաամը անոնց դէմ վարձքով բռնեցին, որպէս զի զանոնք անիծէ. բայց մեր Աստուա-

*Կամ, Բեթ գաղգազայէ

*Եբր. Ժողովրդին ականջներուն կարդացուեցաւ։

ծը անէծքը օրհնութիւն դարձուց։ 3—Ու երբ օրինաց էութիւնը լսեցին, բոլոր խառնուած մարդիկը իսրայէլէ զատեցին։

4—Բայց սակի առաջ մեր Աստուծոյն տանը սենեակներուն վերակացուն, Եղիասիբ քահանան, Տոբիայէն հետ ազգական եղեր էր, 5—ու անոր մեծ սենեակ մը չիներ էր այն տեղ՝ ուր առաջ հացի ընծաները, կնդրուկը ու անօթները, ու Ղեւտացիներուն, երգեցողներուն և դռնապաններուն համար որոշուած ցորենին, գինիին ու իւղին տասանորդները, ու քահանաներուն պէսպէս ընծաները կը դնէին։ 6—Ու այս ամէն բառերուն առնը ես երուսաղէմի մէջ չէի, վասն զի Բաբելոնի Արտաշես Թագաւորին երեսունհարիւրերկուերորդ տարին Թագաւորին գացի։ Ու ժամանակ մը ետքը Թագաւորէն հրաման առի, 7—ու երուսաղէմ գալով Եղիասիբի ըրած չարութիւնը իմացայ, որ Աստուծոյ տանը գաւիթին մէջ Տոբիայի համար սենեակ մը չիներ էր։ 8—Ու չատ դժուարեցայ, ու Տոբիայի բոլոր կահաւորները սենեակէն դուրս նետեցի։ 9—Ու հրաման ըրի, ու սենեակները մաքրեցին, և Աստուծոյ տանը անօթները ու հացի ընծան և կնդրուկը նորէն հոն տարի։ 10—Ու նաև իմացայ որ Ղեւտացւոց բաժիններըը տրուած չէին, վասն զի սպասաւորութիւն ընող Ղեւտացիները ու երգեցողները ամէնն ալ իրենց ագարակները փախեր էին։ 11—Անոր համար տուիրիսներուն հետ վիճեցայ ու ըսի, Աստուծոյ տունը ինչ պատճառաւ այպէս թողուած է։ և Ղեւտացիները ժողվեցի, ու զանոնք իրենց պաշտօններուն մէջ հաստատեցի։ 12—Ու բոլոր Յուդա ցորենին, գինիին ու իւղին տասանորդները գանձարաններըը տարին։ 13—Ու գանձարաններուն վրայ Սեղեմիա քահանան ու Սադովկ գրիչը ու Ղեւտացիներէն Փադայիան գանձապետ կարգեցի։ ու անոնց քով Մաթանիայի որդւոյն Զաքուրի որդին Ուման էր։ վասն զի անոնք հաւատարիմ կը սեպուէին, ու անոնց գործը իրենց եղբայրներուն բաժին տալ էր։ 14—Ով Աստուած իմ, սոր համար զիս յիշէ, ու իմ Աստուծոյս տանը մէջ և անոր ծառայութիւնները մէջ իմ ըրած բարեգործութիւններս մի ջնջեր։

15—Ա՛յն օրերը Հրէաստանի մէջ տեսայ որ շաբաթ ոտք խաղող կը կոխեին. ու ցորեան արաներ կը բերէին, ու էշերու վրայ բեռ կը բեռցնէին, նաև գինի, խաղող, թուզ ու ամէն տեսակ բեռ։ զորոնք շաբաթ օրը Երուսաղէմ կը բերէին. ու ես ուսելիք ծախած օրերնին *զգոնաց յանդիմանեցի։ 16—Ու հոն բնակող Տիւրացիք ձուկ ու ամէն տեսակ ապրանք կը մտնէին, և շաբաթ ոտք Յուդայի որդիներուն ու Երուսաղէմի Բնակիչներուն կը ծախէին։ 17—Ու ծուդայի ազնուականներուն հետ վիճեցայ, ու անոնց ըսի, Ա՛յս ինչ գէշ բան է զոր դուք կ'ընէք, ու շաբաթ օրը կը պղծեք։ 18—Ահա ձեր հայրերն ալ այսպէս ըրին, ու մեր Աստուածը մեր վրայ ու այս քաղաքին վրայ այս բոլոր չարիքները բերաւ. և դուք շաբաթը պղծելով՝ Իսրայէլի վրայ բարկութիւն կ'աւելցնէք։ 19—Ուստի շաբաթէն առաջ Երուսաղէմի †դռներէն որեւը քաւչուան պէս, հրամայեցի որ դռները գոցուին. նաև հրամայեցի որ շաբաթը չանցած չբացուին. ու դռները իմ մանչերէս կայնեցուցի, որպէս զի շաբաթ օրը ներսը բեռ չմտնէ։ 20—Ու վաճառականները ու ամէն տեսակ ապրանք ծախողները մէկ երկու անգամ Երուսաղէմի դուրսը անցուցին գիշերը։ 21—Ու ես զանոնք յանդիմանեցի՝ ըսելով, Դուք ինչո՞ւ համար պարսպին քով գիշերը կ'անցնէք. եթէ մէյմըն ալ այդպէս ընէք, ձեռքս ձեր վրայ կը դնեմ։ Այն ատենէն ի վեր մէյմըն ալ շաբաթ ոտք չեկան։ 22—Ու Ղեւտացիներուն ըսի որ ինքնիրենք սրբեն, ու շաբաթ օրը սրբելու համար երթան դռները պահպանութիւն ընեն։ Ով Աստուած իմ, սոր համար ալ զիս յիշէ, ու քու մեծ ողորմութեանդ համեմատ ինծի ողորմէ։

23—Ու այն օրերը Հրեաներ տեսայ, որոնք Ազովացի, Ամմոնացի ու Մովաբացի կիներ առեր էին։ 24—Ու անոնց տղաքը Հրէարէն խօսիլը աղեկ չգիտնալով՝ կէս մը Ազովացւոց լեզուն կը խօսէին, նմանապէս ուրիշ ազգերուն լեզուներըը։ 25—Ա՛յս պատճառաւ անոնց հետ վիճ ըրի ու զանոնք նզովեցի, և անոնցմէ մէկ քանին ծեծեցի ու մազերնին փետեցի. և Աստուծոյ անունովը զանոնք երդմնցուցի, ըսելով, Ձեր աղջիկները անոնց տղոցը չտաք, ու անոնց աղջիկներէն ձեր տղոցը կամ ձեզի ալ չառնէք։ 26—Ասոնց պատճառաւ չէ՞ր, որ Իսրայէլի Սողոմն Թագաւորը մեղանչեց. ու Թէպետեւ չատ ազգերու մէջ անոր պէս Թագաւոր չկար, և իր Աստուծոյն սիրելի էր, ու Աստուած զանիկա բոլոր Իսրայէլի վրայ Թագաւոր դրաւ, օտար կիները անոր ալ միգտնել տուին։ 27—Ու հիմա ձեզ Թողո՞ւնք որ այս բոլոր մեծ չարութիւնը չընէք, ու օտարազգի կիներ առնելով՝ մեր Աստուծոյն դէմ մեզք գործէք։ 28—Ու մեծ քահանային եղիասիբի որդւոյն Յովիադայի որդիներէն հետ Որոնացի Սանաբազատի փեսան էր. անոր համար զանիկա քովէս վռնտեցի։ 29—Ով Աստուած իմ, զանոնք յիշէ՝ քահանայութիւնը և քահանաներուն ու Ղեւտացիներուն ուխտը պղծելնուն համար։ 30—Այսպէս զանոնք բոլոր օտարազգիներէն մաքրեցի, ու քահանաներուն ու Ղեւտացիներուն դասերը հաստատեցի, ուրուն մէկը իր պաշտօնին վրայ դրի։ 31—Նաև որոշած ժամանակներուն բերելու փայտի ընծային համար՝ ու երախայրի պտուղներուն համար հոգ տարի։ Ով Աստուած իմ, զիս ի բարին յիշէ։

*Եբր. անոնց պէտ վկայութիւն ըրի

†Եբր. դռներուն վրայ չուք եղածին պէս

ԳԻՐՔ ԵՍԹԵՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Ու եղաւ որ Ասուերոսի օրերը, (այսինքն այն Ասուերոսի, որ Հնդկաստանէ մինչև Եթովպիա հարիւր քսանըեօթը գաւառի վրայ Թագաւորութիւն կ'ընէր,) 2—Այն օրերը երբ Ասուերոս Թագաւորը Շուշան մայրաքաղաքին մէջ իր Թագաւորութեան աթոռին վրայ կը նստէր, 3—իր Թագաւորութեան երրորդ տարին իր բոլոր իշխաններուն ու ծառաներուն կոչունք ըրաւ. Ե Պարսից ու Մարաց *մեծերը, նախարարները ու գաւառաց իշխանները անոր առջև էին։ 4-Այն ատեն շատ օրեր, այսինքն հարիւր ութսուն օր, իր Թագաւորութեան փառաւոր հարստութիւնը ու իր մեծութեան պատուական չքեղութիւնը ցուցուց։

5—Ու երբ այն օրերը լմնցան, Թագաւորը Շուշան մայրաքաղաքին մէջ գտնուող բոլոր ժողովուրդին, մեծէն մինչև պզտիկին, Թագաւորական պալատին պարտէզին մէջ եօթը օր կոչունք ըրաւ։ 6—ձերմակ բեհեզէ, կերպասէ ու կապուտակէ վրտիչներ բարակ քթանէ և ծիրանեգոյնի չուաններով ու արծաթէ օղակներով, մարմարեան սիւներէ վար կախուած էին, և պորփիւրէ, ձերմակ մարմարիոնէ, ադամանտէ ու սև մարմարիոնէ յատակի վրայ ոսկիէ ու արծաթէ նստարաններ էդ-ուռ-ան էին։ 7—Ու խմելիքները ոսկիէ ամաններով ու տեսակ տեսակ ամաններով կու տային, ու Թագաւորական գինին առատ էր, †ինչպէս Թագաւորին կը վայլէր։ 8—Ու խմելիքը կանոնաւոր էր, բռնադատող չկար. վասն զի Թագաւորը այսպէս հրամայեր էր իր տան բոլոր վերակացուներուն, որ ամէն մէկուն ուզածին պէս ընեն։ 9—Ե՛ Վաշթի Թագուհին ալ Ասուերոս Թագաւորին պալատին մէջ կիներուն կոչունք ըրաւ։

10—Եօթներորդ օրը, երբ Թագաւորին սիրտը գինիէ զուարճացեր էր, *իր առջև ծառայութիւն ընող եօթը ներքինիներուն, Մէհուման, Բիզթա, Հարբոնա, Բիգթա, Աբագթա, Զեթար, ու Քարքաս անուն,— 11—որ Վաշթի Թագուհին էր արքայական Թագովը Թագաւորին առջև բերուն, որպէս զի ժողովուրդները ու իշխանները անոր գեղեցկութիւնը տեսնեն. վասն զի անիկա տեսքով գեղեցիկ էր։ 12—Բայց Վաշթի Թագուհին ներքինիներուն ձեռքով եղած Թագաւորին հրամանին հակառակեցաւ երթալ չուզեց, ու Թագաւորը խիստ սրդուեցաւ ու իր բարկութիւնը բորբոքեցաւ։

13—Այն ատեն Թագաւորը ժամանակները գիտցող իմաստուններուն ըսաւ, (վասն զի Թագաւորը ամէն օրէնք ու իրաւունք գիտցողներուն այսպէս խորհուրդ կը հարցնէր. 14—Ու Պարսից ու Մարաց եօթը իշխանները, Կարշենա, Սէթար, Ադմաթա, Թարսիս, Մերես, Մարսենա ու Մեհուքան, ոքրանք անոր մօտ էին, ու Թագաւորին երեսը կը տեսնէին, Թագաւորութեան առաջին †խորհրդականներն էին.) 15—Օրէնքին համեմատ ինչ պէտք է ընել Վաշթի Թագուհիին, որովհետև Ասուերոս Թագաւորին ներքինիներուն ձեռքով ղրկած հրամանը չկատարեց։

16—Այն ատեն Մեհուքան՝ Թագաւորին ու իշխաններուն առջև ըսաւ, Վաշթի Թագուհին ոչ միայն Թագաւորին դէմ, հապա բոլոր իշխաններուն դէմ, ու Ասուերոս Թագաւորին բոլոր գաւառներուն մէջ եղող բոլոր ժողովուրդներուն դէմ յանցանք ըրաւ. 17—Վասն զի Թագուհիին ըրածը բոլոր կիներուն մէջ տարածուելով, անոնք իրենց պէտքերը պիտի անարգեն, ըսելով թէ Ասուերոս Թագաւորը հրամայեց որ Վաշթի Թագուհին իր առջև բերուն, բայց անիկա չեկաւ։ 18—Ու այսօր Թագուհիին ըրածը լսող Պարսից ու Մարաց պիկինները Թագաւորին բոլոր իշխաններուն այսպէս պիտի խօսին. ու խիստ չատ անարգանք ու հակառակութիւն պիտի ըլլայ. 19—Արդ եթէ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ, իր կողմանէ հրովարտակ տարածուի, և Պարսից ու Մարաց օրէնքներուն մէջ գրուի՝ որպէս զի ևս չդառնայ, որ Վաշթի Հայէդ ու Ասուերոս Թագաւորին առջև չգայ. ու Թագաւորը անոր տիկնութիւնը անկէ աղէկ եղող ուրիշ կնոջ մը տայ։ 20—Ու երբ Թագաւորին ըրած հրամանը լսուի իր բոլոր Թագաւորութեան մէջ, որ ըլլ ընդարձակ է, բոլոր կիները, մեծէն մինչև պզտիկը իրենց այրերը պիտի պատուեն։

21—Ու այս խօսքը Թագաւորին ու իշխաններուն հաճոյ երեւցաւ, ու Թագաւորը Մեհուքանի ըսածին պէս ըրաւ։ 22—Ու Թագաւորին բոլոր գաւառները, ամէն մէկ գաւառն իր գրովը, ու ամէն մէկ ժողովուրդին իր լեզուովը նամակներ ղրկեց, որ ամէն մարդ իր տանը մէջ տէր ըլլայ, ու իր ժողովուրդին լեզուովը խօսի։

ԳԼ. Բ

Ա յս բաներէն ետքը, երբ Ասուերոս Թագաւորին բարկութիւնը լմնաւ, Վաշթին ու անոր ըրածը ու անոր դէմ եղած վճիռը յիշեց։ 2—Ու Թագաւորին ծառայութիւն ընող սպասաւորները ըսին, Թագաւորին համար գեղեցիկ կոյս աղջիկներ փնտռեն. 3—Ու Թագաւորը իր Թագաւորութեանը բոլոր գաւառներուն մէջ վերակացուներ դնէ, որպէս զի ամէն գեղեցիկ կոյս աղջիկը Շուշան մայրաքաղաքը, Թագաւորին ներքինիին, կինեաց պահապան եղող Հեգէի, ձեռքին տակ ժողվեն, ու անոց մաքրութեանը համար պէտք եղած բաները տրուին։ 4—Ու Թագաւորին աչքին հաճոյ երեւցած աղջիկը Վաշթիի տեղ Թագուհի ըլլայ։ Ու այս խօսքը Թագաւորին առջև հաճելի եղաւ, ու այնպէս ըրաւ։

5—Շուշան մայրաքաղաքին մէջ Հրեայ մարդ մը կար, որուն անունը Մուրթքէ էր, ու Բենիամինեան կիսէ որդւոյն Սեմէիէ որդւոյն Ցայիրէ որդին էր։ 6—Անիկա երուսաղէմէ գերի տարուած էր այն գերիներուն հետ որոնք Բաբելոնի Նաբուգոդոնոսր Թագաւորին գերի տարած Ցուդայի Եհքոնիա Թագաւորին հետ տարուեցան։ 7—Ու անիկա իր հօրեղբօրը աղջիկը Ադասան, այսինքն Եսթերը, կը սնուցանէր, վասն զի անիկա հայր ու մայր չունէր. ու այս աղջիկը գեղեցիկ դէմքը ու վայելուչ կերպարանք մը ունէր, և անոր հօրը ու մօրը մեռնելէն ետքը՝ Մուրթքէ զանիկա իբրեւ աղջիկ ուներ էր իրեն։

8—Ու երբ Թագաւորին հրամանը ու հրովարտակը լսուեցաւ, և շատ մայրաքաղաքին մէջ Հեգէի ձեռքին տակ շատ աղջիկներ ժողվուեցան, եսթեր ալ Թագաւորին պալատը, կիներու պահապան եղող Հեգէի պահպանութեանը, յանձնուեցաւ։ 9—Ու աղջիկը անոր հաճելի եղաւ ու անոր առջև չնորհք գտաւ, և շուտով անոր մաքրութեան համար պէտք եղած բաները ու անոր ուռճիկը, ու Թագաւորին պալատէն անոր տրուելու համար պատրաստուած եօթը աղախիններուն տաւ անոր, և զանիկա իր աղախիններուն հետ կանանց տանը մէջ դէպի աղէկ տեղը փոխադրեց։ 10—Եսթեր իր ազգը ու ծննդեանը չյայտնեց. վասն զի Մուրթքէ անոր պատուիրեր էր որ չյայտնէ։ 11—Ու Մուրթքէ ամէն օր կանանց տանը գաւիթին առջև կը պտտէր, որպէս զի Եսթերի առողջութիւնը ու անոր ինչ ըլլալիքը իմանայ։

12—Ու երբ ամէն մէկ աղջիկան կարգը կու գար Ասուերոս Թագաւորին քովը երթալու՝ կանանց սովորութեանը պէս տասներկու ամիսը լմննալէն ետքը, (որովհետև անոնց մաքրութեան օրերը այս կերպով, այսինքն վեց ամիս զմուռսի իւղով, ու վեց ամիս անուշահոտ խունկերով, ու կիներու մաքրութեանը վերաբերեալ բաներովը կը լմննար.) 13—Այն ատեն աղջիկը Թագաւորին քովն այսպէս կու գար. անիկա ինչ որ

*Եբր. զօրու Թիւնը
†Եբր. Թագաւորին ձեռքին հաւասար

*Եբր. Ասուերոս Թագաւորին
†Եբր. նաւոզներէն

ուզէր՝ անոր կը տրուէր, որպէս զի իրեն հետ կանանց տաճարն Թագաւորին պատասխանէ։ 14—Անիկա իրիկունը կ՚երթար, ու առաւօտուն կանանց միւս տաճարը, հարճերուն պահապանը եղող Թագաւորին ներքինիներին Սաասգազի ձեռքին տակ կը դառնար. անիկա ալ թագաւորին քով չէր երթար, բայց միայն՝ եթէ թագաւորը անոր հաճէր, ու անիկա անունով կանչուէր։

15—Ու թագաւորին քով երթալու կարգը Մուրթքէի հօրեղբօրը Աբիքէլի աղջկանը Եսթերի դարձաւ, (զոր Մոռդոքէ իրեն աղջիկ ըրեր էր) անիկա կիներուն պահապանը եղող Թագաւորին Հեգէ. ներքինիին ըսածէն զատ ուրիշ բան չխնդրեց. ու Եսթեր բոլոր զինք տեսնողներուն առջև շնորհք գտաւ։ 16—Ու Եսթեր Ասուերոս Թագաւորին քով անոր Թագաւորական պալատը առնուեցաւ տասներորդ ամիսը, այսինքն Թեբեթ ամսուն մէջ, անոր Թագաւորութեանը եօթներորդ տարին։ 17—Ու Թագաւորը Եսթերը ամէն կիներէն աւելի սիրեց, ու անիկա անոր առջև ամէն աղջիկներէն աւելի սէր ու շնորհք գտաւ, և Թագաւորական Թագը անոր գլխուն դրաւ, ու զանիկա Վաշթիի տեղ Թագուհի ըրաւ։ 18—Ու Թագաւորը իր բոլոր իշխաններուն ու ծառաներուն մեծ կոչունք ըրաւ, այսինքն Եսթերի կոչունք. ու գաւառներուն հանգստութիւն շնորհեց, և Թագաւորի վայելուչ պարգեւներ տուաւ։

19—Ու երբ երկրորդ անգամ աղջիկներ ժողվեցին, Մուրթքէ Թագաւորին դուռը կը նստէր։ 20—Եսթեր իր ծնունդը ու իր ազգը յայտնած չէր, ինչպէս Մուրթքէ անոր պատուիրեր էր. վասն զի Եսթեր Մուրթքէի ըսածը կ՚ընէր՝ անոր քով մեծցած ատենին պէս։

21—Այն օրերը երբ Մուրթքէ Թագաւորին դուռը կը նստէր, դրան պահապաններէն Բիգթան ու Թերէս, Թագաւորին երկու ներքինիները, սրդոզելով, Ասուերոս Թագաւորին վրայ ձեռք երկընցնել՝ խորհեցան։ 22—Ու Մուրթքէ այս բանը իմանալով Եսթեր Թագուհիին յայտնեց. ու Եսթեր Մուրթքէի անունովը Թագաւորին պատմեց։ 23—Ու այս բանը քննուելով՝ ճշմարիտ գտնուեցաւ. ու անոնց երկուքն ալ ծառի վրայ կախուեցան. ու Թագաւորին առջև ժամանակագրութեան գիրքին մէջ գրուեցաւ։

Գլ. Գ

Ե ասոնց բաներէն ետքը Ասուերոս Թագաւորը Ագագացի Ամադաթայի որդին Համանը մեծցուց ու զանիկա բարձրացուց, ու անոր աթոռը իրեն հետ եղող բոլոր իշխաններուն վերի կողմը դրաւ։ 2—Ու Թագաւորին դուռը եղող Թագաւորին բոլոր ծառաները ծնրադրութեամբ երկրպագութիւն կ՚ընէին Համանի. վասն զի Թագաւորը անոր համար այսպէս հրամայեր էր. բայց Մուրթքէ ծնրադրութիւն ու երկրպագութիւն չըրաւ։ 3—Ու Թագաւորին դուռը եղող Թագաւորին ծառաները Մուրթքէի ըսին, ինչո՞ւ համար դուն Թագաւորին հրամանէն դուրս կ՚ելլես։ 4—Ու անոնք ամէն օր անոր կը զրուցէին. ու երբ անոնց մտիկ չըրաւ, այն ատեն Համանի իմացուցին, որպէս զի տեսնեն Թէ *Մուրթքէի բանը ո՛ւր պիտի կայանայ՝. վասն զի անիկա իր Հրեայ ըլլալը անոնց զրուցեր էր։ 5—Ու երբ Համան տեսաւ որ Մուրթքէ իրեն ծնրադրութիւն ու երկրպագութիւն չընէր, Համան խիստ բարկացաւ։ 6—Ու միայն Մուրթքէի ձեռք զարնելը անոր աչքին ցած բան մը երեւցաւ. և որովհետև Մուրթքէի ազգը անոր իմացուցեր էին, Համան Մուրթքէի ազգը, այսինքն Ասուերոսի բոլոր Թագաւորութեանը մէջ եղող բոլոր Հրեաները կորնչցնել խորհեցաւ։

7—Առաջին ամսուն, այսինքն Նիսան ամսուն, մէջ Ասուերոս Թագաւորին երկուտասաներորդ տարին մինչև երկուտասաներորդ *դ՚ոը, այսինքն Ադար ամիսը, օրէ օր ու ամսէ ամիս Համանի առջև փուր, այսինքն վիճակ ձգեցին։

8—Ու Համան Ասուերոս Թագաւորին ըսաւ, գոյ Թագաւորութեանդ բոլոր

*Նայ, արդեօք Մուրթքէ իր խօսքերուն վրայ հաստատ պիտի կենա՞յ

*Եբր. փնտռեցին

գաւառներուն մէջ՝ ժողովրդներուն մէջ ցրուած ու տարածուած ազգ մը կայ. ու անոնց օրէնքները ամէն ժողովուրդներուն ընդհակառակ տարբեր են, ու Թագաւորին օրէնքները չեն կատարեր. ուստի չվայելեր որ Թագաւորը անոնց թոյլատրութիւն ընէ։ 9—Եթէ Թագաւորին հաճոյ կ՚երեւնայ, *հրաման տրուի՞ որ զանոնք կորնչցնեն, ու ես պաշտօնատարներուն ձեռքը, Թագաւորին գանձը բերելու համար, տասը հազար տաղանդ արծաթ կը կշռեմ ի՞ն գործ։ 10—Այն ատեն Թագաւորը իր ձեռքին իր մատանին հանեց, ու զանիկա Հրեից թշնամիին, Ագագացի Ամադաթայի որդւոյն Համանի, տուաւ։ 11—Ու Թագաւորը Համանի ըսաւ, Ա՛ն արծաթը քեզի տիրատու, ու այն ազգն ալ, որպէս զի քու աչքերուդ հաճոյ երեւցածը ընես անոնց։

12—Ու առաջին ամսուն երեքտասաներորդ օրը Թագաւորին գրագիրները կանչուեցան, ու Թագաւորին նախարարներուն, ու ամէն գաւառներուն վրայ եղող կուսակալներուն, և ամէն գաւառին ամէն մէկ ժողովրդին իշխաններուն իրենց գրովը, ու ամէն ժողովրդին իր լեզուովը Համանի բոլոր հրամայածին պէս գրուեցաւ. Ասուերոս Թագաւորին անունովը գրուեցաւ, ու Թագաւորին մատանիովը կնքուեցաւ։ 13—Ու սուրհանդակներու ձեռքով Թագաւորին ամէն գաւառները հրամայուեցաւ որ մէկ օրուան մէջ, երկուտասաներորդ ամսուն, այսինքն Ադար ամսուն, երեքտասաներորդ օրը, բոլոր Հրեաները, երիտասարդներէն մինչև ծերերը, Նաև տղաքները ու կիները կոտորեն, մեռցնեն ու կորնչցնեն. և անոնց առէնքը էբէլ ասար յափշտակեն։ 14—Ու հրամարակին *պատուէրը այս էր՝ որ հրամանը ամէն մէկ գաւառին մէջ հրատարակուի, ու ամէն ժողովրդներուն բացատրուի, որպէս զի այն օրուան համար պատրաստ գտնուին։ 15—Սուրհանդակները Թագաւորին հրամանէն ստիպուելով՝ շտապ ելան,

*Նբր. գրուի †Նբր. կը տրուի
‡Նբր. օրինակը

ու հրամարակը Շուշան մայրաքաղաքին մէջ ալ *հրատարակուեցաւ. և Թագաւորը ու Համան խմելու նստան, սակայն Շուշան քաղաքը չփոթութեան մէջ էր։

Գլ. Դ

Ո երբ Մուրթքէ բոլոր եղածները իմացաւ, Մուրթքէ իր հանդերձները պատռեց և փուրձ հագաւ, ու ՚ի քաղաքին հրապարակը ելլելով՝ մեծ ու դղրդուի ձայնով ազաղակեց։ 2—Ու մինչեւ Թագաւորին դրանը առջև եկաւ *չ՚երեցաւ. վասն զի փուրձ հագած *մարդ չէր կրնար Թագաւորին գռնէն ներս մտնել։ 3—Ու ամէն գաւառներուն մէջ, ուր որ Թագաւորին հրամանը ու հրովարտակը կը հասնէր, Հրեաները մեծ սուգ կ՚ունենային, ծոմ կը կնծայէին, կու լային ու կ՚ողբային. և շատերը փուրձի ու մոխիրի վրայ կը պառկէին։

4—Ու Եսթերի ազախինները ու ներքինիները եկան անոր պատմեցին. և Թագուհին մեծապէս խռովեցաւ, ու հանդերձներ ղրկեց որ Մուրթքէի հագցընեն, ու անոր վրայէն փուրձը հանեն. բայց անիկա չընդունեց։ 5—Ու Եսթեր Համաքը կանչեց, որ Թագաւորին ներքինիներէն մէկն էր, (զոր *Խ՚եոորը անոր սպասուար տուեր էր,) ու անոր հրամայեց որ Մուրթքէի հասկնայ Թէ այս ի՛նչ պիտի ըլլայ ու ինչո՛ւ համար է։ 6—Ու Հաթաք Մուրթքէի գնաց, որ Թագաւորին դրանը առջև եղող քաղաքի հրապարակին մէջ էր։ 7—Ու Մուրթքէ բոլոր իրեն պատահած բաները անոր յայտնեց, նաև Համանի սահմանուածին՝ որով Թագաւորին գանձին արծաթ տալ խոստացեր էր Հրեաներուն համար, որպէս զի զանոնք կորնչցնէ։ 8—Ու զանոնք կորնչնելու համար Շուշանի մէջ հրատարակուած հրովարտակին օրինակը անոր տուաւ, որպէս զի Եսթերի ցուցնէ ու հասկնցնէ, և անոր պատուիրէ որ Թագաւորին քով երթայ, և անոր ազաչէ, ու անոր առջև իր ազգին համար ազաղաւ խնդրէ։ 9—

*Նբր. արուեցաւ †Նբր. գառն

եւ Հաթաք գնաց ու Մուրթքէի խօսքերը Եսթերի պատմեց։

10—Ու Եսթեր Հաթաքի հետ խօսեցաւ, ու հրամայեց որ Մուրթքէի ըսէ պատասխան տանին. 11—Թագաւորին բոլոր ծառաները, ու Թագաւորին գաւառներուն ժողովուրդները գիտեն, որ այր կամ կին մարդ մը երէ չկանչուած՝ Թագաւորին ներքին գաւիթը մտնէ, զանիկա մեռցնելու համար օրէնք մը կայ. ու անկից միայն կ'ապրի, որու որ Թագաւորը երբ ոսկի գաւազանը կ'երկնցնէ. և հիմա երեսուն օր է որ ես Թագաւորին քով մտնելու կանչուած չեմ։ 12—Ու Եսթերի խօսքերը Մուրթքէի պատմեցին։ 13—Ու Մուրթքէ ըսաւ որ Եսթերի ըսէ պատասխան տանին. Դուն մի կարծեր որ Թագաւորին տունը ըլլալով՝ բոլոր Հրեաներէն դուն միայն պիտի ազատիս։ 14—Եւ ան ի այս ժամանակին մէջ երէ դուն լռես, Հրեաներուն ուրիշ տեղ մը օգնութիւն ու ազատում կու գայ, բայց դուն ու քու հօրդ տունը կը կորսուիք. և ո՞վ գիտէ, թերեւս դուն այսպիսի ատենի մը համար Թագաւորի եղար։

15—Ու Եսթեր ըսաւ որ Մուրթքէի պատասխան տանին. 16—Գնա դուն Շուշանի մէջ եղող բոլոր Հրեաները ժողվէ, ու ինծի համար ծոմ պահեցէք, գիշեր ցորեկ երեք օր մի ուտէք ու մի խմէք. նոյնպես ալ ես իմ ազախիններուս ծոմ կը պահեմ, ու այնպես Թագաւորին առջև կ'երթամ, թէպէտև օրէնքի դէմ է. ու երէ մեռնիմ՝ Թող մեռնիմ։ 17—Այն ատեն Մուրթքէ գնաց, ու ըրաւ այն ամէնուն համեմատ՝ որ Եսթեր իրեն պատուիրեր էր։

Գլ. Ե

Ու եղաւ որ երրորդ օրը Եսթեր էր Թագաւորական զգեստները հագաւ, ու Թագաւորին տանը ներքին գաւիթին մէջ՝ Թագաւորին տանը դիմաց կայնեցաւ. և Թագաւորը Թագաւորական պալատին մէջ՝ պալատին դրանը դիմաց իր Թագաւորական աթոռին վրայ նստեր էր, 2—Ու երբ Թագաւորը Եսթեր Թագուհին տեսաւ որ գաւիթին մէջ կը կայնէր, ե՛ւ չորհք գտաւ անոր առջև, և Թագաւորը իր ձեռքը եղած ոսկի գաւազանը Եսթերի երկնցուց. ու Եսթեր մօտեցաւ ու գաւազանին ծայրին դպաւ. 3—Ու Թագաւորը անոր ըսաւ, Ով Եսթեր Թագուհի, քեզի ի՞նչ եղաւ, և ո՞ւզածդ ի՞նչ է, մինչև Թագաւորութեանը կէսը քեզի տրուի. 4—Ու Եսթեր ըսաւ, Եթէ Թագաւորը կը հաճի, այսօր Թագաւորը Համանի հետ իրեն ըրած կոչունքիս գայ. 5—Ու Թագաւորը ըսաւ, Շուտով Համանը կանչեցէք, որպէս զի Եսթերի բանը կատարէ. ու Թագաւորը Համանի հետ Եսթերի ըրած կոչունքին գնաց։

6—Ու երբ գինին կը խմէին, Թագաւորը Եսթերի ըսաւ, Ի՞նչ է քու խնդիրդ. ու քեզի պիտի տրուի, և ի՞նչ է քու աղաչանքդ. մինչև Թագաւորութեանը կէսը պիտի կատարուի։ 7—Ու Եսթեր պատասխան տուաւ ու ըսաւ, Իմ աղաչանքս ու խնդիրքս այս է. 8—Եթէ Թագաւորին աչքին շնորհք գտայ, ու եթէ Թագաւորը կը հաճի իմ խնդիրքս տալու ու իմ աղաչանքս կատարելու, Թող Թագաւորը ու Համան Եսթեր իրենց համար ընելու կոչունքիս գան, ու վաղը Թագաւորին խօսքին պէս կ'ընեմ։

9—Ու Համան այն օրը զուարթ և ուրախ սրտով դուրս ելաւ. բայց երբ Համան Թագաւորին դրանը մէջ Մուրթքէն տեսաւ, որ իրեն ոտք չէր ելլեր ու իր տեղէն չէր շարժեր, Համանի սիրտը շատ նեղացաւ Մուրթքէի վրայ։ 10—Բայց Համան ինքզինք զսպելով իր տունը գնաց. ու Եսթեր ղրկից իր բարեկամները ու կինը Զերէսը կանչել տուաւ։ 11—Ու Համան պատմեց անոնց իր հարստութեանը փառքը ու իր որդիներուն շատութիւնը, և այն ամէն բաները՝ որոնցմով Թագաւորը զինք մեծցուցեր էր, և թէ ի՛նչպես իշխաններէն ու Թագաւորին ծառաներէն ալ բարձրացուցեր էր։ 12—Ու Համան ըսաւ, Նաև Եսթեր Թագուհին Թագաւորին հետ ինծմէ զատ մէ՛կը *չէրաւիրեց իր ըրած կոչունքին. ու վաղուան համար ալ ինծի Թագաւորին հետ հրաւիրեց։ 13—Բայց այս ամէնին բնաւ գոհ չեմ, քանի որ Հրեայ Մուրթքէն Թագաւորին դուռը նստած կը տեսնեմ։ 14—Ու անոր կինը Զերէս ու անոր բարեկամները անոր ըսին, Ցիսուն կանգուն բարձրութեամբ փայտ մը Թող չընեն, ու վաղը առտու Թագաւորին ըսէ, որ Մուրթքէն անոր վրայ կախուի. և դուն Թագաւորին հետ ուրախ սրտով կոչունքը գնա։ Ու այս խօսքը Համանի հաճոյ երեւցաւ, ու փայտը պատրաստեց։

Գլ. Զ

Այն գիշերը Թագաւորին քունը փախաւ, ու հրամայեց որ գիպաւածները պատմող յիշատակաց գիրքը բերեն. ու Թագաւորին առջև կարդացուեցաւ։ 2—Ու գրուած գտնուեցաւ որ Մուրթքէ՝ դրանը պահպանութիւն ընող՝ Թագաւորին երկու ներքինիներուն, Բիգթանի ու Թարեսի, Համար խնացուցեր էր, Թէ անոնք Ահասերոս Թագաւորին վրայ ձեռք երկնցնել ուզեր էին։ 3—Ու Թագաւորը ըսաւ, Ասոր փոխարէն ի՞նչ պատիւ կամ մեծութիւն արուեցաւ Մուրթքէի. ու Թագաւորին ծառայութիւն ընող պատանիները ըսին, Անոր բան մը չեղաւ։ 4—Ու Թագաւորը ըսաւ, Գաւիթը ո՞վ կայ. (ու Համան Թագաւորին պալատին դուրսի գաւիթը եկեր էր Թագաւորին խօսելու, որ Մուրթքէն կախ այն փայտին վրայ զոր ինք անոր համար պատրաստեր էր.) 5—Ու Թագաւորին պատանիները անոր ըսին, Ահա Համան գաւիթը կը սպասէ. ու Թագաւորը ըսաւ, Թող ներս գայ։

6—Ու երբ Համան ներս մտաւ, Թագաւորը անոր ըսաւ, Ի՞նչ ընել պէտք է այն մարդուն, որու Թագաւորը պատիւ ընել կ'ուզէ։ Ու Համան իր սրտին մէջ ըսաւ, Թագաւորը ինծմէ աւրիշ որո՞ւ պատիւ ընել պիտի ուզէ։ 7—Ու Համան ըսաւ Թագաւորին, Այն մարդուն համար որու Թագաւորը պատիւ ընել կ'ուզէ, 8—Թագաւորին հագած Թագաւորական զգեստը, ու Թագաւորին հեծած ձին, ու անոր գլխուր դրուած Թագաւորական Թագը բերեն։ 9—Ու զգեստը ու ձին Թագաւորին խոստ պատուաւոր իշխաններէն մէկուն ձեռքը տրուի. ու հագցնեն այն մարդուն՝ որու Թագաւորը պատիւ ընել կ'ուզէ. ու ձիուն վրայ հեծցնեն և քաղաքին փողոցին մէջէն անցնին, ու առջեւէն կանչեն ան ըսեն, Այսպես պիտի ըլլայ այն մարդուն, որու Թագաւորը պատիւ ընել կ'ուզէ։ 10—Այն ատեն Թագաւորը Համանին ըսաւ, Շուտով բսածիդ պէս զգեստը ու ձին առ, ու Թագաւորին դուռը նստող Հրեայ Մուրթքէին այնպէս ըրէ. քու բսածիդեն բնաւ մը պակաս չըլլայ։

11—Ու Համան զգեստը ու ձին առաւ, ու զինքը Մուրթքէի հագցնելով զանիկա չորս վրայ հեծցուց, և քաղաքին փողոցին անցաւ, ու առջեւէն կը կանչէր, Այսպէս պիտի ըլլայ այն մարդուն, որու Թագաւորը պատիւ ընել կ'ուզէ։ 12—Ու Մուրթքէ Թագաւորին դուռը դարձաւ. բայց Համան արագ ու գլխուր ծածկած՝ շուտով իր տունը փութացաւ։ 13—Ու Համան իր կնոջ Զերէսի ու բոլոր բարեկամներուն պատմեց ամէն ինչ որ իր գլխուր եկած էր. և անոր խմաստունները ու անոր կինը Զերէս անոր ըսին, Եթէ Մուրթքէ (որուն առջև դուն իյնալու սկսար) Հրէից ազգէն է, դուն անոր պիտի չյաղթես, հապա անոր առջև անշուշտ պիտի իյնաս։ 14-երբ անոնք տակաւին անոր հետ կը խօսէին, Թագաւորին ներքինիները հասան, որպէս զի Համանը շուտով Եսթերի պատրաստած կոչունքին տանին։

Գլ. Է

Ու Թագաւորը Համանի հետ Եսթեր Թագուհիին քով †կոչունքի գնաց։ 2—Ու Թագաւորը երկրորդ օրն ալ գինի խմելուատեն Եսթերի ըսաւ, Ով Եսթեր Թագուհի, ինչ է քու խնդիրքդ. ու քեզի պիտի տրուի. և ի՞նչ է քու աղաչանքդ. մինչև Թագաւորութեանը կէսը պիտի կատարուի։

3—Ու Եսթեր Թագուհին պատասխան տուաւ ու ըսաւ, Եթէ քու առջեւդ

*Պահ. մէկը կը կանչէք
†Եբր. խմելու

շնորհք գտայ, ով Թագաւոր, ու եթէ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ, խնդիրքովս իմ հոգիս՝ ու ազգացանովս իմ ազգս ինծի տրուի. 4—վասն զի մէկ ու մէկ ենք մենք իմ ազգս կորուելու, մեռնելու ու բնաջինջ ըլլալու ծախուելնիս. ու եթէ ծառայ ու աղախին ըլլալու ծախուելիներ, բան մը չէի խօսեր. թէպէտեւ թշնամին Թագաւորին դուռը վնասը չէր կրնար հատուցանել։

5—Ու Ասուերոս Թագաւորը խօսեցաւ, ու Եսթեր Թագուհիին ըսաւ, Ո՞վ է անիկա, և ո՞ւր է անիկա, որ այս բանը ընելու համարձակեցաւ։ 6—Ու Եսթեր ըսաւ, Հակառակորդը ու թշնամին այս չար Համանն է, ու Համան Թագաւորին ու Թագուհիին երեսէն խիստ վախցաւ։

7—Ու Թագաւորը գինի խմելէն բարկութեամբ ելաւ, պալատին պարտէզը գնաց. բայց Համան հոն մնաց, որպէս զի իր անձին համար Եսթեր Թագուհիին աղաչէ. վասն զի տեսաւ որ իր վրայ չարիքը հասած է Թագաւորէն։

8—Ու Թագաւորը երբ պալատին պարտէզէն կոչունքին տեղնակը դարձաւ, Համան Եսթերի եղած բազմոցին վրայ ինկած էր. ու Թագաւորը ըսաւ, Միթէ իմ տանս մէջ իմ քովս Թագուհիին ալ պիտի բռնադատէ. այս խօսքը Թագաւորին բերնէն ելածին պէս Համանի երեսը ծածկեցին։ 9—Այն ատեն Աբդոնա, ներքինիներէն մէկը, Թագաւորին առջեւ ըսաւ, Ահա այն յիսուն կանգուն բարձր փայտը, որ Համան՝ Թագաւորին բարերարութիւն *ընող Մուրթքէի համար պատրաստեց, Համանի տանը մէջ կը կենայ։ Ու Թագաւորը ըսաւ, Զանիկա անոր վրայ կախեցէք։ 10—Ու Համանը Մուրթքէի համար պատրաստած փայտին վրայ կախեցին։ Այն ատեն Թագաւորին բարկութիւնը իջաւ։

Գլ. Ը

Այն օրը Ասուերոս Թագաւորը Հրէից Թշնամիին Համանի տունը Եսթեր Թագուհիին պարգեւեց. ու Մուրթքէ Թագաւորին առջեւ եկաւ, վասն զի Եսթեր ըսած էր թէ ինչ յարաբերութիւն ունի ան անոր հետ։ 2—Ու Թագաւորը հանեց իր մատանին, զոր Համանէ առեր էր, ու զանիկա Մուրթքէի տուաւ, ու Եսթեր Համանի տանը վրայ դրաւ Մուրթքէն։

3—Ու Եսթեր նորէն Թագաւորին առջեւ խօսեցաւ, ու անոր ոտքերը ինկաւ, և լալով անոր աղաչեց որ Ագագացի Համանի չարութիւնը՝ ու Հրէից դէմ անոր հնարած հնարքը խափանէ։ 4—Ու Թագաւորը ոսկի գաւազանը Եսթերի երկնցուց. ու Եսթեր եղաւ ու Թագաւորին առջեւ կայնեցաւ, 5—Ու ըսաւ, Եթէ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ, ու ես քու առջեւդ շնորհք գտայ, ու եթէ այս բանը Թագաւորին առջեւ ուղիղ կ'երեւնայ, ու ես քու աչքերուդ հաճոյ եմ, թող գրուի որ Ագագացի Ամադաթայի որդւոյն Համանի հնարքը, որուն Թագաւորին բոլոր գաւառներուն մէջ եղող Հրեաները կորնչեցնելու համար անոր գրած հրովարտակները, խափանուին։ 6—Վասն զի իմ ժողովուրդիս վրայ գալու չարիքը ինչպէս կրնամ տեսնել. իմ ազգականներուս կորուստը ինչպէս կրնամ տեսնել։

7—Ու Ասուերոս Թագաւորը Եսթեր Թագուհիին ու Հրեայ Մուրթքէի ըսաւ, Ահա Համանի տունը Եսթերի պարգեւեցի. ու զանիկա փայտի վրայ կախեցին՝ Հրէից վրայ ձեռք երկնցնելուն համար։ 8—Ու դուք Հրէից համար ձեզի հաճոյ երեւցածը Թագաւորին անունովը գրեցէք, ու Թագաւորին մատանիովը կնքեցէք. վասն զի Թագաւորին անունովը գրուած ու Թագաւորին մատանիովը կնքուած հրովարտակը չկրնար փոխուիլ։

9—Ու այն ատեն երրորդ ամսուն, այսինքն Սիւան ամսուն, քսանուերկուքերորդ օրը Թագաւորին գրագիրները կոչուեցան, ու Հրեաներուն, ու Հընդկաստանէ մինչեւ Եթովպիա եղող գաւառներուն, հարիւր քսանըեօթը գաւառներուն, նախարարներուն և կուսակալներուն ու իշխաններուն, ամէն գաւառին իր գրովը, ու ամէն ազգին իր լեզուովը, ու Հրեաներուն իրենց գրովը ու լեզուովը գրուեցաւ՝ Մուրթքէի բոլոր հրամայածին պէս։ 10—Ու Ասուերոս Թագաւորին անունովը գրեց ու Թագաւորին մատանիովը կնքեց, և ձիերու, նժոյգներու, ու մատակ ձիերու փուռակ ջորիներու վրայ հեծած սուրհանդակներով հրովարտակները ղրկեց։ 11—Որոնցմով Թագաւորը ամէն քաղաքներու Հրեաներուն հրաման տուաւ որ ժողվուին, ու իրենց կեանքը պաշտպանեն, և իրենց վրայ յարձակող ազգին ու գաւառին բոլոր մարդիկը, տղաքները ու կիները կոտորեն, մեռցընեն ու կորնչցնեն, և անոնց ունեցածը յափշտակեն։ 12—Մէկ օրուան մէջ՝ Ասուերոս Թագաւորին բոլոր գաւառներուն մէջ, երկոտասաներորդ ամսուն, այսինքն Ադար ամսուն, երեքտասաներորդ օրը։ 13—Հրովարտակին պատուէրը այս էր՝ որ հրամանը ամէն մէկ գաւառին մէջ հրատարակուի, ու ամէն ժողովուրդներուն բացատրուի, որպէս զի Հրեաները նոյն օրը իրենց թշնամիներէն վրէժ առնելու պատրաստ ըլլան։ 14—Սուրհանդակները նժոյգներու ջորիներու վրայ հեծան, ու Թագաւորին հրամանէն ստիպուելով՝ արագացին ճամբայ ելլելու. ու հրովարտակը Շուշան մայրաքաղաքին մէջ հրատարակուեցաւ։

15—Ու Մուրթքէ ելաւ Թագաւորին առջեւէն՝ կապուտակի ու ճերմակ բեհեզի թագաւորական զգեստով և ոսկիէ մեծ թագով, ու բեհեզէզգէն ու ծիրանի պատմուճանով. և Շուշան քաղաքը ուրախացաւ ու ցնծութիւն ըրաւ։ 16—Հրեաները լոյս, ուրախութիւն, ցնծութիւն ու պատիւ ունեցան։ 17—Ու ամէն գաւառներու մէջ ու ամէն քաղաքներու մէջ՝ ուր Թագաւորին հրամանը ու հրովարտակը կը հասնէր, Հրեաները ուրախութիւն ու ցնծութիւն ունեցան, և կոչունքի ու ուրախութեան օր ըլլան. ու երկրին ժողովուրդներէն շատերը Հրէայ եղան, վասն զի անոնց վրայ Հրեաներուն վախը ինկաւ։

Գլ. Թ

Ու երկոտասաներորդ ամսուն, այսինքն Ադար ամսուն, երեքտասաներորդ օրը Թագաւորին խօսքին ու հրամանին կատարելու ժամանակը հասնելով՝ այն օրը որ Հրէից Թշնամիները կը յուսային անոնց վրայ տիրել, ներհակը պատահեցաւ. վասն զի Հրեաները իրենց Թշնամիներուն վրայ տիրեցին։ 2—Ասուերոս Թագաւորին բոլոր գաւառներուն մէջ Հրեաները իրենց քաղաքներուն մէջ ժողվուեցան, որպէս զի իրենց չարիք ուզողներուն վրայ ձեռք երկնցընեն. ու ամենուն մէկը չկրցաւ անոնց դէմ կենալ, վասն զի անոնց վախը ամէն ժողովուրդներուն վրայ իներ էր։ 3—Ու գաւառներուն բոլոր իշխանները ու նախարարները և կուսակալները ու Թագաւորին գործակալները Հրեաներուն ձեռնտու էին. վասն զի անոնց վրայ Մուրթքէի վախը իներ էր։ 4—Քանզի Մուրթքէ Թագաւորին պալատին մէջ մեծ էր, ու անոր համբաւը բոլոր գաւառները տարածուեր էր. վասն զի Մուրթքէ երթալով կը մեծնար։ 5—Ու Հրեաները իրենց բոլոր թշնամիները սրով մեռցուցին, ու խիստ մեծ կոտորած ըրին, ու զիրենք ատելիներուն իրենց ուզածին պէս ըրին։ 6—Ու Հրեաները Շուշան մայրաքաղաքին մէջ հինգ հարիւր մարդ մեռցնելով կորնչացուցին. 7—նաեւ Փարսանդաթան, Դալփոնը, Ասփաթան, 8—Փորաթան, Ադալիան, Արիդաթան, 9—Փարմաշթան, Արիսայիը, Արիդային ու Վայեզաթան, 10—Հրէից Թշնամիին, Ամադաթայի որդւոյն Համանին, ասոր տղաքները մեռցուցին. բայց աւարին ձեռք չերկնցուցին։ 11—Այն օրը Շուշան մայրաքաղաքին մէջ մեռցուածներուն հաշիւը Թագաւորին առջեւ եկաւ։

12—Ու Թագաւորը Եսթեր Թագուհիին ըսաւ, Հրեաները Շուշան մայրաքաղաքին մէջ հինգ հարիւր մարդ, ու Համանի տասը տղաքը մեռցնելով կորնչացուցին. Թագաւորին միւս գաւառներուն մէջ ինչ՛ը րրած պիտի ըլլան. հիմա ի՞նչ է խնդիրքդ. պիտի տրուի քեզի. ալ ինչ աղաչանք ունիս. պիտի կատարուի։ 13—Ու Եսթեր ըսաւ, Եթէ

թագաւորը կը հաճի, Շուշանի մէջ եղող Հրեաներուն հրամայել որ վաղն ալ այս օրուան հրավիրատակին համեմատ ընեն, ու Համանի տասը որդիքը փայտի վրայ կախուին։ 14—Ու թագաւորը ըսաւ որ այնպէս ըլլայ. ու Շուշանի մէջ հրամանը հրատարակուեցաւ, ու Համանի տասը որդիքը կախուեցան։ 15—Ու Շուշանի մէջ եղող Հրեաները Ադար ամսուն չորեքտասաներորդ օրն ալ ժողովուեցան, ու Շուշանի մէջ երեք հարիւր մարդ մեռցուցին. բայց աւարին ձեռք չերկնցուցին։ 16—Ու թագաւորին գաւառներուն մէջ եղող միւս Հրեաները ժողովուեցան, ու իրենց կեանքը պաշտպանեցին, և իրենց թշնամիներէն հանգստացան, ու զիրենք ատողներէն եօթանասունըհինգ հազար մարդ մեռցուցին. բայց աւարին ձեռք չերկնցուցին։ 17—Ադար ամսուն երեքտասաներորդ օրը էր, և անոր չորեքտասաներորդ օրը հանգըստացան, ու զանիկա կոչունքի և ուրախութեան օր ըրին։ 18—Իսկ Շուշանի մէջ եղող Հրեաները այն ամսուն երեքտասաներորդ օրը ու չորեքտասաներորդ օրը ժողովուեցան. ու անոր տասնըհինգերորդ օրը հանգստացան, և զանիկա կոչունքի և ուրախութեան օր ըրին։ 19—Ասոր պատճառաւ գիւղացի Հրեաները, անպարիսպ գիւղաքաղաքներու մէջ բնակողները, Ադար ամսուն չորեքտասաներորդ օրը ուրախութեան, կոչունքի ու ուրախմտութեան օր կ'ընեն, ու ոչ օրը ամէն մարդ իր բարեկամին ընծաներ կը ղրկէ։

20—Ու Մուրթքէ այս բաները գրեց, ու Ասուերոս թագաւորին ամէն գաւառներուն մէջ մօտ ու հեռու եղող բոլոր Հրեաներուն թուղթեր ղրկեց, 21— պատուիրելով անոնց՝ որ ամէն տարի Ադար ամսուն չորեքտասաներորդ օրը ու անոր հնգետասաներորդ օրը գոհ կատարեն, 22—(Ա՛ն օրերուն հանգստացան, և այն ամսուն հանգստացան, և այն ամսուն հաճելիտար որ անոնց տրտմութիւնը ուրախութեան՝ ու անոնց սուգը բարի օրուան դարձաւ,) զանոնք կոչունքի և ուրախութեան օրեր ընեն, որոնց մէջ ամէն մարդ իր բարեկամին ընծաներ, ու աղքատներուն պարգեւներ ղրկեն։ 23—Ու Հրեաները խօսք տուին որ իրենց սկսածին պէս՝ ու Մուրթքէի իրենց գրածին պէս ընեն։ 24—Վասն զի բոլոր Հրեաներուն թշնամին Ագագացի Ամադաթայի որդին Համան Հրեաները կորնչցնել խորհեցաւ, ու զանոնք բնաջինջ ընելու և կորնչցնելու համար փուր, այսինքն վիճակ, ձգեց։ 25—Բայց երբ Եսթեր թագաւորին առջև գնաց, Խոսրովը հրովարտակով հրամայեց՝ որ Հրէից դէմ Համանի բրած չար հնարքը անոր գլուխը դառնայ, և զանիկա ու անոր աղաքը փայտի վրայ կախեն։ 26—Ասոր համար այս օրերը *Փուր անուանեն Փուրիմ բառէն։ Ե այս պատճառաւ այս թուղթին խօսքերուն համար, ու անոնց տեսած ու անոնց պատահած բաներուն համար, 27—Հրեաները որոշեցին, ու իրենց և իրենց սերունդին ու բոլոր իրենց հետ միացողներուն կանոն դրին, որ ամէն տարի այն երկու օրը, իրենց գրածին ու ատենին համեմատ, անպատճառ պահեն։ 28—Ու այս օրերը ամէն դարերու մէջ, ամէն ազգատոհմի մէջ, ամէն գաւառի մէջ ու ամէն քաղաքի մէջ յիշուին ու պահուին. և այս փուրիմի օրերը Հրէից մէջէն պակաս չըլլան, ու անոնց յիշատակը իրենց սերունդէն չվերնայ։

29—Ու Աբիքէլի աղջիկը Եսթեր թագուհին ու Հրեայ Մուրթքէ փուրիմը հաստատելու համար այս երկրորդ նամակը կատարեալ իշխանութեամբ գրեցին։ 30—Ու Ասուերոսի թագաւորութեան հարիւր քսանրիօքը գաւառներուն մէջ եղող բոլոր Հրեաներուն՝ խաղաղութեան ու հաւատարմութեան խօսքերով թուղթեր ղրկեցին, 31—Որ այս փուրիմի օրերը իրենց որոշ ժամանակին մէջ հաստատեն, ինչպէս Մուրթքէ Հրէացի ու Եսթեր թագուհին անոնց պատուիրեցին, ու ինչպէս Հրեաները իրենց համար ու իրենց սերունդին համար ծոմապահութեան ու իրենց աղաղակին վերաբերեալ բաները հաստատեցին։ 32—Ա՛յսպէս Եսթերի հրամանը այս փուրիմին

*Այսինքն, վիճակ

*պահպանութիւնը հաստատեց, ու գիրքի մէջ գրուեցաւ։

Գլ. Ժ

Ե Ասուերոս թագաւորը ցամաք երկիրներու վրայ ու ծովու կղզիներուն վրայ հարկ ձգեց։ 2—Ու անոր քաջութեանը բոլոր գործերը ու զօրութիւնը, և Մուրթքէի մեծութեանը փառքը, որով թագաւորը զանիկա մեծցուց, ահա Մարաց ու Պարսից թագաւորներուն ժամանակագրութեան գիրքին մէջ գրուած են։ 3—Վասն զի Մուրթքէ Հրեան Ասուերոս թագաւորին երկրորդն էր, ու Հրեաներուն մէջ մեծ՝ ու իր եղբայրներուն բազմութեանը հաճոյ էր. իր ազգին ազէկութիւնը կը փնտռէր, և իր բոլոր սերունդին խաղաղութեանը վերաբերեալ բաներ կը խօսէր։

*Եբր. բաները

ԳԻՐՔ ՅՈՒԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

*2 Հուս երկրին մէջ Ովբ անունով մարդ մը կար. ու այն մարդը կատարեալ ու արդար և աստուածավախ էր, ու չարութենէ հեռ կը քաշուէր։ 2—Ու անոր հօթը տղայ ու երեք աղջիկ ծնան։ 3—Ու անոր ստացուածքը հօթը հազար ոչխար, ու երեք հազար ուղտ, և հինգ հարիւր զոյգ եզ, ու հինգ հարիւր մատակ էշ էր, ու խիստ շատ ծառաներ ունէր. և այն մարդը բոլոր արեւելցիներէն մեծ էր։

4—Ու անոր տղաքը կ'երթային, ու ամէն մէկը իր օրը տուներնին հաւկիթլոյի կ'ընէին, և †ղրկելով երեք քոյրերնին կը հրաւիրէին, որպէս զի իրենց հետ ուտեն ու խմեն։ 5—Ու երբ հաւկիթլոյին օրերը կը լմնային, Ովբ ‡կանչել կու տար զանոնք ու կը սրբէր. և առտուանց կ'ելլէր՝ անոնց ամէնուն թիւովը աղջկերտիներ կը մատուցանէր. որովհետև կ'ըսէր Ովբ, Կարելի է որ տղաքս մեղք գործեցին, ու սիրտերնուն մէջ Աստուծոյ հայհոյեցին. միշտ այսպէս կ'ընէր Ովբ։

6—Արդ օր մը Աստուծոյ որդիները գացին Տէրոջը առջև կայնելու, ու Սատանայ ալ գնաց անոնց մէջ. 7—Ու Տէրը ըսաւ Սատանայի. Ուրկէ՞ կու գաս. ու Սատանայ պատասխան տուաւ Տէրոջը ու ըսաւ, Երկրի վրայ չկրկնելէն ու անոր մէջ պտըտելէն։ 8—Ու Տէրը ըսաւ Սատանայի, Իմ Ովբ ծառայիս ուշկի ուշադրութիւն ըրի՞ր, որ երկրի վրայ անոր պէս կատարեալ ու արդար, աստուածավախ ու չարութենէ հեռ քաշուող մարդ չկայ։ 9—Ու Սատանայ պատասխան տուաւ Տէրոջը ու ըսաւ, Միթէ Ովբ ‡չի կրնար զԱստուած. 10—չի՞ որ դուն անոր ու անոր տանը և անոր ամէն ունեցածներուն բոլորտիքը ցանկով պատեցիր, անոր ձեռքերուն գործերը օրհնեցիր, ու անոր ստացուածքը երկրի վրայ շատցաւ։ 11—Բայց հիմա ձեռքդ երկնցուր, ու անոր ամէն ունեցածին դպչէ,— —ի՞դէպ թէ†ն թէ ի՛նչպէս քեզի դէմ պիտի հայհոյէ։ 12—Ու Տէրը ըսաւ Սատանային, Ահա անոր ամէն ունեցածը քու ձեռքդ է— —մ. միայն թէ իրեն վրայ ձեռք չերկնցնես։ Այն ժամանակ Սատանայ Տէրոջը առջևէն ելաւ։

13—Ու եղաւ որ օր մը անոր տղաքը ու աղջիկները իրենց մեծ եղբօրը տանը մէջ կ'ուտէին ու գինի կը խմէին։ 14—Ու պատգամաբեր մը եկաւ Ովբի ու ըսաւ, Երբ եզները կը հերկէին ու մատակ էշերը անոնց քովէ կ'արածուէին, 15—Սաբայեցիք յարձակեցան ու զանոնք առին, ու ծառաները սուրի բերնէ անցուցին. և միայն ես ազատեցայ որ քեզի պատմեմ։ 16—Երբ անոր տակաւին կը խօսէր, եկաւ մէկն ալ եկաւ ու ըսաւ, Երկինքէն Աստուծոյ կրակը իջաւ, ու հօտերը ու ծառաները այրեց ու զանոնք սպառեց. և միայն ես ազատեցայ որ քեզի պատմեմ։ 17—Երբ անիկա տակաւին կը խօսէր, եկաւ մէկն ալ եկաւ ու ըսաւ, Քաղդէացիք երեք գունդ բաժնուած՝ ուղտերուն վրայ յարձակեցան և զանոնք առին, ու ծառաները սուրի բերնէ անցուցին. և միայն ես ազատեցայ որ քեզի պատմեմ։ 18—Երբ անիկա տակաւին կը խօսէր, եկաւ մէկն ալ եկաւ ու ըսաւ, Որ տանն տղաքդ ու աղջիկներդ իրենց մեծ եղբօրը տանը մէջ կ'ուտէին ու գինին կը խմէին, 19—Ահա անապատին անդիի կողմէն մեծ հով մը եկաւ, ու տանը չորս կողմը —ի՞դէս զարկաւ, որ տղոցը վրայ փլաւ, ու անոնք մեռան. և միայն ես ազատեցայ որ քեզի պատմեմ։

*Տես Ծն. իբ. 20, 21.
†Ել. կը ղրկէր
‡Ել. ձրի՞ կը վճռնայ Աստուծմէ

20—Այն ատեն Ովբ եղաւ, իր պատմուճանը պատռեց և գլուխն մազերը կարեց, ու գետինը իյնալով երկրպագութիւն ըրաւ, 21—Ու ըսաւ, Մօրս արգանդէն մերկ եկայ, ու հոն մերկ պիտի դառնամ. Տէրը տուաւ ու Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը։ 22—Այս ամէնուն մէջ Ովբ չմեղանչեց, ու Աստուծոյ անզգամութիւն չտուաւ։

Գլ. Բ

Եւ եղէլ օր մը Աստուծոյ որդիները գացին Տէրոջը առջև կայնելու, ու Սատանայ ալ գնաց անոնց մէջ Տէրոջը առջև կայնելու։ 2—Ու Տէրը ըսաւ Սատանայի, Ուրկէ՞ կու գաս. ու Սատանայ պատասխան տուաւ Տէրոջը ու ըսաւ, Երկրի վրայ չրկնէն ու անոր մէջ պտըտելէն։ 3—Ու Տէրը Սատանայի ըսաւ, Իմ Ովբ ծառայիս ուշկի ուշադրութիւն ըրի՞ր, որ երկրի վրայ անոր պէս կատարեալ և արդար, աստուածավախ ու չարութենէ հեռ քաշուող մարդ չկայ, ու անիկա տակաւին իր կատարելութեանը մէջ հաստատ է, թէև դուն ուղեցիր զնա համրզել որ զանիկա զուր տեղը կործանեմ։ 4—Ու Սատանայ պատասխան տուաւ ու Տէրոջը ըսաւ, Մարդի տեղ մարդ՝ նաև մարդս իր բոլոր ստացուածքը իր կեանքին տեղ կու տայ։ 5—Բայց հիմա ձեռքդ երկնցուր, ու անոր ոսկորին ու մարմնին դպչէ, —ի՞դէս թէ†ն թէ ի՛նչպէս քեզի դէմ պիտի հայհոյէ։ 6—Ու Տէրը ըսաւ Սատանայի, Ահա զանիկա քու ձեռքդ է— —մ. միայն թէ անոր կեանքը պահէ։

7—Ու Սատանայ ելաւ Տէրոջը առջևէն, ու Ովբը ոտքին թաթէն մինչև գագաթը գէշ պալարներով զարկաւ։ 8—Ու անիկա խեցիի մը կտոր առաւ, որպէս զի անով քերուի. ու մոխիրի մէջ նստաւ։

9—Ու անոր կինը ըսաւ անոր, Դուն տակաւին քու կատարելութեանդ մէջ հաստատ կը կենա՞ս. Աստուծոյ դէմ հայհոյէ ու մեռիր։ 10—Ու Ովբ ըսաւ անոր, Դուն անզգամ կնոջ մը պէս կը խօսիս. Աստուծոյ ձեռքէն միայն բարիքը ընդունինք, ու չարիքը չընդունի՞նք։ Այս ամէնուն մէջ Ովբ իր շրթունքներովը չմեղանչեց։

11—Ու Ովբի երեք բարեկամները, Եղիփազ Թեմանացի, Բաղդատ *Սօփեցի ու Սոփար Նաամացի, երբ լսեցին անոր գլուխը եկած այս բոլոր փորձութիւնները, ամէն մէկը իր տեղէն էլլալով եկան ու մկկտղ ժողվուեցան, որպէս զի երթան ցաւակից ըլլան անոր ու զանիկա մխիթարեն։ 12—Ու հեռուէն աչքերնին վերցնելով չէսան, Բայց չճանչցան զանիկա. և ձայներնին վերցուցին ու լացին, ու ամէն մէկը իր պատմուճանը պատռելով՝ դէպ ի երկինք գլուխներնին հող ցանեցին։ 13—Ու անոր հետ հօթը օր ու հօթը գիշեր գետնի վրայ նստան. ու մէկը անոր խօսք մը չդրուցեց, քանզի տեսան որ †նոր ցաւը խիստ սաստիկ էր։

Գլ. Գ

Անկէ հետև Ովբ իր բերանը բացաւ ու իր օրը անիծեց։ 2—Ու Ովբ †խօսեցաւ ու ըսաւ,

3—Կորսուի այն օրը որուն մէջ ես ծնայ,
Ու այն գիշերը որուն մէջ ըսին Թէ Արու զաւակ մը ‡ծնաւ։
4—Այն օրը խաւար ըլլայ,
Ու Աստուած չփնտռէ զանիկա վերէն,
Ու երբէք լոյս չծագի անոր վրայ։
5—Խաւարը ու մահուան չուքը ||ներս անոր սեպհականեն՝ զանիկա.
Ամպը ծածկէ զանիկա.
Օրուան մթութիւնը վախցնէ զանիկա։
6—Այն գիշերը մռայլութիւը վրան առնէ.
Անիկա տարուան օրերուն §հետ չմիաւորուի՝
Ու ամիսներուն մէջ չհամրուի։
7—Ահա այն գիշերը թող ամայի մնայ,
Ու անոր մէջ ուրախութեան ձայն չմտնէ։
8—Թող անիծեն զանիկա օրը անիծողները,

*Կամ, Սոփեցի. տես Ծն. իբ. 2։
†Ել. պատասխան տուաւ
‡Ել. արգանդի մէջ գոյացաւ
||Կամ, պղծեն
§Կամ, մէկ չուրախանայ

Որոնք պատրաստ են *վիշապը արթնցընելու։
9—Անոր գիշերուան աստղերը աղօտացնան.
Լոյսին սպասէ ու չունենայ.
Ու արշալոյսին †ճառագայթները չտեսնէ.
10—Վասն զի իմ դռնս արգանդին դըռները չգոցեց,
Ու տառապանքը աչքերէս չծածկեց։
11—Ինչո՞ւ համար մեռս արգանդէն չմեռայ,
Ու որովայնէն ելածիս պէս չկորսուեցայ։
12—Ինչո՞ւ ծունկերը ընդունեցին զիս,
Ու ինչո՞ւ աթոռք դոյն էնէք որ ես ծծեմ։
13—Վասն զի հիմա պառկած կը հանգչէի ու կը քնանայի.
Այն ժամանակ հանգստացած կ'ըլլայի՝
14—Իրենց համար աւերակները չինող
Երկրի թագաւորներուն ու խորհրդականներուն հետ,
15—Կամ ոսկի ունեցող իշխաններուն հետ,
Որոնք տուներնին արծաթով կը լեցնեն.
16—Կամ թէ գաղտուկ վիժածի մը պէս կ'ոչնչանայի,
Այն երախաներուն պէս՝ որոնք երբէք լոյս չտեսան։
17—Հոն չարերը դադրդ տանջելէն կը դադրին,
Եւ հոն ուժէ ինկածները կը հանգստանան։
18—Նմանապէս բանտարկեալները հոն կը հանգչին,
Ու ալ չեն լսեր հարկապահանջին ձայնը։
19—Պզտիկը ու մեծը հոն են.
Ծառան ալ իր տէրոջմէն ազատ է։
20—Ինչո՞ւ համար Քրէութեան մէջ եղողին լոյս՝
Ու դառնահոգիներուն կեանք տուի,
21—Որոնք մահուան կը սպասեն, ու անիկա չգար,
Ու պահուած գանձերէն աւելի զանիկա կը փնտռեն.
22—Գերեզմանը գտած ժամանակնին թիւա ուրախ կ'ըլլան ու կը ցնծան։
23—Ինչո՞ւ լոյս կը տրուի այնպիսի մարդու մը՝ որուն ճամբան գոց. ուած է,
Ու Աստուած արգիլեր է զանիկա ամէն կողմէն։
24—Որովհետև կերակուր ուտելէս առաջ իմ հեծութիւնս կու գայ,
Ու իմ աղաղակներս լուրերու պէս կը հոսին։
25—Վասն զի ի՛նչ բանէ որ չատ կը վախնայի, այն ինծի հանդիպեցաւ,
Եւ ի՛նչ բանէ որ երկիւղ ունէի, այն ինծի հասաւ։
26—Ոչ խաղաղութիւն ունիմ, ոչ հանգստութիւն
Եւ ոչ հանդարտութիւն. բայց Քշտաւութիւնը էմ վրս կու գայ։

Գլ. Դ

Այն ատեն Եղիփազ Թեմանացի պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Պիտի դժուարի՞ս արդեօք՝ եթէ սկսինք քեզի խօսիլ.
Բայց ո՞վ կրնայ զինք զսպել որ չխօսի։
3—Ահա դուն շատերուն խրատ տուիր,
Ու տկար ձեռքերը զօրացուցիր։
4—Քու խօսքերդ սահելու վրայ եղողը հաստատեցին,
Ու դուն տկարացած ծունկերը կ'աղդուժեցիր.
5—Բայց հիմա այս դ*ըչ՚նուիը քեզի պատահեցաւ ու դժուարեցար.
Քեզի դպաւ ու բաղդատին չտիրեցար։
6—Միթէ *աստուածապաշտութիւնդ քու յոյսդ չէ՞,
Ու ճամբաներուդ ուղղութիւնը քու ակնկալութիւնդ։
7—Աղէ, միտդդ բեր, ո՞ր անմեղը կորսուեցաւ,
Եւ ո՞ւ տեղ արդարները բնաջինջ եղան։
8—Ինչպէս տեսայ, անօրէնութիւն հերկողները
Եւ անիրաւութիւն ցանողները նոյնը կը հնձեն։
9—Աստուծոյ շունչէն կը կորսուին,
Ու անոր բնդունքին հովին բնաջինջ կ'ըլլան։
10—Առիւ՝ նը խ*ռնուի առիւծին մռընչիւնը և մռնչող առիւծին ձայնը
Ու կորիւններուն ակռանները կը կոտրըտուին։
11—Առիւծը առանց որսի կը կորսուի,
Ու մատակ առիւծին կորիւնները կը ցրուին։
12—Ես ինծի գաղտուկ կերպով խօսք մը ըսուեցաւ,
Ու անոր չչունջը ականջս հասաւ։
13—Գիշերուան տեսիլքներուն պէս խորհուրդներուն ատենը՝
Երբ խորունկ քուն մը մարդոց վրայ կ'իջնէ,
14—Վրաս ահ*ուի՛ վախ մը ու դող մը եկաւ,
Որ բոլոր ոսկորներս ցնցեց։
15—Ա՛նքիւ՛ս ոգի մը անցաւ,
Ու մարմինս մազերը փուշ փուշ եղան.
16—Անիկա կայնեցաւ, բայց ես չկրցայ զանազանել անոր կերպարանքը.
Աչքերուս առջև երեւոյթ մը կար.
Լռութիւն եղաւ, ու ձայն մը լսեցի, որ կ'ըսէր,
17—Միթէ մարդը Աստուծմէ արդար կ'ըլլա՞յ.
Մարդը իր Արարիչէն մաքուր կ'ըլլա՞յ.
18—Ահա անիկա իր ծառաներուն չհաւատար,
Ու իր հրեշտակներուն վրայ ալ պակասութիւն կը գտնէ.
19—Ա՛լ ո՞ր կը մնան անոնք՝ որ կաւէղէն տուներու մէջ կը բնակին,
Որոնց հիմը փոշիին մէջ է, և որոնք ցեցէն առաջ կը ճզմուին։
20—Անոնք առաւօտէն մինչև երիկուն կը ճնշուին,
Ու առանց մէկուն խնամելուն կը կորսուին յաւիտեան։
21—Ահա անոնց վրայ եղած փառաւորութիւնը կը վերցուի։
Անոնք կը մեռնին առանց իմաստութիւն ըլլալու։

Գլ. Ե

Հիմա աղաղակէ. միթէ պատասխան տուող մը կա՞յ արդեօք.
Ու սուրբերէն որո՞ւ պիտի դարձնես դիտերեսդ։

2—Մտոյգ է որ բարկութիւնը յիմարը կը սպաննէ,
Ու նախանձը անմիտը կը մեռցնէ։
3—Ես յիմարին արմատանալը տեսայ,
Բայց յանկարծ անոր բնակութիւնը անիծեցի։
4—Անոր որդիները ապահովութենէ հեռու են.
Անոնք դրանը մէջ կը ճզմուին,
Եւ ազատող մը չկայ անոնց։
5—Անոնց եղողը կ'ուտէ անոր հունձքը,
Ու զանիկա փուշերու ցոռիէն մէկէն կը յափշտակէ.
Ու անոնց առացուածքը *աւազառուն կը կլլէ։
6—Որովհետև չարիքը հողէն չի ելներ,
Ու թշուառութիւնը գետնէն չբուսաներ.
7—Թէպէտ մարդը թշուառութեան համար կը ծնանի,
Ինչպէս †կրակի կայծերը՝ վեր կը թռչին։
8—Իսկ ես Աստուծոյ պիտի դիմէի,
Ու իմ գործս Աստուծոյ պիտի յանձնէի,
9—Որ *ա՛նդուէն մեծ բաներ կ'ընէ, որ չ*ըդ չկրնար քննել,
Ու *ա՛նդուէն սքանչելիքներ կ'ընէ, զորոնք հնար չէ համրել։
10—Անիկա երկրի վրայ անձրև կու տայ,
Ու դաշտերուն վրայ ջուրը կը ղրկէ.
11—Նաև ցածերը կը բարձրացնէ,
Ու սգաւորները ապահովութեան կ'ելլեն։
12—Անիկա խորամանկներուն խորհուրդները կը ցրուէ,
Որպէս զի ձեռքերնին կարող չըլլայ իրենց գործերը գլուխ տանիլ.
13—Իմաստունները իրենց խորամանկութեանը մէջ կը բռնէ,
Ու նենգաւորներուն խորհուրդը չուտով կը խափանուի։
14—Ցորեկը մութի կը բախին,
Ու կէսօրին գիշերուան պէս խարխափելով կ'ելլեն։
15—Բայց աղքատը սուրէն, անոնց բերնէն
Ու հզօրին ձեռքէն կ'ազատէ։
16—Այսպէս աղքատը յոյս կ'ունենայ,
Իսկ անօրէնութիւնը իր բերանը կը գոցէ։

*կամ, ծարաւը
†կամ, ծածխները, եբր. կայծի որդիները

17—Ահա երանելի է այն մարդը զոր Աստուած կը խրատէ.
Ուրեմն Ամենակարողին յանդիմանութիւնը մի անարգեր.
18—Վասն զի ինք կը վիրաւորէ ու կը փաթթէ.
Կը զարնէ ու իր ձեռքերը կը բժշկեն,
19—Վեց նեղութիւններէ քեզ պիտի ազատէ,
Ու եօթներորդին՝ քեզի չարիք պիտի չդպչի.
20—Սովի ժամանակ քեզ մահուանէ պիտի ազատէ
Ու պատերազմին մէջ սուրին ձեռքէն.
21—Լեզուի խարազանէ ազատուիլ պիտի ըլլաս,
Ու կործանումին գալու ատենը անկէ պիտի չվախնաս.
22—Կործանումի ու սովի վրայ պիտի ծիծաղիս,
Ու երկրի գազաններէն պիտի չվախնաս.
23—Բանզի դաշտի քարերուն հետ դաշինք պիտի ունենաս,
Ու դաշտի գազանները քեզի հետ խաղաղութեամբ պիտի վարուին.
24—Ու պիտի գիտնաս որ վրանիդ մէջ յաջողութիւն կայ.
Ու քու բնակարանիդ այցելութիւն պիտի բնես ու *բան՚ն մը պակաս պիտի չգտանես՝
25—Ու պիտի գիտնաս որ քու զաւակներդ շատնուր,
Ու քու սերունդդ երկրի խոտերուն պէս պիտի ըլլան,
26—Ակղկ մը ծերացած՝ գերեզմանը պիտի մտնես,
Ցորենի խուրձերուն դէղին պէս՝ որ իր ժամանակին կը դիղուի.
27—Ահա մենք այս բանը քննեցինք, այսպէս է.
Մտիկ ըրէ անոր ու քու օգտիդ համար գիացիր զանիկա։

Գլ. Զ

1 Ե. Ցոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Երանի՛ թէ իմ տրտմութիւնս ազդկ կշռուէր,
Ու իմ թշուառութիւնս միկտեղ կշռէին զիս մէջ դրուէր.
3—Քանզի հիմա անկա ծովուն աւազէն ծանր կ՚ըլլար.
Անոր համար իմ խօսքերս *կը հասանին,
4—Որովհետև Ամենակարողին նետերը իմ ներսիդիս են,
Որոնց թոյնը իմ հոգիս կը ծծէ.
Աստուծոյ արհաւիրքները ինծի դէմ պատրաստուելու չարաչած են,
5—Մէթէ վայրենի կղզ խոտին փով կը զռնչէ՞.
կամ եզը իր մսուրին փով կը բառաչէ՞.
6—Անհամ բանը առանց աղի կ՚ուտուի՞.
Հաւկիթի ճերմկուցին մէջ համ կայ արդեօք։
7—Ա՛ն բաները՝ որոնց սիրտս չէր ուզեր դպչիլ,
Իմ զաղրալի կերակուրս եղան։
8—Երանի՛ թէ ուզածս կատարուէր,
Ու տար Աստուած այն բանը՝ որու կը սպասեմ,
9—Ա՛սինքն թէ Աստուած զիս ճնշելու հաւանէր,
Ու ձեռքը երկնցնելով զիս կործանէր։
10—Բայց տակաւին այս մխիթարութիւնը պիտի ունենայի,
Եւ անողորմ ցաւին մէջ պիտի ուրախանայի,
Որ ես Սուրբին խօսքերը չուրացայ։
11—Ոյժս ի՞նչ է՝ որ դիմանամ,
Ու վախճանս ի՞նչ է՝ որ կեանքս երկարցնեմ։
12—Մէթէ իմ ոյժս քարերո՞ւ ոյժ է,
կամ թէ մարմինս պղնձեղէո՞ն է.
13—Չէ՞ որ օգնութենէ զուրկ եմ,
Ու ձեռնտուութիւնը հեռացած է ինծմէ։
14—Թշուառութեան մէջ եղողին իր բարեկամին կարեկցութիւնը պէտ է.
Բայց անիկա Ամենակարողին վախը մէկդի թողուց։
15—Իմ եղբայրներս հեզեզներու պէս խաբեութիւն ըրին ինծի,
Ձորերու հեզեզատներու պէս՝ որոնք կ՚անցնին.
16—Որոնք սառէն պղտորած են,
Երբ ձանոյց մէջ ձիւնը կը ծածկուի՞.
17—Ատոր տեսածնուն պէս կը ցամքին,
Խիստ տաք ատեն իրենց տեղէն անհետանալով կ՚ըլլան։
18—Կարաւաններըը իրենց ճամբան կը դարձնեն,
Բայց *դատարկ երթալով կը կորսուին.
19—Թեմայի կարաւանները նայեցան,
Սարայի ճամբորդները անոնց յուսացան.
20—Ցուսալնուն համար ամչցան,
Իրենց հոն գացած ատենը կարմրեցան։
21—Աւրդարև ինծի անօգուտ եղաք,
Թշուառութիւն տեսաք ու սոսկացիք։
22—Ես ձեզի ըսի՞ որ ինծի բերէք,
Ու ձեր առացուածքէն ընծայ առէք ինծի.
23—Կամ թէ զիս թշնամիին ձեռքէն ազատեցէք,
Ու բռնաւորներուն ձեռքէն զիս փրկեցէք։
24—Սորվեցուցէք ինծի՝ ու լուռ պիտի կենամ.
Ու հասկցուցէք ինծի՝ թէ ի՛նչ բանի մէջ սխալեր եմ.
25—Ուղիղ խօսքերը ո՞րչափ զօրաւորեն.
Բայց ձեր յանդիմանութիւնը ի՞նչ կը նշանակէ.
26—Արդեօք խօսքե՞ր յանդիմանել կը մտածէք։
Ցուսահատին խօսքերը հով են,
27—Մանաւանդ որբին համար որ*ջ կը լարէք,
Ու ձեր բարեկամին համար հոր կը փորէք։
28—Հիմա հաճեցէք ինծի նայիլ.
Մէթէ սուտ կը խօսիմ, յայտնի է ձեզի։
29—Դարձէք, կ՚աղաչեմ, ու անիրաւութիւն չըլլայ.
Այո, դարձէք. քանզի ասով իմ արդարութիւնս կը յայտնուի։
30—Մէթէ իմ լեզուիս վրայ անիրաւութիւն կա՞յ.
Մէթէ իմ քիմքս չար բաները չէ՞ կըրնար զանազանել։

Գլ. Է

1 Մէթէ մարդս երկրի վրայ պատերազմի ասպարէզ մը չունի՞.
Եւ անոր օրերը վարձկանի մը օրերուն պէս չե՞ն։

*կամ, պիտի չօթալիս

2—Ինչպէս ծառան էրէ՛ւոն չուքին կը փափաքի,
Ու վարձկանը իր վարձքին կը սպասէ,
3—Այնպէս ունայնութեան ամիսներ ինծի բաժին արուած են,
Ու թշուառութեան գիշերներ ինծի համար որոշուած են։
4—Պառկած ատենս կ՚ըսեմ, ե՞րբ պիտի ելլեմ,
Ու գիշերը ե՞րբ պիտի անցնի.
Ու մինչև արշալոյս անհանգստութեամբ լցուած եմ.
5—Մարմինս որդերով ու հողի կոշտերով ծածկուած է.
Մորքս կը ճեղքուի ու կը հալի։
6—Օրերս ոտայնանկին կկոցէն արագ կ՚անցնին,
Ու կը սպառին առանց յոյս մը ճարելու։
7—Ծիշ որ կեանքս հովի պէս է.
Աչքս այլևևս տեսնել պիտի չկանգնէ։
8—Զիս տեսնողին աչքերը նորէն զիս պիտի չտեսնեն.
Քու աչքերդ իմ վրաս կը նային, ու ես բնաջինջ կ՚ըլլամ։
9—Ինչպէս ամպը կը ցրուի կ՚երթայ,
Այնպէս գերեզմանը իջնողը պիտի չելնէ։
10—ԵՒս անկիս իր տունը պիտի չդառնայ,
Ու իր բնակարանը ա՛լ զանիկա պիտի չճանչնայ։
11—Ուստի ես իմ բերանս պիտի չզսպեմ.
Հոգիիս նեղութենովը պիտի խօսիմ,
Սրտիս դառնութենովը պիտի գանգատիմ։
12—Մէթէ ես ծո՞վ եմ, կամ կէտ,
Որ իմ վրաս պահապաններ կը դնես։
13—Երբ ես կ՚ըսեմ թէ անկողինս զիս պիտի մխիթարէ,
Մահիճս իմ գանգատներս պիտի պակսեցնէ,
14—Զիս երազներով կը վախցնես,
Ու ցնորքներով կը ցնդհատ ընես։
15—Վասն որոյ աւելի կ՚ընտրեմ խեղդուիլ ու մեռնիլ,
Քան թէ իմ ոսկորներուս պահպանուիլը։
16—Ես ձանձրացած եմ, ու չեմ ուզեր որ յաւիտեան ապրիմ.
Ինձմէ հետ կեցիր, վասն զի իմ օրերս ունայնութիւն են։

*կամ, անապատը

17—Մարդը ո՞վ է՝ որ դուն զանիկա մեծ բան մը համարիս,
Ու անոր համար հոգ տանիս,
18—Եւ ամէն առաւօտ զանիկա դիտես,
Ո՛ւ ամէն վայրկեանի մէջ փորձես։
19—Մինչև ե՞րբ ինծմէ կա չես կենար.
Թուքս կլլելո՞ւ չափ ալ թող չես տար,
20—Մեղանչեցի. քեզի ի՞նչ ընեմ, ով մարդկութիւն պահող.
Ինչո՞ւ համար զիս քեզի նշան առիր,
ու ես ինծի բեռ եղայ,
21—Եւ ինչո՞ւ իմ մեղքս չես ներեր,
Ու իմ անօրէնութիւնս չես վրցներ.
Որովհետև հիմա հողին մէջ պիտի պառկիմ,
Ու առաւօտուն եթէ զիս փնտռես, պիտի չգտնուիմ։

Գլ. Ը

Այն ատեն Բաղդատ Սօփեցի պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Մինչև ե՞րբ այդպէս պիտի խօսիս,
Ու բերնիդ խօսքերը սաստիկ հովի պէս պիտի ըլլան։
3—Մի՛թէ Աստուած դատաստանը կը խախտանէ՞,
կամ Յամենակարողը իրաւունքը կը խափանէ՞։
4—Եթէ քու տղաքդ անոր դէմ մեղանչեր են,
Եւ ան ալ իրենց յանցանքին մատնած է զանոնք,
5— Եթէ դուն առաւօտները կանուխ զԱստուած փնտռես,
Ու Յամենակարողին չնորհք խնդրես,
6—Եթէ դուն մաքուր ու չիսկի ըլլաս,
Հիմա անշուշտ անիկա քեզի համար պիտի արթննայ,
Ու քու արդարութեանդ բնակարանին յաջողութիւն պիտի տայ.
7—Թէև քու սկիզբդ փոքր ըլլայ,
Բայց քու վերջդ խիստ պիտի մեծնայ,
8—Հիմա հարցուր առաջուան ազգերուն,
Ու անոնց հայրերը քննելու ուշադրութիւն ըրէ.
9—(Վասն զի մենք երեկուանններն ենք, ու բան մը չենք գիտեր.
Քանզի մեր կեանքը երկրի վրայ ստուերի պէս է.)
10—Ահա անոնք քեզի պիտի սորվեցնեն, քեզի պիտի խօսին,
Ու իրենց սրտէն խօսքեր պիտի հանեն,
11—Մի՞թէ պրաւուն առանց տիղմի կը բուսա՞,
Կնիւնը առանց ջուրի կ'աճի՞,
12—Անիկա դեռ իր գալարութեանը մէջ ո՛ր չկարսւած՝
Ամէն խոտէն առաջ կը չորնայ։
13—Այսպէս պիտի ըլլայ ամէն անոնց ճամբաները՝ որոնք զԱստուած կը մոռնան.
Ու *կեղծաւորին յոյսը պիտի կորսուի.
14—Վասն զի անոր յոյսը պիտի կըտրուի.
Ու անոր վստահութիւնը սարդի †տաղանդին պէս պիտի ըլլայ։
15—Անիկա իր տունը պիտի կռթնի, Բայց ան հաստատութիւն պիտի չունենայ.
Իր չէ՛տովը զանիկա պիտի բռնէ, Բայց այն կանգնած պիտի չմնայ։
16—‡Արեւը չծագած՝ դալար է, Ու անոր ճիւղերը իր դաշտ պարտէզին վեր կ'ելլեն։
17—Անոր արմատները քարակոյտին կը փաթթուին, Ո՛ւ քարերուն տեղը կը սեսնէ.
18—Եթէ մէկը զանիկա իր տեղէն խլէ, Տէրը պիտի ուրանայ զանիկա՝ ըսելով Ըե՛ս քեզ չտեսայ։
19—Ահա անոր ճամբուն ուրախութիւնը այս է, Ու հողէն ուրիշներ պիտի ելլեն։
20—Ահա Աստուած արդար մարդը չի՛ձրժեր, Ոչ ալ չարերուն ձեռնտու կ'ըլլայ։
21—Մինչև որ քու բերանդ ծիծաղով լեցնէ, Ու շրթունքներդ ուրախութեան ձայնով։
22—Քեզ ատողները ամօթով պիտի ըլլան. Ու ամբարիշտներուն վրանը բնաջինջ պիտի ըլլայ։

*կամ, ամբարշտին
†Եբր. տունը
‡Եբր. Արեւէն առաջ

Գլ. Թ

Եւ Յոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Իրաւցընէ այնպէս ըլլալը գիտեմ.
Ու մարդը ի՞նչպէս պիտի արդարանայ Աստուծոյ առջեւ։
3—Եթէ անոր հետ վիճաբանիլ ուզէ, Հազարէն մէկուն չկրնար անոր պատասխան տալ։
4—Անիկա սրտով իմաստուն՝ և ուժով կարող է.
Ո՞վ անոր դէմ էր ուրտը խաղացուցեր՝ ու յաղողութիւն գտեր է։
5—Անիկա լեռները կը տեղափոխէ, ու անոնք չեն գիտեր.
Իր բարկութիւնովը զանոնք կը տապալէ։
6—Երկիրը իր տեղէն կը շարժէ, Ու անոր սիւները կը դողան։
7—Արեւին հրաման կ'ընէ, ու անիկա չ'ծագիր.
Ու աստղերը կը կնքէ։
8—Ինք միայն երկինքը կը տարածէ, Ու ծովուն *ալիքներուն վրայ կը քալէ։
9—Անիկա ըրաւ Արկը, Հայկը ու Բազմաստղը
Ու հարաւին չտեսնուածները։
10—Անիկա անքննելի մեծագործութիւններ
Ու անթիւ սքանչելիքներ կ'ընէ։
11—Ահա անիկա քովէս կ'անցնի, ու ես չեմ տեսներ.
Առաջ կ'անցնի, ու չեմ իմանար։
12—Եթէ յափշտակէ, ո՞վ կրնայ զանիկա արգիլել.
Ո՞վ կարող է ըսել անոր թէ ի՞նչ կ'ընես։
13—Աստուած իր բարկութիւնը կամ չդարձներ.
Ո՛ւ հպարտ օգնականները անոր տակ կը խոնարհին։
14—Ո՞ւր մնաց որ ես անոր պատասխան տամ,
Ո՛ւ անոր դէմ վէճերս հմտիլ բնարեմ։
15—Որովհետև արդար ալ ըլլամ, պատասխան պիտի չտամ.
Իմ դատաւորիս չնորհք պիտի խնդրեմ։
16—Եթէ ես զանիկա կանչէի, ու ինծի պատասխան ալ տար,

*Եբր. բարձրերուն

Պիտի չհաւատայի թէ անիկա իմ ձայնս լսած է։
17—Որովհետև փոթորիկով զիս ձեղջեց,
Ու առանց պատճառի իմ վէրքերս աւելցուց։
18—Չիս չթողուր որ շունչ առնեմ,
Հապա դառնութեամբ զիս կը լեցնէ։
19—Եթէ զօրութիւն է՝ հոն անիկա զօրաւոր է,
Իսկ եթէ դատաստան՝ *ո՞վ զիս առանքը պիտի կանչէ։
20—Եթէ անձս արդարացնեմ, իմ բերանս զիս կը դատապարտէ.
Եթէ զիս կատարեալ Էլիհուն, զիս յանցաւոր կը հանէ։
21—Եթէ զիս կատարեալ Էլիհուն, իմ անձս չեմ ճանչնար,
Իմ կեանքս կ'արհամարհեմ։
22—Ահէնէ մէկ է. անոր համար ըսի թէ Անիկա արդարը ու ամբարիշտը կ'եղերդ բնաջինջ կ'ընէ։
23—Եթէ հարուածը յանկարծ մեռցնէ, Անիկա անմեղին գործածի փորձութեանը վրայ կը ծիծաղի։
24—Երկիրը ամբարշտին ձեռքը տրուած է.
Ատեաններ անոր դատաւորներուն երեսը կը ծածկէ.
Եթէ ոչ՝ ո՞վ է անիկա։
25—Արդ իմ օրերս սուրհանդակէն աբագ են,
Փախան ու բարութիւն չտեսան։
26—†Արագագնաց նաւերու պէս՝
Որսի վրայ յարձակող արծիւի պէս կ'անցնին։
27—Եթէ ըսեմ, գանգատս մոռնամ,
Տրտմութիւնս ձգեմ ու զուարթ ըլլամ,
28— Բոլոր թշուառութիւններէս կը վախնամ.
Գիտեմ որ զիս անմեղ պիտի չհամարիս։
29—Ամբարիշտ պիտի սեպուիմ,
Ինչո՞ւ համար զուր տեղը աշխատիմ։
30—Եթէ ձիւնի ջրով լուացուիմ,
Ու ձեռքերս ‡մաքրութիւնով սրբեմ,
31—Այն ժամանակ զիս փոսը կ'ընկղմես,

*կամ, ինծի համար ո՞վ վկայութիւն պիտի տայ
†կամ, Ճանկալիւ, և կամ, Առագաստակի
‡կամ, օճառով

Ու հանգչեմս պիտի զգուի ինծմէ։
32—Վասն զի ինծի պէս մարդ չէ՛ որ
անոր պատասխան տամ,
Ո՛ր մէկտեղ դատաստանի երթանք։
33—Մէկնորդ դատաւոր մը չկայ մեր
մէջ,
Որ կարենայ իր ձեռքը մեր երկուքին
վրայ դնել։
34—Թող իր գաւազանը վրայէս վերցնէ,
Ու անոր երկիւղը ա՛լ ինծի չզարհուրե-
ցընէ,
35—Ա՛յն ատեն պիտի խօսիմ, ու անկէ
պիտի չվախնամ.
Բայց եղած վիճակիս մէջ ես իմ անձիս
տէրը չեմ։

Գլ. Ծ

Հոգիս կեանքէս ձանձրացաւ.
Համարձակ պիտի գանգատիմ,
Հոգիիս դառնութիւնովը պիտի խօսիմ.
2—Պիտի ըսեմ Աստուծոյ, Մի դատա-
պարտեր զիս,
Ցայտնէ ինծի թէ ի՛նչ բանի համար ին-
ծի հետ կը վիճիս.
3—Քեզի աղէկ կ'երեւնայ որ չէս հա-
րըստահարես,
Ու քու ձեռքերուդ գործը արհամար-
հես,
Ու ամբարիշտներուն խորհուրդին լոյս
տաս,
4—Միթէ դուն մարմնաւո՞ր աչքեր ու-
նիս,
Մարդուն տեսածի՞ն պէս կը տեսնես,
5—Միթէ քու օրերդ մարդո՞ւն օրե-
րուն պէս են,
Քու տարիներդ մարդո՞ւն օրերուն պէս
են,
6—Որ դուն իմ յանցանքս փնտռես,
Ու մեղքս քննես,
7—Գիտես որ յանցաւոր չեմ,
Բայց չկայ մէկը որ քու ձեռքէդ ազա-
տէ զիս։
8—Քու ձեռքերդ զիս ստեղծեցին,
Ու *իմ բոլոր անդամներս՝ կազմեցին,
Ու զիս բնաւ||իդ կ'ընես։
9—Կ'ադաչեմ, յիշէ որ զիս կաւի պէս
շինեցիր,

*ՆԲԲ. զիս չարքնականի

Ու զիս հո՞ղ պիտի դարձնես։
10—Չէ՞ որ զիս կաթի պէս թափեցիր,
Ու պանրի պէս թանձրացուցիր.
11—Ոսկրներով ու ջիղերով հիւսե-
ցիր,
Ու զիս մսերով ու մաշկով հագուեցու-
ցիր,
12—Ինծի կեանք և ողորմութիւն շնոր-
հեցիր,
Ես քու խնամքդ իմ հոգիս պահեց։
13—Ու ասոնք սրտիդ մէջ պահեցիր.
Գիտեմ որ ասոնք *վերադ են։
14—Եթէ մեղք գործեմ, դուն զիս կը
դիտես,
Ու իմ անօրէնութենէս անմեղ չես հա-
մարիր զիս։
15—Եթէ ամբարշտութիւն ընեմ, վա՛յ
է ինծի,
Ու արդար ալ ըլլամ, գլուխս չեմ կըր-
նար վերցնել.
Անարգանքով լցուած եմ.
Հիմա իմ թշուառութեանս նայէ,
16—†Որ աւելնալու վրայ է՞.
Առիւծի պէս զիս կ'որսաս,
Ես դարձեալ իմ վրաս էյաղթող կ'ըլլաս.
17—Ինծի դէմ վկաներդ կը նորոգես,
Ու քու սրտմտութիւնդ իմ վրաս կը
չատցնես.
Փոփոխութիւններ ու պատերազմ ու-
նիմ։
18—Արդ ինչո՞ւ համար զիս արգանդէն
հանեցիր.
Երանէ՛ ըն հոն մեռնէի, ու աչք չտես-
նէր զիս,
19—Որ չեղածի պէս ըլլայի,
Ու մեռս արգանդէն գերեզմանը տար-
ուէի։
20—Իմ օրերս սակաւաթիւ չէ՞ն.
Ետ կեցիր ինծմէ, ու թող տուր որ փոչ
մը հանգչիմ՝
21—Անդ երթալէս առաջ, ուրկէ
ետ պիտի չդառնամ,
Մութ երկիրը ու մահուան չուքը,
22—Այն ||խաւար մութ երկիրը, մահ-
ուան չուքին խաւարը,

*ՆԲԲ. քովդ
†Կամ, իսկ ԼՔՒ ֆլաւիս վերցնեմ
‡ՆԲԲ. զարմանալի
||ՆԲԲ. մառախուղի նման

Ուր տեղ կարգ չկայ, ու լոյսը խաւարի
պէս է։

Գլ. ԺԱ

Այն ատեն Սոփար Նեեմացի պա-
տասխան տուաւ ու ըսաւ.
2—Շատ խօսքերուն պատասխան պիտի
չտրուի՞,
Ու լեզուանի մարդը կընդո՞ւն ||արդա-
րանայ։
3—Քու պարապ խօսքերդ մարդիկը պի-
տի լռեցնեն՞ս,
Ու երբ դուն ծաղր կ'ընես, պիտի չըլ-
լա՞յ մեկը որ †ինչ ամչցնէ։
4—Վասն զի դուն ըսիր Թէ իմ խօսքս
մաքուր է.
Ու քու աչքիդ առջեւ անարատ եմ.
5—Սակայն երանի՛ Թէ Աստուած խօսէր,
Ու քեզի դէմ իր չրթունքը բանար,
6—Ու քեզի յայտներ իմաստութեան
գաղտնիքը,
Որ հարիւրապատիկն կրկինն է։
Հիմա գիտցիր որ Աստուած
Քու անօրէնութեանդ չէ՞ հասը *անտես
կ'ընէ՞։
7—Աստուծոյ գաղտնիքը կրնա՞ս գտնել.
Ամենակարողը կատարեալապէս կրնա՞ս
իմանալ։
8—Անիկա երկինքին պէս բարձր է.
Ի՞նչ կրնաս ընել.
Դժոխքէն խորունկ է. ի՞նչ կրնաս
գիտնալ։
9—Անոր չափը երկրէ երկայն՝
Ու ծովէն լայն է։
10—Եթէ անիկա յարձակի ու գոցէ
կամ ժողվէ,
Ո՞վ անոր արգելք պիտի ըլլայ։
11—Քանզի ինք ունայն մարդիկը կը
ճանչնայ.
Ու անօրէնութիւնը տեսնելով՝ ուշադ-
րութիւն պիտի չընէ՞,
12—Բայց անմիտ մարդը կը հպարտա-
նայ,
Ու մարդը վայրենի իշու ձագի պէս կը
ծնանի։
13—Եթէ դուն սիրտդ պատրաստես,
Ու ձեռքերդ անոր երկնցնես.

*ՆԲԲ. քեզի կը մոռցնէ

14—Եթէ քու ձեռքդ անօրէնութիւն
կայ, զանիկա †երկէ հեռացուր,
Ու մի թողուր որ վրաններուդ մէջ ան-
զգամութիւն բնակի։
15—Այն ատեն անշուշտ կրնաս պարզե-
րես ||նայ.
Հաստատ կ'ըլլաս ու ջարդէ մը չես վախ-
նար։
16—Քու թշուառութիւնդ պիտի մոռ-
նաս.
Անցած չարերու պէս պիտի յիշես վա-
խնա՛ս։
17—Ու կեանքդ *կէսօրուան լոյսեն
պայծառ պիտի ըլլայ՝
Թէև խաւարի մէջ ես, առտուան պէս
պիտի ըլլաս։
18—Ու ապահով պիտի ըլլաս, վասն զի
յոյս կայ †երէ։
Գիտի փորես ու ապահովութեամբ քնա-
նաս։
19—Ու պիտի պառկիս, ու վախցնող
պիտի չըլլայ։
Ու շատերը քու երեսդ պիտի փնտռեն,
20—Բայց ամբարիշտներուն աչքերը
պիտի նուաղին,
Ու անոնց ապաստանարան պիտի
†չգտնուի,
Ու յոյսերնին հոգեվարութիւն պիտի
ըլլայ։

Գլ. ԺԲ

Ես ըսի պատասխան տուաւ ու
ըսաւ,
2—Արդարեւ ժողովուրդը դուք եք,
Ու իմաստութիւնը ձեզի հետ պիտի
մեռնի։
3—Ես ալ ձեզի պէս խելք ունիմ, ես
ձեզմէ նուաստ չեմ.
Ու այսպիսի բաներ ‡ո՞վ չգիտեր։
4—Իր բարեկամին ծաղր եղող հարբ մը
եմ ես.
Բայց ով որ Աստուծոյ ադաչակէ,
Ան*ոնո՞ւն պատասխան կու տայ անոր.
Արդար ու կատարեալ մարդը ծաղր
կ'ըլլայ։

*ՆԲԲ. կէսօրէն պիտի բարձրանայ
†ՆԲԲ. կորսուի
‡ՆԲԲ. որո՞ւն քով չկայ

5—Որոք սահելու վրայ եղողը, հանգիստ [illegible] կարծիքին համեմատ,
Անպիտան [illegible] մըն է,
6—Գողերուն վրաններըը յաջողութեան մէջ են,
Ու զԱստուած բարկացնողները ապահով են,
Որոնց ձեռքը Աստուած առատութեամբ *կը լեցնէ,
7—Բայց, ով, անաստուններուն հարցուր՝ երբոր զի քեզի սորվեցնեն,
Ու երկինքի թռչուններուն՝ որպէս զի քեզի իմացնեն,
8—կամ թէ երկրի զրուցէ, ու անիկա քեզի պիտի սորվեցնէ.
Ծովուն ձուկերը անգամ քեզի պիտի պատմեն.
9—Ա՛յս ամէն բաներով ո՞վ չգիտեր
Թէ ասիկա ընողը Տէրոջը ձեռքն է.
10—Որ ամէն ապրողին անձը
Ու բոլոր մարդկային մարմնի հոգին անոր ձեռքն է.
11—Մինչ ականջը խօսքերը չ՚ըռնչեր,
Ինչպէս քիմքը կերակուրին համը կ՚առնէ:
12—Իմաստութիւնը ծերերուն քով է,
Ու հանճարը՝ օրերուն շատութեանը մէջ:
13—Անոր քով է իմաստութիւնը ու զօրութիւնը.
Հանճարը ու իմաստութիւնը Անորն են:
14—Ահա Ան կը փլցնէ, ու չ՚կրնար.
Երէ մէկուն վրայ գոցէ, ալ չ՚բացուիր:
15—Ահա Անիկա ջուրերը կ՚արգիլէ ու կը չորնան,
Ու զանոնք Թող կու տայ, ու երկիրը տակնուվրայ կ՚ընենն:
16—Զօրութիւնը ու հանճարը անոր հետ են.
Խաբուողը ու խաբողը անորն են:
17—Խորհրդականները կողոպտուած կը պարտցնէ,
Ու դատաւորները կը յիմարեցնէ:
18—Թագաւորներուն իշխանութիւնը կը փակէ,
Ու մէջքերնին չուան կը կապէ:
19—†Նախարարները կողոպտուած կը պարտցնէ,

Ու զօրաւորները կը կործանէ:
20—Հաւատարիմներուն չէ՚ունքը կը պապանձեցնէ,
Ու ծերերուն խելքը կ՚առնէ:
21—Ազնուականներուն վրայ անարգութիւն կը թափէ,
Ու հզօրներուն զօրին կը թուլցնէ:
22—Խորունկ բաները խաւարէն հանէ՚լով կը յայտնէ,
Ու մահուան սաւառը ի լոյս կը հանէ:
23—Ազգերը կը չատցնէ, ու զանոնք կը կորնչցնէ.
Ազգերը ընդլայնի կը տարածէ, ու զանոնք նա կը դարձնէ:
24—Երկրի ժողովրդներուն առաջնորդներուն խելքը կ՚առնէ,
Ու ճամբայ չունեցող անապատներու մէջ կը մոլորեցնէ զանոնք:
25—Անոնք առանց լոյսի մութին մէջ խարխափելով կ՚երթան.
Ու գինովներու պէս կը մոլորեցնէ զանոնք:

Գլ. ԺԴ

Ահա այս ամէնը իմ աչքս տեսաւ.
Ականջս լսեց զանիկա ու իմացաւ:
2—Ձեր գիտցածը ես ալ գիտեմ.
Ես ձեզմէ նուազ չեմ:
3—Բայց ես Ամենակարողին խօսիլու՝
Ու իմ իրաւունքներս Աստուծոյ ներկայացնելու կը փափաքիմ.
4—Սակայն դուք սուտ նկուածէք կը հնարէք.
Ամէնդ ալ ունայնութեան բժիշկներ եք:
5—Երանի՛ թէ բոլորովին լռած կենայիք.
Ես ձեզ իմաստութիւն պիտի սեպուէր:
6—Հիմա իմ վիճաբանութիւնս մտիկ ըրէք,
Ու շրթունքներուս փաստերուն ականջ դրէք:
7—Աստուծոյ համար անիրաւութիւն կը զրուցէք,
Ու անոր համար նենգութիւն կը խօսիք:
8—Մի՛թէ աչառութիւն կ՚ընէք անոր,
կամ Աստուծոյ փաստը կը պաշպանէք:
9—Աղէ՞կ է որ անիկա ձեզ քննէ.
Պիտի խաբէ՞ք զանիկա մարդ խաբելու պէս:

10—Եթէ ծածուկ աչառութիւն ալ ընէք,
Անշուշտ անիկա պիտի յանդիմանէ ձեզ:
11—Մի՛թէ անոր փառքը ձեզ չէ՚ վախցըներ,
Ու անոր ահը ձեր վրայ չէ՚յնար:
12—Ձեր յիշատակութիւնները մոխիրի առակներ են,
Ձեր *պատնէշները կաւէ պատնէշներու պէս են:
13—Լռեցէք իմ առէջս, ու ես խօսիմ.
Ես ինչ որ ըլլայ՝ Թող պատահի ինծի:
14—Ինչո՞ւ համար մարմինս ակռաներուս մէջ կ՚առնեմ,
Ու հոգիս ափիս մէջ կը դնեմ:
15—Թէև անիկա զիս սպաննէ, ես անոր պիտի յուսամ.
Մանաւանդ իմ ճամբաներս անոր առջև պիտի պաշտպանեմ:
16—Նաև իմ փրկութիւնս անիկա է.
Բայց կեղծաւորը ընաւ անոր առջև պիտի չգայ:
17—Ականջ մտիկ ըրէք իմ խօսքս,
Ու իմ ըսելիքս ձեր ականջներուն հասնի:
18—Ահա հիմա կ՚դասս կարգի դրած եմ,
Գիտեմ որ պիտի արդարանամ:
19—Ո՞վ ինծի հետ պիտի վիճի.
Քանզի եթէ հիմա լռելու ըլլամ, պիտի մեռնիմ:
20—Միայն թէ այս երկու բաները ինծի ընէր,
Ու այն ատեն քու երեսէդ պիտի չպահուըտիմ:
21—Ձեռքդ վրայէս վերցուր,
Ու քու երկիւղդ զիս չզարհուրեցնէ:
22—Ետքը դուն կանչէ, ու ես պատասխան տամ.
կամ թէ ես խօսիմ, ու դուն ինծի պատասխան տուր:
23—Ո՞րչափ են իմ անօրէնութիւններս ու մեղքերս.
Իմ յանցանքս ու մեղքս ինծի իմացուր:
24—Ինչո՞ւ համար երեսդ կը պահես,
Ու զիս քեզի թշնամի կը սեպես:
25—Հովէն քշուած տերեւի՞ մը դէմ ահաւոր պիտի ըլլաս,

Կամ թէ չոր մղե՞ղ մը պիտի հալածես:
26—Որովհետեւ *դառնութեան վճիռ կու տաս՝ ինծի,
Ու իմ երիտասարդութեանս անօրէնութիւնները ինծի կը ժառանգեցնես:
27—Ոտքերս կոճղի մէջ կը դնես,
Ու բոլոր ճամբաներս կը դիտես,
Ու իմ ոտքերուս չափերուն նշան կը դնես:
28—Ու այս ծաչիկս փտած բանի պէս
Ու ցեցէն կերուած լաթի պէս կը մաշի:

Գլ. ԺԴ

Կնոջմէ ծնած մարդը կարճ կեանք ունի.
Ու թշուառութիւնով լեցուն է.
2—Ծաղիկի պէս կ՚ելլէ ու կը կոտրի,
Ու շուքի պէս կը փախչի ու չկենար:
3—Բայց անոր վրայ ալ աչքերդ կը բանաս,
Ու զիս քեզի հետ դատաստանի՞ կը բերես:
4—Անմաքուրէն ո՞վ կրնայ մաքուր հանել.
Բնաւ մէկը չէ՞:
5—Որովհետեւ անոր օրերը որոշուած են,
Անոր ամիսներուն թիւը քու քովդ է.
Դուն անոր սահման դրիր,
Ու անիկա չկրնար անդին անցնել:
6—Երեսդ մէկդի դարձուր անկէ, որպէս զի անիկա հանգչի,
Մինչև որ վարձկանի պէս իր օրը լմնցնէ:
7—Վասն զի եթէ ծառը կտրուի, դեռ յոյս կայ
Որ վերստին ծլի ու շառաւիղը պակաս չըլլայ:
8—Թէև անոր արմատը երկրին մէջ ծերացած ըլլայ,
Ու անոր բունը հողին մէջ մեռած,
9—Անիկա ջուրին հոտին կը ծագկի,
Ու նոր տնկուած ծառ պէս ճիւղեր կարձակէ:
10—Բայց մարդը կը մեռնի ու †կ՚ենթայ.

*ՆԲԷ. կը բերէ †Կամ, քահանաները

*Կամ, մարմինները կաւէ մարմիններու

*ՆԲԷ. դառնութիւններ կը գրես
†Կամ, ապականութիւն կը տեսնէ

Մարդը իր հոգին կ'աւանդէ, ու Է՛տ՛էը
ջուր աեղ է։
11—Իշուէ՛ս ջուրերը ծովին կը պակսին,
Ու գետը կը չորնայ ու կը ցամքի,
12—Այսպէս ալ մարդը էֆ՛էֆ՛ը կը
պառկի ու չկրկրէ.
Մինչև որ ալ երկինք չքլլայ՝ պիտի չեր-
ձնին,
Ու իրենց քունէն պիտի չարթննան։
13—Երանի՛ թէ մինչև գու բարկու-
թեանդ անցնիր՝
Գերեզմանին մէջ ծածկէիր ու պահէիր
զիս.
Ինծի ժամանակ մը որոշէիր, ու Է՛տ՛էը
զիս միտդդ բերէիր։
14—Եթէ մարդը մեռնի, պիտի կեն-
դանանա՞յ ապրելոջ.
Պատերազմիս բոլոր օրերը պիտի սպա-
սեմ,
Մինչև որ իմ փոխուելու Է՛ըէ՛ գայ։
15—Պիտի կանչես, ու ես քեզի պա-
տասխան պիտի տամ.
Գու ձեռքերուդ գործին պիտի փափա-
գիս։
16—Որովհետև հիմա քայլերս կը համ-
բես,
Մեկզմ չե՞ս զններ։
17—Իմ յանցանքս քսակի մէջ կընդ-
քուած է,
Ու իմ անօրէնութեանս վրայ *կարե-
ցեր։
18—Իրաւ որ լեռը իյնալով կը կոր-
ծանի,
Ու ապառաժը իր տեղէն կը փոխադ-
րուի։
19—Ջուրերը կը մաշեցնեն քարերը.
Իրենց յորդած ժամանակը գետնին հո-
ղերը կը քշեն կը տանին.
Գուն ալ մարդուն յոյսը այնպէս կը
կորսնցնես։
20—Գուն զոլորովին յաղթող կ'ըլլաս
անոր վրայ, ու անկա կ'երթայ.
Անոր դէմքը փոխելով՝ զանկա կը
վռնտես։
21—Անոր տղաքը պատիւ կ'ունենան,
ու ինք չգիտնար.
Անոնք անարգ կ'ըլլան, ու ինք անոնց
վիճակը չհասնար։

*Կամ, աւելցուցիր

22—Միայն թէ իր վրայի մարմինը ցաւ
պիտի կրէ,
Ու իր հոգին պիտի սգայի իր ներսի-
դին։

Գլ. ԺԵ

Այն ատեն Եղիփազ Թեմանացի պա-
տասխան տուաւ ու ըսաւ,
2—Մի՞թէ իմաստուն մարդը հովի դէս
*խօսքերով պատասխան պիտի
տա՞յ,
Ու իր փորը արեւելեան հովով պիտի
լեցնէ՞.
3—Պարապ խօսքերով պիտի վիճա-
բանի՞,
Ու այնպիսի զրոյցներով՝ որոնք օգուտ
մը չունին։
4—Մանաւանդ դուն երկիւղը կը խա-
փանես,
Ու Աստուծոյ մտաւցուելու աղօթքը
կ'արգիլես։
5—Որովհետև բերանդ քու անօրէնու-
թիւնդ կը ցուցնէ,
Ու նենգաւորներուն լեզուն ընտրեցիր։
6—Գու բերանդ քեզ պիտի դատա-
պարտէ, ու ոչ թէ ես,
Ես քու շրթունքներդ քեզի դէմ պիտի
վկայեն։
7—Առաջին ծնած մարդը դո՞ւն ես.
Կամ բլուրներէն առա՞ջ սաեղծուեցար։
8—Աստուծոյ գաղտնիքներուն ունկնդիր
եղա՞ր.
Ես իմաստութիւնը դէ՞ն քեզի՞ պահե-
ցիր։
9—Ի՞նչ գիտես դուն, զոր մենք չենք
գիտեր.
Ի՞նչ բան ունէ տեղեկութիւն ունիս, զոր
մենք չունինք։
10—Մեր մէջ ճերմակ մազերով
Ու խիստ ծեր մարդիկ ալ կան,
Որոնք տարիքով քու հօրմէդ աւելի
մեծ են։
11—Մի՞թէ քի՞չ կը թուին քեզի Աս-
տուծոյ մխիթարութիւնները
†Ու քեզի ըսուած մեղմ խօսքերը։
12—Գու սիրտդ ո՞ւր կը տանի քեզ,

*Նէբ. գիտութիւնով
†Կամ, Ծածուկ բան մը ունի՞ս արդեօք

Ու այգերդ ի՞նչ բանի կ'ակնարկեն,
13—Որ հոգիդ Աստուծոյ դէմ դարձը-
նելով՝
Բերնէդ այսպէս խօսքեր կը հանես։
14—Մարդը ի՞նչ է՝ որ մաքուր ըլլայ,
Ու կնոջմէ ծնածը՝ որ արդարանայ։
15—Ահա Ա՛ստ՛ուած իր սուրբերուն
չհաւատար,
Ու երկինք անոր աչքերուն առջև մա-
քուր չէ.
16—Ո՞՛ր կը մնայ գարշելի ու պիղծ
մարդը,
Որ անօրէնութիւնը ջուրի պէս կը խմէ։
17—Քեզի իմացնեմ, մտիկ ըրէ ինծի,
Ու տեսածս պատմեմ քեզի.
18—Ինչ որ իմաստունները յայտնեցին,
Ու բնաւ չծածկեցին իրենց հայրերէն
ստացածնին։
19—(Երկիրը անոնց միայն տրուեցաւ,
Ու անոնց մէջէն օտարական մը չան-
ցաւ։)
20—Ջարը իր բոլոր օրերուն մէջ տան-
ջանք կը կրէ,
Ու բռնաւորին քիչ տարիներ պահուած
են։
21—Վախերու ձայնը անոր ականջն է.
Խաղաղութեան մէջ անոր վրայ կոր-
ծանիչը պիտի գայ։
22—Չհաւատար որ մութէն պիտի ելլէ,
Ու անկա սուրի պահուած է։
23—Հացը ո՞ւր է ըսելով՝ թափառական
կը պտրտի.
Գիտէ որ մութ օրը պատրաստ է Ա իր
ձեռքն է։
24—Նեղութիւնը ու տագնապանքը զա-
նիկա կը վախցնեն,
Ու պատերազմի պատրաստուած թա-
գաւորի պէս անոր վրայ յաղ-
թող կ'ըլլան։
25—Վասն զի Աստուծոյ դէմ ձեռք
վերցուց,
Ու Ամենակարողին դէմ հպարտացաւ։
26—Անոր վրայ կը յարձակի *գոռո-
զութեամբ,
Ու իր ասպարներուն թանձր գմբեթնե-
րովը,
27—Որովհետև իր երեսը ճարպով ծած-
կեց,

*Նէբ. պարանոցով

Ու երիկամանքները պարարտութիւնով
գոցեց,
28—Ես անիկա աւերակ քաղաքներու
մէջ բնակեցայ,
Ու կործանելու մտածած անշէն տուն-
ներու մէջ։
29—Անիկա պիտի չհարստանայ,
Անոր ստացուածքները հաստատ պիտի
չըլլան,
Ու անոնց չտուութիւնը երկրի վրայ պի-
տի չտարածուի։
30—Մութէն պիտի չդուանայ.
Բոցը պիտի չորցնէ անոր ճիւղերը,
Ու Ա՛ստ՛ուծ բերնին շունչովը պիտի
սպննանայ։
31—Խարուելովը ունայնութեան չվըս-
տահի,
Վասն զի անոր փոխարէնը ունայնու-
թիւն պիտի ըլլայ։
32—Օրերը չլմնցած պիտի կատուի,
Ու ճիւղերը նորէն պիտի չկանանչին.
33—Որթի պէս իր ազարը պիտի թափէ,
Ու ձիթենիի պէս իր ծաղիկները պիտի
թօթափէ։
34—Վասն զի կեղծաւորներուն ժողովը
ամայի պիտի ըլլայ,
Ու կաշառք առնողներուն վրանները
կրակը պիտի այրէ։
35—Անոնք թշնամութիւն կը յղա-
նան, անօրէնութիւն կը ծնանին,
Ու սիրտերնին խաբէութիւն կը պատ-
րաստէ։

Գլ. ԺԶ

Եւ Յոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Ես ասոնց պէս շատ բաներ լսած եմ.
Ամենդ ալ ձանձրութիւն տուող մխի-
թարիչներ եք։
3—Դատարկ խօսքերը ծայր ունի՞ն.
Եթէ ոչ՝ ի՞նչ բանէ դրդուած պատաս-
խան կու տաս։
4—Ես ալ ձեզի պէս կրնայի խօսիլ.
Եթէ ձեր անձը իմ անձիս տեղը ըլլար,
Կրնայի ձեզի դէմ խօսքեր դիզել,
Ու ձեզի դէմ գլուխս երերցնել,
5—Սակայն իմ բերնովս ձեզ կը զօրա-
ցընէի,
Ու չրթունքներուս չարժումը չէր զբօ-
սրնչեցնէր կը փարատէր։

6—եթէ խօսիմ՝ արտաքինս չփա-
սիր,
Եւ եթէ լռեմ՝ ի՞նչ կը պակսի ինծի,
7—Բայց հիմա զիս յոգնեցուց.
Բոլոր *տունս ամայի ըրիր.
8—Նաև զիս †բռնեցիր, ու ե՛ւ էն-
դէմ վկայութիւն մըն է.
Ու իմ նիհարութիւնս ինծի դէմ ելլե-
լով՝ երեսիս վրայ վկայութիւն
կ՚ընէ։
9—Անոր բարկութիւնը զի՛ պատռեց,
ու ինծի թշնամի եղաւ,
Ակռաները իմ վրաս կրճտեց.
Թշնամիս սուր աչքերով ինծի նայեցաւ.
10—Բերանին վրաս բացին,
Ու զի՛ նախատելու համար ծնօտներուս
ապտակ զարկին.
Միկռեղ վրաս ժողովուեցան։
11—Աստուած զիս ամբարշտին յանձնեց,
Ու անօրէններուն ձեռքը ձգեց։
12—Հանգիստ էի, ու զիս ճնշեց,
Ու վիզիս բռնելով՝ զիս ջախջախեց,
Ու զիս իրեն նշան դրաւ։
13—Անոր աղեղնաւորները իմ բոլոր-
տիքս առին.
Երեկամուքներս կը խոցէ, ու ինծի
չխնայեր.
Լեղիս գետինը կը թափէ։
14—Կատաղածի վրայ կատաղած ընելով
զիս կոտրեց,
Իմ վրաս զօրաւորի մը պէս յարձակե-
ցաւ։
15—Մորթիս վրայ քուրձ կարեցի,
Ու եղջիւրս †հողով ազատուեցի։
16—Երեսս լալէն ‖ուռեցաւ,
Ու աչքիս թարթիչներուն վրայ մահ-
ուան չուք կայ.
17—Թէև ձեռքերուս մէջ անօրէնու-
թիւն չկայ,
Ու աղօթքս մաքուր է։
18—Ով երկիր, իմ արիւնս մի ծած-
կեր,
Ու աղաղակիս տեղ չըլլայ։
19—Հիմա ալ ահա իմ վկաս երկինքին
մէջ է,
Ու վաստաբանս բարձր տեղերն է։
20—Զիս ծաղր ընողները իմ բարեկամ-
ներս են.
Աչքերս Աստուծոյ առջև արցունք կը
թափեն։
21—Երանի՛ թէ մարդ կարենար Աս-
տուծոյ հետ վիճաբանիլ,
Ինչպես մարդ իր ընկերին հետ։
22—Վասն զի քիչ տարիներ անցնելէն
ետքը՝
Այնպիսի ճամբայ մը պիտի երթամ,
ուրկէ ա՛լ պիտի չդառնամ։

Գլ. ԺԷ

Շունչս կը նուազի, օրերս կը մարին,
Գերեզմանը ինծի կը պատրաստ։
2—Չէ՞ որ ծաղր ընողներ կան իմ քովս,
Ու աչքս անոնց վիճամարտովը գիշերը
կ՚անցնի։
3—Աղէ, քու քովդ ինծի երաշխաւոր
մը դիր.
Ո՞վ կայ որ իմ ձեռքս բռնէ։
4—Վասն զի դուն խելամտութիւնը ա-
նոնց սրտին ծածկեցիր,
Անոր համար պիտի չբարձրացնես զա-
նոնք։
5—Ով որ էր *բարեկամները կողոպ-
տելու կը մատնէ՝
Անոր տղոյը աչքերը պիտի նուազին։
6—Զիս ժողովուրդներուն առակ ըրաւ.
Անոնց առջև զրուկի նման եղայ։
7—Նաև աչքերս արտօրէն չեն լացած,
Ու մարմինս բոլոր անդամները չուփ պէս
եղան։
8—Ուղիղները այս բանին վրայ պիտի
զարմանան,
Ու անմեղները պիտի արթննան հէդ-
ծաւարին դէմ։
9—Ու արդարը հաստատ պիտի կենայ
իր ճամբուն մէջ,
Եւ մաքուր ձեռք ունեցողը երթալով
պիտի զօրանայ։
10—Բայց դուք ամէնդ ալ դարձէք
ու եկէք,
Վասն զի ձեր մէջ իմաստուն չեմ
գտներ։

*Կամ, բարեկամներուն չղոքբրթու-
թիւն կ՚ընէ

11—Իմ օրերս անցան,
Իմ դիտաւորութիւններս — սրտիս
խորհուրդները խափանեցան։
12—Գիշերը ցօրվի փոխուեցաւ,
Ու լոյսը *խաւարին մօտեցաւ։
13—Միայն գերեզմանին կը սպասեմ,
որ իմ տունս պիտի ըլլայ։
Անկողինս մի՛ութեան մէջ փռեցի։
14—Ապականութեան ազգակիցս՝ ըս-
ըսվ, Դուն իմ հայրս ես։
Ես որդերուն՝ Դուք իմ մայրս ու
քոյրս եք։
15—Ես հիմա ո՞ւր է իմ յոյսս.
Իմ յոյսս ո՞վ պիտի տեսնէ։
16—Գերեզմանին առանձնութեանը մէջ
պիտի իջնէ,
Երբ մէկտեղ հողին մէջ հանգստանանք։

Գլ. ԺՐ

Այն ատեն Բաղդատ Սօփեցի պա-
տասխան տուաւ ու բսաւ,
2—Ո՞րբ այդ խօսքերը պիտի հաղցնէք.
Հասկցէք, ու անկէ ետքը խօսինք։
3—Ինչո՞ւ համար անասուններու պէս
համարուինք,
Ու աչքերնուդ առջև անմաքուր սեպ-
ուինք։
4—(Իր բարկութիւնովը զինք կը պա-
տառէ.)
Միթէ երկիր քեզի համար երեսի վրայ
պիտի ձգուի,
Ու ապառաժը իր տեղէն պիտի փո-
խադրուի՞։
5—Անշուշտ ամբարշտին լոյսը պիտի
մարի,
Ու անոր կրակին բոցը լոյս պիտի չտայ.
6—Անոր վրանին մէջ լոյսը պիտի խա-
ւարի,
Ու անոր ճրագը անոր վրայ պիտի
մարի։
7—Անոր զօրութեանը քայլերը նեղու-
թիւն պիտի կրեն,
Ու անոր խորհուրդը զանիկա գետինը
պիտի զարնէ։
8—Վասն զի իր ոտքերովը ուռկանի
մէջ պիտի բռնուի,
Ու ցանցի վրայ պիտի քալէ։

*Կամ, խաւարին առջևէն կարճ եղաւ

9—Վարսը ծոր գայթակղութեան պիտի
բռնէ,
Ու ասպառուն անոր պիտի յաղթէ։
10—Անոր համար գետնին մէջ թա-
կարդ պահուած է,
Ու ծոր ճամբուն վրայ որոգայթ։
11—Արհաւիրքը զանիկա ամէն կողմէն
պիտի պաշարէ,
Ու զանիկա իր ոտքերովը ապտին անդին
պիտի վազցնէ։
12—Անոր զօրութիւնը պիտի անօթե-
նայ,
Ու կորուստը անոր քովէ պատրաստ է։
13—Ու անոր մարմնին այժը պիտի ուտէ.
Մահուան առաջնեկը պիտի ուտէ անոր
այժը։
14—Անոր վստահութիւնը իր վրանէն
պիտի կորուի.
Ու անիկա դէպ ի զարհուրանաց թա-
գաւորը պիտի քշուի։
15—Անոր վրանին մէջ ը՛ր՛ե՛ւ պի-
տի բնակի, որ չ՚իրենը իրը
պիտի չըլլայ։
Ու անոր բնակարանին վրայ ծծումբ
պիտի ցանուի։
16—Անոր արմատները տակէն պիտի
չորնան,
Ու վերէն ճիւղերը պիտի կորուին։
17—Անոր վիշտակը երկրէ պիտի կոր-
սուի,
Ու անոր անունը հրապարակներուն մէջ
պիտի չգուցուի։
18—Անիկա լոյսէն խաւարը պիտի քշուի,
Ու անկից աշխարհէ պիտի վռնտուի։
19—Իր ժողովուրդին մէջ ոչ զաւակ
պիտի ունենայ և ոչ թոռ,
Ու անոր բնակութիւններուն մէջ մ՚ի՛կը
պիտի չմնայ։
20—*Ցեհիններէն անոր օրուանը վրայ
պիտի զարմանան,
Ու †առաջիններէն պիտի սոսկան։
21—Արդարև ամբարշտին բնակարան-
ները այսպէս պիտի ըլլան,
Ու զԱստուած չճանչցողին տեղը այս-
պէս է։

*Կամ, Արեւմուտք բնակողները
†Կամ, արեւելք բնակողները

ԳԼ. ԺԹ

Եւ Յոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Մինչև ե՞րբ հոգիս պիտի վշտացնէք,
Ու զիս խօսքերով պիտի ճնշէք։
3—Արդէն տասը անգամ է որ զիս կը մեղադրէք.
Չէք ամչնար ոչ ալ ինծի կ'ապշեցնէք։
4—Ու եթէ արդարև ես սխալեր եմ,
Իմ սխալմունքս իմ քովս կը մնայ։
5—Եթէ անպատճառ ամբարտաւանութեամբ խօսիլ կ'ուզէք ինծի դէմ,
Ու ամօթս երեսս զարնել,
6—Գիտցէք ուրեմն որ Աստուած կործանեց,
Ու իր ցանցը իմ վրաս դարձուց։
7—Ահա ինծի եղած անիրաւութեանը համար կ'աղաղակեմ, ու պատասխան տուող չկայ.
Կը բողոքեմ, բայց դատաստան չկայ։
8—Անիկա իմ ճամբաս գոցեց, այնպէս որ չեմ կրնար անցնիլ.
Իմ շաւիղներուս վրայ խաւար դրաւ։
9—Զիս իմ փառքէս մերկացուց,
Ու գլխէս թագը վերցուց։
10—Զիս ամէն կողմէ աւերեց, ու ես գացի,
Ու իմ յոյսս ծառի մը պէս արմատէն խլեց։
11—Անոր բարկութիւնը իմ վրաս բորբոքեցաւ,
Ու զիս իր թշնամիներուն կարգը դրաւ։
12—Անոր գունդերը միկտեղ եկան,
Ու ճամբանին ինծի դէմ պատրաստեցին,
Ու վրանիս բոլորտիքը բանակեցուն։
13—Անիկա իմ եղբայրներս ինծմէ հեռացուց,
Ու պրպտուելս ծանօթներս օտարացան ինծմէ։
14—Ազգականներս վար թողուցին,
Ու իմ ճանչցուրներս զիս մոռցան։
15—Իմ տունս բնակողները ու աղախիններս զիս անծանօթ մէկը սեպեցին,
Ո՛ն անոնց աչքին առջև օտարական եղայ։
16—Ծառաս կանչեցի, ու անիկա պատասխան չտուաւ,
Թէև բերնովս անոր աղաչեցի։
17—Իմ շունչս *տանէի եղաւ կնոջս,
Ու իմ աղաչանքներս՝ իմ մէջս գտնվայներուն որդիներուն։
18—Փոքր ազգն ալ զիս կ'անարգեն,
Ու երբ կ'ելլեմ, ինծի դէմ կը խօսին։
19—Բոլոր մտերիմ բարեկամներս ինծմէ զզուեցան,
Ու իմ սիրականներս ինծի դէմ դարձան։
20—Ոսկորներս մարմնիս ու մաշմնիս փական.
Մէ՛յն ակռաներուս կաշիովը ազատեցայ։
21—Ով իմ բարեկամներս, գութ ողորմեցէք ինծի,
Ողորմեցէք ինծի, քանզի Աստուծոյ ձեռքը ինծի դպաւ։
22—Ինչո՞ւ Աստուծոյ պէս զիս կը հալածեք,
Ու մարմինիս չէք կշտանար։
23—Երանի՛ թէ հիմա խօսքերս գրուէին,
Երանի՛ թէ գիրքի մը մէջ քանդակուէին.
24—Սրկաթէ գրիչով կապարի վրայ
Ո՛ր քարի վրայ յաւիտեան փորագրուէին։
25—Վասն զի գիտեմ որ իմ †փրկիչս ողջ է,
Ու անիկա վերջին ժամանակը պիտի ելլէ ‡երկրի վրայ.
26—Ու թէև մարմինս հատը այս ալ փճանայ,
Բայց իմ մարմնովս զԱստուած պիտի տեսնեմ,
27—Զոր ես ինծի համար պիտի տեսնեմ,
Ու իմ աչքերս պիտի դիտեն զանիկա, և ոչ թէ ուրիշը.
Երիկամունքներս իմ ներսիդիս կը հալին։
28—Պէտք կը ըսէիք, ինչո՞ւ կը հալածենք զանիկա.
Որովհետև բանին արմատը իմ վրաս գտնուեցաւ։
29—Սուրէն վախցէք. վասն զի բարկութեան պատիժը սուրն է,

*ԵԲԸ. օտար †Կամ, վկայիմ ‡ԵԲԸ. հողի

Որպէս զի գիտնաք թէ դատաստան կայ։

ԳԼ. Ի

Այն ատեն Սոփար Նաամացի պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Ասոր համար իմ խորհուրդներս ինծի պատասխանել կուտան,
Ու ասոր համար կ'արագամ։
3—Ձես խայտառակող յանդիմանութիւնը լսեցի,
Բայց իմ հոգիս *ըմբռնողութենէս պատասխան տալ կը տարփէ զիս։
4—Դուն տիկա գիտե՞ս որ ի յաւիտենից
Մարդուս երկրի վրայ դրուելէն ի վեր,
5—Անզգամին յաղթանակը քիչ ժամանակ կը տեւէ,
Ու կեղծաւորին ուրախութիւնը մէկ վայրկեանի համար է։
6—Թէև անոր փառաւորութիւնը մինչև երկինք ելլէ,
Ու գլուխը ամպերուն հասնի,
7—Իր աղբին պէս յաւիտեան պիտի ոչնչանայ
Ու զինք տեսողները պիտի ըսեն, Ո՞ւր է անիկա։
8—Երազի պէս պիտի թռչի ու պիտի չգտնուի.
Ու գիշերուան ցնորքի պէս պիտի փախչի,
9—Զանիկա տեսնող աչքը ա՛լ պիտի չտեսնէ.
Ու անոր բնակած տեղը ա՛լ պիտի չնայի անոր,
10—Անոր զաւակները *ազգատներէն չնորհք պիտի խնդրեն,
Ու անոր ձեռքերը իր †յափշտակածը հատ պիտի տան.
11—Անոր ոսկորները իր ‡երիտասարդութեան ուժովը լեցուն են.
Ու անոր հետ հողին մէջ պիտի պառկին,
12—Եթէ անզգամութիւնը անոր բերնին մէջ քաղցր է,

*ԵԲԸ. ազգատները պիտի հաճեցնեն †Կամ, հարստութիւնը ‡Կամ, ծածուկ

Եւ եթէ իր լեզուին տակ կը պահէ զանիկա,
13—Եթէ զանիկա խնայէ ու չձգէ,
Ու իր բերանին մէջ պահէ զանիկա,
14—Կերակուրը անոր աղիքներուն մէջ պիտի փոխուի,
Անոր ներսիդին քորրի լեղի պիտի ըլլայ։
15—Անիկա հարստութիւններ կուլ տուաւ, բայց պիտի փսխէ զանոնք.
Ո՛ն Աստուած անոր փորէն դուրս պիտի հանէ զանոնք։
16—Անիկա քորրին թոյնը պիտի ծծէ,
Ո՛ն զանիկա իժի լեզուն պիտի սպանէ։
17—Անիկա պիտի չտեսնէ վտակները,
Մեղրի ու կովի հեղեղներուն գետերը։
18—Իր ապրատանքով վաստկածը հատ պիտի տայ ու պիտի չկլլէ,
Ու հատ տուածը էր հարստութեանը չափ պիտի ըլլայ,
Ո՛ն վրդ պիտի չուրախանայ։
19—Որովհետև աղքատները ճնշեց ու երեսի վրայ թողուց,
Ու իր չշինած տունը յափշտակեց.
20—Անշուշտ իր ներսիդին խաղաղութիւն պիտի չգտայ,
Ու ցանկացածը պիտի չկրնայ ազատել։
21—Անոր ուտելոյ բան մը պիտի չմնայ,
Անոր համար անոր յաջողութիւնը հաստատ պիտի չըլլայ։
22—Առատութեամբ լեցուն եղած ժամանակն ալ նեղութեան մէջ պիտի ըլլայ.
Թշուառութեան մէջ եղողներուն ամէն *հարուածը անոր վրայ պիտի գայ։
23—Երբ փորը կշտացնելու վրայ կ'ըլլայ,
Աստուած իր սաստիկ բարկութիւնը անոր վրայ պիտի տրկէ,
Ու անձրևի պէս անոր վրայ պիտի թափ֊ֆէ՝ կերակուր ուտելու տանելը։
24—Երկաթէ զէնքին առջեւէն փախած տանելը
Պղնձէ աղեղը զանիկա պիտի խոցէ։
25—Անոր դէմ արձակուածը մարմինը պիտի թափանցէ,
Ու փայլուն սէգը անոր մաղձէն ներս իջնէ.

*ԵԲԸ. ձեռքը. տես գլ. իգ. 2։

Անոր վրայ արհաւիրք պիտի գայ,
26—Բոլոր խաւարը անոր գաղտուկ տեղերը պիտի պահուի.
Զինչուած կրակը զանիկա պիտի լափէ.
Անոր վրանը մնացողը *ապերջանիկ պիտի ըլլայ՝։
27—Երկինք անոր յանցանքը պիտի յայտնէ,
Երկիրը ալ անոր դէմ պիտի ելլէ։
28—Անոր տունը եկամուտը պիտի յափշտակուի,
Ահեղ բո՜ն պիտի անցնի Աստուծոյ բարկութեան օրը։
29—Ասիկա է ամբարիշտ մարդուն բաժինը ըլլալ Աստուծմէ՝ է՜ն ո՜ն,
Եւ ասիկա է այն ժառանգութիւնը զոր Աստուած անոր համար ասհմանած է։

ԳԼ. ԻԱ

Եւ Յոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Խօսքս ադէկ մտիկ ըրէք,
Ու այս ըլլայ ձեր մխիթարութիւնը։
3—Ինծի համբերեցէք ու ես խօսիմ,
Ու խօսելէս ետքը ծաղր ըրէք։
4—Միթէ ես մարդո՞ւ հետ կը վիճիմ.
Եւ ինչո՞ւ համար հոգիս չտրտմի։
5—Ինծի նայեցէք ու սպիեցէք,
Ու բերաննուդ վրայ ձեռք դրէք։
6—Այո՛ բո՜ներէս մնացածով կը զարհուրիմ,
Ու մարմինս կը սկսի դողալ։
7—Ամբարիշտները ինչո՞ւ կ'ապրին.
Կը ծերանան ու խիստ կ'ուժեղանան,
8—Անոնց սերունդը իրենց հետ կը հաստատուի իրենց առջեւ.
Եւ անոնց զաւակները աչքերնուն առջեւ,
9—Ցուներնին խաղաղութեան մէջ է ու վախ չունի,
Եւ Աստուծոյ գաւազանը անոնց վրայ չէ։
10—Անոնց ցուլը կը զուգաւորուի ու դատարկը չելլեր.
Կովը իր ծիծը կը ծնանի ու չվիժեր։
11—Իրենց պզտիկները ոչխարի հօտի պէս կը հանեն.
Ու անոնց տղաքը ուրախութե՜մբ կը ցատկտեն.
12—Թմբուկով ու քնարով երգ կը վերցնեն,
Ու սրինգին ձայնովը ուրախ կ'ըլլան։
13—Անոնք օրերնին զուարճութիւնով կ'անցնեն,
Ու մէկ վայրկեանի մէջ գերեզմանը կ'իջնեն։
14—Եւ Աստուծոյ կ'ըսեն,
Հեռացի՛ մեզմէ,
Վասն զի քու ճամբաներդ գիտնալ չենք ուզեր.
15—Ամենակարողը ո՞վ էր, որ անոր ծառայենք.
Ու եթէ անոր աղօթք ընենք, ի՞նչ օգուտ պիտի ունենանք։
16—Ահա անոնց բարիքը ձեռքերնին չէ.
Ամբարիշտին խորհուրդը ինծմէ հեռու ըլլայ։
17—Ամբարիշտներուն ճրագը քանի՛ անգամ կը մարի,
Ու աոադապատը անոնց վրայ կու գայ.
Աո՜ո՜ծ իր բարկութիւնովը անոնց ցաւեր կը բաժնէ։
18—Հովին առջեւ եղած չարդին պէս
Ու մրրիկին յափշտակած չիւղին պէս կ'ըլլան։
19—Աստուած անոր անիրաւութիւնը անոր որդիներուն կը պահէ.
Անոր մոխարէն պիտի հատուցանէ, ու ան ալ պիտի գիտնայ։
20—Անոր աչքերը իր կորուստը պիտի տեսնեն,
Ու Ամենակարողին բարկութենէն պիտի խմէ։
21—Անկա ի՞նչ զուարճութիւն պիտի ունենայ իրմէ ետքը մնացած տունէն,
Որովհետեւ իր ամիսներուն թիւը կիսուած է։
22—Միթէ Աստուծոյ գիտութիւն սորվեցնել հնա՞ր է,
Անոր՝ որ բարձրերը կը դատէ։
23—Մէկը կը մեռնի իր առաւգութեան մէջ
Բոլորովին հանգարտ և հանգիստ.
24—Անոր *գոմերը ճարպով՝ լեցուն են,
Ու ոսկորներուն ծուծը թարմ է։

*Կամ, պիտի սպառի

25—Ու մէկ ուրիշը կը մեռնի հոգիի ցաւով
Ու առանց բարիքով կ'ուտանալու.
26—Ա՛մ՜ոյ՜ն էլ՜ո՜ւթ մէկտեղ հողին մէջ կը պառկին,
Ու *շիդերը կը ծածկեն զանոնք։
27—Ահա գիտեմ ձեր խորհուրդները,
Ու ինծի դէմ հնարած անիրաւութիւնները։
28—Վասն զի կ'ըսէք, Ո՞ւր է նախարարին տունը,
Եւ ո՞ւր է ամբարիշտներուն բնակած վրանը։
29—Ճամրորդներուն չհարցուցի՞ք,
Ու անոնց նշանները չէ՞ք հականար։
30—Վասն զի չարը կորստեան օրուան կը պահուի,
Ու բարկութեան օրուան կը տարուի։
31—Անոր երեսին դէմ ո՞վ պիտի յանդիմանէ անոր ճամբան.
Եւ անոր ըրածին փոխարէնը ո՞վ անոր պիտի հատուցանէ։
32—Բայց ան ալ գերեզմանը պիտի տարուի,
Ու տապանին մէջ պիտի մնայ։
33—Ձորին հողի կուչերը անոր անոյշ պիտի գան,
Ու ամէն մարդ անոր ետեւէն պիտի երթայ.
Իսկ անոր առջեւէն չ*ոգո՜ն էրթո՜ն հաչիւը չկայ։
34—Ուրեմն ի՞նչպես փուճ մխիթարութիւններ կու տաք ինծի.
Որովհետեւ ձեր պատասխաններուն մէջ սուտութիւն կայ։

ԳԼ. ԻԲ

Այն ատեն եղիփազ Թեմանացի պատասխան տուաւ՝ ըսաւ,
2—Մի՞թէ մարդը կրնա՞յ Աստուծոյ օգտակար ըլլալ։
Խելացի մարդը միայն իրեն օգուտ կ'ընէ։
3—Ամենակարողին հաճութիւն մը կ'ընե՞ս եթէ արդար ըլլաս,
Կամ շա՞հ մը՝ եթէ քու ճամբաներդ չիակեա՞ս։
4—Միթէ քեզմէ վախնալով քեզի հետ վիճաբանութիւն կ'ընէ՞.
Քեզի հետ դատաստանի կը մտնէ՞։
5—Չէ՞ որ քու անզգամութիւնդ մեծ է,
Ու անօրէնութիւններդ անհամար են։
6—Որովհետեւ եղբայրներէդ առանց պատճառի գրաւ առիր,
Ու մերկերուն հանդերձները յափշտակեցիր։
7—Ծարաւածին չուր չխմցուցիր
Ու հացը անօթիէն խնայեցիր։
8—Բայց երկիր զօրաւորինն էր,
Ու անոր մէջ պատուաւորը կը բնակէր։
9—Որբերուն կիները դատարկ զրկեցիր,
Ու որբերուն թեւերը կոտրեցան։
10—Անոր համար քու բոլորտիքդ որոգայթներ չո՜ւ՜ռ՜ն են,
Ու յանկարծական վախը քեզ կը զարհուրեցնէ։
11—կամ *խո՜ւ՜ր խաւար մը չէ՞ք տեսնել,
Ու ջուրերուն չառաւելութիւնը քեզ կը ծածկէ։
12—Աստուած երկինքի խիստ բարձր տեղը չէ՞.
Հիմա աստղերուն *բարձրութեանը նայէ՝ ո՛րչափ բարձր են։
13—Ու դուն ըսիր,
Ի՞նչ գիտէ Աստուած,
Մառախուղին միջէն դատաստա՞ն պիտի ընէ.
14—Ամպերը անոր առջեւ ծածկոյթ են, ու չտեսներ.
Եւ անկա երկինքի կամարին վրայ կը պտտի։
15—†Ուշադրութիւն ըրի՞ր այն ‡հին ճամբային՝
Որ անօրէն մարդիկը պատեցան.
16—Որոնք յանկարծակի յափշտակուեցան,
Որոնց հիմերը հեղեղը ընկղմեց։
17—Անոնք կ'ըսէին Աստուծոյ, Հեռացիր մեզմէ։
Ու Ամենակարողը ||մեզի ի՞նչ պիտի ընէ.
18—Թէև անոնց տունը բարութիւնով լեցուցեր էր.
Անզգամներուն խորհուրդը ինծմէ հեռու ըլլայ։

*Եբր. գլուխն
†Կամ, Պիտի հետեւիմ
‡Կամ, Հին աշխարհին ճամբային
||Եբր. անոնց

19—Արդարները պիտի ուրախանան և ուրախ ըլլան,
Եւ անմեղները զանոնք ծաղր պիտի ընեն՝ ըսելով,
20—Մեր թշնամիները կորսուած չէ՞ն,
Ու անոնց մնացորդը կրակը չիերա՞ւ։
21—Աղէ, Անոր հետ բարեկամ եղիր, ու խաղաղութիւն ունեցիր։
Ու ասկէ քեզի օգուտ կ'ըլլայ։
22—Անոր բերնէն օրէնքը ընդունէ,
Ու անոր խօսքերը սիրտդ դիր։
23—Եթէ Ամենակարողին դառնաս, դուն պիտի *հաստատուիս.
Անօրէնութիւնը քու վրանիերէդ հեռացուր։
24—Ու ոսկին հողին *փոխ պիտի դնես,
Ու Ոփիրի ոսկին՝ հեղեղատներու քարերուն *փոխ։
25—Եւ Ամենակարողը քու ոսկեդ ըլլալով՝
Քու զօրութեանդ արծաթը պիտի ըլլայ։
26—Վասն զի այն ատեն Ամենակարողին ուրախութիւն պիտի ունենաս
Ու երեսդ դէպ ի Աստուած պիտի վերցնես։
27—Անոր պիտի աղաչես, ու քեզի պիտի լսէ.
Եւ քու ուխտերդ պիտի կատարես։
28—Եթէ դիտաւորութիւն մը ունենաս՝ քեզի պիտի յաջողի,
Ու ճամբաներուդ վրայ լոյս պիտի ճառագայթէ։
29—Երբ ձիը ցածնայ, ու դուն ըսես *Թող բարձրանայ՝
Այն ատեն պիտի ազատէ զանիկա՝ որ աչքերով խոնարհած էր։
30—Անմեղ չեղողն ալ պիտի ազատէ,
Ու քու ձեռքերուդ մաքրութիւնովը պիտի ազատուի։

Գլ. ԻԹ

Եւ Յոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Ա՛յսօր ալ իմ դանգատս դառն է,
‖Հարուածս հառաչանքէս ծանր է։

3—Երանի՛ թէ կարող ըլլայի գտնել զանիկա,
Մինչև անոր աթոռը կ'երթայի։
4—Իմ դատս անոր առջև կը տարածէի,
Ու բերանս փաստերով կը լեցնէի։
5—Կը գիտնայի թէ ինծի ի՛նչ պատասխան կու տար,
Ու կը լսէի ինչ որ ինծի կ'ըսէր։
6—Մեծ ուժին չափութիւնովը ինծի հետ պիտի վիճէ՞ր։ ոչ.
Հապա ինք ինձ պիտի զօրացնէր։
7—Ուղիղ մարդը հոն կրնայ վիճաբանել անոր հետ.
Ու ես յաւիտեան իմ Դատաւորէս կ'ազատուէի։
8—Բայց ահա դէպ ի արեւելք կ'երթամ, ու անիկա չերեւնար,
Եւ դէպ ի արեւմուտք՝ ու զանիկա չեմ նշմարեր.
9—Դէպ ի հիւսիս կ'երթամ, ուր ինք կը գործէ,
Բայց զանիկա չեմ կրնար դիտել.
Հարաւային կողմը կը պահուի,
Ու չեմ կրնար տեսնել զանի՛կա։
10—Իսկ անիկա գիտէ իմ ճամբաս.
Երբ ինք զիս փորձէ, ոսկիի պէս պիտի ելլեմ։
11—Ոտքս անոր քայլերուն վրայ հաստատեցայ,
Անոր ճամբան պահելով՝ չմոլորեցայ։
12—Անոր շրթունքներուն պատուիրանքներէն չդատուեցայ.
Անոր բերնին խօսքերը իմ պիտոյքես աւելի պահեցի։
13—Բայց անիկա մէկ միտքի վրայ է,
Եւ ո՞վ կրնայ զանիկա դարձնել.
Ու որուն ուզածը կ'ընէ։
14—Ուրեմն ինծի համար ահմնանուածը պիտի կատարէ։
Ու ասոր պէս շատ բաներ կան անոր քով։
15—Անոր համար անոր ներկայութենէն կը շփոթիմ,
Ո՛ր երբ կը մտածեմ, անկէ կը վախնամ։
16—Վասն զի Աստուած սիրտս կը կատկըղձնէ,
Ու Ամենակարող զիս կը շփոթէ,
17—Որովհետև ես ընդ՚՚՚

Գլ. Ի

Եւ բաղդատ Սօքեցի պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Իշխանութիւնը ու վախը անոր քովն են,
Իր բարձր տեղերուն մէջ խաղաղութիւն կ'ընէ,
3—Անոր գունդերուն համրանքը կա՞յ արդեօք,
Ու անոր լոյսը որո՞ւ վրայ չծագիր,
4—Ուրեմն մարդը ի՞նչպէս պիտի արդարանայ Աստուծոյ առջեւ,
Ու կնոջմէ ծնածը ի՞նչպէս կրնայ մաքուր ըլլալ՝
5—Ահա լուսինն ալ լոյս չտար,
Ու Անոր աչքերուն առջեւ աստղերն ալ մաքուր չեն.
6—Ալ ո՞ւր կը մնայ մարդը՝ որ որդն է,
Ու մարդու որդին՝ որ ճճի մըն է։

Գլ. ԻԶ

Այն ատեն Յոբ պատասխան տուաւ ու ըսաւ,
2—Ցկարին ի՞նչ լաւ օգնութիւն ըրիր,
Ե՛ այժ չունեցող բազուկը ի՞նչպէս զօրացուցիր։
3—Անխելքին ի՞նչ խրատ տուիր,
Ու ի՞նչ չատ իմաստութիւն յայտնեցիր։
4—Դուն որո՞ւ խօսք ըրիր այս խօսքերը,
Ու որո՞ւն շունչը ելաւ քեզմէ։
5—Ոգիները վաքէն կը դողան,
Նո՛ւ ջուրերը ու անոնց բնակիչները։
6—Դժոխքը բաց է Անոր առջեւ,
Ու կորուստը անծածկելի է։
7—Անիկա հիւսիսը պարապ տեղին վրայ կը տարածէ,
Ու երկիրը ոչնչին վրայ կը կախէ։
8—Ջուրերը իր մութ ամպերուն մէջ կը ծրարէ.
Ու անոնց տակէն ամպը չպատռիր։
9—Իր աթոռին երեսը կը պահէ,
Անոր վրայ իր ամպը կը տարածէ։
10—Ջուրերուն երեսին վրայ ամէն կողմին սահմաններ դրաւ
Մինչեւ լոյսին ու խաւարին ծայրը։
11—Երկինքի սիւները կը սարսին,
Ու անոր յանդիմանութենէն կ'ապշին։
12—Իր զօրութիւնովը ծովը *կը խաղաղեցնէ,
Ու իր գիտութիւնովը հպարտութիւնը կը զարնէ։
13—Իր Հոգիովը երկինքը զարդարեց.
Անոր ձեռքը փախչող վիշապը սեղմեց։
14—Ահա սոսկք են անոր ճամբանեբուն ծայրերը,
Բայց անոր վրայով լսածնիս ո՛րչափ փչ է.
Եւ ո՞վ կրնայ իմանալ անոր զօրութեանը որոտումը։

Գլ. ԻԸ

Եւ Յոբ դարձեալ իր առակը սկսելով՝ ըսաւ,
2—Իմ իրաւունքս մէկդի դնող Աստուածը
Ու հոգիս դառնութեամբ լեցնող Ամենակարողը կենդանի է.
3—Քանի որ շունչս վրաս է,
Ու հնգունգներուս մէջ Աստուծոյ հոգին կայ,
4—Շրթունքներս անիրաւ բան մը պիտի չզրուցեն,
Ու լեզուս նենգութիւն պիտի չխօսի։
5—Քա՛ւ լինի՝ որ ձեզ արդարացընեմ.
Մինչեւ մեռնիլս իմ ուղղութիւնս ձեռքէ պիտի չձգեմ։
6—Իմ արդարութիւնս հաստատ բռներ եմ, ու զանիկա պիտի չթողում,
Ո՛ր կեանքիս †մէջ սիրտս բնաւ պիտի չյանդիմանէ։
7—Իմ թշնամիս ամբարշտի պէս ըլլայ,
Ու ինծի դէմ եղողը անզգամի պէս։
8—Քանզի կեղծաւորին յոյսը ի՞նչ է,
(էթէև հարստութիւն ալ դիզած ըլլայ՝)
երբ Աստուած անոր հոգին առնէ։
9—Միթէ Աստուած անոր աղաղակը պիտի լսէ,
երբ անոր վրայ փորձանք գայ։
10—Անիկա Ամենակարողին վրայ պիտի ուրախանա՞յ.

*Կամ, կը յանդիմանէ
†Կամ, հանար էԿամ, երբ մեռանի

Գլ. ԻԹ

Աբդաւև արծաթը էր երակը ունի,
Ու ոսկին էր զատելու տեղը։
2—Երկաթը հողէն կ'առնուի,
Հանքը կը հալի ու պղինձ կ'ելլէ։
3—Մարդը խաւարին վախան կը դնէ,
Ու ամէն բան կատարելապէս կը քննէ,
Նաև ծածուկ պահուած քարերը՝ որոնք մահուան սուսերին մէջ են։
4—Իր բնակած տեղին քովէն փոս կը բանայ.
Ոտք չկոխած կը կախուին,
Ո՛— մարդոցմէ հե՛ռու կ'երերան։
5—Երկրէ հաց կ'ելլէ,
Ու անոր տակ կրակի նման բռնէր կը գոռնուին.
6-Անոր քարերը շափիւզաներու տեղ են,
Ու հոն ոսկի աւազ կայ։
7—Ծափշտակող թռչունը անոր չափը չճանչցաւ,
Ու անգղին աչքը զանիկա չտեսաւ։
8—*Վայրենի գազանները՝ հոն ոտք կոխած չեն.
Առիւծը անկէ անցած չէ։
9—Մարդը իր ձեռքը կ'երկնցնէ ապառաժներուն,
Ու լեռները հիմնն կը տապալէ։
10—Ապառաժները ջեղքելով՝ անոնց ներքեւ վտակներ կ'անցնէ.
Ու ամէն թանկագին բաները անոր աչքը կը տեսնէ։
11—Գետերը վազելէն կ'արգիլէ,
Ու գաղտուկ եղածը երեսն կը հանէ։
12—Բայց իմաստութիւնը ո՞ւր կը գտնուի,
Ու հանճարին տեղը ո՞ւր է։
13—Մարդը անոր յարգը չգիտեր.
Ու կենդանիներուն երկրին մէջ չգտնուիր։
14—Անդունդը կ'ըսէ, Անիկա իմ մէջս չէ.
Ու ծովը կ'ըսէ, Իմ քովս չէ։
15—Ջուա ոսկիով ծախու չառնուիր,
Ու անոր արժէքին համար արծաթ չկշռուիր։
16—Ոչ Ոփիրի ոսկիով կը փոխուի,
Ամէն ժամանակ Աստուծոյ պիտի ազաղակէ՞,
11—Աստուծոյ ձեռքին մէջ եղածը ձեզի պիտի սորվեցնեմ.
Ամենակարողին քով եղածը պիտի չծածկեմ։
12—Ահա դուք ամէնդ ալ տեսաք,
Ու ինչո՞ւ այդպէս բոլորովին ունայնացիր եք։
13—Ահիկա է ամբարիշտ մարդուն բաժինը Աստուծոյ առջեւ,
Ու բռնաւորներուն ժառանգութիւնը.
14—Եթէ անոր ազգքը շատնան, սուրի համար է.
Ու անոր սերունդը հացով պիտի չկըշտանայ։
15—Անոր մնացորդները մահուամբ պիտի թաղուին,
Բայց անոր որբեւարիները պիտի չլան։
16—Թէև հողի պէս արծաթ դիզէ,
Ու տիտի պէս հանդերձներ պատրաստէ,
17—Անիկա պիտի պատրաստէ, բայց արդարը պիտի հագնի,
Ու անմեղը արծաթը պիտի բաժնէ.
18—Իրեն տուն մը կը չինէ ցեցի պէս,
Ու *պէէի պահապանին չինած խրճիթին պէս։
19—Հարուստը կը պառկի ու չսիփոփուիր։
*Աչքերը կը բանայ ու՝ ոչինչ կ'ըլլայ։
20—Արհաւիրքը ջուրերու պէս անոր պիտի հասնի.
Գիշերով փոթորիկը պիտի յափշտակէ զանիկա։
21—Արեւելեան հովը պիտի քշէ զանիկա, ու ան պիտի երթայ.
Ու փոթորիկի պէս զանիկա իր տեղէն պիտի վերցնէ։
22—Ա՛ստ—ուծոյ էր Նէոթը անոր դէմ պիտի նետէ, ու պիտի չխնայէ.
Ա՛ստ—ւ անոր ձեռքէն փախչելու պիտի ջանայ։
23—Անոր համար ծափ պիտի զարնեն,
Ու անոր եղած տեղէն անոր դէմ պիտի սուլեն։

*Կամ, Ակնթարթի մէջ

*Եբր. Հպարտութեան որդիները

Ոչ–Լ պատուական եղնգնաքարով ու
չափիւղայով։
17—Ոսկին ու ակնվանին չեն կրնար
անոր հատասարիլ.
Ու զուտ ոսկիէ ամանները անոր փոխա-
նակ չեն ըլլար։
18—Բուսան ու բիւրեղը անոր դէմ չեն
յիշուիր,
Ու իմաստութեան գինը *յակինթներու
գէմէն աւելի բարձր է։
19—Եթէ ոսկեփայլ ապակիներն գինը ա-
նոր հատասար չըլար,
Ու զուտ ոսկիով չփոխուիր։
20—Ուրեմն իմաստութիւնը ուրկէ՞ կու
գայ,
Ու հանճարին տեղը ո՞ւր է.
21—Որովհետև բոլոր ապրողներուն աչ-
քերէն ծածկուած՝
Ու երկինքի թռչուններէն պահուած է։
22—Կորուստը ու մահը կ'ըսեն,
Մենք անոր համբաւը մեր ականջներով
լսեր ենք։
23—Անոր ճամբան Աստուած կը հաս-
կընայ,
Ու անոր տեղը ինք գիտէ։
24—Քանզի մինչև երկրի ծայրերը կը
նայի,
Ո– բոլոր երկինքի տակ եղածը կը տես-
նէ։
25—Երբ հովին կշիռ կը դնէր
Ու ջուրերը չափով կը չափէր,
26—Երբ անձրեւին օրէնք՝
Ու որոտումներուն փայլակին ճամբայ
կ'որոշէր,
27—Այն ատեն տեսաւ զանիկա ու
յայտնեց,
Պատրաստեց զանիկա ու նաև քննեց.
28—Ու մարդուն բսաւ, Ահա Տէրոջը
վախն է իմաստութիւնը,
Ու չարութենէ հեռանալը հանճարն է։

ԳԼ. ԻԹ

Եւ Յոբ նորէն իր առակը սկսելով՝
բսաւ,
2—Երանի՛ թէ առաջին ամիսներուն պէս,
Աստուծոյ զիս պահած օրերուն պէս
ըլլայի.

*կամ, բուստերու

3—Երբ անոր ճրագը իմ գլխուս վրայ
լոյս կու տար,
Ու ես խաւարի մէջ անոր լուսովը կը
քալէի.
4—Երիտասարդութեանս օրերը եղա-
ծիս պէս՝
Երբ Աստուծոյ մտերմութիւնը իմ վրա-
նիս մէջ էր.
5—Երբ Ամենակարողը տակաւին ինծի
հետ էր,
Ո– տղաքս իմ բոլորտիքս էին,
6—Երբ իմ ճամբաներս կոգիով կը
թրջէին,
Ու ապառաժէն ինծի համար ձէթի հե-
զեղներ կը վազէին,
7—Երբ դռնէն քաղաքը կ'ելլէի,
Ու աթոռս հրապարակին մէջ կը դնէի,
8—Երիտասարդները զիս տեսնելով կը
պահնէին,
Ու ծերերը ոտք կ'ելլէին կը կայնէին.
9—Իշխանները խօսելէն կը դադրեցնին,
Ու ձեռքերնին իրենց բերնին վրայ կը
դնէին.
10—Ազնուականներուը ձայներնին կը
կորչէին,
Անոնց լեզուն իրենց քիմքին կը փակչէր.
11—Ինձի մտիկ ընող ականջը երանի՛
կ'ըսէր ինծի,
Ու զիս տեսնող աչքը վկայութիւն կու
տար ինծի.
12—Վասն զի ես ազատկող աղքատը
Եւ որբը ու օգնութիւն չունեցողը կ'ա-
զատէի.
13—Կորստեալը վրայ եղողին օրհնու-
թիւնը վրաս կու գար,
Ու որբեւայրին սիրտը կ'ուրախացնէի.
14—Արդարութիւն կը հագնէի, անիկա
էր իմ հանդերձս.
Ո– դատաստանը ինծի պատմուճանի ու
խայրի պէս էր։
15—Կոյրին աչքեր էի,
Ու կաղին ոտքեր.
16—Աղքատին հայր էի,
Ու չգիտցած դատաստանս կը քննէի.
17—Անիրաւին ժանիքը կը կոտրէի,
Ու անոր ակռաններէն որսը կը խլէի.
18-Ու կ'ըսէի, Բոյնիս մէջ պիտի մեռնիմ,
Եւ օրերս աւազի պէս պիտի չատցնեմ.
19—Արմատս դէպ ի ջուրերը կը տա-
րածուէր,

Ու ցօղը բոլոր գիշերը ոտքերուս վրայ էր։
20—Փառքս իմ վրաս կը նորոգուէր,
Ու աղեղս ձեռքիս մէջ կ'ուժգնար։
21—Ինծի մտիկ կ'ընէին ու կը
սպասէին,
Ու երբ իմ խորհուրդս կ'ըսէի՝ լուռ կը
կենային.
22—Իմ զրուցելէս ետքը անոնք չէին
կրկներ,
Ու իմ խօսքս անոնց վրայ կը կաթէր.
23—Անձրեւի *ուսուցը պէս ինծի կը
սպասէին,
Ու վերջին անձրեւին †ֆոֆուրը պէս
բերաննին կը բանային։
24—Եթէ անոնց վրայ խնդալի՝ չէին
հաւատար,
Ու երեսիս լոյսը չէին կրնար արհամար-
հել։
25—Անոնց ճամբաները ընտրելով՝ իշ-
խան կը նստէի,
Եւ էր զօրքին մէջ եղող թագաւորի մը
պէս՝
Ու սգաւորներուն մխիթարիչի մը պէս
կը բնակէի։

ԳԼ. Լ

Բայց հիմա տարիքով ինծմէ պզտիկ
եղողները զիս ծաղր կ'ընեն,
Որոնց հայրերը հօտերուս չուներուն հետ
դնելու չէի հաճեր
2—Նաև անոնց ձեռքերուն այժը ինծի
ի՞նչ օգուտ ունէր.
Անոնց առուգութիւնը կորստած էր։
3— Զքաւորութենէ ու անօթութենէ
նիհարացեր էին,
Ու անապատը, մթին, աւերակ ու վայ-
րի տեղերը, կը փախչէին։
4—Իրենց կերակուրին համար մացառ-
ներուն քովի *մոլոշները կը քա-
ղէին,
Ու գիհիի արմատ կը ֆողվէին։
5—Մ՚ըտ՚ոց մէջէն կը վռնտուէին.
Ու անոնց ետեւէն գոռի նետի պոռալու
պէս կը պոռային։
6—Սոսկալի ձորերու մէջ կը բնակէին,
Հողի ու ապառաժներու ծակոտիքներուն
մէջ։

*կամ, փըփրեմներըը

7—Մացառներուն մէջ կը կանչուըռ-
ային,
Եղինձներուն տակ կը ժողվուէին։
8—Ցիմար ու անունսն մ՚ըտ՚ոց զաւակ-
ներ ըլլալով՝
Երկրէն կը վռնտուէին։
9—Ու հիմա ես անոնց խաղը՝
Նաև անոնց առակը եղեր եմ։
10—Ինծմէ գարշելով կը հեռանան
ինծմէ,
Ու երեսիս թուքը չեն խնայեր։
11—Որովհետև իմ կապս թուլցնելով՝
զիս նեղից,
Անոնք իմ առջեւս երասանակը թող
տուին։
12—Ա՛ջ կողմս լակառներ կ'ելլեն,
Անոնք ոտքերս կը հրեն,
Ու ինծի դէմ իրենց կորստեան ճամ-
բաները կը պատրաստեն։
13—Անոնք չուխիներս կ'աւերեն, վիշաս
կ'աւելցնեն.
*Ու անոնց դէմ ՚ինձի օգնութիւն ընող
մը չկայ։
14—Լայն խրամատէ մը ֆալ՚ս պէս կը
յարձակին,
Աւերակներուն տակէն վրաս կը դիմեն։
15—Արհաւիրքները իմ վրաս գարձան,
Ու հովի պէս իմ պատիւս կը հալածեն.
Ու ապաստութիւնս ամպի պէս անցաւ։
16—Եւ հիմա հոգիս իմ ներսիդիս կը
հալի.
Տրամութեան օրերը զիս պաշարեցին։
17—Իմ ցաւս գիշերանց ոսկորներս ծա-
կեց,
Ու ջիղերս հանգստութիւն չունեցան։
18—Իր մեծ զօրութիւնովը իմ հան-
դերձս փոխեց,
Ու իմ պատմուճանիս օձիքին պէս պա-
տեց զիս։
19—Ձիս ցեխին մէջ նետեց,
Ու ես հողի ու մոխիրի նմանեցայ։
20—Ես քեզի կ'աղաղակեմ, ու ինծի
պատասխան չես տար.
Կը կայնիմ, ու դուն ինծի ուշագրու-
թիւն †չես ըներ՝։
21—Դուն ինծի անգութ ‡եղար,

*կամ, Աստուծոյ մէկուն անունց օգնե-
լուն †կամ, կ'ընէ՞ս
‡Եբր. փոխուեցար

Զեռքիդ զօրութիւնովը թշնամին պէտ
կը վարուիս ինծի հետ։
22—Չիս վերցնելով հողին վրայ կը
հնծացնես,
Ու զիս բոլորովին կը հալեցնես։
23—Ուստի գիտեմ որ զիս մահուան
պիտի տանիս,
Ու տուն ապրողներուն համար սահման-
ուած տաներ։
24—*Բայց Անիկա ափերմանդին վրայ
ձեռք պիտի չերկնցնէ,
Եթէ կորաման տան անոր ազաչէն"։
25—Դժբաղդութեան մէջ եղողին հա-
մար չէ՞ լար.
Ազքատին համար հոգիս չէ՞ը նեղանար։
26—Բայց երբ ես բարիք կը յուսայի՝
չարիքը հասաւ.
Ու երբ լոյսին կը սպասէի՝ խաւարը
եկաւ։
27—Փորոտիքս եռաց ու չդանդաղե-
ցաւ.
Թշուառութեան օրերը ինծի հասան։
28—Սևացած պտրտեցայ, բայց ոչ արեւէն.
Ելայ ու ժողովքին մէջ աղաղակեցի։
29—Ջագալներուն եղբայր՝
Ու ջայլամներուն ընկեր եղայ։
30—Մարթս վրաս սևցաւ,
Ու ոսկորներս տաքութենէն այրեցան։
31—Վասն որոյ իմ քնարս սուգի փոխ-
ուեցաւ,
Ու իմ սրինգս՝ լալականներու ձայնի։

Գլ. ԼԱ

Աչքերուս հետ ուխտ եղի.
Ուրեմն ի՞նչպէս կոյսի վրայ մտածեմ։
2—Բանդի վերէն, Աստուածմէ, ի՞նչ բա-
ժին կ'ըլլայ էնծի,
Ու բարձր տեղերէն, Ամենակարողէն,
ի՞նչ ժառանգութիւն։
3—Կորուստ ամբարշտին համար սա-
հմանուած չէ՞,
Ու սոսկալի պատիժը անօրէնութիւն
գործողներուն համար։
4—Միթէ անիկա իմ ճամբաներս չէ՞
տեսներ,

Ու ամէն քայլերս չէ՞ համրեր։
5—Եթէ սուտութեան մէջ քալեցէ,
Կամ իմ ոտքս նենգութեան արտորաց,
6—Թող կշռէ զիս արդարութեան կշի-
ռովը,
Ու Աստուած իմ անմեղութիւնս գիտ-
նայ։
7—Եթէ ոտքս ճամբայէն խոտորեցաւ,
Ու սիրտս աչքերուս ետեւէն գնաց,
Ու ձեռքերուս արատ մը փակաւ,
8—Թող ես սերմանեմ, և ուրիշը ուտէ.
Ու բուսցուցածս արմատէն փրցուի։
9—Եթէ սիրտս կնոջ մը ետեւէն մոլո-
րեցաւ,
Կամ թէ դրացիս դուռը դարանամուտ
եղայ,
10—Իմ կինս ուրիշի մը համար աղօրի-
քի քար դարձնէ,
Եւ ուրիշները անոր վրայ ծռին։
11—Վասն զի այս պղծագործութիւն է,
Ու դատաւորներէն դատուելու անօրէ-
նութիւն.
12—Որովհետև մինչև փո՛ս կորնցնելը
լափող կրակ մըն է,
Ու բոլոր արդիւնքս արմատէն կը խլէ։
13—Եթէ ծառայիս կամ աղախինիս
իրաւունք ընել չուզեցի,
Երբ ինծի հետ վէճ ունեցան.
14—Ես ի՞նչ պիտի ընեմ, երբ Աստ-
ուած ելլէ.
Ու երբ քննէ, ի՞նչ պատասխան պիտի
տամ անոր։
15—Չէ՞ որ զիս որովայնի մէջ ստեղծո-
ղը զանոնք ալ ստեղծեց.
Ու մեզ մէ՛ն ու՛ մարգանդի մէջ ձեւա-
կերպողը մէկ չէ՞։
16—Եթէ աղքատին ցանկացածը չտուի,
Ու որբեւայրիին աչքերը մաքեցուցի։
17—Եթէ պատառս մինակ կերայ,
Ու անկէ որբն ալ չկերաւ.
18—(Վասն զի երիտասարդութենէս
ի վեր հօր պէս մեծցուցի *զա-
նիկա,
Ու մօրս արգանդէն †տնօր խնամք տա-
րի։)
19—Եթէ հանդերձ չունեցող մը կոր-
սուելու վրայ,

*Ա՛ամ, Արդարև ազաչանքը ոչինչ կ'ելլէ-
ոե, երբ Աստ՛ո՛ ձեռքը երկնցնէ, ոչ ալ
անոնց ազաղակը՝ երբ Անիկա կորնչնէ

*Ա՛յսինքն, որբը
†Ա՛յսինքն, որբեւայրին

Կամ ծածկոց չունեցող չքաւոր մը տե-
սայ,
20—Ու եթէ անոր երիկամունքը չօրհ-
նեցին զիս,
Ու իմ ոչխարներուս բուրդէն չտաք-
ցաւ.
21—Եթէ ձեռքս որբին դէմ վերցուցի,
Երբ տեսայ որ դրացիք մէջ ինծի օգնա-
կաններ կան.
22—Թող իմ թեւս ուսէն իյնայ,
Ու բազուկս արմունկէն կոտրուի։
23—Վասն զի Աստուծոյ *դատաստա-
նէն կը վախնայի,
Ու անոր վեհափառութեանը առջև չէի
կրնար դիմել։
24—Եթէ յոյսս ոսկիի վրայ դնելով,
Ցուտ ոսկիին ըսի թէ իմ վստահու-
թիւնս դո՛ւն ես։
25—Եթէ տառապածքս չտա ըլլալէն՝
Ու ձեռքս չտա գտնելէն ուրախացայ.
26—Եթէ արեւին նայեցայ՝ անոր խիտ
փայլուն եղած ատենը,
Կամ պայծառութեամբ քալող լուսինին,
27—Ու սիրտս գաղտնի խաբեւելով՝
Բերանս ձեռքս պագաւ.
28—(Որ այս ալ գաւտելու անօրէ-
նութիւն մըն է,
Որովհետև վերը բնակող Աստուածը ու-
րացած կ'ըլլայի.)
29—Եթէ զիս ատողին թշուառութեա-
նը վրայ ուրախացայ,
Կամ անոր փորձանքի հանդիպելուն
համար խնդացի.
30—(†Լեզուիս ալ մեղք գործելու թոյ
չտուի,
Անէծքով անոր մեռնիլը ուզելով.)
31—Եթէ վրանիս մարդիկը չըսին,
‡Ի՞րբ անոր միսէն չկինք կշտանա՞ր".
32—(Հիւրը երբեք գիշերը դուրսը չէր
մնար,
Ճանապարհորդին դուռս կը բանայի.)
33—Եթէ յանցանքներս ||Ադամի պէս
ծածկեցի,
Ու անօրէնութիւնս ծոցիս մէջ պահեցի,
34—Շատ բազմութենէ վախնալով,

*Ե՛բր. կորուստէն
†Ե՛բր. Բերանիս
‡Կա՛մ, Երանի՛ թէ անոր միսէն կշտա-
||Կա՛մ, մարդու. [նայինք

Ու ազգերուն անարգութիւնը զիս վախ-
ցընելով,
Ալ լռեսիմ ու դռնէն չելլեմ՝
35—Երանի՛ թէ ինծի ականջ դնող մը
ըլլար։
(Ահա այս է իմ փափաքս՝ որ Ամենա-
կարողը ինծի պատասխան տայ.)
Ու իմ դատախազս գրուածք մը գրէր.
36—Անշուշտ զանիկա իմ ուսիս վրայ
պիտի կրէի.
Ու պսակի պէս ինծի պիտի կապէի.
37—Քայլերուս համրանքը անոր պիտի
զրուցէի,
Իշխանի պէս պիտի մօտենայի անոր։
38—Եթէ իմ երկիրս ինծի դէմ կը բո-
ղոքի,
Ու անոր ակօսները կու լան,
39—Եթէ անոր արդիւնքը առանց տուա-
կի կերայ,
Կամ անոր տէրերուն հոգին հանեցի,
40—Ցորենին տեղ փուշ՝
Ու գարիին տեղ որոմ բուսցնէ։
Ցօրի խօսքերը լմնցան։

Գլ. ԼԲ

Այն տեղն այս երեք մարդիկը Ցօրի
պատասխան տալէն դադրեցան, վասն
զի անիկա իր աչքերուն առջև արդար
կ'երեւար։2—Եւ *Արամի ազգատոհմէն
Բուզացի Բարաքիէլի որդւոյն Եղիուի
բարկութիւնը բորբոքեցաւ. անոր բար-
կութիւնը Ցօրի դէմ բորբոքեցաւ, վասն
զի Աստուծմէ աւելի ինքզինքը կ'արդա-
րացնէր։ 3—Նաև իր բարկութիւնը
բորբոքեցաւ անոր երեք բարեկամնե-
րուն դէմ, որովհետև պատասխան
չգտան, ու դո՛ւ-ն Ցօրը յանցաւոր
հանեցին։ 4—Ու Եղիուս Ցօրի խօսքե-
րուն չ՚ենթալո՛ւ սպասեր էր, որովհետև
անոնք իրմէ ծեր էին։ 5—Բայց երբ
Եղիուս տեսաւ որ այն երեք մարդոց
բերանը ո՛չ պատասխան չմնաց, իր
բարկութիւնը բորբոքեցաւ։ 6—Ան-
տեն Բուզացի Բարաքիէլի որդին Եղիուս
պատասխան տալով՝ ըսաւ,
Ես տարիքով փոքր եմ, ու դուք շատ
ծեր էք,

*Ե՛բր. Ռամի

Անոր համար ես կեցայ, ու գիացածս
ձեզի յայտնելու վախցայ։
7—Ըսի Թէ՝ *երկար կեանքը՛ թող խօսի,
Ու տարիներուն չատութիւնը թող ի-
մաստութիւնը գիտցնէ։
8—Բայց մարդուն ներսիդին հոգի կայ,
Ու Ամենակարողին չունչը անոնց հան-
ճար կու տայ։
9—Նբէներն մեծերը իմաստուն չեն,
Ու ծերերը դատաստան չեն հասկնար։
10—Անոր համար ըսի, ինծի մտիկ ըրէ,
Որպէս զի ես ալ իմ գիտցածս ցուցնեմ։
11—Ահա ես ձեր խօսքերուն սպասեցի,
Ձեր փաստերուն ականջ դրի,
Մինչև որ դուք խօսքերը փնտռեցիք։
12—Ես ձեզի ալ ուշադրութիւն ըրի,
Ես ահա ձեզմէ մէկը չկայ, որ Յոբը
յանդիմանէ,
Ու անոր խօսքերուն պատասխան տայ։
13—Զըլայ որ ըսէք Թէ իմաստութիւն
գտանք.
Աստուած է որ զանիկա կը յաղթէ, և
ոչ Թէ մարդ։
14—Անիկա իր խօսքերը ինծի դէմ
չպատրաստեց,
Ես ալ ձեր խօսքերուն համեմատ անոր
պատասխան պիտի չտամ։
15—Անոնք ապշեցան, ալ պատաս-
խան չտուին,
Անոնց խօսքերը հատան։
16—Ու ես սպասեցի, մինչև որ ալ բան
մը չըսին,
Մնացե կեցան ու ալ չկրկնեցին։
17—Ես ալ իմ կարգիս պատասխան
տամ,
Ես ալ իմ գիտցածս ցուցնեմ։
18—Վասն զի խօսքերով լեցուն եմ,
Իմ ներսիդիս եղած հոգին զիս կը սոի-
պէ։
19—Ահա որովայնս չբացուած գինիի
պէս է.
Նոր սիւկերու պէս պատռելու վրայ է։
20—Ձրուցեմ որպէս զի չունչ առնեմ,
Շրթունքներս բանամ ու պատասխան
տամ։
21—Արդ, մի՛կո՛ւն աչառութիւն չընեմ.
Ու մարդո՛ւ մը չողոքորթութիւն չը-
նեմ.

*Եբր. Օրերը

22—Քանզի չեմ գիտեր չողոքորթու-
թիւն ընել.
Զիս ստեղծողը շուտով զիս պիտի վեր-
ցնէր։

Գլ. ԼԳ

Բայց, աղէ, ով Յոբ, իմ խօսքս
մտիկ ըրէ,
Ու ամէն բառերուս ականջ դիր։
2—Ահա հիմա բերանս կը բանամ,
Ո՛ւ լեզուս փիճիս հետ կը խօսի.
3—Խօսքերս սրտիս ուղղութեանը պէս
պիտի ըլլան,
Ու շրթունքներս զուտ իմաստութիւն
պիտի խօսին։
4—Զիս Աստուծոյ Հոգին ստեղծեց,
Ու Ամենակարողին չունչը ինծի կեանք
տուաւ։
5—Եթէ կրնաս, պատասխան տուր ինծի,
Պատրաստուելով դիմացս կայնէ։
6—Ահա ես քու բառիդ համեմատ Աս-
տուծոյ համար իշ կ՚ըլլամ.
Ես ալ հողէն ստեղծուեցայ։
7—Ահա իմ երկիւղս քեզ պիտի չզար-
հուրեցնէ,
Ու իմ *ձեռքս քու վրադ պիտի չծան-
րանայ։
8—Արդարև ականջիս ըսիր,
Ու խօսքերուդ ձայնը լսեցի, որ ըսէր,
9—Ես մաքուր եմ ու առանց յան-
ցանքի.
Ես անարատ եմ, ու իմ վրաս անա-
նձրնութիւն չկայ։
10—Ահա անիկա վրաս պատճառներ
կը գտնէ,
Զիս իրեն թշնամի կը սեպէ.
11—Ոտքերս կոճղերու մէջ կը դնէ,
Իմ բոլոր շաւիղներս կը դիտէ։
12—Ահա քեզի պատասխան կու տամ
որ այս բանին մէջ իրաւունք
չունիս,
Վասն զի Աստուած մարդէն մեծ է։
13—Անոր հետ ինչո՞ւ կը վիճիս.
Որովհետև անիկա քեզ իր գործերուն
համար պատասխան չտար։
14—Ծիրանի Աստուած մէկ անգամ
կամ երկու անգամ կը խօսի,

†Կամ, բնաւ

(Եհովա Ֆբդբը ուշադրութիւն չընեը։)
15—Երազի մէջ, գիշերուան տեսիլքի
մէջ,
Երբ խորունկ քուն մը կ՚իյնայ մարդոց
վրայ,
Ու անոնք էբէնց անկողիններուն մէջ կը
քնանան։
16—Այն ատեն մարդոց ականջները կը
բանայ,
Ու անոնց խրատը կը կնքէ,
17—Որպէս զի մարդը էէւ գործէն
դարձնէ,
Ու մարդէն հպարտութիւնը *արգիլէ։
18—Անոր հոգին գերեզմանէն կը պահէ,
Ու կեանքը՝ որպէս զի սրով չմեռնի։
19—Նաև Ֆբդբը իր անկողնին մէջ
ցաւով կը պատժուի,
Ու իր բոլոր ոսկորները սաստիկ ցաւով
20—Այն ատեն անոր անձը հացէն կը
զզուի,
Ու անոր հոգին՝ փափագելի կերակուր-
ըէն։
21—Անոր մարմինը այնպէս կը հալի որ
ալ չերեւնար,
Ու անոր չերեւցած ոսկորները դուրս
կ՚ելլէն։
22—Անոր անձը գերեզմանին կը մօտե-
նայ,
Ու անոր կեանքը՝ կորուստի։
23—Եթէ անոր քով թարգման պատ-
գամաւոր մը ըլլայ,
Հազարէն մէկը,
Որ անոր ուղղութիւնը մարդուն իմա-
ցընէ,
24—Այն ատեն անոր ողորմելով պիտի
ըսէ,
Ազատէ զանիկա՝ որպէս զի գերեզմանը
չիջնէ.
Ես փրկութիւն մը գտայ,
25—Անոր մարմինը տղու Ֆբդբէն ա-
ւելի փափուկ պիտի ըլլայ,
Ո՛ւ անիկա իր մանկութեան օրերուն
պիտի դառնայ։
26—Աստուծոյ պիտի աղաղակէ, ու
Անոր զանիկա պիտի ըն-
դունի,
Ու անոր երեսը ուրախութեամբ պիտի
տեսնէ.

*Եբր. ծածկէ

Քանզի Անիկա պիտի հատուցանէ մարդ-
ուն՝ անոր արդարութեանը
համեմատ։
27—Անիկա մարդոց վրայ կը նայի.
Ու Ւէւէ ըսէ, Մեղք գործեցի ու
իրաւունքը ուրացայ,
Ու ասիկա ինծի օգտակար չեզաւ։
28—Ան ոՀէւ անոր հոգին կ՚ազատէ,
որպէս զի գերեզմանը չիջնէ.
Ու անոր կեանքը լոյսը կը տեսնէ։
29—Ահա Աստուած այս ամէն բա-
ները
Երկու երեք անգամ մարդուն կ՚ընէ,
30—Որպէս զի անոր հոգին գերեզմա-
նէն դարձնէ,
Որպէս զի ապրողներուն լուսովը լուսա-
ւորուի։
31—Ականջ դիր, ով Յոբ, ինծի մտիկ ըրէ,
Լուռ կեցիր որպէս զի ես խօսիմ։
32—Եթէ ըսելիք ունիս՝ ինծի պատաս-
խան տուր.
Ձրուցէ, վասն զի փեզ արդարացնելու
կը փափաքիմ։
33—Եթէ ոչ՝ ինծի մտիկ ըրէ,
Լուռ կեցիր, որպէս զի ես քեզի իմաս-
տութիւն սորվեցնեմ։

Գլ. ԼԴ

Այն ատեն Եղիուս իր խօսքը շա-
րունակելով՝ ըսաւ,
2—Ով իմաստուններ, իմ խօսքերս
մտիկ ըրէք,
Ու գուք, ով գիտուններ, ինծի ականջ
դրէք։
3—Քանզի ականջը խօսքերը կ՚որոշէ,
Ինչպես փիճիքը կերակուրին համը կ՚ա-
նէ։
4—Իրաւունքը մեզի ընտրենք,
Միէ մէջ գիանանք Թէ ո՛ր բանը ա-
զեկ է։
5—Որովհետև Յոբ ըսաւ,
Ես արդար եմ,
Բայց Աստուած իմ իրաւունքս մեկ-
դի ձգեց։
6—Մինչ՛ի իրաւունքս պիտի սուի՞մ.
Իմ *վէրքս մահարեր է, Թէև յան-
ցանք չունիմ։

*Եբր. Նետս. Գլ. գ. 4։ ժգ. 13։

7—Ցորի պէս մարդ ո՞վ կայ,
Որ հայհոյութիւնը չուլի պէս կը խմէ.
8—Որ անօրէնութիւն գործողներուն
հետ ընկերութեամբ կը պարսի,
Ու ամբարիշտ մարդոց հետ կը քալէ.
9—Վասն զի ըսաւ,
Աստուծոյ հաճոյ ըլլալն մարդուս օ-
գուտ մը չկայ,
10—Ասոր համար ինծի մօտիկ ըլէք,
ով խնամառուներ,
Քա՛ւ լեցի որ Աստուծոյ քովՙ չարու-
թիւն,
Ու Ամենակարողին քովՙ անօրէնութիւն
ըլլայ։
11—Որովհետեւ Անիկա մարդուն բրա-
ծին համեմատ կը հատուցանէ,
Ու ամէն մարդուն իր ճամբուն համե-
մատ գտնել կու տայ։
12—Արդարև Աստուած անօրէնութիւն
չընէր,
Ու Ամենակարողը դատաստան չծռեր։
13—Երկիրը ո՞վ յանձնեց անոր,
Ու բոլոր աշխարհը ո՞վ կարգի գրաւ։
14—Եթէ իր սիրտը *այսպէս ուզելու
ըլլայ՚,
Ա՞րդեօք հոգին ու շունչը իրեն կը
ժողվէ։
15—Այն ատեն ամէն մարմին միասին կը
մեռնի,
Ու մարդը հող կը դառնայ։
16—Հիմա եթէ ընդունողութիւն ուներ՝
ասիկա մտիկ ըրէ.
Խօսքերուս ձայնին ականջ դիր։
17—Մէթէ արդարութիւնը ատողը կըր-
նա՞յ իշխել,
Կամ արդար Հզօրը յանցաւոր կրնա՞ս
հանել,
18—†Ան որ թագաւորին կ՚ըսէ՝ Թէ
Նզովեալ գործ ես,
Ո՛ ազնուականներուն՝ Թէ Զար մը-
րիք եք։
19—Ան որ իշխաններուն աչառութիւն
չընէր,
Ու հարուստը աղքատէն աւելի չխնա-
մեր,
Որովհետեւ անոնք ամէնն ալ իր ձեռ-
քերուն գործն են։
20—Մէկ վայրկեանի մէջ պիտի մեռնին,
Ու կէսգիշերուան ատեն ժողովուրդը
խռովութեան մէջ իյնալով՝ պի-
տի անցնին.
Ու զօրեղները պիտի վերցուին՝ առանց
ձեռք ձեռքը տնտղ դպլլուին։
21—Վասն զի Անոր աչքերը մարդուն
ճամբաներուն վրայ են,
Ու անոր ամէն քայլերը կը տեսնէ։
22—Ոչ խաւար կայ և ոչ մահուան չուք՝
Որ անօրէնութիւն գործողները հոն
պահուին։
23—Վասն զի մարդուս վրայ *երկար
քննութիւն չըներ՚,
Երբ անիկա Աստուծոյ առջև դատաս-
տանի կ՚երթայ,
24—†Անխնդալի ներով՚ զօրաւորները
կը կոտրէ,
Ու անոնց տեղը ուրիշներ կը հաստատէ։
25—Քանզի անոնց գործերը գիտէ,
Ու գիշերով տակնուվրայ կ՚ընէ,
ու կը խորտակուին։
26—Անոնց ամբարիշտ ըլլալուն համար՝
‡Ամէնուն առջև՚ զանոնք կը զարնէ։
27—Որովհետեւ անոր հետեւելէն մէկդի
գացուեցան,
Ու անոր ճամբաները բնաւ չճանչցան.
28—Այնպէս որ աղքատին աղաղակը
անոր հասցուցին,
Ու անիկա զրկականերուն աղաղակը լսեց։
29—Եթէ անիկա հանգստութիւն տայ,
Ո՞վ կրնայ նեղութիւն տալ.
Ու եթէ անիկա երեսը պահէ,
Ո՞վ կրնայ զանիկա տեսնել.
Ո՛ *այսպէս է Թէ՚ ազգի մը և Թէ՚ մար-
դու մը։
30—Որպէս զի կեղծաւոր մարդը չթա-
գաւորէ,
Ու ժողովուրդին որոգայթ չըլլայ։
31—Արդարև պէտք է Աստուծոյ
ըսել,
Պ*ոխէ՚ կրեցի, ալ չարութիւն չեմ
ըներ.
32—Զտեսածս դուն ինծի սորվեցուր,
Եթէ ամբարշտութիւն գործեցի, ալ չեմ
գործեր։

*ՆԲԳ. անոր վրայ դնել
†Կամ, կրնա՞յ մէկը Թագաւորին ըսել

*ՆԲԳ. ալ չդներ
†Կամ, Անթիւ
‡ՆԲԳ. Ցեանողներուն տեղը

33—Արդեօք *քու ապագիդ պէս՚ պիտի
հատուցանէ՞, որ հակառակ կը
կենաս.
Բանզի դուն ընտրելու ես, և ոչ Թէ ես.
Ուրեմն ինչ որ գիտես, խօսէ։
34—Խնամառուները պիտի ըսեն ինծի
հետ,
(Ու գիտուն մարդը որ լսէ ինծի մտիկ կ՚ը-
նէ,)
35—Ցոր խելացութիւնով չզրուցեց,
Ու անոր խօսքերը խնամութեամբ
չեն։
36—Իմ փափաքս այս է, որ Ցոբ մին-
չև վերջը փորձուի.
Վասն զի ամբարիշտ մարդոց †պէս պա-
տասխաններ տուաւ։
37—Քանզի իր մեղքին վրայ ապստամ-
բութիւն կ՚աւելցնէ.
Մեր մէջ ծափ կը զարնէ,
Ու Աստուծոյ դէմ իր խօսքերը կը
շատցնէ։

Գլ. Լե

Ա Ելիհու Նզիւս իր խօսքերը շա-
րունակելով՝ ըսաւ,
2—Ակդեօք իրաւունքո՞վ ըլլալ կը
կարծես ասիկա,
Որ ըսիր Թէ ես Աստուծմէ աւելի ար-
դար եմ,
3—Քանզի դուն ըսիր, Քեզի ի՞նչ օ-
գուտ կ՚ըլլայ.
Մեղքէս աւելի ի՞նչ կը վաստկիմ։
4—Ահա ես քեզի պատասխան կու տամ,
Նաև քեզի հետ քու բարեկամներուդ։
5—Երկինք նայէ ու տես.
Ամպերը դիտէ, որոնք քեզմէ աւելի
բարձր են։
6—Եթէ դուն մեղք գործես, Անոր դէմ
ի՞նչ բան կ՚ընես,
Ու երբ քու անօրէնութիւններդ շատ-
նան, Անոր ի՞նչ կ՚ընես։
7—Եթէ արդար ես, Անոր ի՞նչ կու
տաս,
կամ անիկա քու ձեռքէդ ի՞նչ կ՚առնէ։
8—Քու ամբարշտութիւնդ քեզի պես
մարդուն՝

*ՆԲԳ. քու քովդ
†Կամ, կողմէն

Ու արդարութիւնդ մարդու որդիին կը
ըլլէ։
9—Անիրաւութիւններուն շատութենէն
կը բողոքեն,
Բռնաւորներուն բազուկին համար կ՚ա-
ղաղակեն։
10—Բայց Ո՛ւր չըսեր Թէ Զիս ստեղծող
Աստուածը ո՞ւր է,
Ան որ գիշերուան մէջ երգեր կու տայ,
11—Ան որ մեզ երկրի անասուններէն
աւելի գիտուն,
Ու երկինքի թռչուններէն աւելի իմաս-
տուն կ՚ընէ։
12—*Հոն չարերուն հպարտութեանը
համար կ՚ազաղակեն,
Բայց Ա-ո-ո-ծ պատասխան չտար՚։
13—Արդարև Աստուած ունայնու-
թիւն մտիկ չընէր,
Ու Ամենակարողը անոր չնայիր։
14—Ու Թէև կ՚ըսես Թէ Զանիկա չես
տեսներ,
Բայց դատաստան կայ անոր առջև,
անոր յուսա.
15—Ու հիմա իր բարկութեանը բռածը
բան մը չէ,
Ու անօրէնութիւնը աստիկ քննած չէ.
16—Ուստի Ցոբ իր բերանը զուր տեղը
բանալով՝
Անգիտութեամբ խօսքեր կը շատցնէ։

Գլ. Լզ

Ա Եղիհու շարունակելով՝ ըսաւ,
2—Քիչ մը համբերէ՝ ինծի, ու ես քեզի
յայտնեմ,
Որ Աստուծոյ համար ուրիշ խօսելիք ալ
ունիմ։
3—Գիտութիւնս հեռուէն պիտի առ-
նեմ,
Ու արդարութիւնը Ստեղծողիս ընծա-
յեմ։
4—Իրաւ ցրնէ իմ խօսքերս սուտ չեն.
Գիտութեամբ կատարեալ մէկը քու
քովդ է։
5—Ահա Աստուած հզօր է, բայց Ո՛չ
չարհամարհեր,

*Կամ, Հոն կ՚ազաղակեն, բայց Ա-ո-
ո-ծ պատասխան չտար՚ չարերուն
հպարտութեանը համար

Անիկա հզօր է իբ զբաին զօրութիւնովը։
6—Անիկա ամբարիշտը չապրեցներ,
Ու նեղեալներուն իրաւունք կ՚ընէ։
7—Աչքերը չվերցներ,
Ու զանոնք թագաւորներուն հետ աթոռին վրայ կը դնէ։
Զանոնք յաւիտեան կը նսեցնէ, ու կը բարձրանան։
8—Ու անոնք եթէ չղթաներով կապուած՝
Թշուառութեան պարերուն մէջ բռնուին,
9—Անոնց ունկնդրութիւն կ՚ընէ
Ու իրենց գործերը,
Ու իրենց յանցանքներուն չամանալը։
10—Նաև անոնց ականջը կը բանայ,
Որպէս զի խրատ ընդունին,
Ու դառնան կը պատուիրէ որ անօրէնութենէ դառնան։
11—Եթէ անոնք հնազանդելով՝ անոր ծառայութիւն ընեն,
Օրերնին բարութիւնով, ու տարիներնին ուրախութիւնով կ՚անցնեն։
12—Բայց եթէ անոնք հնազանդութիւն չընեն, սուրի պիտի անցնին,
Ու առանց գիտութեան պիտի մեռնին։
13—Ու անոնք որ սրտով կեղծաւոր են, էրէց մը բարկութիւն կը դիզեն.
Երբ զանոնք կապէ, անոր չեն աղաղակեր։
14—Անոնց անձը երիտասարդութեան մէջ պիտի մեռնի,
Ու անոնց կեանքը պղծերուն մէջ պէտք վերջանի։
15—Աղքատը կ՚ազատէ իր թշուառութեան ատենը,
Ու նեղութեան մէջ անոր ականջը կը բանայ։
16—Քեզ ալ նեղութենէ պիտի ազատէր,
Ու այնպէս ընդարձակութեան բերէր, ուր նեղութիւն չկայ.
Ու քու սեղանդ գրուածը պարարտութեամբ լեցուն պիտի ըլլար։
17—Բայց էրէ գուն չարին փասը *պաշտպանեցիր,
Իրաւունքն ու դատաստանը ձեղ պիտի բռնեն։

18—Որովհետև բարկութիւն կայ, չըլլայ որ հարուած՝ով մը քեզ վերցնէ.
Այն ատեն մեծ փրկանքը քեզ չկրնար ազատել։
19—Մի՛թէ անիկա քու հարստութիւնդ բանի մը տեղ կը դնէ՞.
Ոչ ոսկին ու ոչ մեծ գանձերը բաս մը կը հաշուէ։
20—Մի փափաքիր այն գիշերին՝
Որուն մէջ ժողովուրդները իրենց տեղն †անդերեւոյթ կ՚ըլլան։
21—Զգուշացիր անօրէնութեան դառնալէ.
Վասն զի դուն ասիկա թշուառութենէ աւելի ընտրեցիր։
22—Ահա Աստուած իր զօրութիւնովը †բարձրացեալ է՞.
Ո՞վ կրնայ անոր պէս սորվեցնել։
23—Անոր ‡ուղին ճամբան ո՞վ որոշեց անոր,
Ու ո՞վ բաւ անոր թէ Դուն անիրաւութիւն գործեցիր։
24—Միտքդ պահէ որ մեծարես անոր գործերը՝
Զորոնք մարդիկ կը տեսնեն։
25—Ամէն մարդ կը տեսնէ զանոնք,
Իւրաքանչիւր ոք հեռուէն կը դիտէ։
26—Ահա Աստուած մեծ է, ու մենք չենք գիտեր.
Ու անոր տարիներուն համրանքը անքննելի է։
27—Վասն զի ջուրերուն կաթիլները կը քաշէ։
Անոնք իր գոլորշիէն անձրեւ կը թափին,
28—Զոր ամպերը վազցնելով
Մարդոց վրայ առատօրէն կը կաթեցնեն։
29—Բայց ըսել մեկը ամպերուն տարածուիլը
Ու անոր վրանին դղրդումը կրնայ հասկընալ։
30—Ահա անոր վրայ իր լոյսը կը տարածէ,
Ու ծովուն խորութիւնը կը ծածկէ։

*Եբր. կը վերնան
†Կամ, կը բարձրացնէ
‡Կամ, կ՚երգեն

*Եբր. կատարեցիր

31—Ժողովուրդները այս բաներով *կը դատէ,
Ու առատօրէն կերակուր կու տայ։
32—Ափովը կայծակը կը ծածկէ,
Ու անոր հրամաՙ կու տայ, Թէ ա՛ւր պիտի զարնէ։
33—‡Անոր կը ցուցնէ իր բարկամը.
Անօրէնութեան դէմ բարկութիւն կը դիզուի՞։

ԳԼ. ԼԷ

Ասոր համար ալ սիրտս կը դողայ,
Ու իր տեղէն կ՚երթայ։
2—Անոր ձայնին որոտումը
Ու անոր բերնէն ելած շառաչիւնը մտիկ ըրէք։
3—Բոլոր երկինքի տակ կը զրկէ զանիկա,
Ու անոր լոյսը՝ մինչև երկրի ծայրերը։
4—Անորետեւէն մեծ ձայն մը կ՚ելլէ,
Իր վեհափառութեան ձայնովը կ՚որոտայ,
Ու իր ձայնը լսուելէն ետև չուշացներ զանոնք։
5—Աստուած իր ձայնովը սքանչելի կերպով կ՚որոտայ,
Ու այնպիսի մեծ բաներ կ՚ընէ՝ զորոնք մենք չենք կրնար հասկնալ։
6—Վասն զի անիկա կ՚ըսէ ձիւնին, Երկրի վրայ եղիր,
Նաև սաստիկ անձրեւին ու իր զօրութեանը սաստիկ անձրեւներուն։
7—Անկիա ամէն մարդու ձեռքը կը կնքէ,
Որպէս զի իր ստեղծած բոլոր մարդիկը հասկնան։
8—Գազանները որջերնին կը մտնեն,
Ու այրերնուն մէջ կը բնակին։
9—Հարաւէն փոթորիկ կու գայ,
Ու հիւսիսէն ցուրտ։
10—Աստուծոյ շունչէն սառնամանիք կը տրուի,
Ու լուրերուն լայնութիւնը կը նեղնայ։

*Կամ, կը խնամէ
†Եբր. լոյսը
‡Կամ, Անոր շառաչիւնը անոր համար լուր կու տայ, խաչինքն ալ ելլող ամպին համար

11—Նաև պարզութիւնը մէգը կը փարատէ.
Անոր լոյսը ամպը կը ցրուէ։
12—Անոր խորհուրդովը տեղէ տեղ կը փոխադրուին,
Որպէս զի աշխարհի երեսը՝ երկրի վրայ անոր բոլոր հրաման ըրածը կատարեն։
13—Զանոնք կը բերէ՝ Թէ՛ խրատի համար,
Թէ՛ իր երկրին համար և Թէ՛ ողորմի համար։
14—Ով Ցոբ, այս ըսածս մտիկ ըրէ.
Կայնէ ու Աստուծոյ սքանչելիքներուն վրայով մտածէ։
15—Գիտե՞ս Թէ Աստուած ի՛նչպէս կը կարգաւորէ զանոնք,
Ու իր ամպէն լոյս կը փայլեցնէ։
16—Գիտե՞ս ամպերուն հաւասարակշռութիւնը,
Ու խմաստութեամբ կատարեալ եղողին սքանչելիքները։
17—Երկիրը հարաւային հովէն հանգստացուցած ժամանակը,
Գիտե՞ս Թէ ինչո՛ւ համար քու հանդերձներդ կը տաքնան։
18—Անոր հետ մկտե՞ղ տարածեցիր երկինքը,
Որ ամուր է Թափծու հայելիի պէս։
19—Սորվեցուր մեզի Թէ ի՛նչ պիտի բսենք անոր.
Վասն զի մթութեան պատճառաւ չենք կրնար չէր խօսիլ կարգաւորել։
20—Եթէ եմ խօսելու ըլլամ, պիտի պատմուի Անոր,
Եթէ մեկը զրուցե, անշուշտ պիտի կլլուի։
21—Ու հիմա ալ չեն կրնար նայիլ, երբ երկինքը կը փայլատակէ.
Բայց հովը կ՚անցնի, ու զանիկա կը սրբէ։
22—Ահա հիւսիսէն ոսկիի պէս լոյս կու գայ.
Աստուծոյ քով ահաւոր փառաւորութիւն կայ։
23—Անիկա ամենակարող է, չենք կրնար հասկնալ զանիկա.
Մեծ է զօրութեամբ, դատաստանով ու շատ արդարութեամբ,
Ու չի՛ *չարկանք չըներ։

*Կամ, պատասխան չտար

24—Անոր համար մարդիկ կը վախնան անկէ.
Սրտով իմաստուններուն *բնաւ չնայիր՝։

ԳԼ. ԼԸ

Այն աւուն Եհովա փոթորիկին մէջէն պատասխան տալով Յոբի՝ ըսաւ,
2—Ո՞վ է սա՝ որ անխմաստ խօսքերով
Խորհուրդը կը նսեմացնէ։
3—Հիմա կարիճի պէս մէջքդ պնդէ.
Ինձի հարցնեմ, և դուն գիտցածդ ինծի իմացնես։
4—Ո՞ւր էիր դուն՝ երբ ես երկրի հիմերը կը դնէի.
Ըսէ ինծի՝ եթէ իմաստութեան տեղեկութիւն ունիս։
5—Եթէ գիտես՝ ըսէ, ո՞վ դրաւ անոր չափերը,
Կամ թէ անոր վրայ լարը ո՞վ քաշեց։
6—Անոր հիմերը ինչի՞ վրայ հաստատուած են,
Կամ թէ անոր անկիւնին քարը ո՞վ դրաւ,
7—Երբ առաւօտեան աստղերը միասին փառաբանութիւն կ'ընէին,
Ու Աստուծոյ բոլոր որդիները ցնծութեամբ կ'աղաղակէին։
8—Նաև ծովը որովայնէն յարձակելով ելած ժամանակը
Ո՞վ զոցեց զանիկա դռներով,
9—Երբ ամպը անոր հանդերձ դրի,
Ու մէգը խանձաթուր,
10—Ու անոր վրայ իմ հրամաններս հաստատեցի՝
Անոր փականք ու դռներ դրի,
11—Ու ըսի՝ Մինչև հոս գաս ու անդին չանցնիս,
Ու քու ալիքներուդ հպարտութիւնը հոս դադրի։
12—Կեանքիդ մէջ երբէք առաւօտուն հրաման բրի՞ր,
Արշալոյսին իր †տեղը ցուցի՞ր,
13—Որպէս զի երկրի ծայրերը բռնէ,
Ու չարագործները անկէ թօթուի,

*Կամ, մէկը բնաւ չկրնար տեսնել զԱՒԼ։

14—Երէքը նոր ձև մը կ'առնէ կնքուած կաւի պէս,
Ու ՚Անոնք ի՛նծի զ-զգաստացածի՛ պէս կ'երեւնայ։
15—Սակայն ամբարիշտներէն կ'արգիլուի իրենց լոյսը,
Ու բարձր բազուկը կը խորտակի։
16—Ովուն աղբիւրները մտի՞ր ես,
Ու անդունդին ծածուկ տեղերը պտըտե՞ր ես։
17—Մահուան դռները յայտնուցա՞ն քեզի,
Ու մահուան չուքին դռները տեսա՞ր։
18—Երկրի լայնութիւնը խելքդ հասա՞ր.
Եթէ ամէնը գիտես՝ ըրուցէ։
19—Լոյսին †բնակարանը ո՞ր է,
Ու խաւարին տեղը ո՞ւր է,
20—Որ զանիկա առնես իր սահմանը դառնէ,
Ու անոր ատոր ճամբաները իմանաս։
21—Դուն այն ատեն ծնած ըլլալո՞ւդ համար,
Ու քու օրերուդ համրանքին չատ ըլլալո՞ւն համար գիտես։
22—Ձիւնին չտեմարանները մտի՞ր ես,
Ու կարկտին գանձերը տեսա՞ր ես,
23—Զորնեը ես կը պահեմ նեղութեան ժամանակին,
Ու կռիւի ու պատերազմի օրուան համար։
24—Ի՞նչ ճամբով լոյսը կը բաժնուի,
Ե՞ւ Արեւելեան հովը երկրի վրայ կը տարածուի։
25—Հեղեղներուն համար անցք՝
Ու որոտումներուն փայլակին համար ճամբայ ո՞վ բացաւ,
26—Որպէս զի անձրեւ տայ այն երկրին վրայ՝ ուր մարդ չկայ,
Անապատին վրայ՝ ուր մ'կը չբնակիր,
27—Որպէս զի անապատները ու անչէն տեղերը կշտացնէ,
Ու կանանչ խոտին ընձիւղ բուսցնէ,
28—Անձրեւը հայր ունի՞,
Կամ թէ ցօղին կաթիլները ո՞վ ծնաւ։
29—Սառը որո՞ւն արգանդէն կ'ելլէ,
Ու երկինքի եղեամը ո՞վ ծնաւ,

*Եբր. հագուստի
†Եբր. բնակած ճամբան

30—Ջուրերը քարի պէս կ'ըլլան կը պահուին,
Ու անդունդին երեսը *կը սառի։
31—Բազմաստեղին †կապերը կրնա՞ս կապել,
Կամ թէ Հայկին կապերը կրնա՞ս քակել,
32—‡Մազարօթը ժամանակին կրնա՞ս հանել,
Ու Արկտին և իր զաւակներուն առաջնորդել։
33—Երկինքի կանոնները գիտե՞ս,
Անոր իշխանութիւնը երկրի վրայ կրնա՞ս դնել։
34—Ձայնդ ամպերուն կրնա՞ս վերցնել,
Որպէս զի ջուրերուն չատութիւնը քեզ ծածկէ,
35—Կայծակները կրնա՞ս ղրկել, որպէս զի երթան,
Ու քեզի՝ Ահա պատրաստ ենք՝ ըսեն,
36—Երիկամունքներուն մէջ ո՞վ իմաստութիւն դրաւ,
Կամ սրտին ո՞վ հանճար տուաւ։
37—Ո՞վ կրնայ իմաստութիւնով ամպերը համրել,
Ու երկինքի սիկերը ||պառկեցնել,
38—Երբ փոչին Էրէ֊Էւով զանգուած մը կ'ըլլայ,
Ու հողին կոյտերը իրարու կը փակչին։
39—Առիւծին համար օրս կրնա՞ս որսալ
Ու կորիւններուն ախորժակը կրնա՞ս կշտացնել,
40—Երբ անոնք էրէնց այրերուն մէջ կը կծկին,
Ու դարանի համար որջերնուն մէջ կը կենան,
41—Ո՞վ կը պատրաստէ ագռաւին իր որսը,
Երբ անոր ծագերը Աստուծոյ կ'աղաղակեն,
Ես ուտելիք չունենալուն համար կը թափառին։

*Եբր. կը բռնուի
†Կամ, զուարճութիւնները
‡Կամ, Տասը֊Էրկու֊կենդանակերպները
||Կամ, թափել տալ

ԳԼ. ԼԹ

Ժայռի այծեամներուն ծնանելու ժամանակը գիտե՞ս
Եղնիկներուն ծնանիլը դիտեցի՞ր,
2—Անոնց կատարելու ամիսները կրնա՞ս համրել,
Ու ծնանելու ժամանակնին գիտե՞ս,
3—Անոնք ծռելով ձագերնին կը ծնանին,
Ու ցաւերնին կ'անցնեն,
4—Անոնց ձագերը կը զօրանան, դաշտի մէջ կը մեծնան,
Կ'երթան ու նորէն անոնց չեն դառնար,
5—Ձիւռը ո՞վ համարձակ թող տուաւ,
Ու վայրենի իշուն կապերը ո՞վ քակեց,
6—Որուն դաշտը տուի տունի համար,
Ու անապատը՝ անոր բնակութեանը համար։
7—Անիկա քաղաքին աղաղակը ծաղր կ'ընէ,
Ու բանեցնողին պոռալը չլսեր։
8—Անոր պտրատած լեռները իր արօտն են,
Ու ամէն թխամ խոտերը կը փնտռէ։
9—Միեղջիւրուն քեզի ծառայելու կը հաճի՞,
Կամ քու մսուրիդ քով գիշերը կը մնա՞յ։
10—*Արտ վարելու համար միեղջիւրուն կրնա՞ս չուանով կապել,
Կամ թէ քու հեռուդ հովիտները կը տափանէ՞,
11—Անոր այժէն չատ ըլլալուն համար անոր կը վստահի՞ս,
Ու գործդ անոր կը յանձնե՞ս,
12—Կը հաւատա՞ս անոր թէ քու արմըտիքդ պիտի բերէ,
Ես քու կալը ժողվէ։
13—Ջայլամին թեւը ցնծութեամբ կը շարժի.
Արդեօք արագիլին թեւերուն ու փետուրներուն կը նմա՞յ։
14—Անիկա իր հաւկիթները գետինը՞ կը ձգէ,
Ու զանոնք հողին վրայ կը տաքցնէ,
15—Ու մոռքը չգար որ ֆեռա տաքը կը կոտրէ զանոնք,

*Եբր. Ակօսին մէջ

կամ դաշտի գազանները առնակոխ կ'ըլլան։
16—Անիկա անգութ է իր ձագերուն՝ իրենը չեզածներու պէս.
իր աշխատութիւնը դատարկ երկրուն վախ չունի,
17—վասն զի Աստուած իմաստութենէ զրկեր ըրաւ զանիկա,
ու հանճարէ անոր բաժին չտուաւ։
18—Անիկա բարձրը երթած ժամանակը
Ձին ու անոր վրայ հեծնողը ծաղր կ'ընէ։
19—Ձիուն զո՞ւն ոյժ տուիր,
Անոր պարանոցին *բաշը զո՞ւն հագցուցիր։
20—Զանիկա մարախի պէս կրնա՞ս ցատկեցնել.
Անոր վրնջիւնը †վառատար ձայնը՝ սոսկալի է։
21—Հովիտի մէջ գետինը կը փորէ, ու էր զօրութիւնովը կը զուարճանայ.
Զէնքերուն կ'երթայ։
22—Երկիւղը ծաղր կ'ընէ, բնաւ չի վախնար,
ու սուրին երեսէն կը չդառնար։
23—‡Նետերը անոր վրայ կը սուլեն,
Նիզա՛կ փայլուն նիզակը ու գեղարգը։
24—Կատաղութեամբ ու բարկութեամբ գետինը կը կլլէ,
Ու փողին ձայնը լսելո՛վ՝ չկրնար ինքզինք զսպել։
25—Բանի որ փողը կը հնչէ, Ապո՛ կ'ըսէ.
Հեռուէն կ'առնէ պատերազմին հոտը,
Զօրագլուխներուն որոտումը ու ազդարարութիւնը կը լսէ։
26—Բազէն քո՞ւ խմաստութենովդ կը թռչի,
Ու թեւերը դէպ ի հարաւ կը բանայ։
27—Արծիւը քո՞ւ հրամանովդ կը բարձրանայ,
Ու բոյնը բարձրը կը հաստատէ։
28—Անիկա ժայռի վրայ, ժայռի գագաթներու վրայ,
Ու ապառաժներու մէջ բնակելով կը կենայ.
29—Կերակուրը անկէ կը փնտռէ։
Անոր աչքերը հեռուէն կը տեսնեն,
30—Անոր ձագերն ալ արիւն կը ծծեն.
Ու ուր որ դիեր ըլլան, անիկա հոն է։

Գլ. Թ

Ե՛ Տէրը Յոբի խօսելով՝ ըսաւ,
2—Արդ Ամենակարողին հետ վիճողը բան մը պիտի սորվեցնէ՞.
Աստուծոյ հետ վիճաբանողը թող պատասխան տայ։
3—Այն ատեն Յոբ Տէրոջը պատասխան տալով՝ ըսաւ,
4—Ահա ես նուաստ եմ. քեզի ի՞նչ պատասխան տամ.
Ձեռքս բերնիս վրայ կը դնեմ։
5—Մէկ անգամ խօսեցայ, ալ պատասխան պիտի չտամ.
Երկու անգամ ալ՝ բայց պիտի չկրկնեմ։
6—Այն ժամանակ Տէրը մրրիկէն Յոբի պատասխան տալով՝ ըսաւ,
7—Հիմա կարիճի պէս մէջքդ պնդէ.
Քեզի հարցնեմ, ու դուն ինծի ծանուցէ՛ր։
8—Իմ դատաստանս պիտի խափանե՞ս,
Քեզ արդարացնելու համար դիս յանցաւո՞ր պիտի հանես։
9—Աստուծոյ պէս բազուկ ունի՞ս,
Ու ինծի նման կրնա՞ս անոր պէս ոռոտալ։
10—Հիմա փառաւորութիւնով ու մեծութիւնով զարդարուէ,
Ու պատիւ ու փառքով հագուէ։
11—Բարկութեանդ եռանդը տարածէ,
Ու ամէն հպարտին նայէ ու զանիկա խոնարհեցո՛ր։
12—Ամէն հպարտին նայէ ու զանիկա նուաստէ,
Ու անօրէնները իրենց տեղը կոխկռտէ։
13—Անոնց ամէնն ալ հողին մէջ անբա՛ց ըրէ,
Երեսնին գաղտուկ տեղ պահէ։
14—Այն ատեն ես ալ քեզի կը խոստովանիմ.
Որ քու ձեռքդ քեզ կրնայ ազատել։
15—Ահա *Բեհեմովթը զոր քեզի հետ ստեղծեցի.

*կամ, Բեհեմովթը անկէ կը փնտռէ.
Անոր աչքերը հեռուէն կը տեսնեն,
30—Անոր ձագերն ալ արիւն կը ծծեն.
Ու ուր որ դիեր ըլլան, անիկա հոն է։

Գլ. Թ

Ե՛ Տէրը Յոբի խօսելով՝ ըսաւ,
2—Արդ Ամենակարողին հետ վիճողը բան մը պիտի սորվեցնէ՞.
Աստուծոյ հետ վիճաբանողը թող պատասխան տայ։
3—Այն ատեն Յոբ Տէրոջը պատասխան տալով՝ ըսաւ,
4—Ահա ես նուաստ եմ. քեզի ի՞նչ պատասխան տամ.
Ձեռքս բերնիս վրայ կը դնեմ։
5—Մէկ անգամ խօսեցայ, ալ պատասխան պիտի չտամ.
Երկու անգամ ալ՝ բայց պիտի չկրկնեմ։
6—Այն ժամանակ Տէրը մրրիկէն Յոբի պատասխան տալով՝ ըսաւ,
7—Հիմա կարիճի պէս մէջքդ պնդէ.
Քեզի հարցնեմ, ու դուն ինծի ծանուցէ՛ր։
8—Իմ դատաստանս պիտի խափանե՞ս,
Քեզ արդարացնելու համար դիս յանցաւո՞ր պիտի հանես։
9—Աստուծոյ պէս բազուկ ունի՞ս,
Ու ինծի նման կրնա՞ս անոր պէս ոռոտալ։
10—Հիմա փառաւորութիւնով ու մեծութիւնով զարդարուէ,
Ու պատիւ ու փառքով հագուէ։
11—Բարկութեանդ եռանդը տարածէ,
Ու ամէն հպարտին նայէ ու զանիկա խոնարհեցո՛ր։
12—Ամէն հպարտին նայէ ու զանիկա նուաստէ,
Ու անօրէնները իրենց տեղը կոխկռտէ։
13—Անոնց ամէնն ալ հողին մէջ անբա՛ց ըրէ,
Երեսնին գաղտուկ տեղ պահէ։
14—Այն ատեն ես ալ քեզի կը խոստովանիմ.
Որ քու ձեռքդ քեզ կրնայ ազատել։
15—Ահա *Բեհեմովթը զոր քեզի հետ ստեղծեցի.

*կամ, ձիագետնին, և յետ փիղը

Անիկա արջառի պէս խոտ կ'ուտէ։
16—Ահա հիմա անոր զօրութիւնը իր մէջքին է.
Ու ոյժը փորին *մկաններուն մէջ։
17—Պոչը կ'երերցնէ եղեւնիի պէս.
Աղդրերուն ջիղերը հիւսուած են։
18—Անոր ոսկորները †պղնձէ խողովակնե՛ր են,
Անոր ոսկրները երկաթե՛ նիգերու պէս են։
19—Աստուծոյ ճարտար գործը անիկա է.
Զանիկա ստեղծողը իր սուրը կրնայ մօտեցնել՞։
20—Արդարև անոր պաշար կը բերեն լեռները,
Ուր դաշտի գազանները կը խաղան։
21—Անիկա հալածուած ծառերուն տակ,
Եղէգներուն չորը ու ճահիճներուն մէջ կը պահկի։
22—Հալածուած ծառերը իրենց չուքովը կը ծածկեն զանիկա,
Հեղեղատներուն ուռիները անոր բոլորտիքն են։
23—Եթէ գետը առատանայ, անիկա չվախնար.
Թէև Յորդանան անոր բերանին վրայ դիմելու ըլլայ, հանդարտ կը կենայ։
24—Մի՞թէ անիկա յայտնի կը բռնուի՞.
‖Որոգայթի մէջ անոր քիթը ո՞վ կրնայ ծակել՞։

Գլ. ԺԱ

§Լեւիթանը կարթով կրնա՞ս վերցընել,
Ու անոր լեզուէն լարով կրնա՞ս քաշել։
2—Անոր քիթին չուան անցընելով՝
Կրնա՞ս փուշով ծակել։
3—Մի՞թէ անիկա քեզի չատ աղաչանքներ կ'ընէ՞,
Քեզի մեղմ խօսքեր կ'ըսէ՞։
4—Անիկա քեզի հետ ուխտ կ'ընէ՞,

*կամ, պորտին
†կամ, պղնձի ամուր կտորուանք
‡կամ, անոր սուրը էրէն կու տայ
‖կամ, Քիթովը որոգայթները կը ծակէ
§կամ, կոկորդիլոսը

Զանիկա մշտնջենաւոր ծառայի պէս կրնա՞ս առնել։
5—Թռչունի հետ խա՛ղալ պէս՝ անոր հետ կրնա՞ս խաղալ,
Կամ թէ փոս ազախչներուդ համար զանիկա կրնա՞ս կապել։
6—Ընկերները անոր համ հացկերոյթ կրնա՞ն ընել.
Անիկա վաճառականներուն մէջ կը բաժնուի՞։
7—Անոր մորթը սլաքներով՝
Ու անոր գլուխը ձկնորսի սեգերով կրնա՞ս լեցնել։
8—Ձեռքդ անոր վրայ դիր, պատերազմը չի՛յշէ.
Ո՛ր նորէն պիտի չընես պնդիլ։
9—Ահա անոր ըն՛դունելութեան յոյսը պարապ է.
Զանիկա տեսնելով ալ՝ չէ՞ որ զարհուրիր։
10—Չկայ քաջասիրտ մէկը որ զանիկա արթնցնէ.
Հապա իմ առջեւս ո՞վ կրնայ կայնիլ։
11—Ո՞վ ինծի առաջնորդեց տուաւ, որ ես անոր հատուցանեմ.
Բոլոր երկինքի տակ եղածը իմս է։
12—Անոր անդամներուն ու զօրութեանը,
Նաև գեղեցիկ կարգաւորութեանը վրայով խօսելու պիտի չլռեմ։
13—Անոր հանդերձին երեսը ո՞վ կրնայ բանալ.
Անոր երկու կզակներուն մէջ ո՞վ կրնայ մտնել։
14—Անոր երեսին դռները ո՞վ կրնայ բանալ.
Ահը անոր ակռաներուն բոլորտիքն է։
15—Անոր ամուր վահանները էր հպարտութիւնն են,
Պինդ կնքուածի պէս իրար են.
16—Այնպես քովէ քով չարուած են,
Որ անոնց մէջ քամի չկրնար մտնել.
17—Իրարու կցուած են,
Մէկզմէկ կը բռնեն ու բնաւ չեն զատուիր։
18—Անոր փռնգոցէն լոյս կը փայլի,
Ու աչքերը արշալոյսին արտեւանունքներուն կը նմանին։
19—Անոր բերնէն վառած ջահեր կ'ելլեն,

Ո՞ր կրակի կայծեր կը ցայտեն՝
20—Բիթին ծակերէն չոգի կ'ելլէ՝
Եռացող սանի կամ կաթսայի պէս։
21—Անոր չունչին կրակի կայծեր կը
բորբոքին,
Ու բերնէն բոց կ'ելլէ։
22—Անոր պարանոցին վրայ ոյժ կը
բնակի,
Ու երկիւղը անոր առջեւէն կը խաղայ։
23—Անոր միսին ծալուածքները վա-
կած են,
Անոր վրայ հաստատուելով չեն երե-
բար։
24—Անոր սիրտը քարի պէս պինդ է,
Ու աղօրիքին վարի քարին պէս ա-
մուր է։
25—Անոր ելած ժամանակը զօրաւոր-
ները կը վախնան,
Ո՞ր երկիւղէն կը չփոթին։
26—Անոր վրայ յարձակողին սուրը չդի-
մանար,
Ոչ ալ նիզակը, գեղարդը ու զրահը։
27—Երկաթը յարդի պէս է անոր առ-
ջեւ,
Ո՞ր պղինձը փտած փայտի պէս։
28—Ախէղին նետը զանիկա չվախցնէր,
Գարաւքարերը անոր դէմ մղէղի կը
դառնան։
29—Մահակները չէղերու տեղ կը
սեպէ,
Տէգին ճօճալը ծաղր կ'ընէ։
30—Անոր տակ սրածայր խեցիի կտոր-
ուանք կան,
Ցեխին վրայ սուր բաներ կը տարածէ։
31—Անդունդը սանի մը պէս կ'եռաց-
ընէ,
Ո՞ր ծովը ապերանիի կաթսային նման
կ'ընէ։
32—Իր ետեւէն ճամբան պայծառ կ'ե-
րեւցնէ,
Անդունդը ճերմակած մազերու կը նմա-
նի։
33—Երկրի վրայ անոր նմանը չկայ,
Որ ահ-ի՛ն անվախ ստեղծուած ըլլայ։
34—Ամէն բարձր բաներու վրայ կը
նայի,
Բոլոր *հպարտութեան որդիներուն
թագաւորն է։

*Կամ, վայրենի գազաններուն

ԳԼ. ԽԲ

Ա.յն ատեն Յոբ Տէրոջը պատասխան տալով՝ ըսաւ,
2—Գիտեմ որ ամէն բանի կարող ես,
Ու քու դիտաւորութիւնդ քնաւ չար-
գիլուիր,
3—Ո՞վ է ասիկա որ տգիտութեամբ
խորհուրդը կը նսեմացնէ.
Արդարև կը զրուցեմ, բայց չեմ հաս-
կընար.
*Ինծի սքանչելի բաներ ըլլալով՝ չեմ
իմանար։
4—Կ'աղաչեմ, մտիկ ըրէ՝ որպէս զի ես
զրուցեմ,
Քեզի հարցնեմ ու ինծի սորվեցուր։
5—Ես քու վրայովդ ականջի լուր ըսեր
էի,
Բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ։
6—Անոր համար իմ ՈՒՅՆ կ'արհամար-
հեմ,
Հողի ու մոխիրի վրայ կը զղջամ։
7—Արդ Տէրը այս խօսքերը Յոբի
զրուցելէն ետքը՝ Տէրը եղիփազ Թեման-
նացիի ըսաւ, Բու վրադ ու երկու ըն-
կերներուդ վրայ իմ բարկութիւնս բոր-
բոքեցաւ, վասն զի ինծի համար իմ Յոբ
ծառայիս պէս չխոսեցաք։ 8—
Ուստի հիմա ձեզի եօթը զուարակ ու
եօթը խոյ առէք, ու Յոբ ծառայիս եր-
թալով՝ ձեզի համար ողջակէզ մատու-
ցեք, և իմ Յոբ ծառայս ձեզի հա-
մար աղօթք լնի, որպէս զի ես ալ անոր
†աղօթքը ընդունելով՝ Ձեր անմտու-
թեանը պէս չընեմ ձեզի. վասն զի իմ
առջեւս Յոբ ծառայիս պէս չիմաստ չխո-
սեցաք։
9—Ա.յն ատեն Եղիփազ Թեմանացի
ու Բաղդատ Սօփեցի և Սոփար Նաամա-
ցի երթալով՝ Տէրոջը իրենց ըսածին
պէս ըրին. և Տէրը Յոբի †աղօթքը ըն-
դունեց։
10—Ու Տէրը դերութենէ ազատեց
Յոբը՝ իր բարեկամներուն համար ա-
ղօթք ըրած ատենը. նաև Տէրը Յոբի
բոլոր առացուածքին կրկնապատիկը

*Եբր. ինծմէ
‡Եբր. երեսը. ա Թագ. իե. 35։ Մաղ.
ա. 8։

առաւ։ 11—Եւ անոր բոլոր եղբայրնե-
րը ու բոլոր քոյրերը և զանիկա առաջ-
ուընչ ճանչցողներուն բոլորն ալ անոր
գալով՝ անոր տանը մէջ հաց կերան ա-
նոր հետ, ու անոր համար ցաւելով՝
Տէրոջը անոր ըրած բոլոր փորձանքին
համար անոր մխիթարութիւն տուին. և
ամէն մէկը մէկ կտոր ոսկի ու մէկ-
մէկ ոսկի օղ տուին անոր։ 12—Եւ Տէ-
րը Յոբի վերջը առաջինէն աւելի օրհ-
նեց. այնպէս որ տասնըչորս հազար ոչ-
խար, ու վեց հազար ուղտ, և հազար
զոյգ եզ ու հազար մատակ էշ ունեցաւ։
13—Եւ անոր եօթը տղայ ու երեք աղ-
ջիկ եղաւ։ 14—Ու մէկ աղջկան անու-
նը *Եմիմա, ու երկրորդին անունը կա-
սիա, ու երրորդին անունը †կերեն-հա-
պուք դրաւ։ 15—Ու բոլոր երկրին
վրայ Յոբի աղջիկներուն պէս գեղեցիկ
կիներ չէին գտնուեր. ու հայրերնին
անոնց ժառանգութիւն տուաւ իրենց
եղբայրներուն մէջ։
16—Եւ ասկէ ետքը Յոբ հարիւր
քառասուն տարի ապրելով՝ տեսաւ իր
որդիները ու իր որդւոց որդիները հինգ
սերունդ աղքը։ 17—Ու Յոբ ծերացած
ու օրերը լեցուած մեռաւ։

*Այսինքն, սիւ.
†Այսինքն, եղջիւր ծաղկոյ

*ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

ՍԱՂՄՈՍ Ա

Երանելի է այն մարդը
Որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չգնաց,
Ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկեցաւ,
Եւ ծաղր ընողներուն նստած տեղը չնստաւ.
2—Հապա անոր հաճութիւնը Աստուծոյ օրէնքին մէջ է,
Եւ ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ.
3—Նա անոնց նման է ջրերի ճամբաները արնակաւած ծառի պէս պիտի ըլլայ,
Որ իր ժամանակին իր պտուղը կու տայ.
Ու անոր տերեւը պիտի չթափի,
Եւ ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի.
4—Ամբարիշտները,
Հապա մինդի պէս՝ զոր հովը կը ցրուէ.
5—Ասոր համար ամբարիշտները դատաստանին մէջ պիտի չկրնան կենալ,
Ոչ ալ մեղաւորները արդարներուն ժողովին մէջ.
6—Վասն զի Տէրը կը ճանչնայ արդարներուն ճամբան.
Բայց ամբարիշտներուն ճամբան պիտի կորսուի.

ՍԱՂՄ. Բ

Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն կ'ընեն,
Ու ժողովուրդները պարապ բան կը մտածեն,
2—Երկրի թագաւորները կ'ինքնին կը հաստատուեն,
Ու իշխանները մէկտեղ խորհուրդ կ'ընեն
Տէրոջը դէմ ու անոր Օծեալին դէմ,
3—Ըսելով, կոտրենք անոնց կապերը,
Ու մեզմէ ձգենք անոր *լուծը.
4—Երկինքը բնակողը պիտի ծիծաղի,
Տէրը ծաղր պիտի ընէ զանոնք.
5—Այն ատեն իր բարկութիւնովը պիտի խօսի անոնց,
Ու իր պատուհասովը պիտի խռովեցնէ զանոնք, ըսելով,
6—Ես օծեցի իմ թագաւորս
Իմ սուրբ լեռանս, Սիոնի, վրայ.
7—Հրամանը պիտի պատմեմ.
Տէրը ինծի ըսաւ,
Դուն իմ Որդիս ես,
Ես այսօր քեզ ծնայ.
8—Խնդրէ ինծմէ, ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ,
Ու երկրի ծայրերը՝ քեզի տացուածք.
9—Զանոնք երկաթէ գաւազանով պիտի †կոտրես,
Բրտւոի անօթի պէս պիտի փշրես զանոնք։
10—Ուստի հիմա, ով թագաւորներ, միտքերնիդ առէք,
Երկրի դատաւորներ, խրատուեցէք.
11—Երկիւղով Տէրոջը ծառայեցէք,
Ու դողալով ‡ուրախ վախցէք*,
12—Որդին համբուրեցէք՝ որպէս զի չբարկանայ,
Ու ճամբուն մէջ չկորսուիք,
Երբ անոր բարկութիւնը փոյթ մը բորբոքի,
Երանի՛ այն ամէնուն որոնք անոր կը յուսան։

ՍԱՂՄ. Գ

Սաղմոս Դաւթի, իր որդւոյն Աբիսողոմի երեսէն փախած ժամանակը։

Ով Տէր, իմ թշնամիներս ո՛րչափ շատցան.

*Ղուկ. ի. 42։ Գոր. ա. 20։

*Եբր. չուանները
†Կամ, հոմանաս ‡Կամ, ցնծացէք

Իմ վրաս կելլողները չատուար են։
2—Շատերը իմ անձիս համար կ'ըսեն թէ
Անոր փրկութիւն չկայ Աստուածմէն։ (*Սէլա։)
3—Բայց, ով Տէր, դուն ես իմ ապարս,
Իմ փառքս ու իմ գլուխս բարձրացընողը։
4—Իմ ձայնովս Տէրոջը կանչեցի,
Ու իր սուրբ լեռանէն ինծի պատասխանեց։ (Սէլա։)
5—Ես պառկեցայ ու քնացայ.
Արթնցայ, վասն զի Տէրը զիս պաշտպանեց։
6—Ես պիտի չվախնամ բիւրաւոր ժողովուրդներէն՝
Որոնք իմ չորս կողմս պատեցին։
7—Ելիր, ով Տէր, զիս փրկէ, ով իմ Աստուածս,
Վասն զի դուն զարկիր իմ բոլոր թշնամիներուս թաւշը.
Ամբարիշտներուն ակռաները փշրեցիր։
8—Փրկութիւնը Տէրոջն է.
Քու օրհնութիւնդ քու ժողովուրդիդ վրայ †է։ (Սէլա։)

ՍԱՂՄ. Դ

Գլխաւոր երաժշտին, ‡Նկինոթի վրայ. Սաղմոս Դաւթի։

Կանչելու ատենս ինծի պատասխան տուր, ով իմ արդարութեանս Աստուածը.
Նեղութեան մէջ զիս բնդարձակեցիր.
Ողորմի՛ ինծի ու լսի՛ իմ աղօթքս։
2—Մարդոց որդիներ, մինչև ե՞րբ իմ փառքս ամօթի պիտի դարձնէք,
Ե՞ւ ունայնութիւն պիտի սիրեք ու սուտութիւն փնտռէք։ (Սէլա։)
3—Բայց գիտցէք որ Տէրը իրեն նուիրուած մարդը *զատեց.
Տէրը պիտի լսէ իրեն կանչելու ատենս։
4—Դողացէք ու մեղք մի գործէք.
Խօսեցէք սիրտերնուդ հետ անկողիններնուդ վրայ ու լռեցէք։ (Սէլա։)
5—Արդարութեան զոհեր մատուցէք,
Ու Տէրոջը յուսացէք։
6—Շատերը կ'ըսեն թէ ո՞վ մեզի բարութիւն պիտի ցուցնէ,
Ով Տէր, քու երեսիդ լոյսը մեր վրայ ծագէ։
7—Իմ սրտիս ուրախութիւն տուիր՝
Անոնց ցորենին ու գինիին առատութեան ժամանակէն աւելի։
8—Խաղաղութեամբ պիտի պառկիմ ու քնանամ,
Վասն զի դուն միայն, ով Տէր, զիս ապահովութեամբ կը բնակեցնես։

ՍԱՂՄ. Ե

Գլխաւոր երաժշտին, †Նհիլոթի վրայ. Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, ականջ դիր իմ խօսքերուս,
Միտքդ առ իմ ողողակս։
2—Իմ կանչելուս ձայնը մտիկ ըրէ, ով իմ Թագաւորս ու Աստուածս,
Վասն զի ես քեզի կ'աղօթեմ։
3—Ով Տէր, առաւուտնց պիտի լսես իմ ձայնս.
Առաւուտնց ‡պատրաստ պիտի ըլլամ՝ քեզի ու սպասեմ։
4—Վասն զի դուն անօրէնութեան ուզող Աստուած չես.
Չարը քու քովդ պիտի չբնակի։
5—Չպարծանքը քու աչքերուդ առջև պիտի չկենան.
Բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես։
6—Սուտ խօսողները կը կորսնցնես.

*Կամ, երեւելի ըրաւ
†Ասիկա հաւանական յորդեւ ‡Ելլ-ա նաւթերուներէրուան անուան է։
‡Կամ, առջի՛ս պիտի ներկայացնեմ

Տէրը արիւնահեղ ու նենգաւոր մարդէն
կը զզուի։
7—Բայց ես քու ողորմութեանդ չա-
ուբիւնովը քու տունդ պիտի
մտնեմ.
Քու վախովդ երկրպագութիւն պիտի
ընեմ քու սուրբ տաճարիդ մէջ։
8—Ով Տէր, քու արդարութիւնովդ
ինծի առաջնորդ եղիր թշնա-
միներուս համար.
Քու ճամբադ չիակիչ իմ առջեւս.
9—Վասն զի անոնց բերնին մէջ ճըշ-
մարտութիւն չկայ,
Անոնց ներսիդին չարութիւն է.
Անոնց կոկորդը բաց գերեզման է.
Իրենց լեզուովը նենգաւոր եղան։
10—Ով Աստուած, յանցաւոր հանէ
զանոնք.
Իրենց խորհուրդներովը թող իյնան.
Անոնց շատ ամբարշտութիւններուն հա-
մար հալածէ զանոնք.
Վասն զի քեզի դէմ ապստամբեցան։
11—Բայց ամէն քեզի յուսացողներ
թող ուրախ ըլլան.
Յաւիտեան թող ցնծան, վասն զի դուն
զանոնք կը պաշտպանես.
Ու քու անունդ սիրողները թող քեզ-
մով զուարճանան։
12—Վասն զի դուն պիտի օրհնես ար-
դարը, ով Տէր,
Բարի կամեցողութիւնով անոր չորս կող-
մը պիտի պատես՝ որպէս թէ
վահանով մը։

ՍԱՂՄ. Զ

Գլխաւոր երաժշտին, Նկինոթի վրայ,
*Շէմինիթի վրայ. Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, քու զայրութիւնովդ զիս
մի յանդիմաներ,
Ու քու բարկութիւնովդ զիս մի խրա-
տեր։
2—Ով Տէր, ողորմէ ինծի, վասն զի
տկար եմ ես.
Զիս բժշկէ, ով Տէր, վասն զի ոսկոր-
ներս կը սարսափին։
3—Իմ անձս ալ խիստ սարսափեցաւ.
Ու դուն, ով Տէր, մինչեւ ե՞րբ։
4—Դարձիր, ով Տէր, փրկէ իմ անձս,
Քու ողորմութեանդ համար զիս ազատէ.
5—Վասն զի մահուան մէջ քեզ յիշո-
ղութիւն չկայ.
Գերեզմանին մէջ ո՞վ քեզի չնորհակա-
լութիւն պիտի ընէ։
6—Հառաչանք ընելէ յոգնեցայ.
Ամէն գիշեր առատութեամբ կը լուայ
իմ անկողինս,
Արցունքներովս կը թրջեմ իմ մահիճս։
7—Իմ աչքս մաշեցաւ տրտմութենէ,
Իմ ամէն թշնամիներուս համար հին-
ցաւ։
8—Ինծմէ ետ կեցէք ամէնդ ալ որ
անօրէնութիւն կը գործէք.
Վասն զի Տէրը իմ լալուս ձայնը լսեց.
9—Տէրը իմ աղերսքս լսեց.
Տէրը իմ խնդրուածքս պիտի ընդունի։
10—Թող ամէնան ու խիստ զարհուր-
բին իմ ամէն թշնամիներս,
Ետ դառնան ու չտեսով թող ամչնան։

ՍԱՂՄ. Է

*Շիկկայոն Դաւթի, զոր երգեց Տէրոջը
բնեռամիհեան Քուշի խօսքերուն համար։

Ով իմ Տէր Աստուածս, քեզի կը
յուսամ,
Փրկէ զիս իմ ամէն հալածիչներէս ու
ազատէ զիս.
2—Զըլլայ որ առիւծի պէս իմ անձս
գիշատէ,
Ու պատառէ և ազատող մը չըլլայ։
3—Ով իմ Տէր Աստուածս, եթէ այս
բանը ըրի,
Կամ թէ իմ ձեռքերուս մէջ անօրէ-
նութիւն կայ,
4—եթէ բարեկամիս չարութիւն ըրի,
Ու յանիշտակեցի ջնջիլ՝ որ առանց
պատճառի իմ թշնամիս է.
5—Թող թշնամին հալածէ իմ անձս ու
հասնի անոր,
Ու երկրի վրայ կոխկռտէ իմ կեանքս,
Ու իմ փառքս հողի վրայ բնակեցնէ։
(Սէլա)
6—Ելիր, ով Տէր, քու բարկութիւնովդ,

*Կամ, Մեղեդի. տես Ամբ. գ. 1։

իմ թշնամիներուս կատաղութիւննե-
րուն դէմ բարձր եղիր,
Ու քու հրամայած դատաստանիդ ինծի
համար արթնցիր։
7—Ու ժողովրդներուն ժողովը քու
չորս կողմդ պիտի պատեն.
Անոնց վրայ դէպ ի բարձրը դարձիր։
8—Տէրը պիտի դատէ ժողովրդները.
Ով Տէր, իմ դատաստանս տես,
Իմ ունեցած արդարութեանս ու ան-
մեղութեանս նայելով։
9—Ամբարիշտներուն չարութիւնը թող
հասնի,
Բայց դուն արդարը հաստատէ.
Վասն զի դուն, ով արդար Աստուած,
Կը քննես սիրտերը ու երիկա-
մունքները։
10—Իմ պաշտպանութիւնս Աստու-
ածմէ է.
Որ կ'ապրեցնէ սրտով ուղիղները։
11—Աստուած արդար դատաւոր է,
Ու Աստուած ցեղ-ցեղէն ամէն օր բար-
կացած է.
12—Եթէ անիկա չդառնայ, իր սուրը
պիտի սրէ.
Աղեղը լարեր ու պատրաստեր է։
13—Ու մահու գործիքներ անոր համար
պատրաստեր է,
Իր նետերը *հալածիչներուն համար՝ չի-
ներ է։
14—Ահա անօրէնութեան երկունքը
բռնեց զանիկա.
Չարութիւն յղացաւ ու սուտութիւն
ծնաւ։
15—Հոր փորեց ու խորունկցուց,
Բայց իր չինած փոսին մէջ ինք պիտի
իյնայ.
16—Անոր չարութիւնը իր գլուխը պիտի
դառնայ,
Ու անոր բռնութիւնը իր գագաթին
վրայ պիտի իջնէ։
17—Գոհութիւն պիտի մատուցանեմ
Տէրոջը իր արդարութեանը հա-
մար,
Ու սաղմոս պիտի երգեմ Բարձրեալ Տէ-
րոջը անուանը։

*Կամ, կրակոտ

ՍԱՂՄ. Ը

Գլխաւոր երաժշտին, *Կիթթիթի վրայ.
Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, մեր Տէրը,
Ի՜նչ փառաւոր է քու անունդ բոլոր
երկրի վրայ,
Որ քու փառդ երկինքներէն վեր դրիր։
2—Մանկանց ու կաթնկեր ոտկայից բեր-
նէն
†Գովեստ հաստատեցիր՝ քու թշնամի-
ներուդ համար,
Որպէս զի թշնամին ու վրէժխնդիրը
լռեցնես։
3—Երբ տեսնեմ երկինքդ, քու մա-
տերուդ գործը,
Լուսինը ու աստղերը, զորոնք դուն
հաստատեցիր,
4—Մարդը ի՞նչ է՝ որ զանիկա կը յիշես,
Կամ մարդու որդին, որ անոր այցելու-
թիւն կ'ընես։
5—Քիչ մը վար բրիր զանիկա հրեշ-
տակներէն,
Փառքով ու պատուով պսակեցիր զա-
նիկա.
6—Քու ձեռքերուդ գործերուն վրայ
իշխան դրիր զանիկա.
Ամէն բան անոր ոտքին տակ դրիր.
7—Բոլոր ոչխարները ու արջառները,
Նաև վայրենի անասուններըը,
8—Երկինքի թռչուններըը ու ծովուն
ձուկերը,
Ե՛ ինչ որ ծովու ճամբաներուն մէջ կը
պտրտի։
9—Ով Տէր, մեր Տէրը,
Ի՜նչ փառաւոր է քու անունդ բոլոր
երկրի վրայ։

ՍԱՂՄ. Թ

Գլխաւոր երաժշտին, Մութ-լապպէնի
վրայ. Սաղմոս Դաւթի։

Գոհութիւն պիտի մատուցանեմ Տէ-
րոջը իմ բոլոր սրտովս.

*Կը կարծուի թէ պէտք մը նուագե-
ցուն անուն է։
†Կամ, Զօրութիւն

Քու ամէն սքանչելիքներդ պիտի պատմեմ։

2—Քեզմով ուրախ պիտի ըլլամ ու ցնծամ. Քու անունդ սաղմոս պիտի երգեմ, ով Բարձրեալ։

3—Թշնամիներս ետ դառնալու ատեննին

Քու երեսդ պիտի խլնան ու կորսուին.

4—Վասն զի դատաստանս և իրաւունքս դուն տեսար.

Աթոռին վրայ նստար էիր՝ արդարութեան դատաւոր։

5—Հեթանոսները յանդիմանեցիր, Ամբարիշտը կորնցուցիր, Անոնց անունները յիշեցիք յաւիտանս յաւիտենից։

6—Թշնամին աւերմանքները բոլորովին վերջացան.

Քաղաքները աւերեցիր.

Անոնց յիշատակը իրենց հետ կորսուեցաւ։

7—Բայց Տէրը յաւիտեան կը մնայ.

Անիկա իր աթոռը պատրաստեց դատաստանի համար,

8—Ինք պիտի դատէ աշխարհը արդարութեամբ,

Ժողովուրդներուն դատաստան պիտի ընէ ուղղութեամբ.

9—Տնանկին ալ ապաւէն պիտի ըլլայ Տէրը,

Ապաւէն՝ նեղութեան ժամանակներու։

10—Ու անոնք որ քու անունդ գիտեն՝ քեզի պիտի յուսան.

Վասն զի քեզ փնտռողները, ով Տէր, երբեք չձգեցիր։

11—Սաղմոս երգեցէք Տէրոջը որ Սիոն կը բնակի,

Ժողովուրդներուն մէջ պատմեցէք անոր բրածները։

12—Վասն զի արեան վրէժխնդիրը յիշեց զանոնք,

Չմոռցաւ նեղեալներուն աղաղակը։

13—Ով Տէր, ողորմի ինծի,

Տես իմ թշնամիներէս կրած նեղութիւնս,

Դուն որ զիս մահուան դռներէն կը վերցնես.

14—Որպէս զի քու ամէն գովութիւններդ պատմեմ

Սիոնի աղջկան դռներուն մէջ.

Պիտի ցնծամ քու փրկութիւնովդ։

15—Հեթանոսները իրենց չինած փոսին մէջ ընկղմեցան.

Իրենց գաղտուկ լարած որոգայթին մէջ իրենց ոտքը բռնուեցաւ։

16—Տէրը ճանչցուած է, Վասն զի դատաստան բրաւ.

Ամբարիշտը իր ձեռքին գործերովը ո. րոգայթը կ'ինկայ։ (*Հիկայոն Սէլա։)

17—Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան,

Ու ամէն ազգերը՝ որոնք զԱստուած կը մոռնան։

18—Քանզի աղքատը պիտի չմոռցուի մինչև վերջը։

Տնանկներուն յոյսը յաւիտեան պիտի չկորսուի։

19—Ելիր, ով Տէր, մարդը չզօրանայ.

Թող հեթանոսները դատուին քու առջեւդ.

20—Ով Տէր, †զանոնք վախցուր՝.

Թող հեթանոսները ճանչնան Թէ իրենք մարդ են։ (Սէլա։)

‡ՍԱՂՄ. Ժ

1Ի՞ Տէր, ինչո՞ւ հեռու կը կենաս.

Նեղութեան ժամանակները անտես կ'ընես։

2—‖Ամբարիշտին ամբարտաւանութեանը պատճառաւ աղքատը կը տառջորի՝,

Իրենց խորհած հնարքներուն մէջ թող բռնուին։

3—Վասն զի ամբարիշտը իր անձին ցանկութիւնովը կը պարծենայ,

*Այսինքն, մտածութիւն

†Կամ, անոնց վրայ սարսափնցնող դիր

‡Այս պատճէրդրը Սաղմոսը Երեմեայ Նէյ և Հայոց Գրքերը Երեքմանութեանց մէջ Էնեհերդրէն հետ գտցուածք է. որով այս Երեքմանութեան մէջն գտածները Նոյնպէս Էնեհերդրը չէ. ու այնպես կը լսուածնուն մէջն հարիւր Երեքմանութիւնները Տէս այն տեղ ծանօթութիւնը։

‖Կամ, Ամբարիշտը իր ամբարտաւանութիւնովը սաստիկ կը հալածէ աղքատը

Եւ ազահը էր անյին երանի կու տայ, Տէրը կ'անարգէ։

4—Ամբարիշտը իր երեսին ամբարտաւանութեանը համար Աստուած չփնտռեր.

Բոլորովին անոր մտքին մէջ Աստուած չկայ։

5—Անէն ժամանակ անոր ճամբաները պիղծ են.

Քու դատաստաններդ անոր առջեւէն բարձր են.

Անիկա իր բոլոր թշնամիներուն վրայ կը փչէ։

6—Իր սրտին մէջ ըսաւ Թէ Պիտի չսասանիմ.

Վասն զի ազգէ մինչև ազգ նեղութեան մէջ պիտի չըլլամ։

7—Անոր բերանը անէծքով ու նենգութիւններով ու հարստահարութիւններով լեցուն է.

Անիրաւութիւնը ու անօրէնութիւնը անոր լեզուին տակ են։

8—Գեղերուն դարանի տեղերը կը նստի,

Գաղտուկ տեղերու մէջ անմեղը կը սպաննէ.

Անոր աչքերը ծածկաբար տնանկներուն կը նային։

9—Գաղտուկ տեղը դարանամուտ կ'ըլլայ,ինչպես առիւծը իր օրջին մէջ.

Դարանակալ կը նստի՝ աղքատը յափշտակելու համար.

Աղքատը կը յափշտակէ՝ իր որոգայթը ձգելով զանիկա։

10—Ու կծկատած կը պառկի,

Ու տնանկները անոր ճանկերուն տակ կ'իյնան։

11—Իր սրտին մէջ ըսաւ Թէ Աստուած մոռցեր է,

Ո՞ր երեսը ծածկեր է որպէս զի բնաւ չտեսնէ։

12—Ելիր, ով Տէր. ով Աստուած, ձեռքդ վեր վերցուր,

Մի մոռնար նեղեալները։

13—Ինչո՞ւ համար ամբարիշտը կ'անարգէ զԱստուած.

Իր սրտին մէջ ըսաւ Թէ Պիտի չքննես։

14—Դուն տեսար, վասն զի ցաւին ու նեղութեանը կը նայիս՝

Քու ձեռքովդ փոխարէն հատուցանելու համար։

Աղքատը ինքզինք քեզի կը յանձնէ.

Որբին օգնականը դուն ես։

15—Ամբարշտին բազուկը կոտրէ,

Ու չարին անօրէնութիւնը փնտռէ մինչև որ ու չգտնես։

16—Տէրը յաւիտանս յաւիտենից թագաւոր է։

Հեթանոսները կորսուած են անոր երկրէն։

17—Տնանկներուն ցանկութիւնը լսեցիր, ով Տէր.

Անոնց սիրտերը պիտի հաստատես, ու քու ականջդ պիտի տաս

18—Որբին ու անանկին դատաստանը տեսնելու,

Որպէս զի երկրի մարդը ա՛լ ղեղուիլ չվախցնէ։

ՍԱՂՄ. ԺԱ

Գլխաւոր երաժշտին.Սաղմոս Դաւթի։

Տէրոջը ապաւինեցայ.

Ի՞նչպէս իմ անձիս կ'ըսէք Թէ

Թռչունի պէս դեպի ձեր լեռը Թռչէ.

2—Վասն զի ահա մեղաւորները ազեղ լարեցին,

Իրենց նետերը լարին վրայ պատրաստեցին,

Որպէս զի մութ տեղէն սիրտը չիտակ հոգւոներուն նետեն։

3—Եթէ հիմերը կործանին,

Արդարը ի՞նչ պիտի ընէ։

4—Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.

Տէրոջը աթոռը երկինքն է.

Անոր աչքերը կը տեսնեն,

Անոր Թարթիչները կը քննեն մարդոց որդիները։

5—Տէրը կը քննէ արդարը.

Բայց անոր անձը կ'ատէ ամբարիշտը ու բռնութիւն սիրողը։

6—Ամբարիշտներուն վրայ պիտի տեղան *որոգայթներ,

Հուր և ծծումբ ու խորշակ.

Այս պէտք ըլլայ անոնց բաժակին բաժինը։

7—Քանզի արդար Տէրը արդարութիւնը կը սիրէ,

Անոր երեսը ուղիղին կը նայի։

*Կամ, փայլակներ

ՍԱՂՄ. ԾՐ

Գլխաւոր երաժշտին, Շէմինիթի վրայ. Սաղմոս Դաւթի.

Ով Տէր, փրկէ, վասն զի սուրբը չմնաց.
վասն զի հաւատարիմները մարդոց որդիներուն մէջէն պակսեցան։
2—Անհն մարդ սուտ կը խօսի իր ընկերին հետ.
շողոքորթող շրթունքներով ու կրկին սրտով կը խօսին։
3—Տէրը պիտի կտրէ ամէն շողոքորթող շրթունքները
Ո՛ մեծախօս լեզուն,
4—որոնք ըսին թէ լեզուներնիս պիտի յաղթենք,
շրթունքներնիս մերն է. մեր վրայ տիրող ո՞վ պիտի ըլլայ.
5—Աղքատներուն գրկանքին ու անհնկներուն հեծութեանը համար
Հիմա պիտի ելլեմ, կ'ըսէ Տէրը,
Ազատութեան մէջ պիտի դնեմ պատրաստ կը փչուի.
6—Տէրոջը խօսքերը մաքուր խօսքեր են.
Հողէ բովքի մէջ զտուած
Ո՛ հօրը անգամ մաքրուած արծաթի պէս են.
7—Ով Տէր, դուն պիտի պահես զանոնք,
Ո՛ պիտի պաշտպանես այս ազգէն միշտ յաւիտեան։
8—Անբարիշտները ամէն կողմ կը պտըտին,
երբ մարդոց որդիներուն մէջ անարգները բարձրանան։

ՍԱՂՄ. ԾԳ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

Ով Տէր, մինչև ո՞րքան բոլորովին պիտի մոռնաս,
մինչև ո՞րքան քու երեսդ ինծմէ պիտի ծածկես։
2—Մինչև ո՞րքան մտքիս մէջ հոգեր պիտի դնեմ,
ամէն օր սրտիս մէջ տրտմութիւն ունենամ։
մինչև ո՞րքան թշնամիս իմ վրաս պիտի բարձրանայ։
3—Նայէ, ով իմ Տէր Աստուածս, ու պատասխան տուր ինծի.
Լուսաւորէ իմ աչքերս,
որպէս զի մահուան քունը չքնանամ։
4—Չըլլայ որ թշնամիս ըսէ թէ ծաղթեցի անոր.
կամ թէ ինծի դէմ կեցողները խնդան իմ սասանելու առնես։
5—Ես քու ողորմութեանդ յուսացայ,
իմ սիրտս քու փրկութեանովդ պիտի ցնծայ։
6—Պիտի երգեմ Տէրոջը,
վասն զի ինծի բարերարութիւն ըրաւ։

ՍԱՂՄ. ԾԴ

Գլխաւոր երաժշտին, Սաղմոս Դաւթի։

Անզգամը իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած չկայ.
Ապականեցան ու պիղծ գործեր ըրին.
Մէկը չկայ որ աղէկութիւն ընէ։
2—Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ,
Որպէս զի տեսնի թէ կայ արդեօք իմաստուն մէկը
Որ զԱստուած փնտռէ։
3—Անհնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան.
Աղէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ։
4—Մեթէ չե՞ն ճանչնար անհն անօրէնութիւն ընողները,
որոնք հաց ուտելու պէս իմ ժողովրդս կ'ուտեն,
Ո՛ Տէրոջը չեն կանչեր.
5—Այն տեղ շատ վախցան.
Քանզի Աստուած արդարներուն ազգին մէջ է,
6—Աղքատին խորհուրդը ամօթով բրիք,
*Սակայն անոր յոյսը Տէրն է։
7—Երանի՛ թէ Սիովնէ գար Իսրայէլի փրկութիւնը.
Տէրը իր ժողովուրդը գերութենէն դարձուցած ատենը՝
Յակոբ պիտի ցնծայ, ու Իսրայէլ ուրախ պիտի ըլլայ։

*Կամ, Քանզի

ՍԱՂՄ. ԾԵ

Սաղմոս Դաւթի։

Տէր, ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ,
Ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ վրայ։
2—Ան որ անմեղութեամբ կը քալէ, ու արդարութիւն կը գործէ,
Ու ճշմարտութիւն կը խօսի իր սրտին մէջ։
3—Ան որ լեզուովը չզրպարտեր,
Ընկերին չարութիւն չընէր,
Ու իր դրացին վրայ նախատինք չդներ.
4—Որուն աչքին անարգուած է չարագործը,
Բայց աստուածավախները կը պատուէ.
Երդում կ'ընէ իր *վնասին՝ ու չդառնար.
5—Իր արծաթը վարձքով չտար,
Ու անմեղին դէմ կաշառք չառներ։
Ով որ ասոնք կ'ընէ, յաւիտեան պիտի չսասանի։

*Կամ, դրացիին

ՍԱՂՄ. ԾԶ

Երգ Դաւթի։

Ով Աստուած, զիս պահէ,
վասն զի քեզի յուսացայ։
2—Տէրոջը ըսի, իմ Տէրս դուն ես,
Առանց քեզի բարիք մը չունիմ։
3—Երկրի մէջ եղող սուրբերուն ու պատուականներուն՝
Անոնց վրայ է իմ բոլոր հաճութիւնս։
4—Անոնց ցաւերը պիտի շատնան,
որոնք ուրիշ մը կ'ապտրան.
Անոնց արիւնի նուէրները պիտի չնուիրեմ,
Ու անոնց անուննները շրթունքներուս վրայ պիտի չառնեմ։
5—Տէրն է իմ ժառանգութեանս ու բաժակիս բաժինը։
Իմ վիճակս դուն պիտի պահես։
6—Վիճակներ եղան ինծի զուարճալի տեղերու մէջ.
Իրաւ իմ ժառանգութիւնս ինծի գեղեցիկ եղաւ։
7—Պիտի օրհնեմ Տէրը որ զիս խրատեց.
Նաև իմ երիկամունքներս գիշերւան մէջ ինծի կը սորվեցնեն։
8—Անդին առնն Տէրը իմ առջեւս դրի.
Որովհետև իմ աջ կողմն է, պիտի չսասանիմ։
9—Ասոր համար սիրտս ուրախ եղաւ ու *փառքս բերկրեցաւ,
Ո՛ մարմինս ալ յաւետով պիտի հանգչի.
10—վասն զի իմ անձս դժոխքին չպիտի ձգեր,
Ու քու սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս։
11—կենաց ճամբան ինծի պիտի ցուցընես.
Երեսիդ առջեւ լեցուն ուրախութիւն կայ,
Քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան։

*Կամ, իմ լեզուս

ՍԱՂՄ. ԾԷ

Աղօթք Դաւթի։

Ով Տէր, լսէ արդարութիւնը,
Միտիկ ըրէ իմ աղաղակս,
Ականջ դիր աղօթքիս,
Որ խարեբայ շրթունքներով չէ։
2—Իմ դատաստանս քու երեսդ թող ելլէ.
Քու աչքերդ ուղղութիւնը թող տեսնեն։
3—Իմ սիրտս փորձեցիր, գիշեր տուն քննեցիր,
Զիս կրակով փորձեցիր ու բան մը չգտար.
Ժմիտքս դրի որ բերանս պատրաստզանց չըլլայ*,
4—Մարդոց գործերուն նայելով՝
Քու շրթունքներուդ խօսքերովը ես բռնաւորին ճամբաներէն զգուշացայ։
5—Իմ քայլերս քու ճամբաներուդ մէջ պահէ,
Որպէս զի իմ գնացքներս չսասանին։
6—Ես քեզի կանչեցի, վասն զի ինծի պատասխան պիտի տաս, ով Աստուած.

*Այսինքն, անձս կամ լեզուս
†Կամ, դժոխքին
‡Կամ, Բերանս իմ խորհուրդէս պիտի չհեռանայ

Խոնարհեցուր ինձի քու ականջդ, լսէ իմ խօսքս։
7—Սքանչելի կերպով քու ողորմութիւններդ ցուցուր,
Դուն որ ե՛րէք յուսացողները աջ ձեռքովդ կ'ազատես
Հակառակ կեցողներէն։
8—Աչքի բիբի պէս զիս պահէ,
Թեւերուդ հովանաւորութեանը տակ զիս ծածկէ
9—Ինծի տառապանք տուող ամբարիշտներուն երեսէն,
Իմ անձիս թշնամիները զիս պաշարեցին։
10—Իրենց պարարտութիւնովը ծածկուեցան,
Իրենց բերնովը ամբարտաւանութեամբ խօսեցան։
11—Հիմա քայլերնուս չորս կողմը պատելով՝
Աչքերնին դէպ երկիր անկեցին գետինը զարնելու համար,
12—Առիւծի պէս որ կը փափաքի գիշատելու,
Առիւծի կորիւնի պէս որ դարանակալ կ'ըլլայ։
13—Ելլէ՛, ով Տէր, անոր առջև էդէն ծնո՛ւնքերէն հասէր,
Ձանիկա գետինը զարկ.
Քու որովդ փրկէ իմ անձս ամբարիշտներէն,
14—Քու ձեռքովդ մարդոցմէն, ով Տէր,
Աշխարհի մարդոցմէն՝ որոնց բաժինը այս կեանքին մէջ է,
Ու անոնց փորերը շռեմարաններդ կը լեցնես.
*Անոնց որդիներն ալ՝ կը կշտանան,
Ու երեխայի ա՛նցացածը իրենց ազգը կը թողուն։
15—Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ քու երեսդ.
Երբ արթննամ քու դէմքիդ պիտի կշտանամ։

*Կամ, Անոնք որդիներով

ՍԱՂՄ. ԾԸ

Գլխաւոր երաժշտին. Տէրոջը ծառային Դաւթի սաղմոսը, որ ըսաւ Տէրոջը այս երգին խօսքերը այն օրը որ Տէրը ազատեց զանիկա իր ամէն թշնամիներուն ձեռքէն, և Սաուղի ձեռքէն ու ըսաւ,

Ով Տէր, իմ զօրութիւնս, քեզ պիտի սիրեմ։
2—Տէրը իմ վէմս, ամրութիւնս ու փրկիչս է,
Իմ Աստուածս իմ պարիսպս է, ես անոր կը յուսամ,
Անիկա իմ վահանս ու իմ փրկութեանս եղջիւրը
Ու՝ իմ բարձր աշտարակս է։
3—Օրհնեալ Տէրը կը կանչեմ,
Ու իմ թշնամիներէս կ'ազատիմ։
4—Մահուան լարերը իմ բոլորտիքս առին,
Ու անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին։
5—Դերեզմանին լարերը զիս պաշարեցին,
Ու մահուան որոգայթները իմ առջեւս առին։
6—Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի,
Ու իմ Աստուածոյս աղաղակեցի.
Անիկա իր տաճարէն իմ ձայնս լսեց,
Ու իմ աղաղակս անոր առջև՝ անոր ականջը հասաւ։
7—Այն ատեն երկիրը սասանեցաւ ու դողաց,
Ու լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան,
Բանի անիկա բարկացաւ։
8—Անոր քիթէն ծուխ ելաւ,
Ու բերնէն մաշող կրակ.
Անկէ կայծակներ բռնկեցան։
9—Ես անիկա երկինքը խոնարհեցուց ու իջաւ,
Եւ անոր ոտքերուն տակ մառախուղ կար։
10—Ու քերովբէի մը վրայ ելաւ ու թռաւ,
Ու հովին թեւերուն վրայ սլացաւ։
11—Խաւարը իրեն ծածկոյթ դրաւ,

Ո՛ր բոլորտիքը իրեն բնակարան.
Թանձր ջուրերը ու երկինքի ամպերը ըլլա՝
12—Անոր առջև եղող պայծառութենէն անոր ամպերը անցան
Կարկուտով ու կրակի կայծակներով.
13—Ու Տէրը երկինքին մէջ որոտաց,
Եւ Բարձրեալը իր ձայնը լսել տուաւ
Կարկուտով ու կրակի կայծակներով։
14—Նե իր նետերը ղրկեց ու զանոնք ցրուեց,
Եւ շատ կայծակներ ղրկեց ու զանոնք խռովեցուց։
15—Եւ քու յանդիմանութիւնովդ, ով Տէր,
Քու բարկութեանդ հովին փչելովը
Ջուրերուն յատակները երեւցան,
Ու աշխարհի հիմերը յայտնուեցան։
16—Բարձրէն ղրկեց ու զիս բռնեց,
Եւ շատ ջուրերէն զիս հանեց։
17—Իմ զօրեղ թշնամիէս ու զիս ատողներէն ազատեց զիս.
Վասն զի ինծի՛ զօրաւոր էին։
18—Իմ նեղութեանս օրը իմ առջեւս ա՛ն,
Բայց Տէրը ինծի հաստատութի՛ւն գաւազան եղաւ։
19—Եւ զիս լայնարձակ տեղ մը հանեց,
Ո՛ր զիս ազատեց, վասն զի ինծի հաճեցաւ։
20—Տէրը իմ արդարութեանս պէս ինծի փոխարէն կու տայ,
Իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ հատուցում կ'ընէ ինծի.
21—Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի,
Ու իմ Աստուածոյս դէմ ամբարշտութիւն չըրի,
22—Բանզի անոր ամէն դատաստանները իմ առջեւս էին,
Ու անոր օրէնքները ինծի՛ չհեռացուցին։
23—Նաև անոր առջև կատարեալ եղայ,
Ու իմ անօրէնութենէս զգուշացայ։
24—Եւ Տէրը ինծի հատուցում ըրաւ իմ արդարութեանս համեմատ,
Իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ՝ որ անոր աչքերուն առջև է։
25-Ողորմածին հետ ողորմած կ'ըլլաս,
Կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս.
26—Մաքրին հետ մաքուր կ'ըլլաս,
Ու ծուռին հետ կը ծռիս։
27—Վասն զի դուն վշտացած ժողովուրդը կ'ազատես,
Ու ամբարտաւան աչքերը կը ցածցնես։
28—Բանզի դուն իմ ճրագս կը վառես.
Իմ Տէր Աստուածս իմ խաւարս կը լուսաւորէ։
29—Վասն զի քեզմով գունդի մը վրայ կը վազեմ,
Ու իմ Աստուածովս պարիսպէ կ'անցնեմ։
30—Աստուծոյ ճամբան կատարեալ է.
Տէրոջը խօսքերը փորձուած են.
Անիկա ամէն իրեն յուսացողներուն ասպար է,
31—Բանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուած,
Կամ մեր Աստուածմէն զատ ո՞վ է վէմ
32—Աստուած է որ ինծի զօրութիւն կը հագցնէ,
Ու իմ ճամբաս կատարեալ կ'ընէ։
33—Իմ ոտքերս եղջերուի ոտքերուն պէս կ'ընէ,
Ու իմ բարձր տեղերուս վրայ զիս կը կայնեցնէ։
34—Ձեռքերս պատերազմի կը վարժէ,
Ու իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը լարեն։
35—Ինծի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր.
Եւ քու աջ ձեռքդ զիս զօրացուց,
Ու քու խոնարհութիւնդ զիս մեծցուց։
36—Իմ քալելու ճամբաս ներքեւս լայնցուցիր,
Ու իմ ոտքիս յօդուածները չսասանեցան։
37—Իմ թշնամիներս հալածեցի ու անոնց հասայ,
Ու ետ չդարձայ՝ մինչև որ զանոնք հատցուցի.
38—Զանոնք գետինը զարկի, ու կանգնելու կարող չեղան.
Անոնք իմ ոտքերուս տակ իյնան։
39—Ու պատերազմի համար ինծի զօրութիւն հագցուցիր։

*Կամ, բազուկներուս պղնձէ աղեղ մը կը կոտրուի

իմ վրաս կելլողները տակս ձգեցիր։
40—Ու իմ թշնամիներուս *կռնակը ինծի դարձնել տուիր՝
Որպէս զի զիս ատողները կարգեմ,
41—Ազաղակեցին, բայց ազատող չկար։
Տէրոջը՝ ու՛ղղա՛խօսէ, բայց անոնց պատասխան չտուաւ։
42—Ու զանոնք հալին ափերուն դէմ՝ փոշիի պէս մանրեցի,
Ե՛ փողոցներուն ցեխին պէս մկկդի ձգեցի զանոնք։
43—Ժողովուրդին կռիւներէն զիս ազատեցիր,
Ու՛ զիս ազգերու գլուխ կրկր։
Իմ չգիտցած ժողովուրդս ինծի ծառայեց։
44—Իրենց ականջներովը լսածնուն պէս՝ ինծի հնազանդեցան.
Օտարները ինծի խոնարհութիւն ըրին՝։
45—Օտարները սկսրացան,
Ե՛ իրենց պահուրտած տեղերէն դողացին։
46—Տէրը կենդանի է, ու իմ վէմս օրհնեալ ըլլայ,
Ե՛ իմ փրկութեան Աստուածը բարձր ըլլայ։
47—Աստուած է որ իմ վրէժս կը խնդրէ,
Ու ժողովուրդները ինծի կը հնազանդեցնէ։
48—Իմ թշնամիներէս զիս կը փրկէ.
Նաև զիս իմ վրաս կելլողներէն աւելի բարձրացուցիր,
Ու՛ բռնաւոր մարդէն զիս ազատեցիր։
49—Անոր համար, ով Տէր, ազգերուն մէջ քեզ պիտի գովեմ՝
Ե՛ քու անուանդ սաղմոս պիտի երգեմ։
50—Իր թագաւորին փրկութիւնները մեծցնողը,
Ու իր օծեալին, Դաւիթի, ու անոր սերունդին
Յաւիտեան ողորմութիւն ընողը Ա՛ստ է։

ՍԱՂՄ. ԺԸ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի,

Երկինք Աստուծոյ փառքը կը պատմէ,

Ու էջէ՛ն*է հաստատութիւնը անոր ձեռքերուն գործերը կը ցուցնէ։
2—Օրը օրին կը յայտնէ խօսքը,
Ու գիշերը գիշերին կը ցուցնէ գիտութիւնը։
3—Ձկոյ ըլոյշ ու լկան խօսքեր.
Անոնց ձայնը չլսուիր։
4—Բայց ամէն երկիր ելաւ անոնց հընչիւնը,
Ու մինչև աշխարհի ծայրը՝ անոնց խօսքը։
Անոնց մէջ արեւին համար վրան մը կանգնեց.
5—Ու *անիկա իր առագաստէն ելած փեսայի պէս է,
Հզոր մարդու պէս էր ճամբան վազելով կ'ուրախանայ։
6—Անոր ելքը երկինքի ծայրէն է,
Ու անոր չրջանը մինչև անոնց ծայրերը,
Եւ անոր տաքութենէն բան մը չծածկուիր։
7—Տէրոջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ.
Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, ոգեւոր իմաստուն կ'ընէ։
8—Տէրոջը կանոնները չիտակ են, սիրտը կ'ուրախացնեն.
Տէրոջը պատուիրանքները պայծառ են, աչքերուն լոյս կու տան։
9—Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան կը մնայ.
Տէրոջը դատաստանները ճշմարիտ ու բոլորովին արդար են,
10—Ցանկալի են անոնք ոսկիէն ու շատ փորձուած ոսկիէն.
Մեղրէն անոյշ են, ու խորխոխ կաթած մեղրէն,
11—Նաև քու ծառադ անոնցմով կը խրատուի,
Ու՛ զանոնք պահելուն վարձքը շատ է։
12—Ո՞վ կրնայ միտք առնել իր յանցանքները,
Ծածուկ մեղքերէն զիս մաքրէ.
13—Ամբարտաւան մեղքերէն ալ պահէ քու ծառադ.
Թող անոնք ինծի չտիրեն.
Այն ատեն անմեղ կ'ըլլամ,
Ու կը մաքրուիմ մեծ անօրէնութենէ։

*Կամ, պարանոցը ինծի տուիր
†Եբր. սահելին

*Այլ՝ Էջէ՛ն, արեւը

11—Բերնիս խօսքերը ու սրտիս խորհուրդը
Քու առջեւդ ընդունելի ըլլան,
Ով Տէր, իմ վէմս ու փրկիչս։

ՍԱՂՄ. Ի

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի,

Նեղութեան օրը Տէրը պատասխանէ քեզի,
Յակոբի Աստուծոյն անունը քեզ պաշտպանէ.
2—Օգնութիւն ղրկէ քեզի սուրբ տեղէն,
Ու Սիոնէ զօրացնէ քեզ.
3—Քու ամէն ընծաներդ յիշէ,
Ե՛ քու ողջակէզներդ ընդունի. (Սէլա.)
4—Քու սրտիդ համեմատ քեզի տայ,
Ե՛ քու ամէն խորհուրդներդ կատարէ.
5—Քու փրկութիւնովդ պիտի ուրախանանք,
Ու մեր Աստուծոյն անունովը դրօշակ վերցնենք։
Տէրը կատարէ քու ամէն խնդրուածքներդ.
6—Հիմա գիտցայ որ Տէրը կը պահէ իր օծեալը,
Անոր պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն՝
Իր աջ ձեռքին փրկութեան ուժովը։
7—Ոմանք կառքերու, և ոմանք ալ ձիերու կ'ապաւինին,
Բայց մենք մեր Տէր Աստուծոյն անունը պիտի յիշենք։
8—Անոնք կորացան ու ինկան,
Բայց մենք ելանք ու չիտակ կայնեցանք։
9—*Ով Տէր, փրկէ թագաւորը,
Պատասխան տուր մեզի մեր կանչելու օրը՝։

ՍԱՂՄ. ԻԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի,

Ով Տէր, քու զօրութիւնովդ թագաւորը ուրախ պիտի ըլլայ,
Ու քու փրկութենովդ ո՛րչափ չատ պիտի ցնծայ։
2—Անոր սրտին փափաքը իրեն տուիր,
Ու անոր չրթունքներուն խնդիրքը չերծ չարգիլեցիր։ (Սէլա.)
3—Վասն զի բարութեան օրհնութիւններով անոր հասար.
Անոր գլուխը մաքուր ոսկիէ պսակ դրիր։
4—Քեզմէ կեանք խնդրեց,
Ու՛ անոր երկայն օրեր տուիր յաւիտեանս յաւիտենից։
5—Անոր փառքը մեծ է քու փրկութիւնովդ.
Փառք ու վայելչութիւն դրիր անոր վրայ։
6—Վասն զի օրհնութիւնները անոր վրայ հաստատեցիր յաւիտեան.
Ուրախութեամբ ուրախ րրիր զանիկա քու երեսիդ առջեւ։
7—Վասն զի թագաւորը Տէրոջը կը յուսայ,
Ու բարձրելոյն ողորմութիւնովը պիտի չսասանի։
8—Քու ձեռքդ պիտի գտնէ քու ամէն թշնամիներդ.
Քու աջ ձեռքդ պիտի գտնէ քեզ ատողները։
9—Ջանանք կրակի հնոցի պէս պիտի ընես քու բարկութեանդ ժամանակը.
Տէրը իր բարկութիւնովը *բոլորովին պիտի կրանցնէ՝ զանոնք,
Ու կրակը պիտի ուտէ զանոնք։
10—Անոնց պտուղը երկրէ պիտի կորսընցնես,
Ու անոնց սերունդը մարդոց որդիներէն,
11—Վասն զի քեզի դէմ չարութիւն պատրաստեցին.
Նենգութեան խորհուրդ րրին, բայց կարող չեղան կատարելու։
12—Վասն զի դուն անոնց կռնակը ես պիտի դարձնես.
Քու նետերդ անոնց երեսին դէմ՝ լարես։
13—Ով Տէր, քու ուժովդ բարձր եղիր.
Պիտի երգենք ու սաղմոս ըսենք քու զօրութեանդ։

*Եբր. պիտի կլլէ

ՍԱՂՄ. ԻԸ

Գլխաւոր երաժշտին, Այէլէդ Շահարի վրայ. Սաղմոս Դաւթի։

Ա՛ստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողուցիր։
Հեռու փրկելէն ես պատառելս խօսքերէն հեռու եղար։
2—Ով իմ Աստուածս, ցորեկը կը կանչեմ, ու չես պատասխաներ. եւ գիշերը կը կոչեմ ու չեմ դադարիր։
3—Բայց դուն սուրբ ես, Ով Իսրայէլի գովաբանութեանց մէջ բնակող։
4—Մեր հայրերը քեզի յուսացան. Յուսացան, ու փրկեցիր զանոնք։
5—Քեզի աղաղակեցին ու ազատեցան. Քեզի յուսացան ու չամչցան։
6—Բայց ես որդ եմ ու մարդ չեմ. Մարդոց մէջ քամահրուած, ու ժողովուրդին մէջ անարգուած։
7—Ամէն ոք ինծի ծաղր կ'ընեն. Շրթունք կը բանան, գլուխ կ'երերցնեն,
8—Բո՛ւէ, Տէրոջը յուսացաւ, ա՛ռ թող փրկէ զանիկա. Թող ազատէ զանիկա, վասն զի անոր հաւնեցաւ։
9—Բայց դուն ես որ արգանդէն հանողը դուն ես. Մօրս ծիծը եղած առենս դուն ինծի յոյս աուիր։
10—Արգանդէն ես քեզի յանձնուեցայ. Իմ մօրս որովայնէն դուն ես իմ Աստուածս։
11—Մի հեռանար ինծմէ, վասն զի նեղութիւնը մօտ է, Վասն զի օգնող մը չկայ։
12—Շատ զուարակներ չորս կողմս աւրին, Բասանի ցուլերը դիս պաշարեցին.
13—Իրենց բերանը իմ վրաս բացին՝ Ճանչցնող ու մռնչող առիւծի պէս։
14—Ջուրի պէս թափուեցայ, Ու ամէն ոսկորներս ցրուեցան. Սիրտս մոմի պէս եղաւ, Հալեցաւ փորիս մէջ։
15—Զօրացաւ իմ այծս հողի ամանի մը պէս, Ու լեզուս քիմքիս փակաւ. Եւ զիս մահուան հողը դրիր։
16—Վասն զի չուներըը չորս կողմս աւրին, Չարերուն ժողովը զիս պատեցին, Ձեռքերս ու ոտքերս ծակեցին։
17—Իմ ամէն ոսկորներս կրնամ համրել. Անոնք կը նային, կը տեսնեն զիս։
18—Իմ հանդերձներս իրենց մէջ կը բաժնեն, Ու պատմուճանիս վրայ վիճակ կը ձգեն։
19—Բայց դուն, ով Տէր, մի հեռանար Էնդէ. Ով իմ զօրութիւնս, չուտով ինծի օգնութեան հասիր։
20—Իմ անձս սուրէն ազատէ, Ու *կեանքս՝ շներ ձեռքէն,
21—Փրկէ զիս առիւծին բերնէն, Ու ինծի պատասխան տուր †վիհերէ բուներուն եղջիւրներէն։
22—Քու անունդ եղբայրներուս պիտի պատմեմ, Ժողովին մէջ քեզ պիտի գովեմ։
23—Ով Տէրոջմէ վախցողներ, գովեցէք զանիկա. Ով Յակոբի բոլոր զաւակները, փառաւորեցէք զանիկա, Ու վախցէք անկէ, Իսրայէլի բոլոր զաւակները։
24—Վասն զի չանարգեց ու չքամահրեց տառապեալին †տառապանքը, Ու երեսը անկէ չդարձուց. Հապա իրեն կանչած առենը լսեց։
25—Քեզմէ պիտի ըլլայ իմ գովաբանութիւնս մեծ ժողովքին մէջ. Իմ ուխտերս անկէ վախցողներուն առջեւ պիտի կատարեմ։
26—Տնանկները պիտի ուտեն ու կշտանան. Տէրը պիտի գովեն զանիկա փնտռողները։ Ձեր սիրտը յաւիտեան պիտի ապրի։
27—Պիտի յիշեն ու Տէրոջը դառնան երկրի ամէն ծայրերը, Ու քու առջեւդ երկրպագութիւն պիտի ընեն ազգերուն ամէն տոհմերը։
28—Վասն զի թագաւորութիւնը Տէրոյն է, Ու ան կը տիրէ ազգերուն վրայ։
29—Երկրի ամէն պարարտները պիտի ուտեն ու երկրպագութիւն պիտի ընեն. Ամէն հողը իջնողները ծունկ պիտի կրկնեն անոր առջեւ, Ու ան չ՚որ իր անձը չապրեցնեն։
30—Զաւակը պիտի ծառայէ անոր. Տէրոջը վրայով պիտի պատմուի էս՚ը գարուն մէկ։
31—Պիտի գան ու անոր արդարութիւնը պիտի պատմեն Այն ժողովուրդին, որ պիտի ծնանի Վասն զի այս բանը ան կատարեց։

*Նէբ. միսներս
†Կամ, վայրի ցուլերուն
‡Կամ, ազապակը

ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի։

Տէրը իմ հովիւս է. Ես բան չեմ կարօտութիւն պիտի չունենամ,
2—Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ. Հանդարտ ջուրերուն քով ինծի կ'առաջնորդէ.
3—Հոգիս կը նորոգէ. Իր անունը համար արդարութեան ճամբաներուն մէջ կ'առաջնորդէ ինծի,
4—Թէեւ մահուան չուքի ձորին մէջ ալ պարեմ, Չարէն պիտի չվախնամ, Վասն զի դուն ինծի հետ ես. Քու ցուպդ ու գաւազանդ անոնք զիս պիտի մխիթարեն,
5—Անդան կը պատրաստես իմ առջեւս իմ թշնամիներուս դիմաց. Իմ գլուխս իւղով կ'օծես, Իմ բաժակս խիտ լեցուն է։
6—Ծերութիւնը եւ աղօրմութիւնը ինծի հետ պիտի գան Կեանքիս բոլոր օրերուն մէջ, Ու տուն օրիս Տէրոջը տունը պիտի բնակիմ։

ՍԱՂՄ. ԽԸ

Սաղմոս Դաւթի։

Տէրոջն է երկիրը ու անոր լիութիւնը, Աշխարհն ու անոր քնակիչները։
2—Վասն զի զինք անոր հիմերը ծովերուն վրայ ձգեց, Ու գանիկա գետերուն վրայ հաստատեց։
3—Ո՞վ պիտի երթ Տէրոջը լեռը, Կամ ո՞վ պիտի կենայ անոր սուրբ տեղը։
4—Ձեռքերով սուրբը ու սրտով մաքուրը, Որ սուտէն անձնատուր չեղաւ, Ու նենգութեամբ երդում չըրաւ։
5—Անիկա Տէրոջմէն օրհնութիւն պիտի առնայ, Ու իր փրկութեանը Աստուծմէն՝ արդարութիւն։
6—Զանիկա փնտռողներուն ցեղը այս է. Քու երեսդ խնդրողները *Յակոբն է՝ (Սէլա)
7—Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէք. Ու վերցուեցէք, ով յաւիտենական դռներ, Որպէս զի փառաց Թագաւորը մտնէ։
8—Ո՞վ է այս փառաց Թագաւորը. Կարող ու հզօր Տէրը, Պատերազմի մէջ հզօր Տէրը։
9—Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէք. Ու վերցուեցէք, ով յաւիտենական դռներ, Որպէս զի փառաց Թագաւորը մտնէ։
10—Ո՞վ է այս փառաց Թագաւորը. Զօրքերուն Տէրը, Ինքն է փառաց Թագաւորը։ (Սէլա)

ՍԱՂՄ. ԽԹ

Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, իմ անձս քեզի վերցուցի։
2—Ով իմ Աստուածս, քեզի յուսացայ. Թող չամչնամ, Ու թշնամիներս իմ վրաս չցնծան։
3—Նաեւ ամէն քեզի սպասողները Թող չամչնան. Անօրէնութեամբ անօրէնութիւն ընողները Թող ամչնան։
4—Ով Տէր, քու ճամբաներդ ցուցուր ինծի,

*Կամ, ով Յակոբ

Քու չաւ իղնէրդ սորվեցուր ինծի,
5—Քու ճշմարտութեանդ մէջ ինծի առաջնորդէ ու սորվեցուր ինծի,
Քանզի դուն ես իմ փրկութեան Աստուածը.
Ես քեզի կը սպասեմ ամէն օր։
6—Ով Տէր, քու գթութիւններդ ու ողորմութիւններդ յիշէ,
Վասն զի յաւիտենական են։
7—Մանկութեան մեղքերս ու յանցանքներս մի յիշեր,
Հապա քու ողորմութիւնովդ զիս յիշէ՝
Քու բարութեանդ համար, ով Տէր։
8—Տէրը բարի և ուղիղ է.
Անոր համար մեղաւորներուն կը սորվեցընէ ճամբան։
9—Դատաստանի մէջ պիտի առաջնորդէ հեզերուն,
Ու իր ճամբան հեզերուն պիտի սորվեցնէ։
10—Տէրոջը բոլոր ճամբաները ողորմութիւն ու ճշմարտութիւն են
Իր ուխտը ու վկայութիւնները պահողներուն։
11—Ով Տէր, քու անունդ համար
Ներէ իմ անօրէնութիւնս, *վասն զի մեծ է։
12—Ո՞վ է այն մարդը որ Տէրոջմէն կը վախնայ.
Անոր պիտի սորվեցնէ իր ընտրած ճամբան։
13—Անոր անձը բարութեան մէջ պիտի քնակի,
Ու անոր սերունդը երկիրը պիտի ժառանգէ։
14—Տէրոջը ընտանութիւնը իրմէ վախցողներուն հետ է,
Ու իր ուխտը անոնց կը սորվեցնէ։
15—Իմ աչքերս ամէն ատեն Տէրոջը կը նային,
Վասն զի իմ ոտքերս որոգայթէն ան պիտի հանէ։
16—Ինծի դարձիր ու ողորմէ ինծի,
Վասն զի միայնակ ու վշտացած եմ։
17—Սրտիս նեղութիւնները չատցան.
Իմ վիշտերէս զիս հանէ։
18—Իմ նեղութեանս ու տառապանքիս նայէ,
Ու բոլոր մեղքերս ներէ։
19—Տես իմ թշնամիներս, վասն զի չատցան,
Ու անիրաւ ատելութիւնով զիս ատեցին։
20—Պահէ իմ անձս ու փրկէ զիս.
Թող չամչնամ, վասն զի քեզի յուսացայ։
21—Կատարելութիւնը և ուղղութիւնը զիս պահէն,
Վասն զի քեզի սպասեցի։
22—Ով Աստուած, փրկէ Իսրայէլը
Իր ամէն նեղութիւններէն։

ԳԼ. ԻԶ

Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, զիս դատէ,
Վասն զի իմ անարատութիւնովս քալեցի.
Տէրոջը յուսացայ, պիտի չսասանիմ։
2—Ով Տէր, զիս փորձէ ու քննէ,
Փորձէ իմ երիկամունքներս ու սիրտս։
3—Վասն զի քու ողորմութիւնդ իմ աչքերուս առջև է,
Ու քու ճշմարտութեանդ մէջ քալեցի։
4—Ունայն մարդոց հետ չնստայ,
Ու կեղծաւորներուն հետ պիտի չխառնուիմ։
5—Չարերուն ժողովքը ատեցի,
Ու ամբարիշտներուն հետ պիտի չնստայ։
6—Անմեղութիւնով ձեռքերս պիտի լուայ,
Ու քու սեղանիդ չորս կողմը պիտի պտըտիմ, ով Տէր։
7—Որպէս զի ընդհակալարեան ձայնը լսել տամ,
Ու քու ամէն սքանչելիքներդ պատմեմ։
8—Ով Տէր, սիրեցի քու տանդ բնակութիւնը,
Ու փառքիդ կեցած տեղը։
9—Մի կորսընցներ իմ անձս մեղաւորներուն հետ,
Ու իմ կեանքս՝ արիւնահեղ մարդոցը հետ,
10—Որոնց ձեռքերուն մէջ անօրէնութիւն կայ,
Ու անոնց ալ ձեռքը կաշառքով լեցուն է,
11—Բայց ես իմ անարատութիւնովս պիտի քալեմ.
Զիս փրկէ ու ինծի ողորմէ։
12—Իմ ոտքս չհատկութեան մէջ կը կենայ.
Ժողովքներուն մէջ Տէրը պիտի օրհնեմ։

ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի։

Տէրը իմ լոյս ու փրկութիւնս է,
Ես ու՞րկ պիտի վախնամ.
Տէրը իմ կեանքիս ապաւէնն է,
Ես ու՞րկ պիտի դողամ։
2—Զարերուն իմ մօտիմիս ուտելու համար ինծի մօտեցած ատենը՝
Իմ նեղիչներս ու թշնամիներս սահեցան ու ինկան։
3—Եթէ վրաս զօրքի բանակ ելլէ,
Սիրտս պիտի չվախնայ.
Եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլայ,
Անով ալ ես վստահ պիտի ըլլամ։
4—Բան մը կը խնդրեմ Տէրոջմէն,
Ո՛ւ ասիկա կ'ազնտեմ,
Որ կեանքիս բոլոր օրերը
Տէրոջը տանը մէջ բնակիմ՝
Տէրոջը վայելչութիւնը տեսնելու,
Ու անոր տաճարին մէջ աչքս խնդրելու համար։
5—Վասն զի չար օրուան մէջ՝
Իր բնակարանին մէջ զիս պիտի պահէ,
Իր վրանին ծածկութովը զիս պիտի ծածկէ.
Վէմի վրայ պիտի վերցնէ զիս։
6—Ու հիմա իմ գլուխս պիտի բարձրանայ
Իմ բոլորտիքս եղող թշնամիներուս վրայ.
Ու անոր վրանին մէջ ուրախութեան ձայնով զոհեր պիտի մատուցանեմ.
Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ Տէրոջը։
7—Ով Տէր, ձայնս լսէ կանչելու ատենս,
Ու ողորմէ և պատասխան տուր ինծի։
8—Իմ սրտիս փնտռեցէք՝ ըսէր,
Իմ երեսս փնտռեցիմ՝ ըսի ես,
9—Քու երեսդ ինծմէ մի ծածկեր,

Բարկութիւնով ծառադ մէկդի մի ձգեր.
Ինծի օգնական եղար, զիս մի մերժեր,
Ես զիս մի թողուր, ով իմ փրկութեանս Աստուածը։
10—Թէև հայրս ու մայրս զիս թողուն
Բայց Տէրը զիս պիտի ընդունի։
11—Ով Տէր, քու ճամբադ ինծի սորվեցուր,
Ու չիտակ ճամբան մէջ ինծի՝ առաջնորդէ թշնամիներուս համար։
12—Զիս իմ թշնամիներուս կամքին մի մատներ,
Վասն զի իմ վրաս սուտ վկաներ
Ու անիրաւութիւն փչողներ եղան։
13—Հաւատացի Տէրոջը բարութիւնը տեսնելու.
կենդանիներուն երկրին մէջ։
14—Տէրոջը սպասէ.
Զօրացիր ու սիրտդ քաջ զօրանայ.
Ա՛լ Տէրոջը սպասէ։

ՍԱՂՄ. Ի

Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, քեզի կը կանչեմ.
Ով իմ Վէմս, մի լռեր ինծի.
Զրլլայ որ ինծի լռելովդ
*Գերեզմանը իջնողներուն նմանիմ.
2—Լսէ իմ խնդրատածքիս ձայնը
Երբ քեզի կ'աղաչեմ,
Երբ իմ ձեռքերս կը վերցնեմ
Դէպ ի քու սուրբ դաթիդ։
3—Զիս մի դկորսընցներ ամբարիշտներուն հետ,
Ու անօրէնութիւն գործողներուն հետ,
Որոնք իրենց ընկերներուն հետ խաղաղութիւն կը խօսին,
Բայց սրտերնուն մէջ չարութիւն կայ։
4—Տուր անոնց իրենց գործերուն պէս,
Ու իրենց ըրածներուն չարութեանը պէս.
Իրենց ձեռքերուն գործերուն պէս տուր անոնց,
Հատուցում ըրէ անոնց։
5—Որովհետև անոնք Տէրոջը ըրածները
Ու անոր ձեռքերուն գործերուն մտադրութիւն չեն ըներ,

Պիտի կործանէ զանոնք, ու ՚Լ պիտի չշինէ։
6—Օրհնեալ ըլլայ Տէրը,
Որ լսեց իմ աղաչքիս ձայնը։
7—Տէրը իմ զօրութիւնս ու իմ ասպարս է.
Իմ սիրտս անոր յուսացաւ, ու ես օգնութիւն գտայ.
Ուստի սիրտս ուրախացաւ,
Ու ես իմ երգովս զանիկա պիտի գովեմ։
8—Տէրը անոնց ոյժն է,
Ու իր օծեալին փրկութեանը պաշտպան է։
9—Փրկէ քու ժողովուրդդ,
Ու օրհնէ քու ժառանգութիւնդ.
Նաև հովուէ զանոնք ու յաւիտեան բարձրացուր։

ՍԱՂՄ. ԻԹ

Սաղմոս Դաւթի։

Տէրոջը տուէք, ով ՚հզօրաց որդիներ,
Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն։
2—Տէրոջը տուէք իր անուան փառքը,
Տէրոջը երկրպագութիւն բերք սրբութեան զարդարանքով։
3—Տէրոջը ձայնը լուերուն վրայ է.
Փառաց Աստուածը կ'որոտայ,
Տէրը շատ լուերուն վրայ է։
4—Տէրոջը ձայնը ուժով է,
Տէրոջը ձայնը վեհափառութիւնով է։
5—Տէրոջը ձայնը եղեւինները կը կոտրէ,
Ու Տէրը կը կոտրէ Լիբանանի եղեւիններըը.
6—Զանոնք կը ցնծեցնէ որթու պէս,
Լիբանանը ու Սարիոնը մեզուներուն ձագին պէս.
7—Տէրոջը ձայնը կրակին բոցերը կը ճեղքէ։
8—Տէրոջը ձայնը կը դողացնէ անապատը,
Տէրը կադէսի անապատը կը դողացնէ։
9—Տէրոջը ձայնը եղնիկները կը ծնեցընէ,
Ու անտառները կը մերկացնէ.
Անոր տաճարին մէջ ամէնն ալ կը խօսին անոր փառքը։

10—Տէրը յորհեղեղին վրայ կը նստի,
Տէրը յաւիտեան թագաւոր կը նստի։
11—Տէրը իր ժողովուրդին զօրութիւն պիտի տայ,
Տէրը իր ժողովուրդը խաղաղութիւնով պիտի օրհնէ։

ՍԱՂՄ. Լ

Սաղմոս Դաւթի. տանը նաւակատեաց երգը։

Ով Տէր, կը բարձրացնեմ քեզ, վասն զի ինձ ազատեցիր,
Ու թշնամիներս իմ վրաս չուրախացուցիր։
2—Ով իմ Տէր Աստուածս, քեզի կանչեցի,
Ու ինձ բժշկեցիր։
3—Ով Տէր, իմ անձս գերեզմանէն ՚հանեցիր,
Գուբը իջնողներուն մէջէն ինձ ապրեցուցիր։
4—Սաղմոս երգեցէք Տէրոջը, ով անոր սուրբերը,
Ու անոր սրբութիւնը յիշելով չնորհակալ եղէք։
5—Վասն զի մէկ րոպէ իր բարկութեանը մէջ է,
Բայց իր հաճութեանը մէջ է ԽԸ ԲՈԼՈՐ կեանքին աւետը.
Իրիկունը լաց կայ,
Բայց առաւօն ուրախութիւն։
6—Ես իմ յաջողութեանս մէջ ըսի Թէ Ծառիտան պիտի չսասանիմ։
7—Ով Տէր, քու հաճութիւնովդ իմ լեռս հաստատուն ըրիր.
Երեսդ ծածկեցիր, ու ես խռովեցայ։
8—Ով Տէր, քեզի կը կանչեմ,
Ու Տէրոջը աղաչանք կ'ընեմ։
9—Իմ արիւնիս ի՞նչ օգուտ կ'ըլլայ
Թէ ես գուբը իջնեմ.
Մի՞թէ հողը քեզ պիտի պատմի՞ քու ճշմարտութիւնդ։
10—Լսէ, ով Տէր, ու ողորմէ ինձի.
Ով Տէր, ինձի օգնական եղիր։
11—Իմ սուգս պարի փոխեցիր,

*Կամ, Աստուծոյ

Քուրձս ինծմէ հանեցիր,
Ու ինծի ուրախութիւն հագցուցիր.
12—Որպէս զի Է՛ փառքս աղմոս երգէ քեզի ու ալ չլռէ։
Ով իմ Տէր Աստուածս, յաւիտեան քեզ պիտի գովեմ։

ՍԱՂՄ. ԼԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, քեզի յուսացայ,
Ծաւխեան չամչիմ.
Քու արդարութիւնովդ ինձ ազատէ.
2—Քու ականջդ ինծի խոնարհեցուր,
Շուտով ինձ ազատէ,
Ինծի ամրութեան վէմ մը եղիր,
Ու՞ր ինձ ապրեցնելու համար ապաստանի տուն մըւ։
3—Վասն զի իմ վէմս ու բերդս դուն ես,
Ու քու անուանդ համար ինծի առաջնորդէ ու ինձ կառավարէ։
4—Որոգայթին ինձ համար գաղտուկ լարեր են,
Վասն զի իմ զօրութիւնս դուն ես։
5—Իմ հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ.
Ով Տէրս Աստուած ճշմարտութեան, դուն ինձ փրկեցիր։
6—Մնոսի ունայնութիւններ պահողները աստեղծ.
Բայց ես Տէրոջը յուսացայ։
7—Քու ողորմութիւնովդ պիտի ցնծամ և ուրախ ըլլամ.
Վասն զի իմ թշուառութիւնս տեսար,
Ու՞ր իմ անձս տառապանքներու մէջ գիտցար.
8—Ու ինձ թշնամիին ձեռքը չմատնեցիր,
Հոգս իմ ոտքերս լայնարձակ տեղ մը կանգնեցուցիր։
9—Ով Տէր, ողորմի ինծի, վասն զի նեղութեան մէջ եմ.
Սրտնեղութենէ մաշեցաւ իմ աչքս, իմ անձս ու իմ փորս։
10—Վասն զի իմ կեանքս տրտմութենէ՝ Ու տարիներս հառաչանք ընելէ սպառեցան.
Իմ ոյժս թշուառութենէս ակրացաւ, Ոսկորներս ալ մաշեցան։
11—Իմ բոլոր թշնամիներուս, մանաւանդ դրացիներուս, առջև նախատինք եղայ,
Ու իմ ծանօթներուս երկիւղ եղայ.
Ինձ դուրսը տեսնողները ինձմէ կը փախչէին։
12—Մեռածի պէս սրտէ մոռցուած եղայ,
Կորսուած անօթի նմանեցայ։
13—Վասն զի չատերու բամբասանքը լսեցի.
Չորս կողմս վախ կար.
Երբ անոնք ինծի հակառակ մէկտեղ ժողովեցան,
Խորհուրդ կ'ընէին որ հոգիս առնեն։
14—Բայց ես քեզի յուսացայ, ով Տէր.
Ըսի Թէ Դուն ես իմ Աստուածս.
15—Իմ ժամանակներս քու ձեռքդ են.
Փրկէ զիս թշնամիներուս ձեռքէն ու հալածողներէն։
16—Քու դառնոյիդ վրայ երեսդ փայլեցուր,
Քու ողորմութիւնովդ զիս փրկէ։
17—Ով Տէր, չամչնամ,
Վասն զի քեզի կանչեցի.
Ամբարիշտները թող ամչնան,
Ու՞ր գերեզմանին մէջ թող լռեն կենան։
18—Թող պապանձին սուտլսօս շրթունքները,
Որոնք հպարտութեամբ և նախատինքով
Արդարասաստութիւն կը խօսին արդարին դէմ։
19—Ո՛րքա՜ափ մեծ է քու բարութիւնդ
Զոր քեզմէ վախցողներուն համար պահեցիր,
Ու՞ր քեզի յուսացողներուն համար ըրիր
Մարդոց որդիներուն առջև։
20—Զանոնք քու երեսիդ ծածկոյթովը պիտի ծածկես
Մարդոց դաւաճանութիւններէն.
Խորանի մէջ պիտի ծածկես զանոնք
Լեզուներուն հակառակութենէն։
21—Օրհնեալ ըլլայ Տէրը,
Վասն զի իր ողորմութիւնը զարմանալի ըրաւ ինծի
Պարսպած որ քաղաքի մէջ։
22—Իմ չփոթութեանս մէջ ըսի Թէ
Կտրուեցայ ես քու աչքերուդ առջևէն.
Սակայն դուն իմ ազօթքիս ձայնը լսեցիր

Սրբ քեզի ազազակեցի,
23—Տէրը սիրեցէք, ով անոր բոլոր սուրբերը,
Վասն զի Տէրը հաւատացեալները կը պահէ,
Ու ամբարտաւանութիւն ընողներուն ահաւորին հատուցում կ'ընէ.
24—Կորիճ եղէք ու ձեր սիրտը Թող զօրանայ,
Դուք ամէնդ որ Տէրոջը կը յուսաք։

ՍԱՂՄ. ԼԲ

Դաւիթի *երգը։

Երանի՛ անոր՝ որուն յանցանքներուն Թողութիւն եղաւ,
Ո՛ր անոր մեղքերը ծածկուեցան։
2—Երանի՛ այն մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չհաշիւր անոր,
Ու անոր հոգիին մէջ նենգութիւն չկայ։
3—Երբ լուռ կեցայ, ոսկորներս մաշեցան
Իմ ամէն օր ազազակելովս.
4—Վասն զի ցորեկ ու գիշեր քու ձեռքդ իմ վրաս ծանրացաւ.
Իմ թացութիւնս ամառուան չորութեան դարձաւ։ (Սէլա)
5—Իմ մեղքս քեզի յայտնեցի,
Ու իմ անօրէնութիւնս չծածկեցի.
Ըսի թէ Տէրոջը պիտի խոստովանիմ յանցանքներս.
Ու դուն Թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը։ (Սէլա)
6—Ասոր համար ամէն աստուածապաշտ աղօթք պիտի ընէ քեզի
Ձու գտնուելու ժամանակդ.
Արդարև շատ ջուրերուն հեղեղներուն ատնը
Անոր պիտի չմօտենան,
7—Դուն հս իմ ապաստանարանս.
Նեղութենէ պիտ պիտի պահես.
Դուն զիս պիտի պատես ազատութեան երգերով։ (Սէլա)
8—Քեզի պիտի սորվեցնեմ, ու երթալու ճամբադ պիտի ցուցնեմ քեզի.
*Քեզ պիտի խրատեմ՝ իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ։
9—Ձիու պէս ու ջորիի պէս մի ըլլաք, ուշադիր միտք չունին,
Ո՛ր երեսնց սանձին ու պատառըցին զարդուվը կապելու է, որպէս զի քեզի չմօտենան։
10—Ամբարշտին տանջանքները շատ պիտի ըլլան,
Սակայն Տէրոջը յուսացողին չորս կողմը ողորմութիւնը պիտի պատէ։
11—Ով արդարներ, Տէրոջմով ուրախ եղէք ու ցնծացէք.
Ցնծութեամբ երգեցէք դուք ամէնդ՝ որ սրտով ուղիղ էք։

ՍԱՂՄ. ԼԳ

Ով արդարներ, Տէրոջմով ցնծացէք.
Ուղիղներուն կը վայլէ օրհնութիւն Երգել։
2—Գովեցէք Տէրը քնարով,
Տասը լար ունեցող սաղմոս երգեցէք անոր։
3—Նոր երգ մը երգեցէք անոր,
Վարպետութեամբ նուագելով զարկէք ցնծութեան ձայնով։
4—Վասն զի Տէրոջը խօսքը շիտակ է,
Ու անոր բոլոր գործերը ճշմարտութեամբ են։
5—Անիկա արդարութիւնը ու իրաւունքը կը սիրէ.
Տէրոջը ողորմութիւնովը երկիրը լեցուն է։
6—Տէրոջը խօսքովը երկինք ստեղծուեցաւ,
Ու իր բերնին հոգիովը՝ անոր բոլոր զօրքը։
7—Ծովուն ջուրերը †գեղի մը պէս՝ կը ժողվէ,
Անդունդները շտեմարաններուն մէջ կը դնէ։
8—Բոլոր երկիր Թող Տէրոջմէն վախնայ,
Ո՛ր անկէ դողան աշխարհի բոլոր բնակիչները։
9—Վասն զի անիկա ըսաւ, ու եղաւ.
Ինք հրամայեց, ու հաստատուեցաւ։

*Կամ, խնամատարութեան սաղմոսը

*Կամ, խորհուրդ պիտի բնեմ †Եղէ համաձ

†Կամ, որպէս թէ սրկի մը մէջ

10—Տէրը կը ցրուէ հեթանոսներուն խորհուրդները,
Փուճ կը հանէ ժողովրդներուն դիտաւորութիւնները։
11—Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը մնայ,
Ո՛ր անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մինչև ազգ։
12—Երանի՛ այն ազգին՝ որուն Աստուածը Տէրն է,
Ո՛ր այն ժողովրդին՝ զոր իրեն ժառանգութեան համար ընտրեց։
13—Տէրը երկինքէն կը նայի,
Բոլոր մարդոց որդիները կը տեսնէ։
14—Իր բնակութեանը տեղէն
Աշխարհի բոլոր բնակիչները կը դիտէ։
15—Անոնց սիրտերը հաւասարապէս ինք ստեղծեց,
Անոնց բոլոր ըրածները կ'իմանայ։
16—Թագաւոր մը զօրքի չատութիւնով չազատիր.
Ոչ ալ զօրաւոր մարդ մը ուժի չատութիւնով կը փրկուի։
17—Ձին ազատութեան համար պարապ բան է,
Ու իր ուժին չատութիւնովը չկրնար ազատել։
18—Ահա Տէրոջը աչքը իրմէ վախցողներուն
Ո՛ր ողորմութեանը յուսացողներուն վրայ է,
19—Անոնց անձը մահուանէ փրկելու
Ու սովի ժամանակ զանոնք ապրեցնելու համար։
20—Մեր անձը Տէրոջը կ'սպասէ.
Մեր օգնութիւնը ու մեր վահանը անիկա է։
21—Վասն զի մեր սիրտերը անով կ'ուրախանան,
Քանզի անոր սուրբ անուանը յուսացանք։
22—Ով Տէր, քու ողորմութիւնդ մեր վրայ ըլլայ,
Ինչպէս քեզի կը յուսանք։

*Այսինքն, Անքուսք. տես ա Թագ. ԻԱ. 10, ևն.։

14—Զարութենէ հեռացիր ու բարութիւն ըրէ,
Խաղաղութիւն փնտռէ ու անոր ետեւէն գնա։
15—Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են,
Ու անոր ականջները՝ անոնց աղաղակին։
16— Տէրոջը երեսը չարագործներուն դէմ է,
Անոնց յիշատակը երկրէ բնաջինջ ընելու համար։
17—Արդարները կ'աղաղակեն, ու Տէրը կը լսէ,
Ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք։
18—Տէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է,
Ու հոգիով խոնարհածները կ'ապրեցնէ։
19—Արդարին նեղութիւնները շատ են,
Բայց Տէրը ամէնէն կը փրկէ զանիկա։
20—Անոր բոլոր ոսկորները կը պահէ,
Անոնցմէ մէ՛կը չկոտրուիր։
21— Չարութիւնը ամբարիշտը պիտի մեռցնէ,
Ու արդարը ատողները պիտի դատապարտուին։
22—Տէրը իր ծառաներուն անձը կը փրկէ,
Եւ իրեն յուսացողներէն բնաւ մէկը պիտի չդատապարտուի։

ՍԱՂՄ. ԼԵ

Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, ինծի հետ հակառակողներուն հետ հակառակէ.
Ինծի հետ պատերազմողներուն հետ պատերազմէ։
2—Վահանը ու վահանը առ,
Ու ելիր ինծի օգնութիւն ընելու։
3—Նաև նիզակը քաշէ, ու ճամբան գոցէ զիս հալածողներուն դէմ.
Քո՛ անձիս թէ՝ Քու փրկութիւնդ ես եմ։
4—Իմ անձս փնտռողները ամչնան ու խայտառակ ըլլան.
Եւ դառնան ու ամչնան
Անոնք որ ինծի համար չարութիւն կը խորհին։
5—Հովին առջև եղած մղեղին պէս ըլլան անոնք.
Ու Տէրոջը հրեշտակը փախցնէ զանոնք։
6—Անոնց ճամբան խաւար ու սրդիւնցնող ըլլայ,
Ու Տէրոջը հրեշտակը հալածէ զանոնք։
7—Վասն զի զուր տեղը իրենց որոգայթը փոսի մէջ ինծի համար ծածկեցին,
Ո՛ զուր տեղը ֆո՛ս փորեցին անձիս համար։
8—Թող անոր վրայ յանկարծ աւերում գայ,
Եւ իր ծածկած որոգայթը զինք բռնէ.
Նոյն աւերման մէջ իյնայ։
9—Սակայն իմ անձս Տէրոջմով պիտի ցնծայ,
Անոր փրկութիւնովը ուրախ պիտի ըլլայ։
10—Իմ բոլոր ոսկորներս պիտի ըսեն,
Տէր, ո՞վ քեզի նման է,
Որ ազքատը կ'ազատես անկէ որ կը զօրանայ անոր վրայ,
Ու ազքատը և անանկը՝ իր յափշտակողէն։
11—Սուտ վկաները ելան,
Չգիտցածներս կը հարցնէին ինծի։
12—Աղէկութեան փոխարէն ինծի գէշութիւն ըրին՝
Կողոպտելով իմ անձս։
13—Բայց ես անոնց հիւանդութեան ատեն քուրձ կը հագնէի,
Իմ անձս ծոմով կը չարչարէի,
Ու իմ ազօթքս իմ ծոցս *պիտի դառնայ՝
14—Ինչպէս իմ ընկերիս կամ եղբօրս հետ՝ այդպէս ալ անոնց հետ կը վարուէի,
Իր մօրը համար սուգ ունեցողի մը պէս տրտմութեամբ կը ցնծայի։
15—Բայց անոնք իմ կաղութեանս ատեն խնդացին ու ժողվուեցան.
Չարնողները իմ վրաս ժողվուեցան, ու ես բո՛ն չէի գիտեր.
Կը ճեղքէին զիս ու չէին դադարեր.
16—Խնճոյքի կեղծաւոր խեղկատակներուն հետ
Ակռաներնին իմ վրաս կը կրճտէին։
17—Ով Տէր, մինչև ե՞րբ պիտի նայիս.

*Կամ, կը դառնար

Ազատէ իմ անձս անոնց աւերումներէն,
Իմ *կեանքս՝ առիւծի կորիւններէն։
18—Մեծ ժողովքի մէջ քեզ պիտի գովինամ,
Շատ ժողովուրդի մէջ քեզ պիտի օրհնեմ։
19—Ոյս տեղը ինծի թշնամի եղողները թող իմ վրաս չխնդան,
Առանց պատճառի զիս ատողները աչքով նշան թող չտան։
20-Վասն զի խաղաղութիւն չեն խօսիր,
Հապա երկրի մէջ հանդարտներուն դէմ նենգութիւն կը խորհին,
21—Ու իրենց բերանը ինծի դէմ կը լայնցնեն՝ ըսելով,
Վա՛չ, վա՛չ, մեր աչքերը տեսան։
22—Ով Տէր, դուն տեսար, լուռ մի կենար.
Ով Տէր, ինծմէ մի հեռանար։
23—Արթնցիր, ով իմ Աստուածս ու Տէրս,
Ու իմ դատաստանիս ու դատիս ելիր։
24—Քու արդարութեանդ համեմատ իրաւունք ըրէ ինծի, ով իմ Տէր Աստուածս,
Եւ իմ վրաս թող չխնդան.
25—Իրենց սրտին մէջ թող չըսեն թէ Ահա մեր կամքը եղաւ,
Ո՛ թող չըսեն թէ կլլեցինք զանիկա։
26—Թող ամչնան ու մէկտեղ խայտառակ ըլլան
Անոնք որ իմ չարիքիս վրայ կը խնդան.
Իմ վրաս հպարտացողները
Ամօթ ու խայտառակութիւն հագնին։
27—Թող ցնծան և ուրախանան
Անոնք որ իմ արդարութիւնս կ'ուզեն,
Ու միշտ թող ըսեն թէ Աստուած մեծնայ,
Որ իր ծառային խաղաղութիւնը կ'ուզէ։
28—Ու իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի,
Ո՛ ամէն օր քու գովութիւնդ։

*Եբր. միամօրս

ՍԱՂՄ. ԼԶ

Գլխաւոր երաժշտին. Ս—գմա Դաւթի, Տէրոջը ծառային։

Ամբարշտին չարութեանը վրայով սրտիս մէջն խօսքը ա՛յս է.
Աստուծոյ վախը չկայ անոր աչքերուն առջև։
2—Վասն զի ինքզինք կը չողոքրթէ իր աչքերուն առջև՝
Իր անօրէնութեանը գտնուելուն ու ատելի ըլլալուն վրայով։
3—Անոր բերնին խօսքերը անօրէնութիւն ու նենգութիւն են.
Բարին ընելու համար խմաստուն ըլլալը մէկդի ձգեց։
4—Իր անկողնին մէջ անօրէնութիւն կը մտածէ,
Ո՛ կը կենայ այնպիսի ճամբու մէջ որ ազէկ չէ.
Եւ չարէն չզզուիր։
5—Ով Տէր, քու ողորմութիւնդ մինչև երկինքն է հասնի՝
Ո՛ քու ճշմարտութիւնդ՝ մինչև ամպերը։
6—Քու արդարութիւնդ հզօր լեռներու պէս է,
Քու իրաւունքդ մեծ անդունդ մըն է.
Մարդիկը ու անասունները դուն կ'ապրեցնես, ով Տէր։
7—Ով Աստուած, ի՛նչ գիրազանց է քու գթութիւնդ,
Որ մարդոց որդիները քու թեւերուդ հովանաւորութեանը կ'ապաւինին։
8—Անոնք քու տանդ պարարտութենէն պիտի կշտանան,
Ու քու հաճութիւններուդ գետէն պիտի խմցնես անոնց։
9—Վասն զի կեանքի աղբիւրը քու քովը է.
Քու լուսովդ լոյս պիտի տեսնենք։
10—Քու գթութիւնդ քեզ ճանչցողներուն չարունակէ,
Ու քու արդարութիւնդ՝ սրտով ուղիղներուն։
11—Ամբարտաւանութեան ոտքը թող իմ վրաս չգայ,
Ու չարերուն ձեռքը զիս չշարժէ։

12—Հոն ինկան անօրէնութիւն գործ-
ծողները.
Գեահինը զարնուեցան ու չկրցան վեր
կալել։

ՍԱՂՄ. ԼԵ

Սաղմոս Դաւթի.

Զարերուն համար մի նեղնաս,
Անօրէնութիւն գործողներուն մի նա-
խանձիր.
2—Վասն զի անոնք խոտի պէս չուտով
պիտի կտրուին,
Ու կանանչ խոտի պէս պիտի չորնան։
3—Տէրոջը յուսա ու բարութիւն ըրէ,
Երկրին վրայ բնակէ ու ճշմարտու-
թեան մէջ արածուէ։
4—Ու Տէրոջմով ուրախացիր.
Ու անիկա կու տայ քեզի քու սրտիդ
խնդրուածքները։
5—Տէրոջը յանձնէ քու ճամբադ,
Ու անոր յուսա, և անիկա պիտի կա-
տարէ,
6—Ու դուրս պիտի հանէ քու արդա-
րութիւնդ լոյսի պէս,
Ու քու իրաւունքդ կէսօրուան պէս։
7—Տէրոջը համբերէ ու անոր սպասէ,
Ըս մի նեղնար իր ճամբան յաջողու-
թեամբ գացողին համար,
Ո՞ խարէութիւն ընող մարդուն հա-
մար։
8—Դադարէ բարկութենէ, ու սրդո-
ղութը վերջ ըրէ.
Մի նեղնար, որ չարութիւն ընես։
9—Վասն զի չարագործները պիտի կոր-
սուին,
Սակայն Տէրոջը համբերողները երկիրը
պիտի ժառանգեն։
10—Վասն զի քիչ ժամանակէ ետև ամ-
բարիշտը պիտի չըլլայ,
Ու անոր տեղը պիտի փնտռես, ու ինք
պիտի չգտնուի։
11—Սակայն հեզերը պիտի ժառանգեն
երկիրը,
Ու խաղաղութեան առատութիւնովը ու-
րախ պիտի ըլլան։
12—Մեղաւորը արդարին դէմ չար կը
խորհի,
Ու անոր վրայ ակռաները կը կրճտէ։
13—Տէրը ծաղր պիտի ընէ զանիկա,
Վասն զի անոր օրը հասնելու վրայ կը
տեսնէ։
14—Մեղաւորները թուր քաշեցին,
Ու աղեղնին լարեցին՝
Աղքատը ու անանկը վար ձգելու համար,
*Շիտակ ճամբու մէջ քալողները սպան-
նելու համար։
15—Անոնց թուրը իրենց սիրտը պիտի
մտնէ,
Ու անոնց աղեղները պիտի կոտրտին,
16—Արդարին քիչ բանը
Շատ ամբարիշտներու առատ ստաց-
ուածքէն աղէկ է։
17—Վասն զի ամբարիշտներուն բա-
զուկները պիտի կոտրուին,
Բայց արդարներուն †ապաւէնը Տէրն է։
18—Արդարներուն օրերը գիտէ Տէրը,
Ու անոնց ժառանգութիւնը յաւիտե-
նական պիտի ըլլայ։
19—փորձանքի ժամանակ պիտի չա-
մչկնան,
Ու սովի օրերը պիտի կշտանան։
20—Բայց ամբարիշտները պիտի կոր-
սուին,
Ու Տէրոջը թշնամիները ‡գառնուկներու
ճարպին պէս պիտի ապառնին,
Մուխի պէս պիտի ապառնին։
21—Ամբարիշտը փոխ կ'առնէ ու չվճա-
րեր,
Սակայն արդարը կ'ողորմի ու կու տայ։
22—Վասն զի անոր օրհնածները պիտի
ժառանգեն երկիրը,
Բայց անկէ անիծուածները պիտի կոր-
սուին։
23—Բոլէ մարդուն քայլերը Տէրոջմէ կը կարգադրուին,
Ու անոր ճամբուն կը հաճի։
24—Թէև իյնայ, պիտի չկործանի,
Վասն զի Տէրը անոր ձեռքը կը բռնէ։
25—Տղայ էի ու ծերացայ,
Բայց արդարը անտես եղած չտեսայ,
Կամ անոր զաւակը հաց մուրացող։
26—Ամէն օր կ'ողորմի ու փոխ կու
տայ.
Ու անոր սերունդը օրհնուած է։

*ՆԲԳ. ձամբով չիտակ եղողները
†ՆԲԳ. նեցուկը
‡կամ, պարարտ ոչխար

27—Չարութենէ հեռ կեցիր ու բա-
րութիւն ըրէ,
Ու յաւիտեան պիտի մնաս.
28—Վասն զի Տէրը կը սիրէ իրաւունքը,
Ու իր սուրբերը երեսէ չձգեր.
Յաւիտեան կը պահուին անոնք.
Բայց ամբարիշտներուն սերունդը պիտի
կորսուի,
29—Արդարները պիտի ժառանգեն եր-
կիրը,
Ու յաւիտեան անոր վրայ պիտի բնակին։
30—Արդարին բերանը խնամուա-
թիւն կը խօսի,
Ու անոր լեզուն իրաւունք կը զրուցէ։
31—Իր Աստուծոյն օրէնքը իր սրտին
մէջ է,
Ու անոր քայլերը պիտի չսահին։
32—Մեղաւորը արդարը կը դիտէ,
Ու զանիկա մեռցնելու եւեռէ կ'ելլայ։
33—Տէրը անոր ձեռքը պիտի չձգէ զա-
նիկա,
Ու անոր դատաստանը տեսնուած ատեն
պիտի չդատապարտէ զանիկա։
34—Տէրոջը համբերէ ու անոր ճամբան
պահէ,
Ու անիկա քեզ կը բարձրացնէ որպէս
զի երկիրը ժառանգես.
Ամբարիշտներուն սատակումը պիտի
տեսնես։
35—Ամբարիշտը զօրացած տեսայ,
Ու իր տեղը կեցող կանանչ ծառի մը
պէս տարածուած.
36—Բայց ան անցաւ, ու ահա չկար.
Ու զանիկա փնտռեցի, բայց չգտնուեցաւ։
37—Արդարը նկատէ և ուղիղին նայէ.
Վասն զի խաղաղարար մարդը բոլէ
վախճան պիտի ունենայ։
38—Իսկ անօրէնները միկտեղ պիտի
կորսուին.
Ամբարիշտներուն վախճանը կորսուա
պիտի ըլլայ։
39—Բայց արդարներուն փրկութիւնը
Տէրոջմէն է,
Նեղութեան ժամանակ ինք անոնց ա-
պաւէնն է։
40—Ու Տէրը պիտի օգնէ անոնց և պի-
տի ազատէ զանոնք.
Ամբարիշտներէն պիտի ազատէ,
Ու պիտի փրկէ զանոնք, վասն զի անոր
կը յուսան։

ՍԱՂՄ. ԼԸ

Սաղմոս Դաւթի. յիշատակի համար։

Ով Տէր, քու սրամտութենովդ պիս
մի յանդիմաներ,
Ու բարկութենովդ պիս մի խրատեր։
2—Վասն զի քու նետերդ իմ ներսիդ-
դիս մխուեցան,
Ու քու ձեռքդ իմ վրաս կ'իջնէ։
3—Իմ մարմինս մէջ առողջութիւն չկայ
քու բարկութենդ համար,
Ո՞ ոսկորներուս մէջ հանգստութիւն
չկայ իմ մեղքիս համար։
4—Վասն զի անօրէնութիւններս գլխուս
վեր բարձրացան.
Ծանր բեռի պէս *իմ վրաս ծանրա-
ցած են։
5—Վէրքերս հոտեցան ու փտեցան
իմ յիմարութենես պատճառաւ։
6—Նուաստացայ ու խիստ ցածցայ.
Ամէն օր սրտամբ կը պտրտիմ։
7—Վասն զի աղիքներս չերմութենով
լեցուեցան,
Ու մարմինս մէջ առողջութիւն չկայ։
8—Տկարացայ ու խիստ ճնշուեցայ։
Սրտիս հեծութենէն մռնչեցի։
9—Ով Տէր, իմ ամէն բաղձանքս
քու առջեւդ է,
Ու իմ հեծութիւնս քեզմէ չծածկուե-
ցաւ։
10—Սիրտս կը բաբախէ, ոյժս զիս թող
տուաւ,
Ու իմ աչքերուս լոյսը՝ ան ալ ինծի
հետ չէ։
11—Սիրականներս ու ընկերներս իմ
չարչարանքիս հեռու կը կենան,
Ազգականներս ալ հեռու կը կենան.
12—Ու անձս փնտռողները խնդիր որո-
գայթ կը լարեն,
Ու ինծի չարիք ուզողները անօրէնու-
թիւն կը խօսին,
Ու ամէն օր նենգութիւն կը մտածեն։
13—Սակայն ես խուլի պէս չեմ լսեր,
Ու բերանը չբացող համրի մը պէս եմ,
14—Ու ես այնպէս մարդու մը պէս եմ
որ չլսեր,
Ու հակառակ խօսք չկայ իր բերանը։

*ՆԲԳ. ինծի՛

15—Վասն զի, ով Տէր, հա՛ քեզի կը յուսամ.
Դուն պիտի պատասխանես, ով իմ Տէր Աստուածս,
16—վասն զի ըսի, Թող չխնդան իմ վրաս.
Ոտքիս սահած ժամանակը ինծի դէմ պէրճա՛ կը մեծցնեն,
17—վասն զի ես կաղ ըլլալու պատրաստ եմ,
Ու իմ ցաւս ամէն առեն առջեւս է։
18—Վասն զի անօրէնութիւնս պիտի պատմեմ,
Ո՛ւ մեղքիս համար հոգ պիտի ընեմ։
19—Բայց թշնամիներս ողջ են, ուժովցան.
Զիս զուր տեղը ատողները չատցան.
20—Ու աղէկութեան փոխարէն գէշութիւն ընողները
Ինծի դէմ կը կենան, վասն զի ես աղէկութեան հետեւէ կ'երթամ։
21—Զիս մի թողուր, ով Տէր,
Ով իմ Աստուածս, ինծմէ մի հեռանար։
22—Ինծի օգնութիւն ընելու արագացիր,
Ով Տէր, իմ փրկութիւնս։

ՍԱՂՄ. ԼԹ

Գլխաւոր երաժշտին Իդիթունի. Սաղմոս Դաւթի։

Ըսի թէ ձամբաներուս զգուշութիւն ընեմ,
Որպէս զի լեզուս մեղք չգործեմ.
Բերանս սանձով պահեմ՝
Ամբարիշտին իմ առջեւս եղած ատենը։
2—Մունջ եղայ լռութիւնով,
Աղէկութեան վրայով ալ լռեցի,
Ու ցաւս չարժեցաւ։
3—Սիրտս բորբոքեցաւ ներսիդիս,
*Յերմութեանս մէջ կրակ վառեցաւ.
Այն ատեն լեզուս խօսեցաւ,
4—Ցուցուր ինծի, ով Տէր, իմ վերջս,
Ու օրերուս չափը ո՛րչափ է,
Որպէս զի գիտնամ թէ ի՛նչպէս անցաւոր եմ։

*Կամ, Մտածութեանս

5—Ահա իմ օրերս թիզերու չա՛փ դրիր,
Ու իմ կեանքս ոչնչի պէս է քու առջեւդ.
Իրաւ ամէն մարդ ԲԽԼ հաստատուած ըլլա՛յ։
Բա՛յց բոլորովին ունայնութիւն է։ (Սէլա)
6—Արդարեւ մարդը սուտերի մը պէս կը պարպի,
Արդարեւ փուճ տեղը անհանգիստ կ'ըլլա՛յ.
Կը դիզէ բայց չգիտեր թէ ո՛վ պիտի առնէ զանիկա։
7—Ու հիմա ի՞նչ բանի սպասեմ, ով Տէր.
Իմ յոյս քեզի է։
8—Փրկէ զիս իմ բոլոր յանցանքներէս,
Զիս յիմարներուն նախատինք ըլլալու մի դներ։
9—Մունջ եղայ ու բերանս չբացի,
Վասն զի դուն ըրիր։
10—Քու հարուածդ հեռացուր ինծմէ.
Զեռքիդ զարնելովը ես կորսուեցայ։
11—Անօրէնութեան համար յանդիմանութիւններով կը խրատես մարդը,
Ցեցի մը պէս կը հալեցնես անոր ցանկալի բաները.
Իրաւ ամէն մարդ ունայնութիւն է։ (Սէլա)
12—Ով Տէր, լսէ իմ աղօթքս, ու ականջ դիր աղաղակիս.
Արցունքներուս մի լռեր.
Վասն զի քու առջեւդ պանդուխտ մըն եմ ես,
Հիւր մը՝ իմ բոլոր նախնիքներուս պէս։
13—Թոյլատուութիւն ըրէ ինծի որ զուարթանամ,
Քանի որ չեմ գացեր այն տեղը՝ որ ալ պիտի չգտնուիմ։

ՍԱՂՄ. Խ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

Սպասելով սպասեցի Տէրոջը,
Ու ծռեցաւ ինծի ու լսեց իմ աղաղակս.
2—Ու զիս կորստեան փոսէն, տղմոտ կաւէն, հանեց,
Ու ոտքերս վէմի վրայ ամրցուց ու քալուածքս հաստատեց.
3—Ու բերանս դրաւ նոր երգ մը,

Մեր Աստուծոյն գովութիւնը։
Շատերը պիտի տեսնեն ու պիտի վախնան,
Ու Տէրոջը պիտի յուսան։
4—Երանի՛ այն մարդուն՝ որ իր յոյսը Տէրոջը վրայ կը դնէ,
Ու չնայիր հպարտներուն ու սուտերուն դարձողներուն։
5—Շատ են սքանչելիքներդ զորոնք դուն ըրեր ես,
Ով իմ Տէր Աստուածս,
Ու մեր վրայ մտածածդ խորհուրդներդ.
Մէ՛կը չկրնար կարգաւ պատմել քու առջեւդ.
Պիտի պատմէի ու խօսէի,
Բա՛յց համրանքէն աւելի շատ են։
6—Զոհի ու ընծայի չէ՛ուզեցար,
Հա՛մ իմ ականջներս բացիր.
Ողջակէզ ու մեղքի պատարագ չպահանջեցիր։
7—Այն ժամանակ ըսի թէ Ահա կուգամ ես.
Գիրքի տախի մէջ ինծի համար գրուած է,
8—Ով իմ Աստուածս, քու կամքդ կատարելու փափաքեցայ,
Ու քու օրէնքդ իմ ներսիդիս է։
9—Արդարութիւն քարոզեցի ժողովքի մէջ.
Ահա չրթունքներս չարգիլեցի.
Ով Տէր, դուն գիտես։
10—Սրտիս մէջ գաղտուկ չպահեցի քու արդարութիւնդ.
Հաւատարմութիւնդ ու փրկութիւնդ պատմեցի.
Քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ չտուար ժողովքին չծածկեցի։
11—Դուն, ով Տէր, քու գթութիւնդ ետ մի պահեր ինծմէ.
Քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ ամէն ժամանակ պաշտպանեն զիս։
12—Վասն զի անթիւ չարիքներ զիս պատեցին.
Անօրէնութիւններս ինծի հասան, ու ես չեմ կրնար տեսնել.
Գլխուս մազէն շատ են, ու սիրտս զիս թողուց։
13—Ով Տէր, զիս փրկելու կամք ըրէ.
Ով Տէր, ինծի օգնելու արագացիր։
14—Թող ամչնան ու մէկտեղ խայտառակ ըլլան
Իմ անձս փնտռողները՝ զանիկա կորսընցնելու համար.
Ետ դառնան ու ամօթով ըլլան
Ինծի չարութիւն ուզողները.
15—Թող *ամչնալով կոծանէն
Անոնք որ ինծի վա՛շ վա՛շ կ'ըսեն,
16—Ամէն քեզ փնտռողները
Քեզմով թող ցնծան ու ուրախանան.
Քու փրկութիւնդ սիրողները
Ամէն ժամանակ թող ըսեն, Տէրը մեծցա՛ւ։
17—Բայց ես աղքատ ու անանկ եմ,
Ս՛ա՛յն Տէրը հոգ կը տանի ինծի.
Իմ օգնականս ու փրկիչս դուն ես,
Ով իմ Աստուածս, մի ուշանար։

ՍԱՂՄ. ԽԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

Երանի՛ անոր որ աղքատին հոգ կը տանի.
Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկա։
2—Տէրը պիտի պահէ ուապրեցնէ զանիկա։
Երանելի պիտի ըլլայ երկրի վրայ.
Ու թշնամիներուն կամքին պիտի չմատնես զանիկա։
3—Տէրը անոր ոյժ պիտի տայ տկարութեան անկողնին մէջ.
Անոր ամէն անկողինը պիտի գարձնես անոր հիւանդութեան ատենը։
4—Ես ըսի, Ով Տէր, ողորմի՛ ինծի,
Բժշկի՛ իմ անձս, վասն զի ես քեզի դէմ մեղանչեցի։
5—Թշնամիներս գէշ կը խօսին իմ վրայս.
Ըռնե՞վ ԲՒ մ'երբ պիտի մեռնի ու անունը կորսուի։
6—Եթէ հիւր իմ գալու ըլլայ տեսնելու համար, ունայնութիւն կը խօսի.
Իր սիրտը անօրէնութիւն կը ժողվէ իրեն համար,
Որդեւ՛ն վ դուրս կելլելով պրուցէ։
7—Ինծի դէմ մէկտեղ կը փսփսան ամէն զիս ատողները.

*Կամ, իրենց ամօթին պատճառաւ

իմ վրայովս չարութիւն կը խորհին.
8—Կ'ըսէ՞ն Ի՛ր Զարթութեան բան մը ա-
նոր վրայ թափեցաւ.
Ու հիմ՞ա որ պառկած է, ալ պիտի չկրկէ՞
9—Մինչեւ անգամ իմ բարեկամս՝ որուն
ապաւինեցի էի,
իմ հացս ուտողը, ինծի դէմ կրունկ
վերցուց։
10—Սակայն, ով Տէր, դուն ողորմէ
ինծի ու կանգնեցուր զիս,
Ու ես փոխարէնը տամ անոնց։
11—Ասկէ գիտեմ որ ինծի կը հաւնիս,
Որ Թշնամիս իմ վրաս չզարծիներ։
12—Ու զիս իմ անմեղութեանս մէջ կը
պահես,
Ու յաւիտեան զիս քու առջեդ կը կայ-
նեցնես։
13—Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստ-
ուածը
Յաւիտեանս յաւիտենից։ Ամէն ու ամէն։

ՍԱՂՄ. ԽԲ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդիներուն
երգը։

Ինչպէս եղջերուն կարօտ վտակներուն կը փափաքի,
Այնպէս ալ իմ անձս քեզի կը փափաքի, ով Աստուած։
2—Հոգիս ծարաւի է Աստուծոյ, կեն-
դանի Աստուծոյ.
Ե՞րբ պիտի գամ ու երեւնամ Աստու-
ծոյ առջեւ։
3—Ցորեկ ու գիշեր արցունքներս ինծի
հաց եղան,
Որովհետեւ ամէն օր ինծի կ'ըսեն Թէ
Ո՞ւր է քու Աստուածդ։
4—Այս բաները միտքս կը բերեմ,
Ու հոգիս կը թափեմ իմ ներսիդիս,
Փութփութելով որ բազմութեան հետ եր-
թամ,
Անոնց հետ հանդէսով Աստուծոյ տու-
նը մտնեմ
Ուրախութեան ու օրհնութեան ձայնով,
Տօնախմբող բազմութեան հետ։
5—Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
Ու ինչո՞ւ կ'ողողուիս իմ ներսիդիս անհանգիստ ես։
Աստուծոյ յուսա, վասն զի անգամ մըն
ալ զանիկա պիտի գովեմ,
Ան է իմ երեսիս փրկութիւնը ու իմ
Աստուածս։

ՍԱՂՄ. ԽԳ

Ինծի դատաստան բրէ, ով Աստ-
ուած, ու իրաւունքս պաշտպանէ
Սուրբ չեղող ազգէն.
Նենգաւոր ու անօրէն մարդէն զիս ա-
զատէ։
2—Քանզի դուն ես իմ ամրութեանս
Աստուածը.
Ինչո՞ւ զիս կը մերժես,
Ինչո՞ւ տրտում պտրտիմ
Թշնամիին հարստահարութենէն։
3—Քու լոյսդ ու ճշմարտութիւնդ զրկէ.
Անոնք առաջնորդեն ինծի, ու զիս հա-
նեն
Քու սուրբ լեռդ ու քու բնակարան-
ներդ։

*Եբր. Միասը

4—Ու Աստուծոյ սեղանին գամ պիտի
երթամ,
Իմ ուրախութեանս ու ցնծութեանս
Աստուծոյն առջեւ.
Ու քեզ քնարով պիտի գովեմ,
Ով Աստուած, իմ Աստուածս։
5—Ինչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
Ու ինչո՞ւ կ'ողողուիս իմ ներսիդիս անհանգիստ ես։
Աստուծոյ յուսա, վասն զի անգամ մըն
ալ զանիկա պիտի գովեմ.
Ան է իմ երեսիս փրկութիւնը ու իմ
Աստուածս։

ՍԱՂՄ. ԽԴ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդիներուն
երգը։

Ով Աստուած, մեր ականջներովը
լսեցինք,
Հայրերնիս մեզի պատմեցին
Այն գործը որ անոնց օրերը գործեցիր
Առաջուան ժամանակը։
2—Դուն քու ձեռքովդ հեթանոսները
քշեցիր,
Ու *զանոնք տնկեցիր։
Զարչարեցիր ժողովուրդները
Ու տարածեցիր զանոնք։
3—Քանզի ոչ թէ իրենց սրովը ժա-
ռանգեցին երկիրը,
Ու ոչ թէ իրենց բազուկը ղիրենք փըր-
կեց,
Հապա քու աջ ձեռքդ ու քու բազուկդ
և քու երեսիդ լոյսը.
Վասն զի անոնց հաճեցար։
4—Դուն ինքդ ես իմ Թագաւորս, ով
Աստուած.
Հրաման տուր Յակոբի փրկութիւննե-
րուն համար։
5—Քեզմով թշնամիներնիս գետինը
պիտի զարնենք.
Մեր վրայ հրոդները քու անունովդ
ոտքի տակ պիտի առնենք։
6—Վասն զի աղեղիս չեմ յուսար,
Ու թուրս ալ չկրնար ազատել.
7—Հապա դուն մեզ կը փրկես մեր
թշնամիներէն,

*Այսինքն, հայրերնիս

Ու մեզ ատողները ամօթով կ'ընես։
8—Ամէն օր Աստուծմով կը պարծե-
նանք,
Ու յաւիտեան քու անունդ պիտի գո-
վենք։ (Սելա)
9—Սակայն մեզ մերժեցիր ու խայտա-
ռակ ըրիր,
Ու մեր զօրքերուն հետ չելար։
10—Թշնամիէն մեզ ետ դարձուցիր,
Ու մեզ ատողները դէզ կողոպտեցին։
11—Մեզ ոչխարի պէս ուտելու
տուիր,
Ու հեթանոսներուն մէջ մեզ ցրուեցիր։
12—Քու ժողովուրդդ ոչինչ գնով ծա-
խեցիր,
Ու չաւելցուցիր քու հարստութիւնդ
անոնց գիներովը։
13—Դրացիներնուս առջեւ մեզ խայ-
տառակ ըրիր,
Մեր բոլորտիքը եղողներուն ծաղր ու
կատակ։
14—Մեզ հեթանոսներուն մէջ առակ
ըրիր,
Ու ժողովուրդներուն մէջ գլուխ երերը-
ցնելու պատճառ։
15—Ամէն օր իմ նախատինքս առ-
ջեւս է,
Ու երեսիս ամօթը զիս կը ծածկէ
16—Նախատողին ու հայհոյողին ձայնէն,
Թշնամիին ու վրէժխնդրին երեսէն։
17—Այս ամէնը մեր վրայ եկաւ,
Սակայն մենք քեզ չմոռցանք և քու
ուխտիդ առա չլքանք.
18—Սիրտերնիս հետ չդարձան,
Ու քալուածքնիս քու ճամբայէդ դուրս
չերթան.
19—Թէպէտ չջաղեներուն եղած տեղը
մեզ ճզմեցիր,
Ու մահուան սուերովը մեզ ծածկեցիր։
20—Եթէ մեր Աստուծոյն անունը
մոռցեր ենք,
Կամ օտար Աստուծոյ ձեռքերնիս եր-
կնցուցեր ենք,
21—Մի՞թէ Աստուած այս բանը պիտի
չգիտնար։
Որովհետեւ իրաք սրտին գաղտնիքները
գիտէ։
22—Բայց ամէն օր քեզի համար կը
սպաննուինք,

Մարթուելու ոչխարի պէս կը սեպուինք։
23—Արթնցիր, ով Տէր, ինչո՞ւ կը քնանաս.
Յարիր, մի մերժեր հետ յաւիտեան։
24—Ինչո՞ւ երեսդ կը ծածկես,
Մեր աղտութիւնը ու տառապանքը կը մոռնաս։
25—Վասն զի մեր անձը մինչև հողը ծռեցաւ,
Մեր փորը գետինը փակուեր։
26—Երիր մեր օգնութեանդը,
Ու ազատէ մեզ քու ողորմութեանդ համար։

ՍԱՂՄ. ԽԵ

Գլխաւոր երաժշտին, Շօշանիմի վրայ. Կորխի որդիներուն քերթուածը. երգ սիրոյ.

Իմ սրտես բարի խօսք կը բղխի.
Շարադրածս թագաւորին համար կը խօսիմ.
Իմ լեզուս արագագիր դպիրին գրչին պէս է։
2—Դուն մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ ես.
Քու շրթունքներուդ վրայ շնորհք թափուած է.
Անոր համար Աստուած քեզ օրհնեց յաւիտեան։
3—Ով Հզօր, թուրդ մէջդ կապէ
Քու փառքովդ ու վայելչութիւնովդ։
4—Ու քու վայելչութիւնովդ յաջողուէ.
Ճշմարտութեան ու հեզութեան և արդարութեան համար հնծիր.
Ու քու աջ ձեռքդ քեզի ահաւոր բաներ պիտի սորվեցնէ։
5—Քու նետերդ սրուած են,
Ո՛ թագաւորին թշնամիներուն սրտին մէջ կը ծռուին։
Ժողովուրդները քու ոտքդ պիտի իյնան։
6—Ով Աստուած, քու աթոռդ յաւիտեանս յաւիտենից է.
Քու թագաւորութեանդ գաւազանը ուղղութեան գաւազան է.
7—Արդարութիւնը կը սիրես ու անօրէնութիւնը կ'ատես.
Անոր համար, ով Աստուած, քու Աստուածդ
Ուրախութեան իւղով քեզ օծեց քու ընկերներէդ աւելի։
8—Քու բոլոր հանդերձներդ զմուռս ու հալուէ և կասիա կը հոտին.
Փղոսկրէ պալատներէն Նուէ քեզ ուրախացուցին։
9—Թագաւորներուն աղջիկները քու պատուականներուդ մէջ են.
Թագուհին քու աջ կողմդ կը կանգնի Ոփիրի ոսկիով զարդարուած։
10—Ով աղջիկ, լսէ ու տես, և քու ականջդ ծռէ.
Մոռցիր քու ժողովուրդդ ու քու հօրդ տունը։
11—Այն ատեն թագաւորը պիտի ցանկայ քու գեղեցկութիւնդ.
Վասն զի ան է քու տէրդ, ու անոր երկրպագութիւն ըրէ։
12—Եւ Տիւրոսի աղջիկը ընծայով պիտի խնդրեն քու երեսդ.
Ընծայով պիտի խնդրեն քու երեսդ։
13—Թագաւորին աղջիկը բոլորովին փառաւոր է ներսը,
Ոսկի թելով հիւսուած է իր հանդերձը։
14—Նկարակերպած հանդերձով պիտի բերուի թագաւորին.
Անոր հետևէն եկող աղջիկ ընկերները քեզի պիտի բերուին։
15—Ցնծութիւնով և ուրախութիւնով պիտի բերուին,
Թագաւորին պալատը պիտի մտնեն։
16—Քու հայրերուդ տեղը որդիներդ պիտի ըլլան.
Բոլոր երկրի մէջ իշխաններ պիտի ընես զանոնք։
17—Քու անունդ հռչակել պիտի տամ ազգէ մինչև ազգ.
Անոր համար ժողովուրդները քեզ պիտի գովեն յաւիտեանս յաւիտենից։

ՍԱՂՄ. ԽԶ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդիներուն երգը Ալամոթի վրայ.

Աստուած մեր ապաւէնն ու զօրութիւնն է.

---

*կամ, ուրկէ

Նեղութիւններու մէջ խիստ օգնական կը գտնուի։
2—Անոր համար պիտի չվախնանք, թէև երկիր փոխուի,
Ու լեռները ծովուն սիրտը ձգուին։
3—Թէև անոր ջուրերը գոռան ու պղտորին,
Լեռները դողան անոր ուռեցումովը։ (Սէլա)
4—Գետի վտակները պիտի ուրախացնեն Աստուծոյ քաղաքը,
Բարձրելոյն սուրբ բնակարանները։
5—Աստուած անոր մէջ է, անիկա պիտի չսասանի.
Աստուած անոր պիտի օգնէ առտուանց կանուխ։
6—Հեթանոսները կը խռովին, թագաւորութիւնները կը շարժին.
Բարձրէ՛ն լը ձայնը կու տայ, երկիր կը հալի։
7—Զօրաց Տէրը մեզի հետ է.
Յակոբի Աստուածը մեր ապաւէնն է։ (Սէլա)
8—Եկէք ու տեսէք Տէրոջը գործերը,
Որ աւերումներ բրաւ երկրի մէջ։
9—Պատերազմները կը դադրեցնէ մինչև երկրի ծայրը.
Աղեղը կը կոտրատէ ու նիզակը կը ջարդէ, կառքերը կրակով կ'այրէ։
10—Հանդարտ կեցէք ու ճանչցէք որ ես եմ Աստուած.
Հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ, երկրի վրայ պիտի բարձրանամ։
11—Զօրաց Տէրը մեզի հետ է,
Յակոբի Աստուածը մեզի ապաւէն է։ (Սէլա)

ՍԱՂՄ. ԽԷ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդիներուն Սաղմոս։

Ծափ զարկէք, ամէն ժողովուրդներ,
Ցնծութեան ձայնով Աստուծոյ աղաղակեցէք։
2—Վասն զի Տէրը բարձրեալ և ահարկու է.
Բոլոր երկրի վրայ մեծ թագաւոր է։
3—Ժողովուրդները մեզի կը հնազանդեցնէ,
Ու ազգերը մեր ոտքերուն տակ։
4—Ընտրեց մեզի մեր ժառանգութիւնը,
Յակոբի փառաւորութիւնը՝ զոր ինք սիրեց։ (Սէլա)
5—Աստուած ցնծութիւնով վեր ելաւ,
Տէրը՝ փողի ձայնով։
6—Սաղմոս երգեցէք Աստուծոյ, սաղմոս երգեցէք.
Սաղմոս երգեցէք մեր Թագաւորին, սաղմոս երգեցէք.
7—Վասն զի բոլոր երկրի վրայ թագաւոր Աստուած է.
Երգ երգեցէք ուժով։
8—Աստուած ազգերուն վրայ կը թագաւորէ,
Աստուած կը նստի իր սուրբ աթոռին վրայ։
9—Ժողովուրդներուն իշխանները ժողովեցան
Աբրահամի Աստուծոյն ժողովուրդին հետ.
Վասն զի երկրի ասպարները Աստուծոյն են.
Ինք խիստ բարձրացած է։

ՍԱՂՄ. ԽԸ

Կորխի որդիներուն երգը ու Սաղմոս։

Տէրը մեծ է ու խիստ օրհնեալ է
Մեր Աստուծոյն քաղաքին մէջ,
Իր սուրբ լեռանը վրայ։
2—Գեղեցիկ բարձրութիւնով,
Բոլոր երկրի ուրախութիւնը
Հիւսիսային կողմերը եղող Սիօն լեռն է,
Մեծ թագաւորին քաղաքը։
3—Աստուած անոր պալատներուն մէջ
Ապաւէն գիտցուած է։
4—Վասն զի ահա թագաւորները ժողովեցան,
Ու միկռեղ անցան։
5—Անոնք տեսածնուն պէս զարմացան.
Զարհուրեցան ու շուտով փախան։
6—Հոն դողմը բռնեց զանոնք,
Ո՛ ցաւը՝ ազեակ ծնանողի ցաւի պէս։
7—Արեւելեան հովով
Թարսիսի նաւերը կը խորտակես։
8—Ինչպէս լսեցինք, այնպէս ալ տեսանք
Զօրութեանց Տէրոջը քաղաքին մէջ,
Մեր Աստուծոյն քաղաքին մէջ.

Աստուած զանիկա պիտի հաստատէ յաւիտեան։ (Սէլա)

9—Ով Աստուած քու ողորմութեանդ վրայ կը մտածենք
Քու տաճարիդ մէջ։

10—Քու գովութիւնդ, ով Աստուած,
Քու անունդ պէս մինչև երկրի ծայրերն է.
Արդարութիւնով լեցուն է քու աջ ձեռքդ։

11—Սիօն լեռը թող ուրախանայ,
Ո՛ Ցուդայի աղիւիներըը թող ցնծան
Քու դատաստաններուդ համար։

12—Սիօնի չորս կողմը պտըտեցէք
Ու անոր բոլորտիքը շրջուեցէք
Ո՛ աշտարակները համրեցէք.

13—Ուշադրութեամբ դիտեցէք անոր պարիսպները.
Անոր պալատները զննեցէք,
Որպէս զի գալու ազգին պատմէք.

14—Վասն զի այս Աստուածը մեր Աստուածն է յաւիտեանս յաւիտենից.
Անիկա պիտի առաջնորդէ մեզ մինչև ի մահ։

ՍԱՂՄ. ԽԹ

Գլխաւոր երաժշտին. Կորխի որդիներուն Սաղմոսը։

Լսեցէք ասիկա, ով բոլոր ազգեր,
Ականջ դրէք, աշխարհի բոլոր բնակիչներ,
2—Թէ՛ հասարակներ ու ազնուականներ,
Հարուստներ ու աղքատներ միասին։
3—Բերանս իմաստութիւն պիտի խօսի,
Ու սրտիս խորհուրդները՝ հանճար։
4—Իմ ականջս առակի պիտի ծռեմ,
Երգնագաւազանի քնարով պիտի բանամ։

5—Ինչո՞ւ վախնամ չար օրերուն մէջ,
Երբ *դաւադրակիցներուն անօրէնութիւնը չորս կողմս կը պատէ։

6—Իրենց զօրութեանը յուսացողներուն
Ու իրենց հարստութեանը չառաքինութիւնով պարծողներուն

7—Մէկը բնաւ չկրնար փրկել իր եղբայրը,
Ո՛չ ալ անոր փրկանքը Աստուծոյ հատուցանել.

8—(Քանզի սուղ է անոնց անձին փրկագինը
Ու յաւիտեան պիտի դադրի.)

9—Որպէս զի ալ ապրի յաւիտեան,
Ո՛ ապականութիւն չտեսնէ։

10—Վասն զի կը տեսնէ թէ իմաստունները կը մեռնին,
Ծիմարը ու անխելքը միևնոյն կը կորսուին,
Ու իրենց սեպհական ունեցուածքները ուրիշներուն կը թողուն։

11—Անոնց խորհուրդը այս է թէ իրենց տուները յաւիտեան պիտի տևեն,
Ո՛ իրենց բնակարանները ազգէ մինչև ազգ.
Երկիրները իրենց անուններովը կը կոչեն։

12—Բայց մարդը պատուոյ մէջ չմնար,
Անասուններուն նման է որոնք կը կորսուին։

13—Անոնց այս ճամբան իրենց յիմարութիւն է,
Սակայն անոնց ետեւէն եկողները անոնց խօսքին հաճութիւն պիտի տան։ (Սէլա։)

14—Անոնք ոչխարներու պէս գերեզմանը կը դրուին.
Մահը պիտի հովուէ զանոնք.
Եւ ուղղակիները անոնց վրայ պիտի տիրեն առտուանց.
Ու անոնց դէմքը գերեզմանը պիտի մաշեցնէ իրենց բնակարանէն։

15—Սակայն Աստուած գերեզմանէն ձեռքէն պիտի փրկէ իմ անձս,
Վասն զի զիս պիտի ընդունի։ (Սէլա։)

16—Մի վախնար երբ մարդ մը հարստանայ,
Ու անոր տանը փառքը չաճի։

17—Վասն զի մեռնելու ատենը ամենևին բան մը իրեն հետ պիտի չառնէ,
Ո՛ իր փառքը իր ետեւէն պիտի չիջնէ։

18—Թէպէտև իր անձը օրհնեց իր կենդանութեան ատենը,
(Ու քեզ կը գովին երբ դուն քու անձդ. ազիկութիւն կ'ընես։)

19—Սո՛ւյն իր նախնիքներուն ազգին պիտի երթայ.
Մինչև յաւիտեան լոյս պիտի չտեսնեն։

*կամ, իմ գաբշատարներուս

20—Մարդը որ պատուոյ մէջ է ու իմաստութիւն չունի,
Անասուններուն կը նմանի որոնք կը կորսուին։

ՍԱՂՄ. Ծ

Սաղմոս Ասափայ։

Աստուածներուն Աստուածը, Տէրը, խօսեցաւ,
Ու երկիրը կանչեց արեւելքէն մինչև արեւմուտք։

2—Սիօնէ, գեղեցկութեան կատարելութենէն,
Աստուած փայլեցաւ։

3—Մեր Աստուածը պիտի գայ ու պիտի չլռէ.
Անոր առջև մաղող կրակ,
Ու բոլորտիքը սաստիկ փոթորիկ պիտի ըլլայ։

4—Երկինքը պիտի կանչէ վերեն,
Ու երկիրը՝ իր ժողովուրդը դատելու համար։

5—Ինծի ժողվեցէք իմ սուրբերս,
Ո՛ ինծի հետ զոհով ուխտ ընողները։

6—Ու երկինքները անոր արդարութիւնը պիտի պատմեն,
Վասն զի Աստուած ինք դատաւոր է։ (Սէլա։)

7—Լսէ, ով իմ ժողովուրդս, ու խօսիմ.
Ով Իսրայէլ, ու քեզի վկայութիւն ընեմ,
Որ ես եմ Աստուած, քու Աստուածդ։

8—Ոչ թէ քու զոհերուդ համար քեզ կը յանդիմանեմ,
Ու քու ողջակէզներուդ համար՝ որոնք միշտ իմ առջեւս են։

9—Քու տունէդ զուարակ չեմ առներ,
Ո՛չ ալ քու գոմերէդ նոխազներ։

10—Վասն զի իմն են անտառին բոլոր գազանները,
Հազարաւոր լեռներուն անասունները։

11—Ես գիտեմ լեռներուն բոլոր թռչունները.
Ու դաշտի *գազանները իմ քովս են։

12—Եթէ անօթենամ՝ քեզի պիտի չըսեմ.
Վասն զի աշխարհ ու անոր լիութիւնը իմն է։

13—Միթէ ես ցուլերու միս կ'ուտե՞մ,
Կամ նոխազներու արիւն կը խմե՞մ։

14—Շնորհակալութիւն զոհէ Աստուծոյ,
Ու քու ուխտերդ կատարէ Բարձրեալին.

15—Ու նեղութեան օրը ինծի կանչէ.
Ես քեզ պիտի ազատեմ, ու դուն զիս պիտի փառաւորես։

16—Սակայն Աստուած ամբարշտին կ'ըսէ,
Քեզի ինչ՝ որ դուն իմ օրէնքներս կը պատմես,
Ու իմ ուխտս բերանդ կ'առնես։

17—Վասն զի դուն խրատը ատեցիր,
Ու իմ խօսքերս ետիդ ձգեցիր։

18—Գողը տեսնելով՝ անոր հետ միաբանեցար,
Ու շնացողներուն հետ բաժին ունեցար։

19—Քու բերանդ չարութեան տուիր,
Ու քու լեզուդ նենգութիւն կը հնարէ։

20—Կը նստիս եղբօրդ դէմ կը խօսիս,
Մօրդ որդւոյն դէմ չարախօսութիւն կ'ընես։

21—Այս բաները ըրիր ու ես լռեցի.
Կարծեցիր թէ ես բոլորովին քեզի կը նմանիմ.
Բայց քեզ պիտի յանդիմանեմ,
Ու աչքերուդ առջև պիտի չարեմ զանոնք։

22—Արդ խնայեցէք ասիկա, ով դուք զԱստուած մոռցողներ,
Զրլլայ որ չեղ պատռեմ, և ազատող մըն ալ չգտնուի։

23—Շնորհակալութիւն մատուցանողը զիս կը փառաւորէ.
Ու էր ճամբուն զգուշացողին
Պիտի ցուցնեմ Աստուծոյ փրկութիւնը։

ՍԱՂՄ. ԾԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւիթի, անոր Բերսաբէի քով մտնելէն ետքը, Նաթան մարգարէին անոր եկած ժամանակը։

Ողորմի ինծի, ով Աստուած, քու ողորմութեանդ համեմատ,
Քու առատ գթութեանդ համեմատ ընկէ իմ յանցանքներս։

*կամ, առատութիւնը իմ քովս է

2—իմ անօրէնութենէս բոլորովին զիս լուա,
Ու իմ մեղքէս զիս սրբէ։
3—Վասն զի ես կը ճանչնամ իմ յանցանքներս,
Ու իմ մեղքս միշտ իմ առջեւս է։
4—Քեզի՛ միայն քեզի դէմ մեղանչեցի,
Ու քու աչքերուդ առջեւ չարութիւն ըրի.
Որպէս զի արդար ըլլաս խօսքերուդ մէջ,
Ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ։
5—Ահա ես անօրէնութիւնով ծնայ,
Ու իմ մայրս մեղքով յղացաւ զիս։
6—Ահա դուն ճշմարտութիւն կ'ուզես երկամտութիւնը մէջ.
Ու ծածուկ տեղը խմաստութիւն պիտի գիտցնես ինծի։
7—Զոպայի մշտիկով մաքրէ զիս, ու մաքուր ըլլամ.
Զիս լուա, ու ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ։
8—Ցնծութիւն և ուրախութիւն լսել տուր ինծի,
Ոսկ ցնծան այն ոսկորները զորոնք կոտրեցիր։
9—Իմ մեղքերս երեսդ ծածկէ,
Ու բոլոր անօրէնութիւններս ջնջէ։
10—Ով Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ,
Ու իմ ներսիդիս ուղիղ հոգի նորոգէ։
11—Զիս երեսէդ մի ձգեր,
Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի հաներ։
12—Քու փրկութեանդ ցնծութիւնը ինծի դարձուր,
Ու կամաւոր հոգի մը ինծ հաստատէ զիս։
13—Ամբարիշտներուն պիտի սորվեցընեմ քու ճամբաներդ,
Ու մեղաւորները քեզի պիտի դառնան։
14—Ով Աստուած, իմ փրկութեանս Աստուածը,
Փրկէ զիս արիւնհեղութենէ.
Լեզուս ցնծութեամբ պիտի խօսի քու արդարութեանդ վրայով։
15—Ով Տէր, իմ շրթունքներս բաց,
Ու բերանս պիտի պատմէ քու գովութիւնդ։
16—Վասն զի զոհի չես հաճիր որ ընէի մատուցանէի.
Ողջակէզներէ ալ չես հաճիր։
17—Աստուծոյ զոհը կոտրած հոգին է.
Կոտրած ու խոնարհ սիրտը, ով Աստուած, դուն չես անարհեր։
18—Քու բարեհաճութիւնովդ Սիոնի բարիք ըրէ,
Երուսաղէմի պարիսպները չինէ։
19—Այն ատեն պիտի հանիս արդարութեան զոհերուն,
Ողջակէզներուն ու բոլորովին այրուած զոհերուն.
Այն ատեն քու սեղանիդ վրայ զուարակներ պիտի մատուցանեն։

ՍԱՂՄ. ԾԲ

Գլխաւոր երաժշտին. Դաւիթի երգը, երբ Դոեկ Եդոմացին եկաւ ու պատմեց Սաուղի, ու անոր ըսաւ թէ Դաւիթ Աբիմելէքի տունը մտեր է։

Ինչո՞ւ անօրէնութիւնով կը պարծիս, ով բռնաւոր.
Աստուծոյ գթութիւնը ամէն օր կայ։
2—Լեզուդ չարութիւններ կը հնարէ,
Սուր ածելիի պէս նենգութիւն կը գործէ։
3—Չարութիւնը բարութենէն աւելի կը սիրես,
Ու սուտ խօսքերը արդարութիւն խօսելէն աւելի։ (Սէլա)
4—Ամէն կործանման խօսքերը
Ու նենգաւոր լեզուն կը սիրես։
5—Աստուած ալ յաւիտեան քեզ պիտի կործանէ,
Քեզ պիտի բռնէ ու քեզ հանէ խրճիթէդ,
Ու քեզ արմատէդ պիտի խլէ կենդանիներուն երկրէն։ (Սէլա)
6—Արդարները պիտի տեսնեն ու վախնան,
Ու անոր վրայ պիտի ծիծաղին՝ ըսելով,
7—Ահա այն մարդը, որ Աստուած իրեն ամրութիւն չըրաւ,
Հապա իր շատ հարստութեանը վստահացաւ,
Ու իր անօրէնութիւնովը զօրացաւ։
8—Սակայն ես Աստուծոյ տան մէջ կանանչ ձիթենիի պէս եմ.

Աստուծոյ ողորմութիւնը կը յուսամ յաւիտեան յաւիտենից։
9—Քեզ պիտի գովեմ յաւիտեան,
Որ դուն ըրած կատարեցիր.
Ու քու անուանդ պիտի յուսամ,
Վասն զի բարի է սուրբերուդ առջեւ։

ՍԱՂՄ. ԾԳ

Գլխաւոր երաժշտին. Մալահաթի վրայ. Դաւիթի երգը։

Անզգամը իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած չկայ.
Ապականեցան ու պիղծ անօրէնութիւն ըրին.
Մէ՛կը չկայ որ բարի ընէ։
2—Աստուած երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ,
Որպէս զի տեսնէ թէ կա՞յ արդեօք իմաստուն մէկը
Որ Աստուած փնտռէ։
3—Ամէնը խոտորեցան, միասին անպիտան եղան.
Աղէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ։
4—Մի՞թէ չեն ճանչնար անօրէնութիւն ընողները,
Որոնք հաց ուտելու պէս իմ ժողովուրդս կ'ուտեն,
Ու Աստուծոյ չեն կանչեր։
5—Անոնք այն տեղ չատ վախցան՝ ուր վախ չկար.
Վասն զի քեզ պաշարողներուն ոսկորները ցրուեց Աստուած
Ամչցուցիր զանոնք, վասն զի Աստուած անարգեց զանոնք։
6—Երանի՛ թէ Սիոնէ գար Իսրայէլի փրկութիւնը.
Աստուծոյ իր ժողովուրդը դերութենէն դարձուցած ատենը
Յակոբ պիտի ցնծայ ու Իսրայէլ ուրախ պիտի ըլլայ։

ՍԱՂՄ. ԾԴ

Գլխաւոր երաժշտին, Նկինոթի վրայ, Դաւիթի երգը, այն ատեն որ Զիփացիք եկան ու ըսին Սաուղի, Ահա Դաւիթ մեր քով պահուած է։

Ով Աստուած, քու անունովդ զիս ազատէ,
Ու քու զօրութիւնովդ իրաւունք ըրէ ինծի։
2—Ով Աստուած, լսէ իմ աղօթքս,
Ականջ դիր իմ բերնիս խօսքերուն։
3—Վասն զի օտարները իմ վրաս ելան,
Ու բռնաւորները կը փնտռեն իմ անձս,
Ու զԱստուած իրենց առջեւ չդրին։ (Սէլա)
4—Ահա Աստուած ինծի օգնական է.
Տէրը իմ հոգիիս պաշտպաններուն հետ է։
5—Չարութիւնը թշնամիներուս վրայ պիտի դարձնէ.
Քու ճշմարտութիւնովդ կորսնցուր զանոնք։
6—Ես իմ կամքովս քեզի զոհ պիտի մատուցանեմ.
Ով Տէր, քու անունդ պիտի գովեմ, վասն զի բարի է։
7—Վասն զի ամէն նեղութենէ զիս փրկեց,
Ու իմ աչքս թշնամիներուս խրտուիլը տեսաւ։

ՍԱՂՄ. ԾԵ

Գլխաւոր երաժշտին, Նկինոթի վրայ. Դաւիթի երգը։

Ով Աստուած, ականջ դիր իմ աղօթքիս,
Ու իմ խնդրուածքս քու էրէսդ մի ծածկեր։
2—Միտկ ըրէ ու պատասխանէ ինծի.
Իմ գանգատովս կը մղկտամ ու կը խռովիմ,
3—Թշնամիին ձայնէն ու ամբարշտին նեղութիւն տալէն.

*Կամ, ազնիւ

*Կամ, կը տրտմիմ

վասն զի իմ վրաս անբաւութիւն կը բերեն,
Ու բարկութիւնով զիս կը հալածեն։
4—Սիրաս դողաց իմ ներսիդիս,
Ու մահուան արհաւիրքները իմ վրաս իննկան։
5—Վախ ու դող եկաւ իմ վրաս,
Ու սոսկումը զիս ծածկեց։
6—Ու ըսի, Երանի՛ թէ ազաւնիի նման թեւեր ունենայի,
Որպէս զի թռչէի ու հանգիստ ըլլայի։
7—Ահա հեռուն կը փախչէի,
Աննպաստին մէջ կը բնակէի։ (Սէլա՛)
8—Սաստիկ հովին ու փոթորկին
Իմ փախչելս կ'արտորդնեի։
9—Ով Տէր, կորնցուր, անոնց լեզուները բաժնէ,
Վասն զի քաղաքին մէջ բռնութիւն ու կռիւ տեսայ։
10—Ցորեկ ու գիշեր անոր չորս կողմը, անոր պարիսպներուն վրայ, կը պտրտին.
Անօրէնութիւն ու չարիք կայ անոր մէջ,
11—Անոր մէջ ներհակնագործութիւն կայ.
Ու բռնութիւնը ու նենգութիւնը անոր հրապարակէն չեն զատուիր։
12—Վասն զի թշնամին չէր զիս նախատողը, որ համբերէի.
Կամ ատողը չէր իմ վրաս հպարտացողը, որ անկէ պահուէի.
13—Հապա դուն, ով մարդ, իմ հաւասարս,
Իմ ընկերս ու ճանչուորս,
14—Որ իրարու հետ անուշ խօսակցութիւն կ'ընէինք,
Ո՛ բազմութեան հետ Աստուծոյ տունը կ'երթայինք։
15—Մահը յանկարծ անոնց վրայ պիտի հասնի,
Ո՛ ողջ ողջ գերեզմանը պիտի իյնան,
Վասն զի իրենց բնակարաններուն ու իրենց մէջ չարութիւն կայ։
16—Իսկ ես Աստուծոյ պիտի կանչեմ,
Ու Տէրը զիս պիտի փրկէ։
17—Իրիկունը, առաւուն ու կէսօրը պիտի բողոքիմ ու հառաչեմ,
Ու անիկա պիտի լսէ իմ ձայնս։
18—Խաղաղութիւնով կը փրկէ իմ անձս ինձի դէմ եղած պատերազմէն,
Վասն զի շատերը կան իմ քովս։
19—Աստուած պիտի լսէ,
Ու յաւիտենականութեան մէջ բնակողը պիտի ցածցնէ զանոնք։ (Սէլա՛)
Որովհետև չեն փոխուիր անոնք,
Ու Աստուծմէ չեն վախնար։
20—Ձեռքը իրեն հետ հաշտաւածներուն վրայ երկնցուց,
Իր ուխտը ուրացաւ։
21—Անոր բերնին խնոյեղը կոգիէն կակուղ են,
Բայց անոր սրտին մէջ պատերազմ կայ.
Անոր խօսքերը ձէթէն կակուղ են,
Բայց մերկ սուրեր են։
22—Քու հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Ու ան քեզ պիտի խնամէ.
Անիկա յաւիտեան սասանութիւն չտայ արդարին։
23—Բայց դուն, ով Աստուած, զանոնք ապականութեան գուբին մէջ պիտի իջեցնես.
Արիւնահեղ ու նենգաւոր մարդիկ օրերնուն կէսն պիտի չհասնին։
Սակայն ես քեզի պիտի յուսամ։

ՍԱՂՄ. ՆԶ

Գլխաւոր երաժշտին, Յոնաթ-էլեմ-րեհոգիմի վրայ. Դաւիթի երգը, երբ Փղշտացիք Գէթի մէջ բռնեցին զանիկա։

Ող Աստուած, ողորմի ինձի, վասն զի մարդը կ'ուզէ զիս կլլել.
Ամէն օր պատերազմ ընելով զիս կը նեղէ։
2—Թշնամիներս ամէն օր կ'ուզեն զիս կլլել,
Վասն զի շատ մարդիկ *ամբարտաւանութիւնով ինձի հետ կը մարտնչին։
3—Վախցած օրս քեզի պիտի յուսամ։
4—Աստուծով պիտի գովիմ իր խօսքը.
Աստուծոյ կը յուսամ, պիտի չվախնամ
Մարմինը ինծի ի՞նչ կրնայ ընել։
5—Ամէն օր իմ †բաներուս վնաս կուտան՝

*Կամ, բարձրէն, և կամ, ով բարձրեալ
†Կամ, խօսքերս կը ծռեն

Իմ վրայովս անոնց բոլոր խորհուրդները չարիքի համար են։
6—Կը ժողովին ու կը պահնեն,
Իմ շաւիղներս կը դիտեն,
Վասն զի իմ անձիս կը սպասեն։
7—Մի՛թէ անօրէնութիւնով անոնց փրկութիւն կ'ըլլա՞յ.
Բարկութիւնով ժողովուրդները վար ձգէ, ով Աստուած։
8—Իմ թափառական պարտիզս համրեցիր.
Արցունքներս քու տիկիդ մէջ դիր.
Մի՛թէ անոնք քու գիրքիդ մէջ չե՞ն։
9—Ետ կանչած օրս հոս պիտի դառնան իմ թշնամիներս.
Այսիկա գիտեմ, վասն զի Աստուած ինծի հետ է։
10—Աստուծով պիտի գովիմ էր խօսքը,
Տէրոջմով պիտի գովիմ էր խօսքը։
11—Աստուծոյ կը յուսամ, պիտի չվախնամ.
Մարդը ինծի ի՞նչ կրնայ ընել։
12—Ով Աստուած, քու ուխտերդ իմ վրաս են.
Քեզի շնորհակալութիւններ պիտի հատուցանեմ.
13—Որովհետև իմ անձս մահուանէ ազատեցիր,
Ոտքերս ալ գայթակղելէն չէ՞ս ազատեր,
Որպէս զի Աստուծոյ առջև քալեմ կեանքի լոյսին մէջ։

ՍԱՂՄ. ՆԷ

Գլխաւոր երաժշտին. *Ալ-թաշխէթ, Դաւիթի երգը, Սաուղի եղեռնէն դէպի քարայրը փախած ատենը։

Ողորմի ինձի, ով Աստուած, ողորմի ինձի,
Վասն զի իմ անձս քեզի կը յուսայ.
Ու քու թեւերուդ հովանաւորութեանը պիտի ապաւինիմ,
Մինչև որ թշնամութիւնները անցնին։
2—Բարձրեալ Աստուծոյն պիտի աղաղակեմ,

*Այսինքն, մի կորնցնիր

ինծի համար գործազ Աստուծոյն։
3—Երկինքէն պիտի ղրկէ ու փրկէ զիս,
Թէև զիս կլլել ուզողը վնաս նախատէ. (Սէլա՛)
Աստուած պիտի ղրկէ իր ողորմութիւնը ու ճշմարտութիւնը։
4—Իմ անձս առիւծներու մէջ է.
Բոց փչող մարդոց որդիներուն դէլ կը պառկիմ,
Որոնց ակռաները նիզակներ ու նետեր են,
Ու անոնց լեզուները սրած թուրեր են։
5—Ով Աստուած, երկինքի վրայ բարձրացիր.
Քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ։
6—Իմ քայլերուս որոգայթ պատրաստեցին
Անձս վար ծռեցաւ.
Փոս փորեցին առջևս,
Ու իրենք իրենց անոր մէջ։ (Սէլա՛)
7—Սիրտս պատրաստ է, ով Աստուած, սիրտս պատրաստ է.
Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ։
8—Արթնցիր, ով իմ փառքս.
Արթնցիր, ով տաւիղ ու քնար.
Ես կանուխ պիտի արթննամ։
9—Ով Տէր, ժողովուրդներուն մէջ քեզ պիտի գովեմ.
Սաղմոս պիտի երգեմ քեզի ազգերուն մէջ.
10—Վասն զի մեծ է քու ողորմութիւնդ մինչև երկինք,
Ու քու ճշմարտութիւնդ մինչև ամպերը։
11—Երկինքի վրայ բարձրացիր, ով Աստուած,
Քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ։

ՍԱՂՄ. ՆԸ

Գլխաւոր երաժշտին. Ալ-թաշխէթ, Դաւիթի երգը։

Իրաւցընէ *անարարաւ արդարութիւն կը խօսիք,
Ուղղութիւնով դատաստան կը տեսնէք, ով մարդոց որդիներ։
2—Սրտով անօրէնութիւններ կը գործէք.

*Կամ, արդեօք

Երկրի վրայ ձեռքերնուդ բռնութիւնը
կը կշռեք։
3—Ամբարիշտներդ էրէնց ծուռը արգան-
դէն խոտորեցան.
Որովայնէն կը մոլորին սուտ խօսելով։
4—Անոնց թոյնը օձի թոյնի պէս է,
Խուլ խիժ պես՝ որ կը գոցէ իր ականջները,
5—Որ չլսեր թովիչներուն ձայնը,
Թէև վարպետութեամբ կախարդութիւն
կ'ընեն։
6—Ով Աստուած, անոնց ակռաները ի-
րենց բերաններուն մէջ փշրէ.
Ով Տէր, առիւծի կորիւններուն ժա-
նիքները կոտրէ։
7—Թող անոնք հալին ջուրերու պէս ու
կը վազեն.
Նէր իրենց ալեղնները կը լարեն, թող
կոտրտին.
8—Խեռունդի պէս՝ ու քալած ատենը կը
հալի,
կնոջ մը վիժած զաւակին պէս արեւը
չտեսնեն։
9—Ձեր կաթսաներուն փուշերուն չը-
կը զգալեն առաջ,
Թէ՛ թարմ և թէ՛ այրուող ֆոնչբը
փոթորիկով պիտի ցրուէ։
10—Արդարը պիտի ուրախանայ, երբ
վրէժխնդրութիւնը տեսնէ.
Իր ոտքերը ամբարշտին արիւնին մէջ
պիտի լուայ։
11—Ու մարդը պիտի ըսէ թէ Իրաւցնէ
արդարին համար վարձք կայ.
Իրաւցնէ Աստուած կայ, որ երկրի
վրայ դատաւոր է։

ՍԱՂՄ. ԾԹ

Գլխաւոր երաժշտին. Ալ-թաշխէթ,
Դաւիթի երգը, այն առեն որ Սաուղ
Տղրէն դրկեց, ու տունը պահպանեցին
որպէս զի մեռցնեն զանիկա։

Թշնամիներէս զիս փրկէ, ով իմ
Աստուածս.
Իմ վրաս եղողներէն զիս վեր վերցուր։
2—Անօրէնութիւն գործողներէն զիս
ազատէ,
Ու արիւնահեղ մարդոցմէն զիս փրկէ։
3—Վասն զի ահա իմ անձիս համար
դարանը մտան,
Զօրաւոր մարդիկ իմ վրաս ժողվուե-
ցան,
Ոչ թէ մեղքիս ու յանցանքիս համար,
ով Տէր։
4—Մեղք չունեցած առենս վազ-
վազելն ու պատրաստուեցան.
Արթնցիր զիս դիմաւորելու և նայէ։
5—Ով Տէր Աստուած զօրութեանց,
Աստուած Իսրայէլի,
Արթնցիր բոլոր հեթանոսները ջնջելու.
Չար անօրէններուն քնաս մի ողորմիր։
(Սէլա՛)
6—Անոնք իրիկուան ետ կը դառնան,
Շան պէս կ'ոռնան,
Ու քաղաքին չորս կողմը կը պտրտին։
7—Ահա իրենց բերնէն չար-բիբ դուրս
կը թափին.
Անոնց շրթունքներուն վրայ սուրեր
կան.
Վասն զի՝ ո՞վ պիտի լսէ։
8—Բայց դուն, ով Տէր, անոնց վրայ
պիտի ծիծաղիս
Բոլոր հեթանոսները ծաղր պիտի ընես։
9—Ով *իմ զօրութիւնս, քեզի պիտի
ապաւինի.
Վասն զի Աստուած է իմ ապաւէնս։
10—Ողորմութեամբ Աստուածը ինձի
պիտի հանդիպի.
Աստուած պիտի ցուցնի ինձի թշնամի-
ներուս իջուածքը։
11—Մի մեռցներ զանոնք, որպէս զի
ժողովրդս չմոռնայ.
Զանոնք ցիրուցան ըրէ քու զօրութիւ-
նովդ,
Ու վար ձգէ զանոնք, ով Տէր, մեր
վահանը։
12—Անոնք իրենց բերաններուն մեղ-
քին ու շրթունքներուն խօս-
քին համար
Իրենց ամբարտաւանութեանը մէջ թող
բռնուին,
Նաև անէծքին ու սուտին համար զոր
կը խօսին։
13—Կորնչցուր բարկութիւնով, կոր-
սրնցուր զանոնք՝ որպէս զի
ոչնչանան,
Ու գիտնան թէ Աստուած կը տիրէ Յա-
կոբի վրայ

*Կամ, անոր զօրութիւնը

Մինչև երկրի ծայրերը։ (Սէլա՛)
14—Անոնք իրիկուան ետ պիտի դառ-
նան,
Շան պէս պիտի ոռնան,
Ու քաղաքին չորս կողմը պտրտին.
15—Ուտելիքի համար պիտի թափառին,
Եթէ չկշտանան՝ գիշերը մնչնչեն։
16—Բայց ես քու զօրութիւնդ պի-
տի երգեմ,
Ու առտուանց քու ողորմութիւնովդ
պիտի ցնծամ.
Վասն զի դուն ինձի պահապան եղար,
Ու ապաւէն՝ իմ նեղութեանս օրը։
17—Ով իմ զօրութիւնս, քեզի սազմոս
պիտի երգեմ,
Վասն զի իմ պաշտպանս Աստուած է,
Իմ ողորմութեանս Աստուածը։

ՍԱՂՄ. Կ

Գլխաւոր երաժշտին, Շուշան-Եդութի
վրայ. Դաւիթի երգը՝ սորվեցնելու հա-
մար, այն առեն որ պատերազմեցաւ
Միջագետի Ասորոց ու Սուբայի Ասոր-
ւոց հետ, ու Յովաբ ետ դառնալով՝
Եդոմացիներէն տասներկու հազար
հոգի զարկաւ Աղի ձորին մէջ։

Ով Աստուած, մեզ երեսէ ձգեցիր,
Մեզ ցրուեցիր ու բարկացար. մեզի
դարձիր։
2—Երկիրը դողացուցիր, զանիկա պատ-
ռեցիր.
Անոր վէրքերը նորոգէ, վասն զի
կ'երերայ։
3—Քու ժողովրդիդ խստութիւն ցու-
ցուցիր,
Մեզի թմրութեան գինի խմցուցիր։
4—Քեզմէ վախցողներուն դրօշակ
տուիր,
*Ճշմարտութեան համար վերցնելու.
(Սէլա՛)
5—Որպէս զի քու սիրելիներդ փրկուին՝
Ձի ձեռքովդ ապրեցուր ու պատասխան
տուր ինձի։
6—Աստուած †իր սրբութիւնովը խօսե-
ցաւ,

*Կամ, Որ փախչին աղեղին երեսէն
†Կամ, իր սրբարանէն մէջ

Ես պիտի ցնծամ, Սիւքեմը պիտի բաժ-
նեմ,
Ու Սոկքովթի հովիտը պիտի չափեմ։
7—Իմս է Գաղաադ ու իմս է Մանասէ,
Եփրեմ գլուխս զօրութիւնն է.
Ցուդա իմ օրէնսդիրս է.
8—Մովաբ իմ լուացուելու ամանս է.
Եդոմի վրայ պիտի ձգեմ իմ մաշակս.
Ով փղշտացիք, ինծի համար ձայնով
ցնծացէք։
9—Ո՞վ պիտի տանի զիս պարսպաւոր
քաղաքը.
Ո՞վ պիտի առաջնորդէ ինծի մինչեւ
Եդոմ։
10—Չէ՞ որ դուն, ով Աստուած, որ
երեսէ ձգեցիր մեզ,
Ու մեր զօրքերուն հետ չելար, ով
Աստուած։
11—Նեղութեան մէջէն մեզի օգնու-
թիւն ուր,
Վասն զի փուճ է մարդուն փրկութիւնը։
12—Աստուծով քաջութիւն պիտի
բնենք.
Ու ան պիտի կոխէ մեր թշնամիները։

ՍԱՂՄ. ԿԱ

Գլխաւոր երաժշտին, Նկինօթի վրայ.
Սաղմոս Դաւիթի։

Ով Աստուած, լսէ իմ աղաղակս,
Ո՛ մարիկ լսէ իմ աղօթքս։
2—Երկրի ծայրէն քեզի պիտի կանչեմ՝
որովհետև մաքուր սիրտս չունիմ։
Ինծի բարձր եղած վէմին առաջնորդէ
ինծի։
3—Վասն զի դուն ինծի ապաւէն մը
եղար,
Ամուր աշտարակ մը՝ թշնամիին երեսէն։
4—Քու խորանիդ մէջ պիտի բնակիմ
ես յաւիտեան.
Քու թեւերուդ հովանւոտութեանը
տակ պիտի ապաւինիմ։ (Սէլա՛)
5—Վասն զի դուն, ով Աստուած, լսե-
ցիր իմ ուխտերս.
Քու անունդ վախցողներուն ժառան-
գութիւնը իրենդ տուիր։
6—Թագաւորին օրերուն վրայ օրեր պի-
տի աւելցնես.
Անոր տարիները երեւ ազգ մինչև ազգ
պիտի ըլլան։

7—Անիկա յաւիտեան Աստուծոյ առջև պիտի նստի.
Ողորմութիւն ու ճշմարտութիւն պատրաստէ, որպէս զի զանիկա պահպանեն։
8—Այսպէս սաղմոս պիտի երգեմ քու անուանդ յաւիտեան,
Որպէս զի ամէն օր ուխտերս կատարեմ։

ՍԱՂՄ. ԿԲ

Գլխաւոր երաժշտին, Իդիթունէի վրայ. Սաղմոս Դաւիթի։

Յիրաւի իմ անձս լռիկ կը սպասէ Աստուծոյ.
Անկէ է իմ փրկութիւնս.
2—Յիրաւի ան է իմ վէմս ու փրկութիւնս.
Իմ ապաւէնս է, չատ պիտի չսասանիմ։
3—Մինչև ե՞րբ մարդու վրայ կը յարձակիք.
Դուք ամէնդ պիտի կործանիք զԱնի—
Ծառած պատի ու խախտած ցանկի պէս։
4—Արդարև իր պատիւէն ձգելու խորհուրդ կ'ընեն.
Սուտութիւն կը սիրեն.
Իրենց բերնովը կ'օրհնեն,
Բայց իրենց սրտովը կ'անիծեն։ (Սէլա)
5—Ով իմ անձս, միայն Աստուծոյ սպասէ,
Վասն զի անկէ է իմ յոյսս։
6—Յիրաւի ան է իմ վէմս ու փրկութիւնս.
Իմ ապաւէնս է, պիտի չսասանիմ։
7—Աստուծմէ է իմ փրկութիւնս ու փառքս.
Իմ զօրութեանս վէմը ու իմ ապաւէնս Աստուած է։
8—Ամէն ժամանակ անոր յուսացէք, ով ժողովուրդ.
Անոր առջև սիրտերնիդ թափեցէք.
Աստուած ապաւէն է մեզի։ (Սէլա)
9-Արդարև ռամկի մարդիկը փուճ են,
Ազնուական մարդիկը սուտ են.
Եթէ կշիռքի մէջ դրուելու ըլլան,
Ամէնն ալ ունայնութենէն ԲԷՐԼ են։
10—Հարստահարութեան մի յուսաք,
Ու յափշտակութեան վրայ փուճ յոյս մի դնէք.
Հարստութիւնը եթէ չատնայ,
Անոր վրայ սիրտ մի դնէք.
11—Մէկ անգամ խօսեցաւ Աստուած.
Երկու անգամ լսեցի ասիկա,
Թէ զօրութիւնը Աստուծոյ է,
12—Ողորմութիւնն ալ քու կդ է, ով Տէր,
Վասն զի ամէն մէկուն իր գործին համեմատ հատուցանես կ'ընես։

ՍԱՂՄ. ԿԳ

Սաղմոս Դաւիթի, երբ ինք Ցուդայի անապատին մէջ էր։

Ով Աստուած, դուն ես իմ Աստուածս,
Ես առտուանց քեզ կը փնտռեմ.
Հոգիս կը ծարաւի քեզի, ու մարմինս քեզի կը փափաքի
Զոր ու ծարաւ տեղը, ուր ջուր չկայ,
2—Քու զօրութիւնդ ու փառքդ տեսնելու համար,
Ինչպէս քեզ տեսած եմ սրբարանին մէջ,
3 — Որովհետև քու ողորմութիւնդ կեանքէն աղեկ է,
Իմ շրթունքներս քեզ պիտի գովեն,
4—Այսպէս պիտի օրհնեմ քեզ իմ կեանքիս մէջ.
Քու անունովդ ձեռքերս վեր պիտի վերցնեմ,
5—Իբր թէ ճարպով ու պարարտութիւնով պիտի կշտանայ իմ անձս,
Ու ցնծութեան շրթունքներով պիտի գովէ իմ բերանս,
6—Երբ անկողինիս վրայ քեզ կը յիշեմ
Գիշերապահներուն մէջ քու վրայով կը մտածեմ.
7—Վասն զի ինծի օգնական եղար.
Ու քու թեւերուդ հովանու որութեանը տակ պիտի ցնծամ.
8—Իմ անձս քեզի հետեւելով կը յարի.
Քու ա՛ջ ձեռքդ զիս կը պահէ։
9—Բայց անոնք որ իմ անձս կը փնտռեն ՉՆԻՆ— կորնչցնելու համար,
Գետնին խորունկ տեղերը պիտի մտնեն,
10—Սուրի պիտի մատնուին,

*Ագռէնները բաժին պիտի ըլլան։
11—Բայց թագաւորը Աստուծով պիտի ուրախանայ,
Անով երդուած ընդհանուրն բոլորը պիտի պարծին.
Իսկ ստախօսներուն բերանը պիտի պահպանի։

ՍԱՂՄ. ԿԴ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւիթի։

Ով Աստուած, լսէ իմ ձայնս իմ դանդաղութիւնս առենս.
Թշնամիին վախէն իմ կեանքս պահպանէ։
2—Մածկէ զիս չարերուն ժողովքէն,
Անօրէնութիւն գործողներուն բազմութենէն,
3—Որոնք իրենց լեզուները թուրի պէս կը սրեն,
Իրենց նետերը կը քաշեն, որոնք լեղի խօսքեր են,
4—Դաղտուկ տեղէն անմեղին նետելու համար.
Յանկարծակի անոր կը նետեն ու չեն վախնար։
5—Իրենց մէջ չար խօսքեր կը հաստատեն.
Դաղտնի որոգայթներ դնելու համար կը խօսին,
Կ'ըսեն թէ Չանանք ո՞վ պիտի տեսնէ։
6—Անօրէնութիւն կը փնտռեն,
†Կ'ըսէն Ըն կատարեցինք ծէր խորհած խորհուրդը՛.
Մարդուն ներսը և սիրտը խորունկ է։
7—Բայց Աստուած զանոնք պիտի զարնէ նետով,
Անոնք յանկարծ պիտի վիրաւորին։
8—Ու իրենց լեզուն իրենց վրայ պիտի հանդիպցնեն,
Ամէն դանոնք տեսնողները պիտի փախչին։
9—Եւ բոլոր մարդիկ պիտի վախնան,
Ու Աստուծոյ գործը պատմեն,
Ու անոր ըրածին ուշադրութեամբ պիտի նային։

*Կամ, Զագալներուն
†Կամ, Իրենց խորհած խորհուրդը կը ծածկեն

10—Արդարը Տէրոջմով պիտի ուրախանայ, և անոր պիտի յուսայ.
Եւ ամէն ուղիղ սրտով եղողները պիտի պարծին։

ՍԱՂՄ. ԿԵ

Գլխաւոր երաժշտին. Դաւիթի Սաղմոսը — երգը։

Քեզի *կը սպասէ օրհնութիւնը, ով Աստուած, Սիոնի մէջ,
Ու քեզի ուխտը պիտի կատարուի։
2—Ով աղօթքի լսող,
Քեզի պիտի գայ ամէն մարմին։
3—†Անօրէնութիւնները իմ վրաս զօրացան.
Մեր մեղքերը դուն պիտի քաւես։
4—Երանի՛ անոր զոր կ'ընտրես ու ի՛ւր կը մօտեցնես,
Որպէս զի բնակի քու սրահներուդ մէջ.
Պիտի յագենք քու տանդ,
Քու սուրբ տաճարիդ, բարութենէն։
5—Աքանչելի բաներով, արդարութիւնով, պիտի պատասխանես մեզի,
Ով մեր փրկութեանը Աստուածը,
Որ երկրի ամէն ծայրերուն ու ծովուն մէջ հեռուն եղողներուն յոյսն ես.
6—Որ քու զօրութիւնովդ լեռները հաստատեցիր,
Կարողութիւնով գօտի կապուեցար.
7—Որ կը յուժդնես ծովուն ձայնը,
Անոր ալիքներուն ձայնը,
Ու ազգերուն խռովութիւնը։
8—Ու երէէ ծայրերը բնակողները պիտի վախնան քու նշաններէդ.
Առտուան ու իրիկուան ելքը դուն կ'ուրախացնես։
9—Երկրի այցելութիւն կ'ընես ու զանիկա կը յրես,
Շատ կը հարստացնես զանիկա.
Աստուծոյ գետը ջուով լեցուն է.
Անոնց ցորեն կը պատրաստես,
Վասն զի այսպէս պատրաստեցիր զանիկա։

*Կամ, լռիկ կը սպասէ.տես Սաղմ. կե.1։
†Կամ, Անօրէնութեան խօսքերը

10—Անոր ակօսները կը խմցնես,
Ու անոր փոսերը կը շիակես.
Անձրևներով կը կակուղցնես զանիկա,
Կ'օրհնես անոր բոյսը։
11—Կը պսակես տարին քու բարու-
թիւնովդ,
Ու քու շաւիղներդ պարարտութիւն կը
կաթեցնեն,
12—Անապատի արօտներուն վրայ կը
կաթեցնեն.
Ու բլուրները ուրախութիւնով պատած
են,
13—Արօտները հօտերով հագուած են,
Ու հովիտները ցորենով ծածկուած են.
Ցնծութեամբ կ'աղաղակեն ու կ'երգեն։

ՍԱՂՄ. ԿԶ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս ՚ի երգ։

Ով բոլոր երկիր, ցնծութիւնով Ա-
ստուծոյ աղաղակեցէք։
2—Սաղմոս երգեցէք անոր անուանը
փառքին,
Փառաւոր ըրէք անոր օրհնութիւնը։
3—Ասուածոյ ըսէք Ի՛նչպէս ահա-
ւոր են քու գործերդ.
Քու մեծ զօրութեանդ համար
Թշնամիներդ քեզի *խոնարհութիւն պի-
տի ընեն։
4—Բոլոր երկիր երկրպագութիւն պիտի
ընէ քեզի.
Սաղմոս պիտի երգեն քեզի,
Սաղմոս պիտի երգեն քու անուանդ։
(Սէլա)
5—Եկէք ու տեսէք Աստուծոյ ըրած-
ները.
Անիկա էր գործովը մարդոց †որդիներ-
ուն վրայ՝ ահաւոր է։
6—Ծովը ցամաքի դարձուց,
Գետին ոտքով անցան.
Անկից ուրախացանք։
7—Իր ուժովը յաւիտեան կը տիրէ
Անոր աչքերը ազգերը կը դիտեն.
Ապստամբները թող չբարձրանան։
(Սէլա)

8—Ով ժողովուրդներ, օրհնեցէք
մեր Աստուածը,
Ու լսել տուէք անոր գովութեան ձայնը։
9—Անիկա մեր հոգին կենդանի կը
պահէ,
Ու ոտքերնուս սասանիլ չտար։
10—Վասն զի դուն քննեցիր մեզ, ով
Աստուած.
Փորձեցիր մեզ, ինչպէս արծաթը կը
փորձուի։
11—Մեզ որոգայթի մէջ մացուցիր,
Ծանր բեռ դրիր մեր *կռնակին վրայ։
12—Մեր գլուխներուն վրայ մարդիկ
հեծցուցիր.
Կրակը ու ջուրը մտանք,
Սակայն մեզ առատութեան տեղը հա-
նեցիր։
13—Ողջակէզներով պիտի մտնեմ
քու տունդ,
Քեզի պիտի հատուցանեմ իմ ուխտերս,
14—Զորօնք չբղաւնքներս խոսացան,
Ու նեղութեանս մէջ բերանս խօսեցաւ։
15—Պարարտ ողջակէզներ պիտի մատու-
ցանեմ քեզի խոյերու խունկով.
Զուարակներ պիտի զոհեմ նոխազներու
հետ։ (Սէլա)
16—Եկէք լսեցէք դուք ամէնդ որ
Աստուծմէ կը վախնաք,
Ու պատմեմ ինչ որ ըրաւ իմ անձիս։
17—Բերնովս անոր աղաղակեցի,
Ու լեզուս †զանիկա բարձրացուցի*։
18—Եթէ սրտիս մէջ անօրէնութիւն
տեսնէի,
Տէրը պիտի չլսէր։
19—Սակայն Աստուած լսեց,
Իմ աղօթքիս ձայնը մտիկ ըրաւ։
20—Օրհնեալ ըլլայ Աստուած, որ իմ
աղօթքս չդիրքեց,
Ու իր ողորմութիւնը ինծմէ եւս չդար-
ձուց։

ՍԱՂՄ. ԿԷ

Գլխաւոր երաժշտին, Նկիռնոթի վրայ.
Սաղմոս ՚ի երգ։

Աստուած ողորմի մեզի ու օրհնէ մեզ,

*Եբր. պիտի ատեն. Սաղմ. ժբ. 44, ձա. 15։
†Կամ, որդիներէն աւելի

8—Ով ժողովուրդներ, օրհնեցէք
մեր Աստուածը,
Ու լսել տուէք անոր գովութեան ձայնը։
9—Անիկա մեր հոգին կենդանի կը
պահէ,
Ու ոտքերնուս սասանիլ չտար։
10—Վասն զի դուն քննեցիր մեզ, ով
Աստուած.
Փորձեցիր մեզ, ինչպէս արծաթը կը
փորձուի։
11—Մեզ որոգայթի մէջ մացուցիր,
Ծանր բեռ դրիր մեր *կռնակին վրայ։
12—Մեր գլուխներուն վրայ մարդիկ
հեծցուցիր.
Կրակը ու ջուրը մտանք,
Սակայն մեզ առատութեան տեղը հա-
նեցիր։
13—Ողջակէզներով պիտի մտնեմ
քու տունդ,
Քեզի պիտի հատուցանեմ իմ ուխտերս,
14—Զորօնք չբղաւնքներս խոսացան,
Ու նեղութեանս մէջ բերանս խօսեցաւ։
15—Պարարտ ողջակէզներ պիտի մատու-
ցանեմ քեզի խոյերու խունկով.
Զուարակներ պիտի զոհեմ նոխազներու
հետ։ (Սէլա)
16—Եկէք լսեցէք դուք ամէնդ որ
Աստուածմէ կը վախնաք,
Ու պատմեմ ինչ որ ըրաւ իմ անձիս։
17—Բերնովս անոր աղաղակեցի,
Ու լեզուս †զանիկա բարձրացուցի*։
18—Եթէ սրտիս մէջ անօրէնութիւն
տեսնէի,
Տէրը պիտի չլսէր։
19—Սակայն Աստուած լսեց,
Իմ աղօթքիս ձայնը մտիկ ըրաւ։
20—Օրհնեալ ըլլայ Աստուած, որ իմ
աղօթքս չդիրքեց,
Ու իր ողորմութիւնը ինծմէ եւս չդար-
ձուց։

ՍԱՂՄ. ԿԷ

Գլխաւոր երաժշտին, Նկիռնոթի վրայ.
Սաղմոս ՚ի երգ։

Աստուած ողորմի մեզի ու օրհնէ մեզ,

*Եբր. երիկամունքներուն
†Եբր. անիկա բարձրացաւ

Երեսը փայլեցնէ մեր վրայ, (Սէլա)
2—Որպէս զի երկրի վրայ քու ճամբադ
ճանչցուի,
Ո՛ ամէն ազգերուն մէջ քու փրկու-
թիւնդ։
3—Թող ժողովուրդները քեզ գովեն
ով Աստուած,
Բոլոր ժողովուրդները քեզ գովեն։
4—Ազգերը թող ուրախանան ու ցնծան,
Վասն զի ժողովուրդները ուղղութիւնով
պիտի դատես,
Ու երկրի ազգերուն դուն պիտի առաջ-
նորդես։ (Սէլա)
5—Թող ժողովուրդները քեզ գովեն,
ով Աստուած,
Բոլոր ժողովուրդները քեզ գովեն։
6—Երկիր իր պտուղը պիտի տայ.
Ո՛ Աստուած, մեր Աստուածը, մեզ
պիտի օրհնէ։
7—Աստուած մեզ պիտի օրհնէ,
Ու երկրի ամէն ծայրերը անկէ պիտի
վախնան։

ՍԱՂՄ. ԿԸ

Գլխաւոր երաժշտին. Դաւիթի Սաղմոսը
՚ի երգը։

Թող ելլէ Աստուած, անոր թշնա-
միները թող ցրուին,
Ու զանիկա ատողները իր երեսէն թող
փախչին։
2—Մուխին ցրուելուն պէս ցրուէ զ-
նոնդ.
Ինչպէս մոմը կրակին առջև կը հալի,
Այսպէս թող կորսուին ամբարիշտները
Աստուծոյ երեսէն։
3—Բայց արդարները թող ուրախանան,
Աստուծոյ առջև թող ցնծան,
Ու ուրախութիւնով զուարճանան։
4—Երգեցէք Աստուծոյ, սաղմոս եր-
գեցէք անոր անուանը.
Ճամբայ պատրաստեցէք անապատնե-
րուն միջէն հեծնողին,
Որուն անունը *Եհո է,
Ու ցնծացէք անոր առջև։
5—Որբերուն հայրը ու որբեւայրիներուն
դատաւորը

*Կամ, Եհովա, այսինքն, ՈՐ ԷՆ

Աստուած է իր սուրբ բնակարանին մէջ։
6—Աստուած մինակ եղողները տան մէջ
կը բնակեցնէ,
Կապտածները յաջողութեան կը հանէ.
Բայց ապստամբները չոր տեղ կը բնակին։
7—Ով Աստուած, քու ժողովուրդիդ
առջեւէն գացած ատենդ,
Անապատէն անցած ատենդ, (Սէլա)
8—Երկիր չարժեցաւ, երկինքն ալ ւրաղ
կաթեցուց Աստուծոյ երեսէն.
Սինա՝ ւ ւրաքեցաւ Աստուծոյ, Իսրա-
յէլի Աստուածոյն, առջեւէն։
9—Ով Աստուած, քու ժառանգու-
թեանդ առատօրէն անձրև տա-
լով,
Երբ յոգնած էր, դուն հաստատեցիր
զանիկա։
10—Քու ժողովուրդդ անոր մէջ բնա-
կեցաւ.
Քու քաղցրութիւնովդ ազքատին հա-
մար պատրաստեցիր, ով Աստ-
ուած։
11—Տէրը պատգամ տուաւ.
Աւետաւոր տուղիները մեծ բազմութիւն են։
12—Զօրքերուն թագաւորները կը
փախչին.
Կը փախչին, ու տան մէջ բնակող կինը
աւարը կը բաժնէ։
13—Թէև գամերուն մէջ դնեցեր պատկած
ըլլաք,
Աղաւնիի թեւերուն պէս պիտի ըլլաք
արծաթով պատած,
Ու անոր փետուրները դեղին ոսկիով։
14—Ամենակարողն՝ այն Երկրէն վրայ
թագաւորները ցրուած ատենը,
Եղէր Սելմոնի մէջ ձիւնին պէս ճեր-
մկցաւ։
15—Աստուծոյ լեռը Բասան լեռն է,
Բազմագագաթ լեռը Բասան լեռն է։
16—Ով բազմագագաթ լեռներ, ինչո՞ւ
նախանձով կը նայիք.
Այն լեռն է՝ որուն մէջ Աստուած
հաճեցաւ բնակիլ.
Յիրաւի Տէրը հոն պիտի բնակի յաւիտ-
եան։
17—Աստուծոյ կառքերը երկու անգամ
տասը հազար են, *հազար հա-
զարաց՝.

*Կամ, հազարաւոր հրեշտակներ

Տէրը անոնց մէջ է, էր սուրբ տեղն է էբբե Սինայի մէջ։

18—Բարձր տեղը նըսար, գերութիւնը գերի ըրիր,
Պարգեւներ առիր մարդոց համար,
Ու ապստամբներուն համար ալ,
Որպէս զի Տէր Աստուած անոնց հետ բնակի։

19—Տէրը օրհնեալ ըլլայ *օրէ օր.
Թէեւ հէնց բեռ մը գնէ մեր վրայ,
Աստուած է մեր փրկիչը, (Սէլա)

20—Աստուած մեզի փրկութեան Աստուած է,
Ու մահուանէ ազատութիւը Տէր Եհովայի է։

21—Սակայն Աստուած պիտի փշրէ իր թշնամիներուն գլուխը,
Նաեւ իր անօրէնութիւններուն մէջ պտըտողին գիւաւոր գագաթը։

22—Տէրը ըսաւ, Զանոնք Բասանէ եւս դարձնեմ.
Ծովուն անդունդներէն եւս դարձնեմ,

23—Այնպէս որ ոտքդ արեան մէջ թաթխուի,
Շուներուդ լեզուն թշնամիներէն իր բաժինը ուտէ։

24—Քու քալուածքներդ տեսան,
Ով Աստուած,
Իմ Աստուածս, իմ Թագաւորիս, քալուածքները սուրբ տեղին մէջ։

25—Առջեւն երգիչները գացին,
Նաեւն նուագածուները՝
Թմբուկ զարնող կոյսերուն մէջտեղը։

26—Ժողովուրդներուն մէջ օրհնեցէք զԱստուած,
Տէրը, ով Իսրայէլի աղբիւրէն եղողներ։

27—Ա՛ն տեղ է փոքր Բենիամինը, անոնց տիրապետողը,
Ցուգայի իշխանները իրենց բազմութիւնովը,
Զաբուլոնի իշխանները եւ Նեփթաղիմի իշխանները։

28—Քու Աստուածդ քու զօրութիւնդ հաստատեց.
Զօրացուր, ով Աստուած, այն բանը զոր մեզի համար ըրիր։

29—Երուսաղէմ եղող տաճարիդ համար
Թագաւորները քեզի ընծաներ պիտի բերեն։

30—Եղէգնեղուս մէջ բնակող գազաններ
Ըր, ու ցուլերուն ժողովը
Ժողովրդոց զուարակներուն հետ սաստէ,
Որպէս զի խոնարհին արծաթի կտորներ բերելով։
Պատերազմ սիրող ժողովուրդները ցրուէ։

31—Եգիպտոսէ աղնուականներ պիտի գան.
Եթովպիա իր ձեռքերը շուտով Աստուծոյ պիտի երկնցնէ։

32—Ով երկրի թագաւորութիւններ,
Երգեցէք Աստուծոյ,
Մաղմոս ըսէք Տէրոջը, (Սէլա)

33—Անոր՝ որ ի յաւիտենից երկինքներուն երկինից վրայ *կը նստի,
Ահա անկիա իր ձայնովը զօրաւոր ձայն կու տայ։

34—Զօրութիւն տուէք Աստուծոյ.
Անոր մեծվայելչութիւնը Իսրայէլի վրայ է,
Ու անոր զօրութիւնը ամպերուն մէջ է։

35—Ահաւոր ես, ով Աստուած, քու սուրբ տեղերուդ մէջ,
Իսրայէլի Աստուածը
Ինք կու տայ էր ժողովուրդին ոյժ ու կարողութիւն.
Աստուած օրհնեալ ըլլայ։

ՍԱՂՄ. ԿԹ

Դիմաւոր երաժշտին, Շօշանիմի վրայ.
Սաղմոս Դաւթի.

Ապրեցուր զիս, ով Աստուած,
Վասն զի ջուրերը իմ անձիս հասան։
2—Խորտնկ ցեխի մէջ կ'ընկղմիմ,
Ուր կայնելու տեղ չկայ.
Ջուրերուն խորտնկ տեղերը մտայ,
Ու յորձանքները զիս ընկղմեցին։
3—Ցոգնեցայ ես կանչելէս, կոկորդս ցամքեցաւ,
Աչքերս հնաւղեցան իմ Աստուծոյս սպասելէն։
4—Առանց պատճառի զիս ատողները գլխուս մազերէն շատ են.
Զիս փուճ տեղ կորսնցնող թշնամիներս զօրացան.

*Նէբ. կը հեծնէ

*Կամ, որ օրէ օր մեր վրայ էաբէբաթոթիեան բեռ կը դնէ

Այն բանը զոր չէի յափշտակեր, այն տուն վճարեցի։
5—Ով Աստուած, իմ յիմարութիւնս դուն գիտես,
Ու յանցանքներս քեզմէ ծածկուած չեն։
6—Քեզի համբերողները իմ պատճառուս չմտնան,
Ով Տէր, զօրաց Տէր.
Քեզ փնտռողները իմ պատճառուս ամօթով չըլլան,
Ով Իսրայէլի Աստուածը։
7—Վասն զի քեզի համար նախատինքի համբերեցի,
Ամօթը ծածկեց իմ երեսս։
8—Եղբայրներուս օտար՝
Ու մօր որդիներուն անծանօթ եղայ։
9—Վասն զի քու տանդ նախանձը զիս կերաւ,
Ու քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս իյնան։
10—Իմ անձիս ծոմ պահելովը լացի,
Ու այս ինձի նախատինք սեպուեցաւ։
11—Ես իմ հանդերձս քուրձ ըրի,
Ու անոնց առակ եղայ։
12—Դուռը նստողները իմ վրայս կը խօսին,
Ու արբեցողներուն խաղը եղայ։
13—Բայց ես իմ աղօթքս կ'ընեմ քեզի,
Ով Տէր, ընդունելի ժամանակին.
Ով Աստուած, քու մեծ ողորմութիւնովդ
Քու փրկութեանդ ճշմարտութիւնովը ինձի պատասխան տուր։
14—Հանէ զիս ցեխէն, ու չընկղմիմ.
Զիս ատողներէն ու խորունկ ջուրերէն ազատուիմ։
15—Ջուրերուն յորձանքը ինձ զիս չընկղմէ,
Ու անդունդը զիս չկլլէ,
Ու Հրահորը իր բերանը վրաս չգոցէ։
16—Պատասխան տուր ինձի, ով Տէր,
Վասն զի քու ողորմութիւնդ քաղցր է.
Քու առատ գթութիւնդ հաւնիստ նայէ ինձի.
17—Ու երեսդ մի ծածկեր քու ծառայէդ,

*Կամ, գուբը

Վասն զի ես նեղութեան մէջ եմ.
Շուտով պատասխան տուր ինձի։
18—Իմ անձիս մօտեցիր ու ազատէ,
Իմ թշնամիներուս համար զիս ազատէ։
19—Դուն գիտես իմ նախատինքս
Եւ իմ ամօթս ու իմ խայտառակութիւնս.
Քու առջեւդ են բոլոր զիս նեղողները։
20—Նախատինքը սիրտս կոտրեց ու հիւանդ եղայ.
Վշտակից եղողի մը նայեցայ, բայց չկար,
Ու մխիթարութիւն տուողներուն՝ բայց չգտայ։
21—Հացս կերակուրի տեղ թոյն տուին ինձի,
Ու ծարաւած տեսնես քացախ խմցուցին ինձի։
22—Անոնց սեղանը երեսց առջեւ ա՛ռ ըրած թակ,
Ու յաջողութեան տեղ վտիտ ըլլայ։
23—Անոնց աչքերը մթանան որպէս զի չտեսնեն.
Ու անոնց մէջքերը միշտ դողացուր։
24—Քու սրտմտութիւնդ անոնց վրայ թափէ,
Ու սաստիկ բարկութիւնդ անոնց վրայ հասնի։
25—Անոնց բնակարանը աւերակ ըլլայ,
Ու անոնց վրաններուն մէջ բնակող չգտնուի։
26—Վասն զի զոյն զոր դուն զարկիր, անոնք կը հալածեն,
Ու քու վիրաւորածիդ ցաւին վրայով կը խօսին։
27—Անոնց անօրէնութեանը վրայ անօրէնութիւն դիր,
Ու արդարութեանդ չհասնին։
28—Կենաց գիրքէն թող ջնջուին,
Ու արդարներուն հետ չգրուին։
29—Բայց ես աղքատ ու վշտացած եմ,
Ով Աստուած, քու փրկութիւնդ թող զիս պաշտպանէ։
30—Աստուծոյ անունը պիտի գովեմ երգով,
Ու պիտի բարձրացնեմ գանիկա գոհութիւնով։
31—Ու ասիկա եզիւրատ ու կճղակաւոր եզէն ու զուարակէն

Աւելի բնդունելի պիտի բլլայ Տէրոջը
32—Հեղերը պիտի տեսնեն և ուրախանան.
Ով զԱստուած փնտռողներ, ձեր սիրտն ալ պիտի ապրի.
33-Վասն զի Տէրը անձնկներուն կը լսէ,
Ու իր կապտածներըը չանարգեր։
34—Թող գովեն զանիկա երկինք ու երկիր,
Ծով ու բոլոր անոր մէջ չարժողները.
35—Վասն զի Աստուած Սիոնը պիտի փրկէ,
Ու Յուդայի քաղաքները պիտի չինէ.
Եւ հոն պիտի բնակին ու ժառանգեն զանիկա,
36—Ու իր ծառաներուն սերունդը պիտի ժառանգէ զանիկա,
Ու իր անունը սիրողները անոր մէջ պիտի բնակին։

ՍԱՂՄ. Ը

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի, յիշատակի համար։

Ով Աստուած, զիս փրկելու կ՚ըլլաս ըրէ.
Ով Տէր, ինձի օգնելու արագորդիր։
2—Թող ամչնան ու խայտառակ բլլան
Իմ անձս փնտռողները
Եա դառնան ու ամօթով բլլան
Ինձի չարիք ուզողները.
3—Թող *ամչնալով Եա դառնան
Անոնք որ Ւ՚ն՚ձի վա՛շ վա՛շ կ՚ըսեն։
4—Ամէն փնտռողները
Ցնծան ու ուրախանան.
Եւ փրկութիւնդ սիրողները
Ամէն ժամանակ թող ըսեն, Աստուած մեծնայ։
5—Բայց ես աղքատ ու անանկ եմ,
Ով Աստուած, չուտով հասը ինձի.
Իմ օգնականս ու փրկիչս դուն ես,
Ով Տէր, մի ուշանար։

ՍԱՂՄ. ՀԱ

Ով Տէր, քեզի յուսացայ,
Ջամչնամ յաւիտեան։
2—Ինծ արդարութիւնովդ զիս ապրեցուր ու ազատ զիս.
Ականջդ ծռէ ինձի ու փրկէ զիս։
3—Ինծի ապաստան քարայր եղիր,
Որպէս զի միշտ հոն երթամ.
Դուն հրամայեր սուրբ զիս փրկելու,
Վասն զի իմ վէմս ու բերդս դուն ես։
4—Ով իմ Աստուածս, ամբարշտին ձեռքէն,
Անօրէնին ու բռնաւորին ձեռքէն, զիս փրկէ։
5—Վասն զի իմ ակնկալութիւնս դուն ես, ով Տէր Եհովա.
Մանկութենէս ի վեր իմ յոյս դուն ես.
6—Ես քեզի հառաչեցայ արգանդէն,
Մօրս որովայնէն իմ պաշտպանս դուն ես.
Իմ գովութիւնս միշտ քու վրադ է։
7—Զարմանալի բանի մը պէս եղայ շատերուն.
Բայց իմ զօրաւոր ապաւէնս դուն ես։
8—Բերանս քու գովաբանութիւնովդ լցուի,
Ամէն օր քու փառաբանութիւնովդ։
9—Ծերութեան ատենս զիս մի ձգեր.
Ոյժիս պակսած ատենը զիս մի թողուր։
10—Վասն զի թշնամիներս ինձի համար կը խօսին,
Ու իմ անձս պահաջողները ակկաղ խորհուրդ կ՚ընեն,
11—Ըսելով, Աստուած թողուց զանիկա.
Հալածեցէք ու բռնեցէք զանիկա,
Վասն զի ազատող մը չկայ։
12—Ով Աստուած, ինծմէ մի հեռանար.
Ով իմ Աստուածս, ինձի օգնելու արագորդիր։
13—Թող ամչնան ու կորսուին իմ անձիս հակառակորդները.
Նախատինքով ու ամօթով թող ծածկուին ինձի չարութիւն ուզողները։
14—Բայց ես ամէն ատեն պիտի յուսամ,
Եւ քու ամէն գովաբանութիւններուդ վրայ պիտի աւելցնեմ։
15—Բերանս պիտի պատմէ քու արդարութիւնդ,
Ամէն օր քու փրկութիւնդ.
Վասն զի ես անոնց համրանքը չեմ գիտեր։
16—Պիտի գամ Տէր Եհովային զօրութիւնովը.

*Կամ, իրենց ամօթին պատճառ։

Քու արդարութիւնդ, միայն քուկինդ, պիտի յիշեմ։
17—Ով Աստուած, մանկութենէս ի վեր սորվեցուցիր ինծի,
Ու մինչև հիմա քու հրաշալի գործերդ պատմեցի։
18—Ու հիմա մինչև ծերութեան ու ալեւորութեան ատենս
Զիս մի ձգեր, ով Աստուած,
Մինչև որ պատմեմ քու *կարողութիւնդ ետքի ազգին,
Ու քու զօրութիւնդ այն ամէնուն որ գալիք պիտի գան։
19—Քու արդարութիւնդ ալ շատ բարձր է, ով Աստուած,
Որ մեծամեծ բաներ ըրիր.
Քեզի պես ո՞վ կայ, ով Աստուած։
20—Դուն որ շատ ու ծանր նեղութիւններ ցուցուցիր ինծի,
Նորէն զիս պիտի կենդանացնես,
Ու երկրի անդունդներէն նորէն զիս պիտի հանես։
21—Իմ մեծութիւնս պիտի չատցնես,
Ու գառնալով զիս պիտի մխիթարես։
22—Ուստի ես ալ պիտի գովեմ քեզ սաւիղով
Քու ճշմարտութեանդ համար, ով իմ Աստուածս.
Սաղմոս պիտի երգեմ քեզի քնարով,
Ով Իսրայէլի Սուրբը։
23—Քեզի սաղմոս երգած ատենս իմ շրթունքներս պիտի ցնծան,
Ու իմ հոգիս՝ զոր դուն փրկեցիր։
24—Իմ լեզուս ալ ամէն օր քու արդարութիւնդ պիտի խօսի,
Վասն զի ինծի չարիք ուզողները ամչցան ու խայտառակ եղան։

ՍԱՂՄ. ՀԲ

†Սողոմոնի համար։

Ով Աստուած, քու դատաստաններդ թագաւորին տուր,
Ու արդարութիւնը՝ թագաւորին որդւոյն։
2—Անիկա արդարութիւնով պիտի դատէ քու ժողովուրդդ,

*Եբր. բազուկդ
†Կամ, Սողոմոնի Սաղմոսը

Ու աղքատներդ՝ իրաւունքով։
3—Լեռները խաղաղութիւն պիտի բուսցնեն ժողովուրդին,
Ու բլուրներն ալ՝ արդարութիւնով.
4—Ժողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ,
Տնանկին զաւակները պիտի ազատէ,
Ու բռնաւորը պիտի ջարդէ։
5—Քեզմէ պիտի վախնան քանի որ արեգակը ու լուսինը կը մնան,
Ազգէ մինչև ազգ։
6—Հնձուած խոտի վրայ իջած անձրեւի պէս պիտի իջնէ,
Ցօղափնելու պէս՝ որ երկիրը կը թրջեն։
7—Անոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի.
Ու շատ խաղաղութիւն պիտի բլլայ,
Մինչև որ ալ լուսին չբլլայ։
8—Ու ծովէն մինչև ծով պիտի տիրէ անիկա,
Ու Գետէն մինչև երկրի ծայրերը։
9—Անոր առջև անապատին բնակիչները ծունկ պիտի կրկնեն,
Ու անոր թշնամիները փոշի պիտի լզեն։
10—Թարսիսի ու կղզիներուն թագաւորները ընծայ պիտի մատուցանեն.
Շաբայի ու Սաբայի թագաւորները պարգեւ պիտի բերեն։
11—Ու բոլոր թագաւորները անոր երկրպագութիւն պիտի ընեն.
Բոլոր ազգերը անոր պիտի ծառայեն։
12—Վասն զի աղքատը պիտի փրկէ աղաչակելու ատենը,
Խեղճն ալ, ու զանիկա ալ որ օգնութիւն չունի.
13-Պիտի խղճայ աղքատին ու անանկին,
Ու անանկներուն անձերը պիտի ազատէ.
14—Հարստահարութենէ ու բռնութենէ պիտի փրկէ անոնց անձը,
Ու անոնց արիւնը պատուական պիտի բլլայ անոր առջև։
15—Ու պիտի ապրի, և Շաբայի ոսկիէն անոր պիտի տրուի.
Ու ամէն ատեն աղօթք պիտի մատուցուի անոր համար.
Ամէն օր պիտի օրհնեն զանիկա։
16—Ցորենի առատութիւն պիտի բլլայ երկրի մէջ՝
Լեռներուն գլուխը.

Անոր պատղը Լիբանանի պէս պիտի
շաքափ.
Ու գեանի խոսին պէս պիտի ծաղկին
*քաղաքացիները։
17—Անոր անունը յաւիտեան պիտի
մնայ.
Քանի որ արեգակը կը ծագի, անոր ա-
նունն ալ պիտի մնայ.
Ու մարդիկ անով պիտի օրհնուին.
Ամէն ազգերը երանութիւն պիտի տան
անոր։
18—Օրհնեալ ըլլայ Տէր Աստուած,
Իսրայէլի Աստուածը.
Միայն ինքն է հրաշքներ ընողը։
19—Ու օրհնեալ ըլլայ յաւիտեան անոր
փառաւոր անունը,
Ու բոլոր երկիրը թող լցուի անոր փառ-
քովը։ Ամէն ու ամէն։
20—Յեսսէի որդւոյն Դաւիթի աղօթք-
ները կ'ամփոփին։

ՍԱՂՄ. Հ

Սաղմոս Ասաֆայ։

Ցերուբ Աստուած բարի է Իսրայէլին,
Այսինքն սրտով մաքուր եղողներուն։
2—Բայց քիչ մնաց որ իմ ոտքերս պի-
տի ծռէին,
Ո՛ մաղ մնաց որ իմ քայլերս գայթակ-
ղէին։
3—Վասն զի նախանձեցայ հպարտնե-
րուն,
Երբ ամբարիշտներուն յաջողութիւնը
տեսայ.
4—Քանզի իրենց մահուան ժամանակին
ալ ցաւեր չունին.
Մարմինին ալ պարարտ է։
5—Անոնք մարդոց նեղութեանը մէջ
չեն,
Ու ոբէիլ մարդոց հետ չեն տանիլուիր։
6—Անոր համար վզնոցի պէս ամբար-
տաւանութիւնը զանոնք կը շրջա-
պատէ.
Բռնութիւնը հանդերձի պէս զանոնք
կը ծածկէ։
7—Անոնց աչքերը պարարտութենէն
դուրս կ'ելլեն.
Անոնք սրտի խորհուրդներէն անդին
կ'անցնին։
8—Ծաղր կ'ընեն ու չարութիւնով կը
խօսին բռնութեան համար.
Հպարտութիւնով կը խօսին։
9—Բերաննին երկինքի դէմ կը դնեն,
Ու իրենց լեզուն երկրի մէջ կը պտըտի։
10—(Անոր համար իր ժողովուրդը հոս
պիտի դառնայ,
Ու առատութիւնով ջուր պիտի քամուի
անոնց։)
11-Ու կ'ըսեն, Աստուած ի՞նչպէս գիտէ.
Ու Բարձրեալն քով գիտութիւն կո՞ղ։
12—Ահա անոնք են ամբարիշտները,
Որ միշտ յաջողութիւն ունին, ու հա-
րստութիւն կ'աւելցնեն։
13—Ծիրանի զուր տեղը իմ սիրտս
մաքրեցի,
Ու իմ ձեռքերս անմեղութիւնով լուա-
ցի.
14—Որովհետև ամէն օր կը տանջուիմ,
Ու առտու կը խրատուիմ։
15—Եթե ըսէի թէ ես այսպէս խօսիմ,
Ահա քու որդիներուդ ազգին նենգու-
թիւն ըրած պիտի ըլլայի։
16—Երբ խորհեցայ ասիկա իմանալու,
Դժուար եկաւ իմ աչքերուս.
17—Մինչև որ Աստուծոյ սրբարանը
մտայ,
Ու անոնց վերջը խնայայ։
18—Իրաւ որ դուն զանոնք սահելու
տեղերը դրեր ես.
Կործանման մէջ իջեցուցիր զանոնք։
19—Ի՜նչպէս յանկարծակի աւերմանքի
մէջ հինան.
Հատան ու վախերով կատաւեցան։
20—Ինչպես երազ մը հրդռոտ ար-
թընուելէն ետքը,
Ով Տէր, *քաղաքին մէջ՝ անոնց պատ-
կերը պիտի անարգես։
21—Բայց իմ սիրտս ցաւեցաւ,
Ու իմ երիկամունքներս խոցուեցան։
22—Ու ես յիմար կի ու չէի իմանար,
Քու առջեւդ անասուններու պէս էի։
23—Սակայն ես միշտ քեզի հետ եմ,
Դուն իմ աջ ձեռքս կը բռնես։
24—Դուն պիտի առաջնորդես ինծի
քու խորհրդովդ,

*Կամ, աբիննալով. Սաղմ. հր. 65։

Ու վերջը փառքով պիտի ընդունես։
25—Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ.
Երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ուզեր։
26—Իմ մարմինս ու սիրտս կը մաշին,
Բայց Աստուած իմ սրտիս զօրութիւնը
ու իմ բաժինն է յաւիտեան։
27—Վասն զի ահա անոնք որ քեզմէ
կը հեռանան, կը կորսուին.
Դուն կը սատկեցնես ամէնը որ չնու-
թիւն կ'ընեն՝ քեզմէ խզբզելով։
28—Բայց Աստուծոյ մօտենալը բարի է
ինծի.
Ցոյս դրեր եմ Տէր Եհովայի վրայ,
Որպէս զի քու բոլոր գործերդ պատ-
մեմ.

ՍԱՂՄ. ՀԱ

Երգ Ասաֆայ։

Ով Աստուած, ինչո՛ւ հիւ բոլորովին
մերժեցիր,
Ու բարկութիւնդ կը մխայ քու արօտիդ
ոչխարներուն վրայ։
2—Ցիշէ քու ժողովուրդդ զոր սկիզբէն
առացեր ես,
Քու ժառանգութեանդ վիճակը զոր
փրկեր ես,
Ու այս Սիոն լեռը ուր բնակեր ես։
3—Բարձրացուր քու քայլերդ դէպ ի
բոլորովին աւերուածները,
Ու-սուրբ տեղին մէջ թշնամին ըրած
բոլոր գէշ գործերը։
4—Քու թշնամիներդ կը պոռան քու
ժողովրդիդ մէջ.
Իրենց նշանները նշանի պէս կը դնեն,
5—Անիկա անտառի ծառերուն վրայ
կացիններ վերցնողի մը պէս գիտցուե-
ցաւ.
6—Ու հիմա անոր քանդակագործ զար-
դերը,
Ամէնը մեկէն, կացիններով ու մուրճե-
րով կը կոտրտին։
7—Կրակով սրբեցին քու սրբարանդ.
Մինչև գետինը կործանեցին քու ան-
ունդ բնակարանը։
8—Իրենց սրտերուն մէջ ըսին թէ կոր-
ընդնենք ամէնը միասին մեկտեղ.
Երկրին մէջ Աստուծոյ բոլոր ժողով-
բաններուն
9—Մեր նշանները չենք տեսներ.
Ալ մարգարէ չկայ.
Ու մեր քով մէկն ալ չկայ,
Որ գիտնայ թէ ո՞ւէ՞ր մինչև ե՛րբ դէ՞տ
պիտի։
10—Ով Աստուած, մինչև ե՛րբ նա-
խատինք պիտի ընէ նեղիչը.
Թշնամին մինչև յաւիտեան քու ա-
նունդ պիտի անարգէ՞։
11—Ինչո՞ւ ես կը քաշես քու ձեռքդ
ու աջ ձեռքդ.
Զո՞ւէ՞ր ծոցէդ հանէ ու կորսնցուր
զա-նո՛ւէ։
12—Բայց սկիզբէն իմ թագաւորս Աստ-
ուած է,
Որ փրկութիւնները կ'ընէ երկրի մէջ,
13—Դուն քու զօրութիւնովդ ծովը
պատառեցիր,
Վիշապներուն գլուխները լաւերուն մէջ
փշրեցիր։
14—Դուն Լեւիաթանի գլուխները զը-
լխեցիր.
Զանիկա կերակուր ըլլալու տուիր անա-
պատին մէջի ժողովուրդին։
15—Դուն ճեղքեցիր աղբիւրը ու վտա-
կը,
Դուն չորցուցիր մշտնջենաւոր գետերը։
16—Քուկդ է ցորկը, և քուկդ է գի-
շերը.
Լոյսը ու արեւը դուն պատրաստեցիր։
17—Դուն հաստատեցիր երկրի ամէն
սահմանները.
Ամառ ու ձմեռը դուն ստեղծեցիր։
18—Ցիշէ սակայ՝ որ թշնամին նա-
խատինք տուաւ Տէրոջը,
Ու յիմար ժողովուրդը քու անունդ ա-
նարգեց։
19—Մի մատներ գազանին քու տատ-
րակիդ անձը.
Մի մոռնար յաւիտեան քու աղքատնե-
րուդ *կեանքը։
20—Նայէ ես ուխտիդ, վասն զի երկ-
րի խաւար տեղերը
Բռնութեան բնակարաններով լցուած
են։
21—Թող խեղճը ես չդառնայ ամօթով.
Թող աղքատը ու անանկը օրհնեն քու
անունդ։

*Կամ, ժողովը

22—Եվիբ, ով Աստուած, քու դատդ պաշտպանէ.
Ցիշէ այն նախատինքը՝ զոր անզգամը ամէն օր քեզի կ'ընէ,
23—Մի մոռնար քու թշնամիներուդ ձայնը.
Քեզի դէմ առաջ կելլողներուն խռովութիւնը ամէն ժամանակ կը բարձրանայ։

ՍԱՂՄ. ՀԵ

Գլխաւոր երաժշտին. Ալ-թաշհէթ, Աասիփ Սաղմոսը — երգը։

Կը գովինք քեզ, ով Աստուած,
Կը գովինք, և քու անունդ մօտ է.
Քու հրաշքներդ կը պատմեն,
2—երբ որոշեալ ժամանակ ունենամ՝
Ուղիղ դատաստան պիտի տեսնեմ։
3—Երկիր ու անոր բոլոր բնակիչները մաշեցան.
Անոր սիւները ես կը հաստատեմ՝ (Սէլա)
4—Ըսի հպարտներուն թէ Հպարտութիւն մի ընէք.
Ու ամբարիշտներուն՝ թէ եղջիւր մի վերցնէք։
5—Ձեր եղջիւրները վեր մի վերցնէք.
Ամբարտաւան պարանոցով մի խօսիք։
6—Վասն զի բարձրանալը ոչ արեւելքէն է
Եւ ոչ արեւմուտքէն, ոչ ալ անապատէն,
7—Հապա դատաւորը Աստուած է.
Մէկը կը ցածցնէ, ու միւսը կը բարձրացնէ,
8—Վասն զի Տէրոջը ձեռքը բաժակ կայ, ու գինին կարմիր է.
Անիկա խառնուածքով լեցուն է, ու անկէ կը թափէ.
Եւ իրաւ երկրի բոլոր ամբարիշտները
Անոր մրուընները քամելով պիտի խմեն,
9—Բայց ես յաւիտեան պիտի պատմեմ.
Յակոբի Աստուծոյն սաղմոս պիտի երգեմ։
10—Ու ամբարիշտներուն բոլոր եղջիւրները պիտի փշրեմ,
Արդարին եղջիւրները պիտի բարձրանան։

ՍԱՂՄ. ՀԶ

Գլխաւոր երաժշտին. Նկինոթի վրայ. Ասափ Սաղմոսը — երգը։

Աստուած Ցուդայի մէջ ճանչցուած է.
Անոր անունը Իսրայէլի մէջ մեծ է,
2—Ու անոր խորանը Սաղէմի մէջ է,
Եւ անոր բնակարանը Սիոնի մէջ է։
3—Ան տեղը կարեց սպեղին նետերը,
Վահանը, սուրը ու պատերազմը։ (Սէլա)
4—Դուն լուսափայլ ես,
Յափշտակութեան լեռներէն աւելի գեղապանց ես։
5—Սրտով զօրաւորները յափշտակուեցան,
Քուներնին փնացան.
Ու բոլոր զօրեղ մարդիկը ձեռքերնին չգտան։
6—Ով Յակոբի Աստուածը, քու յանդիմանութենէդ
Կառքը ու ձին անզգայ պառկեցան։
7—Դուն, ով Տէր, դուն ահաւոր ես,
Եւ ո՞վ կրնայ կայնիլ քու առջեւդ՝ քու բարկութեանդ առեներ։
8—Դուն երկինքէն լսել տուիր դատաստանը.
Երկիր վախցաւ ու լռեց,
9—Երբ Աստուած դատաստան ընելու կելաւ,
Որպէս զի երկրի բոլոր հեզերը փրկէ։ (Սէլա)
10—Իրաւ զքեզ մարդուն բարկութիւնը պիտի գովէ.
Ո՞ մնացած բարկութիւնը գուն պիտի զսպես։
11—Ուխտ ըրէք ու կատարեցէք ձեր Տէր Աստուծոյն.
Անոր բոլորովքը եղողներուն ամէնը
Թող ընծաներ բերեն Ահաւորին։
12—Ինք իշխաններուն հոգին պիտի կարէ.
Ահաւոր է երկրի թագաւորներուն։

*կամ, խեղճերը

ՍԱՂՄ. ՀԸ

Գլխաւոր երաժշտին. Իդիթունի վրայ. Ասափ Սաղմոսը։

Իմ ձայնս Աստուծոյ է, ու ես կ'աղաղակեմ.
Իմ ձայնս Աստուծոյ է, ու ան ինծի պիտի լսէ։
2—Իմ նեղութեանս օրը Տէրը փնտռեցի.
Գիշերը սարսափած էր իմ ձեռքս ու չէր թափեր.
Իմ անձս մխիթարիլ չէր ուզեր։
3—ԶԱստուած յիշեցի ու անհանգիստ եղայ.
Խորհեցայ ու իմ հոգիս մաշեցաւ։ (Սէլա)
4—Իմ աչքերս արթուն պահեցիր.
Խռովեցայ ու չկրցայ խօսիլ։
5—Միտքս բերի առաջուան օրերը,
Հին ժամանակներուն տարիները։
6—Գիշերուան մէջ կը յիշեմ իմ երգս.
Իմ սրտիս հետ կը խօսիմ.
Ու իմ հոգիս ալ քննութիւն կ'ընէ։
7—Արդեօք Տէրը յաւիտեան պիտի մերժէ՞,
Ու ալ բնաւ պիտի չհաճի՞։
8—Միթէ անոր ողորմութիւնը բոլորովին պակսեցա՞ւ,
Ո՞ր էր խոստումնիքը վերջացա՞ւ ազգէ մինչեւ ազգ։
9—Միթէ Աստուած գթութիւն ընելը մոռցա՞ւ,
Միթէ բարկութիւնով արգիլե՞ց իր ողորմութիւնը։ (Սէլա)
10—Ուստի ըսի. Այս է իմ ախտս*թիւնս,
*Բարձրեալին աջ ձեռքին փոփոխութիւնը†։
11—Տէրոջը գործերը պիտի յիշեմ.
Ցիրաւ քու առաջուան հրաշքներդ պիտի յիշեմ։
12—Բոլոր գործերուդ վրայ պիտի խորհիմ,
Ու քու բռածներուդ վրայ պիտի մտածեմ։
13—Ով Աստուած, քու ճամբադ սրբութեան մէջ է.

*կամ, Սակայն Բարձրելոյն աջ ձեռքին տարիները գէթ չէին

Աստուծոյ պէս մեծ աստուած ո՞վ կայ։
14—Հրաշքներ ընող Աստուածը դուն ես.
Քու զօրութիւնդ ժողովրդներուն մէջ ցուցուցիր։
15—Քու բազուկովդ փրկեցիր քու ժողովուրդդ։
Յակոբի ու Յովսէփի որդիները։ (Սէլա)
16—Ջուրերը քեզ տեսան, ով Աստուած,
Ջուրերը քեզ տեսան — դողացին.
Անդունդներն ալ սարսափեցան։
17—Ամպերը լալը թափեցին.
Երկինքները ձայն հանեցին.
Նետերդ ալ գացին։
18—Քու որոտմանդիդ ձայնը *երկինքը էր։
Փայլակները լոյս տուին աշխարհի.
Երկիր սասանեցաւ ու դողաց։
19—Քու ճանապարհդ ծովուն մէջ է,
Ու քու շաւիղդ մեծ ջուրերուն մէջ է,
Ու քու չալերդ չեն գիտցուիր։
20—Հօտի պէս քու ժողովուրդիդ առաջնորդեցիր
Մովսէսի ու Ահարոնի ձեռքով։

ՍԱՂՄ. ՀՐ

Երգ Ասափայ։

Ով իմ ժողովուրդս, մտիկ ըրէք իմ †օրէնքս,
Խոնարհեցուցէք ձեր ականջը իմ բերնիս խօսքերուն։
2—Առակով պիտի բանամ իմ բերանս,
Ու հին ժամանակի խրթնաբանութիւնները պիտի խօսիմ,
3—Զորոնք լսեցինք ու գիտցանք,
Եւ մեր հայրերը մեզի պատմեցին,
4—Մենք պիտի չպահենք անոնց որդիներէն.
Ետքի եկող ազգին պիտի պատմենք
Տէրոջը գովութիւնները ու անոր զօրութիւնը
Եւ անոր ըրած հրաշքները,
5—Վասն զի վկայութիւն հաստատեց Յակոբի մէջ,

*կամ, մրրիկի մէջ
†կամ, վարժութիւնս

Ու օրինք դրաւ Իսրայէլի մէջ,
Զորոնք պատուիրեց մեր հայրերուն,
Որպէս զի սորվեցնեն իրենց որդիներուն.
6—Որպէս զի գալու ազգը, ծնանելու որդիքը. ուստէ յանկան
Ո— ելլեն իրենց որդիներուն պատմեն.
7—Անոնք ալ իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնելով՝
Զմոռնան Աստուծոյ գործերը,
Հապա անոր պատուիրանքները պահեն.
8—Ու իրենց հայրերուն պէս
Կամակոր ու ապստամբ ազգ մը չըլլան,
Ա՛ր-ԷՒ-ԼԵՒ ազգ մը՝ որ իրենց սիրտը չէն ուղիղ,
Ու իրենց հոգին հաւատարիմ էլ Աստուծոյ.
9—Սիրեմի որդիները, ուստէ սպառազինեալ աղեղնաւորներ էին,
Պատերազմին օրը ետ դարձան.
10—Աստուծոյ ուխտը չպահեցին,
Ու անոր օրինքին համեմատ չուզեցին քալել.
11—Ու մոռցան անոր գործերը,
Ու անոր հրաշքները զորոնք իրենց ցուցուցեր էր.
12—Անոնց հայրերուն առջև հրաշքներ ըրաւ,
Եգիպտոսի երկրին, Տայանխի դաշտին,
մէջ։
13—Ծովը պատռեց ու զանոնք անցուց,
Ու ջուրերն ալ դէպի պէս կանգնեցուց,
14—Ու ցորեկը ամպով առաջնորդեց անոնց,
Ու բոլոր գիշերը կրակի լուսով։
15—Վէմերը պատռեց անապատին մէջ,
Ու խմցուց անոնց իբր Թէ մեծ անդունդէ մը,
16—Ու առուներ հանեց վէմին,
Ու ջուրերը գետերու պէս բղխեցուցին։
17—Բայց անոնք նորէն մեզբերնին ուռեցուցին անոր դէմ,
Ո— բարկացուցին Բարձրեալը անապատին մէջ.
18—Ու իրենց սիրտերուն մէջ զԱստուած փորձեցին,
Կերակուր ուղելով իրենց անձերուն համար.
19—Ու Աստուծոյ դէմ խօսեցան ասելին,

Մխիթ կարո՞ղ է Աստուած
Անապատին մէջ սեղան պատրաստել.
20—Ահա վէմին զարկաւ, ու ջուրերը դուրս բղխեցին,
Ու առուները վազեցին.
Արդեօք հաց ալ կրնա՞յ տալ.
Արդեօք միս կը պատրաստէ՞ իր ժողովուրդին համար։
21—Ուստի Տէրը լսեց ու բարկացաւ.
Ու կրակ բորբոքեցաւ Յակոբի մէջ,
Ու նաև բարկութիւն ելաւ Իսրայէլի վրայ.
22—Վասն զի Աստուծոյ չհաւատացին,
Ու յոյսերնին անոր փրկութեանը վրայ չդրին.
23—Թէպէտ ինք վերեն հրաման բերեր էր ամպերուն,
Ու երկինքի դռնները բացեր էր,
24—Ու կերակուրի համար անոնց վրայ մանանայ տեղացեր էր,
Ու երկինքի ցորենը տուեր էր անոնց,
25—Մարդիկ հրեշտակներուն հացը կերան.
Կշտանալու չափ պաշար դրկեց անոնց։
26—Երկինքի մէջ արեւելեան հովը հանեց,
Ու իր զօրութիւնովը հարաւային հովը բերաւ.
27—Ու անոնց վրայ փոշիի պէս միս տեղացոյց,
Ու ծովու աւազին չափ թեւաւոր թռչուններ,
28—Ու անոնց բանակին մէջ,
Անոնց վրաններուն չորս կողմը, իջեցուց։
29—Ու կերան և ադեկ կշտացան.
Ու իրենց ցանկութիւնը իրենց տուաւ.
30—Իրենց ցանկութենէն զրկուկ չմնացին.
Ո— քանի որ իրենց կերակուրը իրենց բերանն էր,
31—Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ,
Ու սպաննեց անոնց պարարտներէն,
Ու գետինը զարկաւ Իսրայէլի ընտիրներուն։
32—Ասոր բոլոր բաներուն վրայ նորէն մեղանչեցին,

*Կամ, Անոնց առջև մէկը ապուռ կանխերուն հացը կերան

Ու չհաւատացին անոր հրաշքներուն։
33—Ու ունայնութեան մէջ սպառեց անոնց օրերը,
Ու անի մէջ՝ անոնց տարիները.
34—Երբ կը սպաններ զանոնք, դիմք կը խնդրէին.
Ու ետ կը դառնային, և զԱստուած կանուխ կը փնտռէին։
35—Ու կը յիշէին որ Աստուած իրենց վէմն էր,
Ու Բարձրեալ Աստուածը իրենց Փրկիչն էր։
36—Սակայն իրենց բերնովը կեղծաւորութիւն կ'ընէին անոր,
Ու իրենց լեզուովը սուտ կը խօսէին անոր.
37—Ու իրենց սիրտը ուղիղ չէր անոր առջև,
Ու հաւատարիմ չէին անոր ուխտին մէջ։
38—Բայց ինք գորոված ըլլալով —
Նոյն անօրէնութիւնը կը քաւէր,
Ու չէր կորսնցներ զանոնք.
Ու շատ անգամ կը զսպէր իր բարկութիւնը,
Ու չէր բորբոքեցներ իր բոլոր սրամտութիւնը,
39—Վասն զի կը յիշէր թէ անոնք մարմին են,
Հովի մը պէս՝ որ կ'երթայ ու ետ չդառնար։
40—Քանի՛ անգամ զանիկա սրդոզացուցին անապատին մէջ,
Ո— բարկացուցին զանիկա անջուր տեղին մէջ,
41—Ու դարձան զԱստուած փորձեցին,
Դ. Իսրայէլի Սուրբը նեղացուցին։
42—Չյիշեցին անոր ձեռքը,
Ո— այն օրը՝ որ զիրենք թշնամիէն փրկեց.
43—Ե— Թէ ի՛նչպէս իր նշանները ըրաւ Եգիպտոսի մէջ,
Ու իր հրաշքները Տայանխի դաշտին մէջ.
44—Ու արիւն դարձուց անոնց գետերը
Ու անոնց առուները, որ չկրցան խմել.
45—Շանաճանճեներ զրկեց անոնց վրայ, որոնք կերան զանոնք,
Ու գորտեր՝ որոնք ապականեցին զանոնք.
46—Ու անոնց բերքը գրաւիճին տուաւ,
Ու անոնց վաստակը՝ մարախին.
47—Անոնց որթերը փճացուց կարկտաւով,
Ու անոնց ժանտաթզենիները՝ խոշոր կարկտաւով։
48—Ու անոնց անասունները կարկտաին մատնեց,
Ու անոնց հօտերը՝ կայծակին։
49—Իր սաստիկ բարկութիւնը զրկեց անոնց վրայ,
Սրատեսութիւն ու բարկութիւն ու նեղութիւն,
*Չար հրեշտակները զրկելով։
50—Իր բարկութեանը ճամբայ բացաւ.
Անոնց անձր մահուանէ չխնայեց,
Հապա անոնց †կեանքը ժանտախտի մատնեց.
51—Ու ամէն անդրանիկը սպաննեց Եգիպտոսի մէջ,
Ե— ‡առջինները՝ համի վրաններուն մէջ։
52—Ու իր ժողովուրդը ոչխարներու պէս հանեց,
Ու զանոնք հօտի պէս վարեց անապատին մէջ։
53—Ու անոնց ապահովութեամբ առաջնորդեց, ու չվախցան.
Իսկ անոնց թշնամիները ծովը ծածկեց.
54—Ու զանոնք տարաւ իր սրբութեան սահմանը,
Այն լեռը՝ զոր իր աջ ձեռքը ստացեր էր.
55—Ու անոնց առջեւէն ազգեր վռնտեց,
Ու չափով ժառանգութիւն բաժնեց անոնց,
Ու Իսրայէլի ցեղերը անոնց վրաններուն մէջ բնակեցուց։
56—Բայց անոնք փորձեցին ու սրդոզացուցին Բարձրեալ Աստուածը,
Ու չպահեցին անոր վկայութիւնները.
57—Ու իրենց հայրերուն պէս ետ դարձան ու նենգութիւն ըրին.
Թաքերբայ աղեղի պէս խոտորեցան։
58—Վասն զի զանիկա սրդոզացուցին իրենց բարձր տեղերովը.

*Կամ, Չարիքներու
†Կամ, անասուններ. Եբ. Բ. 3, 6։
‡Եբր. զորութեան սկիզբը

Ու նախանձի չարժեցին զանիկա իրենց
կուռքերովը։
59—Աստուած լսեց ու բարկացաւ,
Եւ չատ անարգից Իսրայէլը։
60—Ու Սիլովի խորանը մերժեց,
Այն վրանը՝ զոր մարդոց մէջ կանգներ
էր։
61—Եւ *իր զօրութիւնը գերութեան
մատնեց,
Ու իր փառքը՝ թշնամիներուն ձեռքը։
62—Ու իր ժողովուրդը սուրի մատնեց,
Ու իր ժառանգութեանը վրայ բարկա-
ցաւ։
63—Անոր երիտասարդները կրակը կե-
րաւ,
Ու անոր †աղջիկները սուգ չըրին՝։
64—Անոր քահանաները սրով ինկան,
Ու անոր այրեւարիները չլացին։
65—Բայց Տէրը արթնցաւ որպես թե
քունէ՝
Զինեխ սթափած զօրաւոր մարդու մը
պէս,
66—Ու իր թշնամիները ետեւնուն զար-
կաւ.
Յաւիտենական նախատինք տուաւ ա-
նոնց։
67—Եւ Յովսէփի վրանը մերժեց,
Ու Եփրեմի ցեղը չընտրեց.
68—Հապա Յուդայի ցեղը ընտրեց,
Ո՞ Սիօն լեռը՝ զոր սիրեց։
69—Եւ իր սրբարանը չինեց բարձր
Բլուրներու պէս,
Երկրի պէս զոր յաւիտեան հաստատեց։
70—Ու իր Դաւիթ ծառան ընտրեց,
Եւ զանիկա ոչխարի փարախներէն ա-
ռաւ.
71—Ծիծ տուող ալեաբեղուն եւսեւնին
բերաւ զանիկա,
Որպէս զի իր Յակոբ ժողովուրդը
Ու իր Իսրայէլ ժառանգութիւնը հով-
ուէ։
72—Անոնք ալ հովուեց զանոնք իր
սրտին անմեղութիւնովը,
Ու իր ձեռքերուն յաջողակութիւնովը
առաջնորդեց անոնց։

*Կամ, անոր

†Կամ, աղջիկներուն համար սուգ
ընող չկար

ՍԱՂՄ. ՀԹ

Սաղմոս Ասափայ։

Ով Աստուած, հեթանոսները քու
ժառանգութեանդ մէջ մտան,
Քու սուրբ տաճարդ պղծեցին,
Երուսաղէմը աւերակներու դարձուցին։
2—Քու ծառաներուդ դիակը
Երկինքի թռչուններուն կերակուր
տուին.
Քու սուրբերուդ մարմինը՝ երկրի գա-
զաններուն։
3—Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին
Երուսաղէմի բոլորտիքը.
Ու մէկը չկար որ ըլլար թաղէր։
4—Մեր դրացիներուն նախատինք ե-
ղանք,
Ծաղր ու կատակ՝ մեր բոլորտիքը եղո-
ղներուն։
5—Մինչեւ ե՞րբ, ով Տէր. միշտ պի-
տի բարկանա՞ս.
Քու նախանձդ կրակի պէս պիտի բոր-
բոքի՞։
6—Թափէ քու բարկութիւնդ այն ազ-
գերուն վրայ՝
Որոնք քեզ չեն ճանչնար,
Ու այն թագաւորութիւններուն վրայ՝
Որոնք քու անունդ չեն կանչեր։
7—Վասն զի Յակոբը կերան,
Ու անոր բնակութիւնը աւերակ դար-
ձուցին։
8—Մի յիշեր մեզի դէմ առաջուան
անօրէնութիւնները.
Թող չուտով հասնին մեզի քու ողոր-
մութիւնները,
Վասն զի խիստ թշուառացանք։
9—Քու անուանդ փառքին համար
Օգնէ մեզի, ով մեր փրկութեան Աստ-
ուածը.
Եւ քու անուանդ համար փրկէ մեզ,
Ու մեր մեղքերը քաւէ։
10—Ինչո՞ւ ըսեն հեթանոսները թէ
Ո՞ւր է անոնց Աստուածը.
Թող յայտնուի հեթանոսներուն մէջ մեր
աչքերուն առջեւ
Քու ծառաներուդ թափուած արիւնին
վրէժը։
11—Կապուածին հառաչանքը քու
առջեւդ թող հլլէ.

Քու զօրութեանդ մեծութիւնովը՝
Մահուան մատնուածները ապրեցուր։
12—Ու եօթնապատիկ հատուցում ըրէ
մեր դրացիներուն իրենց ծոցին
մէջ
Այն իրենց նախատինքին ֆ֊ֆ֊ըէ֊ն, ո-
րով քեզ անարգեցին, ով Տէր։
13—Բայց մենք, քու ժողովուրդդ ու
քու արօտիդ ոչխարները,
Յաւիտեան քեզ պիտի գովենք,
Ո֊ քու փառդ պիտի պատմենք ազգէ
մինչեւ ազգ։

ՍԱՂՄ. Հ

Գլխաւոր երաժշտին, Շօշանիմ-Եդութի
վրայ. Ասափի Սաղմոսը։

Ականջ դիր, ով Իսրայէլի Հովիւը,
Որ Յովսէփի հօտի պէս կ'առաջնորդես.
Դուն որ քերովբէից վրայ կը նստիս,
պայծառացիր։
2—Եփրեմի ու Բենիամինի և Մանասէի
առջեւ
Արթնցուր քու զօրութիւնդ,
Ու եկուր մեզ փրկելու։
3—Ով Աստուած, մեզ դարձուր
Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի
փրկուինք։
4—Ով Տէր, զօրաց Աստուած,
Մինչեւ ե՞րբ կը բարկանաս քու ժողո-
վուրդիդ ազօթքին դէմ։
5—Արտասուքի հաց կը կերցնես անոնց,
Ու մեծ չափով արտասուք կը խմցնես
անոնց։
6—Մեզ կռիւի պատճառ կ'ընես մեր
դրացիներուն,
Ու մեր թշնամիները հեղ ծաղր կ'ընեն
իրենց մէջ։
7—Ով զօրաց Աստուած, մեզ դարձուր,
Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի
փրկուինք։
8—Եգիպտոսէ որթ մը փոխադրեցիր,
Հեթանոսները վռնտեցիր ու զանիկա
անկեցիր։
9—Անոր առջեւէն տեղ պատրաստեցիր,
Ու անոր արմատները հաստատեցիր.
Եւ անիկա երկիրը լեցուց։
10—Լեռները ծածկուեցան անոր հո-
վանիովը,
Ու անոր ճիւղերը Աստուծոյ եղեւիննե-
րուն պէս եղան։
11—Իր ճիւղերը երկնցուց մինչեւ ծով,
Ու իր բողբոջները մինչեւ Գետը։
12—Ինչո՞ւ փլցուցիր անոր ցանկերը,
Որ ճամբային բոլոր անցնողները զանի-
կա փրցնեն։
13—Անտառին խոզը ապականից զա-
նիկա,
Ու դաշտի գազանները կերան զանիկա։
14—Ով զօրաց Աստուած, կ'ազա-
չեմ, դարձիր.
Նայէ երկինքէն ու տես,
Ու այցելու եղիր այս որթին,
15—Եւ այս տունկին՝ զոր քու աջ ձեռ-
քովդ տնկեցիր,
Ու որդիին զոր քեզի համար հաստատե-
ցիր։
16—Կրակով այրուած ու կարուած է.
Քու երեսդ սաստկէն կը կորնչին։
17—Թող քու ձեռքդ քու աջ ձեռքիդ
մարդուն վրայ ըլլայ,
Ո֊ մարդու որդիին վրայ՝ զոր քեզի հա-
մար հաստատեցիր։
18—Մինք ալ ետ պիտի չդառնանք
քեզմէ.
Կենդանացուր մեզ, ու քու անունդ պի-
տի կանչենք։
19—Ով Տէր, զօրաց Աստուած, մեզ
դարձուր,
Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի
փրկուինք։

ՍԱՂՄ. ՀԱ

Գլխաւոր երաժշտին, Կիթթիթի վրայ.
Ասափի Սաղմոսը։

Յնծացէք Աստուծոյ առջեւ, որ մեր
զօրութիւնն է,
Ուրախութեամբ աղաղակեցէք Յակոբի
Աստուծոյն։
2—Սաղմոս առէք ու թմբուկը բերէք,
Նաեւ անոյշ փնարը՝ տաւիղին հետ։
3—Փող հնչեցուցէք ամսու գլուխն,
*Նաեւ լուսնի լրման տաեղը՝ մեր տօնին
օրը։
4—Վասն զի սուրկա Իսրայէլի կանոն
մըն է,

*Կամ, Որոշուած ժամանակին

Ծակոբի Աստուածդն հրամանն է։
5—Ինք վկայութիւն դրաւ ասկից ծովակէվի մէջ,
եգիպտասի երկրին վրայ ելած աւեները.
Ո՜ր լեզու մը լսեցի զոր չէի գիտեր։
6—Անոր թիկունքը հեռացուցի բեռէն.
Անոր ձեռքերը հանգչեցան կողովին։
7—Նեղութեան մէջ կանչեցիր, ու փրկ վրկեցի.
Պատասխան տուի քեզի որոտման ծածկոյնն մէջէն.
Փորձեցի քեզ Մերիպայի ջուրին քով։ (Սէլա՝)
8—Լսէ, ով իմ ժողովուրդս, ու վկայեմ քեզի
Ով Իսրայէլ, եթէ ինծի մտիկ ընես,
9—Օտար աստուած չըլլայ քու մէջդ,
Ու օտար աստուծոյ երկրպագութիւն չընես։
10—Ես եմ քու Տէր Աստուածդ,
Որ հանեցի քեզ Եգիպտասի երկրէն.
Լայն բաց քու բերանդ,
Ու զանիկա ես պիտի լեցնեմ։
11—Բայց իմ ժողովուրդս մտիկ չըրաւ իմ ձայնս,
Ու Իսրայէլ ինձ չուզեց։
12—Ուստի զանոնք իրենց սրտին կամակորութեանը թողուցի,
Որպէս զի իրենց խորհուրդներուն համեմատ քալեն։
13—Երանի՛ թէ իմ ժողովուրդս ինծի մտիկ ընէր,
Ո՜ Իսրայէլ իմ ճամբաներուս մէջ քալէր։
14 Շուտով պիտի խոնարհեցնէի անոնց թշնամիները,
Ու ձեռքս պիտի դարձնէի անոնց նեղիչներուն վրայ։
15—Տէրը աւորները *խոնարհութիւն պիտի ընէին՝ իրեն,
Ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար։
16—Ան պիտի կերակրէր զանոնք պատառ ցորենով.
Ու վէմէն վրաձ մեղրով քեզ պիտի կշտացնէի։

*Եբր. պիտի տեղին

Սաղմոս Ասափայ։

Աստուած կայնած է Աստուծոյ ժողովքին մէջ,
*Աստուածներուն մէջ դատաստան կը տեսնէ։
2—Մինչև ե՞րբ անիրաւութեամբ պիտի դատէք,
Ու ամբարիշտներուն աչառութիւն պիտի ընէք։ (Սէլա՝)
3—Դատաստան ըրէք աղքատին ու որբին.
Թեզնէն ու չքաւորին իրաւունք ըրէք
4—Փրկեցէք աղքատը ու անանկը,
Ամբարիշտներուն ձեռքէն ազատեցէք զանոնք։
5—Չեն իմանար ու միաք չեն առներ
Խաւարի մէջ կը պարսին.
Երկրի բոլոր սիւները չարժեցան։
6—Ես ըսի Թէ Դուք աստուածներ կ՛ք,
Ու դուք ամէնդ Բարձրելոյն որդիներն կ՛ք.
7—Բայց մարդոց պէս պիտի մեռնիք,
Ու իշխաններէն մէկուն պէս պիտի իյնաք։
8—Ելիր, ով Աստուած դատէ երկիրը,
Վասն զի բոլոր ազգերը դուն պիտի ժառանգես։

Ասափի երգը — Սաղմոս։

Ով Աստուած, լուռ մի կենար.
Անձայն մի ըլլար, ու հանդարտ մի կենար, ով Աստուած։
2—Վասն զի ահա քու թշնամիներդ կը գոռան,
Ու քեզ ատողները գլուխ կը վերցնեն.
3—Խորամանկութեան հնարք կը գտնեն քու ժողովուրդիդ դէմ,
Ու խորհուրդ կ՛ընեն քու պահպանածներուդ դէմ։
4—Կ՛ըսեն Թէ եկէք, կորնցնենք զանոնք որպէս զի ազգ չըլլան,

*Կամ, Դատաւորներուն. Եր. խա. 6, իր. 28։

Ու ալ չյիշուի Իսրայէլի անունը։
5—Վասն զի միաբան սրտով խորհուրդ ըրին,
Ո՜ փեզի դէմ դաշնակցութիւն ըրին
6—Եդոմի վրաններըը ու Իսմայէլացիք,
Մովաբ ու Հագարացիք,
7—Գեբաղ ու Ամմոն և Ամաղէկ,
Փղշտացիք՝ Տիւրոսի բնակիչներուն հետ։
8—Նաև Ասուր անոնց հետ միաբանեցաւ.
Ղովթի որդիներուն ձեռնտու եղան։ (Սէլա՝)
9—Ըրէ անոնց ինչպես Մադիամի,
Ինչպես Սիսարայի ու Յաբինի ընդ կիսան հեղեղատին քով.
10—Անոնք Ենդովրի մէջ ոչնչակեցան,
Աղբի պէս հղան երկրի վրայ։
11—Անոնց իշխանները Օրէբի ու Զէբի պէս,
Ու անոնց բոլոր երեւելիները Զեբեէի ու Սալմանայի պէս ըրէ.
12—Որոնք ըսին Թէ Աստուծոյ բնակարանները
Մենք ժառանգենք մեզի համար։
13—Ով իմ Աստուած, անոնք *մրեղի պէս,
Հովի առջև եղող չիւղի պէս ըրէ։
14—Ինչպէս կրակը անտառը կ՛այրէ,
Ու բոցը լեռները կը բռնկցնէ,
15—Այնպես հալածէ զանոնք քու մրրիկովդ,
Ու խռովութեան մէջ ձգէ զանոնք քու փոթորիկովդ։
16—Լեցուր անոնց երեսները անարգանքով,
Որպէս զի քու անունդ խնդրեն, ով Տէր։
17—Թող ամչնան ու խռովին յաւիտեան,
Ես ամօթալից ըլլան ու կորսուին.
18—Որպէս զի գիտնան Թէ միայն դուն, որուն անունը Եհովա է,
Բարձրեալ ես բոլոր երկրի վրայ։

*Կամ, անիւի

Գլխաւոր երաժշտին, Կիթթիթի վրայ. Կորխի որդիներուն Սաղմոս։

Ի՜նչպէս սիրելի են քու բնակարանները,
Ով զօրաց Տէր։
2—Իմ անձս կը վախճանի ու նաև կը մաղի
Տէրոջը սրահներուն համար.
Իմ սիրտս ու մարմինս ցնծութեամբ կ՛ազաղակեն
Կենդանի Աստուծոյն։
3—Ձնճղուկն ալ տուն գտաւ,
Ու ծիծեռնիկը իրեն բոյն՝ իր ձագերը դնելու համար,
Քու սեղաններուդ քով, ով զօրաց Տէր
Իմ Թագաւորս ու Աստուածս։
4—Երանի՛ անոնց որ քու տանդ մէջ կը բնակին.
Անոնք անդադար քեզ պիտի օրհնեն։ (Սէլա՝)
5—Երանի՛ այն մարդոց որոնց զօրութիւնը քեզմէ է,
Ու իրենց սրտին մէջ դասեր ճամբաները կան։
6—Արտասուաց հովիտէն անցնելով աղբիւրի պէս կ՛ընեն զանիկա.
Առաջին անձրեւն ալ *օրհնութիւնով պիտի ծածկէ զանիկա։
7—Անոնք զօրութենէ զօրութիւն կ՛երթան,
Մինչև որ Սիոնի մէջ Աստուծոյ առջև երեւնան։
8—Ով Տէր, զօրաց Աստուած, լսէ իմ աղօթքս.
Ականջ դիր, ով Յակոբի Աստուածը։ (Սէլա՝)
9—Ով մեր վահանը Աստուած, տես,
Ու քու օծեալիդ երեսը նայէ։
10—Վասն զի քու սրահներուդ մէջ
Մէկ օրը հազարէն աղէկ է։
Աւելի ընտրեցի իմ Աստուծոյս տանը չէմին վրայ կենալ,
Քան Թէ ամբարշտաց վրաններուն մէջ բնակիլ։

*Կամ, աւազանները կը լեցնէ

11—Բանզի Տէր Աստուած արև ու վահան է.
Տէրը շնորհք ու փառք պիտի տայ.
Բարութիւն մը պիտի չզրկեցնէ
Ուղղութեամբ քալողներէն։
12—Ով զորաց Տէր,
Երանելի է քեզի յուսացող մարդը։

ՍԱՂՄ. 25

Դիմաւոր երաժշտին. Կորխի որդիներուն Սաղմոսը։

Ով Տէր, դուն հաւնեցար քու երկրիդ,
Ցակոբի գերութիւնը դարձուցիր.
2—Ու ժողովրդիդ անօրէնութիւնը
Ներեցիր,
Անոնց բոլոր մեղքերը ծածկեցիր։ (Սէլա)
3—Հեռացուցիր քու բոլոր սրամտութիւնդ,
Ետ դարձար քու սաստիկ բարկութենէդ։
4—*Մեզ դարձուր, ով մեր փրկութեան Աստուածը,
Ու քու բարկութիւնդ որ մեր վրայ է՝ դադրեցուր։
5—Միթէ յաւիտեան պիտի բարկանա՞ս մեզի.
Քու բարկութիւնդ ազգէ ազգ պիտի երկնցնի՞ս։
6—Միթէ ետ պիտի չդառնա՞ս ու մեզ կենդանացնես,
Որպէս զի քու ժողովրդդ քեզմով ուրախ ըլլայ։
7—Ցուցուր մեզի, ով Տէր, քու ողորմութիւնդ,
Ու քու փրկութիւնդ մեզի տուր։
8—Պիտի լսեմ ինչ որ կը խօսի Տէր Աստուած.
Վասն զի խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովրդին ու իր սուրբերուն.
Ու յիմարութեան չդառնան անոնք։
9—Անշուշտ իր փրկութիւնը մօտ է իրմէ վախցողներուն,
Որպէս զի մեր երկրին մէջ փառք բնակի։
10—Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատահեցան,
Արդարութիւնը ու խաղաղութիւնը էրթ-եր համբուրեցին։
11—Ճշմարտութիւնը երկրէ պիտի բուսնի,
Ու արդարութիւնը երկինքէն վար պիտի նայի։
12—Նաև Տէրը բարութիւն պիտի տայ,
Ու մեր երկիրը իր պտուղը պիտի տայ։
13—Արդարութիւնը անոր առջևէն պիտի երթայ,
Ու *իր գնացքները ճամբու՞ պիտի դնէ։

ՍԱՂՄ. 22

Ադոթք Դաւթի։

Ով Տէր, խնամարհեցար քու ականջիդ,
Պատասխան տուր ինծի, վասն զի աղքատ ու անանկ եմ։
2—Պահէ իմ անձս, վասն զի ես սուրբ եմ.
Ով իմ Աստուածս, քեզի յուսացող ծառադ դուն փրկէ։
3—Ողորմ ինծի, ով Տէր,
Վասն զի քեզի կը կանչեմ ամէն օր,
4—Ուրախացուր քու ծառայիդ անձը,
Վասն զի դէպ ի քեզ կը վերցնեմ իմ անձս, ով Տէր։
5—Վասն զի դուն, ով Տէր, բարի ու ներող ես.
Ու խիստ ողորմած՝ այն ամէնուն որոնք քեզի կը կանչեն։
6—Ականջ դիր իմ ազօթքիս, ով Տէր,
Ու մտիկ ըրէ իմ ազաչանքներուս ձայնը։
7—Նեղութեանս օրը քեզի կ'ազաղակեմ
Վասն զի դուն ինծի կը պատասխանես։
8—Աստուածներուն մէջ քեզի նման մէկը չկայ, ով Տէր,
Ու քու գործերուդ պէս չկայ։
9—Բոլոր ազգերը, զորոնք դուն ստեղծեցիր, պիտի գան
Ու երկրպագութիւն ընեն քու առջևդ, ով Տէր,
Ու քու անուանդ փառք պիտի տան,
10—Վասն զի դուն մեծ ու հրաշքներ գործող ես,
Աստուած միայն դուն ես։
11—Ով Տէր, սորվեցուր ինծի քու ճամբադ,

*Կ՚ար, Դէպ իր քայլերուն ճամբուն մէջ

Որ երթ վի քու ճշմարտութեանդ մէջ քալեմ.
*Միացուր իմ սիրտս՝ որպէս զի քու անունդէ վախնայ։
12—Իմ բոլոր սրտովս քեզ պիտի գովիմ, ով Տէր, իմ Աստուածս,
Ու յաւիտեան պիտի փառաւորեմ քու անունդ։
13—Վասն զի քու ողորմութիւնդ մեծ եղաւ իմ վրաս.
Ու դուն փրկեցիր իմ անձս խորունկ դժոխքէն։
14—Ով Աստուած, ամբարտաւաններ ինծի դէմ եղան,
Ու բռնաւորներուն ժողովքը իմ անձս փնտռեցին,
Ու քեզ իրենց առջև չդրին։
15—Բայց դուն, ով Տէր, գթած ու ողորմած Աստուած ես,
Երկայնամիտ ու ողորմութիւնով և ճշմարտութիւնով առատ ես։
16—Նայէ ինծի ու ողորմ ինծի.
Քու զօրութիւնդ տուր քու ծառայիդ,
Ու փա՛ս տղուիկիդ որդին փրկէ։
17—Բարութեան նշան մը ըրէ ինծի,
Որպէս զի ինծ ատողները տեսնեն ու ամչնան.
Վասն զի դուն, ով Տէր, ինծի օգնեցիր ու ինծ մխիթարեցիր։

ՍԱՂՄ. 26

Կորխի որդիներուն Սաղմոսը — երգը։

Անոր հիմերը սուրբ լեռներուն վրայ են։
2—Տէրը Սիոնի դռները
Ցակոբի բոլոր բնակարաններէն աւելի կը սիրէ։
3—Փառաւոր բաներ կը պատմուին քեզի համար,
Ով Աստուծոյ քաղաքը։ (Սէլա)
4—†Հաստարը ու Բաբելոնը պիտի յիշեմ զիս ‡ճանչցողներուն մէջ՝.
Ահա փղշտացւոց երկիրը ու Տիւրոս Քուշի հետ

*Կ՚ար, իմ սիրտս պիտի ուրախանայ
†Այլեւս, եզիպտոսը
‡Կ՚ար, ճանչցողներու պէս

Ասոնք ան հոն ծնան։
5—Ու Սիոնի համար պիտի ըսուի թէ
Այս մարդը ու այն մարդը հոն ծնաւ.
Ու Բարձրեալը ինք պիտի հաստատէ զանիկա։
6—Տէրը ազգերը գրած ժամանակը պիտի ըսէ
Թէ Ասիկա հոն ծնաւ։ (Սէլա)
7—Ու երգիցուհիները, նուագէս ան *սրնգահարները դէ՛տ ըլ՛են,
Իր բոլոր աղբիւրները քեզմէ են։

ՍԱՂՄ. 27

Կորխի որդիներուն երգը — Սաղմոսը.
Դիմաւոր երաժշտին. Մահալաթ-Լեանոթի վրայ. Եման Եզրահացիի երգը։

Ով Տէր, իմ փրկութեանս Աստուածը,
Ցորկիկ կ'ազաղակեմ — գիշերը քու առջևդ է։
2—Իմ ազօթքս քու առջևդ թող հլլէ.
Խոնարհեցուր քու ականջդ իմ աղաղակիս։
3—Վասն զի իմ անձս չարիքներով լեցուեցաւ,
Ու իմ կեանքս գերեզմանին մօտեցաւ։
4—Գուբը իջնողներուն հետ սեպուեցայ.
Ոյժ չունեցող մարդու մը պէս եղայ։
5—Մեռելներուն մէջ ինկած է,
Գերեզմանի մէջ պառկող մեռցուածներուն պէս,
Զորոնք ա՛լ չես յիշեր,
Ու քու ձեռքդէ մերժուած են։
6—Դուն զիս ամէնէն խորունկ գուբին մէջ դրիր,
Խաւարային անդունդներուն մէջ,
7—Քու սրամտութիւնդ ծանրացաւ իմ վրաս,
Ու քու բոլոր ալիքներովդ զիս չարչարեցիր։ (Սէլա)
8—Իմ ծանօթներս ինծմէ հեռացուցիր,
Զիս գարշելի բրիր անոնց առջև.
Գոցուեցայ ու դուրս չեմ կրնար,
9—Տառապանքէն աչքերս վատեցան.
Ամէն օր քեզի աղաղակեցի, ով Տէր,

*Կ՚ար, պար բռնողները

Զեռքերս քեզի երկնցուցի։
10—Մինչ մեռելներո՞ւն հրաշք պիտի ընես.
Մինչ մեռածնե՞րը պիտի ելլեն ու քեզ գովեն։ (Սէլա)
11—Մինչ կը պատմուի՞ քու ողորմութիւնդ գերեզմանին մէջ,
Ո՞ր քու ճշմարտութիւնդ՝ կորստեան մէջ։
12—Մինչ կը ճանչցուի՞ն քու հրաշքներդ խաւարին մէջ,
Ո՞ր քու արդարութիւնդ՝ մոռացման երկրին մէջ։
13—Բայց ես, ով Տէր, քեզի աղաղակեցի,
Ու իմ աղօթքս առտուանց քու առջեւդ պիտի ելլէ.
14—Ով Տէր, ինչո՞ւ իմ անձս կը մերժես,
Ո՞ր քու երեսդ կը ծածկես ինծմէ։
15—Ես խեղճ եմ ու մանկութենէս ի վեր մեռնելու վրայ եմ.
Քու ահերդ քաշեցի ու խռովեցայ։
16—Քու սրտմտութիւնդ իմ վրաս իջաւ,
Ո՞ր քու զարհուրանքներդ զիս կորսնցուցին։
17—Ամէն օր ջուրի պէս զիս պատեցին,
Միւկողմէ չորս կողմս առին։
18—Հեռացուցիր ինծմէ սիրելին ու բարեկամը,
Իմ ճանչուածներս խաւարի մէջ են։

ՍԱՂՄ. 28

ԵԹԱՆ ՆԳԱՀԱՑԻԼ ԵՐԳԸ։

Տէրոջը ողորմութիւնները յաւիտեան պիտի երգեմ.
Քու հաւատարմութիւնդ իմ բերնովս ազգէ ազգ պիտի պատմեմ։
2—Վասն զի ըսի Թէ Ողորմութիւնը յաւիտեան պիտի շինուի.
Երկինքի մէջ պիտի հաստատես քու հաւատարմութիւնդ։
3—Ես իմ ընտրեալս հետ ուխտ ըրի,
Իմ Դաւիթ ծառայիս երդումով ըրի, ըսելով,
4—Քու սերունդդ յաւիտեան պիտի հաստատեմ,
Ու ազգէ ազգ պիտի շինեմ քու աթոռդ։ (Սէլա)
5—Երկինք ալ կը փառաւորէ քու հրաշքներդ, ո՛վ Տէր,
Ու քու հաւատարմութիւնդ՝ սուրբերուն ժողովին մէջ։
6—Վասն զի ո՞վ կայ երկինքի մէջ Տէրոջը հաւասար։
Ո՞ր *հզօրաց որդիներուն մէջ ո՞վ կը նմանի Տէրոջը։
7—Աստուած խիստ զարհուրելի է սուրբերուն ժողովին մէջ,
Ու ահաւոր է ամէն իր բոլորտիքը եղողներուն։
8—Ով Տէր, զօրաց Աստուած, ո՞վ է քեզի պէս հզօր Տէր։
Ու քու հաւատարմութիւնդ քու բոլորտիքդ է։
9—Դուն կը տիրես ծովուն հպարտութեանը վրայ.
Երբ անոր ալիքները կը բարձրանան, դուն կը հանդարտեցնես զանոնք։
10—Դուն ճնշեցիր Ռահաբը խոցոտածի պէս.
Քու զօրաւոր բազուկովը ցրուեցիր քու թշնամիներդ։
11—Քուկդ է երկինքը ու քուկդ է երկիրը.
Դուն հիմնեցիր աշխարհը ու անոր լիութիւնը։
12—Հիւսիսը ու հարաւը դուն ստեղծեցիր.
Թաբոր ու Հերմոն քու անունովդ կը ցնծան։
13—Դուն զօրաւոր բազուկ ունիս.
Քու ձեռքդ ուժով է, քու աջ ձեռքդ բարձրացած է։
14—Արդարութիւնը ու իրաւունքը քու աթոռիդ հիմն են,
Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քու երեսիդ առջեւէն կ՚երթան։
15—Երանի՛ այն ժողովուրդին որ գիտեն †ազդարարութեան ֆուվրոռա՞ ձայնը.
Ով Տէր, անոնք քու երեսիդ լուսովը պիտի քալեն։
16—Քու անունովդ ամէն օր պիտի ցնծան,
Ու քու արդարութիւնովդ պիտի բարձրանան։

*Կամ, աստուածոց
†Կամ, ցնծութեան. Թուա. իգ. 21։

17—Վասն զի դուն ես անոնց զօրութեանը փառքը,
Ու քու հաճութիւնովդ պիտի բարձրանայ մեր եղջիւրը։
18—Վասն զի մեր վահանը Տէրոջն է,
Ու մեր թագաւորը Իսրայէլի սուրբինն է։
19—Այն ժամանակ տեսիլքով խօսեցար քու սուրբիդ հետ,
Ու ըսիր, Օգնութիւն դրի զօրաւորին վրայ,
Ժողովուրդէն ընտրուածը բարձրացուցի։
20—Իմ ծառաս Դաւիթը գտայ,
Իմ սուրբ իւղովս օծեցի զանիկա.
21—Որու հետ իմ ձեռքս պիտի հաստատուի,
Ու իմ բազուկս պիտի զօրացնէ զանիկա։
22—Թշնամին պիտի չհարստահարէ զանիկա,
Ու անօրէնութեան որդին պիտի չչարչարէ զանիկա։
23—Ես անոր թշնամիները իր առջեւէն պիտի կոտրեմ,
Ու զանիկա ատողները պիտի զարնեմ։
24—Ես իմ հաւատարմութիւնս ու ողորմութիւնս անոր հետ պիտի ըլլայ.
Ու անոր եղջիւրը իմ անունովս պիտի բարձրանայ։
25—Անոր ձեռքը ծովուն մէջ պիտի դնեմ,
Ու անոր աջ ձեռքը գետերուն մէջ։
26—Անիկա ինծի պիտի կանչէ Թէ Դուն ես իմ Հայրս,
Իմ Աստուածս ու իմ փրկութեանս վէմը։
27—Ու ես զանիկա անդրանիկ պիտի ընեմ՝
Երկրի թագաւորներէն աւելի բարձր։
28—Իմ ողորմութիւնս յաւիտեան պիտի պահեմ անոր համար,
Ու իմ ուխտս անոր հետ հաւատարիմ պիտի ըլլայ։
29—Եւ անոր սերունդը յաւիտեան,
Ու անոր աթոռը երկինքի օրերուն չափ պիտի ընեմ։
30—Եթէ անոր որդիները իմ օրէնքս թողուն,
Ու իմ իրաւունքներովս չքալեն,
31—Եթէ իմ կանոններս անարգեն,
Ու իմ պատուիրանքներս չպահեն,
32—Ես ալ գաւազանով պիտի պատժեմ անոնց յանցանքը,
Ու հարուածներով՝ անոնց անօրէնութիւնը։
33—Բայց իմ ողորմութիւնս պիտի չվարեմ անկէ,
Ու իմ հաւատարմութիւնս սուտ պիտի չհանեմ։
34—Իմ ուխտս պիտի չանարգեմ,
Ու չրթունքներուս ելածը պիտի չփոխեմ։
35—Անգամ մը երդում ըրի իմ սրբութիւնովս,
Որ սուտ պիտի չըսեմ Դաւիթի։
36—Անոր սերունդը յաւիտեան պիտի մնայ,
Ու անոր աթոռը իմ առջեւս՝ արեգակին չափ։
37—Լուսնին պէս յաւիտեան պիտի հաստատուի,
Ու երկինքի մէջ հաւատարիմ վկայ ՝ղէ։ (Սէլա)
38—Բայց դուն երեսդ ձգեցիր ու անարգեցիր,
Քու օծեալիդ բարկացար,
39—Քու ծառայիդ ուխտը մերժեցիր,
Անոր թագը գետնին հաւասար պղծեցիր,
40—Անոր բոլոր պարիսպները փլցուցիր,
Անոր բերդերը աւերակ ըրիր։
41—Բոլոր ճամբայէն անցնողները կողոպտեցին զանիկա.
Նախատինք եղաւ իր դրացիներուն։
42—Անոր նեղիչներուն աջ ձեռքը բարձրացուցիր,
Անոր բոլոր թշնամիները ուրախացուցիր։
43—Անոր սուրին բերանն ալ դարձուցիր,
Ու զինք պատերազմին մէջ չկայնեցուցիր։
44—Անոր փառքը դադրեցուցիր,
Ու անոր աթոռը գետինը զարկիր։
45—Անոր երիտասարդութեան օրերը կարճեցուցիր.
Ջանիկա ամօթով ծածկեցիր։ (Սէլա)
46—Մինչեւ ե՞րբ, ով Տէր. քու անձդ միշտ պիտի պահե՞ս.
Քու սրտմտութիւնդ կրակի պէս պիտի բորբոքի՞։
47—Յիշէ իմ կեանքիս ինչ ըլլալը.

Ի՛նչ ունայնութեան համար ստեղծեցիր մարդոց բոլոր որդիները։

48—Ո՞վ է այն մարդը որ ապրի ու մահ չտեսնէ, Ե՞ր իր անձը դժոխքին ձեռքէն փրկէ։ (Սէլա՛)

49—Ով Տէր, ո՞ւր են քու առաջուան ողորմութիւնները, Զորո՛վ երդուար ըրիր Դաւիթի քու հաւատարմութիւնովդ։

50—Ով Տէր, յիշէ քու ծառաներուդ նախատինքը, Զոր իմ ծոցիս մէջ կը կրեմ բոլոր մեծ ազգերէն։

51—Որով քու թշնամիներդ անարգեցին, ով Տէր, Որով քու օծեալիդ քայլերը անարգեցին։

52—Օրհնեալ ըլլայ Տէրը յաւիտեան։ Ամէն ու ամէն։

ՍԱՂՄ. Ղ

Աստուծոյ մարդուն Մովսէսի աղօթքը։

Ով Տէր, դուն մեզի ապաւէն եղար ազգէ մինչև ազգ։

2—Լեռներուն ծնանելէն առաջ Ու երկրի և աշխարհի ստեղծուելէն առաջ՝

Յաւիտենից մինչև յաւիտեան դուն Աստուած։

3—Դուն մարդը փոշի կը դարձնես, Ու կ'ըսես, Ետ դարձէ՛ք մարդոց որդիներ։

4—Վասն զի հազար տարին քու առջեւդ երէկուան օրին պէս է որ անցաւ, Կամ գիշերուան պահու մը պէս։

5—Կ'ընկղմես զանոնք, երազի պէս կ'ըլլան. Առտուընց կանանչացած խոտի պէս կ'ըլլան.

6—Առտուընց կը ծաղկի ու կը կանանչնայ, Իրիկուընը կը կոտրի ու կը չորնայ։

7—Վասն զի քու բարկութենէդ կը մաշինք, Եւ քու սրտմտութենէդ կը խռովինք։

8-Մեր անօրէնութիւնները քու առջեւդ, Ո՛ւ մեր ծածուկ մեղքերը քու երեսիդ լուսոյն մէջ դրիր։

9—Վասն զի մեր բոլոր օրերը քու բարկութենովդ կ'անցնին. Մեր տարիները ցնորքի մը պէս կ'անցընենք։

10—Մեր տարիներուն օրերը եօթանասուն տարի են. Ու եթէ զօրութենով ութսուն տարի ըլլան, Տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է. Վասն զի անոնք չտեսով կ'անցնին, ու մենք կը թռչինք։

11—Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօրութիւնը, Եւ քու սրտմտութիւնդ՝ քու վախիդ համեմատ։

12—Այնպէս սորվեցուր մեզի մեր օրերը հաշուել, Որ սրտի իմաստութիւն առնանք։

13—Դարձիր, ով Տէր, մինչև ե՞րբ. Ու գթութիւն ըրի՛ր քու ծառաներուդ։

14—Կշտացուր մեզ կանուխ քու ողորմութիւնովդ, Որպէս զի ցնծանք և ուրախ ըլլանք մեր բոլոր օրերուն մէջ։

15—Ուրախացուր մեզ այն օրերուն չափովը որ պատժեցուցիր. Այն տարիներուն չարիքովը որ չարիք տեսանք։

16—Թող երեւնայ քու գործդ քու ծառաներուդ, Եւ քու փառքդ անոնց որդիներուն։

17—Ու մեր Տէր Աստուծոյն վայելչութիւնը մեր վրայ ըլլայ. Եւ ձեռքերնուս գործը հաստատէ մեր վրայ. Մեր ձեռքերուն գործը հաստատէ։

ՍԱՂՄ. ՂԱ

Բարձրելոյն ծածկոցին տակ բնակողը Ամենակարողին հովանաւորութեանը տակ պիտի հանգչի։

2—Տէրոջը համար պիտի ըսեմ Թէ իմ ապաւէնս ու իմ ամրոցս է. Իմ Աստուածս՝ որու կը յուսամ։

3—Արդարև ան պիտի փրկէ քեզ որսորդին որոգայթէն,

Ապականիչ ժանտամահէն։

4—Քեզ իր փետուրներովը պիտի ծածկէ, Ու իր թեւերուն տակ պիտի ապաստանիս. Անոր ճշմարտութիւնը վահան մը ու ասպար մը պիտի ըլլայ քեզի։

5—Պիտի չվախնաս գիշերուան զարհուրանքէն, Ո՛ր ցերեկը թռչող նետէն,

6—Ո՛չ մութ տեղը պտրտող ժանտամահէն, Ո՛ր կէսօրուան ատեն աստակեցնող հարուածէն։

7—Հազար հոգի քու քովիդ, Ու տասը հազար քու աջ կողմիդ պիտի իյնան, Բայց քեզի հո՛ւրդ մը պիտի չմօտենայ,

8—Միայն քու աչքերովդ պիտի նայիս, Ու ամբարիշտներուն հատուցումը պիտի տեսնես։

9—Որովհետև դուն Տէրը, իմ Ապաւէնս, Բարձրելոյն քեզի ապաստանարան ըրիր,

10—Քեզի չարիք պիտի չհասնի, Եւ քու բնակարանիդ հարուած մը պիտի չմօտենայ։

11—Վասն զի իր հրեշտակներուն պիտի ապաւրէ քեզի համար, Որ քու բոլոր ճամբաներուդ մէջ քեզ պահեն։

12—Անոնք ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, Որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես։

13—Առիւծի ու իժի վրայ պիտի քալես. Առիւծի կորիւնը ու վիշապը պիտի կոխկրտուտես։

14— Որովհետև ինծի կը ցանկայ, Անոր համար ես պիտի փրկեմ զանիկա. Անոր ամուր եմ պիտի ըլլամ, Վասն զի անիկա իմ անունս գիտցաւ։

15—Ինծի պիտի կանչէ, ու ես անոր պատասխան պիտի տամ. Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ. Պիտի ազատեցնեմ ու փառաւորեմ զանիկա.

16—Երկայն օրերով պիտի կշտացնեմ զանիկա, Ու իմ փրկութիւնս անոր պիտի ցուցնեմ։

ՍԱՂՄ. ՂԲ

Շաբաթ օրուան համար Սաղմոս ու երգ։

Բարի է գոհանալ Տէրոջմէն, Ու սաղմոս ըսել քու անուանդ, ով Բարձրեալ.

2—Առտուանց քու ողորմութիւնդ, Ու գիշերները քու հաւատարմութիւնդ պատմել՝

3—Տասը լար ունեցող նուագարանով ու սաւիղով, Ե՛ր քնարի ձայնով,

4—Վասն զի դուն, ով Տէր, քու գործովդ ինծի ուրախացուցիր. Քու ձեռքերուդ գործերովը պիտի ցնծամ։

5—Ով Տէր, ի՛նչ մեծ են քու գործերդ. Շատ խորունկ են քու խորհուրդներդ։

6—Անմիտ մարդը ասիկա չհասնար, Ու յիմարը չհասկնար.

7—Ամբարիշտներուն խոտի պէս բուսնելը Ու բոլոր անօրէնութիւն գործողներուն ծաղկիլը Իրենց յաւիտենական կորուստին է՛ր պահէ։

8—Բայց դուն, ով Տէր, յաւիտեան բարձր ես։

9—Վասն զի ահա քու թշնամիներդ, ով Տէր, Վասն զի ահա քու թշնամիներդ պիտի կորսուին. Բոլոր անօրէնութիւն գործողները պիտի ցրուին։

10—Բայց իմ եղջիւրս մէկղէրու ինչին պէս պիտի բարձրացնես. Ես նոր իւղով օծուեցայ.

11— Ու իմ աչքերս թշնամիներուս [illegible] պիտի տեսնեն. Իմ ականջներս ինծի դէմ ելլող չարագործներուն [illegible] պիտի լսեն։

12—Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի, Լիբանանի եղևնիի պէս պիտի մեծնայ։

13—Տէրոջը տանը մէջ տնկուածները

Մեր Աստուծոյն արահներուն մէջ պիտի
ծաղկին.
14—Ներութեան ատեն ալ պտուղ պիտի
տան,
Պարարտ ու կանանչ պիտի մնան,
15—Որպէս զի պատմեն թէ Տէրը ուղիղ է.
Անիկա իմ վէմս է, ու անիրաւութիւն
չկայ անոր քով։

ՍԱՂՄ. ՂԳ

Տէրը կը թագաւորէ, մեծափառութիւն հագած է,
Տէրը զօրութիւն հագած ու գօտեւորած է.
Աշխարհ ալ հաստատուած է որպէս զի
չսասանի։
2—Քու աթոռդ հին ժամանակէն հաստատ է.
Ի յաւիտենից ես դուն։
3—Ովկ Տէր, գետերը բարձրացուցին,
Գետերը բարձրացուցին իրենց ձայնը.
Գետերը կը բարձրացնեն իրենց շառաչիւնը։
4—Շատ լուրերուն ձայնէն ու ծովուն
զօրաւոր ալիքներէն
Աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան
մէջ։
5—Քու վկայութիւններդ շատ հաւատարիմ են.
Ովկ Տէր, սրբութիւնը քու տանդ կը
վայլէ *յաւիտեան։

ՍԱՂՄ. ՂԴ

Ովկ Տէր, վրէժխնդրութեանց Աստուած,
Ովկ վրէժխնդրութեանց Աստուած,
յայտնուէ։
2—Երիր, ով երկրի Դատաւորը,
Ամբարտաւաններուն հատուցում բրէ։
3—Ովկ Տէր, մինչև ե՞րբ ամբարիշտները,
Մինչև ե՞րբ ամբարիշտները պարծենան.
4—Գոռոզ բերանե բարբառելով խօսին,
Ո՞ր բոլոր անօրէնութիւն գործողները
պարծենան։
5—Ովկ Տէր, անոնք քու ժողովուրդդ
կը հարստահարեն,
Ու քու ժառանգութիւնդ կը չարչարեն.
6—Որբևայրն ու պանդուխտը կը
սպաննեն,
Եւ որբերը կը մեռցնեն.
7—Ու կ'ըսեն, Տէրը չտեսնէր,
Եւ Յակոբի Աստուածը չիմանար։
8—Իմացէք, ով ժողովուրդին անմիտներըդ,
Ու դուք, ով յիմարներ, ե՞րբ միտք
պիտի առնէք։
9—Մի՞թէ ականջը անկողք չը՞լսէր,
Կամ թէ աչքը առնդողը չը՞տեսներ,
10—Մի՞թէ ազգերը խրատողը չը՞յանդիմաներ.
Մի՞թէ մարդու գիտութիւն սորվեցնողը
չը՞ն՞էԹԷ։
11—Տէրը մարդոց խորհուրդները գիտէ
Որ ունայնութիւն են։
12—Երանի՛ այն մարդուն զոր դուն
կը խրատես, ով Տէր,
Եւ քու օրէնքէդ անոր կը սորվեցնես,
13—Որպէս զի չարութեան օրերուն
մէջ դադիկա հանգչեցնես,
Մինչև որ ամբարշտին համար հոր փորուի։
14—Վասն զի Տէրը իր ժողովուրդը
երեսէ պիտի չձգէ,
Ու իր ժառանգութիւնը պիտի չմերժէ.
15—Հապա դատաստանը իրաւունքի
պիտի դառնայ,
Ու ամէն սրտով ուղիղները անոր հետևէն պիտի երթան։
16—Ո՞վ ինձի համար չարերուն դէմ
պիտի ելլէ,
Ո՞վ ինձի համար անօրէնութիւն գործողներուն դէմ պիտի կայնի։
17—Եթէ Տէրը ինձի օգնական չըլլար,
Քիչ պիտի մնար որ իմ անձս լռութեան տեղը բնակէր։
18—Երբ կ'ըսէի թէ իմ ոտքս կը սասանի,
Ովկ Տէր, քու ողորմութիւնդ զիս կը հաստատէր։
19—Իմ ներսիդս հոգերուս չատցած ատենը՝
Քու մխիթարութիւններդ իմ անձս կ'ուրախացնէին։
20—Մի՞թէ քեզի հետ հաղորդակցութիւն ունի՞ անօրէնութեան աթոռը,

*Եբր. երկար օրեր

Որ *օրէնքին գէմ՝ չարիք կը պատրաստէ։
21—Արդարին անձին դէմ կը ժողովուին,
Ու անմեղ արիւնը կը դատապարտեն։
22—Բայց Տէրը իմ ամրութիւնս է,
Ու իմ Աստուածս՝ իմ ապաւինութեանս վէմը.
23—Եւ անոնց անօրէնութիւնը իրենց վրայ պիտի դարձնէ,
Ու զանոնք իրենց չարութիւնովը պիտի կտրէ.
Մեր Տէր Աստուածը պիտի կտրէ զանոնք։

ՍԱՂՄ. ՂԵ

Եկէք ցնծութիւն ընենք Տէրոջը
առջև,
Աղաղակենք մեր փրկութեան վէմին։
2—Գոհութիւնով անոր երեսին առջև
գանք,
Սաղմոսներով աղաղակենք անոր։
3—Վասն զի Տէրը մեծ Աստուած է,
Ու բոլոր աստուածներուն վրայ մեծ
Թագաւոր է։
4—Անոր ձեռքին մէջ են երկրի խորհրդավոր տեղերը,
Ու լեռներուն †բարձրութիւնները ա-
նոնն են։
5—Իրն է ծովը ու ինք չինեց զանիկա.
Եւ իր ձեռքերը տեղծեցին ցամաքը։
6—Եկէք երկրպագութիւն ընենք ու
ծունկի գանք.
Մեր Ստեղծող Տէրոջը առջև.
7—Վասն զի ան է մեր Աստուածը,
Ու մենք անոր արօտին ժողովուրդը և
անոր ձեռքին ոչխարներն ենք.
Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք,
8—Ձեր սիրտերը մի խստացնէք ինչպէս
Մերիբայի մէջ՝
Անապատին մէջ փորձութեան օրուանը
պէս,
9—Ուր ձեր հայրերը զիս փորձեցին,
Քննեցին զիս ու իմ գործերս տեսան։
10—Քառասուն տարի զզուեցայ այն
ազգին,

*Կամ, էր տեղահան օրէնքովը
†Կամ, զօրութիւնները

Ու ըսի, Անոնք սրտով մոլորած ժողովուրդ մըն են,
Իմ ճամբաներս չեճանչցան։
11—Ուստի իմ բարկութեանս մէջ երդուայ ըրի,
Թէ անոնք իմ հանգիստս պիտի չմտնեն։

ՍԱՂՄ. ՂԶ

Նոր երգ երգեցէք Տէրոջը.
Ովկ բոլոր երկիր, երգեցէք Տէրոջը։
2—Երգեցէք Տէրոջը, օրհնեցէք անոր
անունը.
Օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք։
3—Անոր փառքը ազգերուն մէջ պատմեցէք,
Ո՛ր անոր հրաշքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ.
4—Քանի Տէրը մեծ է ու խիստ գովելի.
Անիկա բոլոր աստուածներուն վրայ ահաւոր է։
5—Վասն զի ազգերուն բոլոր աստուածները *կուռքեր են.
Բայց Եհովա երկինքը ստեղծեց։
6—Փառք ու վեհութիւն կայ անոր առջև,
Զօրութիւն ու գեղեցկութիւն՝ անոր սրբարանին մէջ։
7—Տէրոջը տուէք, ով ժողովրդոց տոհմերը,
Տէրոջը տուէք փառք ու զօրութիւն։
8—Տէրոջը տուէք իր անուանը փառքը.
Ընծայ առէք ու անոր սրահներուն մէջ մտէք։
9—†Սուրբ հանդեսով՝ Տէրոջը երկրպագութիւն ըրէք.
Վախցէք անոր երեսէն, ով բոլոր երկիր։
10—Հեթանոսներուն մէջ ըսէք թէ Տէրը կը թագաւորէ.
Աշխարհ ալ հաստատուած է որպէս զի չսասանի.
Անիկա պիտի դատէ ժողովուրդները ուղղութիւնով։
11—Երկինք թող ուրախանայ ու երկիր ցնծայ.
Ծովը իր լիութիւնովը թող գոռայ.
12—Դաշտը ու բոլոր անոր մէջ եղողները թող ուրախանան.

*Կամ, ունայնութիւններ
†Կամ, Սրբութեան զարդարանքով

Այն առնն անառաքին բոլոր Ծառերը
Թող ցնծան
13—Տէրոջը առջև, վասն զի կու գայ,
վասն զի կու գայ երկիրը դատելու.
Պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,
Ու ժողովուրդները իր ճշմարտութիւնով։

ՍԱՂՄ. ՂԱ

Տէրը կը թագաւորէ, երկիրը թող
ցնծայ.
Շատ կղզիներ թող ուրախանան։
2—Անոր բոլորակը ամպ ու մառախուղ
կայ,
Արդարութիւնը ու իրաւունքը անոր
աթոռին հիմերն են։
3—Անոր առջևէն կրակ կ'երթայ,
Ու անոր բոլորակը եղած թշնամիները
կ'այրէ։
4—Անոր փայլակները աշխարհը կը լու-
սաւորեն.
Երկիր կը տեսնէ ու կը դողայ։
5—Լեռները մոմի պէս կը հալին Տէրոջ
Երեսին,
Բոլոր երկրի Տէրոջը երեսին։
6—Երկինք կը պատմէ անոր արդարու-
թիւնը,
Ու բոլոր ժողովուրդները կը տեսնեն ա-
նոր փառքը։
7—Թող ամչնան այն ամէնը որոնք
կուռքերուն կը ծառայեն,
Որոնք ունայնութիւններով կը պարծե-
նան.
Ով բոլոր աստուածներ, անոր երկրպա-
գութիւն ըրէք։
8—Սիօն լսեց և ուրախացաւ,
Ու Ցուդայի աղջիկները ցնծացին
Քու իրաւունքներուդ համար, ով Տէր։
9—Վասն զի դուն, ով Տէր, բարձրեալ
ես բոլոր երկրի վրայ.
Շատ բարձրացար բոլոր աստուածնե-
րուն վրայ։
10—Ով Տէրը սիրողներ, չարութիւ-
նը ատեցէք.
Անիկա իր սուրբերուն անձերը կը պահէ,
Անօրինականերուն ձեռքէն կը փրկէ զա-
նոնք։
11— Արդարին համար լոյս ցանուեցաւ,
Ու սրտով ուղիղներուն համար՝ ուրա-
խութիւն։
12—Տէրոջմով ուրախացէք, ով արդա-
ներ,
Ու անոր սրբութիւնը յիշելով շնորհա-
կալ եղէք։

ՍԱՂՄ. ՂԲ

Սաղմոս։

Նոր երգ երգեցէք Տէրոջը,
Վասն զի հրաշքները ըրաւ.
Իր աջ ձեռքը ու իր սուրբ բազուկը
Իրեն *փրկութիւն տուաւ։
2—Տէրը ցուցուց իր փրկութիւնը,
Ազգերուն առջև յայտնեց իր արդա-
րութիւնը։
3—Ծիշտց իր ողորմութիւնը ու իր հա-
ւատարմութիւնը
Իսրայէլի տանը համար.
Երկրի ամէն ծայրերը
Մեր Աստուծոյն փրկութիւնը տեսան։
4—Ցնծացէք Տէրոջը առջև, ով բոլոր
երկիրը.
Ուրախութեան ձայնով ազատակեցէք ու
սաղմոս ըսէք։
5—Սաղմոս երգեցէք Տէրոջը քնարով,
Քնարով ու սաղմոսի ձայնով.
6—Փողերով ու շեփորի ձայնով
Ազատակեցէք Տէր Թագաւորին առջև։
7—Թող գոռայ ծովը ու անոր լիու-
թիւնը,
Աշխարհ ու անոր բնակիչները։
8—Գետերը թող ծափ զարնեն,
Ո՞ր լեռները միասին թող ցնծան
9—Տէրոջը առջև, վասն զի կու գայ
երկիրը դատելու.
Անիկա պիտի դատէ աշխարհը արդա-
րութիւնով,
Ու ժողովուրդները՝ ուղղութիւնով։

ՍԱՂՄ. ՂԳ

Տէրը կը թագաւորէ, ժողովուրդները
թող սարսափին.
Ինք քերովբէներուն վրայ կը նստի,
Երկիր թող շարժի։
2—Տէրը մեծ է Սիօնի մէջ,
Ու բարձրացած է բոլոր ժողովուրդնե-
րուն վրայ։

*կամ, յաղթութիւն

3—Թող գովեն քու մեծ ու ահաւոր
անունդ.
Անիկա սուրբ է։
4—Ու *թագաւորին զօրութիւնը իրա-
ւունք կը սիրէ՞.
Ուղղութիւն հաստատեցիր,
Իրաւունք ու արդարութիւն ըրիր Ցա-
կոբի մէջ։
5—Բարձրացուցէք Տէրը, մեր Աստ-
ուածը,
Ու երկրպագութիւն ըրէք անոր ոտքե-
րուն պատուանդանին.
Անիկա սուրբ է։
6—Մովսէս ու Ահարոն անոր քահանա-
ներուն մէջ,
Ու Սամուէլ անոր անունը կանչողնե-
րուն մէջ
Տէրոջը կ'աղաղակէին,
Ու անիկա պատասխան կու տար անոնց։
7—Ամպի սիւնին մէջէն կը խօսէր անոնց
հետ.
Անոնք կը պահէին անոնց վկայութիւն-
ները,
Ու այն հրամանը՝ որ իրենց տուաւ։
8—Ով Տէր, մեր Աստուածը, դուն կը
լսէիր անոնց.
Դուն անոնց նկատ Աստուած էիր,
Թէպէտ վրէժխնդիր եղար անոնց գոր-
ծերուն։
9—Բարձրացուցէք Տէրը, մեր Աստ-
ուածը,
Ու երկրպագութիւն ըրէք անոր սուրբ
լեռանը վրայ.
Վասն զի Տէրը, մեր Աստուածը, սուրբ է։

ՍԱՂՄ. Ճ

Գոհութեան Սաղմոս։

Աղաղակեցէք Տէրոջը, ով բոլոր
երկիր,
2—Ծառայեցէք Տէրոջը ուրախու-
թեամբ.
Անոր առջև եկէք ցնծութեամբ։
3—Ճանչցէք որ Եհովա է Աստուած.
Անիկա առիծեց մեզ, ու †ոչ Թէ մենք՝.
Մենք անոր ժողովուրդը ու անոր արօ-
տին ոչխարներն ենք։
4—Մտէք անոր դռները գոհութեամբ,
Ու անոր սրահները՝ օրհնութեամբ.
Գոհացէք անկէ ու օրհնեցէք անոր ա-
նունը։
5—Վասն զի Տէրը բարի է.
Անոր ողորմութիւնը յաւիտեան է,
Ու անոր հաւատարմութիւնը ազգէ մին-
չև ազգ։

ՍԱՂՄ. ՃԱ

Սաղմոս Դաւթի։

Ողորմութիւն ու իրաւունք պիտի
երգեմ.
Ով Տէր, քեզի սաղմոս պիտի ըսեմ։
2—Խոհեմութեամբ պիտի քալեմ կա-
տարելութեան ճամբուն մէջ.
Ե՞րբ ինծի պիտի գաս.
Իմ տանս մէջ սրտիս կատարելութեամ-
ը պիտի վարեմ։
3—Աչքերուս առջև չար բան մը պիտի
չդնեմ.
Մոլորածներուն գործը կ'ատեմ,
Թող անիկա ինծի չկպչի։
4—Ծուռ սիրտը թող զատ ինծմէ.
Զարը պիտի չճանչնամ։
5—Ան որ ծածուկ կը խօսի իր ընկերին
դէմ, պիտի ջնջեմ.
Ան որ աչքերով բարձր է ու սրտով
ամբարտաւան,
Անոր պիտի չհամբերեմ։
6—Իմ աչքերս երկրի հաւատարիմնե-
րուն վրայ պիտի լլան,
Որպէս զի ինծի հետ բնակին.
Կատարելութեան ճամբուն մէջ քալողը
ինծի ծառայութիւն պիտի ընէ։
7—Նենգաւորը պիտի չբնակի իմ տանս
մէջ.
Սուտ խօսողը աչքերուս առջև պիտի
չհաստատուի։
8—Աստուանց կանուխ պիտի ջնջեմ
երկրին բոլոր ամբարիշտները,
Որպէս զի Տէրոջը քաղաքին բոլոր ան-օ-
րէնութիւն գործողները կոր-
սընցնեմ։

ՍԱՂՄ. ՃԲ

Վշտալիին աղօթքը՝ երբ ուժը կը մարի
ու իր գանգաթը Տէրոջը առնէ կը թափէ։

Ով Տէր, լսէ իմ աղօթքս.
Ու իմ աղաղակ քոգ քեզի հասնի։
2—Ինծ երեսդ մի ծածկեր ինծմէ իմ
նեղութեանս օրը.
Խոնարհեցուր ինծի քու ականջդ.
Շուտով պատասխան տուր ինծի այն
օրը որ ուէշ կանչեմ։
3—Վասն զի իմ օրերս մուխի պէս փըշացան,
Ու իմ ոսկորներս խոփի պէս այրեցան։
4—Սիրտս զարնուեցաւ ու խոտի պէս
չորցաւ,
Այնպէս որ իմ հացս ուտելու մոռցայ։
5—Հառաչանքիս ձայնէն
Ոսկորներս մարմինիս փական։
6—Անապատին մէջի հաւալուսնի նմանեցայ,
Աւերակներուն բուէն պէս եղայ։
7—Անքուն մնացի, ու նման եղայ
Տանիքին վրայ մինակ եղող ճնճղուկին։
8—Ամէն օր իմ թշնամիներս պիս կը
նախատեն,
Իմ վրաս սաստիկ բարկացողները ինծի
դէմ երդում կ'ընեն։
9—Վասն զի մոխիրը հացի պէս կերայ,
Ու խմիչքս արցունքով խառնեցի
10—Քու բարկութեանդ ու սրտմտութեանդ համար,
Վասն զի պիս վերցուցիր ու նետեցիր։
11—Իմ օրերս երկնցած սաւառնի պէս
եղան,
Ու ես խոտի պէս չորցայ։
12—Բայց դուն, ով Տէր, յաւիտեան
կը կենաս,
Ու քու յիշատակդ ազգէ մինչև ազգ։
13—Դուն պիտի ելլես ու Սիոնի ողորմիս,
Վասն զի ժամանակ է անոր ողորմելու,
Քանի որ ատեան ժամանակը հասաւ։
14—Վասն զի քու ծառաներդ անոր
քարերուն կը հաւնին,
Ու անոր հողին կը գթան։
15—Ու հեթանոսները պիտի վախնան
Տէրոջը անունէն,
Ու երկրի բոլոր թագաւորները՝ քու
փառքէդ։
16—Վասն զի Տէրը պիտի չինէ Սիոնը,
Իր փառքովը պիտի երեւնայ։
17—Տնանկներուն աղօթքը մտիկ պիտի
ընէ,
Ու անոնց աղօթքը պիտի չանարգէ։
18—Այս պիտի գրուի գալու ազգին
համար.
Ու ստեղծուելիք ժողովուրդը Տէրոջը
գոհութիւն պիտի ասի։
19—Վասն զի իր սրբութեանը բարձրութենէն հայեցաւ.
Տէրը երկինքէն երկրի վրայ նայեցաւ.
20—Որպէս զի կապուածին հառաչանքը լսէ,
Ու մահու որդիները արձակէ։
21—Որպէս զի Սիոնի մէջ Տէրոջը ա-
նունը պատմուի,
Ու անոր գովութիւնը՝ Երուսաղէմի մէջ,
22—Երբ ժողովուրդները միհատ ժողովուին,
Ու թագաւորութիւնները՝ Տէրոջը ծառայելու համար։
23—Անիկա զօրութիւնս ուժասցուց
ճամբուն մէջ,
Ու իմ օրերս կրճատցուց։
24—Ես ըսի, Ով իմ Աստուածս,
Իմ օրերուս կէսին մէջ զիս մի վերցներ.
Քու տարիներդ ազգէ մինչև ազգ են։
25—Սկիզբէն երկրի հիմերը դրիր,
Ու երկինք քու ձեռքերուդ գործն է։
26—Անոնք պիտի կորսուին, բայց դուն
պիտի կենաս.
Ու անոնց ամէնը լաթի պէս պիտի մաշին.
Հանդերձի պէս պիտի փոխես զանոնք,
Ու պիտի փոխուին։
27—Բայց դուն նոյն ինքն ես,
Ու քու տարիներդ պիտի չվերջանան։
28—Քու ծառաներուդ որդիները պիտի
բնակին,
Ու անոնց սերունդը հաստատ պիտի
մնայ քու առջեւդ։

ՍԱՂՄ. ՃԳ

Մաղմոս Դաւթի.

Ով իմ անձս, օրհնէ Տէրը,
Ու այն ամէնը որ իմ ներսիդիս է՝ անոր
սուրբ անունը։
2—Ով իմ անձս, օրհնէ Տէրը,

Ու անոր բոլոր բարերարութիւնները մի
մոռնար.
3—Որ կը ջնջէ քու բոլոր հիւանդութիւններդ.
Ու կը ջժչկէ քու բոլոր հիւանդութիւններդ.
4—Որ կը փրկէ քու կեանքդ ապականութենէն,
Ու կը պսակէ քեզ ողորմութիւնով ու
գթութիւնով.
5—Որ կը լեցնէ քու ծերութիւնդ բարութիւնով,
Ու քու մանկութիւնդ արծիւին պէս կը
նորոգուի։
6—Տէրը արդարութիւններ ու իրաւունքներ կ'ընէ
Բոլոր զրկուածներուն։
7—Անիկա իր ճամբաները Մովսէսի
ճանչցուց,
Ու իր գործերը՝ Իսրայէլի որդիներուն։
8—Բարեգութ ու ողորմած է Տէրը,
Երկայնամիտ ու առատ՝ ողորմութիւնով։
9—Անիկա մինչև վերջը չհակառակիր,
Ու յաւիտեան սէր չպահեր։
10—Անիկա մեր մեղքերուն համեմատ
չվրաս մեղի,
Ու մեր անօրէնութիւններուն համեմատ հատուցում չվրաճ մեղի։
11—Հապա որչափ որ երկինք երկրէ
բարձր է,
Այնչափ իր ողորմութիւնը իրմէ վախցողներուն վրայ զօրաւոր է։
12—Որչափ որ արեւելքը արեւմուտքէն
հեռու է,
Այնչափ հեռացուց մեզմէ մեր յանցանքները։
13—Ինչպես հայր մը կը գթայ իր որդիներուն վրայ,
Այնպէս Տէրը կը գթայ իրմէ վախցողներուն վրայ։
14—Վասն զի ան գիտէ մեր կազմուածքը,
Կը յիշէ որ մենք հող ենք։
15—Մարդուն օրերը խոտի պէս են.
Ինչպէս գաշտի ծաղիկը, այնպէս կը ծաղկի։
16—Վասն զի հովը անոր վրայէն կ'անցնի ու ան կ'ոչնչանայ,
Ու ալ անոր տեղը չճանչնար զանիկա։
17—Բայց Տէրոջը ողորմութիւնը յաւիտեանս յաւիտենից իրմէ վախցողներուն վրայ է,
Ու անոր արդարութիւնը՝ որդւոց որդիներու վրայ.
18—Անոնց վրայ է՝ որոնք կը պահեն
անոր ուխտը,
Ու կը յիշեն անոր պատուիրանքները
ու կը կատարեն։
19—Տէրը իր աթոռը երկինքի մէջ
հաստատեց.
Ու անոր թագաւորութիւնը ամէնուն
վրայ կը տիրէ։
20—Օրհնեցէք Տէրը, ով անոր հրեշտակներդ, որ ուժով զօրաւոր էք,
Որ անոր խօսքին ձայնը լսելով՝ իր հրամանը կը կատարէք։
21—Օրհնեցէք Տէրը, ով անոր բոլոր
զօրքերը,
Անոր կամքը կատարող պաշտօնեաներդ։
22—Օրհնեցէք Տէրը, ով անոր բոլոր
գործերը,
Անոր տէրութեանը ամէն տեղերուն մէջ։
Օրհնէ Տէրը, ով իմ անձս։

ՍԱՂՄ. ՃԴ

Օրհնէ Տէրը, ով իմ անձս.
Ով Տէր, իմ Աստուածս, դուն խիստ
մեծ ես.
Փառք ու վայելչութիւն հագած ես.
2—Լոյսը հանդերձի պէս կը հագնիս,
Երկինքը վարագոյրի պէս կը տարածես։
3—Անիկա իր վերնատունները ջուրերուն վրայ կը չինէ,
Ամպերը իրեն կառք կ'ընէ,
Հովին թեւերուն վրայ կը պտրտի։
4—Իր հրեշտակները հոգիներ կ'ընէ,
Ու իր պաշտօնեաները՝ կրակի բոց։
5—Անիկա հաստատեց երկիրը իր հիմերուն վրայ,
Որպէս զի յաւիտեանս յաւիտենից
չխախտի։
6—Ջանիկա անդունդով ծածկեցիր իբր
թէ հանդերձով.
Ջուրերը լեռներուն վրայ կայնեցան.
7—Քու սաստելդ փախան.
Քու որոտմունքիդ ձայնէն արտորալով
փախան։
8—Լեռներուն վրայ ելան ու հովիտներուն մէջ իջան,
Այն տեղը զոր դուն հաստատեցիր անոնց համար։

9—Սահման դիր որպէս զի չանցնին,
Ու նորին երկիրը չծածկեն։
10—Զօրերուն մէջ աղբիւրներ կը ղրկէ.
Ջր—էրէզ լեռներուն մէջէն կ'երթան։
11—Անոնք բոլոր գաշտի գազաններուն
կը խմցնեն.
Ո— վայրի էշերը իրենց ծարաւութիւնը
կ'անցնեն։
12—Անոնց կող երկինքի թռչունները
կը բնակին,
Ոստերուն մէջէն ձայն կու տան։
13—Անկից իր վերնատուններէն լեռ-
ները կը ջրէ.
Քու գործերուդ պտուղէն երկիր կը
կշտանայ։
14—Անկից անասուններուն համար խոտ
կը բուսցնէ,
Ու մարդուն ծառայութեան համար՝
բոյս,
Որպէս զի կերակուր հանէ երկրէ,
15—Ու գինի՝ որ կ'ուրախացնէ մարդ-
ուն սիրտը,
Ե— *իւղ՝ որ անոր երեսը կը փայլեցնէ,
Ու հաց՝ որ կը հաստատէ մարդուն սիրտը։
16—Տէրոջը ծառերը կուշտ են,
Լիբանանի եղեւիններըՙ զորս ինք
անկեց,
17—Հոն թռչունները բոյներնին կը շի-
նեն,
Ո— արագիլին բնակարանը մայրերուն
վրայ է։
18—Բարձր լեռները այծեամներուն ա-
պաւէն են,
Ո— վէմերը՝ ճագարներուն։
19—Ժամանակներու համար լուսինը
առեղծեց.
Արեգակը իր մայրը մտնելը կը ճանչնայ։
20—Խաւարը կը դնես ու գիշեր կ'ըլ-
լայ,
Որուն մէջ անասունին բոլոր գազանները
կը պտրտին։
21—Առիւծներուն կորիւնները կը մռըն-
չեն յափշտակութեան համար,
Ու Աստուծմէ իրենց կերակուրը կը
խնդրեն.
22—Արեգակին ծագելուն պէս կը ժող-
վուին,
Ու իրենց օրջներուն մէջ կը պառկին։

*Եբր. իւղէն, կամ, իւղէն ա—եւէ

23—Մարդ մինչև իրիկուն իր գործին
Ու իր ծառայութեանը կ'երթայ։
24—Ով Տէր, ո՛րքան շատ են քու
գործերդ.
Անոնց բոլորը իմաստութիւնով ըրիր.
Երկիրը լցուած է քու *սեղծածներովդ։
25—Այս ծովը մեծ ու լայն է,
Հոն անթիւ սողացողներ,
Գոյութիւն ունեցող կենդանիներ, կան։
26—Հոն նաւերը կը գային,
Ո— Լեւիաթան՝ զոր անոնց մէջ խաղալու
համար սեղծեցիր։
27—Ասոնց ամէնը քեզի կը սպասեն,
Որպէս զի իրենց կերակուրը ժամանա-
կին տաս։
28—Դուն անոնց կու տաս ա— անոնք
կը ժողվեն.
Ձեռքդ կը բանաս ա— բարութիւնով կը
կշտանան։
29—Երբ քու երեսդ կը ծածկես՝ կը
խռովին.
Երբ անոնց հոգին կ'առնես՝ կը մեռնին
Ե իրենց հողը կը դառնան։
30—Հոգիդ կը ղրկես ա— անոնք կը
սեղծուին,
Ու երկրի երեսը կը նորոգես։
31—Տէրոջը փառքը յաւիտեան ըլլայ.
Տէրը իր գործերուն վրայ ուրախանայ։
32—Երկրի վրայ կը նայի ու այն կը
դողայ.
Լեռներուն կը դպչի և անոնք կը մխան։
33—Տէրոջը պիտի երգեմ իմ կեանքիս
մէջ.
Սաղմոս պիտի ըսեմ իմ Աստուծոյս՝ քա-
նի որ ոգի եմ։
34—Անոր վրայով իմ մտածութիւնս
քաղցր պիտի ըլլայ.
Ես Տէրոջմով պիտի ուրախանամ։
35—Մեղաւորները աշխարհէ թող պակ-
սին,
Ու ամբարիշտները այնպէս ան,
Օրհնէ Տէրը, ով իմ անձս։ †Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԵ

Գոհացէք Տէրոջմէն, անոր անունը
կանչեցէք,

*Կամ, սասցուածքներովդ
†Այսինքն, Տէրը օրհնեցէք

Անոր գործերը ժողովուրդներուն մէջ
պատմեցէք։
2—Երգեցէք անոր, սաղմոս ըսէք անոր,
Պատմեցէք անոր բոլոր հրաշքները։
3—Անոր սուրբ անունովը պարծեցեք.
Տէրը խնդրողներուն սիրտը թող ու րախ
ըլլայ։
4—Տէրը ու անոր զօրութիւնը խնդրե-
ցէք,
Անձն ժամնամակ անոր երեսը փնտռե-
ցէք.
5—Յիշեցէք անոր ըրած հրաշքները,
Անոր հրաշքները ու բերնին դատաս-
տանները,
6—Ով անոր ծառային Աբրահամի սե-
րունդը,
Ով Յակոբի որդիներ, անոր ընտրեալ-
ները։
7—Եհովա ինք է մեր Աստուածը.
Անոր դատաստանները բոլոր երկրի մէջ
են։
8—Անկից իր ուխտը յաւիտեան կը
յիշէ,
Ո— իր պատուիրած խօսքը՝ մինչև հա-
զար ազգ.
9—Այն ո—Եէ—ը զոր Աբրահամի հետ
ըրաւ,
Ու իր երդումը զոր Իսահակի ըր—ւ.
10—Յակոբի ալ հաստատեց զանիկա՝
օրէնք մը ըլլալու,
Ո— Իսրայէլի՝ Էբէր յաւիտենական ուխտ
մը,
11—Ըսելով, Քեզի պիտի տամ Քանա-
նու երկիրը,
Ձեր ժառանգութեան վիճակը.
12—Երբ անոնք սակաւաթիւ էին,
Բիչ մը ու պանդուխտ՝ անոր մէջ,
13—Ու մէկ ազգէ ուրիշ ազգի գացին,
Մէկ թագաւորութենէ ուրիշ ժողո-
վուրդի,
14—Անկից մէկ*ուն Քեզ չտուաւ զր
զանոնք նեղէ.
Թագաւորներ ալ յանդիմանեց անոնց
համար,
15—Ըսելով, Իմ օծեալներուս մի դպչիք,
Ու իմ մարգարէներուս չարութիւն մի
ընէք։
16—Ու սով կանչեց երկրին վրայ.
Հացին բոլոր զօրութիւնը կոտրեց։
17—Անոնց առջևէն մարդ ղրկեց,
Յովսէփը՝ որ ծառայութեան ծախուե-
ցաւ։
18—Անոր ոտքերը կապանքով նեղե-
ցին.
Անոր անձը երկաթի մէջ դրուեցաւ՝
19—Մինչև այն ժամանակ որ անոր
խօսքը եկաւ,
Տէրոջը խօսքը փորձեց զանիկա։
20—Թագաւորը ղրկեց ու արձակեց
զանիկա,
Ժողովուրդներուն իշխանը ազատեց զա-
նիկա։
21—Իր տանը վրայ տէր կեցուց զա-
նիկա,
Ու իր բոլոր ունեցածին վրայ իշխող։
22—Որպէս զի անոր իշխանները իր ու-
զածին պէս կապէ,
Ու անոր ծերերը իմաստուն ընէ։
23—Ու Իսրայէլ եգիպտոս եկաւ,
Ու Յակոբ պանդուխտ եղաւ Քամի երկ-
րին մէջ։
24—Ու Տէրը իր ժողովուրդը խիստ
չաոցուց,
Ու զանոնք իրենց թշնամիներէն աւելի
զօրաւոր ըրաւ։
25—Անոնց սիրտը *դարձուց, որպէս զի
իր ժողովուրդը ատեն,
Ու իր ծառաներուն նենգութիւն ընեն։
26—Իր ծառան Մովսէսը ղրկեց,
Ե— իր ընտրած Ահարոնը.
27—Որոնք անոնց մէջ իր նշանները
ըրին,
Ու հրաշքներ՝ Քամի երկրին մէջ։
28—Խաւար ղրկեց ու խաւարեցուց.
Ու անոր խօսքին դէմ չկեցան։
29—Անոնց ջուրերը արիւնի դարձուց,
Ու անոնց ձուկերը սպաննեց։
30—Անոնց երկիրը առատօրէն գորտեր
դուրս բերաւ՝
Մինչև անոնց թագաւորներուն ներքին
սենեակներուն մէջ։
31—Բսաւ, ու չանճանճեր և մուկերը
Անոնց բոլոր սահմաններուն մէջ եկան։
32—Անձրեւի տեղ կարկուտ տուաւ
անոնց,
Ո— կրակի բոցեր՝ անոնց երկրին մէջ։
33—Անոնց որթերը ու թզենիները
զարկաւ,

*Կամ, դարձաւ

Եւ անոնց սահմաններուն ծառերը կոտրեցիք։
34—Ըսաւ, ու եկաւ մարախը,
Եւ Լորեակը՝ առանց համրանքի.
35—Ու անոնց երկրին մէջի բոլոր խոտը կերաւ,
Եւ անոնց արտերուն պտուղը կերաւ։
36—Անոնց երկրին մէջի բոլոր անդրանիկները
Ո՛ անոնց բոլոր զօրութեանը սկիզբը զարկաւ։
37—Եւ զանոնք ոսկիով ու արծաթով հանեց.
Ու անոնց ցեղերուն մէջ ակար մարդ չկար։
38—Եգիպտոս ուրախացաւ անոնց դուրս ելլելուն,
Վասն զի անոնց ահը իրենց վրայ ինկած էր։
39—Ծոփելը հովանի ըլլալու համար անկաւ,
Ու գիշերը լոյս տալու համար կրակը տարածեց։
40—Խնդրեցին, ու լորամարգիներ բերաւ,
Ու երկինքի հացով կշտացուց զանոնք։
41—Վէմը պատռեց, ու ջուրերը վազեցին.
Գետի պէս քալեցին չոր տեղերուն մէջ։
42—Վասն զի իր սուրբ խօսքը յիշեց,
Ձոր իր Աբրահամ ծառային հետ ըներ էր։
43—Ու ժողովուրդը ցնծութիւնով հանեց,
Եւ իր ընտրածները՝ ուրախութիւնով։
44—Ու հեթանոսներուն երկիրները անոնց տուաւ.
Եւ ժողովուրդներուն վաստակները ժառանգեցին անոնք։
45—Որպէս զի անոր պատուիրանքները պահեն,
Ու անոր օրէնքները կատարեն։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԶ

Ալէլուիա։ Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,
Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է։
2—Ո՞վ պիտի պատմէ Տէրոջը մեծ գործերը.
Ո՞վ պիտի լսցնէ անոր ամէն գովութիւնը։
3—Երանի՛ անոնց որ իրաւունքը կը պահեն,
Ո՛ ամէն ժամանակ արդարութիւն կ'ընեն։
4—Ցիշէ զիս, օվ Տէր, քու ժողովուրդիդ կեդ ունեցած հաճութեանդ համեմատ,
Ինծի այցելութիւն ըրէ քու փրկութիւնովդ.
5—Որպէս զի քու ընտրեալներուդ բարութիւնը տեսնեմ,
Քու ազգիդ ուրախութիւնովը ուրախանամ,
Քու ժառանգութիւնովդ պարծենամ։
6—Մենք մեր հայրերուն հետ մեղանչեցինք.
Անօրէնութիւն ըրինք, ամբարշտութիւն գործեցինք։
7—Մեր հայրերը եգիպտոսի մէջ չմտածեցին քու հրաշքներդ,
Չյիշեցին քու ողորմութեանդ չատութիւնը.
Հապա ապստամբեցան ծովուն քով,
Կարմիր ծովուն քով։
8—Բայց զանոնք իր անունը համար փրկեց,
Որպէս զի իր մեծ զօրութիւնը ճանչցնէ։
9—Ու կարմիր ծովուն սաստեց, ու ցամքեցաւ.
Ու անդունդներուն միջէն քալել տուաւ անոնց, իբր թէ անապատին միջէն,
10—Ու զանոնք փրկեց ատելին ձեռքէն,
Ու ապահով զանոնք թշնամիին ձեռքէն։
11—Ու ջուրերը անոնց թշնամիները ծածկեցին.
Անոնցմէ մէ՛կը չմնաց։
12—Այն ատեն հաւատացին անոր խօսքին,
Ու անոր օրհնութիւն երգեցին։
13—Շուտով մոռցան անոր գործերը,
Ո՛ անոր խրատին չսպասեցին։
14—Ու անապատին մէջ խիստ ցանկացան,
Ու զԱստուած փորձեցին անկուլ տեղին մէջ։
15—Ու անոնց տուաւ իրենց ուզածը,
Ու ժանտամահը դադրեցուց։
31—Ու այս բանը անոր արդարութիւն սեպուեցաւ՝
Ազգէ մինչև ազգ յաւիտեան։
32—Նաև բարկացուցին վէճին մերսիպայի չուրերուն վրայ,
Ու անոնց համար Մովսէսի գէշ եղաւ.
33-Վասն զի դառնացուցին անոր հոգին,
Ան ալ անխորհրդաբար խօսեցաւ իր շրթունքներովը։
34—Չկորսնցուցին այն ազգերը
Որ Տէրը ըսեր էր անոնց.
35—Հապա հեթանոսներուն հետ խառնուեցան,
Ու անոնց գործերը սորվեցան.
36—Ու անոնց կուռքերուն ծառայեցին,
Ու անոնք իրենց որոգայթ եղան,
37—Ու իրենց աղաքները ու աղջիկները
Դեւերուն զոհեցին.
38—Ու անվեղ արիւն թափեցին,
Իրենց աղաքներուն ու աղջիկներուն արիւնը,
Զորոնք զոհեցին Քանանու կուռքերուն.
Ու երկիրը պղծուեցաւ արիւնով,
39—Ու իրենց գործերովը պղծուեցան,
Ու իրենց ըրածներովը պոռնկութիւն ըրին։
40—Ուստի Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ իր ժողովուրդին վրայ,
Ու զզուեցաւ իր ժառանգութենէն.
41—Ու զանոնք հեթանոսներուն ձեռքը մատնեց,
Ու զանոնք ատողները տիրեցին անոնց վրայ։
42—Ու անոնց թշնամիները նեղեցին զանոնք,
Ու անոնց ձեռքին տակ խոնարհեցան։
43—Շատ անգամ փրկեց զանոնք.
Բայց անոնք իրենց խորհուրդներովը դառնացուցին զԱստուած,
Ու նուաստացան իրենց անօրէնութեանը համար։
44—Սակայն անիկա նայեցաւ անոնց նեղութեանը,
Երբ անոնց աղաղակը լսեց.
45—Ու անոնց համար իր ուխտը յիշեց,
Ու իր մեծ ողորմութեանը համեմատ ղղջացաւ.
46—Ու անոնց բոլոր գերեվարներուն առջև
Թէպէտև վատաժառիթին զրկեց անոնց անձերուն վրայ։
16—Ու Մովսէսի նախանձեցան բանակին մէջ,
Ո՛ Տէրոջը սուրբին, Ահարոնի։
17—Երկիրը բացուեցաւ ու կլլեց Դաթանը,
Ու Աբիրոնի ժողովքը ծածկեց։
18—Ու կրակ բորբոքեցաւ անոնց ժողովքին մէջ,
Բոցը այրեց ամբարիշտները։
19—Որթ չնեցին Քորեբի մէջ,
Ու երկրպագութիւն ըրին ձուլածոյ պատկերին։
20—Ու իրենց փառքը
Խոտակեր արջառի նմանութեանը փոխեցին։
21—Մոռցան իրենց փրկիչ Աստուածը՝
Որ մեծամեծ գործեր ըրաւ եգիպտոսի մէջ,
22—Ո՛ հրաշքներ՝ Քամի երկրին մէջ,
Ե՛ ահաւոր բաներ՝ կարմիր ծովուն մէջ։
23—Ուստի ըսաւ որ զանոնք կորնչցնէ,
Եթէ անոր ընտրեալը Մովսէս
*Մէջտեղը անոր առջև կայնած չըլլար,
Անոր բարկութիւնը հետ դարձնելու համար, որպէս զի չսպանէ։
24—Նաև այն ցանկալի երկիրը անարգեցին,
Ո՛ անոր խօսքին չհաւատացին։
25—Ու իրենց վրաններուն մէջ տրտնջացին,
Տէրոջը ձայնը չլսեցին։
26—Ուստի անոնց համար †երդուաւ ըրաւ՝
Որ զանոնք անապատին մէջ ձգէ,
27—Ու անոնց սերունդը ազգերուս մէջ ձգէ,
Ու զանոնք երկիրներու մէջ ցրուէ։
28—Ու անոնք Բէլփեգովրի չարեցան,
Ու մեռածներուն զոհերը կերան.
29—Ու իրենց գործերովը Տէրը բարկացուցին.
Ու անոնց վրայ ժանտամահ հասաւ։
30—Եւ Փենէհէս ելաւ ու դատաստան ըրաւ,

*Նէե. Խրամատին մէջ. Եզեկ. ԺԳ. 5։ Իբ. 30։
†Նէե. ձեռքը վերցուց. Եզ. ը 8։ Բ Օր. Իբ. 40։

Դիւթիւն գանել տուաւ անոնց։
47—Փրկի մեզ, ով Տէր, մեր Աստուածը,
Ու ժողվէ մեզ հեթանոսներուն մէջէն,
Որպէս զի քու սուրբ անուանդ գոհութիւն տառացանենք,
Ու քու օրհնութիւնովդ պարծենանք։
48—Օրհնեալ ըլլայ Տէրը, Իսրայէլի Աստուածը,
Յաւիտեանս յաւիտենից։
Ու բոլոր ժողովուրդը ըսաւ, Ամէն, Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԷ

Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,
Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է։
2—Թող ըսեն ըսողները Տէրոջը փրկածները,
Զորոնք փրկեց թշնամիին ձեռքէն,
3—Ու ժողովեց զանոնք երկիրներէն,
Արեւելքէն ու արեւմուտքէն, հիւսիսէն ու *ծովէն։
4—Անոնք մոլորեցան անապատին մէջ, անջուր ճամբու մէջ.
Բնակիլու քաղաք չգտան։
5—Անօթի ու ծարաւ ըլլալով՝
Հոգինին իրենց ներսիդին կը մարէր։
6—Ու Տէրոջը ազաղակեցին իրենց նեղութեանը մէջ,
Ե՛ անկից փրկեց զանոնք իրենց տառապանքներէն։
7—Ու անոնց ուղիղ ճամբու մէջ առաջնորդեց,
Որպէս զի բնակիլու քաղաք երթան։
8—Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար,
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար։
9—Վասն զի անկիկ ծարաւած հոգին կը յագեցնէ,
Ու անօթեցածը բարութիւնով կը լեցնէ։
10—Անոնք խաւարի ու մահուան չուքի մէջ կը նստէին,
Տառապանքով ու երկաթով կապուած էին։
11—Վասն զի Աստուծոյ խօսքերուն հակառակ կեցան,
Ու բարձրելոյն խորհուրդը անարգեցին։
12—Ուստի անկիկ ես նեղութիւնով խոնարհեցուց անոնց սիրտը.
Ինկան ու օգնական մը չկար։
13—Ե՛ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ,
Ո՛ զանոնք փրկեց իրենց տառապանքներէն։
14—Զանոնք խաւարէն ու մահուան չուքէն հանեց,
Ու անոնց կապանքները կտրատեց։
15—Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար,
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար։
16—Վասն զի պղնձէ դռնները փշրեց,
Ու երկաթէ նիգերը կտրեց։
17—Ցիմարները իրենց չար ճամբուն համար
Ու իրենց անօրէնութիւններուն համար նեղութիւն կը կրեն.
18—Անոնց անձը ամէն կերակուրէ կը ղզուի,
Ու մինչեւ մահուան դռներուն կը մօտենան։
19—Ե՛ Տէրոջը կ'ազաղակեն իրենց նեղութեանը մէջ,
Ո՛ կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն։
20—Իր խօսքը կը ղրկէ ու կը բժշկէ զանոնք,
Ու կ'ազատէ զանոնք իրենց կործանումներէն։
21—Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար,
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար.
22—Ե՛ գոհութեան պատարագներ մատուցանեն,
Ու անոր գործերը ցնծութեամբ պատմեն։
23—Նաւերով ծովը իջնողները
Ո՛ մեծ յորձրու մէջ գործ գործողները,
24—Անոնք Տէրոջը գործերը
Ու անոր հրաշքները կը տեսնեն անդունդին մէջ։
25—Վասն զի ան կ'ըսէ ու մրրկալից հովը կը հանէ,

*Կամ, հարաւէն

Որ անոր ալիքները կը բարձրացնէ։
26—Երկինք կ'ելլեն, -- անդունդը կ'իջնեն.
Անոնց անձերը նեղութենէ կը հալին.
27—Ինկով մարդու պէս կը դողդղան ու կ'երերան,
Ե՛ անոնց բոլոր խմաստութիւնը կը հաանի։
28—Այն ատեն Տէրոջը կ'ազաղակեն իրենց նեղութեանը մէջ,
Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն։
29—Մրրիկը հանդարտութեան կը դարձնէ,
Ու ալիքները կը դադարին։
30—Իրենք ալ կ'ուրախանան որ դադրեցան.
Ե՛ կ'առաջնորդէ անոնց իրենց ուզած նաւահանգիստը։
31—Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար,
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար։
32—Ե՛ թող բարձրացնեն զանկիկ ժողովուրդին ժողովքին մէջ,
Ու ծերերուն առեանին մէջ գովեն զանկիկ։
33—Գետերը անապատ կը դարձնէ,
Ու յորդուն գնացքները՝ չոր երկիր,
34—Ո՛ պտղաբեր երկիրը ազի երկիր՝
Անոր բնակիչներուն չարութեանը համար,
35—Անապատը ջուրերու լիճի կը փոխէ,
Ու չոր երկիրը՝ յորդուն գնացքի.
36—Ե՛ անօթիները հոն կը բնակեցնէ.
Որպէս զի բնակիլու քաղաք հաստատեն,
37—Ու արտեր ցանեն և այգիներ տնկեն,
Որպէս զի արմտիքի պտուղ բերեն։
38—Զանոնք կ'օրհնէ, և անոնք խիստ կը բազմանան,
Ու անոնց անասուններուը չպակսեցըներ։
39—Նորէն կը պակսին ու կը ցածնան
Բռնութենէն, նեղութենէ ու տրտմութենէն։
40—Անարգանք կը թափէ իշխաններուն վրայ,
Ու զանոնք ճամբայ չտնեցող անապատի մէջ կը մոլորեցնէ։
41—Բայց աղքատը խեղճութենէ կը բարձրացնէ,
Ե՛ տոհմերը ոչխարներու հօտի պէս կ'ընէ։
42—Ուղիղները պիտի տեսնեն և ուրախանան.
Ու ամէն անօրէնութիւն իր բերանը պիտի գոցէ։
43—Ո՞վ է իմաստուն՝ որ այս բաները պահէ.
Անկիկ Տէրոջը ողորմութիւնները պիտի հասկնայ։

ՍԱՂՄ. ՁԸ

Դաւիթի երգը -- Սաղմոս։
Իմ սիրտս պատրաստ է, ով Աստուած.
Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ իմ փառքովս ալ։
2—Արթնցիր, ով տաւիղ ու քնար.
Ես կանուխ պիտի արթննամ։
3—Ով Տէր, ժողովուրդներուն մէջ քեզ պիտի գովեմ,
Ու սաղմոս պիտի երգեմ քեզի ազգերուն մէջ։
4—Վասն զի քու ողորմութիւնդ մեծ է -- երկինքէ վեր,
Ե՛ քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը։
5—Երկինքի վրայ բարձրացիր, ով Աստուած,
Ու քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ։
6—Որպէս զի քու սիրելիներդ փրկուին՝
Ա՛ձեռքովդ ապրեցուր ու պատասխան տուր ինծի։
7—Աստուած *իր սրբութիւնովը՝ խօսեցաւ,
Ես պիտի ցնծամ, Սիւքեմը պիտի բաժնեմ,
Ու Սուկքովթի հովիտը պիտի չափեմ։
8—Իմն է Գաղաադ -- իմն է Մանասէ.
Ե՛ Եփրեմ գլխուս զօրութիւնն է.
Յուդա իմ օրէնադիրս է.
9—Մովաբ իմ լուացուելու ամանս է.
Եդոմի վրայ պիտի ձգեմ իմ մուճակս.
Փղշտացիներուն վրայ ձայնով պիտի ցնծամ։

*Կամ, իր սրբարանին մէջ

10—Ո՞վ պիտի տանի վես պարսպաւոր քաղաքը.
Ո՞վ պիտի առաջնորդէ ինձի մինչև Եդոմ,
11—չէ՞ որ դուն, ով Աստուած, ոչ երեսէ ձգեցիր մեզ,
Ու մեր զօրքերուն հետ չելար, ով Աստուած,
12—Նեղութեան մէջէն մեզի օգնութիւն տուր,
Վասն զի փուճ է մարդուն փրկութիւնը։
13— Աստուծով քաջութիւն պիտի բնենք.
Ու ան պիտի կոխէ մեր թշնամիները։

ՍԱՂՄ. ՃԹ

Դիմաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

Ով իմ օրհնութեան Աստուածը, լուռ մի կենար.
2—Վասն զի ամբարշտին բերանը
Ու նենգաւորին բերանը բացուեցաւ իմ վրաս.
Ինձի դէմ սուտ լեզուով խօսեցան,
3—Ատելութեան խօսքերով վես պատեցին,
Ու ինձի հետ անիրաւ տեղը կռուեցան։
4—իմ սիրոյս փոխարէն հակառակութիւն ըրին ինձի,
Բայց ես աղօթք կ'ընէի։
5—Նաև բարիին տեղ չար հատուցին,
Ու իմ սիրոյս տեղ՝ ատելութիւն։
6—Անոր վրայ ամբարիշտ մը վերակացու դիր,
Ու* Սատանայ թող կայնի անոր աջ կողմը։
7—Երբ դատուի՝ յանցաւոր ելլէ,
Ու անոր աղօթքը մեղք ըլլայ։
8—Անոր օրերը պակսին,
Ու անոր պաշտօնը ուրիշը առնէ։
9—Անոր որդիները որբ ըլլան,
Ու անոր կինը՝ այրեւուրի։
10—Ու անոր որդիները թափառական ըլլան ու մուրան,
Ու իրենց աւերակներէն ելլելով հոգ փնտռեն։
11—Փոխ տուողը առնէ անոր բոլոր ունեցածը,
Ու օտարները յափշտակեն անոր վաստակածը։
12—Բնաւ մէկը գթութիւն չընէ անոր,
Ու մէկը չողորմի անոր որբերուն։
13—Անոր զաւակները կորուստի մատնուին,
Անոնց անունը գալու ազգին մէջ չնշուի։
14—Անոր հայրերուն անօրէնութիւնը Տէրոջը առջև յիշուի,
Ու անոր մօրը մեղքը չչնջուի։
15—Անոնք միշտ Տէրոջը առջև ըլլան,
Որպէս զի անոնց յիշատակը երկրէ վերցնէ։
16—Վասն զի անիկա ողորմութիւն ընելը չյիշեց,
Հապա խեղճը ու աղքատը հալածեց,
Որպէս զի սիրտը կտրածը սպաննէ։
17—Նաև անէծքը սիրեց, ու թող անոր վրայ գայ,
Ու օրհնութիւնը չուզեց, ու թող անկէ հեռու ըլլայ։
18—Անէծքը իր հանդերձին պէս հագաւ,
Ու անիկա ջուրի պէս անոր փորին մէջ մտնէ,
Ու ձէթի պէս՝ անոր ոսկորներուն մէջ։
19—Հագնելու հանդերձի պէս
Ու միշտ մէջքը կապելու գօտիի պէս ըլլայ անոր։
20—Ինծի հակառակ կեցողներուն
Ու իմ անձիս համար չար խօսողներուն վարձքը այս ըլլայ Տէրոջմէն։
21—Բայց դուն, ով Տէր Եհովա, *օգնէ ինծի՛ քու անունդ համար.
Փրկէ զիս քու ողորմութեանդ բարի ըլլալուն համար,
22—Վասն զի ես խեղճ ու աղքատ եմ,
Ու իմ սիրտս նեղսիրտիս խոցուած է։
23—Ես երկնցող ստուերի պէս անցայ,
Մարախի պէս թօթվուեցայ։
24—Ծունկերս ծոմապահութենէ սխալեցան,
Ու մարմինս էր պարարտութենէն մաշեցաւ։
25—Ու ես անոնց նախատինք եղայ.
Երբ զիս կը տեսնեն՝ գլուխնին կը շարժեն։
26—Օգնէ ինծի, ով Տէր, իմ Աստուածս.

*Կամ, հակառակորդը

*Ծէբ. ինծի հետ գործէ

Փրկէ զիս քու ողորմութեանդ համեմատ,
27—Ու գիտնան թէ քու ձեռքդ այս է
Ու դուն երբոր ասիկա, ով Տէր,
28—Թող անոնք անիծեն, բայց դուն օրհնէ.
Երբ ելլեն, թող ամչնան,
Բայց քու ծառադ թող ուրախ ըլլայ։
29—Իմ թշնամիներս թող նախատինք հագնին,
Ու իրենց ամօթը պատմուճանի պէս իրենց վրայ առնեն։
30—Շատ պիտի գոհանամ Տէրոջմէն իմ բերնովս,
Ու շատերուն մէջ պիտի օրհնեմ զանիկա։
31—Վասն զի ինք աղքատին աջ կողմը կը կայնի,
Որպէս զի անոր անձը դատապարտողներէն փրկէ։

ՍԱՂՄ. ՃԺ

Սաղմոս Դաւթի։

Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս,
Մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։
2—Տէրը քու զօրութեանդ գաւազանը Սիոնէ պիտի ղրկէ.
Քու թշնամիներուդ մէջտեղը դուն տիրէ։
3—ժողովրդդ քու զօրութեանդ օրը Ճօճապահակ պիտի ըլլայ սրբութեան զարդարանքներով.
Քու *երիտասարդներդ արշալոյսին արգանդի ցօղնէ՛
Ա՜խէլ պիտի ըլլան քեզի։
4—Տէրը երդում ըրաւ ու պիտի չղղայ,
Դուն յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս քահանայ ես։
5—Տէրը քու աջ կողդիդ է,
Անիկա իր բարկութեան օրը թագաւորներ պիտի ջարդէ։
6—Անիկա հեթանոսներուն մէջ դատաստան պիտի ընէ,
Մեռելներով պիտի լեցնէ,
Շատ երկիրներու վրայ գլուխ էջընէէ պիտի ջարդէ։
7—Ճամբուն մէջ գետէն պիտի խմէ.
Անոր համար գլուխ պիտի վերցնէ։

ՍԱՂՄ. ՃԺԱ

Ալէլուիա։ Բոլոր սրտով Տէրը պիտի գոհանամ
Ուղիղներուն ժողովքին ու ժողովրդին մէջ։
2—Տէրոջը գործերը մեծ են,
Զանոնք սիրողներուն բոլորին կը քննուին։
3—Անոր գործը փառաւոր ու վայելուչ է,
Ու անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ։
4—Յիշել տուաւ իր հրաշքները.
Տէրը ողորմած ու գթած է։
5-Կերակուր տուաւ իրմէ վախցողներուն.
Իր ուխտը յաւիտեան կը յիշէ։
6—Իր գործերուն զօրութիւնը ցուցուց իր ժողովրդին,
Անոնց տալով ազգերուն ժառանգութիւնը։
7—Անոր ձեռքերուն գործերը ճշմարտութիւն ու իրաւունք են.
Անոր բոլոր պատուիրանքները հաստատուած են.
8—Յաւիտեանս յաւիտենից հաստատուած են,
Ճշմարտութեամբ և ուղղութեամբ եղած են։
9—Փրկութիւն ղրկեց իր ժողովրդին,
Իր ուխտը յաւիտեան պատուիրեց.
Սուրբ ու ահաւոր է անոր անունը։
10— Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է.
Բարի խոհեմութիւն ունին այն մարդիկը որոնք զանոնք կ'ընեն.
Անոր օրհնութիւնը յաւիտեան կը մնայ։

ՍԱՂՄ. ՃԺԲ

Ալէլուիա։ Երանի՛ այն մարդուն որ Տէրոջմէն կը վախնայ,
Ու անոր պատուիրանքներուն շատ կը հաճի։

2—Անոր սերունդը զօրաւոր պիտի ըլ-
լայ երկրի վրայ.
Ուղիղներուն ցեղը պիտի օրհնուի։
3—Ա՛սատուածքիւն ու հարստութիւն պի-
տի ըլլայ անոր տանը մէջ,
Ու անոր արդարութիւնը յաւիտեան
պիտի մնայ։
4—Խաւարի մէջ լոյս կը ծագի ուղիղ-
ներուն.
Ողորմած ու գթած և արդար է։
5—Բարի մարդը կ'ողորմի ու փոխ կու
տայ.
Իր բաները իրաւունքով կը կառավարէ։
6—Ցրուած անիկա յաւիտեան պիտի
չսասանի.
Արդարին յիշատակը յաւիտեան պիտի
մնայ։
7—Անիկա գէշ լուրէն չվախնար.
Անոր սիրտը հաստատուած է, ու Տէրոջը կը
յուսայ։
8—Անոր սիրտը հաստատուած է, չվախ-
նար,
Մինչև իր թշնամիներուն [illegible] տեսնէ։
9—Տարածեց, ազգասիրներուն տուաւ.
Անոր արդարութիւնը յաւիտեան կը
մնայ.
Անոր [illegible] պիտի բարձրանայ։
10—Անիրաւները պիտի տեսնէ ու բար-
կանայ,
Իր ակռաները պիտի կրճտէ ու պիտի
հալի.
Անիրաւներուն ցանկութիւնը պիտի
կորսուի։

ՍԱՂՄ. ՃԾԳ

Ա՛ւելուած։ Օրհնեցէք, ով Տէրոջը ծա-
ռաները,
Օրհնեցէք Տէրոջը անունը։
2—Օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը
Ասկէ հետև մինչև յաւիտեան։
3—Արեւելքէն մինչև արեւմուտք
Օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը։
4—Տէրը բարձր է բոլոր ազգերուն վրայ.
Անոր փառքը երկինքէն վեր է։
5—Մեր Տէր Աստուծոյն պէս ո՞վ կայ,
Որ բարձրութեան մէջ կը բնակի.
6—Որ երկինքի ու երկրի մէջ նայած
բաները
Տեսնելու համար կը խոնարհի։
7—Որ ազքատը փոշիէն վեր կը վերցնէ,
Ու անանկը աղբանոցէն կը բարձրացնէ,
8—Որպէս զի զ[illegible] նատեցնէ իշխան-
ներուն հետ,
Իր ժողովրդին իշխաններուն հետ.
9—Որ ամուլ կինը տունը կը բնակեցնէ,
Ու որդիներու ուրախ մայր [illegible]։

ՍԱՂՄ. ՃԾԴ

Երբ Իսրայէլ եգիպտոսէ դուրս եկաւ,
Ու Յակոբի տունը՝ օտարաբարբառ ժողո-
վուրդին միջէն,
2—Յուդա անոր սրբարանը՝
Ու Իսրայէլ անոր իշխանութիւնը եղաւ։
3—Ծովը անոնց ու փախաւ.
Յորդանան ետ դարձաւ։
4—Լեռները խոյերու պէս ցաւի կանչին,
Ու բլուրները՝ գառնուկներու պէս։
5—Քեզի [illegible] եղաւ, ով ծով, որ
փախար,
Ե՛ դուն, Յորդանան, որ ետ դարձար։
6—Ով լեռներ, [illegible]՝ խոյերու պէս
ցաւի կանչեցէք,
Ու դուք բլուրներ, գառնուկներու պէս։
7—Սարսափէ, ով երկիր, Տէրոջը
երեսէն.
Յակոբի Աստուծոյն երեսէն,
8—Որ վէմը լճերու լիճի դարձուց,
Ու ապառաժը՝ ջուրերու աղբիւր։

ՍԱՂՄ. ՃԾԵ

Ո՛չ մեզի, ով Տէր, ոչ մեզի,
Հապա քու անունդ փառք տուր՝
Քու ողորմութեանդ ու ճշմարտութեանդ
համար։
2—Ինչո՞ւ համար հեթանոսները ըսեն թէ
Ո՞ւր է հիմա անոնց Աստուածը։
3—Բայց մեր Աստուածը երկինքն է.
Անիկա իր բոլոր ուզածը կրնա։
4-Անոնց կուռքերը արծաթ ու ոսկի են,
Մարդու ձեռքի գործեր են.
5—Բերան ունին, բայց չեն խօսիր.
Աչքեր ունին, բայց չեն տեսներ.
6—Ականջներ ունին, բայց չեն լսեր.
Քիթ ունին, բայց հոտ չեն առներ.
7—Ձեռքեր ունին, բայց չեն չօչափեր.
Ոտքեր ունին, բայց չեն քալեր,
Ու իրենց կոկորդովը ձայն չեն հաներ։
8—Անոնց նման կ'ըլլան զանոնք չինող-
ները
Ու բոլոր անոնց յուսացողները։
9—*Ով Իսրայէլ, Տէրոջը յուսա՛.
Ան է անոնց օգնութիւնը ու ասպարը։
10—†Ով Ահարոնի տունը, Տէրոջը յու-
սացէ՛ք.
Ան է անոնց օգնութիւնը ու ասպարը։
11—‡Ով Տէրոջմէ վախցողներ, Տէրոջը
յուսացէ՛ք։
Ան է անոնց օգնութիւնը ու ասպարը։
12—Տէրը մեզ կը յիշէ — պիտի
օրհնէ,
Իսրայէլի տունը պիտի օրհնէ.
Ահարոնի տունը պիտի օրհնէ։
13—Տէրոջմէ վախցողները պիտի օրհնէ,
Պզտիկները մեծերուն հետ։
14—Տէրը ձեզի [illegible] պիտի աւելցնէ,
Ձեզի ու ձեր որդիներուն։
15—Օրհնեալ եք դուք Տէրոջմէն,
Որ երկինքն ու երկիրը առեղծեց։
16—Երկինք երկինքը Տէրոջն է,
Բայց երկիրը մարդոց որդիներուն
տուաւ։
17—Մեռելները Տէրը չեն օրհներ,
Ո՛չ ալ այն ամէնը որ ||գերեզմանը կ'իջ-
նեն։
18—Բայց մենք Տէրը պիտի օրհնենք
Ասկէ հետև մինչև յաւիտեան. Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԾԶ

§Ու բան եմ ես', վասն զի Տէրը
Իմ ձայնս ու աղաչանքս լսեց.
2—Վասն զի անիկա իր ականջը ինծի
խոնարհեցուց
Ու իմ օրերուս մէջ ես պիտի կանչեմ։
3—Մահուան լարերը զիս պատեցին,

*Կամ, Իսրայէլ Տէրոջը կը յուսայ
†Կամ, Ահարոնի տունը Տէրոջը կը
յուսան
‡Կամ, Տէրոջմէ վախցողները Տէրոջը
կը յուսան
||Բէէր. լուսնքիւնը
§Կամ, Տէրը կը սիրեմ

Ու գերեզմանին վիշտերը զիս գտան.
Նեղութիւն ու տրտմութիւն գտայ։
4—Բայց ես Տէրոջը անունը կանչեցի,
Կ'ապաչեմ, ով Տէր, փրկէ իմ անձս։
5—Ողորմած ու արդար է Տէրը,
Ու մեր Աստուածը գթած է։
6—Տէրը միամիտները կը պահէ.
Ես խեղճ եղայ, ու անիկա զիս ազատեց։
7—Ով իմ անձս, դարձիր քու հան-
գըստութեանդ,
Քանզի Տէրը քեզի բարիք ըրաւ։
8—Վասն զի դուն իմ անձս մահուանէ
փրկեցիր,
Իմ աչքերս արցունքէն, — իմ ոտքերս
գայթակղելէն։
9—Տէրոջը առջև պիտի քալեմ
Կենդանիներուն երկրին մէջ։
10—Հաւատացի, անոր համար խօսեցայ,
Ես խիստ թշուառացայ։
11—Իմ չփոթութեանս մէջ ըսի թէ
Ամէն մարդ սուտ է։
12—Ի՞նչ հատուցանեմ Տէրոջը՝
Անոր բոլոր [illegible] բարութեանը
փոխարէն։
13—Փրկութեան բաժակը պիտի առնեմ,
Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ։
14—Իմ ուխտերս Տէրոջը պիտի հա-
տուցանեմ
Իր բոլոր ժողովրդին առջև։
15—Պատուական է Տէրոջը առջև
Իր սուրբերուն մահը։
16—Կ'ապաչեմ, ով Տէր, վասն զի ես
քու ծառադ եմ,
Ես քու ծառադ եմ ու քու աղախինիդ
որդին.
Դուն իմ կապերս արձակեցիր։
17—Գոհութեան պատարագ պիտի մա-
տուցանեմ քեզի,
Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ։
18—Իմ ուխտերս Տէրոջը պիտի հա-
տուցանեմ
Իր բոլոր ժողովրդին առջև,
19—Տէրոջը տանը սրահներուն մէջ,
Քու մէջդ, ով Երուսաղէմ։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԾԷ

Օրհնեցէք Տէրը, ով բոլոր ազգեր,
Գովեցէք զանիկա, ով բոլոր ժողովուրդ-
ներ.

2—Վասն դի անոր ողորմութիւնը մեր վրայ մեծ է,
Ու Տէրոջը ճշմարտութիւնը յաւիտեան է։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԾԸ

Գոհացէ՛ք Տէրոջմէն, վասն դի բարի է.
վասն դի անոր ողորմութիւնը յաւիտեան է,
2—Իսրայէլ թող ըսէ թէ
Անոր ողորմութիւնը յաւիտեան է։
3—Ահարոնի տունը թող ըսէ թէ
Անոր ողորմութիւնը յաւիտեան է։
4—Տէրմէ՛ վախցողները թող ըսեն թէ
Անոր ողորմութիւնը յաւիտեան է։
5—Նեղու թեան մէջ Տէրոջը կանչեցի,
Ու Տէրը պատասխան տուաւ ինծի,
լայնարձակ տեղ մը հանելով։
6—Տէրը ինծի հետ է, չեմ վախնար.
Մարդը ինծի ի՞նչ կրնայ ընել։
7—Տէրը իմ օգնականներուս հետ դէպի ինծի հետ է,
Ու ես իմ թշնամիներուս [illegible] պիտի տեսնեմ։
8—Լաւ է Տէրոջը յուսալ,
քան թէ մարդոց ապաւինիլ։
9—Լաւ է Տէրոջը յուսալ,
քան թէ իշխաններուն ապաւինիլ։
10—Բոլոր ազգերը զիս պաշարեցին.
Բայց Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք։
11—Իմ բոլորտիքս առին, և զիս պաշարեցին.
Բայց Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք։
12—Մեղուներու պէս իմ բոլորտիքս առին,
փուչերու կրակի պէս մարեցան.
Քանի Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք։
13—Սաստիկ հրեցիր զիս, որպէս զի վար իյնամ.
Բայց Տէրը օգնեց ինծի։
14—Տէրը իմ զօրութիւնս ու սաղմոս է,
Ու իմ փրկութիւնս եղաւ։
15—Արդարներուն բնակարաններուն մէջ ցնծութեան ու փրկութեան ձայն կայ.
Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ։
16—Տէրոջը աջ ձեռքը բարձր է.
Տէրոջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ։
17—Պիտի չմեռնիմ, հապա պիտի ապրիմ,
Ու Տէրոջը գործերը պատմեմ։
18—Տէրը զիս չատ խրատեց,
Բայց մահուան չմատնեց զիս։
19—Բացէ՛ք ինծի արդարութեան դռները.
Անոնց մէջ պիտի մտնեմ, — Տէրոջը գոհութիւն մատուցանեմ։
20—Սա է Տէրոջը դուռը,
Արդարները ասկէ պիտի մտնեն.
21—Կը գոհանամ քեզմէ որ ինծի պատասխան տուիր,
Ու ինծի փրկութիւն եղար։
22—Այն քարը զոր շինողները անարգեցին,
Անկիւնին գլուխը եղաւ։
23—Ասիկա Տէրոջմէն եղաւ.
Զարմանալի է ասիկա մեր աչքերուն։
24—Սա՛ս այն օրն է զոր Տէրը ստեղծեց.
Ցնծա՛նք և ուրախ ըլլա՛նք անոր մէջ։
25—Հիմա կ'ազատէ՛, ով Տէր, փրկէ՛.
Հիմա կ'ազատէ՛, ով Տէր, յաջողէ՛։
26—Օրհնեալ ըլլայ ան որ Տէրոջը անունովը կու գայ.
Օրհնեցինք ձեզ Տէրոջը տունէն։
27—Տէրը Աստուած է, և լոյս կը ցուցընէ մեզի.
Զոհի [illegible] կապեցէ՛ք,
Ո՛ սեղանին եղջիւրներուն մե՛խեցէ՛ք։
28—Դուն ես իմ Աստուածս, ու քեզի գոհութիւն պիտի մատուցանեմ.
Ով իմ Աստուածս, քեզ պիտի բարձրացնեմ։
29—Գոհացէ՛ք Տէրոջմէն, վասն դի բարի է,
վասն դի անոր ողորմութիւնը յաւիտեան է։

ՍԱՂՄ. ՃԾԹ

Ա Լ Է Փ

Երանի՛ ճամբով ամբիծներուն,
Որոնք Տէրոջը օրէնքին մէջ կը քալեն։
2—Երանի անոնց՝ որոնք անոր վկայութիւնները կը պահեն,

Ո՛— բոլոր սրտով զինք կը խնդրեն,
3—Ու անօրէնութիւն չեն ըներ,
Հա՛ա՛ անոր ճամբաներուն մէջ կը քալեն։
4—Դուն պատուիրեցիր որ շատ զգուշութեամբ
Քու հրամաններդ պահենք։
5—Երանի՛ թէ իմ ճամբաներս յաջողին,
Որպէս զի քու կանոններդ պահեմ։
6—Այն ատեն պիտի չամչնամ
երբ քու բոլոր պատուիրանքներուդ զգուշութիւն ընեմ։
7—Պիտի գովեմ քեզ ուղիղ սրտով,
երբ քու արդար դատաստաններդ սորվիմ։
8—Քու կանոններդ պիտի պահեմ.
Զիս բոլորովին մի թողուր։

Պ Է Թ

9—Երիտասարդը ինչո՞վ մաքրէ իր ճամբան.
Քու խօսքիդ համեմատ [illegible] զգուշութիւն ընելով։
10—Իմ բոլոր սրտովս խնդրեցի քեզ.
Մի թողուր զիս որ քու պատուիրանքներէդ մոլորիմ։
11—Իմ սրտիս մէջ պահեցի քու խօսքերդ,
Որպէս զի չմեղանչեմ քեզի դէմ։
12—Օրհնեալ ես դուն, ով Տէր.
Սորվեցուր ինծի քու կանոններդ։
13—Իմ շրթունքներովս պատմեցի
Քու բերնիդ բոլոր դատաստանները։
14—Քու վկայութիւններուդ ճամբովը ուրախացայ,
Որպէս թէ ամէն կերպ հարստութիւնով։
15—Քու հրամաններուդ վրայով պիտի մտածեմ,
Ու քու ճամբաներդ պիտի դիտեմ։
16—Քու կանոններովդ պիտի ուրախանամ,
Ո՛— քու խօսքդ պիտի չմոռնամ։

Կ Ի Մ Է Լ

17—Բարութիւն ըրէ քու ծառայիդ,
Որպէս զի ապրիմ ու քու խօսքդ պահեմ։
18—Բաց իմ աչքերս,
Որպէս զի քու օրէնքիդ հրաշքներ տեսնեմ։
19—Պանդուխտ եմ ես երկրի վրայ.
Մի ծածկեր ինծմէ քու պատուիրանքներդ։
20—Իմ անձս կը նեղուի
Ամէն ժամանակ քու դատաստաններդ ցանկանալէն։
21—Դուն սաստեցիր անիծեալ ամբարտաւանները,
Քու պատուիրանքներէդ մոլորղները։
22—Նախատինքը ու անարգանքը վերցուր ինծմէ,
Վասն զի քու վկայութիւններդ պահեցի։
23—Իշխաններ ալ կը նստէին ու ինծի դէմ կը խօսէին,
Բայց քու ծառադ քու կանոններուդ վրայով կը մտածէր։
24—Քու վկայութիւններդ ալ իմ ուրախութիւնս
Ո՛— իմ խորհրդականներս են։

Տ Ա Լ Է Թ

25—Իմ անձս հողին կը փակչի.
կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ։
26—Իմ ճամբաներս պատմեցի, ու դուն ինծի պատասխան տուիր.
Սորվեցուր ինծի քու կանոններդ։
27—Քու հրամաններուդ ճամբան ինծի իմացուր,
Ու քու սքանչելիքներուդ վրայով պիտի *մտածեմ։
28—Իմ անձս տրտմութենէն կը հալի.
Հաստատե զիս քու խօսքիդ համեմատ։
29—Սուտութեան ճամբան հեռացուր ինծմէ,
Ու քու օրէնքդ շնորհէ ինծի,
30—Ճշմարտութեան ճամբան ընտրեցի,
Ու քու դատաստաններդ իմ [illegible] դրի։
31—Քու վկայութիւններուդ յարեցայ.
Ով Տէր, զիս մի ամչցներ։
32—Քու պատուիրանքներուդ ճամբան մէ՛ջ պիտի վազեմ,
վասն զի դուն իմ սիրտս պիտի լայնցընես։

*Կամ, խօսիմ. Տաղ. Ճախ. 5, 6։

Հ Ի

33—Ով Տէր, սորվեցուր ինծի քու կանոններուդ ճամբան,
Ու մինչև վերջը պահի պահեմ զանիկա։
34—Իմաստուն ըրէ զիս, որպէս զի քու օրէնքդ պահեմ,
Ու բոլոր սրտով զանիկա ի գործ դնեմ։
35—Առաջնորդէ ինծի քու պատուիրանքներուդ շաւիղին մէջ,
Վասն զի անոր հաւնեցայ։
36—Իմ սիրտս քու վկայութիւններուդ յօժարեցուր,
Ու ոչ թէ ագահութեան։
37—Նա դարձուր իմ աչքերս, որպէս զի սնոտի բան չտեսնեն.
Եւ զիս քու ճամբուդ մէջ կենդանացուր։
38—Հաստատէ քու խօսքդ
Ծեզմէ վախցող ծառայիդ վրայ։
39—Նա դարձուր ինծմէ իմ նախատինքս, որմէ կը վախնամ,
Վասն զի քու դատաստաններդ բարիներն։
40—Ահա ցանկացայ քու հրամանները.
Քու արդարութեանդ մէջ կենդանացուր զիս։

Վ Ա Վ

41—Ով Տէր, թող իմ վրաս գայ քու ողորմութիւնդ,
Եւ քու փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ։
42—Ու ես խօսքով պատասխան պիտի տամ զիս նախատողին,
Վասն զի քու խօսքիդ յուսացած եմ։
43—Ու ճշմարտութեան խօսքը բնաւ մի հեռացներ իմ բերնէս,
Վասն զի քու դատաստաններուդ յուսացած եմ։
44—Ու քու օրէնքդ միշտ պիտի պահեմ
Յաւիտեան յաւիտենից.
45—Ու լայնարձակ տեղ մէջ պիտի քալեմ,
Քանզի քու հրամաններդ խնդրեցի։
46—Ու քու վկայութիւններդ թագաւորներուն առջև պիտի խօսիմ,
Եւ պիտի չամչնամ։
47—Ու պիտի ուրախանամ քու պատուիրանքներովդ՝
Զորոնք սիրեցի։
48—Ու ձեռքերս դէպ ի քու պատուիրանքներդ պիտի վերցնեմ՝ զորոնք սիրեցի,
Ու քու կանոններուդ վրայով պիտի մտածեմ։

Զ Ա Ց Ի Ն

49—Յիշէ քու ծառայիդ եղած խօսքը,
Որուն վրայ ինծի յուսալ տուիր։
50—Իմ նեղութեանս մէջ մխիթարութիւնս այս է,
Վասն զի քու խօսքդ զիս կենդանացուց։
51—Ամբարտաւանները խիստ չատ ծաղր ըրին զիս,
Բայց ես քու օրէնքէդ չխոտորեցայ։
52—Ով Տէր, քու առաջնոյն դատաստաններդ յիշեցի,
Ու մխիթարուեցայ։
53—Սոսկումդ զիս բռնեց այն ամբարիշտներուն համար՝
Որոնք քու օրէնքդ կը թողուն։
54—Քու կանոններդ ինծի երգեր եղան
Իմ պանդխտութեանս տանը մէջ։
55—Ով Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,
Ու քու օրէնքդ պահեցի։
56—Այս եղաւ ինծի,
Վասն զի քու հրամաններդ կը պահեմ։

Խ Ե Թ

57—Դուն իմ բաժինս ես, ով Տէր.
Ըսի որ քու խօսքերդ պահեմ։
58—Բոլոր սրտով քու երեսդ խնդրեցի.
Ողորմէ ինծի քու խօսքիդ համեմատ։
59—Իմ ճամբաներուս վրայով մտածեցի,
Եւ իմ ոտքերս քու վկայութիւններուդ դարձուցի.
60—Ուշ պատուիրանքներդ պահելու
Պատրաստ ու չուշացայ։
61—Ամբարիշտներուն *խումբերը զիս պատեցին,

*Կամ, լարերը

Բայց ես քու օրէնքդ չմոռցայ։
62—Կէսգիշերին կ'ելլեմ քեզի գոհութիւն մատուցանել
Քու արդար դատաստաններուդ համար։
63—Ես ընկեր եղայ այն ամէնուն որ քեզմէ կը վախնան,
Ու քու հրամաններդ կը պահեն։
64—Ով Տէր, երկիր լեցուն է քու ողորմութիւնովդ.
Սորվեցուր ինծի քու կանոններդ։

Դ Ի Թ

65—Բարութիւն ըրիր քու ծառայիդ, ով Տէր,
Քու խօսքիդ համեմատ։
66—Բարի իմաստութիւն ու գիտութիւն սորվեցուր ինծի,
Վասն զի քու պատուիրանքներուդ հաւատացի։
67—Քանի որ չխոտորած չէի՝ կը սխալէի,
Բայց հիմա քու խօսքդ կը պահեմ։
68—Բարի ես դուն ու բարերար.
Սորվեցուր ինծի քու կանոններդ։
69—Ամբարտաւանները սուտ թիւն հնարեցին ինծի դէմ,
Բայց ես բոլոր սրտով քու հրամաններդ պիտի պահեմ։
70—Անոնց սիրտը ճարպի պէս պարարացաւ,
Բայց ես քու օրէնքովդ ուրախացայ։
71—Աղէկ եղաւ ինծի որ վշտացայ,
Որպէս զի քու կանոններդ սորվիմ։
72-Ինծի հազարաւոր ոսկիէ ու արծաթէ
Աւելի աղէկ է քու բերնիդ օրէնքը։

Ե Ո Տ

73—Զիս քու ձեռքերդ ըրին ու ստեղծեցին.
Իմաստուն ըրէ զիս, որպէս զի քու պատուիրանքներդ սորվիմ։
74—Քեզմէ վախցողները զիս պիտի տեսնեն և ուրախանան,
Վասն զի քու խօսքիդ յուսացայ։
75—Գիտեմ, ով Տէր, որ քու դատաստաններդ արդարութիւնով են,
Ու իրաւունքով զիս վշտացուցիր։
76—Հիմա թող քու ողորմութիւնդ ինծի մխիթարութիւն ըլլայ՝

Քու ծառայիդ *ուխտիդ համեմատ։
77—Թող քու գթութիւններդ իմ վրաս գան, որպէս զի ապրիմ,
Վասն զի քու օրէնքդ իմ ուրախութիւնս է։
78—Ամբարտաւանները պիտի ամչնան,
Վասն զի առանց պատճառի անիրաւութիւն ըրին ինծի դէմ.
Բայց ես քու հրամաններուդ վրայ պիտի մտածեմ։
79—Թող ինծի դառնան քեզմէ վախցողները
Եւ քու վկայութիւններդ ճանչցողները։
80—Թող իմ սիրտս կատարեալ ըլլայ քու կանոններուդ մէջ,
Այնպէս որ չամչնամ։

Ք Ա Ֆ

81—Իմ անձս քու փրկութեանդ *կը կարօտի,
Ու ես քու խօսքիդ կը յուսամ։
82—Իմ աչքերս քու խօսքիդ համար կը նուաղին,
Ըսելով թէ ե՞րբ պիտի մխիթարես զիս։
83—Վասն զի ես ծուխի մէջ *տրուած տիկի պէս եղայ,
Բայց քու կանոններդ չմոռցայ։
84—Ո՞րչափ են քու ծառայիդ օրերը.
Զիս հալածողներուն ե՞րբ դատաստան պիտի ընես։
85—Ամբարտաւանները փոսեր փորեցին ինծի համար,
Որ քու օրէնքիդ պէս չեն։
86—Քու բոլոր պատուիրանքներդ ճշմարիտ են.
Զուր տեղ զիս կը հալածեն, օգնէ ինծի։
87—Քիչ մնաց որ զիս կործանեցնէին երկրի մէջ,
Բայց ես քու հրամաններդ չթողուցի։
88—Քու ողորմութեանդ համեմատ կենդանացուր զիս,
Ու քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ։

Լ Ա Մ Ե Տ

89—Ով Տէր, քու խօսքդ

*Եբր. կը մաշի

Ցաւխեան հառաւտ է երկինքի մէջ։
90—Քու հաւատարմութիւնդ ազգէ ազգ կը մնայ.
Դուն հաստատեցիր երկիրը ու կը կենայ։
91—Քու հրամաններուդ պէս կը կենան մինչեւ այսօր,
Վասն զի բոլորը քու ծառաներդ են։
92—Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլլար,
Ա՛յն ատեն կորսուած պիտի ըլլայի իմ տառապանքիս մէջ։
93—Ցաւխեան պիտի չմոռնամ քու հրամաններդ,
Քանզի անոնցմով կենդանացուցեր ես։
94—Ես քուկդ եմ, փրկէ զիս.
Վասն զի քու հրամաններդ փնտռեցի։
95—Ամբարիշտները ինծի սպասեցին, որպէս զի զիս կորնչցնեն,
Բայց ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերի։
96—Ամէն կատարելութեան վերջը տեսայ.
Քու պատուիրանդ շատ ընդարձակ է։

Մ Է Մ

97—Ո՛րչափ կը սիրեմ քու օրէնքդ.
Ա՛յն է ամէն օր իմ մտածութիւնս։
98—Քու պատուիրանքներդ զիս իմ թշնամիներէս խաստուն ըրին,
Քանզի անոնք միշտ իմ քովս են։
99—Իմ բոլոր ուսուցիչներէս աւելի հանճարեղ եղայ,
Վասն զի քու վկայութիւններդ իմ մտածութիւնս են։
100—Ծերերէն աւելի խմաստուն եղայ,
Վասն զի քու հրամաններդ պահեցի։
101—Ամէն գէշ ճամբայէ իմ ոտքերս եմ քաշեցի,
Որպէս զի քու խօսքդ պահեմ։
102—Քու դատաստաններէդ չխոտորեցայ,
Վասն զի դուն սորվեցուցիր ինծի։
103—Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ բմբիրնաս.
Մեղրէն աւելի անոյշ է իմ բերնիս։
104—Քու հրամաններուդմէ խմաստուն եղայ,
Անոր համար ատեցի ամէն ճամբան սուտութեան։

Ն Ո Ւ Ն

105—Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է,
Ու իմ շաւիղներուս լոյս։
106—Երդում ըրի ու պիտի կատարեմ,
Որպէս զի քու արդար դատաստաններդ պահեմ։
107—Շատ նեղացայ.
Ով Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ։
108—Հիմա իմ բերնիս կամաւոր գոհերը ընդունէ, ով Տէր,
Ու քու դատաստաններդ սորվեցու ինծի։
109—Իմ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջ է,
Բայց քու օրէնքդ չեմ մոռնար։
110—Ամբարիշտները որոգայթ լարեցին ինծի համար,
Բայց ես քու հրամաններէդ չմոլորեցայ։
111—Քու վկայութիւններդ յաւիտեան ինծի ժառանգութիւն առի,
Վասն զի անոնք իմ սրտիս ցնծութիւնն են։
112—Խոնարհեցուցի իմ սիրտս, որպէս զի քու կանոններդ կատարեմ
Ցաւխեան մինչեւ վերջը։

Ս Ա Մ Է Խ

113—Երկմիտները ատեցի,
Բայց քու օրէնքդ սիրեցի։
114-Իմ ապաւէնս ու ասպարս դուն ես.
Քու խօսքիդ յուսացայ։
115—Ելա՛ փսլուեցէք ինծմէ, ով չարագործներ,
Վասն զի ես իմ Աստուծոյս պատուիրանքները պիտի պահեմ։
116—Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որպէս զի ապրիմ.
Ու հիւսա քու կանոններուդ ուշադրութիւն ընեմ։
117—Զօրացուր զիս որպէս զի ապրիմ,
Ու միշտ քու կանոններուդ խոտորեցայն,
Քանզի անոնց նենգութիւնը սուտ է։
119—Դուն դժուղներս* կղկղանք կը համարիս երկրի բոլոր ամբարիշտները.

*կամ, կղկղանքի պէս մերժեցիր

Անոր համար ես քու վկայութիւններդ կը սիրեմ։
120—Իմ մարմինս քու ահէդ դողաց,
Ու ես քու դատաստաններդէդ վախցայ։

Ա Ց Ի Ն

121—Իրաւունք ու արդարութիւն ըրի.
Զիս իմ նեղիչներուս մի մատներ։
122—Քու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր եղիր.
Ամբարտաւանները չհարստահարեն զիս։
123—Իմ աչքերս նուազեցան քու փրկութեանդ համար
Ու քու արդարութեանդ խօսքին համար։
124—Ըրէ քու ծառայիդ քու ողորմութեանդ համեմատ,
Ու քու կանոններդ սորվեցուր ինծի։
125—Ես քու ծառադ եմ, իմաստուն ըրէ զիս,
Որպէս զի քու վկայութիւններդ ճանչնամ։
126—Տէրոջը բան տեւնելու ժամանակն է,
Վո՜ւ վ քու օրէնքդ խափանեցին։
127—Անոր համար քու պատուիրանքներդ
Ոսկիէն ու աղնիւ ոսկիէն աւելի սիրեցի։
128—Ուստի ամէն բանի վրայով ցո՜ւ-ու՜ղ-ղ-ած է՜ո՜ բոլոր հրամաններդ ուղիղ կը համարիմ,
Ու ատութեան ամէն ճամբան կ'ատեմ։

Փ Է

129—Քու վկայութիւններդ զարմանալի են.
Անոր համար իմ անձնս զանոնք կը պահէ։
130—Քու խօսքերուդ յայտնութիւնը լոյս կու տայ,
Ու միամիտները խմաստուն կ'ընէ։
131—Իմ բերանս բացի ու հեւացի,
Վասն զի քու պատուիրանքներուդ ցանկացայ։
132—Ինծի նայէ ու ողորմի ինծի,
Ինչպէս սովորաբար կ'ընես քու անուանդ սիրողներուն։
133—Իմ գնացքներս հաստատէ քու խօսքիդ մէջ,
Ու բնաւ անօրէնութիւն մը չտիրէ ինծի։
134—Փրկէ զիս մարդոց բռնութենէն,
Ու քու հրամաններդ պիտի պահեմ։
135—Երեսդ փայլեցուր քու ծառայիդ վրայ,
Ու սորվեցուր ինծի քու կանոններդ։
136—Ջուրերու առուներ կ'իջնեն իմ աչքերէս,
Վասն զի չ-ը-պ-ահ-ե-ցին քու օրէնքդ չպահեցին։

Ց Ա Տ Է

137—Արդար ես դուն, ով Տէր,
Ու քու դատաստաններդ ուղիղ են։
138—Քու պատուիրած վկայութիւններդ
Արդար ու խիստ ճշմարիտ են։
139—Իմ նախանձս զիս մաշեց,
Վասն զի իմ թշնամիներս քու խօսքերդ մոռցան։
140—Քու խօսքդ խիստ մաքուր է,
Անոր համար քու ծառադ զանիկա կը սիրէ։
141—Ես ցած ու անարգուած եմ,
Բայց քու հրամաններդ չմոռցայ։
142—Քու արդարութիւնդ յաւիտենական արդարութիւն է,
Ու քու օրէնքդ ճշմարտութիւն է։
143—Նեղութիւն ու վիշտ զիս գտան,
Բայց քու պատուիրանքներդ իմ ուրախութիւնս են։
144—Քու վկայութիւններուդ արդարութիւնը յաւիտեան է.
Իմաստուն ըրէ զիս ու պիտի ապրիմ։

Գ Օ Ֆ

145—Բոլոր սրտով աղաղակեցի,
Ով Տէր, պատասխան տուր ինծի, ո՜ւ քու կանոններդ պիտի պահեմ։
146—Քեզի աղաղակեցի, փրկէ զիս,
Ու քու վկայութիւններդ պիտի պահեմ։
147—Կանուխ եղայ արշալոյսին ու աղաղակեցի.
Քու խօսքիդ յուսացայ։
148—Գիշերո՜ւան պահերէն առաջ բացուեցան իմ աչքերս
Քու խօսքերուդ վրայ մտածելու համար։
149—Իմ ձայնս լսէ քու ողորմութեանդ համեմատ.

Ով Տէր, քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս։

150—Անօրէնութեան հեռեւողները մոտեցան.
Անոնք քու օրէնքէդ հեռացան։
151—Ով Տէր, դուն մօտ ես,
Ու քու բոլոր պատուիրանքներդ ճշմարտութիւն են։
152—Առաջուընէ իմացած եմ քու վկայութիւններդ,
Զորոնք յաւիտեան հաստատեցիր։

Ր Է Շ

153—Տես իմ խղճմտութիւնս ու զիս փրկէ,
Վասն զի քու օրէնքդ չմոռցայ։
154—Իմ իրաւունքս պաշտպանէ ու փրկէ զիս.
Քու խօսքիդ համեմատ կենդանացուր զիս։
155—Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն,
Վասն զի քու կանոններդ չխնդրեցին։
156—Ով Տէր, քու գթութիւնները շատ են.
Քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս։
157—Շատ են իմ հալածիչներս ու թշնամիներս,
Բայց ես քու վկայութիւններէդ չխոտորեցայ։
158—Անօրէնները տեսայ ու զզուեցայ,
Վասն զի անոնք քու խօսքդ չէին պահեր։
159—Նայէ որ քու հրամաններդ կը սիրեմ.
Ով Տէր, քու ողորմութեանդ համեմատ կենդանացուր զիս։
160—Քու խօսքիդ *սկիզբը ճշմարտութիւն է,
Ու քու բոլոր արդար դատաստաններդ յաւիտեան են։

Շ Ի Ն

161—Իշխանները զուր տեղ զիս հալածեցին,
Բայց իմ սիրտս քու խօսքէդ վախցաւ։

*Կամ, բովանդակութիւնը

162—Ես կը ցնծամ քու խօսքերովդ,
Շատ աւար գտնողի պէս։
163—Սուտութիւնը ատեցի ու անարգեցի,
Բայց քու օրէնքդ սիրեցի։
164—Օրը եօթը անգամ կ'օրհնեմ քեզ,
Քու արդար դատաստաններուդ համար։
165—Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ,
Ու անոնց գայթակղութիւն չըլլար։
166—Ով Տէր, քու փրկութեանդ սպասեցի,
Ես քու պատուիրանքներդ կատարեցի։
167—Իմ անձս քու վկայութիւններդ պահեց,
Ու ես զանոնք շատ կը սիրեմ։
168—Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի,
Վասն զի իմ բոլոր ճամբաներս քու առջեւդ են։

Թ Ա Վ

169—Ով Տէր, թող իմ աղաղակս քու առջեւդ մօտենայ.
Քու խօսքիդ համեմատ խնամատուն ըլլի զիս։
170—Թող իմ աղաչանքս քու առջեւդ հասնի.
Քու խօսքիդ համեմատ փրկէ զիս։
171—Իմ շրթունքներս օրհնութիւն պիտի բղխեն,
Վասն զի քու կանոններդ սորվեցուցիր ինծի,
172—Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմէ,
Վասն զի քու բոլոր պատուիրանքներդ արդար են։
173—Թող քու ձեռքդ ինծի օգնական ըլլայ,
Վասն զի քու հրամաններդ ընտրեցի։
174—Ով Տէր, քու փրկութեանդ ցանկացայ,
Ու քու օրէնքդ իմ ուրախութիւնս է։
175—Թող իմանամ ապրի ու քեզ օրհնէ,
Ես քու դատաստաններդ օգնեն ինծի։
176—Կորսուած ոչխարի պէս մոլորեցայ.
Փնտռէ քու ծառադ, վասն զի քու պատուիրանքներդ չմոռցայ։

ՍԱՂՄ. ՃԻ

Ասոփճաններուն երգը։

Իմ նեղութեանս մէջ Տէրոջը աղաղակեցի,
Ու անիկա ինծի պատասխան տուաւ։
2—Ով Տէր, փրկէ իմ անձս սուտ շրթունքներէն
Ու նենգաւոր լեզուէն։
3—*Ով նենգաւոր լեզու, քեզի ի՞նչ արուի,
Ես քեզի ի՞նչ աւելցնեմ.
4—Զօրաւոր մարդուն սուր նետերը
Ու գիհիին կոյծերը։
5—Վա՛յ ինծի, որ Մոսոքի մէջ պանդուխտ եղայ,
Ես կեդարի վրաններուն քովերը բնակեցայ։
6—Շատ ժամանակ իմ անձս բնակեցաւ
Խաղաղութիւնը ատողներուն հետ։
7—Ես խաղաղասէր էի.
Բայց երբ կը խօսէի, անոնք կռիւ կ'ընէին։

ՍԱՂՄ. ՃԻԱ

Ասոփճաններուն երգը։

Աչքերս դէպ ի լեռները պիտի վերցնեմ,
Ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ։
2—Իմ օգնութիւնս Տէրոջմէն է,
Որ երկինքը ու երկիրը ստեղծեց։
3—Անիկա քու ոտքդ չդողացնէ,
Ու քու Պահապանդ չքնանայ։
4—Ահա իսրայէլի Պահապանը
Պիտի չմրափէ ու պիտի չքնանայ,
5—Տէրը քու պահապանդ է.
Տէրը քու աջ ձեռքիդ քովն քու հովանիդ է։
6—Ցորւիկը արեգակը քեզպիտի չզարնէ,
Ոչ ալ գիշերը լուսինը։
7—Տէրը քեզ ամէն չարէն պիտի պահպանէ,
Քու անձդ պիտի պահպանէ։
8—Տէրը քու ելլելդ ու մտնելդ պիտի պահպանէ
Ակէ հետև միշտ յաւիտեան։

*Կամ, Նենգաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տայ ու քեզի ի՞նչ կ'աւելցնէ

ՍԱՂՄ. ՃԻԲ

Դաւիթի ասոփճաններուն երգը։

Կ'ուրախանայի երբ ինծի կ'ըսէին,
Տէրոջը տունը երթանք։
2—Մեր ոտքերը քու դռներուդ մէջ կայնեցան,
Ով Երուսաղէմ։
3—Երուսաղէմ շինուած քաղաքի մը պէս շինուած է,
Որ ինքնիրեն միաւորուած է.
4—Ուր ցեղերը, Տէրոջը ցեղերը, հոն կ'ելլեն
Իսրայէլի պատուիրածին պէս,
Տէրոջը անուանը գոհութիւն մատուցանելու համար։
5—Վասն զի հոն դրուած են դատաստանի աթոռները,
Դաւիթի տանը աթոռները։
6—Երուսաղէմի խաղաղութիւնը խընդրեցէք.
Թող յաջողին անոնք որ քեզ կը սիրեն։
7—Խաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպներուդ մէջ,
Ու յաջողութիւն՝ քու պալատներուդ մէջ։
8—Իմ եղբայրներուս ու ընկերներուս համար
Հիմա պիտի ըսեմ, Խաղաղութիւն ըլլայ քու մէջդ։
9—Մեր Տէր Աստուծոյն տանը համար
Քեզի բարութիւն պիտի ուզեմ։

ՍԱՂՄ. ՃԻԳ

Ասոփճաններուն երգը։

Քեզի կը բարձրացնեմ իմ աչքերս,
Ով երկինքի մէջ բնակող։
2—Ահա ինչպէս ծառաներուն աչքերը իրենց Տէրոջը ձեռքին կ'նային,
Ու ինչպէս աղախինին աչքերը իր տիկնոջ ձեռքին,
Այնպէս մեր աչքերը Տէրոջը, մեր Աստուծոյն, պիտի նային,
Մինչև մեզի ողորմի։
3—Ողորմէ մեզի, ով Տէր, ողորմէ մեզի,
Վասն զի խիստ լեցուեցանք անարգանքով։
4—Խիստ լեցուած է մեր անձը հանգիստ վայելողներուն նախատինքովը
Ու ամբարտաւաններուն անարգանքովը։

ՍԱՂՄ. ՁԻԹ

Դաւիթի աստիճաններուն երգը։

ԵԹԷ Տէրը մեզի հետ չըլլար,
Հիմա Իսրայէլ Թող ըսէ,
2—ԵԹԷ Տէրը մեզի հետ չըլլար,
Երբ մարդիկ մեր վրայ ելան,
3—Այն ատեն ողջ ողջ պիտի կլլէին մեզ,
Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբոքած էր։
4—Այն ատեն ջուրերը մեզ պիտի ընկրկուէին,
Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր։
5—Այն ատեն հպարտացած ջուրերը
Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին։
6—Օրհնեալ ըլլայ Տէրը,
Որ մեզ անոնց ակռաներուն որս չտուաւ։
7—Մեր անձերը ճնճղուկի պէս ազատեցան որոգայթէն որոգայթողներուն։
Որոգայթը կտրեցաւ ու մենք ազատեցանք։
8—Մեր օգնութիւնը Տէրոջը անունովն է,
Որ երկինքն ու երկիրը ստեղծեց։

ՍԱՂՄ. ՁԻԸ

Աստիճաններուն երգը։

Տէրոջը յուսացողները Սիօն լեռանը պէս են,
Որ չասասկին, հաստ յաւիտեան կը մնայ։
2—Ինչպէս Երուսաղէմ լեռներով պատած է,
Նոյնպէս Տէրը իր ժողովուրդին չորս կողմն է
Ամէն ատեն մինչև յաւիտեան։
3—Վասն զի ամբարշտին գաւազանը արդարներուն վիճակին վրայ պիտի չմնայ,
Որպէս զի արդարները ձեռքերնին անօրէնութեան չերկնցնեն։
4—Ով Տէր, բարիք ըրէ բարիներուն
Ու սրտով ուղիղներուն,
5—Սակայն զանոնք որ իրենց ծուռ ճամբաներուն մէջ կը մոլորին,

Տէրը պիտի *կորսնցնէ անօրէնութեան գործողներուն հետ։
Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ։

ՍԱՂՄ. ՁԻԹ

Ասիճաններուն երգը։

Երբ Տէրը Սիօնի գերութիւնը դարձուց,
†Երազ տեսնողներու պէս եղանք,
2—Այն ժամանակ մեր բերանը խնդութիւնով լեցուեցաւ,
Ու մեր լեզուն ցնծութիւնով.
Այն ժամանակ հեթանոսներուն մէջ ըսին Թէ
Տէրը մեծ գործեր ըրաւ։
3—Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ,
Ո՞վ կրնայ ուրախացնէ։
4—Ով Տէր, դարձուր մեր գերութիւնը
Հարաւի առուներուն պէս։
5—Անոնք որ արցունքով կը ցանեն,
Ցնծութիւնով կը հնձեն։
6—Ան որ լալով կ'երթայ,
Ցանելու սերմը տանելով,
Անշուշտ ցնծութեամբ կու պիտի դառնայ,
Իր ցորեկի խուրձերը բերելով։

ՍԱՂՄ. ՁԻԿ

Սողոմոնի աստիճաններուն երգը։

ԵԹԷ Տէրը չշինէ տունը,
Զուր տեղ կ'աշխատին անոր շինողները.
ԵԹԷ Տէրը չպահպանէ քաղաքը,
Զուր տեղ կը հսկեն պահապանները։
2—Պարապ բան է ձեզի համար կանուխ ելլելը և ուշ հանգչիլը
Ո՞ ցաւով հաց ուտելը։
Արդարև անիկա իր սիրելիին քուն կուտայ։
3—Ահա տղաքը Տէրոջը ժառանգութիւնն են.
Որովայնի պտուղը՝ ՚ոռ ‡պարգեւն է։
4—Ինչպէս են նետերը զօրաւորին ձեռքին մէջ,

*ՆԲԴ. տանի †կամ, Առողջացողներու
‡կամ, վարձքն

Այնպէս են երիտասարդներուն տղաքը։
5—Երանի՛ այն մարդուն,
Որ իր կապարճը անոնցմով լեցուց.
Երբ դրանը մէջ թշնամիներուն հետ խօսելու ըլլան,
Պիտի չամչնան։

ՍԱՂՄ. ՁԻԿ

Ասիճաններուն երգը։

Երանի՛ այն ամէնուն՝ որոնք Տէրոջմէ կը վախնան,
Ո՞ անոր ճամբաներուն մէջ կը քալեն։
2—Վասն զի քու ձեռքիդ աշխատութիւնը պիտի ուտես.
Երանի՛ է քեզի, ու քեզի բարի պիտի ըլլայ։
3—Քու կնոջդ պտղաբեր որթի մը պէս պիտի ըլլայ
Քու տանդ ներսիդի կողմը,
Ո՞ քու որդիներդ ձիթենիի տունկերու պէս
Քու սեղանիդ չորս կողմը։
4—Ահա Տէրոջմմէն վախցող մարդը
Այսպէս պիտի օրհնուի։
5—Տէրը քեզ Սիոնէ օրհնէ,
Ու Երուսաղէմի բարութիւնը տեսնես
Քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ.
6—Ու քու որդւոցդ որդիները տեսնես։
Խաղաղութիւն ըլլայ Իսրայէլի վրայ։

ՍԱՂՄ. ՁԻԹ

Ասիճաններուն երգը։

Հիմա Իսրայէլ Թող ըսէ,
Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին.
2—Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին,
Բայց ինծի չյաղթեցին։
3—Հերկողները իմ կռնակիս վրայ հերկեցին,
Ո՞ իրենց ակօսները երկնցուցին։
4—Տէրը արդար է.
Անիկա սոսքարիչներուն չուանները կտրեց։
5—Սիօնը ատողներուն ամէնը
Պիտի ամչնան ու ետ դառնան։
6—Տանիքի վրայի խոտին պէս պիտի ըլլան,
Որ դեռ չբրցած կը չորնայ.
7—Որով հնձողը չկրնար իր ձեռքը լեցնել,
Ո՛չ ալ խուրձ կապողը իր գոգը.
8—Ու անցնողները չեն ըսեր Թէ
Տէրոջը օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ,
Ո՞ ձեզ Տէրոջը անունովը կ'օրհնենք։

ՍԱՂՄ. ՁԼ

Ասիճաններուն երգը։

Խորունկ տեղերէն քեզի կանչեցի, ով Տէր։
2—Ով Տէր, իմ ձայնս լսէ.
Քու ականջիդերդ Թող մտիկ ընեն իմ աղօթքիս ձայնը։
3—Ով Տէր, եթէ անօրէնութիւնները յիշելու ըլլաս,
Տէր, ո՞վ կրնայ կենալ։
4—Բայց քու քովդ է Թողութիւնը,
Որպէս զի քեզմմէ վախնան։
5—Ես Տէրոջը կը սպասեմ, իմ անձս կը սպասէ,
Ու անոր խօսքին կը յուսամ։
6—Առաւօտեան սպասողներէն, առաւօտեան սպասողներէն աւելի
Իմ անձս Տէրոջը կը սպասէ։
7—Իսրայէլ Թող Տէրոջը յուսայ,
Վասն զի Տէրոջը քով ողորմութիւն կայ.
Ու անոր քով շատ փրկութիւն կայ.
8—Ու անիկա պիտի փրկէ Իսրայէլը
Իր բոլոր անօրէնութիւններէն։

ՍԱՂՄ. ՁԼԱ

Դաւիթի աստիճաններուն երգը։

Ով Տէր, իմ սիրտս չգոռոզացաւ,
Ես իմ աչքերս չբարձրացան.
Ու ես մեծամեծ բաներու մէջ,
Ու ինծմէ բարձր բաներու մէջ չքալեցի։
2—Արդարև իմ անձս հանդարտեցուցի ու հանգստացուցի
Իր մօրը կաթէն կտրուած տղու մը պէս.
Իմ անձս կաթէն կտրուած տղու մը պէս է։
3—Իսրայէլ Թող Տէրոջը յուսայ
Այսկէ եւեթ մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԼԸ

Ասաֆաննեռան երգը։

Գաւիթի համար յիշէ, ով Տէր,
Անոր բոլոր նեղութիւնը.
2—Որ երդում ըրաւ Տէրոջը,
Ե՛ ուխտ դրաւ Յակոբի Զօրաւորին,
3—Ըսելով Թէ իմ տանս բնակարանը
չմտնեմ,
Ու իմ փառաւ անկողնիս վրայ չելլեմ,
4—Թէ իմ աչքերուս քունը
Եւ արտեւանունքներուս նիրհառ
չտամ,
5—Մինչև Տէրոջը համար տեղ մը գըտնեմ,
Ո՛ Յակոբի Զօրաւորին համար բնակարան,
6—Ահա անոր վրայով լսեցինք եփրաթայի մէջ,
Ե՛ զանիկա գտանք անտառի դաշտերուն մէջ։
7—Մտանենք անոր բնակարաններըն,
Ո՛ երկրպագութիւն բնենք անոր պատուանդանին քով։
8—Ջու հանգստութեանդ տեղը ելիր,
ով Տէր,
Դուն ու քու զօրութեանդ տապանակը։
9—Քահանաներդ թող արդարութիւն հագնին,
Եւ քու սուրբերդ ցնծան։
10—Ջու Գաւիթ ծառայիդ համար
Աննդին մի դարձներ քու օծեալիդ երեսը։
11—Տէրը երդում ըրաւ Գաւիթի ճշմարտութեամբ,
Ե՛ ետ չդառնար անկէ,
Թէ քու որովայնիդ պտուղէն
Քու աթոռիդ վրայ պիտի նստեցնեմ։
12—Եթէ քու որդիներդ պահեն իմ ուխտս ու վկայութիւններս
Զորոնք անոնց պիտի սորվեցնեմ,
Անոնց որդիներն ալ
Քու աթոռիդ վրայ պիտի նստին յաւիտեան։
13—Վասն զի Տէրը Սիովն ընտրեց,
Ե՛ զանիկա իրեն բնակութեան համար ուզեց,
14—Ըսելով, Այս է յաւիտեան իմ հանգիստս.
Ասոր մէջ պիտի բնակիմ, վասն զի ասիկա ուզեցի։
15—Անոր պաշարը առատապէս պիտի օրհնեմ,
Ո՛ անոր ազգասաները հացով պիտի կշտացնեմ,
16—Եւ անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագցնեմ.
Ու անոր սուրբերը ուրախութեամբ պիտի ցնծան։
17—Անդ տեղը Դաւիթի եղջիւրը պիտի բուսցնեմ,
Ո՛ Ծրագ պիտի պատրաստեմ իմ օծեալիս համար։
18—Անոր թշնամիներուն ամօթ պիտի հագցնեմ,
Բայց անոր վրայ իր թագը պիտի ծաղկի։

ՍԱՂՄ. ՃԼԳ

Գաւիթի ասաֆաննեռան երգը։

Ահա ո՛րչափ բարի ու ո՛րչափ վայելուչ է
Որ եղբայրները էջ-ը-ու հեւ միաբանութեամբ բնակին։
2—Ան ալնիւ իւղին պէս է,
Որ գլխուն վրայէն մօրուքին վրայ,
Ահարոնի մօրուքին վրայ, վազից,
Ո՛ մինչև անոր զգեստներուն ծայրը իջաւ։
3—Սիօնի լեռներուն վրայ իջած
Հերմոնի շաղին պէս է.
Վասն զի Տէրը հոն հաստատեց օրհնութիւնը
Ո՛ կեանքը մինչև յաւիտեան։

ՍԱՂՄ. ՃԼԴ

Ասաֆաննեռան երգը։

Աղէ, օրհնեցէք Տէրը, ով Տէրոջը բոլոր ծառաները,
Որ Տէրոջը առնը կը կենաք գիշերները։
2—Սուրբ տեղը ձեռքերնիդ վերցուցէք,
Ու օրհնեցէք Տէրը։
3—Երկինքը ու երկիրը ստեղծող Տէրը
Թող օրհնէ քեզ Սիօնէ։

ՍԱՂՄ. ՃԼԵ

Ալէլուիա։ Օրհնեցէք Տէրոջը անունը,
Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները,
2—Որ Տէրոջը տունը կը կենաք,
Մեր Աստուծոյն տանը սրահներուն մէջ,
3—Օրհնեցէք Տէրը, վասն զի Տէրը բարի է։
Սաղմոս բսեք անոր անունը, վասն զի քաղցր է,
4—Վասն զի Տէրը Յակոբ իրեն համար ընտրեց
Ցակոբը,
Ո՛ Իսրայէլը իրեն սեպհական գոհարը ըլլալու։
5—Վասն զի ես իմացայ, որ Տէրս մեծ է,
Ու մեր Տէրը՝ բոլոր աստուածներէն։
6—Տէրը ամէն ինչ որ ուզեց՝ ըրաւ,
Երկինքի ու երկրի մէջ,
Ծովերուն ու բոլոր անդունդներուն մէջ։
7—Երկրի ծայրերէն ջրգիներ կը հանէ,
Անձրեւի համար փայլակներ կը շինէ,
Ո՛ հով կը հանէ իր շտեմարաններէն։
8—Անիկա եգիպտոսի առջինեկները զարկաւ
Մարդէ մինչև անասուն։
9—Նշաններ ու հրաշքներ ղրկեց քու մէջդ, ով Եգիպտոս,
Փարաւոնի ու անոր բոլոր ծառաներուն վրայ,
10—Շատ ազգեր զարկաւ,
Ու զօրեղ թագաւորներ սպաննեց.
11—Ամորհացւոց Սեհոն թագաւորը,
Բասանի Ովգ թագաւորը,
Ե՛ Քանանու բոլոր թագաւորութիւնները.
12—Ու անոնց երկիրը ժառանգութիւն տուաւ,
Իր Իսրայէլ ժողովուրդին ժառանգութիւն։
13—Ով Տէր, քու անունդ մինչև յաւիտեան կը ձայ.
Ով Տէր, քու յիշատակդ ազգէ մինչև ազգ։
14—Վասն զի Տէրը իր ժողովուրդը կը դատէ,
Ե՛ իր ծառաներուն կ'ողորմի։
15—Հեթանոսներուն կուռքերը արծաթ ու ոսկի են,
Մարդու ձեռքի գործեր են.
16—Բերան ունին, բայց չեն խօսիր.
Աչքեր ունին, բայց չեն տեսներ.
17—Ականջներ ունին, բայց չեն լսեր,
Ու չունէ չկայ անոնց բերնին մէջ։
18—Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները
Ո՛ բոլոր անոնց յուսացողները։
19—Ով Իսրայէլի տունը, օրհնեցէք Տէրը.
Ով Ահարոնի տունը, օրհնեցէք Տէրը.
20—Ով Ղեւիի տունը, օրհնեցէք Տէրը.
Ով Տէրոջմէն վախցողներ, օրհնեցէք Տէրը։
21—Օրհնեալ ըլլայ Տէրը Սիօնէ,
Որ Երուսաղէմի մէջ կը բնակի։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՃԼԶ

Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
2—Գոհացէք աստուածներուն Աստուծմէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
3—Գոհացէք տէրերուն Տէրոջմէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
4—Միայնակ մեծ հրաշքներ ընողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
5—Երկինքը խնամութեամբ ստեղծողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
6—Երկիրը ջուրերուն վրայ տարածողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
7—Մեծամեծ լուսաւորներ ստեղծողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
8—Արեգակը՝ որպէս զի ցորեկին իշխէ,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
9—Լուսինը ու աստղերը՝ որպէս զի գիշերին իշխեն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.

10 — *Եգիպտացւոց անդրանիկները՝
զաբնողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
11—Ու Իսրայէլը անոնց մէջէն հանողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
12—Հզօր ձեռքով ու տարածուած բազուկով,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
13—Կարմիր ծովը երկու բաժնողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
14—Ու Իսրայէլը անոր մէջէն անցընողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
15—Եւ փարաւոնը ու անոր զօրքը կարմիր ծովուն մէջ թօթվողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
16—Իր ժողովուրդը անապատին մէջ պտրացնողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
17—Մեծ թագաւորներ զարնողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
18—Ու զօրեղ թագաւորներ սպաննողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
19—Ամորհացւոց Սեհոն թագաւորը,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
20—Ու Բասանի Ովգ թագաւորը,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
21—Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
22—Իր Իսրայէլ ծառային ժառանգութիւն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.

*ԵԲՐ. Եգիպտացիները իրենց անդրանիկներուն մէջ

23—Մեր խոնարհութեանը մէջ մեզ յիշողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
24—Ու մեր թշնամիներէն մեզ փրկողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
25—Բոլոր մարմնին հաց տուողէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է.
26—Գոհացէք երկինքի Աստուծմէն,
վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է։

ՍԱՂՄ. ՃԼԷ

Բաբելոնի գետերուն քով՝ հոն կը նստէինք,
Ու Սիոնը մտածելնիս բերելով կու լայինք։
2—Անոր մէջ ուռիներուն վրայ
կախեցինք մեր քնարները։
3—Վասն զի մեզ գերի ընողները
հոն մեզմէ երգ մը խնդրեցին,
Ու մեր *կողոպտիչները ուրախութիւն,
ԸՍԷՂԵՎ, երգեցէք մեզի Սիոնի երգերէն։
4—Տէրոջը երգը ի՞նչպես երգենք
Օտար երկրի մէջ։
5—Ով երուսաղէմ, եթէ քեզ մոռնամ,
Թող իմ աջ ձեռքս իր պատրիճը մոռնայ։
6—Թող իմ լեզուս իմ բերանիս փակչի,
Եթէ քեզ չյիշեմ,
Եթէ Երուսաղէմը իմ գլխաւոր ուրախութենիս
Աւելի մեծ չհամարիմ։
7—Յիշէ, ով Տէր, Եդովմի որդիները
Երուսաղէմի օրուանը մէջ,
Որոնք կ'ըսէին, փլցուցէք, փլցուցէք
Մինչև անոր հիմը։
8—Ով բաբելոնի †աւերող աղջիկը,
Երանի՛ անոր՝ որ քեզի կը հատուցանէ
Մեզի ըրած գործերուդ վոխարէնը.
9—Երանի՛ անոր՝ որ քու զաւակներդ
կը բռնէ
Ու քարի կը զարնէ։

*Կամ, գերեվարները
†Կամ, աւրուելու.Ես.ԺԳ, 1,6, ևն.։ Ղսէ. 1։ Երեմ. ԻԼ. 12։ Ծ. 2։

ՍԱՂՄ. ՃԼԸ

Սաղմոս Դաւթի։

Քեզի գոհութիւն պիտի մատուցանեմ իմ բոլոր սրտովս.
*Աստուածներուն առջև քեզի սաղմոս պիտի երգեմ։
2—Երկրպագութիւն պիտի ընեմ դէպ ի քու սուրբ տաճարդ,
Եւ քու անունդ գոհութիւն պիտի մատուցանեմ
Քու ողորմութեանդ ու ճշմարտութեանդ համար.
Վասն զի քու բոլոր անունէդ վեր մեծցուցիր քու խօսքդ։
3—Կանչած օրս պատասխան տուիր ինծի,
Իմ անձիս մէջ զօրութիւնով զիս ուժովցուցիր։
4—Ով Տէր, երկրի բոլոր թագաւորները քեզի գոհութիւն պիտի մատուցանեն,
Երբ քու բերնիդ խօսքերը լսեն.
5—Ու Տէրոջը ճամբաներուն մէջ պիտի երգեն.
Վասն զի Տէրոջը փառքը մեծ է։
6—Թէպետ Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ,
Ու բարձրամիտը հեռուէն կը ճանչնայ։
7—Եթէ նեղութեան մէջ ալ քալեմ,
Դուն զիս պիտի կենդանացնես.
Իմ թշնամիներուս բարկութեանը դէմ
Քու ձեռքդ պիտի երկնցնես,
Ու քու աջ ձեռքդ զիս պիտի փրկէ։
8—Տէրը պիտի գործէ ինծի համար.
Ով Տէր, քու ողորմութիւնդ յաւիտեան է.
Քու ձեռքիդ գործերը երեսէ մի ձգեր։

ՍԱՂՄ. ՃԼԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, զիս քննեցիր ու ճանչցար։
2—Դուն գիտես իմ նստիլս ու ելլելս,
Իմ խորհուրդս հեռուանց կ'իմանաս։

*Կամ, Հրեշտակներուն, կամ, Դատաւորներուն, և կամ, Աստուածդ

3—Իմ չաիղս ու պառկիլս կը քննես,
Ու իմ բոլոր ճամբաներս գիտես։
4—Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ,
Ահա, ով Տէր, դուն ամէնը գիտես։
5—Իմ հետևէս ու առջևէս զիս պաշարեցիր,
Եւ քու ձեռքդ իմ վրաս դրիր։
6—Այս գիտութիւնը ինծի խիստ զարմանալի է,
Բարձր է — չեմ կրնար հասկնալ զայնիկա։
7—Ո՞ւր երթամ քու Հոգիէդ,
Եւ քու երեսէդ ո՞ւր փախչիմ։
8—Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես.
Եթէ դժոխքը անկողինս ընեմ, ահա դուն հոն ես։
9—Եթէ արշալոյսին թևերը առնեմ,
Եւ ծովուն վերջի ծայրերը բնակիմ,
10—Հոն ալ քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ,
Ու քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ։
11—Եթէ ըսեմ, Իրաւցնէ խաւարը զիս պիտի ծածկէ,
Այս ատեն գիշերն ալ լոյս կ'ըլլայ իմ բոլորտիքս։
12—Մութն ալ քեզի խաւար չէ.
Հապա գիշերը ցորեկի պէս լուսաւոր կ'ըլլայ.
Խաւարը և լոյսը միևնոյն բան են։
13—Վասն զի դուն *առեղծեցիր իմ երիկամունքներս,
Ո՛ւ իմ մօրս որովայնին մէջ դուն զիս ծածկեցիր։
14—Կը գոհանամ քեզմէ,
Որ ահաւոր — զարմանալի կերպով առեղծուեցայ։
Քու գործերդ զարմանալի են,
Ու իմ անձս ալ կը գիտէ։
15—Իմ գոյութիւնս չծածկուեցաւ քեզմէ,
Երբ գաղտուկ տեղը չինուեցայ,
Երկրի խորութիւններուն մէջ †ճարտարութեամբ կազմուեցայ։
16—Քու աչքերդ իմ անկատար կազմուածքս տեսան.

*Կամ, առացար
†ԵԲՐ. Նկարակերպեցայ

Ու անբիծները բոլորը քու գիրքիդ
մէջ գրուած էին,
Որոնք ժամանակին պիտի կազմուէին,
երբ դեռ անոնցմէ մէկը չկար։
17—Ո՛րչափ պատուական են ինծի
քու խորհուրդներդ, ով Աստուած.
Ո՛րչափ մեծ է անոնց թիւը։
18—Երէ համրեմ զանոնք՝ աւազէն
շատ են.
երբ արթննամ՝ դեռ քեզի հետ եմ։
19—Իրաւցընէ ամբարիշտը պիտի
սպաննես, ով Աստուած.
Ուրեմն, ով արիւնահեղ մարդիկ, հե-
ռացէք ինծմէ։
20—Անոնք քեզի դէմ նենգութեամբ
կը խօսին,
Ու քու *թշնամիները քու անունդ պա-
տրաստ տեղ կ՚առնեն։
21—Քեզ ատողները չէ՞մ ատեր, ով
Տէր,
Ու քեզի դէմ ելլողներէն չէ՞մ զզուիր։
22—Զանոնք կատարեալ ատելութեամբ
կ՚ատեմ,
Ու ինծի թշնամի կը համարիմ։
23—Փորձէ զիս, ով Աստուած, ու
ճանչցիր իմ սիրտս.
Զիս քննէ ու գիտցիր իմ մտածմունք-
ներս,
24—Ու նայէ թէ արդեօք չար ճամբու
մէ՞ր եմ,
Ու զիս դեպ ի յաւիտենական ճամբան
առաջնորդէ։

ՍԱՂՄ. ՁԹ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, չար մարդէն զիս փրկէ,
Ու բռնաւոր մարդէն զիս պահէ,
2—Որոնք սրտերնուն մէջ չար բաներ
կը մտածեն,
Ու ամէն օր կռիւներու համար կը ժող-
վուին։
3—Իրենց լեզուները օձի պէս սրեցին.
Իժի թոյն կայ անոնց շրթունքներուն
տակ։ (Սէլա)
4—Ով Տէր, զիս ամբարիշտին ձեռքէն
պահէ.
Զիս բռնաւոր մարդէն պահպանէ,
Որոնք իմ գնացքներս խափանելու
խորհուրդ ըրին։
5—Ամբարտաւանները ինծի համար
գաղանի որոգայթ ու չուաններ
լարեցին.
Ուռկան փռեցին կ՚ճամբուս վրայ
Ու պարիսպ դրին ինծի համար։ (Սէլա)
6—Ըսի Տէրոջը, Դուն ես իմ Աստ-
ուածս.
Ով Տէր, լսէ իմ աղաչանքիս ձայնը։
7—Ով Տէր Եհովա, իմ փրկութեանս
զօրութիւնը,
Դուն իմ գլխուս հովանի եղար պատե-
րազմին օրը։
8—Ով Տէր, ամբարիշտին ցանկութիւն-
ները մի տար.
Անոր չար խորհուրդը մի յաջողեր,
Որ չըլլա՛ թէ բարձրանան։ (Սէլա)
9—Զիս պաշարողներուն գլուխը
իրենց շրթունքներուն ալխաատութիւնը
պիտի ծածկէ։
10—Վառած ածուխներ պիտի իյնան
անոնց վրայ.
Կրակի մէջ պիտի ձգէ զանոնք,
Ու խորունկ ջուրերու մէջ, որպէս զի
ըլլաւ վեր չկրնան։
11—Զարախօս մարդը երկրի վրայ պի-
տի չհաստատուի.
Թշուառութիւնը պիտի որսայ բռնաւոր
մարդը,
Որպէս զի չ՚նէ՛ կործանէ։
12—Գիտեմ որ Տէրը դատաստան պիտի
ընէ խեղճին,
Ու՝ իրաւունք՝ աղքատներուն։
13—Ձիրաւի արդարները քու անունդ
պիտի գովեն.
Ուղիղները քու առջեւդ պիտի բնակին,

ՍԱՂՄ. ՁԽԱ

Սաղմոս Դաւթի։

Ով Տէր, քեզի կը կանչեմ, չուտով
հասիր ինծի.
Ականջ դիր իմ ձայնիս երբ քեզի կը
կանչեմ։
2—Թող իմ աղօթքս խունկի պէս քեզի
շնորհուի,

Ու իմ ձեռքերուս վեր վերցուիլը՝ իրիկ-
ուան պատարագին պէս։
3—Ով Տէր, պահապան դիր իմ բեր-
նիս,
Ու իմ շրթունքներուս դուռը պահ-
պանէ։
4—Իմ սիրտս չար բանի հետեւիլ թոյա-
ընդել մի թողուր,
Որպէս զի անօրէնութիւն գործող մարդ-
ոց հետ գէշ գործեր չընեմ,
Ու անոնց համադամ կերակուրներէն
չուտեմ։
5—Արդարը թող զիս զարնէ, այն ողոր-
մութիւն է.
Եւ զիս յանդիմանէ, այն գլխուս իւղ է.
Իմ գլուխս չմերժէ ընդդիմ։
Վասն զի անոնց նեղութիւններուն մէջ
ալ պիտի աղօթեմ։
6—Երբ անոնց դատաւորները ապա-
ռաժներու մէջ ձգուին,
Այն ատեն իմ խօսքերս պիտի լսեն,
վասն զի քաղցր են։
7—Ինչպէս *հերկողը ու ճեղքողը կը
շրջի երկրի վրայ,
Այնպէս մեր ոսկորները գերեզմանին
բերանը ցիրուցան եղան։
8—Սակայն, ով Տէր Եհովա, իմ աչ-
քերս դէպ ի քեզ են.
Քեզի յուսացայ, իմ հոգիս մի մերկա-
ցըներ։
9—Ինծի համար լարուած որոգայթէն,
Ու անօրէնութիւն գործողներուն վար-
միրէն զիս պահէ։
10—Ամբարիշտները իրենց ցանցերուն
մէջ պիտի իյնան,
Երբ ես բոլորովին անցնիմ։

ՍԱՂՄ. ՁԾԲ

Դաւթի երգը — աղօթքը՝ երբ ինք
այրին մէջ էր։

Իմ ձայնովս Տէրոջը կ՚ապաւակեմ.
Իմ ձայնովս Տէրոջը կ՚աղաչեմ։
2—Իմ գանգատս անոր առջեւ կը թա-
փեմ.
Իմ նեղութիւնս անոր առջեւ կը պատ-
մեմ։

3—Երբ հոգիս իմ մէջս կը մաշէր,
Դուն իմ շաւիղս գիտցար.
Իմ քալած ճամբուս մէջ
Ինծի համար գաղտուկ որոգայթ լարե-
ցին։
4—Նայէ աջ կողմս ու տես,
Որ բնաւ զիս ճանչցող մը չկայ.
Ապաւէնը ինծմէ կորսուեցաւ.
Բնաւ մէկը չկայ որ իմ անձիս համար
հոգ ընէ։
5—Ով Տէր, քեզի աղաղակեցի,
Ու ըսի, Դուն ես իմ ապաւէնս,
Ու իմ վիճակս կենդանիներուն երկրին
մէջ։
6—Ականջ դիր իմ աղաղակիս,
Վասն զի չատ նեւաստացայ.
Ազատէ զիս իմ հալածիչներէս,
Վասն զի ինծմէ զօրաւոր են։
7—Իմ անձս բանտէն հանէ,
Որպէս զի քու անուանդ գոհութիւն
մատուցանեմ,
Արդարները իմ չորս կողմս պիտի պա-
տեն,
Երբ ինծի բարութիւն ընես։

ՍԱՂՄ. ՁԾԳ

Սաղմոս Դաւթի.

Ով Տէր, լսէ իմ աղօթքս,
Ականջ դիր իմ աղաչանքիս.
Պատասխան տուր ինծի քու ճշմարտու-
թիւնովդ։
Ու քու արդարութիւնովդ։
2—Ու քու ծառայիդ հետ դատաստանի
մի մտներ,
Վասն զի բնաւ կենդանի մը պիտի չար-
դարանայ քու առջեւդ։
3—Վասն զի թշնամին իմ անձս հալա-
ծեց,
Իմ կեանքս գետինը զարկաւ,
Զիս չատոնցուընէ մեռածներուն պէս
Մութը նստեցուց։
4—Ու իմ հոգիս ներսիդիս մարեցաւ,
Իմ սիրտս ներսիդիս խռովեցաւ։
5—Առաջուան օրերը կը յիշեմ,
Քու բոլոր գործերուդ վրայ կը մտածեմ.
Քու ձեռքերուդ ըրածներուն վրայ կը
խորհիմ։
6—Ձեռքերս դէպ ի քեզ կ՚երկնցնեմ.

իմ անձս չար երկրի պես քեզի կը թո-
ղու։ (Սէլա)
7—Շուտով պատասխան տուր ինծի,
ով Տէր.
իմ հոգիս մաշեցաւ.
Քու երեսդ ալ ծածկեր ինծի,
Որպէս զի գուբը իջնողներուն պէս չըլլամ
8—Առաւուանց քու ողորմութիւնդ ինծի
լսել տուր,
վասն զի քեզի յուսացայ.
Իմ երթալու ճամբաս ինծի ցուցուր,
վասն զի իմ անձս դէպ ի քեզ վերցուցի։
9—Ով Տէր, փրկէ զիս իմ թշնամիներէս,
վասն զի քեզ իմ ապաւէնս ըրի։
10-Սորվեցուր ինծի որ քու կամքդ ընեմ,
Քանզի դուն ես իմ Աստուածս.
Թող քու բարի Հոգիդ զիս ուղիղ երկիրը
առաջնորդէ։
11—Ով Տէր, քու անուանդ համար
կենդանացուր զիս.
Քու արդարութեանդ համար իմ անձս
նեղութենէն հանէ.
12—Եւ քու ողորմութիւնովդ սատկե-
ցուր իմ թշնամիներս,
Ու կորսնցուր բոլոր իմ անձս վշտացը-
նողները,
վասն զի ես քու ծառադ եմ։

ՍԱՂՄ. ՁԼԹ

Ս—ՀՀ— Դաւթի։

Օրհնեալ ըլլայ Տէրը, իմ վէմս,
Որ իմ ձեռքերս մարտնչելու կը վարժէ,
Ո— իմ մատերս՝ պատերազմելու։
2—Անիկա է իմ ողորմութիւնս ու ապա-
քինս,
իմ ապաւէնս ու իմ փրկիչս,
իմ վահանս, և ես անոր կը յուսամ,
Որ իմ ժողովուրդս ինծի կը հնազանդե-
ցընէ։
3—Ով Տէր, մարդը ի՞նչ է որ զանի-
կա կը ճանչնաս,
Ո— մարդու որդին՝ որ զանիկա կը յար-
գես։
4—Մարդը ունայնութեան պէս է,
Անոր օրերը անցնող չուքի պէս կ'են։
5—Ով Տէր, խոնարհեցուր քու եր-
կինքդ ու վար իջիր.
Լեռներուն դպչէ ու պիտի ծխան։
6—Փայլակո՛ր նետէ ու ցրուէ զանոնք.
Քու նետերդ ղրկէ ու զանոնք խռովե-
ցո՛ր։
7—Քու ձեռքդ վերէն ղրկէ և ազատէ
զիս.
Փրկէ զիս մեծ ջուրերէն — օտարներուն
ձեռքէն,
8—Որոնց բերանը ունայնութիւն կը
խօսի,
Եւ անոնց աջ ձեռքը սուտի՛ան աջ
ձեռք է։
9—Ով Աստուած, քեզի նոր երգ
պիտի երգեմ,
Տասը լար ունեցող տաւիղով սաղմոս
պիտի ըսեմ քեզի։
10-Թագաւորներուն փրկութիւն տուողը,
Ո— իր Դաւիթ ծառան չար սուրէն ազա-
տողը ան է։
11—Զիս ազատէ ու օտարներուն ձեռ-
քէն փրկէ,
Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի.
Եւ անոնց աջ ձեռքը սուտի՛ան աջ
ձեռք է։
12—Որպէս զի մեր որդիները իրենց
երիտասարդութեանը մէջ տունկերու պէս մեծնան,
Ո— մեր աղջիկները պալատի շէնքին հա-
մար փորագրուած անկիւնի քա-
րերու պէս ըլլան.
13—Որպէս զի մեր ամբարները լեցուին,
Ե— ամէն տեսակ կերակուրներ բղխեն,
Ո— մեր ոչխարները հազարաւոր Ը րիւ րա-
ւոր ծնանին մեր արտերուն մէջ.
14—Որպէս զի մեր արջառները *բազ-
մանին ըլլան,
Ու աւերուն ի բնութենէ մանել ու
ելլել չըլլայ,
Ոչ ալ աղաղակ՝ մեր հրապարակներուն
մէջ։
15—Երանի՛ այսպիսի վիճակի մէջ
եղող ժողովուրդին.
Երանի՛ այն ժողովուրդին՝ որուն Աստ-
ուածը Եհովա է։

ՍԱՂՄ. ՁԼԹ

Օրհնութիւն Դաւթի։

Քեզ պիտի բարձրացնեմ, ով իմ
Աստուածս, որ Թագաւոր ես,

*Իմա, պարարտ

Ու քու անուանդ յաւիտեան յաւիտե-
նից պիտի օրհնեմ։
2—Ամէն օր քեզ պիտի օրհնեմ,
Եւ քու անուանդ յաւիտեան յաւիտե-
նից պիտի գովեմ։
3—Մեծ ու խիստ գովելի է Տէրը,
Ու անոր մեծութիւնը անքննելի է։
4—Ազգ ազգի պիտի գովէ քու գործերդ,
Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ։
5—Քու փառքիդ մեծութեանը վայել-
չութիւնը
Ու քու հրաշալի գործերդ պիտի զրուցեմ։
6—Ու քու ահաւոր գործերդ պիտի
խօսին,
Ու ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ։
7—Քու մեծ բարեբարութեանդ յիշա-
տակը պիտի հրատարակեն,
Եւ քու արդարութիւնովդ պիտի ցնծան։
8—Ողորմած ու գթած է Տէրը,
Երկայնամիտ և բազումողորմ է։
9—Տէրը ամենուն բարի է,
Ու անոր ողորմութիւնները իր բոլոր
գործերուն վրայ են։
10—Ով Տէր, քու բոլոր գործերդ քեզ
պիտի գովեն,
Եւ քու սուրբերդ քեզ պիտի օրհնեն։
11—Քու թագաւորութեանդ փառքը
պիտի խօսին,
Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.
12—Որպէս զի անոր զօրաւոր գործերը
ու անոր թագաւորական փա-
ռաւոր մեծութիւնը
Մարդոց որդիներուն գիտցնեն։
13—Քու թագաւորութիւնդ յաւիտե-
նական թագաւորութիւն է,
Ու քու տէրութիւնդ՝ ազգէ ազգ։
14—Տէրը կը հաստատէ բոլոր կոնա-
լու վրայ եղողները,
Եւ բոլոր վար ծռածները կը կանգնեցնէ։
15—Ամէնուն աչքերը քեզի կը սպասեն,
Ու ժամանակին անոնց կերակուրը
դուն անոնց կու տաս։
16—Քու ձեռքդ կը բանաս,
Ու ամէն կենդանիին փափաքը կը լե-
ցընես։
17—Տէրը արդար է իր բոլոր ճամբա-
ներուն մէջ,
Ու ողորմած է իր բոլոր գործերուն մէջ։
18—Տէրը մօտ է այն ամենուն որ զինք
կը կանչեն,
Այն ամենուն՝ որ ճշմարտութեամբ
զինք կը կանչեն։
19—Անիկա իրմէ վախցողներուն փա-
փաքը կը լեցնէ,
Եւ անոնց աղաղակը կը լսէ ու կը փրկէ
զանոնք։
20—Տէրը բոլոր զինք սիրողները կը
պահէ,
Սակայն բոլոր ամբարիշտները կը կոր-
սընցնէ։
21—Իմ բերանս Տէրոջը գովութիւնը
պիտի խօսի
Ու ամէն մարմին անոր սուրբ անունը
օրհնէ յաւիտեան յաւիտենից։

ՍԱՂՄ. ՁԼԶ

Ալէլուիա։ Օրհնէ Տէրը, ով իմ անձս։
2—Տէրը պիտի օրհնեմ իմ կեանքիս մէջ,
Քանի որ ունի եմ՝ իմ Աստուածոյս սաղմոս
պիտի ըսեմ։
3—Մի յուսաք իշխաններուն,
Մարդու որդիին՝ որուն քով փրկութիւն
չկայ։
4—Անոր հոգին կելլէ, անիկա իր հողը
կը դառնայ.
Նոյն օրը անոր խորհուրդները կը կոր-
սուին։
5—Երանի՛ անոր՝ որուն օգնականը
Յակոբի Աստուածն է,
Ո— անոր յոյսը իր Տէր Աստուծոյն
վրայ է։
6—Որ երկինքը ու երկիրը,
Ծովը ու բոլոր անոնց մէջ եղածը ստեղ-
ծեց,
Ճշմարտութիւն կը պահէ յաւիտեան,
7—Իրաւունք կ'ընէ զրկուածներուն,
Ո— հաց կու տայ անօթիներուն.
Տէրը կ'արձակէ կապուածները։
8—Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը.
Տէրը կը կանգնեցնէ վար ծռածները.
Տէրը կը սիրէ արդարները.
9—Տէրը կը պահէ պանդուխտները.
Կը հաստատէ որբը ու այրեւարին,
Բայց ամբարիշտներուն ճամբան կը ծռէ։
10—Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան,
Քու Աստուածդ, ով Սիօն, ազգէ ազգ։
Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԻԷ

Գովեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուածոյն սաղմոս ըսէ.
վասն զի քաղցր — վայելուչ է օրհնութիւնը։
2—Տէրը կը շինէ Երուսաղէմը,
Իսրայէլի ցրուածները կը ժողվէ.
3—Սրտով կոտրածները կը բժշկէ,
Ու անոնց խոցերը կը փաթթէ.
4—Աստղերուն թիւը կը համրէ,
Անոնց ամէնն ալ էրէնց անուններովը կը կանչէ։
5—Մեծ է մեր Տէրը, ու իր զօրութիւնը չատ է.
Անոր խմաստութիւնը անհուն է։
6—Տէրը կը հաստատէ խեղճերը,
Ու ամբարիշտները մինչև հողը կը խոնարհեցնէ։
7—Սրգեցէք Տէրոջը գոհութիւնով.
Մեր Աստուածոյն սաղմոս ըսէք քնարով։
8—Որ երկինքը ամպերով կը ծածկէ,
Անձրև կը պատրաստէ երկրի համար,
Խոտ կը բուսցնէ լեռներուն վրայ։
9—Ու անասուններուն իրենց կերակուրը կու տայ,
Ու ագռաւին ձագերուն՝ որոնք կ'աղաղակեն։
10—Անիկա ձիուն զօրութիւնը չհաճիր,
Մարդուն սրունքներուն չհաներ։
11—Տէրը կը հաւնի իրմէ վախցողներուն
Ու իր ողորմութիւնը յուսացողներուն։
12—*Ով Երուսաղէմ, գովէ Տէրը.
Օրհնէ քու Աստուածդ, ով Սիօն։
13—Վասն զի անիկա քու դռներուդ նիգերը ամրցուց,
Ու քու որդիներդ քու մէջդ օրհնեց։
14—Անիկա քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ,
Ու պարարտ ցորենով քեզ կը կշտացնէ։
15—Անիկա իր խօսքը երկրին մէջ կը դրկէ.
Իր խօսքը շուտով կը վազէ։
16—Անիկա բուրդի պէս ձիւն կու տայ,
Ու եղեամը մոխրի պէս կը ցանէ։
17—Իր սառը պատառներու պէս կը նետէ.
Անոր ցուրտին դէմ ո՞վ կրնայ կենալ։
18—Անիկա իր խօսքը կը դրկէ ու կը հալեցնէ զանոնք
Իր հովը փչել կու տայ, — ջուրը կը վազեն։
19—Անիկա իր խօսքը կը պատմէ Յակոբի,
Ու իր կանոնները ու դատաստանները՝ Իսրայէլի։
20—Բնաւ ազգի մը այպէս չըրաւ.
Ու անոնք անոր դատաստանները չճանչցան։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԻԸ

Ալէլուիա։ Օրհնեցէք Տէրը երկինքէն.
Օրհնեցէք զանիկա բարձր տեղերուն մէջ։
2—Օրհնեցէք զանիկա, ով անոր բոլոր հրեշտակները.
Օրհնեցէք զանիկա, ով անոր բոլոր զօրքերը։
3—Օրհնեցէք զանիկա, ով արեգակ ու լուսին.
Օրհնեցէք զանիկա, ով բոլոր փայլուն աստղեր։
4—Օրհնեցէք զանիկա, ով երկնից երկինք
Ու երկինքէ վեր եղող ջուրեր։
5—Թող Տէրոջը անունը օրհնեն.
Վասն զի ինք հրամայեց, ու անոնք ստեղծուեցան։
6—Եւ զանոնք յաւիտեան յաւիտենից հաստատեց.
Կանոն դրաւ որ չխափանուի։
7—Օրհնեցէք Տէրը երկրէ,
Ով վիշապներ ու բոլոր անդունդներ.
8—Կրակ և կարկուտ, ձիւն ու շոգի,
Ու անոր խօսքը կատարող մրրկայից հով,
9—Լեռներ ու բոլոր բլուրներ,
Պաղատու ծառեր ու եղեւիններ,
10—Գազաններ ու բոլոր անասուններ,
Սողացողներ ու թեւաւոր թռչուններ,
11—Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր,
Իշխաններ ու երկրի բոլոր դատաւորներ,
12—Երիտասարդներ և կոյս աղջիկներ,
Ծերեր ու պատկներ.
13—Թող Տէրոջը անունը օրհնեն,

*Եբրայերէնէ և Հայոց էջմիածնի ընդհանրական Դպրոցին մէջ ուսել իւր հայերէն թարգմանութեան Սաղմոսը, Տէս Սաղմոս պատկերազարդին վրայ ձանձրանալու։

վասն զի միայն անոր անունը բարձր է,
Անոր փառքը երկրի ու երկինքէ վեր է։
14—Անիկա բարձրացուց իր ժողովուրդին եղջիւրը,
Իր բոլոր սուրբերուն,
Իրեն մօտ եղող ժողովուրդին,
Իսրայէլի որդիներուն օրհնութիւնը։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԻԹ

Ալէլուիա։ Տէրոջը նոր երգ երգեցէք,
Ու անոր օրհնութիւնը՝ սուրբերուն ժողովրդին մէջ։
2—Իսրայէլ թող ուրախանայ իր Ստեղծողին վրայ.
Սիօնի որդիները թող ցնծան իրենց Թագաւորին վրայ։
3—Թող անոր անունը պարով օրհնեն,
Թմբուկով ու քնարով սաղմոս թող ըսեն անոր։
4—Վասն զի Տէրը իր ժողովուրդին կը հաճի,
Խոնարհները փրկութիւնով պիտի փառաւորէ։
5—Թող սուրբերը ուրախանան փառքով,
Ու իրենց անկողիններուն մէջ ցնծան։
6—Աստուծոյ գովութիւնները անոնց բերնին մէջ թող ըլլան,
Ու երկու բերնով սուր՝ անոնց ձեռքին մէջ,
7—Որպէս զի հեթանոսներէն վրէժ առնեն,
Ու ժողովուրդները պատժեն,
8—Որպէս զի անոնց թագաւորները չղթաներով կապեն,
Ու անոնց ազնուականները՝ երկաթէ կապանքներով։
9—Որպէս զի գրուած դատաստանը անոնց վրայ կատարեն.
Այս անոր բոլոր սուրբերուն փառքն է։ Ալէլուիա։

ՍԱՂՄ. ՁԺ

Ալէլուիա։ Օրհնեցէք զԱստուած իր սրբարանին մէջ.
Օրհնեցէք զանիկա իր զօրութեանը հաստատութեանը մէջ։
2—Օրհնեցէք զանիկա իր զօրաւոր գործերուն համար.
Օրհնեցէք զանիկա իր մեծափառութեանը համեմատ։
3—Օրհնեցէք զանիկա փողի ձայնով.
Օրհնեցէք զանիկա սաւիղով ու քնարով։
4—Օրհնեցէք զանիկա թմբուկով ու պարով.
Օրհնեցէք զանիկա լար ունեցող նաւագործաններով ու սրինգով։
5—Օրհնեցէք զանիկա մեծաձայն ծընծղաներով.
Օրհնեցէք զանիկա ցնծութեան ծնծղաներով։
6—Ամէն շունչ ունեցող Թող Տէրը օրհնէ։ Ալէլուիա։

ԳԻՐՔ ԱՌԱԿԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Իսբայէլի թագաւորին Դաւիթի որդւոյն Սողոմոնի առակները.
2—Իմաստութիւնը ու խրատը գիտնալու համար,
Հանճարին խօսքերը հասկնալու համար.
3—Իմաստութեան կրթութիւնը ընդունելու համար,
Այսինքն արդարութիւնը, դատաստանը և ուղղութիւնը.
4—Միամիտներուն սրամտութիւն տալու համար,
Ո՛ երիտասարդներուն գիտութիւն և հանճար.
5—Իմաստունը թող լսէ ու էջ իմաստութիւնը աւելցնէ,
Ու հանճարեղ մարդը խոհեմութիւն առնայ,
6—Առակը ու *նմանութիւնը հասկնալու համար,
Նաև իմաստուններուն խօսքերը ու անոնց իրթնաբանութիւնները.
7—Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է,
Բայց յիմարները իմաստութիւնը ու կրթութիւնը կ'անարգեն։
8—Որդեակ իմ, քու հօրդ խրատը մտիկ ըրէ,
Ու քու մօրդ †օրէնքը մի մերժեր.
9—Քանդի անոնք քու գլուխդ շնորհաց պսակ,
Եւ քու պարանոցդ մանեակներ պիտի ըլլան։
10—Որդեակ իմ, եթէ մեղաւորները քեզ գթիւ հանել ուզեն,
Դուն անոնց հաւանութիւն մի տար։
11—եթէ ըսեն, Մեզի հետ եկուր,
Արեան համար դարանամուտ ըլլանք,
Անմեղ մարդուն համար առանց պատճառի ծածուկ տեղ սպասենք.
12—Ձանոնք գերեզմանի պէս ողջ ողջ՝
Եւ գուբը իջնողներուն պէս ամբողջ կլլենք.
13—Ամէն թեսակ պատուական ստացուածք գտնենք,
Ու մեր տուները աւարով լեցնենք.
14—Քու վիճակդ մեր մէջ ձգէ,
Ամէնս մէկ քսակ ունենանք։
15—Որդեակ իմ, անոնց հետ ճամբայ մի երթար,
Անոնց շաւիղէն քու ոտքերդ եւս պահէ.
16—Քանդի անոնց ոտքերը չարութեան կը վազեն,
Եւ արիւն թափելու կ'արագանան։
17—Արդարև ամէն թռչունին աչքերուն առջեւ
Պարապ տեղ վարուիր կը լարուի.
18—Բայց անոնք իրենց արեանը համար դարան կը գործեն,
Ո՛ իրենց կեանքին համար ծածուկ տեղ կը սպասեն։
19—Ամէն ագահին ճամբաները այսպէս են.
Ագահութիւնը իրեն անձնասուր եղողները կը մեռցնէ։
20—Իմաստութիւնը դուրսը ե՜ղյո՜ն կ'աղաղակէ,
Ո՛ հրապարակներու մէջ իր ձայնը կուտայ։
21—Անիկա բազմութիւն եղած տեղերուն գլուխը
Ե՛ դռներուն մուտքերուն մէջ կ'աղաղակէ,
Ո՛ քաղաքին մէջ իր խօսքերը կը խօսի ե՜ղ՝ըսե՛.
22—Ով անմիտներ, մինչև ե՞րբ անմտութիւնը պիտի սիրէք,
Մինչև ե՞րբ ծաղր ընողները ծաղր ընելով պիտի զուարճանան,
Ու յիմարները գիտութիւնը ատեն։
23—Իմ յանդիմանութեանս դարձէք.
Ահա իմ հոգիս ձեր վրայ պիտի թափեմ,
Իմ խօսքերս ձեզի պիտի հասկցնեմ։
24—Որովհետև ես կանչեցի, ու դուք չուզեցիք ընել,
Ձեռքս երկնցուցի, ու մարդ ընդդէմ չեղաւ.
25—Հապա իմ բոլոր խրատներս մերժեցիք,
Ես իմ յանդիմանութիւնս չուզեցիք.
26—Ես ալ ձեր թշուառութեանը վրայ պիտի ծիծաղիմ,
Ու ձեր վախը հասնելուն՝ ծաղր պիտի ընեմ.
27—Երբ ձեր վախը հեղեղի պէս հասնի,
Ձեր թշուառութիւնը մրրիկի պէս պատահի,
Ե՛ ձեր վրայ նեղութիւն ու տառապանք գայ,
28—Այն ատեն ինծի պիտի աղաղակեն, ու պատասխան պիտի չտամ.
Զիս պիտի փնտռեն ու պիտի չգտնան գանել.
29—Որովհետև գիտութիւնըատեցին,
Ու Տէրոջը վախը չընտրեցին.
30—Իմ խրատներս չուզեցին,
Ո՛ բոլոր յանդիմանութիւնս անարգեցին.
31—Ուրեմն անոնք իրենց ճամբուն պտուղին պիտի ուտեն,
Ու իրենց խորհուրդներուն պիտի կշտանան,
32—Վասն զի անմիտներուն խաղտիքը զիրենք պիտի մեռցնէ,
Եւ յիմարներուն *անհոգութիւնը զիրենք պիտի կորսնցնէ։
33—Բայց ինծի մտիկ ընողը ապահովութեամբ պիտի բնակի,
Ու չարիքներու վախէն հանդարտ պիտի ըլլայ։

ԳԼ. Բ

Որդեակ իմ, եթէ իմ խօսքերս ընդունիս,
Ու իմ պատուիրանքներս քովդ պահես,
2—Այնպէս որ ականջդ իմաստութեան տաս,
Ո՛ սիրտդ հանճարին բանաս,
3—եթէ դուն իմաստութիւնը †էդէ կանչես,
Եւ քու ձայնդ հանճարին ուղղես,
4—եթէ զանիկա արծաթի պէս փնտռես,
Ու ծածուկ գանձերու պէս խնդրես,
5—Այն ատեն Տէրոջը վախը պիտի հասկնաս,
Եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես.
6—Վասն զի իմաստութիւնը Տէրը կուտայ.
Գիտութիւնը ու հանճարը անոր բերնէն են։
7—Անիկա ուղղներուն համար *փրկութիւն կը պահէ.
Անիկա ուղղութեամբ քալողներուն վահան է,
8—Որպէս զի արդարութեան ճամբաները պաշտպանէ,
Ու իր սուրբերուն ճամբան պահէ։
9—Այն ատեն արդարութիւնը, դատաստանը և ուղղութիւնը,
Ամէն աղէկ ճամբան պիտի հասկնաս։
10—Երբ իմաստութիւնը քու սրտիդ մէջ մտնէ,
Եւ գիտութիւնը քու հոգւոյդ ախորժելի ըլլայ,
11—Խոհեմութիւնը քեզ պիտի պահէ,
Ո՛ հանճարը քեզ պիտի պաշտպանէ.
12—Որպէս զի քեզ չար †ճամբայէն,
Նենգաբեր խօսող մարդէն ազատէ.
13—Անոնք՝ որոնք ուղիղ ճամբան թողուցեր են,
Որպէս զի խաւար ճամբաներու մէջ քալեն.
14—Չարութիւն ընելով կ'ուրախանան,
Ե՛ չարին նենգութիւններովը կը ցնծան.
15—Որոնց ճամբաները ծուռ են,
Ու անոնց ընթացքը խոտորնակ է։
16—Որպէս զի Նաև քեզ ազատէ օտար կնոջմէն,
Շողոքորթութիւն խօսող օտար կնոջմէն.
17—Որ իր երիտասարդութեան բարեկամը կը թողու,
Եւ իր Աստուծոյն ուխտը կը մոռնայ.
18—Քանդի անոր տունը մահուան կը տանի,
Ու անոր շաւիղները՝ մեռելներուն։
19—Անոր գացողները բնաւ չեն գառնար,
Եւ կեանքի ճամբաներուն չեն հասներ։

*Կամ, մեկնութիւնը
†Այլ՝ օրէն, վարժութիւնը
*Կամ, յաղողութիւնը
*Կամ, իմաստութիւն

20—Որպէս զի բարի *ճանապարհ ճամբան երթաս,
Ու արդարներուն շաւիղները պահես։
21—Քանզի ուղիղները երկրի վրայ պիտի բնակին
Եւ կատարեալները անոր մէջ պիտի մնան։
22—Բայց ամբարիշտները երկրէ պիտի կորսուին,
Ու անօրէնները անկէ պիտի փրցուին։

Գլ. Գ

Որդեակ իմ, մի մոռնար իմ օրէնքս,
Հապա քու սիրտդ Իմ պատուիրանքներս պահէ.
2—Վասն զի քեզի երկայն օրեր ու կենդանութեան տարիներ
Եւ յաջողութիւն պիտի աւելցնեն։
3—Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քեզ չլքողնեն.
Զանոնք քու պարանոցիդ վրայ կապէ,
Քու սրտիդ տախտակին վրայ գրէ զանոնք։
4—Այսպէս Աստուծոյ և մարդոց առջև
Շնորհք ու բարի համբաւ պիտի գտնես։
5—Քու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ,
Եւ քու խնամատութեանդ մի վստահիր։
6—Քու ամէն ճամբաներուդ մէջ զանիկա ճանչցիր,
Ու անիկա քու շաւիղներդ պիտի ուղղէ։
7—Դուն քու աչքիդ առջև իմաստուն մի ըլլար.
Տէրոջմէ վախցիր ու չարութենէ հեռացիր։
8—Անիկա քու *ջիղերուդ առողջութիւն,
Եւ քու ոսկորներուդ պարարտութիւն կ'ըլլայ։
9—Տէրոջը պատիւ ըրէ քու տացուածքէդ
Եւ քու բոլոր բերքերուդ երախայրիներէն։
10—Եւ քու չոեմարաններդ առատութիւնով պիտի լեցուին,
Ու հնձաններդ նոր գինին դուրս պիտի թափին։

11—Որդեակ իմ, Տէրոջը խրատը մի անարգեր,
Ու անոր յանդիմանութենէն մի թուլնար.
12—Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ,
Ինչպէս հայր մը իր սիրական զաւակին կ'ընէ։
13—Երանի՛ այն մարդուն որ իմաստութիւն կը գտնէ,
Ու այն մարդուն որ հանճար կը ստանայ։
14—Վասն զի անոր չափը արծաթի չափէն աղէկ է,
Ու անոր արդիւնքը՝ մաքուր ականէն։
15—Անիկա *զոհարներէն պատուական է.
Եւ քու բոլոր ցանկալի բաներդ չեն կրնար անոր հաւասարիլ։
16—Անոր այ ձեռքին մէջ օրերու երկայնութիւն,
Ե՛ ձախ ձեռքին մէջ հարստութիւն ու փառք կայ։
17—Անոր ճամբաները հաճոյական ճամբաներ են,
Եւ անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն են։
18—Անիկա իրեն յարողներուն կենաց ծառ է.
Ու զինք բռնողները երջանիկ կ'ըլլան։
19—Տէրը իմաստութիւնով հիմնեց երկիրը,
Ե՛ հանճարով հաստատեց երկինքը։
20—Անոր գիտութիւնովը անդունդները բզը կը պատռին,
Ու ամպերը ցօղ կը կաթեցնեն։
21—Որդեակ իմ, ասոնք քու աչքերուդ առջևէն չերթան։
Իմաստութիւնը ու խոհեմութիւնը †ուշ պահէ.
22—Եւ քու հոգւոյդ կեանք՝
Ու քու պարանոցիդ †զարդ ըլլան։
23—Այն ատեն ճամբադ ապահովութեամբ պիտի քալես,
Եւ քու ոտքդ պիտի չսայթի։
24—Եթէ պառկիս՝ պիտի չվախնաս,
Ու եթէ քնանաս՝ քունդ անոյշ պիտի ըլլայ։

*Կամ, պղտիկ

*Կամ, բաւականէն
†Եբր. չնորհք

25—Պիտի չվախնաս յանկարծահաս վախէն,
Ոչ ալ ամբարիշտներուն *կորուստէն՝ երբ գայ.
26—Վասն զի քու յոյսդ Տէրը պիտի ըլլայ,
Եւ քու ոտքդ պիտի պահէ, որպէս զի չբռնուիս։
27—Երբ ձեռքդ աղէկութիւն ընել կու գայ,
†Կարօտ եղողէն՝ մի արգիլեր զանիկա։
28—Քու դրացիիդ բնաւ մի ըսեր, Գնա ու դարձեալ եկուր,
Եւ վաղը կու տամ, երբ քու քովդ կայ։
29—Քու դրացիիդ դէմ չարութիւն մի մտածեր,
Քանի որ անիկա վստահութեամբ քեզի հետ կը բնակի։
30—Առանց պատճառի մարդու հետ մի վիճիր,
Երբ անիկա քեզի չարութիւն մը ըրած չէ։
31—Բռնաւոր մարդուն մի նախանձիր,
Ու անոր ճամբաները բնաւ մի ընտրեր.
32—Վասն զի ծուռ մարդը Տէրոջը առջև պիղծ է.
Բայց Անոր ընտրութիւնը արդարներուն հետ է։
33—Անբարիչտ մարդուն տանը մէջ Տէրոջը անէծքը կայ.
Բայց արդարներուն բնակարանը Անիկա կ'օրհնէ։
34—Ծիւրտի Անիկա ծաղր ընողները ծաղր կ'ընէ.
Բայց խոնարհներուն շնորհք կու տայ։
35—Իմաստունները փառք պիտի ժառանգեն,
Բայց յիմարներուն բարձրանալը անարգանք պիտի ըլլայ։

Գլ. Դ

Որդիք, յէր հօրը խրատը լսեցէք,
Ու մտիկ ըրէք որպէս զի իմաստութիւնը ճանչնաք։
2—Վասն զի ձեզի աղէկ կըթութիւն կու տամ.

*Կամ, արհատանքէն
†Եբր. Անոր ակռաներէն

իմ օրէնքս մի թողուք։
3—Քանզի ես իմ հօրս տգան էի,
Փափուկ ու սիրելի՝ իմ մօրս առջև։
4—Անիկա ինծի կը սորվեցնէր ու կ'ըսէր,
Քու սիրտդ իմ խօսքերս պահէ ու ապրէ.
Իմ պատուիրանքներս պահէ ու ապրէ.
5—Իմաստութիւն ստացիր, խոհեմութիւն ստացիր.
Մի մոռնար, ու իմ բերնիս խօսքերէն մի խոտորիր։
6—Զանիկա մի թողուր, ու անիկա քեզ պիտի պահէ.
Զանիկա սիրէ, ու անիկա քեզ պիտի պաշտպանէ։
7—Ամէն բանէն գլխաւոր իմաստութիւնն է, իմաստութիւն ստացիր։
Ու ամէն ստացած բաներուդ հետ խոհեմութիւն ստացիր։
8—Զանիկա մեծարէ, ու անիկա քեզ պիտի բարձրացնէ.
Եթէ զանիկա գրկես, քեզ պիտի պատուէ։
9—Անիկա քու գլխուդ շնորհաց զարդ պիտի տայ,
Քեզի փառաց պսակ պիտի պարգեւէ։
10—Մտիկ ըրէ, որդեակ իմ, ու իմ խօսքերս ընդունէ.
Եւ քու կեանքիդ տարիները պիտի չատնան։
11—Քեզի իմաստութեան ճամբան մէջ ցոյց կու տամ.
Քեզ ուղղութեան շաւիղներուն մէջ պտրտցուցի,
12—Որ երբ դուն քալես, առջիդ փայլերը չնեղնան,
Ու վազելու ատենդ չսայթիս։
13—Ամուր բռնէ խրատը ու բնաւ մի թողուր.
Զանիկա պահէ, վասն զի քու կեանքդ անիկա է։
14—Ամբարիշտներուն ճամբան մի երթար,
Ու չարերուն ճամբան մէջ մի քալեր։
15—Անկէ զգուշացիր, անոր քովէն մի անցնիր,
Անկէ խոտորէ ու անցիր։
16—Վասն զի անոնք մինչև որ չարութիւն չընեն՝ չեն քնանար.
Ու եթէ հնչը չկործանեն՝ քուներնին կը փախչի։

17—Բանդի անոնք ամբարչաւութեան հացը կ'ուտեն,
Ու անիրաւութեան գինին կը խմեն։
18—Բայց արգարներուն ճամբան ծագող լոյսին պէս է,
Որ երթալով կը լուսաւորուի, մինչև կատարեալ օր ըլլայ։
19—Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է,
Ու չեն գիտեր թէ ի՛նչ բանով իրենց տապը պիտի սահի։
20—Որդեակ իմ, մտիկ ըրէ իմ խօսքերս,
Ու ականջդիդ իմ խօսքերուս տուր։
21—Անոնք քու աչքերուդ առջեւէն չերթան,
Զանոնք քու սրտիդ մէջ պահէ։
22—Վասն զի զանոնք գտնողներուն անոնք կեանք են,
Եւ անոնց բոլոր մարմնին՝ բժշկութիւն։
23—Ամէն զգուշութենով քու սիրտդ պահէ,
Քանի որ կեանքի *աղբիւրները անկէ են։
24—Ծուռ բերանը քեզմէ մէկդի ըրէ,
Ու անիրաւ շրթունքները քեզմէ հեռացուր։
25—Քու աչքերդ ուղիղ նային,
Ու աջեւ ձախն ալ քու կողմէդ մի խոտորիր,
Ոտքդ չարութենէ դարձուր։

Գլ. Ե

Որդեակ իմ, մտիկ ըրէ իմաստութեանս,
Ե՛ւ քու ականջդ իմ հանճարիս տուր,
2—Որպէս զի խոհեմութիւն պահես,
Ու քու շրթունքներդ գիտութիւն պահեն։
3—Վասն զի օտար կնոջ շրթունքներէն խորխոջ մեղր կը կաթի,
Ու անոր փիքը իւղէն կակուղ է.
4—Բայց անոր վախճանը օշինդրի պէս դառն՝
Ու երկասայրի սուրի պէս սրած է։
5—Անոր ոտքերը մահուան կ'իջնեն,
Ու անոր քայլերը դժոխք կը հասնին։
6—Անոր ճամբաները փոփոխական են,
ու չես կրնար ըմբռնել պիտանալ,
Որ չըլլայ թէ կեանքի հոտկան մտածես։
7—Ես հիմա, ով որդեակ, ինծի մտիկ ըրէք,
Ու իմ բերնիս խօսքերէն մի խոտորիք
8—Այն կնոջմէն ճամրադ հեռացուր,
Ու անոր տանը դրանը մի մտանես
9—Զրլլայ որ քու փառքդ ուրիշներու
Եւ տարիներդ անողորմ մարդու տաս.
10—Զրլլայ որ օտարները քու զօրութենէդ կշտանան,
Ու քու վաստակդ օտարներուն տունը մնայ.
11—Ու քու վերջին աստիճդ չհառաչես,
Երբ քու մարմինդ ու անդամներդ մաշին,
12—Ու չըսես, ես ի՜նչպէս խրատը ատեցի,
Ու իմ սիրտս յանդիմանութիւնը անարգեց.
13—Եւ իմ ուսուցիչներուս խօսքը մտիկ չըրի,
Ու իմ ականջս վարժապետներուն չսոսի.
14—Ժողովքի ու ժողովուրդի մէջ
Գրեթէ ամէն դէ՜մ թշուառութեան հանդիպեցայ։
15—Դուն քու ջրափայտէդ ջուր խմէ,
Եւ քու կոնդիդ մէջ վազող ջուրէն,
16—Որ աղբիւրներդ դուրսը սարսափուին,
Լճակներու ջուրերու վտակները հրապարակներուն մէջ։
17—Անոնք միայն քուկդ ըլլան,
Ու ոչ թէ քուկդ և օտարներուն։
18—Որ աղբիւրդ օրհնեալ ըլլայ.
Եւ քու երիտասարդութեանդ կնոջը հետ ուրախ եղիր։
19—Անիկա *էգ սիրելի եղնիկի պէս,
Եւ շնորհալի այծեամի պէս ըլլայ.
Ամէն ատեն անոր սարիքները քեզ կշտացնեն,
Ու միշտ անոր սիրովը գինեպուր։
20—Եւ ինչո՞ւ, որդեակ իմ, դուն օտար կնոջ մը *էրովը գինեպուր,
Ու օտար կնոջ ծոցը գրկես։
21—Վասն զի մարդուն ճամբաները Տէրոջը աչքերուն առջեւ են,

Ու անոր ամէն քայլերը Ի՛նք կը կշռէ։
22—Զարագործը իր անօրէնութիւններէն պիտի բռնեն.
Ու անիկա իր մեղքին չուաններովը պիտի բռնուի։
23—Անիկա առանց խրատի պիտի մեռնի,
Ու իր մեծ յիմարութիւնովը պիտի մոլորի։

Գլ. Զ

Որդեակ իմ, եթէ քու բարեկամիդ համար երաշխաւոր եղար,
Կա՛մ օտար մարդու համար քու ձեռքդ տուիր,
2—Քու բերնիդ խօսքերովը որոգայթը ինկար,
Բերնիդ խօսքերովը բռնուեցար.
3—Որդեակ իմ, չատով այսպէս ըրէ որպէս զի ազատիս.
Որովհետև դուն քու բարեկամիդ ձեռքը մտար,
Գնա քու բարեկամիդ խոնարհէ
Ու զանիկա թախանձէ.
4—Աչքերուդ քուն՝
Ու արտեւանունքներուդ նիրհում մի տար.
5—Ինչպէս այծեամը որսորդէն ձեռքէն,
Կամ թռչունը հաւորսին ձեռքէն ի՛նքզինքը ազատէ։
6—Ով ծոյլ, մրջիւնին գնա,
Անոր ճամբաները տես և իմաստուն եղիր։
7—Վասն զի անիկա իշխան,
Ոստիկան կամ տիրող չունի,
8—Իր կերակուրը ամառուընէ կը պատրաստէ.
Իր ուտելիքը հունձքի ատեն կը ժողվէ։
9—Ով ծոյլ, մինչև ե՞րբ կը պառկիս,
Քունեդ ե՞րբ պիտի արթննաս։
10—Քիչ մը քնանաս, քիչ մը նիրհես,
Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու համար։
11—Այն ատեն քու աղքատութիւնդ ճամբորդի մը պէս պիտի գայ,
Ու կարօտութիւնդ՝ սպառազինեալ մարդու պէս։
12—Անօրէնն ու չար մարդը
Ծուռ բերնով կը շարժի.
13—Անիկա իր աչքերովը ակնարկութիւն կ'ընէ.
Ոտքերովը կը խօսի,
Ու մատներովը բան կը սորվեցնէ.
14—Անոր սրտին մէջ ծուութիւն կայ,
Միշտ չարութիւն կը հնարէ — կռիւներ կը հանէ.
15—Ասոր համար անոր կորուստը յանկարծ պիտի գայ.
Անիկա յանկարծ պիտի կտորուի, ու անոր դարման պիտի չգտնուի։
16—Տէրը այս վեց բանէն կը զզուի,
Ու անոր հոգւոյն առջեւ եօթը բան պիղծ է.
17—Ամբարտաւան աչքեր, սուտախօս լեզու
Եւ անմեղ արիւն թափող ձեռքեր,
18—Չար խորհուրդներ հնարող սիրտ,
Չարութիւն ընելու համար չատ վազող ոտքեր.
19—Սուտ խօսող աներես վկայ,
Ու եղբայրներու մէջ կռիւներ ցանող մարդ։
20—Որդեակ իմ, քու հօրդ պատուիրանքը պահէ,
Եւ քու մօրդ օրէնքը մի մոռնար։
21—Զանոնք միշտ քու սրտիդ վրայ կապէ,
Զանոնք քու պարանոցդ կախէ։
22—Քալած ատենդ անոնք քեզի առաջնորդութիւն ընեն,
Քնացած ատենդ քեզ պահպանեն,
Ու արթնցած ատենդ քեզի հետ խօսակցին։
23—Քանզի պատուիրանքը ճրագ՝ ու օրէնքը լոյս է,
Եւ խրատին յանդիմանութիւնները կեանքի ճամբայ են.
24—Որպէս զի քեզ գէշ կնոջմէն,
Օտար կնոջ շողոքորթող լեզուն պահէ։
25—Սրտիդ մէջ անոր գեղեցկութիւնը մի ցանկար.
Եւ քեզ իր արտեւանունքներովը չբռնէ։
26—Վասն զի պոռնիկ կնոջ պատճառաւ Մ՛ըտ մինչև պատառ մը հացի կ'իյնայ։
Եւ ընդոծղ առնակինը պատուական հոգին կ'որսայ։
27—Հնա՞ր է որ մէկը իր ծոցը կրակ դնէ,
Ու հանդերձները չայրին։

28—Հնաոք է որ մեկը կրակի կայծերու վրայ քալէ,
Ու անոր ոտքերը չայրին։
29—Ասոր պէս է իր դրացին կնոջը քով գացողն ալ.
Ով որ անոր դպչի՝ անմեղ չըլլար։
30—Գողը կթէ անօթութեան համար
ու իր փորը կշտացնելու համար գողութիւն ընէ,
Զին քամահրեր չեն՝։
31—Սակայն եթէ գանուի, եօթնապատիկ կը հատուցանէ,
իր ամբը բոլոր ինչքը կու տայ։
32—Կնոջ հետ չնութիւն ընողին խելքը պակաս է.
Այս բանը ընողը իր հոգին կը կորնցնէ։
33—Անկա վէրք ու անարգանք կը գտնէ,
Ու անոր նախատինքը անջնջելի է։
34—Քանզի նախանձը երկնքը կատաղութիւնն է,
Ու անկա վրէժխնդրութեան օրը չխնայելեր.
35—Անկա բնաւ մէկ փրկանքի չնայիր,
կաշառք ալ չատցնելու բլլաս՝ անկա չհաճիր։

Գլ. է

Որդեակ իմ, պահէ իմ խօսքերս,
Ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ։
2—Իմ պատուիրանքներս պահէ որպէս զի ապրիս,
Ու իմ օրէնքս քու աչքերուդ բիբին պէս դնէ։
3—Զանոնք մատներուդ վրայ կապէ,
Զանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ։
4—Իմաստութեան ըսէ, Դուն իմ քոյրս ես.
Ու խոհեմութեան՝ Զանօթ կանչէ,
5—Որպէս զի քեզ օտար կնոջմէն,
Շողոքորթութեամբ խօսող օտար կնոջմէն, պահեն։
6—Վասն զի իմ տանս պատուհանէն,
իմ վանդակէս, նայեցայ։
7—Ես անմիտներուն մէջ տեսայ,
Երիտասարդներուն մէջ պակասամիտ պատանի մը գտայ,
8—Որ փողոցին մէջ այն կնոջ դռնէն անկիւնին քովէն կ'անցնէր,
Ու անոր տանը ճամբան բռնեց,
9—երբ իրիկուն եղաւ, օրը տարաժամացաւ
Ու գիշերուան մութը սկսաւ.
10—Ես ահա անոր առջև կին մը ելաւ,
Անիկա պոռնիկի հերպարանք ու նենգասիրտ սիրտ մը ունէր։
11—Անիկա ազդակող ու անզգամ էր,
Ու անոր ոտքերը իր տանը մէջ չէին կրնար։
12—երբեմն դուրսը, երբեմն հրապարակներուը,
Ես ամէն անկիւնի քով դարանամուտ կ'ըլլար։
13—Զանիկա բռնեց համբուրեց,
Ու լիրբ երեսով անոր բսաւ,
14—Իմ քովս խաղաղութեան զոհեր կան.
Ես այսօր իմ ուխտերս կատարեցի.
15—Անոր համար ելայ քեզ դիմաւորելու,
Քու երեսդ փնտռելու, ու գտայ։
16—Իմ անկողինս ծածկոցներով զարդարեր եմ,
Եգիպտոսի ծաղկանկար բեհեզով.
17—Անկողինս վրայ զմուռս,
Հալուճ ու կինամոն ցաներ եմ.
18—Եկուր մինչև առտու սիրով զուարճանանք,
Ու ցանկութիւններով զբօսնուինք.
19—Վասն զի այրս տունը չէ,
Անկա հեռու ճամբայ գնաց.
20—Սաուիկ քսակը իրեն հետ առաւ,
Ես Լուսնի լրման՝ օրը իր տունը պիտի դառնայ։
21—Անոնք իր շատ խօսքերովը զանիկա հրապուրեց,
Ու իր շրթունքներուն չղոքդրթութիւնովը զանիկա ստիպեց։
22—Ան ալ չիտակ կնոջ նմուէն,
Սպանդանոցը գացող արջառի պէս,
Պատժուելու ճօտդ կապուած յիմարի մը պէս կ'երթայ,
23—Մինչև որ նետը անոր լեարդը ծակէ.
Ինչպէս թռչուն մը արագրալով դէպ ի ծուղակը կ'երթայ,
Ու չգիտեր որ անկա իր հոգւոյն համար լարուած է։

---

*Կամ, սոնամխութեան որոշուած

24—Եւ հիմա, ով որդիք, ինծի մտիկ ըրէք,
Ու իմ բերնոս խօսքերուն ականջ դրէք։
25—Քու սիրտդ անոր ճամբաներուն չխառնուի,
Ես անոր շաւիղներուն մէջ չմոլորիս.
26—Վասն զի անիկա շատերը խոցոտեց ու կործանեց,
Ու անոր բոլոր մեռցուցած մարդիկը զօրաւոր էին։
27—Անոր տունը դժոխքին ճամբաներն է,
Անոնք մահուան ներսերուները կ'իջնեն։

Գլ. Ը

Ահա իմաստութիւնը կը կանչէ,
Ու խոհեմութիւնը իր ձայնը կու տայ։
2—Անկա բարձր տեղերու գլուխ, ճամբու վրայ
Ես՝ շիտկներու մէջ կը կայնի։
3—Անկա դռներուն քով, քաղաքնեբուն բերանը
Ո՛ դռներուն մուտքը աղաղակելով կ՚ըսէ,
4—Ով մարդիկ, ձեզի կը կանչեմ.
Ես իմ ձայնս մարդոց որդիներուն է։
5—Ով ապիհներ, իմաստութիւն սորվեցէք.
Ով անմիտներ, խելացով սիրտ ունեցէք։
6—Լսեցէք, վասն զի ազնիւ բաներ պիտի խօսիմ,
Ու իմ շրթունքներս պիտի բանամ ուղիղ բաներ խօսելու համար։
7—Քանզի իմ բերանս ճշմարտութիւն պիտի խօսի,
Բայց իմ շրթունքս ամբարշտութենէ կը զզուի։
8—Բերնիս բոլոր խօսքերը արդարութեամբ են,
Ես անոնց մէջ խոտորնակ ու ծուռ բան չկայ։
9—Անոնք ալ հասկցողին ուղիղ են,
Ու գիտութիւն գտնողներուն շիտակ են։
10—Իմ խրատս առէք, և ոչ թէ արծաթ.
Ու ընտիր ոսկիէն աւելի գիտութիւնը ընդունեցէք։
11—Վասն զի իմաստութիւնը գոհարներէն աղեկ է,
Ես բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր հաւասարիլ։
12—Ես իմաստութիւնս զգամտութեան հետ կը բնակիմ,
Ես ճարպարութեանց գիտութիւնը կը գտնեմ։
13—Տէրոջը վախը չարութիւնը ատելն է.
Ես հպարտութիւնը, սմբարտաւանութիւնը, չար ճամբան
Ու նենգաւոր բերանը կ'ատեմ.
14—Խորհուրդը և խոհականութիւնը իմն են.
Ես եմ հանճարը, ու զօրութիւնը իմն է։
15—Թագաւորները ինծմով կը թագաւորեն,
Ու նախարարները էնձմով արդարութեան կանոնները կը դնեն,
16—Ինծմով կ'իշխեն իշխանները,
Ազնուականները՝ ո՛ երկրի բոլոր դատաւորները,
17—Ես կը սիրեմ զիս սիրողները,
Ես զիս կանուխ փնտռողները զիս կը գտնեն։
18—Իմ քովս հարստութիւն ու փառք,
Ընտիր ստացուածք և արդարութիւն կայ։
19—Իմ պտուղս ոսկիէն ու մաքուր ոսկիէն,
Ես իմ արդիւնքս ընտիր արծաթէն աղեկ է։
20—Ես արդարութեան ճամբուն մէջ,
Իրաւունքի շաւիղներուն մէջ կը քալեմ,
21—Որպէս զի զիս սիրողներուն ստացուածք ժառանգեցնեմ՝.
Ու անոնց գանձերը պիտի լեցնեմ։
22—Տէրը իր ճամբուն սկիզբը,
Իր վաղեմի գործերէն առաջ, զիս ստացեր էր.
23—Ես յաւաքմանէ,
Երկրի սկիզբէն առաջ, †օծուեցայ,
24—Անդունդները չեղած,
Առատ ջուրերուն աղբիւրները չեղած, ես ծնած էի,
25—Լեռները չտեղաւորուած,
Բլուրներէն առաջ ես ծնած էի.

---

*Կամ, Զիս սիրողներուն ժառանգութիւն տալու կ'որոշեմ ունիմ
†Կամ, հաստատուեցայ

26—Տակաւին երկիրը ու բաց տեղերը
Եւ աշխարհս հողերուն *առաջինը չըս-
տեղծած,
27—երբ երկինքները կը պատրաստէր,
Ու անդունդներուն երեսին վրայ կա-
մար կը ձգէր, ես հոն էի։
28—երբ վերի ամպերը կ'ուժգնցնէր,
Եւ անդունդներուն աղբիւրները կը
հաստատէր,
29—երբ ծովուն կանոն կը դնէր,
Որպէս զի ջուրերը իր հրամանէն դուրս
չելլեն,
Ո՞ երբ երկրի հիմերը կը ձգէր,
30—Ա՛յն ատեն ես անոր քով ճարտա-
րապետ էի,
Եւ ամէն օր Ն՚որ զուարճութիւնն էի,
Ո՞ միշտ անոր առջև կ'ուրախանայի՝
31—ես աշխարհի մէջ — անոր երկրին
վրայ կ'ուրախանայի,
Ու իմ զուարճութիւնս մարդոց որդի-
ներուն հետ էր։
32—Ես հիմա, ով որդիք, լսեցէք մտիկ
ըրէք.
Վասն զի իմ ճամբաներս պահողները
երջանիկ կ'ըլլան։
33—Խրատ մտիկ ըրէք ու իմաստուն
եղէք,
Ու չ՚ունե՛ք մի մերժէք։
34—երանի՛ այն մարդուն որ ինծի
մտիկ կ'ընէ,
Ամէն օր իմ դռներուս քով կը հսկէ,
Եւ իմ դրանդիքներս կը դիտէ։
35—Վասն զի ինծ գտնողը կեանք կը
գտնէ,
Ու Տէրոջմէ շնորհք կը առնայ։
36—Բայց ինծի դէմ մեղանչողը իր
հոգւոյն անվրաւութիւն կ'ընէ.
Բոլոր ինծ ատողները մահը կը սիրեն։

Գլ. Թ

Իմաստութիւնը իր տունը շինեց,
Ո՞ իր եօթը սիւները †կանգնեց։
2—Իր անասունները մորթեց, իր գի-
նին էխառնեց
Ու իր սեղանը պատրաստեց։
3—Անոնք իր աղախինները ղրկեց,
Ո՞ քաղաքին բարձր տեղերուն վրայ
կը կանչէ.
4—Ով որ պարզամիտ է՝ թող հոս գայ։
Ու պակասամիտ եղողին կ'ըսէ,
5—եկէ՛ք իմ հացէս կերէ՛ք,
Ու *խառնած գինիէս խմեցէ՛ք։
6—Ծիմարութիւնը թողուցէ՛ք, որպէս
զի ապրի՛ք,
Ու խոհեմութեան ճամբուն մէջ քա-
լեցէ՛ք։
7—Ծաղր ընողը յանդիմանողը երեն
անարգանք,
Ու ամբարիշտը խրատողը իրեն արատ կը
վաստկի։
8—Ծաղր ընողը մի յանդիմաներ, որ
չըլլայ թէ քեզի թշնամի ըլլայ.
Իմաստունը յանդիմանէ, ու քեզ պիտի
սիրէ։
9—Իմաստունին էջ՚ոք տուր, և աւելի
իմաստուն պիտի ըլլայ.
Արդար մարդուն սորվեցուր, ու էջ ի-
մաստութիւնը պիտի աւելցնէ։
10—Իմաստութեան սկիզբը Տէրոջմէ
վախն է,
Ու †Ամենասրբին գիտութիւնը հաս-
կայ է։
11—Վասն զի քու օրերդ ինծմով պիտի
շատնան,
Եւ քեզի կեանքի տարիներ պիտի աւել-
նան։
12—եթէ իմաստուն ես, քեզի իմաս-
տուն ես,
Ու եթէ ծաղր ընող ես, Ն՚ոյնը դո՛ւքդ
միայն դուն պիտի կրես։
13—Անզգամ կինը ազմկակոչ կ'ըլլայ,
Անիկա անմիտ է ու բան մը չգիտեր։
14—Ես քաղաքին բարձր տեղերը,
Իր տանը դուռը աթոռի վրայ կը նստի,
15—Որպէս զի իրենց ճամբան չհասկ
գացող
Անցուդարձերը կանչէ,
16—Ով որ պարզամիտ է, թող հոս
գայ։
Ու պակասամիտ եղողին կ'ըսէ,
17—Գողցուած ջուրերը անոյշ են,
Ես գաղտուկ հացը համով կ'ըլլայ։
18—Բայց անիկա չգիտեր որ այն տեղը
մեռելներ կան,

*Կամ, բարձր տեղերը
†Եբր. տաչէց ‡Կամ, լեցուց

*Կամ, լեցուցած †Կամ, սուրբերուն

Ո՞ անոր հրաւիրած մարդիկը գժոխքին
անդունդներուն մէջ են։

Գլ. Ժ

Սողոմոնի առակները։

Իմաստուն տղան իր հայրը կ'ուրա-
խացնէ.
Բայց անմիտ տղան իր մօրը տրտմու-
թիւն է։
2—Անօրէնութեան գանձերը օգուտ չեն
ըներ.
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազա-
տէ։
3—Տէրը արդարին հոգին անօթի չթո-
ղուր.
Բայց ամբարիշտներուն ցանկութիւնը կը
խափանէ։
4—Ծոյլ ձեռքով բանողը աղքատ կ'ըլ-
լայ.
Բայց ժիր մարդոց ձեռքը հարստու-
թիւն կը բերէ։
5—Ան որ ամառը կը ժողվէ, խոհեմ
տղայ է.
Հունձքի ատեն քնացողը ամօթի պատ-
ճառ եղող տղայ է։
6—Արդարին գլխուն վրայ օրհնութիւն-
ներ կան.
Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բե-
րանը կը գոցէ։
7—Արդարներուն յիշատակը օրհնեալ
կ'ըլլայ.
Բայց ամբարիշտներուն անունը կը վռի։
8—Իմաստուն սիրտ ունեցողը պատուի-
րանքները կը բանէ.
Բայց յիմար շրթունք ունեցողը կը կոր-
ծանի։
9—Կատարելութեամբ քալողը ապահո-
վութեամբ կը քալէ.
Բայց իր ճամբաները ծռողը պիտի ճանչ-
ցուի։
10—Աչքով ակնարկութիւն ընողը նե-
ղութիւն կու տայ.
Ու յիմար շրթունք ունեցողը կը կոր-
ծանի։
11—Արդարին բերանը կեանքի աղ-
բիւր է.
Բայց բռնութիւնը ամբարիշտներուն բե-
րանը կը գոցէ։
12—Ատելութիւնը կռիւներ կը հանէ.
Բայց սէրը ամէն յանցանքները կը
ծածկէ։
13—Իմաստունին շրթունքներուն վրայ
իմաստութիւն կը գտնուի.
Բայց պակասամիտ եղողին կռնակին հա-
մար գաւազան պէտ է։
14—Իմաստունները գիտութիւն կը
գանձեն.
Բայց յիմարին բերանը կործանման
մօտ է։
15—Հարուստին ճոխութիւնը իր ամուր
քաղաքն է.
Բայց տնանկներուն աղքատութիւնը ի-
րենց կործանումն է։
16—Արդարին գործը կեանքի համար է.
Իսկ ամբարիշտին արդիւնքը մեղքի հա-
մար է։
17—Խրատ պահողը կեանքի ճամբուն
մէջ է.
Բայց յանդիմանութիւնը մերժողը կը
մոլորի։
18—Ատելութիւնը ծածկողը առասիս
շրթունքներ ունի,
Ու բամբասանք հանողը անմիտ է։
19—Շատ խօսքերու մէջ յանցանք պա-
կաս չէ.
Բայց իր շրթունքները զսպողը խելա-
ցի է։
20—Արդարին լեզուն ընտիր արծաթ է.
Ամբարիշտներուն սիրտը փչէ արժէք
ունի։
21—Արդարին շրթունքները շատերուն
առաջնորդութիւն կ'ընեն.
Բայց յիմարները խելքի պակասութենէ
կը մեռնին։
22—Տէրոջը օրհնութիւնն է որ հարըս-
տութիւն կու տայ,
Ու անոր հետ տրտմութիւն չխառներ։
23—Զարութիւն ընելը յիմարին զբօ-
սանքն է.
Բայց խոհեմ մարդուն՝ իմաստութիւն։
24—Զար մարդուն վախցած բանը իր
վրայ կու գայ.
Բայց արդարներուն փափաքը կը լեցուի։
25—Մրրիկը անցնելուն պէս ամբարիշ-
տը բնաջինջ կ'ըլլայ.
Բայց արդարը յաւիտենական հիմ ունի։
26—Ինչպէս քացախը ատամներուն եւ
ծուխը աչքերուն,

Ծայն ու ինք զրկողներուն այնպես է։
27—Տէրոջը վախը օրեր կ'աւելցնէ.
Բայց ամբարիշտներուն տարիները պիտի կարճնան։
28—Արդարներուն յոյսը ուրախութիւն է.
Բայց ամբարիշտներուն ակնկալութիւնը պիտի կորսուի։
29—Տէրոջը ճամբան արդարին զօրութիւն է.
Բայց անօրէնութիւն գործողներուն կործանումի է.
30—Արդարը պիտի չսասանի յաւիտեան.
Բայց ամբարիշտները երկրի վրայ պիտի չբնակին։
31—Արդարին բերանը իմաստութիւն կը բղխէ.
Բայց նենգաւոր լեզուն պիտի կորսուի։
32—Արդարին շրթունքները հաճոյ բանը գիտեն,
Բայց ամբարիշտներուն բերանը՝ դիւրաննենգութիւն։

Գլ. ԺԱ

Ընդդութեան կշիռքը Տէրոջը տաքին պիղծ է.
Բայց ուղիղ կշռոյքը անոր հաճոյ է։
2—Երբ հպարտութիւնը գայ, անարգութիւնն ալ կու գայ.
Բայց խոնարհութիւնը իմաստութիւնն հետ է։
3—Ուղիղներուն շիտակութիւնը անոնց առաջնորդութիւն կ'ընէ.
Բայց անօրէններուն ծռութիւնը զանոնք բնաջինջ կ'ընէ։
4—Բարկութեան օրը հարստութիւնը օգուտ մը չընէր.
Բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ։
5—Կատարեալներուն արդարութիւնը անոնց ճամբան կը շիտակէ.
Բայց անիրաւը իր անիրաւութիւնովը կ'իյնայ։
6—Ուղիղներուն արդարութիւնը զանոնք կ'ազատէ.
Բայց անօրէնները իրենց *չարութեանը մէջ կը բռնուին։
7—Երբ չար մարդը մեռնի, անոր ակնկալութիւնը կը կորսուի.
Եւ անօրէններուն յոյսը կը կորսուի։
8—Արդարը նեղութենէ կ'ազատի,
Ու անոր տեղ ամբարիշտը կ'երթայ։
9—Կեղծաւորը բերնովը իր դրացին կը կործանէ.
Բայց արդարները գիտութեամբ կ'ազատին։
10—Արդարներուն յաջողութեանը վրայ քաղաքը կ'ուրախանայ.
Ու երբ չարերը կորսուին, ցնծութեան ձայն կը լսուի։
11—Ուղիղներուն օրհնութիւնովը քաղաքը կը բարձրանայ.
Բայց ամբարիշտներուն բերնովը կը կործանի։
12—Գիտասամիտ եղողը իր դրացին կ'արհամարհէ.
Բայց խոհեմ մարդը կը լռէ։
13—Բանսարկութեան պտրտողը գաղտնիքը կը յայտնէ.
Բայց հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ։
14—Ժողովուրդը առանց *խոհականութեան կը կործանի.
Բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւն կ'ըլլայ։
15—Օտարականին երաշխաւոր եղողը անշուշտ չարիքի կը հանդիպի.
Բայց երաշխաւորութիւնը ատողը ապահով է։
16—Շնորհալի կինը պատիւ կը ստանայ.
Եւ †զօրաւոր մարդիկ հարստութիւն կը ստանան։
17—Ողորմած մարդը իր անձին ագիւ կ'ընէ.
Բայց անողորմ մարդը իր մարմնին նեղութիւն կու տայ։
18—Չար մարդը սնոտի գործ կը գործէ.
Բայց արդարութիւն ցանողը ապահով վարձք կ'ունենայ։
19—Ինչպէս արդարութիւնը կեանքի կ'առնէ ճշմարիտը,
Նոյնպէս չարութեան հետեւողը իր մահուանը կ'երթայ։
20—Ծուռ սիրտ ունեցողները Տէրոջը տաքին պիղծ են.

*Կամ, ցանկութեանը

Բայց ուղիղ ճամբայ քալողները անոր հաճոյ են։
21—Անօրէնները *ի՛նչ ձեռք ձեռքի տուած անպատիժ պիտի չմնան.
Բայց արդարներուն սերունդը պիտի ազատի։
22—Գեղեցիկ կինը՝ որ խոհեմութիւն չունի,
Խոզին քիթը ոսկի օղակին նման է։
23—Արդարներուն ցանկութիւնը միայն բարութիւն է.
Բայց անօրէններուն ակնկալութիւնը բարկութիւն պիտի ըլլայ։
24—Մէկը կայ որ իր ապրանքէը ցրուելով կ'աւելցնէ,
Ու մէկը կայ որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի։
25—Բարերար անձը պիտի գիրնայ.
Եւ ան որ կ'ոռոգէ՝ ինքն ալ պիտի ոռոգուի։
26—Ցորենը պահողին՝ ժողովուրդը անէծք կու տայ.
Հայց զանիկա ծախողին գլխուն վրայ օրհնութիւն կ'ըլլայ։
27—Աղէկութեան համար փոյթ ունեցողը շնորհք կը ստանայ.
Բայց ով որ գէշութիւն կը փնտռէ, անիկա իրեն պիտի հանդիպի։
28—Իր հարստութեանը վրայ յոյսը դնողը պիտի իյնայ.
Բայց արդարները կանաչ տերեւի պէս պիտի ծաղկին։
29—Իր տանը նեղութիւն տուողը հով պիտի ժառանգէ.
Ու յիմարը իմաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ։
30—Արդարին պտուղը կենաց ծառ է.
Եւ հոգիներ վաստակողը իմաստուն է։
31—Ահա արդարը երկրի վրայ պատիժ կը կրէ.
Ո՛րքա՜ն մեղաւորը ու մեղաւորը։

Գլ. ԺԲ

Խրատ սիրողը գիտութիւն կը սիրէ,
Ու յանդիմանութիւն ատողը անմիտ է։

*Կամ, ազգէ ազգ

2—Բարի մարդը Տէրոջմէ շնորհք կը ստանայ.
Բայց Ա՛ստուածէ նենգաւոր մարդը պիտի դատապարտէ։
3—Մարդը անիրաւութեամբ հաստատութիւն չունենար.
Բայց արդարներուն արմատը չտարժիր։
4—Առաքինի կինը իր երկանը պսակ է.
Բայց նախատինք բերողը անոր ոսկորներուն մէջի փտութեանը պէս է։
5—Արդարներուն մտածութիւնները իրաւունք են.
Բայց ամբարիշտներուն խորհուրդները նենգութիւն են։
6—Ամբարիշտներուն խօսքերը արիւնի համար դարան են.
Բայց ուղիղներուն բերանը զերենք կ'ազատէ։
7—Ամբարիշտները կը կործանին ու բնաջինջ կ'ըլլան.
Բայց արդարներուն տունը կը հաստատուի։
8—Մարդը իր խոհեմութեանը չափ կը գովուի.
Բայց ծուռ սիրտ ունեցողը կ'անարգուի։
9—Աննշան մարդը որ ծառայ ունի,
Զինք մեծցնող ու հացի կարօտ եղողէն աղէկ է։
10—Արդարը իր անասուններուն կեանքին համար հոգ կը տանի.
Բայց ամբարիշտներուն ողթքները անողորմ են։
11—Իր երկիրը գործողը հացով կը կշտանայ.
Բայց դատարկ մարդոց հետեւողը պակասամիտ է։
12—Ամբարիշտը չարերուն աւարին կը փափաքի.
Բայց արդարներուն արմատը դուրս կու տայ։
13—Չարը էր շրթունքներուն յանցանքովը որոգայթը կ'իյնայ.
Բայց արդարը նեղութենէ կ'ելլէ։
14—Մարդը իր բերնին պտուղէն բարիքներով կը լեցուի.
Ու մարդուն ձեռքերուն հատուցումը իրեն պիտի գտնայ։
15—Ցիմարին ճամբան իր աչքերուն շիտակ է.
Բայց խրատ մտիկ ընողը իմաստուն է։

16—Ցիմարը նայն օրը կը յայտնէ իր բարկութիւնը.
Բայց անարգանքը ծածկողը խելացի է։
17—Ձշմարտութիւն խօսողը արդարութիւն կը յայտնէ,
Իսկ սուտ վկան՝ նենգութիւն։
18—Մարդէն կան որոնք իրենց չատախօսութեամբը սուրի պէս կը խոցոտեն.
Բայց իմաստուններուն լեզուն բժշկութիւն է։
19—Ձշմարտախօս շրթունքը միշտ հաստատ կը մնայ.
Բայց սուտախօս լեզուն վայրկենական է։
20—Չարութիւն մտածողին սրտին մէջ նենգութիւն կ'ըլլայ.
Բայց խաղաղութեան համար խորհուրդ ընողները ուրախութիւն կ'ունենան։
21—Արդարին բնաւ չարիք չհասնիր.
Բայց ամբարիշտները թշուառութիւնով կը լեցուին։
22—Սուտ շրթունքը Տէրոջը գզուելի է.
Բայց հաւատարմութիւն ընողները անոր հաճոյ են։
23—Խոհեմ մարդը էր գիտցածը կը ծածկէ.
Բայց յիմարներուն սիրտը յիմարութիւն կը հրատարակէ։
24—Ժիր մարդոց ձեռքը կ'իշխէ,
Ու ծոյլը հարկատու կ'ըլլայ։
25—Մարդուն սրտին մէջ եղող վիշտը զանիկա կը ճնշէ.
Բայց աղեկ խօսքը կ'ուրախացնէ զանիկա։
26—Արդարը *իր ընկերին ճամբայ կը ցուցնէ՝.
Բայց ամբարիշտներուն ճամբան զիրենք կը մոլորեցնէ։
27—Ծոյլը իր որսը չեփեր.
Բայց ժիր մարդուն ստացուածքը պատուական է։
28—Արդարութեան ճամբուն մէջ կեանք կայ.
†Ու անոր շաւիղներուն ճամբուն մէջ մահ չկայ։

*Կամ, իր ընկերին դերազանց է
†Կամ, Բայց լաւերուն կոխած ճամբան մահուան չը դառնէ

ԳԼ. ԺԳ

Իմաստուն տղան իր հօրը խրատը հոգէ լ'ընէ.
Բայց ծաղր ընողը յանդիմանութիւնը մտիկ չընէր։
2—Մարդը իր բերնին պատղէն բարութիւն կ'ուտէ,
Բայց անօրէններուն հոգին՝ բռնութիւն։
3—Իր բերանը զգուշողը իր անձը կը պահէ.
Բայց շրթունքները լայն բացողը պիտի կորսուի։
4—Ծոյլին հոգին կը ցանկայ ու բան մը չունի.
Բայց ժրաջան մարդուն հոգին կը գիրնայ։
5—Սուտ խօսքը արդարին ատելի է.
Բայց ամբարիշտը ամօթալից ու խայտառակ վարք ունի։
6—Արդ արութիւնը կատարելութեամբ գայղնները կը պաշտպանէ.
Բայց չարութիւնը մեղաւորները կը կործանէ։
7—Կան որ զիրենք հարուստ կը ցուցընեն ու բան մը չունին,
Ու կան որ զիրենք աղքատ կը ցուցնեն ու չատ հարստութիւն ունին։
8—Մարդուն կեանքին փրկանքը իր հարստութիւնն է.
Բայց աղքատը չանդիմանութիւն չլսեր։
9—Արդարներուն լոյսը զուարթ պիտի ըլլայ.
Բայց ամբարիշտներուն ճրագը պիտի մարի։
10—Ցիրաւի հպարտութենէ կռիւ կը ծագի.
Բայց խրատ մտիկ ընողներուն գով իմաստութիւն կայ։
11—*Անիրաւութեամբ ժողվուած հարստութիւնը պիտի պակսի.
Բայց էջ աշխատութիւնով ժողվողը պիտի չատցնէ։
12—Ուշացած յոյսը սիրտը կը հիւանդացնէ.
Բայց փափաքին հասնիլը կեանքի ծառ մըն է։
13-Խօսքը արհամարհողը պիտի կորսուի.

*Եբր. Ունայնութենէ

Բայց պատուիրանքին վախցողը վարձք պիտի առնէ։
14—Իմաստունին օրէնքը կեանքի աղբիւր է՝
Մահուան որոգայթներէն ազատ ընելու համար։
15—Բարի խոհեմութիւնը շնորհք կուտայ.
Բայց անօրէններուն ճամբան դժուարին է։
16—Ամէն խելացի խմաստութեամբ կը գործէ.
Բայց անմիտը յիմարութիւն կը տարածէ։
17—Չար պատգամաւորը թշուառութեան մէջ կ'իյնայ.
Բայց հաւատարիմ դեսպանը բժշկութիւն է։
18—Իրատ անարգողը աղքատութիւն ու անարգութիւն կը կրէ.
Բայց յանդիմանութիւն մտիկ ընողը պատիւ կը գտնէ։
19—Փափաքին կատարիլը հոգիին անոյշ է.
Ու չարագործութենէ հեռ կեղծալը յիմարներուն զզուելի է։
20—Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլլայ.
Բայց անմիտներուն հետ ընկերացողը *չար կ'ըլլայ՝.
21—Մեղաւորներուն հետևէն ձախորդութիւն կ'երթայ.
Բայց արդարներուն բարիք կը հատուցուի։
22—Բարի մարդը իր որդւոց որդիներուն ժառանգութիւն կը թողուս.
Բայց մեղաւորին ստացուածքը արդարին համար կը պահուի։
23—Աղքատներուն մշակած երկրին մէջ չատ ուտելիք կայ.
Բայց †զրկ կայ որ անիրաւութենէ կը կորսուի։
24—Գաւազանին խնայողը իր որդին կ'ատէ.
Բայց զանիկա սիրողը կանուխ կը խրատէ։
25—Արդարը մինչև իր անձին կշտանալը կ'ուտէ.
Բայց ամբարիշտներուն փորը կարօտութիւն պիտի քաշէ։

*Կամ, չարիքի կը հանդիպի

ԳԼ. ԺԴ

Իմաստուն կիները իրենց տունը կը չինեն.
Բայց յիմար կինը զանիկա իր ձեռքովը կը փլցնէ։
2—Իր ուղղութեանը մէկ քալողը Տէրոջմէ կը վախնայ.
Բայց ծուռ ճամբայ ունեցողը զանիկա կ'անարգէ։
3—Ցիմարին բերանը հպարտութեան գաւազան կայ.
Բայց իմաստուններուն շրթունքները զիրենք կը պահեն։
4—Ուր արջառ չկայ, մսուրը մաքուր կը մնայ.
Իսկ արդիւնքին առատութիւնը եղին զօրութենէն յառաջ կու գայ։
5—Ձշմարտութեան վկան սուտ չխօսիր.
Բայց անիրաւ վկան սուտութիւններ *կը թափէ բերէ։
6—Ծաղր ընողը խմաստութիւն կը փընտռէ ու չգտնէր.
Բայց իմաստուններուն համար գիտութիւնը դիւրին է։
7—Ցիմար մարդէն հեռացիր,
Երբ կ'իմանաս որ իմաստուն շրթունքներ չունի։
8—Խելացի մարդուն իմաստութիւնը իր ճամբան հասկնալն է.
Բայց յիմարներուն անմտութիւնը նենգութիւն է։
9—Ցիմարները յանցանքը ծաղր կ'ընեն.
Բայց ուղիներուն մէջ ներողամտութիւն կայ։
10—Մարդուն սիրտը իր հոգիին ցաւը կը ճանչնայ.
Ու անոր ուրախութեանը ուրիշը մասնակից չըլլար։
11—Ամբարիշտներուն տունը պիտի կործանի.
Բայց ուղիղներուն վրանը պիտի ծաղկի։
12—Ճամբայ կայ որ մարդուն չիտակ կ'երեւնայ.
Բայց անոր վախճանը մ հուան ճամբաներն է։
13—Ծիծաղելու ատենն ալ խռչակաւոր սիրտը տրտմութիւն կը զգայ.

*Եբր. կը փչէ †Եբր. չկայ։

Ե. ուրախութեան վախճանը սուգ կ'ըլլայ։
14—Ապականած սիրտը իր ճամբաներէն՝
Ու բարի մարդը ինքնիրմէն պիտի կշտանայ։
15—Միամիտ մարդը ամէն խօսքի կը հաւատայ.
Բայց խելացին իր քայլերը կը քննէ.
16—Իմաստունը կը վախնայ ու չարութենէ կը փախչի.
Բայց անմիտը կը հպարտանայ ու յանձնապատան կ'ըլլայ։
17— Շուտ բարկացողը յիմարութիւն կ'ընէ.
Ու նենգավոր մարդը ատելի է։
18—Անխոհեմները անմտութիւն կը ժառանգեն.
Բայց խելացիները գիտութեամբ կը պսակուին։
19—Չարերը բարիներուն առջև կը խոնարհին,
Եւ ամբարիշտները՝ արդարներուն դրանը գով։
20—Աղքատը մինչև անգամ իր ընկերին ատելի է.
Բայց հարուստին բարեկամները չատ են։
21—Իր ընկերը անարգողը մեղք կը գործէ.
Բայց աղքատին ողորմութիւն ընողը երանելի կ'ըլլայ։
22—Ահա չարութիւն մտածողները կը մոլորին.
Բայց բարութիւն մտածողներուն ողորմութիւն ու ճշմարտութիւն կ'ըլլայ։
23—Ամէն աշխատանքի մէջ օգուտ մը կայ.
Բայց *դատարկաբանութիւնը՝ միայն կարօտութեան կը տանէ մարդը։
24—Իմաստուններուն հարստութիւնը իրենց պսակն է.
Բայց անմիտներուն †բարձրութիւնը յիմարութիւն է։
25—Հաւատարիմ վկան հոգիներ կ'ազատէ.
Բայց խաբեպաճը ստութիւններ դուրս կու տայ։
26—Տէրոջը վախին մէջ հաստատ վստահութիւն կայ.
Ու անոր որդիները ապաւէն պիտի ունենան։
27—Տէրոջը վախը կեանքի աղբիւր է՝
Մահուան որոգայթներէն ազատ մնալու համար։
28—Ժողովուրդին բազմութիւնը թագաւորին պատիւն է.
Բայց ժողովուրդին նուազութիւնը իշխանին կործանումն է։
29—Երկայնամիտ մարդը չատ խոհեմ է.
Իսկ կարճամիտը չատ յիմարութիւն կ'ընէ.
30-*Հանդարտ սիրտը մարմինին կեանք է.
Բայց նախանձը ոսկորներուն փտութիւն է։
31—Աղքատին զրկանք ընողը անոր Ստեղծիչը կ'անարգէ.
Բայց անանկին ողորմութիւն ընողը զինեկիս կը պատուէ։
32—Ամբարիշտը իր չարութեանը համար կը վռնտուի.
Բայց արդարը իր մահուան ատենը ապաւէն կ'ունենայ։
33—Խելացի մարդուն սրտին մէջ իմաստութիւն կը հանգչի.
Իսկ յիմարներուն ներսը եղածը կը ճանչցուի։
34—Արդարութիւնը ազգը կը բարձրացնէ.
Բայց մեղքը ժողովուրդներուն անարգանք է։
35—Թոհեմ ծառային՝ թագաւորը կը հաճի.
Բայց նախատինք բերող ծառային կը բարկանայ։

Գլ. ԺԵ

Մեղմ պատասխանը սրտմտութիւնը կ'իջեցնէ.
Բայց խիստ խօսքը բարկութիւնը կը գրգռէ։
2—Իմաստուններուն լեզուն գիտութիւնը հաճոյ կ'երեւցնէ.
Բայց անմիտներուն բերանը յիմարութիւն կը բղխէ։
3—Տէրոջը աչքերը ամէն տեղ
Չարերը ու բարիները կը դիտեն։
4—*Խաղաղասեր լեզուն կենաց ծառ է.
Բայց խռովարար լեզուն սիրտ կը կոտրէ։
5—Յիմարը իր հօրը խրատը կ'անարգէ.
Բայց յանդիմանութեան հնազանդողը խելացի կ'ըլլայ։
6—Արդարին տունը մեծ գանձ կայ.
Բայց ամբարշտին եկամուտներուն մէջ խռովութիւն կայ։
7—Իմաստուններուն շրթունքները գիտութիւն կը տարածեն.
Բայց յիմարներուն սիրտը †այնպես չէ։
8—Ամբարիշտներուն զոհը Տէրոջը ատելի պիղծ է.
Բայց ուղիղներուն աղօթքը անոր ընդունելի է։
9—Տէրը ամբարշտին ճամբային կը զզուի.
Բայց արդարութեան հետեւողը կը սիրէ։
10—Ո՜ղէկ ճամբան մեր֊ժողին՝ ‡գէշ պատիժ կ'ըլլայ՝.
Ո՜ր յանդիմանութիւնը ատողը պիտի մեռնի։
11—Դժոխքը ու կորուստը Տէրոջը առջև են.
Ո՛րչափ աւելի մարդոց որդիներուն սիրտերը։
12—Ծաղր ընողը իր յանդիմանիչը չսիրեր,
Ե՜ իմաստուններուն գով չերթար։
13—Ուրախ սիրտը երեսը կը զուարթացնէ.
Բայց սրտին տրտմութենէն հոգին կը ճնշուի։
14—Հանճարեղ սիրտը գիտութիւն կը փնտռէ.
Բայց անմիտներուն բերանը յիմարութեամբ կը սնանի։
15—Վշտալից մարդուն ամէն օրերը գէշ են.
Բայց ուրախ սիրտը հանգիստաւոր կուշտքի մէջ է։
16—Աւելի սղկէ է փիչ բանը Տէրոջը վախովը,
Քան թէ մեծ գանձը՝ խռովութիւնով։
17—Աւելի սղկէ է սեր եղած տեղը խոտեղէն կերակուրը,
Քան թէ գէշ զուարակը՝ատելութիւնով։
18—Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ.
Բայց երկայնամիտը կռիւը կը դադրեցնէ։
19—Ծոյլին ճամբան փշեղէն ցանկի պէս է.
Բայց ուղիղներուն ճամբան բանուկ է։
20—Իմաստուն որդի իր հայրը կ'ուրախացնէ.
Բայց անմիտ մարդը իր մայրը կ'անարգէ։
21—Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զբօսանք է.
Բայց խնամաւոր մարդը կ'ուղղէ իր ընթացքը։
22—Առանց խորհուրդի՝ դիտաւորութիւնները կը ցրուին.
Բայց խորհրդականներուն չատութիւնովը կը հաստատուին։
23—Մարդ իր բերնին պատասխանովը կ'ուրախանայ.
Ու ատենովը լսուած խօսքը ո՜րչափ գեղեցիկ է։
24—Կեանքի ճամբան խոհեմ մարդը դէպ ի վեր կ'երթայ,
Որպէս զի վարի դժոխքէն հեռանայ։
25—Տէրը հպարտներուն տունը կը կործանէ,
Բայց այրեւմտին սահմանը կը հաստատէ։
26—Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առջև պիղծ են.
Բայց պարկեշտներուն խօսքերը հաճելի են։
27—Ագահութեան անձնասիրը երդոյր իր տունը խռովութեան մէջ կը ձգէ.
Բայց կաշառքներէ զզուողը պիտի ապրի։
28—Արդարին սիրտը տալու պատասխանը կը մտածէ.
Բայց ամբարիշտներուն բերանը չարիք կը բղխէ։
29—Տէրը ամբարիշտներէն հեռու է.
Բայց արդարներուն աղօթքը կը լսէ։
30—Աչքերու լոյսը սիրտը կուրախացնէ.
Բարի լուրը ոսկորները կը բերկրեցնէ։
31—Կեանքի յանդիմանութիւնը լսող ականջը
Իմաստուններուն մէջ կը բնակի։
32—Խրատ մերժողը իր հոգին կ'անարգէ։

*Կամ, Ոգի

*Եբր. շրթունքներուն խօսքը
†Կամ, յիմարութիւնը

*Կամ, Թժկութիւն տուող
†Կամ, հաստատ
‡Կամ, խրատը գէշ կը թուի

Բայց յանդիմանութիւն մարկ ընդդէմ խելք կը վաստկի։
33—Տէրոջը վախը խնամութեան խրատն է,
Ու փառքին առջեւէն խոնարհութիւնը կ'երթայ։

ԳԼ. ԺԲ

Սրտին պատրաստութիւնները մարդուն [է Վէր-Բէրէն.
Բայց լեզուին պատասխանը Տէրոջմէն է։
2—Մարդուն ամէն ճամբաները իրեն մաքուր կ'երեւնան.
Բայց Տէրը հոգիները կը կշռէ։
3—Քու գործերդ Տէրոջը յանձնէ,
Ու քու խորհուրդներդ պիտի հաստատուին։
4—Տէրը ամէն բան *իր նպատակին" համար ստեղծեց,
Ու ամբարիշտն ալ՝ ձախորդ օրուան համար։
5—Ամէն սրտով հպարտները Տէրոջը առջեւ պիղծ են,
Ու †ԲԱՆ ձեռք ձեռքի տալով՝ պատիժ չպիտի չմնան։
6—Ողորմութեամբ և ճշմարտութեամբ անօրէնութիւնը կը քաւուի,
Ու Տէրոջը վախովը մարդ չարութենէ կը հեռանայ։
7—Երբ Տէրը մարդուն ճամբաներուն կը հաճի,
Մինչեւ անգամ անոր թշնամիները կը հաշտեցնէ անոր հետ։
8—Ագէկ է քիչ բան արդարութեամբ,
Քան թէ մեծ եկամուտներ՝ անիրաւութեամբ։
9—Մարդուն սիրտը իր ճամբան կը հնարէ.
Բայց անոր քայլերը Տէրը կ'ուղղէ։
10—Թագաւորին շրթունքներուն վրայ աստուածային ազդեցութիւն կայ.
Անոր բերանը դատաստանի մէջ չսխալիր։
11—Ուղիղ կշռադրոյը և կշիռքը Տէրոջմն են.
Մախաղին ամէն [է-ե քարերը անոր գործն են,
12—Չարագործութիւնը թագաւորներուն զզուելի է.
Վասն զի աթոռը արդարութեամբ կը հաստատուի։
13—Արդար շրթունքները թագաւորներուն հաճելի են,
Ու շիտակ խօսողը կը սիրեն։
14—Թագաւորին բարկութիւնը մահուան դեսպաններու պէս է.
Բայց խնամուն մարդը զանիկա կ'իջեցնէ։
15—Թագաւորին երեսին լոյսը կեանք է,
Ու անոր հաճութիւնը վերջին անձրեւին ամպին պէս է։
16—Իմաստութիւն առնողը ոսկիէն ա՛րչաւ ագէկ է,
Ու հանճար վաստկիլը արծաթէն աւելի ընտիր է։
17—Ուղիղներուն մեծ ճամբան չարութենէ հրաժարիլն է.
Իր ճամբուն զգուշութիւն ընդդէմ իր հոգին կը պահէ։
18—Կառաջին առջեւէն հպարտութիւն,
Ու կործանման առջեւէն ամբարտաւանութեան ոգին [՚Երթայ։
19—Խոնարհներուն հետ խոնարհ ըլլալը Հպարտներուն հետ աւար բաժնելէն աղէկ է։
20—Գործի մէջ խելացութեամբ վարուողը բարիք կը գտնէ.
Ու Տէրոջը ապատինողը երանելի է։
21—Իմաստուն սիրտ ունեցողը խոհեմ կ'ըսուի.
Ու չրթունքներուն քաղցրութիւնը գիտութիւն կ'աւելցնէ։
22—Խոհեմութիւնը՝ ունեցողին կեանքի աղբիւր է.
Բայց յիմարներուն խրատը յիմարութիւն է։
23—Իմաստունին սիրտը իր բերնին իմաստութիւն կու տայ,
Ու իր շրթունքներուն գիտութիւն կ'աւելցնէ։
24—Ախորժելի խօսքերը մեղրի խորիսխին պէս են,
Հոգիին քաղցր ու ոսկորներուն բժշկութիւն են։
25—Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երեւնայ,

*Կամ, իրեն †Կամ, ազգէ ազգ

Բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է։
26—Աչխատաւոր անձը իրեն համար կ'աշխատի.
Քանզի իր բերանը կը պահանջէ իրմէ։
27—Անօրէն մարդը չարութիւն կը փորէ,
Ու անոր շրթունքներուն վրայ իբր թէ այրող կրակ մը կայ։
28—Ծուռ մարդը կռիւ կը հանէ,
Ու քաղաքացիներէ կը զատէ։
29—Անօրէն մարդը իր ընկերը կը խաբէ,
Ու զանիկա գէշ ճամբաներ կը տանի։
30—Նենգութիւններ մտածելու համար աչքերը կը գոցէ,
Ու չրթունքները խածնելով չարութիւնը կը կատարէ։
31—Մազի ճերմկութիւնը փառաց պսակ է,
Երէ անիկա արդարութեան ճամբուն մէջ գտնուի։
32—Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է,
Ու իր ոգին զսպողը՝ քաղաք առնողէն։
33—Վիճակը ծոցը կը ձգուի,
Բայց անոր ամէն կարգադրութիւնը Տէրոջմէն է։

ԳԼ. ԺԷ

Աղէկ է պատառ մը չոր հաց խաղաղութիւնով,
Քան թէ տուն մը լեցուն զոհեր՝ կռիւով։
2—Խոհեմ ծառան նախատինք բերող որդիին կ'իշխէ,
Ու եղբայրներու մէջ ժառանգութեան բաժին կ'առնէ։
3—Արծաթի համար հալոց՝ և ոսկիի համար քուրայ կայ.
Բայց սիրտերը փորձողը Տէրն է։
4—Չար մարդը անիրաւին չրթունքներուն կ'ընդունի.
Ու սուտաւոր լեզուին ականջ կը դնէ։
5—Աղքատը ծաղր ընդդէմ անոր Ստեղծիչը կ'անարգէ.
Ու ձախորդութեան վրայ ուրախացողը անպատիժ պիտի չմնայ։
6—Որդւոց որդիները ծերերուն պսակն են,
Ու որդւոց պարծանքը իրենց հայրերն են։
7—Ընծեր *խօսքը անզգամին չվայլեր.
Ո՛րչափ աւելի ատելի չրթունքը՝ ազնուականին։
8—Պարգեւը՝ †գործածողին աչքին պատուական գոհարի պէս է.
Ուր որ դառնայ՝ յաջողութիւն կը գտնէ։
9—Ծանցանքը ծածկողը բարեկամութիւն կը փնտռէ.
Բայց զանիկա պատմողը մտերիմ բարեկամները կը զատէ։
10—Խոհեմ մարդուն աւելի կ'ազդէ հկ յանդիմանութիւնը,
Քան թէ հարիւր է——ակնի հարուած՝ յիմարին։
11—Չար մարդը միշտ ապստամբութիւն կը փնտռէ,
Ու անոր խիստ պատգամաւոր կը ղրկուի։
12—Աւ ագէկ է ձագերը գողցուած արջուն առջեւ ելլել,
Քան թէ յիմարն ի՛ր անոր յիմարութեան առեներ։
13—Ով որ ոտիկութեան փոխարէն չարիք կը հատուցանէ,
Չարիքը անոր առանձն պակաս պիտի չըլլայ։
14—Կռիւին սկզբնաւորութիւնը ջուրին արձակմանը կը նմանի.
Ուրեմն վէճը չբռնկած՝ եւս քաշուէ։
15—Ամբարիշտը արդարացնողը և արգարը ամբարիշտ հանողը՝
Երկուքն ալ Տէրոջը առջեւ պիղծ են։
16—Իմաստութիւնը ծախու առնելու գինը ինչ օգուտ ունի յիմարին ձեռքը.
Որովհետեւ խելք չունի։
17—Բարեկամը ամէն առեն կը սիրէ,
Ու եղբայրը նեղութեան *դէմ համար ծնած է։
18—Պակասամիտ մարդը ձեռքը կուտայ,
Ու իր բարեկամին ||համար երաշխաւոր կ'ըլլայ։
19—Կռիւ սիրողը յանցանք կը սիրէ.
Իր գռուռը բարձրացնողը էր կործանումը կը փնտռէ։

*Եբր. չրթունքը
†Կամ, ընդունողին. Եբր. իր տէրոջը
‡Կամ, փափաք ||Եբր. առջեւ

20—Ծուռ սիրտ ունեցողը աղէկ բան չգտներ,
Ու նենգաւոր լեզուով մարդը չարիքի մէջ կ'իյնայ։
21—Ցիմարը ծնանողը տրտմութիւն կը կրէ,
Եւ անզգամին հայրը չուրախանար։
22—Ուրախ սիրտը դեղի պէս օգտակար է.
Բայց կոտրած սիրտը ոսկորները կը չորցընէ։
23—Անօրէն մարդը «ընդէ՞ր» ծոցէն կաշառք կ'առնէ,
Որպէս զի արդարութեան ճամբաները ծռէ։
24—Իմաստութիւնը խոհեմ մարդուն առջեւ է.
Բայց յիմարին աչքերը երկրի ծայրերն են։
25—Յիմար տղան իր հօրը տրտմութիւն
Ու զինք ծնանողին դառնութիւն կ'ըլլայ։
26—Ագէկ չէ արդարէն տուգանք առնել.
«Ոչ ալ իշխանները ծեծել» իրաւունք ընէլուն համար։
27—Իր խօսքերը զսպողը խմաստուն է,
Ու երկայնամիտ մարդը հանճարեղ է։
28—Յիմարը անգամ երբ լուռ կենայ, իմաստուն՝
Ո՛ր իր շրթունքները գոցողը հանճարեղ կը սեպուի։

Գլ. ԺԸ

†Ինքնահաճոյ մարդը էր ցանկութիւնը կը փնտռէ
Եւ ‡ամէն խորհուրդի դէմ կը կենայ։
2—Յիմարը խոհեմութենէն չհաւրժիր,
Հապա իր սրտին բէղ եղածը յայտնել կ'ուզէ։
3—Երբ ամբարիշտը գայ, անարգութիւն ալ կու գայ,
Ու նախատինքի հետ խայտառակութիւն։
4—Մարդուն բերնին խօսքերը խորունկ ջուրեր են.
Իմաստութեան աղբիւրը առատաբուղս գետ է։
5—Դատաստանի մէջ արդարը սուտ հանելու համար՝
Ամբարիշտին աչառութիւն ընելը աղէկ չէ։
6—Անմիտ մարդուն շրթունքները կռիւ մէջ կը մտնեն,
Ու անոր բերանը ծեծը կը կանչէ։
7—Անմիտ մարդուն բերանը իրեն կործանումի է,
Եւ անոր շրթունքները իր անձին որոգայթ են։
8—Ծուռ մարդուն խօսքերը քաղցր պատառներու պէս են,
Ու անոնք մինչեւ փորին չտեսմարանները կ'իջնեն։
9—Ան որ իր գործին մէջ թոյլ է,
Շռայլ մարդուն եղբայրն է։
10—Տէրոջը անունը ամուր աշտարակ է,
Արդարը անոր կը դիմէ, ու ապահով ապաստանարան կ'ունենայ։
11—Հարուստին ստացուածքը իր ամուր քաղաքն է,
Ու անոր երեւակայութեանը մէջ բարձր բերդի պէս է։
12—Կործրածէն առաջ մարդուն սիրտը կը հպարտանայ.
Բայց փառքին առջեւէն խոնարհութիւնը կ'երթայ։
13—Ով որ բան մը չլսած պատասխան կու տայ,
Ցիմարութիւն ու նախատինք է անոր։
14—Մարդուն հոգին իր հիւանդութեանը կը համբերէ.
Բայց վիրաւորուած հոգին ո՞վ կրնայ *մխիթարել։
15—Խոհեմին սիրտը գիտութիւն կը վաստկի,
Եւ իմաստուններուն ականջը գիտութիւն կը փնտռէ։
16—Մարդուն ընծան անոր ճամբայ կը բանայ,
Ու զանիկա մեծերուն առջեւ կը տանի։
17—Իր դատը առաջին ընկ սկսողը իրաւունք ունեցող կը սեպուի։

*Կամ, տանել. ԵԲԸ. վերցնել

Բայց եղբ իր *ասոնը գայ՝ զանիկա կը գտնէ։
18—Վիճակը վէճերը կը դադրեցնէ,
Ու զօրաւորներուն մէջտեղ որոշումի կ'ընէ։
19—Վշտացած եղբայր մը ամուր քաղաքէն ան-առ-էլ է,
Եւ անոր վէճերը բերդի մը նիգերուն կը նմանին։
20—Մարդ մը իր բերնին պտուղէն իր փորը կը կշտացնէ,
Ու իր շրթունքներուն արդիւնքէն կը կշտանայ։
21-Մահը ու կեանքը լեզուին ձեռքն են,
Եւ զանիկա սիրողները անոր պտուղը կ'ուտեն։
22—Ա-ա-էլ կին գտնողը բարիք կը գտնէ,
Ու Տէրոջմէն շնորհք կը ստանայ։
23—Աղքատը աղաչելով կը խօսի,
Բայց հարուստը խիստ պատասխան կու տայ։
24—Բարեկամներ ունեցող մարդը բարեկամութիւն ընելու է.
Ու եղբօրմէ աւելի հաստատ բարեկամ կայ։

Գլ. ԺԹ

Իր կատարելութեան մէջ քալող աղքատը
Նենգաւոր շրթունք ունեցող յիմարէն աղէկ է։
2—Հոգիին ագիտութիւնը աղէկ չէ,
Ու ոտքերովը արտրացողը կը սայթի։
3—Մարդուն յիմարութիւնը անոր ճամբան կ'ուրթեւ,
Եւ անոր սիրտը Տէրոջը դէմ զարտունչ կ'ընէ։
4—Հարստութիւնը շատ բարեկամներ կ'աւելցնէ.
Բայց աղքատը իր բարեկամէն կը զատուի։
5—Սուտ վկան անպատիժ պիտի չմնայ,
Ու սուտ խօսողը պիտի կորսուի։
6—Շատերը †առատաձեռն մարդուն երեսը կը փնտռեն,
Ու ամէն մէկը պարգեւատու մարդուն բարեկամ կ'ըլլայ։
7—Աղքատին բոլոր եղբայրները անկէ կը զզուին,
Անոր բարեկամները ա՛լ աւելի անկէ կը հեռանան.
Անիկա *ոչինչ խօսքերու եւեւէ կ'յուսայ"։
8—Խելք վաստկողը իր հոգին կը սիրէ.
Իմաստութիւն պահողը բարիք պիտի գտնէ։
9—Սուտ վկան անպատիժ պիտի չմնայ,
Ու սուտ խօսողը պիտի կորսուի։
10—Ցիմարին փափկութիւն չվայլեր.
Ո՛րչափ աւելի ծառայի մը՝ իշխաններու վրայ իշխել։
11—Մարդուն խոհեմութիւնը անոր բարկութիւնը կը զսպէ,
Ու յանցանք ներելը անոր պարծանք է։
12—Թագաւորին բարկութիւնը առիւծի մռնչիւնին կը նմանի,
Իսկ անոր հաճութիւնը խոտի վրայի ցօղին պէս է։
13—Անիմաստ տղան հօրը թշուառութիւնն է,
Ու կնոջ կռիւները չարունակ կաթիլնեբու պէս են։
14—Տունը ու ստացուածքը հայրերէն ժառանգութիւն են.
Բայց խոհեմ կինը Տէրոջմէն է։
15—Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ,
Եւ թոյլ մարդը անօթի կը մնայ։
16—Պատուիրանքը պահողը իր հոգին կը պահէ.
Իր ճամբաները անարգողը պիտի մեռնի։
17—Աղքատին ողորմութիւն ընողը Տէրոջը փոխ կու տայ,
Ու Անիկա անոր հատուցում պիտի ընէ։
18—Քանի որ յոյս կայ՝ տղադ խրատէ՝
Եւ †անոր մեռնելուն կամակից մի ըլլար։
19—Խիստ բարկացող մարդը ձեռս կը կրէ.
Վասն զի եթէ ան-էլ-ի մը ազատես՝ նորէն ընելու է։
20—Խրատը լսէ և կրթութիւնը ընդունէ,

*Կամ, անոնց եւեւէն կ'իյնայ խօսքերով, Բայց անոնք չեն գոհունէը
†Կամ, անոր աղաղակին ականջ մի դներ

*ԵԲԸ. ընկերը
†Կամ, իշխանին ‡ԵԲԸ. երեսը

Որպէս զի քու վերջին առենդ խնա-
սուն ըլլաս։
21—Մարդուն սրտին մէջ շատ գիտա-
ւորութիւններ կան.
Բայց Տէրոջը խորհուրդը հաստատուն
պիտի մնայ։
22—Մարդուն ողորմածութիւնը իր
փառքն է,
Ու տգրկատը առաքսէն աղէկ է։
23-Տէրոջը երկիւղը կեանքի պատճառ է,
Եւ գոհ-ոհեցողը կաւշտ կը պառկի,
— ձախորդութեան չհանդիպիր։
24—Ծոյլը իր ձեռքը ամանին մէջ կը
խոթէ,
Ո՛ւ դանիկա իր բերանը անգամ չդար-
ձընէր։
25—Ծաղր ընողը ծեծէ, ու միամիտը
խելացի կ'ըլլայ,
Եւ հոգ խնասուածը յանդիմանես՝ հաս-
կացողը կը հասկնայ։
26—Իր հայրը կործանողը — էր մայրը
վռնտողը
Ամօթ ու նախատինք բերող տղայ մըն է։
27—Որդեակ իմ, եթե կեցիր այն խրա-
տը մտիկ ընելէն,
Որ տեղ խնասութեան խօսքերէն կը
խոտորցնէ։
28—Զաք վկան աղտաբութիւնը ծաղր
կ'ընէ,
Ու ամբարիշտներուն բերանը անիրա-
ւութիւն կը կլլէ։
29—Ծաղր ընողներուն համար դատաս-
տանները
Եւ անմտներուն կռնակին համար ծե-
ծեր պատրաստուած են։

Գլ. Ե

Գիրենն ծաղր ընող է, — ոք ցքին կռիւ
հանող,
Եւ ով որ ասոնց անձնատուր կ'ըլլայ,
խնասուն չըլլար։
2—Թագաւորին սէր առոյգ առիւծի
մռնչիւնին պէս է,
Ու զանիկա բարկացնողը իր անձին վնաս
կ'ընէ։
3—Կռիւէն եթե կենալը մարդուն փառք է.
Բայց ամէն յիմար կռուասէր է։
4—Ծոյլը՝ Ձմեռ է ըսէլով, ֆէրթինը չհեր
կնը.
Ուստի հունձքի ատենը պիտի մուրայ,
ու բան մը պիտի չունենայ։
5—Մարդու մը սրտին մէջի խորհուրդը
խորտնի ջուրերու պէս է.
Բայց խելացի մարդը զանիկա կը հանէ։
6—Մարդոցմէ շատերը իրենց բարեպա-
տութիւնը կը հրատարակեն.
Բայց հաւատարիմ մարդ մը ո՞վ կրնայ
գտնել։
7—Իր անարատութեանը մէջ քալողը
արդար է.
Անոր որդիները իր ետեւէն երջանիկ
պիտի ըլլան։
8—Դատաստանի աթոռը նստող թագա-
ւորը
Իր աչքերովը ամէն չարիքը կը ցրուէ։
9—Ո՞վ կրնայ ըսել թէ իմ սիրտս
սրբեցի,
Իմ մեղքէս մաքրուեցայ։
10—Երկու տեսակ կշռոյ քար, երկու
տեսակ ֆունտ
Հաւասարապէս Տէրոջը ատելի պիտի են։
11—Մինչեւ անգամ տղա մը վարքին
մաքրութիւնը և ուղղութիւնը
Անոր գործերէն կը հասկցուի։
12—Լսող ականջը ու տեսնող աչքը,
Երկուքն ալ, Տէրը ստեղծեր է։
13—Քունը մի սիրեր, որպէս զի չըլլայ
թէ աղքատանաս.
Աչքերդ բաց, որպէս զի հացով կշտա-
նաս։
14—Ծախու առնողը Գէշ է, գէշ է,
կ'ըսէ.
Բայց երբ երթայ, այն ատեն կը պար-
ծենայ։
15—Ոսկի ու շատ գոհար կը գտնուի.
Բայց գիտութեան շրթունքները մեծա-
գին զարդեր են։
16—Օտարականի մը երաշխաւոր եղո-
ղին զգեստը առ,
Եւ օտար կնոջ համար էշխատաւոր եղո-
ղէն գրաւ առ։
17—Սուտութեան հացը մարդուն ախոր-
ժելի է.
Բայց ետքը անոր բերանը խիճով պիտի
լեցուի։
18—Դիտաւորութիւնը խորհրդով կը
հաստատուի.

*Եբր. արդու

Ուստի խոհեմութեամբ պատերազմ ըրէ։
19—Բանաբերկութեան պարտողը գաղտ-
նիքը կը յայտնէ.
Ուրեմն չբծախօսողովը չզոգջոզքերու-
թիւն ընողին հետ հաղորդակ-
ցութիւն մի ըներ։
20—Ով որ իր հայրը ու մայրը կ'անիծէ,
Անոր ճրագը մութ խաւարի մէջ պիտի
մարի։
21—Կայ ժառանգութիւն որ սկիզբը
պատրաստ կ'առնուի.
Բայց անոր վերջը պիտի չօրհնուի։
22—Չարութեան փոխարէնը հատուց-
անեմ՝ մի ըսեր.
Տէրոջը սպասէ, ու անիկա փրկ պիտի
պատաէ։
23—Երկու տեսակ կշռոյ քարը Տէրոջը
ատելի պիտի է,
Ու նենգաւոր կշռոյը աղէկ չէ։
24—Մարդուն քայլերը Տէրոջմէն են.
Ուստի մարդը իր ճամբան ինչպես հաս-
կընայ,
25—*Անխորհրդաբար բան մը նուիրե-
լը՝ և ուխտ ընելէն ետքը քննե-
նութիւն ընելը
Մարդուն որոգայթ մըն են։
26—Իմաստուն թագաւորը ամբարիշտ-
ները կը ցրուէ,
Ու անիւը անոնց վրայ կը դարձնէ։
27—Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է,
Սրտին բոլոր ներքինիները կը քննէ։
28—Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը
թագաւորը կը պահեն,
Անիկա ալ իր աթոռը ողորմութեամբ
կը հաստատէ։
29—Երիտասարդներուն զարդը անոնց
ոյժն է,
Ու ծերերուն փառքը ալեւորութիւնն է։
30—Վէրքի նշանները ու փորի չաւեմա-
րանները հանող հարուածները
†Զար մարդուն՝ ամբողջական դեղ են։

Գլ. ԻԱ

Թագաւորին սիրտը ջուրի վտակներ-
ու պէս է Տէրոջը ձեռքին մէջ.
Զանիկա ո՛ր կողմը ուզէ կը դարձնէ։

*Կամ, Սուրբ բան մը կլլելը
†Կամ, Զարութեան դէմ

2—Մարդուն ամէն ճամբան իրեն ու-
ղիղ կ'երեւնայ.
Բայց Տէրը սիրտերը կը կշռէ։
3—Արդարութիւն և իրաւունք գործելը
Զոհէն աւելի ընդունելի է Տէրոջը։
4—Աչքերու ամբարտաւանութիւնը և
սրտի հպարտութիւնը
Ե՛ւ ամբարիշտներուն *լեսը մեղք է։
5—Աչխատասէր մարդուն խորհուրդները
միայն առատութիւն կը բերէն.
Բայց ամէն արտարացող՝ միայն կարօ-
տութիւնը կը բերէ։
6—Սուտ լեզուով գանձեր վաստակիլը
Մահը փնտռողներուն հալածած ունայ-
նութիւնն է։
7—Ամբարիշտներուն բռնութիւնը զա-
նոնք պիտի կործանէ.
Վասն զի իրաւունք ընել չեն ուզեր։
8—Սրբ մարդուն ճամբան ծուռ է, կը
խոտորի.
Բայց մաքուր եղողին գործը ուղիղ է։
9—Ապրիլ տանիքի մը անկիւնը բնակիլ
Քան թէ կռնատեր կնոջ հետ †մեծ
տան մէջ։
10—Ամբարիշտ մարդուն հոգին չարու-
թեան կը ցանկայ,
Ո՛ւ անոր ընկերը անոր աչքին չնորհք
չգտներ։
11—Երբ ծաղր ընողը տուգանքի հան-
գիպի, միամիտը խնասուն կ'ըլ-
լայ,
Եւ երբ խնասունը խրատուի, գիտու-
թիւն կը առնայ։
12—Արդարը խոհեմութեամբ ամբա-
րիշտին տունը կը դիտէ,
Սրբ ամբարիշտները չարութեան համար
կը կործանէ։
13—Ով որ աղքատին ազաղակը չլսէ լու
համար իր ականջը կը գոցէ,
Ինք ալ պիտի աղաղակէ, ու իրեն լսող
պիտի չըլլայ։
14—Գաղտնի պարգեւը բարկութիւնը
կ'իջեցնէ,
Եւ ծոցը պատուած ընծան սաստիկ կա-
տաղութիւնը կը դադրեցնէ։
15—Իրաւունք ընելը արդարին ուրա-
խութիւն է.

*Կամ, մշակութիւնը
†Եբր. ընկերութեան

Բայց անիրաւութիւն ընդունելոյն տանջանք է։

16—*Խոհեմութեան ճամբային մոլորող մարդը*
Մեռելներուն ժողովքին մէջ կ'իջնէ։

17—*Ուրախութիւն սիրտը կարօտութեան մէջ կ'իյնայ.*
Գինին ու խղճ սիրտը չհարստանար։

18—*Ամբարիշտը արդարին համար,*
Ու անօրէնը ուղիղներուն համար փրկանք կ'ըլլայ։

19—*Աղէկ է անապատ տեղ բնակիլ՝*
Քան թէ կռուասէր ու բարկացող կնոջ հետ։

20—*Իմաստունին բնակարանին մէջ ցանկալի գանձ ու իւղ կը գտնուի.*
*Բայց անմիտ մարդը *իր ունեցածը՝ կը կլլէ։*

21 — *Արդարութեան ու ողորմածութեան հետեւողը*
Կեանք, արդարութիւն և փառք պիտի գտնէ։

22—*Իմաստունը զօրաւորներուն քաղաքը կ'ելլէ,*
Ու +նոյն ապաւինած ամրութիւնը կը փլցնէ։

23—*Իր բերանը ու լեզուն պահողը*
Իր հոգին նեղութիւններէն կը պահէ։

24—*Հպարտասիրութեամբ և բարկութեամբ վարուող մարդուն անունը*
Հպարտ և յանդուգն ծաղր ընող կ'ըսուի։

25—*Ծոյլին ցանկութիւնը զանիկա կը մեռցնէ.*
Վասն զի անոր ձեռքերը աշխատիլ չեն ուզեր։

26—*Անիկաամէն օր սաստիկ կը ցանկայ.*
Իսկ արդարը կու տայ ու չխնայէր։

27—*Ամբարիշտներուն զոհը պիղծ է,*
Մանաւանդ երբ զանիկա չար դիտաւորութեամբ կը մատուցանեն։

28—*Սուտ վկան պիտի կորսուի.*
Բայց լսող մարդը †հաւատարմութեամբ պիտի խօսի։

29—*Ամբարիշտ մարդը իր երեսը կը պինդցնէ.*
Բայց ուղիղը իր ճամբաները կը չիտկէ։

30—*Իմաստութիւն, հանճար կամ խորհուրդ մը չկայ*
Ո՛ր Տէրոջը դէմ կ'ելլէ։

31—*Պատերազմի օրուան համար ձին կը պատրաստուի.*
Բայց փրկութիւնը Տէրոջմէն է։

ԳԼ. ԻԲ

Բարի անունը չատ հարստութենէն աւելի ընտիր է.
Ու շնորհքը արծաթէն ու ոսկիէն աղէկ է։
2—*Հարուստը ու աղքատը իրարու կը հանդիպին.*
Անոնց ամէնը ստեղծողը Տէրն է։
3—*Խորագէտը չարիքը կը տեսնէ ու կը ղգուշանայ.*
Բայց միամիտները յառաջ կ'անցնին ու վնաս կը կրեն։
4—*Խոնարհութեան և Տէրոջը երկիւղին վարձատրութիւն, փառք ու կեանք է։*
5—*Ծուռ մարդուն ճամբուն մէջ փուշեր ու որոգայթներ կան.*
Իր հոգին պահողը անոնցմէ հեռու կ'ըլլայ։
6—*Կրթէ մանուկը *իր ճամբան ակած տուներ՝,*
Որպէս զի իր ծերութեան առեն ալ անկէ չխոտորի։
7—*Հարուստը աղքատներուն վրայ կը տիրէ,*
Ու փոխ առնողը փոխ տուողին ծառայ կ'ըլլայ։
8—*Զարութիւն ցանողը ունայնութիւն կը հնձէ,*
Ու անոր բարկութեանը գաւազանը պիտի կորսուի։
9—*Աղէկ աչք անեցողը օրհնեալ կըլլայ.*
Վասն զի իր հացէն աղքատին կու տայ։
10—*Ծաղր ընողը եթէ վռնտես, կռիւը կ'անցնի,*
Ու վէճը և անարգանքը կը դադրին։
11—*Սրտի մաքրութիւն սիրողին շրթունքներուն վրայ շնորհք կայ,*
Ու թագաւորը անոր բարեկամ կ'ըլլայ։
12—*Տէրոջը աչքերը գիտութիւնը կը պահպանեն,*

Բայց անօրէնին խօսքերը կ'աւերէ։
13—*Ծոյլը կ'ըսէ, Դուրսը առիւծ կայ,*
Հրապարակին մէջ պիտի մեռցուիմ։
14—*Օտար կիներուն բերանը խորունկ փոս է,*
Տէրոջը սաստկի եղողը հոն կ'իյնայ։
15—*Մանուկին սրտին մէջ յիմարութիւնը կապուած է.*
Զանիկա խրատի գաւազանը կը հեռացնէ անկէ։
16—*Իր ապրուստը չատցնելու համար աղքատին զրկանք ընողը*
Ու հարուստին տուողը անշուշտ կարօտութեան կը հասնի։
17—*Ականջդ ծալ ու իմաստուններուն խօսքերը մտիկ ըրէ,*
Ու փութ սիրտդ իմ գիտութեանս տուր։
18—*Վասն զի եթէ անոնք քու որովայդ մէջ պահես, համելի բան է.*
Անոնք քու չրթունքներուդ վրայ ալ պիտի հաստատուին։
19—*Ահա քեզի այս բաները այսօր իմացուցի,*
Որպէս զի քու ապաւինութիւնդ Տէրոջը վրայ ըլլայ։
20—*Մի՞թէ ես քեզի *չատ անգամ՝ խրատներով*
Ու գիտութեամբ չգրեցի՞,
21—*Որպէս զի քեզի ճշմարիտ խօսքերուն ստուգութիւնը սորվեցնեմ,*
Որպէս զի քեզի †հարցնողներուն ճշմարիտ խօսքերով պատասխան տաս։
22—*Աղքատը մի կողոպտեր իր աղքատութեանը համար,*
Ու անանկը էդատաստանի մէջ մի կոխեր.
23—*Վասն զի Տէրը անոնց իրաւունքը պիտի պաշտպանէ,*
Ու զանոնք կողոպտողներուն հոգին պիտի կողոպտէ։
24—*Բարկացող մարդուն հետ ընկերութիւն մի ըներ,*
Ու ցասկոտ մարդուն հետ մի երթար.
25—*Որպէս զի չըլլայ թէ անոր ճամբաները սորվիս,*

Ու քու հոգուդ որոգայթ վաստկիս։
26—*Ձեռք տուողներէն մի ըլլար,*
Ո՛ւ պարտքի համար երաշխաւոր եղողներէն։
27—*Եթէ վճարելու կարողութիւն չունիս,*
Ինչո՞ւ համար տակէդ քու անկողինդ առնեն։
28—*Զրլլայ որ տեղէն վերցնես այն վաղեմի սահմանին նշոնը,*
Զոր քու հայրերդ դրեր են։
29—*Իր գործին մէջ ժիր մարդ մը կը տեսնե՞ս,*
Անիկա թագաւորներուն առջև պիտի կայնի.
Աննշան մարդոց առջև պիտի չկայնի։

ԳԼ. ԻԳ

Երբ իշխանի հետ սեղան նստիս,
Առջեւդ դրուածը աղէկ նայէ։
2—*Ու եթէ դուն ախորժակի տէր մարդ ես,*
Կոկորդիդ վրայ դանակ դիր։
3—*Անոր ուրիշ կերակուրներուն մի ցանկար.*
Վասն զի անոնք խաբէութեան հաց են։
4—*Հարուստ ըլլալու մի աշխատիր.*
*Քու *խորհուրդդ եա կեցիր։*
5—*Աչք պիտի տնկե՞ս այն բանին որ ոչինչ է.*
Անիկա անշուշտ իրեն թեւեր կը շինէ,
Ու արծիւի պէս օդը կը թռչի։
6—*Չար աչք ունեցողին հացը մի ուտեր,*
Ու անոր ուրիշ կերակուրներուն մի ցանկար.
7—*Վասն զի անիկա իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ, այնպէս է.*
Կեր ու խմէ՛ կ'ըսէ քեզի,
Բայց անոր սիրտը քեզի հետ չէ։
8—*Կերած պատառդ պիտի փսխես,*
Ու հաճելի խօսքերդ պիտի կորսնցնես։
9—*Ցիմարին ականջներուն մի խօսիր,*
Քանզի քու խօսքերուդ իմաստութիւնը կ'անարգէ։
10—*Վաղեմի սահմանին նշոնը տեղէն մի վերցներ,*
Ու որբերուն արտերը մի մտներ.

Վասն զի անոնց փրկիչը հզօր է,
Ան քու անօրէնին խօսքերը կ'ատբէ։
13—*Ծոյլը կ'ըսէ, Դուրսը առիւծ կայ,*
Հրապարակին մէջ պիտի մեռցուիմ։
14—*Օտար կիներուն բերանը խորունկ փոս է,*
Տէրոջը սաստկի եղողը հոն կ'իյնայ։
15—*Մանուկին սրտին մէջ յիմարութիւնը կապուած է.*
Զանիկա խրատի գաւազանը կը հեռացնէ անկէ։
16—*Իր ապրուստը չատցնելու համար աղքատին զրկանք ընողը*
Ու հարուստին տուողը անշուշտ կարօտութեան կը հասնի։
17—*Ականջդ ծալ ու իմաստուններուն խօսքերը մտիկ ըրէ,*
Ու փութ սիրտդ իմ գիտութեանս տուր։
18—*Վասն զի եթէ անոնք քու որովայդ մէջ պահես, համելի բան է.*
Անոնք քու չրթունքներուդ վրայ ալ պիտի հաստատուին։
19—*Ահա քեզի այս բաները այսօր իմացուցի,*
Որպէս զի քու ապաւինութիւնդ Տէրոջը վրայ ըլլայ։
20—*Մի՞թէ ես քեզի *չատ անգամ՝ խրատներով*
Ու գիտութեամբ չգրեցի՞,
21—*Որպէս զի քեզի ճշմարիտ խօսքերուն ստուգութիւնը սորվեցնեմ,*
Որպէս զի քեզի †հարցնողներուն ճշմարիտ խօսքերով պատասխան տաս։
22—*Աղքատը մի կողոպտեր իր աղքատութեանը համար,*
Ու անանկը էդատաստանի մէջ մի կոխեր.
23—*Վասն զի Տէրը անոնց իրաւունքը պիտի պաշտպանէ,*
Ու զանոնք կողոպտողներուն հոգին պիտի կողոպտէ։
24—*Բարկացող մարդուն հետ ընկերութիւն մի ըներ,*
Ու ցասկոտ մարդուն հետ մի երթար.
25—*Որպէս զի չըլլայ թէ անոր ճամբաները սորվիս,*

Ու քու հոգուդ որոգայթ վաստկիս։
26—*Ձեռք տուողներէն մի ըլլար,*
Ո՛ւ պարտքի համար երաշխաւոր եղողներէն։
27—*Եթէ վճարելու կարողութիւն չունիս,*
Ինչո՞ւ համար տակէդ քու անկողինդ առնեն։
28—*Զրլլայ որ տեղէն վերցնես այն վաղեմի սահմանին նշոնը,*
Զոր քու հայրերդ դրեր են։
29—*Իր գործին մէջ ժիր մարդ մը կը տեսնե՞ս,*
Անիկա թագաւորներուն առջև պիտի կայնի.
Աննշան մարդոց առջև պիտի չկայնի։

ԳԼ. ԻԳ

Երբ իշխանի հետ սեղան նստիս,
Առջեւդ դրուածը աղէկ նայէ։
2—*Ու եթէ դուն ախորժակի տէր մարդ ես,*
Կոկորդիդ վրայ դանակ դիր։
3—*Անոր ուրիշ կերակուրներուն մի ցանկար.*
Վասն զի անոնք խաբէութեան հաց են։
4—*Հարուստ ըլլալու մի աշխատիր.*
*Քու *խորհուրդդ եա կեցիր։*
5—*Աչք պիտի տնկե՞ս այն բանին որ ոչինչ է.*
Անիկա անշուշտ իրեն թեւեր կը շինէ,
Ու արծիւի պէս օդը կը թռչի։
6—*Չար աչք ունեցողին հացը մի ուտեր,*
Ու անոր ուրիշ կերակուրներուն մի ցանկար.
7—*Վասն զի անիկա իր սրտին մէջ ինչպէս կը մտածէ, այնպէս է.*
Կեր ու խմէ՛ կ'ըսէ քեզի,
Բայց անոր սիրտը քեզի հետ չէ։
8—*Կերած պատառդ պիտի փսխես,*
Ու հաճելի խօսքերդ պիտի կորսնցնես։
9—*Ցիմարին ականջներուն մի խօսիր,*
Քանզի քու խօսքերուդ իմաստութիւնը կ'անարգէ։
10—*Վաղեմի սահմանին նշոնը տեղէն մի վերցներ,*
Ու որբերուն արտերը մի մտներ.

Վասն զի անոնց փրկիչը հզօր է,
Ան քու անօրէնին խօսքերը կ'ատբէ։

Ու ջանք ունեցիր որ ուսնիս։
2—*Ես ձեզի բարի վարդապետութիւն կու տամ,*
Ինծի մի՛ թողուք զձեր օրէնքը։
3—*Որովհետեւ ես հայրիկիս համար որդի մը եղայ,*
Մօրս առջեւ նազելի և միակ զաւակ։
4—*Ինծի սորվեցուց ու ըսաւ ինծի,*
Թող սիրտդ իմ խօսքերս ընդունի,
Պահէ իմ պատուիրանքներս ու կեցիր։
5—*Ձեռք ձգէ՛ իմաստութիւն, ձեռք ձգէ՛ հանճար,*
Մոռնալ մի՛ տար ու մի՛ խոտորիր իմ բերնէս խօսքերէն։
6—*Մի՛ թողուր զայն, պահէ զքեզ,*
Սիրէ՛ զայն, զայն քեզ կը պահէ։
7—*Իմաստութեան սկիզբը իմաստութիւն ձեռք ձգէ՛,*
Ամէն ինչէ առաջ հանճար ձեռք ձգէ՛։
8—*Զայն բարձրացուր, զայն քեզ կը բարձրացնէ,*
Զայն փառաւորելով զքեզ կը փառաւորէ։
9—*Գլխուդ շնորհքի պսակ մը կու տայ,*
Պատիւի պսակ մը կը պարգեւէ քեզի։
10—*Լսէ՛ ու ընդունէ՛ իմ խօսքերս,*
Որպէսզի երկար տարիներ ունենաս։
11—*Ես ձեզի իմաստութեան ճամբան ցուցուցի,*
Ուղիղ շաւիղներուն մէջ առաջնորդեցի։
12—*Երբ երթաս, քայլերդ չեն նեղուիր,*
Ու եթէ վազես, չես գայթակղիր։
13—*Պինդ բռնէ՛ խրատը, չձգես զայն,*
Պահէ՛ զայն, զայն քու կեանքդ է։
14—*Ամբարիշտներուն շաւիղը մի՛ մտներ,*
Ու չարերուն ճամբան մի՛ քալեր։
15—*Խուսափէ՛ անկէ, չանցնիս անկէ,*
Դարձիր ու հեռացիր անկէ։
16—*Վասն զի անոնք չեն քնանար չարութիւն չընելով,*
Ու քունը կորսնցուցած կ'ըլլան,
Եթէ մէկը չգայթակղեցնեն։
17—*Վասն զի անիրաւութեան հացը կ'ուտեն,*
Ու բռնութեան գինին կը խմեն։
18—*Բայց արդարներուն շաւիղը առտուան լոյսի պէս է,*
Որ կը պայծառանայ մինչեւ կատարեալ ցերեկ։
19—*Ամբարիշտներուն ճամբան խաւարի պէս է,*
Չգիտեն թէ ինչի կը գայթակղին։
20—*Որդեակ իմ, իմ խօսքերուս ուշադրութիւն ըրէ՛,*
Ականջդ ծալ իմ ըսածներուս։
21—*Աչքերդ անոնցմէ չհեռանան,*
Պահէ՛ զանոնք քու սրտիդ մէջ։
22—*Վասն զի անոնք կեանք են անոնց որ զանոնք կը գտնեն,*
Ու բոլոր մարմնին բժշկութիւն։
23—*Ամէն պահպանելիէ առաջ սիրտդ պահէ՛,*
Վասն զի կեանքի աղբիւրները անկէ կը բղխին։
24—*Ամբիծ բերան մը քեզի հեռու պահէ՛,*
Ու ստամոքսաբան շրթունքներ քեզմէ հեռու ըլլան։
25—*Աչքերդ ուղիղ նային,*
Ու երեսդ ուղիղ առջեւդ նայի։
26—*Ոտքիդ շաւիղը ուղղէ՛,*
Ու բոլոր ճամբաներդ հաստատ ըլլան։
27—*Աջ կամ ձախ մի՛ խոտորիր,*
*Ոտքդ չարութենէ հեռու պահէ՛

11—Քանզի անոնց վբեժխնդիրը զօրաւոր է,
Ու՝ քեզի դէմ անոնց իրաւունքը անիկա պիտի պաշտպանէ։
12—Քու սիրագ խրատ տուր,
Ու ականջներդ՝ գիտութեան խօսքերուն,
13—Տգայն խրատը մի կարեր,
Վասն զի երէկ զանիկա գաւազանով ծեծես, չմեռնիր։
14—Դուն անիկա գաւազանով կը ծեծես,
Բայց անոր հոգին դժոխքէն կ'ազատես։
15—Որդեակ իմ, երէկ քու սիրագ իմաստուն ըլլայ,
Իմ սիրտս ալ պիտի ուրախանայ։
16—Ու երբ քու չրթունքներդ ուղիղ բաներ խօսին,
Իմ երիկամունքներս պիտի ցնծան։
17—Քու սիրագ մեղաւորներուն չնախանձի,
Հապա ամեն օր Տէրոջը վախին մէջ եղիր։
18-Վասն զի իրաւցընէ վախճան մը կայ,
Ու քու յոյսդ պիտի չկտրի։
19—Որդեակ իմ, լսէ, ու իմաստուն եղիր,
Ու քու սիրտդ ուղիղ ճամբուն մէջ չխոտի։
20-Մի ընկերանար գինեմոլներուն հետ,
Ու՝ իրենց մսոյնները մաշողներուն հետ.
21—Վասն զի գինեմոլը ու շռայլը աղքատ կ'ըլլան.
Ու քուն փունը պատառած հանդերձներ կը հագցնէ։
22—Հնազանդութիւն ըրէ հօրդ որ քեզ ծներ է,
Ու մի անարգեր քու մայրդ երբ կը պառաւի։
23—Ձշմարտութիւնը ծախու առ ու ՚ի՚ր մի ծախեր.
Նմանապէս իմաստութիւնը, խրատը ու հանճարը։
24—Արդարին հայրը շատ պիտի ցնծայ,
Ու իմաստուն զաւակ ծնանողը անոր վրայ պիտի ուրախանայ։
25—Թող քու հայրդ ու մայրդ ԱՍՈՒԾՈ ուրախանան,
Ու քեզ ծնանողը թող ցնծայ։

26—Որդեակ իմ, քու սիրտդ ինձի տուր,
Ու քու աչքերդ թող իմ ճամբաներս դիտեն.
27—Վասն զի պոռնիկը խորունկ փոս է,
Ու օտար կինը նեղ ջրհոր է.
28—Ու անիկա գողի պէս դարանը կը մտնէ,
Ու մարդոց մէջ անհաւատարիմները կ'աւելցնէ։
29—Որո՞ւն է վայը. որո՞ւն է ոհը.
Որո՞ւն են կռիւները. որո՞ւն են արտուունջները.
Որո՞ւն են առանց պատճառի վերքերը.
Որո՞ւն է աչքերու կարմրութիւնը։
30—Գինիին քով մնացողներուն,
Խառնած գինին փնտռելու գացողներուն։
31—Մի նայիր գինիին կարմրութեանը,
Գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն ու շիտակ վազելուն։
32—Անիկա ետքը օձի պէս կը խածնէ
Ու քարբի պէս կը խայթէ։
33—Աչքե՚ր քու տեսնեն օտար կիներու պիտի նային,
Ու քու սիրտդ ծուռ բաներ պիտի խօսի.
34—Ու ծովու *մէջ պառկողի պէս՝
Ու կայմի վրայ պառկողի պէս պիտի ըլլաս։
35—Ու՝ ե՚րե՚ ըսես, Զիս ծեծեցին, ու ես ցաւ մը չզգացի,
Ինծի զարկին, ու ես բան մը չիմացայ.
Ե՞րբ պիտի արթննամ,
Որպէս զի զանիկա նորեն փնտռեմ։

ԳԼ. ԻԴ

Զար մարդոց մի նախանձիր,
Ու անոնց հետ կենալու մի ցանկար.
2—Վասն զի անոնց սիրտը բռնութիւն կը խորհի,
Ու անոնց շրթունքները վնասներու վրայով կը խօսին։
3—Տունը իմաստութեամբ կը շինուի,
Ու հանճարով կը հաստատուի։
4—Ու շտեմարանները գիտութեամբ՝
Ամէն թանկագին ու վայելուչ գանձերով կը լեցուին։

*ՆԷՔ. սիրտը

5—Իմաստուն մարդը զօրաւոր կ'ըլլայ,
Ու գիտութիւն ունեցողը ոյժը կ'աւելցընէ.
6—Վասն զի պատերազմդ խոհեմութեամբ կ'ընես.
Ու *ազատութիւնը խորհրդականներու շատութիւնով կ'ըլլայ։
7—Իմաստութիւնը յիմարին համար շատ բարձր է.
Անիկա դրանը մէջ իր բերանը չբանայ։
8—Ով որ չարութիւն ընել կը մտածէ,
Անիկա նենգամիտ պիտի ըսուի։
9—Ցիմարութեան խորհուրդը մեղք է,
Ու ծաղր ընողը մարդոց զզուելի է։
10—Եթէ նեղութեան օրը թուլնաս,
Ուժդ քիչ է։
11—Ազատէ զանոնք որ մեռցուելու կը տարուին,
Ու սպանուելու վրայ եղողները ետ դարձնելէն ետ մի կենար։
12—Եթէ ըսես Թէ Մենք ասիկա չգիտցանք,
Ահա սիրտերը կշռողը ինք կը հասկնայ.
Ու քու հոգիդ պահպանողը ինք գիտէ,
Ու հատուցանէ մարդուն իր գործին չափովը պիտի հատուցանէ։
13—Որդեակ իմ, մեղր կեր, որ աղեկ է,
Ու մեղրախորիսխ ՚ի՚ր, որ քիմքիդ քաղցր է։
14—Իմաստութեան ճանչցումն ալ քու հոգիիդ այնպէս ե՚ղէր դէ՚ր ըլլա՚,
Եթէ գտնիկա գանես.
Ու վերջաւն մը կայ,
Ու քու յոյսդ պիտի չկտրի։
15—Ով չար, արդարին տանը դարանակալ մի ըլլար,
Անոր բնակարանը մի աւերեր։
16—Վասն զի արդարը եօթը անգամ ալ իյնայ՝ պիտի կանգնի.
Բայց չարերը ձախորդութեան մէջ պիտի իյնան։
17—Երբ քու թշնամիդ իյնայ՝ մի ուրախանար,
Ու երբ նոր ոտքը սահի՝ քու սիրտդ ԻՂՁ չցնծայ։

*Կամ, յաղթութիւնը
†Կամ, հանգստութեան տեղը

18—Զըլլայ որ Տէրը տեսնէ ու իրեն անհաճոյ երեւնայ,
Ու իր բարկութիւնը անոր վրայէն դարձընէ։
19—Չարագործներուն համար մի սրտմտիր,
Ու՝ ամբարիշտներուն մի նախանձիր.
20—Վասն զի չար մարդը ԲՈՒՆ վախճան չունենար.
Ամբարիշտներուն ճրագը պիտի մարի։
21—Որդեակ իմ, Տէրոջմէ ու թագաւորէն վախցիր,
Ու՝ խռովարար մարդոց հետ մի խառնուիր.
22—Քանզի անոնց կործանումը յանկարծ կ'ըլլայ,
Ու երկուքին ալ պատուհասը ո՞վ գիտէ։
23—Ասոնք ալ իմաստուններուն ՅՈՊՈՒ են.
Դատաստանի մէջ աչառութիւն ընելը ազէկ չէ։
24—Ով որ ամբարիշտին կ'ըսէ Թէ Դուն արդար ես,
Ազգերը անոր անէծք պիտի տան,
Ու ժողովուրդները զանիկա պիտի անարգեն։
25—Բայց յանդիմանութիւն տուողները շնորհք կ'ըլլայ,
Ու անոնց վրայ բարի օրհնութիւն կու գայ։
26—Շիտակ պատասխան տուողը
Շրթունքներ կը հաստատէ։
27—Դուրսի գործդ կանոնաւորէ,
Ու զանիկա †քու արտիդ մէջ կարգի դիր,
Ու տունդ ետքը չինէ։
28—Քու դրացիիդ դէմ զուր տեղ վկայութիւն մի ըներ,
Ու քու շրթունքներովդ մի խաբեր։
29—Մի ըսեր Թէ Անիկա ինծի ինչպէս որ ըրաւ, ես ալ անոր այնպէս պիտի ընեմ,
Ամէն մարդուն իր գործին համեմատ հատուցում պիտի ընեմ։
30—Ծոյլ մարդուն արտին քովէն՝
Ու պակասամիտ մարդուն այգիին քովէն անցայ։

*ՆԷՔ. փոխաբերական
†ՆԷՔ. արտին մէջ քեզի համար

31—Եւ ահա ամէնուն մէջ փուշեր բուսեր էին,
Ու անոնց երեսը եղինճներ ծածկեր էին,
Եւ անոր քարէ պատը փլած էր։
32—Ու երբ ըսի՝ տեսայ՝ մոգթս մէջ պահեցի,
Աչք նայեցայ ու խրատ առի։
33—Նըխե քիչ մը քնանաս, քիչ մը ներհանս,
Ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու համար,
34—Ու աղքատութիւնդ ճամբորդի պէս պիտի գայ,
Եւ քու կարօտութիւնդ՝ սպառազինեալ մարդու պէս։

Գլ. ԻԹ

Ասոնք ալ Սողոմոնի առակներն են,
զորոնք Ցուդայի Եզեկիա թագաւորին մարդիկը օրինակեցին։
2-Բանը ծածկելը Աստուծոյ փառքն է։
Բայց թագաւորներուն փառքը բանը ուղէ քննելն է։
3—Երկինքի բարձրութիւնը ու երկրի խորութիւնը
Եւ թագաւորներուն սիրտը չեն քննուիր։
4—Վերցուր արծաթէն կղկղանքը,
Ու օսկերիչին համար գոհար անօթ կ'ելլէ։
5—Վերցուր թագաւորին առջեւէն ամբարիշտը,
Ու անոր աթոռը արդարութեամբ կը հաստատուի։
6—Թագաւորին առջեւ մի պարծիր,
Եւ մեծերուն տեղը մի կենար.
7—Վասն զի աղէկ է որ քեզի ըսեն Թէ Հոս ելլէր,
Քան Թէ քու աչքերուդ տեսած իշխանին առջեւ վար իջեցնեն քեզ։
8—*Կռիւի համար չուտով դուրս մի ելլեր.
Զի ետքը ընկերդ քեզ ամչցնէ,
Դուն վերջը ինչ ընելիդ չգիտնաս։
9—Ընկերիդ հետ քու դատդ վարէ,
Բայց գաղտնիքը ուրիշի մի յայտներ.
10—Զի ետքը որ լսողը քեզ անարգէ,
Ու գէշ անունդ անջնջելի մնայ։

11—Ցարմարութեամբ ըսուած խօսքը
Արծաթի զարդերու մէջ ոսկեայ խնձորներու կը նմանի։
12—Իմաստունին յանդիմանութիւնը՝
մեկ ընդ ականջին
Ոսկեայ օղ ու մաքուր ոսկի մանեակ է։
13—Հաւատարիմ դեսպանը զինք ղրկողներուն
Հունձքի առեւնի ձիւնին զօրութեանը պէս է,
Ու իր տէրոջը հոգին կը զուարճացնէ։
14—Սուտ *առատաձեռնութեան վրայ պարծենցողը
Անանձրեւ ամպերու ու հովի պէս է։
15—Համբերութեամբ իշխանին սիրտը կը չինուի,
Եւ անոյշ լեզուն ոսկորներ կը կոտրէ։
16—Եթէ մեղր գտնես, քեզի բաւական եղածին չափ կեր,
Զըլլայ որ անով կշտանաս ու զանիկա փսխես։
17—Քու ոտքդ դրացիդ տունը յաճախ չկոխէ,
Զըլլայ որ քեզմէ ձանձրանայ ու քեզ ատէ։
18—Իր դրացին համար սուտ վկայութիւն ընողը
Ուռի, սուրի և սրած նետի պէս է։
19—Նեղութեան օրը անհաւատարիմ մարդու ապաւինիլը
Փչրուող ակռայի և դիւրագլոր ոտքի պէս է։
20—Տրտում մարդուն առջեւ երգեր երգողը
Ցուրտ օրը էդ զգեստը հանողին,
Կամ բորակի վրայ խոփած քացախին նը նմանի։
21—Եթէ թշնամիդ անօթի է, անոր հաց կերցուր,
Ու եթէ ծարաւ է, անոր ջուր խմցուր։
22—Քանզի այսպէս ընելով անոր գլխուն վրայ կրակի կայծեր կը դիզես,
Եւ Տէրը քեզի հատուցում պիտի ընէ։
23-Հիւսիսային հովը անձրեւը *ետը ցրուէ,
Ու խոժոռ դէմքը՝ չարախօս լեզուն։
24—Աղէկ է տանիքի մը անկիւնը բնակիլ,

*Կամ, Դատի

*Եբր. պարգեւի †Կամ, կը յարուցանէ

Քան թէ կռուասէր կնոջ հետ մեծ տան մէջ։
25—Ինչպէս է պաղ ջուրը ծարաւած մարդուն,
Այսպէս է հեռու երկրէ եկած բարի լուրը։
26—Զար մարդուն առջեւ իյնող արդարը
Պղտորուած աղբիւրի ու աւերուած ակի կը նմանի։
27—Շատ մեղր ուտելը աղէկ չէ,
Ու մարդոց իր փառքը փնտռելը փառք չէ։
28—Իր ոգին չզսպող մարդը
Փլած ու անպարիսպ քաղաքի պէս է։

Գլ. Ի

Ինչպէս ամառուան մէջ ձիւն, և հունձքի ատեն անձրեւ,
Այնպէս յիմարին պատիւ չվայելեր։
2—Ինչպէս ծնեզուկը կը պատրէ, ու ծիծեռնիկը կը թռչի,
Այնպէս առանց պատճառի անէծքը չգար։
3—Ձիուն խարազան, ու իշուն սանձ,
Եւ յիմարներուն կռնակին գաւազան պէտք է։
4—Ցիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան մի տար,
Զըլլայ որ դուն ալ անոր նման ըլլաս։
5—Ցիմարին իր յիմարութեանը համեմատ պատասխան տուր,
Զըլլայ որ անիկա ինքզինքն իմաստուն կարծէ։
6—Ցիմարին ձեռքովվ խօսք դրկողը
Իր ոտքերը կը կտրէ ու վնաս *կը քաշէ
7—Լեղէաց կաղին ոտքերը կ'երերան,
Այնպէս յիմարին բերնին մէջ առակը։
8—Ցիմարին պատիւ տուողը
†Քարակոյտի մը մէջ պարսկաքար քարկոծու ծրար գնողին կը նմանի։
9—Առակը յիմարին բերնին մէջ՝
Գինովին ձեռքը մտնող փուչին պէս է։
10—Մեծ է ամէն բան յաղեցնողը,
Որ յիմարին վարձք կու տայ և յանցաւորներուն վարձք կու տայ։
11—Ինչպէս շունը իր փսխածին կը դառնայ,

*Եբր. կը խմէ
†Կամ, Պարսատիկի մէջ քար կապողին

Այնպէս յիմարը իր յիմարութեանը կը դառնայ։
12—Զինք իմաստուն կարծող մարդ մը տեսա՞ր.
Աւելի յոյս կայ յիմարէն քան Թէ անկէ։
13—Ծոյլը կ'ըսէ Թէ ճամբուն մէջ առիւծ կայ,
Հրապարակներուն մէջ առիւծ։
14—Ինչպէս դուռը իր ծխնիներուն վրայ կը դառնայ,
Այնպէս ծոյլը իր անկողինին վրայ։
15—Ծոյլը իր ձեռքը ամանին մէջ կը խոթէ,
Ու բերանը դէպ՛ ատնելու գժուարութիւն կը զգայ։
16—Ծոյլը իր աչքերուն՝
Խելացի պատասխան տուող եօթը մարդկէն աւելի իմաստուն կ'երեւնայ։
17—Իրենը չեղած դատին համար բարկացող անցաւորը
Շունը ականջներէն բռնողին պէս է։
18—Ինչպէս կատաղած մարդը որ կրակի կայծեր, նետեր ու մահ կը ցանէ,
19—Այնպէս է այն մարդը որ իր բարեկամին նենգութիւն կ'ընէ,
Ու ետքէն կ'ըսէ, Ահա կատակ ըրի։
20—Առանց փայտի կրակը կը մարի,
Եւ եթէ քսուկ չըլլայ, կռիւը կը դադրի։
21—Ինչպէս ածուխը կայծերուն, ու փայտը կրակին,
Այնպէս է կռուասէր մարդը վէճ բռընկցընելու։
22—Քսուկ մարդուն խօսքերը քաղցր պատառներու պէս են,
Ու անոնք մինչեւ փորին ջուխտարանները կ'իջնեն։
23—Եռանդուն չրթունքները և չար սիրտը
Արծաթի կղկղանքով ապակած հողէ ամանի նը նմանին։
24—Ատեցողը իր չրթունքներովը կը կեղծէ,
Ու սրտին մէջ նենգութիւն կը պահէ։
25—Անոր գեղեցիկ խօսուածքին չհաւատաս.
Վասն զի անոր սրտին մէջ եօթը գզուելի բան կայ։
26—Ան որ իր ատելութիւնը նենգութեամբ կը ծածկէ,

Անոր չարութիւնը ժողովքի մէջ պիտի յայտնուի։
27—Փոս փորողը ինք մէջը պիտի իյնայ, Ու ան որ քար կը գլորի՝ իրեն պիտի դառնայ։
28—Սատանայ լեզուն *իր ծեծածները՝ կ'ատէ, Ու շողոքորթող բերանը կործանում կ'ընէ։

ԳԼ. ԻԵ

Վաղուան համար մի պարծիր, Վասն զի չես գիտեր թէ օրը ի՛նչ պիտի ծնանի։
2—Քեզ ուրիշը գովէ և ոչ թէ քու բերանդ, Օտարը՝ և ոչ թէ քու շրթունքներդ։
3—Քարը ծանրութիւն՝ ու աւազը բեռ է, Բայց յիմարին բարկութիւնը երկուքէն ալ ծանր է։
4—Բարկութիւնը անողորմ է, ու սրամտութիւնը խաթա է, Բայց նախանձին առջև ո՞վ կրնայ կեցնալ։
5—Յայտնի յանդիմանութիւնը Ծածուկ սիրէն աղէկ է։
6—Բարեկամին *հարուածները հաւատարիմ են, Բայց թշնամիին համբոյրները առատ են։
7-Կուշտ մարդը խորիսխը կ'արհամարհէ, Բայց անօթի մարդուն ամէն լեղի բան անոյշ կու գայ։
8—Իր տեղէն թափառական եղող մարդը Իր բոյնէն թափառական եղող թռչունին պէս է։
9—Իւղը ու խունկը սիրտը կը զուարճացնեն, Նմանապէս բարեկամին քաղցրութիւնը՝ մեր իմ խորհրդով։
10—Քու բարեկամդ ու քու հօրդ բարեկամը մի թողուր, Ու քու նեղութեանդ տունը քու եղբօրդ տունը մի երթար. Մօտ դրացին հեռու եղող եղբօրմէ աղէկ է։
11—Որդեակ իմ, իմաստուն եղիր ու սիրտս ուրախացուր, Որպէս զի պիտ անարգողին պատասխան տամ։
12—Խորագէտը չարիքը կը տեսնէ ու կը զգուշանայ, Բայց միամիտները առաջ կ'անցնին ու վնաս կը կրեն։
13—Օտարականի մը երաշխաւոր եղողին զգեստը առ, Ու օտար կնոջ համար երաշխաւոր եղողին գրաւ առ։
14—Երեկ մեկը առաւօտուն կանուխ ելլէ, ու իր դրացին բարձր ձայնով օրհնէ, Անիկա անոր անէծք կը սեպուի։
15—Անձրեւատ օրուան չարունակ կաթիլը Ու կռռաւսէր կինը իրարու կը նմանին։
16—Զանիկա ծածուկ պահողը հովը կը պահէ, Ու ալ ձեռքին հէլ *ունեցած իւղը վնաս կը յայտնէ։
17—Երկաթը երկաթով կը սրուի, Ու մարդը իր բարեկամին երեսը կը սրէ։
18—Թզենիին հոգ տանողը անոր պտուղը կ'ուտէ, Ու իր տէրը պահպանողը պատիւ կը գտնէ։
19—Ինչպէս ջուրը երեսը երեսին, Նոյնպէս սիրտը մարդը մարդուն կը ցոյց ընէ։
20-Դժոխքը ու կորուստը չեն կշտանար, Մարդուն աչքերն ալ չեն կշտանար։
21—Ինչպես հալոցը արծաթը՝ և փորձանքն ալ ոսկին կը փորձէ։
22—Ծիմարը ցորենի հետ անկանի մէջ տանդիտատով ծեծես ալ, Անոր յիմարութիւնը անկէ չերթար։
23—Քու ոչխարներուդ վիճակը աղէկ գիտցիր, Ու հօտերուդ ուշադիր նայէ։
24-Վասն զի հարստութիւնը միշտ չմնար, Ու թագը դարէ դար չտեւեր։
25—Կանանչը կը բուսնի, խոտը կ'երեւնայ, Ու լեռներուն խոտերը կը ժողովին։
26—Գառները քու հագուստիդ համար են, Ու նոխազները դաշտերուն գինն են։
27—Քու կերակուրիդ համար և քու տանդ կերակուրին համար Ու քու աղախիններուդ ապրուստին համար Բաւական այծի կաթ պիտ ունենաս։

ԳԼ. ԻԶ

Ամբարիշտը առանց մէկուն հալածելուն կը փախչի. Բայց արդարները առտուգ առիւծի պէս քաջասիրտ կ'ըլլան։
2—Երկրին յանցանքովը անոր իշխանները շատ կ'ըլլան. Բայց անոր վիճակը իմաստուն ու գիտուն մարդուն ձեռքով երկար կը դիմանայ։
3—Աղքատները զրկող չքաւոր մարդը Հացի կարօտութիւն բերող յորդառատ անձրեւի պէս է։
4—Օրէնքը մերժողները ամբարիշտները կը գովեն, Բայց օրէնքը պահողները անոնց դէմ կը կենան։
5—Չար մարդիկ իրաւունքը չեն հասկընար. Բայց Տէրը փնտռողները ամէն բան կը հասկնան։
6—Իր կատարելութեանը մէջ քալող աղքատը Ծուռ ճամբաներու մէջ քալող հարուստ մարդէն աղէկ է։
7—Օրէնքը պահողը իմաստուն տղայ է, Բայց շռայլներուն բարեկամ եղողը իր հայրը կ'ամչցնէ։
8—Իր ստացուածքը տոկոսիքով և վաշխով աւելցնողը Ջանիկա աղքատին ողորմութիւն ընդունի համար կը ժողովէ։
9—Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը դարձնէ իր ականջը, Անոր աղօթքը անգամ պիղծ է։
10—Ուղիղները չար ճամբու մէջ մոլորեցնողը իր փոսին մէջ պիտի իյնայ. Սակայն արդարները բարիք պիտի ժառանգեն։
11—Հարուստ մարդը իր աչքերուն իմաստուն կ'երեւնայ, Բայց հանճարեղ աղքատը զանիկա կը քննէ։
12—Երբ արդարները ուրախանան, մեծ փառք կ'ըլլայ. Բայց երբ ամբարիշտները բարձրանան, մարդ *կը փնտռուի։
13—Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտնէ, Բայց ըննդ խոստովանողը ու մեկզիլ ձգողը ողորմութիւն կը գտնէ։
14—Միչտ վախցող մարդը երանելի է. Բայց իր սիրտը խստացնողը չարիքի մէջ պիտի իյնայ։
15—Ագռաւ ժողովուրդի վրայ իշխող ամբարիշտը Մռնչող առիւծի ու անյագ արջու նման է։
16—Խոհեմութիւն չունեցող իշխանը շատ զրկողութիւններ կ'ընէ. Բայց ագահութենէ զզուողը իր կեանքը կ'աւելցնէ։
17—†Արիւնապարտ մարդը մինչև գերեզման կը փախչի. Թող մի՛ կը չպաշտպանէ զանիկա։
18—կատարելութեամբ քալողը փրկութիւն կը գտնէ. Բայց ծուռ մարդը որ երկու ճամբով կ'երթայ, անդ մեկուն մէջ կ'իյնայ։
19—Իր երկիրը գործողը հացով պիտի կշտանայ, Ու դատարկ մարդոց հետեւողը աղքատութեամբ պիտի լեցուի։
20—Հաւատարիմ մարդը շատ օրհնութիւններ կ'ունենայ. Բայց հարուստ ըլլալու արագացողը պիտի չպատժուի։
21—Աչառութիւն ընել ապէկ չէ, Վասն զի պատառ մը հացի համար մարդ յանցանք կը գործէ։
22—Չար աչք ունեցող մարդը հարուստ ըլլալու կ'արագացայ, Ու չգիտեր որ իր վրայ աղքատութիւն պիտի գայ։
23—Մարդ յանդիմանողը վերջապէս շնորհք կը գտնէ Լեզուով չողոքորթութիւն ընողէն աւելի։

*կամ, կը պահուըտի
†ԵԲԲ. Անձի մը արիւնովը ձեռնածած

21—Ան որ իր հայրը կամ մայրը կը կո-
ղոպտէ, ըսելով թէ ծանցանք
չէ,
Անիկա ազահաբար մարդուն ընկերնէ։
25—Հպարտ սիրտ ունեցող մարդը կռիւ
կը հանէ,
Բայց Տիրոջը ապաւինողը պիտի գիրնայ։
26—Իր սրտին ապաւինողը անմիտ է.
Բայց իմաստութեամբ քալողը պիտի ա-
զատի։
27—Աղքատին տուողը կարօտ չըլլար.
Բայց անկէ երես դարձնողը շատ անէծք-
ներ կ՚ունենայ։
28—Եթէ ամբարիշտները բարձրանան,
մարդիկ կը պահուին.
Բայց եթէ անոնք կորսուին, արդարա-
ները կը շատնան։

Գլ. ԻԹ

*Շատ անգամ յանդիմանուած՝ մարդը որ իր պարանոցը կը խստացընէ,
Յանկարծ պիտի կործանի ու բժշկութիւն պիտի չգտնէ։
2—Եթէ արդարները զօրանան, ժողովուրդը կ՚ուրախանայ.
Բայց երբ ամբարիշտը իշխանութիւն կ՚ունենայ, ժողովուրդը կը հեծէ։
3—Իմաստութիւն սիրող մարդը իր հայրը կ՚ուրախացնէ.
Բայց պոռնիկներուն ընկեր եղողը ստացուածքը կը ցրուէ։
4—Թագաւորը արդարութեամբ կը հաստատէ երկիրը.
Բայց կաշառք առնողը զանիկա կը կործանէ։
5—Իր ընկերին շողոքորթութիւն ընող մարդը
Անոր քայլերուն որոգայթ կը լարէ։
6—Չար մարդուն ամբարշտութեանը մէջ որոգայթ կայ.
Բայց արդարը ցնծութեան և ուրախութեան մէջ պիտի ըլլայ։
7—Արդարը աղքատներուն դատը գիտէ.
Բայց չար մարդը տեղեակ չըլլար։
8—Ծաղր ընող մարդիկ քաղաքը կը բռնկեցնեն.
Բայց իմաստունները բարկութիւնը կը դադրեցնեն։
9—Իմաստուն մարդը երբ յիմարին հետ վիճաբանութիւն կ՚ընէ,
Թէ՛ սրդողի և թէ՛ ծիծաղի՝ հանգիստ չըլլար։
10—Արիւնահեղ մարդիկ արդարը կ՚ատեն.
Բայց ուղիղները անոր որոխտութիւնը կը հարցնեն։
11—Ցիմարը իր միտքը բոլորովին կը յայտնէ.
Բայց իմաստունը զանիկա ուրիշ ատենի կը պահէ։
12—Սուտ խօսքերու ականջ դնող իշխանին
Բոլոր ծառաները չար կ՚ըլլան։
13—Աղքատը ու բռնաւորը իրարու հանդիպեցան.
Երկուքին ալ աչքերուն լոյս տուողը Տէրն է։
14—Ադատները ճշմարտութեամբ դատող թագաւորին աթոռը
Յաւիտեան հաստատ կ՚ըլլայ։
15—Գաւազանը ու յանդիմանութիւնը իմաստութիւն կու տան.
Բայց էր կ՚ելլէ ձգուած տգան իր մայրը կ՚ամչցնէ։
16—Երբ ամբարիշտները շատնան, յանցանքը կը շատնայ.
Բայց արդարները անոնց կնայալը պիտի տեսնեն։
17—Խրատէ քու որդիդ, որպէս զի քեզ հանգստացնէ,
Եւ քու հոգիդ զուարճացնէ։
18—Առանց մարգարէութեան ժողովուրդը կը խոտորի.
Բայց օրէնքը պահողը երջանիկ կ՚ըլլայ։
19—Չանկցող ու պատասխան չտուող ծառան
Խօսքերով չխրատուիր։
20—Իր խօսքերուն մէջ արտորացող մարդ մը տեսա՞ր.
Աւելի յոյս կայ յիմարին քան թէ անկէ։
21—Եթէ մէկը իր ծառան տղայութենէն փափկութեամբ կը մեծցնէ,
Վերջապէս անիկա իր տգան կ՚ըլլայ։
22—Բարկասիրտ մարդը կռիւ կը հանէ,
Եւ ցասկոտ մարդը շատ յանցանքներ կը գործէ։

*կամ, կռնաւորը

23—Մարդուն հպարտութիւնը զինք կը
կործանէ.
Բայց հեզահոգի մարդը փառք կը վաս-
տկի։
24—Գողին ընկերը եղողը իր հոգին կա-
տէ,
Անիկա երդումը կը լսէ, ու էր ի՛ւ-ոչ-ինչ կը
չհայտնէ։
25—Մարդու վախը որոգայթի մէջ կը
ձգէ.
Բայց Տիրոջը ապաւինողը ամուր ապաս-
տանարան կ՚ունենայ։
26—Շատերը իշխանին երեսը կը փնտռտէն.
Բայց մարդուն իրաւունքը Տիրոջմէն է։
27—Անօրէն մարդը արդարներուն զզուելի է,
Եւ ուղղութեամբ քալողը ամբարշտին
զզուելի է։

Գլ. Լ

Յակէեան Ագուրի խօսքերը,
Այրինքն պատգամը, զոր անիկա Իթիէլի խօսեցաւ,
Իթիէլի և Ուքալի։
2—Արդարև ես ամէն մարդէ բանտ-
բամիա եմ,
Ու ես մարդկային խոհեմութիւն չունիմ.
3—Ես իմաստութիւն չսորվեցայ,
Ու *Ամենասրբին գիտութիւնը չեմ
գիտեր։
4—Երկինք ո՞վ ելաւ ու իջաւ.
Հովը իր ձեռքերուն մէջ ո՞վ ժողվեց.
Ջուրերը էր հանդերձին մէջ ո՞վ տոփո-
փեց.
Երկրի բոլոր ծայրերը ո՞վ հաստատեց.
Անոր անունը ինչ է, ու անոր որդւոյն
անունը ինչ է.
Եթէ գիտես՝ ըսէ։
5-Աստուծոյ ամէն խօսքերը մաքուր են.
Անիկա իրեն ապաւինողներուն ա-
պար է։
6—Դուն անոր խօսքերուն վրայ բան մի
աւելցներ,
Որպէս զի չըլլայ թէ քեզ յանդիմանէ,
ու դուն սուտաւոր երեւնաս։
7—Քեզմէ երկու բան կը խնդրեմ.
Մեռանելէս առաջ զանոնք ինծմէ մի
պզտիներ.
8—Ունայնութիւնը և սուտ խօսքը ինծ-
մէ հեռացուր.
Ինծի աղքատութիւն կամ հարստու-
թիւն մի տար.
Իմ սովորական հացովս զիս կերակրէ.
9—Չըլլայ որ կշտանամ և ուրանամ,
Ու՝ Տէրը ո՞վ է, ըսեմ.
Եւ չըլլայ որ աղքատանամ ու գողու-
թիւն ընեմ,
Եւ իմ Աստուծոյս անունը պարապ տեղ
բէրբոռ առնեմ։
10—Ծառայի մը համար իր տէրոջը
մեղադրանութիւն մի ըներ,
Չըլլայ որ քեզի անէծք տայ, ու դուն
յանցաւոր գտնուիս։
11—Ցիզ կայ որ իր հայրը կ՚անիծէ,
Եւ իր մայրը չօրհներ։
12—Ցիզ կայ որ իր աչքին առջեւ մա-
քուր է,
Սակայն իր ապականութենէն լուացուած
չէ։
13—Ցիզ կայ որուն աչքերը խիստ ամ-
բարտաւան են,
Ու անոր արտեւանունքները բարձրա-
ցած են։
14—Ցիզ կայ որուն ակռաները սուրե-
րու պէս են,
Եւ անոր ժանիքները դանակներու պէս
են,
Ադքատները երկրի վրայէն՝
Ու անանկները մարդոց մէջէն ուտելու
համար։
15—Տզրուկը երկու աղջիկ ունի.
Տուր, տուր՝ կ՚ըսէ։
Այս երեքը չեն կշտանար,
Ո՛ չորս բան կայ որոնք չհերիք է՝ չեն
ըսեր.
16—Գերեզմանը, ամուլ արգանդը,
Երկիրը որ ջրով չկշտանար
Ու կրակը որ չհերիք է՝ չըսեր։
17—Աչն աչքը որ իր հայրը ծաղր կ՚ընէ,
Եւ իր մօրը հնազանդիլը կ՚անարգէ,
Ձորերուն ագռաւները պիտի փորեն,
Ու զանիկա արծիւներուն ձագերը պիտի
ուտեն։
18—Այս երեք բանը ինծի զարմա-
նալի կ՚երեւնան,

*կամ, սուրբերուն

Եւ չորս բան կայ զորոնք չեմ գիտեր.
19—Օդին մէջ արծիւին ճամբան,
Ապառաժի վրայ օձին ճամբան,
Ծովուն մէջ նաւուն ճամբան,
Ու աղջկան քով այր մարդուն ճամբան։
20—Շնացող կնոջ ճամբան ալ այնպէս է.
Կ'ուտէ ու բերանը կը սրբէ,
Ու, Զարմանք չըրի՛ կ'ըսէ։
21—Երկրէ բանէ համար երկիրը կը դողայ,
Ու չորս բան կայ, զորոնք չկրնար տանել.
22—Ծառան երբ թագաւորէ,
Ծիծաղը երբ հացով կշտանայ,
23—Ատելի կինը երբ կարգուի,
Եւ աղախինը երբ իր տիկնոջ ժառանգ ըլլայ,
24—Երկրի վրայ չորս բան կայ որոնք պզտիկ են,
Բայց անոնք չատ խելացի են.
25—Մրջիւնները զօրաւոր ժողովուրդ մը չեն,
Բայց իրենց կերակուրը ամառուընէ կը պատրաստեն.
26—Ձագարները տկար ժողովուրդ մըն են,
Բայց իրենց տուները վէմերու մէջ կը շինեն.
27—Մարախները թագաւոր չունին,
Սակայն ամէնը գունդ գունդ դուրս կ'ելլեն.
28—*Մողէսը էր ձեռքերովը պարսպուն կը փակչի,
Ու թագաւորաց պալատներուն մէջ կը գտնուի.
29—Աղեկ քալող երեք բան կայ.
Եւ չորս բան կայ որոնք գեղեցիկ քալուածք ունին.
30—Առիւծը՝ որ ամէն անասուններէն զօրաւոր է,
Ու բնաւ մէկուն երեսէն ետ չդառնար.
31—†Մէկը կապած չկո՞ ու նոխազը,
Եւ թագաւորը՝ որուն ժողովուրդը իրեն հետ է.

*Կամ, Սարգը. Եբէր. ուխտաւոր, որով կ'ենթադրուի հոդեսէ ելած ուխտաւորներէն մը
†Կամ, Որսական շունը

32—Եթէ բարձրանալով յիմարութիւն ըրիր,
Կամ չարութիւն մը մտածեցիր,
Ձեռքդ բերնիդ վրայ դիր։
33—Վասն զի եթէ կաթը ծեծես՝ կոգի կ'ելլէ,
Եթէ քիթը ճմլես՝ արիւն կ'ելլէ.
Նոյնպէս եթէ բարկութիւնը գրգռես՝ կռիւ կ'ելլէ։

ԳԼ. ԼԱ

Լեմուէլ թագաւորին խօսքերը,
Այրինքն պատգամը, զոր անոր մայրը անոր սորվեցուց։
2—Ի՞նչ ըսեմ, ով որդեակ իմ,
Ի՞նչ ըսեմ, ով իմ որովայնիս որդին,
Ի՞նչ ըսեմ, ով իմ ուխտերուս որդին։
3—Քու զօրութիւնդ կիներուն մի տար,
Ո՛չ ալ քու ճամբաներդ թագաւորներ բնաջինջ ընողներուն։
4—Ով Լեմուէլ, թագաւորներուն չվայելեր,
Գինի խմել թագաւորներուն չվայելեր,
Եւ օղի խմել իշխաններուն չվայելեր։
5—Զլլայ որ խմեն ու օրէնքը մոռնան,
Եւ տառապեալներէն մկրտուն դատաստանը ծռեն։
6—Օղին կորսուելու վրայ եղողին,
Ու գինին դառնահոգիներուն տուէք։
7—Որպէս զի զանոնք խմեն ու իրենց աղքատութիւնը մոռնան,
Եւ իրենց նեղութիւնը մէյմըն ալ չյիշեն։
8—Բայ քու բերանդ համր մարդուն համար,
Ո՛ր բոլոր անխնամ մնացածներուն դատին համար։
9—Բայ քու բերանդ, արդարութեամբ դատէ,
Եւ աղքատին ու անանկին դատաստանը տես։
10—Առաքինի կինը ո՞վ կրնայ գտնել.
Անոր գինը գոհարներէն չատ աւելի է։
11—Անոր երկանը սիրտը անոր վրայ վստահ է,
Ու աւարի կարօտ չըլլար։
12—Անիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ
Անոր բարիք կը բերէ և ոչ թէ չարիք։

13—Բուրդ ու վիթան կը փնտռէ,
Եւ *ուզածը ձեռքովը կը գործէ։
14—Առեւտրական նաւերուն կը նմանի.
Իր հացը հեռու տեղէ կը բերէ։
15—Եւ անիկա գիշերով կ'ելլէ, ու տանը մարդոցը կերակուր
Եւ իր աղախիններուն բաժին կու տայ։
16—Արտի մը վրայ կը խորհի ու զանիկա ձեռք կ'առնէ,
Ե՛ր իր ձեռքերուն պտուղէն այգի կը տնկէ։
17—Իր մէջքը զօրութեամբ կը պնդէ,
Ու իր բազուկները կը զօրացնէ։
18—Իր վաստակին աղեկ ըլլալը կը հասկընայ.
Անոր ճրագը գիշերը չմարիր։
19—Իր ձեռքերը իլիկին կ'երկնցնէ,
Ու ափովը բոքը կը բռնէ։
20—Ձեռքը աղքատին կը բանայ,
Ու ձեռքերը կարօտներուն կ'երկնցնէ։
21—Իր տանը մարդոցը համար ձիւնէն չվախնար.
Քանզի բոլոր ընտանիքը կրկին հանդերձ հագած են։
22—Իրեն ծածկոցներ կը շինէ.

*Կամ, յօժարութեամբ

Իր հանգերձը բեհեզ ու ծիրանի է։
23—Անոր այրը կը ճանչցուի գանդրուն մէջ,
Երբ երկրին ծերերուն հետ կը նստի։
24—Կտաւ կը գործէ ու կը ծախէ,
Եւ վաճառականներուն գօտիներ կուտայ։
25—Զօրութիւն ու փառք կը հագնի.
Ու վերջին օրերը պիտի ուրախանայ։
26—Իր բերանը իմաստութեամբ կը բանայ,
Եւ իր լեզուին վրայ *քաղցրութեան օրէնք կայ.
27—Իր տանը ճամբաները կը քննէ,
Եւ ծուլութեան հացը չուտեր։
28—Անոր ազաքը կ'ելլեն ու զանիկա երանելի կ'անուանեն.
Անոր այրն ալ զանիկա կը գովէ, ըսելով
29—Շատ աղջիկներ առաքինի եղան,
Բայց դուն ամէնէն գերազանց եղար։
30—Վայելչութիւնը սուտ է, ու գեղեցկութիւնը ունայն է.
Այլ Տէրոջմէ վախցող կինը պիտի գովուի։
31—Տուէք անոր իր ձեռքին պտուղէն.
Ու անոր գործերը դռներու մէջ գովեն զանիկա։

*Կամ, ողորմութեան

ԳԻՐՔ ԺՈՂՈՎՈՂԻ

ԳԼՈՒԽ Ա

Երուսաղէմի մէջ թագաւորող Դաւիթի որդւոյն ժողովողին խօսքերը։
2—Ունայնութի՛ւն ունայնութեանց, ըսաւ ժողովողը,
Ունայնութի՛ւն ունայնութեանց, ամէն բան ունայնութիւն է։
3— Ի՞նչ օգուտ կ՚ունենայ մարդ
Արեւուն տակ քրտնած բոլոր աշխատանքին,
4—Ազգ կ՚երթայ և ազգ կու գայ,
Բայց երկիրը միշտ կը կենայ։
5—Նաև արեւը կը ծագի ու արեւը կը մանէ,
Ու իր ծագած տեղը արտորալով կը դառնայ։
6—Հովը դէպ ի հարաւ կ՚երթայ,
Ու դէպ ի հիւսիս կը պտըտի.
Ը— հովը տպին անդին պտըտելով
կ՚երթայ, իր շրջաններուն համեմատ կը դառնայ։
7—Ամէն գետերը ծովը կ՚երթան,
Բայց ծովը չի լեցուիր.
Այն տեղը ուր գետերը կ՚երթային,
Նորէն հոն կ՚երթան։
8—Ամէն *խօսքերը կը հառնին .
Մարդս խօսելու կարող չէ.
Աչքը տեսնելով չկշտանար,
Ու ականջը լսելով չի լեցուիր։
9—Ինչ որ եղած է, նոյնը պիտի ըլլայ.
Ու ինչ որ գործուած է, նոյնը պիտի գործուի.
Եւ արեւուն տակ բնաւ նոր բան մը չկայ։
10—Կա՞յ արդեօք այնպիսի բան մը՝
Որու համար կրնայ ըսուիլ, Ահա ասիկա նոր է.
Ահա մեզմէ առաջ եղած դարերուն մէջ
Անիկա արդէն եղած էր։
11—Առաջնոյն բաներուն յիշատակը չկայ,
Ու ետքը ըլլալու բաներուն ալ՝
Ետքը եկողներուն մէջ յիշատակը պիտի չըլլայ։
12—Ես Ժողովող երուսաղէմի մէջ
Իսրայէլի վրայ թագաւոր եղայ։
13—Ու իմ սիրտս երկինքի տակ բոլոր եղածները
Իմաստութեամբ փնտռելու ու քննելու տուի.
Ատոնք այս չար զբաղմունքը մարդոց որդիներուն տուաւ,
Որպէս զի անով զբաղին։
14—Արեւուն տակ բոլոր գործուած գործերը տեսայ,
Եւ ահա ամէնն ալ ունայնութիւն ու *հոգիի տանջանք՚ են։
15—Այն որ ծուռ է, չկրնար շիտկուիլ,
Ու այն որ պակաս է, չկրնար համրուիլ։
16—Ես իմ սրտիս մէջ խօսեցայ ու ըսի,
Ահա ես մեծցայ, ու իմաստութիւն ստացայ
Երուսաղէմի մէջ ինծմէ առաջ եղողներուն ամէնէն աւելի.
Եւ իմ սիրտս շատ իմաստութիւն ու գիտութիւն տեսաւ։
17—Ես իմ սրտս իմաստութիւնը ճանչնալու,
Ու խենդութիւնը և յիմարութիւնը գիտնալու տուի.
Հասկցայ որ ասիկա ալ հոգի տանջանք է։
18—Վասն զի շատ իմաստութեան մէջ
շատ արամութիւն կայ.
Ու է՛ գիտութիւնը աւելցնողը է՛ վիշտը կ՚աւելցնէ։

ԳԼ. Բ

Ես իմ սրտիս մէջ ըսի, Եկուր հիմա ուրախութեան միջոցով փորձեմ.
Ուստի բարիքներ վայելէ.
Եւ ահա ասիկա ալ ունայնութիւն է։
2—Ծիծաղին համար ըսի Թէ ցնծալը է,

*կամ, բաները կը յոգնին

*կամ, հովի համար աշխատութիւն

Եւ ուրախութեանը համար՝ Թէ Ասոր ըրածը ի՞նչ է։
3—Սրտիս մէջ խորհեցայ որ մարմինս գինիով զուարճացնեմ,
Եւ իմաստութեան առաջնորդութիւնովը անմտութիւնը ճանչնամ,
Որպէս զի տեսնեմ Թէ ի՛նչ է մարդոց որդիներուն բարին,
Զոր կրնան ընել երկինքի տակ
Իրենց կեանքին բոլոր օրերուն մէջ։
4—Մեծ գործեր ըրի.
Ինծի տուներ չինեցի, — ինծի այգիներ անկեցի.
5—Ինծի պարտէզներ և դրախտներ չինեցի,
Ու անոնց մէջ ամէն տեսակ պտուղ բերող ծառեր անկեցի.
6—Ինծի ջուրի աւազաններ չինեցի,
Որպէս զի անոնցմէ ծառ բուսցնող անտառը ոռգուի.
7—Ծառաներ ու աղախիններ ստացայ,
Եւ իմ տանս մէջ ծնած ծառաներ ունեցայ.
Ու չատ արջառներ և հօտեր ունեցայ
Ինծմէ առաջ Երուսաղէմի մէջ եղողներուն ամէնէն աւելի։
8—Նաև ինծի արծաթ ու ոսկի
Եւ թագաւորներու ու գաւառներու գանձեր դիզեցի.
Ինծի այր և կին երգեցողներ ստացայ,
Ու մարդոց որդիներուն զուարճութիւնները *և ամէն տեսակ չքեղութիւն՚,
9—Եւ ինծմէ առաջ Երուսաղէմի մէջ եղողներուն
Աւելի մեծ եղայ ու բարգաւաճեցայ.
Իմաստութիւնս ալ իմ քովս կը կեներ։
10—Ու իմ աչքերուս ամէն ցանկութիւնը անոնցմէ չպզտիեցի,
Ո— իմ սրտս ամէն գեղեցիկ ուրախութիւնէ զուրկ չթողուցի.
Հապա իմ սրտս իմ բոլոր աշխատութիւններէս ուրախացաւ.
Եւ իմ բոլոր աշխատութիւններէս բաժինս սիրկս էր։
11—Ու ես իմ ձեռքերուս ըրած ամէն գործերուն,
Ու ընելու համար իմ քրտնած ամէն աշխատանքիս նայեցայ,
Եւ ահա ամէնը ունայնութիւն ու հոգիի տանջանք էին,
Ու արեւուն տակ օգուտ չկար։
12—Ու ես դարձայ իմաստութիւնը տեսնելու,
Նաև յիմարութիւնը ու անմտութիւնը.
Վասն զի թագաւորին ետեւէն եկող մարդը ի՞նչ կրնայ ընել.
Ինչ որ արդէն ըրած են։
13—Ու տեսայ որ իմաստութիւնը անմտութենէն օգտակար է.
Ինչպէս լոյսը խաւարէն օգտակար է։
14—Իմաստունին աչքերը իր գլխուն վրայ են,
Իսկ անմիտը խաւարի մէջ կը քալէ.
Բայց ես հասկցայ որ
Անոնց ամէնուն պատահած դիպուածը մէկ է։
15—Ա՛յն ատեն իմ սրտիս մէջ ըսի,
Որովհետեւ անմիտին պատահածը ինծի ալ պիտի պատահի,
Ուրեմն ես ինչո՞ւ համար աւելի իմաստուն եղայ.
Այս պատճառաւ իմ սրտիս մէջ ըսի որ այս ալ ունայնութիւն է։
16—Վասն զի ինչպէս անմիտին՝ նմանապէս իմաստունին
Յաւիտեան յիշատակը չկայ.
Վասն զի հիմա եղած բաներուն ամէնը
Ապագայ ժամանակին մէջ պիտի մոռցուին.
Ու իմաստունը ի՞նչպէս կը մեռնի.
Անմիտին պէս։
17—Անոր համար այս կեանքէն զզուեցայ,
Վասն զի արեւուն տակ եղած գործերը ինծի գէշ երեցան,
Քանզի ամէնը ունայնութիւն ու հոգիի տանջանք են։
18—Ու ես արեւուն տակ քրտնած բոլոր աշխատութիւններէս զզուեցայ,
Քանզի ինծմէ ետքը գալու մարդուն պիտի թողում զանիկա.
19—Ու ո՞վ գիտէ Թէ անիկա իմաստո՛ւն պիտի ըլլայ Թէ անմիտ.
Բայց պիտի տիրէ իմ բոլոր աշխատութիւններուս վրայ,
Զորոնք արեւուն տակ աշխատեցայ,
Ու անոնց մէջ իմաստութիւն ցուցուցի,

*կամ, մեծ առատութիւնով

Աւիկա ալ ունայնութիւն է։

20—Ես ես դարձայ, որպէս զի արհամարհ տակ գաչած բոլոր աշխատանքիս վրայով

իմ սրտէս յոյս կտրեմ,

21—վասն զի մարդ կայ որուն աշխատութիւնը

իմաստութեամբ, գիտութեամբ և յաջողութեամբ կ'ըլլայ,

Բայց անոր մէջ չաշխատող մարդուն էբէ՞ բաժին կու տայ։

Աւիկա ալ ունայնութիւն ու մեծ չարիք մըն է։

22—Վասն զի մարդ արհամարհ տակ գաչած իր բոլոր աշխատանքին

Ու սրտին տանջանքին [որ] օգուտ կ'ունենայ։

23-Քանզի անոր բոլոր օրերը վիշտերով,

Ու գործը տրտմութեամբ լեցո՜ւն են.

Անոր սիրտը գիշերը անգամ հանգստութիւն չգտներ։

Աւիկա ալ ունայնութիւն է։

24—Մարդս ուտելէն ու խմելէն

Ու իր աշխատանքովը իր հոգին զատ-ճաշակելէն զատ ուրիշ ազէկութիւն մը չունի։

Ես տեսի ալ տեսայ որ Աստուծոյ ձեռքով կ'ըլլայ։

25—Վասն զի *ինծմէ զատ՞ ո՞վ կրնայ ուտել,

Ու ո՞վ կրնայ զուարճանալ։

26—Քանզի Աստո՜ւած իր առջև հաճելի եղող մարդուն

իմաստութիւն, գիտութիւն և ուրախութիւն կու տայ.

Բայց մեղաւորին զբաղմունք կու տայ,

Որպէս զի անոնք ողոյծո՜ւած† ժողվէ ու դիզէ,

Որպէս զի Աստուծոյ առջև հաճելի եղողին տայ։

Աւիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է։

ԳԼ. Գ

Ա.մէն բանին ատենը կայ,

Ու երկինքի տակ եղող ամէն †գործին ժամանակը.

2—Ծնանելու ժամանակ և մեռնելու ժամանակ,

Տնկելու ժամանակ և անկուածը խլելու ժամանակ,

3—Մեռցնելու ժամանակ և բժշկելու ժամանակ,

Փլցնելու ժամանակ ու չինելու ժամանակ,

4—Լալու ժամանակ և ծիծաղելու ժամանակ,

Սուգ ընելու ժամանակ ու կաքաւելու ժամանակ,

5—Քարերը դուրս նետելու ժամանակ ու քարերը ժողվելու ժամանակ,

Գրկելու ժամանակ ու գրկելէ հեռանալու ժամանակ,

6—Փնտռելու ժամանակ և կորնցնելու ժամանակ,

Պահելու ժամանակ ու դուրս ձգելու ժամանակ,

7—Պատռելու ժամանակ և կարելու ժամանակ,

Լռելու ժամանակ ու խօսելու ժամանակ,

8—Սիրելու ժամանակ և ատելու ժամանակ,

Պատերազմի ժամանակ ու խաղաղութեան ժամանակ։

9—Աշխատողին, իր քաշած աշխատանքէն,

Ի՞նչ օգուտ կ'ըլլայ,

10—Տեսայ այն զբաղմունքը զոր Աստուած մարդոց որդիներուն տուաւ,

Որպէս զի անով զբաղին։

11—Անոնք ամէն բան իր ժամանակին վայելուչ ըրաւ,

Ե՛ս աշխարհս ալ անոնց սրտին մէջ դրաւ.

Բայց Աստուծոյ ըրած գործը

Մարդ չկրնար սկիզբէն մինչև վերջը գտնել։

12—Գայս գիտեմ որ ուրախ ըլլալէ

Ու կենդանութեան ատեն ազէկութիւն ընելէ զատ՝

Ուրիշ ազէկ բան մը չկայ անոնց մէջ,

13—Ու նաև ամէն մարդուն ուտելը ու խմելը,

Ես իր բոլոր աշխատութենէն բարիք վայելելը

Աստուծոյ պարգեւն է։

14—Գիտեմ որ Աստուծոյ ամէն ըրածը յաւիտեան պիտի մնայ.

Անոր վրայ բան մը աւելցնել, կամ անկէ պակսեցնել կարելի չէ.

Ու Աստուած ընե՛լ- ըրաւ, որպէս զի իր երեսէն վախնան։

15—Ինչ որ եղած է, հիմա ալ կայ.

Ու ինչ որ պիտի ըլլայ, արդէն եղած է։

Ու Աստուած անցածը կը փնտռէ։

16—Ու նաև արեւուն տակ տեսայ որ դատաստանի տեղ ամբարշտութիւն,

Ու արդարութեան տեղ անօրէնութիւն կար։

17—Ես իմ սրտիս մէջ ըսի Թէ Աստուած պիտի դատէ արդարը ու ամբարիշտը.

Վասն զի ամէն դիտաւորութիւն ու ամէն գործ ժամանակ ունի հոն։

18—Ես իմ սրտիս մէջ ըսի

Մարդոց որդիներուն վիճակին վրայով,

Թէ Աստուած զանոնք պիտի փորձէ.

Ու պիտի տեսնեն որ իրենք անասուններ են։

19—Վասն զի մարդոց որդիներուն պատահածը

Ու անասուններուն պատահածը մէկ է.

Մէկը ինչպէս կը մեռնի, միւսն ալ այնպէս կը մեռնի.

Ու ամէնուն չունչը մէկ է.

Ես մարդը անասունէն աւելի բան մը չունի,

Վասն զի ամէնը ունայնութիւն է։

20—Ամէնը մէկ տեղ կ'երթայ.

Ամէնը հողէն եղաւ, ու ամէնը հող կը դառնայ։

21—Ո՞վ գիտէ Թէ մարդոց որդիներուն հոգիները վեր կ'ելլեն,

Ես անասուններուն ոգիները վար գետինը կ'իջնեն։

22—Ու տեսայ որ մարդս իր գործերովը ուրախ ըլլալէ զատ

Ուրիշ ազէկութիւն մը չունի,

Քանզի անոր բաժինը այն է.

Վասն զի ո՞վ պիտի տանի զանիկա որ տեսնէ

Թէ իրմէ ետքը ի՛նչ պիտի ըլլայ։

ԳԼ. Դ

Ես ես դարձայ ու տեսայ

Աւիկա ալ եղած բոլոր զրկանքները.

Ես ահա զրկուածներուն արցունքը կար,

Բայց անոնք մխիթարող չունէին.

Ու անոնց զրկանք ընողներուն ձեռքը ոյժ կար,

Բայց անոնց մխիթարութիւն տուող չկար։

2—Ես ես մեռածները, արդէն մեռածները,

Մինչև հիմա ապրողներէն աւելի գովեցի։

3—Բայց ան որ մինչև հիմա եղած չէ, երկուքէն ալ աղէկ է,

Վասն զի անիկա աւելուն տակ եղած չարութիւնը չտեսաւ։

4—Ու ես ամէն աշխատութիւնը

Ես ամէն յաջող գործը տեսայ,

Որ անոնց համար մարդ իր ընկերին կը նախանձի։

Աւիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է։

5—Անմիտը իր ձեռքերը կը ծալէ,

Ու իր մեսը կ'ուտէ։

6—Աւելի աղէկ է մէկ լեցուն ձեռքը հանգստութեամբ,

Քան Թէ երկու լեցուն ձեռքը՝ որ աշխատանքով ու հոգիի տանջանքով է։

7—Ես ես դարձայ ու սրտիս տակ ունայնութիւն տեսայ։

8—Մարդ մը կայ որ երկրորդ չունի,

Ոչ տղայ ունի և ոչ եղբայր։

Բայց անոր ամէն աշխատութիւնը վախճան չունի,

Ու անոր աչքերը հարստութեամբ չեն կշտանար,

Եւ չըսէր Թէ ես որո՞ւ համար կ'աշխատիմ,

Ու իմ հոգիս բարիքէ կը զրկեմ։

Աւիկա ալ ունայնութիւն ու չար զբաղմունք է։

9—Երկուքը մէկէն աղէկ է,

Վասն զի անոնց աշխատանքը աղէկ վարձք ունի.

10—Քանզի եթէ իյնան, մէկզմէկ կը վերցնեն.

Բայց վա՛յ կնոջ մէկուն՝
Որ զինք վերցնող երկրորդ մը չունի։
11—Ու երկու մարդ հէփ-հէպ պառկելով
կը տաքնան.
Բայց մինակը ինչպէս կրնայ տաքնալ։
12—Եւ եթէ մէկը անոնց բռնութիւն
ընէ,
Երկուքը կրնան անոր դէմ դնել.
Ե՛ւ երեքպատիկ դեղձանը դիւրաս չկըտրուիր։
13—Ազէկ է աղքատ ու խմաստուն
տղան,
Քան թէ ծեր ու անմիտ թագաւորը՝
Որ ալ չգիտեր խրատուիլ։
14—Բանդի հէնց բանտէն կ'ելլէ՝ որպէս
զի թագաւորի,
Բայց ուրիշ մը որ *թագաւոր ծնած է,
աղքատ կ'ըլլայ։
15—Տեսայ արեւուն տակ քալող ամէն
կենդանիները
Այն տղան հետ՝ որ †յաջորդէն երկրորդն էր,
Ու անոր տեղը պիտի անցնէր.
16—†Անոնց պատճառ եղող՝ բոլոր ժողովուրդը անթիւ էր.
Սակայն ետքը եկողները անկէ պիտի
չուրախանան.
Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի
տանջանք է։

Գլ. Ե

Երբ Աստուծոյ տունը կ'երթաս, ոտքիդ զգուշութիւն ըրէ.
Ու աւելի մոտիկ ընելու մտածելիր,
Քան թէ անմիտներու զոհ մատուցանիլ.
Վասն զի անոնք չեն գիտեր թէ չարութիւն կ'ընեն։
2—Բերնովդ մի աճապարիր,
Ու քու սիրտդ Աստուծոյ առջեւ խօսք
հանելու չարտարայ.
Քանդի Աստուած երկինքն է, ու դուն
երկրի վրայ ես,
Անոր համար քու խօսքերդ փիչ ըլլան։
3—Վասն զի երազը շատ զբաղմունքէն
յառաջ կու գայ,

Ու յիմարին ձայնը՝ շատ խօսքերէն։
4—Երբ Աստուծոյ ուխտ կ'ընես,
Զանիկա կատարելը մի ուշացներ.
Քանդի Անհաւատ անմիտներուն չհաճիր.
Ըրած ուխտդ կատարէ։
5—Աղէկ է որ ուխտ չընես,
Քան թէ ուխտ ընես ու չկատարես։
6—Թող մի տար որ քու բերանդ մարմնիդ մեղք գործել տայ,
Ու հրեշտակին առջեւ մի ըսեր թէ սխալանք եղաւ.
Ինչո՞ւ Աստուած քու խօսքիդ համար բարկանայ,
Ու ձեռքերուդ գործը ապրէ։
7—Վասն զի երազներուն շատութեանը մէջ
Ու խօսքերուն շատութեանը մէջ
Ունայնութիւններ ալ կան.
Բայց դուն Աստուծմէ վախցիր։
8—Եթէ գաւառի մէջ աղքատին եղած զրկանքը
Ու իրաւունքի և արդարութեան *ծրագիրը տեսնես,
Այս բանին վրայ մի զարմանար.
Վասն զի բարձրերուն վրայ Բարձր եղողը կը դիտէ.
Եւ ասոնցմէ Բարձրը կայ։
9—Երկիր ամէնուն ալ օգտակար է.
Թագաւորին «Ես» արտէն ծառայութիւն կ'ըլլայ։
10—Արծաթի սիրողը արծաթէն չկըշտանար,
Ոչ ալ հարստութիւն սիրողը՝ էւլէտ բերքէն։
Ասիկա ալ ունայնութիւն է։
11—Երբ բարիքը կը շատնայ,
Ուտողներն ալ կը շատնան.
Ուրեմն զանիկա ունեցողներուն՝
Աչքով տեսնելէն զատ ինչ օգուտ կ'ըլլայ։
12—Քաղցր է աշխատող մարդուն քունը՝
Թէ՛ շատ և թէ՛ փիչ ուտէ.
Բայց հարստութեան †կուշտ ըլլալը
Զինուորը որ անկիտ հանգիստ գտնայ։
13—Արեւուն տակ տեսայ որ գէշ ցաւ մը կայ,

*Կամ, իր թագաւորութեանը մէջ
†Կամ, Անոնցմէ առաջ եղող

*Եբր. յաճախակութիւնը
†Կամ, առատութիւնը

Այսինքն այն հարստութիւնը որ իր տէրը ձախորդութեանը համար պահած է.
14—Եւ այն հարստութիւնը ձախորդ *դիպուածով մը կը կորսուի.
Ու ինք տղայ կը ծնանի, և անոր ձեռքը բան մը չկայ։
15—Ինչպէս իր մօրը որովայնէն եկաւ,
Այնպէս մերկ կը դառնայ.
Ինչպէս եկաւ, այնպէս կ'երթայ,
Ու իր աշխատութենէն բան մը չառներ
զոր իրեն հետ տանի։
16—Այս ալ գէշ ցաւ մըն է,
Որ ինչպէս եկաւ, ճիշդ այնպէս կ'երթայ.
Եւ ինչ օգուտ կ'ըլլայ անոր
Որ հովի համար կ'աշխատի։
17—Անիկա իր բոլոր օրերը խաւարի մէջ կ'ուտէ
Մեծ արամութեամբ, հիւանդութեամբ և սրտմտութեամբ։
18—Ահա այս ալ տեսայ,
Որ վայելուչ է ուտել ու խմել,
Ու Աստուծոյ՝ մեկուն տուած կեանքին
բոլոր օրերուն մէջ
Արեւուն տակ իր քրտած բոլոր աշխատանքին բարիքը վայելել,
Վասն զի անոր բաժինը ասիկա է։
19—Եւ ո՛ր մարդուն որ Աստուած հարստութիւն ու ստացուածք կու տայ,
Ու անկէ ուտելու և բաժինը առնելու
Ու իր աշխատանքէն ուրախանալու իշխանութիւն կու տայ,
Ասիկա Աստուծոյ պարգեւն է։
20—Քանդի անիկա իր կեանքին օրերը չատ չի՛խօսիր.
Վասն զի Աստուած անոր սրտին ուրախութիւնովը «Ես» պատասխան կու տայ,

Գլ. Զ

Արեւուն տակ տեսայ որ չարիք մը կայ,
Ու անիկա մարդոց մէջ չատ կը դժուարէ.
2—Մարդ մը՝ որու Աստուած հարստութիւն ու ստացուածք և փառք կու տայ,

Այնպէս որ իր հոգիին ցանկացած բաներէն պակասութիւն մը չունենար.
Բայց Աստուած անոր իշխանութիւն չտար անկէ ուտելու,
Հապա զանիկա օտար մարդ կ'ուտէ։
Ասիկա ունայնութիւն ու գէշ ցաւ մըն է։
3—Եթէ մարդ հարիւր *որդի ծնանի,
Ու շատ տարիներ ապրի,
Եւ անոր տարիներուն օրերը շատ ըլլան,
Ու անոր հոգին բարութենէն չկշտանայ,
Եւ անկէ թաղում ալ չունենայ,
Ս'ըսեմ որ վիժածը անկէ աղէկ է.
4—Վասն զի սկիզբ ունայնութեամբ կու գայ, ու խաւարով կ'երթայ,
Եւ անունը խաւարի մէջ կը ծածկուի.
5—Արեւն ալ չտեսաւ ու բան մը չգիտցաւ.
Ասիկա միւսէն աւելի հանգիստ է։
6—Իսկ անիկա թէև երկու հազար տարի ապրի,
Ու աղէկութիւն չտեսնէ,
Մէթէ ամէնը մէկ տեղ չե՞ն երթար։
7—Մարդուն բոլոր աշխատութիւնը իր բերնին համար է,
Սակայն անոր հոգին չկշտանար։
8—Քանդի իմաստունը անմիջին աւելի ի՞նչ բան ունի.
Կենդանիներուն մէջ քալել գիտցող աղքատը ի՞նչ ունենայ։
9—Աչքերով տեսնելը հոգիով *փափաքելէն աղէկ է։
Ասիկա ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է։
10—Ինչ որ եղաւ, արդէն անոր անունն գրուած է,
Ու յայտնի է թէ մարդն է.
Ու անիկա իրմէ զօրաւորին հետ վիճելու կարող չէ։
11—Որովհետեւ ունայնութիւն չատցնող շատ բաներ կան,
Մարդուն ի՞նչ կը մնայ։
12—Քանդի ո՞վ գիտէ թէ ո՛ր բանը աղէկ է կենդանի մարդուն՝
Ատուերի պէս անցուցած իր ունայն կեանքին բոլոր օրերուն մէջ.

*Եբր. քալելէն

վասն զի մարդուն ո՞վ պիտի յայտնէ,
թէ իրմէ հեռքը արեւուն տակ ի՛նչ պիտի ըլլայ։

ԳԼ. Է

1—Բո՛ւրէ անունը հոտաւէտ իւղին,
ու մահուան օրը ծննդեան օրէն աղէկ է։
2—Սուգի տունն երթալը
կաղունքի տուն երթալէն աղէկ է.
վասն զի ամէն մարդուն վախճանը այն է,
ու կենդանի եղողը ըն՚էլ՝ իր սրտին
մէջ կը դնէ։
3—*Տրտմութիւնը ծիծաղելէն աղէկ է,
վասն զի երեսին տրտմութիւնովը սիրտը
դէպ ուրախանայ։
4-Իմաստուններուն սիրտը սուգի տունը,
իսկ յիմարներուն սիրտը ուրախութեան
տունը կ՚ըլլայ։
5—Իմաստունին յանդիմանութիւնը
լսելը
ցիմարներուն երգը լսելէն աղէկ է։
6—Վասն զի ինչպէս է փուչերուն ձայնը
կաթսային տակ,
ցիմարներուն ծիծաղն ալ այնպէս է։
Ասիկա ալ ունայնութիւն է։
7—Իրաւ որ, բռնութիւնը իմաստունը
յիմար կ՚ընէ,
ու պարգեւը խրատուն սիրտը կ՚ապականէ։
8—Մէկ բանին վախճանը սկիզբէն ա-
ղէկ է.
ո՞ երկայնամիտ ոգին հպարտ ոգիէն ա-
ղէկ է։
9—Մի արտորար հոգիովդ բարկանալու.
Քանզի բարկութիւնը յիմարներուն ծո-
ցին մէջ կը հանգչի։
10—Մի ըսեր թէ ինչո՞ւ համար առաջ-
ուան օրերը այս օրերէն աղէկ
էին,
վասն զի այս բանին համար ըրած հար-
ցումդ իմաստութեամբ չէ։
11 — Իմաստութիւնը ժառանգու-
թեան պէս աղէկ է,
ու արեւը տեսնողներուն օգտակար է։
12—Վասն զի իմաստութիւնը հովանա-
ւորութիւն կ՚ընէ,

*Կամ, Սրամտութիւնը
†Կամ, բարի կ՚ըլլայ

ու՝ արծաթը հովանաւորութիւն կ՚ընէ
Բայց գիտութեան օգուտը այս է
Որ իմաստութիւնը զինք տացողները
կ՚ապրեցնէ։
13—Աստուծոյ գործին նայէ.
վասն զի անոր ծռածը ո՞վ կրնայ չիսկել։
14—Ագէկ օրը աղէկութեամբ անցուր,
ու գէշ օրը զգուշութիւն ըրէ.
ու Աստուած իրարու դիմաց դրաւ ա-
նոնք,
Որպէս զի մարդ իրմէ ետքը բան մը
չգտնէ։
15—Իմ ունայնութեան օրերուս մէջ
ամէնը տեսայ.
Արդար կայ որ իր արդարութեանը մէջ
կը կորսուի,
ու ամբարիշտ կայ որ իր ամբարշտու-
թեանը մէջ երկարէ կ՚երկնցնէ։
16—Իիստ շատ արդար մի ըլլար,
ու ինքզինքդ չտիպ դուրս իմաստուն
մի կարծեր.
Ինչո՞ւ համար քեզ կորսնցնես։
17—Իիստ ամբարիշտ մի ըլլար ու յի-
մար մի ըլլար.
Ինչո՞ւ համար ատենդ չեկած մեռնիս։
18—Աղէկ է որ մէկը բռնես, ու միւ-
սէն ալ ձեռքդ չքաշես,
Վասն զի Աստուծմէ վախցողը ամէնէն
դուրս կ՚ելլէ։
19—Իմաստութիւնը աւելի ոյժ կու
տայ իմաստունին,
Քան թէ քաղաքի մը մէջ եղող տասը
իշխանք՝ ոյ՞ւ թողէ։
20—Իրաւ որ երկրի վրայ արդար մարդ
չկայ
Որ աղէկութիւն ընէ, ու մեղք չգործէ։
21—Արդ փու սիրտդ ամէն խօսուած
խօսքերուն մի տար,
Որպէս զի քու ծառայիդ քեզի անէծք
տալը չլսես.
22—Վասն զի քու սիրտդ գիտէ
Որ դուն ալ շատ անգամ ուրիշներուն
անէծք տուած ես։
23—Ատոնց ամէնը իմաստութեամբ փոր-
ձեցի։
Ըսի թէ ես իմաստուն ըլլամ.
Բայց անիկա ինծմէ հեռու էր։
24—Հեռուն ինչ ըլլալը,
ու խիստ խորունկ եղածը ո՞վ կը գտնէ։

25—Ես իմ սրտովս պտրտեցայ՝ որպէս
զի գիտնամ և քննեմ
Ու փնտռեմ իմաստութիւնը ու հան-
ճարը.
Ես յիմարութեան չարութիւնը
Ու անմտութիւնը ն խենթութիւնը գիտ-
նամ.
26—Ու ես մահացնէ դառն գտայ այն
կինը՝
Որուն սրտին մէջ ցանցեր և ուռկաններ,
Ո՞ ձեռքերուն մէջ կապանքներ կան.
Աստուծոյ առջև հաճելի եղողը անկէ
կ՚ազատի,
Բայց մեղաւորը անկէ կը բռնուի։
27—Ահա ասիկա գտայ, կ՚ըսէ ժողովողը,
Մէկիկ մէկիկ հմտնելէ՝ հաշիւը գտնելու
համար.
28—(Զոր հոգիս տակաւին կը փնտռէ,
Բայց չեմ գտներ գտնել.)
Այր մարդ՝ հազարէն մէկ գտայ,
Բայց բոլոր ասոնց մէջ մէկ կին չգտայ։
29—Ահա միայն ասիկա գտայ՝
Որ Աստուած մարդը ուղիղ ստեղծեց,
Բայց անոնք շատ հնարքներ փնտռեցին։

ԳԼ. Ը

1—Իմաստունին պէս ո՞վ կայ.
Ու խօսքի մեկնութիւնը ո՞վ գիտէ.
Մարդուն իմաստութիւնը անոր երեսը
կը փայլեցնէ,
Ու երեսին պնդութիւնը կը փոխուի։
2—Ես կ՚ըսեմ որ թագաւորին հրամանը
պահէ.
Մանաւանդ Աստուծոյ երդումին պատ-
ճառաւ։
3—Անոր առջեւէն ելլելու մի արտորար.
Չար գործի մէջ մի կենար,
Վասն զի անիկա ինչ որ ուզէ՝ կ՚ընէ։
4—Ուր որ թագաւորին խօսքը կայ, հոն
իշխանութիւն կայ.
Ու ո՞վ կրնայ անոր ըսել թէ ի՞նչ կ՚ընես։
5—Պատուիրանքը պահողը չարիքի
չհանդիպիր.
Ես իմաստունին սիրտը ժամանակը ու
յարմարութիւնը կը ճանչնայ,
6—Վասն զի ամէն գիտաւորութիւն էր
ժամանակը ու յարմարութիւնը
ունի,

*Կամ, զինադադարում

Ու ամբարիշտներ ալ կան, որոնց արդարներուն գործին պես կը պատահի։
Բայ որ Աչս ալ ունայնութիւն է։
15—Ու ես ուրախութիւնը գովեցի, վասն զի մարդ արեւուն տակ՝ Ուտելէ, խմելէ և ուրախութիւն ընելէ զատ Աղեկ բան չունի՛ վասն զի արեւուն տակ Աստուծոյ անոր տուած կեանքին օրերուն մէջ իր աշխատանքէն ասիկա կը մնայ անոր։
16—Երբ ես իմ սիրտս տուի իմաստութիւնը գիտնալու, Ու երկրի վրայ եղած զբաղմունքը տեսնելու, (Վասն զի թէ՛ ցորեկ և թէ՛ գիշեր Իր աչքը քուն չտեսնող մարդ կայ,)
17—Այն ատեն Աստուծոյ բոլոր գործերուն հակացայ, Որ մարդ չկրնար գտնել այն գործը՝ որ արեւուն տակ կ՚ըլլայ։ Վասն զի մարդ կ՚աշխատի փնտռելու, բայց չգտներ, Ու թէև իմաստունն ալ գիտնամ ըսէ, գտնելու կարող չըլլար։

Գլ. Թ

Վասն զի այս ամէնը իմ սրտիս մէջ դրի, Որ այս ամէնը քննեմ, Որ արդարները և իմաստուններն ու անոնց գործերը Աստուծոյ ձեռքին մէջ են. Մարդ չգիտեր թէ՛ սէրը և թէ՛ ատելութիւնը. Ամէն բան անոնց առջև է։
2—Ամէն բան ամէնուն հաւասարապէս կը պատահի. Արդարին ու ամբարշտին, Բարի *րդուն, մաքուրին ու անմաքուրին, Զոհ ընողին ու զոհ չընողին Պատահի դիպուածը մէկ է. Ինչպէս է բարի մարդը, մեղաւորն ալ այնպէս է. Երդումընողը երդումէ վախցողին պէս է։
3—Արեւուն տակ եղած բոլոր գործերուն մէջ դէշ բանը այս է, Որ ամէնուն պատահի դիպուածը մէկ է. Ու նաև մարդոց սրտին բերուն չարութեամբ լեցուած ըլլալով՝ Իրենց կենդանութեան առեն իրենց սրտին մէջ խենթութիւն կայ, Ու ետքը մեռելներուն կ՚երթեն։
4—Քանի բոլոր կենդանիներուն ընկերացած մարդին յոյս կայ. Վասն զի ողջ շունը մեռած առիւծէն աղեկ է։
5—Որովհետև կենդանիները գիտեն որ պիտի մեռնին. Բայց մեռելները բան մը չեն գիտեր, Ու ալ *վարձք մը չեն առներ. Վասն զի անոնց յիշատակը մոռցուեցաւ։
6—Թէ՛ անոնց սէրը, թէ՛ ատելութիւնը Ու թէ՛ նախանձը արդէն կորսուեցաւ, Ու անոնք արեւուն տակ եղող բաներուն մէջ՝ Ալ յաւիտեան բաժին մը չունին։
7—Գնա հացդ ուրախութեամբ կեր, Ու գինիդ ուրախ սրտով խմէ, Վասն զի արդէն Աստուած քու գործերուդ հաւնեցաւ։
8—Հանդերձներդ ամէն առեն ճերմակ ըլլան, Ու գլխուդ վրայէն իւղը պակաս չըլլայ։
9—Քու սիրած կնոջդ հետ կեանք վայելէ Քու ունայնութեան կեանքիդ բոլոր օրերուն մէջ, Զոր Աստուած քեզի տուաւ արեւուն տակ Քու ունայնութեանդ բոլոր օրերուն մէջ. Վասն զի այս կեանքին մէջ քու բաժինդ անիկա է՝ Արեւուն տակ քրտած աշխատանքիդ։
10—Ձեռքդ ինչ որ գտնէ ընելու, Բուռը ուժովդ ըրէ. Քանի այն քու երթալու գերեզմանիդ մէջ Գործ, խորհուրդ, գիտութիւն ու իմաստութիւն չկայ։
11—Դարձայ ու արեւուն տակ տեսայ, Որ ճամբան վազողներուն չէ, Ու պատերազմը զօրաւորներուն չէ, Ու նաև հացը իմաստուններուն չէ, Ու հարստութիւնն ալ հանճարեղներուն չէ,

*Կամ, չահ

Ու նաև չնորհքը գիտուններուն չէ. Հապա ժամանակ ու դիպուած կը պատահի ամէնուն.
12—Վասն զի մարդ իր առենը անգամ չգիտեր. Ինչպէս ձուկերը չար ուռկանով կը բռնուին, Ու թռչունները ծուղակի մէջ կը բռնուին, Նոյնպէս մարդոց որդիներն ալ որոգայթի մէջ կ՚իյնան, Ու չար ժամանակը յանկարծ անոնց վրայ կու գայ։
13—Ասիկա ես այս իմաստութիւնն ալ տեսայ, Ու անիկա ինծի մեծ երեւցաւ.
14—Պզտիկ քաղաք մը՝ ու մէջն ալ փէլ մարդ կար, Ու անոր վրայ մեծ թագաւոր մը եկաւ ու զանիկա պաշարեց, Ու անոր դէմ մեծ պատնէշներ չինեց.
15—Ու անոր մէջ աղքատ իմաստուն մը գտնուեցաւ, Ու անիկա իր իմաստութիւնովը քաղաքը ազատեց. Բայց այս աղքատ մարդը քնաւ յիշող մը չեղաւ։
16—Այն ատեն ըսի թէ՝ Իմաստութիւնը ուժէն աղեկ է, Թէև աղքատին իմաստութիւնը կ՚անարգեն, Ու անոր խօսքերը մարիկ չեն ըներ։
17—Իմաստուններուն մեղմ խօսքերը Ծիծաղներուն մէջ իշխան եղողին աղաղակէն աղեկ կը լսուին։
18—Իմաստութիւնը պատերազմական զէնքերէն աղեկ է. Բայց մէկ մեղաւորը շատ բարութիւններու կորսուածին պատճառ կ՚ըլլայ։

Գլ. Ժ

Մեռած ճանճերը իւղագործին իւղը գարշահոտ կ՚ընեն. Քիչ մը անմտութիւնն ալ *իմաստութեամբ և պատուալ երեւելի ընդունուածէ շատերը այնպես կ՚ընէ։

*Կամ, իմաստութենէն ու պատիւէն աւելի երեւան կ՚ելլէ

2—Իմաստունին սիրտը իր աջ կողմն է, Ու անմտին սիրտը իր ձախ կողմն է։
3—Ու անմիտ մարդը ճամբան քալելու առեն ալ, Խելքը պակաս ըլլալուն համար, իր յիմար ըլլալը ամէնուն կը յայտնէ։
4—Եթէ իշխանին բարկութիւնը քեզի դէմ ելլէ, Քու տեղդ մի ձգեր. Վասն զի քաղցրութիւնը մեծ յանցանքները կը դադրեցնէ։
5—Արեւուն տակ չարութիւն մըն ալ տեսայ, Որ իշխանին երեսէն եղած անխոհեմութիւն մը ըլլալ կ՚երեւնայ։
6—Անմտութիւնը խիստ բարձր տեղերու վրայ կը դրուի, Ու հարստացածը ցած տեղ մը կը նստին։
7—Տեսայ ծառաներ ձիու վրայ հէնելու էն, Ու իշխաններ՝ որոնք երկրի վրայ ծառաներու պէս կը քալէին։
8—Փոս փորողը ինք անոր մէջ կ՚իյնայ, Ու ցանկ քակողը օձը կը խածնէ։
9—Քարեր կորզողը անոնցմէ կը վնասուի, Ու փայտ ճեղքողը անկէ վտանգի մէջ կ՚ըլլայ։
10—Եթէ երկաթը բթացած է, ու անոր բերանը չսրե, Այն ատեն մարդը էր ոյժը *կրկնապատկելու է. Բայց իմաստութիւնը յաջողելու օգուտը ուրիշ է։
11—†Եթէ օձը թովիչէն առաջ խածնէ, Այն ատեն թովիչին օգուտ մը չմնար։
12—Իմաստունին բերնին խօսքերը շնորհք են, Բայց անմտին չրթունքները զինք կը կլլեն։
13—Անոր բերնին խօսքերուն սկզբնատութիւնը անմտութիւն է, Ու անոր խօսքին վերջը գէշ խենթութիւն է։
14—Ու յիմարը իր խօսքերը կը չատցնէ.

*Եբր. զօրացնելու
†Կամ, Օձ մը՝ որ առանց ձայն հանելու կը խածնէ, բանսարկու մարդը ուրիշ տարբերութիւն մը չունի

Մարդս ինչ ըլալիքը չգիտեր,
Ու անոր ո՞վ պիտի յայտնէ
Թէ անկէ ետքը ի՛նչ պիտի ըլլայ։
15—Ցիմաբներուն աչխատանքը զիրենք
կը ձանձրացնէ
Բաղաքը երթալը չգիտցողին չէ։
16—Վա՜յ քեզի, երկիր, երբ քու
թագաւորդ աղայ է,
Ու իշխաններդ առտուանց ՚ի՛ւր։ կ՚ուտեն։
17—Երանի՛ քեզի, երկիր, երբ քու թա-
գաւորդ ազնուազարմ է,
Եւ քու իշխաններդ առտնով կ՚ուտեն՝
Ուժի համար և ոչ թէ գինովութեան
համար։
18—Շատ ծուլութիւնով չենքը կը փլչի,
Եւ ձեռքերու թուլութիւնով տունը կը
կաթի։
19—Կոչունքը ծիծաղելու համար կ՚ընեն,
Ու գինին կեանքը կ՚ուրախացնէ.
Իսկ արծաթը ամէն բանի կ՚ըլ-
լայ։
20—Մտքիդ մէջ անգամ թագաւո-
րին անէծք մի տար,
Եւ քու պառկելու սենեակիներուդ մէջ
մեծերուն անէծք մի տար.
Վասն զի երկինքի թռչունը այն ձայնը
կը տանի,
Ու թեւաւորը խօսքը կը պատմէ։

Գլ. Ժ.

Քու հացդ լուրերու երեսին վրայ ձգէ,
Վասն զի շատ օրերէն ետքը զանիկա
պիտի գտնես։
2—Եօթնին և ութին ալ բաժին տուր,
Վասն զի չես գիտեր թէ երկրի վրայ
ի՛նչ պատահա պիտի ըլլայ։
3—Եթէ ամպերը լեցուն ըլլան,
Երկրի վրայ անձրև կը թափեն։
Ու երբ ծառ մը դէպ ի հարաւ կամ
դէպ ի հիւսիս իյնայ,
Այն ծառը ինկած տեղը կը մնայ։
4—Հովը դիտողը չկրնար ցանել,
Եւ ամպերուն նայողը չկրնար հնձել։
5—Ինչպես դուն *հովին ճամբան ո՛րն
ըլլալը,
Ո՛ր յղիին արտմանին մէջ ոսկորներուն
ի՛նչպէս կազմուելը չես գիտեր,
Նոյնպէս ամենատեղծ Աստուծոյն գոր-
ծը չես գիտեր։
6—Առտուանց քու սերմդ ցանէ,
Եւ իրիկունը քու ձեռքդ պարապ մի
թողուր.
Վասն զի չես գիտեր թէ ո՛րը օգտակար
պիտի ըլլայ, այս թէ այն,
Կամ թէ երկուքը հաւասարապէս ապէկ
պիտի ըլլան։
7—Իրաւ որ լոյսը քաղցր է,
Ու արեգը աեսնելը աչքերու ախորժելի է.
8—Բայց թէև մարդ մը շատ տարի ապրի,
Ո՛ անոնց ամէնուն մէջ ուրախանայ,
Խաւարի օրերն ալ յիշելու է,
Վասն զի անոնք շատ պիտի ըլլան.
Բոլոր գալիքը ունայնութիւն է։
9—Ով երիտասարդ, քու մանկու-
թեանդ մէջ ուրախ եղիր,
Ու երիտասարդութեանդ օրերուն մէջ
սիրտդ քեզ զուարճացնէ.
Եւ քու սրտիդ ճամբաներովը
Ու աչքերուդ նայուածքովը քալէ.
Բայց գիտցիր որ ասոնց ամէնուն համար
Աստուած քեզ դատաստանի պիտի բերէ։
10—Ու քու սրտիդ տրտմութիւնը վեր-
ցուր,
Ու մարմնիդ չարութիւնը հեռացուր,
Վասն զի մանկութիւնը ու երիտասար-
դութիւնը ունայնութիւն են։

Գլ. Ժ Ր

Եւ քու Արարիչդ երիտասարդու-
թեանդ օրերուն մէջ յիշէ
Դեռ թշուառութեան օրերը չհիասծ,
Ու այն տարիները չհասած,
Որոնց մէջ պիտի ըսես թէ Անոնց չեմ
հաւնիր.
2—Արեւը, լոյսը, լուսինը ու աստղերը
չխաւարած,
Ու անձրևին ետևէն ամպերը չդարձած.
3—Այն օրը որ տանը պահապաններուն
պիտի դողան,
Ու զօրաւոր մարդիկը պիտի ծռին,
Եւ աղացողները քիչ մնալնուն համար
պիտի դադարին,
Ու պատուհաններէն նայողները պիտի
մթննան.
4—Ու երբ աղօրիքին ձայնը ակարանայ,
Փողոցներուն մէջ դռնները պիտի գոցուին,
Եւ թռչունի ձայնով պիտի ելլեն,

*Կամ, հոգիին

Ու բոլոր երգեցող աղջիկները նկուն
պիտի ըլլան.
5—Եւ բարձրէն պիտի վախնան,
Ու ճամբուն մէջ վախցած պիտի ըլլան.
Եւ նշենին պիտի ծաղկի,
Ու մարախը ծանրութիւն պիտի սեպուի.
Եւ *ախորժակը պիտի դադարի.
Վասն զի մարդ իր յաւիտենական տու-
նը կ՚երթայ,
Եւ լացողները փողոցներուն մէջ պիտի
շրջին.
6—Դեռ արծաթէ թելը չկրճատի,
Ու ոսկիէ բաժակը չկոտրատի,
Եւ աւփորը աղբիւրին քով չփշրատի,
Ու չրհորին վրայի անիւը չկոտրատի.
7—Այն ատեն հողը երկիրը պիտի դառ-
նայ՝ որպէս եղած էր պէս.
Ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ՝ որ
զանիկա տուաւ։
8—Ունայնութի՛ւն ունայնութեանց,
ըսաւ ժողովողը,
Ամէն բան ունայնութիւն է։
9—Եւ որչափ որ ժողովողը իմաստուն էր,
Այնքա՛ն ալ ժողովուրդին գիտութիւն
սորվեցուց.

*Կամ, կապպարը

Եւ խորհելով ու քննելով
Շատ առակներ չարադրեց։
10—Ժողովողը փնտռեց որ ախորժելի
խօսքեր գտնէ.
Ու գրուածը ուղիղ և ճշմարիտ խօս-
քեր են։
11—Իմաստուններուն խօսքերը խր-
ատներու պէս են,
Ու ժողովներու տէրերուն գամուած բե-
հեռներու պէս՝ մէկ հովիւ
տրուած։
12—Վերջապէս, որդեակ իմ, անոնցմէ
խրատ առ.
Շատ գիրք շինելը ծայր չունի,
Ու շատ կարդալը մարմինը կը յոգնեցնէ։
13—Այս բոլոր խօսքին վախճանը
լսենք.
Աստուծմէ վախցիր ու անոր պատուէ-
րանքները պահէ,
Վասն զի մարդուս բոլոր դ-ր-ծ-ո-ն-ե-
ր-ը-ն-ը ասիկա է։
14—Քանզի Աստուած ամէն գործը,
Ամէն ծածուկ բաներու հետ,
Թէ՛ բարին և թէ՛ չարը դատաստանի
պիտի բերէ։

*Կամ, կշռաբերով

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Երգ երգոց Սողոմոնի։
2—Իր բերանին համբոյրներովը Թող համբուրէ զիս.
Վասն զի քու սէրդ գինիէն աղէկ է։
3—Քու իւղերուդ հոտը անոյծելի է,
Քու անունդ թափուած իւղի պէս է,
Անոր համար օրիորդները քեզ կը սիրեն։
4—Զիս քաշէ, քու ետեւէդ պիտի վազենք.
Թագաւորը իր ներքին սենեակները տարաւ զիս.
Քեզի հետ ցնծանք և ուրախանանք,
Քու սէրդ գինիէն աւելի յիշենք.
Քեզ *ուղղութեամբ կը սիրեն։
5—Ով Երուսաղէմի աղջիկներ,
Ես սեւ եմ, բայց գեղեցիկ,
Կեդարու վրաններուն պէս,
Սողոմոնի վարագոյրներուն պէս։
6—Իմ սեւցած բլլալուս մի նայիք,
Վասն զի արեւը վրս տեսաւ.
Իմ մօրս որդիները բնաւ սրդողեցան,
Զիս այգիներու պահապան բրին.
Բայց իմ այգիս պահպանութիւն չբրի։
7—Պատմէ՛ բնաւ, ով հոգիս սիրածը,
Քու հովդ ո՞ւր կ'արածես.
Կէսօրին ո՞ւր կը պառկեցնես.
Բանզի քու ընկերներուդ հօտերուն քով
Ինչո՞ւ †թափառականի պէս բլլամ։
8—Եթէ դուն չես գիտեր, ով կիներուն գեղեցիկը,
Հօտերուն չաւ իդներէն գնա,
Ու հովիւներուն վրաններուն քով քու ուլերդ արածէ։
9—Փարաւոնի կառքերուն էգուաձ ձիերուս
Նմանցուցի քեզ, ով իմ սիրուհիս.
10-Քու այտերդ զարդերով գեղեցիկ են,
Ու քու պարանոցդ գառամանեակներով։
11-Քեզի ոսկեղէն զարդեր պիտի չինենք
Արծաթէ կիսաւածներով։
12—Երբ Թագաւորը սեղանն էր,
Նարդոս իր հոտը բաւրեց։
13—Իմ սիրականս ինծի ատլախ ծրարին պէս է,
Գիչերը իմ ասիներուս մէջ պիտի հանգչի։
14—Իմ սիրականս հինայի ողկոյզէ պէս է ինծի
Ենգադդի այգիներուն մէջ։
15—Ահա գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս,
Ահա գեղեցիկ ես. քու աչքերդ աղաւնիներու պէսերուն նման են։
16—Ով իմ սիրականս, ահա գեղեցիկ ես ու վայելուչ.
Ու մեր անկողինը կանանչ է։
17—Մեր տուներուն գերանները եղեւնահատ են,
Ու մեր առիւծները մայր փայտ են։

ԳԼ. Բ

Ես Սարոնի ծաղիկն եմ,
Ու հովիւներուն շուշանը։
2—Ինչպէս շուշանը փուչերուն մէջ
Այնպէս է իմ սիրուհիս ազջիկներուն մէջ։
3—Ինչպէս խնձորենին անտառի ծառերուն մէջ
Այնպէս է իմ սիրականս երիտասարդներուն մէջ.
Անոր հովանիին տակ ախորժելով նստայ,
Ու անոր պտուղը իմ քիմքիս քաղցր է։
4—Զիս *ինձոյքին տունը բերաւ,
Ես անոր դրօշը իմ վրաս սէր եր։
5—Զիս կարկանդակներով զօրացուցէք,
Զիս խնձորներով ուժգնացուցէք,
Վասն զի ես սիրով կը նուաղիմ։
6—Անոր ձախ ձեռքը իմ գլխուս տակ բլլայ,
Ու աջ ձեռքը վրս գրկէ։
7—Ով Երուսաղէմի աղջիկներ,

*Կամ, ուղիղները
†Կամ, նուաղածի

*Եբր. գիներին

Զեզ այծեամներով կամ դաշտի եղնիկներով կ'երդմնցնեմ,
Որ սիրուհին չվերցնէք ու չարթնցնէք,
Մինչև որ ինք չուզէ։
8—Իմ սիրականիս ձայնն է.
Ահա անիկա լեռներուն վրայէն ցատկելով,
Ու բլուրներուն վրայէն ցատկրտելով կու գայ։
9—Իմ սիրականս այծեամի կամ եղնիկի ձագի կը նմանի.
Ահա հիմա մեր պատին ետեւը կայներ է,
Պատու հաններէն կը նայի,
Վանդակներէն կ'երեւնայ։
10—Իմ սիրականս պատասխան տալով ինծի ըսաւ,
Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս, ու եկուր.
11—Քանզի ահա ձմեռը անցաւ,
Անձրեւները անցան գացին.
12-Գետնի վրայ ծաղիկներ կ'երեւնան,
Ցօհաբեր ժամանակը հասաւ,
Ու մեր երկրին վրայ տատրակին ձայնը կը լսուի։
13—Ահա թզենին իր թուզերը կը հասցնէ,
Ու արթերը ծաղկեցան և էջերնէ հոտը կու տան.
Ելիր, ով սիրուհիս, ով գեղեցիկս, ու եկուր։
14—Ով իմ աղաւնիս, վէմին խառնչներուն մէջ,
Ապառաժին հովանիին տակ էիս։
Ինծի երեսդ ցուցուր, ձայնդ ինծի լսել տուր.
Քանզի ձայնդ քաղցր ու դէմքդ գեղեցիկ է։
15—Բռնեցէք մեզի աղուէսները.
Այգիները աւրող պզտիկ աղուէսները.
Վասն զի մեր այգիները ծաղկեր են։
16—Իմ սիրականս իմս է, ու ես անոնն եմ.
Անիկա էջ հօտը շուշաններու մէջ կ'արածէ։
17—Օրուան հովը չփչած՝ ու տուրերները չհեռացած՝
Դարձիր, ով իմ սիրականս,
Ու թեթերի լեռներուն վրայի այծեամին պէս
Կամ եղնիկներու ձագին պէս եղիր։

ԳԼ. Գ

Իմ հոգւոյս սիրածը
Գիչերը անկողինիս մէջ փնտռեցի,
Զանիկա փնտռեցի բայց չգտայ։
2—Պիտի հիմա պտըտիմ քաղաքին մէջ,
Փողոցներուն ու հրապարակներուն մէջ,
Իմ հոգիիս սիրածը փնտռեմ.
Զանիկա փնտռեցի, բայց չգտայ։
3—Պատաքին մէջ պտըտող պահապանները զիս գտան.
Արդեօք իմ հոգիիս սիրածը տեսա՞ք ըսի։
4—Անոնցմէ քիչ մը առաջ անցնելով,
Իմ հոգիիս սիրածը գտայ։
Զանիկա բռնեցի ու չձգեցի,
Մինչև որ իմ մօրս տունը,
Ու զիս ծնանողին սենեակը, տարի։
5—Ով Երուսաղէմի աղջիկներ,
Զեզ այծեամներով կամ դաշտին եղնիկներովը կ'երդմնցնեմ,
Որ սիրուհին չվերցնէք ու չարթնցնէք՝
Մինչև որ ինք չուզէ։
6—Ո՞վ է ասիկա՝ որ զմեուռով և կնդրուկով
Ու փերզամներուն ամէն փեռայէ փոշիովը խնկուած՝
Անապատէն կ'ելլէ ծուխի սիւներու պէս
7—Ահա Սողոմոնի *գահոյքը
Որուն բոլորտիքը իսրայէլի զօրաւորներէն
Վաթսուն զօրաւոր կայ.
8—Անոնն ալ սուսերաւոր են,
Ու պատերազմի վարժուած են.
Գիչերուան վախին համար՝
Անոնն մէկուն սուրը իր ազդրին վրայ է,
9—Սողոմոն թագաւորը Լիբանանի ծառերէն
Գահաւորակ մը չինեց իրեն համար.
10—Սիւները արծաթէ, յենարանները ոսկէ,
Բազմոցը ծիրանիէ չինեց.
Ու մէջը Երուսաղէմի աղջիկներէն
†Խիստ գեղեցիկ՝ նկարագրուած էր։
11—Ով Սիովնի աղջիկներ, ելէք,
Ես Սողոմոն Թագաւորը տեսէք
Այն թագովը, որով իր մայրը անոր փեսայութեան օրը
Ու սրտին ուրախութեան օրը պսակեց զանիկա։

*Կամ, անկողինը †Եբր. սիրով

Գլ. Դ

Ահա դուն գեղեցիկ ես, ով իմ սիրեալ,
Ահա դուն գեղեցիկ ես.
Լայակիդ մէջէն քու աչքերդ աղաւնիներու աչերո՛ւն նման են.
Քու մազերդ Գաղաադ *լեռը պառկող՝ այծերուն հօտին պէս են։
2—Ակռաներդ լուացարանէն ելլող խուզած հօտի պէս են,
Որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին,
Ու անոնց մէջ ամուլ չկայ։
3—Քու շրթունքներդ կարմիր դերձանի պէս են,
Ու խօսուածդդ գեղեցիկ է.
Ա՛յտերդ լայակիդ մէջէն՝
Նռնոտի կտորներու կը նմանին։
4—Քու պարանոցդ զինարանի համար շինուած
Դաւիթի աշտարակին պէս է,
Որ հոն հազար ասպար կախուած են.
Ամէնն ալ զօրաւորներուն վահաններն են։
5—Քու երկու ծոնգդ նման են երկու ուլիկներու,
Որոնք այծեամի մը երկու օրեակ ձագ՝ են,
Ու շուշաններու մէջ կ'արածուին։
6—Օրուան հովը չվազած, ու սաւառները չհեռացած,
Ես զմուռսի լեռը ու կնդրուկի բլուրը պիտի երթամ։
7—Ծողոքովին գեղեցիկ ես, ով իմ սիրեալս,
Ու քու վրադ արատ չկայ։
8—Ով հարսն, ինծի հետ Լիբանանէ եկո՛ւր,
Ինծի հետ Լիբանանէ եկուր.
Ամանայի գագաթէն, Սանիրի ու Հերմոնի գագաթէն,
Առիւծներուն մորիներէն ու ինձերուն լեռներէն նայէ։
9—Սիրտս առիր, ով իմ հարս քոյրս,
Սիրտս առիր քու մէկ աչքովդ
Ու պարանոցիդ մէկ քաւամանեակովը։
10—Քու սէրդ ինչ գեղեցիկ է, ով հարս քոյրս.
Քու սէրդ գինիէն աղէկ է,
Ու քու իւղերուդ անուշահոտութիւնը՝ Ամէն խառնիճէն։
11—Շրթունքներէդ խորիսխի մեղր կը կաթի, ով հարսն,
Լեզուիդ տակ մեղր ու կաթ կայ.
Ու քու զգեստներուդ անուշահոտութիւնը
Լիբանանի հոտին պէս է։
12—Իմ հարս քոյրս փակեալ պարտէզ մըն է,
Փակեալ աղբիւր ու կնքուած աղբերակ մըն է։
13—Քու առուներդ քաղցրահամ պտուղներով,
Հինաներով ու նարդոսներով՝ նռնենիներու գրաստ են.
14—Նարդոս ու քրքում, եղէգն ու կինամոն,
Ամէն կնդրուկի ծառով, զմուռսով ու հալուէով
Ու բոլոր գլխաւոր խառնկերով։
15—Պարտէզներու աղբիւր,
Կենդանի ջուրի ջրհոր
Ու Լիբանանէ վազած հեղեղներ։
16—Արթնցիր, ով հիւսիս, եկուր, ով հարաւ,
Իմ պարտէզիս մէջ փչէ, որպէս զի անոր խառնկերը բուրեն.
Իմ սիրականս թող իր պարտէզը գայ,
Ու իրեն ախորժելի պտուղները ուտէ։

Գլ. Ե

Իմ պարտէզս եկայ, ով հարս քոյրս
Իմ զմուռսս խառնկերուս հետ ժողվեցի,
Իմ խորիսխս մեղրիս հետ կերայ,
Իմ գինիս կաթովս խմեցի։
Կերէ՛ք, ով բարեկամներ,
Խմեցէ՛ք ու գինովցէ՛ք, ով սիրելիներ։
2—Ես կը քնանամ, բայց իմ սիրտս արթուն է.
Ահա իմ սիրականիս ձայնն է, որ կը զարնէ ու կ'ըսէ.
Ով իմ քոյրս, իմ սիրուհիս,
Իմ աղաւնիս, իմ կատարեալս, բացի՛ ինծի.
Քանզի իմ գլուխս ցօղով լեցուեցաւ,
Ու վարսերս՝ գիշերուան չաղերով։
3—Իմ պատմուճանս հաներ եմ,

---

*Կամ, լեռնէն երեւցած

Զանիկա ի՞նչպէս հագնիմ.
Ոտքերս լուացեր եմ,
Զանոնք ի՞նչպէս աղտեղեմ։
4—Իմ սիրականս իր ձեռքը ծակէն երկնցուց,
Ու անոր համար իմ ալիքս գալարեցաւ։
5—Ես եղայ որ իմ սիրականիս բանամ,
Ու ձեռքերէս զմուռս՝ ու իմ մատներէս ընտիր զմուռս կաթեց
Փականակին բռնելու տեղին վրայ։
6—Ես իմ սիրականիս բացի,
Բայց իմ սիրականս քաշուեր գացեր էր.
Երբ անիկա կը խօսէր, իմ հոգիս նուաղեցաւ.
Զանիկա փնտռեցի, բայց չգտայ.
Զանիկա կանչեցի, բայց ինծի պատասխան չտուաւ։
7—Քաղաքին մէջ պտըտող պահապանները զիս գտան,
Զարկին վիրաւորեցին զիս.
Պարսպին պահապանները քողս վրայէս վերցուցին։
8—Ով Երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երդմնցնեմ,
Եթէ իմ սիրականս գտնէք,
Անոր պատմէք որ ես սիրով կը նուաղիմ։
9—Ով կիներուն գեղեցիկը,
Քու սիրականդ ուրէն սիրականէ ինչ տարբերութիւն ունի.
Քու սիրականդ ուրէն սիրականէ ինչ տարբերութիւն ունի,
Որ մեզ այդպէս կ'երդմնցնես։
10—Իմ սիրականս սպիտակ ու կարմիր է,
Տասը հազարի մէջ երեւելի է։
11—Անոր գլուխը զուտ ոսկի է,
Վարսքերը ցցուած՝ ու ագռաւի պէս սեւ են։
12—Աչքերը՝ վազող յուներուն քով
Կաթով լուացուած ազաւնիներու ա՛չերո՛ւն կը նմանին,
Գանուած գոհարներու պէս են։
13—Անոր այտերը խնկալից տունկերու ածուին
Ու անուշահոտ ծաղիկներու թաղարներուն պէս են.
Շրթունքները ընտիր զմուռս կաթող շուշաններ են.
14—Ձեռքերը ոսկի մատնիներ են
Թարսիսի քարերով լեցուած.
Որովայնը բանուած փղոսկր է
Շափիւղաներով ծածկուած.
15—Սրունքները մարմարիոն սիւներ են
Ընտիր ոսկի խարխնաներու վրայ հաստատուած.
Կերպարանքը Լիբանանի պէս,
Եղեւիններուն պէս, ընտիր է։
16—Անոր բերանը քաղցր,
Ու ինք բոլորովին ցանկալի է։
Ահա այսպէս է իմ սիրականս, այսպէս է իմ բարեկամս,
Ով Երուսաղէմի աղջիկներ։

Գլ. Զ

Քու սիրականդ ո՞ւր գնաց,
Ով կիներուն գեղեցիկը.
Քու սիրականդ ո՞ւր դարձաւ,
Որ զանիկա քեզի հետ փնտռենք։
2—Իմ սիրականս իր պարտէզը,
Խնկալից տունկերուն ածուները, իջաւ,
Որպէս զի պարտէզներու մէջ արածէ,
Ու շուշաններ ժողվէ։
3—Ես իմ սիրականիս եմ,
Ու իմ սիրականս իմ է.
Անիկա շուշաններու մէջ կ'արածէ։
4—Թերսայի պէս գեղեցիկ ես, ով իմ սիրուհիս.
Երուսաղէմի պէս հմայելի ես,
Ու դիշակիր զօրերու պէս ահարկու ես։
5—Աչքերդ ինծմէ դարձուր,
Վասն զի անոնք ինծի յաղթեցին.
Մազերդ *Գաղաադ պառկող՝ այծերուն հօտին պէս են։
6—Ակռաներդ լուացարանէն ելած մափիներուն հօտին կը նմանին,
Որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին,
Ու անոնց մէջ ամուլ չկայ։
7—Այտերդ լայակիդ մէջէն՝
Նռնոտի կտորներու կը նմանին։
8—Թագուհիները վաթսուն, ու հարճերը ութսուն,
Ու օրիորդները անթիւ են։
9—Իմ ազաւնիս, իմ կատարեալս, մէկ է,
Իր մօրը մէկ հատիկը,
Ջինք ծնանողին ընտրեալն է.
Զանիկա աղջիկները տեսան,
Ու անոր՝ երանի՛ ըսին.

---

*Կամ, Գաղաադէ երեւցած

Թագաւորները ու հարճերն ալ,
Եւ զանիկա գովեցին։
10—Ո՞վ է ասիկա, որ արշալոյսի պէս
կը նայի,
Որ լուսնին պէս գեղեցիկ, արեւու պէս
մաքուր,
Ո՞ր դիւցազնը պէս զէնքերու պէս ահարկու է։
11—Ընկոյզներու պարտէզը իջայ,
Որպէս զի ձորին *կանանչութիւնը տեսնեմ,
Եւ նայիմ թէ արդօք որթը ծլեցած,
Ու նռնենիները ծաղկեցած։
12—Ես չգիտցած՝ իմ հոգիս Ամինադաբի կառքերուն պէս ըրաւ զիս։
13—Դարձիր, դարձիր, ով Սողոմացի՛,
Դարձիր, դարձիր, որպէս զի քեզ տեսնենք։
Ինչ պիտի տեսնէք Սողոմացիին վրայ.
Իբրև երկու բանակներու գունդ։

Գլ. Է

Ի՜նչ գեղեցիկ են քու քայլերդ կօշիկներով,
Ով իշխանի աղջիկ.
Քու բարձերուդ կաղմուածքը
Երեւելի արուեստաւորի մը ձեռքով չինուած
Մանեակներու կը նմանի։
2—Քու պորտդ ըմպելիքով լեցուն բոլորակ թասի մը կը նմանի.
Քու փորդ շուշանով պատած ցորենի չեղջիւր պէս է,
3—Քու երկու ծունդ նման են երկու ուլերու,
Որոնք այծեամի մը երկուորեակ ձնած են։
4-Պարանոցդ փղոսկրե աշտարակի պէս է.
Աչքերդ Եսբոն՝ Բաթբաբբիմի դրանը քով եղող աւազաններուն չափ նմանին.
Ունդդ դէպ ի Դամասկոս նայող Լիբանանի աշտարակին պէս է։
5—Գլուխդ քու վրադ Կարմէղոսի պէս,
Եւ գլխուդ հիւսուածը ծիրանիի պէս է.
Թագաւորը †ու խոպոպիքներուդ կապուած է։
6-Ո՛րչափ գեղեցիկ և ո՛րչափ քաղցր ես,

*Կամ, պատուհները

Իմ փափկութիւս սիրուհիս։
7—Քու հասակդ արմաւենիի
Ու ատինքներդ ողկոյզներու կը նմանին,
8—Ըսի, Արմաւենիին վրայ ելլեմ,
Անոր ճաներուն փակչիմ.
Եւ քու ատինքներդ խաղողի ողկոյզներու պէս,
Ու ռնգունքներուդ հոտը խնձորներու հոտին պէս ըլլայ։
9—Եւ քու քիմքդ ազնիւ գինիի պէս է,
Որ չիտակ կը վազէ իմ սիրականիս,
Ու քնացողներուն *շրթունքները կը խօսեցնէ։
10—Ես իմ սիրականին եմ,
Եւ անոր բաղձանքը ինծի է։
11—Եկուր, իմ սիրականս, դաշտը ելլենք,
Գիւղերը գիշերու մէջ անցնենք.
12—Առտուանց կանուխ այգիները երթանք,
Ու տեսնենք թէ որթը ծլե՞ր է, ծաղիկը բացե՞ր է,
Եւ նռնենիները ծաղկե՞ր են.
Հոն իմ սէրս քեզի տամ։
13—Մանրագործները էրէց հոտը կուտան,
Ու մեր դուներուն մէջ,
Ամէն ընտիր պտուղներէն, թէ՛ նոր և թէ՛ հին,
Քեզի համար պահեր եմ, ով իմ սիրականս։

Գլ. Ը

Երանի՛ թէ իմ մօրս տինքը ծծած եղբօրս պէս ըլլայիր.
Երբ քեզ դուրսը գտնէի, պիտի համբուրէի,
Եւ զիս պիտի չանարգէին։
2—Քեզ առաջնորդելով իմ մօրս տունը կը տանէի,
Որպէս զի ինծի խօրհրդեներս.
Քեզի հոտաւէտ գինիէն, իմ նռնենիիս օշարակէն, կը խմցնէի։
3—Ձախ ձեռքը գլխուս տակ,
Ու աջ ձեռքը զիս կը գրկէր։
4—Ով երուսաղէմի աղջիկներ, ձեզ կ'երդմնցնեմ,

*Կամ, շրթունքներուն վրայ կը կաթի
†Կամ, սորվեցներ

Որ չյարուցնէք ու չվերցնէք,
Մինչև որ ինք չուզէ։
5—Ո՞վ է ասիկա որ իր սիրականին կռթնած՝
Անապատէն կ'ելլէ.
Քեզ խնձորենիին տակ արթնցուցի.
Քու մայրդ փլուզ հոն ծնաւ,
Քու ծնողդ փլուզ հոն ծնաւ։
6—Զիս քու սրտիդ վրայ կնիքի պէս,
Քու բազուկիդ վրայ կնիքի պէս, դիր.
Վասն զի սէրը մահուան պէս զօրաւոր
Ո՞ր նախանձը գերեզմանի պէս խիստ է.
Անոր կայծերը սաստիկ բոցավառ կրակի կայծեր են։
7—Շատ ջուրերը չեն կրնար սէրը մարել,
Ու գետերը զանիկա չեն կրնար ընկղմել.
Եթէ մարդ մը սիրոյ փոխարէն իր տանը բոլոր ստացուածքը տայ,
Զանիկա բոլորովին կ'անարգեն։
8—Պզտիկ քոյր մը ունինք,
Ու անիկա տինք չունի.
Մեր քրոջը ի՞նչ ընենք
Անոր համար խօսուած օրը։
9—Եթէ անիկա պարիսպ է,
Վրան արծաթէ աշտարակ մը չինենք.
Եւ եթէ դուռ է,
Զանիկա եղեւնափայտի տախտակներով պատենք։
10—Ես պարիսպ եմ,
Ու իմ տինքերս աշտարակներու պէս են.
Այս պատճառաւ անոր առջև
Խաղաղութիւն գտածի պէս եղայ։
11—Սողոման Բաալամոնի մէջ այգի ունէր.
Անիկա այգին պահապաններու տուաւ,
Ամէն մէկը անոր պտուղին համար հազար կտոր արծաթ կը բերէր։
12—Իմ այգիս իմ առջեւս է.
Ով Սողոման, հազարը քուկդ ըլլայ,
Ու երկու հարիւրը անոր պտուղը պահապանողներուն։
13—Ով պարտէզներու մէջ նստող,
Ընկերներուդ քու ձայնդ կը լսեն.
Ինծի ալ լսել տուր։
14—Շուտ ըրէ, ով իմ սիրականս,
Ու խնկաբեր լեռներուն վրայ
Այծեամի կամ եղնիկներու ձագի նման եղիր։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Ամենէն սրգալոյն նասլիի տեսիլքը զոր
Ծուգայի ու երուսաղէմի վրայ տեսաւ՝
Ծուգայի թագաւորներուն Ոզիայէ, Յոթամայ, Աքազի ու Եզեկիայի օրերը։
2—Լա՛ւ, ով երկինք, և ականջ դիր,
ով երկիր,
վասն զի Տէրը կը խօսի.
Զաւակներ մեծցուցի ու բարձրացուցի,
եւ անոնք ինծի դէմ ապստամբեցան։
3—Եզը իր տէրը կը ճանչնայ,
ու էշը իր տիրոջ մսուրը,
Բայց իսրայէլ չէ՛ ճանչնար,
իմ ժողովուրդս չիմացաւ։
4—Վա՛յ մեղաւոր ազգին,
Անօրէնութիւնով ծանրացած ժողովուրդ,
Չարագործներու սերունդ, ապականիչ զաւակներ.
Անոնք Տէրը թողուցին,
Իսրայէլի Սուրբը անարգեցին
ու՝ ետ քաշուեցան։
5—Ո՞ր հարկաւորը վրայ կրնաք զարնուիլ,
երբ ալ աւելի ապստամբիք։
Բոլոր գլուխը հիւանդ
եւ բոլոր սիրտը մարած է։
6—Ոտքին թաթէն մինչև գլուխը
ոչ ոեւ անոր մէջ տեղ չկայ.
Հարուածներ, վէրքեր ու շարաւղից խոցեր կան.
Անոնք չգոցուեցան, չկապուեցան
ու իւղով ալ չկակղցան։
7—Ձեր երկիրը աւերակ դարձեր է,
ու ձեր քաղաքները կրակով այրուած են.
Ձեր արտերը այլերնուդ առջև օտարները կ'ուտեն,
ու անոնք օտարներուն ըմբռնած աւերակներուն պէս խորտնացած են։
8—Ու Սիոնի աղջիկը այգիի մէջ եղած խրճիթի պէս,
վարունգի արտի մէջ եղած հիւղի պէս,
Պաշարուած քաղաքի պէս թողուած ձգեր է։
9—Եթէ զօրաց Տէրը մեզի փիչ մը մնացորդ թողուցած չըլլար,
Մենք Սոդոմի պէս պիտի ըլլայինք,
ու Գոմորի պիտի նմանէինք։
10—Լսեցէք Տէրոջը խօսքը, ով Սոդոմի իշխաններ,
Ականջ դրէք մեր Աստուծոյն օրէնքին,
ով Գոմորի ժողովուրդ.
11—Ի՞նչ պէտք է ինծի ձեր զոհերուն շատութիւնը, կ'ըսէ Տէրը.
Ձեր խոյերուն ողջակէզներէն
ու պարարտ անասուններուն ճարպէն կշտացած եմ,
Եւ զուարակներուն ու գառներուն
եւ նոխազներուն արիւնները չեմ ախորժիր։
12—Երբ կու գաք իմ առջեւս երեւնալու,
ո՞վ պահանջից ձեզմէ, որ այսպէս իմ սրահներս կոխէք.
13—Ալ ընդհ ունայն ընծաները մի բերէք,
Ձեր խունկը ինծի պիղծ է.
Ամսագլուխներուն ու շաբաթներուն
ու ժողովներու գումարուելուն չեմ կրնար տանիլ.
Ձեր ոճախարութիւնը անգամ անօրէնութիւն է։
14—Ձեր ամսագլուխներէն ու տօներէն
կը զզուի իմ հոգիս.
Անոնք իմ վրաս ծանր բեռ եղան,
վերցնելէ յոգնեցայ։
15—Ուստի երբ ձեռքերնիդ կը տարածէք,
Աչքերս ձեզմէ պիտի ծածկեմ.
Նաեւ երբ աղօթքնիդ կը շատցնէք, պիտի չլսեմ.
վասն զի ձեռքերնիդ արիւնով լեցուն են։
16—Լուացուեցէք, մաքրուեցէք,
իմ աչքերուս առջեւէն ձեր չար գործերը վերկդի բրէք,
Զարութիւն գործելէ դադրեցէք.
17—Բարութիւն ընել սորվեցէք,
Իրաւունքը փնտռեցէք, ջրկաւածին ուղղութիւն բրէք,
Որբին դատաստանը տեսէք, ու որբեւարիին դատը պաշտպանեցէք։
18—Հիմա եկէք վիճաբանինք, կ'ըսէ Տէրը.
Եթէ ձեր վերդերը կրկնակի կարմիրի պէս են,
Ձիւնի պէս պիտի ճերմկնան,
եւ եթէ որդան կարմիրի նման են,
Ասրի պէս ճերմկի պիտի ըլլան։
19—Եթէ դուք յօժարիք ու հնազանդիք,
երկրին բարիքը պիտի ուտէք.
20—Բայց եթէ չկ ուզեք ու մերժելով ապստամբիք,
Սուրը պիտի ուտէ ձեզ,
վասն զի Տէրոջը բերանը խօսեցաւ։
21—Ի՛նչպէս պոռնկեցաւ այդ հաւատարիմ քաղաքը։
Անիկա իրաւունքով լեցուն էր,
ու անոր մէջ արդարութիւն կը բնակէր.
Բայց հիմա մարդասպաններու բնակարան է։
22—Քու արծաթդ կղկղանք դարձաւ,
Գինիիդ մէջ ջուր խառնուած է։
23—Քու իշխանները ապստամբ ու գողերու ընկեր եղան.
Ամէնն ալ կաշառք սիրելով՝ պարգեւներ կը փնտռեն,
Անոնք որբին դատաստանը չեն տեսներ,
ու որբևարիին դատը անոնց առջև չգայ։
24—Անոր համար զօրաց Եհովա Տէրը,
Իսրայէլի Հզօրը, այսպէս կ'ըսէ.
Աւա՛ղ, իմ հակառակորդներուս հատուցում պիտի ընեմ,
Ու թշնամիներէս վրէժ պիտի առնեմ։
25—Ու իմ ձեռքս քու վրադ պիտի դարձնեմ,
Ու կղկղանդ իբր թէ *բորակով պիտի մաքրեմ,
Ու բոլոր անագդ մէկդի պիտի զատեմ։
26—Ու քու դատաւորներդ առաջուան պէս,
Ու խորհրդականներդ սկիզբէն եղածին պէս նորէն պիտի հաստատեմ.
Անկէ ետքը դուն պիտի կոչուիս
Արդարութեան քաղաք և հաւատարիմ աւան։
27—Սիոնը դատաստանով պիտի փրկուի,
Ու հոն դարձողները՝ արդարութեամբ։
28—Բայց անօրէնները ու մեղաւորները միկտեղ պիտի ջարդուին,
Ու անոնք որ Տէրը կը թողուն, բնաջինջ պիտի ըլլան։
29—Քանի ձեր ցանկացած բեւեկներէն պիտի ամչնան,
Ու այն ձեր ընտրած պարտէզներուն համար ամօթով պիտի մնաք։
30—Վասն զի տերեւները թառամած բեւեկնի պէս,
Ու ջուր չունեցող պարտէզի պէս պիտի ըլլաք։
31—Ու զօրութիւն անեցողը խծուծի պէս,
Ու անոր գործը կայծի նման պիտի ըլլայ,
Ու երկուքն ալ միկտեղ պիտի այրին,
Ու մարող պիտի չգտնուի։

ԳԼ. Բ

Ամենէն սրգալոյն նասլիի՝ Ծուգայի ու երուսաղէմի վրայ տեսած տեսիլքին խօսքը։
2—Վերջին օրերը պիտի ըլլայ որ Տէրոջը տանը լեռը
Լեռներուն գլխուն վրայ պիտի հաստատուի,
Ու բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
Ու բոլոր հեթանոսները հոսելով պէս պիտի դիմեն անոր։
3—Ու շատ ժողովուրդներ պիտի երթան ու ըսեն,
Եկէք, Եհովայի լեռը,
Յակոբի Աստուծոյն տունը, երթանք,
Որպէս զի մեզի իր ճամբաները սորվեցնէ,
Ու անոր շաւիղներուն մէջ քալենք.
վասն զի օրէնքը Սիոնէ,
Ու Տէրոջը խօսքը Երուսաղէմէ պիտի ելլէ.
4—Ու անիկա հեթանոսներուն մէջ դատաստան պիտի տեսնէ,
Ու շատ ժողովուրդներ պիտի յանդիմանէ.
Ու անոնք իրենց սուրերը խոփեր,

*Կամ, մաքրութիւնով

եւ իրենց նիզակները յօտացներ պիտի չընեն.
Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ.
եւ ալ պատերազմ պիտի չսորվին։
5—Ով Յակոբի տունը,
եկէք Տէրոջը լուսովը քալենք։
6—Քանի դուն քու ժողովուրդդ,
Յակոբի տունը, թողուցիր,
վասն զի արեւելքի [1]—ըդ-ներ-ով լեցուեցան,
եւ փղշտացոց պէս հմայութիւն կ'ընեն,
ու օտարներու զաւակց հետ դաշնագիր եղան։
7—Եւ անոնց երկիրը արծաթով ու ոսկիով լեցուեցաւ,
ու անոնց գանձերը անթիւ եղան.
Անոնց երկիրը ձիերով լեցուեցաւ,
եւ անոնց կառքերը անթիւ են։
8—Կուռքերով ալ լեցուն է անոնց երկիրը.
իրենց ձեռաց գործերուն երկրպագութիւն կ'ընեն,
Անոնց՝ զորնք իրենց մատերը չինեցին։
9—Եւ ոտիկ մարդը ծռեցաւ,
ու ազնուականը խոնարհեցաւ.
եւ անոնց պիտի չներես։
10—Տէրոջը վախին երեսէն
եւ անոր վեհափառութեանը մեծութենէն
վէմին մէջ մտիր, ու հողին մէջ պահուէ։
11—Մարդուն ամբարտաւան աչքերը պիտի խոնարհին,
եւ մարդոց հպարտութիւնը պիտի ցածնայ,
ու այն օրը միայն Տէրը պիտի բարձրանայ,
12—Վասն զի զօրաց Տէրոջը օրը
Ամէն ամբարտաւաններուն ու բարձրամիտներուն վրայ
եւ ամէն հպարտացածներուն վրայ պիտի ըլայ,
ու անոնք պիտի խոնարհին։
13—Եւ Լիբանանու ամէն բարձրացած ու վերացած եղեւիններուն վրայ,
ու Բասանի ամէն կաղնիներուն վրայ,
14—Եւ ամէն բարձր լեռներուն վրայ,
ու ամէն բարձրացած բլուրներուն վրայ,
15—Եւ ամէն բարձր աշտարակներուն վրայ,
ու ամէն ամուր պատերուն վրայ,
16—Եւ Թարսիսի ամէն նաւերուն վրայ,
ու ամէն հաճելի երեւցած բաներուն վրայ պիտի ըլայ.
17—Եւ մարդուն ամբարտաւանութիւնը պիտի ցածնայ,
ու մարդոց հպարտութիւնը պիտի խոնարհի,
եւ այն օրը միայն Տէրը պիտի բարձրանայ,
18—Ու կուռքերը բնաջինջ պիտի ըլլան։
19—Եւ քարայրներու մէջ
ու երկրի խոռոչները պիտի մտնեն
Տէրոջը վախին երեսէն
եւ անոր վեհափառութեանը մեծութենէն,
երբ ինք երկիրը սարսելու ելլէ։
20—Այն օր մարդ իսլամներուն ու չղխիներուն պիտի նետէ
իր արծաթիզէն կուռքերը ու իր ոսկիզէն կուռքերը,
Զորոնք իրեն չիներ են երկրպագութիւն ընելու համար։
21—Որպէս զի Տէրոջը վախին երեսէն
ու անոր վեհափառութեանը մեծութենէն
Ապառաժներուն ծակերը
ու վիմերուն ծերպերը մտնէ,
երբ Անիկա երկիրը սարսելու ելլէ։
22—Ես կեցէք մարդէն, որուն շունչը
իր ռնգունքներուն մէջ է.
վասն զի ինչ բանի մէջ համարուի ան։

Գլ. Գ

Վասն զի ահա զօրաց Եհովա Տէրը
Երուսաղէմէ և Յուդայէ պիտի վերցնէ
զաւազանը և ցուպը,
Հացին բոլոր զօրութիւնը ու ջուրին բոլոր զօրութիւնը,
2—Կարիճը ու պատերազմող մարդը,
Դատաւորը ու մարգարէն, գուշակութիւն ընողը ու ծերը,
3—Յիսնապետը ու պատուաւոր մարդը,
Խորհրդականը ու իմաստուն ճարտարապետը և հանճարեղ կախարդը։
4—Եւ անոնց վրայ մանուկները իշխաններ պիտի կարգեմ,
Ու անոնց վրայ տղաք պիտի իշխեն,
5—Ու ժողովուրդը իրարմէ

Ու ընկերը իր ընկերէն հարստահարութիւն պիտի կրէն.
Մանուկները ծերերուն գոռոզութիւն պիտի ընեն,
Եւ անարգները՝ պատուականներուն։
6—Այն ատեն պիտի բռնէ մարդ իր հօրը տունէն հզօր իր եղբայրը,—ը-ե,
Դուն հանգերձ ունիս,
Մեր վրայ իշխան եղիր,
Ու այս աւերակը քու ձեռքիդ տակ ըլլայ։
7—Այն օր անիկա *պատասխան պիտի տայ՝ ու ըսէ,
Ես դառնչորդ չեմ ըլլար,
վասն զի իմ տանս մէջ ոչ հաց կայ և ոչ հանդերձ.
Զիս ժողովուրդին վրայ իշխան մի կարգէք։
8—Քանի երուսաղէմ սասանեցաւ և Յուդա ինկաւ.
վասն զի անոնց լեզուները ու գործերը Տէրոջը դէմ են,
Որպէս զի բարկացնեն անոր փառաւոր աչքերը։
9—Անոնց երեսներուն տեսքը իրենց դէմ կը վկայէ,
եւ իրենց մեղքերը Սոդոմի պէս կը յայտնեն, չեն ծածկեր.
Վա՛յ անոնց անձին, վասն զի իրենց վրայ չարիք բերին։
10—Ազդարարին ըսէք որ երջանիկ ըլլայ.
վասն զի անոնք իրենց գործերուն պտուղը պիտի ուտեն։
11—Վա՛յ անօրէնին, գէշ [2]—ըդ ըլլայ ան-որ,
վասն զի անոր ձեռքերուն [3]—ը-ներ-ուն փոխարէնը իրեն պիտի տրուի։
12—Ի-յոյ իմ ժողովուրդիս վրայ տղաք բռնաւորութիւն կ'ընեն,
Ու անոր վրայ կիներ կը տիրեն։
Ով իմ ժողովուրդս, քու առաջնորդներդ [4]-ող գլխի կը հանեն,
Եւ քու չար ուղիներուդ ճամբան կը խանգարեն։
13—Տէրը դատաստան տեսնելու ելեր է,
Ու ժողովուրդները դատելու կայներ է։
14—Տէրը ինք դատաստան ընելու պիտի գայ
իր ժողովուրդին ծերերուն ու իշխաններուն հետ.
Վասն զի դուք այգին այրեցիք,
Ու աղքատին յափշտակուածը ձեր տունն է։
15—Ձեզի ի՞նչ եղաւ որ իմ ժողովուրդս կը ջախջախէք,
Ու ազքատներուն երեսը կը ճնշէք,
կ'ըսէ Եհովա, զօրաց Տէրը։
16—Եւ Տէրը [5]-ըդ-ը-ըսաւ,
Որովհետեւ Սիոնի աղջիկները հպարտացան,
Եւ բարձրացպարանոց կը քալեն,
Անհամեստ ակնարկութիւններ կ'ընեն,
Մանրաքայլ կ'երթան
Ու ոտքերով չաչիւն կը հանեն,
17—Տէրն ալ Սիոնի աղջիկներուն գագաթը պիտի կնատացնէ,
Եւ Տէրը անոնց ամթոյքը պիտի մերկացնէ։
18—Եւ այն օրը Տէրը պիտի վերցնէ
Ա-ռ-ը-ոտի մէհենադներուն փառքը
Ու ցանցակերպ ծամակալները և մանիկները,
19—Գինաները, ապարանջանները ու չղաչաեռները,
20—Ապարօչները, ոտքի չղթաները ու գօտիները,
Ա-ռ-ը-ո-ը-ոտ ագիներուն տուփերը, հմայեակները,
21—Մատանիները և քիթերնուն օղերը,
22—Պատմուճանները, վերարկուները,
Ծածկոցները ու քսակները,
23—Հայելիները ու բեհեզները,
Խոյրերը ու գոգնոցները,
24—Եւ պիտի ըլլայ որ անուշահոտութեան տեղ փտութիւն,
Ու գօտիի տեղ չուան,
Եւ գանգուր մազերու տեղ կնատութիւն,
Եւ լանջագեղ կամարի տեղ խորգեղէն գօտի,
Ու գեղեցկութեան տեղ խարան պիտի ըլլայ։
25—Քու մարդիկդ սրով պիտի իյնան,
Ու կարիճներդ ալ պատերազմի մէջ։
26—Եւ անոր դուռները պիտի ողբան ու սուգ բռնեն,
Եւ անիկա ամայի ըլլալով՝ գետինը պիտի նստի։

*Կամ, երդում պիտի ընէ, Եէ՛ր, պիտի վերցնէ Կամ՝ ջրհոսին

Գլ. Դ

Եւ այն օրը եօթը կին մէկ այր մարդը պիտի բռնեն ու ըսեն,
Մեր հացը ուտենք ու մեր հանդերձը հագնինք,
Բայց միայն քու անունդ կանչուի մեր վրայ՝
Մեր նախատինքը վերցնելու համար։
2—Այն օրը Տէրոջը չքաւոր իղձ
Փառաւոր ու պատուական պիտի ըլայ,
Եւ Իսրայէլի փրկուածներուն՝
Երկրին պտուղը պարծանաց և պատուոյ համար պիտի ըլայ։
3—Ու պիտի ըլայ որ Սիոնի մէջ մնացածը
Ու Երուսաղէմի մէջ բոլոր ողջ *կեցողները,
Սուրբ պիտի ըսուին,
4—երբ Տէրը Սիօնի աղջիկներուն աղտը լուայ,
Ու դատաստանի հոգիով և այրող հոգիով
Երուսաղէմի արիւնները անոր մէջէն սրբէ։
5—Ու Տէրը Սիօն լեռանը ամէն տեղերուն վրայ
Ու անոր ժողովքներուն վրայ
Ցորեկը ամպ և մէգ
Ու գիշերը փայլուն կրակի բոց պիտի սահցնէ,
Վասն զի բոլոր փառքին վրայ հովանի պիտի ըլայ։
6—Ու ցորեկը վրան պիտի ըլայ
Տաքութեան համար հովանի՝
Ու մրրիկի ու անձրեւի համար
Ապաստանարան ու ծածկոց ըլլալու։

Գլ. Ե

Հիմա իմ սիրականիս երգը
Իմ սիրելիիս երգիմ իր այգիին վրայով.
Իմ սիրելիս այգի մը ունէր
Թիւռ պաղաբեր բլուրի մը վրայ.
2—Ջանիկա ցանկով պատեց, քարերը հանեց մէջէն,
Ու ընտիր որթեր տնկեց,
Ու անոր մէջտեղը աշտարակ շինեց,
Ու հոն հնձան մըն ալ փորեց.
Ու կը սպասէր որ խաղող տար,
Բայց անիկա ազռխ տուաւ։
3—Ուստի հիմա դուք, ով Երուսաղէմի բնակիչներ ու Յուդայի մարդիկ,
Իմ ու այգիիս միջեւ դատաստան ըրէք։
4—Իմ այգիիս՝ ալ ի՞նչ պէտք եր ընել,
Զոր ես անոր չըրի.
Ինչո՞ւ համար, երբ ես խաղող սպասէի,
Անիկա ազռխ տուաւ։
5—Ու հիմա ես ձեզի պատմեմ
Թէ ի՛նչ պիտի ընեմ իմ այգիիս.
Անոր ցանկը պիտի փակիմ, որպէս զի ճարակ ըլայ.
Անոր պատերը պիտի փլցնեմ, որպէս զի ոտնակոխ ըլայ.
6—Խոպանացած պիտի թողում.
Անիկա պիտի չխոպոպի ու չրրուի,
Հապա ցախ ու փուշ պիտի բուսցնէ.
Ես ամպերուն պիտի պատուիրեմ
Որ անոր վրայ անձրեւ չտեղան։
7—Վասն զի զօրաց Տէրոջը այգին Իսրայէլի տունն է,
Ու Յուդայի մարդիկը՝ անոր ախորժելի տունկը.
Ես անիկա իրաւունքի կը սպասէր, և ահա արիւնահեղութիւն,
Արդարութեան՝ և ահա աղաղակ։
8—Վա՛յ անոնց՝ որոնք տունը տան կը յարեն,
Ագարակ ագարակի վրայ կ'աւելցնեն.
Մինչեւ որ տեղ մը չմնայ,
Ու դուք միմակ բնակիք երկրին մէջ։
9—Զօրաց Տէրը իմ ականջիս խօսեցաւ.
Ըսելով.
Ծիրանի չատ տուներ աւերակ պիտի ըլլան,
Մեծ ու գեղեցիկ դուռներ, ու անոնց մէջ բնակող պիտի չգտնուի։
10—Վասն զի տասը լծամար այգին մէկ մար պիտի տայ,
Ու մէկ զոհ սերմը մէկ արտու պիտի տայ։
11—Վա՛յ անոնց, որոնք առաւօտուն կանուխ կ'ելլեն,
Ու ցբի խմելու հետեւ կ'ըլլան,
Եւ իրիկունն ալ կ'ուշանան,

*Եբր. գրաւածները. տես Փիլ. գ. 3։ Ցայտ. գ. 6։

Մինչեւ որ գինին իրենց էլեւէը տաքցնէ։
12—Եւ անոնց խնջոյքներուն մէջ քնար ու տաւիղ,
Թմբուկ ու սրինգ և գինի կը գտնուի.
Բայց Տէրոջը ըրածներուն ուշադրութիւն չեն ըներ,
Եւ անոր ձեռաց գործերուն չեն նայիր։
13—Անոր համար իմ ժողովուրդս *Տէրը չճանչնալով գերի կ'իյնայ,
Ու անոր մեծամեծ մարդիկը սով կը կրեն,
Ու բազմութիւնը ծարաւէն կը ցամքին։
14—Անոր համար դժոխք ինքզինք կը լայնցնէ,
Ու բերանը չափ գուբս կը բանայ.
Եւ անոր պարծանքը ու բազմութիւնը
Եւ ազգակը ու զուարճութիւնը ներս ձգ պիտի իջնէ։
15—Ու ոստկի մարդը պիտի խոնարհի,
Ու ամբարտաւան պիտի խոնարհի,
Ամբարտաւաններուն աչքերն ալ պիտի խոնարհին։
16—Ու զօրաց Տէրը իրաւունքով պիտի բարձրանայ,
Ու Սուրբն Աստուած արդարութիւնով պիտի †փառաւորի։
17—Ու գառնուկները իրենց սովորութեանը պէս պիտի արածին,
Ու հարուստներուն աւերակները օտարները պիտի ուտեն։
18—Վա՛յ անոնց, որոնք անօրէնութիւնը ունայնութեան չուանովը կը քաշեն,
Ու մեղքը՝ սայլի փոկերով։
19—Որոնք կ'ըսեն, Թող արագայ,
Իր գործը չուտով կ'ատաքէ, որպէս զի դիտենք։
Եւ Իսրայէլի Սուրբին խորհուրդը
Թող մօտենայ՝ գայ, որպէս զի գիտնանք։
20—Վա՛յ անոնց, որոնք չարին բարի կ'ըսեն, ու բարիին չար.
Որոնք խաւարը լոյսի տեղ՝ ու լոյսը խաւարի տեղ կը դնեն,
Որոնք դառնը քաղցրի տեղ, ու քաղցրը դառնի տեղ կը դնեն։
21—Վա՛յ անոնց, որոնք իրենց աչքին իմաստուն

*Եբր. առանց գիտութեան
†Եբր. սրբուի

Ու իրենց առջեւ խոհական են։
22—Վա՛յ անոնց, որոնք գինի խմելու զօրաւոր
Ու ցբի խառնելու կարիճ են։
23—Որոնք կաշառքի համար ամբարիշտը կ'արդարացնեն,
Ու արդարը իր իրաւունքէն կը զրկեն։
24—Անոր համար ինչպէս կրակին բոցը յարդը կ'ուտէ,
Ու չոր խոտը բոցին մէջ կը հանի,
Այնպէս անոնց արմատը փտութեան պէս պիտի ըլայ,
Ու անոնց ծաղիկը փոշիի պէս վեր պիտի ելլէ.
Վասն զի զօրաց Տէրոջը օրէնքը մերժեցին,
Ու իսրայէլի Սուրբին խօսքը անարգեցին։
25—Անոր համար Տէրոջը բարկութիւնը իր ժողովուրդին դէմ բորբոքեցաւ,
Ու անոնց վրայ ձեռքը երկնցուց ու զարկաւ զանոնք.
Այնպէս որ լեռները դողացին,
Ու անոնց դիերը ճամբաներուն վրայ ալրի պէս ձգացին.
Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը չիջաւ,
Հապա անոր ձեռքը տակաւին երկնցած է։
26—Ու հեռաւոր ազգերու դրօշակ պիտի վերցնէ,
Ու զանոնք երկրի ծայրէն սուլելով պիտի կանչէ,
Ու ահա անոնք արագարագ արագութեամբ պիտի գան։
27—Անոնց մէջ մէկը յոգնած պիտի չըլլայ, ու մէկը պիտի չսայի.
Մէկը պիտի չմրափէ ու չքնանայ.
Մէկուն մէջքի գօտին պիտի չթակուի,
Ոչ ալ կօշիկին կապը պիտի կտրուի։
28—Անոնց նետերը սուր են,
Ու բոլոր աղեղները լարուած.
Անոնց ձիերուն սմբակները գայլախազի կը նմանին,
Ու †—ուերուն անիւները մրրիկի պէս են.
29—Անոնց մռնչիւնը առիւծինն պէս է։
Կորիւններուն պէս կը մռնչեն,
Կը գոչեն ու կողոպուտը կը յափշտակեն,
Ու ազատող մը չկայ.

30—Եւ այն օրը անոնց վրայ պիտի գոչեն ծովուն գոչելուն պէս.
Ու երբ մէկը երկրին նայի, ահա խաւար ու տագնապ պէտէ պէտէ.
Եւ լոյսը անոր *մանկերուն մէջ պիտի խաւարի։

Գլ. Ջ

Ողիա Թագաւորին մահուան տարին Տէրը տեսայ որ բարձր ու վերացած աթոռի վրայ նստեր էր, ու անոր զգեստը տաճարը կը լեցնէր։ 2—Վերի կողմը սերովբէները կը կայնէին անոր առջեւ, որոնց ամէն մէկը վեց վեց թեւեր ունէին. երկուքով երեսները կը ծածկէին, երկուքով ոտքերնին կը ծածկէին, ու երկուքով կը թռչէին։ 3—Եւ փոխանակի կ'աղաղակէին ու կ'ըսէին,
Սուրբ, Սուրբ, Սուրբ է զօրաց Տէրը։
Բոլոր երկիրը անոր փառքովը լեցուն է։
4—Ու աղաղակողին ձայնէն սեմերուն հիմերը շարժեցան, ու տունը ծխով լեցուեցաւ։
5—Ու ըսի,
Վա՛յ ինծի, ահա կը կորսուիմ.
Վասն զի ես պիղծ շրթունք ունեցող մարդ մըն եմ,
Ու պղծաշրթին ժողովուրդի մէջ կը բնակիմ,
Ու իմ աչքերս զօրաց Տէրը, Թագաւորը, տեսան։
6—Բայց սերովբէներէն մէկը դէպ ինծ թռաւ, ու ձեռքը կրակի կայծ մը կար զոր սեղանէն առնելով առած էր։
7—Ու բերնիս դպցնելով՝ ըսաւ,
Ահա սոսկա քու շրթունքներուդ դպաւ,
Ու քու անօրէնութիւնդ վերցաւ,
Ու մեղքիդ քաւութիւն եղաւ։
8—Նաեւ լսեցի Տէրոջը ձայնը, որ ըսաւ,
Ո՞վ զրկեմ, և ո՞վ կերթայ մեզի համար։
Ու ես ըսի, Ահաւասիկ ես. ինծ զրկէ։
9—Անոր ատեն ըսաւ, Գնա, ըսէ այս ժողովուրդին,
Լսելով պիտի լսէք, բայց պիտի չիմանաք,
Ու տեսնելով պիտի տեսնէք, բայց պիտի չգիտնաք։
10—Այս ժողովուրդին սիրտը թանձրացուր,
Ու ականջները ծանրացուր, ու անոր աչքերը գոցէ.
Որպէս զի չլսէ թէ աչքերովը տեսնէ,
Ու ականջներովը լսէ,
Ու սրտովը իմանայ, և դարձի գայ ու բժշկուի։
11—Ու ես ըսի, Մինչև ե՞րբ, ով Տէր իմ. ու ըսաւ,
Մինչև որ քաղաքները բնակիչ չմնան նալով՝
Ու տուները մարդ չգտնուելով՝ ամայի մնան,
Ու երկիրը բոլորովին աւերակ ըլլայ։
12—Ու մինչև որ Տէրը հեռացնէ մարդիկը,
Ու երկրին մէջտեղը մեծ ամայութիւն ըլլայ։
13—Բայց անոր մէջ դեռ տասներորդ մասը պիտի գտնուի,
Ու այն ալ դարձեալ պիտի սպառի.
Ինչպէս բեւեկինին ու կաղնին կորսուելով՝ անոնց բունը կը մնայ,
Այնպէս սուրբ սերունդը այն ձգտվելոց-քին բունը պիտի ըլլայ։

Գլ. Ի

Ես եղաւ որ Ոզիայի թագաւորին, Ղեմայի որդւոյն Ռասոնի թագաւորը ու Ռեմալիայի որդւոյն Ափարի, օրերը, Ասորւոց Ռասին թագաւորը ու Իսրայէլի թագաւորը Ռեմալիայի որդին փակիչ Երուսաղէմի վրայ պատերազմելու եկան, բայց չկրցան անոր հետ պատերազմ ընել։ 2—Ուստի երբ Դաւիթի տանը լսուր տրուեցաւ՝ թէ Ասորիք *Եփրեմի հետ միաբանեցան", ան ալ սիրտը և անոր ժողովուրդին սիրտը շարժեցաւ, ինչպէս անտառին ծառերը հովէն կը շարժին։ 3—Բայց Տէրը Եսայիէ ըսաւ, Հիմա դուն ու քու որդիդ †Սէար-յասուբ, Թափիչի

*Կամ, երկինքին

*Կամ, Եփրեմի Երէրէն վրայ բանակեցան

†Այսինքն, Մնացորդը պիտի դառնայ, Տես Գլ. ժ. 21։

ագարակին ճամբուն վրայ, վերի աւազանին ջրմուղին եղերքը, երէր Ափազը դիմաւորելու։ 4—Եւ ըսէ անոր,
Զգոյշ եղիր որ հանգարտ ըլլաս,
Մի վախնար ու սիրտդ չմարի
Այս ծուխ հանող երկու կիսայրեաց փայտի ծայրերէն,
Այսինքն Ռասինի ու Ասորւոց
Ու Ռեմալիայի որդւոյն սաստիկ բարկութենէն,
5—Որովհետև Ասորիք, Եփրեմ ու Ռեմալիայի որդին
Ձեռ վրայդմէ չար խորհուրդ ըրին ու ըսին,
6—Ծուդայի վրայ երթանք ու զանիկա բռնադատեանք
Եւ մեզի հնազանդեցնենք,
Նաբէ անոր մէջ Տաբէէլի որդին թագաւոր գնենք.
7—Տէրովս Տէրը այսպէս կ'ըսէ.
Այս խորհուրդը պիտի չհաստատուի ու չկատարուի.
8—Վասն զի Ասորւոց Երուսէմ գլուխը Դամասկոս,
Ու Դամասկոսի գլուխը Ռասին է.
Ու վաթսունըհինգ տարուան մէջ եփրեմ ժողովուրդ ըլլալէ պիտի չընչուի,
9—Ու Եփրեմի գլուխը Սամարիա,
Ու Սամարիայի գլուխը Ռեմալիայի որդին է.
Եթէ չհաստատաք հաստատուն պիտի չըլլաք։
10—Դարձեալ Տէրը խօսեցաւ Ահազի ու ըսաւ,
11—Քու Տէր Աստուծմէդ քեզի համար նշան խնդրէ,
Խորութեան մէջ կամ բարձրութեան մէջ խնդրէ։
12—Բայց Ահազ ըսաւ, Չեմ խնդրեր և Տէրը չեմ փորձեր։
13—Ան ատեն անիկա ըսաւ,
Լսեցէք հիմա, ով Դաւիթի տունը.
Պզտիկ բան կ'երեւնայ ձեզի մարդիկ ուշխատացնելնիդ,
Որ իմ Աստուածս ալ պիտի ուշխատացնէք.
14—Անոր համար Տէրը ինք նշան պիտի տայ ձեզի.
Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի,
Եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչէ։
15—Անիկա կագի ու մեղր պիտի ուտէ,
Մինչև որ գիտնայ չարը մերժել ու բարին ընտրել։
16—Վասն զի տղան չարը մերժելը ու բարին ընտրելը գիտնալէն առաջ
*Պիտի թողուի այն երկիրը
Որուն երկու թագաւորներէն դուն կը վախնաս"։
17—Տէրը քու վրադ, ու քու ժողովուրդիդ վրայ,
Եւ քու հօրդ տանը վրայ այնպէս օրեր պիտի բերէ,
Որ Եփրեմի ծուդայէ զատուած օրէն ի վեր չեկան,
Այսինքն Ասորեստանի թագաւորը։
18—Եւ պիտի ըլլայ այն օրը, որ Տէրը պիտի սուլէ
Եգիպտոսի գետերուն ծայրը եղած ճանճերուն,
Ու Ասորեստանի երկրին մէջ եղած մեղուներուն.
19—Եւ ամէնը պիտի գան ու պիտի հանգչին
Ամայի ձորերուն մէջ ու վէմերուն խոռոչներուն մէջ,
Եւ ամէն թուփերուն ու ամէն արօտներուն մէջ։
20—Այն օրը Տէրը, վարձքով առնուած ածելիով,
Այսինքն Գետէն անդին կողմը եղող Ասորեստանի թագաւորով,
Գլուխը ու ոտքերուն մազը պիտի ածիլէ
Եւ մօրուքն ալ բնաւրէն պիտի ածիլէ.
21—Ու պիտի ըլլայ այն օրը որ մարդ մը
Մէկ երինջ ու երկու ոչխար պահելով,
22—Անոնց տուած կաթին առատութենէն կագի պիտի ուտէ.
Վասն զի երկրին մէջ բոլոր մնացորդները
Կագի ու մեղր պիտի ուտեն։
23—Եւ պիտի ըլլայ այն օրը,
Որ որ հազար արծաթի դրամ է հազար *հին արծաթի դրամով,
Ձախերով ու փուշերով պիտի լեցուի։
24—Նետերով ու աղեղներով հոն պիտի գան,

*Կամ, Քու զզուած երկիրդ՝ իր երկու թագաւորներէն պիտի թողուի։ Տես դ Թագ. ժե. 30։ ժզ. 9։

վասն ոչ բոլոր երկիրը ցասկոյ ու փուշերով պիտի լեցուի.
25—Եւ այն ամէն լեռները որոնք բրիւով կը փորուէին,
Ցախի ու փուշի երկիւղին պատճառաւ հոն պիտի չերթաք.
Արջառներուն արօտ ու խաչինքներուն կոխան պիտի ըլլան։

ԳԼ. Ը

Եւ Տէրը ինծի ըսաւ, Դուն քեզի մեծ տոմս մը առ, և անոր վրայ մարդու գրիչով գրէ Մահէր-շալալ-հաշ-պազին վրայով։ 2—Եւ ինծի հաւատարիմ վկաներ բռնեցի Ուրիա քահանան ու Բարաքիայի որդին Զաքարիան։ 3—Եւ մերձեցայ մարգարէուհիին, ու անիկա յղացաւ ու որդի մը ծնաւ. և Տէրը ինծի ըսաւ, Անոր անունը *Մահէր-շալալ-հաշ-պազ դիր. 4—վասն զի դեռ տղան Հայրս և Մայրս կանչելը չսորված՝ Դամասկոսի հարստութիւնները ու Սամարիայի աւարը Ասորեստանի թագաւորին առջև պիտի տարուին։
5—Եւ դարձեալ Տէրը ինծի խօսեցաւ ու ըսաւ, 6—Որովհետև այս ժողովուրդը Սիլոամայի հանդարտ վազող ջուրերը կ'արհամարհէ, և Րասինի ու Ռամելիայի որդւոյն կը հանին,
7—Ահոր համար անոնց վրայ Տէրը անոնց վրայ գետին զօրաւոր ու առատ ջուրերը,
Այսինքն Ասորեստանի թագաւորը ու անոր բոլոր †զօրութիւնը, պիտի հանէ.
Եւ անիկա իր ամէն յատակներէն վեր պիտի ելլէ,
Ու իր բոլոր եզերքներուն վրայէն պիտի գայ.
8—Եւ Յուդայի մէջ յորդելով՝ պիտի անցնի եւ թմրի,
Ու մինչև վզերուդ պարանոցը պիտի հասնի,
Եւ անոր թեւերուն տարածութիւնը
Քու երկրիդ լայնութիւնը պիտի լեցնէ, ով Էմմանուէլ։
9—Ով ժողովուրդներ, *դաշնակից եղէք՝ բայց պիտի խորտակուիք.
Ով երկրին հեռաւոր տեղերը, ականջ դրէք.
†Պատրաստուեցէք, բայց պիտի խորտակուիք.
†Պատրաստուեցէք, բայց պիտի խորտակուիք.
10—Խորհուրդ ըրէք, բայց պիտի խափանուի.
Խօսք խօսեցէք, բայց պիտի չհաստատուի.
Քանզի Աստուած մեզի հետ է։
11—Քանզի Տէրը հզօր ձեռքով այսպէս խօսեցաւ ինծի,
Ու խրատեց զիս՝ թէ պէտք չէ այս ժողովուրդին ճամբուն մէջ քալել՝ ըսելով,
12—Դաշնակցութիւն մի ըսէք,
Ինչ բանի որ այս ժողովուրդը դաշնակցութիւն կ'ըսէ.
Եւ անոր վախովը մի վախնաք ու մի զարհուրիք.
13—Մէ՛նչ զօրաւոր Տէրը ‡փառաւորեցէք,
Անիկա ըլլայ ձեր վախը և ձեր զարհուրանքը.
14-Եւ անիկա չէ՛ր սրբարան պիտի ըլլայ,
Բայց Իսրայէլի երկու տուներուն՝
Գայթակղութեան քար և գլորելու վէմ,
Ու Երուսաղէմի բնակիչներուն թակարդ ու որոգայթ պիտի ըլլայ։
15—Եւ անոնցմէ շատերը պիտի գլորին,
Ու խլտալով պիտի խորտակուին,
Եւ որոգայթի մէջ խլտալով պիտի բռնուին։
16—Վկայութիւնը կապէ,
Աշակերտներուս մէջ օրէնքը կնքէ։
17—Ուրեմն ես պիտի սպասեմ Տէրոջը,
Որ Յակոբի տունէն իր երեսը ծածկեր է,
Ու անոր պի՛տի յուսամ։
18—Ահաւասիկ ես ու այն զաւակները զորոնք Տէրը ինծի տուաւ,
Նշաններ ու պատկերներ ըլլալու Իսրայէլի մէջ՝
Սիօն լեռը բնակող զօրաց Տէրոջը կողմանէ։

*Կամ, ցնծութիւն բրէք
†Եբր. Գօտի կապեցէք
‡Եբր. սրբեցէք

*Այսինքն, արտորալով ասպատակէ ու չուտով կողոպտող ժողովէ
†Եբր. փառքը

19—Ու երբ ձեզի ըսեն թէ
Շշնջող ու քրթմնջող վհուկներուն
Եւ նշանագիտներուն հարցուցէ՛ք,
Այդ ազգը իր Աստուծոյն պիտի չհարցնէ՞.
կենդանիներուն համար մեռածներո՞ւն դէմ հարցնէ։
20—Օրէնքին ու վկայութեանը խօսք հարցնեն.
Եթէ այս խօսքին համեմատ չդրուցեն,
Անոնք առաւօտեան լոյս չունին։
21—Ու անդունդը վիշտ ու սով կրելով պիտի անցնի անկէ.
Ու երբ անօթենայ, պիտի բարկանայ,
Ու իր թագաւորին և իր Աստուծոյն պիտի հայհոյէ, ու վեր նայի,
22—Ու դէպ ի երկիր պիտի նայի,
Ու ահա վիշտ ու խաւար, նեղութեան մէգ.
Ու դէպ ի մառախուղ պիտի քշուին։

ԳԼ. Թ

Բայց այնպէս խաւար պիտի չըլլայ, ինչպես նեղութեան ժամանակը,
Երբ առաջուան տուները անարգեց Զաբուղոնի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը.
Հապա վերջին տունը պիտի պատուէ Ծովուն ճամբան,
Յորդանանու անդին կողմը, Հեթանոսաց Գալիլեան։
2—Խաւարի մէջ պարապած ժողովուրդը մեծ լոյս տեսաւ,
Մահուան տուներին երկիրը բնակողներուն լոյս ծագեցաւ։
3—Ազգը չատցուցիր, անոր ուրախութիւնը մեծցուցիր.
Անոնք քու առջեւդ կ'ուրախանան՝ հունձքի տունի ուրախութեան պէս
Ինչպես կը ցնծան անոնք որ աւար կը բաժնեն։
4—Վասն զի Մադիամի օրուանը պէս՝
Անոր ծանր լուծը ու կռնակին գաւազանը
Ու անոր վրայ բռնութիւն ընողին ցավը կոտրեցիր,
5—Քանզի չուռչիւնով պատերազմողներուն ամէն †զէնքերը
Եւ արիւնաթաթախ հանգերձները
Պիտի այրուին և հրոյ ճարակ ըլլան։
6—Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ,
Մեզի որդի մը տրուեցաւ,
Եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ,
Ու անոր անունը պիտի կոչուի
Ակռանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած,
Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան։
7—Դաւիթի աթոռին վրայ ու անոր թագաւորութեանը վրայ
Անոր իշխանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ,
Որպէս զի հիմնականէ մինչև յաւիտեան
Իրաւունքով ու արդարութիւնով հաստատէ և զօրացնէ զանիկա։
Զօրաց Տէրոջը նախանձը պիտի ընէ ասիկա։
8—Տէրը Յակոբի պատգամ ղրկեց.
Ու անիկա Իսրայէլի վրայ իջաւ։
9—Ու բոլոր ժողովուրդը պիտի իմանայ,
Այսինքն Եփրեմ ու Սամարիայի բնակիչները,
Որոնք ամբարտաւանութեամբ և սրտի հպարտութեամբ կ'ըսեն,
10—Թէ՛ աղիւսները ինկան,
Բայց մենք տաշած քարերով պիտի չինենք.
Մալթի ծեներները կարուեցան,
Բայց մենք անոնց տեղ եղեւնափայտեր պիտի դնենք։
11—Սակայն Տէրը անոր վրայ Րասինի հակառակորդները պիտի յարուցանէ,
Ու անոր թշնամիները պիտի †գրգռէ։
12—Ասորիները ‖արեւմուտքէն,
Փղշտացիները արեւմուտքէն.
Ու անոնք լեցուն բերանով Իսրայէլը պիտի ուտեն։
Այսու ամենայնիւ անոր բարկութիւնը չիյնար,
Հապա անոր ձեռքը տակաւին երկնցած է։

*Կամ, առնապանները
†Կամ, սպառազինէ
‡Եբր. առջեւէն
‖Եբր. հետեւէն

13—Քանզի ժողովուրդը զինք զարնողին չդառնար,
Ու զօրաց Տէրը չվնասեր։
14—Ես Տէրը խրատելէ գլուխը ու պոչը,
Արմաւենիին ոստը ու կնիւնը
Մէկ օրուան մէջ պիտի կտրէ։
15 — (Տէրը ու պատուաւոր մարդը գլուխն է.
Եւ սուտին ուսուցանող մարգարէն պոչն է։)
16—Եւ այս ժողովուրդին առաջնորդները կը մոլորեցնեն զանոնք,
Եւ անոնցմէ առաջնորդուածները պիտի կլլուին։
17—Ա՛յս պատճառաւ Տէրը անոր երիտասարդներուն պիտի չհամբի,
Եւ անոր որբերուն ու որբևարիներուն պիտի չողորմի.
Վասն զի ամէնն ալ կեղծաւոր ու չարագործ եղան,
Եւ ամէն բերան անզգամութիւն կը խօսի։
Ա՛յսու ամէնայնիւ անոր բարկութիւնը չկ՚լա,
Հապա անոր ձեռքը տակաւին երկընգած է։
18—Քանզի անօրէնութիւնը կրակի պէս կ՚այրէ,
Ցախերը ու փուշերը կը սպառէ,
Անտառին թանձրախիտ ծառերը կ՚այրէ,
Ու անոնք կը ցնդին վեր ելլող ծուխի պէս։
19—Զօրաց Տէրոջը բարկութենէն երկիրը պիտի *այրի,
Ու ժողովուրդը հրոյ ճարակ եղածի պէս պիտի ըլլայ.
Մարդ իր եղբօրը պիտի չխնայէ։
20—Եւ աջ կողմը եղածը պիտի յափըշտակէ ու անօթի պիտի մնայ,
Եւ ձախ կողմինն ալ պիտի ուտէ ու չկշտանայ,
Ամէն մարդ իր բազուկներուն միսը պիտի ուտէ։
21—Մանասէ Եփրեմը պիտի ուտէ, ու Եփրեմ Մանասէն,
Ե՛ւ անոնք միկռեղ Յուդայի վրայ պիտի յարձակին։
Ա՛յսու ամէնայնիւ անոր բարկութիւնը չկ՚լա,
Հապա անոր ձեռքը տակաւին երկընգած է։

Գլ. Ժ

1—Վա՛յ անոնց, որոնք անօրէնութեան կանոններ կը սահմանեն,
Եւ այն գրիչներուն, որոնք անիրաւութիւն կը գրեն,
2—Որպէս զի տգիտաներուն դատաստանը խոտորեն,
Ու իմ ժողովուրդիս անանկներուն իրաւունքը յափշտակեն.
Որպէս զի որբևարիները իրենց աւար ըլլան,
Ու որբերը կողոպտեն։
3—Ուրեմն ի՞նչ պիտի ընէք այցելութեան օրը,
Եւ հեռուներց գալու կործանման առեներ.
Օգնութեան համար որո՞ւ պիտի դիմէք,
Ու ձեր փառքը ո՞ւր պիտի թողուք։
4—Առանց ինծի գերիներուն *մէջ պիտի ծռին,
Ու սպաննուածներուն *մէջ պիտի իյնան։
Այսու ամէնայնիւ անոր բարկութիւնը չկ՚լա,
Հապա անոր ձեռքը տակաւին երկընգած է։
5—Վա՛յ Ասորեստանի Ը֊ը֊ՐԸ֊ն, ու իմ բարկութեանս գաւազանը Ը֊ՐԸ֊.
Որուն ձեռքի ցաւագը իմ սրտմտութիւնս է։
6—Զանիկա կեղծաւոր ազգի մը վրայ պիտի զրկեմ,
Ու իմ սրդողած ժողովուրդիս դէմ հրամայեմ պիտի տամ անոր,
Որ աւար ժողվէ ու յափշտակութիւն բնէ,
Եւ զանոնք փողոցներուն ցեխին պէս կոխկռտէ։
7—Բայց անիկա այնպէս չմտածեր,
Ու սրտովը այնպէս չխորհիր.
Հապա իր միտքը գրեթէ ե՛ր կործնցնէ,
Եւ չատ ազգեր բնաջինջ ընէ։
8—Վասն զի կ՚ըսէ,
Միթէ իմ իշխաններս ամէնն ալ թագաւորներ չե՞ն.

[1] կամ՝ խաւարչի

[2] Եբր. տակ

9—Քաղանէ Քարքամիսի պէս չէ՞.
Եմաթ Արփադի պէս չէ՞.
Սամարիա Դամասկոսի պէս չէ՞։
10 — Ինչպէս իմ ձեռքս *տիրեց կռապաշտ թագաւորութիւններուն՝
Որոնց կուռքերը երուսաղէմի ու Սամարիայի կռոցներէն չատ էին։
11 — Միթէ Սամարիայի ու անոր կուռքերուն ըրածին պէս,
Երուսաղէմի ու անոր կուռքերուն ալ այնպէս պիտի չընե՞մ։
12—Ու երբ Տէրը Սիօն լեռանը վրայ
Ու Երուսաղէմի մէջ իր ամէն գործը կատարէ,
Ասորեստանի թագաւորին հպարտացած սրտին պատղը,
Եւ անոր ամբարտաւան աչքերուն փառքը պիտի քննեմ։
13—Քանզի անիկա կ՚ըսէ,
Ես իմ ձեռքիս ուժովը
Ու իմ իմաստութիւնովս ըրի ասիկա,
Որովհետև ես խելացի եմ.
Եւ ազգերուն սահմանները վերցուցի,
Ու անոնց գանձերը յափշտակեցի,
Ես զօրաւորի պէս բնակիչները նուաճեցի։
14—Ու իմ ձեռքս ժողովրդներուն սատցուածքը բոյնի պէս գտաւ.
Եւ բոլոր երկիրը ժողվեցի,
Ինչպէս մեկը կը ժողվէ թողուած հաւկիթները.
Ու թև չարժող կամ բերան բացող կամ ճիկ հանող մը չեղաւ։
15—Միթէ տապարը իրմով կտրող մարդուն դէմ կը գոռազանա՞յ.
կամ սղոցը զինք գործածողին դէմ կը հպարտանա՞յ.
Ասիկա այնպես է՝ որպես թէ գաւազանը զինք վերցնողը չարժէր,
Եւ ցուպը բարձրացնէր նոյն ոչ փայտ չէ։
16—Անոր համար Տէրը, զօրաց Տէրը,
Անոր գէր մարդոցը նիհարութեան պիտի զրկէ,
Ու անոր փառքին տակ հրդեհ մը պիտի վառէ
Բոցավառ հրդեհի պէս։
17—Ու Իսրայէլի Լոյսը կրակ,
Ու անոր Սուրբը բոց պիտի ըլլայ.
Եւ մէկ օրուան մէջ անոր փուշերը ու ցախերը
Այրելով պիտի սպառէ.
18—Եւ անոր անտառին ու բարեբերը ագարակին փառքը,
Հոգին ու մարմինը, պիտի հատնէ,
Ու *մարող հիւանդի պէս պիտի ըլլայ։
19—Ու անոր անտառին մէջ մնացած ծառերը քիչ պիտի ըլլան,
Այնպէս որ տղայ մը կարնայ զանոնք գրել։
20—Եւ պիտի ըլլայ այն օրը, որ Իսրայէլի մնացորդը,
Ու Յակոբի տանը ազատուածները,
Մէկմէկու ալ պիտի չապաւինին զիրենք զարնողին.
Հապա ճշմարտութեամբ Տէրոջը, Իսրայէլի Սուրբին, պիտի ապաւինին։
21—Մնացորդը, Յակոբի մնացորդը,
Հզոր Աստուծոյն պիտի դառնայ։
22—Վասն զի քու ժողովուրդդ, ով Իսրայէլ, թէև ծովու աւազին չափ ըլլայ,
Անոնցմէ մնացորդ մը դարձ պիտի դառնայ։
Նախասահմանեալ աւերումը արդարութեամբ պիտի յարձակի։
23—Քանզի զօրաց Եհովա Տէրը բոլոր երկրին մէջ
Նախասահմանեալ աւերումը իւ գործ պիտի դնէ։
24—Անոր համար զօրաց Եհովա Տէրը այսպէս կ՚ըսէ.
Ով Սիոնի մէջ բնակող ժողովուրդս,
Ասորեստանցիին մի վախնար։
Անիկա գեղ գաւազանով պիտի զարնէ,
Եւ իր ցուպը քու վրագ պիտի վերցնէ †եգիպտացւոց կերպովը՝։
25—Բայց չատ քիչ ժամանակի մէջ իմ բարկութիւնս պիտի դադարի,
Ու իմ սրտմտութիւնս անոնց կորուսանն պիտի դառնայ։
26—Եւ զօրաց Տէրը անոր վրայ խարազան մը պիտի վերցնէ,

*Եբր. գաւազանները

*կամ՝ դրօշակիրի մարելուն
†կամ՝ Եգիպտոսի ճամբան մէջ

Օրհնի վկային քով Մագիամա հարուածին պէս
Ու իր գաւազանը ծովուն վրայ պիտի վերցնէ,
Ինչպէս ըրաւ Եգիպտոսի մէջ։
27—Եւ պիտի բլլայ այն օրը որ անոր բեռը քու կռնակէդ՝
Ու անոր լուծը քու պարանոցէդ պիտի վերնայ։
Եւ լուծը *գիրութենէն պատճառաւ պիտի կործրի։
28—Անգէ *հալաթը եկաւ, Մագրոն անցաւ
Ո՞ր կահ կարասիքը Մաքմասի մէջ տեղաւորեց։
29—Անցքերնին անցան, Գաբայի մէջ իջևանեան ըրին.
Ռամա վախցաւ, Սաւուղի Գաբաան փախաւ։
30-Ով Գաղղիմի աղիկ, ձայնդ վերցուր,
Լայիսի ընէլ տուր, †ով խեղճ Անաթովթ՝։
31—Մադմինա հեռացաւ,
Գեբիմի բնակիչները փախան։
32—Տակաւին այսօր Նոբի մէջ պիտի կենայ,
Դէպ ի Սիոնի աղջկան լեռը, Երուսաղէմի բլուրը։
Ձեռքը պիտի շարժէ։
33—Ահա զօրաց Տէր Եհովա
Ահաւոր զօրութեամբ գեղեցիկ ոստերը պիտի կտրէ.
Եւ բարձրահասակները պիտի կտրուին,
Ու բարձրերը պիտի ցածնան։
34—Ու անիկա անտառին թխտ ծառերը երկաթով պիտի կտրէ.
Ու Լիբանան Հզօրին ձեռքով պիտի իյնայ.

Գլ. ԺԱ

Ու ցեղաէի բունէն չառաւիղ պիտի ելլէ,
Եւ անոր արմատէն ընձիւղ պիտի բուսնի.
2—Ու անոր վրայ պիտի հանգչի Տէրոջը Հոգին,
Իմաստութեան ու հանճարի Հոգին,
Խորհուրդի ու զօրութեան Հոգին,
Գիտութեան և Աստուծոյ վախին Հոգին։
3—Ու անիկա Տէրոջը վախովը պիտի *լեցուի.
Եւ իր աչքերուն տեսածին համեմատ պիտի չդատի,
Ու իր ականջներուն լսածին համեմատ պիտի չյանդիմանէ.
4—Հապա աղքատին դատը արդարութեամբ պիտի տեսնէ,
Ու երկրին զրկածներուն համար իրաւամբ պիտի յանդիմանէ.
Եւ իր բերնին գաւազանովը երկիրը պիտի զարնէ,
Ու իր չրթունքներուն հոգիովը ամբարիշտը պիտի մեռցնէ։
5—Եւ իր մէջքի գօտին արդարութիւն,
Ու իր երիկամունքներուն գօտին հաւատարմութիւն պիտի բլլայ։
6—Եւ գայլը գառին հետ պիտի բնակի,
Ու ինձը ուլին հետ պիտի պառկի,
Եւ որթը ու առյգ առիւծը և պարարտ ցուլիկը միասին դէտ-դէն,
Ու զանոնք պզտիկ տղայ մը պիտի քշէ։
7—Եւ կովը արջին հետ պիտի ճարակի,
Անոնց ձագերը միասին պիտի պառկին,
Եւ առիւծը արջառի պէս յարդ պիտի ուտէ,
8—Ու կաթնակեր տղան խժին ծակին վրայ պիտի խաղայ,
Եւ կաթէն կտրուածը ձեռքը քարբին բոյնին վրայ պիտի դնէ։
9—Անոնք պիտի չվնասեն ու չապականեն իմ բոլոր սուրբ լեռանս վրայ։
Քանզի երկիրը Տէրոջը գիտութիւնովը պիտի լեցուի,
Ինչպէս ջուրերը ծովը կը ծածկեն։
10—Եւ այն օրը Ցեսսէի մէկ արմատը պիտի բլլայ,
Որ պիտի կայնի ժողովուրդներուն դրօշակ բլլալու համար.
Ազգերը պիտի փնտռեն,
Ու անոր հանգիստը փառաւոր պիտի բլլայ։
11—Եւ այն օրը պիտի բլլայ որ
Տէրը նորէն իր ձեռքը պիտի երկնցնէ,

*կամ, օծման
†կամ, պատասխան տուր, ով Անաթովթ

*կամ ուրախանայ. եբր. հոս առնէ

Որպէս զի Ասորեստանէ, Եգիպտոսէ,
Պաթրոսէ, Եթովպիայէ,
Եղամէ, Սենաարէ, Եմաթէ
Ու ծովու կղզիներէն իրեն առնէ
Իր ժողովուրդին մնացած մնացորդը.
12—Ու ազգերուն դրօշակ պիտի վերցընէ,
Ու Իսրայէլի աքսորուածները պիտի ժողվէ.
Ու երկրի չորս անկիւններէն
Ցուդայի ցրուածները պիտի ժողվէ.
13—Ու Եփրեմի նախանձը պիտի վերնայ,
Ու Ցուդայի դէմ նեղիչները պիտի կորսնին.
Եփրեմ պիտի չնախանձի Ցուդայի,
Ու Ցուդա պիտի չնեղէ Եփրեմը։
14—Հապա անոնք դէպ ի արեւմուտք
Փղշտացւոց *ուսերուն վրայ պիտի թռչին,
Ո՞ւ մէկտեղ արեւելքի բնակիչները պիտի կողոպտեն.
Եդովմի և Մոաբի վրայ ձեռքերնին պիտի երկնցնեն,
Ու Ամմոնի որդիները անոնց պիտի հնազանդին։
15—Եւ Տէրը Եգիպտոսի ծովին լեզուն պիտի †կործանէ.
Եւ իր հովին սաստիկ զօրութիւնովը ձեռքը գետին վրայ պիտի երբացընէ,
Ու զանիկա եօթը ձորի բաժնելով պիտի զարնէ,
Այնպէս որ ոտով կօխիկներով քալուի։
16—Եւ իր ժողովուրդին մնացած մնացորդին համար
Բանուկ ճամբայ մը պիտի բլլայ Ասորեստանէ.
Ինչպէս եղաւ Իսրայէլի
Այն օրը՝ որ Եգիպտոսի երկրէն ելաւ։

Գլ. ԺԲ

Եւ այն օրը պիտի ըսես,
Ով Տէր, քեզ պիտի օրհնեմ,
Որ թէև ինծի բարկացած եիր,
Սակայն բարկութիւնդ կրնդ դարձաւ,
Եւ դուն մխիթարեցիր։
2—Ահա իմ փրկութիւնս Աստուած է,
Ես պիտի յուսամ ու պիտի չվախնամ,
Քանզի իմ զօրութիւնս ու օրհնութիւնս Տէր Եհովա է,
Ու անիկա իմ փրկութիւնս եղաւ։
3—Եւ ուրախութեամբ ջուր պիտի քաշէք
փրկութեան աղբիւրներէն,
4—Ու այն օրը պիտի ըսէք,
Գոհացէք Տէրոջմէն, անոր անունը կանչեցէք,
Անոր գործերը ազգերուն մէջ պատմեցէք,
Յիշեցէք որ անոր անունը բարձր է։
5—Տէրոջը սաղմոս ըսէք,
Վասն որ անիկա մեծամեծ բաներ ըրաւ.
Ասիկա բոլոր երկրի մէջ գիտցուած է։
6—Ով Սիոնի բնակիչներ, աղաղակեցէք ու ցնծացէք,
Քանզի ձեր մէջ Իսրայէլի Սուրբը մեծ է։

Գլ. ԺԳ

Բաբելոնի պատգամը որ Ամովսի որդւոյն Եսայիի յայտնուեցաւ։
2—Մերկ լեռանը վրայ դրօշակ արնկեցէք,
Անոնց ձայն վերցուցէք,
Ձեռքով նշան ըրէք, որպէս զի իշխաններուն դուռները գան։
3—Իմ *որոշածներուս հրաման ըրի.
Իմ զօրաւորներս, իմ փառքիս համար ուրախացողները,
Իմ բարկութիւնս է գործ դնելու կանչեցի։
4—Լեռներուն վրայ բազմութեան ձայն մը կայ,
Մեծ ժողովուրդի մը ձայնի պէս,
Միկտեղ ժողոված ազգերուն թագաւորութիւններուն աղմուկին ձայնը կայ.
Զօրաց Տէրը պատերազմի համար իր զօրքերը այրէ կ'անցնէ։
5—Հեռաւոր երկրէ, երկինքի ծայրէն,
Տէրը ու անոր բարկութեան գործիքները
Բոլոր երկիրը աւերելու կու գան։

*եբր. սրբուածներուս

6—Ողբացէք, վասն զի Տէրոջը օրը մօտ է.
Անիկա Ամենակարողէն էն՝ աւերման պէս կու գայ։
7—Անոր համար ամէն ձեռքերը պիտի թուլնան,
Ու ամէն մարդուն սիրտը պիտի հալի.
8—Ու անոնք պիտի սոսկան.
Նեղութիւն ու անձկութիւն պիտի ունե՛ն,
Ծննդական կնոջ պէս ցաւ պիտի քաշեն.
Ամէն մարդ իր ընկերին վրայ պիտի նա՛յէ ու ապշի,
Անոնց երեսները բոցագոյն պիտի ըլլան։
9—Ահա Տէրոջը օրը կու գայ
Անգթութեամբ, սրտմտութեամբ և սաստիկ բարկութեամբ,
Որպէս զի երկիրը աւերակ դարձնէ,
Ու անոր մեղաւորները անկէ բնաջինջ ընէ։
10—Վասն զի երկինքի աստղերը ու անոնց համաստեղութիւնները
Իրենց լոյսը պիտի չտան.
Արեւը իր ելած ատենը պիտի խաւարի,
Ու լուսինը իր լոյսը պիտի չտայ։
11—Ու ես պիտի պատժեմ աշխարհը իր չարութեանը համար,
Ու ամբարիշտները՝ իրենց անօրէնութեանը համար.
Ու հպարտներուն ամբարտաւանութիւնը պիտի դադրեցնեմ,
Ու բռնաւորներուն դոզութիւնը պիտի ցածցնեմ։
12—Մարդը զուտ ոսկիէն
Ու Ոփիրի ոսկիէն պատուական պիտի ընեմ։
13—Ուստի պիտի սարսեմ երկինքը,
Ու երկիրը իր տեղէն պիտի սասանի
Զօրաց Տէրոջը սրտմտութիւնովը՝
Անոր սաստիկ բարկութեանը օրը։
14—Ու Բաբելոնի բնակիչները հալածուած այծեամի պէս պիտի ըլլան,
Ու մօտ՝ ոչխարներու պէս՝ որ ոչ ոք ժողվող մը չկայ,
Անոնց ամէն մէկը իր ժողովուրդին պիտի դառնայ,
Ու ամէն մարդ իր երկիրը պիտի փախչի։
15—Ով որ գտնուի, պիտի խոցուի,
Ու ով որ բռնուի, սրով պիտի կտրուի,
16—Ու անոնց տղաքը աչքերնուն առջեւ գետինը պիտի զարնուին,
Անոնց տուները պիտի կողոպտուին,
Ու անոնց կիները պիտի պղծուին։
17—Ահա անոնց վրայ Մարսաց ազգը պիտի յարուցանեմ,
Որոնք արծաթը բանի տեղ չեն դներ,
Ու ոսկիէն չեն ախորժիր։
18—Աղեղնները երիտասարդները պիտի խոցեն,
Ու անոնք որովայնի պտուղին գթութիւն պիտի չընեն,
Ու անոնց աչքը պիտի չխնայէ տղաքներուն։
19—Ու Բաբելոնը թագաւորութիւններուն փառքը
Ու Քաղդէացւոց փառաւորութեանը պարծանքը եղող Բաբելոն
Սոդոմ-Գոմորի պիտի ըլլայ,
Ինչպէս Աստուած զանոնք ու Գոմորը կործանեց,
20—Հոն յաւիտեան բնակութիւն պիտի չըլլայ,
Ու ազգ ազգ մարդ պիտի չբնակի.
Ու հոն Արաբացիք վրան պիտի չհանգնեն,
Ու հովիւները էրէից հոտը հոն պիտի չպառկեցնեն.
21—Հապա հոն *վայրենի կատուները* պիտի պառկին,
Ու անոնց տուները ուռնացող անասուններով պիտի լեցուին,
Ու հոն յոյլամներ պիտի բնակին,
Ու հոն այծեամդրներ պիտի կաքաւեն։
22—Ու անոր պալատներուն մէջ բորենիներ,
Ու զբօսանաց տուներուն մէջ ճագարներ պիտի կանչուրտանեն.
Ու անոր ժամանակը հասնելու վրայ է,
Ու անոր օրերը ա՛լ պիտի չերկննան։

ԳԼ. ԺԴ

Վասն զի Տէրը պիտի ողորմի Յակոբի,
Ու Իսրայէլը նորէն պիտի ընտրէ,
Ու զանոնք իրենց երկրին վրայ պիտի հանգստացնէ.
Ու օտարազգիները պիտի միանան անոնց,
Ու Յակոբի տանը պիտի յարին։

*Կամ, անապատի գազաններ

2—Ու ժողովուրդները զանոնք պիտի առնեն ու իրենց տեղը պիտի տանին.
Ու Իսրայէլի տունը պիտի ժառանգէ զանոնք Տէրոջը երկրին վրայ,
Իբրև ծառաներ ու աղախիններ.
Ու անոնք իրենց գերեվարները գերի պիտի առնեն,
Ու իրենց բռնութիւն ընողներուն վրայ պիտի տիրեն։
3—Ու պիտի ըլլայ որ երբ Տէրը քեզ հանգստացնէ քու ա՛շխատանքէդ, տանջանքէդ ու քու վրադ դրուած ծանր ծառայութենէն, 4—Բաբելոնի թագաւորին համար այս առակը զրուցես ու ըսես,
Ի՛նչպէս դադարեցաւ բռնաւորը ընողը,
Ի՛նչպէս դադարեցաւ հարկապահանջ *ոտքերը։
5—Տէրը ամբարիշտներուն գաւազանը
Ու իշխողներուն ցուպը կոտրեց։
6—Սրտմտութեամբ և անդադար հարուածով ազգերը զարնողը,
Ու բարկութեամբ ժողովուրդներուն վրայ իշխողը
Հե՛ր կը հալածուի, ու սրգիլող մը չկայ։
7—Բոլոր երկիրը հանգստացաւ ու հանդարտեցաւ,
Ու ցնծութեան ձայները կը հանեն։
8—Նաև մայրերը ու Լիբանանի եղեւիններուն
Քեզի համար կ'ուրախանան ու կ'ըսեն,
Քանի որ դուն պառկեր ես,
Մեր վրայ ո՛չ ոք կտրող չելաւ։
9—Դժոխքը վաբեն քեզի համար դղրդեցաւ,
Որպէս զի քու գալուստդ դիմաւորէ.
Քեզի համար արթնցուց մեռելները,
Երկրի բոլոր իշխանները,
Բոլոր ազգերուն թագաւորները
Իրենց աթոռներէն վերցուց։
10—Անոնք ամէնը պատասխան կու տան ու քեզի կ'ըսեն,
Մի՛թէ դո՛ւն ալ մեզի պէս տկարացար
Ո՞ր մեզի նմանեցար։
11—Քու փառքդ և ատուիններուդ ձայնը գերեզմանը իջաւ.
Քու տակդ զեռուններ տարածուեցան,
Ու որդերը քեզ կը ծածկեն։

12—Ով առաւօտեան ծագող Արուսեակ,
Ի՛նչպէս երկինքէ ինկար
Ո՞ վինչև գետին կործանեցար,
Դուն որ ազգերը նկուն կ'ընէիր։
13—Դուն սրտիդ մէջ ըսած էիր
Երկինքը ելլե՛մ
Ո՞ իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր բարձրացնե՛մ.
Ես ժողովի լեռը, հիւսիսի կողմերը քնակի՛մ.
14—Ամպերու բարձրութիւններուն վրայ ելլե՛մ,
Բարձրեալին նմանի՛մ,
15—Բայց ո՛հ՝ գերեզմա՛նը կ'իջնե՛ս, գուբին խորունկ տեղերը։
16—Քեզ տեսնողները քու վրադ պիտի զարմանան,
Ու քեզի նայելով ա՛խ ըսե՛ն,
Ա՛ս այն մարդն է որ երկիրը կը սարսէր,
Թագաւորութիւնները կը դողացնէր,
17—Աշխարհս անապատ կը դարձնէր,
Ու անոր քաղաքները աւերակ կ'ընէր,
Ո՞ իր գերիները տուներնին չէր ղրկեր։
18—Ազգերուն բոլոր թագաւորները
Ամէն մէկը պատուով իր տանը մէջ կը պառկին,
19—Բայց դուն գարշելի ընձիւղի մը պէս,
Դատի փաթերուն մէջ ինկող
Սրով խոցուած մեռելներուն հանդերձին պէս,
Ոտքի տակ կոխուած դիակի պէս
Քու գերեզմանէդ դուրս նետուեցար։
20—Դուն թաղումով անոնց հետ չես միանար,
Քանզի քու երկիրդ աւերեցիր
Ո՞ ժողովուրդդ սպաննեցիր.
Չարերուն սերունդը յաւիտեան պիտի չյիշուի։
21—Սպանութիւն պատրաստեցէ՛ք անոր ոդոցը,
Իրենց հայրերուն անօրէնութեանը համար,
Որպէս զի չելլեն ու երկիրը չժառանգեն,
Ու աշխարհի երեսը *թշնամիներով չլեցնեն։

*Կամ, քաղաքներով

22—Քանզի զօրաց Տէրը կ'ըսէ ՝ր
Անոնց վրայ պիտի ելլեմ՝
եւ Բաբելոնի անունը ու Մնացորդը
նաւակը ու սերունդը պիտի կորզեմ՝
կ'ըսէ Տէրը։
23—Նաեւ զանիկա ոզնիներուն ժառանգութիւն
ու ջուրի լճակներ պիտի ընեմ։
եւ կորստեան աւելով պիտի աւլեմ զանիկա՝
կ'ըսէ զօրաց Տէրը։
24—Զօրաց Տէրը երդում ըրաւ ու ըսաւ՝
ինչպէս խորհեցայ՝ անշուշտ այնպէս պիտի ըլլայ՝
ու ինչ որ որոշեցի՝ այն պիտի կատարուի։
25—Որ Ասորեստանցին իմ երկրիս մէջ պիտի կարեմ՝
ու զանիկա լեռներուս վրայ պիտի կոխկրտեմ։
եւ անոր լուծը անոնց վրայէն պիտի վերնայ՝
ու անոր բեռը անոնց ուսէն պիտի վերնայ։
26—Բոլոր երկրի համար որոշուած նախասահմանութիւնը սա՛կ է։
ու ամէն ազգերուն վրայ երկնցած ձեռքը սա՛կ է։
27—Վասն զի զօրաց Տէրը նախասահմանեց՝
եւ ո՞վ կրնայ զանիկա եւս դարձնել։
ձեռքը երկնցած է՝
եւ ո՞վ կրնայ զանիկա եւս դարձնել։
28—Ահազ թագաւորին մահուան տարին այս պատգամը եղաւ։
29—Ով բոլոր փղշտացւոց երկիր՝
քեզ զարնողին գաւազանը կտրելուն համար մի ուրախանար։
Քանզի օձին արմատէն քարը պիտի ելլէ՝
ու անոր պտուղը կիզող թեւաւոր օձ պիտի ըլլայ։
30—Եւ ազգայնոցս անդրանիկները պիտի կերակրուին՝
ու չքաւորները ապահովութեամբ պիտի պառկին։
եւ քու արմատդ սովով պիտի կորսնցնեմ՝
ու անիկա քու մնացորդդ պիտի մեռցնէ։
31—Ողբա՝ ով դուռ՝ աղաղակէ՝ ով քաղաք։
Դուն՝ ով բոլոր փղշտացւոց երկիր՝
ամկնութիւնդ պիտի ըլլաս։
Քանզի հիւսիսէն ծուխ մը կու գայ՝
ու անոր զօրքերէն ասանդական մը պիտի չըլլայ։
32—Եւ ազգայ դեսպաններուն ի՞նչ պատասխան պիտի տրուի։
Թէ Տէրը Սիոնի հիմերը հաստատեց՝
ու անոր ժողովուրդին ազգայնները հոն պիտի ապաստանին։

ԳԼ. ԺԵ

Մոաբի պատգամը։
Ցերեւի Մոաբի Ար ի՛շտ գիշերով կոխուեցաւ՝ ու կործանեցաւ։
Ցերեւի Մոաբի Կիր ի՛շտ գիշերով կոխուեցաւ՝ ու կործանեցաւ։
2—Անիկա տաճարը ու Դիբոն
ու բարձր տեղերը ելաւ լալու համար։
Նաբաւի ու Մեդաբայի վրայ Մոաբ պիտի ողբայ։
Անոր ամէն գլուխները կնատակ պիտի ըլլան՝
ամէն մօրուք պիտի կորուի։
3—Անոր փողոցներուն մէջ քուրձ պիտի հագնեն՝
անոր տանիքներուն վրայ ու հրապարակներուն մէջ
ամէնը պիտի ողբան ու լան։
4—Ու Եսբոն ու Եղեալէ պիտի աղաղակեն՝
անոնց ձայնը մինչև Յասա պիտի լսուի։
Անոր համար Մոաբի սպառազէնները պիտի կանչուրտանեն՝
իրենց հոգին պիտի ձանձրանայ։
5—Իմ սիրտս Մոաբի համար պիտի աղաղակէ՝
անոր փախստականները երկաթ տարեկան երինջի պէս մինչև Սեգոր ու Եղլաթ։
Քանզի Ղուխիթի զառիվերը լալով պիտի ելլեն՝
վասն զի Որոնայիմի ճամբան կատրածի աղաղակ պիտի հանեն՝
6—Քանզի Նեմրիմի ջուրերը կ'աւերուին։
Քանզի խոտը կը չորնայ՝ կանանչ խոտը կը հանի՝

*Եբր. լացի մէջ իջնեն

ու կանանչեղէն չմնայ։
7—Անոր համար իրենց ստացած հարստութիւնը
ու բոլոր պահածնին ուռիներուն ձորը պիտի տանին։
8—Քանզի Մոաբի սահմանը աղաղակ չրջապատեց։
Անոր ողբը մինչև Եգլայիմ՝
Անոր ողբը մինչև Բերելիմ հասաւ։
9—Քանզի Դեմոնի ջուրերը արիւնով պիտի լեցուին։
Քանզի Դեմոնի վրայ աւելի չբերեմ՝
ու Մոաբի ազատուածներուն վրայ
ու երկրին մնացորդին վրայ առիւծներ պիտի ղրկեմ։

ԳԼ. ԺԶ

Ղրկեցէք գառը երկրին տիրոջին՝
Վէմէն անապատի ճամբայով Սիոնի աղջկան լեռը։
2—Ու Մոաբի աղջիկները Առնոնի անցքերուն քով
Բոյնէն վռնտուած թափառական թռչունի պէս պիտի ըլլան։
3—Խորհուրդ ասա՝ դատաստան ըրէ՝
Քու հովանիդ կէսօրուան տակն գիշերի պէս դիր՝
Ահաւորուածները պահէ ու փախստականները ձեռք մի տար։
4—Իմ ահաւորուածներս Թող քու քովդ պանդուխտի պէս բնակին՝ ով Մոաբ։
Դուն անոնց ծածկոյթ եղիր կործանողին երեսէն։
Քանզի բռնաւոր չմնաց՝ աւերողը պակսեցաւ՝
ու կոխողները երկրին վրայէն վերցան։
5—Ու աթոռը ողորմութեամբ պիտի հաստատուի։
եւ անոր վրայ Դաւիթի խորանին մէջ
Ա՛ր-ոխէ դատաւոր մը պիտի նստի ճշմարտութեամբ՝
Որ իրաւունքը պիտի փնտռէ՝
ու արդարութիւնը շուտով իւգործ պիտի դնէ։
6—Մոաբի ամբարտաւանութիւնը լսեցինք՝
Անիկա խիստ ամբարտաւան է՝
Անոր գոռոզութիւնը՝ ամբարտաւանութիւնը ու սրամտութիւնը ըստէ՛ն։
Անոր սնապարծ խօսքերը պարապ են։
7—Ասոր պատճառաւ Մոաբը Մոաբի համար պիտի ողբայ՝
Ամէն մէկը պիտի ողբայ։
Կիրհարեսէթի հիմերուն համար պիտի հեծէք։
Անոնք չքերուած եղած են։
8—Քանզի Եսբոնի դաշտերը նաւադեցան։
Ազգայ իշխանները Սեբամայի որթին ամէնէն պատուական ճիւղերը կոտրեցին՝
Որոնք մինչև Յազեր հասեր էին՝ անապատը չրջապատեր էին։
Անոր շառաւիղները երկննալով ծովէն անցեր էին։
9—Ասոր համար Սեբամայի որթին վրայ Յազերի լացովը պիտի լամ։
Քեզ աչքիս արցունքովը պիտի առատեմ՝
ով Եսբոն ու Եղեալէ։
Վասն զի ամառնային պտուղիդ և հունձքիդ համար եղած աղաղակը դադրեցաւ։
10—Ու պտղաբեր արտերէն ուրախութիւնը ու ցնծութիւնը պիտի վերնայ՝
Ու այգիներու մէջ երգերու և ցնծութեան ձայն պիտի չլսուի։
Հնձանի մէջ ա՛լ գինի պիտի չկոխեն։
Ես ձայն աղաղակը վերջացուցի։
11—Ասոր պատճառաւ իմ սրտիս Մոաբի համար՝
Ու փորս Կիրհարեսէթի համար քնարի պէս ձայն պիտի տայ՝
12—Այն ատեն պիտի երեւնայ
Թէ՛ ինչպէս Մոաբը իր բարձր տեղը երթալով պիտի յոգնի՝
Ու իր սրբարանը պիտի մտնէ աղօթք ընելու համար՝
Բայց օգուտ մը պիտի չըլլայ։
13—Ասիկա է այն խօսքը զոր Տէրը էչտռոնցւոյ Մոաբի համար խօսեր է։
14—Բայց հիմա Տէրը խօսեցաւ ու ըսաւ՝
երեք տարուան մէջ՝ վարձկանի տարիներուն պէս՝

*Կամ՝ վչտացած Եբր. այն տեղին

Մովաբի փառքը պիտի անարգուի
Ամէն բոլոր մեծ բազմութիւնովը.
Ու մնացորդը խիստ փչուելոք ու սակաւ պիտի ըլլայ։

Գլ. ԻԶ

Դամասկոսի պատգամը։
Ահա Դամասկոս քաղաք ըլլալէ պիտի վերնայ,
Ու աւերակի չեղի մը պիտի ըլլայ։
2—Արոերի քաղաքները պիտի թողուին,
Հօտերու ննջելոց պիտի ըլլան,
Որպէս զի անոնք պատկին, ու վախցնող չըլլայ։
3—Ու Եփրեմի պարիսպը պիտի վերնայ,
Ու Դամասկոսի ու Ասորւոց մնացորդին՝
Թագաւորութիւնը.
Անոնք իսրայէլի որդիներուն փառքին պէս պիտի ըլլան,
Կ'ըսէ զօրաց Տէրը։
4—Ու այն օրը Յակոբի փառքը պիտի պակսի,
Ու անոր մարմինին գիրութիւնը պիտի նիհարանայ։
5—Ու այնպէս պիտի ըլլայ, ինչպէս հընձող երբ ցորեն կը հնձէ,
Թևերին վրայ հասկերը կը ժողվէ.
Ու Րափայիմներուն հովիտը հասկեր քաղողին պէս պիտի ըլլայ,
6—Ու ինչպէս ձիթենին կը թափվին,
Ո՞ր բարձր ոստին ծայրը երկու երեք հատ,
Ու խիստ պտղաբեր ոստին վրայ չորս հինգ հատ կը մնայ,
Անոր վրայ ալ Իսրայէլի Տէրը Աստուածը։
7—Այն օրը մարդ իր Սաեզծողին պիտի նայի,
Ու իր աչքերը Իսրայէլի Սուրբը պիտի դիտեն։
8—Ու իր ձեռքերուն գործը եղող սեղաններուն պիտի չնայի,
Ու իր մատերուն չինածը,
Թէ՛ Աստարթիի կուռքերը
Ու թէ՛ արեգական կուռքերը, պիտի չդիտեն։
9—Այն օրը անոր ամուր քաղաքները,
Իսրայէլի որդիներուն երեսին ձգուած
Անպիտան թուփերու և բարձր ոստերու պիտի նմանին,
Ու ամէնքն պիտի ըլլան
10—Որովհետև դուն քու փրկութեանդ Աստուածը մոռցար,
Ու քու զօրութեանդ վէմը չյիշեցիր,
Անոր համար հաճելի տունկեր պիտի տնկես,
Ու օտար էրէխէ բէրոջ տունկեր պիտի տնկես,
11—Տնկածդ ցորկը պիտի աճեցնես,
Ու ցանածդ առաւօտուն պիտի բուսցնես.
Բայց բերքին օրը հանձաքը պիտի պակսի,
Ու սաստիկ ութամարթիւն պիտի ըլլայ։
12—Վա՛յ շատ ժողովուրդներու բազմութիւններ,
Որոնք ծովու ձայնին պէս կը գոռան,
Ու ժողովուրդներու ազմուկին՝
Որոնք ասատիկ յուրերու ձայնին պէս կը գոչեն,
13—Ժողովուրդները շատ յուրերու ձայնին պէս կը գոչեն.
Բայց Աստուած զանոնք պիտի յանդիմանէ,
Ու հեռու պիտի փախչին.
Ու լեռներուն վրայ տղերին պէս հովին երեսէն,
Ու մրրիկին առջեւէն գլորուած իւղին պէս պիտի հալածուին,
14—Ու իրկնաւան ատեն ահա խռովութիւն ալէկոծ։
Ու առաւօտ չեզած բնաջինջ պիտի ըլլան.
Մեր յափշտակիչներուն բաժինը
Ու մեր կողոպտիչներուն վիճակը ասիկա է։

Գլ. ԻԸ

Ով եթովպացւոց գետերուն անդին կողմը եղող
Թեւերով *հովանաւոր երկիր,
2—Որ ծովին՝ պատուիրակներով
Ջուրի երեսին վրայէն գեսպաններ կը ղրկէ,
Ով արագընթաց դեսպաններ, գացէք
†երկայնահասակ ու լերկ ազգին,
Սկիզբէն մինչև հիմա ահեղ ժողովուրդին,
Խիստ զօրաւոր ու ամէնս կոխկռտող ազգին,

*Կամ, շառաչուն հանող
†Կամ, տարածուած ու խիստ

Որուն երկիրը գետերը կը կտրեն,
3—Ով աշխարհի բոլոր բնակիչներդ,
Ու երկրի վրայ բնակողներդ,
Երբ լեռները դրօշակ կանգնուի՝ նայեցէք,
Ու երբ փող հնչուի՝ լսեցէք.
4—Քանզի Տէրը ինծի այսպէս բսաւ,
Ես հանգիստ պիտի ըլլամ, ու իմ բնակարանէս պիտի նայիմ՝
*Խոտ վրայի պայծառ տաքութիւնը պէս.
Ու հունձքերու տաքութիւնը մէջ ցօղագին ամպի պէս.
5—Քանզի հունձքի ժամանակէն առաջ,
Երբ բնձիը զը կը մեծնայ
Ու ծաղիկը ազոխ ըլլալով հասնելու վրայ է,
Անիկա ճիւղերը յօտացուլ պիտի կորէ
Ու ուռիները պիտի փրցնէ նետէ։
6—Անոնք մկկաեղ լեռներու թռչուններուն
Ու երկրի գազաններուն պիտի թողուին.
Ու թռչունները ամառը անոնց վրայ պիտի անցնեն,
Ու երկրի ամէն գազանները ձմեռը անոնց վրայ պիտի անցնեն։
7—Այն ժամանակ զօրաց Տէրոջը
Նուիրանուէրով ու լերկ ժողովուրդէն
Ու սկիզբէն մինչև հիմա ահեղ ժողովուրդէն,
Խիստ զօրաւոր ու ամէնս կոխկռտող ազգէն,
Որուն երկիրը գետերը կը կտրեն,
Զօրաց Տէրոջը անուանը տեղը,
Սիօն լեռը, ընծայ պիտի բերուի։

Գլ. ԻԹ

Եգիպտոսի պատգամը։
Ահա Տէրը թեթեւ ընթաց ամպի վրայ հեծեր է,
Ու եգիպտոս պիտի մտնէ.
Ու անոր երեսէն Եգիպտոսի կուռքերը պիտի շարժին,
Ու եգիպտոսի սիրտը իր ներսիդին պիտի հալի։
2—Ու եգիպտացիները պիտի †գրգռեմ եգիպտացիներուն վրայ.

*Կամ, կէսօրուան †Կամ, սպառազինեմ

Ու ամէն մէկը իր եղբօրը հետ, և ամէն մէկը իր ընկերին հետ,
Քաղաք քաղաքի հետ — թագաւորութիւն թագաւորութեան հետ,
Պատերազմ պիտի ընէ։
3—Ու եգիպտոսի ոգին իր ներսիդին պիտի պակսի,
Ու անոր խորհուրդը պիտի ցրուեմ.
Ու անոնք կուռքերուն, կախարդներուն, Վհուկներուն ու նշանագէտներուն պիտի հարցնեն։
4—Ու եգիպտացիները խստասիրտ ազգի մը ձեռքը պիտի մատնեմ,
Ու անոնց վրայ անգութ թագաւորութիւն մը պիտի տիրէ,
Կ'ըսէ զօրաց Եհովա Տէրը։
5—Ու ջուրերը ծովէն պիտի պակսին,
Ու գետը պիտի ցամքի ու չորնայ։
6—Ու *գետերուն չորութը պիտի քաշուին,
Ու †պապասլաւր †ալաբէնուած գետերը պիտի պապասին ու չորնան,
Եղէգը ու պրաւն պիտի թառամին։
7—Գետին քով ու Գետին եզերքին վրայ եղող մարգագետինները
Ու Գետին բոլոր վարուցանը
Պիտի չորնան, ցիրուցան ըլլան ու կորսուին։
8—Ձկնորսներն ալ պիտի հեծծեն,
Ու Գետին բոլոր կարթ ընկէցները պիտի ոռնան,
Ու ջուրին վրայ ցանց նետողները պիտի տրտմին։
9—Ու բարակ քաեան գործողները
Ու ճերմակ կտաւ հիւսողները պիտի ամչնան։
10—Անոր ‡սիւները պիտի կոտրին,
Ո՞ր ամէն վարձք առնողներուն հոգին պիտի տրտմի։
11—Իրաւ որ Տայանիսի իշխանները յիմարներ են.
Փարաւոնի խնամտուն խորհրդականներուն խորհուրդը անմտական է.
Ի՞նչպէս Փարաւոնի կրնաք ըսել,
Թէ ես իմաստուններու որդի եմ,
Ու հին թագաւորներու որդի եմ։

*Կամ, գետերը պիտի հռհին
†Կամ, Եգիպտոսի
‡Կամ, վարպետները

12—Արդ ո՞ւր են քու խնառուածներդ, Որ հիմա քեզի պատահին ու *խնացնեն Թէ զօրաց Տէրը ի՛նչ վճռեր է Եգիպտոսի համար։

13—Տոչորների իշխանները յիմարեցան. Մեմփիսի իշխանները խաբուեցան. Ու Եգիպտոսը իր ցեղերուն գլխաւորները մոլորեցուցին,

14—Տէրը անոր մէջ մոլորութեան ոգի խառնեց Ու անոնք Եգիպտոսը իր ամէն գործին մէջ մոլորեցուցին, Ինչպէս վխտող գինովը կը մոլորի։

15—Ու Եգիպտոսի մէջ գործ պիտի չըլլայ. Որ գլուխ կամ պոչ, հզողը Արմաւենիի ասա կամ կնիւն գործէ։

16—Այն օրը Եգիպտոս կիներուպէս պիտի ըլլայ, Ու պիտի դողայ և զարհուրի Զօրաց Տէրոջը ձեռքին շարժմունքէն Զոր պիտի շարժէ անոր վրայ։

17—Ու Յուդայի երկիրը Եգիպտացւոց արհաւիրք պիտի ըլլայ. Ով որ զանիկա յիշէ՝ պիտի վախնայ. Զօրաց Տէրոջը խորհուրդին պատճառաւ, Զոր անոր դէմ սահմաներ է։

18—Այն օրը Եգիպտոսի երկրին մէջ Քանանու լեզուն խօսող Ու զօրաց Տէրոջը անուանին երդուելով ընող Հինգ քաղաք պիտի ըլլայ. Մէկիը †Աերեգ քաղաք պիտի ըսուի։

19—Այն օրը Եգիպտոսի երկրին մէջ Տէրոջը համար սեղան, Ու անոր սահմանին քով Տէրոջը համար կոթող մը պիտի ըլլայ.

20—Ու անիկա Եգիպտացւոց երկրին մէջ Զօրաց Տէրոջը համար նշան ու վկայութիւն պիտի ըլլայ. Ասան որ բանաւորներուն պատճառաւ Տէրոջը պիտի աղաղակին Ու անիկա ազատիչ մը ու մեծ հոգի մը դրկելով անոնց՝ պիտի ազատէ զանոնք.

21—Ու Տէրը Եգիպտոսի մէջ պիտի յայտնուի, Ու այն օրը Եգիպտացիք Տէրը պիտի ճանչնան, Ու զոհեր ու պատարագներ պիտի մատուցանեն, Ու Տէրոջը ուխտ պիտի ընեն ու կատարեն.

22—Ու Տէրը Եգիպտացիները պիտի զարնէ. Պիտի զարնէ, ու պիտի բժշկէ. Ու անոնք Տէրոջը պիտի դառնան, Ու անիկա պիտի ընդունի զանոնք ու պիտի բժշկէ.

23—Այն օրը Եգիպտոսէ դէպ ի Ասորեստան բանուկ ճամբայ պիտի ըլլայ. Ու Ասորեստանցիք Եգիպտոս՝ ու Եգիպտացիք Ասորեստան պիտի երթան, Ու Եգիպտացիք †Ասորեստանցւոց հետ Աստուծոյ պիտի ծառայեն։

24—Այն օրը Իսրայէլ երրորդ պիտի ըլլայ Եգիպտոսի ու Ասորեստանի հետ. Ո՛ երկրի մէջ օրհնութիւն պիտի ըլլայ,

25—Զանոնք զօրաց Տէրը զանիկա պիտի օրհնէ, Ու պիտի ըսէ, Օրհնեալ ըլլայ իմ ժողովուրդս Եգիպտոս, Ու իմ ձեռքերուս գործը Ասորեստան, Եւ իմ ժառանգութիւնս Իսրայէլ։

Գլ. Ի

Այն տարին որ Տարթան Ասորեստանի Սարգոն թագաւորէն զրկուելով՝ Ազոտոս գնաց, ու Ազոտոսի հետ պատերազմ բռնաւ, ու զանիկա առաւ, 2—Այն ժամանակ Տէրը Ամովսի որդւոյն Եսայիի ձեռքով խօսեցաւ՝ ըսելով, Գնա ու քեզ քեղ փութդ հանէ, ու տաբէդ կօշիկներդ հանէ. ու անիկա այնպէս ըրաւ, և մերկ ու բոկոտն կը չրջէր։ 3—Ու Տէրը ըսաւ, Ինչպէս իմ ծառաս Եսայի երեք տարի մերկ ու բոկոտն չրջեցաւ, որ Եգիպտոսի համար ու Եթովպիայի համար նշան ու ցոյց մըն է, 4—Այնպէս Ասորեստանի թագաւորը Եգիպտացիները գերի՝ ու Եթովպացիները աքսոր

*Կամ, գիւանան
†Կամ, Կոբսեան. Եբր. Հերես

*Կամ, Ասորեստանցւոց պիտի ծառայեն

պիտի տանի, երիտասարդները ու ծերերը՝ մերկ, բոկոտն և իրենց ամօթոյքը բաց, Եգիպտոսի նախատինք ըլլալու համար։ 5—Ու անոնք պիտի սոսկան ու ամչնան Եթովպիայէ՝ որ իրենց ապաւէնն էր, ու Եգիպտոսէ՝ որ իրենց փառքն էր։ 6—Ու այն օրը այս ծովեզերեայ երկրին բնակիչները պիտի ըսեն, Ահա այսպէս եղաւ մեր ապաստանարանը՝ որ մենք Ասորեստանի թագաւորին երեսէն ազատելու համար, ու օգնութիւն գտնելու համար հոն փախանք. ուրեմն մենք ի՞նչպէս պիտի ազատինք։

Գլ. ԻԱ

Ծովու անապատին պատգամը։ Հարաւէն յորձակող մրրիկներուն պէս Անիկա անապատէն, սոսկալի երկրէն, կու գայ։

2—Ինծի վշտալի տեսիլք մը յայտնուեցաւ. Ցափշտակողը կը յափշտակէ ու կործանողը կը կործանէ։ Ով Եղամացիք, վեր եկէք. ով Մարք, պաշարեցէք. Անոր դադարեցուցի։

3—Ասոր համար երկամէնքս ցաւով լիցուեցաք, Ու ծննդական հնոյ ցաւերուն պէս ցաւերը բռնեցին զիս. *Անկէս կծկուած եմ որ չեմ կրնար լսել, Անկէս խռոված եմ որ չեմ կրնար տեսնել։

4—Սիրտս չփոթեցաւ, արհաւիրքը զիս զղջացուց. Իմ ուրախութեանս գիշերը ինծի սրատոդողի ֆեվէր ըրաւ։

5—Սեղանը կը պատրաստեն, դէտերը կը գնեն, կ'ուտեն կը խմեն. Եկէք, ով իշխաններ, վահանները օծեցէք։

6—Քանզի Տէրը ինծի այսպէս ըսաւ, Գնա դէտ մը դիր, որ տեսածը զրուցէ։

7—Ու անիկա հեծեալները տեսաւ, երկաւ ձիաւոր,

*Կամ, Լսելէն կծկուած եմ. տեսնելէն խռոված եմ

Ո՛ հեծեալ վրայ հեծածներ Ա՛ տրեալ վրայ հեծածներ,
Ու ուշադրութեամբ, մեծ ուշադրութեամբ, մտիկ ըրաւ,

8—Ու ազաղակեց առիւծի պէս, Ով Տէր, ես ցորեկը միշտ իմ դիտանոցիս մէջ կը կայնիմ, Ու բոլոր գիշերը իմ պահպանութեանս տեղը կը կենամ.

9—Ու ահա հեծեալ մարդիկ, երկու ձիաւոր, կու գան. Նաև պատասխան առաւ ու ըսաւ, Ինկաւ Բաբելոն, ինկաւ, Ու անոր աստուածներուն բոլոր արձանները կատարեցան ա՛ գետինը Նէ՛ռ-է՛ցաւ։

10—Ով իմ կոխուածներս ու իմ կալիս ցորենը, Ես ձեզի պատմեցի ինչ որ լսած եմ Զօրաց Տէրոջմէն, Իսրայէլի Աստուծմէն։

11—*Եդոմի պատգամը։ Սէիրէ ձայն մը կու գայ ինծի, Ով պահապան, գիշերուան համար ի՞նչ, Ով պահապան, գիշերուան համար ի՞նչ լուր կայ։

12—Պահապանը կ'ըսէ, Առաւօտ կու գայ ու նաև գիշերը. Եթէ կ'ուզէք հարցնել, հարցուցէք. Դարձէ՛ք ու եկէ՛ք։

13—Արաբիայի պատգամը։ Արաբիայի անտառին մէջ գիշերը պիտի անցնէք, Ով Դեդանացւոց կարաւաններըը։

14—Ով Թեմայի երկրի բնակիչները, Դարաւին առջև ջրով եկէք, Փախստականին առջև հացով եկէք։

15—Վասն զի անոնք կը փախչին սուրերուն առջևէն, Քաշուած սուրին առջևէն Ու լարուած աղեղին առջևէն Ու սաստիկ պատերազմին առջևէն։

16—Քանզի Տէրը ինծի այսպէս ըսաւ, Մէկ տարուան մէջ վարձկանի տարիներուն պէս Կեդարի բոլոր փառքը պիտի վերջանայ,

17—Ու աղեղնաւորներուն ճիացած թիւը,

*Եբր. Դումայի. ա Մն. ա. 30։

կեզաբլ սրտւոց զօրաւորներըն, պիտի
փչէնան,
Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը խօսեցաւ։

Գլ. ԻԲ

Տեսիլքի ձորին պատգամը։
Հիմա քեզի ի՞նչ եղաւ,
Որ ամէնդ տանիքներու վրայ ելար։
2—Ով խռովութեամբ լեցուած
Ագմուկի քաղաք, զբօսասէր քաղաք,
Քու սպաննուածներդ սրով սպաննուած
չեն,
Ու պատերազմի մէջ չմեռան։
3—Բոլոր իշխաններդ մեկին փախան,
Աղեղնաւորներէն կապուեցան.
Քու ձօղովբդիդ հեռու փախչողներուն
Բոլոր գտնուածները մեկտեղ կապուեցան։
4—Անոր համար ըսի,
Թող աչքէս դիս, որ դառնապէս լամ.
Իմ ժողովուրդիս աղիկան կործանումին
համար
Ձիս մխիթարելու մի աշխատիք։
5—Քանզի սեսիլքի ձորին մէջ զօրաց
Տէրոջմէն
Խռովութեան, կոխման ու չփոթութեան
օր է.
Պարիսպը կը փլցնեն, և աղաղակը մինչև լեռը կ՚հասնէ։
6—Ու Եղամ էր ձիաւոր մարդոցմով
կապարճը վերցուց,
Եւ կիր վահանը բացաւ.
7—Եւ քու ընտիր հովիտներդ կառքերով լեցուեցան,
Ու ձիաւորները դունդ կազմեցին դրան
ներուն քով.
8—Եւ Յուդայի ծածկոցը բացուեցաւ,
Ու այն օրը անտառի տանը զէնքերուն
նայեցաք.
9—Եւ Դաւիթի քաղաքին վնաս տեղերուն շատ ըլլալը տեսաք,
Ու վարի աւազանին ջուրերը ժողվեցիք.
10—Ու երուսաղէմի տուները համրեցիք,
Եւ պարիսպը ամրացնելու համար տուները փլցուցիք.
11—Ու հին աւազանին ջուրերուն համար
Նկիւս պարսպին մէջտեղ յարկայս մը շինեցիք,
Բայց զանիկա չնայեցաք,
Ու չտառնցուկ զանիկա կազմողին ուշադրութիւն չըրիք։
12—Եւ այն օրը զօրաց Եհովա Տէրը
Յէղ կանչեց
Լալու ու սգալու,
Գլուխ կնատցնելու և քօրձ հագնելու.
13—Եւ ահա ցնծութիւն և ուրախութիւն ըրէ։
Արջառներ կը սպաննէիք և ոչխարներ
կը մորթէիք,
Միս կ՚ուտէիք ու գինի կը խմէիք՝ ըսելով,
Ուտենք ու խմենք,
Քանզի վաղը պիտի մեռնինք։
14—Բայց զօրաց Տէրոջը կոզմանէ իմ
ականջներուս յայտնուեցաւ որ
Անշուշտ այս անօրէնութիւնը ձեզի պիտի չթողուի,
Մինչև որ դուք մեռնիք,
Կ՚ըսէ զօրաց Եհովա Տէրը։
15—Զօրաց Եհովա Տէրը այսպէս ըսաւ,
Գնա, ա՛ռ պատասին հրամանատարին,
Սեբնա *գանձապետին, ըսելով մսիը ո՞ր
ըսե,
16—Դուն հոս ի՞նչ ունիս և հոս ո՞վ
ունիս,
Որ հոս քեզի գերեզման փորեցիր,
Ով դուն, որ քու գերեզմանդ բարձր
տեղ կը փորես,
Ու քեզի վէմի մէջ բնակարան †կը շինես,
17—Ահա Տէրը քեզ պիտի նետէ զօրաւոր նետուածքով մը,
Եւ քեզ բռնօրէն պիտի ծածկէ։
18—Անշուշտ գնդակի պէս
Լայնատարած երկիրը մը պիտի գլորէ քեզ։
Դուն հոն պիտի մեռնիս,
Եւ քու փառքիդ կառքերը հոն պիտի մնան,
Դուն տան տիրոջդ տանը անարգանքը։
19—Ու քու պաշտօնէիդ քեզ պիտի վռնտեմ,
Եւ քու տարեմանէիդ քեզ պիտի զրկեմ,
20—Ու այն օրը պիտի կանչեմ իմ ծառաս,

*Կամ, առաջին պաշտօնատարին
†Եբր. կը քանդակես ‡Կամ, Իքբէ

Բեղկիայի որդին Եղիակիմը,
21—Եւ քու պատմուճանդ անոր պիտի
հագցնեմ,
Ու քու գօտիիդ զանիկա պիտի զօրացընեմ,
Եւ քու իշխանութիւնդ անոր ձեռքը
պիտի տամ.
Ու անիկա Երուսաղէմի բնակիչներուն
Ու Յուդայի տանը հօր պէս պիտի ըլլայ։
22—Եւ Դաւիթի տանը բանալին
Անոր ուսին վրայ պիտի դնեմ,
Որպէս զի անիկա բանայ և գոցող չըլլայ,
Ու գոցէ և բացող չըլլայ։
23—Ու զանիկա հաստատ տեղ մը
Բնեմ պէս պիտի գամեմ.
Եւ անիկա իր հօրը տանը
Փառաւոր աթոռի պէս պիտի ըլլայ։
24—Ու անոր հօրը տանը բոլոր փառքը
անոր վրայ պիտի կախեն,
Անոր սերունդին եղող պատուականները
ու անարգները,
Ամէն պզտիկ ամաններէն, սեռակ սեռակ
թասերէն
Մինչև ամէն սեռակ *սիկերը։
25—Այն օրը, կ՚ըսէ զօրաց Տէրը,
Այս հաստատ տեղը գամուած բեւեռը
պիտի վերցուի,
Եւ պիտի կտրի ու իյնայ,
Ու անոր վրայ եղած բեռը պիտի կտրուի,
Քանզի Տէրը խօսեցաւ։

Գլ. ԻԳ

Տիւրոսի պատգամը։
Ողբացէք, ով Թարսիսի նաւեր,
Քանզի անիկա բնաջինջ եղաւ, հոն տուն
կամ †դուռ չմնաց.
Այսիկա Կիտացոց երկրէն յայտնուեցաւ
անոնց։
2—Ով կղզիի բնակիչներ, լռեցէք.
Ծովէ անցնող Սիդոնացւոց վաճառականները լեցուցեր էին քեզ։
3—Եւ չատ ջուրերու մէջ Եգիպտոս *Սիհորի հունձքերը,
Գետին հունձքը, անոր եկամուտն էր,
Ու անիկա ազգերուն վաճառանոցն էր։

*Կամ, ասիրները, և Կամ, նուագարանները
†Եբր. մուտք ‡Կամ, Նեղոսի

4—Ով Սիդոն, ամչցիր, քանզի ծովը կը
խօսի.
Ծովուն զօրութիւնը կը խօսի ու կ՚ըսէ,
Ես ծննդականի ցաւ չեմ քաշեր ու
չեմ ծնանիր.
Երիտասարդներ չեմ սնուցաներ և
կոյս աղջիկներ չեմ մեծցներ։
5—Երբ Եգիպտացւոց ականջը
հասնի,
Տիւրոսի լուրին համար պիտի տագնապին։
6—Թարսիս անցէք,
Ով *ծովեզերքի բնակիչներ, ողբացէք։
7—Չէր ուրախութեան †աղաղակը սակայն է,
Որուն հնութիւնը չատանցմէ է.
Անոր ոտքերը հեռու տեղ պանդուխտ
ըլլալու պիտի տանին զանիկա։
8—Ո՞վ այս խորհուրդը ըրաւ Տիւրոսի
դէմ,
Որ էր բնակիչները կը պսակէր.
Անոր վաճառականները իշխաններ էին,
Ո՞ւ առուտուր ընողները՝ երկրի պատուաւորը էին։
9—Զօրաց Տէրը այս խորհուրդը ըրաւ,
Որպէս զի ամէն փառքին արհամարհանութիւնը խայտառակէ,
Ո՞ւ երկրի բոլոր պատուաւորները ամարգէ։
10—Ով Թարսիսի աղիկ,
Քու սեղէդ գետի պէս անցիր,
Ասկէ նաւքը †գօտի չկայ։
11—Իր ձեռքը ծովուն վրայ երկնցուց,
Թագաւորութիւնները սարսեց.
Տէրը Քանանացւոց համար հրամայեց,
Որ անոր բերդերը աւերեն.
12—Ու ըսաւ, Դուն մէկմէն ալ պիտի
չզբաղանաս,
Ով Սիդոնի անարգուած կոյս աղիկը.
Ելիր, կիտիմ անցիր,
Բայց հոն ալ հանգստութիւն պիտի չգտնեսնաս։
13—Ահա Քաղդեացւոց երկիրը,
Որ ժողովուրդ չէր,
Ջանիկա Ասորեստանցիք հիմնեցին անապատի բնակիչներուն համար,
Անոր աշտարակները կանգնեցին, անոր
պալատները շինեցին,
Բայց անիկա հիմ աւերակ ըրաւ սակայն։
14—Ողբացէք, ով Թարսիսի նաւեր,

*Կամ, կղզիի †Կամ, արգելք

վասն որ ձեր զօրութիւնը կորսուեցաւ։
15—Եւ այն օրը Տիրոջ մատնացած պիտի մնայ եօթանասուն տարի,
Մէկ թագաւորի օրերուն չափ.
Իսկ եօթանասուն տարիէն ետքը
Երբ Հը պիտի երգէ Տիրոջմէ, պոռնիկի երգին պէս.
16-Ով մատնացած պոռնիկ, քնարը առ
Ու քաղաքին մէջ պտրտէ.
Աղէկ զարկ, շատ խաղ կանչէ,
Որպէս զի քեզ յիշեն։
17—Եւ եօթանասուն տարիէն ետքը
Տէրը այցելութիւն պիտի ընէ Տիրոջմէ,
Եւ անիկա իր շահին պիտի դառնայ,
Ու աշխարհի երեսը եղող բոլոր երկրի թագաւորութիւններուն հետ
Պոռնկութիւն պիտի ընէ
18-Եւ անոր *վաճառականութեան շահը՝ Տէրոջը պիտի նուիրուի.
Անիկա գանձատունը պիտի չդրուի,
կամ շտեմարանի մէջ պիտի չպահուի.
Հապա անոր վաճառականութեան շահը Տէրոջը առջեւ բնակողներուն պիտի ըլլայ,
Որպէս զի մինչեւ կշտանալին ուտեն,
Ու պատուական զգեստներ հագնին։

ԳԼ. ԻԹ

Ահա Տէրը երկիրը կը պարպէ ու զանիկա կը դատարկացնէ,
Եւ տակնուվրայ ընելով անոր բնակիչները կը ցրուէ։
2—Ու ինչպէս է ժողովուրդը՝ քահանան ալ այնպէս,
Ինչպէս է ծառան՝ իր տէրն ալ այնպէս,
Ինչպէս է աղախինը՝ իր տիկինն ալ այնպէս,
Ինչպէս է ծախող առնողը՝ ծախողն ալ այնպէս,
Ինչպէս է փոխ տուողը՝ փոխ առնողն ալ այնպէս,
Ինչպէս է տոկոսիք առնողը՝ տոկոսիք տուողն ալ այնպէս պիտի ըլլայ։
3—Երկիրը բոլորովին պիտի պարպուի,
Ու բոլորովին պիտի կողոպտուի,
Քանզի այս խօսքը Տէրը խօսեցաւ։
4—Երկիրը սուգ կը բռնէ ու կը մաքի,
Աշխարհ կը նուազի ու կը մաքի,
Երկրի ժողովրդին մեծերը կը նուազին։
5—Ու երկիրը իր բնակիչներուն տակ պղծուեցաւ,
Քանզի անոնք օրէնքները զանց ըրին,
Պատուիրանքը փոխեցին, յաւիտենական ուխտը խափանեցին։
6—Ահա պատճառաւ նզովքը կերա երկիրը,
Ու անոր մէջ բնակողները իրենց յանցանքին պատիժը կրեցին.
Ահա պատճառաւ երկրի բնակիչները այրեցան,
Ու փիչ մարդիկ մնացին։
7—Նոր գինին սուգ կը բռնէ, որթը կը նուազի,
Եւ ամէն ուրախասիրտ եղողները կը հառաչեն։
8—Թմբուկներուն ցնծութիւնը կը դադրի,
Ուրախութիւն ընողներուն աղաղակը կորի,
Քնարին ցնծութիւնը կը դադարի։
9—Երգով գինի պիտի չխմեն.
Գինի՝ խմողներուն դառն պիտի ըլլայ։
10—Դատարկ քաղաքը կործանեցաւ,
Ամէն տուն գոցուեցաւ, որպէս զի ներս մը չմնայ։
11—Փողոցներուն մէջ գինիի համար աղաղակ կայ.
Ամէն ուրախութիւն մթնցաւ,
Երկրին ցնծութիւնը վերցաւ։
12—Քաղաքին մէջ ամայութիւն մնաց.
Ու դուռը զարնուեցաւ ու աւերակ եղաւ։
13—Քանզի երկրին մէջ, ժողովուրդներուն մէջ,
Թօթուած ձիթենիի պէս,
Ու այգեկութիւն եղած ճառադային պէս պիտի ըլլայ։
14—Անոնք ձայննին վերցնելով ցնծութեամբ պիտի երգեն,
Ծովու կողմէն Տէրոջը փառքին համար բարձրաձայն պիտի աղաղակեն։
15—Անոր համար *արեւելեան կողմը՝ փառաւորեցէք Տէրը,
Ծովու կղզիներուն մէջ Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը։
16—Երկրի ծայրերէն օրհնութիւններ լսեցինք,

*ԵԲՐ. վաճառականութիւնը ու շահը

*ԵԲՐ. լեռներուն մէջ

Արդարին փառք հոսուցէք.
Բայց ես ըսի, Նիհար եմ, նիհար եմ, վա՛յ ինծ.
Ճարպակողները կը յափշտակեն.
Ճարպակողները բանի կը յափշտակեն։
17—Ով երկրի բնակիչ,
Վախ, գուբ և որոգայթ պիտի ըլլայ քու վրադ.
18—Ու վախին ձայնէն փախչողը գուբը պիտի իյնայ,
Եւ գուբին մէջէն ելլողը որոգայթին մէջ պիտի բռնուի.
Քանզի բարձրէն *պատուհանները բացուեն,
Ու երկրի հիմերը կը չարժին։
19—Երկիր բոլորովին կը ճեղուի.
Երկիր բոլորովին կը պատռի.
Երկիր բոլորովին կը սասրի.
20—Երկիր գինովի պէս անդադար պիտի երերայ,
Ու հիւղի պէս պիտի չարժի.
Եւ անոր մեղքը պիտի ծանրանայ անոր վրայ,
Ու անիկա պիտի իյնայ ու ուժմէն ալ պիտի չելլէ։
21—Եւ այն օրը Տէրը բարձրէն այցելութիւն պիտի ընէ հպարտներուն զօրքին,
Ու երկրի վրայ՝ երկրի թագաւորներուն,
22—Եւ անոնք պիտի ժողովին,
Ինչպէս բանտարկեալները գուբին մէջ կը ժողովին,
Ու բանտի մէջ պիտի գոցուին.
Եւ շատ աւելի ետքը անոնց այցելութիւն պիտի ըլլայ։
23—Եւ լուսինը պիտի ամչնայ, ու արեւը պիտի պատկառի,
Երբ զօրաց Տէրը Սիոն լեռանը վրայ
Ու Երուսաղէմի մէջ թագաւորի,
Ու իր ծերերուն առջեւ փառաւորուի։

ԳԼ. ԽԵ

Ով Տէր, իմ Աստուածս դուն ես.
Բեզ պիտի բարձրացնեմ, քու անուանդ փառք պիտի տամ.
Քանզի սքանչելի բաներ ըրիր,

*կամ, սահանները

Քու վաղեմի խորհուրդներդ հաւատարիմ և ճշմարիտ են։
2—Քանզի քաղաքը հոգակոյտ,
Ու պարսպատ քաղաքը աւերակ դարձուցիր,
Որպէս զի պղտիկ քաղաք չըլլալով
Օտարականներուն պալատը յաւիտեան չշինուի։
3—Անոր համար զօրաւոր ժողովուրդը քեզ պիտի պատուէ,
Եւ ահարկու ազգերուն քաղաքը քեզմէ պիտի վախնայ։
4—Վասն զի դուն ապաւէն եղար տգիտացին,
Ապաւէն՝ չքաւորին իր նեղութեան ատենը,
Ապաստանարան՝ փոթորիկէն, հովանի՝ տաքութենէն,
Երբ անօրէնին մարդոց կատաղութիւնը պատի փլած փոթորկի պէս կու գայ։
5—Օտարականներուն ազգակը
Ջոր տեղին տաքութեանը պէս պիտի խոնարհեցնես,
Ինչպէս տաքութիւնը ամպի հովանիով կ'ընկերանայ,
Այնպէս բռնաւորներուն ցնծութեան ձայնը պիտի ցածնայ։
6—Եւ զօրաց Տէրը այս լեռան վրայ
Բոլոր ազգերուն կերուխում մը պիտի ընէ,
Պարարտ բաներու և հին գինիներու,
Ծուծով լեցուած պարարտ բաներու,
Ու զտուած հին գինիներու կերուխում։
7—Եւ այս լեռան վրայ
Ամէն ժողովուրդներուն վրայ տարածուած ծածկոցը
Ու ամէն ազգերուն վրայ փռուած վարագոյրը քանդելով պիտի ընէ.
8—Մահը յաւիտեան կլլելով պիտի ընէ,
Ու Տէր Եհովա ամէն դէմքէ արցունքը պիտի սրբէ,
Եւ բոլոր երկրի երեսէն իր ժողովուրդին նախատինքը պիտի վերցնէ.
Վասն որ Տէրը խօսեցաւ։
9—Ու այն օրը պիտի ըսեն,
Ահա մեր Աստուածը ասիկա է.
Անոր յուսացանք ու անիկա մեզ ազատեց.

*կամ, յաղթութեան մէջ
†ԵԲՐ. երեսէ

Տէրը ասիկա է. անոր յաւատացէք.
Անոր վրայ թիւնով պիտի ցնծանք
և ուրախանանք։
10—Քանզի Տէրոջը ձեռքը այս լեռան
վրայ պիտի հանգչի,
Ու Մովաբ անոր տակ պիտի կոխուի,
Ինչպէս յարդը կը կոխուի աղբանոցին
մէջ։
11—Ու իր ձեռքերը պիտի տարածէ ա-
նոր մէջ,
Ինչպէս լողացողը կը տարածէ լողալու
համար.
Ու անոր հպարտութիւնը անոր ձեռքե-
րուն հնարքներուն հետ պիտի
կործանի։
12—Ու քու բարձր պարիսպներուդ ամ-
րութիւնը պիտի խանգարեցնէ,
Ու գետնի հետ հաւասարեցուց փոշիի մէջ
պիտի ձգէ։

Գլ. ԻԶ

Այն օրը Յուդայի երկրին մէջ այս
երգը պիտի երգուին.
Մենք զօրաւոր քաղաք ունինք.
Փրկութիւնը պարիսպներու ու պատնէշ-
ներու տեղ կը դրուի։
2—Դռնները բացէք,
Որպէս զի ճշմարտութիւն պահող արդար
ազգը ներս մտնէ։
3—Հաստատ միտքը կատարեալ խաղա-
ղութեան մէջ կը պահես,
Վասն զի քեզի կը յուսայ։
4—Յուսացէք Տէրոջը յաւիտեան.
Քանզի Տէր Եհովա յաւիտենական վէմ է։
5—Քանզի անիկա բարձր տեղը բնա-
կողները կը խոնարհեցնէ,
Բարձր քաղաքը կը ցածցնէ.
Մինչև գետինը կը ցածցնէ,
Զանիկա հողի հետ հաւասար կ'ընէ։
6—Ոտքը զանիկա պիտի կոխէ,
Աղքատին ոտքը ու չքաւորներուն գա-
շտպերը։
7—Արդարին ճամբան շիտակ է.
Ով ուղիղ, արդարին ճամբան դուն
կ'ուղղես։
8—Ու քու դատաստաններուդ ճամբուն
մէջ քեզի կը սպասենք, ով Տէր.
Մեր հոգին փափաքը քու անուանդ և
քու յիշատակիդ վրայ է։
9—Գիշերը փափաքեցայ քեզի հոգւով,
Ու առաւօտուն քեզ կը փնտռեմ *բո-
լոր սրտովս.
Քանզի երբ քու դատաստաններդ երկրի
վրայ ըլլան,
Աշխարհի բնակիչները արդարութիւն
պիտի սորվին։
10—Անբարի ողորմութիւն ալ ըլլայ՝
արդարութիւն չսորվիր.
Անիկա ուղղութեան երկրին մէջ անօրէ-
նութիւն կը գործէ,
Ու Տէրոջը մեծափառութիւնը չտեսներ։
11—Ով Տէր, ձեռքդ քու ձեռքիդ բարձ-
րանալը չեն տեսներ,
Բայց ժողովուրդին վրայ նէ ունեցած
նախանձդ պիտի տեսնեն ու
ամչնան.
Նէ քու թշնամիներդ կրակը պիտի ապա-
ռէ։
12—Ով Տէր, մեզի խաղաղութիւն պի-
տի տաս,
Վասն զի մեր ամէն գործերն ալ դուն
մեզի համար գործեցիր։
13—Ով Տէր Աստուած մեր, քեզմէ ու-
րիշ տէրեր մեր վրայ տիրեցին,
Բայց քու անունդ, միայն քովդ, կը
յիշենք.
14—Անոնք մեռած են, պիտի չապրիանան.
Ուրուականներ են, չեն կրնար ելլել.
Վասն զի դուն այցելութիւն ընելով՝
զանոնք բնաջինջ ըրիր,
Ու անոնց բոլոր յիշատակը կորնչցուցիր։
15—Դուն այս ազգը աւելցուցիր, ով Տէր,
Այս ազգը աւելցնելով՝ փառաւորեցար,
Երկրի ամէն ծայրերը ընդարձակեցիր։
16—Ով Տէր, նեղութեան մէջ քեզ
փնտռեցին,
Քու պատիժդ անոնց վրայ եղած ատեն
†աղաչանք ըրին*։
17-Ինչպէս ծնանելու մօտ եղող յղի կինը
Իր երկունքին մէջ տանջալ ելլով կ'ողա-
ղակէ,
Մենք ալ քու առջեւդ այնպէս եղանք,
ով Տէր։
18—Յղացանք, ցաւեր քաշեցինք,
Հով ծնանողի պէս եղանք,
Ու երկիրը չկրցանք ազատել,

*Եբր. իմ ներսիդիս եղած հոգիովս
†Կամ, հառաչանք թափեցին

Ու աշխարհի բնակիչները չինկան։
19—Քու մեռելներդ պիտի ոչնչանան,
Իմ մեռելներուս մարմինները յարու-
թիւն պիտի առնեն.
Արթնցէք ու ցնծութեամբ երգեցէք,
ով հողի մէջ բնակողներ.
Քանզի քու ցօղդ խոտերու ցօղ է,
Ու երկիրը էր մեռելները ծնո՛ւր պիտի
նետէ։
20—Գնա, ով իմ ժողովուրդս, քու
սենեակներուդ մէջ մտիր,
Ու քու վրադ դռներդ գոցէ.
Պահուէ քիչ մը, վայրկեան մը,
Մինչև բարկութիւնը անցնի։
21—Քանզի ահա Տէրը իր տեղէն կ'ելլէ,
Որպէս զի երկրի բնակիչներուն պցկու-
թիւն ընէ իրենց անօրէնու-
թեանը համար.
Ու երկիրը իր արիւնները պիտի յայտնէ,
Ու սպաննուածները ա՛լ պիտի չծածկէ։

Գլ. ԻԷ

Այն օրը Տէրը իր ամրակուռ, մեծ
ու զօրաւոր սրովը
Պիտի պատժէ փախչող Լևիաթան օձը,
Այսինքն այն ծռամածուռ Լևիաթան օձը,
Ու ծովուն մէջ եղող վիշապը պիտի մեռ-
ցնէ։
2—Այն օրը *դինիի այգիին վրայ եր-
գեցէք.
3—Ես Տէրս կը պահեմ զանիկա,
Ամէն վայրկեանի մէջ պիտի ոռոգեմ
զանիկա,
Գիշեր ու ցորեկ անոր պահպանու-
թիւն պիտի ընեմ,
Որպէս զի չըլլայ թէ անոր վրայ չ՚ըլ-
ղ յարձակիմ։
4—Ես բարկութիւն չունիմ.
Երանի՛ թէ ցաքեաը ես փուչերը ին-
ծի դէմ պատերազմին.
Ես անոնց վրայ պիտի քալէի,
Ու զանոնք մէկէն պիտի այրէի։
5—Եթէ ոչ՝ թող իմ զօրութեանս
ապաւինին,
Թող ինծի հետ խաղաղութիւն ընեն,
Ինծի հետ խաղաղութիւն ընեն։
6—Ապագայ ժամանակին մէջ Յակոբ
պիտի արմատանայ,

*Կամ, ցանկալի

Իսրայէլ պիտի ծաղկի ու պիտի բնձիւղի,
Ու պտղով աշխարհի երեսը պիտի լեցը-
նեն։
7—Միթէ զանիկա զարնողին հարուա-
ծքին պէս զարկաւ զանիկա,
Կամ անկէ սպաննուածներուն սպանե-
մա՞ն պէս սպաննուեցաւ։
8—Չափաւորութեամբ վիճեցար անոր
հետ,
Երբ զանիկա զրկեցիր,
Թէև արեւելեան հովին օրը աստիկ հո-
վով տարիր։
9—Ուստի Յակոբի անօրէնութիւնը ա-
նով քաւութիւն պիտի ըլլայ.
Ու բոլոր *դիտաւորութիւնը այս է որ
անոր մեղքը վերցնէ,
Երբ զոհասեղաններուն բոլոր քարերը կիրի
փշրուած քարերու պէս ընէ,
Աստարտիի կառքերը ու արեգական
արձանները ո՛չ պիտի կանգնին։
10—Քանզի պարսպաւոր քաղաքը ա-
մայի՝
Ո՛ չէն տեղը անապատի պէս թողուած
ու մերժուած պիտի ըլլայ.
Հոն զուարակ պիտի արածի և հոն պի-
տի պառկի,
Ու անոր ճիւղերը պիտի հատցնէ։
11—Անոր ոստերը չորնալով պիտի կոտ-
րին,
Կիները պիտի գան ու զանոնք պիտի
բռնկցնեն,
Քանզի անիկա խնամատուն ժողովուրդ չէ.
Ուստի զանիկա ստեղծողը անոր վրայ
պիտի չգթայ,
Ու զանիկա կազմողը անոր պիտի չողոքի։
12—Ու պիտի ըլլայ այն օրը,
Որ Տէրը Գետին յորձանքէն մինչև Եգիպ-
տոսի հեղեղատը պիտի թօթվէ.
Ու դուք, ով Իսրայէլի որդիներ,
Մէկիկ մէկիկ պիտի ժողովուիք։
13—Ու այն օրը մեծ փողը պիտի հնչուի,
Ու Ասորեստանի երկրին մէջ թափառա-
կան եղողները
Ու Եգիպտոսի երկրին մէջ ափսոսած-
ները պիտի գան,
Ու Երուսաղէմ սուրբ լեռանը վրայ
Տէրոջը երկրպագութիւն պիտի ընեն։

*Եբր. պատրաստութիւնը

ԳԼ. ԻԸ

Վ՚ԱՅ Եբբեմի գինեվներան հպարտութեան պատիժն,
Որուն փառաց զարդը թառամեալ ծաղիկ մըն է,
Որ գինիով թմրածներուն պարարտ հովիտին գլուխը կը կեղտոյ։
2—Ահա Տէրոջը կոչնակ քալ ու զօրաւոր ըլլամդ մը,
Կարկտի փոթորիկի պէս, աւերիչ մրրիկի պէս
Ու սաստիկ ջուրերուն յորդահոս հեղեղին պէս,
Զեռքովը գահերը պիտի զարնէ գետնէն։
3-Եբբեմի գինեվներուն հպարտութեան պատիժ
Ոտքերով պիտի կոխուի։
4—Ու պարարտ հովիտին գլուխը եղող անոր փառաց զարդը,
Որ թառամեալ ծաղիկ մըն է,
Հունձքէն առաջ վազահասուկ թուզի պէս պիտի ըլլայ,
Զոր տեսնողը ձեռքը առածին պէս կը կլլէ։
5—Այն օրը զօրաց Տէրը իր ժողովուրդին միացորդին
Փառաց պսակ ու չքեղ թագ պիտի ըլլայ.
6—Ու դատաստանի նստողին դատաստանի ոգի,
Ու պատերազմը դէպ ի դուռը դարձնողին զօրութիւն պիտի ըլլայ։
7—Բայց սոսկալ ալ գինիով կը մոլորին,
Ու ցբիով կը դանդաչտին.
Քահանան ու մարգարէն ցբիով կը մոլորին.
Անոնք գինիէն կ՚ընկղմին, ցբիէն կը դանդաչտին,
Տեսիլքի մէջ կը մոլորին ու դատաստանի մէջ կը սխալին.
8—Վասն զի անոնց սեղանները փսխուածքի պղծութիւնով լեցուած են,
Այնպէս որ տեղ մը չկայ։
9—Որո՞ւ գիտութիւն սորվեցնէ,
Որո՞ւ կրթութիւն հասկցնէ.
Կաթէ կտրուածներո՞ւն,
Սոխնեքէ զատուածներո՞ւն։
10—Քանզի խրատ խրատի վրայ, խրատ խրատի վրայ,
Հրաման հրամանի վրայ, հրաման հրամանի վրայ,
Քիչ մը հոս, քիչ մը հոն։
11—Ծիրանի այս ժողովուրդին հետ
*Չհակցուելու չքմեղանքով և օտար լեզուով պիտի խօսի
12—Քանզի անոնց բսաւ,
Ցգնածը հանգստացնելու հանգիստին տեղ սա է,
Ու մխիթարութիւնը սա՛ոկ է.
Բայց անոնք մտիկ բնել չուզեցին։
13—Ուստի Տէրոջը խօսքը պիտի ըլլայ անոնց՝
Խրատ խրատի վրայ, խրատ խրատի վրայ,
Հրաման հրամանի վրայ, հրաման հրամանի վրայ,
Քիչ մը հոս, քիչ մը հոն.
Որպէս զի երթան, կռնակի վրայ իյնան ու կտորտին,
Ու որոգայթի մէջ իյնալով բռնուին։
14-Ուրեմն Տէրոջը խօսքը մտիկ ըրէք,
Ով ծաղր բնող մարդիկ,
Որ երուսաղէմի մէջ իշխող այս ժողովուրդին վրայ կը տիրէք։
15—Որովհետև ըսիք,
Մենք մահուան հետ ուխտ ըրինք,
Ու գերեզմանին հետ դաշնակից եղանք,
Որ երբ յորդահոս †հեղեղը ա՛ւէ անցնի, մեր վրայ պիտի չգայ.
Վասն զի սուտ թիւնը մեզի պատսպարան ըրինք,
Ու ունայնութեան մէջ պահուեցանք։
16—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ՚ըսէ.
Ահա ես Սիոնի մէջ վէմ մը կը դնեմ իբրև հիմ.
‡Ընտիր վէմ, պատուական անկիւն, հաստատուն հիմ.
Ով որ հաւատայ անոր, պիտի չփոտորայ փախչելու։
17—Ու դատաստանը լարին,
Ու արդարութիւնը կշիռին համեմատ պիտի դնեմ.
Ու սուտ թեան պատսպարանը կարկտոտը պիտի տանի,

*ԵԲԲ. Թոթովախօս
†ԵԲԲ. խարազանը
‡ԵԲԲ. փորձուած

Ու պահուելու տեղը ջուրերը պիտի կոխեն։
18—Ու մահուան հետ ըրած ուխտերնիդ պիտի ապրեցի,
Ու գերեզմանի հետ ըրած դաշնակցութիւններնիդ պիտի չհաստատուի.
Երբ յորդահոս հեղեղը ա՛ւէ անցնի,
Դուք անկէ պիտի կոխուիք։
19—Անցնելու ատեն ձեզ պիտի առնէ,
Քանզի առեն առաւոտ, ցորեկ ու գիշեր պիտի անցնի.
Ու անոր լուրը առնելը անգամ սոսկալի պիտի ըլլայ։
20—Քանզի անկողինը երկննալու համար կարճ է,
Ու ծածկոցը ծածկուելու համար նեղ է։
21—Քանզի Տէրը պիտի ելլէ, ինչպես Փարասին լեռանը վրայ եղա՛ւ,
Ու պիտի բարկանայ, ինչպես Գաբաւոնի ձորին մէջ բո՛ւռնացա՛ւ,
Որպէս զի իր գործը, իր օտար գործը, գործէ,
Ու իր պաշտօնը, իր օտար պաշտօնը, կատարէ։
22—Եւ հիմա ծաղր ընողներ մի ըլլաք,
Որպէս զի չըլլայ թէ ձեր կապանքները ա՛ւելի ուժգնանան.
Քանզի զօրաց Տէր Եհովայի կողմանէ
Բոլոր երկրի վրայ նախասահմանեալ աւերում մը լսեցի։
23—Ականջ տուէք ու իմ ձայնս լսեցէք.
Մտիկ ըրէք ու իմ խօսքս լսեցէք։
24—Մինչ հերկողը ցանելու համար միշտ կը հերկէ՞.
Մէլ իր երկիրը կը բանայ ու անոր կոշտերը կը տափանէ՞.
25—Անոր երեսը հաւասարցնելէն ետքը
Միթէ արմնդեղը ու չամանը չը՞ ցաներ,
Ու ցորենը կարգով ու գարին որոշուած տեղը,
Ու համարը իր սահմանին մէջ չը՞ դներ։
26—Վասն զի իր Աստուածը կրթութիւն կու տայ անոր,
Ո՞ կը սորվեցնէ թէ ի՛նչ պէտք է ընել։
27—Քանզի արմնդեղը կամնասայլով չեն եծեծուիր,
Ու չամանին վրայ սայլին անիւը չդառնար
Հապա արմնդեղը գաւազանով

Ու չամանը ցուպով կը թօթուի։
28—Հացին ցորենը կը կոխուի.
Բայց դանիկա միշտ չեն եծեծեր,
Ու սայլին անիւը ջանիկա չեն փշրեր,
Ու ձիերը դանիկա չեն փշրեր։
29—Ասիկա ալ զօրաց Տէրոջմէն կ՚ելլէ,
Որուն խորհուրդը սքանչելի է,
Ու անոր իմաստութիւնը գերազանց է։

ԳԼ. ԻԹ

Վ՚ԱՅ *Արիէլ,
Դաւիթի բնակած Արիէլ քաղաքին.
Տարի տարիի վրայ աւելցուցէք.
Թող զոհերէն ոճերը զառնան։
2—Բայց ես Արիէլը նեղը պիտի ձգեմ,
Ու անիկա սգաւոր ու տխուր պիտի ըլլայ.
Ես ինծի †Արիէլի պէս պիտի ըլլայ։
3—Ու քեզի գէմ չուրջանակի բանակ պիտի դնեմ,
Ես քեզ պատնէշներով պիտի պաշարեմ,
Ու քեզի գէմ հողաբլուրներ պիտի կանգնեմ.
4—Ես պիտի ցածնաս ա՛ռ գետնէն խօսես,
Ես փա՛ռ խօսքերդ հողին տակէն պիտի ելլեն,
Ու փա՛ռ ձայնդ վհուկի յո՛ւշին պէս գետնէն պիտի ըլլայ,
Ես փա՛ռ խօսքդ հողէն պիտի փսփսայ։
5—Ու փա՛ռ օտարականներուդ բազմութիւնը մանր փոշիի պէս,
Ես փա՛ռ բռնաւորներուդ բազմութիւնը անցնող մղեղի պէս պիտի ըլլայ.
Ու տակա յանկարծ մէկ վայրկեանի մէջ պիտի ըլլայ։
6—Զօրաց Տէրոջը կողմանէ
Որոտումով, գետնաշարժով, մեծ ձայնով,
Մրրիկով, փոթորիկով ու մաղող կրակի բոցով
Այցելութիւն պիտի ըլլայ։
7—Ու Արիէլի վրայ պատերազմի եկող բոլոր ազգերուն բազմութիւնը,
Ես այս †ոտքէն վրայ ու անոր պարիսպներուն վրայ բոլոր յարձակողները

*Այսինքն, Աստուծոյ կրակարանին, կամ, զոհանոցին
†կամ, զոհանոցի

Ու զանիկա պաշարողները
Գիշերը անանուած երազի պէս պիտի
ըլլան։
8—Եւ ինչպէս անօթի եղողը երազին
մէջ կը տեսնէ թէ կերակուր
կ'ուտէ,
Ու արթննալէն ետքը փորը անօթի կը
մնայ,
Եւ ինչպէս ծարաւ մարդը երազին մէջ
կը տեսնէ թէ ջուր կը խմէ,
Ու արթննալէն ետքը կը մաըի ու հոգին
կը պապակի,
Այնպէս պիտի ըլլայ բազմութիւնը
Որ Սիօն լեռանը դէմ պատերազմի կու
գան։
9—Ապշեցէք ու զարմացէք,
Շլայնէք ու թմրեցէք.
Անոնք արբած են, բայց գինիէն չէ.
Անոնք կը դանդաղին, բայց ցզիին չէ.
10—Քանզի Տէրը ձեր վրայ թմրութեան
ոգի թափեց,
Ու ձեր աչքերը գոցեց.
Մարգարէները ու ձեր գլխաւորները,
Որոնք տեսիլք կը տեսնէին, կուրցուց։
11—Ու ամէնուն տեսիլքները կնքուած
գիրքի մը խօսքերուն պէս պիտի
ըլլան ձեզի,
Զոր կարդալ գիացողին կու տան
Ու կ'ըսեն, Կ'աղաչենք, սա՛ւիկ կարդա.
Ու անիկա կ'ըսէ, Չեմ կրնար, վասն զի
կնքուած է։
12—Եւ այն գիրքը կարդալ չգիացողին
կու տան
Ու կ'ըսեն, Կ'աղաչենք, սա՛ւիկ կարդա.
Ու անիկա կ'ըսէ, Կարդալ չեմ գիտեր։
13—Ասոր համար Տէրը կ'ըսէ,
Որովհետեւ այս ժողովուրդը ինձի բերնով
վր կը մօտենայ,
Եւ գիս չրթունքներովը կը պատուէ,
Բայց անոնց սիրտը ինծմէ հեռու է,
Ու ինծմէ ուրիշներէն
Մարդոց սովրեցուցած պատուիրանք
մըն է։
14—Ասոր համար ահա ես այս ժողովուրդին մէջ
Ահաւոր հեռանալով գործեր ու հրաշքներ պիտի ընեմ.
Եւ անոնց իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսուի,
Ու հանճարեղներուն հանճարը բնաջինջ պիտի ըլլայ։
15—Վա՛յ անոնց որ խորունկ տեղ կը փնտռեն
Իրենց խորհուրդը Տէրոջմէ պահելու համար.
Ու իրենց գործը մութի մէջ կ'ընեն,
Ու կ'ըսեն, Մեզ ո՞վ կը տեսնէ ու մեզ ո՞վ գիտէ։
16—Վա՜յ ձեր կամակորութեանը.
Մէթէ բրուտը կաւին տեղ կը դրուի՞.
Քանզի կարելի՞ է որ գործը զինք գործողին համար ըսէ
Թէ անիկա չես չգործեց.
Ու սեղծուածը՝ զինք սեղծողին համար,
Թէ անիկա չհասկնար։
17—Ահա չատ փիչ ժամանակէն Լիբանան պտղաբեր արտի պիտի դառնայ,
Ու պտղաբեր արտը անտառ պիտի սեպուի։
18—Ու այն օրը խուլերը գիրքին խօսքերը պիտի լսեն,
Եւ կոյրերուն աչքերը մգեղէն ու խաւարէն ազատուելով պիտի տեսնեն։
19—Եւ խեղճերը Տէրոջմով իրենց ուրախութիւնը պիտի աւելցնեն,
Ու չքաւոր մարդիկ Իսրայէլի Սուրբովը պիտի ցնծան,
20—Վասն զի բռնաւորը պիտի վերնայ,
Եւ ծաղր բնողը պիտի չմնայ.
Ու ամէն անոնք որ անօրէնութեան համար կը հսկեն՝ պիտի կորսուին.
21—Անոնք որ մարդը գատաստանի մէջ յանդգնաբար կը հանեն,
Ու դաղէն դրանը մէջ *ջատագովութիւն ընողին համար որոգայթ կը լարեն,
Եւ արդարին իրաւունքը կը խափանեն։
22—Ասոր համար Աբրահամը փրկող Տէրը
Յակոբի տանը համար այսպէս կ'ըսէ.
Յակոբ ալ չպիտի չամչնայ,
Ու անոր երեսը ալ պիտի չդեղնի.
23—Վասն զի երբ †տեսնէ իր տղաքը
իմ ձեռքերուս գործը, իր մէջ,
Ան սուրբ պիտի ճանչնայ
Ու հանդիսաւորութեան համբաւ պիտի տայ,
Ու Յակոբի Աստուածմէն պիտի վախնան,
21—Եւ հոգիով մոլորածները խոհեմութիւնը պիտի ճանչնան,
Ու տրտնջողները խրատութիւն պիտի սորվին։

*ԵԲԲ. ջանգիմանութիւն
†Կամ, տեսնեն

Գլ. Լ

1—Վա՜յ ապստամբ տղաքներուն, կ'ըսէ Տէրը,
Որոնք մեղք մեղքի վրայ աւելցնելու համար
Խորհուրդ կ'ընեն, բայց ինծմով չէ.
Ու դաշնագրութիւն կ'ընեն, բայց իմ Հոգւովս չէ.
2—Որոնք առանց իմ բերնիս հարցնելու կ'երթան եգիպտոս կ'իջնեն,
Փարաւոնի պաշտպանութեանը տակ ամրանալու,
Ու եգիպտոսի հովանիին ապաւինելու համար։
3—Բայց փարաւոնի պաշտպանութիւնը ձեզի ամօթ,
Ու եգիպտոսի հովանիին ապաւինիլը չէվ նախատինք պիտի ըլլայ։
4—Քանզի անոր իշխանները Տանիս գացին,
Ու դեսպանները Հանէս հասան։
5—Ամէնը ամչցան այն ժողովուրդին պատճառաւ
Որ իրենց օգուտ մը ընելու կարողութիւն չունի.
Անիկա չկրնար օգնութիւն մը կամ օգուտ մը ընել,
Հապա էրէնց ամօթ ու նախատինք պիտի բլլայ։
6—Ահա †գեղ կրող անասուններուը՝ դէպ ի հարաւ,
Նեղութեան ու վիշտերու,
Մաւակ ու թմրած և առիւծ ու իժ,
Իժի ու կիպդ թեւաւոր օձի երկիրը [՝ԷրԲառ.
Իրենց սաացուածքը էշերու կռնակին վրայ,
Ու իրենց գանձերը ուղտի սապատին վրայ կը տանին
Այնպիսի ժողովուրդի մը՝ որ էրէնց օգուտ չունի։

*ԵԲԲ. սրբեն †ԵԲԲ. անասուններու բեռը

7—Եւ Եգիպտացիք պարապ ու զուր տեղ օգնութիւն կ'ընեն.
Անոր համար անոր Պ—ր—դ նստող պարծենկոտ կանչեցի։
8—Ուրեմն գնա, անոնց առջեւ տախտակի վրայ գրէ,
Եւ գիրքի մէջ դրոշմէ,
Որպէս զի գալու ժամանակին միայ
Յաւիտենական վկայութեան համար։
9—Քանզի տեսիլք ապստամբ ժողովուրդ մըն է.
Սուտաբոս տղաքներ են,
Որ՝ չկամին լսել Տէրոջը օրէնքը լսել չեն ուզեր։
10—Որոնք տեսանողներուն կ'ըսեն, Մի տեսնէք,
Ու մարգարէներուն՝ Մեզի համար ուղիղ բաներ մի մարգարեանաք.
Մեզի հաճոյքորթութիւնները խօսեցէք,
Խաբէութիւններ մարգարեացէք,
11—Ճամբայէն եւս քաշուեցէք,
Շաւիղէն խոտորեցէք,
Իսրայէլի Սուրբը մեր առջեւէն վերցուցէք։
12—Ուստի Իսրայէլի Սուրբը այսպէս կ'ըսէ.
Որովհետեւ դուք այս խօսքը անարգեցիք,
Եւ բռնութեան ու ծռութեան ապաւինեցաք,
Ու անոնց վրայ կռթնեցաք,
13—Ասոր համար այս անօրէնութիւնը
Բարձր պարիսպի մը ճեղքուածքին պէս պիտի ըլլայ ձեզի,
Որուն կործանումը յանկարծակի մէկ վայրկեանի մէջ կու գայ։
14—Եւ զանիկա բրուտներու սափորին կոտրուածքին պէս պիտի կոտրէ.
Պիտի փշրէ ու չխնայէ.
Եւ անոր կտորտանքներուն մէջ
Կրակարանէն կրակ առնելու
Կամ փոսէն ջուր հանելու կտոր մը պիտի չգտնուի։
15—Վասն զի Եհովա Տէրը, Իսրայէլի Սուրբը, այսպէս կ'ըսէ.
Դուք դառնալով ու հանգստանալով փրկութիւն կը գտնէք,
Ձեր զօրութիւնը հանդարտութեամբ ու ապահովութեամբ կ'ըլլայ.
Բայց դուք չուզեցիք,

16—Հապա ըսիք, Ոչ, ձի հեծնենք փախչինք.
Անոր համար պիտի փախչիք.
Արագընթաց չէիք՝— վրայ հեծնենք ըսիք,
Անոր համար ձեզ հալածողներն ալ արագընթաց պիտի ըլլան։
17—Մէկուն սպառնալիքովը հազարներդ,
Հինգին սպառնալիքովը՝ հինդ պիտի փախչիք.
Մինչև որ լեռան գլուխը սիւնի պես,
Ու բլուրի վրայ դրօշակի պես թողուիք։
18—Բայց Տէրը պիտի սպասէ որպէս զի ձեզի ողորմի.
Ու պիտի բարձրանայ որպէս զի ձեզի ողորմի.
Քանզի Տէրը արդար Աստուած մըն է.
Երանի՛ այն ամենուն որ անոր կը սպասեն։
19—Քանզի ժողովուրդը Սիոնի վրայ, Երուսաղէմի մէջ, պիտի բնակի.
Ալ բնաւ պիտի չլաս.
Քու աղաղակիդ ձայնը ելլելէն ետև շատով քեզի պիտի ողորմի,
Զանիկա լսածին պէս քեզի պատասխան պիտի տայ,
20—Թէև Տէրը ձեզի նեղութեան հաց ու տառապանքի ջուր տայ,
Քու ուսուցիչներդ մէկտեղ ալ պիտի չհեռանան,
Հապա քու աչքերդ քու ուսուցիչներդ պիտի տեսնեն,
21—Ու երբ աջ կողմը կամ ձախ կողմը խոտորելու ըլլաս,
Քու ականջներդ եետևէդ խօսք մը պիտի լսեն, որ կ'ըսէ,
Ահաւիկ է ճամբան, սոր մէջ քալեցէք։
22—Ա՛յն տեղն քու քանդակած արծաթի կուռքերուդ ծածկոցները Ու ձուլածոյ ոսկի կուռքերուդ զարդերը պիտի պղծես,
Զանոնք դաշտաւոր լաքի պէս պիտի նետես,
Անոնց ամէն մէկուն պիտի ըսես, Դուրսելիր։
23—Ու Տէրը քու սերմանած երկրիդ հունտերուն վրայ անձրև,
Ու երկրի արդիւնքին հաց պիտի տայ,
Ու առատ ու պարարտ պիտի ըլլայ.
Ա՛յն օրը քու խաչինդ ընդարձակ մարգի մէջ պիտի ճարակին։
24—Ու երկիրը գործող եզները ու էշերը
Թիով ու հեծանոցով հոսած
Մաքուր *կերակուր պիտի ուտեն։
25—Ու մեծ կոտորածին օրը
Ո՛ւ աշտարակներուն կործանման ատենը
Ամէն բարձր լեռան վրայ
Ու ամէն բարձրացած բլուրի վրայ
Գետեր ու ջուրի առուներ պիտի ըլլան։
26—Ու այն օրը որ Տէրը իր ժողովուրդին վէրքը պիտի պատէ,
Ու անոնց հարուածքին խոցը պիտի բժշկէ,
Լուսնին լոյսը արեւին լոյսին պես,
Ու արեւին լոյսը եօթնապատիկ աւելի,
Ու եօթը օրուան լոյսին չափ պիտի ըլլայ։
27—Ահա Տէրոջը անունը հեռուէն կու գայ,
Անոր բարկութիւնը կը վառի ու բոցը սաստիկ է.
Շրթունքները սրտմտութեամբ լեցուած են,
Ու լեզուն մաշող կրակի պէս է.
28—Ու անոր հոգին յորդահոս գետի պէս
Մինչև պարանոցը պիտի հասնի,
Որպէս զի ազգերը ունայնութեան մաղով մաղէ,
Ու ժողովուրդներուն կռկիը սանձ դնելով՝ ետևնին խոտորեցնէ։
29—Գուք սուրբ ծոլի մը գիշերուան պէս երգ պիտի ունենաք։
Ու խրոսկէլի Վէմին, Տէրոջը, լեռը երթալու համար
Սրինգով գացողի պէս սրտի ուրախութիւն պիտի ունենաք։
30—Ու Տէրը իր փառաւոր ձայնը լսել պիտի տայ,
Ու էր սաստիկ բարկութիւնովը և մաշող կրակին բոցովը,
Հեղեղով, փոթորիկով ու կարկտով քարերով
Իր †երկնցած բազուկը՝ պիտի ցուցնէ։
31—Վասն զի գաւազանով զարնող Աստուածնին
Տէրոջը ձայնէն պիտի ճնշուի։

*Կամ, չարաշած
†Եբր. բազուկին իջնելը

32—Ու որչափ գաւազանին ամէն *հարուածը,
Զոր Տէրը անոր վրայ պիտի դնէ,
Թմբուկներով ու փսալներով պիտի ըլլայ.
Ու անոր հետ ազիկներից պատերազմելով պիտի պատերազմի։
33—Քանզի Տոփեթ չատանցմէ պատրաստած է,
Անիկա ալ Թագաւորին համար պատրաստուեցաւ,
Ջոնէլ— խորանկցուց ու լայնցուց,
Անոր դէղը կրակ ու շատ փայտ է,
Զանիկա Տէրոջը չունչը ծծումբի հեղեղի պէս պիտի բռնկցնէ։

ԳԼ. ԼԱ

Վա՛յ անոնց որ օգնութեան համար Եգիպտոս կ'իջնեն,
Ու ձիերու կը վստահին և կառքերու կ'ապաւինին, որովհետև շատ են,
Ու ձիաւորներու՝ որովհետև խիստ †զօրաւոր են.
Ու Իսրայէլի Սրբին չեն նայիր,
Ո՛ւ Տէրը չեն փնտռեր։
2—Բայց անիկա ալ իմաստուն է, ու չարիք կը բերէ,
Ու իր խօսքերը ետ չդարձներ.
Ու չարերուն տունը դէմ,
Ու անօրէնութիւն գործողներուն օգնութեան դէմ կ'ելլէ։
3—Արդ եգիպտացիք մարդ են և ոչ թէ Աստուած.
Ու անոնց ձիերը մարմին են և ոչ թէ հոգի.
Ու երբ Տէրը իր ձեռքը երկնցնէ,
Թէ՛ օգնութիւն ընողը պիտի սահի,
Ու թէ՛ օգնութիւն գտնողը պիտի իյնայ.
Ու ամէնը մէկտեղ պիտի կորսուին։
4—Քանզի Տէրը ինծի այսպէս ըսաւ.
Զոր օրինակ առիւծը կամ կորիւնը իր որսին համար կը գոչէ,
Ու երբ հովիւներուն գունդը անոր վրայ կը ժողովին,
Անոնց ձայնէն չվախնար,
Ու անոնց աղաղակէն չվհատիր,
Այնպէս զօրաց Տէրը Սիօն լեռանը համար
Ու անոր բլուրին համար պատերազմելու պիտի իջնէ։
5—Ինչպէս թռչունները էրէնց յարկը կը ծածկեն,
Այնպէս զօրաց Տէրը երուսաղէմի պաշտպանութիւն պիտի ընէ.
Պիտի պաշտպանէ ու փրկէ զանիկա,
Պիտի †անցնի ու պիտի ազատէ։
6—Դուք այն Աստուածէն դարձէք,
Որմէ իսրայէլի զաւակները չարաչար ապստամբեցան,
7—Քանզի այն օրը ամէն մարդ մէկդի պիտի նետէ
Իր արծաթէ կռատքերը ու ոսկիէ կռատքերը,
Զորոնք ձեռքերնիդ չինեցին ձեզի մեղքի համար։
8—Ու Ասորեստանցին սրով պիտի իյնայ, բայց ոչ թէ մարդու սրով.
Հապա զանիկա ուրիշ սուր մը պիտի ուտէ, որ մարդու սուր չէ.
Ու անիկա սուրին երեսէն պիտի փախչի.
Ու անոր երիտասարդները հարկատու պիտի ըլլան։
9—Ու անիկա էր վախին պատճառաւ իր †բերդը պիտի անցնի.
Ու անոր իշխանները դրօշակին պիտի զարհուրին,
Կ'ըսէ Տէրը, որուն կրակը Սիօնի մէջ է,
Ու փուռը երուսաղէմի մէջ։

ԳԼ. ԼԲ

Ահա Թագաւոր մը արդարութեամբ պիտի Թագաւորէ,
Ու իշխանները իրաւունքով պիտի իշխեն։
2—Ու էայս մարդը՝ հովի դէմ դնող պատսպարանի պէս
Ու փոթորկի դէմ դնող ծածկոցի պէս,
Ջուր տեղ եզող ջուրի վտակներու պէս
Ու ծարաւած երկրի մէջ
Մեծ ապառաժի մը հովանիին պէս պիտի ըլլայ։
3—Ու տեսողներուն աչքերը պիտի չլուանան,
Ու լսողներուն ականջները մտիկ պիտի ընեն։

*Կամ, խնայէ †Կամ, բերդէն
‡Կամ, ամէն մէկը

4—Ու արտարացողներուն սիրտը գիտութիւն պիտի հասկնայ,
Եւ թոթովախօսներուն լեզուն
Յստակ խօսելու պատրաստ պիտի ըլլայ։
5—Անզգամին մէկ մը ալ ազնուական պիտի չըսուի,
Ու ագահին մէկ մը ալ առատաձեռն պիտի չըսուի.
6—Վասն զի անզգամը անզգամութիւն կը խօսի,
Ու անոր սիրտը անօրէնութիւն կը գործէ.
Կեղծաւորութիւն կ'ընէ, ու Տէրոջը վրայ սխալական խօսք կը խօսի.
Անօթիին հոգին ի դերև կը դրկէ,
Ու ծարաւածին խմելիքը կը հատցնէ։
7—Եւ ագահին *հնարքները չար են.
Անիկա սուտ խօսքերով ազգայնները կորնչացնելու համար
Նենգութիւններ կը խորհի,
Թէև անանկը արդարութեամբ խօսի։
8—Բայց ազնուական մարդը ազնիւ բաներ կը խորհի,
Ու ազնիւ բաներու վրայ հաստատուն կը մնայ։
9—Ով հանգիստ կիներ, ելէք,
Իմ ձայնս մտիկ ըրէք.
Ով անհոգ աղջիկներ,
Իմ խօսքիս ականջ տուէք։
10—Օրերով ու տարիներով խռովութեան մէջ պիտի ըլլաք
Ով անհոգ կիներ,
Քանզի այգեկութը կորսուեցաւ,
Հունձքի ժամանակ պիտի չգայ։
11—Ով հանգիստ կիներ, դողացէք.
Ով անհոգ կիներ, խռովութեան մէջ ինկէք.
Հանուեցէք ու մերկ եղէք,
Ու մէջքերնիդ †տոպրակ կապեցէք։
12—Ցանկալի արտերուն ու պտղաբեր որթին համար
†Կաթսթերնին պիտի ծեծեն՝
13—Իմ ժողովրդիս երկրին վրայ
Փուշ և ցախ պիտի բուսնի.
Նաև ամէն ուրախութեան տուներուն վրայ՝
Քերկրալի քաղաքին մէջ։
14—Թանկի պալատները երեսկ պիտի ձգուին,
Աղմկայոյզ քաղաքը պիտի թողուի,
Բերդերը ու պարիսպները յաւիտեան փայտերներ պիտի ըլլան,
Ջեռներու զուարճութեան համար ու խաշինքներու արօտ ըլլալու համար,
15—Մինչև որ վերէն մեր վրայ Հոգի թափուի,
Ու անապատը պտղաբեր արտի դառնայ,
Եւ պտղաբեր արտը անտառ համարուի,
16—Այն ատեն անապատին մէջ իրաւունք պիտի բնակի,
Ու պտղաբեր արտին մէջ արդարութիւն պիտի հանգչի.
17—Եւ արդարութեան գործը խաղաղութիւն,
Ու արդարութեան արդիւնքը հանգիստ ու ապահովութիւն պիտի ըլլայ յաւիտեան։
18—Եւ իմ ժողովրդս խաղաղաչափ բնակարանի մէջ,
Ու ապահով վրաններու մէջ,
Եւ հանգարտ հանգստութեան մէջ պիտի բնակի։
19—Բայց կարկուտ պիտի իջնէ անտառներն վրայ,
Ու քաղաքը բոլորովին պիտի խոնարհի։
20—Երանի՛ ձեզի, որ ամէն ջուրերու քով կը ցանէք,
Ու եզան և իշուն ոտքը հոն †կոխել կու տաք։

ԳԼ. ԼԳ

Վա՛յ քեզի, ով կործանող, որ դուն չկործանուեցար.
Ու Ե՛յ †եղէ, ով չափչպակող, որ քեզ չչափչպակեցին.
Երբ դուն կործանելը լմնցնես, քեզ պիտի կործանեն.
Երբ չափչպակելէն դադարես, քեզ պիտի չափչպակեն.
2—Ով Տէր, մեզի ողորմէ, քեզի կը յուսանք.
Ամէն առտու անոնց զօրութիւն եղիր,
Ու նեղութեան ժամանակ մեզի փրկութիւն եղիր։

*ՆԲԳ. կը զրկէք

†ՆԲԳ. Սահմանները։ Ուրիշ պիտի ոչ-քան

3—Ազմկին ձայնէն ժողովրդները կը փախչին,
Քու բարձրանալդ ազգերը կը ցրուին։
4—Ու ձեր ապարը Թրթուրին ժողվելուն պէս պիտի ժողվին.
Անոր վրայ՝ մարախներուն ցաթկելուն պէս պիտի ցաթկին։
5—Տէրը բարձրացած է, վասն զի բարձրերը կը բնակի.
Սիոնը իրաւունքով ու արդարութիւնով լեցուց։
6—Ու քու ժամանակներուդ հաստատութիւնը,
Ու փրկութեանդ զօրութիւնը իմաստութիւնն ու գիտութիւնն պիտի ըլլայ.
Տէրոջը վախը անոր գանձն է։
7—Ահա անոնց զօրաւորները դուրսը կ'աղաղակեն.
Խաղաղութեան դեսպանները դառնապէս կու լան։
8—Բանուկ ճամբաները ամայի եղան,
Ճամբայէն անցնող չմնաց.
Անիկա ուխտը ատեց, քաղաքները կ'անարգէ,
Մարդը բանի տեղ չսեպէ.
9—Երկիրը սուգ կը բանէ ու կը նաւաղի,
Լիբանան ամչցաւ ու թառամեցաւ,
Սարօն անապատի պէս եղաւ,
Ու Բասան ու Կարմէղոս կը թօթուեին։
10—Հիմա պիտի եղնեմ, կ'ըսէ Տէրը,
Հիմա պիտի փառաւորուիմ,
Հիմա պիտի բարձրանամ։
11—Դուք յղութով պիտի յղանաք ու մղեղ պիտի ծնանիք.
Ու ձեր *շունչը կրակի պէս ձեզ պիտի ուտէ։
12—Եւ ժողովրդները կիրի այրուելուն պէս պիտի ըլլան.
Անոնք կրակի մէջ կոտրած փուշերու պէս պիտի այրին։
13—Ով հեռու եղողներ, իմ գործս լսեցէք.
Ու, մօտ եղողներ, իմ զօրութիւնս գիտցէք։
14—Սիոնի մէջ մեղաւորները կը վախնան,
Երկչոտները դողը կը բռնէ։

*Կամ, Բարկութիւնս ոգին

3—Ով պիտի բնակի մաշող կրակին մէջ.
Մեզմէ ո՞վ պիտի բնակի յաւիտենական բոցերուն մէջ։
15—Արդարութեամբ քալողը և ուղղութիւն խօսողը,
Անիրաւութեան շահը մերժողը,
Կաշառք առնելէն ձեռքերը թօթվողը,
Արիւնահեղութեան խորհուրդը լսելու համար ականջները գոցողը,
Ու չարութիւնը չտեսնելու համար աչքերը գոցողը։
16—Անիկա բարձրերը պիտի բնակի,
Անոր բերդը ամուր վէմերու վրայ պիտի ըլլայ։
Անոր հաց պիտի արուի,
Ու անոր ջուրը անպակաս պիտի ըլլայ։
17—Քու աչքերդ թագաւորը իր վայելչութիւնովը պիտի տեսնեն,
Անոնք հեռաւոր երկիր պիտի նային։
18—Քու սիրտդ վախերը պիտի մտածէ.
Որո՞ւր է գրիչը, որո՞ւր է կշռողը,
Որո՞ւր է աշտարակները գրողը։
19—Դուն պիտի չտեսնես այն խիստ ժողովուրդը,
Դժուարիմաց ու անծանօթ լեզուս ունեցող ժողովուրդը,
Թոթովախօս ու անիմանալի լեզուով խօսողը։
20—Մեր տօնախմբութիւններուս քաղաքին, Սիոնի, նայէ.
Քու աչքերդ նրուսաղէմը պիտի տեսնեն,
Իբրև հանգիստ բնակարան մը ու չխախտուելու վրան մը.
Որուն ցիցերը յաւիտեան պիտի չպոկուին,
Ու չուանները բնաւ պիտի չկորչին։
21—Հոն փառաւորեալ Տէրը պիտի ըլլայ մեզի
Լայնատարած գետերու ու վտակներու տեղ,
Ուր թիաքարշ նաւ պիտի չմտնէ,
Եւ անկէ մեծ նաւ պիտի չանցնի.
22—Քանզի մեր դատաւորը Տէրն է,
Մեր օրէնսդիրը Տէրն է,
Մեր թագաւորը Տէրն է,
Անիկա մեզ պիտի ազատէ։
23—Քու չուանները թուլցան,
Իրենց կայմին խարիսխը չկրցան հաստատ բռնել,
Առագաստը չկրցան բանալ։

Այն ատեն մեծ ատ բաժնուեցաւ,
Մինչեւ անգամ կազիրը ատ առին։
21—Ու հոն բնակողը պիտի չըսէ Թէ հիւանդ եմ.
Հոն բնակող ժողովուրդին անօրինութիւնը պիտի Թողուի։

Գլ. ԼԻ

Ով ազգեր, մտածեցէք զայս զի լսէք,
Ով ժողովուրդներ, ականջ առէք.
Երկիր ու անոր լիութիւնը,
Աշխարհ ու անոր բոլոր *բնակիչները
Թող մեզի ընեն։
2—Վասն զի Տէրոջը բարկութիւնը ամէն ազգերուն վրայ,
Ու սրտմտութիւնը անոնց բոլոր զօրքերուն վրայ է.
Անիկա զանոնք նզովեց, զանոնք սպանդի մատնեց։
3—Ու անոնց սպաննուածները պիտի նետուին,
Ու անոնց դիակներէն գեշ հոտ պիտի ելլէ,
Ու անոնց արիւնէն լեռները պիտի հալին,
4—Ու երկինք բոլոր զօրքերը պիտի հալին,
Ու երկինք մագաղաթի պէս պիտի գալարի,
Ու անոր բոլոր զօրքերը վար պիտի թափին,
Ինչպէս տերեւը որթէն կը թափի,
Ու ինչպէս խո՛ւզը Թզենիէն կը թափի։
5—Քանզի իմ սուրս երկինքի մէջ արբեցած է.
Ահա անիկա Եդոմի վրայ ու իմ նզոված ժողովուրդիս վրայ
Դատաստան ընելո՛ պիտի իջնէ։
6—Տէրոջը սուրը արիւնով լիցուած է
Ո– ճարպով խզուած է.
Գառներուն և նոխազներուն արիւնովը
Ո– խոյերուն երկմաւնքներուն ճարպովը.
Քանզի Տէրը Բոսրայի մէջ զոհ ունի,
Ու Եդոմի երկրին մէջ մեծ սպանդ։
7—Ու անոնց հետ պիտի իյնան †մեզեղջերուները,
Ու զուարակները՝ ցուլերուն հետ.
Ու անոնց երկիրը արիւնով պիտի գինովնայ,
Ու անոնց հողը ճարպով պիտի պարարտանայ.
8—Քանզի Տէրոջը վրէժխնդրութեան օրը
Ո– Սիոնի վէճին համար հատուցման տարին է։
9—Ու անոր գետերը ձիւթի,
Ու հողը ծծմբի պիտի դառնան.
Ու անոր երկիրը վառած ձիւթ պիտի ըլլայ,
10—Գիշեր ու ցորեկ պիտի չմարի
Անոր ծուխը յաւիտան պիտի ելլէ.
Ու գարէ գար աւերակ պիտի մնայ
Յաւիտեան յաւիտենից անկէ անցնող պիտի չըլլայ։
11—Հապա զանիկա հաւալաւները ու ոզնիները պիտի ժառանգեն.
Ու հոն գոլհաւը ու ագռաւը պիտի բնակին.
Անոնք Տէրոջը փառքը,
Մեր Աստուծոյն վայելչութիւնը, պիտի տեսնեն։
3—Թուլցած ձեռքերը ուժովցուցէք,
Ու դողդոջուն ծունկերը զօրացուցէք.
4—Թո՛ւ լսոխրտներուն ըսէք,
Ուժովցէք, մի վախնաք.
Ահա ձեր Աստուածը վրէժխնդրութիւնով
Ո– Աստուծոյ հատուցումովը կու գայ.
Անիկա պիտի գայ ու ձեզ ազատէ.
5—Այն ատեն կոյրերուն աչքերը պիտի բացուին,
Ու խուլերուն ականջները պիտի բացուին։
6—Այն ատեն կաղը եղջերուի պէս պիտի ցատկըտէ,
Ու համրին լեզուն օրհնութիւն պիտի երգէ.
Քանզի անապատի մէջ ջուրեր
Ու անբնակ երկիրի մէջ հեղեղներ պիտի բղխին։
7—Ու խորշակահար երկիրը լիճի պիտի դառնայ,
Ու ծարաւուտ երկիրը ջուրի աղբիւրներ պիտի բղխէ.
Ու չաքալներուն պառկած բնակարանը եղէգի ու կնիւնի գալիք պիտի ըլլայ։

*Եբր. սերուածը
†Կամ, վայրենի ցուլերը

Մէկմէկուն ընկերը պակաս պիտի չըլլայ.
Վասն զի իր բերանը հրամայեր է,
Ու իր Հոգին պիտի ժողվէ զանոնք։
17—Ու ինքնանոց համար վիճակ ձգեր է,
Ու իր ձեռքը զանիկա լարով բաժներ է անոնց.
Զանիկա յաւիտան պիտի ժառանգեն,
Դարէ դար անոր մէջ պիտի բնակին։

Գլ. ԼԵ

Անապատը ու չոր երկիրը *պիտի ուրախանայ.
Ու անբնակ երկիրը պիտի ցնծայ, ու շուշանի պէս պիտի ծաղկի։
2—Անիկա բոլորովին պիտի ծաղկի,
Ու ցնծութեամբ ու երգերով պիտի ուրախանայ.
Անոր պիտի տրուի Լիբանանի փառքը,
Կարմելոսի ու Սարոնի վայելչութիւնը.
Անոնք Տէրոջը փառքը,
Մեր Աստուծոյն վայելչութիւնը, պիտի տեսնեն։
3—Թուլցած ձեռքերը ուժովցուցէք,
Ու դողդոջուն ծունկերը զօրացուցէք.
4—Թո՛ւ լսոխրտներուն ըսէք,
Ուժովցէք, մի վախնաք.
Ահա ձեր Աստուածը վրէժխնդրութիւնով
Ո– Աստուծոյ հատուցումովը կու գայ.
Անիկա պիտի գայ ու ձեզ ազատէ.
5—Այն ատեն կոյրերուն աչքերը պիտի բացուին,
Ու խուլերուն ականջները պիտի բացուին։
6—Այն ատեն կաղը եղջերուի պէս պիտի ցատկըտէ,
Ու համրին լեզուն օրհնութիւն պիտի երգէ.
Քանզի անապատի մէջ ջուրեր
Ու անբնակ երկիրի մէջ հեղեղներ պիտի բղխին։
7—Ու խորշակահար երկիրը լիճի պիտի դառնայ,
Ու ծարաւուտ երկիրը ջուրի աղբիւրներ պիտի բղխէ.
Ու չաքալներուն պառկած բնակարանը եղէգի ու կնիւնի գալիք պիտի ըլլայ։

*Կամ, անոնց համար պիտի

8—Ու հոն պողպատեայ ու ճամբայ պիտի ըլլայ,
Ու անիկա սուրբ ճամբայ պիտի ըսուի
Անկէ պիղծ մէ՛կը պիտի չանցնի,
Հապա անիկա անոնց համար պիտի ըլլայ.
Այն ճամբան մէջ քալողը՝ ու յիմարները սխալ պիտի չմոլորին։
9—Հոն առիւծ պիտի չըլլայ,
Ու անոր վրայ պատառող գազան պիտի չելլէ,
Ե– հոն պիտի չգտնուի,
Հապա փրկուածները հոն պիտի քալեն։
10—Ու Տէրոջը փրկածները պիտի դառնան,
Ու երգերով Սիօն պիտի գան,
Ու անոնց գլխուն վրայ յաւիտենական ուրախութիւն պիտի ըլլայ.
Անոնք ցնծութիւն և ուրախութիւն պիտի առնեն,
Ու տրտմութիւնը ու հեծութիւնը — Նռնդէ պիտի հեռանայ։

Գլ. ԼԶ

Ու եղաւ որ եզեկիա թագաւորին չորեքտասաներորդ տարին, Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը Յուդայի բոլոր պարսպաւոր քաղաքներուն վրայ եկաւ, ու զանոնք առաւ։ 2—Ու Ասորեստանի թագաւորը Իռիսակը չատ զօրքով Լաքիսէ Երուսաղէմ դրկեց Եզեկիա թագաւորին. ու անիկա Թափիչի ագարակին ճամբան եղող վերի աւազանին ջրմուղին վրայ կայնեցաւ։ 3—Ու Հեզկիայի որդին եղիակիմ, պալատին հազարապետը, ու Սեբնա տաճնագիրը ու յիշատակներու գրիչ Ասափի որդին Յովաք անոր ելան։
4—Ու Ռափսակ անոնց բսաւ, եզեկիայի ըսէք, Մեծ թագաւորը, Ասորեստանի թագաւորը, այսպէս կ'ըսէ. Ի՞նչ է այդ յոյսը՝ որու դուն կ'ապաւինիս։
5—Դուն ըսիր, պատերազմի համար խորհուրդ ու զօրութիւն ունիմ. բայց չըրթունքի խօսքեր են հիմա. ապաւինելով ինձմէ ապստամբեցար։ 6—Ահա դուն այն չոմչոմած եղէգէ ցուպին, Եգիպտոսի, ապա ինկեցար, որ եթէ անոր մարդ մը կռթնի՝ ձեռքը պիտի մտնէ ու զանիկա պիտի ծակէ. Եգիպտոսի Փարաւոն թագա-

ասրը բոլոր երկին ապատինդներուն այնպէս է։ 7—Բայց կը խնդրեմ թէ Մենք մեր եհովա Աստուծոյն կ'ապատինենք, ասիկա ան չէ՞ որուն բարձր սեղերը ու սեղանները Եզեկիա վերցուց, և Յուդայի ու Երուսաղէմի ըսաւ, Ա՛ջո՛ց այս սեղանին առջև երկրպագութիւն ըրէք։ 8—Ու հիմա իմ տէրոջս, Ասորեստանի Թագաւորին, *հետ հաշտուէ՛, ու քեզի երկու հազար ձի տամ, եթէ դուն կրնանեք անոնց վրայ հեծնողներ դնելու կարող ես։ 9—Ու իմ տէրոջս ամենէն պզտիկ ծառաներէն մէկի կռնակին ինչպէս կրնաս դէմ դնել, որ դուն կառքերու ու ձիերու համար Եգիպտոսի կ'ապաւինիս։ 10—Ու հիմա այս երկրին վրայ ոտքնօք ելայ՝ զայն հրոմարելո՞ւ համար։ Ինծի եհովա ըսաւ, Ա՛յն երկրին վրայ ելլէ ու զայն աւրէ։

11—Ու Եղիակիմ և Սերնա ու Յովաք Խափսակի ըսին, Ծնորհք ըրէ, քու ծառաներուդ հետ Ասորերէն խօսէ, քանզի մենք կը հասկնանք, ու մեզի հետ Եբրայեցերէն մի խօսիր որ պարսպին վրայ եղող ժողովուրդը լսէ։ 12—Բայց Խափսակ ըսաւ, Մի՞թէ այս խօսքերը խօսելու համար իմ տէրս ձիս քու տէրոջդ ու քեզի՞ դ-ո՞ղ ղրկեց։ չէ՞ որ այս մարդոց ա՛լ որոնք պարսպին վրայ կը նստին ձեզի հետ իրենց ապրը ուտելու ու իրենց մէզը խմելու։

13—Ու Խափսակ ոտք եղաւ, ու մեծ ձայնով մը Եբրայեցերէն ազազակեց ու ըսաւ, Մեծ Թագաւորին, Ասորեստանի Թագաւորին, խօսքերը մեզի ըրէք։ 14—Թագաւորը այսպէս կ'ըսէ. Եզեկիա ձեզ չխաբէ, քանզի անկիա չկրնար ձեզ ազատել։ 15—Ու Եզեկիա ձեզ եհովայի վստահացնէ՝ ըսելով, եհովա մեզ անչուշտ պիտի ազատէ, ա՛ռ այս քաղաքը Ասորեստանի Թագաւորին ձեռքը պիտի չտրուի։ 16—Եզեկիայի մեզի մի ընդ-ք, քանզի Ասորեստանի Թագաւորը այսպէս կ'ըսէ. Ինծի հետ հաշտութիւն ըրէք ու ինծի ելէք. և ամէն մարդ իր թզենիէն ուտէ, և ամէն մարդ իր ջրհորին չուրէն խմէ, 17—Մինչև ես գամ, ու ձեզ ձեր երկրին պէս երկիր մը, ցորեան ու գինիի երկիր մը, հացի ու այգիներու երկիր մը, ատենիտ։ 18—Զրկայ որ Եզեկիա ձեզ գլխէ հանէ՝ ըսելով, եհովա մեզ պիտի ազատէ։ Միթէ ազգերուն աստուածները Ասորեստանի Թագաւորին ձեռքէն՝ ամէն մէկը իր երկիրը ազատե՞ց։ 19—Եմաթի ու Արփադի աստուածները ա՞ր են. Սեփարուիմի աստուածները ա՞ր են. Ինծի անոնք Սամարիան իմ ձեռքէս ազատե՞ցին։ 20—Այս երկիրներուն ամէն աստուածներէն ո՞րը իր երկիրը իմ ձեռքէս ազատեց, որ եհովա Երուսաղէմը իմ ձեռքէս ազատէ։ 21—Ու անոնք լռեցան և ոչնոր ոչնեղին պատասխան մը չտուին. քանզի Թագաւորը հրամայեր էր՝ ըսելով, Ո՛նոր պատասխան մի տաք։

22—Ու Քեղկիայի որդին Եղիակիմ, պալատին հազարապետը, և Սերնա անդնադպիրը ու յիշատակներու գրիչ Ասոփի որդին Յովաք հանդերձներն պատռած՝ Եզեկիայի գացին, ու Խափսակի խօսքերը անոր պատմեցին։

ԳԼ. ԼԷ

Ու երբ Եզեկիա Թագաւորը լսեց, իր հանդերձները պատռեց ու քուրձ հագաւ, և Տէրոջը տունը մտաւ. 2—Ու Եղիակիմ, պալատին հազարապետը, և Սերնա տանդնադպիրը ու քահանաներուն ծերերը քուրձ հագած՝ Ամոսի որդւոյն Եսայի մարգարէին ղրկեց։ 3—Ու անոր ըսին, Եզեկիա այսպէս կ'ըսէ. Այսօր նեղութեան, կշտամբանքի ու նախատինքի օր է. քանզի ազգերը մինչև ծննդեան վայրկեանը հասան, բայց ծննդեան այժ չկայ։ 4—Գուցէ է որ քու Տէր Աստուածդ Խափսակի խօսքերը լսէ, զոր իր տէրը, Ասորեստանի Թագաւորը, ղրկեց կենդանի Աստուածը նախատելու համար, ու քու Տէր Աստուածդ այն իր լսած խօսքերուն համար յանդիմանութիւն տայ. ուրեմն դուն գտնուող մնացորդին համար աղօթք ըրէ։ 5—Ու եզեկիա Թագաւորին ծառաները Եսայեի գացին։ 6—Ու Եսայի անոնց ըսաւ, Ձեր տէրոջը այսպէս ըսէք.

*Կամ, պատանդ տուը
†Կամ, Քաղդէացիներն

Տէրը այսպէս կ'ըսէ. Մի վախնար այն լսած խօսքերէդ, որոնցմով Ասորեստանի Թագաւորին ծառաները պիս հայհոյեցին։ 7—Ահա ես անոր վրայ ոգի մը կը ղրկեմ, ու լուր մը լսելով՝ իր երկիրը պիտի դառնայ, ու զանիկա իր երկրին մէջ սրով պիտի կործանեմ։

8—Ու Խափսակ դարձաւ, ու Ասորեստանի Թագաւորը գտաւ որ Լիբնային հետ կը պատերազմէր, վասն զի լսած էր որ Լաքիսէ չուեր է։ 9—Ու Սենեքերիմ եթէովպացւոց Թարակա Թագաւորին համար լսեց որ կ'ըսէին, Ահա անիկա քեզի հետ պատերազմելու ելեր է. Ու երբ ասիկա լսեց, եղեկիայի դեսպանները ղրկեց՝ ըսելով, 10—Յուդայի Եզեկիա Թագաւորին այսպէս խօսիք ու ըսէք. Այն քու Աստուածդ, որու դուն ապաւինիր ես, Թող քեզ չխաբէ՝ ըսելով, Երուսաղէմ Ասորեստանի Թագաւորին ձեռքը պիտի չտրուի։ 11—Ահա դուն լսեցիր ինչ որ Ասորեստանի Թագաւորները բոլոր երկիրներուն ըրին, ու ինչպէս զանոնք բոլորովին կործանեցին, ու հո՞ն դո՞ւն պիտի ազատիս։ 12—Միթէ իմ հայրերուս կործանած ազգերուն, այսինքն Գովզանի, Խառանի, Ռեսեփի ու Թէլասարի մէջ եղող Եդեմի որդիներուն աստուածները զանոնք ազատեցի՞ն։ 13—Ո՞ւր է Եմաթի Թագաւորը ու Արփադի Թագաւորը, ու Սեփարուիմ քաղաքին, Անոսի, և Աւայի Թագաւորը։

14—Ու Եզեկիա նամակը դեսպաններուն ձեռքէն առաւ ու զանիկա կարդաց, և Տէրոջը տունը եկաւ. ու եզեկիա Տէրոջը առջև *բացաւ զանիկա։ 15—Ու Եզեկիա Տէրոջը առջև աղօթք ըրաւ, ու ըսաւ, 16—Ով Տէր զօրութեանց, Աստուած Իսրայէլի, որ փերովբէներուն վրայ կը նստիս, երկրի ամէն Թագաւորութիւններուն վրայ Աստուած միայն դուն ես. երկինքը ու երկիրը դուն ստեղծեցիր։ 17—Ով Տէր, ականջդ խոնարհեցուր ու լո՛ւր. ով Տէր, աչքերդ բաց ու նայէ, և լո՛ւր Սենեքերիմի բոլոր խօսքերը, զորոնք ղրկեց կենդանի Աստուածը նախատելու համար։ 18—Ով Տէր, իրաւցնէ Ասորեստանի Թագաւորները բոլոր †ազգերը ու անոնց երկիրը աւերեցին, 19—Ու անոնց աստուածները կրակի տուին. վասն զի անոնք Աստուած չէին, հապա մարդու ձեռագործ, փայտ ու քար, էին. անոր համար զանոնք կորնցուցին։ 20—Ու հիմա դուն, ով Տէր Աստուած մեր, ազատէ մեզ անոր ձեռքէն, որպէս զի երկրի բոլոր Թագաւորութիւնները գիտնան որ Տէրը միայն դուն ես։

21—Ու Ամոսի որդին Եսայի եզեկիայի ղ-ր-ր ղրկեց ըսելով, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Որովհետև Ասորեստանի Սենեքերիմ Թագաւորին համար աղօթք ըրիր ինծի, 22—Անոր վրայով Տէրոջը բան խօսքը այս է.

Սիօնի կոյս աղջիկը քեզ անարգեց, քեզ ծաղր ըրաւ,
Երուսաղէմի աղջիկը քու եռեւեդ գլուխ շարժեց։

23—Դուն ո՞վ նախատեցիր ու հայհոյեցիր,
Ու որո՞ւ վրայ ձայնդ վերցուցիր,
Ես աչքերդ Իսրայէլի Սուրբին դէմ վեր վերցուցիր։

24—Քու ծառաներուդ ձեռքով Տէրը նախատելով՝ ըսիր,
Իմ կառքերուս չատութիւնովը լեռներուն բարձրութիւնը,
Լիբանանու փովերը, ելայ,
Ու անոր բարձր եղեւինները
Ես ընիր մայրերը †պիտի կտրեմ՝.
Ու անոր խիտ բարձր ծայրը,
Անոր Կարմելոսի անտառը, ‡պիտի մնեմ։

25—Ես փորեցի ու խմեցի,
Ու պաշարուած տեղերուն բոլոր գետերը
Ոտքերուս թաթովը ցամքեցուցի։

26—Միթէ լսած չէ՞ս որ ասիկա չատոնցմէ ես չինեցի,
Ու առաջուան օրերէն ի վեր ձեւակերպեցի.
Հիմա հասուցի,
Որպէս զի դուն պարսպաւոր քաղաքները աւերակի հողակոյտներու դարձնես։

*Եբր. երկիրները †Կամ, կոթեցի
‡Կամ, մատ

*Կամ, տարածեց

27—Ուստի անոնց բնակիչներուն ձեռքը կարճ ըլլալուն համար
Զարհուրեցան ու ամչցան.
Անոնք դաշտի խոտ և կանանչ բանջար ի՛ր պէս,
Ո՛ տանիքի խոտ պէս,
Ու դեռ չհասած ու խոշտակին զարնուած հունձքի պէս եղան։
28—Բայց ես քու բնակութիւնդ, ելլելդ ու մտնելդ,
Ու քու ինծի ունեցած սրտմտութիւնդ գիտեմ։
29-Որովհետև ինծի ունեցած սրտմտութիւնդ
Ու քու ամբարտաւանութիւնդ իմականջներս եկաւ,
Ես ալ իմ կարթս քու քիթդ և իմ սանձս քու բերանդ պիտի դնեմ,
Ու քու եկած ճամբայդէդ քեզ կոս պիտի դարձնեմ։
30—Ես ասիկա քեզի նշան ըլլայ.
Այս տարի ինքնիրմէ բուսածը
Ու երկրորդ տարին ինկած հասկերէն բուսածը պիտի ուտէք.
Ու երրորդ տարին ցանեցէք ու հնձեցէք,
Ես այգիներ տնկեցէք ու անոնց պտուղը կերէք։
31—Ես Յուդայի տանը ազատուած մնացորդը
Վարէն արմատ պիտի արձակէ,
Ու վերէն պտուղ պիտի տայ։
32—Քանզի Երուսաղէմէ մնացորդ
Ու Սիոն լեռնէն ազատուած պիտի ելլէ.
Այսիա զօրաց Տէրոջը նախանձը պիտի ընէ։
33—Ասոր համար Ասորեստանի թագաւորին վրայով Տէրը այսպէս կ'ըսէ.
Անիկա այս քաղաքը պիտի չմտնէ,
Ու անոր նետ պիտի չձգէ,
Ես անոր առջև վահանով պիտի չգայ,
Ու անոր դէմ պատնէշ պիտի չշանդնէ.
34—Իր եկած ճամբայէն ետ պիտի դառնայ,
Ու այս քաղաքը պիտի չմտնէ, կ'ըսէ Տէրը։
35—Ես այս քաղաքը պիտի պաշտպանեմ ու զանիկա ազատեմ,
Ինծի համար ու իմ ծառային Դաւիթի համար։

36—Ու Տէրոջը հրեշտակը ելաւ, և Ասորեստանի բանակին մէջ հարիւր ութսունըհինգ հազար մարդ զարկաւ. ու երբ առաւօտուն կանուխ եղան, ահա անոնց ամէնը մեռած մարմիններ էին։
37—Ես Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը չուեց գնաց, ու դարձաւ Նինուէի մէջ նստաւ։ 38—Ու երբ անիկա իր աստուծոյն Նեսրոքի տանը մէջ երկրպագութիւն կ'ընէր, անոր որդիները Ադրամելէք ու Սարասար զանիկա սրով զարկին, ու Արարատի երկիրը փախան. և անոր տեղ անոր որդին Եսարդան թագաւոր եղաւ։

Գլ. ԼՐ

Այն օրերը եզեկիա մահուան տագնաւն հիւանդացաւ։ Ու Ամոսի որդին Եսայի մարգարէն անոր եկաւ, ու անոր ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Տանդ համար պատուէր տուր, քանզի դուն պիտի մեռնիս ես ու պիտի չապրիս։ 2—Ու եզեկիա իր երեսը պատին դարձուց, ու Տէրոջը աղօթք ըրաւ, 3—Ու ըսաւ, Ով Տէր, կ'աղաչեմ, քու առջեւդ ճշմարտութեամբ ու կատարեալ սրտով քալելս, և քու աչքիդ առջև բարի եղածը ընելս յիշէ. ու եզեկիա մեծ լացով մը լացաւ։

4—Ու Տէրոջը խօսքը եղաւ Եսայիի՝ ըսելով, 5—Գնա եզեկիայի ըսէ, Քու հօրդ Դաւիթի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Քու աղօթքդ լսեցի, քու արտասուքդ տեսայ. ահա ես քու օրերուդ վրայ տասնըհինգ տարի պիտի աւելցնեմ։
6—Ու քեզ ու այս քաղաքը Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ, և այս քաղաքին պաշտպանութիւն պիտի ընեմ։ 7—Ու ասիկա քեզի Տէրոջմէն նշան ըլլայ, թէ Տէրը այս իր բուած խօսքը պիտի կատարէ։ 8—Ահա աստիճանը Ահազի արեւու ժամացոյցին վրայ իջած աստիճաններէն տասը աստիճան ետ պիտի դարձնեմ. ու արեւը իջած աստիճաններէն տասը աստիճան ետ դարձաւ։

9—Այս է Յուդայի եզեկիա թագաւորին գրածը, որ իր հիւանդանալուն ու հիւանդութենէն ելլելուն առեն գրէց.

10—Ես ըսի, իմ օրերուս *հանգիստ ժամանակին՝ մէկ
Դերեզմանին դռները պիտի երթամ.
Մնացած տարիներէս զրկուեցայ։
11—Ըսի թէ Տէրը պիտի չտեսնեմ,
Տէրը պէտ չէ՛ր կենդանիներուն երկրին մէջ.
Ես մարդ աշխարհին բնակիչներուն հետ ըլլալով,
Ալ մարդ պիտի չտեսնեմ։
12—Իմ †բնակս կը չուէ,
Ու հովիւներուն տաղաւարին պէս ինծմէ կը փոխադրուի.
Իմ կեանքս կարելի ոսկեայ հանկի պէս Աաւէնեն կը կտրէ.
Ցորեկուընէ մինչև գիշեր պիտի լմնցնես։
13—Մինչև առաւօտ սպասեցի.
Առիւծի պէս բոլոր ոսկորներս կը կոտրէ.
Ցորեկուընէ մինչև գիշեր պիտի լմնցնես։
14—Կռունկի պէս կամ ծիծեռնիկի պէս ճռէի,
Աղաւնիի պէս կը հեծէի.
Վեր դէպ երկինք աչքերս տկարացան.
Ով Տէր, ասպնջական մէկ եմ, ինծի ձեռնտու եղիր։
15—Ի՞նչ ըսեմ. ինք ինծի խօսեցաւ ու ինք կատարեց.
Իմ բոլոր տարիներուս մէջ
Հոգւոյս այս ցաւին համար կամաց պիտի քալեմ։
16—Ով Տէր, մարդիկ ասոնցմով կ'ապրին,
Ու իմ հոգւոյս կեանքը ասոնց ամէնուն է,
Ես դուն բժշկեցիր ու ապրեցուցիր։
17—Ահա խաղաղութեան տեղ մեծ դառնութիւն եղա— ինծի.
Բայց դուն իմ հոգիս սիրեցիր, ո՛ւ ապականութենէն գուբէն էքսէիր.
Վասն զի բոլոր մեղքերս կռնակիդ տեսար նետեցիր։
18—Քանզի գերեզմանը քեզ չկրնար օրհնել,
Մահը քեզի փառք չկրնար տալ.
Գուբը իջնողները քու ճշմարտութեանդ չեն կրնար յուսալ։
19—Ապրողը, ապրողը քեզ պիտի օրհնէ,
Ինչպես ես այսօր կ'ընեմ.
Քու ճշմարտութիւնդ հայրը իր որդիներուն պիտի գիտցնէ։
20—Տէրը իմ փրկութիւնս եղաւ.
Անոր համար մեր կեանքին բոլոր օրերուն մէջ,
Իմ օրհնութիւններս Տէրոջը տանը մէջ
Լար ունեցող նուագարաններով պիտի երգենք։
21—Վասն զի Եսայի ըսեր էր, Զոր թուզը առնեն, մանրեն ու վէրքին վրայ դնեն, և պիտի առողջանայ 22—Ու եզեկիա ըսեր էր, Տէրոջը տունը ելլելուս նշանը ի՞նչ ըլլայ։

Գլ. ԼԹ

Այն առեն Բաբելոնի թագաւորը, Բաղադանի որդին Մարովդաք-բաղադան, նամակներ ու ընծաներ զրկեց եզեկիայի, քանզի անոր հիւանդացածը և առողջանալը լսեր էր։ 2—Ու եզեկիա անոնց վրայ ուրախացաւ, և իր թանկագին բաներուն տունը, արծաթը ու ոսկին, ու խունկերը և պատուական իւղը, ու իր զէնքերուն բոլոր տունը և իր գանձերուն մէջ բոլոր գտնուածը ցուցուց ու իր տանը մէջ և իր բոլոր տէրութեանը մէջ բան մը չմնաց, զոր եզեկիա անոնց չցուցնէ։
3—Ու Եսայի մարգարէն եզեկիա թագաւորին եկաւ, ու անոր ըսաւ, Այդ մարդիկը ինչ ըսին, և ուրկէ՞ եկան քեզի. ու եզեկիա ըսաւ, Ինծի հեռու տեղէ, Բաբելոնէ, եկան։ 4—Ու անիկա ըսաւ, Քու տանդ մէջ ի՞նչ տեսան. ու եզեկիա ըսաւ, Տանս մէջ ինչ որ կայ՝ տեսան, ու գանձերուս մէջ անոնց չցուցուցած բանս չմնաց։ 5—Այն առեն Եսայի եզեկիայի ըսաւ, Զօրաց Տէրոջը խօսքը մտիկ ըրէ. 6—Ահա օրեր կու գան՝ որ քու տանդ մէջ ինչ որ կայ, ու քու հայրերդ մինչև այսօր ինչ որ ժողվեցին, Բաբելոն պիտի տարուին, բան մը պիտի չմնայ, կ'ըսէ Տէրը. 7—Ու քեզմէ ելլելու՝ քու ծնանելու որդիներէդ պիտի առնեն, և անոնք Բաբելոնի թագաւորին պալատին մէջ ներքինիներ պիտի ըլլան։ 8—Ու եզեկիա Եսայիի ըսաւ, Տէրոջը խօսքը զոր գուն ըսիր,

*Կամ, կէսին †Կամ, բնակարանս

բարի է. Նաև բան՝ Արամհաև իմ ա-
ծերաս մէջ խաղաղութիւն ու ապահո-
վութիւն պիտի ըլլայ։

Գլ. Խ

Մխիթարեցէք, մխիթարեցէք իմ
ժողովուրդս,
կ'ըսէ ձեր Աստուածը.
2—Երուսաղէմի քաղցրութեամբ խօսե-
ցէք,
ու անոր կանչեցէք՝ որ անոր պատե-
րազմելու ժամանակը լրացաւ,
Եւ անոր անօրէնութիւնը թողուեցաւ.
Քանզի իր բոլոր մեղքերուն համար
Տէրոջը ձեռքէն կրկին հարուածներ առաւ։
3—*Անապատին մէջ կանչողին ձայնը,
Տէրոջը՝ ճամբան պատրաստեցէք,
ու ամայութեան մէջ մեր Աստուծոյն
համար շաւիղ շիակեցէք։
4—Ամէն ձոր պիտի բարձրանայ,
Եւ ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ,
ու ծռաւոր պիտի չիակուի,
Եւ խորաւարտ տեղերը հաւասար պի-
տի ըլլան.
5—Ու Տէրոջը փառքը պիտի յայտնուի,
Եւ ամէն մարմին մէկտեղ զայն† պիտի
տեսնէ.
Քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ։
6—Ձայն մը ըսաւ, կանչէ.
Ու †անոնք բաւ՝, Ի՞նչ կանչեմ.
Ամէն մարմին խոտ է,
Ու անոր բոլոր վայելչութիւնը դաշտի
ծաղիկին պէս է։
7—Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թա-
ռամի,
երբ անոր վրայ Տէրոջը հովը կը փչէ.
Իրաւցընէ ժողովուրդը խոտ է։
8—Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թա-
ռամի,
Բայց մեր Աստուծոյն խօսքը յաւի-
տեան պիտի մնայ։
9—Ելիր բարձր լեռան վրայ,
Ով գուն, որ Սիոնի աւետիս կը բերես.
Քու ձայնդ ուժով բարձրացուր,
Ով գուն, որ Երուսաղէմի աւետիս կը
բերես.
Բարձրացուր, մի վախնար.
Ցուդային քաղաքներուն ըսէ, Ահա ձեր
Աստուածը։
10—Ահա Տէր Եհովա զօրութեամբ պի-
տի գայ,
Ու անոր բազուկը իրեն համար պիտի
իշխէ.
Ահա իր վարձքը իրեն հետ է,
Ու գործերու հատուցումը իր առջև է։
11—Անիկա հովուի պէս իր հօտը պիտի
հովուէ.
Գառնուկները իր բազուկովը պիտի ժող-
վէ,
Ու՝ գրկեն† իր գիրկին մէջ պիտի կրէ,
Եւ ծիծ տուողները կամաց պիտի փչէ։
12—Ո՞վ իր ափով ջուրերը չափեց,
Ու թիզով երկինքը ծրագրեց,
Ու երկրի հողը չափի մէջ ամփոփեց,
Ու լեռները կշռադրով,
Ու բլուրները կշռաքով կշռեց։
13—Ո՞վ ճանչց Տէրոջը Հոգին,
Ու անոր խորհրդակից ըլլալով՝ խելա-
մուտ ըրաւ զանիկա։
14—Անիկա որո՞ւ խորհուրդ հարցուց,
Եւ ո՞վ անոր խնամատարութիւն տուաւ,
Ու գատաստանի ճամբան սորվեցուց,
Ո՞վ անոր գիտութիւն սորվեցուց,
Ու խնամատարութեան ճամբան գիտցուց։
15—Ահա ազգերը դոյլին կաթիլի պէս են,
Ու կշռադրի մէջի մանր փոշիին պէս կը
սեպուին.
Ահա կղզիները *չրաւած փոշիի պէս են՝
16—Ու Լիբանան կրակի համար բաւա-
կան չէ,
Ու անոր անասունները ողջակէզի համար
բաւական չեն։
17—Ամէն ազգերը անոնց առջև ոչինչի
պէս,
Ո՛ոչինչին պահաս և ունայնութիւն կը
սեպուին։
18—Ու՞մի գոլ զԱստուած որո՞ւ
կը նմանցնէք,
Ու զանիկա ի՞նչ նմանութեան հետ կը
հաւասարցնէք։
19—Արուեստաւորը կը ձուլէ կուռքը,
Ու ոսկերիչը զանիկա ոսկիով կը պատ-
է,
Եւ՝ անոր արծաթէ չղթաներ կը չինէ.
20—Այն ազքատը որ չկրնար դեղա-
նուէրներ ընել,
Անմիտ փայտ կ'ընտրէ,
Իրեն նվաստացուցիչ կը փնտռէ,
Որպէս զի անշարժ կուռք մը չինէ։
21—Միթէ չգիտցա՞ք, չլսեցի՞ք,
Չեզի առաջին ըլլալ ցուցած չե՞ք,
Երկրի հիմնադրութենէն չհասկցա՞ք։
22—Նա՛ է երկրի շրջանին վրայ նստողը,
Ու անոր բնակիչները մարախներու պես
են.
Նա՛ է երկինքը վարագուրի պէս տա-
րածողը,
Ու նստելու համար զանիկա վրանի պես
կանգնողը.
23—Նա՛ է իշխանները բնաջինջ ընողը,
Ու երկրի դատաւորները ոչնչացնողը։
24—Անոնք դեռ չնկուած, չցանուած,
Եւ անոնց բունը հողի մէջ չարմատացած,
Անիկա անոնց վրայ կը փչէ, ու անոնք
կը չորնան.
Եւ փոթորիկը զանոնք մղեղի պէս կը
տանի։
25—Արդ որո՞ւ կը նմանցնէք զիս,
Որ ես անոր հաւասար ըլլամ, կ'ըսէ
Սուրբը։
26—Աչքերնիդ վեր վերցուցէք ու նա-
յեցէք,
Ատանք ո՞վ ասոնց ձգեց.
Անիկա անոնց զօրքը համրանքով կը
հանէ,
Անոնց ամէնը իրենց անուններով կը կոչէ.
Իր մեծ իշխանութիւնովը ու սաստիկ զո-
րութիւնովը
Անոնցմէ բնաւ մէկը կառ չմնար։
27—Ով Յակոբ, ինչո՞ւ կ'ըսես,
Ու, ով Իսրայէլ, ինչո՞ւ կը զրուցես քէ-
իմ ճամբաս Տէրոջմէ ծածկուեցաւ,
Եւ իմ իրաւունքս իմ Աստուծմէս
զանց եղաւ,
28—Միթէ չգիտցա՞ր կամ չլսեցի՞ր
Որ յաւիտենական Աստուածը Եհովա,
Երկրի ծայրերուն Ստեղծիչը,
Չյոգնիր ու չվհատիր.
Անոր իմաստութիւնը չքննուիր։
29—Անիկա է յոգնածին ոյժ տուողը,
Ու կարողութիւն չունեցողին չատ զօրու-
թիւն հասցնողը։
30—Երիտասարդները անգամ պիտի
յոգնին ու թուլնան,
Եւ ընտիր կոլիճները բոլորովին պիտի
իյնան.
31—Բայց Տէրոջը ապաքինողներուն ոյժը
պիտի նորոգուի
Ե՛ անոնք արծիւներու պէս †թեւերով
վեր պիտի ելլեն՝
Պիտի վազեն ու չվհատին,
Պիտի քալեն ու չյոգնին։

Գլ. ԽԱ

Ով կղզիներ, իմ առջևս լուռ կեցէք,
Ու ժողովուրդները էրէնց ոյժը նորոգեն,
Մօտենան ե՛ւ այն ատեն խօսին.
Միասին դատաստանի մօտենանք։
2—Ո՞վ ոտք հանեց արդարը արեւել-
քէն,
Ու զանիկա իր շաւիղներուն կանչեց,
Ազգերը անոր առջև դրաւ,
Ու թագաւորներու վրայ զայն տիրել
տուաւ.
Զանոնք փոշիի պէս դրաւ անոր սուրին
առջև,
Ու հոզմակոծ մղեղի պէս՝ անոր աղեղին
առջև։
3—Զանոնք հալածեց և խաղաղութեամբ
անցաւ
Այնպիսի ճամբայէ մը՝ ուր բնաւ իր ոտքը
կոխած չէր։
4—Ո՞վ է ասիկա գործեց ու ընողը,
Ո՛ր չրչանները սկիզբէն կանչողը.
Ես Տէրս, որ առաջինն է,
Ու վերջիններուն հետ եմ։
5—Կղզիները տեսան ու վախցան,
Երկրի ծայրերը դողացին,
Անոնք մօտեցան ու եկան.
6—Անոնց ամէն մէկը իր ընկերին օգ-
նութիւն ըրաւ,
Ու ան՝ ըսաւ իր եղբօրը Զօրացիր՝ ըսաւ,
7—Ու արուեստաւորը ոսկերիչին,
Ու զայն չեկոցը սալի վրայ զարնողին
սիրտ կու տայ,
Ու կ'ըսէ, Ասիկա կպցնելու համար ա-
ղեկ է.
Ու զանիկա գամերով կը գամէ, որպէս
զի չշարժի։

*կամ, Ձայն մը կը կանչէ. Անապա-
տին մէջ Տէրոջը †կամ, Ես ըսի

*կամ, կը վերցնէ փոշիի պէս

*կամ, Նորափետուր պիտի զարդա-
ուին

8—Բայց դուն, ով իմ ծառաս Իսրայէլ,
Իմ ընտրեալս Յակոբ,
Իմ սիրելիս Աբրահամի սերունդը,
9—Զոր երկրի ծայրերէն առի,
Եւ քեզ անոր ազնիւներէն կանչեցի,
Եւ քեզի ըսի, Դուն իմ ծառաս ես,
Քեզ ընտրեցի ու քեզ չմերժեցի.
10-Մի վախնար, քանզի ես քեզի հետ եմ.
Մի զարհուրիր, վասն զի ես քու Աստուածդ եմ
Քեզ պիտի զօրացնեմ և քեզի օգնութիւն պիտի ընեմ,
Ու իմ արդարութեանս աջովը քեզ պիտի բռնեմ։
11—Ահա քեզի դէմ ամէն բարկացողները
Պիտի ամչնան ու պիտի պատկառին.
Ու քեզի հետ վիճող մարդիկը
Չեղածի պէս պիտի ըլլան ու պիտի կորսուին։
12—Քեզի հետ կռուող մարդիկը
Պիտի փնտռես ու պիտի չգտնես.
Քեզի հետ պատերազմ ընող մարդիկը
Չեղածի պէս ու ոչինչի պէս պիտի ըլլան։
13—Քանզի ես քու Տէր Աստուածդ եմ,
Որ քու աջ ձեռքդէդ կը բռնեմ, — քեզի կ'ըսեմ,
Մի վախնար, ես քեզի օգնութիւն կ'ընեմ։
14—Ով Յակոբի որդը, մի վախնար,
Ով Իսրայէլի մահկանացուները,
Քեզի պիտի օգնեմ, կ'ըսէ Տէրը
Ու Իսրայէլի Սուրբը, քու Փրկիչդ։
15—Ահա ես քեզ նոր, սուր և սատար հաւար կամնասայլի պէս պիտի ընեմ.
Լեռները պիտի մանրես ու փշրես,
Ու բլուրները մրեզի պիտի դարձնես.
16—Զանոնք պիտի հռնես, ու հովը զանոնք պիտի տանի,
Ու փոթորիկը զանոնք պիտի ցրուէ.
Ու դուն Տէրոջմով պիտի ցնծաս,
Իսրայէլի Սուրբովը պիտի պարծենաս։
17—Աղքատներըը ու անտէրներըը ջուր կը փնտռեն, բայց չկայ.
Անոնց լեզուն ծարաւէն չորցեր է.
Ես Տէրս անոնց Ընդդիմածէը պիտի լսեմ,
Ես՝ Իսրայէլի Աստուածը, զանոնք երեսէ պիտի չձգեմ,
18—Բարձր տեղերու վրայ գետեր,
Ու հովիտներու մէջ աղբիւրներ պիտի բանամ
Անապատը ջուրի լիճ՝
Ու չոր երկիրը ջուրի աղբիւրներու պիտի դարձնեմ։
19—Անապատին մէջ եղեւին,
Սատիր, մրտենի և իւղի ծառ պիտի անկեմ,
Անմուր երկրին մէջ մայր,
Սօսի ու ասասա միասին պիտի դնեմ.
20—Որպէս զի տեսնեն ու գիտնան,
Ու միասին մտածեն ու հասկնան,
Որ ասիկա Տէրոջը ձեռքը բրաւ,
Ու Իսրայէլի Սուրբը ստեղծեց։
21—Ձեր դատը յառաջ բերէք, կ'ըսէ Տէրը.
Ձեր զօրաւոր փաստերը մօտեցուցէք, կ'ըսէ Յակոբի Թագաւորը։
22—Թող մօտեցնեն ու ինչ ըլլալիքը մեզի պատմեն.
Առաջիններըը մեզի յայտնեն թէ անոնք ի՛նչ էին,
Որպէս զի միտքերնիս պահենք ու անոնց վախճանը գիտնանք
Կա՛մ ապագայ բաներըը մեզի գիտցնեն։
23-Ասիկ ետքը ըլլալիքները պատմեցէք,
Որպէս զի ձեր աստուած ըլլալը գիտնանք.
Կա՛մ ուղիկ կա՛մ գէշ բան մը ըրէք,
Որպէս զի զարմանանք ու միասին տեսնենք։
24—Ահա դուք ոչինչ էք, ու ձեր գործն ալ ոչինչ է.
Ձեզ ընտրողը պղծութիւն է։
25—Հիւսիսի կողմէն հեւը արթնցուցի,
Ու պիտի գայ — արեւելքէն իմ անունս պիտի կանչէ.
Ու իշխանները սրիմի պէս պիտի կոխէ,
Ինչպէս բրուտը կաւը կը կոխէ։
26—Ո՞վ պատմեց սկիզբէն՝ որ գիտնանք.
Ու առաջուան գտրերէն՝ որ ձշմարիտ է՝ բանք.
Ոչ յայտնող մը կայ, ոչ գիտցնող մը
Ես ոչ ձեր խօսքերը մտիկ ընող մը։
27—Առաջ է՛ն ըսի Սիոնի, Ահա, ահա անոնք.
Ու երուսաղէմի աւետիս բերող տուի։
28—Ես նայեցայ ու մարդ մը չկար,

Ու առանցմէ բնաւ մէկ խորհրդական չկար,
Որու հարցնեմ ու պատասխան տայ։
29—Ահա ամէնը սնոտի են, գործերնին ոչինչ է.
Անոնց ձուլածոյ կուռքերը հով և անպտղութիւն են։

Գլ. ԽԲ

Ահա իմ ծառաս, որու ձեռնտու պիտի ըլլամ,
Ո՛ր իմ ընտրեալս, որ իմ սիրտս հաւնեցաւ.
Իմ Հոգիս անոր վրայ դրի.
Անիկա ազգերուն իրաւունք պիտի հանէ,
2—Անիկա պիտի չպոռայ ու պիտի չբարձրանայ,
Ու իր ձայնը դուրսը լսել պիտի չտայ։
3—Ջախջախուած եղէգը պիտի չկոտրէ,
Ու պլպլած պատրոյգը պիտի չմարէ,
Իրաւունքը ճշմարտութեան պիտի հանէ։
4—Անիկա պիտի չհուսահատի ու պիտի չմտնայ,
Մինչև իրաւունքը երկրի վրայ հաստատէ.
Ու կղզիները անոր օրէնքին պիտի սպասեն։
5—Երկինքը ստեղծող ու զանիկա կազմող,
Երկիրը ու անոր մէջ բուսածը տարածող,
Անոր վրայ եղող ժողովուրդին չունչ՝
Ու անոր մէջ քալողներուն ոգի տուող
Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ.
6—Ես Տէրս քեզ արդարութեամբ կանչեցի,
Ու ձեռքդ պիտի բռնեմ ու քեզ պիտի պահպանեմ,
Ու քեզ ժողովուրդին ուխտ՝
Ու ազգերուն լոյս պիտի տամ։
7—Որպէս զի կոյրերուն աչքերը բանան,
Բանտարկեալները բանտէն հանես.
Ո՛ր խաւարի մէջ նստողները՝ կապանքի տանիս։
8—Ես Եհովա եմ. իմ անունս այս է.
Ու իմ փառքս ուրիշի չեմ տար,
Ոչ ալ իմ պատիւս կուռքերուն։
9—Առաջուան բաները ահա եղան,
Ու նորերը ես կը յայտնեմ.
Անոնք դեռ չելած ձեզի կ'իմացնեմ։
10—Նոր երգ երգեցէք Տէրոջը,
Ո՛ր անոր գովեստը երկրի ծայրերէն,
Ով ծովը իջնողներ ու զանիկա լեցնողներ,
Կղզիներ և անոնց բնակիչներըը։
11—Անապատը ու անոր քաղաքներըը,
Կեդարու բնակած գիւղերը յո՛ վերցնեն,
•Վէմի բնակիչները յաղթանակի երգով
Լեռներուն գլխէն ձայն տան.
12—Տէրոջը փառք տան,
Ու անոր գովեստը կղզիներուն մէջ պատմեն։
13—Տէրը հզօրի պէս պիտի ելլէ,
Պատերազմող մարդու պէս իր նախանձը պիտի արթնցնէ.
Պիտի աղաղակէ ու բարձրաձայն պիտի գոչէ
Ու իր թշնամիներուն վրայ †յաղթող պիտի ըլլայ։
14—Ես չսասնցմէ լուռ կեցայ,
Զայնս կոբնեցի ու պես զապեցի.
Ինչ ծնանող կնոջ պէս պիտի պոռամ,
‡Պիտի աւերեմ ու մէկէն պիտի կլլեմ։
15—Լեռները ու բլուրները անապատ պիտի ընեմ,
Ու անոնց բոլոր խոտը պիտի չորցնեմ,
Ու գետերը ||ցամաքի պիտի դարձնեմ,
Ու լիճերը պիտի ցամքեցնեմ։
16—Ու կոյրերը իրենց չգիտցած ճամբան մէջ պիտի պարտցնեմ,
Զանոնք իրենց չգիտցած շաւիղներուն մէջ պիտի քալեցնեմ.
Անոնց առջև խաւարը լոյս, ու խորտուբորտ տեղերը հաւասար պիտի ընեմ.
Անոնց այս բաները պիտի ընեմ, ու զանոնք երբեք պիտի չձգեմ։
17—Քանդակած կուռքերու ապաւինողները,
Ու ձուլածոյ կուռքերուն՝ Դուք մեր աստուածներն էք՝ բսողները
Ետ պիտի դառնան ու ամօթալից ըլլան։
18—Ով խուլեր, լսեցէք,
Ու ով կոյրեր, նայեցէք, որպէս զի տեսնէք.
19—Ո՞վ է կոյր բաց ի իմ ծառայէս,

•կամ, Վէմերու.
†կամ, պիտի զօրանայ
‡կամ, Շուռնչ առնելով պիտի փչեմ
||կամ, կղզիներու.

կամ խալ՝ իմ զրկած դեսպանիս պէս,
Ո՞վ է կոյր՝ Աստուծոյ նախընտրելին պէս,
եւ կոյր՝ Տէրոջը ծառային պէս։
20—Շատ բաներ կը տեսնես, բայց ղգուշութիւն չես ըներ.
Ականջներդ բաց են, բայց չես լսեր։
21—Տէրը իր արդարութեանը համար
Սէր հաճեցաւ,
Իր օրէնքը մեծցուց ու փառաւորեց.
22—Բայց անիկա յափշտակուած և կողոպտուած ժողովուրդ է.
Ամէնը քարայրներու մէջ որոգայթի բռնուեցան,
Ու բանտերու մէջ պահուեցան.
Անոնք յափշտակութեան մնացեալացան,
և ազատող մը չկայ.
Կողոպտա՛ եղան, ու մէկը չգտնուեր որ ետ առը՛ ըսէ։
23—Ձեր մէջ ո՞վ կայ որ ասոր ականջ դնէ,
Ե՛ մնոյն ընկ ու լսէ գալու ժամանակին համար։
24—Ո՞վ հատուցեց Յակոբը յափշտակութեան,
Ու Իսրայէլը՝ կողոպտիչներուն.
Չէ՞ որ Տէրը՝որու դէմ մեղք գործեցինք.
Ուսն էլ անոր ճամբաներուն մէջ քալել չուզեցին,
Եւ անոր օրէնքին հնազանդութիւն չըրին։
25—Ուստի իր սաստիկ բարկութիւնը
Ու պատերազմի ուժգնութիւնը անոր վրայ թափեց,
Եւ ամէն կողմէն զանիկա բռնկուցուց,
բայց անիկա չգիտցաւ.
Ջանիկա այրեց, բայց անիկա իր սրտին մէջ դրաւ։

Գլ. ԽԲ

Եւ հիմա, ով Յակոբ, քեզ ստեղծողը,
Ու, ով Իսրայէլ, քեզ ձեւակերպողը
Տէրը այսպէս կ'ըսէ.
Մի վախնար, վասն զի ես քեզ փրկեցի,
Քեզ քու անունովդ կանչեցի. դուն իմն ես։
2—Երբ ջուրերէն անցնես, ես քեզի հետ պիտի ըլլամ,
Ու երբ գետերէն անցնես, քեզ պիտի չխեղեն.
Երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրես,
Ու բոցը քեզ պիտի չրնկնէ։
3—Քանզի ես քու Տէր Աստուածդ,
Իսրայէլի Սուրբը, քու Փրկիչդ եմ.
Եգիպտոսը քեզի համար փրկանք,
Եթովպիան և Սաբան քեզի համար փոխարէն տուի։
4—Որովհետեւ իմ աչքիս պատուական եղար,
Պատիւ գտար, ու ես քեզ սիրեցի.
Անոր համար քու անչէք փոխարէն մարդ,
Ու քու հոգիդ փոխարէն ժողովուրդ.
5—Մի վախնար, քանզի ես քեզի հետ եմ.
Քու սերունդդ արեւելքէն պիտի բերեմ,
Ու քեզ արեւմուտքէն պիտի ժողվեմ.
6—Հիւսիսին պիտի ըսեմ Թէ Տուր,
Ու հարաւին Թէ Մի պզգիլեր.
Իմ ազգիններս հեռուէն,
Ու աղջիկներս երկրի ծայրէն բեր,
7—Ամէն քոյր իմ անունովս կոչուածները.
Վասն զի անոնք իմ փառքիս համար ստեղծեցի,
Զանոնք ձեւակերպեցի ու կազմեցի։
8—Աչք ունեցող կոյր ժողովուրդը,
Ու ականջ ունեցող խուլերը հանեցէք։
9—Բոլոր ազգերը միկտեղ ժողովուին,
Եւ ժողովուրդները հաւաքուին.
Անոնցմէ ո՞վ կրնայ ասիկա պատմել,
Ու առաջուան բաները մեզի գիտցնել.
Իրենց վկաները թող բերեն որպէս զի արդարանան,
Եւ լսողներ լսեն ու ըսեն Թէ Ասիկա՛ ճշմարիտ է։
10—Իմ վկաներս դուք էք, կ'ըսէ Տէրը
Նաեւ իմ ընտրած ծառաս.
Որպէս զի գիտնաք ու ինծի հաւատաք,
Եւ հասկնաք որ ես եմ.
Ինծմէ առաջ Աստուած *չեղաւ,
Ու ինծմէ ետքն ալ պիտի չըլլայ։
11—Տէրը ես եմ, ես եմ,
Եւ ինծմէ ուրիշ փրկիչ չկայ։
12—Ես զրուցեցի ու փրկեցի և դիտցուցի,
Երբ ձեր մէջ օտար աստուած չկար.
Ու իմ վկաներս դուք էք, կ'ըսէ Տէրը,
որ ես եմ Աստուած։

*ԵԲԲ. չստեղծուեցաւ.

13—*Սկիզբէն ի վեր ես նոյն եմ,
Ու չկայ մէկը որ իմ ձեռքէս ազատէ.
Երբ ես բան մը կ'ընեմ, ո՞վ կրնայ զանիկա արգիլել։
14—Այսպէս կ'ըսէ Տէրը,
Ձեր Փրկիչը, Իսրայէլի Սուրբը.
Ձեր սիրոյն համար Բաբելոն կը զրկեմ,
Եւ անոնց ամէն փախստականները
Ու Նաւերու մէջ ազաղակող Քաղդէացիները կ'իջեցնեմ։
15—Ես եմ Տէրոջ, ձեր Սուրբը,
Իսրայէլի Ստեղծիչը, ձեր Թագաւորը։
16—Այսպէս կ'ըսէ Տէրը, որ ծովու մէջ ճամբայ,
Ու զօրաւոր ջուրերու մէջ շաւիղ կը դնէ,
17—Որ կառքը ու ձին, զօրքը և զօրութիւնը կը հանէ
Անոնք միասին կը պառկին ու չեն կրնար.
Անոնք պառապդի պէս կը մարին և կ'անցնին։
18—Առաջնոյ անները մի յիշէք,
Ու հին բաները միտքերնիդ մի բերէք։
19—Ահա ես նոր բան պիտի ընեմ, որ հիմա պիտի յայտնուի.
Միթե զանիկա պիտի չգիտնա՞ք.
Ես անապատի մէջ ալ ճամբայ,
Ու անջրդի երկրի մէջ գետեր պիտի դնեմ։
20—Ինծ գաշտի գազանները,
Ջաքալները ու չոլամները պիտի փառաւորեն
Վասն զի իմ ժողովուրդիս, իմ ընտրեալներուս, խմցնելու համար,
Անապատի մէջ ջուրեր,
Ու անջրդի երկրի մէջ գետեր պիտի տամ։
21—Այս ժողովուրդը ես ինծի համար ստեղծեցի,
Անոնք իմ գովութիւնս պիտի պատմեն։
22—Բայց դուն ինծի չկանչեցիր,
ով Յակոբ.
Հապա ինծմէ ձանձրացար, ով Իսրայէլ։
23—Քու ողջակէզներուդ ոչխարները ինծի չբերիր,
Ու քու զոհերովդ ինծ չփառաւորեցիր.
Ընծայի համար քեզ չաշխատցուցի,
Ու կնդրուկի համար քեզ չյոգնեցուցի։
24—Ինծի համար ասեղով խունկեզէգն ծախու չառիր,
Ու քու զոհերուդ ճարպովը զիս չկշտացուցիր.
Հապա քու մեղքերովդ զիս ձանձրացուցիր
Ու քու անօրէնութիւններովդ զիս յոգնեցուցիր։
25—Ես եմ, ես եմ, որ քու յանցանքներդ ինծի համար կը ջնջեմ,
Ու քու մեղքերդ՝ ալ պիտի չյիշեմ։
26—Միտքս ձգէ, միասին դատի կելլենք.
Դուն զրուցէ, որպէս զի արդարանաս։
27—Քու նախահայրդ մեղք գործեց,
Ու քու ուսուցիչներդ ինծմէ ապստամբեցան։
28—Ուստի ես՝ւ սրբարանին իշխանները պիղծ սեպեցի,
Ու Յակոբը նզովքի,
Ու Իսրայէլը նախատինքի մատնեցի։

Գլ. ԽԴ

Եւ հիմա մեկ լսէ, ով իմ ծառաս Յակոբ,
Ու դուն, ով իմ ընտրած Իսրայէլ։
2—Քեզ ստեղծող և արգանդի մէջ ձեւակերպող,
Ու քեզի օգնութիւն ընող Տէրը այսպէս կ'ըսէ.
Ով իմ ծառաս Յակոբ,
Ու դուն, ով իմ ընտրած *Իսրայէլս, մի վախնար.
3—Քանզի ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ,
Ու անկոխ երկրին վրայ հեղեղներ.
Քու սերունդիդ վրայ իմ Հոգիս պիտի թափեմ,
Ու քու սրբդներուդ վրայ՝ իմ օրհնութիւնս։
4—Ու անոնք էծր Ե խոտերու մէջ,
Ջուրի վտակներու քով եղող ուռիներու պէս պիտի բուսնին։
5—Մէկը պիտի ըսէ Թէ Ես Տէրոջն եմ.
Մէկն ալ Յակոբի անունովը պիտի կանչէ,

*ԵԲԲ. Յեսուրունա

*ԵԲԲ. Օրէն էկաւ, եւ անոնց ամէնը փախստական կ'իջեցնեմ. ու Քաղդեացւոց ազաղակը Նաւերուն մէջ պիտի ըլլայ

Եւ մէնա ալ իր ձեռքովը պիտի գրկ
Ի՛ր ու Տէրոջն Խ՛,
Ու Իսրայէլի անունովը պիտի մականուանի,
6—Տէրը, Իսրայէլի Թագաւորը,
Եւ զրօաց Տէրը, անոր փրկիչը, այսպէս կ'ըսէ.
Ես եմ առաջինը ու ես եմ վերջինը,
Ու ինծմէ ուրիշ Աստուած չկայ։
7—Եւ հին ժողովուրդը հաստատէլէս ի վեր
Ո՞վ կրցաւ ինծի պէս ձայն տալ ու պատմել,
Եւ ասիկա ինծի համար կարգի դնել.
Թող զրուցեն գալու և ըլլալու բաները։
8—Մի վախնաք ու մի զարհուրիք.
Միթէ ես ձեզի այն առենէն չհետացուցի՞ ու չզրուցեցի՞.
Իմ վկաներս դուք եք.
Ինծմէ ուրիշ Աստուած կայ.
Ցիրաւի ո՛չինչ վէմ չկայ. ո՛չինչ ես չեմ գիտեր։
9—Կուռք չինողներուն ամէնն ալ ունայնութիւն են,
Եւ անոնց ընտիր ԷՐԳԵՐԸՆ օգուտ մը չեն ըներ,
Ու իրենք իրենց ըՆՏ վկաներ են.
Չեն տեսներ ու չեն խմանար որ ամչնան։
10—Ո՞յն ո՞վ է անիկա որ աստուած կը չինէ,
Եւ կուռք կը ձուլէ, որ օգուտ մը չընէր։
11—Ահա անոր բոլոր ընկերները պիտի ամչնան,
Վասն զի արուեստաւորները իրենք մարդ են.
Թող անոնք ամէնը ժողովին ու կայնին,
Պիտի խանդան ու միկտեղ պիտի ամչնան։
12—Երկաթագործը ածուխով կը չինէ տապարը,
Եւ կռաններով անոր ձև կու տայ,
Ու զանիկա իր զօրաւոր բազուկովը կը չինէ.
Երբ անօթենայ, ուժէ կը կտրի.
Երբ ջուր չխմէ, կը մարի։
13—Հիւսը լար կը քաշէ և մատիտով Ն՛ուէՐԸ կը գծագրէ,
Զանիկա քանդակագործի գրիչով կը բանի,
Ու անոր վրայ կարկինով կը գծէ,
Զանիկա մարդու կերպարանքով
Եւ մարդկային գեղեցկութիւնով կը չինէ,
Որպէս զի տան մէջ դնուի։
14—Անիկա իրեն եղեւինները կը կտրէ,
Եւ թեղջ ու կաղնի կ'առնէ,
Զորանք իրեն՝ անտառի ծառերէն կ'ընտրէ,
Սոճի կը տնկէ և ՃՆԿԻ՝ անձրևը կը մեծցնէ։
15—Ու անոնք մարդուն վառելիք կ'ըլլան.
Եւ անոնցմէ կ'առնէ, որպէս զի ՃՐՒՆ ՈՒՏԷ տաքնայ։
Անոնց հետ հաց կ'այրէ ու հաց կ'եփէ,
Նաև աստուած մը կը չինէ և անոր երկրպագութիւն կ'ընէ.
Զանիկա կուռք կը ձեւացնէ ու կը պաշտէ։
16—Անոր կէսովը կրակ կը վառէ,
Կէսովը միս կ'ուտէ,
Խորված կ'եփէ ու կը կշտանայ,
Եւ կը տաքնայ ու կ'ըսէ,
Ա՛հա տաքցայ, կրակը տեսայ։
17—Եւ անոր մնացածը աստուած, այսինքն կուռք, կը չինէ իրեն,
Զանիկա կը պաշտէ ու անոր երկրպագութիւն կ'ընէ,
Եւ անոր աղօթք կ'ընէ ու կ'ըսէ,
Ձես ազատէ, քանզի իմ աստուածս դուն ես։
18—Չեն գիտեր ու չեն հասկնար.
Քանզի անոնց աչքերը՝ տեսնելէն,
Ե՛ւ անոնց սիրտերը հասկնալէն ծխփուեցան,
19—Ու մէ՛կը միտքը չբերէր,
Եւ գիտութիւն ու հանճար չունի որ ըսէ,
Կէսը կէսովը կրակ վառեցի,
Եւ անոր կոչնդուն վրայ հաց ալ եփեցի,
Միս խորովեցի ու կերայ.
Եւ մնացածը պղծութի՞ւն չընեմ.
Ծառի կո՞ճղ պաշտեմ։
20—Անիկա մոխիրով կը անանի.
Անոր խաբուած սիրտը զինք կը մոլորեցընէ,
Եւ իր հոգին չկրնար փրկել, ու չըսեր Թէ
Իմ աջ ձեռքիս մէջ սուտութի՞ւն չկա՞յ։
21—Ասոնք միտդ բեր, ով Յակոբ,
Եւ դուն, ով Իսրայէլ, քանզի իմ ծառաս ես.
Ես ստեղծեցի քեզ, դուն իմ ծառան ես,

Ով Իսրայէլ, *ինծմէ պիտի չմոռցուիս՝։
22—Քու յանցանքներդ մէկի պէս,
Ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի.
Ինծի գարձիր, քանզի քեզ փրկեցի։
23—Ուրախ եղէք, ով երկինք, քանզի Տէրը ըրաւ ԱՒԼԱ.
Ով երկրի վարի կողմերը, ցնծութեամբ աղաղակեցէք.
Լեռներ, անտառ ու անոր մէջ եղող բոլոր ծառեր,
Ուրախութեան ձայներ հանեցէք.
Քանզի Տէրը փրկեց Յակոբը,
Եւ Իսրայէլի մէջ փառաւորուեցաւ։
24-Ա՛յսպէս կ'ըսէ Տէրը, քու Փրկիչդ,
Ու քեզ արգանդի մէջ Սաղմոսողը.
Ես եմ Տէրը որ ամէն ԲԱՆԵՐԸ ըրի.
Երկինքը միայն ես տարածեցի,
Ու երկիրը իմ կարողութենովս հաստատեցի.
25—Սուտասաններուն նշանները պարապը կը հանեմ,
Եւ գուշակողները կը յիմարացնեմ.
Իմաստուններուն ետ կը դարձնեմ,
Ու անոնց գիտութիւնը յիմարութեան կը հանեմ,
26—Իմ ծառային խօսքը կը հաստատեմ,
Ու իմ դեսպաններուս խորհուրդը կը կատարեմ.
Ես Ե՛Ս, որ Երուսաղէմի համար կ'ըսեմ Թէ Պիտի բնակուի,
Ու Յուդայի քաղաքներուն համար՝ Թէ Պիտի շինուին.
Ու անոր աւերակները պիտի կանգնեմ,
27—Ես անդունդին կ'ըսեմ Թէ Ջորցիր,
Ու քու գետերդ պիտի ցամքեցնեմ.
28—Ես Կիւրոսի համար կ'ըսեմ, իմ հովիւս է,
Ու իմ ամէն կամքս պիտի կատարէ.
Ու Երուսաղէմի կ'ըսեմ Թէ Պիտի շինուի,
Եւ տաճարին՝ Թէ Քու հիմերդ պիտի ձգուին։

Գլ. Խե

Ա՛յսպէս կ'ըսէ Տէրը իր օծեալ Կիւրոսին,

Ուսն այ ձեռքը բռնեցի,
Որպէս զի ազգերը անոր առջև հնազանդեցնեմ,
Ու թագաւորներուն մէջքը թուլցնեմ,
Ես անոր առջև դռներուն փեղկերը բացուին,
Ու դռները ԲՆԱ՛ չգոցուին.
2—Ես քու առջևէդ պիտի երթամ,
Եւ խորաթոռ տեղերը պիտի չափեմ.
Պղնձէ դռները պիտի փշրեմ,
Ու երկաթէ նիգերը պիտի կտրատեմ.
3—Եւ քեզի խաւարի ՀՂ ՀԱՐՍՏՈՒՆՔ գանձերը,
Ու պահուած հարստութիւնները պիտի տամ,
Որպէս զի գիտնաս Թէ ես եմ Տէրը,
Իսրայէլի Աստուածը, որ ՏՂ քու անունովդ կը կանչեմ։
4—Իմ Յակոբ ծառայիս համար
Եւ իմ ընտրած Իսրայէլիս համար
Քեզ քու անունովդ կանչեցի,
Ու քեզի մականուն գրի՝ Թէև դիս չէիր ճանչնար։
5—Ես եմ Տէրը, և ուրիշ մը չկայ,
Ինծմէ զատ Աստուած չկայ.
Ես քեզի գօտի կապեցի, Թէև դիս չէիր ճանչնար.
6—Որպէս զի արեւելքէն ու արեւմուտքէն գիտնան
Որ ինծմէ զատ մէ՛կը չկայ.
Ես եմ Տէրը, և ուրիշ մը չկայ։
7—Լոյսը հաստատողը և խաւարը ստեղծողը,
Խաղաղութիւնը ընողը ու չարիքը ստեղծողը,
Այս ամէն բաները ընողը ես Տէրս եմ։
8—Ով երկինքներ, վերէն ցօղ կաթեցուցէք,
Եւ ամպերը արդարութիւն տեղան.
Երկիր բացուի ու փրկութեան պտուղ *տայ,
Ու մէկտեղ արդարութիւն բուսանի.
Ասանք ստեղծողը ես Տէրս եմ։
9—Վա՜յ անոր որ իր Արարիչին հետ կը վիճի,
†Ո— ՏՓ՝ երկրի խեցիներուն պէս խեցի մըն է՞.

*Կամ, պիտի մոռնար

*ԵՐԲ. տան †Կամ, խեցին երկրի խեցիներուն հետ խոզ վիճի

Մինչեւ կաւը պինդ ձեւացնողին կրնա՞յ բսել թէ ի՞նչ կը շինես,
կամ գուն գործդ չունի՞ ուղիղ ըներ թէ Չեռք չունիս։
10—Վա՜յ անոր որ իր հօրը կ'ըսէ, ի՞նչ կը ծնանիս,
Ու իր մօրը՝ ինչ՞ կը ծոռնակ կը բերես։
11—Այսպէս կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի Սուրբը ու անոր Արարիչը.
Գալու բաներուն վրայով ինծի հարցուցէք,
Իմ որդիներուս համար ու իմ ձեռքերուս գործերուն համար
Ինծի պատուէր տուէք։
12—Երկիրը ես շինեցի,
Ու անոր վրայ մարդը ստեղծեցի.
Երկինքը իմ ձեռքերս տարածեցին,
Ու անոր բոլոր զօրքին ես պատուէր տուի։
13—Ես զանիկա արդարութեամբ արթընցուցի,
Ու անոր ամէն ճամբաները պիտի շիտկեմ.
Անիկա իմ քաղաքս պիտի շինէ,
Ու իմ աքսորուածներս ետ պիտի դարձնէ
Առանց գնոյ ու առանց կաշառքի,
Կ'ըսէ զօրաց Տէրը։
14—Տէրը այսպէս կ'ըսէ.
Եգիպտոսի վաստակը,
Ու Եթովպացւոց և երկայնահասակ Սաբայեցւոց ստացուածոները
Քեզի պիտի անցնին, ու քու կիզ պիտի ըլլայ.
Անոնք քու ետեւէդ պիտի գային,
Ու շղթաներով պիտի գային,
Ու քեզի երկրպագութիւն ընէլով
Քեզի պիտի ազաչեն ու ըսեն,
Միայն քու մէջդ Աստուած կայ,
Ու ուրիշ զաս ուրիշ Աստուած մը չկայ։
15—Ճիրաւի գուն գիշ ծածկող
Աստուած մըն ես,
Ով Իսրայէլի փրկիչ Աստուածը։
16—Անոնք ամէնը պիտի ամչնան ու պատկառին.
Կուռք շինողները միասին ամօթով պիտի երթան։
17—Իսրայէլ յաւիտենական փրկութիւնով Տէրոջմէ պիտի փրկուի.
Դուք յաւիտեան յաւիտենից պիտի չամչնաք ու չպատկառիք։
18—Քանզի այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը,
Այն Աստուածը որ երկիրը կազմեց,
Զանիկա չինեց ու հաստատեց,
Զանիկա պարապ տեղ չստեղծեց,
Հապա բնակութեան համար կազմեց.
Տէրը ես եմ, ու ինծմէ ուրիշը չկայ։
19—Ես ծածկաբար երկրի մութ տեղը չխօսեցայ.
Յակոբի սերունդին չըսի թէ
Զուր տեղ պիտի փնտռեցէք.
Ես Տէրս արդարութիւն կը խօսիմ
Ու՝ ճշմարիտ բաներ կը յայտնեմ։
20—Ժողվուեցէք ու եկէք,
Մէկտեղ մօտեցէք դուք, ով ազգերէն ազատուածներս.
Անոնք գիտութիւն չունին, որ իրենց կուռքին փայտը կը կանգնեն,
Ու փրկելու կարողութիւն չունեցող աստուծոյ աղօթք կ'ընեն։
21-Բարողեցէք ու ըներս մօտեցուցէք,
Ու անոնք մէկտեղ խորհուրդ ընեն.
Ասիկա ի սկզբանէ ո՞վ գիտցուց,
Այն ժամանակէն ի վեր ո՞վ պատմեց.
Չէ՞ որ ես Տէրս, և ինծմէ զատ ուրիշ Աստուած չկայ,
Ու ինծմէ ուրիշ ճշմարիտ Աստուած ու փրկիչ չկայ։
22—Ով երկրի բոլոր ծայրերը, ինծի նայեցէք որպէս զի փրկիք.
Քանզի ես եմ Աստուած, և ինծմէ ուրիշ չկայ։
23—Իմ անձիս վրայ երդում րրի,
Իմ բերանէս արդարութեան խօսք ելաւ ու կա չդառնար,
Որ ամէն ծունկ ինծի պիտի կրկնուի,
Ու՝ ամէն լեզու երդում պիտի ընէ։
24—Մէկը պիտի ըսէ,
Միայն Տէրոջմով արդարութիւն ու զօրութիւն ունիմ.
Ամէն հնչը անոր պիտի գայ.
Ու բոլոր անոր դէմ բարկացողները պիտի ամչնան։
25—Իսրայէլի բոլոր սերունդը
Տէրոջմով պիտի արդարանայ ու պիտի պարծենայ։

Գլ. ԽԶ

Բէլ խոնարհեցաւ, Նաբու ծռեցաւ,
Անոնց կուռքերը կենդանիներու ու անասուններու վրայ էին.
Ձեր բեռցուած բեռները
Յոգնած անասուններն ծանրութիւն եղան։
2—Անոնք ծռեցան ու միասին խոնարհեցան,
Բնաւ ազատուիլ կարող չեղան,
Ու իրենք ալ գերութեան գացին։
3—Ինծի մտիկ րրէք, ով Յակոբի տունը,
Ու Իսրայէլի տանը բոլոր մնացորդը,
Որ ձեզ պտմուհի կը կրեմ և արգանդի կը վերցնեմ.
4—Մինչեւ չէր ծերութիւնը անգամ ես նոյն եմ,
Ու մինչեւ չէր ալեւորութիւնը ես չէ՛ պիտի կրեմ.
Ես ստեղծեցի ու ես պիտի վերցնեմ,
Ես պիտի կրեմ ու պիտի ազատեմ։
5—Զիս որո՞ւ կը նմանցնէք և որո՞ւ հաւասար կը սեպէք,
Ինծի ինչ նմանութիւն կը չինէք, որ նման ըլլանք։
6—Քսակէն ոսկի կը թափեն ու կշռադով արծաթ կը կշռեն,
Վարձքով ոսկերիչ կը բռնեն, որ անով աստուած կը շինէ.
Ջոկին կը պաշտեն և անոր երկրպագութիւն կ'ընեն,
7—Ջանիկա ուսերու վրայ կը վերցնեն կը տանին,
Իր տեղը կը հաստատեն ու կը կայնի,
Անկէ իր տեղէն չշարժիր.
Ու եթէ մէկը անոր ազաղակէ, պատասխան չտայ,
Ձանիկա իր նեղութենէն չազատեր։
8—Ասիկա յիշեցէք ու մարդ եղէք,
Մխաքերնիդ բերէք, ով յանցաւորներ,
9—Ի յառաջուներէ եղած առաջուան բաները յիշեցէք.
Քանզի ես եմ Աստուած, և ինծմէ ուրիշ չկայ.
Ես եմ Աստուած, և ինծի պէս մէ՛կը չկայ,
10—Որ վերջինը սկիզբէն
Ու դէ՛ս չեղածը առաջուընէ պատմեցի,
Ու կ'ըսեմ թէ իմ խորհուրդս պիտի հաստատուի,
Ես իմ ամէն կամքս պիտի կատարեմ։
11—Ես իմ որ արեւելքէն գիշատիչ թռչունը կը կանչեմ,
Ու հեռաս երկրէ՛ իմ խորհուրդս է՛ղծողը։ մարդը.
Ես խօսեցայ ու ես պիտի կատարեմ,
Ես խորհեցայ ու ես է գործ պիտի դնեմ։
12—Ով սրտատրոհներդ հեռացած խրատասիրաներդ,
Ինծի մտիկ րրէք.
13—Իմ արդարութիւնս մօտեցուցի,
Անիկա պիտի չհեռանայ,
Ես իմ փրկութիւնս պիտի չյապաղեմ.
Ու իմ փառքս եղող Իսրայէլի համար
Սիօնի մէջ փրկութիւն պիտի դնեմ։

Գլ. ԽԷ

Ով Բաբելոնի կոյս աղջիկ,
Իջիր ու հողի վրայ նստէ.
Ով Քաղդէացւոց աղջիկ,
Գահոյի վրայ առանց աթոռի նստէ,
Քանզի մէկ մըն ալ քնքուշ ու փափուկ պիտի չկոչուիս։
2—Ձաղօրքին քարերը առ, ալիւր ազատ.
Լաչակդ հանէ, գոգնոցդ վերցուր.
Սրունդդ բաց, գետերէն անցիր։
3—Թող քու մերկութիւնդ բացուի
Ու նախատինքդ ալ երեւնայ.
Քեզմէ վրէժ պիտի առնեմ,
Ու մարդու մը միջնորդութիւնը պիտի չընդունիմ։
4—(Մեր փրկչին անունը *Եհովա Սաբաւովթ՝ է.
Անիկա Իսրայէլի Սուրբն է։)
5—Լուռ նստէ, խաւարի մէջ մտիր, ով Քաղդէացւոց աղջիկ,
Քանզի մէկմըն ալ թագաւորութիւններուս պիկին պիտի չկոչուիս։
6—Ես իմ ժողովուրդիս բարկացայ,
Ու իմ ժառանգութիւնս պղծեցի,
Ու զանոնք քու ձեռքդ տուի.
Դուն անոնց գթութիւն չցուցուցիր,
Ծերին վրայ քու լուծդ խիստ ծանրացուցիր։

*Այսինքն, Տէր զօրութեանց

7—Եւ ըսէր, Ես յաւիտեան ոչինչն պիտի մեռայ.
Այնպէս որ ասիկա մաքիդ մէջ չդրէիր,
Ասոր վախճանը չյիշեցիր,
8—Ու հիմա մտիկ ըրէ,
Ով անհոգութեամբ նստող հեշտասէր,
Որ սրտիդ մէջ կ'ըսես,
Ես եմ ու ինծմէ ուրիշ չկայ.
Որբեւարի պիտի չնստիմ,
Ու անզաւակութիւն պիտի չգիտնամ,
9—Հիմա ասոնց երկուքն ալ,
Թէ՛ անզաւակութիւնը եւ թէ՛ որբեւայրութիւնը
Ցանկաւծ մէկ օրուան մէջ քու վրադ պիտի գան.
Քու դիւթութիւններուդ չատութեանը մէջ
Եւ քու անթիւ կախարդութիւններուդ մէջ
Անոնք ամբողջ քու վրադ պիտի գան։
10—Ու դուն քու չարութեանդ ապաւինեցար,
Ու ըսիր, Ոեւ աներեսդ չկայ։
Քեզ գլխէ հանողը քու խնամատարութիւնդ ու գիտութիւնդ եղեն.
Եւ սրտիդ մէջ ըսիր, Ես եմ ու ինծմէ ուրիշ չկայ։
11—Անոր համար քու վրադ ձախողութիւն մը պիտի գայ,
Որուն ուրկէ ծագիլը պիտի չգիտնաս.
Եւ քու վրադ թշուառութիւն պիտի իյնայ,
Զոր ես դարձնելու կարող պիտի չըլլաս.
Ու քու վրադ յանկարծ աւերում մը պիտի գայ,
Զոր դուն պիտի չգիտնաս։
12—Հիմա քու կախարդութիւններուդ եւ շատ դիւթութիւններուդ մէջ կեցիր,
Որոնցմով քու մանկութենէդ ի վեր աշխատեր ես,
Թերեւս օգուտ մը գտնելու կարող ըլլաս,
Թերեւս կարենաս յաղթել։
13—Խորհուրդներուդ շատութենէն ձանձրացար.
Հիմա երկինքը զննողները, աստեղագէտները,
Նոր ամիսներով գուշակութիւն ընողները թող կենան,
Եւ քու վրադ գալու կոբէներն քեզ ազատեն։
14—Ահա անոնք մղեղի պէս պիտի ըլլան,
Ու զանոնք կրակը պիտ այրէ.
Իրենց հոգին բոցին զօրութենէն պիտի չկրնան ազատել.
Ցտրհնալու համար կայծ մը,
Կամ դիմացը նստելու համար կրակ մը պիտի չլինայ։
15—Այսպէս պիտի ըլլան քեզի անոնք՝ որոնց հետ աշխատեցար,
Ու մանկութենէդ ի վեր առուտուր ըրիր.
Ամէն մէկը իր ճամբան էրթալով՝ ցիրուցան պիտի ըլլան,
Ու քեզ ազատող մը պիտի չըլլայ։

Գլ. ԽԸ

Լսեցէք ասիկա, ով Յակոբի տունը,
Որ Իսրայէլի անունովը կանչուած եք,
Ու Յուդայի *աղբիւրէն ելեր եք,
Եւ Տէրոջը անունովը երդում կ'ընէք,
Ու Իսրայէլի Աստուածը կը յիշէք,
Բայց ճշմարտութեամբ չէ, ու արդարութեամբ չէ։
2—(Քանզի անոնք Սուրբ քաղաքին անունովը կը յիշուին,
Եւ Իսրայէլի Աստուծոյն կը կռթնին,
Որուն անունը Եհովա Սաբաւովթ է։)
3—Առաջուան բաները հին ժամանակէն ի վեր պատմեցի,
Ու անոնք իմ բերնէս ելան, և զանոնք լսցուցի.
Զանոնք յանկարծ ըրի ու եղան։
4—Որովհետեւ գիտէի որ դուն խիստ ես,
Եւ քու պարանոցդ երկաթէ ջիղեր ունի,
Ու պղնձէ ճակտա մը ունիս
5—Ու սակ քեզի հին ժամանակէն ի վեր պատմեցի,
Ու դեռ չեղած քեզի լսցուցի,
Որ չըլլայ թէ ըսես, Զանոնք իմ աբեձանս ըրաւ,
Եւ իմ քանդակած ու ձուլածոյ կուռքս հրամայեց։
6—Դուն լսեցէք լսեցիր, նայէ, անոնց ամէնը կատարուեցաւ.
Ու դուք պիտի չհրաստարակէ՞ք.
Ես քեզի սակ եղբ նոր ու ծածուկ բաներ պիտի գիացնեմ,
Զորոնք դուն չգիտցար։

*Եբր. Ջուրերէն

7—Անոնք հիմա ստեղծուեցան և ոչ թէ առաջուընէ.
Ու այս օրէն առաջ զանոնք չլսեցիր,
Որ չըլլայ թէ ըսես, Ահա զանոնք գիտցայ։
8—Դուն ոչ լսեցիր, ոչ ալ գիտցար,
Ես սկիզբէն քու ականջդ չբացուեցաւ.
Վասն զի գիտցայ որ դուն խիստ նենգաւոր ես,
Ու դուն որովայնէ ապստամբ կոչուեցար։
9—Ես իմ անուանս համար բարկութիւնս պիտի ուշացնեմ
Եւ իմ փառքիս համար համբերող պիտի ըլլամ քեզի,
Որպէս զի քեզ չկորսնցնեմ։
10—Ահա քեզ մաքրեցի, բայց ոչ թէ *արծաթի պէս.
Եւ քեզ նեղութեան հալոցին մէջ փորձեցի։
11—Առ՚ի՛ն ինծի համար, ինծի համար պիտի ընեմ.
Քանզի ի՞նչ անարգ ինչո՞ւ պղծուի.
Ու ես իմ փառքս ուրիշի չեմ տար։
12—Ով Յակոբ ու իմ կանչած Իսրայէլը, ինծի մտիկ ըրէ.
Ես նոյն եմ, առաջինը ես եմ, վերջիններս ալ ես եմ։
13—Նաև երկիրը իմ ձեռքս հիմնեց,
Ու երկինքը իմ աջ ձեռքս տարածեց.
Երբ ես զանոնք կանչեմ,
Անոնք միասին իմ առջեւս կը կայնին։
14—Ամէնդ ժողովեցէք ու մտիկ ըրէք.
Անոնցմէ ո՞վ պատմեց այս բաները.
Տէրոջը սիրածը Բաբելոնի մէջ անոր կամքը ի գործ պիտի դնէ.
Ու իր բազուկը Քաղդէացւոց վրայ պիտի էրխդնէ։
15—Ես, ես խօսեցայ ու զանիկա կանչեցի,
Զանիկա բերի, և անոր ճամբան յաջողպիտի ըլլայ։
16—Ինծի մօտեցէք, ասիկա լսեցէք.
Առաջուընէ ծածուկ չխօսեցայ,
Այս բաներուն եղած ժամանակէն ի վեր ես հոն եմ,
Ու հիմա զիս Տէր Եհովա ու անոր Հոգին ղրկեց։

*Կամ, արծաթով

17—Այսպէս կ'ըսէ Տէրը,
Քու Փրկիչդ, Իսրայէլի Սուրբը.
Ես եմ քու Տէր Աստուածդ,
Որ քեզի օգտակար եղածը կը սորվեցընեմ,
Ու քալելու ճամբուդ մէջ քեզ կ'առաջնորդեմ։
18—Երանի՜ թէ իմ պատուիրանքս մտիկ ընէիր.
Այն ատեն քու խաղաղութիւնդ գետի պէս,
Ու արդարութիւնդ ծովուն ալիքներուն պէս պիտի ըլլար։
19—Եւ քու սերունդդ աւազի չափ,
Ու որովայնիդ ծնունդը անոր *խիճին չափ պիտի ըլլար,
Անոր անունը իմ առջեւէս պիտի չկորսուէր ու չկորսուէր։
20—Բաբելոնէ ելէք, Քաղդէացիներէն փախէք.
Ասիկա յայտութեան երգով պատմեցէք — հրատարակեցէք.
Աշխարհի մինչեւ երկրի ծայրը տարածեցէք,
Ըսէք՝ Տէրը իր Յակոբ ծառան փրկեց։
21—Ու երբ զանոնք անապատներուն մէջ պարացուց, չծարաւեցան.
Անոնց համար վիմէն ջուրեր վազցուց,
Վէմը պատռեց ու անկէ ջուրեր բղխեցան։
22—Ամբարիշտներուն խաղաղութիւն պիտի չունենան, կ'ըսէ Տէրը։

Գլ. ԽԹ

Ով կղզիներ, ինծի մտիկ ըրէք,
Ու, ով ժողովուրդներ, հեռուէն ականջ տուէք.
Տէրը զիս արգանդէն կանչեց,
Իմ անունս մօրս որովայնէն յիշեց.
2—Ես իմ բերանս սրած թուրի պէս ըրաւ.
Զիս իր ձեռքին հովանիին տակ ծածկեց,
Ես զիս փայլուն նետի պէս ըրաւ.
Իր կապարճին մէջ պահեց զիս.
3—Ես ինծի ըսաւ, Դուն իմ ծառաս ես,
Ով Իսրայէլ, որով պիտի փառաւորուիմ։
4—Ու ես ըսի, Պարապ տեղ աշխատեցայ,

*Կամ, որովայնին ծնունդին

Ե- իմ զօրութիւնս ոչինչ ու դատարկ
ուղղ գործածեցի.
Բայց իմ իրաւունքս Տէրոջը առջև է,
Ու իմ գործս իմ Աստուծոյս քով է։
5—Ու հիմա այսպէս կ'ըսէ Տէրը,
Որ ինծ արամայնէ իրեն ծառայ ըլլալու
համար աստղծոց,
Որ Յակոբը անոր դարձնեմ,
Ու Իսրայէլ անոր ժողվուի,
Որ Տէրոջը առջև փառաւորուիմ,
Ու իմ Աստուածս ինծի զօրութիւն ըլլայ։
6—Այսպէս կ'ըսէ. Յակոբի ցեղերը նո-
րէն հաստատելու համար,
Ու Իսրայէլի ազատուածները դարձնե-
լու համար,
Իմ ծառա ըլլալդ քեզի քիչ է.
Ահա քեզ ազգերուն լոյս պիտի դնեմ,
Որպէս զի մինչև երկրի ծայրը իմ փրկու-
թիւնս ըլլայ։
7—Այսպէս կ'ըսէ Տէրը, Իսրայէլի
փրկիչը, անոր Սուրբը.
Անարգուած անձին, ազգով ատելի ե-
ղողին, իշխաններու ծառային.
Թագաւորները պիտի տեսնեն ու ոտք
պիտի ելլեն.
Իշխաններն ալ երկրպագութիւն պիտի
ընեն
Տէրոջը համար, որ հաւատարիմ է,
Իսրայէլի Սուրբին համար, որ քեզ ըն-
րեր է։
8—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ընդունելի ժամանակի մը մէջ քեզի
լսեցի,
Ու փրկութեան օրը քեզի օգնութիւն
ըրի,
Ու քեզ պահեցի և ժողովուրդին ուխտ
ըլլալու տուի,
Որպէս զի երկիրը հաստատեմ,
Ու աւերած ժառանգութիւնները ժա-
ռանգեցնեմ.
9 - Ու կապուածներուն ըսեմ, Ելէք,
Ո- խաւարի մէջ եղողներուն՝ Ցայտ-
նուեցէք։
Անոնք ճամբաներու վրայ պիտի արածին,
Ու անոնց արօտը ամէն բլուրներու վրայ
պիտի ըլլայ։
10—Անոնք պիտի չանօթենան ու չծա-
րաւին,
Ու զանոնք խոչակը կամ արեւը պիտի
չզարնէ.
Քանզի անոնց ողորմութիւն ընողը պիտի
առաջնորդէ անոնց,
Ու ջուրի աղբերակներուն քով պիտի
տանի զանոնք։
11—Ու ամէն լեռներս ճամբաներ պիտի
ընեմ,
Ու իմ պողոտաներս պիտի բարձրանան։
12—Ահա անոնք հեռուէն,
Ու ահա անոնք հիւսիսէն ու արեւմուտ-
քէն,
Ու անոնք Սինեացւոց երկրէն պիտի
գան։
13—Ով երկինք, ուրախ եղիր, ու, ով
երկիր, ցնծութիւն ըրէ,
Ու, ով լեռներ, ուրախութեան ձայնով
ազդակեցէք.
Քանզի Տէրը իր ժողովուրդին մխիթա-
րութիւն տուաւ,
Ու իր անանկիներուն ողորմցաւ։
14—Բայց Սիօն ըսաւ, Եհովա ինծ
թողուց,
Ու Տէրը զիս մոռցաւ։
15—Միթէ կինը իր կաթնկիր մանուկը
կրնա՞յ մոռնալ,
Այնպէս որ իր որովայնին ծնունդեանը
վրայ չգթայ.
Թէև անոնք մոռնան,
Բայց ես քեզ պիտի չմոռնամ։
16—Ահա ես քեզ իմ ձեռքերուս մէջ
նկարագրեցի,
Քու պարիսպներդ միշտ իմ առջեւս են։
17—Քու ազգերդ պիտի արագան,
Ո- քեզ վրձնողները և աւրողները քեզ-
մէ պիտի ելլեն։
18—Աչքերդ վերցուր ու բոլորտիքդ
նայէ.
Ամէնը կը ժողովին ու քեզի կու գան.
Տէրը կ'ըսէ որ ես կենդանի եմ,
Անշուշտ անոնց ամէնը զարդերու պէս
պիտի հագնես,
Ու անոնցմով հարսի պէս պիտի զար-
դարուես։
19—Քանզի քու աւերակներդ, ամայի
տեղերդ,
Ու քու կործանմանդ երկիրը
Հիմա էր բնակիչներուն նեղ պիտի գայ,
Ու քեզ կլլողները պիտի հեռանան։
20—Քու անզա ակութենդ եւս ծնա-
նելու որդիներդ
Քու ականջներուդ պիտի ըսեն,

Ակա տեղը ինծի նեղ է,
Տեղ տուր ինծի որ բնակիմ։
21—Ու դուն քու սրտիդ մէջ պիտի
ըսես,
Ասոնք ինծի ո՞վ ծնաւ.
Ես անզաւակ ու ամալ էի,
Ես գերի ու ազատուած էի,
Ասոնք ո՞վ սնուցուց.
Ահա ես մինակ մնացեր էի,
Ասոնք ո՞ւր էին։
22—Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա,
Ահա իմ ձեռքս ազգերու վրայ պիտի
վերցնեմ,
Ու իմ դրօշակս ժողովուրդներու մէջ
պիտի կանգնեմ.
Եւ անոնք քու ազատներդ էրեւոց ծոցին
մէջ պիտի բերեն,
Ու քու աղջիկներդ ուսերուն վրայ
պիտի վերցուին։
23—Ու թագաւորները քու անուդ ջինները
պիտի ըլլան,
Ու անոնց թագուհիները քու դայեակ-
ներդ.
Երեսնին գետինը ծռելով քեզի երկրպա-
գութիւն պիտի ընեն,
Ու աքսերդ փոշին պիտի լզեն,
Եւ պիտի գիտնաս որ ես եմ Տէրը.
Վասն զի ինծի ապաւինողները պիտի
չամչնան։
24—Միթէ հզօրէն աւարը կ'առնու՞,
Կամ *անարկու մարդուն գերի առածը
կ'ազատի՞։
25—Բայց Տէրը այսպէս կ'ըսէ.
Հզօրին գերի առածը անգամ պիտի
առնու,
Ու բռնաւոր մարդուն աւարը պիտի ա-
զատուի.
Ու քեզի հետ վիճողներուն դէմ ես
պիտի վիճիմ,
Ես քու ազատներդ ես պիտի ազատեմ,
26—Ու քեզ հարստահարողներուն իրենց
մարմինները պիտի կերցնեմ,
Ես իրենց արիւնը նոր գինիի պէս Խմելով
պիտի գինովնան.
Ես ամէն մարմին պիտի գիտնայ
Թէ ես եմ Տէրը, որ քեզ ազատեցի,
Ու քու Փրկիչդ, Յակոբի Հզօրը։

*Կամ, իրաւունք ունեցող

Գլ. Ե

Տէրը այսպէս կ'ըսէ.
Ո՞ւր է ձեր մօրը ապահարզանի թուղթը,
Որով ես զանիկա արձակեցի.
Կամ ո՞վ է այն պարտատէրս,
Որու ես ձեզ ծախեցի.
Ահա դուք ձեր անօրէնութիւններուն
համար ծախուեցաք,
Ու ձեր մօրը ձեր յանցանքներուն հա-
մար արձակուեցաւ։
2—Ինչո՞ւ համար իմ եկած ատենս
մարդ մը չկար,
Ո- կանչած ատենս պատասխան առնող
մը չկար.
Միթէ իմ ձեռքս բնաւ կարճցա՞ւ որ
փրկելու կարող չըլլամ,
Կամ թէ ազատելու զօրութիւն չունի՞մ.
Ահա իմ սաստկութիւնս ծովը կը ցամքեցը-
նեմ,
Գետերը անապատ կը դարձնեմ.
Անոնց ձուկերը ջուր չըլլալուն համար կը
հոտին
Ու ծարաւէն կը մեռնին։
3—Երկինքները խաւար կը հագցնեմ,
Ու ծածկոցի համար անոնց վրայ քուրձ
կը դնեմ։
4—Տէր Եհովա ինծի խրատուողներու
լեզու տուաւ,
Որպէս զի յոգնածին խօսքով օգնել
գիտնամ,
Առին առաւ զիս կ'արթնցնէ,
Անիկա իմ ականջս կ'արթնցնէ,
Որպէս զի աշակերտներու պէս լսեմ։
5—Տէր Եհովա իմ ականջս բացաւ,
Ու ես անհնազանդ չեղայ, ետ չդարձայ։
6—Իմ կռնակս՝ զարնողներուն,
Ու այտերս՝ փետողներուն տուի.
Իմ երեսս նախատինքէն ու թուքէն
չծածկեցի։
7—Բայց Տէր Եհովա ինծի կ'օգնէ,
Անոր համար ամօթահարուած պիտի չըլլամ.
Անոր համար իմ երեսս գայլածաղի պէս
բրի,
Ու գիտեմ որ պիտի չամչնամ։
8—Զիս արդարացնողը մօտ է.
Ո՞վ ինծի հետ պիտի վիճի. միկտեղ
դատաստանի կանգնինք.
Իմ դատախազս ո՞վ է. թող ինծի մօ-
տենայ։

9—Ահա Տէր Նովա ինձի պիտի օգնէ.
Ո՞վ է անիկա որ ինձ յանցաւոր պիտի հանէ.
Ահա ամէնը հանդերձի պէս պիտի մաշին,
Ցեցը պիտի ուտէ զանոնք։
10—Ձեր մէջ Տէրոջմէ վախցող,
Անոր ծառային ձայնը մտիկ ընող ո՞վ կայ,
Որ մութի մէջ կը քալէ ու բնաւ լոյս չունի.
Թող անիկա Տէրոջը անուանը ապաւինի,
Ու իր Աստուծոյն կռթնի։
11—Ահա դուք ամէնդ, որ կրակ կը վառէք
Ու կայծերով կը չրջապատիք,
Ձեր կրակին լուսովը
Ու ձեր վառած կայծերուն մէջ քալեցէք.
Անիկա ձեզի իմ ձեռքէս պիտի ըլլայ,
Դուք տրտմութեամբ պիտի պառկիք։

Գլ. Ծ Ա

Ով դուք, արդարութեան հետեւողներ
Ու Տէրը փնտռողներ, ինձի մտիկ ըրէք.
Դուք այն վէմին նայեցէք, ուրկէ կտրուեցաք,
Ու այն գուբին փոսին՝ ուրկէ փորուեցաք։
2—Ձեր հօրը Աբրահամի
Ու ձեզ ծնանող Սառային նայեցէք.
Քանզի զանիկա կանչեցի, որ մէկ մարդ էր,
Ու զանիկա օրհնեցի ու բազմացուցի։
3—Վասն զի Տէրը Սիօնը պիտի մխիթարէ,
Անոր բոլոր աւերակները պիտի մխիթարէ.
Ու անոր անապատը Եդեմի պէս,
Ու անոր անապատիները Տէրոջը դրախտին պէս պիտի ընէ.
Անոր մէջ ցնծութիւն և ուրախութիւն,
Գոհութեան և օրհնութեան ձայն պիտի գտնուի։
4—Ով իմ ժողովրդս, ինձի մտիկ ըրէ,
Ով իմ ազգս, ինձի ականջ տուր.
Քանզի ինծմէ օրէնք պիտի ելլէ,
Ու իմ իրաւունքս ժողովրդներուն լոյս ըլլալու համար պիտի հաստատեմ։
5—Իմ արդարութիւնս մօտ է, իմ փրկութիւնս եղած է,
Ու իմ բազուկներս ժողովրդները պիտի դատեն.
Կղզիները ինծի պիտի յուսան
Ու իմ բազուկս պիտի ապաւինին։
6—Աչքերնիդ վէր վերցուցէք դէպ ի երկինք,
Ու վար նայեցէք դէպ ի երկիր.
Քանզի երկինքը ծուխի պէս պիտի անցնի,
Ու երկիր հնդերձի պէս պիտի մաշի,
*Նմանապէս անոր բնակիչներն ալ պիտի մեռնին.
Բայց իմ փրկութիւնս յաւիտենական պիտի ըլլայ,
Ու իմ արդարութիւնս պիտի չպակսի։
7—Ինծի մտիկ ըրէք, ով արդարութիւն ճանչցողներ,
Ես իմ օրէնքս ձեր սրտին մէջ դոհող ժողովուրդ.
Մարդոց նախատինքէն մի վախնաք,
Ու անոնց բամբասանքէն մի զարհուրիք։
8—Վասն զի ցեցը պիտի ուտէ զանոնք հանդերձի պէս,
Ես մկը պիտի ուտէ զանոնք բուրդի պէս.
Բայց իմ արդարութիւնս յաւիտեան,
Ու իմ փրկութիւնս ամէն դարերու մէջ պիտի ըլլայ։
9—Արթնցիր, արթնցիր, ով Տէրոջը բազուկը, զօրութիւն հագիր.
Արթնցիր առաջուան օրերուն պէս,
Նաամանցիէ անցած դարերուն պէս.
Դուն անիկա չէ՞ որ Ռահաբը կտրատեցիր
Ու վիշապը վիրաւորեցիր։
10—Դուն անիկա չէ՞ որ ծովը,
Մեծ անդունդին ջուրերը, ցամքեցուցիր,
Ես ծովուն խորունկ տեղերը ճամբայ ըրիր,
Որպէս զի փրկուածները անցնին։
11—Ու Տէրոջը փրկածները պիտի դառնան,
Ու երգելով Սիօն պիտի գան,
Եւ անոնց գլուխն վրայ յաւիտենական ուրախութիւն պիտի ըլլայ։
Անոնք ցնծութիւն և ուրախութիւն պիտի առնան,

*Կամ, Մժեղի պէս

Տրտմութիւնը ու հեծութիւնը անդնդի պիտի հեռանայ։
12—Ես եմ, ես եմ որ ձեզ կը մխիթարեմ.
Դուն ո՞վ ես, որ մահկանացու մարդէն
Ու խոտի նմանելիք մարդու զաւակէն կը վախնաս.
13—Ու քեզ սահեցնող, երկինքները տարածող
Ու երկրի հիմերը դնող Տէրը կը մոռնաս.
Ու բռնաւորին սրամտութենէն միշտ ամէն օր կը վախնաս,
Իբր թէ ւէդ կորնծնելու պատրաստուած է.
Բայց հիմա ո՞ւր է բռնաւորին սրամտութիւնը,
14—Բայց կապուածը չուտով պիտի արձակուի,
Ու գուբին մէջ պիտի չմեռնի,
Ես իր հացը պիտի չպակսի։
15—Քանզի ես Տէր Աստուածդ եմ եմ,
Որ ծովը կը յանդիմանեմ՝ երբ անոր ալիքները կը գոռան.
Իմ անունս Նովա Սաբաւոթ է։
16—Ու իմ խօսքերս քու բերանդ դրի,
Ձեռքիս ձեւքիս հովանիովը ծածկեցի,
Որպէս զի երկինքը հաստատեմ ու երկրի հիմերը դնեմ,
Ես Սիօնի ըսեմ, Քու ժողովուրդս ես։
17—Արթնցիր, արթնցիր — ելիր, ով Երուսաղէմ,
Որ Տէրոջը ձեռքէն անոր բարկութեանը բաժակը խմեցիր.
Թմրութեան բաժակին մրուրը քամելով խմեցիր։
18—Անոր բոլոր ծնած որդիներէն՝ իրեն առաջնորդ ոչ չկայ,
Ու բոլոր մեծցուցած աղաքներէն՝ իրեն ձեռնտու չկայ։
19—Այս երկու բաները քեզի պատահեցան.
Ո՞վ քեզի սիրտ ցաւի.
Կործանում ու կատորած, սով ու սուր.
Քեզ ինչո՞վ մխիթարեմ։
20—Քու տղաքդ մարած՝
Ամէն փողոցներուն գլուխը կը պառկին,
Որոգայթի մէջ բռնուած յանդիմանութիւնովը,
Քու Աստուածդ յանդիմանութիւնովը լեցուած են։
21—Ուրեմն ասիկա մտիկ ըրէ, ով աղքտիկ,
Որ արբած ես, բայց ոչ գինիէ։
22—Այսպէս կ'ըսէ քու Տէրդ,
Ու քու Աստուածդ, որ իր ժողովրդին գաղը կը պաշտպանէ.
Ահա քու ձեռքէդ թմրութեան բաժակը,
Իմ բարկութեանս բաժակին մրուրը, սրտիդ.
Զանիկա մէկ կրկնն ալ պիտի չխմես.
23—Ու զանիկա քեզ հարստահարողներուն ձեռքը պիտի դնեմ,
Որոնք քու անձիդ կ'ըսէին. Ծռէ որպէս զի անցնինք.
Ու դուն կռնակդ, անցնողներուն համար,
Գետնի պէս ու փողոցի պէս դրիր։

Լ. Ծ Ե

Արթնցիր, արթնցիր, քու զօրութիւնդ հագիր, ով Սիօն.
Քու փառաւոր հանդերձներդ հագիր,
Ով Երուսաղէմ սուրբ քաղաք.
Քանզի մէկ կրկնն ալ անթլփատ ու պիղծ մկը քու մէջդ պիտի չմտնէ։
2—Փոշին փռզիլ թօթուէ,
Ել նստէ, ով Երուսաղէմ.
Քու պարանոցիդ կապերը քակէ,
Ով Սիօնի գերի ազլիկը։
3—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
Զրի ծախուեցաք,
Ու առանց սահակի պիտի փրկուիք։
4—Քանզի Տէր Նովա այսպէս կ'ըսէ.
Իմ ժողովրդս առաջ եգիպտոս իջաւ
Որպէս զի հոն պանդխտութիւն ընէ.
Ու Ասորեաստանցիք առանց պատճառի անոր բռնութիւն ըրին։
5—Ես հիմա հոս ի՞նչ ունիմ, կ'ըսէ Տէրը,
Որ իմ ժողովրդս պարապ տեղ փըշուեցաւ.
Անոր վրայ իշխողները ղռռիլ կը պատասցնեն, կ'ըսէ Տէրը,
Ու միշտ ամէն օր իմ անունս կը հայհոյուի։
6—Ասոր համար իմ ժողովրդս պիտի գիտնայ իմ անունս.
Ասոր համար այն օրուան մէջ ուխտ ընողս,
Թէ ես ան եմ՝ որ կը խօսէի. ահա ես եմ։

7—Ի՛նչ գեղեցիկ են լեառներուն վրայ անոր ոտքերը՝
Ու աւետաւո՛ր կը բերէ, խաղաղութիւն կը քարոզէ,
Բարութեան աւետաւո՛ր կը բերէ, փրկութիւն կը քարոզէ,
Ո՛ր Սիոնի կ՚ըսէ, Քու Աստուածդ կը թագաւորէ։
8—Քու պահապաններդ ձայն պիտի վերցնեն։
Ճնծութեան ձայնով մրթերան պիտի երգեն.
Քանզի երբ Տէրը Սիոնը կա՛ դարձնէ,
Անոնք *յայտնապէս պիտի տեսնեն։
9—Ով երուսաղէմի աւերակներդ,
Ճնծութեան ձայնով մեկտեղ ուրախացէ՛ք.
Քանզի Տէրը իր ժողովուրդը մխիթարեց,
Ո՛ր Երուսաղէմը փրկեց։
10—Տէրը իր սուրբ բազուկը մերկացուց
Բոլոր ազգաց աչքերուն առջեւ,
Ու երկրի ամէն ծայրերը
Մեր Աստուծոյն փրկութիւնը պիտի տեսնեն։
11—Գացէ՛ք, գացէ՛ք, անկէ ելէ՛ք,
Պիղծ բանի մի դպչի՛ք,
Անոր միջէն ելէ՛ք.
Մաքուր եղէ՛ք, ով Տէրոջը սպասները վերցնողնե՛ր։
12—Քանզի ո՛չ թե արտոռալով պիտի ելլէ՛ք,
Եւ ո՛չ թե փախչելով պիտի երթա՛ք.
Հապա Տէրը ձեր առջեւէն պիտի երթայ,
Ու Իսրայէլի Աստուածը ձեզի թիկնապահ պիտի ըլլայ։
13—Ահա իմ ծառաս յաջողութիւն պիտի գտնէ,
Ե՛ւ պիտի մեծնայ ու պիտի բարձրանայ ու խիստ պիտի վսեմանայ։
14—Ինչպէս շատերը †անոր վրայ* ապշեցան,
(Անոր երեսին մարդու նը՛մանը,
Ու կերպարանքին մարդու որդիներէն տեսնի աւելի տգեղած ըլլալուն համար,)
15—Այնպէս շատ ազգե՛ր պիտի *զարմացնէ,
Թագաւորները անոր առջեւ իրենց բերանը պիտի գոցեն.
Վասն զի իրենց չպատմուածը պիտի տեսնեն,
Ու իրենց չլսածը պիտի խմանան։

ԳԼ. ՆԳ

Ո՞վ հաւատաց մեր տեսե՛ր լուրին,
Ու Տէրոջը բազուկը որո՞ւ յայտնուեցաւ։
2—Քանզի անիկա անոր առջեւ մատաղտուկի պէս,
Ու ծարաւատ երկրի խո՛ղ արմատի պէս բուսաւ.
Անիկա կերպարանք կամ վայելչութիւն չունէր՝ որ անոր նայէ՛նք,
Ոչ ալ այնպիսի երեւոյթ մը՝ որ անկէ հաճո՛ւիլ։
3—Անիկա մարդոցմէ անարգուեցաւ ու երեսէ ձգուեցաւ,
Վշտակիր ու ցաւերու տեղեակ եղաւ.
Ու անկէ երես դարձնելու մարդու պէս եղաւ,
Անարգուեցաւ ու զանիկա չյարգեցինք։
4-Իրաւ որ անիկա մեր ցաւերը վերցուց
Ու մեր վիշտերը իր վրայ առաւ.
Ե՛ւ մենք զանիկա վիրաւորուած, Աստուծմէ զարնուած
Ու չարիքի հանդիպած սեպհցինք։
5—Բայց անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ,
Ե՛ւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ.
Մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ,
Ու անոր վէրքերովը մենք բժշկուեցանք։
6—Ամէնս ոչխարներու պէս մոլորեցանք։
Ամէն մէկս իր ճամբան դարձաւ,
Ու Տէրը մեր ամէնուն անօրէնութիւնը անոր վրայ դրաւ։
7—Անիկա անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ,
Բայց իր բերանը չբացաւ.
Մորթուելու տարուող ոչխարի պէս,

*Կամ, դէմ յանդիման էրաւ. ԵԲՐ. աչք աչքի
†ԵԲՐ. քու վրադ

*Կամ, սրսկէ

Ու իր խուզողներուն առջեւ մանո՛ կեցող մաքիի պէս,
Այնպէս իր բերանը չբացաւ։
8—*Նեղութեամբ և դատապարտութեամբ* վերցաւ.
Ու անոր ազգատոհմը ո՞վ պիտի պատմէ.
Քանզի անիկա կենդանիներուն երկրէն կտրուեցաւ,
Անիկա իմ ժողովրդիս յանցանքին համար զարնուեցաւ։
9—Ու անոր գերեզմանը ամբարիշտներու հետ պրաւեցաւ.
Բայց երբ մեռաւ, հարուստին հետ եղաւ.
†Քանզի անիկա անօրէնութիւն մը չգործեց,
Ու անոր բերանին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ։
10—Բայց Տէրը հաճեցաւ որ զանիկա ծեծելով ցաւերու մատնէ.
Անոր անձը մեղքի համար զոհ ընծայէիր եւ անիկա սերունդ պիտի տեսնէ, իր օրերը պիտի երկնցնէ,
Ու Տէրոջը կամքը անոր ձեռքով պիտի յաջողի։
11—Իր անձին աշխատութեանը պտուղը տեսնելով պիտի կշտանայ.
Իմ արդար ծառաս իր գիտութիւնովը շատերը պիտի արդարացնէ,
Քանզի անոնց անօրէնութիւնները ինք պիտի կրէ։
12—Անոր համար մեծերուն հետ բաժին պիտի տամ անոր,
Ե՛ւ հզօրներուն հետ աւարէն բաժին պիտի առնէ.
Քանզի իր անձը մահուան ||մատնեց,
Ու յանցագործներուն հետ սեպուեցաւ.
Ե՛ւ շատերուն մեղքը վերցուց,
Ու յանցագործներուն համար միջնորդութիւն ըրաւ։

ԳԼ. ՆԴ

Ով չծնանող անա՛ղ, ցնծա.
Ով ծնունդական ցաւ չքաշող, ցնծութեամբ գոչէ և աղաղակէ.

*Կամ, Նեղութեամբ և դատաստանէ
†Կամ, Թէև
‡Կամ, ըլլալէն ||ԵԲՐ. Թափեց

*Կամ, Յանկարծական

Քանզի երեսէ ձգուածին տղաքները
Այր ունեցողին տղաքներէն շատ պիտի ըլլան, կ՚ըսէ Տէրը։
2—Վրանիդ տեղը լայնցո՛ր,
Ու քու բնակարանիդ վարագոյրները տարածուի՛ն.
Մի խնայե՛ր, չնա՛նեղդ երկնցո՛ր ու ցիցերդ ամրցո՛ր։
3—Քանզի աջ ու ձախ կողմը պիտի տարածուի՛ս.
Ե՛ւ քու սերունդդ ազգե՛ր պիտի ժառանգէ,
Ու աւերած քաղաքները բնակիչներով պիտի լեցնէ։
4—Մի վախնա՛ր, վասն զի պիտի չամչուի՛նաս.
Ու մի պատկառի՛ր, վասն զի պիտի չնախատուի՛ս.
Քանզի քու մանկութեանդ ամօթը պիտի մոռնաս,
Ե՛ւ քու այրեւարութեանդ նախատինքը ալ պիտի չյիշե՛ս։
5—Քանզի քու այրդ քու Սաեղծիչդ է,
Անոր անունը Եհովա Սաբաւովթ է.
Ու քու Փրկիչդ Իսրայէլի Սուրբն է,
Անիկա բոլոր երկրի Աստուածը պիտի կոչուի՛։
6—Քանզի Տէրը քեզ, երեսէ ձգուած և հոգովd վշտացած կնոջ պէս,
Ու մերժուած նորահասակ կնոջ պէս կանչեց, կ՚ըսէ քու Աստուածդ։
7—Փոքր վայրկեան մը քեզ թողուցի,
Բայց մեծ ողորմութիւններով քեզ պիտի ժողվե՛մ։
8—*Բիչ մը* սրսմնոտութեամբ, մէկ վայրկեան երեսս քեզմէ ծածկեցի,
Բայց յաւիտենական ողորմութիւնով քեզի պիտի ողորմի՛մ,
Կ՚ըսէ քու Փրկիչդ Եհովա։
9—Քանզի սա՛կ ինծի Նոյի ջուրերուն պէս է.
Ինչպէս երդում բրի՛, թէ Նոյի ջուրերը էլ երկրի՛ վրայ չանցնի՛ն,
Այնպէս երդուե՛մ բրի որ քեզի չբարկանա՛մ ու քեզ չյանդիմանե՛մ։
10—Քանի՛ լեռները պիտի վերնան,
Ե՛ւ բլուրները պիտի սասանին,

Բայց իմ ոգորմութիւնս քեզմէ պիտի չվերնայ,
Ու իմ հաստատութիւնս ոտքդ պիտի չսասանի,
Կ'ըսէ Տէրը, որ քեզի կ'ողորմի։
11—Ով տխրահարեալ զրտնուած անմխիթար ոգորմելի,
Ահա ես քու քարերդ *գոյնզգոյն պիտի դնեմ,
Ու քեզ չափիւ զանոնով պիտի հիմնեմ.
12—Ու քու մարգարիտներդ՝ †կարմիր յաղինիներով՝,
Ու դռներդ՝ կարկեհաններով,
Ու բոլոր ֆպարեպատներդ թանկագին քարերով պիտի շինեմ.
13—Ու քու բոլոր որդիներդ Տէրոջմէ սորված պիտի ըլլան,
Ու քու որդիներուդ խաղաղութիւնը շատ պիտի ըլլայ։
14—Դուն արդարութեամբ պիտի հաստատուիս,
Բռնութենէ հեռու պիտի ըլլաս, որովհետեւ դու չվախնաս,
Ու սարսափէն՝ որովհետեւ քեզի չմօտենայ.
15—Ահա անշուշտ ||հարուած պիտի ընեն, բայց ինծմէ չէ.
Ով որ քու վրադ յարձակի՝ քու կողմդ պիտի դառնայ։
16—Ահա կրակի մէջ ածուխները փչող
Ու իր գործին համար գործիք հանող դարբինը ես ստեղծեցի,
Ու աւերելու համար՝ կործանողը ես ստեղծեցի։
17—Քեզի դէմ հնարուած գործիքը յաջողին պիտի չյաջողի,
Ու քու վրադ դատաստանի ելլող ամէն լեզուս պիտի դատապարտես։
Տէրոջը ծառաներուն ժառանգութիւնը ասիկա է,
Ու անոնց արդարութիւնը ինծմէ է, կ'ըսէ Տէրը։

*Կամ, ծարաւով
†Կամ, յասպիս քարերով
‡Եբր. սահմաններդ
||Կամ, ինծմէ չեզող պատերազմներ պիտի գան. ով որ քու դէմդ պատերազմութիւն կ'ընէ

ԳԼ. ՆԵ

Ով բոլոր ծարաւածներ, լուերուն եկէք.
Ու սակ չունեցողներ, եկէք, ծախու առէք ու կերէք.
Եկէք, առանց սակի և առանց գնոյ Գինի ու կաթ ծախու առէք։
2—Ինչո՞ւ ձեր սակը կը վատնէք՝ ոչ թէ հացի համար,
Ու ձեր վաստակը՝ այնպիսի բանի համար որ չկշտացնէր.
Ուշադրութեամբ ինծի մտիկ ըրէք, որպէս զի բարիքներ ուտէք,
Ու ձեր հոգին պարարտութեամբ զուարճանայ։
3—Ձեր ականջը խոնարհեցուցէք ու ինծի եկէք.
Մտիկ ըրէք, ու ձեր հոգին պիտի ապրի.
Ու ձեզի հետ յաւիտենական ուխտ մը պիտի ընեմ,
Դաւիթի հաստատուն ողորմութիւնները չէ՞ որ։
4-Ահա զանիկա ժողովուրդներուն վկայ,
Ազգերուն առաջնորդ ու հրամանատար դրի։
5—Ահա չգիտցած ազգդ պիտի կանչես,
Ու քեզ չճանչցող ազգերը քեզի պիտի դիմեն
Քու Տէր Աստուածդ համար
Ու Իսրայէլի Սուրբին համար,
Քանզի անիկա քեզ փառաւորեց։
6—Տէրը փնտռեցէք, քանի որ անիկա կը գտնուի.
Զանիկա կանչեցէք, քանի որ անիկա մօտ է։
7—Թող ամբարիշտը իր ճամբային,
Ու անօրէնն մարդը իր խորհուրդներուն հրաժարի,
Ու Տէրոջը դառնայ, ու անիկա պիտի ողորմի անոր,
Ու մեր Աստուծոյն, վասն զի անիկա առատապէս կը ներէ։
8—Քանզի իմ խորհուրդներս ձեր խորհուրդները չեն,
Ու ձեր ճամբաները իմ ճամբաներս չեն,
Կ'ըսէ Տէրը.
9-Հապա որչափ երկինք երկրէ բարձր է,
Անոնցմէ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են,

Ու իմ խորհուրդներս ձեր խորհուրդներէն։
10—Ինչպէս որ ինչպես անձրեւը ու ձիւնը երկինքէն կ'իջնէ և հոն չդառնար,
Հապա երկիրը կ'առուգէ ու զանիկա պտղաբեր և արգասաւոր կ'ընէ,
Ու ցանողին հաւնտ և ուտողին հաց կուտայ,
11—Իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ,
Ինծի պարապ պիտի չդառնայ.
Հապա իմ կամքս պիտի կատարէ,
Ու յաջողութեամբ ինծի զրած գործն էն բանը՝ որու համար զանիկա ղրկեցի։
12—Քանզի ուրախութեամբ պիտի ելլէք,
Ու խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք.
Լեռները ու բլուրները ձեր առջեւէն ցնծութեամբ պիտի ազաղակեն,
Ու դաշտերուն բոլոր ծառերը ծափ պիտի զարնեն։
13—Փուշին տեղ մայր,
Ու դժնիկին տեղ մրտենի պիտի բուսնի.
Ու սասիկա Տէրոջը անուանը փառքին համար
Անջինջ ու յաւիտենական նշան մը պիտի ըլլայ։

ԳԼ. ՆԶ

Տէրը այսպէս կ'ըսէ.
Իրաւունքը պահեցէք ու արդարութիւն ըրէք,
Քանզի իմ փրկութիւնս գալու
Ու արդարութիւնս յայտնուելու մօտ է։
2—Երանի՛ այն մարդուն՝ որ ասիկա կ'ընէ,
Ու մարդու որդիին՝ որ ասիկա ամուր կը բռնէ,
Այսինքն շաբաթը կը պահէ ու զանիկա չպղծէր,
Ու ամէն անիրաւութիւն ընելէ իր ձեռքը հոս կը պահէ։
3—Ու Տէրոջը յարող օտարականի որդին թող չզրուցէ՝ ըսելով,
Տէրը զիս իր ժողովուրդէն բոլորովին զատեց.
Ու նկրպտինն ալ թող չըսէ,
Ահա ես չոր ծառ մըն եմ։
4—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ այն նկրպտիններուն,
Որոնք իմ շաբաթներս կը պահեն,
Ու ինծի հաճոյ եղածը կ'ընտրեն,
Ու իմ ուխտիս մէջ հաստատ կը կենան.
5—Անոնց՝ իմ տանս մէջ և պարիսպներուս մէջ
Տղաքներէ ու ձիղխիներէ աւելի ազէկ տեղ ու անուն պիտի տամ.
Անոնց յաւիտենական անուն պիտի տամ,
Որ պիտի չկտրի։
6—Ու այն օտարականի որդիները որոնք Տէրոջը յարեր են՝
Անոր ծառայութիւն ընելու,
Տէրոջը անունը սիրելու.
Ու անոր ծառաները ըլլալու համար,
Այսինքն ամէն անոնք որ շաբաթը կը պահեն ու չեն պղծեր,
Ու իմ ուխտիս մէջ հաստատ կը կենան,
7—Զանոնք ալ իմ սուրբ լեռս պիտի բերեմ,
Ու իմ աղօթքի տանս մէջ զանոնք պիտի ուրախացնեմ.
Անոնց ողջակէզները ու զոհերը իմ սեզանիս վրայ ընդունելի պիտի ըլլան,
Քանզի իմ տունս բոլոր ազգերուն համար աղօթքի տուն պիտի կոչուի։
8—Այդպէս կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ,
Որ Իսրայէլի ափսորուածները կը ժողվէ,
Անոր ժողովուածներուն վրայ ուրիշներ ալ պիտի ժողվեմ անոր,
9—Ով դաշտի բոլոր գազաններ,
Ով անտառի բոլոր գազաններ, ուտելու եկէք։
10—Անոր բոլոր պահապաններըը կոյր են, բան չը գիտեր,
Ամէնն ալ համր շուներ են, հաչելու կարող չեն.
Անոնք կը ցնորին, կը պառկին, քունը կը սիրեն.
11—Այո՛ շատակեր ու անյագ շուներ են,
Ու անոնք խնամողութենէ զուրկ հովիւներ են.
Ամէնը իրենց ճամբաներուն գարձան,
Ամէն մէկը իր կողմէն իր անիրաւ վաստակը փնտռելով, ոս ըսէն,

*Կամ, կը ներհան

12—Նկէք, գինի բերիմ,
Ու ցգիով արքենանք.
Վաղն ալ այսօրուան պէս
Ո՞ւ ալ աւելի առատ պիտի ըլլայ։

Գլ. ՆԿ

Արգարը կը կարուսի, և ուշադրութիւն ընող մարդ չկայ.

Ու բարի մարդիկը ալ՝ չեն կրնար կը վերցուին,
Առանց մեկուն խնամալուն թէ արդարը
չարիքին երեսէն կը վերցուի։
2—Անիկա խաղաղութեան մէջ կը մտնէ.
Ուղղութեամբ քալողները
իրենց անկողիններուն վրայ հանգստութիւն կը գտնեն։
3—Բայց դուք, ով վհուկի որդիներ,
Շնացողի ու պոռնիկի սերունդ, հոս մօտեցէք.
4—Դուք ո՞վ ծաղր կ'ընէք,
Ձեր բերանը որո՞ւ վրայ կը լայնցնէք,
Ո՞ւ լեզուներ կ'երկնցնէք.
Չէ՞ որ դուք անօրէնութեան զաւակներ
ու սուտութեան սերունդ էք։
5—Դուք աւելն կանանչ ծառերու տակ
*Դեզ ի կուռքերը" ցանկութեամբ կը սպաքնաք.
Ձղաձիները ձորերու մէջ,
Վէմերու խոռոչներուն մէջ կը մորթէք։
6—Քու բաժինդ ձորին սահակ ժողովրդոյն մէջ է.
Քու վիճակդ անոնք են, անոնք.
Անոնց անգամ նուէր թափեցիր, ընծայ մատուցիր.
Միթէ ես սոսնց կրնամ համբերել,
7—Դուն քու անկողնդ բարձր ու ընդարձակ լեռան վրայ դրիր.
Հոն ալ զոհ ընելու ելար։
8—Ու դռներուն ու դրանդիքներուն
հաւուր քու յիշատակդ դրիր.
Քանզի ինծմէ ուրիշն քու անձդ ծածկացուցիր,
Ու վեր ելլելով անկողնդ լայնցուցիր.
Ու անոնց հետ դաշնագրութիւն ըրիր,
Անոնց անկողինը սիրեցիր, ու անոր հասդ տեղ պատրաստեցիր։
9—Ու թագաւորին քով հոգաւոր լուղով գացիր,
Ու անուշահոտութիւններդ չատցուցիր,
Ու դեսպաններդ հեռաւոր տեղեր ղրկեցիր,
Ու ինքզինքդ մինչև դժոխք իջեցուցիր։
10—Քու ճամբադ երկայնութենէն յոգնեցար,
Բայց ըսյս չկայ՝ չըսիր.
Քու ձեռքիդ կեանքը գտար,
Անոր համար չթուլցար։
11—Ու դուն արմ՝ զարհուրեցար ու վախցար, որ սատիսս ելար,
Ու սրա չյիշեցիր ու սիրդ չդրիր.
Չի՞ որ իմ շատանգամ լուռ կենալուս համար է
Որ ինծմէ չես վախնար։
12—Ես քու արդարութիւնդ ու գործերդ պիտի հրատարակեմ,
Որոնք քեզի օգուտ պիտի չընծեն։
13—Երբ գուն ազաղակես, թող քու ժողովածներդ քեզ փրկեն.
Բայց ամէնը հովը պիտի տանի,
Շունչ մը զանոնք պիտի առնէ.
Սակայն ինծի յուսացողները երկիրը իբրև կալուածք պիտի տանուին,
Ու իմ սուրբ լեռս պիտի ժառանգեն.
14—Ու պիտի ըսեն,
Բարձրացուցէք, բարձրացուցէք.
Ճամբայ պատրաստեցէք,
Խոչը իմ ժողովուրդիս ճամբայէն վերցուցէք։
15—Քանզի այսպէս կ'ըսէ Բարձրը ու Բարձրեալը,
Որ յաւիտենականութեան մէջ կը բնակի ու անոր անունը Սուրբ է.
Ես բարձր ու սուրբ տեղը կը բնակիմ,
Բայց կաթած ու խոնարհ հոգի ունեցողին հետ եմ,
Որպէս զի խոնարհներուն հոգին կենդանացնեմ,
Ու կաթած սիրտերը ապրեցնեմ։
16—Քանզի յաւիտեան պիտի չվիճիմ,
Ու միշտ պիտի չբարկանամ.
Վասն զի իմ առջևս հոգիները պիտի մաշէին.
Ու այն կեանքերը՝ զորոնք ես ստեղծեցի։
17—Անոր ագահութեանը անօրէնութեանը համար բարկացայ
Ու զանիկա զարկի, իմ երեսս ծածկեցի ու սրտոտեցայ.
Ու ապստամբը իր կամքին ճամբուն հեռու տեւեցաւ։

*Կամ, Բեւեհներուան մէջ։ Գլ. ա. 29։

18—Անոր ճամբաները տեսայ, ու զանիկա պիտի բժշկեմ,
Ու անոր առաջնորդութիւն պիտի ընեմ,
Ու զանիկա ու անոր սգաւորները պիտի մխիթարեմ։
19—Շրթունքներուն պտուղը ես պիտի ստեղծեմ.
Խաղաղութիւն, խաղաղութիւն ըլլայ հեռուն եղողին
Ու մօտը եղողին, կ'ըսէ Տէրը,
Ու ես զանիկա պիտի բժշկեմ։
20—Բայց ամբարիշտները ալեծուփ ծովու պէս են, որ չկրնար հանդարտիլ,
Որուն ջուրերը տիղմ ու ցեխ դուրս կը նետեն։
21—Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան, կ'ըսէ իմ Աստուածս։

Գլ. ՆԼ

*Բարձրաձայն կանչէ և մի խնայեր,
Ձայնդ փողի պէս բարձրացուր.
Ես իմ ժողովուրդիս՝ իրենց յանցանքը,
Ու Յակոբի տանը իրենց մեղքերը պատմէ։
2—Բայց անոնք ամէն օր զիս կը փընտռեն.
Ես իմ ճամբաներս գիտնալու կը փափաքին,
Ազնիւի ազգի մը պէս՝ որ արդարութիւն կ'ընէ,
Ու իր Աստուծոյն իրաւունքը զանց չըներ.
Ինծմէ արդարութեան կանոնները կը հարցնեն.
Աստուծոյ մօտենալու կը փափաքին.
3—Ո՞ւ կ'ըսեն,
Մենք ինչո՞ւ ծոմ պահեցինք, և դուն չտեսար,
Մեր անձերը չարչարեցինք, ու դուն չգիտցար։
Ահա ձեր ծոմապահութեան օրը ձեր բաղձանքը կը կատարէք,
Ես ձեր ամէն †պահանջատիները խստութեամբ կը պահանջէք"։
4—Ահա կռիւի ու վէճի համար

*Եբր. կակղագոյ
†Կամ, ծառաները կը հարստահարէք

Ես չարութեան բռունցքով զարնելու համար ծոմ կը պահէք.
Այս օրուան պէս ծոմ մի պահէք,
Որ ձեր ձայները բարձրերը լսել տաք։
5—Իմ ընտրած ծոմապահութիւնս
Ո՞ւ մարդու մը իր անձը խոնարհեցնելու օրը սպսպէ՞ս կ'ընէս.
Իր գլուխը կնիկի պէս ծռելով,
Ես էր †—է քարձ ու մոխիր տարածե՞վ կ'ըսես։
Արդեօք ծոմապահութիւն ու Տէրոջը ընդունելի՞ օր պիտի անուանես։
6—Ահա այս է իմ ընտրած ծոմապահութիւնս,
Որ անիրաւութեան կապերը փակես,
Ես լուծին կապերը քակելու,
Ու հարստահարութիւն կրողները ազատ թողուս,
Ես ամէն լուծը կոտրես,
7—Քու հացդ անօթիին բաժնես,
Ես թափառական անանկները տունդ ընդունիս,
Երբ մերկ մը տեսնես՝ զանիկա հագուեցընես,
Ու քու մարմնէդ փախ չպահես։
8—Այն ատեն քու լոյսդ առաւօտի պէս պիտի ծագի,
Ու բժշկութիւնդ չուտով պիտի *յայտնուի,
Ես քու արդարութիւնդ քու առջևէդ պիտի երթայ,
Ու Տէրոջը փառքը քու հետևէդ քեզ պիտի պաշտպանէ։
9—Այն ատեն պիտի կանչես, և Տէրը պատասխան պիտի տայ.
Պիտի ազաղակես, ու անիկա պիտի ըսէ,
Ահա հոս
Եթէ քու միջէդ լուծը,
Մատով ցուցնելը ու չար խօսքերը վերցընես,
10—Եթէ †անօթիին յօժարութեամբ կերակրես՝,
Ես կարօտին հոգին կշտացնես,
Այն ատեն քու լոյսդ խաւարի մէջ պիտի ծագի,
Ու քու խաւարդ կէսօրուան պէս պիտի ըլլայ։

*Եբր. բուսնի
†Եբր. քու հոգիդ անօթիին ընծայես

11—Եւ Տէրը մէյ մի քեզի առաջնորդութիւն պիտի ընէ,
Ու քու հոգիդ *երաշտութեան աեն՝ պիտի կշտացնէ,
Եւ ոսկորներդ պիտի զօրացնէ
Ու դուն ջրարբի պարտէզի պէս
Եւ ջուրը չպակսող աղբերակի պէս պիտի ըլլաս,
12—Ու քեզմէ Հնոյները հին աւերակները պիտի չինեն.
Աննդուն հիմերը պիտի վերականգնես,
Եւ դուն Փրածներ նորոգող
Ու բնակութեան համար ճամբաներ չիտկող պիտի կոչուիս։
13—Եթէ շաբաթը իմ սուրբ օրս,
Քու ցանկութիւնդ կատարելէ ուզգդարձնես,
Ու շաբաթը հոս զուարճութիւնդ
Եւ Տէրոջը նուիրուած ւրը պատուական անուանես,
Ու զանիկա պատուես՝ քու ճամբանեբուդ չհետեւելով,
Քու ցանկութիւնդ չկատարելով ու ոչ-ըսով խօսք չխօսելով,
14—Այն ատեն Տէրոջմով պիտի ուրախանաս.
Եւ քեզ երկրի բարձր տեղերը պիտի հանեմ,
Ու քու հօրդ Յակոբի ժառանգութիւնը քեզի պիտի կերցնեմ.
Քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ։

ԳԼ. ԽԹ

Ահա Տէրոջը ձեռքը վրկելէն չկարճցաւ,
Ու անոր ականջը լսելէն չծանրացաւ։
2—Հապա ձեր ու ձեր Աստուծոյն մէջտեղ բաժանում ձգողը
Ձեր անօրէնութիւնները եղան,
Եւ ձեր մեղքերը *նոր երեսը ձեզմէ ծածկելեցին, որ չլսէ։
3—Քանզի ձեր ձեռքերը արիւնով,
Ու ձեր մատները անօրէնութիւնով պղծուեցան.
Ձեր շրթունքը սուտ խօսեցան,
Եւ ձեր լեզուները անիրաւութիւն արտաբերեցին։
4—Չկայ մէկը որ արդարութեան համար բողոքի,
Ու չկայ մէկը որ ճշմարտութեամբ դատվարի։
Անոնք անառի բաներու կը յուսան և ունայնութիւն կը խօսին.
Թշնաառութիւն կը յղանան ու անօրէնութիւն կը ծնանին։
5—Բարբի հաւկիթներ կը ածգենեն,
Ու սարդի ոստայն կը գործեն.
Անոնց հաւկիթներէն ուտողը կը մեռնի,
Ու բացուածէն իժ կ'ելլէ։
6-Անոնց ոստայններէն հանդերձ չըլլար.
Եւ իրենց գործերովը չեն կրնար պրկենք ծածկել.
Անոնց գործերը անօրէնութեան գործ են,
Ու անոնց ձեռքերուն մէջ բռնութեան գործ կայ.
7-Անոնց ոտքերը չարութեան կը վազեն,
Ու անմեղ արիւն թափելու կ'արագորան.
Անոնց խորհուրդները անօրէնութեան խորհուրդներ են,
Անոնց ճամբաներուն մէջ կործանում ու կատաղած կայ։
8—Խաղաղութեան ճամբան չեն գիտեր,
Եւ անոնց ընթացքին մէջ արդարութիւն չկայ.
Իրենց շաւիղները խոտորցուցին.
Անոնց մէջ քալողներուն ամէնը խաղաղութիւն չեն գիտեր։
9—Անոր համար իրաւունքը մեզմէ հեռացաւ.
Ու արդարութիւնը մեզի չհասնիր.
Լոյսի կը սպասենք, և ահա խաւար կայ.
Պայծառութեան կը սպասենք, և մհմառախուղի մէջ կը չոլինք։
10—Կոյրերու պէս պատերը կը չոշափինք,
Ու աչք չունեցողներու պէս կը խարխափինք.
Կէսօրին գիշերուան պէս կը գլորինք.
*Պատարեր ոչխարու մէջ՝ մեռելներու պէս ենք։
11—Ամէնս արջերու պէս կը մռնչինք,
Ու աղաւնիներու պէս անդադար կը մռնչենք.
Դատաստանի կը պասենք, բայց չկայ.
Փրկութեան համար կը նայինք, բայց անիկա մեզմէ հեռացած է։
12—Քանզի մեր յանցանքները քու առջեւդ չատցան,
Ու մեր մեղքերը մեզի դէմ վկայութիւն կու տան.
Վասն զի մեր յանցանքները մեր քով են,
Ու մեր անօրէնութիւնները գիտենք։
13—Յանցանք լրնինք, Տէրը ուրացանք
Եւ մեր Աստուծոյն հետեւելէն խոտորեցանք.
Անիրաւութիւն ու ապստամբութիւն խօսեցանք,
Մէջ սրտին մէջ սուտ խօսքեր մտածեցինք ու դուրս եկինք։
14—Եւ դատաստանը հոս դարձաւ,
Ու արդարութիւնը հեռուն կայնեցաւ.
Քանզի ճշմարտութիւնը հրապարակին մէջ ինկաւ,
Եւ ուղղութիւնը չկրնար ներս մտնել
15—Ու ճշմարտութիւնը կը պակսի,
Եւ չարութենէ զգուշացողը կը կողոպտուի.
Ու Տէրը սեաաւ, և ատիկա անոր աչքին գէշ երեւցաւ,
Քանզի իրաւունք չկար։
16—Ու սեաաւ որ մարդ մը չկար,
Եւ զարմացաւ որ միջնորդ մը չեր գտնուեր.
Ուստի իր բազուկը իրեն օգնեց,
Ու իր արդարութիւնը իրեն ձեռնտու եղաւ։
17—Եւ արդարութիւնը զրահի պէս,
Ու փրկութիւնը իր գլխուն սաղաւարտի պէս հագաւ,
Եւ վրէժխնդրութեան զգեստը պատմուճանի պէս հագաւ,
Ու նախանձը վերարկուի պէս իր վրայ առաւ։
18—Իբրեւ վարձուձքին համեմատ հատուցում պիտի ընէ,
Բարկութիւն՝ իր հակառակորդներուն,
Հատուցում՝ իր թշնամիներուն.
*Կղզիներուն հատուցում պիտի ընէ։
19—Ու արեւմուտքը Տէրոջը անունէն,
Եւ արեւելքը անոր փառքէն պիտի վախնան.
Երբ թշնամին գետի պէս գայ,
Տէրոջը Հոգին *անոր դէմ դրօշակ պիտի կանգնէ։
20—Ու Փրկիչ պիտի գայ Սիոնի,
Ու Յակոբի մէջ յարութենէ դարձողներուն, կ'ըսէ Տէրը։
21—Եւ անոնց հետ ընէ ուխտս ասիկա է, կ'ըսէ Տէրը.
Իմ Հոգիս որ քու վրադ է,
Ու իմ խօսքերս զորանք քու բերանդ դրած եմ,
Քու բերնէդ ու քու զաւակներուդ բերնէն
Եւ քու զաւակդ զաւակներուն բերնէն
Չխմակուընէ մինչև յաւիտեան պիտի չպակսին, կ'ըսէ Տէրը։

ԳԼ. Կ

Ելիր, լուսաւորուէ. քանզի քու լոյսդ եկաւ,
Ու Տէրոջը փառքը քու վրադ ծագեցաւ։
2—Վասն զի ահա երկիրը խաւար
Ու ազգերը մառախուղ պիտի ծածկէ.
Բայց քու վրադ Տէրը պիտի ծագի,
Եւ անոր փառքը քու վրադ պիտի երեւնայ,
3—Ու քու լոյսիդ ազգեր պիտի գան,
Եւ քու վրադ ծագած պայծառութեանդ՝ թագաւորներ։
4-Աչքերդ վերցուր ու բոլորտիքդ նայէ.
Ամէնը կը ժողովուին *քեզի կու գան.
Քու որդիներդ հեռուէն պիտի գան,
Եւ քու աղջիկներդ գիրկի մէջ պիտի վերցուին։
5—Այն ատեն պիտի տեսնես և ուրախանաս,
Ու սիրտդ պիտի չարժի ու բացուի.
Քանզի ծովուն առատութիւնը քեզի պիտի դառնայ,
Ազգերուն հարստութիւնը քեզի պիտի գայ,
6—Քեզ ուղտերուն հոսանքը,

*Կամ, անջուր տեղերու մէջ

*Կամ, Պարսրաններուն մէջ, և կամ, Թանձր խաւարին մէջ

*Կամ, Հեռաւոր երկիրներուն

*Կամ, զանիկա պիտի հալածէ

Մագիտա ու Գեհազի առաիկ ուղարը,
պիտի ծածկեն.
Ամէնը Սաթայէ պիտի գան,
Ոակի ու կնդրուկ պիտի բերեն,
Եւ Տէրոջը զոհ թիւններըը պիտի աւե-
տեն,
7—կեդրոնի բոլոր հօտերը քու փոխ-
պիտի ժողվուին,
Ու նաբէոթի խոյերը քեզի պիտի ծա-
ռայեն.
Անոնք իմ սեղանիս վրայ պիտի ելլեն
ընդունելի ընծաներ,
Եւ իմ փառքիս տունը պիտի փառաւո-
րեմ,
8—Ո՞վ են սոոնք՝ որ կը թռչին ամպի
պէս,
Ու դեպի իրենց վանդակը Քրիստոս ա-
զաւնիներու պէս
9—Քանզի կղզիները ու նախ Թարսիսի
նաւերը
Ինծի համար պատրաստ պիտի ըլլան,
Որպէս զի հեռուէն քու որդիներդ՝
Ս— անոնց հետ անոնց արծաթը ու ոս-
կին բերեն,
Քու Տէր Աստուծոյդ անուանը համար,
Ու Իսրայէլի Սրբոյն համար, քանզի
անիկա քեզ կը փառաւորէ։
10—Ես օտարներուն որդիները քու
պարիսպներդ պիտի շինեն,
Ու անոնց թագաւորները քեզի ծառա-
յութիւն պիտի ընեն.
Քանզի իմ բարկութիւնովս քեզ զարկի,
Բայց բարեհաճութիւնովս քեզի պիտի
ողորմիմ։
11—Ես քու դռներդ միշտ բաց պիտի
ըլլան,
Ցորեկ ու գիշեր պիտի չգոցուին,
Որպէս զի քեզի ազգերուն ստացուածքը
կրեն,
Ու անոնց թագաւորները *բերուին,
12—Քանզի քեզի ծառայութիւն չընող
ազգը ու թագաւորութիւնը
պիտի կորսուի,
Ու ազգերը բոլորովին պիտի կործանին։
13-Լիբանանի փառքը քեզի պիտի գայ,
Մայրը, սոսին ու սօսիները միասին՝
Իմ սրբարանիս տեղը զարդարելու համար,
Ես իմ ոտքերուս տեղը պիտի փառաւո-
րեմ։
14—Ու քեզի նեղութիւն տուողներուն
որդիները
Գալով քեզի պիտի գան,
Ու քեզ անարգողներուն ամէնը
Քու ոտքերուդ գարշապարներուն եր-
կրպագութիւն պիտի ընեն.
Ու քեզ Տէրոջը քաղաքը,
Իսրայէլի Սրբոյն Սիոնը, պիտի անուա-
նեն։
15—Թէև որ երեսկ ձգուած ու ատելի
եղար,
Ես ոեւէ անցնող չեղար,
Բնիկ յաւիտենական փառք,
Ու ազգէ ազգ գէօղ ուրախութիւն
պիտի ըլնես։
16—Եւ ազգերուն կաթը պիտի ծծես,
Ու թագաւորներուն ստինքը պիտի ծծես.
Եւ պիտի գիտնաս որ ես Տէրս եմ քու
Ազատիչդ,
Ու քու Փրկիչդ, Յակոբի Հզօրը։
17—Պղինձի տեղ ոսկի պիտի բերեմ,
Ու երկաթի տեղ՝ արծաթ,
Եւ փայտերու տեղ՝ պղինձ,
Ու քարերու տեղ երկաթ պիտի բերեմ,
Եւ քու վերակացուներդ խաղաղութիւն
պիտի ընեմ,
Ու քու իշխաններդ արդարութիւն դնող
պիտի ընեմ։
18—Մէկ մը ալ քու երկրիդ մէջ բռնա-
թիւն,
Եւ քու սահմաններուդ մէջ յափշտա-
կութիւն ու կոտորած պիտի
չլսուի.
Հապա քու պարիսպներդ փրկութիւն,
Ու դռներդ Գովեստ պիտի անուանես։
19—Մէկ մը ալ ցորեկը քու լոյսդ ա-
լեւը պիտի չըլլայ,
Ու ՙԼուսինը իր պայծառութիւնովը
քեզի լոյս պիտի չտայ.
Հապա Եհովա քեզի յաւիտենական լոյս,
Եւ քու Աստուածդ քու փառքդ պիտի
ըլլայ։
20-Քու արեւդ մէկ մը պիտի չմտնէ,
Ու քու լուսինդ պիտի չնուազի.
Հապա Եհովա քեզի յաւիտենական լոյս
պիտի ըլլայ,
Եւ սգի օրերդ պիտի վերջանան։

*կամ, հանգիստ պան

21—Ու քու ժողովրդիդ ամէնը ար-
դար պիտի ըլլան,
Ու երկիրը յաւիտեան պիտի ժառանգեն.
Իմ անկած առնկս, իմ ձեռքերուս
գործը,
Իմ փառքիս համար պիտի ըլլայ։
22—Գզուիկը հազարաւոր՝
Ու փիւռաւը մեծ ազգ պիտի ըլլայ.
Ես Տէրս չուտով պիտի կատարեմ ասիկա
իր ժամանակին։

ԳԼ. ԿԱ

Տէր Եհովայի Հոգին իմ վրաս է.
Վասն զի Տէրը զիս օծեց,
Ո— զիս ղրկեց աղքատներուն աւետիս
տալու,
Կոտրած սիրտ ունեցողները բժշկելու,
Գերիներուն ազատութիւն,
Եւ բանտարկեալներուն՝ բանտին բաց-
ուիլը հրատարակելու.
2—Տէրոջը ընդունելի տարին
Ու մեր Աստուծոյն վրէժխնդրութեան
օրը հրատարակելու,
Ամէն սգաւորները մխիթարելու,
3—Սիոնի սգաւորներուն որոշելու,
Ո— անոնց մոխրի տեղ գեղ տալ,
Սուգի տեղ ուրախութեան իւղ,
Կոտրած հոգիի տեղ գովեստի պատ-
մուճան տալու.
Եւ պիտի անուանեն զանոնք Արդարու-
թեան բեւեռիները,
Զորոնք Տէրը տնկեր է իր փառքին հա-
մար։
4—Եւ հին աւերակները պիտի շինեն,
Ո— առաջուան կործանուածները պիտի
կանգնեն,
Եւ աւրուած քաղաքները
Ու շատ դարերէ ի վեր աւերակ ձեւա-
ցածները պիտի նորոգեն.
5—Եւ օտարականները պիտի ելլեն ու
ձեր հօտերը պիտի հովանեն,
Ու օտարներուն որդիները ձեր երկրա-
գործները և այգեգործները
պիտի ըլլան։
6—Բայց դուք Տէրոջը քահանաները
պիտի կոչուիք,
Մեր Աստուծոյն պաշտօնեաները պիտի
ըսուիք,
Ազգերուն հարստութիւնը պիտի ուտէք,
Ու անոնց փառքովը պիտի փառաւո-
րուիք։
7—Ձեր ամօթին տեղ՝ երկին ՙՐ—Խ—
Ր՚Խ—,
Եւ անարգանքին դէմ իրենց ժառան-
գութիւնը մէջ պիտի ցնծան.
Ուստի իրենց երկրին մէջ կրկին ժա-
ռանգութիւն պիտի առնեն.
Անոնք յաւիտենական ուրախութիւն
պիտի ունենան։
8—Քանզի ես Տէրս արդարութիւնը կը
սիրեմ.
Անիրաւութիւնը ու յափշտակութիւնը
կ՚ատեմ.
Իրաւունքնէ անոնց գործերուն վարձքը
պիտի տամ,
Ու անոնց հետ յաւիտենական ուխտ
պիտի ընեմ,
9—Ու անոնց սերունդը ազգերուն մէջ՝
Ու անոնց տղաքները ժողովրդոց մէջ պիտի գիտցուին.
Զանոնք որ տեսնեն պիտի ճանչ-
նան
Թէ անոնք Տէրոջը օրհնած սերունդն են։
10—Ես Տէրոջմով մեծապէս պիտի
ցնծամ,
Ո— իմ հոգիս իմ Աստուծովս պիտի ու-
րախանայ.
Քանզի ինծի փրկութեան հանդերձները
հագցուց,
Ինծ արդարութեան պատմուճանով ծած-
կեց,
Փեսայի պէս՝ որ իրեն փառաւոր խոյր
կը դնէ,
Ու հարսի պէս՝ որ իր զարդերովը կը
զարդարուի։
11—Քանզի ինչպէս երկիրը իր սունկը
կ՚ածեցնէ,
Ու պարտէզը իր մէջ ցանուածները կը
բուսցնէ,
Այնպէս Տէր Եհովա բոլոր ազգերուն
առջեւ
Արդարութիւն ու գովութիւն պիտի
բուսցնէ։

ԳԼ. ԿԲ

Սիոնի սիրոյն համար պիտի չլռեմ,
Ու Երուսաղէմի սիրոյն համար պիտի
չհանգչիմ,

Մինչև որ անոր արդարութիւնը ըլյսի պէս,
Եւ անոր փրկութիւնը բոցավառ ջահի պէս *ճառագայթէ։
2—Ու ազգերը քու արդարութիւնդ,
Ու բոլոր թագաւորները քու փառքդ պիտի տեսնեն.
Ու դուն նոր անուանով պիտի կոչուիս,
Զոր Տէրոջը բերանը պիտի անուանէ։
3—Ու Տէրոջը ձեռքին մէջ վայելչութեան պսակ,
Ու քու Աստուծոյդ ձեռքին մէջ արքայական թագ պիտի ըլլաս։
4—Դուն մէ՛ւս ըլն ալ Թողուած պիտի չկոչուիս,
Ու քու երկիրդ մէ՛ւս ալ Աւերակ պիտի չըսուի.
Հապա դուն† իմ հաճութիս",
Ու քու երկիրդ Ամուսնացեալ պիտի ըսուի.
Քանզի Տէրը քեզմէ պիտի հաճի,
Ու քու երկիրդ պիտի ամուսնանայ։
5—Ուսն ալ իւրաքէ երիտասարդ մը կոյսէ հետ կ'ամուսնանայ,
Այդպէս քու ազգակիցդ քեզմէ հետ պիտի ամուսնանան.
Եւ ինչպէս փեսան հարսին վրայ կ'ուրախանայ,
Այդպէս քու Աստուածդ քու վրադ պիտի ուրախանայ։
6—Քու պարիսպներուդ վրայ, օվ Երուսաղէմ, պահապաններ դրի.
Անոնք բոլոր օրը ու բոլոր գիշերը բնաւ պիտի չըլռեն.
Դուք, ով Տէրոջը յիշողներ, լռութիւն մի կենաք,
7—Ու անոր հանգստութիւն մի տաք,
Մինչև անիկա հաստատէ,
Ու մինչև երկրի վրայ Երուսաղէմը գովելի ընէ։
8—Տէրը իր աջ ձեռքին վրայ ու իր զօրաւոր բազուկին վրայ ուղեէ երդուած ըրաւ,
Թէ քու ցորենդ մէ՛ւս ալ քու թշնամիներուդ կերակուր պիտի չտամ.
Եւ օտարներուս որդիները պիտի չխմեն քու գինիդ,
Որու համար դուն աշխատեցար.
9—Հապա զանիկա հնձողները պիտի ուտեն,
Ու Տէրոջը փառք պիտի տան.
Եւ զանիկա քաղողները իմ սուրբ սրահներուս մէջ պիտի խմեն։
10—Անցէ՛ք, անցէ՛ք դռներէն,
Ժողովուրդին ճամբայ պատրաստեցէ՛ք.
Շինեցէ՛ք, շինեցէ՛ք շաւիղները,
Քարերը հե՛նէ ժողվեցէ՛ք.
Ժողովուրդներուն դրօշակ վերցուցէ՛ք։
11—Ահա Տէրը մինչև երկրի ծայրը լսել տուաւ.
Սիոնի աղջիկը ըսէ՛ք,
Ահա քու փրկիչդ կու գայ.
Ահա անոր վարձքը իրեն հետ է,
Ու գործելու հատուցումը իր առջև է։
12—Եւ անոնք Սուրբ ժողովուրդ, Տէրոջը փրկածները, պիտի ըսուին.
Ու դուն փնտռուած — Չթողուած քաղաք պիտի կոչուիս։

Գլ. ԿԹ

Ո՞վ է ասիկա որ կու գայ Եդոմէ,
Կարմրագոյն զգեստով† Բոսրայէ,
Որ փառաւոր հանդերձով զարդարուած է,
Եւ իր չատ զօրութիւնովը պանծալով կը քալէ։
Ես եմ, որ արդարութիւն կը խօսիմ,
Ու* փրկելու կարող թիւն ունիմ,
2—Ինչո՞ւ համար քու հանդերձդ կարմիր է,
Ու քու զգեստներդ հնձանի մէջ կոխողին պէս են։
3—Հնձանի մէջ միայն ես կոխեցի,
Եւ ժողովուրդներէն ինձի հետ մա՛րդ մը չկար.
Ու զանոնք իմ բարկութիւնովս կոխեցի,
Եւ իմ սրամիտութիւնովս զանոնք ճղիեցի.
Ու անոնց արիւնը իմ զգեստներուս վրայ ցայտեց,
Եւ բոլոր հանդերձներս ներկեցի.
4—Քանզի իմ սրտիս մէջ վրէժխնդրութեան օր կար.
Ու իմ փրկածներուս տարին հասած էր.
5—Եւ նայեցայ, բայց օգնող չկար,
Եւ զարմացայ որ ձեռնտու եղող մը չկար.
Ուստի իմ բազուկս ինձի համար փրկութիւն բրաւ,
Ու իմ բարկութիւնս ինձի ձեռնտու եղաւ։
6—Եւ իմ բարկութիւնովս ժողովուրդներ կոխեցի,
Ու զանոնք իմ սրամտութիւնովս *գինովցուցի,
Եւ անոնց արիւնը գետինը իջեցուցի։
7—Տէրոջը ողորմութիւնները, Տէրոջը գովութիւնները պիտի յիշեմ՝
Տէրոջը բոլոր մեզի ըրածներուն համեմատ
Եւ այն չատ բարիքներուն համեմատ,
Զորոնք իր գթութիւնովը և առատ ողորմութիւնով
Իսրայէլի տանը ըրած է։
8—Քանզի ըսաւ, Իրաւցընէ անոնք իմ ժողովուրդս են,
Սուտ չեղող որդիներ են.
Ու անոնց անոնց փրկիչ եղաւ.
9—Անոնց ամէն նեղութիւններուն մասին նեղութիւն քաշեց,
Եւ իր երեսին հրեշտակը զանոնք ազատեց.
Իր սիրովը ու գթութիւնովը զանոնք փրկեց,
Եւ զանոնք վերցուց ու հին ժամանակին բոլոր օրերուն մէջ զանոնք կրեց։
10—Բայց անոնք ապստամբեցան ու անոր Սուրբ Հոգին բարկացուցին.
Անկիկա ալ դարձաւ անոնց թշնամի եղաւ,
Ու ինք անոնց հետ պատերազմ բրաւ։
11—Այն ատեն առաջուան օրերը — Մովսէսը և անոր ժողովուրդը *յիշեցին.
Ո՞ւր է անիկա՝ որ իր հօտին հովիւովը զանոնք ծովէն հանեց.
Ո՞ւր է անիկա՝ որ անոնց մէջ իր Սուրբ Հոգին դրաւ.
12—Իր փառաւոր բազուկը Մովսէսի աջ ձեռքին հետ պարզուցուց.
Իրենց յաւիտենական անուն †ընելու համար
Անոնց առջեւէն ջուրերը պատռեց.
13—Ու զանոնք անդունդներէն առանց սահելու անցուց,

*Կամ, Չախչախեցի †Կամ, յիշեց
‡Եբր. ընելու.

Ինչպէս ձի մը անապատէն լա՛ռնչէ,
14—Տէրոջը Հոգին զանիկա հանգըստացուց,
Հովիւի մէջ իջնող անասուններու պէս։
Դուն քու ժողովուրդիդ այնպէս առաջնորդեցիր,
Որպէս զի քեզի փառաւոր անուն վաստկիս։
15—Երկինքէն նայէ,
Ու քու սուրբ ու փառաւոր բնակութենէդ տես.
Ո՞ւր է քու նախանձդ ու զօրութիւնդ.
Քու ալիքներուդ գալարիլը և ինձի ընդ՝ողորմութիւններդ սրգիլ-ուեցա՞ն։
16—Քանզի մեր Հայրը դուն ես,
Թէև Աբրահամ մեզ չգիտեր,
Ու Իսրայէլ մեզ չճանչնար.
Դուն, ով Տէր, մեր Հայրն ես,
Ո՛ր քու անունդ սկիզբէն մեր Փրկիչն է։
17—Ով Տէր, ինչո՞ւ համար մեզ քու ճամբաներէդ կը մոլորեցնես.
Ինչո՞ւ մեր սիրտը կը խստացնես, որ քեզմէ չվախնանք.
Քու ծառաներուդ համար,
Քու ժառանգութեանդ ցեղերուն համար գարձիր։
18—Քու սուրբ ժողովուրդդ իրենց ժառանգութիւնը քիչ առեն վայելեցին.
Մեր թշնամիները քու սրբարանդ ոտնակոխ ըրին։
19—*Մենք սկիզբէն †ո՛չ ենք.
Դուն անոնց վրայ չիրշեցիր,
Ո՛ր քու անունդ անոնց վրայ չկանչուեցաւ",

Գլ. ԿՊ

Երանի՛ թէ երկինքը ձեղքելով վար իջնէիր,
Քու ներկայութենէդ լեռները †հալէին
2—Խոխունջը բռնկցնող կրակի պէս,
Ջուրերը եռացնող կրակի պէս,

*Կամ, Մենք ո՛չ-ինչ ենք եղանք, որչափ ալ Իսրայէլ մեր վրայ բնաւ չէիր տիրեր, և քու անունդ մեր վրայ չէր կանչուեր †Կամ, սասանէին

Որ քու անունդ թշնամիներուդ յայտնէիր,
Ո– ազգերը քու երեսդ դողային,
3—երբ այն սասկալի բաներըդ ըրիր, որոնց չէինք յուսար,
իջար, քու երեսդ լեռները *հալեցան,
4—բանդի սկիզբէն ի վեր չլսուեցաւ ու ականջ չկաց,
եւ աչք չտեսաւ քեզմէ ուրիշ Աստուած մը,
Որ իրեն յուսացողներուն –յոյժ բարէ ընէ,
5—Ուրախ եղողին ու արդարութիւն գործողին
եւ քու ճամբաներուդ մէջ քեզ յիշողներուն հասար.
Ահա բարկացար, վասն զի մեղք գործեցինք.
Անոնց մէջ անուղղութիւն կայ, ու պիտի փրկուինք։
6—Բայց ամէնս պիղծ բանի պէս եղանք,
Ու մեր բոլոր արդարութիւնները դաշտաման լաթի պէս են.
Եւ ամէնս տերեւի պէս կը թառամինք,
Ու մեր անօրէնութիւնները հովի պէս մեզ կը վերցնեն։
7—Եւ քու անունդ կանչող չկայ,
Որ արթննայ ու քեզմով այժ գտնէ.
Քանզի քու երեսդ մեզմէ ծածկեցիր,
Ու մեր անօրէնութիւնոնց պատճառաւ մեզ մաշեցիր։
8—Բայց հիմա, ով Տէր, դուն մեր Հայրն ես.
Մենք կաւ ենք, ու դուն մեր Բրուտն ես.
Եւ ամէնս քու ձեռքիդ գործն ենք։
9—Շատ մի բարկանար, ով Տէր,
Ու հետ անօրէնութիւնը յաւիտեան մի յիշեր.
Ահա նայէ, կ'աղաչենք, ամէնս քու ժողովրդդ ենք։
10—Սուրբ քաղաքներդ անապատեղան.
Սիոն անապատ եղաւ.
Երուսաղէմ աւերակ եղաւ։
11—Մեր սուրբ ու փառաւոր տունը,
Որուն մէջ մեր հայրերը քեզ կ'օրհնէին,
Հրոյ ճարակ եղաւ,
Եւ մեր ամէն ցանկալի տեղերը ամայի եղան։

12—Ասոնց վրայ ինքզինքդ պիտի զսպե՞ս, ով Տէր,
Ես–էն պիտի լռե՞ս ու մեզ խիստ չտանջե՞ս։

Գլ. ԿԴ

Զէր չհարցնողներէն փնտռտուեցայ,
Զիս չիմդրողներուն գտնուեցայ.
Իմ *անունս չկանչող ազգին
Ահա ես, ահա ես՝ ըսի.
2—Ամէն օր իմ ձեռքերս երկնցուցի ապստամբ ժողովրդի մը՝
Որոնք այնպիսի ճամբու մէջ կը քալեն
Որ ազէկ չէ,
Ե– իրենց խորհուրդներուն կը հետեւին.
3—Անոնք ժողովրդի մը՝ որ միշտ երեսիս դէմ զիս կը սրդոդցնեն.
Պարտէզներու մէջ կը զոհեն,
Ու աղիւսներու վրայ խունկ կը ծխեն.
4—Գերեզմաններու մէջ կը նստին,
Եւ գիշերը առանձին տեղեր կ'անցնեն.
Խոզի միս կ'ուտեն,
Ու իրենց ամանները մէջ գարշելի բաներու արգանակ կայ.
5—Որոնք կ'ըսեն,
Մէկդի կեցիր, ինծի մի դպչիր,
Քանզի ես քեզմէ սուրբ եմ։
Ասոնք իմ ռնգան–ներուս մէջ ծուխ են,
Ու ամէն օր բորբոքած կրակ են։
6—Ահա իմ առջեւս գրուած է.
Պիտի չլռեմ, հապա պիտի հատուցանեմ.
Այո, անոնց ծոցին մէջ պիտի հատուցանեմ
7—Ձեր անօրէնութիւնները ձեր հայրերուն անօրէնութիւններուն հետ միկտեղ
Որոնք լեռներուն վրայ խունկ ծխեցին,
Ու բլուրներուն վրայ զիս անարգեցին,
Կ'ըսէ Տէրը,
Ուստի անոնց առաջուան գործերը իրենց ծոցերուն մէջ պիտի լեցնեմ։
8—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ջոր օրինակ երբ ողկոյզի մէջ վրայ քաղցրութիւն գտնուի, կ'ըսեն թէ
Աւերիա մի կորսնցներ,
Քանզի սոսոր վրայ օրհնութիւն կայ.

Ես ալ իմ ծառաներուս համար այնպէս պիտի ընեմ,
Որպէս զի ամէնը չկորսնցնեմ։
9—Ու Յակոբէ սերունդ՝
Եւ Յուդայէ իմ լեռներուս ժառանգորդը պիտի հանեմ.
Ու իմ ընտրեալներս այն երկիրը պիտի ժառանգեն,
Եւ իմ ծառաներս հոն պիտի բնակին։
10—Ու դիս փնտռող ժողովրդիս համար Սարօն հօտերու փարախ՝
Եւ Ակռվրի ձորը արջառներու մակաղատեղ պիտի ըլլայ։
11—Բայց դուք Տէրը թողուցիք
Ու իմ սուրբ լեռս մոռցաք.
*Գադ ‡––էին՝ սեղան պատրաստեցիք,
Ու †Մէնիի ‖թափելու նուէր՝ լեցուցիք։
12—Ես ալ ձեզ սուրի պիտի ||մատնեմ,
Եւ ամէնդ պիտի ծռիք մորթուելու համար.
Քանզի կանչեցի ու պատասխան չտուիք,
Խօսեցայ ու մնիկ չերիք.
Հապա իմ առջեւս չարը ըրիք,
Եւ ինծի հաճելի չեղածը ընտրեցիք։
13—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ
Ահա իմ ծառաներս պիտի ուտեն,
Բայց դուք անօթի պիտի մնաք.
Ահա իմ ծառաներս պիտի խմեն,
Բայց դուք ծարաւ պիտի մնաք.
Ահա իմ ծառաներս պիտի ուրախանան,
Բայց դուք ամօթէն պիտի ըլլաք։
14—Ահա իմ ծառաներս սրտի ուրախութենէն պիտի ցնծան,
Բայց դուք սրտի ցաւէ պիտի աղաղակէք,
Եւ հոգւի ճնշումէ պիտի ոռնաք։
15—Ու ձեր անունը իմ ընտրածներուս անէծքի համար պիտի թողուք.
Եւ Տէր Եհովա քեզ պիտի մեռցնէ,
Ու իր ծառաները ուրիշ անունով պիտի կանչէ.
16—Որպէս զի երկրի վրայ օրհնուողը
Ճշմարիտ Աստուծով օրհնուի,
Ու երկրի վրայ երդում ընողը
Ճշմարիտ Աստուծով երդուի ընէ.

*կամ, բաղդին †կամ, Ճակատագրին
‡Եբր. խառնուածք
‖Եբր. Ճակատագրիւ

Քանզի առաջուան նեղութիւնները մոռցուեցան,
Ու անոնք իմ աչքերէս ծածկուեցան։
17—Քանզի ահա ես նոր երկինք ու նոր երկիր կը ստեղծեմ.
Եւ առաջիններուն պիտի չյիշուին, ու խորհուրդ միտքը պիտի չգան։
18—Բայց դուք իմ ստեղծագործութիւնովս
Յաւիտեան յաւիտենից ուրախացէք և ցնծացէք.
Վասն զի ահա ես Երուսաղէմը ցնծութեան համար,
Ու անոր ժողովրդը ուրախութեան համար կը ստեղծեմ։
19—Ու Երուսաղէմի վրայ պիտի ցնծամ,
Եւ իմ ժողովրդիս վրայ պիտի ուրախանամ.
Ու հոն մէկ լացի ձայն ու ողբի ձայն պիտի չլսուի։
20—Հոն մէկ մկրտի տղայ, կամ օրերը չլեցուած ծեր պիտի չըլլայ.
Քանզի երիտասարդը հարիւր տարեկան պիտի մեռնի,
Եւ հարիւր տարեկան մեղաւորը անէծքի պիտի հանդիպի։
21—Ու տուներ պիտի շինեն ու պիտի բնակին,
Եւ այգիներ պիտի տնկեն ու անոնց պտուղը պիտի ուտեն։
22—Անոնք պիտի չշինեն՝ որ ուրիշները բնակին,
Անոնք պիտի չտնկեն՝ որ ուրիշները ուտեն.
Վասն զի իմ ժողովրդիս օրերը ծառի օրերու չափ պիտի ըլլան,
Եւ իմ ընտրածներս իրենց ձեռքերուն գործերը պիտի հինցնեն։
23—Անոնք պարապ տեղ պիտի չաշխատին,
Ու գիքարդութեան համար զաւակներ պիտի չծնանին.
Քանզի անոնք Տէրոջը օրհնածներուն սերունդն են,
Ու անոնց հետ անոնց զաւակներն ալ։
24-Ե- պիտի ըլլայ որ անոնք դեռ չկանչած՝ պատասխան պիտի տամ,
Ու քանի որ դեռ կը խօսին՝ պիտի լսեմ։
25—Գայլը ու գառը միկտեղ պիտի արածկին,

Եւ առիւծը արջառի պէս յարդ պիտի ուտէ.
Ու օձին կերակուրը հող պիտի ըլլայ.
Անոնք իմ բոլոր սուրբ լեռանս մէջ վնաս պիտի չտան
Ու պիտի չապականեն, կ'ըսէ Տէրը։

Գլ. ԿԶ

Տէրը այսպէս կ'ըսէ.
Երկինք իմ աթոռս է,
Ու երկիրը իմ ոտքերուս պատուանդանն է.
Այս ի՞նչ տուն է որ ինծի համար կը շինէք,
Եւ այս ի՞նչ տեղ է իմ հանգստութեանս համար.
2—Քանզի ասոնց ամէնը իմ ձեռքս չինեց,
Ու ասոնց ամէնը եղան, կ'ըսէ Տէրը.
Բայց ես ասոր պիտի նայիմ,
Այսինքն խոնարհին և կոտրած հոգի ունեցողին
Ու իմ խօսքիս դողացողին։
3—Արջառ մորթողը մարդ սպանողի *պէս է,
Գառնուկ զոհողը շուն մորթողի պէս է,
Նուէր մատուցողը խոզի արիւն հո-*ցոնողի պէս է,
Կնդրուկ ծխողը *կուռք պատուողի պէս։
Իրենցներէ անոնք իրենց ճամբաները ընտրեցին,
Ու անոնց հոգիները իրենց գարշելիներէն կ'ախորժին։
4—Ես ալ անոնց թշուառութիւնները պիտի ընտրեմ,
Եւ իրենց վախցած բաները իրենց վրայ պիտի բերեմ.
Վասն զի կանչեցի ու պատասխան տուող չեղաւ,
Խօսեցայ ու մտիկ չըրին.
Հապա իմ աչքիս չարութիւն ըրին,
Ու իմ չհաւնածս ընտրեցին։
5—Տէրոջը խօսքը մտիկ ըրէք,
Ով անոր խօսքին դողացողներ.
Իմ անուանս համար ձեզ ատող,
Ու ձեզ անարգող ձեր եղբայրները ըսին,
Թող Տէրը փառաւորուի,
Ու ձեր ուրախութիւնը տեսնենք,
Բայց անոնք պիտի ամչնան։
6—Քաղաքէն ազազակի ձայն, տաճարէն ձայն մը լսո-ւի,
Տէրոջը ձայնը՝ որ իր թշնամիներուն պատիժ կը հատուցանէ։
7—Յաւ չցաւած ծնաւ,
Յաւ չունած արու զաւակ ծնաւ։
8—Այսպիսի բան մը ո՞վ լսեց, այսպիսի բաներ ո՞վ տեսաւ.
Մէթէ երկիր մէկ օրուընմէ մէջ կը ծնանի,
Կամ ազգ մը մէկ անգամին ծնաւ.
Քանզի Սիօն ցաւ քաշածին պէս իր տղաքները ծնաւ։
9-Ես որ ծնանելու վայրկեանը կը բերեմ,
Չծնանիլ պիտի չտա՞մ, կ'ըսէ Տէրը.
Ես որ ծնանիլ կու տամ,
Աչ+-ն-դ-ը պիտի գոցե՞մ, կ'ըսէ քու Աստուածդ։
10—Երուսաղէմի հետ ուրախացէք ու անոր հետ ցնծացէք
Դուք ամէնդ որ զանիկա կը սիրէք.
Մեծապէս ուրախացէք անոր հետ
Դուք ամէնդ որ անոր համար սուգ կը բանէք.
11—Վասն զի անոր մխիթարութեան սաւնդներէն
Պիտի ծծէք ու կշտանաք.
Վասն զի դուք պիտի դիէք,
Ես անոր փառքին առատութեամբը զուարճանաք։
12—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես անոր վրայ խաղաղութիւնը գետի պէս
Ու ազգերուն փառքը յորդահոս հեղեղի պէս պիտի տարածեմ.
Եւ պիտի դիէք, գիրկի վրայ պիտի վերցուիք,
Ու ծունկերու վրայ պիտի գգուիք։
13—Ինչպէս մայր մը *իր տղան՝ կը մխիթարէ,
Այնպէս ալ ես ձեզ պիտի մխիթարեմ.
Ու Երուսաղէմէ մխիթարութիւն պիտի գտնէք։
14—Եւ պիտի տեսնէք ու սիրտերնիդ պիտի ուրախանայ,
Եւ ձեր ոսկորները կանանչ խոտի պէս պիտի ծաղկին.

*ԵՓԲ. ունայնութիւն օրհնողի

*ԵՓԲ. մէկը

Ու Տէրոջը ձեռքը իր ծառաներուն վրայ,
Եւ անոր բարկութիւնը թշնամիներուն վրայ պիտի յայտնուի։
15—Քանզի ահա Տէրը կրակով կու գայ,
Ու անոր կառքերը մրրիկի պէս են,
Որպէս զի իր բարկութիւնը սրտմտութիւնով,
Եւ իր սպառնալիքը կրակի բոցով ի գործ դնէ։
16—Քանզի Տէրը կրակով ու իր սրովը պիտի դատէ ամէն մարմինը.
Ու Տէրոջմէ սպանուածները շատ պիտի ըլլան։
17—Ջրերնիք սրբողները, և պարտէզներու մէջտեղը իրարմէ ետև մտքրտուղները,
Խոզի միս ու պղծ բաներ և մուկ ուտողները
Միկտեղ բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ Տէրը։
18—Բայց ես անոնց գործերը ու խորհուրդները գիտեմ.
Պիտի գամ որ բոլոր ազգերը ու լեզուները պիտի ժողվեմ,
Եւ անոնք պիտի գան ու իմ փառքս տեսնեն։
19—Եւ անոնց մէջ նշան պիտի դնեմ,
Ու անոնցմէ ազատուածները ազգերուն պիտի ղրկեմ,
Այսինքն դէպ ի Թարսիս, դէպ ի Փազ և Ղուդ՝ (աղեղնաձգողները)
Դէպ ի Թոբէլ ու Յաւան,
Այն հեռու կղզիները որոնք իմ համբաւս չլսեցին
Եւ իմ փառքս չտեսան.
Ու իմ փառքս ազգերու մէջ պիտի պատմեն։
20—Եւ անոնք ձիերով ու կառքերով,
Գահաւորակներով, ջորիներով ու սատիկ ուղտերով՝
Չար բոլոր եղբայրները ամէն ազգերէն
Իմ սուրբ լեռս երուսաղէմ
Տէրոջը ընծայ պիտի բերեն, կ'ըսէ Տէրը,
Ինչպէս իսրայէլի որդիները
Մաքուր ամանով Տէրոջը տունը ընծայ կը բերեն։
21—Եւ անոնցմէ ալ պիտի առնեմ՝
Քահանաներ ու Ղեւտացիներ ըլլալու համար, կ'ըսէ Տէրը։
22—Քանզի ինչպէս իմ առեղծելու նոր երկինքս
Ու նոր երկիրս իմ առջեւս պիտի կենան, կ'ըսէ Տէրը,
Այնպէս ձեր սերունդը ու ձեր անունը պիտի կենան։
23—Ու պիտի ըլլայ որ նոր ամիսէ նոր ամիս
Ու շաբաթէ շաբաթ
Ամէն մարմին իմ առջեւս երկրպագութիւն ընելու պիտի գայ, կ'ըսէ Տէրը։
24—Եւ անոնք պիտի ելլեն
Ու ինծի ապստամբ եղող մարդոց դիերը պիտի տեսնեն.
Քանզի անոնց որդը պիտի չմեռնի,
Եւ անոնց կրակը պիտի չմարի,
Ու անոնք ամէն մարմնի զզուանք պիտի ըլլան։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ը.

Բենիամինի երկիրը, Անաթովթի մէջ
2 եղող քահանաներէն Բեզկիայի որդւոյն
Սեմէայի խօսքերը. 2—Որու Տէրոջը
խօսքը եղաւ, Յուդայի Թագաւորին Ա-
մոնի օրերուն Յոսիայի օրերը, անոր
Թագաւորութեանտասնըերկրորդ տա-
րին։ 3—Նաեւ Յուդայի Թագաւորին Յոս-
իայի որդւոյն Յոյակիմի օրերը, մինչև
Յուդայի Թագաւորին Յոսիայի որդւոյն
Սեդեկիայի միտասաներորդ տարւոյն
վերջը, մինչև Երուսաղէմի գերութիւնը,
որ հինգերորդ ամսուն մէջ եղաւ։
4—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
ըսելով,
5—Քեզ որովայնի մէջ չստեղծած քեզ
գիտցայ,
Ու դուն ծոց չբզիր արգանդէն չելած քեզ
սրբեցի.
Քեզ ազգերուն մարգարէ ըրի։
6—Ա՛յն ատեն ես ըսի,
Ո՜հ, Տէր Եհովա, ահա ես խօսիլ չեմ
գիտեր,
Վասն զի ես մանուկ եմ։
7—Բայց Տէրը ինծի ըսաւ,
Մի ըսեր Թէ ես մանուկ եմ.
Վասն զի ուր որ քեզ ղրկեմ՝ պիտի եր-
թաս,
Ու ինչ որ քեզի պատուիրեմ՝ պիտի խո-
սիս։
8—Անոնց երեսէն մի վախնար.
Քանզի ես քեզի հետ եմ
Քեզ ազատելու համար, կ'ըսէ Տէրը։
9—Ու Տէրը իր ձեռքը երկնցուց ու
իմ բերնիս դպաւ.
Ու Տէրը ինծի ըսաւ,
Ահա իմ խօսքերս քու բերանդ դրի։
10-Նայէ, ես այսօր քեզ ազգերուն վրայ,
Ու Թագաւորութիւններուն վրայ կացնե-
ցուցի,
Որպէս թէ խլես ու փշրնես և կորնչնես
ու աւրես,
Նաեւ չինես ու անկես։
11—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
ըսելով,
Ով երեմիա, ի՞նչ կը տեսնես։
Ու ես ըսի, Նշենիի գաւազան մը կը
տեսնեմ։
12—Ա՛յն ատեն Տէրը ինծի ըսաւ, Աղեկ
տեսար.
Վասն զի ես իմ խօսքիս համար զանիկա
կատարելու *պիտի արագամ։
13—Ու երկրորդ անգամ Տէրոջը
խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
Ի՞նչ կը տեսնես։
Ու ես ըսի, Եռացող կաթսայ մը կը տես-
նեմ,
Ու անոր երեսը դէպ ի հիւսիս է։
14—Ու Տէրը ինծի ըսաւ,
Չարիքը հիւսիսէն պիտի բորբոքի
Երկրին բոլոր բնակիչներուն վրայ։
15—Քանզի ահա ես հիւսիսի Թագաւո-
րութիւններուն
Բոլորը ազգատոհմներըը պիտի կանչեմ,
կ'ըսէ Տէրը,
Ու պիտի գան, և ամէն մէկը իր աթոռը
Երուսաղէմի դռներուն առջև,
Ու անոր չրջակայ պարիսպներուն վրայ
Ու Յուդայի բոլոր քաղաքներուն վրայ
պիտի դնեն։
16—Ու պիտի խօսիմ անոնց իմ դա-
տաստաններս,
Անոնց բոլոր չարութիւններուն համար.
Վասն զի անոնք զիս թողուցին,
Ու ուրիշ աստուածներու խունկ ծխեցին,
Ու իրենց ձեռքերուն գործերուն երկրր-
պագութիւն ըրին։
17—Ուրեմն դուն քու մէջդդ պնդէ
ու ելլէր,
Ու քեզի բոլոր հրամայածս անոնց ըսէ,
Անոնց երեսէն մի վախնար,
Չըլլայ որ քեզ անոնց առջև՝ ամօթով
բնեմ.
18—Ու ես ահա այսօր քեզ բոլոր երկ-
րին դէմ,

*ԵՔԲ. կը հակեմ

Այսինքն Յուդայի Թագաւորներուն,
անոր իշխաններուն,
Անոր քահանաներուն և երկրին ժողո-
վուրդին
Ամէն քաղաքի պէս ու երկաթէ սիւնի
պէս
Ու պղնձէ պարիսպներու պէս դէմ։
19—Ու անոնք քեզի հետ պիտի պա-
տերազմին,
Բայց պիտի չկրնան քեզ յաղթել.
Վասն զի ես քեզի հետ եմ
Քեզ ազատելու համար, կ'ըսէ Տէրը։

ԳԼ. Բ

Ե՛ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
2—Գնա ու Երուսաղէմի ականջներուն
կանչէ ու ըսէ,
Տէրը այսպէս կ'ըսէ.
Անապատին մէջ այն չցանուած երկիրը
Իմ հետեւիս եկած առենդ
Քու մանկութեանդ փաղցրութիւնը,
Քու հարսնութեանդ սէրը քեզի համար
յիշեցի։
3—Իսրայէլ Տէրոջը սուրբ էր,
Անոր արմտիքներուն երախայրին էր.
Ամէն անոնք որ զանիկա կ'ուտէին՝ յան-
ցաւոր կ'ըլլային.
Անոնց վրայ չարիք կը հասնէր, կ'ըսէ
Տէրը։
4—Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով Յա-
կոբի տունը,
Ու Իսրայէլի տանը բոլոր ազգատոհմները.
5—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ձեր հայրերը ի՞նչ անիրաւութիւն գտան
իմ վրաս,
Որ ինծմէ հեռացան,
Ու ունայնութեան հետեւ երթալով ու-
նայն եղան.
6—Ու չըսին Թէ Ո՞ւր է Տէրը
Որ մեզ եգիպտոսի երկրէն հանեց.
Որ մեզ անապատէն պարզացուց,
Անապատ Թան և փոսերու երկրէն,
Չորութեան և մահուան սուերի երկ-
րէն,
Այնպիսի երկրէ մի՝ ուրկէ մարդ չէր
անցներ,
Ու հոն մարդ չէր բնակեր։
7—Ու ձեզ բարեբեր երկիր մը բերի,
Որպէս թէ անոր պտուղը ու բարիքը ու-
տէք.
Ու գացէք մտաք ու իմ երկիրս անմա-
քուր ըրիք,
Ու իմ ժառանգութիւնս պղծեցիք.
8-Քահանաները չըսին Թէ Տէրը ո՞ւր է,
Ու օրինաց վարդապետները զիս չճանչ-
ցան,
Ու հովիւները ինծմէ ապստամբեցան,
Ու մարգարէները Բահաղով մարգարէ-
ութիւն ըրին,
Ու անօգուտ բաներու հետեւ գացին։
9—Ասոր համար ձեզի հետ ատեանին
պիտի վիճիմ, կ'ըսէ Տէրը,
Ու ձեր որդւոց որդիներուն հետ պիտի
վիճիմ։
10—Վասն զի կիտացուց կղզիները ան-
ցէք ու նայեցէք,
Ու Կեդար դրկեցէք ու ազէկ հաս-
կըցէք,
Ու տեսէք Թէ այսպիսի բան մը եղո՞ր է.
11—Միթէ ազգ մը իր աստուածները
փոխե՞ց,
Թէև անոնք Աստուած չեն.
Բայց իմ ժողովուրդս իր փառքը
Անօգուտ բանի հետ փոխեց։
12—Ով երկինք, ասոր վրայ զարմացէք.
Ապշեցէք ու խիստ սոսկացէք, կ'ըսէ
Տէրը։
13—Վասն զի իմ ժողովուրդս երկու
չարութիւն գործեց,
Զիս, կենաց կուրին աղբիւրը, թողուցին,
Ու իրենց գուբեր փորեցին,
Ծակոտ գուբեր՝ որոնք չեն կրնար ջուր
պահել։
14—Միթէ Իսրայէլ ծառա՞յ է,
կամ *ծառայի՞ զաւակ է.
Անիկա ինչո՞ւ համար յափշտակութեան
մառնաւեցաւ.
15—Անոր վրայ առիւծի կորիւնները
գոչեցին
Ու ձայներնին հանեցին,
Ու անոր երկիրը աւերակ ըրին.
Անոր քաղաքները այրեցան, անբնակ
եղան։
16—Մեմփացւոց ու Տափնացւոց ազգա-
ները անգամ
Քու գլխուդ գագաթը կտրեցին։

*ԵՔԲ. ընդոծի՞ն

17-Զի՞ որ ասիկա դուն քու վրադ բերիր
Քու Տէր Աստուածդ ձգելով,
Երբ անիկա ճամբուն մէջ քեզմէ առաջ-
նորդութիւն կ'ընէր։
18—Ու հիմա դուն Եգիպտացւոց ճամ-
բան ի՞նչ բան ունիս,
Որ Սիհորի ջուրերը խմելու կ'երթա՜ս.
Կամ Ասորեստանի ճամբան ի՞նչ բան
ունիս,
Որ Գետին ջուրը խմելու կ'երթա՜ս։
19-Քու չարութիւնդ քեզ պիտի խրատէ,
Ու քու անհաւատարմութիւններդ քեզ
պիտի յանդիմանեն.
Արդ գիտցիր ու տես թէ գէշ ու դառն
բան մըն է,
Որ քու Տէր Աստուածդ կը թողուս
Ես քու վրադ իմ վախս չկայ,
Կ'ըսէ զօրաց Եհովա Տէրը։
20—Վասն զի քու լուծդ չառնցմէ
*կտրեցի,
Քու կապանքներդ փրցուցի,
Ու դուն ըսիր, Օրինազանց չեմ ըլլար.
Սակայն՝ ամէն բարձր բլուրի վրայ
Ես ամէն կանանչ ծառի տակ
Ծառեցար՝ պոռնկութիւն ըրիր։
21—Ու ես քեզ ընտիր որթ
Ո՜ր բոլորովին հարազատ սերմ անկէր էի,
Ես դուն ի՞նչպէս վայրենի որթի անպէ-
տութեան ճիւղերու պէս եղար ինծի։
22—Եթէ բորակով լուացուիս
Ու շատ օճառ ալ գործածես,
Քու անօրէնութիւնդ առջևէս բիծի պէս
կը մնայ,
Կ'ըսէ Տէր Եհովա։
23—Ի՞նչպէս կրնաս ըսել,
Ես չպղծուեցայ,
Բահաղի ետեւէն չգացի.
Հովիտին մէջ քու ճամբադ նայէ,
Ինչ ըրած գիտցիր,
Ով խոտորնակ ճամբաներ պտրտող ա-
րագընթաց ուղտ։
24—Անապատը սովրած վայրենի էշը
Որ իր հոգւոյն ցանկութիւնովը օդը կը
ծծէ,
Իր ցանկութենէն ո՞վ կրնայ ետ դար-
ձընել.

*Կամ, կոտրեցիր, քու կապերդ փրր-
ցուցիր, ու ըսիր, Ծառայութիւն չեմ
ըներ. այնպէս որ

Զանիկա ամէն փնտռողները չեն յոգնիր,
Զանիկա իր ամսուն մէջ կը գտնեն։
25—Ոտքդ մերկութենէ ու կոկորդդ
ծարաւէ ետ պահէ.
Բայց դուն ըսիր, *Անկարելի է, չըլլար.
Վասն զի օտարները սիրեր եմ,
Ու անոնց ետեւէն պիտի երթամ։
26—Ինչպէս գողը բռնուած ատեն
կ'ամչնայ,
Այսպէս պիտի ամչնան Իսրայէլի տունը,
Իրենք, իրենց թագաւորները — իշ-
խանները
Եւ քահանաները ու մարգարէները.
27—Որոնք փայտին կ'ըսեն, Դուն իմ
հայրս ես,
Ու քարին՝ Դուն զիս ծնար.
Քանզի ինծի կռնակ դարձուցին և ոչ
Թէ երես.
Բայց իրենց ձախորդութեան ժամանակ
կը կ'ըսեն,
Ելիր ու մեզ ազատէ։
28— Ու ո՞ր են քու ստեղծածներդ, որ-
բանք քեզի չնեղիր.
Եթէ քու ձախորդութեան ժամանակը
քեզ կրնան ազատել, Թող ել-
լեն.
Վասն զի քու աստուածներդ, ով Յուդա,
Քու քաղաքներուդ թիւին չափ եղան։
29—Ինչո՞ւ համար ինծի հետ կը վիճիք.
Դուք ամէնդ ինծմէ ապստամբեցաք, կ'ըս-
կ Տէրը։
30—Պարապ տեղ ձեր ազգը ծեծեցի.
Անոնք խրատ չառին.
Ձեր սուրը ապականարար առիւծի պէս
Ձեր մարգարէները կերաւ։
31—Ով ազգ, Տէրոջը խօսքին նայէ-
ցէք.
Միթէ ես անապա՞տ եղայ Իսրայէլի,
Կամ մութ երկի՞ր մը.
Իմ ժողովուրդս ինչո՞ւ կ'ըսեն,
Մենք ինքնագլուխ կը պտրտինք,
Մէլ մին ալ քեզի չենք գար։
32—Միթէ կույսը իր զարդերը,
Կամ հարսը իր գօտին կը մոռնա՞յ.
Բայց իմ ժողովուրդս անթիւ օրեր զիս
մոռցաւ։
33—Սէր փնտռելու համար՝ ինչո՞ւ քու
ճամբադ ազնիւ կը ցուցնես,

*Եբր. ծոյս չկայ

Այնպէս որ քու ճամբաներդ չար կիներուն ալ սորվեցուցիր։
34—Նաև քու քղանցքներուդ վրայ
Անմեղ ազքատներուն հոգիներուն ար-
իւնները գտնուեցան.
Զանոնք գաղտուկ տեղը չգտայ,
Հապա այս ամէն բաներուն վրայ,
35—Բայց դուն կ'ըսես Թէ Անմեղ ըլ-
լալուս համար
Անոր բարկութիւնը անշուշտ ինծմէ պի-
տի դառնայ։
Ահա ես քեզի հետ դատ պիտի վարեմ
Ես մեղք չգործեցի՛ ըսելուդ համար։
36—Ինչո՞ւ ճամբադ փոխելով այսչափ
կը թափառիս.
Դուն Եգիպտոսէ ալ պիտի ամչնաս,
Ինչպէս Ասորեստանէ ամչցար։
37—Դուն ասկէ ալ պիտի ելլես
Ձեռքերդ գլխուդ վրայ դրած.
Քանզի Տէրը քու յոյսերդ մերժեց,
Ու անոնցմով յաջողութիւն պիտի չու-
նենաս։

Գլ. Գ

Կ'ըսեն Թէ Մարդ մը եթէ իր կինը
արձակէ,
Ու անիկա անոր քովէն երթայ և ուրիշ
այր մը ունենէ,
Անիկա մէյմըն ալ այն կնոջ կը դառնա՞յ.
Այն երկիրը բոլորովին չը՞ պղծուիր։
Բայց դուն, Բէ՛ւ չատ հմանիներու հետ
չնութիւն ըրիր,
Նորէն ինծի դարձիր, կ'ըսէ Տէրը։
2-Աչքերդ բլուրներուն վերցուր ու նայէ,
Ո՞ւր պոռնկութիւն չըրիր։
Դուն անոնց համար ճամբաներուն վրայ
նստար
Անապատի Արաբացիին պէս,
Ու քու պոռնկութիւններովդ ու չարու-
թիւններովդ երկիրը պղծեցիր։
3—Ուստի անձրեւները խափանեցան,
Ու վերջին անձրեւը չեղաւ,
Սակայն քու ճակատդ պոռնիկի ճա-
ռի պէս եղաւ,
Ամօթը մերկ ձգեցիր։
4—Մէյմէկ ատկէ ետքը ինծի պիտի չա-
ղաղակե՞ս՝ ըսելով,
Ով Հայր իմ, դուն ես իմ մանկու-
թեանս առաջնորդը։
5-Միթէ յաւիտեան պիտի բարկանա՞յ,
Կամ էր երդնո՜ւիս միչև պիտի
պահէ՞.
Ահա դուն այսպէս խօսեցար,
Ու քու կարողութեանդ չափ չարու-
թիւն գործեցիր։
6—Ու Յովսիա Թագաւորին օրերը
Տէրը ինծի ըսաւ,
Ապստամբ Իսրայէլի ըրածը տեսա՞ր.
Անիկա ամէն բարձր լեռան վրայ
Ու ամէն կանանչ ծառի տակ գնաց,
Ու հոն շնութիւն ըրաւ։
7—Ու անիկա այս ամէն բաները ընելէն
ետքը
Ըսի, Ինծի դարձիր, բայց անիկա չդար-
ձաւ.
Ու անոր ուխտադրուժ քոյրը Յուդա ա-
յն տեսաւ։
8—Ու երբ ապստամբ Իսրայէլի չնու-
թիւն ընելուն պատճառաւ՝
Զանիկա արձակեցի և արձակման թուղ-
թը անոր տուի,
Տեսայ որ անոր ուխտադրուժ քոյրը
Յուդա չվախցաւ,
Հապա գնաց ինք ալ չնութիւն ըրաւ։
9—Ու եղաւ որ անիկա իր չնութեան
լրբութիւնովը երկիրը պղծեց,
Քանզի քարի ու փայտի հետ չնութիւն
ըրաւ։
10—Այսու ամենայնիւ անոր ուխտա-
դրուժ քոյրը Յուդա ալ
Բոլոր սրտովը ինծի չդարձաւ,
Հապա սուտ Թո՜ւյա՜ս, կ'ըսէ Տէրը։
11—Ու Տէրը ինծի ըսաւ,
Ապստամբ Իսրայէլը ուխտադրուժ Յու-
դայէ աւելի զինք արդարացուց։
12—Գնա այս խօսքերը դէպ ի հիւսիս
կանչելով ըսէ,
Դարձիր, ով ապստամբ Իսրայէլ, կ'ըսէ
Տէրը,
Իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր.
Քանզի ես ողորմած եմ, կ'ըսէ Տէրը,
Յաւիտեան ալ չեմ պահեր։
13—Միայն Թէ քու անօրէնութիւնդ
ճանչցիր,
Որ քու Տէր Աստուածդմէդ ապստամբեցար,
Ու ամէն կանանչ ծառի տակ
Քու ճամբաներդ օտարներուն տարա-
ծեցիր.
Ու իմ խօսքիս հնազանդութիւն չըրիք,
կ'ըսէ Տէրը։

14—Դարձէք, ով ապստամբ որդիք, կ'ըսէ Տէրը,
Քանզի *ԵԽ- ձեզ ամրժեցի,
Բայց՝ ձեզ պիտի առնեմ, մէկ քաղաքէ
մէկ հոգի,
Ու մէկ ազգատոհմէ երկու հոգի,
Ու ձեզ Սիօն պիտի բերեմ.
15—Ու ձեզի իմ սրտիս յարմար հովիւներ պիտի տամ,
Ու ձեզ գիտութեամբ և հանճարով պիտի հովուեն.
16—Ու երբ դուք այն օրերը երկրի վրայ չատնաք ու աճիք, կ'ըսէ Տէրը,
Մէկմէն ալ Տէրոջը տապանակը՝ պիտի չըսեն.
Ու անոնց միտ՛ո վիրաքը պիտի չգայ,
Ու զանկից պիտի չյիշեն,
Ու անոր այցելութիւն պիտի չընեն.
Ու այս բաներէը մէկմէն ալ պիտի չըլլան։
17—Այն առեն Երուսաղէմը Տէրոջը աթոռը պիտի անուանեն,
Ու ամէն ազգերը հոն՝ Տէրոջը անունին համար Երուսաղէմ պիտի ժողովուին.
Ու մէկմէն ալ իրենց չար սրտին կամակորութեանը ետևէն պիտի չերթան։
18—Այն օրերը Յուդայի տունը Իսրայէլի տանը հետ պիտի երթայ,
Ու Երկուքը մէկտեղ հիւսիսի երկրէն
Անոնց հայրերուն ժառանգութիւն սրսած երկիրս պիտի գան։
19—Բայց ես ըսի, Ինչպէս որդիներուն մէջ դնեմ,
Ու քեզի ան ցանկալի երկիրը,
Ազգերուն խիտ գեղեցիկ ժառանգութիւնը, տամ.
Ու ըսի, Ինծի Հայր իմ՝ պիտի ազդակես,
Ու ինծի հետևիլէն ետ պիտի չդառնաս։
20—Իրաւցընէ, ով Իսրայէլի տունը,
Ինչպէս կին մը իր երկունը անհաւատարիմ կ'ըլլայ,
Այնպէս ալ դուք ինծի անհաւատարիմ եղաք, կ'ըսէ Տէրը։
21—Բլուրներու վրայ ձայն մը լսուեցաւ,
Իսրայէլի որդիներուն ազաչանքի ու լացի ձայնը.

*Կամ, ձեր վրայ սիրոջը ես եմ, և

Վասն զի անոնք իրենց ճամբան խոտորցուցին,
Իրենց Տէր Աստուածը մոռցան։
22—Ով ապստամբ որդիներ, դարձէք,
Ես ձեր ապստամբութիւնները կը բժշկեմ։
Ահա մենք քեզի կու գանք,
Քանզի դուն մեր Տէր Աստուածն ես։
23—Ծիրաւի բլուրներուն
Ու լեռներու բազմութեանը յոյսը պարապ բան է.
Հապա Իսրայէլի փրկութիւնը մեր Տէր Աստուծմէն է.
24—Վասն զի մեր մանկութենէն ի վեր մեր հայրերուն վաստակը,
Անոնց հօտերը և արջառները,
Անոնց տղաքները ու աղջիկները ամօթը կերաւ։
25—Մեզ ամօթով կը պառկինք,
Ու մեր անարգանքը մեզ կը ծածկէ.
Վասն զի մեր մանկութենէն մինչև այսօր
Թէ՛ մենք և թէ՛ մեր հայրերը
Մեր Տէր Աստուծոյն դէմ մեզք գործեցինք,
Ու մեր Տէր Աստուծոյն ձայնին հնազանդութիւն չըրինք։

Գլ. Դ

1 Եթէ դառնաս, ով Իսրայէլ, կ'ըսէ Տէրը,
Ինծի պիտի դառնաս.
Ու եթէ քու պղծութիւններդ իմ առջեւէս վերցնես,
Ալ թափառական պիտի չըլլաս։
2—Ու ճշմարտութեամբ, իրաւամբ ու արդարութեամբ
Երդուած պիտի ըսես թէ Տէրը կենդանի է.
Ու ազգերը անով պիտի օրհնուին,
Ու անով պիտի պարծին։
3—Վասն զի Տէրը Յուդայի ու Երուսաղէմի մարդոց այսպէս կ'ըսէ.
Ձմեռուած երկիրներ հերկեցէք ձեզի,
Ու փուշերու մէջ մի ցանէք։
4—Ով Յուդայի մարդիկ ու Երուսաղէմի բնակիչներ,
Տէրոջը թլփատուեցէք,

Ու ձեր սրտին անթլփատութիւնը վերցուցէք,
Որ չըլլայ թէ իմ բարկութիւնս ձեր չար գործերուն համար
Կրակի պէս *բորբոքի ու այրէ, և մարդ մը չըլլայ,
5—Ցուդայի մէջ պատմեցէք,
Ու Երուսաղէմի մէջ քարոզեցէք ու ըսէք,
Երկրի վրայ փող հնչեցուցէք,
Բարձրաձայն ազդակեցէք ու ըսէք,
Ժողովեցէք ու պարսպատոր քաղաքները մտնենք։
6—Դէպ ի Սիօն դրօշ վերցուցէք,
Փախչեցէք, մի կայնիք.
Վասն զի ես չարիք ու մեծ կոտորած պիտի բերեմ հիւսիսէն։
7—Առիւծը իր խորշէն ելաւ,
Ու ազգերը Ջարդողը իր տեղէն ելաւ,
Ճամբայ ինկաւ,
Որպէս զի քու երկիրդ աւերակ ընէ.
Քաղաքներդ պիտի փլին,
Ու անոնց մէջ բնակիչ պիտի չգտնուի։
8—Ասոր համար քու թևերը հագիր
Ու սուգ ընելով ողբացէք,
Վասն զի Տէրոջը սաստիկ բարկութիւնը մեզմէ չդարձաւ։
9—Ու պիտի ըլլայ այն օրը, կ'ըսէ Տէրը,
Որ թագաւորին սիրտը ու իշխաններուն սիրտը պիտի հանի.
Ու քահանաները պիտի ապշին,
Ու մարգարէները պիտի հիանան։
10—Այն առեն ըսի,
Աւա՛ղ, ով Տէր Եհովա,
Արդարև դուն այս ժողովուրդը ու Երուսաղէմը խաբեցիր խաբեցիր՝ ըսելով,
Ձեզի խաղաղութիւն պիտի ըլլայ.
Ու ահա սուրը մինչև անոնց հոգին հասաւ։
11—Այն առեն այս ժողովուրդին ու Երուսաղէմի պիտի ըսուի,
Այրող հով մը անապատին բլուրներէն
Իմ ժողովուրդիս աղջկան ճամբուն մէջ,
Ոչ թէ հռսելու համար, ոչ ալ մաքրելու համար։
12—Ասկէ աւտիկ հով մը պիտի գայ ինծի.

*Բբր. եղէք †Բբր. մացառէն

Հիմա ես ալ անոնց հետ գատաստանի պիտի խօսիմ։
13—Ահա անկիս ամպերու պէս պիտի ելլէ,
Ու անոր կառքերը մրրկի պէս.
Անոր ձիերը արծիւներէն արագընթաց են.
Վա՛յ մեզի՝ որ կ'աւերուինք։
14—Ով Երուսաղէմ, սիրտդ չարութենէ լուա,
Որպէս զի փրկութիւն գտնես.
Քու չար խորհուրդներդ մինչև ե՞րբ պիտի մէջ պիտի մնան։
15—Վասն զի ձայն մը Դանի լուր կը բերէ,
Ու նիրհելի լեռներէն թշուառութիւն լսել կու տայ։
16—Ազգերուն յիշեցէք,
Ահա Երուսաղէմի վրայով պատմեցէք,
Որ հեռաւոր երկրէ պաշարողներ կու գան,
Ու Յուդայի քաղաքներուն վրայ իրենց ձայնը կ'արձակեն։
17—Անոր չորս կողմը ագարակի պահապաններու պէս պիտի պաշարեն,
Վասն զի անիկա ինծի ապստամբեցաւ,
կ'ըսէ Տէրը։
18—Այս բաները քու ճամբաներդ ու գործերդ բերին քու վրադ.
Ասիկա քու չարութիւնդ է, վասն զի գառն է.
Որովհետև մինչև քու սիրտդ հասաւ։
19—Փո՛ր, փո՛ր, մինչև սրտիս *չուեմարաններուը ցաւ կը զգամ.
Սիրտս իմ ներսիդիս կը խռովի, չեմ կրնար լռել.
Քանզի դուն, ով իմ անձս, փողին ձայնը,
Պատերազմին ազդակը, լսեցիր։
20—Կատորած կատորածի վրայ կը կանչուի,
Վասն զի բոլոր երկիրը կործանեցաւ.
Վրանները յանկարծակի՝
Ու խորաններս մէկէն կործանեցան.
21—Մինչև ե՞րբ դրօշը պիտի տեսնեմ,
Ու փողին ձայնը պիտի լսեմ։
22—Քանզի իմ ժողովուրդս յիմար է, զիս չճանչցան.
Անոնք անմիտ զաւակներ են,

*Բբր. պատերը

Ու անոնց քով հանձար չկայ.
Անոնք չարութիւն ընելու խմաւուն են.
Բայց ազէկութիւն ընել չեն գիտեր։
23—Երկրի վրայ նայեցայ, և ահա անձեւ ու պարապ էր.
Երկինք՝ չ՚իյ՚ա՚յ, ու լոյս չունէր։
24—Լեռներուն նայեցայ, և ահա կը դողային,
Ու ամէն բլուրները կը սասկէին։
25—Նայեցայ, և ահա մարդ մը չկար,
Ու երկինքի բոլոր թռչունները փախած էին։
26—Նայեցայ, և ահա պտղաբեր երկիրը անապատ եղած էր,
Ու ամէն քաղաքները Տէրոջը երեսէն,
Անոր սաստիկ բարկութեանը երեսէն,
փլած էին։
27—Վասն զի Տէրը այսպէս կ՚ըսէ.
Բոլոր երկիրը պիտի աւերուի,
Բայց բոլորովին —ե՚ր՚-ն պիտի չընեմ։
28—Ասոր վրայ երկիրը սուգ պիտի բռնէ,
Ու վերէն երկինք պիտի խաւարի.
Վասն զի խօսեցայ, որոշեցի,
Ու պիտի չզղջամ ու անկէ ետ պիտի չդառնամ։
29—Հեծեղոտութեան և ազեղնաւորներուն ձայնէն
Բոլոր քաղաքը պիտի փախչի.
Անոնք թանձրախիտ անտառներու մէջ պիտի մտնեն,
Ու ապառաժներու վրայ պիտի ելլեն.
Ամէն քաղաքները պիտի թողուին,
Ու անոնց մէջ մարդ պիտի չբնակի։
30—Ու դուն, ով աւերուած, ի՞նչ պիտի ընես.
Թէև կարմիրները հագնիս,
Թէև ոսկի զարդերով զարդարես,
Ու *աչքերուդ վրայ շատ ծարոյր ալ դնես՝
Պարապ տեղ կը զարդարուիս.
Քու հոմանիներդ քեզ մերժեցին ե՛ քու հոգիդ կը փնտռեն։
31—Ծանղի ձայն մը լսեցի ծննդական կնոջ չ՚ունէր պէս՝
Ո՛ր անդրանիկը ծնանողին երկունքին պէս.
Սիօնի աղջկան ձայնը՝ որ կը հառաչէ, ու ձեռքերը բանալով՝ կ՚ըսէ,
Հիմա վա՛յ ինծի,
Ջանի սպաննողներուս պատճառաւ հոգիս մաշեցաւ։

Գլ. Ե

Երուսաղէմի փողոցներուն մէջ պտըտեցէք,
Ու հիմա նայեցէք ու գիտցէք,
Ու անոր հրապարակներուն մէջ փընտռեցէք.
Եթէ մարդ մը կրնաք գտնել,
Եթէ իրաւունք ընող, ճշմարտութիւն փնտռող մը կայ,
Ես այն *ո՛չ՚-ին թողութիւն ընեմ։
2—Ու թէև Տէրը կենդանի է՝ կ՚ըսեն,
Բայց սուտ երդումով կ՚ընեն։
3—Ով Տէր, միթէ քու աչքերդ ճշմարտութեան չե՞ն նայիր.
Զանոնք ծեծեցիր, բայց ցաւ մը չզգացին.
Զանոնք հատցուցիր, ե՛յ՚ս խրատ ընդունել չուզեցին.
Իրենց երեսը ապառաժէն աւելի կարծրացուցին,
Ու դառնալ չուզեցին։
4—Ու ես ըսի, Իրաւցնէ անոնք ազգատ են,
Անոնք անմիտ են, քանզի Տէրոջը ճամբան,
Իրենց Աստուծոյն դատաստանը, չեն գիտեր։
5—Ես մեծերուն երթամ
Ու անոնց հետ խօսիմ,
Վասն զի անոնք Տէրոջը ճամբան,
Իրենց Աստուծոյն դատաստանը, գիտեն.
Բայց ե՛ս անոնք ալ լուծը կոտրեցին,
Կապերը փրցուցին։
6—Անոր համար գանոնք անտառին առիւծը պիտի մեռցնէ,
Զանոնք *անապատներուն գայլը՝ պիտի սատկեցնէ,
Անոնց քաղաքներուն վրայ ինձը պիտի հսկէ,
Անոնցմէ ամէն դուրս ելլողը պիտի գիջատուի.
Վասն զի անոնց յանցանքները շատցան,

*Կամ, երեկոյեան գայլը. Սաղ. ճգ. 20։ Ամբ. ա. 8։ Սոփ. գ. 3։

*Եբր. աչքերդ ծարոյրով պատուես

Ու անոնց ապստամբութիւնները բազմացան։
7—Ա՛յս բանին համար քեզի ի՞նչպէս ներեմ.
Քու որդիներդ զիս թողուցին
Ու չատաւածներով երդում ըրին.
Ու երբ զանոնք կշտացուցի, անոնք շնութիւն ըրին,
Ու բազմութեամբ բազանոցը գացին։
8—Առտուանց գերեցած ձիերու նմա՛ն են,
Ամէն մարդ իր դրացիին կնոջ կը վրնջէ։
9—Միթէ այս բաներուն համար այցելութիւն պիտի չընե՞մ, կ՚ըսէ Տէրը,
Կամ այսպիսի ազգի մը իմ հոգիս վրէժ պիտի չառնէ՞։
10—Անոր մարկոցները վերցուցէք,
Ու կործանեցէք.
Բայց ո՛չ թէ բոլորովին.
Անոր մարկոցները վերցուցէք,
Վասն զի անոնք Տէրոջը չեն։
11—Իսրայէլի տունը և Ցուդայի տունը
Ինծի խիստ անհաւատարիմ եղան, կ՚ըսէ Տէրը։
12—Անոնք Տէրը ուրացան ու ըսին,
Անիկա չէ,
Ու մեր վրայ չարիք պիտի չգայ,
Նաև սուր ու սով պիտի չտեսնենք.
13—Ու մարգարէները հովի պէս են,
Ու անոնց բերանը Տէրոջը խօսքը չկայ.
Անոնց այնպէս ըլլայ։
14—Անոր համար զօրաց Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ.
Դուք այս խօսքը խօսելնուդ համար,
Ահա ես իմ խօսքերս քու բերնիդ մէջ կրակ՝
Ու այս ժողովուրդը փայտ պիտի ընեմ,
Ու զանոնք պիտի սպառէ։
15—Ահա ես ձեր վրայ հեռուէն ազգ մը կը բերեմ,
Ով Իսրայէլի տունը, կ՚ըսէ Տէրը.
Անիկա զօրաւոր ազգ է,
Անիկա հին ազգ է,
Ու այնպիսի ազգ մըն է՝ որ դուն անոր լեզուն չես գիտեր
Ու խօսածը չես հասկնար.
16—Անոնց կապարճները բաց գերեզմանի պէս են.
Անոնք ալ զօրաւոր մարդիկ են,
17-Ու անիկա պիտի ուտէ քու հունձքդ,
Ու քու աղաքնէրուդ ու աղխկներուդ ուտելու հացը.
Քու հօտերդ և արջառներդ պիտի ուտէ,
Քու այգիներդ ու թզենիներդ պիտի ուտէ,
Քու ապաւինած պարսպատոր քաղաքներդ
Սրով պիտի աւերէ։
18—Բայց այն օրերն ալ, կ՚ըսէ Տէրը,
Ձեզ պիտի չկատարեմ։
19—Ու երբ ըսէք,
Ի՞նչ պատճառաւ մեր Տէր Աստուածը այս ամէնը մեզի բրաւ.
Դուն անոնց ըսես,
Ինչպէս զուք զիս թողուցիք,
Ու ձեր երկրին մէջ օտար աստուածներու ծառայութիւն ըրիք,
Այնպէս զուք ձերը չեղած երկրին մէջ
Օտարներու ծառայութիւն պիտի ընէք։
20—Ասիկա Յակոբի տանը մէջ պատմեցէք,
Ու Ցուդայի մէջ հրատարակեցէք ըսէք.
21—Հիմա մոխի ըրէք սոխկա,
Ով յիմար ու անմիտ ժողովուրդ,
Որ աչքեր ունիք, բայց չէք տեսներ.
Ականջներ ունիք, բայց չէք լսեր։
22-Ինծմէ պիտի չվախնա՞ք, կ՚ըսէ Տէրը,
Իմ երեսէս պիտի չդողա՞ք,
Որ յաւիտենական հրամանով մը աւազը ծովուն սահման դրի,
Ու անկէ չանցնիր.
Թէև անոր ալիքները կը ծփին, բայց չեն կրնար յաղթել,
Թէև անոնք կը գոչեն, բայց անկէ չեն կրնար անցնել։
23—Սակայն այս ժողովուրդը անհնազանդ ու ապստամբ սիրտ մը ունի.
Անոնք երթալով իրենց ճամբան ծռեցին,
24—Ու իրենց սրտին մէջ չըսին,
Մեր Տէր Աստուծմէն վախնանք,
Ան որ անձրեւը, առաջին ու վերջին անձրեւը, իր ատենին կու տայ,
Ու հունձքի համար որոշուած շաբաթները մեզի կը պահէ։
25—Ձեր անօրէնութիւնները ասոնք հեռացուցին.
Ձեր մեղքերը բարիքը ձեզմէ զրկելին.
26—Վասն զի իմ ժողովուրդիս մէջ մարդ բռնիչներ գտնուեցան.

Անոնք արտարդնեբուն կծկանալն պէս
գարանամուտ կ'ըլլան,
Որոգայթի կը լարեն, մարդիկ կը բռնեն,
27—Ինչպէս վանդակը թռչուններով
լեցուն է,
Այնպէս անոնց տուները նենգութեամբ
լեցուն են.
Անոր համար անոնք մեծցան ու հարըս-
տացան.
28—Գիրցան, *պարարտացան,
Ու չարեբուն գործերէն ալ գերազան-
ցեցին.
Անոնք չհսկեցին դատաստան չեն ըներ,
Որբին իրաւունքը չեն դատեր,
(Այսու ամենայնիւ յաջողութիւն կը
գտնեն,)
Ու աղքատին դատը չեն ուներ.
29—Միթէ այս բաներուն համար այցե-
լութիւն պիտի չընե՞մ, կ'ըսէ Տէ-
րը,
Կամ այսպիսի ազգի մը իմ հոգիս վրէժ
պիտի չառնէ՞.
30—Երկրին վրայ զարմանալի ու սոս-
կալի գործ կ'ըլլայ.
31—Մարգարէները սուտ թեամբ մար-
գարէութիւն կ'ընեն,
Ու քահանաները անոնց ձեռքով կ'իշ-
խեն,
Ու իմ ժողովուրդս այսպէս կ'ախորժի.
Բայց ի՞նչ պիտի ընէք, երբ անոնց վախ-
ճանը հասնի.

Գլ. Զ

Ով Բենիամինի որդիներ, երուսա-
ղէմի մէջէն փախչեցէք,
Ու Թեկուէի մէջ փող հնչեցուցէք,
Ու Բեթհաքարմայի վրայ նշան վերցուցէք.
Վասն զի հիւսիսէն չարիք ու մեծ կո-
տորած կ'երեւնայ.
2—Սիօնի աղջիկը գեղեցիկ ու փափուկ
հիոզ մը նմանցուցի.
3—Հովիւները և անոնց հօտերը անոր
պիտի երթան,
Անոր դէմ շուրջանակի վրաններ պիտի
կանգնեն,
Անէն մէկը իր սահմանին մէջ պիտի հով-
ուէ.
4—Անոր վրայ պատերազմ պատ-
րաստեցէք.
Ելէք, ու կէսօրին ելլենք.
Վա՜յ մեզի, վասն զի օրը կ'անցնի,
Ու իրիկուան սուռերները կ'երկննան.
5—Ելէք, ու գիշերով ելլենք
Ու անոր *բերդերը կործանենք.
6—Վասն զի զորաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Ծառերը կտրեցէք ու Երուսաղէմի դէմ
պատնէշ կանգնեցէք.
Ասիկա այցելութիւն ընելու քաղաք
մըն է,
Բոլորովին հարստահարութեամբ լեց-
ուած է.
7—Ինչպէս ջուրերը իր ջուրերը կը բղխէ,
Անիկա ալ իր չարութիւնը այնպէս կը
բղխէ.
Անոր մէջ զրկանք ու յափշտակութիւն
կը լսուի.
Իմ առջեւս միշտ ցաւեր ու հարուած-
ներ կան.
8—Ով երուսաղէմ, խրատուէ,
Զըլլայ որ իմ հոգիս քեզմէ զատուի.
Զըլլայ որ քեզ ամայութ և անբնակ երկ-
րի մը դարձնեմ.
9—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Իսրայէլի մնացորդները այգիի պէս
Բոլորովին ճառադայ պիտի ընեն.
Դուս ձեռքդ՝ կիսողի պէս կողովներուն
դարձուր.
10—Որո՞ւ խօսիմ ու վկայութիւն
ընեմ՝ որ լսեն.
Ահա անոնց ականջները անթլփատ են,
Ու չեն կրնար մտիկ ընել.
Ահա Տէրոջը խօսքը անոնց առջեւ անար-
գանք եղաւ,
Անկէ չեն ախորժիր.
11—Սակայն ես Տէրոջը բարկութիւնով
լեցուած եմ,
Ինքզինքս զսպելէն յոգնեցայ.
Զանէ դուրս պիտի թափեմ ազա-
ներուն վրայ,
Ու նաև երիտասարդներուն ժողովին
վրայ.
Քանզի այր ու կին մարդը,
Ծերը ու տարիքը առածը պիտի բռնուին.
12—Ու անոնց տուները, ագարակները
ու կիները մէկտեղ

*Կամ, պալատները

Օտարներուն ձեռքը պիտի անցնին.
Վասն զի երկրին բնակիչներուն վրայ
իմ ձեռքս պիտի երկնցնեմ, կ'ըսէ Տէրը։
13—Վասն զի անոնց պզտիկէն մինչև
մեծը
Ամէնը ագահ են թեան հաւէտ եղան,
Ու մարգարէին մինչև քահանան
Ամէնը սուտ թեամբ կը վարուին.
14—Ու իմ ժողովուրդիս ազկան վէր-
քը հարեւանցի բժշկելով՝
Թաղադրելով թաղադրելով՝ կ'ըսեն,
Երբ խաղաղութիւն չկայ.
15—Միթէ իրենց պղծութիւն ըրած ա-
տենը կ'ամչնա՞ն.
Բնաւ չեն ամչնար,
Ու պատկառիլ չեն գիտեր.
Անոր համար իյնողներուն մէջ պիտի իյ-
նան,
Անոնց այցելութիւն ըրած ատենս պիտի
գլորին, կ'ըսէ Տէրը։
16—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ճամբաներու վրայ կայնեցէք ու նայե-
ցէք,
Ու հին շաւիղներուն համար հարցուցէք,
Թէ ո՛րն է բարի ճամբան.
Ու անոր մէջ քալեցէք,
Որպէս զի ձեր հոգիներուն հանգիստ
գտնէք.
Բայց անոնք ըսին, Ա՜ոչ հէ չենք քալեր։
17—Ու ձեր վրայ դէտեր դրի, ըսելով,
Փողին ձայնը մտիկ ըրէք.
Բայց անոնք ըսին, Մտիկ չենք ըներ։
18—Ուրեմն, ով ազգեր, լսեցէք.
Ով ժողովք, անոնց մէջ եղած բանը
գիտցիր։
19—Լսէ, ով երկիր,
Ահա ես այս ժողովուրդին վրայ չարիք,
Անոնց խորհուրդներուն պտուղը, պիտի
բերեմ.
Վասն զի իմ խօսքերս մտիկ չըրին,
Ու իմ օրէնքս ալ մերժեցին,
20—Ինչո՞ւ ինծի այսպէս Սաբայէ կընդ-
ունիմ գայ,
Ու հեռաւոր երկրէ՝ անուշահոտ խունկ
կերէգն.
Ձեր ողջակէզները ընդունելի չեն,
Ու ձեր զոհերը ինծի հաճելի չեն։
21—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս ժողովուրդին առջեւ խոչոր
կը դնեմ,
Ու հայրերը որդիներուն հետ մէկտեղ
անոնց գարնան ելով պիտի գլորին.
Դրացին ու բարեկամը պիտի կորսուին։
22—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա հիւսիսի երկրէն ժողովուրդ մը կու
գայ,
Ու երկրի ծայրերէն մեծ ազգ մը կ'ելլէ.
23—Անոնք ազեղ և նիզակ կը կրեն,
Անոնք անգութ ու անողորմ են.
Անոնց ձայնը ծովու պես կը գոռայ,
Ու անոնք ձիերու վրայ կը հեծնեն,
Ու պատերազմով մարդու պէս
Քեզի դէմ կը շարուին, ով դուստր Սիօնի։
24—Անոր լուրը լսեցինք.
Ձեռքերնիս թուլցան,
Ու ցաւերը մեզ պատեցին
Ծննդական կնոջ երկունքին պէս։
25—Արտերը մի ելլէք ու ճամբաները
մի պտրտիք.
Վասն զի չորս կողմը թշնամիին սուրը ու
վախ կայ.
26—Ով իմ ժողովուրդիս աղջիկը, փուռ
հագիր
Ու մոխիրի մէջ թաւալի.
Ու խիստ գոռան պէս լաց,
Ինչպէս մէկ հատիկ ոտք վրայ կու լան.
Վասն զի կործանողը յանկարծ մեր վրայ
պիտի գայ։
27—Քեզ իմ ժողովրդիս մէջ փորձիչ
ու բերդ դրի,
Որպէս զի անոնց ճամբան գիտնաս և
փորձես։
28—Անէնը կամակոր ապստամբներ են,
Բանսարկու թեան կը պտրտին, պղինձ ու
երկաթ են.
Անէնը ապականակործ են։
29—Փուքը այրեցաւ,
Կապարը կրակին հատաւ.
Արծաթագործը պարապ տեղ կ'աշխատի,
Վասն զի չարերը չորցուեցան։
30—Անոնց Անպիտան արծաթ՝ պիտի
կանչեն,
Վասն զի Տէրը զանոնք մերժեց։

Գլ. Է

Տէրոջը կըսմանէ երեմիայի եղած
խօսքն է, որ ըսաւ,
2—Տէրոջը տունը գուռը կայնէ,
Ու հոն այս խօսքը կանչէ ու ըսէ,

Ցերեկը խօսքը մեզ ըրեք, ամէն բոլոր ցուզա,
Որ այս գործերէն կը մնանք՝
Ցերեկը երկրպագութիւն ընելու համար։
3—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ՚ըսէ.
Ձեր ճամբաները ու գործերը ուղղեցէք,
Ու ձեզ պիտի թողում որ այս տեղ բնակիք։
4—Դուք մի ապաւինիք սուտ խօսքերուն՝ որ կ՚ըսեն,
Ցերեկը տաճարը, Ցերեկը տաճարը,
Ցերեկը տաճարը ասոնք են։
5—Քանի որ ձեր ճամբաները ու գործերը ուղղէք,
Ու որ ձեզի ու ձեր հայրերուն ատած տեղիս
Ամէն իրաւունքը ուշադրութեամբ ի գործ դնէք,
6—Պանդուխտին, որբին ու այրեւարին զրկանք չընէք,
Ու այս տեղ անմեղ արիւն չթափէք,
Ու օտար աստուածներու ետեւէ չերթաք,
Որ ձեզի չարիքի պատճառ կ՚ըլլայ,
7—Ա՛յն ատեն այս տեղ ձեր հայրերուն տուած երկրիս մէջ
Պիտի բնակեցնեմ ձեզ յաւիտեանս յաւիտենից։
8—Ահա դուք սուտ խօսքերու կ՚ապաւինիք,
Որոնք չեն կրնար օգուտ մը ընել։
9—Այդ չէօք գողութիւն, մարդասպանութիւն և շնութիւն ընելով,
Ու սուտ երդում ընելով, և բահաղի խունկ ծխելով,
Ու ձեր չգիտցած օտար աստուածներուն ետեւէն երթալով
10—կրնա՞ք գալ ու իմ առջեւս կայնել այս տան մէջ՝
Որուն վրայ իմ անունս կոչուած է,
Ու ըսել թէ Ազատուեցանք որպէս զի այս ամէն պղծութիւնները ընենք։
11—Այս տունը, որուն վրայ իմ անունս կոչուած է,
Միթէ ձեր աչքերուն առջեւ աւազակներու քարա՞յր եղաւ։
Ահա ես ալ տեսայ, կ՚ըսէ Տէրը։
12—Բայց հիմա դուք Սեղեմի մէջ եղող իմ տեղս գացէք,
Ուր առաջ իմ անունս հաստատեցի,
Ու տեսէք ինչ որ անոր ըրեր եմ
Իմ ժողովրդիս Իսրայէլի չարութեանը համար։
13—Ու հիմա որովհետեւ այս բոլոր գործերը ըրիք, կ՚ըսէ Տէրը,
Ու թէպէտ ձեզի խօսեցայ կանուխ կելլելով ու խօսելով, բայց դուք մնիկ չլսիք,
Ձեզ կանչեցի, բայց դուք պատասխան չտուիք։
14—Ես ալ այս ձեր ապաւինած տանը,
Որուն վրայ իմ անունս կոչուած է,
Ու ձեզի ու ձեր հայրերուն տուած տեղիս
Սելովի ըրածիս պէս պիտի ընեմ։
15—Ու ինչպէս ձեր բոլոր եղբայրները,
Եփրեմի բոլոր սերունդը վռնտեցի,
Ա՛յդպէս ձեզ իմ առջեւէս պիտի վռնտեմ։
16—Ուստի դուն այս ժողովրդին համար աղօթք մի ըներ,
Ու անոնց համար ազաղակ ու աղաչանք մի մատուցաներ,
Ու ինծի բարեխօսութիւն մի ըներ,
Քանզի քեզի մնիկ չեմ ընդունիր։
17—Դուն չե՞ս տեսներ թէ անոնք ի՛նչ կը գործեն
Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ։
18—Տղաքները փայտ կը ժողվեն,
Ու հայրերը կրակ կը վառեն,
Ու կիները խմոր կը շաղեն՝
Երկնքի թագուհիին բլիթներ չինելու համար,
Ու օտար աստուածներու թափելու նուէրներ կը մատուցանեն,
Որպէս զի զիս բարկացնեն։
19—Միթէ անոնք զի՞ս կը բարկացնեն, կ՚ըսէ Տէրը,
Չէ՞ որ իրենց անձը կը խովէն իրենց երեսին ամօթին համար։
20—Ասոր համար այսպէս կ՚ըսէ Տէր Եհովա.
Ահա իմ բարկութիւնս ու սրտմտութիւնս
Այս տեղին վրայ պիտի թափի՝
Մարդու վրայ և անասունի վրայ
Ու դաշտի ծառերուն վրայ
Ու երկրի պտուղներուն վրայ,
Ու պիտի բռնկի ու պիտի չմարի։

21—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ՚ըսէ.
Ձեր ողջակէզները ձեր զոհերուն վրայ աւելցուցէք և միս կերէք։
22—Վասն զի ձեր հայրերը Եգիպտոսի երկրէն հանած օրս՝
Անոնց ետ չխօսեցայ ողջակէզի ու զոհի վրայով,
Ոչ ալ անոնց հրամայեցի.
23—Հապա անոնց այս բանը հրամայեցի ու ըսի,
Իմ ձայնս մնիկ ըրէք
Ու ես ձեզի Աստուած ըլլամ,
Ու դուք ինծի ժողովրդ ըլլաք։
Ու ձեզի ամէն հրամայած ճամբաներուս մէջ քալեցէք,
Որպէս զի ձեզի ազէկ ըլլայ։
24—Բայց անոնք մնիկ չըրին ու ականջնին չդնեցին,
Հապա իրենց չար սրտին կամակորութիւնովը
Իրենց խորհուրդներուն հետեւեցան,
Ու ետ գացին և ոչ թէ առաջ։
25—Ձեր հայրերուն Եգիպտոսի երկրէն ելած օրէն մինչեւ այսօր
Իմ բոլոր ծառաներս, մարգարէները, ձեզի զրկեցի.
Ամէն օր կանուխ կելլելով կը զրկէի.
26—Ու ինծի մնիկ չըրին և ականջնին չդնեցին,
Հապա իրենց պարանոցը խստացուցին,
Իրենց հայրերէն աւելի չար եղան։
27—Ու դուն այս բոլոր խօսքերը անոնց պիտի զրուցես,
Բայց քեզի մնիկ պիտի չընեն.
Ձանոնք պիտի կանչես,
Բայց քեզի պատասխան պիտի չտան։
28—Ա՛յն ատեն անոնց ըսես,
Իր Տէր Աստուծոյն ձայնը մնիկ չընդունեցին
Ու խրատ չընդունեցին։ ազգը ասկից է.
Ճշմարտութիւնը կորսուեցաւ ու անոնց բերնէն կարեցաւ։
29—Մազերդ կարէ ու նետէ, ով Երուսաղէմ,
Ու բլուրներուն վրայ ողբա.
Քանզի Տէրը մերժեց ու երեսէ ձգեց այն ազգը
Որու դէմ շատ սրդոզեր էր,
30—Վասն զի Յուդայի որդիները իմ առջեւս չարութիւն գործեցին,
կ՚ըսէ Տէրը,
Իրենց գարշելի բաները իմ անունովս կոչուած տանը մէջ դրին,
Որպէս զի զանիկա պղծեն,
31—Ու Ինովմի որդւոյն ձորին մէջ եղող Տոփեթի բարձր տեղերը չինեցին՝
Իրենց տղաքը ու աղիկները կրակով այրելու համար,
Զոր ես չհրամայեցի ու միտքէս ալ անցած չէր,
32—Ուստի ահա օրեր կու գան, կ՚ըսէ Տէրը,
Որ ալ Տոփեթի կամ Ինովմի որդւոյն ձորը պիտի չըսուի,
Հապա Սպանութեան ձոր.
Ու Տոփեթի մէջ դիւնէնէր պիտի թաղեն *մինչեւ որ ալ տեղ չմնայ՝,
33—Ու այս ժողովրդին դիեերը
Երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան,
Ու վռնտող մը պիտի չըլլայ։
34—Ու Յուդայի քաղաքներէն ու Երուսաղէմի փողոցներէն
Ցնծութեան ձայնը և ուրախութեան ձայնը,
Փեսային ձայնը ու հարսին ձայնը պիտի դադրեցնեմ,
Վասն զի երկիրը ամայի պիտի ըլլայ։

Գլ. Ը

Ա՛յն ժամանակ, կ՚ըսէ Տէրը,
Յուդայի թագաւորներուն ոսկորները,
Ու անոր իշխաններուն ոսկորները,
Ու քահանաներուն ոսկորները,
Ու մարգարէներուն ոսկորները,
Ու Երուսաղէմի բնակիչներուն ոսկորները
Իրենց գերեզմաններէն պիտի հանեն,
2—Ու պիտի տարածեն զանոնք արեւուն առջեւ ու լուսնին առջեւ,
Ու երկինքի բոլոր զօրքին առջեւ,
Զորոնք սիրեցին, ու անոնց ծառայեցին,
Ու անոնց ետեւէն գացին,
Ու զանոնք փնտռեցին, և անոնց երկրպագութիւն ըրին.

*Կամ, որ իւր տեղ չըլլալուն համար

Անոնք պիտի չժողովուին ու պիտի չթաղուին,
Երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան,
3—Ու մահը կեանքէն աւելի ցանկալի պիտի ըլլայ
Ամբողջ մնացորդներուն, որոնք մնացեր են այն ամէն տեղերը
Ուր զանոնք վռնտեր եմ, կ'ըսէ զօրաց Տէրը։
4—Ու անոնց ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ.
Մէյ մէկ անոնք պիտի իյնան ու պիտի չկրկնե՞ն.
Դարձ դէպի ետ չդառնա՞ր կը խոստովի ու նա չը՞ դառնար.
5—Ինչո՞ւ այս երուսաղէմի ժողովուրդը միշտաւոր խոստովանութիւնով մը խոստովեցաւ.
Անոնք նենգութեան յարեցան, դառնալ չուզեցին։
6—Ականջ դրի ու մտիկ ըրի,
Անոնք չիտակ չեն խօսիր.
Մարդ մը չկայ որ իր չարութենէն զղջայ,
Ու ըսէ թէ ի՛նչ գործեցի.
Ամէնը իրենց ընթացքին դարձան՝
Պատերազմի վազող ձիու պէս։
7—Արագիլը անգամ օդին մէջ իր որոշ ժամանակը կը դիտէ,
Ու տատրակը և կռունկը ու ծիծեռնիկը
Իրենց գալու տարի ժամանակը կը դիտեն,
Բայց իմ ժողովուրդս Տէրոջը դատաստանը չդիտեր։
8—Ինչպէս կ'ըսէք թէ Մենք խելացուն ենք,
Ու Տէրոջը օրէնքը մեր քով է.
Իրաւցնէ ահա գրիչներուն սուտ գրիչը սուտութիւն կը գործէ։
9—Խելացունները ամչցան,
Անոնք զարհուրեցան ու բռնուեցան,
Ահա Տէրոջը խօսքը անարգեցին,
Ալ անոնց քով ի՞նչ խելացութիւն կը մնայ։
10—Ուստի անոնց կիները օտարներուն,
Անոնց ագարակները անոնց տիրացողներուն պիտի տամ,
Վասն զի պզտիկէն մինչև մեծը, ամէնը ագահութեան կուտէ հոգի,
Մարգարէէն մինչև քահանան, ամէնը սուտութեամբ կը վարուին։
11—Ու իմ ժողովուրդիս աղիկան վէրքը հարեւանցի բժշկելով՝
Խաղաղութիւն, խաղաղութիւն կ'ըսեն,
Երբ խաղաղութիւն չկայ։
12—Մէյ մէկ իրենց պզտութիւն ըրած ատենը կ'ամչնա՞ն.
Բնաւ չեն ամչնար,
Ու պատկառիլ չեն գիտեր։
Անոր համար իյնողներուն մէջ պիտի իյնան,
Անոնց այցելութիւն եղած ատենը պիտի գլորին, կ'ըսէ Տէրը։
13—Զանոնք բոլորովին բնաջինջ պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը.
Ողկոյզ մը չի մնար որթին վրայ խաղող պիտի չըլլայ,
Ու թզենիին վրայ թուզ պիտի չըլլայ.
Անոնց տերեւն ալ պիտի թառամի,
Ու անոնց տուածները պիտի անցնին։
14—Մենք ինչո՞ւ կը նստինք.
Ժողովուեցէք, ու պարսպատոր քաղաքները մէջ մանենք
Ու հոն լուռ կենանք.
Վասն զի մեր Տէր Աստուածը մեզ լռեցուց,
Ու մեզի դառնութեան ջուր խմցուց,
Քանզի Տէրոջը դէմ մեզք գործեցինք։
15—Խաղաղութեան սպասեցինք,
բայց բարութիւն չկար.
Բժշկութեան ժամանակին սոսկութիւն,
բայց ահա խռովութիւն։
16—Անոր ձիերուն փռնչիւնը Դանէ լսուեցաւ.
Անոր երիվարներուն խրխինչունէն ձայնէն
Բոլոր երկիրը շարժեցաւ.
Վասն զի պիտի գան, ու երկիրը և անոր լիութիւնը,
Քաղաքը ու անոր բնակիչները պիտի ուտեն։
17—Քանզի ահա ես ձեր մէջ օձեր,
Բարբեր կը զրկեմ, որոնց թովչութիւն չպղտրի,
Ու ձեզ պիտի խածնեն, կ'ըսէ Տէրը։
18—Իմ զուարթութիւնս սգոմութեան է՛ե՛ե՛ցաւ,
Իմ սիրտս ներսիդիս կը մաքրի։
19—Ահա հեռուստ երկրէ եկողներուն պատճառաւ՝
Իմ ժողովուրդիս աղիկան ազգերուն ձայնը.

Մէյ մէկ Տէրը Սիոնի մէջ չէ՞,
Անոր Թագաւորը հոն չէ՞։
Ինչո՞ւ իրենց քանդակած կուռքերովը
Ու օտարներուն ունայնութիւններովը զիս բարկացուցին։
20—Հունձքի աւուրը անցաւ, ամառը վերջացաւ,
Բայց մենք չփրկուեցանք։
21—Իմ ժողովուրդիս աղիկան վէրքին համար վիրաւորեցայ,
Խաւարեցայ ու սոլոթիւնը զիս պատեց։
22—Մէյ մէկ Գաղաադու մէջ բալասան չկա՞յ,
Հոն բժիշկ չկա՞յ.
Հապա ինչո՞ւ համար իմ ժողովուրդիս աղիկը բժշկութիւն չգտաւ։

Գլ. Թ

Երանի՛ թէ գլուխս ջուր,
Ու աչքերս արցունքի աղբիւր ըլլային,
Որպէս զի ցորեկ ու գիշեր լայի
Իմ ժողովուրդիս աղիկան սպանուածներուն համար։
2—Երանի՛ թէ անապատի մէջ ճամբորդներու իջեւան մը ունենայի,
Որպէս զի իմ ժողովուրդս թողուի ու անոնցմէ հեռանայի.
Վասն զի ամէնը շնացողներ են,
Ու նենգաբարներու ժողով են։
3—Ու իրենց լեզուները իրենց աղեղնեղուն պէս կը լարեն սուտութեան համար,
Բայց ճշմարտութեան համար երկրի վրայ զօրացած չեն։
Վասն զի չարութենէ չարութիւն կ'երթան,
Ու զիս չեն ճանչնար, կ'ըսէ Տէրը։
4—Ամէն մարդ թող իր ընկերէն զգուշանայ,
Ու բնաւ եղբօր մը մի ապաւինիք.
Վասն զի ամէն եղբայր խաբեութիւն կը հնարէ,
Ու ամէն ընկեր բանսարկութեան կը պտրտի.
5—Ու ամէն մարդ իր ընկերը կը խաբէ,
Ու ճշմարտութիւն չեն խօսիր.
Անոնք իրենց լեզուները սուտ խօսելու սորվեցուցած են,
Ինաւրէնութիւն ընելով կը յոգնին,
6—Քու բնակարանդ նենգութեան մէջ է.
Նենգութեան պատճառաւ զիս ճանչնալ չեն ուզեր, կ'ըսէ Տէրը։
7—Անոր համար զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա զանոնք պիտի հալեցնեմ ու պիտի փորձեմ,
Վասն զի իմ ժողովուրդիս աղիկան հասմար ի՞նչպէս ընեմ,
8—Անոնց լեզուն մահաբեր նետ է,
Նենգութիւն կը խօսի.
Բերնովը իր ընկերին հետ խաղաղութիւն կը խօսի,
Բայց սրտովը անոր դարան կը պատրաստէ։
9—Մէյ մէկ այս բաներուն համար անոնց այցելութիւն պիտի չընե՞մ,
կ'ըսէ Տէրը,
Կամ այսպիսի ազգէ մը իմ հոգիս վրէժ պիտի չառնէ՞։
10—Լեռներուն համար լաց ու ողբ,
Ու անապատի արօտներուն համար կոծ պիտի ընեմ.
Վասն զի այրեցան, անվի մարդ չանցնիր,
Ու խաշնարներու ձայն չլսեր.
Օդին թռչուններէն մինչև անասունները փախան, գացին։
11—Ու Երուսաղէմը կոյտ-կոյտ գէշեր
Ու չագալներու բնակարան պիտի ընեմ,
Ու Յուդայի քաղաքները անբնակ ամայութեան պիտի դարձնեմ։
12—Ո՞վ է այն խելացուն մարդը, որ ասիկա հասկնայ.
Ու անոր՝ Աստուծոյ բերանը խօսած ըլլայ, որ ասիկա պատմէ,
Թէ երկիրը ինչո՛ւ համար աւերուեցաւ
Ու այրած անապատի պէս եղաւ,
Ուրկէ մարդ չանցնիր,
13—Ու Տէրը ըսաւ,
Վասն զի անոնք իմ օրէնքս ձգեցին,
Զոր իրենց առջև գրեի էի,
Ու իմ ձայնիս մտիկ չընելով անոր հետեւցան չգնացին,
14—Հապա իրենց սրտին կամակորութեանը
Ու հայրերնուն իրենց սորվեցուցած Բահովմին ետեւէն գացին,
15—Անոր համար զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ,

Ահա ես այս ժողովուրդին օձինդր պիտի
կերցնեմ,
Ու անոնց դառնութեան ջուր պիտի
խմցնեմ։
16—Ես զանոնք պիտի ցրեմ այն ազ-
գերուն մէջ,
Զորանք ոչ իրենք գիտցան, ոչ ալ իրենց
հայրերը,
Ու անոնց վրայ սուր պիտի զրկեմ,
Մինչև որ զանոնք հատցնեմ։
17—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Մտածեցէք, ու լալկան կիներ կանչե-
ցէք՝ որ գան,
Ու հանճարեղ կիներուն լաւ զրկեցէք՝
որ գան,
18—Ու մեզի համար չուռալ ողբի յօթ-
վերցնեն,
Որպէս զի մեր աչքերը արցունքներ իջե-
ցընեն,
Ու մեր արտեւանունքները ջուրերը վազ-
ցընեն։
19—Քանզի Սիօնէ ողբի ձայն լսուեցաւ,
Ինչպէս կործանեցանք, խիստ ամչ-
ցանք,
Վասն զի երկիրը թողուցինք,
Վասն զի Ը֊ԸՏ֊ՒՆԵՐԸ հիմնայատակ
ըրին մեր բնակարանները։
20—Ուրեմն, ով կիներ, Տէրոջը խօսքը
մտիկ ըրէք,
Ու ձեր ականջները անոր բերնին խօսքը
թող ընդունին.
Ու ձեր աղջիկներուն ողբ սորվեցուցէք,
Ու ամէն կին իր դրացին եղերերգու-
թիւն սորվեցնէ։
21—Վասն զի մահը մինչև մեր պատու-
հանները եկաւ,
Մեր պալատները մտաւ,
Որպէս զի փողոցներէն տղաքները՝
Ու հրապարակներէն երիտասարդները
բնաջինջ ընէ։
22—Ըսէ որ Տէրը այսպէս կ'ըսէ.
Մարդոց դիակները պիտի իյնան՝
Արտերու երեսին վրայ եղով ապրին պէս,
Կամ հնձողներուն ետեւէ ՏՈՅԹ խուրձի
պէս.
Ու պիտի չըլլայ մէկը որ զանոնք ժողվէ։
23—Տէրը այսպէս կ'ըսէ.
Իմաստունը իր իմաստութիւնովը չպարծի,
Ու զօրաւորը իր զօրութիւնովը չպարծի,
Հարուստը իր հարստութիւնովը չպարծի,
24—Հապա ան որ կը պարծի՝ թող ա-
սով պարծի,
Որ կը հասկնայ ու զիս կը ճանչնայ,
Ը֊ ԷՒԵՒ ԹԷ ԵՍ ԵՄ ՏԷՐԸ՝
Որ երկրի վրայ ողորմութիւն, իրաւունք
ու արդարութիւն կ'ընեմ.
Քանզի ես ասոնց կը հաճիմ, կ'ըսէ Տէրը։
25—Ահա օրեր պիտի գան, կ'ըսէ Տէրը,
Որ ամէն թլփատածներուն ու ան-
թլփատներուն,
26—Եգիպտոսի և Յուդայի ու Եդոմի
Ու Ամմոնի որդիներուն ու Մովաբի
Ու Ը֊ԷՐԵՑ ՆՇՈՒՑԻՆ Ծայրերը կարող՝ ա-
նապատի բոլոր բնակիչներուն
Այցելութիւն պիտի ընեմ.
Վասն զի ամէն ազգերը անթլփատ են,
Ու բոլոր Իսրայէլի տունը սրտով ան-
թլփատ է։

Գլ. Ժ

Ով Իսրայէլի տունը,
Տէրոջը ձեզի համար ըսած խօսքը մտիկ
ըրէք.
2—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ազգերուն ճամբաները մի սորվիք,
Ու երկինքի նշաններէն մի զարհուրիք,
Վասն զի անոնցմէ հեթանոսները կը զար-
հուրին։
3—Քանզի ժողովուրդներուն սովորու-
թիւնները ունայնութիւն են.
Քանզի անտառէն փայտ կը կտրեն,
Արհեստագէտին ձեռքերուն
գործն է՝ տապալով էրգՈՒՄՆ։
4—Ոսկիով արծաթով և ոսկիով կը
զարդարեն,
Ու գամերով և ուռերով կը գամեն
զանիկա ու չշարժիր։
5—Անոնք արմաւենիի պես չիսակ են,
բայց չեն խօսիր.
Անոնք ի հարկէ պիտի վերցուին, վասն
զի չեն կրնար քալել.
Անոնցմէ մի վախնաք, վասն զի չարիք
մը չեն կրնար հասցնել,
Ոչ ալ բարիք ընելու կարող են։
6—Ով Տէր, քեզի նման մէկը չկայ.
Դուն մեծ ես, ու քու անունդ զօրու-
թեամբ մեծ է։

*Կամ, Էրկրի ծայրերը եղող

7—Քեզմէ ով պիտի չվախնայ, ով ազ-
գաց թագաւոր,
Քանզի քեզի կը վայլէ.
Վասն զի ազգաց բոլոր իմաստուններ-
ուն մէջ
Ու անոնց բոլոր թագաւորութիւննե-
րուն մէջ
Քեզի նման մէկը չկայ։
8—Բայց անոնք բոլորովին անասո ու
անմիտ են.
Անոնց ուսուցումը ունայնութեանց վարդա-
պետութիւն է, փայտ է։
9—Թարսիսէ ծեծուած արծաթ
Ու Ովազէ ոսկի կը բերուի,
Անոնք վարպետի ու ոսկերչի ձեռքեր-
ուն գործն են.
Անոնց զգեստը կապուտակ ու ծիրանի է.
Ամէնը հանճարեղներու գործեր են։
10—Սակայն Եհովա է ճշմարիտ Աստ-
ուած,
Անիկա է կենդանի Աստուած և յաւի-
տենական թագաւոր.
Անոր բարկութենէն երկիրը կը դողայ,
Ու ազգերը անոր սրտմտութեանը չեն
դիմանար։
11—[*Անոնց այսպէս ըսէք.
Այն աստուածները, որոնք երկինքը ու
երկիրը չստեղծին.
Երկրէ ու այս երկինքներուն տակէն
պիտի կորսուին։]
12—Երկիրը իր զօրութիւնովը չինեց,
Աշխարհը իր իմաստութիւնովը հաստա-
տուեց,
Ու երկինքը իր խորհրդովը տարածեց։
13—Երբ իր ձայնը կու տայ, երկինքի մէջ
ջուրերու բազմութիւն կ'ըլլայ,
Ու երկրի ծայրերէն ջրհոսներ կը հանէ.
Անձրեւի համար փայլակներ կը չինէ,
Ու հովը կը հանէ իր շտեմարաններէն։
14—Ամէն մարդ գիտութենէ զրկուած՝
անասուն դարձաւ.
Ամէն ոսկերիչ իր քանդակած կուռքին
պատճառաւ ամօթով եղաւ.
Վասն զի ձուլած կուռքը սուտ է,
Ու անոնք հոգի չունին։
15—Անոնք ունայնութեան ու խաբէու-
թեան գործեր են,

*Այս հատուածը Բաղդէացիին լեզուով
ԷՐՐՈՒՆ Է

Անոնց այցելութիւն եղած ատեն անոնք
պիտի կորսուին։
16—Յակոբի բաժինը ասոնց պէս չէ,
Վասն զի անիկա ամէն բան Ստեղծողն է,
Ու Իսրայէլ անոր ժառանգութեան վի-
ճակն է.
Ը֊ անոր անունը ՏՀՈՎԱ Սաբաւովթ է։
17—Ով բերդի մէջ բնակող,
Քու վաճառներդ երկրէն ժողվէ։
18—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս անգամ երկրին բնակիչնե-
րը *զուրս պիտի նետեմ,
Ու զանոնք նեղութեան մէջ պիտի ձգեմ,
որպէս զի Ը֊ԸՏ֊ՒՆԸ գտնեն։
19—Վա՛յ ինծի իմ հարուածքիս համար,
Իմ վէրքս անբժշկելի է.
Բայց ես ըսի, Իրաւցնէ սա իմ ցաւ է,
Ու զանիկա կրելու եմ։
20—Իմ վրանս կործանեցաւ և ամէն
չուանները փրթան.
Տղաքներս ինծմէ ելան ու չկան.
Ոեւէ հաս վրանս կանգնող
Ու վարագոյրներս գնող չկայ։
21—Վասն զի հովիւները անասուն դար-
ձան,
Ու Տէրը չխնդրեցին.
Անոր համար յաջողութիւն չգտան,
Ու անոնց բոլոր հօտը ցրուեցաւ։
22—Ահա հիւսիսի երկրէն գուժի ձայն
Ու մեծ խռովութիւն կու գայ,
Որպէս զի Յուդայի քաղաքները աւերակ
Ու չագալներու բնակարան ընէ։
23—Գիտեմ, ով Տէր, որ մարդուն
ճամբան իր ձեռքը չէ,
Քալող մարդը իր քալուածքը չիսկելու
կարող չէ։
24—Ով Տէր, զիս խրատէ, բայց չա-
փաւորութեամբ,
Ու ոչ թէ քու բարկութիւնովդ, չըլլայ
որ զիս սպառես։
25—Քու սրտմտութիւնդ քեզ չճանչցող
ազգերուն վրայ
Ու քու անունդ չկանչող ազգատոհմեր-
ուն վրայ թափէ.
Վասն զի Յակոբը կերան,
Զանիկա կերան ու հատցուցին,
Ու անոր բնակութիւնը աւերակ դար-
ձուցին։

*ՆԱԽ. պարապարիկով. ա թագ. իե.29։

ԳԼ. ԺԱ

Ա՛յն խօսքը որ Տէրոջը կողմանէ Երեմիայի եղաւ՝ ըսելով, 2—Ա՛յս ուխտին խօսքերը մանրակրկիտ, և Յուդայի մարդոցը ու Երուսաղէմի բնակիչներուն խօսեցէք. 3—Եւ դուն անոնց ըսես, Ըսած է Տէրը Աստուածը Իսրայէլի. Անիծեալ ըլլայ այն մարդը՝ որ մանրակրկիտ չընար այս ուխտին խօսքերը, 4—Զորոնք ես ձեր հայրերուն պատուիրեցի եգիպտոսի երկրէն, այն երկաթի հնոցէն, զանոնք հնած օրս՝ ու ըսի, Իմ ձայնս մանրակրկիտ ու ձեզի բոլոր հրամայածիս համաձայն ի գործ դրէք, որպէս զի դուք իմ ժողովրդա ըլլաք, ու ես ձեր Աստուածը ըլլամ. 5—Որպէս զի հաստատեմ այն երդումը զոր ձեր հայրերուն ըրի, այնպիսի երկիր մը տալու անոնց՝ որ կաթ ու մեղր կը բղխէ, ինչպէս այսօր կ'երեւի։ Եւ ես պատասխան առի ու ըսի, Ամէն, ով Տէր։

6—Եւ Տէրը ինծի ըսաւ, Ա՛յս բոլոր խօսքերը Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ կանչելով ըսէ, Այս ուխտին խօսքերը մանրակրկիտ, ու զանոնք ի գործ դրէք. 7—Վասն զի ձեր հայրերը փութով խրատեցի, զանոնք Եգիպտոսի երկրէն հնած օրէս մինչեւ այսօր, կանուխ կեցնելով ու խրատելով ըսի, Իմ ձայնս մանրակրկիտ։ 8—Բայց անոնք մանրակրկիտ չընդունեցին ու իրենց ականջը չդնեցին, հապա ամէն մարդ իր չար սրտին կամակորութիւնը հաստատ քալեց. ուստի ես անոնց վրայ կը բերեմ այս ուխտին բոլոր խօսքերը, զորոնք ես անոնց պատուիրեցի որ ընեն, ու անոնք չըրին։ 9—Եւ Տէրը ինծի ըսաւ, Յուդայի մարդոցը մէջ ու Երուսաղէմի բնակիչներուն մէջ դաւադրութիւն գտնուեցաւ. 10—Անոնք իմ խօսքերս մանրակրկիտ ընել չուզող իրենց նախահայրերուն անօրէնութիւններուն դարձան, և օտար աստուածներու ետեւէ գացին, որպէս զի անոնց ծառայութիւն ընեն. Իսրայէլի տունը ու Յուդայի տունը իրենց հայրերուն հետ բրած ուխտս ալ բեկին։

11—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այնպիսի չարիք կը բերեմ անոնց վրայ, որմէ անկէ ելլելու կարող պիտի չըլլան. Եւ ինծի պիտի աղաղակեն, ու անոնց մանրակրկիտ պիտի չլսեմ։

12-Եւ Յուդայի քաղաքները ու Երուսաղէմի բնակիչները պիտի երթան, Ու պիտի աղաղակեն այն աստուածներուն, որոնց խունկ ծխեր էին. Բայց անոնց ձախորդութեան ժամանակը Բնաւ պիտի չազատեն զանոնք։

13—Քանզի քու աստուածներդ, ով Յուդա, Քու քաղաքներուդ թիւին չափ եղան. Ու Երուսաղէմի փողոցներուն թիւին չափ՝ Ամօթալից իրերուն համար սեղաններ, Բահաղի խունկ ծխելու համար սեղաններ, կանգնեցիք։

14—Ուստի դուն այս ժողովուրդին համար աղօթք մի ըներ, Ու անոնց համար խնդրուածքով ու պաղատանքով մի աղաչեր. Քանզի կը լսենց վրայ հասած չարիքին համար ինծի աղաղակեն, Ան ալ մանրակրկիտ պիտի չընեմ։

15—Իմ սիրելիս ինչ գործ ունի իմ տանս մէջ, Որովհետեւ *չատերուն հետ անօրէնութիւն՝ գործեր է. Սուրբ միսն ալ քեզմէ անցաւ, Քանզի քուն քու չարութիւնովդ կ'ուրախանաս։

16—Տէրը քու անունդ Կանանչ, գեղեցիկ ու բարեպտուղ ձիթենի կոչեց, Բայց անոր վրայ մեծ ազմուկի ձայնով կրակ բռնկցուց, Ու անոր ոստերը կոտրեցան։

17—Ու քեզ տնկող զօրաց Տէրը Քու վրայդվ չարիք խօսեցաւ, Իսրայէլի տանը ու Յուդայի տանը չարութեանը համար՝ Զոր անոնք գործեցին, Ու բարկացուցին զիս բուրվառ ծխելով՝ Բահաղի խունկ ծխելով՝ զիս բարկացուցին։

18—Ու Տէրը ինծի գիացուց, ու գտայ։ Այն ատեն ինծի անոնց գործերը ցուցուցիր։

19—Բայց ես մորթուելու առուագ ընտանեցած գառի մը պէս էի, Ու չէի գիտեր որ անոնք ինծի համար նենգութիւններ կը հնարեին՝ ըսելով, Ածառը իր պատզովը կործանենք, Ու զանիկա կենդանիներուն երկրէն բնաջինջ ընենք, Ու անոր անունը ալ չյիշուի։

20—Սակայն, ով Տէր զօրութեանց, արդար Դատաւոր, Որ երիկամունքը ու սիրտը կը քննես, Անոնցմէ վրէժդ տեսնեմ. Քանզի իմ գործս քեզի յայտնեցի։

21—Ուստի Տէրը այսպէս կ'ըսէ Անաթովթի մարդոցը համար՝ Որոնք քու հոգիդ կը փնտռեն ու կ'ըսեն, Տէրոջը անունովը մարգարէութիւն մի ըներ, Որպէս զի մեր ձեռքերովը չմեռնիս։

22—Անոր համար զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես անոնց այցելութիւն պիտի ընեմ. Կարմիրները սրով պիտի մեռնին, Անոնց աղաքները ու աղիկները սովամահ պիտի ըլլան.

23—Ու անոնք մնացորդ պիտի չունենան. Վասն զի ես Անաթովթի մարդոցը վրայ, Անոնց այցելութեան տարին, չարիք պիտի բերեմ։

ԳԼ. ԺԲ

Ով Տէր, երբ քեզի հետ վիճիմ, դուն արդար ես երէ *ջոխտեմ. Սակայն քեզի *իրաւունքի վրայով պիտի խօսիմ. Ինչո՞ւ ամբարիշտներուն ճամբան յաջողի է, Ո՞ր բոլոր նենգութիւն ընողները հանգըստութիւն կը վայելեն։

2—Դուն զանոնք տնկեցիր, և անոնք արմատացան, Անոնք կ'աճին ու պտուղ կու տան. Դուն անոնց բերնին մօտ ես, Բայց անոնց երիկամունքէն հեռու ես։

3—Ես դուն, ով Տէր, զիս գիտես, Զիս տեսար ու իմ սիրտս քու առջեւդ քննեցիր. Զատ զանոնք մորթուելու ոչխարներու պես, Ու սպանման օրուան համար *պատրաստ։

4-Մինչեւ ե՞րբ երկիրը սուգ պիտի բանէ, Իր բնակիչներուն չարութեանը համար, Ու բոլոր դաշտին խոտը չորնայ. Անասուններն ու թռչունները կորսուեցան, Վասն զի ըսին, Անիկա մեր վախճանը պիտի չտեսնէ։

5—Եթէ դուն հետեւակներուն հետ վազեցիր, ու քեզ յոգնեցուցին, Հապա ձիաւորներուն հետ ինչպէս մրցարշաւը պիտի մանես. Ու դուն որ խաղաղութեան երկրին մէջ ապահով ես, Ի՞նչ պիտի ընես՝ երբ Յորդանան էներդ բարձրանայ։

6—Քանզի քու եղբայրներդ ու քու հօրդ տունն ալ, Անոնք անգամ քեզի դէմ նենգութիւն ըրին, Ու քու ետեւէդ բարձրաձայն աղաղակեցին. Թէև անոնք քեզի ազէկ բաներ ալ խօսին, Դուն անոնց մի հաւատար։

7—Իմ տունս թողուցի, իմ ժառանգութիւնս ձգեցի, Հոգիիս սիրածը իր թշնամիներուն ձեռքը տուի, 8—Իմ ժառանգութիւնս անտառի առիւծին պէս եղաւ ինծի, Անիկա իր ձայնովը իմ վրաս պոռաց. Ա՛յս պատճառաւ զանիկա ատեցի։

9—Իմ ժառանգութիւնս †գոյնզգոյն թռչունի մը պէս եղաւ ինծի, Թռչուններն անոր չորս կողմն են. Եկէք, անասուններուն բոլոր գազաններդ ժողվեցէք, Ուտելիք որ ուտեն։

10—Շատ հովիւներ իմ այգիս ապականեցին, Իմ բաժինս ոտնակոխ ըրին,

*Կամ, չատ անօրէնութիւններ

*Կամ, երբ դատաստաններուդ

*Նէր. սրբեմ, Լմ, Նաւրէ
†Կամ, գիշատիչ

Ե֊ իմ ցանկալի վիճակս անապատի ա֊
մայութեան դարձուցին։
11—Զանիկա ամայութեան դարձուցին,
Ո֊ ամայի ըլլալով իմ առջեւս սուգ
բռնեց.
Բոլոր երկիրը ամայութեան դարձաւ,
Բանզի մարդ մը չկայ որ *յո֊ն ի֊նէրը
մտածէ։
12—Անապատին ամէն բլուրներուն վրայ
ասպատակներ եկան.
Վասն զի երկրին մէկ ծայրէն մինչեւ
միւս ծայրը
Տէրոջը սուրը կ'ուտէ,
Ե֊ ամէն մարմնի խաղաղութիւն չկայ։
13—Ցորեն ցանեցին, բայց փուշեր պիտի
հնձեն.
Աշխատանք քաշեցին, ի֊յե օգուտ պիտի
չտեսնեն.
Ու Տէրոջը սաստիկ բարկութեանը համար
Ձեր արդիւնքներէն պիտի ամչնաք։
14—Այսպէս կ'ըսէ Տէրը իմ չար
դրացիներուս համար,
Որոնք իմ ժողովուրդիս խորհրդի առած
ժառանգութեանս կը դպչին.
Ահա ես զանոնք իրենց երկրին երեսէն
պիտի խլեմ,
Ցուդայի տունն ալ անոնց մէջէն պիտի
խլեմ։
15—Ու պիտի ըլլայ որ զանոնք խլելէս
ետքը
Պիտի դառնամ անոնց ողորմիմ,
Եւ ամէն մէկը իր ժառանգութեանը՝
Ու ամէն մէկը իր երկիրը պիտի դար֊
ձընեմ.
16—Ես եթէ անոնք իմ ժողովուրդիս
ճամբաները սորվին,
Ու իմ անուանովս երդուիր ընեն՝ ի֊նչ֊պէս
կենդանի է Տէր,
(ինչպէս անոնք իմ ժողովուրդիս՝ Բա֊
հաղի անուանովը երդուիր ընել
սորվեցուցին,)
Այն ատեն իմ ժողովուրդիս մէջ պիտի
*հաստատուին։
17—Բայց եթէ մինչ չլսենն,
Այն ատեն այն ազգը արմատապի պիտի
խլեմ
Ու պիտի կորսնցնեմ, կ'ըսէ Տէրը։

*ԵԲՐ. չինուին

Տէրը ինծի այսպէս ըսաւ. Գնա,
քեզի քթնեղ գօտի մը ծախու առ, և
զանիկա մէջդդ կապէ, ու զանիկա ջուր
մի խթեր։ 2—Ուստի Տէրոջը խօսքին
համեմատ գօտին ծախու առի ու մէջս
կապեցի։ 3—Եւ երկրորդ անգամ Տէրոջը
խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 4—Ա֊յն
ծախու առած գօտիդ, որ քու մէջդիդ
վրայ է, առ ու ելիր Եփրատ գնա, և
հոն վէմին ծակին մէջ պահէ զանիկա։
5—Ու ես գացի և զանիկա Եփրատի
էվէրէը պահեցի, ինչպէս Տէրը ինծի
պատուիրեց։ 6—Ետ շատ օրերէն եղաւ
Տէրը ինծի ըսաւ, Ելիր, Եփրատ գնա,
ու անկէ առ այն գօտին, զոր քեզի
հրամայեցի որ հոն պահես։ 7—Ես ալ
Եփրատ գացի, ու փորելով՝ գօտին այն
պահած տեղէս առի. և ահա գօտին
փսիր էր, ու բնաւ բանի մը չէր գար։
8—Ես Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
ըսելով,
9—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ցուդայի հպարտութիւնը
Ու Երուսաղէմի մեծ հպարտութիւնը
այդպէս պիտի ապեր։
10—Ա֊յս չար ժողովուրդը,
Որ իմ խօսքերս լսել չեն ուզեր,
Ու իրենց սրտին կամակորութեամբը կը
գալեն,
Եւ օտար աստուածներու հետեւ կ'եր֊
թան՝
Անոնց ծառայութիւն ընելու և անոնց
երկրպագութիւն ընելու համար,
Ա֊յդ անպիտան գօտիին պէս պիտի ըլլան։
11—Վասն զի ինչպէս գօտին մարդուն
մէջքը կը փակչի,
Բոլոր Իսրայէլի տունը ու բոլոր Ցուդայի
տունը
Ինծի այնպէս փակցուցեր էի, կ'ըսէ Տէրը,
Որ ինծի ժողովուրդ ըլլան,
Նաև անուն և փառք ու պարծանք.
Բայց անոնք մինչ չլսին։
12—Նաև այս խօսքը ըսես անոնց,
Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ.
Ամէն սրիկ գինիով պիտի լեցուի.
Բայց անոնք քեզի պիտի ըսեն,
Մի֊թէ մենք չենք գիտեր որ ամէն սրիկ
գինիով պիտի լեցուի,

13—Իակ դուն անոնց ըսես,
Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս երկրին բոլոր բնակիչները,
Ու Դաւիթի աթոռին վրայ նստող թա֊
գաւորները,
Եւ քահանաները ու մարգարէները,
Ու Երուսաղէմի բոլոր բնակիչները ար֊
բեցութեամբ պիտի լեցնեմ.
14—Ես զանոնք իրարու ը֊ն֊կ֊ե֊ր֊ւ պի֊
տի կարտամ,
Հայրերը աղջոյը հետ մէկտեղ, կ'ըսէ
Տէրը,
Ես ո֊չ֊ ոյնի֊ պիտի չգթամ ու պիտի չխնա֊
յեմ,
Ես առանց ողբալու զանոնք բնաջինջ
պիտի ընեմ։
15—Մարիկ բրէք, ականջ տուէք, մի
հպարտանաք,
Վասն զի Տէրը խօսեցաւ։
16—Ձեր Տէր Աստուծոյն փառք տուէք,
Դեռ խաւարը չէր ը֊ղ֊ջ֊ չհասած,
Ու ձեր ոտքերը մութ լեռներու վրայ
չսահած,
Եւ ձեր լոյսի սպասած ատենը
Ա֊ռ֊ո֊ո֊ղ֊ զանիկա մահուան աստւերի
չվերածած,
Ու զանիկա թանձր մէգի չդարձուցած։
17—Բայց եթէ մարիկ չընէք,
Ձէր հպարտութեանը համար իմ հոգիս
ծածուկ տեղէր պիտի լայ,
Եւ իմ աչքս խիստ չար լալով արցունք
պիտի թափէ,
Վասն զի Տէրոջը հօտը գերի առնուե֊
ցաւ։
18—Թագաւորին ու թագուհիին ըսէ,
Ձեր անձը խոնարհեցուցէք ո֊ ֆ֊ր֊ծ֊ի֊
վ֊ր֊ա նստեցէք,
Վասն զի ձեր գլխէն ձեր փառաց թա֊
գը ինկաւ։
19—Հարաւային քաղաքները գոցուե֊
ցան,
Ու բացող մը չկայ.
Բոլոր Ցուդա գերութեան գնաց.
Ամէնը գերութեան գացին։
20—Աչքերնիդ վերցուցէք և հիւսիսի
կողմէն եկողներուն նայեցէք.
Քեզի տրուած հօտը, քու փառացդ խա֊
չինքդ, ո՞ր է ն֊ն։
21—Ի֊՞նչ պիտի ըսես, երբ քեզի սոցե֊
լութիւն ընէ.
Վասն զի դուն անոնց սորվեցուցիր որ
քու վրադ իշխան և գլուխ ըլլան.
Մի֊թէ ծննդական կնոջ պէս ցաւեր
պիտի չբռնեն։
22—Ու եթէ սրտիդ մէջ ըսես,
Ա֊յս բաները ինչո֊ւ համդիպեցան ինծի.
Քու անօրէնութեանդ չատութենէն քու
քղանցքներդ բացուեցան,
Եւ գարշապարներդ բռնութեամբ մեր֊
կացան։
23—Մի֊թէ կարելի֊ է որ Եթէովպացին
իր մորթը՝
Կամ ինծի իր խայտուցները փոխէ,
Որ դուք ալ, չարութիւն ընելու սորված
ըլլալով,
կարենաք աղէկութիւն ընել։
24—Ուստի անապատի հովէն վերցուած
մղեղի պէս
Պիտի ցրուեմ զանոնք։
25—Ա֊յս է քու վիճակդ և քու բաժինդ՝
Ձոր ես քեզի որոշեցի, կ'ըսէ Տէրը,
Քանզի դիս մոռցար ու սուտութեան ա֊
պաւինեցար։
26—Ուստի ես ալ քու քղանցքներդ
քու երեսիդ վրայ վերցուցի,
Ու քու անարգանքդ երեւցաւ։
27—Ես քու շնութիւններդ, ու վրնջ֊
ւիւններդ,
Ե֊ քու լիրը պոռնկութիւնդ,
Ո֊ բլուրներու վրայ և դաշտի վրայ քու
ը֊ր֊ա֊ պղծութիւններդ տեսայ.
Վա՛յ քեզի, ով երուսաղէմ.
Պիտի չմաքրուի՞ս ալ մինչեւ ե՞րբ։

Տէրոջը խօսքը որ Երեմիայի եղաւ
երաշտութեան վրայով։
2—Ցուդա սուգ կը բռնէ,
Ու անոր գռները կը նուաղին.
Անոնք գետնի վրայ սրտառուչ կը նստին,
Ու Երուսաղէմի աղաղակը վեր ելաւ։
3—Ու անոնց ազնուականները իրենց
մանուկները ջուրի կը ղրկեն.
Ա֊ւազանները գացին, ջուր չգտան,
Ե֊ գարձան՝ իրենց անօթները պարապ
Բ֊ր֊է֊ւ֊ր֊վ֊.
Ամչցան ու պսակաւեցան և գլուխնին
ծածկեցին։
4—Երկրին վրայ անձրեւ չըլլալուն պատ֊
ճառաւ

Թեսթոնը ձաթելոն համար՝
երկրագործներըը ամէցան և գլուխնին
ծածկեցին։
5—Բանդի նաև եղինկը գաշտի մէջ
ծնաւ,
Ու խոտ չըլլալուն համար էր յ–էը թո-
ղաւ։
6—Ու վայրենի էշերը բլուրներու վրայ
կայնեցան,
Ես չագալներու պէս ոգը ծծեցին,
Ու աչքերնին տկարացաւ, վասն զի խոտ
չկար։
7—Թէև մեր անօրէնութիւնները մե-
ղի դէմ *ելլէր են,
Ա–ֆ–, ով Տէր, քու անուանդ համար
ըրէ,
Բանդի մեր յանցանքները շատ են։
Քեզի դէմ մեղք գործեցինք։
8—Ով իսրայէլի Ցոյսը,
Նեղութեան ատեն անոր փրկիչը,
Ինչո՞ւ համար երկրի վրայ հիւրի պէս,
Ու դիշերը իջեւան ընելու դարձող ճամ-
բորդի պէս ըլլաս։
9—Ինչո՞ւ համար ապշած մարդու պէս,
Կո՛ր ազատելու կարողութիւն չունեցող
հզօրի մը պէս ըլլաս։
Ես դուն, ով Տէր, մեր մէջ ես,
Ու քու անունդ մեր վրայ կոչուած է։
Մեզ մի թողուր։
10—Ա–յսպէս կ'ըսէ Տէրը այս ժողո-
վուրդին համար։
Անոնք աստանդեան չըլլալը այսպէս սի-
րեցին
Ե– իրենց ոտքերը չզսպեցին,
Ուստի Տէրը անոնց չհաւնեցաւ։
Հիմա անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,
Ու անոնց մեղքերուն այցելութիւն պիտի
ընէ։
11—Ես Տէրը ինծի ըսաւ,
Այս ժողովուրդին բարիք ըլլալու համար
աղօթք մի ըներ։
12—Երբ անոնք ծոմ պահեն,
Անոնց աղաղակը մտիկ պիտի չընեմ։
Ու երբ ողջակէզ կամ զոհ մատուցանեն,
Չանոնք պիտի չընդունիմ։
Հապա սրով, սովով և ժանտախտով
Պիտի սպառեմ զանոնք։
13—Ու ես ըսի, Ա–ա՛ղ, ով Տէր Եհովա,
Ահա մարգարէները անոնց կ'ըսեն,
Սուր պիտի չտեսնէք
Ու ձեր մէջ սով պիտի չըլլայ,
Հապա ձեզի այս տեղ ճշմարիտ խա-
ղաղութիւն պիտի տամ։
14—Այն ատեն Տէրը ինծի ըսաւ,
Մարգարէները իմ անունովս սուտ մար-
գարէութիւն կ'ընեն։
Զանոնք ես չղրկեցի և անոնց չհրամա-
յեցի
Ու անոնց չխօսեցայ։
Անոնք ձեզի սուտ տեսիլքներ, անոտ
գուշակութիւններ
Ես իրենց սրտին խաբեութիւնները կը
մարգարեանան։
15—Ուստի Տէրը այսպէս կ'ըսէ.
Այն մարգարէներուն համար, որոնք իմ
անունովս մարգարէութիւն կ'ը-
նեն,
(Թէպէտև զանոնք ես չղրկեցի,)
Ու կ'ըսեն Թէ այս երկրին մէջ սուր ու
սով պիտի չըլլայ,
Այն մարգարէները սրով ու սովով պի-
տի կորսուին։
16—Ես այն ժողովուրդը, որոնց անոնք
մարգարէութիւն կ'ընեն,
Սուրին ու սովին պատճառաւ
Երուսաղէմի փողոցները պիտի ձգուին.
Ես զանոնք, անոնց կիներըը, աղաքներըը
ու աղջիկները
Թաղող պիտի չգտնուի.
Ու անոնց վրայ իրենց չարութիւնը պի-
տի թափեմ։
17—Ուստի անոնց՝ այս խօսքը պրա-
կես.
Դիշերը ու ցորեկ աչքերս արցունք պիտի
թափին
Ու բնաւ պիտի չդադարին,
Վասն զի իմ ժողովուրդիս կոյս աղջիկը
մեծ կատարածով,
Խիստ սասափկ հարուածով, կոտրեցաւ։
18—Եթէ դաշտը ելլեմ՝
Ահա սրով մեռցուածներ,
Ես եթէ քաղաքը մտնեմ՝
Ահա սովով տկարացածներ կան.
Վասն զի թէ՛ մարգարէն և թէ՛ քահա-
նան
Իրենց չգիտցած երկիրը կը պտրտին։
19—Միթէ Յուդան բոլորովին մեր-
ժեցի՞ր.

Ա–ա՛ղ Սիոնէ զզուեցա՞ր.
Մեզի ինչո՞ւ այնպէս զարկիր որ մեզի
բժշկութիւն չկայ.
Մենք խաղաղութեան ապասեցինք, բայց
բարութիւն չկար.
Բժշկութեան ժամանակին –ա–ւ–չէ–,
բայց ահա խանգաղութիւն է։–։
20—Մենք, ով Տէր, մեր ամբարշտա-
թիւնը
Ո– մեր հայրերուն անօրէնութիւնը գի-
տենք,
Վասն զի քեզի դէմ մեղք գործեցինք։
21—Քու անուանդ համար Ղէղէ մի
զզուիր.
Քու փառքիդ աթոռը մի անարգեր.
Մեզի հետ ըր–ծ ուխտդ յիշէ և զանիկա
մի ուրեր։
22—Միթէ հեթանոսաց ունայնութիւն-
ներուն մէջ անձրև տուող մը
կա՞յ,
Կամ թէ ան՝ձրեւը երկինքնե՞րը կու տան.
Չէ՞ որ –ա–ի– ընդ–ը դուն ես, ով մեր
Տէր Աստուածը.
Ուստի քեզի կը յուսանք,
Վասն զի ասոնց ամէնը դուն ըրիր։

Գլ. ԺԵ

Ես Տէրը ինծի ըսաւ,
Թէև Մովսէս ու Սամուէլ իմ առջեւս
կայնելու ըլլային,
Այս ժողովուրդին վրայ հաճութիւն պիտի
չունենայի.
Զանոնք առջեւէս վռնտէ, ու թող ելլեն,
2—Ես եթէ քեզի՝ Ո՞ւր ելլենք ըսեն,
Այն ատեն անոնց ըսես, Տէրը այսպէս
կ'ըսէ.
Մահուան համար՝ ո–ւ–ը–ն–ը՝ մահ-
ուան,
Ու սուրի համար՝ ո–ւ–ը–ն–ը՝ սուրի,
Ես սովի համար՝ ո–ւ–ը–ն–ը՝ սովի,
Ու գերութեան համար՝ ո–ւ–ը–ն–ը
գերութեան ելլեն։
3—Ես անոնց վրայ չորս տեսակ պ–ո–ւ–
պիտի ղրկեմ՝ կ'ըսէ Տէրը.
Մեռցնելու համար՝ սուրը,
Ու պատառելու համար՝ շուներըը,
Ես ուտելու ու ոչնչանալու համար՝
Երկինքի թռչուններըը ու երկրի գազան-
ներըը։

4—Ես զանոնք, նեղութիւն կրելու հա-
մար,
Երկրի բոլոր թագաւորութիւններուն
ձեռքը պիտի մատնեմ,
Ծագադայ Թագաւորին Եզեկիայի որդւոյն
Մանասէի պատճառաւ,
Անոր Երուսաղէմի մէջ ըրած բաներուն
համար։
5—Վասն զի ո՞վ քեզի պիտի խնայէ,
ով Երուսաղէմ,
Ես ո՞վ քեզի ցաւակից պիտի ըլլայ,
Ես քու արպիտութիւնդ հարցնելու հա-
մար ո՞վ պիտի գառնայ։
6—Դուն զիս թողուցիր, կ'ըսէ Տէրը, –
ետ գացիր.
Ես ալ իմ ձեռքս քու վրադ պիտի երկ-
կընցնեմ և քեզ պիտի կոր-
սընցնեմ.
Գթութիւն ընդունել ձանձրացայ։
7—Ու զանոնք երկրին դռներուն մէջ
պիտի հռսեմ Իբր Ի–ի ձեծանոցով.
Իմ ժողովուրդս անզաւակ պիտի թողում
Ե պիտի կորսընցնեմ,
Վասն զի անոնք իրենց ճամրաներէն
չդարձան։
8—Անոնց այրեւարիներըը ծովուն աւա-
զէն աւելի չատցան իմ առջեւս.
Անոնց վրայ –ա երիտասարդին՝ մօրը
վրայ
Կէսօրուան ատեն աւարառու բերի.
Անոր վրայ յանկարծ արհաւիրք ու սոս-
կալ ձգեցի։
9—Եօթը ը–ի ծնանողը նուաղեցաւ,
Իր հոգին ուտնդեց,
Յորհնուան ատեն անոր արեւը մտաւ.
Անիկա ամչցաւ ու պատկառեցաւ,
Ես անոնց մնացորդը իրենց թշնամինե-
րուն առջեւ
Սուրի պիտի մատնեմ, կ'ըսէ Տէրը։
10—Վա՛յ ինծի, ով մայրս,
Որ զիս բոլոր երկրի հոգով
Կռիւ մղող ու վէճի մարդ ծնար.
Ոչ ես չոհով ատակ տուի,
Ոչ ալ ինծի չոհով ատակ տուին,
Սակայն ամէնը ինծի անէծք կու տան։
11—Տէրը կ'ըսէ որ Անշուշտ քեզ պիտի
ազատեմ,
Ու երջանիկ պիտի ընեմ.

*կո՛ր, Անոնց երիտասարդներուն

Եւ անշուշտ նեղութեան ու տառապանքի ժամանակ
Թշնամիդդ քեզի ազատել պիտի տայ։
12—Մէթէ երկաթը հիւսիսի երկաթը ու պղինձը կը կոտրի՞։
13—Քու բոլոր մեղքերուդ համար՝ բոլոր սահմաններուդ մէջ
Քու առագաստդ ու դանձերդ ձրիապէս յափշտակութեան պիտի մատնեմ.
14—Եւ *Ինձ քու թշնամիներուդ հետ քու չգիտցած երկիրդ պիտի փոխադրեմ՝
Վասն զի իմ բարկութենէս կրակ վառեցաւ,
Ո՞ ձեր վրայ պիտի բորբոքի։
15—Ով Տէր, դուն չե՞ս յիշեր ինծի.
Զիս յիշէ և ինծի այցելութիւն ըրէ,
Ու իմ հալածիչներէս իմ վրէժս առ.
Քու երկայնմտութեանդ համար զիս մի վերցներ.
Գիտցիր որ քեզի համար նախատինք կրեցի։
16—Ես քու խօսքերդ *գտածիս պէս՝ զանոնք կերայ,
Եւ քու խօսքդ իմ սրտիս ցնծութիւն և ուրախութիւն եղաւ.
Վասն զի քու անունդ իմ վրաս կոչուած է,
Ով զօրաց Տէր Աստուած։
17—Ծաղր ընողներուն ժողովքին մէջ չնստայ ու չզուարճացայ.
Քու ձեռքիդ պատճառաւ առանձին նստայ,
Վասն զի ե՛ս բարկութիւնովդ զիս լեցուցիր։
18—Ինչո՞ւ իմ ցաւս յաւիտենական՝
Եւ իմ վէրքս անդարմանելի է.
Անիկա բժշկուիլ չուզեր.
Դուն ինծի բոլորովին սուտ
Ո՞ անհաւատարիմ չուքերու պէ՞ս պիտի ըլլաս։
19-Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Եթէ դառնաս՝ ես քեզ կը պիտի բերեմ,
Ո՞ իմ առջեւս պիտի կայնիս.
Եւ եթէ պատուականը անարգէն որոշես,

*Կամ, քու թշնամիներդ քու չգիտցած երկիրդ պիտի բերեմ

†Եբր. գանուելուն

իմ բերնիս պէս պիտի ըլլաս.
Անոնք քեզի դառնան,
Բայց դուն անոնց մի դառնար։
20—Ու քեզ այս ժողովուրդին՝ պղինձէ
ամուր պարիսպ պէս պիտի ընեմ.
Եւ քեզի հետ պիտի պատերազմին,
Բայց պիտի չկրնան քեզ յաղթել.
Վասն զի ես քեզի հետ եմ
Քեզ փրկելու ու ազատելու համար,
Կ'ըսէ Տէրը։
21—Եւ քեզ չարերուն ձեռքէն պիտի ազատեմ,
Ու բռնաւորներուն ձեռքէն պիտի փրկեմ։

ԳԼ. ԺԶ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
2—Քեզի կին մի առներ,
Ու այս տեղ աղաքներ ու աղջիկներ չունենաս.
3—Քանզի այս տեղ ծնած աղաքներուն ու աղջիկներուն համար,
Եւ այս երկրին մէջ զանոնք ծնանող մայրերուն համար,
Ու զանոնք ծնանող հայրերուն համար
Տէրը այսպէս կ'ըսէ.
4—Անոնք մահաւիժի հիւանդութիւններով պիտի մեռնին.
Անոնց համար սուգ պիտի չընուին, ու անոնք պիտի չթաղուին.
Երկրի երեսին վրայ պարի պէս պիտի ըլլան,
Եւ սրով ու սովով պիտի հատնին.
Եւ անոնց դիւերը երկինքի թռչուններուն
Ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան։
5—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ.
Սուգի տունն մի մտներ ու լալու մի երթար,
Եւ անոնց համար մի ողբար,
Վասն զի իմ խաղաղութիւնս այս ժողովուրդէն վերցուցի, կ'ըսէ Տէրը,
Ողորմութիւնը ու գթութիւնը վերցուցի։
6—Ու այս երկրին մէջ մեծերը ու պզտիկները
Պիտի մեռնին և պիտի չթաղուին.
Ու անոնց համար սուգ պիտի չընեն,
Եւ իրենց մարմիններուն վրայ կտրածներ պիտի չընեն,

Ու անոնց համար իրենց մայրը պիտի չթեսնեն։
7—Եւ մեռելի մը վրայով մխիթարութիւն տալու համար
Սուգի հաց պիտի չբաժնեն,
Ու անոնց հայրերուն ու մայրերուն համար
Մխիթարութեան բաժակը անոնց պիտի չխմցնեն։
8—Նաև կոչունքի տուն մի մտներ,
Որ անոնց հետ նստիս ուտելու և խմելու համար.
9—Վասն զի Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս տեղէն, ձեր աչքին առջեւ ձեր օրերուն մէջ
Ցնծութեան ձայնը և ուրախութեան ձայնը,
Փեսային ձայնը ու հարսին ձայնը պիտի դադարեցնեմ։
10—Ու երբ այս բոլոր խօսքերը այս ժողովուրդին ըրացնես, և անոնք քեզի ըսեն,
Ինչո՞ւ համար Տէրը բոլոր այս մեծ չարիքը մեր վրայ խօսեցաւ.
Ու ի՞նչ է մեր անօրէնութիւնը ու մեր մեղքը
Զոր մեր Տէր Աստուծոյն դէմ գործեր ենք,
11—Այն ատեն անոնց ըսես,
Վասն զի ձեր հայրերը զիս թողուցին, կ'ըսէ Տէրը,
Եւ ուրիշ աստուածներու հետեւ գացին,
Ու անոնց ծառայութիւն ըրին և անոնց երկրպագութիւն ըրին.
Զիս թողուցին ու իմ օրէնքս չպահեցին։
12—Ու դուք ձեր հայրերէն աւելի չարութիւն ըրիք.
Եւ ահա ինծի մարկ չընելով
Ձեզմէ ամէն մէկը իր չար սրտին կամակորութեանը հետեւի գնաց.
13—Ես ալ այս երկրին երեսէն ձեզ պիտի նետեմ
Այնպիսի երկիր մը, զոր չէք ճանչնար
Ո՛չ դուք՝ ոչ ալ ձեր հայրերը.
Ու հոն ցորեկ ու գիշեր օտար աստուածներու ծառայութիւն պիտի ընէք,
Վասն զի ձեզի ողորմութիւն պիտի չընեմ։
14-Անոր համար ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ ա՛լ պիտի չըսուի թէ կենդանի է Տէրը՝
Որ Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն հանեց.
15—Հապա՝ կենդանի է Տէրը՝
Որ Իսրայէլի որդիները հանեց հիւսիսի երկրէն
Եւ այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք ցրեր էր։
Ու զանոնք պիտի դարձնեմ իրենց երկիրը՝
Զոր իրենց հայրերուն տուի։
16—Ահա ես շատ ձկնորսներ բերել պիտի տամ, կ'ըսէ Տէրը,
Ու զանոնք պիտի որսան,
Ու անկէ ետքը շատ որսորդներ բերել պիտի տամ,
Ու զանոնք ամէն լեռան վրայէն
Եւ ամէն բլուրի վրայէն
Ու վէմերուն ծակերէն պիտի որսան։
17—Վասն զի իմ աչքերս անոնց ամէն ճամբաներուն վրայ են.
Իմ երեսէս ծածկուած չեն,
Ու անոնց անօրէնութիւնը իմ աչքերուս առջեւէն պահուած չէ։
18—Ու նախ անոնց անօրէնութիւնը ու մեղքին
Կրկնապատիկ հատուցում պիտի ընեմ,
Որովհետեւ իմ երկիրս պղծեցին,
Ու իրենց գարշելութիւններուն ու պղծութիւններուն դիւրովը
Իմ ժառանգութիւնս լեցուցին։
19—Ով Տէր, իմ զօրութիւնս և իմ բերդս
Ու իմ ապաստանարանս նեղութեան օրը,
Երկրի ծայրերէն ազգերը քեզի պիտի գան
Ու պիտի ըսեն,
Իրաւցնէ մեր հայրերը սուտ բան ժառանգեցին,
Ունայնութիւն ու անօգուտ բաներ
20—Մի՞թէ մարդ իրեն աստուածներ պիտի ընէ.
Ու անոնք աստուածներ չեն։
21—Ասոր համար ահա ես անոնց այս անգամ պիտի գիտցնեմ,
Իմ ձեռքս ու իմ զօրութիւնս պիտի գիտցնեմ անոնց.
Եւ պիտի գիտնան որ իմ անունս Եհովա է։

ԳԼ. ԾԼ

Ցուդայի մեղքը երկաթէ գրիչով
Ու ադամանդի ծայրով գրուած է.
Անոնց սրտին տախտակին վրայ
Եւ անոնց սեղաններուն եղջիւրներուն
վրայ փորուած է.
2—Որպէս զի անոնց տղաքը միտքերնին
բերեն
Անոնց սեղաններըն ու անոնց Աստարտէ-
թի կուռքերը,
Որոնք կանանչ ծառերուն քով բարձր
բլուրներուն վրայ չէ՜՜՜ն էն։
3—Ով *իմ լեռս՝ ու դաշտի մէկ է՝
Քու սաացուածդ քու բոլոր գանձերդ,
Ու՝ բոլոր տահձաններուդ մէկ մեղքի
համար չէ՜՜՜ն բարձր տեղերդ
Ցափշտակութեան պիտի մատնեմ,
4—Ու դուն ալ պիտի ղրկուես քու ժա-
ռանգութենէդ ղոր քեզի տուի.
Ու քու չգիտցած երկիրդ մէկ
Քու թշնամիներուդ ծառայ պիտի ընեմ
քեզ.
Վասն զի իմ բարկութեանս մէկ. կրակ
վառեցիք,
Որ յաւիտեան պիտի բորբոքի։
5—Տէրը այսպէս կ'ըսէ.
Անիծեալ ըլլայ այն մարդը՝ որ մարդու
կ'ապաւինի,
Ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ,
Եւ իր սիրտը Տէրոջմէ կը խոտորի։
6—Անիկա անապատի մէջ մոլորի պէս
պիտի ըլլայ.
Ու երբ ադկութիւն գայ պիտի չտեսնէ,
Եւ անապատին այրուած տեղերը՝
Աղի ու անբնակ երկրի մէջ պիտի բնակի։
7—Օրհնեալ ըլլայ այն մարդը՝ որ Տէ-
րոջը կ'ապաւինի,
Ու անոր յոյսը Տէրն է։
8—Անիկա ջուրերու քով տնկուած ծա-
ռի պէս պիտի ըլլայ,
Որ իր արմատները գետի քով երկնցնելով,
Տաքութեան գալը չտեսնէր.
Հապա անոր տերեւը կանանչ կ'ըլլայ,
Ու երաշտութեան տարին նեղը չքաշէր,
Ու պտուղ տալէն կտ չմնար։

9—Սիրտը ամէն բանէն աւելի խա-
բերայ ու խիստ չար է,
Ձանիկա ո՞վ կրնայ գիտնալ։
10—Ես Տէրս սիրտը կը քննեմ,
Երիկամունքները կը փորձեմ,
Որպէս զի մարդուն՝ իր ճամբաներուն
համեմատ
Ու՝ իր գործերուն պտուղին համեմատ
հատուցում ընեմ։
11—Անիրաւութեամբ հարստութիւն
դիզողը՝
Իր չափած հաւկիթներով թռչնի նստող
կաքաւի պէս է.
Ձանիկա իր օրերուն կէսին պիտի թողու,
Ու վերջը անմիտ պիտի ըլլայ։
12—Մեր սրբարանին տեղը
Ի սկզբանէ փառաւոր աթոռ է,
13—Ով Տէր, Իսրայէլի յոյսը,
Ամէն անոնք որ քեզ կը թողուն՝ պիտի
ամչնան,
*Քեզմէ հեռացողները երկրի հողին վրայ
պիտի գրուին,
Վասն զի Տէրը, կենաց յուրբին աղբիւրը,
Թողուցին։
14—Ով Տէր, զիս բժշկէ ու պիտի
բժշկուիմ,
Զիս փրկէ ու պիտի փրկուիմ.
Վասն զի իմ պարծանքս դուն ես։
15—Ահա անոնք ինծի կ'ըսեն,
Տէրոջը խօսքը ո՞ւր է. հիմա գայ։
16—Բայց ես քու հովիւդ՝ հովիւ ըլլա-
լէն չփախայ,
Ու չարիքի օրուան չցանկացայ, Ինքդ-
դուն գիտես.
Իմ շրթունքներս ելածը քու առջեւդ էր։
17—Ինծի սրսուիլքդ մի ըլլար.
Նեղութեան օրը իմ ապաւէնս դուն ես։
18—Զիս հալածողները թող ամչնան,
ու ես չամչնամ.
Թող անոնք զարհուրին, ու ես չզարհու-
րիմ.
Անոնց վրայ թշուառութեան օրը բեր,
Եւ զանոնք կրկին կատրածով կործ։
19—Տէրը այսպէս ըսաւ ինծի. Գնա,
ու ժողովուրդին որդիներուն դուռը,
ուրկէ Ցուդայի թագաւորները կը մտնեն
ու կ'ելլեն, ու Երուսաղէմի ամէն դրա-
ները կայնէ. 20—Ու անոնց ըսէ, Ով

*Կամ, լեռնաքնակ

*Կամ, Ինծմէ

Ցուդայի թագաւորներ, ու բոլոր Ցու-
դա, ու Երուսաղէմի բոլոր բնակիչներ
որ այս դռներէն կը մտնէք, Տէրոջը
խօսքը մտիկ ըրէք. 21—Տէրը այսպէս
կ'ըսէ. Ձեր անձերուն զգուշութիւն ը-
րէք, և չաբաթ օրը բեռ մի վերցնէք,
ու Երուսաղէմի դռներէն ներս մի բե-
րէք. 22—Ու չաբաթ օրը ձեր տուն-
էրէն դուրս բեռ մի հանէք, ու բնա-
գործ մը չընէք. Հապա չաբաթ օրը սուրբ
պահեցէք, ինչպէս ձեր հայրերուն պատ-
ուիրեցի. 23—Բայց անոնք մտիկ չըրին
ու ականջնին չդնացին, հապա իրենց
պարանոցը խստացուցին որպէս զի մտիկ
չընեն ու խրատ չընդունին. 24—Իսկ
եթէ ուշադրութեամբ ինծի մտիկ ընէք,
կ'ըսէ Տէրը, որ չաբաթ օրը այս քաղա-
քին դռներէն ներս բեռ չբերէք, ու
չաբաթ օրը սուրբ պահէք՝ բնաւ անոր
մէկ գործ մը չընելով. 25—Այն ատեն Դա-
ւիթի աթոռին վրայ նստող թագաւոր-
ներ ու իշխաններ, կառքերու ու ձիե-
քու վրայ հեծած, այս քաղաքին դռնե-
րէն պիտի մտնեն, իրենք և իրենց իշ-
խանները, Ցուդայի մարդիկը ու Երու-
սաղէմի բնակիչները. ու այս քաղաքը
յաւիտեան պիտի մնայ. 26—Ու Ցու-
դայի քաղաքներէն ու Երուսաղէմի շրջ-
ակայ տեղերէն, ու Բենիամինի երկրէն
և դաշտերէն ու լեռներէն ու հարաւէն
պիտի գան, և ողջակէզ ու զոհ և հացի
ընծայ ու կնդրուկ պիտի բերեն, և Տէ-
րոջը տունը շնորհակալութեան ընծաներ
պիտի բերեն 27—Բայց եթէ ինծի մտիկ
չընէք, որ չաբաթ օրը սուրբ պահէք
ու չաբաթ օրը բեռ չվերցնէք ու Երու-
սաղէմի դռներէն ներս չմտնէք, ես ալ
անոր դռներուն մէջ կրակ պիտի բռնկեց-
նեմ. ու Երուսաղէմի պալատները պի-
տի ուտէ, ու պիտի չմարի։

ԳԼ. ԾՀ

Տէրոջը կողմանէ Երեմիայի խօսքն է
ղոր ըսաւ, 2—Վերը ու բրուտին տունը
իջիր, և հոն քեզի իմ խօսքերս լսել
տամ։ 3—Ու ես բրուտին տունը իջայ,
և ահա անիկա ճախարակով կը գործէր։
4—Ու կաւէ չինած ամանը բրուտին
ձեռքին մէջ ապուռեցաւ. և զանիկա
նորէն ուրիշ աման մը չինեց՝ ինչպէս
բրուտին հաճոյ եղաւ որ ընէ։ 5—Ու
Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
6—Մի՞թէ ձեզի՝ այս բրուտին ըրածին
պէս ընելու կարող չե՞մ,
Ով Իսրայէլի տունը, կ'ըսէ Տէրը։
Ահա ինչպէս է կաւը բրուտին ձեռքին
մէջ,
Դուք իմ ձեռքիս մէջ այնպէս էք, ով
Իսրայէլի տունը։
7—Երբ ազգի մը կամ թագաւորութեան
մը համար ըսելու ըլլամ
Թէ պիտի քակեմ, պիտի փլցնեմ ու
պիտի կորնցնեմ,
8—Եթէ այն ազգը, որուն վրայով խօսե-
ցայ, իր չարութենէն դառնայ,
Ես ալ պիտի զղջամ այն չարիքին հա-
մար՝ զոր անոր ընել մտածեր էի։
9—Իսկ երբ ազգի մը կամ թագաւորու-
թեան մը համար ըսելու ըլլամ
Թէ պիտի չինեմ ու պիտի տնկեմ,
10—Եթէ անիկա իմ խօսքս մտիկ չընե-
լով՝ իմ աչքիս չարութիւն ընէ,
Ես ալ պիտի զղջամ այն բարիքին հա-
մար՝ զոր ըսեր էի թէ անոր պի-
տի ընեմ։
11—Ես հիմա Ցուդայի մարդիկներուն
Ու Երուսաղէմի բնակիչներուն խօսք ու
ըսէ,
Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես ձեզի համար չարիք կը պատ-
րաստեմ,
Ու ձեզի համար խորհուրդ մը կը խորհիմ.
Հիմա ամէն մէկդ ձեր չար ճամբաներէն
դարձէք,
Եւ ձեր ճամբաները ու ձեր գործերը
ուղղեցէք։
12—Բայց անոնք կ'ըսեն, Ցոյս չկայ.
Վասն զի մեր մեր խորհուրդներուն
ետեւէն պիտի երթանք,
Ու ամէն մէկս մեր չար սրտին կամա-
կորութեանը պէս պիտի ընենք։
13—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Հիմա ազգերուն մէջ հարցուցէք,
Այսպիսի բան մը ո՞վ լսեր է.
Իսրայէլի կոյսը խիստ սոսկալի բան ըրաւ։
14—Մի՞թէ Լիբանանի ձիւնը *արտին
վրայէն՝ կը պակսի՞,

*Կամ Սուրսադայէ

կամ հեռանէն վազող ցուրա չուրերը կը ցամքե՞ն։
15—Բայց իմ ժողովուրդս զիս մոռցաւ. Ունայնապէս խունկեր խունկին.
Ու զանոնք իրենց ճամբաներուն մէջ սահեցուցին,
Որպէս զի ոտիւ չսլանալու մէջ, չլեռնակաւոր ճամբայի մէջ, քալեն,
16—Որպէս զի իրենց երկիրը աւերակ,
Ու յաւիտեան սուլելու խըղճանք ընեն.
Անկէ ամէն անցնողը պիտի հիանայ
Ու գլուխը պիտի շարժէ։
17—Զանոնք թշնամիին առջեւ պիտի ցրուեմ
Իբր թէ արեւելեան հովով,
Անոնց թշուառութեան օրը
Անոնց կռնակ պիտի ցուցնեմ և ոչ թէ երեսս։
18—Ու ըսին,
Եկէք, նենգելու դէմ հնարքներ խորհինք.
Վասն զի քահանայէն օրէնք
Ու խոհականէն խորհուրդ
Եւ մարգարէէն խօսք պիտի չկորսուի.
Եկէք, զանիկա լեզուով զարնենք,
Ու անոր ամէն խօսքերուն ականջ չդնենք։
19—Ով Տէր, ինծի ականջ տուր,
Ու ինծի հետ վիճողներուն ձայնը լսէ։
20—Մինթէ ապիկար թեան փոխարէն չարիք կը հատուցուի՞.
Վասն զի անոնք իմ անձիս համար փոս փորեցին.
Ծիշտ որ քու առջեւդ կայնեցայ,
Որպէս զի անոնց համար բարեխօսութիւն ընեմ,
Ու քու բարկութիւնդ անոնցմէ դարձնեմ։
21—Անոր համար անոնց տղաքները սովի մատնէ,
Ու զանոնք սուրին ձեռքը յանձնէ.
Անոնց կիները անզաւակ ու արբեւաբի ըլլան,
Եւ այրերը մահով կատրուին,
Ու երիտասարդները պատերազմի մէջ սրով զարնուին։
22—Երբ անոնց վրայ յանկարծակի ասպատակ գունդեր բերես,
Անոնց առներէն ազաղակ լսուի.
Վասն զի զիս բռնելու համար փոս փորեցին,
Ու իմ ոտքերուս համար ծածուկ որոգայթները լարեցին։
23—Ու դուն, ով Տէր, գիտես անոնց բոլոր խորհուրդը
Ինծի դէմ, զիս սպանելու համար.
Անոնց անօրէնութիւնը մի քաւեր,
Եւ անոնց մեղքը քու առջեւդ մի ինկեր.
Հապա անոնք քու առջեւդ կործանին.
Քու բարկութեանդ առնը անոնց ետքը ըրէ։

ԳԼ. ԺԲ

Տէրը այսպէս ըսաւ. Գնա, բրուտի չինած հողէ կուժ մը ծախու առ, ու ժողովրդին ծերերէն և քահանաներուն ծերերէն երկու հոգի առ։ 2—Ու խեցիներու դրանը դիմաց ելլոյ՝ Ինոմմի որդւոյն ձորը երթալ, ու հոն քարոզէ այն խօսքերը զորոնք քեզի պիտի զրուցեմ։ 3—Ու ըսէ, ով Յուդայի թագաւորներ ու Երուսաղէմի բնակիչներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք. Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես այս տեղին վրայ այնպիսի չարիք պիտի բերեմ, որ զանիկա ամէն լսողին ականջները պիտի խօսին. 4—Վասն զի անոնք զիս թողուցին, ու այս տեղը ինծմէ օտարացուցին, և հոս խունկ ծխեցին ուրիշ աստուածներու՝ զորոնք ոչ իրենք և ոչ իրենց հայրերը, ոչ ալ Յուդայի թագաւորները ճանչցեր էին. ու այս տեղը անմեղ արիւնով լեցուցին. 5—Ու Բահաղի բարձր տեղերը չինեցին, որպէս զի իրենց տղաքները կրակով այրեն, Բահաղի ողջակէզ ընեն, զոր ես չհրամայեցի, չխօսեցայ ու միտքս ալ չանցաւ։ 6—Ուստի ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, որ մէկմէկ ալ այս տեղը Տոփեթ ու Ինոմմի որդւոյն ձորը պիտի չըսուի, հապա Սպանութեան ձոր։ 7—Ու այս տեղ Յուդայի ու Երուսաղէմի խորհուրդը պիտի խափանեմ. ու զանոնք իրենց թշնամիներուն առջեւ սրով և իրենց հոգին փնտռտողներուն ձեռքով պիտի կործանեմ. ու անոնց դիերը երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի տամ. 8—Ու այս քաղաքը աւերակ ու նախատինք պիտի ընեմ. անկէ ամէն անցնողը անոր բոլոր հարուածներուն պատճառաւ պիտի հիանայ ու պիտի սուլէ։ 9—Ու պաշարման ատեն այն նեղութեանը մէջ օրով անոնց թշնամիները և անոնց հոգին փնտռտողները զանոնք պիտի նեղեն, իրենց ազդիկներուն միսը պիտի կերցնեմ անոնց. ու իրարու միսը պիտի ուտեն։

10—Եւ քու կուժը քեզի հետ երկոց մարդոց աչքին առջեւ կոտրէ. 11—Ու անոնց ըսէ, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Այս ժողովուրդը ու այս քաղաքը այնպէս պիտի կոտրեմ, ինչպէս մէկը բրուտի սամանը կը կոտրէ, որ ա՛լ չկրնար նորոգուիլ. ու Տոփեթի մէջ պիտի թաղեն՝ մինչև ա՛լ թաղելու տեղ չմնայ։ 12—Այս տեղին ու անոր բնակիչներուն այսպէս պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը, և այս քաղաքը Տոփեթի պէս պիտի ընեմ. 13—Ու Երուսաղէմի տուները և Յուդայի թագաւորներուն տուները Տոփեթի տեղին պէս պիտի պիղծ պիտի ըլլան, այն բոլոր տուներուն պատճառաւ՝ որոնց տանիքներուն վրայ երկինքի բոլոր զօրքերուն խունկ ծխեցին, և օտար աստուածներուն թափելու նուէրներ մատուցին։

14—Ու Երեմիա Տոփեթէ եկաւ, ուր Տէրը զանիկա զրկեր էր մարգարէութիւն ընելու համար. և Տէրոջը տանը գաւիթը կայնեցաւ ու բոլոր ժողովուրդին ըսաւ, 15—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա այս քաղաքին վրայ ու անոր բոլոր գիւղաքաղաքներուն վրայ պիտի բերեմ այն բոլոր չարիքները զորոնք անոր դէմ խօսեցայ. վասն զի իրենց պարանոցը խստացուցին, որպէս զի իմ խօսքերս մտիկ չընեն։

ԳԼ. Ի

Եւ Տէրոջը տանը գլխաւոր վերակացուն Եմմերի որդին Փասուր քահանան լսեց այս խօսքերը զորոնք Երեմիա կը մարգարէանար։ 2—Ու Փասուր Երեմիա մարգարէին զարկաւ, և զանիկա Տէրոջը տանը ՎԼ հզոր բենիամինի վերի դրանը կոձղը դրաւ։ 3—Ու հետեւեալ օրը Փասուր երեմիան կոձղէն հանեց։ Ու Երեմիա անոր ըսաւ, Տէրը քու անունդ Փասուր չկոչեց, հապա *Մակոր-միսսապիպ։ 4—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզ սրտաւերք պիտի ընեմ քու անձիդ ու քու բոլոր բարեկամներուդ. և անոնք իրենց թշնամիներուն սրովը պիտի իյնան, ու քու աչքերդ պիտի տեսնեն. և բոլոր Յուդան Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնեմ. ու զանոնք Բաբելոն գերի պիտի տանի, ու զանոնք սրով պիտի զարնէ։ 5—Ու այս քաղաքին բոլոր հարստութիւնը ու անոր բոլոր վաստակը ու անոր բոլոր պատուական բաները պիտի տամ. և Յուդայի թագաւորներուն բոլոր գանձերը իրենց թշնամիներուն ձեռքը պիտի տամ. և զանոնք պիտի յափշտակեն ու առնեն և Բաբելոն տանին։ 6—Ու դուն, ով Փասուր, ու քու տանդ բոլոր բնակիչները, գերութեան պիտի երթաք. և Բաբելոն պիտի երթաս, ու հոն պիտի մեռնիս, և հոն պիտի թաղուիս քեզ ու քու բոլոր բարեկամներդ, որոնց սուտ մարգարէութիւն ըրիր։

7—Զիս համոզեցիր, ով Տէր, ու ես համոզուեցայ.
Դուն ինծմէ զօրաւոր ես ու յաղթեցիր.
Ամէն օր խնդք եղայ,
Ամէնը զիս ծաղր կ'ընեն։
8—Քանի քանի որ կը խօսիմ, կ'աղաղակեմ
Ու բռնութեան ու զրկանքի համար կը բողոքեմ.
Վասն զի Տէրոջը խօսքը ամէն օր նախատինք ու անարգանք եղաւ ինծի։
9—Ու ես ըսի, Զանիկա չյիշեմ,
Ու մէկմէկ ալ անոր անունովը չխօսիմ.
Բայց սրտիս մէջ վառած կրակի պէս եղաւ՝ ոսկորներուս մէջ գոցուած.
Ու յոգնեցայ ղանիկա կրելէն ու ա՛լ չեմ կրնար։

*Կամ, մորթէ թաղելու տեղ չըլլալուն համար

†Կամ, այսինքն այն բոլոր առները

*Այսինքն, ամէն կողմանէ վախ. Սպ. լմ. 13։ Երմ. 10։ ԳԼ. գ. 25։ խգ. 5։ խթ. 29։

10—Վասն զի չառաբերն չարաթօսու թիւն լսեցի,
Ամէն կազմանէ վախ եղաւ։
Բամբասեցէք, ու բամբասանք՝ ըսէն.
Իմ բոլոր բարեկամներս *իմ սխալիս կը դիտեին՝ ըսելով,
Թերևս անիկա խաբուի, ու անոր յաղթենք
Ու անկէ մեր վրէժը առնենք։
11—Բայց Տէրը ինծի հետ է զօրաւոր սարսեռանի պէս.
Անոր համար զիս հալածողները պիտի գլորին ու պիտի չյաղթեն.
Անոնք խիստ պիտի ամչնան, քանզի անյաջողութեամբ կը վարուին,
Անոնց նշանագանքը յաւիտեան պիտի չմոռցուի։
12—Բայց դուն, ով զօրաց Տէր, որ արդարը կը փորձես,
Երիկամունքը ու սիրտը կը տեսնես,
Անոնց վրայ քու վրէժխնդրութիւնդ տեսնեմ.
Քանզի իմ դատս քեզի յայտնեցի։
13—Տէրոջը երգեցէք, Տէրը գովեցէք.
Քանզի անանկին հոգին չարագործներուն ձեռքէն ազատեց։
14—Անիծեալ ըլլայ այն օրը երբ ես ծնայ.
Իմ մօրս զիս ծնած օրը օրհնեալ չըլլայ։
15—Անիծեալ ըլլայ այն մարդը որ իմ հօրս աւետիս բերաւ,
Ու զանկիկ խիստ շատ ուրախացուց՝ ըսելով,
Քեզի արու զաւակ մը ծնաւ։
16—Ու այն մարդը այն քաղաքներուն պէս ըլլայ՝
Զորոնք Տէրը կործանեց ու չխնայեց.
Անկիկ առաւօտուն ողբ լսէ,
Ու կէսօրուան աւերն ազդակ։
17—Վասն զի ինծ՚ արգանդէն զիս չմեռցուց,
Որ մայրս ինծի գերեզման ըլլար,
Ու անոր արգանդը յաւիտեան յղի մնար։
18—Ինչո՞ւ այսպէս ինծ՚ արգանդէն եկայ
Որ աշխատանք ու ցաւ տեսնեմ,
Ու իմ օրերս ամօթով ազատին։

*Կամ, ինծի չարողները կ՚ըսէն

Գլ. ԻԱ

Տէրոջը կողմանէ երեմիայի եղած խօսքն է, երբ Սեդեկիա Թագաւորը Մելքիայի որդին Փասուրը ու Մաասիայի որդին Սոփոնիա քահանան անոր ղրկեց՝ ըսելով, 2—Ննջորէ ըրէ, մեզի համար Տէրոջը հարցուր, վասն զի Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը մեզի հետ պատերազմ կ՚ընէ. Թերևս Տէրը մեզի համար իր բոլոր սքանչելիքներուն համեմատ ընէ. և անկիկ *մեզմէ դառնայ։

3—Ու երեմիա անոնց ըսաւ, Սեդեկիայի այսպէս ըսէք. 4—Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ. Ահա ես ձեր ձեռքերուն մէջ եղող պատերազմական զէնքերը պիտի դարձնեմ, որոնցմով դուք պարսպին դուրսէն ձեզ պաշարող Բաբելոնի Թագաւորին ու Քաղդէացիներուն հետ կը պատերազմիք. և զանոնք այս քաղաքին մէջ պիտի ժողվեմ 5—Ու ես ու երկնցած ձեռքով և զօրաւոր բազուկով, բարկութեամբ ու մեծ ցասումով ձեզի հետ պիտի պատերազմիմ։ 6—Ու այս քաղաքին բնակիչները, թէ՛ մարդ և թէ՛ անասուն պիտի զարնեմ. անոնք մեծ ժանտախտով պիտի մեռնին։ 7—Ու անկէ ետքը, կ՚ըսէ Տէրը, Յուդայի Թագաւորը Սեդեկիան, և անոր ծառաները ու ժողովուրդը, և այս քաղաքին մէջ ժանտախտէն, սուրէն ու սովէն մնացածները, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ձեռքը, և անոնց թշնամիներուն ձեռքը, ու անոնց հոգիները փրնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ. և զանոնք սուրի բերնէ պիտի անցընէ, անոնց պիտի չխնայէ, պիտի չդթայ ու ողորմութիւն պիտի չընէ։

8—Ու այս ժողովուրդին ըսես, Տէրը այսպէս կ՚ըսէ. Ահա ես ձեր առջև կը դնեմ կեանքի ճամբան ու մահուան ճամբան. 9—Այս քաղաքին մէջ կեցողը սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի, իսկ ելլողը ու ձեզ պաշարող Քաղդէացիներուն իյնողը ողջ պիտի մնայ, ու անոր կեանքը իրեն աւարի մը

*Եբր. մեր վրայեն ելլէ

պէս պիտի ըլլայ։ 10—Քանզի իմ երեսս այս քաղաքին վրայ հատաւտեցի չարիք ընելու համար և ոչ թէ բարիք, կ՚ըսէ Տէրը. անիկա Բաբելոնի Թագաւորին ձեռքը պիտի տրուի, ու զանիկա կրակով պիտի այրէ։

11—Ու Յուդայի Թագաւորին տունը ըսէ, Տէրոջը խօսքը լսեցէք. 12—Ով Դաւիթի տունը, Տէրը այսպէս կ՚ըսէ. Առտուանց իրաւունքով դատաստան տեսէք, ու ղրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք. չըլլայ որ ձեր չար գործերուն համար իմ բարկութիւնս կրակի պէս ելլելով բռնկի, ու մարող մը չըլլայ։ 13—Ահա ես ձեզի դէմ եմ, ով հովիտին, դաշտական վէմին, քնակիչները, որ կ՚ըսէք թէ Մեզի դէմ ո՞վ պիտի իջնէ, կամ մեր բնակարաններուն մէջ ո՞վ պիտի մտնէ. 14—Բայց ես ձեզի ձեր գործերուն պատուին համեմատ այցելութիւն պիտի ընեմ, կ՚ըսէ Տէրը, ու անոր անտառին մէջ կրակ պիտի բռնկեցնեմ, որ անոր ամէն բոլորտիքը եղածը պիտի ուտէ։

Գլ. ԻԲ

Տէրը այսպէս կ՚ըսէ.
Ցուդայի Թագաւորին տունը իջիր,
2—Ու հոն այս խօսքը խօսէ, ու ըսէ,
Ով Դաւիթի աթոռին վրայ նստող Ցուդայի Թագաւոր,
Տէրոջը խօսքը մտիկ ըրէ,
Թէ՛ դուն և թէ՛ քու ծառաներդ ու ժողովուրդդ,
Որ այս դռներէն կը մտնէք։
3—Տէրը այսպէս կ՚ըսէ.
Իրաւունք ու արդարութիւն ըրէք,
Ու զրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք,
Ու օտարականին, որբին ու այրեւարիին
Անիրաւութիւն ու բռնութիւն մի ընէք,
Ու այս տեղ անմեղ արիւն մի թափէք։
4—Վասն զի եթէ ամէն կերպով այս խօսքը ի գործ դնէք,
Այն ատեն Դաւիթի աթոռին վրայ նստող Թագաւորներ
Կառքերու ու ձիերու վրայ հեծած՝
Այս տանը դռներէն պիտի մտնեն,
Իրենք և իրենց ծառաները ու ժողովուրդը։

5—Բայց եթէ այս խօսքերը մտիկ չընէք,
Իմ անձիս վրայ երդուա՛վ կ՚ընեմ, կ՚ըսէ Տէրը,
Որ այս տունը աւերակ պիտի ըլլայ։
6—Քանզի Ցուդայի Թագաւորին տանը վրայով
Տէրը այսպէս կ՚ըսէ.
Դուն Խնճ ինծի Գաղաադու դէմ
Ու Լիբանանու գագաթին դէմ ես,
Սակայն անշուշտ քեզ անապատ դէմ
Ու անբնակ քաղաքներու դէմ պիտի ընեմ։
7—Ու քու վրադ կործանողները պիտի *հանեմ.
Ամէն մէկը իր զէնքովը դէմ է,
Ու քու ընտիր եղևնիներդ պիտի կտրեն
Ու կրակը ձգեն։
8—Ու այս քաղաքէն շատ ազգեր պիտի անցնին,
Ու իրարու պիտի ըսեն,
Ինչո՞ւ համար Տէրը այս մեծ քաղաքին այսպէս ըրաւ։
9—Ու պիտի ըսեն, Վասն զի իրենց Տէր Աստուածոյն ուխտը Թողուցին,
Ու ուրիշ աստուածներու երկրպագութիւն ըրին ու անոնց ծառայեցին։
10—Մեռնողին համար մի լաք,
Ու անոր համար մի ողբաք.
Հապա գացողին համար դառնապէս լացէք,
Որովհետև ան չի պիտի դառնայ,
Ու իր հայրենիքը պիտի չտեսնէ։
11—Վասն զի Տէրը այսպէս կ՚ըսէ.
Ցուդայի Թագաւորին Յովսիայի որդւոյն Սեղոմի համար,
Որ իր հօրը Յովսիայի տեղ Թագաւոր նստաւ,
Ու այս տեղէն ելաւ.
Անիկա մէ՛ևյն ալ հոս պիտի չդառնայ.
12—Հապա անիկա իր գերի փշուած տեղը պիտի մեռնի,
Ու մէ՛ևյն ալ այս երկիրը պիտի չտեսնէ։
13—Վա՛յ անոր, որ իր տունը զրպարտութեամբ
Ու իր վերնատուններուը անիրաւութեամբ կը շինէ.
Իր դրացին ձրի կը բանեցնէ,

*Եբր. սրբեմ

Եւ անոր աշխատութիւնը վարձքը չվճարեր.

14—Ինծի ընդարձակ տուն
Ու հոյասուն վերնատուններ չինեմ՝
ըսելով,
Իրեն պատուհաններ կը բանայ,
Ու ներկ՝ եղեւնափայտով կը պատէ,
Ու նոթով կը ներկէ։
15—Մինչ դուն *չատ եղեւնափայտեր
ժողվելով
Թագաւո՞ր պիտի ըլլաս։
Չէ՞ որ քու հայրդ կերաւ ու խմեց,
Նաեւ իրաւունք ու արդարութիւն ըրաւ,
Այն ատեն անոր ապրելը եղաւ.
16—Աղքատին ու անանկին դատը տեսաւ,
Այն ատեն անոր ապրելը եղաւ.
Միթէ զիս գիտնալը ասիկա չէ՞, կ'ըսէ
Տէրը։
17—Սակայն քու աչքերդ ու սիրտդ
ուրիշ բանի վրայ չեն,
Բայց միայն քու ագահութեանդ
Եւ անմեղ արիւն թափելու
Եւ անիրաւութեան ու բռնաւորութեան
վրայ է, որ պիտի ընես։
18—Անոր համար Յուդային թագաւորին,
Յովսիայէ որդւոյն Յովակիմի, վրայով
Տէրը այսպէս կ'ըսէ.
Անոր վրայ պիտի չողբան՝ ըսելով,
Վա՜յ, եղբայրս, կամ վա՜յ, քոյրս.
Անոր վրայ պիտի չողբան՝ ըսելով,
Վա՜յ, տէր իմ, կամ վա՜յ անոր փառքին։
19—Անիկա իշու թաղումով պիտի թաղուի,
Ու քաշելով պիտի տարուի,
Ու Երուսաղէմի դուռերէն դուրս պիտի
նետուի։
20—Լիբանան ելիր ու աղաղակէ,
Եւ Բասանի վրայ ձայնդ ձգէ
Ու Աբարիմէ աղաղակէ.
Վասն զի քու բոլոր համանիներդ կոտրուեցան։
21—Երբ դուն յաղողութեան մէջ էիր,
քեզի ըսուցեցի,
Ու դուն ըսիր, Մտիկ չեմ ըներ.
Քու մանկութենէդ ի վեր ճամբադ այս է՝
Որ իմ խօսքս մտիկ չընես։
22—Քու բոլոր հովիւներդ հովը պիտի
կերծանէ,
Ու համանիներդ գերութեան պիտի երթան.
Ցիրաւի այն ատեն բոլոր չարութեանդ
համար
Պիտի ամչնաս ու պիտի պատկառիս։
23—Ով Լիբանանի մէջ բնակող,
Ու եղեւիններու մէջ բոյն ունեցող,
Երբ քեզի ծնդգման կնոջ երկունքին
պէս ցաւեր գան,
Ո՛րչափ ողբալուի պիտի ըլլաս։
24—Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը,
Ով Յուդայի թագաւոր, Յովակիմի որդի
Յեքոնիա,
Թէև իմաչ ձեռքիս վրայ հինէք ալ ըլլաս,
Անկէ ալ քեզ պիտի փրցնեմ.
25—Եւ քեզ քու հոգիդ փնտռողներուն ձեռքը
Ու այն մարդոց ձեռքը, որոնց երեսէն
դուն կը վախնաս,
Եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը
Ու Քաղդէացւոց ձեռքը պիտի մատնեմ.
26—Եւ քեզ ու քու մայրդ որ քեզ ծնաւ,
Օտար երկիր պիտի նետեմ
Ուր ծնած չէք,
Եւ հոն պիտի մեռնիք։
27—Ու պիտի չդառնան այն երկիրը,
Ուր դառնալու †կը յուսան։
28—Միթէ այս Յեքոնիա ըսուած մարդը անարգուած ու կոտրուած
սափոր մըն է,
Կամ թէ այնպիսի սամոն մըն է՝ որու
մէջ կը չհաճիր.
Ինչո՞ւ համար ինք ու իր սերունդը նետուեցան,
Ու իրենց չգիտցած երկիրը փշուեցան։
29—Ով երկիր, երկիր, երկիր,
Տէրոջը խօսքը մտիկ րլէ.
30—Տէրը այսպէս կ'ըսէ.
Այս մարդը անպտուղ գրեցէք,
Այս մարդը իր օրերուն մէջ յաջողութիւն պիտի չգտնէ.
Որ իմ սերունդէն ոեւէ մէկը յաջողութիւն պիտի չգտնէ,
Որ Դաւիթի աթոռին վրայ նստի,
Եւ այսուհետեւ Յուդայի վրայ թագաւորութիւն ընէ։

*Եբ. հեղեղատյոյն համար նախանձելով

*Եբ. Քոնիա
†Եբ. իրենց անձը կը վերցնեն

ԳԼ. ԻԳ

Վա՜յ այն հովիւներուն,
Որոնք իմ արօտիս ոչխարները կը կորսընցնեն ու կը ցրուեն, կ'ըսէ
Տէրը։
2—Անոր համար այսպէս կ'ըսէ Իսրայէլի
Տէր Աստուածը
Այն հովիւներուն վրայով որ իմ ժողովուրդս կը հովանին.
Դուք իմ ոչխարներս ցրուեցիք ու զանոնք վռնտեցիք,
Եւ անոնց այցելութիւն չըրիք.
Ահա ես ձեր գործերուն չարութեանը
համար
Ձեզի այցելութիւն պիտի ընեմ, կ'ըսէ
Տէրը.
3—Ու ես իմ ոչխարներուս մնացորդը
պիտի ժողվեմ
Այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք
քշեր եմ,
Եւ զանոնք իրենց *փարախները պիտի
դարձնեմ,
Եւ պիտի աճին ու շատնան։
4—Ու անոնց վրայ հովիներ պիտի
դնեմ որ զանոնք հովանին.
Եւ անոնք ալ՝ կրկին ալ պիտի չվախնան
ու պիտի չդարհտրին
Ու պիտի չպակսին, կ'ըսէ Տէրը։
5—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ Դաւիթի արդարութեան Շառաւիղ
մը պիտի հանեմ,
Որ թագաւորի պէս թագաւորութիւն
պիտի ընէ,
Իմաստութեամբ պիտի վարուի,
Ու երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի ընէ։
6—Անոր օրերը Յուդա պիտի ազատի,
Եւ Իսրայէլ ապահովութեամբ պիտի
բնակի.
Ու այս է անոր անունը՝ որով պիտի
կոչուի,

*կամ, արօտները

Տէրը Մեր Արդարութիւնը։
7—Անոր համար ահա օրեր կու գան,
կ'ըսէ Տէրը,
Որ ալ պիտի չըսուի Թէ կենդանի է Տէրը,
Որ Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն հանեց,
8—Հապա՝ կենդանի է Տէրը
Որ Իսրայէլի տանը սերունդը հանեց ու
բերաւ հիւսիսի երկրէն,
Ու այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք
քշեր էի.
Ու անոնք իրենց երկրին մէջ պիտի բնակին։
9—Մարգարէներուն համար սիրտս
ներսիդիս կը կոտրի.
Բոլոր ոսկորներս կը դողան.
Տէրոջը երեսէն ու անոր սուրբ խօսքերուն երեսէն
Գինով մարդու պէս
Ու գինին գլխով զարկած մարդու պէս
եղայ։
10—Քանզի երկիրը շնացողներով լեցուած է.
Քանզի անէծքի պատճառաւ երկիրը
սուգ կը բռնէ.
Անապատին արօտները չորցան,
Որովհետեւ անոնց ճամբան չար եղաւ,
Եւ անոնց այժր ուղղութեան համար չէ։
11—Վասն զի Թէ՛ մարգարէն և Թէ՛
քահանան պղծուեցան,
Անոնց չարութիւնը իմ տանս մէջ ալ
գտայ, կ'ըսէ Տէրը։
12—Անոր համար անոնց ճամբաները
Խաւարի մէջ սահեցնող սեղերու պէս
պիտի ըլլան անոնց,
Անոնք պիտի մղուին ու հոն պիտի իյնան.
Վասն զի ես անոնց այցելութեան տարին
Անոնց վրայ չարիք պիտի բերեմ, կ'ըսէ
Տէրը։
13-Ես Սամարիայի մարգարէներուն մէջ
Անզգամութիւն տեսայ.
Բահաղի ՀՈՎՆՈՎ մարգարէութիւն կ'ընէին,
Եւ իմ ժողովուրդս Իսրայէլը կը մոլորեցնէին։
14—Ու Երուսաղէմի մարգարէներուն
մէջ սոսկալի բան տեսայ.
Անոնք շնութիւն կ'ընեն, ու սուտերուն
մէջ կը քալեն,
Եւ չարագործներուն ձեռքերը կ'ուժովցընեն,

Որպէս զի չդառնան ամէն մէկը իր չարութենէն.
Անոնց ամէնը ինծի Սոգոմի պէս,
Ու անոր բնակիչները Գոմորի պէս եղան։
15—Ասոր համար զորաց Տէրը մարգարէներուն վրայով այսպէս կ'ըսէ.
Ահա ես անոնց օշինդր պիտի կերցնեմ,
Ու անոնց դառնութեան ջուր պիտի խմցնեմ.
Վասն զի Երուսաղէմի մարգարէներէն ամբարշտութիւն ելաւ
Ո՞ր բոլոր երկրին մէջ ԴՋԽՃՀԵՑ։
16—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Չեզի մարգարէութիւն ընող մարգարէներուն խօսքերուն մի՛ լսէք.
Անոնք ունայնութեան կը սորվեն ձեզ,
Իրենց սրտին տեսիլքը կը խօսին,
Ո՞ չ Թէ Տէրոջը բերնէն։
17—Անոնք դէս անարգողներուն կը խօսին ու կ'ըսեն,
Տէրը ըսաւ, Չեզի խաղաղութիւն պիտի ըլլայ.
Ու իրենց սրտին կամակորութեանը մէջ բոլոր քալողներուն կ'ըսեն,
Չեր վրայ չարիք պիտի չգայ։
18—Վասն զի Տէրոջը խորհուրդին մէջ ո՞վ կայնեցաւ.
Ո՞վ տեսաւ ու անոր խօսքը լսեց.
Անոր խօսքին ո՞վ ականջ տուաւ ու մարիկ ըրաւ։
19—Ահա Տէրոջը մրրիկը սրտմտութեամբ եկաւ.
Անիկա սաստիկ մրրիկ է,
Ամբարիշտներուն գլխուն վրայ պիտի յարձակի։
20—Տէրոջը բարկութիւնը եան պիտի չդառնայ
Մինչև իր սրտին խորհուրդները չկատարէ ու չհաստատէ.
Վերջին օրերը ասիկա ազէկ պիտի հասկընաք։
21—Այս մարգարէները ես չղրկեցի, բայց անոնք կը վազեն.
Ես անոնց չխօսեցայ, բայց անոնք կը մարգարէանան։
22—Իսկ եթէ անոնք իմ խորհուրդիս մէջ կեցած ըլլային,
Այն ատեն իմ խօսքս իմ ժողովուրդիս լսել պիտի տային.
Ու զանոնք իրենց չար ճամբաներէն
Ու իրենց չար գործերէն պիտի դարձընէին։
23—Մի՞թէ ես մօտի՛ Աստուած եմ,
Ու հեռուէն Աստուած չե՞մ, կ'ըսէ Տէրը։
24—Կամ թէ մէկը ծածուկ տեղեր կրնայ պահուիլ,
Որ ես զանիկա չտեսնեմ, կ'ըսէ Տէրը.
Միթէ երկինքը ու երկիրը լեցնողը ես չե՞մ, կ'ըսէ Տէրը։
25—Իմ անունովս սուտ մարգարէութիւն ընող մարգարէներուն ըսածները լսեցի,
Որ կ'ըսեն, Երազ տեսայ, երազ տեսայ։
26—Մինչև ո՞րբ սուտ մարգարէներուն սրտին մէջ պիտի ըլլայ,
Որոնք իրենց սրտին ներգործութիւնները կը մարգարէանան։
27—Անոնք իրենց երազներովը, զորոնք իրարու կը պատմեն,
Իմ անունս իմ ժողովուրդիս մոռցնել կը խորհին.
Ինչպէս անոնց հայրերը Բահաղի պատճառաւ իմ անունս մոռցան։
28—Երազ ունեցող մարգարէն թող երազ պատմէ,
Իսկ իմ խօսքս ունեցողը ճշմարտութեամբ թող իմ խօսքս խօսի.
Ցորդը ցորենին քովՙ ինչ է, կ'ըսէ Տէրը։
29—Միթէ իմ խօսքս կրակի պէս չէ՞, կ'ըսէ Տէրը,
Ու ապառաժը կտորուող մուրճի պէս չէ՞։
30—Անոր համար ահա ես այն մարգարէներուն դէմ եմ, կ'ըսէ Տէրը,
Որոնք ամէն մէկը իր ընկերէն իմ խօսքերս կը գողնան։
31—Ահա ես այն մարգարէներուն դէմ եմ, կ'ըսէ Տէրը,
Որոնք իրենց լեզուները կը գործածեն ու կ'ըսեն, Անիկա ըսաւ։
32—Ահա ես այն սուտ երազներ մարգարեացողներուն դէմ եմ, կ'ըսէ Տէրը,
Որ զանոնք պատմելով իմ ժողովուրդս կը մոլորեցնեն
Իրենց սուտութիւններովը ու մեծպարծութիւնովը.
Ու ես զանոնք չղրկեցի և անոնց չպատուիրեցի։

Ու անոնք այս ժողովուրդին ամենևին օգուտ մը պիտի չընեն, կ'ըսէ Տէրը։
33—Ու սա երբ այս ժողովուրդը
Կամ մարգարէ մը կամ քահանայ մը
Քեզի հարցնէ ու ըսէ Թէ Տէրոջը *բեռը ի՞նչ է,
Այն ատեն անոնց ըսես, Ի՞նչպէս բեռ.
Ես ձեզ անչուշ պիտի թողում, կ'ըսէ Տէրը։
34—Ու այն մարգարէն կամ քահանան կամ ժողովուրդը
Որ Տէրոջը բեռը կ'ըսէ,
Այն մարդուն ու անոր տունը այցելութիւն պիտի ընեմ։
35—Ամէն մարդ իր ընկերին՝
Ու ամէն մարդ իր եղբօրը այսպէս ըսէք.
Տէրը ի՞նչ պատասխան տուաւ,
Ու Տէրը ի՞նչ խօսեցաւ։
36—Ու մէկմէկ ալ Տէրոջը բեռը չյիշէք.
Վասն զի ամէն մարդուն բեռը իր խօսքը պիտի ըլլայ.
Բայց դուք կ'ոնդրկէք Աստուծոյ,
Ձօրաց Տէրոջը, մեր Աստուծոյն, խօսքը փոխեցիք։
37—Մարգարէին այսպէս ըսես.
Տէրը քեզի ի՞նչ պատասխան տուաւ,
Ու Տէրը ի՞նչ խօսեցաւ։
38-Բայց որովհետև Տէրոջը բեռը կ'ըսէք,
Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Որովհետև այս խօսքը, այսինքն Տէրոջը բեռը, կ'ըսէք,
Թէև ես ձեզի ըսի՝ Տէրոջը բեռը մի ըսէք՝ ըսի,
39—Անոր համար ահա ես ձեզ բոլորովին պիտի մոռնամ,
Ու երեսէս պիտի ձգեմ ձեզ
Ու այն քաղաքը զոր ձեզի ու ձեր հայրերուն տուի.
40—Ու ձեր վրայ յաւիտենական նախատինք
Ու յաւիտենական անարգանք պիտի գնեմ,
Որ պիտի չմոռցուի։

Գլ. ԻԴ

Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին Յուդայի թագաւորը Յովակիմի որդին Եկոնիան և Յուդայի իշխանները և հիւսերը ու գաբրիններըը Երուսաղէմէ գերի առնելէն ու Բարելոն տանելէն ետքը, Տէրը ինծի գործ ցոյց ըրաւ.
Տէրոջը տաճարին առջև դրուած երկու կողով թուզ կար։ 2—Մէկ կողովին մէջ խիստ ազէկ թուզեր կային՝ կանխահաս թուզերու պէս, ու միւս կողովին մէջ խիստ գէշ թուզեր կային, այնպէս որ կ'չըլլար անոնց ուտելը անկարելի էր։ 3—Ու Տէրը ինծի ըսաւ, Ովե՛րիմիա, ի՞նչ կը տեսնես. ու ես ըսի, Թուզեր. ազէկ թուզերը խիստ ազէկ են, ու գէշերը չատ գէշ են, այնպէս որ գէշութենէն անոնց ուտելը անկարելի է։
4—Ա՛յն ատեն Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 5—Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Այս ազէկ թուզերուն պէս պիտի բաձնեմ Յուդայէ գերի փշուածներս, զորոնք այս տեղէն Քաղդեացոց երկիրը դրկեցի էրէց ազէկ ըլլալու համար։ 6—Ես իմ աչքերս անոնց վրայ պիտի հաստատեմ բարութեան համար, ու զանոնք այս երկիրը պիտի դարձնեմ, և զանոնք պիտի չքանդեմ, և զանոնք պիտի չկործանեմ, և զանոնք պիտի տնկեմ ու պիտի չհերեմ։ 7—Ու անոնց սիրտ մը պիտի տամ, որ ես Ճանչնան Թէ ես եմ Տէրը. ու անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան, ու ես անոնց Աստուածը պիտի ըլլամ. վասն զի իրենց բոլոր սրտովը իմ դիմի պիտի դառնան։ 8—Ու ինչպես են այս գէշ թուզերը որ գէշութենէն չեն ուտուիր, Տէրը այսպէս կ'ըսէ. Յուդայի Թագաւորը Սեդեկիան ու անոր իշխանները ու Երուսաղէմի մնացորդը, որոնք այս երկրին մէջ մնացեր են, նաև Եգիպտոսի երկրին մէջ բնակողները այնպէս պիտի ընեմ։ 9—Ու զանոնք երկրի բոլոր Թագաւորութիւններուն մէջ նեղութեան ու Թշուառութեան պիտի մատնեմ, որպէս զի անոնք նախատինք, ուռնալ, անարգանք ու անէծք ըլլան այն բոլոր տեղերը ուր զանոնք պիտի փշեմ։
10—Ես անոնց վրայ սուր, սով ու ժանտախտ պիտի զրկեմ, մինչև Տատնին այն երկրին վրայէն՝ զոր իրենց ու իրենց հայրերուն տուի,

*Այսինքն, պատգամը

Գլ. Իե

Ցուդայի Թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին, որ Բաբելացւոյն Նաբուգոդոնոսոր Թագաւորին առաջին տարին էր, բոլոր Ցուդայի Ժողովրդին վրայով երեմիայ Եղած խօսքն է, 2—Զոր երեմիա մարգարէն բոլոր Ցուդայի Ժողովրդին ու բոլոր Երուսաղէմի բնակիչներուն խօսեցաւ ու ըսաւ, 3—Ցուդայի Թագաւորին Ամմոնի որդւոյն Յովսիայի տասներկուերորդ տարիէն մինչև այսօր, որ քսանևհինգ տարի է, Տէրոջը խօսքը ինծի եղաւ, ու ես ձեզի խօսեցայ կանուխ ելլելով ու խօսելով, բայց մտիք չդրիք. 4—Ու Տէրը ձեզի ղրկեց իր բոլոր ծառաները, մարգարէները, կանուխ ելլելով ու ղրկելով, բայց մտիկ չդրիք, ու մտիկ ընելու համար ականջնիդ չդուեցիք, 5—Որոնք կ'ըսէին, Ամէն մէկդ ձեր չար ճամբայեն ու ձեր չար գործերէն դարձէք, որպէս զի բնակիք յաւիտեան յաւիտենից այն երկիրին մէջ զոր Տէրը ձեզի ու ձեր հայրերուն տուաւ. 6—Ու օտար աստուածներուն եամեցէն մի երթաք, անոնց ծառայելու ու երկրպագութիւն ընելու համար. և. պիս ձեր ձեռքերուն գործերովը մի բարկացնէք, որպէս զի ձեզի չարիք չընեմ, 7—Բայց դուք ինծի մտիկ չդրիք, կ'ըսէ Տէրը, որպէս զի պիս ձեր ձեռքերուն գործերովը բարկացնէք, ու ձեզի գէշ ըլլայ։

8—Ասոր համար զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. 9—Որովհետև իմ խօսքերս մտիկ չդրիք, Ահա ես պիտի ղրկեմ, ու բոլոր հիւսիսի ազգատոհմները և իմ ծառաս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը պիտի առնեմ, կ'ըսէ Տէրը, ու զանոնք այս երկրին վրայ և անոր բնակիչներուն վրայ ու բոլոր այս չրջակայ ազգերուն վրայ պիտի բերեմ, ու զանոնք նզովածի պէս բնաջինջ պիտի ընեմ, և զանոնք զարմանքի ու սուլելու խոխոջի դիտի ընեմ, ու յաւիտենական աւերակի պիտի դարձնեմ, 10—Ես անոնցմէ ցնծութեան ձայնը և ուրախութեան ձայնը, փեսային ձայնը ու հարսին ձայնը, աղօրիքին ձայնը ու ճրագին լոյսը պիտի կորնչեցնեմ. 11—Ու այս բոլոր երկիրը անապատ ու ամայութիւն պիտի ըլլայ. և այս ազգերը եօթանասուն տարի Բաբելոնի Թագաւորին պիտի ծառայեն։

12—Ու եօթանասուն տարիին լմննալէն ետքը Բաբելոնի Թագաւորին ու այն ազգին այցելութիւն պիտի ընեմ իրենց անօրէնութեանը համար. նաեւ Քաղդէացւոց երկրին ուղիղ ընեմ զիրենք յաւիտենական աւերակներ. 13—Ու այն երկրին վրայ պիտի բերեմ այն բոլոր խօսքերը զորոնք ես անոր դէմ խօսեցայ, այսինքն երեմիայի բոլոր ազգերուն վրայով բրած մարգարէութեան այս գիրքին մէջ գրուած բոլոր բաները. 14—Քանզի զանոնք ալ շատ ազգեր ու մեծ Թագաւորներ իրենց ծառայ պիտի ընեն. ու ես անոնց հատուցում պիտի ընեմ իրենց ըրածներուն ու իրենց ձեռքերուն գործերուն համեմատ։

15—Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը ինծի այսպէս ըսաւ. Այս բարկութեան գինիին գաւաթը ձեռքէս առ, ու զանիկա խմցուր այն բոլոր ազգերուն՝ որոնց ես քեզ կը ղրկեմ. 16—Ու խմին ու խառնվին ու անոնց մէջ ղրկած սուրիս երեսէն յիմարին. 17—Ուստի Տէրոջը ձեռքէն գաւաթը առի ու խմցուցի այն բոլոր ազգերուն, որոնց Տէրը պիս ղրկեց. 18—Երուսաղէմի ու Ցուդայի քաղաքներուն և անոր Թագաւորներուն ու անոր իշխաններուն, որպէս զի զանոնք անապատ, ամայութիւն, անարգանք ու անէծք ընէ, ինչպէս այսօր կ'երեւի. 19—Եգիպտոսի փարաւոն Թագաւորին, և անոր ծառաներուն ու իշխաններուն, ու անոր բոլոր Ժողովուրդին. 20—Ու բոլոր խառնիճաղանճ Ժողովուրդներուն, ու Հուս երկրին բոլոր Թագաւորներուն, ու փղշտացւոց երկրին բոլոր Թագաւորներուն, այսինքն Աշկաղոնի, Գազայի, ու Ակկարոնի, և Ազոտոսի մնացորդին. 21—Եդոմին, ու Մոաբի, ու Ամմոնի որդիներուն. 22—Ու Տիւրոսի բոլոր Թագաւորներուն, ու Սիդոնի բոլոր Թագաւորներուն, և ծովուն անդիի կողմը եղող

*կղզիներու Թագաւորներուն. 23—Դեդանի, ու Թեմայի, և Բուզի, ու ամէն էրէնց մորուքին ծայրերը կտրողներուն. 24—Ու Արաբացւոց բոլոր Թագաւորներուն, ու անապատը բնակող խառնիճաղանճ Ժողովրդին բոլոր Թագաւորներուն. 25—Ու †Զամբրիի բոլոր Թագաւորներուն, ու Եղամի բոլոր Թագաւորներուն, ու Մարաց բոլոր Թագաւորներուն. 26—Ու իրարու մօտ կամ հեռու եղող հիւսիսի բոլոր Թագաւորներուն, ու երկրի երեսին վրայ եղող երկրի բոլոր Թագաւորութիւններուն խոշոջ. և անոնցմէ ետքը Սիսաքի Թագաւորը պիտի խմէ։ 27—Ու անոնց ըսես, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Խմեցէք, ու գինովցէք ու փսխեցէք, և ձեր ևս ղրկելու սուրիս երեսէն ինկէք ու մի ելլէք, 28—Ու եթէ գաւաթը քու ձեռքէդ առնել չուզեն խմելու համար, այն ատեն անոնց ըսես. Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Անշուշտ պիտի խմէք. 29—Քանզի ահա ես իմ անունով կոչուած քաղաքին վրայ չարիք բերելու սկսայ. միթէ դուք անպատիժ պիտի մնաք. անպատիժ պիտի չմնաք, քանզի երկրի բոլոր բնակիչներուն վրայ սուր պիտի կանչեմ, կ'ըսէ զօրաց Տէրը։

30—Ուստի դուն այս բոլոր խօսքերը անոնց մարգարէանալով՝ անոնց ըսես, Տէրը բարձրէն պիտի գոռայ, Ու իր սուրբ բնակութենէն իր ձայնը պիտի տայ. Իր բնակարանին վրայ ահարկու ձայնով պիտի գոռայ, Խաղողի կոխողներուն պէս երկրի բոլոր բնակիչներուն պատասխան պիտի տայ. 31—Ահ որ բարձր ձայնը մինչև երկրի ծայրերը պիտի հասնի, Վասն զի Տէրը ազգերուն հետ դատաստան ունի. Անիկա ամէն մարմնի հետ դատ պիտի վարէ, Ու ամբարիշտները սուրի պիտի տայ, կ'ըսէ Տէրը։

*կամ, ծովեզերեայ երկիրներու
†կամ, Զեմիանացւոց

32—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա չարիք պիտի ելլէ ազգէ ազգի հետէ ու մեծ սրբեկ պիտի ելլէ։
33—Ու այն օրը Տէրոջմէ սպաննուածները երկրի մէկ ծայրէն մինչև երկրի միւս ծայրը պիտի ըլլան. Անոնց համար սուգ պիտի չընուի, Անոնք պիտի չհաւաքուին ու պիտի չթաղուին, Երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան։
34—Ողբացէք, ով հովիւներ, ու աղաղակեցէք. Ու հրէէրէ հէլ Թաւալեցէք, ով հօտին քնարիները. Վասն զի ձեր մորթուելու և ցիրուցան ըլլալու օրերը լրացած են, Ու պատուական ամանի պէս պիտի խնաք։
35—Ու հովիւներուն փախչելու ճամբան Ու հօտին ընտիրներուն ազատուելու միջոց պիտի կորուի։
36—Հովիւներուն ազաղակին ձայնը Ու հօտին ընտիրներուն ոռնալուն ձայնը կայ, Վասն զի Տէրը անոնց արօտները կործանեց։
37—Ու Տէրոջը սաստիկ բարկութենէն Խաղաղութեան բնակարանները ամայութեան դարձան։
38—Առիւծի պէս իր բնակարանը թողուց, Քանզի †բռնաւորին բարկութենէն Ու անոր սաստիկ սրումնութենէն երեսէն Անոնց երկիրը ամայի եղաւ։

Գլ. Իզ

Ցուդայի Թագաւորին, Յովսիայի որդւոյն Յովակիմի, Թագաւորութեանը սկիզբը Տէրոջը կողմանէ այս խօսքը եղաւ՝ ըսելով, 2—Տէրը այսպէս կ'ըսէ. Տէրոջը տանը գաւիթին մէջ կայնէ, ու Տէրոջը

*կամ, բռնաւոր սուրին

տունը երկրպագութիւն ընելու եկող Յուդայի բոլոր քաղաքներուն խօսք այն ամէն խօսքերը զորոնք ես պատուիրեցի անոնց խօսելու համար. խօսք մը եւս մի ձգեր. 3—Թերեւս մարդ ընեն, ու ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ. ես ալ զղջամ այն չարիքին համար զոր անոնց չար գործերուն պատճառաւ իրենց վրայ բերել կը խորհիմ. 4—Ու անոնց ըսես, Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ ինծի մարդ չընելով, ձեր առջեւ գրած օրէնքիս մէջ չգալէք 5—Ու ձեզի ղրկած ծառաներուս, մարգարէներուն, խօսքերը մարդ չընելով, զորոնք կանուխ եւ յետոյ կը ղրկեի, ու դուք մարդ չըրիք. 6—Այն ատեն այս տունը Սիլովի պէս պիտի ընեմ, և այս քաղաքը երկրի բոլոր ազգերուն անէծք պիտի ընեմ։

7—Ու քահանաները և մարգարէները ու բոլոր Ժողովուրդը լսեցին, երբ Երեմիա Տէրոջը տանը մէջ այս խօսքերը կը խօսէր։ 8—Ու երբ Երեմիա լմնցուց այն բոլոր Եւ՚երէը զրուցելը՝ զորոնք Տէրը հրամայեր էր բոլոր Ժողովուրդին խօսել, քահանաները ու մարգարէները ու բոլոր Ժողովրդը զանիկա բռնեցին ու ըսին, Դուն անպատճառ պիտի մեռնիս. 9—Ինչո՞ւ համար Տէրոջը անունովը մարգարէութիւն ըրիր՝ ըսելով, Այս տունը Սիլովի պէս պիտի ըլլայ, ու այս քաղաքը աւերակ պիտի ըլլայ և հոն բնակիչ պիտի չըլլայ. ու բոլոր Ժողովուրդը Տէրոջը տանը մէջ Երեմիայի վրայ Ժողովեցաւ։

10—Ու երբ Յուդայի իշխանները այս բաները լսեցին, թագաւորին տունէն Տէրոջը տունը եկան, և Տէրոջը դռնը նոր դրանը մուտքը նստան. 11—Ու քահանաները և մարգարէները իշխաններուն ու բոլոր Ժողովուրդին խօսեցան ու ըսին, Այս մարդը մեռնելու արժանի է, քանզի այս քաղաքին դէմ մարգարէութիւն ըրաւ, ինչպէս դուք ձեր ականջներով լսեցիք։

12—Ու Երեմիա բոլոր իշխաններուն ու բոլոր Ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ, Տէրը զիս ղրկեց որ այս տունը ու այս քաղաքին վրայով ձեր լսած բոլոր խօսքերը զգուշացնէ՝ մարգարէութիւն ընեմ։ 13—Ու հիմա ձեր ճամբաները ու գործերը ուղղեցէք, ու ձեր Տէր Աստուծոյն ձայնը մտիկ ըրէք, և Տէրը ձեր վրայով լսած չարիքին համար պիտի զղջայ։ 14—Բայց ես ահա ձեր ձեռքն եմ. ձեր աչքին ազէկ ու չիսկ երեւցածը ըրէք ինծի. 15—Սակայն ազէկ գիտցէք որ եթէ զիս մեռցնէք, ձեր վրայ ու այս քաղաքին վրայ և անոր բնակիչներուն վրայ անշուշտ անմեղ արեան դատ պիտի բերէք. վասն զի Յ՚ղարկած է Տէրը զիս ձեզի զրկեց, որպէս զի այս բոլոր խօսքերը ձեր ականջներուն զրուցեմ։

16—Ան ատեն իշխանները ու բոլոր Ժողովուրդը քահանաներուն ու մարգարէներուն ըսին, Այս մարդը մեռնելու արժանի չէ, վասն զի մեր Տէր Աստուծոյն անունովը մեզի խօսեր է։ 17—Ու երկրին Ծերերէն քանի մը մարդիկ ելան, և Ժողովուրդին բոլոր Ժողովին խօսեցան՝ ըսելով, 18—Յուդայի Եզեկիա Թագաւորին օրերը Մօրաւացի Միքիա մարգարէութիւն ըրաւ. և բոլոր Յուդայի Ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Սիօն ագարակի պէս պիտի հերկուի, ու Երուսաղէմ աւերակներու դիզուի, ու Տէրոջը տանը լեռը անտառի բարձր տեղերու պէս պիտի ըլլայ։

19—Միթէ Յուդայի Եզեկիա Թագաւորը ու բոլոր Յուդա զանիկա մեռցուցի՞ն. չէ՞ որ անիկա Տէրոջմէ վախնալով՝ Տէրոջը աղօթք ըրաւ, և Տէրը անոնց վրայով բաած չարիքին համար զղջաց. ու մենք մեծ չարիք մը ըրած կ'ըլլանք մեր անձերուն։

20—Ու նաև կարիաթարիմէ Սեմայիայի որդին Ուրիա անունով մարդ մը կար, որ Տէրոջը անունով մարգարէութիւն կ'ընէր. և անիկա այս քաղաքին վրայ ու այս երկրին վրայ նեմիայի բոլոր խօսքերուն պէս մարգարէացաւ։ 21—Ու երբ Յոյակիմ Թագաւորը ու անոր բոլոր զօրաւոր մարդիկը ու բոլոր իշխանները անոր խօսքերը լսեցին, Թագաւորը ուզեց որ զանիկա մեռցնէ. բայց Ուրիա այս բանը լսելով՝ վախցաւ ու փախաւ Եգիպտոս գնաց։ 22—Ու Յոյակիմ Թագաւորը մարդիկ ղրկեց Եգիպտոս, Ակբորի որդին Եղնաթանը ու անոր հետ քանի մը մարդիկ դրկեց Եգիպտոս, 23—

Ու անոնք Ուրիան Եգիպտոսէ հանեցին, ու զանիկա Յոյակիմ Թագաւորին բերին. ան ալ զանիկա սրով զարկաւ, ու անոր մարմինը Ժողովուրդին որդիներուն գերեզմանները նետեց։ 24—Բայց Սափանի որդւոյ ան Աքիկամի ձեռքը Երեմիայի հետ էր, որ չըլլայ թէ անիկա Ժողովուրդին ձեռքը մատնուելով՝ մեռցուի։

Գլ. ԻԶ

Յուդայի Թագաւորին Յոսիայի որդւոյն *Սեդեկիայի Թագաւորութեան սկիզբը Տէրոջը կողմանէ Երեմիայի այս խօսքը եղաւ՝ ըսելով, Տէրը ինծի այսպէս ըսաւ. 2—Քեզի կապեր ու լուծեր չինէ, ու զանոնք պարանոցիդ վրայ դիր. 3—Ու զանոնք Երուսաղէմ Յուդայի Սեդեկիա Թագաւորին եկող դեսպաններուն ձեռքով Եգովմի Թագաւորին, ու Մոաբի Թագաւորին, ու Ամմոնի որդիներուն Թագաւորին, և Տիւրոսի Թագաւորին ու Սիդոնի Թագաւորին ղրկէ. 4—Ու անոնց պատուիրէ ըսելով, Ձեր տիրուհիներուն համար ու ըսէք, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ձեր տէրերուն այսպէս ըսէք. 5—Ես իմ մեծ զօրութիւնովս ու երկնցած բազուկովս երկիրը, մարդը ու երկրի երեսին վրայ եղող անասուններուն ստեղծեցի, և զանիկա կու տամ որու որ իմ աչքիս ուղիղ համայ կ'երեւնայ ինծի։ 6—Ու հիմա այս բոլոր երկիրները ես իմ ծառային, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին, ձեռքը կու տամ, ու դաշտի գազաններն ալ անոր կու տամ, որպէս զի անոր ծառայութիւն ընեն։ 7—Ու բոլոր ազգերը ծառայութիւն պիտի ընեն անոր ու անոր որդւոյն ու անոր որդիին որդւոյն, մինչև անոր երկրին ժամանակն ալ հասնի, ու զանիկա ալ շատ ազգեր ու մեծ Թագաւորներ իրենց ծառայ ընեն։ 8—Ու այն ազգը կամ Թագաւորութիւնը որ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ծառայութիւն չընէր, ու իր պարանոցը Բաբելոնի Թագաւորին լուծին տակ չդնէր, այն ազգին սրով, սովով ու ժանտախտով այցելութիւն պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը, մինչև զանոնք անոր ձեռքով չսատկեցնեմ։

9—Ու դուք մտիկ մի ընէք ձեր մարգարէներուն, բազդ նայողներուն, երազահաններուն, գուշակողներուն ու կախարդներուն, որոնք ձեզի կը խօսին՝ ըսելով, Բաբելոնի Թագաւորին ծառայ պիտի չըլլաք. 10—Քանզի անոնք ձեզի սուտ մարգարէութիւն կ'ընեն, որպէս զի ձեր երկրին վրայէն ձեզ հեռացնեն, ու ես ձեզ վռնտեմ ու կորսուիք։ 11—Բայց իր պարանոցը Բաբելոնի Թագաւորին լուծին տակ դնող և անոր ծառայութիւն ընող ազգը անշուշտ իր երկրին վրայ հանգիստ պիտի Թողում, կ'ըսէ Տէրը, ու պիտի մշակէ զանիկա, ու անոր մէջ պիտի բնակի։

12—Ծուդայի Սեդեկիա Թագաւորին ալ այս բոլոր խօսքերուն համեմատ զրուցեցի ու ըսի, Ձեր պարանոցը Բաբելոնի Թագաւորին լուծին տակ դրէք, և անոր ու անոր Ժողովուրդին ծառայութիւն ընող ազգը անշուշտ իր երկրին վրայ հանգիստ պիտի Թողում, կ'ըսէ Տէրը, ու պիտի մշակէ զանիկա, ու անոր մէջ պիտի բնակի։

13—Ինչո՞ւ համար դուն ու քու Ժողովուրդդ սրով, սովով ու ժանտախտով մեռնիք, ինչպէս Տէրը Բաբելոնի Թագաւորին ծառայութիւն չընող ազգին համար խօսեցաւ։ 14—Ու դուք մտիկ մի ընէք այն մարգարէներուն խօսքերը, որոնք ձեզի կը խօսին՝ ըսելով, Բաբելոնի Թագաւորին ծառայ պիտի չըլլաք, վասն զի անոնք ձեզի սուտ մարգարէութիւն կ'ընեն. 15—Քանզի ես զանոնք չղրկեցի, կ'ըսէ Տէրը, հապա անոնք իմ անունովս սուտ մարգարէութիւն կ'ընեն, որպէս զի ես ձեզ վռնտեմ, և դուք ու ձեզի մարգարէութիւն ընող մարգարէները կորսուիք։

16—Ու ես քահանաներուն և այս բոլոր Ժողովուրդին զրուցեցի ու ըսի, Տէրը այսպէս կ'ըսէ. Ձեր մարգարէներուն խօսքերը մտիկ մի ընէք, որոնք ձեզի մարգարէութիւն կ'ընեն՝ ըսելով, Ահա Տէրոջը տանը անօթները յօտեւս Բաբելոնէ կու պիտի բերուին. քանզի անոնք սուտ մարգարէութիւն կ'ընեն ձեզի։ 17—Անոնց մտիկ մի ընէք. Բաբելոնի Թագաւորին ծառայեցէք, որպէս զի ապրիք. ինչո՞ւ այս քաղաքը

*Եբրայերէն օքիւնէբուռ հէֆ հաւը այս տեղ Յոյակիմի առնէ. Բայց տես հմմ. 3, 12, 20։ Գլ. իը. 1։

աւերակ ըլլայ։ **18**—Բայց եթէ անոնք մարգարէներ են ու եթէ անոնց քով Տէրոջը խօսքը կայ, թող հիմա զօրաց Տէրոջը աղօթք ընեն, որպէս զի Տէրոջը տունը մէջ և Յուդայի թագաւորին տունը մէջ ու Երուսաղէմի մէջ մնացած անօթները Բաբելոն չերթան։ **19**—Վասն զի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ սիւներուն ու ծովին և սկիներուն ու այս քաղաքին մէջ մնացած անօթներուն վրայով, **20**—Զորոնք Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը չառաւ, երբ Յուդայի թագաւորը Յոյակիմի որդին Եկոնիան, և Յուդայի ու Երուսաղէմի բոլոր ազնւականները Երուսաղէմէ Բաբելոն գերի տարաւ։ **21**—Ճիւաւել զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ Տէրոջը տունը մէջ և Յուդայի թագաւորին տանը մէջ ու Երուսաղէմի մէջ մնացած անօթներուն համար։ **22**—Անոնք Բաբելոն պիտի տարուին, և հոն պիտի մնան մինչև այն օրը՝ որ անոնց այցելութիւն ընեմ, կ'ըսէ Տէրը։ Եւթը զանոնք պիտի հանեմ ու այս տեղ պիտի դարձնեմ։

Գլ. ԻԸ

Ու եղաւ որ նոյն տարին Յուդայի թագաւորին Սեդեկիայի թագաւորութեան սկիզբը, չորրորդ տարւոյն հինգերորդ ամիսը, Գաբաւոնի եղող Ազուրի որդին Անանիա մարգարէն Տէրոջը տանը մէջ քահանաներուն ու բոլոր ժողովուրդին առջև խօսեցաւ ու ըսաւ, **2**-Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կը խօսի ու կ'ըսէ, Բաբելոնի թագաւորին լուծը կոտրեցի։ **3**—Մինչև երկու տարի, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին այս տեղէն առած ու Բաբելոն տարած Տէրոջը տանը բոլոր անօթները այս տեղ պիտի դարձնեմ։ **4**—Ու Յուդայի թագաւորը Յոյակիմի որդին Եկոնիան, ու Բաբելոն գացած բոլոր գերիները այս տեղ պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը, վասն զի Բաբելոնի թագաւորին լուծը պիտի կոտրեմ։

5—Ու երեմիա մարգարէն, Տէրոջը տանը մէջ կայնող քահանաներուն ու բոլոր ժողովուրդին աչքին առջև Անանիա մարգարէին խօսեցաւ։ **6**—Ու երեմիա մարգարէն ըսաւ, Ամէն. Տէրը այնպէս ընէ. Տէրը քու մարգարէացած խօսքերդ հաստատէ, ու Տէրոջը տանը անօթները ու բոլոր գերիները Բաբելոնէ այս տեղ դարձնէ։ **7**—Բայց հիմա քու ականջներուդ և բոլոր ժողովուրդին ականջներուն այս իմ ըսելու խօսքս մխիթ ըրէ։ **8**—Ինծմէ առաջ ու քեզմէ առաջ, սկիզբէն ի վեր եղող մարգարէները չաս երկիրներու դէմ ու մեծ թագաւորութիւններու դէմ պատերազմի, չարիքի ու ժանտախտի վրայով մարգարէացան։ **9**—Երբ մարգարէ մը խաղաղութիւն կը մարգարէանայ, ու այն մարգարէին խօսքը կը կատարուի, այն ատեն կը հասկցուի որ անիկա Տէրոջմէ զրկուած մարգարէ մըն է։

10—Այն ատեն Անանիա մարգարէն երեմիա մարգարէին պարանոցէն լուծը առաւ, ու զանիկա կոտրեց։ **11**—Ու Անանիա բոլոր ժողովուրդին աչքին առջև խօսեցաւ ու ըսաւ, Տէրը այսպէս կ'ըսէ. Մինչև երկու տարի, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին լուծը ամէն ազգերուն պարանոցին վրայէն այսպէս պիտի կոտրեմ։ ու երեմիա մարգարէն իր ճամբան գնաց։

12—Ու Անանիա մարգարէին՝ երեմիա մարգարէին պարանոցին վրայէն լուծը կոտրելէն ետքը, Տէրոջը խօսքը երեմիայի եղաւ՝ ըսելով, **13**—Գնա Անանիայի խօսք ու ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Դուն փայտէ լուծերը կոտրեցիր, սակայն անոնց տեղ երկաթէ լուծեր պիտի չինես։ **14**—Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Այս բոլոր ազգերուն պարանոցին վրայ երկաթէ լուծ դրի, որպէս զի Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ծառայութիւն ընեն, և անոր պիտի ծառայեն. դաշտի գազաններն ալ անոր տուի։

15—Ու երեմիա մարգարէն Անանիա մարգարէին ըսաւ, Լիմա լսէ, ով Անանիա, Տէրը քեզ զրկած չէ, ու դուն այս ժողովուրդը առաւելեան յուսացուցիր։ **16**—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզ երկրի երեսին վռնտելն պիտի վռնտեմ. դուն այս տարի պիտի մեռնիս, վասն զի Տէրոջը դէմ ապստամբութիւն խօսեցար։ **17**—Ու Անանիա այն տարւոյն եօթներորդ ամսոյն մէջ մեռաւ։

Գլ. ԼԹ

Ասոնք են այն նամակին խօսքերը, զորոնք երեմիա մարգարէն Երուսաղէմէ զրկեց գերիներէն մնացած ծերերուն, քահանաներուն և մարգարէներուն ու բոլոր ժողովուրդին, զորոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէ Բաբելոն գերի էր։ **2**—Ճեքոնիա թագաւորին և թագուհիին ու պալատականներուն, Յուդայի ու Երուսաղէմի իշխաններուն ու հիւսերուն և դարբիններուն Երուսաղէմէ ելլելէն ետքը, **3**—Սափանի որդւոյն Եղեասայի ու Քէղկիայի որդւոյն Գամարիայի ձեռքով, (զորոնք Յուդայի թագաւորը Սեդեկիա Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին Բաբելոն զրկեր էր) ըսելով,

4—Այսպէս կ'ըսէ զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, բոլոր գերիներուդ, որոնք Երուսաղէմէ Բաբելոն գլխով տուեր եմ. **5**—Տուներ չինեցէք ու բնակեցէք, պարտէզներ անկեցէք ու անոնց պտուղը կերէք, **6**—կիներ առէք և տղաքներ ու աղիկներ ունեցէք, ու ձեր տղոցը կիներ առէք, և ձեր աղիկները այրերու տուէք, որպէս զի տղաքներ ու աղիկներ ծնանին, և հոն բազմացէք ու չքչնաք։ **7**—Ու այն քաղաքին խաղաղութիւնը փնտռեցէք, ուր ձեզ գլխով տուեր եմ, և անոր համար Տէրոջը աղօթք ըրէք, վասն զի անոր խաղաղութիւնովը ձեզի խաղաղութիւն կ'ըլլայ։ **8**—Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ձեր մէջ եղող ձեր մարգարէները ու ձեր բաղդատողները ձեզ չխաբեն, և ձեր տեսնելու տուած երազներուն մտիկ մի ընէք, **9**—վասն զի անոնք իմ անունովս սուտ մարգարէութիւններ կ'ընեն ձեզի. զանոնք ես չղրկեցի, կ'ըսէ Տէրը։ **10**—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ. Երբ Բաբելոնի եօթանասուն տարին լմննայ, ձեզի այցելութիւն պիտի ընեմ, և ձեզ այս տեղ դարձնելով՝ իմ բարի խոստմունքս ձեր վրայ պիտի կատարեմ։ **11**—Քանզի

պիտի մեռնիս, վասն զի Տէրոջը դէմ ապստամբութիւն խօսեցար։ **17**—Եւ Անանիա մարգարէն այն տարւոյն եօթներորդ ամսոյն մէջ մեռաւ։

Գլ. Լ

Ասոնք են այն բանը որ Տէրոջմէ երեմիա մարգարէին եղաւ՝ ըսելով, **2**—Այսպէս կ'ըսէ զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, ըսելով, Գիրք մը գրէ քեզի համար ամէն խօսքերուս համեմատ որ քեզի ըսի։ **3**—Վասն զի ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, որ ես զերեզմանեալ ժողովուրդս Իսրայէլ և Յուդա կը դարձնեմ, կ'ըսէ Տէրը, և զանոնք նորէն այն երկիրը կը դարձնեմ՝ զոր իրենց հարցն տուի, և անոնք զայն պիտի ժառանգեն։

4—Ասոնք են այն խօսքերը որ Տէրը Իսրայէլի և Յուդայի համար խօսեցաւ։ **5**—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ. Դողութեան ձայն մը լսեցինք, սարսափ կայ ու խաղաղութիւն չկայ։ **6**—Հարցուցէք ու տեսէք թէ արու մը ծնանելու ցաւ կը քաշէ՞։ Ինչո՞ւ համար տեսայ որ ամէն մարդու ձեռքը իր մէջքին վրայ դրած է ինչպէս ծնանելու ցաւ քաշող կնոջ մը, և ամէն երեսներ դեղնցած են։ **7**—Վա՜յ, վասն զի այդ օրը մեծ է, անոր նմանը չկայ, և Յակոբի նեղութեան ժամանակն է, բայց անկէ պիտի ազատի։ **8**—Զօրաց Տէրը կ'ըսէ, այդ օրը պիտի ըլլայ որ անոնց պարանոցէն քու լուծդ պիտի կոտրեմ, ու քու կապերդ պիտի պատռեմ, և օտարներ անոր պիտի չծառայեն։ **9**—Հապա Տէրոջը՝ իրենց Աստուածին և իրենց համար յարուցանելիք թագաւորին պիտի ծառայեն, զոր Դաւիթի համար պիտի յարուցանեմ։ **10**—Ուստի դուն, ով իմ ծառաս Յակոբ, մի՛ վախնար, կ'ըսէ Տէրը, ու Իսրայէլ, մի՛ զարհուրիր, վասն զի ահա ես քեզ հեռուներէն պիտի ազատեմ, և քու սերունդդ գերութեան երկրէն. Յակոբ պիտի դառնայ ու հանգիստ ու խաղաղ պիտի ըլլայ, և ոչ ոք պիտի զանոնք վախցնէ։ **11**—Վասն զի քեզի հետ եմ, կ'ըսէ Տէրը, քեզ պիտի փրկեմ։ Ես բոլոր ազգերուն մէջ որ քեզ ցրուեր եմ, զանոնք պիտի վերջացնեմ, բայց քեզ չեմ վերջացներ, հապա քեզ խրատով պիտի խրատեմ, և անպատիժ չեմ թողուր քեզ։ **12**—Վասն զի Տէրոջը խօսքն է. Քու վէրքդ անդարմանելի է, և քու հարուածդ ծանր է։ **13**—Քու դատաստանդ ընողը չկայ, որ կապուածդ կապէ, և դուն բժշկութիւն չունիս։ **14**—Քու բոլոր սիրեցեալներդ քեզ մոռցան, քեզ չեն փնտռեր, վասն զի քու մեծ անօրէնութեանդ համեմատ, և քու շատ մեղքերուդ համար զարկի պէս զարկի քեզ զարկի, դաժան պատիժի պէս պատժեցի քեզ։ **15**—Ինչո՞ւ կ'աղաղակես քու վէրքիդ համար, որ անդարմանելի է քու մեծ անօրէնութեանդ համար, որ շատ են քու մեղքերդ, քեզ ըրի։ **16**—Ուստի բոլոր անոնք որ քեզ կ'ուտեն՝ պիտի ուտուին, և քու բոլոր հակառակորդներդ՝ ամէնքն ալ պիտի գերի երթան, և քեզ կողոպտողները կողոպտուած պիտի ըլլան, և քեզ կողոպտելու ամէն մարդ կողոպտուելու պիտի մատնեմ։ **17**—Վասն զի քեզի առողջութիւն պիտի տամ, և քու վէրքերդ պիտի բժշկեմ, կ'ըսէ Տէրը, վասն զի քեզ Հեռացեալ անուանեցին ըսելով, Սիոն է, որուն համար ոչ ոք կը հոգայ։ **18**—Այսպէս կ'ըսէ Տէրը, Ահա ես Յակոբի վրաններուն գերութիւնը պիտի դարձնեմ, և անոր բնակարաններուն պիտի ողորմիմ, և քաղաքը իր աւերակին վրայ պիտի շինուի, և պալատը իր տեղին վրայ պիտի կենայ։ **19**—Ու անոնցմէ պիտի ելլէ գոհութեան ձայն ու խաղացողներուն ձայն, և զանոնք պիտի շատցնեմ ու չպակսին, պատիւ պիտի տամ ու չանարգուին։ **20**—Անոնց որդիները առաջուան պէս պիտի ըլլան, և անոնց ժողովը իմ առջևս պիտի հաստատուի, և անոնց բոլոր հարստահարողները պիտի պատժեմ։ **21**—Անոնց իշխանը անոնցմէ պիտի ելլէ, և անոնց տիրակալը անոնց միջէն պիտի դուրս գայ, և զանիկա մօտեցնեմ, և անիկա ինծի պիտի մօտենայ, վասն զի ո՞վ է որ իր սիրտը ինծի մօտենալու պատրաստէ, կ'ըսէ Տէրը։ **22**—Ու դուք ինծի պիտի ըլլաք ժողովուրդ, և ես ձեզի պիտի ըլլամ Աստուած։ **23**—Ահա Տէրոջը փոթորիկը՝ զայրոյթով ելաւ, սաստիկ փոթորիկ մը պիտի պտտի չարագործներուն գլխուն վրայ։ **24**—Տէրոջը բարկութիւնը պիտի չդառնայ մինչև որ գործած ու կատարած ըլլայ իր սրտին խորհուրդները. վերջին օրերը պիտի հասկնաք զայն։

---

*ՆԲԲ. վախճան և յոյս

նոսը Թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանոնք ձեր աչքերուն առջեւ պիտի զարնէ. 22—նե Բաբելոն եղող Յուդայի բոլոր գերիներուն մէջէ՝ անոնց դ-ո-ռ-հ-ա-ն անէծք պիտի առնուի՝ ըսելով, Տէրը քեզ Բաբելոնի Թագաւորին կրակի մէջ խորհած Սեդեկիային ու Աքաաբի պէս ընէ։ 23—Վասն զի իսրայէլի մէջ անզգամութիւն գործեցին, և իրենց ընկերներուն կիներուն հետ շնութիւն ըրին, ու իմ անունովս սուտ խօսքեր խօսեցան, զորոնք ես անոնց չհրամայեցի. բայց ես գիտեմ ու վկայ եմ, կ'ըսէ Տէրը։

24—Ու Նեհեղամացի Սեմայիայի խօսեա ու ըսեա, 25—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կը խօսի ու կ'ըսէ. Որովհետեւ դուն Երուսաղէմ եղող բոլոր ժողովուրդին, և Մաասիայի որդւոյն Սոփոնիա քահանային ու բոլոր քահանաներուն քու անունովդ Թուղթեր ղրկեցիր՝ ըսելով, 26-Տէրը քեզ Յոյիադա քահանային տեղ քահանայ դրաւ, որպէս զի Տէրոջը տանը վերակացու ըլլաս, ու ամէն խելացնոր մարդ, որ զինք մարգարէ կը ձեւացնէ, կոշղը ու երկաթը դնես, 27—ու հիմա ինչո՞ւ համար ձեզի *մարգարէութիւն ընող Անաթոթացի Երեմիան չյանդիմանեցիր. 28—վասն զի անիկա մեզի այսպես նամակ ղրկեց Բաբելոն ու բաւ, Այս գ-ե-ր-ի-ն-ը պիտի երկնայ. տուներ չինեցէք ու բնակեցէք, պարտէզներ անկեցէք և անոնց պտուղը կերէք. 29—Ու Սոփոնիա քահանան այս Թուղթը երեմիա մարգարէին ականջներուն կարդաց։

30—Ու Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ ըսելով, 31—Բոլոր գերիներուն լաւ ղրկէ ու ըսէ, Նեհեղամացի Սեմայիայի համար Տէրը այսպէս կ'ըսէ. Որովհետեւ Սեմայիա ձեզի մարգարէութիւն բրաւ, թէպէտեւ զանիկա ես չղրկեցի, ու ձեզ սուտ յուսացուց, 32—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես Նեհեղամացի Սեմայիան ու անոր սերունդին այցելութիւն պիտի բնեմ. այս ժողովուրդին մէջ բնակող անոր մէկ մարդը պիտի չլինայ, և իմ ժողովուրդիս ընելու բարիքս անիկա պիտի չտեսնէ, կ'ըսէ Տէրը, վասն զի Տէրոջը դէմ ապստամբութիւն խօսեցաւ։

*կամ, զինքը մարգարէ ձեւացնող

Գլ. Լ

Տէրոջը կողմանէ Երեմիայի եղած խօսքն է՝ զոր բաւ, 2—Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կը խօսի ու կ'ըսէ, Բոլոր քեզի ըսած խօսքերս գիրքի մը մէջ գրէ. 3—Քանզի ահա օրեր կուգան, կ'ըսէ Տէրը, որ իմ ժողովուրդիս Իսրայէլի և Յուդայի գերութիւնը պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը, ու զանոնք իրենց հայրերուն տուած երկիրը պիտի դարձնեմ, ու զանիկա պիտի ժառանգեն։

4—Եւ Իսրայէլի համար ու Յուդայի համար Տէրոջը ըսած խօսքերը սոսկ են. 5—Տէրը այսպէս կ'ըսէ.

Սոսկալի ձայն լսեցինք,
վախ կայ ու խաղաղութիւն չկայ.
6—Հիմա հարցուցէք ու տեսէք,
թէ արդեօք այր մարդը զաւակ կը ծնանի՞.
ինչո՞ւ համար ամէն կորմնը
ցնդեցական կնոջ պէս ձեռքերը մէջքը դ-ր-ե-ր,
ու բոլոր երեսները դեղնած կը տեսնեմ։
7—Վա՜յ, քանզի անիկա մեծ օր է, ասոր պէս չկայ.
Ու անիկա Յակոբի նեղութեան ժամանակ պիտի ըլլայ,
Բայց անկէ պիտի ազատի.
8—Վասն զի այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Անոր լուծը քու պարանոցէդ պիտի կոտրեմ,
Եւ քու կապերդ պիտի փրցնեմ,
Ու զանիկա մէկզմէկ ալ օտարները պիտի չծառայեցնեն.
9—Հապա անոնք իրենց Տէր Աստուծոյն
Ու իրենց Դաւիթ Թագաւորին ծառայութիւն պիտի բնեն,
Զոր ես պիտի հանեմ անոնց։
10—Բայց դուն, ով իմ ծառաս Յակոբ,
Մի վախնար, կ'ըսէ Տէրը,
Ու, ով Իսրայէլ, մի զարհուրիր.
Քանզի ահա ես քեզ հեռուէն,
Եւ քու սերունդդ իրենց գերութեանը երկրէն պիտի ազատեմ.
Ու Յակոբ պիտի դառնայ և հանդարտ ու հանգիստ պիտի ըլլայ,

Եւ ջնջիլ՝ վախցնող պիտի չըլլայ։
11—Վասն զի ես քեզ ազատելու համար քեզի հետ եմ, կ'ըսէ Տէրը.
Քանզի պիտի ազատեմ այն բոլոր ազգերը
Որոնց մէջ քեզ ցրուեցի.
Բայց քեզ պիտի չազատեմ,
Հապա քեզ չափաւորութեամբ պիտի խրատեմ,
Ու քեզ բոլորովին անպէտ պիտի չհանեմ.
12—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
Քու հարուածդ անբժշկելի է ու վէրքդ անդարմանելի է.
13—Զ-ն-ի-լ- պատելու համար քու դատաստանդ անեղող մը չկայ.
Բեղի համար դեղ — ապգամի չկայ։
14—Քու բոլոր հոմանիներդ քեզ մոռցան.
Քեզ չեն փնտռեր.
Վասն զի քեզ թշնամիի հարուածով,
Անգութ մէկուն պատիժովը, զարկի
Քու անօրէնութիւններուդ չատութեանը համար,
Քու մեղքերդ չատցան։
15—Քու բնկճանդ համար ինչո՞ւ կ'աղաղակես.
Քու ցաւդ անբժշկելի է.
Այս բաները քու անօրէնութիւններուդ չատութեանը համար քեզի ըրի,
Քանզի քու մեղքերդ չատցան։
16—Անոր համար ամէն անոնք որ քեզ կը կլլեն, պիտի կլլուին,
Ու քու բոլոր թշնամիներդ գերութեան պիտի երթան,
Ու քեզ յափշտակողները պիտի յափշտակուին.
Ու քեզ կողոպտողներուն ամէնը կողոպտուելու պիտի մատնեմ.
17—Վասն զի քու վէրքդ պիտի պատեմ,
Ու քեզ քու վէրքերէդ պիտի բժշկեմ,
կ'ըսէ Տէրը,
Քանզի քեզի Ա-ք-ս-ո-ւ-ա-ծ կանչեցին,
Այս այն Սիոնն է, զոր փնտռող չկայ,
ը-ն-ի-ն։
18—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես Յակոբի վրանները գերութիւնը պիտի դարձնեմ,
Ու անոր բնակարաններուն ողորմութիւն պիտի ընեմ.
Ու քաղաքը իր աւերակներուն վրայ պիտի չինուի,
Ու պալատը *տ-ա-ճ-ո-ւ-ա-ն պէս՝ պիտի կանգնուի,
19—Ու անոնցմէ պիտի ելլէ գոհութիւն
Ու ուրախութիւն ընդունելու ձայն.
Ու զանոնք պիտի չատցնեմ ու պիտի չքչնանան,
Ու զանոնք պիտի փառաւորեմ, ու պզտիկ պիտի չըլլան։
20—Ու անոնց ազգքները առաջուան պէս պիտի ըլլան,
Անոնց ժողովը իմ առջեւս պիտի հաստատուի,
Ու բոլոր անոնց նեղութիւն տուղներուն այցելութիւն պիտի բնեմ,
21—Ու անոնց իշխանը իրենցմէ պիտի ըլլայ,
Ու անոնց վրայ տէրտէրը իրենց մէջէն պիտի ելլէ,
Ու զանիկա պիտի մօտեցնեմ, ու ինծի մօտ պիտի ըլլայ.
Վասն զի ո՞վ է անիկա որ իր սիրտը պատրաստեց ինծի մօտենալու,
կ'ըսէ Տէրը.
22-Ու դուք ինծի ժողովրդ պիտի ըլլաք,
Ես ալ ձեզի Աստուած պիտի ըլլամ։
23—Ահա Տէրոջը մրրիկը սրտմտութեամբ ելաւ.
Անիկա ուռղ մրրիկ է,
Ամբարիշտներուն գլխուն վրայ պիտի յարձակի։
24—Տէրոջը սաստիկ բարկութիւնը հոս պիտի չդադարէ,
Մինչեւ որ իր սրտին խորհուրդները չկատարէ ու ի գործ չդնէ.
Վերջին օրերը ասիկա պիտի հասկնաք։

Գլ. ԼԱ

Ա-յն ատեն, կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի բոլոր ազգաւորութիւններուն Աստուած պիտի ըլլամ,
Ու անոնք ինծի ժողովրդ պիտի ըլլան։
2—Տէրը այսպէս կ'ըսէ.
Սուրէն փախած ժողովրդը անապատին մէջ շնորհք գտաւ,
Երբ †կ'երթար Իսրայէլ հանգստութիւն գտնելու՝.

*Եբր. իր սովորութեանը պէս
†կամ, կ'երթայր Իսրայէլի հանգստութիւն տալու

3-Տէրը չատոնցմէ ինծի երեւցաւ՝ ըսելո՛վ,
Քեզ յաւիտենական սիրով սիրեցի.
Անոր համար *ողորմութեամբ քեզ քա-
շեցի՛.
4—Քեզ նորէն պիտի չինեմ, ու պիտի
չինուիս, ով Իսրայէլի կոյսը,
Նորէն քու թմբուկներովդ պիտի զար-
դարուիս,
Ու ցնծութեամբ պար բռնողներուն
խումբին հետ պիտի ելլես.
5—Նորէն Սամարիայի լեռներուն վրայ
այգիներ պիտի տնկես.
Տնկողները պիտի տնկեն ու անոնց պը-
տուղը պիտի ուտեն.
6—Վասն զի օր պիտի գայ որ
Եփրեմի լեռանը վրայ պահապանները
պիտի կանչեն,
Ելէք, ու մեր Տէր Աստուծոյն դէպ ի
Սիոն ելլենք.
7—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ.
Յակոբի համար ուրախութեամբ երգե-
ցէք,
Ու աղգերուն գլուխին †համար ցնծա-
ցէք.
Զայն առէք, օրհնեցէք ու ըսէք,
Ով Տէր, քու ժողովուրդդ,
Իսրայէլի մնացորդը, փրկէ.
8—Ահա ես զանոնք հիւսիսի երկրէն
պիտի բերեմ.
Ու զանոնք երկրի ծայրերէն՝
Ո– անոնց հետ կոյրը ու կաղը,
Յղին ու ծնած կինը միասին պիտի ժո-
ղովեմ.
Մեծ ժողով մը հոս պիտի դառնայ.
9—Լալով պիտի գան, ու աղաչանքնե-
րով զանոնք պիտի բերեմ.
Զանոնք յորդու վտակներուն քովէն
պիտի պտրտցնեմ,
Շիտակ ճամբայէն՝ որուն մէջ չգայթակ-
ղին.
Վասն զի Իսրայէլի հայր եղայ,
Ու Եփրեմ իմ անդրանիկս է։
10—Ով ազգեր, Տէրոջը խօսքը մտիկ
ըրէք,
Ու հեռաւոր կղզիներուն պատմեցէք ու
ըսէք,
Իսրայէլը ցրուողը զանիկա պիտի ժողվէ,
Ու զանիկա պիտի պահպանէ, ինչպէս
հովիւը իր հօտը կը պահպանէ։
11—Քանզի Տէրը փրկեց Յակոբը,
Ու զանիկա անկէ զօրաւորին ձեռքէն
ազատեց։
12—Ու պիտի գան, ու Սիոնի բարձ-
րութեանը վրայ ուրախութեան
ձայն պիտի վերցնեն,
Ու պիտի դիմեն Տէրոջը բարիքներուն,
Ա,իսինքն ցորենին ու գինիին ու իւղին
Ու հօտերուն ու արջառներուն,
Ու անոնց անձերը ջրաւած պարտէզի
պէս պիտի ըլլան,
Ու մէ,իմն ալ պիտի չնուաղին։
13—Այն ատեն կոյսը պար բռնելով
պիտի ուրախանայ,
Նաև երիտասարդները և ծերերը միասին.
Վասն զի անոնց սուգը ուրախութեան
պիտի դարձնեմ,
Ու անոնց սրտմտութենէն զանոնք մխի-
թարելով՝ պիտի ուրախացնեմ։
14—Ու քահանաներուն հոգիները պա-
րարտութեամբ պիտի լեցնեմ,
Ու իմ ժողովուրդս իմ բարիքներովս
պիտի կշտանայ, կ'ըսէ Տէրը։
15—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ,
Ողբի ու դառնապին լացի ձայն.
Ռաքել իր որդոցը համար կուլար,
Ու իր որդոցը համար մխիթարուիլ չէր
ուզեր,
Վասն զի անոնք չկային։
16—Տէրը այսպէս կ'ըսէ.
Քու ձայնդ լսէին
Ու աչքերդ արցունքէն դադրեցուր,
Վասն զի քու գործիդ համար վարձք
կայ, կ'ըսէ Տէրը,
Ու թշնամիին երկրէն պիտի դառնան։
17—Ու քու ապագայ ժամանակիդ հա-
մար յոյս կայ, կ'ըսէ Տէրը,
Որ †ու որդիքներդ իրենց սահմանը
դառնան։
18—Ծիրանի Եփրեմի †ողբալը
լսեցի.
Զիս խրատեցիր ու խրատուեցայ
Լուծէն չսորված զուարակի պէս.
Զիս դարձուր, որպէս զի դառնամ,
Վասն զի իմ Տէր Աստուածս դուն ես։
19—Իրաւցընէ դառնալէս ետքը ղեղ-
ջացայ,

*Կամ, քեզի ողորմութիւն երկնցուցի
†Կամ, մէջ

Ու կրծաւելէս ետքը իմ ազդրիս
զարկի.
Ամչցայ ու պատկառեցայ,
Վասն զի իմ մանկութեանս անար-
գանքը կրեցի։
20—Մի՞թէ Եփրեմ իմ պատուական որ-
դի՞ս է,
Կամ սիրական զաւակ մըն է.
Վասն զի քանի որ ես անոր վրայով կը
խօսիմ,
Նարեւնակ զանիկա կը յիշեմ.
Այս պատճառաւ իմ ազիքս կը գալարի
անոր համար,
Անշուշտ անոր ողորմութիւն պիտի ընեմ,
կ'ըսէ Տէրը.
21—Քեզի կոթողներ կանդնէ, քեզի
սիւներ անկէ,
Սիրտդ մեծ ճամբուն, քու գացած շա-
փիղդ, դիր։
Դարձիր, ով Իսրայէլի կոյսը,
Այս քու քաղաքներդ դարձիր։
22—Ով ապստամբ աղջիկ,
Մինչեւ ե՞րբ ատանդական պիտի ջլիս։
Քանզի Տէրը երկրի վրայ նոր բան ստեղ-
ծեց,
Կին մարդը պիտի չրջապատէ այր մարդը։
23—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը,
այսպէս կ'ըսէ.
Այսու հետեւ Յուդայի երկրին մէջ
Ու անոր քաղաքներուն մէջ այս խօսքը
պիտի ըսեն՝
Երբ անոնց գերութիւնը դարձնեմ.
Տէրը քեզ օրհնէ,
Ով արդարութեան բնակարան, սուրբ
լեռ։
24—Ես հոն, Յուդայի մէջ ու միան-
գամայն անոր բոլոր քաղաքնե-
րուն մէջ
Երկրագործներ ու հօտերու հետ չուող-
ներ պիտի բնակին,
25—Քանզի յոգնած հոգին պիտի զո-
վացնեմ,
Ու ամէն մարած հոգին պիտի կշտացնեմ։
26—Ասոր վրայ արթնցայ ու նայեցայ,
Ու իմ քունս ինծի անոյշ էր։
27—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ Իսրայէլի տունը և Յուդայի տունը
Մարդու սերմ ու անասունի սերմ պի-
տի ցանեմ։
28-Ինչպէս խլելու, փլցնելու ու աւերելու,
Ու կորնցնելու ու չարիք հասցնելու
համար
Անոնց վրայ հսկեցի,
Նոյնպէս –ս չինելու ու տնկելու համար
Անոնց վրայ պիտի հսկեմ, կ'ըսէ Տէրը։
29—Այն օրերը մէ,իմն ալ պիտի չըսեն,
Հայրերը ազախ կերան,
Ու որդիներուն ակռաները սարին.
30—Հապա ամէն մարդ իր անօրէնու-
թեանը համար պիտի մեռնի.
Ամէն մարդ որ ազախ կ'ուտէ,
Անոր ակռաները պիտի սարնեն։
31—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ Իսրայէլի տանը հետ ու Յուդայի տա-
նը հետ
Նոր ուխտ պիտի ընեմ,
32—Ոչ թէ այն ուխտին պէս, զոր ա-
նոնց հայրերուն հետ ըրի
Այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝
Զանոնք եգիպտոսի երկրէն հանելու հա-
մար.
Քանզի անոնք իմ ուխտս զանց ըրին,
*ես ալ զանոնք մերժեցի՛, կ'ըսէ Տէրը.
33—Հապա այն օրերէն ետքը
Իսրայէլի տանը հետ ընելու ուխտս ա-
սիկա է, կ'ըսէ Տէրը.
Իմ օրէնքս անոնց ներսիդին պիտի
դնեմ,
Ու զանիկա անոնց սրտին վրայ պիտի
գրեմ,
Ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ,
Ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան։
34—Ու անկէ ետքը մարդ մը իր ընկերին
Ու մարդ մը իր եղբօրը պիտի չսորվեցնէ՝
Ըսելով թէ Տէրը ճանչցէք.
Հապա անոնց պզտիկէն մինչեւ մեծը
Ամէնը զիս պիտի ճանչնան, կ'ըսէ Տէրը.
Վասն զի անոնց անօրէնութիւնը պիտի
ներեմ,
Ու անոնց մեղքը մէ,իմն ալ պիտի չյի-
շեմ։
35—Այսպէս կ'ըսէ Տէրը,
Որ արեւը հաստատեց օրուան լոյսին
համար,
Ու գիշերուան լոյսին համար լուսինին
ու աստղերուն կանոնները դրաւ,
Որ ծովը կը յանդիմանէ, երբ անոր ա-
լիքները կը գոռան.

*Կամ, թէև անոնց վրայ տիրողը ես էի

Անոր անունը Եհովա Սաբաւովթ է.
36—Եթէ այս կանոնները իմ առջեւէս դադարին, կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի սերունդն ալ իմ առջեւս միշտ ազգ ըլլալէն պիտի դադարի
37—Տէրը այսպէս կ'ըսէ.
Եթէ երկինքները կրնան վերէն չափուիլ,
Ու երկրի հիմերը վարէն քննուիլ,
Ես ալ բոլոր Իսրայէլի սերունդը,
Իրենց բոլոր ըրածներուն համար, պիտի մերժեմ, կ'ըսէ Տէրը։
38—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ Անանայէլի աշտարակէն մինչեւ Անկեան դուռը
Քաղաքը Տէրոջը համար պիտի շինուի.
39—Ու անոր գիծագէն չափին ըսրը
Մինչեւ Գարեբի բլուրը պիտի երթէ,
Ու դէպ ի Գոաթ պիտի դառնայ,
40—Ու դիերուն ու մոխրոց բոլոր ձորը
Ու բոլոր արտերը մինչեւ Կեդրոն հեղուղաձոր,
Մինչեւ Ձիերուն դրանը անկիւնը դէպ ի արեւելք,
Սուրբ պիտի ըլլայ Տէրոջը.
Երբեմն ալ պիտի չքակուի ու չկործանուի յաւիտեան։

ԳԼ. ԼՒ

Յուդայի Սեդեկիա Թագաւորին տասնեւրորդ տարին, այսինքն Նաբուգոդոնոսորի տասնեւրորդ տարին, Տէրոջը կողմանէ երեմիայի եղած խօսքն էր։ 2—Ու այն ատեն Բաբելոնի Թագաւորին զօրքը Երուսաղէմը կը պաշարէր, ու Երեմիա մարգարէն Յուդայի Թագաւորին տունը եղող բանտին գաւիթին մէջ արգելուած էր։ 3—Վասն զի Յուդայի Սեդեկիա Թագաւորը զանիկա արգիլեց՝ ըսելով, Դուն ինչո՞ւ համար մարգարէութիւն ըրիր ու ըսիր Թէ Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այս քաղաքը Բաբելոնի Թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանիկա պիտի առնէ. 4—Ու Յուդայի Սեդեկիա Թագաւորը Քաղդէացւոց ձեռքէն պիտի չազատի, հապա անշուշտ Բաբելոնի Թագաւորին ձեռքը պիտի մտնի, ու անոր հետ բերան առ բերան պիտի խօսի, և անոր հետ աչք աչքի պիտի տեսնայ։ 5—Ու անիկա Սեդեկիան Բաբելոն պիտի տանի. ու անիկա հոն պիտի մնայ մինչեւ ես անոր այցելութիւն ընեմ, կ'ըսէ Տէրը. եթէ Քաղդէացւոց հետ պատերազմ ընէք, յաջողութիւն պիտի չգտնէք։

6—Ան ատեն Երեմիա ըսաւ, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 7—Ահա քու հօրեղբօրդ Սեդղումի որդին Անամէլ քեզի պիտի գայ ու պիտի ըսէ, Անաթովթի մէջ եղող ագարակս քեզի ծախու առ, վասն զի ազգականութեան իրաւունքով քեզի կ'իյնայ զայն առնես։ 8—Ես Տէրոջը խօսքին համեմատ իմ հօրեղբօրս որդին Անամէլ ինծի բանտին գաւիթը եկաւ, ու ինծի ըսաւ, Շնորհք ըրէ, ինձմովին երկիրը Անաթովթի մէջ առնեցած ագարակս ծախու առ, վասն զի ժառանգութեան իրաւունքը քուկդ է ու քեզի կ'իյնայ որ փրկես, քեզի ծախու առ. այն ատեն գիտցայ որ ասիկա Տէրոջը խօսքն էր։ 9—Ես հօրեղբօրս որդիէն, Անամէլէն, Անաթովթի մէջ եղող ագարակը ծախու առի, ու սասկը տասներեքը սիկղ արծաթ կշռեցի անոր։ 10—Ես մուրհակ մը գրեցի ու կնքեցի ու վկաներ բռնեցի և արծաթը կշռելով կշռեցի։ 11—Ու առացուածքի մուրհակը, Թէ՛ հրամանին ու կանոններուն համեմատ կնքուածը, և Թէ՛ բաց եղածը առի։ 12—Ու առացուածքի մուրհակը, հօրեղբօրս Անամէլի աչքերուն առջեւ ու առացուածքի մուրհակին մէջ գրուող վկաներուն աչքերուն առջեւ, բանտի գաւիթին մէջ նստող բոլոր Հրէից աչքերուն առջեւ, Մաասէայի որդւոյն Ներիայի որդւոյն Բարուքի տուի։ 13—Ես անոնց աչքերուն առջեւ Բարուքի պատուիրեցի ու ըսի, 14—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Այս մուրհակները, այս կնքուած առացուածքի մուրհակը ու այս բաց մուրհակը, առ, և զանոնք հողի անօթի մը մէջ դիր, որպէս զի շատ օրեր մնան։ 15— Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ա՛յս երկրին մէջ նորէն տուներ ու ագարակներ և այգիներ ծախու պիտի առնուին։

16—Ու առացուածքի մուրհակը Նեբիայի որդւոյն Բարուքի տալէս ետքը, Տէրոջը ալքիք ըրի ու ըսի, 17—Ո՛հ, Տէր Եհովա, ահա դուն քու մեծ զօրութիւնովդ ու երկնցած բազուկովդ երկինքը ու երկիրը ստեղծեցիր. բնաւ բան մը քեզի դժուարին չէ։ 18—Դուն հազարներուն ողորմութիւն կ'ընես, ու հայրերուն անօրէնութեան պատիժը անոնցմէ ետքը անոնց որդիներուն ծոցը կու տաս. դուն մեծ ու հզօր Աստուած ես, Ե զօր անունդ Զօրաց Տէր է։ 19— Դուն խորհրդով մեծ ու գործով զօրաւոր ես, որովհետեւ որ ամէն մկնուն իր ճամբաներուն համեմատ ու անոր գործերուն պտուղին համեմատ հատուցում ընելու համար՝ քու աչքերդ մարդոց որդիներուն բոլոր ճամբաներուն բաց են։ 20—Դուն որ մինչեւ այսօր Եգիպտոսի երկրին մէջ ու Իսրայէլի մէջ և ընդ մարդոց մէջ նշաններ ու հրաշքները ընելով քեզի անուն վաստկեցար, ինչպես այսօր կ'երեւի. 21—Ու քու ժողովուրդդ Իսրայէլը, նշաններով ու հրաշքներով և զօրաւոր ձեռքով ու երկնցած բազուկով և մեծ ահաւկութիւնով եգիպտոսի երկրէն հանեցիր, 22—Ու անոնց տուիր այս երկիրը զոր իրենց հայրերուն երդում ըրեր էիր իրենց տալու, որ երկիր մը որ կաթ ու մեղր կը բղխի. 23— Ու մտան զանիկա ժառանգելին, բայց քու ձայնիդ ականջ չտուին և քու օրէնքիդ համեմատ չգործեցին. անոնք չըրին ինչ որ անոնց պատուիրեցիր որ ընեն. ասոր այս բոլոր չարիքը անոնց վրայ բերիր։ 24—Ահա քաղաքին դէմ պատնէշները կանգնուեցան, որպէս զի զանիկա առնեն. և քաղաքը սուրին, սովին ու ժանտախտին պատճառաւ, անոր դէմ պատերազմ ընող Քաղդէացւոց ձեռքը տրուեցաւ. և քու բանդ կատարուեցաւ, ու ահա կը տեսնես։ 25—Բայց դուն, օվ Տէր Եհովա, ինծի ըսիր որ Ագարակը տասկով քեզի ծախու առ ու վկաներ բռնէ. և ես քաղաքը Քաղդէացւոց ձեռքը կը մատնուի։

26—Ես Տէրոջը խօսքը երեմիայի եղաւ՝ ըսելով, 27—Ահա ես եմ Եհովա, ամէն մարմնի Աստուածը. միթէ ինծի դժուարին բան մը կա՞յ։ 28—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես այս քաղաքը Քաղդէացւոց ձեռքը ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանիկա պիտի առնէ. 29—Ես այս քաղաքին դէմ պատերազմ ընող Քաղդէացիները պիտի գան, ու այս քաղաքը կրակի պիտի տան ու այրեն. նաև տներ այն տուներուն՝ որոնց տանիքներուն վրայ Բահաղի խունկ կը ծխեին, և ասոր աստուածներուն թափելու նուէրներ կը մատուցանէին՝ զիս բարկացնելու համար։ 30—Քանզի Իսրայէլի որդիները ու Յուդայի որդիները իրենց մանկութենէն է վեր իմ աչքիս մէջն չարութիւն կը գործեն. որովհետեւ Իսրայէլի որդիները իրենց ձեռքերուն գործերովը անդադար զիս կը բարկացնեն, կ'ըսէ Տէրը։ 31—Քանզի այս քաղաքը իր շինութեան օրէն մինչեւ այսօր իմ բարկութեանս ու սրտմտութեանս համար եղաւ, որպէս զի զանիկա երեսիս առջեւէն վերցնեմ, 32-Իսրայէլի որդիներուն ու Յուդայի որդիներուն, Թէ՛ իրենց Թէ՛ իրենց Թագաւորներուն, իշխաններուն, քահանաներուն ու մարգարէներուն և Յուդայի մարդոցը ու Երուսաղէմի բնակիչներուն բոլոր չարութեանը պատճառաւ, զոր ըրին զիս բարկացնելու համար։ 33—Ես ինծի կռնակ դարձուցին և ոչ Թէ երես, ու Թէև անոնց ուսուցի, կանուխ ելլելով ու ուսուցնելով, բայց անոնք մտիկ չըրին, որ խրատ ընդունին. 34—Հապա իմ անուանովս կոչուած տանը մէջ իրենց պղծութիւնները դրին, զանիկա պղծելու համար։ 35—Ու Ենոմի որդւոյն ձորին մէջ եղող Բահաղի բարձր տեղերը շինեցին, իրենց տղաքները ու աղջիկները Մոլոքի համար Իւրէն անցընելու, զոր ես անոնց հրամայած չէի ու միտքս ալ անցած չէր, որ անոնք այս պղծութիւնը ընեն՝ Յուդայի մեղանչել տալու համար։

36—Ուստի հիմա Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ այս քաղաքին համար՝ որ դուք կ'ըսէք Թէ սրով, սովով ու ժանտախտով Բաբելոնի Թագաւորին ձեռքը կը մատնուի։ 37—Ահա ես զանոնք պիտի ժողվեմ այն բոլոր երկիրէն ուր զանոնք իմ բարկութենովս

պատուաւթիւնով ու մեծ ցաւումով վանեցից, և զանոնք այս տեղ պիտի դարձնեմ ու ապահովաթեամբ պիտի բնակիցնեմ։ 38—Ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան, ես ալ անոնց Աստուած պիտի ըլլամ։ 39—Ու անոնց մէկ սիրտ ու մէկ ճամբայ պիտի տամ, որպէս զի միշտ ինծմէ վախնան, և իրենց ու իրենցմէ ետքը իրենց զաւակներուն ազէկ ըլլայ։ 40—Ես անոնց հետ յաւիտենական ուխտ մը պիտի դնեմ, որ անոնց բարիք ընելէն անոնցմէ ետ չդառնամ. ու իմ վախս անոնց սրտին մէջ պիտի դնեմ, որպէս զի ինծմէ չհեռանան։ 41—Ես անոնց բարիք ընելով՝ անոնց վրայ պիտի ուրախանամ, ու զանոնք բոլոր սրտովս ու բոլոր հոգւովս՝ ճշմարտաթեամբ այս երկրին մէջ պիտի տունկեմ։ 42—Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ. Ինչպէս այս ժողովուրդին վրայ այս բոլոր մեծ չարիքը բերի, նոյնպէս անոնց վրայ պիտի բերեմ այն բոլոր բարիքը՝ զոր անոնց համար խօսեցայ։ 43—Ու դաշտեր ագարակներ ծախու պիտի առնուին այդ երկրին մէջ, որու համար դուք կ'ըսէք թէ Ամայացած է, ու մարդէ և անասունէ զուրկ է, ա— Քաղդեացւոց ձեռքը տրուած է։ 44—Բենիամինի երկրին մէջ, ու Երուսաղէմի չրջակայ տեղերը, և Յուդայի քաղաքներուն մէջ, ու լեռնային քաղաքներուն մէջ, և դաշտային քաղաքներուն մէջ, և հարաւային քաղաքներուն մէջ ագարակներ ծախու պիտի առնուին և մուրհակներ պիտի գրեն ու պիտի կնքեն ու վիճակներ պիտի բռնեն, վասն զի անոնց գերութիւնը կատ պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը։

ԳԼ. ԼԳ

Ե Տէրոջը խօսքը երկրորդ անգամ Երեմիայի եղաւ երբ անիկա տակաւին բանտին գաւիթին մէջ արգելուած էր՝ ըսելով, 2—Այսպէս կ'ըսէ Տէրը որ այս ըներուը չինող, Տէրը, որ զանիկա հաստատելու համար զանիկա ստեղծեց, որուն անունը Եհովա է. 3—Ինծի կանչէ, ու քեզի պատասխան տամ, և քեզի մեծ ու խորին բաներ պատմեմ, զորոնք դուն չես գիտեր։ 4—Վասն զի այս քաղքին տուներուն համար, ու Ցուդայի թագաւորներուն տուներուն համար, որոնք պատնէշներուն ու սուրին փշած են, Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. 5—*Քաղդէացւոց դէմ պատերազմ ընելու կու գան. և այն տեղերը մեռած մարդոց դիւրովը պիտի լեցնեմ, զորոնք իմ բարկութիւնովս ու սրտմտութիւնովս պիտի զարնեմ. վասն զի ես այս քաղաքէն իմ երեսս ծածկեցի՝ անոնց բոլոր չարութիւնոր համար։ 6—Ահա անոր առողջութիւն ու բժշկութիւն պիտի բերեմ ու զանոնք պիտի բժշկեմ, և խաղաղութեան ու ճշմարտութեան առատութիւնը անոնց պիտի յայտնեմ։ 7—Ես Ցուդայի գերութիւնը ու Իսրայէլի գերութիւնը պիտի դարձնեմ, ու զանոնք առաջուան պէս պիտի հաստատեմ։ 8—Ու անոնց ինծի դէմ գործած բոլոր անօրէնութենէն զանոնք պիտի սրբեմ, ու անոնց ինծի դէմ բրած բոլոր անօրէնութիւնները ու յանցանքները պիտի ներեմ։ 9—Ես ասիկա ինծի ուրախութեան անուն, փառք ու պարծանք պիտի ըլլայ երկրի բոլոր ազգերուն մէջ, որոնք պիտի լսեն այն ամէն բարիքը՝ զոր ես անոնց պիտի ընեմ. և պիտի վախնան ու դողան այն ամէն բարիքին ու ամէն յաջողութեանը համար՝ զոր ես այս քաղաքին պիտի ընեմ։

10—Տէրը այսպէս կ'ըսէ. Ա յս տեղին մէջ, որու համար դուք կ'ըսէք թէ Մարդէ ու անասունէ զուրկ ըլլալով՝ անուպատ գարձած է, և Ցուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ, որոնք անմարդ ու անբնակ ու անասունէ զուրկ ըլլալով՝ ամայացած են, նորէն պիտի լսուի 11—ցնծութեան ձայն, և ուրախութեան ձայն, փեսայի ձայն, ու հարսի ձայն, նաև անոնց ձայնը որոնք Տէրոջը տուներ գոհութեան ընծաներէ բերելով՝ կ'ըսեն, Գոհացէք զօրաց Տէրոջմէն, վասն զի Տէրը բարի է, վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է. քանզի այս երկրին գերիները էբէնց առաջուան վիճակին պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը։ 12—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.

*Կամ, Քաղդեացիք †Եբր. չինեմ

Այս տեղին մէջ, որ մարդէ ու անասունէ զուրկ ըլլալով՝ անապատ գարձած է, և անոր ամէն քաղաքներուն մէջ, նորէն հօտեր պառկեցնող հովիւներու բնակատեղի պիտի ըլլան։ 13—Լեռնային քաղաքներուն մէջ, գաշտային քաղաքներուն մէջ ու հարաւային քաղաքներուն մէջ և Բենիամինի երկրին մէջ ու Երուսաղէմի չրջակայ տեղերը և Ցուդայի քաղաքներուն մէջ հօտերը գարձեալ ներքեւ համրողին ձեռքէն պիտի անցնեն, կ'ըսէ Տէրը։

14—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, որ Իսրայէլի տանը համար և Ցուդայի տանը համար ըսած բարի խօսքս պիտի կատարեմ։ 15—Այն օրը ու այն ժամանակը Դաւիթի արդարութեան ճառագիթ մը պիտի բուսցնեմ. և անիկա երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի ընէ։ 16—Այն օրերը Ցուդա պիտի ազատի, ու Երուսաղէմ ապահովաթեամբ պիտի բնակի, և այս է անոր անունը որով պիտի կոչուի, Տէրը մեր արդարութիւնը։ 17—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ. Դաւիթէ Իսրայէլի տանը աթոռին վրայ նստող մարդ պակաս պիտի չըլլայ։ 18—Ու Ղեւտացի քահանաներէն ողջակէզ, հացի ընծայ ու զոհ մատուցանող մարդ չպակսի պիտի չըլլայ իմ առջեւէս։

19—Ես Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, Տէրը այսպէս կ'ըսէ. 20—Եթէ ցորեկուան ուխտս ու գիշերուան ուխտս կրնաք աւրել, որ ցորեկը ու գիշերը իրենց ժամանակովը չըլլան, 21—իմ ծառայիս Դաւիթի հետ ունեցած ուխտս ալ պիտի աւրուի, որ իր աթոռին վրայ թագաւորութիւն ընելու որդի չունենայ. այնպէս ալ ինծի ծառայութիւն ընող Ղեւտացի քահանաներուն հետ ունեցած ուխտս։ 22—Ինչպէս երկինքի զօրքերը չեն համրուիր ու ծովուն աւազը չափուիր, իմ ծառայիս Դաւիթի սերունդը և ինծի ծառայութիւն ընող Ղեւտացիները այնպէս պիտի չաւգնեմ։

23—Ես Տէրոջը խօսքը Երեմիայի եղաւ՝ ըսելով, 24—Չե՞ս տեսներ որ այս ժողովուրդը ի՛նչ կը խօսի ու կ'ըսէ, Տէրը իր ընտրած երկու ազգատոհմերը երեսէ ձգեց. ու անոնք իմ ժողովուրդս կ'անարգեն, մինչև զանիկա իրենց առջեւ ազգ չսեպելով։ 25—Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ ցորեկուան ու գիշերուան համար ուխտս ըրած չեմ, և երկինքն ու երկրի կանոնները գրած չեմ, 26—ծակերն ու իմ ծառայիս Դաւիթի սերունդն ալ երեսէ պիտի ձգեմ, որպէս զի մէյմըն ալ անոր սերունդէն Աբրահամի, Իսահակի ու Յակոբի սերունդին վրայ իշխաններ չառնեմ. վասն զի անոնց գերութիւնը պիտի դարձնեմ ու անոնց պիտի ողորմիմ։

ԳԼ. ԼԴ

Երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրքովը, ու իր իշխանութեան տակ եղող երկրին բոլոր թագաւորութիւններովը, և բոլոր ժողովուրդներով Երուսաղէմի վրայ ու անոր բոլոր քաղաքներուն վրայ պատերազմ կ'ընէր, Տէրոջը կողմանէ Երեմիայի այս խօսքը եղաւ՝ ըսելով,

2—Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Գնա, Ցեդէկիա Թագաւորին խօսէ ու անոր ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա այս քաղաքը Բաբելոնի Թագաւորին ձեռքը պիտի տամ, ու զանիկա կրակով պիտի այրէ. 3—Ես դուն անոր ձեռքէն պիտի չազատիս, հապա անշուշտ պիտի բռնուիս ու անոր ձեռքը պիտի տրուիս. և քու աչքերդ Բաբելոնի Թագաւորին աչքերը պիտի տեսնեն, ու անոր բերանը քու բերնիդ հետ պիտի խօսակցի, ու Բաբելոն պիտի երթաս։ 4—Բայց Տէրոջը խօսքը մինչ ըրէ, ով Սեդեկիա, Ցուդայի Թագաւոր, Տէրը քեզի համար այսպէս կ'ըսէ. Դուն սրով պիտի չմեռնիս, 5—Դուն խաղաղութեամբ պիտի մեռնիս. և ինչպէս քեզմէ առաջ եղող քու հայրերուդ, առաջուան Թագաւորներուն, համար խունկեր ծխեցին, նոյնպէս քեզի համար պիտի ծխեն, ու վա՛յ, ութ էմ, ըսելով՝ քու վրադ պիտի ողբան, վասն զի այս խօսքը ես խօսեցայ, կ'ըսէ Տէրը։

6—Ու Երեմիա մարգարէն այս բոլոր խօսքերը Ցուդայի Սեդեկիա Թագաւորին խօսեցաւ Երուսաղէմի մէջ, 7—ես

Բաբելոնի Թագաւորին զօրքը Երուսաղէմի դէմ ու Ցուդայի մնացած բոլոր քաղաքներուն դէմ, Լաքիսի ու Ազեկայի դէմ, պատերազմ կ'ընէր, վասն զի Ցուդայի քաղաքներէն պարսպազարդ քաղաքները մնացեր էին։

8—Տէրոջը կողմանէ երեմիայի եղած խօսքն է, երբ Սեդեկիա Թագաւորը Երուսաղէմի մէջ եղող բոլոր ժողովուրդին հետ ուխտ ըրաւ որ ազատութիւն քարոզեն, 9—որ ամէն մարդ իր ծառան ու ամէն մարդ իր ազախինը, եբրայեցի մարդը ու եբրայեցի կինը, ազատ արձակէ, ու մէկզմէ ալ մարդ մը իր Հրեայ եղբայրը չծառայեցնէ։ 10—Ու հնազանդեցան բոլոր իշխանները ու բոլոր ժողովուրդը, որոնք զուարակին կարնէրուն մէջմտան, որ ամէն մարդ իր ծառան ու ամէն մարդ իր ազախինը ազատ արձակէ, և ա՛լ անոնք չծառայեցնէ. հրնազանդեցան և զանոնք արձակեցին։ 11—Բայց անկէ ետքը դարձան, ու իրենց ազատ թող տուած ծառաները ու ազախինները նոր դարձուցին, և զանոնք բռնագաւեցին որ ծառաներ ու ազախիններ ըլլան։

12—Ու Տէրոջը խօսքը երեմիայի եղաւ Տէրոջմէն՝ ըսելով, 13—Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ես ձեր հայրերուն հետ ուխտ ըրի զանոնք Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանած օրս, ու ըսի, 14—Եօթը տարին ձեզմէ ամէն մէկը ազատ ձգէ իր արձակէ իր Եբրայեցի եղբայրը որ ձեզի ծախուած է, ու վեց տարի քեզի ծառայեր է, զանիկա քովէդ ազատ արձակես, բայց ձեր հայրերը ինծի մնիկ չկրին ու ականջնին չդնացին։ 15—Եւ դուք այսօր դարձաք, ու ամէն մարդ իր ընկերին ազատութիւն քարոզելով՝ իմ աչքիս ուղիղ եղածը ըրիք, և իմ անձիս ուխտ ըրիք այն տանը մէջ որուն վրայ իմ անունս կոչուած է։ 16—Բայց Նորէն դառնալով՝ իմ անունս պղծեցիք. ու ամէնդ ալ ձեր ազատ արձակած ու իրենց կամքին նայ գացած ծառաները ու ազախինները դարձուցիք, ու զանոնք բռնագաւեցիք որ ձեզի ծառաներ ու ազախիններ ըլլան։

17—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Դուք ինծի մնիկ չկրիք, որ ձեր ամէն մէկը իր եղբօրը համար ու ամէն մէկը իր ընկերին համար ազատութիւն քարոզէ. ահա ես ձեզի համար, կ'ըսէ Տէրը, սուրին, ժանտախտին ու սովին ազատութիւն կը քարոզեմ. ու ձեզ երկրի բոլոր Թագաւորութիւններուն մէջ նեղութեան պիտի մատնեմ 18—ու զուարակը երկուքի կտրելով ու անոր կտրատներուն մէջէնին անցնելով՝ իմ ուխտս որ ինծի հետ ուխտեցիր չկատարող, և իմ ուխտս զանց ընդ մարդիկը պիտի մատնեմ, 19—Այսինքն Ցուդայի իշխանները ու երուսաղէմի իշխանները, պալատականները և քահանաները ու երկրին բոլոր ժողովուրդը, որոնք զուարակին կտրատներուն մէջէնէն անցան, 20—Զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հոգին փնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ, և անոնց դիերը երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան։ 21—Ու Ցուդայի Սեդեկիա Թագաւորը ու անոր իշխանները իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հոգին փնտռողներուն ձեռքը և ձեզմէ գունդ Բաբելոնի Թագաւորին զօրքերուն ձեռքը պիտի մատնեմ, 22—Ահա ես հրամայեցի, կ'ըսէ Տէրը, ու զանոնք այս քաղաքը նոր պիտի բերեմ, և անոր դէմ պատերազմ պիտի ընեն ու զանիկա պիտի առնեն ու կրակով այրեն. և Ցուդայի քաղաքները անբնակ ամայութեան պիտի դարձնեմ։

Գլ. Լե

Ցուդայի Թագաւորես Յովսիայի որբոյն Յովակիմի օրերը Տէրոջը կողմանէ երեմիայի եղած խօսքն է, որ ըսաւ, 2—Ռեքաբականց առանը գնա ու անոնց հետ խօսէ, և զանոնք Տէրոջը տունը տանիս մը տար, ու անոնց գինի խըմցուր։ 3—Եւ Գամաղիելիայի որբոյն երեմիայի որդին Ցազոնիա ու անոր եղբայրները և բոլոր որդիները ու Ռեքաբականց բոլոր տունը առի. 4—Ու զանոնք Տէրոջը տունը տարի Սեդղոմի որդւոյն Մաասիա դանապանին տնեսականին վրայ եղող իշխաններուն տնեսականին վրայ՝ Աստուծոյ մարդուն Ցազդողիայի որդւոյն Անանի որդիներուն տնեսակը. 5—Ու Ռեքաբականց առջի որդիներուն առջև գինիով լեցուն ամաններ ու գաւաթներ դրի, և անոնց ըսի, Գինի խմեցէք։ 6—Ու անոնք ըսին, Գինի չենք խմեր. քանզի մեր Հայրը, Ռեքաբի որդին Յովնադաբ, մեզի պատուիրեց ու ըսաւ, Դուք ու ձեր որդիները յաւիտեան գինի չխմէք. 7—Ու տուն չշինէք ու սերմ չցանէք և այդի չունկնք ու չտառնաք, հապա ձեր բոլոր օրերը վրանները մէջ բնակիք. որպէս զի ձեր պանդխտեան եղած երկրին վրայ շատ օրեր ապրիք։ 8—Ու մեր հօրը Ռեքաբի որդւոյն Յովնադաբի բոլոր մեզի հրամայածին պէս անոր խօսքը մնիկ ընելով՝ մեր բոլոր օրերուն մէջ մենք, մեր կիները, մեր աղջիկները ու մեր աղջիկները գինի չխմեր. 9—Ու բնակելու համար տուներ չենք շիներ, ու այդի և ագարակ ու սերմ չենք տառնար. 10—Հապա վրաններու մէջ կը բնակինք, ու հնազանդութիւն ընելով՝ մեր հօրը Յովնադաբի բոլոր մեզի հրամայածը ի գործ կը դնենք։ 11—Բայց երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը այս երկիրը եկաւ, ըսինք, Եկէք, Քաղդեացւոց զօրքին երեսէն ու Ասորւոց զօրքին երեսէն Երուսաղէմ երթանք. այսպես Երուսաղէմի մէջ կը բնակինք։

12—Ու Տէրոջը խօսքը երեմիայի եղաւ՝ ըսելով, 13—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Գնաս Ցուդայի մարդոց ու Երուսաղէմի բնակիչներուն ըսէ, Իմ խօսքերս մնիկ ընելու համար խրատ չէ՞ք ընդունիր, կ'ըսէ Տէրը։ 14—Ռեքաբի որդւոյն Յովնադաբի իր որդիներուն գինի չխմելու համար պատուիրած խօսքերը հաստատ պահուեցան. վասն զի երեք հօրը հրամանին հնազանդութիւն ընելով՝ մինչև այսօր չեն խմեր. բայց Թէև ես ձեզի խօսեցայ, կանուխ կանխելով ու խօսելով, սակայն ինծի մնիկ չկրիք։ 15—Ու իմ բոլոր ծառաներս մարգարէները ձեզի դրկեցի՝ կանուխ կանխելով ու դրկելով, ու ըսի, Ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ, և բարի գործեր ըրէք, ու օտար աստուածներու հետևիլ մի երթաք, որ անոնց ծառայութիւն ընէք, որպէս զի ձեզի ու ձեր հայրերուն տուած երկիրս մէջ բնակիք. բայց ձեր ականջը չդնեցիք ու ինծի մնիկ չկրիք։ 16—Ու Ռեքաբի որդւոյն Յովնադաբի որդիները իրենց հօրը պատուիրած հրամանը հաստատ պահեցին, բայց այս ժողովուրդը ինծի մնիկ չկրաւ։ 17—Անոր համար զօրաց Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես Ցուդայի և Երուսաղէմի բոլոր բնակիչներուն վրայ պիտի բերեմ այն բոլոր չարիքը զոր անոնց համար խօսեր էի. վասն զի անոնց խօսեցայ, բայց մնիկ չկրին, ու անոնց կանչեցի, բայց պատասխան չտուին։

18—Ու երեմիա Ռեքաբականց տանը ըսաւ, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Որովհետև ձեր հօրը Յովնադաբի պատուէրը մնիկ ըրիք, ու անոր բոլոր հրամանները պահեցիք, և ձեզի ամէն պատուիրածին պէս ըրիք, 19—Անոր համար զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ռեքաբեան Յովնադաբէ միշտ իմ առջևս կայնող մարդ պակաս պիտի չըլլայ։

Գլ. Լզ

Ու եղաւ որ Ցուդայի Թագաւորին, Յովսիայի որբոյն Յովակիմի, չորրորդ տարին Տէրոջը կողմանէ այս խօսքը եղաւ երեմիայի՝ ըսելով, 2—Ջեզի գիրքի մաս մը առ, ու անոր վրայ գրէ այն բոլոր խօսքերը զորոնք քեզի հետ խօսեցայ Ա---ի օրեն Յովսիայի օրերէն մինչև այսօր Իսրայէլի վրայով ու Յուդայի վրայով և բոլոր ազգերուն վրայով խօսեցայ։ 3—Գուցէ Թէ Ցուդայի տունը լսէ այն բոլոր չարիքը զոր ես կը մտածեմ անոնց ընել, որպէս զի ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ, և ես անոնց անօրէնութիւնը ու մեղքը ներեմ։

4—Ու երեմիա Ներիայի որդին Բարուքը կանչեց. և Բարուք երեմիայի բերանէն Տէրոջը անոր ըսած բոլոր խօսքերը այն գիրքի մասին վրայ գրեց։ 5—Ու երեմիա Բարուքի պատուիրեց ու ըսաւ, Ես ---ս գրեալ եմ. Տէրոջը տունը երթալու կարող չեմ. 6—

Ուստի դուն երթաս, ու ծանապարհութեան օրը Տէրոջը ատենը մէջ ժողովրդին ականջներուն իմ բերնէս գրած ամենը Տէրոջը խօսքերը կարդաս, ու նաև իրենց քաղաքներէն եկող բոլոր Յուդայի ականջներուն զանոնք կարդաս։ 7—Թերևս *Տէրոջը առջև իյնալով աղօթք ընեն, և ամէն մարդ իր չար ճամբայէն դառնայ. քանզի մեծ է այն բարկութիւնը ու սրամտութիւնը որ Տէրը այս ժողովրդին համար խօսեցաւ։ 8—Ու ներթայի որդին Բարուք Սերեմիա մարգարէին բոլոր իրեն տրամայածին պէս բրաւ, և ան գիրքին Տէրոջը խօսքերը կարդաց Տէրոջը տանը մէջ։

9—Ու եղաւ որ Յուդայի թագաւորին, Յովսիայի որդւոյն Յովակիմի, հինգերորդ տարին, իննսերորդ ամիսը, բոլոր Երուսաղէմի ժողովրդին, ու Յուդայի քաղաքներէն Երուսաղէմ եկող բոլոր ժողովրդին, Տէրոջը առջև ծոմապահութիւն քարոզեցին։ 10—Ես Բարուք Սափան գրիչին որդւոյն Գամարիայի սենեակը, Տէրոջը տանը նոր գրաւը մուտքը, վերի գաւիթին մէջ բոլոր ժողովրդին ականջներուն այն գիրքին Երեմիայի խօսքերը կարդաց։

11—Ես Սափանի որդւոյն Գամարիայի որդին Միքիա երբ գիրքին Տէրոջը բոլոր խօսքերը լսեց, 12—Թագաւորին տունը դպիրին սենեակը իջաւ. և ահա բոլոր իշխաններըն, նեղնասա դպիրը, ու Սեմայիայի որդին Դալայիա, ու Աքբորի որդին Եղնաթան, և Սափանի որդին Գամարիա, ու Անանիայի որդին Սեդեկիա, և բոլոր իշխանները հոն նստեր էին։ 13—Ու Միքիա անոնց պատմեց այն բոլոր խօսքերը զորոնք լսեր էր՝ երբ Բարուք ժողովրդին ականջներուն այն գիրքին կը կարդար։ 14—Ես բոլոր իշխանները Բուհդի որդւոյն Սեդեմիայի որդւոյն Նաթանիայի որդին Յուդին Բարուքի դրկեցին՝ բանալով, ժողովրդին ականջներուն կարդացած տումը ձեռքդ առ ու հոս եկար։ ուստի Ներիայի որդին Բարուք տումը ձեռքը առաւ ու անոնց գնաց։ 15—Ես անոնք բսին անոր, Կ՚ոզաչենք, նստէ ու մեր ականջներուն ալ կարդա զանիկա։ Եւ Բարուք անոնց ականջներուն կարդաց։ 16—Ու երբ այն բոլոր խօսքերը լսեցին, վախով իրարու կը նայէին. ու Բարուքի բսին, Անշուշտ այդ բոլոր խօսքերը թագաւորին պիտի պատմենք։ 17—Ես Բարուքի հարցուցին ու բսին, Շնորհք լրէ, պատմէ մեզի թէ ի՛նչպես գրեցիր այդ խօսքերը անոր բերանէն։ 18—Ես Բարուք անոնց բաւ, Այս խօսքերուն ամէնը անիկա ինձի բերնով արտասանեց, ու ես զանոնք մելանով այս գիրքին մէջ գրեցի։ 19—Այն ատեն իշխանները Բարուքի բսին, Գնա պահուըտ թէ՛ դուն և թէ՛ Երեմիա, և ոչ ըլլայնէ մարդ չգիտնայ։

20—Ու անոնք սրահը թագաւորին մտան, բայց տումը նեղնասա դպիրին սենեակին մէջ պահեր էին, և այս բոլոր խօսքերը թագաւորին ականջներուն պատմեցին։ 21—Ես թագաւորը զրկեց Յուդին որ այն տումը առնէ, ու զանիկա նեղնասա դպիրին սենեակէն առաւ. և Յուդի զանիկա թագաւորին ականջներուն ու թագաւորին քով կայնող բոլոր իշխաններուն ականջներուն կարդաց։ 22—Ես իննսերորդ ամիսը ըլլալով՝ թագաւորը ձմերատունը մէջ նստած էր, ու առջևը վառած կրակարան կար։ 23—Ու երբ Յուդի երեք կամ չորս երես կարդաց, զանիկա զմեյինով կարեց ու կրակարանի կրակին մէջ նետեց, մինչև որ բոլոր տումը կրակարանի կրակին մէջ հատաւ։ 24—Ես թագաւորը ու անոր բոլոր ծառաները, որոնք այս բոլոր խօսքերը կը լսէին, չվախցան, ոչ ալ հանդերձներնին պատռեցին։ 25—Թեպետև Եղնաթան, Դալայիա ու Գամարիա թագաւորին ազաչեցին որ տումը չայրէ, բայց անոնց մտիկ չըրաւ։ 26—Ես թագաւորը՝ թագաւորի որդւոյն Յերամիէլի ու Եզրիէլի որդւոյն Սարայիայի ու Աբդիէլի որդւոյն Սեդեմիայի հրամայեց, որ Բարուք գպիրը ու Երեմիա մարգարէն բռնեն, բայց Տէրը զանոնք պահեց։

27—Ես թագաւորը այն տումը ու Երեմիայի բերնէն Բարուքի գրած խօսքերը այրելէն ետքը՝ Տէրոջը խօսքը ետ եղաւ Երեմիայի՝ ըսելով, 28—Նորէն գնա, քեզի ուրիշ տոմս մը առ, ու անոր վրայ գրէ այն բոլոր առաջուան խօսքերը՝ որոնք Յուդայի Յովակիմ թագաւորին այրած առաջուան տոմսին մէջ կային։ 29—Ես Յուդայի Յովակիմ թագաւորին ըսես, Տէրը այսպես կ՚ըսէ. Դուն այդ տումը այրեցիր, ըսելով թէ ինչո՞ւ համար անոր վրայ գրեցիր թէ Բաբելոնի թագաւորը անպատճառ պիտի գայ ու այս երկիրը պիտի ուրբ, և անկէ մարդը ու անասունը պիտի վերցնէ։

30—Անոր համար Տէրը Յուդայի Յովակիմ թագաւորին վրայով այսպես կ՚ըսէ. Անիկա Դաւիթի աթոռին վրայ նստող մարդ պիտի չունենայ. և անոր մեռելը ցորեկը տաքի մէջ ու գիշերը ցուրտի մէջ պիտի ձգուի։ 31—Ու անոր և անոր սերունդին ու անոր ծառաներուն այցելութիւն պիտի ընեմ իրենց անօրէնութեանը համար. և անոնց վրայ ու Երուսաղէմի բնակիչներուն վրայ ու Յուդայի մարդոցը վրայ պիտի բերեմ այն ամէն չարիքը զոր *անոնց խօսեցայ, և անոնք մտիկ չըրին։

32—Ու Երեմիա ուրիշ տոմս մը առաւ, ու զանիկա Ներիայի որդւոյն Բարուք գպիրին տուաւ. և անիկա անոր վրայ Երեմիայի բերնէն՝ Յուդայի Յովակիմ թագաւորին կրակով այրած գիրքին բոլոր խօսքերը գրեց. ու անոնց վրայ անոնց պէս ուրիշ շատ խօսքեր աւելցան։

ԳԼ. ԼԲ

Ե Յովսիայի որդին Սեդեկիա թագաւորը Յովակիմի որդւոյն Յեքոնիայի տեղ թագաւորեց, զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Յուդայի վրայ թագաւոր դրաւ։ 2—Բայց անիկա ու անոր ծառաները ու երկրին ժողովուրդը Տէրոջը Երեմիա մարգարէին ձեռքով խօսած խօսքերը մտիկ չըրին։

3—Ու Սեդեկիա թագաւորը Սեղեմիայի որդին Յուքաղը ու Մասեսիայի որդին Սոփոնիա փառանդ Երեմիա մարգարէին ղրկեց՝ ըսելով, Շնորհք ըրէ, մեզի համար մեր Տէր Աստուծոյն աղօթք ըրէ։ 4—Այն ժամանակ Երեմիա ժողովուրդին մէջ կը մտնէր կ՚ելլէր, ու զանիկա դ-ի-ն բանտը դրած չէին։ 5—Ու Եգիպտոսէ փարաւոնի զօրքը ելաւ. ու Երուսաղէմը պաշարող Քաղդէացիները երբ անոնց լուրը լսեցին, Երուսաղէմի վրայէն քաշուեցան։

6—Ես Տէրոջը խօսքը Երեմիա մարգարէին եղաւ՝ ըսելով, Իսրայէլի Տէր Աստուածը այսպես կ՚ըսէ 7—Ինծի հարցնելու համար ձեզ ինծի զրկող Յուդայի թագաւորին այսպես ըսէք. Ահա ձեզի օգնութեան համար ելլող փարաւոնի զօրքը իր երկիրը Եգիպտոս պիտի դառնայ. 8—Ու Քաղդէացիք պիտի դառնան և այս քաղաքին դէմ պատերազմ պիտի ընեն, ու զանիկա պիտի առնեն և զանիկա կրակով այրեն։ 9—Տէրը այսպես կ՚ըսէ. Մի խաբէք ձեր անձերը՝ ըսելով թէ Քաղդէացիք անշուշտ մեզմէ պիտի երթան, վասն զի պիտի չերթան. 10—Քանզի թէև ձեզի հետ պատերազմ ընող Քաղդէացւոց բոլոր զօրքը զարնէք, ու նոնցմէ Ֆ-ն մէկ քանի վիրաւորուած մարդիկ մնան, անոնց ամէն մէկը իր վրանէն ելլելով՝ այս քաղաքը կրակով պիտի այրեն։

11—Ու երբ Քաղդէացւոց զօրքը փարաւոնի զօրքին պատճառաւ Երուսաղէմի վրայէն քաշուեցան, 12—Երեմիա Երուսաղէմէ ելաւ որ բենիամինի երկիրը երթայ, ու անկէ ժողովրդին մէջ էր բաժինը առնէ։ 13—Ու երբ առնիա բենիամինի դուռն էր, հոն Անանիայի որդւոյն Սեղեմիայի որդին, Յերիա անունով սպասկան մը, կար. և առնիա Երեմիա մարգարէն բռնեց ու ըսաւ, Դուն Քաղդէացւոց կողմը կ՚անցնես։ 14—Ու Երեմիա ըսաւ, Սուտ է, ես Քաղդէացւոց կողմը չեմ անցներ. բայց անիկա անոր մտիկ չըրաւ. ու Յերիա բռնեց Երեմիան ու զանիկա իշխաններուն տարաւ։ 15—Ես իշխանները Երեմիայի սրդոզեցան ու զանիկա ծեծեցին և բանտարկեցին Յոնաթանի գպիրին տանը մէջ. վասն զի այն տունը բանտ ըրեր էին։

16—Երբ Երեմիա բանտը ու խուցերուն մէջ մտաւ, ու հոն շատ աուեն

*Նոմ, անոնց համար

*Եբր. անոնց աղօթքը Տէրոջը առջև իյնայ

նաառ, 17—Սեդեկիա թագաւորը Յուդ զրկեց, զանիկա առաւ, և թագաւորը իր առջեւ մէջ գաղտուկ անոր հարցուց ու ըսաւ, Արդեօք Տէրոջմէ խօսք մը կա՞յ։ Ու Երեմիա ըսաւ, Կայ։ Նաև ըսաւ, Դուն Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի տրուիս։ 18—Ու Երեմիա ըսաւ Սեդեկիա թագաւորին, Քեզի կամ ծառաներուդ կամ այս ժողովուրդին դէմ ի՞նչ մեղք գործեցի որ զիս բանտը դրիք։ 19—Եւ ո՞ւր են ձեր մարգարէները որոնք ձեզի մարգարէութիւն ըրին ու ըսին, Բաբելոնի թագաւորը ձեր վրայ ու այս երկրին վրայ պիտի չգայ։ 20—Ես հիմա կ՚աղաչեմ, ով տէր իմ թագաւոր, մինչ ըրէ, թող իմ աղաչանքս քու առջեւդ ընդունելի ըլլայ։ ու զիս Յոնաթանի պաշերին տունը եւս մի դրկեր, որ հոն չմեռնիմ։ 21—Եւ Սեդեկիա թագաւորը հրամայեց, ու Երեմիան բանտին գաւիթը դրին, ու ամէն օր հացագործներուն փողոցէն մէկմէկ նկանակ հաց կու տային անոր, մինչև քաղաքին հացը բոլորովին հատաւ։ ու Երեմիա բանտին գաւիթին մէջ կը նստէր։

Գլ. ԼԸ

Ե Մատթանի որդին Սափատիա ու Փաշուրի որդին Գադղիա և Սեղեմիայի որդին Յուքալ ու Մելքիայի որդին Փաշուր Երեմիայի բոլոր ժողովուրդին հետ խօսած խօսքերը լսեցին, որ ըսաւ, Տէրը այսպէս կ՚ըսէ· 2—Այս քաղաքին մէջ կեցողը սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի։ Իսկ Քաղդէացւոց ելլողը ողջ պիտի մնայ, և անոր կեանքը իրեն աւարի մը պէս պիտի ըլլայ ու պիտի ապրի։ 3—Տէրը այսպէս կ՚ըսէ· Այս քաղաքը անպատճառ Բաբելոնի թագաւորին զօրքին ձեռքը պիտի տրուի, ու զանիկա պիտի առնէ։ 4—Ու իշխանները Թագաւորին ըսին, Կ՚աղաչենք, թող այս մարդը մեռցուի, վասն զի այս քաղաքին մէջ մնացած պատերազմական մարդոց ձեռքերը ու բոլոր ժողովուրդին ձեռքերը կը թուլցնէ՝ անոնց այսպիսի խօսքեր խօսելով։ վասն զի այս մարդը այս ժողովուրդին խաղաղութիւնը չփնտռեր, հապա անոր չարիքը։ 5—Եւ Սեդեկիա թագաւորը ըսաւ, Ահա անիկա ձեր ձեռքն է։ որովհետև թագաւորը ձեր քով կարող բիւն մը չունի։ 6—Ու երեմիան առին և զանիկա Թագաւորի որդւոյն Մեղքիայի գուբը նետեցին, որ բանտին գաւիթին մէջ էր, ու Երեմիան լուսաններով իջեցուցին։ և այն գուբին մէջ ջուր չկար, հապա միայն ցեղմ ու Երեմիա ցեղին մէջ կ՚ընկղմէր։

7—Ես Թագաւորին տունը եղող Եթէոպացի Ներքինին Աբդեմելէք լսեց որ Երեմիան գուբը ձգեցին։ ու Թագաւորը բնիամինի դուռը կը նստէր։ 8—Ես Աբդեմելէք Թագաւորին տունէն ելաւ, ու Թագաւորին խօսեցաւ ու ըսաւ, 9—Ով տէր իմ Թագաւոր, այս մարդիկը գէշ ըրին ամէն ինչ որ Երեմիա մարգարէին ըրին՝ զանիկա գուբը նետելով։ քանզի քաղաքին մէջ ա՛լ հաց չգտնուելուն համար՝ անիկա իր տեղը անօթութենէն *պիտի մեռնի։ 10—Ես Թագաւորը Եթէոպացի Աբդեմելէքի հրամայեց ու ըսաւ, Ասկէ քեզի հետ երեսուն մարդ առ, ու Երեմիա մարգարէն գուբէն հանէ՝ քանի որ մեռած չէ։ 11-Ես Աբդեմելէք իրեն հետ առաւ մարդիկը, ու Թագաւորին տունը չամոտանին տակ գնաց, և անկէ պատառած լաթեր ու հին լաթեր առաւ, և զանոնք լուսաններով գուբը Երեմիայի իջեցուց։ 12—Ու Եթէոպացի Աբդեմելէք Երեմիայի ըսաւ, Այս պատառած ու հին լաթերը թեւերուդ տակ լուսաններուն տակէն դիր։ ու Երեմիա այնպէս ըրաւ։ 13—Ու Երեմիան լուսաններով քաշեցին, և զանիկա գուբէն դուրս հանեցին։ ու Երեմիա բանտին գաւիթին մէջ նստաւ։

14—Ես Սեդեկիա Թագաւորը Յուդ զրկեց, ու Երեմիա մարգարէն իր քով առաւ Տէրոջը տունը եղող երրորդ մուտքը։ և Թագաւորը Երեմիայի ըսաւ, Քեզի քան մը պիտի հարցնեմ, ինծմէ բան մի պահեր։ 15—Ու Երեմիա ըսաւ Սեդեկիայի, Եթէ քեզի պատմեմ, չէ՞ որ զիս անշուշտ պիտի մեռցնես. և եթէ քեզի խրատ տամ, ինծի մտիկ պիտի չընես։ 16—Բայց Սեդեկիա Թագաւորը Երեմիայի գաղտուկ երդուեալ ըսաւ ու ըսաւ, Մեզի այս հոգին ստեղծող Տէրը կենդանի է՝ որ քեզ պիտի չմեռցնեմ, և քեզ պիտի չմատնեմ այս մարդոց ձեռքը՝ որոնք քու հոգիդ կը փնտռեն։ 17—Այն ատեն Երեմիա Սեդեկիայի ըսաւ, Զօրաց Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ՚ըսէ· Եթէ Բաբելոնի Թագաւորին իշխաններուն ելլես, քու հոգիդ ողջ պիտի մնայ, և այս քաղաքը կրակով պիտի չայրի։ հապա դուն ու քու տունդ ողջ պիտի մնաք։ 18—Բայց եթէ Բաբելոնի Թագաւորին իշխաններուն չելլես, այն ատեն այս քաղաքը Քաղդէացւոց ձեռքը պիտի տրուի, ու զանիկա կրակով պիտի այրեն։ և դուն անոնց ձեռքէն պիտի չազատիս։ 19—Ու Սեդեկիա Թագաւորը Երեմիայի ըսաւ, Քաղդէացւոց կողմը անցած Հրեաներէն կը վախնամ, չըլլայ որ զիս անոնց ձեռքը տան ու ինծի հետ անարգանքով վարուին։ 20—Ու Երեմիա ըսաւ, Պիտի չտան. կ՚աղաչեմ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէ զոր քեզի պիտի ըսեմ, որպես զի քեզի ազէկ ըլլայ ու քու անձդ ապրի։ 21—Բայց եթէ ելլել չուզես, Տէրոջը ինծի ցուցուցած բանը այս է։ 22—Ահա Յուդայի Թագաւորին տունը մնացած բոլոր կիները Բաբելոնի Թագաւորին իշխաններուն պիտի տարուին. ու այն կիները պիտի ըսեն, Քու բարեկամներդ քեզ հրապուրեցին ու քեզ յաղթեցին, ոտքերուդ տիղմի մէջ ընկղմելուն պէս՝ անոնք ետ քաշուեցան։ 23—Ես քու բոլոր կիներդ ու ազգքներդ Քաղդէացիներուն պիտի հանեն. դուն ալ անոնց ձեռքէն պիտի չազատիս, հապա Բաբելոնի Թագաւորին ձեռքով պիտի բռնուիս. և դուն *պատճառ պիտի ըլլաս որ այս քաղաքը կրակով այրի։ 24—Ու Սեդեկիա ըսաւ Երեմիայի, Այս խօսքերը մարդ մը չգիտնայ, ու դուն պիտի չմեռնիս։ 25—Եւ եթէ իշխանները քեզի հետ խօսելու գան ու քեզի գան ու քեզի ըսեն, Հիմա Թագաւորին հետ ինչ խօսեցար, մեզի պատմէ. մեզմէ մի պահեր, ու քեզ չենք մեռցներ. և Թագաւորը քեզի հետ ի՞նչ խօսեցաւ։ 26-Այն ատեն անոնց ըսես, Ես Թագաւորին առջեւ աղաչանք բրի, որ զիս Յոնաթանի տունը եւս չղրկէ որ հոն մեռնիմ։ 27-Ես բոլոր իշխանները Երեմիայի եկան ու անոր հարցուցին. և անոնց պատմեց այս ամէն խօսքերուն համեմատ՝ զորոնք Թագաւորը պատուիրեր էր։ ու անոր խօսելէն դադարեցան. վասն զի բանը չլսուեցաւ։ 28—Ու Երեմիա բանտին գաւիթին մէջ կը նստէր՝ մինչև Երուսաղէմի առնուած օրը։ ու երբ Երուսաղէմ առնուեցաւ անիկա հոն էր։

Գլ. ԼԹ

Յուդայի Սեդեկիա թագաւորին իններորդ տարին տասներորդ ամիսը, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրքովը Երուսաղէմ եկաւ, ու զանիկա պաշարեցին։ 2-Սեդեկիայի մեսասներորդ տարին չորրորդ ամիսը, ամսուն իննին փողոցին դարը ճեղքուեցաւ։ 3—Ես Բաբելոնի թագաւորին բոլոր իշխանները, այսինքն Ներգեղսարասար, Սամեգարնաբու, †Սարսեքիմ Ներքինապետը, Ներգեղսարասար մոգպետը՝ ու Բաբելոնի թագաւորին բոլոր մնացած իշխանները եկան մէջին գուռը նստան։

4—Ու երբ Յուդայի Սեդեկիա թագաւորը ու բոլոր պատերազմական մարդիկը զանոնք տեսան, փախան ու քաղաքէն գիշերով թագաւորի պարտէզին ճամբայովը երկու պարսպին մէջի դռնէն ելլան. ու ինք դաշտի ճամբան ելաւ։ 5—Ես Քաղդէացւոց զօրքը անոնց հետեւեցին հետն, ու Երիքովի դաշտերուն մէջ Սեդեկիայի հասան և զանիկա բռնեցին, ու Եմաթի երկիրը, Ռեբղայի մէջ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին առջեւ հանեցին, որ անոր դատաստանը տեսաւ։ 6—Ես Բաբելոնի Թագաւորը Ռեբղայի մէջ Սեդեկիայի տղաքը անոր աչքերուն առջեւ մորթեց։ ու Բաբելոնի Թագաւորը Յուդայի բոլոր ազնուականները մորթեց։ 7—Ես Սեդեկիայի աչքերը կուրցուց, ու զանիկա չղմանե-

*Կամ, Սարսեքիմ, Ռաբսարիս, Ներգեղսարասար, Ռաբմագ

*Եբր. այս քաղաքը կրակով պիտի այրես

*Կամ, աբդէն կը մեռնի

բով կապեց որպէս զի Բաբելոն տանի։ 8—Եւ Բաղդեացիք կրակով այրեցին Թագաւորին տունը ու Ժողովրդին տուներըը, ու Երուսաղէմի պարիսպները փլցուցին։ 9—Եւ Նաբուզարդան դահճապետը քաղաքին մէջ մնացած Ժողովրդին մնացորդը, ու իրեն ինկած փախստականները, և Ժողովրդին ուրիշ մնացորդները Բաբելոն գերի տարաւ։ 10—Ու Նաբուզարդան դահճապետը Ցուդայի երկրին մէջ թողուց Ժողովրդին աղքատներէն՝ որոնք բան մը չունէին, և նոյն օրը անոնց այգիներ ու արտեր տուաւ։

11—Ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը Երեմիայի համար Նաբուզարդան դահճապետին պատուիրեց ու ըսաւ, 12—Զանիկա առ և աչքդ անոր վրայ ըլլայ, ու անոր ամենեւին չարիք մը հատցնէր, հապա ինչ որ քեզի ըսէ՝ անոր այնպէս ըրէ։ 13—Եւ Նաբուզարդան դահճապետը ու Նաբուսազաբան ներքինապետը ու Ներգեղսարասար մգապետը և Բաբելոնի Թագաւորին բոլոր նախարարները դրկեցին, 14—Ու Երեմիան բանտին գաւթէն առին, ու զանիկա Սափանի որդւոյն Աքիկամի որդւոյն Գոդոդիայի տուին, որպէս զի զանիկա տանը մտնէ. ու անիկա Ժողովրդին մէջ բնակեցաւ։

15—Եւ Տէրոջը խօսքը եղաւ Երեմիայի, երբ անիկա բանտին գաւթին մէջ արգիլուած էր, ըսելով, 16—Գնա ԷԹԷովպացի Աբդեմելէքի խօսէ ու ըսէ, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես այս քաղաքին վրայով ըս֊ի խօսքերս ի գործ պիտի դնեմ՝ չարիքի և ոչ թէ բարիքի համար. ու այն օրը քու ա֊չքե֊ր ա՛ռջև պիտի կատարուին։ 17—Եւ այն օրը քեզ պիտի ազատեմ, կ'ըսէ Տէրը, ու պիտի չտրուիս այն մարդոց ձեռքը՝ որոնց երեսէն դուն կը վախնաս։ 18—Վասն զի քեզ անչուշտ պիտի ազատեմ, ու սրով պիտի չիյնաս. և քու կեանքդ քեզի ա֊ւարի մը պէս պիտի ըլլայ, քանզի ինծի ապաւինեցար, կ'ըսէ Տէրը։

Գլ. Խ

Այն խօսքը որ Տէրոջը եղաւ Երեմիայի եղաւ, Նաբուզարդան դահճապետին զանիկա Հռամայէ արձակելէն ետքը. (երբ Բաբելոն տարուող Երուսաղէմի ու Ցուդայի բոլոր գերիներուն մէջ զանիկա ֊ը չղթաներով կապած առած էր։)

2—Ու դահճապետը Երեմիան առնելով՝ անոր ըսաւ, Քու Տէր Աստուածդ այս տեղին վրայ այս չարիքը խօսած է։ 3—Ու Տէրը ը֊նէ֊ բերաւ ու իր ըսածին պէս ըրաւ, քանզի դուք Տէրոջը դէմ մեղք գործեցիք և անոր ձայնին մտիկ չըրիք. ու այս բանը ձեզի եղաւ։ 4—Եւ հիմա ահա այսօր քու ձեռքերուդ չղթաները փակեցի. եթէ ինծի հետ Բաբելոն երթալը քու աչքիդ առնիս՝ ա֊ռիկ է՝ եկուր, ու իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ. բայց եթէ ինծի հետ Բաբելոն երթալը քու աչքիդ գէշ կ'երեւնայ՝ զանց ըրէ, ահա բոլոր երկիրը քու առ֊ջեւդ է, ուր որ քեզի ազեկ ու հաճոյ կ'երեւնայ երթալու՝ հոն դնաւ։ 5—Ու ա֊ռ֊՛ Բաբելոնի Թագաւորին Ցուդայի քաղաքներուն վրայ դրած Սափանի որդւոյն Աքիկամի որդին Գոդոդիա դեռ ետ չդարձած՝ անոր գնաւ ու անոր հետ Ժողովրդին մէջ բնակէ, և կա՛մ ուր որ քեզի ազեկ կ'երեւնայ երթալ՝ հոն դնաւ. ու դահճապետը անոր պաշարներ ու պարգեւ տուաւ և զանիկա արձակեց։ 6—Ու Երեմիա Մասփա գնաց Աքիկամի որդւոյն Գոդոդիայի, և անոր հետ երկրին մէջ մնացած Ժողովրդին մէջ բնակեցաւ։

7—Ու զաւրը եղող բոլոր զօրավարները, իրենք ու իրենց մարդիկը, երբ լսեցին թէ Բաբելոնի Թագաւորը Աքիկամի որդին Գոդոդիան երկրին վրայ դրաւ, և Բաբելոն չգրաւած մարդիկը ու կիները և տղաքները ու երկրին աղքատները անոր յանձնեց, 8—Մասիա եկան Գոդոդիայի. այսինքն Նաթանիայի որդին Իսմայէլ, ու Կարէի որդիները, Ցօհանան ու Ցոնաթան, և Թանհումէթի որդին Սարայիա, ու Նետոփաթացի Եփայի որդիները ու Մաքաթիի որդին

Ցեզոնիա՝ Թէ՛ իրենք և Թէ՛ իրենց մարդիկը։ 9—Ու Սափանի որդւոյն Աքիկամի որդին Գոդոդիա անոնց ու անոնց մարդոցը երդում ըրաւ ու բսաւ, Քաղդեացւոց ծառայութիւն ընելէն մի վախնաք. այս երկրին մէջ բնակեցէք և Բաբելոնի Թագաւորին ծառայութիւն ըրէք, ու ձեզի աղեկ պիտի ըլլայ։ 10—Ես ահա Մասփայի մէջ կը բնակիմ, որպէս զի մեզի եկող Քաղդեացիներուն առջև կենամ. ու գուք գինի և ամառնային պտուղ ու իւղ ժողվեցէք, ու ձեր ամաններուն մէջ դրէք, և ձեր քաղաքներուն մէջ եղած փազաքներուն մէջ բնակեցէք։ 11—Ու Մոաբի մէջ և Ամմոնի որդիներուն մէջ ու Եդովմի մէջ և ամէն երկիրներու մէջ եղող բոլոր Հրեաներն ալ երբ լսեցին, որ Բաբելոնի Թագաւորը Հրեաստանի մէջ մնացորդ Թողուցեր է, ու անոնց վրայ Սափանի որդւոյն Աքիկամի որդին Գոդոդիան դրեր է, 12—Բոլոր Հրեաները ամէն իրենց ցրուած տեղերէն դարձան, ու Ցուդայի երկիրը Մասփա Գոդոդիայի հասան, և խիստ շատ գինի ու ամառնային պտուղներ ժողվեցին։

13 — Եւ Կարէի որդին Ցօհանան ու զաւրը եղող բոլոր զօրավարները Մասփա եկան Գոդոդիայի, 14—Ու անոր ըսին, Գիտե՞ս որ Ամմոնի որդիները Թագաւորը Բաալիս՝ Նաթանիայի որդին Իսմայէլը ղրկեց քեզ մեռցնելու համար. բայց Աքիկամի որդին Գոդոդիա անոնց չհաւատացաւ, 15—Ու Կարէի որդին Ցօհանան Մասփայի մէջ Գոդոդիայի հետ գաղտուկ խօսեցաւ ու բսաւ, Հիմա երթամ ու Նաթանիայի որդին Իսմայէլը զարնեմ, ու մարդ չիմանայ. ինչո՞ւ անիկա քեզ մեռցնէ, ու քովը ժողվուած բոլոր Հրեաները ցրուին, և Ցուդայի մնացորդը կորսուի։ 16—Ու Աքիկամի որդին Գոդոդիա Կարէի որդւոյն Ցօհանանի ըսաւ, Այդ բանը մի ըներ, վասն զի դուն Իսմայէլի վրայով սուտ կը խօսիս։

Գլ. ԽԱ

Ու եղաւ որ եօթներորդ ամսուն մէջ Թագաւորական սերունդէն եղող Եղիսամայի որդւոյն Նաթանիայի որդին Իսմայէլ, Թագաւորին նախարարներէն ու իրեն հետ տասը մարդով Մասփա եկաւ Աքիկամի որդւոյն Գոդոդիային, ու հոն Մկկաեղ հաց կերան Մասփայի մէջ։ 2—Ու Նաթանիայի որդին Իսմայէ֊ ու իրեն հետ եղող տասը մարդը ելան, և Սափանի որդւոյն Աքիկամի որդին Գոդոդիան սրով զարկին ու մեռցուցին զանիկա՝ զոր Բաբելոնի Թագաւորը երկրին վրայ դրեր էր։ 3—Նաև Գոթոդիայի հետ Մասփայի մէջ եղող բոլոր Հրեաները, և հոն գտնուած Քաղդեացի պատերազմականները Իսմայէլ կոտրեց։

4—Ու եղաւ որ Գոդոդիան մեռցնելէն հետքը, հետեւեալ օրը դեռ մարդ չիմացած, 5—Սիւքեմէ, Սելովէ ու Սամարիայէ՝ մօրուքնին ածիլած, և հանդերձներնին պատռած ու իրենց ֊ը֊ձերնին վրայ կտրածներ ըրած ութսուն մարդ եկան, և անոնց ձեռքը ընծաներ ու կնդրուկ կային՝ Տէրոջը տաճարը տանելու համար։ 6—Ու Նաթանիայի որդին Իսմայէլ Մասփայէ ելաւ զանոնք գիմաւորելու. անիկա գացած ատենը լալով կ'երթար. ու երբ անոնց հասաւ՝ անոնց ըսաւ, Աքիկամի որդւոյն Գոդոդիայի եկէք։ 7—Ու եղաւ որ երբ անոնք քաղաքին մէջտեղը եկան, Նաթանիայի որդին Իսմայէլ՝ ինք իրեն հետ եղող մարդոցմով զանոնք մեռցուց ու փոսին մէջ նետեց։ 8—Ու անոնց մէջ տասը մարդ գտնուեցաւ որ Իսմայէլի ըսին, Մեզ մի մեռցներ, վասն զի մենք գաշտը ցորեն, գարիի, իւղ ու մեղրի ծածուկ չտեղաններ ունինք. ուստի անիկա դադրեցաւ և զանոնք իրենց եղբայրներուն մէջ չմեռցուց։

9—Ու այն փոսը՝ որուն մէջ Իսմայէլ Գոդոդիայի *պատճառաւ բոլոր մեռցուցած մարդոցը դիերը նետեց, նոյնն էր զոր Ասա Թագաւորը չիներ էր՝ Իսրայէլի Բասա Թագաւորին երեսէն վ֊ը֊խ֊չ֊ր֊ հ֊մ֊ր֊։ Նաթանիայի որդին Իսմայէլ զանիկա մեռցուցիներով լեցուց։

10—Եւ Իսմայէլ Մասփայի մէջ եղող Ժողովրդին բոլոր մնացորդը գերի բրաւ, Թագաւորին աղջիկները ու Մասփայի մէջ մնացած բոլոր ժողովուրդը՝ որ Նաթանիայի որդւոյն Իսմայէլ Գոդոդիայի որդւոյն Աքիկամի զանոնք գերի տարած էր, զանոնք առաւ ու գնաց որ Ամմոնի որդիներուն մօտ անցնի։

11—Ու Կարէի որդին Ցօհանան ու անոր հետ եղող զօրավարներուն բոլոր չարիքը որ Նաթանիայի որդին Իսմայէլ ըրեր էր, լսեցին։ 12—Ու բոլոր մարդիկը առին ու գացին որ Նաթանիայի որդին Իսմայէլի հետ պատերազմին, և Գաբաոնի մեծ ջուրերուն քով զանիկա գտան։ 13—Ու եղաւ որ երբ Իսմայէլի հետ եղող բոլոր ժողովուրդը Կարէի որդին Ցօհանանին և անոր հետ եղող զօրավարներուն տեսան, ուրախացան։ 14—Ու Իսմայէլի գերի տարած բոլոր ժողովուրդը դարձան ու անկէ գացին Կարէի որդին Ցօհանանին քով։

15—Բայց Նաթանիայի որդին Իսմայէլ ութ մարդով Կարէի որդին Ցօհանանին առջևէն ազատեցաւ, և Ամմոնի որդիներուն մօտ անցաւ։ 16—Ու Կարէի որդին Ցօհանան և անոր հետ եղող բոլոր զօրավարները Նաթանիայի որդին Իսմայէլ Գոդոդիայի որդւոյն Աքիկամի որդւոյն Մասփայէն գերի տարած բոլոր մնացորդ ժողովուրդը՝ զոր Գաբաոնէն դարձուցեր էին, զինուորներ, կիներ, մանուկներ և ներքինապետներ՝ որոնց Գաբաոնէն դարձուցեր էին, առին ու Բեթ֊խ֊մ֊ր֊ի մօտ եղող Քամհամ անունով տեղը գացին որ հոն բնակին։ 17—Ու Եգիպտոս երթալու համար գացին, Քաղդեացիներուն երեսէն վախնալով, որովհետեւ Նաթանիայի որդին Իսմայէլ Գոդոդիայի որդւոյն Աքիկամի որդին զանոնք սպաննած էր, որ երկրին վրայ Թագաւորական սերունդէն եղող եղեր էր։

---

*կ֊ր՛ հետ

փայի մէջ Յեսսեի որդւոյն Դաւթի, որուն վրայ Նաթանայէլ գաւազանով Աբրահամի որդւոյն Իսահակի գերեզմանին վրայ եղած քարը գլորեց։ Եւ Նաթանիայի որդին Իսմայէլ գայլերու ձագերուն պէս անցնելով՝ գնաց Ամմանի որդիներուն մօտ։

11—Եւ Կարէի որդին Յովնանան ու անոր հետ եղող բոլոր զօրավարները երբ Նաթանիայի որդւոյն Իսմայէլի բոլոր բոլոր մարդիկը առին, ու Նաթանիայի որդւոյն Իսմայէլի հետ պատերազմելու գացին։ Եւ զանիկա Գաբաւոնի չոր լերկութեան քով գտան։ 13—Ու Իսմայէլի հետ եղող բոլոր ժողովուրդը երբ Կարէի որդին Յովնանանը ու անոր հետ եղող բոլոր զօրավարները տեսան, ուրախացան։ 14—Ու Իսմայէլի Մաասիայէ գերի ձգած բոլոր ժողովուրդը երեսներն դարձուցին, ու էս դառնալով՝ Կարէի որդւոյն Յովնանանի գացին։ 15—Բայց Նաթանիայի որդին Իսմայէլ ութ մարդով Յովնանանի երեսէն փախաւ, ու Ամմոնի որդիներուն գնաց։

16—Ու Կարէի որդին Յովնանան ու անոր հետ եղող բոլոր զօրավարները Նաթանիայի որդիէն Իսմայէլէ ետ բերած ժողովուրդին բոլոր մնացորդը Մասիայէ առին՝ Աբրիկամի որդւոյն Գեդոդիայի մեռցուելէն ետքը, այսինքն Գաբաւոնէ ետ բերած պատերազմող կարճենները ու կիներն ու ազաքներ ու ներքիններ։ 17—Ու գացին ու բնակեցան քով եղող Քամաամի պանդոկին մէջ Նաամն, որպէս զի երթան Եգիպտոս մտնեն 18—Քաղդէացւոց երեսէն, վասն զի անոնցմէ վախցան. քանզի Նաթանիայի որդին Իսմայէլ Բաբելոնի թագաւորին՝ երկրին վրայ դրած Աբրիկամի որդին Գեդոդիան մեռցուցեր էր։

Գլ. ԽԲ

Եւ բոլոր զօրավարները, ու Կարէի որդին Յովնանան, և Ոսէոյի որդին Եզոնիա ու բոլոր ժողովուրդը, պզտիկէն մինչև մեծը, մօտեցան։ 2—Ու երեսվրա մարգարէին ըսին, Մեր խնդիրքը քու առջեւդ ընդունելի ըլայ, ու մեզի համար, այսինքն այս բոլոր մնացորդներուն համար, քու Տէր Աստուածդ աղօթք ըրէ։ վասն զի շատեն փոքր մնացինք, ինչպես աչքերդ մեզ կը տեսնեն։ 3—Ու քու Տէր Աստուածդ մեր երթալու ճամբան ու մեր ընելու բանը մեզի իմացնէ։ 4—Ու Երեմիա մարգարէն անոնց ըսաւ, Լսեցի. ահա ձեր Տէր Աստուածդն աղօթք կ'ընեմ ձեր խօսքերուն համեմատ, և Տէրը ձեզի համար ինչ պատասխան որ տալու ըլլայ, ձեզի կ'իմացնեմ. ձեզմէ բան մը չեմ պահեր։ 5—Ու անոնք Երեմիայի ըսին, Տէրը մեր մէջ ճշմարիտ ու հաւատարիմ վկայ ըլլայ, եթէ չընենք այն ամէն բաներուն համեմատ, որոնց համար քու Տէր Աստուածդ քեզ մեզի պիտի ղրկէ։ 6—Թէ՛ բարի և թէ՛ չար, մեր Տէր Աստուածդն ձայնին պիտի հնազանդինք, որու քեզ կը ղրկենք, որպէս զի մեր Տէր Աստուածդն ձայնին հնազանդելով՝ մեզի ազէկ ըլայ։

7—Ու տասը օրէն ետքը Տէրոջը խօսքը եղաւ Երեմիայի։ 8—Ու Կարէի որդին Յովնանան և անոր հետ եղող բոլոր զօրավարները ու պզտիկէն մինչև մեծը, բոլոր ժողովուրդը, կանչեց։ 9—Ու անոնց ըսաւ, Իսրայէլի Տէր Աստուածն, որու դուք զիս ղրկեցիք ձեր ազաչանքը մատուցանելու համար, այսպէս կ'ըսէ. 10—Եթէ չարունակէք այս երկրին մէջ բնակիլ, ես ալ ձեզ պիտի չշինեմ ու պիտի չքակեմ, և ձեզ պիտի անկեմ ու պիտի չվեժեմ. վասն զի ձեզի բրած չարիքիս վրայով զղջացայ։ 11—Մի վախնաք Բաբելոնի թագաւորին երեսէն, որմէ կը վախնաք. անկէ մի վախնաք, կ'ըսէ Տէրը, վասն զի ձեզ անոր ձեռքէն ազատելու համար ու ձեզ ապրեցնելու համար ես ձեզի հետ եմ։ 12—Ու ձեզի ողորմութիւններ ընծայէ պիտի տայ, և անիկա ձեզի պիտի ողորմի, ու ձեզ ձեր երկիրը դարձնէ։ 13—Բայց եթէ ըսէք, Այս երկրին մէջ չենք բնակիր. ու ձեր Տէր Աստուածդն խօսքը մտիկ չընելով՝ 14—Ըսէք, Ոչ, հապա Եգիպտոսի երկիրը մտնենք, ուր պատերազմ պիտի չտեսնենք ու փողի ձայն պիտի չլսենք, և հացի համար անօթի պիտի չմնանք, ու հոն պիտի բնակինք։ 15—Ուրեմն հիմա Տէրոջը խօսքը մտիկ

ըրէք, ով Յուդայի մնացորդը։ Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Եթէ դուք ձեր երեսները յիշակերպ դնելու համար, ու հոն պանդրխտանալու երթաք, 16—Այն սաինն այն սուրը, որմէ կը վախնաք, հոն Եգիպտացւոց երկրին մէջ ձեր վրայ պիտի գայ, և այն սովը, որմէ դուք կը զարհուրիք, հոն Եգիպտացւոց երկրին մէջ ձեր ետեւէն պիտի պաշարէ, ու հոն պիտի մեռնիք։ 17—Ու այն ամէն մարդիկը՝ որոնք իրենց երեսները կը յիշակերպ դնելու համար, հոն պանդրխտանալու համար, սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնին. և իմ անոնց վրայ բերելու չարիքիս երեսէն անոնցմէ մնացորդ ու ազատուած պիտի չլինայ։

18—Վասն զի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ինչպէս իմ բարկութիւնս ու սրտմտութիւնս Երուսաղէմի բնակիչներուն վրայ թափեցաւ, այնպես ձեր վրայ պիտի թափի իմ սրտմտութիւնս, երբ Եգիպտոս մտնէք, և անէծքի, զարմանքի, նզովքի ու նախատինքի ԵՒ-Ի-Ց պիտի ըլլաք, ու մէյմըն ալ այս տեղը պիտի չտեսնէք։ 19—Ով Յուդայի մնացորդներ, Տէրը ձեզի համար՝ Եգիպտոս մի մտնէք՝ բաւ։ ՀԱՍՏ ազէկ գիտցէք որ այսօր ձեզի վկայութիւն կ'ընեմ, 20—Վասն զի դուք ձեր հոգիին դէմ նենգութիւն ըրիք՝ երբ դիս ձեր Տէր Աստուածդն ղրկեցիք՝ ըսելով, Մեզի համար մեր Տէր Աստուածդն աղօթք ըրէ, ու մեր Տէր Աստուածդն ամէն բան խօսքը մեզի պատմէ, ու պիտի ընենք։ 21—Ու ես այսօր ձեզի պատմեցի, ու դուք մտիկ չըրիք ձեր Տէր Աստուածդն ձայնը, ու այն ամէն Իւոէէրը՝ անոնց համար դիս ձեզի ղրկեց։ 22—Ու հիմա ազէկ գիտցէք որ դուք սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնիք այն տեղը՝ ուր կ'ուզէք երթալ հոն պանդխտանալու համար։

Գլ. ԽԳ

Երբ երեմիա բոլոր ժողովուրդին՝ անոնց Տէր Աստուածդն բոլոր խօսքերը խօսիլը լմնցուց, որոնց համար անոնց Տէր Աստուածը զանիկա անոնց ղրկեր էր, այսինքն այս բոլոր խօսքերը, 2—Այն ատեն Ովսիայի որդին Ազարիա ու Կարէի որդին Յովնանան և բոլոր ամբարտաւան մարդիկը երեմիայի խօսեցան ու բսին, Դուն սուտ կը խօսիս. մեր Տէր Աստուածը քեզ չղրկեց որ ըսէ բսելու Եգիպտոս մի մտնէք հոն պանդրխտանալու համար։ 3—Հապա Ներիայի որդին Բարուք քեզ մեզի դէմ ազ կը հանէ, որպէս զի մեզ Քաղդեացւոց ձեռքը տայ, որ մեզ մեռցնեն ու մեզ Բաբելոն գերի տանին, 4—Ու Կարէի որդին Յովնանան ու բոլոր զօրավարները և բոլոր ժողովուրդը Տէրոջը ձայնը մտիկ չըրին, որ Յուդայի երկրին մէջ բնակին. 5—Հապա Կարէի որդին Յովնանան ու բոլոր զօրավարները Յուդայի բոլոր մնացորդները առին, որոնք Յուդայի երկրին մէջ բնակելու համար ետ գարձեր էին այն բոլոր ազգերէն՝ ուր ցրուած էին. 6—Այրեններն ալ մարդիկ ու կիները, և ազաքները, ու Թագաւորին աղջիկները, և Նաբուզարգան գաշտապետին՝ Սափանի որդւոյն Աբրիկամի որդւոյն Գեդոդիայի քով Թողուցած բոլոր մարգիկը, ու Երեմիա մարգարէն, և Ներիայի որդին Բարուք։ 7—Ու Եգիպտոսի երկիրը գացին. վասն զի Տէրոջը ձայնը մտիկ չըրին, ու մինչև Տափնես եկան։

8—Ու Տափնեսի մէջ Տէրոջը խօսքը եղաւ Երեմիայի՝ ըսելով, 9—Ձեռքդ մեծ քարեր առ, ու զանոնք Յուդայի մարդոցը աչքերուն առջև Տափնես եղող՝ Փարաւոնի տանը գրանը առջեւի ազիւատուածը կաւին մէջ Թաղէ։ 10—Ու անոնց ըսէ, Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես պիտի ղրկեմ, ու իմ ծառաս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը պիտի առնեմ, և անոր աթոռը այս իմ Թաղած քարերուս վրայ պիտի գնեմ. ու անիկա իր արքայական խորանը անոնց վրայ պիտի տարածէ. 11—Ու պիտի գայ ու Եգիպտոսի երկիրը պիտի զարնէ. մահուան համար եղողները մահուան, գերութեան համար եղողները գերութեան, և սուրի համար եղողները սուրի ղէրէ ֆոդէ։ 12—Ու Եգիպտոսի աստուածներուն տաներուն մէջ կրակ պիտի բանկցնեմ. և անիկա զանոնք պիտի

այրէ ու զանոնք գետը պիտի տանի. և անկա՛ս Եգիպտոսի երկիրը պիտի հագնի, ինչպես հովիւը իր հանդերձը կը հագնի. ու անկէ խաղաղութեամբ պիտի երթայ։ 13—Ու Եգիպտոսի երկրին մէջ եղող արեւու տաճարը արձանները պիտի կոտրատի, ու Եգիպտոսի աստուածներուն տաճարները կրակով պիտի այրէ։

Գլ. ԽԴ

Եգիպտոսի երկրին մէջ բնակող բոլոր Հրեաներուն համար, այսինքն Մագդոլ, Տափնաս, Մեմփիս ու Պաթուրէսի երկրին մէջ բնակողներուն համար երեմիայի եղած խօսքն է, որ բան,

2—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Դուք տեսաք այն ամէն չարիքը զոր Երուսաղէմի վրայ ու բոլոր Յուդայի քաղաքներուն վրայ բերի. և ահա անոնք այսօր աւերակ են, ու անոնց մէջ բնակող չկայ, 3—Հրէ բարկացնելու համար զոր չարութիւններուն պատճառաւ, որ գացին, խունկ ծխեցին ու ծառայեցին ըրին ուրիշ աստուածներու, զորոնք ոչ իրենք ճանչցեր էին, ոչ դուք, ոչ ձեր հայրերը։ 4—Ու ես ձեզի դրկեցի իմ բոլոր ծառաներս մարգարէները կանուխ ելլելով ու դրկելով, և ըսի, Այդ պիղծ գործը մի ընէք, զոր ես կ'ատեմ։ 5—Բայց մարի չըրին ու ականջնին չդնեցին՝ որ իրենց չարութիւններէն դառնան և ուրիշ աստուածներու խունկ չծխեն։ 6—Ուստի իմ սրտմտութիւնս ու բարկութիւնս թափեցաւ, և Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ բորբոքեցաւ. ու անոնք այսօր ու անապատ ու ամայի եղան։ 7—Ու հիմա զօրաց Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ինչո՞ւ համար դուք ձեր հոգիին դէմ այս մեծ չարութիւնը կը գործէք, որ Յուդայի մէկէն այր մարդը ու կինը, տղան ու կաթնկեր մանուկը կորնչեցնէք այնպէս որ ձեզի մնացորդ մը չմնայ. 8—Ձեր ձեռքերուն գործերովը զիս սրդողցընելով, և ուրիշ աստուածներու խունկ ծխելով Եգիպտոսի երկրին մէջ, ուր դուք մտաք հոն պանդխտանալու. հատար, որպէս զի ձեր անձը կոտնցնէք, ու երկրի բոլոր ազգերուն մէջ անէծք ու նախատինք ըլլաք։ 9—Մոռցա՞ք դուք երկրին մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ ձեր հայրերուն բրած չարութիւնները և Յուդայի թագաւորներուն չարութիւնները, ու անոնց կիներուն չարութիւնները, և ձեր չարութիւնները ու ձեր կիներուն չարութիւնները, որ ընին ինձի մոգացո՞ք։ 10—Անոնք մինչև այս օր իրենց անձերը չխոնարհեցուցին ու չվախցան, և ձեր առջև ու ձեր հայրերուն առջև դրած օրէնքիս ու պատուիրանքներուս մէջ չքալեցին։ 11—Անոր համար զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր վրայ կը հաստատեմ իմ երեսս չարիքի համար, ու բոլոր Յուդան կորնցընելու համար։ 12—Ու պիտի առնեմ Յուդայի մնացորդը, որոնք երեսնին հաստատեցին Եգիպտոսի երկիրը մտնելու, հոն պանդխտանալու համար. ու ամէնը Եգիպտոսի երկրին մէջ պիտի հատնին. սրով, սովով պիտի իյնան՝ հատնին. պզտիկէն մինչև մեծը սրով ու սովով պիտի մեռնին, և անէծքի, զարմանքի, նզովքի ու նախատինքի խրճիթ պիտի ըլլան։ 13—Ու Եգիպտոսի երկիրը բնակողներուն այցելութիւն պիտի ընեմ, ինչպես Երուսաղէմի՝ սրով, սովով ու ժանտախտով այցելութիւն ըրի, 14—Ու Յուդայի մնացորդին, այսինքն Եգիպտոսի երկիրը պանդխտանալու գացողներուն, մնացորդ ու ազատուած պիտի չլինայ, որ Յուդայի երկիրը դառնան, ուր անոնք կը յուսան դառնալ և հոն բնակիլ. վասն զի Նէդոբոսի փախչողները միայն պիտի դառնան։

15—Ու այն բոլոր մարդիկը, որոնք գիտէին թէ իրենց կիները օտար աստուածներու խունկ կը ծխեն, և բոլոր ներկայ եղող կիները, մեծ ժողով մը, ու Եգիպտոսի երկիրը, Պաթուրէսի մէջ, բնակող բոլոր ժողովուրդը Երեմիայի պատասխան տուին՝ ըսելով, 16—Տէրոջը անունով մեզի խօսած խօսքիդ վրայով մենք քեզի մտիկ չենք ըներ. 17—Հապա անշուշտ մեր բերնէն ելած ամէն խօսքը պիտի ընենք, երկինքի թագուհիին խունկ ծխելով և անոր թափելու նուէրներ մատուցանելով, ինչպես մենք ու մեր հայրերը, մեր թագաւորները ու մեր իշխանները՝ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ, ուր հացով կշտացանք և հանգիստ էինք ու չարիք մը չտեսանք, 18—Սակայն այն ատենէն ի վեր որ երկինքի թագուհիին խունկ ծխելէն ու անոր թափելու նուէրներ մատուցանելէն ետ կեցանք, ամէն բանի կարօտ եղանք, և սրով ու սովով հատանք։ 19—Ու երբ երկինքի թագուհիին խունկ կը ծխենք և անոր թափելու նուէրներ կը մատուցանենք, միթէ առանց մեր այրերուն հրամանէն գանկիա պաշտելու համար բլիթներ չնեցինք, ու անոր թափելու նուէրներ մատուցինք։

20—Ու Երեմիա բոլոր ժողովուրդին, այրերուն և կիներուն, ու իրեն այս պատասխանը տուող բոլոր ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ, 21—Միթէ այն խունկը, զոր Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ կը ծխէիք, դուք ու ձեր հայրերը, ձեր թագաւորները ու ձեր իշխանները ու երկրին ժողովուրդը, Տէրը չյիշե՞ց ու անոր միտքը չինկա՞ւ։ 22—Ու Տէրը ձեր չար գործերուն ու ձեր բրած գարշելիքներուն համար չկրցաւ համբերել. ուստի ձեր երկիրը անապատ, ամայի ու նզովուած և անբնակ եղաւ, ինչպես այսօր կ'երեւայ։ 23—Որովհետև դուք խունկ ծխեցիք, ու Տէրոջը դէմ մեղք գործեցիք, ու Տէրոջը ձայնին հնազանդութիւն չըրիք, ու անոր օրէնքին, պատուիրանքներուն ու վկայութիւններուն մէջ չքալեցիք, անոր համար այս չարիքը ձեզի եկաւ, ինչպես այսօր կ'երեւայ։

24—Ու Երեմիա բոլոր ժողովուրդին ու բոլոր կիներուն ըսաւ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով Եգիպտոսի երկրին մէջ եղող բոլոր Յուդա։ 25—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կը խօսի ու կ'ըսէ, Դուք ու ձեր կիները ձեր բերնովը խօսեցաք, ու ձեր ձեռքովը կ'գործ ղրիք, ու ըսիք, Անշուշտ ըրած ուխտերնիս պիտի կատարենք, այսինքն երկինքի թագուհիին խունկ պիտի ծխենք, ու անոր թափելու նուէրներ պիտի մատուցանենք. այո, դուք ձեր ուխտերուն վրայ հաստատ պիտի կենաք, և ձեր ուխտերը պիտի կատարէք։ 26—Անոր համար Տէրոջը խօսքը մտիկ ըրէք, ով բոլոր Յուդա, որ Եգիպտոսի երկրին մէջ կը բնակիք. Ահա ես իմ մեծ անունովս երդուայ ըրի, կ'ըսէ Տէրը, որ Եգիպտոսի բոլոր երկրին մէջ մէկմէկ ալ բնաւ Յուդայի մարդու մը բերնէն իմ անունս պիտի չհնչուի՝ ըսելով, Կենա՛ Տէրը կենդանի է. 27— Ահա ես անոնց վրայ կը հսկեմ չարիքի համար և ոչ թէ բարիքի համար. ու Եգիպտոսի երկրին մէջ եղող Յուդայի բոլոր մարդիկը սրով ու սովով պիտի կատարին մինչև հատնին։ 28—Ու թիւ փչ մարդիկ պիտի ըլլան որ սուրէն ազատուելով՝ Եգիպտոսի երկրէն Յուդայի երկիրը պիտի դառնան, ու Եգիպտոսի երկիրը պանդխտանալու գացող Յուդայի բոլոր մնացորդները պիտի գիտնան թէ որո՛ւն խօսքը պիտի հաստատուի, ի՞մս թէ իրենց։ 29—Ու սա՛կս ձեզի նշան ըլլայ, կ'ըսէ Տէրը, որ այս տեղ ձեզի այցելութիւն պիտի ընեմ, որպէս զի գիտնաք որ իմ խօսքս ձեր վրայ անշուշտ պիտի հաստատուի չարիքի համար։ 30—Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի փարաւոն Վափրա թագաւորը իր թշնամիներուն ձեռքը ու իր հոգին փնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ. ինչպես Յուդայի Սեդեկիա թագաւորը իր թշնամիին ու իր հոգին փնտռող Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը մատնեցի։

Գլ. ԽԵ

Երեմիա մարգարէին խօսքը, զոր Նէրիայի որդւոյն Բարուքի խօսեցաւ, երբ անիկա այս խօսքերը Երեմիայի բերնէն գիրքի մէջ գրեց, Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին, ու ըսաւ, 2—Ով Բարուք, Իսրայէլի Տէր Աստուածը քեզի համար այսպէս կ'ըսէ. 3—Դուն ըսիր, Վա՛յ ինծի, վասն զի Տէրը իմ ցաւիս վրայ տրտմութիւն աւելցուց. իմ հեծութենէս յոգնեցայ ու հանգստութիւն չեմ գտներ։ 4—Անոր այսպէս ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես իմ շինածս պիտի փլցնեմ, ու իմ անկածս պիտի խլեմ, այսինքն այս բոլոր երկիրը։ 5—Ու դուն քեզի մեծ բաներ կը փնտռ-

ահս. մի փնտռեր, քանզի ահա ես ածից
մարմնի վրայ չարիք պիտի բերեմ, կ'ըսէ Տէրը, բայց քու կեանքդ քեզի աւար
մը պէս պիտի տամ քու ամէն երթալու տեղերդ։

Գլ. ԽԶ

Տէրոջը խօսքը որ եղաւ Երեմիա մարգարէին, ազգերուն վրայով։

2—Եգիպտոսի համար, Եգիպտացւոց թագաւորին, փարաւոնի նեփքամիսի մէջ եփրատ գետին քով եղող զօրքին վրայ, զոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը զարկաւ՝ Յուդայի թագաւորին Յովսիայի որդւոյն Յովակիմի չորրորդ տարին։

3—Ասպար ու վահան պատրաստեցէք
եւ պատերազմի մօտեցէք։
4—Ձիերը լծեցէք, ու դուք, ով ձիաւորներ, հեծէք։
Սաղաւարտներով կայնեցէք,
Նիզակները փայլեցուցէք, զրահները հագէք։
5—Զանոնք ինչո՞ւ համար զարհուրած
եւ դարձած կը տեսնեմ.
Անոնց զօրաւորները անգամ զարնուեցան,
Ու արագօրէն փախչելով երթից եաեւը չնայեցան.
Այնէն կողմէ վախ կայ, կ'ըսէ Տէրը։
6—Շուտ վազողը թող չփախչի,
Ու զօրաւորը չազատի.
Անոնք հիւսիսային կողմը, եփրատ գետին քով,
Գլորելով պիտի իյնան։
7-Ո՞վ է ասիկա որ գետի պէս վեր կ'ելլէ,
Որուն յորդերը գետերուն պէս կը ծփին։
8—Եգիպտոս գետի պէս վեր կ'ելլէ,
Ու նոր յորդերը գետերուն պէս կը ծփին,
Ու կ'ըսէ, Վեր ելլեմ, երկիրը ծածկեմ,
Բազաքը ու անոր բնակիչները բնաջինջ ընեմ.
9—Ով ձիեր, ելէք, և ով կառքեր, կատղեցէք։
Նէ զօրաւորները թող ելլեն,
Վահան բռնող Եթովպացիք ու Փուտացիք,
Ու աղեղ բռնող Լուդացիք։
10—Վասն զի այսօր զօրաց Տէր Եհովայի վրէժխնդրութեան օրն է.
Որ իր թշնամիներէն վրէժ առնէ.
Ու սուրը պիտի ուտէ ու կշտանայ,
Ու անոնց արիւնովը պիտի գինովնայ,
Վասն զի հիւսիսի երկրին մէջ, Եփրատ գետին քով,
Զօրաց Տէր Եհովա զոհ ունի։
11—Գաղատ ելիր ու բալասան առ,
Ով Եգիպտոսի կոյս աղջիկը.
Դեղերը սպառած տեղ կը չտանես,
Քեզի բժշկու֊թիւն չկայ.
12—Ազգերը քու անարգանքդ լսեցին,
Ու քու աղաղակդ երկիրը լեցուց.
Վասն զի զօրաւորը զօրաւորին վրայ գլորեցաւ,
Երկուքը միասին ինկան։
13—Ա֊յն խօսքը զոր Տէրը
Երեմիա մարգարէին խօսեցաւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին գալուն
՚՚ Եգիպտոսի երկիրը զարնելուն վրայով։
14—Եգիպտոսի մէջ պատմեցէք,
Մագդոլի մէջ հրատարակեցէք,
Ու Մեմփիսի ու Տափնասի մէջ հրատարակեցէք.
Ո՛ր ըսէք, կայնէ ու պատրաստ եղիր,
Վասն զի քու բոլորտիքդ սուրը պիտի ուտէ։
15—Քա՛ զօրաւորներդ ինչո՞ւ կործանեցան.
Անոնք չկրցան կենալ, վասն զի Տէրը զանոնք վար ձգեց։
16—Գլորուածները չատցու֊ց, ու իրարու վրայ ինկան.
Ու ըսին, Կելլ֊ը, ու բռնաւորութեան երեսէն
Մեկ֊ ժողովուրդին ու մեր ծննդեան երկիրը դառնանք։
17—Հոն զը կանչեին,
Եգիպտոսի փարաւոն Թագաւո֊ր ո֊րո֊շ ազաղակ է.
Անիկա էր որոշուած ժամանակը անցուց։
18—Ես կենդանի եմ, կ'ըսէ այն Թագաւորը
Որուն անունը Զօրաց Տէր է,
Ինչպէս Թաբոր լեռներու մէջ է,
Ու ինչպէս Կարմեղոս մինչև ծովը կը հասնի,
Այնպէս անկիւ պիտի գայ։
19—Ով Եգիպտոս բնակող աղջիկ,
Գերութեան կարասիներ պատրաստէ քեզի.

Վասն զի Մեմփիս ամայի պիտի ըլլայ,
Ու աւերակ֊ատանց բնակիչ չի։
20—Եգիպտոս խիստ գեղեցիկ երինջ մըն է,
Բա֊յց կատորած կու գայ, հիւսիսէն կու գայ։
21—Ու անոր մէջ վարձքով բռնուած զբօ֊ի֊ե֊ր գերեցած զուարակներու պէս են.
Քանզի անոնք ալ դարձան, միկտեղ փախան, չկայնեցան.
Վասն զի անոնց վրայ՝ անոնց կորստեան օրը
Ո֊ անոնց այցելութեան ժամանակը հասաւ։
22—Անոր ձայնը օձի յ֊ն֊չ֊ի պէս պիտի ըլլայ,
Վասն զի զօրքով պիտի հասնին,
Ու անոր վրայ փայտահարներու պէս տապարներով պիտի գան.
23—Անոր անտառը պիտի կտրեն, կ'ըսէ Տէրը,
Թէպէտև ա֊ռ֊ր֊ը անթիւ են.
Քանզի անոնք մարախէն չատ են,
Այնպէս որ չեն համրուիր։
24—Եգիպտոսի աղջիկը ամօթով պիտի ըլլայ,
Հիւսիսային ժողովուրդին ձեռքը պիտի մատնուի։
25—Զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, կ'ըսէ,
Ահա ես *Նովայի Ամոնի՝ և փարաւոնի
Ու Եգիպտոսի և անոր աստուածներուն ու թագաւորներուն,
Այո՛ նաև փարաւոնի ու անոր ապաւինողներուն, այսինքն Թիւբ պիտի ընեմ
26—Ու զանոնք՝ անոնց հոգին փնտռողներուն ձեռքը,
Ու Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը,
Ու անոր ծառաներուն ձեռքը պիտի մատնեմ.
Եւ անկէ ետքը առաջուան օրերուն պէս պիտի բնակուի՝ կ'ըսէ Տէրը։
27—Բայց դուն, ով իմ ծառա Յակոբ, մի վախնար,
Ու, ով Իսրայէլ, մի զարհուրիր.
Քանզի ահա ես քեզ հեռուէն՝

*Կամ, Նովին Ամոն բազմութեանը

Ու քու սերունդդ իրենց գերութեան երկրէն պիտի ազատեմ.
Ու Յակոբ պիտի դառնայ, և հանգարտ ու հանգիստ պիտի ըլլայ,
Եւ ըն֊դ֊ի֊ա֊ն֊ո֊ղ պիտի չըլլայ։
28—Դուն մի վախնար, ով իմ ծառա Յակոբ, կ'ըսէ Տէրը,
Վասն զի ես քեզի հետ եմ.
Քանզի պիտի ազատեմ այն բոլոր ազգերը՝
Որոնց մէջ քեզ ցրուեցի,
Բայց քեզ պիտի չազատեմ,
Հապա քեզ չափաւորութեամբ պիտի խրատեմ,
Ու քեզ բ֊ո֊վ֊ի֊ն անմեղ պիտի չհանեմ։

Գլ. Խէ

Տէրոջը խօսքը, որ Երեմիա մարգարէին եղաւ փղշտացւոց վրայով՝ դեռ փարաւոն Գազան չզարկած,

2—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա հիւսիսէն ջուրեր կ'ելլեն,
Որոնք յորդած հեղեղի պէս պիտի ըլլան,
Ու երկիրը և անոր լիութիւնը,
Քաղաքը ու անոր բնակիչները պիտի կոխեն.
Եւ մարդիկ պիտի աղաղակեն,
Ու երկրին բոլոր բնակիչները պիտի առնան,
3—Անոր երիվարներուն սմբակներուն ձայնէն,
Անոր կառքերուն չաչիւնէն
Ու անիւներուն չառաչիւնէն՝
Հայրերը էրէց ազգը պիտի չնային
Իրէնց ձեռքերուն թուլնալուն համար,
4—Բոլոր փղշտացիները կորնչելու,
Եւ Տիւրոսի ու Սիդոնի
Բոլոր մնացած օգնականները կտրելու.
Եհովա օրուանը պատճառ.
Քանզի Տէրը փղշտացիները,
Կափթոր կղզիին մնացորդները, պիտի կորնչցնէ։
5—Գազայի վրայ հնաւանդութիւն եկաւ,
Ասկաղոն իր հովիտին մնացորդովը աւերակ եղաւ.
Մինչև ե՞րբ քու մարմինդ վրայ կըտրածներ պիտի ընես։
6—Ով Տէրոջը սուրը,
Մինչև ե՞րբ հանդարտ չես կենար.
Քու պատեանդ դարձիր,

Հանգչէ ու լռէ։
7—Ի՞նչպէս կրնայ հանդարտ կենալ.
Վասն զի Տէրը անոր հրաման տուեր է
Ասկաղոնի ու ծովեզերքի դէմ,
Հոն դրկեր է զանիկա։

Գլ. ԽԸ

Մովաբի վրայով զօրաց Տէրը,
Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ.
Վա՜յ Նաբաւի, վասն զի աւերուեցաւ.
Կարիաթեմ ամչցաւ ու առնուեցաւ.
Մասգաբ ամչցաւ ու զարհուրեցաւ։
2—Մովաբ ա՛լ չկայ.
Անոր վրայ չարիք խորհեցան՝ ըսելով,
Եկէք ու զանիկա ազգ ըլլալէն կտրենք։
Դուն ալ, ով Մադմէն, պիտի կորսնաս.
Սուր հետեւիդ սուր կու գայ։
3—Որոնայիմի աղաղակի ձայն կու գայ.
Աւերում ու մեծ կոտրած կայ։
4—Մովաբ կոտրեցաւ.
Անոր պզտիկ աղաքները աղաղակ վերցուցին։
5—Քանզի Ղուխիթի զառ ի վերին վրայ
Մեծ լացով պիտի ելլեն.
Քանզի Որոնայիմի զառ ի վայրին վրայ
Թշնամիները կոտրածի աղաղակ լսեցին։
6—Փախէք, ձեր անձը ազատեցէք.
Եւ անապատին մէջի մոլորեալն պէս եղէք։
7—Քանզի քու գործերուդ ու գանձերուդ ապաւինելուդ համար՝
Դուն ալ պիտի առնուիս.
Եւ Քամոշ գերութեան պիտի երթայ
Իր քուրմերով ու իրիշխաններով միւտեղ։
8—Եւ ամէն քաղաքի վրայ կործանողը պիտի գայ,
Ու քաղաք մը պիտի չազատի.
Հովիտը պիտի կորսուի ու դաշտը պիտի աւրուի,
Ինչպէս Տէրը ըսաւ։
9—Մովաբի թեւերը տուէք որպէս զի թռչելով փախչի.
Ու անոր քաղաքները ամայի պիտի ըլլան՝ բնակիչ չունենալով։
10—Տէրոջիս գործը *ննջեցութեամբ կատարողը անիծեալ ըլլայ,
Ու իր սուրը արիւնէն խնայողը անիծեալ ըլլայ։

11—Մովաբ իր ջրայութենէն ի վեր հանգստութեան մէջ էր,
Ու էջէն էջ իր մրուրին վրայ կը նստէր,
Եւ ամանէ աման չթափուեցաւ,
Ու գերութեան չգնաց.
Անոր համար իր համը իր մէջ մնաց
Ու հոտը չփոխուեցաւ։
12—Ուստի ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ անոր փոխադրողներ պիտի ղրկեմ,
Ու զանիկա պիտի փոխադրեն,
Եւ անոր անօթները պիտի պարպեն,
Ու տիկերը կոտր կոտր պիտի ընեն։
13—Եւ Մովաբ Քամոշէ պիտի ամչնայ,
Ինչպէս Իսրայէլի տունը իր ապաւինած Բեթէլէն ամչցաւ։
14—Ի՞նչպէս կ'ըսէք թէ Մենք կորիճներ ենք,
Ու պատերազմի համար զօրաւոր մարդիկ ենք։
15—Մովաբ աւրուեցաւ և անոր քաղաքները *այրեցան,
Ու անոր ընտիր երիտասարդները մորթուելու իջան,
Կ'ըսէ այն Թագաւորը՝ որուն անունը Զօրաց Տէր է։
16—Մովաբի կորուստը գալու մօտ է,
Եւ անոր պատուհասը խիստ կ'արագանայ։
17—Ով անոր բոլորտիքը եղողներ, ամէնդ զանիկա ողբացէք,
Ու ըսէք դուք ամէնդ որ անոր անունը գիտէք,
Զօրութեան գաւազանը, պարծանացն ցուպը,
Ի՛նչպէս կոտրեցաւ։
18—Ով Դեբոնի մէջ բնակող աղջիկ,
Փառքէն իջիր ու ծարաւութեան մէջ նստէ.
Վասն զի Մովաբը կործանողը քու վրադ պիտի ելլէ,
Ու քու պարիսպներդ պիտի աւրէ։
19—Ճամբու վրայ կայնէ ու դիտէ,
Ով Արոէրի բնակիչ,
Փախչողին ու ազատողին հարցուր
Ու ըսէ թէ ի՞նչ եղաւ։
20—Մովաբ ամչցաւ, վասն զի կատեցաւ.
Հեծէծ ու աղաղակէ.

*կամ, թուլութեամբ

*եբէր, վեր ելան

Մովաբի աւրուիլը Առնոնի մէջ պատմեցէք։
21—Ու դաշտային երկրին վրայ՝
Հոլոնի, Յասսայի ու Մեփաաթի վրայ
22—Նաև Դեբոնի վրայ, Նաբաւի վրայ,
Բեթգեդլաթեմի վրայ,
23-Ու Կարիաթեմի վրայ, և Բեթգամուղի վրայ,
24-Ե. Կարիօթի վրայ, ու Բոսրայի վրայ,
Ու Մովաբի երկրին բոլոր քաղաքներուն վրայ,
Թէ՛ հեռաւոր և թէ՛ մօտաւոր։
25—Մովաբի եղիւրը կտրուեցաւ,
Ու բազուկը կոտրեցաւ՝ կ'ըսէ Տէրը։
26—Զանիկա գինովցուցէք,
Վասն զի Տէրոջը դէմ հպարտացաւ,
Ու Մովաբ թող իր փսխուածքին մէջ թաւալի,
Ե. ինք ալ ծաղր ըլլայ։
27—Մինչ Իսրայէլ քեզի ծաղր եղա՞ւ.
Անիկա գողերո՞ւ մէջ գտնուեցաւ,
Որ դուն գլուխ որ անոր վրայով կը խօսէիր՝ գլուխ կը շարժէիր։
28—Ով Մովաբի բնակիչներ,
Քաղաքները թողուցէք, վէմերու մէջ բնակեցէք,
Ու փեսի բերանին փղիրը իր բոյնը չինող աղաւնիին պէս եղէք։
29—Մովաբի ամբարտաւանութիւնը լսեցինք.
Անիկա խիստ ամբարտաւան է.
Անոր հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը, գոռոզութիւնը
Ու սրտին բարձրութիւնը լսեցէ՛ք։
30—Ես անոր սրամտութիւնը գիտեմ, կ'ըսէ Տէրը,
Բայց պարապ է.
Անոր անապարտ խօսքերը պարապ պիտի ելլեն։
31-Ուստի Մովաբի համար պիտի ողբամ,
Ու բոլոր Մովաբի համար պիտի աղաղակեմ.
Կիրհարէսի մարդոցը համար սուգ պիտի բռնուի։
32—Ով Սիբմայի որթ, քու վրադ ծագերի լացովը պիտի լամ.
Քու չաւաս իրենդ ծովին անցնելով՝
Մինչև Յազերի ծովը հասեր էին.
Քու ամառնային պտուղիդ վրայ և ւզդեհ-

կութիւդ վրայ աւերածու ինկաւ։
33—Ու պտղաբեր աբտաբէն և Մովաբի երկրէն
Ուրախութիւնը ու ցնծութիւնը պիտի վերնայ.
Ու հնձաններէն գինին գադրեցուցի.
Ցնծութեամբ խաղալ պիտի չկոխուի.
Ո՛ ցնծութեան ձայն պիտի չլսուի։
34—Եսեբոնի աղաղակէն մինչև Եղեազէ,
Մինչև Յասսա իրենց ձայնը տուին,
Երեք տարեկան երինձի պէս, Սեգավրէ մինչև Որոնայիմ.
Քանզի Նեմրիմի ջուրերը անգամ կ'աւրուին։
35—Ես Մովաբէ բարձր տեղը ոչխարկէ մատուցանողը,
Ու իր աստուածներուն խունկ ծխողը
Պիտի վերցնեմ, կ'ըսէ Տէրը։
36—Ահա պատճառաւ իմ սիրտս Մովաբի համար սրինգներու պէս պիտի հնչէ,
Ու Կիրհարէսի մարդոցը համար իմ սիրտս սրինգներու պէս պիտի հնչէ.
Վասն զի ունեցած հարստութիւնը կորսուեցաւ։
37—Քանզի ամէն գլուխ կեռասկ պիտի չլլայ,
Ու ամէն մօրուք պիտի կարուի.
Ու ամէն ձեռքերու վրայ կտրածներ պիտի ըլլան,
Ու մէջքերու վրայ քուրձ պիտի ըլլայ։
38—Մովաբի բոլոր տանիքներուն վրայ
Ու անոր փողոցներուն մէջ բոլորովին կոծ պիտի ըլլայ,
Վասն զի Մովաբը կոտրեցի պղնձիկ անօթի մը պէս
Որու մէկը չհաճիր, կ'ըսէ Տէրը։
39—Ի՞նչպէս կոտրեցաւ Մովաբ,
Ու ի՞նչպէս ամօթով կռնակ դարձուց՝
Ըսելով պիտի ողբան.
Ու Մովաբ ամէն իր բոլորտիքը եղողներուն՝
Խայտառակութեան ու ասկումի պատճառ պիտի ըլլայ։
40—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա Ը՛ն-ին արծիւի պէս պիտի թռչի,
Ու իր թեւերը Մովաբի վրայ պիտի տարածէ։

11—*Բազաքները կ'աւանեմ՝
Եւ բերդերը կը նուաճեմ,
Ու այն օրը Մովաբի զօրաւորներուն
սիրտը
Իր երկունքին մէջ եղող կնոջ սրտին պէս
պիտի ըլլայ։
12—Եւ Մովաբ ժողովուրդ ըլլալէն պիտի կորսուի,
Վասն զի Տէրոջը դէմ հպարտացաւ։
13—Ով Մովաբի բնակիչ,
Քու վրադ վախ, գուբ ու որոգայթ պիտի ըլլայ, կ'ըսէ Տէրը։
14—Վախէն փախչողը գուբը պիտի իյնայ,
Եւ գուբէն ելլողը որոգայթի մէջ պիտի բռնուի.
Քանզի անոր վրայ, Մովաբի վրայ,
Անոնց այցելութեան տարին պիտի բերեմ, կ'ըսէ Տէրը։
15—†Ու Հէշի փախչողները՝ նեբոնի հովանիին տակ կայնեցան.
Բայց նեբոնի կրակ՝
Ու Սիհոնի մէջէն բոց ելաւ,
Եւ Մովաբի ծայրը
Ու աղաղակողներուն գագաթը կերաւ։
16—Վա՛յ քեզ, Մովաբ,
Քամոսի ժողովուրդը կորսուեցաւ.
Քու որդիդ գերութեան տարուեցան
Ու աղջիկներդ գերութեան ե՛ն։
17—Բայց վերջին օրերը
Մովաբի գերութիւնը պիտի դարձնեմ,
կ'ըսէ Տէրը։
Մովաբի դատաստանը մինչև հոս է։

Գլ. ԽԸ

Ամմոնի որդիներուն վրայով Տէրը այսպէս կ'ըսէ.
Միթէ Իսրայէլ տղաքներ չունի՞.
Միթէ անիկա ժառանգ չունի.
Ինչո՞ւ Մելքամ Գադի ժառանգ եղաւ,
Ու իր ժողովուրդը անոր քաղաքներուն մէջ բնակեցաւ։
2—Ասոր համար ահա օրեր կու գան,
կ'ըսէ Տէրը,
Որ Ամմոնի որդիներուն Րաբբայի մէջ
Պատերազմի աղաղակ լսել պիտի տամ։
Ու անիկա աւերակներու դէզ պիտի ըլլայ,
Եւ անոր *գիղերը կրակ՝ վրան պիտի տրուին.
Ու Իսրայէլ իրեն տիրացողներուն վրայ պիտի տիրէ, կ'ըսէ Տէրը։
3—Ողբա՛, ով Եսբոն, վասն զի Գայի կործանեցաւ.
Աղաղակեցէ՛ք, ով Րաբբայի աղջիկնե՛ր,
Գօտիներ հագէ՛ք, լացէ՛ք
Ու ցանգ ցանգ վազեցէ՛ք.
Վասն զի Մելքամ գերութեան կ'երթայ
Իր քահանաները ու իշխաններովը միասին։
4—Ինչո՞ւ հովիտներովդ կը պարծիս.
Քու հովիտդ աւերեցաւ, ով ապստամբ աղջիկ,
Որ քու գանձերուդ ապաւիներ էիր,
Ո՝ն է՛ըսէիր Թէ իմ վրաս ո՞վ կրնայ գալ։
5—Ահա ես, կ'ըսէ զօրաց Տէր Նէհովան,
Քու վրադ վախ պիտի բերեմ
Ամէն բոլորտիդ եղողներէն,
Եւ ամէն մէկը իր առջեւէ ճամբան կը թափի՝ պիտի ցրուի,
Ու փախստականները ժողովող պիտի չըլլայ։
6—Եւ անկէետքը Ամմոնի որդիներուն գերութիւնը
Պիտի դարձնեմ՝ կ'ըսէ Տէրը։
7—Եդովմի վրայով զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Արդեօք Թեմանի մէջ ա՛լ իմաստութիւն չկա՞յ.
Ո՞ր հանճարեղներէն խորհուրդը կորսուեցա՞ւ.
Անոնց իմաստութիւնը հասա՞ւ։
8—Փախէ՛ք, դարձէ՛ք, խորունկ տեղեր բնակեցէ՛ք,
Ով Դեդանի բնակիչներ,
Վասն զի Եսաւ կորսուցը
Անոր այցելութիւն բրած ժամանակս
անոր վրայ կը բերեմ,
9—Եթէ գիզող կիներ գային
Միթէ ճիւաղներ պիտի չթողուի՞ն.
Եթէ գիշերով գողեր ե՞ն,
Իրենց բաւական եղածին չափ պիտի յափշտակեն։
10—Բայց ես Եսաւը մերկացուցի,
Անոր ծածուկ տեղերը բացի,

*Եբր. աղջիկները

Ե՛ւ անիկա պահուըտելու կարող չէ
Անոր զաւակները, անոր եղբայրները ու
անոր դրացիները կորսուեցան,
Եւ ինք չկայ։
11—Որբերդ թող ապրի, ես զանոնք
ողջ կը պահեմ.
Ու քու այրեւմտեցիներդ թող ինծի ապաւինին.
12—Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա անոնք որ բաժակը խմելու պարտաւոր չէին, անշուշտ պիտի խմեն.
Իսկ դուն բոլորովին անպատիժ պիտի մնաս.
Անպատիժ պիտի չմնաս,
Հապա անպատճառ պիտի խմես։
13—Վասն զի իմ անձիս վրայ երդուա՛ւ կ'ընեմ, կ'ըսէ Տէրը,
Որ Բոսրա ամայութիւն, նախատինք,
աւերակ ու անէծք պիտի ըլլայ,
Եւ անոր ամէն քաղաքները յաւիտենական աւերակներ պիտի ըլլան։
14—Տէրոջը կողմանէ լուր լսեցի,
Ու ազգերուն դեսպան ղրկուած է՝ որ կ'ըսէ,
Ժողովեցէ՛ք և անոր վրայ գացէ՛ք
Ու պատերազմի ելէ՛ք։
15-Քանզի ահա քեզ ազգերու մէջ պզտիկ
Ո՛ մարդոց մէջ անարգ ըրի։
16—Քու ահաւորութիւնդ, քու սրտիդ պարտութիւնը քեզ խաբեցին,
Ով վիմին խոռոչներուն մէջ բնակող
Ու բարձր բլուրները փակղող.
Թէև քու բոյնդ արծիւի պէս բարձրերը չհնես,
Քեզ անկէ պիտի իջեցնեմ, կ'ըսէ Տէրը։
17—Ու Եդովմ սոսկի պիտի ըլլայ.
Անկէ ամէն անցնողը պիտի հիանայ,
Եւ անոր բոլոր հարուածներուն համար պիտի սուլէ։
18—Սոդոմի ու Գոմորի և անոր չրջակայ դրացիներուն կործանումին պէս, կ'ըսէ Տէրը,
Հոն ա՛ւ մարդ մը պիտի չնստի,
Ու անոր մէջ մարդու զաւակ պիտի չբնակի։
19—Ահա առիւծի պէս ամբոր բնակութենէն վրայ պիտի ելլէ
Զորդանանու ե՛ւ բերբերուն յորդելէն.
Բայց անոր վրայէն չտւտով պիտի փախցնեմ զանիկա.
Եւ ո՞վ է այն ընտրեալը՝ զոր անոր վրայ դնեմ.
Վասն զի ինծի նման ո՞վ կայ,
Ու *ինծի հետ ո՞վ պիտի վիճաբանի՞.
Եւ ո՞վ է այն հովիւը որ իմ առջեւս պիտի կենայ.
20—Անոր համար Եդովմի վրայով Տէրոջը խորհած խորհուրդը
Ու Թեմանի բնակիչներուն վրայով մտածած մտածմունքը մտիկ ըրէք.
Հօտին ամենէն պզտիկը անպատճառ պիտի քշե զանոնք,
Անշուշտ անոնց բնակարանները անոնց հետ պիտի աւրէ։
21—Անոնց կործանման ձայնէն երկիր կը չարժի.
Անոնց ազաղակին ձայնը մինչև Կարմիր Ծով կը լսուի։
22—Ահա նը՛ն-ին արծիւի պէս բարձրանալով պիտի թռչի,
Ու իր թեւերը Բոսրայի վրայ պիտի տարածէ.
Եւ այն օրը Եդովմի զօրաւորներուն սիրտը
Իր երկունքին մէջ եղող կնոջ սրտին պէս պիտի ըլլայ։
23—Դամասկոսի վրայով։
Եմաթ ու Արփադ ամչցան,
Քանզի գէշ լուր լսեցին՝ ո՛ մաթեցան.
Ծովուն մէջ տատապանք կայ
Ու անիկա չկրնար հանդարտիլ։
24—Դամասկոս ակարացաւ,
Փախչելու դարձաւ,
Արհաւիրքը անոր վրայ հասաւ.
Ձանիկա ծննդական կնոջ պէս նեղութիւն ու ցաւեր բռնեցին։
25—Ինչպէս չի ողուեցաւ երեւելի քաղաքը,
Իմ ուրախութեանս քաղաքը։
26—Ուստի անոր կոչումները իր հրապարակներուն մէջ պիտի իյնան,
Եւ բոլոր պատերազմական մարդիկը
Այն օրը բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէրը։
27—Ու Դամասկոսի պարսպին մէջ կրակ պիտի բռնկցնեմ,
Ու Բենհադադի պալատները պիտի ուտէ։
28—Կեդարու վրայով ու Հասորի թա-

*Կամ, ով ինծի ժամանակ պիտի որոշէ

*Կամ, կաբհօթը կ'աւանուբ. Հմմ. 24։
†Կամ, փախչողները ուժէ ինկած՝

գաւառութիւններուն վրայով, զորոնք
Բաբելոնի Նաբու-գոդոնոսոր թագաւորը
զարկաւ, Տէրը այսպէս կ'ըսէ.
Նէյ, կեդարու վրայ գացէք,
եւ արեւելքի բնակիչները յարդեցէք.
29—Անոնց վրաններըը ու հօտերը պիտի
առնեն,
Անոնց վարագոյրները ու բոլոր կարա-
սիները
եւ ուղտերը իրենց համար պիտի տանին.
Ու անոնց ձայն պիտի արուի թէ
Սէմն կողմանէ վախ կայ.
30—Փախէք, չուռով հեռացէք,
խորունկ տեղը բնակեցէք,
Ով Հասորի բնակիչներ, կ'ըսէ Տէրը,
վասն զի Բաբելոնի Նաբու-գոդոնոսոր
թագաւորը
Ձեզի դէմ խորհուրդ մը խորհեցաւ,
Ու ձեզի դէմ դիտաւորութիւն մը մտա-
ծեց,
31—Նէյ ու հանգստութեան Ե ա-
պահովութեան մէջ բնակող
ազգին գացէք, կ'ըսէ Տէրը,
Որ դռներ ու նիգեր չունի ու առանձին
կը բնակի:
32—Եւ անոնց ուղտերը աւար պիտի
ըլլան,
Ու անոնց խաշինքներուն բազմութիւնը
պիտի յափշտակուի.
Եւ էրէոց մօրուքին ծայրը կարղնելը
ամէն հովի պիտի ցրուեմ,
Ու անոնց կործանումը ամէն կողմէն
պիտի բերեմ, կ'ըսէ Տէրը.
33—Եւ Հասոր չգաղձներու բնակարան,
Յաւիտենական ամայութիւն, պիտի ըլ-
լայ.
Հոն մարդ պիտի չնստի,
Ու հոն մարդու զաւակ պիտի չբնակի:
34—Յուդայի Թագաւորին Սեդեկիա-
յի Թագաւորութեան սկիզբը Եղամի
վրայով երեմիա մարգարէին եղած Տէ-
րոջը խօսքն է, որ ըսաւ,
35—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես Եղամի աղեղը,
Անոնց գլխաւոր զօրութիւնը, պիտի
կոտրեմ,
36—Ու Եղամի վրայ երկինքի չորս կող-
մէն չորս հովերը պիտի բերեմ,
Եւ զանոնք այս բոլոր հովերուն պիտի
ցրուեմ.
Ու պիտի չըլլայ ազգ մը, որու Եղամի
փախստականները չերթան:
37—Ու Եղամացիք իրենց թշնամինե-
րուն առջեւ
Եւ իրենց հոգին փնտռողներուն առջեւ
պիտի վախցնեմ,
Ու անոնց վրայ պատուհաս պիտի բերեմ,
Այո՛ինքն իմ սաստիկ բարկութիւնս,
կ'ըսէ Տէրը,
Եւ անոնց ետեւէն սուր պիտի ղրկեմ,
Մինչեւ զանոնք հատցնեմ:
38—Ու իմ աթոռս Եղամի մէջ պիտի
դնեմ,
Եւ անկէ թագաւոր ու իշխանները պիտի
կորսնցնեմ, կ'ըսէ Տէրը:
39—Բայց վերջին օրերը
Եղամի գերութիւնը պիտի դարձնեմ,
կ'ըսէ Տէրը:

ԳԼ. Ե

Բաբելոնի վրայով, Քաղդէացւոց
երկրին վրայով, Երեմիա մարգարէին
ձեռքով Տէրոջը խօսած խօսքը:
2—Ազգերուն մէջ պատմեցէք.
Հրատարակեցէք ու դրօշ վերցուցէք.
Հրատարակեցէք — մի ծածկէք, — ը-
ըսէք.
Բաբելոն առնուեցաւ, Բէլ ամչցաւ,
Մարովդաք կոտրեցաւ,
Անոր արձանները ամչցան,
Անոր կուռքերը կոտրտեցան.
3—Վասն զի անոր վրայ հիւսիսէն ազգ
մը ելաւ,
Անիկա անոր երկիրը աւերակ պիտի դնէ,
Ու հոն բնակիչ պիտի չմնայ.
Մարդ մինչեւ անասուն պիտի փախչին
երթան:
4—Ա՛յն օրերը ու այն ժամանակը,
կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի որդիները, իրենք ու Յուդայի
որդիները, միկտեղ պիտի գան,
Գալլելով ու լալով պիտի երթան,
Եւ իրենց Տէր Աստուածը պիտի փնտռեն:
5—Սիովնի համար պիտի հարցնեն՝
Իրենց երեսը դէպ ի հոն դ-ըշ-նե-լով.
Եկէք ու Տէրոջը յարինք
Յաւիտենական ու անմոռաց ուխտով մը:
6—Իմ ժողովուրդս կորսուած ոչ-
խարներու պէս եղաւ,

Զանոնք իրենց հովիւները մոլորեցուցին,
Զանոնք լեռներու վրայ պատրաստին.
Անոնք — լ լեռնէ լե- — բ-ր-ր բլուր
գացին,
Ո- իրենց մակաղատեղը մոռցան:
7—Ամէն գտնողները զանոնք կերան.
Ու անոնց թշնամիները ըսին,
Մենք յանցանք չունինք,
վասն զի անոնք արդարութեան բը-
նակարան եղող Տէրոջը դէմ,
Ու իրենց հայրերուն յոյսը եղող Տէ-
րոջը դէմ մեղք գործեցին:
8—Բաբելոնի մէջէն փախէք,
Ու Քաղդէացւոց երկրէն ելէք,
Եւ հօտերուն առջեւէն ֆ-ը-դ նոխազ-
ներուն պէս եղէք:
9—Քանզի ահա ես Բաբելոնի վրայ
Հիւսիսի երկրէն մեծ ազգերու ժողովք
Պիտի արթնցնեմ ու հանեմ,
Ու անոր առջեւ գունդերով պիտի չար-
ուին,
Անկէ պիտի առնուի.
Անոնց նետերը, յաղողակ պատերազմո-
ղի նետերուն պէս,
Պարապ պիտի չդառնան:
10—Եւ Քաղդէացւոց երկիրը աւար պի-
տի ըլլայ,
Ո- զանիկա բոլոր թալանողները պիտի
կշտանան, կ'ըսէ Տէրը:
11—Որովհետեւ դուք ուրախացաք
ու խնդացիք,
Ով իմ ժառանգութեանս կողոպտիչներըը,
•կանանչ խոտերու մէջ արածուող" ե-
րինջի պէս ցաթկեցէք,
Ու երիվարներու պէս վրնջեցէք:
12—Ձեր մայրը խիստ ամչցաւ.
Ձեզ ծնանողը ամօթով եղաւ.
Ահա անիկա ազգերուն յետինը,
Անապատ, անջուր ու ամայի պիտի ըլլայ:
13—Տէրոջը բարկութեանը պատճառաւ
հոն մարդ պիտի չբնակի,
Հապա բոլորովին ամայի պիտի ըլլայ.
Բաբելոնէ ամէն անցնողը
Անոր բոլոր հարուածներուն վրայ
Պիտի հիանայ ու պիտի սուլէ:
14—Բաբելոնի դէմ չուրջանակի չար-
ուեցէք,
Դուք բոլոր պզեղ լարողներ,
Անոր նետեցէք, նետին մի խնայէք,
Քանզի անիկա Տէրոջը դէմ մեղք գործեց:
15—Անոր դէմ չուրջանակի աղաղակ
վերցուցէք.
Անիկա իր ձեռքը տուաւ.
Անոր հիմերը կործանեցան,
Անոր պարիսպները աւերեցան,
Վասն զի սա Տէրոջը վրէժխնդրու-
թիւնն է.
Անկէ վրէժ առէք,
Անոր իր ըրածին համեմատ ըրէք:
16—Բաբելոնէ սերմանողը ու հունձքի
ժամանակ մանգաղ բռնողը
կտորեցէք.
Բռնաւոր սուրին երեսէն
Ամէն մարդ իր ժողովուրդին պիտի դառ-
նայ,
Ու ամէն մարդ իր երկիրը պիտի փախչի:
17—Իսրայէլ մոլորեալ ոչխար մը է,
Առիւծները ը-նդ-ի- հալածեցին.
Ա՛նքիս Ասորեստանի Թագաւորը
կերաւ,
Ու հոպը այս Բաբելոնի Նաբու-գոդոնո-
սոր թագաւորը անոր ոսկորները
կրծեց:
18—Ասոր համար զօրաց Տէրը, Իսրա-
յէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ.
Ահա ես Բաբելոնի թագաւորին ու անոր
երկրին այցելութիւն պիտի ընեմ,
Ինչպէս Ասորեստանի թագաւորին այցե-
լութիւն բրի:
19—Եւ Իսրայէլը իր բնակարանը պիտի
դարձնեմ,
Ու Կարմէղոսի ու Բասանի մէջ պիտի
արածի,
Ու անոր հոգին Եփրեմի լեռանը վրայ
Ու Գաղաադացւոյ վրայ պիտի կշտանայ:
20—Այն օրերը ու այն ժամանակը,
կ'ըսէ Տէրը,
Իսրայէլի անօրէնութիւնը պիտի փընտ-
ռուի,
Բայց անիկա ո-ւ-ր-ե-ք պիտի չեւ-
նենայ.
Եւ Յուդայի մեղքերը ը-ղ-ծ-ո-ւ-ի,
Բայց պիտի չգտնուին.
Վասն զի իմ պահած ճեացորդներուս
Ներէը պիտի ներեմ,
21—•Մերաթայիմի երկրին վրայ

•Այո՛ինքն, ապստամբութեան

•կամ, Յարեն Ծեծող

Եւ *փակուդի քանկիչներուն վրայ ելլէր.
Անոնց հոտէն առէր,
Ու նզովածի պէս քնացինէ ըրէր, կ'ըսէ Տէրը,
Եւ քեզի ամէն պատուհասածիս պէս ըրէ։
22—Երկրին մէջ պատերազմի ձայն
Ու մեծ կատաղած կայ,
23—Բալըը երկրի մէջտեղը ի՛նչպէս կատրեցաւ ու մաներեցաւ,
Բաբելոն ազգերուն մէջ ի՛նչպէս աւերակ եղաւ.
24—Բեզի որոգայթ լարեցի ու բռնուեցար, օվ Բաբելոն,
Բայց դուն չգիտցար.
Գտնուեցար ու ձեռք անցար,
Վասն զի Տէրոջը դէմ հակառակեցար։
25—Տէրը իր զինարանը բացաւ
Ու իր բարկութեան զէնքերը հանեց,
Քանզի Բաղդէացւոց երկրին մէջ
Զօրաց Տէր Եհովան գործ ունի,
26—Եւ էէ ծայրէն անոր վրայ եկէք,
Անոր չոհեմարանները բացէք,
Զանիկա չեղէրու պէս դիզեցէք,
Ու նզովածի պէս զանիկա բնաջինջ ըրէք.
Անոր մնացորդ մը չմնայ։
27—Անոր բոլոր զուարակները կոտորեցուցէք,
Թող անոնք սպանդանոցը իջնեն.
Վա՛յ անոնց, քանզի անոնց օրը,
Անոնց այցելութեան ժամանակը, հասած է։
28—Բաբելոնի երկրէն փախչողներուն ու ազատուածներուն ձայնը [է],
Որպէս զի մեր Տէր Աստուծոյն վրէժխնդրութիւնը,
Անոր տաճարին վրէժխնդրութիւնը, Սիոնի մէջ պատմէ։
29—Բաբելոնի վրայ †ազեղնաւորները կանչեցէք.
Ով բոլոր աղեղ լարողներ,
Անոր բոլորտիքը անոր դէմ բանակեցէք.
Ձըլլայ որ մարդ մը ազատի,
Անոր իր գործերուն համեմատ հատուցում ըրէք,
Անոր իր ամէն ըրածին համեմատ ըրէք.
Վասն զի անիկա Տէրոջը դէմ,
Իսրայէլի Սուրբին դէմ, հպարտութիւն ըրաւ։
30—Ուստի անոր կոլիճները իր հրապարակներուն մէջ պիտի իյնան,
Եւ անոր բոլոր պատերազմական մարդիկը
Այն օրը բնաջինջ պիտի ըլլան, կ'ըսէ Տէրը։
31—Ահա ես քեզի դէմ եմ, օվ հպարտ, կ'ըսէ զօրաց Տէր Եհովան.
Քանզի քու օրդ, քեզի այցելութիւն ընելու ժամանակս, հասած է,
32—Եւ հպարտը գլորելով պիտի իյնայ,
Ու մէ՛կը պիտի չըլլայ որ զանիկա վերցնէ.
Եւ անոր քաղաքներուն մէջ կրակ պիտի բռնկցնեմ,
Որ անոր բոլոր չրջակայ տեղերը պիտի ուտէ։
33—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Իսրայէլի որդիները ու Յուդայի որդիները միկտեղ զրկանք կրեցին.
Ու անոնց բոլոր գերեվարները զանոնք բռնեցին,
Ո՛չ են ուզեր զանոնք արձակել։
34—Անոնց Փրկիչը զօրաւոր է,
Անոր անունը Զօրաց Տէր է.
Անիկա անշուշտ անոնց դատին կատարեալ գով պիտի ըլլայ,
Որպէս զի երկրին հանգստութիւն տայ,
Ու Բաբելոնի բնակիչները խռովելնէ։
35—Տէրը կ'ըսէ որ Քաղդէացւոց վրայ
Ու Բաբելոնի բնակիչներուն վրայ
Եւ անոր իշխաններուն ու իմաստուններուն վրայ սուր [է],
36—Սամբօսներուն վրայ սուր [է], ու պիտի խենթենան.
Անոր կարճեներուն վրայ սուր [է], ու պիտի զարհուրին.
37—Անոր ձիերուն ու կառքերուն վրայ
Եւ անոր մէջ եղող բոլոր խառնիճաղանճ բազմութեանը վրայ սուր [է],
Ու կիներու պէս պիտի ըլլան.
Անոր գանձերուն վրայ սուր [է], ու պիտի յափշտակուին.
38—Անոր ջուրերուն վրայ չորութիւն [է], ու պիտի ցամքին.
Քանզի անիկա գրաչտանկերու երկիր է,
Ու էրէոց կուռքերովը կը յիմարին։

*Այսինքն, այցելութեան
†կամ, չաուերը

39—Անոր համար հոն վայրենի կատուները ու բուերնիները պիտի բնակին,
Ու հոն ջայլամները պիտի բնակին.
Եւ անիկա ուրիշն ալ մարդաբնակ պիտի չըլլայ,
Ու ազգ ազգ հոն բնակիչ պիտի չըլլայ։
40—Աստուածոյ Կոմորհան Սոդոմին ու Գոմորին
Եւ անոր չրջակայ [ք]ներուն պէս, կ'ըսէ Տէրը,
Հոն [՚]ի մարդ մը պիտի չնստի,
Եւ անոր մէջ մարդու զաւակ պիտի չբնակի։
41—Ահա հիւսիսէն ժողովուրդ կու գայ,
Ու մեծ ազգ և շատ թագաւորներ
Երկրի ծայրերէն պիտի արթնանան։
42—Անոնք ազեղ ու նիզակ կը կրեն,
Անոնք անգութ ու անողորմ են.
Անոնց ձայնը ծովու պէս կը գոռայ,
Եւ անոնք ձիերու վրայ կը հեծնեն,
Ու պատերազմող մարդու պէս
Քեզի դէմ կը շարուին, օվ Բաբելոնի աղջիկ։
43—Երբ Բաբելոնի թագաւորը անոնց լուրը լսեց,
Անոր ձեռքերը թուլցան.
Նեղու[թիւնը չրջապատեց զանիկա
Ծննդական կնոջ երկունքին պէս։
44—Ահա անիկա առիւծի պէս ամուր բնակարանին վրայ պիտի ելլէ
Յորդանանու [ե]բերէ[ն] յորդելէն.
Բայց անոր վրայէն չտեսուվ պիտի փախցնեմ զանոնք.
Եւ ո՞վ է այն ընտրեալը՝ զոր անոր վրայ դնեմ.
Վասն զի ինծի նման ո՞վ կայ,
Ու ինծի հետ ո՞վ պիտի վիճաբանի.
Եւ ո՞վ է այն հովիւը որ իմ առջեւս պիտի կենայ։
45—Անոր համար Բաբելոնի վրայով Տէրոջը խորհած խարհուրդը
Ու Քաղդէացւոց երկրին վրայ մտածած մտածմանքը մտիկ ըրէք.
Հօտին ամենէն պզտիկը անպատճառ պիտի քչէ զանոնք.
Անոնց [ա]նոնց բնակարանները անոնց հետ պիտի աւրէ։
46—Բաբելոնի առնուելուս ձայնէն երկիրը կը չարժի,
Ու ազգերուն մէջ աղաղակ կը լսուի։

ԳԼ. ՆԱ

Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես Բաբելոնի վրայ
Ու իմ Թշնամիներուս մէջտեղ բնակողներուն վրայ
Ապականիչ հով մը պիտի հանեմ։
2—Եւ Բաբելոնի վրայ հսկողներ պիտի զրկեմ,
Ու զանիկա պիտի հսկեն և անոր երկիրը պիտի պարպեն.
Վասն զի պատուհասին օրը անոր վրայ ամէն կողմէն պիտի գան։
3—Աղեղնաւորը պիտի լարէ իր ազեղը ազեղնաւորին դէմ
Ու իր զրահովը հպարտացողին դէմ.
Եւ անոր երիտասարդներուն մի խնայէք,
Անոր բոլոր զօրքը նզովածի պէս բնաջինջ ըրէք։
4—Ու Քաղդէացւոց երկրին մէջ սպանուածներով
Եւ անոր հրապարակներուն մէջ խոցոտուածներով պիտի իյնան։
5—Քանզի Իսրայէլ ու Յուդա իր Աստուածմէն,
Զօրաց Տէրոջմէն, չմերժուեցաւ,
Թէպէտև անոնց երկիրը Իսրայէլի Սուրբին դէմ
Յանցանքով լեցուեցաւ։
6—Բաբելոնի մէջէն փախեք,
Ու ամէն մարդ Թող իր անձը ազատէ,
Որպէս զի անոր անօրէնութիւնովը չկործանիք.
Քանզի ատիկա Տէրոջը վրէժխնդրութեան ժամանակն է,
Ինք անոր հատուցում պիտի ընէ։
7—Բաբելոն Տէրոջը ձեռքին մէջ
Բոլոր երկիրը գինովցնող ոսկի գաւաթ եղաւ.
Անոր գինիէն ազգերը խմեցին,
Անոր համար ազգերը յիմարեցան։
8—Բաբելոն յանկարծ ինկաւ կատրեցաւ.
Անոր վրայ ողբացէք.
Անոր վէրքին համար բալասան առէք,
Թերեւս բժշկութիւն գտնէ։
9—Բաբելոնի դէզ ըրինք, բայց բժշկութիւն չգտաւ.
Զանիկա Թողէք, ու մեզմէ ամէն մէկը իր երկիրը երթայ.

վասն զի անոր դատաստանը մինչև երկինք հասաւ,
Ու մինչև ամպերըելաւ։
10—Տէրը մեր արդարութիւնը երեւան հանեց.
եկէք, ու Սիոնի մէջ
Մեր Տէր Աստուածոյն գործը պատմենք։
11—Նետերը փայլեցուցէք, վահանները առէք.
Տէրը Մարաց թագաւորներուն հոգին արթնցուց,
Բանզի Բաբելոնի վրայով խորհեցաւ որ զանիկա բնաջինջ ընէ.
վասն զի սաիկա Տէրոջը վրէժխնդրութիւնը,
Իր տաճարին վրէժխնդրութիւնն, է։
12—Բաբելոնի պարիսպներուն դէմ դրօշ վերցուցէք,
Պահապան զօրքը ուժովցուցէք,
Դիտաւոր կարգեցէք, դարանները պատրաստեցէք,
Բանզի Տէրը որոշեց,
Ու Բաբելոնի բնակիչներուն վրայով ըրած խօսքը կ'գործ դրաւ։
13—Ով շատ ջուրերու քով բնակող ու շատ գանձեր ունեցող,
Քու վախճանդ ու քու ագահութեանդ չափը եկաւ.
14—Զօրաց Տէրը իր անձին վրայ երդուաւ ըսաւ՝ ընդ[illegible]ով
Անշուշտ քեզ մարախի ե[illegible]նը
չափ մարդոցմով պիտի լեցնեմ
Ու քու վրադ բարբ ձայնով պիտի պոռան։
15—Երկիրը իր զօրութիւնովը չնեց,
Աշխարհը իր իմաստութիւնովը հաստատեց,
Ու երկինքը իր խորհրդովը տարածեց։
16—Երբ իր ձայնը կու տայ, երկինքի մէջ
Ջուրերու բազմութիւն կ'ըլլայ,
Ու երկրի ծայրերէն շոգիներ կը հանէ.
Անձրեւի համար փայլակներ կը շինէ,
Ու հով կը հանէ իր շտեմարաններէն։
17—Ամէն մարդ գիւտութենէ զ[illegible]ծ անսուտն դարձաւ,
Ամէն ոսկերիչ էր քանդակած կուռքին պատճառաւ ամօթալի եղաւ.
վասն զի իր ձուլածոյ կուռքը սուտութիւն է,
Ու անոնք հոգի չունին։
18—Անոնք ունայնութեան և խաբեութեան գործեր են.
Անոնց այցելութիւն եղած ատեն անոնք պիտի կորսուին։
19—Յակոբի բաժինը ասոնց պէս չէ,
Վասն զի անիկա ամէն բանը Ստեղծողն է,
Ու Իսրայէլ անոր ժառանգութեան վիճակն է.
ե՛ անոր անունը Տէրովա Սաբաւովթ է։
20—Դուն իմ կռանիս, պատերազմական գործիքս, ես.
Ես քեզմով ազգեր պիտի կտրեմ,
Ու քեզմով թագաւորութիւններ պիտի աւերեմ,
21—Ես ձին ու անոր հեծեալը քեզմով պիտի կտրեմ,
Ու կառքը և անոր վրայ հեծնողը քեզմով պիտի կտրեմ,
22—Ու քեզմով մարդը ու կինը պիտի կտրեմ,
Ես քեզմով ծերը և երիտասարդը պիտի կտրեմ,
Ու կոյսը քեզմով պիտի կտրեմ,
23—Ու հովիւը և անոր հօտը քեզմով պիտի կտրեմ,
Երկրագործը ու անոր եզներուն զոյգը քեզմով պիտի կտրեմ,
Ես կառավարիչները ու նախաձեռնները քեզմով պիտի կտրեմ։
24—Ես Բաբելոնի ու Քաղդէացւոց երկրին բոլոր բնակիչներուն
Պիտի հատուցանեմ իրենց բոլոր չարութիւնը,
Ձեր ձեր աչքերուն առջեւ Սիոնի ըրին,
կ'ըսէ Տէրը։
25—Ով բոլոր երկիրը աւերող ապականիչ լեռ,
Ահա ես քեզի դէմ եմ, կ'ըսէ Տէրը,
Ես իմ ձեռքս քու վրադ պիտի երկնցնեմ,
Ու քեզ վէմերէն վար պիտի գլորեմ,
Ես քեզ այրած լեռ պիտի ընեմ.
26—Ու քեզմէ անկեան քար և հիման քար պիտի չառնեն,
Քանզի յաւիտենական աւերակ պիտի ըլլաս, կ'ըսէ Տէրը։
27—Երկրին մէջ դրօշ վերցուցէք,
Ազգերուն մէջ փող հնչեցուցէք,
Անոր դէմ ազգեր պատրաստեցէք,

Անոր վրայ Արարատի, Մինննի ու Ասքանազի թագաւորութիւնները կանչեցէք,
Անոր վրայ զօրապետները դրէք,
Մազաս մարախներուն պէս ձիեր հանեցէք.
28—Անոր վրայ ազգեր, Մարաց թագաւորները,
Անոնց կուսակալները ու բոլոր նախաբարները
Ես անոնց իշխանութեանը բոլոր երկիրը պատրաստեցէք։
29—Ու երկիրը պիտի դողայ ու նեղութիւն կրէ,
Վասն զի Բաբելոնի վրայով Տէրոջը ուղղած խորհուրդները պիտի հաստատուին,
Բաբելոնի երկիրը անբնակ ամայութիւն ընելու համար։
30—Բաբելոնի զօրաւոր մարդիկը պատերազմելէն դադրեցան,
Բերդերու մէջ բնակեցան.
Ու ժայռերին կտրեցաւ, կիներու պէս եղան.
Անոր բնակարանները այրեցին, անոր նիգերը կոտրեցան։
31—Սուրհանդակը սուրհանդակի հանդիպելու,
Ու լուրերը լուրերի հանդիպելու պիտի վազէ,
Բաբելոնի թագաւորին պատմելու համար
Թէ անոր քաղաքը մէկ ծայրէն առնուեցաւ,
32—Ես թէ անցքերը բռնուեցան,
Ու եղէգները կրակով այրեցան,
Ես պատերազմական մարդիկը զարհուրեցան։
33—Քանզի զօրաց Տէրը, Իսրայէլի Աստուածը, այսպէս կ'ըսէ.
Բաբելոնի աղջիկը կալի պէս է,
Անոր ժամանակը ատենն է.
Քիչ ատենէն հունձքին ժամանակը պիտի գայ։
34—Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը
Զիս կերաւ, զիս բնաջինջ ըրաւ,
Զիս պարապ ամանի պէս ըրաւ,
Վիշապի պէս զիս կլլեց,
Իմ փափկութիւններէս իր փորը կշտացուցաւ,
Զիս դուրս նետեց։
35—Սիոնի բնակիչը պիտի ըսէ,
Ինձի ու իմ մարմինս եղած զրկանքը Բաբելոնի վրայ ըլլայ։
Ու Երուսաղէմ պիտի ըսէ,
Իմ արիւնս Քաղդէացւոց երկրին բնակիչներուն վրայ ըլլայ։
36—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես քու գործիդ պաշտպան պիտի կանգնիմ,
Ու քեզի համար վրէժխնդիր պիտի ըլլամ,
Ես անոր ծովը ցամաք պիտի ընեմ,
Ու անոր աղբիւրը պիտի չորցնեմ։
37—Ես Բաբելոն [illegible]ի դէզերը,
Շագալներու բնակարան,
Ո՛ զարմանքի և սուլելու խրո[illegible]ի պատի ըլլայ,
Ու հոն մարդ պիտի չբնակի։
38—Անոնք առիւծներու պէս միասին պիտի մռնչեն,
Ե՛ կորիւններու պէս պիտի կանչուրտեն։
39—Երբ անոնք ջերմացան, ա[illegible]նց կոչունք պիտի ընեմ,
Ու զանոնք պիտի գինովցնեմ, որպէս զի զուարճանան,
Ես յաւիտենական քունով քնանան
Ու չարթննան, կ'ըսէ Տէրը։
40—Զանոնք սպանդանոցը պիտի իջեցնեմ գառներու պէս
Կ՛ոչխարներու հետ։
41—Ի՛նչպէս առնուեցաւ Սիսակ,
Ու բոլոր երկրի պարծանքը բռնուեցաւ.
Բաբելոն ի՛նչպէս աւերակ եղաւ ազգերուն մէջ։
42—Ծովը Բաբելոնի վրայ ելաւ,
Անոր ալիքներուն չաւութենէն ծածկուեցաւ։
43—Անոր քաղաքները աւերակ,
Անջուր երկիր ու անապատ եղան.
Ես այնպիսի երկիր մը եղան ուր մարդ չբնակիր,
Ու անկէ մարդու զաւակ չանցնիր։
44—Ես Բաբելոնի մէջ Բէլն այցելութիւն պիտի ընեմ,
Ու անոր բերնէն անոր կլլածը պիտի հանեմ.
Ու ժխտին ազգերը անոր պիտի չդիմեն,
Բաբելոնի պարիսպն ալ պիտի փլի։
45—Անոր մէջէն ելէք, ով իմ ժողովուրդս,

Եւ ամէն մարդ. Քաղ իր անձը ազատէ
Տէրոջը սաստիկ բարկութենէն։
46—Ու չըլլայ որ երկրին մէջ լսուելու լուրն
Չեր սիրտը թուլնայ ու վախնաք,
երբ մէկ տարուան մէջ լուր մը,
եւ հետեւեալ տարուան մէջ ուրիշ լուր մը գայ,
Ու երկրին մէջ բռնութիւն ըլլայ,
Ս= իշխան իշխանի դէմ •պէ՛ եղէ։
47—Անոր համար ահա օրեր կու գան
Որ Բաբելոնի կուռքերուն այցելութիւն պիտի ընեմ.
Ու անոր բոլոր երկիրը ամօթով պիտի ըլլայ,
եւ անոր բոլոր սպանուածները անոր մէջ պիտի իյնան։
48—Ու երկինք ու երկիր և բոլոր անոնց մէջ եղածը
Բաբելոնի վրայ պիտի ցնծան,
Վասն զի աւերողները հիւսիսէն պիտի գան անոր, կ'ըսէ Տէրը։
49—Ինչպէս Բաբելոն իսրայէլի սպանուածները վար ձգեց,
Այնպէս Բաբելոնի մէջ բոլոր երկրին սպանուածները պիտի իյնան։
50—Ով սուրէ ազատուածներ, գացէք,
մի կայնիք,
Հեռուէն Տէրը յիշեցէք,
Ու երուսաղէմ ձեր միտքը թող գայ։
51—Նախատինք լսելնուս համար
ամչցանք.
Ամօթը մեր երեսը ծածկեց,
Քանզի Տէրոջը տունը սրբարաններուն մէջ օտարազգիներ մտան։
52—Անոր համար ահա օրեր կու գան,
կ'ըսէ Տէրը,
Որ անոր կուռքերուն այցելութիւն պիտի ընեմ,
Ու անոր բոլոր երկրին մէջ վիրաւորներ պիտի հեծեծեն,
53—Թէև Բաբելոն մինչև երկինք ելլէ,
Ու իր •զօրութիւնը բարձրութեան մէջ հաստատէ՞,
Իմ կողմանէս աւերողներ պիտի գան անոր, կ'ըսէ Տէրը։
54—Բաբելոնէ աղաղակի ձայն,
Ու Քաղդեացւոց երկրէն մեծ կոտրածի յ=ր է= է=։
55—Քանզի Տէրը Բաբելոնը կ'աւերէ,
Ու անոր մէջէն մեծ ձայնը կը խափանէ.
Որովհետեւ անոնց ալիքները չաս ձայնելու պէս կը գոչեն,
Ս= անոնց ձայնը ազդակուելէ կ'ելլէ։
56—Քանզի անոր վրայ, Բաբելոնի վրայ, աւերող մը եկաւ,
Ու անոր զօրաւորները առնուեցան,
Անոնց աղեղները կարծեցան,
Քանզի Տէրը Հատուցիչ Աստուած է,
Անշուշտ հատուցում պիտի ընէ։
57—Ու անոր իշխանները ու իմաստուններըն,
կուսակալները ու նախարարները
Եւ զօրաւոր մարդիկը պիտի գինովցնեմ,
Ու անոնք յաւիտենական քունով պիտի քնանան,
Ու պիտի չարթնանան, կ'ըսէ այն Թագաւորը
Որուն անունը զօրաց Տէրը է։
58—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Բաբելոնի այն լայն պարիսպները բոլորովին պիտի փլչին.
Ու անոր բարձր դռնները կրակով պիտի այրին.
Եւ ժողովուրդները պարապ տեղ,
Ու ազգերը կրակի համար պիտի աշխատին ու յոգնին։
59—Ահա խօսքն է զոր Երեմիա մարգարէն պատուիրեց Մաասեայի որդւոյն Ներիայի որդւոյն Սարայիայի, երբ անիկա Ցեդայի Սեդեկիա Թագաւորին •կղզնանէ, անոր Թագաւորութեանը չորրորդ տարին, Բաբելոն գնաց. ու Սարայիա գլխաւոր սենեկապան էր։ 60—Վասն զի Երեմիա Բաբելոնի վրայ գալու ամէն չարիքները գիրքի մը մէջ գրեց, այսինքն այս բոլոր խօսքերը որ Բաբելոնի դէմ գրուած են։ 61—Ու Երեմիա Սարայիայի բսաւ, երբ Բաբելոն երթաս, †Նայէ որ կարդաս՞ այս բոլոր խօսքերը,
62—Ու բսես, Ով Տէր, դուն այս ուրեղին համար բսիր որ զանիկա պիտի աւերես, ու մարդ ու մինչև անասուն անոր մէջ բնակիչ պիտի չըլլայ, հապա յաւիտենական ամայութիւն պիտի ըլլայ։

•Նէբ. զօրութիւնը բարձրութիւնը ամրացնէ

•Կամ, հետ †Կամ, տես և կարդա

63—Ու երբ այս գիրքը կարդալը լմնցընես, անոր վրայ քար մը կապես ու զանիկա Եփրատ մէջ նետես, 64—Ու ըսես, Այսպէս պիտի ընկղմի Բաբելոն, ու Ես՝ր՞ն —ւ պիտի չկանգնի իմ անոր վրայ բերելու չարիքներուս պատճառաւ, և անոնք պիտի յոգնին։
Երեմիայի խօսքերը մինչև հոս են։

Գլ. ԾԲ

Սեդեկիա քսանըմեկ տարեկան էր երբ Թագաւոր եղաւ, ու երուսաղէմի մէջ տասնըմեկ տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ամիտալ էր =ւ Լիբնացի Երեմիայի աղիկն էր, 2—Ու անիկա Յոակիմի բոլոր ըրածին պէս Տէրոջը առջև չարութիւն ըրաւ. 3—Քանզի Տէրոջը բարկութիւնը երուսաղէմի ու Յուդայի վրայ էր, մինչև զանոնք իր երեսէն ձգէ, անոր համար Սեդեկիա Բաբելոնի Թագաւորին ապստամբեցաւ։
4—Ու եղաւ որ անոր Թագաւորութեանը իններորդ տարին տասներորդ ամիսը, ամսուն տասներորդ օրը, Բաբելոնի Նաբուզոդոնոսոր Թագաւորը իր բոլոր զօրքերովը երուսաղէմի վրայ եկաւ, ու անոր դէմ չորչափակի պատնէշներ չինեցին. 5—Ու մինչև Սեդեկիա Թագաւորին մեռտասներորդ տարին քաղաքը պաշարման մէջ էր։ 6—Ու չորրորդ ամսուն մէջ, ամսուն իննին, քաղաքին մէջ սաստիկ սով կար, ու երկրին ժողովուրդը հաց չունէր. 7—Ու քաղաքին պ=ր՞=ղը ճեղքուեցաւ, ու բոլոր պատերազմողները փախան, և գիշերով Թագաւորի պարտէզին քով եղող երկու պարսպին մէջի դրանը ճամբայով քաղաքէն ելլուն. ու Քաղդեացիք քաղաքին բոլորտիքը կ'եղեր էին. ու անոնք դաշտի ճամբայէն գացին. 8—Ու Քաղդեացւոց զօրքը Թագաւորին հետեւին ինկան ու Երիքովի դաշտերուն մէջ Սեդեկիայի հասան, և անոր բոլոր զօրքը անոր փովին ցրուեցաւ. 9—Ու Թագաւորը բռնեցին, ու զանիկա Բաբելոնի Թագաւորին Ռիբղա տարին Եմաթի երկրին մէջ, և անոր դատաստանը տեսաւ. 10—Ու Բաբելոնի Թագաւորը Սեդեկիայի տղաքները անոր աչքերուն առջև մորթեց. Ցուդայի բոլոր իշխաններն ալ Ռիբղայի մէջ մորթեց. 11—Ու Սեդեկիայի աչքերը կուրցուց ու զանիկա շղթաներով կապեց, և Բաբելոնի Թագաւորը զանիկա Բաբելոն տարաւ, ու զանիկա մինչև իր մահուան օրը բանտին մէջ պահեց։
12—Ու Բաբելոնի Թագաւորին, Նաբուզոդոնոսոր Թագաւորին, տասներեքերորդ տարին հինգերորդ ամիսը, ամսուն տասնին, Բաբելոնի Թագաւորին առջև կացող Նաբուզարդան գահճապետը երուսաղէմի մէջ մտաւ. 13—Ու Տէրոջը տունը և Թագաւորին տունը սրբեց, ու երուսաղէմի բոլոր տուները ու մեծ մեծ տուները կրակով այրեց։ 14—Ու գահճապետին հետ եղող Քաղդեացւոց բոլոր զօրքերը երուսաղէմի բոլոր չրջակայ պարիսպները փլցուցին։ 15—Ու ժողովուրդին աղքատներէն, և քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը, ու Բաբելոնի Թագաւորին իյնող փախստականները, ու մնացած բազմութիւնը Նաբուզարդան գահճապետը գերի տարաւ։ 16—Ու Նաբուզարդան գահճապետը երկրին աղքատներէն Քոզուց այգեգործներ ու երկրագործներ ըլլալու համար։
17—Ու Քաղդեացիք Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ սիւները ու մեքենովքները, ու Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ ծովը կոր կոր ըրին, ու անոնց բոլոր պղինձը Բաբելոն տարին։ 18—Ու քարայրները և թիակները և բաժակալները ու կոնգրը և խնկամաններ ու պաշտօնի համար գործածուած բոլոր պղնձէ անօթները առին. 19—Ու գաւաթները ու բուրվառները և կոնգրը ու Քառարները և աշտանակները ու խնկամանները և բաժակները առաւ դահճապետը, ինչ որ ոսկեղէ էր՝ էբՀ ոսկի, ու ինչ որ արծաթէ էր՝ էբՀ արծաթ. 20—Նե Սողոմոն Թագաւորին Տէրոջը տանը համար չինած երկու սիւները, մէկ ծովը ու •մեքենովքներուն տակ եղած տասուերկու պղնձէ եզները՝.

•Կամ, •անոր տակ եղած տասուերկու եզները =ւ մեքենովքները

բոլոր այս գործիքներուն պղինձը կչեփ չէր գար։ 21—Ու սիւներէն մէկուն բարձրութիւնը տասնըվեց կանգուն էր, ու անոր չլլապատը տասնըվեցական կանգուն էր, և անոր թանձրութիւնը չորս մատնաչափ էր *— մէկը պարապ էր։ 22—Ու անոր վրայ պղինձէ խոյակ կար. ու մէկ խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն էր, և խոյակին վրայ շուրջանակի ցանցակերպ զարդ ու նռներ կային, ամէնն ալ պղինձէ էին, միւս սիւնն ալ նռներով այնպես էր։ 23—Ու նռները —չորս կողմին իննսունըվեց էին, ու ցանցակերպ զարդին վրայ չորքհատկի բոլոր նռները հարիւր էին։

24—Ու դահճապետը առաջին քահանան Սաբայիան ու երկրորդ քահանան Սոփոնիան ու դրան երեք պահապանները առաւ։ 25—Ու քաղաքին ներքինի մը առաւ, որ պատերազմով մարդոց զօրագլուխն էր։ ու քաղաքին մէջ գտնուած՝ թագաւորին *ուսիւնոդներէն" եօթը մարդ, ու երկրին ժողովը զինուորութեան զրող զօրքին մեծ գրագիրը, և քաղաքին մէջ գտնուած երկրին ժողովուրդէն վաթսուն մարդ։ —— 26—Ու Նաբուզարդան զահճապետը զանոնք առաւ ու Բաբելոնի թագաւորին՝ Ռեբղա տարաւ։ 27—Ու Բաբելոնի թագաւորը զանոնք զարկաւ, ու Եմաթի երկրին Ռեբղային մէջ զանոնք մեռցուց։ Այսպէս Յուդա իր երկրէն գերի տարուեցաւ։

28—Նաբուգոդոնոսորի գերի քշած ժողովուրդը սակայն է. եօթներորդ տարին երեք հազար քառասունըհինգ Հրեայ։ 29-Նաբուգոդոնոսորի տասներեքերորդ տարին՝ Երուսաղէմէ ութ հարիւր երեսունեւերկու հոգի։ 30—Նաբուգոդոնոսորի քառասունըհինգերորդ տարին Նաբուզարդան գահճապետը Հրեաներէն եօթը հարիւր քառասունըհինգ հոգի գերի քշեց։ ամէնը չորս հազար վեց հարիւր հոգի էր։

31—Ու եղաւ որ Յուդայի Յոյաքին Թագաւորին գերութեանը երեսունըեօթներորդ տարին երկուտասաներորդ ամիսը, ամսուն քսաներհինգերորդ *ըշ, Բաբելոնի եղեմբաժագաբ Թագաւորը իր Թագաւոր եղած տարին, Յուդայի Յոյաքին Թագաւորին գլուխը բարձրացուց, ու զանիկա բանտէն հանեց։ 32—Ու անոր հետ քաղցրութեամբ խօսեցաւ, ու անոր աթոռը Բաբելոնի մէջ իրեն հետ եղող Թագաւորներուն աթոռէն վեր դրաւ։ 33—Ու անոր բանտի հագները փոխեց։ ու անիկա իր կեանքին բոլոր օրերուն մէջ միշտ անոր առջև հաց կ'ուտէր։ 34—Ու անոր առօրիկը միատեսակ առօրիկ բլլալով, անոր կեանքին բոլոր օրերուն մէջ մինչև անոր մահուան օրը Բաբելոնի Թագաւորին կողմէն օրէ օր անոր կը սրուէր։

*Եբր. երեսը տեսնողներէն

ՈՂԲՔ ԵՐԵՄԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Ինչպես առանձին կը նստի բազմամարդ քաղաքը։
Աղգերուն մէջ մեծ եղողը արբեւարիի պէս եղաւ,
Գաւառներուն մէջ իշխանուհի եղողը հարկատու եղաւ։
2—Գիշերը անդադար կու լայ, ու իր արցունքները իր այտերուն վրայ կան.
Անոր բոլոր սիրելիներէն անոր մխիթարութիւն տուող չկայ.
Անոր բոլոր բարեկամները անոր նենգութիւն ըրին, անոր թշնամի եղան։
3—Յուդա տառապանքի և խիստ ծառայութեան համար գերի քշուեցաւ.
Հեթանոսներուն մէջ կը բնակի, հանգըստութիւն չգտաւ.
Անոր բոլոր հալածիչները անոր նեղութիւններուն մէջ անոր վրայ հասան։
4—Սիովնի ճամբաները սուգ կը բռնեն՝ հնդիւրաց տօներուն եկողներ չըլլալուան համար.
Անոր բոլոր դռները ամայացած են, անոր քահանաները կը հեծեծեն.
Անոր կոյսերը կը տրտմին, ու ինք դառնութեան մէջ է։
5—Անոր նեղիչները իշխան եղան, անոր թշնամիները յաջողութիւն գտան,
Վասն զի Տէրը զանիկա տրտմութեան մատնեց անոր չատ յանցանքներուն համար.
Անոր պզտիկ տղաքը թշնամիին առջեւէն գերի գացին։
6—Ու Սիովնի աղջիկին իր բոլոր վայելչութիւնը գնաց.
Անոր իշխանները ճարակ չգտնող եղջերուներու պէս եղան,
Ու հալածողին առջեւէն առանց ուժի կ'երթան։

7—Երուսաղէմ իր տառապանքի ու թշուառութեան օրերը՝
Իր առաջուան ունեցած բոլոր ցանկալի բաները յիշեց,
Երբ իր ժողովուրդը թշնամիին ձեռքը իյնար, ու իրեն օգնութիւն ընդոզ չեղաւ.
Թշնամիները զանիկա տեսան *— անոր կործանումին վրայ խնդացին։
8—Երուսաղէմ մեղք գործեց, անոր համար *պիղծ սեպուեցաւ.
Ջանիկա ամէն պատուողները զանիկա անարգեցին, վասն զի անոր մերկութիւնը տեսան.
Անիկա ալ հառաչեց ու ետ գարձաւ։
9—Անոր պղծութիւնը իր քղանցքներուն վրայ է, անիկա իր վախճանը չյիշեց,
Ու զարմանալի կերպով մը նուաստացաւ. անիկա մխիթարիչ չունի։
Ով Տէր, իմ տառապանքիս նայէ, վասն զի թշնամին հպարտացաւ,
10—Անոր բոլոր ցանկալի բաներուն՝ թշնամին ձեռք երկնցուց.
Քանզի հեթանոսները տեսան որ իր սրբարանին մէջ մտան,
Որոնց համար դուն պատուիրեր էիր՝ որ անոնք քու ժողովքիդ մէջ չմտնեն։
11—Անոր բոլոր ժողովուրդը հաց փնտռելէն հառաչեց.
Իրենց հոգին ուժովցնելու համար՝ իրենց ցանկալի բաները կերակուրի փոխարէն տուին.
Տես, ով Տէր, ու նայէ, վասն զի անարգուեցայ։
12—Արդեօք հոդ չէ՞ք ըներ, ով բոլոր ճամբայէ անցնողներ.
Նայեցէք ու տեսէք, թէ արդեօք իմ ցաւիս պէս ցաւ կա՞յ՝ որ իմ վրաս եկաւ.

*Կամ, թափառական եղաւ

վան զի Տէրը զիս նեղեց իր սաստիկ բարկութեան օրը.

13—Բարձրէն իմ ոսկորներուս կրակ զրկեց՝ որ անոնց տիրեց.

Ոտքերուս ցանց տարածեց՝ ետ զիս եւ դարձուց.

Զիս ամայի ըրաւ՝ բոլոր օրը վշտա†տրտում.

14—Իմ յանցանքներուս լուծը անոր ձեռքով կապուեցաւ.

Անոնք *մէացան ու իմ պարանոցիս վրայ եկան. իմ ոյժս կորցուց.

Տէրը զիս այնպիսի ձեռքերու մատնեց՝ որ ոտնդէ չեմ կրնար†ազատիլ.

15—Տէրը իմ մէջս իմ բոլոր զօրաւորներս անարգեց.

Իմ երիտասարդներս կոտրելու համար իմ վրաս ժողովք կանչեց.

Տէրը Յուդայի կոյս աղջիկը հնձանի մէջ կոխեց.

16—Անոր համար կու լամ, աչքերս, աչքերս ջուրցունք կ'իջեցնեն.

Վասն զի ինծմէ հեռացաւ մխիթարիչը, որ իմ հոգիս պիտի նորոգէր.

Իմ տղաքս նուաղեցան, վասն զի թշնամին զօրացաւ.

17—Սիօն իր ձեռքերը տարածեց, անոր մխիթարութիւն տուող չկայ.

Տէրը Յակոբի համար հրամայեց՝ որ անոր թշնամիները զանիկա շրջապատեն.

Երուսաղէմ անոնց մէջ դաշտանաւոր կնոջ պէս եղաւ.

18—Տէրը արդար է, վասն զի անոր հրամանին ապստամբ եղայ.

Լսեմ, ով բոլոր ժողովուրդներ, մեկ ըրէք ու իմ ցաւս տեսէք.

Իմ կոյսերս ու երիտասարդներս գերութեան գացին.

19—Իմ սիրականներս կանչեց, անոնք զիս խաբեցին.

Իմ քահանաներս ու ծերերս քաղաքին մէջ հոգիներն աւանդեցին,

Երբ իրենց համար կերակուր կը փնտռէին՝ իրենց հոգին զովցնելու համար.

20—Ով Տէր, նայէ, վասն զի նեղուեցայ, աղիքներս խռովեցան.

Սիրտս նեղութենս առկունվայր է, վասն զի խիստ չատ ապստամբեցայ.

Դուրսէն սուրը զիս կը զրկէ — ներսը մահ կայ։

21—Իմ հառաչանքս լսեցին, բայց ինծի մխիթարութիւն տուող չկայ.

Իմ բոլոր թշնամիներս իմ թշուառութիւնս լսելով ուրախացան, վասն զի դուն ըրիր —։—.

Կանչած օրդ պիտի բերես, ու անոնք ինծի պէս պիտի ըլլան։

22—Անոնց բոլոր չարութիւնը թող քու առջեւդ հասնի.

Ու անոնց այնպէս ըրէ, ինչպէս ինծի ըրիր իմ բոլոր յանցանքներուս համար.

Վասն զի իմ հեծութիւններս չատ են ու իմ սիրտս նուաղած է։

Գլ. Բ

Ինչպէս Տէրը իր բարկութիւնովը խաւարով ծածկեց Սիօնի աղջիկը.

Իսրայէլի փառքը երկինքէն վար նետեց, Ու իր բարկութեան օրը իր ոտքերուն պատուանդանը չյիշեց։

2—Տէրը առանց խնայելու Յակոբի բոլոր բնակարանները կլլեց,

Ցուդայի աղջկան ամրոցները իր բարկութիւնովը փլուցուց — հիմնայատակ ըրաւ,

Թագաւորութիւնը ու անոր իշխանները պղծեց։

3—Սաստիկ բարկութեամբ Իսրայէլի բոլոր եղջիւրը փչրեց.

Անոր աջ ձեռքը թշնամիին երեսէն ետ դարձուց,

Ու Յակոբի մէջ կրակի բոցի պէս բռնկեցաւ, որ անոր բոլորտիքը կ'եբաւ։

4—Իր ոտղը թշնամիի պէս լարեց, իր աջ ձեռքովը հակառակորդի պէս կեցաւ,

Ու բոլոր աչքի հաճոյ եղողները մեռցուց,

Իր բարկութիւնը կրակի պէս թափեց Սիօնի աղջկան խորանին մէջ։

5—Տէրը թշնամիի պէս եղաւ, Իսրայէլը կլլեց,

Անոր բոլոր պալատները կլլեց. անոր ամրոցները կործանեց,

Ու Յուդայի աղջկան մէջ ոգբը ու կոծը չատցուց։

6—Անոր *հիւղը պարտէզի հիւղի պէս բռնութեամբ կործանեց, անոր ժողովատեղին աւրեց.

Տէրը Սիօնի մէջ հանդիսաւոր ատը ու շաբաթը մոռցուց,

Ու իր սաստիկ բարկութիւնովը թագաւորը ու քահանան անարգեց։

7—Տէրը իր սեղանը մերժեց — իր սրբարանէն զզուեցաւ,

Անոր պալատներուն պարիսպները թշնամիին ձեռքը մատնեց.

Անոնք Տէրոջը տանը մէջ հանդիսաւոր տօնի օրուան պէս ձայն ատին։

8—Տէրը խորհեցաւ Սիօնի աղջկան պարիսպը աւրել.

Լարը քաշեց, իր ձեռքը կործանելէն ետ չդարձուց.

Պատնէշն ու պարսպին սուգ բռնել տուաւ, անոնք միկտեղ սրբատութեան մէջ են։

9—Անոր դռները գետինը անցան, անոր նիգերը աւրեց ու կոտրեց.

Անոր թագաւորը ու իշխանները ազգերուն մէջ են. օրէնք չկայ.

Անոր մարգարէներն ալ Տէրոջմէ տեսիլք չեն գտներ։

10—Սիօնի աղջկան ծերերը գետնի վրայ նստած՝ լուռ կը կենան.

Իրենց գլուխն վրայ հող դրին՝ քուրձեր հագան,

Երուսաղէմի կոյսերը գլուխնին գետինը իջեցուցին։

11—Իմ ժողովրդիս աղջկան բեկմանը համար աչքերս արցունք †թէլէն աւրեցան,

Աղիքներս խռովեցան, լեարդս գետինը թափեցաւ,

Վասն զի ազգիս երը ու կաթնկերները փողոցին հրապարակներուն մէջ կը մարին։

12—Անոնք իրենց մայրերուն կ'ըսեն, Ո՞ւր է ցորեն ու գինի.

Երբ վիրաւորուածներու պէս կը մարին փողոցին հրապարակներուն մէջ,

Ու երբ իրենց հոգին կ'աւանդեն իրենց մայրերուն գիրկերուն մէջ։

13—Քեզի ի՞նչ բան վկայութիւն բերեմ. քեզի ի՞նչ օրինակ բերեմ, ով Երուսաղէմի աղջիկ.

Քեզ մխիթարելու համար քեզի ի՞նչ նըմանութիւն բերեմ, ով Սիօնի կոյս աղջիկ.

Քանզի քու խրամատութիւնդ ծովու չափ մեծ է. ո՞վ կրնայ քեզ բժշկել։

14—Քու մարգարէներդ քեզի համար սնոտի ու չխմարական տեսիլքներ տեսան,

Ու քու անօրէնութիւնդ էրէվ չյայտնեցին, որ քու գերութիւնդ ետ դարձնեն,

Հապա քեզի համար սնոտի *տեսիլքներ ու մոլորութիւններ տեսան։

15—Բոլոր ճամբայէ անցնողները քեզի համար ծափ զարկին,

Ու սուլելով գլուխնին չարժեցին Երուսաղէմի աղջկան համար,

Ո՞ւր, Այս է այն քաղաքը որ Գեղեցկութեան կատարելութիւն — Բոլոր երկրին ուրախութիւնը կ'ըսուէր։

16—Քու բոլոր թշնամիներդ իրենց բերանը քու վրադ բացին,

Ու սուլելով ակռայ կրճտեցին ու ըսին, Ջո՞ւխ կլլեցինք.

Ահա այս է մեր սպասած օրը, գտանք, տեսանք ը՞ւխ։

17—Տէրը իր խորհածը կատարեց, առաջին օրերէն պատուիրած խօսքը ի գործ դրաւ.

Փլուց ու չխնայեց, և թշնամին քու վրադ ուրախացուց,

Քու թշնամիներուդ եղջիւրը բարձրացուց։

18—Անոնց սիրտը Տէրոջը աղաղակեց.

Ով Սիօնի աղջկան պարիսպը, ցորեկ ու գիշեր հեղեղի պէս արցունք թափէ.

Քեզի հանգիստ մի տար, աչքիդ բիբը չդադարի։

*Եբր. հիւսուածքն

†Եբր. սաք եղէզ

‡Եբր. ղուբ

*Կամ, ցանգը պարտէզի շոնդի պէս

*Եբր. պատգամները

19—Սիրէ գիչերով ազաղակէ էէ՛չ՛ը՛՛՛

Սրբասրանին քարերը ամէն փողոցներուն գլուխը թափուեցան։

2—Սիօնի պատուական ազգիները, որոնք ընտիր ոսկիի հաւասար էին,

Ինչպէս բրուտի ձեռքով չինուած խեցեղէն սափոններու պէս սեպուեցան։

3—*Վիշապները անգամ ծիծերնին կը հանեն ու իրենց լակոտներուն կաթ կուտան.

Իմ ժողովուրդիս աղիկը անապատի յայլայիներուն պէս անգութ եղաւ։

4—Կաթնկերին լեզուն ծարաւութենէն իր քիմքին փակաւ.

Տղաքները հաց ուզեցին, բայց անոնց չարդող չկար։

5—Ազնիւ կերակուրներ ուտողները փողոցներուն մէջ յուսակտուր մնացին.

Կարմիր հագուստներով մեծցողները աղբանոցներ գրկեցին։

6—Ու իմ ժողովուրդիս ազկան անօրէնութիւնը Սոդոմի մեղքէն մեծ եղաւ.

Որ մէկ վայրկեանի մէջ ասկնոփոյ եղաւ՝ առանց ձեռքերուն անոր դպչելուն։

7—Անոր ազնուականները ձիւնէն մաքուր, կաթէն ճերմակ էին.

Անոնց մարմինը †յակինթներէն կարմիր էր, անոնց կերպարանքը շափիւղայի կը նմանէր։

8—Անոնց դէմքը ածուխէն աւելի սեւ եղաւ, ու փողոցներուն մէջ չեն ճանչցուիր.

Անոնց մորթը իրենց ոսկորներուն փակաւ, չորցաւ ու փայտի պէս եղաւ։

9—Սուրէ մեռածները անօթութենէ մեռածներէն երջանիկ էին,

Վասն զի ասոնք ագարակի արդիւնքներուն պակասութենէն մաշեցան ու մեռան։

10—Ողորմած կիներուն ձեռքերը իրենց տղաքը եփեցին,

Իմ ժողովուրդիս աղկան կոտրածին ատենը անոնց կերակուր եղան։

11-Տէրը իր սրտմտութիւնը կատարեց, իր սաստիկ բարկութիւնը թափեց.

Ու Սիօնի մէջ կրակ բռնկցուց, որ անոր հիմերը կերաւ։

12—Երկրի թագաւորները ու աշխարհի բոլոր բնակիչները չհաւատացին

Թէ հակառակորդը ու թշնամին Երուսաղէմի դռներէն պիտի մտնէ։

13—Անոր մարգարէներուն մեղքերէն, անոր քահանաներուն անօրէնութիւններէն,

Որոնք անոր մէջտեղը արդարներուն արիւնը թափեցին,

14—Փողոցներուն մէջ կոյրերու պէս աստանդական պտռտցան, արիւնով պղծուեցան.

Այնպէս որ մարդ մը կարող չէր անոնց զգեստներուն դպչիլ։

15—*Անոնց կը կանչէին, Ետ քաշուեցէք, ով պիղծեր,* ետ քաշուեցէք, ետ քաշուեցէք, մի դպչիք.

Անոնք փախան ու ապին անդին պտռտեցան. ազգերուն մէջ ըսուեցաւ, Անոնք մէյմըն ալ հոս չընակին։

16—Տէրոջը բարկութիւնը զրուեց զանոնք, անոնց մէյմըն ալ չնայիր,

Քահանաներուն երեսին պատիւ չբրին, ծերերուն գթութիւն չբրին։

17—Մեզի ըլլալու օգնութեանը համար պարապ տեղ մինչև հիմա աչքերնիս մաշեցան.

Դիտելով սպասկինիք ժողովի մը՝ որ չէր կրնար մեզ ազատել։

18-Մեր քայլերը կ'որսան, որպէս զի մեր փողոցներուն մէջ չպտրտինք.

Մեր վախճանը մօտեցաւ, մեր օրերը լեցուեցան, յիրաւի մեր վախճանը հասաւ։

19—Մեզ հալածողները երկինքի արծիւներէն արագընթաց եղան.

Մեզ լեռներու վրայ աստիկ հալածեցին, անապատի մէջ մեզի համար դարանամուտ եղան։

20—Մեր ռնգունքներուն շունչը, Տէրոջը օծեալը, անոնց որոգայթներուն մէջ բռնուեցաւ,

*Կամ, Անոնց համար կը կանչէին, ետ քաշուեցէք, պիղծ են.

Որու համար մենք կ'ըսէինք, Ազգերուն մէջ անոր հովանիին տակ պիտի ապրինք։

21—Ցնծա և ուրախ եղիր, ով եդովմի աղիկ, որ Հուս երկրին մէջ կը բնակիս.

Քեզի ալ պիտի անցնի բաժակը. պիտի գինովնաս ու ինքզինդ պիտի մերկացնես։

22—Քու անօրէնութիւնդ վերջացաւ, ով Սիօնի աղիկ, քեզ մէյմըն ալ գերի պիտի չտանի.

Քու անօրէնութեանդ այցելութիւն պիտի ընէ, ով եդովմի աղիկ, քու մեղքերդ պիտի յայտնէ։

ԳԼ. Ե

Մեզի եղածը յիշէ, ով Տէր,
Նայէ ու մեր նախատինքը տես։

2—Մեր ժառանգութիւնը օտարներուն անցաւ,
Մեր տուները՝ օտարազգիներուն։

3—Հայր չունեցող որբեր եղանք,
Մեր մայրերը որբեւայրիներու պէս են։

4—Մեր ջուրը տակով խմեցինք,
Մեր փայտը գնով կու գայ։

5—Լուծը մեր պարանոցին վրայ ըլլալով հալածուեցանք,
Կ'այլասերինք ու հանգստութիւն չունենք։

6—Հացով կշտանալու համար
Դէպ ի Եգիպտոս *երկնցուցինք,
Ասորեստան ձեռք *երկնցուցինք։

7—Մեր հայրերը մեզք գործեցին և չկան,
Ու անոնց անօրէնութիւններուն պատիժը մենք կը կրենք։

8—Ծառաներ սիրեցին մեր վրայ,
Անոնց ձեռքէն ետ ազատող չկայ։

*Եբր. տուինք

9—Անապատի սուրին երեսէն
Մեր հացը մեր կեանքին վտանգով ձեռք բերինք.

10—Սովին սաստկութեանը պատճառաւ
Մեր մորթը փուռի պէս սեւցաւ.

11—Կիները Սիօնի մէջ խայտառակեցին,
Ու կոյսերը՝ Ցուդայի քաղաքներուն մէջ։

12—Իշխանները *անոնց ձեռքով կախուեցան.
Ծերերուն երեսին պատիւ չբրին։

13—Երիտասարդները երկանքարերը վերցուցին,
Ու տղաքը փայտի տակ ինկան։

14-Ծերերը դադրեցան դուռը նստիլէ.
Ու երիտասարդները իրենց երաժշտութենէն։

15—Մեր սրտին ուրախութիւնը գադրեցաւ,
Մեր կաքաւելը սուգի փոխուեցաւ։

16—Մեր գլխուն թագը ինկաւ.
Հիմա վա՛յ մեզի, վասն զի մեզք գործեցինք։

17—Ասոր համար մեր սիրտը նուաղած է,
Ասոնց պատճառաւ աչքերնիս խաւարեցան.

18—Սիօն լեռանը պատճառաւ՝ որ ամայի եղաւ.
Անոր վրայ ոզուէներ կը պտըտին։

19—Դուն, ով Տէր, յաւիտեան կը մնաս,
Քու աթոռդ գարէ գար կը տեւէ։

20—Ինչո՞ւ համար յաւիտեան մեզ կը մոռնաս,
Ու երկար ժամանակ մեզ կը թողուս։

21—Քեզի դարձուր մեզ, ով Տէր, ու դառնանք.
Մեր օրերը առաջուան պէս նորոգէ։

22—Սակայն դուն բոլորովին մեզ մերժեցիր,
Մեր վրայ խիստ չատ բարկացար։

*կամ, իրենց ձեռքէն

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

Ա. եղաւ որ երեսներորդ տարին չորրորդ –Ջ–ը, ամսուն հինգին երբ ես գերբինեւուն մէջ Բոբար գետին քով էի, երկինք բացուեցաւ, ու Աստուծոյ տեսիլքները տեսայ։ 2-Ամսուն հինգերորդ օրը, այսինքն Յոյակիմին թագաւորին գերեվարութեան հինգերորդ տարին, Բագդեատցոց երկրին մէջ, 3—Բոբար գետին քով, Բուզիի որդւոյն Եզեկիել քահանային յայտնապէս Տէրոջը խօսքը եղաւ, և հոն անոր վրայ Տէրոջը ձեռքը եղաւ։

4—Ու տեսայ որ ահա հիւսիսային կողմէն մրրկածից հով, մեծ ամպ ու բռնկած կրակ կու գար, որուն բոլորտիքը պայծառութիւն կար, ու մէջտեղէն, կրակին մէջէն, ասկեպղինի նմանութիւն մը կ'երեւար։ 5—Ու անոր մէջ չորս կենդանիի կերպարանք կար, ու անոնց երեւոյթը այս էր. անոնք մարդու կերպարանք ունէին։ 6—Ու ամէն մէկը չորս երես ունէր, ու անոնց ամէն մէկը չորս թեւ ունէր։ 7—Ու անոնց ոտքերը ուղիղ ոտքեր էին, ու անոնց ոտքերուն թաթը զուարակի ոտքին թաթին պէս էր, ու փայլուն պղնձի պէս կը փայլէին։ 8—Ու անոնց չորս կողմերը անոնց թեւերուն տակ մարդու ձեռքեր կային, ու չորսն ալ երեսներ ու թեւեր ունէին։ 9—Անոնց թեւերը իրարու կցուած էին. անոնք երբոլորտին չէին դառնար, ամէն մէկը չորսակ յառաջ կ'երթար։ 10—Ու անոնց երեսներուն ձեւը այսպէս էր. չորսն ալ մարդու երես ունէին, ու աջ կողմին առիւծի երես. նաև չորսն ալ ձախ կողմէն եզի երես, ու չորսն ալ արծիւի երես ունէին։ 11—Ու անոնց երեսները այսպէս էին և անոնց թեւերը վերէն կը տարածուէին, երկուքը իրարու կցուած էին, ու երկուքը անոնց մարմինը կը ծածկէին։ 12-Ու ամէն մէկը չորսակ յառաջ կ'երթար. ոգին ուր որ երթալու ըլլար՝ անոնք հոն կ'երթային, գացած ատեննին չէին դառնար։ 13—Ու կենդանիներուն կերպարանքը, անոնց երեւոյթը, կրակի վառած կայծերու պէս՝ լապտերու երեւոյթին պէս էր. որ կենդանիներուն մէջէն կը պարբերէր. ու այն կրակը լուսափայլ էր, ու կրակէն փայլակներ կ'ելլէին։ 14—Ու կենդանիները փայլակի երեւոյթին պէս կը վազէին ու կը գառնային։

15—Ու կենդանիներուն նայեցայ, և ահա գետնի վրայ, կենդանիներուն –Ն Ի–ՆՁ քով չորս երեսով անիւ մը կար։ 16—Անիւներուն երեւոյթը ու անոնց շինուածքը ասկեպարի կը նմանէին, և չորսին ձեւը մէկ էր. ու անոնց երեւոյթը ու շինուածքը այնպէս էր, որպէս թէ անիւ անիւի մէջ եղած ըլլար։ 17—Գացած ատեննին իրենց չորս կողմերուն վրայ կ'երթային. գացած ատեննին երթալ Լ Ի–Ր Յ–Ե Ի–ՀԸ չէին դառնար։ 18-Ու անոնց շրջանակները բարձր ու ահեղ էին, և չորսին ալ շրջանակները ամէն կողմէն աչքերով լեցուն էին։ 19—Ու երբ կենդանիները կ'երթային, անիւներն –Լ անոնց քովէն կ'երթային. ու երբ կենդանիները երկրի երեսէն կը վերանային, անիւներն –Լ կը վերանային։ 20—Ոգին ուր որ երթալու ըլլար, անոնք հոն, ոգիին գացած տեղը, կ'երթային. անիւներն ալ անոնց հետ մէկտեղ կը վերանային. քանզի անիւներուն մէջ կենդանիներուն ոգին կար։ 21—երբ անոնք կ'երթային, –ԱՆԻ–Լ կ'երթային, ու երբ անոնք կը կայնէին, –ԱՆԻ–Լ կը կայնէին. ու երբ անոնք երկրի երեսէն կը վերանային, անիւները անոնց հետ կը վերանային. քանզի անիւներուն մէջ կենդանիներուն ոգին կար։ 22 — Ու կենդանիներուն գլխուն վրայ՝ Էլ[1]էի հաստատութեանը նմանութիւնը վերէն անոնց գլուխներուն վրայ տարածուած էր՝ լուսափայլ ակնվանիի նման։ 23—Ու այն հաստատութեանը տակ՝ անոնց թեւերը իրարու կը չհասկնէին. ամէն մէկը մէկ կողմն էր ծածկող երկու բան ունէր, և ամէն մէկը միւս կողմն իր մարմինը ծածկող երկու բան ունէր։ 24—Ու երբ կ'երթային, անոնց թեւերուն ձայնը լսեցի չատ լուրերու ձայնին պէս, Ամենակարողին ձայնին պէս, ազմկի ձայնի –– բանակի ձայնի պէս. երբ կը կայնէին, իրենց թեւերը կ'իջեցնէին։ 25—Ու երբ անոնք կը կայնէին –– թեւերնին կ'իջեցընէին, անոնց գլխուն վրայ եղող հաստատութենէն ձայն մը կ'ելլէր։

26—Ու անոնց գլխուն վրայ եղող հաստատութենէն վեր, չափ ու զոյ քարի երեւութով աթոռի նմանութիւն մը կար, ու այն աթոռի նմանութեանը վրայ մարդու կերպարանքով նմանութիւն մը կար վերէն։ 27—Ու անոր երիկամունքին երեւութէն վեր ասկեպղինի նման՝ բոլորտիքը –– ներսը կրակի նմանութեան պէս տեսայ. ու երիկամունքին երեւութէն վար կրակի նմանութեան պէս տեսայ. ու պայծառութեամբ չրջապատուած էր։ 28—Ինչպէս է անձրեւի օրը ամպի մէջ եղող ծիածանի երեւոյթը, այնպէս էր այն շրջապատուած պայծառութեանը երեւոյթը։ Ասիկա Տէրոջը փառքին նմանութեանը երեւոյթն էր. ու երբ տեսայ, երեսիս վրայ իյնկայ, ու խօսողի մը ձայնը լսեցի։

ԳԼ. Բ

Ե. ինծի ըսաւ, Որդի մարդոյ, ոտքերուդ վրայ կայնէ ու քեզի հետ խօսիմ։ 2—Ու ինծի հետ խօսածին պէս Հոգին իմ վրաս եկաւ, և զիս ոտքերուս վրայ վերցուց. ու ինծի հետ խօսողին յ–ՆՁ լսեցի 3—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, ես քեզ Իսրայէլի որդիներուն, ինծի դէմ ապստամբող ապստամբներու ազգին, կը դրկեմ, որոնք Թ՛ իրենք և Թ՛ իրենց հայրերը մինչև այսօր ինծի դէմ յանցաւոր գտնուեցան. 4—Ու անոնք պինդերես և խստասիրտ որդիներ են. ես քեզ անոնց կը դրկեմ, ու անոնց ըսես, Տէր Ն՛Տովա այսպէս կ'ըսէ։ 5—Ու անոնք Թ՛ լսեն և Թ՛ զանց ընեն, (քանզի անոնք ապստամբներու տուն են,) սակայն պիտի գիտնան Թ՛ իրենց մէջ մարգարէ կայ։

6—Ու դուն, որդի մարդոյ, անոնցմէ մի վախնար, և անոնց խօսքերէն մի վախնար, Թէև քու քովդ Ա՛կամոիներ ու ծուռ մարդիկ՝ կան, և կարիՆներու քով կը բնակիս. անոնց խօսքերէն մի վախնար և անոնց երեսէն մի զարհուրիր, Թէև անոնք ապստամբներու տուն են։ 7—Ու անոնց իմ խօսքերս խօսիս, Թ՛ լսեն և Թ՛ զանց ընեն. քանզի անոնք ապստամբ են։

8—Ու դուն, որդի մարդոյ, քեզի ըսածս մանկ ըրէ, այն ապստամբ տունը պէս ապստամբ մի ըլլար. բերանդ բաց ու քեզի տուածս կեր։ 9—Ու նայեցայ, և ահա ինծի երկնցած ձեռք մը, և ահա անոր մէջ գիրքի տոմս մը կար. 10—Ու զանիկա իմ առջեւս բացաւ. և անիկա ներսէն ու դուրսէն գրուած էր. ու անոր վրայ ողբեր, հառաչանք ու վայ գրուած կային։

ԳԼ. Գ

Ե. ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այգ գտածդ կեր. այգ տումը կեր ու գնա Իսրայէլի տունը խօսէ։ 2—Ու իմ բերանս բացի, ու այն տումը ինծի կերցուց. 3—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս իմ քեզի տուած տումս փորիդ կերցուր ու աղիքներդ լեցուր. ու ես ՀԱՒ– կերայ, ու բերնիս մէջ մեղրի պէս անուշ եղաւ։ 4—Ա՛ն տուեն ինծի ըսաւ, Որդի մարդոյ, ազէ, Իսրայէլի տունը գնա ու իմ խօսքերովս անոնց խօսէ։ 5—Վասն զի դուն դժուարիմաց խօսք և ծանր լեզու ունեցող ազգի մը չղրկուես, հա–ա Իսրայէլի տունը. 6—Դժուարիմաց խօսք ու ծանր լեզու ունեցող չատ ազգերուն չէ, որոնց խօսքերը դուն չես հասկնար. յիրաւի եթէ քեզ անոնց դրկէի, անոնք քեզի մտիկ պիտի ընէին։ 7—Բայց Իսրայէլի տունը

[1] Եբր. ահաւոր

[2] Կամ, փուչեր ու տատասկներ

քեզի մարիկ բնել պիտի չտալին, վասն զի նոքա ուզեր ինձի մարիկ բնել. որովհետև բոլոր իսրայէլի տունը պինդերես ու խրատասերք է։ 8—Ահա անոնց երեսին դէմ քու երեսդ պինդ, ու անոնց ճակատին դէմ քու ճակատդ պինդ ըրի։ 9—Քու ճակատդ վէմին նման՝ ադամանդի պէս ըրի. անոնցմէ չվախնաս ու անոնց երեսէն չդարհուրիս, թէև անոնք ապստամբներու տուն են։

10—Ես Տէրէ ինծի ըսաւ, Որդի մարդոյ, իմ բոլոր խօսքերս զորոնք քեզի պիտի խօսիմ, սրտիդ մէջ ընդունէ ու ականջներովդ լսէ. 11—ես գնա գերիներուն մէջ մարդոց քու ժողովրդիդ որդիներուն մէջ, ու անոնց խօսէ և անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. թէ՛ մարիկ ընեն և թէ՛ դադ ընեն։

12—Ա,յն ատեն Հոգին զիս վերցուց, ու հառեւէս մեծ շարժուելի ձայն մը լսեցի ետ կ'ըսէը, Տէրոջը փառքը օրհնեալ ըլլայ իր տեղէն։ 13—Ես կենդանիներուն թեւերուն իրարու զարնելուն ձայնը, ու անոնց քովի անիւներուն ձայնը, ու մեծ շարժուելի ձայն լսէի։ 14—Ես Հոգին զիս վերցուց տարաւ, ու ես իմ հոգիս տագնապութենէն դառնութեամբ գացի. ու Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ զօրութեամբ։ 15—Ես Թոքաբ գերուն քով բնակող Թէլապիւլի գերիներուն եկայ, ու անոնց նստած տեղը նստայ, և հոն եօթը օր անոնց մէջ ապշած նստայ։

16—Ու եօթը օրէն ետքը Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 17—Որդի մարդոյ, քեզ Իսրայէլի տանը դէտ դրի. ու իմ բերնէս խօսք լսես, և իմ կողմանէս զանոնք զգուշացնես։ 18—Երբ ամբարշտին ըսեմ Թէ Անշուշտ պիտի մեռնիս, ու դուն զանիկա չզգուշացնես, և չզրուցես որ ամբարիշտը ապրեցնելու համար՝ իր չար ճամբայէն դառնալու համար՝ իր չար ճամբայէն դառնալու համար, այն ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը քու ձեռքդէդ պիտի փնտռեմ։ 19—Իսկ եթէ դուն ամբարիշտը զգուշացնես, ու անիկա իր ամբարշտութենէն և չար ճամբայէն չդառնայ, անիկա իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց դուն քու հոգիդ ազատած կ'ըլլաս։ 20—Ու երբ արդարը իր արդարութենէն դառնայ և չարութիւն ընէ, ու ես անոր առջեւ պատրաստութիւն դնեմ որ անիկա մեռնի, զանիկա չզգուշացնելուդ համար անիկա իր մեղքին մէջ պիտի մեռնի, և անոր բրած արդարութիւնը պիտի չյիշուի, բայց անոր արիւնը քու ձեռքդէդ պիտի փնտռեմ։ 21-Իսկ եթէ դուն այն արդարը զգուշացնես՝ որ արդարը մեղք չգործէ, ու եթէ անիկա մեղք չգործէ, անիկա անշուշտ պիտի ապրի իրատ մարիկ ընելուն համար, ու դուն քու հոգիդ ազատած պիտի ըլլաս։

22—Ես հոն Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, ու ինծի ըսաւ, Ելլ, դաշտը գնա, ու հոն քեզի հետ պիտի խօսիմ։ 23—Ես ես ելայ, դաշտը գացի. և ահա հոն կայներ էր Տէրոջը փառքը՝ Քոբար գետին փով տեսած փառքիս պէս. ու երեսիս վրայ ինկայ։ 24—Ես Հոգին իմ վրաս եկաւ, ու զիս ոտքի վրայ կայնեցուց. և ինծի հետ խօսեցաւ. ու ինծի ըսաւ, Գնա տանդ մէջ պահուըտէ։ 25—Ու դուն, որդի մարդոյ, ահա քու վրադ կապանքներ պիտի դնեն, և անոնցմով քեզ պիտի կապեն, ու անոնց մէջ պիտի չելլես։ 26—Ես քու լեզուդ քու ծնօտիդ պիտի փակցնեմ, ու համր պիտի ըլլաս. և անոնց մէջ յանդիմանող մարդու պէս պիտի չըլլաս, վասն զի անոնք ապստամբներու տուն են։ 27—Բայց երբ ես քեզի հետ խօսիմ, քու բերանդ պիտի բանամ. ու անոնց պիտի ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Լսողը թող լսէ, ու զանց ընողը թող զանց ընէ. վասն զի անոնք ապստամբներու տուն են,

Գլ. Դ

Եւ դուն, որդի մարդոյ, քեզի աղիւս մը առ ու զանիկա առջեւդ դիր, և անոր վրայ քաղաք մը, այսինքն Երուսաղէմը, գծագրէ։ 2—Ես անոր բոլորտիքը պատրաստ դիր, և անոր դէմ մատակոց շինէ, ու անոր դէմ պատնէշ կանգնէ, և անոր դէմ բանակ կազմէ, ու անոր բոլորտիքը *պատերազմական մեքենաներ" դիր։ 3—Ես դուն քեզի երկաթէ տապակ մը առ, ու զանիկա քու երկաթէ պատ

*ԵԲՐ. խոյեր

նայ և չարա թիւն ընէ, ու ես անոր առջեւ պաշարումը դնեմ որ անիկա մեռնի, զանիկա չզգուշացնելուդ համար անիկա իր մեղքին մէջ պիտի մեռնի, և անոր բրած արդարութիւնը պիտի չյիշուի, բայց անոր արիւնը քու ձեռքդէդ պիտի փնտռեմ։ 21-Իսկ եթէ դուն այն արդարը զգուշացնես՝ որ արդարը մեղք չգործէ, ու եթէ անիկա մեղք չգործէ, անիկա անշուշտ պիտի ապրի իրատ մարիկ ընելուն համար, ու դուն քու հոգիդ ազատած պիտի ըլլաս։

22—Ես հոն Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, ու ինծի ըսաւ, Ելլ, դաշտը գնա, ու հոն քեզի հետ պիտի խօսիմ։ 23—Ես ես ելայ, դաշտը գացի. և ահա հոն կայներ էր Տէրոջը փառքը՝ Քոբար գետին փով տեսած փառքիս պէս. ու երեսիս վրայ ինկայ։ 24—Ես Հոգին իմ վրաս եկաւ, ու զիս ոտքի վրայ կայնեցուց. և ինծի հետ խօսեցաւ. ու ինծի ըսաւ, Գնա տանդ մէջ պահուըտէ։ 25—Ու դուն, որդի մարդոյ, ահա քու վրադ կապանքներ պիտի դնեն, և անոնցմով քեզ պիտի կապեն, ու անոնց մէջ պիտի չելլես։ 26—Ես քու լեզուդ քու ծնօտիդ պիտի փակցնեմ, ու համր պիտի ըլլաս. և անոնց մէջ յանդիմանող մարդու պէս պիտի չըլլաս, վասն զի անոնք ապստամբներու տուն են։ 27—Բայց երբ ես քեզի հետ խօսիմ, քու բերանդ պիտի բանամ. ու անոնց պիտի ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Լսողը թող լսէ, ու զանց ընողը թող զանց ընէ. վասն զի անոնք ապստամբներու տուն են,

քաղաքին մէջտեղ երկաթէ պարիսպի նման դիր, ու քու երեսդ անոր դէմ չիտակ որ անիկա պաշարուի, ու զանիկա պաշարէ. ասիկա Իսրայէլի տանը նշան ըլլայ։

4—Ես դուն քու ձախ կողմիդ վրայ պառկէ, ու անոր վրայ դիր Իսրայէլի տանը անօրէնութիւնը. անոր վրայ պառկած օրերուդ թիւովը անոնց անօրէնութիւնը կրես։ 5—Քանզի ես անոնց անօրէնութեանը տարիները օրերու թիւով քու վրադ դրի, երեք հարիւր քսան օր, որպես զի Իսրայէլի տանը անօրէնութիւնը կրես։ 6—Ու երբ այն տերէը լմննես, նորէն պառկիս քու ալ կողմիդ վրայ, ու քառասուն օր Յուդայի տանը անօրէնութիւնը կրես. քեզի ամէն մէկ տարիին տեղ մէկմէկ օր տուի։

7—Ես քու երեսդ դէպի Երուսաղէմի պաշարումը չյիակես, ու քու բազուկդ մերկացնես, ու անոր վրայ մարգարէութիւն ընես։ 8—Ես ահա քու վրադ կապանքներ պիտի դնեմ, որպես զի մէկ կողմիդ միւս կողմդ չդառնաս, մինչև քու պաշարման օրերդ լմննես։

9—Ու դուն քեզի ցորեն, գարի, բակլայ, ոսպ, կորեկ ու հնձար առ, և զանոնք սանտի մը մէջ դիր, ու անոնցմէ քեզի հաց շինէ. զանիկա, քու յօ կողմիդ վրայ պառկած օրերուդ համարքովը, երեք հարիւր քսնաւն օր ուտես։ 10—Ես ուտելու կերակուրդ կչիռքով ըլլայ, օրը քսան սիկղ. զանիկա ժամանակ ժամանակ ուտես։ 11—Ես ջուրը չափով, հինգնի մը վեցերորդ մասը, խմես. զանիկա ժամանակ ժամանակ խմես։ 12—Ես այն տ-- կ-- կարեղեն չօթերու պէս չկերակ ուտես. ու զանիկա անոնց ալբին առջեւ մարդու ապրի վրայ եփես։ 13—Ես Տէրը ըսաւ, Իսրայէլի որդիները այսպէս պղծած իրենց հացը այն ազգերուն մէջ, ուր զանոնք պիտի քշեմ։ 14—Ու ես ըսի, Ո՜հ, Տէր Եհովա, ահա իմ անձս չպղծուեցաւ, և իմ ստացուածքէս մինչև հիմա մեռելուտի կամ գազանաբեկ չկերայ, ու իմ բերանս պիղծ միս չմտաւ։ 15—Ես ինծի ըսաւ, Նայէ, քեզի մարդու աղբին տեղ կովի քակոր տուի, ու քու հացդ անոր վրայ եփես։

16—Նաև ինծի ըսաւ, Որդի մարդոյ, ահա ես երուսաղէմի մէջ հացին ցուպը պիտի կոտրեմ, ու հացը կչիռքով և անձկութեամբ պիտի ուտեն, ու ջուրը չափով և ապշութեամբ պիտի խմեն։ 17—Վասն զի հացի ու ջուրի կարօտութիւն պիտի քաշեն, ու իրարու դէմ պիտի ապշին, և իրենց անօրէնութեանը պիտի հալին։

Գլ. Ե

Եւ դուն, որդի մարդոյ, քեզի սուր գանակ մը առ, քեզի սափրիչի ածելի մը առ, և շ--ի-- գլխուդ վրայէն ու մօրուքիդ վրայէն անցուր. և քեզի կչիռք մը առ, ու հ--երը բաժին բաժին ըրէ։ 2—Երրորդ մասը քաղաքին մէջ կրակով այրես, երբ պաշարման օրերը լմննան. ու երրորդ մասը առնես և գանակով զարնես անոր բոլորտիքը. ու երրորդ մասը հովին ցրուես, ու ես անոնց ետեւէն սուր պիտի քաշեմ։ 3—Ես անոնցմէ փոքր թիւով առնես, ու զանոնք փղանգքիտուկդ մէջ ծրարես։ 4—Ես գարձեալ անոնցմէ առնես ու զանոնք կրակը նետես և զանոնք կրակով այրես. անկէ բոլոր Իսրայէլի տանը կրակ պիտի ելլէ։

5—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահաւիկ Երուսաղէմն է. զանիկա ազգերուն մէջ ու իր բոլորտիքը եղող երկիրներուն մէջ դրի։ 6—Ես անիկա իմ *դատաստաններս՝ ազգերէն, ու իմ կանոններս՝ իր բոլորտիքը եղող երկիրներէն աւելի ամբարշտութեամբ փոխեց՞. վասն զի իմ դատաստաններս մերժեցին և իմ կանոններովս չգալեցին։ 7—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև ձեր բոլորտիքը եղող ազգերէն աւելի թեպետև եղաք, իմ կանոններուս չգալեցիք և իմ դատաստաններս ի գործ չդրիք. ոչ ալ ձեր բոլորտիքը եղող հեթանոսներուն սովորութիւններուն համեմատ ըրիք։ 8—Անոր համար Տէր Եհո-

*կ--ի, դատաստաններուս՝ ազգերէն, ու իմ կանոններուս՝ իր բոլորտիքը եղող երկիրներէն աւելի ամբարշտութեամբ դէմ կեցաւ.

†կ--ի, խառվայպզ

վա այսպէս կ'ըսե. Ահա ես քեզի դէմ եմ, ու ազգաց ալքերուն առջև քու մէջդ դաւաստաններ ի գործ պիտի դնեմ, 9—ես քու բոլոր պղծութիւններուդ համար այնպիսի բան մը պիտի ընեմ քու մէջդ, որուն նմանը ոչ ըրած եմ ու ալ պիտի ընեմ, 10—Ուստի համար քու մէջդ հայրերը էրէն ազաքը պիտի ուտեն, ու ազաքը իրենց հայրերը պիտի ուտեն, և քու մէջդ դաւաստաններ ի գործ պիտի դնեմ, ու քու բոլոր մնացորդդ ամէն հովի պիտի ցրեմ եմ։ 11—Ասոր համար ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որովհետև դուն քու բոլոր գարշելութիւններովդ ու բոլոր պղծութիւններովդ իմ սրբարանս պղծեցիր, ես ալ անշուշտ էրէ պիտի կարճեմ, և իմ աչքս պիտի չխնայէ ու պիտի չողորմիմ։ 12—Քու երրորդ մասդ ժանտախտով պիտի մեռնին, և քու մէջդ սովով պիտի սպառին. և քու երրորդ մասդ սրով պիտի իյնան. ու երրորդ մասդ ամէն հովի պիտի ցրեմ, ու անոնց ետեւէն սուր պիտի քաշեմ։ 13—Այսպէս իմ բարկութիւնս պիտի կատարուի, և իմ սրտմտութիւնս անոնց վրայ պիտի լեցնեմ ու մխիթ պիտի առնեմ. ու երբ իմ սրտմտութիւնս անոնց վրայ կատարեմ, պիտի գիտնան թէ ես Տէրս իմ նախանձոտ խօսեցայ։ 14—Ես ամէն անցնողին աչքերուն առջև, քու բոլորտիքդ եղող ազգերուն մէջ աւերման ու անարգութեան պիտի մատնեմ քեզ։ 15—Ու երբ բարկութեամբ և սրտմտութեամբ ու սրտմտութեան պատիժներով քու վրադ դաւաստաններ ի գործ դնեմ, «ես Եհովա քու բոլորտիքդ եղող ազգերուն մէջ ատորգածը, նախատինքը, առակ ու զարմացում պիտի ըլլայ. ես Տէրս խօսեցայ։ 16—Երբ անոնց վրայ սովուն չար ու սպականիչ նետերը ղրկեմ, որոնք ձեզ ապականելու համար պիտի ղրկեմ, սովը ձեր վրայ պիտի աւելցնեմ, ու ձեզի համար հացին ցուպը պիտի կոտրեմ։ 17—Այսպէս ձեր վրայ սով ու չար գազաններ պիտի ղրկեմ, ու քեզ անզաւակ պիտի թողուն. և քու մէջդ ժանտախտ ու արիւն պիտի անցնի, ու քու վրադ սուր պիտի բերեմ. ես Տէրս խօսեցայ։

Գլ. Զ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երեսդ Իսրայէլի լեռներուն դարձուր, ու անոնց մարգարէութիւն ըրէ, 3—ու ըսէ, Ով Իսրայէլի լեռներ, Տէր Եհովայի խօսքը մտիկ ըրէք. Այսպէս կ'ըսէ Տէրը լեռներուն, բլուրներուն, ձորերուն ու հովիտներուն. Ահա ես ձեր վրայ սուր պիտի բերեմ, ու ձեր բարձր տեղերը պիտի կործանեմ. 4—ու ձեր սեղանները աւերակ պիտի ընան, ու ձեր արեգական կուռքերը պիտի կոտրտին. և ձեր մեղքէն սպանուածները ձեր կուռքերուն առջև ինկած պիտի ձգեմ. 5—Ու Իսրայէլի որդիներուն դիակները իրենց կուռքերուն առջև պիտի դնեմ, և ձեր ոսկորները ձեր սեղաններուն բոլորտիքը պիտի ցրուեմ. 6—Ձեր ամէն բնակած տեղերուն մէջ քաղաքները աւերակ պիտի ըլլան, ու բարձր տեղերը ամայի պիտի ըլլան. որպէս զի ձեր սեղանները աւերակ ու ամայի ըլլան, և ձեր կուռքերը կոտրտին ու խափանուին, և ձեր արեգական կուռքերը կործանին, ու ձեր գործերը չկենան։ 7—Ու ձեր մէջ սպանուածները պիտի իյնան, և պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։

8—Բայց երբ դուք երկիրներու մէջ ցրուիք, ձեզմէ սուրէն ազատուածները ազգերուն մէջ միացող պիտի թողում 9—Ու ձեր ազատուածները ինծի յիշեն այն ազգերուն մէջ ուր գերի պիտի գտչուին, *ինչպէս զի իրենց չնացող ու ինծմէ խոտորած սրտովը ու իրենց կուռքերուն ետեւէն պոռնկութիւն ընող աչքերովը ատեցի՛. և անոնք իրենց բոլոր պղծութիւններուն համեմատ ըրած չարութիւններուն պատճառաւ իրենց անձերէն պիտի զզուին։ 10—Ու պիտի գիտնան թէ ես Տէրս պարապ տեղ չխօսեցայ՝ թէ այս չարիքը անոնց պիտի բերեմ։ 11—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ձեռքերդ իրարու զարկ ու ոտքդ գե-

*Կամ, երբ կատարեմ իրենց չնացող ու ինծմէ խոտորած սիրտը, ու իրենց կուռքերուն ետեւէն պոռնկութիւն ընող աչքերը

րինը զարկ, ու ըսէ, Ափսո՛ս Իսրայէլի տանը բոլոր չար պղծութիւններուն, վասն զի սրով, սովով ու ժանտախտով պիտի իյնան։ 12—Հեռուն եղողը ժանտախտով պիտի մեռնի. ու մօտ եղողը սրով պիտի իյնայ, և մնացածը ու փրկուածը մէջ եղողը՝ սովով պիտի մեռնի. այսպէս իմ սրտմտութիւնս անոնց վրայ պիտի կատարեմ։ 13—Ու երբ անոնց սպանուածները իրենց կուռքերուն մէջտեղ, իրենց սեղաններուն բոլորտիքը, ամէն բարձր բլուրի վրայ, ամէն լեռներու գլուխ ու ամէն կանաչ ծառի տակ և ամէն տերեւախիտ բեւեկնիի տակ խունկ ըլլան, ուր անոնք իրենց բոլոր կուռքերուն անոյշ հոտ կը մատուցանէին, պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։ 14—Այսպէս իմ ձեռքս անոնց վրայ պիտի երկնցնեմ. ու երկիրը, այսինքն անոնց բոլոր բնակած տեղերը, Դեբղայի կողմը եղող անապատէն աւելի ամայի ու աւերակ պիտի ընեմ. ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

Գլ. Է

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
2—Ու դուն, որդի մարդոյ, խոսի ըէր.
Տէր Եհովա Իսրայէլի երկրին այսպէս կ'ըսէ.
Վախճան, երկրին չորս կողմին վրայ վախճանը հասեր է։
3—Հիմա քու վրադ վախճանը է՜, է՜,
Ու իմ բարկութիւնս քու վրադ պիտի ղրկեմ.
Ու քու ճամբաներուդ համեմատ քեզի դատաստան պիտի ընեմ,
Ու քու բոլոր պղծութիւններդ քու վրադ պիտի բերեմ։
4—Ու իմ աչքս քեզի պիտի չխնայէ, ու պիտի չողորմիմ.
Հապա քու ճամբաներդ քու վրադ պիտի դնեմ,
Ու քու պղծութիւններդ քու մէջդ պիտի ըլլան,
Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը՝ որ կը զարնեմ։
5—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.
Չարիք մը, ահա չարիք մը կու գայ։
6—Վախճանը կու գայ, վախճանը կու գայ.
Քու վրադ արթնցաւ, ահա կու գայ։
7—Ով երկրին բնակիչը, կարգը քեզի կու գայ,
Ժամանակը կու գայ, խռովութեան օրը մօտեցաւ,
Ու ոչ թէ լեռներուն ցնծութիւնը։
8—Հիմա մօտերս իմ սրտմտութիւնս քու վրադ պիտի թափեմ,
Ու իմ բարկութիւնս քու վրադ պիտի կատարեմ,
Ու քու ճամբաներուդ համեմատ քեզի դատաստան պիտի ընեմ,
Ու քու բոլոր պղծութիւններդ քու վրադ պիտի բերեմ։
9—Ու իմ աչքս պիտի չխնայէ, ու պիտի չողորմիմ.
Քու ճամբաներուդ համեմատ քեզի հատուցում պիտի ընեմ,
Ու քու պղծութիւններդ քու մէջդ պիտի ըլլան,
Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը՝ որ կը զարնեմ։
10—Ահա օրը, ահա կուգայ.
Կարգը ելաւ հասաւ,
Գաւազանը ծաղկեցաւ, ամբարտաւանութիւնը ընձաղեցաւ.
11—Բռնաւորութիւնը ելաւ, ամբարշտութեան գաւազան եղաւ.
Անոնցմէ մնացք պիտի չմնայ,
Ու անոնց բազմութենէն ու ամբոխէն բան մը պիտի չմնայ,
Ու անոնց մէջ *վայելչութիւն պիտի չըլլայ։
12—Ժամանակը եկաւ, օրը մօտեցաւ.
Գնողը չուրախանայ ու ծախողը չսգայ,
Քանզի անոր բոլոր բազմութեանը վրայ բարկութիւն է՜, է՜։
13—Վասն զի ծախողը ծախուածին պիտի չդառնայ,
Թէև ողջ ըլլան.
Վասն զի անոր բոլոր բազմութեանը համար եղած տեսիլքը ետ պիտի չդառնայ,
Ու մարդ մը իր կեանքին անօրէնութիւնովը պիտի չուժեղնայ։

†Կամ, պահուըտածը

*Կամ, սուգ

14—Փողը հնչեցուցին, ամէն բան պատռատեցին,
Բայց պատերազմի գացող չկայ.
Վասն զի իմ բարկութիւնս անոր բոլոր բազմութեանը վրայ է։
15—Թուրսէն սուր, ու ներսէն ժանտախտ ու սով պիտի ըլլայ.
Դաշտը եղողը սրով պիտի մեռնի,
Ու քաղաքին մէջ եղողը սովը ու ժանտախտը պիտի ուտէ։
16—Ու անոնց ազատուածները որոնք պիտի ազատին,
Լեռներուն վրայ ձորերու աղաւնիներուն պէս պիտի ըլլան.
Ամէնը պիտի հեծծեն, ամէն մէկը իր անօրէնութեանը համար։
17—Ամէն ձեռքերը պիտի թուլնան,
Ու ամէն ծունկերը չորի պէս պիտի հալին։
18—Ու անոնք քուրձեր պիտի հագնին,
Ու զանոնք սոսկումը պիտի ծածկէ.
Ու ամէն երեսի վրայ ամօթ,
Ու անոնց ամէն գլուխն վրայ կնատութիւն պիտի ըլլայ։
19—Իրենց արծաթը փողոցներուն մէջ պիտի նետուի,
Ու անոնց ոսկին անարգ բան մը պիտի սեպուի.
Անոնց արծաթը ու ոսկին Տէրոջը բարկութեան օրը
Կարող պիտի չըլլայ զանոնք ազատել.
Անով պիտի չկրնան իրենց անձը կշտացընել,
Ոչ ալ իրենց փորը լեցնել.
Վասն զի անիկա իրենց անօրէնութեանը գայթակղութիւնը եղաւ։
20—Իրենց զարդերուն փառքը հպարտութեան դարձուցին,
Ու անով իրենց գարշելութիւնները, իրենց պղծութիւններուն պատկերները չընեցին.
Այս պատճառաւ անոնց առջև անարգ բան մը կ'ընեմ զանիկա։
21—Ու զանիկա օտարներուն ձեռքը պիտի տամ, որպես զի յափշտակին,
Ու երկրի ամբարիշտներուն՝ որպես զի զանիկա կողոպտեն,
Ու զանիկա պիտի պղծեն։
22—Ու իմ երեսս անոնցմէ պիտի դարձնեմ,
Ու իմ գաղտնի տեղս պիտի պղծեն.
Ու հոն բռնաւորներ պիտի մտնեն,
Ու զանիկա պիտի պղծեն։
23—Շղթայ մը չընեմ,
Վասն զի երկիրը արեան դատաստանով լեցուեցաւ,
Ու քաղաքը բռնութիւնով լեցուեցաւ։
24—Ու ազգերուն խիստ չարերը պիտի բերեմ,
Ու անոնց առնները պիտի ժառանգեն.
Ու բռնաւորներուն ամբարտաւանութիւնը պիտի դադրեցնեմ,
Ու անոնց սուրբ տեղերը պիտի պղծուին։
25—Կործանումը կու գայ.
Ու խաղաղութիւն պիտի փնտռեն, բայց պիտի չգտնուի։
26—Պատուհասի վրայ պատուհաս պիտի գայ,
Ու գուժի վրայ գոչ պիտի ըլլայ.
Ու մարգարէին տեսիլք պիտի ուզեն,
Ու քահանային օրէնքը ու ծերերուն խորհուրդը պիտի կորսուի։
27—Թագաւորը սուգ պիտի բռնէ,
Ու իշխանը սոսկում պիտի հագնի,
Ու երկրին ժողովուրդին ձեռքերը վախով պիտի թուլնան.
Անոնց ճամբաներուն համեմատ անոնց հատուցում պիտի ընեմ,
Ու անոնց դատաստաններուն համեմատ զանոնք պիտի դատեմ,
Ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

Գլ. Ը

Ու եղաւ որ վեցերորդ տարին, վեցերորդ ամսուն հինգերորդ օրը, ես իմ տանս մէջ կը նստէի, և Յուդայի ծերերը իմ առջևս կը նստէին, ու հոն Տէրը Եհովայի ձեռքը իմ վրաս իջաւ.
2—Ու նայեցայ, ու ահա մարդու կերպարանք մը կար կրակի երեւութով. անոր երիսմանդքներուն ներսէն վար կրակ էր, ու անոր երիսմանդքներէն վեր ոսկեպզինձի նման փայլուն երեւոյթ մը կար։ 3—Ու անիկա ձեռքի նմանութիւն մը երկնցուց, ու իմ գլխուս վարսքին բռնեց. ու Հոգին զիս երկրի ու երկինքի մէջտեղ վերցուց, և զիս Աստուծոյ տեսիլքով Երուսաղէմ, դէպ ի հիւսիս նայող ներքին դրանը

մտաքը, բերաւ, ուր նախանձ գրգռող Նախանձու կուռքը կը կենար։ 4—Ու ահա հոն, դաշտի մէջ տեսած տեսիլքին պէս Իսրայէլի Աստուծոյն փառքը կար։
5—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, հիմա քու աչքերդ դէպ ի հիւսիս վերցուր. ու երբ աչքերս դէպ ի հիւսիս վերցուցի, ահա սեղանին դրանը մտաքին հիւսիսային կողմը այս նախանձու կուռքը կար։ 6—Ան առեն ինծի ըսաւ, Որդի մարդոյ, կը տեսնե՞ս ասոնց ըրածը, այն մեծ պղծութիւնները զորոնք Իսրայէլի տունը հոս կ'ընէ, որպէս զի ես իմ սրբարանէս հեռանամ. բայց նորէն դարձիր, ու՝ էլ մեծ պղծութիւններ պիտի տեսնես։
7—Ու զիս գաւիթին դուռը տարաւ. ու տեսայ, և ահա պատին վրայ ծակ մը կար։ 8—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, հիմա այս պատը փորէ. ու երբ պատը փորեցի, ահա դուռ մը կար։ 9—Ու ինծի ըսաւ, Մտիր ու տես այն չար պղծութիւնները զորոնք անոնք հոս կ'ընեն։ 10—Ու ես մտայ ու տեսայ, և ահա ամէն տեսակ սողուններու ու գարշելի անասուններու պատկերներ, և Իսրայէլի տանը բոլոր կուռքերը պատին վրայ շուրջանակի փորուած էին։ 11—Ու անոնց առջև կայնած էին Իսրայէլի տանը ծերերէն եօթանասուն մարդ, և Սափանի որդին Յազոնիա՝ անոնց մէջ կայնած էր. ամէն մէկը ձեռքը բուրվառ ունէր, ու խունկին ծուխը ամպի պէս վեր կ'ելլէր։ 12—Ու Տէրը ինծի ըսաւ, Որդի մարդոյ, կը տեսնե՞ս թէ ինչ'ը կ'ընեն Իսրայէլի տանը ծերերը մութ տեղը, ամէն մարդ իր ծածուկ պատկերաստանը մէջ. վասն զի անոնք կ'ըսեն Թէ Տէրը մեզ չտեսներ, Տէրը երկիրը թողուց։ 13—Ու ինծի ըսաւ, Նորէն դարձիր, և անոնց ըրած՝՝՝էլ մեծ պղծութիւնները պիտի տեսնես։
14—Ու զիս Տէրոջը տանը դէպ ի հիւսիս եղող դրանը մտաքը բերաւ. և ահա հոն Թամմուզի համար լացող կիները կը նստէին։ 15—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, կը տեսնե՞ս. նորէն դարձիր, ՝՝՝ասոնցմէ աւելի մեծ պղծութիւններ պիտի տեսնես։
16—Ու զիս Տէրոջը տանը ներքին գաւիթը բերաւ. և ահա Տէրոջը տաճարին դուռը, սրահին ու սեղանին մէջտեղ, քսանըհինգ մարդու չափ կային. անոնք կռնակնին Տէրոջը տաճարին դարձուցեր էին, ու երեսնին արեւելքին, ու դէպ ի արեւելք արեւուն երկրպագութիւն կ'ընէին։ 17—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, տեսա՞ր. միթէ Յուդայի տանը պզտի՞կ բան կ'երեւնայ իրենց հոս ըրած պղծութիւնները ընելը, որ երկիրն ալ բռնութիւնով լեցուցին, ու զիս բարկացնելու դարձան. և ահա Ճիւղը իրենց քիթին կ'երկնցնեն։ 18—Ու ես ալ սրտմտութեամբ պիտի վարուիմ՝՝՝ անոնց հետ. աչքս պիտի չխնայէ, ու պիտի չողորմիմ. և անոնք իմ ականջներուս մեծ ձայնով պիտի կանչեն, սակայն անոնց մտիկ պիտի չընեմ։

Գլ. Թ

Ես մեծ ձայնով կանչեց իմ ականջներուս ու ըսաւ, Քաղաքին վրայ սրուժածները մտեցուցէք, ու ամէն մէկը իր ապականիչ գործիքը իր ձեռքը՝՝՝նէ՝՝։ 2—Ու ահա դէպ ի հիւսիս նայող վերի դրանը ճամբայէն վեց մարդ կու գար, ու ամէն մէկուն կատարիչ գործիքը իր ձեռքն էր. և անոնց մէջ կուաէզգեստ հագած մարդ մը կար, ու մէջքը գրագիրի կաղամար ուներ. և անոնք գացին պղնձէ սեղանին քով կայնեցան։ 3—Ու Իսրայէլի Աստուծոյն փառքը, որ քերովբէներուն վրայ էր, անոնց վրայէն տանը սեմը եղաւ։
Ու այն կուաէզգեստ հագած ու մէջքը գրագիրի կաղամար ունեցող մարդը կանչեց։ 4—Ու Տէրը անոր բաւ, Քաղաքին մէջէն, Երուսաղէմի մէջէն, անցիր, ու անոր մէջ եղած բոլոր պղծութիւններուն համար հառաչող ու ազաչող մարդոցը ճակտներուն վրայ նշան դիր։ 5—Ու քանի որ ես կը լսէի, միւսներուն ըսաւ, Անոր հետեւէն քաղաքին անցէք ու զարկէք. աչքերնիդ չխնայէ ու մի ողորմիք. 6—Ծերը, երիտասարդը ու կոյսը, պզտիկ ազաքը ու կիները սպաննեցէք ու կոտորացուցէք, բայց վրան նշան ունեցող մարդու մը մի՛ հասնիք. ու իմ սրբա-

բանէս սկսեցէք։ Ուսաի սանը առջև եղող ծեր մարգացմէն սկսաւ։ 7—Ու անոնց ըսաւ, Տուները պղծեցէք, ու գաւիթները մեռելներով լեցուցէք — ելէք։ Ու անոնք ելան ու քաղաքին մէջ զարկին։

8—Ու երբ զանոնք զարկին, ու ես մնացի, այն ատեն երեսիս վրայ ինկայ և աղաղակելով ըսի, Ո՜հ, Տէր Եհովա, դուն նըուաստէմի վրայ քու բարկութիւնդ թափելո՞վ Իսրայէլի բոլոր մնացորդը բնաջի՞նջ պիտի ընես։ 9—Ու ինծի ըսաւ, Իսրայէլի և Յուդայի սանը անօրէնութիւնը խիստ չատ մեծ է, ու երկիրը արիւնով լեցուցեալ և քաղաքը անիրաւութիւնով լեցուցեալ։ Վասն զի ըսին, Տէրը երկիրը թողուց, ու Տէրը չտեսնէր։ 10—Ես հիմա իմ աչքս ալ պիտի չխնայէ ու պիտի չողորմիմ։ Իրենց ճամբաները իրենց գլխուը պիտի բերեմ։

11—Ու ահա կաւէ զգեստ հագած ու մկիքը կողմանը ունեցող մարդը լուր բերաւ՝ ու ըսաւ, Ինծի հրամայածիդ պէս ըրի։

Գլ. Ը

Ու տեսայ որ ահա քերովբէներուն գլխուն վրայի հաստատութեանը մէջ՝ շափիւզայ քարի պէս աթոռի ձեւով նմանութիւն մը կ'երեւէար անոնց վրայ։ 2—Ու կաւէ զգեստ հագած մարդուն խօսեցաւ ու ըսաւ, Քերովբէներուն տակ եղող անիւներուն մէջտեղ մտիր, և ձեռքիդ քերովբէներուն մէջտեղ եղող կրակի կայծերէն լեցու զ, ու քաղաքին վրայ ցանէ։ ԵՒ անիկա իմ աչքերուս առջև՛ մտաւ։ 3—Ու երբ այն մարդը մտաւ, քերովբէները տանը աջ կողմը կայնած էին, և ամպը ներսիդին գտիքը լեցուցեր էր։ 4—Ու Տէրոջը փառքը քերովբէներուն վրայէն տանը սեմը վերացաւ, և տունը ամպով լեցուեցաւ, ու գաւիթը Տէրոջը փառքին պայծառութիւնովը լեցուեցաւ։ 5—Ու քերովբէներուն թեւերուն ձայնը մինչև արտաքին գաւիթը կը լսուէր, Ամենակարող Աստուծոյ ձայնին պէս, երբ կը խօսի։ 6—Ու երբ կաւէ զգեստ հագած մարդուն հրամայեց, ու ըսաւ թէ Քերովբէներուն մէջտեղէն եղող անիւներուն մէջէն կրակ առ, անիկա գնաց անիւներուն քով կայնեցաւ։ 7—Ու քերովբէներէն մէկը իր ձեռքը քերովբէներուն մէջտեղ եղող կրակին երկնցուց ու առաւ, և կաւէ զգեստ հագնողին ձեռքը տուաւ։ անիկա ալ առաւ ու ելաւ։ 8—(Ու քերովբէներուն թեւերուն տակ մարդու ձեռքի նմանութիւն կ'երեւնար։)

9—Ես տեսայ որ ահա քերովբէներուն քով չորս անիւ կար, ամէն մէկ քերովբէին քով մէկմէկ անիւ։ ու անիւներուն երեւոյթը ասկեփարի կը նմանէր։ 10—Ես անոնց երեւոյթը՝ չորսին ալ ձեւը մէկ էր, որպէս թէ անիւ անիւի մէջ եղած ըլլար։ 11—Գացած ատեննին իրենց չորս կողմերուն վրայ կ'երթային. գացած ատեննին չէին դառնար, վասն զի ո՛ր կողմը որ գլուխը կը նայէր, անոր եռեւէն կ'երթային, գացած ատեննին չէին դառնար։ 12—Ես անոնց բոլոր մարմինը, կռնակները ու ձեռքերը ու թեւերը, և անիւները, այսինքն այն չորսին անիւները, ամէն կողմէն աչքերով լեցուն էին։ 13—Անիւներուն համար լսեցի որ անոնց անուն դրուեցաւ *Մրբիկ։ 14—Ու չորս մէկը չորս երես ունէր. առաջին երեսը քերովբէի երես էր, երկրորդ երեսը մարդու երես էր, ու երրորդը առիւծի երես էր, և չորրորդը արծիւի երես էր։ 15—Ու քերովբէները վերացան, Քոբար գետին քով տեսած կենդանինեսս ասոնք էին։ 16—Ու երբ քերովբէները կ'երթային, անիւներն ալ անոնց քովէն կ'երթային, ու երբ քերովբէները երկրէ բարձրանալու համար թեւերնին կը վերցնէին, այս անիւներն ալ անոնց քովէն չէին դառնար։ 17—Երբ անոնք կայնէին, անոնք ալ կը կայնէին, երբ անոնք վերանային, անոնք ալ կը վերանային անոնց հետ. վասն զի անոնց մէջ կենդանիներուն ոգին կար։

18—Ու Տէրոջը փառքը տանը սեմին վրայէն ելաւ, ու քերովբէներուն վրայ կայնեցաւ։ 19—Ես իմ աչքերուս առջև՛ քերովբէները հլնլով՝ թեւերնին վեր

*Կամ, Դիւրաթափառ ԵԷբ. Գաղղա.

ցուցին ու երկրէ բարձրացան. անիւներն ալ անոնց հետ էին, ու Տէրոջը տանը արեւելեան դրանը մուտքը կայնեցան, ու Իսրայէլի Աստուծոյ փառքը վերէն անոնց վրայ էր։ 20—Քոբար գետին քով Իսրայէլի Աստուծոյ տակ տեսած կենդանիներս ասոնք էին, ու գիտցայ որ անոնք քերովբէներ են։ 21—Անոնց մէկը չորս երես, ու մէկը մէկը չորս թև ունէր, և անոնց թեւերուն տակ մարդու ձեռքերու նմանութիւն կ'երեւնար։ 22—Ու անոնց երեսներուն երեւոյթը նոյն երեսներուն նը նմանէր՝ զորոնք Քոբար գետին քով տեսայ, թէ՛ անոնց կերպարանքը և թէ՛ իրենք. ամէն մէկը չիտակ յառաջ կ'երթար։

Գլ. ԺԱ

Ես Հոգին զիս վերցուց, ու Տէրոջը տանը դէպ ի արեւելք նայող արեւելեան դուռը բերաւ. և ահա դրանը մուտքը քսանըհինգ մարդ կար, ու ես անոնց մէջ Ժողովրդին իշխանները, Ազուրի որդին Յազանիան ու Բանեայի որդին Փաղտիան, տեսայ։

2—Ու անիկա ինծի ըսաւ, Որդի մարդոյ,

Ասոնք են այն մարդիկը որ անօրէնութիւն կը մտածեն,

Ու չար խորհուրդ կու տան այս քաղաքին մէջ,

3—Ու կ'ըսեն, Մօտ չէ՛ [illegible], տուներ չինենք.

Այս [illegible] կաթսայ է, ու մենք միս ենք։

4—Ուսաի մարգարեացիր անոնց վրայ, Մարգարեացիր, որդի մարդոյ։

5—Այն ատեն Տէրոջը Հոգին իմ վրաս իջնաւ

Ու ինծի ըսաւ, Ըսէ որ Տէրը այսպէս կ'ըսէ.

Դուք այսպէս ըսիք, ով Իսրայէլի տուներ, Բայց ես ձեր միտքին անցածը գիտեմ։

6—Դուք այս քաղաքին մէջ ձեր սպանուածները չատցուցիք,

Ու անոր փողոցները սպանուածներով լեցուցիք։

7—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Ձեր սպանուածները զորոնք անոր մէջ դրիք,

Անոնք միսն են, ու անիկա կաթսան է. Բայց ձեզ անոր մէջէն պիտի հանեմ։

8—Դուք սուրէն վախցաք,

Ու ես սուրը ձեր վրայ պիտի բերեմ, ը՛ըսէ Տէր Եհովա։

9—Ու ձեզ անոր մէջէն պիտի հանեմ, Ես ձեզ օտարներուն ձեռքը պիտի մատնեմ,

Ու ձեր մէջ դատաստաններ ի գործ պիտի գնեմ։

10—Դուք սրով պիտի իյնաք,

Իսրայէլի սահմանին վրայ ձեզ պիտի դատեմ,

Ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։

11—Այս [illegible] ձեզի համար կաթսայ պիտի չըլլայ,

Որ դուք անոր մէջ միս ըլլաք.

Իսրայէլի սահմանին վրայ ձեզ պիտի դատեմ,

12—Ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը. Վասն զի իմ օրէնքներովս չյարմեցիք,

Ու իմ իրաւունքներս ի գործ չդրիք, Հապա ձեր բոլորտիքը եղող ազգերուն սովորութիւններուն համեմատ վարուեցաք։

13—Ու եղաւ որ իմ մարգարէութիւն ըրած ատենս Բանեայի որդին Փաղտիա մեռաւ. այն ատեն երեսիս վրայ ինկայ, բարձր ձայնով աղաղակեցի ու ըսի, Ո՜հ, Տէր Եհովա, մինչէ Իսրայէլի մնացորդը բոլորովին պիտի սպաննե՞ս։

14—Այն ատեն Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 15—Որդի մարդոյ, քու եղբայրներդ, քու եղբայրներդ, քու ազգականներդ ու բոլոր Իսրայէլի տունը, ամէնը այն մարդիկն են՝ որոնց Երուսաղէմի բնակիչները ըսին, Տէրոջը փովէն հեռացէ՛ք. այս երկիրը մեզի ժառանգութիւն արուած է։

16—Անոր համար ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Թէպետև զանոնք ազգերուն մէջ հեռացուցի,

Ու զանոնք երկիրներուն մէջ ցրուեցի, Բայց անոնց մնած երկիրներուն մէջ

Ինչ մը [illegible] անոնց սրբարան պիտի ըլլամ

17—Անոր համար ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

Ձեզ ժողովուրդներէն պիտի հաւաքեմ,
Ու ձեզ պիտի ժողվեմ այն երկիրներէն՝
Ուր դուք ցրուած եք.
Ու ձեզի պիտի տամ Իսրայէլի երկիրը։
18—Եւ հոն պիտի մտնեն,
Ու անոր բոլոր գարշութիւնները
Ու բոլոր պղծութիւնները անկէ պիտի վերցնեն։
19—Եւ անոնց մէկ սիրտ պիտի տամ,
Ու անոնց նեղսիրտին նոր հոգի պիտի դնեմ.
Ու անոնց մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ,
Ու անոնց մարմնեղէն սիրտ պիտի տամ.
20—Որպէս զի իմ օրէնքներուս մէջ քալեն,
Ու իմ իրաւունքներս պահեն ու զանոնք ի գործ դնեն.
Ու անոնք ինծի ժողովուրդ ըլլան,
Ես ալ անոնց Աստուած ըլլամ։
21—Բայց անոնց որոնց սիրտը իրենց կամքին գարշութիւններուն
Ու պղծութիւններուն հաւնէն կ'երթայ,
Անոնց ճամբան իրենց գլխուքը պիտի բերեմ,
Կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ։
22—Ու քերովբէները իրենց թեւերը վերցուցին, ու անիւները անոնց քով էին, և Իսրայէլի Աստուծոյն փառքը վերէն անոնց վրայ էր։ 23—Ու Տէրոջը փառքը քաղաքին մէջտեղին վրայէն ելաւ, և քաղաքին արեւելեան կողմը եղող լեռանը վրայ կայնեցաւ։
24—Ու Հոգին զիս վերցուց ու Քաղդեացւոց երկիրը եղող գերիներուն քով բերաւ, Ե՛ՒՒ ԵՂԵ՛Ւ Աստուծոյ Հոգւովը տեսիլքի մէջ. ու այն տեսած տեսիլքս իմ վրայէս ելաւ։ 25—Ու ես գերիներուն խօսեցայ Տէրոջը բոլոր խօսքերը զորոնք ինծի յայտներ էր։

ԳԼ. ԺԲ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, դուն տպրատումներու տանը մէջ բնակած ես, որոնք տեսնելու աչքեր ունին ու չեն տեսներ, և լսելու ականջներ ունին ու չեն լսեր. վասն զի անոնք ապստամբներու տուն են։ 3—Ու դուն, որդի մարդոյ, քեզի չտեսնելու կարասիներ պատրաստէ, ու անոնց աչքերուն առջև ցերեկով չտես, և անոնց աչքերուն առջև քու եղած տեղէդ ուրիշ տեղ մը չտես, թերեւս *ուշադրութիւն ընեն, թէև անոնք ապստամբներու տուն են։ 4—Ու անոնց աչքերուն առջև քու կարասիներդ ցերեկով հանես, չտեսնելու կարասիներու պէս. բայց դուն անոնց աչքերուն առջև իրիկունը ելլես, գերութեան գացողներու պէս։ 5—Անոնց աչքերուն առջև պատը ծակես ու անկէ հանես. 6—Անոնց աչքերուն առջև ջնդէդ ուսդ վրայ վերցնես, — մթնցած ատեն հանես. երեսդ ծածկէ որպէս զի երկիրը չտեսնես. վասն զի քեզ Իսրայէլի տանը նշան ըսի։

7—Ես այնպէս ըրի ինչպէս ինծի հրամայուեցաւ. իմ կարասիներս՝ չտեսնելու կարասիներու պէս ցերեկով հանեցի, ու իրիկունը ձեռքովս պատը ծակեցի, — մթնցած ատեն հանեցի. անոնց աչքերուն առջև ուսիս վրայ վերցուցի։ 8—Եւ առաւանց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 9—Որդի մարդոյ, Իսրայէլի տունը, այն ապստամբներու տունը, քեզի չըսի՞ն թէ Ա՛յդ ի՞նչ կ'ընես։ 10—Անոնց ըսէ, Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ. Ա՛յս պատգամը Երուսաղէմի մէջ եղող իշխանին, ու հոն բո՛լոր Իսրայէլի բոլոր տանը համար է։ 11—Ըսէ, Ես ձեզի համար նշան եմ. Ես ինչպէս ըրի, անոնց այնպէս պիտի ըլլայ. Անոնք պիտի չտեսնեն — գերութեան երթան։ 12—Ու անոնց մէջ եղող իշխանը Իր ուսին վրայ բե՛ր պիտի վերցնի, Ու մթնցած ատեն պիտի ելլէ. Պատը պիտի ծակեն որպէս զի անկէ հանեն. Անիկա իր երեսը պիտի ծածկէ, Որպէս զի երկիրը աչքով չտեսնէ։ 13—Ու անոր վրայ իմ ցանցս պիտի տարածեմ, Ու անիկա իմ որոգայթիս մէջ պիտի բռնուի. Եւ զանիկա Բաբելոն,

*Կամ, տեսնեն թէ իրենք

Քաղդեացւոց երկիրը, պիտի տանիմ, Եւ անիկա այն տեղը պիտի չտեսնէ, Թէև հոն պիտի մեռնի։ 14—Ու անոր բոլորտիքը եղող բոլոր օգնականները Ու անոր բոլոր գունդերը Ամէն հովերու պիտի ցրուեմ, Ու անոնց հետևէն սուր պիտի քաշեմ։ 15-Ու երբ զանոնք ազգերու մէջ ցրուեմ, Ու զանոնք երկիրներու մէջ ցանեմ, Պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։ 16—Ու անոնցմէ սուրբեն, սովէն ու ժանտախտէն Քիչ մարդ ձեացուցի պիտի թողում, Որպէս զի իրենց բոլոր պղծութիւնները պատմեն Այն ազգերուն մէջ ուր պիտի մտնեն. Ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

17—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 18—Որդի մարդոյ, քու հացդ դողալով ուտես, Ու ջուրդ սաստիկով և անձկութեամբ խմես. 19—Ու երկրին ժողովուրդին ըսես, Իսրայէլի երկրին մէջ եղող Երուսաղէմի բնակիչներուն վրայով Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ. Անոնք իրենց հացը անձկութեամբ պիտի ուտեն, Ու իրենց ջուրը ապշութեամբ պիտի խմեն, Որպէս զի իրենց երկիրը *բոլորովին ամայի պիտ Իր բոլոր բնակիչներուն անիրաւութեանը պատճառաւ։ 20—Ու մարդաբնակ քաղաքները պիտի աւերուին, Ու երկիրը ամայի պիտի ըլլայ. Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։

21—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 22—Որդի մարդոյ, ի՞նչ պիտի ըլլայ ձեզի այն առակը Զոր կ՚ե՛ս Իսրայէլի երկրին մէ՛ջ կ՚ը՛ս՛ե՛ս՛։ Ու կ'ըսէ՛ք, Օրերը կ'երկննան, Ու ամէն տեսիլք պարապ կ'ելլէ։ 23—Անոր համար անոնց ըսէ,

*ԵՒՐ. իր լեռներէն

Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ.
Այս առակը պիտի խափանեմ,
Ու այս առակը Իսրայէլի մէջ պիտի չգործածեն.
Բայց անոնց ըսէ, Օրերը մօտեցան,
Նաև ամէն տեսիլքին կատարումը։
24—Վասն զի Իսրայէլի տանը մէջ մէ՛յ՛մ՛ն՛ ալ ունայն տեսիլք
Եւ չոզոքորթութեան գուշակութիւն պիտի չըլլայ։
25—Քանզի ՚ես Տէրս կը խօսիմ՚,
Ու խօսած խօսքս ի գործ պիտի գրուի,
Ալ պիտի չուշանայ։
Վասն զի ձեր օրերուն մէջ, ով տպրատումներու տուն,
Խօսք պիտի խօսիմ ու պիտի կատարեմ,
Կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ։
26—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
27—Որդի մարդոյ, Ահա Իսրայէլի տունը կ'ըսեն թէ
Ասոր տեսած տեսիլքը շատ օրերու համար է,
Ու ասիկա հեռաւոր ժամանակներու համար մարգարէութիւն կ'ընե։
28—Անոր համար անոնց ըսէ,
Այսպէս կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ.
Այսուհետև բնաւ մէկ խօսքս պիտի չուշանայ,
Հապա իմ խօսած խօսքս պիտի կատարուի,
Կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ։

ԳԼ. ԺԳ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
2—Որդի մարդոյ, մարգարէութիւն ընող Իսրայէլի մարգարէներուն դէմ մարգարէացիր,
Ու իրենց սրտէն մարգարէութիւն ընողներուն ըսէ,
Տէրոջը խօսքը մտիկ ըրէք.
3—Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ.
Վա՜յ անգամ մարգարէներուն,
Որոնք իրենց հոգիին հետևէն կ'երթան,
Ու բան մը տեսած չեն։
4—Քու մարգարէներդ, ով Իսրայէլ,
Աւերակներու մէջ եղող աղուէսներու պէս եղան։
5—Խրամատութեան տեղերը չէք

*Կամ, ես եմ Տէրը, որ կը խօսիմ

Ու Տէրոջը օրը պատերազմի մէջ հ---
կայնելու համար
Իսրայէլի տունը պարապով չպատեցիք։
6—Անոնք ունային տեսիլք և սուտ գու-
շակութիւն կը տեսնեն,
Եւ կ'ըսեն Թէ Տէրը ըսաւ,
Թէև Տէրը զանոնք ղրկած չէ.
Եւ յոյս կու տան Թէ էրէՅ խօսքը պիտի
կատարուի։
7—Միթէ դուք ունայն տեսիլքներ չտե-
սա՞ք,
Եւ սուտ գուշակութիւններ չխօսեցա՞ք,
Ու չըսի՞ք Թէ Տէրը խօսեցաւ,
Երբ ես խօսած չէի։
8-Անոր համար Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ.
Ձեր խօսքին ունայն
Ու ձեր տեսիլքին սուտ ըլլալուն համար՝
Ահա ես ձեզի դէմ եմ,
Կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ.
9-Ու իմ ձեռքս ունայն տեսիլք տեսնող
Եւ սուտ գուշակութիւն ընող մարգա-
րէներուն դէմ պիտի ըլլայ.
Անոնք իմ ժողովուրդիս խորհուրդին
մէջ պիտի չըլլան,
Ու իսրայէլի տանը գիրքին մէջ պիտի
չգրուին,
Եւ իսրայէլի երկիրը պիտի չմտնեն.
Ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէր ԵՀՈՎԱ։
10—Որովհետև անոնք իմ ժողովուրդս
կը մոլորեցնեն,
Եւ խաղաղութիւն է՛ կ'ըսեն, երբ խաղա-
ղութիւն չկայ.
Ու անիկա պատ կը շինէ,
Եւ անոնք կիրուվ կը ծեփեն զանիկա։
11—Ան կիրուվ ծեփողներուն ըսէ որ
Անիկա պիտի փլչի։
Յորդառատ անձրեւ պիտի ըլլայ,
Եւ դուք, ով կարկուտի քարեր, պիտի
իյնաք.
Ու գ-ՆԷ՚- մրրկայից հովը պիտի ձեղքէ։
12—Ես ահա էբէ պատը փլչի,
Ձեզի պիտի չըսի՞ն Թէ
Ո՞ր է այն ծեփը զոր դուք ծեփեցիք։
13-Անոր համար Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ.
Իմ սրտմտութիւնովս մրրկայից հով պի-
տի հանեմ,
Եւ իմ բարկութիւնովս յորդառատ անձրեւ,
Ու սրտմտութիւնովս կարկուտի քարեր
պիտի ըլլան,
Որպէս զի զ-ՆԷ՚- բնաջինջ ընեն։
14—Ու կիրուվ ծեփած պատերնիդ
պիտի փլցնեմ,
Եւ զանիկա գետնին հետ հաւասար պի-
տի ընեմ.
Ու անոր հիմը պիտի երեւայ, և անիկա
պիտի իյնայ,
Ու դուք անոր մէջ բնաջինջ պիտի ըլլաք։
Ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
15—Ու ես իմ սրտմտութիւնս պատին
վրայ
Ու զանիկա կիրուվ ծեփողներուն վրայ
պիտի կատարեմ,
Ու ձեզի պիտի ըսեմ,
Պատը ու զանիկա ծեփողները ոչինչ
եղան,
16—Իսրայէլի մարգարէները՝
Որոնք Երուսաղէմի վրայ մարգարէու-
թիւն կ'ընէին,
Եւ անոր վրայով խաղաղութեան տես-
իլքներ կը տեսնէին,
Քանի որ խաղաղութիւն չկայ, կ'ըսէ
Տէր ԵՀՈՎԱ։
17—Ու դուն, որդի մարդոյ, երեսդ
քու ժողովուրդիդ աղջիկներուն
դէմ, որոնք իրենց սրտէն մարգարէու-
թիւն կ'ընեն, ու անոնց վրայ մարգա-
րէացիր, 18—Ու ըսէ, Տէր ԵՀՈՎԱ այս-
պէս կ'ըսէ. Վա՜յ այն կիներուն, որոնք
ամէն թեւերու տակ բարձ կը կարեն, և
ամէն հասակի *-ՐՔ-ՈՅ գլուխներուն *լա-
չակներ կը շինեն որպէս զի հոգիներ որ-
սան միթէ դուք իմ ժողովուրդիս հո-
գիները որսալով ձեր հոգիները պիտի
ապրեցնե՞ք։ 19—Ու ափեր լեցուն գա-
րիի համար ու հացի պատառներու հա-
մար իմ ժողովուրդիս առջեւ զիս պիտի
անարգե՞ք. որպէս զի սուտ թեան ականջ
դնող ժողովուրդիս սուտ թիւն գրուցելով՝
չմեռնելու հոգիները մեռցնէք, ու չապ-
րելու հոգիները ապրեցնէք։ 20—Անոր
համար Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ. Ահա
ես ձեր բարձերուն դէմ եմ, որոնցմով
դուք հոգիները կ'որսաք †Թռչուններու
պէս՝, և զանոնք ձեր թեւերէն պիտի
պատռեմ, ու այն հոգիները որ դուք ա-
ձակեմ, այսինքն այն հոգիները զորոնք
դուք կ'որսաք †Թռչուններու պէս՝։

*կամ, երեսի բարձեր
†կամ, որպէս զի Թռչին

21—Ես ձեր լաչակները պիտի պատռեմ,
ու իմ ժողովուրդս ձեր ձեռքէն պիտի
ազատեմ, ու մէյ մըն ալ ձեր ձեռքին
մէջ որս պիտի չըլլան. ու պիտի գիտ-
նաք Թէ ես եմ Տէրը։ 22—Վասն զի
դուք արդարին սիրտը չէր սուտ Թիւն-
ներովը տրտմեցուցիք զոր ես չէի տրըտ-
մեցուցած. ու ամբարիշտին ձեռքը ու-
ժովցուցիք, որպէս զի իր չար ճամբա-
յէն չդառնայ ու ապրի։ 23—Անոր հա-
մար մէյմըն ալ ունայն տեսիլք պիտի
չտեսնէք, և գուշակութիւն պիտի չըս-
նէք. ու իմ ժողովուրդս ձեր ձեռքէն
պիտի ազատեմ. և պիտի գիտնաք Թէ
ես եմ Տէրը։

ԳԼ. ԺԴ

Ու Իսրայէլի ծերերէն քանի մը մար-
դիկ ինծի եկան, ու իմ առջեւս նստան։
2—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
լով, 3—Որդի մարդոյ, այդ մարդիկը
իրենց կուռքերը իրենց սիրտերուն մէջ
կանգնեցին, ու իրենց անօրէնութեան
գայթակղութիւնը իրենց երեսներուն
առջեւ դրին. միթէ բնա՞ւ անոնց
պատասխան պիտի տա՞մ։ 4—Ուստի
անոնց հետ խօսէ ու անոնց ըսէ, Տէր
ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ. Իսրայէլի տունէն
ով որ իր կուռքերը իր սրտին մէջ
կանգնէ, ու իր անօրէնութեանը գայ-
թակղութիւնը իր երեսին առջեւ դնէ,
ու մարգարէին գայ, այն եկողին՝ ես
Տէրս անոր կուռքերուն չառած Թեանը
համեմատ պատասխան պիտի տամ. 5—
Որպէս զի Իսրայէլի տունը իրենց սիրտե-
րուն բռնեմ, վասն զի անոնց ամէնը ի-
րենց կուռքերով ինծմէ օտարացան։

6—Անոր համար Իսրայէլի տանը ըսէ,
Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ. Դարձէ՛ք, ու
ձեր կուռքերէն չէ՛ դարձուցէք, և ձեր
ամէն պղծութիւններէն երեսնիդ դար-
ձուցէ՛ք։ 7—Քանզի Իսրայէլի տունէն
կամ Իսրայէլի մէջ պանդուխտ եղող ո-
մարականներէն ով որ ինծմէ պատուի,
և իր կուռքերը իր սրտին մէջ կանգնէ, ու
իր անօրէնութեանը գայթակղութիւնը
իր երեսին առջեւ դնէ, և մարգարէին գայ՝
անոր միջոցով ինծի հարցնելու համար,
ես Տէրս ինծմէ պատասխան պիտի տամ
անոր. 8—Ու իմ երեսս այն մարդուն
վրայ պիտի հաստատեմ, և զանիկա նշան
ու առակ պիտի ընեմ, ու զանիկա իմ
ժողովուրդիս մէջէն բնաջինջ պիտի ը-
նեմ, ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։
9—Ու եթէ մարգարէ մը պատեհուած
բան մը խօսի, այն մարգարէն ես Տէրս
պատեհցուցի. ու իմ ձեռքս անոր վրայ
պիտի երկնցնեմ, և իմ ժողովուրդիս
Իսրայէլի մէջէն զանիկա պիտի կորնչը-
նեմ։ 10—Ու անոնք իրենց պատիժը
պիտի կրեն, է--ն հարցնողին պատիժը
ու մարգարէին պատիժը մէկ պիտի ըլ-
լայ. 11—Որպէս զի Իսրայէլի տունը
մէյմըն ալ ինծմէ չխոտորի, ու մէյմըն
ալ իրենց բոլոր յանցանքներով չպղծ-
ուին, հապա անոնք ինծի ժողովուրդ
ըլլան, ես ալ անոնց Աստուած ըլլամ,
կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ։

12—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
ըսելով, 13—Որդի մարդոյ, եթէ եր-
կիր մը անհաւատարմութիւն ընելով ին-
ծի դէմ մեղանչէ, ու ես անոր վրայ իմ
ձեռքս երկնցնեմ, ու անոր հացին ցու-
պը կատրեմ և անոր վրայ սով ղրկեմ,
ու մարդը և անասունը անկէ կտրեմ.
14—Ու եթէ այս երեք մարդը, Նոյ,
Դանիէլ ու Ցոբ, անոր մէջ ըլլան, ա-
նոնք իրենց արդարութիւնովը՝ Գ--ն
իրենց հոգին պիտի ազատեն, կ'ըսէ Տէր
ԵՀՈՎԱ։

15—Եթէ երկրին վրայ չար գազան-
ներ բերեմ, որոնք զանիկա անպտուղ
թողուն, ու ամայի ըլլայ, այնպէս որ
գազաններուն պատճառաւ անկէ անց-
նող չըլլայ։ 16—Եթէ այն երեք մար-
դիկը անոր մէջ ըլլան, ես կենդանի եմ,
կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ, որ էբէՅ զաւակները
ու աղջիկները պիտի չկարենան ազա-
տել, բայց միայն իրենք պիտի ազատին,
ու երկիրը ամայի պիտի ըլլայ։

17—Կամ եթէ այն երկրին վրայ
սուր *բերեմ, և ըսեմ Թէ, Ով սուր,
երկրին մէջէն անցիր. ու անկէ մարդը
ու անասունը կտրեմ. 18—Ու էբէ այն
երեք մարդիկը անոր մէջ ըլլան, ես

*ԵԲԲ. անոնցմէ պիտի հարցուի՞մ

*ԵԲԲ. անցնեմ

կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ չէ՛ք ազաքները ու աղիկները պիտի չկարենան ազատել, բայց միայն իրենք պիտի ազատին։

19—Կամ եթէ այն երկրին վրայ ժանտախտ ղրկեմ, ու արիւնով իմ բարկութիւնս անոր վրայ թափեմ, այնպէս որ մարդը ու անասունը անկէ կըտրեմ. **20**—Ու Նոյ, Դանիէլ ու Ցոբ ա՛նոր մէջ ըլլան, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ էրէՒ մէ՛կ տղան կամ աղիկը պիտի չկրնան ազատել. անոնք իրենց արդարութիւնովը՝ հո՛ն իրենց անձը պիտի ազատեն։ **21**—Սակայն Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ո՛րչափ աւելի՝ երբ ես իմ չորս սոսկալի պատիժներս, սուրը, սովը, չար գազանները ու ժանտախտը, Երուսաղէմի վրայ ղրկեմ՝ մարդը ու անասունը անկէ կտրելու համար։ **22**—Բայց ահա հոն ազատուած մնացորդ մը պիտի ըլլայ, այսինքն որդիքներու ու աղիկներուն՝ որոնք պիտի ելլեն. ահա անոնք ձեզի պիտի ելլեն, և անոնց ճամբան ու անոնց գործերը պիտի տեսնէք, ու Երուսաղէմի վրայ բերած չարիքս վրայով, անոր վրայ բերած բոլոր չ՚էէէս՚ վրայով, պիտի մխիթարուիք։ **23**—Ու երբ անոնց ճամբան ու գործերը տեսնէք, անոնք ձեզ պիտի մխիթարեն. և պիտի գիտնաք թէ ինչ որ ըրի անոր մէջ՝ առանց պատճառի չըրի, կ'ըսէ Տէր Եհովա։

ԳԼ. ԺԵ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
2—Որդի մարդոյ, որթին փայտը ի՞նչ **՚՚էէէ** ունի ամէն **՚՚էէէ** փայտերէն,
Այսինքն այնպիսի չաւաւիղ մը որ անտառի ծառերուն մէջ է։
3—Միթէ անկէ փայտ կ'առնուի՞, քանի մը գործածելու համար.
Կամ թէ անկէ ցից մը կ'առնուի՞, անկէ ուսան մը կախելու համար։
4—Ահա կրակի մէջ կը նետուի, անոր կերակուր ըլլալու համար.
Կրակը անոր երկու ծայրերը կ'ուտէ,
Ու մէկը կ'այրի.
Միթէ անկէ բանի մը օգտակա՞ր է։
5—Ահա անկէ ամբողջ եղած ատենը բանի մը չգար.
Ո՞րքա՛ն պիտի անկէ բանի մը օգտակար ըլլայ՝
Կրակին զանկէ ուտելէն ու այրելէն ետքը։
6—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.
Անտառի փայտերուն մէջ ինչպէս է որ թին փայտը,
Զոր կրակին ուտի կերակուրի համար,
Այնպէս ալ Երուսաղէմի բնակիչները տուի,
7—Ու իմ երեսս անոնց վրայ պիտի հաստատեմ.
Անոնք մէկ կրակէ պիտի ելլեն,
Ու ուրիշ կրակ մը զանոնք պիտի ուտէ.
Ու երբ իմ երեսս անոնց վրայ հաստատեմ,
Պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։
8—Ու իրենց անհաւատարմութիւն ընելուն համար
Երկիրը ամայի պիտի ընեմ,
Կ'ըսէ Տէր Եհովա։

ԳԼ. ԺԶ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,
2—Որդի մարդոյ, Երուսաղէմի իր պղծութիւնները գիտցուր,
3—Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ Երուսաղէմի.
Քու ակիզբդ ու ծնունդդ Քանանացւոց երկրէն էր,
Քու հայրդ Ամորհացի՝ ու մայրդ Քետացի էր։
4—Ու քու ծնունդդ այսպէս էր.
Քու ծնած օրդ պորտդ չկարուեցաւ,
Ու մազրաւելու համար ջրով չլուացուեցար,
Ու աղով չաղուեցար ու խանձարուրով չփաթթուեցար։
5—Աչք մը քեզի չխնայեց, որ քեզի ոդորմի,
Ու այս բաներուն մէկը քեզի ընէ.
Հապա ծննդեան օրդ
Քու անձիդ գարշելութիւնովը դաշտի երեսին վրայ նետուեցար։

6—Ու ես քու քովէդ անցայ,
Ու քեզ արիւնիդ մէջ կոխատած տեսայ.
Ու էրէ՚ արիւնիդ մէջ էէր, քեզի Ապրէ ըսի.
Այո, էրէ՚ արիւնիդ մէջ էէր, քեզի Ապրէ ըսի։
7—Քեզ դաշտի բոյսերուն պէս բիւրատը ըրի,
Ու չատցար ու մեծցար,
Ու կատարեալ գեղեցկութեան հասար.
Սիներդ գոյացան ու մազերդ աճեցան.
Բայց դուն մերկ ու անծածկոյթ էիր։
8—Ու քու քովէդ անցայ ու քեզի նայեցայ,
Ու ահա քու ժամանակդ սիրոյ ժամանակ էր,
Ու ես իմ քղանցքս քու վրադ տարածեցի,
Ու քու մերկութիւնդ ծածկեցի.
Ու քեզի երդում ընելով՝
Քեզի հետ ուխտ ըրի, կ'ըսէ Տէր Եհովա,
Ու դուն իմ եղար։
9—Ու քեզ ջրով լուացի,
Դէ քու վրայէդ քու արիւնդ սրբեցի,
Ու քեզ իւղով օծեցի.
10—Ու քեզի նկարագործ հանդերձ հագցուցի,
Ու քեզի բէհեզի էէէէդ մանճակներ հագցուցի,
Ու քու մէջդ բեհեզ գոտի կապեցի,
Ու քեզ մետաքսներով ծածկեցի.
11—Ու քեզ զարդերով զարդարեցի,
Ու ձեռքերուդ վրայապարանջաններ դրի,
Ու պարանոցիդ վրայ մանեակ դրի,
12—Ու քու քիթդ օղակ,
Ու ականջներդ գինաներ,
Ու գլուխդ պարծանքի պսակ դրի։
13—Ու դուն ոսկիով ու արծաթով զարդարուեցար,
Ու քու հանդերձներդ բեհեզ, մետաքս ու նկարագործ եղան.
Նաչիհ ու մեղր ու իւղ կերար,
Ու խիստ չատ գեղեցկացար,
Ու թագաւորութեան հասար։
14—Ու քու գեղեցկութեանդ համար քու անունդ ազգերուն մէջ տարածուեցաւ,
Վասն զի անիկա կատարեալ եղաւ այն վայելչութեանը պատճառաւ՝
Զոր քու վրադ դրի, կ'ըսէ Տէր Եհովա։
15—Բայց դուն քու անուանդ պատճառաւ,
Քու գեղեցկութեանդ ապաւինելով չնութիւն ըրիր,
Ու քու պոռնկութիւնդ ամէն անցնողին առիթ թափեցիր. անոր կ'ըլլար։
16—Ու քու հանդերձներէդ առիր,
Ու քեզի գոյնզգոյն զարդերով բարձր տեղեր չինեցիր,
Ու անոնց վրայ չնութիւն ըրիր։
Անոնց նմա՛նը չեղաւ, ո՛չ ալ պիտի ըլլայ։
17—Ու իմ քեզի տուած ոսկիէս ու արծաթէս
Քու պարծանքիդ զարդերը առիր,
Ու քեզի արուական պատկերներ չինեցիր
Ու անոնցմով պոռնկեցար։
18—Ու քու նկարագործ հանդերձներդ առնելով՝
Զանոնք ծածկեցիր,
Ու իմ իւղս ու խունկս անոնց առջև դրիր։
19—Ու քեզի տուած հացս,
Քեզի կերցուցած նաչիհս, իւղս ու մեղրս ալ
Անոնց առջև դրիր անոյշ հոտի համար։
Ու ասիկա եղաւ, կ'ըսէ Տէր Եհովա։
20—Ու ինծի համար ծնած տղաքներդ ու աղիկներդ առիր,
Ու զանոնք կերակուրի համար զո՛ն ըրիր անոնց։
21—Այս քու պոռնկութիւնդ քի՞չ բան է,
Որ իմ տղաքներս մորթեցիր,
Ու զանոնք անոնց տուիր՝ կրակի անցընելով։
22—Ու քու բոլոր պղծութիւններուդ ու պոռնկութիւններուդ մէջ
Քու մանկութեանդ օրերը չյիշեցիր
Երբ մերկ ու անծածկոյթ
Ու քու արեանդ մէջ կոխատած էիր։
23—Ու եղաւ որ բոլոր չարութիւններդ եղան,
(Վա՛յ, վա՛յ քեզի, կ'ըսէ Տէր Եհովա,)
24—Դուն քեզի բազանոց ալ չինեցիր,
Ու քեզի ամէն հրապարակի մէջ բարձր տեղ ըրիր։
25—Ամէն ճամբու գլուխ քու բարձր տեղերդ չինեցիր,

Ու քու գեղեցկութիւնդ զուարճի ըրէր,
Եւ ամէն անցնողին քու ապերդ բացիր,
Ու քու պռնկութիւններդ չատցուցիր։
26—Եւ քու մեծանդամ սահմանակից-
ներուդ,
Եգիպտոսի որդիներուն, հետ պռնկու-
թիւն ըրիր,
Ու զիս սրդիդացնելու համար քու պոռ-
նկութիւններդ չատցուցիր։
27—Ես ահա իմ ձեռքս քու վրադ եր-
կընցուցի,
Ու քու ռոճիկդ պակսեցուցի,
Ու քեզ քու թշնամիներուդ, փղշտացւոց
աղիկներուն, կամքին յանձ-
նեցի,
Որոնք քու անհամեստ վարմունքէդ
կ'ամչնան։
28—Եւ չկշտանալով՝ Ասորեստանի
որդիներուն հետ պռնկութիւն
ըրիր,
Եւ թէպէտ անոնց հետ պռնկութիւն
ըրիր, սակայն չկշտացար։
29—Ու քանանացւոց երկիրն մինչև
Քաղդեացւոց երկիրը
Քու պռնկութիւններդ չատցուցիր,
Բայց ասով ալ չկշտացար։
30—Քու սիրտդ ո՜րչափ ակար է, կ'ըսէ
Տէր Եհովա,
Որ այս ամէն բաները ըրիր,
Անամօթ պռնկիկ կնոջ մը գործը։
31—Ամէն ճամբու գլուխ քու բազա-
նոցներդ չինեցիր,
Ու քեզի ամէն հրապարակի մէջ բարձր
տեղ ըրիր,
Ու վարձքը անարգելով՝ պռնկիկ կնոջ
պէս չեղար,
32—Հապա այն շնութիւն ընդող կնոջ
դէմ էլ,
Որ իր երկրայր տեղ օտարներ կ'առնէ։
33—Ամէն բոզերուն վարձք կու տան,
Բայց դուն ամէն հաճոյներուդ քու
վարձքերդ կու տաս.
Այո, կաշառք կու տաս անոնց, որպէս
զի ամէն կողմէն քեզի գան՝
Քեզի հետ պռնկութիւն ընելու համար։
34—Ես քու պռնկութիւններուդ մէջ՝
կիներուն եղածին ներհակը կ'ըլ-
լայ քեզի,
Վասն զի պռնկութեան համար քու
ետեւդ եկող մարդ չկայ.
Ու քու վարձք տալովդ և ուրիշէն վարձք
չառնելովդ՝
Դուն ներհակը եղար։
35—Ասոր համար, ով պռնկիկ, Տէ-
րոջը խօսքը մտիկ ըրէ,
36—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.
Որովհետև քու պղինձդ սպառած ես,
Եւ քու պռնկութիւնովդ մերկութիւնդ
Քու հաճոյներուդ ու ամէն գարշելի
կուռքերուդ յայտնի եցար,
Ես անոնց նաւրուած սրտիդ արիւնը ի-
ւիցս,
37—Անոր համար ահա ես պիտի ժո-
ղովեմ քու բոլոր հաճոյներդ,
Որոնց դուն հաճոյ եղար,
Եւ ամէն անոնք որ սիրեցիր, ու ամէն
անոնք որ ատեցիր.
Եւ զանոնք ամէն կողմէն քու վրադ պի-
տի ժողովեմ,
Ու քու մերկութիւնդ անոնց պիտի բա-
նամ,
Եւ անոնք քու բոլոր մերկութիւնդ պի-
տի տեսնեն,
38—Ու քեզ պիտի դատեմ
Շնութիւն ընող և արիւն թափող կիներ-
ուն դատաստանովը,
Ու քեզի բարկութեամբ ու նախանձով
արեան վէճ պիտի տամ.
39—Եւ քեզ անոնց ձեռքը պիտի տամ,
Ու քու բազանոցդ պիտի փլչեն,
Ու քու բարձ տեղերդ պիտի աւրեն.
Եւ քու հանդերձներդ քեզ պիտի մեր-
կացնեն,
Ու քու պարծանքիդ զարդերը պիտի
առնեն,
Եւ քեզ մերկ ու անծածկոյթ պիտի թո-
ղուն.
40—Ու քու վրադ ժողովք մը ոտք պի-
տի հանեն,
Եւ քեզ քարերով պիտի քարկոծեն,
Ու իրենց սուրերովը քեզ պիտի խոցոտեն,
41—Եւ քու տուներդ կրակով պիտի
այրեն,
Ու շատ կիներու առջև քու վրադ դա-
տաստաններ իգործ պիտի դնեն.
Եւ քեզ պռնկութիւն ընելէ պիտի դադ-
րեցնեմ,
Ու մէյմըն ալ պարգև պիտի չտաս
42—Այսպես պիտի դադրեցնեմ իմ
բարկութիւնս որ քեզի դէմ է,

Ու իմ նախանձս քեզմէ պիտի վերնայ,
Ու պիտի հանգարտիմ ու ա՛լ պիտի
չբարկանամ։
43—Որովհետև դուն քու մանկութեանդ
օրերը չյիշեցիր,
Հապա այս ամէն բաներով զիս սրդիդ-
ացուցիր,
Անոր համար ահա ես ալ քու ճամբադ-
ը գլուխդ պիտի բերեմ,
Կ'ըսէ Տէր Եհովա,
Ու դուն քու բոլոր պղծութիւններուդ
վրայ
Այս եղեռնագործութիւնը պիտի չընես։
44—Ահա ամէն առակ խօսողը
Քու վրադ առակ պիտի խօսի՝ ըսելով,
Ինչպէս է մայրը, աղլիկն ալ այդպէս է։
45—Դուն քու մօրդ աղլիկն ես,
Որ իր այրն ու աղաքներէն զզուեցաւ.
Եւ քու քոյրերուդ քոյրն ես,
Որոնք իրենց այրերէն ու աղաքներէն
զզուեցան.
Ձեր մայրը Քետացի, ու ձեր հայրը
Ամորհացի է։
46—Ու քու մեծ քոյրդ Սամարիա է,
Որ իր աղլիկներովը քու ձախ կողմդ կը
բնակի.
Եւ քեզմէ պզտիկ քոյրդ Սոդոմ է,
Որ իր աղլիկներովը քու ալ կողմդ կը
բնակի։
47—Ու դուն անոնց ճամբաներուն մէջ
չգալեցիր,
Եւ անոնց պղծութիւններուն պէս չըրիր.
Հապա որպէս թէ սոյնէ ըրածդ պզտիկ
մ՛ընչին եր,
Դուն քու բոլոր ճամբաներուդ մէջ
անոնցմէ աւելի ապականեցար։
48—Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա,
Որ քու քոյրդ Սոդոմ, ինք ու իր աղ-
լիկները, այդպէս չըրին,
Ինչպէս դուն ու քու աղլիկներդ ըրիք։
49—Ահա քու քրոջդ Սոդոմի անօրէ-
նութիւնը այս եր.
Անիկա իր աղլիկներով
Հպարտութիւն, հացի կուշտութիւն ու
անհոգ հանգստութիւն ունե-
ցաւ,
Եւ աղքատին ու անանկին ձեռքը չու-
ժովցուց։
50—Ու հպարտացան և իմ առջեւս
պղծութիւն ըրին,
Ու զանոնք աւտաժխ պէս վերցուցի։
51—Եւ Սամարիա քու մեղքերուդ կէ-
սին չափ մեղք չգործեց.
Ու դուն քու պղծութիւններդ անոնցմէ
աւելի չատցուցիր,
Եւ քու բոլոր պղծութիւններովդ
Քու քոյրերդ արդարացուցիր։
52—Ու դուն որ քու քոյրերդ դատա-
պարտեցիր,
Քու անարգանքդ կրէ քու մեղքերուդ
համար,
Որ դուն անոնցմէ աւելի պղծութիւն
ըրիր։
Անոնք քեզմէ արդար են.
Իսկ դուն քոյրերդ արդարացնելուդ
համար
Ամչցիր ու քու անարգանքդ կրէ։
53—Ու ես պիտի դարձնեմ անոնց գե-
րութիւնը,
Սոդոմի ու անոր աղլիկներուն գերու-
թիւնը,
Եւ Սամարիայի ու անոր աղլիկներուն
գերութիւնը.
Անոնց մէջ քու գերութիւնդ ալ ետ դ-
ը՜ր՜յ՜ն՜ի՜,
54—Որպէս զի քու անարգանքդ կրես
Ու ամէն ըրածդէդ ամչնաս
Անոնց մխիթարութիւն ըլլալուդ հա-
մար։
55—Եւ քու քոյրերդ Սոդոմ ու անոր
աղլիկները,
Իրենց առաջուան վիճակին պիտի դառ-
նան,
Եւ Սամարիա ու անոր աղլիկներն ալ
Իրենց առաջուան վիճակին պիտի դառ-
նան,
Ու դուն և քու աղլիկներդ ալ
Ձեր առաջուան վիճակին պիտի դառ-
նաք։
56—Վասն զի քու հպարտութեանդ օրը
Քու քոյրդ Սոդոմ քու բերնէդ չլսուե-
ցաւ,
57—Քանի որ դեռ քու չարութիւնդ
յայտնուած չէր,
Ինչպես հիմա յ՜ա՜դ՜ո՜ն՜ե՜ա՜ց՜ երբ Ասո-
ւոց աղլիկներուն առջև,
Ու անոնց բոլորտիքը եղող բոլոր փղշ-
տացւոց աղլիկներուն առջև ա-
մօթալ եղար,
Որոնք ամէն կողմէ քեզ նախատեցին,

58—Քու եղեռնագործութիւնդ և քու պղծութիւններդ
Դուն կրեցիր, կ'ըսէ Տէրը։
59—Վասն զի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Քու բաժիդ հաւնեցամ պիտի ընեմ քեզի,
Որ երդումը անարգեցիր և ուխտը ապականեցիր։
60—Բայց ես քու մանկութեանդ օրերը քեզի հետ ընդ ուխտս պիտի յիշեմ,
Ու քեզի հետ յաւիտենական ուխտ պիտի հաստատեմ.
61—Ու դուն քու ճամբաներդ պիտի յիշես,
Ու պիտի ամչնաս՝ երբ ընդունիս քեզմէ մեծ և քեզմէ պզտիկ քոյրերդ,
Ու էջ զանոնք քեզի աղիկներու տէր տամ,
Բայց ոչ թէ քու ուխտովդ.
62—Հապա ես քեզի հետ իմ ուխտս պիտի հաստատեմ,
Ու պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը.
63—Որպէս զի յիշես ու ամչնաս,
Ու ամչնալուդ պատճառաւ մէյ մըն ալ բերանդ չբանաս,
Ու քու ըրած գործերուդ համար
Քեզի քաւութիւն ընեմ, կ'ըսէ Տէր Եհովա։

Գլ. ԻԷ

Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, Իսրայէլի տանը հանելուկ պատմէ ու առակ խօսէ, 3—Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Մեծ արծիւ մը, մեծ թեւերով, երկայն փետուրներով ու գոյնզգոյն բարակ փետուրներով լեռնէն Լիբանան եկաւ, ու եղէւնին ամենաբարձր ճիւղը առաւ. 4—Անոր ընձիւղներուն ծայրը փրցուց, և զանիկա վաճառականի երկիրը տարաւ, ու զանիկա վաճառականներու քաղաքը դրաւ. 5—Ու այն երկրին հունտէն առաւ, ու զանիկա բարեբեր արտի մէջ դրաւ. ղ-ննէ-ղ չատ ջուրերու քով տարաւ, ուռիի պէս դրաւ. 6—(Ու անիկա բուսաւ, ու տարածուած՝ կոթճահասակ որթ մը եղաւ.) այնպէս որ անոր ոստերը իրեն նային, ու արմատները իրեն տակ ըլլան. և անիկա որթ ըլլալով՝ ոստեր բուսցուց ու ընձիւղներ արձակեց։

7—Ու ուրիշ մեծ թեւ, ու բազմափետուր մեծ արծիւ մըն ալ կար. և ահա այս որթը իր արմատները դէպ ի այն ծառը, ու իր ոստերը դէպ ի այն երկրացուց, որպէս զի իր անկուած ածուներովը զինք ոռոգէ. 8—Անիկա բարեբեր արտի մէջ չատ ջուրերու քով սրած էր, որպէս զի ոստեր արձակէ և պտուղ բերէ ու ազնիւ որթ ըլլայ։ 9—Ըսէ որ Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Արդեօք անիկա պիտի յաջողի՞. միթէ ան ոստերը պիտի չկիսէ՞, ու անոր պտուղը պիտի չփրցնէ՞, որպէս զի չորնայ։ Անոր ամէն բուսած տերեւները պիտի չորնան. և առանց մեծ բազուկի ու չատ ժողովուրդի զանիկա արմատէն պիտի խլէ։ 10—Ու ահա անկուեցաւ, միթէ պիտի յաջողի՞. չէ՞ որ արեւելեան հովը անոր դպածին պէս բոլորովին պիտի չորնայ. անիկա իր բուսած ածուներուն վրայ պիտի չորնայ։

11—Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 12—Հիմա ապստամբներուն տանը ըսէ, Անոնց ինչ ըլլալը չէ՞ք գիտեր. ըսէ որ Ահա Բաբելոնի թագաւորը Երուսաղէմ եկաւ, և անոր թագաւորը ու իշխանները առաւ, ու զանոնք իր քով Բաբելոն տարաւ։ 13—Ու թագաւորին սերունդէն հիւր առնելով՝ անոր հետ ուխտ ըրաւ, ու անոր երդումը ընել տուաւ. Նաև երկրին զօրաւորները առաւ. 14—Որպէս զի թագաւորութիւնը ցած ըլլայ, ու չկրնայ դինք բարձրացնել. և իր ուխտը պահելով անոր վրայ հաստատ կենայ։ 15—Բայց անիկա անկէ ապստամբեցաւ, ու եգիպտոս դեսպաններ ղրկեց, որպէս զի իրեն ձիեր ու շատ զօրքեր տան. միթէ անիկա յաջողութիւն պիտի գտնէ՞. այս բաներուն ընողը պիտի ազատի՞, կամ թէ ուխտը աւրելով պիտի ազատի՞. 16—Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ անիկա անշուշտ այն թագաւորին բնակած տեղը, որ զինք թագաւոր ըրեր էր, որուն երդումը անարգեր էր, ու անոր ուխտը աւրեր էր, անոր քով Բաբելոնի մէջ պիտի մեռնի. 17—Ու Փարաւոն մեծ զօրքով ու չատ բազմութիւնով պատերազմի մէջ անոր համար բան մը պիտի չընէ. երբ պատնէշներ կանգնուին ու մարտկոցներ չինուին չատ հոգիներ կտրելու համար։ 18—Վասն զի անիկա երդումը անարգեց և ուխտը աւրեց, և ահա անիկա իր ձեռքը տալէն ետքը՝ այս ամէն բաները ընելուն համար պիտի չազատի։

19—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես կենդանի եմ, որ անշուշտ անոր գլուխը պիտի դարձնեմ իմ երդումս զոր անիկա անարգեց, ու իմ ուխտս զոր աւրեց. 20—Ու անոր վրայ իմ ցանցս պիտի տարածեմ, ու անիկա իմ որոգայթիս մէջ պիտի բռնուի, և զանիկա Բաբելոն պիտի տանիմ, ու հոն անոր հետ դատ պիտի վարեմ, անոր ինծի դէմ ըրած յանցանքին համար։ 21—Ու անոր բոլոր փախստականները և անոր բոլոր զօրքերը սրով պիտի իյնան, ու մնացորդները ամէն հովերու պիտի ցրուին. ու պիտի գիտնաք թէ ես Տէրս խօսեցայ։

22—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես ալ բարձր եղեւինին ամենաբարձր ճիւղէն պիտի առնեմ, ու պիտի անկեմ. ես անոր ընձիւղներուն ծայրէն մատղաչը պիտի փրցնեմ, ու բարձր ու վերացած լեռան մը վրայ պիտի անկեմ. 23—Ջանիկա Իսրայէլի բարձր լեռանը վրայ պիտի անկեմ. և անիկա ոստեր պիտի արձակէ ու պտուղ պիտի տայ, ու ազնիւ եղեւին պիտի ըլլայ. և անոր տակ ամէն տեսակ թռչ. ունեցող բոլոր թռչունները պիտի նստին, անոր ոստերուն հովանիին տակ պիտի բնակին։ 24—Ու դաշտի բոլոր ծառերը պիտի գիտնան՝ թէ ես Տէրս բարձր ծառը ցածցուցի, ու ցած ծառը բարձրացուցի, կանանչ ծառը չորցուցի, ու չոր ծառը կանանչցուցի. ես Տէրս խօսեցայ ու պիտի կատարեմ։

Գլ. ԻԸ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Ի՞նչ պիտի ըլլայ ձեզի այն առակը զոր դուք Իսրայէլի երկրին մէջ կը խօսիք՝ ըսելով, Հայրերը սգոյ կեցան ու որդիներուն ակռանները առին։

3—Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ Իսրայէլի մէջ այս առակը մէյլէն ալ պիտի չգործածէք. 4—Ահա բոլոր հոգիները իմն են. ինչպէս հօրը հոգին՝ նոյնպէս որդւոյն հոգին իմն է. այն անձը որ մեղք կը գործէ, անիկա պիտի մեռնի։ 5—Իսկ եթէ մարդ մը արդար ըլլայ, և իրաւունք ու արդարութիւն ընէ, 6—Լեռներու վրայ չուտէ, ու աչքերը դէպ ի Իսրայէլի տանը կուռքերը չվերցնէ, ու իր դրացիին կինը չպղծէ, և իր դաշտանին մէջ եղող կնոջ մը չմօտենայ, 7—Ու մարդու մը զրկանք չընէ, ու պարտականին՝ գրաւը կատարելով բան մը չյափշտակէ, և իր հացը անօթիին տայ. ու մերկը հանդերձով ծածկէ, 8—Ու-ից վաշխով չտայ ու տոկոսիք չառնէ, իր ձեռքը անօրէնութենէ կատարելով պահէ, երկու մարդու մէջ ուղիղ դատաստան տեսնէ. 9—Ծրագրութիւն ընելով՝ իմ օրէնքներուս մէջ քալէ, ու իմ իրաւունքներս պահէ. անիկա արդար է, անշուշտ պիտի ապրի, կ'ըսէ Տէր Եհովա։

10—Բայց եթէ անիկա անբրու ու արիւնահեղ որդի մը ծնանի, որ ասոնց պէս բան մը ընէ. 11—Այսինքն՝ եթէ անիկա այն ամէն ոչի բաները չընէ, հապա միայն լեռներու վրայ ուտէ, ու իր դրացիին կինը պղծէ, 12—Ազքատին ու անանկին զրկանք ընէ, բռնութեամբ բան մը յափշտակէ, գրաւը կատարելով՝ աչքերը կուռքերուն վերցնելով՝ պղծութիւն գործէ, 13—Վաշխով ոչի տայ ու տոկոսիք առնէ. անիկա պիտի ապրի՞. պիտի չապրի, անիկա այս բոլոր գարշութիւնները ընելուն համար՝ անշուշտ պիտի մեռնի. անոր արիւնը իր վրայ պիտի ըլլայ։

14—Ու եթէ անիկա որդի ծնանի, ու անիկա իր հօրը ըրած բոլոր մեղքերը տեսնելով՝ վախնայ ու անոնց համեմատ չընէ. 15—Լեռներու վրայ չուտէ, ու իր աչքերը դէպ ի Իսրայէլի տանը կուռքերը չվերցնէ, իր դրացիին կինը չպղծէ, 16—Ու մարդու մը զրկանք չընէ, գրաւը չպահէ, ու բռնութեամբ բան մը չյափշտակէ, իր հացը անօթիին տայ, ու մերկը հանդերձով ծածկէ, 17—Աղքատին ան-իչ-ին ընկէ իր

ձեռքը եւ քաշէ, զայն ու տակտիք չառնէ, իմ դատաստաններս ի գործ դնէ, — իմ օրէնքներուս մէջ քալէ· անիկա իր հօրը անօրէնութեանը համար պիտի չմեռնի, անիկա անշուշտ պիտի ապրի։ 18—Ե՛ անոր հայրը, որովհետեւ զրկանք ըրաւ, — իր եղբօրմէն բռնութեամբ բան յափշտակեց, և ազգիկ չէզոքը ըրաւ իր ժողովուրդին մէջ, ահա անիկա իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի։

19—Եւ դուք կ՚ըսէք թէ ինչո՞ւ համար որդին չ՚առնուր հօրը անօրէնութիւնը չկիրեր։ Որովհետեւ որդին իրաւունք ու արդարութիւն ըրաւ, և իմ բոլոր օրէնքներս պահեց ու զանոնք ի գործ դրաւ, անշուշտ պիտի ապրի։ 20—Այն անձը որ մեղք կը գործէ, անիկա պիտի մեռնի։ որդին հօրը անօրէնութիւնը պիտի չկիրէ, ու հայրը որդւոյն անօրէնութիւնը պիտի չկրէ։ արդարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ, ու ամբարշտին ամբարշտութիւնը իր վրայ պիտի ըլլայ։ 21—Ու եթէ ամբարիշտը իր գործած բոլոր մեղքերէն դառնայ, ու իմ բոլոր օրէնքներս պահէ, և իրաւունք ու արդարութիւն ընէ, անիկա անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի։ 22—Անոր ըրած բոլոր յանցանքները իրեն դէմ պիտի չյիշուին, հապա անիկա իր ըրած արդարութիւնովը պիտի ապրի։ 23—Միթե ես քնաւ ամբարշտին մեռնիլը կ՚ուզե՞մ, կ՚ըսէ Տէր Եհովա. չէ՞ որ ես կ՚ուզեմ որ անիկա իր ճամբային դառնայ ու ապրի։ 24—Բայց եթէ արդարը իր արդարութենէն դառնայ, ու ամբարշտին ըրած բոլոր գարշելիութիւններուն պէս անօրէնութիւն ընէ, պիտի ապրի՞. անոր ըրած բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի. անիկա իր ըրած յանցանքովը ու գործած մեղքովը, անոնցմով պիտի մեռնի։

25—Եւ դուք կ՚ըսէք թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. հիմա մի՛կ ըրէք, ով Իսրայէլի տունը, միթէ իմ ճամբաս ուղիղ չէ. չէ՞ որ ձեր ճամբան ուղիղ չէ։ 26—Երբ արդարը իր արդարութենէն դառնայ ու անօրէնութիւն ընէ, և անոր մէջ մեռնի, անիկա իր ըրած անօրէնութեանը համար կը մեռնի։ 27—Ու երբ ամբարիշտը իր ըրած ամբարշտութենէն դառնայ և իրաւունք ու արդարութիւն ընէ, անիկա իր անձը պիտի ապրեցնէ։ 28—Որովհետեւ անիկա ուշադրութիւն ըրաւ ու իր բոլոր յանցանքներէն եւ դարձաւ, անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի։

29—Բայց Իսրայէլի տունը կ՚ըսէ թէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. ով Իսրայէլի տունը, միթէ իմ ճամբաներս ուղիղ չեն. չէ՞ որ ձեր ճամբաները ուղիղ չեն։ 30—Անոր համար, ով Իսրայէլի տունը, ձեզմէ ամէն մէկը իր ճամբաներուն համեմատ պիտի դատեմ, կ՚ըսէ Տէր Եհովա. դարձի եկէք ու ձեր բոլոր յանցանքներէն եւ դարձէք, որպէս զի անօրէնութիւնը *ձեր կորուստին պատճառ չըլլայ։ 31—Ձեր ըրած բոլոր յանցանքները ձեր վրայէն նետեցէք, և ձեզի նոր սիրտ ու նոր հոգի †սարքեցէք. քանզի ինչո՞ւ մեռնիք, ով Իսրայէլի տունը։ 32—Վասն զի մեռնողին մեռնիլը չեմ ուզեր, կ՚ըսէ Տէր Եհովա. ուստի դարձէք ու ապրեցէք։

Գլ. ԺԹ

Եւ դուն Իսրայէլի իշխաններուն վրայ ողբ էրէն, 2—Ու ըսէ,

Քու մայրդ ի՞նչ է. մատակ առիւծ մըն է,
Որ առիւծներու մէջ կը պառկի,
Ու իր կորիւնները առոյգ առիւծներու մէջ կը մեծցնէ։
3—Ու անիկա իր կորիւններէն մէկը մեծցուց,
Ո՝ անիկա առոյգ առիւծ եղաւ,
Ու յափշտակութիւն ընել սորվեցաւ — մարդ կ՚ուտէր։
4—Ու անոր վրայով ազգերը լսեցին,
Անիկա անոնց փոսին մէջ բռնուեցաւ.
Ու զանիկա կարթերով Եգիպտոսի երկիրը տարին։
5—Ու երբ անիկա տեսաւ որ դադ†պեղ կը սպասէ, յոյսը կտրեցաւ,
Ու իր կորիւններէն մէկ ուրիշը առաւ,
Ու զանիկա առոյգ առիւծ ըրաւ,

*ՆԲԲ. ձեզի խոչընդոտ
†Կամ, ըրէք ‡ՆԲԲ. վերցուր

6—Ու անիկա առիւծներու մէջ պարզուց առոյգ առիւծ եղաւ,
Ու յափշտակութիւն ընել սորվեցաւ — մարդ կ՚ուտէր։
7—Ու անոնց *պալատները գիտցաւ,
Ու անոնց քաղաքները կործանեց.
Ու անոր մռնչելուն ձայնէն
Երկիրը իր լիութեամբը սարսափեցաւ։
8—Ու չրջակայ գաւառներէն անոր վրայ ազգեր եկան,
Ու անոր դէմ իրենց ցանցը տարածեցին.
Ո՝ անոնց փոսին մէջ բռնուեցաւ։
9—Ու զանիկա բարթերով վանդակի մէջ դրին,
Ու զանիկա բաբելոնի թագաւորին տարին,
Ո՝ զանիկա բերդը դրին,
Որպէս զի անոր ձայնը մէլմըն ալ Իսրայէլի լեռներուն վրայ չլսուի։
10—Քու մայրդ քու †նմանութիւնովդ՝ չարերու քով անկուած որթի պէս է,
Որ ջուր չունենալուն պատճառաւ՝ պտղաւու ասաերով լեցուն եղաւ
11—Ու անիկա զօրաւոր չաւազիղներ ունեցաւ՝ իշխանաց գաւազաններու համար,
Ու իր հասակը խիտ ճիւղերուն մէջէն բարձրացաւ,
Ու իր բարձրութիւնովը ու բարունակներուն չաւազութիւնովը երեւցաւ։
12—Բայց անիկա բարկութեամբ խլեցաւ ու գետինը ձգուեցաւ,
Ու արեւելեան հովը անոր պտուղը չորցուց.
Անոր զօրաւոր չաւազիղները կոտրեցան ու չորցան,
Ե՝ զանոնք կրակը կերաւ։
13—Ու հիմա անապատի մէջ
Ջոր ու անջուր տեղ մը անկուեցաւ։
14—Ու անոր ոստերուն մէկ չաւազիղէն կրակ ելաւ
Ո՝ անոր պտուղը կերաւ,
Ու անոր վրայ իշխանի գաւազանի համար զօրաւոր չաւազիղ մը չմնաց։
Ասիկա ողբ է ու ողբի տեղ պիտի ըլլայ,

*Կամ, որբեւաբլիները
†Կամ, արքունիք մէջ

Գլ. Ի

Ու եղաւ որ եօթներորդ տարին, հինգերորդ ամսուն տասներորդ օրը, Տէրոջը հարցնելու համար Իսրայէլի ծերերէն մարդիկ եկան, և իմ առջեւս նստան։

2—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 3—Որդի մարդոյ, Իսրայէլի ծերերուն հետ խօսէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ՚ըսէ. Միթէ դուք ինծի հարցնելո՞ւ եկաք. ես կենդանի եմ, որ *ձեզի պատասխան պիտի չտամ՝ կ՚ըսէ Տէր Եհովա։ 4—Միթէ անոնց դատաստան պիտի ընե՞ս, դատաստան պիտի ընե՞ս, որդի մարդոյ, անոնց հայրերուն պղծութիւնները անոնց գիտցու, 5—Ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ՚ըսէ. Այն օրը որ Իսրայէլը ընտրեցի, և Յակոբի տանը սերունդին †իմ ձեռքս վերցուցի՝, ու եգիպտոսի երկրին մէջ անոնց յայտնուեցայ, և իմ ձեռքս անոնց վերցնելով՝ ըսի Թէ Ձեր Տէր Աստուածը ես եմ. 6—Այն օրը իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք եգիպտոսի երկրէն, այն կաթ ու մեղր բղխող ամէն երկիրներուն պարծանքը եղող երկիրը հանեմ, զոր անոնց համար ‡պատրաստեր էի. 7—Ու անոնց ըսի, Ամէն մարդ իր աչքերուն գարշելիները թող մէկդի ձգէ, ու եգիպտոսի կուռքերովը մի պղծուիք. ես եմ ձեր Տէր Աստուածը։

8—Բայց անոնք ինծի ապստամբեցան, և չուզեցին ինծի մտիկ ընել, — մէկդի չձգեցին ամէն մէկը իր աչքերուն գարշելիները, ու եգիպտոսի կուռքերը չթողուցին. այն ատեն ըսի որ իմ զայտնութիւնս անոնց վրայ թափեմ, ու եգիպտոսի երկրին մէջ իմ բարկութիւնս անոնց վրայ կատարեմ. 9—Բայց ես ըրի իմ անունս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջեւ՝ որոնց մէջ անոնք կը գտնուէին, և որոնց առջեւ ես անոնց յայտնուեցայ, երբ զանոնք եգիպտոսի երկրէն հանեցի,

*ՆԲԲ. ձեզմէ պիտի չհարցուիմ
†Այլ՝ ձեռք, երդում բրի. տես Եզ. Ի. 8։
‡Կամ, հոգացեր էի

10—Եւ զանոնք եգիպտացի երկրէն հանեցի, ու զանոնք անապատը բերի։ 11—Ես իմ օրէնքներս անոնց տուի, ու իմ դատաստաններս անոնց գիտցուցի, որոնցմով մարդ կ'ապրի, եթէ զանոնք կատարէ։ 12—Ես իմ շաբաթներս ալ անոնց տուի, որպէս զի իմ ու անոնց միջեւեղ նշան ըլլան, որպէս զի գիտնան թէ ես եմ Տէրը՝ որ զանոնք կը սրբեմ։

13—Բայց իսրայէլի տունը անապատին մէջ բնակի ապստամբեցաւ. իմ օրէնքներովս չգնացին, ու իմ դատաստաններս մերժեցին, որոնցմով մարդ կ'ապրի, եթէ զանոնք կատարէ, և իմ շաբաթներս մեծապէս պղծեցին. անոր համար ըսի որ իմ սրամաւթիւնս անոնց վրայ թափեմ անապատին մէջ, ու զանոնք ապառնի։ 14—Բայց ես ըրի իմ անուանս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջեւ՝ որոնց առջեւ զանոնք հանեցի։ 15—Նաև անապատին մէջ իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք չտանիմ այն կաթ ու մեղր բղխող ու ամէն երկիրներուն պարծանքը եղող երկիրը, զոր ետուի տուեր էի, 16—Քանի որ իմ դատաստաններս մերժեցին, ու իմ օրէնքներովս չգնացին, և իմ շաբաթներս պղծեցին. վասն զի անոնց սիրտը իրենց կուռքերուն ետեւէն կ'երթար։ 17-Բայց իմ աչքս անոնց խնայեց, որ զանոնք չկորնցնեմ. ուստի անապատին մէջ զանոնք չսպառեցի։

18—Ու անապատին մէջ անոնց որդիներուն ըսի, Ձեր հայրերուն կանոններովը մի գնաք, ու անոնց սովորութիւնները մի պահէք, և անոնց կուռքերովը մի պղծուիք։ 19—Ես եմ Տէրը ձեր Աստուածը. իմ օրէնքներովս գնացէք, ու իմ դատաստաններս պահեցէք, ու զանոնք ի գործ դրէք։ 20—Ես իմ շաբաթներս սուրբ պահեցէք, ու անոնք իմ ու ձեր միջեւեղ նշան ըլլան, որպէս զի գիտնաք թէ ես եմ Տէրը, ձեր Աստուածը։

21—Բայց անոնց որդիները ալ ինծի ապստամբեցան. իմ օրէնքներովս չգնացին ու իմ դատաստաններս կատարելու ուշադրութիւն չըրին, որոնցմով մարդ կ'ապրի, եթէ զանոնք կատարի, և իմ շաբաթներս պղծեցին. ուստի ըսի որ իմ սրամաւթիւնս անոնց վրայ թափեմ, ու անապատին մէջ իմ բարկութիւնս անոնց վրայ կատարեմ։ 22—Սակայն իմ ձեռքս քաշեցի ու ըրի իմ անուանս համար, որ չըլլայ թէ պղծուի այն ազգերուն առջեւ՝ որոնց առջեւ զանոնք հանեցի։

23—Նաև անապատին մէջ իմ ձեռքս անոնց վերցուցի, որ զանոնք ազգերու մէջ ցրուեմ, ու զանոնք երկիրներու մէջ ցիրուցան ընեմ։ 24—Վասն զի իմ դատաստաններս ի գործ չդրին, ու իմ օրէնքներս մերժեցին, և իմ շաբաթներս պղծեցին. ու անոնց աչքերը իրենց հայրերուն կուռքերուն ետեւէն եղան։ 25—Ուստի ես ալ այնպիսի օրէնքներ տուի անոնց՝ որ բարի չէին, ու այնպիսի դատաստաններ՝ որոնցմով չէին կրնար ապրիլ։ 26—Ու զանոնք իրենց ընծաներովը պղծեցի, [illegible] ամէն արգանդ բացողը [illegible] որպէս զի զիրենք ահ ածեմ, որպէս զի գիտնան թէ ես եմ Տէրը։

27—Անոր համար, որդի մարդոյ, խօսեցիր ամբո իսրայէլի տունը ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ձեր հայրերը սապէս ալ ինծի դէմ յանցանք ընելով՝ զիս նախատեցին։ 28—Վասն զի երբ զանոնք տարի այն երկիրը, զոր անոնց տալու համար ձեռքս վերցուցեր էի, ամէն բարձր բլուրը ու ամէն տերեւաւէտ ծառը տեսնելով՝ հոն իրենց զոհերը մատուցին, և իրենց բարկութիւն գրգռող ընծաները հոն տարին, ու իրենց անուշահոտ խունկերը հոն ծխեցին, և իրենց թափելու նուէրները հոն մատուցին։ 29—Ու անոնց ըսի, Ինչ է այդ բարձր տեղը՝ ուր դուք կ'երթաք. և անոր անունը մինչև այսօր Բարձր տեղ կ'ըսուի։

30—Անոր համար իսրայէլի տունը ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուք որ ձեր հայրերուն ճամբան մէ՞ կը պղծուիք, և անոնց գարշութիւններուն հետեւելով պոռնկութիւն կ'ընէք։ 31—Եւ ձեր ընծաները մատուցանելով ու ձեր տղաքը կրակի անցընելով, ձեր բոլոր կուռքերով կը պղծուիք մինչև այսօր, միթէ ես ձեզի պատասխան պիտի տա՞մ, ով իսրայէլի տունը. ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ ձեզի պատասխան պիտի չտամ։ 32—Ու ձեր սրտին խորհուրդը ամենեւին պիտի չկատարուի, որ կ'ըսէք թէ Մենք փայտ ու քար պաշտելով, հեթանոսներուն պէս, երկիրներուն ազգատոհմներուն պէս, պիտի ըլլանք։ 33—Ես կենդանի եմ, կ'ըսէ, Տէր Եհովա, որ անչուշտ ձեր վրայ զօրաւոր ձեռքով ու երկնցած բազուկով ու թափած բարկութիւնով թագաւորութիւն պիտի ընեմ։ 34—Ու զօրաւոր ձեռքով ու երկնցած բազուկով և թափած բարկութիւնով ձեզ ժողովրդներէն պիտի հանեմ, և ձեր ցիրուցան եղած երկիրներէն պիտի ժողովեմ զանոնք։ 35—Ու ձեզ ժողովրդներուն անապատը պիտի տանիմ, ու հոն ձեզի հետ երես երեսի դատ պիտի վարեմ։ 36—Ինչպես եգիպտոսի երկրին անապատին մէջ ձեր հայրերուն հետ դատ վարեցի, այնպես ալ ձեզի հետ դատ պիտի վարեմ, կ'ըսէ Տէր Եհովա։ 37—Ու ձեզ գաւազանին տակէն պիտի անցնեցնեմ, ու ձեզ ուխտին կապին տակ պիտի մտցնեմ։ 38—Ու ապստամբները ու ինծի դէմ յանցաւոր եղողները ձեզմէ պիտի զատեմ. զանոնք իրենց պանդխտութեան երկրէն պիտի հանեմ, ու անոնք Իսրայէլի երկիրը պիտի չմտնեն. ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։

39—Ես դուք, ով Իսրայէլի տունը, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Գացէք, այսհետեւ ա՛լ ունկի մի դիք ձեր կուռքերուն ծառայութիւն ըրէք, քանի որ դուք ինծի մտիկ չէք ըներ. բայց իմ սուրբ անունս ձեր ընծաներովը ու ձեր կուռքերովը մի պղծէք։ 40—Վասն զի իմ սուրբ լեռանս վրայ, Իսրայէլի բարձր լեռանը վրայ, կ'ըսէ Տէր Եհովա, բոլոր Իսրայէլի տունը՝ ամենը երկրին մէջ ըլլալով՝ հոն ինծի ծառայութիւն պիտի ընեն. հոն անոնց պիտի հաճիմ, և ձեր պատարագները և ձեր ընծաներուն երախայրիները ձեր բոլոր սուրբ բաներովը՝ հոն պիտի փնտռեմ։ 41—Երբ ձեզ ազգերէն հանեմ ու ձեզ ժողովեմ այն երկիրներէն ուր դուք ցրուած եք, անուշահոտ [illegible] ձեզի պիտի հաճիմ, և ձեր մէջ ազգաց աչքերուն առջեւ սուրբ պիտի ըլլամ։ 42—Ու երբ ձեզ Իսրայէլի երկիրը տանիմ, այսինքն այն երկիրը զոր ձեր հայրերուն տալու համար ձեռքս վերցուցի, պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։ 43—Ու հոն պիտի յիշէք ձեր ճամբաները ու ձեր բոլոր գործերը՝ որոնցմով պղծուեցաք. և ձեր երեսէն բոլոր չարութիւններուն համար դուք ձեզմէ պիտի զզուիք։ 44—Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը, երբ ձեզի [illegible] ընեմ իմ անուանս համար և ոչ թէ ձեր չար ճամբաներուն ու ձեր ապականեալ վարմունքին համեմատ, ով Իսրայէլի տունը, կ'ըսէ Տէր Եհովա։

45—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 46—Որդի մարդոյ, երեսդ դէպ ի Տեման դարձուր ու դէպ ի հարաւ խօսէ, ու հարաւային դաշտին անտառին վրայ մարգարէութիւն ըրէ։ 47—Ես հարաւային անտառին ըսէ, Տէրոջը խօսքը լսելի ըրէ. Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քու մէջդ կրակ պիտի բռնկցնեմ, և քու մէջդ եղած ամէն կանանչ ծառը ու ամէն չոր ծառը պիտի ուտէ. բռնկած բոցը պիտի չմարի, ու անով հարաւէն մինչև հիւսիս ամէն երեսները պիտի սրբին։ 48—Ու ամէն մարմին պիտի տեսնէ թէ ես Տէրս զանիկա բռնկեցուցի. — անիկա պիտի չմարի։ 49—Այն ատեն ես ըսի, Ո՛հ, Տէր Եհովա, անոնք ինծի համբ կ'ըսեն, Չէ՞ որ ասիկա առակներ կը խօսի։

ԳԼ. ԻԱ

Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երեսդ դէպ Երուսաղէմ չիռկէ, ու սուրբ տեղերուն խօսէ, ու Իսրայէլի երկրին մարգարէութիւն ըրէ, 3—Ու Իսրայէլի երկրին ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ու իմ սուրս իր պատեանէն պիտի հանեմ, և արդարը ու անբարիշտը քեզմէ պիտի կտրեմ։ 4—Որովհետեւ արդարը ու անբարիշտը քեզմէ պիտի կտրեմ, անոր համար հարաւէն մինչև հիւսիս ամէն մարմին դէմ իմ սուրս իր պատեանէն պիտի քաշուի։ 5—Ու ամէն մարմին պիտի գիտնայ՝ թէ ես Տէրս իմ սուրս իր պատեանէն հաներ եմ. անիկա մէյմին ալ ետ պիտի չդառնայ։ 6—Ու

*ծէր. երեսները

դուն, որդի մարդոյ, հնծէ. ու էլքը կոտրածի պէս դառնաթեամբ անոնց ացքերուն առջեւ հնծէ։ 7—Ու ըսը զինք կանչեցի ինչ՞ս կը հնծեաս, այն ատեն ըսեաս, Տէր Եհովային համար, վասն զի կու գայ. և ամէն սիրտ պիտի հալի, և ամէն ձեռք պիտի թուլնայ, ու ամէն հոգի պիտի մարի, և ամէն ծունկ ջուրի պէս պիտի բլլայ. ահա կու գայ ու պիտի կատարուի, կ'ըսէ Տէր Եհովան։

8—Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 9—Որդի մարդոյ, մարգարեացիր ու ըսէ, Տէրը այսպէս կ'ըսէ. Ըսէ որ Սուրը, սուրը պատրաստ ու նաև պրպտեցաւ։ 10—Մեծ կոտորած ընելու համար պատրաստ, փայլելու համար պրպտուեցաւ. հիմա մենք ուրախանա՞նք, իմ որդւոյս գաւազանը ամէն փայտը կ'արհամարհէ։ 11-Թող ինք պրպտելու տանը զանիկա, որպէս զի ձեռքով բռնուի. այս սուրը պատած է ու պրպտած է, որպէս զի զանիկա սպանողին ձեռքը տայ։ 12—Աղաղակէ ու աղաղա, որդի մարդոյ, քանզի անիկա իմ ժողովուրդիս վրայ, Իսրայէլի բոլոր իշխաններուն վրայ, պիտի բլլայ. իմ ժողովուրդիս վրայ սուրի պատճառաւ վախեր պիտի բլլան. անոր համար ւոս ազդրերդ զարկի։ 13—Վասն զի փորձը եղաւ. ու ինչ ը՞րէ ըլլաս, եթէ այն անարգող գաւազանը ա՛լ չըլլայ, կ'ըսէ Տէր Եհովան։ 14—Ես դուն, որդի մարդոյ, մարգարէութիւն ըրէ, ու ձեռքերդ իրարու զարկէ. և սուրը, սպանուածներուն սուրը, երեք անգամ պիտի կրկնուի. մեծամեծաց վիրաւորուելուն սուրը սիրկա է, որ "անոնց բոլորութիւրը պաշարեց"։ 15—Սիրտերուն նուաղելուն համար ու խափերուն չատնալուն համար՝ անոնց բոլոր դռներուն վրայ սուրին վախը դրի. ատա՛ղ, անիկա փայլելու համար չինուեցաւ, մրրիկելու համար սրուեցաւ։ 16—Ինքզինքդ ժողվէ. ըու ալ կամ ձախ կողմդ, ուր որ երեսդ դարձած է, զարկէ։ 17-Ու ես ալ ձեռքերս իրարու պիտի զարնեմ, և իմ սրամտութիւնս պիտի դադրեցնեմ, ես Տէրս խօսեցայ։

18—Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 19—Որդի մարդոյ, դուն քեզի երկու ճամբայ պատրաստէ, որպէս զի Բաբելոնի թագաւորին սուրը գայ. անոնց երկուքն ալ մէկ երկրէ պիտի ելլեն. ու անդ մը ընտրէ, քաղաքին ճամբան գլուխը ընտրէ։ 20—Ճամբայ պատրաստէ, որպէս զի Ամմոնի ազգաց Բաբբային վրայ և Յուդայի մէջ եղող պարսպաւոր Երուսաղէմին վրայ սուր գայ։

21—Վասն զի Բաբելոնի թագաւորը ճամբուն բաժանում մին վրայ՝ երկու ճամբուն գլուխը կայնեցաւ, որպէս զի հմայութիւն ընէ. անիկա իր նետերը երերցուց, թերափիմներուն հարցուց, լերդին նայեցաւ։ 22—Անոր ալ ձեռքին մէջ հմայութիւն կար երուսաղէմի համար, որպէս զի մեքենաներ դնեն, պատերազմի մէջ բերանին բանան ու ազազակով ձայն վերցնեն, դռներու դէմ մեքենաներ դնեն, հողալեր կանգնեն։— Մարդկոց չինեն։ 23-Բայց սակիա անոնց այքերուն առջեւ անոնի հմայութեան մը պէս պիտի բլլայ, [illegible] անոնց երդումներ ըրեր էին. բայց անիկա էբէնց անօրէնութիւնը պիտի յիշեցնէ, որպէս զի բռնուին։

24—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև դուք ձեր անօրէնութիւնը յիշեցուցիք, երբ ձեր յանցանքները յայտնուեցան, ու բոլոր գործերնուդ մէջ ձեր մեղքերը երեցան, [illegible] յիշեցնելնիդ համար ձեռքով պիտի բռնուիք։ 25—Եւ դուն, ով պիղծ— ամբարիշտ իշխան Իսրայէլի, որուն օրը հասեր է, [illegible] անօրէնութեանդ ժամանակին վախճանը, 26—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Խայրը վերցուր ու թագը հանիլ. սակիա այսպէս չըլլար. ցածը բարձրացուր ու բարձրը ցածցուր։ 27—Ձանիկա տակնուվրայ, տակնուվրայ, տակնուվրայ պիտի ընեմ. ու ալ պիտի չըլլայ, մինչև գայ անիկա՝ որուն իրաւունքն է, ու անոր պիտի տամ։

28—Եւ դուն, որդի մարդոյ, մարգարեացիր ու ըսէ, Ամմոնի ազգ [illegible] համար ու անոնց նախատինքին համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. ու ըսէս, Սուրը, սուրը քաշուած է, [illegible] համար սրուած է, որպէս զի իր փայլի

*Կամ, զանոնք խոցեց

երկու ճամբայ պատրաստէ, որպէս զի Բաբելոնի թագաւորին սուրը գայ. անոնց երկուքն ալ մէկ երկրէ պիտի ելլեն. ու անդ մը ընտրէ, քաղաքին ճամբան գլուխը ընտրէ։ 20—Ճամբայ պատրաստէ, որպէս զի Ամմոնի ազգաց Բաբբային վրայ և Յուդայի մէջ եղող պարսպաւոր Երուսաղէմին վրայ սուր գայ։

21—Վասն զի Բաբելոնի թագաւորը ճամբուն բաժանում մին վրայ՝ երկու ճամբուն գլուխը կայնեցաւ, որպէս զի հմայութիւն ընէ. անիկա իր նետերը երերցուց, թերափիմներուն հարցուց, լերդին նայեցաւ։ 22—Անոր ալ ձեռքին մէջ հմայութիւն կար երուսաղէմի համար, որպէս զի մեքենաներ դնեն, պատերազմի մէջ բերանին բանան ու ազազակով ձայն վերցնեն, դռներու դէմ մեքենաներ դնեն, հողալեր կանգնեն։— Մարդկոց չինեն։ 23-Բայց սակիա անոնց այքերուն առջեւ անոնի հմայութեան մը պէս պիտի բլլայ, [illegible] անոնց երդումներ ըրեր էին. բայց անիկա էբէնց անօրէնութիւնը պիտի յիշեցնէ, որպէս զի բռնուին։

24—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև դուք ձեր անօրէնութիւնը յիշեցուցիք, երբ ձեր յանցանքները յայտնուեցան, ու բոլոր գործերնուդ մէջ ձեր մեղքերը երեցան, [illegible] յիշեցնելնիդ համար ձեռքով պիտի բռնուիք։ 25—Եւ դուն, ով պիղծ— ամբարիշտ իշխան Իսրայէլի, որուն օրը հասեր է, [illegible] անօրէնութեանդ ժամանակին վախճանը, 26—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Խայրը վերցուր ու թագը հանիլ. սակիա այսպէս չըլլար. ցածը բարձրացուր ու բարձրը ցածցուր։ 27—Ձանիկա տակնուվրայ, տակնուվրայ, տակնուվրայ պիտի ընեմ. ու ալ պիտի չըլլայ, մինչև գայ անիկա՝ որուն իրաւունքն է, ու անոր պիտի տամ։

28—Եւ դուն, որդի մարդոյ, մարգարեացիր ու ըսէ, Ամմոնի ազգ [illegible] համար ու անոնց նախատինքին համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. ու ըսէս, Սուրը, սուրը քաշուած է, [illegible] համար սրուած է, որպէս զի իր փայլի

*Կամ, [illegible] չաս սրբուած է՝ որպէս զի փայլի

լատնդը հատցնէ՝։ 29—Երբ քեզի համար ունայն տեսիլքներ՝ կը տեսնեն, և սուտ հմայութիւններ կ'ընեն, որպէս զի քեզ սպանուելու ամբարիշտներուն պատոցին վրայ բերեն, որոնց օրը հասեր է, [illegible] անօրէնութեանը ժամանակին վախճանը։ 30—Ձ-Ն՝՝— իր պատեանը դարձնե՞մ. քեզ քու ստեղծման տեղդ ու քու ծննդեանդ երկրին մէջ պիտի դատեմ։ 31—Եւ քու վրադ իմ բարկութիւնս պիտի թափեմ, քու վրադ իմ սրամտութեանս կրակովը պիտի փչեմ, ու քեզ բարբարոս մարդոց, ապականելու վարպետ եղողներուն, ձեռքը պիտի տամ՝։ 32—Հրոյ ճարակ պիտի բլլաս, քու արիւնդ երկրին մէջտեղը պիտի բլլայ, դուն պիտի չյիշուիս. վասն զի ես Տէրս խօսեցայ։

Գլ. ԻԲ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Ու դուն, որդի մարդոյ, այս արիւնահեղ քաղաքին դատաստան պիտի ընե՞ս, դատաստան պիտի ընե՞ս. ուրեմն անոր բոլոր պղծութիւնները իրեն գիտցուր, 3—Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ով քաղաք, որ քու մէջդ արիւն կը թափես, որպէս զի քու ժամանակդ գայ, և քու անձդ պղծելու համար քեզի դէմ կուռքեր կը շինես, 4—Դուն քու թափած արիւնովդ յանցաւոր եղար, ու շինած կուռքերովդ պղծուեցար, և քու օրերդ մօտեցուցիր ու քու տարիներուդ հասար. անոր համար քեզ ազգերուն նախատինք, ու ամէն երկիրներու ծաղր ըլլալու տուի, 5—Ջեզի մօտ եղողները ու քեզմէ հեռու եղողները քեզ ծաղր պիտի ընեն, ով վատահամբաւ, ազմկալից [illegible]։

6—Ահա քու մէջդ Իսրայէլի իշխանները, ամէն մէկը իր բազկովը արիւն թափելու համար կայներ են։ 7—Քու մէջդ հայրը ու մայրը անարգեցին, քու մէջդ օտարականին բռնութիւն ըրին, քու մէջդ որբին ու այրեաւորին զրկանք ըրին։ 8—Իմ սուրբ բաներս արհամարհեցիր, և իմ շաբաթներս պղծեցիր։ 9—Քու մէջդ բանսարկու մարդիկ եղան արիւն թափելու համար, ու քու մէջդ լեռներու վրայ կերան, և քու մէջդ եղեռնագործութիւն ըրին։ 10—Քու մէջդ ա՛ն էր հօրը մերկութիւնը յայտնեց, քու մէջդ դաշտանի պատճառաւ անմաքուր եղող կինը բռնադատեցին։ 11—Դուն մէկը իր դրացին կեսդ հետ պղծութիւն ըրաւ, ու մէկը եղեռնագործութիւն ըրաւ՝ իր հարսը պղծելով, և քու մէջդ ուրիշ մըն ալ իր քոյրը, իր հօրը ազիկը, բռնադատեաց։ 12—Քու մէջդ արիւն թափելու համար կաշառք ատին, վասն ու տոկոսիք ատին, և բռնութիւն ընելով քու դրացիներէդ բան վաստկեցար ագահութեամբ, ու զիս մոռցար, կ'ըսէ Տէր Եհովա։ 13—Ուստի ահա քու բրած ագահութեանդ ու քու մէջդ եղած արիւնահեղութեան համար ձեռքերս իրարու զարկի։ 14—Մինչ քու սիրտդ կրնա՞յ դիմանալ, կամ թէ ձեռքերդ կրնա՞ն ուժգնանալ այն օրերը՝ երբ ես քեզի հաշիւ պիտի ընեմ. ես Տէրս խօսեցայ ու պիտի կատարեմ, 15—Ու քեզ ազգերու մէջ պիտի ցրուեմ, ու քեզ երկիրներու մէջ ցիրուցան պիտի ընեմ, և քու պղծութիւնդ քեզմէ պիտի հատցնեմ։ 16—Ու դուն քեզմէ պիտի պղծուիս ազգաց աչքերուն առջեւ, ու պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը։

17—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 18—Որդի մարդոյ, Իսրայէլի տունը ինծի կղկղանքի պէս եղաւ. ամէնը Լաղոյի մէջ՝ պղինձի, անագի, երկաթի ու կապարի տէ՝ արծաթի կղկղանք եղան։ 19—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև ամէնդ կղկղանքի պէս եղաք, անոր համար ահա ես ձեզ Երուսաղէմի մէջ պիտի ժողվեմ։ 20—Ինչպես արծաթը ու պղինձը ու երկաթը և կապարը ու անագը Լաղոյի մէջ կը ժողվեն, ու անոր վրայ կրակը կը փչեն՝ ը-Ն՝՝— Հալեցնելու համար, այնպես ձեզ իմ բարկութիւնովս ու սրամտութիւնովս պիտի ժողվեմ, և պիտի թողամ ու պիտի հալեցնեմ։ 21—Եւ ձեզ մէկտեղ բերելով՝ ձեր վրայ իմ բարկութեանս կրակով պիտի փչեմ, և դուք անոր մէջ պիտի հալիք։ 22—Ինչպես արծաթը հալոցին մէջ կը հալի, դուք ալ անոր մէջ այնպես պիտի հա-

լինք, ու պիտի գիտնաք որ ես Տէրս իմ սրամտութիւնս թափեցի ձեր վրայ»

23—Ես Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 24—Որդի մարդոյ, անոր ըսէ, Դուն այնպիսի երկիր մըն ես, որ ոչ մարգուած է, ոչ ալ բարկութեան օրը անձրեւով ծրջուած։ 25—Անոր մէջ իր մարգարէներուն դաւաճանութիւն կայ, որոնք աւար յափշտակող ու մնչղող առիւծի պէս հոգիներ կ'ուտեն. անոնք գանձ ու պատուական բաներ առին, ու անոր մէջ անոր որբեւարիները չատցուցին։ 26—Անոր քահանաները իմ օրէնքս աւրեցին, ու իմ սուրբ բաներս պղծեցին. սուրբը պիղծէն չորոշեցին, և անմաքուրին ու մաքուրին տարբերութիւնը չդիտցուցին, և իրենց աչքերը իմ շաբաթներէս ծածկեցին, ու ես անոնց մէջ պիղծ սեպուեցայ։ 27—Անոր իշխանները անոր մէջ յափշտակող գայլերու պէս՝ արիւն թափելու — հոգի կորնցնելու համար, որպէս զի ագահութեամբ բան վաստկին։ 28—Ու անոր մարգարէները անսայն սեւեփլներ սեւանելով՝ ու անոնց սուտ գուշակութիւն ընելով՝ զանոնք կերով ծեփեցին, ու ըսին, Տէր Եհովա այսպես կ'ըսէ, թէև Տէրը խօսած չէր։ 29—Երկրին ժողովուրդը մեծ զրկանք ըրին ու մեծ յափշտակութիւն ըրին, և ազքատ ու անանկը բռնադատեցին, ու օտարականին անիրաւութեամբ զրկանք ըրին։ 30—Ու անոնցմէ մարդ մը փնտռեցի, որ պարսպ չկնէ, ու խրամատին մէջ իմ առջեւս կայնի երկրին համար, որպէս զի զանիկա չաւերեմ. բայց չգտայ։ 31—Ուստի իմ բարկութիւնս անոնց վրայ թափեցի, զանոնք իմ սրամտութեանս կրակովը սպառեցի. անոնց ճամբաները իրենց գլխուը տուի, կ'ըսէ Տէր Եհովա։

ԳԼ. ԻԳ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երկու կիներ կային մէկ մօր աղջիկներ. 3—Ու անոնք Եգիպտոսի մէջ պոռնկութիւն ըրին, իրենց մանկութեան տարիներ պոռնկութիւն ըրին. անոնց ծիծերը հոն ճնշուեցան, ու անոնց կուսութեան սաինքները հոն չօշափուեցան։ 4—Ու անոնց անունները՝ մեծինը Ոողա, ու անոր քրոջը՝ Ոողիբա էր. ու անոնք իմս եղան, և աղաքներ ու աղիկներ ծնան. (ու անոնց անունները՝ Ոողա Սամարիա է, ու Ոողիբա Երուսաղէմ է։)

5—Ես Ոողա քանի որ իմս էր, պոռնկութիւն ըրաւ ու իր հոմանիներուն սիրահարեցաւ, այսինքն Ասորեստանցի դրացիներուն, 6—կապուտակ հագնող կուսակալներուն ու նախարարներուն, ձի հեծնող ձիաւորներուն՝ որոնք ամէնը շնորհալի երիտասարդներ էին։ 7—Ու անոնց վրայ պոռնկութիւն ըրաւ անոնց հետ, այսինքն Ասորեստանի ամէն ընտիր արդիներուն հետ, ու ան ամէնուն հետ՝ որոնց սիրահարեցաւ — անոնց ամէն կուռքերովը պղծուեցաւ։ 8—Ու Եգիպտոսէ իրը պոռնկութիւնները չմոռցաւ. վասն զի անոր մանկութեան տարիներ անոր հետ պառկեր էին, և անոր կուսութեան սաինքները չօշափեր էին, ու իրենց պոռնկութիւնը անոր վրայ թափեր էին։ 9—Անոր համար զանիկա իր հոմանիներուն ձեռքը տուի, Ասորեստանի որդիներուն ձեռքը, որոնց սիրահարած էր։ 10—Անոնք անոր մերկութիւնը յայտնեցին. անոր աղաքները ու աղիկները առին, ու զանիկա սրով մեռցուցին. այսպէս անիկա կիներուն մէջ անուանի եղաւ. և անոր վրայ դատաստաններ լ գործ դրին։

11—Ու երբ անոր քոյրը Ոողիբա տեսաւ, էն սիրահարելովը անկէ աւելի պարանոցաւ. և իր պոռնկութիւններէն աւելի ըսոյսոյ։ 12—Ու էր դրացիներուն սիրահարեցաւ, այսինքն Ասորեստանի արդիներուն, չքեղութեամբ հագուած կուսակալներուն ու նախարարներուն, ձի հեծնող ձիաւորներուն. որոնք ամէնը շնորհալի երիտասարդներ էին։ 13—Ու տեսայ որ պղծուեցաւ, — երկուքին ալ ճամբան մէկ եղաւ։ 14—Ու իր պոռնկութիւնները աւելցուց, քանդի երբ պատի վրայ նկարուած մարդիկ, նօթով նկարուած Քաղդէացւոց պատկերները, տեսաւ, 15—Որոնք մէջքերնին գօտի կապած էին, և իրենց գլխներուն վրայ *ներկուած խայրեր՝ ունէին, ու ամէնը իշխաններու կերպարանքով կին, իրենց ծննդեան երկրին Բաբելոնի որդիներուն, Քաղդէացւոց նմանութեանը պէս, 16—Զանոնք իր աչքերովը տեսածին պէս անոնց սիրահարեցաւ, և անոնց՝ Քաղդէացւոց երկիրը դեսպաններ զրկեց։ 17—Ու Բաբելոնի որդիները անոր հետ սիրոյ անկողինը մտան, և զանիկա իրենց պոռնկութիւններով պղծեցին, ու անիկա անոնց հետ պղծուեցաւ, ու Խէէ անոր հոգին անոնցմէ զատուեցաւ։ 18—Ու իր պոռնկութիւնները յայտնեց ու իր մերկութիւնը բացաւ. ուստի իմ հոգիս անկէ զատուեցաւ, ինչպէս անոր քրոյմէն զատուեր էր։ 19—Այսպէս անիկա իր պոռնկութիւնները չատցուց, յիշելով իր մանկութեան օրերը՝ Եգիպտոսի երկրին մէջ ընութիւն ըրած ժամանակը։ 20—Ու սիրահարեցաւ անոնց տարփածուներուն, որոնց մարմինը էշերու մարմնի է, ու անոնց զօրութիւնը ձիերու զօրութիւն է։ 21—Ու դուն նորէն քու մանկութեանդ պղծագործութիւնը ձեռք առիր, որ քու մանկութեանդ ծիծերուն ՃՂ-Ի-ՎԸ՝ սաինքներդ նգիպտացիներէն չօշափուեցան։

22—Անոր համար, ով Ոողիբա, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քու վրադ պիտի արթնցնեմ քու համնիներդ, որոնցմէ քու հոգիդ զատուեցաւ, ու զանոնք ամէն կողմէն քու վրադ պիտի բերեմ, 23—Բաբելոնի որդիները ու բոլոր Քաղդէացիները, †փկուտը, Սուէն ու Կուէն՝ և անոնց հետ Ասորեստանի բոլոր որդիները, ամէնը, շնորհալի երիտասարդներ, կուսակալներ ու նախարարներ, ամէնը ձի հեծնող զօրագլուխներ ու անուանի մարդիկ. 24—Ու անոնք զէնքերով, կառքերով ու անիւներով ու ժողովրդներու բազմութիւնով քու վրադ պիտի գան, և ամէն կողմէն քեզի դէմ վահան, ասպար ու սաղաւարտ պիտի դնեն. և դատաստանը անոնց ձեռքը պիտի տամ, ու քեզ իրենց դատաստաններովը պիտի դատեն։

*Կամ, մեծ ապարօշներ

†Կամ, իշխանները, հարուստները ու պաշտօնականները

25—Ու իմ նախանձս քեզի դէմ պիտի դնեմ. ու քեզի հետ բարկութեամբ պիտի վարուին, քու քիթդ ու ականջներդ պիտի կտրեն, և քու մնացորդդ սրով պիտի իյնայ. անոնք քու տղաքներդ ու աղիկներդ պիտի առնեն, ու քու մնացորդդ կրակով պիտի այրի։ 26—Ու քու հանգիստներեդ քեզ պիտի մերկացնեն, ու քու պարծանքիդ զարդերը պիտի առնեն։ 27—Ու քեզմէ պիտի գագրեցընեմ քու պղծագործութիւնդ ու քու պոռնկութիւններդ, Ըշէյ Եգիպտոսի երկրէն Էէէր. ու աչքերդ անոնց պիտի չվերցնես ու մէյմըն ալ Եգիպտոսը պիտի չյիշես։

28—Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզ պիտի մատնեմ անոնց ձեռքը զորնք գուն ատելիր, և անոնց ձեռքը որոնցմէ քու հոգիդ զատուեցաւ։ 29—Ու անոնք քեզի հետ ատելութեամբ պիտի վարուին, ու քու բոլոր վաստակդ պիտի առնեն, և քեզ մերկ ու անծածկոյթ պիտի թողուն. ու քու պոռնկութիւններուդ մերկութիւնը, քու պղծագործութիւնդ ու պոռնկութիւնդ պիտի յայտնուին։ 30—Ազգերուն հետեւելով պոռնկութիւն ընելուդ համար և անոնց կուռքերովը պղծուելուդ համար՝ այս բաները քեզի պիտի ընեմ։ 31—Դուն քու քրոջդ ճամբան գացիր. ես ալ անոր բաժակը քու ձեռքդ պիտի տամ։ 32—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուն քու քրոջդ խորունկ ու լայն բաժակը պիտի խմես, խաղ ու խայտառակ պիտի ըլլաս, այն Բ-ի-Լ չատ բան կ'առնէ։ 33—Դուն արբեցութեամբ ու տրտմութեամբ պիտի լցուիս, սարսափութեան ու զարմացման բաժակ մըն է քու քրոջդ Սամարիայի բաժակը։ 34—Ու գուն զանիկա պիտի խմես ու պիտի քամես, և անոր կտորները պիտի †լզես, ու տաինքներդ պիտի պատառատես, քանզի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա։ 35—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Զիս մոռնալուդ ու կռնակիդ եռաւը նետելուդ համար, գուն ալ քու պղծագործութիւնդ ու պոռնկութիւնդ կրես։

36—Ես Տէրը ինծի ըսաւ, Որդի մարդ-

*Կամ, կրծես

զոյ, Ոզոյլի ու Ոզոիբայի գառապատանը պիտի անանի՞ս ուրնին անոնց պղծութիւնները իրենց պատճէ։ 37—Վասն զի չնութիւն ըրին. ու ձեռքերնուն մէջ արիւն կայ. և իրենց կուռքերովը չնութիւն ըրին, ու իրենց ինձի ծնած տղաքն ալ իրենց անցուցին, որպէս զի անոնց կերակուր ըլլան։ 38—Ձայս ալ ըրին ինծի. նաև որը իմ սրբարանս անմաքուր ըրին ու իմ շաբաթներս պղծեցին։ 39—Վասն զի երբ իրենց տղաքը իրենց կուռքերուն զոհեցին, նոյն օրը իմ սրբարանս մտան, որպէս զի զանիկա պղծեն. և ահա իմ տանս մէջ այսպէս ըրին։ 40—Ու նաև հեռուէն գալու մարդոց լաթ ղրկեցիք, որոնց պատգամաւորներ ղրկուելուն պէս՝ ահա անոնք եկան. և դուն անոնց համար լուացուեցար ու աչքերուդ վրայ ծարայր դրիր ու զարդերով զարդարուեցար։ 41—Ու պատուական բազմոցի վրայ նստար, որուն առջև պատրաստուած սեղան կար, և իմ խունկս ու իւղս անոր վրայ դրիր։ 42—Ու հոն ուրախութիւն ընող բազմութեան ձայն կը լսուեր ու այն բազմաթիւ մարդոցմէն զատ անապատէն գինեմոլ մարդիկ բերուեցան, որոնք անոնց ձեռքերը ապարանջաններ, ու անոնց գլուխները պարծանքի թագեր կը դնէին։

43—Ու չնութեան մէջ պառաւածին վրայով ըսի, Հիմա ալ ասոր հետ պոռնկութիւն պիտի ընէ՞ն։ 44—Ու անոր քով կը մտնէին. ինչպես պոռնիկ կինոջ քով կը մտնեն, այնպես ալ Ոզոյլի ու Ոզոիբայի, այն պղծագործ կիներուն, քով կը մտնէին։ 45—Բայց արդար մարդիկ չնացող կիներուն դատաստանովը ու արիւն թափող կիներուն դատաստանովը պիտի դատեն զանոնք. վասն զի անոնք չնացող կիներ են, ու անոնց ձեռքերուն մէջ արիւն կայ։

46—Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Անոնց դէմ ժողով պիտի հանեմ, և զանոնք նեղութեան ու յափշտակութեան պիտի մատնեմ։ 47—Ու ժողովը զանոնք քարերով պիտի քարկոծեն, և զանոնք իրենց սուրերովը պիտի կտրատեն. անոնց տղաքները ու աղիկինները պիտի մեռցնեն, ու անոնց տուները կրակով պիտի այրեն։ 48—Ու երկրին պղծագործութիւնը պիտի վերցնեմ, որպէս զի ամէն կիները խրատուին ու ձեր պղծագործութեանը պէս չընեն։ 49—Ու ձեր պղծագործութիւնը ձեր վրայ պիտի դնեն, ու դուք ձեր կուռքերուն մեղքերը պիտի կրէք. ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէր Եհովա։

Գլ. ԻԴ

Ե. ինեւերորդ տարին տասներորդ ամիսը, ամսուն տասներորդը էր, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, դուն քեզի այս օրուան անունը՝ բուն այս օրը գրէ. Բաբելոնի թագաւորը բուն այս օրը Երուսաղէմի մօտեցաւ. 3—Ու այն ապստամբներուն տանը առակ խօսիս, ու անոնց ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Կաթսան դիր, կ՚ընէ՝ դիր ու ալէնն ալ ջուր լեցուր։ 4—Անոր կտորները, ամէն ազէկ կտորները, ազդրը և ուսը, անոր մէջ ժողվէ, ու կ՚ընէ՝ ընտիր ոսկորներով լեցուր։ 5—Ոչխարներուն ընտիրները առ ու ոսկորներն ալ տակը դիզէ, զանիկա խիստ չաս եռացուր, որպէս որ մէջի ոսկորներն ալ եփին։

6—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Վա՜յ արիւնահեղ քաղաքին, այն կաթսային, որուն ժանգը իր մէջ է, ու ժանգը մէջէն ելած չէ. զանիկա իր դէպ կտորներովը հանէ, անոր վրայ վիճակ չգուլ։ 7—Վասն զի անոր արիւնը իր մէջ է. զանիկա չոր ապառաժի վրայ դրաւ, զանիկա գետնի վրայ չթափից որ զանիկա հողով ծածկէ։ 8—Իմ սրտմտութիւնս հանելու՝ վրէժ առնելու համար՝ անոր արիւնը չոր ապառաժի վրայ դրի որպէս զի չծածկուի։ 9—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Վա՜յ արիւնահեղ քաղաքին, ես ալ կրակին դիզը պիտի մեծցնեմ։ 10—Փայտերը չատցուր, կրակը բռնկցուր՝ որպէս զի միսը հալի, համեմներ ալ դիր, ու ոսկորները այրին։ 11—Ետքը պարապ կաթսան կայծերուն վրայ դիր, որպէս զի պղինձը տաքնայ ու այրի, ու մէջի պղծութիւնը հալի ու ժանգը հատնի։ 12—Անիկա աշխատութիւնով զէնյոգնեցուց, ու անոր չատ ժանգը իրմէ չելաւ, անոր ժանգը կրակով չէ՝՝։ 13—Քու անմաքրութեանդ մէջ պղծագործութիւն կայ. որովհետև զիզ *մաքրելու աշխատեցայ՝, ու դուն չմաքրուեցար, այսուհետև քու անմաքրութենէդ պիտի չմաքրուիս, մինչև որ իմ բարկութիւնս քու վրադ չլիճնցնեմ։ 14—Ես Տէրս խօսեցայ, իմ կ՚ըսէ՝ պիտի գայ, ու կ՚ընէ՝ պիտի կատարեմ, դարձի չնեղնեմ՝ ու պիտի չխնայեմ և պիտի չզղջամ. քու ճամբաներուդ ու քու գործերուդ համեմատ պիտի դատաստան կ'ընեն Տէր Եհովա։

15—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 16—Որդի մարդոյ, ահա ես հարուածով մը քու աչքերուդ ցանկութիւնը քեզմէ պիտի առնեմ. ու դուն չողբաս ու չլաս և քու արցունք չգայ։ 17—Լռութեամբ ըլլայ քու հեծծութիւնդ, մեռելի սուգ մի բռներ. քու սալաւոր գլուխդ փաթթէ, կօշիկներդ ոտքերդ հագիր ու շրթունքդ մի ծածկեր և մարդոց հացը մի ուտեր։

18—Ու առաւօտուն ժողովուրդին խօսացայ, ու իրիկունը կինս մեռաւ, ու հետևեալ առաւօտուն ինծի հրամայուածը ըրի։ 19—Ու ժողովուրդը ինծի ըսաւ, Մեզի չե՞ս պատմեր Թէ այս քու ըրածներդ ինչ ունին մեզ։

20—Ու ես անոնց ըսի, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 21-Իսրայէլի տանը ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես իմ սրբարանս, ձեր զօրութեանը պարծանքը, ձեր աչքերուն ցանկութիւնը ու ձեր հոգւոյն խնայածը, պիտի պղծեմ. և ձեր Թողացած տղաքներնիդ ու աղիկինէներնիդ սրով պիտի իյնան։ 22—Ու դուք իմ ըրածիս պէս պիտի ընէք. չէր չրթունքները պիտի չծածկէք, ու մարդոց հացը պիտի չուտէք։ 23—Ու ձեր սպասուորները գլուխներնիդ, և ձեր կօշիկները ոտքերնիդ պիտի ըլլան. պիտի չողբաք ու պիտի չլաք, հապա ձեր անօրէնութիւններովը պիտի մաշիք, և իրարու հետ պիտի հեծծէք։ 24—Ու եզեկիէլ ձեզի նշան մըն է. դուք անոր

*ԵԲԲ. մաքրեցի

†կամ, պիտի չձգեմ իմ ջէրաուսրութիւնս

բոլոր ըրածին պէս պիտի ընէք. ու երբ ասիկա ըլլայ, պիտի գիտնաք Թէ ես եմ Տէր Եհովա։

25—Ու դուն, որդի մարդոյ, երբ ես անոնցմէ առնեմ անոնց զօրութիւնը, անոնց պարծանքի ցնծութիւնը, անոնց աչքերուն ցանկութիւնը ու անոնց հոգւոյն սիրած տղաքները ու աղիկինները, 26—Ահա այն օրը պատսաւածը քեզի պիտի գայ, և ինձ ականջներուդ պիտի պատմէ։ 27—Այն օրը քու բերանդ պիտի բացուի պատսաւածին, ու պիտի խօսիս և ալ համր չըլլաս. ու դուն անոնց նշան պիտի ըլլաս, ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։

Գլ. ԻԵ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երեսդ Ամմոնի որդիներուն դարձուր, ու անոնց վրայ մարգարէութիւն ըրէ. 3—Ու Ամմոնի որդիներուն ըսէ, Տէր Եհովայի խօսքը մտիկ ըրէք. Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև դուն վա՜յ ըսիր իմ սրբարանիս վրայով երբ պղծուեցաւ, ու Իսրայէլի երկրին վրայով երբ աւերակ եղաւ, և Յուդայի տանը վրայով երբ գերութեան գնաց. 4—Անոր համար ահա ես քեզ արեւելքի բնակիչներուն ժառանգութիւն կու տամ. ու քու մէջդ իրենց գեղերը պիտի հաստատեն, ու քու մէջդ իրենց վրաններ պիտի գնեն. քու պտուղներդ պիտի ուտեն և քու կաթդ պիտի խմեն։ 5—Ու Ռաբբան պատրան փարախ և Ամմոնի որդիներուն Երէյեզ հօտերու մակաղատեղ պիտի ընեմ, ու պիտի գիտնաք Թէ ես եմ Տէրը։ 6—Վասն զի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետև դուն ծափ զարկիր, ու ոտքդ գետինը զարկիր, ու իսրայէլի երկրին վրայ քու հոգւոդդ բոլոր արհամարհանքովը ուրախացար, 7—Անոր համար ահա ես իմ ձեռքս քու վրադ պիտի երկնցնեմ, ու քեզ ազգերուն յափշտակութիւն ըլլալու պիտի տամ, և քեզ ժողովրդներէն պիտի կտրեմ, ու քեզ երկիրներուն մէջէն պիտի կորսընցնեմ. քեզ բնաջինջ պիտի ընեմ, ու պիտի գիտնաս Թէ ես եմ Տէրը։

8—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ Մովաբ ու Սէիր ըսին թէ Ահա Յուդայի տունը ամէն ազգերուն պէս է, 9—Անոր համար ահա ես Մովաբի սահմանը էր քաղաքներէն, իր Ծայրը եղող քաղաքներէն, երկրին պարծանքը եղող Բեթեսիմոթի, Բեէլմէոնի ու Կարիաթեմի կողմէն պիտի բանամ 10—Աբեւելքի բնակիչներուն, որոնք դէմ Ամմոնի որդիներուն վրայ չըլլան. ու այն երկիրը Ամմոնի որդիներուն մէջ չյիշուի։ 11—Մովաբի մէջ ալ դատաստաններ իրագործ պիտի դնեմ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

12—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ Եդոմի Յուդայի տանը դէմ գնելով վրէժ առաւ, և անկէ վրէժ առնելով մեծ յանցանք բրաւ, 13—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Եդոմի վրայ անշուշտ ձեռքս պիտի երկնցնեմ, և մարդը ու անասունը անկէ պիտի կտրեմ, և զանիկա անապատ պիտի ընեմ Թեմանէ, ու մինչև Դեդան սրով պիտի իյնան։ 14—Ու իմ ժողովրդիս իսրայէլի ձեռքով իմ վրէժխնդրութիւնս եդոմի վրայ պիտի կատարեմ. ու անոնք իմ սրտմտութեանս ու բարկութեանս համեմատ պիտի ընեն եդոմի մէջ. և իմ վրէժխնդրութիւնս պիտի գիտնան, կ'ըսէ Տէր Եհովա։

15—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ փղշտացիք վրէժխնդրութեամբ վարուեցան, ու հոգիի արհամարհանքով վրէժ առին՝ հինաւուրց ատելութեամբ աւերելով, 16—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես իմ ձեռքս փղշտացւոց վրայ պիտի երկնցնեմ, և քրեթհիները պիտի կտրեմ, ու ծովեզերքը եղողներուն մնացորդը բնաջինջ պիտի ընեմ. 17—Ու անոնց վրայ իմ սրտմտութեանս յանդիմանութիւններովը մեծ վրէժխնդրութիւններ պիտի կատարեմ. ու երբ իմ վրէժս անոնցմէ առնեմ, պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

ԳԼ. ԻԶ

Ո՛ եղաւ որ մեռասաններորդ տարին, ամսուն առաջին օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, օրհնեան Տիւրոս Եղուսաղէմի վրայով ըսաւ, Վա՛յ, ժողովուրդներուն դռները կտրեցան, ան ինծի փոխադրուեցաւ, անոր անապատ դառնալով ես պիտի լեցուիմ. 3—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Տիւրոս, ու քու վրադ շատ ազգեր պիտի յարուցանեմ, ինչպես ծովը իր ալիքները կը յարուցանէ. 4—Ու անոնք Տիւրոսի պարիսպները պիտի աւերեն, ու անոր աշտարակները պիտի փլցընեն, ու ես անոր հողը անկէ պիտի աւլեմ, և զանիկա չոր ապառաժի պիտի դարձնեմ. 5—Անիկա ծովուն մէջ ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլայ, վասն զի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա, ու անիկա ազգերուն աւար պիտի ըլլայ։ 6—Ու անոր աղիքներուն որոնք դաշտի մէջ են, սրով պիտի սպաննուին, և ժողովրդի պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

7—Վասն զի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես հիւսիսէն Տիւրոսի վրայ պիտի բերեմ Թագաւորաց Թագաւորը, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը, ձիերով, կառքերով, ձիաւորներով, բազմաթիւ ու շատ ժողովուրդով։ 8—Անիկա քու աղջիկներդ դաշտի մէջ սրով պիտի մեռցնէ, և քեզի դէմ մատկոց պիտի շինէ, ու քեզի դէմ հողաբլուր պիտի կանգնէ, ու քեզի դէմ վահան պիտի վերցնէ. 9—Ու քու պարիսպներուդ դէմ իր պատերազմական մեքենաները պիտի դնէ, ու իր տապարներովը քու աշտարակներդ պիտի փլցնէ. 10—Անոր ձիերուն բազմաթիւնէն անոնց փոշին քեզ պիտի ծածկէ. ձիաւորներուն ու անիւներուն և կառքերուն ձայնէն քու պարիսպներդ պիտի սասանին, երբ ինք քու դռներդ մտնէ՝ պատիպը փշած քաղաքի մէջ մտնողներուն պէս։ 11—Քու ամէն փողոցներդ իր ձիերուն սմբակներովը պիտի կոխէ, քու ժողովուրդդ սրով պիտի սպաննէ, և քու ամուր բերդերդ գետնի հետ հաւասար պիտի ըլլան։ 12—Ու քու հարստութիւնդ պիտի թալնեն, ու ապրանքներդ աւար պիտի առնեն. և քու պարիսպներդ պիտի փլցնեն, ու գեղեցիկ տուներդ պիտի քակեն. և քու քարերդ, փայտերդ ու հողդ ջուրերուն մէջ պիտի ձգեն։ 13—Ու քու երգերուդ ազդակը պիտի դադրեցնեմ, ու քու քնարներուդ ձայնը ալ պիտի չլսուի։ 14—Ու քեզ չոր ապառաժի պիտի դարձնեմ, ուռկաններ փռելու տեղ պիտի ըլլաս, ալ պիտի չշինուիս. վասն զի ես Տէրս խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա։

15—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ Տիւրոսի. Մինէ քու կործանումիդ ձայնէն կղզիները պիտի չսասանին, երբ քու մէջդ կոտրած ըլլալով՝ վիրաւորները հեծծեն, 16—Այն ատեն ծովուն բոլոր իշխանները իրենց աթոռներուն վրայէն պիտի իջնեն, և իրենց պատմուճանները պիտի հանեն, ու իրենց նկարագործ հանդերձները պիտի մերկանան, սոսկալի պիտի հագնին, գետնի վրայ պիտի նստին, և ամէն վայրկեան պիտի սարսափին, ու քու վրայովդ պիտի ապշին. 17—Ու քու վրայովդ ողբ ընելով քեզի պիտի ըսեն, Ի՜նչպէս կործանեցար, ով ծովեզեակ անուանի քաղաք, որ ծովուն մէջ զօրաւոր էիր դուն ու քու բնակիչներդ, որ ամէնուս էիք դողացընողները բոլոր բնակիչներուն։ 18—Հիմա քու կործանումիդ օրը կղզիները պիտի դողան, ու ծովու մէջ եղող կղզիները քու բնաջինջ ըլլալուդ վրայով պիտի ապշին։

19—Վասնզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. երբ քեզ աւերակ քաղաք մը ընեմ այն քաղաքներուն պէս՝ որոնք բնակիչ չունին, և քու վրադ անդունդը հանեմ, ու շատ ջուրերը քեզ ծածկեն, 20—Ու քեզ գետը իջնողներուն հետ հին ժողովուրդին իջեցնեմ, ու քեզ գետը իջնողներուն հետ գետնին տակերը, յաւերժական աւերակներուն մէջ նստեցնեմ, այնպէս որ ուրիշ ոչ չբնակուիս, այն ատեն ես կենդանեաց երկրին մէջ փառք պիտի դնեմ։ 21—Քեզ ահեղ սոսկում պիտի ընեմ, ու պիտի ոչնչանաս. ու երբ փնտռուիս, ա՛լ յաւիտեան պիտի չգտնուիս, կ'ըսէ Տէր Եհովա։

*ՆՔԲ. վերցնելով

ԳԼ. ԻԸ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Դուն, որդի մարդոյ, Տիւրոսի վրայ ողբ ըրէ. 3—Ու Տիւրոսի ըսէ, Ով ծովուն մուտքերը բնակող, շատ կղզիներու մէջ ժողովուրդներուն հետ վաճառականութիւն ընող, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ով Տիւրոս, դուն ըսիր թէ ես գեղեցկութեան մէջ կատարեալ եմ, 4—Քու սահմաններդ *ծովուն մէջտեղն են, քեզ չինողներդ քու գեղեցկութիւնդ կատարեալ ըրին։

5—Անոնք քու ամէն †սախտակներդ Սանիրի մայրէն չինեցին. Լիբանանէ եղէւենները առին, որպէս զի քեզի կայմեր չինեն։ 6—Քու թիերդ Բասանի կաղնիներէն չինեցին, քու ‡նաստարաններդ կիպրացւոց կղզիներէն էլիշայ ոսկեայ չինեցին փղոսկրով զարդարած։ 7—Քու բացած առագաստդ եգիպտոսի նկարագործ բեհեզէն էր. քու ծածկոցդ եղիսայի կղզիներուն կապուտակ ու ծիրանագոյն ներկած էր։ 8—Սիդոնի ու Արուադի բնակիչները քու թիավարներդ էին. քու մէջդ եղող իմաստուններդ, ով Տիւրոս, անոնք քու նաւավարներդ էին։ 9—Գեբալի ծերերը ու անոր իմաստունները քու մէջդ էին՝ քու ծածկուածդ նորոգելու համար. ծովուն բոլոր նաւերը ու անոնց նաւաստիները քու առուտուրդ ընելու համար քու մէջդ էին։ 10—Քու զօրքերուդ մէջ պատերազմական մարդիկդ Պարսք, Ղուդացիք ու Փուդացիք էին. քու մէջդ վահան ու սաղաւարտ կախող անոնք էին, ա՛ն անոնք քեզ փառաւորեցին։ 11—Արուադացիք քու զօրքիդ հետ՝ շուրջանակի քու պարիսպներուդ վրայ, ու ‡Գամադացիք քու աշտարակներուդ մէջ էին. անոնք իրենց վահանները շուրջանակի քու պարիսպներուդ վրայ կը կախէին, անոնք քու գեղեցկութիւնդ կատարեալ ըրին։

12—Աւձն †ԹՈՒՂ ապրանքի շատ բազմութեան համար՝ Թարսիսի ԸՆԿԵՐԸ քու

*ՆՔԲ. ծովերուն սրտին մէջն
†կամ, սախտակամածներդ
‡կամ, քաղաքացիները

վաճառականներդ էին. անոնք քու վաճառանոցներուդ մէջ արծաթին, երկաթի, անոպի ու կապարի առուտուր կ'ընէին։ 13—Ցաւան, Թոբէլ ու Մոսոք քու վաճառականներդ էին. անոնք քեզի հետ մարդոց հոգիներու ու պղնձէ ամաններու առուտուր կ'ընէին։ 14—Թոգարմայի տունէն քու վաճառանոցներդ կը բերէին ձիեր ու ձիաւորներ և լծորներ։ 15—Դեդանի որդիները քու վաճառականներդ էին. շատ կղզիներու վաճառականութիւնը քու ձեռքդ էր. անոնք քեզի հետ փղոսկրի ժանիքներով ու ապնուզով փոխանակութիւն կ'ընէին։ 16—Ձեռագործներուդ շատութեանը համար Ասորիները քու վաճառականներդ էին. նաև քու վաճառանոցներդ մէջ կարկհանի, ծիրանեդոյնի, նկարագործ կերպասի, բհհզի, բուսաներու ու կարմիր յակինթի առուտուր կ'ընէին։ 17—Ցուդա ու Իսրայէլի երկիրը քու վաճառականներդ էին. անոնք քեզի հետ Մինիթի ցորենի, խմորեղէնի, մեղրի, իւղի ու բալասանի առուտուր կ'ընէին։ 18—Ձեռագործներուդ շատութենէն, ամէն տեսակ ապրանքի շատ ըլլալուն համար, Դամասկոս քու վաճառականդ էր՝ Քեղբոնի գինիով ու ձերմակ բուրդով։ 19—Վէդան ու Ցաւան քու վաճառանոցներդ մտնած կը բերէին. քու վաճառքներուդ մէջ բանուած երկաթ, կասիա ու խունկեղէնը կար։ 20—Կառքերու համար պատառականներ բերող վաճառականդ Դեդան էր։ 21—Արաբացիք ու կեդարի բոլոր իշխանները քու պատրաստ վաճառականներդ էին. անոնք քեզի հետ գառնուներու, խոյերու ու նոխազներու առուտուր կ'ընէին։ 22—Սաբայի ու Ռեգմայի վաճառականները քու վաճառականներդ էին, անոնք քու վաճառանոցներուդ մէջ ամէն տեսակ ընտիր խունկերու, և ամէն տեսակ պատուական քարերու ու ոսկիի առուտուր կ'ընէին։ 23—Խառան, Քհնանէ ու Եդեմ, Սաբայի վաճառականները, Ասորեստան ու Քղմադ քու վաճառականներդ էին։ 24—Անոնք քու վաճառանոցներուդ մէջ քեզի հետ չքեղ հանդերձներով, կապոտակ ու նկարագործ վերարկուներով ու չուաններով կապուած եղեւնափայտէ մնառներու առուտուր կ'ընէին։ 25—Թարսիսի նաւերը քու առուտուրիդ համար կը պտրաէին. ու դուն լեցուեցար ու խիստ փառաւոր եղար Ծովուն մէջտեղը։

26—Քու թիավարներդ քեզ չատ մարերուն բերին. արեւելեան հովը քեզ Ծովուն մէջտեղը կտրեց։ 27—Քու ապրանքներդ ու վաճառանոցներդ — առուտուրդ, քու նաւաստիներդ ու նաւավարներդ, քու նաւերդ նորոգողները ու քեզի հետ առուտուր ընողները, և քու մէջդ եղող բոլոր պատերազմական մարդիկդ, ու քու մէջդ եղող բոլոր բազմութիւնդ քու կործանումիդ օրը Ծովուն մէջտեղը պիտի իյնան։ 28—Քու նաւավարներուդ ազաղակին ձայնէն արաբանները պիտի սարսին։ 29—Ու ամէն թիի փայտ նաւաստիները, ամէն Ծովու նաւավարները իրենց նաւերէն պիտի իջնեն ու ցամաքը պիտի կայնին. 30—ու իրենց ձայնը քու վրայդէն լսել պիտի ուն, ու գառնապես պիտի ազազակեն, և իրենց գլուխներուն վրայ հող պիտի դնեն, ու մոխրի մէջ պիտի թաւալին. 31—Ու քեզի համար մազերնին պիտի փետեն և փուրձ պիտի հագնին. ու քեզի համար սրտի ցաւով ու գառն ողբով պիտի լան։ 32—Ու իրենց սաղմէն մէջ քեզի համար ողբալու յօդ պիտի վերցնեն, ու քու վրայ ողբան ընելով, ինչ է՞ պէս կար Տիւրոսի նման՝ որ Ծովուն մէջ բնաջինջ եղաւ։ 33—Քանի որ քու վաճառքներդ Ծովէն կ'ելլէին, շատ ազգեր կը կշտացնէիր, չատ ապրանքներովդ ու առուտուր ընելովդ երկրի թագաւորները կը հարստացնէիր. 34—Ջուրերուն խորութեանը մէջ Ծովերէն կոտրուած ատենդ՝ քու վաճառականութիւնդ ու բոլոր բազմութիւնդ քու մէջդ ինկան։ 35—Կղզիներուն բնակիչները քու վրայդ ապշեցան, ու անոնց թագաւորները խիստ զարհուրեցան, էջերնէ երեսները դեղնեցան։ 36—Ազգերուն մէջ վաճառականները քու վրադ սուլեցին, դուն սոսկումի ղոքճ եղար և յաւիտեան ոչնչացար։

ԳԼ. ԻԷ

Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, Տիւրոսի իշխանին ըսէ Թէ Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ քու սիրտդ հպարտացաւ, ու ըսիր Թէ Ես աստուած մըն եմ, Ես Ծովուն մէջտեղը Աստուածոյ աթոռը կը նստիմ. սակայն դուն մարդ ես ու ոչ Թէ Աստուած, Թէեւ քու սիրտդ Աստուծոյ սրտին տեղ դրիր։ 3—Ահա դուն Դանիէլէ իմաստուն ես, քնաւ գաղտնիք մը քեզմէ չպահուեցաւ. 4—Քու իմաստութիւնովդ ու հանճարովդ քեզի հարստութիւն ստացար, և գանձերուդ մէջ ոսկի ու արծաթ ժողվեցիր։ 5—Շատ իմաստութիւնովդ — վաճառականութիւնովդ քու հարստութիւնդ չատցուցիր, և քու հարստութեանդ պատճառաւ սիրտդ հպարտացաւ։

6—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ դուն քու սիրտդ Աստուծոյ սրտին տեղ դրիր, 7—Անոր համար ահա ես քու վրադ օտարներ, ազգաց բռնաւորները, պիտի բերեմ. և անոնք քու իմաստութեանդ գեղեցկութեանը վրայ սուրերնին պիտի քաշեն, ու քու վայելչութիւնդ պիտի ապականեն. 8—Գերդ պիտի իջեցնեն, ու Ծովուն մէջտեղը վիրաւորներուն մահովը պիտի մեռնիս։ 9—Մինչ քեզ սպանողներուն առջեւ պիտի կրնա՞ս ըսել Թէ Ես Աստուած եմ. դուն քեզ մեռցնողներուն ձեռքին մէջ մարդ պիտի ըլլաս ու ոչ Թէ Աստուած։ 10—Օտարներուն ձեռքով՝ անթլփատներուն մահովը պիտի մեռնիս, քանզի Ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա։

11—Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 12—Որդի մարդոյ, Տիւրոսի Թագաւորին վրայով ողբ ըրէ, ու անոր ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուն որ կատարելութեան կնիքն ես, իմաստութեամբ լեցուած՝ ու գեղեցկութեան մէջ կատարեալ ես։ 13—Դուն Աստուծոյ դրախտին, Եդեմի, մէջ էիր, քու ծածկոցդ ամէն պատուական քարերն էին, սարդիոն, տոպազիոն ու ադամանդ, ակնթարթ, հղոյնաքար և յասպիս, շափիւզ, կարկեհան և զմրուխտ ու ոսկի. քու թմբուկներուդ ու սրինգներուդ գործը քու ստեղծման օրդ քեզի պատրաստեցաւ։ 14—Դուն Քերովբէ մշտածածկող քերովբէ մըն էիր, ու քեզ դրի. և դուն Աստուծոյ սուրբ լեռանը վրայ էիր, դուն հրեղէն քարերուն մէջտեղը կը չրջէիր։ 15—Դուն քու ճամբաներուդ մէջ կատարեալ էիր, քու ստեղծման օրդ մինչեւ անօրէնութիւն գտնուեցաւ։ 16—Քու առուտուրիդ չատութեանը համար քու մէջդ զրկանքով լեցուցին, ու մեղք գործեցիր. ես ալ քեզ Աստուծոյ լեռներէն իջեցի պիղծ մը նկատեցի, և քեզ, ով ծածկող քերովբէ, հրեղէն քարերուն մէջէն բնաջինջ ըրի։ 17—Քու գեղեցկութեանդ համար սիրտդ հպարտացաւ, քու վայելչութեանդ պատճառաւ քու իմաստութիւնդ ապականեր. ես ալ քեզ գետինը նետեցի, քեզ Թագաւորներուն առջեւ դրի տեսարան ըլլալու համար։ 18—Քու խարդախ վաճառականութիւնովդ ըրած չատ անօրէնութիւններովդ քու սրբութիւններդ պղծեցիր. ես ալ քու մէջէդ կրակ հանեցի, անիկա քեզ կերաւ, ու քեզ տեսնողներուն աչքին առջեւ քեզ գետնի վրայ մոխիր ըրի։ 19—Ազգերուն մէջ ամէն քեզ ճանչցողները քու վրայդ ապշեցան. դուն սոսկումի ղոքճ եղար ու յաւիտեան ոչնչացար։

20—Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 21—Որդի մարդոյ, երեսդ Սիդոնի դարձուր, ու անոր մարգարէութիւն ըրէ, 22—Ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Սիդոն, և քու մէջդ պիտի փառաւորուիմ. ու երբ անոր մէջ դատաստաններ ընեմ, ու անոր մէջ սուրբ սեպուիմ, պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։ 23—Վասն զի անոր մէջ ժանտախտ ու անոր փողոցներուն մէջ արիւն պիտի ղրկեմ. և չուրջանակի անոր վրայ եղող սրովը անոր մէջ վիրաւորներ պիտի իյնան, ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։ 24—Ու Իսրայէլի տանը մէջ-

մըն ալ խայթող տատասկ ու ցուցնող փուշ պիտի չըլլայ՝ իրենց բոլորտիքը եղող վիրաւոր ամէն նախատանքներէն. ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէր Աստուածը։

25—Տէր Աստուած այսպէս կ'ըսէ. Երբ Իսրայէլի տունը ժողվեմ այն ժողովուրդներէն՝ որոնց մէջ ցրուած են, այն ատեն անոնց մէջ ազգաց աչքերուն առջեւ սուրբ պիտի սեպուիմ. ու անոնք պիտի բնակին իրենց երկրին մէջ, զոր ես իմ ծառայ Յակոբ տուի։ 26—Ու անոր մէջ ապահովութեամբ պիտի բնակին, ու տուներ պիտի շինեն և այգիներ պիտի անկեն. ու երբ դատաստան ընեմ ի գործ դնեմ ամէն անոնց բոլորտիքը եղողներուն վրայ՝ որ զանոնք նախատանքին, անոնք ապահովութեամբ պիտի բնակին, ու պիտի գիտնան Թէ ես եմ իրենց Տէր Աստուածը։

Գլ. ԻԹ

Տասներորդ տարին, տասներորդ ամսուն երկուտասաներորդ օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երեսդ Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին դարձուր, ու անոր դէմ ու բոլոր Եգիպտոսի դէմ մարգարէութիւն ըրէ. 3—խօսէ ու ըսէ, Տէր Աստուած այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Եգիպտոսի Փարաւոն Թագաւոր, փոս գետերուդ մէջ պառկող մեծ վիշապ, որ կ'ըսես Թէ իմ գետս իմն է, ու ես զայն ինծի համար շինեցի։ 4—Բայց ես քու կզակներուդ կարթեր պիտի անցնեմ, և քու գետերուդ ձուկերը քու թեփերուդ պիտի փակցնեմ, ու քեզ գետերուդ մէջէն պիտի հանեմ, ու գետերուդ բոլոր ձուկերը քու թեփերուդ պիտի փակչին։ 5—Ես քեզ ու գետերուդ բոլոր ձուկերը անապատը պիտի նետեմ. դուն դաշտի երեսին վրայ պիտի իյնաս ու պիտի չժողվուիս և չսոսփսիս. քեզ երկրի գազաններուն ու երկինքի թռչուններուն կերակուր տուի։ 6—Ու Եգիպտոսի բոլոր բնակիչները պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը, վասն զի իսրայէլի տանը եղէգէ ցուպ եղան։ 7—Երբ անոնք քեզ ձեռքով բռնեցին, դուն կտրեցար ու անոնց բոլոր *բազուկը ձեղքեցիր. ու երբ քեզի կռթնեցան, փշրուեցար ու անոնց բոլոր մէջքը դողացուցիր։

8—Ասոր համար Տէր Աստուած այսպէս կ'ըսէ. Ահա ես քու վրադ սուր պիտի բերեմ և մարդը ու անասունը քեզմէ պիտի կտրեմ։ 9—Ու Եգիպտոսի երկիրը աւերակ ու անապատ պիտի ըլլայ, ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը. որովհետև անիկա ըսաւ, Գետը իմն է, ու ես զայն ինծի շինեցի։ 10—Անոր համար ահա ես քեզի և քու գետերուդ դէմ եմ, ու Եգիպտոսի երկիրը Մագդոլէ մինչև Սուէնէ ու մինչև Եթովպացւոց սահմանը աւերակ ու անշէն անապատ պիտի ընեմ։ 11—Անկէ մարդու ոտք պիտի չանցնի, ոչ ալ անասունի ոտք անկէ պիտի անցնի, և քառասուն տարի անբնակ պիտի մնայ։ 12—Ու Եգիպտոսի երկիրը ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի ընեմ, և անոր քաղաքները աւերուած քաղաքներու մէջ քառասուն տարի ամայի պիտի մնան, ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, ու զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ։

13-Սակայն Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Քառասուն տարիէն ետքը Եգիպտացիները պիտի ժողվեմ այն ազգերէն որոնց մէջ ցրուեցան։ 14—Ու Եգիպտացւոց գերութիւնը ետ պիտի դարձնեմ, և զանոնք Պաթուրէսի երկիրը, իրենց հայրենի երկիրը, պիտի դարձնեմ, ու հոն ցած Թագաւորութիւն մը պիտի ըլլան։ 15-Թագաւորութիւններուն խոտ ցածը պիտի ըլլայ, ու մէյմըն ալ ազգերուն վրայ պիտի չբարձրանայ. վասն զի զանոնք պիտի պզտիկցնեմ, որպէս զի ազգերուն վրայ չիշխեն։ 16—Ու անոնք մէյմըն ալ իսրայէլի տանը յոյս չըլլան, որ իրենց հետևելն երթալնուն անօրէնութիւնը յիշուի. ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէր Եհովա։

17—Ու եղաւ որ քսանըհոթներորդ տարին, առաջին ամսուն առաջին *օր, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 18—Որդի մարդոյ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը իր զօրքը մեծ ծառայութեան գործածեց Տիւրոսի դէմ. ամէն գլուխ կնացաւ ու ամէն ուսին մաշը ելաւ. սակայն իրեն ու իր զօրքին հատուցում մը չեղաւ Տիւրոսի այն ծառայութեան համար զոր անոր դէմ բրաւ։ 19—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի երկիրը Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին պիտի տամ. ու անոր բազմութիւնը պիտի առնէ, և անոր կողոպուտը պիտի կողոպտէ, ու անոր աւարը պիտի յափշտակէ, և անիկա անոր զօրքին վարձք մը պիտի ըլլայ։ 20—Հոն ըրած գործին համար Եգիպտոսի երկիրը անոր տուի, վասն զի ինծի համար աշխատեցան, կ'ըսէ Տէր Եհովա։ 21—Այն օրը Իսրայէլի տանը եղջիւրը պիտի բուսցնեմ, ու անոնց մէջ բերան պիտի տամ, ու պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։

Գլ. Լ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ողացէք -- ըսէ, Ա՜ա՛խ, յո՜-րի օր. 3—վասն որ օրը մօտ է, Տէրոջը օրը մօտ է, անիկա ամպոտ օր է. ազգերուն ժամանակը պիտի ըլլայ։ 4—Ու Եգիպտոսի վրայ սուր պիտի գայ, ու Եթովպիոյի մէջ տատակ խռովութիւն պիտի ըլլայ, երբ Եգիպտոսի մէջ վիրաւորներ իյնան, և անոր բազմութիւնը պիտի առնեն, ու անոր հիմերը պիտի կործանին։ 5—Եթովպիացի, Փութացիք և Ղուդացիք ու բոլոր խառնիճամուճ ժողովուրդը և *Քուբացիք և ասոնց հետ երկրին որդիները անոնց հետ մեկտեղ սրով պիտի իյնան։ 6—Տէրը այսպէս կ'ըսէ. Եգիպտոսի օգնականներն ալ պիտի իյնան, ու անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի խոնարհի. Մագդոլէ մինչև Սուէնէ սրով պիտի իյնան անոր մէջ, կ'ըսէ Տէր Եհովա։ 7—Ու ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի ըլլան, և անոր քաղաքները կործանուած քաղաքներու մէջ պիտի ըլլան։ 8—Ու երբ Եգիպտոսի մէջ կրակ ձգեմ, ու անոր բոլոր օգնականները կտրին, պիտի գիտնան Թէ ես եմ Տէրը։ 9—Այն օրը իմ առջեւէս նաւերով գեսպաններ պիտի ելլեն, որպէս զի ապահով Քուշ մէջ եղող Եթովպացիները վախցնեն, և անոնց վրայ սաստիկ խռովութիւն պիտի ըլլայ Եգիպտոսի օրուանը պէս. վասն զի ահա կու գայ։

10—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Եգիպտոսի բազմութիւնն ալ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ձեռքով բնաջինջ պիտի ընեմ։ 11—Անիկա ու անոր հետ իր ժողովուրդը, ազգերուն բռնաւորները, երկիրը աւերելու պիտի բերուին. անոնք իրենց սուրերը Եգիպտոսի վրայ պիտի քաշեն, ու երկիրը սպաննուածներով պիտի լեցնեն։ 12—Ես ալ գետերը պիտի ցամքեցնեմ, ու երկիրը չարերուն ձեռքը պիտի մատնեմ. ու երկիրը և բոլոր անոր մէջ եղածը օտարներուն ձեռքով պիտի կործանեմ. ես Տէրս խօսեցայ։

13—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Կուռքերն ալ ալ բնաջինջ պիտի ընեմ, ու Մեմփիսի չաստուածները պիտի ոչնչացնեմ, ու մէյմըն ալ Եգիպտոսի երկրէն իշխան պիտի չըլլայ. ու Եգիպտոսի երկրին մէջ վախ պիտի դնեմ։ 14—Ու Պաթուրէսը աւերակ պիտի ընեմ, ու Տոյանիսը կրակի պիտի տամ, ու Նովի մէջ դատաստաններ ի գործ պիտի դնեմ։ 15—Ու Եգիպտոսի ամրութիւնը եղող Սինի վրայ իմ սրումութիւնս պիտի թափեմ, ու Նովի բազմութիւնը պիտի կտրեմ։ 16—Ու Եգիպտոսի մէջ կրակ պիտի ձգեմ. Սին՝ սաստիկ պիտի ցաւնապի, ու Նովի պատռտուքներ պիտի ըլլայ, և Մեմփիսի ցորեկով դէմերն իշխան Թահպանհէսը։ 17—Աւրեգ քաղաքին ու Բուբաստի կռիճները սրով պիտի իյնան, ու անոնց բնակիչները գերութեան պիտի երթան։ 18—Նաև Տափհնասի մէջ ցորեկը խաւար պիտի ըլլայ՝ երբ հոն Եգիպտոսի լուծերը կոտրեմ. ու հոն անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի ոչնչանայ. ամպիկ մըն պիտի ծածկէ, և անոր աղիկները գերութեան պիտի երթան։ 19—Այսպէս Եգիպտոսի մէջ դատաստաններ ի գործ

*Եբր. ուսը

*Կամ, Նուբիացիք

պիտի դնեմ, ու պիտի գիտանան Թէ ես եմ Տէրը։

20—Ու եղաւ որ մեռածներորդ տարին առաջին ամսուն, ամսուն եօթնին, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 21—Որդի մարդոյ, Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին բազուկը կոտրեցի. և ահա անիկա պիտի չկապուի, ոչ ալ անոր վրայ դեղերը ու կապերը դնելով զանիկա պիտի պաուեն, որ զօրանայ սուր բռնելու։ 22—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին դէմ եմ, ու անոր բազուկները պիտի կոտրեմ, Թէ՛ զօրաւորը և Թէ՛ կոտրածը, և սուրը անոր ձեռքէն վար ձգել պիտի տամ. 23—Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ։ 24—Ու Բաբելոնի Թագաւորին բազուկները պիտի զօրացնեմ և իմ սուրս անոր ձեռքը պիտի տամ. իսկ Փարաւոնի բազուկները պիտի կոտրեմ, ու անիկա անոր առջև ի մահ վիրաւորուածին հեծած Թիւնովը պիտի հեծէ։ 25—Ա՛յսպէս Բաբելոնի Թագաւորին բազուկները պիտի զօրացնեմ, ու Փարաւոնի բազուկները պիտի իյնան. ու երբ իմ սուրս Բաբելոնի Թագաւորին ձեռքը տամ, և ան ալ զանիկա Եգիպտոսի երկրին վրայ երկնցնէ, պիտի գիտանան Թէ ես եմ Տէրը։ 26—Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ, և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ, ու պիտի գիտանան Թէ ես եմ Տէրը։

Գլ. ԼԱ

Ու եղաւ որ մեռածներորդ տարին, երրորդ ամսուն, ամսուն առաջին օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին ու անոր բազմութեանը ըսէ, Դուն քու մեծութիւնովդ որո՞ւ կը նմանիս։ 3—Ահա Ասորեստանցին Լիբանանի մէջ եղող եղեւնի մը պէս էր, անոր ասիները գեղեցիկ, ու տերեւախիտ չաւաղիները հովանաւոր էին, ու հասակը բարձր էր, և անոր գլուխը *թխտ ճիւղերուն մէջ էր։ 4—Ջուրերը զանիկա մեծցուցին, անդունդները զանիկա բարձրացուցին, իրենց գետերը անոր անկուած տեղին բոլորտիքը կը պարապէին, ու իրենց վտակները դաշտին բոլոր ծառերուն կը զրկէին։ 5—Ա՛յս պատճառաւ անոր հասակը դաշտին բոլոր ծառերէն բարձր եղաւ, ու տարածուելով՝ ջուրերուն չաւաղներէն անոր ասիները չատցան և չաւաղիները երկնցան։ 6—Անոր ասիներուն վրայ երկինքի բոլոր թռչունները բոյն կը շինէին, ու չաւաղիներուն տակ դաշտի բոլոր գազանները կը ծնանէին, և անոր հովանիին տակ բոլոր մեծ ազգերը կը բնակէին։ 7—Ու իր մեծութիւնովը ու իր ասիներուն երկայնութիւնովը գեղեցիկ էր, վասն զի անոր արմատը չատ ջուրերու քով էր։ 8—Աստուծոյ դրախտին եղեւիններն զանիկա չէին ծածկեր, մայր ծառերը անոր ասիներուն չէին նմաներ, ու սօսիները անոր չաւաղիներուն պէս չէին. Աստուծոյ դրախտին մէջ բնաւ ծառ մը գեղեցկութեան կողմանէ անոր նման չէր։ 9—Զանիկա իր ասիներուն չատութիւնովը գեղեցիկ չիներ էի, ու Աստուծոյ դրախտին մէջ եղող Եդէմի բոլոր ծառերը անոր կը նախանձէին։

10—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ հասակով *բարձրացաւ ու գլուխը թխտ ճիւղերուն մէջ վերացուց, և իր սիրտը իր բարձրութիւնովը հպարտացաւ, 11—ես ալ զանիկա ազգերուն զօրաւորին ձեռքը տուի, որ անշուշտ անոր հաշուոյ պիտի բնէ. զանիկա իր չարութեանը համար քշեցի։ 12—Ու օտարները, ազգերուն բռնաւորները, զանիկա կտրեցին և զանիկա թողուցին. անոր ասիները լեռներու վրայ ու ամէն հովիտներու մէջ իյնան, և անոր չաւաղիները երկրին ամէն ձորերուն մէջ կոտրեցան, ու երկրի ամէն ժողովուրդները անոր հովանիին իյնան ու զանիկա թողուցին։ 13—Անոր ինկած ոտիերուն վրայ երկինքի բոլոր թռչունները պիտի բնակին, և անոր չաւաղիներուն վրայ դաշտի բոլոր գազանները պիտի ըլլան։ 14—Որպէս զի ջրաստն

*Կամ, ամպերու

*Եբր. բարձրացար

ծառերը բնաւ իրենց հասակին վրայ չհպարտանան. և իրենց գլուխը խիտ ճիւղերուն մէջ չվերցնեն, ու բոլոր ջրով *ոռոգուածները անոնց հպարտութեանը համար անոնց չյարին. վասն զի մահկանացուներուն մէջ անկուածներուն պէս գերեզմանը իջան։

15—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Գերեզմանը իջած օրը սուգ բրածնել տուի. անոր համար անդունդը ծածկեցի ու անոր գետերը արգիլեցի, և չատ ջուրեր արգիլեցան. ու անոր համար Լիբանանի սուգ հագցուցի, և անոր համար դաշտի բոլոր ծառերը թառամեցան։ 16—Երբ զանիկա գերեզմանները հետ գերեզմանը իջեցուցի, անոր կործանումին ձայնէն ազգերը դողացուցի. ու Եդէմի բոլոր ծառերը, Լիբանանի ընտիր ու գեղեցիկ *ծ—ը—ը, ամէն ջրով ոռոգուածները, գետնին տակերը մխիթարուեցան։ 17—Անոնք ալ անոր հետ՝ սրով սպանուածներուն քով գերեզմանը իջան, ու նաև անոր բազուկը եղողները՝ որոնք անոր հովանիին տակ ազգերուն մէջ կը նստեին։

18—Դուն այսպիսի փառքով ու մեծութեամբ որո՞ւ կը նմանիս Եդէմի ծառերուն մէջ. գուն Եդէմի ծառերուն հետ գետնին տակ պիտի նետուիս, սրով սպանուածներուն հետ անթլփատներուն մէջ պիտի պառկիս։ Փարաւոն ու անոր բոլոր բազմութիւնը այսպէս պիտի ըլլայ, կ'ըսէ Տէր Եհովա։

Գլ. ԼՒ

Ու եղաւ որ երկոտասաներորդ տարին, երկոտասաներորդ ամիսը, ամսուն առաջին օրը, Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին վրայ ողբ ըրէ ու անոր ըսէ,

Դուն ազգերու մէջ առյոգ առիւծի կը նմանիս,
Ու ծովերու մէջ վիշապի պէս ես.
Դուն գետերուդ վրայ կը յարձակիս,
Ու ոտքերովդ ջուրերը կը խառնես,
Ու անոնց գետերը կը պղտորես։

3—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.
Ես շատ ազգերու ժողովրդով
Իմ ցանցս քու վրադ պիտի տարածեմ,
Ու քեզ իմ ուռկանովս պիտի հանեմ,
4—Ու քեզ գետինը պիտի նետեմ,
Ու քեզ դաշտի երեսին վրայ պիտի ձգեմ,
Ու քու վրադ երկինքի բոլոր թռչունները պիտի իջեցնեմ,
Ու բոլոր երկրի գազանները քեզմէ պիտի կշտացնեմ.
5—Ու քու մարմինդ լեռներուն վրայ պիտի գնեմ,
Ու քու ցեղերովդ ձորերը պիտի լեցնեմ.
6—Ու քու լողացած երկիրդ մինչև լեռները
Ջու արիւնովդ պիտի ոռոգեմ,
Ու հեղեղատները քեզմէ պիտի լեցուին։
7—Ու երբ քեզ մարեմ՝ երկինքը պիտի ծածկեմ,
Ու անոր աստղերը պիտի խաւարեցնեմ.
Արեւը ամպով պիտի ծածկեմ,
Ու լուսինը իր լոյսը պիտի չտայ։
8—Քու վրադ երկինքի բոլոր լուսաւորները պիտի խաւարեցնեմ,
Ու քու երկրիդ վրայ մթութիւն պիտի բերեմ,
Կ'ըսէ Տէր Եհովա։
9—Ու երբ քու կործանումիդ լուրը
Ազգերուն ու քու չգիտցած երկիրներուդ հասցնեմ,
Շատ ժողովրդներու սիրտը պիտի խռովեցնեմ.
10—Ու քու պատճառուդ շատ ժողովրդներ պիտի ապշեցնեմ,
Ու քու պատճառուդ անոնց թագաւորները խիտ պիտի զարհուրին,
Երբ իմ սուրս անոնց երեսին առջև երերցնեմ.
Ու քու կործանումիդ օրը
Ամէն մարդ իր հոգիին համար ամէն վայրկեան պիտի սարսափի։
11—Քանզի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.
Բաբելոնի Թագաւորին սուրը քու վրադ պիտի գայ։
12—Քու բազմութիւնդ զօրաւորներուն սուրերովը վար պիտի ձգեմ,
Անոնց ամէնը ազգերուն բռնաւորներն են,

*Կամ, ուռգուած անոնց կռնիները իրենց հպարտութեանը մէջ հասատա չկենան

Ու անոնք եգիպտասի փառքը պիտի կազգանան,
Ու անոր բոլոր բազմութիւնը պիտի կորսուի։
13—Ես անոր բոլոր անաստուածները
Շատ յուսերու փալէն պիտի կորնչեմ։
Ու մէյմըն ալ մարդու ոտքը զանոնք պիտի չզպարնէ,
Անաստուածի կեզակներն ալ զանոնք պիտի չզպարնեն։
14—Այն ատեն անոնց յուսերը ականակա պիտի բնեմ,
Ես անոնց գեաղերը իզի պես պիտի քանդեմ,
Կ'ըսէ Տէր Եհովա,
15—երբ եգիպտասի երկիրը աւերակ դարձնեմ,
Ու երկիրը *բոլորովին մնայի մնայ,
Ո– երբ անոր բոլոր բնակիչները զարնեմ,
Ես պիտի գիանան թէ ես եմ Տէրը։
16—Այս օրն է զոր պիտի գուացին.
Զանիկա ազգերուն ազդիկները պիտի գուացեն,
Եգիպտասի վրայ ու անոր բոլոր բազմութեանը վրայ զանիկա պիտի գուացեն,
Կ'ըսէ Տէր Եհովա։
17—Ու եղաւ որ երկրաստանեցոց տարին, ամսուն տասնըհինգին, Տէրոջը խօսքը լինէի եղաւ՝ ըսելով,
18—Որդի մարդոյ, եգիպտասի բազմութեանը վրայ ողբա,
Ես զանիկա ու եբես ելի ազգերուն ազդիկները
Գուբը իջնողներուն հետ գետնին տակերը իջեցուր։
19—Դուն որմէ՞ գեզեցիկ ես.
Իջիր ու անթլփատներուն հետ պառկիլ։
20—Անոնք սրով սպաննուածներուն մէջ պիտի իյնան.
Անիկա սուրի տրուեցաւ.
Զանիկա ու անոր բոլոր բազմութիւնը քաշկռտեցէք։
21—Գեղեզմանին մէջէն զօրաւոր կըսրիճները
Անոր օգնութիւն ընդներուն հետ անոր պիտի գուացեն.
Անոնց սրով սպաննուած անթլփատները հոն իյած կը պառկին։
22—Ասոր ու իր բոլոր ժողովքը հոն են.
Անոր գեղեզմաններըը իր բոլորտիքն են.
Ամէնը սպաննուած՝ սրով ինկած են.
23—Որուն գեղեզմաններըը գուբին խոբանկ տեղերը տեղաւորուած են,
Ու անոր ժողովքը իր գեղեզմանին բոլորտիքն է.
Ամէնը սպաննուած՝ սրով ինկած են,
Անոնք որ կենդանիներուն երկրին մէջ վախ կու տային։
24—Եղամ ու իր բոլոր բազմութիւնը հոն անոր գեղեզմանին բոլորտիքն են.
Ամէնը սպաննուած՝ սրով ինկած են,
Ու գետնին տակերը անթլփատ իջան.
Անոնք որ կենդանիներուն երկրին մէջ իրենց վախը կու տային,
Սակայն գուբը իջնողներուն հետ իրենց ամօթը կը կրեն։
25—Սպաննուածներուն մէջ անկողին դրին անոր ու իր բոլոր բազմութեանը.
Անոր գեղեզմաններըը իր բոլորտիքն են.
Ամէնը սրով սպաննուած անթլփատներ են.
Թէպետև անոնք կենդանիներուն երկրին մէջ իրենց վախը կու տային,
Սակայն գուբը իջնողներուն հետ իրենց ամօթը կը կրեն.
Անիկա սպաննուածներուն մէջ դրուած է.
26—Մոսոք -- Թոբել և անոր բոլոր բազմութիւնը հոն են,
Անոր գեղեզմաններըը իր բոլորտիքն են.
Ամէնը սրով սպաննուած անթլփատներ են,
Թէպետև անոնք կենդանիներուն երկրին մէջ իրենց վախը կու տային,
27—Ու անոնք անթլփատներէն իյնող զօրաւորներուն հետ պիտի չպառկին,
Որոնք իրենց պատերազմական զէնքերովը գեղեզման իջան,
Ու իրենց սուրերը իրենց գլուխներուն տակ դրին.
Սակայն անոնց անօրէնութիւնները իրենց ոսկորներուն վրայ պիտի ըլլան,

*եբր. իր լեռութենէն

Թէև անոնք կենդանիներուն երկրին մէջ զօրաւորներուն ահարկութիւն եին,
28—Ես դուն անթլփատներուն մէջ պիտի կառուրես,
Ու սրով սպաննուածներուն հետ պիտի պառկիս։
29—Եդովմ, անոր թագաւորները ու բոլոր իշխանները հոն են,
Որոնք իրենց զօրութիւնովը սրով սպաննուածներուն հետ գրուած են.
Անոնք անթլփատներուն հետ
Ու գուբը իջնողներուն հետ կը պառկին։
30—Հիւսիսի բոլոր իշխանները և բոլոր Սիդոնացիք հոն են,
Որոնք սպաննուածներուն հետ իջան.
Անոնք իրենց ահարկութիւնովը իրենց զօրութենէն կ'ամչնան,
Ես անոնք սրով սպաննուածներուն հետ անթլփատ կը պառկին,
Ու գուբը իջնողներուն հետ իրենց ամօթը կը կրեն։
31—Փարաւոն զանոնք պիտի տեսնէ
Ես իր բոլոր բազմութեանը համար պիտի մխիթարուի,
Փարաւոն ու իր բոլոր զօրքը սրով սպաննուեցան,
Կ'ըսէ Տէր Եհովա։
32—*Զանոնք կենդանիներուն երկրին մէջ իմ վախս դրի,
Ես՝ անիկա անթլփատներուն մէջ սրով սպաննուածներուն հետ պիտի պառկի,
Ա֊յսինքն փարաւոն ու անոր բոլոր բազմութիւնը,
Կ'ըսէ Տէր Եհովա։

ԳԼ. ԼԲ

1Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, քու ժողովուրդիդ որդիներուն խօսէ ու անոնց ըսէ, Եթէ երկրի մը վրայ սուր բերեմ, ու այն երկրին ժողովուրդը իրենց միջէն մարդ մը ընտրեն ու զանիկա իրենց համար դէտ դնեն, 3—Ու անիկա այն երկրին վրայ սուրին գալը տեսնէ, և փողը հնչեցնէ ու ժողովուրդը զգուշացընէ. 4—Այն ատեն եթէ փողին ձայնը լսողը չզգուշանայ, և սուրը գայ՝ զանիկա վերցնէ, անոր արիւնը իր գլուխը պիտի ըլլայ։ 5—Անիկա փողին ձայնը լսեց ու չզգուշացաւ, անոր արիւնը իր վրայ պիտի ըլլայ. բայց զգուշացողը իր հոգին կ'ազատէ։ 6—Իսկ եթէ դէտը սուրին գալը տեսնէ և փողը չհնչեցնէ, ու ժողովուրդը չզգուշանայ, և սուրը գայ ու անոնցմէ հոգի մը վերցնէ, անիկա իր անօրէնութեանը համար վերցուեցաւ. բայց անոր արիւնը դէտին ձեռքէն պիտի պահանջեմ։
7—Ես դուն, որդի մարդոյ, քեզ Իսրայէլի տանը դէտ դրի, ու իմ բերնէս խօսք լսես և իմ կողմանէս զանոնք զգուշացնես։ 8—Երբ ամբարշտին ըսեմ Ով ամբարիշտ, անշուշտ պիտի մեռնիս, ու դուն ամբարիշտը իր ճամբային զգուշացնելու համար չխօսիս, այն ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ։ 9—Իսկ եթէ դուն ամբարիշտը իր ճամբային զգուշացնես, որպէս զի անկէ դառնայ, ու անիկա իր ճամբային չդառնայ, անիկա իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի, բայց դուն քու հոգիդ ազատած կ'ըլլաս։
10—Ես դուն, որդի մարդոյ, Իսրայէլի տանը ըսէ, Դուք այսպէս կը խօսիք ու կ'ըսէք, Մեր յանցանքները ու մեղքերը մեր վրայ են, ու մենք անոնց մէջ կը մաշինք, ուրեմն ինչպէս պիտի ապրինք։ 11—Անոնց ըսէ, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր, հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի. դարձէք, դարձէք ձեր չար ճամբաներէն, վասն զի ինչո՞ւ մեռնիք, ով Իսրայէլի տուն։
12—Ես դուն, որդի մարդոյ, քու ժողովուրդիդ որդիներուն ըսէ, Արդարին արդարութիւնը՝ անոր յանցանք ըրած օրը զանիկա պիտի չազատէ. ու ամբարշտին ամբարշտութիւնը՝ իր ամբարշտութենէն դարձած օրը իրեն գլորման պատճառ պիտի չըլլայ. ոչ ալ արդարը մեղք գործած օրը իր արդարութենէն պիտի կրնայ ապրիլ։ 13—Երբ

*կամ, Թէև կենդանիներուն երկրին մէջ անոր վախը դրի, Բայց

եւ արդարն ըսեմ քէ անչուշտ պիտի ապրի. ու անիկա իր արդարութեանը ապատինելով անօրէնութիւն ընէ, անոր բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի, հապա անիկա իր ըրած անօրէնութեանը մէջ պիտի մեռնի։ 14—Ու երբ ամբարիշտը իր ամբարշտութենէն դառնայ եւ իրաւունք ու արդարութիւն ընէ, անիկա անոնցմով պիտի ապրի. 20—Բայց դուք կ'ըսէք քէ Տէրոջը ճամբան ուղիղ չէ. ես ձեր ամէն մէկուն դատաստանը իր ճամբաներուն համեմատ պիտի տեսնեմ, ով Իսրայէլի տունը։

21—Ու եղաւ որ մեր գերութեանը երկոտասաներորդ տարին, տասներորդ ամսուն հինգերորդ օրը, Երուսաղէմէն ազատուածին մէկը ինծի եկաւ ու ըսաւ, Փախաքը զարնուեցաւ։ 22—Եւ այն առաւօտուածը չեմէի՝ իրիկուանը Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, ու իմ բերանս բացուէ մինչեւ որ առաւօտուն անիկա ինծի եկաւ, ու երբ բերանս բացուեցաւ՝ ալ համր չեղայ։

23—Ես Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 24—Որդի մարդոյ, այս Իսրայէլի երկրին աւերակներուն բնակիչները կը խօսին ու կ'ըսեն, Աբրահամ մէկ հոգի էր, ու երկիրը մեզի ժառանգութիւն տրուեցաւ։ 25—Անոր համար անոնց, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուք հոգը արիւնով կ'ուտէք, ու աչքերնիդ ձեր կուռքերուն կը վերցնէք, ու արիւն կը թափէք. ու երկիրը պիտի ժառանգէ՞ք։ 26—Դուք ձեր սուրերուն կ'ապաւինիք, պղծութիւն կ'ընէք, ու ամէն մէկդ իր ընկերին կինը կը պղծէ. ու երկիրը պիտի ժառանգէ՞ք։ 27—Անոնց այսպէս ըսես, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես կենդանի եմ՝ որ աւերակներուն մէջ եղողները սրով պիտի իյնան, ու դաշտին երեսը եղողները գազաններուն կերակուր ըլլալու պիտի տամ, և բերդերուն ու քարայրներուն մէջ եղողները ժանտախտով պիտի մեռնին։ 28—Ու երկիրը բոլորովին ամայի պիտի ընեմ, և անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի կոտրուի. Իսրայէլի լեռներն ալ ամայի պիտի ըլլան, և անոնց վրայէն անցնող պիտի չըլլայ։ 29—Ու երբ երկիրը բոլորովին ամայի ընեմ իրենց ըրած բոլոր գարշութիւններուն համար, պիտի գիտնան քէ ես եմ Տէրը։

30—Ես դուն, որդի մարդոյ, քու ժողովրդիդ որդիները պատերուն քով ու տուներուն դռները քու վրայովդ խօսակցութիւն կ'ընեն, և իրարու՝ ամէն մարդ իր եղբօրը կը զրուցէ ու կ'ըսէ, Հիմա եկէք ու լսեցէք քէ ինչ է ան, Տէրոջմէ ելած խօսքը։ 31—Անոնք ժողովրդին գալուն պէս քեզի կու գան, ու քու առջեւդ իմ ժողովրդիս պէս կը նստին, և քու խօսքերդ կը լսեն, բայց զանոնք չեն ըներ. վասն զի անոնք իրենց բերնովը հաճութիւն կը ձեւացնեն, բայց սիրտերնին իրենց ագահութեանը հետեւեն կ'երթայ։ 32—Ու ահա դուն անոնց՝ քաղցրաձայն ու հմուտ նուագածուի մը պէսորթեւի երգին պէս կաս. որոնք քու խօսքերդ կը լսեն, բայց զանոնք ի գործ չեն դներ։ 33—Սակայն երբ ասիկա ըլլայ, (ահա պիտի ըլայ) այն ատեն պիտի գիտնան քէ իրենց մէջ մարգարէ կար։

ԳԼ. ԼԴ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, Իսրայէլի հովիւներուն դէմ մարգարէութիւն ըրէ, մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ հովիւներուն. Վա՛յ Իսրայէլի հովիւներուն՝ որոնք

ինքզինքնին կ'արածեն. հովիւները հօսը արածելու չե՞ն։ 3—Դուք *ճարպը կ'ուտէք ու բուրդը կը հագնիք Ե գէրը կը մորթէք, Բայց հօսը չեք արածեր։ 4—Տկարները չամրացուցիք, ու հիւանդները չբժշկեցիք, և կոտրածը չկապեցիք, ու մոլորածը չդարձուցիք, և կորսուածը չփնտռեցիք. հապա բռնութիւնով ու խստութիւնով անոնց վրայ տիրեցիք։ 5—Ու անոնք հովիւ չունենալնուն համար ցրուեցան, ու ցրուելով դաշտի բոլոր գազաններուն կերակուր եղան։ 6—Իմ ոչխարներս ամէն լեռներու վրայ ու ամէն բարձր բլուրներու վրայ մոլորեցան, և իմ ոչխարներս բոլոր երկրի երեսին վրայ ցրուեցան, ու իրենց վրայ չկայ ու փնտռող չկայ։

7—Ասոր համար, ով հովիւներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք։ 8—Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որովհետեւ հովիւ չըլլալուն համար իմ հօտս յափշտակուեցաւ, ու իմ ոչխարներս դաշտի բոլոր գազաններուն կերակուր եղան, և իմ հովիւներս իմ ոչխարներս չփնտռեցին, ու հովիւները ինքզինքնին արածեցին ու իմ հօտս չարածեցին։ 9—Ասոր համար, ով հովիւներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք։ 10—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես հովիւներուն դէմ եմ, ու իմ ոչխարներս անոնց ձեռքէն պիտի պահանջեմ, և զանոնք ոչխար արածելէն պիտի արգիլեմ ու հովիւները ալ զիրենք պիտի չարածեն. ու իմ ոչխարներս անոնց բերնէն պիտի հանեմ, որպէս զի ալ անոնց կերակուր չըլլան։

11—Վասն զի Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես ինքզինքն իմ ոչխարներս պիտի խնդրեմ ու պիտի փնտռեմ. 12—ինչպես հովիւը, երբ իր ցրուած ոչխարներուն մէջ կը գտնուի, իր հօսը կը փնտռէ, այնպէս ես իմ ոչխարներս պիտի փնտռեմ ու պիտի ազատեմ զանոնք ամէն տեղերէն, ուր ամպի ու մառախուղի օրը ցրուեցան։ 13—Ու զանոնք ժողովուրդներէն պիտի հանեմ, ու զանոնք երկիրներէն պիտի ժողվեմ, ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ, և զանոնք Իսրայէլի լեռներուն վրայ, ձորերու մէջ ու երկրին ամէն բնակուելու տեղերը պիտի արածեմ. 14—Զանոնք ազէկ արօտի մէջ պիտի արածեմ, ու անոնց փարախը Իսրայէլի բարձր լեռներուն վրայ պիտի ըլլայ. հոն ազէկ փարախի մէջ պիտի պառկին, ու Իսրայէլի լեռներուն վրայ պարարտ արօտի մէջ պիտի արածին։ 15—Իմ ոչխարներս ես պիտի արածեմ ու զանոնք ես պիտի պառկեցնեմ, կ'ըսէ Տէր Եհովա։ 16—Կորսուածը պիտի փնտռեմ ու մոլորածը պիտի դարձնեմ, և կոտրածը պիտի փաթթեմ ու հիւանդը պիտի ուժովցնեմ, բայց պարարտ ու զօրաւորը պիտի կորնչեցնեմ. զանոնք իրաւունքով պիտի արածեմ։

17—Ու դուք, ով իմ ոչխարներս, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես ոչխարին ու ոչխարին, խոյերուն ու նոխազներուն մէջ դատաստան պիտի ընեմ։ 18—Մինչեւ ազէկ արօտի մէջ արածելը քիչ բան է ձեզի. որ ձեր արօտներուն մնացորդը ձեր ոտքերով կը կոխէք, ու մաքուր ջուրերն ալ խմելէ՞ որ մնացածները ձեր ոտքերով կը պղտորէք։ 19—Ու իմ ոչխարներս ձեր ոտքերուն կոխածը կը ճարակեն, ու ձեր ոտքերնէն պղտորածը կը խմեն։

20—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ անոնց. Ահա ես ինքզինքն դատաստան պիտի ընեմ պարարտ ոչխարին ու նիհար ոչխարին մէջտեղ։ 21—Որովհետեւ դուք ձեր կողով և ուսով հրեցիք, ու ձեր եղջիւրներով բոլոր տկարները զարկիք, մինչեւ որ դուրսը ցրուեցիք զանոնք, 22—ես ալ իմ ոչխարներս պիտի ազատեմ, ու մէկմէկ ալ պիտի չյափշտակուին, և ոչխարին ու ոչխարին մէջտեղ դատաստան պիտի ընեմ։ 23—Ու անոնց վրայ հովիւ մը, այսինքն իմ ծառաս Դաւիթը, պիտի կեցնեմ, որպէս զի զանոնք հովուէ. անիկա պիտի հովուէ զանոնք, և անիկա պիտի ըլլայ անոնց հովիւը։ 24—Ու ես Տէրս անոնց Աստուած պիտի ըլլամ, և իմ ծառաս Դաւիթ անոնց մէջ իշխան պիտի ըլլայ. ես Տէրս խօսեցայ։ 25—Ու անոնց հետ խաղաղութեան ուխտ մը պիտի ընեմ, ու այն երկրէն չար գազանները բնաջինջ

*կամ, կաթը

պիտի ընեմ. և անապատին մէջ ապահովութեամբ պիտի բնակին, ու անտառներուն մէջ պիտի քնանան։ 26—Ես զանոնք ու իմ լեռանս չրջակայ տեղերը օրհնութիւնով պիտի ընեմ, ու անձրեւները իրենց ժամանակին պիտի իջեցնեմ. անոնք օրհնութեան անձրեւներ պիտի ըլլան։ 27—Ու գաշտի ծառերը իրենց պտուղը պիտի տան, ու երկիր իր բերքը պիտի տայ, և անոնք իրենց երկրին վրայ ապահովութեամբ պիտի բնակին. ու երբ անոնց լուծին կապերը կոտրեմ, ու զանոնք իրենց ծառայեցնողներուն ձեռքին ազատեմ, պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։ 28—Ես անոնք մէկմէկու ալ ապրելն պիտի չյափշտակուին, ու երկրի գազանները զանոնք պիտի չուտեն. այլ ապահովութեամբ պիտի բնակին, ու վախցնող մը պիտի չըլլայ։ 29—Ես անոնց անուանի տունկ մը պիտի բուսցնեմ, ու մէկմէն ալ երկրին վրայ սովամահ պիտի չպատահին, ու մէկմէն ալ ազգերէն նախատինք պիտի չկրեն։ 30—Ես պիտի գիտնան թէ ես, անոնց Տէր Աստուածը, անոնց հետ եմ, ու անոնք իսրայէլի տունը իմ ժողովուրդս են, կ'ըսէ Տէր Եհովա։

31—Ու դուք, իմ ոչխարներս, իմ արօտիս ոչխարները, մարդիկ էք, ես ձեր Աստուածն եմ, կ'ըսէ Տէր Եհովա։

Գլ. Լե

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երեսդ Սէիր լեռանը վրայ դարձուր ու անոր դէմ մարգարէութիւն ըրէ, 3—ու անոր ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Սէիր լեռ, ու իմ ձեռքս քու վրադ պիտի երկնցնեմ, ու քեզ բոլորովին ամայի պիտի ընեմ. 4—Քու քաղաքներդ աւերակ պիտի ընեմ, և դուն ամայի պիտի ըլլաս, ու պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը։

5—Որովհետեւ դուն հինաւուրց ատելութիւն ունեցար, ու իսրայէլի որդիները, անոնց պատուհասին ժամանակին, անօրէնութեան ժամանակին լրանալուն, սուրին ձեռքը մատնեցիր, 6—Անոր համար ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ քեզ արեան մէջ պիտի դնեմ, և արիւնը քեզ պիտի հալածէ. դուն արիւնը չատելուդ համար՝ արիւնը քեզ պիտի հալածէ։ 7—Ու Սէիր լեռը բոլորովին ամայի պիտի ընեմ, և անկէ անցնողը ու դարձողը պիտի կտրեմ։ 8—Ու անոր լեռները իր սպանուածներովը պիտի լեցնեմ. քու բլուրներուդ վրայ, քու հովիտներուդ մէջ ու բոլոր ձորերուդ մէջ սրով սպանուածներ պիտի իյնան։ 9—Քեզ մշտնջենաւոր ամայութիւն պիտի ընեմ, և քու քաղաքներդ դէրջեր պիտի չըլլան։ Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։

10—Որովհետեւ դուն ըսիր թէ Այս երկու ազգը ու այս երկու երկիրը ինծի պիտի ըլլան, ու անոնց պիտի տիրենք. (ու Տէրը հոն էր.) 11—Անոր համար, ես կենդանի եմ, կ'ըսէ Տէր Եհովա, որ քու թշնամութիւնովդ անոնց դէմ ի գործ դրած բարկութեանդ ու նախանձովդ չափովը հատուցում պիտի ընեմ, և քու դատաստանդ տեսած ատենս անոնց մէջ պիտի ճանչցուիմ։ 12—Ու պիտի գիտնաս որ ես Տէրս լսեցի քու բոլոր հայհոյութիւններդ, զորոնք Իսրայէլի լեռներուն դէմ խօսեցար՝ ըսելով, Անոնք աւերակ եղան, անոնք մեզի կերակուր տրուեցան. 13—Ու ձեր բերնովը ինծի դէմ հպարտացաք, ու խօսքերնիդ ինծի դէմ չատցուցիք, ես ալ լսեցի։

14—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Բոլոր երկրին ուրախութեան ատենը քեզ ամայի պիտի ընեմ։ 15—Ինչպէս դուն իսրայէլի տանը ժառանգութեանը վրայ ուրախացար՝ որ ամայի եղաւ, քեզի ալ այնպէս պիտի ընեմ. դուն, ով Սէիր լեռ ու բոլոր Եդոմ, բոլորովին ամայի պիտի ըլլաս. ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

Գլ. Լզ

Եւ դուն, որդի մարդոյ, իսրայէլի լեռներուն մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Ով իսրայէլի լեռներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք. Տէր Եհովա այսպէս կ'ըսէ.

*կամ, չնորոգուին

2—Որովհետեւ թշնամին ձեզի համար ըսաւ, Վա՛շ, յաւիտենական բլուրներն ալ մեզի ժառանգութիւն եղան, 3—Անոր համար մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ ձեզ աւրիցին, ու ամէն կողմէն կլլեցին, այնպէս որ ձեզմէ անցնողը ու դարձողը պիտի կարենայ։ 4—Ու անոր լեռները իր սպանուածներովը պիտի լեցնեմ. քու բլուրներուդ վրայ, քու հովիտներուդ մէջ ու բոլոր ձորերուդ մէջ սրով սպանուածներ պիտի իյնան։ 5—Քեզ մշտնջենաւոր ամայութիւն պիտի ընեմ, և քու քաղաքներդ հէրջեր պիտի չըլլան։ Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։

6—Անոր համար իսրայէլի երկրին վրայ մարգարէութիւն ըրէ, և լեռներուն ու բլուրներուն, ձորերուն ու հովիտներուն ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուք ազգերէն նախատինք կրելնուդ համար՝ ահա ես իմ նախանձովս ու իմ բարկութիւնովս խօսեցայ։ 7—Անոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ես իմ ձեռքս վերցուցի՝ որ ձեր բոլորտիքը եղող ազգերը իրենց անարգանքը իրենք պիտի կրեն։ 8—Բայց դուք, ով իսրայէլի լեռներ, ձեր ոստերը պիտի երկնցնէք, ու իմ ժողովուրդիս իսրայէլի համար ձեր պտուղները պիտի բերէք, վասն զի անոնք մտերս պիտի գան։ 9—Քանզի ահա ես ձեր կողմն եմ ու ձեզի պիտի դառնամ, և դուք պիտի մշակուիք ու պիտի սերմնանուիք. 10—Ու ձեր վրայ մարդիկ, բոլոր իսրայէլի տունը, ամէնը պիտի չատցնեմ. ու քաղաքները պիտի բնակուին և աւերակները պիտի չինուին։ 11—Ու ձեր վրայ մարդը ու անասունը պիտի չատցընեմ, և անոնք պիտի չատնան ու պտղաբեր պիտի ըլլան. և ձեր առաջուան կացութեանը պէս ձեզ պիտի բնակեցնեմ, ու ձեր առաջուան վիճակէն աւելի աղէկ պիտի ընեմ չէ՛. ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։ 12—Ես ձեր վրայ մարդիկ, իմ ժողովուրդս իսրայէլը, պիտի պտրտցնեմ, ու անոնք քեզ պիտի ժառանգեն, և դուն անոնց ժառանգութիւնը պիտի ըլլաս, ու մէկմէն ալ զանոնք *պիտի չպատառես։

13—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Որովհետեւ ձեզի համար կ'ըսեն թէ Դուն մարգկերը երէներ մեռն ես, քու ազգերդ ապառեցիր։ 14—Անոր համար մէկմէն ալ մարդ պիտի չուտես, ու մէկմէն ալ քու ազգերդ պիտի չպատառես, կ'ըսէ Տէր Եհովա։ 15—Ու քու մէջդ մէկմէն ալ ազգերուն նախատինքը լսել պիտի չտամ, ու մէկմէն ալ ժողովուրդներուն անարգանքը պիտի չկրես, և քու ազգերդ մէկմէն ալ պիտի չպատառես, կ'ըսէ Տէր Եհովա։

16—Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 17—Իսրայէլի տունը իրենց երկրին մէջ բնակեցան, և զանիկա իրենց ճամբայովը ու գործերովը պղծեցին. անոնց ճամբան իմ առջեւս դաշտանաւոր կնոջ անմաքրութեանը պէս եղաւ։ 18—Ուստի իմ բարկութիւնս անոնց վրայ թափեցի այն արիւնին համար՝ զոր իրենք թափեցին երկրին վրայ, ու զանիկա իրենց կուռքերովը պղծեցին. 19—Ու զանոնք ազգերուն մէջ ցրուեցի, ու երկիրներուն մէջ ցիրուցան եղան. զանոնք իրենց ճամբուն ու գործերուն համեմատ դատեցի։ 20—Ու իրենց գացած ազգերուն մէջ երթալուն պէս՝ իմ սուրբ անունս պղծեցին, երբ իրենց համար բսուեցաւ թէ Անոնք Եհովայի ժողովուրդն են, ու անոր երկրէն ելան։ 21—Սակայն ես խնայեցի իմ սուրբ անուանս համար, զոր իսրայէլի տունը իրենց մտած ազգերուն մէջ պղծեցին։

22—Անոր համար իսրայէլի տանը բսէ որ Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ոչ թէ ձեզի համար կ'ընեմ *ասիս, ով իսրայէլի տուներ, հապա իմ սուրբ անուանս համար զոր դուք ձեր մտած ազ-

*Եբր. անզաւակ պիտի չքնես

գերբուն մէջ պղծեցէք։ 23—Եւ սա՛ր պիտի ընեմ իմ մեծ անունս, որ ազգերուն մէջ պղծուեցաւ, զոր դուք անոնց մէջ պղծեցիք. ու ազգերը պիտի գիտնան թէ ես եմ Տէրը, կ'ըսէ Տէր Եհովա, երբ անոնց աչքերուն առջև ձեր մէջ սրբուիմ։ 24—Եւ ձեզ ազգերէն պիտի առնեմ ու ամէն երկիրներէն ձեզ պիտի ժողվեմ, ու ձեզ ձեր երկիրը պիտի բերեմ, 25—Եւ ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ, ու պիտի մաքրուիք. ձեր բոլոր պղծութիւններէն ու ձեր բոլոր կռապերէն ձեզ պիտի մաքրեմ. 26—Եւ ձեզի նոր սիրտ պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ, և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ. 27—Եւ իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու ձեզի իմ օրէնքներուս մէջ քալել պիտի տամ, ու իմ իրաւունքներս պիտի պահէք ու ի գործ դնէք. 28—Եւ ձեր հայրերուն տուած երկրիս մէջ պիտի բնակիք, ու դուք ինծի ժողովուրդ պիտի ըլլաք, ես ալ ձեզի Աստուած պիտի ըլլամ։ 29—Եւ ձեր բոլոր պղծութիւններէն ձեզ պիտի ազատեմ, ու ցորենը պիտի կանչեմ և զանիկա պիտի չաճցնեմ, ու ձեր վրայ սով պիտի չբերեմ։ 30—Եւ ծառերուն պտուղը ու արտերուն բերքը պիտի չաճցնեմ, որպէս զի ազգերուն մէջ սովի նախատինք չկրէք։ 31—Ու ձեր գէշ ճամբաներդը և անբարի գործերը պիտի յիշէք, ու ձեր անօրէնութիւններուն համար և ձեր պղծութիւններուն համար դուք ձեր անձերէն պիտի զզուիք, 32—Ոչ թէ ձեզի համար կ'ընեմ ասիկա, կ'ըսէ Տէր Եհովա, ձեզի յայտնի ըլլայ. ձեր ճամբաներէն ամչցէք ու պատահեցէք, ով Իսրայէլի տունը։

33—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այն օրը որ ձեր բոլոր անօրէնութիւններէն ձեզ մաքրեմ, քաղաքները մարդաբնակ պիտի ընեմ, ու աւերակները պիտի շինուին։ 34—Եւ այն ամայացած երկիրը, որ անցնողին աչքերուն առջև ամայի ըլլալուն տեղ, պիտի մշակուի։ 35—Ու պիտի ըսեն, Այս ամայացած երկիրը Եդեմի դրախտին պէս եղաւ. և աւերակ, ամայի ու փլած քաղաքները պարսպաւոր ու մարդաբնակ եղան։ 36—Ու ձեր բոլորտիքը մնացած ազգերը պիտի գիտնան թէ ես Տէրս փլածները կը շինեմ, — ամայացած երկիրը կը տնկեմ. ես Տէրս խօսեցայ ու պիտի կատարեմ։

37—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Իսրայէլի *տանը խնդրուածքը ա՛լ պիտի ընդունեմ՝ որպէս զի անոնց ասիկա ընեմ, անոնց մարդիկը հօտի պէս պիտի չաճցնեմ։ 38—Սուրբ հօտին պէս, երուսաղէմի հնդիսաւոր տօներուն հօտին պէս, աւերուած քաղաքները մարդոց հօտերով այնպէս լեցուն պիտի ըլլան. ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԷ

Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, և †Տէրը զիս Հոգիով՝ հանեց ու զիս դաշտին մէջ դրաւ, և անիկա ոսկորներով լեցուն էր։ 2—Ու զիս անոնց քովէրնէն պտըտցուց չորլնանակի և ահա անոնք դաշտին երեսին վրայ խիստ շատ էին, և ահա անոնք խիստ չորցած էին։

3—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս ոսկորները կրնա՞ն կենդանանալ։ ես ըսի, Ով Տէր Եհովա, դուն գիտես։ 4—Ես ինծի ըսաւ, Այս ոսկորներուն վրայ մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ, Ով չորցած ոսկորներ, Տէրոջը խօսքը մտիկ ըրէք։ 5—Այսպէս կ'ըսէ Տէր Եհովա այս ոսկորներուն. Ահա ես ձեր մէջ հոգի պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք։ 6—Ես ձեր վրայ ջիղեր պիտի դնեմ, ու ձեզ միսով պիտի պատեմ, ու ձեզ մորթով պիտի ծածկեմ, և ձեր մէջ հոգի պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. և պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։

7—Ու ես մարգարէութիւն ըրի ինչպես ինծի հրամայուեցաւ. ու մարգարէութիւն ըրածիս պէս ձայն մը եղաւ. և ահա շարժում մը եղաւ, ու ոսկորները էրթ-ռա՛ մտացան՝ ոսկորը իր ոսկորին։ 8—Ես տեսայ որ ահա անոնք ջիղերով ու միսով պատեցան, ու վրայէն մորթով ծածկուեցան, բայց անոնց մէջ հոգի չկար։

9—Այն ատեն ինծի ըսաւ, Նաւնէին մարգարէութիւն ըրէ, մարգարէութիւն ըրէ, որդի մարդոյ, ու նաւնէին ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ով չունչ, չորս հովերէն եկար, ու այս սպանեալներուն վրայ փչէ որպէս զի կենդանանան։ 10—Ես ես մարգարէութիւն ըրի՝ ինչպէս ինծի հրամայեց, ու չունչը անոնց մէջ մտաւ, ու կենդանացան և իրենց ոտքերուն վրայ կայնեցան, — խիստ մեծ զօրք մը էր—։

11—Ու ինծի ըսաւ, Որդի մարդոյ, այս ոսկորները բոլոր Իսրայէլի տունն են. ահա անոնք կ'ըսեն, Մեր ոսկորները չորցան ու մեր յոյսը կորսուեցաւ. մենք կտրուած ենք։ 12—Անոր համար մարգարէութիւն ըրէ ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր գերեզմանները պիտի բանամ, ու ձեր գերեզմաններէն ձեզ պիտի հանեմ, ով իմ ժողովուրդս, և ձեզ Իսրայէլի երկիրը պիտի բերեմ։ 13—Ու երբ ձեր գերեզմանները բանամ, ու ձեզ ձեր գերեզմաններէն հանեմ, ով իմ ժողովուրդս, պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։ 14—Ես իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. ու ձեր երկրին մէջ ձեզ պիտի հանգստացնեմ, ու պիտի գիտնաք *որ ես Տէրս խօսեցայ ու րրի՛, կ'ըսէ Տէրը։

15—Ես Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 16—Ու դուն, որդի մարդոյ, քեզի փայտ մը առ ու անոր վրայ գրէ, Ցուդայի համար ու անոր ընկերներուն, Իսրայէլի որդիներուն համար. ետքը ուրիշ փայտ մը առ ու անոր վրայ գրէ, Յովսէփի համար, Եփրեմի ու անոր ընկերներուն բոլոր Իսրայէլի տանը փայտը. 17—Ու զանոնք իրարու մօտեցուր, որպէս զի մէկ փայտ ըլլան ու քու ձեռքիդ մէջ միանան։ 18—Ու երբ քու ժողովուրդիդ որդիները քեզի խօսին ու ըսեն, Ի՞նչ պիտի ըլլան քեզի այս բաները. մեզի չե՞ս պատմեր։ 19—Անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես պիտի առնեմ Յովսէփի փայտը որ Եփրեմի ձեռքն է, ու անոր ընկերները, Իսրայէլի ցեղերը, և զանոնք անոր հետ միկտեղ Ցուդայի փայտին հետ պիտի դնեմ, ու զանոնք մէկ փայտ պիտի ընեմ. ու իմ ձեռքս մէջ մէկ պիտի ըլլան։ 20—Ու այն փայտերը, որոնց վրայ գուն պիտի գրես, անոնց աչքերուն առջև քու ձեռքիդ մէջ ըլլան։ 21—Ու անոնց ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես Իսրայէլի որդիները պիտի առնեմ այն ազգերուն մէջէն՝ ուր գացին, ու զանոնք ամէն կողմէն պիտի ժողվեմ, ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ. 22—Ու զանոնք երկրին մէջ Իսրայէլի լեռներուն վրայ մէկ ազգ պիտի ընեմ, ու անոնց ամէնուն վրայ մէկ թագաւոր պիտի թագաւորէ. ու մէկմէն ալ երկու ազգ պիտի չըլլան, ու մէկմէն ալ երկու թագաւորութեան պիտի չբաժնուին. 23—Ու մէկմէն ալ իրենց կռապերովը ու գարշութիւններովը ու իրենց բոլոր յանցանքներովը պիտի չպղծուին. ու ես զանոնք պիտի ազատեմ իրենց բոլոր բնակութիւններէն՝ որոնց մէջ իրենք մեզ գործեցին, և զանոնք պիտի սրբեմ. ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան, ես ալ անոնց Աստուած պիտի ըլլամ։ 24—Ու անոնց վրայ իմ ծառաս Դաւիթ թագաւոր պիտի ըլլայ, ու ամէնը մէկ հովիւ պիտի ունենան. և իմ իրաւունքներուս մէջ պիտի քալեն, ու իմ օրէնքներս պիտի պահեն ու զանոնք պիտի կատարեն. 25—Ու պիտի բնակին այն երկրին վրայ զոր իմ ծառայ Յակոբ տուի, որուն մէջ ձեր հայրերը բնակեցան. ու անոր վրայ իրենք ու իրենց որդիները և իրենց որդւոց որդիները յաւիտեան պիտի բնակին. ու իմ ծառաս Դաւիթ յաւիտեան անոնց իշխան պիտի ըլլայ։ 26—Ու անոնց հետ խաղաղութեան ուխտ պիտի ընեմ, անիկա անոնց յաւիտենական ուխտ պիտի ըլլայ. և զանոնք պիտի տեղաւորեմ ու պիտի չաճցնեմ, և իմ սրբարանս անոնց մէջ պիտի դնեմ յաւիտեան. 27—Ու իմ խորանս անոնց քով պիտի ըլլայ. և ես անոնց Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան։ 28—Ու իմ սրբարանս յաւիտեան անոնց մէջ ըլլալով ազգերը պիտի գիտնան թէ ես եմ Տէրը որ Իսրայէլը կը սրբեմ։

---

*ՆԲՔ. տուներէն ա՛լ պիտի փնտռուիմ տես. գլ. ԺԶ. 3։

†ԿՍՖ, Տէրոջը Հոգիով զիս

*ԿՍՖ, թէ ես եմ Տէրը. ես խօսեցայ, ու պիտի կատարեմ

ԳԼ. ԼԸ

Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, 2—Որդի մարդոյ, երեսդ Մագոգի երկիրը եղող Ռոսի, Մոսոքի ու Թոբէլի իշխանին Գոգի դարձուր, և անոր վրայով մարգարէութիւն ըրէ, 3—ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Գոգ, Ռոսի, Մոսոքի ու Թոբէլի իշխան. 4—ու քեզ պիտի դարձնեմ, և քու կզակներուդ կարթեր պիտի անցնեմ, ու քեզ ու քու բոլոր զօրքդ պիտի հանեմ, ձիերը ու ձիաւորները, ամէնն ալ կատարելապէս հագած. ե վահանաւորներուն ու սպառազէնները մեծ ժողովքը՝ ամէնն ալ սուր բռնող. 5—Անոնց հետ Պարսիկները, Եթովպացիները ու Փութացիները, ամէնն ալ ասպարաւոր ու սաղարաւոր. 6—Նաե Գոմեր ու անոր բոլոր գունդերը, Թորգոմայի տունը հիւսիսի ծայրերէն, ու անոր բոլոր գունդերը, շատ ժողովուրդներ, քեզի հետ ղէրէ հոնէ։

7—Պատրաստ եղիր, և քեզ ու քու բոլոր ժողոված բոլոր ժողովներդ պատրաստէ, ու դուն անոնց պահապան եղիր։ 8—Շատ օրերէն ետքը՝ քու զօրքերդ պիտի հասնին. ետքի տարիները պիտի գաս այն երկիրին վրայ որ սուրէն ազատուած է, և այն ժողովուրդին վրայ որ շատ ազգերէն ժողովուած է Իսրայէլի լեռներուն վրայ, որոնք միտնիներուց ետևակ եղեն. բայց անկիս ազգերէն ելած բլլալով, ամէնը ապահով թնակած պիտի բնակին։ 9—Իսկ դուն պիտի կու պիտի գաս, ու երկիրը ծածկելու համար ամպի պէս պիտի բլլաս, դուն և քու բոլոր գունդերդ ու շատ ժողովուրդներ քեզի հետ։

10—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այն օրը պիտի բլլայ որ քու միտքդ բաներ պիտի գան, ու չար խորհուրդ մը պիտի մտածես։ 11—Ու պիտի ըսես, Անպարիսպ գեղերուն երկիրը կելլամ, հանդարտ թնակողներուն, ապահովաթնակած բնակողներուն, ամէնքն ալ անպարիսպ ու դռներ չունին. 12—Որպէս զի աւար յափշտակես և կողոպտես կողոպտես, և քու ձեռքդ՝ բնակուած աւերակներուն վրայ ու ազգերէն ժողոված՝ հասկներ և ապրանք ստացած՝ երկրին բարձր տեղերը բնակած ժողովուրդին վրայ դարձնես։ 13—Սաբա ու Դեդան և Թարսիսի վաճառականները ու անոր բոլոր առիւծները քեզի պիտի ըսեն. Միթէ աւար յափշտակելու եկաք. կողոպտելու համար քու ժողովդ ժողվեցիր, որպէս զի արծաթ ու ոսկի վերցնես, խաշինք ու ապրանք առնես, մեծ աւար յափշտակես։

14—Անոր համար մարգարէութիւն ըրէ, որդի մարդոյ, ու Գոգի ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Այն օրը որ իմ ժողովուրդս Իսրայէլ ապահով թնակի՝ ասոր գուն պիտի գիտնաս, 15—Ու քու տեղէդ, հիւսիսի ծայրերէն, պիտի գաս, դուն ու քեզի հետ շատ ժողովուրդներ՝ ամէնը ձիեր հեծած, մեծ բազմութեամբ ու շատ զօրքով։ 16—Ու իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ ամպի պէս երկիրը ծածկելու պիտի գաս. վերջին օրերը պիտի բլլայ, ու քեզ իմ երկրիս վրայ պիտի բերեմ, որպէս զի ազգերը զիս ճանչնան երբ ես անոնց աչքերուն առջև քու վրայ *ծանաւորուիմ, ով Գոգ։

17—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Դուն անիկա՞ ես, որ քեզի համար առաջուան օրերը, այն օրերը՝ տարիները մարգարէութիւն ընող Իսրայէլի մարգարէներուն, իմ ծառաներուս, միջոցով ըսի թէ քեզ անոնց վրայ պիտի բերեմ, 18—Ու այն օրը, Գոգի Իսրայէլի երկրին վրայ եկած օրը, կ'ըսէ Տէր Եհովա, իմ սրամտութիւնս †երեսս պիտի ելլէ։ 19—Ե իմ նախանձովս, իմ բարկութեանս կրակովը, խօսեցայ, որ այն առեն անշուշտ Իսրայէլի երկրին վրայ մեծ խռովութիւն պիտի բլլայ։ 20-Ու ծովու ձուկերը ու երկինքի թռչունները և դաշտի գազանները ու գետնի վրայ սողացող բոլոր սողուններն ու երկրի երեսին վրայ եղող բոլոր մարդիկը իմ երեսէս պիտի խռովին. և լեռները պիտի փլչին, ու գահավէժ ժայռերը պիտի իյնան, ու բոլոր պարիսպները գետինը պիտի իյնան։ 21—Ու անոր դէմ իմ բոլոր լեռներուս վրայ սուր պիտի կանչեմ, կ'ըսէ Տէր Եհովա. մարդուն սուրը իր եղբօրը վրայ պիտի բլլայ։ 22—Ե անոր հետ ժանտախտով ու արիւնով պիտի վիճիմ, և անոր վրայ ու անոր զբօսնողներուն վրայ ու անոր հետ եղող շատ ժողովուրդներուն վրայ յորդառատ անձրև ու կարկուտի քարեր, կրակ ու ծծումբ պիտի տեղամ։ 23—Ու շատ ազգերու առջև պիտի փառաւորուիմ ու սրբութիմ և ճանչցուիմ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԹ

Ե դուն, որդի մարդոյ, Գոգի վրայով մարգարէութիւն ըրէ ու ըսէ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ով Գոգ, Ռոսի, Մոսոքի ու Թոբէլի իշխան. 2—Ու ես քեզ պիտի դարձնեմ, քեզ պիտի առնիմ և հիւսիսի ծայրերէն քեզ պիտի հանեմ, ու քեզ Իսրայէլի լեռներուն վրայ պիտի բերեմ, 3—Ու քու աղեղդ քու ձախ ձեռքէդ վար պիտի ձգեմ, ու քու նետերդ ալ ձեռքէդ վար պիտի նետեմ։ 4—Դուն քու բոլոր գունդերովդ ու քեզի հետ եղող ժողովուրդներով Իսրայէլի լեռներուն վրայ պիտի իյնաս. քեզ ամէն տեսակ թռչ ունեցող գիշատիչ թռչունին ու դաշտի գազաններուն կերակուր պիտի տամ։ 5—Դաշտի երեսին վրայ պիտի իյնաս, վասն զի ես խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովա։ 6—Ու Մագոգի վրայ ու կղզիներուն մէջ ապահովութեամբ բնակողներուն վրայ կրակ պիտի ղրկեմ, ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։ 7—Ու իմ սուրբ անունս իմ ժողովուրդիս Իսրայէլի մէջ պիտի ծանչցնեմ. ու պիտի չթողուիմ որ մէյ մըն ալ իմ սուրբ անունս պղծուի. ազգերը պիտի գիտնան թէ ես եմ Տէրը, Իսրայէլի մէջ եղող Սուրբը։ 8—Ահա կու գայ, ու պիտի կատարուի, կ'ըսէ Տէր Եհովա, իմ ըսած օրս ասիկա է։ 9—Ու Իսրայէլի քաղաքներուն բնակիչները պիտի ելլեն, ու կրակ պիտի վառեն, ու զէնքերը պիտի այրեն. և ասպարներով, վահաններով, աղեղներով, նետերով, բիրերով ու նիզակներով հօրը սուրէ կրակ պիտի վառեն։ 10—Ու գաշէն վայտ պիտի չբերեն, ոչ ալ անտառներէն պիտի կտրեն, հապա զէնքերով կրակ պիտի վառեն. ու գիրենք թալանողները պիտի թալլեն, ու գիրենք կողոպտողները պիտի կողոպտեն, կ'ըսէ Տէր Եհովա։

11—Ու պիտի բլլայ որ այն օրը հոն Իսրայէլի մէջ Գոգի գերեզմանի տեղ պիտի տամ անցաւորաց ձորը՝ ծովուն արեւելեան կողմէն. և անիկա անցաւորները պիտի արգիլէ, ու հոն Գոգը ու անոր բոլոր բազմութիւնը պիտի թաղեն, և ձորը՝ Գոգի բազմութեան ձորը պիտի կոչեն։ 12—Ու Իսրայէլի տունը երկիրը մաքրելու համար հօրը ամիս զանազ պիտի թաղեն։ 13—Ու երկրին բոլոր ժողովուրդը ձեռնտ պիտի թաղեն, և ասիկա անոնց անուն մը պիտի բլլայ այն օրը՝ որպէս զի ես փառաւորուիմ, կ'ըսէ Տէր Եհովա։ 14—Ու մարդիկ պիտի որուհեն՝ որ շարունակ երկրին մէջ պտըտին՝ անցնողներուն հետ՝ երկրի երեսին վրայ ժամացածները թաղեն, որպէս զի զանիկա մաքրեն. անոնք հօրը ամիսեն ետքը պիտի փնտռեն։ 15—Ու երկրին մէջէն անցնողները անցած ատեններնին երբ մեռածու ոսկոր տեսնեն, քովը նշան մը պիտի կանգնեն մինչև թաղողները զանիկա Գոգի բազմութեան ձորը թաղեն։ 16—Ու քաղաքին անունն ալ *Համոնա պիտի բլլայ. այսպէս երկիրը պիտի մաքրեն։

17—Ու դուն, որդի մարդոյ, Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ամէն տեսակ թռչուններն ու դաշտի բոլոր գազաններուն ըսէ, ժողվու եկէք ու հաւաքուեցէք իմ ձեզի համար զոհած զոհիս, Իսրայէլի լեռներուն վրայ՝ մեծ զոհին. ամէն կողմէն մսակերէք, որպէս զի միս ուտէք ու արիւն խմէք. 18—Զօրաւորներուն միսը ուտէք, ու երկրի իշխաններուն արիւնը խմէք, խոյերու,

*ԵԲՐ. պիտի հանուիս

*ԵԲՐ. սրբուիմ

†ԿԱՐ, բարկութիւնովս

*Այսինքն, բազմութիւն

գառներուս, նոխազներու և զուարակներուս՝ որոնց ամէնը Բաասի գէր անասուններն են։ 19—Ես ձեզի համար զոհած զոհս՝ մինչև կշտանալնիդ ծարպ ուտէք, ու մինչև գինովնալնիդ արիւն խմէք։ 20—Ու իմ սեղանիս վրայ ձիերուն ու *կառքի «անասուններէն», զօրաւորներուն ու ամէն պատերազմով մարդկէն կշտանաք, կ'ըսէ Տէր Եհովա։ 21—Ու ազգերուն մէջ իմ փառքս պիտի դնեմ, ու ամէն ազգերը իմ ըրած դատաստաններս ու անոնց վրայ դրած ձեռքս պիտի տեսնեն։ 22—Ու Իսրայէլի տունը այն օրէն եւս ա՛լ պիտի գիտնան թէ ինքնին Տէր Աստուածը ես եմ։ 23—Ու ազգերը պիտի գիտնան թէ Իսրայէլի տունը իրենց անօրէնութեանը համար, ինծի ապստամբ ըլլալնուն համար, գերի եղան, ու ես իմ երեսս անոնցմէ ծածկեցի, և զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը տուի, ու ամէնը սրով ինկան։ 24—Իրենց պղծութեանը համեմատ ու իրենց յանցանքներուն համեմատ ես ալ անոնց հետ վարուեցայ ու իմ երեսս իրենցմէ ծածկեցի։

25—Ասոր համար Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Հիմա Յակոբի գերութիւնը պիտի դարձնեմ, ու բոլոր Իսրայէլի տունը պիտի ողորմիմ, և իմ սուրբ անունս համար նախանձաւոր ըլլալով։ 26—Ու երբ անոնք իրենց երկրին մէջ ապահովութեամբ բնակին, ու վախցնող մը չըլլայ, այն ատեն իրենց անարգանքը ու իրենց ինծի դէմ ըրած բոլոր յանցանքները պիտի կրեն։ 27—Երբ զանոնք ժողովուրդներէն դարձնեմ, ու զանոնք իրենց թշնամիներուն երկիրներէն ժողվիմ, այն ատեն անոնց մէջ շատ ազգաց աչքերուն առջև պիտի սրբութիւն։ 28—Ես պիտի գիտնան թէ ես եմ անոնց Տէր Աստուածը. որովհետև զանոնք ազգերու մէջ գերի բչեցի, ու զանոնք նորէն իրենց երկիրը ժողվեցի, և ա՛լ անոնցմէ հոն †չըդէ մը պզուցի։ 29—Ու ա՛լ իմ երեսս անոնցմէ պիտի չծածկեմ. քանզի իմ Հոգիս Իսրայէլի տանը վրայ թափեցի, կ'ըսէ Տէր Եհովա։

*Կամ, կառք հեծնողներէն

†Կամ, պիտի ըլլար, երբ կրեն իրենց անարգանքը ու իրենց բոլոր յանցանքները՝ զորոնք ինծի դէմ ըրին՝ քանի որ իրենց երկրին մէջ ապահովութեամբ կը բնակէին, ու վախցընող մը չկար

Գլ. Թ

Մեր գերութեան քսանըհինգերորդ տարին, *առաջին ամիսը՝ ամսուն տասներորդ օրը, քաղաքին գարնեւելեան չորեքտասաներորդ տարին, նոյն օրը Տէրոյը ձեռքը իմ վրաս եղաւ, ու զիս հոն տարաւ։ 2—Զիս Աստուծոյ տեսիլքներով Իսրայէլի երկիրը տարաւ, և զիս խիստ բարձր լեռան մը վրայ դրաւ. ու անոր վրայ հարաւային կողմը քաղաքի մը չինուածքի պէս էր։—յի կարծ։ 3—Ու երբ զիս հոն տարաւ, ահա մարդ մը՝ որուն երեւոյթը պղնձի երեւոյթի պէս էր, և անոր ձեռքը քթանի լար ու չափի եղէգ կար, ու անիկա դուռը կայնեը էր։ 4—Ու այն մարդը ինծի ըսաւ, Որդի մարդոյ, աչքերովդ տես ու ականջներովդ լսէ, ու քեզի ամէն ցուցացածներուս ուշադրութիւն ըրէ. վասն զի դուն հոս բերուեցար որպէս զի ա՛յս բաները քեզի ցուցնեմ. ամէն տեսածդ Իսրայէլի տանը պատմէ։

5—Ու ահա տանը դուրսէն չորրորդ պարիսպ կար, ու այն մարդուն ձեռքը վեց կանգնանի երկայնութեամբ չափի եղէգ մը կար, իւրաքանչիւր մէկ կանգուն ու չորս մատնաչափ բարձրութեամբ։ Ու †պարիսպին լայնութիւնը եղէգ մը, ու բարձրութիւնը եղէգ մը չափեց։

6—Ու անիկա դէպ ի արեւելք նայող դուռը եկաւ, ու անոր աստիճաններուն վրայ ելաւ, ու դրանը մէկ սեմը եղէգ մը լայն, ու միւս սեմը եղէգ մը լայն չափեց։ 7—Ու *մէն խուցը եղէգ մը երկայն ու եղէգ մը լայն էր, ու խուցերուն միջոցը հինգ կանգուն էր։ Ու դրանը սրահին քով եղող դրանը սեմը ներսէն մէկ կանգուն էր։ 8—Ու անիկա դրանը սրահը ներսէն մէկ եղէգ չափեց։ 9—Ու դրանը սրահը ութ կանգուն չափեց ու անոր դրանդիքը երկու կանգուն էր, ու դրանը սրահը ներսի կողմն էր։ 10—Ու դէպ ի արեւելք եղող դրանը խուցերը մէկ կողմէն երեք ու միւս կողմէն երեք էին, ու երեքին չափը մէկ էր. և դրանդիքներուն չափը մէկ կողմէն ու միւս կողմէն մէկ էր։ 11—Ու դրանը մտափին լայնութիւնը տասը կանգուն չափեց, — դրանը երկայնութիւնը տասներեք կանգուն։ 12—Ու խուցերուն առջև հինգ հինգ մէկ կանգունի սահման, ու միւս կողմէն մէկ կանգունի սահման մը կար ու խուցերը մէկ կողմէն վեց կանգուն, ու միւս կողմէն վեց կանգուն էին։ 13—Ու դուռը չափեց մէկ խուցին տանիքէն մինչև միւսին տանիքը. — երկայնութիւնը քսանըհինգ կանգուն էր, — մուտքերը դիմացէ դիմաց էին։ 14—Ու դրանդիքներուն երեսները վեց կանգուն բրաւ, մինչև դրանը բոլորտիքը եղող գաւիթին դրանդիքը։ 15—Ու դուրսի դրանը երեսէն մինչև ներսի դրանը սրահին երեսը հիսուն կանգուն էր։ 16—Ու խուցերուն և անոնց դրանդիքներուն քով, դրանը ներսի կողմէն չուրջանակի *վանդակապատ պատուհաններ կային, սրահներն ալ այսպէս էին, ու ներսի կողմէն չուրջանակի պատուհաններ կային։ Ու դրանդիքներուն վրայ արմաւենիներ կային։

17—Ու զիս դուրսի գաւիթը բերաւ, և ահա հոն սենեակներ, ու գաւիթին համար չինուած չուրջանակի քարայատակ կար. ու քարայատակին վրայ երեսուն սենեակ կար։ 18—Ու դռներուն քովի քարայատակը դռներուն երկայնութեանը դիմաց եղող վարի քարայատակն էր։ 19—Ու անիկա վարի դրանը առջևէն մինչև ներքին սրահին առջև դուրսէն՝ դէպ ի արեւելք ու հիւսիս լայնութիւնը հարիւր կանգուն չափեց։ 20—Ու դուրսի գաւիթին դէպ ի հիւսիս նայող դրանը երկայնութիւնը ու լայնութիւնը չափեց։ 21—Ու անոր խուցերը երեք մէկ կողմէն էին, ու երեք միւս կողմէն, և անոր դրանդիքները ու սրահները առաջին դրանը չափին էին։

*Կամ, ներսէն լայն, դուրսէն նեղ

անոր երկայնութիւնը հիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր։ 22—Ու պատուհանները ու սրահները ու արմաւենիները դէպ ի արեւելք նայող դրանը չափին էին, ու եօթը աստիճանով ան դուռը կ'ելլէին. և սրահները անոնց առջև էին։ 23—Ու սրահները անոնց առջև մէ ունէր՝ հիւսիսային դրանը ու արեւելեան դրանը դիմաց, ու մէկ գանձն մինչև միւս դուռը հարիւր կանգուն չափեց։

24—Ու զիս հարաւային կողմը տարաւ, և ահա հարաւային կողմը դուռ մը կար. ու անոր դրանդիքները ու սրահները չափեց, որոնք նոյն չափերուն համեմատ էին։ 25—Ու անիկա ու անոր սրահները նոյն պատուհաններուն պէս պատուհաններ ունէին չուրջանակին. անոր երկայնութիւնը հիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր։ 26—Ու այն դուռը ելլելու համար եօթը աստիճան կար, ու անոր սրահները անոնց առջև էին. ու անոր դրանդիքներուն վրայ մէկ կողմէն ու միւս կողմէն արմաւենիներ կային։

27—Ու ներսի գաւիթը դուռ մը ունէր դէպ ի հարաւ, ու մէկ դռնէն մինչև միւս դուռը դէպ ի հարաւ հարիւր կանգուն չափեց։ 28—Ու զիս հարաւային դուռէն ներսի գաւիթը բերաւ, ու հարաւային դուռը չափեց, որ նոյն չափերուն համեմատ էր։ 29—Ու անոր խուցերը ու դրանդիքները ու սրահները նոյն չափերուն համեմատ էին. և անիկա ու անոր սրահները չուրջանակի պատուհաններ ունէին. անոր երկայնութիւնը հիսուն կանգուն, ու լայնութիւնը քսանըհինգ կանգուն էր։ 30—Ու սրահները չուրջանակի քսանըհինգ կանգուն երկայն ու հինգ կանգուն լայն էին։ 31—Ու սրահները դէպ ի դուրսի գաւիթն էին, ու դրանդիքներուն վրայ արմաւենիներ կային. և այն դուռը ելլելու համար ութ աստիճան կար։

32—Ու զիս ներսի գաւիթը տարաւ դէպ ի արեւելք, ու գուռը չափեց, որ նոյն չափերուն համեմատ էր։ 33—Ու անոր խուցերը ու դրանդիքները ու սրահները նոյն չափերուն համեմատ էին. և անիկա ու անոր սրահները չուրջա-

*Եբր. տասը տասի դլուխը †Եբր. չէնքին

նակի պատուհաններ ունէին. ---որ երկայնութիւնը չիւան կանգուն, ու լայնութիւնը քառասնից կանգուն էր։

34—Ու անոր սրահները դէպ ի դուրսի գաւիթն էին, ու անոր դրանդիքներուն մէկ կողմն ու միւս կողմն արմաւենիներ ունէին. և այն ---ը ելլելու համար ութ աստիճան կար։

35—Ու զիս հիւսիսային դուռը բերաւ, ու նոյն չափերուն համեմատ չափից 36—խուցերը, դրանդիքները ու սրահները, չորքանակի պատուհաններ ունէր. ---որ երկայնութիւնը չիւան կանգուն, ու լայնութիւնը քառասնից կանգուն էր։ 37—Ու անոր դրանդիքները դէպ ի դուրսի գաւիթն էին, ու դրանդիքները մէկ կողմն ու միւս կողմն արմաւենիներ ունէին. և այն ---ը ելլելու համար ութ աստիճան կար։

38—Ու սենեակ մը կար որուն մուտքը դռներուն քովի դրանդիքներուն մօտ էր. ողջակէզը հոն կը լուային։ 39—Ու գրանը սրահին մէջ մէկ կողմն երկու սեղան, ու միւս կողմն երկու սեղան կար, որպէս զի անոնց վրայ ողջակէզը ու մեղքի պատարագը ու յանցանքի պատարագը մորթեն։ 40—Ու հիւսիսային դրանը մուտքը ելլելուն դուրսի կողմը երկու սեղան, ու միւս կողմը եղող գրանը սրահին մէջ երկու սեղան կար։ 41—Դրանը քով մէկ կողմն չորս սեղան, ու միւս կողմն չորս սեղան կար, ութ սեղան էր, --- անոնց վրայ կը մորթէին։ 42—Ու չորս սեղանները, որունք ողջակէզի համար էին, տաշուած քարէ մէկ ու կէս կանգուն երկայն ու մէկ ու կէս կանգուն լայն, ու մէկ կանգուն բարձր էին. և ողջակէզը ու զոհը մորթելու գործիքները անոնց վրայ կը դնէին։ 43—Ու ներսէն չորս մատնաչափ *եզերք մը" չհնուած էր. ու սեղաններուն վրայ զոհին միսը կը ---էր։

44—Ու ներսի գրանը դուրսի կողմը, հիւսիսային գրանը քով եղող ներսի գաւիթին մէջ, երգեցողներուն սենեակները կային, ու անոնց երեսը դէպ ի հարաւ էր. մէկը արեւելեան գրանը քով էր, --- երեսը դէպ ի հիւսիս էր, 45—Ու ինծի ըսաւ, Այս սենեակը որ դէպ ի հարաւ կը նայի, տանը պահապանութիւնը ընող քահանաներուն համար է։ 46—Ու այն սենեակը որ դէպ ի հիւսիս կը նայի, սեղանին պահապանութիւնը ընող քահանաներուն համար է. ա. նոնք Սադովկի որդիներն են, որոնք Ղեւիի որդիներէն Տէրոջը կը մօտենան՝ անոր ծառայութիւն ընելու համար։

47—Ու գաւիթը չափեց, չորս կողմնայ քիւնը հարիւր կանգուն, ու լայնութիւնը հարիւր կանգուն էր, անկիւնադաւակուան էր. ու սեղանը տանը առջեւ էր։

48—Ու զիս տանը սրահը տարաւ, ու սրահին դրանդիքները չափեց, հինգ կանգուն մէկ կողմն ու հինգ կանգուն միւս կողմն. և դրանը լայնութիւնը մէկ կողմէն երեք կանգուն, և միւս կողմէն երեք կանգուն էր։ 49—Սրահին երկայնութիւնը քսան կանգուն, ու լայնութիւնը տասնըմէկ կանգուն էր, և հոն [---ը] աստիճաններով կ'ելլէին". ու դրանդիքներուն քով սիւներ կային, մէկը մէկ կողմէն, մէկալ միւս կողմէն։

Գլ. ԽԱ

Ու զիս տաճարը տարաւ, ու ---որ դրանդիքները չափեց, մէկ կողմէն վեց կանգուն լայն ու միւս կողմէն վեց կանգուն լայն էր, խորանին լայնութիւնը համեմատ։ 2—Ու դրանը լայնութիւնը տասը կանգուն էր, ու դրանը քովերը մէկ կողմէն հինգ կանգուն, ու միւս կողմէն հինգ կանգուն էին. և անոր երկայնութիւնը քառասուն կանգուն, ու լայնութիւնը քսան կանգուն չափեց։

3—Ու ներս մտաւ, և դրանը դրանդիքները երկու կանգուն, ու դուռը վեց կանգուն չափեց. ու դրանը լայնութիւնը եօթը կանգուն էր։

4—Ու անոր երկայնութիւնը չափեց քսան կանգուն, ու լայնութիւնը քսան կանգուն՝ տաճարին ---որ հանդի-

*Կամ, կարթեր

*Կամ, էր, այն աստիճաններովը մէկ-մէկ, որոնցմով հոն կ'ելլէին

մաս. ու ինծի ըսաւ, Ասիկա է սրբութիւն սրբութեանց։

5—Ու տանը պատը վեց կանգուն, ու տանը բոլորտիքը եղող սենեակներուն լայնութիւնը չորս կանգուն չափեց։

6—Ու սենեակները իրարու վրայ էին երեք ---ով, ու թիւով երեսուն. և ---ոց ---ը կը մտնէին տաճարին այն պատին մէջ որ սենեակներուն համար չէ---ած էր չորքանկիւն. որպէս զի ---ը կռթնին, բայց տանը պատին մէջ չէին կռթնիր։ 7—Ու սենեակները ելլելու համար լայնցող ու չրջանակաւոր ---որ կար, որ տանը բոլորտիքը՝ վեր ելլելու համար տանը կը պարուրէր. անոր համար ելլելով տանը կը լայնանար, և այսպէս վերի դասիկոնէն վերի դասիկոնը միջին դասիկոնէն կ'ելլէին։ 8—Ու չորքանկի տանը բարձրութիւնը տեսայ. սենեակներուն հիմերը ամբողջ մէկ եղէգ, վեց մեծ կանգուն էին։ 9—Սենեակներուն պատին լայնութիւնը դուրսէն հինգ կանգուն էր, ու մնացածը սենեակներուն մէջքին միջոցն էր։ 10—Ու ---ուն սենեակներուն մէջտեղը, տանը բոլորտիքը, քսան կանգուն լայն միջոց մը կար։ 11—Ու սենեակներուն մուտքերը մնացած տեղին կը նայէին. մուտքին մէկը դէպ ի հիւսիս, և մուտքին մէկը դէպ ի հարաւ կը նայէր. ու մնացած տեղին լայնութիւնը չորքանկի հինգ կանգուն էր։

12—Ու զատած տեղին առջեւ, դէպ ի արեւմտեան ծայրը եղող շէնքին լայնութիւնը, եօթանասուն կանգուն էր. ու շէնքին պատը չորքանկի հինգ կանգուն լայն ու երկայնութիւնը իննսուն կանգուն էր։ 13—Ու տանը երկայնութիւնը հարիւր կանգուն չափեց. ու զատած տեղը ու շէնքը իր պատերովը հարիւր կանգուն երկայն էր։ 14—Ու տանը ու զատած տեղին երեսը դէպ ի արեւելք հարիւր կանգուն քսան էր։

15—Ու ---ոջը հետի կողմին՝ զատուած տեղին դիմաց եղող շէնքին երկայնութիւնը և անոր սիւնազարդ սրահները մէկ կողմէն ու միւս կողմէն, ներսին տաճարին ու գաւիթին սրահներուն հետ, հարիւր կանգուն չափեց։ 16—Դրոջը սիւները ու վանդակապատ պատուհանները, և չորքանակի այն երեք չէ---ուած սիւներուն դիմաց եղող սենեակազարդ սրահները ամէն կողմէն տախտակամած չէ---ած էին գետնէն մինչև պատուհանները, ու պատուհանները ծածկատած էին։ 17—Ներ գրանը վերայ ու մինչև ներսին տունը, և դուրսէն ու բոլոր պատը չորքանակի ներսէն ու դուրսէն էրէց չափերովը։

18—Ա---ուխ---ներէն վրայ քերովբէներ ու արմաւենիներ փորագրուած էին, ու երկու քերովբէներուն մէջտեղ արմաւենի մը, ու ---էն էվ քերովբէն երկու երես ուներ։ 19—Այրինքն մէկ կողմէն դէպ ի արմաւենին մարդու երես, ու միւս կողմէն դէպ ի արմաւենին առտյծ ա---ծի երես բոլոր տանը քառակուսի չորքանկի ---ուր էր։ 20—Յատակէն մինչև գրանը վրայ քերովբէներ ու արմաւենիներ քանդակուած էին, նոյնպես ալ տաճարին պատին վրայ։ 21—Տաճարին դրանդիքները քառակուսի էին, ու սրբարանին երեսը, ---ուն երեւոյթը ---ուն երեւոյթին պէս էր։

22—Փայտի սեղանը երեք կանգուն բարձր էր, ու երկայնութիւնը երկու կանգուն էր, և անոր անկիւնները իրմէ էին, ու անոր երկայնութիւնը ու փովերը փայտէ էին. ու անիկա ինծի ըսաւ, Ասիկա է Տէրոջը առջեւ եղող սեղանը։ 23—Ու տաճարը ու սրբարանը երկու դուռ ունէին։ 24—Ու դռները երկերկու փեղկ ունէին, ու փեղկերը երկուքի կը ծալուէին. երկու փեղկ մէկը ուներ, ու երկու փեղկ միւսը։ 25—Ու անոնց վրայ, տաճարին դռներուն վրայ, պատերուն վրայի քանդակին պէս քերովբէներ ու արմաւենիներ քանդակուած էին. ու դուրսէն սրահին երեսը փայտէ *սանգուխ մը կար։ 26—Ու սրահին քովերը ու տանը սենեակներուն մէջ և սանգուխներուն վրայ, մէկ կողմէն ու միւս կողմէն, վանդակապատ պատուհաններ ու արմաւենիներ կային։

Գլ. ԽԲ

Անկէ ետքը զիս դէպ ի հիւսիս եղող ճամբովը արտաքին գաւիթը հանեց, և

*Կամ, վայրագաւիթ

պիս զաուաւած տեղին դիմաց եղող ու դէպ ի հիւսիս նայող չէնքին դիմացի սենեակները բերաւ։ 2—Այս ինչ-նչ-նչ-նչ հիւսիսային մասին աջին երկայնութիւնը հարիւր կանգուն, ու լայնութիւնը յիսուն կանգուն էր։ 3—Ներսի գաւիթին քսան նչ-նչ-նչ-նչին դէմ ու դուրսի գաւիթին քառասունին դէմ, իրարու դիմաց, երեք գաւիթնով սիւնազարդ սրահներ կային։ 4—Ու սենեակներուն առջև, ներսէն սասը կանգուն լայն ճեմելիք մը — մէկ կանգուն ճամբայ մը կար, և անոնց դռները դէպ ի հիւսիս էին։ 5—Ու վերի սենեակները կաւե էին, վասն զի սիւնազարդ սրահները անոնցմէ, այսինքն չէնքին վերի ու միւին սենեակներէն, ոեւ կ'առնէին։ 6—Քանզի անոնք երեք գաւիթով էին, ու գաւիթներուն սիւներուն պէս սիւներ չունէին. անոր համար գետնէն, այսինքն վերի ու միւին սենեակներէն, երկայնութիւնը կը նեղնային։ 7—Ու սենեակներուն դիմաց, դուրսի գաւիթին կողմը, սենեակներուն առջեւ դուրսի պատին երկայնութիւնը յիսուն կանգուն էր։ 8—Վասն զի դուրսի գաւիթը նայող սենեակներուն երկայնութիւնը յիսուն կանգուն էր։ և ահա տաճարին դիմաց հարիւր կանգուն էր։ 9—Ու այս սենեակներուն տակէն, դուրսի գաւիթէն առնոց երթալու համար արեւելեան կողմէն, մուտք մը կար։ 10—Ե- գաւիթին պարսպին լայնութեանը մէջ դէպ ի արեւելք, զաուաւած տեղին դիմաց ու չէնքին դիմաց, սենեակներ կային։ 11—Ե- անոնց առջև ճամբայ մը կար դէպ ի հիւսիս եղող սենեակներուն երեւոյթին պէս, թէ՛ անոնց երկայնութեանը, թէ՛ անոնց լայնութեանը և թէ՛ անոնց բոլոր ելքերուն և անոնց ձեւերուն ու դռներուն կողմանէ։ 12—Նոյնպես էին դէպ ի հարաւ եղող սենեակներուն մուտքերը։ ճամբուն գլուխը մուտք մը կար։ այսինքն արեւելեան ճամբուն բերանը՝ պատին առջեւէ չհասկ ճամբան։

13—Ե- ինծի բաւ. Զաուաւած տեղին առջև եղող հիւսիսային կողմի սենեակները — հարաւային կողմի սենեակները սուրբ սենեակներ են, ուր Տէրոջը մատեցող քահանաները ամենասուրբ բաները պիտի ուտեն. հոն պիտի դնեն ամենասուրբ բաները ու հացի ընծան ու մեղքի պատարագը և յանցանքի պատարագը, քանզի այն տեղը սուրբ է։ 14—Երբ քահանաները հոն մտնեն, սուրբ տեղէն դուրսի գաւիթը պիտի չելլեն, հապա իրենց պաշտօնի զգեստները հոն պիտի թողուն, վասն զի անոնք սուրբ են. և ուրիշ հանդերձներ հագնելով՝ ժողովրդին վերաբերեալ բաներուն պիտի մօտենան։

15—Ու երբ անիկա ներքին տունը չափից լմնցուց, դէպ ի արեւելք նայող դռանը հանեց, ու զայնիա ամէն կողմէն չափեց։ 16—Արեւելեան կողմը չափի եղեգով՝ չորքանակի հինգ հարիւր եղեգ չափեց եղեգով։ 17—Հիւսիսային կողմը չորքանակի չափի եղեգով հինգ հարիւր եղեգ չափեց։ 18—Հարաւային կողմը չափի եղեգով հինգ հարիւր եղեգ չափեց։ 19—Արեւմտեան կողմը դարձաւ, — չափի եղեգով հինգ հարիւր եղեգ չափեց։ 20—Զանիկա չորս կողմէն չափեց. անիկա հինգ հարիւր երկայն, ու հինգ հարիւր եղէգ լայն էր։— պարսպ ունէր՝ սուրբ ու անսուրբ տեղէն մեկուսի զատելու համար։

Գլ. ԽԲ

Եւ դէպ արեւելք նայող դռանը, տարաւ։ 2—Ու ահա արեւելեան ճամբային Իսրայէլի Աստուծոյն փառքը կու գար. ու անոր ձայնը շատ յորձրաս ձայնին պէս էր, ու երկիր անոր փառքին լուսաւորեցաւ։ 3—Ու ասոնք տեսիլքա նման էր այն տեսիլքին պէս, զոր տեսայ երբ քաղաքը աւերելու եկայ. ու տեսիլքները Քոբար գետին քով տեսած տեսիլքիս պէս էին, ու երեսիս վրայ ինկայ։ 4—Ու Տէրոջը փառքը դէպ ի արեւելք նայող դրանը ճամբային տուաւ մտաւ։ 5—Ու Հոգին դէպ վերցուց և դէպ ներքին գաւիթը տարաւ, և ահա Տէրոջը փառքը տունը լեցուցեր էր։ 6—Ու յայ ինծի լսեցի որ տաճարին ինծի կը խօսէր (ու իմ քովս մարդ մը կայներ էր։) 7—Ու ինծի բաւ. Որդի մարդոյ, Իսրայէլի որդիներուն մէջ յաւիտեան բնակելու տեղս, և իմ ոտքերուս գաղտնարանս, ուր Իսրայէլի տունը ես ու իրենց թագաւորները, իրենց պոռնկութիւնովը ու իրենց թագաւորներուն դիերը բծախնդրութեամբ իրենց բարձր տեղերուն մէջ՝ իմ սուրբ անունս պիտի չպղծեն։ 8—Վասն զի իրենց սեմերը իմ սեմերուս՝ ու իրենց դրանդիքը իմ դրանդիքներուս մօտ դրին, այնպես որ իմ ու անոնց միջեւ պատ մը կար, և իրենց ըրած գարշութիւններովը իմ սուրբ անունս պղծեցին. ես ալ իմ բարկութիւնովս ոչնչացի զանոնք։ 9—Հիմա թող իրենց պոռնկութիւնը ու իրենց թագաւորներուն դիերը բծախնդրութիւնս ետ տանին, ու յաւիտեան անոնց մէջ պիտի բնակիմ։

10—Ինծի, որդի մարդոյ, Իսրայէլի տունը այս տունը գիտցուր, որպէս զի իրենց անօրէնութիւններէն ամչնան, ու թող չափը գաղափարը չափեն։ 11—Եթէ իրենց բոլոր ըրածներէն ամչնան, տունը ձեւը ու կարգաւորութիւնը, և անոր ելքը ու մուտքը, ու բոլոր ձեւերը և բոլոր կանոնները, [ու բոլոր ձեւերը] և բոլոր օրէնքները անոնց գիտցուր. ու անոնց աչքերուն առջև գրէ, և անոր բոլոր ձեւերը ու բոլոր կանոնները պահեն ու զանոնք կատարեն։ 12—Այս է տաճարին օրէնքը։ Անոր բոլոր սահմանը չորքանակի լեռանը գլխուն վրայ ամենասուրբ պիտի ըլլայ. ահա տաճարին օրէնքը սա է։

13—Ե- սասնք են սեղանին չափերը կանգունով. (կանգունը մէկ կանգուն ու չորս մատնաչափ է.) ու խոր տեղը մէկ կանգուն, ու -որ լայնութիւնը մէկ կանգուն, և անոր սահմանը անոր եզերքին վրայ չորքանակի մէկ թիզ պիտի ըլլայ. ու այս պիտի ըլլայ սեղանին հիմը։ 14—Ու գետնին խոր տեղէն մինչև վարի չորքանակը երկու կանգուն, և -որ լայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ. ու պզտիկ չորքանակէն մինչև մեծ չորքանակը չորս կանգուն, ու լայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ։ 15—Ու կրակարանը չորս կանգուն բարձր պիտի ըլլայ, ու կրակարանէն վեր չորս եղջիւր պիտի ըլլայ։ 16—Ե- *կրակարանը տասներկու երկայն և տասներկու լայն, չորս կողմն ալ հաւասար ըլլայ՝ քառակուսի պիտի ըլլայ։ 17—Ե- անոր բոլորտիքը եղող չորքանակը տասնչորս երկայն և տասնչորս լայն պիտի ըլլայ, և բոլորտիքը եղող սահմանը կէս կանգուն, ու խոր տեղը չորքանակի մէկ կանգուն պիտի ըլլայ, ու անոր աստիճանները դէպ ի արեւելք պիտի ըլլան։

18—Ե- ինծի ըսաւ, Որդի մարդոյ, Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ'ըսէ. Ասոնք պիտի ըլլան սեղանին կանոնները՝ այն օրը որ կռիւներ չընեն, անոր վրայ ողջակէզներ մատուցանելու՝ ու անոր վրայ արիւն սրսկելու համար։ 19—Սադովկի սերունդէն եղող Ղեւտացի քահանաներուն, (որոնք ինծի ծառայութիւն ընելու համար ինծի պիտի մօտենան, կ'ըսէ Տէր ԵՀՈՎԱ,) մեղքի պատարագի համար արջառներէն զուարակ մը պիտի տաս։ 20—Ե- անոր արիւնէն պիտի առնես, ու եղջիւրներուն չորս եղջիւրներուն վրայ, ու չորքանակին չորս անկիւններուն վրայ դնես, ու զանիկա պիտի սրբես և անոր համար քաւութիւն ընես։ 21—Ու մեղքի պատարագին զուարակը պիտի առնես, և սրբարանէն դուրս՝ տաճարին որոշուած տեղը պիտի սրուի։ 22—Ու երկրորդ օրը մեղքի պատարագի համար այծերէն անարատ նոխազ մը մատուցանես, ու սեղանը պիտի սրբեն՝ ինչպես զուարակով սրբեցին։ 23—Երբ սրբելը լմնցնես, սրբառներէն անարատ զուարակ մը, ու ոչխարներէն անարատ խոյ մը պիտի մատուցանես։ 24—Ե- զանոնք Տէրոջը առջև պիտի մատուցանես, ու քահանաները անոնց վրայ աղ պիտի ցանեն, ու զանոնք Տէրոջը ողջակէզ պիտի մատուցանեն։ 25—Եօթը օր մեղքի պատարագի համար՝ օրը մէկ նոխազ պիտի մատուցանես. նաև արջառներէն զուարակ մը, ու ոչխարներէն խոյ մը պիտի մատուցանեն, արատ անարատ պիտի ըլլան։ 26—Եօթը օր սեղանին քաւութիւն պիտի ընեն և զանիկա պիտի սրբեն ու զանիկա նուիրեն։ 27—Ու երբ այն օրերը լմնան, ութերորդ օրը ու անկէ ետքը քահանաները սեղանին վրայ ձեր ողջա-

*Եզր. Արիելը. Ես. լիթ. 1։

կէզիները ու ձեր խաղաղութեան զոհերը պիտի մատուցանեն, և ես ձեզ պիտի ընդունիմ, կ'ըսէ Տէր Եհովա։

Գլ. ԽԴ

Ե ովս օրբարանին դէպ ի արեւելք նայող դուրսի դրանը ճամբան դարձուց, ու անկա զոց էր։ 2—Ու Տէրը ինծի ըսաւ, Այս դուռը զոց պիտի մնայ, ու պիտի չբացուի, ու անկէ մարդ պիտի չմտնէ. քանզի անկէ Իսրայէլի Տէր Աստուածը մտաւ, անոր համար զոց պիտի մնայ։ 3—Ումեմն իշխանին համար պիտի նստի, հան միայն իշխանը պիտի նստի Տէրոջը առջև հաց ուտելու համար. անիկա դրանը սրահին ճամբայէն պիտի մտնէ, ու նոյն ճամբայէն պիտի ելլի։

4—Ու ովս հիւսիսային դրանը ճամբայէն տանը առջև բերաւ. ու տեսայ որ ահա Տէրոջը փառքը Տէրոջը տունը լեցուցեր էր. ու երեսիս վրայ իյնայ։ 5-Ու Տէրը ինծի ըսաւ, Որդի մարդոյ, Տէրոջը տանը բոլոր կանոններուն ու անոր բոլոր օրէնքներուն վրայով քեզի ամէն բանծս սրտիդ մէջ դիր, ու աչքերովդ նայէ և ականջներովդ լսէ, ու տանը մուտքերը ու արբարանին բոլոր ելքերը աղէկ դիտէ. 6-Ու ապստամբներուն, Իսրայէլի տանը, ըսիւս, Տէր Եհովա այսպես կ'ըսէ. Ալ հերիք է ձեզի ձեր բոլոր պղծութիւններդ, օվ Իսրայէլի տունը, 7—Որ դուք արտով անթլփատ ու մարմնով անթլփատ օտարազգիներ մտցուցիք, որ իմ սրբարանիս մէջ ըլլան ու իմ տունս պղծեն, երբ դուք իմ հացս, ճարպը ու արիւնը կը մատուցանէիք. ու ձեր բոլոր պղծութիւններէն զատ անոնք իմ ուխտս խափանեցին. 8—Ու իմ սուրբ բաներուս պահապանութիւնը չպահեցիք, հապա իմ սրբարանիս մէջ ձեր ոտքերին պէս իմ պահապանութեանս վրայ պահապաններ դրիք։

9—Տէր Եհովա այսպես կ'ըսէ. Իսրայէլի որդիներուն մէջ եղող բոլոր օտարազգիներէն՝ արտով անթլփատ ու մարմնով անթլփատ բնաւ օտարազգի մը իմ սրբարանս պիտի չմտնէ։ 10—Մանաւանդ Ղեւտացիները, որոնք ինծմէ հեռացան, երբ Իսրայէլի որդիները ինծմէ մոլորեցան ու իրենց կուռքերուն ետեւէն գացին, իրենց անօրէնութիւնը պիտի կրեն. 11—Ու իմ սրբարանիս մէջ սանը դռները սրսուած սպասաւորներ, ու տաճարին սպասաւորները պիտի ըլլան. ժողովուրդին համար ողջակէզները ու զոհերը անոնք պիտի մատչին, ու անոնց ծառայութիւն ընելու համար անոնց առջև անոնք պիտի կայնին։ 12-Որովհետև անոնց համար անոնց կուռքերուն առջև ծառայութիւն ըրին, ու Իսրայէլի տանը գայթակղութիւն անօրէնութեան պատճառ եղան, անոր համար անոնց վրայով իմ ձեռքս վերցուցի, կ'ըսէ Տէր Եհովա, որ իրենց անօրէնութիւնը պիտի կրեն. 13—Ու ինծի պիտի չմօտենան ինծի քահանայութիւն ընելու՝ ու իմ բոլոր սուրբ բաներուս և սուրբերուս բաներուս մօտենալու, հապա իրենց անարգանքը ու իրենց ըրած պղծութիւնները պիտի կրեն։ 14—Սակայն զանոնք տանը պահպանութեանը վրայ պահապան պիտի դնեմ՝ անոր ամէն ծառայութեանը համար, ու անոր մէջ ըլլալը ամէն գործին համար։

15—Բայց Ղեւտացի քահանաները, Սադոկի որդիները, որոնք իմ սրբարանիս պահպանութիւնը պահեցին՝ երբ Իսրայէլի որդիները ինծմէ մոլորեցան, անոնք ինծի ծառայութիւն ընելու համար ինծի պիտի մօտենան, և ճարպը ու արիւնը ինծի մատուցանելու համար անոնք իմ առջևս պիտի կայնին, կ'ըսէ Տէր Եհովա, 16—Անոնք իմ սրբարանս պիտի մտնեն, ու ինծի ծառայութիւն ընելու համար անոնք պիտի մօտենան իմ սեղանիս, և իմ պահպանութիւնս պիտի պահեն։ 17—Ու երբ ներսի գաւիթին դռներէն մտնեն՝ կաւէ զգեստները պիտի հագնին, ու ներսի գաւիթին դռներուն ու ներսը ծառայութիւն ընած ատեննին իրենց վրայ բուրդ պիտի չհագնին։ 18—Իրենց գլխաներուն վրայ կտաւէ ապարօշներ ըլլան, ու մէջքերնին կտաւէ վարտիքներ ըլլան, ու քրտնցնող բան պիտի չհագնին։ 19—Ու երբ դուրսի գաւիթը ժողովուրդին ելլին, իրենց պաշտօնի զգեստները պիտի հանեն, ու

*Եբր. չեզե

զանոնք սուրբ սենեակներուն մէջ դնեն, և ուրիշ զգեստներ պիտի հագնին, որպէս զի իրենց զգեստներովը ժողովուրդը չսրբեն։ 20—Ու գլուխնին պիտի չածիլեն, ալ ալ վարսերնին երկնցնեն, հապա միայն գլուխնուն մազերը փոքրեն։ 21—Ու բնաւ գինի մը գինի չխմի երբ ներքին գաւիթը կը մտնէ։ 22—Ու այրեւարին կամ արձակուածը իրենց կին չառնեն, հապա Իսրայէլի տանը սերունդէն եղող կոյսը, կամ քահանայէ մը արդեւարի մնացած կինը առնեն։ 23—Ու իմ ժողովուրդիս սուրբ ու անսուրբ բաներուն տարբերութիւնը պիտի սորվեցնեն, և անմաքուրին ու մաքուրին տարբերութիւնը անոնց գիտցընեն։ 24—Ու դատերու վրայ անոնք պիտի կենան գատաստան ընելու համար, ու իմ իրաւունքներուս համեմատ զանոնք դատեն, և իմ բոլոր տօներուս մէջ իմ օրէնքներս ու կանոններս պիտի պահեն, ու իմ շաբաթներս սրբեն։ 25-Ու մարդ ուռնալի քով չերթան՝ որ պղծուին. հապա միայն հօր համար, կամ մօր համար, կամ որդւոյ համար, կամ աղջկան համար, եղբօր համար, կամ աղկան համար, եղբօր համար, կամ չամուսնացած քրոջ համար պղծուին։ 26—Ու մէկուն սրբութենէն հետքը եթէ օր պիտի համրեն անոր։ 27—Ու անիկա սրբարանին մէջ ծառայութիւն ընելու համար ներսի գաւիթը սրբարանը մտած օրը՝ անիկա իր մեղքի պատարագը պիտի մատուցանէ, կ'ըսէ Տէր Եհովա։

28—Ու ասիկա անոնց ժառանգութիւն ըլլայ. անոնց ժառանգութիւնը ես եմ. ու Իսրայէլի մէջ անոնց կալուածք չտաք. անոնց կալուածքը ես եմ։ 29—Հացի ընծան ու մեղքի պատարագը և յանցանքի պատարագը անոնք պիտի ուտեն. ու Իսրայէլի մէջ ամէն նուէր անոնց պիտի ըլլայ։ 30—Ու ամէն պտուղ բաներն բոլոր երախայրիներուն առաջինը, ու ձեր բոլոր ընծաներէն ամէն բան ընծային բոլորը քահանային պիտի ըլլայ. ու ձեր խմորնեղուն երախայրին քահանային պիտի տաք, որպէս զի քու տանդ վրայ օրհնութիւն *բերես։ 31—Քահանաները

*Կամ, բերէ

բնաւ մեռած կամ գազանաբեկ թռչուն չեն ուտեն, թէ՛ թռչուն և թէ՛ չորքոտանի։

Գլ. ԽԵ

Ու երբ երկիրը վիճակով ժառանգութիւն բաժնէք, երկրին քառակուսիին համար նուէր երկոյնութեամբ ու տասը հազար լայնութեամբ սուրբ ընծայ մատուցանէք Տէրոջը. ասիկա չորքանակի իր բոլոր սահմաններուն մէջ սուրբ ըլլայ։ 2—Ասկէ քառակուսի չափուած՝ հինգ հարիւրով հինգ հարիւրը սրբարանին համար ըլլայ, ու անկա չորքանակի մասան կանգուն արուարձան ունենայ։ 3—Ու այս չափով՝ երկայնութիւնը քառակուսիին հազար ու լայնութիւնը տասը հազար չափես, ու անոր մէջ պիտի ըլլայ սրբարանը, սանհասրը սեղը։ 4—Ասկա Տէրոջը ծառայութիւն ընելու մօտեցող սրբարանի պաշտօնեաներուն, քահանաներուն համար սուրբ ըլլալ երկրին, որպէս զի անոնց՝ տաճարը համար սեղ մը ու սրբարանին համար սուրբ տեղ մը ըլլայ։

5—Ու տանը ծառայութիւնը ընող Ղեւտացիները քառակուսիին հազար երկայնութեամբ ու տասը հազար լայնութեամբ կալուածք պիտի ունենան, դաւ քսան սենեակ։

6—Ու հինգ հազար լայնութեամբ ու քառակուսիին հազար երկայնութեամբ՝ քաղաքին կալուածքը պիտի տաք սրբարանին ընծային քով. ասիկա բոլոր Իսրայէլի տանը ըլլայ։

7—Ու իշխանին համար՝ սուրբ ընծային ու քաղաքին կալուածքին մէկ կողմէն ու միւս կողմէն, սուրբ ընծային և քաղաքին կալուածքին դիմաց արեւմտեան ծայրէն դէպ ի արեւմուտք, ու արեւելեան ծայրէն դէպ ի արեւելք ըլլայ. ու երկայնութիւնը արեւմտեան սահմանէն մինչև արեւելեան սահմանը մաս բաժիններէն մէկուն հետ հաւասար ըլլայ։ 8—Իսրայէլի մէջ երկրէն ասիկա անոր կալուածք ըլլայ, ու իմ իշխաններս ինծմէն այլ իմ ժողովրդիս չհարստահարեն. ու

*Կամ, չափեն

ՀՕՅՔ երկիրը իսրայէլի առջեւ արուի իրենց ցեղերուն համեմատ։

9—Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ՚ըսէ. Ալ հեռի՛ կ՚ըլլայ, ով իսրայէլի իշխաններ. զրկանքը ու յափշտակութիւնը վերցուցէ՛ք, եւ իրաւունք ու արդարութիւն ըրէ՛ք. իմ ժողովուրդիս ձեր բռնի պահանջմունքները վերցուցէ՛ք, կ՚ըսէ Տէր ԵՀՈՎԱ։ 10-Ձեր կշիռքները արդար, ձեր արդուն արդար ու ձեր մաքը արդար ըլլայ։ 11—Արդուն ու մաքը մէկ չափ ըլլայ, որպէս զի մաքը փառին տասներորդը պարունակէ՝ ու արդուն ալ փառին տասներորդը։ փառին նայելով պիտի ըլլայ անոնց չափը։ 12—Ու սիկղը փառ կերտած պիտի ըլլայ. ձեր մնասը փառ սիկղ, փառը հինգ սիկղ, տասներհինգ սիկղ պիտի ըլլայ։

13—Ձեր մատաղ ցանելու ընծան ասիկա ըլլայ. ցորնի փառին արդուին վեցերորդ մասը՝ ու գարիի փառին արդուին վեցերորդ մասը։ 14—Ու իւղին կանոնը՝ ՈՒԽԻ ըլլայ. իւղին մաքին՝ մաքին տասներորդը՝ ՈՒՆ փառին, այսինքն ՈՒՆ խօմէրին, որ տասը մաք կընդունի՝ ՈՒԽԻ, վասն զի տասը մաքը մէկ խօմէր է։ 15—Ու իսրայէլի յղտրէի արօտներուն հօտերէն՝ երկու հարիւրէն մէկ ոչխար։ Ասոնք ընծայ ու ողջակէզ ու խաղաղութեան զոհ, որպէս զի իրենց համար քաւութիւն ըլլայ, կ՚ըսէ Տէր ԵՀՈՎԱ։ 16—Երկրին բոլոր ժողովուրդը այս ընծան իսրայէլի մէկ իշխան եղողին պարտաւոր պիտի ըլլան։ 17—Ու տօներու ու ամսագլուխներու ու շաբաթներու ու յատկութիւններու մէջ, իսրայէլի տանը համար օրերուն մէջ, ողջակէզները ու հացի ընծան ու թափելու նուէրը իշխանին վրայ պիտի ըլլան. մեղքի պատարագը ու հացի ընծան ու ողջակէզը ու խաղաղութեան զոհը անոր պիտի մատուցանէ՝ իսրայէլի տանը քաւութիւն ընելու համար։

18—Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ՚ըսէ. Առաջին ամսուն առաջին օրը արջառներէն մէկ անարատ զուարակ առնես, ու սրբարանը մաքրես. 19—ու քահանան մեղքի պատարագին արիւնէն պիտի առնէ, և տանը դրանդիքներուն վրայ, ու սեղանին չորս անկիւններուն վրայ, և ներքին գաւիթին դրանը դրանդիքներուն վրայ դնէ։ 20—Ամսուն եօթներորդ օր ալ սխալած կամ անմիտ մարդու համար այնպէս ընես, և տանը համար քաւութիւն պիտի ընէք։

21—Առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը ձեզի զատիկ ըլլայ. եօթը օր ան ՀԻՒԹ ԴՐՈՒԱԾ ԲԱԳԱՐ ուտուի։ 22—Ու այն օրը իշխանը իրեն համար ու երկրին բոլոր ժողովուրդին համար զուարակ մը պիտի մատուցանէ ԷՐԼ մեղքի պատարագ։ 23—Ու ամբողջ եօթը օրը Տէրոջը ողջակէզ պիտի մատուցանէ, այն եօթը օրուան մէջ՝ օրը եօթը զուարակ ու եօթը անարատ խոյ, և ամէն օր այծերէն մէկ նոխազ ԷՐԼ մեղքի պատարագ։ 24—Ու ամէն մէկ զուարակին համար՝ մէկ արդու, և ամէն մէկ խոյին համար՝ մէկ արդու հացի ընծայ, ու ամէն մէկ արդուն համար մէկ հին իւղ մատուցանէ. 25—Նոյնպէս ալ եօթներորդ ամսուն հնգետասաներորդ օրը. ամբողջ եօթը օր այս մեղքի պատարագին, ողջակէզին, հացի ընծային ու իւղին պէս պիտի մատուցանէ։

ԳԼ. ԽԶ

Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ՚ըսէ. Ներքին գաւիթին դէպ ի արեւելք նայող դուռը գործի վից օրերը գոց ըլլայ. ու շաբաթ օրը բացուի, ու ամսագլուխն օրը բացուի։ 2—Ու իշխանը այն դրանը սրահին ճամբային դուրսէն պիտի մտնէ, ու դրանը դրանդիքներուն քով կայնի. և քահանաները անոր ողջակէզը ու խաղաղութեան զոհերը պիտի մատուցանեն, ու անիկա դրանը սեմին վրայ երկրպագութիւն պիտի ընէ ու ելլէ. և այն դուռը մինչև իրիկուն պիտի չգոցուի։ 3—Ու երկրին ժողովուրդը շաբաթ օրերը ու ամսագլուխներուն Տէրոջը առջեւ այս դրանը մուտքին մէջ երկրպագութիւն պիտի բնեն։

4—Ու իշխանին շաբաթ օրը Տէրոջը մատուցանելու ողջակէզը վեց անարատ գառ. ու մէկ անարատ խոյ ըլլայ։ 5—Ու խոյին համար հացի ընծայ մէկ արդու, ու գառներու համար հացի ընծայ ձեռքէն եկածը, և ամէն մէկ արդուի համար մէկ հին իւղ ֆոռոցներու։

6—Ու ամսագլուխն օրը՝ արջառներէն մէկ անարատ զուարակ ու վեց գառ ու մէկ խոյ, որոնք անարատ պիտի ըլլան։ 7—Ու զուարակին համար մէկ արդու, և խոյին համար մէկ արդու հացի ընծայ մատուցանէ, ու գառներու համար՝ ինչ որ ձեռքէն կու գայ, և ամէն մէկ արդուի համար մէկ հին իւղ ըլլայ։

8—Ու երբ իշխանը գայ՝ դրանը սրահին ճամբային մտնէ, և նոյն ճամբային ելլէ։ 9—Ու երկրին ժողովուրդը, հանդիսաւոր օրերուն մէջ երկրպագութիւն ընելու համար Տէրոջը առջեւ եկած ատենները, հիւսիսային դրանը ճամբային մտնողը հարաւային դրանը ճամբային ելլէ, ու հարաւային դրանը ճամբային մտնողը հիւսիսային դրանը ճամբային ելլէ. մտած դրանը ճամբային չդառնայ, հապա անոր դիմացինէն ելլէ։ 10—Ու իշխանը անոնց մտած ատենը անոնց հետ մտնէ, ու անոնց ելած ատենը անոնց հետ ելլէ։

11—Ու ասներու մէջ ու հանդիսաւոր օրերու մէջ հացի ընծան ամէն զուարակի համար արդու մը, և ամէն խոյի համար արդու մը ըլլայ, ու գառներու համար՝ ձեռքէն եկածը, ու ամէն մէկ արդուի համար մէկ հին իւղ ըլլայ։ 12—Ու եթէ իշխանը կամաւոր ողջակէզ մը, կամ կամաւոր խաղաղութեան զոհ մը Տէրոջը մատուցանելու ըլլայ, դէպ ի արեւելք նայող դուռը անոր բանան. ու անիկա իր ողջակէզը ու խաղաղութեան զոհը մատուցանէ՝ ինչպես շաբաթ օրը կը մատուցանէ, ու ելլէ. և անոր ելլելէն եօթը դուռը գոցեն։

13—Ու ամէն օր մէկ տարեկան անարատ գառնուկ մը Տէրոջը ողջակէզ մատուցանես, զանիկա առաւօտ մատուցանես։ 14—Ու անոր հետ ամէն առաւօտ արդուին վեցերորդ մասը հացի ընծայ մատուցանես, ու հիմէնին երրորդ մասը իւղ՝ նաիհին հետ խառնելու համար. ՈՒԽԻ յաւիտենական կանոնով Տէրոջը մշտնջենաւոր հացի ընծայ ըլլայ։ 15—Ու գառնուկը ու հացի ընծան ու իւղը ամէն առաւօտ մատուցանեն. ՈՒԽԻ մշտնջենաւոր ողջակէզ ըլլայ։

16—Տէր ԵՀՈՎԱ այսպէս կ՚ըսէ. Երբ իշխանը իր որդիներէն մէկուն պարգեւ տայ, անոր ժառանգութիւնը անոր որդիներուն ըլլայ. անիկա ժառանգութեան կալուածէ մը ըլլայ անոնց։ 17—Իսկ երբ իր ժառանգութենէն իր ծառաներէն մէկուն պարգեւ տայ, այն տարին անիկա մինչև թողութեան տարին անոր պիտի ըլլայ, ետքը իշխանին պիտի դառնայ. վասն զի անոր ժառանգութիւնը միայն իր որդիներուն պիտի ըլլայ։ 18—Ու իշխանը ժողովուրդին ժառանգութենէն չառնէ՝ զանոնք իրենց կալուածքէն զրկելով. իր որդիներուն իր կալուածքէն ժառանգութիւն տայ, որպէս զի իմ ժողովուրդս՝ ամէն մէկը իր կալուածքէն չցրուի։

19—Ու զիս դրանը քով եղող մուտքէն քահանաներուն դէպ ի հիւսիս նայող սուրբ սենեակները տարաւ, և ահա հոն հեռի կողմերը դէպ ի արեւմտեան ակղ մը կար։ 20—Ու ինծի ըսաւ, Ասիկա այն տեղն է՝ ուր քահանաները յանցանքի պատարագին ու մեղքի պատարագին դիւր պիտի խաչեն, ու հոն հացի ընծան պիտի եփեն, որ չըլլայ թէ գուրսի գաւիթը հանեն ու ժողովուրդը սրբրեն։ 21—Ու զիս գուրսի գաւիթը հանեց, ու զիս գաւիթին չորս անկիւններէն անցուց, և ահա գաւիթին ամէն մէկ անկիւնը մէկմէկ գաւիթ կար։ 22—Գաւիթին չորս անկիւններուն մէջ քառասուն [ՆՈՒՅՆ] երկայնութենէն ու երեսուն լայնութենէն չորեքանկի գոգաւոր գաւիթներ կային. չորսին չափը մէկ էր անկիւններուն մէջ։ 23—Ու անոնց բոլորտիքը, չորսին ալ բոլորտիքը, չէ՛ՓԷԼ կարգ մը կար, ու այն կարգերուն տակ չորեքանկի եփարաններ չինուած էին։ 24—Ու ինծի ըսաւ, Ասոնք եփոցներուն տեղերն են, ուր տանը պաշտօնեաները ժողովուրդին զոհը պիտի եփեն։

ԳԼ. ԽԷ

Ու զիս նորէն տանը դրանը առջեւ բերաւ, և ահա արեւելեան կողմէն տանը սեմին տակէն ջուրեր կ՚ելլէին, քանի տանը երեսը դէպ ի արեւելք էր. ու ջուրերը տանը աջ կողմին տակէն՝ ա-

*Կամ, պզտիկ

զանին հարաւային կողմն կ'իջնեն։ 2—եւ զիս հիւսիսային դրանը Ճամբայէն հանեց, ու զիս դարբի Ճամբան, դարբի դրանը արեւելք նայող Ճամբան, պաշտացուց. և ահա ալ կողմն չարբեր կը վազէին։

3—Ա՛յն մարդը որ իր ձեռքը լոր ուներ, դեպ ի արեւելք ելաւ, ու հազար կանգուն չափեց, և զիս չարերէն անցուց, — չարերը մինչև գարշապարները կ'երթէին։ 4—Հազար ևս չափեց, ու զիս չարերէն անցուց, — չարերը մինչև ծունկերը կ'երթէին. հազար ևս չափեց, ու զիս կ—ըերէն անցուց, և չարերը մինչև մէջքս կ'երթէին։ 5—Նորէն հազար ալ չափեց, — այնպէսի գետ մը եղած էր, որ չէի կրնար անցնիլ. վասն զի չարերը յորդեր էին, *— լողալու գետ մը եղեր էին, ուրկէ մարդ չէը կրնար անցնել՝ բայց միայն լողալով։

6—Ա՛յն ատեն ինծի ըսաւ, Ցեհաբը, որդի մարդոյ. և զիս տարաւ ու գետին եղերքը պարցուց։ 7—Եւ քանի որ հոն կը պարտէի, տեսայ որ գետին եղերքը մէկ կողմէն ու մէւս կողմէն խիստ շատ ծառեր կային։ 8—Ես ինծի ըսաւ, Ա՛յս չարերը արեւելեան կողմը կ'երթան ու անապատը կ'իջնեն ու ծովը կ'երթան. և ծովը ելլելով՝ անոր չարերը բժշկութիւն կը գտնեն։ 9—Եւ ԹԳեռն ամէն գացած տեղը ամէն չարժուն կենդանիները պիտի ապրին, ու ձուկերը խիստ շատ պիտի բլլան. քանզի այս չարերը հոն պիտի երթան, ու գետին ամէն գացած տեղը բժշկութիւն պիտի բլլայ, ու պիտի ապրին։ 10—Եւ անոր վրայ Ենգադիէ մինչև Ենեգլայիմ ձկնորսներ պիտի կայնին, հոն ուռկաններ փռելու տեղ պիտի բլլայ. ձուկերը տեսակ տեսակ պիտի բլլան, մեծ ծովուն ձուկերուն պէս խիստ շատ պիտի բլլան։ 11—Բայց անոր ապականուած տեղերը ու ճահիճները բժշկութիւն պիտի չգտնեն, անոնք աղի համար պիտի որոշուին։ 12—Ու գետին եղերքը՝ մէկ կողմէն ու մէւս կողմէն ամէն պտուղ ծառեր պիտի բուսնին, որոնց տերեւը պիտի չթափի ու պտուղը չհատնի. ամէն ամիս նորէն պտուղ պիտի տան, վասն զի անոր չարերը սրբարանէն կ'ելլէին. և անոնց պտուղը կերակուր համար, ու տերեւները բժշկութեան համար պիտի բլլան։

13—Տէր Եհովա այսպէս կ'ըսէ. Ա՛յս է երկրին սահմանը զոր գաւազ պիտի ժառանգէք Իսրայէլի տասներկու ցեղերուն համեմատ. (Յովսէփ երկու բաժին ունի։) 14—Ու զանիկա ամէն մարդ իր եղբօրը պէս պիտի ժառանգէ, վասն զի իմ ձեռքս վերցուցի որ զանիկա ձեր հայրերուն տամ. և այս երկիրը ձեզի ժառանգութիւն պիտի իյնայ։ 15—Ու երկրին սահմանը այս է. Հիւսիսային կողմը՝ մեծ ծովէն Ելթլոնի Ճամբան մինչև Սեդադ, Եմաթ, 16—Բերոթա, Սիբրայիմ՝ որ Դամասկոսի սահմանին ու Եմաթի սահմանին մէջտեղ է, — Հազէր Ա՛ռանի սահմանը եղող Ասերաթիկրանը, 17—Ու երկրին սահմանը ծովէն մինչև Ասար-Ենան՝ որ Դամասկոսի սահմանն է դեպ ի հիւսիս, նաև Եմաթի սահմանը պիտի բլլայ. և հիւսիսային կողմը —էն— ըլլայ։ 18—Ու արեւելեան կողմը՝ Աւրանի մէջէն ու Գաղաադի մէջէն ու Յորդանանէ Երէզ Իսրայէլի երկրին մէջէն՝ սահմանէն մինչև արեւելեան ծովը չափէք. ու արեւելեան կողմը —էն— ըլլայ։ 19—Եւ դեպ ի հարաւ հարաւային կողմը՝ Թամարէ մինչև Վիճաբանութեան ջուրերը Կադէսի մէջ՝ — մինչև մեծ ծովը երթալ պիտի բլլայ. և դեպ ի հարաւ հարաւային կողմը ասիկա բլլայ։ 20—Ու արեւմտեան կողմը մեծ ծովը պիտի բլլայ՝ սահմանէն մինչև Եմաթի դիմաց. արեւմտեան կողմը ասիկա բլլայ։

21—Եւ այս երկիրը ձեզի բաժնեք Իսրայէլի ցեղերուն համեմատ, 22—Ու զանիկա ժառանգութեան համար վիճակով բաժնեք՝ Թէ՛ ձեզի, և Թէ՛ ձեր մէջ բնակող ու ձեր մէջ զաւակներ ծնանող օտարականներուն. ու անոնք ձեզի բնակիներու պէս պիտի բլլան Իսրայէլի որդիներուն մէջ, — անոնք ձեզի հետ ժառանգութիւն պիտի առնեն Իսրայէլի ցեղերուն մէջ։ 23—Ու ո՛ր ցեղին մէջ որ օտարականը պանդխտացած է, հոն անոր ժառանգութիւն պիտի տաք, կ'ըսէ Տէր Եհովա։

*Նէբր. լողալու ջուրեր, անանցանելի գետ, Եղիք էին Կոմ.Երկու գետերուն

ԳԼ. ԽՐ

1 Ցեղերուն անուններուն ասոնք են, Հիւսիսի ծայրէն՝ Եթլոնի Ճամբան քով դէպ ի Եմաթ Երթալով՝ մինչև Ասարենան որ Դամասկոսի սահմանն է դէպ ի հիւսիս մինչև Եմաթի քով, ու արեւելեան կողմն մինչև արեւմտեան Դանի մէկ բաժին ըլլայ։ 2—Ու Դանի սահմանին քով, արեւելեան կողմն մինչև արեւմտեան կողմը, Ասերի մէկ բաժին ըլլայ։ 3—Ու Ասերի սահմանին քով, արեւելեան կողմն մինչև արեւմտեան կողմը, Նեփթալիմի մէկ բաժին ըլլայ։ 4—Ու Նեփթալիմի սահմանին քով, արեւելեան կողմն մինչև արեւմտեան կողմը, Մանասէի մէկ բաժին ըլլայ։ 5—Ու Մանասէի սահմանին քով, արեւելեան կողմն մինչև արեւմտեան կողմը, Եփրեմի մէկ բաժին ըլլայ։ 6—Ու Նեփթալիմի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը, Ռուբէնի մէկ բաժին ըլլայ։ 7—Ու Ղուբէնի սահմանին քով, արեւելեան կողմն մինչև արեւմտեան կողմը, Ցուդայի մէկ բաժին ըլլայ։

8—Ու Ցուդայի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը պիտի բլլայ այն ընծան՝ զոր պիտի նուիրեք, — ԱՒՒ— քառասնհինգ հազար եղէգ լայնութիւն, և միւս բաժիններէն մէկուն չափ երկայնութիւն պիտի ԱՒՒԱՆ, արեւելեան կողմէն մինչեւ արեւմտեան կողմը. և սրբարանը անոր մէջտեղը պիտի բլլայ։ 9—Տէրոջը նուիրելու ընծանիդ քառասնհինգ հազար երկայնութիւն, ու տասը հազար լայնութիւն ունենայ։ 10—Ու սուրբ ընծան ասոնց բլլայ, այսինքն քահանաներուն. հիւսիսին ԷրէՅՕՒՒՒ

դէպ ի արեւմուտք քանդերինգ հազարին դէմոց մինչև արեւմտեան սահմանը չեխ-բոհ բաժիններուն քով իչխանին համար ըլլայ։ Ասիկա պիտի ըլլայ սուրբ ընծան, ու տաճարին արքաքանը անոր մէկտեղը պիտի ըլլայ։ 22—Իչխանին բաժինին մէկտեղը եղող Ղեւտացւոց կալուածքին ու քաղաքին կալուածքին շուրջ՝ Յուդայի սահմանին ու Բենիամինի սահմանին մէկտեղ իչխանին պիտի ըլլայ։

23—Ու մնացած ցեղերուն՝ արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը, Բենիամինի մէկ բաժին ըլլայ։ 24—Ու Բենիամինի սահմանին քով, արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը, Շմաւոնի մէկ բաժին ըլլայ։ 25—Ու Շմաւոնի սահմանին քով արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը Իսաքարի մէկ բաժին ըլլայ։ 26—Ու Իսաքարի սահմանին քով արեւելեան կողմէն մինչեւ արեւմտեան կողմը Զաբուղոնի մէկ բաժին ըլլայ։ 27—Ու Զաբուղոնի սահմանին քով արեւելեան կողմէն մինչև արեւմտեան կողմը, Գադի մէկ բաժին ըլլայ։ 28—Ու Գադի սահմանին քով հարաւային կողմը դէպ ի հարաւ Էրէբին սահմանը, Թամարի հովէն մինչև Մէրիբաթ-Քեադեսի ջուրերը կազեմի մէջ — հովէն մեծ ծովը երթող հեղեղատը պիտի ըլլայ։

29—Այս է այն երկիրը զոր Իսրայէլի ցեղերուն վիճակով պիտի բաժնէք ժառանգութեան համար, ու անոնց բաժինները ասոնք են, կ՚ըսէ Տէր Եհովա։

30—Ու քաղաքին ելքերը ասոնք են. Հիւսիսային կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով, 31—(Ու քաղաքին դուռները Իսրայէլի ցեղերուն անուններուն համեմատ պիտի ըլլան.) երեք դուռ դէպ ի հիւսիս. մէկ դուռ Ռուբէնի, մէկ դուռ Յուդայի — մէկ դուռ Ղեւիի. 32—Ու արեւելեան կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով՝ երեք դուռ պիտի ըլլայ. մէկ դուռ Յովսէփի, մէկ դուռ Բենիամինի — մէկ դուռ Դանի. 33—Ու հարաւային կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով՝ երեք դուռ պիտի ըլլայ. մէկ դուռ Շմաւոնի, մէկ դուռ Իսաքարի — մէկ դուռ Զաբուղոնի. 34—Արեւմտեան կողմէն՝ չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով՝ երեք դուռ պիտի ըլլայ. մէկ դուռ Գադի, մէկ դուռ Ասերի — մէկ դուռ Նեփթաղիմի. 35—Բոլոր չրջապատը տասներեք հազար չափ պիտի ըլլայ. ու այն օրէն քաղաքին անունը *Եհովա-շամա պիտի ըլլայ։

*Ա-յ-ի-ն-, Տէրը հոն է. երեմ. գ. 17։ Յովել. գ. 21։ Զաք. բ. 10։ Յայտնութ. 3։ իբ. 3։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա

Յուդայի թագաւորին Յովակիմի թագաւորութեան երրորդ տարին Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Երուսաղէմ եկաւ, ու զանիկա պաշարեց։ 2—Ու Տէրը անոր ձեռքը տուաւ Յուդայի Յովակիմ թագաւորը, ու Աստուծոյ տանը անօթներուն մէկ մասը. և անիկա զանոնք Սենաար երկիրը, իր աստուծոյն տունը, տարաւ, ու անօթները իր աստուծոյն գանձատունը դրաւ։

3—Ու թագաւորը իր ներքինապետին Ասփանէզի ըսաւ որ Իսրայէլի որդիներէն ու թագաւորական սերունդէն և իշխաններէն՝ 4—Բնաւ արատ չունեցող, գեղեցիկ դէմքով ու ամէն խնաստութեան հմուտ, ու գիտութեան տեղեակ՝ հանճարեղ, և թագաւորին պալատին մէջ կայնելու կարողութիւն ունեցող պատկներ բերել, և անոնց՝ Քաղդեացւոց գիրը ու լեզուն սորվեցնել։ 5—Ու թագաւորը անոնց օրական ռաճիկ սահմանեց՝ թագաւորին ածիլ կերակուրէն ու իր խմած գինիէն, որպէս զի զանոնք երեք տարի այսպէս սնուցանեն, ու ետքը թագաւորին առջև կայնին։ 6—Ու անոնց մէջ էին Յուդայի որդիներէն Դանիէլ, Անանիա, Միսայէլ ու Ազարիա։ 7—Ու ներքինապետը անոնց անուններ դրաւ. Դանիէլի Բաղտասար, Անանիայի Սեդրաք, Միսայէլի Միսաք, ու Ազարիայի Աբեդնեգով դրաւ։

8—Ու Դանիէլ միտը դրաւ որ թագաւորին ածիլ կերակուրովը ու անոր խմած գինովը չպղծուի. և ներքինապետէն խնդրեց որ անպղծով ինքզինք չպղծէ։ 9—Ու Աստուած ներքինապետին առջև չնորհք ու գթութիւն գտնել տուաւ Դանիէլին։ 10—Ու ներքինապետը Դանիէլի ըսաւ, Ես կը վախնամ իմ Թագաւոր տէրոջմէս որ ձեր ուտելիքը ու խմելիքը սահմանեց. վասն զի ինչո՞ւ համար անիկա ձեր երեսները ձեզի հասակակից եղող ազգ երէնէրէն աւրաւած տեսնէ, ու գլխ թագաւորին առջև գլխապարտ ընէք։ 11—Ու Դանիէլ ըսաւ *մանահէմին, զոր ներքինապետը Դանիէլին, Անանիայի, Միսայէլի ու Ազարիայի վրայ գրեր էր։ 12—Ես կը խնդրեմ քեզի, փորձէ՛ ծառաներդ տասը օր փորձ, ու մեզի ուտելու համար ընդեղէն, ու խմելու համար ջուր տրուի։ 13—Ես քու առջեւդ մեր դէմքը, ու թագաւորին ածիլ կերակուրը ուտող ազգ դէմքը երևնան. և ինչպես տեսնես՝ անոր համեմատ ըրէ քու ծառաներուդ։ 14—Ու անիկա այս բանին համաձայն անոնց մասին ըրաւ, ու զանոնք տասը օր փորձեց։ 15—Ես տասը օրէն ետքը անոնց դէմքը՝ թագաւորին ածիլ կերակուրը ուտող ամէն ազգ դէմքէն աւելի ազէկ ու գէր երևցաւ։ 16—Ուստի անասելը անոնց ածիլ կերակուրը ու խմելու գինին կը վերցնէր, ու անոնց ընդեղէն կու տար։

17—Ու Աստուած այս չորս ազգ՝ ամէն գպրութեան ու խնաստութեան մէջ գիտութիւն ու հանճար տուաւ. ու Դանիէլ ամէն տեսիլքը ու երազը կը հասկնար։ 18—Ես այն օրերուն յիշնալէն ետքը որ թագաւորը հրաման ըրեր էր որ զանոնք բերեն, ներքինապետը զանոնք Նաբուգոդոնոսորի առջև տարաւ։ 19—Ու թագաւորը անոնց հետ խօսեցաւ, և անոնց ամէնուն մէջ Դանիէլի, Անանիայի, Միսայէլի ու Ազարիայի պէս չգտնուեցաւ. ու անոնք թագաւորին առջև կը կայնէին։ 20—Ու թագաւորը անոնց հարցուցած ամէն խնաստութեան ու գիտութեան վերաբերեալ բաներուն մէջ՝ զանոնք իր բոլոր թագաւորութեանը մէջ եղող բոլոր մոգերէն ու հմայզներէն տասնապատիկ գերազանց գտաւ։ 21—Ես Դանիէլ մինչև կիւրոս թագաւորին առաջին տարին մնաց։

*կամ, Մելտասրին

ԳԼ. Բ

Ե Նաբուգոդոնոսորի Թագաւորա-
Թեանը երկրորդ տարին Նաբուգոդոնո-
սոր երազներ տեսաւ, և անոր ոգին
խռովեցաւ. ու քունը փախաւ։ 2—Ու
Թագաւորը հրամայեց որ մոգերը, հմա-
յողները, կախարդները ու Քաղդեացիք-
ը կանչեն, որպէս զի Թագաւորին իր
երազները պատմեն. և անոնք եկան ու
Թագաւորին առջև կացնեցան։

3—Ու Թագաւորը անոնց ըսաւ,
Երազ տեսայ, ու իմ ոգիս կը խռովի որ
այն երազը գիտնամ։ 4—Ու Քաղդեա-
ները Թագաւորին *Ասորերէն ըսին, Ով
Թագաւոր, յաւիտեան ապրէ կեցիր. ըսէ
երազը քու ծառաներուդ, ու մենք —
Նոր մեկնութիւնը խմացնենք։ 5—Թա-
գաւորը պատասխան տուաւ ու Քաղդե-
ացիներուն ըսաւ, †Բանը ինծմէ եղաւ.
եթէ երազը ու անոր մեկնութիւնը ին-
ծի չյայտնէք, զուք կոր կոր պիտի
ըլլաք, ու ձեր տուները աղբանոց պիտի
ըլլան։ 6—Բայց եթէ երազը ու անոր
մեկնութիւնը ինծի խմացնէք, ինծմէ
պարգեւներ, տուրքեր ու շատ պատիւ
պիտի առնէք. ուրեմն երազը ու անոր
մեկնութիւնը ինծի խմացուցէք։ 7—Ա-
նոնք նորէն պատասխան տուին ու ըսին,
Թագաւորը Թող իսկ երազը իր ծառա-
ներուն, ու անոր մեկնութիւնը խմա-
ցընենք։ 8—Թագաւորը պատասխան
տուաւ ու ըսաւ, Ազիկ գիտեմ որ զուք
ժամանակը ծախու կ'առնէք, վասն զի
կը տեսնէք որ ‡բանը ինծմէ ելած է։
9—Բայց եթէ զուք երազը ինծի չյայտ-
նէք, ձեզի համար մէկ վճիռ կայ. վասն
զի զուք ձեր մէջ որոշեցիք որ իմ առ-
ջեւս սուտ ու ապականեալ խօսք մը
դրուցէք՝ մինչև որ ժամանակը փոխուի.
ուստի ըսէք ինծի երազը, որպէս զի
գիտնամ Թէ պիտի կարենաք անոր մեկ-
նութիւնը խմացնել։ 10—Քաղդեացիները
Թագաւորին առջև պատասխան տուին
ու ըսին, Երկրի վրայ այնպիսի մարդ
մը չկայ, որ կարող ըլլայ Թագաւորին
պահանջած բանը խմացնել. անոր հա-
մար բնաւ Թագաւոր մը, նախապար մը
կամ իշխան մը այսպիսի բան պա-
հանջած չէ մոգէ մը կամ հմայողէ մը
կամ Քաղդեայէ մը։ 11—Ու Թագաւո-
րին պահանջած բանը դժուար է, և ու-
րիշ մէկը չկայ որ զանիկա Թագաւորին
առջև խմացնէ, բայց եթէ աստուածնե-
րը որ մեղեցց մէջ չեն բնակիր։

12—Ասոր վրայ Թագաւորը սրտողե-
ցաւ ու խիստ բարկացաւ, և հրամայեց
որ Բաբելոնի բոլոր իմաստունները կոտ-
րեն։ 13—Ու հրամանը ելաւ, և իմաս-
տուններուն կը կոտրտէին. ու փնտռեցին
Դանիէլը ու անոր ընկերները որպէս զի
մեռցնեն։ 14—Այն ատեն Դանիէլ ի-
մաստութեամբ ու խոհեմութեամբ խօ-
սեցաւ Թագաւորին գահակալութեան Արի-
օքի հետ, որ Բաբելոնի իմաստուններուն
կոտրելու ելեր էր։ 15—Ու Թագաւորին
իշխանին Արիօքի խօսեցաւ ու ըսաւ,
Ինչո՞ւ համար այս հրամանը Թագաւո-
րին երեսէն արագութեամբ ելաւ. այն ատեն
Արիօքը բանը Դանիէլի յայտնեց։ 16—
Ու Դանիէլ մտաւ ու Թագաւորէն խընդ-
րեց որ իրեն ժամանակ տայ, որպէս զի
մեկնութիւնը Թագաւորին խմացնէ։
17—Ու Դանիէլ իր տունը գնաց, և այս
բանը իր ընկերներուն, Անանիայի, Մի-
սայէլի ու Ազարիայի, յայտնեց։ 18—
Որպէս զի այս գաղտնիքին համար եր-
կինքի Աստծմէն գթութիւն խնդրեն,
որպէս զի Դանիէլը ու անոր ընկերները
Բաբելոնի մեռ իմաստուններուն հետ
չկորսնցնեն։

19—Ու գաղտնիքը գիշերուան տե-
սլքի մէջ Դանիէլի յայտնուեցաւ. այն
ատեն Դանիէլ երկինքի Աստուածը օրհ-
նեց։ 20—Դանիէլ խօսեցաւ ու ըսաւ,
Աստուծոյ անունը յաւիտեան յաւի-
տենից օրհնեալ ըլլայ, վասն զի իմաս-
տութիւնը ու զօրութիւնը անորն են.
21—Ու աւեններն ու ժամանակները
փոխողը, Թագաւորներ վերցնողը ու
Թագաւորներ դնողը անիկա է. անի-
կա իմաստուններուն իմաստութիւն կու-
տայ, ու հանճարեղներուն՝ գիտու-
թիւն. 22—Խորունկ ու ծածկուած
բաները ինք կը յայտնէ, մութի մէջ ե-
ղածը գիտէ, ու լոյսը անոր քով կը
բնակի։ 23—Ես քեզի գոհութիւն ու
փառք կը մատուցանեմ, ով իմ Հայրե-
րուս Աստուածը, որ ինծի իմաստութիւն
ու զօրութիւն տուիր, ու հիմա ինծի
դիացուցիր ինչ որ քեզմէ խնդրեցինք,
քանզի Թագաւորին բանը մեզի գիա-
ցուցիր։

24—Ուստի Դանիէլ Արիօքի մտաւ
եաս, զոր Թագաւորը դրեր էր Բաբելո-
նի իմաստունները կորնչեցնելու. գնաց
ու անոր այսպէս ըսաւ. Բաբելոնի իմաս-
տունները մի կորնչեցներ, զիս Թագաւո-
րին առջև տար, ու մեկնութիւնը Թա-
գաւորին խմացնեմ։ 25—Այն ատեն
Արիօք արագութեամբ Դանիէլը Թագաւո-
րին առջև հանեց, ու անոր այսպէս
ըսաւ. Հրեաստանի գերիներէն մարդ մը
գտայ, որ մեկնութիւնը պիտի գիացնէ
Թագաւորին։ 26—Պատասխան տուաւ
Թագաւորը ու ըսաւ Դանիէլին, որուն
անունը Բալթասարաբ էր—ը, Կա-
րո՞ղ ես զուն իմ տեսած երազս ու
անոր մեկնութիւնը ինծի գիացնել։

27—Դանիէլ Թագաւորին առջև պա-
տասխան տուաւ ու ըսաւ, Թագաւորին
հարցուցած գաղտնիքը իմաստուններ,
հմայողներ, մոգեր — բաղդ նայողնե-
րը Թագաւորին յայտնելու կարող չեն.
28—Բայց երկինքի մէջ գաղտնիքներ
յայտնող Աստուած կայ, ու Նաբու-
գոդոնոսոր Թագաւորին կը յայտնէ ինչ որ
վերջին օրերը պիտի ըլլայ։ Երազդ ու
անկողնիդ մէջ գլխուդ տեսիլքը ասիկա
է. 29—Զուն, ով Թագաւոր, քու ան-
կողնիդ մէջ կը մտածէիր Թէ ապա-
կա՛ եաքը ինչ պիտի ըլլայ. ու գաղտնիքներ
յայտնողը ըլլալու բանը քեզի գիացուց։
30—Ես այս գաղտնիքը՝ ոչ Թէ ամէն
ապրողներէն աւելի իմաստութիւն ունե-
նալուս համար ինծի յայտնուեցաւ, հա-
պա մեկնութիւնը Թագաւորին գիացնե-
լու համար, և որպէս զի զուն քու սրտ-
մտիդ խորհուրդները գիտնաս։

31—Զուն, ով Թագաւոր, կը տես-
նէիր որ ահա մեծ արձան մը կար. այս
մեծ ու խիստ պայծառ արձանը քու
դիմացդ կացներ էր, և անոր երեւոյթը
ահաւոր էր։ 32—Այս արձանին գլուխը
զուտ ոսկէ, անոր կուրծքը ու թեւերը
արծաթէ, ծիլքը ու ազդրերը պղնձէ,
33—Սրունքները երկաթէ, ոտքե-

րուն մէկ մասը կաւէ էր։ 34—Զուն կը
տեսնէիր, մինչև քար մը կարու եղաւ
առանց ձեռքի, ու այն արձանին երկաթ-
է ու կաւէ ոտքերուն զարկաւ, ու զա-
նոնք փշրեց։ 35—Այն ատեն երկաթը,
կաւը, պղինձը, արծաթը ու ոսկին մէկ-
տեղ փշրուեցան, և ամառուան կալերուն
մէջեղին պէս եղան. ու հովը զանոնք տա-
րաւ, ու ամենեքին անոնց տեղ մը չգըտ-
նուեցաւ. բայց արձանը զարնող քարը
մեծ լեռ մը եղաւ, ու բոլոր երկիրը լե-
ցուց։ 36—Երազը այս է, ու Թագաւո-
րին առջև անոր մեկնութիւնը ըսենք։

37—Ով Թագաւոր, զուն Թագաւո-
րաց Թագաւոր ես, վասն զի երկինքի
Աստուածը քեզի Թագաւորութիւն, կա-
րողութիւն, զօրութիւն ու պատիւ տուեր
է. 38—Ու մարդոց որդիները բոլոր
բնակած տեղերուն մէջ գազանի գազան-
ները ու երկինքի թռչունները քու ձեռ-
քդ տուեր է, անոնց ամէնուն վրայ
քեզ իշխան դրեր է. այն ոսկի գլուխը
զուն ես։ 39—Ու քեզմէ ետքը ուրիշ
Թագաւորութիւն մը պիտի ելլէ քեզմէ
ցած, ու պղնձէ ուրիշ երրորդ Թագա-
ւորութիւն մը՝ որ բոլոր երկրին պիտի
տիրէ։ 40—Ու չորրորդ Թագաւորու-
թիւնը երկաթի պէս ամուր պիտի ըլլայ.
— ինչպէս երկաթը ամէն բան կը փշրէ
ու կը մաշէ, տիկա ալ՝ այս ամէն բա-
ները կոտրող երկաթին պէս փշրելով
պիտի կոտրէ։ 41—Ու որովհետև ոտքե-
րը ու մատերը՝ մէկ մասը բրուտի կաւէ
ու մէկ մասը երկաթէ տեսար, այն Թա-
գաւորութիւնը պիտի բաժնուի, բայց
երկաթի պնդութենէն բան մնայ
նենաս, քանզի երկաթը տղմուտ կաւի
հետ խառնուած տեսար։ 42—Ու ոտքե-
րուն մատերուն մէկ մասը երկաթէ ու
մէկ մասը կաւէ ըլլալը՝ այս է որ այն
Թագաւորութեանը մէկ մասը ամուր՝ ու
մէկ մասը դիւրաբեկ պիտի ըլլայ։ 43—
Ու տղմուտ կաւին հետ երկաթը խառ-
նուած տեսնելդ՝ այս է որ անոնք մար-
դոց սերունդին հետ պիտի խառնուին,
բայց անոնք իրարու պիտի չմիակցին,
ինչպես երկաթը կաւին հետ չխառնուիր։

44—Ու այն Թագաւորներուն օրերը
երկինքի Աստուածը Թագաւորութիւն
մը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի

*Կամ, Քաղդէացիներէն
†Կամ, Հրամանը ‡Կամ, հրամանը

չաբի, և այս Թագաւորութիւնը ուրիշ ժողովրդի պիտի չիջոյ. անկից այս բոլոր Թագաւորութիւնները պիտի փչրի ու պիտի հաստնի, ու ինք յաւիտեան պիտի մնայ։ 45 Որովհետև դուն առանց ձեռքի լեռնէն կարած քար մը տեսար, և անկից երկաթը, պղինձը, կաւը, արծաթը ու ոսկին փչրեց, մեծ Աստուածը ապկի եղաք ինչ. ըլլալիքը Թագաւորին դիացուց. ու երազը ճշմարիտ է, և անոր մեկնութիւնը՝ հաւատարիմ։

46—Այն ատեն Նաբուգոդոնոսոր Թագաւորը իր երեսին վրայ ինկաւ. ու Դանիէլի երկրպագութիւն բրաւ, և հրամայեց որ ընծայ ու անույշ հոտեր մատուցանեն անոր։ 47—Ու Թագաւորը Դանիէլին պատասխան տուաւ ու ըսաւ, Իրաւցընէ ձեր Աստուածը ինք է աստուածներուն Աստուածը, և Թագաւորներուն Տէրը, ու գաղտնիքները յայտնող, քանզի դուն կարող եղար այս գաղտնիքը յայտնել։ 48—Այն ատեն Թագաւորը մեծցուց Դանիէլը, ու անոր շատ ու մեծ պարգեւներ տուաւ, և զանիկա Բաբելոնի բոլոր գաւառին վրայ կառավարիչ ու Բաբելոնի բոլոր իմաստուններուն գլխաւորներուն վրայ իշխան դրաւ։ 49—Ու Դանիէլ Թագաւորին խնդրեց, ու Բաբելոնի գաւառին գործերուն վրայ Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը դրաւ. ու Դանիէլ Թագաւորին դուռն էր։

ԳԼ. Գ

1 Նաբուգոդոնոսոր Թագաւորը ոսկիէ արձան մը չինեց, անոր բարձրութիւնը վաթսուն կանգուն ու լայնութիւնը վեց կանգուն. զանիկա Բաբելոնի գաւառը, Դուրա դաշտին մէջ, կանգնեց։ 2 Ու Նաբուգոդոնոսոր Թագաւորը հրամայ ղրկեց՝ կուսակալները, նախարարները, կառավարիչները, դատաւորները, գանձապետները, խորհրդականները, օրէնսգէտները ու գաւառներուն բոլոր իշխանները ժողովելու, որպէս զի Նաբուգոդոնոսոր Թագաւորին կանգնած արձանին նաւակատիքին գան։ 3 Այն ատեն կուսակալները, նախարարները, կառավարիչները, գաւառներուն բոլոր իշխանները ժողովուեցան, որպէս զի Նաբուգոդոնոսոր Թագաւորին կանգնած արձանին նաւակատիքին ժողվուեցան, ու Նաբուգոդոնոսորի կանգնած արձանին առջև կայնեցան։

4 Ու մունետիկը ուժով կը կանչէր, Ով ժողովուրդներ, ազգեր ու լեզուներ, ձեզի կը պատուիրեմ. 5 Երբ փողին, սրինգին, քնարին, չէթակին, տաւիղին, սրիկին ու ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսէք, Նաբուգոդոնոսոր Թագաւորին կանգնած ոսկի արձանին առջև իյնաք ու երկրպագութիւն ընէք. 6 Ու ով որ չիյնայ ու երկրպագութիւն չընէ, նոյն ժամուն բորբոքած կրակի հնոցին մէջ պիտի նետուի։ 7 Ուստի երբ բոլոր ժողովուրդները փողին, սրինգին, քնարին, չէթակին, տաւիղին ու ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսեցին, բոլոր ժողովուրդները, ազգերը ու լեզուները կ'իյնային, և Նաբուգոդոնոսոր Թագաւորին կանգնած ոսկի արձանին երկրպագութիւն կ'ընէին։

8 Ուստի այն ատեն քանի մը Քաղդեացի մարդիկ մօտեցան. ու Հրեաներուն վրայով ամբաստանութիւն ըրին. 9 Նաբուգոդոնոսոր Թագաւորին խօսեցան ու ըսին, Ով Թագաւոր, յաւիտեան ողջ կեցիր. 10 Դուն, ով Թագաւոր, հրաման ըրիր որ ամէն մարդ որ փողին, սրինգին, քնարին, չէթակին, տաւիղին, սրիկին և ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսէ, իյնայ ու ոսկի արձանին երկրպագութիւն ընէ. 11—Ու ով որ չիյնայ ու երկրպագութիւն չընէ, բորբոքած կրակի հնոցին մէջ նետուի։ 12—Քանի մը Հրեայ մարդիկ կան, զորոնք դուն Բաբելոնի գաւառին գործերուն վրայ դրիր, այսինքն Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով, այս մարդիկը քեզ բանի տեղ չեն սեպեր, ով Թագաւոր. քու աստուածներդ չեն պաշտեր, և քու կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չեն ըներ։

13—Այն ատեն Նաբուգոդոնոսոր սրտմտութեամբ և բարկութեամբ հրամայեց որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը բերեն։ ուստի այն մարդիկը

Թագաւորին առջև բերին։ 14—Պատասխան տուաւ Նաբուգոդոնոսոր ու անոնց ըսաւ, Ով Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով, խորհրդո՞վ է որ իմ աստուածներուն չէք պաշտեր, և իմ կանգնած ոսկի արձանիս երկրպագութիւն չէք ըներ։ 15—Հիմա եթէ պատրաստ էք փողին, սրինգին, քնարին, չէթակին, տաւիղին, սրիկին ու ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսած ատենդ իյնալու ու իմ չինած արձանիս երկրպագութիւն ընելու, ա՛խ։ բայց եթէ երկրպագութիւն չընէք, նոյն ժամուն՝ բորբոքած կրակի հնոցին մէջ պիտի նետուիք. և ո՞վ է այն Աստուածը որ ձեզ իմ ձեռքէս պիտի ազատէ։

16—Պատասխան տուին Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով, ու Թագաւորին ըսին, Ով Նաբուգոդոնոսոր, այս բանին վրայով քեզի պատասխան տալու հարկաւորութիւն մը չունինք։ 17—Ահա մեր պաշտած Աստուածը մեզ բորբոքած կրակի հնոցէն ազատելու կարող է. քու ձեռքդ ալ Դէդ պիտի ազատէ, ով Թագաւոր։ 18—Ապա թէ ոչ՝ քեզի յայտնի ըլլայ, ով Թագաւոր, որ մենք քու աստուածներդ չենք պաշտեր, և քու կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չենք ըներ։

19—Այն ատեն Նաբուգոդոնոսոր բարկութեամբ լեցուեցաւ, ու անոր երեսին երեւոյթը փոխուեցաւ Սեդրաքին, Միսաքի ու Աբեդնագովի վրայ, և պատասխան տալով՝ հրամայեց որ հնոցը վառելու սովորութենէն եօթնապատիկ աւելի վառեն։ 20—Ու իր զօրքին մէջ եղող զօրաւոր մարդոցը հրամայեց որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը կապեն, ու բորբոքած կրակի հնոցին մէջ նետեն։ 21—Այն ատեն այս մարդիկը իրենց անդրավարտիքներովը, բաճկոններովը, վերարկուներովը ու ուրիշ հանդերձներովը կապեցին, ու բորբոքած կրակի հնոցին մէջ նետեցին։ 22—Ու Թագաւորին հրամանին սաստիկ ըլլալուն՝ ու հնոցին չատ տաքցած ըլլալուն համար, Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը վերցնող մարդիկը կրակին բոցը սպաննեց։ 23—Ու այս երեք մարդիկը, Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով, կապուած իյնան բորբոքած կրակի հնոցին մէջ։

24—Այն ատեն Նաբուգոդոնոսոր Թագաւորը ապշած արտարձագ ոտք եկաւ, իր խորհրդականներուն խօսեցաւ ու ըսաւ, Մենք կրակին մէջ երեք կապուած մարդ չնետեցի՞նք. անոնք պատասխան տուին ու Թագաւորին ըսին, Այո, ով Թագաւոր։ 25—Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ահա ես կրակին մէջ չորս արձակուած մարդ կը տեսնեմ որ կը քալեն, անոնք ամենևին վնաս մը չեն քաշեր. ու չորրորդին դէմքը աստուածներու որդիի մը կը նմանի։ 26—Այն ատեն Նաբուգոդոնոսոր բորբոքած կրակի հնոցին դրանը մտնելով՝ խօսեցաւ ու ըսաւ, Ով Բարձրեալ Աստուծոյ ծառաները, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, գուրս ելէք ու հոս եկէք. Այն ատեն Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով կրակին մէջէն ելան։ 27—Ու կուսակալները, նախարարները ու կառավարիչները ու Թագաւորին խորհրդականները ժողվուեցան, և տեսան այս մարդիկը, որոնց մարմիններուն վրայ կրակը ամենևին չթրծեց, ու անոնց գլխուն մէկ մազը չխանձեցաւ, ու անոնց անդրավարտիքները գոյներնին չեփոխեցին. անոնց վրայ կրակին հոտը անգամ չկար։

28—Պատասխան տուաւ Նաբուգոդոնոսոր ու ըսաւ, Օրհնեալ ըլլայ Սեդրաքի, Միսաքի ու Աբեդնագովի Աստուածը, որ իր հրեշտակը ղրկեց, ու իր ծառաները ազատեց. վասն զի անորապաւինելով՝ Թագաւորին խօսքը անարգեցին, ու իրենց մարմինները չուխ տուին, որպէս զի իրենց Աստուածէն զատ ուրիշ աստուծոյ մը ծառայութիւն ու երկրպագութիւն չընեն։ 29—Արդ ես հրաման կու տամ որ ամէն ժողովուրդ, ազգ ու լեզու՝ որ Սեդրաքի, Միսաքի ու Աբեդնագովի Աստուծոյն դէմ սխալ բան մը ըսէ, կոր կոր ըլլայ, ու անոր տունը աղբանոց ըլլայ. վասն զի ուրիշ աստուած չկայ, որ կարող ըլլայ այսպէս ազատել։ 30—Այն ատեն Թագաւորը աւելի մեծցուց Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը Բաբելոնի գաւառին մէջ,

Գլ. Դ

Նաբուգոդոնոսոր թագաւոր բոլոր երկրին վրայ բնակող բոլոր ժողովուրդներուն, ազգերուն ու լեզուներուն. Ձեր խաղաղութիւնը շատնայ։ 2—Իմ առջեւս հաճոյ երեւցաւ որ բարձրեալ Աստուծոյն ինծի ըրած նշանները ու հրաշքները յայտնեմ։ 3—Անոր նշանները ի՛նչ մեծ, ու հրաշքները ի՛նչ զօրաւոր են. անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, ու անոր իշխանութիւնը դարէ դար կը մնայ։

4—Ես Նաբուգոդոնոսոր երբ իմ տանս մէջ հանգիստ էի, ու պալատիս մէջ կը զուարճանայի, 5—երազ տեսայ, որ զիս վախցուց. և անկողնիս վրայ իմ խորհուրդներս ու իմ գլուխս տեսիլքները զիս խռովեցուցին։ 6—Ուստի հրամայուածքիս բոլոր իմաստունները իմ առջեւս բերելու հրաման ըրի, որպէս զի անոնք ինծի երազին մեկնութիւնը գիտցնեն։ 7—Այն ատեն մոգերը, հմայողները, Քաղդեացիները ու բաղդ նայողները եկան, ու ես երազը անոնց առջեւ ըսի. բայց անոնք չկրցան մեկնութիւնը ինծի գիտցընել։ 8—Ու վերջապէս Դանիէլ առջեւս եկաւ, որուն անունը իմ աստուծոյս անուանը համեմատ Բաղտասասար կը կոչուի, և որուն ներսիդին սուրբ աստուածներուն հոգին կայ, ու անոր առջեւ երազը պատմեցի ու ըսի, 9—Ով մոգերուն իշխանը Բաղտասասար, որովհետեւ գիտեմ որ քու ներսիդիդ սուրբ աստուածներուն հոգին կայ, ու քեզի բնաւ գաղտնիք մը նեղութիւն չտար. ահա տեսած երազիս տեսիլքները, ու դուն անոնց մեկնութիւնը ըսէ։

10—Իմ անկողնիս մէջ գլուխս տեսիլքները ասոնք էին. Ես կը տեսնէի որ ահա երկրի մէջ ծառ մը կար, ու անոր բարձրութիւնը մեծ էր։ 11—Այն ծառը մեծցաւ և ուժովցաւ, ու անոր բարձրութիւնը մինչեւ երկինք հասաւ. ու անիկա բոլոր երկրի ծայրերէն կը տեսնուէր։ 12—Անոր տերեւները գեղեցիկ, ու պտուղը առատ էր, և անոր վրայ ամէնուն համար կերակուր կար. դաշտի անասունները անոր շուքին տակ կը նստէին, ու երկինքի թռչունները անոր ոստերուն վրայ կը բնակէին, և ամէն մարմին անկէ կը կերակրուէր։ 13—Անկողնիս վրայ գլուխս տեսիլքներուն մէջ կը տեսնէի որ ահա երկինքէն *սուրբ պահապան մը* իջաւ. 14—Անիկա ուժգնով կանչեց ու այսպէս ըսաւ. Ծառը կտրեցէք, ու ոստերը մկրտէ հանեցէք. տերեւները թօթափեցէք, ու պտուղները ցրուեցէք. անոր տակէն գնացնասունները, ու ոստերէն թռչունները փախչին. 15—Բայց արմատներուն բունը երկրի մէջ թողուցէք, ու երկաթէ և պղնձէ կապանքով դաշտի խոտերուն մէջ ըլլայ, ու երկինքի ցօղովը թրջուի, և անոր բաժինը անասուններու հետ երկրի խոտին մէջ ըլլայ։ 16—Անոր սիրտը մարդու սրտէն փոխուի, ու անոր անասունի սիրտ տրուի, և անոր վրայէն եօթը ժամանակ անցնի։ 17—Այս բանը պահապաններուն վճիռովն է, ու այս խնդիրքը սուրբերուն խօսքովն է. որպէս զի ապրողները գիտնան թէ Բարձրեալը կը տիրէ մարդոց թագաւորութեանը վրայ, ու զանիկա իր ուզածին կու տայ, ու անոր վրայ մարդոց անարգ կը դնէ։ 18—Ես Նաբուգոդոնոսոր թագաւոր այս երազը տեսայ, ու դուն, ով Բաղտասասար, անոր մեկնութիւնը ըսէ. վասն զի իմ թագաւորութեանս բոլոր իմաստունները կարող չեղան անոր մեկնութիւնը ինծի գիտցնել. բայց դուն կարող ես, քանզի քու ներսիդիդ սուրբ աստուածներուն հոգին կայ։

19—Այն ատեն Դանիէլ, որուն անունը Բաղտասասար էր, †մէկ ժամու չափ հիացած մնաց, ու անոր խորհուրդները զանիկա խռովեցուցին. Պատասխան տուաւ թագաւորը ու ըսաւ, Ով Բաղտասասար, երազը կամ անոր մեկնութիւնը քեզ չհամոզեցնէ. պատասխան տուաւ Բաղտասասար ու ըսաւ, Ով տէր իմ, երազը քեզ ատելողներուն՝ ու անոր մեկնութիւնը քու թշնամիներուդ ըլլայ։ 20—Այն տեսած ծառդ որ մեծցաւ և ուժովցաւ, ու անոր բարձրութիւնը մինչեւ երկինք հասաւ, ու ամէն բոլոր երկրի մէջ կը տեսնուէր, 21—ու անոր տերեւները գեղեցիկ, ու պտուղը առատ էր, ու անոր վրայ ամէնուն համար կերակուր կար, անոր տակ դաշտի անասունները կը բնակէին, ու անոր ոստերուն վրայ երկինքի թռչուները կը կենային, 22—Անիկա դուն ես, ով թագաւոր, որ մեծցար և ուժովցար. և քու մեծութիւնդ բարձրացաւ ու մինչեւ երկինք հասաւ, և քու իշխանութիւնդ մինչեւ երկրի ծայրերը հասաւ, 23—ու որովհետեւ թագաւորը սուրբ պահապան մը տեսաւ որ երկինքէն իջաւ, ու ըսաւ, Ծառը կտրեցէք ու զանիկա ատելեցէք, բայց անոր արմատներուն բունը երկրի մէջ թողուցէք, ու երկաթէ և պղնձէ կապանքով դաշտի խոտերուն մէջ ըլլայ, ու երկինքի ցօղովը թրջուի, և անոր բաժինը դաշտի անասուններուն հետ ըլլայ, մինչեւ անոր վրայէն եօթը ժամանակ անցնի. 24—Այս է մեկնութիւնը, ով թագաւոր, և այս է բարձրեալին վճիռը՝ որ իմ թագաւոր տէրոջս վրայ հասած է. 25—Քեզ մարդոց մէջէն պիտի վռնտեն, և քու բնակութիւնդ դաշտի անասուններուն հետ պիտի ըլլայ. ու քեզ պիտի խոտին որ արջառներու պէս խոտ ուտես, ու երկինքի ցօղովը թրջուիս. և քու վրայէդ եօթը ժամանակ պիտի անցնի, մինչեւ գիտնաս թէ մարդոց թագաւորութեանը վրայ բարձրեալը կը տիրէ, ու զանիկա իր ուզածին կու տայ. 26—Ու որ ըսուեցաւ թէ այն ծառին արմատներուն բունը թողուն, —ա՛ռ ե՛ր քու երկնաւոր իշխանութիւնը ճանչնալէդ ետքը՝ քու թագաւորութիւնդ քեզի պիտի հաստատուի։ 27—Անոր համար, ով թագաւոր, խոտ իմ խրատս քեզի հաճոյ երեւնայ, քու մեղքերդ արդարութեամբ ու քու անօրէնութիւններդ ողորմութիւնով *ինկնի ձգէ*. թերեւս հանգստութիւնդ երկնցնայ։

28—Այս ամէնը Նաբուգոդոնոսոր թագաւորին վրայ եկաւ։ 29—Տասներկու ամիսէն ետքը երբ Բաբելոնի թագաւորութեան պալատին վրայ կը ձեւ-

*Թարգ. պահապան ու սուրբ մը

†Կամ, ժամանակ մը

ներէր բոլոր երկրի մէջ կը տեսնուէր, 30—թագաւորը խօսեցաւ ու ըսաւ, Այս չէ՞ այն մեծ Բաբելոնը զոր ես իմ զօրութիւնովս ու կարողութիւնովս իմ մեծութեանս փառքին համար թագաւորութեան տուն շինեցի։ 31—Երբ խօսքը դեռ թագաւորին բերանն էր, երկինքէն ձայն մը իյնաւ, Քեզի կ'ըսուի, ով Նաբուգոդոնոսոր թագաւոր, թագաւորութիւնը քեզմէ գնաց. 32—Ու քեզ մարդոց մէկէն պիտի վռնտեն, և քու բնակութիւնդ դաշտի անասուններուն հետ պիտի ըլլայ, քեզ պիտի խոտին որ արջառներու պէս խոտ ուտես, ու քու վրայէդ եօթը ժամանակ պիտի անցնի, մինչեւ գիտնաս թէ մարդոց թագաւորութեանը վրայ բարձրեալը կը տիրէ, ու զանիկա իր ուզածին կու տայ։ 33—Նոյն ժամուն մէկէն այս խօսքը Նաբուգոդոնոսորի վրայ կատարուեցաւ, ու մարդոց մէկէն վռնտուեցաւ, ու արջառներու պէս խոտ կ'ուտէր, և անոր մարմինը երկինքի ցօղովը կը թրջուէր, մինչեւ որ մազերը արծիւներու էֆոդրէրքան պէս, ու ղոյնդները թռչուններու հաւկիթքան պէս երկնցան։

34—Ու այն օրերուն վերջը ես Նաբուգոդոնոսոր աչքերս երկինք վերցուցի, ու խելքս ինծի դարձաւ, և Բարձրեալը օրհնեցի, ու գովեցի ու փառաւորեցի զանիկա որ յաւիտեան կենդանի է, ու անոր իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է, և անոր թագաւորութիւնը դարէ դար կը մնայ։ 35—Ու երկրի բոլոր բնակիչները ոչինչի պէս կը սեպուին. և անիկա երկինքի զօրքերուն մէջ ու երկրի բնակիչներուն մէջ իր ուզածը կը գործէ. ու անոր ձեռքին դէմ դնող, կամ անոր †ին կ'ըսէ՝ ըսող չկայ։ 36—Այն ատեն խելքս ինծի դարձաւ, ու իմ թագաւորութեանս պատուոյն հետ իմ փառքս ու մեծվայելչութիւնս ինծի դարձաւ, և իմ խորհրդականներս ու մեծամեծներս զիս փնտռեցին, ու իմ թագաւորութեանս մէջ հաստատուեցայ և ինծի աւելի մեծ վեհափառութիւն տրուեցաւ։

37—Հիմա ես Նաբուգոդոնոսոր երկինքի թագաւորը կը գովեմ, և կը բարձրացնեմ ու կը փառաւորեմ, վասն

*Կամ, քաւէ

զի անոր բոլոր գործերը ճշմարտութիւն, ու ճամբաները իրաւունք են, ու անիկա կարող է ամբարտաւանութեամբ քալողները ցածցնել։

Գլ. Ե

Բաղտասար թագաւորը իր մեծամեծներուն հազար հոգիի մեծ կոչունք բրաւ, ու հազարին առջև գինի խմեց։ 2—Ու երբ բաղտասար գինիին զուարթացաւ, հրամայեց որ իր Հօրը Նաբուգոդոնոսորի նրուագներէն առնուին հանած ոսկիէ ու արծաթէ անօթները բերուին, որպէս զի թագաւորը ու իր մեծամեծները, իր կիները ու հարճերը անոնցմով խմեցին։ 3—Ուստի երուսաղէմ եղող Աստուծոյ տանը առնարէն հանած ոսկիէ անօթները բերին, և թագաւորը ու իր մեծամեծները, իր կիները ու հարճերը անոնցմով խմեցին։ 4—Անոնք գինի խմեցին, ու ոսկիէ, արծաթէ, պղնձէ, երկաթէ, փայտէ ու քարէ աստուածները գովեցին։

5—Նոյն ժամուն մէկ մարդու ձեռքի մատներ ելան, ու աչառանային դիմաց, թագաւորական պալատին պատին ծեփին վրայ, գրեցին և թագաւորը այն գրող ձեռքին թաթը տեսաւ։ 6—Ան ատեն թագաւորին դէմը փոխուեցաւ, ու անոր խորհուրդները զանիկա խռովեցուցին, այնպէս որ մէջքին յօդուածները կը փակուէին ու ծունկերը իրարու կը զարնէին։ 7—Թագաւորը բարձրաձայն ազդակեց որ հմայողները, Քաղդեացիները ու բաղդ նայողները բերուին։ Թագաւորը Բաբելոնի իմաստուններուն խօսեցաւ ու ըսաւ, Ով որ այս գիրը կարդայ ու մեկնութիւնը ինծի իմացնէ, ծիրանի պիտի հագնի ու անոր պարանոցը ոսկի մանեակ պիտի դրուի, և թագաւորութեան մէջ երրորդ իշխան պիտի ըլլայ։ 8—Ուստի թագաւորին բոլոր իմաստունները եկան, բայց գիրը կարդալու ու անոր մեկնութիւնը թագաւորին գիտցնելու կարող չեղան։ 9—Ան ատեն Բաղտասար թագաւորը սաստիկ խռովեցաւ ու երեսին գոյնը փոխուեցաւ. անոր մեծամեծներն ալ ապշած մնացին։ 10—Թագուհին թագաւորին ու անոր մեծամեծներուն խօսքերուն պատճառաւ կոչունքին տունը եկաւ, — թագուհին խօսեցաւ ու ըսաւ, Ով թագաւոր, յաւիտեան ողջ կեցիր. քու խորհուրդներդ քեզ չխռովեցնեն, ու երեսիդ գոյնը չփոխուի։ 11—Քու թագաւորութեանդ մէջ մարդ մը կայ, ու անոր ներսիդին սուրբ աստուածներուն հոգին կայ, և քու հօրդ օրերը անոր մէջ լոյս, հանճար, ու աստուածներուն իմաստութեանը պէս իմաստութիւն գտնուեցաւ, և քու հայրդ Նաբուգոդոնոսոր թագաւորը զանիկա մոգերուն, հմայողներուն, Քաղդեացիներուն — բաղդ նայողներուն վրայ իշխող դրաւ։ 12—Քանզի այս Դ-ը-ն-ի-էլ, որուն անունը Բաղտասար դրաւ, գերազանց հոգի, գիտութիւն ու հանճար կայ՝ երազները մեկնելու, առեղծուածներ յայտնելու ու դժուարին խնդիրներ լուծելու. հիմա Դանիէլ թող կանչուի, ու անիկա մեկնութիւնը պիտի իմացնէ։

13—Ան ատեն Դանիէլ թագաւորին առջև տարուեցաւ. թագաւորը խօսեցաւ ու Դանիէլի ըսաւ, Իմ թագաւոր հօրս Հրէաստանէ բերած Հրէաստանի գերիներէն եղող Դանիէլը դո՞ւն ես։ 14—Լսած զի քեզի համար լսեցի որ քու ներսիդիդ աստուածներուն հոգին կայ. և քու փոքր լոյս, հանճար ու գերազանց իմաստութիւն կը գտնուի։ 15—Ու հիմա իմ առջևս իմաստուններ — հմայողներ բերուեցան, որպէս զի այս գրուածը կարդան ու անոր մեկնութիւնը ինծի գիտցնեն, բայց անոնք չկրցան այս խօսքին մեկնութիւնը իմացնել։ 16—Ու ես քեզի համար լսեցի որ մեկնութիւններ տալու, և դժուարին խնդիրներ լուծելու կարող ես։ հիմա եթէ դուն այն գրուածը կարդալու, և անոր մեկնութիւնը ինծի գիտցնելու կարող ըլլաս, ծիրանի պիտի հագնիս, և քու պարանոցդ ոսկի մանեակ պիտի դրուի, ու թագաւորութեանդ մէջ երրորդ իշխան պիտի ըլլաս։

17—Ան ատեն Դանիէլ պատասխան առաւ ու թագաւորին առջև ըսաւ, Քու պարգեւներդ քեզի ըլլան, ու տուրքերդ ուրիշին տուր. բայց ես այն գրուածը թագաւորին պիտի կարդամ, ու մեկնութիւնը անոր գիտցնեմ։ 18—Ով թագաւոր, Բարձրեալ Աստուածը քու հօրդ Նաբուգոդոնոսորի թագաւորութիւն ու մեծութիւն և պատիւ ու փառք տուաւ. 19 — Ու անոր տուած մեծութենէն՝ բոլոր ժողովուրդները, ազգերը ու լեզուները անոր երեսէն կը դողային ու կը վախնային. անիկա ուզածը կը մեռցնէր և ուզածը ողջ կը թողուր. անիկա ուզածը կը բարձրացնէր և ուզածը կը ցածցնէր։ 20—Բայց երբ անոր սիրտը բարձրացաւ, ու անոր հոգին ամբարտաւանութեամբ կարծրացաւ, իր թագաւորութեան աթոռէն ինկաւ, ու պատիւը անկէ առնուեցաւ. 21—Ու անկա մարդոց որդիներուն մէջէն վռնտուեցաւ, ու անոր սիրտը անասուններու պէս եղաւ, և անոր բնակութիւնը վայրենի էշերուն հետ եղաւ. արջառներու պէս խոտ կը կերցնէին անոր, ու անոր մարմինը երկինքի ցօղովը կը թրջուէր, մինչև գիտցաւ թէ մարդոց թագաւորութեանը վրայ Բարձրեալ Աստուածը կը տիրէ, ու իր ուզած մարդը անոր վրայ կը դնէ։ 22—Ու դուն, ով Բաղտասար, անոր որդին, քու սիրտդ չխոնարհեցուցիր, թէեւ այս ամէնը գիտցար. 23—Հապա երկինքի Տէրոջը դէմ քեզ բարձրացուցիր, ու անոր տանը անօթները քու առջեւդ բերին. և դուն ու քու մեծամեծներդ, քու կիներդ ու հարճերդ անոնցմով գինի խմեցիք. և դուն արծաթէ, ոսկիէ, պղնձէ, երկաթէ, փայտէ ու քարէ չտեսնող աստուածները գովեցիր, որոնք ոչ կը տեսնեն, ոչ կը լսեն, ոչ ալ բան մը գիտեն. և այն Աստուածը, որուն ձեռքն է քու շունչդ, և որուն են քու ամէն ճամբաները, չփառաւորեցիր։ 24—Անոր համար այն ձեռքի թաթը անոր երեսէն դրկուեցաւ, ու այս գրուածը գրուեցաւ։ 25—Ու գրուած գիրը սա՛կիա է. *ՄԱՆԷ, ՄԱՆԷ, ԹԵԿԷԼ, ՈՒ ՓԱՐՍԻՆ։ 26—Այս խօսքին մեկնութիւնը այս է. Մանէ, Աստուած քու թագաւորութիւնդ համրեց ու զանիկա վերջացուց։ 27—Թեկէլ, կշռուելով կշռուեցար ու պակաս գտնուեցար։ 28 — Փարսին, քու թագաւորութիւնդ բաժնուեցաւ և Մարաց ու Պարսից արուեցաւ։

29—Այն ատեն Բաղտասար հրամայեց, ու Դանիէլի ծիրանի հագցուցին ու պարանոցը ոսկի մանեակ դրէին, և անոր համար մունեակին կանչել տուին՝ որ թագաւորութեանը մէջ երրորդ իշխան ըլլայ։

30—Նոյն գիշերը Քաղդեացւոց Բաղտասար թագաւորը սպանուեցաւ։ Ու թագաւորութիւնը Մարաց Դարեհ Ք-ը-ն-ր-ը մառ, երը վաթսունեքերկու տարեկանի չափ էր։

Գլ. Զ

Դարեհի առջև հաճոյ երեւցաւ որ թագաւորութեանը վրայ հարիւր քսան կուսակալներ դնէ, որոնք բոլոր թագաւորութեանը մէջ ըլլան. 2—Ու անոնց վրայ երեք հրամանատար՝ որոնց մէկը Դանիէլ էր. որպէս զի այն կուսակալները ասոնց հաշիւ տան, որպէս զի թագաւորին վնաս չըլլայ։ 3—Ու այս Դանիէլ ա-ա հրամանատարներէն և կուսակալներէն նախապատիւ էր, վասն զի անոր վրայ գերազանց հոգի կար, ու թագաւորը միտք ունէր որ զանիկա բոլոր թագաւորութեանը վրայ դնէ։

4—Ու հրամանատարները ու կուսակալները թագաւորութեանը ք-ր-է-ր-ա-ն կողմէ Դանիէլի գէմ պատճառ մը գտնելու կը ջանային, բայց անոնք բնաւ պատճառ մը կամ չարութիւն մը գտնել կարող չեղան. վասն զի անկիս հաւատարիմ էր, ու անոր վրայ բնաւ յանցանք մը կամ չարութիւն մը չգտնուեցաւ։ 5—Ուստի այս մարդիկը ըսին, Մենք այս Դանիէլին գէմ ամենեւին պատճառ մը պիտի չգտնենք, բայց եթէ անոր գէմ անոր Աստուծոյն օրէնքին կողմանէ գտնենք։

6—Այն ատեն հրամանատարները ու կուսակալները թագաւորին քով ժողվուեցան, ու անոր այսպէս ըսին։ Ով

Ա-յ-ւ-ծ, մեծ հօրը. հմմ. 11, 13։ բ Թագ. Բ. 7։ բ Մն. ժ-ե. 16։ Երեմ. ե-ե. 7։

*Ա-յ-ւ-ծ, Համրուած, համրուած, կշռուած ու քաժնուած

Դարեհ Թագաւոր, յաւիտեան ազգ կեցիր։ 7—Թագաւորութեան բոլոր հրամանատարները, նախարարները, կառավարիչները, խորհրդականները ու կառավարիչները խորհուրդ ըրին, որ թագաւորական հրաման մը արձակի, և արգելիչ օրէնք մը հաստատի, Թէ ով որ մինչև երեսուն օր ինդրուած մը ինդրի աստուածմէ մը կամ մարդէ մը բայ ի քեզմէ, ով Թագաւոր, առիծներուն գուբը նետուի։ 8—Հիմա, ով Թագաւոր, այս արգելիչ օրէնքը հաստատէ, ու հրովարտակը առորագրէ, որպէս զի Մարսագ ու Պարսից անխափանելի օրէնքին հաւանութիւն չտեսնուի։ 9—Ասոր համար Դարեհ Թագաւորը հրովարտակը ու արգելիչ օրէնքը առորագրեց։

10—Ու երբ Դանիէլ իմացաւ Թէ հրովարտակը առորագրուեցաւ, իր առունը գնաց, ու իր սենեակին մէջ պատուհաններէն դէպ ի Երուսաղէմ բաց էին, և օրը երեք անգամ ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր, ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր առաջուան սովորութեանը պէս։ 11—Ու սոյն մարդիկը ժողմուեցան, ու Դանիէլը գտան՝ որ իր Աստուծոյն առջև աղօթք ու աղաչանք կ'ընէր։ 12—Ա՛յն ատեն մտեցան, ու Թագաւորին առջև Թագաւորին արգելիչ օրէնքին վրայով բսին, Դուն արգելիչ օրէնք մը չստորագրեցի՞ր, Թէ ով որ մինչև երեսուն օր քեզ չի ինդրի աստուածմէ մը կամ մարդէ մը, բայ ի քեզմէ, ով Թագաւոր, առիծներուն գուբը նետուի։ Թագաւորը պատասխան տուաւ ու բսաւ, Ա՛յդ խօսքը ճշմարիտ է՝ Մարսագ ու Պարսից անխափանելի օրէնքին համեմատ։ 13—Ա՛յն ատեն անոնք պատասխան տուին ու Թագաւորին առջև բսին, Հրէաստանի գերութեան որդիներէն եղող Դանիէլը քեզ և քու առաջագրած արգելիչ օրէնքդ բան մեղ չտեսիր, ով Թագաւոր, հապա օրը երեք անգամ իր ինդրուածքը կը մատուցանէ։ 14—Ա՛յն ատեն Թագաւորը այս խօսքերը լսածին պէս՝ ինքնիրեն չատ տրամեցաւ, ու իր սիրտը Դանիէլի վրայ դրաւ որպէս զի զանիկա ազատէ, ու մինչև արեւուն մանելը կը ջանար որ զանիկա ապրեցնէ։ 15—Բայց այն մարդիկը Թագաւորին քով ժողմուեցան, ու Թագաւորին բսին, Ով Թագաւոր, գիտցիր որ Մարսագ ու Պարսից օրէնքը այս է, որ Թագաւորին ամէն հաստատած արգելիչ օրէնքը ու հրամանը չփոխուի։ 16—Ա՛յն ատեն Թագաւորը հրամայեց, ու Դանիէլը բերին, և զանիկա առիծներուն գուբը նետեցին։ Թագաւորը Դանիէլի խօսեցաւ ու բսաւ, Քու Աստուածդ, զոր դուն անդադար կը պաշտես, անիկա քեզ պիտի ազատէ։ 17—Ու քար մը բերին ու գուբին բերանը դրին, և Թագաւորը զանիկա իր կնիքովը ու իր մեծամեծներուն կնիքովը կնքեց, որպէս զի Դանիէլի վրայով բան մը չփոխուի։ 18—Ետքը Թագաւորը իր առունը գնաց, ու գիշերը անօթի անցուց, և իր առջև *նուագարաններ բերել չտուաւ. ու քունը իրմէ փախաւ։

19—Ու Թագաւորը արշալոյսին կանուխ եղաւ, ու արագութեամբ առիծներուն գուբը գնաց։ 20—Ու երբ գուբին մօտեցաւ, որաւմ ձայնով մը Դանիէլի պոռաց, Ե՛ Թագաւորը խօսեցաւ ու Դանիէլի բսաւ, Ով Դանիէլ, կենդանի Աստուծոյ ծառան, քու Աստուածդ զոր դուն անդադար կը պաշտես, կարող եղա՞ւ քեզ առիծներէն ազատել։ 21—Ա՛յն ատեն Դանիէլ Թագաւորին բսաւ, Ով Թագաւոր, յաւիտեան ազգ կեցիր։ 22—Իմ Աստուածս իր հրեշտակը ղրկեց, ու առիծներուն բերանը գոցեց, ու ինծի վնաս չտուին. վասն զի անոր առջև իմ վրաս անմեղութիւն գտնուեցաւ, և քու առջեդ ալ, ով Թագաւոր, չանցանք մը ըրած չեմ։ 23—Ա՛յն ատեն Թագաւորը չատ ուրախացաւ, ու հրամայեց որ Դանիէլը գուբէն հանեն։ և Դանիէլը գուբէն հանեցին, ու անոր վրայ ամենևին ինչ վնաս մը չգտնուեցաւ, վասն զի իր Աստուծոյն հաւատացաւ։ 24—Ու Թագաւորը հրամայեց, ու Դանիէլի վրայով չարախօսող Թիւն ընդմարդիկը բերին, և զանոնք ու անոնց զաւակները ու կիները առիծներուն գուբը նետեցին. ու անոնք դեռ գուբին յատակը չհասած՝ առիծները անոնց վրայ տիրեցին, ու անոնց բոլոր ոսկորները փշրեցին։

---

*Կամ, հանգամանք կերակուրներ

25—Ա՛յն ատեն Դարեհ Թագաւորը բոլոր երկրի վրայ բնակող ժողովուրդներուն, ազգերուն ու լեզուներուն գրեց։ Ձեր խաղաղութիւնը չատնայ։ 26—Ինծմէ հրաման կ'ելլայ որ իմ Թագաւորութեանս բոլոր իշխանութեանը մէջ Դանիէլի Աստուծոյն երեսին դողան ու վախնան, վասն զի անիկա կենդանի Աստուած է ու յաւիտեան կը կենայ, և անոր Թագաւորութիւնը չի բարթիր, ու անոր իշխանութիւնը մինչև վերջը կը տեւէ։ 27—Անիկա կ'ազատէ ու կը փրկէ, և երկինքի մէջ ու երկրի վրայ նշաններ ու հրաշքներ կ'ընէ, որ Դանիէլը առիծներուն *բերնէն ազատեց։

28-Ու այս Դանիէլը Դարեհի Թագաւորութեանը ու Պարսից Կիւրոսի Թագաւորութեանը տասն յաջողութիւն գտաւ։

Գլ. Ե

Բաբելոնի Բազատասար Թագաւորին առաջին տարին Դանիէլ երազ տեսաւ, ու իր անկողնին մէջ՝ իր գլխուն տեսիլները։ և անիկա երազը գրեց ու բառերուն համառօտութիւնը ըսաւ։ 2—Դանիէլ խօսեցաւ ու բսաւ, Գիշերը տեսիլքիս մէջ տեսայ որ ահա երկինքի չորս հովերը մեծ ծովուն վրայ կը յարձակէին։ 3-Ու ծովէն չորս մեծ գազաններ ելան, որոնք իրարմէ տարբեր էին։

4—Առաջինը առիծի պէս էր, ու արծիւի թեւեր ունէր։ ու կը տեսնէի մինչև անոր թեւերը փրցուեցան, ու երկրէն վերացաւ և մարդու պէս ոտքերուն վրայ կայնեցաւ, ու անոր մարդու սիրտ տրուեցաւ։

5—Ու ահա ուրիշ երկրորդ գազան մը արջու նման՝ որ մէկ փովին վրայ կայնեցաւ, ու բերանը, ակռաներուն մէջ, երեք կողի ոսկոր կար։ և անոր այսպէս ըսին. Ելիր, չատ միս կեր։

6—Ասկէ ետքը կը տեսնէի, և ահա ընձուղ նման ուրիշ մը՝ որուն կռնակին վրայ չորս Թռչունի թեւեր կային. և այս գազանը չորս գլուխ ունէր, ու անոր իշխանութիւն տրուեցաւ։

*Բառ. ձեռքին

7—Ասկէ ետքը գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ահա չորրորդ գազան մը՝ ահիկա ահեղ, սոսկալի ու խիստ զօրաւոր էր, և ահիկա մեծ երկաթէ ակռաներ ունէր, ահիկա կ'ուտէր ու կը փշրէր ու մնացածը ոտքերովը կը կոխէր, ու իրմէ առաջ եղող ամէն գազաններէն տարբեր էր, և տասը եղջիւր ունէր։ 8—Երբ ես այն եղջիւրները կը դիտէի, ահա անոնց մէջ ուրիշ պզտիկ եղջիւր մը ելաւ, որուն առջեւէն առաջուան եղջիւրներէն երեքը խլուեցան. և ահա այս եղջիւրին վրայ մարդու աչքեր պէս աչքեր, ու մեծ բաներ խօսող բերան կար։

9—Ես կը տեսնէի մինչև աթոռներ դրուեցան, ու Հինաւուրցը նստաւ. անոր զգեստը ձիւնի պէս ճերմակ, ու գլխուն մազը մաքուր բուրդի պէս էր, անոր աթոռը կրակի բոցի պէս էր, ու անիւները վառած կրակի պէս էին։ 10—Անոր առջեւէն կրակի գետ կ'ելլէր ու կը վազէր. հազարք հազարաց ծառայութիւն կ'ընէին անոր, և բիւրք բիւրեաց անոր առջև կը կայնէին. ատեանը բազմեցաւ, ու գիրքերը բացուեցան։ 11—Ա՛յն ատեն կը նայէի այն եղջիւրին խօսած մեծ խօսքերուն ձայնին համար, ու նայեցայ մինչև այն գազանը սպանուեցաւ, և անոր մարմինը կորսուեցաւ ու կրակի բոցերու տրուեցաւ։ 12—Ու միւս գազաններուն իշխանութիւնը վերցուեցաւ, բայց մինչև ժամանակ մը ու ատեն մը կեանքի երկարութիւն տրուեցաւ անոնց։ 13—Գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ահա երկինքի ամպերով Որդւոյն մարդոյ նման Մէկը կու գար, ու մինչև Հինաւուրցը եկաւ, և զանիկա անոր առջև մտցուցին։ 14—Ու անոր իշխանութիւն, պատիւ ու Թագաւորութիւն տրուեցաւ, որպէս զի ամէն ժողովուրդներ, ազգերը ու լեզուները անոր ծառայութիւն ընեն. անոր իշխանութիւնը յաւիտենական իշխանութիւն է որ չանցնիր, ու Թագաւորութիւնը չաւրուիր։

15—Ես Դանիէլ հոգիով վշտացայ իմ ներսիդիս, և իմ գլխուս տեսիլքները զիս խռովեցուցին։ 16—Հոն կայնողներէն մէկուն մտեցայ, ու այս ամէն բաներուն ճշմարտութիւնը անոր

հարցուցի. և անիկա ինծի խօսեցաւ, ու այս բաներուն մեկնութիւնը ինծի գիտցուց։ 17—Այս չորս մեծ գազանները չորս թագաւորներ են, որոնք երկրէ պիտի ելլեն։ 18—Ե՛ թագաւորութիւնը Բարձրեալին սուրբերը պիտի առնեն, ու անոնք պիտի ժառանգեն թագաւորութիւնը յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։

19—Ես ալ չէրկրդ գազանին վրայով ճշմարիտը գիտնալ ուզեցի, որ բոլոր մյուսներէն տարբեր էր, — խիստ ահեղ էր. անոր ականները երկաթէ, և ըղունգները պղնձէ էին, անիկա կ'ուտէր, կը փշրէր ու մնացածը ոտքերովը կը կոխէր։ 20—Ու անոր գլուխը եղող տասը եղջիւրներուն վրայով, ու մէս եղածին վրայով՝ որ անոր առջեւէն երեքը թնկան, այսինքն այն եղջիւրին վրայով՝ որ աչքեր ու մեծ բաներ խօսող բերան ունէր, և անոր դէմքը միւսներէն մեծ էր։ 21—Ես կը տեսնէի որ այն եղջիւրը սուրբերուն հետ պատերազմ կ'ընէր, ու անոնց յաղթեց, 22—Մինչեւ որ Հինաւուրցը եկաւ, և Բարձրեալին սուրբերուն իրաւունք տուեցաւ, ու ժամանակը հասաւ որ սուրբերը թագաւորութիւնը առին։ 23—Անիկա այսպէս բաւ. Չորրորդ գազանը երկրի վրայ չորրորդ թագաւորութիւն պիտի ըլլայ, որ ամէն թագաւորութիւններէն տարբեր պիտի ըլլայ, ու բոլոր երկիրը պիտի ուտէ, ու զանիկա պիտի կոխէ ու փշրէ։ 24—Ու այն տասը եղջիւրները այն թագաւորութենէն ելլելու տասը թագաւորներ են, ու անոնցմէ ետքը մէկ ուրիշը պիտի ելլէ, ու անիկա առաջուանններէն տարբեր պիտի ըլլայ, և անիկա երեք թագաւոր պիտի կործանէ։ 25—Ու Բարձրեալին դէմ խօսքեր պիտի ըսէ, ու Բարձրեալին սուրբերը պիտի մաշէ, և պիտի մտածէ ժամանակներ ու օրէնքներ փոխելուն. ու անոնք մինչեւ ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ անոր ձեռքը պիտի տրուին։ 26—Բայց առեանը պիտի բազմի, ու անոր իշխանութիւնը պիտի վերցնեն, ջնջէ՛ մինչեւ վերջը բնաջինջ պիտի ընեն ու կորնչեցնեն։ 27—Ու թագաւորութիւնը ու իշխանութիւնը, ու երկրիս տակ եղող թագաւորութիւններուն մեծութիւնը Բարձրեալին սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի. անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է, ու բոլոր իշխանները անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին։

28—Խօսքին վերջը մինչեւ հոս է։ Ես Դանիէլս իմ խորհուրդներս խիստ խռովեցուցին, ու երեսս գոյնը փոխուեցաւ. և այս խօսքը սրտիս մէջ պահեցի։

Գլ. Ը

Բազասար թագաւորին թագաւորութեանը երրորդ տարին ինծի Դանիէլիս տեսիլք երեւցաւ՝ այն առաջուան տեսածէս ետքը։ 2—Ու տեսիլքի մէջ տեսայ. ու եղաւ որ տեսած ատենս՝ ես Եղամի գաւառին մէջ եղող Շուշան մայրաքաղաքն էի, ու տեսիլքի մէջ տեսայ որ Ուլա գետին քով էի։

3—Ես իմ աչքերս վերցուցի ու տեսայ, և ահա գետին քով խոյ մը կայնած էր, ու անիկա երկու եղջիւր ունէր, և այն եղջիւրները բարձր էին, ու մէկը միւսէն բարձր էր, ու այն բարձրը ետքէն ելաւ։ 4—Ես տեսայ այն խոյը՝ որ էր Եղէ-ըրէբ-ով դէպ ի արեւմտեան, դէպ ի հիւսիս ու դէպ ի հարաւ կը զարնէր, ու բնաւ գազան մը անոր առջեւ չէր կրնար կայնիլ, և անոր ձեռքէն ազատող չկար. հապա անիկա իր ուզածին պէս ըրաւ ու մեծցաւ։

5—Ու երբ ես կը մտածէի, ահա աքեւմտեան բոլոր երկրի երեսին վրայ այծերու քօշ մը եկաւ, ու գետնին չէր դպչէր. ու քօշը իր աչքերուն մէջտեղ նշանաւոր եղջիւր մը ունէր։ 6—Ու անիկա հասաւ մինչեւ երկու եղջիւր ունեցող խոյը, զոր տեսայ որ գետին քով կայնած էր. ու իր կատաղի զօրութիւնովը անոր վրայ յարձակեցաւ։ 7—Ու տեսայ որ խոյին մօտեցաւ, ու անոր վրայ կատաղելով՝ խոյը զարկաւ, և անոր երկու եղջիւրը կոտրեց. ու խոյը այլեւս չունէր որ անոր առջեւ կայնի. ու զանիկա գետինը զարկաւ ու զանիկա կոխկռտեց, և ո՛վ կը չկար որ խոյը անոր ձեռքէն ազատէր։ 8—Ու այծերու քօշը խիստ մեծցաւ. ու անիկա ուժովցածին պէս՝ այն մեծ եղջիւրը կոտրեցաւ, և անոր տեղ դեղ ի երկինքի չորս հովերը չորս նշանաւոր եղջիւր ելան։ 9—Ու անոնց մէկէն պզտիկ եղջիւր մը ելաւ, և անիկա դէպ ի հարաւ, դէպ ի արեւելք ու դէպ ի փառաւոր երկիրը խիստ մեծցաւ։ 10—Ու մինչեւ երկինքի զօրքը մեծցաւ, և զօրքին ու աստղերէն գետինը ձգեց ու զանոնք կոխկռտեց։ 11—Ու մինչեւ զօրաց իշխանը զինք բարձրացուց. ու անկե մշտնջենաւոր ընծան վերցուեցաւ, և անոր սրբարանին բնակարանը կործանեցաւ։ 12—Ու՝ զօրք մը ամբարշտութեամբ մշտնջենաւոր ընծային դէմ դրաւ՝, ու ճշմարտութիւնը գետինը զարկաւ, ու բան տեսաւ և յաջողեցաւ։ 13—Ու լսեցի որ սուրբ մը կը խօսէր, և այն խօսողին ուկ ուրիշ սուրբ մը ըսաւ, Մշտնջենաւոր ընծին, ու աւերակ ամբարշտութեանը, ու սրբարանին և զօրքին կոխուելու տրուելուն տեսիլքը մինչեւ ե՞րբ պիտի ըլլայ։ 14—Ու անիկա ինծի ըսաւ, Մինչեւ երկու հազար երեք հարիւր օր, եւ սրբարանը պիտի մաքրուի։

15—Ու երբ ես Դանիէլ տեսիլքս տեսայ, ու հիւ-ըի-ն կը փնտռէի որ հասկնամ, ահա իմ դիմացս մարդու կերպարանքով մէկը կայնէր։ 16—Ու Ուլա ֆէրին մէկէն մարդու ձայն լսեցի, որ կը կանչէր ու կ'ըսէր, ՈվՂ Գաբրիէլ, տեսիլքը տուր հասկցուր։ 17—Ու անիկա իմ կեցած տեղս մօտ եկաւ. ու երբ եկաւ, վախցայ ու երեսիս վրայ իյնալ, և անիկա ինծի բաւ, Հասկցիր, որդի մարդոյ, որ այս տեսիլքը, վերջին ժամանակին համար է։ 18—Ու երբ անիկա ինծի հետ կը խօսէր, ես թմրած՝ երեսիս վրայ գետինը իյնած էի. և անիկա ինծի դպաւ, ու զիս իմ կեցած տեղս կայնեցուց։ 19—Ու բաւ, Ահա քեզի կ'իմացնեմ բարկութեան վերջը ինչ ըլլալիքը. վասն զի այս տեսիլքը վերջին ժամանակին համար է։ 20—Այն քո տեսած խոյդ, որ երկու եղջիւր ունէր, Մարաց ու Պարսից թագաւորներն են։ 21—Ու *այծերու քօշը Յունաց թագաւորն է. ու անոր աչքերուն մէջտեղի մեծ եղջիւրը առաջին թագաւորն է։ 22—Ու ան որ կոտրեցաւ, ու անոր տեղը չորսը ելաւ, այս է որ այն ազգէն չորս թագաւորութիւն պիտի ելլէ, բայց ոչ թէ անոր զօրութիւնովը։ 23—Ու անոնց թագաւորութեան վերջին երբ ամբարիշտները չափը լրացնեն, պինդերես ու խորագէտ թագաւոր մը պիտի ելլէ. 24—Ու անոր իշխանութիւնը պիտի զօրանայ, բայց ոչ թէ իր զօրութիւնովը. ու անիկա սքանչելի կերպով պիտի աւերէ, և պիտի յաջողի ու բան պիտի տեսնէ, ու զօրաւորները և սրբոց ժողովուրդը պիտի ապրէ։ 25—Ու իր խելքին միջոցով իր ձեռքին մէջ նենգութիւնը պիտի յաջողի, և իր սրտին մէջ պիտի հպարտանայ, ու խաղաղութեան մէջ շատերը պիտի կործանէ, և իշխանաց իշխանին դէմ պիտի դնէ, բայց առանց ձեռքի պիտի կոտրի։ 26—Ու իրիկուան ու առաւօտան տեսիլքը որ ըսուեցաւ՝ ճշմարիտ է. ու դուն տեսիլքը գոցէ, զանոր շատ օրերու համար է։

27—Ու ես Դանիէլ մարեցայ և քանի մը օր հիւանդացայ. ետքը ելայ թագաւորին գործը տեսայ. ու տեսիլքին համար զարմացումի մէջ էի, ու մէկը չկար որ †ինձի հասկցնէր։

Գլ. Թ

Ասուերոսի որդւոյն Դարեհի առաջին տարին, որ Մարաց սերունդէն էր, ու Քաղդեացւոց թագաւորութեանը վրայ թագաւոր դրուեցաւ։ 2—Անոր թագաւորութեանը առաջին տարին ես Դանիէլ գիրքերուն իմացայ այն տարիներուն թիւը՝ որոնց համար Տէրոջը խօսքը եղեր էր Երեմիա մարգարէին, Թէ եօթանասուն տարիով պիտի վերջացնէր Երուսաղէմի աւերակութիւնները։

*Կամ, տարեշրջութեան համար մշտնջենաւոր ընծին գէմ էրէ՛ զօրք տրուեցաւ.

†Բ՛Բէր. իրիկուան առաւօտ

*Կամ, մուզտ †Կամ, այս բառը խմնաբ

*Կամ, տարի

3—Ու ես իմ երեսս Տէր Աստուծոյ դարձուցի, որպէս զի ծանապարհաքննեմ, քարկով ու մխիթարով աղօթք ու աղաչանք մատուցանեմ. 4—Ու իմ Տէր Աստուծոյս աղօթք ըրի, խոստովանեցայ ու ըսի, Ո՜ն, Տէր, մեծ և ահաւոր Աստուած, որ ջեզ սիրողներուն և քու պատուիրանքներդ պահողներուն ուխտ ու ողորմութիւն կը պահես, 5-Մենք մեղք գործեցինք, անօրէնութիւն ըրինք, ու ամբարշտութիւն ըրինք, ու ապստամբ եղանք, ու քու պատուիրանքներէդ ու իրաւունքներէդ խոտորեցանք. 6-Ու քու ծառաներուդ մարգարէներուն, մանկ չըրինք, որոնք մեր թագաւորներուն, մեր իշխաններուն ու մեր հայրերուն ու երկրին բոլոր ժողովուրդին քու անունովդ խօսեցան։ 7-Ով Տէր, քեզի կը վայլէ արդարութիւն, ու մեզի՝ երեսի ամօթ, (ինչպես այսօր եղաւ) Ցուդայի մարդոց, Երուսաղէմի բնակիչներուն ու ամէն մէրձաւոր ու հեռաւոր Իսրայէլացիներուն, այն բոլոր երկիրներուն մէջ ուր դուն զանոնք քշեցիր անոնց քեզի դէմ ըրած յանցանքին համար։ 8—Ով Տէր, երեսի ամօթ կը վայլէ մեզի, մեր թագաւորներուն, մեր իշխաններուն ու մեր հայրերուն, վասն զի քեզի դէմ մեղք գործեցինք. 9—Ի՛ողորմութիւն ու ներողութիւն մեր Տէր Աստուծոյն կը վայլէ, վասն զի մենք անիկ ապստամբեցանք, 10—Ու մեր Տէր Աստուծոյն ձայնին մանկ չըրինք որ անոր օրէնքները քալենք, զորոնք իր ծառաներուն, մարգարէներուն, ձեռքով մեր առջև դրաւ։ 11—Ու բոլոր Իսրայէլ քու օրէնքդ զանց ըրին, և քու ձայնիդ մանկ չնեղով՝ խոտորեցան. ուստի Աստուծոյ ծառային Մովսէսի օրէնքին մէջ գրուած անէծքը ու երդումը մեր վրայ թափեցան, քանզի Անոր դէմ մեղք գործեցինք. 12—Ու մեր վրայ մեծ չարիք բերելով՝ հաստատեց իր խօսքերը, զորոնք մեր վրայով ու մեզ դատող մեր դատաւորներուն վրայով խօսեր էր. այնպէս որ Երուսաղէմի մէջ եղածին պէս բոլոր երկինքին տակ չեղաւ։ 13—Մովսէսի օրէնքին մէջ գրուածին պէս այս բոլոր չարիքը մեր վրայ եկաւ. սակայն մենք մեր անօրէնութիւններեն դառնալու և քու ճշմարտութեանդ խելամուտ ըլլալու համար՝ մեր Տէր Աստուծոյն երեսը չաղաչեցինք. 14—Ու Տէրը այս չարիքին համար հսկելով՝ զանիկա մեր վրայ բերաւ, քանզի մեր Տէր Աստուածը իր ըրած բոլոր գործերուն մէջ արդար է, բայց մենք անոր ձայնին մանկ չըրինք։ 15—Ու արդ, ով Տէր Աստուած մեր, որ քու ժողովրդդ զօրաւոր ձեռքով Եգիպտոսի երկրէն հանեցիր, ու քեզի անուն վաստկեցար, ինչպես այսօր կ՚երեւի, մենք մեղք գործեցինք, ամբարշտութիւն ըրինք։ 16—Ով Տէր, քու բոլոր *բարութեանդ համեմատ չնորհք ըրէ, քու սաստը լուծնէդ, Երուսաղէմ քաղաքէն, քու սրտմտութիւնդ ու բարկութիւնդ դառնայ, վասն զի մեր մեղքերուն համար ու մեր հայրերուն անօրէնութիւններուն համար՝ Երուսաղէմ ու քու ժողովրդդ ամէն մեր բոլորիվրը եղողներուն նախատինք եղան։ 17—Ու հիմա, ով Աստուած մեր, քու ծառայիդ աղօթքը ու աղաչանքը լսէ, ու Տէրոջը համար՝ քու սրսխացած սրբարանիդ վրայ երեսդ փայլեցուր։ 18—Ականջդ խոնարհեցուր, ով Աստուած իմ, ու լսէ, աչքերդ բաց ու տես մեր աւերակները և այն քաղաքը որուն վրայ քու անունդ կոչուած է. վասն զի մեր աղաչանքը ոչ թէ մեր արդարութիւններուն համար քու առջեւդ կը մատուցանենք, հապա քու մեծ ողորմութեանդ համար։ 19—Ով Տէր, լսէ, ով Տէր, ներէ, ով Տէր, մանկ ըրէ ու կատարէ. մի ուշանար՝ քեզի համար, ով Աստուած իմ, քանզի քու քաղաքդ վրայ ու քու ժողովրդիդ վրայ քու անունդ կոչուած է։

20—Ու երբ ես տակաւին կը խօսէի, կ՚աղօթէի, և իմ մեղքս ու իմ ժողովրդիս Իսրայէլի մեղքը կը խոստովանէի, և իմ Աստուծոյս սուրբ լեռանը համար իմ աղաչանքս իմ Տէր Աստուծոյս առջև կը մատուցանէի. 21—երբ ես տակաւին աղօթքի մէջ կը խօսէի, ահա այն առաջին տեսիլքին մէջ տեսած մարդս Գաբրիէլ շուտ մը թռչելով ինծի դպաւ երեկոյան զոհին ատենը,

*ԵԲԲ. արդարութիւններուդ։

22—Ու ինծի հասկցնելով՝ ինծի հետ խօսեցաւ ու ըսաւ, Ով Դանիէլ, հիմա ելայ՝ որ քեզի խելամտութիւն տրուիցնեմ. 23—Քու աղաչանքիդ սկիզբը պատգամ եղաւ, ու ես ելայ տրուելս զի պատմեմ, վասն զի դուն Ա-ր-ա-ծ-յ սիրելի ես. ուրեմն պատգամը միտք առ ու տեսիլքը հասկցիր։ 24—Ծանցանքը վերջացնելու, ու մեղքը հատցնելու, և անօրէնութիւնը քաւելու, և յաւիտենական արդարութիւնը բերելու, և տեսիլքը ու մարգարէութիւնը կնքելու, ու սրբոց Սուրբը օծելու համար՝ քու ժողովրդիդ վրայ ու սուրբ քաղաքիդ վրայ եօթանասուն եօթնեակ որոշուած է։ 25—Ու գիտցիր ու հասկցիր, որ Երուսաղէմը նորէն շինելու հրամանը ելլելէն մինչև *Օծեալ իշխանը եօթը եօթնեակ ու վաթսունեւերկու եօթնեակ կայ. Ե նորէն հրապարակը ու պարիսպը պիտի շինուի նեղութեան ժամանակներու մէջ։ 26—Ու վաթսունեւերկու եօթնեակէն հաքը Օծեալը պիտի կորսի, բայց ոչ թէ իրեն համար. ու գալու իշխանին ժողովրդը քաղաքը ու սրբարանը պիտի աւրէ, և վերջը հեղեղով պիտի ըլլայ. ու մինչև պատերազմին վերջը ասւրամներ սահմանուած են։ 27—Ու եօթնեակ մը շատերուն հետ ուխտ պիտի հաստատէ, և եօթնեակին մէջտեղը զոհը ու պատարագը պիտի դադրեցնէ. ու †աւրողը պղծութեանց աշտարակին վրայ պիտի ըլլայ՝ մինչև որ աւրուածին վրայ նախասահմանեալ կորուստը թափուի։

ԳԼՈՒԽ Ժ

Պարսից կիւրոս թագաւորին երրորդ տարին խօսք մը յայտնուեցաւ Դանիէլին, որուն անունը Բաղտասասար կոչուած էր. ու այն խօսքը ճշմարիտ էր, ու *մեծ ատապանքի վրայ էր՝. ու անիկա խօսքը հասկցաւ ու տեսիլքին տեղեակ

*ՆԵՐ. Մեսիա

†Կամ, աւրող պղծութիւնը աշտարակին վրայ պիտի ըլլայ, Կամ, պղծութեանց թևին վրայ աւրողը պիտի դնէ։

*ԵԲԲ. զօրքը մեծ էր, Կամ, պատերազմը մեծ էր

եղաւ։ 2—Այն օրերը ես Դանիէլ լման երեք շաբաթ սուգի մէջ էի. 3—Ախորժելի կերակուր չկերայ ու բերանս միս կամ գինի չմտաւ, ու ամենեւին իւղով չօծուեցայ՝ մինչեւ որ երեք շաբաթը լմնցաւ։

4—Ու առաջին ամսուն քսանչորսերորդ օրը ես Տիգրիս գետին մեծ գետին եզերքն էի. 5—Ու աչքերս վերցուցի ու նայեցայ, և ահա կտաւ հագած ու մէկէզը Ոփազի ոսկիէ գօտի կապած մարդ մը կար. 6—Ու անոր մարմինը ակռխրոլի պէս, ու երեսը փայլակի երեւութի պէս, և աչքերը կրակի բոցերու պէս, ու թեւերը ու ոտքերը փայլուն պղնձի գոյնին պէս, և իր խօսքերուն ձայնը բազմութեան ձայնին պէս էր։ 7—Ու ես տեսիլքը միայն ես Դանիէլ տեսայ, ու ինծի հետ եղող մարդիկը տեսիլքը չտեսան, հապա անոնց վրայ մեծ վախ իյնաւ, ու փախան որպէս զի պահուըտին։ 8—Ու ես մնացի միայնակ, ու այս մեծ տեսիլքը տեսայ, ու իմ վրաս այժ չմնաց, և իմ վայելչութիւնս ապականութեան դարձաւ, ու ալ այժ չունեցայ։ 9—Ու անոր խօսքերուն ձայնը լսեցի, ու անոր խօսքերուն ձայնը լսածիս պէս, քնացած՝ երեսիս վրայ գետինը ինկայ։

10—Ու ահա ինծի ձեռք մը դպաւ, ու զիս ծունկերուս ու ձեռքերուս թաթերուն վրայ վերցուց. 11—Ու ինծի ըսաւ, Ով Դանիէլ, սիրելի մարդ, քեզի ընելու խօսքերս հասկցիր, ու եղած տեղդ կայնէ, քանզի հիմա քեզի զրկուեցայ. ու երբ անիկա այս խօսքը ինծի ըսաւ, դողալով կայնեցայ։ 12—Ու ինծի ըսաւ, Մի վախնար, ով Դանիէլ, քանզի այն առաջին օրէն ի վեր որ քու սիրտդ տուիր հասկնալու և քու Աստուծոյդ առջև քու անձդ խոնարհեցընելու, քու խօսքերդ լսուեցան, ու ես քու խօսքերուդ համար եկայ։ 13—Բայց Պարսից թագաւորութեան իշխանը քսանմեկ օր իմ երեսիս դէմ կեցաւ. ասկայն ահա Միքայէլ, առաջին իշխաններէն մէկը, ինծի օգնութեան եկաւ, ու ես հոն Պարսից թագաւորներուն քով մնացի. 14—Ու հիմա եկայ որպէս զի վերջին օրերը քու ժողովուր-

Ճիդ ինչ ըլլալիքը քեզի հասկցնեմ, վասն զի տեսիլքը գալու օրերուն համար է։ 15—Եւ անիկա ինծի այսպիսի խօսքեր ըսած ատեն՝ երեսս դէպ ի գետինը ծռեցի ու համր մնացի։

16—Եւ ահա մարդու որդիներուս կերպարանքով մէկը չբնաւնիներուս դպաւ, ու բերանս բացի ու խօսեցայ, ու դիմացս կանգնողին ըսի, Ով տէր իմ, այս տեսիլքով ցաւերս վրաս դարձան, և ալ ոյժ չունեցայ։ 17—Ու այս իմ տէրոջս ծառան՝ այս իմ տէրոջս հետ ինչպէս խօսելու կարող ըլլայ, վասն զի հիմակուընէ վրաս ոյժ չկայ, ու վրաս շունչ չմնաց։ 18—Ու այն մարդու կերպարանք ունեցողը նորէն ինծի դպաւ և զիս ուժովցուց։ 19—Ու ըսաւ, Մի վախնար, ով սիրելի մարդ, խաղաղութիւն ըլլայ քեզի, ուժովցիր ու քաջ եղիր։ ու երբ անիկա ինծի հետ խօսեցաւ, ուժովցայ ու ըսի, Թող խօսի իմ տէրս, վասն զի ուժովցուցիր զիս։

20—Ու անիկա ըսաւ, Գիտե՞ս թէ ինչո՛ւ համար քեզի եկայ. ու հիմա Պարսից իշխանին դէմ պատերազմելու պիտի դառնամ, ու երկրորդ կերթամ, ահա Յունաց իշխանը պիտի գայ։ 21—Բայց ես ճշմարտութեան գիրքին մէջ գըրուածը քեզի պիտի պատմեմ. ու ասոնց *մէջ մէկը չկայ որ ինծի օգնէ, բայց միայն ձեր իշխանը Միքայէլ։

Գլ. ԺԱ

Ու Մարաց Դարեհ Քաղդէացին առաջին տարին ես կայնեցայ որպէս զի զանիկա ուժովցնեմ ու զօրացնեմ։ 2—Ու հիմա քեզի ճշմարտութիւն պիտի պատմեմ. Ահա Պարսից Եղէրէք մէկ երեք թագաւոր ալ պիտի ելլէ, ու չորրորդը մեծ հարստութիւնով՝ ամէնէն հարուստ պիտի ըլլայ, ու երբ իր հարստութիւնովը ուժովնայ, ամէնը ոտք պիտի հանէ Յունաց թագաւորութեան դէմ։

3—Նոյնը զօրաւոր թագաւոր մը պիտի ելլէ, ու մեծ իշխանութիւնով պիտի տիրէ, և իր կամքին պէս պիտի ընէ. 4—Ու ելլելուն պէս անոր թագաւորութիւնը պիտի կտրուի, ու երկինքի չորս հովերուն պիտի բաժնուի. բայց ոչ իր յաջորդներուն, ոչ ալ իր վարած իշխանութեանը պէս. վասն զի անոր թագաւորութիւնը պիտի քակտուի, ու ասոնցմէ ուրիշներուն պիտի ըլլայ։

5—Ու հարաւի թագաւորը պիտի ուժովնայ, ու անոր իշխաններէն մէկը անոր վրայ պիտի ուժովնայ ու պիտի տիրէ. անոր իշխանութիւնը մեծ իշխանութիւն պիտի ըլլայ։ 6—Ու մէկ քանի տարիէն հետը դաշնակցութիւն պիտի ընեն, վասն զի հարաւի թագաւորին աղջիկը հիւսիսի թագաւորին պիտի երթայ հաշտութիւն ընելու համար, բայց բազուկի ոյժ պիտի չունենայ. և այն Բ---ը ու անոր բազուկը պիտի չկարենայ դիմանալ, հապա այն աղջիկը ու զանիկա բերողները ու զանիկա ծնանողը և զանիկա ժամանակներուն համեմատ ուժովցնողը ձեռք պիտի տրուին։

7—Բայց անոր արմատներուն ընձիւղներէն մէկը պիտի ելլէ անոր տեղ, ու անիկա զօրքով պիտի գայ, և հիւսիսի թագաւորին ամրոցները պիտի մտնէ, ու անոնց մէջ բան պիտի տեսնէ ու յաղթող պիտի ըլլայ։ 8—Ու անոնց աստուածները ալ ձուլածոյ կուռքերուն ու ոսկեղէն ու արծաթեղէն ընտիր անօթներուն հետ Եգիպտոս գերութեան պիտի տանի. ու անիկա *հիւսիսի թագաւորէն աւելի շատ տարիներ պիտի կացնի։ 9—Ու հարաւի թագաւորին թագաւորութեանը մէջ պիտի մտնէ, ու նորէն իր երկիրը պիտի դառնայ։ 10—Ու անոր որդիները պատերազմի պիտի ելլեն, ու շատ զօրքերու բազմութիւն պիտի ժողվեն. ինք ալ անպատճառ պիտի գայ ու հեղեղի պէս պիտի անցնի, և դարձեալ մինչև անոր ամրոցը պիտի պատերազմի։ 11—Իսկ հարաւի թագաւորը պիտի կատղի ու պիտի ելլէ և անոր հետ, այսինքն հիւսիսի թագաւորին հետ, պատերազմ պիտի ընէ. ան ալ շատ բազմութիւն ոտք պիտի հանէ, բայց բազմութիւնը անոր ձեռքը պիտի տրուի։ 12—Ու երբ

*Կամ, դէմ

*Կամ, մէկ քանի տարի հիւսիսի թագաւորէն աւելի պիտի ուժովնայ

այն բազմութիւնը առնէ, իր սիրտը պիտի բարձրանայ, ու բիւրաւորներ պիտի կործանէ, բայց պիտի չուժովնայ։ 13—Քանզի հիւսիսի թագաւորը պիտի դառնայ, ու առաջուանէն աւելի բազմութիւն ոտք պիտի հանէ, ու մէկ քանի տարիէն հետը մեծ զօրքով ու մեծ պատրաստութեամբ անշուշտ պիտի գայ։ 14—Ու այն ժամանակները հարաւի թագաւորին վրայ շատերը պիտի ելլեն. ու քու ժողովուրդիդ բռնաւորներուն որդիները ոտք պիտի ելլեն՝ տեսիլքը կատարելու համար, բայց պիտի գլորին։ 15—Ու հիւսիսի թագաւորը պիտի գայ, ու հողաբլուրներ պիտի կանգնէ, ու պարսպաւոր քաղաքները պիտի առնէ. և հարաւի Բ---ուն բազուկները ու անոր ընտրեալները պիտի չդիմանան, ոչ ալ դիմանալու ոյժ ունին։ 16—Ու անոր վրայ եկողը իր ուզածին պէս պիտի ընէ, ու անոր երեսին դէմ դնող պիտի չըլլայ, և փառաւոր երկրին մէջ պիտի կենայ, որ անոր ձեռքով պիտի աւրի։ 17—Ու երեսը պիտի չեկէ իր բոլոր թագաւորութեանը ուժովը գալու, և իրեն հետ ուղղութիւններ պիտի ընայ, ու բան պիտի տեսնէ. և կանանց աղջիկը անոր պիտի տայ, որպէս զի անոր Բ---ը-Բ-ին՝ աւրէ, բայց անիկա անոր հետ պիտի չկայնի ու անոր պիտի չըլլայ։ 18—Նաև իր երեսը դէպ ի կղզիները պիտի դարձնէ, ու շատերը պիտի առնէ. և իշխան մը անոր նախատինքը պիտի դադրեցնէ, ու ասկէ զատ անոր նախատինքը վրան պիտի դարձնէ։ 19—Ու իր երեսը դէպ ի իր երկրին ամրոցները պիտի դարձնէ, բայց պիտի գլորի, պիտի խնայ ու պիտի չգտնուի։

20—Ու անոր տեղ մէկը պիտի ելլէ, որ հարկապահանջը պիտի զրկէ իր թագաւորութեանը *փառքին համար՝. բայց անիկա քիչ օրերու մէջ պիտի կտրուի, սակայն ոչ բարկութեամբ և ոչ պատերազմով։

21—Ու անոր տեղ անարգ մը պիտի ելլէ, որու թագաւորական պատիւ պիտի չտան. բայց անիկա հանդարտու-

*Կամ, փառաւոր մասէն

թեամբ պիտի գայ, ու չոզոբրթութիւններով թագաւորութիւնը պիտի առնէ։ 22—Ու անոր առջեւէն հեղեղին բազուկները պիտի ընկղմին ու պիտի կտրուին, նաև ուխտին իշխանը։ 23—Քանզի անոր հետ դաշնակցութիւն ընելէն ետքը անիկա նենգութիւն պիտի ընէ, և պիտի ելլէ ու սզոխ ազգով պիտի յաղթէ։ 24—Անիկա հանդարտութեամբ խիստ պարարտ գաւառին մէջ պիտի մտնէ, ու իր հայրերուն ու հարցը հայրերուն չըրածը ընք պիտի ընէ. անոնց մէջ աւար և կողոպուտ ու առացուածք պիտի բաշխէ, ու մինչև ժամանակ մը պարիսպներուն դէմ իր խորհուրդները պիտի խորհի։ 25—Ու մեծ զօրքով իր զօրութիւնը ու սիրտը պիտի գրգռէ հարաւի թագաւորին դէմ. հարաւի թագաւորն ալ խիստ մեծ ու զօրաւոր զօրքով պատերազմի պիտի ելլէ, բայց պիտի չկարենայ դիմանալ. վասն զի անոր դէմ խորհուրդներ պիտի խորհին։ 26—Անոր պաշտիկերակուրները ուտողները անգամ զանիկա պիտի կտորեն. և անոր զօրքը պիտի *ցրուի, ու շատերը սպանուած պիտի իյնան։ 27—Ու այս թագաւորներուն երկուքին ալ սիրտը չարութիւն ընելու հո---ը-ով պիտի ըլլայ, ու մէկ սեղանի վրայ սուտ պիտի խօսին, բայց պիտի չյաջողի. վասն զի վախճանը ըրաշուած ժամանակի մէջ պիտի ըլլայ։ 28—Ու անիկա շատ հարստութիւնով իր երկիրը պիտի դառնայ, և իր սիրտը սուրբ ուխտին դէմ պիտի ըլլայ, ու բան պիտի տեսնէ, ու իր երկիրը պիտի դառնայ։

29—Որոշուած ժամանակի մէջ պիտի դառնայ, ու հարաւի վրայ պիտի երթայ. բայց վերջինը առաջինին պէս պիտի չըլլայ։ 30—Քանզի Կիտացւոց նաւերը անոր վրայ պիտի երթան, և անիկա պիտի թուլնայ, ու դառնալով սուրբ ուխտին դէմ պիտի բարկանայ, ու բան պիտի տեսնէ, և պիտի դառնայ, ու սուրբ ուխտը թողղներուն ուշագրութիւն պիտի ընէ։ 31—Ու անոր կողմէն բազուկներ պիտի կայնին, և սրբարանը ու ամրոցը պիտի պղծեն, ու մնանձնա-

կամ, կռնակ, երես, յոտքէ

նաւ որ ՚ՀՀ պիտի վերցնեն, ու աւրդ պղծութիւնը պիտի դնեն։ 32—Ու ան-
թան դէմ մեքաչառութիւն ընդունողները չ-
զօրքով աթիւններով գլուխ պիտի հա-
նէ. բայց իրենց Աստուածը ճանչցողնե-
րուն ժողովուրդը այժ պիտի գանեն, ու
բան պիտի ուեաննեն։ 33—Ու ժողովուր-
դին խելացիները չատերուն պիտի սոր-
վեցնեն, ու անոնք մը սուրի, կրակի,
գերութեան և յափշտակութեան պիտի
հանդիպին։ Ու երբ —յս ԲՈՒԼՈՒՆ հան-
դիպին՚ փչ մը օգնութիւն պիտի գըտ-
նեն, 34—Ու չատերը շողոքորթութիւն-
ներով անոնց պիտի յարին։ 35—Ու
խելացիներէն ոմանք —յս ԲՈՒԼՈՒՆ պի-
տի հանդիպին, որպէս զի մինչև վերջին
ժամանակը զանոնք փորձէ, մաքրի ու
ճերմկցնէ. քանզի —ՒՒ— ասկսին որոշ
ժամանակ մը պէտ ԳԼՈՒ։ 36—Ու այն
թագաւորը իր ուզածը պիտի ընէ, ու
ինքը բոլոր աստուածներէն վեր պիտի
բարձրացնի ու պիտի մեծցնէ, և աստ-
ուածներուն Աստուծոյն դէմ ասկսի
բաներ պիտի խօսի, ու յաջողութիւն
պիտի գտնի՝ մինչև որ բարկութիւնը
կատարուի. քանզի նախասահմանուածը
ի գործ պիտի գրուի։ 37—Ու անիկա
իր հայրերուն աստուածները բանի տեղ
պիտի չդնէ, և կանանց ցանկութիւնը,
ու բնաւ աստուած մը պիտի չդնէ,
վասն զի ինք ամէնուն վրայ պիտի
մեծցնէ։ 38—Հապա բերդերուն աստ-
ուածը իր եղած տեղը պիտի պատուէ,
ու իր հայրերուն չճանչցած աստուածը
ոսկիով, արծաթով, պատուական քա-
րերով ու ցանկալի բաներով պիտի
պատուէ։ 39—Ու այն օտար աստուծոյն
հետ զօրաւոր բերդերուն մէջ բան պիտի
ուեանէ, ու —ՂՆԻ— ճանչցողներուն
վրայ տիրել պիտի տայ անոնց, ու եր-
կիրը ՚երբև՚ արժէք՚ պիտի բաժնէ։

40—Ու վերջին ժամանակը հարաւի
թագաւորը անոր հետ պիտի ծեծկռի.
ու հիւսիսի թագաւորը կառքերով, ձի-
աւորներով ու շատ նաւերով մրրիկի
պէս անոր դէմ պիտի երթայ, ու եր-
կիրները պիտի մտնէ ու կոխելով պիտի
անցնի։ 41—Ու փառաւոր երկիրը պիտի
մտնէ, ու շատ երկիրներ ապականուած պի-
տի ըլլան։ բայց անոր ձեռքէն ասոնք
պիտի ազատին. Եդովմ, Մովաբ ու Ամ-
մոնի որդիներուն գլխաւոր †ՂԸ։ 42—
Ու իր ձեռքը երկիրներուն վրայ պիտի
երկնցնէ, ու եգիպտոսի երկիրը պիտի
չկարենայ ազատիլ։ 43—Ու ոսկիի ու
արծաթի գանձերուն ու եգիպտոսի բո-
լոր պատուական բաներուն պիտի տիրէ,
և Լիբեացիք ու ԽՒՇԱՀարացիք անոր
*հնազանդ պիտի ըլլան։ 44—Բայց աբե-
լեքէն ու հիւսիսէն լուրեր պէտ ԹՈՒ,
և զանիկա պիտի խռովեցնեն. ու մեծ
բարկութեամբ պիտի ելլէ որպէս զի չա-
տերը կործանէ ու բնաջինջ ընէ։ 45—
Ու պալատներու պէս վրանները †ծովե-
րուն մէջտեղ փառաւոր ու սուրբ լեռան
վրայ՝ պիտի կանգնէ. բայց անիկա մին-
չև իր վախճանը պիտի հասնի, ու անոր
օգնութիւն ընող պիտի չըլլայ։

ԳԼ. ԺԲ

Ե այն ժամանակ քու ժողովուրդիդ
որդիներուն վրայ կայնող Միքայէլ մեծ
իշխանը պիտի ելլէ, ու —ՒՆԴԻՒ նեղու-
թեան ժամանակ պիտի ըլլայ, որ ազգ
ըլլալէն մինչև այն ատեն այնպիսին ե-
ղած չէ. և այն ժամանակ քու ժողո-
վուրդդ պիտի ազատի, այսինքն ով որ
գիրքին մէջ գրուած գտնուի։ 2—Ու
երկրի հողին մէջ քնացողներուն շատերը
պիտի արթննան, ոմանք յաւիտենական
կեանքի համար, և ոմանք ալ նախա-
տինքի —ՒՒ յաւիտենական անարգանքի
համար։ 3—Ու իմաստուններն էլլՒՒՒ
հաստատութեանը լոյսին պէս, ու ա-
նոնք որ շատերը արդարութեան կ'ա-
ռաջնորդեն՝ աստղերուն պէս պիտի փայ-
լին յաւիտեան յաւիտենից։

4—Ու դուն, ով Դանիէլ, այս խօս-
քերը գոց, ու գիրքը կնքէ մինչև վեր-
ջին ժամանակը. շատերը †ետ չատ-
թեամբ պիտի կարգան՚, ու գիտութիւ-
նը պիտի շատնայ։

*ՆԲԳ. քայլերուն մէջ
†Կամ, ծովերուն ու փառաւոր սուրբ լեռանը մէջտեղ
‡Կամ, հաս հան պիտի պատահին

5—Ու ես Դանիէլ տեսայ որ ահա
ուրիշ երկու մարդիկ կայներ էին, մէկը
գետին մէկ եզերքը՝ ու միսը գետին
միւս եզերքը։ 6—Ու մէկը բսաւ այն
կտաւ հագած մարդուն որ գետին ջու-
րերուն վրայ էր՚՝ Ա՛ր աջանչելի
բաներուն վերջը մինչև ե՞րբ պիտի ըլ-
լայ։ 7—Ու լսեցի որ այն կտաւ հագած
մարդը որ գետին ջուրերուն վրայ էր՚՝
ը՛ր էր, իր ա՛ջ ու ձախ ձեռքերը եր-
կինք վերցնելով՝ յաւիտեան կենդանի
եղողին վրայ երդում բրաւ, որ ժամա-
նակ մը, ժամանակներ, ու կէս ժա-
մ՚՝ պիտի ըլլայ։ ու երբ սուրբ ժողո-
վուրդին զօրութիւնը բոլորովին ցրուի-
ասոնց ամէնը պիտի կատարուի։

8—Ու ես լսեցի, բայց չհասկցայ։ ու
ըսի, Ո՛վ տէր իմ, ասոնց վերջը ի՞նչ պի-
տի ըլլայ։ 9—Ու անիկա ըսաւ, Գնա,
ով Դանիէլ, քանզի այս խօսքերը մին-
չև վերջին ժամանակը գոցուած ու կնքո-
ւած են։ 10—Շատերը պիտի մաքը-
րուին ու պիտի ձերմկնան ու պիտի
փորձուին, բայց ամբարիշտները ամբա-
րիշտութիւն պիտի ընեն. ու բնաւ ամ-
բարիշտ մը պիտի չհասկնայ, հապա ի-
մաստունները պիտի հասկնան։ 11—Ու
հանձինհաւոր զոհին *վերցուելուն ու աւր-
դող պղծութեանը գրուելուն ժամա-
նակէն՝ հազար երկու հարիւր իննսուն
օր պիտի ըլլայ։ 12—Երանի՛ անոր որ
պիտի սպասէ, ու հազար երեք հարիւր
երեսունըհինգ օրուան պիտի հասնի։
13—Բայց գուն գնա մինչև վախճանը,
վասն զի պիտի հանգչիս. ու օրերուն
վերջը քու վիճակիդ մէջ պիտի կայ-
նիս։

*Կամ, վերցուած ժամանակէն մինչև աւրդող պղծութեանը դրուիլը

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՈՎՍԵԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը խօսքը, որ Բէերի որդւոյն Ովսէէ եղաւ, Ցուդայի թագաւորութեան, Ոզիայի, Յովաթամի, Ահազի եւ Եզեկիայի օրերը և Իսրայէլի թագաւորին Յոաշի որդւոյն Երոբովամի օրերը։

2—Ովսէէի մէկզգալ եղած Տէրոջը խօսքին սկիզբը։ Եւ Տէրը ըսաւ Ովսէէին, Գնա, քեզի պոռնկութեան կին մը ու պոռնկութեան ազգքներ առ, քանզի երկիրը Տէրոջմէ խառարելով՝ խիստ շատ պոռնկեցաւ։

3—Եւ անիկա գնաց ու Դաբելայիմի աղջիկը Գոմերը առաւ, և անիկա յղացաւ ու անոր որդի մը ծնաւ։ 4—Եւ Տէրը անոր ըսաւ, Անոր անունը Յեզրաէել դիր, քանզի փոքր աւուրնին հոտքը Յեզրաէելի վրէ խ-փ-ռ-ծ արիւնները Եհուի տունին պիտի պահանջեմ, ու Իսրայէլի տանը թագաւորութիւնը պիտի դադրեցնեմ։ 5—Եւ պիտի ըլլայ որ այն օրը Յեզրաէելի հովիտին մէջ Իսրայէլի աղեղը պիտի կոտրեմ։

6—Եւ Գոմէր դարձեալ յղացաւ ու աղիկ մը ծնաւ։ Եւ Տէրը ըսաւ Ովսէէի, Անոր անունը *Լօռուհամա դիր, քանզի ալ պիտի չողորմիմ Իսրայէլի տանը. †Տապա զանիկա բոլորովին պիտի վերցընեմ։ 7—Բայց Ցուդայի տանը ողորմութիւն պիտի ընեմ, ու զանոնք իրենց Տէր Աստուծովը պիտի փրկեմ, և զանոնք աղեղով կամ սրով կամ պատերազմով, ձիերով կամ ձիաւորներով պիտի չփրկեմ։

8—Ու երբ Լօռուհաման կաթէն կտրեց, նորէն յղացաւ ու որդի մը ծնաւ։ 9—Ա՛յն ատեն Տէրը ըսաւ, Անոր անունը Հ*Լօամմի դիր, քանզի դուք իմ ժողովուրդս չէք, ու ես ձեզի Ա-ա-ե-ի պիտի չըլլամ։ 10—Բայց Իսրայէլի որդիները Թիւը ծովու աւազին պէս պիտի ըլլայ, որ անչափ ու անթիւ է. ու այն տեղ ուր անոնց ըսուեցաւ Թէ Դուք իմ ժողովուրդս չէք, հոն անոնք կենդանի Աստուծոյն որդիները պիտի ըսուին։ 11—Եւ Ցուդայի որդիները ու Իսրայէլի որդիները միկտեղ պիտի ժողովուին, ու իրենց վրայ իշխան մը պիտի դնեն, ու երկրէն պիտի ելլեն, քանզի Յեզրաէելի օրը մեծ պիտի ըլլայ։

ԳԼ. Բ

Ձեր եղբայրներուն *Ամմի,
Ու ձեր քոյրերուն †Րուհամա ըսէք։
2—Վիճեցէք ձեր մօրը հետ, վիճեցէք,
Քանզի անիկա իմ կինս չէ,
Ու ես անոր այրը չեմ.
Եւ անիկա իր երեսէն իր պոռնկութիւնները՝
Ու իր ծիծերուն մէջէն իր շնութիւնները
Թող վերցնէ.
3—Որ չըլլայ թէ զանիկա մերկացնեմ,
Ու զանիկա իր ծննդեան օրուանը պէս
Թողում,
Եւ զանիկա անապատի դարձնեմ,
Ու զանիկա անջուր երկրի պէս ընեմ,
Եւ զանիկա ծարաւով մեռցնեմ։
4—Ու անոր որդիներուն ողորմութիւն պիտի չընեմ,
Քանզի անոնք պոռնկութեան որդիներ են։
5—Քանզի անոնց մայրը պոռնկութիւն ըրաւ,
Զանոնք յղացողը խայտառակութիւն գործեց,
Վասն զի ըսաւ, Իմ հոմանիներուս եւեւէն երթամ,

*Ա՛յսինքն, չողորմեալ
†Կամ, որ անոնց մէկ կերպով մը նմանիմ
‡Ա՛յսինքն, ոչ իմ ժողովուրդս
*Ա՛յսինքն, իմ ժողովուրդս
†Ա՛յսինքն, ողորմեալ

Որոնք իմ հացս ու ջուրս, բուրդս ու կտանս,
Իւղս ու խմելիքներս Ն*ին կու տան։
6—Անոր համար ահա ես փուշերով ցանգ պիտի փակեմ *անոր ճամբուն*,
Ու անոր Բ-ը-ր-ծ-ը պատ պիտի չինեմ,
Որպէս զի իր ճամբաները չգտնայ գտնել։
7—Եւ անիկա իր հոմանիներուն եւեւէն պիտի երթայ, բայց անոնց պիտի չհասնի,
Ու զանոնք պիտի փնտռէ, բայց պիտի չգտնայ զանոնք.
Այն ատեն պիտի ըսէ, Երթամ իմ առաջնոյ կրկնաս գառնամ,
Քանզի այն ատեն հիմակուընէ ալէկ վ-ի-ճ-ակ էր։
8—Եւ անիկա չգիտցաւ որ ցորենը ու գինին ու իւղը ես անոր կուտայի,
Եւ անոր արծաթը ու ոսկին ես կը շատցընէի,
Որոնցմով անոնք Բահաղի կ-ռ-ւ-ե-ր չընծեցին։
9—Անոր համար պիտի դառնամ, ու իմ ցորենս իր եղանակին մէջ
Ու իմ գինիս իր որոշ ժամանակին մէջ պիտի առնեմ,
Եւ անոր մերկութիւնը ծածկող բուրդս ու քէթանս ես պիտի առնեմ։
10—Ու հիմա անոր հոմանիներուն առջեւ Անոր անզգամութիւնը պիտի յայտնեմ,
Ու մարդ մը պիտի չըլլայ որ զանիկա իմ ձեռքէս ազատէ։
11—Եւ անոր բոլոր ուրախութիւնը,
Անոր տօները, ամսագլուխները ու շաբաթները
Եւ բոլոր հանդիսաւոր օրերը պիտի խափանեմ։
12—Ու պիտի աւերեմ անոր որթերը ու թզենիները,
Որոնց համար կ'ըսէր Թէ Ասոնք իմ հոմանիներուս ինծի տուած պարգեւներն են,
Եւ զանոնք անտառ պիտի դարձնեմ.
Ու զանոնք դաշտի գազանները պիտի ուտեն։
13—Եւ զանիկա պիտի պատժեմ այն օրերուն համար՝
Որոնց մէջ անիկա Բահաղիմներուն խունկ կը ծխէր,
Իր օղերովը ու մանեակներովը կը զարդարուէր,
Ու իր հոմանիներուն եւեւէն կ'երթար,
Ու զիս մոռցեր էր, կ'ըսէ Տէրը։
14—Անոր համար ահա ես զանիկա պիտի հմայեմ,
Եւ զանիկա անապատը պիտի տանիմ,
Ու անոր սրտին պէս պիտի խօսիմ։
15—Եւ անկէ անոր այգիները
Ու Աքորվի ձորը յոյսի դրան համար անոր պիտի տամ,
Եւ հոն իր մանկութեան օրերուն պէս,
Ու Եգիպտոսի երկրէն ելած օրուանը պէս երգեր պիտի երգէ։
16—Ու պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը,
Զիս Իմ այրս պիտի կոչես,
Ու մէյմըն ալ զիս Իմ *Բահաղս պիտի չկոչես։
17—Ու անոր բերնէն Բահաղիմի անունները պիտի վերցնեմ,
Ու անոնք մէյմըն ալ իրենց անուններովը պիտի չյիշուին։
18—Եւ անոնց համար այն օրը
Դաշտի գազաններուն հետ ու երկինքի թռչուններուն հետ
Ու երկրի սողուններուն հետ ուխտ պիտի ընեմ,
Ու երկրէն աղեղը, սուրը ու պատերազմը պիտի կոտրեմ,
Եւ զանոնք ապահովութեամբ պիտի պառկեցնեմ։
19—Ու քեզ յաւիտեան ինծի պիտի նշանեմ,
Եւ քեզ արդարութիւնով, իրաւունքով,
Ողորմութիւնով ու գթութիւնով ինծի պիտի նշանեմ.
20—Այո, քեզ ճշմարտութիւնով ինծի պիտի նշանեմ,
Ու Տէրը պիտի ճանչնաս։
21—Եւ պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը, պատասխան պիտի տամ.
Ես երկինքներուն պատասխան պիտի տամ,
Ու անոնք երկրի պատասխան պիտի տան,
22—Ու երկիրը ցորենին, գինիին ու իւղին պատասխան պիտի տայ,

*Ա՛յսինքն, աէրս

Եւ անոնք *Ցեզրայէլի պատասխան պիտի տան։
23—Ու զանիկա ինծի համար երկի վրայ պիտի սերմանեմ,
Ու չղոմէականին պիտի ողորմիմ,
Ու իմ ժողովուրդս չեղողին՝ Դուն իմ ժողովուրդս ես՝ պիտի ըսեմ.
Ան ալ ՙինծի՚ իմ Աստուածս ես՝ պիտի ըսէ։

Գլ. Գ

Ետքը Տէրը ինծի ըսաւ, Նորէն գնա, էդ բարեկամն սիրուած չնացող կին մը սիրէ, ինչպէս Տէրը Իսրայէլի որդիները կը սիրէ, թէեւ անոնք օտար աստուածներու կը դառնան, ու չամիչէն կարկանդակներ կը սիրեն։ 2—Ուստի զանիկա տասնըհինգ ՙլիւ արծաթով ու մէկ ու կէս քառ գարիով ինծի առի. 3—Ու անոր ըսի, ինծի համար շատ օրեր նստիս, չնաթիւն չընես և ՙուրիշ մարդու մը չլսուեիս, ու ես ալ քեզի համար ՙյանէ՚ պիտի ըլլամ։

4—Քանզի Իսրայէլի որդիները շատ օրեր առանց Թագաւորի, առանց իշխանի, առանց զոհի, առանց կուռքի, առանց եփուած ու Թերափիմի պիտի նստին։ 5—Ետքը Իսրայէլի որդիները պիտի դառնան, ու իրենց Տէր Աստուածը և իրենց Դաւիթ Թագաւորը պիտի փնտռեն, ու վերջին օրերը Տէրոջը ու անոր բարութեանը պիտի ապաստանին։

Գլ. Դ

Տէրոջը խօսքը մարկ ըրէք, ով Իսրայէլի որդիներ,
Քանզի Տէրը երկրի բնակիչներուն հետ վէճ ունի,
Քանզի երկրի վրայ ճշմարտութիւն չկայ ու ողորմութիւն չկայ
Ու Աստուծոյ գիտութիւնը չկայ։
2—Երդումը, սուտ խօսիլը, մարդասպանութիւնը,
Գողութիւնը ու շնութիւնը չատցեր են,
Ու արիւնները արիւններու կը հասնին։
3—Անոր համար երկիրը սուգ պիտի բռնէ,

*Այլ՝ Աստուծոյ սերմանածին

Ու անոր բոլոր բնակիչները
Դաշտի գազաններուն ու երկինքի թռչուններուն հետ պիտի նուաղին,
Ու ծովու ձուկերն ալ պիտի ապաքին։
4—Սակայն մարդ մը թող չվիճի, ու մարդ մը թող չյանդիմանէ,
Քանզի քու ժողովուրդդ քահանային հետ վիճողներու պէս է։
5—Ուստի դուն ցորեկով պիտի գլորիս,
Ու մարգարէն ալ քեզի հետ գիշերով պիտի գլորի.
Ես քու մայրդ բնաջինջ պիտի ընեմ։
6—Իմ ժողովուրդս գիտութիւն չունենալուն համար բնաջինջ եղաւ.
Որովհետեւ դուն գիտութիւնը մերժեցիր,
Ես ալ քեզ պիտի մերժեմ, որպէս զի ինծի քահանայ չըլլաս.
Ես որովհետեւ քու Աստուծոյդ օրէնքը մոռցար,
Ես ալ քու որդիներդ պիտի մոռնամ։
7—Անոնք որչափ որ բազմացան,
Այնչափ ալ ինծի դէմ մեղք գործեցին.
Ո՞ւրէ անոնց փառքը անարգութեան պիտի փոխեմ։
8—Անոնք իմ ժողովուրդիս մեղքը կ'ուտեն,
Ես *իրենց սիրտերը անոնց անօրէնութեանը կու տամ՚։
9—Ու ըլլայ ինչպես ժողովուրդին՝ նոյնպես ալ քահանային պիտի ըլլայ.
Ես զանոնք իրենց ճամբաներուն համեմատ պիտի պատժեմ,
Ու անոնց իրենց գործերուն փոխարէնը պիտի հատուցանեմ։
10—Ես պիտի ուտեն, բայց պիտի չկշտանան.
Պոռնկութիւն պիտի ընեն, բայց պիտի չշատանան.
Քանզի Տէրոջը ուշադրութիւն ընելը թողացին,
11—Շնութիւնը, գինին ու քաղցուն
Սիրտը †կը խաբեն։
12—Իմ ժողովուրդս իր փայտին կը հարցնէ,
Ու իր ցուպը իրեն կ'իմացնէ.

*Կամ՝ անոնց սիրտերը իրենց անօրէնութեանը կը համոզեն
†Եբր. կ'առնեն

Քանզի պոռնկութեան ոգին զանոնք գլխէ հանեց,
Ու իրենց Աստուածը թողլով՝ պոռնկեցան։
13—Լեռներուն գլուխները զոհ կը մատուցանեն,
Ու բլուրներուն վրայ կաղնիի, կազմախի ու բեւեհենի տակ,
Անոնց հովանիին հաճելի ըլլալուն համար, խունկ կը ծխեն.
Անոր համար ձեր ազիկները պոռնկութիւն պիտի ընեն,
Ու ձեր հարսերը շնութիւն պիտի ընեն։
14—Ձեր ազիկները պիտի չպատժեմ երբ պոռնկութիւն ընեն,
Ոչ ալ ձեր հարսերը՝ երբ շնութիւն ընեն.
Քանզի հ-յրէրը իրենք պոռնիկներուն հետ կը զատուին,
Ու բոզերուն հետ կը զոհեն.
Ուստի անհանճար ժողովուրդը պիտի կործանի։
15—Թէեւ դուն պոռնկութիւն կ'ընես, ով Իսրայէլ,
Յուդա թող յանցաւոր չըլլայ.
Ու Գողգոթա մի մտնէք, ու Բեթաւան մի ելլէք,
Ու Տէրը կենդանի է ըսելով երդում մի ընէք,
16—Քանզի Իսրայէլ կամակոր երինջի պէս ապստամբեր է.
Հիմա Տէրը լայնարձակ տեղ մը գառնեռու պէս պիտի արածէ զանոնք։
17—Եփրեմ կուռքերուն յարեր է.
Զանիկա թող տուր։
18—Անոնց *խնճոյքը ապականած է.
Շատ պոռնկութիւն ըրին.
Տուէք ըսելը կը սիրեն,
Ամ՛ի՛ր անոնց իշխաններուն։
19—Հովը զանիկա իր թեւերուն վրայ պիտի կապէ,
Ու անոնք իրենց զոհերէն պիտի ամչնան։

Գլ. Ե

Լսեցէք ասիկա, ով քահանաներ,
Ու մտիկ ըրէք, ով Իսրայէլի տունը,
Ու ականջ տուէք, ով թագաւորին տունը,

*Կամ՝ գինին

Վասն զի ձեզի համար դատաստան կայ,
Քանզի գուք Մասփայի մէջ որոգայթ,
Ու Թաբովրի վրայ տարածուած վարմ եղաք։
2—Մոլորածները սպանութիւն ընելով հրչէ հէլ խորասոյզ եղան,
*Թէեւ ես անոնց ամէնուն խրատ ըլլամ։
3—Ես Եփրեմը կը ճանչնամ,
Ու Իսրայէլ ինծմէ պահուած չէ.
Այո, հիմա, ով Եփրեմ, դուն չնաթիւն կ'ընես,
Ու Իսրայէլ պղծուած է։
4—†Անոնք իրենց գործերը չեն չիտկեր՝
Որ իրենց Աստուծոյն դառնան.
Քանզի անոնց մէջ պոռնկութեան ոգի կայ,
Ու Տէրը չեն ճանչնար։
5—‡Ուստի Իսրայէլի հպարտութիւնը իր երեսին առջեւ պիտի խոնարհի՚.
Ես Իսրայէլ ու Եփրեմ իրենց անօրէնութիւնովը պիտի գլորին.
Ցուդա ալ անոնց հետ պիտի գլորի։
6—Անոնք իրենց ոչխարներովը ու արջառներովը
Տէրը փնտռելու պիտի երթան, բայց պիտի չգտնեն.
Անիկա անոնցմէ քաշուեցաւ։
7—Անոնք Տէրոջը անհաւատարմութիւն ըրին,
Քանզի օտար ազգերներ ծնան.
Հիմա իրենց վիճակներովը ||մէկ ամսուան մէջ պիտի ապահին՚։
8—Գիբեայի մէջ շեփոր հնչեցուցէք,
Ու Ռամայի մէջ տատափոզ.
Բեթաւանի մէջ բարձրաձայն կանչեցէք,
Քու հետեւէդ, ով Բենիամին։
9—Յանդիմանութեան օրը Եփրեմ ամայի պիտի ըլլայ.
Իսրայէլի ցեղերուն մէջ ճշմարիտը գիտցուցի։

*Կամ՝ Ուստի ես անոնց ամէնուն վրայ պատիժ պիտի բերեմ
†Կամ՝ Իրենց գործերը չէրէնէ չեն թողուր
‡Կամ՝ Ու Իսրայէլի հպարտութիւնը անոր երեսին դէմ կը վկայէ
||Եբր. Մէկ ամիսը զանոնք պիտի ուտէ

10—Ծուղայի իշխանները սահմաններ
փոխողներու պէս եղան.
Անոնց վրայ ջուրի պէս պիտի թափեմ
իմ բարկութիւնս։
11—Եփրեմ հարստահարուած ու դա-
տաստանուած է,
Քանզի յօժար կամքով հրամանին եւե-
լաւն քալեց։
12—Ուստի ես Եփրեմի ցեղի պէս,
Ու Ծուղայի տանը փայտի որդի պէս
պիտի ըլլամ։
13—Երբ Եփրեմ իր ախտը և Ծուղա
իր վէրքը տեսաւ,
Եփրեմ Ասորեստան գնաց,
Ու *Ծաբէք թագաւորին դեսպաններ
ղրկեց.
Բայց անկարա ձեզ բժշկելու ու ձեր վէր-
քը առողջացնելու կարող չէ։
14—Քանզի ես Եփրեմի առիւծի պէս,
Ու Ծուղայի տանը առյզ առիւծի պէս
պիտի ըլլամ.
Ես, ես պիտի պատառեմ ու պիտի եր-
թամ.
Պիտի տանիմ, ու ազատող մը պիտի
չըլլայ։
15—Ես պիտի երթամ ու իմ տեղս
դառնամ,
Մինչև անոնք իրենց յանցաւոր ըլլալը
խոստովանին, ու իմ երեսս
փնտռեն.
Երբ նեղութեան մէջ մնանան, ինծ կա-
նուխ պիտի փնտռեն։

Գլ. Զ

Եկէք, ու Տէրոջը դառնանք,
Քանզի անիկա պատառեց, ու անիկա
մեզ պիտի բժշկէ.
Անիկա զարկաւ, ու անիկա մեզ պիտի
պատէ.
2—Երկու օրէն հոգը մեզ պիտի կեն-
դանացնէ.
Երրորդ օրը մեզ պիտի կանգնեցնէ,
Ու անոր առջև պիտի ապրինք։
3—Ու Տէրը պիտի ճանչնանք, ու ձգտինք
ճանչնալու հետևէ պիտի ըլլանք.
Անոր ելքը արշալոյսի պէս պատրաս-
տուած է,

Ու անիկա մեզի պիտի գայ անձրեւի
պէս,
Երկիրը քրքջ վերջին անձրեւին պէս։
4—Ինչի՞ ընեմ, ով Եփրեմ,
Ինչի՞ ընեմ, ով Ծուղա,
Վասն զի ձեր բարութիւնը առաւօտեան
ամպին պէս
Ու կանուխ իյնած ցօղին պէս է՝ որ
կ'անցնի։
5—Ասոր համար մարգարէներուն ձեռ-
քով ձնծաղ †կոտրեցի,
Բերնիս խօսքերովը զանոնք մեռցուցի,
Ու †քու դատաստաններդ լոյսի պէս
պիտի ելլեն։
6—Քանզի ես ողորմութիւն կ'ուզեմ և
ոչ թէ զոհ,
Ու ողջակէզներէն աւելի՝ Աստուծոյ գի-
տութիւնը։
7—Իսկ անոնք ‡Ադամի պէս ուխտազանց
եղան.
Հոն ինծի անհաւատարմութիւն ըրին։
8—Գաղաադ անօրէնութիւն ընողներու
քաղաք է,
Արեան չափ հետիոտով լեցուն է։
9—Ու ինչպէս աւազակներու գունդերը
Մարդու համար դարանամուտ կ'ըլլան,
Այնպէս քահանաներուն խումբը
Սիւքեմի ճամբուն մէջ սպանութիւն
կ'ընեն,
Քանզի անոնք եղեռնագործութիւն կ'ը-
նեն։
10—Իսրայէլի տանը մէջ սոսկալի բան
տեսայ.
Եփրեմի պոռնկութիւնները հոն են,
Իսրայէլ պղծուեցաւ։
11—Ինծի ալ հունձք մը պատրաստուած
է, ով Ծուղա,
Երբ իմ ժողովուրդիս գերութիւնը դար-
ձընեմ։

Գլ. Է

Երբ Իսրայէլը պիտի բժշկէի,
Եփրեմի անօրէնութիւնը
Ու Սամարիայի չարութիւնները յայտ-
նուեցան.

*Եբր. տալեցի
†Կո՛, իմ դատաստաններս
‡Կո՛, մարդու.

Գողի անոնք սատիճն կը գործեն.
Ու գողը ներս կը մտնէ,
Ու դուրսը աւազակներուն գունդը կը
մերկացնէ։
2—Ու իրենց սրտին մէջ չեն մտածեր,
Թէ ես անոնց բոլոր չարութիւնը կը յիշեմ.
Հիմա զանոնց գործերը զիրենք պաշարե-
ցին,
Անոնք իմ երեսիս առջև են։
3—Իրենց չարութիւնովը թագաւորը,
Ու իրենց սատիճներովը իշխանները
կ'ուրախացնեն։
4—Անոնց ամէնը շնացողներ են՝
Հոգ եփղէն վառուած թոնրի պէս,
Որ զանգուածը չաղկէն եառքը՝
Մինչև անոր խմորիլը վառէլեն կը դա-
դարի։
5—Մեր թագաւորին օրը
Իշխանները գինիին տաքութենէն *հի-
ւանդացան.
Անիկա իր ձեռքը ծաղր ընողներուն
երկնցուց։
6—Քանզի անոնք դարանամուտ ըլլալով,
Իրենց սիրտը թոնրի պէս պատրաստե-
ցին.
Անոնց եփոյը բոլոր գիշերը կը քնանայ,
Առտուանց անիկա բոցավառ կրակի պէս
կը վառի։
7—Ամէնը թոնրի պէս տաքցան.
Ու իրենց դատաւորները կերան.
Անոնց բոլոր թագաւորները իյնան.
Անոնց մէջ ինծի կանչող մը չկայ։
8—Եփրեմ ժողովուրդներուն հետ
խառնուեցաւ.
Եփրեմ չդարձուած չօքի պէս է։
9—Անոր զօրութիւնը օտարները կերան,
ու ինք չգիտեր.
Մազերուն մէջ անգամ ճերմակ ինկաւ,
ու ինք չգիտեր։
10—Ու Իսրայէլի հպարտութիւնը իր
երեսին առջև խոնարհած է.
Այսու ամենայնիւ անոնք իրենց Տէր
Աստուածոյն չեն դառնար,
Ու զանիկա չեն փնտռեր։
11—Ու Եփրեմ միամիտ ու անխելք
աղաւնիի պէս եղաւ.
Եգիպտացիները կը կանչեն, Ասորեստան
կ'երթան։

*Կո՛, զՆէ՛ հիւանդացուցին

12—Երբ անոնք երթան, անոնց վրայ
իմ վարսն պիտի տարածեմ,
Որպէս զի զանոնք երկինքի թռչունի
պէս իջեցնեմ,
Ու զանոնք պատժեմ, ինչպէս անոնց
ժողովքը լսեր է.
13—Վա՛յ անոնց, քանզի ինծմէ փախան.
Կորուստը անոնց դէմ հասէ, քանզի
ինծի դէմ յանցաւոր եղան.
Ու Թէև զանոնք ես փրկեցի,
Բայց անոնք ինծի դէմ սատիճներ
կը խօսին։
14—Ու երբ անոնք իրենց անկողիննե-
րուն վրայ կ'ողբային,
Իրենց սրտովը ինծի չաղաղակեցին.
Անոնք ցորենի ու գինիի համար կը ժո-
ղովին
Ու ինծմէ կ'ապստամբին։
15—Ու Թէպէտ զՆէ՛ խրատեցի
Ու անոնց բազուկները զօրացուցի,
Սակայն *Նէ՛ ինծի չարութիւն մեպե-
ցին՝
16—Անոնք կը դառնան, բայց Բարձր-
եալին չէ.
Անոնք խաբէբայ աղեղի պէս են,
Անոնց իշխանները իրենց լեզուին կա-
տաղութեանը համար սրով պի-
տի իյնան.
Ասիկա պիտի ըլլայ անոնց նախատինքը
Եգիպտոսի երկրին մէջ։

Գլ. Ը

Փողը բերանդ դիր։
Թշնամին Տէրոջը տանը վրայ արծիւի պէս
դէպ է՛ս,
Քանզի իմ ուխտս զանց ըրին,
Ու իմ օրէնքիս դէմ յանցաւոր եղան։
2—Իսրայէլ ինծի կ'աղաղակէ՝ — Ի՛նձ,
Ով իմ Աստուածս, մենք քեզ կը ճանչ-
նանք։
3—Իսրայէլ բարին մերժեց,
Ջանիկա թշնամին պիտի հալածէ։
4—Անոնք թագաւորներ դրին, բայց
ինծմով չէ.
Իշխաններ ընտրեցին, բայց ես չգիտցայ.

*Կո՛, ինծի դէմ չարութիւն խորհե-
ցան

իրենց արծաթովը ու ոսկիովը իրենց
կուռքեր չինեցին,
Որպէս զի բնաջինջ ըլլան։
5—Քու որդիդ, ով Սամարիա, մերժեց
իմ բարկութիւնս անոնց վրայ բորբո-
քեցաւ.
Մինչև ե՞րբ անմեղութիւնը ձեռք պիտի
չբերեն,
6—Քանզի ասիկա ալ Իսրայէլէ է.
Հաստ կառ կառ պիտի ըլլայ Սամա-
րիայի ոսկիը։
7—Քանզի հով ցանեցին ու մրրիկ պի-
տի հնձեն.
Անիկա հասուն ցորեն պիտի չբերէ,
Ո՛ր ալ արդիւնքին ալիւր պիտի չըլ-
լայ.
Ե՛ր եթէ ըլլայ ալ՝ օտարները պիտի
կլլեն զանիկա։
8—Իսրայէլ կլլուեցաւ,
Հիմա ազգերուն մէջ անպիտան ամանի
պէս պիտի ըլլան։
9—Քանզի անոնք առանձնակեաց վայ-
րենի էշու պէս Ասորեստան գա-
ցին.
Եփրեմ վարձքով սիրականներ բռնեց։
10—Թէև ազգերէն ընծաներ վարձ-
քով բռնեն ալ, հիմա զանոնք
պիտի ժողվեմ.
Ու *իշխաններուն թագաւորին բեռէն
քիչ մը նեղութիւն պիտի կրեն"։
11—Քանզի Եփրեմ չատ սեզաններ չի-
նեց մեղքի համար,
Ա՛յն սեզաններըը իրեն մեղքի համար
եղան։
12—Իմ օրէնքս մեծ բաները անոր
գրեցի,
Սակայն օտար բաներ պէս սեպուեցան։
13—Իմ ընծաներուս զոհերուն համար
Անոնք միս կը զոհեն ու կ'ուտեն,
Բայց Տէրը անոնց չհաւնիր.
Հիմա անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,
Ե՛ւ անոնց մեղքերուն այցելութիւն պի-
տի ընէ.
Անոնք Եգիպտոս պիտի դառնան։

*Կամ, Թագաւորին ու իշխաններուն
բեռէն քիչ մը պիտի հանգստանան

14—Քանզի Իսրայէլ իր Սաեղծողը մոռ-
ցաւ, ու *մեհեաններ չինեց,
Եւ Յուդա պարսպաւոր քաղաքներ չատ-
ցուց.
Բայց ես անոր քաղաքները կրակ պիտի
ղրկեմ,
Ու անոր պալատները պիտի ուտէ։

Գլ. Թ

Ժողովրդներուն պէս ցնծութեամբ
մի ուրախանար, ով Իսրայէլ,
Քանզի քու Աստուծմէդ հեռացար՝
պոռնկութիւն ըրիր,
Ամէն ցորենի կալերուն վրայ պոռնի-
կեաց վարձք սիրեցիր։
2—Կալը ու հնձանը զանոնք պիտի չկե-
րակրեն,
Ե՛ւ քաղցուն հոն պիտի դաւրայ։
3—Անոնք Տէրոջը երկրին մէջ պիտի
չբնակին,
Հապա Եփրեմ նորէպատս պիտի դառնայ,
Ու Ասորեստանի մէջ պիղծ բաներ պիտի
ուտեն,
4—Տէրոջը գինիի նուէր պիտի չմատու-
ցանեն,
Ե՛ւ անոր ընդունելի պիտի չըլլան.
Անոնց զոհերը ագռաւներու հացին պէս
պիտի ըլլան իրենց,
Զանիկա ամէն ուտողները պիտի պղծ-
ծուին.
Քանզի անոնց հացը իրենց անձերուն
համար է,
Տէրոջը տունը պիտի չմտնէ.
5—Ի՞նչ պիտի ընէք ժողովի օրը,
Ու Տէրոջը տօնախմբութեան օրը։
6—Քանզի ահա կործանումէն խոյս կ'երթան.
Եգիպտոս զանոնք պիտի ժողվէ,
Մեմփիս զանոնք պիտի թաղէ.
Անոնց արծաթին ֆեռվը ռամռամ ցան-
կալի տեղերը
Եղինջը պիտի ժառանգէ,
Անոնց վրաններուն մէջ փուչերը պիտի
բուսանին։
7—Այցելութեան օրերը հասան,
Հատուցման օրերը հասան,

*Կամ, պալատներ
†Եբր. ստե

Իսրայէլ պիտի գիտնայ.
Քու անօրէնութեանդ չատութեանը հա-
մար,
Ե՛ւ քու մեծ հակառակութեանդ համար,
Մարգարէն անմիտ ու հոգեւոր մարդը
խենդ եղաւ.
8—Եփրեմ իմ Աստուծոյս կը դիտէ,
Մարգարէն իր ամէն ճամբաներուն մէջ
որոգայթ կը լարէ,
Ո՛ր իր Աստուծոյն տանը մէջ հակառա-
կութեան պատ՝ է։
9—Գաբաայի օրերուն պէս խիստ շատ
ապականեցան.
Անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,
Ո՛ր անոնց մեղքերուն այցելութիւն պի-
տի ընէ.
10—Իսրայէլը անապատի մէջ եղող
խաղողի պէս գտայ,
Ձեր հայրերը թզենիին առաջին կան-
խահաս պտուղին պէս տեսայ.
Ա՛լ՝ նէ անոնք Բեղփեգովր մտան,
Ու իրենց անձը ամօթալից էժդնէթա-
համար զատեցին,
Ե՛ւ իրենց սիրած բանին պէս իրենք՝ ալ
պիղծ եղան։
11—Եփրեմի փառքը
Ծնունդէն և արգանդէն ու յղութենէն՝
Թռչնի պէս պիտի թռչի.
12—Թէև իրենց տղաքները մեծցնեն,
Զանոնք մարդէ զուրկ պիտի թողում.
Նաև վա՛յ անոնց երբ անոնցմէ քաշ-
ուիմ,
13—Եփրեմ ալ, ինչպէս Տիւրոսը տե-
սայ, գեղարմավի տեղ մը արմ-
կուած էր.
Բայց Եփրեմ իր տղաքները՝ մեռցնողին
պիտի հանէ։
14—Տա՛ր անոնց, ով Տէր. ի՞նչ պիտի
տաս.
Անոնց վիժող արգանդ ու չոր ծիծակ-
ներ տուր։
15—Անոնց բոլոր չարութիւնը Գաղգա-
ղայի մէջ է,
Քանզի հոն անոնցմէ զզուեցայ.
Անոնց չար գործերուն պատճառաւ
Զանոնք իմ տունէս պիտի վռնտեմ,
Զանոնք մէլմին ալ պիտի չսիրեմ.
Անոնց բոլոր իշխանները ապստամբներ
են.
16—Եփրեմ չարնուեցաւ,

Անոնց արմատը չորցաւ, պտուղ պիտի
չտան.
Եթէ անոնք ծնանին ալ,
Անոնց արգանդին ցանկալի պտուղներն
ալ պիտի մեռցնեմ։
17—Իմ Աստուածս զանոնք պիտի
մերժէ,
Քանզի անոր մտիկ չըրին.
Ու ազգերու մէջ թափառական պիտի
ըլլան։

Գլ. Ժ

Իսրայէլ լայնատարած որթ մըն է,
Իրեն համար պտուղ կը բերէ.
Իր պտուղին չատութեանը չափ սեզան-
ներ չատցուց,
Իր երկրին գեղեցկութեանը պէս գեղե-
ցիկ կուռքեր չինեցին։
2—Անոնց սիրտը փոփոխական է, հիմա
յանցաւոր պիտի ելլեն.
Անիկա անոնց սեզաններըը պիտի փլցնէ,
Անոնց կուռքերը պիտի աւրէ։
3—Վատն ալ հիմա անոնք պիտի ըսեն,
Մենք թագաւոր չունինք,
Քանզի Տէրոջմէն չվախցանք.
Ու թագաւորը մեզի ի՞նչ պիտի ընէ.
4—Ուխտ րրած ատեններին՝ սուտ երդում
ընելով խօսքեր խօսեցան,
Ու դատաստանը արմին ակօսներուն մէջ
Քունեաւոր Խոխէոս պէս պիտի
բուսանի.
5—Սամարիայի բնակիչները Բեթաւանի
որթերուն պատճառաւ պիտի
վախնան,
Քանզի անոր վրայ անոր ժողովուրդը
սուգ պիտի ընէ,
Ու անոր քուրմերը անոր փառքին հա-
մար պիտի դողան,
Քանզի անիկա իրմէ գերութեան կ'եր-
թայ։
6—Անիկա ալ Ասորեստան պիտի տարուի՝
Ցարէբ Թագաւորին պարգև ըլլալու.
Եփրեմ ամօթ պիտի կրէ,
Ու Իսրայէլ իր խորհուրդէն պիտի ամչ-
նայ։
7—*Սամարիայի թագաւորը՝ բնաջինջ
պիտի ըլլայ

*Կամ, Սամարիա իր Թագաւորովը

Ջուրբ երեսին վրայ եղող փրփուրին պէս։
8—Եւ Աւետի բոլոր անդերը, Իսրայէլի մեղքը, ուերակ պիտի ըլլան։
Անոնց անդաններուն վրայ փուշ ու տատասկ պիտի բուսնի.
եւ լեռներուն պիտի ըսեն, Մեզ ծածկեցէք.
ու բլուրներուն՝ Մեր վրայ իյնկէք։
9—Գաբաայի օրերէն ի վեր մեղք գործեցիր, ով Իսրայէլ.
Հոն կայնեցան ****
Գաբաայի մէջ չհասնելան պատերազմը անոնց չհասաւ։
10—Ցանկութիւնք կը ցանկամ.
ու անոնց վրայ ժողովուրդներ պիտի ժողվուին,
երբ իրենց երկու *անօրէնութիւններուն համար" կապուին։
11—Ու Եփրեմ երինջ մըն է, որ սորված է ու կը սիրէ ցորեն ծեծել,
Բայց ես անոր պարանոցին գեղեցկութիւնը վրայ կ՚անցնեմ.
Եփրեմը կառքի պիտի քշեմ,
Յուդա պիտի հերկէ,
Յակոբ անոր էֆ-էֆ պիտի տափանէ։
12—Ձեզի արդարութիւնով ցանեցէք,
ո՜ողորմութիւնով հնձեցէք,
ե՜ս չշահագործ երկիրը հերկեցէք.
Քանզի Տէրը վրնռելու ատեն է,
Մինչև ինք գայ ու ձեր վրայ արդարութիւն տեղայ։
13—Ամբարշտութիւնը հերկեցիք ու անօրէնութիւն հնձեցիք,
Սուտ պտուղ կերաք.
Քանզի դուն քու ճամբադ և քու զօրաւորներուդ բազմութեանը ապաւինեցար։
14—Ուստի քու ժողովուրդներուդ մէջ խռովութիւն պիտի ելլէ,
եւ քու բոլոր բերդերդ պիտի կործանին,
ինչպես Սալման պատերազմին օրը Բեթ արբելը կործանեց,
ո՜ր մայրը իր ազգը վրայ գետինը զարնուեցաւ։
15—Բեթէլ ձեզի ասոր պէս պիտի ընէ,
Ձեր չափազանց չարութեանը համար։

*Կամ, ակօսներուն մէջ

Ակչալոյին առանը իսրայէլի թագաւորը բոլորովին բնաջինջ պիտի ըլլայ։

Գլ. ԺԱ

Երբ Իսրայէլ մանուկ էր, զանիկա կը սիրէի,
Ու իմ որդիս Եգիպտոսէ կանչեցի։
2—Որչա՜փ զանոնք կանչեցին, այնչափ անոնց երեսէն գացին.
Բահաղիմներուն զոհ մատուցին,
Ու կռապերուն խունկ ծխեցին։
3—Ու Եփրեմը ես քալեցուցի.
Զանոնք †իրենց թեւերէն† կը բռնէի.
Սակայն չգիտցան թէ զիրենք բժշկողը ես եմ.
4—Զանոնք մարդու չուաններով, սիրոյ կապերով, քաշեցի,
Ու անոնց ‡պարանոցին լուծը հանողներու պէս եղայ իրենց,
Եւ անոնց հանգստութեամբ կերցուցի։
5—Անիկա Եգիպտոսի երկիրը պիտի չդառնայ,
Հապա Ասորեստանցին պիտի ըլլայ անոր թագաւորը,
Քանզի դառնալ չուզեցին։
6—Ու անոր քաղաքներուն վրայ սուրը պիտի յարձակի,
Ու անոր էիշխանները պիտի ուտէ հատցընէ
Անոնց խորհուրդներուն համար։
7 — Ես իմ ժողովուրդս ինծի դէմ ապստամբելու հակամիտ է,
Ու թէև անոնք բարձրեալին կը հրաւիրեն,
Ս՚ո՜չ-ոք բնաւ մէկը ը՜նդ՚ե՜ դրարձրացներ։
8—Քեզ ի՞նչպէս տամ, ով Եփրեմ,
Քեզ ի՞նչպէս մատնեմ, ով Իսրայէլ.
Քեզ ի՞նչպէս Ադմայի պէս ընեմ,
Քեզ ի՞նչպէս Սեբոյիմի պէս դնեմ.
Իմ սիրտս ներսիդ՚ն կը խռովի,
Կարեկցութիւնս ալ միանգամայն կը բռնկին։
9—իմ սաստիկ բարկութիւնս ի գործ պիտի չդնեմ,
Եփրեմը աւերելու պիտի չդառնամ,

*Կամ, թեւերուս
†ԵԲԲ. ծնօտներէն
‡ԵԲԲ. նիգերը

Քանզի ես Աստուած եմ և ոչ թէ մարդ,
Քու մէկդ եղող Սուրբը ե՜ս եմ,
Ու *բարկութեամբ պիտի չգամ՝
10—Տէրոջը եւեւէն պիտի երթան,
Անիկա առիւծի պէս պիտի գոչէ.
Երբ անիկա գոչէ,
Արեւմտեան կողմէն ազգերը արագընթաց պիտի գան.
11—Անոնք եգիպտոսէ թռչունի պէս
Ու Ասորեստանի երկրէն ազաւնիի պէս արագընթաց պիտի գան.
Ու զանոնք իրենց տուներուն մէջ պիտի բնակեցնեմ, կ՚ըսէ Տէրը։

Գլ. ԺԲ

Եփրեմ զիս կը պաշարէ սուտութեամբ,
Ու Իսրայէլի տունը՝ նենգութեամբ.
Բայց Յուդա տակաւին Աստուծով կը տիրէ,
Ու սուրբերուն մէջ հաւատարիմ է։
2—Եփրեմ հով կը ծարակէ, ու արեւելեան հովին եւեւէն կը վազէ.
Ամէն օր սուտութիւնը ու յափշտակութիւնը կը շատցնէ.
Ասորեստանի հետ դաշնակցութիւն կ՚ընեն,
Ու եգիպտոս իւղ կը տանին։
3—Տէրը Յուդայի հետ ալ վէճ ունի,
Ու Յակոբի անոր ճամբաներուն համեմատ այցելութիւն պիտի ընէ,
Ու անոր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ անոր։
4—Անիկա արգանդի մէջ իր եղբօրը գարշապարէն բռնեց,
Եւ իր ուժովը Աստծոյ հետ ըմբշամարտեցաւ։
5—Ու հրեշտակին հետ ըմբշամարտեցաւ և յաղթ հասաւ,
Լացաւ և անկէ շնորհք խնդրեց.
Զանիկա Բեթէլի մէջ գտաւ,
Ու հոն մեզի հետ խօսեցաւ Ա՚՚Է՚՚—
6—Այսինքն զօրաց Տէր Աստուածը,
Որուն յիշատակը նո՚՚վա է։
7—Ուրեմն դուն քու Աստուծոյդ դարձիր,
Ողորմութիւն ու իրաւունք պահէ,
Ու միշտ քու Աստուծոյդ յուսա։

*Կամ, քաղաք չեմ մտներ

8—Եփրեմ վտանգական է, անոր ձեռքը նենգութեան կշիռ կայ,
Անիկա հարստահարելը կը սիրէ։
9—Ու Եփրեմ ըսաւ, Իրաւցնէ հարստացայ,
Ինծի ստացուած գտայ.
Իմ ամէն վաստակներուս կողմէն
Անօրէնութիւն պիտի չգտնեն իմ վրաս,
որ մեղք ըլլայ։
10—Իսկ ես Եգիպտոսի երկրէն ի վեր քու Տէր Աստուածդ եմ.
Քեզ տակաւին վրաններու մէջ պիտի բնակեցնեմ՝ հնդ՚ե՜որ ատենի օրերուն պէս։
11—Ես մարգարէներուն միջոցով խօսեցայ,
Ու տեսիլքները չատցուցի,
Ու մարգարէներուն ձեռքով նմանութիւններ գործածեցի։
12—Արդարև Գաղաադ անօրէն է. արդարև ունայնութիւն եղան.
Գաղգազայի մէջ արջառներ մորթեցին,
Անոնց սեղաններըը անգամ արտի ակօսներուն վրայ եղող քարակոյտներու պէս են։
13—Ես Յակոբ Ասորւոց դաշտը փախաւ,
Ու Իսրայէլ կնոջ համար ծառայութիւն ըրաւ,
Ու կնոջ համար հովիւ եղաւ։
14—Ես Տէրը մէկ մարգարէով եգիպտոսէ հանեց Իսրայէլը,
Ու անիկա մէկ մարգարէով պահպանուեցաւ։
15—Եփրեմ դառնապէս բարկացուց ՚Ա՚՚տո՚՚ո՚՚ն.
Անոր համար անոր արիւնները անոր վրայ պիտի ձգէ,
Ու անոր Տէրը անոր նախատինքը անոր պիտի հատուցանէ։

Գլ. ԺԳ

Եփրեմ երբ դողալով կը խօսէր, Իսրայէլի մէջ բարձրացաւ,
Բայց երբ Բահաղով յանցաւոր եղաւ, մեռաւ։
2—Ու հիմա նորէն մեղք կը գործեն,
Ու իրենց համար իրենց արծաթէն՝

իրենց խելքովը ձուլածոյ կուռքեր՝ արձաններ կը չինեն,
Որոնց ամէնը արուեստաւորի գործ են. իրենք անոնց համար կ՚ըսեն,
Զոհ ընող մարդիկը Թող որթերը համբուրեն։
3—Անոր համար անոնք առաւօտեան ամպին պէս,
Ու կանուխ իյած վազանցիկ ցօղին պէս,
Կալէն փոթորիկով վերցուած մրեղին պէս,
Ու ծխնելոյզին Ելած ծուխին պէս պիտի ըլլան.
4—Սակայն ես Եգիպտոսի երկրէն ի վեր քու Տէր Աստուածդ եմ.
Ու ինձմէ ուրիշ աստուած չգիտնաս,
Քանզի ինծմէ ուրիշ Փրկիչ մը չկայ։
5—Ես քեզ անապատի մէջ՝
Խիստ անվնաս երկրի մէջ ճանչցայ։
6—Անոնք իրենց արօտին համեմատ կշտացան,
Կշտացան ու անոնց սիրտը բարձրացաւ.
Անոր համար զիս մոռցան։
7—Ուստի անոնց առիւծի պէս պիտի ըլլամ,
Ճամբուն քով ընձառ պէս դարանամուտ պիտի ըլլամ։
8—Իր ձագերը կորանցուցած արջու պէս անոնց պիտի հանդիպիմ,
Ու անոնց սրտին վարագոյրը պիտի պատառեմ,
Ես զանոնք հոն առիւծի պէս պիտի ուտեմ.
Զանոնք գազանի գազանը պիտի պատառէ։
9—Դուն քեզ կորնչացուցիր, ով Իսրայէլ,
Բայց քու օգնութիւնդ ինծմէ է։
10—Ո՞ւր է քու Թագաւորդ, Որպէս զի քու բոլոր քաղաքներուդ մէջ քեզ ազատէ.
Ես ո՞ր են այն դատաւորները,
Որոնց համար բսիր Թէ Ինծի Թագաւոր ու իշխաններ տուր։
11—Իմ բարկութիւնովս քեզի Թագաւոր տուի,
Ու իմ սրտմտութիւնովս առի։
12—Եփրեմի անօրէնութիւնը կապուած՝
Անոր մեղքը պահուած է։
13—Անոր վրայ ծննդական կնոջ ցաւերը պիտի հասնին.
Անիկա իմաստուն տղայ չէ.
Ապա թէ ոչ՝ արգանդին բերանը ան-ը-ե՞ս առնէ չէը կենար։
14—Ձանոնք գերեզմանին ձեռքէն պիտի փրկեմ,
Զանոնք մահուանէ պիտի ազատեմ.
Բա՛ ժանտախտդ ո՞ւր է, ով մահ.
Բա՛ աւերումդ ո՞ւր է, ով գերեզման.
Իմ աչքերէս զղջումը պիտի ծածկուի։
15—Թէև անիկա եղբայրներուն մէջ պտղաբեր ըլլայ,
Արեւելեան հովը պիտի գայ,
Ու անապատէն Տէրոջը հովը պիտի ելլէ.
Ու անոր աղբիւրը պիտի ցամքի,
Ու անոր աղբերակը պիտի չորնայ.
Անիկա բոլոր ցանկալի անաններուն գանձը պիտի կողոպտէ։
16—Սամարիա աւերակ պիտի ըլլայ,
Քանզի իր Աստուծմէն ապստամբեցաւ.
Անոնք սրով պիտի իյնան,
Անոնց պզտիկ ազաքը գետինը պիտի զարնուին,
Ու յղի կիները պիտի ճեղքուին։

ԳԼ. ԺԴ

Ով Իսրայէլ, քու Տէր Աստուծոյդ դարձիր,
Քանզի քու անօրէնութեանդ պատճառաւ գլորեցար։
2—Ձեզի հետ խօսքեր առէք ու Տէրոջը դարձէք.
Անոր ըսէք, Ամէն անօրէնութիւնը վերցուր
Ու բարի բարութեամբ ընդունէ,
Ու մեր շրթունքներուն *զոհերը պիտի մատուցանենք։
3—Ասորեստանցին մեզ պիտի չփրկէ.
Ձիերու վրայ պիտի չհեծնենք,
Ու մեր ձեռքերուն գործին՝ Մեր Աստուածն ես՝ պիտի չըսենք,
Քանզի որբը քեզմէ ողորմութիւն կը գտնէ։
4—Անոնց ապստամբութիւնը պիտի բժշկեմ,
Զանոնք ձրիապէս պիտի սիրեմ,
Քանզի իմ բարկութիւնս անոնցմէ դարձաւ։
5—Իսրայէլի՛ ցօղի պէս պիտի ըլլամ,
Անիկա շուշանի պէս պիտի ծաղկի,

*Եբր. զոհ արարակները

Ու իր արմատները Լիբանանի ե-է-ննե-բ-ն պէս պիտի արձակէ։
6—Անոր ատեր պիտի տարածուին,
Ու անոր վայելչութիւնը ձիթենիի պէս պիտի ըլլայ,
Ու անոր անուշահոտութիւնը Լիբանանի պէս պիտի ըլլայ։
7—Անոր հովանիին տակ նստողները պիտի դառնան,
Ցորենի պէս պիտի կենդանանան,
Ու որթի պէս պիտի ծաղկին.
Անոր յիշատակը Լիբանանի գինիին պէս պիտի ըլլայ։
8—Եփրեմ ուրէ՞ն ըսէ, Կուռքերու հետ ալ ի՞նչ բան ունիմ.
Ես անոր խնդրուածքը լսեցի ու անոր խնամքը տարի.
Ես կանանչ մայր ծառի մը պէս եմ,
Բա՛ պտուղդ ինծմէ է։
9—Ո՞վ է իմաստուն՝ որ ասոնք հասկընայ,
Կա՛մ խոհեմ՝ որ ասոնք գիտնայ.
Քանզի Տէրոջը ճամբաները չիտակ են,
Ու արդարները անոնց մէջ պիտի քալեն.
Բայց յանցաւորները անոնց մէջ պիտի գլորին։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎԵԼԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը խօսքը՝ որ եղաւ Փոթուէլի որդւոյն Յովէլի։
2—Լսեցէք ասիկա, ով ծերեր,
Ու ականջ առէք, ով երկրի բոլոր բնակիչները.
Միթէ այսպիսի բան մը եղա՞ւ ձեր օրերուն մէջ,
Կամ ձեր հայրերուն օրերուն մէջ։
3—Ասիկա ձեր որդիներուն պատմեցէք,
Ու ձեր որդիները իրենց որդիներուն,
Ու անոնց որդիները յետագայ ազգին պատմեն։
4—Խաւնիձին Թողածը մարախը կերաւ,
Ու մարախին Թողածը ջրեակը կերաւ,
Ու ջրեակին Թողածը գրաւիծը կերաւ։
5—Արթնցէք, ով գինովներ, ու լացէք,
Ու պաք ամէնդ, ով գինի խմողներ,
Մուգ բռնեցէք քաղցուին համար,
Քանզի ձեր բերնէն կարեցաւ։
6—Ուան զի իմ երկրիս վրայ
Զօրաւոր ու անթիւ ազգ մը եկաւ.
Անոր ակռաները առիւծի ակռաներ են,
Ու անիկա մատակ առիւծի ժանիքներ ունի։
7—Անիկա իմ որթս աւերեց,
Ու իմ թզենիս կատարեց.
Զանիկա բոլորովին մերկացուց ու վար ձգեց,
Անոր ուռիները ծերմկցան։
8—Ողբ բրէ կոյսի մը պէս՝
Որ իր մանկութեան կիսանը համար քուրձ հագած ի՛ւ-նքը։
9—Հացի ընծան ու թափելու նուէրը Տէրոջը տաճէն կտրեցան.
Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները սուգ կը բռնեն։
10—Արտերը աւերեցան, երկիրը սուգ կը բռնէ,
Քանզի ցորենը աւերեցաւ,
Նոր գինին չորցաւ, իւղը պակսեցաւ։
11—Ամչցէք, ով երկրագործներ,
Ողբացէք, ով այգեգործներ,
Թէ՛ ցորենին համար և թէ՛ գարիին համար,
Քանզի արտերուն բերքը կորաւեցաւ։
12—Որթը չորցաւ ու թզենին նուազեցաւ.
Նռնենին, արմաւենին, խնձորենին,
Արտին բոլոր ծառերը չորցան.
Այսպէս մարդոց որդիներէն ուրախութիւնը վերցաւ։

13—Բ֊ոյչ հագէք ու ազգացէք, ով քահանաներ.
Հառաչեցէք, ով սեղանին պաշտօնեաներ.
Եկէք, ով իմ Աստուծոյս ծառաներ,
Գիշերը քուրձերու մէջ անցուցէք.
Քանզի հացի ընծան ու թափելու նուէրը
Ձեր Աստուծոյն տունէն վերցան.
14—Հռամապատուիթեան ւ պրոյեցէք.
Հանդիսաւոր ժողով քարոզեցէք.
Ծերերը -- երկրին բոլոր բնակիչները
Ձեր Տէր Աստուծոյն տունը ժողվեցէք,
Ու Տէրոջը ազաղակեցէք.
15—Վա՛յ այն օրուան համար,
Քանզի Տէրոջը օրը մօտ է,
Ու Ամենակալողէն ԿՀ֊Ի աւերումի պէս պիտի գայ.
16—Ահա մեր աչքին առջեւէն կերակուրը,
Մեր Աստուծոյն տունէն ուրախութիւնը ու ցնծութիւնը կտրեցաւ.
17—*Հողին չոր կոչտերուն տակ սերմերը փտեցան,
Շտեմարանները ամայի մնացին, ամբարները ուրեցան,
Քանզի ցորենը խորշակահար եղաւ.
18—Ի՛նչպէս կը հեծեծեն անասունները.
Արջառներուն անդհանները աստանդական կը պտրտին,
Քանզի անոնց համար արօտ չկայ,
Ոչխարներուն հօտերն ալ կորսուեցան.
19—Քեզի պիտի աղաղակեմ, ով Տէր,
Քանզի անապատին արօտները կրակը կերաւ,
Ու դաշտին բոլոր ծառերը բոցը այրեց,
20—Դաշտին անասուններն անգամ քեզի կը նային,
Քանզի ջուրերուն վտակները ցամքեր են,
Ու անապատին արօտները կրակը կերեր է.

Գլ. Բ

Սիոնի մէջ փող հնչեցուցէք,
Ու իմ սուրբ լեռանս վրայ ազդարարութեան ձայն վերցուցէք.
Երկրին բոլոր բնակիչները դողան,
Քանզի Տէրոջը օրը կու գայ, վասն զի մօտ է,

2—Խաւարի ու մէգի օրը,
Ամպի ու մառախուղի օրը.
Ինչպէս արշալոյսը լեռներուն վրայ կը տարածուի,
Այդպէս չատուոր ու զօրաւոր ժողովուրդ մը պիտի ելլայ,
Որուն ի յաւիտենից նմանը չէ եղած,
Ու անկէ ետքը մէկմէկ ալ պիտի չըլլայ
Ցեղացոյ ժամանակին մէջ դարէ դար.
3—Անոր առջեւէն կրակ պիտի սպառէ,
Ու ետեւէն բոցը պիտի այրէ.
Երկիրը անոր առջեւ Եդեմի դրախտին պէս,
Ու անոր ետեւը ամայի անապատ պիտի ըլլայ,
Ու անկէ բան մըն ալ պիտի չազատի.
4—Անոնց կերպարանքը ձիերու կերպարանքին պէս է,
Ու անոնք ձիաւորներու պէս պիտի վազեն,
5—Լեռներու գլուխներուն վրայ կառքերու ձայնին պէս,
Ցարդը ուռող կրակի բոցին ձայնին պէս,
Պատերազմի չարաւած զօրաւոր ժողովուրդի պէս պիտի ցաքկեն.
6—Անոնց երեսէն ժողովուրդները պիտի տագնապին,
Ամէն երեսները գոյներնին պիտի նետեն,
7—Անոնք զօրաւորներու պէս պիտի վազեն,
Պատերազմական մարդոց պէս պարիսպներու վրայ պիտի ելլեն,
Ու ամէն մէկը իրենց ճամբուն մէջ պիտի փալեն,
Ու իրենց շաւիղները պիտի չփոխեն,
8—Ու մէկմէկ պիտի չհրեն,
Ամէն մէկը իր ճամբուն մէջ պիտի փալէ.
Ու եթէ սուրի վրայ ալ իյնան՝ պիտի չվիրաւորուին.
9—Քաղաքին մէջ պիտի պորտին,
Ու պարսպին վրայ պիտի վազեն.
Տուները պիտի ելլեն,
Գողի պէս պատուհաններէն պիտի մտնեն,
10—Անոնց երեսէն երկիրը պիտի դողայ,
Երկինք պիտի սասթ,
Արեւը ու լուսինը պիտի խաւարին,
Ու աստղերը իրենց պայծառութիւնը կու պիտի քաշեն,

11—Ու Տէրը իր զօրքերուն առջեւ իր ձայնը պիտի տայ,
Քանզի անոր բանակը խիստ մեծ է,
Քանզի անոր խօսքը ի գործ դնողը զօրաւոր է,
Քանզի Տէրոջը օրը մեծ ու խիստ ահեղ է,
Ու ո՞վ կրնայ անոր դիմանալ.
12—Սակայն հիմա ալ Տէրը ՅՀՎՀ֊Ի՛ըսէ.
Ինծի դարձէք ձեր բոլոր սրտովը
Ւրանապահութեամբ, լալով ու սգալով,
13—Ու ձեր սիրտերը պատառեցէք և ոչ թէ ձեր հանդերձները,
Ու ձեր Տէր Աստուծոյն դարձէք.
Քանզի անիկա ողորմած ու գթած,
Երկայնամիտ ու բազմողորմ է,
Ու չարիքի համար կը զղջայ,
14—Ո՞վ գիտէ, թերեւս անիկա դառնայ ու զղջայ,
Ու իր հետեւէն օրհնութիւն թողու,
Որպէս զի Ցորհուրդ ընծա֊ ձեր Տէր Աստուծոյն
Հացի ընծայ ու թափելու նուէր Ցհաղորդուի,
15—Սիոնի մէջ փող հնչեցուցէք,
Ւրանապահութեան ւ պրոյեցէք,
Հանդիսաւոր ժողով քարոզեցէք.
16—Ժողովուրդը ժողվեցէք, ժողովքը սրբեցէք, ծերերը հաւաքեցէք.
Տղաքները ու կաթնկերը մանուկները ժողվեցէք.
Փեսան իր սենեակէն թող ելլէ,
Ու հարսը՝ իր առագաստէն.
17—Տէրոջը պաշտօնը կատարող քահանաները
Սրահին ու սեղանին մէջտեղ թող լան,
Ու ըսեն, Ով Տէր, քու ժողովուրդիդ խնայէ,
Ու քու ժառանգութիւնդ նախատինքի մի տար,
Որ ազգերը անոնց վրայ ծիրան.
Ինչո՞ւ համար ժողովուրդներուն մէջ ըսեն թէ
Ո՞ւր է անոնց Աստուածը.
18—Այն ատեն Տէրը իր երկրին համար պիտի նախանձի,
Ու իր ժողովուրդին պիտի ողորմի,
19—Ու Տէրը պատասխան պիտի տայ, ու իր ժողովուրդին ըսէ,
Ահա ես ձեզի ցորեն, գինի ու իւղ պիտի դրկեմ,
Ու անոնցմով պիտի կշտանաք,
Ու ձեզ ազգերուն մէջ նախատինք պիտի չընեմ.
20—Ու հիւսիսային զօրքը ձեր վրայէն պիտի հեռացնեմ.
Ու անոր երեսը գէպ ի արեւելեան ծովը,
Ու ետեւը գէպ ի արեւմտեան ծովը ըլլալով,
Զանիկա չոր ու ամայի երկիր մը պիտի փչեմ.
Ու անոր գէշ հոտը պիտի ելլէ,
Ու անոր գարշահոտութիւնը պիտի բարձրանայ,
Քանզի մեծ բաներ ըրաւ։
21—Մի վախնար, ով երկիր, ցնծա և ուրախացիր,
Քանզի Տէրը մեծ բաներ պիտի ընէ։
22—Ով դաշտի անասուններ, մի վախնաք,
Քանզի անապատին արօտները կը կանանչին,
Քանզի ծառը իր պտուղը կու տայ,
Թզենին ու որթը իրենց զօրութիւնը կու տան։
23—Ու դուք, ով Սիոնի որդիներ,
Ձեր Տէր Աստուծով ցնծացէք և ուրախ եղէք,
Քանզի անիկա *չափաւորապէս առաջին անձրեւը ձեզի կու տայ,
Ձեզի անձրեւ կ'իջեցնէ, առաջին անձրեւը ու վերջին անձրեւը, առաջին ամսուն մէջ,
24—Ու կալերը ցորենով պիտի լեցուին,
Ու հնձանները գինիով ու իւղով պիտի յորդին.
25—Ու ձեզի կտ պիտի տամ այն տարիներուն գործերը,
Ջօրանգ մարախը, ջրաւակը, գրուխը ու խառնիճը,
Ձեր մէջ ղրկած իմ մեծ զօրքս, կերաւ։
26—Ու առատօրէն պիտի ուտէք ու կշտանաք,
Ու ձեր Տէր Աստուծոյն անունը պիտի օրհնէք,
Որ ձեզի համար հրաշքները ըրաւ.

*Եբր. արդարութեամբ

*Եբր. իրենց

Եւ իմ ժողովուրդս յաւիտեան պիտի չամչնայ։
27—Ու պիտի գիտնաք թէ ես Իսրայէլի մէջ եմ,
Եւ թէ ձեր Տէր Աստուածը ես եմ, և ուրիշ մը չկայ
Եւ իմ ժողովուրդս յաւիտեան պիտի չամչնայ։
28—Ու պիտի ըլլայ որ ասկէ ետև
Իմ Հոգիս ամէն մարմնի վրայ պիտի թափեմ,
Ու ձեր աղջկները պիտի մարգարէանան,
Ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն,
Ու ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն,
29—Եւ ծառաներուն վրայ ու աղախիններուն վրայ ալ
Ա՛յն օրերը իմ Հոգիս պիտի թափեմ
30—Ու երկինքի մէջ ու երկրի վրայ նշաններ պիտի դնեմ,
Արիւն ու կրակ և ծխի սիւներ։
31—Արեւը խաւարի պիտի դառնայ, ու լուսինը արիւնի,
Դեռ Տէրոջը մեծ ու ահեղ օրը չեկած,
32—Եւ պիտի ըլլայ որ ամէն ով որ Տէրոջը անունը կանչէ, պիտի ազատի.
Քանզի Տէրոջը բաժին պիտի՝
Սիօն լեռանը վրայ ու Երուսաղէմի մէջ փրկութիւն պիտի ըլլայ,
Ու նո՛ւ այն մնացորդներուն մէջ՝ զորոնք Տէրը պիտի կանչէ,

Գլ. Գ

Քանզի ահա այն օրերը ու այն ժամանակը,
Որ ես Յուդայի ու Երուսաղէմի գերութիւնը պիտի դարձնեմ,
2—Ա՛յն ատեն բոլոր ազգերը պիտի ժողվեմ,
Ու զանոնք *Յովսափատ հովիտը պիտի իջեցնեմ,
Եւ հոն անոնց հետ դատ պիտի վարեմ,
Իմ ժողովուրդիս ու իմ ժառանգութեանս Իսրայէլի համար,
Զոր ազգերու մէջ ցրուեցին,
Ու իմ երկիրս բաժնեցին,
3—Եւ իմ ժողովուրդիս համար վիճակ ձգեցին,
Ու տղան պոռնիկի վաճառի տուին,
Եւ աղջիկը գինիի համար ծախեցին, որպէս զի խմեն։
4—Ու նաև դուք ինծի հետ ի՞նչ բան ունիք,
Ով Տիւրոս ու Սիդոն, և Փղշտացւոց բոլոր սահմանները,
Մի՞թէ դուք ինծի հատուցում պիտի ընէք.
Եթէ դուք ինծի հատուցում ընէք,
Շուտով ու անյապաղ ձեր հատուցումը ձեր գլխուը պիտի դարձնեմ,
5—Քանզի իմ արծաթս ու ոսկիս առիք,
Ու իմ ազէկ ու ցանկալի բաներս ձեր մեհեանները տարիք.
6—Եւ Յուդայի որդիները ու Երուսաղէմի որդիները
Յունաց որդիներուն ծախեցիք,
Որպէս զի զանոնք իրենց սահմանէն հեռացնէք.
7—Ահա ես զանոնք պիտի արթնցնեմ այն տեղէն՝ ուր դուք զանոնք ծախեցիք,
Եւ ձեր հատուցումը ձեր գլխուն վրայ պիտի դարձնեմ.
8—Ու ձեր որդիները ու աղջիկները Յուդայի որդիներուն ձեռքը պիտի ծախեմ,
Եւ անոնք հեռաւոր ազգի, Սաբայեցւոց, պիտի ծախեն զանոնք,
Քանզի Տէրը խօսեցաւ։
9—Ասիկա ազգերու մէջ հրատարակեցէք,
Պատերազմ քարոզեցէք,
Զօրաւորները արթնցուցէք,
Բոլոր պատերազմական մարդիկը մօտեն. նան ու ելլեն,
10—Ձեր խոփերը սուրեր եմ՝ չինեցէք,
Ու ձեր յօտցնները՝ նիզակներ.
Տկար եղողը ես զօրաւոր եմ՝ թող ըսէ,
11—Շուտով ակէ՛ք, ով բոլոր չրջակայ ազգեր, ու ժողվուեցէք.
Հոս զօրաւորներդ, ով Տէր, հոն իջեցուր։

*Նբր. ծեծեցէք

*Ա՛յսինքն, Տէրոջը դատաստանին

12—Ազգերը թող արթնան ու Յովսափատ հովիտը ելլեն,
Քանզի բոլոր չրջակայ ազգերը դատելու համար հոն պիտի նստիմ։
13—Մանգաղը երկնցուցէք, քանզի հունձքը հասած է.
Եկէք, իջէք, քանզի հնձանը լեցուեցաւ,
Ա՛պատնիները կը յորդին.
Քանզի անոնց չարութիւնը մեծ է։
14—Բազմութիւններ, բազմութիւններ իջ ձովեզերքի վճռոյ հովիտին մէջ,
Քանզի Տէրոջը օրը մօտ է վճռոյ հովիտին մէջ,
15—Արեւը ու լուսինը պիտի խաւարին,
Եւ աստղերը իրենց պայծառութիւնը պիտի քաշեն.
16—Տէրը Սիօնէ պիտի գոչէ,
Ու Երուսաղէմ իր ձայնը պիտի տայ,
Եւ երկինք ու երկիրը պիտի սարսին.
Բայց Տէրը իր ժողովուրդին ապաւէն,
Ու Իսրայէլի որդիներուն ամրութիւն պիտի ըլլայ։
17—Եւ պիտի գիտնաք թէ ես եմ Տէր Աստուածը,
Որ իմ սուրբ լեռանս, Սիօնի, մէջ կը բնակիմ.
Ու Երուսաղէմ սուրբ պիտի ըլլայ,
Եւ անկէ մէկզմէն ալ օտարներ պիտի չանցնեն։
18—Եւ պիտի ըլլայ որ այն օրը լեռները քաղցու պիտի կաթեցնեն,
Ու բլուրները կաթ պիտի վազցնեն,
Եւ Յուդայի բոլոր ձորերը ջուրեր պիտի քալեցնեն.
Ու Տէրոջը տաճարէն աղբիւր պիտի ելլէ,
Եւ Սատիմի ձորը պիտի ոռոգէ։
19—Յուդայի որդիներուն եղած անիրաւութեանը համար
Եգիպտոս ամայի թիւն պիտի ըլլայ,
Ու Եդոմ ամայի անապատ պիտի ըլլայ,
Քանզի անոնց երկրին մէջ անմեղ արիւն թափեցին։
20—Բայց Յուդա մարգարեակ պիտի ըլլայ յաւիտեան,
Եւ Երուսաղէմ՝ գաբէ գաբ։
21—Եւ *պիտի մաքրեմ անոնց արիւնը զոր մաքրած չէի՛.
Եւ Տէրը Սիօնի մէջ պիտի բնակի։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄՈՎՍԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Թեկուէի հովիւներուն մէջէն եղող Ամոսի խօսքերն են, որոնք Յուդայի Թագաւորին Ոզիայի օրերը ու Իսրայէլի Թագաւորին Յովասի որդւոյն Երոբոամայի օրերը, գետնաշարժէն երկու տարի առաջ, տեսիլքով անոր յայտնուեցան Իսրայէլի վրայով։ 2—Ու ըսաւ,
Տէրը Սիօնէ պիտի գոչէ,
Ու Երուսաղէմէ իր ձայնը պիտի տայ.
Եւ հովիւներուն արօտները սուգ պիտի բռնեն,
Ու Կարմէղոսի գլուխը պիտի չորնայ։
3—Տէրը այսպէս կ'ըսէ.
Դամասկոսի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պատիժը եւս պիտի չդարձնեմ.
Քանզի անոնք Գաղաադը երկաթէ կամնասյլերով ծեծեցին.
4—Սակայն Ազայէլի տունը վրայ կրակ պիտի ղրկեմ,
Ու Բենադադի պալատները պիտի ուտէ։
5—Եւ Դամասկոսի նիգերը պիտի կոտրտեմ,
Ու Աւենի դաշտէն բնակիչը,
Ու Եդեմի տունէն գաւազան բռնողը պիտի կտրեմ.

*Կամ, անոնց արեանը վրէժխնդիր պիտի ըլլամ, ու անպատիժ պիտի չթողում

եւ Աստուց ժողովրդը կիր գերի պիտի
փշաբ, կ'ըսե Տէրը։
6—Տէրը այսպէս կ'ըսե.
Գազայի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի անոնք գերիները բոլորովին գերի
փշեցին,
Որպէս զի Եդոմի ձեռքը մատնեն.
7—Սակայն Գազայի պարսպին վրայ
կրակ պիտի դրկեմ,
Ու անոր պալատները պիտի ուտե.
8—Ու Ազոտասե քնակիչը,
Ու Ասկաղոնէ գաւազան բռնողը պիտի
կտրեմ,
Եւ իմ ձեռքս Ակկարոնի վրայ պիտի
դարձնեմ,
Ու Փղշտացւոց մնացորդը պիտի կորսուի,
կ'ըսե Տէր Եհովա։
9—Տէրը այսպէս կ'ըսե.
Տիւրոսի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի գերիները բոլորովին Եդոմի
ձեռքը մատնեցին,
Ու եղբայրական ուխտը չյիշեցին.
10—Սակայն Տիւրոսի պարսպին վրայ
կրակ պիտի դրկեմ,
Ու անոր պալատները պիտի ուտե։
11—Տէրը այսպէս կ'ըսե.
Եդոմի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի իր եղբայրը սրով հալածեց,
Ու իր ողորմութիւնը կտրեց.
Եւ իր բարկութիւնը միշտ պատռեց,
Ու իր կատաղութիւնը յաւիտեան պահեց.
12—Սակայն Թեմանի վրայ կրակ պիտի
դրկեմ,
Ու Բոսրայի պալատները պիտի ուտե։
13—Տէրը այսպէս կ'ըսե.
Ամմոնի որդիներուն երեք յանցանքին
համար,
Ու չորսին համար անոնց պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի Գաղաադի յղի կիները ձեղքեցին,
Որպէս զի իրենց սահմանները լայնցնեն,
14—Սակայն Ռաբբայի պարսպին վրայ
կրակ պիտի բռնկցնեմ,
Ու անոր պալատները պիտի ուտե.
Աւէլ– պատերազմի օրը աղաղակով
Ու փոթորիկի օրը խա–վա–ր–ա–մ–ը ե–ւ–ե
ըլլայ։
15—Ու *անոնց թագաւորը՝ գերու-
թեան պիտի երթայ,
Ինք ու իր իշխանները միասին, կ'ըսե
Տէրը։

ԳԼ. Բ

Տէրը այսպէս կ'ըսե.
Մոաբի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի Եդոմի թագաւորին ոսկորները
մինչև կիր դառնալը այրեց.
2—Սակայն Մոաբի վրայ կրակ պիտի
դրկեմ,
Ու Կարիօթի պալատները պիտի ուտե,
Ու Մոաբ խռովութեամբ, աղաղակով
–– փողի ձայնով պիտի մեռնի.
3—Ու անոր միջէն դատաւորը բնաջինջ
պիտի ընեմ.
Ու անոր հետ անոր բոլոր իշխանները
պիտի մեռցնեմ, կ'ըսե Տէրը։
4—Տէրը այսպէս կ'ըսե.
Յուդայի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի Տէրոջը օրէնքը անարգեցին,
Ու անոր պատուիրանքները չպահեցին.
Հապա իրենց սուտ–ի–ւ–ն–ն–ե–ր–ը պիրենք
մոլորեցուցին,
Որոնց հետեւողները եղեր էին իրենց հայրերը.
5—Սակայն Յուդայի վրայ կրակ պիտի
դրկեմ,
Ու Երուսաղէմի պալատները պիտի ուտե։
6—Տէրը այսպէս կ'ըսե.
Իսրայէլի երեք յանցանքին համար,
Ու չորսին համար անոր պ–ո–ւ–ի–ծ–ը եա
պիտի չդարձնեմ.
Քանզի անոնք արդարը սակով
Ու անանկը զոյգ մը կօշիկով ծախեցին.
7—Անոնք †ադբասներուն գլուխն վրայ
Երդ երկրի հողին կը ցանկան",
Ու չքաւորներուն ճամբան կը ծռեն.
Ու իմ սուրբ անունս պղծելու համար

*Կ–մ, Մեգբոնը. Երեմ. խթ. 3։
†Կ–մ, ազգասաներուն գլուխը երկրի
հողին վրայ ո–ո–ւ–վ կը կոխեն

Տղան ու Հայրը գնդեցին աղջկան կը մատնեն.
8—Ու ամէն սեզանի քով
Գրաւ առնուած հանգերձներու վրայ կը
պառկին,
Ու իրենց աստուածներուն տան մէջ
Զրկուածներուն գինին կը խմեն։
9—Բայց ես անոնց առջեւէն Ամորհա-
ցին բնաջինջ ըրի,
Որուն բարձրութիւնը եղևիններու բարձ-
րութեանը պէս էր,
Ու անիկա կաղնիներու պէս ամուր էր.
Ու վերէն անոր պտուղը
Ու վարէն անոր արմատները բնաջինջ
ըրի։
10—Ու ես ձեզ Եգիպտոսի երկրէն հա-
նեցի,
Ու ձեզ քառասուն տարի անապատին
մէջ պարացուցի,
Որպէս զի Ամորհացիին երկիրը ժառան-
գէք։
11—Ու ձեր տղաքներէն մարգարէներ
Ու ձեր երիտասարդներէն ուխտաւորներ
հանեցի.
Հիմա այսպէս չէ՞, ով Իսրայէլի որդի-
ներ, կ'ըսե Տէրը։
12—Բայց դուք ուխտաւորներուն գինի
խմցուցիք,
Ու մարգարէներուն պատուիրեցիք՝ ը-
սելով,
Մարգարէութիւն մի ընէք։
13—Ահա ես *ձեր եղած տեղը չէ պիտի
կոխեմ,
Ինչպէս սրաններով լեցուն սայլը էր ո–ռ–ն–ա–ւ–ե–լ կը կոխէ"։
14—Ու արագընթացը պիտի չկրնայ
փախչիլ,
Եւ ուժով հզօրը պիտի չկրնայ իր այժը
գործածել,
Ու զօրաւորը պիտի չկրնայ իր անձը
ազատել,
15—Ու աղեղ բռնողը պիտի չկրնայ
կայնիլ,
Ու չատ վազողը պիտի չկրնայ դէպ ա-
զատել,
Ու ձի հեծնողը պիտի չկրնայ իր անձը
ազատել.

*Կ–մ, ձեր տակը ճնշուած եմ, ինչ-
պէս որ սրաններով լեցուն սայլը կը
ճնշուի

16—Ու զօրաւորներուն մէջ քաջասիրտ
եղողը
Այն օրը մերկ պիտի փախչի, կ'ըսե Տէրը։

ԳԼ. Գ

Լսեցէք այս խօսքը, ով Իսրայէլի
որդիներ,
Զոր Տէրը ձեր վրայ կը խօսի,
Այն բոլոր ազգատոհմին վրայ,
Զոր Եգիպտոսի երկրէն հանեցի, ըսելով,
2—Երկրի բոլոր ազգատոհմերէն միայն
ձեզ ճանչցայ,
Այս պատճառաւ ձեր բոլոր անօրէնու-
թիւններուն համար ձեզ պիտի
պատժեմ։
3—Կարելի՞ է որ երկու հոգի միհամուռ
քալեն,
եթէ միաբանութիւն չունենան։
1—Մինթէ առիւծը անտառին մէջ կը
մռնչէ՞,
եթէ որս մը չունենայ.
Առյոգ առիւծը իր մորթին իր ձայնը կու-
տա՞յ,
եթէ բան մը առած չըլլայ։
5—Մինթէ թռչունը երկրի վրայ վարսի
մէջ կ'իյնա՞յ,
եթէ անոր համար որոգայթ լարուած
չըլլայ.
Ու–վարսը երկրէն կը վերցուի՞,
երբ բան մը բռնած չէ։
6—Եթէ փողաքին մէջ փող հնչուի,
ժողովրդը չը՞ վախնար.
Մինթէ փողաքին մէջ չարիք մը կ'ըլլա՞յ,
եթէ Տէրը զանիկա ըրած չէ։
7—Ցիրաւի Տէր Եհովա բան մը չըներ,
Մինչև իր գաղտնիքը իր ծառաներուն,
մարգարէներուն, չյայտնե։
8—Առիւծը մռնչեց, ո՞վ պիտի չվախնայ.
Տէր Եհովա խօսեցաւ, ո՞վ պիտի չմար-
գարէանայ։
9—Ազովտոսի մէջ պալատներու վրայ
Ու եգիպտոսի երկրին մէջ պալատներու
վրայ կանչեցէք ու ըսէք.
Սամարիայի լեռներուն վրայ ժողովուե-
ցէք,
Եւ անոր մէջ չատ խռովութիւններ
Ու անոր մէջ բռնութիւններ տեսէք։
10—Քանզի ուղղութիւն ընել չգի-
տեր, կ'ըսե Տէրը,

իբենց պալատներուն մէջ զրկանք ու չափչփուկութիւն կը դիմեն։
11—Անոր համար Տէր Նովա այսպէս կ'ըսէ.
Թշնամին երկրին բոլորտիքը պիտի ըլլայ,
Ու քեզմէ քու այժդ պիտի իջեցնէ,
Եւ քու պալատներդ պիտի կողոպտուին։
12—Տէրը այսպէս կ'ըսէ.
Ինչպէս հովիւը առիւծին բերնէն
Երկու ոտդը կամ մէկ ականջի կտոր կ'ազատէ,
Այնպէս պիտի ազատին Իսրայէլի որդիները,
Որոնք Սամարիայի մէջ բազմոցի անկիւնը,
Ու *Դամասկոսի մէջ՝ անկողինի վրայ կը նստին։
13—Լսեցէք ու Յակոբի տունը վկայութիւն ըրէք,
Կ'ըսէ զօրաց Աստուածը, Տէր Նովա,
14—Որ այն օրը ուր Իսրայէլի յանցանքներուն պատիժը անոր վրայ բերեմ,
Բեթէլի սեղաններն ալ պիտի պատժեմ.
Ու սեղանին եղջիւրները պիտի կտրին ու գետինը պիտի իյնան։
15—Եւ ձմեռնային տունը ու ամառնային տունը պիտի զարնեմ,
Ու փղոսկրեայ տուները պիտի կորսուին,
Ու մեծ տուները բնաջինջ պիտի ըլլան,
Կ'ըսէ Տէրը։

Գլ. Դ

Լսեցէք այս խօսքը, ով Սամարիայի լեռանը վրայ եղող Բասանի կովերը,
Որ աղքատներուն զրկանք կ'ընէք,
Ու անպիտանները ոտքի տակ կ'առնէք,
Եւ ձեր տէրերուն՝ Բեր որ խմենք՝ կ'ըսէք։
2—Տէր Նովա իր սրբութիւնովը երդում ըրաւ,
Թէ ահա ձեր վրայ օրեր կու գան,
Որ ձեզ կարթերով պիտի վերցնեն,
Ու ձեր սերունդը՝ ձուկի կարթերով։

*Կամ, Դամասկոսի կերպասով զարդարուած

3—Եւ փլած տեղերէն պիտի ելլէք ամէն մէկդ իր երեսին դարձած կողմէն,
Ու բերդը պիտի նետուիք, կ'ըսէ Տէրը։
4—Բեթէլ եկէք ու յանցանք գործեցէք.
Գաղգաղայի մէջ յանցանք ընելը չատցուցէք.
Եւ առէն առաու ձեր զոհերը
Ո՛ւ առէն երեք օրը ձեր տասանորդները բերէք։
5—Եւ շնորհակալութեան զոհը խմբուել մատուցէք,
Ու կամաւոր ընծաները քարոզեցէք — հրապարակեցէք,
Քանզի այսպէս սիրեցիք, ով Իսրայէլի որդիներ,
Կ'ըսէ Տէր Նովա։
6—Եւ ես ալ ձեզի ձեր ամէն քաղաքներուն մէջ ակռայի մաքրութիւն,
Ու ձեր ամէն տեղերը հացի կարօտութիւն տուի,
Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
7—Ու նաև հունձքէն երեք ամիս առաջ անձրեւը ձեզմէ արգիլեցի,
Ու մէկ քաղաքին վրայ անձրեւ իջեցուցի,
Եւ միւս քաղաքին վրայ անձրեւ չիջեցուցի.
Մէկ վիճակին վրայ անձրեւ եկաւ,
Ու միւս վիճակը, որուն վրայ անձրեւ չեկաւ, չորցաւ։
8—Ու երկու երեք քաղաք ջուր խմելու համար
Մէկ քաղաքի մէջ ժողվուեցան,
Բայց բաւական չգտան.
Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
9—Ձեզ խորշակահարութեամբ ու դալկութիւնով զարկի.
Խաղնիձը կերաւ ձեր բազմաթիւ պարտէզները
Ու այգիները և թզենիները ու ձիթենիները,
Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
10—Եգիպտոսի *ճանրան մէջ ձեր վրայ ժանտախտ ղրկեցի,
Ձեր երիտասարդները սրով մեռցուցի,
Ու ձեր ձիերը գերի ըրի,

*Կամ, կերպովը

Եւ ձեր բանակներուն գարշահոտութիւնը մինչև ձեր քիթը հանեցի,
Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
11—Աստուածով կործանած Սոդոմին ու Գոմորին պէս ձեզ ալ կործանեցի,
Ու կրակէ հանուած խանձարի պէս եղաք,
Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
12—Անոր համար քեզի այսպէս պիտի ընեմ, ով Իսրայէլ,
Ս- որովհետև քեզի այս բանը պիտի ընեմ,
Ջոկ Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ, ով Իսրայէլ։
13—Քանզի ահա ան որ լեռները հաստատեց ու հովը ստեղծեց,
Եւ կը յայտնէ մարդուն՝ թէ ի՛նչ է անոր խորհուրդը,
Արշալոյսը խաւար կ'ընէ,
Ու երկրի բարձր տեղերուն վրայ կը քալէ,
Անոր անունը Նովա, զօրաց Աստուած է։

Գլ. Ե

Լսեցէք այս խօսքը, ձեր վրայ ըրած ողբս,
Ով Իսրայէլի տունը։
2—Իսրայէլի կոյսը ինկած է, մեկնելէն ալ պիտի չկանգնի.
Իր երկրին վրայ ձգուած է, զանիկա վերցնող չկայ։
3—Քանզի Տէր Նովա այսպէս կ'ըսէ.
Այն քաղաքին մէջ, ուրկէ հազար կ'ելլէր,
Հարիւր պիտի մնայ.
Եւ ուրկէ հարիւր կ'ելլէր,
Տասը պիտի մնայ Իսրայէլի տանը։
4—Քանզի Տէրը Իսրայէլի տանը այսպէս կ'ըսէ.
Ձես փնտռեցէք, որպէս զի ապրիք։
5—Բայց Բեթէլը մի փնտռէք,
Ու Գաղգաղա մի մտնէք,
Ու Բերսաբէէ մի անցնիք.
Քանզի Գաղգաղա անշուշտ գերութեան պիտի գլուխ,
Ու Բեթէլ պիտի աչնչանայ։
6—Տէրը փնտռեցէք, որպէս զի ապրիք.
Զըլլայ որ Յովսէփի տանը մէջ կրակի պէս էնայ,
Եւ չհնչէ- ուտէ, ու Բեթէլի մէջ մարող չըլլայ։
7—Դուք որ իրաւունքը օշինդրի կը դարձնէք,
Ու արդարութիւնը գետինը կը ձգէք,
8—Փնտռեցէք զանիկա որ Բազմաստեղը ու Հոյկը չինեց,
Ու մահուան առաւօտը առաւօտեան չոխի կը գարձնէ,
Եւ ցորեկը գիշերուան պէս կը մթնցնէ,
Ու ծովուն ջուրերը կը կանչէ,
Ու զանոնք երկրի երեսին վրայ կը թափէ.
Անոր անունը Նովա է.
9—Որ զօրաւորին վրայ յանկարծ կործառ կը բերէ,
Ու կործառը մինչև ամրոցը կը հասնի։
10—Դրանը մէջ յանդիմանողը կ'ատեն,
Ու չիստակ խօսողէն կը գզուին։
11—Ուստի, որովհետև աղքատին վրայ կը կոխէք,
Ու անկէ ցորենի պարգեւները կ'առնէք,
Թէև ապշուած քարէ տուներ չինէք,
Բայց անոնց մէջ պիտի չբնակիք.
Ու- Բէև ցանկալի այգիներ անկէք,
Բայց անոնց գինին պիտի չխմէք։
12—Քանզի ձեր չատ յանցանքները ու ձեր ծանր մեղքերը գիտեմ
Աղգարը կը նեղէք, կաշառք կ'առնէք
Ու գրանը մէջ անանկերուն դատը կը ծռէք։
13—Անոր համար խելացի եղողը այն ատեն պիտի լռէ.
Քանզի ժամանակը չար է։
14—Բարութիւն փնտռեցէք ու ոչ թէ չարութիւն, որպէս զի ապրիք.
Եւ այսպէս զօրաց Տէր Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ, ինչպէս ըսիք։
15—Չարութիւնը ատեցէք, բարութիւնը սիրեցէք,
Եւ գրանը մէջ իրաւունքը հաստատեցէք.
Թերեւս զօրաց Տէր Աստուածը Յովսէփի մնացորդին ողորմութիւն ընէ։
16—Անոր համար զօրաց Աստուածը, Տէր Նովա, այսպէս կ'ըսէ.
Ամէն հրապարակներու մէջ ողբ պիտի ըլլայ,
Ու ամէն փողոցներու մէջ վա՛յ, վա՛յ պիտի ըսեն,
Ու երկրագործը սուգի, ու ողբ գիտցողները ողբալու պիտի կանչեն,

17—Ու ամէն այգիներու մէջ ոզը պիտի ըլլայ,
Քանզի քու մէջդ պիտի անցնիմ, կ'ըսէ Տէրը,
18—Վա՛յ անոնց՝ որ Տէրոջը օրուանը կը ցանկան.
Ձեզի ինչ պիտի ըլլայ Տէրոջը օրը.
Անիկա խաւար է և ոչ թէ լոյս.
19—Ինչպէս երբ մարդ մը առիւծին կը բախէն փախչի,
Ու արջ մը անոր հանդիպի,
Ու կամ տունը մտնէ ու ձեռքը պատին վրայ կռթնցնէ,
Ու զանիկա օձը խածնէ։
20—Ահա Տէրոջը օրը խաւար է և ոչ թէ լոյս,
Ու անոր մէջ մառախուղ կայ և ոչ թէ պայծառութիւն։
21—Ձեր ժողովները կ'ատեմ ու կը մերժեմ,
Ու ձեր հանդիսաւոր ժողովներուն մէջ հոտ պիտի չառնեմ։
22—Թէեւ ինծի ողջակէզներ ու ձեր հացի ընծաները մատուցանէք ալ՝
Պիտի չընդունիմ,
Ու ձեր գեր անասուններուն խաղաղութեան զոհերուն պիտի չնայիմ։
23—Քու երգերուդ աղաղակը ինծմէ հեռացուր,
Քանզի քու տաւիղներուդ եղանակը պիտի չլսեմ,
24—Հապա իրաւունքը յորի պէս թող վազէ,
Ու արդարութիւնը զօրաւոր գետի պէս։
25—Մէթէ անապատին մէջ քառասուն տարի
Ինծի զոհեր ու ընծաներ մատուցիք, ով Իսրայէլի տուներ.
26-Հապա դուք ձեր Մոզոքի խորանները
Ու ձեր Քիւնեի կուռքերը
Ու ձեզի համար չինած աստուածները
Ուղղ տապղ կրեցիք։
27—Ուստի ձեզ Դամասկոսէ անդին գերի պիտի քշեմ,
Կ'ըսէ Տէրը, որուն անունը Զօրաց Աստուած է։

Գլ. Զ

Վա՛յ Սիոնի մէջ հանգիստ բնակողներուն,

Ու Սամարիայի լեռանը վրայ ապահովութեամբ նստողներուն,
Ազգաց գլխաւոր երեւելիներուն,
Որոնց կը դիմի Իսրայէլի տունը։
2—Քալանէ անցէք ու տեսէք,
Ու անկէ մեծ Եմաթը գացէք,
Ու Փղշտացւոց Գէթը իջէք։
Մէթէ անոնք այս թագաւորութիւններէն ալէ՞կ են,
Կամ անոնց սահմանը ձեր սահմանէն մե՞ծ է,
3—Վա՛յ անոնց՝ որ չար օրը կը հեռացընեն,
Ու բռնութեան աթոռը կը մօտեցնեն,
4—Փղոսկրեայ մահիճներու մէջ կը պառկին,
Ու իրենց անկողիններուն վրայ կ'երկրննան,
Եւ հօտերէն գառնուկները
Ու գոմերու միջէն պարարտ ոչխարը կ'ուտեն,
5—Տաւիղի ձայնով խաղ կը կանչեն,
Ու Դաւիթի պէս իրենց երաժշտական գործիքներ կը հնարեն,
6—Գաւաթներով գինի կը խմեն,
Ու ծանրագին իւղերով կ'օծուին,
Եւ Յովսէփի բեկումին վրայ չեն ցաւիր,
7—Անոր համար հիմա առաջնութեան գերիներուն հետ գերի պիտի փչուին,
Ու ՀԱՅՈՑՆԵՐՈՒ վայ երկնցողներուն ուրախութեան ձայնը պիտի վերջանայ։
8—Տէր Եհովա իր անձին վրայ երդում ըրաւ,
Կ'ըսէ զօրաց Տէր Աստուածը,
Ես Յակոբի պարծանքին կ'ըզուիմ,
Ու անոր պալատները կ'ատեմ,
Եւ քաղաքը ու բոլոր անոր մէջ եղողը ԸՆԴՀԱՐ պիտի մատնեմ.
9—Ու եթէ մէկ տան մէջ տասը մարդ մնայու ըլլայ,
Անոնք ալ պիտի մեռնին,
10—Ու մէկուն հօրեղբայրը, կամ ԴԱՀԻՃԸ այրող մարդը զանիկա պիտի վերցնէ՝
Ոսկորները տունէն դուրս հանելու համար,
Ու տանը մէջ եղողին պիտի ըսէ,
Ալ ՈՒՐԻ՞Ն կայ փոխ,
Ու անիկա պիտի ըսէ, Ոչ.

Ու Դ՚ԱՐԸ պիտի ըսէ, Լուռ կեցիր,
Քանզի Տէրոջը անունը յիշելու ԱՐԺԱՆ չէ։
11—Վասն զի ահա Տէրը կը հրամայէ,
Ու մեծ տունը կործանումով
Ու պզտիկ տունը պատառատումով պիտի զարնէ։
12—Միթէ ձիերը ապառաժի վրայ կը վազե՞ն.
Կամ անոնք եզներով կը հերկուի՞.
Քանզի դուք իրաւունքը դառնութեան
Ու արդարութեան պտուղը օչինդրի դարձուցիք,
13—Ով ոչինչ բանով ուրախացողներ,
Որ ըսիք Թէ Չէ՞ որ մեր ուժովը մեզի եղինիրներ առինք։
14—Անոր համար ահա ես, ով Իսրայէլի տուներ,
Ձեր վրայ ազգ մը առ պիտի հանեմ,
Կ'ըսէ զօրաց Տէր Աստուածը,
Ու ձեզ նեմաթի մուտքէն մինչեւ անապատի ձորը պիտի նեղեն։

Գլ. Է

Տէր Եհովա ինծի այսպէս ցուցուց,
Որ ահա վերջին խոտին բուսնելուն սկիզբը մարախներ առեղծեց,
Ու ահա վերջին խոտը թագաւորին հունձքէն ետքն էր։
2—Ու եղաւ որ անոնց՝ երկրին խոտը բոլորովին ուտելէն ետքը
Ես ըսի, Ով Տէր Եհովա, կ'ազաչեմ, ներէ.
Յակոբ ինչպէս պիտի կանգնի, քանզի փիչուր է։
3—Տէրը ասոր համար զղջաց,
Ասիկա չըլլայ՝ ըսաւ Տէրը։
4—Տէր Եհովա ինծի այսպէս ցուցուց,
Որ ահա Տէր Եհովա կրակը կը կանչէր որպէս զի անով դատաստան ընէ,
Եւ անիկա մեծ անդունդը կերաւ,
Ու արտերը սպառեց։
5—Ու ես ըսի, Ով Տէր Եհովա, կ'ազաչեմ, դադարէ.
Յակոբ ինչպէս պիտի կանգնի, քանզի փիչուր է։
6—Տէրը ասոր համար զղջաց,
Ասիկա ալ չըլլայ՝ ըսաւ Տէր Եհովա։
7—Ինծի այսպէս ցուցուց,
Որ ահա Տէրը գնատակի ՀԱՐՈՎ ՀԱՐԱԾ պարապի մը վրայ կայներ էր,
Ու ձեռքը գնատակ մը կար։
8—Ու Տէրը ինծի ըսաւ,
Ի՞նչ կը տեսնես, ով Ամովս.
Ու ես ըսի, Գնատակ մը.
Ես Տէրը ըսաւ,
Ահա ես իմ ժողովուրդիս Իսրայէլի մէջ գնատակ մը կը դնեմ.
Ալ անոնց ԸՆԴՀԱՐՈՒԹԻՒՆԸ անոնց պիտի չընեմ,
9—Ու Իսահակի բարձր տեղերը աւերակ պիտի ըլլան,
Ու Իսրայէլի սրբարանները պիտի աւերին,
Ու Յերոբովամի տանը վրայ սրով պիտի ելլեմ։
10—Ու Բեթէլի քահանան Ամասիա Իսրայէլի Յերոբովամ թագաւորին լուր զրկեց՝ ըսելով,
Իսրայէլի տանը մէջ Ամովս քեզի դէմ դաւաճանութիւն կ'ընէ.
Երկիրը չկրնար անոր բոլոր խօսքերը տանիլ.
11—Քանզի Ամովս այսպէս կ'ըսէ.
Յերոբովամ սրով պիտի մեռնի,
Ու Իսրայէլ իր երկրին վրայէն անշուշտ գերութեան պիտի երթայ։
12—Ու Ամասիա ըսաւ Ամովսի,
Ով տեսանող, գնա Յուդայի երկիրը փախիր,
Ու հոն հաց կեր, և հոն մարգարէութիւն ըրէ,
13—Ու մէկ մըն ալ Բեթէլի մէջ մարգարէութիւն մի ըներ,
Քանզի անիկա թագաւորին սրբարանն է,
Ու թագաւորութեան տունն է։
14—Ու Ամովս պատասխան տուաւ ու Ամասիայի ըսաւ,
Ես ոչ մարգարէ էի՝ ոչ ալ մարգարէի որդի,
Հապա ես արջառներու հովիւ ու մասիքենի փորոզ կիթ.
15—Ու Տէրը զիս հօտին ետեւէն առաւ,
Ու Տէրը ինծի ըսաւ,
Գնա, իմ ժողովուրդիս Իսրայէլի մարգարէութիւն ըրէ։
16—Ու հիմա Տէրոջը խօսքը մտիկ ըրէ.
Դուն կ'ըսես որ Իսրայէլի համար մարգարէութիւն մի ըներ,
Ու Իսահակի տանը վրայով խօսք մի խօսիր։
17—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.

Քաւ կինդ քաղաքին մէջ պահակ թիւն պիտի ընէ,
Եւ քաւ ազաքներդ ու աղիկներդ սրով պիտի խյնան,
Ու քաւ երկիրդ լարով պիտի բաժնուի,
Եւ դուն պիղծ երկրի վրայ պիտի մեռնիս.
Ու Իսրայէլ իր երկրին վրայէն անշուշտ գերութեան պիտի երթայ։

Գլ. Ը

Տէր Եհովա ինծի այսպէս ցուցուց,
Եւ ահա կողով մը ամառնային պտուղ։
2—Ու ըսաւ, Ինչ կը տեսնես, ով Ամոս.
Ու ես ըսի, Կողով մը ամառնային պտուղ.
Եւ Տէրը ինծի ըսաւ,
Իմ ժողովուրդիս Իսրայէլի վրայ վախճանը հասած է.
Ալ անոնց անցնելուները անտես պիտի չընեմ։
3—Ու այն օրը տաճարին երգերը ողբեր պիտի ըլլան,
Կ'ըսէ Տէր Եհովա.
Շատ մեռելներ պիտի ըլլան,
Ու ըն ամէն տեղ լռութեամբ պիտի նետեն։
4—Ա՛կիկա մտիկ ըրէք,
Դուք որ անանկը կ'ելլէք,
Ու երկրին աղքատները կորնչեցնել կը ցանկաք,
5—Ու կ'ըսէք, Ամսագլուխը ո՞րը պիտի անցնի՝ որ ընդհղին ծախենք,
Եւ շաբաթը՝ որ ցորենը ձեռնհաս հանենք,
Ու արդուն պզտիկցնենք ու սիկղը մեծցընենք,
Եւ նենգութեամբ խաբդախ կշիռները գործածենք.
6—Որպէս զի ազքատները առակով
Ու անոնկները զոյգ մը կօշիկով ծախու առնենք,
Ու ցորնին խոտանը ծախենք։
7—Տէրը Յակոբի մեծվսկեայ թիւնը վրայ երդուաւ ըսաւ՝ Բնաւ,
Անոնց բոլոր գործերը յաւիտեան պիտի չմոռնամ։
8—Չէ՞ որ այս բանին համար երկիրը պիտի դողայ,

*Կամ, պալատի

Ու ամէն անոր մէջ բնակողը սուգ պիտի բռնէ,
Եւ բոլոր երէրը գետի պէս վեր պիտի ելլէ,
Ու պիտի փչուի ու պիտի ընկղմի որպէս Եգիպտոսի գետով։
9—Եւ պիտի ըլլայ օր այն օրը, կ'ըսէ Տէր Եհովա,
Արեւը կեսօրուան ատեններ մարը պիտի մտցնեմ,
Ու ցորեկուան լոյսին աստղերը երկիրը պիտի խաւարեցնեմ։
10—Եւ ձեր տաւները սուգի
Ու ձեր բոլոր երգերը ողբի պիտի դարձնեմ.
Ու ամէն մէջքերու վրայ քուրձ,
Եւ ամէն գլխու վրայ կնատիւն պիտի բերեմ.
Ու երէրէն վրայ սուգ պիտի բերեմ՝ մեկ հասիկ զաւակի համար եզած սուգին պէս,
Եւ անոր վախճանը դառնութեան օրուան պէս։
11—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէր Եհովա,
Որ երկրին վրայ սով մը պիտի դրկեմ,
Ոչ թէ հացի սով և ոչ թէ ջուրի ծարաւ,
Հապա Տէրոջը խօսքերը լսելուն սովը։
12—Ու մէկ ծովին մինչև ծովը,
Եւ հիւսիսէն մինչև արեւելք պիտի թափառին.
Տէրոջը խօսքը փնտռելու համար հո՛ն պիտի պտըտին,
Բայց պիտի չգտնեն։
13—Այն օրը գեղեցիկ կոյսերը
Ու երիտասարդները ծարաւով պիտի մարին,
14—Որոնք Սամարիայի յանցանքովը երդուած կ'ըսեն ու կ'ըսեն,
Կենդանի է քու Աստուածդ, ով Դան,
Ու կենդանի է Բերսաբէէի ճամբան.
Անոնք պիտի իյնան ու մէյնալ պիտի չելլեն։

Գլ. Թ

Տէրը տեսայ որ սեղանին վրայ կայներ էր ու ըսաւ,
Խոյակին զարկ որպէս զի սեմերը դողան,

Եւ զանոնք կոր կոր բրէ անոնց ամենուն գլխուն վրայ,
Ու անոնց միացորդը սրով պիտի մեռցընեմ.
Անոնց փախուականը պիտի չկարենայ փախչիլ,
Ու անոնց ազատուածը պիտի չկարենայ ազատիլ։
2—Թէև անոնք մինչև դժոխք փորեն,
Իմ ձեռքս անկէ պիտի առնէ զանոնք,
Ու թէև երկինք ելլեն,
Զանոնք անկէ պիտի իջեցնեմ.
3—Ու թէև Կարմէղոսի գլուխը պահուըտին,
Զանոնք պիտի փնտռեմ, անկէ պիտի առնեմ.
Ու թէև իմ աչքերուս առջեւէն ծովուն խորութեանը մէջ ծածկուին,
Հոն օձին պիտի հրամայեմ ու զանոնք պիտի խածնէ.
4—Ու թէև անոնք իրենց թշնամիներուն առջեւէն գերութեան երթան,
Հոն սուրին պիտի հրամայեմ ու զանոնք պիտի մեռցնէ.
Եւ իմ աչքս անոնց վրայ պիտի դնեմ չարիքի համար
Եւ ոչ թէ բարիքի համար։
5—Քանզի զօրաց Տէր Եհովա ինքն է
Որ երկիրս կը դպչի, ու անիկա կը հալի,
Ու անոր բոլոր բնակիչները սուգ կը բռնեն,
Եւ բոլոր երէրը գետի պէս վեր կ'ելլէ,
Ու կ'ընկղմի որպէս Եգիպտոսի գետով։
6—Ինքն է որ երկինքի մէջ իր վերնատուները կը շինէ,
Ու անոր կամարը երկրի վրայ կը հիմնէ,
Ծովուն ջուրերը կը կանչէ,
Ու զանոնք երկրի երեսին վրայ կը թափէ.
Անոր անունը Եհովա է։
7—Մի՞թէ դուք ինծի Եթովպացւոց որդիներուն պէս չէ՞ք,
Ով Իսրայէլի որդիներ, կ'ըսէ Տէրը.
Չէ՞ որ Իսրայէլը Եգիպտոսի երկրէն,
Ու փղշտացիները Կափթորէ,
Եւ Ասորիները Կիրէ հանեցի,

8—Ահա Տէր Եհովայի աչքերը այդ մեղաւոր թագաւորու թեանը վրայէն.
Ու զանիկա երկրի երեսին վրայէն պիտի կորնչեցնեմ.
Սակայն Յակոբի տունը բոլորովին պիտի չկորնչեցնեմ, կ'ըսէ Տէրը։
9—Քանզի ահա ես կը հրամայեմ,
Ու Իսրայէլի տունը բոլոր ազգերուն մէջ պիտի խարբաշեմ,
Ինչպես ցորենը մաղով կը խարբաշեն,
Բայց հատ մը գետինը պիտի չիյնայ։
10—Իմ ժողովուրդիս բոլոր մեղաւորները սրով պիտի մեռնին,
Որոնք կ'ըսեն թէ Զարիքը հէր չէ՛ պիտի չհասնի,
Ու մեր առջեւ պիտի չառնէ։
11—Այն օրը Դաւիթի ինկած խրաւանը պիտի կանգնեմ.
Եւ անոր փլածները պիտի նորոգեմ,
Ու աւրածները պիտի կանգնեմ,
Եւ զանիկա հին օրերուն պէս պիտի չինեմ.
12—Որպէս զի անոնք եդոմի մնացորդը
Ու բոլոր ազգերը ժառանգեն,
Որոնց վրայ իմ անունս կոչուած է,
Կ'ըսէ Տէրը՝ որ այս բանը կ'ընէ։
13—Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը,
Որ հերկողը հնձողին՝
Եւ խաղող կոխողը սերմանացանին պիտի հասնի.
Ու լեռները քաղցու պիտի կաթեցնեն
Եւ ամէն բլուրները պիտի հալին։
14—Եւ իմ ժողովուրդիս Իսրայէլի գերութիւնը պիտի դարձնեմ,
Ու աւրած քաղաքները պիտի չինեն ու անոնց մէջ բնակին,
Եւ այգիներ պիտի անկեն ու անոնց գինին խմեն,
Եւ պարտէզներ պիտի չինեն ու անոնց պտուղները ուտեն։
15—Եւ զանոնք իրենց երկրին վրայ պիտի անկեմ,
Ու մէյնալ պիտի չխլուին իրենց երկրէն՝ զոր իրենց տուի,
Կ'ըսէ քաւ Տէր Աստուածդ։

*Կամ, խիճ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱԲԴԻՈՒ

Աբդեա անուիլը,
Տէր նոմա նգովմի վրայով այսպէս կ'ըսէ.
Տէրոջմէ լուր լսեցինք,
Ու ազգերուն դեսպան զրկուեցաւ՝ ըսելէն.
Ելէք, ու անոր վրայ պատերազմի ելլենք։
2—Ահա քեզ ազգերու մէջ պզտիկ ըրի,
Դուն խիստ անարգուած ես։
3—Քու սրտիդ հպարտութիւնը քեզ խաբեց,
Ով վէմին խոռոչներուն մէջ բնակող,
Ո՞ բարձր բնակարան ունեցող,
Որ սրտիդ մէջ կ'ըսես,
Ո՞վ զիս գետինը պիտի իջեցնէ.
4—Թէև արծիւի պէս բարձրանաս,
Ու քու բոյնդ աստղերուն մէջ դնես,
Քեզ անկէ պիտի իջեցնեմ, կ'ըսէ Տէրը։
5—Եթէ քեզի գաղիր կամ գիշերային աւազակներ գային,
(Ի՜նչպէս կործանեցար.)
Անոնք իրենց բաւական եղածին չափ պիտի չգողնային՞ն.
Եթէ քեզի կթաղներ գային,
Մէթէ ճիւեր պիտի չթողուի՞ն,
6—Եսաւ ի՜նչպէս փնտուեցաւ.
Անոր ծածուկ տեղերը փնտուեցան։
7—Քու բոլոր դաշնակիցներդ քեզ մինչեւ սահմանը զրկեցին,
Քեզի հետ խաղաղութիւն ունեցող մարդիկը քեզ խաբեցին
Ու քեզ յաղթեցին.
Քու հացդ ուտողները քու տակդ որոգայթ դրին.
Անոր գոյ հանճար չկայ։
8—Ահա այն օրը, կ'ըսէ Տէրը,
Եդոմէ իմաստուններըը,
Ու Եսաւ լեռնէն հանճարը բնաջինջ պիտի ընեմ,
9—Ու քու զօրաւորներդ, ով Թեւման, պիտի զարհուրին,
Որպէս զի Եսաւ լեռնէն ահն մարդ սպանուելով կտրուի։
10—Քու եղբօրդ Յակոբի եղած անիրաւութեանը համար
Ամօթը քեզ պիտի ծածկէ,
Ու յաւիտեան բնաջինջ պիտի ըլլաս։
11—Այո՛ր դիմաց կայնած օրդ,
Երբ օտարազգիները անոր զօրքը գերի առին,
Ու օտարները անոր դուռերը մտան,
Ու Երուսաղէմի վրայ վիճակ ձգեցին,
Դուն ալ անոնց մէկուն պէս էիր։
12—Ու պէտք չէր որ քու եղբօրդ օրը,
Անոր օտարութեան օրը, դէմ-դիմէն նայէիր,
Ու Յուդայի որդիներուն վրայ
Անոնց կորուստին օրը խնդայիր,
Ու ահնդ նեղութեան օրը
Քու բերանդ մեծցնէիր,
13—Ոչ ալ իմ ժողովուրդիս դուռը
Անոնց թշուառութեան օրը մտնէիր,
Անոնց կործանումին օրը
Դուն ալ անոնց չարիքին վրայ նայէիր,
Ու անոնց կործանումին օրը
Անոնց սայացուած քիչ մը վրայ չձգէիր.
14—Ու ոչ անոր ազատուածները կտրելու համար
Ճամբուն բերանը կայնէիր,
Ու անոնց նեղութեան օրը
Քու մնացորդները մատնէիր։
15—Քանզի բոլոր ազգերուն վրայ Տէրոջը օրը մօտ է.
Քեզի քու ըրածդ պէս պիտի ընեն.
Քու հատուցումդ գլխուդ պիտի դառնայ։
16—Քանզի ինչպէս դուք իմ սուրբ լեռանս վրայ խմեցիք,
Բոլոր ազգերն ալ չարունակ պիտի խմեն.
Պիտի խմեն ու պիտի կլլեն,
Ու չեզածի պէս պիտի ըլլան։
17—Բայց Սիօն լեռանը վրայ փրկութիւն պիտի ըլլայ,
Ու սրբութիւն պիտի ըլլայ.
Ու Յակոբի տունը իրենց կալուածքները պիտի տիրեն։
18—Ու Յակոբի տունը կրակ,
Ու Եսաւի տունը խոզ պիտի ըլլայ.
Ու Յովսէփի տունը բոց,
Ու Եսաւի տունը խոտ պիտի ըլլայ.
Ու անոնց մէջ պիտի բռնկին,
Ու զանոնք պիտի ուտեն,
Ու Եսաւի տանը ետացողդ մը պիտի չըլլայ.
Քանզի Տէրը խօսեցաւ։
19—Ու հարաւայինները Եսաւի լեռը պիտի ժառանգեն,
Ու դաշտայինները՝ Փղշտացւոց երկիրը,
Նաև Եփրեմի դաշտը ու Սամարիայի դաշտը պիտի ժառանգեն.
Ու Բենիամին Գաղաադը ժառանգէ։
20—Ու Իսրայէլի զրկեալներուն այս զօրքին գերիները
Քանանացւոց եղածը մինչեւ Սարեփթա,
Ու Երուսաղէմի գերիները, որոնք Սեփարադի մէջ են,
Հարաւային քաղաքները պիտի ժառանգեն։
21—Ու ազատողներ պիտի ելլեն Սիօն լեռը՝
Եսաւի լեռը դատելու համար.
Ու Թագաւորութիւնը Տէրոջը պիտի ըլլայ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

Ու Տէրոջը խօսքը Ամաթիի որդւոյն Յովնանի եղաւ՝ ըսելով, 2—Ելիր, Նինուէ մեծ քաղաքը գնա, ու անոր դէմ քարոզութիւն ըրէ, քանզի անոնց չարութիւնը իմ առջեւս եկաւ։ 3—Բայց Յովնան ելաւ որ Տէրոջը երեսէն Թարսիս փախչի, և Յոպպէ իջաւ. ու նաւ մը գտաւ որ Թարսիս կ'երթար, և անոր վարձքը տուաւ ու անոր մէջ մտաւ, որպէս զի անոնց հետ Թարսիս երթայ Տէրոջը երեսէն։

4—Ու Տէրը ծովուն մէջ մեծ հով մը հանեց, ու ծովուն մէջ մեծ փոթորիկ մը եղաւ, այնպէս որ նաւը խորտակուելու վտանգի մէջ էր։ 5—Ու նաւավարները վախցան և ամէն մէկը իր աստուածին կ'ազաղակէր, ու նաւուն մէջի կարասիները ծովը նետեցին, որպէս զի ըն[illegible] իրենցմէ թեթեւցնեն. բայց Յովնան նաւուն խորչը իջնելով պառկեր էր ու խոր քուն կը քնանար։ 6—Ու նաւապետը անոր մօտեցաւ ու անոր ըսաւ, Քեզի ի՞նչ եղաւ, ով խոր քունդ քնացող. ելիր քու Աստուածդդ ազազակէ, թերեւս Աստուած մեզ յիշէ, որ չկորսուինք։

7—Ու իրարու ըսին, Ելէք, վիճակ ձգենք, որպէս զի գիտանանք թէ այս չարիքը որո՞ւն պատճառաւ մեր վրայ եկաւ։ Ու վիճակ ձգեցին, ու վիճակը Յովնանի ելաւ։ 8—Ու անոնք ըսին անոր, Հիմա պատմէ մեզի՝ թէ այս չարիքը որո՞ւն պատճառաւ մեր վրայ է[illegible] քու գործդ ի՞նչ է, և ուրկէ՞ կու գաս. քու երկիրդ ո՞րն է, ու դուն ո՞ր ժողովուրդէն ես։ 9—Ու անկէ ըսաւ անոնց, Ես Եբրայեցի եմ, և Տէր Աստուածն երկինքի Աստուածն եմ, որ ծովը ու ցամաքը ստեղծած երկինքի Աստուածն եմ։ 10— Ու այն մարդիկը խիստ չատ վախցան, ու անոր ըսին, Այդ բանը ինչո՞ւ ըրիր։ քանզի այն մարդիկը գիտցան որ Տէրոջը երեսէն կը փախչէր, վասն զի անոնց պատմեր էր։ 11—Ու անոր ըսին, Քեզի ի՞նչ ընենք, որ ծովը մեզմէ դադարի. քանզի ծովը երթալով աւելի կը տասկանար։ 12—Ու անկա ըսաւ անոնց, Զիս վերցուցէք ու զիս ծովը նետեցէք, ու ծովը ձեզմէ պիտի դադարի, քանզի ես գիտեմ որ այս

մեծ փթթորիկը իմ պատճառաւս ձեր վրայ եղաւ։

13—Ու այն մարդիկը թէ փաչելով կը լանային Տ֊ը ցամաքը դարձնել, բայց չկրցան, քանզի ծովը երթալով կը սաստկանար անոնց վրայ։ 14—Ու Եհովայի աղաղակեցին ու ըսին, Ո՛ն Եհովա, կ՚աղաչենք, այս մարդուն հոգիին համար չկորսուինք, ու մեր վրայ անմեղ արիւն մի դներ, քանզի դուն, ով Եհովա, ուզածդիդ պէս ըրիր։ 15—Ու Յովնանը վերցուցին ու ծովը նեռեցին, և ծովը իր սաստկութենէն դադարեցաւ։ 16—Ու այն մարդիկը Եհովայէ մեծ վախով վախցան, ու Եհովայի զոհ մատուցին և ուխտեր ըրին։

17—Ու Տէրը մեծ ձուկի մը հրամայեց որ Յովնանը կլլէ. ու Յովնան երեք օր ու երեք գիշեր ձուկին փորը մնաց։

ԳԼ. Բ

Ե՛ Յովնան ձուկին փորէն իր Տէր Աստուծոյն աղօթք ըրաւ, 2—Ու ըսաւ,
Իմ նեղութենէս Տէրոջը աղաղակեցի,
Ու անկից ինծի պատասխան առաւ։
Գերեզմանին փորէն կանչեցի,
Ո՛ւ իմ ձայնս լսեցիր։
3—Վասն զի զիս ծովերուն մէջ, անդունդը, նետեցիր,
Ու հեղեղները զիս պաշարեցին.
Քու ամէն կոհակներդ ու ալիքներդ իմ վրայէս անցան։
4—Ու ես ըսի,
Քու աչքերուդ առջեւէն վռնտուեցայ,
Բայց տակաւին քու սուրբ տաճարիդ պիտի նայիմ։
5—Ջիս մինչեւ հոգիս լուրերը պաշարեցին,
Անդունդը ամէն կողմէն զիս չծլպատուեց,
Կնիւնները գլուխս փաթթուեցան։
6—Լեռներուն տակերը իջայ,
Երկիրը իր նիգերովը յաւիտեան իմ բոլորտիքս էր,
Բայց դուն իմ կեանքս գուբէն հանեցիր,
Ով իմ Տէր Աստուածս։
7—Երբ հոգիս իմ վրաս մաթեցաւ, Տէրը յիշեցի.
Ու իմ աղօթքս քեզի քու սուրբ տաճարդ հասաւ։
8—Սուտ ուներութիւններու նայողները իրենց ըլլալու ողորմութիւնը կը թողուն,
9—Բայց ես շնորհակալութեան ձայնով քեզի զոհ պիտի մատուցանեմ,
Ո՛ր ըրած ուխտս պիտի կատարեմ։
Փրկութիւնը Տէրոջն է։
10—Ու Տէրը ձուկին հրաման ըրաւ, ան ալ Յովնանը ցամաքը փսխեց։

ԳԼ. Գ

Ե՛ Տէրոջը խօսքը երկրորդ անգամ Յովնանի եղաւ՝ ըսելով, 2—Ելիր, Նինուէ մեծ քաղաքը գնա, ու քարոզէ անոր այն քարոզութիւնը զոր ես քեզի կը խօսիմ։ 3—Ու Յովնան Տէրոջը խօսքին համեմատ ելաւ. Նինուէ գնաց։ Իսկ Նինուէ *խիստ մեծ քաղաք մըն էր՝ երեք օրուան ճամբա պտըտելիք։ 4—Ու Յովնան սկսաւ քաղաքը մտնել, ու մէկ օրուան ճամբայ պտըտելէ կը քարոզէր ու կ՚ըսէր, Դեռ քառասուն օր կայ ու Նինուէ պիտի կործանի։

5—Ու Նինուէի մարդիկը Աստուծոյ հաւատալով՝ ծոմապահութիւն քարոզեցին, ու անոնց մեծէն մինչեւ պզտիկը քուրձ հագան։ 6—Ու այս խօսքը Նինուէի թագաւորին հասաւ, ու անիկա իր աթոռէն ելաւ ու վրայէն պատմուճանը հանեց, և քուրձ հագաւ ու մոխիրի վրայ նստաւ։ 7—Ու Նինուէի մէջ մեծ նիստով կանչել տուաւ, ու թագաւորին ու իր մեծամեծներուն հրամանովը պատուիրեց՝ ըսելով, Մարդ ու անասուն, արջառ ու ոչխար բան մը չուտեն, չարածին ու ջուր չխմեն։ 8—Ու մարդիկ ու անասուններ քուրձ հագնին, ու բոլոր ուժով Աստուծոյ աղաղակեն. և ամէն մարդ իր չար ճամբայէն ու իր ձեռքերուն մէջ եղած անիրաւութենէն դառնայ։ 9—Ո՞վ գիտէ, Ի՛նչ Աստուած դառնայ ու զղջայ, և իր սաստիկ բարկութենէն դառնայ, ու չկորսուինք։

10—Ու Աստուած անոնց գործերը տեսաւ՝ որ իրենց չար ճամբաներէն դարձան, ու Աստուած զղջաց այն չարիքին համար զոր ըսեր էր թէ անոնց ընէ, ու չընաւ։

*Եբր. Աստուծոյ

ԳԼ. Դ

Ե՛ Յովնան խիստ դժուարացաւ ու նեղացաւ. 2—Ու Տէրոջը աղօթք ըրաւ ու ըսաւ, Ո՛ն, Տէր, երբ ես դեռ իմ երկիրս էի, իմ խօսքս այս չէ՞ր. ասոր համար առաջ թարսիս փախչելու եղայ, քանզի գիտէի որ դուն ողորմած, գթած, երկայնամիտ և բազումողորմ Աստուած ես, ու չարիքի համար կը զղջաս։ 3—Ու հիմա, ով Տէր, կ՚աղաչեմ, իմ հոգիս ինձմէ առ, քանզի մեռնիլս ապրելէս աղէկ է։ 4—Ու Տէրը ըսաւ, *Մի՞թէ դուրս նեղանալովդ աղէ՞կ կ՚ընես։

5—Ու Յովնան քաղաքէն դուրս ելաւ, ու քաղաքին արեւելեան կողմը նստաւ, և հոն իրեն տաղաւար մը շինեց, ու անոր հովանիին տակ նստաւ, մինչեւ տեսնէ թէ քաղաքին ի՛նչ պիտի ըլլայ։ 6—Ու Տէր Աստուած դդմենիի մը հրամայեց, ու Յովնանի վրայ ելաւ, որ անոր գլխուն վրայ հովանի ըլլայ, որպէս զի զանիկա իր տառապանքէն ազատէ. և Յովնան դդմենիին համար մեծ ուրախութիւնով ուրախացաւ։

7—Ու հետեւեալ օրը երբ առաւօտ կ՚ըլլար, Աստուած հրամայեց որդի մը, որ դդմենին կարկուտ, ու անիկա չորցաւ։ 8—Ու եղաւ որ երբ արեւը կը ծագէր, Աստուած խորշակաբեր արեւելեան հովի մը հրամայեց, ու արեւը Յովնանի գլխուն վրայ զարկաւ, այնպէս որ անիկա մարեցաւ. ու անիկա ինքզինքին մահը ուզելով ըսաւ, Մեռնիլս ապրելէս աղէկ է։

9—Ու Աստուած Յովնանի ըսաւ, Միթէ դդմենիին համար նեղանալովդ աղէ՞կ կ՚ընես. ու անիկա ըսաւ, Մինչեւ ի մահ նեղանալովս աղէկ կ՚ընեմ։

10—Այն ատեն Տէրը ըսաւ, Դուն դդմենիին խնայեցիր, որու համար աշխատութիւն չքաշեցիր ու զանիկա չմեծցուցիր, որ մէկ գիշերուան մէջ բուսաւ ու մէկ գիշերուան մէջ կորսուեցաւ. 11—Ու ես պիտի չխնայե՞մ Նինուէի, այն մեծ քաղաքին, որուն մէջ հարիւր քսան հազարէն աւելի մարդիկ կան, որոնք աջ ու ձախ ձեռքին տարբերութիւնը չեն գիտեր, ու նաեւ շատ անասուններ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԻՔԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը խօսքը, որ Մուդայի Թագաւորներուն, Յովաթամի, Ահազի ու Եզեկիայի օրերը Մօրաստացի Միքիայի եղաւ, և Սամարիայի ու Երուսաղէմի վրայով անոր յայտնուեցաւ։

2-Լսեցէք, ով բոլոր ժողովուրդներ, Մտիկ ըրէ, ով երկիր, ու անոր եղերը բնակիչները՝
Ու Տէր Եհովա ձեզի դէմ վկայ ըլլայ, Տէրը Իւր սուրբ տաճարէն։

*կամ, իրաւ է որ խիստ նեղացեր ես
Եբր. լեռնիրը

3—Քանզի ահա Տէրը իր տեղէն կ՚ելլէ, Ու պիտի իջնէ ու երկրի բարձր տեղերուն վրայ պիտի պտրտի։
4—Ու լեռները անոր տակ պիտի հալին, Ու հովիտները պիտի պատռին՝
Կրակին առջեւ հալած մոմի պէս
Ու զառ ի վայրէն թափուած ջուրի պէս։
5—Ա՛յս ամէնը Յակոբի յանցանքին համար
Ու Իսրայէլի տանը մեղքին համար է.
Յակոբի յանցանքին պատճառը ո՞վ է. Սամարիա չէ՞.
Ու Մուդայի բարձր տեղերուն պատճառը ո՞վ է. Երուսաղէմ չէ՞։
6—Ուստի Սամարիան դաշտի քարակոյտ

Ո՛ այդի անկելու տեղի պիտի դարձընեմ,
Անոր քարերը ձորին մէջ պիտի գլորեմ,
Ու անոր հիմերը պիտի բանամ.
7—Ու անոր բոլոր կուռքերը պիտի կոտրտին,
Ու անոր բոլոր նուիրուած բաները կրակով պիտի այրին,
Ես անոր բոլոր արձանները բնաջինջ պիտի ընեմ.
Քանզի՝ *նուէ բոզի վարձքով ժողվեց,
Ու բոզի վարձքի պիտի դառնան։
8—Ասոր համար պիտի ողբամ ու պիտի հառաչեմ,
Անձամբ կերթ ու մերկ պիտի չըլլիմ.
Ձագալներու պէս կոծ, ու ջայլամներու պէս սուգ պիտի ընեմ։
9—Քանզի անոր վէրքերը անբժշկելի են,
Քանզի մինչև Յուդա եկաւ,
Մինչև իմ ժողովուրդիս դուռը, մինչև Երուսաղէմ, հասաւ։
10—Գէթի մէջ մի պատմէք — բնաւ մի լաք.
*Բեթափրայի մէջ փոշիի մէջ թաւալէ։
11—Ով †Սաֆիրի բնակիչ, քու մերկութիւնդ բաց ունենալով անցիր.
‡Սաանանի բնակիչը դուրս չելլեր,
‖Բեթեսելի կոծը իր օթևանը ձեզմէ կ'առնէ։
12—Վասն որ §Մարոթի բնակիչը բարիքի համար կը վշտանայ.
Քանզի մինչև Երուսաղէմի դուռը Տէրոջմէ չարիք իջաւ։
13—Ներիվարը կառքին լծէ, ով Լաքիսի բնակիչ.
Սիոնի աղջկան մեղքին սկիզբը անիկա է.
Քանզի քու մէջդ Իսրայէլի յանցանքները գտնուեցան։
14—Անոր համար Մօրեսեթ-գէթի ընծաներ պիտի տաս.
**Աքզիբերի տուները Իսրայէլի թագաւորներուն պիտի սաեն։

*Այլն՝ փոշիի տուն
†Այլն՝ գերեզկութիւն
‡Այլն՝ հոսեր ունեցող
‖Այլն՝ մերձակայ տուն, կամ, իջեւանի տուն
§Այլն՝ գառնութիւններ
**Այլն՝ սուտութիւն

15 Տակաւին քեզի ժառանգ պիտի բերեմ, ով *Մարեսայի բնակիչ.
Իսրայէլի փառքը մինչև Ադոզամ պիտի հասնի։
16—Քու սիրելի որդիներուդ համար մազերդ փետէ ու կարէ,
Կնասութիւնդ արծիւի պէս չատցուր,
Քանզի քեզմէ գերութեան գացին։

ԳԼ. Բ

Վա՛յ անոնց՝ որ անօրէնութիւն կը խորհին,
Ու իրենց անկողիններուն վրայ չարութիւն կը հնարեն.
Անոնք առաւօտեան լոյսին ատոնք գործադրեն ի գործ կը դնեն,
Քանզի իրենց ձեռքերուն մէջ այժ կայ։
2—Ու անոնք ագարակներու կը ցանկան ու զանոնք կը յափշտակեն,
Ես տուներու՝ ու զանոնք կ'առնեն.
Ես մարդուն ու իր տանը,
Մարդուն ու իր ժառանգութեանը,
զրկանք կ'ընեն։
3—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Ահա ես այս ազգին վրայով չարիք մը կը խորհիմ,
Ուրկէ պիտի չկրնաք ձեր պարանոցը հանել,
Ու պիտի չկրնաք հպարտութեամբ քալել։
Վասն զի ժամանակը չար է։
4—Այն օրը ձեր վրայ առակ պիտի խօսին,
Ու տրտմալի ողբով պիտի ողբան ու ըսեն,
Բոլորովին յափշտակուեցանք.
Իմ ժողովուրդիս բաժինը փոխեց,
Ջանիկա ինչպէս ինծմէ վերցուց.
Մեր ագարակները ետ տալու տեղ՝ բաժնեց։
5—Անոր համար Տէրոջը ժողովին մէջ վիճակով լար քաշող մը պիտի չունենաս։
6—Մարգարէութիւն ընդունեցուն՝ Մարգարէութիւն մի ընէք՝ կըսէին.
Անոնց մարգարէութիւն պիտի չընեն, ամօթը նախատինքը պիտի չվերնայ։

*Այլն՝ ժառանգութիւն, կամ, Գլխաւոր

7—Ով Յակոբի տուն ըսուած, միթէ Տէրոջը ոգին կարճցա՞ւ,
Անոր գործերը սա՞նք են.
Միթէ ուղղութեամբ քալողին իմ խօսքերս ազէկ չե՞ն։
8—Ու իմ ժողովուրդս չառաջնդմէ առաջ եկաւ թշնամի ըլլալու համար.
Ապահովութեամբ անցնողներէն, պատերազմէ դարձողներէն,
Հանդերձներուն *վրայէն պատառաճանը կը կողոպտէք։
9—Իմ ժողովուրդիս կիները իրենց զուարճալի տուներէն կը վռնտէք.
Անոնց ազաքներէն յաւիտեան իմ փառքս կ'առնէք։
10—Ելէք ու գացէք.
Քանզի ասիկա հանգստութեան տեղ չէ.
Պիղծ ըլլալուն պատճառաւ.
Մեծ կործանութեամբ բնաջինջ պիտի ըլլայ։
11—Եթէ մարդ մը հովի և ունայնութեան ետեւէ երթայ,
Ու սուտութիւն խօսի՝ ըսելով,
Գինիի ու օղիի համար քեզի մարգարէութիւն ընեմ,
Անիկա պիտի ըլլայ այս ժողովուրդին մարգարէն։
12—Ով Յակոբ, ամէնդ անշուշտ պիտի ժողվեմ,
Իսրայէլի մնացորդը պիտի հաւաքեմ,
Ո՛ Բոսրայի ոչխարներուն պէս,
Իրենց փարախին մէջ եղող հօտերուն պէս, մեկեղ պիտի դնեմ.
Մարդոց բազմութիւնը համար ալմուկ պիտի ըլլայ։
13—Խրամատութիւն ընողը անոնց առջև եկաւ.
Անոնք խրամատեցին ու դռնէն անցան և անկէ ելան.
Ու անոնց թագաւորը անոնց առջև անցաւ,
Ու Տէրը իրեն անոնց գլուխ —Լ՝ Է՛ԵՐ—ը։

ԳԼ. Գ

Ու ըսի, Հիմա մտիկ ըրէք, ով Յակոբի գլխաւորներ,
Ու Իսրայէլի տանը իշխաններ.

*կամ, հետ

Գիտք չէ՞ որ դուք իրաւունքը ճանչնաք.
2—Դուք որ ատելութիւնը կ'սատէք ու չարութիւնը կը սիրէք,
*Մարդոց վրայէն մաշքերը, ու անոնց ոսկորներէն միսերը կը հանէք.
3—Ու անոնք որ իմ ժողովուրդիս միսը կ'ուտեն,
Ես անոնց վրայէն մաշքերը կը հանեն,
Ու անոնց ոսկորները կը փշրեն,
Ես զանոնք պատկի մէջ ու կոթսայի մէջ Է՛ԼԼ— միսի պէս կտոր կտոր կ'ընեն,
4—Այն ատեն Տէրոջը պիտի աղաղակեն,
Բայց անոնց պատասխան պիտի չտայ,
Ու այն ժամանակ իր երեսը անոնցմէ պիտի ծածկէ,
Վասն զի անոնք չար գործեր ըրին։
5—Այսպէս կ'ըսէ Տէրը այն մարգարէներուն համար՝
Որոնք իմ ժողովուրդս կը մոլորեցնեն,
Ու իրենց ակռաներովը կը խածնեն,
Ես խաղաղութիւն կը քարոզեն,
Ու ով որ անոնց բերանը բան չդներ,
Անոր դէմ պատերազմ կը հրատարակեն։
6—Անոր համար ձեզի գիշեր պիտի ըլլայ, որպէս զի տեսիլք չտեսնէք.
Ես ձեզի խաւար պիտի ըլլայ, որպէս զի գուշակութիւն չընէք.
Ու մարգարէներուն վրայ արեւը պիտի մտնէ,
Ես անոնց վրայ օրը պիտի խաւարի.
7—Ու տեսանողները պիտի ամչնան,
Ես գուշակողները ամօթով պիտի ըլլան.
Ամէնն ալ իրենց շրթունքը պիտի ծածկեն,
Վասն զի Աստուծմէ պատասխան մը պիտի չըլլայ։
8—Սակայն ես Տէրոջը Հոգիովը՝
Զօրութեամբ, դատաստանով և արիութեամբ լեցուած եմ,
Որպէս զի Յակոբի իր յանցանքը,
Ու Իսրայէլի իր մեղքը յայտնեմ.
9—Հիմա ասիկա մտիկ ըրէք,
Ով Յակոբի տանը գլխաւորներ
Ու Իսրայէլի տանը իշխաններ,
Գուք որ իրաւունքին կը գզուիք,
Ու ամէն ուղղութիւնը կը ծռեք,
10—Սիոնը արիւններով,

Եբր. Անոնց

Ու Սրուսազէմը անվրաւութեամբ կը
չինէք։
11—Անոր գլխաւորները կաշառքով կը
դատեն,
Ու անոր քահանաները վարձքով կը
սորվեցնեն,
Եւ անոր մարգարէները ստակով գու-
շակութիւն կ'ընեն,
Ու Տէրոջը վրայ կը կռթնին ու կ'ըսեն,
Չէ՞ որ Տէրը մեր մէջ է.
Մեր վրայ չարիք պիտի չգայ։
12—Ուրեմն ձեր պատճառաւ Սիօն ա-
գարակի պէս պիտի հերկուի,
Ու Երուսազէմ աւերակներու դէզերը
Ու Տէրոջը տանը լեռը անտառի բարձր
տեղերու պէս պիտի ըլլայ։

Գլ. Դ

Բայց վերջին օրերը պիտի ըլլայ որ
Տէրոջը տանը լեռը
Լեռներուն գլխուն վրայ պիտի հաս-
տատուի,
Եւ բլուրներէն վեր պիտի բարձրանայ,
Ու ժողովուրդները հեղեղի պէս անոր
պիտի դիմեն.
2—Եւ շատ ազգեր պիտի երթան ու
ըսեն,
Եկէք, Տէրոջմէ լեռը,
Յակոբի Աստուծոյն տունը, երթանք,
Որպէս զի մեզի իր ճամբաները սոր-
վեցնէ,
Ու անոր շաւիղներուն մէջ քալենք։
Վասն զի օրէնքը Սիօնէ,
Ու Տէրոջը խօսքը Երուսազէմէ պիտի
ելլէ.
3—Եւ անիկա շատ ժողովուրդներու մէջ
դատաստան պիտի ընէ,
Ու զօրաւոր ազգեր մինչև հեռաւոր տե-
ղեր պիտի յանդիմանէ.
Ու անոնք իրենց սուրերը խփեր,
Եւ իրենց նիզակները յօտոցներ պիտի
չընեն.
Ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ,
Եւ ալ պատերազմ պիտի չսորվին.
4—Հապա ամէն մարդ իր որթին տակ
Ու իր թզենիին տակ պիտի նստի,
Ու վախցնող պիտի չըլլայ.
Վասն զի զօրաց Տէրոջը բերանը խօսեր-
ցաւ։
5—Բանզի բոլոր ժողովուրդներն
Ամէն մէկը իր աստուծոյն անունովը կը
քալէ,
Բայց մենք յաւիտեանս յաւիտենից
Մեր Տէր Աստուծոյն անունովը պիտի
քալենք։
6—Այն օրը, կ'ըսէ Տէրը, կաղը պի-
տի ժողվեմ,
Ու ափսորածը պիտի հաւաքեմ,
Եւ զանիկա ալ զոր նեղեցի.
7—Եւ կաղը մնացորդ պիտի ընեմ,
Ու հեռուն վռնտուածը՝ զօրաւոր ազգ.
Եւ Տէրը Սիօն լեռանը մէջ անոնց վրայ
պիտի թագաւորէ
Հիմակուընէ մինչև յաւիտեան։
8—Ու դուն, ով հօտի աշտարակ, Սիօնի
աղջկան բլուրը,
Մինչև քեզի պիտի գայ,
Քեզի պիտի հասնի, առաջուան իշխա-
նութիւնը,
Ու թագաւորութիւնը՝ Երուսազէմի
աղջկան։
9—Հիմա ինչո՞ւ բարձրաձայն կը պո-
ռաս.
Միթէ քու մէջդ թագաւոր չկա՞յ,
Կամ թէ քու խորհրդականդ կորսուե-
ցա՞ւ,
Որ ցաւ ծննդական հիսէ պէս ցա-
բռնեց։
10—Ցաւ քաշէ ու ծննդականի պէս կը-
կանչէ մէջ եղիր, ով Սիօնի աղ-
ջիկ,
Քանզի հիմա քաղաքէն պիտի ելլես,
Ու դաշտ մէջ պիտի բնակիս,
Ու մինչև Բաբելոն պիտի երթաս,
Եւ հոն պիտի ազատիս.
Հոն Տէրը պիտի ազատէ քեզ քու թշնա-
միներուդ ձեռքէն։
11—Ու հիմա քու վրադ շատ ազգեր
ժողովեցան, որոնք կ'ըսեն,
Թող անիկա պղծուի,
Ու մեր աչքերը Սիօնը տեսնեն։
12—Բայց անոնք Տէրոջը խորհուրդները
չեն գիտեր,
Ու անոր դիտաւորութիւնը չեն հասկնար.
Քանզի ինք զանոնք կը ժողվէ՝ ինչպէս
որանները կալին մէջ կը ժողվեն։
13—Ելիր ու կալը ծեծէ, ով Սիօնի աղ-
ջիկ,
Քանզի քու եղջիւրդ երկաթէ պիտի ընեմ,
Ու քու կճղակներդ պղնձէ պիտի ընեմ,
Ու շատ ժողովուրդներ պիտի մանրես.
Ու անոնց աստացածքը բոլոր երկրին
Տէրոջը պիտի նուիրեմ,

Գլ. Ե

Հիմա, ով գունդի աղջիկ, քեզի
գունդ կազմէ.
Մեր վրայ պաշարում դրուեցաւ.
Իսրայէլի դատաւորին ծնօտքին գաւազա-
նով պիտի զարնեն։
2—Եւ դուն, ով Բեթլհեմ Եփրաթա,
Թէև Յուդայի հազարապետերուն մէջ
ըլլալու պզտիկ ես,
Բայց քեզմէ պիտի ելլէ ինծի ան որ Իս-
րայէլի վրայ իշխան պիտի ըլլայ,
Ու անոր ելքը ի հնուց, յաւիտենական
օրերէն, է։
3—Անոր համար զանոնք յետ պիտի տայ՝
Մինչև ծնանողին ծննդելու ժամանակը,
Ու անոր եղբայրներուն մնացորդը
Իսրայէլի որդիներուն պիտի դառնայ։
4—Ու անիկա պիտի կենայ, ու Տէրոջը
զօրութիւնովը
Եւ իր Տէր Աստուծոյն անունը մեծա-
յեալութիւնովը պիտի հովուէ,
Ու անոնք պիտի բնակին.
Քանզի հիմա մինչև երկրի ծայրերը պի-
տի մեծանայ։
5—Եւ անիկա խաղաղութիւն պիտի ըլլայ
Երբ Ասորեստացին մեր երկիրը մտնէ,
Ու մեր պալատներուն մէջ ոտք կոխէ,
Անոր դէմ հօթը հովիւ
Եւ ութ իշխանաւոր մարդիկ պիտի հա-
նենք։
6—Ու անոնք Ասորեստանի երկիրը սրով
Ու Նեբրովթի երկիրը իր դռներուն մէջ
պիտի սպառեն.
Եւ անիկա Դէղ պիտի ազատէ Ասորես-
տացիներէն,
Երբ անոնք մեր երկիրը մտնեն
Ու մեր սահմաններուն մէջ ոտք կոխեն։
7—Եւ Յակոբի մնացորդը շատ ժո-
ղովուրդներու մէջ
Յօդի պես պիտի ըլլայ՝ որ Տէրոջմէ կաթէ,
Եւ՝ շաղի պէս՝ որ կանանչ խոտի վրայ
կ'իջնէ.
Զոր մարդ չսպասեր,

Ու մարդու որդիներէն չյուսար։
8—Եւ Յակոբի մնացորդը ազգերուն մէջ
Շատ ժողովուրդներու մէջ, անդոլո պի-
տի ըլլայ,
Ինչպես առիւծ մը՝ անտառի գազաններ-
ուն մէջ,
Կամ առյոգ առիւծ մը՝ ոչխարներու
հօտերուն մէջ,
Որ երթ անցնի՝ կը կոխկռտէ ու կը պա-
տառէ,
Եւ ազատող մը չըլլար։
9—Քու ձեռքդ քու հակառակորդնե-
րուդ վրայ պիտի վերնայ,
Ու բոլոր թշնամիներդ պիտի կտրին։
10—Եւ պիտի ըլլայ օր այն օրը,
կ'ըսէ Տէրը,
Քու ձիերդ քու մէջդէն քանդիմ պիտի
ընեմ,
Եւ քու կառքերդ պիտի կորնչեցնեմ.
11—Եւ քու երկրիդ քաղաքները քան-
դինմ պիտի ընեմ,
Ու բոլոր պարիսպներդ պիտի փլցնեմ.
12—Եւ քու ձեռքիդ կախարդութիւն-
ները բնաջինջ պիտի ընեմ,
Ու ա՛լ գուշակութիւն ընողներ պիտի
չունենաս.
13—Եւ քու մէջդէ քու գրօշակներդ
Ու արձաններդ բնաջինջ պիտի ընեմ,
Ու մէյմըն ալ քու ձեռքերուդ գործե-
րուն երկրպագութիւն պիտի
չընես։
14—Եւ քու մէջդէ Աստարովթի կուռ-
քերդ պիտի կործանեմ,
Ու քու քաղաքներդ պիտի աւերեմ։
15—Եւ խիստ մարիկ չընդունիմ ազգերէն
Սրամտութեամբ ու բարկութեամբ վրէժ
պիտի առնեմ։

Գլ. Զ

Հիմա Տէրոջը ըսածը մարիկ բրէք.
Ելիր ու լեռներուն առջև դատ վարէ,
Եւ բլուրները քու ձայնդ թող լսեն։
2—Ով լեռներ ու երկրի ամուր հիմերը,
Տէրոջը դատը մարիկ բրէք,
Քանզի Տէրը իր ժողովուրդին հետ դատ
ունի,
Ու Իսրայէլի հետ պիտի վիճի։
3—Ով իմ ժողովուրդս, քեզի ի՞նչ բրի,
Ու ի՞նչ բանով քեզ յոգնեցուցի.

ինծի զէմ պատասխան ատր,
4—Վասն զի քեզ Նգիպտոսի երկրէն հանեցի,
Ու ծառայութեան տունէն քեզ փրկեցի,
Եւ քու առջեւդ Մովսէսը, Ահարոնը ու Մարիամը ղրկեցի։
5—Ով իմ ժողովուրդս, մտքդ բեր
Ինչ որ Մովաբացւոց Բազակ Թագաւորը խորհեցաւ,
Ու ինչ որ Բէովրեան Բաղաամ անոր պատասխանեց.
Ե՛ւ էն՝ ը էշ՝— Սատիմէ մինչև Գազգազա,
Որպէս զի Տէրոջը արդարութիւնը գիտնաս։
6—Տէրոջը առջև ինչո՞վ երթամ,
Ու Բարձրեալ Աստուծոյն առջև խնամ.
Արդեօք անոր առջև ողջակէզներո՞վ,
Մէկ տարեկան արջառներո՞վ երթամ։
7—Արդեօք Տէրը հաճութեամբ խոյերու կամ բիւրաւոր իւղի գետերու պիտի հաճի՞.
Արդեօք իմ յանցանքիս համար իմ անդրանի՞կս,
Ո՛ հոգւոյս մեղքին համար որովայնիս պտո՞ւղը տամ։
8—Քեզի յայտնեց, ով մարդ, թէ ի՛նչ է աղէկը.
Ու Տէրը քեզմէ ի՛նչ կը պահանջէ,
Բայց միայն իրաւունք ընել, ողորմութիւն սիրել,
Ու խոնարհութիւնով քու Աստուծոյդ հետ քալել։
9—Տէրոջը ձայնը քաղաքին կը կանչէ,
Ու իմաստութիւնը քու անունդ պիտի տեսնէ.
Գաւազանը ու անոր հրամայողը լսեցէ՛ք։
10—Անօրէնին տանը մէջ տակաւին անօրէնութեան գանձեր կան,
Ու պակաս արգա՛ւ՝ որ պիտի է։
11—Միթէ անօրէնութեան կշիռներ
Ու խարդախ քարերու քսակ ո՞՛ՒՐ՚ՂԸ մաքուր պիտի սեպե՞մ։
12—Քանզի անոր հարուստները զրկանքով լեցուն են,
Եւ անոր բնակիչները սուտ կը խօսին,
Ու իրենց բերնին մէջ նենգաւոր լեզու ունին։
13—Ուստի ես ալ քեզ զարնելով հիւանդ պիտի ընեմ,
Եւ քու մեղքերուդ համար ւէշ տամ, բակ պիտի ընեմ։
14—Դուն պիտի ուտես ու պիտի չկշտանաս,
Ու քու անօթութիւնդ փորիդ մէջ պիտի ըլլայ.
Պիտի յափշտակես, բայց պիտի չկարենաս ազատել,
Ու ազատածդ սուրի պիտի մատնեմ։
15—Դուն պիտի սերմանես, բայց պիտի չհնձես.
Դուն ձիթապտուղ պիտի կոխես, բայց իւղով պիտի չօծուիս.
Քաղցու ղ՚էւ ղ՚ՐՐ՚՚ՒՒ, բայց գինի պիտի չխմես։
16—Քանզի Ամրիի հրամանները կը պահո՛ւին,
Եւ Աքաաբի տանը բոլոր գործերը.
Եւ դուք անոնց խորհուրդներովը կը քալէք,
Որպէս զի քեզ ամայի ընեմ,
Եւ՝ քու բնակիչներդ՝ սուլելու ԷՐ՚՚ՒՒ։
Ուստի իմ ժողովուրդիս նախատինքը պիտի կրեք։

ԳԼ. Է

Վա՜յ ինծի, որ ամառնային պտուղը քաղուածի պէս,
Այգեկութին ճաշակ ճմռելու պէս եղայ։
Ուտելու ողկոյզ չկայ.
Հոգիս կանխահաս պտուղներուն կը ցանկայ։
2—Բարեպաշտը երկրէ կորսուեցաւ,
Ու մարդոց մէջ ուղիղ մէկը չկայ.
Ամէնը արիւններու համար դարան կը գործեն,
Ամէն մարդ իր եղբայրը որոգայթով կ՚որսայ,
3—Չեռփերով չաս չարութիւն ընելու համար
Իշխանը ղ՚ՐՐ՚՚Ւ կը պահանջէ,
Եւ գատաւորը կաշառքի կ՚նայէ,
Ու մեծ մարդը իր սրտին ցանկութեանը համեմատ կը խօսի.
Այսպէս զանիկա կը ծռեն։
4—Անոնց ամենէն փուչի պէս
Շիտակը փշոտէն ցանգէն ֆէլ է.

*ՆԲՐ. անոր բնակիչները

Քու դէտերուդ օրը քու այցելութիւնդ եկաւ,
Անոնց չփոթութիւնը հիմա պիտի ըլլայ։
5—Բարեկամի մի հաւատաք,
Մտերիմ բարեկամի մի ապաւինիք,
Մոտ պառկողին բերնիդ դռները պահէ։
6—Քանզի տղան իր հօրը կ՚անարգէ,
Աղխիկը իր մօրը վրայ, — հարսը իր կեսուրին վրայ կ՚ելլէ.
Մարդուն թշնամիները իր ընտանիքն են։
7—Բայց ես Տէրոջը պիտի սպասեմ,
Իմ փրկութեան Աստուծոյն պիտի յուսամ,
Իմ Աստուածս ինծի պիտի լսէ։
8—Ով իմ թշնամիս, վրաս մի խնդար.
Թէև իյնամ՝ պիտի ելլեմ,
Թէև խաւարի մէջ նստիմ՝ Տէրը ինծի լոյս պիտի ըլլայ։
9—Տէրոջը բարկութիւնը պիտի կրեմ,
(Քանզի անոր դէմ մեղք գործեցի,)
Մինչև անիկա իմ դատս պաշտպանէ ու ինծի իրաւունք ընէ,
Զիս լոյսը հանէ ու անոր արդարութիւնը տեսնեմ։
10—Այն ատեն իմ թշնամիս պիտի տեսնէ.
Ամօթը պիտի ծածկէ զանիկա որ ինծի կ՚ըսէր Թէ
Ո՛ւր է քու Տէր Աստուածդ.
Իմ աչքերս զանիկա պիտի տեսնեն.
Հիմա անիկա փողոցներուն ցեխին պէս ոտքի կոխան պիտի ըլլայ։
11—Այն օրը որ քու պարիսպներդ պիտի չինուին,
Նոյն օրը պատուէրը հեռացած պիտի ըլլայ։
12—Այն օրը Ասորեստանի և՝ պարսպաւոր քաղաքներէն,
Ու †պարիսպէն մինչև Գետը,
Եւ ծովէ ծով ու լեռնէ լեռ քեզի պիտի գան։

*Կ՚ՍՐ. Եգիպտոսի
†Կ՚ՍՐ. Եգիպտոսէ

13—Սակայն երկիրը ամայի պիտի ըլլայ իր բնակիչներուն՝ պատճառաւ,
Ո՛ղջ-ն էի իրենց գործերուն պտուղին ՚՚ՐՒՒ։
14—Քու գաւազանովդ հովուէ քու ժողովուրդդ,
Քու ժառանգութեանդ խաչինքը,
Որ առանձին անտառ մը կը նստի Կարմէզոսի մէջ.
Անոնք առաջուան օրերուն պէս
Բասանի ու Գաղաադի մէջ թող արածին։
15—Անոր հրաշքներ պիտի ցուցնեմ,
Ինչպէս այն օրերը որ Եգիպտոսի երկրէն ելար։
16—Ազգերը պիտի տեսնեն,
Ու իրենց բոլոր քաջութենէն պիտի ամչնան.
Բերնի վրայ ձեռք պիտի դնեն,
Ու անոնց ականջները պիտի խլանան։
17—Օձի պէս հող պիտի լզեն,
Երկրի սողուններուն պէս
Իրենց պահուրտած տեղերէն պիտի դողան։
Մեր Տէր Աստուածմէն պիտի զարհուրին,
Ու քեզմէ պիտի վախնան։
18—Քեզի պէս Աստուա՞ծ կայ,
Որ անօրէնութիւնը կը ներէ,
Ու իր ժառանգութեանը ճնացորդին յանցանքը անտես կ՚ընէ.
Իր բարկութիւնը յաւիտեան չպահեր,
Քանզի ողորմութիւն կը սիրէ։
19—Անիկա պիտի դառնայ, մեզի ողորմութիւն պիտի ընէ,
Մեր անօրէնութիւնները ոտքին տակ պիտի առնէ.
Այո, անոնց բոլոր մեղքերը
Ծովուն խորութեանը մէջ պիտի նետես։
20—Յակոբի ճշմարտութիւն պիտի ընես,
Եւ Աբրահամի ողորմութիւն,
Ինչպէս առաջուան օրերէն ի վեր
Մեր հայրերուն երդումով խոստացար։

*Կ՚ՍՐ. հետ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՆԱԻՈՒՄԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Նինուէի պատգամը. Եղկեսացի Նաւումի տեսիլքին գիրքը։

2—Եհովա նախանձոտ ու վրէժխնդիր Աստուած է.
Եհովա վրէժ առնող ու բարկութեան տէր է.
Եհովա իր հակառակորդներէն վրէժ կ՚առնէ,
Ու իր թշնամիներուն բ֊ր֊ն֊ւ֊ն կը պահէ։
3—Եհովա երկայնամիտ է, ու անոր զօրութիւնը մեծ է,
Բայց յ֊ն֊շ֊ո֊ւ֊ղը ամենևին անպատիժ չ՚ձգուիր.
Եհովայի ճամբան մրրիկի ու փոթորիկի մէջ է,
Ու ամպերը անոր ոտքերուն փոշին են։
4—Ծովուն կը սաստէ ու զայն կը ցամքեցնէ,
Ու բոլոր գետերը կը չորցնէ.
Բասան ու Կարմելոս կը թառամին,
Ու Լիբանանի ծաղիկը կը թառամի։
5—Լեռները անկէ կը դողան ու բլուրները կը հալին.
Երկիր անոր երեսէն կը խախտի,
Աշխարհ ու անոր բոլոր բնակիչները։
6—Անոր ցասումին առջև ո՞վ կրնայ կայնիլ,
Ու անոր սաստիկ բարկութեանը ո՞վ կրնայ դէմ դնել.
Անոր սրամտութիւնը կրակի պէս կը թափի,
Ու ապառաժները անկէ կը խորտակին։
7—Եհովա բարի է, նեղութեան օրը ամրութիւն է,
Ու իրեն ապաստնածները կը ճանչնայ։
8—Բայց այն ւ֊ղ֊ւ֊թ֊ն անոր յորդահոս հեղեղով բոլորովին պիտի աւրէ,
Ու խաւարը պիտի հալածէ անոր թշնամիները։
9—Եհովայի դէմ ի՞նչ կը խորհիք.
Ինկինիչ ընողը անիկա է.
Նեղութիւնը երկրորդ անգամ պիտի չ֊ե֊լ֊ւ֊ի։
10—Քանի քանի որ անանք փուչերու պէս փաթթուած են,
Ու իրենց ըմպելիքովը գինովցածի պէս են
Բոլորովին չորցած չարդի պէս պիտի այրին։
11—Քեզմէ Եհովայի դէմ չարութիւն մտածող մը,
Անօրէն խորհրդական մը, ելաւ։
12—Տէրը այսպէս կ՚ըսէ.
Թէև անանք խաղաղութեան մէջ են ու բազմաթիւ են,
Սակայն անանք պիտի կտրին երբ անիկա անցնի.
Թէև քեզ նեղեցի, ա՛լ պիտի չնեղեմ։
13—Ու հիմա քու վրայէդ անոր լուծը պիտի կոտրեմ,
Ու քու կապերդ պիտի կոտրեմ։
14—Ու Տէրը քեզի համար հրամայեց, մէկմէն ալ քու անունդ չ֊տ֊ւ֊ա֊ծ֊ո֊ւ֊ի։
Քու աստուածներուդ տունէն
Քանդակած և ձուլածոյ կուռքերը բնաջինջ պիտի ընեմ.
Գ֊ն֊ե֊ւ֊մ֊ա֊ն֊դ պիտի ընեմ,
Քանի դուն անարգ եղար։
15—Ահա լեռներուն վրայ աւետաբերի մը ոտքերը.
Խաղաղութիւն քարոզողին, ոտքերը.
Տօներդ պահէ, ով Յուդա, ուխտերդ կատարէ.
Քանի մէկմէն ալ քու մէջդ անօրէն պիտի չանցնի,
Անիկա բոլորովին կտրեցաւ։

ԳԼ. Բ

Նորաակողը քու երեսիդ դէմ ելաւ.
Պարիսպը պահպանէ, ճամբան դիտէ,
Մէջքերդ ուժովցուր — բոլոր ոյժդ էջ֊ը֊ դ֊ո֊ղ֊վ֊է֊։
2—Քանզի Տէրը Յակոբի վայելչութիւնը
Իսրայէլի վայելչութեանը պէս նորոգեց.
Վասն զի պարպողները զանոնք պարպեցին,
Ու անոնց որթի ւ֊ա֊ղ֊ե֊ր֊ը ա֊ւ֊ե֊ր֊ե֊ց֊ի֊ն֊։
3—Անոր զօրաւորներուն վահանը կարմրեցաւ,
Ա֊ռ֊ւ֊ր֊ ք֊ա֊ջ֊ մարդիկը կարմիրով ներկուեցան.
Անոր պատրաստութեանը օրը կառքը *պզպզած փայլուն֊ութ֊ի֊ւ֊ն֊ պիտի ունենայ,
Ու նիզակները պիտի երերցուին։
4—Կառքերը փողոցներուն մէջ պիտի կատղին,
Հրապարակներուն մէջ իրար պիտի բազխեն.
Անոնց երեւոյթը ջահերու պէս պիտի ըլլայ
Ու փայլակներու պէս պիտի վազեն
5—Իր կորիճները պիտի յիշէ.
Անանք քալած տեղերնին պիտի գլորին,
Իւ֊ր֊ բ֊ն֊ա֊կ֊ի֊ն֊ը֊ պարսպին †ոտ֊ք֊ն֊ե֊ր֊ը֊ պիտի արագան,
Ու պատսպարան պիտի պատրաստուի։
6—Գետերուն դռնները պիտի բացուին,
Ու պալատը պիտի †փլի։
7—Ու ‡նախասահմանուեցաւ որ՝ անիկա գերութեան պիտի երթայ,
Ու անոր ազախիններուն կուրծքերնուն զարնելով
Ո֊ա֊ղ֊ա֊ւ֊ն֊ի֊ր֊ պէս ձիչելով ո֊ն֊ո֊ւ֊ր֊ հետ պիտի երթան։
8—Ու Նինուէ չաս ժամանակէ ի վեր ջուրերու աւազանի պէս էր։
Սակայն անանք փախչելով՝ կայնեցէք, կայնեցէք՝ †ո֊ւ֊ր֊ ը֊ն֊ե֊ն֊,
Բայց դարձող պիտի չըլլայ։
9—Արծաթի յափշտակեցէք, ոսկի յափշտակեցէք.
Քանզի ո֊ն֊ո֊ւ֊ր֊ զարդերը անթիւ են,
Ու ամէն ցանկալի պատներու առատութիւն կայ։
10—Պարապ ու պարպած ու գաւառկացած է.
Ու սիրտերը կը հալին, ու ծունկերը իրարու կը զարնեն,
Ու ամէն մէջքերը կը դողան,
Ու ամէնուն երեսները գոյներնին կը նետեն։

*կամ, ջահերու լոյս †Եբր. հալի ‡կամ, թէև պահապաններ դրուած են,

11—Ո՞ւր է առիւծներուն բնակարանը,
Ու առյդ առիւծներուն արօտը,
Ուր արու առիւծը, մատակ առիւծը,
Ու առիւծի կորիւնը կը պարակին,
Ու ը֊ն֊դ֊ո֊ւ֊ն֊ վախցնող մը չկար։
12—Առիւծը իր կորիւններուն բաւական եղածին չափ կը պատառէր
Ու իր մատակ առիւծներուն համար կը խեղդէր,
Ու իր մրրիկները որսով՝
Ու իր բնակարանները յափշտակութեամբ կը լեցնէր։
13—Ահա ես քեզի դէմ եմ, կ՚ըսէ զօրաց Տէրը,
Ու անոր կառքերը պիտի այրեմ ա֊ծ֊ա֊խ ե֊ւ֊ ք֊ա֊ր֊ն֊ի֊ւ֊,
Ու քու առյդ առիւծներդ սուրը պիտի ուտէ.
Ու քու որոգ երկրի վրայէն պիտի չընկճեմ,
Ու քու դեսպաններուդ ձայնը ա֊խ֊յ֊ր֊ն֊ ալ պիտի չլսուի։

Գլ. Գ

Վա՛յ արիւններու քաղաքին,
Բոլորովին սուտութեամբ ա֊ւ յափշտակութեամբ լեցուն է.
Հոն որսը պակաս չէ։
2—Ահա խարազանին ձայնը,
Ու անիւին չարժման ձայնը,
Ու սրընթաց ձիին ու ցնցուղ կառքին ը֊ն֊թ֊ա֊ց֊ը֊։
3—Ձիաւորը կը վերցնէ *փայլուն սուրը ու չաղչաղուն նիզակը՝
Ու չատ վիրաւորներ ու խիստ չատ մեռելներ կ՚ըլլան,
Ու դիերը անթիւ են, դիերուն վրայ կը գլորին,
4—Այն պոռնիկին պոռնկութիւններուն չատութեանը համար,
Որ խիստ չնորհալի ու կախարդութեանց տէր ըլլալով՝
Իր պոռնկութիւններովը ազգեր,
Ու իր կախարդութիւններովը ազգատոհմներ կը ծախէր։
5—Ահա ես քեզի դէմ եմ, կ՚ըսէ զօրաց Տէրը,

*Եբր. սուրին բոցը ու նիզակին փայլակը

Ու քու երեսդ դէմ քու ջանցդ պիտի բանամ,
Նե քու մերկութիւնդ ազգերուն,
Ու քու անարգանդդ թագաւորութիւններուն պիտի ցուցնեմ.
6—Նե քու վրադ պղծութիւններ պիտի նետեմ,
Ու քեզ խայտառակ պիտի ընեմ,
Ու քեզ օրինակ պիտի դնեմ։
7—Ու պիտի ըլլայ որ ամէն քեզ տեսնողը
Քեզմէ պիտի փախչի, ու պիտի ըսէ,
Նինուէ աւերակ եղաւ.
Անոր վրայ ո՞վ պիտի ողբայ.
Քեզի ուրկէ՞ մխիթարիչներ փնտռեմ.
8—Մի՞թէ դուն Նով-ամմոնէ աղէ՞կ ես,
Որ գետերուն մէջ կը բնակէր,
Ու ջուրերով չրջապատուած էր,
Որուն խրամ եղած էր ծովը,
Ո՞ ծովը անոր պարիսպն էր.
9—Անոր զօրութիւնը Եթովպիա ու Եգիպտոս էր,
Ու ծայր չունէր.
Փութացիք ու Լիբեացիք քեզի օգնական էին.
10—Անկիա ալ աքսոր ու գերութեան գնաց,
Անոր ազգերը անգամ ամէն ճամբու գլուխ գետինը զարնուեցան.
Նե անոր պատուականներուն վրայ վիճակ ձգեցին,
Ու անոր բոլոր մեծամեծները չղթաներով կապուեցան։
11—Դուն ալ պիտի գինովնաս ու անյայտ ըլլաս,
Դուն ալ թշնամիէն ամրանալու տեղ պիտի փնտռես։
12—Քու բոլոր բերդերդ կանխահաս պտուղներ ունեցող թզենիներու դէս պիտի ըլլան,
Որոնք երբ թօթվուին, ուտողին բերանը կ'իյնան։
13—Ահա քու ժողովուրդդ քու մէջդ կիներու դէս պիտի ըլլան,
Քու երկիրդ դռները անուշա՛ քու թշնամիներուդ պիտի բացուին,
Կրակը պիտի ուտէ քու նիգերդ։
14—Պաշարումի համար քեզի ջուրեր քաշէ,
Բերդերդ ամրացուր.
Ցեխի մէջ մտիր ու կաւը կոխէ,
Նե ագիւսին փուռը նորոգէ.
15—Հոն կրակը քեզ պիտի ուտէ,
Սուրը քեզ պիտի կարէ,
Ու չորեակի պէս քեզ պիտի հատցնէ.
Քեզ չորեակի պէս չատցուր,
Քեզ մորեխի պէս չատցուր։
16—Քու վաճառականներդ երկինքի աստղերէն աւելի չատցուցիր.
Չորեակը տարածուեցաւ, նոսքը Թռաւ։
17—Քու թագակիրներդ մորեխի պէս,
Ու զօրավարներդ անթիւ մորեխներու պէս են,
Որոնք ցուրտ օրը ցանգերու վրայ կը հանգչին.
Երբ արեւը ծագի՝ կը չուեն,
Ու անոնց տեղին ուր ըլլալը չգիացուիր։
18—Քու հովիւներդ կը քնանան, ով Ասորեստանի թագաւոր,
Քու ազնուականներդ կը պառկին.
Քու ժողովուրդդ լեռներուն վրայ ցրուեցան,
Ու ումկը չկայ որ ղեռ ժողվէ։
19—Քու բեկումդ ծար չկայ,
Քու վէրդդ անդարմանելի է.
Ամէն անոնք որ քու լուրդ կը լսեն՝ քեզի համար ծափ պիտի զարնեն,
Քանի ամէն ժամանակ քու չարութիւնդ որո՞ւ վրայ անցած չէ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Ամրակում մարգարէին տեսիլքով յայտնուած պատգամը։
2—Մինչեւ ե՞րբ, ով Տէր, աղաղակեմ ու չլսես,
Ես զրկանքի համար քեզի կանչեմ ու չազատես։
3—Ինչո՞ւ համար ինծի անօրէնութիւն կը ցուցնես,
Ես նեղութիւն կ'երեւցնես.
Քանզի իմ առջեւս յափշտակութիւն ու զրկանք կայ,
Ես դատ ու վէճ հանդ կայ։
4—Անոր համար օրէնքը կը խափանի,
Ու իրաւունքը ի գործ չդրուիր,
Վասն զի անօրէնը արդարին բոլորտիքը կ'առնէ.
Ահա պատճառաւ դատաստանը ծուռ կ'ելլէ։
5—Ակդերուն մէջ նայեցէք ու տեսէք,
Ես զարմանալովապշեցէք,
Վասն զի ձեր օրերուն մէջ այնպիսի գործ մը պիտի գործեմ,
Որ եթէ չհաւատաք, պիտի չհաւատաք։
6—Քանզի ահա ես պիտի արթնցնեմ Քազդէացիները,
Ահն դառն ու արագընթաց ազգը,
Որ իրենը չհղող բնակութիւններուն տիրելու համար՝
Երկրի լայնութիւնը կը պտըտի.
7—Անկիա սոսկալի և ահարկու է,
Անոր դատաստանը ու իշխանութիւնը իրմէ կ'ելլեն։
8—Անոր ձիերը ինձերէն աւելի արագաշարժ են,
Ու երեկոյեան գայլերէն աւելի կատաղած են,
Ես անոր ձիաւորները պիտի ցաթկեն,
Ու անոր ձիաւորները հեռուէն պիտի գան,
Ու կերակուրի վրայ արագացող արծիւի պէս պիտի Քռչին։
9—Ամէնը զրկանքի համար պիտի գան,

Դանդերուն երեսները դէպի Ե՛յառաջ պիտի ըլլան,
Ու աւազի պէս գերիներ պիտի ժողվէ։
10—Ես անիկա Թագաւորները ծաղր պիտի ընէ,
Ու իշխանները անոր խաղալիկ պիտի ըլլան.
Անիկա ամէն պարսպի վրայ պիտի խնդայ,
Վասն զի հող պիտի դիզէ ու զանիկա պիտի առնէ։
11—Այն ատեն անոր միտքը պիտի փոխուի ու պիտի հպարտանայ,
Ես այս իր զօրութիւնը իր աստուածոյն Ե՛հէյէ՛Ջ յանցաւոր պիտի ըլլայ։
12—Մի՞թէ դուն ի յաւիտենից չէ՞ս, ով իմ Տէր Աստուածս, իմ Սուրբս.
Պիտի չմեռնինք։
Ով Տէր, զանիկա դատաստանի համար որոշեցիր,
Ով Վէմ, զանիկա չանդիմանելու համար հաստատեցիր։
13—Դուն, որուն աչքերը չարութիւն տեսանելէն մաքուր են,
Ու անբարւոքեան նայելու կարող չես,
Նենգաւորներուն ինչո՞ւ կը նայիս,
Ամբարիշտին իրմէ արդար եղողը կլլած ատենը Ինչո՞ւ կը լռես.
14—Ու մարդը ծովու ձուկերուն պէս կ'ընես,
Սողուններուն պէս՝ որոնք իրենց վրայ տէրդ չունին։
15—Անոնց ամէնը կաբիթով կը հանէ.
Զանոնք իր ուռկանովը կը բռնէ,
Ես զանոնք իր ցանցովը կը ժողվէ,
Անոր համար կ'ուրախանայ ու կը ցնծայ.
16—Անոր համար իր ուռկանին զոհ կը մատուցանէ,
Ու իր ցանցին խունկ կը ծխէ,
Վասն զի անոնցմով իր բաժինը գէր
Ու իր կերակուրը պարարտ է։
17—Արդեօք այս պատճառաւ իր ուռկանը պիտի պարպէ՞,

*Կամ, արեւելք

Ու մէյ ազգերը կատելին պիտի չգադարի՞։

Գլ. Բ

Իմ պահպանութեանս տեղը պիտի կենամ,
Ու պարսպին վրայ պիտի կայնիմ,
Ու պիտի սպասեմ որ տեսնեմ թէ ինծի հետ ի՛նչ պիտի խօսի,
Ու թէ իմ նչ-ե՞ն յանդիմանութեանս վրայ ի՛նչ պատասխան պիտի տամ։
2—Ու Տէրը ինծի պատասխան տուաւ ու ըսաւ,
Տեսիլը գրէ ու տախտակներու վրայ յայտնի նշանակէ,
Որպէս զի զանիկա կարդացողը *համարձակ կարդայ։
3—Քանզի տեսիլքը տակաւին որոշուած ժամանակի համար է,
Բայց վախճանին կ'արագորայ, սուտ պիտի չելլէ։
Մէ՛ն ուշանայ՝ անոր սպասէ,
Քանզի անշուշտ պիտի գայ, ետ պիտի չմնայ։
4—Ահա հպարտ ը-ը-ն հոգին իր ներսիդին ուղիղ չէ,
Բայց արդարը իր հաւատարմութիւն պիտի ապրի։
5—Մանաւանդ գինին կը կատղեցնէ,
Հպարտ մարդը հանգարտ չկենար,
Քանզի իր հոգին գերեզմանի պէս կը լայնցնէ,
Ու մահուան պէս բլլալով՝ չկշտանար,
Հապա բոլոր ազգերը իրեն կը ժողվէ,
Ու բոլոր ժողովուրդները իր քով կը գումարէ։
6—Միթէ ասոնց ամէնը անոր վրայ առակ պիտի չհանե՞ն,
Ու անոր համար ծաղրական խօսքերով պիտի չըսե՞ն,
Վա՛յ անոր՝ որ իրենը չեզածը կը շատցնէ,
(Մինչև ե՞րբ ու-ե-ն,)
Ու իր վրայ †գրաւներ կրբեռնաւորէ։
7—Միթէ յանկարծ քեզ խածնողներ պիտի չելլե՞ն,
Ու քեզի նեղութիւն տուողներ պիտի չարթննա՞ն,
Ու դուն անոնց աւար պիտի չըլլա՞ս։
8—Որովհետև դուն շատ ազգեր կոտորեցիր,
Քեզ ալ ժողովուրդներուն բոլոր մնացորդները պիտի կողոպտեն
Մարդոց արիւններուն համար
Ու երկրին, քաղաքին և բոլոր անոր մէջ բնակողներուն զրկանքին համար։
9—Վա՛յ անոր՝ որ իր տանը համար չար ագահութեամբ ը-ե՞ն կը վաստկի,
Որպէս զի իր բոյնը բարձր տեղ դնէ,
Չարին ձեռքէն զինք ազատելու համար։
10—Շատ ժողովուրդներ կատկտվդ,
Քու տանդ վրայ անարգանք *բերիր,
Ու քու հոգւոյդ դէմ մեղք գործեցիր։
11—Քանզի քարը պատէն պիտի աղաղակէ,
Ու գերանը չէ-ւէն փայտերուն մէջէն պատասխան պիտի տայ անոր։
12—Վա՛յ անոր՝ որ արիւններով քաղաք կը շինէ,
Ու անիրաւութեամբ աւան կը հաստատէ։
13—Ահա ասիկա զօրաց Տէրոջմէն չէ՞,
Որ ժողովուրդները կրակի համար կ'աշխատին,
Ու ազգերը պարապ տեղ կը յոգնին։
14—Քանզի երկիրը Տէրոջը փառքին գիտութիւնովը պիտի լեցուի,
Ինչպես ջուրերը ծովը կը ծածկեն։
15—Վա՛յ †ե-էն՝ որ քու ընկերիդ է-էն-է կը խմցնես,
Ու քու †արբեցուցիչ բմպելիքդ՝ առատ կը բաշխես,
Որ --ը-է-ը-ն ալ գինովցնես,
Որպէս զի անոնց մերկութիւնը տեսնես։
16—Փառքին աւելի ամօթով կշտացար,
Դուն ալ խմէ ու մերկացիր։
Տէրոջը աջ ձեռքին բաժակը քեզի պիտի դառնայ,
Ու քու փառքիդ վրայ անարգանք պէ-ո-է է-ն։
17—Քանզի Լիբանանի զրկանքը քեզ պիտի ծածկէ,
Ու գազաններուն յափշտակութիւնը պիտի վախցնէ
Մարդոց արիւններուն համար,
Ու երկրին, քաղաքին և բոլոր անոր մէջ բնակողներուն զրկանքին համար։

*Եբր. վազէ
†Կամ, թանձր ցեխ

*Եբր. խորհեցար
†Եբր. առքութիւնդ

18—Ի՞նչ օգուտ ունի արուեստաւորին փորագրած կուռքը,
Ձուլածոյ կուռքը և սուտ ուսուցիչը.
Ու չինողը իր չինած բանին ապաւինի,
Ու համր կուռքեր շինէ։
19—Վա՛յ անոր՝ որ փայտին կ'ըսէ, Արթնցիր,
Ը- համր քարին՝ Նկեր.
Միթէ անիկա ը-ե՞ն հը պիտի սորվեցնէ՞.
Ահա անիկա ակիով ու արծաթով պատած է,
Բայց անոր մէջ ամենևին հոգի չկայ։
20—Սո՛կայն Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.
Անոր երեսին առջև լուռ կեցէր, ով բոլոր երկիր։

Գլ. Գ

*Շիկիովթի վրայ, Ամբակում մարգարէին աղօթքը,
2—Ով Տէր, քու լուրդ լսեցի --- վախցայ.
Քու գործդ սարիներու մէջ նորոգե, ով Տէր,
Տարիներուն մէջ գիացուր,
Բարկութեան մէջ ողորմութիւն յիշէ։
3—Աստուած Թեմանէ եկաւ,
Ու Սուրբը՝ Փառան լեռնէն. (Սէլա.)
Անոր փառքը երկինքը ծածկեց,
Ու երկիրը անոր գովութիւնովը լեցուեցաւ։
4—Ու ե-որ պայծառութիւնը լոյսի պէս էր.
Անոր ձեռքին ճառագայթներ կ'ելլէին,
Ու անոր զօրութեանը ծածկոյթը հոն էր.
5—Անոր առջեւէն ժանտախտը կերթար,
Ու անոր ոտքերուն եռեւէն †հրատապ նետ մեներ։
6—Անիկա կայնեցաւ ու երկիրը չափեց
Նայեցաւ և ազգերը գողացուց.
Ու յաւիտենական լեռները փշրուեցան,
Ը- վաղնջի բլուրները խոնարհեցան.
Անոր յաւիտենական ճամբաներ ունի։

*Կամ, Մղեդիներու. տես Սազ. է. վերնագիրը։
†Կամ, կայծակ. Սազ. ԺԸ. 8։

7—*Քուշանի վրանները նեղութեան տակ տեսայ,
Մադիամու երկրին վրանները դողացին։
8—Միթէ գետերուն բարկացա՞ Տէրը,
Քու սրամտութիւնդ գետերուն վրա՞յ էր,
Բարկութիւնդ ծովուն վրա՞յ էր,
Որ քու ձիերդ --- փրկութեան կառքերդ հեծար։
9—Քու ազեղդ բոլորովին մերկ եղաւ
Իբ-յէ-ի ցեղերուն ըբ-ծ երդումներուդ ա- է-ո- խօսքիդ դէ-ո. (Սէլա.)
Երկիրը գետերով պատռեցիր։
10—Լեռները քեզ տեսան --- դողացին,
Ջուրերուն յորդութիւնը անցաւ,
Անդունդը իր ձայնը տուաւ,
Ո- ձեռքերը վեր վերցուց։
11—Արեւը --- լուսինը իրենց կարգին մէջ կայնեցան,
Անոնք քու նետերուդ լուսովը
Ու քու չողչողուն նիզակիդ պայծառութիւնովը փախցին։
12—Երկրին վրայ սրամտութեամբ պտըտեցար,
Ու բարկութեամբ ազգերը կոխեցիր։
13—Քու ժողովրդիդ փրկութեանը համար,
Քու օծեալիդ հետ փրկութեան համար,
Ելար.
Անօրէնին տունէն գլուխ ծմկեցիր՝
Հիմը մինչև պարանոցը բանալով։ (Սէլա.)
14-Իրենց գաւազաններովը իրենց գիւղաւորներուն գլուխը խոցոտեցիր,
Զիս ցրուելու համար փոթորկի պէս եկան,
Անոնց ուրախութիւնը անանկը գաղտուկ ուտելու պէս էր,
15—Քու ձիերովդ ծովուն վրայ,
Շատ ջուրերուն խառնութեանը վրայ, քալեցիր։
16—Լսեցի ու սիրտս սարսափեցաւ,
Ձայնէն շրթունքներս դողացին.
Ոսկորներուս մէջ փտութիւն մտաւ,
Ու եզած տեղս սարսափեցայ,
Որպէս զի հանգստութիւն ունենամ նեղութեան օրը,
Երբ ժողովուրդին ելլէ-ն-ը որ իր գունդովը անոր վրայ պիտի յարձակի։
17—Թէև թզենին ընձիւղ չտայ,

*Կամ, Եթովպիայի

Ու որքերուն վրայ պատուհ չըլլայ,
Ու ձիթենիին բերքը սահ,
Ու արտերը կերակուր չտան,
Ու փարախին ոչխարը կորի,
Ու գոմերուն մէջ արջառ չըլլայ,
18—Սակայն ես Տէրոջմով պիտի ցնծամ,
Իմ փրկութեանս Աստուծովը պիտի ուրախանամ,
19—Տէր Եհովա իմ զօրութիւնս է,
Ու իմ ոտքերս եղնիկի ոտքերու պէս պիտի ընէ,
Ու զիս իմ բարձր տեղերուս վրայ պիտի պարտցնէ։
Դիմաւոր երաժշտին, իմ զարնելու նուագարաններուս վրայ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՍՈՓՈՆԵԱՅ

ԳԼՈՒԽ Ա

Տէրոջը խօսքը, որ եղեկիայի որդւոյն Ամարիայի որդւոյն Գադալիայի որդւոյն Քուսիի որդւոյն Սափնիայի եղաւ՝ Յուդայի Թագաւորին Ամոնի որդւոյն Յոսիայի օրերը։

2—Երկրի երեսէն ամէն բանը բոլորովին պիտի կորնչցնեմ, կ'ըսէ Տէրը,
3—Մարդը ու անասունը պիտի կորնչցնեմ,
Երկինքի թռչուններն ու ծովուն ձուկերը
Ու գայթակղութիւնները ամբարիշտներուն հետ պիտի կորնչցնեմ,
Ու երկրի երեսէն մարդը պիտի կորնչեմ, կ'ըսէ Տէրը։
4—Ու իմ ձեռքս Յուդայի վրայ
Ու Երուսաղէմի բոլոր բնակիչներուն վրայ պիտի երկնցնեմ.
Ու այս տեղէն բնաջինջ պիտի ընեմ Բահաղի մնացորդը,
Քուրմերուն անունը՝ քահանաներուն հետ,
5—Ու տանիքներու վրայ երկինքի զօրքերուն երկրպագութիւն ընողները,
Ու երկրպագութիւն ընելով Տէրոջմով երդում ընողները,
Ու Մեղքոմով երդում ընողները,
6—Ու Տէրոջմէ հետ դարձողները, ու Տէրը չփնտռողները
Ու զանիկա չհնդրողները։
7—Տէր Եհովայի առջեւ լուռ կեցէր,
Քանզի Տէրոջը օրը մօտ է,
Քանզի Տէրը զոհ պատրաստեց, իր հրաւիրեալներն սրբեց։
8—Ու պիտի ըլլայ որ Տէրոջը զոհին օրը
Իշխանները ու Թագաւորին տղաքները
Ու բոլոր օտար զգեստ հագնողները պիտի պատժեմ։
9—Ու այն օրը սեմին վրայէն բոլոր ցաքկողները,
Իրենց տէրոջը տունը զրկանքով ու նենգութեամբ լեցնողները, պիտի պատժեմ։
10—Ու պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ Տէրը,
Ձկանց դռնէն աղաղակի ձայն,
Ու մասնայատ հեծութիւն,
Ու բլուրներէն մեծ կոտորած պիտի ըլլայ։
11—Ողբացէք, ով Մաքթեսի բնակիչներ,
Քանզի բոլոր վաճառական ժողովուրդը կորսուեցաւ,
Բոլոր արծաթ բերողները կտուրցան։
12—Ու պիտի ըլլայ որ այն ժամանակ Երուսաղէմը ճրագներով պիտի փնտռեմ,
Ու էյնէէ ըսես իրենց մրուրին վրայ հանգիստ նստող մարդիկը պիտի պատժեմ,
Որոնք իրենց սրտին մէջ կ'ըսեն,

*Եբր. սրբեց

13—Ու անոնց ստացուածքը ասար
Ու անոնց տուները աւերակ պիտի ըլլան.
Ու տուներ պիտի չինեն, բայց անոնց մէջ պիտի չբնակին,
Ու այգիներ պիտի տնկեն, բայց անոնց գինին պիտի չխմեն։
14—Տէրոջը մեծ օրը մօտ է,
Մօտ է, ու խիստ կ'արագայ.
Տէրոջը օրուան ձայնը ։— ։—,
Զօրաւորը հոն դառնագէս պիտի ազաղակէ։
15—Այն օրը բարկութեան օր է.
Նեղութեան ու տառապանքի օր,
Կործանու մի ու աւերու մի օր,
Խաւարի ու մէգի օր,
Ամպի ու մառախուղի օր է.
16—Պարսպաւոր քաղաքներու դէմ
Ու բարձր աշտարակներու դէմ փողի ու ազաղակի օր է։
17—Ու մարդիկը նեղութեան մէջ պիտի ձգեմ,
Ու կույրերու պէս պիտի պտրտին,
Քանզի Տէրոջը դէմ մեղք գործեցին.
Ու անոնց արիւնը փոշիի պէս
Ու մսերնին աղբի պէս պիտի թափուին։
18—Տէրոջը բարկութեան օրը
Անոնց արծաթը ու ոսկին անգամ
Զանոնք ազատել կարող պիտի չըլլան.
Հապա բոլոր երկիրը անոր նախանձին կրակովը պիտի ոճատ,
Քանզի անկէ խիստ չուտով երկրի բոլոր բնակիչները պիտի հատցնէ։

ԳԼ. Բ

*Քննեցէք ձեր անձերը, քննեցէք,
Ով չամչող ազգ,
2—Դեռ նախասահմանութիւնը չծնած,
Օրը մղոի պէս չանցած,
Դեռ Տէրոջը սաստիկ բարկութիւնը ձեր վրայ չեկած,
Դեռ Տէրոջը բարկութեան օրը ձեր վրայ չեկած։
3—Տէրը փնտռեցէք, ով երկրի բոլոր խոնարհները,

*Կամ, ժողովեցէք, ժողովեցէք. Ծովել. բ. 16։

Որ իրաւունքը կը գործէ կը դնէք,
Արդարութիւն փնտռեցէք, խոնարհութիւն փնտռեցէք,
Թերեւս Տէրոջը բարկութեան օրը պահուիք։
4—Քանզի Գազա պիտի թողուի,
Ասկաղոն ամայի պիտի ըլլայ.
Ազոտացիները կէսօրուան ատեն պիտի վռնտուին,
Ու Ակկարոն արմատէն պիտի խլուի։
5—Վա՛յ ծովեզերքը բնակողներուն, Քերեթիներուն ազգին.
Տէրոջը խօսքը քեզի դէմ է, ով Քանանացւոց երկիրը Փղշտացի,
Քեզ ալ պիտի ոչնչեմ, այնպէս որ բնակիչ չմնայ։
6—Ու ծովեզերքը հովիներու՝ բնակարաններ ու ուսուցիչներ՝
Ու հօտերու փարախներ պիտի ըլլայ։
7—Ու ծովեզերքը Յուդայի տունը Մնացորդին պիտի ըլլայ,
Հոն պիտի արածին.
Իրիկունը Ասկաղոնի տուներուն մէջ պիտի պառկին,
Քանզի անոնց Տէր Աստուածը անոնց այցելութիւն պիտի ընէ,
Ու անոնց գերութիւնը պիտի դարձնէ։
8—Մովաբի նախատինքը
Ու Ամմոնի որդիներուն հայհոյութիւնները լսեցի,
Որոնք իմ ժողովուրդս նախատեցին,
Ու անոնց սահմանին դէմ հպարտացան։
9—Անոր համար Իսրայէլի Աստուածը, զօրաց Տէրը, այսպէս կ'ըսէ.
Կենդանի եմ ես, որ Մովաբը Սոդոմի պէս
Ու Ամմոնի որդիները Գոմորի պէս
Եղինճներու կալուածք և աղի հանք
Ու յաւիտեան ամայութիւն պիտի ըլլայ.
Իմ ժողովուրդիս մնացորդը զանոնք պիտի յափշտակէ,
Ու իմ ազգիս մնացորդները զանոնք պիտի ժառանգեն։
10—Ասիկա անոնց հպարտութեանը համար իրենց պիտի ըլլայ,
Քանզի անոնք զօրաց Տէրոջը ժողովուրդը նախատեցին,
Ու անոր դէմ հպարտացան։

*Կամ, գեռնոփոր բնակարաններ

11—Տէրը անոնց վրայ ահարկու պիտի
ըլլայ,
Քանզի անիկա երկրի բոլոր աստուած-
ները բնաջինջ պիտի ընէ,
Ու ազգաց բոլոր կղզիները,
Ամէն մէկը իր տեղէն, երկրպագութիւն
պիտի ընեն անոր։
12—Դուք ալ, ով նէթովպացիք
իմ սրովս պիտի սպաննուիք։
13—Ու անիկա իր ձեռքը հիւսիսին
վրայ պիտի երկնցնէ,
Ու Ասորեստանին պիտի կորսնցնէ.
Ու Նինուէն աւերակի
Ո՛ անապատի պէս չոր երկրի պիտի
դարձնէ,
14—Ու անոր մէջ հօտեր,
Ազգաց բոլոր գազաններըպիտի պառկին
Հաւալուրը ու ոզնին ալ
Անոր խոյակներուն մէջտեղերը գիւերը
պիտի անցնեն.
Պատուհաններէն ձայն պիտի հնչուի,
Սեմերուն մէջ աւերումի պիտի ըլլայ,
Քանզի եղևնափայտը պիտի փակուի։
15—Զքօսասէր քաղաքը ասիկա է, որ
ապահովութեամբ կը բնակէր.
Որ իր սրտին մէջ կ'ըսէր Թէ
Ես եմ ու ինծմէ ուրիշ չկայ.
Ի՛նչպէս աւերակ ու գազաններու խլեակ
եղաւ.
Անկէ ամէն անցնողը պիտի սուլէ ու
ձեռքը պիտի շարժէ։

Գլ. Գ

Վա՛յ ապստամբ ու պիղծ ու բռնակալ
քաղաքին,
2—Ձայնը մտիկ չըրաւ, խրատ չընդունեց,
Տէրոջը չապաւինեցաւ, իր Աստուծոյն
չմօտեցաւ։
3—Անոր իշխանները անոր մէջ մռնչող
առիւծներ են,
Անոր դատաւորները երեկոյեան գայլեր
են,
Որոնք մինչեւ առտու բան մը չեն թողուր։
4—Անոր մարգարէները անպատուած ու
նենգաւոր մարդիկ են,
Անոր քահանաները սրբութիւնը պղծեցին
Ու օրէնքը բռնադատեցին։
5—Արդար Տէրը անոր մէջ է,
Անիկա անօրէնութիւն չգործեր.
Առտուէ առտու իր իրաւունքը ի լոյս
կը հանէ ու չձլուիր,
Բայց անիրաւը ամչնալ չգիտեր
6—Ազգերը բնաջինջ ըրի,
Անոնց աշտարակները կործանեցան.
Անոնց փողոցները աւերեցի,
Այնպէս որ անանցիկ անցնող չըլլայ.
Անոնց քաղաքները ամայացան,
Անմարդ ու անբնակ եղան։
7—Ըսի որ Դուն անշուշտ ինծմէ պիտի
վախնաս
Ու խրատ պիտի ընդունիս.
Եւ անոր բնակարանը բնաջինջ չըլլայ,
Որչափ որ զանիկա պատժեմ.
Սակայն անոնք կանուխ ելան,
Ու իրենց բոլոր գործերը ապականեցին։
8—Ու ըսին ինծի սպասեցէք, կ'ըսէ
Տէրը,
Մինչեւ այն օրը որ օրաի համար ոտք կելլեմ,
Քանզի իմ վճիռս ազգերը ժողվել,
Թագաւորութիւնները գումարել է,
Որպէս զի անոնց վրայ իմ սրամտու-
թիւնս,
Իմ բոլոր սաստիկ բարկութիւնս, թա-
փեմ.
Քանզի բոլոր երկիրը իմ նախանձիս
կրակովը պիտի ապառի։
9—Վասն զի այն ժամանակ ժողովուրդ-
ներուն չըլխաւորիրը
Մաքուր շրթունքներու պիտի դարձնեմ,
Որպէս զի ամէնը Տէրոջը անուն կանչեն,
Ու մէկ՝ սրտով անոր ծառայութիւն ընեն։
10—Նէթովպիայի գետերուն անդի
կողմէն
Իմ ցրուածներուս աղ-
ջիկը,
Իմ ընծաս պիտի բերեն։
11—Այն օրը պիտի չամչնաս քու բոլոր
գործերէդ,
Որոնցմով ինծի դէմ յանցանք ըրիր.
Քանզի այն ատեն քու հպարտութիւ-
նովդ զուարճացողները քու մէջ-
էդ պիտի վերցնեմ,
Ու մէյմըն ալ իմ սուրբ լեռանս վրայ
գոռոզութիւն պիտի չընես։
12—Ու քու մէջդ խոնարհ ու ազքատ
ժողովուրդ՝ մնացորդ պիտի թո-
ղում,

*Եբր. ուսով

Ու Տէրոջը անուանը պիտի յուսան։
13—Իսրայէլի մնացորդը անօրէնութիւն
պիտի չընեն,
Ու սուտ պիտի չխօսին,
Ու անոնց բերնին մէջ նենգաւոր լեզու
պիտի չգտնուի.
Քանզի անոնք պիտի արածին ու պիտի
պառկին,
Ու վախցնող պիտի չըլլայ։
14—Ցնծա, ով Սիօնի աղջիկ,
Բարձրաձայն աղաղակէ, ով Իսրայէլ,
Բոլոր սրտով ուրախ և զուարթ եղիր,
Ով Երուսաղէմի աղջիկ։
15—Տէրը քու գատաստաններդ վեր-
ցուց,
Քու թշնամիդ վռնտեց.
Իսրայէլի Թագաւորը, Տէրը, քու
մէջդ է,
Մէյմըն ալ չարիք պիտի չտեսնես։
16—Այն օրը Երուսաղէմի պիտի ըսուի,
Մի վախնար,
Ո՛ Սիօնի՛ Չեռքերդ չթուլնան։
17—Քու Տէր Աստուածդ քու մէջդ զօ-
րաւոր է,
Անիկա փրկէ պիտի փրկէ.
Անիկա քեզի համար ուրախութեամբ
պիտի զուարճանայ,
Ու իր սիրովը էրէն թոյլութիւն պիտի
տայ,
Ու քու վրադ ցնծութեամբ պիտի ու-
րախանայ։
18-Հ-նդիսաւոր ժողովոյ համար տրտում-
ածները պիտի ժողվեմ,
Որոնք քեզմէ էին,
Որոնց վրայ նախատինքը բեռ էր։
19—Ահա ես այն ժամանակ քու բոլոր
նեղիչներդ պիտի սպառեմ,
Ու կաղը պիտի ազատեմ, ու վռընտ-
ուածը պիտի ժողվեմ.
Ու զանոնք գովելի ու անուանի պիտի
ընեմ
Այն բոլոր երկիրներուն մէջ՝ ուր նա-
խատինք կրեր էին։
20—Այն ատեն ձեզ էլ պիտի բերեմ,
Ու այն ատեն ձեզ պիտի ժողվեմ.
Վասն զի երկրի բոլոր ժողովուրդներուն
մէջ ձեզ անուանի ու գովելի
պիտի ընեմ,
Երբ ձեր գերութիւնը ձեր աչքերուն առ-
ջեւ դարձնեմ, կ'ըսէ Տէրը։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՆԳԵԱՑ

Գլուխ Ա

Դարեհ Թագաւորին երկրորդ տարին
վեցերորդ ամիսը, ամսուն առաջին օրը,
Տէրոջը խօսքը Անգէ մարգարէին ձեռ-
քով Յուդայի իշխանին Սաղաթիէլեան
Զօրաբաբէլի, ու մեծ քահանային Յով-
սեդեկեան Յեսուի եղաւ՝ ըսելով, 2—
Զօրաց Տէրը կը խօսի ու այսպէս կ'ըսէ.
Այս ժողովուրդը կ'ըսէ Թէ ժամանակը
չէ հասած, Տէրոջը տունը չհնելու ժա-
մանակը։ 3—Ու Անգէ մարգարէին ձեռ-
քով Տէրոջը խօսքը եղաւ՝ ըսելով,
4—Արդեօք ժամանակ է որ դուք
ձեզունազարդ տուներնուդ մէջ
բնակիք,
Ու այս տունը աւերակ մնայ։
5—Սակայն հիմա զօրաց Տէրը այսպէս
կ'ըսէ.
Ձեր ճամբաներուն վրայով մտածեցէք,
6—Շատ ցանեցիք, բայց քիչ բերիք.
Կերաք, բայց չկշտացաք.
Խմեցիք, բայց ծարաւնիդ չանցուցիք.
Հագուեցաք բայց չտաքցաք.
Ու վարձով բանողը ծակ քսակի հա-
մար կը վաստկի իր վարձքը։
7—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.

Զեր ծամբաններուն վրայով մնաք ծեկեք։
8—Լեռը ելէք, փայտ բերէք
Ու տաճարը շինեցէք, և անոր պիտի հաճիմ,
Ու պիտի փառաւորուիմ, կ'ըսէ Տէրը։
9—Շատին նայեցաք, և ահա քիչ եղաւ.
Ձեր տուները անդամ բերիք, բայց ա-
նոր վրայ փչեցի։
Ինչո՞ւ համար, կ'ըսէ զօրաց Տէրը.
Իմ տանս համար, որ աւերակ է,
Ու ձեզմէ ամէն մէկը իր տունը կը վազէ։
10—Անոր համար երկինք ձեր վրայէն
էր ցօղը եւ կը պահէ,
Ու երկիր ալ իր պտուղը չտաւ։
11—Ու ես երկրի վրայ, ու լեռներուն
վրայ,
Եւ ցորենին վրայ, ու գինիին վրայ, ու
իւղին վրայ,
Ու գետնի բերքերուն վրայ,
Եւ մարդոց վրայ, ու անասուններուն
վրայ,
Եւ ձեռքերու բոլոր վաստակին վրայ ե-
կաչաւութիւն կանչեցի։
12—Այն ատեն Սաղաթիէլեան Զօ-
րաբաբէլ, ու մեծ քահանան Յոսէ-
դեկեան Եհոսու, և ժողովուրդին բոլոր
մնացորդը մեկ ըրին իրենց Տէր Աստու-
ծոյն ձայնին ու Անգէ մարգարէին խօս-
քերուն, ինչպէս իրենց Տէր Աստուածը
զանոնք ղրկեր էր. ու ժողովուրդը Տէ-
րոջը երեսէն վախցաւ։ 13—Ու Տէրոջը
դեսպանը Անգէ Տէրոջը դեսպանու թիւ-
նովը ժողովուրդին խօսեցաւ ու ըսաւ,
Ես ձեզի հետ եմ, կ'ըսէ Տէրը։ 14—Ու
Տէրը Զուբաբէլի իշխանին Սաղաթիէլեան
Զօրաբաբէլի հոգին, ու մեծ քահանային
Յոսէդեկեան Եհոսուի հոգին, և ժող-
ովուրդին բոլոր մնացորդին հոգին ար-
թընցուց. ու գացին և իրենց Աստուծոյն,
զօրաց Տէրոջը, տանը մէջ աշխատեցան,
15—Դարեհ Թագաւորին երկրորդ տարին
վեցերորդ ամսուն քսանըչորսերորդ օրը։

Գլ. Բ

Եօթներորդ ամսուն քսանըմէկերորդ օրը Անգէ մարգարէին ձեռքով Տէրոջը խօսքը եղաւ՝ ըսելով, 2—Խիսա Զուբաբէլի իշխանին, Սաղաթիէլեան Զօրաբաբէլի, ու մեծ քահանային Յոսէդեկեան Եհոսուի, և ժողովուրդին մնացորդին խօսք ու ըսէ,
3—Ձեր մէջ մնացած ո՞վ կայ,
Որ այս տունը իր առաջուան փառաւո-
րութիւնովը տեսած ըլլայ.
Ու հիմա զանիկա ի՞նչպէս կը տեսնէք.
Մի՛թէ տակաւ անոր քով այնչ բանի մը պէս չէ՞ ձեր աչքերուն առջեւ,
4—Բայց արդ զօրացիր, ով Զօրաբաբէլ,
կ'ըսէ Տէրը.
Եւ ով Յոսէդեկեան Եհոսու, մեծ քա-
հանայ, զօրացիր.
Ու դուք, ով երկրին բոլոր ժողովուրդը,
Զօրացէք, կ'ըսէ Տէրը, ու աշխատեցէք.
Քանզի ես ձեզի հետ եմ, կ'ըսէ զօրաց
Տէրը.
5—Ինչպէս ձեր Եգիպտոսէ ելած ատենը
ձեզի հետ խօսք կապեցի,
Իմ հոգիս ձեր մէջ կը կենայ. մի վախնաք։
6—Քանզի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Քիչ ատենէն եւս՝ նորէն երկինքը ու
երկիրը,
Ու ծովը ու ցամաքը պիտի չարժեմ։
7—Նաև ամէն ազգերը պիտի չարժեմ,
Ու ամէն ազգերուն ցանկալի բաները
պիտի գան.
Եւ այս տունը փառքով պիտի լեցնեմ,
կ'ըսէ զօրաց Տէրը։
8—Արծաթը իմն է ու ոսկին իմն է, կ'ըսէ
զօրաց Տէրը։
9—Այս վերջին տանը փառքը առաջ-
ուանէն մեծ պիտի ըլլայ, կ'ըսէ
զօրաց Տէրը.
Ու այս տեղ խաղաղութիւն պիտի տամ,
կ'ըսէ զօրաց Տէրը։
10—Դարեհի երկրորդ տարին, իննե-
րորդ ամսուն քսանըչորսերորդ օրը Անգէ
մարգարէին ձեռքով Տէրոջը խօսքը ե-
ղաւ՝ ըսելով, 11—Զօրաց Տէրը այսպես
կ'ըսէ. Հիմա օրէնքին վրայով հարցմունք
ըրէ քահանաներուն ու ըսէ, 12—եթէ
մարդ մը իր հանդերձին փղանցքովը
սուրբ միս վերցնէ, ու փղանցքովը հաց
կամ ապուր կամ գինիի կամ իւղի
կամ ինչևիցէ կերակուրի դպչի, անիկա
սուրբ կ'ըլլա՞յ։ Եւ քահանաները պա-
տասխան տուին ու ըսին, Ոչ։ 13—Ու
Անգէ ըսաւ, եթէ մեռելէ պղծուած մէ
ասոնցմէ մէկուն դպչելու ըլլայ, կը
պղծուի՞։ Ու քահանաները պատասխան
տուին ու ըսին, Կը պղծուի։ 14—Ու
Անգէ պատասխան տուաւ ու ըսաւ,

Այսպէս է այս ժողովուրդը,
Եւ այսպէս է այս ազգը իմ առջեւս,
կ'ըսէ Տէրը,
Ու այսպէս է իրենց ձեռքերուն բոլոր
գործը.
Ու ինչ որ հոն ընծայ կը մատուցանեն՝
պիղծ է։
15—Ուրեմն հիմա այս օրէն առաջ ե-
զածը մտածեցէք,
Երբ դեռ Տէրոջը տաճարին մէջ քար
քարի վրայ դրուած չէր։
16—Այն ատեն երբ մէկը քսան չափ ցո-
րեկի դեզին քով կ'երթար,
Տասը չափ կը գտնուէր.
Ու երբ երեսուն գինիի աւազանին քով կ'եր-
թար հնձանէն հիսուն չափ հա-
նելու,
Քսան չափ կը գտնուէր։
17—Ձեզ ես ձեր ձեռքերուն բոլոր
գործը
Խոշտանգութեամբ և գալարով ու
կարկտատով զարկի,
Սակայն ինծի չդարձաք, կ'ըսէ Տէրը։
18—Հիմա այս օրէն առաջ եղածը մտա-
ծեցէք,
Տէրոջը տաճարին հիմնարկութեան օրէն,
Իններորդ ամսուն քսանըչորսերորդ օ-
րէն, առաջ եղածը մտածեցէք.
19—Հունտը տակաւին ամբարին մէջ է.
Եւ որթը ու թզենին և նռնենին ու ձի-
թենին
Դեռ պտուղ չտուին.
Այս օրէն ի վեր պիտի օրհնեմ։
20—Ու Տէրոջը խօսքը երկրորդ ան-
գամ
Անգէի եղաւ ամսուն քսանըչորսերորդ
օրը՝ ըսելով,
21—Յուդայի իշխանին Զօրաբաբէլի խօս-
ք ու ըսէ,
Ես երկինքը ու երկիրը պիտի չարժեմ,
22—Ու թագաւորութիւններու աթոռը
տակնուվրայ պիտի ընեմ,
Ու ազգաց թագաւորութիւններուն զօ-
րութիւնը պիտի կորսնցնեմ,
Եւ կառքը ու անոր հեծեալները տակ-
նուվրայ պիտի ընեմ.
Ու ձիերը ու անոնց հեծեալները պիտի
իյնան,
Ամէն մէկը իր եղբօրը սրովը։
23—Այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Քեզ պիտի առնեմ, ով Սաղաթիէլեան
Զօրաբաբէլ, իմ ծառաս, կ'ըսէ
Տէրը,
Ու քեզ կնիքի պէս պիտի դնեմ,
Քանզի քեզ ընտրեր եմ, կ'ըսէ զօրաց
Տէրը։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՁԱՓԱՐԵԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Դարեհի երկրորդ տարին ութերորդ ամիսը, Տէրոջը խօսքը Ադդովի որդւոյն Բարաքիայի որդւոյն Զաքարիա մարգարէին եղաւ՝ ըսելով,
2—Տէրը ձեր հայրերուն խիստ բար-
կացաւ։
3—Ու անոնց ըսէ, Զօրաց Տէրը այս-
պէս կ'ըսէ.
Ինծի դարձէք, կ'ըսէ զօրաց Տէրը,
Ու ես ձեզի պիտի դառնամ, կ'ըսէ զօ-
րաց Տէրը։
4—Ձեր հայրերուն պէս մի ըլլաք,
Որոնց առաջուան մարգարէները կը
կանչէին՝ ըսելով,
Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Ձեր չար ճամբաներէն ու չար գործերէն
դարձէք,
Բայց անոնք մեկ չլսին
Ու ինծի ականջ չտուին, կ'ըսէ Տէրը։
5—Ձեր հայրերը ո՞ւր են.

Ու մարգարէները յաւիտեան կ'ապրի՞ն։
6—Սակայն իմ խօսքերս ու հրամաններս
Զորոնք իմ ծառաներուս, մարգարէներուն, պատուիրեր եմ,
Չեր հայրերուն չհասա՞ն.
Իսկ անոնք դարձան ու ըսին,
Զորաց Տէրը ինչ որ մեզի ընելու որոշեր էր,
Մեր ճամբաներուն ու գործերուն համեմատ,
Զայնիկա մեր վրայ ի գործ դրաւ։

7—Դարեկի երկրորդ տարին, միւսա-
սանեկրորդ ամսուն, այսինքն Սեբաթ ամսուն, քսանչորսերորդ օրը Տէրոջը խօսքը Ագդալի որդւոյն Բարաքիայի որդւոյն Զաքարիա մարգարէին եղաւ՝
ըսելով, 8—Գիշերով տեսայ որ ահա
այրեխա ձիու վրայ հեծած մարդ մը ձո-
րին մէջ եղող մրտենիներուն մէջտեղը
կը կայներ, ու անոր ետեւը այրեխա,
պիսակ ու ճերմակ ձիեր կային։ 9—Ու
ըսի, Ադոնք ի՞նչ են, ով տէր իմ, ու
ինծի հետ խօսող հրեշտակը ինծի ըսաւ,
Ադոնց ինչ ըլլալը քեզի պիտի ցուցնեմ։
10—Ու մրտենիներուն մէջ կայնող մար-
դը պատասխան տուաւ ու ըսաւ, Ադոնք
անոնք են՝ զորոնք Տէրը ղրկեց երկիրը
պտրտելու համար։ 11—Ու մրտենիներ-
ուն մէջ կայնող Տէրոջը հրեշտակին
պատասխան տուին ու ըսին, Երկիրը
պտրտեցանք, և ահա բոլոր երկիրը
հանգստութեամբ կը նստի։ 12—Ու Տէ-
րոջը հրեշտակը պատասխան տուաւ ու
ըսաւ, Ով զօրաց Տէր, մինչև ե՞րբ չես
ողորմիր Երուսաղէմի ու Ցուդայի քա-
ղաքներուն, որոնց այս հօգեառատաս
տարին բարկացար։ 13—Ու Տէրը ինծի
հետ խօսող հրեշտակին բարի խօսքերով
— մխիթարական խօսքերով պատաս-
խան տուաւ։ 14—Ես ինծի հետ խօսող
հրեշտակը ինծի ըսաւ, կանչէ ու ըսէ,
Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Երուսաղէմի համար ու Սիոնի համար
Մեծ նախանձով կը նախանձիմ.
15—Ու հանգիստ եղող ազգերուն խիստ
չատ բարկացած եմ,
Քանզի ես փոչ բարկացայ,
Ու անոնք չարիքը աւելցուցին։
16—Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ.
Երուսաղէմի ողորմութեամբ դարձայ.
Իմ տունս անոր մէջ պիտի չինուի,
կ'ըսէ զօրաց Տէրը,
Ու նրուսաղէմի վրայ լար պիտի քաշուի։
17—Դարձեալ կանչէ ու ըսէ,
Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Իմ քաղաքներս նորէն բարիքներով
պիտի յորդին,
Ու Տէրը նորէն Սիոնը պիտի մխիթարէ,
Ու նորէն Երուսաղէմը պիտի ընտրէ։

18—Ու աչքերս վերցուցի ու նայե-
ցայ, և ահա չորս եղջիւր։ 19—Ու ինծի
հետ խօսող հրեշտակին ըսի, Ադոնք ի՞նչ
են. ու ինծի ըսաւ, Ադոնք են այն եղջի-
ւրները՝ որոնք Ցուդան, Իսրայէլը ու Երու-
սաղէմը ցրուեցին։ 20—Ու Տէրը ինծի
չորս արհեստաւոր ցուցուց։ 21—Ու
ըսի, Ադոնք ի՞նչ ընելու կու գան. և
անիկա խօսեցաւ ու ըսաւ, Ադոնք են
այն եղջիւրները որոնք Ցուդան ցրուե-
ցին, այնպէս որ մարդ մը չկրցաւ իր
գլուխը վերցնել. ուստի ասոնք եկան
որպէս զի զանոնք վախցնեն, ու Ցու-
դայի երկրին վրայ՝ զանիկա ցրուելու
համար եղջիւրը վերցնող ազգերուն եղ-
ջիւրները վար ձգեն։

Գլ. Բ

Ե աչքերս վերցուցի ու նայեցայ,
և ահա մարդ մը՝ որուն ձեռքին մէջ
չափելու չուան կար։ 2—Ու ըսի, Դուն
ո՞ւր կ'երթաս. ու ինծի ըսաւ, Երուսա-
ղէմը չափելու, որպէս զի լայնութիւնը
որչա՞փ ու երկայնութիւնը որչա՞փ ըլլալը
տեսնեմ։ 3—Ու ահա ինծի հետ խօսող
հրեշտակը ելաւ, ու անոր դիմաց ուրիշ
հրեշտակ մը ելաւ։ 4—Ու անոր ըսաւ,
Վազէ, այս երիտասարդին խօսէ ու ըսէ,
Երուսաղէմ առանց պարսպի պիտի
բնակուի
Մարդու և անասունի բազմութեանը
համար՝ որոնք անոր մէջ պիտի
ըլլան։
5—Ու ես անոր բոլորտիքը հրեղէն պա-
րիսպ պիտի ըլլամ. կ'ըսէ Տէրը,
Ու անոր մէջ փառքի համար պիտի
ըլլամ։
6—Ահէ, ահէ, հիւսիսի երկրէն փա-
խէք, կ'ըսէ Տէրը,
Քանզի ձեզ երկինքի չորս հովերուն պէս
ցրուեցի, կ'ըսէ Տէրը։

7—Ահէ, քեզ ազատէ, ով Սիոն,
Որ Բաբելոնի աղջկան հետ կը բնակիս։
8—Քանզի Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Փառքի համեմէն զիս ձեզ կողոպտող
ազգերուն ղրկեց,
Քանզի ձեզի դպչողը անոր աչքին բիբին
կը դպչի։
9—Վասն զի ահա ես իմ ձեռքս անոնց
վրայ պիտի շարժեմ,
Ու անոնք իրենց ծառաներուն աւար
պիտի ըլլան,
Ու պիտի գիտնաք որ զօրաց Տէրը զիս
ղրկեր է։
10—Ցնծա և ուրախացիր, ով Սիոնի
ազիկ,
Քանզի ահա ես կու գամ
Ու քու մէջդ պիտի բնակիմ, կ'ըսէ
Տէրը։
11—Ու այն օրը շատ ազգեր Տէրոջը
պիտի յարին,
Ու ինծի ժողովուրդ պիտի ըլլան.
Ես ես քու մէջդ պիտի բնակիմ,
Ու պիտի գիտնաս որ զօրաց Տէրը զիս
քեզի ղրկեր է։
12—Ու Տէրը իր բաժինը Ցուդան
Սուրբ երկրին մէջ ժառանգութիւն պի-
տի առնէ,
Ու նորէն Երուսաղէմը պիտի ընտրէ։
13—Տէրոջը առջև լուռ կեցիր, ով բո-
լոր մարմին,
Քանզի անիկա իր սուրբ բնակութենէն
արթնցաւ։

Գլ. Գ

Ե Տէրը ինծի ցուցուց մեծ քահա-
նան Յեսուն, որ Տէրոջը հրեշտակին առ-
ջև կայներ էր, ու Սատանայ անոր աջ
կողմը կայներ էր՝ անոր դէմ դնելու
համար։ 2—Ու Տէրը Սատանայի ըսաւ,
Տէրը քեզ յանդիմանէ, ով Սատանայ,
ու քեզ Երուսաղէմը ընտրող Տէրը յան-
դիմանէ. միթէ ասիկա կրակէ հանուած
խանձող չէ՞։
3—Ու Յեսու ազտոտ հանդերձներ
հագեր էր, ու հրեշտակին առջև կը
կայներէր։ 4—Ու իր առջև կայնողներուն
պատասխան տուաւ, ու խօսեցաւ ըսե-
լով, Ազտոտ հանդերձները անոր վրա-
յէն հանեցէք. և անոր ըսաւ, Նայէ,
քու անօրէնութիւնդ վրայէդ վերցուցի,
ու քեզի պատուական զգեստներ պիտի
հագցնեմ։ 5—Ու ես ըսի որ անոր գլու-
խը մաքուր խոյր դնեն. և անոր գլուխը
մաքուր խոյրը գրին, ու անոր հան-
գերձներ հագցուցին, ու Տէրոջը հրեշ-
տակը կայներ էր։
6—Ու Տէրոջը հրեշտակը Յեսուի
վկայութիւն բրաւ ու ըսաւ, 7—Զօրաց
Տէրը այսպէս կ'ըսէ. եթէ իմ ճամբանե-
րուս մէջ քալես ու իմ պահպանու-
թիւնս պահես, այն ատեն դուն ալ իմ
տունս պիտի դատես և իմ սրահներս
ալ պիտի պահես, ու քեզի այս ներկայ
գտնուողներուն *մէջէն առաջնորդներ՝
պիտի տամ։ 8—Լիմա մտիկ ըրէ, ով
Յեսու մեծ քահանայ, դուն ու քու
առջևդ նստող բարեկամներդ, քանզի
անոնք նշան ըլլալու մարդիկ են. վասն
զի ահա ես իմ ծառաս Ճառատիը պի-
տի բերեմ։ 9—Քանզի ահա Յեսուի
առջև դրած քարս, այն մէկ քարին
վրայ եօթը աչք պիտի ըլլայ. ահա ես
անոր փորագրութիւնը պիտի փորագրեմ,
կ'ըսէ զօրաց Տէրը, և այն երկրին անօրէ-
նութիւնը մէկ օրուան մէջ պիտի վերցը-
նեմ։ 10—Այն օրը, կ'ըսէ զօրաց Տէրը,
Ձեզմէ ամէն մէկը իր դրացին որթի
տակ ու թզենիի տակ պիտի կանչէ։

Գլ. Դ

Ու ինծի հետ խօսող հրեշտակը գար-
ձաւ, և զիս իր քունէն արթնցնող մար-
դու պէս արթնցուց։ 2—Ու ինծի ըսաւ,
Ի՞նչ կը տեսնես. ու ըսի, Կը տեսնեմ
ու ահա բոլորովին ոսկիէ աչսանակ մը
կայ, ու անոր վրայ բաժակ մը՝ և անոր
վրայ եօթը ծրագ՝ ու անոր վրայի եօթը
ծրագներուն համար եօթը խողովակ կայ.
3—Ու անոր քով երկու ձիթենի կայ,
մէկը բաժակին աջ կողմէն՝ ու մէկը
ձախ կողմէն։ 4—Ու պատասխան տուի,
ու ինծի հետ խօսող հրեշտակին խօ-
սեցայ ու ըսի, Ադոնք ի՞նչ են, ով
տէր իմ։ 5—Ու ինծի հետ խօսող հրեշ-
տակը պատասխան տուաւ ու ինծի ըսաւ,
Ադոնց ինչ ըլլալը չե՞ս գիտեր. ու ես
ըսի, Ո՛չ, ով տէր իմ։ 6—Ու պատաս-

*կամ, մէջէ ձեռնարկներ

*Խան տաւտ ու ինծի խօսեցաւ՝ ըսելով, Այս է Տէրոջը խօսքը որ Զօրաբաբէլի կ՚ըսուի.

Զօրաբաբէլ չէ, և ուժով չէ, Հապա իմ Հոգւովս, կ՚ըսէ զօրաց Տէրը։

7—Դուն, ով մեծ լեռ, ո՞վ ես. Զօրաբաբէլի առջև դաշտ պիտի ըլլաս. Ու գլուխ քարը ինք պիտի հանէ, Ու պիտի ազազակեն, շնորհ, շնորհ անոր։

8—Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով,

9—Այս տունը Զօրաբաբէլի ձեռքերը հիմնեցին, Ու անոր ձեռքերը պիտի կատարեն զանիկա, Ու պիտի գիտնաս որ զօրաց Տէրը զիս ձեզի ղրկած է։

10—Քանզի պզտիկ բաներուն օրը ո՞վ անարգեց. Վասն զի այն եօթը ուրախութեամբ պիտի տեսնեն գնաւակը Զօրաբաբէլի ձեռքին մէջ. Անոնք Տէրոջը աչքերն են, որոնք բոլոր երկրին մէջ կը պտրտին։

11—Ու ես պատասխան տուի ու անոր ըսի, Աչառնակին այ կողմը ու անոր ձախ կողմը եղող այս երկու ձիթենիները ի՞նչ են։ **12**—Ու երկրորդ անգամ պատասխան տուի ու անոր ըսի, Երկու ոսկի խողովակներուն միջոցով է՞ը իրենցմէ ոսկիի գոյն թափող երկու ձիթենիի ոստերը ի՞նչ են։ **13**—Ու ինծի խօսեցաւ ու ըսաւ, Անոնց ինչ ըլլալը չի՞ գիտես. ու ես ըսի, Ոչ, ով տէր իմ։ **14**—Ու ըսաւ, Անոնք երկու՝ օծեալներն են՝ որոնք բոլոր երկրի Տէրոջը առջև կը կայնին։

Գլ. Ե

Ե դարձայ ու աչքերս վերցուցի ու տեսայ, և ահա թռչող ոտմն մը։ **2**—Ու ինծի ըսաւ, Ի՞նչ կը տեսնես. ու ըսի, Թռչող ոտմն մը կը տեսնեմ. երկայնութիւնը քսան կանգուն է՝ ու լայնութիւնը տասը կանգուն է։ **3**—Ու ինծի ըսաւ, Ասիկա բոլոր երկրի երեսին վրայ ելլող անէծքն է. քանզի ամէն գողութիւն ընողը այս կողմին էջ---ն համեմատ պիտի կորսուի՝* ու ամէն երդում ընողը միւս կողմին էջ---ն համեմատ պիտի կորսուի։ **4**—Զանիկա ես կը հանեմ, կ՚ըսէ զօրաց Տէրը, ու գողին տունը, և իմ անունովս սուտ երդում ընողին տունը պիտի մտնէ, ու անոր տունը մէջ պիտի մնայ, և զանիկա իր փայտերովը ու քարերովը պիտի սպառէ։

5—Ու ինծի հետ խօսող հրեշտակը ելաւ ու ինծի ըսաւ, Հիմա աչքերդ վերցուր ու նայէ թէ այս ելլողը ի՞նչ է. **6**—Ու ես ըսի, Ի՞նչ է. ու ըսաւ, Այս ելլողը արդա է. ու ըսաւ, Բոլոր երկրի վրայ անոնց նմանութիւնը ասիկա է. **7**—Ու ահա կապարեայ տաղտիկ մը վերցուեցաւ, ու կին մը արդային մէջ կը նստէր։ **8**—Ու ըսաւ, Այս է Զարութիւնը. ու զանիկա արդային մէջ ձգեց, և այն կապարեայ կշռաքը այն էջէ---ն բերանը ձգեց։ **9**—Ես աչքերս վերցուցի ու տեսայ, և ահա երկու կին ելան, ու հովը անոնց թեւերուն մէջ էր, և անոնք արագիլի թեւերու նման թեւեր ունէին, ու այն արդային երկրի ու երկինքի մէջտեղ վերցուցին։ **10**—Ու ինծի հետ խօսող հրեշտակին ըսի, Ասոնք ո՞ր կը տանին արդան։ **11**—Ու անիկա ինծի ըսաւ, Կը տանին անոր տունը շինելն Սենաար երկրին մէջ. ու պիտի հաստատուի և հոն իր խարսխին վրայ պիտի դրուի։

Գլ. Զ

Ե դարձայ ու աչքերս վերցուցի ու տեսայ, և ահա երկու լեռներու միջէն չորս կառք կ՚ելլէր, ու լեռները պղնձէ լեռներ էին։ **2**—Առաջին կառքին աշխատ ձիեր էջ---ն էին, ու երկրորդ կառքին՝ սեւ ձիեր, **3**—Ու երրորդ կառքին՝ ճերմակ ձիեր, և չորրորդ կառքին՝ պիտակ -- գորշագոյն ձիեր։ **4**—Ես պատասխան տուի, ու ինծի հետ խօսող հրեշտակին ըսի, Ասոնք ի՞նչ են, ով տէր իմ։ **5**—Ու հրեշտակը պատասխան տուաւ ու ինծի ըսաւ, Ասոնք երկինքի չորս հովէ---ն հոպիներն են, որոնք բոլոր երկրի Տէրոջը առջև կայնելէն կ՚ելլեն։ **6**—Սեւ ձիերը՝ որ այն հ---ին էջէ---ն էն, հիւսիսի երկիրը կ՚ելլեն, ու ճերմակները անոնց ետեւէն կ՚ելլեն, ու

*Եբր. Լսել արդիներն

պիտակները հարաւի երկիրը կ՚ելլեն։ **7**—Ու գորշագոյնները եւս, և ուզեցին որ երթան -- երկրի վրայ պարտին. և անիկա ըսաւ, Գացէք, երկրի վրայ պարտեցէք. ու անոնք երկրի վրայ պարտեցան։ **8**—Ու անիկա ինծի ազազակեց ու ինծի խօսեցաւ՝ ըսելով, Նայէ, հիւսիսի երկիրը հանգչեցուցին իմ հոգիս հիւսիսային երկրին մէջ հանգչեցուցին։

9—Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, **10**—Գերութենէն ետ---ն Եղդայի, Տոբիայի ու Ցեդայիայի առ, ու նոյն օրը գնա Բաբելոնի եկող Սոփոնիայի որդւոյն Յովսիայի տունը մտիր։ **11**—Արծաթ ու ոսկի առ ու պսակներ շինէ, ու մեծ քահանային Յոսեդեկեան Յեսուի գլուխը դիր։ **12**—Ու անոր խօսէ ըսելով,

Զօրաց Տէրը կը խօսի ու այսպէս կ՚ըսէ.

Ահա այն մարդը, որուն անունը Շառափիղ է.

Անիկա իր տեղէն պիտի բուսնի, Ու Տէրոջը տաճարը պիտի շինէ։

13—Անիկա պիտի շինէ Տէրոջը տաճարը, Ու պատիւ պիտի առնէ, Ու իր աթոռին վրայ նստելով՝ իշխանութիւն պիտի վարէ, Ու քահանայ պիտի ըլլայ իր աթոռին վրայ. Ու երկուքին միջեւով խաղաղութեան խորհուրդ պիտի ըլլայ։

14—Ու պսակները Հելեմի, Տոբիայի ու Յեդայիայի և Սոփոնիայի որդւոյն Հէնի պիտի ըլլան՝ Տէրոջը տաճարին մէջ յիշատակ ըլլալու համար։ **15**—Ու հեռուն եղողները պիտի գան, ու Տէրոջը տաճարին մէջ պիտի շինեն, և պիտի գիտնաք որ զօրաց Տէրը զիս ձեզի ղրկեր է. ու ասիկա պիտի ըլլայ՝ եթէ ուշադրութեամբ ձեր Տէր Աստուծոյ ձայնին մտիկ ընէք։

Գլ. Է

Ու եղաւ որ Դարեհ Թագաւորին չորրորդ տարին, իններորդ ամսուն, այսինքն Քասլեւին, չորրորդ օրը, Տէրոջը խօսքը Զաքարիայի եղաւ, **2**—երբ Սարասար ու Իւեկեմմելէք և անոնց մարդիկը Աստուծոյ տունը ղրկուեցան, որպէս զի Տէրոջը առջև աղօթք ընեն, **3**—Ու զօրաց Տէրոջը տանը մէջ եղող քահանաներուն ու մարգարէներուն խօսին ու ըսեն, Արդեօք հինգերորդ ամսուն մէջ իմ անձս զատելով լա՞մ, ինչպէս այլապէս տարիներ ըրի. **4**—Այն ատեն զօրաց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, **5**—Այս երկրին բոլոր ժողովրդին ու քահանաներուն խօսէ ու ըսէ, Այս եօթանասուն տարին, երբ հինգերորդ ու եօթներորդ ամսին մէջ ծոմապահութիւն կ՚ընէիք ու սուգ կը բռնէիք, միթէ ինծի՞ համար ծոմապահութիւն կ՚ընէիք։ **6**—Ու երբ կ՚ուտէիք ու կը խմէիք, ձեզի համար չէի՞ք ուտեր ու ձեզի համար չէի՞ք խմեր։ **7**—Ասոնք չէի՞ն այն խօսքերը՝ զորոնք Տէրը առաջուան մարգարէներուն ձեռքով հրատարակեց, երբ Երուսաղէմ ու անոր չորեակ քաղաքները բնակուած ու հանգիստ էին, և հարաւային ու գաշտային կողմերը բնակուած էին։

8—Դարձեալ Տէրոջը խօսքը Զաքարիայի եղաւ՝ ըսելով, **9**—Զօրաց Տէրը այսպէս խօսեցաւ ու ըսաւ, Արդար դատաստան տեսէք, և ձեզմէ ամէն մէկը իր եղբօրը ողորմութիւն ու գթութիւն ընէ. **10**—Ու որբեւայրին ու որբը, օտարականը ու անանկը մի հարստահարէք, ու բնաւ մէկը իր եղբօրը համար իր սրտին մէջ չարութիւն չմտածէ. **11**—Բայց անոնք չուզեցին մտիկ ընել, հապա ետինէ ուսը կա փաչեցին, և ականջները ծանրացուցին որպէս զի չլսեն. **12**—Ու իրենց սիրտը ադամանդի պէս ըրին, որպէս զի չլսեն այն օրէնքը ու այն խօսքերը՝ զորոնք զօրաց Տէրը իր Հոգւովը առաջուան մարգարէներուն ձեռքով անդր ղրկեց. անոր համար զօրաց Տէրոջը կողմանէ մեծ բարկութիւն եղաւ։ **13**—Ու եղաւ որ ինչպէս անիկա կանչեց ու անոնք մտիկ չըրին, այնպէս անոնք կանչեցին ու ես մտիկ չըրի, կ՚ըսէ զօրաց Տէրը. **14**—Հապա զանոնք իրենց չգիացած բոլոր ազգերուն մէջ փոթորիկով ցրուեցի, և անոնց հաւէնն երկիրը անշնորհ ու գարձած ամայի ձգուց. այնպէս ցանկալի երկիրը ամայի ըրին։

ԳԼ. Ը

Պարձեալ զօրաց Տէրոջը խօսքը Ե֊ռէ եղաւ՝ ըսելով, 2—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Սիօնի համար խիստ մեծ նախանձով նախանձեցայ, ու անոր համար մեծ սրտմտութիւնով նախանձեցայ։ 3—Տէրը այսպէս կ'ըսէ. Սիօնի դարձած եմ, ու Երուսաղէմի մէջ պիտի բնակիմ, ու Երուսաղէմ ճշմարտութեան քաղաք, և զօրաց Տէրոջը լեռը Սուրբ լեռ պիտի կոչուի։

4—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Երուսաղէմի հրապարակներուն մէջ տակաւին ծեր մարդիկ ու պառաւ կիներ պիտի նստին, գաւազանը ձեռքը ցուցպիտի ըլլայ օրերու չափութենէն. 5—Եւ քաղաքին հրապարակները զբաղեալ ու աղիկներով պիտի լեցուին, որոնք անոր հրապարակներուն մէջ պիտի խաղան։

6—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ այն օրերը այս ժողովուրդին մնացորդին աչքերուն սակայն դժուար երեւնայ, միթէ իմ աչքերո՞ւս ալ դժուար պիտի երեւնայ, կ'ըսէ զօրաց Տէրը։

7—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա իմ ժողովուրդս արեւելեան երկրին ու արեւմտեան երկրին պիտի փրկեմ. 8—Եւ զանոնք պիտի բերեմ, ու Երուսաղէմի մէջ պիտի բնակին. և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան, ես ալ ճշմարտութեամբ ու արդարութեամբ անոնց Աստուած պիտի ըլլամ։

9—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ձեր ձեռքերը թող ուժնուին, ով դուք որ այս օրերս կը լսէք այս խօսքերը այն մարգարէներուն բերնէն, որոնք զօրաց Տէրոջը տանը հիմնարկութեան ու տաճարին նորոգութեան օրը խօսեցան։ 10—Քանզի այն օրերէն առաջ մարդու համար վարձք չկար, ու անասունի համար վարձք չկար. և նեղութեան պատճառաւ՝ ելլողին ու մտնողին խաղաղութիւն չկար, քանզի ես ամէն մարդը իր բնակիչին դէմ ոտք հաներ եմ։ 11—Բայց հիմա այս ժողովուրդին մնացորդին՝ առաջուան օրերուն պէս պիտի չըլլամ, կ'ըսէ զօրաց Տէրը։ 12—Քանզի հունտը խաղաղութիւն պիտի տայ, ու որկրիքը իր պտուղը պիտի տայ, ու երկինքը իր ցօղը պիտի տայ. և այս ամէն բաները այս ժողովուրդին մնացորդին ժառանգել պիտի տամ։ 13—Ու պիտի ըլլայ որ ինչպէս դուք ազգերու մէջ անէծք եղաք, ով Յուդայի տունը ու Իսրայէլի տունը, այնպէս ձեզ պիտի ազատեմ, ու օրհնութիւն պիտի ըլլաք. մի վախնաք, ձեր ձեռքերը թող ուժնուին։ 14—Քանզի զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ինչպէս ձեզի չարիք ընելու դիտաւորութիւն ըրի, երբ ձեր հայրերը զիս սրդոդացուցին, կ'ըսէ զօրաց Տէրը, ու չդղջացայ, 15—Այնպէս դարձայ ու այս օրերը նորէն Երուսաղէմի ու Յուդայի տունը բարիք ընելու դիտաւորութիւն ըրի. մի վախնաք։ 16—Ձեր ընելու բաները սոսկ են. ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին հետ, ձեր դատերուն մէջ արդարութեամբ և խաղաղութեամբ դատաստան տեսէք. 17—Ու ձեզմէ մէկը իր սրտին մէջ իր ընկերին համար չարութիւն չխոհանայ, և սուտ երդումը մի սիրեք. վասն զի ես այս բոլոր բաները կ'ատեմ, կ'ըսէ Տէրը։

18—Դարձեալ զօրաց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով, Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. 19—Զորրորդ ամսուն ծոմը, ու հինգերորդին ծոմը, ու եօթներորդին ծոմը, և տասներորդին ծոմը Յուդայի տանը ցնծութիւն և ուրախութիւն ու խնդալից տօներ պիտի ըլլան. ուստի ճշմարտութիւնը ու խաղաղութիւնը սիրեցէք։

20—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Նորէն ժողովուրդներ ու շատ քաղաքներու բնակիչներ պիտի գան. 21—Ու մէկուն բնակիչները միւսին պիտի երթան ու ըսեն, եկէք Տէրոջը առջև ազօթք ընելու և զօրաց Տէրը փնտռելու երթանք. ես ալ պիտի երթամ։ 22—Ու շատ ժողովուրդներ և զօրաւոր ազգեր Երուսաղէմի մէջ զօրաց Տէրը փնտռելու ու Տէրոջը առջև ազօթք ընելու պիտի գան։ 23—Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Այն օրերը ազգերուն ամէն լեզուներէն տասը մարդ հեթանոսներէն պիտի բռնեն՝ այո՛ն Հրեայ եղող մարդուն զգեստը պիտի բռնեն, ու ըսեն, Ձեզի

հետ երթանք, քանզի լսեցինք որ Աստուած ձեզի հետ է։

ԳԼ. Թ

Հադրաքի երկրին դէմ Տէրոջը խօսքին պատգամն է,
Ու Դամասկոսի վրայ պիտի հանգչի.
(Քանզի Տէրոջը աչքը մարդու
Եւ Իսրայէլի բոլոր ցեղերուն [ը Ե֊ռէ։)
2—Ու Եմաթ ալ անոր սահմանակիցն է,
Նաև Տիւրոս ու Սիդոն՝ թէև շատ իմաստուն են։
3—Եւ Տիւրոս իրեն ամրոց չինեց.
Ու արծաթը հողի պէս
Եւ զուտ ոսկին փողոցներու ցեխի պէս դիզեց։
4—Ահա Տէրը զանիկա պիտի փշէ,
Եւ ծովուն մէջ անոր ունեցած զօրութիւնը պիտի զարնէ,
Ու անիկա կրակով պիտի սպառի։
5—Ասկաղոն պիտի տեսնէ ու պիտի վախնայ,
Գազա ալ՝ ու մեծապէս պիտի տագնապի,
Ակկարոն ալ՝ քանզի իր յոյսը *պարապ պիտի ելլէ՝.
Եւ Գազայէ թագաւորը պիտի կորսուի,
Ու Ասկաղոն պիտի չբնակուի.
6—Ու Ազովոտի մէջ †օտարազգի պիտի բնակի,
Ու Փղշտացւոց հպարտութիւնը պիտի ընկճեմ.
7—Եւ անոնց արիւնը իրենց բերնէն,
Ու անոնց պղծութիւնները իրենց ակառաններուն մէջէն պիտի վերցնեմ.
Ու մնացորդը՝ անիկա ալ մեր Աստուծոյն պիտի ըլլայ,
Եւ Յուդայի մէջ հազարապետի պէս
Ու Ակկարոն Եբուսացիի պէս պիտի ըլլայ։
8—Եւ անցնող ու դարձող զօրքին պատճառաւ
Իմ տանս բոլորտիքը պիտի բնակիմ,
Ու մէկմէկ ալ անոնց մէջէն բռնաւոր պիտի չանցնի,
Քանզի հիմա իմ աչքերովս տեսայ։

*ՆԵՐ. պիտի ամչնայ
†ՆԵՐ. անհարազատ, խոշ. պառնկորդի

9—Մեծապէս ուրախացիր, ով Սիօնի ազիկ,
Ցնծութեամբ աղաղակէ, ով Երուսաղէմի ազիկ.
Ահա քու թագաւորդ քեզի կու գայ.
Անիկա արդար ու փրկիչ է,
Հեզ է, ու իշու վրայ հեծած,
Ու իշուս ձագի, ուռնակի, վրայ։
10—Ու Եփրեմէ կառքը,
Ու Երուսաղէմէ ձին պիտի ջնջեմ,
Ու պատերազմին աղեղը պիտի կտրի.
Ու անիկա ազգերուն խաղաղութիւն պիտի խօսի.
Ու անոր իշխանութիւնը ծովէ մինչև ծով,
Ու Գետէն մինչև երկրի ծայրերը պիտի ըլլայ։
11—Եւ քեզի ալ՝ ըէ՛ , քու ուխտիդ արիւնովը
Քու գերիներդ ջուր չունեցող գուբէն հանեցի։
12—Ամրացը դարձէք, ով յուսով գերիներ,
Ես այսօր ալ կը ծանուցանեմ
Որ քեզի կրկնապատիկ հատուցում պիտի ընեմ.
13—Վասն զի Յուդան ինծի համար ուղղի պէս պիտի լարեմ,
Ու Եփրեմը *նետի պէս պիտի գնեմ՝,
Եւ քու որդիներդ, ով Սիօն,
Յունաց որդիներուն վրայ պիտի յարուցանեմ.
Ու քեզ զօրաւորին սուրին պէս պիտի ընեմ։
14—Եւ Տէրը անոնց վրայ պիտի երեւնայ,
Ու անոր նետը փայլակի պէս պիտի ելլէ.
Եւ Տէր Ե֊ռովա փող պիտի հնչեցնէ,
Ու Հարաւային մրրիկներով պիտի գայ։
15—Զօրաց Տէրը զանոնք պիտի պաշտպանէ.
Եւ անոնք բնաջինջ պիտի ընեն,
Ու †պարսաքարերու վրայ՝ պիտի կոխեն,
Եւ պիտի խմեն ու գինովի պէս պիտի աղաղակեն.
Ու անոնք սուրսի պէս,
Սեղանին անկիւններուն պէս, պիտի լեցուին։

*ՆԵՐ. պիտի լեցնեմ
†ԿՈՒ, պաքսաքարերով

16—Ու այն օրը անոնց Տէր Աստուածը
Զանոնք իր ժողովրդին հօտին պէս
պիտի փրկէ,
Քանզի անոր երկրին վրայ թագի քա-
րերու պէս պիտի բարձրանան։
17—Քանզի անոր բարութիւնը ու գե-
ղեցկութիւնը ի՛նչ մեծ է.
Ցորենը երիտասարդները՝ ու քաղցուն
կոյսերը պիտի մեծցնէ։

Գլ. Ը

Վերջին անձրեւին ժամանակը
Տէրոջմէ անձրեւ խնդրեցէք.
Տէրը փայլակներ պիտի ընէ,
Ու անոնց առատ անձրեւ պիտի տայ,
Ո՛ր ամէն մէկուն ագարակին խոտը։
2—Քանզի թերափիները ունայնութիւն
խօսեցան,
Ու գուշակութիւն ընողները սուտութիւն
տեսան,
Ու սուտ երազներ զրուցեցին,
Պարապ մխիթարութիւն տուին,
Անոր համար հօտերու պէս չուեցին,
Հովիւ չըլլալուն համար տագնապեցան։
3—Հովիւներուն վրայ իմ բարկութիւնս
բռնկեցաւ,
Ու նոխազներուն պցելութիւն պիտի
ընեմ.
Քանզի զօրաց Տէրը իր հօտին,
Ցուդայի տանը, պցելութիւն բրաւ,
Ու զանոնք իր պատերազմի մէջ հեծած
գեղեցիկ ձիուն պէս պիտի ընէ։
4—*Անկիւնը անկէ, բեւեռը անկէ՝
Պատերազմի աղեղը անկէ,
Ամէն զօրապետ մէկտեղ անկէ պիտի
ելլէ.
5—Ու †իրենք զօրաւորներու պէս պիտի
ըլլան,
Որոնք պատերազմի մէջ ընդհէն փողոց-
ներուն ցեխին մէջ կը կռնեն.
Ու անոնք պատերազմ պիտի ընեն.
Քանզի Տէրը անոնց հետ է,
Ու ձիերու վրայ հեծնողները պիտի
ամչնան։
6—Ու Ցուդայի տունը պիտի զօրացը-
նեմ.
Ու Յովսէփի տունը պիտի փրկեմ,
Ու զանոնք նորէն պիտի բնակեցնեմ,
Քանզի անոնց ողորմեցայ.
Ու անոնք ալ պիտի ըլլան,
Որպես թէ զանոնք երբեք ձգած չէի.
Քանզի անոնց Տէր Աստուածը ես եմ,
Ու անոնց պիտի լսեմ։
7—Ու Եփրեմ զօրաւորի պէս պիտի
ըլլայ,
Ու անոնց սիրտը ուրախ պիտի ըլլայ իբր
թէ գինիով.
Անոնց ազգականներն ալ պիտի տեսնեն ու
պիտի ուրախանան,
Անոնց սիրտը Տէրոջմով պիտի ցնծայ։
8—Անոնց պիտի սուլեմ ու զանոնք
պիտի ժողվեմ,
Վասն զի զանոնք փրկեցի.
Ու անոնք պիտի չատանան՝ ինչպէս որ
չատ էին։
9—Թէև զանոնք ժողովուրդներու մէջ
ցանեմ,
Սակայն հեռաւոր տեղեր պիտի յիշեն,
Ու իրենց որդիներուն հետ պիտի ապ-
րին ու նորէ պիտի դառնան։
10—Ու զանոնք Եգիպտոսի երկրէն պի-
տի դարձնեմ,
Ու զանոնք Ասորեստանէ պիտի ժողվեմ,
Ու զանոնք Գաղաադու երկիրը
Ու Լիբանան պիտի բերեմ,
Ու անոնց համար ե՛ւ†† տեղ պիտի
չգտնուի։
11—Ու ծովին *նեղութեամբ պիտի
անցնի,
Ու ծովուն ալիքները պիտի զարնէ.
Ու գետին բոլոր խորութիւնները պիտի
ցամքին,
Ու Ասորեստանի հպարտութիւնը պիտի
իջնէ,
Ու Եգիպտոսի գաւազանը պիտի վերցուի։
12—Ու զանոնք Տէրոջմով պիտի զօ-
րացնեմ,
Ու անոր անունովը պիտի պարտին,
կ'ըսէ Տէրը։

Գլ. ԺԱ

Դուներդ բաց, ով Լիբանան,
Ու կրակը քու եղեւիններդ ուտէ։

*Կամ, իշխանը անկէ, գլխաւորը անկէ

*Կամ, նեղութիւն

2—Մայր ծառը թող ողբայ,
Քանզի եղեւինը ինկաւ,
Վասն զի ազնուականները կողոպտուե-
ցան.
Բասանու կաղնիները թող ողբան,
Քանզի անմատչելի անտառը *կոտրուե-
ցաւ։
3—Հովիւներուն ողբալու ձայնը իւ
լսուի,
Քանզի անոնց փառքը յափշտակուեցաւ.
Առյագ առիւծներու մռնչելուն ձայնը
իւ լսուի,
Քանզի Յորդանանու չքեղութիւնը յա-
փշտակուեցաւ։
4—Իմ Տէր Աստուածս այսպէս կ'ըսէ.
Մորթելու ոչխարները արածէ,
5—Զանոնք՝ որ ծախու առնողները կը
մորթեն
Ու յանցաւոր չեն սեպուիր.
Ու զանոնք ծախողները կ'ըսեն,
Տէրը օրհնեալ ըլլայ որ հարստացայ.
Ու անոնց հովիւները անոնց վրայ գութ
չունին։
6—Քանզի ես ալ երկրի բնակիչնե-
րուն պիտի չգթամ, կ'ըսէ Տէրը,
Մանաւանդ՝ ահա ես ամէն մարդը իր
ընկերին ձեռքը
Ու իր թագաւորին ձեռքը պիտի մատ-
նեմ.
Ու երկիրը պիտի զարնեն,
Ու անոնց ձեռքէն պիտի չփրկեմ։
7—Ու մորթելու ոչխարները,
Այո, հօտին խեղճերը, արածեցի։
Ու ինծի երկու գաւազան առի,
Մէկուն անունը Գեղեցկութիւն,
Ու միւսին անունը Կապեր դրի,
Ու ոչխարները արածեցի։
8—Ու մէկ ամսուան մէջ երեք հովիւ
կաորեցի,
Քանզի հոգիս անոնց նեղացաւ,
Ու անոնց հոգին ալ ինծի զզուեցաւ։
9—Ու ըսի, Ձեզ պիտի չհովուեմ.
Մեռնողը թող մեռնի,
Ու կտրուողը թող կտրուի,
Ու մնացածներուն թող իրարու միս ու-
տեն։
10—Ու Գեղեցկութիւն †գաւա-
զանս առի և զանիկա կոտրեցի,

Նշէր՝ իմաս

Որպէս զի բոլոր ժողովուրդներուն հետ
բրած ուխտս աւրեմ։
11—Ու նոյն օրը աւրեցաւ։
Ու ինծի սպասող հօտին խեղճերը
Հասատատ գիտցան որ ասիկա Տէրոջը
խօսքն է։
12—Ու անոնց ըսի,
Եթէ ձեր աչքերուն հաճոյ կ'երեւնայ,
Իմ վարձքս տուէք,
Ապա թէ ոչ՝ զանց ըրէք.
Ու իմ վարձքս համար երեսուն արծա-
թի կշռեցին։
13—Ու Տէրը ինծի ըսաւ,
Զանիկա *բրուտին նետէ.
Ահիկա վայելուչ գին մըն է,
Զոր անոնք ինծի համար կարծեցին.
Ու երեսուն արծաթը առի,
Ու զանիկա Տէրոջը տունը *բրուտին
նետեցի։
14—Ետքը Կապեր կոչուած միւս գա-
ւազանս կոտրեցի,
Որպէս զի Ցուդայի ու Իսրայէլի մէջ
եղող եղբայրութիւնը աւրեմ։
15—Ու Տէրը ինծի ըսաւ,
Քեզի նորէն յիմար հովիւի գործիքներ
առ.
16—Քանզի ահա ես երկրի վրայ հովիւ
մը պիտի հանեմ.
Անիկա կորսուելու վրայ եղողներուն այ-
ցելութիւն պիտի չընէ,
Ցրուածը պիտի չփնտռէ,
Ու կոտրածը պիտի չբժշկէ,
Ո՛ †ողջը պիտի չսնուցանէ,
Հապա գերիրուն միսը պիտի ուտէ,
Ու անոնց կճղակները պիտի խորտակէ։
17—Վա՛յ ունայնութեան հովիւին, որ
ոչխարները կը թողու.
Անոր բազուկին վրայ ու աջ աչքին վրայ
սուր պիտի ըլլայ,
Անոր բազուկը բոլորովին պիտի չորնայ,
Ու աջ աչքը բոլորովին պիտի խաւարի։

Գլ. ԺԲ

Իսրայէլի վրայով Տէրոջը խօսքին պատգամը։
Երկինքը տարածող ու երկիրը հիմ-
նարկող

Կամ, գանձատունը
†Կամ, ես ձեռացածը

Ու մարդան հոգին անոր մէջ առնդոզ
Տէրը կ'ըսէ,
2—Ահա ես երուսաղէմը բոլոր չքնաղ
ազգերուն
Թմբլաթեան բաժակ պիտի ընեմ.
Նաև Յուդայի վրայ ալ պիտի ըլլայ
Երուսաղէմի պաշարման ատենը։
3—Ու պիտի ըլլայ որ այն օրը երու-
սաղէմը
Բոլոր ժողովրդներուն ծանր քար պի-
տի ընեմ.
Ամէն անոնք որ անով կը բեռնաւոր-
ուին՝ բոլորովին պիտի կտրին,
Թէև երկրի բոլոր ազգերը անոր վրայ
ժողովին։
4—Այն օրը, կ'ըսէ Տէրը,
Ամէն ձի սանկրամով՝ պիտի զարնեմ,
Ու անոր հեծեալը ապշութեամբ.
Ու Յուդայի տանը վրայ աչքերս պիտի
բանամ,
Ու ժողովրդներուն բոլոր ձիերը կու-
րութեամբ պիտի զարնեմ։
5—Ու Յուդայի հազարապետները իրենց
սրտին մէջ պիտի ըսեն,
Երուսաղէմի բնակիչները *մեր զօրու-
թիւնն՝ են
Զօրաց Տէրոջմով, իրենց Աստուծոյն։
6—Այն օրը Յուդայի հազարապետները
կրակի վառարանի պես պիտի ընեմ
փայտերու մէջ,
Ու կրակի ջահի պէս՝ դարաններու մէջ.
Ու անոնք ալ կուղին ու ձախ կուղին
Բոլոր չքնաղ ժողովրդները պիտի ու-
տեն.
Ու դարձեալ երուսաղէմ իր տեղը,
Նորէն երուսաղէմի մէջ, պիտի բնակի։
7—Ու Տէրը նաև Յուդայի վրանները
պիտի փրկի,
Որպէս զի Դաւիթի տանը պարծանքը
Ու երուսաղէմի բնակիչներուն պար-
ծանքը
Յուդայի վրայ չհպարտանայ։
8—Այն օրը Տէրը երուսաղէմի բնակիչ-
ներուն պաշտպանութիւն պիտի
ընէ.
Ու անոնց մէջ տկար եղողը այն օրը Դա-
ւիթի պէս պիտի ըլլայ,
Ու Դաւիթի տունը Աստուծոյ պէս,

*Եբր. իմ զօրութիւնս

Տէրոջը հրեշտակին պէս, պիտի ըլլայ ա-
նոնց առջև։
9—Ու պիտի ըլլայ որ այն օրը
Երուսաղէմի վրայ եկող բոլոր ազգերը
Բնաջինջ ընելու համար պիտի ըլլամ։
10—Ու Դաւիթի տանը վրայ
Ու երուսաղէմի բնակիչներուն վրայ
Շնորհքի և ազօթքի հոգին պիտի թա-
փեմ,
Ու անոնք ինծի, իրենց խոցածին, պի-
տի նային.
Ու անոր վրայ մէկ հատիկ զաւակի վրայ
ողբալու պէս պիտի ողբան,
Ու անոր վրայ անդրանիկ զաւակի վրայ
ցաւելու պէս պիտի ցաւին։
11—Այն օրը Երուսաղէմի մէջ մեծ ողբ
պիտի ըլլայ՝
Մակեդովի դաշտին մէջ Ադադ-ռեմո-
նի ողբին պէս։
12—Ու երկիրը պիտի ողբայ,
Ամէն մէկ ազգատոհմը առանձին.
Դաւիթի տանը ազգատոհմը առանձին,
Ու անոնց կիները առանձին,
Նաթանի տանը ազգատոհմը առանձին,
Ու անոնց կիները առանձին,
13—Ղևիի տանը ազգատոհմը առանձին,
Ու անոնց կիները առանձին,
Սեմեիի ազգատոհմը առանձին,
Ու անոնց կիները առանձին,
14—Բոլոր մնացած ազգատոհմներուն
ամէն մէկը առանձին,
Ու անոնց կիները առանձին։

ԳԼ. ԺԳ

Այն օրը Դաւիթի տանը ու երուսա-
ղէմի բնակիչներուն
Բացուած աղբիւր մը պիտի ըլլայ
Մեղքի համար ու պղծութեան համար։
2—Ու պիտի ըլլայ որ այն օրը, կ'ըսէ
զօրաց Տէրը,
Կուռքերուն անունները երկրէն պիտի
ջնջեմ,
Ու մէյմըն ալ պիտի չյիշուին.
Ու մարգարէները ու պիտի ոգին
ալ երկրէն պիտի վիրցնեմ։
3—Ու պիտի ըլլայ որ երբ մարդ մը ան-
կէ հետև մարգարէութիւն ընէ,
Ծնանիլիք Հայրը ու մայրը անոր
պիտի բսեն,

Զապրիս, քանզի Տէրոջը անունովը սուտ
խօսեցար.
Ու անոր մարգարէութիւն ըրած ատենը՝
Ծնանիլիք Հայրը ու մայրը զա-
նիկա պիտի խոցեն։
4—Ու պիտի ըլլայ որ այն օրը մարգա-
րէները
Մարգարէութիւն ըրած ատեննին պիտի
ամչնան, ամէն մէկը իր տեսիլ-
քէն,
Ու խաբելու համար մազոտ վերարկու
պիտի չհագնին։
5—Ու ան-ըսէ-ա-ին ըսէ պիտի ըսէ,
Ես մարգարէ չեմ, ես երկրագործ մարդ
եմ.
Քանզի իմ մանկութենէս ի վեր գիս
*տացան իբրև հովիւ։
6—Ու անոր պիտի ըսուի,
Ձեռքերուդ մէջը այս վէրքերը ինչ են.
Ու անիկա պիտի ըսէ,
Ասոնք իմ բարեկամներուս տանը մէջ
ընդունած վէրքերս են։
7—Արթնցիր, ով սուր, իմ հովիւիս
վրայ,
Ու իմ ընկերս եղող մարդուն վրայ, կ'ըսէ զօրաց Տէրը.
Հովիւը զարկ, ու ոչխարները ցրուին,
Ու իմ ձեռքս պզտիկներուն վրայ դար-
ձընեմ։
8—Ու պիտի ըլլայ բոլոր երկրին մէջ,
կ'ըսէ Տէրը,
Որ երկու մասը պիտի կտրուի ու պիտի
մեռնի,
Ու երրորդ մասը պիտի մնայ անոր մէջ։
9—Ու այն երրորդ մասը կրակէ պիտի
անցնեմ,
Ու զանոնք պիտի զուլէ՝ ինչպես արծա-
թը կը զուլուի,
Ու զանոնք պիտի փորձեմ՝ ինչպես ո-
սկին կը փորձուի.
Անոնք իմ անունս պիտի կանչեն,
Ու ես անոնց պատասխան պիտի տամ.
Ես պիտի ըսեմ թէ Անիկա իմ ժողո-
վուրդս է.
Անոնք ալ, Տէրը իմ Աստուածս է պի-
տի ըսեն։

*Կամ, ատացուածքներու վրայ դրին

ԳԼ. ԺԴ

Ահա Տէրոջը օրը կու գայ,
Ու քու աւարդ քու մէջդ պիտի բաժ-
նուի.
2—Քանզի բոլոր ազգերը պատերազմի
համար
Երուսաղէմի վրայ պիտի ժողվեմ,
Ու քաղաքը պիտի առնուի,
Ու տուները պիտի կողոպտուին,
Ու կիները պիտի պղծուին,
Ու քաղաքին կէսը գերութեան պիտի
ելլէ,
Բայց ժողովրդին մնացորդը քաղաքէն
պիտի չկտրուի։
3—Ու Տէրը պիտի ելլէ,
Ու այն ազգերուն հետ պիտի պատե-
րազմի,
Ինչպէս պատերազմին օրը պատերազմե-
ցաւ։
4—Ու այն օրը անոր ոտքերը
Զիթենեաց լեռանը վրայ պիտի կայնին,
Որ Երուսաղէմի առջև է դէպ ի արե-
ւելք.
Ու Զիթենեաց լեռը դէպ ի արեւելք ու
դէպ ի արեւմտեան կէսէն պիտի
պատռի,
Ու խիստ մեծ ձոր պիտի ըլլայ.
Ու լեռանը կէսը դէպ ի հիւսիս,
Ու կէսը դէպ ի հարաւ պիտի փոչուի։
5—Ու դուք լեռներուն ձորը պիտի
փախչիք,
Քանզի լեռներուն ձորը մինչև Ասել
պիտի հասնի.
Ու պիտի փախչիք՝ ինչպէս գետնաշար-
ժէն փախաք
Յուդայի թագաւորին Ոզիայի օրերը.
Ու իմ Տէր Աստուածս պիտի գայ,
Բոլոր սուրբերը քեզի հետ պիտի ըլլան։
6—Ու պիտի ըլլայ որ այն օրը
*Լոյսը պայծառ կամ ազօտ պիտի չըլլայ՝
7—Ու անիկա Տէրոջը յայտնի օր մը,
Ոչ ցորեկ ու ոչ գիշեր պիտի ըլլայ,
Սակայն երեկոյեան ժամանակը լոյս պի-
տի ըլլայ.
8—Ու այն օրը Երուսաղէմէ կենդանի
ջուրեր պիտի ելլեն,

*Կամ, Լոյս պիտի չըլլայ, հապա ցուրտ
և սառ

կէսը դէպ ի արեւելեան ծովը
Ու կէսը դէպ ի արեւմտեան ծովը.
Ամառ ու ձմեռ պիտի ըլլայ։
9—Ու Տէրը բոլոր երկրի վրայ Թագաւոր պիտի ըլլայ։
Այն օրը Տէրը մէկ, ու անոր անունը մէկ պիտի ըլլայ։
10—Բոլոր երկիրը դաշտ պիտի դառնայ Գաբայէ մինչեւ Ռեմոն, որ Երուսաղէմի հարաւային կողմը,
Ու պիտի բարձրանայ ու իր տեղը պիտի բնակուի
Բենիամինի դռնէն մինչեւ Առաջին դրանը տեղը, մինչեւ Անկեանց դուռը,
Ու Անանէելի աշտարակէն մինչեւ Թագաւորին հնձաններըը։
11—Ու հոն պիտի բնակին, ու հոն մէկ մը ալ նզովք պիտի չըլլայ,
Ու Երուսաղէմ ապահովութեամբ պիտի բնակուի։
12—Ու այս պիտի ըլլայ այն հարուածը
Որով Տէրը պիտի զարնէ ամէն ժողովուրդները,
Որոնք Երուսաղէմի դէմ պատերազմեցան.
Ոտքի վրայ կայնած տեղնին անոնց մարմինը պիտի հալի,
Ու անոնց աչքերը իրենց խորշերուն մէջ պիտի հալին,
Ու անոնց լեզուն անոնց բերնին մէջ պիտի հալի։
13—Ու պիտի ըլլայ օր այն օրը անոնց մէջ
Մեծ խռովութիւն պիտի ըլլայ Տէրոջմէ,
Ու սակն մէկը իր ընկերին ձեռքը պիտի բռնէ,
Ու անոր ձեռքը իր ընկերին ձեռքին դէմ պիտի վերցուի։
14—Ու Յուդա ալ Երուսաղէմի *մէջ պիտի պատերազմի.
Ու բոլոր չրջակայ ազգերուն առատութիւնը,
Ոսկի ու արծաթ ու հանդերձներ, մեծ առատութեամբ հոն պիտի ժողովուին։
15—Ու ձիուն, ջորիին, ուղտին ու իշուն
Ու այն բանակներուն մէջի բոլոր անասուններուն հարուածը
Նոյն հարուածին պէս պիտի ըլլայ։
16—Ու Երուսաղէմի վրայ եկած բոլոր ազգերէն ամէն մնացորդը
Այն տեղն տարիէ տարի Թագաւորին, զօրաց Տէրոջը, երկրպագութիւն ընելու
Ու տաղաւարահարաց տօնը կատարելու պիտի երթան։
17—Ու երկրի ազգատոհմներէն ով որ Երուսաղէմ չերթայ
Թագաւորին, զօրաց Տէրոջը, երկրպագութիւն ընելու,
Անոր վրայ անձրեւ պիտի չըլլայ։
18—Ու երթ Եգիպտացւոց ազգատոհմը չերթայ ու չգայ,
(Որոնք անձրեւ չունին,)
Անոնց վրայ պիտի ըլլայ այն հարուածը,
Որով Տէրը պիտի զարնէ այն ազգերը
Որոնք տաղաւարահարաց տօնը կատարելու չեն երթար։
19—Աւրկա պիտի ըլլայ Եգիպտոսի պատիժը,
Ու տաղաւարահարաց տօնը կատարելու չերթացող բոլոր ազգերուն պատիժը։
20—Այն օրը ձիերուն սանձի զարդերուն վրայ
ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՒՈՆ պիտի ըլլայ։
Ու Տէրոջը տունը մէջի կաթսաները
Սեզանին առջեւի կոնքերուն պէս պիտի ըլլան։
21—Ու Երուսաղէմի մէջ և Յուդայի մէջ ամէն կաթսայ
Զօրաց Տէրոջը սուրբ պիտի ըլլայ.
Ու ամէն զոհ ընողները պիտի գան,
Ու անոնցմէ պիտի առնեն, ու անոնց մէջ պիտի եփեն.
Ու այն օրը մէկմըն ալ զօրաց Տէրոջը տանը մէջ Քանանացի պիտի չըլլայ։

*Կամ, դէմ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԱՂԱՔԵԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Մաղաքիայի ձեռքով Իսրայէլի եղած Տէրոջը խօսքին պատգամը։
2—Ես ձեզ սիրեցի, կ'ըսէ Տէրը,
Ու դուք՝ Մեզ ինչո՞վ սիրեցիր, կ'ըսէք։
Մի՞թէ Եսաւ Յակոբի եղբայրը չէ՞ր, կ'ըսէ Տէրը,
Ու Յակոբը սիրեցի,
3—Բայց Եսաւըատեցի,
Ու անոր լեռները ամայութեան,
Ու անոր ժառանգութիւնը անապատի *րնակութեան դարձուցի։
1—Եթէ եդովմ ըսէ Թէ կործանեցանք,
Բայց պիտի դառնանք ու աւերակները չինենք,
Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ.
Անոնք պիտի չինեն, բայց ես պիտի փլցնեմ.
Ու անոնք պիտի կոչուին Անօրէնութեան սահման,
Ու ժողովուրդ՝ որու դէմ Տէրը յաւիտեան բարկացեր է։
5—Ու ձեր աչքերը պիտի տեսնեն, ու պիտի ըսէք,
Տէրը Իսրայէլի Թաւհանեն անդին՝ փառաւորուի։
6—Տղան իր հօրը
Ու ծառան իր տէրոջը պատիւ կ'րնէ.
Եթէ ես հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է,
Ու եթէ տէր եմ, ինծմէ վախնալը ո՞ւր է,
Կ'ըսէ ձեզի զօրաց Տէրը.
Ով քահանաներ, որ իմ անունս կ'անարգէք.
Ու դուք կ'ըսէք, Ինչ անունդ ինչ բանով անարգեցինք։
7—Իմ սեղանիս վրայ պիղծ հաց կը մատուցանէք,

*Կամ, չագալներուն տուի
†Կամ, սահմանին վրայ

Ու կ'ըսէք, Ինչո՞վ պղծեցինք։
Տէրոջը սեղանը անարգ է ըսելովիդ։
8—Ու երբ կոյր զոհի համար կը մատուցանէք, գէշ չէ՞.
Ու երբ կաղ կամ հիւանդը կը մատուցանէք, գէշ չէ՞.
Ագէ, զանիկա քու իշխանիդ ընծայէ.
Միթէ քեզի պիտի հաճի՞,
Կամ *քեզ սիրով պիտի ընդունի՞, կ'ըսէ զօրաց Տէրը։
9—Ու հիմա Աստուծոյ երեսը աղաչեցէք,
Որպէս զի մեզի ողորմութիւն ընէ.
Աւրկա ձեր ձեռքէն եղաւ,
Միթէ ձեզ սիրով պիտի ընդունի, կ'ըսէ զօրաց Տէրը։
10—Ձեր մէջ անգամ դռները չէի գոցեր ո՛վ կայ.
Իմ սեզանիս կրակն ալ ձրի չէք վառեր.
Ձեզի չեմ հաճիր, կ'ըսէ զօրաց Տէրը,
Ու ձեր ձեռքէն ընծայ չեմ ընդունիր։
11—Քանզի արեւուն ծագած տեղէն մինչեւ անոր մտած տեղը,
Ազգերուն մէջ, իմ անունս մեծ պիտի ըլլայ.
Ու ամէն տեղ իմ անունս
Խունկ ու սուրբ ընծայ պիտի մատուցուի,
Քանզի իմ անունս ազգերուն մէջ մեծ պիտի ըլլայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
12—Ու դուք զանիկա կը պղծէք,
Ըսելով Թէ Տէրոջը սեղանը պիղծ է,
Ու անոր բերքը, այսինքն կերակուրը, անարգ։
13—Նաև կ'ըսէք, Ահա ինչ աչառութիւն է,
Ու անոր վրայ կը փչէք, կ'ըսէ զօրաց Տէրը,
Ու յափշտակուածը ու կաղը և հիւանդը բերիք.
Այսպէս ընծայ բերիք.

*Կամ, քու երեսդ

Մի՛թէ զանիկա ձեր ձեռքէն պիտի ընդունի՞մ, կ'ըսէ Տէրը։
14—Բայց անիծեալ ըլլայ այն խաբեբայ մարդը,
Որ իր հօտին մէջ արձն ունենալով՝ ուխտ կ'ընէ,
Եւ արատաւորը Տէրոջը կը մատուցանէ.
Քանզի ես մեծ Թագաւոր եմ, կ'ըսէ զօրաց Տէրը,
Ու իմ անունս ազգերուն մէջ ահարկու է,

Գլ. Բ

Եւ հիմա այս պատուէրը ձեզի է, ով քահանաներ։
2—Եթէ մտիկ չընէք,
Ու եթէ չէք սրտին մէջ չդնէք
Որ իմ անուանս պատիւ տաք, կ'ըսէ զօրաց Տէրը,
Այն ատեն ձեզի անէծք պիտի ղրկեմ,
Ու ձեր օրհնութիւնները պիտի անիծեմ.
Այո, զանոնք արդէն անիծեր եմ,
Քանզի դուք չէք սրտին մէջ չէք դներ։
3—Ահա ես ձեր սերմնդը պիտի յանդիմնեմ,
Ու ձեր երեսին վրայ ագր,
Ձեր տօներուն ագրը, պիտի ցանեմ,
Եւ անիկա ձեզ իրեն հետ պիտի տանի։
4—Ու պիտի գիտնաք որ ես ձեզի ղրկեցի այս պատուէրը,
Որպէս զի իմ ուխտս Ղեւիի հետ ըլլայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
5—Իմ ուխտս անոր հետ էր կեանքի ու խաղաղութեան համար.
Ու զանոնք անոր տուի այն երկիւղին համար·
Որով ինծի կը վախնար,
Ու իմ անուանս երեսէն կը սարսափէր։
6—Ճշմարտութեան օրէնքը անոր բերնին մէջ էր,
Եւ անոր շրթունքներուն մէջ անիրաւութիւն չգտնուեցաւ.
Ինծի հետ խաղաղութեամբ և ուղղութեամբ կը քալէր,
Ու շատերը անօրէնութենէ դարձուց։
7—Քանզի քահանային շրթունքները գիտութիւն պահելու են,
Եւ հրէաէն անոր բերնին օրէնքը փընտռելու են,
Քանզի անիկա զօրաց Տէրոջը դեսպանն է։
8—Բայց դուք ճամբայէն խոտորեցաք,
Շատերը օրէնքին մէջ գայթակղեցուցիք,
Ղեւիի ուխտը աւրեցիք, կ'ըսէ զօրաց Տէրը։
9—Ուստի ես ալ ձեզ բոլոր ժողովուրդին առջև անարգուած ու ցած րրի,
Ինչպէս դուք իմ ճամբաներս չպահեցիք,
Ու օրէնքին մէջ անհատութիւն ընիք։
10—Մի՞թէ ամէնս մէկ հայր չունի՞նք.
Մի՞թէ մէկ Աստուած չստեղծի՞ց մեզ.
Ինչո՞ւ համար մեր հայրերուն ուխտը աւրելով՝
Մեզմէ ամէն մէկը իր եղբօրը նենգութիւն կ'ընէ։
11—Յուդա նենգութիւն ըրաւ,
Ու Իսրայէլի մէջ ու Երուսաղէմի մէջ պղծութիւն գործուեցաւ.
Վասն զի Յուդա պղծեց Տէրոջը սրբարանը զոր ինք կը սիրէր,
Ու օտար աստուծոյ աղիկանը այր եղաւ։
12—Տէրը Յակոբի վրաններէն բնաւին պիտի ընէ այս բանը ընդմարդը,
*Արթուն եղողը ու պատասխան տուողը·
Ու զօրաց Տէրոջը ընծայ մատուցանողը։
13—Ու դարձեալ ասիկա ըրիք.
Տէրոջը սեղանը արցունքներով,
Լացով ու ողբով ծածկեցիք.
Այնպէս որ Անիկա մէյմըն ալ ընծային չնայիր,
Որ ընդունի՝ ձեր ձեռքէն հաճութեամբ ընդունի։
14—Բայց դուք ըսիք, Ինչո՞ւ.
Անոր համար որ Տէրը վկայ եղաւ քու և քու երիտասարդութեանդ կնոջ միջեւդ,
Որու հետ անհաւատարմութեամբ վարուեցար.
Ու անիկա քու ընկերդ ու քու ուխտիդ կինն է։
15—Ու մէկը չըրա՞ւ, որ Հոգիին առատութիւնը ունէր.
Ու այն մէկը ի՞նչ կը փնտռէր· Աստուծոյ սերունդ.
Ուրեմն ձեր հոգիին զգուշութիւն ըրէք,
Ու ձեզմէ մէ՛կը իր երիտասարդութեան կնոջ հետ անհաւատարմաբար չվարուի։

*Կամ, Ուսուցիչը ու աշակերտը

16—Քանզի Իսրայէլի Տէր Աստուածը կ'ըսէ Թէ
*Ինք կ'ատէ կին արձակելը·
Բայց ո՞րտէ իր հանդերձով զրկանքը կը ծածկէ, կ'ըսէ զօրաց Տէրը։
Ուստի ձեր հոգիին զգուշութիւն ըրէք ու անհաւատարմի մի ըլլաք։
17—Ձեր խօսքովը Տէրը ձանձրացուցիք։
Բայց դուք կ'ըսէք, Ինչո՞վ ձանձրացուցինք։
Այո՛ն ըսելովիդ. Ամէն չարութիւն բնողը
Տէրոջը աչքերուն առջև հաճոյ է,
Ու ինք անոնց կը հաճի,
Կամ Թէ Դատաստանի Աստուածը ո՞ւր է։

Գլ. Գ

Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ,
Ու իմ առջեւս ճամբայ պիտի պատրաստէ.
Եւ ձեր փնտռած Տէրը, այսինքն ուխտին հրեշտակը, որու կը հաճիք,
Ծանկարծ իր տաճարը պիտի գայ.
Ահա կու գայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
2—Ու անոր գալուստին օրը ո՞վ կրնայ դիմանալ,
Եւ անոր երեւնալուն առեջը ո՞վ կրնայ կայնիլ.
Քանզի անիկա հալեցնողին կրակին պէս,
Ու թափիչներուն օճառին պէս պիտի ըլլայ։
3—Ու անիկա արծաթ հալեցնողի ու մաքրողի դէս պիտի նստի,
Ու Ղեւիի որդիները պիտի մաքրէ,
Եւ զանոնք ոսկիի պէս ու արծաթի պէս պիտի զտէ.
Ու անոնք արդարութեամբ Տէրոջը ընծայ մատուցանողներ պիտի ըլլան.
4—Եւ Յուդայի ու Երուսաղէմի ընծան Հին օրերուն պէս ու առաջին տարիներուն պէս
Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ։
5—Ու դատաստանի համար ձեզի պիտի մօտենամ,
Եւ կախարդներուն ու շնացողներուն
Ու սուտ երդում ընողներուն,
Եւ վարձկանին իր վարձքին վրայով,
Ողբաւորիին ու որբին զրկանք ընողներուն,
Եւ պանդուխտին իրաւունքը խոտորցնողներուն,
Ու ինծի չվախցողներուն դէմ արագ վկայ պիտի ըլլամ, կ'ըսէ զօրաց Տէրը։
6—Քանզի ես Տէրս եմ, չեմ փոխուիր,
Ձեր համար դուք, ով Յակոբի որդիներ, չպատահեցաք։
7—Ձեր հայրերուն օրերէն ի վեր
Իմ հրամաններէս պատուեցաք ու չպահեցիք.
Ինծի դարձէք ու ես ձեզի պիտի դառնամ, կ'ըսէ զօրաց Տէրը։
Սակայն դուք կ'ըսէք, Ինչո՞վ դառնանք։
8—Մի՞թէ մարդ զԱստուած կը գողնայէ՞,
Որ դուք զիս կը գողնայէք։
Բայց դուք կ'ըսէք, Քեզմէ ի՞նչ գողցանեցինք։
Տասանորդներ ու ընծաներ։
9—Դուք անէծքով անիծուած էք,
Քանզի դուք բոլոր ազգդ զիս կը գողնայէք։
10—Բոլոր տասանորդները գանձատունը տարէք,
Որպէս զի իմ տանս մէջ պաշար ըլլայ.
Եւ տես զիս փորձեցէք, կ'ըսէ զօրաց Տէրը,
Թէ արդեօք ձեզի երկինքի պատուհանները չի՞մ բանար
Ու ձեզի օրհնութիւն Թափեր,
Այնպէս որ տեղ բաւական տեղ չըլլայ։
11—Ու ձեզի համար ուտողը պիտի յանդիմնեմ,
Ու անիկա ձեր երկրին պտուղը պիտի չսպականէ,
Եւ ձեր այգիին մէջ որթը անպտուղ պիպիտի չըլլայ, կ'ըսէ զօրաց Տէրը։
12—Ու ամէն ազգերը ձեզի երանի՛ պիտի ըսեն,
Քանզի դուք ցանկալի երկիր պիտի ըլլաք, կ'ըսէ զօրաց Տէրը։
13—Ձեր խօսքերը ինծի դէմ խիստ եղան, կ'ըսէ Տէրը։
Բայց դուք կ'ըսէք, Քեզի դէմ ի՞նչ խօսեցանք։

11—Դուք ըսէք, Աստուծոյ ծառայութիւն ընելը պարապ բան է,
եւ անոր պահպանութիւնը պահելէն
ու զօրաց Տէրոջը առջեւ սուգով քալելէն ի՞նչ չահեցանք.
15—ու հիմա մենք հպարտները երանի կ'ըսենք.
Ամբարշտութիւն ընողները անգամ բարգիչն կ'ըլլան,
ԶԱստուած ալ կը փորձեն ու կ'ազատին,
16—Այն ատեն Տէրոջմէ վախցողները
իրարու հետ խօսեցան,
Ու Տէրը մտիկ ըրաւ ու լսեց.
Ու իր առջեւ յիշատակի գիրք գրուեցաւ
Տէրոջմէ վախցողներուն համար
Ու անոր անունը մտածողներուն համար,
17—Ու անոնք իմն պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէրը,
Այն օրը որ չմ սեպհական դանձս ժողվեմ,
Ու անոնց պիտի խնայեմ,
Ինչպէս մարդ մը կը խնայէ իր որդւոյն
Որ իրեն ծառայութիւն կ'ընէ.
18—Ու պիտի դառնաք, ու արդարին
և ամբարշտին,
Աստուծոյ ծառայութիւն ընողին
Ու անոր ծառայութիւն չընողին
Տարբերութիւնը պիտի տեսնէք։

Գլ. Դ

Քանզի ահա վառարանի պէս վառած օրը
կու գայ,
Ու բոլոր հպարտները և բոլոր ամբարշտութիւն գործողները
Ցարդի պէս պիտի ըլլան.
Ու գալու օրը զանոնք պիտի այրէ, կ'ըսէ զօրաց Տէրը,
Այնպէս որ անոնց արմատ կամ ճիւղ պիտի չթողու։
2—Բայց ձեզի, իմ անունէս վախցողներուդ,
Արդարութեան արեգակը պիտի ծագի,
Ու անոր թեւերուն վրայ բժշկութիւն պիտի ըլլայ.
Ու դուք գոմի պարարտ արջառուն պէս
Դուրս պիտի ելլէք ու պիտի ցատկէք,
3—Ու ամբարիշտները պիտի կոխէք,
Վասն զի իմ գործ ունենալու օրս
Անոնք ձեր ոտից թաթերուն տակ
Մոխիր պիտի ըլլան, կ'ըսէ զօրաց Տէրը։
4—Յիշեցէք իմ ծառայիս Մովսէսի օրէնքը,
Այսինքն այն կանոնները ու գատաստանները,
Զորոնք անոր պատուիրեցի Փոքրէի մէջ
բոլոր Իսրայէլի համար,
5—Ահա ես ղրկեմ մարգարէն ձեզի պիտի ղրկեմ
Դեռ Տէրոջը մեծ ու ահեղ օրը չհկած.
6—Ու անիկա հայրերուն սիրտը որդիներուն,
Ու որդիներուն սիրտը հայրերուն պիտի դարձնէ,
Որ չըլլայ թէ ես գամ, ու երկիրը անէծքով զարնեմ։

11430

221

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

1008
358446

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Ց. ՊՕՅԱՃԵԱՆ

1913

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի, Դաւիթի որդւոյն, Աբրահամի որդւոյն։

2—Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ զՅուդան ու զանոր եղբայրները։ **3**—Յուդա ծնաւ զՓարէսը ու զԶարան Թամարէ. Փարէս ծնաւ զԵսրոնը. Եսրոն ծնաւ զԱրամը։ **4**—Արամ ծնաւ զԱմինադաբը. Ամինադաբ ծնաւ զՆաասոնը. Նաասոն ծնաւ զՍալմոնը։ **5**—Սալմոն ծնաւ զՌաաւը Յերիքովէ. Ռաաւ ծնաւ զՈբէդը. Ովբէդ ծնաւ զԵսսէն։ **6**—Յեսսէ ծնաւ զԴաւիթ թագաւորը։ Դաւիթ թագաւորը ծնաւ զՍողոմոնը Ուրիայի կնոջմէն։ **7**—Սողոմոն ծնաւ զՌոբովամ. Ռոբովամ ծնաւ զԱբիան. Աբիա ծնաւ զԱսաո։ **8**—Ասա ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ. Յովրամ ծնաւ զՈզիան։ **9**—Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ զԵզեկիան։ **10**—Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն. Ամոն ծնաւ զՅովսիան։ **11**—Յովսիա ծնաւ զԵքոնիան ու անոր եղբայրները Բաբելոնեան գերութեան առնելուին։ **12**—Բաբելոն գերութեան երթալէն ետև Եքոնիա ծնաւ զՍաղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլը։ **13**—Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովրը։ **14**—Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵղիուդ։ **15**—Եղիուդ ծնաւ զԵղիազարը. Եղիազար ծնաւ զՄաաթան. Մաաթան ծնաւ զՅակոբը։ **16**—Յակոբ ծնաւ զՅովսէփ, զայրն Մարիամայ, որմէ ծնաւ Յիսուս, որ կ'ըսուի Քրիստոս։ **17**—Ամբողջ ազգերը Աբրահամէ մինչև Դաւիթ տասնըչորս ազգ, և Դաւիթէ մինչև Բաբելոնեան գերութիւնը տասնըչորս ազգ, ու Բաբելոնեան գերութենէն մինչև Քրիստոս տասնըչորս ազգ։

18—Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդը այս կերպով էր. անոր մայրը Մարիամ Յովսէփի նշանածած, դեռ իրարու քով չեկած՝ Սուրբ Հոգիէն յղացած գտնուեցաւ։ **19**—Եւ Յովսէփ անոր այրը արդար ըլլալով ու չուզելով որ զանիկա խայտառակ ընէ, մտածեց որ ծածկաբար արձակէ զանիկա։ **20**—Եւ քանի որ անիկա այս բաները կը մտածէր, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեցաւ անոր ու ըսաւ, Յովսէփ, Դաւիթի որդի, մի վախնար քեզի առնել քու Մարիամ կինդ, վասն զի անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիէն է, **21**—և որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը *Յիսուս դնես, քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ։ **22**—Եւ այս ամենը եղաւ, որպէս զի կատարուի Տէրոջմէն բանաւածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, **23**—Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ։ **24**—Եւ Յովսէփ քունէն արթնցալով ինչպես Տէրոջը հրեշտակը իրեն հրամայեց, ոչխարը բերաւ ու իր կինը քովը առաւ։ **25**—Եւ չէր գիտեր զանիկա՝ մինչև իր անդրանիկ որդին ծնաւ, ու անոր անունը Յիսուս դրաւ։

ԳԼ. Բ

Ու երբ Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհեմին մէջ Հերովդէս թագաւորին օրերը, ահա արեւելքէն մոգեր եկան Երուսաղէմ, **2**—Ու ըսին, Ո՞ւր տեղ է ան՝ որ Հրեաներուն թագաւոր ծնաւ։

*Այոնդեն, փրկիչ

վան զի մինչ արեւելքի մէջ անոր ասաղը տեսան, ու եկանք անոր երկրպագութիւն ընելու։ 3—Ու երբ Հերովդէս թագաւորը լսեց, խռովեցաւ, և բոլոր Երուսաղէմ իրեն հետ։ 4—Ու ժողվելով բոլոր քահանայապետները ու ժողովուրդին դպիրները, հարցուց անոնց թէ Քրիստոսը ո՞ւր պիտի ծնանի։ 5—Անոնք ալ իրեն ըսին, Հրէաստանի Բեթլհեմին մէջ. վասն զի այսպէս գրուած է մարգարէին ձեռքով. 6—Ու դուն, Բեթլհեմ, Յուդայի երկիրը, Յուդայի իշխաններուն մէջ բնաւ պզտիկ մը չես. վասն զի քեզմէ իշխան մը պիտի ելլէ որ իմ խրայէլ ժողովուրդս պիտի հովուէ։ 7—Այն ատեն Հերովդէս ծածկաբար մոգերը կանչեց, ու աստղից անոնցմէ ստացին երեւցած ատենը։ 8—Ու զանոնք Բեթլհեմ զրկելով ըսաւ, Գացէք ամենայն իմացէք այն մանուկին վրայով, ու երբ գտնէք, ինծի իմացուցէք, որպէս զի ես ալ գամ, անոր երկրպագութիւն ընեմ։ 9—Ու երբ անոնք թագաւորին լսեցին, գացին. և ահա այն աստղը զոր արեւելքի մէջ տեսեր էին, անոնց առջեւէն գնաց, մինչեւ եկաւ կեցաւ մանուկին եղած տեղին վրայ։ 10—Երբ տեսան աստղը, շատ մեծ ուրախութիւնով ուրախացան։ 11—Ու տունը մտնելով տեսան մանուկը իր մօր Մարիամի հետ, ու ինկան երկրպագութիւն ըրին անոր, և իրենց գանձերը բանալով ընծաներ տուին անոր, ոսկի ու ննդրուկ և զմուռս։ 12—Ու հրաման առնելով երազի մէջ, որ նորէն Հերովդէսի չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը։

13—Ու երբ անկէ գացին անոնք, ահա Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւցաւ Յովսէփի ու ըսաւ, Ելիր, առ մանուկը ու անոր մօրը, ու Եգիպտոս փախիր, և հոն կեցիր մինչեւ ես քեզի բսեմ, քանզի Հերովդէս պիտի փնտռէ այդ մանուկը կորսնցնելու համար։ 14—Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մօրը գիշերով առաւ և գնաց Եգիպտոս, ու մինչեւ Հերովդէսի մահը հոն էր։ 15—Որպէս զի կատարուի Տէրոջմէն բսուածը մարգարէին ձեռքով, որ կ'ըսէ, Եգիպտոսէ կանչեցի իմ որդիս։

16—Այն ատեն երբ տեսաւ Հերովդէս թէ *խաբուեցաւ մոգերէն, սաստիկ սրդուեցաւ, ու զրկեց ջարդեց Բեթլհեմի և անոր ամէն սահմաններուն մէջ գտնուած բոլոր ազաքի երկու տարեկան և անկէ վար, այն ժամանակին հաշիւնոր զոր մոգերէն ստացեր էր։ 17—Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով բսուածը, որ կ'ըսէ, Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ, ողբ, լաց ու մեծ կոծ. 18—Ռաքէլ կու լար իր զաւակը համար, ու չէր ուզեր մխիթարուիլ, վասն զի չկային։

19—Ու երբ Հերովդէս մեռաւ, ահա Տէրոջը հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփի երեւցաւ, 20—Ու բսաւ, Ելիր, առ մանուկը ու անոր մայրը, և գնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան անոնք որ մանուկին կեանքը կը փնտռէին։ 21—Ան ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը առաւ և եկաւ Իսրայէլի երկիրը։ 22—Իսկ երբ լսեց թէ Աքելաոս Յուդա Թագաւորեց Հերովդէսի փոխ իր հօրը Հերովդէսի տեղ, վախցաւ հոն երթալու, ու երազի մէջ պատգամ առնելով Գալիլեայի կողմերը գնաց։ 23—Ու եկաւ Նազարէթ բսուած քաղաքը բնակեցաւ, որպէս զի մարգարէներուն խօսքը կատարուի՝ թէ Նազովրեցի պիտի կոչուի։

ԳԼ. Գ

Ա յն օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ, ու Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր, 2—Ու կ'ըսէր, Ապաշխարեցէք, վասն զի երկինքի Թագաւորութիւնը մտեցած է։ 3—Վասն զի ասիկա ան է որու համար Եսայի մարգարէին ձեռքով բսուեցաւ, որ կ'ըսէ, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները շիտկեցէք։ 4—Ու այս Յովհաննէսը իր հանդերձը ուղտի մազէ, ու իր մէջքը կաշեէ գօտի ունէր. և իր կերակուրը մարախ ու վայրենի մեղր էր։ 5—Ան ատեն Երուսաղէմ և բոլոր Հրէաստան ու Յորդանանու բոլոր կողմերը

*Ցաւե. ծաղրուեցաւ։

իրեն կ'ելլէին, 6—Ու կը մկրտուէին իրմէ Յորդանան մէջ, ու իրենց մեղքերը կը խոստովանէին։ 7—Ու երբ տեսաւ փարիսեցիներէն ու սադուկեցիներէն շատերը իր մկրտութեանը գալ, ըսաւ անոնց, Իժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութենէն փախչիլ։ 8—Ուրեմն ապաշխարութեան պտուղներ պտղաբերեցէք։ 9—Ու մի խորհիք գուցէ ձեր ներսիդին ըսել, Մեզի Աբրահամ հայր ունինք. քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստուած կարող է այս քարերէն Աբրահամի որդիներ հանել։ 10—Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը դրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէ, կը կտրուի և կրակը կը ձգուի։ 11—Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց իմ հետևէս եկողը իմմէ զօրաւոր է, ու ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ. անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգիով Սրբով ու կրակով։ 12—Որուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ ու իր ցորենը հաւաքուր պիտի ժողվէ, և յարդը պիտի այրէ չմարող կրակով։

13—Այն ատեն Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ Յովհաննէսի, որպէս զի անկէ մկրտուի։ 14—Ու Յովհաննէս կ'արգիլէր զանկիա ու կ'ըսէր, Ինծի՛ պէտք է որ քեզմէ մկրտուիմ, ու դուն ինծի՞ կու գաս։ 15—Յիսուս պատասխան առաւ ու բսաւ անոր, Թող առ հիմա, վասն զի այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք. հաքը Թող առաւ անոր։ 16—Ու երբ Յիսուս մկրտուեցաւ, չատ մը չանցան դարբ ելաւ, և ահա երկինք անոր բացուեցաւ, ու տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի պէս կ'իջնէր, ու կու գար իր վրայ։ 17—Ու ահա երկինքէն ձայն մը էր՝ որ կ'ըսէր, Ասիկա է իմ սիրելի Որդիս, որու հանիր եմ։

ԳԼ. Դ

Ա յն առեն Յիսուս անապատը տարուեցաւ Սատանայ Հոգիէն, որպէս զի Սատանայէ փորձուի։ 2—Ու փառասուն գիշեր ծոմ պահելէն հաքը անօթեցաւ։

3—Ու փորձողը անոր մատնանալով բսաւ, Եթէ զուն Աստուծոյ Որդին ես, բսէ որ այս քարերը հաց ըլլան։ 4—Անիկա պատասխան առաւ ու բսաւ, Գրուած է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ։

5—Այն առեն Սատանայ առաւ տարաւ զանիկա սուրբ քաղաքը, և կայնեցուց զանիկա տաճարին աշտարակին վրայ, 6—Ու բսաւ անոր, Եթէ զուն Աստուծոյ Որդին ես, քեզ ներքև վար ձգէ, վասն զի գրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի ապսպրէ քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի վերցրնեն քեզ, որպէս զի չըլլայ թէ ոտքդ քարի զարնես։ 7—Յիսուս բսաւ անոր, Դարձեալ գրուած է թէ Քու Տէր Աստուածդ չփորձես։

8—Սատանայ նորէն առաւ հանեց զանիկա խիստ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները ու անոնց փառքը. 9—Ու բսաւ անոր, Ասոնք ամէնը քեզի կու տամ, եթէ իյնաս՝ ինծի երկրպագութիւն ընես։ 10—Այն ատեն Յիսուս բսաւ անոր, [Երթա] գնա, Սատանայ, վասն զի գրուած է թէ Քու Տէր Աստուածդայ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես։ 11—Այն ատեն Սատանայ զանիկա թողուց. և ահա հրեշտակներ եկան ու անոր սպասաւորութիւն կ'ընէին։

12—Ու երբ լսեց Յիսուս թէ Յովհաննէս մատնուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա, 13—Ու ձգելով Նազարէթը, եկաւ բնակեցաւ Կափառնայում՝ ծովեզերեայ *Զաբուղոնի ու Նեփթաղիմի սահմաններուն մէջ։ 14—Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին ձեռքով բսուած խօսքը, 15—Զաբուղոնի երկիրը ու Նեփթաղիմի երկիրը, ծովու ճամբով Յորդանանու անդիի կողմը, Հեթանոսաց Գալիլեան. 16—Խաւարի մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, և լոյս ծագեցաւ անոնց՝ որոնք մահուան երկրին ու չարքին մէջ կը նստէին։ 17—Անկէ հան Յիսուս սկսաւ քարոզել ու բսել, Ապաշխարեցէք, վասն զի երկինքի Թագաւորութիւնը մօտ է։

18—երբ Յիսուս Գալիլեացւոց ծովուն փռվելը կը պարաէր, տեսաւ երկու եղբայրներ, Պետրոս կոչուած Սիմոնը և անոր եղբայրը Անդրեասը, որոնք ծովը ուռկան կը ձգէին, վասն զի ձկնորս էին. 19—և բսաւ անոնց, Իմ հետևէն եկէք, ու ձեզ մարդոց որսորդ բնեմ. 20—Անոնք ալ չուտ մը ուռկանները թողուցին ու անոր հետևեցին գացին. 21—և անկէ յառաջ երթալով՝ տեսաւ երկու եղբայրներ, Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, նաւին մէջ իրենց հօրը Զեբեդէոսի հետ, երբ իրենց ուռկանները կը կարկտին. ու կանչեց զանոնք. 22—Անոնք ալ չուտ մը նաւը ու հայրերնին թողուցին ու անոր հետևեցան.

23—Ու Յիսուս բոլոր Գալիլեա պարտէզով, կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, և աւետարան կը քարոզէր, ու ժողովուրդին մէջի ամէն կերպ հիւանդութիւնները ու ամէն կերպ ցաւերը կը բժշկէր. 24—Ու անոր համբաւը բոլոր Սուրիա տարածուեցաւ, և բերին անոր՝ բոլոր հիւանդները որոնք կերպ կերպ ցաւերով ու տանջանքներով կը նեղուէին, և դիւահարները ու լուսնոտները և անդամալոյծները. ու բժշկեց զանոնք. 25—Ու չատ ժողովուրդներ անոր հետևեցին Գալիլեայէ ու Դեկապոլիսէ և Երուսաղէմէ ու Հրէաստանէ և Յորդանանէ անդին կողմէն.

Գլ. Ե

Ու տեսնելով ժողովուրդները, լեռը ելաւ. ու երբ նստաւ հոն, իր աշակերտները քովը գացին. 2—Ու իր բերանը բանալով կը սորվեցնէր անոնց ու կ'ըսէր,

3—Երանի՛ հոգւով աղքատներուն, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է. 4—Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին. 5—Երանի՛ հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը. 6—Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան. 7—Երանի՛ ողորմածներուն, վասն զի անոնք ողորմութիւն պիտի գտնեն. 8—Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած. 9—Երանի՛ խաղաղութիւն բնակներուն, վասն անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին. 10—Երանի՛ անոնց որ հալածուած են արդարութեան համար, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է. 11—Երանի՛ ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն, և սուտ ամէն կերպ չար խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար. 12—Ցնծացէք և ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը չատ է երկինքը. քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները.

13—Դուք էք երկրի աղը. հապա եթէ աղը իր համը կորնչցնէ, ինչ բնով պիտի աղուի. անկէ եւս բանի մը չէ՛ պիտի ըլլար, միայն թէ դուրս ձգուելու և մարդոց ոտքին տակ կոխուելու. 14—Դուք էք աշխարհի լոյսը. քաղաք մը որ լեռան վրայ կեցած է, չի՛նար պահուիլ. 15—Ու ճրագը չեն վառեր և դներ գրասենի տակ, հապա աշտանակի վրայ, և լոյս կու տայ բոլոր տանը մէջ եղողներուն. 16—Այնպես թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջև, որ տեսնեն ձեր բարի գործերը, ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է.

17—Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները բերելու. չեկայ բերելու, հապա կատարելու. 18—Ճշմարիտը կ'ըսեմ ձեզի, Մինչև երկինքը ու երկիրը անցնին, օրէնքէն յաղ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչև բոլորն ալ կատարուին. 19—Ուստի ով որ այս ամենափոքր պատուիրանքներէն մէկը աբէ, ու մարդոց այնպես սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկինքի թագաւորութեան մէջ. բայց ով որ ընէ և սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկինքի թագաւորութեանը մէջ. 20—Քանզի կ'ըսեմ ձեզի, Եթէ ձեր արդարութիւնը դպիրներուն ու փարիսեցիներուն ա-ը-ը-ա-ր-ե-ն-ն-ն

առներ ձեր Հօրմէն որ երկինքն է։ 2—Ուստի երբ ողորմութիւն կ՚ընես, առջեդ փող մի հնչեցներ, ինչպես կեղծաւորները ժողովարաններուն ու փողոցներուն մէջ կ՚ընեն, որպէս զի մարդոցմէ փառաւորուին. ճշմարիտ կըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ՚ըլլան։ 3—Իսկ դուն երբ ողորմութիւն կ՚ընես, ձախ ձեռքդ ի՛նչ չգիտնայ աջ ձեռքդիդ ինչ գործելը։ 4—Որպէս զի քու ողորմութիւնդ գաղտուկ ըլլայ, և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի բնէ։

5—Ու երբ աղօթք կ՚ընես, կեղծաւորներուն նման չըլլաս, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ ու հրապարակներուն անկիւններուր կայնելով աղօթք բնել, որպէս զի մարդոց երևնան. ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ՚ըլլան։ 6—Իսկ դուն երբ աղօթք կ՚ընես, մտիր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ, և աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը տեսնէ։ և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի բնէ։ 7—Ու երբ աղօթք կ՚ընէք, հեթանոսներուն պէս չատախօս մի ըլլաք, վասն զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին։ 8—Ուրեմն անոնց չնմանիք, վասն զի ձեր Հայրը ձեզի պէտք եղածը գիտէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած։ 9—Ուստի այսպէս աղօթք ըրէք դուք։

Ով Հայր մեր որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ։ 10—Քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպես երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ։ 11—Մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր։ 12—Ու մեզի ներէ մեր պարտքերը, ինչպես մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն։ 13—Ու մեզ փորձութեան մի տաներ, հապա չազատէ մեզ չարէն. քանզի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեան. Ամէն։

14—Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ։ 15—Հապա եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չներէը ձեր յանցանքները։

16—Ու երբ ծոմ կը պահէք, կեղծաւորներուն պէս տրտում մերթս մի ըլլաք. քանզի իրենց երեսները կ՚աւրեն որպէս զի մարդոց երևնան թէ ծոմ կը պահեն. ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ՚ըլլան։ 17—Բայց դուն երբ ծոմ կը պահես, գլուխդ օծէ ու երեսդ լուա, 18—Որպէս զի մարդոց ծոմ պահողի պէս չերևնաս, հապա քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղ կը տեսնէ։ և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, *քեզի հատուցում պիտի բնէ։

19—Երկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք, ուր ցեցը ու ժանգը կ՚ապականեն, և ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան. 20—Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր ոչ ցեցը և ոչ ժանգը կ՚ապականէ, ու ոչ գողերը պատ կը ծակեն և կը գողնան։ 21—Քանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ։ 22—Մարմինին ճրագը աչքն է. հապա եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ՚ըլլայ։ 23—Բայց եթէ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ՚ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ու այն խաւարը որչափ է։ 24—Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն բնել. վասն զի կա՛մ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ, կա՛մ †մէկուն պիտի յարի՝ և միւսը պիտի արհամարհէ. չէք կրնար Ծառայել Աստուծոյ ու մամոնային։ 25—Ուստի կ՚ըսեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար թէ ի՛նչ պիտի ուտէք, կամ ի՛նչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՛նչ պիտի հագնիք. չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն։ 26—Նայեցէք երկինքի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ մառարի մէջ կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ եք։ 27—Ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել։ 28—Ու հագուստի համար ինչո՞ւ հոգ կ՚ընէք. նայեցէք դաշտի շուշաններուն,

*Ոմանք, քեզի յայտնապէս
†կամ, մէկը պիտի մեծարէ

թէ ինչպես կ՚աճին. ոչ կ՚աշխատին և ոչ կը մանեն. 29—Բայց ձեզի կ՚ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկո՛ւն պէս չհագուեցաւ. 30—Ուստի եթէ դաշտի խոտը, որ այսօր կայ և վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, հապա ո՛րչափ աւելի ձեզ, Քերաննատաներ, 31—Ուրեմն հոգ մի ընէք՝ ըսելով, Ի՞նչ պիտի ուտենք, կամ Ի՞նչ պիտի խմենք, կամ Ի՞նչ պիտի հագնինք. 32—(Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն.) վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ՝ Թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են։ 33—Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի արուին։ 34—Ուստի վաղուան համար հոգ մի ընէք, վասն զի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. հերիք է օրուան իր նեղութիւնը։

ԳԼ. Է

Մի դատէք, որպէս զի չդատուիք. 2—Քանզի ի՛նչ դատաստանով որ դատէք, †նո՛վ պիտի դատուիք, և ի՛նչ չափով որ չափէք, †նո՛վ պիտի չափուի ձեզի։ 3—Ու ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի չիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր։ 4— կամ ի՞նչպես կրնաս ըսել քու եղբօրդ, Թող ատր աչքէդ չիւղը հանեմ. և ահա քու աչքիդ մէջ գերան կայ։ 5—Կեղծաւոր, առաջ քու աչքէդ գերանը հանէ, ու յետոր պարզ պիտի տեսնես եղբօրդ աչքին չիւղը հանելու։

6—Սուրբ բանը շուներուն մի տաք, և ձեր մարգարիտները խոզերուն առջեւ մի ձգէք, որպէս զի ոտքերնուն տակ չկոխկռտեն զանոնք, ու դառնան ձեզ պատառեն։

7—Խնդրեցէք, և պիտի տրուի ձեզի. փնտռեցէք, և պիտի գտնէք. դո՛ւռը զարկէք, և պիտի բացուի ձեզի. 8—Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ՚առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ դո՛ւռը կը զարնէ՝ պիտի բացուի անոր։ 9—Ձեզմէ ո՞ր մարդը կայ՝ որուն որդին եթէ հաց ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր։ 10—Ու կամ եթէ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ պիտի տայ անոր։ 11—Ուստի եթէ դուք որ չար էք, ձեր զաւակներուն ազնիւ ընծաներ տալ գիտէք, ո՛րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է, բարի բաներ պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն։

12—Ուստի ամէն ինչ որ կ՚ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս րնէք, քանզի այս է օրէնքը ու մարգարէները։

13—Նեղ դռնէն մտէք. վասն զի լայն է այն դուռը ու ընդարձակ՝ այն ճամբան, որ կ՚երթ կորուստ կը տանի. և շատ որ են անոնք որ անկէ կը մտնեն. 14—Վասն զի նեղ է այն դուռը ու նեղուցած է այն ճամբան, որ կ՚երթ կեանք կը տանի. և քիչ որ են անոնք որ զանիկա կը գտնեն։

15—Զգոյշ կեցէք սուտ մարգարէներէն, որոնք ձեզի կու գան ոչխարի հանդերձներով, բայց ներսէն յափշտակող գայլեր են։ 16—Իրենց պտուղներէն պիտի ճանչնաք զանոնք. միթէ փուչերէն խաղող կը քաղե՞ն, կամ տատասկէն թուզ։ 17—Այսպէս ամէն բարի ծառ բարի պտուղ կու տայ, և չար ծառ չար պտուղ կու տայ։ 18—Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ տալ։ 19—Ամէն ծառ որ բարի պտուղ չտար, կը կարուի ու կրակի կը ձգուի. 20—Ուրեմն իրենց պտուղներէն պիտի ճանչնաք զանոնք։

21—Ոչ թէ ամէն մէկը որ ինծի Տէր, Տէր, կ՚ըսէ, պիտի մտնէ երկինքի Թագաւորութիւնը, հապա անիկա՝ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ։ 22—Շատերը այն օրը ինծի պիտի բսեն, Տէր, Տէր, չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և քու անունովդ դևեր հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք։ 23—Ես այն ատեն անոնց յայտնապէս պիտի ըսեմ Թէ Ես բնաւ ձեզ չեմ ճանչնար. մեկնի գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք։

24—Արդ ով որ իմ խօսքերս կը լսէ և կը կատարէ զանոնք, զանիկա պիտի նմանցնեմ խելացի մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ չինեց։ 25—Ու

անձրև. իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու չինաւ, վասն զի վէմի վրայ հաստատուած էր։ 26—Ու ով որ այս իմ խօսքերս կը լսէ ու չկատարեր զանոնք, կը նմանի անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ չինեց։ 27—Ու անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու փլաւ, և մեծ էր անոր կործանումը։

28—Ու երբ Յիսուս լմնցուց այս խօսքերը, ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ։ 29—Վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ դպիրներուն պէս։

Գլ. Ը

Ու երբ այն լեռնէն վար իջաւ, շատ ժողովուրդներ գացին անոր ետեւէն։ 2—Ու ահա բորոտ մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, եթէ ուզես, կրնաս զիս մաքրել։ 3—Ու Յիսուս իր ձեռքը երկնցնելով դպաւ անոր ու բաւ, Կ'ուզեմ, մաքրուի։ և չուտ մը անոր բորոտութիւնը մաքրուեցաւ։ 4—Ու Յիսուս ըսաւ անոր, Զգոյշ կեցիր, մարդո՛ւ չըսես, հապա գնա, քեզ քահանային ցուցուր, և Մովսէսի պատուիրած ընծան տուր, անոնց վկայութիւն ըլլալու համար։

5—Ու *երբ Կափառնայում մտաւ, հարիւրապետ մը եկաւ քովը, կ'աղաչէր անոր, 6—Ու կ'ըսէր, Տէր, իմ ծառաս տունը անդամալոյծ պառկած չարաչար կը տանջուի։ 7—Ու Յիսուս բաւ անոր, Ես կու գամ և զանիկա կը բժշկեմ։ 8—Ու հարիւրապետը պատասխան տալով ըսաւ, Տէր, ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակ մտնես. միայն թէ խօսքով ըսես, ու իմ ծառաս պիտի բժշկուի։ 9—Վասն զի ես ալ իշխանութեան տակ մարդ մըն եմ, ու իմ հըռամներս տակ զինուորներ ունիմ. և ասոր կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին՝ Թէ կուբս, ու կու գայ. և ծառայիս՝ Թէ Այս բանը ըրէ, ու կ'ընէ։ 10—Յիսուս երբ լսեց, զարմացաւ, և իր հետևէն գացողներուն բաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ հաւատք չգտայ։ 11—Ու ձեզի կ'ըսեմ որ արեւելքէն ու արեւմուտքէն շատեր պիտի գան, ու երկինքի թագաւորութեանը մէջ պիտի բազմին Աբրահամի ու Իսահակի և Յակոբի հետ։ 12—Իսկ թագաւորութեանը որդիները դուրսի խաւարը պիտի հանուին. հոն պիտի լլալ ու ակռաները կրճտել։ 13—Ու Յիսուս հրեշտակաւին բաւ, Գնա, ու ինչպէս դուն հաւատացիր, այդպէս քու ըլլայ քեզի։ և նոյն ժամուն անոր ծառան բժշկուեցաւ։

14—Ու Յիսուս Պետրոսի տունը գալով, տեսաւ որ անոր զոքանչը ջերմ բռնուած՝ պառկած էր։ 15—Ու անոր ձեռքին բռնեց, ու ջերմը թող տուաւ զանիկա. ան ալ ոտքի վրայ ելաւ և *անոնց սպասաւորութիւն կ'ընէր։

16—Երբ իրիկուն եղաւ, շատ դեւահարներ բերին անոր, ու խօսքով հանեց չար ոգիները և բոլոր հիւանդները բժշկեց։ 17—Որպէս զի Եսայի մարգարէին ձեռքով ըսած խօսքը կատարուի, Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց և ախ տարերը կրեց։

18—Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տեսնելով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան։ 19—Ու գրիչ մը մօտենալով՝ ըսաւ անոր, Վարդապետ, ես քու ետեւէդ պիտի գամ ուր որ երթաս։ 20—Ու Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջեր ունին, ու երկինքի թռչունները բոյներ, բայց Որդին մարդոյ որ տեղ չդնէ, ուր իր գլուխը դնէ։ 21—Ու մէկ ուրիշը, որ անոր աշակերտներէն էր, ըսաւ անոր, Տէր, ինծի հրաման տուր, որ երթամ առաջ իմ հայրս թաղեմ։ 22—Յիսուս ըսաւ անոր, Ետեւէս եկուր, ու թող մուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները։

23—Ու երբ նաւը մտաւ, իր աշակերտները իր ետեւէն գացին։ 24—Ու ահա մեծ ալեկոծութիւն մը եղաւ ծովուն մէջ, այնպէս որ նաւը ալիքներէն կը ծածկուէր. իսկ ինք կը քնանար։

*Ոմանք, երբ Յիսուս

*Ոմանք, անոր

25—Ու աշակերտները մօտ գացին, արթնցուցին զանիկա ու բսին, Տէր, ազատէ մեզ, ահա կը կորսնինք։ 26—Ու ըսաւ անոնց, Թերահաւատներ, ինչո՞ւ վախեցաք կոր. այն ատեն ելաւ հովերուն ու ծովուն հանդարտութիւն մեծ հանդարտութիւն եղաւ։ 27—Ու մարդիկը զարմացան և կ'ըսէին, Ի՞նչպիսի մարդ է ասոր հովերը ու ծովը ասոր կը հնազանդին։

28—Ու երբ միւս կողմը *Գերգեսացոց երկիրը անցաւ, երկու դիւահար պատահեցան իրեն գերեզմաններէն ելած՝ սաստիկ կատաղ, այնպէս որ ոեւէր չէր մարդու այն ճամբային անցնիլ։ 29—Ու ահա ազազակեցին ու բսին, Ի՞նչ բան ունիս, ասենէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար։ 30—Ու անոնցմէ հեռու չատ խոզերու երամակ մը կար, որոնք կ'արածուէին։ 31—Ու դեւերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Եթէ մեզ կը հանես, հրամայէ տար մեզի որ երթանք խոզերուն երամակին մէջ մտնենք։ 32—Ու ըսաւ անոնց, Գացէք. ու անոնք ելան գացին խոզերուն երամակին մէջ մտան, և ահա բոլոր երամակը գահավէժ տեղէն ծովը վազեցին, ու ջուրերուն մէջ մեռան։ 33—Հոտ բածներն ալ փախան, և քաղաքը երթալով բոլորը պատմեցին, ու դիւահարներուն պատահածը բաները։ 34—Ու ահա բոլոր քաղաքը Յիսուսի դիմաց ելաւ, ու երբ տեսան զանիկա, աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ։

Գլ. Թ

Ե նաւը մտնելով անդին կողմը անցաւ, ու եկաւ իր քաղաքը։ 2—Ու ահա բերին իրեն անդամալոյծ մը, որ մահիճի մէջ պառկած էր։ և Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին, Քաջալերուէ, որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են։ 3—Ու ահա գրիչներէն ոմանք իրենց Ինքնէն մէջ ըսին, Աստիկա հայհոյութիւն կ'ընէ։ 4—Յիսուս ալ անոնց խորհուրդները իմանալով

*Ոմանք, Գադարացւոց

բսաւ, Ինչո՞ւ սիրտերնուդ մէջ չար բաներ կը խորհիք։ 5—Քանզի ո՞րը աւելի գիւրին է. Քու մեղքերդ ներուած են՝ ըսելը, Թէ ելիր ու քալէ՝ ըսելը։ 6—Բայց որպէս զի գիտնաք Թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու Թողութիւն տալու, (այն ատեն անդամալոյծին բսաւ,) Ելիր, վերցուր առ ու տունդ գնա։ 7—Ու անիկա ելաւ իր տունը գնաց։ 8—Ժողովուրդները երբ տեսան, զարմացան, ու փառաւորեցին զԱստուած, որ մարդոց այնպիսի իշխանութիւն տուեր էր։

9—Ու Յիսուս անկէ առաջ անցնելով մարդ մը տեսաւ Մատթէոս անունով, որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու բսաւ անոր, Ետեւէս եկուր. ան ալ ելաւ անոր ետեւէն գնաց։ 10—Ու եղաւ որ տունը սեղան նստած ատեն՝ ահա ուրիշ շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկած ու սեղան նստած էին Յիսուսի ու անոր աշակերտներուն հետ։ 11—Ու փարիսեցիները երբ տեսան, բսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ։ 12—Բայց Յիսուս երբ լսեց՝ բսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն։ 13—Գացէք սորվեցէք Թէ ինչ է այս Խօսքը, Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ Թէ զոհ. վասն զի ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները *ապաշխարութեան։

14—Այն ատեն Յովհաննէսի աշակերտները անոր եկան ու բսին, Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք, և քու աշակերտներդ չեն պահեր։ 15—Ու Յիսուս բաւ անոնց, Միթէ կարելի՞ է որ հարսնիքին ազգաը սուգ պահեն, քանի որ փեսան իրենց հետ է. բայց օրեր պիտի գան որ երբ փեսան իրենցմէ վերցուի, այն ատեն ծոմ պիտի պահեն։ 16—Ու մէկը չկը նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ, քանզի ան որ անոր լրութեանը համար ըլլուած է, կ'առնէ հանդերձէն, ու պատուածքը աւելի գէշ կ'ըլլայ։ 17—Ու ալ նոր գինին հին սրիկներու մէջ

*Ոմանք չասին

կը դնեն, եթէ ոչ՝ տիկերը կը պատռին ու գինին կը թափի, և տիկերը կը կորսուին. հապա նոր գինին նոր տիկերու մէջ կը դնեն, ու երկուքն ալ կը պահուին։

18—Երբ անոնց հետ այս բաները կը խօսէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագու Քրիստոսի կ'ընէր ու կ'ըսէր, Աղջիկս ա՛յ մինչև հիմա մեռած է, բայց եկուր ձեռքդ անոր վրայ դիր, ու պիտի ապրի։ 19—Ու Յիսուս ելաւ ու իր աշակերտներուն հետ անոր ետևէն գնաց։

20—Ու ահա տասներկու տարուան տեղատեղ կին մը մօտեցաւ ետևէն, անոր հնդկերթին գրպանին դպաւ։ 21—Ինքնիր իր Ճշտին մէջ կ'ըսէր, եթէ միայն անոր հանդերձին դպչիմ, պիտի բժշկուիմ։ 22—Բայց Յիսուս երբ ետին դարձաւ ու տեսաւ զանիկա, ըսաւ, Քաջալերուէ, աղջիկ, քու հաւատդ քեզ բժշկեց։ և կինը նոյն ժամուն բժշկուեցաւ։

23—Ու երբ Յիսուս իշխանին տունը եկաւ, ու տեսաւ փողահարները և խռոված բազմութիւնը, 24—Ըսաւ անոնց, Մեկնեք գացէք, վասն զի աղջիկը մեռած չէ, հապա կը քնանայ։ և ծաղր կ'ընէին զանիկա։ 25—Ու երբ բազմութիւնը դուրս ձգուեցաւ, ինք ներս մտաւ, անոր ձեռքէն բռնեց, ու աղջիկը ոտք եկաւ։ 26—Ու այս լուրը բոլոր երկիրը տարածուեցաւ։

27—Ու երբ Յիսուս անկէ՝ առաջ անցաւ, երկու կոյր ետևէն եկան, կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ողորմի մեզի, Որդի Դաւիթ։ 28—Ու երբ տունն եկաւ, կոյրերը իրեն եկան. և Յիսուս անոնց ըսաւ, Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը յետ բնել։ ըսին անոր, Այո, Տէր։ 29—Ապա անոնց աչքերուն դպաւ ու ըսաւ, Ձեր հաւատքին պէս թող ըլլայ ձեզի։ 30—Ու անոնց աչքերը բացուեցան. և Յիսուս սաստիկ պատուէր տուաւ անոնց ու ըսաւ, Զգոյշ կեցէք, մի՛կը չիմանայ։ 31—Բայց անոնք ելան, այն բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարածեցին։

32—Ու երբ անոնք դուրս ելան, ահա համր դիւահար մարդ մը բերին իրեն։ 33—Ու երբ դեւը հանուեցաւ, համրը խօսեցաւ. և ժողովրդները զարմացան ու կ'ըսէին Թէ Իսրայէլի մէջ բնաւ այսպիսի բան մը տեսնուած չէ։ 34—Բայց փարիսեցիները կ'ըսէին Թէ Սատանան իշխանաւորն է դեւերը հանել։

35—Ու Յիսուս կը պտրտէր բոլոր քաղաքները ու գիւղերը, և անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր ու կը քարոզէր աւետարանը արքայութեան և ամէն հիւանդութիւններ ու ամէն տկարութիւններ ժողովուրդին մէջ։ 36—Ու ժողովուրդները տեսնելով, անոնց վրայ խղճաց, վասն զի յոգնած ու ցիրուցան եղած էին հովիւ չունեցող ոչխարներու պէս։ 37—Աշակերտներուն, Հունձքը շատ է, բայց բանուորները քիչ։ 38—Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ բանուորներ հանէ իր հունձքին։

Գլ. Ժ

Եւ իր քով կանչելով իր տասներկու աշակերտները, անոնց իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ, որպէս զի զանոնք հանեն, և ամէն ցաւերը ու ամէն հիւանդութիւնները բժշկեն։

2—Ու տասներկու առաքեալներուն անունները ասոնք են. առաջինը Սիմոն, Պետրոս ըսուածը և անոր եղբայրը Անդրեաս, 3—Յակոբոս Զեբեդեան և անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթողիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեան և Դեբբէոս որ Թադէոս մականունցուած, 4—Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովացի, որ նաև մատնեց զանիկա։

5—Այս տասներկուքը Յիսուս զրկեց, և անոնց պատուիրեց՝ ըսելով, Հեթանոսներուն ճամբայ մի երթաք ու Սամարացիներու քաղաք մի մտնէք։ 6—Հապա աւելի Իսրայէլի տանը կորսուած ոչխարներուն գացէք։ 7—Ու երբ կ'երթաք, քարոզեցէք ու ըսէք Թէ երկինքի թագաւորութիւնը մօտեցած է։ 8—Հիւանդները բժշկեցէք, բորոտները *մաքրեցէք, դեւերը հանեցէք. ձրի առեր էք, ձրի տուէք։ 9—Մի առնաք ոսկի,

*Ոմն.՝ մաքրեցէք, մեռեալները յարուցէք

և ոչ արծաթ, և ոչ պղինձ ձեր գօտիներուն մէջ, 10—Ոչ ճամբու համար պարկ, և ոչ կրկին հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան. վասն զի մշակը իր կերակուրին արժանի է։ 11—Ու ո՛ր քաղաք կամ գիւղ մտնէք, հարցուցէք Թէ ո՛վ է անոր մէջ արժանաւոր, ու հոն կեցէք մինչև ելլէք։ 12—Ու երբ տունը կը մտնէք, բարև տուէք *անոր։ 13—Ու եթէ այն տունը արժանաւոր է, ձեր բարևը անոր վրայ գայ. հապա եթէ արժանաւոր չէ, ձեր բարևը ձեզի դառնայ։ 14—Ու ով որ ձեզ չընդունի, ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբ այն տունէն կամ քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին թօթուեցէք։ 15—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը քան Թէ այն քաղաքին։

16—Ահա ես ձեզ կը զրկեմ իբրև ոչխարներ գայլերու մէջ. ուստի օձերու պէս խոհեմ եղէք և աղաւնիներու պէս միամիտ։ 17—Իսկ մարդոցմէ զգուշացէք. վասն զի ձեզ առեանդներու պիտի մատնեն, ու իրենց ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն։ 18—Ու իմ *ետևէս համար կուսակալներու ու թագաւորներու առջև պիտի տարուիք, անոնց և հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար։ 19—Բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի ընէք Թէ ինչպէս կամ ի՛նչ պիտի խօսիք, վասն զի ձեզի պիտի տրուի այն ժամուն՝ ինչ որ պիտի խօսիք։ 20—Վասն զի ոչ Թէ դուք էք որ կը խօսիք, հապա ձեր Հօրը Հոգին՝ որ ձեր ներսիդին կը խօսի։ 21—Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մատնէ, և հայրը՝ որդին. և որդիներ ելլելով ծնողքներուն վրայ պիտի յարձանին ու մեռցնեն զանոնք։ 22—Ու իմ անունիս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք, բայց ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի։ 23—Ու երբ այս քաղաքին մէջ ձեզ կը հալածեն, ուրիշ *տե՛ղ փախչիք. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի քաղաքները պիտի չհասցնէք, մինչև Որդին մարդոյ գայ։ 24—Աշակերտը իր վարդապետէն աւելի չէ, և ոչ ծառան իր տէրոջմէն։ 25—Հերիք է աշակերտին՝ որ իր վարդապետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տէրոջը պէս. եթէ տանտէրը Բէեզեբուղ կոչեցին, ո՛րչափ աւելի անոր ընտանիները։ 26—Ուստի մի վախնաք անոնցմէ, վասն զի բան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտնուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի։ 27—Ինչ որ ձեզի մթին մէջ կ'ըսեմ, ըսէ՛ք լոյսի մէջ խօսեցէք, և ինչ որականջի է վար կը լսէք, ամբիոններուն վրայ քարոզեցէք։ 28—Ու մի վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպանեն, ու չեն կրնար հոգին սպաննել. հապա աւելի անկէ վախցէք զուք, որ կրնայ հոգին ու մարմինը գեհենին մէջ կորսնցնել։ 29—Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին, և անոնցմէ մէ՛կը գետինը չիյնար առանց ձեր Հօրը։ 30—Բայց ձեր գլուխն բոլոր մազերն ալ համրուած են։ 31—Ուրեմն մի վախնաք, վասն զի շատ ճնճղուկներէն լաւ էք դուք։ 32—Արդ ով որ մարդոց առջև զիս կը դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է։ 33—Ու ով որ մարդոց առջև զիս կ'ուրանայ, ես ալ զանիկա պիտի ուրանամ իմ Հօրս առջև՝ որ երկինքն է։ 34—Մի կարծէք Թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ. խաղաղութիւն ձգելու չեկայ՝ հապա սուր։ 35—Վասն զի եկայ մարդը իր Հօրմէն զատելու, ու աղջիկը իր մօրմէն, ու հարսը իր կեսուրէն։ 36—Ու մարդուն թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան։ 37—Ան որ հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ. և ան որ ազան կամ աղջիկը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ. 38—Ու ան որ իր խաչը չառնէր ու իմ ետևէս գար, ինծի արժանի չէ. 39—Ան որ իր անձը կը գտնէ, պիտի կորսնցնէ զանիկա. և ան որ իր անձը ինծի համար կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա։ 40—Ան որ ձեզ կ'ընդունի, զիս կ'ընդունի. և ան որ զիս կ'ընդունի, զիս զրկողը կ'ընդունի։ 41—Ան որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէի անունով,

*Ոմն.՝ անոր՝ ու ըսէք, բարև այս տանը

մարգարէի վարձք կ'առնէ. և ան որ արդար մը կ'ընդունի արդարի անուանով, արդարի վարձք կ'առնէ։ 12—Ու ան որ այս պզտիկներէն մէկուն միայն գաւաթ մը պաղ ջուր կը խմցնէ աշակերտի անուանով, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, բնաւ իր վարձքը պիտի չկորսնցնէ։

ԳԼ. ԺԱ

Ե եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր տասներկու աշակերտներուն պատուէր տալը, գնաց անկէ անոնց քաղաքներուն մէջ քարոզելու և սորվեցնելու։

2—Իսկ Յովհաննէս բանտին մէջ երբ լսեց Քրիստոսի գործերը, իր աշակերտներէն երկուքը ղրկելով 3—Ըսաւ անոր, Դուն ա՞ն ես որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասենք։ 4—Ու Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Գացէք պատմեցէք Յովհաննէսի ինչ որ կը լսէք ու կը տեսնէք. 5—Կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն ու ազգատներուն աւետարան կը քարոզուի։ 6—Ու երանի՛ անոր որ իմ վրայով չգայթակղիր։

7—Ու երբ անոնք գացին, Յիսուս սկսաւ ժողովրդներուն ըսել Յովհաննէսի համար, Ի՞նչ տեսնելու ելաք անապատին մէջ. եղի՞ց մը հովէն շարժուած։ 8—Ըսպա ի՞նչ տեսնելու ելաք. փափուկ հանդերձներ հագած մարդ մը. ահա փափուկ հագուստներ հագնողները թագաւորներուն տուներն են։ 9—Ըսպա ի՞նչ տեսնելու ելաք. մարգարէ՞ այո, կ'ըսեմ ձեզի, մարգարէին ալ աւելի։ 10—Վասն զի ասիկա ի՛նք որու համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ առջեւէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջեւէդ։ 11—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Կիներէն ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն մեծը եւած չէ. սակայն երկինքի թագաւորութեան մէջ ամենէն պզտիկը անկէ մեծ է։ 12—Ու Յովհաննէս Մկրտիչին օրերէն մինչեւ հիմա երկինքի թագաւորութիւնը ուժով կ'առնուի, և ուժեղները կը յափշտակեն զանիկա։ 13—Վասն զի բոլոր մարգարէները ու օրէնքը մինչեւ Յովհաննէս մարգարէութիւն ըրին։ 14—Ու եթէ կ'ուզէք ընդունիլ, անիկա է Եղիան՝ որ պիտի գար։ 15—Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ։ 16—Բայց որո՞ւ նմանցընեմ այս ազգը. կը նմանի տղոց, որոնք չուկաները նստելով իրենց ընկերներուն կը կանչեն, 17—Ու կ'ըսեն, Փող հնչեցուցինք ձեզի՝ ու չխաղացիք, ողբ կ'արդացինք ձեզի՝ ու կոծ չըրիք։ 18—Վասն զի Յովհաննէս եկաւ, ոչ կ'ուտէր և ոչ կը խմէր, ու կ'ըսեն, Դեւ կայ անոր ներսիդին։ 19—Մարդի Որդին եկաւ, կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսեն, Ահա ուտող և արբեցող մարդ մը, մաքսատուններու ու մեղաւորներու բարեկամ. և իմաստութիւնը արդարացաւ իր գործերէն։

20—Այն ատեն սկսաւ նախատել այն քաղաքները, որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներէն շատերը, քանզի չապաշխարեցին։ 21—Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա, վասն զի եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած լինային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, շատոնց քու բոժով ու մոխրով ապաշխարած պիտի լինային։ 22—Բայց ձեզի կ'ըսեմ, Տիւրոսի և Սիդոնի աւելի դիւրին պիտի լինայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի։ 23—Ու դուն, Կափառնայում, որ մինչեւ երկինք բարձրացած ես, մինչեւ դժոխք պիտի իջնես, վասն զի եթէ Սոդոմի մէջ եղած լինային այն հրաշքները որոնք քու մէջդ եղան, էջա՛ր մինչեւ այսօր դեռ պիտի մնար։ 24—Բայց ձեզի կ'ըսեմ որ Սոդոմացւոց երկրին աւելի դիւրին պիտի լինայ դատաստանին օրը՝ քան թէ քեզի։

25—Նոյն ժամանակ պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկինքի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն, ու տղոց յայտնեցիր։ 26—Այո, ով Հայր, վասն զի քու առջեւդ այսպէս հաճելի եղաւ։ 27—Ամէն բան ինծի պատուիրուած իմ Հօրմէս ու ոչ ոք կը ճանչնայ Որդին՝ բայց Հայրը, և ոչ ոք կը ճանչնայ Հայրը՝ բայց Որդին, և ան՝ որու Որդին կ'ուզէ յայտնել։ 28—Եկէք ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, և ես ձեզ պիտի հանգչեցնեմ։ 29—Իմ լուծս ձեր վրայ առէք, և ինծմէ սորվեցէք՝ որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք։ 30—Վասն զի իմ լուծս փայտը է, և իմ բեռս թեթեւ։

ԳԼ. ԺԲ

Ա՛յն ատեն Յիսուս շաբաթ օրը գնաց արտերուն միջէն, և իր աշակերտները անօթեցան, ու սկսան ցորենի հասկեր փրցնել և ուտել։ 2—Փարիսեցիները երբ տեսան, բսին անոր, Ահա քու աշակերտներդ կը գործեն ինչ որ արժան չէ շաբաթ օրը գործել։ 3—Ան ալ անոնց բսաւ, Չէ՞ք կարդացեր դուք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինք ու անոնք որ իրեն հետ էին. 4— Ի՛նչպէս մտաւ Աստուծոյ տունը, և առաջնաւորութեան հացերը կերաւ, որ ոչ իրեն օրինաւոր էր ուտել, և ոչ անոնց որ իրեն հետ էին, բայց միայն քահանաներուն։ 5—Կամ չէ՞ք օրէնքին մէջ կարդացեր, որ քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ են։ 6—Բայց ձեզի կ'ըսեմ որ այս տեղ տաճարէն մեծ մէկը կայ։ 7—Ու եթէ գիտնայիք թէ ի՛նչ ըսել է, Ողորմութիւն կ'ուզեմ ու ոչ զոհ, չէիք դատապարտեր անպարտները։ 8—Քանզի Որդին մարդոյ *շաբաթին տէրն է։

9—Ու անկէ երթալով եկաւ անոնց ժողովարանը։ 10—Ու նոն մարդ մը կար որուն ձեռքը չորցած էր. և հարցուցին անոր, ու բսին թէ շաբաթ օրը բժշկել արժա՞ն է, որպէս զի անոր վրայով ամբաստանութիւն բնեն։ 11—Ան ալ բսաւ անոնց, Ձեզմէ ո՞ր մարդը կայ, որ ոչխար մը ունենայ, և անիկա շաբաթ օրը փոսի մէջ իյնայ, պիտի չբռնէ՞ ու վեր հանէ զանիկա։ 12—Որդ ո՞րչափ աւելի է մարդը ոչխարէն. ուրեմն շաբաթ օրը բարի գործել արժան է։ 13—Այն ատեն բսաւ այն մարդուն, երկնցուր ձեռքդ։ ան ալ երկնցուց, ու ոջխացաւ միւսին պէս։ 14—Իսկ փարիսեցիները գացին կըլխով անոր վրայ խորհուրդ կ'ընէին թէ ի՛նչպէս զանիկա կորնչցնեն։

15—Ու Յիսուս երբ գիտցաւ, գաւառացաւ անկէ. և շատ ժողովրդներ անոր եեսէ եղան գացին, ու ամէնը բժշկեց, 16—Ու սաստիկ պատուիրեց անոնց որ զինք չ–ըչ–ո՛–չ յայտնեն. 17—Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին ձեռքով բսուած խօսքը, 18—Ահա իմ ծառաս, զոր ընտրեցի, Ե իմ սիրելիս, որու հաւնեցաւ իմ անձս. իմ Հոգիս անոր վրայ պիտի դնեմ, ու հեթանոսներուն իրաւունք պիտի պատմէ։ 19—Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի ազազակէ, և ոչ մէկը պիտի լսէ անոր ձայնը հրապարակներուն մէջ։ 20—Ջախջախուած եղէգը պիտի չիրխրէ, ու պղպջած պատրոգը պիտի չմարէ, մինչեւ որ դատաստանը յաղթութեան հանէ։ 21—Ու հեթանոսները անոր անուանը պիտի յուսան։

22—Այն ատեն կոյր ու համր դեւահար մը բերին իրեն, և զանիկա բժշկեց, այնպէս որ համրը ու կոյրը խօսացաւ ու տեսաւ։ 23—Ու բոլոր ժողովրդները զարմացան ու կ'ըսէին, Արդեօք սա՞կ է Դաւիթի որդին։ 24—Բայց փարիսեցիները երբ լսեցին՝ բսին, Ասիկա *Բէէլ Զեբուղ չհաներ դեւերը, բայց գեւերուն Բէէզեբուղ իշխանովը։ 25—Ու Յիսուս անոնց խորհուրդները իմանալով բսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի. և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնուած՝ չիկրնար կենալ։ 26—Ու եթէ Սատանայ Սատանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուեցաւ. ուստի ի՞նչպէս պիտի կենայ անոր թագաւորութիւնը։ 27—Ու եթէ ես Բէէզեբուղով դեւերը կը հանեմ, ձեր որդիները ի՞նչով կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։ 28—Բայց եթէ ես Աստուծոյ Հոգիովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։ 29—Կամ ի՞նչպէս կրնայ մէկը զօրաւոր մարդու մը տունը մտնել, և անոր կարասիները յափշտակել եթէ առաջ այն զօրաւոր

*Ոմանք, շաբաթին ալ

մարդը չկապէ, ու ճոպը անոր առնէ կողոպտէ։ 30—Ան որ ինծի հետ չէ, ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ չժողվեր, ցիր ու ցան կ'ընէ։ 31—Անոր համար ձեզի կ'ըսեմ, Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց։ 32—Ու ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ կ'ըսէ, պիտի չներուի անոր, ոչ այս աշխարհին մէջ և ոչ գալու ալէ֊հրէին մէջ։ 33—Կա՛մ ծառը բարի ըրէք, ու անոր պտուղը բարի, կա՛մ ծառը չար ըրէք, ու անոր պտուղը չար. վասն զի ծառը պտուղէն կը ճանչցուի։ 34—Իժերու ծնունդներ, ինչպէս կրնաք բարի խօսիլ, որ չար էք. վասն զի սրտին առատութենէն բերան կը խօսի։ 35—Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ, և չար մարդը էջ ալ֊էն չար գանձէն չար բաներ կը հանէ։ 36—Բայց ձեզի կ'ըսեմ թէ Ամէն դատարկ խօսքի համար՝ զոր մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշիւ պիտի տան։ 37—Վասն զի քու խօսքերէդ պիտի արդարանաս, և քու խօսքերէդ պիտի դատապարտուիս։

38—Ա֊ն ատեն դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք պատասխան առին իրեն ու ըսին, Վարդապետ, կ'ուզենք քեզմէ նշան մը տեսնել։ 39—Անիկա պատասխան առաւ ու անոնց ըսաւ, Չար և շնացող ազգը նշան կ'ուզէ, և ո֊ՐԷՒԷ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը։ 40—Քանզի ինչպէս Յովնան երեք օր ու երեք գիշեր կէտ ձուկին փորին մէջ էր, այնպէս Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրի սրտին մէջ երեք օր ու երեք գիշեր։ 41—Նինուէի մարդիկը դատաստանին ՏԷԸ այս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դատապարտեն ասիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնովը զղջի եկան. և ահա Յովնանէ մեծ մէկը կայ հոս։ 42—Հարաւի թագուհին դատաստանին ՏԷԸ այս ազգին դէմ պիտի ելլէ ու պիտի դատապարտէ ասիկա, վասն զի ինք երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս։

43-Ու երբ պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ անջուր տեղեր կը պտրտի, հանգստութիւն կը փնտռէ ու չգտներ. 44—Ա֊յն ատեն կ'ըսէ, Դառնամ նորէն իմ տունս, ուրկէ ելայ. և կու գայ ըՆՒԻ֊կը գտնէ պարապ, մաքրուած ու յարդարուած։ 45—Ա֊յն ատեն կ'երթայ և իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ. այսպէս պիտի ըլլայ այս չար ազգին ալ։

46—Ու քանի որ ինք ժողովուրդին կը խօսէր, ահա իր մայրը ու եղբայրները դուրսը կայներ էին, և կ'ուզէին իրեն հետ խօսիլ։ 47—Ու մէկը իրեն ըսաւ, Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, և կ'ուզեն քեզի հետ խօսիլ։ 48—Ա֊ն ալ իրեն ըսողին պատասխան առաւ ու ըսաւ, Ո֊վ է իմ մայրս, և ո֊վ են իմ եղբայրներս։ 49—Ու իր ձեռքը դէպ ի իր աշակերտները երկնցնելով ըսաւ, Ահա իմ մայրս և եղբայրներս։ 50—Վասն զի ով որ իմ երկնաւոր Հօրս կամքը կատարէ, անիկա է իմ եղբայրս և քոյրս ու մայրս։

Գլ. ԺԳ

Ա֊յն օրը Յիսուս տունէն ելլելով ծովուն եզերքը նստաւ։ 2—Ու շատ ժողովրդներ քովը ժողվուեցան, այնպէս որ ինք նաւը մտաւ ու նստաւ, և բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ էր։ 3—Ու շատ բաներ խօսեցաւ անոնց առակներով, և ըսաւ,

4—Ահա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ. ու երբ կը ցանէր, մէկ քանիները ճամբուն քով ինկան, և թռչուններ եկան ու կերան զանոնք։ 5—Ու ուրիշները ապառաժուտ տեղերու վրայ ինկան, ուր շատ հող չկար, և շուտ մը բուսան՝ հողին խորութիւն չունենալուն համար։ 6—Արեւուն ծագած ատեր այրեցան, ու արմատ չունենալուն համար չորցան։ 7—Ու ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը եկան ու խեղդեցին զանոնք։ 8—Ու ուրիշները ինկան ազնիւ հողի մէջ, ու պտուղ կու տային՝ ո֊րը հարիւրը, ո֊րը վաթսունը, և ո֊րը երեսունը։ 9—Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

10—Ու աշակերտները մօտենալով ըսին իրեն, Ինչո՞ւ համար առակներով կը խօսիս անոնց։ 11—Ան ալ պատասխան առաւ ու ըսաւ անոնց, Անոր համար՝ որ ձեզի տրուած է գիտնալ երկնքի թագաւորութեան խորհուրդները, և անոնց տրուած չէ։ 12—Վասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի ու պիտի աւելցայ, և ով որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի։ 13—Անոր համար առակներով կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն՝ ու չեն տեսներ, և կը լսեն՝ ու չեն լսեր ու միտք չեն առներ։ 14—Ու անոնց վրայ կը կատարուի Եսայիի մարգարէութիւնը որ կ'ըսէ, Լսելով պիտի լսէք, ու պիտի չհմանաք, և տեսնելով պիտի տեսնէք, ու պիտի չտեսնէք։ 15—Վասն զի այս ժողովուրդին սիրտը թանձրացաւ, և իրենց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որպէս զի չլլայ թէ աչքերով տեսնեն և ականջներով լսեն և սրտով իմանան ու դարձի գան, և ես զանոնք բժշկեմ։ 16—Բայց երանի՛ է ձեր աչքերուն որովհետև կը տեսնեն, ու ձեր ականջներուն որովհետև կը լսեն։ 17—Քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ շատ մարգարէներ և արդարներ փափաքեցան ձեր տեսածները տեսնել՝ ու չտեսան, և ձեր լսածները լսել՝ ու չլսեցին։

18—Հիմա դուք սերմ ցանողին առակը լսեցէք։ 19—Ա֊յն ամէնը որ թագաւորութեան խօսքը կը լսէ ու միտք չառներ, չորը կու գայ ու անոր սրտին մէջ ցանուածը կը յափշտակէ. ասիկա այն է որ ճամբուն քով ցանուեցաւ։ 20—Ու ապառաժուտ տեղերու վրայ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զանիկա։ 21—Բայց իր մէջ արմատ չունենալով, փիչ ժամանակ կը տեւէ. ու երբ նեղութիւն կամ հալածանք լսելու խօսքին համար, շուտ մը կը գայթակղի։ 22—Ու փուշերուն մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զգայնութիւնը և հարստութիւնը խեղդեն զանիկա, ու կ'ըլլայ անպտուղ։ 23—Իսկ ազնիւ հողի մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, միտք կ'առնէ, և պտուղ կու տայ, ո֊րը հարիւր, ո֊րը վաթսուն, ու ո֊րը երեսուն։

24—Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ, Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց։ 25—Ու երբ մարդիկ կը քնանային, իր թշնամին եկաւ ու ցորենին մէջ սերմ ցանեց և գնաց։ 26—Ու երբ խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ ետև սերմն ալ երեցաւ։ 27—Ու տան տանուտէրոյ ծառաները մտնելով ըսին իրեն, Տէր, չէ՞ որ դուն քու սրտիդ մէջ բարի սերմ ցանեցիր. ուրեմն սերմը ուրկէ՞ ունի։ 28—Ու անիկա ըսաւ անոնց, Թշնամի մարդ մը բրած է ասիկա. ծառաները իրեն ըսին, Հիմա կու գո՞ս որ երթանք զանիկա մէկդի քաղենք։ 29—Ան ալ ըսաւ, Ոչ, չըլլայ թէ սերմը քաղած ատենիդ ցորենն ալ անոր հետ փրցնէք։ 30—Թող ատեր որ երկուքն ալ մինչեւ հունձքի ատենը. և հունձքի ատենը հնձողներուն պիտի ըսեմ, Առաջ սերմը քաղեցէք, և զանիկա խուրձ խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք։

31—Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ, Երկինքի թագաւորութիւնը մանանեխի հատի նման է, զոր մարդ մը առաւ, իր արտին մէջ ցանեց։ 32—Որ ամէն սերմերէն պզտիկ է, ու երբ աճի, ամէն խոտերէնէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ, այնպէս որ երկինքի թռչուններն կու գան և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին։

33—Ուրիշ առակ մըն ալ զրուցեց անոնց ՝՝ ըՐԻ, Երկինքի թագաւորութիւնը խմորի նման է, զոր կին մը առաւ, երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչեւ ամէնն ալ խմորեցաւ։

34—Յիսուս այս ամէն բաները առակներով խօսեցաւ ժողովուրդին, ու առանց առակի բան մը չէր խօսեր անոնց։ 35—Որպէս՝ զի կատարուի մար-

գաբէին ձեռքով բռնած խօսքը, Առակներով պիտի բանամ իմ բերանս, աչխարհի սկիզբէն ի վեր ծածկուած բաները յառաջ պիտի բերեմ։

36—Աչն ատեն Յիսուս ժողովրդները Թոզուց, ատենը եկաւ, և իր աչակերտները մտեցան իրեն ու ըսին, Արմին պրծինեըուն առակը մեկնէ մեզի։ 37—Ան ալ պատասխան առաւ ու բսաւ անոնց, Բարի սերմը ցանողը Որդին մարդոյ է։ 38-Ու արտ աչխարհս է. բարի սերմը անոնք են որ Թագաւորութեանը որդիներն են, բայց արմը չարին որդիներն են։ 39—Ու Թշնամին որ զանիկա ցանեց, Սատանան է, և հունձքը աչխարհիս վերջն է, ու հնձողները հրեչտակներն են։ 40—Ուրդ ինչպէս որ արմը կը ժողվուի ու կրակի մէջ կ'այրի, աչխարհիս վերջն ալ այնպէս պիտի ըլլայ։ 41—Որդին մարդոյ իր հրեչտակները պիտի դրկէ, ու պիտի ժողվեն անոր Թագաւորութենէն բոլոր գայթակղութիւնները, և զանոնք որ անօրէնութիւն կը գործեն, 42—Ու կրակի հնոցին մէջ պիտի ձգեն զանոնք. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել։ 43—Աչն ատեն արդարները իրենց Հօրը Թագաւորութեանը մէջ, Ան որ լսելու ականջ ունի Թող լսէ։

44—Դարձեալ երկինքի Թագաւորութիւնը արտի մէջ պահուած գանձի նման է, զոր մարդ մը գտնելով կը ծածկէ, և ուրախութենէն կ'երթայ բոլոր ունեցածը կը ծախէ, ու այն արտը կը գնէ։

45—Դարձեալ երկինքի Թագաւորութիւնը վաճառական մարդու մը նման է, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ։ 46—Ու պատուական մարգարիտ մը գտնելով, գնաց իր բոլոր ունեցածը ծախեց, ու զանիկա գնեց։

47—Դարձեալ երկինքի Թագաւորութիւնը ծովը ձգուած ուռկանի մը նման է, որ ամէն տեսակէն կը ժողվէ։ 48—Երբ լեցուեցաւ, ցամաքը հանեցին, ու նստան՝ ազկիները ամանները մէջ ժողվեցին և անչարը դուրս ձգեցին։ 49—Աչպէս պիտի ըլլայ աչխարհիս վերջը։ Հրեչտակները պիտի ելլեն, ու արդարներուն մէջէն չարերը պիտի զատեն, 50—Ու պիտի ձգեն զանոնք կրակի հնոցին մէջ, հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել։

51—Ըսաւ անոնց Յիսուս, Հասկցա՞ք այս ամէն բաները. բոլն անոր, Այո, Տէր։ 52—Ու անոնք բսաւ անոնց, Անոր համար ամէն դպիր որ երկինքի Թագաւորութեան աչակերտեալ է, նման է տանուտէր մարդու մը որ իր գանձէն նոր ու հին բաներ կը հանէ։

53—Ու երբ կատարեց Յիսուս այս առակները, անկէ մեկնեցաւ։ 54—Ու եկաւ իր գաւառը, ու անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ. մինչև որ կը զարմանային անոնք ու կ'ըսէին, Աթկա ուրկէ՞ ունի այս իմաստութիւնը և հրաչքները. 55—Աթիկա հիսոն որդին չէ՞. ասոր մայրը Մարիամ չէ՞ կոչուիր, ու ասոր եղբայրներ՝ Յակոբոս և Յովսէս ու Սիմոն և Յուդա. 56—Ու ասոր քոյրերը ամէնը մեր քով չե՞ն. ալ ինչ ուրկէ՞ ունի այս ամէն բաները։ 57—Ու անոր վրայով կը գայթակղէին. բայց Յիսուս բսաւ անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ, բայց միայն իր գաւառին ու իր տանը մէջ։ 58—Ու հոն շատ հրաչքներ չըրաւ անոնց անհաւատութեանը համար։

Գլ. ԺԴ

Աչն ժամանակ Հերովդէս չորրորդապետը Յիսուսի համբաւը լսեց։ 2—Ու իր ծառաներուն բսաւ, Անիկա Յովհաննէս մկրտիչն է. անիկա մեռելներէն յարութիւն առած է, և անոր համար հրաչքներ կ'ըլլան անով։

3—Քանզի Հերովդէս Յովհաննէսը բռներ, զանիկա կապեր ու բանտը դրեր էր, իր եղբօր Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար։ 4—Վասն զի Յովհաննէս անոր կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ զանիկա ՚ի՛ւ ունենալ։ 5—Ու սաի կ'ուզեր զանիկա սպաննել, բայց ժողովրդին կը վախնար, վասն զի իրեև մարգարէ կ'ընդունէին զանիկա։ 6—Ու երբ Հերովդէսի ծննդեան օրը եղաւ, Հերովդիայի աղջիկը խաղաց հառդխէ սրտին մէջ. ու Հերովդէսի հաճելի եղաւ։ 7—Ուսաի երդումով խոստացաւ որ ասյ

անոր ինչ որ ուզէր ըլլայ։ 8—Ու անիկա առաջ իր մօրմէն խրատուելով՝ ըսաւ, Տուր ինծի հոս Յովհաննէսա մկրտիչին գլուխը սկուտեղի մը վրայ։ 9—Ու Թագաւորը տրտմեցաւ. բայց երդումնէրուն համար ու իրեն հետ նստողներուն համար հրամայեց ըսաւ որ տրուի։ 10—Ու ղրկելով Յովհաննէսը բանտին մէջ գլխատեց։ 11—Ու անոր գլուխը սկուտեղով բերուեցաւ ու աղջկան, ան ալ իր մօրը տարաւ։ 12—Ու անոր աչակերտները եկան ու մարմինը վերցնելով Թաղեցին, և գացին Յիսուսի պատմեցին։

13—Ու երբ լսեց Յիսուս, անկէ նաւով անապատ տեղ մը գնաց առանձին. երբ լսեցին ժողովրդները, ոտքով անոր հետևեցան գացին էրէնց քաղաքներէն։

14—Ու ՚երբ դուրս ելաւ, չաս ժողովրդ տեսնելով խղճաց անոնց վրայ, ու անոնց հիւանդները բժչկեց։

15—Ու իրիկուան ատեն իր աչակերտները իրեն եկան ու ըսին, Հոս անապատ տեղ մըն է, և ժամանակը ուշացած է. արձակէ ժողովրդները, որպէս զի գեղերը երթան ու իրենց կերակուր գնեն։ 16—Ու Յիսուս անոնց բսաւ, Հարկ չէ որ սատնք երթան, դուք տուէք անոնց որ ուտեն։ 17—Անոնք ալ բսին անոր, Հոս ՚ՐԷՒ ՔՈՒ չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ։ 18—Ու բսաւ ՚ՒՆՁՑ, Հոս ինծի քերէք գոնեն։ 19—Ու հրաման բրաւ որ ժողովրդները խոտին վրայ նստին. և հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ, ու զէպ ի երկինք նայելով օրհնեց, ու կոտրելով նկանակները աչակերտներուն տուաւ, և աչակերտները՝ ժողովրդին։ 20—Ու ամէնը կերան ու կչտացան. և տասուերկու կողով լեցուն ուելցած կտորու անգները վերցուցին։ 21—Ու անոնք որ կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն և տղաքներէն զատ։

22—†Ու չուտ մը աչակերտները արտորցուց որ նաւը մտնեն, և իրմէ առաջ անդիի կողմը անցնին, մինչև որ

*Ոմանք, երբ Յիսուս
†Ոմանք, Ու Յիսուս

1898
35846

ինք ժողովրդները արձակէ։ 23—Ու ժողովրդները արձակելէն եաքը, ինք լեռը ելաւ առանձին ազօթք ընելու. ու երբ իրիկուն եղաւ, հոն մինակ էր։ 24—Իսկ նաւը արդէն ծովուն մէջտեղը ալկոծութեան մէջ էր, վասն զի հովը դէմ էր։ 25—Ու գիչերուան չորրորդ պահուն Յիսուս գնաց ի ծովեզր վրան քալելով։ 26-Ու աչակերտները երբ զանիկա տեսան որ ծովուն վրայ կը քալէր, խռովեցան, և ըսին Թէ աչքի երեւոյթ բան մըն է. ու վախերնէն կանչտռատեցին։ 27—Ու չուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու բսաւ, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք։ 28—Պետրոս պատասխան առաւ անոր ու բսաւ, Տէր, եթէ դուն ես, հրաման բրէ ինծի որ քովդ գամ ջուրերուն վրայէն։ 29—Ան ալ բսաւ, Եկո։ Պետրոս ալ նաւէն իջաւ, քալեռուն վրայէն քալեց ար-պէս զի Յիսուսի քով երթայ։ 30—Բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ, ու երբ սկսաւ ընկղմիլ, պոռզակեց ու բսաւ, Տէր, ազատէ զիս։ 31—Ու Յիսուս չուտ մը իր ձեռքը երկնցուց, բռնեց զանիկա ու անոր բսաւ, Թերահաւատ, ինչո՞ երկմտեցար։ 32—Ու երբ նաւը ելան, հովը դադարեցաւ։ 33—Ու անոնք որ նաւուն մէջ էին, եկան երկրպագութիւն բրին անոր ու ըսին, Իրաւցնէ Որդի Աստուծոյ ես գուն։

34—Ու անդիի կողմը անցնելով, Գեննեսարէթի երկիրը հասան։ 35—Ու երբ այն տեղի մարդիկը ճանչցան զանիկա, ՚ղրկեցին բոլոր չրջակայ տեղերը, ու բոլոր հիւանդները անոր բերին։ 36—Ու կ'աղաչէին անոր, որ միայն իր հանդերձին փղանջին դպչին. և ան-նոնք որ դպան, բժչկուեցան։

Գլ. ԺԵ

Աչն ատեն Յիսուսի եկան գպիրները ու փարիսեցիները, որոնք Երուսաղէմէն էին, ու ըսին, 2—Ինչո՞ ւ քու աչակերտներդ ծերերուն աւանդութիւնը զանց կ'ընեն, վասն զի ձեռքերնին չեն լուար, երբ հաց կ'ուտեն։ 3—Ան ալ պատասխան առաւ ու բսաւ անոնց, Հապա դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանքը

զանց կ'ընէք ձեր աւանդութեան պատճառաւ։ 4—Քանզի Աստուած պատուիրեց՝ ըսելով, Թո՛ հայրդ ու մայրդ պատուէ։ 5—Եւ, Ով որ էջ հայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի։ 6—Բայց դուք կ'ըսէք, Ով որ էջ հօրը կամ մօրը բան թէ Այն բանը զոր ինծմէ պիտի չտեսնս, Ա-ո-ո-ն-յ ո-ւ-ր- ընծայ է։ ու իր հայրը կամ իր մայրը չպատուէ, -ր-ը-ո Է։ և -յ-ո-է- ձեր աւանդութեան պատճառաւ Աստուծոյ պատուիրանքը խափանած էք։ 7—Կեղծաւորներ, ազգիկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Եսայի ու ըսաւ, 8—Այս ժողովուրդը ինձ՝ *չրթունքներովը պիտ կը պատուէ, բայց իրենց սիրտ հեռացած պատուած է ինծմէ։ 9—Ու պարապ տեղը պիտ կը պաշտեն՝ մարդոց պատուիրած բաները էէ-ո- վարդապետութիւն սորվեցնելով։

10—Եւ ժողովուրդները իրեն կանչելով ըսաւ անոնց, Լսեցէք ու միտք ածէք։ 11—Ոչ թէ ինչ որ բերանը կը մանէ՝ կը պղծէ մարդը, հապա ինչ որ բերնէն կ'ելլէ՝ անիկա կը պղծէ մարդը։

12—Այն ատեն իր աշակերտները եկան՝ ըսին իրեն, Գիտէ՞ս որ փարիսեցիները գայթակղեցան երբ լսեցին այն խօսքը։ 13—Ան ալ պատասխան տալով ըսաւ, Ամէն ատենկ զոր իմ երկնաւոր Հայրս չ'անկեր, պիտի խլուի։ 14—Թող ատոնք զանոնք։ էէ-ո- կոյր են, կոյրերու առաջնորդ։ իսկ եթէ կոյրը կոյրին առաջնորդէ, երկուքն ալ փոսը պիտի իյնան։ 15—Եւ Պետրոս պատասխան տալով՝ անոր ըսաւ, Մեկնէ մեզի այս առակը։ 16—Ըսաւ Յիսուս, Դո՛ւք ալ տակաւին անմիտ էք։ 17—Ու չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ որ բերանը կը մանէ՝ փորը կ'երթայ ու արտաքնոցը կը ձգուի։ 18—Բայց բերնէն ելած բաները սրտէն յառաջ կու գան, և անոնք կը պղծեն մարդը։ 19—Վասն զի սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ, սպանութիւններ, չնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ։ 20—Ատոնք են որ կը պղծեն մարդը, բայց անլուայ ձեռքով հաց ուտելը չպղծեր մարդը։

21—Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիւրոսի ու Սիդոնի կողմերը գնաց։ 22—Ու ահա Քանանացի կին մը այն սահմաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու կ'ըսէր, Ողորմի ինծի, Տէր, որդի Դաւիթ։ աղիկս դեւէն սաստիկ կը չարչարուի։ 23—Եւ ինք բնաւ պատասխան մը չտուաւ անոր։ ու իր աշակերտները մօտենալով՝ կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Արձակէ ատիկա, վասն զի մեր ետեւէն կ'աղաղակէ։ 24—Եւ ինք պատասխան տուաւ ու բսաւ, Ես -ր-էէ Հ չղրկուեցայ, բայց միայն Իսրայէլի տան կորսուած ոչխարներուն։ 25—Եւ անիկա եկաւ երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, ազնի ինծի։ 26—Ան ալ պատասխան տուաւ ու բսաւ, Ապիկ չէ ազգ հացը առնել ու շուներուն ձգել։ 27—Ան անիկա բսաւ, Այո, Տէր, վասն զի շուներն ալ իրենց տէրոջ սեղանէն ինկած փշրանքներէն կը կերակրուին։ 28—Այն ատեն Յիսուս պատասխան տուաւ անոր ու բսաւ, Ով կին, քու հաւատդ մեծ է, քու ուզածդ պէս ըլլայ քեզի։ և ծոյն ժամէն անոր աղիկը բժշկուեցաւ։

29—Ու Յիսուս անկէ գնաց, Գալիլեացի ծովեզերքը եկաւ, և լեռը ելլելով հոն նստաւ։ 30—Եւ շատ ժողովուրդներ իրեն եկան, որոնք իրենց հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ շատեր։ ու ձգեցին զանոնք Յիսուսի առջեւ, և բժշկեց զանոնք։ 31—Անպէս որ ժողովուրդները զարմացան, տեսնելով որ համրերը կը խօսէին, հաշմանդամները կը բժշկուէին, կաղերը կը քալէին և կոյրերը կը տեսնէին, ու Իսրայէլի Աստուածը կը փառաւորէին։

32—Եւ Յիսուս իր աշակերտները մօտ կանչելով՝ բսաւ, Կը խղճամ այդ ժողովուրդին վրայ, վասն զի հիմա երեք օր է որ իմ քովս են, և բան մը չունին ուտելու։ ու զանոնք անօթի արձակել չեմ ուզեր, չըլլայ որ ճամբան մարթին։ 33—Իսկ աշակերտները անոր ըսին, Մինչ անապատի մէջ ուրկէ՞ պիտի ունենանք այնչափ հաց, որ այսչափ բազմութիւնը կշտացնենք։ 34—Եւ Յիսուս

*Ոմանք, բերնովը ինծի կը մօտենայ, և չրթունքներովը

բսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք։ անոնք ալ ըսին, Եօթը, ու քանի մը մանր ձուկեր։ 35—Եւ հրաման ըրաւ ժողովուրդին որ գետնին վրայ նստին։ 36—Ու եօթը նկանակը և ձուկերը առաւ, գոհացաւ և կտրեց ու աշակերտներուն տուաւ, աշակերտներն ալ՝ ժողովուրդին։ 37—Կերան ամէնը և կըշտացան, ու եօթը զամբիւղ լիցուն՝ ձկոցած կտրուածքները վերցուցին։ 38—Եւ անոնք որ կերան՝ չորս հազար այր մարդիկ էին, կինոերէն և տղաքներէն զատ։

39—Ու երբ ժողովուրդը արձակեց, նաւը մտաւ ու Մագդալայի սահմանները եկաւ։

ԳԼ. ԺԶ

Եւ փարիսեցիները ու սադուկեցիները փորձ եկան, փորձելով՝ իրմէ կ'ուզէին որ երկինքէն նշան մը ցուցնէ իրենց։ 2—Անիկա պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Երբ իրիկուն կ'ըլլայ, կ'ըսէք թէ Գարշ պիտի ըլլայ, վասն զի երկինք կարմրած է։ 3—Եւ առտուանց՝ Այսօր մրրիկ պիտի ըլլայ, վասն զի երկինք միգապատ ու կարմրած է։ կեղծաւորներ, երկինքի երեսը քննել գիտէք, բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար էէ-ո-։ 4—Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ, և -ր-էէ նշան պիտի չտրուի անոր, բայց Յովնան մարգարէին նշանը։ և Թողուց զանոնք ու գնաց։

5—Ու երբ իր աշակերտները անդիի կողմը անցան, հաց առնելու մոռցեր էին։ 6—Եւ Յիսուս անոնց բսաւ, Նայիցէք ու զգուշացէք փարիսեցիներու ու սադուկեցիներու խմորէն։ 7—Անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չբերինք ձեզի հետ։ 8—Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով՝ բսաւ անոնց, Ձեր մէջ ինչո՞ւ կը խորհիք, թերահաւատներ, թէ հաց չունիք։ 9—Տակաւին չէ՞ք հասկնար և չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին, ու քանի՛ կողով վերցուցիք։ 10—Ո՞չ ալ եօթը նկանակը՝ չորս հազարին, ու քանի՛ զամբիւղ վերցուցիք։ 11—Ի՞նչպէս չէք հասկնար թէ ես հացի համար չըսի ձեզի՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն զգոյշ կենալ։ 12—Այն ատեն հասկցան որ հացի խմորէն զգուշանալ չըսաւ, հապա փարիսեցւոց ու սադուկեցւոց վարդապետութենէն։

13—Եւ Յիսուս Փիլիպպոսի Կեսարիային կողմերը երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու բսաւ, Մարդիկ ո՞վ կ'ըսեն Որդի մարդոյ։ 14—Ու անոնք բսին, Ոմանք կ'ըսեն Իւ Յովհաննէս մկրտիչն է, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը։ 15—Ըսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ եմ։ 16—Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու բսաւ, Դուն ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին։ 17—Եւ Յիսուս պատասխան տուաւ ու բսաւ անոր, Երանի՛ քեզ, Սիմոն, Յովնանի որդի, վասն զի մարմինը և արիւնը քեզի չյայտնեց -ր-էէ-, հապա իմ Հայրս՝ որ երկինքն է։ 18—Եւ ես քեզի կ'ըսեմ որ Դուն Պետրոս ես, ու այս վէմին վրայ պիտի չինեմ իմ եկեղեցիս, և դժոխքին դռները զանիկա պիտի չյաղթեն։ 19—Ու երկինքի թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ և ինչ որ երկրի վրայ կապես, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ։ ու ինչ որ երկրի վրայ արձակես, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ։ 20—Այն ատեն աշակերտներուն պատուիրեց, որ մարգո՛ չըսեն Թէ ինք Քրիստոսն է։

21—Անկէ հետէ սկսաւ Յիսուս իր աշակերտներուն ցուցնել թէ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ, ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն և քահանայապետներէն ու գրիչներէն, և սպանուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ։ 22—Եւ Պետրոս մէկդի առաւ զանիկա, և սկսաւ յանդիմանել զանիկա ու բսել, Փո՛ւչ լեզի քեզ, Տէր, այդ բանը քեզի չըլլայ։ 23—Եւ ինք դառնալով Պետրոսի բսաւ, Ետեւս գնա, Սատանայ, ինծի գայթակղութիւն ես դուն, վասն զի Աստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները։

*Աչխէն, վէմ
†Ոմանք, Յիսուս Քրիստոսն

24—Ա՛յն ատեն Յիսուս իր աշակերտներուն ըսաւ, Եթէ մէկը իմ ետեւէս գալ կ՚ուզէ, թող իր անձը ուրանայ և իր խաչը վերցնէ ու իմ ետեւէս գայ։ 25—Վասն զի ով որ կ՚ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա. և ով որ ինծի համար իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա։ 26—Ինչի՞ կը չտիր մարդ մը՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի և իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ի՞նչ ապառիկ պիտի տայ մարդ։ 27—Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ, և այն ատեն ամէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի բնէ։ 28—Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ Հոս ներկայ եղողներուն մէկ քանիները կան՝ որոնք մահուան համը պիտի չառնեն, մինչեւ ատենն Որդին մարդոյ իր թագաւորութիւնովը եկած։

Գլ. Ժէ

Եւ վեց օրէն հան Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և անոր եղբայրը Յովհաննէսը, ու զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին։ 2—Ու անոնց առջեւ այլակերպեցաւ, ու իր երեսը փայլեցաւ արեգակի պէս, ու իր հանդերձները ձերմկցան լոյսի պէս։ 3—Ու ահա երեւցան անոնց Մովսէս ու Եղիա ու իրեն հետ կը խօսէին։ 4—Պատասխան առաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսի, Տէր, ապիկ է որ հոս կենանք. եթէ կ՚ուզես, երեք խրճիթ շինենք հոս. մէկը քեզի, և մէկը Մովսէսի, ու մէկը Եղիայի։ 5—Ու քանի որ անիկա կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ. և ահա ամպէն ձայն մը եկաւ՝ ըսելով, Ասիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւներ եմ, առաջ մտիկ ըրէք։ 6—Աշակերտները երբ լսեցին, երեսնուն վրայ ինկան ու խիստ վախցան։ 7—Ու Յիսուս մօտենալով դպաւ անոնց ու ըսաւ, Ելէք ու մի վախնաք։ 8—Աչքերնին վերցուցին ու մէկը չտեսան, բայց միայն Յիսուս։

9—Ու երբ այն լեռնէն վար կ՚իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ու ըսաւ, Այդ տեսիլքը մարդու մի զրուցէք, մինչեւ Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ։ 10—Ու իր աշակերտները իրեն հարցուցին ու ըսին, Ուրեմն ինչո՞ւ համար դպիրները կ՚ըսեն թէ Պէտք է որ առաջ Եղիա գայ։ 11—Պատասխան առաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Յիրաւի առաջ Եղիա կու գայ և ամէն բան կարգի կը դնէ։ 12—Բայց ձեզի կ՚ըսեմ որ Եղիա արդէն եկած է, և զանիկա չճանչցան, հապա ինչ որ ուզեցին ըրին անոր։ Նոյնպէս ալ Որդին մարդոյ անոնցմէ պիտի չարչարուի։ 13—Այն ատեն հասկցան աշակերտները որ Մկրտիչ Յովհաննէսի համար ըսաւ անոնց։

14—Ու երբ ժողովուրդին քով եկան, մարդ մը մօտեցաւ անոր, և ծունկի վրայ գալով՝ կ՚ըսէր, 15—Տէր, իմ որդւոյս ողորմի, որ կը լուսնահ և չարաչար կը տանջուի, քանզի չատ անգամ կրակի մէջ կ՚իյնայ, ու չատ անգամ ջուրի մէջ։ 16—Ու զանիկա քու աշակերտներուդ բերի, ու չկրցան զանիկա բժշկել։ 17—Յիսուս պատասխան առաւ ու ըսաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ ե՞րբ ձեզի պիտի հանդիսբերմ. զանիկա հոս բնծի բերէք։ 18—Ու Յիսուս սաստեց անոր, ու դեւը անկէ ելաւ, և բժշկուեցաւ ատան նոյն ժամուն։ 19—Աչակերտները առանձին Յիսուսի քով երթալով՝ ըսին, Մենք ինչո՞ւ չկրցանք զանիկա հանել։ 20—Ու Յիսուս ըսաւ անոնց, Հաւատքնիդ չնչին ըլլալուն համար. քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, եթէ մանանեհի հատ չափ հաւատք ունենաք, այս լեռանը պիտի ըսէք, Ասկէ անդին փոխադրուէ, և պիտի փոխադրուի. ու բան մը անհնարին պիտի չըլլայ ձեզի։ 21—Սակայն այս տեսակը ոչ ելլեր բայց միայն աղօթքով և ծոմապահութեամբ։

22—Ու երբ անոնք Գալիլեայի մէջ կը պտրաէին, Յիսուս ըսաւ անոնց, Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, 23—և զանիկա պիտի մեռցնեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ. ու խիստ տրտմեցան։

24—Երբ Կափառնայում եկան, երկդրամանոց տուրքը առնողները Պետրոսի եկան ու ըսին, Ձեր վարպետը երկդրամանոց չի՞ հատուցանէ։ 25—Ան ալ ըսաւ, Այո, կը հատուցանէ։ Ու երբ տուն մտաւ, առաջ Յիսուս խօսեցաւ անոր ու ըսաւ, Քեզի ի՞նչպէս կ՚երեւնայ, Սիմոն. երկրի թագաւորները որմէ՞ կ՚առնեն հարկը կամ տուրքը. իրենց որդիներէ՞ն թէ օտարներէն։ 26—Պետրոս անոր ըսաւ թէ Օտարներէն. Յիսուս անոր ըսաւ, Ուրեմն որդիները ազատ են։ 27—Բայց չըլլայ որ զանոնք գայթակղեցնենք, գնա ծովը և կարթ ձգէ, ու առաջին ձուկը որ կ՚ելլէ՝ առ, և անոր բերանը բանալով ստատր մը պիտի գտնես. զանիկա առ, անոնց տուր ինծի և քեզի համար։

Գլ. Ժը

Նոյն ժամուն աշակերտները Յիսուսի քով եկան ու ըսին, Ո՞վ է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ։ 2—Ու Յիսուս ազգ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջտեղը կայնեցուց, 3—Ու ըսաւ, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, եթէ դարձի չգաք և ազգ պէս չըլլաք, երկինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմանէք։ 4—Ուստի ով որ իր անձը այս ազուն պէս խոնարհեցնէ, անիկա է մեծ երկինքի թագաւորութեանը մէջ։ 5—Ու ով որ այսպիսի ազգ մը կ՚ընդունի իմ անունովս, զիս կ՚ընդունի։ 6—Ու ով որ գայթակղեցնէ այս պզտիկներէն մէկը որոնք ինծի կը հաւատան, ապէկ է անոր՝ որ իր պարանոցէն իշոյ ադացքի քար մը կախուի, ու ծովուն անդունդին մէջ ընկղմի։

7—Վա՛յ աշխարհի՝ գայթակղութիւններու պատճառաւ. վասն զի հարկ է որ գայթակղութիւնները գան, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով գայթակղութիւնը կու գայ։ 8—Արդ եթէ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. ապէկ է քեզի կաղ կամ պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ ու յաւիտենական կրակին մէջ ձգուիլ։ 9—Ու եթէ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա և քեզմէ ձգէ. ապէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել, քան թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհենքը ձգուիլ։

10—Զգուշ կեցէք որ չանարգէք այս պզտիկներէն մէկը. քանզի կ՚ըսեմ ձեզի որ երկինքի մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսանեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքի է։ 11—Վասն զի Որդին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու։ 12—Ինչպէս կ՚երեւնայ ձեզի. եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը մոլորի, իննսունիններն ալ՝ լերանները չի՞ ձգեր, ու երթար մոլորածը փնտռեր։ 13—Ու եթէ զանիկա գտնէ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ աւելի ուրախ կ՚ըլլայ անոր վրայ, քան թէ իննսունիններէն՝ որոնք մոլորած չեն։ 14—Այսպէս ձեր երկնաւոր Հայրը չկամի որ այս պզտիկներէն մէկը կորսուի։

15—Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զանիկա երբ դուն և ան միմակ ըլլաք. եթէ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղբայրդ։ 16—Հապա եթէ մտիկ չընէ՝ քեզի հետ երկու մը կամ երեք վկաներու բերնէն ամէն բան հաստատուի։ 17—Ու եթէ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցիին ըսէ. իսկ եթէ եկեղեցիին ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։

18—Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, երկրի վրայ ինչ որ կապէք, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ. ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ։ 19—Դարձեալ կ՚ըսեմ ձեզի, եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին, ամէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս որ երկինքն է։ 20—Քանզի ուր երկու կամ երեք հոգի ժողովուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջ։

21—Ա՛յն ատեն Պետրոս մօտեցաւ անոր ու ըսաւ, Տէր, քանի՞ անգամ եթէ եղբայրս ինծի դէմ մեղանչէ, ներեմ անոր. մինչեւ եօ՞թը անգամ։ 22—Յի-

*Ուրեմն, չի՞ ձգեր, ու լեռները

սուս անոր բաւ, ֆեզի չեմ բներ քէ մինչև եօթը անգամ, հապա մինչև եօթանասուն անգամ եօթը։ 23—Ասոր համար երկինքի թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ իր ծառաներէն հաշիւ առնել ուզեց։ 24—Ու երբ սկսաւ առնել, տասը հազար տաղանդի պարտական մը բերուեցաւ իրեն։ 25—Բայց անիկա վճարելու կարողութիւն չունենալով, իր տէրը հրաման բրաւ որ անիկա և անոր կինը ու որդիները և անոր բոլոր ունեցածը ծախուին, ու դրա-ւէ վճարուի։ 26—Իսկ ծառան անոր առջև խնդալով երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր, Տէր, համբերէ ինծի և ամէնը ֆեզի կը վճարեմ։ 27—Ու այն ծառային տէրը վրան խղճալով արձակեց զանիկա, ու պարտքը չնորհեց անոր։ 28—Ու նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր, ու զանիկա բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր, Վճարէ ինծի ունեցած պարտքդ։ 29—Ուստի անոր ծառայակիցը անոր առջև ինկաւ, կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, Համբերէ ինծի ու *ֆեզի կը վճարեմ։ 30—Ու ինք չէր ուզեր, հապա գնաց՝ բանտը դրաւ զանիկա, մինչև որ պարտքը վճարէ։ 31—Երբ իր ծառայակիցները անսան եղած բաները, խիստ տրտմեցան, ու եկան իրենց տէրոջը հասկցուցին բոլոր եղածը։ 32 Այն ատեն անոր տէրը կանչեց զանիկա ու բսաւ անոր, Չար ծառայ, այն բոլոր պարտքը ես ֆեզի չնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար։ 33—Ո՞չ պէտք չէ՞ր ֆեզի ալ քու ծառայակիցդ ողորմել, ինչպէս ես ֆեզի ողորմեցայ։ 34—Ու անոր տէրը բարկանալով՝ դահիճներուն մատնեց զանիկա, մինչև որ բոլոր պարտքը վճարէ։ 35—Այսպէս իմ երկնաւոր Հայրս պիտի բնէ ձեզի, եթէ ձեր սիրտերէն չէք ներեր ամէն մէկդ իր եղբօրը իրենց յանցանքները։

Գլ. ԺԹ

Ու եղաւ որ երբ Յիսուս այս խօսքերը լմնցուց, Գալիլեայէ ելաւ ու եկաւ Հրէաստանի սահմանները Յորդանանու անդիի կողմը։ 2—Ու անոր հետևէն շատ ժողովուրդներ գացին, ու հոն բժշկեց զանոնք։

3—Ու փարիսեցիները անոր մատնելով՝ զանիկա կը փորձէին, ու կ'ըսէին քէ Արժա՞ է որ մարդ մը իր կինը արձակէ ամէն պատճառի համար։ 4—Անիկա ալ պատասխան տուաւ ու անոնց բսաւ, Չկ՚ կարդացեր քէ ան որ սկիզբէն ստեղծեց, արու և էգ ստեղծեց զանոնք՝ ու բսաւ, 5—Ասոր համար մարդ էր Հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի յարի, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։ 6—Ուստի ա՛լ երկու չեն, հապա մէկ մարմին. ուրեմն զոր որ Աստուած միաւորեց՝ մարդ զայն չզատէ։ 7—Ըսին իրեն, Հապա Մովսէս ինչո՞ պատուիրեց արձակման թուղթ տալ և արձակել։ 8—Ըսաւ անոնց, Մովսէս ձեր սիրտերուն կարծրութեանը համար ձեզի հրաման տուաւ կիներնիդ արձակել, բայց սկիզբէն այնպէս չեղաւ։ 9—Ասկայն ձեզի կ'ըսեմ, Ով որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ. և ով որ արձակուածը առնէ, շնութիւն կ'ընէ։ 10 Իր աշակերտները բսին իրեն, Եթէ այդպիսի բան կայ երկան ու կնոջ մէջտեղ, չամնանալը ապէկ է։ 11—Ու ինք անոնց բսաւ, Ամէնը բանական չեն այդ բանին, հապա անոնք՝ որոնց տրուած է։ 12—Վասն զի կան ներքինիներ՝ որոնք էբնէց մօրը որովայնէն այնպէս ծնան, և կան ներքինիներ՝ որոնք մարդոցմէ ներքինի եղան, և կան ներքինիներ՝ որոնք ինքզինքնին ներքինի րրին երկինքի թագաւորութեանը համար. ով որ կրնայ առնել՝ թող առնէ։

13—Ան ատեն մանր ոգոց բերուեցան իրեն, որպէս զի անոնց վրայ ձեռք դնէ և ազօթք րնէ, ու աշակերտները կը յանդիմանէին զանոնք։ 14—Բայց Յիսուս բսաւ, Թող առէք այդ մանր ոգոցը, և մի արգիլէք ատոնք ինծի գալէն, վասն զի երկինքի թագաւորութիւնը այդպիսիներուն է։ 15—Ու անոնց վրայ ձեռք դնելէն ետև գնաց անկէ։

*Ոմանք, ամէնը քեզի

16—Ու ահա մէկը մատնելով՝ բսաւ անոր, Բարի վարդապետ, ի՞նչ բարի բան գործեմ, որպէս զի յաւիտենական կեանքը ընկալնիմ։ 17—Ու անիկա բսաւ անոր, Ինչո՞ւ ինծի բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած. Հապա եթէ կ'ուզես կեանքը մտնել, պատուիրանները պահէ։ 18—Ըսաւ անոր, Որո՞նք. և Յիսուս բսաւ, Սպանութիւն մի ընար, Շնութիւն մի ընար, Գողութիւն մի ընար, Սուտ վկայութիւն մի ընար, 19—Պատուիրէ զհայրդ ու մայրդ պատուէ, և Թան ընկերդ քու անձիդ պէս սիրես։ 20—Պատանին բսաւ անոր, Ասանկ ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ. ալ ի՞նչ բանով պակաս եմ։ 21—Ըսաւ անոր Յիսուս, եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ հետևէս։ 22—Երբ պատանին այս խօսքը լսեց՝ տրտմած գնաց, վասն զի շատ ստացուածք ունէր։

23—Ու Յիսուս բսաւ աշակերտներուն, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ հարուստը դժուարաւ պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը։ 24—Դարձեալ կ'ըսեմ ձեզի, Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ։ 25—Աշակերտները երբ լսեցին, շատ զարմացան ու բսին, Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ։ 26—Յիսուս անոնց նայելով բսաւ, Աւարիա մարդոց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է։

27—Այն ատեն Պետրոս պատասխան տուաւ ու բսաւ անոր, Ահա մենք ամէն բան թողուցինք և քու հետևդ եկանք. ուստի մեզի ի՞նչ պիտի ըլլայ։ 28—Ըսաւ անոնց Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ դուք որ իմ հետևէս եկաք, †ին ատեն ամէն գալատիին երբ Որդին մարդոյ իր փառաց աթոռը նստի, դուք ալ տասներկու աթոռներու վրայ պիտի նստիք՝ Իսրայէլի տասներկու ցեղերը դատելու։ 29—Ու ով որ Թողուց տուներ, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր իմ անուանս համար, Հարիւրապատիկ պիտի առնէ, և յաւիտենական կեանք պիտի ժառանգէ։ 30—Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և յետիններ՝ առաջին։

Գլ. Ի

Քանզի երկինքի թագաւորութիւնը տանուտէր մարդու մը նման է, որ առտուանց կանուխ ելաւ՝ իր այգիին համար բանուարներ բռնելու։ 2—Ու բանուարներուն հետ օրը մէկ դահեկանի խօսք կապեց, ու զանոնք զրկեց իր այգին։ 3—Ու ժամը երեքին տեսնելով ելաւ՝ ուրիշները հետաւ, որոնք չուկային մէջ պարապ կայներ էին. 4—Ու բսաւ անոնց, Դուք ալ գացէք իմ այգիս, և ինչ որ արժան է՝ կտամ ձեզի. 5—Անոնք ալ գացին. ու նորէն ժամը վեցին և ժամը իննին տասներորդը ելաւ՝ այնպէս րրաւ։ 6—Ու ժամը տասնըմէկին տասներորդը ելաւ, ուրիշները գտաւ՝ որոնք պարապ կայներ էին, ու անոնց բսաւ, Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կայներ էք։ 7—Ըսին իրեն, Անոր համար որ մէկը մեզ վարձքով չբռնեց. բսաւ անոնց, Դուք ալ այգին գացէք, ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք. 8—Ու երբ իրիկուն եղաւ, այգիին տէրը իր անտեսին բսաւ, Բանուարները կանչէ, և անոնց վարձքը տուր՝ վերջիններէն սկսելով մինչև առաջիներուն։ 9—Ու երբ եկան անոնք որ ժամը տասնըմէկին ֆշշեր էին, մէյմէկ դահեկան առին. 10—Ու առաջիններն գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն, ու անոնք ալ առին մէյմէկ դահեկան։ 11—Երբ առին՝ տանուտէրոջ դէմ արտուղ կ'ընէին ու կ'ըսէին թէ 12—Այդ վերջիններս մէկ ժամ գործեցին, և զանոնք հաւասար ըրիր մեզի, որ օրուան ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք։ 13—Անիկա պատասխան տուաւ անոնցմէ մէկուն ու բսաւ, Ընկեր, ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ դուն ինծի հետ մէկ դահեկանի խօսք կապեցիր. 14—Առ քուկդ ու գնա. կ'ուզեմ որ այս վերջինին քեզի պատա-

*Ոմանք, պարանը
†Ոմանք, վերստին ծննդեան մէջ

ձէռ պէս տամ։ 15—Մէյմէկ ես իշխանութիւնս չունե՞մ իմ բանեցուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ գու աչքդ չո՞ր է՝ որ ես բարերար եմ։ 16—Այսպէս յետիններըը առաջին պիտի ըլլան, և առաջիններըը յետին. վասն զի կանչուածներըը շատ են, բայց ընտրուածներըը քիչ։

17—Ու երբ Յիսուս երուսաղէմ կ'երթար, ճամբան տասներկու աշակերտներըը իրեն հետ առաւ առանձին, ու րսաւ անոնց, 18—Ահա երուսաղէմ կ'երթանք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան պիտի դատապարտեն, 19—ու զանիկա հեթանոսներուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու և խաչը հանելու. ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։

20—Այն ատեն Զեբեդէոսի որդիներուն մայրը իր որդիներուն հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ'ընէր ու բան մը կը խնդրէր անկէ։ 21—Ան ալ րսաւ անոր, Ի՞նչ կ'ուզես։ Րսաւ անոր, Րսէ որ այս իմ երկու որդիներս մէկը ալ կողմդ՝ և մէկը ձախ կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ։ 22—Յիսուս պատասխանի տուաւ Յիսուս ու րսաւ, Չէք գիտեր ի՛նչ կը խնդրէք. կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես պիտի խմեմ, կամ այն մկրտութիւնով մկրտիլ զոր ես պիտի մկրտիմ. ըսին իրեն, Կրնանք։ 23—Ու րսաւ անոնց, Իմ գաւաթս պիտի խմէք, և այն մկրտութիւնով զոր ես մկրտուիմ եմ, պիտի մկրտիք. բայց իմ աջ կողմն ու ձախ կողմն ընծայելը՝ իմս չէ տալը, հապա որոնց որ պատրաստած է իմ Հօրիս։ 24—Ու երբ ետասն աշակերտները լսեցին, այն երկու եղբայրներուն նեղացան։ 25—Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու րսաւ, Գիտէք որ ազգերուն իշխանները կը տիրեն անոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց։ 26—Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ, Թող անիկա ձեր ապասաւորը ըլլայ։ 27—Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ, Թող անիկա ձեր ծառան ըլլայ։ 28—Ինչպէս Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու և իր կեանքը չատերու համար փրկանք տալու։

29—Ու երբ անոնք Երիքովէ ելան, մեծ բազմութիւն անոր հետևէն գնաց։ 30—Ու ահա ճամբուն քով երկու կոյր նստած կին. երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, աղաղակեցին ու րսին, Ողորմի մեզի, Տէր, Որդի Դաւիթ։ 31—Ու բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք որ լռեն, բայց անոնք աւ ետքի կ'աղաղակէին ու կ'րսէին, Ողորմի մեզի, Տէր, Որդի Դաւիթ։ 32—Ու Յիսուս կանգ առնելով կանչեց զանոնք ու րսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի րնեմ։ 33—Ըսին անոր, Տէր, որ աչքերնիս բացուին։ 34—Ու Յիսուս խղճալով՝ անոնց աչքերուն դպաւ, և չատ մը անոնց աչքերը բացուեցան, ու անոր հետևէն գացին։

ԳԼ. ԻԱ

Ո երբ երուսաղէմի մատեցան ու եկան Բեթփագէ դէպ ի Ձիթենեաց լեռը, այն ատեն Յիսուս էր աշակերտներէն երկուքը ղրկեց։ 2—Ու րսաւ անոնց, Գացէք այդ ձեր դիմացի գեղը, և չատ մը պիտի գանէք կապուած էշ մը ու անոր հետ ասանակ մը. արձակեցէք զանոնք ու ինծի բերէք։ 3—Ու եթէ մէկը ձեզի բան մը ըսէ, րսէք թէ Տէրոջը պէտք են. և չատ մը գանոնք պիտի ղրկէ։ 4—Այս ամէն բաները եղան, որպէս զի կատարուի մարգարէին խօսքը որ կ'ըսէ. 5—Ըսէք Սիօնի աղջկան, Ահա քու Թագաւորդ քեզի կու գայ, հեզ, ու իշու վրայ հեծած և իշուս ձագի, աւանակի, վրայ։ 6—Ու աշակերտները գացին, և ինչպէս Յիսուս իրենց պատուիրեր էր՝ րրին։ 7—Ու բերին էշը ու աւանակը, և անոնց վրայ իրենց հանդերձները դրին, ու Նստաւ անոնց վրայ։ 8—Ու ժողովրդին չատեր իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և ուրիշներ ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին։ 9—Ու ժողովրդները, որոնք

---

*Ոմանք, նստեցուցին

առջևէն ու հետևէն կ'երթային, կ'աղաղակէին ու կ'րսէին, Ովսաննա Որդւոյ Դաւիթ, օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ. Ովսաննա ի բարձունս։

10—Ու երբ անիկա Երուսաղէմ մտաւ, բոլոր փազաքը չարժեցաւ ու րսաւ, Ո՞վ է սա։ 11—Ու ժողովրդները րսին, Անիկա Յիսուս մարգարէն է Գալիլեայի Նազարէթէն։

12—Ու Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, ու գուրս հանեց ամէն անոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, և սեղանափոխներուն սեղանները ու աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց։ 13—Ու րսաւ անոնց, Գրուած է թէ իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի. բայց դուք անիկա ահաւակներու ապր ըրիք։

14—Ու տաճարին մէջ կոյրեր ու կաղեր եկան իրեն, և բժշկեց զանոնք։ 15—Երբ քահանայապետները ու դպիրները սեսան անոր ըրած հրաշքները, և տղաքը որոնք տաճարին մէջ կ'ողաղակէին ու կ'րսէին, Ովսաննա Որդւոյ Դաւիթի, բարկացան։ 16—Ու րսին անոր, Կը լսե՞ս ինչ կ'րսեն տղաքս. և Յիսուս րսաւ անոնց, Այո. բնաւ չէ՞ք կարդացեր, թէ Մանկանց ու կաթնկեր ոտայոց բերանէն գովեստ հնչ կատարեցեր։

17—Ու թողուց զանոնք՝ գաղափէն գուրս Բեթանիա ելաւ, ու գիշերը հոն կեցաւ։

18—Ու առաւոտանց երբ փազաքը կը գառնար, անօթեցաւ։ 19—Ու ճամբուն վրայ թզենի մը տեսնելով գովը գնաց, և անոր վրայ տերեւներէն զատ բան մը չգտաւ. ու րսաւ անոր, Ասկէ հետև գեղմէ պտուղ չբլլայ յաւիտեան. և իսկոյն թզենին չորցաւ։ 20—Ու աշակերտները երբ սեսան, զարմացան ու րսին թէ Ինչպէս թզենին չատ մը չորցաւ։ 21—Յիսուս պատասխանի տուաւ ու րսաւ անոնց, Ճշմարիտ կ'րսեմ ձեզի, եթէ հաւատք ունենաք ու չերկմիտիք, ոչ թէ միայն այդ թզենիին եղածը պիտի ընէք, հապա նաեւ եթէ այս լեռանդը ըսէք, Ելիր, ու ծովը իսկիր, պիտի բլլայ։ 22—Ու ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խնդրէք, պիտի առնէք։

23—Ու երբ անիկա տաճարը եկաւ, քահանայապետները և ժողովրդին ծերերը անոր մատեան երբ կը սորվեցնէր, ու րսին, Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը։ 24—Պատասխանի տուաւ Յիսուս ու րսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը կարցնեմ, զոր եթէ ինծի րսէք, ես ալ ձեզի պիտի րսեմ թէ ի՛նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։ 25—Յովհաննէսի մկրտութիւնը երկի՞ց էր, երկինքէ՞ն թէ մարդոցմէ. և անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ'րսէին, 26—Եթէ ըսենք երկինքէն, մեզի պիտի րսէ թէ Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ ըսենք՝ Մարդոցմէ, ժողովրդէն կը վախնանք, վասն զի բոլորն ալ Յովհաննէսը իբրեւ մարգարէ կ'ընդունին։ 27—Ու պատասխան տուին Յիսուսի՝ ըսին, Չենք գիտեր. և ինք րսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՛նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։

28—Բայց ի՞նչպէս կ'երեւնայ ձեզի. մարդ մը երկու որդի ունէր, ու գնաց առաջինին րսաւ, Որդեակ, գնա այսօր այգիս մէջ գործէ։ 29—Անիկա պատասխան տուաւ ու րսաւ, Չեմ ուզեր երթալ. բայց ետքը զղջացաւ ու գնաց։ 30—Միւսին ալ գնաց և այնպէս րսաւ, անիկա պատասխան տուաւ ու րսաւ, Կ'երթամ, տէր. և չգնաց։ 31—Հիմայս երկուքէն ո՞ր էր հօրը կամքը կատարեց. րսին անոր, Առաջինը. Յիսուս րսաւ անոնց, Ճշմարիտ կ'րսեմ ձեզի որ մաքսաւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը։ 32—Վասն զի Յովհաննէս արդարութեան ճամբայով եկաւ ձեզի, և դուք անոր չհաւատացիք. բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր հաւատացին. և դուք տեսաք ու ետքը չզղջացիք անոր հաւատալու։

33—Ուրիշ առակ մըն ալ լսեցէք. Տանուտէր մարդ մը կար՝ որ այգի մը տնկեց ու ցանգով պատեց զանիկա, և անոր մէջ հնձան փորեց ու աշտարակ չինեց, և զանիկա հնչկներու յանձնեց, ու ինք օտար երկիր մը գնաց։ 34—Երբ պտուղի ժամանակը մօտեցաւ, իր ծա-

առաքը մշակներուն ղրկեց, որպէս զի անոր պտուղները առնեն։ 35—Եւ մշակները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, մէկ ուրիշը քարկոծեցին։ 36—Նորէն ուրիշ ծառաներ ղրկեց առաջիններէն շատ, և անոնց ալ այնպէս ըրին։ 37—Վերջէր իր որդին ղրկեց անոնց՝ ըսելով, Թերեւս ամչնան իմ որդիս։ 38—Բայց մշակները երբ տեսան որդին, իրարու ըսին, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպաննենք ու անոր ժառանգութիւնը տիրենք։ 39—Եւ առին զանիկա, այգիին դուրս հանեցին ու սպաննեցին։ 40—Ուստի երբ այդ տիրոջ ալը գայ, ի՞նչ պիտի ընէ այն մշակներուն։ 41—Ըսին իրեն, Ան չարերը չարաչար պիտի կորսընցնէ, և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք պտուղները իրենց ժամանակին պիտի տան իրեն։ 42—Ըսաւ անոնց Յիսուս, Բնա՞ւ չէ՞ք կարդացեր գիրքին մէջ, Այն քարը զոր չինողները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. ասիկա Տէրոջմէն եղաւ և զարմանալի է մեր աչքերուն։ 43—Ասոր համար կ'ըսեմ ձեզի, որ Աստուծոյ Թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու այնպիսի ազգի մը պիտի տրուի՝ որ անոր պտուղները բերէ։ 44—Եւ ով որ այս քարին վրայ իյնայ, պիտի կոտրտի, և որու վրայ որ իյնայ, պիտի փոշի դանիկա։

45—Ու երբ քահանայապետները և փարիսեցիները անոր առակները լսեցին, իմացան որ իրենց համար կ'ըսէր։ 46—Ու կը փնտռէին Ի՛նչ՝ը բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, վասն զի մարգարէ պէս կ'ընդունէին զանիկա։

ԳԼ. ԻԲ

Պատասխանեալ պատասխան տուաւ Յիսուս և առակներով ըսաւ անոնց, 2—Երկինքի Թագաւորութիւնը Թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր որդւոյն համար հարսնիք ըրաւ։ 3—Ու իր ծառաները ղրկեց, որպէս զի կանչեն հարսնիքի հրաւիրածները, և անոնք չուզեցին գալ։ 4—Նորէն ուրիշ ծառաներ ղրկեց ու ըսաւ, Ըսէք հրաւիրածներուն, Ահա իմ ճաշս պատրաստեցի, զեւարակներս ու գիր կենդանիներս մորթուած են, և ամէն բան պատրաստ է. հարսնիք եկէք։ 5—Բայց անոնք անհոգութիւն ընելով գացին, մէկը իր արտը ու միւսը իր առուտուրին։ 6—Ու ուրիշները անոր ծառաները բռնեցին, նախատեցին ու սպաննեցին։ 7—Թագաւորն ալ երբ լսեց՝ բարկացաւ, և իր զօրքերը ղրկեց ու այն սպաննողները սատկեցուց, ու անոնց քաղաքը այրեց։ 8—Այն ատեն իր ծառաներուն ըսաւ, Հարսնիքը պատրաստ է, բայց հրաւիրածները արժանի չէին։ 9—Ուստի գացէք համրա դուրսերները, և ո՛վ որ գտնէք՝ հարսնիքի հրաւիրեցէք։ 10—Ու այն ծառաները ելան ճամբաները վրայ, ու ո՛վ որ գտան, Թէ՛ չար և Թէ՛ բարի, ամէնն ալ ժողվեցին, ու հարսնիքը հարսնեւորներով լեցուեցաւ։ 11—Ու Թագաւորը երբ մտաւ հարսնեւորները տեսնելու, հոն մարդ մը տեսաւ որ հարսնիքի հանդերձ հագած չէր։ 12—Ու ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար հոս մտար առանց հարսնիքի հանդերձ ունենալու. և անիկա պապանձեցաւ։ 13—Այն ատեն Թագաւորը սպասաւորներուն ըսաւ, Կապեցէք ասոր ոտքերը ու ձեռքերը, և առէք ու հանեցէք դանիկա դուրսի խաւարը. հոն պիտի լլայ լալ ու ակռաներ կրճտել։ 14—Վասն զի կանչուածները շատ են ու ընտրուածները քիչ։

15—Այն ատեն փարիսեցիները գացին խորհուրդ բրին, Թէ ի՛նչպէս անոր որոգայթ մը դնեն խօսքով։ 16—Ու իրենց աշակերտները Հերովդեսեաններուն հետ մէկտեղ ղրկեցին անոր ու ըսին, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես, ու մարդո՛ւ համար հոգ չես, քանզի մարդոց երեսպաստութիւն չես ըներ։ 17—Ուստի մեզի ըսէ, ինչի՞ կ'երեւնայ, կայսրին տուրք տալ արժա՞ն է՝ Թէ ոչ։ 18—Յիսուս գիտնալով անոնց խորամանկութիւնը՝ ըսաւ, Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորներ, 19—Ցուցուցէք ինծի տուրքին դրամը. և անոնք դահեկան մը բերին իրեն։ 20—Ու ըսաւ անոնց, Որո՞ւնն է այս պատկերը ու գիրը։ 21—Ըսին անոր, Կայսրինն. այն ատեն ըսաւ անոնց, Ուրեմն զայն որ կայսրինն է կայսրին տուէք, և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ։ 22—Երբ լսեցին՝ զարմացան, և Թողուցին զանիկա ու գացին։

23—Նոյն օրը անոր քով եկան սադուկեցիները որոնք կ'ըսեն Թէ յարութիւն չկայ, և անոր հարցուցին՝ 24—Ըսելով, Վարդապետ, Մովսէս ըսաւ, Եթէ մէկը առանց զաւակի մեռնելու բլլայ, անոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը զաւակ հանէ։ 25—Ուրեմն եօթ եղբայրներ կային մեր մէջ. և առաջինը կին առաւ՝ ու մեռաւ, և զաւակ չունենալուն համար իր կինը ձգեց իր եղբօրը։ 26—Նոյնպէս ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մինչև եօթներորդը։ 27—Ամենէն ետքը կինն ալ մեռաւ։ 28—Ուրեմն յարութեան ատեն այն եօթնէն որո՞ւն կինը պիտի բլլայ. վասն զի ամէնն ալ զանիկա ՚ի՛ւնեցան։ 29—Ու Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Դուք մոլորած էք, որ չ'գիտցիրը գիտէք և չ'Աստուծոյ զօրութիւնը։ 30—Քանզի յարութեան ատեն ոչ կին կ'առնեն և ոչ էրկան կը տրուին, հապա հրեշտակներուն պէս են։ 31—Բայց մեռելներուն յարութիւն առնելուն համար՝ չէ՞ք կարդացեր Աստուծմէ ձեզի բսուած խօսքը։ 32—Ես եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը. Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն։ 33—Ու ժողովրդները լսելով կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ։

34—Բայց փարիսեցիները երբ լսեցին Թէ անիկա պապանձեցուց սադուկեցիները, մէկտեղ ժողովեցան. 35—Ու անոնցմէ մէկը, օրինական մը, հարցուց, զանիկա փորձելով, ու ըսաւ, 36—Վարդապետ, ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ։ 37—Ու Յիսուս ըսաւ անոր, Պիտ Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր միտքովդ։ 38—Այս է առաջին և մեծ պատուիրանքը։ 39—Ու երկրորդը ասոր նման, Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս։ 40—Այս երկու պատուիրանքէն կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները։

41—Ու երբ փարիսեցիները ժողվուեցան, Յիսուս հարցուց անոնց ու ըսաւ, 42—Քրիստոսի վրայով ի՞նչ կարծիք ունիք. անիկա որո՞ւն որդին է։ 43—Ըսին իրեն, Դաւիթի։ Ըսաւ անոնց Ցո՞ւսոս, Հապա ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զանիկա Տէր կը կոչէ ու կ'ըսէ, 44—Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև քու Քշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։ 45—Ուրեմն եթէ Դաւիթ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։ 46—Ու մէ՛կը չէր կրնար անոր խօսք մը պատասխանել. ու այն օրէն հետեւ մէ՛կը չէր համարձակեր անոր բան մը հարցնել։

ԳԼ. ԻԳ

Այն ատեն Յիսուս խօսեցաւ ժողովրդոց և իր աշակերտներուն ու ըսաւ, 2—Մովսէսի աթոռը գրիչները և փարիսեցիները նստած են. 3—Ուրեմն ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէք ու ըրէք, բայց անոնց գործերուն պէս մի ընէք, վասն զի կ'ըսեն ու չեն ըներ։ 4—Քանզի ծանր և տանելու գժուար բեռներ կը կապեն ու կը դնեն մարդոց ուսերուն վրայ, և իրենց մատովը չեն ուզեր զանոնք շարժել։ 5—Ու իրենց ամէն գործերը մարդոց երեւնալու համար կ'ընեն. կը լայնցնեն իրենց գրապահարները ու կ'երկնցնեն իրենց հանդերձներուն փղանոցները։ 6—Ընթրիքներու մէջ առաջին բազմոցները կը սիրեն, և ժողովարաններուն մէջ առաջին աթոռները, ու չուկաներուն մէջ բարեւները։ 7—Ու մարդոցմէ Ռաբբի, Ռաբբի կոչուիլ։ 8—Բայց դուք Ռաբբի մի կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս. և դուք ամէնդ եղբայր էք։ 9—Ու երկրի վրայ հո՛ւր ձեզի Հայր մի կոչէք, վասն զի ձեր Հայրը մէկ է, որ երկինքն է։ 10—Ու դուք ուսուցիչներ

մի կոչուիք, վասն զի ձեր Աստուածը մեկ է, այսինքն Քրիստոս։ 11—Եւ ձեր մեջէն մեծը ձեզ ապաւաչողը պիտի ըլլայ։ 12—Ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ։

13—Բայց վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ երկինքի թագաւորութիւնը մարդոց առջև կը գոցէք. քանզի դուք չէք մտներ, և մտնողներն ալ չէք թողուր որ մտնեն։ 14—Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ այրեւարներուն տուները կ'ուտէք, ու ֆ-ըդ-ա երեւնալու համար ազօթք կ'երկնցնէք. անոր համար աւելի դատապարտութիւն պիտի ընդունիք։ 15—Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ ծով ու ցամաք կը պտրտիք մէկ նոբահնատա բնելու, ու երբ ըլայ, զանիկա ձեզմէ երկու անգամ աւելի գեհենի որդի կ'ընէք։ 16—Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք Թէ Ով որ տաճարին վրայ երդումի բնէ, բան մը չէ, բայց ով որ տաճարին մէկի ոսկին վրայ երդումի բնէ, պարտաւոր կ'ըլլայ։ 17—Ով յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկի՞ն Թէ տաճարը որ կը սրբացնէ ոսկին։ 18—Ու Թէ՝ Ով որ սեղանին վրայ երդումի բնէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդումի բնէ, պարտաւոր կ'ըլլայ։ 19—Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է, պատարա՞գը Թէ սեղանը որ կը սրբացնէ պատարագը։ 20—Ուստի ով որ սեղանին վրայ երդումի բնէ, երդումի կ'ընէ անոր վրայ և անոր վրայի ամէն բաներուն վրայ։ 21—Ու ով որ տաճարին վրայ երդումի բնէ, երդումի կ'ընէ անոր վրայ և անոր մէջ բնակողին վրայ։ 22—Ու ով որ երկինքի վրայ երդումի բնէ, երդումի կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ և անոր վրայ նստողին վրայ։ 23—Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանխին ու սամիթին և չամանին տասանորդը կը վճարէք, ու կը ձգէք օրէնքին ծանր ծանր բաները, դատաստանը և ողորմածութիւնը ու հաւատքը։ ասոնք պէտք էր ընել, և զանոնք չձգել։ 24—Կոյր առաջնորդներ, որ մէզուկը կը փաճէք և ուղտը կը կլլէք։ 25—Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ գաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ և *անիրաւութեամբ լեցուն են։ 26—Կոյր փարիսեցի, առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաքրէ, որպէս զի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ։ 27—Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, և ներսէն մեռելներու ոսկորներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն են։ 28—Նոյնպէս դուք դուրսէն մարդոց արդար կ'երեւնաք, ու ներսէն կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն էք։ 29—Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ մարգարէներուն տապանները կը չինէք, և արդարներուն գերեզմանները կը զարդարէք։ 30—Ու կ'ըսէք, Եթէ մեր հայրերուն օրերը ըլլային, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէինք ըլլար։ 31—Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք Թէ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները կը սպաննէին։ 32—Ո՛հ դուք ալ ձեր հայրերուն չափը լեցուցէք։ 33—Օձեր, իժերու ծնունդներ, ինչպէս պիտի փախչիք գեհենին դատապարտութենէն։ 34—Ասոր համար ահա ես կը ղրկեմ ձեզի մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ, և անոնցմէ ֆ-ն-էի-ը պիտի սպաննէք ու խաչը հանէք, և մէկ քանիները ձեր ժողովարաններուն մէջ պիտի ծեծէք, ու քաղաքէ քաղաք հալածէք։ 35—Որպէս զի երկրի վրայ Թափուած բոլոր արդար արիւները ձեր վրայ գայ, արդար Աբէլի արիւնէն մինչեւ Բարաքիայի որդւոյն Զաքարիայի արիւնը, զոր սպաննեցիք ձեր տաճարին ու սեղանին մէջտեղ։ 36—Ձշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ահա ամէն բաները պիտի գան այս ազգին վրայ։

37—Ով Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու քարկոծ կ'ընէիր քեզի զրկուածները կը քանիցս կ'ուզէի, քանի՛ անգամ քու ազաքներդ ժողվել ուզեցի, ինչպէս հաւր իր ձագերը թեւերուն տակ կը ժողվէ, և դուք չուզեցիք։ 38—Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ։ 39—Վասն զի ձեզի կ'ըսեմ որ ա՛լ ասկէ հետև պիտի չտեսնէք զիս, մինչև ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ։

ԳԼ. ԻԴ

Եւ Յիսուս ասոնցմէն դուրս ելլելով կ'երթար, ու աշակերտները անոր քով գացին տաճարին շէնքերը իրեն ցուցնելու։ 2—Ու Յիսուս անոնց ըսաւ, Չէ՞ք տեսներ այդ ամէն բաները. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝ որ չքանայ։

3—Ու երբ անկից Ձիթենեաց լեռը նստեր էր, աշակերտները իրեն եկան առանձին ու ըսին. Ըսէ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները. և քու գալստեան ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի ըլայ։ 4—Ու Յիսուս պատասխանելով ըսաւ անոնց, Զգոյշ եղէք, չըլայ որ մէկը ձեզ խաբէ։ 5—Վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու բանն Թէ Ես եմ Քրիստոսը, ու շատերը պիտի մոլորեցնեն։ 6—Ու պիտի լսէք պատերազմներ ու պատերազմներու լուրեր. զգոյշ կեցէք որ չխռովիք. վասն զի այն ամէն բաները պէտք է որ ըլլան, բայց դեռ վերջը չէ։ 7—Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ տեղ սովեր ու մահատարաժամներ և երկրաշարժութիւններ պիտի ըլլան։ 8—Բայց ասոնք ամէնը ցաւերուն սկիզբն են։ 9—Այն ատեն ձեզ նեղութեան պիտի մատնեն և ձեզ պիտի սպաննեն, ու իմ անունս համար ամէն ազգերուն ատելի պիտի ըլլաք։ 10—Ու այն ատեն շատերը պիտի գայթակղին, ու մէկզմէկ պիտի մատնեն և մէկզմէկ պիտի ատեն։ 11—Ու շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորեցնեն։ 12—Ու անօրէնութեան չատնալուն համար շատերուն սէրը պիտի պաղի։ 13—Բայց ով որ մինչեւ վերջը համբերէ անոնք պիտի ապրի։ 14—Ու արքայութեան այս աւետարանը բովանդակ աշխարհի մէջ պիտի քարոզուի՝ բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու, և անկէ հետև վերջը պիտի գայ։

15—Ուստի երբ տեսնէք աւերմանքին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքով բսուած է, Թէ սուրբ տեղը կը կենայ։ (ով որ կարդայ, Թող հասկնայ։) 16—Այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները Թող փախչին. 17—Ու ան որ տանիքին վրայ է, Թող չիջնէ իր տունէն բան մը առնելու. 18—Ու ան որ արտին մէջ է, Թող ետ չդառնայ իր հանդերձները առնելու. 19—Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տալիներուն։ 20—Ու ազօթք ըրէք որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ, ոչ ալ շաբաթ օրը. 21—Քանզի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլայ, որու նմանը աշխարհի սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլայ։ 22—Ու եթէ այն օրերը չկրճատուին, բնաւ մարմին մը պիտի չազատէր. բայց ընտրեալներուն համար այն օրերը պիտի կրճատուին։ 23—Այն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ Թէ Ահա հոս է Քրիստոսը կամ հոն, մի հաւատաք։ 24—Վասն զի սուտ Քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի է՝ ընտրեալներն ալ մոլորեցնեն։ 25—Ահա ձեզի առաջուընէ ըսի։ 26—Ուստի եթէ ձեզի ըսեն Թէ Ահա անապատին մէջ է, մի ելլէք. Ն Թէ՝ Ահա ներքին սենեակներուն մէջ է, մի հաւատաք։ 27—Վասն զի ինչպէս փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կ'երեւնայ, այնպէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գալուստը։ 28—Քանզի ուր մեռած մարմին կայ, հոն պիտի ժողովին արծիւները։

29—Ու չուտ մը այն նեղութեան օրերէն ետև արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, և աստղերը երկինքէն պիտի իյնան, ու երկինքի զօրութիւնները պիտի չարժին։ 30—Ու այն ատեն Որդւոյ մարդոյ նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ, ու

---

*Ոմանք, անբարեխառնութեամբ

այն առեն երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, ու պիտի տեսնեն Որդին մարդոյ երկինքի ամպերուն վրայ գալով զօրութիւնով ու մեծ փառքով։ 31— Ու անկից իր հրեշտակները պիտի զրկէ մեծաձայն փողով, ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչև միւս ծայրը։

32—Թզենիէն առակ մը սորվեցէք. որ երբ անոր ոստերը կը կակուղնան ու տերեւները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է։ 33—Նոյնպես դուք երբ այս ամէն բաները տեսնէք, գիտցէք որ մօտ է դռներուն քով։ 34—Ձեզմէ ոեւ կ'ըսեմ ձեզի որ այս ազգը պիտի չանցնի մինչև այս ամէն բաները ըլլան։ 35—Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս քնաւ պիտի չանցնին։

36—Իսկ այն օրուան և այն ժամուն համար մարդ չգիտեր, ոչ ալ երկինքի հրեշտակները, հապա միայն իմ Հայրս։ 37—Բայց ինչպես Նոյի օրերը եղաւ, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպես պիտի ըլլայ։ 38—Քանի ինչպես էին այն օրերը ջրհեղեղին առաջ, կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին ու երկան կու տային, մինչև այն օրը որ Նոյ տապանը մտաւ, 39—ու չգիտցան՝ մինչև ջրհեղեղը եկաւ ու ամէնը վերցուց, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպես պիտի ըլլայ։ 40—Այն առեն երկու հոգի արտի մէջ պիտի ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ 41—Ու երէք երկու կին մէկ ջրաղացի մէջ աղալու վրայ գտնուին, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի։

42-Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ։ 43—Բայց զայս գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ ի՛ր պահուն գողը կու գայ, արթուն կը կենար և թոյլ չէր տար որ իր տունը ծակեն։ 44—Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ այնպիսի ժամու մէջ որ դուք չէք կարծեր։ 45-Ուստի ո՞վ է այն հաւատարիմ ու խնամուն ծառան՝ զոր իր տէրը իր ծառաներուն վրայ դրաւ, որպէս զի առենին անոնց կերակուր տայ։ 46—Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած առենը այնպէս ըրած պիտի գտնէ։ 47—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա։ 48—Հապա եթէ այն չար ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ։ 49-Ու սկսի իր ծառայակիցները ծեծել, ու գինովներուն հետ ուտել ու խմել։ 50—Այն ծառային տէրը պիտի գայ այնտեղ որ մը՝ որ չսպասեր, և այնտեղ ժամ մը՝ որ չգիտեր։ 51—Ու զանիկա մէկդի պիտի կարէ, ու անոր բաժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ. հոն պիտի լալ ու ակռաները կրճտել։

*Ոմանք, հրեշտակները, և ոչ Որդին մարդոյ կուգայ

Գլ. ԻԵ

Այն առեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները առնելով փեսան դիմաւորելու եղան։ 2—Ասոնցմէ հինգը խելառ էին, և հինգը լիմար։ 3—Լիմարները առին իրենց լապտերները, ու իրենց հետ իւղ չառին։ 4—Բայց խելառները իրենց լապտերներուն հետ անօթներով իւղ առին։ 5—Ու երբ փեսան ուշացաւ, ամէնն ալ թմրեցան ու քնացան։ 6—Ու կէսգիշերին ձայն մը եղաւ, Ահա փեսան կու գայ. զանիկա դիմաւորելու ելէք։ 7—Այն առեն բոլոր կոյսերը եղան ու իրենց լապտերները չիակեցին։ 8—Ու լիմարները ըսին խելառներուն, Տուէք մեզի ձեր իւղէն, վասն զի մեր լապտերները մարելու վրայ են։ 9—Պատասխան տուին խելառները ու ըսին, Զրկայ որ մեզի ու ձեզի չբաւականանայ, այլ երթայ ծախողներուն գայէք և գնեցէք ձեզի համար։ 10-Երբ անոնք գային գնելու, փեսան եկաւ, ու պատրաստ եղողները անոր հետ հարսնիքը մտան և դուռը գոցուեցաւ։ 11—Յետքը միւս կոյսերը եկան ու ըսին, Տէր, Տէր, բաց մեզի։ 12—Բայց անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ես ձեզ չեմ ճանչնար։ 13—Ուրեմն արթուն կեցէք, վասն զի ո՛չ օրը գիտէք և ո՛չ *ժամը։

*Ոմանք, ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կուգայ

11—Քանզի ինչպէս օտար երկիր գացող մարդ մը կանչեց իր ծառաները, և իր ունեցածը անոնց յանձնեց։ 15—Մէկուն տասս հինգ տալանդ, ու մէկուն՝ երկուս, և մէկուն՝ մէկ, ամէն մէկուն իր կարողութիւնը չափ, ու անմիջապէս ճամբայ ելաւ։ 16—Ու ան որ հինգ տալանդը առած էր, գնաց առնցմով գործ սկսաւ, և ուրիշ հինգ տալանդ շահեցաւ։ 17—Նմանապէս ան որ երկուքը ---ը էր, ուրիշ երկուք ալ շահեցաւ։ 18—Իսկ ան որ մէկը առած էր, գնաց գետինը փորեց, ու իր տէրոջը տակը պահեց։ 19—Շատ ժամանակետև այն ծառաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հաշիւ ուզեց։ 20—Ու հինգ տալանդը առնողը եկաւ՝ ուրիշ հինգ տալանդ ալ բերաւ, ու ըսաւ, Տէր, հինգ տալանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ հինգ տալանդ ես անոնց վրայ շահեցայ։ 21—Ըսաւ անոր իր տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ. դուն որ փիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ. մտիր քու տէրոջդ ուրախութեանը մէջ։ 22—Երկու տալանդը առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, երկու տալանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ երկու տալանդ ես անոնց վրայ շահեցայ։ 23—Ըսաւ անոր իր տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ. դուն որ փիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ. մտիր քու տէրոջդ ուրախութեանը մէջ։ 24—Մէկ տալանդը առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, գիտէի որ դուն խիստ մարդ մըն ես, չսերմնացած տեղէդ կը հնձես ու չցանած տեղէդ կը ժողվես։ 25—Ու սաստ վախնալով՝ գացի քու տալանդդ գետնին տակ պահեցի. ---է ահա քուկդ քեզի։ 26—Պատասխան տուաւ անոր տէրը ու ըսաւ անոր, Չար և ծոյլ ծառայ, գիտէիր որ չսերմնացած տեղէս կը հնձեմ ու չցանած տեղէս կը ժողվեմ։ 27—Ուրեմն պէտք էր քեզի որ իմ առակս սեղանաւորներուն տայիր, որպէս զի եկած առենս շահովս առնէի իմս։ 28—Արդ առէք տակէ տալանդը, ու տասը տալանդ ունեցողին տուէք։ 29—Վասն զի ամէն ունեցողին պիտի տրուի, ու պիտի աւելայ, և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի։ 30—Ու այդ անպիտան ծառան դուրսի խաւարը նետեցէք. հոն պիտի լալ ու ակռաները կրճտել։

31—Ու երբ Որդին մարդոյ իր փառքովը գայ, և բոլոր *սուրբ հրեշտակները իրեն հետ, այն առեն իր փառաց աթոռը պիտի նստի։ 32—Ու անոր առջև պիտի ժողվուին բոլոր ազգերը, ու զանոնք իրարմէ պիտի զատէ, ինչպես հովիւ մը ոչխարները այծերէն կը զատէ։ 33—Ու ոչխարները իր աջ կողմը պիտի կացնեցնէ, ու այծերը ձախ կողմը։

34—Այն առեն թագաւորը իր աջ կողմը եղողներուն պիտի ըսէ, Եկէք, իմ Հօրս օրհնածներ, ժառանգեցէք պատրաստուած թագաւորութիւնը ձեզի համար աշխարհի սկիզբէն։ 35—Վասն զի անօթեցայ, և ինծի ուտելիք տուիք. ծարաւեցայ, ու ինծի խմցուցիք. օտարական էի, և զիս ներս առիք. 36—Մերկ էի, և զիս հագուեցուցիք. հիւանդ էի, ու ինծի տես եկաք. բանտի մէջ էի, և ինծի եկաք։ 37—Այն առեն արդարները անոր պատասխան պիտի տան ու ըսեն, Տէր, ե՞րբ քեզ անօթեցած տեսանք ու կերակրեցինք, կամ ծարաւած՝ ու խմցուցինք։ 38—Ե՞րբ քեզ օտարական տեսանք և ներս առինք, կամ մերկ՝ ու հագուեցուցինք։ 39—Ե՞րբ քեզ հիւանդ կամ բանտի մէջ տեսանք, ու քեզի եկանք։ 40—Ու թագաւորը պատասխան տալով պիտի ըսէ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որովհետև այս իմ եղբայրներուս ամէնէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք։

41—Այն առեն ձախ կողմը եղողներուն ալ պիտի ըսէ, Մէկդի գացէք ինծմէ, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ՝ որ պատրաստուած է Սատանայի ու իր հրեշտակներուն։ 42—Վասն զի անօթեցայ, և ինծի ուտելիք չտուիք. ծարաւեցայ, ու ինծի չխմցուցիք. 43—Օտարական էի, և զիս ներս չառիք. մերկ էի, և զիս չհագուեցուցիք. հիւանդ ու բանտի մէջ էի, և ինծի տես

*Ոմանք չտուին

չեկաք։ **44**—Այն ատեն անոնք ալ պատասխան պիտի *տան ու ըսեն, Տէր, ե՞րբ տեսանք քեզ անօթեցած, կամ ծարաւած, կամ օտարական, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, ու քեզ պատաս արած չըրինք։ **45**—Այն ատեն պատասխան պիտի տայ անոնց ու ըսէ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որովհետեւ ասոնց ամենէն պզտիկներէն մէկուն չըրիք, ինծի ալ չըրիք։

46—Ու ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը։

ԳԼ. ԻԶ

1 Ու երբ Յիսուս լմնցուց այս բոլոր խօսքերը, ըսաւ իր աշակերտներուն, **2**—Իմանաք որ երկու օրէն հաւ զատիկ կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը մատնուի խաչը հլլելու։

3—Այն ատեն քահանայապետները ու գիրերը և ժողովրդին ծերերը ժողվուեցան քահանայապետին պատը, որուն անունը Կայիափա էր։ **4**—Ու խորհուրդ ըրին որ նենգութեամբ բռնեն Յիսուսը ու մեռցնեն։ **5**—Բայց կ'ըսէին Թէ Ոչ տօնին ատեներ, որպէս զի ժողովրդին մէջ խռովութիւն չըլլայ։

6—Ու երբ Յիսուս Բեթանիա էր, բորոտ Սիմոնի տունը, **7**—կին մը եկաւ անոր՝ որ ունէր ծանրագին իւղի շիշ մը, և թափեց անոր գլխուն վրայ՝ երբ անիկա սեղան նստած էր։ **8**—Ու անոր աշակերտները տեսնելով՝ դժգոհութիւն ու ըսին, Ինչո՞ւ այս կորուստը ըլլայ։ **9**—Քանդի այդ իւղը կրնար սուղ գնով ծախուիլ, ու աղքատներուն արուիլ։ **10**—Ու Յիսուս իմանալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք կինը։ քանզի տեսիլ բարի գործ մը գործեց ինծի։ **11**—Վասն զի աղքատները միշտ ատեն ձեզի հետ ունիք, բայց զիս միշտ ատեն չունիք։ **12**—Վասն զի տեսիլ որ այդ իւղը իմ մարմինիս վրայ թափեց, իմ թաղմանս համար ըրաւ։ **13**—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ Բոլոր աշխարհի մէջ ուր որ այս աւետարանը քարոզուի, ատոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար։

14—Այն ատեն տասներկուքէն մէկը, որ Յուդա Իսկարիովացի կ'ըսուէր, գնաց քահանայապետներուն ու ըսաւ, **15**—Ի՞նչ կ'ուզէք ինծի տալ, ու ես ձեզի մատնեմ զանիկա։ և անոնք երեսուն արծաթ *խոստացան անոր։ **16**—Ու անկէ հետ պատեհութիւն մը կը փնտռէր, որպէս զի զանիկա մատնէ անոնց։

17—Ու բազմոյակերաց առաջին օրը աշակերտները Յիսուսի եկան ու անոր ըսին, Ո՞ւր կ'ուզես որ քեզի պատրաստենք՝ զատիկը ուտելու համար։ **18**—Ու անիկա ըսաւ, Գացէք քաղաքը այս ինչ մարդուն ու ըսէք անոր, Վարդապետը կ'ըսէ, ժամանակս մօտ է։ աշակերտներուս հետ մէկտեղ զատիկը պիտի ընեմ զաորիկը։ **19**—Աշակերտները այ ըրին ինչպէս Յիսուս իրենց հրամայեց բրաւ, ու պատրաստեցին զատիկը։

20—Ու երբ իրիկուն եղաւ, տասներկուքին հետ սեղան նստաւ։ **21**—Ու քանի որ կ'ուտէին, ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ։ **22**—Ու չատ տրտմեցան, և ամենքն ալ մէկ մէկ սկսան ըսել անոր, Տէր, միթէ ե՞ս եմ։ **23**—Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ան որ ինծի հետ իր ձեռքը պնակը խոթեց, նոյնը պիտի մատնէ զիս։ **24**—Որդի Մարդոյ կ'երթայ, ինչպէս գրուած է իրեն համար։ բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդին մարդոյ կը մատնուի։ աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար։ **25**—Պատասխան տուաւ Յուդա որ զանիկա պիտի մատնէր՝ ու ըսաւ, Վարդապետ, միթէ ե՞ս եմ։ ըսաւ անոր, Դուն ըսիր։

26—Ու քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կոտրեց, և տուաւ աշակերտներուն ու ըսաւ, Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս։ **27**—Ու գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ անոնց և ըսաւ, Ամէնդ ալ խմեցէ՛ք ասկէ։ **28**—Վասն զի ասիկա է իմ արիւնս նոր ուխտին, որ շատերու համար

*Ոմանք, տան անոր

*Կամ, կշտացին

կը թափուի մեղքերու թողութեան համար։ **29**—Բայց կ'ըսեմ ձեզի, Ասկէ հետեւ արքին բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչեւ այն օրը՝ երբ ձեզի հետ զանիկա նոր խմեմ իմ Հօրս թագաւորութեանը մէջ։

30—Ու օրհնութիւն մը երգելէ հետեւ Ձիթենեաց լերը ելան։ **31**—Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Դուք ամենդ այս գիշեր իմ վրայովս պիտի գայթակղիք։ վասն զի գրուած է Թէ Հովիւը պիտի զարնեմ, ու հօտին ոչխարները պիտի ցրուին։ **32**—Բայց յարութիւն առնելէս հետեւ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ։ **33**—Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ անոր, Թէկուա ամենն ալ քովվրայովդ գայթակղին, բայց ես բնաւ պիտի չգայթակղիմ։ **34**—Ըսաւ անոր Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Այս գիշեր գոռ հաւը չհասած՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս։ **35**—Ըսաւ անոր Պետրոս, Թէկուա քեզի հետ մեռնելու ալ ըլլամ, բնաւ քեզ պիտի չուրանամ։ այսպէս կ'ըսէին նաեւ ամէն աշակերտները։

36—Այն ատեն Յիսուս անոնց հետ տեղ մը եկաւ որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ աշակերտներուն, Հոս նստեցէ՛ք մինչեւ որ հոն երթամ հոն ազօթք ընեմ։ **37**—Ու իրեն հետ առնելով Պետրոսը ու Զերեդէոսի երկու որդիները, սկսաւ տրտմիլ ու վշտանալ։ **38**—Այն ատեն ըսաւ անոնց, Իմ անձս մեռնելու չափ տրտում է։ հոս կեցէ՛ք և ինծի հետ արթուն մնացէ՛ք։ **39**—Ու փոքր մը առաջ երթալով իր երեսին վրայ ինկաւ և ազօթք ըրաւ՝ ըսելով, Ով Հայր իմ, եթէ կարելի է, թող այս գաւաթը ինծմէ անցնի։ բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես։ **40**—Ու եկաւ աշակերտներուն ու զանոնք քնացած գտաւ, և ըսաւ Պետրոսի, Այդպէս մէկ ժամ ալ չկրցա՞ք ինծի հետ արթուն կենալ։ **41**—Արթուն կեցէ՛ք և ազօթք ըրէ՛ք, որպէս զի փորձութեան մէջ չմտնէ՛ք։ հոգին յօժար է, բայց մարմինը տկար։ **42**—Դարձեալ երկրորդ անգամ գնաց ազօթք ըրաւ՝ ըսելով, Ով Հայր իմ, եթէ անկարելի է որ այս գաւաթը ինծմէ անցնի առանց անկէ խմելուս, թող քու կամքդ ըլլայ։ **43**—Ու եկաւ զանոնք նորէն քնացած գտաւ, վասն զի աչքերնին ծանրացած էր։ **44**—Ու թողուց զանոնք, ու նորէն գնաց երրորդ անգամ ազօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով։ **45**—Այն ատեն եկաւ իր աշակերտներուն ու ըսաւ անոնց, Ասկէ հետեւ քնացէ՛ք ու հանգչեցէ՛ք։ ահա ժամը հասաւ, և Որդին մարդոյ մեղաւոր մարդոց ձեռքը կը մատնուի։ **46**—Եկէ՛ք ասկէ երթանք։ ահա մատնեցաւ անիկա որ զիս պիտի մատնէ։

47—Ու գեռ անիկա զրոյց կը խօսէր, Ահա Յուդա, տասներկուքէն մէկը, եկաւ, և իրեն հետ շատ բազմութիւն՝ սուրերով ու բիրերով, քահանայապետներէն և ժողովրդին ծերերէն։ **48**—Ու զանիկա մատնողը անոնց նշան մը տուեր էր՝ ըսելով, Ով որ հոն համբուրեմ, ան է, բռնեցէ՛ք զանիկա։ **49**—Ու չուտ մը Յիսուսի մօտենալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, վարդապետ, ու համբուրեց զանիկա։ **50**—Ու Յիսուս ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար եկար գուն։ այն ատեն մօտեցան, ձեռք զարկին Յիսուսի, ու բռնեցին զանիկա։ **51**—Ու ահա Յիսուսի հետ եղողներէն մէկը ձեռքը երկնցուց և իր սուրը հանելով՝ զարկաւ քահանայապետին ծառային, և անոր ականջը մէկդի հանեց։ **52**—Այն ատեն Յիսուս ըսաւ անոր, Սուրդ իր տեղը գարձուր, վասն զի ամէն սուր առնողները սրով պիտի կորսուին։ **53**—Կը կարծես Թէ չեմ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, և ինծի հազուագէտ տասներկու *գունդէն աւելի հրեշտակներ։ **54**—Բայց ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը, Թէ պէտք է այսպէս ըլլայ։

55—Այն ատեն Յիսուս ըսաւ այն բազմութեանը, Իբր Թէ աւազակի վրայ երկաք սուրերով ու բիրերով գիս բռնելու եկաք։ ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցնէի, և զիս չբռնեցիք։ **56**—Բայց այս ամէն բաները եղան, որպէս զի կատարուին մարգարէներուն գիրքերը։ Այն ատեն բոլոր աշակերտները Յիսուսը թողուցին զանիկա ու փախան։

57—Ու անոնք որ Յիսուսը բռնեցին, Կայիափա քահանայապետին տարին,

*Յոյն, լեգեանէն

ար գպիրներըդ ու ծերերդ ժողովեր էին։ 58—Եւ Գեառա հեռանայ անոր եան-ւէն գնաց մինչև քահանայապետին գա-ւիթը, ու ներս մտաւ ապատաս արներուն հետ նստաւ որպէս զի վերջը տեսնէ։ 59—Իսկ քահանայապետները ու ծե-րերը և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ վկայութիւն մը կը փնտռէին, որպէս զի զանիկա մեռցնեն։ 60—Ու չգտան. Թէև շատ սուտ վկաներ ալ եկան, բայց չգտան. ետքը երկու սուտ վկայ եկան, 61—ու բսին Թէ Այիկա բսաւ, Ես կրնամ Աստուծոյ տաճարը քակել, և զանիկա երեք օրուան մէջ չշինել։ 62—Եւ քահանայապետը ոտք ելլելով բսաւ անոր, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն տանք քեզի դէմ։ 63—Եր Յիսուս լուռ կը կենար։ Պատասխան առաւ քահանայապետը ու բսաւ անոր, Կենդանի Աստուծով քեզ կ'երդնեմ մեզի բսես, Թէ դո՞ւն ես Քրիստոս Որդին Աստուծոյ։ 64—Ըսաւ անոր Յիսուս, Դուն բսիր. բայց կ'բսեմ ձեզի, Ետքէ եան պիտի տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նստած, ու երկինքի ամպերուն վրայ եկած։ 65—Այն ատեն քահանայապետը իր հանդերձները պատռեց ու բսաւ, Հայհոյութիւն ըրաւ. ալ ի՞նչ պէտք են մեզի վկաներ. ահա հիմա լսեցիք սուրբ հայհոյութիւնը։ 66—Ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ. անոնք պատասխան առին ու բսին, Մահապարտ է։ 67—Այն ատեն անոր երեսը թքեցին, ու բռնցքով ծեծեցին զանիկա. ոմանք ալ ապտակ տարնելով՝ բսին, 68—Մարգարէացիր մեզի, դուն Քրիստոս, ո՞վ է ան որ քեզի զարկաւ։

69—Իսկ Գեառա դուրսը գաւիթը նստեր էր, և ազախին մը եկաւ անոր ու բսաւ, Դուն ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր։ 70—Բայց անիկա ամենուն առջև ուրացաւ ու բսաւ, Ձեմ գիտեր դուն ի՛նչ կը խօսիս։ 71—Ու երբ դուռը ելաւ, ուրիշ ազախին մը զանիկա տեսաւ, և հոն եղողներուն բսաւ, Ասիկա ալ Յիսուս Նազովրեցիի հետ էր։ 72—Եւ Պետրոս նորէն երդումով բնելով ուրացաւ, Թէ ես այն մարդը չեմ ճանչնար։

73—Ու փոչ մը ատենէն ետև հոն եղողները եկան և բսին Գեառասի, արդարև դուն ալ անոնցմէ ես, վասն զի քու գրուցատիպդ ալ քեզ յայտնի կ'ընէ։ 74—Այն ատեն սկսաւ անիծել ու երդումով բնել՝ ըսելով Թէ ես այն մարդը չեմ ճանչնար. և իսկոյն հաւ խօսեցաւ։ 75—Եւ Գեառա միտքը բերաւ Յիսուսի խօսքը զոր իրեն բսեր էր Քէ Դեհաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս. ու դուրս ելլելով դառնապէս լացաւ։

Գլ. ԻԵ

Երբ առաւոտ եղաւ, բոլոր քահանայապետները ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ բրին որ զանիկա մեռցնեն։ 2—Ու կապելով զանիկա տարին, ու Պոնտացի Պիղատոս կուսակալին ձեռքը տուին։

3—Այն ատեն Յուդա, որ զանիկա մատնեց, տեսնելով Թէ դատապարտուեցաւ, զղջմէ եկաւ, ու երեսուն արծաթը ետ դարձուց քահանայապետներուն և ծերերուն, 4—ու բսաւ, Մեղայ, որ անմեղ արիւն մատնեցի. և անոնք բսին, Մեզի ի՞նչ, դուն նայէ։ 5—Ու արծաթը աւազանին մէջ ձգեց ու դուրս ելաւ, և գնաց ինքզինք խեղդեց։ 6—Քահանայապետներն ալ արծաթը առնելով՝ բսին, Արժան չէ սակայն *կորբանին մէջ" դնել, վասն զի արեան գին է։ 7—Ուստի խորհուրդ բրին, և անով բրաւ սին արտ Խեռաւ ուխտներուս գերեզմանատուն ըլլալու համար։ 8—Ա յս պատճառաւ այն արտ Արեան արտ բսուեցաւ մինչև այսօր։ 9—Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով բսուած խօսքը, Ես առին երեսուն արծաթը, գին կորսուածին գինը, զոր Իսրայէլի որդիներէն ոմանք գին կարճցին, 10—ու առին զանիկա բրաւ սին արտին, ինչպէս ինծի հրաման բրաւ Տէրը։

11—Եւ Յիսուս կուսակալին առջև կայնեցաւ. և կուսակալը հարցուց անոր ու բսաւ, Հրէից Թագաւորը դո՞ւն ես։

*Այսինքն՝ ուռաքրին գանձանակը ՓՈՄԱՀ ԸՆԴԱՆ ԵՐԵՄԻԱ

Ես Յիսուս բսաւ անոր, Դուն կ'բսես։ 12—Ու քահանայապետներն ու ծերերէն ամբաստանուած ատենը բնաւ պատասխան մը չառաւ։ 13—Այն ատեն Պիղատոս բսաւ անոր, Չե՞ս լսեր Թէ ո՛րչափ բեզի դէմ կը վկայեն ատոնք։ 14—Եւ անոր բան մը պատասխան չառաւ, մինչև չսա զարմացաւ կուսակալը։

15—Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ ատեն ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին, ով որ ուզէին։ 16—Այն ատեն բաբարաս անուանով երեւելի բանտարկեալ մը ունէին։ 17—Երբ ժողվուեցան, բսաւ անոնց Պիղատոս, Ո՞ր կ'ուզէք որ ձեզի արձակեմ. Բաբարաս՞ն, Թէ Յիսուս՝ որ Քրիստոս կ'բսուի։ 18—Գիտէր գիտէր Թէ նախանձի համար մատնեցին զանիկա։

19—Ու երբ անիկա տեղը նստեր էր, անոր կինը հետ զրկեց անոր ու բսաւ, Դուն այն արդարին հետ բան մը չունենաս, վասն զի այսօր երազիս մէջ շատ դժուարութիւններ անցան գլխուս անոր համար։

20—Բայց քահանայապետները և ծերերը ժողովուրդը համոզեցին որ Բաբաբաս խնդրեն ու Յիսուսը կորսնցնեն։ 21—Պատասխան առաւ կուսակալը ու բսաւ անոնց, Այս երկուքէն ո՞ր կ'ուզէք որ ձեզի արձակեմ. և անոնք բսին, Բաբաբաս։ 22—Ըսաւ անոնց Պիղատոս, Ապա ի՞նչ ընեմ Յիսուսը, որ Քրիստոս կ'բսուի։ 23—Ամենն ալ բսին անոր, Խաչ հանուի. և կուսակալը բսաւ, Բայց ի՞նչ չար գործ բրաւ. և անոնք ա՛լ ատելի կ'ուզակէին ու կ'բսէին, Խաչ հանուի։ 24—Ու Պիղատոս տեսնելով որ օգուտ մը չըլլար, հապա՛ լ աւելի խռովութիւն կ'ըլլայ, ջուր առաւ, ձեռքերը լուաց ժողովուրդին առջև ու բսաւ, Ես այդ արդարին արիւնէն անպատասխանատու եմ. դուք մտածեցէք։ 25—Ու բոլոր ժողովուրդը պատասխան տալով բսաւ, Անոր արիւնը մեր վրայ ու մեր որդիներուն վրայ ըլլայ։ 26—Այն ատեն Բաբաբասն արձակեց անոնց, և Յիսուսը ծեծելով անոնց ձեռքը առաւ որպէս զի խաչուի։

27—Այն ատեն կուսակալին զին-ւորները պալատին նէրսը առին Յիսուսը, ու բոլոր զինուորները գունդը անոր վրայ ժողվեցին. 28—ու զանիկա մերկացնելով կարմիր վերարկու մը հագուցին անոր։ 29—Ու փշերէ պսակ մը հիւսելով անոր գլխուը գրին, ու եզէգ մը անոր աջ ձեռքը. և անոր առջև ծունկի վրայ գալով ծաղր կ'ընէին զանիկա, ու կ'բսէին, Ողջոյն քեզ, Հրէից Թագաւոր։ 30—Ու Քսնելով անոր վրայ՝ եզէգը կ'առնէին ու անոր գլուխը կը ծեծէին։ 31—Ու երբ ծաղր բրին զանիկա, վերարկուն վրայէն հանեցին ու իր հանդերձները հագուցին անոր և տարին զանիկա խաչը հանելու։

32—Ու գտնս ելլելով Կիւրենացի մարդ մը գան Սիմոն անուամբ, զանիկա պահակ բռնեցին որպէս զի անոր խաչը վերցնէ։ 33—Ու եկան Գողգոթա բսած տեղը, որ է գանկի տեղ։ 34—Ու լեզիով խառնուած քացախ տուին անոր որպէս զի խմէ. ու երբ համը առաւ, խմել չէր ուզեր։ 35—Ու զանիկա խաչը հանելով, անոր հանդերձները վիճակով բաժնեցին։ (որպէս զի մարգարէն բսուածը կատարուի, Իմ հանդերձները իրենց մէջ բաժնեցին, և իմ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին։) 36—Ու նստեր զանիկա կը պահէին։ 37—Ու անոր գլխուն վրայ իր յանցանքը գրած գրին, Թէ Այիկա է Յիսուս Հրէից Թագաւորը։ 38—Այն ատեն անոր հետ երկու աւազակ խաչուեցան, մէկը աջ կողմէն, ու մէկը ձախ կողմէն։

39—Ու անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր, գլուխնին կը շարժէին, 40—ու կ'բսէին, Դուն որ տաճարը կը քակէիր և երեք օրուան մէջ կը շինէիր, ինքզինքդ ազատէ. եթէ Աստուծոյ Որդին ես, իջիր այդ խաչէն։ 41—Նոյնպէս ալ քահանայապետները գպիրներուն ու ծերերուն հետ ծաղր ընելով՝ կ'բսէին, 42—Ուրիշները ազատեց, ինքզինք չկրնար ազատել. եթէ Իսրայէլի Թագաւոր է, թող հիմա իջնէ խաչէն, և իրեն հաւատանք։ 43—Աստուծոյ յուսացեր է, հիմա թող փրկէ սիրկա եթէ կ'ուզէ սիրկա. վասն զի բսաւ, Թէ ես Որդի Աստուծոյ եմ։

44—Իրեն հետ խաչած աւազակներն ալ նոյնպէս կը նախատէին զանիկա։

45—Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժամը բոլոր երկրին վրայ խաւար եղաւ։ 46—Եւ ժամը իններն աւելնելուն Յիսուս մեծ ձայնով աղաղակեց ու ըսաւ, Էլի, Էլի, լ՚ամա սաբաքթանի. որ կը նշանակի՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր։ 47—Անոնցմէ ոմանք, որ հոն կայնած էին, երբ լսեցին՝ կ՚ըսէին, Ահաւասիկ կը կանչէ Եղիան զայն։ 48—Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց ասպնջ մը առաւ՝ քացախով լեցուց, ու եղէգի մը անցընելով առաւ անոր օրպէս զի խմէ։ 49—Ու միւսները կ՚ըսէին, Թող ատ, տեսնենք թէ եղիա կու գա՞յ ազիկա ազատելու։

50—Եւ Յիսուս գոչելով մեծ ձայնով աղաղակեց, ու հոգին աւանդեց։

51—Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն վար երկու բի հնդգաւեցաւ, ու երկիրը շարժեցաւ, և քարերը պատռեցան։ 52—Ու գերեզմանները բացուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին, 53—Ու գերեզմաններէն ելան անոր յարութենէն ետև, մտան սուրբ քաղաքը ու շատերու երեւցան։

54—Բայց հարիւրապետը և անոր հետ Յիսուսը պահողները, երբ տեսան երկրաշարժը ու եղած բաները, շատ վախցան՝ ու ըսին, Արդարև ասիկա Որդի Աստուծոյ էր։

55—Եւ հոն շատ կիներ կային որոնք հեռուէն կը նայէին, որոնք Գալիլեայէ Յիսուսի ետևէն եկան իրեն ծառայութիւն ընելու։ 56—Որոնց մէջ էր Մարիամ Մագդալինացի և Յակոբոսի ու Յովսէսի մայրը Մարիամ և Զեբեդէոսի որդիներուն մայրը։

57—Ու երբ իրիկուն եղաւ, Արիմաթիայէ հարուստ մարդ մը եկաւ, որուն անունը Յովսէփ էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր։ 58—Ասիկա Պիղատոսի մօտ երթալով՝ Յիսուսի մարմինը խնդրեց. այն ատեն Պիղատոս հրամայեց որ մարմինը տրուի։ 59—Եւ Յովսեփ մարմինը առաւ, մաքուր կտաւով պատնեց, 60—Ու դրաւ իր նոր գերեզմանին մէջ զոր քարէ փորած էր. և գերեզմանին դուռը մեծ քար մը գլորելով գնաց։ 61—Ու հոն էր Մարիամ Մագդալինացի և միւս Մարիամ՝ գերեզմանին դիմաց նստած։

62—Եւ հետևեալ օրը, որ ուրբաթէն ետև էր, քահանայապետները ու փարիսեցիները ժողովեցան Պիղատոսի մօտ, 63—Ու ըսին, Տէր, կը յիշենք որ այն մոլորեցուցիչը իր կենդանութեան ատենը կ՚ըսէր թէ երեք օրէն ետև յարութիւն կ՚առնեմ։ 64—Ուստի հրամայէ որ մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւն ընեն. չըլլայ թէ իր աշակերտները գիշերով գան զանիկա գողնան, և ժողովուրդին ըսեն թէ մեռելներէն յարութիւն առաւ. ու եւսի մոլորութիւնը առաջինէն գէշ ըլլայ։ 65—Պիղատոս անոնց ըսաւ, Դուք ունիք պահապան զինուորներ. գացէք, զգուշութիւն ըրէք ինչպէս որ գիտէք։ 66—Անոնք ալ գացին գերեզմանին զգուշութիւն ըրին, քարը կնքելով ու պահապան զինուորներ դնելով։

ԳԼ. ԻԸ

Ե շաբաթ գիշերը երբ Կիւրիակի լուսնաթ, եկաւ Մարիամ Մագդալինացի ու միւս Մարիամը գերեզմանը տեսնելու։ 2—Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ, վասն զի Տէրոջը հրեշտակը երկինքէն իջնելով, գնաց դարձեալ մեկդի գլորեց քարը, ու անոր վրայ նստաւ։ 3—Եւ անոր տեսքը փայլակի պէս էր, ու անոր հանդերձները՝ ձիւնի պէս ճերմակ։ 4—Եւ անոր վախէն պահապանները խռովեցան, ու մեռածի պէս եղան։ 5—Պատասխան առաւ հրեշտակը ու ըսաւ կիներուն, Դուք մի վախնաք, գանդի գիտեմ որ կը փընտռէք Յիսուսը, որ խաչուեցաւ։ 6—Անիկա հոս չէ, վասն զի յարութիւն առաւ, ինչպէս ըսաւ. եկէք տեսէք այն տեղը, ուր Տէրը պառկած էր։ 7—Եւ շուտ մը գացէք անոր աշակերտներուն ըսէք թէ Անիկա մեռելներէն յարութիւն առաւ, և ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ՚երթայ, հոն պիտի տեսնէք զանիկա. ահա ձեզի պատգիցի։ 8—Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրախութիւնով, և կը վազէին աշակերտներուն պատմել։

9—Ու երբ կ՚երթային անոր աշակերտներուն պատմել, ահա Յիսուս անոնց դէմը ելաւ ու ըսաւ, Ողջոյն ձեզի։ Եւ անոնք մօտենալով անոր ոտքերը բռնեցին, ու երկրպագութիւն ըրին անոր։ 10—Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց, Մի վախնաք, գացէք իմ եղբայրներուս ըսէք որ Գալիլեա երթան, ու հոն զիս պիտի տեսնեն։

11—Երբ անոնք կ՚երթային, ահա պահապան զինուորներէն մէկ քանին քաղաքը եկան, ու քահանայապետներուն պատմեցին բոլոր եղած բաները։ 12—Եւ անոնք ծերերուն հետ միկռուդ ժողովելով ու խորհրդ ընելով, շատ տակ տուին զինուորներուն, 13—Ու ըսին, Ըսէք թէ Անոր աշակերտները գիշերով եկան զանիկա գողցան, երբ մենք կը քնանայինք։ 14—Եւ եթէ այդ բանը կուսակալին ականջը հասնի, մենք զինիկ կը համոզենք, և ձեզ *ապահով կ՚ընենք։ 15—Անոնք ալ առակը առին, ու ուրպատնուն պէս ըրին. և այս ձայնը Հրեաներուն մէջ սարած ուեցաւ մինչև այսօր։

16—Իսկ տասնմէկ աշակերտները գացին Գալիլեա, այն լեռը ուր Յիսուս իրենց որոշեր էր։ 17—Ու երբ զանիկա տեսան, երկրպագութիւն ըրին անոր, բայց ոմանք տարակուսեցան։ 18—Եւ Յիսուս մօտենալով՝ խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի ու երկրի մէջ։ 19—Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ 20—Սորվեցուցէք անոնց որ այն ամէն բաները պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուիրեցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը։ Ամէն։

*Յոյն. անոնք.

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼ. Ա

Սաստծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի աւետարանին սկիզբը։ 2—Ինչպէս մարգարէներուն մէջ գրուած է. Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ առջեւէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջեւէդ։ 3—Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները չիսկեցէք։ 4—Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր, և ապաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր՝ մեղքերու թողութեան համար։ 5—Եւ բոլոր Հրէաստանի երկիրը ու Երուսաղէմացիք կ'երթային անոր, ու ամէնը կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ մեղքերնին խոստովանելով։ 6—Եւ Յովհաննէս հագեր էր ուղտի մազ, և իր մէջքը կաշեայ գօտի. ու իր կերակուրը մարախ ու վայրենի մեղր էր։ 7—Եւ կը քարոզէր ու կ'ըսէր, Իմ ետեւէս ինծմէ զօրաւորը կու գայ, որ ես արժանի չեմ ծռելու և անոր կօշիկներուն կապերը արձակելու։ 8—Ես ձեզ ջրով մկրտեցի, բայց անիկա ձեզ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ։

9—Ու եղաւ որ այն օրերը Յիսուս Գալիլեայի Նազարէթէն եկաւ, ու Յովհաննէսէ մկրտուեցաւ Յորդանանու մէջ։ 10—Եւ շուտ մը ջուրէն ելլելուն պէս երկինքը բացուած տեսաւ, և Հոգին աղաւնիի պէս՝ որ իր վրայ կ'իջնէր։ 11—Եւ ձայն մը եկաւ երկինքէն, որ կ'ըսէր, Դուն ես իմ սիրելի Որդիս, որու հաճներ եմ։

12—Եւ շուտ մը Հոգին անապատը հանեց զանիկա։ 13—Ու քառասուն օր հոն էր անապատին մէջ՝ Սատանայէ փորձուած, և գազաններու հետ էր, ու հրեշտակները իրեն ապասաւորութիւն կ'ընէին։

14—Եւ Յովհաննէսի մատնուելէն ետեւ Յիսուս Գալիլեա եկաւ, Աստծոյ արքայութեան աւետարանը կը քարոզէր 15—Ու կ'ըսէր, Թէ ժամանակը լրացած է, և Աստծոյ թագաւորութիւնը մօտեցած է. ապաշխարեցէք ու աւետարանին հաւատացէք։

16—Երբ Գալիլեացւոց Ծովուն քովերը կը պարուէր, տեսաւ Սիմոնը ու Սիմոնի եղբայրը Անդրեասը, Ծովը ուռկան ձգած, վասն զի ձկնորս էին։ 17—Եւ Յիսուս բաւ անոնց, Իմ ետեւէս եկէք, ու ես ձեզ պիտի ընեմ որ մարդու որսորդ ըլլաք։ 18—Անոնք ալ շուտ մը իրենց ուռկանները թողուցին ու անոր ետեւէն գացին։ 19—Ու անկէ փիչ մը առաջ երթալով՝ տեսաւ Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը, որ անոնք ալ նաւին մէջ ուռկանները կը կարկըտէին։ 20—Եւ շուտ մը զանոնք կանչեց. անոնք ալ իրենց հայրը Զեբեդէոսը վարձկաններուն հետ նաւին մէջ ձգելով՝ անոր ետեւէն գացին։

21—Ու մտան Կափառնայում. և իսկոյն շաբաթ օրը ժողովարանը մտնելով՝ կը սորվեցնէր։ 22—Եւ կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ, վասն զի իշխանութիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց, ու ոչ թէ գպիրներուն պէս։ 23—Եւ անոնց ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիտի ոգի ունէր իր ներսիդին, ու աղաղակեց՝ բսելով, 24—Թող տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազովրեցի. միթէ մեզ կորնցնելու՞ եկար. գիտեմ քեզ՝ ո՛վ ես Աստծոյ Սուրբը։ 25—Ու Յիսուս սաստեց անոր՝ ըսելով, Պառնէ ու ել ասկէ։ 26—Ու պիտի ոգին սաստիկ ցնցեց զանիկա, ու մեծ ձայնով մը աղաղակեց ու անկէ ելաւ։ 27—Ու ամէնը զարմացան, այնպէս որ իրարու հարցափորձ կ'ընէին ու կ'ըսէին, Այս ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է այս, որ իշխանութիւնով պիտի ոգիներուն ալ կը հրամայէ, ու իրեն կը հնազանդին։ 28—Եւ շուտ մը իր համբաւը Գալիլեացւոց ամէն կողմերը եղաւ։

29—Ու շուտ մը ժողովարանէն ելլելով՝ Սիմոնի ու Անդրեասի տունը մտան Յակոբոսի և Յովհաննէսի հետ։ 30—Ու Սիմոնի զոքանչը ֆեբռնատած՝ պառկած էր, և շուտ մը անոր համար բսին իրեն։ 31—Ու ձեռքէն մատեցաւ, անոր ձեռքէն բռնեց, վերցուց զանիկա. և իսկոյն ֆեբռը թողուցաւ զանիկա, ու անոնց սպասաւորութիւն կ'ընէր։

32—Ու երբ իրիկուն եղաւ, արեգակին մտած ատենը բոլոր հիւանդները և դիւահարները իրեն կը բերէին։ 33—Ու բոլոր քաղաքը դռան ժողվուեր էր։ 34—Եւ շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէ՝ բժշկեց ու շատ դևեր հանեց. ու դևերուն խօսիլ չէր տար, վասն զի զինք կը ճանչնային։

35—Ու առաւօտուն շատ կանուխ ելլելով դուրս ելաւ գնաց անապատ տեղ մը, և հոն աղօթք կ'ընէր։ 36—Ու Սիմոն և իրեն հետ եղողները գացին անոր ետեւէն։ 37—Ու երբ գտան զանիկա, իրեն անոր թէ Ամէնը քեզ կը փնտռեն։ 38—Ու բսաւ անոնց, Եկէ՛ երթանք մերձակայ գիւղաքաղաքները, որպէս զի հոն ալ քարոզեմ, քանզի այս բանին համար եկեր եմ։ 39—Եւ անոնց ժողովարաններուն մէջ կը քարոզէր բոլոր Գալիլեայի մէջ, ու դևեր կը հանէր։

40—Բորոտ մը եկաւ անոր, կ'աղաչէր, ծունկ կը դնէր ու կ'ըսէր անոր, Եթէ ուզես, կրնաս զիս մաքրել։ 41—Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը երկնցուց, դպաւ անոր ու բսաւ անոր, Կ'ուզեմ, մաքրուէ։ 42—Ու երբ ըսաւ բսաւ անոր, շուտ մը բորոտութիւնը անկէ գնաց, ու մաքրուեցաւ։ 43—Եւ սաստիկ պատուիրեր ուղարկեց անոր՝ շուտ մը դուրս հանեց զանիկա, ու բսաւ անոր, 44—Զգոյշ կեցիր, մարգո՛ բան մը չըսես. հապա գնա քեզ քահանային ցուցուր, և ուր մաքրութեանդ ընծան, զոր Մովսէս պատուիրեց անոնց վկայութիւն ըլլալու համար։ 45—Բայց անիկա ելլելով՝ սկսաւ շատ հրապարակել ու բանը տարածել, այնպէս որ ա՛լ ինք չէր կրնար յայտնի կերպով քաղաք մը մտնել. հապա դուրս անապատ տեղեր էր, և ամէն կողմերէն իրեն կու գային։

ԳԼ. Բ

Ու նորէն կափառնայում մտաւ քանի մը օրէն եաւ. 2—Ու լսուեցաւ որ անիկա տան մէջ է, և շատավ շատ մարդիկ ժողովեցան, այնպէս որ ա՛լ տեղ չկար, ոչ ալ դրսի քովերը. ու կը խօսէր անոնց Աստուծոյ խօսքը։ 3—Եւ կու գային իրեն՝ չորս մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին։ 4—Ու երբ բազմութենէն չէին կրնար անոր մօտենալ, քանկցին տանը կողը յարկը ուր Յիսուս էր, ու ծակ մը բանալով վար ինցուցին մահիճը, որուն վրայ պառկած էր անդամալոյծը։ 5—Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ բսաւ անդամալոյծին, Որդեակ, քու մեղքերդ ներուած են։ 6—Ու գպիրներէն մէկ քանիները կային որ հոն նստեր էին, և իրենց սիրտերուն մէջ կը խորհէին՝ 7—Ինչո՞ւ համար ասիկա այսպիսի հայհոյութիւններ կը խօսի՝ ո՞վ կրնայ մեղքերու թողութիւն տալ, բայց միայն Աստուած։ 8—Եւ Յիսուս իսկոյն իմանալով իր հոգւոյն մէջ՝ որ անոնք այնպէս կը խորհին իրենց մէջ, բսաւ անոնց, Ա՛յդ ինչ կը խորհիք սիրտերնուդ մէջ։ 9—Ո՞րը աւելի գիւրին է, անդամալոյծին բսե՛լ, Քու մեղքերդ ներուած են, թէ բսել՝ ելիր, մահիճդ առ ու քալէ։ 10—Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (բսաւ անդամալոյծին,) 11—Քեզի կ'ըսեմ, ելիր, մահիճդ առ ու տունդ գնա։ 12—Ան ալ շուտ մը

եալ, և չէ մոռիթը առնելով՝ ամէնուն առջև գալս եալ, այնպէս որ ամէնը ապշած մնացին, և փառս տուին Աստուծոյ, ու ըսին թէ Այսպիսի բան մը ամենեին տեսած չենք։

13—Ու եալ Նարէն ծովեզերքը, ու բոլոր ժողովուրդը իրեն կու գային, և կը սրվիցնէր անոնց։ 14—Ու երբ կ'անցնէր, տեսաւ Ղեի Ալփէոսեանը, որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու բսաւ անոր, Հետս եկո՛ իմ հետևէս։ ան ալ եալս անոր հետևեցաւ գնաց։ 15—Ու եղաւ որ երբ տեղան նստած էր անոր տանը մէջ, շատ մաքսաւորներ ու մեղաւորներ ալ տեղան նստած էին Յիսուսի հետ ու անոր աշակերտներուն հետ. քանզի շատեր էին, ու անոր հետևեցին կ'երթային։ 16—Ու գպիրները ու փարիսեցիները երբ տեսան թէ ան նիկա մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ ու կը խմէ։ 17—Ու Յիսուս երբ լսեց՝ բսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն. ես սրտաւներուը կանչելու չեկայ, հապա մեղաւորներ՝։

18—Ու Յովհաննէսի ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահէին. և եկան ու ըսին անոր, Ինչո՞ւ Յովհաննէսի ու փարիսեցիներուն աշակերտները ծոմ կը պահեն, ու քու աշակերտներդ ծոմ չեն պահեր։ 19—Ու Յիսուս բսաւ անոնց, Միթէ կարելի՞ է որ հարսնիքին ազաքը, քանի որ փեսան իրենց հետ է, ծոմ պահեն. որչափ ժամանակ որ փեսան իրենց հետ ունին, կարելի չէ ծոմ պահել։ 20—Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի, ապա այն օրը ծոմ պիտի պահեն։ 21—Մէկը կարկան չձգեր նոր լաթի կտոր մը հին հանդերձի վրայ. եթէ ալ՝ այն նորը որ անոր լրութիւնը հոմար գրուած էր, հինէն կ'առնէ ու պատառատածքը ա՛լ աւելի գէշ կ'ընէ։ 22—Ոչ ալ մէկը նոր գինին հին սրկերու մէջ կը դնէ. եթէ ալ՝ նոր գինին սրկերը կը պատռէ, ու գինին կը թափի և սրկերը կը կորսուին. հապա նոր գինին նոր սրկերու մէջ դնելու է։

23—Ու եղաւ որ շաբաթ օրը ինք պատերուն միջէն կ'անցնէր, և իր աշակերտները երը կ'երթային, սկսան ցորեխ հասկեր փրցնել։ 24—Ու փարիսեցիները ըսին իրեն, Նայէ՛ շաբաթ օրը ի՛նչ կ'ընեն, որ արժան չէ։ 25—Ինք ալ անոնց բսաւ, Մնա՞ք չի՛ք կարդացեր դաւթ Դաւիթի գործը՝ երբ պէտք ունեցաւ, և անօթեցաւ ինք ու անոնք որ իրեն հետ էին։ 26—Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար քահանայապետին օրով, և առաջաւորութեան հացերը կերաւ, ու տուաւ անոնց ալ որ իրեն հետ էին, զոր Հէ՛ն օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահանաներուն։ 27—Ու բսաւ անոնց, Շաբաթը մարդուն համար եղաւ, ու ոչ թէ մարդ՝ շաբաթին համար։ 28—Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է։

Գլ. Գ

Ն նորէն ժողովարանը մտաւ, ու հոն մարդ մը կար՝ որուն ձեռքը չորցած էր։ 2—Ու իրեն կը սպասէին թէ արդեօք շաբաթ օրը զանիկա պիտի բժշկէ՛, որպէս զի իր վրայով մեղաւանաթիւն բնեն։ 3—Ու ինք ձեռքը չորցած մարդուն բսաւ, Ելիր մէջտեղը կե՛ցէ։ 4—Ու բսաւ անոնց, Շաբաթ օրը բարի՞ք ընել արժան է՝ թէ չարիք ընել, հոգի մը ապրեցնե՞լ՝ թէ մեռցընել։ բայց անոնք լուռ կեցան։ 5—Ու Յիսուս բարկութեամբ շրջանակի անոնց վրայ նայելով՝ անոնց սրտերուն կարութեան համար տրտմած, բսաւ այն մարդուն, Ձեռքդ երկնցո՛ր։ ան ալ երկնցուց, և անոր ձեռքը *ողջացաւ։ 6—Ու փարիսեցիները ելլելով հետևանները հետ ժկտեց չաւ մը դուրս ելլելով, անոր դէմ խորհուրդ կ'ընէին թէ ի՛նչպէս կորսնցնեն զանիկա։

7—Բայց Յիսուս իր աշակերտներովը ծովեզերքը գնաց. և շատ բազմութիւն անոր հետևեցան գացին Գալիլեայէ ու

*Ոմանք՝ Խոնչցնէին, ապաշխարութեան

*Ոմանք՝ ողջացաւ մի սին պես

Հրէաստանէ, 8—ու Երուսաղէմէ ու Եդովմէ և Յորդանանու անդի կողմէն. ու անոնք որ Տիւրոսի ու Սիդոնի չրջակայ տեղերէն էին, շատ բազմութիւն, երբ լսեցին ինչ որ կ'ընէր, իրեն եկան։ 9—Ու իր աշակերտներուն բսաւ որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար՝ ժողովուրդին բազմութեանը պատճառաւ, որպէս զի զինք չնեղեն։ 10—Քանզի շատերը բժշկեց, այնպէս որ ցաւ ունեցողները վրան կը դիզուէին որպէս զի իրեն դպչին։ 11—Ու պիղծ ոգիները երբ զինք կը տեսնէին, կ'իյնային իր առջև, կը կանչռըտալին ու կ'բսէին, 12—Դուն ես Աստուծոյ Որդին. և ինք սաստիկ կը յանդիմաներ զանոնք, որ զինք չյայտնեն։

13—Ու լեռը ելլելով՝ իր ուզածները իրեն կանչեց, ու գացին անոր մօտ։ 14—Ու տասներկու հոգի որոշեց, որպէս զի իրեն հետ ըլլան, և որպէս զի զանոնք ղրկէ քարոզել։ 15—Ու իշխանութիւն ունենալ ցաւերը բժշկելու և դեւերը հանելու։ 16—Ու Սիմոնի անունը Պետրոս դրաւ. 17—Ու Զեբեդեան Յակոբոսի ու Յակոբոսի եղբօրը Յովհաննէսի՝ անոնց անունները Բոանեռգէս դրաւ, որ բսել է Որդիք որոտման։ 18—Ու Անդրէասը, ու Փիլիպպոսը, և Բարթողիմէոսը, ու Մատթէոսը, և Թովմասը, ու Ալփէոսեան Յակոբոսը, և Թադէոսը, ու Սիմոն Կանանացին, 19—Ու Յուդա Իսկարիովացին, որ նաև մատնեց զանիկա։

20—Տուն մը եկան, և նորէն ժողովուրդը ժողովեցաւ, այնպէս որ հաց ուտելու ալ չ*ամռնալ չկրցան ։Ր։։։

ծագած առանը այրեցաւ, ու աբհատ չկրնալուն համար չորցաւ։ 7—Ու ուրիշը ինկաւ փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանիկա, ու պատուղ չտուաւ։ 8—Ու ուրիշը ինկաւ ազնիկ հողի մէջ, ու պատուղ կու տար, որ ելաւ ու մեծցաւ, և կը բերէր մէկուն տեղ եօթսունը, ու մէկուն տեղ վաթսունը, և մէկուն տեղ հարիւր։ 9—Ու ըսաւ անոնց, Ան որ ականջ ունի, թող լսէ։

10—Ու երբ առանձին էր, իր գուղներէն տասներկուքին հետ մէկտեղ հարցուցին իրեն այն առակը։ 11—Ու ըսաւ անոնց, Ձեզի արուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են, ամէն բան առակներով կ'ըլլայ։ 12—Որպէս զի տեսնելով տեսնեն՝ ու չտեսնեն, և լսելով լսեն՝ ու չհասկնան, որպէս զի չըլլայ թէ դարձի գան, և իրենց մեղքերուն թողութիւն ըլլայ։ 13—Ու ըսաւ անոնց, Ահա առակը չէք գիտեր։ ուրեմն ի՞նչպէս պիտի գիտնաք ամէն առակները։ 14—Սերմ ցանողը խօսքը կը ցանէ։ 15—Ու ճամբան գտնվինները անոնք են, որոնց մէջ խօսքը կը ցանուի, ու երբ կը լսեն, չուտ մը Սատանայ կու գայ և անոնց սիրտերուն մէջ ցանուած խօսքը կը հանէ։ 16—Նոյնպէս ալ ապառաժուտ տեղերու վրայ ցանուածներդը անոնք են, որ երբ կը լսեն խօսքը, չուտ մը ուրախութեամբ կ'ընդունին զանիկա։ 17—Ու իրենց մէջ արմատ չունենալով՝ փիչ ժամանակ կը տեւեն, ետքը երբ նեղութիւն կամ հալածանք ըլլայ խօսքին համար, չուտ մը կը գայթակղին։ 18—Ու փուշերուն մէջ ցանուածներդը անոնք են, որ երբ խօսքը կը լսեն, 19—Աշխարհիս զբաղմունքներդը ու հարստութեան խաբեութիւնները, և ուրիշ բաներուն ցանկութիւնները մէջ մտնելով, խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ անպտուղ։ 20—Ու ազնիկ հողի մէջ ցանուածներդը անոնք են, որ խօսքը կը լսեն և կ'ընդունին, ու պտուղ կու տան՝ մէկուն տեղ երեսունը, և մէկուն տեղ վաթսունը, ու մէկուն տեղ հարիւր։

21—Ու ըսաւ անոնց, Մի՞թէ ճրագը գրուանին կամ մահիճին տա՞կ դրուելու համար կու գայ, չէ՞ որ աչառանակին վրայ դրուելու համար։ 22—Վասն զի ծածուկ բան մը չկայ, որ պիտի չյայտնուի։ և գաղտուկ բան մը չէ եղած, որ երեւան պիտի չելլէ։ 23—Եթէ մէկը լսելու ականջ ունի, թող լսէ։

24—Ու ըսաւ անոնց, Նայեցէք ի՞նչ կը լսէք։ ի՞նչ չափով որ դուք կը չափէք, նոյն չ֊ափով պիտի չափուի ձեզի։ և ձեզի, որ կը լսէք, պիտի աւելնայ։ 25—Վասն զի ո՛վ որ ունի, անոր պիտի տրուի։ և ո՛վ որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի։

26—Ու կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը այսպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ սերմ ձգէ, 27—Ու գիշեր ու ցորեկ և սերմը բուսնի ու մեծնայ, ո՛ր ինչ չգիտեր թէ ի՛նչպէս։ 28—Քանզի հողը ինքիրմէ պտուղ կու տայ. առաջ խոտը, ետքը հասկը, անկէ ետև լեցուն ցորենը հասկին մէջ։ 29—Ու երբ պտուղը հասունցայ, չուտ մը մանգաղը կը ղրկէ, վասն զի հունձքի տեղը հասած է։

30—Ու կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի նմանցնենք, կամ ի՞նչ առակով զանիկա բացդ առնք։ 31—Մանանեխի հատի նման է, որ հողին մէջ ցանուած ատեն՝ երկրի վրայ եղած սերմերուն ամէնէն պզտիկն է։ 32—Ու երբ ցանուի, կը բուսնի և ամէն խոտեղէններէն ալ մեծ կ'ըլլայ, ու մեծ ճիւղեր կ'արձակէ, այնպէս որ երկինքի թռչուններուն հերիք կ'ըլլայ անոր չուքին տակ բնակելու։

33—Ու այսպէս շատ առակներով կը խօսէր անոնց հետ խօսքը, որչափ որ կրնային մտիկ ընել։ 34—Ու առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, բայց առանձին իր աշակերտներուն կը մեկներ ամէնը։

35—Ու նոյն օրը երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց, Եկէ՛ք դուռնէն անդին կողմը անցնինք։ 36—Անոնք ալ ժողովուրդը թող տալով՝ առին զինք ինչպէս էր նաւուն մէջ։ և ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ։ 37—Ու հովի մեծ փոթորիկ մը եղաւ. և ալիքները նաւուն վրայ կու գային, այնպէս որ գրեթէ կը լեցուէր։ 38—Ու ինք նաւուն ետևի կողմը բարձի վրայ կը քնանար։ արթնցուցին զանիկա և կ'ըսէին անոր, Վարդապետ, հոգդ չէ՞ որ կը կորսուինք։ 39—Ու ելլելով՝ սաստեց հովին, և ծովուն ըսաւ, Դադար, լռա կեցիր։ ու հովը դադրեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ։ 40—Ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ այդպէս վախկոտ եք, ի՞նչպէս կ'ըլլայ որ հաւատք չունիք։ 41—Ու անոնք խիստ վախցան, ու կ'ըսէին իրարու, Արդեօք ո՞վ է ասիկա, որ հովը ու ծովը ասոր կը հնազանդին։

Գլ. Ը

Ե. եկան ծովուն անդիի կողմը Գադարացւոց երկիրը։ 2—Ու երբ ինք նաւէն ելաւ, գերեզմաններէն ելած մարդ մը պատահեցաւ իրեն, որ պիղծ ոգի ունէր։ 3—Որուն բնակած տեղն ալ գերեզմաններուն մէջ էր, ու չզիայով ալ մէկը չէր կրնար զանիկա կապել։ 4—Որովհետև շատ անգամ ոտնակապերով և չղթաներով կապուած էր, բայց անիկա չղթաները կոթոր ու ոտնակապերը կոտրտոր էր, և մէ՛կը չէր կրնար զանիկա նուաճել։ 5—Ու միշտ գիշեր ու ցորեկ եգերեզմաններուն մէջ ու լեռներուն մէջ՝ կը կանչըռտար, ու իր մարմինը քարերով կը ճեղքռտէր։ 6—Երբ հեռուանց Յիսուսը տեսաւ, վազեց ու երկրպագութիւն ըրաւ անոր։ 7—Ու մեծ ձայնով մը ազազակեց ու ըսաւ, Դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, քեզ Աստուծով կ'երդմեցնեմ, զիս մի տանջեր։ 8—(Քանզի կ'ըսէր անոր, Պիղծ ոգի, ելիր այդ մարդէն)։ 9—Ու անոր հարցուց Թէ Անուդ ի՞նչ է. ու ըսաւ անոր, Իմ անունս Լեգէոն է, վասն զի մենք շատուր ենք։ 10—Ու շատ էկ'ազաչէին անոր՝ որ զիրենք այն երկրէն դուրս չղրկէ։ 11—Ու հոն լեռանը մօտ խոզերու մեծ երամակ մը կար՝ որ կ'արածուէին։ 12—Ու բոլոր դեւերը ազաչեցին անոր ու ըսին, Մեզ խոզերուն ղրկէ, որպէս զի անոնց մէջ մտնենք։ 13—Ու Յիսուս չուտ մը հրաման տուաւ անոնց. ու երբ պիղծ ոգիները ելան, խոզերուն մէջ մտան, և երամակը գահավիժ տեղէն ծովը վազեց, (երկու հազարի չափ կային,) ու ծովուն մէջ խեղդուեցան։ 14—Ու խոզարածները փախան, ու պատմեցին քաղաքը ու ագարակները։ և Ելան տեսնելու՝ Թէ ի՞նչ բան է որ եղաւ։ 15—Ու եկան Յիսուսի, և տեսան գիւտուորը, որ լեգէոն ունէր, որ հագած ու խելքը վրան եկած նստած էր, ու վախցան։ 16—Ու անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց Թէ ի՞նչ եղաւ գիւտուորին, նաև խոզերուն վրայով։ 17—Ու սկսան ազաչել անոր, որպէս զի իրենց սահմաններէն երթայ։ 18—Ու երբ անիկա նաւը մտաւ, գիւտուորը կ'ազաչէր անոր՝ որ անոր հետ ըլլայ։ 19—Ու Յիսուս Թոյլ չտուաւ անոր, Հապա ըսաւ անոր, Գնա քու տունդ քու բնտանիքիդ, ու պատմէ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ, և ողորմեցաւ քեզի։ 20—Ան ալ գնաց, և սկսաւ Դեկապոլիսի մէջ քարոզել ինչ որ Յիսուս իրեն ըրաւ. և ամէնը կը զարմանային։

21—Ու երբ Յիսուս նաւով նորէն ծովուն անդիի կողմը անցաւ, չատ բազմութիւն ժողովեցաւ անոր քով, և ինք ծովեզերքն էր։ 22—Ու ահա ժողովրդապետներէն մէկը կու գար, որուն անունը Յայրոս էր, ու երբ տեսաւ զանիկա, անոր առջը ինկաւ։ 23—Ու չատ կ'ազաչէր անոր ու կ'ըսէր Թէ իմ ազջիկս մեռնելու մօտ է, գաս՝ անոր վրայ ձեռք դնես. որպէս զի ազատի, ու պիտի ապրի։ 24—Ու գնաց անոր հետ, ու չատ բազմութիւն իր ետևէն կ'երթային ու կը նեղէին զինք։

25—Ու կին մը, որ տասներկու տարի արիւնի աղբատութեան մէջ էր, 26—Ու չատ նեղութիւն կրած էր չատ բժիշկներէ, և իր բոլոր ունեցածը վատներ էր, ու օգուտ մը չէր գտեր, հապա ևս առաւել զայրացեր էր, 27—երբ Յիսուսի վրայով լսեց, ետևէն եկաւ բազմութեանը մէջ, ու անոր հանդերձին դպաւ. 28—Քանզի կ'ըսէր,

---

*Ոմանք, Գերգեսացւոց Ոմանք, լեռներուն ու գերեզմանէկամ, կ'ազաչէր [ներուն մէջ

եթէ միայն անոր հանդերձներուն դպչիմ, պիտի բժշկիմ։ 29—Ու յաւտմ իր արիւնին աղբիւրը ցամքեցաւ, ու իր մարմինին մէջ իմացաւ թէ ապրանքէն բժշկուեցաւ։ 30—Ու Յիսուս յաւտմ դիտնալով իր անձին մէջ այն զօրութիւնը որ իրմէ ելաւ, դարձաւ բազմութեանը մէջ ու ըսաւ, Ո՞վ դպաւ իմ հանդերձներուս։ 31—Ու իր աշակերտները ըսին իրեն, Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ, ու կ'ըսե՞ս թէ Ո՞վ ինծի դպաւ։ 32—Ու իր գտնտրութիւնը չտեսի տեսնի զոյս եղաւ անոր։ 33—Ու կինը վախցաւ ու դողաց, գիտնալ զի գիտէր թէ իրեն ի՛նչ եղաւ, և եկաւ՝ անոր առջև ինկաւ, ու բոլոր ճշմարտութիւնը ըսաւ անոր։ 34—Ու Յիսուս ըսաւ անոր, Աղջիկ, քու հաւատդ քեզ բժշկեց. գնա խաղաղութեամբ, ու բժշկուած եղիր քու տանջանքէդ։

35—Երբ դեռ ինք կը խօսէր, ժողովրդապետին տունէն մարդ եկան ու ըսին թէ Աղջիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցնես։ 36—Իսկ Յիսուս լսուած խօսքը լսածին պէս ժողովրդապետին ըսաւ, Մի վախնար, միայն թէ հաւատար։ 37—Ու ո՛չկը թող չտուաւ իրեն հետ երթալ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսի եղբայրը Յովհաննէսը։ 38—Ու ժողովրդապետին տունը գալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ ու աղաղակներ։ 39—Ու ներս մտնելով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խռովիր և կու լայք. մանուկը մեռած չէ, հապա կը քնանայ։ 40—Ու ծաղր կ'ընէին զանիկա. բայց ինք ամէնը դուրս հանելով՝ իրեն հետ առաւ մանուկին հայրը ու մայրը, և զանոնք որ իրեն հետ էին, ու մտաւ հոն ուր մանուկը պառկած էր։ 41—Ու մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր, Տալիթա, կումի. որ կը թարգմանուի, Աղջիկ (քեզի կ'ըսեմ) ելիր։ 42—Ու իսկոյն աղջիկը ոտք ելաւ ու կը քալէր, վասն զի տասներկու տարեկան էր։ Ու մեծ ապշութեամբ ապշեցան։ 43—Ու սաստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մա՛րդ չգիտնայ այս բանը, ու ըսաւ որ անոր ուտելիք տան։

Գլ. 6

Ե անկէ ելլելով՝ եկաւ իր երկիրը, ու անոր աշակերտները իր ետևէն գացին։ 2—Ու երբ շաբաթ օրը հասաւ, սկսաւ ժողովարանին մէջ սորվեցնել. ու շատերը լսելով կը զարմանային ու կ'ըսէին, Ասիկա ուրկէ՞ ունի այս բաները, և այս ինչ իմաստութիւն է ասոր տրուած, որ այսպիսի հրաշքներ կ'ըլլան ասոր ձեռքով։ 3—Ասիկա հիւսը չէ՞, Մարիամի որդին, և Յակոբոսի ու Յովսէսի և Յուդայի ու Սիմոնի եղբայրը. ու ասոր քոյրերը հոս մեր քով չե՞ն. և անոր վրայով կը գայթակղէին։ 4—Բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր երկրին մէջ ու իր ազգականներուն և իր տանը մէջ։ 5—Ու չէր կրնար հոն մի՛կ հրաշք ալ ընել, միայն թէ քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու բժշկեց ըներ։ 6—Ու անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար. ու չրջակայ գեղերը պտրտելով՝ կը սորվեցընէր։

7—Ու իրեն կանչեց տասներկուքը, ու սկսաւ երկու երկու զրկել զանոնք, ու անոնց իշխանութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ։ 8—Ու պատուիրեց անոնց՝ որ ճամբու համար բան մը չտանեն, բայց միայն գաւազանմը. ոչ պարկ, ոչ հաց, ոչ սակո՛ գօտիներնուն մէջ. 9—Հապա հողաթափ հագնին. և կրկին հանդերձ մի հագնիք՝ ըսաւ։ 10—Ու ըսաւ անոնց, Ո՛ր տունն որ մտնէք, հոն կեցէք մինչև անկէ ելլէք։ 11—Ու ո՛ր տեղ որ ձեզ չեն ընդունիր, ու ձեզի մտիկ չեն բներ, երբ անկէ կ'ելլէք, ոտքերնուդ տակի փոշին թօթվեցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար։ *Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ այն քաղաքին։"

12—Ու անոնք ելլելով՝ կը քարոզէին որ մարդիկ ապաշխարեն։ 13—Ու շատ դևեր կը հանէին, ու շատ հիւանդներ իւղով կ'օծէին ու կը բժշկեին զանոնք։

---

*Ոմանք լսանին

14—Ու Հերովդէս Թագաւորը լսեց, (քանզի անոր անունը յայտնի եղաւ.) ու կ'ըսէր թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր է, ու անոր համար հրաշքներ կ'ըլլան անով։ 15—Ուրիշները կ'ըսէին թէ Եղիան է. ուրիշներն ալ կ'ըսէին թէ Մարգարէներէն մին է, կամ մարգարէներէն մէկուն պէս։ 16—Բայց երբ Հերովդէս լսեց, բսաւ, Ասիկա Յովհաննէսն է, որուն գլուխը ես կարեցի, հառիչներէն յարութիւն առեր է։

17—Քանզի Հերովդէս ինք ղրկեց, Յովհաննէսը բռնեց, ու կապեց բանտը Փիլիպպոսի կնոջ, Հերովդիայի, համար, քանզի իրեն կին առեր էր զանիկա։ 18—Վասն զի Յովհաննէս Հերովդէսի կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ քու եղբօրդ կինը ունենալ։ 19—Ու Հերովդիա սիտ ունէր անոր դէմ, ու կ'ուզէր զանիկա մեռցնել ու չէր կրնար։ 20—Վասն զի Հերովդէս կը վախնար Յովհաննէսէ, գիտնալով թէ անիկա արդար և սուրբ մարդ մըն է, և անոր բերանը կը նայէր, ու անկէ լսելով՝ շատ բաներ կ'ընէր, և քաղցրութեամբ անոր մտիկ կ'ընէր։ 21—Ու երբ դիպուկ օր մը եղաւ, որ Հերովդէս իր ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իր մեծամեծներուն և հազարապետներուն ու Գալիլեայի երեւելիներուն, 22—Ու Հերովդիայի աղջիկը հնդրեխ գրօհը մտնելով խաղաց, ու հաճելի եղաւ Հերովդէսի և իրեն հետ նստողներուն, Թագաւորը ըսաւ աղջկան, Խնդրէ ինծմէ ինչ որ կ'ուզես, ու պիտի տամ քեզի։ 23—Ու անոր երդում ըրաւ՝ ըսելով, Ինչ որ դուն ինծմէ խնդրես, պիտի տամ քեզի, մինչև Թագաւորութեանս կէսը։ 24—Ու անիկա դուրս ելլելով իր մօրը ըսաւ, Ի՞նչ ուզեմ. ան ալ ըսաւ, Յովհաննէս մկրտչին գլուխը։ 25—Ու շատ մը արտրալով Թագաւորին քով մտաւ ու խնդրեց՝ ըսելով, Կ'ուզեմ որ չուտով սկուտեղի մէջ վրայ Յովհաննէս մկրտչին գլուխը տաս ինծի։ 26—Ու Թագաւորը խիստ տրամեցաւ, բայց երդումներուն համար ու իրեն հետ նստողներուն համար, չուզեց որ անոր երեսը մերժէ։ 27—Ու Թագաւորը իսկոյն դահիճ ղրկեց, ու հրաման ըրաւ անոր գլուխը բերել. ան ալ գնաց բանտին մէջ գլխատեց զանիկա, 28—Ու սկուտեղով մը բերաւ անոր գլուխը ու տուաւ աղջկան. և աղջիկը զանիկա իր մօրը տուաւ։ 29—Ու անոր աշակերտները լսելով՝ եկան անոր մարմինը վերցուցին ու գերեզմանի մէջ դրին։

30—Ու առաքեալները Յիսուսի քով ժողվուեցան, ու պատմեցին անոր ամէն ինչ որ ըրին և ինչ որ սորվեցուցին։ 31—Ու անիկա բսաւ անոնց, Եկէք դուք առանձին անապատ տեղ մը, և քիչ մը հանգչեցէք. քանզի շատերը կային որ կու գային ու կ'երթային. և հաց ուտելու ալ ժամանակ չէին ունենար։ 32—Ու նաւով անապատ տեղ մը գացին առանձին. 33—Ու ժողովրդականները տեսան զանոնք որ կ'երթային, և շատերը զանիկա ճանչցան, ու ոտքով բոլոր քաղաքներէն հոն կը վազէին, և անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քով ժողովուեցան։ 34—Ու Յիսուս երբ դուրս ելաւ, տես ժողովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ, վասն զի հովիւ չունեցող ոչխարներու պէս էին, և սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց։

35—Ու երբ ժամանակը շատ ուշացաւ, իր աշակերտները իրեն եկան ու բսին, Տե՛ անապատ տեղ մըն է, ու ժամանակը ուշացած է։ 36—Արձակէ զանոնք որպէս զի երթան բոլորտիքի ագարակները ու գեղերը ու իրենց համար հաց գնեն, վասն զի ուտելու բան մը չունին։ 37—Բայց անիկա պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Դուք ուտէք տանոնց որ ուտեն։ Ու բսին իրեն, Երթանք երկու հարիւր գահեկանի հաց գնե՞նք և տանք տանոնց որ ուտեն։ 38—Բսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք, գացէք նայեցէք. ու երբ գիտցան՝ բսին, Հինգ, ու երկու ձուկ։ 39—Ու հրաման ըրաւ անոնց՝ որ ամէնը կանանչ խոտին վրայ գունդ գունդ նստեցնեն։ 40—Ու գաս գաս նստան, հարիւրական ու յիսնեանական։ 41—Ու հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ ու դէպ ի երկինք նայելով՝ օրհնեց, և մանրեց նկանակները ու տուաւ իր աշակերտներուն, որպէս զի անոնց առնեն գնեն, ու երկու

ձուկը ամէնուն ալ բաժնեց։ 42—Ու ամէնը կերան ու կշտացան։ 43—Ու աստուածկու կողով լեցուն՝ կտրատանքները վերցուցին, և ձուկերէն ալ։ 44—Ու այն հացերէն ուտողները հինգ հազար չափ այր մարդիկ էին։

45—Ու չուտ մը իր աշակերտները արարքացը որ նաւ մտնեն, և իրմէ առաջ միւս կողմը Բեթսայիդա անցնեն, մինչև ինք ժողովուրդը արձակէ։ 46—Ու անոնցմէ զատուելով՝ լեռը ելաւ աղօթք ընելու։ 47—Ու երբ իրիկուն եղաւ, նաւը ծովուն մէջտեղն էր, ու ինք միայնակ ցամաքն էր։ 48—Ու տեսաւ զանոնք որ կը տագնապէին հալէն քիչ փայլաւ առնն, վասն զի հովը իրենց դէմ էր, և գիշերուան երրորդ պահուն առիւծներուն ծովուն վրայ քալելով կու գայ անոնց, ու կ'ուզէր անոնցմէ անցնիլ։ 49—Անոնք երբ տեսան որ ծովուն վրայ կը քալէր, կարծեցին թէ աչքի երեւոյթ բան մըն է, ու կանչռտեցին։ 50—Քանզի ամէնն ալ զանիկա տեսան ու խռովեցան։ և ինք չուտ մը խօսեցաւ անոնց հետ ու ըսաւ անոնց, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք։ 51—Ու նաւը ելաւ անոնց քով, ու հովը դադարեցաւ։ և անոնք միտքերնուն մէջ չափէ դուրս ապշած էին ու կը զարմանային, 52—Վասն զի հացին վրայ խրատ հրաւէր չմտացան, քանզի սիրտերնին քարած էր։

53—Ու միւս կողմը անցնելով՝ Գինեսարէթի երկիրը հասան ու նաւը տեղաւորեցին։ 54—Ու երբ նաւէն ելան, անդր ոեւէ մարդիկ իսկոյն ճանչցան զանիկա։ 55—Ու ասդին անդին վազելով բոլոր չքնաղ տեղերը, սկսան մահճակներով հիւանդները բերել՝ ուր որ կը լսէին թէ հոն է։ 56—Ու ուր որ կը մտնէր, գեղերը կամ քաղաքները կամ ագարակները, հրապարակներուն մէջ կը դնէին հիւանդները, ու կ'աղաչէին իրեն որ գոնէ իր հանդերձին փղանցքին դպչին։ և որոնք որ դպան, բժշկուեցան։

Գլ. Է

Ե՛ իր քով ժողովեցան փարիսեցիները ու դպիրներէն ոմանք՝ որ Երուսաղէմէ եկած էին։ 2—Ու երբ տեսան որ անոր աշակերտներէն ոմանք պիղծ, այսինքն անլուայ, ձեռքերով հաց կ'ուտէին, մեղադրեցին։ 3—Վասն զի փարիսեցիները ու բոլոր Հրեաները մինչև ազգ մը ձեռքերնին չլուան՝ հաց չեն ուտեր, քանզի ծերերուն աւանդութիւնը կը բռնեն։ 4—Ու չուկայէն եւ՝ ոչինչ եթէ չլուացուին՝ չեն ուտեր։ և ուրիշ շատ բաներ կան զորոնք ընդունած են ու կը բռնեն, այսինքն գաւաթներու և փարչերու ու պղնձէ ամաններու և անկողիններու լուացմունքներ։ 5—Ա՛յն ատեն փարիսեցիները ու դպիրները հարցուցին անոր, Քէ ինչո՞ւ համար աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար, հապա անլուայ ձեռքերով հաց կ'ուտեն։ 6—Ան ալ պատասխան առաւ ու ըսաւ անոնց, Ազիկ մարգարէութիւն բրաւ ձեզի կեղծաւորներուդ համար, ինչպէս գրուած է, Ա՛յս ժողովուրդը շրթունքներովը զիս կը պատուէ, բայց իրենց սիրտը հեռացած գտաւած է ինծմէ։ 7—Ու պարապ տեղ զիս կը պաշտեն, մարդոց պատուիրած բաները է՛ջ՛ը վարդապետութիւն սորվեցնելով։ 8—Վասն զի Աստուծոյ պատուիրանքը թողլով՝ մարդոց աւանդութիւնը կը բռնէք, ինչպէս՝ փարչերու և գաւաթներու լուացմունքները, և ասանց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք։ 9—Ու ըսաւ անոնց, Ազիկ կ'անարգէք Աստուծոյ պատուիրանքը, որպէս զի ձեր աւանդութիւնը պահէք։ 10—Քանզի Մովսէս ըսաւ, Քու հայրդ ու մայրդ պատուէ։ և, Ով որ չէ հայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի։ 11—Բայց դուք կ'ըսէք, Եթէ մէկը չէ հօրը կամ մօրը բան, Ա՛յն բանը զոր ինծմէ պիտի չտեսնես, Աստուծոյ պատրաստ է, (որ ըսել է ընծայ,) 12—Ու ա՛յլ թող չէք ասր անոր բան մը ընել իր հօրը կամ իր մօրը։ 13—Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր աւանդութիւնովը զոր կ'աւանդէք։ և ասոր նման շատ ուրիշ բաներ կ'ընէք։

14—Ու բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Լսեցէք ինծի ամէնդ ու հասկցէք։ 15—Բան մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ, ու կարող ըլայ զանիկա պղծել, հապա այն բաները որ անկէ կ'ելլեն, անոնք են որ մարդը կը պղծեն։ 16—Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

17—Ու երբ այն բազմութենէն ջոկուեցաւ մտաւ տուն, իր աշակերտները հարցուցին իրեն այն առակին համար։ 18—Ու ըսաւ անոնց, Դո՞ւք ալ այդպէս անմիտ եք։ չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ որ դուրսէն մարդուն ներսէն կը մտնէ, չկրնար զանիկա պղծել։ 19—Վասն զի ոչ թէ անոր սրտին մէջ կը մտնէ, հապա փորը, և արտաքնոցը կ'ելլէ, ու բոլոր կերածները կը մաքրէ։ 20—Ու կ'ըսէր թէ Ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա կը պղծէ մարդը։ 21—Վասն զի ներսէն, մարդոց սրտէն, կ'ելլեն չար խորհուրդներ, շնութիւններ, պոռնկութիւններ, սպանութիւններ, 22—Գողութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւն, գիճութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ 23—Ա՛յս բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն, ու կը պղծեն մարդը։

24—Ու անկէ ելլելով Տիւրոսի ու Սիդոնի սահմանները գնաց, և տուն մը մտնելով՝ չէր ուզեր որ մէկուն յայտնուի, բայց չկրցաւ ծածկուիլ։ 25—Քանզի կին մը, որուն աղջիկը պիղծ ոգի ունէր էր Ներսէսէն, լսեց անոր վրայով, ու եկաւ, անոր ոտքը ինկաւ։ 26—Ու այն կինը *Հեթանոս էր, ազգով Փիւնիկ Սորի, ու կ'աղաչէր անոր որ դեւը իր աղջիկէն հանէ։ 27—Ու Յիսուս ըսաւ անոր, Թող սուր որ առաջ ազաքը կշտանան, քանզի ազէկ չէ ազոց հացը առնել ու շուներուն ձգել։ 28—Անիկա պատասխան առաւ ու ըսաւ անոր, Այո, Տէր, վասն զի շուներն ալ սեղանին սակ ազոցը վշրանքներէն կը կերակրուին։ 29—Ու ըսաւ անոր, Այդ խօսքիդ համար գնա, քու աղջիկդ դեւը ելաւ։ 30—Ու ինք իր տունը երթալով, գտաւ որ դեւը ելած՝ ու աղջիկը անկողինին վրայ պառկած էր։

31—Ու նորէն Տիւրոսի ու Սիդոնի

*Յոյն. Յոյն

սահմաններէն ելլելով, եկաւ Գալիլեայի ծովեզերքը, Դեկապոլիսի սահմանները մէջտեղ։ 32—Ու մէկը բերին անոր առջև, խուլ ու դժուարախօս, ու կ'աղաչէին որ անոր վրայ ձեռք դնէ։ 33—Ու ժողովուրդէն մէկդի առնելով զանիկա, իր մատները անոր ականջներուն մէջ խոթեց ու թքաւ, և անոր լեզուին դպաւ, 34—Ու երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր, Եփփաթա, (որ ըսել է Բացուէ։) 35—Ու իսկոյն անոր ականջները բացուեցան, ու անոր լեզուին կապանքը արձակուեցաւ, և չիտակ կը խօսէր։ 36—Ու պատուիրեց անոնց որ մարդո՛ւ չըսեն։ և որչափ ինք կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը քարոզէին։ 37—Ու չափէ դուրս կը զարմանային և կ'ըսէին, Ամէն բաներէ ազէկ բրաւ ասիկա, որ խուլերուն լսել կու տայ և համրերուն խօսիլ։

Գլ. Ը

Ա՛յն օրերը ժողովուրդը խիտ չատ բլլալով, և ուտելբ բան մը չունենալով, Յիսուս իրեն կանչեց իր աշակերտները ու ըսաւ անոնց, 2—Կը խղճամ այդ ժողովուրդին վրայ, վասն զի հինս երեք օր է որ իմ քովս են, և բան մը չունեն ուտելու։ 3—Ու եթէ տուռնք անօթի զրկեմ իրենց տուներուն, ճամբան մէջ պիտի մարթին, վասն զի ատոնցմէ ոմանք հեռու տեղէ եկած են։ 4—Ու իր աշակերտները պատասխան տուին իրեն, Ա՛յս անապատին մէջ ուրկէ՞ կրնայ մէկը հացով կշտացնել ատոնք։ 5—Ու հարցուց անոնց, Քանի՞ նկատակ ունիք, ու անոնք բսին, Եօթը։ 6—Ու հրաման ըրաւ ժողովուրդին՝ որ գետնին վրայ նստին, ու առաւ եօթը նկատակը, գոհացաւ և կտրեց ու տուաւ աշակերտներուն, որպէս զի ժողովուրդին առջև դնեն, և դրին։ 7—Ու քանի մը մանր ձուկեր ունէին, և օրհնեց ու ըսաւ որ զանոնք ալ դնեն անոնց առջև։ 8—Ու կերան ու կշտացան, ու աւելցած կտորատանքները վերցուցին եօթը զամբիւղ։ 9—Ու ատոնցները չորս հազարի չափ էին, ու արձակեց զանոնք։ 10—Ու չուտ մը

նաբ մանկոյ աշակերտաներան հետ՝ եկաւ Գադարա քաղաքն Գալիլեայ։

11—Ու փարիսեցիները գալով՝ սկան անոր հետ վիճաբանութիւն բնել, և զանիկա փորձելով՝ իրմէ նշան մը կ՚ուզին երկինքէն։ 12—Ու անկից իր հոգիին մէջ հառաչելով՝ բաւ, Ո՞նց է որ այս ազգը նշան կ՚ուզէ. ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ այս ազգին նշան պիտի չտրուի։ 13—Ու զանոնք թող առլով նորէն նաբ մտաւ, ու գնաց յայն միւս կողմը։

14—Ու հաց առնելու մոռցեր էին, ու նաւուն մէջ իրենց հետ միայն մէկ նկանակ ունէին։ 15—Ու կը պատուիրէր անոնց ու կ՚ըսէր, Նայեցէք ու զգուշացէք փարիսեցիներուն խմորէն ու Հերովդէսի խմորէն։ 16—Ու իրարու հետ կը խորհէին ու կ՚ըսէին թէ հաց չունենալնուս համար է։ 17—Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով՝ բաւ անոնց, Ինչո՞ւ կը խորհիք թէ հաց չունիք. տակաւին չե՞ք հասկնար ու չե՞ք իմանար. դեռ սրտերնիդ քարա՞ծ է։ 18—Աչքեր ունիք ու չե՞ք տեսներ, և ականջներ ունիք ու չե՞ք լսեր, և չե՞ք յիշեր։ 19—երբ հինգ նկանակ հինգ հազարին կոտրեցի, քանի՞ կողով լեցուն կտորանոց վերցուցիք։ ըսին անոր, Տասներկու։ 20—Ու երբ եօթը հազարին չորս հատարին [որբէնչ], քանի՞ զամբիւղ լեցուն կտորանոց վերցուցիք։ անոնք ալ ըսին, Եօթը։ 21—Ու բաւ անոնց, Հա՞ դ ինչպես չէք հասկնար։

22—Ու Բեթսայիդա եկաւ, ու անոր առջև կոյր մը բերին, ու կ՚աղաչէին իրեն որ դպչի անոր։ 23—Ու անկիս կոյրին ձեռքէն բռնելով գեղէն դուրս հանեց, ու անոր աչքերուն թքնելով՝ ձեռքը անոր վրայ դրաւ, ու կը հարցնէր անոր թէ բան մը կը տեսնէ՞։ 24—Ան ալ նայեցաւ ու կ՚ըսէր, Մարդիկ կը տեսնեմ ծառերու պէս որ կը պտրտին։ 25—Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դրաւ, ու անոր նայիլ տուաւ. և ողջացաւ ու ամէն բան հանգամանքով կը տեսնէր։ 26—Ետքը զանիկա իր տունը դրկելով՝ բաւ, Գեղը մի մտներ ու գեղին մէջ մարդո՛ց մի ըսեր։

27—Ու Յիսուս իր աշակերտներուն հետ ելկոտ Փիլիպպոսի Կեսարիային գեղերը եկաւ, ու ճամբան ալ կը հարցնէր իր աշակերտներուն ու կ՚ըսէր անոնց, Ինծի համար ո՞վ կ՚ըսեն մարդիկ թէ եմ։ 28—Ու անոնք պատասխան տուին ու ըսին, Յովհաննէս Մկրտիչը, և ուրիշները՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Մարգարէներէն մէկը։ 29—Ու ինք բաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ՚ըսէք թէ եմ. պատասխան առաւ Պետրոս ու բաւ անոր, Դուն ես Քրիստոսը։ 30—Ու առատիկ պատուիրեց անոնց՝ որ իրեն համար մարդո՛ց չպրուցեն։

31—Ու սկաւ սորվեցնել անոնց, թէ Պէտք է որ Որդին մարդոյ չատ չարչարանքներ կրէ, ու երէցներէն և քահանայապետներէն ու դպիրներէն մերժուի, ու սպանուի, և երեք օրէն հետ յարութիւն առնէ։ 32—Ու այս խօսքը յայտնի խօսեցաւ. և Պետրոս մէկդի առաւ զանիկա, ու սկաւ յանդիմանել զանիկա։ 33—Ու ինք դարձաւ ու իր աշակերտներուն նայելով՝ յանդիմանեց Պետրոսը ու բաւ, Ետիս գնա, Սատանայ, վասն զի դուն Աստուծոյ բաներէն չես մտածեր, հապա մարդոց բաներէն։

34—Ու ժողովուրդը իր աշակերտներուն հետ ինկոտ իրեն կանչելով՝ բաւ անոնց, Ով որ կ՚ուզէ իմ հետևէս գալ, թող իր անձը ուրանայ, և իր խաչը վերցնէ, ու իմ հետևէս գայ։ 35—Վասն զի ով որ կ՚ուզէ իր անձը ապրեցընել, պիտի կորսընցնէ զանիկա. և ով որ ինծի ու աւետարանին համար իր անձը կը կորսընցնէ, պիտի ապրեցնէ զանիկա։ 36—Քանզի ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստկի, և իր անձը կորսընցնէ։ 37—Կամ իր անձին համար ի՞նչ ազատուխ պիտի տայ մարդ։ 38—Վասն զի ով որ ինծի ու իմ խօսքերս ամբարիշտ ազգին մէջ, Որդին մարդոյ ալ զանիկա պիտի ամչնայ, երբ գայ իր Հօրը փառքովը սուրբ հրեշտակներուն հետ։ 39—Ու բաւ անոնց, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ Հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան համը պիտի

չառնեն, մինչև տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը զօրութիւնով եկած։

Գլ. Թ

Ու վեց օրէն հետ Յիսուս իրեն հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, ու զանոնք բարձր լեռ մը հանեց առանձին, և անոնց առջև այլակերպեցաւ։ 2—Ու իր հանդերձները հոգի փայլուն խիստ ճերմակ, այնպէս որ երկրի վրայ քիմիչ մը չկրնար այնպէս ճերմկցնել։ 3—Ու Եղիա Մովսէսի հետ երեւցան անոնց, և Յիսուսի հետ կը խօսէին։ 4—Ու Պետրոս պատասխան առաւ ու բաւ Յիսուսի, Ռաբբի, ոտկի է որ հոս կենանք. ու երեք խրճիթ շինենք, մէկը քեզի, և մէկը Մովսէսի, ու մէկը Եղիայի։ 5—Վասն զի չէը գիտեր թէ ի՛նչ կը խօսի, քանզի զարհուրեր էին։ 6—Ու ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, ու ձայն մը եկաւ ամպէն՝ բսելով, Այիկա է իմ սիրելի Որդիս, սորան մտիկ բրէք։ 7—Ու յանկարծ երբ ապին անդին նայեցան, ալ ուրիշ մէկը չտեսան, հապա միայն Յիսուս իրենց հետ։ 8—Ու երբ լեռնէն վար կ՚իջնէին, պատուիրեց անոնց որ տեսածնին մարդո՛ց չպատմեն, բայց միայն Որդւոյն մարդոյ մեռելներէն յարութիւն առնելը ի՞նչ է։ 9—Ու անոնք այն խօսքը պահեցին. ու իրենց մէջ հարցափորձ կ՚ընէին թէ մեռելներէն յարութիւն առնելը ի՞նչ է։ 10—Ու իրեն հարցուցին ու բսին, Ա՛ն ի՞նչ է որ դպիրները կ՚ըսեն թէ Պետք է որ առաջ Եղիա գայ։ 11—Անկիս պատասխան առաւ ու բաւ անոնց, Յիրաւի առաջ Եղիա կու գայ, և ամէն բան կարգի կը դնէ. և թէ ի՞նչպես գրուած է Որդւոյ մարդոյ համար, որ չատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի։ 12—Բայց ձեզի կ՚ըսեմ որ Եղիա եկաւ ալ, և ինչ որ ուզեցին՝ ըրին անոր, ինչպես գրուած է անոր համար։

13—Ու աշակերտներուն քով գալով՝ տեսաւ չատ ժողովուրդ անոնց բոլորտիքը, և դպիրները որ վիճաբանութիւն կ՚ընէին անոնց հետ։ 14—Ու չուտ մը բոլոր ժողովուրդը երբ տեսան զանիկա, խիստ զարմացան, ու առաջ վազելով բարև կու տային անոր։ 15—Ու հարցուց դպիրներուն թէ ի՞նչ վիճաբանութիւն կ՚ընէք անոնց հետ։ 16—Ու ժողովուրդէն մէկը պատասխան տուաւ՝ բսելով, Վարդապետ, իմ որդիս քեզի բերի, որ համր ոգի ունի. 17—Ու որ որ անոր հասնի, զանիկա գետինը կը զարնէ, ան ալ կը փրփրի և իր ակռաները կը կրճտէ ու կը ցամքի. և քու աշակերտներուդ բսի որ զանիկա հանեն ու չկրցան։ 18—Պատասխան առաւ ու անոնց ու բաւ, Ով անհաւատ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի բլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ. բնծի բերէք զանիկա։ 19—Ու զանիկա բերին իրեն. երբ զԱՆ տեսաւ զանիկա, չուտ մը ԶՐ ոգին ցնցեց զանիկա, ու գետինը ինկած կը թաւալէր ու կը փրփրէր։ 20—Ու Յիսուս հարցուց անոր հօրը ու բաւ, Ո՞րչափ ատեն է որ այդ բանը տեղը եղաւ. ու անիկա բաւ, Տղայութենէն ի վեր. 21—Ու չատ անգամ կրակի ու ջուրի մէջ կը նետէ ապահիկ՝ որպէս զի կորսընցնէ. բայց եթէ կարողութիւն մը ունիս, օգնէ մեզի, խղճալով մեր վրայ։ 22—Ու Յիսուս բսաւ անոր, Եթէ կարող ես հաւատալու, ամէն բան կարելի է անոր որ կը հաւատայ։ 23—Ու ուրտն հայրը չուտ մը ազաղակեց ու արցունքով բսաւ, Կը հաւատամ, Տէր, օգնէ իմ անհաւատութեանս։ 24—Յիսուս երբ տեսաւ որ ժողովուրդը վրան կը դիզուի, սաստեց պիղծ ոգիին ու բսաւ անոր, Համր ու խուլ ոգի, կը հրամայեմ քեզի, ելիր ասկէ, ու մէկ մըն ալ չմտնես անոր ներսը։ 25—Ու կանչուրտաւելով՝ սաստիկ ցնցեց զանիկա ու ելաւ. և զԱՆ մեռելի պէս եղաւ, այնպես որ չատերը բսին թէ մեռաւ։ 26—Ու Յիսուս անոր ձեռքէն բռնելով վերցուց զանիկա. ան ալ կայնեցաւ։ 27—Ու երբ ինք տունը մտաւ, իր աշակերտները առանձին հարցուցին իրեն՝ ըսելով, Մենք ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա։ 28—Ու բսաւ անոնց, Այդ տեսակին կարելի չէ ելլել բանով մը ելլել, բայց միայն ազօթքով ու ժամադրութեամբ։

29—Ու անկէ ելլելով Գալիլեայի

մէկն կ'անցնէին, ու չէր ուզեր որ մէկը գիտնայ։ 30—Վասն զի կը սորվեցնէր իր աշակերտներուն ու կ'ըսէր անոնց Թէ Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը, և զանիկա պիտի սպաննեն. ու երբ սպաննուի՝ երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ 31—Ու անոնք չէին հասկնար այն խօսքը, ու կը վախնային իրեն հարցնելու։

32—Ու եկաւ Կափառնայում, ու երբ տունն մտաւ՝ հարցուց անոնց, Ի՞նչ վիճաբանութիւն կ'ընէիք ճամբան իրարու հետ։ 33—Ու անոնք լուռ կեցան, վասն զի ճամբան մէջ իրարու հետ վիճաբանութիւն կ'ընէին Թէ ո՛վ մեծ է։ 34—Ու երբ նստաւ, կանչեց տասներկուքը ու բսաւ անոնց, Եթէ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ, ամենուն յետինը պիտի ըլլայ և ամենուն սպասաւորը։ 35—Ու առաջ մը առաւ, կայնեցուց անոնց մէջ, և իր գիրկը առնելով զանոնիկա՝ բսաւ անոնց, 36—Ով որ այսպիսի տղոցմէն մէկը ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի. և ով որ զիս ընդունի, ոչ Թէ զիս կ'ընդունի, հապա զիս ղրկողը։ 37—Պատասխան առաւ անոր Յովհաննէս ու բսաւ, Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր, ու մեր հետեւէն չպարտիր, և զանիկա արգիլեցինք՝ մեր հետեւէն չպարտիրնուն համար։ 38—Ու Յիսուս բսաւ, Մի արգիլէք զանիկա, վասն զի մէկը չկայ որ իմ անունովս հրաշք գործէ, ու կարենայ չուտ մը զիս հայհոյել։ 39—Քանզի ան որ *մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է։ 40—Վասն զի ով որ ձեզի գաւաթ մը ջուր խմցնէ Քրիստոսին եք, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անիկա իր վարձքը պիտի չկորնցնէ։ 41—Ու ով որ գայթակղեցնէ այս պզտիկներէն մէկը որ ինծի կը հաւատան, աւելի ապէկ էր անոր՝ որ պզոյգքի քար մը իր վիզէն կախուէր, ու ծովը ձգուէր։ 42—Ու եթէ քու ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կարէ զանիկա. ապէկ է քեզի պակասաւոր մտնել կեանքը, քան Թէ երկու ձեռք ունենալ ու գեհենը երթալ չմարելու կրակին մէջ, 43—Ուր անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ 44—Ու եթէ քու ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կարէ զանիկա. ապէկ է քեզի կաղ մտնել կեանքը, քան Թէ երկու ոտք ունենալ ու գեհենը ձգուիլ չմարելու կրակին մէջ, 45—Ուր անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ 46—Ու եթէ քու աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա. ապէկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել, քան Թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհենը ձգուիլ։ 47—Ուր անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ 48—Վասն զի ամէն մարդ կրակով պիտի սրուի, և ամէն զոհ աղով պիտի սրուի։ 49—Աղը աղէկ է, բայց եթէ աղը անհամնայ, ինչո՞վ պիտի համեմցընէք. ձեր անձին մէջ աղ ունեցէք, և իրարու հետ խաղաղութիւն ըրէք։

Գլ. Ժ

Ե անկէ ելլելով՝ Հրէաստանի սահմանները եկաւ Յորդանանու անդիի կողմէն, ու նորէն ժողովուրդները անոր քով կը ժողովէին. և ինչպէս սովորութիւն ունէր, դարձեալ կը սորվեցնէր անոնց։

2—Ու փարիսեցիները քովը եկան, և զանիկա փորձելով՝ կը հարցնէին անոր Թէ Արժա՞ն է որ այրը իր կինը արձակէ։ 3—Ու անիկա պատասխան տուաւ ու անոնց բսաւ, Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց։ 4—Ու անոնք բսին, Մովսէս հրաման տուաւ արձակական գիր գրել ու արձակել։ 5—Ու Յիսուս պատասխան տալով՝ անոնց բսաւ, Ձեր սրտին կարծրութեանը համար գրեց ձեզի այդ պատուէրը։ 6—Բայց ստեղծագործութենէն սկիզբն Աստուած զանոնք արու և էգ բրաւ, — ըսաւ, 7—Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ և իր կնոջ պիտի յարի, 8—Ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան. ուստի ա՛լ երկու չեն, հապա մէկ մարմին. 9—Ուրեմն զայն որ Աստուած միաւորեց, մարդ Թող չզատէ։ 10—Ու տունը իր աշակերտները նորէն նոյն բանը հարցուցին իրեն։ 11—Ու բսաւ անոնց, Ով որ իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, անոր դէմ չնորհքին կ'ընէ։ 12—Ու կինն մը եթէ իր երիկնոջմէն արձակ և ուրիշ երկան մը ըլլայ, չնորհքին կ'ընէ։

13—Ու մանր տղաք բերին իրեն, որպէս զի անոնց դպչի, բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները։ 14—Որուս երբ տեսաւ, սրդոռնչով անոնց բսաւ, Թող տուէք այդ մանր տղոցը որ ինծի գան, և մի արգիլէք զանոնք, վասն զի Աստուծոյ Թագաւորութիւնը այդպիսիներուն է։ 15—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ Թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ։ 16—Ու զանոնք գիրկը առաւ, անոնց վրայ ձեռք դրաւ ու օրհնեց զանոնք։

17—Ու երբ անիկա գուրս ելաւ ճամբան մէջ, — ահա մարդ մը վազեց, ու անոր առջեւ ծունկ դնելով կը հարցընէր անոր — ըսէ՛ր, Բարի վարդապետ, ի՞նչ բնեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ 18—Ու Յիսուս բսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած։ 19—Պատուիրանքները գիտես Շնութիւն մի ըներ, Սպանութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի ըներ, Զրկանք մի ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ։ 20—Անիկա պատասխան տուաւ ու բսաւ անոր, Վարդապետ, ատանք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ։ 21—Ու Յիսուս անոր նայելով՝ սիրեց զանիկա, ու բսաւ անոր, Մէկ բան պակաս է քեզի. գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և բաշը վերցուր ու եկուր իմ հետևէս։ 22—Ու անիկա այս խօսքին համար խոժռեալով տրտնջած գնաց, վասն զի շատ ստացուածք ունէր։ 23—Ու Յիսուս իր բոլորտիքը նայելով՝ բսաւ իր աշակերտներուն, Ո՛րչափ գժուար է անոնց որ հարստութիւն ունին Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել։ 24—Ու աշակերտները զարմացեր էին անոր խօսքերուն վրայ. բայց Յիսուս նորէն պատասխան տալով՝ անոնց բսաւ, Որդեակներ, ո՛րչափ գժուար է երեսց հարստութիւնը ստացողներուն Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել։ 25—Դիւրին է որ ուղտ ասղին ծակէն անցնի, քան Թէ հարուստ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնէ։ 26—Ու անոնք խիստ շատ կը զարմանային ու կ'ըսէին իրարու, Ա՛վ ո՞վ կրնայ փրկուիլ։ 27—Ու Յիսուս անոնց նայելով՝ բսաւ, Աներկա մարդոց կազմանէ անկարելի է, բայց ոչ Աստուծոյ կազմանէ. քանզի Աստուծոյ կազմանէ ամէն բան կարելի է։ 28—Պետրոս սկսաւ ըսել անոր, Ահա մենք ամէն բան Թողուցինք և քու հետեւէդ եկանք։ 29—Ու Յիսուս պատասխան տալով՝ բսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Մէկը չկայ որ Թողուց տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր՝ ինծի համար ու աւետարանին համար, 30—Որ պիտի չառնէ հարիւրապատիկ հիմա այս ատենս տուներ, ու եղբայրներ, և քոյրեր, ու մայրեր, և որդիներ, ու արտեր հալածանքներու հետ, և գալիք աշխարհի մէջ յաւիտենական կեանքը։ 31—Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին։

32—Ու անոնք դեռ ի ճանապարհ կ'ելլէին — Ճամբան մէջ էին. և Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար, ու անոնք կը զարմանային, ու հետևէն երթալով՝ կը վախնային։ Ու նորէն քովը առնելով տասներկուքը, սկսաւ բսել անոնց ինչ բաներ որ իրեն պիտի պատահէին. 33—Ո— ըսաւ, Ահա երթս ալ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան պիտի դատապարտեն, ու զանիկա հեթանոսներուն պիտի մատնեն. 34—Ու զանիկա ծաղր պիտի բնեն ու ծեծեն, և անոր վրայ պիտի թքնեն, ու զանիկա մեռցնեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։

35—Ու անոր քով գացին Յակոբոս ու Յովհաննէս, Զեբեդէոսի որդիները, ու բսին, Վարդապետ, կ'ուզենք որ ինչ որ խնդրենք՝ մեզի ընես։

*Ո՛հառ, մեզի հակառակ չէ, մեր Ո՛հառ, այս անունով։

36—Ան ալ բաւ անոնց, Ի՞նչ կ՚ուզէք որ ձեզի ընեմ։ 37—Ու անոնք ըսին իրեն, Շնորհէ մեզի որ նստինք մեկէն մեկը աջ կողմդ և մէսը ձախ կողմդ քու փառքիդ մէջ։ 38—Ու Յիսուս բաւ անոնց, Չէք գիտեր ի՛նչ կը խնդրէք։ կրնա՞ք խմել այն գաւաթը զոր ես կը խմեմ, և այն մկրատութիւնովը մկրատիլ՝ զոր ես կը մկրատիմ։ 39—Ու անոնք ըսին իրեն, Կրնանք. ու Յիսուս բաւ անոնց, Այն գաւաթը զոր ես կը խմեմ՝ պիտի խմէք, և այն մկրատութիւնովը զոր ես կը մկրատիմ՝ պիտի մկրատիք։ 40—Բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս նստիլը իմս չէ տալը, հապա որոնց որ պատրաստուած է։ 41—Ու երբ տասը լսեցին, սկսան Յակոբոսի ու Յովհաննէսի նեղանալ։ 42—Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու բաւ անոնց, Գիտէք որ ազգերուն իշխան սեպուածները կը տիրեն անոնց, և անոնց մեծամեծները կ՚իշխեն անոնց։ 43—Բայց ձեր մէջ այնպէս պիտի չըլլայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ՚ուզէ, անիկա ձեր սպասաւորը ըլլայ։ 44—Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ՚ուզէ, անիկա ամէնուն ծառայ ըլլայ։ 45—Քանզի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու, և իր կեանքը չատերու համար փրկանք մը տալու։

46—Ու եկան Երիքովէ։ ու երբ Երիքովէ կ՚ելլէր աշակերտներովը և չատ բազմութիւնով, Տիմէոսի որդին կոյր Բարթիմէոս ճամբուն քով նստեր էր մուրալու։ 47—Ու երբ լսեց թէ Յիսուս Նազովրեցին է, սկսաւ պոռալակել ու ըսել, Յիսուս, որդի Դաւիթի, ողորմի ինծի։ 48—Ու չատերը կը յանդիմանէին զանիկա որպէս զի լռէ, բայց անիկա աւ աւելի կ՚ազաղակէր, Որդի Դաւիթի, ողորմի ինծի։ 49—Ու Յիսուս կանգ առնելով՝ բաւ որ զանիկա կանչեն. կանչեցին կոյրը ու ըսին անոր Քաջ եղիր, ելիր, քեզ կը կանչէ։ 50 Ու անիկա իր հանդերձը ձգելով, ելաւ ու եկաւ Յիսուսի։ 51—Ու Յիսուս պատասխան տուաւ ու անոր բսաւ, Ի՞նչ կ՚ուզես որ քեզի ընեմ. կոյրը բսաւ անոր, Իթաբունի, որ այքերս բացուին։ 52—Ու Յիսուս բաւ անոր, Գնա. քու հաւատդ քեզ բժշկեց. և չուտ մը անոր աչքերը բացուեցան, ու ճամբան Յիսուսի հետևեցաւ կ՚երթար։

ԳԼ. ԺԱ

Ու երբ Երուսաղէմի մօտեցան, Բեթփագէ ու Բեթանիա դէպ ի Ձիթենեաց լեռը, Յ---- իր աշակերտներէն երկուքը ղրկեց, 2—Ու բաւ անոնց, Գացէք այդ ձեր դիմացի գիւղը, և անոր մէջ մտնելնուդ պէս՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը, որուն վրայ մարդ մը նստած չէ. արձակեցէք զանիկա ու բերէք։ 3—Ու եթէ մէկը բսէ ձեզի Թէ Այդ ի՞նչ կ՚ընէք, բսէք Թէ Տէրոջը պէտք է. և չուտ մը հոս պիտի ղրկէ զանիկա։ 4—Գացին և գտան աւանակը դուրս փզղոցին մէջ դրսի քով կապուած, ու արձակեցին զանիկա։ 5—Ու հոն կայնողներէն ոմանք ըսին անոնց, Ի՞նչ կ՚ընէք որ կ՚արձակէք այդ աւանակը։ 6—Ու անոնք ըսին անոնց ինչպէս Յիսուս պատուիրեր էր, ու իրենց թոյլ տուին։ 7—Ու աւանակը Յիսուսի բերին, ու անոր վրայ իրենց հանդերձները դրին, ու նստաւ անոր վրայ։ 8—Ու չատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և ուրիշներ ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին։ 9—Ու առջևէն ու ետևէն գացողները կ՚աղաղակէին ու կ՚ըսէին, Ովսաննա. Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ։ 10—Օրհնեալ է մեր Դաւիթի հօրը Թագաւորութիւնը որ *կու գայ. Ովսաննա ի բարձունս։

11—Ու Յիսուս մտաւ Երուսաղէմ ու տաճարը, և չորս կողմը ամէն բաներէն աչքէ անցուց. և արդէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ելաւ տասուերկուքին հետ մէկտեղ։

12—Ու հետևեալ օրը երբ Բեթանիայէ կ՚ելլէին, անօթեցաւ. 13—Ու հեռուանց տերեւազարդ Թզենի մը տեսնելով՝ եկաւ որ Թերևս անոր վրայ բան մը գտնէ. ու երբ անոր քով գնաց, տերեւներէն զատ բան մը չգտաւ, վասն զի դեռ Թուզի ատեն չէր։ 14—Ու պատասխան տուաւ ու բաւ անոր, Ասկէ հետև մէկը քեզմէ պտուղ չուտակ յատեան. և իր աշակերտները լսեցին։

15—Ու եկան Երուսաղէմ. և Յիսուս տաճարը մտնելով՝ սկսաւ գուրս հանել զանոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին. և տապակ փոխադրներուն սեղանները ու աթոռն ծախողներուն աթոռները կործանեց. 16—Ու Թող չէր տար որ մէկը տաճարին միջէն աման մը անցնէ։ 17—Ու կը սորվեցնէր ու կ՚ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ իմ տունս ազգերուն տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն. բայց դուք տուիք ահագնականներու այր ըրիք։ 18—Ու գրագիրները ու քահանայապետները լսելով՝ կը փնտռէին Թէ ի՛նչպէս կորնչցնեն զանիկա, քանզի անկէ կը վախնային. վասն զի բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր վարդապետութեանը վրայ։ 19—Ու երբ իրիկուն եղաւ, քաղաքէն դուրս ելաւ։

20—Ու առաւուանց երբ անցնէին, Թզենին տեսան արմատէն չորցած։ 21—Ու Պետրոս հիշքը եկաւ ու բաւ անոր, Ռաբբի, ահա Թզենին զոր անիծեցիր՝ չորցեր է։ 22—Ու Յիսուս պատասխան տալով՝ բսաւ անոնց, Ունեցէք հաւատք ունեցէք։ 23—Քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Ով որ այս լեռանը բսէ, Ելիր ու ծովը իյնկիր, և իր սրտին մէջ չերկմտի, հապա հաւատայ Թէ ի՛նչ որ բսէ կ՚ըլլայ, պիտի ըլլայ անոր ի՛նչ որ բսէ։ 24—Ասոր համար կ՚ըսեմ ձեզի, Ի՛նչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատացէք Թէ պիտի առնէք, և պիտի ըլլայ ձեզի։ 25—Ու երբ աղօթքի կը կայնիք, Ներեցէք եթէ մէկուն դէմ բան մը ունիք, որպէս զի ձեր Հայրն ալ որ երկինքն է, Ներէ ձեզի ձեր յանցանքները։ 26—Իսկ եթէ դուք չներէք, ձեր Հայրն ալ որ երկինքն է, պիտի չներէ ձեր յանցանքները։

27—Ու նորէն Երուսաղէմ եկան. ու երբ տաճարին մէջ կը պտըտէր, քահանայապետները և գպիրները ու ծերերը անոր եկան, 28—Ու ըսին անոր, Ի՞նչ իշխանութիւնով կ՚ընես այդ բաները, և ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը, որ այդ բաները ընես։ 29—Պատասխան տուաւ Յիսուս ու բաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, ու ինծի պատասխան տաք, ես ալ ձեզի պիտի ըսեմ Թէ ի՛նչ իշխանութիւնով կ՚ընեմ այս բաները։ 30—Յովհաննէսի մկրատութիւնը երկինքէ՞ն էր՝ Թէ մարդոյմէ. պատասխան տուէք ինծի։ 31—Ու անոնք իրենց մէջ կը խորհէին ու կ՚ըսէին, Եթէ ըսենք՝ երկինքէն, պիտի բսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր։ 32—Իսկ եթէ ըսենք՝ Մարդոյմէ, ժողովուրդէն կը վախնային, վասն զի ամէնը գիտէին Յովհաննէսը Թէ ճշմարտապէս մարգարէ էր։ 33—Ու պատասխան տուին՝ ըսին Յիսուսի, Չենք գիտեր. և Յիսուս պատասխան տուաւ ու բաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ բսեր Թէ ի՛նչ իշխանութիւնով կ՚ընեմ այս բաները։

ԳԼ. ԺԲ

Ու սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ։ Մարդ մը այգի տնկեց, ու անոր բոլորտիքը ցանգ փաթեց, և առարաձման փորեց, ու աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր մը գնաց։ 2—Ու ատենին ծառայ մը ղրկեց մշակներուն, որպէս զի մշակներէն այգիին պտուղէն առնէ։ 3—Իսկ անոնք բռնեցին, ծեծեցին զանիկա ու պարապ ճամբեցուցին։ 4—Նորէն ուրիշ ծառայ մըն ալ ղրկեց անոնց, և զանիկա քարկոծելով գլուխը վիրաւորեցին ու անարգուած ճամբեցուցին։ 5—Ու դարձեալ ուրիշ մը ղրկեց, ու զանիկա սպաննեցին. և չատ ուրիշներ ալ, որոնց մէկ քանիները ծեծեցին ու մէկ քանիները սպաննեցին։ 6—Ուստի սիրելի որդի մըն ալ ունենալով, վերջապէս զանիկա ալ ղրկեց անոնց՝ բսելով, Թերևս այնտեղ իմ որդիս։ 7—Բայց այն մշակները ըսին

*Ոմանք, Տէրոջը անունովը կու գայ

*Ոմանք, ու Յիսուս

*Ոմանք, ուղեին

իրարու, Աթիկա է ժառանգը. եկէք զանիկա սպանենք, ու ժառանգութիւնը մերը ըլլայ։ 8—Ու բանեցին զանիկա ու սպանեցին, և այդ՝ին դուրս հանեցին։ 9—Ուստի այդ՝ին տէրը ի՞նչ պիտի ընէ. պիտի գայ ու կորնչեցնէ մշակները, և այգին ուրիշներու պիտի տայ։ 10—Ու այս գիրը չէ՞ք կարդացեր, Քէ Այն քարը զոր շինողները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. 11—Աթիկա Տէրոջմէն եղաւ, և զարմանալի է մեր աչքերուն։

12—Ու կը փնտռէին քէ ի՛նչպէս բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, քանզի իմացան որ այն առակը իրենց համար բաւս, և ձգեցին զանիկա ու գացին։

13—Ու փարիսեցիներէն ու Հերովդեսեաններէն քանի մը հոգի ղրկեցին անոր, որպէս զի խօսքով բռնեն զանիկա։ 14—Ու անոնք եկան ու ըսին անոր, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ կաս, և մէկ՛ուն համար հոգ չէ, քանզի մարդոց երեսպաշտութիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես. Կայսրին տուրք տալ արժա՞նի է՝ Քէ ոչ, տա՞նք՝ Քէ չտանք։ 15—Ու Ձեռոց գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ բսաւ անոնց, Ինչո՞ւ զիս կը փորձէք. բերէք ինծի դահեկան մը որ տեսնեմ։ 16—Եւ անոնք բերին. ու բսաւ անոնց, Որո՞ւն է այս պատկերը ու գիրը. և անոնք ըսին անոր, Կայսրին։ 17—Ու Ձիսուս պատասխան տալով՝ բսաւ անոնց, Զայն որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և զոյն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք։ ու զարմացան անոր վրայ։

18—Ու անոր քով եկան սադուկեցիները որոնք կ'ըսեն Քէ յարութիւն չկայ, և անոր հարցուցին բսելով, 19—Վարդապետ, Մովսէս մեզի գրեց որ եթէ մէկուն եղբայրը մեռնի, ու կինը ձգէ և զաւակ չձգէ, անոր եղբայրը առնէ անոր կինը, և իր եղբօրը զաւակ հանէ։ 20—Արդ եօթը եղբայրներ կային, և առաջինը կին առաւ ու մեռաւ և զաւակ չձգեց։ 21—Ու երկրորդը առաւ զանիկա ու մեռաւ, և ան ալ զաւակ չձգեց. նոյնպէս ալ երրորդը։ 22—Ու եօթին ալ զանիկա առին և զաւակ չձգեցին. ամենէն ետքը կինն ալ մեռաւ։ 23—Ուրեմն յարութեան աւուն, երբ յարութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ. վասն զի եօթն ալ զանիկա կին ունեցան։ 24—Ու Ձիսուս պատասխան տալով՝ անոնց բսաւ, Ասոր համար չէ՞ որ մոլորած եք, որ ոչ գիրքերը գիտէք և ոչ Աստուծոյ զօրութիւնը։ 25—Քանզի երբ մեռելներէն յարութիւն առնեն, ոչ կին կ'առնեն և ոչ էրկան կը տրուին, հապա երկինքի հրեշտակներուն պէս են։ 26—Բայց մեռելներուն համար՝ Քէ յարութիւն կ'առնեն, Մովսէսի գիրքին մէջ չէ՞ք կարդացեր Թէ Աստուած անոր խօսեցաւ՝ ըսելով, Ես եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, ու Յակոբի Աստուածը։ 27—Անիկա մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն. ուրեմն դուք խիստ մոլորած էք։

28—Ու գպիրներէն մէկը եկաւ, ու մտիկ կ'ընէր անոնց՝ երբ վիճաբանութիւն կ'ընէին, ու երբ տեսաւ Քէ ոտիկ պատասխան տուաւ անոնց, հարցուց անոր ըսելով, Ո՞րն է բոլոր պատուիրանքներուն առաջինը։ 29—Ու Ձիսուս պատասխանեց անոր, Բոլոր պատուիրանքներուն առաջինը այս է. Լսէ, ով Իսրայէլ, Մեր Տէր Աստուածը մէկ Տէր է։ 30—Ու քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտիդ, և քու բոլոր անձիդ, ու քու բոլոր մտքիդ, և քու բոլոր զօրութիւնէդ. սակայն է առաջին պատուիրանքը։ 31—Ու երկրորդը ասոր նման, Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս. ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրանք չկայ։ 32—Ու գպիրը բսաւ անոր, Ահեկ, վարդապետ, ճշմարիտ խօսեցար Քէ Աստուած մէկ է, և անկէ զատ ուրիշ մը չկայ։ 33—Ու բոլոր սրտէ, ու բոլոր հոգւէ, և բոլոր անձէ, ու բոլոր զօրութիւնէ զանիկա սիրելը, ու ընկերը իր անձին պէս սիրելը ամէն ողջակէզներէ ու զոհերէ աւելի է։ 34—Ու Ձիսուս տեսնելով որ անիկա խելացութիւնով պատասխան տուաւ, բսաւ անոր, Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես. և ա՛լ ուրիշ մէկը չէր համարձակեր անոր բան մը հարցնելու։

35—Ու Ձիսուս երբ ատաճարին մէջ կը սորվեցնէր, պատասխան տուաւ ու բսաւ, Դպիրները ի՞նչպէս կ'ըսեն Քէ Քրիստոս Դաւիթի որդին է։ 36—Ու ինք Դաւիթ Սուրբ Հոգիով կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս բսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատառանդան ընեմ։ 37—Ուրեմն Դաւիթ ինք որ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ. և ժողովուրդն չատերը յօժարութեամբ մտիկ կ'ընէին անոր։

38—Ու իր վարդապետութեանը մէջ կ'ըսէր անոնց, Զգուշացէք գպիրներէն, որոնք կ'ուզեն փառաւոր հանգերձներով պտրել, և չուկաներուն մէջ բարեւներ կը ֆերեն, 39—Ու ժողովարաններուն մէջ առաջին աթոռներէն, և ընթրիքներու մէջ առաջին բազմոցները. 40—Որոնք որթևարիներուն տուները կ'ուտեն, ու Երկայն երեսնալու համար ազօթքը կ'երկնցնեն. ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին։

41—Ու Ձիսուս գանձանակին դիմաց նստած՝ կը նայէր Քէ ի՛նչպէս ժողովուրդը գանձանակին մէջ ոսկի կը ձգէ. և չատ հարուստներ չատ բան ձգեցին. 42—Ագքսա որբևարի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ դամբարակիս մը կ'ընէ։ 43—Ու իր աշակերտները իրեն կանչելով՝ բսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ Այս աղքատ որբևարին գանձանակը ամէն ձգողներուն աւելի ձգեց. 44—Վասն զի ամէնը իրենց աւելցածէն ձգեցին, բայց ասիկա իր չքաւորութենէն՝ ամենայն բոլորը ձգեց, իր բոլոր ապրուստը։

Գլ. ԺԳ

Ու երբ ատաճարէն դուրս կ'ելլէր, իր աշակերտներէն մէկը բսաւ իրեն, Վարդապետ, նայէ ի՛նչպէս քարեր են, և ի՛նչ կերպ շէնքեր։ 2—Ու Ձիսուս պատասխան տալով՝ բսաւ անոր, Կը տեսնե՞ս այդ մեծ շէնքերը. քար մը քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի։

3—Ու երբ անկից Ձիթենեաց լեռը ատաճարին դիմաց նստաւ էր, Պետրոս ու Յակոբոս և Յովհաննէս ու Անդրէաս հարցուցին իրեն առանձին, 4—Ըսէ մեզի, ի՞րը պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ նշան պիտի ըլլայ այդ ամէն բաներուն կատարուելու ատենը։ 5—Ու Ձիսուս պատասխան տուաւ անոնց ու սկսաւ ըսել, Զգույշ կեցէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ. 6—Վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու բսեն Քէ ես եմ Քրիստոսը, ու շատերը պիտի մոլորեցնեն։ 7—Բայց երբ լսէք պատերազմներ և պատերազմներու լուրեր՝ մի խռովիք, վասն զի պէտք է ըլլայ, բայց գեռ վերջը չէ։ 8—Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ, և տեղ տեղ երկրաշարժութիւններ պիտի ըլլան. սովեր ու խռովութիւններ ալ պիտի ըլլան. ասոնք ցաւերուն սկիզբներն են։ 9—Զգուշացէք ձեր անձերուն. քանզի ձեզ առաքելներու պիտի մատնեն, ու ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն, և իմ սիրոս համար կանգնուելու ու թագաւորներու առջև պիտի կենաք՝ անոնց վկայութիւն ըլլայու համար։ 10—Ու առաջ պէտք է որ աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն։ 11—Բայց երբ ձեզ մատնելու տանին, առաջուընէ հոգ մի ընէք և մի մտածէք Քէ ի՛նչ պիտի խօսիք, հապա այն ժամուն ինչ որ ձեզի տրուի՝ զայնիկա խօսեցէք. վասն զի ոչ Քէ դուք էք որ կը խօսիք, հապա Հոգին Սուրբ։

12—Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մատնի, և Հայրը՝ որդին, և որդիներ էրէնց ծնողքներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք։ 13—Ու իմ անունս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք. բայց՝ ով որ մինչև վերջը համբերէ՝ անիկա պիտի ապրի։ 14—Ու երբ տեսնէք ատելութեան պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքով բսուած է, Քէ որ տեղ չպատ տեղը կը կենայ, (ով որ կարդայ՝ թող հասկնայ,) այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին։ 15—Ու ան որ տանիքին վրայ է՝ թող տան չիջնէ, ու չմտնէ իր տունէն բան մը առնելու։ 16—Ու ան որ արտին մէջ է՝ թող դա

չդառնայ իր հանդիպելը առնելու։ 17—Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուղներուն։ 18—Ու աղօթք ըրէք որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ։ 19—Քանզի այն օրերը այնպիսի նեղութիւն պիտի ըլլայ, որուն նմանը Աստուծոյ ստեղծած արարածներուն սկիզբէն մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ։ 20—Ու եթէ Տէրը այն օրերը չկարճեցնէր, բնաւ մարմին մը պիտի չազատէր։ բայց ընտրեալներուն համար զորոնք ընտրեց՝ այն օրերը կարճեցուց։ 21—Ու այն ատեն եթէ մէկը ձեզի ըսէ, Ահա հոս է Քրիստոս՝ կամ Ահա հոն, մի հաւատաք։ 22—Վասն զի սուտ Քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու նշաններ և հրաշքներ պիտի ցուցնեն, որպէս զի եթէ կարելի եր, ընտրեալներն ալ մոլորեցնեն։ 23—Իսկ դուք զգոյշ կեցէք. ահա առաջուընէ բան ձեզի ամէնը։

24—Բայց այն օրերը այն նեղութենէն ետև արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի չտայ, 25—Ու աստղերը երկինքէն պիտի թափիփչին, ու երկինքին ուժերը պիտի շարժին։ 26—Ու այն ատեն պիտի տեսնեն Որդին մարդոյ՝ ամպերու մէջ եկած մեծ զօրութիւնով ու փառքով։ 27—Ու այն ատեն իր հրեշտակները պիտի դրկէ, ու իր ընտրեալները պիտի ժողվէ չորս հովերէն, երկրի ծայրէն մինչև երկինքի ծայրը։ 28—Թզենիէն առակ մը սորվեցէք։ երբ անոր ոստերը կը կակուղնան ու տերևները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է։ 29—Նոյնպէս ալ դուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ մօտ է դուռներուն քով։ 30—Ձշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս ազգը պիտի չանցնի՝ մինչև որ այս ամէն բաները ըլլան։ 31—Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։ 32—Իսկ այն օրուան ու ժամուն համար մէկը չգիտեր, ոչ երկինքի մէջ եղող հրեշտակները և ոչ Որդին, հապա միայն Հայրը։ 33—Զգոյշ կեցէք, արթուն մնացէք և աղօթք ըրէք, վասն զի չէք գիտեր ատենը ե՛րբ է։ 34—Ինչպէս օտար երկիր գացող մարդ մը իր տունը կը թողու, ու իր ծառաներուն իշխանութիւն կու տայ, և ամէն մէկուն իր գործը, ու գռնապանին կ'ապսպրէ որ արթուն կենայ։ 35—Ուրեմն արթուն կեցէք, վասն զի չէք գիտեր թէ ե՛րբ կու գայ տանուտէրը, իրիկո՞ւնը՝ թէ կէսգիշերի՞ն թէ հաւաբասի՞ն և թէ առաւօ՞տը։ 36—Չըլլայ որ յանկարծակի գայ ու ձեզ քունի մէջ գտնէ։ 37—Ու ինչ որ կ'րսեմ ձեզի՝ ամէնուն կ'ըսեմ, Արթուն կեցէք։

Գլ. ԻԴ

ԵՒ երկու օրէն հաւ գաղիկ ու բաղարջակերք էր։ և գահանայապետները ու գպիրները կը փնտռէին թէ ի՛նչպէս ներգործութեամբ բռնեն զանիկա ու մեռցընեն։ 2—Բայց կ'ըսէին թէ Ոչ տօնին ատենը, որպէս զի ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ։

3—Ու երբ ինք Բեթանիա էր բորոտ Սիմոնի տունը սեղան նստած, կին մը եկաւ՝ որ չիշ մը պատուական սուդ նարդոսի իւղ ունէր, և կտորեց այն չիշը ու անոր գլխուն վրայ թափեց։ 4—Ու կային ոմանք որ կը դժուարէին ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար եղաւ այդ իւղին կորսուտը։ 5—Քանզի այդ [իւղը] երեք հարիւր դահեկանէ աւելի կրնար ծախսիլ ու աղքատներուն տրուիլ։ և սաստիկ կը յանդիմանէին զանիկա։ 6—Բայց Յիսուս ըսաւ, Թող ատկէ տարբ, ինչո՞ւ անհանգիստ կ'ընէք աղիկա. բարի գործ մը գործեց ինծի։ 7—Վասն զի աղքատները միշտ ձեզի հետ ունիք, ու երբ ուզէք, կրնաք անոնց բարիք ընել, բայց ինծի միշտ չունիք։ 8—Աղիկա ինչ որ ունէր՝ ըրաւ. առաջուընէ իմ մարմինս օծեց իմ թաղմանս համար։ 9—Ձշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թէ Բոլոր աշխարհի մէջ, ուր որ այս աւետարանը կը քարոզուի, ատոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար։

10—Ու Յուդա Իսկարիովացի, տասներկուքէն մէկը, գնաց քահանայապետներուն, որ զանիկա մատնէ անոնց։ 11—Անոնք ալ լսելով ուրախացան, ու իրեն ատակ տալ խոստացան, և կը փնտռէր թէ ի՛նչպէս պատեհ հնարքով մը մատնէ զանիկա։

12—Ու բաղարջակերաց առաջին օրը, երբ զատիկը կը մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն, Ո՞ւր կ'ուզես երթանք պատրաստենք՝ որպէս զի զատիկը ուտես։ 13—Ու իր աշակերտներէն երկուքը դրկեց ու ըսաւ անոնց, Գացէք քաղաքը, ու ձեզի մարդ մը պիտի պատահի՝ որ սրսիս կրկ չափր մը կը տանի, գացէք անոր ետևէն։ 14—Ու ուր որ մտնէ, տանտէրը ըսէք, Վարդապետը կ'ըսէ, Ո՞ր է օթեւանը, ուր աշակերտներուս հետ զատիկը ուտեմ։ 15—Ան ալ ձեզի յարգարած սենեակ մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ. հոն պատրաստեցէք մեզի։ 16—Ու իր աշակերտները գացին ու քաղաքը մտան, և ինչպէս իրենց բսաւ՝ գտան, և զատիկը պատրաստեցին։

17—Ու երբ իրիկուն եղաւ, տասներկուքին հետ մէկտեղ եկաւ։ 18—Ու երբ սեղան նստան և կ'ուտէին, ըսաւ Յիսուս, Ձշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը որ հիմա ինծի հետ կ'ուտէ, դիս պիտի մատնէ։ 19—Ու անոնք սկսան տրտմիլ, ու մէկիկ մէկիկ ըսել անոր, Միթէ ե՞ս եմ. և ուրիշ մը՝ Միթէ ե՞ս եմ։ 20—Անոնց պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Այդ տասներկուքէն մէկը՝ որ ինծի հետ էր չ՚ափը պնակը խթեց։ 21—Որովհետև Որդին մարդոյ կ'երթայ, ինչպէս գրուած է իրեն համար. բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով Որդին մարդոյ կը մատնուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած չըլլար։

22—Ու քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց ու կոտրեց, և տուաւ անոնց ու ըսաւ, Առէ՛ք, այս է իմ մարմինս։ 23—Ու գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ անոնց, և ամէնն ալ խմեցին անկէ։ 24—Ու ըսաւ անոնց, Ասիկա է իմ արիւնս նոր ուխտին, որ շատերու համար կը թափուի։ 25—Ձշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետև երբէք պիտի չխմեմ մինչեւ որ Աստուծոյ թագաւորութեան մէջ։

26—Ու օրհնութիւն մը երգելէ ետև Ձիթենեաց լեռը ելան։ 27—Ու Յիսուս ըսաւ անոնց, Ամէնդ ալ այս գիշեր իմ վրայովս պիտի գայթակղիք. վասն զի գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ, ու ոչխարները պիտի ցրուին։ 28—Բայց յարութիւն առնելէս ետև, ձեզմէ առաջ Գալիլիա պիտի երթամ։ 29—Իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ ամէնն ալ գայթակղին, բայց ոչ թէ ես։ 30—Ու Յիսուս ըսաւ անոր, Ձշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դուն այս գիշեր գեղ հարր երկու անգամ չխօսած երեք անգամ դիս պիտի ուրանաս։ 31—Բայց Պետրոս աւելի կը պնդէր ու կ'ըսէր, Թէև քեզի հետ մեռնիլ պէտք ըլլայ ինծի, բնաւ քեզ պիտի չուրանամ. նոյնպէս կ'ըսէին ամէնն ալ։

32—Եկան այն տեղը որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ իր աշակերտներուն, Հոս նստեցէք, մինչև որ ես աղօթք ընեմ։ 33—Ու իրեն հետ առնելով Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, սկսաւ խռովիլ և վշտանալ։ 34—Ան ատեն ըսաւ անոնց, Իմ անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք և արթուն մնացէք։ 35—Ու քիչ մը առաջ երթալով՝ էր երեսին վրայ գետինը ինկաւ և աղօթք ըրաւ, որ եթէ կարելի է, այն ժամը իրմէ անցնի։ 36—Ու ըսաւ, Աբբա Հայր, ամէն բան քեզի հնարաւոր է, այս գաւաթը ինծմէ անցուր. բայց ոչ թէ ինչպես ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես։ 37 Ու եկաւ ու գտնելով քնացած գաւաս և ըսաւ Պետրոսին, Սիմո՛ն, կը քնանա՞ս. չկրցա՞ր ժամ մը արթուն կենալ։ 38—Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չմտնէք։ Հոգին յօժար է, բայց մարմինը տկար։ 39—Ու նորէն գնաց աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով։ 40—Ու գարձաւ ու գտնելով նորէն քնացած գտաւ, վասն զի աչքերնին ծանրացած էր, և չէին գիտեր թէ ի՛նչ պատասխան տան անոր։ 41—Երրորդ անգամ ալ եկաւ ու ըսաւ անոնց, Ասկէ ետև քնացէք ու հանգչեցէք. բաւական է, ժամը հա-

*Ոմանք, Առէք, կերէք

սու. ահա Որդին մարդոյ մեզաւորնե-
րուն ձեռքը կը մատնուի։ 42—Ելէք
երթանք, ահա մատնեցաւ անիկա որ զիս
պիտի մատնէ։

43—Եւ դեռ անիկա չէր որ կը խո-
սէր, իսկոյն Յուդա, տասներկուքէն
մէկը, եկաւ, և իրեն հետ քահանայա-
պետներուն և գրիչներուն ու ծերե-
րուն կազմէն չատ բազմութիւն՝ սուրե-
րով ու բիլիրով։ 44—Եւ զանիկա մատ-
նողը անոնց նշան մը ասելը եր՝ ըսե-
լով, Ով որ ես համբուրեմ՝ ան է, բռնա-
նեցէք զանիկա և զգուշութեամբ տա-
րէք։ 45—Ու անիկա գալով չատ մը
մտաւ անոր և ըսաւ, Ռաբբի, Ռաբբի,
ու համբուրեց զանիկա։ 46—Եւ ա-
նոնք ձեռք զարկին անոր ու բռնեցին
զանիկա։ 47—Եւ ժողովրդէրէն
մէկը սուրը քաշեց ու զարկաւ քահա-
նայապետին ծառային, ու անոր ականջը
մէկդի տանեց։ 48—Եւ Յիսուս պատաս-
խան տալով՝ ըսաւ անոնց, Իբր թէ ա-
ւազակի՞ վրայ եկաք սուրերով ու բի-
լիրներով զիս բռնելու։ 49—Ամէն օր ձեր
քով էի ու տաճարին մէջ կը սորվեց-
նէի, և զիս չբռնեցիք։ բայց որպէս զի
գիրքերը կատարուին։ 50—Անոնք
բոլոր՝ Ուխտ-ը թողուցին զանի-
կա ու փախան։ 51—Եւ երիտասարդ
մը անոր հետևէն կ'երթար՝ մերկ մար-
մինին վրայ կտաւ մը առած, ու երի-
տասարդները զանիկա բռնեցին։ 52—
Ան ալ կտաւը թողուց ու մերկ փա-
խաւ անոնցմէ։

53—Եւ տարին Յիսուսը քահանա-
յապետին, ու անոր քով ժողովեցան
բոլոր քահանայապետները և ծերերը ու
դպիրները։ 54—Եւ Պետրոս հետևանց
անոր հեռուէն գնաց մինչև ներսը, քա-
հանայապետին գաւիթը, և սպասաւոր-
ներուն հետ նստաւ, ու կրակին քով կը
տաքնար։ 55—Իսկ քահանայապետները
և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ վկայու-
թիւն կը փնտռէին, որպէս զի զանիկա
մեռցնեն, և չէին գտներ։ 56—Վասն
զի շատերը սուտ վկայութիւն կը վկայէին
անոր դէմ, ու վկայութիւնները էր-ը-
համաձայն չէին։ 57—Եւ ոմանք ելան
սուտ վկայութիւն կ'ընէին անոր դէմ՝
ու կ'ըսէին Թէ, 58—Մենք լսեցինք
ասիկ որ կ'ըսէր, Ես այդ ձեռագործ
տաճարը պիտի քակեմ, և երեք օրուան
մէջ ուրիշ մը պիտի չինեմ առանց ձե-
ռագործի։ 59—Բայց այնպէս ալ իրենց
վկայութիւնը համաձայն չէր։ 60—Եւ
քահանայապետը ժիլոտը ոտք ելլե-
լով՝ հարցուց Յիսուսի ու ըսաւ, Պա-
տասխան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն
ասոնք քեզի դէմ։ 61—Բայց անիկա
լռեց կը կենար և պատասխան մը չէր
տար. քահանայապետը նորէն կը հարց-
ընէր անոր ու կ'ըսէր, Դո՞ւն ես Քրիս-
տոս, օրհնեալ Աստուծոյ Որդին։ 62—
Եւ Յիսուս ըսաւ, Ես եմ. ու պիտի տես-
նէք Որդին մարդոյ Զօրութեան աջ
կողմը նստած, ու երկինքի ամպերովը
գալած։ 63—Եւ քահանայապետը իր
հանդերձները պատռեց, ու ըսաւ, Ալ
ի՞նչ պէտք են մեզի վկաներ։ 64—Աստ-
ուածհայհոյութիւնը լսեցիք. մեզի ի՞նչպէս
կ'երեւնայ։ և ամէնը դատապարտեցին
զանիկա թէ մահապարտ է։

65—Եւ ոմանք սկսան թքնել անոր
ու երեսը ծածկել և բռունցքով ծեծել
ու ըսել, Մարգարէացիր։ ու սպասաւ-
որները ապտակ կը զարնէին անոր։

66—Եւ Պետրոս վարը գաւիթն էր,
ու քահանայապետին ազախիներէն մէ-
կը եկաւ, 67—Ու տեսնելով Պետրոսը
որ կը տաքնար, նայեցաւ անոր ու ըսաւ,
Դուն ալ Յիսուս Նազովրեցիի հետ էիր։
68—Բայց անիկա ուրացաւ ու ըսաւ,
Չեմ գիտեր և չեմ հասկնար թէ դուն
ի՞նչ կը խօսիս։ ու երբ դուրս ելաւ գա-
ւիթին դրան առջև, հաւը խօսեցաւ։
69—Ու ազախինը նորէն տեսաւ զա-
նիկա, ու սկսաւ բոլորտիքը կանգնածնե-
րուն ըսել թէ Ասոնցմէ է։ 70—
Եւ անիկա նորէն ուրացաւ։ Ու քիչ
մը ատենէն հեռուէն բոլորտիքը
կանգնածները ըսին Պետրոսի, Արդարև
դուն անոնցմէ ես, վասն զի Գալիլեացի
ես, և քու դրուցուածդդ ալ նման է
անոնց։ 71—Բայց անիկա սկսաւ անի-
ծել ու երդուիլ ընել՝ ըսելով Թէ ես
այն մարդը չեմ ճանչնար, որու համար
դուք կ'ըսէք։ 72—Եւ իսկոյն երկրորդ
անգամ հաւը խօսեցաւ. ու Պետրոս
մտաքը բերաւ այն խօսքը զոր Յիսուս
իրեն ըսեր էր Թէ Դեռ հաւը երկու ան-

չխօսած՝ դուն երեք անգամ պիտի ու-
րանաս զիս. ու ակսաւ լալ։

Գլ. ԺԵ

Եւ առաւօտուն չատ մը քահանայա-
պետները ծերերուն ու գիրքերուն հետ՝
և բոլոր ժողովքն ալ խորհուրդ ըրին,
Յիսուսը կապեցին ու տարին մատնեցին
Պիղատոսի։ 2—Եւ Պիղատոս հարցուց
անոր ըսելով, Դո՞ւն ես Հրեից թա-
գաւորը. անիկա ալ պատասխան տա-
լով՝ ըսաւ անոր, Դուն կ'ըսես։ 3—Եւ
քահանայապետները չատ ամբաստանու-
թիւն կ'ընէին անոր վրայով։ 4—Ու
Պիղատոս նորէն հարցուց անոր՝ ըսելով,
Պատասխան մը չե՞ս տար. նայէ ո՛րչափ
բան զիս կը վկայեն։ 5—Եւ Յիսուս
ալ պատասխան մը չտաւ, մինչև
որ Պիղատոս զարմացաւ։

6—Բայց ասոնն տաներ կապուած մը
կ'արձակէր անոնց, ո՛րը որ իրենք ու-
զէին։ 7—Եւ Փիլ կար Բարաբբա ա-
նուանով իր ընկերք խռովարարներուն հետ
կապուած, որոնք խռովութեան ատեն
մարդասպանութիւն ըրեր էին։ 8—Եւ
ժողովուրդը ազաղակելով՝ սկսաւ խնդ-
րել որ ըն֊ի ինչպէս միշտ կ'ընէր իրենց։
9—Եւ Պիղատոս անոնց պատասխան
տուաւ ըսելով, Կուզէ՞ք որ Հրէից
թագաւորը արձակեմ ձեզի։ 10—Քանի
որ գիտէր որ քահանայապետները նա-
խանձի համար մատներ էին զանիկա։
11—Բայց քահանայապետները ժողո-
վուրդը գրգռեցին որ Բ֊ն֊ը յա-
ւելու Բարաբբան իրենց արձակել։ 12—Դա-
րձեալ Պիղատոս պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց, Հապա Հրէից թագաւոր
բանածնիդ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ։ 13—
Եւ անոնք նորէն կ'ազազակէին, Խաչը
հանէ ատիկա։ 14—Պիղատոս ըսաւ ա-
նոնց, Բայց ի՞նչ չար գործ բրած է
ատիկա. և անոնք ա՛լ աւելի կ'ազա-
զակէին ու կ'ըսէին, Խաչը հանէ ատի-
կա։ 15—Եւ Պիղատոս ժողովուրդը գոհ
ընել ուզելով՝ Բարաբբան արձակեց ա-
նոնց, ու Յիսուս ծեծելով՝ ձեռք տուաւ
որպէս զի խաչուի։

16—Եւ զինուորները ներս տարին
զանիկա գաւիթը, այսինքն պալատը, և
բոլոր գունդը մէկտեղ կանչեցին։ 17—
Ու հագցուցին անոր ծիրանիներ, և
փչելէն պսակ հիւսելով՝ անոր էր-ը-
դրին։ 18—Ու սկսան բարև տալ անոր
ու ըսել, Ողջոյն քեզ, Հրէից թագա-
ւոր։ 19—Եւ անոր գլուխը եղէգով կը
ծեծէին ու կը թքնէին անոր, և ծունկի
վրայ գալով երկրպագութիւն կ'ընէին
անոր։ 20—Ու երբ ծաղր րրին զանի-
կա, ծիրանիները վրայէն հանեցին և իր
հանդերձները հագցուցին անոր, ու
գուրս հանեցին զանիկա՝ որպէս զի
խաչը հանեն։

21—Եւ Սիմոն Կիւրենացի, Ալեք-
սանդրոսի և Ռուփոսի հայրը, որ անկէ
կ'անցնէր արտէն եկած, պահակ բռնե-
ցին որպէս զի անոր խաչը վերցնէ։ 22—
Ու տարին զանիկա Գողգոթա ը-ը-
անդր, (որ կը թարգմանուի Գանկի տեղ,)
23—Եւ անոր գմռաւոյ խառնուած
գինի տուին որ խմէ, բայց ինք չառաւ։
24—Ու խաչը հանեցին զանիկա, և ա-
նոր հանդերձները բաժնեցին՝ անոնց
վրայ վիճակ ձգելով Թէ ա՛վ ի՞նչ պիտի
առնէ։ 25—Ժամը երեքն էր ու խաչը
հանեցին զանիկա։ 26—Եւ անոր յան-
ցանքի գիրը գրուած էր Ի֊ Հրէից Թա-
գաւոր ն։ 27—Ու անոր հետ երկու
աւազակ խաչը հանեցին, մէկը անոր
աջ կողմէն ու մէկը ձախ կողմէն։ 28—
Եւ կատարուեցաւ այն գիրը որ կ'ըսէ
Թէ Անօրէններուն հետ անպատեցաւ։
29—Եւ անոնք որ կ'անցնէին, կը հայ-
հոյէին անոր, գլուխնին կը շարժէին ու
կ'ըսէին, Աւա՛ղ, որ տաճարը կը քա-
կեր, և երեք օրուան մէջ կը չիներ։
30—Ինքզինքդ ազատէ ու իջիր այդ
խաչէն։ 31—Նոյնպէս ալ քահանայա-
պետները գպիրներուն հետ իրենց մէջ
ծաղր ընելով՝ կ'ըսէին, Ուրիշները ա-
զատեց, ինքզինք չկրնար ազատել։
32—Իսրայէլի Քրիստոսը, Իսրայէլի Թագա-
ւորը, Թող հիմա խաչէն վար իջնէ, որ-
պէս զի տեսնենք ու հաւատանք. և
իրեն հետ խաչը ելլուզները կը նախատէին
զանիկա։

33—Ու վեցերորդ ժամը հասած ին
պէս՝ բոլոր երկրին վրայ խաւար եղաւ
մինչև իններորդ ժամը։ 34—Եւ իննե-
րորդ ժամուն՝ Յիսուս մեծ ձայնով ազա-

պակաց ու քաւ, էլոի, էլոի, լա՞մա սաբաքթանի. որ կը թարգմանուի, Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր: 35—Ու քանի կայնողներէն ոմանք երբ լսեցին՝ կ'ըսէին թէ Եղիան կը կանչէ: 36—Ու մէկը վազեց սպունգ մը քացախով լեցուց, ու եղէգի մը անցընելով՝ տուաւ անոր որպէս զի խմի, և ըսաւ, Թող տուր, տեսնենք թէ Եղիա կու գա՞յ առիկա վար իջեցընելու:

37—Ու Յիսուս մեծ ձայն մը հանեց ու հոգի տուաւ: 38—Ու տաճարին վարագոյրը երկու քի պատռեցաւ վերէն վար: 39—Ու հարիւրապետը որ անոր դիմաց կեցեր էր, տեսնելով որ այսպէս աղաղակելով հոգի տուաւ, ըսաւ. Արդարև Որդի Աստուծոյ էր այս մարդը: 40—Կիներ ալ կային, որոնք հեռուանց կը նայէին, որոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացի, և պզտիկ Յակոբոսի ու Յովսէսի մայրը Մարիամ, և Սողոմէի. 41—որոնք երբ Գ[illegible] Գալիլեա էր, իր հետէն կ'երթային, և իրեն սպասաւորութիւն կ'ընէին. և ուրիշ շատ կիներ ալ՝ որոնք իրեն հետ Երուսաղէմ եկեր էին:

42—Ու երբ իրիկուն եղաւ, որ էր ուրբաթ, այսինքն շաբաթին առջի օրը, Յոսէփ, 43—Յովսէփ Արիմաթիացի, երեւելի խորհրդական մը, որ ինք ալ Աստուծոյ թագաւորութիւնը կը սպասէր, եկաւ ու համարձակութիւն ընելով՝ Պիղատոսի քով մտաւ, և Յիսուսի մարմինը խնդրեց: 44—Ու Պիղատոս զարմացաւ որ արդէն մեռած ըլլայ. և հարիւրապետը իրեն կանչելով՝ հարցուց անոր թէ շա՞տ ատեն է որ մեռաւ: 45—Ու երբ հարիւրապետէն, մարմինը Յովսէփի չնորհեց: 46—Ու Յովսէփ կաւ գնեց, ու վար իջեցնելով՝ կաւոտիը փաթթեց, ու գերեզմանի մը մէջ՝ որ քարէ փորուած էր. և քար մը գլորեց գերեզմանին դուռը: 47—Իսկ Մարիամ Մագդաղենացի ու Յովսէփի Յոսէը Մարիամ տեսան այն տեղը ուր դրուեցաւ:

Գլ. ԺԶ

1 Երբ շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղենացի և Յակոբոսի Յոսէը Մարիամ և Սողոմէ խունկեր ծախու առին, որպէս զի գան օծեն զանիկա: 2—Ու մէկշաբթի առաւոտը չուա կնաներ, երբ արեւը կը ծագէր, եկան գերեզմանը, 3—Ու իրարու կ'ըսէին, Քարը ո՞վ պիտի գլորէ գերեզմանին դռնէն, 4—(Ու նայեցան տեսան որ քարը գլորուած էր,) վասն զի շատ մեծ էր: 5—Ու ներս գերեզմանը մտնելով՝ երիտասարդ մը տեսան որ աջ կողմը նստեր էր ճերմակ պատմուճան հագած, ու զարհուրեցան: 6—Ու անիկա ըսաւ անոնց, Մի զարհուրիք. Յիսուս Նազովրեցին կը փնտռէք, որ խաչուեցաւ. անիկա յարութիւն առաւ, հոս չէ. ահա այն տեղը ուր դրին զանիկա: 7—Բայց գացէք, ըսէք անոր աշակերտներուն և Պետրոսի, թէ ան ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք զանիկա՝ ինչպէս ձեզի բաւ: 8—Ու անոնք դողով ու ապշութեամբ բռնուած՝ *էլան ու փախան գերեզմանէն, և մարդո՛ւ բան չըսին, քանի կը վախնային:

9—Երբ մէկշաբթի առաւոտուն յարութիւն առած՝ առաջ Մարիամ Մագդաղենացիի երեւցաւ, որմէ եօթը դեւ հաներ էր: 10—Անիկա գնաց անոնց պատմեց՝ որոնք անոր հետ էին, երբ սուգ կ'ընէին ու կու լային: 11—Իսկ անոնք երբ լսեցին թէ կենդանի է և թէ իրեն երեւցաւ, չհաւատացին:

12—Ետքը ուրիշ կերպարանքով երեւցաւ անոնցմէ երկուքին՝ որոնք քալելով արտը կ'երթային: 13—Ու անոնք գացին ուրիշներուն պատմեցին, ու անոնց ալ չհաւատացին:

14—Վերջը տասնմէկին երեւցաւ, երբ սեղան նստած էին, ու երեսնին պարկաւ իրենց անհաւատութիւնը և սիրտերնուն կարծրութիւնը, վասն զի որոնց որ ինք երեւցաւ մեռելներէն յարութիւն առած՝ իրենք չհաւատացին:

15—Ու բաւ անոնց, Գացէք բոլոր աշխարհ, ու աւետարանը քարոզեցէք բոլոր առեղծուածներուն: 16—Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի, և ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի: 17—Ու անոնք որ կը հաւատան, այս նշաններըը անոնց հետ պիտի երթան. Իմ անունովս դեւեր պիտի հանեն, նոր լեզուներ պիտի խօսին. 18—Չեռքերնին օձեր պիտի բռնեն, և եթէ մահաբեր դեղ մը խմեն, իրենց պիտի չվնասէ. հիւանդներու վրայ ձեռք պիտի դնեն, ու անոնք պիտի առողջանան:

19—Ետքը Տէրը անոնց հետ խօսելէն յետքը երկինք համբարձաւ, ու Աստուծոյ աջ կողմը նստաւ: 20—Ու անոնք ելան ու ամէն տեղ կը քարոզէին, և Տէրը գործակից էր, ու խօսքը կը հաստատէր այն նշաններով որոնք անոնց հետ կ'երթային: Ամէն:

*Յոհաննէ, չուտ ելան

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼ. Ա

Որովհետեւ՝ շատերը ձեռ ձէ հաւատով գիտցած բաներուն վրայով եղած պատմութիւնը կարգի դնելու ձեռք զարկին, 2—ինչպէս սկիզբէն այգիվ տեսնողները եւ խօսքին սպասաւոր եղողները մեզի, 3—ես ալ որ սկիզբէն այն ամէն բաներուն ճշդութեամբ տեղեկացեր էի, յարմար դատեցի կարգաւ գրել քեզի, ով պատուական Թէոփիլոս, 4—որպէս զի ուղիղ բաներուդ տեղեկութիւնը իմանաս։

5—Հերովդէս Թագաւորի Աբիայի դասակարգութենէն Զաքարիա անունով քահանայ մը կար, որուն կինը Ահարոնի աղջիկներէն էր, և անոր անունը Եղիսաբէթ, 6—ու երկուքն ալ Աստուծոյ առջեւ արդար էին, և Տէրոջը բոլոր պատուիրանքներուն ու իրաւունքներուն մէջ անարատութեամբ կը քալէին։ 7—Ու զաւակ չունէին, վասն զի Եղիսաբէթ ամուլ էր, ու երկուքն ալ օրերնին անցած էին։

8—Ու երբ անոնք իր դասակարգութեան օրերը հանդիսաւոր քահանայական պաշտօնը կը կատարէր Աստուծոյ առջեւ, 9—քահանայութեան սովորութեանը պես իրեն բնկաւ որ Տէրոջը տաճարը մտնէ խնկարկութիւն բնէ։ 10—Ու ժողովրդեան բոլոր բազմութիւնը դուրսը աղօթք կ՚ընէր էին խունկին ատեն։ 11—Ու երեւցաւ անոր՝ Տէրոջը հրեշտակը, որ կայներ էր խունկի սեղանին ալ կողմը։ 12—Ու Զաքարիա երբ տեսաւ, շփոթեցաւ, ու անոր վրայ վախ մը բնկաւ։ 13—Ու հրեշտակը բաւ անոր, Մի վախնար, Զաքարիա, վասն զի քու աղօթքդ լսուեցաւ, և քու կնդ Եղիսաբէթ քեզի որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը *Յովհաննէս դնես։ 14—Ու քեզի ուրախութիւն ու ցնծութիւն պիտի ըլլայ, և շատերը անոր ծնանելուն վրայ պիտի ուրախանան։ 15—Վասն զի Տէրոջը առջեւ մեծ պիտի ըլլայ, և գինի ու օղի պիտի չխմէ։ և դեռ իր մօրը արգաւանդէն Սուրբ Հոգիով պիտի լեցուի։ 16—Ու Իսրայէլի որդիներէն շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ։ 17—Ու ինք անոր առջեւէն պիտի գայ Եղիայի հոգիովը ու զօրութիւնովը, հայրերուն սիրտերը որդիներուն վրայ դարձնելու, և անհնազանդները՝ արդարներուն խնամութեանը, որպէս զի Տէրոջը բարեկարգ ժողովուրդ մը պատրաստէ։ 18—Ու Զաքարիա բաւ հրեշտակին, Ինչո՞վ գիտնամ այդ բանը, որովհետեւ ես ծեր եմ, ու իմ կինս իր օրերը անցուցած է։ 19—Ու հրեշտակը պատասխան տուաւ՝ բաւ անոր, Ես եմ Գաբրիէլ որ Աստուծոյ առջեւ կը կայնիմ, ու ղրկուեցայ քեզի զրուցելու և այս բաներուն աւետիար քեզի տալու։ 20—Ու ահա համր պիտի ըլլաս դուն, ու պիտի չկրնաս խօսիլ մինչեւ այն օրը՝ որ այս բաները ըլլան, քանզի չհաւատացիր իմ խօսքերուս, որոնք իրենց ատենին պիտի կատարուին։ 21—Ու ժողովուրդը Զաքարիայի կը սպասէր, և կը զարմանային անոր տաճարին մէջ ուշանալուն վրայ։ 22—Ու երբ գուրս եկաւ, չէր կրնար խօսիլ անոնց հետ։ և իմացան որ տաճարին մէջ տեսիլք մը տեսած է. ու ինք նշանով կը խօսէր անոնց հետ, և համր կը կենար։ 23—Ու եղաւ որ

*Այսինքն, Տէրոջը չնորհքը

երբ անոր պաշտօնին օրերը լմնցան, իր տունը գնաց։ 24—Ու այն օրերէն ետքը անոր կինը Եղիսաբէթ յղացաւ, ու հինգ ամիս ինքզինք կը պահէր, և ըսաւ, 25—Այսպէս բրաւ ինծի Տէրը այս օրերս, որ իմ վրաս նայեցաւ նախատինքս մարդոց մէջէն վերցնելու։

26—Ու վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ ղրկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը՝ որուն անունը Նազարէթ էր, 27—Կոյսի մը՝ մարգու մը նշանուած, որուն անունը Յովսէփ էր, Դաւիթի տունէն, և այն կոյսին անունը Մարիամ էր։ 28—Ու հրեշտակը անոր գալով՝ բաւ, Ողջոյն քեզ, ով չնորհընկալ կոյս, Տէրը քեզի հետ է. դուն կանանց մէջ օրհնեալ ես։ 29—Ու ը֊նդ֊ն֊ա֊հ֊ե֊լով, անոր խօսքին վրայ չփոթեցաւ, ու ինքզինքին կը մտածէր թէ ի՛նչպես բան պիտի ըլլայ այս ողջոյնը։ 30—Ու հրեշտակը անոր բաւ, Մի վախնար, Մարիամ, վասն զի Աստուծմէ չնորհք գտար։ 31—Ու ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի ծնանես, և անոր անունը Յիսուս պիտի դնես։ 32—Անիկա մեծ պիտի ըլլայ, ու Բարձրելոյն Որդին պիտի բսուի, և Տէր Աստուած պիտի տայ անոր իր հօրը Դաւիթի աթոռը։ ու Յակոբի տանը վրայ յաւիտեան պիտի թագաւորէ։ 33—Ու անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ։ 34—Ու Մարիամ բաւ հրեշտակին, Ինչպէս պիտի ըլլայ այդ բանը, որովհետեւ ես այր մարդ չեմ գիտեր։ 35—Ու հրեշտակը պատասխան տուաւ՝ բաւ անոր, Հոգին Սուրբ պիտի գայ քեզի, ու Բարձրելոյն զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ Որդի պիտի բսուի։ 36—Ու ահա քու ազգականդ Եղիսաբէթ՝ անիկա իր պատուհասին տասներորդ ամսովն ալ յղի է. ու ասիկա այն ամուլ բսուածին վեցերորդ ամիսն է, 37—վասն զի Աստուծոյ քովէն բնաւ բան մը անհնարին չըլլար։ 38—Ու Մարիամ բաւ, Ահա ես Տէրոջը աղախինն եմ, քու բսածիդ պես թող ըլլայ ինծի։ ու հրեշտակը անոր քովէն գնաց։

39—Այն օրերը եղաւ Մարիամ ու

ՍՈՒՍ ՂՈՒԿԱՍՈՒ 63

ոտքերնով լեռնակողմը Յուդայի Հեբրոնը գնաց։ 40—Ու մտաւ Զաքարիայի տունը ու Եղիսաբէթի բարեւ տուաւ։ 41—Ու եղաւ որ երբ լսեց Եղիսաբէթ Մարիամի բարեւը, մանուկը անոր որովայնին մէջ թռաւ, ու Եղիսաբէթ Սուրբ Հոգիով լեցուեցաւ։ 42—Ու բարձր ձայնով մը կանչեց ու բաւ, Օրհնեալ ես դուն կանանց մէջ, և օրհնեալ է քու որովայնիդ պտուղը։ 43—Ու այս ինծի ուրկէ՞ եղաւ, որ իմ Տէրոջս մայրը ինծի գայ։ 44—Վասն զի ահա երբ քու բարեւիդ ձայնը ականջիս եկաւ, մանուկը որովայնիս մէջ ուրախութենէն ցնծաց։ 45—Ու երանի՛ անոր որ *հաւատացեր է, քանզի՝ պիտի կատարուին այն բաները որոնք Տէրոջմէ բան եղած իրեն։ 46—Ու Մարիամ բաւ, Իմ անձս կը մեծցնէ Տէրը, 47—Ու իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուծովս։ 48—Վասն զի իր ապիրանին խոնարհութեանը նայեցաւ. քանզի ահա ասկէ ետեւ բոլոր ազգերը ինծի երանութիւն պիտի տան։ 49—Վասն զի Հզօրը ինծի մեծամեծ բաներ բրաւ, ու անոր անունը սուրբ է։ 50—Ու անոր ողորմութիւնը իրմէ վախցողներուն վրայ է ազգէ ազգ։ 51—Իր բազուկովը զօրութիւն ցուցուց, ցիրուցան բրաւ սրտերուն անձրեր իրենց սրտին խորհուրդովը։ 52—Զօրաւոր գահերը էջերէն թօռներնին իջեցուց, ու խոնարհները բարձրացուց։ 53—Անօթիները բարիքներով լեցուց, և հարուստները պարապ ձամբեց։ 54—Օգնութիւն բրաւ իր խոստեկ ծառային՝ իր ողորմութիւնը միտք բերելով, 55—ինչպես ինք խօսեցաւ մեր հայրերուն, Աբրահամի ու անոր սերունդին յաւիտեան։

56—Ու Մարիամ անոր քովը երեք ամիս չափ կեցաւ, ու իր տունը դարձաւ։

57—Ու Եղիսաբէթի ծնանելու ժամանակը լեցուեցաւ, ու որդի մը ծնաւ։ 58—Ու իր դրացիները ու անոր բարերարիքը կը բնակէին, ու անոր ազգականները, որ Տէրը անոր վրայ իր մեծ ողորմութիւնը ցուցուց, և անոր հետ կ՚ուրախանային։

*կամ, հաւատացեր է քէ

59—Ու եղաւ որ ութերորդ օրը գան թլփատելու նկան, և զանիկա իր հօրը անունովը Զաքարիա կը կոչէին։ 60—Իսկ անոր մայրը պատասխան առաւ ու ըսաւ, Ոչ։ հապա Յովհաննէս պիտի կոչուի։ 61—Ու անոր ըսին թէ Քու ազգականներուդ մէջ մէկը չկայ որ այս անունով կոչուի։ 62—Անոք կ'ընէին անոր հօրը թէ ինչ ուզես կ'ուզէ որ անիկա կոչուի։ 63—Ան ալ տախտակ մը ուզեց ու գրեց՝ ըսելով, Յովհաննէս է ասոր անունը։ ու ամէնը զարմացան։ 64—Ու իսկոյն բացուեցաւ անոր բերանը ու անոր լեզուն, և կը խօսէր ու կ'օրհնէր Աստուած։ 65—Ու վախ մը բնկաւ այն ամէնուն վրայ՝ որոնք անոնց բոլորտիքը կը բնակէին. ու այս ամէն բաները Հրէաստանի բոլոր լեռնակողմը կը զրուցուէին։ 66—Ու ամէն լսողները իրենց սիրտերուն մէջ դրին, ու կ'ըսէին, Արդեօք այս ասան ինչ պիտի ըլլայ։ ու Տէրոջը ձեռքը անոր հետ էր։

67—Ու անոր հայրը Զաքարիա Սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարէացաւ ու ըսաւ, 68—Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ այցելեր Քեան եղաւ և իր ժողովրդին փրկութիւն բրաւ, 69—Ու մեզի փրկութեան եղջիւր մը հանեց իր Դաւիթ ծառային տունէն. 70—(Ինչպէս սուրբերուն բերնովը խօսեցաւ, որոնք աշխարհի սկիզբէն ի վեր անոր մարգարէները էին.) 71—փրկութիւն մեր թշնամիներէն և բոլոր մեզ ատողներուն ձեռքէն, 72—Ողորմութիւն բնելու մեր հայրերուն վրայ, և իր սուրբ ուխտը միտք բերելու, 73—(Այն երդումը զոր մեր հօրը Աբրահամի բրաւ.) մեզի տալու, 74—Որպէս զի մեր թշնամիներուն ձեռքէն ազատուելով՝ առանց վախի զանիկա պաշտենք 75—Սրբութիւնով ու արդարութիւնով առոր առջև մեր կեանքին բոլոր օրերուն մէջ։ 76—Ու դուն, ով մանուկ, բարձրելոյն մարգարէն պիտի կոչուիս, վասն զի Տէրոջը երեսին առջեւէն պիտի երթաս՝ անոր ճամբաները պատրաստելու, 77—Անոր ժողովրդին գիտցնելու երէց փրկութիւնը իրենց մեղքերուն թողութիւնովը, 78—Մեր Աստուծոյն գթած ողորմութեանը համար, որով ծագող արեգակը վերէն մեզի այցելութեան եկաւ՝ 79—Տեսնելու և մահուան մութերի մէջ նստողներուն լոյս տալու, ու մեր ոտքերը խաղաղութեան ճամբուն մէջ ղեկավարելու։

80—Ու տղան կը մեծնար ու կը զօրանար հոգիով, և անապատներուն մէջ կը մնար մինչև այն օրը երբ ինք Իսրայէլի երեւցաւ

Գլ. Ա

Ու եղաւ որ այն օրերը Օգոստոս կայսրէն հրաման եկաւ որ բոլոր աշխարհ գրուի։ 2—(Ասիս առաջին աշխարհագիրը եղաւ կիւրենոսի Սիւրիոյ վրայ կառավարութիւն բրած ատենը։) 3—Ու ամէնը կ'երթային աշխարհագիրը տանելու՝ ամէն մէկը իր քաղաքին մէջ։ 4—Յովսէփ ալ Գալիլեայէ, Նազարէթ քաղաքէն, եկաւ դէպ ի Հրէաստան Դաւիթի քաղաքը որ Բեթլհէմ կ'ըսուի, (իրեն Դաւիթի տունէն ու ազգատոհմէն ըլլալուն համար։) 5—Աշխարհագիրը տանելու Մարիամի հետ մկնիզ, որ իր նշանածն էր, և յղի էր։ 6—Ու եղաւ որ երբ անոնք հոն էին, անոր ծնանելու օրերը լեցուեցան։ 7—Ու իր անդրանիկ որդին ծնաւ, ու խանձարուրով փաթթեց և մանկիկ մսուրին մէջ պառկեցուց, վասն զի իրենց տեղ չկար։

8—Ու այն տեղը հովիւներ կային դաշտի մէջ կեցած, որոնք իրենց հօտերուն գիշերապահութիւնը կ'ընէին։ 9—Ու ահա Տէրոջը հրեշտակը անոնց վրայ իջաւ, ու Տէրոջը փառքը անոնց բոլորիքը ծագեցաւ. ու խիստ չատ վախցան։ 10—Ու հրեշտակը ըսաւ անոնց, Մի վախնաք, վասն զի ահա կը ձեզի մեծ ուրախութեան աւետիս կու տամ, որ բոլոր ժողովրդին պիտի ըլլայ։ 11—Վասն զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է։ 12—Ու այս ձեզի նշան մը ըլլայ։ Մանուկ մը պիտի գտնէք խանձարուրով փաթթուած ու մսուրի մէջ պառկած։ 13—Ու իսկոյն այն հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը եղաւ, որոնք զԱստուած կ'օրհնէին ու կ'ըսէին, 14—Երկինքի բարձրութեան մէջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն։ 15—Ու եղաւ որ երբ հրեշտակները անոնցմէ երկինք վերցան, հովիւները իրարու ըսին, Եկէք մինչև Բեթլհէմ երթանք, ու տեսնենք թէ ի՞նչ է այս եղած բանը, զոր Տէրը մեզի ցուցուց։ 16—Ու եկան արագաձօք, և գտան Մարիամը ու Յովսէփը և մսուրին մէջ պառկած մանուկը։ 17—Ու երբ տեսան, իմացուցին այն խօսքին վրայով որ այս մանուկին համար իրենց զրուցուեցաւ։ 18—Ու ամէնը որ կը լսէին, կը զարմանային այն բաներուն վրայ զորանք հովիւները իրենց կը զրուցէին։ 19—Բայց Մարիամ այս ամէն բաները կը պահէր, ու իր սրտին մէջ կը մտածէր։ 20—Ու հովիւները դարձան, կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստուած այն ամէն բաներուն համար զորանք լսեցին ու տեսան, ինչպէս իրենց զրուցուած էր։

21—Ու երբ ութ օրերը լման եղան մանուկը թլփատելու, անոր անունը Յիսուս դրուեցաւ, որ հրեշտակին կոչուած էր՝ դեռ ինք հղէ որովայնին մէջ չկրացած։

22—Ու Մովսէսի օրէնքին համեմատ երբ թանձց մաքրութեան օրերը լմնցան, երուսաղէմ տարին զանիկա Տէրոջը առնելու, 23—(Ինչպէս գրուած է Տէրոջը օրէնքին մէջ, թէ Ամէն արու որ արգանդ կը բանայ՝ Տէրոջը սուրբ բսուի.) 24—Ու Տէրոջը օրէնքին մէջ բսուածին պէս բնծայ տալու՝ զոյգ մը տատրակ կամ ազաւնիի երկու ձագ։ 25—Ու ահա երուսաղէմի մէջ մարդ մը կար, որուն անունը Սիմէոն էր, ու այն մարդը արդար ու աստուածավախ էր, և Իսրայէլի մխիթարութեանը կը սպասէր. ու Սուրբ Հոգին անոր վրայ էր։ 26—Ու անոր յայտնուած էր Սուրբ Հոգիէն թէ մահ պիտի չտեսնէ, մինչև Տէրոջը Օծեալը տեսնէ։ 27—Ու Հոգիով տաճարը եկաւ. ու երբ ծնողքը բերին Յիսուս մանուկը, որպէս ուած կ'օրհնէին ու կ'ըսէին, 28—Ինք ալ զանիկա իր գիրկը առաւ, և օրհնեց զԱստուած ու ըսաւ, 29—Ալ հիմա, ով Տէր, արձակես քու ծառադ խաղաղութիւնով քու խօսքիդ համեմատ. 30—Վասն զի իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ, 31—Զոր բոլոր ժողովրդներուն առջև պատրաստեցիր, 32—Լոյս մը հեթանոսները լուսաւորելու, և փառք քու Իսրայէլ ժողովրդիդ։ 33—Ու Յովսէփ ու անոր մայրը զարմացած կին այն բաներուն վրայ՝ որոնք անոր համար կը խօսուէին։ 34—Ու Սիմէոն օրհնեց զանոնք, և անոր մօրը Մարիամի բսաւ, Ահա այս հանդիսը Իսրայէլի մէջ շատ մարդոց իյնալուն ու ելլելուն համար, ու հակառակութեան նպատակ մը ըլլալու համար կեցած է. 35—(Ու քու սրտիդ ալ թուր մը պիտի անցնի.) որպէս զի շատերուն սրտերուն խորհուրդներ յայտնուին։

36—Ու հոն եր Աննա մարգարէն, Փանուէլի ազիկը, Ասերի ցեղէն. տարիքա իր օրերը շատ անցուցած եր, էրկանը հետ եօթը տարի կենալով իր կուսութեան ժամանակէն, 37—Ու որբեւայրի եր գրեթէ ութսունչորս տարուան, որ տաճարէն չէր զատուեր, հապա ծոմով և աղօթքով Աստուծոյ ծառայութիւն կ'ընէր գիշեր ու ցորեկ։ 38—Ու ասիկա նոյն ժամուն եկաւ, ու Տէրոջը գոհութիւն կու տար, ու անոր վրայով կը խօսէր այն ամէնուն՝ որոնք երուսաղէմի մէջ փրկութեան կը սպասէին։

39—Ու երբ ամէն բան կատարեցին Տէրոջը օրէնքին համեմատ, դարձան Գալիլեա գաւառն իրենց նազարէթ քաղաքը։ 40—Ու մանուկը կը մեծնար ու հզօրով կը զօրանար իմաստութիւնով լեցուած, ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր։

41—Ու անոր ծնողքը ամէն տարի զատկի տօնին երուսաղէմ կ'երթային։ 42—Ու երբ տասնիկա տասներկու տարեկան եղաւ, տօնին սովորութեանը պէս երբ անոնք երուսաղէմ եկան, 43—Ու երբ այն օրերը լմնցուցին ու դարձան, Յիսուս մանուկը երուսաղէմ մնաց. և Յովսէփ ու անոր մայրը չէին գիտեր. 44—Հապա կարծե-

*Ոմանք, զանիկա
†Ոմանք, անոր

լով թէ անիկա Համբարձնեբուն հետ է, ու կ՚օրհնէ զանիկա Էլիշա ապդականներուն եւ Ճանչցողներուն մէջ։ **15**—Ու երբ չգտան, նորէն Երուսաղէմ դարձան զանիկա փնտռելու։ **16**—Ու եղան ան երեք օրէն հոգիի աստիճարին մէջ գտան զանիկա, որ վարդապետներուն հետ նստեր էր, անոնց մեկ կ՚րնէր ու անոնց քարկ կը հարցնէր։ **17**—Ու ան ալ անոր ա՛կանջ դնողները կը զարմանային անոր խոստովանութեանը ու պատասխանելուն վրայ։ **18**—Ու երբ տեսան զանիկա, ապշած մնացին։ Եւ անոր մայրը բսաւ անոր, Որդեակ, ինչո՞ւ համար մեզի այսպէս ըրիր։ ահա քու հայրդ ու ես խիստ վշտացած քեզ կը փնտռէինք, **19**—Ու բսաւ անոնց, Չիս ինչո՞ւ կը փնտռէիք։ չէի՞ք դիտեր թէ ինծի պէտք է որ իմ Հօրս *տունը ըլլամ։ **50**—Ու անոնք չհասկցան այն խօսքը զոր իրենց ըսաւ։ **51**—Ու իջաւ անոնց հետ ու գնաց Նազարէթ, և անոնց հնազանդ էր։ բայց անոր մայրը այս ամէն խօսքերը իր սրտին մէջ կը պահէր։

52—Ու Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու հասակով, և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք էր ընդունում։

Գլ. Գ

Տիբերիոս կայսրին թագաւորութեան տասնըհինգերորդ տարին, Պոնտոսի Պիղատոս Հրէաստանի վրայ կառավարութիւն ըրած տեսնը, ու Հերովդէս Գալիլեացւոց վրայ չորրորդապետութեան տեսնը, և անոր եղբօրը Փիլիպպոսի Իտուրացւոց և Տրաքոնացւոց երկրին վրայ չորրորդապետութեան տեսնը, և Լիւսանիայի Աբիլինացւոց վրայ չորրորդապետութեան տեսնը, **2**—Ու Անննայի ու Կայիափայի գահանայապետութեան տեսնը Աստուծոյ խօսքը եղաւ Զաքարիայի որդւոյն Յովհաննէսի վրայ անապատին մէջ։ **3**—Ու անիկա եկաւ Յորդանանու բոլոր կողմերը, և ապաշխարութեան մկրտութիւն կը քարոզէր մեղքերու թողութեան համար. **4**—ինչպէս Եսայի մարգարէին խօսքերուն գիրքին մէջ գրած է՝ բանով, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները ւղիղ ընեցէք։ **5**—Ամէն ձոր պիտի լեցուի, և ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ, և ծուռը պիտի ւղիղ ըլլայ, և խոտոտ բերան տեղերը հարթ ճամբաներ պիտի ըլլան, **6**—ու ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը պիտի տեսնէ։

7—Ու իրմէ մկրտուելու ելլող ժողովրդներուն բսաւ, Իժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի գալու բարկութենէն փախչիլ։ **8**—Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պտուղներ բերէք, և մի սկսիք ձեր ներսիդին ըսել Մենք մեզի հայր՝ Աբրահամ ունինք, քանի որ կ՚ըսեմ ձեզի որ Աստուած կարող է այս քարերէն Աբրահամի որդիներ հանել։ **9**—Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քով կը դրուած ըլլայ։ ամէն ծառ որ բարի պտուղ չբերէր, կը կտրուի ու կրակը կը ձգուի։ **10**—Ու ժողովրդները կը հարցնէին իրեն ու կ՚ըսէին, Ուրեմն ինչ ընենք։ **11**—Պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Ով որ երկու հանդերձ ունի, թող հինը չունեցողին տայ. և ով որ կերակուր ունի, նոյնպէս ընէ։ **12**—Մաքսաւորներ ալ եկան մկրտուելու, ու բսին անոր, Վարդապետ, մենք ինչ ընենք։ **13**—Ան ալ բսաւ անոնց, Ձեզի հրամայուածէն աւելի բան չպահանջէք։ **14**—Զինուորներն ալ կը հարցնէին անոր ու կ՚ըսէին, Ե՛ւ մենք ինչ ընենք։ բսաւ անոնց, Մէկէն մի հարստահարէք. և *սբ՛ո՛ւ էշ զրպարտութիւն մի ընէք, ու ձեր թոշակով բաւականացէք։

15—Երբ ժողովուրդը կը սպասէր, և ամէնը իրենց սիրտերուն մէջ կը մտածէին Յովհաննէսի համար՝ Թէ գ՚ուշ արդեօք Քրիստոսը, **16**—Յովհաննէս պատասխան տուաւ ամենուն ու բսաւ, Ես ձեզ ջրով կը մկրտեմ, բայց ինծմէ աւելի զօրաւորը կու գայ, որուն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ, անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով և կրակով։ **17**—Որուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ, ու ցորենը իր ամբարը պիտի ժողվէ, և յարդը չմարող կրակով պիտի այրէ։ **18**—Ուրիշ շատ բաներ ալ կը քարոզէր՝ ժողովուրդը յորդորելով։

19—Բայց Հերովդէս չորրորդապետը անկէ յանդիմանուելով իր *եղբօր կնոջ, Հերովդիայի, համար, և բոլոր չարութիւններուն համար, զորոնք Հերովդէս գործեց, **20**—Այն ամենուն վրայ դարձալ ալ աւելցուց, որ Յովհաննէսը բանտի մէջ գոցեց։

21—Ու երբ մկրտուեցաւ բոլոր ժողովուրդը, և Յիսուս ալ մկրտուելով՝ աղօթք կ՚ընէր, երկինք բացուեցաւ, **22**—Ու Սուրբ Հոգին մարմնաւոր երեւոյթով աղաւնիի պէս անոր վրայ իջաւ, ու երկինքէն ձայն մը եկաւ, որ կ՚ըսէր, Դուն ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ։

23—Ու ինքն Յիսուս սկսեր էր գործել երեսուն տարեկան ըլլալ, որ (ինչպէս կը կարծուէր) որդին էր Յովսէփի, որ Հեղիի, որ Մատաթի, **24**—Որ Ղեւիի, որ Մեղքիի, որ Յաննէի, որ Յովսէփի, **25**—Որ Մատաթիայի, որ Ամովսի, որ Նաւում, որ Եսղիի, որ Նագգէի, **26**—Որ Մաաթի, որ Մատաթիայի, որ Սեմէիի, որ Յովսէփի, որ Յուդայի, **27**—Որ Յովհաննայի, որ Բեսայի, որ Զորաբաբէլի, որ Սաղաթիէլի, որ Ներիի, **28**—Որ Մեղքիի, որ Ադդիի, որ Կովսամի, որ Եղմոդագի, որ Երի, **29**—Որ Յովսէի, որ Եղիազարի, որ Յովրիմի, որ Մատաթի, որ Ղեւիի, **30**—Որ Սիմէոնի, որ Յուդայի, որ Յովսէփի, որ Յովնանի, որ Եղիակիմի, **31**—Որ Մելեայի, որ Մայնանի, որ Մատաթայի, որ Նաթանի, որ Դաւիթի, **32**—Որ Յեսսեի, որ Ովբէթի, որ Բոոսի, որ Սաղմանի, որ Նաասոնի, **33**—Որ Ամինադաբի, որ Արամի, որ Եսրոնի, որ Փարէսի, որ Յուդայի, **34**—Որ Յակոբի, որ Իսահակի, որ Աբրահամի, որ Թարայի, որ Նաքովրի, **35**—Որ Սերուգի, որ Իագաւի, որ Փալէկի, որ Եբերի, որ Սալայի, **36**—Որ Կայնանի, որ Արփաքսադի, որ Սեմի, որ Նոյի, որ Ղամէքի, **37**—Որ Մաթուսալայի, որ Ենովքի, որ Յարէդի, որ Մաղաղիէլի, որ Կայնանի, **38**—Որ Ենոսի, որ Սէթի, որ Ադամի, որ Աստուծոյ։

Գլ. Դ

Եւ Յիսուս Հոգւով Սրբով լեցուած՝ Յորդանանէ գարձաւ, ու Հոգիին անապատը տարուեցաւ, **2**—Ու քառասուն օր Սատանայէ փորձուեցաւ. ու այն օրերը բան մը չկերաւ, և այն երեսուն լմնցուելէն ետեւ անօթեցաւ։

3—Ու Սատանայ բսաւ անոր, Եթէ Աստուծոյ Որդին ես, բսէ այդ քարին որ հաց ըլլայ։ **4**—Ու Յիսուս պատասխան տուաւ անոր ու բսաւ, Գրուած է թէ Ոչ միայն հացով կ՚ապրի մարդ, հապա Աստուծոյ ամէն խօսքովը։

5—Ու Սատանայ բարձր լեռ մը հանելով զանիկա, աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր մէջէն։ **6**—Ու Սատանայ բսաւ անոր, Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի տամ, վասն զի ինծի յանձնուած է, և որուն որ ուզեմ՝ կու տամ զանիկա։ **7**—Ուրեմն եթէ դուն իմ առջեւս երկրպագութիւն ընես, ամէնը քեզի ըլլայ։ **8**—Ու Յիսուս պատասխան տուաւ անոր ու բսաւ, *Գրուած է թէ Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես։

9—Ու զանիկա տարաւ Երուսաղէմ ու տաճարին աշտարակին վրայ կացնեցուց, ու բսաւ անոր, Եթէ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ասկէ վար ձգէ. **10**—Վասն զի գրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար որ քեզ պահեն. **11**—Ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ, որ չքլլայ թէ ոտքդ քարի զարնես։ **12**—Ու Յիսուս պատասխան տուաւ ու բսաւ անոր, Բսուած է թէ Քու Տէր Աստուածդ չփորձես։ **13**—Ու երբ Սատանայ ամէն փորձութիւնը կատարեց, տասն մը էտ կեցաւ անկէ։

14—Ու Յիսուս Հոգիին զօրութիւնովը Գալիլիա գարձաւ, ու անոր համբաւը

*Կամ, էրշիներուն դէմ

*Ո՛մանք, եղբօր Փիլիպպոսի

*Ո՛մանք, նախ գնաս, Սատանայ, վասն զի գրուած

բաւը այն գաւառին ամէն կողմերը սարած ուեցաւ։ 15—Եւ ինք անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցնէր, ու ամէնէն կը փառաւորուէր։

16—Ու եկաւ Նազարէթ, ուր ինք սնած էր, և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժողովարանը, ու ելաւ որ կարդայ։ 17—Ու սուրբ անոր Եսայի մարգարէին գիրքը։ ու երբ գիրքը բացաւ, գտաւ այն տեղը՝ ուր գրած էր։ 18—Տէրոջը Հոգին իմ վրաս է։ *Վասն զի զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս զրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, 19—Գերիներուն ազատութիւն և կայերուն տեսութիւն քարոզելու, հարստահարութիւն կրողները ազատ թող տալու, Տէրոջը ընդունելի տարին քարոզելու։ 20—Ու գիրքը գոցելով՝ սպասաւորին ու նստաւ։ և ժողովարանը եղողներուն ամէնը աչքերնին անոնց վրայ կը նայէին։ 21—Ու սկսաւ անոնց ըսել, Այսօր այս գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին։ 22—Ու ամէնը անոր վրայ կը վկայէին, ու կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, ու կ'ըսէին, Արդեօք Յովսէփի որդին չէ՞։ 23—Ու բաւ անոնց, Իրաւ որ դուք ինծի պիտի բսէք այս առակը, Բժիշկ, քու անձդ բժշկէ։ որչափ բաներ լսեցինք որ Կափառնայումի մէջ եղան, հոս ալ քու քաղաքիդ մէջ։ 24—Ու բաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թէ Մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի չէ։ 25—Ու արդարև կ'ըսեմ ձեզի, Թէ Շատ սրբևարիներ կային Եղիայի օրերը Իսրայէլի մէջ, երբ երեք տարի ու վեց ամիս երկինք գոցուեցաւ, այնպէս որ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ։ 26—Բայց Եղիա անոնցմէ մէկը՛ն չղրկուեցաւ, հապա միայն Սիդոնացւոց Սարեփթա քաղաքին մէջ որբևարի կնոջ մը։ 27—Ու շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ մարգարէին ատենը, ու անոնցմէ մէկը չմաքրուեցաւ, հապա միայն Նեեման Ասորի։ 28—Ու ժողովարանին մէջ ամէնն ալ բարկութիւնով լեցուեցան՝ երբ այս խօսքերը լսեցին։ 29—Ու ելան զանիկա քաղաքէն դուրս հանեցին, ու տարին զանիկա մինչև այն լեռանը ցցուած ծայրը, որուն վրայ իրենց քաղաքը շինուած էր, որպէս զի զանիկա բարձր տեղէն վար ձգեն։ 30—Բայց ինք անոնց մէջէն անցաւ գնաց,

31—Ու իջաւ Գալիլեայի կափառնայում քաղաքը, ու շաբաթ օրերը կը սորվեցնէր անոնց։ 32—Ու կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ, վասն զի իշխանութիւնով էր անոր խօսքը։ 33—Ու ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիղծ դեւի ոգի ունէր, ու մեծ ձայնով մը աղաղակեց 34—Ըսելով, Թող տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նազովրեցի։ միթէ մեզ կորսնցնելո՞ւ եկար. գիտեմ քեզ ով ես։ Աստուծոյ Սուրբը։ 35—Ու Յիսուս սաստկացաւ անոր՝ բսելով, Պապանձէ ու ել ատկէ. ու դեւը զանիկա Նէղ-ը ֆշռռուէցուցած միջոցը գետինը զարկաւ, և ելաւ անկէ, ու վնաս մը չտուաւ անոր։ 36—Ու զարմանք եկաւ ամէնուն վրայ, և իրարու հետ կը խօսէին ու կ'ըսէին, Այս ի՞նչ խօսք է, որ իշխանութիւնով և զօրութիւնով կը հրամայէ պիղծ ոգիներուն, ու կ'ելլեն։ 37—Ու անոր համբաւը սարածուեցաւ շրջակայ գաւառին ամէն տեղերը։

38—Ու ժողովարանէն ելլելով՝ Սիմոնի տունը մտաւ։ 39—Սիմոնի զոքանչն ալ սաստիկ ջերմով կը տանջուէր, ու անոր համար աղաչեցին իրեն։ 40—Ու Յիսուս անոր վրայ կանգնելով՝ սաստկացաւ ջերմին, որ թողուց զանիկա. և չուտ մը ելաւ ու անոնց սպասաւորութիւն կ'ընէր։

41—Ու արեւին մարը մտած ատենը՝ ամէն անոնք որ ունէին տեսակ տեսակ ցաւերով հիւանդներ, իրեն բերին զանոնք. ինք ալ անոնցմէ ամէն մէկուն վրայ ձեռք դնելով՝ բժշկեց զանոնք։ 42—Գիւեր ալ կ'ելլէին չառերէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին Թէ Դուն ես Քրիստոս, Աստուծոյ Որդին. և ինք կը սաստէր ու թող չէր տար անոնց որ խօսին, վասն զի գիտէին Թէ ինք Քրիստոսն է։

*Կամ, անոր համար

43—Ու ըսաւ ցորեկ եղաւ, ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և ժողովրդները կը փնտռէին զանիկա. եկան մինչև անոր, ու կը սթափէին զանիկա որ իրենցմէ չերթայ։ 44—Բայց անիկա բաս անոնց, Պէտք է ինծի որ ուրիշ քաղաքներու ալ Աստուծոյ Թագաւորութիւնը քարոզեմ, քանզի այս բանին համար ղրկուած եմ։ 45—Ու Գալիլեայի ժողովարաններուն մէջ կը քարոզէր։

Գլ. Ե

Ու եղաւ որ երբ ժողովրդը անոր բոլորտիքը դիզուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար, ինք ալ Գեննեսարէթի ծովակին քով կեցեր էր։ 2—Ու տեսաւ երկու նաւեր որ ծովակին քով կեցեր էին, և ձկնորսները անոնց մէջէն ելած՝ ուրականները կը լուային։ 3—Ինք այն նաւերէն մէկուն մէջ մտաւ որ Սիմոնին էր, և աղաչեց անոր որ քիչ մը ցամաքին դէմ մէջ տանի. և նստելով՝ նաւուն մէջէն ժողովրդներուն կը սորվեցնէր։

4—Ու երբ խօսելէն դադարեցաւ, բաս Սիմոնի, Առջի տար Դ-ը դէպ ի խորութիւն, և ուրականներդ ձգեցէք յորս։ 5—Ու Սիմոն պատասխան տալով՝ բաս անոր, Վարդապետ, բոլոր գիշերս աշխատեցանք ու բան մը չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար ուրականը ձգեմ։ 6—Ու երբ այս ըրին, խիտ շատ ձուկեր ժողվեցին միջը, ու իրենց ուրականը կը պատռուէր։ 7—Ու աշք կ'ընէին մէկ նաւուն մէջ եղող իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց. և եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, մինչև որ ընկղմելու մօտ էին։ 8—Սիմոն Պետրոս երբ տեսաւ, Յիսուսի ծունկերուն իյնալ ու բսաւ, Տէր, իմ քովէս մեկնիր գնա, քանզի ես մեղաւոր մարդ մըն եմ։ 9—Վասն զի ապշութիւնը պատեց զանիկա և անոր հետ եղող ամէնը՝ այն իրենց բռնած ձուկերուն օրսին համար։ 10—Նոյնպէս ալ Զեբեդէոսի որդիները, Յակոբոս և Յովհաննէս, որոնք Սիմոնի ընկերներն էին. ու Յիսուս բաս Սիմոնի, Մի վախնար, ասկէ հետև մարդոց որսորդ պիտի ըլլաս։ 11—Ու նաւերը ցամաքը հանեցին՝ ամէն բան թողուցին ու անոր հետևեցան գացին։

12—Ու եղաւ որ երբ ինք քաղաքի մը մէջ էր, ահա մարդ մը բորոտութիւնով լեցուն՝ երբ Յիսուս տեսաւ, երեսի վրայ իյնալով աղաչեց անոր ու բսաւ, Տէր, եթէ ուզես՝ կրնաս զիս մաքրել։ 13—Ու Յիսուս իր ձեռքը երկնցնելով գպաւ անոր, ու բսաւ, Կ'ուզեմ, մաքրուէ։ և չուտ մը բորոտութիւնը անկէ գնաց։ 14—Ու ինք պատուիրեց անոր որ մարդո՛ չբսէ, հապա, Գնա, գնա քեզ քահանային ցուցուր, և մաքրութեանդ բաժան ուր, անոնց վկայութիւն ըլլալու համար։ 15—Ու անոր վրայով խօսքը աւելի կը սարածուէր ու չատ ժողովրդներ կը ժողովուէին մարիկ ընելու, և ուռով իրենց հիւանդութիւններէն բժշկուելու։ 16—Ու ինք անապատ տեղեր կը քաշուէր և աղօթք կ'ընէր։

17—Ու եղաւ որ օր մը ինք կը սորվեցնէր, ու փարիսեցիներ և օրինաց վարդապետներ նստած էին, որոնք Գալիլեայի ու Հրէաստանի ու Երուսաղէմի բոլոր գիւղաքաղաքներէն ժողվուած էին. ու Տէրոջը զօրութիւնը Ն-էյ էր զանոնք բժշկելու։ 18—Ու ահա քանի մը մարդիկ անդամալոյծ մարդ մը մահիճովը բերին, և ներսը կը փնտռէին թէ ի՛նչպես զանիկա ներս խոթեն ու դնեն անոր առջև։ 19—Ու երբ բազմութենէն ե-ջ-էյ չէին գտներ՝ որ անկ ներս խոթեն զանիկա, տանիքին վրայ ելան, և զանիկա կղմինդրներուն միջէն մահիճովը մէջտեղը Յիսուսի առջև իջեցուցին։ 20—Ու անիկա տեսնելով անոնց հաւատքը՝ բսաւ անոր, Ով մարդ, քու մեղքերդ քեզի ներուած են։ 21—Ու դպիրները ու փարիսեցիները սկսան խորհիլ ու բսել, Ո՞վ է սպիկա՝ որ հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղքերու թողութիւն տալ, բայց միայն Աստուած։ 22—Ու Յիսուս իմանալով անոնց խորհուրդները՝ պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Սիրտերնուդ մէջ ի՞նչ կը խորհիք։ 23—Ո՞րը աւելի դիւրին է, Քու մեղքերդ քեզի ներուած

են՝ ըսի լը, թէ նոքա ու քալէ՝ ըսելը։ 24—Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն ընելու, (ըսաւ անդամալոյծին,) ինձի կ'ըսեմ, նոքա մահճակ առ ու առնդ գնա։ 25—Ան ալ իսկոյն անոնց առջև եղաւ, ու վրան առաւ ինչ բանի վրայ որ պառկած էր, և գնաց իր տանը, ու Աստուծոյ փառք կու տար։ 26—Ու ամենը ապշած մնացին, ու Աստուծոյ փառք կու տային, և վախով լեցուած՝ կ'ըսէին թէ Այսօր նորանման բաներ տեսանք։

27—Ու այս բաներէն ետև ելաւ դուրս, ու տեսաւ մաքսատուր մը, որուն անունը Ղեւի էր որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ետևէս եկուր։ 28—Ան ալ թողուց ամենը և ելաւ գնաց անոր ետևէն։ 29—Ու Ղեւի անոր մեծ կոչնական մը ըրաւ իր տանը մէջ. և շատ բազմութիւն կար մաքսատուրներու և ուրիշներու՝ որ անոնց հետ սեղան նստեր էին։ 30—Ու անոնց գրիչները ու փարիսեցիները արամնդ կ'ընէին անոր աշակերտներուն ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար մաքսատուրներուն և մեղաւորներուն հետ կ'ուտէք ու կը խմէք։ 31—Ու Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն։ 32—Ես արդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները՝ ապաշխարութեան։

33—Անոնք ալ բսին անոր, Ինչո՞ւ, Յովհաննէսի աշակերտները շատ անգամ ծոմ կը պահեն և աղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցիներուն եւ ինչերը. և քու կիներդ կ'ուտեն ու կը խմեն։ 34—Անիկա ալ բսաւ անոնց, Կրնա՞ք հարսնիքին տղոցը ծոմ պահել տալ՝ քանի որ փեսան իրենց հետ է։ 35—Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան իրենցմէ վերցուի, ապա այն օրերը ծոմ պիտի պահեն։ 36—Առակ մըն ալ բսաւ անոնց, Թէ Մէկը չգգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ. եթէ ոչ՝ այն նորը պատառատած ալ կ'ընէ, ու հինցածին հետ ալ չհամաձայներ այն նոր լաթին եղած կտորը։ 37—Ու մէկը նոր գինին հին տիկերու մէջ չդներ. եթէ ոչ՝ նոր գինին *տիկերը կը պատռէ, ինք կը թափի ու տիկերը կը կորսուին. 38—Հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է, ու երկուքն ալ կը պահուին։ 39—Ու մէկը հին ելլելէն ետև անմիջապէս նորը չուզեր, քանզի կ'ըսէ թէ Հինը աւելի ախորժելի է։

Գլ. Զ

1 Եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օր իր ինք արտերուն միջէն կ'անցնէր, և իր աշակերտները ցորեխէ հասկը փրցնելով՝ ձեռքերնուն մէջ կը չփէին ու կ'ուտէին։ 2—Ու փարիսեցիներէն ոմանք բսին անոնց, Ինչ կ'ընէք, զոր արժան չէ ընել շաբաթ օրը։ 3—Ու Յիսուս պատասխան տալով՝ անոնց բսաւ, Չ՞ք կարդացեր դուք Դաւիթի ըրածը, երբ անօթեցաւ ինք և անոնք որ իրեն հետ էին, 4—Ի՛նչպես անիկա Աստուծոյ տունը մտաւ, և առաջաւորաց թէեան հացերը առաւ ու կերաւ, և տուաւ անոնց ալ որ իրեն հետ էին, զորոնք ՚ոչ՚՚՚ օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահանաներուն։ 5—Ու բսաւ անոնց, Որդին մարդոյ շաբաթին ալ տէրն է։

6—Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինք ժողովարանը մտաւ ու կը սորվեցնէր. և հոն մարդ մը կար որուն աջ ձեռքը չորցած էր։ 7—Ու դպիրները ու փարիսեցիները անոր կը սպասէին՝ թէ շաբաթ օրը չ՚՚՚ կը բժշկէ՞, որպէս զի ամբաստանութեան ՚՚՚ի հ գտնեն անոր դէմ։ 8—Իսկ ինք գիտնալով անոնց խորհուրդները, բսաւ այն մարդուն որուն ձեռքը չորցած էր, Ելիր, մէջտեղը կայնէ. ան ալ ելաւ կայնեցաւ։ 9—Այն ատեն Յիսուս բսաւ անոնց, Ձեզի ՚՚՚ հարցնեմ. Շաբաթ օրը ի՞նչ արժան է. բարի՞ ընել թէ չարիք ընել, հոգի մը ապրեցնե՞լ թէ մեռցնել։ 10—Ու չուբլանակի ամենուն վրայ նայելով՝ բսաւ անոր, Ձեռքդ երկնցուր. ան ալ այնպէս բրաւ, ու անոր ձեռքը ողջացաւ միւսին պէս։ 11—Ու անոնք կատաղութեամբ լեցուեցան, ու իրարու հետ կը խօսէին թէ ի՞նչ ընեն Յիսուսի։

*Ոմանք, հին տիկերը

12 Ու եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթք ընելու, ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով անցուց։ 13—Ու երբ առաւօտ եղաւ, կանչեց իր աշակերտները, ու անոնցմէ տասներկուսը հոգի ընտրեց, զորոնք առաքեալ ալ անուանեց. 14—Սիմոնը՝ զոր Պետրոս ալ անուանեց, և անոր եղբայրը Անդրեասը, Յակոբոսը ու Յովհաննէսը. 15—Փիլիպոսը և Բարթողոմէոսը, Մատթէոսը և Թովմասը, Ալփեոսեան Յակոբոսը և Նախանձայոյզ բսած Սիմոնը, 16—Յակոբոսի եղբ՚՚՚ը Յուդան, և Իսկարիովթացի Յուդան, որ և մատնիչ եղաւ։ 17—Ու անոնց հետ իջնելով՝ տափարակ տեղ մը կայնեցաւ, նաև իր աշակերտներուն ժողովը՝ ու մեծ բազմութիւն մը ժողովրդեանը՝ բոլոր Հրէաստանէ ու Երուսաղէմէ և Տիւրոսի ու Սիդոնի ծովեզերքէն. 18—Որոնք եկան անոր խ՚՚՚ը մաքի ընելու, ու իրենց հիւանդութիւններէն բժշկուելու. և պիղծ ոգիներէն նեղութիւն կրողներն ալ ելան ու կը բժշկուէին. 19—Ու բոլոր ժողովուրդը կ'ուզէր իրեն դպչիլ, վասն զի զօրութիւն կ'ելլէր իրմէ ու ամենը կը բժշկէր։

20—Ու ինք իր աչքերը դէպ իր աշակերտները վերցուց ու բսաւ, Երանի՛ ձեզ աղքատներուդ, վասն զի ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը։ 21—Երանի՛ ձեզ որ հիմա անօթի էք, վասն զի պիտի կշտանաք. երանի՛ ձեզ որ հիմա կու լաք, վասն զի պիտի խնդաք։ 22—Երանի՛ է ձեզի՝ երբ մարդիկ ձեզ ատեն, ու երբ ձեզ էլ՚՚՚ ընէ՚՚՚ մերժեն ու նախատեն, և ձեր վրայով գէշ անուն հանեն Որդւոյ մարդոյ պատճառաւ։ 23—Ուրախ եղէք դուք այն օրը ու ցնծացէք, որ ահա ձեր վարձքը շատ է երկինքը. վասն զի իրենց հայրերը այդպես կ'ընէին մարգարէներուն։ 24—Բայց վա՛յ ձեզի հարուստներուդ, վասն զի ձեր միխթարութիւնը առած էք։ 25—Վա՛յ ձեզի որ կուշտ էք, վասն զի պիտի անօթենաք. վա՛յ ձեզի որ հիմա կը ծիծաղիք, վասն զի սուգ պիտի ընէք ու լաք։ 26—Վա՛յ ձեզի երբ *մարդիկ ձեր վրայով ազէկ խօսին, վասն զի իրենց հայրերը այդպես կ'ընէին սուտ մարգարէներուն։

*Ոմանք, բոլոր մարդիկ

27—Բայց կ'ըսեմ ձեզի որ մտիկ կ'ընէք, Սիրեցէք ձեր թշնամիները, ձեզ ատողներուն բարի ըրէք։ 28—Ձեզ անիծողները օրհնեցէք, ձեզի նեղութիւն տանողներուն համար աղօթք ըրէք։ 29—Ան որ քու մէկ ծնօտիդ կը զարնէ, միւսն ալ մատեցուր անոր. և ան որ քու վերարկուդ քեզմէ կը հանէ, մի արգիլեր անկէ չսպիտակ ալ։ 30—Այն ամենուն որ քեզմէ կ'ուզէ՝ տուր, ու քու բաներդ առնողէն չ՚՚՚ պահանջեր։ 31—Ու ինչպես կ'ուզէք որ մարդիկ ձեզի բնեն, դուք ալ անոնց այնպէս բրէք։ 32—Ու եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները։ 33—Ու եթէ դուք ձեզի բարի բնողներուն բարի բնէք, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն։ 34—Ու եթէ այնպիսի մարդոց փոխ տաք՝ որոնցմէ յոյս ունիք առնելու, ի՞նչ շնորհ կ'ունենաք. վասն զի մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կու տան, որպէս զի նոյն չափով հետ առնեն։ 35—Հապա սիրեցէք դուք ձեր թշնամիները, ու բարի ըրէք, և փոխ առէք առանց փոխարէնի մը ապասելու, և ձեր վարձքը շատ պիտի ըլլայ, ու բարձրելոյն որդիները պիտի ըլլաք. վասն զի անիկա բարեբար է ապերախտներուն ու չարերուն։ 36—Ուրեմն գթած եղէք, ինչպես ձեր Հայրն ալ գթած է։ 37—Մի դատեր, ու պիտի չդատուիք. մի դատապարտեր, ու պիտի չդատապարտուիք. ներեցէք, ու ձեզի պիտի ներուի. 38—Տուէք, ու ձեզի պիտի տրուի. ազնիւ չափով, կոխուած, ցնցուած, լիսկելցուած պիտի տրուի ձեր գոգը. քանի որ այն չափովը որով դուք կը չափէք, ձեզի պիտի չափուի։

39—Առակ մըն ալ բսաւ անոնց, Միթէ կոյրը կուրին կրնա՞յ առաջնորդութիւն ընել. չէ՞ որ երկուքն ալ

փոսը պիտի իյնան։ 40—Ա՛կակերոը իր վարդապետէն մեծ չէ, բայց ամէն կատարեալ վարժուածը իր վարդապետին պէս կ՚ըլլայ։

41—Ու ինչո՞ւ փս եղբօրդ աչքին մէջի չիւղը կը տեսնես, ու փս աչքիդ մէջի գերանին չես նայիր։ 42—Կամ ինչպէս կրնաս ըսել փս եղբօրդ, Եղբայր, Թող սուր ար աչքիդ մէջի չիւղը հանեմ. և դուն փս աչքիդ մէջի գերանը չես տեսներ. կեղծաւոր, առաջ փս աչքիդ գերանը հանէ, ու եօթը պարզ պիտի տեսնես փս եղբօրդ աչքին մէջի չիւղը հանելու։ 43—Քանզի չկայ բարի ծառ մը որ չար պտուղ բերէ, ու ալ չար ծառ մը որ բարի պտուղ բերէ։ 44—Ուստի ամէն ծառ իր պտուղին կը ճանչցուի. քանզի փս չբերեն թուզ չեն քաղեր, ու մորենիէն խաղող չեն ժողվեր։ 45—Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարի բիւն կը բղխէ, և չար մարդը իր սրտին չար գանձէն չար բիւն կը բղխէ. վասն զի իր բերանը սրտին առկացը բէն կը խօսի։

46—Ու ինչո՞ւ զիս Տէր, Տէր, կը կոչէք ու բան բանիս չէք կատարեր։ 47—Ամէն ամէնը որ ինծի կու գայ և իմ խօսքերս կը լսէ ու զանոնք կը կատարէ, ձեզի յայտնեմ Թէ ար՛ա՛, կը նմանի։ 48—Անիկա տան չինող մարդու մը կը նմանի, որ փորեց ու խորունկցուց, ու հիմը վէմի վրայ դրաւ. և յորժամ եղած առուն գետ զարկաւ այն տանը, ու չկրցաւ զանիկա շարժել, վասն զի վէմի վրայ հաստատուած էր։ 49—Բայց ան որ կ՚ետէսը կը լսէ ու չկատարէ, կը նմանի այն մարդուն՝ որ հողի վրայ առանց հիմի տուն կը չինէ. որ գետ զարկաւ, և չուտ մը փլաւ, ու այն տանը կործանումը մեծ էր։

Գլ. Է

Ո երբ իր բոլոր խօսքերը ժողովուրդին ականջներուն էտէնը լմնցուց, մտաւ Կափառնայում։ 2—Ու հարբապետի մը ծառայ ծանր հիւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր անոր։ 3—Երբ Իիսուսի վրայով լսեց, Հրեաներէն ղՀ ծերերը զրկելով՝ աղաչեց անոր որ գայ իր ծառան ապրեցնէ։ 4—Անոնք ալ եկան Իիսուսի և թախանձանօք կ՚աղաչէին անոր ու կ՚ըսէին Թէ Անիկա արժանի է որ այս ընէրէ պիտի բնաւ, 5—Վասն զի մեր ազգը կը սիրէ, ու ժողովարանը անիկա չինեց մեզի։ 6—Ու Իիսուս անոնց հետ գնաց. երբ տանէն չատ հեռու չէր, հարիւրապետ զրկեց անոր ղՀ բարեկամներ, ու ըսաւ անոր, Տէր, մի յոգնիր, վասն զի ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակ մտնես։ 7—Անոր համար ես ինքզինքս ալ արժանի չսեպեցի քեզի գալու. հապա խօսքով զրուցէ, և իմ ծառաս պիտի բժշկուի։ 8—Վասն զի ես ալ իշխանութեան տակ դրուած մարդ մըն եմ, ու իմ հրամանիս տակ զինուորներ ունիմ. և ասոր կ՚ըսեմ, Գնա, ու կ՚երթայ. և միւսին՝ Թէ եկուր, ու կու գայ. և ծառայիս՝ Թէ Այս բանը ըրէ, ու կ՚ընէ։ 9—Իիսուս այս բաները լսելով՝ զարմացաւ անոր վրայ. և իր հետևէն գացող ժողովուրդին դարձաւ ու ըսաւ, Ձեզի կ՚ըսեմ, որ Իսրայէլի մէջ անդամ այսչափ հաւատք չգտայ։ 10—Ու պատգամաւորները տունը դարձան, և հիւանդ ծառան առողջացած գտան։

11—Ու եղաւ որ հետևեալ օրը փոքրիկ մը կ՚երթար, որուն անունը Նային էր, և անոր հետ կերթային իր աշակերտներէն չատերը ու մեծ բազմութիւն։ 12—Ու երբ քաղաքին դրանը մտեցաւ, ահա մեռել մը դուրս կը հանէին, իր մօր միակ հասիկ ազան. և անիկա որբեւայր էր, ու քաղաքին չատ ժողովուրդը անոր հետ էր։ 13—Ու Տէրը զանիկա տեսնելով՝ խղճաց անոր վրայ, ու ըսաւ անոր, Մի լար։ 14—Ու մտնելով՝ դագաղին դպաւ, ու տանողները կանգ առին. և ըսաւ, Ով պատանի, քեզի կ՚ըսեմ, Ելիր։ 15—Ու մեռելը ելաւ նստաւ ու սկսաւ խօսիլ. ու տուաւ զանիկա իր մօրը։ 16—Ու ամէնն ալ վախով բռնուեցան ու զԱստուած կը փառաւորէին՝ ըսելով Թէ Մեծ մարգարէ մը ելեր է մեր մէջ. և Թէ Աստուած իր ժողովուրդին այցելութիւն բրաւ։ 17—Ու այս ձայնը անոր վրայով բոլոր Հրէաստան եղաւ, ու բոլոր չրջակայ տեղերը։

18—Ու Յովհաննէսի պատմեցին իր աշակերտները այս ամէն բաներուն վրայով։ 19—Յովհաննէս ալ իր աշակերտներէն երկուքը իրեն կանչեց, և ղՆոյնս Իիսուսի ղրկեց՝ ըսելով, Դուն ան ես որ գալու էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ 20—Ու այն մարդիկը եկան անոր ու ըսին, Յովհաննէս մկրտիչը մեզ ղրկեց քեզի, ու կ՚ըսէ, Դուն ան ես որ գալու էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ 21—Ու նոյն ժամուն չատերը բժշկեց էրէնց հիւանդութիւններէն ու չարահոգիներն ու չար աչքերէն, ու չատ կոյրերու տեսութիւն շնորհեց։ 22—Ու Իիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Գացէք Յովհաննէսի պատմեցէք ինչ որ տեսաք ու լսեցիք. որ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ՚առնեն, ապրտաներուն աւետարան կը քարոզուի։ 23—Ու երանի՛ անոր որ իմ վրայովս չդայթակղիր։

24—Ո երբ Յովհաննէսի ղրկած մարդիկը գացին, Իիսուս սկսաւ ժողովուրդին ներուն բսել Յովհաննէսի համար, Ինչ տեսնելու ելար անապատին մէջ. եղի՞գ մը հովին չարժուած. 25—Հապա ինչ տեսնելու ելար. փափուկ հանդերձներ հագած մարդ մը. ահա անոնք որ փառաւոր հագուստներով ու փափկութեան մէջ են, թագաւորական պալատներն են։ 26—Հապա ինչո՞ւ տեսնելու ելար. մարգարէ՞. այո, կ՚ըսեմ ձեզի, մարգարէէ մըն ալ աւելի։ 27—Վասն զի սորիկա է՝ որու համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ փս երեսիդ առջեւէն, որ փս ճամբադ պիտի պատրաստէ փս առջեւէդ։ 28—Քանզի կ՚ըսեմ ձեզի, կիներէն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտիչէն մեծ մարգարէ չկայ. սակայն Աստուծոյ թագաւորութեանը մէջ ամէնէն պզտիկը անկէ մեծ է։

29—Ու բոլոր ժողովուրդը ու մաքսաւորները երբ լսեցին, արդարացուցին զԱստուած, որ Յովհաննէսի մկրտութիւնովը մկրտուեցան։ 30—Բայց փարիսեցիները և օրինականները իրենց անձին դէմ Աստուծոյ խորհուրդը ա-

31—*Ուստի ասո՛ր նմանցնեմ այս ազգին մարդիկը, և որո՛ւ կը նմանին. 32—Կը նմանին տղոց, որոնք չուկաները նստելով՝ իրարու կը կանչեն ու կ՚ըսեն, Փող հնչեցուցինք ձեզի, ու չպարեցիք. ողբ կարգացինք ձեզի, ու չլացիք։ 33—Վասն զի Յովհաննէս մկրտիչ եկաւ, ոչ հաց կ՚ուտէր և ոչ գինի կը խմէր, ու կ՚ըսէք, Դև կայ անոր մէջը։ 34—Որդին մարդոյ եկաւ, կ՚ուտէ ու կը խմէ, և կ՚ըսէք, Ահա ուտող և արբեցող մարդ մը, մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ։ 35—Ու իմաստութիւնը արդարացաւ իր բոլոր որդիներէն։

36—Փարիսեցիներէն մէկը կ՚ապաչէր անոր որ իրեն հետ հաց ուտէ. ան ալ փարիսեցիին տունը մտաւ ու սեղան նստաւ։ 37—Ու ահա քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար. երբ իմացաւ Թէ անիկա փարիսեցիին տունը սեղան նրստած է, չիշ մը անուշահոտ իւղ բերաւ. 38—Ու հետի կոշիկն անոր առջեւը ետ կեցեր՝ կու լար, և արցունքովը սկսաւ անոր առջերը քրջել, ու իր գլխուն մազերովը կը սրբէր, և կը համբուրէր անոր առջերը, ու իւղով կ՚օծէր։ 39—Ու երբ տեսաւ փարիսեցին, որ զանիկա հրաւիրեր էր, կ՚ըսէր իր միտքին մէջ, Եթէ սա մարգարէ բլլար, պիտի գիտնար Թէ ո՛վ և ինչպէս կին է իրեն դպղոր, վասն զի մեղաւոր է։ 40—Ու Իիսուս պատասխան տուաւ ու բսաւ անոր, Սիմո՛ն, քեզի բան մը ունիմ ըսելու. ան ալ բսաւ, Ըսէ, վարդապետ. և ըսաւ, 41—Փոխատու մը երկու պարտական ունէր. մէկը հինգ հարիւր դահեկան պարտք ունէր, ու միւսը յիսուն։ 42—Ու որովհետև հատուցանելու ի՛րաւ-ինչ չունէին, երկուքին ալ շնորհեց. հիմա զրուցէ, Անոնցմէ ո՞րը աւելի պիտի սիրէ զանիկա։ 43—Պատասխան տուաւ Սիմոն ու բսաւ, Ինծի այսպէս կ՚երեւնայ, Թէ որուն որ շատ շնորհեց. ան ալ բսաւ անոր, Ուղիղ դատեցիր։ 44—Ու դառնալով դէպ ի այն կինը՝ բսաւ Սիմոնի,

*Ո՞ր-ն-է, ու Տէրը բսաւ, Ուստի

կր անանե՞ս այս կինը. ես քու տունդ մտայ, գուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա էդ արցունքովը ոտքերս թրջեց, և իր *մազերովը սրբեց։ 45—Դուն ինծի համբոյր մը չտուիր, բայց ասիկա հա՛ մանելէս ի վեր ոտքերս համբուրելէն չդադարեցաւ։ 46—Դուն իմ գլուխս ձէթով չօծեցիր, բայց ասիկա իմ ոտքերս անուշահոտ իւղով օծեց։ 47—Ասոր համար կ'ըսեմ քեզի, Անոր շատ են ասոր չատ մեղքերը, վասն զի շատ սիրեց. բայց որու որ փչ կը ներուի, անիկա փչ կը սիրէ։ 48—Ու ըսաւ անոր, Քու մեղքերդ ներուած են։ 49—Ու անոր հետ սեղան նստողները սկսան իրենց մէջ ըսել, Ո՞վ է ասիկա որ մեղքերու թողութիւն ալ կուտայ։ 50—Ու ինք ըսաւ կնոջը, Քու հաւատքդ քեզ †փրկեց, գնա խաղաղութեամբ։

Գլ. Ը

Ու եղաւ որ անկէ ետև ա՛լ ինք քաղաքի քաղաք ու գիւղ գիւղ պտրտելով՝ կը քարոզէր, և Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւետաբաներ, ու տասներկու իրեն հետ էր։ 2—Նաև քանի մը կիներ՝ որոնք չար ոգիներէ ու հիւանդութիւններէ բժշկուած էին. Մարիամ որ Մագդաղենացի կ'ըսուէր, ուրկէ եօթը դեւ ելած էր, 3—Ու Յոհաննա, Հերովդէսի սանր վերակացուին Քուզասի կինը, ու Շուշան և չատ ուրիշներ, որոնք իրենց ստացուածքովը ։անոր ծառայութիւն կ'ընէին,

4—Ու երբ մեծ բազմութիւն ժողվուեցաւ և չատ քաղաքներէ իրեն եկան, առակով մը ըսաւ անոնց, 5—Սերմ ցանող մը ելաւ իր սերմը ցանելու. ու ցանած ատենը մէկ քանին ճամբուն քով ինկաւ և ոտքէ տակ կոխուեցաւ, ու երկինքի թռչունները կերան զանիկա։ 6—Ու ուրիշը ապառաժի վրայ ինկաւ, ու բուսածին պէս չորցաւ, հողին հիւթ չունենալուն համար։ 7—Ու ուրիշը փշերու մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետ բուսնելով, խեղդեցին զանիկա։ 8—Ու ուրիշը ապկ հողի մէջ ինկաւ, ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ։ Երբ այս բաները կը ըսուցներ, կ'ազազակէր, Ան որ ըսելու ականջ ունի՝ թող լսէ։

9—Ու իր աշակերտները կը հարցնէին իրեն՝ ըսելով Թէ ի՞նչ պիտի ըլլայ այն առակը։ 10—Ան ալ ըսաւ, Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն առակներով կ'ըսուի։ որպէս զի տեսնելով՝ չտեսնեն, և լսելով՝ չիմանան։

11—Արդ առակը այս է։ Սերմը Աստուծոյ խօսքն է։ 12—Ու ճամբուն քովինները անոնք են՝ որ կը լսեն, ու ետքը Սատանայ կու գայ, անոնց սրտէն կը հանէ խօսքը, որպէս զի չըլլայ Թէ հաւատան ու փրկուին։ 13—Ու ապառաժին վրայինները անոնք են՝ որ երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը, բայց արմատ չունին. տանն մը կը հաւատան, ու փորձութեան ժամանակ կը հեռանան։ 14—Ու փուշերուն մէջ ինկածը անոնք են՝ որ կը լսեն, բայց հոգերով ու հարստութիւնով և այս կեանքին ցանկութիւններովը զրաւած րլլալով՝ կը խեղդուին և անպտուղ կ'ըլլան։ 15—Իսկ ապկ հողի մէջ ընտրեալները անոնք են՝ որ բարի և յօժար սրտով լսելով խօսքը կ'ընդունին ու համբերութիւնով պտուղ կ'ուտան։

16—Ձեռք մէկը որ ճրագ վառէ ու ամանի մը տակ կամ մահճին ներքև դնէ, հապա աւանակի վրայ կը դնէ, որպէս զի ներս մտնողները լոյսը տեսնեն։ 17—Վասն զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտնուի, ոչ ալ գաղտուկ բան մը որ պիտի չգիտցուի ու երեան չելլէ։ 18—Ուստի նայեցէք Թէ ի՛նչպէս կը լսէք. քանզի ով որ ունի՝ անոր պիտի տրուի, և ով որ չունի՝ այն ալ զոր ինք կը կարծէ Թէ ունի, անկէ պիտի առնուի։

19—Ու անոր մայրը ու եղբայրները իրեն եկան, ու բազմութենէն չէին կրնար անոր քով երթալ։ 20—Ու անոր իմացուցին՝ ըսելով, Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, ու քեզ տեսնել կ'ուզեն։ 21—Ու անիկա պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Իմ մայրս ու իմ եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու զանիկա կը կատարեն։

22—Ու եղաւ որ օր մը նաւը մտաւ ինք և իր աշակերտներն ալ, ու ըսաւ անոնց, Ծովակին միւս կողմը անցնինք. և ճամբայ ելան։ 23—Ու երբ նաւով կ'երթային, ինք քնացաւ. ու հովի փոթորիկ մը իջաւ ծովակին վրայ, և նաւը կը լեցուէր, ու իրենք վտանգի մէջ կ'ին։ 24—Մօտեցան, արթնցուցին զանիկա ու ըսին, Վարդապետ, վարդապետ, մե՛ռ կը կորսու ինք. ան ալ ելաւ սաստեց հովին ու յորձրուն խառնվածքեանը, և հանգարտեցաւ, ու խաղաղութիւն եղաւ։ 25—Ու ըսաւ անոնց, Ո՞ր է ձեր հաւատքը. և անոնք վախի մէջ ինկած՝ զարմացան, ու իրարու կ'ըսէին, Արդեօք ո՞վ է ասիկա՝ որ հովին ու յորձրին ալ հրաման կու տայ, և կը հնազանդին ասոր։

26—Ու նաւելով իջան *Գադարացւոց երկիրը, որ Գալիլեայի գիմացի կողմն է։ 27—Ու ինք ցամաքը ելլելուն պէս՝ այն քաղաքին մարդ մը ելաւ դիմացը, որուն ներսը չատ տարիէ ի վեր դեւեր կային. ու անիկա հանդերձ չէր հագներ, ոչ ալ տան մէջ կը բնակէր, հապա գերեզմաններու մէջ։ 28—Ու Յիսուսը տեսնելով՝ աղաղակեց ու ինկաւ անոր առջև, ու բարձր ձայնով ըսաւ, Դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս, Որդի Աստուծոյ Բարձրելոյն. կ'աղաչեմ քեզի, զիս մի տանջեր։ 29—(Վասն զի հրամայեց պիղծ ոգիին որ այն մարդէն ելլէ. որովհետև չատ տարի էր որ զանիկա յափշտակեր էր, և անիկա չղթաներով ու ոտնակապերով կապուած կը պահուէր, բայց կապերը կը կտրտէր ու դեւէն անապատը կը քշուէր) 30—Հարցուց անոր Յիսուս ու ըսաւ, Անունդ ի՞նչ է. ան ալ ըսաւ, Լեգէոն. վասն զի չատ դեւեր մտեր էին անոր ներսիդին։ 31—Ու կ'աղաչէին անոր որ անդունդը երթալու հրաման

*Ո՛մանք, Գերգեսացւոց

չընէ իրենց։ 32—Ու այն տեղ չատ խոզերու երամակ մը կար, որոնք լեռը կ'արածէին. ու աղաչեցին անոր որ իրենց հրաման տայ անոնց մէջ մտնելու. և հրաման տուաւ անոնց։ 33—Ու դեւերը մարդէն ելլելով՝ խոզերուն մէջ մտան, և երամակը գահավէժ տեղէն ծովակը վազեց ու խեղդուեցաւ։ 34—Ու խոզարածները այս եղած բանը տեսնելով փախան, ու պատմեցին քաղաքը ու ագարակները։ 35—Ու *ելան եղած բանը տեսնելու, ու եկան Յիսուսի, և գտան այն մարդը՝ ուրկէ դեւերը ելեր էին, հագուած ու խելքը վրան Յիսուսի ոտքերուն քով նստած, ու վախցան։ 36—Ու անոնք որ տեսեր էին, պատմեցին անոնց Թէ ի՛նչպէս դիւահարը ազատեցաւ։ 37—Ու Գադարացւոց չրջակայ տեղերը գանուազ բոլոր բազմութիւնը կ'աղաչէր անոր, որ իրենցմէ երթայ, վասն զի մեծ վախով բռնուած էին. ան ալ նաւը մանելով՝ նա գարձաւ։ 38—Ու այն մարդը՝ ուրկէ դեւերը ելեր էին, կ'աղաչէր անոր որ հետը ըլլայ, բայց Յիսուս արձակեց զանիկա ու ըսաւ, 39—Դարձիր քու տունդ, ու պատմէ ինչ որ Աստուած քեզի ըրաւ. ան ալ գնաց, ու բոլոր քաղաքին մէջ քարոզեց ինչ որ Յիսուս իրեն ըրաւ։

40—Ու երբ Յիսուս նա գարձաւ, ժողովուրդը զանիկա ընդունեց, վասն զի ամէնը անոր կը սպասէին։ 41—Ու ահա Յայրոս անունով մարդ մը եկաւ, ու ինք ժողովարանին իշխանն էր. և Յիսուսի ոտքը իյնալով՝ կ'աղաչէր անոր որ իր տունը մտնէ. 42—Վասն զի մէկ հատիկ աղջիկ մը ունէր, գրեթէ տասներկու տարեկան, որ մեռնելու մօտ էր. ու երբ անիկա կ'երթար, բազմութիւնը կը նեղէր զանիկա։

43—Ու կին մը, որ տասներկու տարիէ ի վեր արիւնի աղտաութեան մէջ էր, ու իր բոլոր ունեցածը բժիշկներուն ծախք րրած էր, և իրեն ոչ մէկին բժշկուելու ձար մը եղած էր, 44—եկաւ էն մտնելով՝ անոր հանդերձին փղանգիկն դպաւ, և իսկոյն իր արիւնին հոսումը դադրեցաւ։ 45—Ու Յիսուս ըսաւ, Ո՞վ է ան որ ինծի դպաւ. երբ ամէնը կ'ուրանային, Պետրոս,

*Ո՛մանք, Դիմեցին

ու անոր հետ եղողները, վարդապետ, բաղմաթիւնը փեղ կը հրէ ու կը նեղէ, ու կ'բսէ թէ Ո՞վ ինծի գալ։ 46— Ու Յիսուս բսաւ, Մէկը ինծի գալու, քանզի խնացայ որ ինծմէ զօրաթիւն մը ելաւ։ 47—Երբ տեսաւ կինը որ ինքը ծածկեալ չկրնացաւ, դողալով եկաւ ու անոր առջև ինկաւ, և բոլոր ժողովուրդին առջև անոր պատմեց թէ ի՛նչ քանի համար անոր դպեր էր, և թէ ի՛նչպէս ինք իսկոյն բժշկուեցաւ։ 48—Ու Յիսուս անոր, Դուստեր, ապրիկ, քու հաւատովդ փեղ բժշկեց, գնա խաղաղութեամբ։

49—Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ ու բսաւ անոր, Աղջիկդ մեռաւ, ալ վարդապետը մի յոգնեցներ։ 50—Բայց Յիսուս երբ լսեց, պատասխան տուաւ անոր ու բսաւ, Մի վախնար, միայն հաւատա, ու պիտի ապրի։ 51—Ու երբ տունը մտաւ, ուրիշ մէկը ինք չուռաւ որ մտնէ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը ու աղջկան հայրը ու մայրը։ 52—Ամէնն ալ կուլային ու կ'ողբային անոր վրայ։ և ինք բսաւ, Մի լաք, անիկա մեռած չէ, հապա կը քնանայ։ 53—Ու անոնք ծաղր կ'ընէին զանիկա, քանզի գիտէին թէ մեռաւ։ 54—Ու ինք ամէնն ալ դուրս հանելով բռնեց անոր ձեռքէն ու կանչեց՝ բսելով, Աղջիկ, ելիր։ 55—Ու անոր հոգին դարձաւ, ու իսկոյն ոտք եկաւ։ և Յիսուս հրաման բրաւ որ ուտելիք տան անոր։ 56—Ու անոր ծնողքը սաստած Յիսուսին։ և ինք անոնց պատմելու որ եղած բանը մարդո՛ւ չպրուցեն։

Գլ. Թ

Եւ իր տասուերկու *աշակերտները մէկտեղ իրեն կանչելով՝ անոնց զօրութիւն ու իշխանութիւն տուաւ բոլոր դեւերուն վրայ և ախտերը բժշկելու։ 2—Ու զանոնք ղրկեց որ Աստուծոյ թագաւորութիւնը քարոզեն ու հիւանդները բժշկեն։ 3—Ու բսաւ անոնց, Ճամբու համար բան չառնէք, ոչ գաւազան և ոչ պարկ, ոչ հաց և ոչ ասակ, ոչ ալ կրկին հանդերձ ունենաք։ 4—Ու ո՛ր տուն որ մտնէք, հոն մնացէք ու անկէ ելլէք։ 5—Ու անոնք որ ձեզ չեն ընդունիր, երբ այն քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին անդամ թօթուեցէք՝ իրենց դէմ վկայութիւն ըլլալու համար։ 6—Ու անոնք ելան ու գեղէ գեղ կը պարտէին, և ամէն տեղ ուսուցանելով կը քարոզէին ու բժշկութիւն կ'ընէին։

7—Ու Հերովդէս չորրորդապետը անոր բոլոր գործերը լսելով տարակուսանքի մէջ կը։ որովհետև ոմանք բսած էին 8—Թէ Յովհաննէս յարութիւն առաւ մեռելներէն, և ոմանք՝ Թէ Եղիա յայտնուեցաւ, և ուրիշներն ալ՝ Թէ Առաջուան մարգարէներէն մէկը յարութիւն առաւ։ 9—Ու Հերովդէս բսաւ, Յովհաննէսը ես գլխատեցի, հապա ասկա ո՞վ պիտի ըլլայ, որուն վրայով այսպիսի բաներ կը լսեմ։ ու կ'ուզէր որ տեսնէ զանիկա։

10—Ու առաքեալները դարձան ու պատմեցին անոր ինչ որ ըրին։ և առաւ զանոնք, առանձին անապատ տեղ մը քաղաքեցաւ քաղաքի մը քովՙ որուն անունը Բեթսայիդա էր։ 11—Ու ժողովուրդները երբ իմացան՝ անոր ետևէն գացին, ու զանոնք ընդունելով՝ կը խօսէր անոնց Աստուծոյ թագաւորութեանը վրայով։ և որոնք որ բժշկութեան կարօտ էին՝ կը բժշկէր։

12—Ու երբ օրը սկսաւ իրիկուան մօտենալ, տասուերկուքը եկան ու ըսին անոր, Արձակէ ժողովուրդները, որպէս զի չրջակայ գեղերը ու ագարակները երթան իջեւանին ու կերակուր գտնեն, վասն զի հոս անապատ տեղ մըն ենք։ 13—Ըսաւ անոնց, Դուք ուտելիք տուեցէք անոնց։ անոնք ալ ըսին, Մենք հինգ նկանակին ու երկու ձուկին աւելի բան չունինք, եթէ չերթանք այդ բոլոր ժողովուրդին համար կերակուր չգնենք։ 14—(Քանզի հինգ հազարի չափ այր մարդիկ կային։) Ու բսաւ իր աշակերտներուն, Անոնք դաս դաս, յիսուն յիսուն, նստեցուցէք։ 15—Ու այնպէս ըրին ու ամէնն ալ նստեցուցին։ 16—Ես այն հինգ նկանակը ու երկու ձուկը առնելով ու դէպ ի երկինք նայելով օրհնեց զանոնք ու կարեց, և կու տար աշակերտներուն, որպէս զի ժողովրդին առջև դնեն։ 17—Ու կերան ու կշտացան ամէնն ալ, ու ուելցած կտորանոցները տասուերկու կողով վերցուցին։

18—Ու եղաւ որ երբ ինք առանձին աղօթք կ'ընէր, աշակերտներն ալ իրեն հետ էին, և հարցուց անոնց՝ բսելով, ժողովուրդները ինծի համար ո՞վ կ'բսեն Թէ եմ։ 19—Անոնք ալ պատասխան տալով՝ բսին, Ոմանք՝ Յովհաննէս մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիա, ուրիշներ ալ՝ Թէ Առաջուան մարգարէներէն մէկը յարութիւն առեր է։ 20—Ու ինք բսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'բսէք Թէ եմ։ պատասխան տուաւ Պետրոս ու բսաւ, Աստուծոյ Քրիստոսը։ 21—Ու ինք սաստիկ պատուիրեց անոնց որ այս բանը մարդո՛ւ չպրուցեն։ 22—Ու բսաւ Թէ Պէտք է որ Որդին մարդոյ չատ չարչարանքներ կրէ, և ծերերէն ու քահանայապետներէն և դպիրներէն մերժուի ու սպաննուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ։ 23—Ու ամէնուն կ'բսէր, Եթէ մէկը կ'ուզէ իմ ետևէս գալ, թող իր անձը ուրանայ, և ամէն օր իր խաչը վերցնէ, ու իմ ետևէս գայ։ 24—Վասն զի ով որ իր անձը ապրեցնել, պիտի կորնչցնէ զանիկա. և ով որ ինծի համար իր անձը կորնչցնէ, պիտի ապրեցնէ զանիկա։ 25—Քանզի ի՞նչ կը չահի մարդ մը՝ եթէ բոլոր աչխարհը վաստկի, և իր անձը կորնչցնէ կամ վնաս բնէ։ 26—Վասն զի ով որ զիս և իմ խօսքերս չ---նէ ամօթ պիտի սեպէ՝ երբ գայ իր ու Հօրը և սուրբ հրեշտակներուն փառքովը։ 27—Բայց ճշմարիտ կ'բսեմ ձեզի, որ հոս կայնողներէն մէկ քանիները կան՝ որանք մահուան համր պիտի չտանեն, մինչև տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը։

28—Ու եղաւ որ այս խօսքերէն գրեթէ ութ օր ետքը՝ Պետրոսը ու Յովհաննէսը և Յակոբոսը առնելով, լեռը ելաւ աղօթք ընելու։ 29—Ու երբ ինք աղօթք կ'ընէր, իր երեսին տեսքը ուրիշ կերպ մը եղաւ, ու իր հագուստը շերմակ — փայլուն եղաւ։ 30—Ու ահա երկու մարդիկ իրեն հետ կը խօսէին, որոնք Մովսէս ու Եղիա էին, 31—Փառքով երեւցած, և անոր ---ն [illegible] ելլելուն վրայով կը խօսէին, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր։ 32—Բայց Պետրոս և անոր հետ եղողները քունով ծանրացած էին, ու երբ արթնցան, տեսան անոր փառքը և այն երկու մարդիկը որոնք անոր քով կեցեր էին։ 33—Ու եղաւ որ երբ անոնք պատուեցան անոր քովէն, Պետրոս բսաւ Յիսուսի, Վարդապետ, ապրիլ է որ հոս կենանք, ու երեք խրտիճ չինենք. մէկը քեզի՛ և մէկը Մովսէսի՛ ու մէկը Եղիայի, վասն զի չէր գիտեր ի՛նչ կը խօսէր։ 34—Ու քանի որ անիկա այս բաները կը խօսէր, ամպ մը եկաւ ու անոնց վրայ հովանի եղաւ, և ամպին ատկ մտած աներնին վախցան։ 35—Ու ձայն մը եղաւ ամպէն՝ բսելով, Աիրիկ է իմ սիրելի Որդիս, ասոր մտիկ ըրէք։ 36—Ու երբ այն ձայնը եղաւ, Յիսուս միայնակ գտնուեցաւ։ Ու իրենք լուռ կեցան, և իրենց տեսածներէն այն օրերը մարդո՛ւ բան մը չպատմեցին։

37—Ու եղաւ որ հետեւեալ օրը, երբ անոնք լեռնէն վար իջան, շատ ժողովուրդ անոր դիմաց ելաւ։ 38—Ու ահա ժողովուրդին մէջէն մարդ մը ազաղակեց ու բսաւ, Վարդապետ, կ'աղաչեմ քեզի, նայէ իմ որդիիս, քանզի իմ մէկ հատիկս է։ 39—Ու ահա ոգի մը կը բռնէ զանիկա, ան ալ յանկարծ կը կանչ բառէ, և զանիկա ցնցելով կը փրփրեցնէ, ու հազիւ կը զատուի անկէ՝ չարչարելով ընելով զանիկա։ 40—Ու քու աչակերտներուդ աղաչեցի որ հանեն զանիկա. ու չկրցան։ 41—Պատասխան տուաւ Յիսուս ու բսաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ ու ձեզի հանդուրժեմ. հոս բեր քու որդիդ։ 42—Ու երբ դեռ կը մօտենար, դեւը զանիկա գետինը զարկաւ ու սաստիկ ցնցեց։ 43—Իսկ Յիսուս սաստեց պիղծ ոգիին, և բժշկեց տղան ու զանիկա իր հօրը տուաւ։ 44—Ու ամէնը կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ։

*Ոմանք, առաքեալները

Ու քանի որ ամէնը կը զարմանային Յիսուսի ըրած բոլոր գործերուն վրայ, անոնք ըսաւ իր աշակերտներուն, Դուք այս խօսքերը ականջներնիդ դրէք, վասն զի Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը։ 45—Բայց անոնք չէին իմանար այն խօսքը, և անոնցմէ ծածկուած էր որպէս զի չհասկնան, ու կը վախնային այն խօսքին համար իրեն հարցնելու։

46—Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ՝ թէ արդեօք իրենց մէջ ո՞վ է մեծ։ 47—Իսկ Յիսուս անոնց սրտին խորհուրդը իմանալով՝ տղայ մը առաւ ու զանիկա իր քով կացնեցուց, 48—Ու ըսաւ անոնց, Ով որ այս տղան իմ անունովս կ'ընդունի՝ զիս կ'ընդունի. և ան որ զիս կ'ընդունի՝ անիկա զիս ղրկողը կ'ընդունի. վասն զի ան որ ձեր ամէնուն մէջ պզտիկ է, անիկա մեծ պիտի ըլլայ։

49—Պատասխան առաւ Յովհաննէս ու ըսաւ, Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր, և զանիկա արգիլեցինք, վասն զի մեզի հետ չգտարար։ 50—Ու Յիսուս ըսաւ անոր, Մի արգիլէք, քանզի ան որ *մեզի հակառակ չէ, մեր՝ կողմն է։

51—Ու եղաւ որ երբ իր †ալեբռնելու օրերը կը կատարուէին, ինք ալ †հաստատ որոշեց՝ Երուսաղէմ երթալ։ 52—Ու իր երեսին առջեւէն պատգամաւորներ ղրկեց. և երբ գացին, Սամարացւոց մէկ գեղը մտան որպէս զի իրեն համար պատրաստութիւն մը ընեն։ 53—Ու չընդունեցին զանիկա, վասն զի անոր երեսը դէպ ի Երուսաղէմ երթալու էր։ 54—Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, տեսան, ըսին, Տէր, կ'ուզե՞ս որ բանենք, ու երկինքէն կրակ իջնէ և սատկեցնէ զանոնք, ինչպէս Եղիա ալ ըրաւ։ 55—Ու դարձաւ յանդիմանեց զանոնք՝ ըսելով, Չէք գիտեր թէ ի՛նչ հոգիի տէր էք դուք։ 56—†Վասն զի Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորնչցու-

*Ոմանք, Ձեզի հակառակ չէ, Ձեր
†Յոյն. երեսը հաստատեց
†Ոմանք չսկսին

նելու, հապա փրկելու։ և ուրիշ գեղ մը գացին։

57—Ու երբ անոնք ճամբան կ'երթային, մէկը ըսաւ անոր, Տէր, քու եասնէդ գամ՝ ուր որ երթաս։ 58—Ու Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որիներ ունին, ու երկինքի թռչունները բոյներ, բայց Որդին մարդոյ տեղ չունի, ուր իր գլուխը դնէ։

59—Ուրիշի մըն ալ ըսաւ, Եկուր իմ եասնէս։ ան ալ ըսաւ, Տէր, ինծի հրամայէ առաջ երթամ իմ հայրս թաղեմ։ 60—Յիսուս ըսաւ անոր, Թող մեռելները մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները, բայց դուն գնա Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ։

61—Ուրիշ մըն ալ ըսաւ, Տէր, ես քու եասնէդ պիտի գամ, բայց ինծի հրամայէ առաջ իմ տանս մէջ եղողներուն հրաժարական ղրկեմ տամ։ 62—Յիսուս ըսաւ անոր, Ոյ մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու եասին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար է։

Գլ. Ժ

Ա յս բաներէն եասև Տէրը ուրիշ եօթանասունն ալ որոշեց, և զանոնք իր առջեւէն երկու երկու ղրկեց բոլոր քաղաքները ու տեղերը՝ ուր ինք պիտի երթար։ 2—Ու կ'ըսէր անոնց, Հունձքը շատ է, ու մշակները քիչ. ուստի հունձքին Տէրոջը ազաչեցէք որ մշակներ հանէ իր հունձքին։ 3—Գացէք. ահա ես ձեզ կը ղրկեմ իբրեւ գառներ գայլերու մէջ։ 4—Ձեզի հետ քսակ մի առնէք, ոչ ալ պարկ, և ոչ կօշիկներ, ու համրան մարդո՛ւ բարեւ մի ասէք։ 5—Ու ո՛ր տուն որ մտնէք՝ առաջ ըսէք, *Խաղաղութիւն այս տան։ 6—Ու եթէ հոն †բարեւի արժանաւոր մարդ՝ կայ, ձեր բարեւը պիտի հանգչի անոր վրայ, ապա թէ ոչ՝ ձեզի պիտի դառնայ։ 7—Ու այն տանը մէջ մնացէք, ու անոնցմէ կերէք և խմեցէք, վասն զի մշակը իր վարձքին արժանի է. տանէ տան մի փոխուիք։ 8—Ու ո՛ր քաղաք որ մտնէք

*Յոյն. Խաղաղութիւն
†Յոյն. խաղաղութեան

ու ձեզ ընդունին, ինչ որ ձեր առջեւ դրուի՝ կերէք. 9—Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները, և ըսէք անոնց, Առաջուստ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է։ 10—Բայց ո՛ր քաղաք որ մտնէք ու ձեզ չընդունին, անոր հրապարակները երթալով՝ ըսէք, 11—Ա՛նն փոշին ալ որ ձեր քաղաքէն մեր ոտքերուն փակած է, ձեզի կը թօթվենք. միայն թէ զայս գիտցած որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է։ 12—Ձեզի Ը՛րսեմ որ այն օրը Սոդոմի դրութիւնը աւելի դիւրին պիտի ըլլայ՝ քան թէ այն քաղաքին։ 13—Վա՛յ քեզ, Բեթսայիդա, վա՛յ քեզ, Քորազին, վասն զի եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային այն հրաշքները որոնք ձեր մէջ եղան, չատեցմէ ժամանակ ու մոխիրի մէջ նստելով ապաշխարած պիտի ըլլային։ 14—Բայց դատաստանին օրը Տիւրոսի ու Սիդոնի աւելի դիւրին պիտի ըլլայ քան թէ ձեզի։ 15—Ու դուն, Կափառնայում, որ մինչեւ երկինք բարձրացած եաս, մինչեւ դժոխք պիտի իջնես։ 16—Ան որ ձեզի մտիկ կ'ընէ, ինծի մտիկ կ'ընէ. և ան որ ձեզ կը մերժէ, զիս կը մերժէ. և ան որ զիս կը մերժէ, զիս ղրկողը կը մերժէ։

17—Ու եօթանասուն ալէներորդը դարձան ուրախութեամբ ու ըսին, Տէր, քու անունովդ դեւերն ալ մեզի կը հնազանդին։ 18—Ու ըսաւ անոնց, Սատանան փայլակի պէս երկինքէն վար իջնած կը տեսնէի։ 19—Ահա ձեզի իշխանութիւն կու տամ օձերու ու կարիճներու և թշնամիին բոլոր զօրութեանը վրայ կոխկռտելու. ու բնաւ բան մը ձեզի պիտի չվնասէ։ 20—Բայց զատ անոր վրայ մի ուրախանաք որ ոգիները ձեզի կը հնազանդին, հապա ուրախացէք որ ձեր անունները երկինքը գրուած են։

21—Ա՛յն նոյն ժամուն Յիսուս Հոգիով ուրախացաւ ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկինքի և երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր խնասուններէն և գիտուններէն, ու տղոց յայտնեցիր. այո, ով Հայր, վասն զի քու առջեւդ այսպէս հաճելի եղաւ։ 22—Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս, ու մէ՛կը չգիտեր թէ ո՛վ է Որդին, բայց միայն Հայրը. և թէ ո՛վ է Հայրը, բայց միայն Որդին, և ան՝ որու Որդին կ'ուզէ յայտնել։

23—Ու ասկէ դարձեալ՝ առանձին ըսաւ, Երանի՛ այն աչքերուն՝ որոնք ձեր տեսածները կը տեսնեն. 24—Քանզի կ'ըսեմ ձեզի, որ շատ մարգարէներ և թագաւորներ ուզեցին ձեր տեսածները տեսնել, ու չտեսան, և ձեր լսածները լսել, ու չլսեցին։

25—Ու ահա օրէնսգէտ մը ելաւ, ու զանիկա փորձելով՝ ըսաւ, Վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ 26—Անիկա ալ ըսաւ անոր, Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է, ի՞նչպէս կը կարդաս։ 27—Պատասխան տուաւ անիկա ու ըսաւ, Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ ու քու բոլոր անձովդ և քու բոլոր զօրութեանովդ ու քու բոլոր միտքովդ, և քու ընկերդ քու անձիդ պէս։ 28—Ու ինք ըսաւ անոր, Շիտակ պատասխան տուիր. արիւ՛ր եղիր ու պիտի ապրիս։ 29—Իսկ անիկա ուզելով ինքզինքը արդարացնել, ըսաւ Յիսուսի, Բայց իմ ընկերս ո՞վ է։ 30—Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Մարդ մը Երուսաղէմէ Երիքով կ'իջնէր, ու աւազակներու յանձ եկաւ, որոնք մերկացուցին զանիկա ու վիրաւորելով կիսամեռ թողուցին ու գացին։ 31—Ու պատահեցաւ որ քահանայ մը այն ճամբայէն կ'իջնէր, ու զանիկա տեսնելով՝ անդին կողմէն անցաւ։ 32—Նոյնպէս Ղեւտացի մըն ալ այն տեղ հասնելով՝ գնաց ու տեսաւ, և անդին կողմէն անցաւ։ 33—Բայց Սամարացի մը որ ճամբորդութիւն կ'ընէր, եկաւ անոր քով, ու զանիկա տեսնելով խղճաց. 34—Ու մօտեցաւ, անոր վէրքերը փաթթեց, վրան ձէթ և գինի թափելով, ու իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ զանիկա պանդոկ մը, և անոր հոգ տարաւ։ 35—Ու հետեւեալ օրը երբ կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդոկապետին տուաւ և անոր ըսաւ, Հոգ տար տարի, ու ինչ որ աւելի ծախք ընես, ես գառնալուս քեզի կը վճարեմ։ 36—Հիմա այն երեքէն ո՞րը քեզի կ'երեւնայ ընկեր ըլլալ աւազակներուն

յԵ-ուշ իյնոգին։ 37—Եւ անիկա բսաւ, Ան որ ողջմտիթիւն բրաւ։ Ան ատեն Յիսուս բսաւ անոր, Դնա, դուն ալ այնպէս բրէ։

38—Եւ եղաւ որ երբ անոնք կ'երթային, ինք գիւղ մը մտաւ, և կին մը, Մարթա անունով, զանիկա իր տունը ընդունեց։ 39—Եւ անիկա քոյր մը ուներ, որուն անունը Մարիամ էր, որ նստաւ Յիսուսի ոտքերուն քով նսաւ, ու անոր խօսքերը մտիկ կ'ընէր։ 40—Բայց Մարթա չատ ապասարքիթիւնով զբաղած էր։ Եկաւ անոր քով ու բսաւ, Տէր, քու հոգդ չէ՞, որ իմ քոյրս զիս մինակ թողուց ապասարքիթեան մէջ։ ուսաի ասոր զրուցէ որ ինծի օգնէ։ 41—Պատասխան տուաւ Յիսուս ու բսաւ անոր, Մարթա, Մարթա, դուն չատ բաներու համար հոգ ընելով կը տագնապիս։ 42—Բայց մէկ բան պէտք է, և Մարիամ այն ազնիկ բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի։

ԳԼ. ԺԱ.

Ու եղաւ որ տեղ մը ազօթք կ'ընէր, ու երբ դադրեցաւ, իր աշակերտներէն մէկը բսաւ իրեն, Տէր, մեզի ազօթք ընել սորվեցուր, ինչպէս Յովհաննէս ալ իր աշակերտներուն սորվեցուց։ 2—Եւ բսաւ անոնց, Երբ ազօթք կ'ընէք՝ ըսէք, Ով Հայր *մեր, որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ։ քու Թագաւորութիւնդ գայ։ *քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ։* 3—Մեր ամէն օրուան հացը օրէ օր մեզի տուր։ 4—Եւ մեզի ներէ մեր մեղքերը, քանզի մենք ալ կը ներենք այն ամէնուն՝ որ մեզի պարտական են։ ու մեզ փորձութեան մի տաներ, *հապա յարէն մեզ ազատէ։*

5—Եւ բսաւ անոնց, Ձեզմէ ո՞վ է՝ որ բարեկամ մը ունենայ, ու կէսգիշերուան մէջ երթայ անոր և ըսէ անոր, Բարեկամ, ինծի երեք նկանակ փոխ տուր։ 6—վասն զի իմ մէկ բարեկամս ճամբայէ ինծի եկաւ, ու բան մը չունիմ անոր առջև դնելու։ 7—Անիկա ալ ներսէն պատասխան տայ և ըսէ, Զիս մի յոգնեցներ, արդէն գաւառ գոցուած է, ու տղաքս իմ քովս անկողինի մէջ են. չեմ կրնար ելլել ու քեզի հաց տալ։ 8—Ձեզի կ'ըսեմ, թէև բարեկամութեան համար չելլէ տայ անոր, սակայն անոր թախանձանքին համար պիտի ելլէ, ու պէտք եղածը տայ անոր։ 9—Ես ալ կ'ըսեմ ձեզի, Խնդրեցէք և պիտի տրուի ձեզի, փնտռեցէք ու պիտի գտնէք, դրաշը զարկէք և պիտի բացուի ձեզի։ 10—Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ դրաշը կը զարնէ՝ պիտի բացուի անոր։ 11—Ձեզմէ ո՛վ է այն հայրը, որմէ իր որդին հաց որ ուզէ, միթէ քար պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղ օձ պիտի տայ անոր։ 12—Եւ կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կարի՞ պիտի տայ անոր։ 13—Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն ազնիկ ընծաներ տալ գիտէք, ո՛րչափ աւելի Երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն։

14—Ու դեւ մը կը հանէր, և անիկա համր էր. ու եղաւ որ երբ դեւը ելաւ, համրը խօսեցաւ, և ժողովուրդները զարմացան։ 15—Բայց անոնցմէ մէկ քանիներն ըսին, Աթիւա դեւերուն իշխանին միջոցով դեւերը կը հանէ։ 16—Ուրիշներն ալ փորձելով երկինքէն նշան մը կ'ուզէին անկէ։ 17—Բայց ինք գիտնալով անոնց խորհուրդները՝ բսաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի, և տուն մը *իրեն դէմ բ-ժ-ն-ո-ւ-ած՝ կը կործանի։ 18—Հապա եթէ Սատանայ իրեն դէմ բաժնուած է, անոր թագաւորութիւնը ի՞նչպէս պիտի կենայ. որովհետև կ'ըսէք թէ իշխողքրզով դեւերը կը հանեմ։ 19—Իսկ եթէ ես իշխողքրզով դեւերը կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։ 20—Բայց եթէ ես Աստուծոյ մատովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։

*Ոմանք չունին

*Յոյն. տան

21—Երբ զրաւոր մէկը զէնքերը վրան առած՝ իր տունը բակը կը պահպանէ, անոր բաները խաղաղութեան մէջ կը մնան. 22—Բայց երբ անկէ աւելի զօրաւորը վրան գալով յաղթէ զանիկա, անոր զէնքերը կ'առնէ՝ որոնց ինք յուսացեր էր, և անկէ ---ը կողոպուտը կը բաժնէ։ 23—Ան որ ինծի հետ չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ չժողվեր՝ ցիրուցան կ'ընէ։

24—Երբ պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անջուր տեղեր կը պտրտի, հանգրստութիւն կը փնտռէ. ու երբ չգտնէր՝ կ'ըսէ, Դառնամ ներքին իմ տունս՝ ուրկէ ելայ։ 25—Ու կու գայ, ը-ն-ի-ա-ծ-ա-ր-ա-ւ-ած ու յարդարուած կը գտնէ։ 26—Այն ատեն կ'երթայ, և իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին, և այն մարդուն վերջին առաջինէն գէշ կ'ըլլայ։

27—Ու եղաւ որ երբ անիկա այս բաները կը խօսէր, ժողովուրդին միջէն կին մը ձայնը վերցուց ու բսաւ անոր, Երանի՛ այն որովայնին՝ որ քեզ կրեց, և այն ծիծերուն՝ որոնք քեզի կաթ տուին։ 28—Եւ ինք բսաւ, Մանաւանդ քէ երանի՛ անոնց որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն։

29—Ու երբ ժողովուրդները ահոռ էր կը դիմաւէին, սկսաւ ըսել, Այս ազգը չար է. նշան կ'ուզէ, և ---ի նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը։ 30—Քանզի ինչպէս Յովնան Նինուէացիներուն նշան եղաւ, այնպէս Որդին մարդոյ այս ազգին պիտի ըլլայ։ 31—Հարաւի թագուհին դատաստանին ելլը այս ազգին մարդոցը դէմ պիտի ելլէ, ու պիտի դատապարտէ զանոնք, վասն զի երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնի խմաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս։ 32—Նինուէի մարդիկը դատաստանին ելլը այս ազգին դէմ պիտի ելլեն, ու պիտի դատապարտեն զանիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնով զղջին եկան, և ահա Յովնանէ մեծ մէկը կայ հոս։

33—Մէկը ճրագը չվառեր, ծածուկ տեղ մը դներ, ոչ ալ գրասանի տակ, հապա աչառնակի վրայ, որպէս զի ներս մտնողները լոյսը տեսնեն։ 34—Մարմնոյդ ճրագը աչքն է. ուստի երբ աչքդ պարզ է, բոլոր մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ. բայց երբ չար է, մարմինդ ալ մութ կ'ըլլայ։ 35—Ուրեմն զգոյշ կեցիր, որ քու մէջդ եղած լոյսը խաւար չըլլայ։ 36—Արդ եթէ քու բոլոր մարմինդ լուսաւոր է, և մութ մաս մը չունի, բոլորն ալ լուսաւոր կ'ըլլայ, ինչպես երբ ճրագ մը իր փայլուձանքիւնովը քեզ կը լուսաւորէ։

37—Ու երբ այս *խ-ո-ս-ք-ը կը խօսէր, փարիսեցի մը կ'ազաչէր անոր՝ որ իր քով ճաշ ուտէ. անիկա ալ մտաւ ուտելու նստաւ։ 38—Իսկ փարիսեցին երբ տեսաւ, զարմացաւ, որ նախ չլուացուեցաւ ճաշէն առաջ։ 39—Եւ Տէրը բսաւ անոր, Հիմա դուք, փարիսեցիներ, գաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ձեր ներսիդին յափշտակութեամբ և չարութեամբ լեցուն է։ 40—Անխելքներ, ան որ գառբանը բրաւ, ներսիդինն ալ ինք չբրաւ։ 41—Սակայն ---ով մէջ եղածներէն ողորմութիւն տուէք, և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի։ 42—Բայց վա՛յ ձեզի փարիսեցիներուդ, որ անանուխին ու փիգնային և բոլոր խոտակերներուն տասանորդը կը վճարէք, ու զանց կ'ընէք իրաւունքը և Աստուծոյ սէրը. տասնեակ պէտք էր բնել, և զանոնք չձգել։ 43—Վա՛յ ձեզի փարիսեցիներուդ, որ ժողովարաններուն մէջ առաջին աթոռները կը սիրէք, ու չուկաներուն մէջ բարեներ։ 44—Վա՛յ ձեզի, կեզծաւոր գիրքերու ու փարիսեցիներ, որ անյայտ գերեզմաններու նման էք, որոնց վրայէն մարդիկ կը փայլեն ու չեն գիտեր։

45—Եւ օրինականներէն մէկը պատասխան տալով՝ բսաւ անոր, Վարդապետ, այդ խօսքերը զրուցելով՝ մեզ ալ վիր կը զարնես։ 46—Եւ անիկա բսաւ, Ձեզի ալ վա՛յ օրինականներուդ, որ տանելու ժ-ո-ւ-ա-ր բեռներ կը բեռցրնէք մարդոց, ու գուք ձեր մէկ մատով այն բեռներուն չէք դպչիր։ 47—Վա՛յ ձեզի, որ մարգարէներուն գերեզմանները կը չինէք, ու ձեր Հայրերը սպանեցին զանոնք։ 48—Ուրեմն կը

*6

վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր հայրերուն ըրածներուն. վասն զի իրենք սպաննեցին զանոնք, ու դուք անոնց գերեզմանները կը չինէք։ 49—Անոր համար ալ Աստուծոյ խոստութիւնը ըսաւ, Պիտի զրկեմ անոնց մարգարէներ ու առաքեալներ, և անոնցմէ ո՛րը պիտի սպաննեն ու ո՛րը հալածեն. 50—Որպէս զի աշխարհի սկիզբէն հետէ թափած բոլոր մարգարէներուն արիւնը այս ազգէն պահանջուի, 51—Աբէլի արիւնէն մինչև Զաքարիայի արիւնը, որ սեղանին ու տաճարին միջև սպանուեցաւ. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Այս ազգէն պիտի պահանջուի։ 52—Վա՛յ ձեզի օրինականներուդ, որ գիտութեան բանալին վերցուցիք. դուք չմտաք, և մտնողներն ալ արգիլեցիք։

53—Ու երբ այս բաները անոնց կը զրուցէր, դպիրները ու փարիսեցիները սկսան խիստ դժուարիլ, և շատ բաներու վրայով անոր բերնէն խօսք փընտռել. 54—Ու անոր դարան պատրաստելով, կը փնտռէին թէ ի՛նչպէս անոր բերնէն բան մը գտնան, որպէս զի անոր վրայով ամբաստանութիւն ընեն։

Գլ. ԺԲ

Այս միջոցին երբ բիւրաւոր ժողովրդներ վրան ժողովեցան, մինչև մէկզմէկ կը կոխէին, սկսաւ ըսել իր աշակերտներուն, Ամէնէն առաջ ինքզինքնիդ զգայ պահեցէք փարիսեցիներուն խմորէն, որ է կեղծաւորութիւն։ 2—Վասն զի բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չյայտնուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի. 3—Ուստի ինչ որ մութ տեղը զրուցեցիք, անիկա լոյս տեղը պիտի լսուի. և այն զոր ներքին սենեակներուն մէջ ականջի խօսեցաք, տանիքներուն վրայ պիտի քարոզուի։ 4—Բայց ձեզի իմ բարեկամներուս կը զրուցեմ, Մի վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն, ու անկէ եւս աւելի բան մը ընելու չեն կրնար։ 5—Հապա ձեզի ցուցնեմ թէ որմէ՛ պիտի վախնաք. Անկէ վախցէք՝ որ սպաննելէն եւս իշխանութիւն ունի գեհենը ձգելու. այո, կ'ըսեմ ձեզի, Անկէ վախցէք։ 6—Չի՞ որ հինգ ճնճղուկ երկու դանկի կը ծախուի, և անոնցմէ մի՛կը մոռցուած չէ Աստուծոյ առջև։ 7—Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ հաշուած են. ուրեմն մի վախնաք, Դուք չատ ճնճղուկներէն աւելի պղկէ եք։ 8—Ու ձեզի կ'ըսեմ, Ամէն ով որ ինծի կը դաւանի մարդոց առջև, Որդին մարդոյ ալ զանիկա պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն առջև։ 9—Բայց ան որ ինծի մարգոց առջև կ'ուրանայ, ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջև։ 10—Ու ամէն ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն կ'ընէ, պիտի չներուի անոր։ 11—Ու երբ ձեզ ժողովարանները և իշխանութիւններու ու պետութիւններու առջև տանելու բլլան, հոգ մի ընէք թէ ի՛նչպէս կամ ի՛նչ պատասխան պիտի տաք, կամ ի՛նչ պիտի ըսէք. 12—Վասն զի Սուրբ Հոգին պիտի սորվեցնէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ պէտք է խօսիլ։

13—Ժողովուրդին մէկէն մէկը ըսաւ անոր, Վարդապետ, պատգէ եղբօրս, որ հրէշ էն-ի ժառանգութիւնը բնդի հետ բաժնէ։ 14—Ան ալ ըսաւ անոր, Մարդ, ո՞վ դիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին ընդ դրաւ։ 15—Ու ըսաւ անոնց, Նայեցէք և զգուշացէք ագահութենէ. վասն զի մարգուս առատութիւնէրուն աւելնալն կեանքը չէ իր կեանքէն։ 16—Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով, Հարուստ մարդու մը արտերը առատ բերքեր տուին։ 17—Ու ինք կը մտածէր ինքնիրեն ու կ'ըսէր, Ի՞նչ ընեմ, վասն զի տեղ չունիմ, ուր իմ բերքերս ժողվեմ։ 18—Ու ըսաւ, Դայս ընեմ. իմ մաքրարներս քակեմ ու ա՛լ աւելի մեծ շինեմ, և հոն ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս. 19—Ու իմ անձիս ըսեմ, Ով անձս, չատ բարիքներ ունիս չատ տարիներու համար ժողվուած. հանգչէ, կեր, խմէ և ուրախ եղիր։ 20—Բայց Աստուած ըսաւ անոր, Անմիտ, այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի. ուստի այն զոր պատրաստած բաներդ որո՞ պիտի բլլան։ 21—Այսպէս է անիկա որ իր անձին համար գանձ կը դիզէ, ու Աստուծոյ չհարստանար։

22—Ու ըսաւ իր աշակերտներուն, Ասոր համար կ'ըսեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ոչ ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք։ 23—Վասն զի կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն։ 24—Նայեցէք ագռաւներուն, որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն, որոնք ոչ չեմարանները ունին, ոչ ալ սմբաքներ, ու Աստուած զանոնք կը կերակրէ. դուք ո՛րչափ աւելի լաւ էք քան զնոսիկներն։ 25—Ու ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կանգնուն մը աւելցնել։ 26—Հապա եթէ ամենափոքր բանին կարող չէք, ուրիշ բաներու համար ինչո՞ւ հոգ կ'ընէք։ 27—Նայեցէք շուշաններուն, ի՛նչպէս կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ կը մանեն. բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկո՛ւն պէս չհագուեցաւ։ 28—Ուստի եթէ խոտը որ այսօր գաշտի մէջ է, ու վաղը փուռը կը ձգուի, Աստուած այնպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձեզ, Քերա՛ստաններ։ 29—Ու դուք մի փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք և ի՛նչ պիտի խմէք, ու մի չիմաթիք։ 30—Վասն զի այդ բոլոր բաները աշխարհս ազգերը կը փնտռեն. ու ձեր Հայրը գիտէ որ այդ բաները ձեզի պէտք են։ 31—Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք, և այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին։ 32—Մի վախնար, պզտիկ հօտ, վասն զի ձեր Հայրը հաճեցաւ որ թագաւորութիւնը ձեզի տայ։ 33—Ծախեցէք ձեր ստացուածքը և ողորմութիւն ըրէք. ձեզի չխնամող քսակներ պատրաստեցէք, երկինքը՝ չսպկտկելու գանձ մը, ուր ոչ գողը կը մօտենայ և ոչ ցեցը կ'ապականէ։ 34—Ձանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ։ 35—Ձեր մէջքերը գօտևորուած ըլլան, ու ճրագները վառուած։ 36—Ու դուք այն մարդոց նմա՛ն՝ որոնք իրենց տէրը կը սպասեն, թէ ե՛րբ պիտի գայ և դառնայ հարսնիքէն. որպէս զի երբ գայ և դռնէն զարնէ, իսկոյն բանան անոր։ 37—Երանի՛ այն ծառաներուն, որ տէրը երբ գայ՝ զանոնք արթուն պիտի գտնէ. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ինք գօտին մէջքը պիտի կապէ ու սեղան նստեցնէ զանոնք, և առաջ անցնելով սպասաւորութիւն պիտի ընէ անոնց։ 38—Ու եթէ էրկրորդ պահուն գայ, կամ երրորդ պահուն գայ ու այնպէս գտնէ, երանելի են այն ծառաները։ 39—Բայց գայս գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ ո՛ր տունն գողը կու գայ, արթուն կը կենար ու թոզ չէր ձգեր որ իր տունը ծակեն։ 40—Ու ըսաւ անոր, Դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ այնպիսի ժամու մը մէջ որ դուք չէք կարծեր։

41—Ու Պետրոս ըսաւ անոր, Տէր, այդ առակը մե՞զ կ'ըսես թէ ամենուն ալ։ 42—Ու Տէրը ըսաւ, Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ ու խոհական տնտեսը, զոր տէրը իր գերդաստանին վրայ պիտի դնէ, որպէս զի տուէնին ժամուն ուտելիքը տայ։ 43—Երանի՛ է այն ծառային, զոր իր տէրը եկած ատենը այնպէս գրած պիտի գտնէ։ 44—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի կեցնէ զանիկա։ 45—Հապա եթէ այն ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ. և սկսի ծառաները ու ազախինները ծեծել, և ուտել ու խմել ու գինովնալ, 46—Ան ծառային տէրը պիտի գայ այնպէս օր մը որ չսպասեր, և այնպէս ժամ մը որ չգիտեր, և զանիկա մէյմեզկէն պիտի կտրէ, ու անոր բաժինը անհաւատարիմներուն հետ պիտի գնէ։ 47—Ու այն ծառան որ իր տէրոջը կամքը գիտէ ու չպատրաստուիր, ոչ ալ անոր կամքը կ'ընէ կը դնէ, չատ ծեծ պիտի ուտէ։ 48—Բայց ան որ չգիտեր ու ծեծի արժանի բան մը կ'ընէ, քիչ ծեծ պիտի ուտէ. որուն որ չատ տրուեցաւ, չատ պիտի ուզուի անկէ, և որուն որ աւելի յանձնուեցաւ, ա՛լ աւելի պիտի պահանջուի անկէ։

49—Ես կրակ ձգելու եկայ երկրի վրայ, ու ի՞նչ կ'ուզեմ եթէ արդէն

բորբոքած է։ 50—Բայց մկրատութիւն մը ունիմ մկրատելու, և ի՛նչպէս կը ուզենայիմ մինչև կատարեմ։ 51—Կը կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութի՛ւն տալու եկայ։ Ձեզի կ՚ըսեմ, Ոչ, հապա բաժանումնե՛ր։ 52—Վասն զի ասկէ ետեւ, մէկ տան մէջ հինգը իրարմէ բաժնուած պիտի ըլլան, երեքը երկուքին ու երկուքը երեքին։ 53—Հայրը պիտի բաժնուի որդիին, և որդին հօրմէն, մայրը աղջիկէն ու աղջիկը մօրմէն, կեսուրը իր հարսէն ու հարսը իր կեսուրէն։

54—Ու ըսաւ ժողովուրդներուն, երբ արեւմուտքի կողմէն ամպ մը ելած կը տեսնէք, չուտ մը կ՚ըսէք թէ Անձրեւ պիտի գայ, և այնպես կ՚ըլլայ։ 55—Ու երբ հարաւային հովը կը փչէ, կ՚ըսէք թէ Ցաւ պիտի ըլլայ, և այնպես կ՚ըլլայ։ 56—Կեղծաւորներ, երկրի ու երկինքի երեսը քննելը գիտէք, հապա այս ժամանակը ի՞նչպես չէք քններ։ 57—Ու ինչո՞ւ դուք ձեզմէ չէք որոշեր իրաւունքը։ 58—Երբ դուն քու ոսոխիդ հետ իշխանին երթալու ըլլաս, ճամբան մէջ անկէ ազատուելու համար ջանք բրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առջեւ քաշէ, ու դատաւորը դահիճին ձեռքը տայ քեզ, ու դահիճն ալ բանտը դնէ։ 59—Քեզի կ՚ըսեմ, բնաւ պիտի չելլես անկէ, մինչև վերջին լուման չվճարես։

Գլ. ԺԳ

Ե՛ւ ատենք այն ատեն ներկայ գտնուելով՝ պատմեցին անոր Գալիլեացւոց վրայով, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետ խառնեց։ 2—Ու Յիսուս պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Կը կարծէ՞ք որ այն Գալիլեացիները բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր էին, որովհետեւ այսպիսի բաներ քաշեցին։ 3—Չեզի կ՚ըսեմ, Ոչ, հապա եթէ չապաշխարէք, ամէնդ ալ նոյնպես պիտի կորսուիք։ 4—Կամ թէ այն տասնըութ հոգին որոնց վրայ Սիլոամի մէջի աշտարակը ինկաւ, և զանոնք մեռցուց, կը կարծէ՞ք որ անոնք երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին։ 5—Չեզի կ՚ըսեմ, Ոչ. հապա եթէ չապաշխարէք, ամէնդ ալ նոյնպես պիտի կորսուիք։

6—Այս առակին ալ բաւ. Մարդ մը իր այգիին մէջ անկուած թզենի մը ունէր, ու եկաւ անկէ պտուղ փնտռելու և չգտաւ։ 7—Ուստի ըսաւ այգեպանին, Ահա երեք տարի է որ կու գամ այդ թզենիին վրայ պտուղ փնտռելու, ու չեմ գտներ. —Ը տարիա կտրէ, ինչո՞ւ համար գետինը խափանէ։ 8—Անիկա պատասխան առաւ ու անոր ըսաւ, Տէր, այս տարի ալ տարիա թող տուր, մինչև սուտը բոլորիքը բրեմ ու քրիք դնեմ, 9—ու եթէ պտուղ ասյ՝ —Ձէ՛, ապա թէ ոչ՝ գալ գոբէ կարես տարիա։

10—Ու ինք ժողովարաններէն մէկուն մէջ շաբաթ օրը կը սորվեցնէր։ 11—Ու ահա կին մը կար, որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնըութ տարիէ ի վեր, ու կծկատած էր և ամենեւին չէր կրնար չիտակ կայնիլ։ 12—Ու Յիսուս զանիկա տեսնելով՝ էրէն կանչեց և ըսաւ անոր, Ովվ կին, դուն քու հիւանդութենէդ արձակուած ես։ 13—Ու ձեռքը անոր վրայ դրաւ. և իսկոյն չիակուեցաւ ու փառք կուտար Աստուծոյ։ 14—Իսկ ժողովարանին իշխանը պատասխան առաւ. բարկանալով՝ որ Յիսուս շաբաթ օրը բժշկեց, և ըսաւ ժողովուրդին. Վեց օր կայ, որոնց մէջ արժան է գործ գործել. ուստի այն օրերը եկէք բժշկուեցէք, ու ոչ թէ շաբաթ օրը։ 15—Այն ատեն Տէրը պատասխան առաւ անոր ու ըսաւ. *Կեղծաւոր, ձեզմէ ամէն մէկը շաբաթ օրը իր եզը կամ էշը մեւրէն չա՞բձակեր, որպէս զի տանի ջուր ուտ։ 16—Հապա ասկիա որ Աբրահամի աղջիկ էր, որ ահա տասնըութ տարի Սատանայ զանիկա կապեց, չի՞ը վայելեր որ շաբաթ օրը այն կապէն արձակուի։ 17—Ու երբ այս բաները ըսաւ, իրեն հակառակ կեցողները ամէնն ալ ամօթով մնացին. ու բոլոր ժողովուրդը կ՚ուրախանար այն ամէն փառաւոր գործերուն համար՝ որոնք անկէ կ՚ըլլային։

18—Ու ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի կը նմանի, ու ի՞նչ

*Յունա. կեղծաւորներ

բանի նմանցնեմ զանիկա։ 19—Մանանեխի հատի նման է, զոր մարդ մը առաւ իր պարտէզը ձգեց. և աճեցաւ ու մեծ ծառ եղաւ. ու երկինքի թռչունները անոր ճիւղերուն վրայ բնակեցան։

20—Դարձեալ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի նմանցնեմ, 21—Խմորի նման է, զոր կին մը առաւ, երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև ամէնն ալ խմորեցաւ։

22—Ու գաղաքներէն ու գեղերէն պտըտելով՝ կը սորվեցնէր, ու դէպ ի Երուսաղէմ ճամբայ կ՚ընէր։ 23—Ու մէկը ըսաւ անոր, Տէր, փրկուողը են անոնք որ պիտի փրկուին։ 24—Անիկա ալ ըսաւ անոնց, Ջանք բրէք որ նեղ դռնէն մտնէք, զանոնք կ՚ըսեմ ձեզի որ շատերը մտնել պիտի ուզեն և պիտի չկրնան։ 25—Անկէ ետեւ երբ սեռատէրը ելլէ ու դուռը գոցէ, և դուրսի սկիզբ դուրսը կեդալ, ու դուռը զարնել և ըսել, Տէր, Տէր, բաց մեզի. ան ալ պատասխան տալով՝ պիտի ըսէ ձեզի, Ձեզ չեմ ճանչնար ուրկէ՛ էք, 26—Այն ատեն պիտի սկիզբ ըսել, Մենք քու առջեւդ կերանք ու խմեցինք, և դուն մեր փողոցներուն մէջ սորվեցուցիր։ 27—Ու անիկա պիտի ըսէ, Ձեզի կ՚ըսեմ, Ձեզ չեմ ճանչնար ուրկէ՛ էք. մեկզի կեցէք ինծմէ բոլոր անիրաւութիւն գործողներդ։ 28—Հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել, երբ տեսնէք Աբրահամ ու Իսահակ և Յակոբ ու բոլոր մարգարէները Աստուծոյ թագաւորութեանը մէջ, ու ձեզ դուրս հանած, 29—Ու պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն և հիւսիսէն ու հարաւէն, ու պիտի բազմին Աստուծոյ թագաւորութեանը մէջ։ 30—Ու ահա կան յետիններ՝ որոնք առաջիններ պիտի ըլլան, ու կան առաջիններ՝ որոնք յետիններ պիտի ըլլան։

31—Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան ու ըսին անոր, Ելիր ու գնա ասկէ, վասն զի Հերովդէս քեզ սպանել կ՚ուզէ։ 32—Ու ինք ըսաւ անոնց, Երթա՛ք, այն աղուէսին ըսէ՛ք, Ահա ես դեւեր կը հանեմ ու բժշկութիւններ կը կատարեմ այսօր և վաղը, ու երրորդ օրը պիտի կատարուիմ։ 33—Միայն թէ պէտք է որ այսօր ու վաղը և միւս օրը պտրտիմ, վասն զի կարելի չէ որ մարգարէ մը երուսաղէմէ դուրս կորսուի։ 34—Ով երուսաղէմ, երուսաղէմ, որ մարգարէները կը սպանես ու փեղի ղրկուածները կը քարկոծէիր, քանի՛ անգամ քու ազգածդ ժողվել ուզեցի, ինչպես հաւը իր ձագերը թեւերուն տակ իւ ժողվէ, և դուք չուզեցի՛ք։ 35—Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ. սակայն ձեզի կ՚ըսեմ, որ ա՛լ զիս պիտի չտեսնէք, մինչև գայ այն ժամանակը որ պիտի ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ։

Գլ. ԺԴ

Ու եղաւ որ երբ ինք շաբաթ օր մը փարիսեցւոց գլխաւորներէն մէկուն տունը մտաւ հաց ուտելու, ու անոնք անոր կը սպասէին։ 2—Ու ահա հոն ջրգռեալ մարդ մը կար իր առջեւ։ 3—Ու Յիսուս պատասխան տուաւ ու խօսեցաւ օրինականներուն ու փարիսեցիներուն՝ ըսելով, Արժա՞ն է շաբաթ օրը բժշկել։ 4—Անոնք ալ լուռ կեցան. և ինք բռնեց զանիկա, բժշկեց ու ճամբեց. 5—Ու պատասխան տալով՝ ըսաւ անոնց, Ձեզմէ որո՞ւն էշը կամ եզը հորը իյնալու ըլլայ, ու չուտ մը չհաներ զանիկա շաբաթ օրը։ 6—Ու այս բաներուն չկրցան անոր պատասխան տալ։

7—Առակ մը զրուցեց այն հրաւիրուած մարդոց ալ, երբ տեսաւ թէ ի՛նչպես առաջին բազմոցները կ՚ընտրէին, ու ըսաւ անոնց, 8—Երբ մարդ մը հարսնիքի հրաւիրես, առաջին բազմոցին վրայ մի նստիր. չըլլայ որ քեզմէ աւելի պատուաւոր մէկն ալ հրաւիրուած ըլլայ անկէ։ 9—Ու ան որ քեզ ու զանիկա հրաւիրեց, գայ զրուցէ քեզի, Սորտեղ տեղ տուր, և անկէ ետեւ սկսիս ամօթով յետին տեղը բռնել։ 10—Հապա երբ հրաւիրուիս, գնա յետին տեղը նստէ. որպէս զի երբ քեզ հրաւիրողը գայ, քեզի ըսէ, Բարեկամ, վեր հրամմէ. այն ատեն քեզի հետ նստողներուն առջեւ քեզի փառք կ՚ըլլայ։ 11—Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի. և ով

որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ։

12—Ու զինք հրաւիրողին ալ բսաւ, երբ ճաշ կամ ընթրիք կ'ընես, մի կանչեր քու բարեկամներդ, ոչ ալ քու եղբայրներդ, և ոչ քու ազգականներդ, ու ոչ թէ հարուստ դրացիներդ, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւիրեն, ու քեզի հատուցում ըլլայ։ 13—Հապա երբ հացկերոյթ կ'ընես, ազգատներ, կաղաւատրներ, կոյրեր ու կոյրեր հրաւիրէ։ 14—Ու երանելի պիտի ըլլաս, վասն զի անոնք չեն կրնար փոխարէնը քեզի հատուցանել։ քանզի արդարներուն յարութիւնն առած ատենը փոխարէնը քեզի պիտի հատուցուի։

15—Ու սեղան նստողներէն մէկը երբ լսեց այս խօսքը՝ բսաւ անոր, երանի՛ անոր որ Աստուծոյ թագաւորութեանը մէջ հաց պիտի ուտէ։ 16—Ու ինք բսաւ անոր, Մարդ մը մեծ ընթրիք երաւ ու շատ մարդիկ հրաւիրեց։ 17—Ու ընթրիքին ատենը ղրկեց իր ծառան, որպէս զի հրաւիրուածները կանչէ՝ ըսելով, եկէք, վասն զի արդէն ամէն բան պատրաստ է։ 18—Ու ամէնը մէկէն սկսան ետ փաչուիլ։ առաջինը անոր բսաւ, Ես արտ մը ծախու առի, ու պէտք է որ ելլեմ անոնիտ դանիկա։ կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած սեպէ։ 19—Ու միւսը բսաւ, Ինձ զոյգ եզ ծախու առի, ու կ'երթամ որ զանոնք փորձեմ, կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած սեպէ։ 20—Ու միւսը բսաւ, Կին առի, ու անոր համար չեմ կրնար գալ։ 21—Ու այն ծառան եկաւ ու իր տէրոջը պատմեց այս բաները։ այն ատեն բարկացաւ տանուտէրը ու բսաւ իր ծառային, Շուտով փողոցներն հրապարակներն ու փողոցները ելիր, և աղքատները ու պակասաւորները և կոյրերը ու կոյրերը հոս մտցուր։ 22—Ուստի ալ բսաւ, Տէր, եղաւ ինչ որ հրամայեցիր, ու տակաւին տեղ կայ։ 23—Ու տէրը բսաւ ծառային, Ելիր ճամբաները ու ցանգերը, և ներս ձգէ՛ զանոնք հոս մտնելու, որպէս զի տունս լեցուի։ 24—Քանզի կ'ըսեմ ձեզի, որ այն հրաւիրուածներէն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի չառնէ։

25—Ու իրեն հետ շատ ժողովուրդներ կ'երթային. և դառնալով անոնց բսաւ, 26—Եթէ մէկը ինծի կու գայ, ու չատնէ իր հայրը և մայրը, ու կինը և զաւակները, ու եղբայրները և քոյրերը, նաև իր կեանքն ալ, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ 27—Ու ով որ իր խաչը չվերցնէր ու իմ ետեւէս գար, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ 28—Վասն զի ձեզմէ ո՞վ աշտարակ մը չինել ուզելով, առաջ չնստիր ու հաշիւ չընր ծախքը, թէ դանիկա լմնցնելու ի՞նչ ունի։ 29—Որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ ու չկրնայ լմնցնել, բոլոր տեսնողները սկսին զանիկա ծաղր բնել, 30—Ու բսել թէ Այս մարդը սկսաւ չինել ու չկրցաւ լմնցնել։ 31—Կամ թէ ո՞ր թագաւորը ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալով, առաջ չնստիր ու խորհիր, թէ արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ անոր՝ որ քսան հազարով իր վրայ կու գայ։ 32—Ապա թէ ոչ՝ քանի որ անկից հեռու է, դեսպան ղրկելով խաղաղութիւն կը խնդրէ։ 33—Ահա այսպէս ալ ձեր մէկն ամէն մէկը եթէ իր բոլոր տասգուածքէն ետ չկենայ, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ 34—Ուրը ազէկ բան է, բայց եթէ աղը իր համը կորնցնէ, ինչո՞վ պիտի համեմեսայ։ 35—Ոչ հողի ու ոչ քրիքի տեղ օգտակար կ'ըլլայ, հապա զանիկա դուրս կը նետեն։ Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

ԳԼ. ԺԵ

Ու բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր կը մօտենային իրմէ լսելու համար։ 2—Ու փարիսեցիները ու դպիրները արտունջ կ'ընէին ու կ'բսէին, Ասիկա մեղաւորները կ'ընդունի, ու անոնց հետ կ'ուտէ։

3—Ու անոնց այս առակը խօսեցաւ անոնց՝ ըսելով, 4—Ձեզմէ ո՞վ է այն մարդը որ հարիւր ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը կորնցնէ, իննսունըինը չո՞ ձգէ անապատին մէջ, ու այն կորսուածին ետեւէն երթար, մինչև զանիկա գտնէ, 5—Ու երբ կը գտնէ, ուրախանալով իր ուսերուն վրայ կը դնէ 6—Ու տունը գալով, կը կանչէ բարեկամները ու դրացիները, ու անոնց կ'բսէ, Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսուած ոչխարս գտայ։ 7—Ձեզի կ'ըսեմ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ, քան թէ իննսունըինը արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ։ 8—Կամ թէ ո՞վ է այն կինը որ տասը դրամ ունենայ, ու եթէ դրամ մը կորնցնէ, ճրագ չո՞ վառէ, ու տունը մկի ատկ գտնէ և գտնելու համար փնտռէր, մինչև գտնէ։ 9—Ու երբ կը գտնէ, կը կանչէ բարեկամները ու դրացիները, և կ'բսէ, Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորնցուցած դրամս գտայ։ 10—Ա՛նպէս ե՛, ձեզի կ'ըսեմ, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջև մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ։

11—Ու բսաւ, Մարդ մը երկու որդի ունէր։ 12—Ու անոնցմէ պզտիկը հօրը բսաւ, Հայր, տո՛ ստացուածքէդ իմ իմնալու բաժինը տուր ինծի։ ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը։ 13—Ու շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները ժողվեց ու հեռու երկիր մը գնաց, և հոն անառակութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց։ 14—Ու երբ ամէնը հատցուց, այն երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ, ու ինք սկսաւ չքաւոր ըլլալ։ 15—Ու գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քով մնաւ, ան ալ իր ագարակը ղրկեց զանիկա՝ խոզեր արածելու համար։ 16—Ու կը փափաքէր խոզերուն կերած եղիւրէն իր փորը լեցնել ու մէ՛կը չէր տար անոր։ 17—Ու ինքզինքին գալով՝ բսաւ, Քանի՛ բանուորներ կան իմ հօրս դռնէն հացով լեցուած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ։ 18—Կելլեմ, երթամ իմ հօրս, և բսեմ անոր, Հայր, մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջևդ, 19—Ու ալ արժանի չեմ քու որդիդ բսուելու. զիս քու վարձկաններէդ մէկուն պես ըրէ։ 20—Ու եկաւ իր հօրը եկաւ. և մինչդեռ ինք չատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկա ու գութը շարժեցաւ, և վազելով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա։ 21—Որդին ալ բսաւ անոր, Հայր, մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջևդ, և ալ արժանի չեմ քու որդիդ բսուելու։ 22—Հայր հայրը բսաւ իր ծառաներուն, Հանեցէ՛ք առաջին պատմուճանը ու հագցուցէ՛ք անոր, և մատանի դրէ՛ք անոր ձեռքը, ու կօխիկներ՝ անոր ոտքերը։ 23—Ու պարարտ զուարակը բերէ՛ք, մորթեցէ՛ք, և ուտենք և ուրախ ըլլանք. 24—Վասն զի այս իմ որդիս մեռած էր ու ողջացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ. և սկսան ուրախ ըլլալ։ 25—Ու անոր մեծ որդին ագարակն էր, ու երբ կու գար ու տանը մօտեցաւ, նուագարաններուն և պարերուն ձայները լսեց։ 26—Ու ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ կը հարցնէր թէ այս ի՞նչ է։ 27—Անոնք ալ բսաւ անոր, եղբայրդ եկաւ, ու հայրդ պարարտ զուարակը մորթեց, վասն զի առջի առողջ ձեռք ձգեց զանիկա։ 28—Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր։ 29—Ու անիկա պատասխան տալով՝ բսաւ հօրը, Ահա այսչափ տարի է որ քեզի կը ծառայեմ, ու բնաւ քու խօսքիդ դուրս չեղայ, ու ինծի երբէք ալ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն բնէի։ 30—Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու ստացուածքդ բազերու հետ կերաւ, անոր մորթեցիր պարարտ զուարակը։ 31—Ու անիկա բսաւ անոր, Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես, ու իմ բոլոր ունեցածս քուկդ է։ 32—Սակայն պէտք էր ուրախ ըլլալ և խնդալ, վասն զի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ։

ԳԼ. ԺԶ

Ու իր աշակերտներուն ալ բսաւ, Հարուստ մարդ մը կար, որ անուս մը ունէր, և անոր վրայով գանգատ եղաւ իրեն՝ որպէս թէ իր ունեցածը կը փըճացնէ։ 2—Ուստի կանչեց զանիկա ու բսաւ անոր, Ի՞նչ է այս զոր քեզի համար կը լսեմ. քու անտեսութեանդ հաշիւը տուր, վասն զի ա՛լ չես կրնար

անտես լլլայ։ 3—Եւ անտեսը իր մտքին մէջ բսաւ, Ինչ ընեմ, որովհետեւ իմ աէրս անտեսութիւնը ինծմէ կ'առնէ. *հողագործութիւն չեմ կրնար ընել՝, մաքառիլ կ'ամչնամ։ 4—Գիտեմ ինչ պիտի ընեմ, որպէս զի երբ չմ անտեսութենէս վերծուիմ, զիս իրենց առնը ընդունին։ 5—Եւ իր աէրոջը պարտականները մէկիկ մէկիկ իրեն կանչելով՝ բսաւ առաջինին, Դուն իմ աէրոջս որչափ պարտք ունիս։ 6—Ան ալ բսաւ, Հարիւր մար ձէթ։ Ե բսաւ անոր, Դիրդ առ ու չտեսով նստ չիսուն գրէ։ 7—Ետքը մէւսին բսաւ, Դուն ալ որչափ պարտք ունիս։ Ե անոկա բսաւ, Հարիւր փռա ցորեն. ու բսաւ անոր, Դիրդ առ և ութսուն գրէ։ 8—Ու աէրը անիրաւ անտեսը գովեց, որ խելացութիւնով բրաւ. վասն զի այս աշխարհին որդիները իրենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի խելացի են։ 9—Եւ ես ալ ձեզի կ'բսեմ, Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ բրէք, որպէս զի երբ անկում պակսի՝, ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ ընդունին։ 10—Ան որ փիլ քանի մէջ հաւատարիմ է, չատի մէջ ալ հաւատարիմ է. և ան որ փիլի մէջ անիրաւ է, չատի մէջ ալ անիրաւ է։ 11—Ուստի եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի հաւատայ ձեզի։ 12—Ու եթէ օտարին բանին մէջ հաւատարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի։ 13—Ոեւաւոյ մը չկրնար երկու աէրերու ծառայութիւն բնել, վասն զի կա՛մ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ, կամ ժէմկուն պիտի չարի՛ և միւսը արհամարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի։

14—Եւ փարիսեցիներն ալ, որոնք արծաթասէր էին, այս ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկա։ 15—Եւ բսաւ անոնց, Դուք էք որ մարդոց առջեւ ինքզինքիդ կ'արդարացնէք, բայց Աստուած գիտէ ձեր սիրտերը. վասն զի մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ առջեւ պիղծ է։ 16—Օրէնքը ու մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. անկէ ետեւ Աստուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի, և ամէն մէկը անոր մէջ մտնելու կ'արագայ։ 17—Դիւրին է որ երկինք ու երկիր անցնին, քան թէ օրէնքին մէկ նշանագիրը իյնայ։ 18—Ամէն որ իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ, և ամէն որ երիկի արձակուած կինն մը առնէ, շնութիւն կ'ընէ։

19—Հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու բեհեզ կը հագնէր, և ամէն օր փառաւորապէս ուրախութիւն կ'ընէր։ 20—Ու Ղազարոս անունով աղքատ մը կար վէրքերով լեցուն, որ անոր դրանը առջեւ դրուած էր։ 21—Եւ կը փափաքէր որ այն հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն իր փորը լեցնէ. նաեւ շուներն ալ կու գային և անոր վէրքերը կը լզէին։ 22—Ու եղաւ որ այն աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զանիկա. հարստոն ալ մեռաւ ու թաղուեցաւ։ 23—Եւ դժոխքին մէջ երբ աչքերը վերցնելով՝ հեռուէն տեսաւ Աբրահամ, ու Ղազարոսը անոր գոգը հանգչած։ 24—Եւ ինք աղաղակեց ու բսաւ, Հայր Աբրահամ, գթալով ինծի ու ղրկէ Ղազարոսը, որպէս զի իր մատին ծայրը ջուրը թաթխէ, ու զովացնէ իմ լեզուս, վասն զի այս բոցին մէջ կը տանջուիմ։ 25—Եւ Աբրահամ բսաւ, Որդեակ, միտդ բեր, որ դուն քու կեանքիդ ատենը քու բարիքները առիր, նոյնպէս Ղազարոս՝ չարիքները. հիմա անիկա [հոս] կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս։ 26—Ու այս ամէն բաներէն զատ՝ մեր ու ձեր մէջտեղ մեծ անդունդ մը կայ հաստատուած, այնպէս որ ձեզի անցնել ուզողները չկրնան, ոչ ալ ատկէ մեզի գալ ուզողները անցնին։ 27—Ան ալ բսաւ, Ուրեմն, կ'ազաչեմ քեզի, հայր, որ զանիկա իմ հօրս տունը ղրկես, 28—Քանզի հինգ եղբայր ունիմ, որպէս զի էրեւ անոնց վկայութիւն տայ, որ չլլայ թէ անոնք ալ այս չարչարանքին տեղը գան։ 29—Եւ Աբրահամ բսաւ անոր, Անոնք Մովսէսը ու մարգարէները ունին, թող անոնց մտիկ բնեն։ 30—Ան ալ բսաւ, Ոչ, հայր Աբրահամ, հապա եթէ մեռելներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշխարեն։ 31—Եւ անկա բսաւ անոր, Եթէ Մովսէսի ու մարգարէներուն մտիկ չեն ըներ, ոչ ալ եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնելու լլայ, պիտի հաւատան։

ԳԼ. ԺԶ

Ե բսաւ իր աշակերտներուն, Անկարելի է որ գայթակղութիւններ չգան, բայց վա՛յ անոր, որուն ձեռքով կու գան։ 2—Անոր աւելի ապկի է, որ աղոր պարանոցին խլուի ադագքի քար մը կախուի, ու անկա ծովը ձգուի, քան թէ այս պզտիկներէն մէկը գայթակղեցնէ։ 3—Զգուշացէք ձեր անձերուն։ Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, յանդիմանէ զանիկա. ու եթէ ապաշխարէ, ներէ անոր։ 4—Ու եթէ օրը եօթը անգամ քեզի դէմ մեղանչէ, ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու բսէ, Կ'ապաշխարեմ, ներես անոր։

5—Ու առաքեալները բսին Տէրոջը, Մեր հաւատքը ու էլցուր։ 6—Ու Տէրը բսաւ, Եթէ մանանեխի հատ չափ հաւատք ունենայիք, այս թիթենիին կըսնայիք բսել, Արմատոփ խլուէ ու ծովուն մէջ անկուէ, ան ալ պիտի հնազանդէր ձեզի։

7—Բայց ձեզմէ ո՞վ է այն հարբը՝ որ ունենայ հերկապործ կամ հովիւ, ծառայ մը, որ անկից երբ ագարակէն դառնայ մտնէ, չսուտով գրուցէ անոր թէ Անցիր սեղան նստէ։ 8—Հապա չը՞պէր անոր թէ Պատրաստէ իմ ընթրիքս, ու գօտիդ կապած ինծի սպասաւորութիւն բրէ, մինչեւ ես ուտիմ ու խմիմ, ու ետքը դուն ալ կեր ու խմէ։ 9—Միթէ չնորհակա՞լ կ'ըլլայ այն ծառային, իրեն հրամայուած բաները կատարելուն համար. չեմ կարծեր։ 10—Նոյնպէս դուք երբ բոլոր ձեզի հրամայուած բաները բնէք, բսէք թէ Մենք անպիտան ծառաներ ենք, քանզի զոն որ պարտական էինք բնելու՝ բրինք։

11—Ու եղաւ որ երբ ինք Երուսաղէմ կ'երթար, Սամարիայի և Գալիլեայի միջեւէն կ'անցնէր։ 12—Ու երբ գեղ մը պիտի մտնէր, տասը բորոտ մարդիկ հանդիպեցան անոր, որոնք հեռուն կայնեցան։ 13—Եւ ձայներնին վերցուցին ու բսին, Յիսուս վարդապետ, ողորմի մեզի։ 14—Եւ տեսնելով՝ անոնց բսաւ, Գացէք գոք ձեզ քահանաներուն ցուցուցէք. ու եղաւ որ երբ կ'երթային, մաքրուեցան։ 15—Եւ անոնցմէ մէկը երբ տեսաւ թէ բժշկուեցաւ, կը գարձաւ ու մեծ ձայնով փառք կու տար Աստուծոյ։ 16—Ու երեսի վրայ անոր ոտքը իյնալով՝ շնորհակալ կ'ըլլար անոր. և ինք Սամարացի էր։ 17—Յիսուսի տուաւ Յիսուս ու բսաւ, Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ այն իննը ո՞ր են։ 18—Այս օտարազգիէն զատ դարձնելէ չգտաւեցա՞ն՝ որ դառնալով Աստուծոյ փառք տան։ 19—Եւ բսաւ անոր, Ելիր գնա, քու հաւատքդ քեզ բժշկեց։

20—Ու երբ փարիսեցիները իրեն հարցուցին թէ Աստուծոյ թագաւորութիւնը ո՞ր պիտի գայ, պատասխան տուաւ անոնց ու բսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը աչքառնէն երեւցած բանով չգար։ 21—Ու պիտի չբսեն թէ Ահա հոս է, կամ Ահա հոն, վասն զի ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է։

22—Աշակերտներուն ալ բսաւ, Օրեր պիտի գան որ դուք Որդւոյ մարդոյ օրերէն մէկը տեսնելու պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք։ 23—Եւ իրեր բսեն ձեզի թէ Ահա հոս է, կամ Ահա հոն, մի երթաք ու ետեւնէ մի հետեւիք։ 24—Վասն զի ինչպէս փայլակը երկինքին տակ մէկ դիէն փայլատակելով՝ միւս երկինքին տակ միւս դին լոյս կու տայ, նոյնպէս պիտի լլլայ Որդին մարդոյ իր էլուած օրը։ 25—Մինչ թէ պէտք է որ ինք առաջ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս ազգէն։ 26—Եւ ինչպէս Նոյի օրերը եղաւ, այնպէս պիտի լլլայ Որդւոյ մարդոյ օրերն ալ։ 27—Կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին, էրկան կը տրուէին, մինչեւ այն օրը որ Նոյ տապանը մտաւ, և չրհեղեղը եկաւ ու ամէնը կորսնցուց։ 28—Նմա-

*Յոյն. չեմ կրնար բրել

†Ա չէ՞ն, ձեր կարօտութեան ժամանակը

‡Կամ, մեկը պիտի մեծցնէ

նապէս, ինչպէս Դաւիթ օրերը եղաւ, կ՚ուտէին, կը խմէին, ծախու կ՚առնէին, կը ծախէին, կը անկէին, կը շինէին. 29—Բայց այն օրը որ Դաւիթ Սադոմ եկաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ կորնչեցուց. 30—Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը որուն Մկ. Որդին յայտնուի։ 31—Այն օրը ան որ տանիքին վրայ է և իր կահասիները տանը Մկ. Քազ վար չիջնէ զանոնք առնելու. և ան որ արտին Մկ է, նոյնպէս Քազ ետ չդառնայ։ 32—Միտքերնիդ բերէք Դաւիթի կինը։ 33—Ով որ իր կեանքը կ՚ուզէ ապրեցնել՝ պիտի կորնչցնէ զանիկա, և ով որ կը կորնչցնէ՝ պիտի ապրեցնէ զանիկա։ 34—Ձեզի կ՚ըսեմ, Այն գիշերը Երկու հոգի Մկ անկողինի Մկ ըլլան, Մկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ 35—Երկու հոգի կին Մկ Քազ ազալու ըլլան, Մկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ 36—Երկու հոգի արտի մը Մկ ըլլան, Մկը պիտի առնուի ու միւսը ձգուի։ 37—Անոնք ալ բան անոնց, Ուր մարմին կայ, հոն պիտի ժողովուին արծիւները։

Գլ. ԺԸ

Անոնց առակ մըն ալ բաւ այս բաներն ըսելով՝ Թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ։ 2—Ըսաւ, Դատաւոր մը կար քաղաքի մը Մկ, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդէ չէր ամչնար։ 3—Եւ հոն քաղաքին Մկ այրի մը կար, որ անոր կու գար ու կ՚ըսէր, Իրաւունք ըրէ ինծի ի՛ւ ազատէ զիս իմ ոսոխս։ 4—Եւ անիկա ժամանակ մը չէր ուզեր անոր։ Բայց ետքը բաւ իր մտքին Մկ, Թէև Աստուծմէ չեմ վախնար ու մարդէ չեմ ամչնար, 5—Գոնէ այս այրիս գործը ինծի ձանձրացնելուն համար իրեն իրաւունք ընեմ, որպէս զի չգայ ամէն ատեն գիս Թախանձէ։ 6—Եւ Տէրը բաւ, Լսեցէք, անիրաւ դատաւորը ի՛նչ կ՚ըսէ։ 7—Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ՚աղաղակեն, Թէև երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ։ 8—Ձեզի կ՚ըսեմ որ չուտով անոնց իրաւունք պիտի ընէ. բայց Որդին մարդոյ երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ։

9—Եւ մէկ քանիներուն, որոնք իրենց անձերուն վրայ կը վստահանային Թէ արդար են, և ուրիշները կ՚անարգէին, այս առակը բաւ։ 10—Երկու մարդ եկան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու միւսը մաքսաւոր։ 11—Փարիսեցին կայներ էր, ու առանձին այսպէս աղօթք կ՚ընէր. Ով Աստուած, չնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող, և կամ այս մաքսաւորին պէս. 12—Հոգ չառնելով երկու անգամ ծոմ կը պահեմ, ու բոլոր ստացուածքիս տասանորդը կու տամ։ 13—Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր, ու չէր ուզեր աչքն ալ երկինք վերցնել, հապա իր կուրծքը ծեծելով կ՚ըսէր, Աստուած, ողորմի ինծի մեղաւորիս։ 14—Ձեզի կ՚ըսեմ Թէ ասիկա այն միւսէն աւելի արդարացած իր տունը իջաւ. վասն զի ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ։

15—Մանր տղաք ալ բերին իրեն, որպէս զի անոնց դպչի. ու աշակերտները տեսնելով կը յանդիմանէին զանոնք։ 16—Բայց Յիսուս զանոնք իրեն կանչելով՝ ըսաւ, Թող տուէք այդ մանր տղոյր որ ինծի գան, և մի արգիլէք զանոնք, վասն զի Աստուծոյ Թագաւորութիւնը այդպիսիներուն է։ 17—Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Ով որ Աստուծոյ Թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ։

18—Եւ իշխան մը հարցուց անոր ու ըսաւ, Բարի վարդապետ, ի՛նչ գործ գործեմ որպէս զի յաւիտենական կեանքը ժառանգեմ։ 19—Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ՚անուանես. մէկէն զատ բարի չկայ՝ որ է Աստուած։ 20—Պատւիրանքները գիտես. Շնութիւն մի ըներ, Սպանութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի ըներ, Ծնողդ պատուէ։ 21—Ան ալ ըսաւ, Առանք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ։ 22—Զայս լսելով Յիսուս ըսաւ անոր, Բան մըն ալ պակսի է քեզի. փութ բոլոր ունեցածդ ծախէ և աղքատներուն բաշխէ, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ հետևիս։ 23—Անիկա երբ այս բանը լսեց, տրտմեցաւ, վասն զի չատ հարուստ էր։ 24—Եւ Յիսուս երբ զանիկա տրտմած տեսաւ, ըսաւ, Ո՛րչափ գժուար է անոնց որ հարստութիւն ունին, Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել։ 25—Քանզի դիւրին է որ ուղտ ասեղին ծակէն անցնի, քան Թէ հարուստ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնէ։ 26—Եւ անոնք որ լսեցին, կ՚ըսէին, Ալ ո՞վ կրնայ փրկուիլ։ 27—Եւ ինք ըսաւ, Մարդոց կարելի անկարելի եղած բաները Աստուծոյ կարելի են։ 28—Ու Պետրոս ըսաւ, Ահա մենք ամէն բան Թողուցինք և քու եղանէդ եկանք։ 29—Ան ալ ըսաւ անոնց, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի Թէ Մարդ մը չկայ որ Թողուցած տուն, կամ ծնողք, կամ եղբայրներ, կամ կին, կամ որդիներ Աստուծոյ Թագաւորութեանը համար, 30—Որ պիտի չառնէ բազմապատիկ այս ատենին մէջ, և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանքը։

31—Եւ տասներկուքը իր քով առնելով՝ ըսաւ անոնց, Ահա մենք երթալիս կ՚ելլենք, և մարգարէներուն ձեռքով Որդւոյ մարդոյ համար բոլոր գրածները պիտի կատարուին։ 32—Վասն զի հեթանոսներուն պիտի մատնուի, ու ծաղր պիտի ըլլայ և պիտի նախատուի, ու պիտի թքնեն անոր, 33—Եւ պիտի ծեծեն ու սպաննեն զանիկա, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ 34—Բայց անոնք այս բաներէն մէկն ալ չհասկցան. ու այս խօսքը անոնցմէ ծածկուած էր, և բուած բաները չէին իմանար։

35—Ու եղաւ որ երբ Յիսուս երիքովի կը մտեներ, կոյր մը ճամրուն քովը նստեր էր մուրալու։ 36—Երբ լսեց բազմութեանը անցնելը, հարցուց թէ ի՞նչ է այն։ 37—Եւ իրեն ըսին թէ Յիսուս Նազովրեցի կ՚անցնի։ 38—Ասոր աղաղակեց ու բաւ, Յիսուս, Որդի Դաւիթ, ողորմի ինծի։ 39—Եւ անոնք որ առջևէն կ՚երթային, կը յանդիմանէին զանիկա, որպէս զի լռէ. բայց անիկա աւելի կ՚աղաղակէր, Որդի Դաւիթ, ողորմի ինծի։ 40—Եւ Յիսուս կանգ առնելով՝ հրամայեց բերուի զանիկա իրեն մօտ. և երբ անիկա մօտեցաւ, հարցուց անոր ու բաւ, 41—Ի՞նչ կ՚ուզես որ քեզի ընեմ. անիկա ալ բաւ, Տէր, որ աչքերս բացուին։ 42—Եւ Յիսուս բաւ անոր, Թող բացուին. քու հաւատքդ քեզ բժշկեց։ 43—Եւ իսկոյն անոր աչքերը բացուեցան, ու անոր ետևէն կ՚երթար, և փառք կու տար Աստուծոյ. բոլոր ժողովուրդն ալ անանձկով՝ զԱստուած կը գովաբանէին։

Գլ. ԺԹ

Եւ մանելով Երիքովի միջէն կ՚անցնէր։ 2—Եւ ահա մարդ մը կար, անունը Զաքէոս բաւած, որ մաքսապետ էր ու հինք հարուստ էր։ 3—Եւ կ՚ուզէր տեսնել Թէ ո՛վ է Յիսուս, ու բազմութենէն չէր կրնար, վասն զի հասակով կարճ էր։ 4—Եւ առաջ վազեց ու ժանտաթզենիի մը վրայ ելաւ, որպէս զի զանիկա տեսնէ, վասն զի անկէ պիտի անցնէր։ 5—Ու երբ Յիսուս այն տեղը եկաւ, վեր նայելով զանիկա տեսաւ, ու բաւ անոր, Զաքէոս, չուտ իջի, ատկէ վար իջիր, վասն զի պէտք է ինծի այսօր քու տունդ կենալ։ 6—Եւ արագապով վար իջաւ, և ուրախութեամբ ընդունեց զանիկա։ 7—Երբ ամէնն ալ տեսան, կը տրտնջէին ու կ՚ըսէին Թէ Մեղաւոր մարդու քով մտաւ իջևան ընելու։ 8—Եւ Զաքէոս կայնեցաւ ու բաւ Տէրոջը, Տէր, ահա իմ ունեցածիս կէսը ազքատներուն կու տամ, ու եթէ զրպարտութեամբ մէկուն զրկանք րրած եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ ան։ 9—Եւ Յիսուս բաւ անոր, Այսօր այս տանը փրկութիւն եղաւ, քանզի ասիկա ալ Աբրահամի որդի է։ 10—Վասն զի Որդին

մարդ այնկատ արգէս զի կորսուածը փրկուած ու փրկէ։

11—Ու երբ անոնք այս բաները կը լսէին, առակ մըն ալ բսաւ իր երեսաց դէմ մտածելուն համար, և անոնց այնպէս կարծելուն համար թէ չատ մը Աստուծոյ Թագաւորութիւնը պիտի յայտնուի։ **12**—Ուստի բսաւ, Ազնուական մարդ մը հեռաւոր երկիր գնաց՝ իրեն թագաւորութիւն առնելու և դառնալու։ **13**—Ու իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տուաւ անոնց, ու բսաւ անոնց, Բանեցուցէք մինչև ես գամ։ **14**—Ու անոր քաղաքացիները զանիկա կ'ատէին, ու դեսպաններ դրկեցին անոր ետևէն, բսելով թէ Չենք ուզեր որ սոքիկա մեր վրայ թագաւորութիւն բնէ։ **15**—Ու եղաւ որ երբ անիկա թագաւորութիւնը առնելով ետ դարձաւ, իրեն կանչել տուաւ այն ծառաները որոնց տակուր տուեր էր, որպէս զի գիտնայ թէ ո՛վ ինչ չահ բրած է։ **16**—Ու առաջինը եկաւ ու բսաւ, Տէր, քու մնադ տասը մնաս չահ բրաւ։ **17**—Ու բսաւ անոր, Ապրիս, բարի ծառայ։ որովհետեւ փիչ բանին մէջ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունենցիր։ **18**—Ու երկրորդը եկաւ ու բսաւ, Տէր, քու մնադ հինգ մնաս չահ բրաւ։ **19**—Ու բսաւ անոր, Դուն ալ հինգ քաղաքի վրայ եղիր։ **20**—Ու ուրիշ մը եկաւ ու բսաւ, Տէր, ահա քու մնադ՝ զոր թաչխինակի մէջ ծրարած կը պահէի։ **21**—Քանզի կը վախնայի քեզմէ, վասն զի դուն խիստ մարդ մըն ես, չդրած բանդ կը վերցնես ու չսերմնածդ կը հնձես։ **22**—Ու անիկա բսաւ անոր, Քու բերնէդ քեզ պիտի դատեմ, ով չար ծառայ։ գիտէիր որ ես խիստ մարդ մըն եմ, չդրած բանս կը վերցնեմ ու չսերմնածս կը հնձեմ։ **23**—Ու ինչո՞ւ համար իմ մատակ սեղանաւորներուն չտուիր, որպէս զի ես եկած ատենս չահովը առնէի զանիկա։ **24**—Ու հոն կայնողներուն բսաւ, Առէք մտիկ մնասը ու տուէք անոր որ տասը մնաս ունի։ **25**—(Ու բսին իրեն, Տէր, անիկա տասը մնաս ունի։) **26**—Քանզի կ'բսեմ ձեզի, թէ ամէն ունեցողին պիտի տրուի, և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի։ **27**—Բայց այն իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւոր ըլլամ, հոս բերէք ու իմ առջեւս սպաննեցէք։ **28**—Ու այս բաները խոսելէն ետեւ՝ յառաջ գնաց երուսաղէմ երթալու։

29—Ու եղաւ որ երբ Բեթփագէի ու Բեթանիայի մօտեցաւ՝ ձէթի թ այն լեռը որ Ձիթենեաց չ- կ'բսուի, իր աշակերտներէն երկու քր դրկեց, **30**—Ու բսաւ, Գացէք դէպի գիւղը, և անոր մէջ մտնելնուդ պես պիտի գրտնէք կապուած աւանակ մը, որուն վրայ մարդ մը նստած չէ. արձակեցէք զանիկա ու բերէք։ **31**—Ու եթէ մէկը ձեզի հարցնէ թէ Ինչո՞ւ կ'արձակէք, այսպէս բսէք անոր, Թէ Տէրոջը պէտք է։ **32**—Երբ գացին անոնք որ դրկուացան, ինչպէս իրենց ըսուեր էր՝ գտան։ **33**—Ու երբ աւանակը կ'արձակէին, անոր տէրերը բսին անոնց, Ինչո՞ւ, կ'արձակէք այդ աւանակը։ **34**—Անոնք ալ բսին, Տէրոջը պէտք է։ **35**—Ու զանիկա Յիսուսի բերին ու իրենց հանդերձները աւանակին վրայ ձգելով՝ Յիսուսը հեծցուցին։ **36**—Ու երբ կ'երթար, իրենց հանդերձները ճամբուն վրայ կը փռէին։ **37**—Ու երբ ա՛լ մօտեցաւ, և Ձիթենեաց լեռանէր զատ ի վայրն կ'իջնէր, աշակերտներուն բոլոր բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ զԱստուած օրհնել բարձր ձայնով՝ այն բոլոր հրաշքներուն համար զորոնք տեսեր էին, **38**—Ու կ'բսէին, Օրհնեալ է այդ թագաւորը որ Տէրոջը անունովը կու գայ. երկինքի մէջ խաղաղութիւն, ու փառք բարձրութեան մէջ։ **39**—Ու բազմութեանը մէջէն փարիսեցիներէն մէկ քանիները բսին անոր, Վարդապետ, այդ քու աշակերտներդ յանդիմանէ։ **40**—Ու անիկա պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Ձեզի կ'բսեմ, եթէ սոքա լուռ կենան, քարերը պիտի ազաղակեն։

41—Ու երբ մօտեցաւ, քաղաքը տեսնելով՝ լացաւ անոր վրայ և բսաւ, **42**—Գոնէ այս օրս օրհնանդ մէջ գիտնայիր քու խաղաղութիւնդ։ բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերդ։ **43**—Վասն զի օրեր պիտի գան քու վրադ՝ որ թշնամիներդ քու բոլորտիքդ պատնէշ պիտի չինեն, ու քեզ պիտի պաշարեն և ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն։ **44**—Ու հիմնայատակ պիտի ընեն քեզ ու քու մէջդ եղած զաւակներդ, և քար մը քարի վրայ ամենեւին պիտի չթողուն քու մէջդ, անոր համար որ չճանչցար քու այցելութեանդ ժամանակը։

45—Ու տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոր մէջ ծախողները և գնողները։ **46**—Ու բսաւ անոնց, Գրուած է թէ իմ տունս աղօթքի տուն է, բայց դուք ասիկա աւազակներու այր ըրիք։

47—Ու ամէն օր տաճարին մէջ կը սորվեցնէր. բայց քահանայապետները ու դպիրները և ժողովուրդին գլխաւորները կը փնտռէին թէ ի՛նչպէս կորսնցնեն զանիկա։ **48**—Ու բան մը չէին կրնար գտնել թէ ի՛նչ ընեն, վասն զի բոլոր ժողովուրդը անոր կապուեր էին մտիկ ընելու։

Գլ. Ի

Ու եղաւ որ այն օրերէն մէկը, երբ տաճարին մէջ ժողովուրդին կը սորվեցնէր և աւետարանը կը քարոզէր, քահանայապետները ու դպիրները ծերերուն հետ մէկտեղ վրայ հասան, **2**—Ու անոր հետ խոսեցան՝ բսելով, Զրուցէ մեզի, ի՛նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները, կամ ո՞վ է այդ իշխանութիւնը քեզի տուողը։ **3**—Պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, և բսէք ինծի։ **4**—Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՞ն էր թէ մարդոցմէ։ **5**—Ու անոնք իրենց մէջ խորհեցան ու բսին, Եթէ բսենք՝ Երկինքէն, պիտի բսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր։ **6**—Իսկ եթէ բսենք՝ Մարդոցմէ, բոլոր ժողովուրդը մեզ պիտի քարկոծեն, վասն զի համոզուած են թէ Յովհաննէս մարգարէ էր։ **7**—Ու պատասխան տուին թէ չեն գիտեր ուրկէ էր։ **8**—Ու Յիսուս բսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ բսեր թէ ի՛նչ իշխանութիւնով կ'ընեմ այս բաները։

9—Սկսաւ այս առակը զրուցել ժողովուրդին. Մարդ մը այգի տնկեց և զանիկա մշակներու յանձնեց, ու ինք օտար երկիր երթալով՝ շատ ժամանակ մնաց։ **10**—Ու ատենին ծառայ մը զրկեց մշակներուն, որպէս զի այգիին պտուղէն անոր տան. իսկ մշակները ծեծելէն զանիկա ու պարապ ճամբեցին։ **11**—Ու ուրիշ ծառայ մըն ալ զրկեց. իսկ անոնք զանիկա ալ ծեծելէն, անարգելէն ու պարապ ճամբեցին։ **12**—Ու երրորդ մըն ալ զրկեց. իսկ անոնք զանիկա ալ վիրաւորելէն ու դուրս հանելէն։ **13**—Այն ատեն այգիին տէրը բսաւ, Ի՞նչ ընեմ. իմ սիրելի որդիս զրկեմ, թերեւս զանիկա տեսնելով ամչնան։ **14**—Բայց մշակները երբ տեսան զանիկա, իրարու հետ խորհուրդ բրին՝ բսելով, Ասիկա է ժառանգը, եկէք զանիկա սպաննենք, որպէս զի ժառանգութիւնը մեր ըլլայ։ **15**—Ու զանիկա այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին. ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ անոնց։ **16**—Պիտի գայ ու կորսնցնէ այն մշակները, և այգին ուրիշներու պիտի տայ։ **17**—Երբ ղ-ր լսեցին, բսին, Քա՛ւ լիցի։ Ու ինք անոնց նայելով՝ բսաւ, Հապա ի՞նչ է այս գրուածը, Թէ Այն քարը զոր չինողները մերժեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ։ **18**—Ամէն ով որ այն քարին վրայ իյնայ, պիտի կոտրտի, և որու վրայ որ իյնայ, պիտի փսրէ զանիկա։ **19**—Ու քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ի՛նչպէս նոյն ժամուն ձեռք զարնեն անոր, բայց ժողովուրդէն վախցան. քանզի իմացան որ այն առակը իրենց համար բսաւ։

20—Ու Է-ը չ-ր-ը ո-ի պատասխով, զրկեցին քանի մը խարեբայ մարդիկ, որոնք կեծատրութեամբ ինքզինքնին արդար կը ձեւացնէին, որպէս զի զանիկա խօսքով բռնեն՝ ատրութեան և կառավարին իշխանութեանը զանիկա մատնելու։ **21**—Ու անոր հարցուցին՝ բսելով, Վարդապետ, գիտենք որ չիտակ կը խօսիս ու կը սորվեցնես, և այլաբերութիւն չես բներ, հապա Աստուծոյ ճամբան կը սորվեցնես։ **22**—Մեզի արժա՞նի է Կայսրին տուրք տալ Թէ ոչ։ **23**—Ու անոնց խորամանկութիւնը հասկնալով՝

բաւ անոնց, ինչո՞ւ զիս կը փոքձէք։ 24—Ցուցուցէք ինծի դահեկան մը։ Որո՞ւն պատկերը ու գերը ունի ըսաւ։ Պատասխանի ատուին ու ըսին, Կայսրինը։ 25—Ու ինք բաւ անոնց, Ուրեմն զայն որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և զայն որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք։ 26—Ու չկրցան զանիկա խօսքով մը բռնել ժողովուրդին առջև, ու զարմանալով անոր պատասխանին վրայ՝ լռեցին։

27—Ու սադուկեցիներէն ոմանք եկան, (որոնք հակառակութիւն կ'ընեն թէ յարութիւն չկայ,) և անոր հարցուցին՝ 28—Ըսելով, Վարդապետ, Մովսէս մեզի գրեց, Եթէ մէկուն եղբայրը կին առնելով մեռնելու ըլլայ, ու մեռած ատենը զաւակ չունենայ, անոր եղբայրը առնէ այն կինը և իր եղբօրը զաւակ հանէ։ 29—Արդ եօթը եղբայրներ կային. ու առաջինը կին մը առնելով՝ զաւակ չունեցած մեռաւ։ 30—Երկրորդն ալ առաւ այն կինը և ինք ալ մեռաւ առանց զաւակի։ 31—Երրորդն ալ առաւ զանիկա. նմանապէս եօթն ալ, ու զաւակ չձգեցին ու մեռան։ 32—Ամէնէն ետքը կինն ալ մեռաւ։ 33—Ուրեմն յարութեան ատենը անոնցմէ որո՞ւն կինը պիտի ըլլայ, վասն զի եօթն ալ զանիկա կին ունեցան։ 34—Ու Յիսուս պատասխանելով անոնց՝ բաւ, Այս աշխարհին որդիները կին կ'առնեն ու կին կը տրուին։ 35—Բայց անոնք որ արժանի պիտի ըլլան այն աշխարհին հասնելու ու մեռելներէն յարութիւն առնելուն, ոչ կին կ'առնեն և ոչ կին կը տրուին։ 36—Որովհետև ա՛լ չեն կրնար մեռնել. քանզի հրեշտակներուն հաւասար են, ու Աստուծոյ որդիները են, վասն զի յարութեան որդիներ են։ 37—Բայց մեռելներուն յարութիւն առնելը Մովսէս ալ իմացուց մարէնին գոփոսի մէջ, երբ կը կոչէ Տէրը՝ Աբրահամի Աստուածը, ու Իսահակի Աստուածը, և Յակոբի Աստուածը։ 38—Ու Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն, վասն զի ամէնը անոր կենդանի են։ 39—Ու գպիրներէն մէկ քանին պատասխան տուին ու ըսին, Վարդապետ, ազնիւ ըսիր։ 40—Ու ա՛լ մէկը համարձակութիւն չէր ըներ անոր բան մը հարցնելու։

41—Ու բաւ անոնց, Ի՞նչպէս կ'ըսեն Քրիստոսը Դաւիթի որդին է։ 42—Ու ինք Դաւիթ Սաղմոսներուն գիրքին մէջ կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս բաւ, Նստէ իմ աջ կողմս, 43—Մինչև զքո թշնամիներդ ոտքերուդ պատառանդան ընեմ։ 44—Ուրեմն Դաւիթ որ զանիկա Տէր կը կոչէ, ինչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։

45—Ու բոլոր ժողովուրդին առջև բաւ իր աշակերտներուն, 46—Զգուշացէք գպիրներէն, որոնք կ'ուզեն փառաւոր հանդերձներով պտըտիլ, և շուկաներուն մէջ բարեւներ կը սիրեն. ու ժողովարաններուն մէջ առաջին աթոռները, և ընթրիքներու մէջ առաջին բազմոցները։ 47—Որոնք այրեն արիներուն տուները կ'ուտեն, ու ձեւացուց երկնալու համար ազօթքը կ'երկնցնեն.ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին։

Գլ. ԻԱ

Ու նայելով՝ տեսաւ հարուստները որոնք իրենց ընծաները գանձանակը կը ձգէին, 2—Տնանկ այրի ալ մը տեսաւ, որ հոն երկու լումայ ձգեց, 3—Ու բաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ այս աղքատ այրին ամէնէն աւելի ձգեց. 4—Վասն զի ամէն անոնք իրենց աւելցածէն Աստուծոյ ընծաներուն մէջ ձգեցին, բայց սակայն իր չքաւորութենէն բոլոր իր ունեցած ապրուստը ձգեց։

5—Ու երբ մէկ քանիները տաճարին համար կ'ըսէին թէ Գեղեցիկ քարերով ու նուէրներով զարդարուած է, բաւ, 6—Այդ բաները զորոնք կը տեսնէք, օրեր պիտի գան որ այն տաճարին քար մը քարի վրայ պիտի չմնայ որ չքակուի։ 7—Հարցուցին իրեն ու ըսին, Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները, և ի՞նչ է նշանը՝ երբ այդ բաները պիտի ըլլան։ 8—Ան ալ բաւ, Զգոյշ կեցէք, չխաբուիք, վասն զի շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն Թէ ես եմ Քրիստոսը, ու ժամանակը մօտեցած է. ուրեմն անոնց հետևին չերթաք։ 9—Բայց երբ լսէք պատերազմներ և խռովութիւններ, մի վախնաք, վասն զի պէտք է առաջ այս բաները ըլլան, բայց վախճանը իսկոյն չէ։ 10—Այն ատեն ըսաւ անոնց, Ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝ թագաւորութեան վրայ. 11—Ու տեղ տեղ մեծ երկրաշարժութիւններ պիտի ըլլան, ու սովեր և մահաբեր ժանտիներ, նաև երկինքէն սոսկալի բաներ և մեծ նշաններ պիտի ըլլան։ 12—Բայց այս ամէն բաներէն առաջ իրենց ձեռքերը ձեզի պիտի զարնեն ու հալածեն, և ժողովարաններու ու բանտերու պիտի մատնեն. և իմ անուանս համար թագաւորներու ու կառավարիչներու առջև պիտի տարուիք։ 13—Ու այս ձեռներէդ վկայութիւն մը պիտի ըլլան։ 14—Ուստի ձեր սրտին մէջ գրէք՝ որ առաջուընէ չմտածէք պատասխան տալու վրայով։ 15—Վասն զի ես ձեզի բերան ու իմաստութիւն պիտի տամ, որու պիտի չկրնան դէմ խօսիլ կամ դէմ կենալ ձեր ամէն հակառակորդները։ 16—Ու պիտի մատնուիք ծնողքներէ ու եղբայրներէ և ազգականներէ ու բարեկամներէ, ու ձեզմէ պիտի սպաննեն. 17—Ու իմ անուանս համար ամէնուն ատելի պիտի ըլլաք։ 18—Բայց մազ մը ձեր գլխէն պիտի չկորսուի։ 19—Ձեր համբերութիւնովը հոգիներդ պիտի առնաք։

20—Ու երբ տեսնէք Երուսաղէմը բոլոր կողմէն զօրքերով պատած, այն ատեն գիտցէք որ անոր աւերումը մօտ է։ 21—Այն ատեն Հրեաստանի մէջ եղողները լեռները թող փախչին, ու անոր մէջ եղողները թող չեռանան, և անոնք որ ագարակներն են՝ թող չմտնեն անոր մէջ։ 22—Վասն զի այն օրերը վրէժխնդրութեան օրեր են, որպէս զի բոլոր գրուածները կատարուին։ 23—Բայց վա՛յ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուղներուն, վասն զի մեծ նեղութիւն պիտի ըլլայ երկրին վրայ. ու բարկութիւն դէպ ի՛ այս ժողովուրդին վրայ. 24—Ու սուրի բերնով պիտի իյնան, ու բոլոր ազգերուն մէջ գերի պիտի տարուին. ու Երուսաղէմ ոտից կոխան պիտի ըլլայ, մինչև ազգերուն ժամանակները լմննան։ 25—Ու արեգակին և լուսնին ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան, ու երկրի վրայ ազգերը ապշութեամբ պիտի տագնապին, և ծովը ու ալիքները պիտի գոռան. 26—Մարդոց սիրտերը պիտի ձուլուին էրեծ վախէն և աչխարհի վրայ գալու բաներուն սպասելէն, վասն զի երկինքի զօրութիւնները պիտի շարժին։ 27—Ու այն ատեն պիտի տեսնեն Որդին մարդոյ ամպի մէջ եկած զօրութիւնով ու մեծ փառքով։ 28—Ու երբ այս բաները սկսին ըլլալ, ելէք ու գլուխնիդ բարձրացուցէք, վասն զի ձեր փրկութիւնը մօտ է։

29—Ու առակ մը բաւ անոնց, Տեսէք թզենին ու ամէն ծառերը. 30—Երբ կը բողբոջին, տեսնելով՝ գուք ձեզմէ կ'իմանաք թէ ալ ամառը մօտ է։ 31—Նոյնպէս գուք երբ այս բաները եղած տեսնէք, գիտցէք որ Աստուծոյ թագաւորութիւնը մօտ է։ 32—Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս ազգը պիտի չանցնի, մինչև այս ամէն բաները ըլլան։ 33—Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։ 34—Իսկ գուք զգուշացէք ձեր անձերուն. չըլլայ որ սիրտերնիդ կերուխումով ու գինովութիւնով և աչխարհային զբաղմունքներով ծանրանայ, ու յանկարծակի այն օրը ձեր վրայ հասնի։ 35—Վասն զի բոլոր երկրին երեսը բնակողներուն ամէնուն վրայ որոգայթի մը պէս պիտի հասնի։ 36—Ուստի արթուն կեցէք, ու ամէն ատեն ազօթք ըրէք, որ արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատուելու և Որդւոյ մարդոյ առջև կայնելու։

37—Ու ցորեկները տաճարին մէջ կը սորվեցնէր. և գիշերները կ'ելլէր Ձիթենեաց լեռած լեռը կը կենար։ 38—Ու բոլոր ժողովուրդը առտուանց կանուխ իրեն կ'երթային տաճարը՝ իր խօսիլը լսելու։

Գլ. ԻԲ

Բաղարջակերաց տօնը մօտեցաւ որ Զատիկ կ'ըսուէր. 2—Ու քահանայա-

պետները ու դպիրները կը փնտռէին Քէ ի՛նչպէս ոտնձնեն զանիկա, քանզի ժողովուրդէն կը վախնային։

3—Ու Սաուանայ՝ իսկաբեռացած մականատանեալ Ռուգայի ներքո մնաւ, որ տասներկու-քսան հարիւրներէն էր։ 4—Ու գնաց քահանայապետներուն ու իշխաններուն հետ խօսք ըրաւ Քէ ի՛նչպէս զանիկա մատնէ անոնց։ 5—Անոնք ալ ուրախացան և խոստացան անոր սակ տալ։ 6—Ու ինք վրան առաւ, և պատեհութիւն մը կը փնտռէր որպէս զի զանիկա մատնէ անոնց առանց բազմութեանը ժողովելուն։

7—Ու բազարկեցաց օրը եկաւ, որուն մէջ պէտք էր զատիկը մորթել։ 8—Ու ղրկեց Գեորգը և Յովհաննէսը ու ըսաւ, Գացէք պատրաստեցէք մեզի զատիկը որպէս զի ուտենք։ 9—Անոնք ալ ըսին անոր, Ո՞ւր կ'ուզես որ պատրաստենք։ 10—Ու ըսաւ անոնց, Ահա երբ քաղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի պատահի որ սափոր ջուր կը տանի. անոր հետևէն գացէք այն տունը ուր ինք կը մտնէ։ 11—Ու այն տանը տիրոջ ըսէք, Վարդապետը կ'ըսէ քեզի, Ո՞ր է օթեւանը ուր աշակերտներուս հետ մկկոտ զատիկը ուտեմ։ 12—Ան ալ ձեզի յարդարուած մեծ վերնատուն մը պիտի ցուցնէ, հոն պատրաստեցէք։ 13—Ու գացին գան ինչպէս իրենց ըսաւ, ու զատիկը պատրաստեցին։

14—Ու երբ ժամը հասաւ, սեղան նստաւ և տասներկու առաքեալները իրեն հետ։ 15—Ու ըսաւ անոնց, Փափաքելով փափաքեցայ որ այս զատիկը ձեզի հետ ուտեմ իմ չարչարելէս առաջ։ 16—Քանզի կ'ըսեմ ձեզի որ ալ բնաւ ասկէ պիտի չուտեմ մինչև Աստուծոյ Թագաւորութեանը մէջ կատարուի։ 17—Ու գաւաթը առաւ, գոհացաւ ու ըսաւ, Առէ՛ք սոկա ու բաժնեցէ՛ք ձեր մէջ։ 18—Վասն զի ձեզի կ'ըսեմ որ բնաւ արքին բերքէն պիտի չխմեմ մինչև Աստուծոյ Թագաւորութիւնը գայ։

19—Ու հաց առաւ, գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց ու ըսաւ, Այս է իմ մարմինս, որ ձեզի համար սրտաժ է։ ասիկա ըրէ՛ք զիս յիշելու համար։ 20—Նոյնպէս ալ գաւաթը ետքը ընթերցելէն հետև ու ըսաւ, Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս, որ ձեզի համար կը թափուի։

21—Բայց ահա զիս մատնողին ձեռքը ինծի հետ այս սեղանն է։ 22—Ու յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ՝ ինչպես սահմանուած է։ բայց վա՛յ այն մարդուն՝ որուն ձեռքով անիկա կը մատնուի։ 23—Ու անոնք սկսան իրենց մէջ հարցուփորձ ընել՝ Քէ իրենցմէ ո՛վ է որ այն բանը պիտի ընէ։

24—Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջ՝ Քէ իրենցմէ ո՛վ մեծ պիտի սեպուի։ 25—Ու անիկա ըսաւ անոնց, Ազգաց թագաւորները անոնց կը տիրեն, և անոնք որ կ'իշխեն անոնց՝ բարերար կը կոչուին։ 26—Բայց դուք այնպես պիտի չըլլաք, հապա ան որ ձեր մէջ մեծ է, պզտիկին պես Քաղ ըլլայ, և առաջնորդը ծառայողին պես։ 27—Քանզի ո՞վ է մեծը, սեղան նստո՞ղը Քէ ծառայողը. չէ՞ որ սեղան նստողը. սակայն ես ձեր մէջ ծառայողի մը պես եմ։ 28—Ու դուք անոնք եք՝ որ միշտ ինծի հետ կը կենայիք իմ փորձութիւններուս մէջ։ 29—Ես ալ ձեզի Խոստանում կ'ընեմ ինչպէս ինծի Հայրս ինծի Թագաւորութիւն մը ուխտ րրաւ։ 30—Որպէս զի դուք իմ սեղանիս ուտէք ու խմէք իմ Թագաւորութեանս մէջ, և աթոռներու վրայ նստիք իսրայէլի տասներկու ցեղերը դատելու։

31—Ու Տէրը ըսաւ, Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա Սատանայ ձեզ փնտռեց, որ ցորենի պես խարխլէ։ 32—Բայց ես քեզի համար ապրիք րրի որպէս զի քու հաւատքդ չպակսի։ և դուն երբ դարձի գաս, քու եղբայրներդ զ՚ը հաստատէ։ 33—Իսկ ինք ըսաւ անոր, Տէր, ես պատրաստ եմ քեզի հետ բանտ երթալու ալ, մեռնելու ալ։ 34—Ու անիկա ըսաւ, Պետրո՛ս, քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի չկանչի մինչև դուն երեք անգամ ուրանաս՝ ըսելով Քէ զիս չես ճանչնար։

35—Ու ըսաւ անոնց, Երբ ձեզ ղրկեցի առանց քսակի ու պարկի և կօշիկներու, բանի մը կարօտ եղա՞ք։ 36—

Անոնք ալ ըսին, Բանի մըն ալ չէ։ հապ՛ը ըսաւ, Բայց հիմա ան որ քսակ ունի, թող իրէն հետ առնէ, նոյնպէս ալ պարկը։ և ան որ չունի, թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը ծախու առնէ։ 37—Քանզի կ'ըսեմ ձեզի որ այս գրուած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարի, Ու անօրէններու հետ սեպուեցաւ։ քանզի ինչ որ ինծի համար գրուած է, կատարելու վրայ է։ 38—Անոնք ալ ըսին, Տէր, ահա հոս երկու թուր կայ։ ան ալ ըսաւ անոնց, Հերիք են։

39—Ու ելաւ իր սովորութեանը պես Ձիթենեաց լեռը գնաց։ աշակերտներն ալ իր ետևէն գացին։ 40—Երբ այն տեղը հասաւ, ըսաւ անոնց, Աղօթք ըրէ՛ք որպէս զի փորձութեան մէջ չմտնէ՛ք։ 41—Ու ինք անոնցմէ քառասնեայ քարընկեցի մը չափ, ու ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր, 42—Ու կ'ըսէր, Հայր, եթէ կ'ուզես, այս գաւաթը ինծմէ անցուր։ բայց ոչ Քէ իմ կամքս՝ հապա քուկդ Թող ըլլայ։ 43—Ու երկինքէն հրեշտակ մը երեւցաւ անոր և կը զօրացնէր զանիկա։ ու տառապանքի մէջ բլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէր։ 44—Ու էր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պես էր, որ գետինը կը թափուէր։

45—Ու աղօթքէն ելլելով աշակերտներուն գալ եկաւ, ու գտաւ զանոնք տրտմութենէն քնացած։ 46—Ու ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք։ ելէ՛ք աղօթք ըրէ՛ք որպէս զի փորձութեան մէջ չմտնէ՛ք։

47—Ու երբ դեռ կը խօսէր, ահա բազմութիւն մը, և Յուդա ըսուածն ալ, տասներկուքէն մէկը, անոնց առջեւէն կ'երթար, ու Յիսուսի մտնացաւ որպէս զի զանիկա համբուրէ։ 48—Բայց Յիսուս ըսաւ անոր, Յուդա, համբուրելո՞վ կը մատնես Որդին մարդոյ։ 49—Երբ անոր բովանդակը եղողները տեսան ինչ որ պիտի ըլլար, ըսին անոր, Տէր, Թուրով զարնե՞նք։ 50—Ու անոնցմէ մէկը քահանայապետին ծառային զարկաւ ու մէկդի հանեց անոր աջ ականջը։ 51—Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Թող տուէ՛ք մինչև սրով սրեղը։ և դպաւ անոր ականջին ու բժշկեց զանիկա։ 52—Ու Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն ըսաւ, Իբր Քէ աւազակի՞ վրայ ելած տեբերով ու բիրերով։ 53—Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ, և ինծի ձեռք չզարկի՛ք։ բայց այս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը։

54—Ու զանիկա բռնելով տարին ու քահանայապետին տունը մտցուցին։ Պետրոս ալ հետևանց հեռուեն կ'երթար։ 55—Երբ կրակ վառեցին գետինին մէջ ու մէկտեղ նստան, Պետրոս ալ նստաւ անոնց մէջ։ 56—Ապուխին մը տեսնելով զանիկա որ կրակին քով նստած էր, նայեցաւ անոր ու ըսաւ, Ասիկա ալ անոր հետ էր։ 57—Բայց Պետրոս ուրացաւ զանիկա ու ըսաւ, Ովկ կիմ, ես զանիկա չեմ ճանչնար։ 58—Ու քիչ մը հետը ուրիշ մը տեսաւ զանիկա ու ըսաւ, Դուն ալ անոնցմէ ես։ և Պետրոս ըսաւ, Ովկ մարդ, ես հեռու չեմ։ 59—Ու ժամու մը չափ անցնելէն հետև՝ ուրիշ մըն ալ կը պնդէր ու կ'ըսէր, Ճշմարիտ ասիկա ալ անոր հետ էր, վասն զի Գալիլեացի է։ 60—Բայց Պետրոս ըսաւ, Ովկ մարդ, չեմ գիտեր ի՛նչ կը դուցես գուն։ և քանի որ իր խօսքը բերանն էր, իսկոյն հաւը բաղանեցաւ։ 61—Ու Տէրը դարձաւ ու Պետրոսի նայեցաւ։ Պետրոս ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը որ իրեն ըսեր էր Քէ Դեռ հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս։ 62—Ու Պետրոս դուրս ելելով դառնապէս լացաւ։

63—Ու այն մարդիկը որոնք Յիսուսը կը պահէին, ծաղր կ'ընէին զանիկա ու կը ծեծէին։ 64—Ու անոր աչերը ծածկելով՝ անոր երեսին կը զարնէին, ու կը հարցնէին իրեն՝ ըսելով, Մարգարէացիր՝ Ո՞վ է ան որ քեզի զարկաւ։ 65—Ու ուրիշ շատ բաներ կը զրուցէին իրեն հայհոյելով։

66—Ու երբ առաւօտ եղաւ, ժողովուրդին ծերակոյտը, քահանայապետները և դպիրները ժողովեցան, ու տարին զանիկա իրենց ատեանը և ըսին, Եթէ Քրիստոս դուն ես, ըսէ մեզի։ 67—Ըսաւ անոնց, Եթէ ձեզի ըսեմ ալ՝

պիտի չհաւատաք։ 68—Եւ եթէ ձեզի ըսեմ ճշմարտութիւնը, ինծի պատասխան պիտի չտաք, ոչ ալ զիս պիտի արձակէք։ 69—Ահաւասիկ հետևորդներ Աստուծոյ զօրութեանը ամէն կողմը պիտի նայի։ 70—Եւ ամէնը բսին, Ուրեմն դուն Աստուծոյ որդին ես։ ինք ալ բսաւ անոնց, Դուք կ'բսէք Թէ ես եմ։ 71—Եւ անոնք բսին, Ալ ինչ պէտք է մեզի վկայութիւն, վասն զի մենք մեզմէ ասոր բերնէն լսեցինք։

Գլ. ԺԹ

Եւ անոնց բոլոր բարեմասնութիւնը ոտք հանելով՝ ասոնին դանիկա Պիղատոսի։ 2—Ու սկսան անոր վրայով ամբաստանութիւն բնել և բսել, Ասիկա գտանք, որ հոզ ազգը կը մոլորեցնէր, ու կայսրին հարկ տալէ կ'արգիլէր, և իրեն համար կ'բսէր Թէ ինք Քրիստոս ։։ Թագաւոր է։ 3—Իսկ Պիղատոս հարցուց անոր ու բսաւ, Չէ՞ր Թագաւորը գո՞ն ես։ անիկա ալ պատասխան տուաւ անոր ու բսաւ, Դուն կ'բսես։ 4—Ա՛յն ատեն Պիղատոս քահանայապետներուն ու ժողովրդներուն բսաւ, Ես այս մարդուն վրայ յանցանք մը չեմ գտներ։ 5—Բայց անոնք ոտք կը կոխէին ու կ'բսէին Թէ ժողովուրդը իրար կ'անցնել, ու բոլոր Հրէաստանի մէջ կը սորվեցնէ՝ Գալիլեայէ սկսած մինչև այս տեղ։ 6—Եւ Պիղատոս երբ լսեց Գալիլեայի համար, հարցուց Թէ այդ մարդը Գալիլեացի՞ է։ 7—Ու երբ իմացաւ Թէ Հերովդեսի իշխանութեան տակէն էր, զանիկա Հերովդէսի ղրկեց, քանզի ան ալ այն օրերը Երուսաղէմ էր։

8—Եւ Հերովդէս երբ Յիսուսը տեսաւ, շատ ուրախացաւ, վասն զի ինք շատոնցմէ կը փափաքէր զանիկա տեսնել։ քանզի անոր վրայով շատ բաներ լսած էր, և կը յուսար որ անկէ եղած նշան մը տեսնէ։ 9—Ու շատ խօսքերով հարցուփորձ կ'ընէր անոր, բայց անիկա բնաւ իրեն պատասխան մը չտուաւ։ 10—Քահանայապետները ու դպիրներն ալ կեցեր էին, և սաստիկ ամբաստանութիւն կ'ընէին անոր վրայ։ 11—Իսկ Հերովդէս անարգեց զանիկա իր զօրականներուն հետ, ու ծաղր ընելէն ետև փառաւոր հանդերձներ հագցուց անոր, և նորէն Պիղատոսի ղրկեց։ 12—Ու այն օրը Պիղատոս և Հերովդէս իրարու հետ բարեկամ եղան. որովհետև առաջ իրենց մէջտեղ թշնամութիւն կար։

13—Եւ Պիղատոս քահանայապետները ու իշխանները և ժողովուրդը մէկտեղ կանչեց։ 14—Ու բսաւ անոնց, Ա՛յս մարդը առջև բերիք ժողովուրդը մոլորեցնողի մը պէս, և ահա ես ձեր առջև քննութիւն ընելով՝ ասոր համար ձեր բրած ամբաստանութիւններէն յանցանք մը չգտայ այդ մարդուն վրայ։ 15—Ոչ ալ Հերովդէս, վասն զի ձեզ անոր ղրկեցի, և ահա ասիկա մահու արժանի գործ մը բրած չէ։ 16—Ուրեմն պատիժ մը տամ ասոր ու արձակեմ։ 17—(Իսկ ածին ատներ պէտք էր որ մէկը արձակէր անոնց։) 18—Եւ բոլոր բազմութիւնը մէկտեղ ազաղակեցին՝ ըսելով, Վերցուր ասիկա, ու Բարաբբան արձակէ մեզի։ 19—(Որ քաղաքին մէջ եղած խռովութեան մը և մարդասպանութեան համար բանտը դրուած էր։) 20—Եւ Պիղատոս Յիսուսը արձակել ուզելով՝ նորէն խօսեցաւ անոնց։ 21—Բայց անոնք կ'ազաղակէին ու կ'բսէին, Խաչը հանի՛ ասիկա, խաչը հանի՛։ 22—Եւ ինք երրորդ անգամ բսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ բրած է ասիկա։ Ես ասոր վրայ մահու արժանի յանցանք մը չգտայ։ ուրեմն պատիժ մը տամ ասոր ու արձակեմ։ 23—Իսկ անոնք մեծաձայն ազաղակներով ոտք կը կոխէին, ու կ'ուզէին որ անիկա խաչուի։ և անոնց ու քահանայապետներուն ձայները զօրաւոր եղան։ 24—Ու Պիղատոս վճռեց որ անոնց խնդիրքը իրագործուի։ 25—Եւ անոնց ուզած մարդը, որ խռովութեան և մարդասպանութեան համար բանտը դրուած էր, արձակեց անոնց, և Յիսուսը իրենց կամքին յանձնեց։

26—Ու երբ զանիկա կը տանէին, Սիմոն Կիւրենացի ըսուած մէկը բռնեցին՝ որ արտէն կու գար, և խաչը անոր վրայ դրին որպէս զի Յիսուսի հետևէն բերէ։ 27—Ու անոր հետևէն կ'երթար

մեծ բազմութիւն ժողովրդներու, նաև կիներու, որոնք կ'ողբային ու կու լային անոր համար։ 28—Եւ Յիսուս դարձաւ անոնց ու բսաւ, Ով երուսաղէմի աղիկներ, իմ վրաս մի լա՛ք, հապա ձեր անձերուն վրայ ու ձեր զաւակներուն վրայ լացէ՛ք։ 29—Վասն զի ահա օրեր կու գան, որոնց մէջ պիտի բսեն, Երանի՛ ամուլներուն, և այն արտասուներուն որոնք չծնան, և ծիծերուն որոնք կաթ չտուին։ 30—Այն ատեն պիտի սկսին բսել լեռներուն, Մեր վրայ իյնէ՛ք, ու բլուրներուն՝ Մեզ ծածկեցէ՛ք։ 31—Վասն զի եթէ գաբար փայտին այսպէս կ'ընեն, հապա չորին ի՞նչ պիտի ըլլայ։

32—Ուրիշ երկու ալ, չարագործներ, բերուեցան անոր հետ սպանուելու։ 33—Երբ Գագաթ բսուած տեղը գացին, հոն խաչը հանեցին զանիկա, և այն չարագործներն ալ, մէկը ա՛յ կողմէն ու միւսը ձախ կողմէն, Խաչեցին։ 34—Եւ բսաւ Յիսուս, Հայր, թողութիւն տուր ասոնց, վասն զի չեն գիտեր ի՛նչ կ'ընեն։ Ու անոր հանդերձները բաժնելու տեսնին վիճակ ձգեցին։ 35—Եւ ժողովուրդը կայներ կը նայէր. իշխաններն ալ անոնց հետ կը նախատէին զանիկա ու կ'բսէին, Ուրիշները ազատեց, Թող ինքզինքն ալ ազատէ, եթէ ասիկա է Քրիստոս, Աստուծոյ ընտրեալը։ 36—Ծաղր կ'ընէին զանիկա զինուորներն ալ, առջևը կու գային քացախ կը մատուցանէին անոր, 37—Ու կ'բսէին, Եթէ դուն ես Հրէից Թագաւորը, քու անձդ ազատէ։ 38—Եւ գիր մը գրուած էր անոր վրայ Յունարէն ու Լատիներէն և Երբայեցերէն գիրերով, Թէ Ասիկա է Հրէից Թագաւորը։

39—Եւ այն կախուած չարագործներէն մէկը հայհոյութիւն կ'ընէր անոր ու կ'բսէր, Եթէ դուն Քրիստոսն ես, ազատէ քու անձդ ու մեզ ալ։ 40—Իսկ միւսը պատասխան տուաւ և զանիկա նզդիմանելով՝ բսաւ, Դուն Աստուծմէ չե՞ս վախնար, որովհետև նոյն դատապարտութեան մէջ ես։ 41—Ու մենք իրաւունքով, քանզի՝ ան՝ մեր ըրածներուն արժանաւոր հատուցումը կ'առնենք։ բայց ասիկա գէշ բան մը չըրաւ։ 42—Եւ բսաւ Յիսուսի, Տէր, յիշէ զիս, երբ քու Թագաւորութիւնդ գաս։ 43—Յիսուս ալ բսաւ անոր, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Դուն այսօր ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս։

44—Եւ ժամը վեցին ատեններն էր, ու բոլոր երկրին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը. և արեգը խաւարեցաւ, 45—Ու տաճարին վարագոյրը մէջտեղէն պատռեցաւ։ 46—Եւ Յիսուս մեծ ձայնով ազաղակեց ու բսաւ, Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս։ ու երբ զայս բսաւ, հոգի ետաւ։

47—Եւ հարիւրապետը եղած բանը տեսնելով՝ Աստուծոյ փառք ետաւ ու բսաւ, Իրաւցնէ այս մարդը արդար էր։ 48—Եւ այս տեսարանը դիտելու հաւար ժողված բոլոր բազմութիւնները եղած բաները տեսնելով՝ կուրծքերնուն կը զարնէին ու ետ կը դառնային։ 49—Ամէն իր ծանօթներն ալ հեռուն կայներ էին, նոյնպէս ալ այն կիները՝ որոնք իր հետևէն եկեր էին Գալիլեայէ, ու կը տեսնէին այս բաները։

50—Եւ ահա մարդ մը Յովսէփ անունով, որ խորհրդական էր, բարի ու արդար մարդ մը։ 51—(Ասիկա անոնց խորհուրդին և գործին հաւանութիւն տուած չէր։) Հրէաձորան Արիմաթիա քաղաքէն, որ ինք ալ Աստուծոյ Թագաւորութեանը կը սպասէր։ 52—Ասիկա Պիղատոսի գնաց, ու Յիսուսի մարմինը խնդրեց։ 53—Եւ զանիկա խոլէն իջեցնելով՝ կտաւով փաթթեց, ու փորէ փորուած գերեզմանի մը մէջ դրաւ, ուր բնաւ մէկը դրուած չէր։ 54—Եւ այն օրը ուրբաթ էր, ու շաբաթը պիտի *սկսէր։

55—Եւ անոր հետևէն գացին այն կիները, որոնք իրեն հետ Գալիլեայէ եկած էին, ու տեսան գերեզմանը, և Թէ ի՛նչպէս անոր մարմինը հոն դրուեցաւ։ 56—Եւ դառնալով՝ խունկեր ու իւղեր պատրաստեցին, և շաբաթ օրը հանգստացան պատուիրանքին համեմատ։

---

*Յոյն. լուսնար

ԳԼ. ԻԲ

Ա. Մկկաբքի օրը առաւաւանց չատ կանուխ գերեզմանը եկան, ու բերին այն խունկերը զորանք պատրաստեր էին, և ուրիշ կիներ ալ անոնց հետ։ 2—Ու քարը գերեզմանէն մեկնի գլորուած գտան, 3—ու ներս մանելով՝ Տէր Յիսուսի մարմինը հոն չգտան։ 4—Ու եղաւ որ երբ անոնք այս բանին համար տարակուսանքի մէջ էին, ահա երկու մարդիկ լուսափայլ հանդերձներով հոնտեղ անոնց 5—ու երբ վախով երեսնին գետին դէպ ի գերեզմանը, այն մարդիկը ըսին անոնց, ինչո՞ւ համար ողջը մեռելներուն հետ կը փնտռէք։ 6—Հոս չէ ան, հապա յարութիւն առաւ. մխիթարիր բերէք ի՛նչպէս խօսեցաւ ձեզի երբ գետ Գալիլեայի մէջ էր, 7—Ըսելով Թէ Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի ու խաչը ելլէ, ու երրորդ օրը յարութիւն առնէ, 8—Ու մխիթարներին բերին անոր խօսքերը, 9—ու գերեզմանէն դառնալով՝ այս ամէն բաները պատմեցին տասնմէկին ու բոլոր ուրիշներուն։ 10—Ու էին Մարիամ Մադգաղենացի ու Յովհաննա և Յակոբոսի Մարիամ, ու անոնց հետ ուրիշներ ալ, որոնք այս բաները առաքեալներուն պատմեցին։ 11—Ու անոնց առջև ցնորական խօսքեր երեւցան անոնց դրուցածը, ու չէին հաւատար անոնց։ 12—Բայց Պետրոս ելաւ վազեց դէպ ի գերեզմանը, ու ծռելով նայեցաւ և տեսաւ որ միայն կտաւները կը կնայէին. ու գնաց՝ իր մտքին մէջ զարմանալով այն եղածին վրայ։

13—Ու ահա անոնցմէ երկուքը նոյն օրը գեղ մը կ'երթային, որ Երուսաղէմէ վաթսուն ասպարէզ հեռու էր, և անոր անունը Էմմաուս էր։ 14—Ու անոնք կը խօսէին իրարու հետ այս բոլոր եղած անցքերուն վրայով։ 15—Ու եղաւ որ երբ անոնք կը խօսակցէին ու խորհրդածութիւն կ'ընէին, Յիսուս ինք ալ մօտենալով անոնց հետ կ'երթար։ 16—Բայց անոնց աչքերը բռնուած էին, որպէս զի զինք չճանչնան։ 17—Ու ըսաւ անոնց, Ի՞նչ են այդ խօսքերը՝ որ քալելով իրարու հետ կը խօսակցիք, ու տրտում եք։ 18—Պատասխան առաւ անոնցմէ մէկը, որուն անունը Կղէոպաս էր, ու ըսաւ անոր, Դո՞ն միայն Երուսաղէմի մէջ կը կենաս, ու չես գիտեր Թէ ինչե՛ր եղան հոն այս օրերս։ 19—Ու ինք ըսաւ անոնց, Ի՞նչ։ անոնք ալ ըսին իրեն, Նազովրեցի Յիսուսի համար, որ Աստուծոյ և բոլոր ժողովուրդին առջև գործով ու խօսքով զօրաւոր մարգարէ մը եղաւ։ 20—Ի՛նչպէս քահանայապետները ու մեր իշխանները մատնեցին զանիկա և խաչը հանեցին։ 21—Իսկ մենք կը յուսայինք Թէ անիկա էր որ Իսրայէլը պիտի ազատէր. և այս ամէնուն վրայ այս երրորդ օրն է որ այս բաները եղան։ 22—Նաև մեր մէյմէն մէկ քանի կիներ ալ մեզ զարմացուցին, որոնք առաւուանց կանուխ գերեզմանը գացին, 23—ու անոր մարմինը չգտնելով՝ եկան ու ըսին Թէ հրեշտակներու տեսիլք ալ տեսան, որոնք բսեր են Թէ անիկա ողջ է։ 24—Ու մերիններէն մէկ քանիներն ալ գերեզմանը գացին ու այնպէս գտան, ինչպես այն կիները դրուցեցին, միայն Թէ զինք չտեսան։ 25—Ան ալ բսաւ անոնց, Ով անմիտներ ու Թուլասիրտներ, հաւատալու այն բոլոր բաներուն, զորանք մարգարէները խօսեցան։ 26—Չէ՞ որ Քրիստոսի պէտք էր այս չարչարանքները կրել, և իր փառքը մտնել։ 27—Ու սկսելով Մովսէսէ և բոլոր մարգարէներէն, կը մեկնէր անոնց, ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ էր։ 28—Երբ մտեցան այն գեղին՝ ուր կ'երթային, ինք ալ կը ցուցնէր որպէս Թէ աւելի հեռու տեղ մը պիտի երթար։ 29—Բայց ստիպեցին զինք ու ըսին, Մեր քով կեցիր, վասն զի իրիկունը մօտ է և օրը իջած է. և մտաւ անոնց հետ կենալու։ 30—Ու եղաւ որ երբ ինք անոնց հետ սեղան նստաւ, հաց առաւ, օրհնեց, ու կոտրելով տուաւ անոնց։ 31—Աչքերն ալ բացուեցան ու զինք ճանչցան, և ինք անհետացաւ անոնց աչքէն։ 32—Ու իրարու կ'ըսէին, Չէ՞ որ սիրտերնիս մեր ներսիդին կը բորբոքէր, երբ ինք մեզի

հետ կը խօսէր ճամբան մէջ, և գիրքերը կը մեկնէր մեզի։

33—Ու ելան նոյն ժամուն երուսաղէմ գարձան, ու մէկտեղ ժողովուած գտան տասնըմէկը ու անոնց հետ եղողները, 34—Որոնք կ'ըսէին Թէ իրաւցնէ Տէրը յարութիւն առաւ, ու Սիմոնի երեւցաւ։ 35—Ու իրենք պատմեցին ինչ որ ճամբան վրայ եղաւ, և Թէ ինչպէս ինքզինք իրենց ճանչցուց հացը կտրած ատեն։

36—Ու քանի որ այս բաները կը խօսէին, Յիսուս ինք կայնեցաւ անոնց մէջտեղը ու բսաւ անոնց, Խաղաղութիւն ձեզի։ 37—Բայց անոնք զարհուրելով կը վախնային, ու կը կարծէին Թէ ոգի մը կը տեսնեն։ 38—Ու բսաւ անոնց, Ինչո՞ւ խռոված եք, և ինչո՞ւ սիրտերնուդ մէջ խորհուրդներ կ'ելլեն։ 39—Տեսէք ձեռքերս ու ոտքերս, որ ես ինքնս եմ։ չոչափեցէք զիս ու տեսէք, վասն զի ոգին մարմին և ոսկորներ չունենար, ինչպես զիս կը տեսնէք որ ունիմ։ 40—Ու զայս բսելով՝ ձեռքերը ու ոտքերը ցուցուց անոնց։ 41—Ու երբ տակաւին էջերը ուրախութենէն չէին հաւատար, և զարմանքի մէջ էին, բսաւ անոնց, Ուտելիք մը ունի՞ք հոս։ 42—Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ ու մեղրախորիսխ տուին իրեն։ 43—Ու առաւ կերաւ անոնց առջև։ 44—Ու բսաւ անոնց, Ասոնք են այն խօսքերը զորանք ձեզի խօսեցայ երբ գետ ձեզի հետ էի, Թէ Պէտք է որ կատարուին այն ամէնը՝ որոնք Մովսէսի օրէնքին մէջ ու մարգարէներուն մէջ և սաղմոսներուն մէջ ինծի համար գրուած են։ 45—Աչքն ատեն անոնց միտքը բացաւ որպէս զի գիրքերը հասկնան։ 46—Ու բսաւ անոնց Թէ Այսպէս գրուած է, և այսպէս պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, ու երրորդ օրը մեռելներէն յարութիւն առնել։ 47—Ու անոր անունովը ապաշխարութիւն ու մեղքերու Թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերու մէջ՝ Երուսաղէմէ սկսած։ 48—Ու դուք էք այս բաներուն վկաները։ 49—Ու ահա ես իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը զրկեմ. բայց դուք Երուսաղէմ քաղաքին մէջ նստեցէք, մինչև վերէն զօրութիւն առնէք ձեր վրայ։

50—Ու զանոնք մինչև Բեթանիա հանեց, ու իր ձեռքերը վեր վերցնելով օրհնեց զանոնք։ 51—Ու եղաւ որ երբ զանոնք կ'օրհնէր, զատուեցաւ անոնցմէ ու վեր կ'ելլէր երկինք։ 52—Անոնք ալ երկրպագութիւն րնելով՝ մեծ ուրախութեամբ Երուսաղէմ գարձան։ 53—Ու ամէն ատեն տաճարին մէջ էին, ու կը գովաբանէին և կ'օրհնէին զԱստուած։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

Ակիզբն էր Բանի, ու Բանը Աստուծոյ քով էր, և Բանը Աստուած էր։ 2—Անիկա սկիզբէն Աստուծոյ քով էր։ 3—Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։ 4—Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր։ 5—Ու լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր, ու խաւարը զանիկա չճանչցաւ։

6—Աստուծմէ զրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր։ 7—Անիկա վկայութեան եկաւ որպէս զի լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնը անոր միջոցով հաւատան։ 8—Ինք չէր այն լոյսը, հապա եկաւ՝ որպէս զի լոյսին համար վկայութիւն տայ։

9—Ճշմարիտ լոյսը ան էր, որ աշխարհ *եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ։ 10—Ինք աշխարհի մէջ էր, և աշխարհ անով եղաւ, ու աշխարհ զանիկա չճանչցաւ։ 11—Իրենները գալաւ, և իրենները զինք չընդունեցին։ 12—Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիները ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը։ 13—Որոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ, ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան։ 14—Ու Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (և անոր փառքը տեսանք՝ Հօրմէն միածնի փառքին պէս) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն։

15—Յովհաննէս վկայեց անոր համար և աղաղակեց՝ ըսելով, Ասիկա է, որուն համար կը զրուցէի, Ան որ իմ հետևէս կու գայ, ինծմէ առաջ եղաւ, վասն զի ինծմէ առաջ էր։ 16—Ու անոր լեցութենէն մենք ամէնս շնորհք առինք շնորհքի տեղ։ 17—Վասն զի օրէնքը Մովսէսի ձեռքով արուեցաւ, բայց շնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի ձեռքով եղան։ 18—Մէկը երբէք զԱստուած տեսած չէ, բայց միածին Որդին որ Հօրը ծոցն է, անիկա պատմեց։

19—Ու Յովհաննէսի վկայութիւնը այս է, երբ Հրեաները Երուսաղէմէ քահանաներ ու Ղեւացիները զրկեցին որպէս զի հարցնեն անոր Թէ Դուն ո՞վ ես։ 20—Ու անիկա խոստովանեցաւ ու չուրացաւ. խոստովանեցաւ Թէ Ես Քրիստոսը չեմ։ 21—Ու հարցուցին անոր, Հապա ի՞նչ. Նգիա՞ն ես։ և ըսաւ, Չեմ. Ան մարգարէ՞ն ես։ պատասխան տուաւ Թէ Ոչ։ 22—Ան ատեն ըսին անոր, Դուն ո՞վ ես. ըսէ մեզի, որպէս զի պատասխան տանինք մեզ զրկողներուն. դուն ի՞նչ կ'ըսես քեզի համար։ 23—Ըսաւ, Ես անոր ձայնն եմ, որ անապատին մէջ կը կանչէ, Շիտակեցէք Տէրոջը ճամբան, ինչպես Եսայի մարգարէն ըսաւ։ 24—Ու այն զրկուածները փարիսեցիներէն էին։ 25—Ու հարցուցին իրեն՝ ըսելով, Հապա ինչո՞ւ մկրտուիս կ'ընես, եթէ դուն Քրիստոսը չես, ու ոչ Եղիան, և ոչ մարգարէն։ 26—Պատասխան տուաւ անոնց Յովհաննէս ու ըսաւ, Ես ջրով կը մկրտեմ, բայց ձեր մէջ մէկը կայ զոր դուք չէք ճանչնար։ 27—Անիկա է իմ հետևէս եկողը որ ինծմէ առաջ եղաւ, որուն կօշիկին կապը քակելու ես արժանի չեմ։ 28—Այս բաները Բեթաբարայի մէջ եղան Յորդանանու անդիի կողմը, ուր Յովհաննէս կը կենար ու կը մկրտէր։

29—Հետևեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ իրեն կու գար, և ըսաւ, Ահա Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ։ 30—Ասիկա է որուս համար ես կը զրուցէի, Իմ հետևիս մարդ մը կու գայ որ ինծմէ առաջ եղաւ, վասն զի ինծմէ առաջ էր։ 31—Ու ես զանիկա չէի ճանչնար, բայց անոր համար ես եկայ ջրով մկրտելու, որպէս զի անիկա Իսրայէլի յայտնուի։ 32—Ու Յովհաննէս վկայութիւն տուաւ ըսելով՝ Թէ կը տեսնէի Հոգին որ աղաւնիի պէս երկինքէն կ'իջնէր, ու անոր վրայ կը հանգչէր։ 33—Ու ես զանիկա չէի ճանչնար, բայց ան որ զիս զրկեց ջրով մկրտելու, ինք ըսաւ ինծի, Որու վրայ տեսնես Հոգին, որ կ'իջնէ ու կը հանգչի անոր վրայ, անիկա է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ։ 34—Ու ես տեսայ, ու վկայեցի Թէ ասիկա է Աստուծոյ Որդին։

35—Հետևեալ օրը գարձեալ Յովհաննէս կայներ էր, և իր աշակերտներէն երկու։ 36—Ու նայելով Յիսուսի վրայ որ կը պտրաէր, ըսաւ, Ահա Աստուծոյ Գառը։ 37—Ու լսեցին անկէ երկու աշակերտները երբ կը խօսէր, ու գացին Յիսուսի հետևէն։ 38—Յիսուս երբ գարձաւ ու տեսաւ զանոնք որ էր հետևէն կու գային, ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք. անոնք ալ ըսին իրեն, Ռաբբի, (որ Թարգմանուելով վարդապետ ըսել է,) ո՞ւր է քու օթեւանդ։ 39—Ըսաւ անոնց, Եկէք ու տեսէք։ Եկան ու տեսան ուր տեղ որ էր իր օթեւանը, և այն օրը անոր քով կեցան, վասն զի ժամ տասնի տուեններէն էր։ 40—Սիմոն Պետրոսի եղբայրը Անդրէաս այն երկուքին մէկն էր, որոնք լսեցին Յովհաննէսէ և անոր հետևեցան գացին։ 41—Ասիկա նախ իր Սիմոն եղբայրը կը գտնէ և կ'ըսէ անոր, Գտանք Մեսիան, (որ *Քրիստոս կը Թարգմանուի։) 42—Ու տարաւ զանիկա Յիսուսի քով. Յիսուս անոր նայելով՝ ըսաւ, Դուն ես Յովհաննի որդին Սիմոն. դուն կեփաս պիտի ըսուիս, որ †Պետրոս կը Թարգմանուի։

43—Հետևեալ օրը Յիսուս Գալիլիա ելլել ուզեց, և Փիլիպպոս գտնելով՝ ըսաւ անոր, Եկուր իմ հետևէս։ 44—Ու Փիլիպպոս Բեթսայիդայէ էր. Անդրէասի ու Պետրոսի քաղաքէն։ 45—Փիլիպպոս կը գտնէ Նաթանայէլը և կ'ըսէ անոր. Ան, որու համար Մովսէս օրէնքին մէջ գրեց, և մարգարէներն ալ, գտինք՝ գոանք, այսինքն Յիսուս Նազովրեցին, Յովսէփի որդին։ 46—Ու Նաթանայէլ ըսաւ անոր, Նազարէթէ կարելի՞ է որ ոեւէ բան մը ըլլայ. ըսաւ անոր Փիլիպպոս, Եկուր ու տես։ 47—Յիսուս երբ տեսաւ Նաթանայէլը որ իրեն կու գար, ըսաւ անոր համար, Ահա իրաւցնէ Իսրայէլացի մը, որուն նենգութիւն չկայ։ 48—Նաթանայէլ ըսաւ անոր, Ուրկէ՞ կը ճանչնաս զիս. պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Դեռ Փիլիպպոս քեզ չկոչած, դուն որ թզենիին տակ էիր, ես քեզ տեսայ։ 49—Պատասխան տուաւ Նաթանայէլ ու ըսաւ անոր, Ռաբբի, դուն ես Աստուծոյ Որդին, դուն ես Իսրայէլի Թագաւորը։ 50—Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Արդ համար՝ որ քեզի ըսի Թէ քեզ թզենիին տակ տեսայ, կը հաւատա՞ս. տակի աւելի մեծ բաներ պիտի տեսնես։ 51—Ու ըսաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ձեզի հետև պիտի տեսնէք երկինքը բացուած, և Աստուծոյ հրեշտակները՝ որ կ'ելլեն ու կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ։

ԳԼ. Բ

Ո երրորդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի Կանա ժողովուրդը, և Յիսուսի մայրը հոն էր։ 2—Յիսուս ալ կանչուեցաւ այն հարսնիքը, ու իր աշակերտներն ալ։ 3—Ու երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր, Գինի չունին։ 4—Յիսուս ըսաւ անոր, Ով կին, դուն ինծի հետ ի՞նչ բան ունիս. իմ ժամանակս դեռ հասած չէ։ 5—Իր մայրը սպասաւորներուն ըսաւ, Ինչ որ ձեզի ըսէ, ըրէք։ 6—Հոն վեց հատ քարէ կարասներ գրուած կային Հրէից մաքրութեան սովորութիւնովը համաձայն, որոնց

*Կամ, գալով

†Այսինքն, Ծածկալ

*Այսինքն, վէմ

աւին մէկը երկա՛ կամ երեք մար Ք՚ն կ՚առնէր։ 7—Յիսուս բաւ անոնց, Լեցուցէ՛ք այդ կարասները ջրո՛վ։ ու լեցուցին զանոնք մինչեւ բերանը։ 8—Եւ բաւ անոնց, Հիմա հանեցէ՛ք ու սեղանապետին տարէ՛ք։ անոնք ալ տարին։ 9—Ու սեղանապետը երբ գինի եղած ջուրին համը առաւ, և չէր գիտեր ուրկէ ըլլար, (բայց սպասաւ արները որոնք ջուրը քաշեր էին, գիտէին,) սեղանապետը կը խօսի փեսային, 10—Ու անոր կ՚ըսէ, Ամէն մարդ ապրկ գինին առա՛ջ կը մատուցանէ, ու երբ խմած կ՚ըլլան, այն ատեն սոսկնագոյնը։ Բայց դուն ապրկ գինին մինչեւ հիմա պահեցիր։ 11—Յիսուս հրաշքներուն սկիզբը զոյս բրաւ Գալիլեայի Կանա Հաղ-ին մէջ, և իր փառքը յայտնեց։ ու իր աշակերտները հաւատացին իրեն։

12—Ասկէ հետև Յիսուս կափառնաւում իջաւ, ինք և իր մայրը ու իր եղբայրները և իր աշակերտները, ու չատ օրեր հոն չկեցան։

13—Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու Յիսուս Երուսաղէմ եկաւ։ 14—Ու տաճարին մէջ գտաւ արջառ ու ոչխար և աղաւնի ծախողները, ու սակի փոխողները ալ՝ որոնք նստեր էին։ 15—Ու չտանէ խարազան մը շինելով՝ ամէնը տաճարէն դուրս հանեց, ոչխարներն ալ ու արջառներն ալ, և սակի փոխողներուն պրինձները ցիրուցան բրաւ, ու սեղանները կործանեց։ 16—Ու աղաւնի ծախողներուն բաւ, Ասկէ վերցուցէ՛ք ասոնք, իմ Հօրս տաւնը առուտուրի տուն մի ընէ՛ք։ 17—Ու իր աշակերտները միտքերնին բերին որ գրուած է, Քու տանդ նախանձը զիս կերաւ։

18—Ալն ատեն պատասխան տուին Հրեաները ու բսին անոր, Ի՞նչ նշան կը ցուցնես մեզի՝ որ այդ բաները կ՚ընես։ 19—Պատասխան տուաւ Յիսուս ու բաւ անոնց, Քակեցէ՛ք այս տաճարը, ու երեք օրուան մէջ զանիկա պիտի կանգնեմ։ 20—Ու Հրեաները բսին, Քառասուներկու տարուան մէջ չշինուեցաւ այս տաճարը, և դուն երեք օրուան մէջ պիտի կանգնե՞ս զանիկա։ 21—Բայց ինք իր մարմնին տաճարին համար կ՚բսէր։ 22—Ուստի երբ ինք յարուցաւ մեռելներէն, իր աշակերտները միտքերնին բերին թէ այս բանը բաւ էր՝ ու հաւատացին գիրքին և Յիսուսի բաւած խօսքին։

23—Ու երբ զատկի տաճին տաճար Երուսաղէմ էր, շատ մարդիկ անոր բրած հրաշքները տեսնելով՝ հաւատացին անոր անուանը։ 24—Բայց ինք Յիսուս իր անձը անոնց չէր հաւատար, վասն զի ինք զիտէր զամէն մարդ։ 25—Ու պէտք չէր որ մէկը մարդու համար վկայութիւն տար իրեն, քանզի ինք գիտէր Թէ ի՛նչ կայ մարդուն ներսիդին։

Գլ. Գ

Եւ փարիսեցիներէն մարդ մը կար Նիկոդեմոս անունով, որ Հրէից իշխան էր։ 2—Անիկա գիշերով †Յիսուսի գալ եկաւ, և բաւ անոր, Ռաբբի, գիտենք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես, վասն զի մէ՛կը չկրնար բնել այդ հրաշքները զորոնք դուն կ՚բնես, եթէ Աստուած իրեն հետ չըլլայ։ 3—Պատասխան տուաւ Յիսուս և բաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ կ՚բսեմ քեզի, եթէ մարդ մը ներէնն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել։ 4—Նիկոդեմոս բաւ անոր, Ի՞նչպէս կրնայ մարդ մը ծնանիլ, որ ծերացած է. Հնարաւո՞ր բան է որ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնանի։ 5—Յիսուս պատասխան տուաւ, Ճշմարիտ ճշմարիտ կ՚բսեմ քեզի, եթէ մարդ մը չծնրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ 6—Մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն ծնածը Հոգի է։ 7—Զուն մի զարմանար որ քեզի բսի, Պէտք է ձեզի նորէն ծնանիլ։ 8—Հովը ուր որ ուզէ՝ կը փչէ, և անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ կամ ո՛ւր կ՚երթայ։ այսպէս ալ է այն ամէնը որ Հոգիէն կը ծնանի։ 9—Պատասխան տուաւ Նիկոդեմոս ու բաւ անոր, Այդ ի՞նչպէս կրնայ բլլալ։ 10—Պատասխան

*Ոմանք Յ՚ասէլցնէն, իրենց
†Ոմանք, անոր
‡Կամ, վերէն

տուաւ Յիսուս ու բաւ անոր, Դուն Իսրայէլի վէ վարդապետ մրն ես, և այս բաները չի՞ս գիտեր։ 11—Ճշմարիտ ճշմարիտ կ՚բսեմ քեզի, Թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք, և ինչ որ տեսանք՝ կը վկայենք, ու մեր վկայութիւնը չկ՚ընդունէք։ 12—Եթէ երկրաւոր բաները ձեզի զրուցեցի ու չկ՚հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք եթէ երկնաւոր բաները ձեզի զրուցեմ։ 13—Ու մէ՛կը երկինք չելաւ։ բայց անիկա միայն որ երկինքէն իջաւ, Որդին մարդոյ որ երկինքն է։ 14—Ու ինչպէս Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, այնպէս պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ։ 15—Որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ 16—Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ 17—Վասն զի Աստուած իր Որդին չղրկեց աշխարհ, որպէս զի աշխարհը դատէ, հապա՝ որպէս զի աշխարհ անով փրկուի։ 18—Ան որ կը հաւատայ անոր՝ չդատապարտուիր։ Եւ ան որ չհաւատար՝ անիկա արդէն դատապարտած է, վասն զի Աստուծոյ միածին Որդւոյն անունը չհաւատաց։ 19—Ու այս է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, քանզի իրենց գործերը չար էին։ 20—Վասն զի ամէն ով որ չար կը գործէ, անիկա լոյսը կ՚ատէ. և լոյսին գալ չգար, որպէս զի իր գործերը չյանդիմանուին։ 21—Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ, լոյսին գալ կու գայ, որպէս զի իր գործերը յայտնի ըլլան Թէ Աստուծով գործուածքան։

22—Ա՛յս բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր աշակերտները Հրեաստանի երկիրը, և հոն կը կենար անոնց հետ ու մկրտէր, ու մկրտութիւն կ՚ընէր։ 23—Յովհաննէս ալ Այինոնի մէջ Սաղիմի մօտ մկրտութիւն կ՚ընէր, որովհետև հոն չատ ջուր կար, ու կու գային և կը մկրտուէին։ 24—Վասն զի Յովհաննէս դեռ բանտը գրուած չէր։

25—Ա՛յն ատեն վիճաբանութիւն մը եղաւ Յովհաննէսի աշակերտներէն *Հրեացներուն հետ՝ մաքրութեան վրայով։ 26—Ու եկան Յովհաննէսի և անոր բսին, Ռաբբի, անիկա որ քեզի հետ Յորդանանու անդիի կողմն էր, որու համար դուն վկայութիւն տուիր, ահա ինք կը մկրտէ և ամէնը անոր կու գան։ 27—Պատասխան տուաւ Յովհաննէս և բաւ, Մարդ մը չկրնար բան մը առնել, եթէ երկինքէն որուած չըլլայ անոր։ 28—Դուք ձեզմէ կը վկայէք ինծի համար, որ բսի Թէ ես Քրիստոսը չեմ, հապա անոր առջեւէն զրկուած եմ։ 29—Ան որ հարսն ունի, փեսան անիկա է. բայց փեսային բարեկամը որ կը կենայ ու կը լսէ անոր, մեծապէս կ՚ուրախանայ փեսային ձայնին համար։ ուստի այս իմ ուրախութիւնս լցուած է։ 30—Անիկա պէտք է որ մեծնայ, բայց ես պզտիկնամ։ 31—Ան որ վերէն կու գայ՝ ամէնէն վեր է. ան որ երկրէ է՝ երկրաւոր է, ու երկրէ կը խօսի. ան որ երկինքէն կու գայ՝ ամէնէն վեր է։ 32—Ու ինչ որ տեսաւ ու լսեց, զայն կը վկայէ, ու անոր վկայութիւնը մէ՛կը չընդունիր։ 33—Ան որ անոր վկայութիւնը կ՚ընդունի, կնքեց Թէ Աստուած ճշմարիտ է։ 34—Վասն զի ան զոր Աստուած դրկեց, Աստուծոյ խօսքերը կը խօսի, վասն զի Աստուած անոր չափով չտար Հոգին։ 35—Հայրը կը սիրէ Որդին, և ամէն բան անոր ձեռքը տուած է։ 36—Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի. և ան որ Որդւոյն չհնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ։

Գլ. Դ

Երբ երը Տէրը իմացաւ որ փարիսեցիները լսեր են Թէ Յիսուս Յովհաննէսէ աւելի աշակերտներ կ՚ընէ և կը մկրտէ, 2—(թէպէտ ոչ Թէ Յիսուս ինք կը մկրտէր, հապա իր աշակերտները,) 3—Թողուց Հրէաստանը ու նորէն Գալիլեա գնաց։ 4—Ու պէտք եղաւ որ

*Կամ, Հրեայի մը

Սամարիայի մէջէն անցնի։ 5—Ուստի եկաւ Սամարացւոց մէկ քաղաքը, որուն անունը Սուքար էր, այն անդին մօտ՝ զոր Յակոբ իր որդւոյն Յովսէփի տուաւ։ 6—Ու հոն Յակոբի մէկ աղբիւրը կար։ Յիսուս ալեծանրացեալ յոգնած ըլլալով այն աղբիւրին վրայ նստաւ. և ժամը վեցին առաւօտեան էր։

7—Սամարիայէ կին մը եկաւ ջուր հանելու. Յիսուս ըսաւ անոր, Ինծի ջուր տուր խմելու. 8—(Քանզի իր աշակերտները քաղաքը գացեր էին, որպէս զի ուտելիք առնեն,) 9—Այն առեն Սամարացի կինը ըսաւ անոր, Դուն որ Հրեայ ես, ի՞նչպէս կ'ուզես ջուր խմել ինծմէ, Սամարացի կնոջմէ մը. վասն զի Հրեաները Սամարացւոց հետ հաղորդակցութիւն չեն ըներ։ 10—Յիսուս պատասխան առաւ ու ըսաւ անոր, Եթէ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը, և ով է ան որ քեզի կ'ըսէ, Ինծի ջուր տուր խմելու, դուն անկէ պիտի ուզէիր, և ինք քեզի կենդանի ջուր պիտի տար։ 11—Կինը ըսաւ անոր, Տէր, դուն ջրհան ալ չունիս, ու այս հորը խորունկ է. ուրեմն ուրկի՞ պիտի ունենաս այն կենդանի ջուրը։ 12—Մի՞թէ դուն մեր Յակոբ հօրմէն աւելի մի՞ն ես, որ այս հորը մեզի տուաւ, և ասկէ խմեց ինք ու իր որդիները և իր անասուններըն։ 13—Յիսուս պատասխան առաւ ու ըսաւ անոր, Ամէն ով որ այդ ջուրէն խմի, նորէն պիտի ծարաւի, բայց ով որ խմի այն ջուրէն զոր ես անոր պիտի տամ, յաւիտեան պիտի չծարաւի. 14—Հապա այն ջուրը զոր ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներսիդին ջուրի աղբիւր մի՝ որ յաւիտենական կեանքի համար կը բղխէ։ 15—Կինը ըսաւ անոր, Տէր, տուր ինծի այն ջուրը, որպէս զի չծարաւիմ, և հոս չգամ ջուր հանելու։ 16—Յիսուս ըսաւ անոր, Գնա քու այրդ կանչէ, ու հոս եկուր։ 17—Կինը պատասխան տալով ըսաւ, Ես այր չունիմ. Յիսուս ըսաւ անոր, Աղէկ ըսիր Թէ այր չունիմ, 18—Վասն զի դուն հինգ այր ունեցեր ես, և ան զոր հիմա ունիս՝ քու այրդ չէ. ատիկա շիտակ գրուեցիր։ 19—Կինը ըսաւ անոր, Տէր, կը տեսնեմ որ դուն մարգարէ մի՛ն ես։ 20—Մեր հայրերը այս լեռան վրայ երկրպագութիւն ըրին, և դուք կ'ըսէք Թէ Մէյն Երուսաղէմ է տեղը, ուր պէտք է երկրպագութիւն ընել։ 21—Յիսուս ըսաւ անոր, Ով կին, հաւատա ինծի որ ժամանակ կու գայ, երբ ոչ այս լեռան վրայ, և ոչ Երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընէք Հօրը։ 22—Դուք անոր երկրպագութիւն կ'ընէք, զոր չէք ճանչնար. մենք անոր երկրպագութիւն կ'ընենք, զոր կը ճանչնանք. վասն զի փրկութիւնը Հրեաներէն է։ 23—Բայց ժամանակ կու գայ ու հիմա ալ է, երբ ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով ու ճշմարտութիւնով, վասն զի Հայրն ալ իրեն այնպիսի երկրպագողներ կ'ուզէ։ 24—Աստուած Հոգի է, և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն։ 25—Կինը ըսաւ անոր, Գիտեմ որ Մեսիան կու գայ, (Քրիստոս ըսուածը,) երբ ինք գայ՝ ամէն բան մեզի պիտի պատմէ։ 26—Յիսուս ըսաւ անոր, Ես ան եմ՝ որ քեզի հետ կը խօսիմ։ 27—Ու այս Տուէին վրայ իր աշակերտները եկան, ու զարմացան որ ան հետ կը խօսէր. բայց անոնցմէ մէկը չըսաւ Թէ Ի՞նչ կ'ուզես, կամ Ի՞նչ կը խօսիս անոր հետ։ 28—Այն առեն կինը ձգեց իր ամփորը ու քաղաքը գնաց, և ըսաւ մարդոցը, 29—Եկէք տեսէք մարդ մը՝ որ բաւ ինծի ամէն ինչ որ գործեր եմ. արդեօք անիկա՞ է Քրիստոսը։ 30—Ու անոնք քաղաքէն ելան ու անոր կու գային։

31—Ու այս միջոցին աշակերտները իրեն կ'ազալէին ու կ'ըսէին, Ռաբբի, հաց կեր։ 32—Անիկա ըսաւ անոնց, Ես կերակուր ունիմ ուտելու՝ զոր դուք չէք գիտեր։ 33—Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու, Արդեօք մէկը ատոր ուտելու բան մը բերա՞ւ։ 34—Յիսուս ըսաւ անոնց, Իմ կերակուրս այն է որ ես զիս ղրկողին կամքը ընեմ, և անոր գործը կատարեմ։ 35—Չի՞ որ դուք կ'ըսէք Թէ Տակաւին չորս ամիս կայ որ հունձքի տուները գայ։ ահա ես ձեզի կ'ըսեմ, Աչքերնիդ վերցուցէք ու արտերուն նայեցէք, որ արդէն հերկուած հնձուելու դաշտեր են։ 36—Ու ան որ կը հնձէ՝ վարձք կ'առնէ, ու յաւիտենական կեանքի համար պտուղ կը ժողվէ, որպէս զի սերմանողը ու հնձողը մէկտեղ ուրախանան։ 37—Վասն զի այս բանին մէջ ճշմարիտ է այն խօսքը Թէ Ուրիշը կը սերմանէ և ուրիշը կը հնձէ։ 38—Ես ձեզ ղրկեցի հնձելու զոյն որ դուք չաշխատեցաք. ուրիշները աշխատեցան, ու դուք անոնց աշխատանքին մէջ մտաք։

39—Ու այն քաղաքէն շատ Սամարացիներ իրեն հաւատացին այն կնոջ խօսքին համար որ վկայեց, ըսելով Թէ Ինչ որ ես գործեր էի՝ բոլորը ինծի ըսաւ։ 40—Ու երբ Սամարացիները անոր եկան, կ'ազալէին անոր որ իրենց քով կենայ. ու հոկու օր հոն կեցաւ։ 41—Ու շատերը իրեն հաւատացին իր խօսքին համար։ 42—Ու կ'ըսէին կնոջը, Ասկէ հետև ոչ Թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, վասն զի մենք մեզմէ լսեցինք, և գիտենք որ ատիկա է Ճշմարտապէս աշխարհի Փրկիչը, Քրիստոսը։

43—Ու երկու օրէն հետև ելաւ անկէ և Գալիլեա գնաց։ 44—Վասն զի Յիսուս ինք վկայեց Թէ Մարգարէ մը իր գաւառին մէջ պատիւ չունենար։ 45—Ու երբ Գալիլեա եկաւ, Գալիլեացիները զինք ընդունեցին, քանզի տեսած էին այն բոլոր հէ՜նց՝ որ զորձեց ինք երուսաղէմի մէջ տօնին առեն. վասն զի իրենք ալ այն տօնին գացեր էին։

46—Ու Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց Կանա քա՜ղ՜ա՜ք՜ը՜, ուր ջուրը գինի րրած էր. և հոն ազնուականի մէկը կար, որուն որդին հիւանդ էր Կափառնայումի մէջ։ 47—Ասիկա լսելով որ Յիսուս Հրեաստանէ Գալիլեա եկեր է, եկաւ անոր ու կ'ազալէր որ իջնէ և իր որդին բժշկէ, վասն զի մեռնելու վրայ էր։ 48—Այն առեն Յիսուս ըսաւ անոր, Եթէ նշաններ ու հրաշքներ չտեսնէք, բնաւ պիտի չհաւատաք։ 49—Ազնուականը ըսաւ անոր, Տէր, իջիր քանի որ իմ տղաս մեռած չէ։ 50—Յիսուս ըսաւ անոր, Գնա, քու որդիդ ողջ է. մարդն ալ հաւատաց այն խօսքին զոր Յիսուս իրեն ըսաւ, ու գնաց։ 51—Ու երբ կ'իջնէր, իր ծառաները գիմաւորեցին զինք, և ուրախ ուրախ ըսելով Թէ Քու տղադ ողջ է։ 52—Ուստի հարցուց անոնց Թէ ո՛ր ժամին սկսաւ ապէկի գտնալ. և ըսին իրեն, Երէկ ժամը եօթնին տենդը թողուց զանիկա։ 53—Այն առեն գիտցաւ ատոր հայրը Թէ այն ժամն էր երբ Յիսուս իրեն ըսաւ Թէ Քու որդիդ ողջ է. ու հաւատաց ինք և իր բոլոր տունը։ 54—Այս նորէն երկրորդ հրաշքն էր զոր Յիսուս ըրաւ, երբ Հրեաստանէ Գալիլիա եկաւ։

ԳԼ. Ե

Ասկէ հետև Հրէից տօն էր, և Յիսուս Երուսաղէմ գնաւ։ 2—Ու Երուսաղէմի մէջ Ոչխարաց Դրան քով աւազան մը կայ, որ Եբրայեցերէն Բեթզեդա կ'ըսուի, որ հինգ սրահ ունի։ 3—Անոնց մէջ խիստ շատ հիւանդներ պառկած էին, կոյրեր, կաղեր, չորցածներ, որոնք կը սպասէին ջուրին խառնուելուն։ 4—Վասն զի հրեշտակ մը ժամանակ ժամանակ ատենը կ'իջնէր ու ջուրերը կը խառնէր, և ով որ ջուրին խառնուելէն հետև առաջ մտնէր՝ կը ջժշկուէր ի՛նչ հիւանդութիւն ալ որ ունենար։ 5—Ու հոն մարդ մը կար, որ երեսունութ տարիէ ի վեր հիւանդութիւն մը ունէր։ 6—Յիսուս երբ տեսաւ զանիկա որ ինկած պառկած էր, ու գիտցաւ որ շատ ժամանակէ ի վեր է, ըսաւ անոր, Կ'ուզե՞ս առողջանալ։ 7—Հիւանդը պատասխան առաւ անոր, Տէր, մարդ մը չունիմ որ երբ ջուրերը խառնուին զիս ատաղանը ձգէ. հապա քանի որ ես ինծը կը շարժիմ, ինծմէ առաջ ուրիշ մը կ'իջնէ։ 8—Յիսուս ըսաւ անոր, Ելիր, մահիճդ առ ու քալէ։ 9—Ու իսկոյն մարդը առողջացաւ, ու իր մահիճը վերցնելով կը քալէր. ու այն օրը շաբաթ էր։ 10—Այն առեն Հրեաները ըսին բժշկուած մարդուն, Շաբաթ է, և արժան չէ որ մահիճդ վերցնես։ 11—Պատասխան առաւ անոնց ան ըսաւ, Ան որ զիս բժշկեց՝ ինք ինծի ըսաւ,

Մահինդ առաւ զգալն։ 12—Ուստի հարցուցին անոր, Ո՛վ է այն մարդը որ քեզի բսաւ, Մահինդ առ ու գալէ։ 13—Եւ բժշկուողը չէր գիտեր Թէ ո՛վ է ան, վասն զի Յիսուս ժկտի քաշուեցաւ՝ այն տեղ բազմաթիւն ըլլալուն համար։ 14—Անկէ ետքը Յիսուս զանիկա տաճարին մէջ գտնելով՝ բսաւ անոր, Ահա բժշկուեցար, ալ մեղք մի գործեր, որ ալ աւելի չար բան մը չպատահի քեզի։ 15—Գնաց մարդը, ու Հրեաներուն պատմեց Թէ Յիսուս է որ զինք բժշկեց։

16—Եւ ասոր համար Հրեաները կը հալածէին Յիսուս, և կը փնտռէին զանիկա սպաննել, որ այս բաները շաբաթ օրը կ'ընէր։ 17—Ու Յիսուս պատասխան տուաւ անոնց, Իմ Հայրս մինչև հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ։ 18—Ասոր համար ա՛լ աւելի կը փընտռէին Հրեաները զանիկա սպաննել, վասն զի ոչ Թէ միայն շաբաթ օրը կը լուծէր, հապա նաև զԱստուած իր Հայրը կ'անուանէր, ու այսպէս ինքզինք Աստուծոյ հաւասար կ'ընէր։ 19—Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու բսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որդին ինքիմքէ բան մըն ալ չկրնար ընել, միայն Թէ ինչ որ տեսնէ զոր Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկա կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ։ 20—Քանզի Հայրը կը սիրէ Որդին, և ամէն բան կը ցուցնէ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ. և ասոնցմէ ալ աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէս զի դուք զարմանաք։ 21—Վասն զի ինչպէս Հայրը մեռելները կը յարուցանէ ու կենդանի կ'ընէ, այնպէս ալ Որդին զորոնք կ'ուզէ կը կենդանացնէ։ 22—Քանզի Հայրը մէկը չդատաեր, հապա , ամէն դատաստանը Որդոյն տուաւ։ 23—Որպէս զի ամէնը պատուեն Որդին, ինչպէս Հայրը կը պատուեն. ան որ Որդին չպատուեր, զանիկա զրկող Հայրը չպատուեր։ 24—Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի Թէ Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ, և կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի, ու դատապարտութեան տակ չէ գիտար, հապա մահուանէ դէպ ի կեանք անցած է։ 25—Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ պիտի գայ և ալ հիմա է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդւոյն ձայնը, և անոնք որ կը լսեն, պիտի ապրին։ 26—Վասն զի ինչպէս Հայրը իր անձին մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդւոյն տուաւ որ իր անձին մէջ կեանք ունենայ։ 27—Ու դատաստան ընելու ալ իշխանութիւն տուաւ անոր, քանզի անիկա Որդի մարդոյ է։ 28—Ասոր վրայ մի զարմանաք. վասն զի ժամանակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, 29—Ու դուրս պիտի գան, անոնք որ բարի գործեր են՝ կեանց յարութեան համար, և անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար։ 30—Ես ինքիմքէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ, և իմ դատաստանս արդար է, վասն զի ես իմ կամքս չեմ փնտռեր, հապա *անոր կամքը որ զիս զրկեց։ 31—Եթէ ես ինծի համար վկայեմ, իմ վկայութիւնս ճշմարիտ չէ։ 32—Ուրիշ մըն է որ ինծի համար կը վկայէ. և ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը՝ զոր ինք ինծի համար վկայեց։ 33—Դուք Յովհաննէսի ղրկեցիք, և ինք ճշմարտութեանը վկայեց։ 34—Բայց ես ոչ Թէ մարդոյմէ վկայութիւն կ'առնեմ, հապա այս բաները կ'ըսեմ որպէս զի դուք փրկուիք։ 35—Անիկա ճրագ մըն էր որ կը վառէր ու լոյս կու տար, և դուք փիլ մը ատեն ուզեցիք անոր լուսովը ուրախանալ։ 36—Բայց ես Յովհաննէսի վկայութենէն ալ մեծ վկայութիւն ունիմ. քանզի այն գործերը զորոնք Հայրը ինծի տուաւ որ կատարեմ, այն նոյն գործերը զորոնք ես կը գործեմ, ինծի համար կը վկայեն Թէ Հայրը զիս զրկեց։ 37—Ու Հայրը որ զիս զրկեց, ինք վկայեց ինծի համար. դուք բնաւ անոր ձայնը չլսեցիք, ոչ ալ անոր կերպարանքը տեսաք. 38—Ու ոչ անոր խօսքը ձեր մէջ բնակած ունիք, քանզի զայն որ ինք զրկեց, դուք անոր չէք հաւատար։ 39—Գիրքերը քննեցէք, վասն զի դուք անոնցմով կը սեպէք

*Ոմանք, Հօրը

յաւիտենական կեանքը ունենալ, և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն. 40—Եւ դուք չէք ուզեր ինծի գալ, որ կեանք ունենաք։ 41—Ես մարդոցմէ փառք չեմ առներ։ 42—Բայց գիտեմ ձեզ որ Աստուծոյ սէրը ձեր մէջ չունիք։ 43—Ես իմ Հօրս անունովը եկայ, ու զիս չէք ընդունիր. եթէ ուրիշ մէկը իր անունովը գայ, զանիկա պիտի ընդունիք։ 44—Դուք ինչպէս կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք, և այն փառքը որ մէկ Աստուծմէն է՝ չէք փնտռեր։ 45—Մի կարծէք Թէ ես ձեզի համար ամբաստանութիւն պիտի բնեմ Հօրը. կայ մէկը որ ձեզի համար ամբաստանութիւն կ'բնէ, Մովսէս՝ որու դուք յուսացած էք։ 46—Վասն զի եթէ դուք Մովսէսի հաւատայիք, ինծի ալ պիտի հաւատայիք, քանզի անիկա ինծի համար գրեց։ 47—Բայց եթէ անոր գրածներուն չէք հաւատար, իմ խօսքերուս ինչպէս պիտի հաւատաք։

ԳԼ. Զ

Ա յս բաներէն ետքը Յիսուս Գալիլեայի, այսինքն Տիբերիայի, ծովուն անդիի կողմը գնաց. 2—Ու անոր հետևէն շատ ժողովուրդ կ'երթար, վասն զի կը տեսնէին այն հրաշքները զորոնք հիւանդներուն վրայ կ'ընէր։ 3—Ու Յիսուս լեռը ելաւ, ու հոն նստաւ իր աշակերտներուն հետ միասին։ 4—Ու Հրեից զատկի ոտը մօտ էր։

5—Յիսուս երբ իր աչքերը վեր վերցուց ու տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն, բսաւ Փիլիպպոսի, Ուրկէ՞ հաց ծախու առնենք որպէս զի սոոնք ուտեն։ 6—(Ըսաւ կ'ըսէր զանիկա փորձելու համար, քանզի ինք գիտէր ինչ պիտի ընէր։) 7—Փիլիպպոս պատասխան տուաւ անոր, Երկու հարիւր դահեկանի հաց սոոնց հերիք չէ, որ ամէն մէկը փիչ մը առնէ։ 8—Իր աշակերտներէն մէկը, Սիմոն Պետրոսի եղբայրը Անդրէաս, բսաւ իրեն, 9—Հոս պատանի մը կայ, որ հինգ գարեղէն հաց ու երկու ձուկ ունի, բայց անոնք ինչ պիտի ըլլան այդչափ մարդոց։ 10—Յիսուս բսաւ, Նստեցուցէք այդ մարդիկը. և այնտեղ շատ խոտ կար, ու մարդիկը նստան թուով հինգ հազարի չափ։ 11—Ու Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ, և աշակերտներուն բաժնեց, աշակերտներն ալ նստողներուն, նոյնպէս ալ ձուկերէն՝ որչափ որ ուզեցին։ 12—Ու երբ կշտացան, բսաւ իր աշակերտներուն, Ժողվեցէք ուելցած կտորուանքները, որպէս զի բան մը չկորսուի։ 13—Ուստի ժողվեցին, և տասուերկու կոզով լեցուցին այն հինգ գարեղէն հացերուն ճաշած կտորուանքները որոնք ուտողներուն ուելցան։ 14—Իսկ մարդիկը երբ Յիսուսի ըրած հրաշքը տեսան, կ'ըսէին Թէ Անիկա է ճշմարտապէս այն մարգարէն որ աշխարհ պիտի գար։ 15—Ու Յիսուս գիտնալով որ պիտի գան զինք յափշտակեն, որպէս զի զինք թագաւոր ընեն, նորէն մինակ լեռը գնաց։ 16—Ու երբ իրիկուն եղաւ, իր աշակերտները ծովեզերքը իջան։ 17—Ու նաւ մտնելով ծովուն անդիի կողմը Կափառնայում կ'երթային և արդէն մաքը կոխեր էր, ու Յիսուս դեռ իրենց եկած չէր։ 18—Մրրիկ ալ հովին սաստիկ փչելէն ականջվայ կ'ըլլար։ 19—Ուստի երբ Թէ փոչելով քառասնհինգ կամ հետևան ասպարէզի չափ գացին, տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն քալելով՝ նաւուն կը մօտենար, ու վախցան։ 20—Բայց ինք բսաւ անոնց, Ես եմ, մի վախնաք։ 21—Ան ատեն ուզեցին զանիկա նաւը առնել. և չուտ մը նաւը այն երկիրը հասաւ՝ ուր կ'երթային։

22—Հետևեալ օրը ժողովուրդը որ ծովուն անդիի կողմն էր, և տեսեր էր որ ուրիշ նաւակ չկար հոն այն մէկէն զատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտեր էին, և որ Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակը մտած չէր, հապա միայն անոր աշակերտները գացեր էին. 23—(Բայց Տիբերիայէ ուրիշ նաւակներ եկան այն տեղին մօտ՝ ուր Տէրոջը գոհանալովը հացը կերեր էին.) 24—Ան ատեն ժողովուրդը տեսնելով Թէ ոչ Յիսուս հոն է, ոչ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւերը մտան ու եկան Կափառնայում Յիսուսը փնտռելու։ 25—Ու երբ զանիկա ծովուն անդիի կողմը

գոան, բսին անոր, Թաբբի, ի՞րբ եկար գուն հոս։ 26—Յիսուս պատասխան տուաւ անոնց և բսաւ, ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Դուք զիս կը փընտռէք՝ ոչ թէ անոր համար որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար որ հացերէն կերաք ու կշտացաք։ 27—Գործեցէք, ոչ թէ կորսուական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ, զոր Որդին մարդոյ ձեզի պիտի տայ. վասն զի Հայրն Աստուած զանիկա կնքեց։ 28—Ան ատեն բսին անոր, Ի՞նչ ընենք զգալս զի Աստուծոյ գործերը գործենք։ 29—Պատասխան տուաւ Յիսուս ու բսաւ անոնց, Ա՛յս է Աստուծոյ գործը, որ անոր զրկածին հաւատաք։ 30—Ըսին անոր, Բայց դուն ի՞նչ նշան կ՚ընես որ տեսնենք ու քեզի հաւատանք. ի՞նչ կը գործես։ 31—Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան. ինչպէս գրուած է, Երկինքէն հաց տուաւ անոնց զգալս զի ուտեն։ 32—Ու Յիսուս բսաւ անոնց, ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր հացը։ 33—Վասն զի Աստուծոյ [illegible] հացը այն է որ երկինքէն կ՚իջնէ, ու աշխարհի կեանք կու տայ։ 34—Ուստի ըսին անոր, Տէր, միշտ տուն այդ հացը մեզի տուր։ 35—Ու Յիսուս բսաւ անոնց, Ես եմ կենաց հացը. ան որ ինծի կու գայ, երբէք պիտի չանծաքննայ, և ան որ ինծի կը հաւատայ, պիտի չծարաւի։ 36—Բայց ես ձեզի բսի որ դուք զիս տեսաք ալ, ու չէք հաւատար։ 37—Ամն ամիներ զոր Հայրը ինծի կու տայ, ինծի պիտի գայ, և ան որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ։ 38—Վասն զի ես երկինքէն իջայ, ոչ թէ իմ կամքս բնելու, հապա անոր կամքը՝ որ զիս զրկեց։ 39—Ու զիս զրկող Հօրը կամքը այս է որ ամն ամիներ զոր ինք ինծի տուաւ, չկորնցնեմ ամնիկ, հապա անոր յարութիւն առնել պտի վերջին օրը։ 40—Քանզի զիս զրկողին կամքը այս է, որ ամն ամիներ որ կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր, յաւիտենական կեանք ունենայ. ես ալ անոր յարութիւն առնել պտի վերջին օրը։

41—Ուստի Հրեաները արտունչ կ՚բնէին իրեն համար, վասն զի բսաւ Թէ ես եմ երկինքէն իջած հացը։ 42—Ու կ՚բսէին, Ասիկա Յովսէփի որդին Յիսուս չէ՞, որուն հայրը ու մայրը մենք կը ճանչնանք. արեմն ի՞նչպէս կ՚բսէ ասիկա Թէ ես երկինքէն իջայ։ 43—Պատասխան տուաւ Յիսուս ու բսաւ անոնց, Տրտունչ մի բնէք ձեր մէջ։ 44—Մէկը չկրնար ինծի գալ, եթէ զիս ղրկող Հայրը գանիկա չգաչէ, ու ես անոր յարութիւն առնել պտի պտի վերջին օրը։ 45—Մարգարէներուն մէջ գրուած է, Ու ամենն ալ Աստուծմէ սորված պիտի բլլան. այն ամենը որ Հօրմէն կը լսէ ու կը սորվի, ինծի կու գայ։ 46—Ոչ թէ մէկը Հայրը տեսած է, եթէ ոչ ան՝ որ Աստուծմէ է, անիկա Հայրը տեսած է։ 47—Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի Թէ Ան որ ինծի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի։ 48—Ես եմ կենաց հացը։ 49—Ձեր հայրերը անապատին մէջ մանանան կերան ու մեռան։ 50—Ա՛յս է այն հացը որ երկինքէն կ՚իջնէ, որպէս զի եթէ մէկը ասկէ ուտէ, չմեռնի։ 51—Ես եմ կենդանի հացը որ երկինքէն իջայ. եթէ մէկը այս հացէն ուտէ, յաւիտեան պիտի ապրի. և այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինս է, զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար։

53—Ասոր վրայ Հրեաները իրարու հետ կը վիճէին ու կ՚բսէին, Ի՞նչպէս կրնայ ասիկա չէ մարմինը մեզի տալ ուտելու։ 54—Իսկ Յիսուս բսաւ անոնց, ճշմարիտ ճշմարիտ կ՚բսեմ ձեզի, եթէ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք և անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար։ 55—Ով որ իմ մարմինս ուտէ և իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ՚ունենայ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը։ 56—Վասն զի իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս ճշմարիտ բմպելիք է։ 57—Ան որ իմ մարմինս կ՚ուտէ և իմ արիւնս կը խմէ, անիկա իմ ներսիդիս կը բնակի ու ես անոր ներսիդին, 58—ինչպէս կենդանի Հայրը զիս զրկեց, ու ես կենդանի եմ Հօրը ձեռքով, նոյնպէս ալ ան որ զիս կ՚ուտէ, ինք ալ իմ ձեռքով կենդանի կը մնայ։ 59—Ա՛յս է այն հացը որ երկինքէն իջած է. ոչ թէ ինչպես հայրերդիդ մանանան կերան ու մեռան. ով որ այս հացը ուտէ, յաւիտեան պիտի ապրի։

60—Ա՛յս բաները զրուցեց ժողովրանին մէջ երբ Կափառնայումի մէջ կը սորվեցներ։

61—Ու աշակերտներէն շատերը երբ լսեցին՝ բսին, Խիստ է այդ խօսքը, ո՞վ կրնայ ատոր մասիկ ընել։ 62—Յիսուս երբ ինքներէն հասկցաւ որ իր աշակերտները այն բանին համար արտունչ կ՚բնեն, բսաւ անոնց, Աս[illegible] ձեզ կը գայթակղեցնէ՞։ 63—Հապա ի՞նչ դէտ եթէ[illegible]էք, եթէ տեսնէք Որդին մարդոյ որ կ[illegible] ուր առաջ էր։ 64—Հոգին է կենդանի բնազը, մարմինը շահ մը չբներ. այն խօսքերը զորս ես ձեզի ՚կը խօսիմ, հոգի ու կեանք են։ 65—Բայց ձեր մէջեն կան ոմանք որ չեն հաւատար. վասն զի Յիսուս սկիզբէն գիտէր Թէ ո՛վ են անոնք որ չեն հաւատար, և ո՛վ է ան որ զինք պիտի մատնէ։ 66—Ու կ՚բսէր, Ասոր համար ձեզի բսի որ Ա՛ՀԸ չկրնար ինծի գալ, եթէ իմ Հօրմէս արուած չըլլայ անոր։

67—Ա՛յս պատճառաւ իր աշակերտներէն շատերը ետ գացին, և ալ իրեն հետ չէին պտրաեր։ 68—Ա՛յն ատեն Յիսուս տասներկուքին բսաւ, Մի՞թէ դուք ալ կ՚ուզէ՞ք երթալ։ 69—Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր, Տէր, որո՞ւ պիտի երթանք, դուն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս։ 70—Ու մենք հաւատացինք ու գիտցանք Թէ դուն ես Քրիստոսը †Աստուծոյ Որդին։ 71—Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ես ձեզ տասներկուքդ չընտրեցի՞, ու ձեզմէ ալ մէկը սատանայ է։ 72—Ձայս կ՚բսէր Իսկարիովթացի Սիմոնեան Յուդայի համար, վասն զի անիկա էր որ զինք պիտի մատնէր, ու տասներկուքէն մէկն էր։

*Ոմանք, խօսեցայ
†Ոմանք, կենդանի Աստուծոյ

ԳԼ. Է

Ե ետս բաներէն հետ Յիսուս Գալիլեայի մէջ կը պտրտէր, քանզի չէր ուզեր Հրէաստանի մէջ պտրտիլ, վասն զի Հրեաները զինք սպաննել կ՚ուզէին։

2—Ու Հրեաներուն տաղաւարաց[illegible] մօտը մօտ էր։ 3—Ուստի իր եղբայրները ըսին իրեն, Ելիր ասկէ ու Հրէաստան գնա, որպէս զի քու աշակերտդ ալ տեսնեն քու գործերդ զորս կ՚ընես. 4—Վասն զի մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինք յայտնի ըլլալ ուզէ. եթէ դուն այդ բաները կ՚ընես, ինքզինքդ աշխարհի յայտնէ։ 5—Քանզի իր եղբայրներն ալ չէին հաւատար իրեն։ 6—Իսկ Յիսուս բսաւ անոնց, Իմ ժամանակս գնա հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։ 7—Աշխարհ ձեզ չկրնար ատել, բայց զիս կ՚ատէ, վասն զի ես անոր վրայով կը վկայեմ Թէ իր գործերը չար են։ 8—Դուք ելէք այս տօնին. ես [գնա] չեմ ելլեր այս տօնին. վասն զի իմ ժամանակս գնա լցուած չէ։ 9—Զայս բսելով անոնց՝ ինք Գալիլեա մնաց։ 10—Բայց երբ իր եղբայրները ելան, եթոքը ինք ալ ելաւ տօնին, ոչ թէ յայտնի՝ հապա գաղտուկ կերպով մը։

11—Ու Հրեաները տօնին տեղը կը փնտռէին զինք, ու կ՚բսէին, Ո՞ւր է ասիկա։ 12—Ու ժողովուրդին մէջ չատ չչնչին կար անոր վրայով. ոմանք կ՚բսէին Թէ Ազնիւ մարդ է. ուրիշները կ՚բսէին, Ոչ, հապա ժողովուրդը կը մոլորեցնէ։ 13—Սակայն մէկը անոր վրայով համարձակ չէր խօսեր Հրեաներուն վախէն։

14—Իսկ երբ տօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը ելաւ ու կը սորվեցնէր։ 15—Ու Հրեաները կը զարմանային ու կ՚բսէին, Ի՞նչպէս ասիկա գիրքերը գիտէ, որ սորված չէ։ 16—Յիսուս պատասխան տուաւ անոնց ու բսաւ, Իմ վարդապետութիւնս իմս չէ, հապա զիս զրկողինն է։ 17—Եթէ մէկը կ՚ուզէ անոր կամքը բնել, պիտի գիտնայ այս վարդապետութեան համար Թէ արդեօք Աստուծմէ՞ է՝ Թէ ես ինքիրմէս

կը խօսէր։ 18—Ան որ ինքզինքն կը խոստի, իր անձին փառքը կը փնտռէ, բայց ան որ զինք ղրկողին փառքը կը փրնտռէ, անիկա ճշմարիտ է, և անոր քովէ անիրաւութիւն չկայ։ 19—Մովսէս չտուա՞ւ ձեզի օրէնքը, ու ձեզմէ մէ՛կն ալ չպահեր օրէնքը։ 20—Ինչո՞ւ կը փնտռէք զիս սպաննել։ պատասխան տուաւ Ժողովուրդը ու ըսաւ, Դև կայ քու ներսդ։ ո՞վ քեզ կը փնտռէ սպաննել։ 21—Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց, Գործ մը գործեցի, ու ամէնդ ալ զարմացեր էք։ 22—Արդ Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ, (որ ոչ թէ Մովսէսէ էր՝ հապա նախնիքներէն,) ու շաբաթ օրը մարդ կը թլփատէք։ 23—Եթէ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ՚առնէ՝ որպէս զի Մովսէսի օրէնքը չկոտրի, ինծի կը բարկանա՞ք որ ես շաբաթ օրը ամբողջ մարդ մը բժշկեցի։ 24—Աչքի երեւոյթին պէս դատաստան մի ընէք, հապա արդար դատաստան ըրէք։

25—Ան ատեն երուսաղէմացիներէն ոմանք կ՚ըսէին, Աթէա՞ ան չէ՞ զոր կը փնտռեն սպաննել։ 26—Ու ահա յայտնի կը խօսի, ու բան մը չեն ըսեր անոր. միթէ իշխանները գիտացա՞ծ են թէ սաիկա ճշմարտապէս Քրիստոսն է։ 27—Սակայն մենք սաիկա գիտենք ուրկի՛ է։ բայց Քրիստոս երբ գայ, մէ՛կը չգիտեր ուրկի՛ է։ 28—Ու Յիսուս գանի որ կը սորվեցնէր, տաճարին մէջ, ազաղակեց՝ ըսելով, Զիս ալ գիտէք, և ուրկի՛ ըլլալս ալ գիտէք. ու ես ինքզինքէս եկած չեմ, հապա ան որ զիս ղրկեց՝ ճշմարիտ է, զոր դուք չէք գիտեր։ 29—Բայց ես գիտեմ զանիկա, վասն զի ես անկէ եմ, և անիկա զիս ղրկեց։ 30—Ուստի կը փնտռէին զինք բռնել, բայց մէ՛կն ալ իրեն ձեռք չդարկաւ, վասն զի իր ժամանակը դեռ հասած չէր։ 31—Ու Ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն, և կ՚ըսէին, Քրիստոս երբ գայ, աստղմէ աւելի նշաննե՞ր պիտի բնէ, որոնք ասկիակ կ՚ընէ։

32—Փարիսեցիները լսեցին Ժողովուրդին այս չշնչիները անոր վրայով։ ու փարիսեցիները և քահանայապետները պատասխանէներ ղրկեցին, որպէս զի զանիկա բռնեն։ 33—Իսկ Յիսուս *ըսաւ, Քիչ մը ժամանակ ալ ձեզի հետ եմ, ու կ՚երթամ անոր որ զիս ղրկեց։ 34—Զիս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք, և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։ 35—Ան ատեն Հրեաները ըսին իրարու, Ո՞ր պիտի երթայ սաիկա, որ մենք զինք պիտի չգտնենք։ միթէ †հեթանոսներուն հէն ցիրուցան եղածները՞ն պիտի երթայ, և հեթանոսներո՞ւն պիտի սորվեցնէ։ 36—Ի՞նչ է այն խօսքը զոր ըրաւ ցնց, Զիս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք, և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։

37—Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կայներ էր, կ՚ազազակէր ու կ՚ըսէր, Եթէ մէկը ծարաւ է, թող ինծի գայ ու խմի։ 38—Ան որ ինծի կը հաւատայ, ինչպէս գիրքը կ՚ըսէ, անոր փորէն կենդանի յորի գետեր պիտի բղխեն։ 39—Զայս բաւ Հոգիին համար զոր իրեն հաւատացողները պիտի առնէին, վասն զի Սուրբ Հոգին դեռ տրո՞ւած չէր տակաւին, քանզի Յիսուս դեռ փառաւորուած չէր։ 40—Ժողովուրդէն շատ մարդիկ երբ այս խօսքը լսեցին՝ կ՚ըսէին, Իրաւցնէ սաիկա է մարգարէն։ 41—Ուրիշները կ՚ըսէին, Աթէա՞ է Քրիստոսը։ ուրիշներն ալ կ՚ըսէին, Միթէ Քրիստոսը Գալիլեայէ՞ կու գայ։ 42—Չէ՞ որ գիրքը կ՚ըսէ Թէ Քրիստոս Դաւիթի սերունդէն ու Դաւիթի եղած գեղէն Բեթլեհեմէ կու գայ։ 43—Ուստի ժողովուրդին մէջ երկպառակութիւն եղաւ անոր համար։ 44—Ու անոնցմէ ոմանք ուզեցին բռնել զանիկա, բայց մէ՛կը անոր ձեռք չդարկաւ։

45—Ու սպասաւորները Նո՞ւիէ եկան քահանայապետներուն և փարիսեցիներուն. ու ասոնք ըսին անոնց, Ինչո՞ւ զանիկա հո՞ւ չբերիք։ 46—Պատասխան տուին սպասաւորները, Երբէք մէ՛կը այս մարդուն պէս խօսած չէ։ 47—Անոնք ալ փարիսեցիները պատասխան տուին անոնց և ըսին, Միթէ դո՞ւք ալ մոլորեցաք։ 48—Իշխաններէն կամ փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց անոր։ 49—Բայց այս ամբոխ ժողովուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նզովուած են։ 50—Նիկոդեմոս բաւ անոնց, (որ ---ընկեր գիշեր առեն իրեն եկեր էր, և անոնցմէ մէկն էր,) 51—Մեր օրէնքը մարդ կը դատե՞, եթէ առաջ անկէ բան մը չլսէ, և չգիտնայ թէ ի՞նչ կ՚ընէ, 52—Պատասխան տուին ու ըսին անոր, Միթէ գա՞լն ալ Գալիլեայէ՞ ես. քննէ ու նայէ որ Գալիլեայէ մարգարէ չելլեր։ 53—Ու ամէն մէկը իր տունը գնաց։

Գլ. Ը

Ե Յիսուս Ձիթենեաց լեռը գնաց։ 2—Ու առաւօտուց նորէն տաճարը եկաւ, և բոլոր Ժողովուրդը իրեն կուգար. ու ինք նստեր կը սորվեցնէր անոնց։ 3—Ու գպիրները ու փարիսեցիները չնաքեան մէջ բռնած կին մը բերին առջեւը, ու զանիկա մէջտեղը կայնեցնելով՝ 4—Ըսին իրեն, Վարդապետ, այս կինը չնաքեան մէջ այս մեղքը գործած տեղը բռնուեցաւ։ 5—Ու օրէնքին մէջ Մովսէս մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել։ Հիմա դուն ի՞նչ կ՚ըսես ---ը հո՞ւր։ 6—Զայս կ՚ըսէին՝ զանիկա փորձելով, որպէս զի անոր վրայ ամբաստանութիւն ընե--իր մը ունենան. բայց Յիսուս դէպ ի վար ծռելով՝ մատովը գետնին վրայ կը գրէր. 7—Սակայն երբ վրան իջնան՝ հարցնելով իրեն, վեր նայեցաւ ու ըսաւ անոնց, Ձեզմէ անմեղ եղողը՝ առաջ անոնց քար գարձէ տալը վրայ։ 8—Նիկա Թող գար ձգէ տալը վրայ։ 8—Ու նորէն դէպ ի վար ծռելով՝ գետնին վրայ կը գրէր։ 9—Ու անոնք ըսո՞ւ լսելով ու խրճո՞ւ խղճմտանքէն չանգիմանուելով՝ մէկիկ մէկիկ դուրս կ՚ելլէին, ծերերէն սկսած մինչև յետիններէը. և Յիսուս մինակ մնաց, ու կինը մէջտեղը կայնած։ 10—Ու Յիսուս վեր նայելով ու կնոջմէն զատ մէ՛կը չտեսնելով՝ ըսաւ անոր, Ով կին, ո՞ւր են անոնք որ քու վրայդ ամբաստանութիւն կ՚ընէին. մէ՛կը քեզ չդատապարտե՞ց։ 11—Ու անիկա ըսաւ, Ո՛չ մէկը, Տէր. ու Յիսուս ըսաւ անոր, Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու ասկէ ետև մեղք մի գործեր։

12—Ապ Յիսուս նորէն խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետևէս կու գայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենցաղ լոյսը պիտի ունենայ։ 13—Իսկ փարիսեցիները ըսին անոր, Դուն քու անձիդ համար կը վկայես, քու վկայութիւնդ ճշմարիտ չէ։ 14—Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Թէև ես իմ անձիս համար կը վկայեմ, ճ---յ իմ վկայութիւնս ճշմարիտ է, վասն զի գիտեմ ուրկի՛ եկայ և ո՛ր կ՚երթամ. բայց դուք չէք գիտեր ուրկի՛ կու գամ կամ ո՛ր կ՚երթամ։ 15—Դուք մարմինին նայելով գատաստան կ՚ընէք, ես բնաւ մէկը չեմ գատեր։ 16—Ու թէև գատելու ալ ըլլամ, իմ գատաստանս ճշմարիտ է, վասն զի ես մինակ չեմ, հապա ես՝ և Հայրը որ զիս ղրկեց։ 17—Ու ձեր օրէնքին մէջ ալ գրուած է Թէ երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է։ 18—Ես եմ որ իմ անձիս համար կը վկայեմ, ու կը վկայէ ինծի համար Հայրն ալ որ զիս ղրկեց։ 19—Ան ատեն ըսին անոր, Ո՞ւր է քու Հայրդ։ Յիսուս պատասխան տուաւ, Ոչ զիս գիտէք՝ և ոչ իմ Հայրս. եթէ զիս գիտնայիք, իմ Հայրս ալ պիտի գիտնայիք։

20—Յիսուս այս խօսքերը խօսեցաւ գանձատունը՝ երբ տաճարին մէջ կը սորվեցնէր. ու մէ՛կը չբռնեց զանիկա, վասն զի դեռ անոր ժամանակը հասած չէր։

21—Ու Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ես կ՚երթամ՝ ու զիս պիտի փնտռէք, և ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք. ուր ես կ՚երթամ, դուք չէք կրնար գալ։ 22—Ասոր վրայ Հրեաները կ՚ըսէին, Միթէ ինքզինք պիտի մեռցնէ՞, որ կ՚ըսէ Թէ Ուր ես կ՚երթամ, դուք չէք կրնար գալ։ 23—Ու ըսաւ անոնց, Դուք վարէն եք, ես վերէն եմ. դուք այս աշխարհէն եք, ես այս աշխարհէն չեմ. 24—Ասոր համար ձեզի ըսի Թէ ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք, վասն զի եթէ չհաւատաք Թէ ես եմ, ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք։ 25—Ան ատեն ըսին անոր, Դուն ո՞վ ես. և Յիսուս ըսաւ անոնց, Ինչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ։ 26—Շատ

---

*Ոմանք, անոնց ըսաւ.

†Յոյն. Յոյներուն

բաներ ունիմ ձեզի համար խօսելու և դատելու. բայց ան որ զիս ղրկեց՝ ճշմարիտ է, և ես ինչ որ իրմէ լսեցի, զանիկա կը խօսիմ աշխարհի մէջ։ 27—Անոնք չիմացան թէ Հօրը համար կը ղրուցէր իրենց։

28—Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Երբ Որդին մարդոյ բարձրացնէք, այն ատեն պիտի գիտնաք թէ ես եմ, ու ինքիրմէս բան մը չեմ ըներ, հապա Հայրս ինչպէս ինծի սորվեցուց՝ այնպէս կը խօսիմ. 29—Ու զիս ղրկողը ինծի հետ է, Հայրը զիս մինակ չթողուց, վասն զի ես միշտ անոր հաճելի եղած բաները կ՚ընեմ։

30—Երբ ասոնք խօսեցաւ, շատ մարդիկ իրեն հաւատացին։ 31—Ան ատեն Յիսուս իրեն հաւատացող Հրեաներուն ըսաւ, Եթէ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ՚ըլլաք. 32—Ու ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ։ 33—Պատասխան տուին իրեն, Մենք Աբրահամի սերունդ ենք, ու երբէք մէկու՛ն չծառայեցինք. դուն ի՞նչպես կ՚ըսես թէ Ազատ պիտի ըլլաք։ 34—Յիսուս պատասխան տուաւ անոնց, ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա մեղքի ծառայ է։ 35—Ու ծառան տանը մէջ յաւիտեան չմնար, բայց որդին յաւիտեան կը մնայ։ 36—Ուստի եթէ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք։ 37—Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք, բայց կը փորձուէք զիս մեռցնել, վասն զի իմ խօսքս ձեր ներսիդին տեղ չունի։ 38—Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քով՝ զայն կը խօսիմ, և դուք ալ ինչ որ տեսաք ձեր հօրը քով՝ զայն կ՚ընէք։ 39—Պատասխան տուին ու ըսին անոր, Մեր Հայրը Աբրահամ է. ըսաւ անոնց Յիսուս, Եթէ Աբրահամի որդիները ըլլայիք, Աբրահամի գործերը պիտի գործէիք։ 40—Բայց հիմա կը փորձէք սպաննել զիս, մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւնը խօսեցայ, զոր Աստուծմէ լսեցի. Աբրահամ այդ բաները չրրաւ։ 41—Դուք ձեր հօրը գործերը կ՚ընէք. ան ատեն ըսին անոր, Մենք պոռնկութենէ չենք ծնած, մենք մէկ Հայր ունինք, որ է Աստուած։

42—Յիսուս ըսաւ անոնց, Եթէ Աստուած ձեր Հայրը ըլլար, պիտի սիրէիք զիս. վասն զի ես Աստուծմէ ելայ ու եկայ. և ոչ թէ ես ինքիրմէս եկայ, հապա անիկա զիս ղրկեց։ 43—Ինչո՞ւ դուք իմ ըրածս ածքս չէք հասկնար. անոր համար որ չէք կրնար իմ խօսքս մտիկ ընել։ 44—Դուք չէք հօրմէն Սատանայէ էք, ու ձեր հօրը բաղձանքը կ՚ուզէք ընել. անիկա սկիզբէն հետ մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չկեցաւ, վասն զի անոր ներսիդին ճշմարտութիւն չկայ. երբ անիկա սուտ խօսի, բուն իրենները կը խօսի, քանզի անիկա սուտացող է և անոր Հայրը։ 45—Բայց որովհետև ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի չէք հաւատար։ 46—Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար. իսկ եթէ ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինչո՞ւ ինծի չէք հաւատար։ 47—Ան որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքերը մտիկ կ՚ընէ. դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ Աստուծմէ չէք։ 48—Պատասխան տուին Հրեաները ու ըսին անոր, Աղէկ չէ՞նք ըսեր մենք թէ դուն Սամարացի ես, ու դև կայ քու ներսդ։ 49—Յիսուս պատասխան տուաւ. Ես դեւ չկայ, հապա ես իմ Հայրս կը պատուեմ, և դուք զիս կ՚անարգէք։ 50—Իսկ ես իմ փառքս չեմ փնտռեր. կայ հոն որ կը փնտռէ ու կը դատէ։ 51—Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, եթէ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ պիտի չտեսնէ։ 52—Ան ատեն Հրեաները ըսին անոր, Հիմա գիտցանք որ քու ներսդ դև կայ. Աբրահամ մեռաւ, ու մարգարէներն, և դուն կ՚ըսես, եթէ մէկը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահուան համը պիտի չառնէ։ 53—Մի՞թէ դուն աւելի՞ մեծ ես մեր հօրմէն Աբրահամէ, որ մեռաւ, ու մարգարէներն ալ մեռան. դուն քեզ ո՞վ կ՚ընես։ 54—Յիսուս պատասխան տուաւ, Եթէ ես ինքզինքս փառաւորեմ, իմ փառքս բան մը չէ. իմ Հայրս է որ զիս իր փառաւորէ, որուն համար դուք կ՚ըսէք թէ *Մեր Աստուածն է. 55—Ու

*Ոմանք, Ձեր

զանիկա չէք ճանչնար, բայց ես գիտեմ զանիկա. ու եթէ ըսեմ թէ զանիկա չեմ գիտեր, ձեզի պէս ստախօս պիտի ըլլամ. հապա ես գիտեմ զանիկա, և անոր խօսքը կը պահեմ։ 56—Ձեր Հայրը Աբրահամ ցնծացաւ իմ օրս տեսնել, ու տեսաւ և ուրախացաւ։ 57—Իսկ Հրեաները ըսին անոր, Դուն տակաւին հիսուն տարեկան չես. Աբրահա՞մ ալ տեսար։ 58—Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Աբրահամի ըլլալէն առաջ եմ ես։ 59—Ան ատեն քարեր վերցուցին որպէս զի անոր վրայ նետեն. բայց Յիսուս ծածկուեցաւ ՚ՈՒՒՐ ՎԵՐԵՒՑԷՆ, և անցաց միջէն անցնելով՝ տաճարէն դուրս ելաւ, ու այպէս գնաց։

Գլ. Թ

Ու երբ կ՚անցնէր, մարդ մը տեսաւ կոյր ծնած. 2—Ու իր աշակերտները հարցուցին իրեն ու ըսին, Ուսուցի՛չ, որո՞ւն է մեղքը, տա՞ր թէ իր ծնողքին, որ անիկա կոյր ծնաւ։ 3—Պատասխան տուաւ Յիսուս, Ոչ տարր է մեղքը, ոչ ալ իր ծնողքին, հապա որպէս զի Աստուծոյ գործերը տար վրայ յայտնի ըլլան։ 4—Քանի որ ցորեկ է, պէտք է որ զիս ղրկողին գործերը գործեմ. գիշերը կու գայ երբ մէ՛կը չկրնար գործել։ 5—Քանի որ ես աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ։ 6—Երբ զայս բաւ, թքաւ գետինը և թուքով կաւ չինեց, ու այն կաւը կոյրին աչքերուն վրայ ծեփեց։ 7—Ու բաւ անոր, Գնա, լուացուի Սելոամի աւազանին մէջ, (որ դրհւած կը թարգմանուի.) ուստի գնաց ու լուացուեցաւ, եկաւ ու կը տեսնէր։ 8—Իսկ դրացիները և անոնք որ առաջուրնէ տեսած էին զանիկա որ *կոյր էր, կ՚ըսէին, Ասիկա չէ՞ր որ կը նստէր և կը մուրար. ոմանք կ՚ըսէին, Անիկա է. 9—Ուրիշները կ՚ըսէին, Անոր նման մէկն է. Էսկ ինք կ՚ըսէր թէ Ես եմ. 10—Ուստի ըսին իրեն, Հապա ինչպէս բացուեցան քու աչքերդ. 11—Ինք պատասխան տուաւ ու բաւ,

*Ոմանք, մուրացկան

Յիսուս կոչուած մարդ մը կաւ չինեց ու աչքերս ծեփեց, և բաւ ինծի, Գնա Սելոամի աւազանը ու լուացուի. ես ալ գացի, լուացուեցայ ու կը տեսնեմ։ 12—Ու ըսին իրեն, Ո՞ւր է անիկա. բաւ ՆՈՅՆ, Չեմ գիտեր։

13—Փարիսեցիներուն տարին զանիկա որ առաջուով կոյր էր։ 14—Ու շաբաթ որ էր երբ Յիսուս կաւը չինեց, ու անոր աչքերը բացաւ։ 15—Նորէն փարիսեցիներն ալ կը հարցնէին իրեն, Թէ ինչպէս կը տեսնէ. անիկա ալ բաւ անոնց, Կաւ դրաւ աչքերուս վրայ, ու լուացուեցայ և կը տեսնեմ։ 16—Ասոր վրայ փարիսեցիներէն ոմանք կ՚ըսէին, Այն մարդը Աստուծմէ չէ, վասն զի շաբաթ օրը չպահեր. ուրիշները կ՚ըսէին, Ինչպէս կրնայ մեզաւոր մարդ մը այսպիսի հրաշքներ ընել. ու անոնց մէջ երկպառակութիւն կար։ 17—Նորէն ըսին կոյրին, Դուն ի՞նչ կ՚ըսես անոր համար որ քու աչքերդ բացաւ. ան ալ բաւ Թէ Մարգարէ մըն է։ 18—Իսկ Հրեաները չէին հաւատար անոր համար՝ Թէ կոյր էր ու բացուեցաւ, մինչև որ այն աչքը բացուածին ծնողքը կանչեցին։ 19—Ու անոնց հարցուցին ու ըսին, Ա՞յս է ձեր որդին, որու համար դուք կ՚ըսէք Թէ կոյր ծնաւ. Հապա հիմա ի՞նչպէս կը տեսնէ։ 20—Անոր ծնողքը պատասխան տուին անոնց ու ըսին, Գիտենք որ ասիկա է մեր որդին, և որ ինք կոյր ծնաւ. 21—Բայց հիմա ի՛նչպէս կը տեսնէ՝ չենք գիտեր, կամ Թէ ո՛վ բացաւ աչքերը՝ մենք չենք գիտեր. ինք չափահաս է, իրեն հարցուցէք. Թող ինք խօսի իրեն համար։ 22—Ծայս ըսին անոր ծնողքը՝ Հրեաներէն վախնալնուն համար, քանզի Հրեաները միացան համաձայնութեամբ որ՝ եթէ մէկը զանիկա Քրիստոս դաւանի, Ժողովարանէն դուրս ձգուի։ 23—Ասոր համար անոր ծնողքը ըսին Թէ ինք չափահաս է, իրեն հարցուցէք։ 24—Ետքը նորէն կանչեցին այն մարդը որ կոյր էր, ու ըսին անոր, Աստուծոյ փառք տուր. մենք գիտենք որ այն մարդը մեզաւոր է։ 25—Անիկա ալ պատասխան տուաւ ու բաւ, Եթէ մեզաւոր է՝ ես չեմ գիտեր. միայն զայս

գիանամ զր կայր եւ հիմա կը տեսնեմ։ 26—Նորէն ըսին անոր, Ի՞նչ բրաւ քեզի, քա՛ւ աչքերդ ի՞նչպէս բացաւ։ 27—Պատասխան տուաւ անոնց, Հիմա ըսի ձեզի ու չլսեցիք։ ինչո՞ւ համար նորէն լսել կ՚ուզէք։ միթէ դո՞ւք ալ կ՚ուզէք անոր աշակերտ ըլլալ։ 28—Անոնք նախատելով զանիկա ըսին, Դուն կա անոր աշակերտ, իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք։ 29—Մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ, բայց ասիկա չենք գիտեր թէ ուրկէ՛ է։ 30—Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց, Ասիկա է զարմանալի բանը՝ որ դուք չէք գիտեր թէ ուրկէ՛ է, և անիկա իմ աչքերս բացաւ։ 31—Գիտենք որ Աստուած մեղաւորներուն մտիկ չընէր, բայց եթէ մկր աստուածապաշտ ըլլայ ու անոր կամքը կատարէ, անոր մտիկ կ՚ընէ։ 32—Աշխարհի սկիզբէն է վեր լսուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը բացած է։ 33—եթէ Աստուծմէ չըլլար այն մարդը, բան մըն ալ չէր կրնար ընել։ 34—Պատասխան տուին և ըսին անոր, Դուն բոլորովին մեղքերու մէջ ծնած ես, ու մեզի վարդապետութիւն կ՚ընես։ և դուրս ըրին զանիկա։

35—Յիսուս լսեց որ զանիկա դուրս ըրին, ու երբ գտաւ զանիկա, ըսաւ անոր, Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ Որդիին։ 36—Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Տէր, ո՞վ է՝ որ հաւատամ անոր։ 37—Ու Յիսուս ըսաւ անոր, Տեսար ալ զանիկա, և քեզի հետ խօսողն է։ 38—Անիկա ալ ըսաւ, Կը հաւատամ, Տէր։ ու անոր երկրպագութիւն ըրաւ։ 39—Ու Յիսուս ըսաւ, Ես դատաստանի համար եկայ այս աշխարհս, որպէս զի չհաւատացողները տեսնեն և տեսնողները կուրանան։

40—Ու փարիսեցիներէն ոմանք որ իրեն հետ էին, այս բաները լսելով՝ ըսին իրեն, Մի՞թէ մենք ալ կոյր ենք։ 41—Յիսուս ըսաւ անոնց, Եթէ կոյր ըլլայիք, դուք մեղք չէիք ունենար, բայց հիմա կ՚ըսէք թէ կը տեսնենք, ասոր համար ձեր մեղքը չի՛ վերայ կը մնայ։

Գլ. Ժ

Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Ան որ դռնէն չմտներ ոչխարներուն բակը, հապա ուրիշ տեղէ կ՚ելլէ, անիկա գող ու աւազակ է։ 2—Բայց ան որ դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է։ 3—Դռնապանը կը բանայ անոր, և ոչխարները անոր ձայնին կը լսեն, ու իր ոչխարները անուանիէն կը կանչէ, և դուրս կը հանէ զանոնք։ 4—Ու երբ իր ոչխարները կը հանէ, անոնց առջևէն կ՚երթայ, ու ոչխարները իր ետևէն կ՚երթան, վասն զի անոր ձայնը կը ճանչնան։ 5—Անկայն օտարի ետևէ չեն երթար, հապա անկէ կը փախչին, վասն զի օտարներուն ձայնը չեն ճանչնար։

6—Յիսուս այս առակը ըսաւ անոնց, բայց անոնք չէին իմացար թէ ի՛նչ էր զոր իրենց կը խօսէր։ 7—Ու Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Ես եմ ոչխարներուն դուռը։ 8—Ամէն անոնք որ ինծմէ առաջ եկան, գող ու աւազակ էին, բայց անոնց չլսեցին ոչխարները։ 9—Ես եմ դուռը։ եթէ մէկը ինծմէ ներս մտնէ, պիտի փրկուի, ու պիտի մտնէ ու ելլէ և արօտ գտնէ։ 10—Գողը չգայ, միայն թէ գողնալու և սպաննելու ու կորսնցնելու համար։ Ես եկայ որ կեանք ունենան, և աւելի առատ ունենան։ 11—Ես եմ բարի հովիւը։ բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ։ 12—Բայց վարձկանը որ հովիւ չէ ու ոչխարները իրը չեն, երբ կը տեսնէ գայլը որ կու գայ, կը թողու ոչխարները ու կը փախչի, և գայլը կը յափշտակէ ոչխարները ու կը ցրուէ։ 13—Ու վարձկանը կը փախչի, վասն զի վարձկան է ու իր հոգը չէ ոչխարներուն համար։ 14—Ես եմ բարի հովիւը, և կը ճանչնամ իմիններս ու կը ճանչցուիմ իմիններէս։ 15—Ինչպէս Հայրը զիս կը ճանչնայ, ես ալ Հայրը կը ճանչնամ, ու իմ կեանքս ոչխարներուն համար կը դնեմ։ 16—Ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս բակէն չեն. զանոնք ալ պէտք է որ բերեմ, ու իմ ձայնիս պիտի լսեն, և պիտի ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ։ 17—

Անոր համար իմ Հայրս զիս կը սիրէ, որ ես իմ կեանքս կը դնեմ, որպէս զի նորէն առնեմ զանիկա։ 18—Մէկ՚կը չտաներ զանիկա ինծմէ, հապա ես կը դնեմ զանիկա ինքիրմէս։ իշխանութիւն ունիմ զանիկա դնելու, և իշխանութիւն ունիմ զանիկա նորէն առնելու։ այս պատուէրը իմ Հօրմէս առի։

19—Նորէն երկպառակութիւն ելաւ Հրէից մէջ այս խօսքերուն համար։ 20—Ու անոնցմէ շատերը կ՚ըսէին, Դեւ կայ ասոր ներսիդին, ու խելագառած է. ինչո՞ւ ասոր մտիկ կ՚ընէք։ 21—Ուրիշները կ՚ըսէին, Այս խօսքերը դիւահարի խօսքեր չեն. միթէ դեւը կրնա՞յ կոյրերուն աչքերը բանալ։ 22—Այն ատեն Երուսաղէմ նաւակատիքի տօնը եղաւ, ու ձմեռ էր։ 23—Ու Յիսուս կը պտրտէր տաճարին մէջ Սողոմոնի սրահը։ 24—Ու Հրեաները անոր չորս կողմը առին ու ըսին անոր, Մինչև ե՞րբ մեզ տարակուսանքի մէջ կը թողուս. եթէ Քրիստոսը դուն ես, մեզի համարձակ ըսէ։ 25—Յիսուս պատասխան տուաւ անոնց, Ձեզի ըսի ու չէք հաւատար. այն գործերը զորոնք ես իմ Հօրս անունովը կը գործեմ, անոնք կը վկայեն ինծի համար։ 26—Բայց դուք չէք հաւատար, վասն զի իմ ոչխարներէս չէք, *ինչպես ձեզի ըսի։* 27—Իմ ոչխարներս իմ ձայնիս կը լսեն, ես ալ զանոնք կը ճանչնամ, ու իմ ետևէս կու գան։ 28—Ու ես անոնց յաւիտենական կեանք կու տամ, ու յաւիտեան պիտի չկորսուին, և ո՛չ՚կը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք։ 29—Իմ Հայրս որ ՚ընծէ՛ ինծի տուաւ, ամէնէն մեծ է, և ո՛չ՚կը չկրնար իմ Հօրս ձեռքէն յափշտակել։ 30—Ես ու Հայրը մէկ ենք։

31—Հրեաները նորէն քարեր վերցուցին, որպէս զի զանիկա քարկոծեն։ 32—Յիսուս պատասխան տուաւ անոնց, Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի իմ Հօրմէս, անոնցմէ ո՞ր գործին համար զիս կը քարկոծէք։ 33—Հրեաները պատասխան տուին անոր՝ ըսելով, Բարի գործի համար քեզ չենք քարկոծեր, հապա հայհոյութեան համար, և քանզի դուն որ մարդ ես, ինքզինքդ Աստուած կ՚ընես։ 34—Յիսուս պատասխան տուաւ անոնց, Չէ՞ որ ձեր օրէնքին մէջ գրուած է, Ես ըսի թէ դուք աստուածներ էք։ 35—Եթէ աստուածներ կ՚անուանէ զանոնք, որոնց Աստուծոյ խօսքը եղաւ, (ու կարելի չէ որ այն գրուածը ուրանայ։) 36—Հապա զայն որ Հայրը սրբեց և աշխարհ ղրկեց, դուք ՚ուղիղ կ՚ըսէ՞ք թէ Հայհոյութիւն կ՚ընես՝ Աստուծոյ Որդի եմ ըսելուս համար։ 37—Եթէ իմ Հօրս գործերը չեմ գործեր, իրեն մի հաւատաք։ 38—Ապա եթէ կը գործեմ, թէև իրեն չէք հաւատար, գէթ գործերուն հաւատացէք, որպէս զի գիտնաք ու *հաւատաք թէ Հայրը իմ մէջս է, և ես անոր մէջ։

39—Դարձեալ կը փնտռէին զանիկա բռնել, և անոնց ձեռքէն ելաւ։ 40—Ու նորէն գնաց Յորդանանէն անդին այն կողմը, այն տեղը ուր Յովհաննէս առաջ կը մկրտէր, ու հոն կեցաւ։ 41—Ու շատերը եկան անոր ու կ՚ըսէին, Իրաւ Յովհաննէս հրաշք մը չըրաւ։ 42—Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ անոր համար՝ ամէնը ճշմարիտ էր։ և շատ մարդիկ հոն անոր հաւատացին։

Գլ. ԺԱ

Ու Մարիամի և անոր քրոջ Մարթայի գիւղէն, Բեթանիայէ, Ղազարոս անունով մէկը հիւանդ էր։ 2—Ասիկա այն Մարիամն էր որ Տէրը խունկ օծեց, ու անոր ոտքերը իր մազերովը սրբեց, որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր։ 3—Ուստի էր քոյրերը խրկեցին անոր ու ըսին, Տէր, ահա անիկա զոր դուն կը սիրես, հիւանդ է։ 4—Յիսուս երբ լսեց՝ ըսաւ, Այս հիւանդութիւնը մահուան համար չէ, հապա Աստուծոյ փառքին համար, որպէս զի Աստուծոյ Որդին անով փառաւորուի։ 5—Արդ Յիսուս կը սիրէր Մարթան և անոր քոյրը ու Ղազարոսը։ 6—Իսկ երբ լսեց թէ հիւանդ է, եղած տեղը երկու օր ալ կեցաւ։ 7—Ու անկէ ետքը ըսաւ աշա-

*Ոմանք չտանին

*Ոմանք, ճանչնաք

կերաներուն, Նյէե, նորէն Հրէաստան երթանք։ 8—Աշակերտները իրեն ըսին, Ռաբբի, Հրեաները հիմա քեզ կը փընաուէին քարկոծելու, ու նորէն հոն կ'երթաս։ 9—Գաւառական տասն ժամուս, 2ի° որ օրը տասներկու ժամ է. եթէ մէկը ցորեկը քալի՝ չսահիր, վասն զի այս աշխարհին լոյսը կը տեսնէ. 10—բայց եթէ մէկը գիշերը քալի՝ կը սահի, վասն զի իրեն հետ լոյս չկայ։ 11—Ա՛յս բաները բսելէն ետև բսաւ անոնց, Ղազարոս մեր բարեկամը քնացած է, բայց կ'երթամ որպէս զի զանիկա արթնցնեմ։ 12—Իր աշակերտները ըսին, Տէր, եթէ քնացած է, պիտի առողջանայ։ 13—Իսկ Յիսուս անոր մեռնելուն համար կ'ըսէր, բայց անոնք կը կարծէին թէ քուն քնանալուն համար կ'ըսէր։ 14—Ա՛յն ատեն Յիսուս յայտնապէս բսաւ անոնց, Ղազարոս մեռաւ. 15—Ու ես ուրախ եմ ձեզի համար որ հոն չէի, որպէս զի դուք հաւատաք. բայց երթանք անոր։ 16—Թովմաս, որ Սրկաւորիակ կ'բսուէր, բսաւ էր աշակերտակիցներուն, Մենք ալ երթանք, որպէս զի անոր հետ մեռնինք։

17—Յիսուս երբ եկաւ, գտաւ որ անիկա արդէն չորս օրուան գերեզմանը գտեր էր։ 18—Ու Բեթանիա Երուսաղէմի մօտ էր աւուրհնդ ասպարէզի չափ։ 19—Ու Հրեաներէն շատերը Մարթային ու Մարիամի եկած էին որպէս զի մխիթարեն զանոնք իրենց եղբօրը համար։ 20—Արդ երբ լսեց Մարթա թէ Յիսուս կու գայ, զանիկա դիմաւորելու գնաց, բայց Մարիամ տանը մէջ նստեր էր։ 21—Ու Մարթա բսաւ Յիսուսի, Տէր, եթէ հոս ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ. 22—Բայց գիտեմ որ հիմա ալ դուն ինչ որ խնդրես Աստուծմէ, Աստուած պիտի տայ քեզի։ 23—Յիսուս բսաւ անոր, Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ. 24—Մարթա բսաւ անոր, Գիտեմ որ յարութիւն Ժամանակը, վերջին օրը, յարութիւն պիտի առնէ։ 25—Յիսուս բսաւ անոր, Ես եմ յարութիւնը ու կեանքը. ան որ ինծի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի։ 26—Ու ան ամէնը որ կենդանի է ու ինծի կը հաւատայ, յաւիտեան պիտի չմեռնի. դուն կը հաւատա՞ս սորա։ 27—Ըսաւ անոր, Այո, Տէր, ես հաւատացեր եմ որ դուն ես Քրիստոս, Աստուծոյ Որդին, որ աշխարհ գալու էիր։ 28—Ու երբ զայս բսաւ, գնաց իր քոյրը Մարիամը գաղտուկ մը կանչեց՝ բսելով, Վարդապետը եկեր է ու քեզ կը կանչէ։ 29—Անիկա լսածին պէս՝ շուտ մը ելաւ ու եկաւ անոր։ 30—Իսկ Յիսուս դեռ գեղը եկած չէր, հապա այն տեղ էր, ուր Մարթա զանիկա դիմաւորեց։ 31—Հայց Հրեաները որ անոր հետ տանը մէջ էին ու կը մխիթարէին զանիկա, երբ տեսան որ Մարիամ շուտ մը ելաւ ու գնաց, էրէնէ՝ ու անոր եեաւէն գացին՝ բսելով թէ Գերեզմանը կ'երթայ որպէս զի հոն լայ։ 32—Իսկ Մարիամ երբ Յիսուսի եկած տեղը եկաւ ու զանիկա տեսաւ, անոր ոտքը իյնալով՝ բսաւ անոր, Տէր, եթէ հոս ըլլայիր՝ իմ եղբայրս չէր մեռներ։ 33—Յիսուս երբ տեսաւ զանիկա որ կու լար, և անոր հետ եղող Հրեաները որոնք կու լային, իր հոգւոյն մէջ հառաչեց ու խռովեցաւ, 34—Ու բսաւ, Ո°ւր դրած էք զանիկա. բսին իրեն, Տէր, եկուր ու տես։ 35—Յիսուս լացաւ։ 36—Ուստի Հրեաները կ'բսէին, Նայեցէք ա՛ր̈ըպ կը սիրէր զանիկա։ 37—Անոնցմէ ոմանք ալ կ'բսէին, Արիկա որ կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար բնել որ ան ալ չմեռնէր։ 38—Յիսուս նորէն իր ա՛ր̈ըխ մէջ հառաչելով գերեզման կու գայ. և անիկա քարայր մըն էր, ու անոր վրայ քար մը դրուած էր։ 39—Յիսուս բսաւ, Մեկնի բրեք այդ քարը. մեռելին քոյրը Մարթա բսաւ անոր, Տէր, արդէն հոտած պիտի ըլլայ, վասն զի չորս օրուան է։ 40—Ըսաւ անոր Յիսուս, Քեզի չբսի՞ որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես։ 41—Ա՛յն ատեն մեկնի բրին *քարը. և Յիսուս էչ աչքերը վեր վերցուց ու բսաւ, Հայր, շնորհակալ եմ քեզմէ, որ ինծի լսեցիր։ 42—Ու ես գիտէի որ ամէն ատեն ինծի կը լսես. բայց այս բոլորովքս

*Ոմանք, քարը, ուր պառկած էր մեռելը

կ'ըսեմ ժողովուրդին համար որ կեցող պէս զի հաւատան թէ դուն զրկեցիր զիս։ 43—Ու զայս բսելէն ետքը՝ մեծ ձայնով մը կանչեց, Ղազարոս, դուրս եկուր։ 44—Մեռելն ալ եկաւ՝ ոտքերը ու ձեռքերը պատանքով կապած և երեսը վարշամակով պատած. Յիսուս բսաւ անոնց, Արձակեցէք ա՛ր̈իկա ու թոզէք որ երթայ։

45—Ու Հրեաներէն շատերը որոնք Մարիամի եկեր էին, երբ Յիսուսի ըրածը տեսան, հաւատացին իրեն։ 46—Բայց անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներուն, ու Յիսուսի ըրածը անոնց պատմեցին։

47—Ուստի քահանայապետները և փարիսեցիները ժողով գումարեցին ու բսին, Ի՞նչ բնենք, քանզի այս մարդը շատ հրաշքներ կ'ընէ։ 48—Եթէ զանիկա այսպէս թող տանք, ամէնն ալ անոր պիտի հաւատան, և Հռովմայեցիք պիտի գան ու մեր տեղը ու ազգը պիտի վերցնեն։ 49—Ու անոնցմէ մէկը, Կայիափա անուամբ, որ այն տարուան քահանայապետ էր, բսաւ անոնց, 50—Դուք բան մը չէք գիտեր, և չէք ալ խորհիր թէ ազէկ է մեզի՝ որ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, ու բոլոր ազգը չկորսուի։ 51—Բայց այս բանը ոչ թէ ինքիրմէ զրուցեց, հապա այն տարուան քահանայապետ ըլլալով, մարգարեացաւ թէ Յիսուս ազգին համար պիտի մեռնէր. 52—Ու ոչ թէ միայն ազգին համար, հապա որ Աստուծոյ ցիրուցան եղած որդիները ալ մէկտեղ ժողվէ։

53—Ալ այն օրէն հետ խորհուրդ բրին որ սպանեն զանիկա։ 54—Ուստի Յիսուս անկէ հետը համարձակ չէր պարեր Հրէից մէջ, հապա անկէ անապատին մօտ տեղ մը գնաց, քաղաք մը որուն անունը Եփրայիմ էր, ու իր աշակերտներուն հետ մնկոեց հոն կը կենար։

55—Ու Հրէից զատիկը մօտ էր, ու այն տեղէն շատ մարդիկ զատիկէն առաջ Երուսաղէմ կու գան, որպէս զի ինքզինքնին մաքրեն։ 56—Ու կը փնտռէին Յիսուսը, ու տաճարին մէջ կեցած ատեննին իրարու կ'ըսէին, Ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ, թէ այս ուժին բնաւ պիտի չգա՞յ։ 57—Իսկ քահանայապետները ու փարիսեցիները պատուէր տուեր էին, որ եթէ մէկը գիտնայ անոր ուր ըլլալը՝ իմացնէ, որպէս զի զանիկա բռնեն։

ԳԼ. ԺԲ

Իսկ Յիսուս զատիկէն վեց օր առաջ Բեթանիա եկաւ, ուր էր Ղազարոս մեռեալը, զոր Յիսուս մեռելներէն յարուցեր էր։ 2—Ու հոն անոր ընթրիք մը ըրին, ու Մարթա սպասաւորութիւն կ'ընէր, և Ղազարոս անոր հետ սեղան նստողներէն մէկն էր։ 3—Իսկ Մարիամ մէկ լիտր նարդոսի պատուական մեծագին իւղ առնելով, Յիսուսի ոտքերը օծեց, ու իր մազերովը անոր ոտքերը սրբեց. և տունը իւղին անուշահոտութենովը լեցուեցաւ։ 4—Ա՛յն ատեն աշակերտներէն մէկը, Իսկարիովտացի Սիմոնեան Յուդա որ զանիկա պիտի մատնէր, բսաւ, 5—Ինչո՞ւ համար այդ իւղը չծախուեցաւ երեք հարիւր դահեկանի, որ աղքատներուն արուէր։ 6—Զայս բսաւ, ոչ թէ աղքատներուն համար իր հոգն էր. հապա որ գող էր ու գանձանակը ինք կը պահէր, և ինչ որ ձգուէր՝ ինք կը կրէր։ 7—Իսկ Յիսուս բսաւ, Թող տուր տայր. այդ բանը իմ թաղմանս օրուանը համար պահեց։ 8—Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք, բայց ինծի ամէն ատեն չունիք։

9—Ուստի Հրեաներէն շատ ժողովուրդ անոր հոն ըլլալը իմացան, ու եկան ոչ թէ միայն Յիսուսի համար, հապա որպէս զի Ղազարոսն ալ տեսնեն, զոր մեռելներէն յարուցեր էր։ 10—Իսկ քահանայապետները խորհուրդ բրին որ Ղազարոսն ալ մեռցնեն. 11—Վասն զի Հրեաներէն շատերը անոր պատճառով կ'երթային ու կը հաւատային Յիսուսի։

12—Հետևեալ օրը շատ ժողովուրդ որ տօնին եկած էին, երբ լսեցին թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, 13—Արմաւենիի ոստեր առին ու ելան զանիկա դիմաւորելու, և կ'աղաղակէին, Ովսաննա, օրհնեալ է Իսրայէլի Թագաւորը՝ որ Տէրոջը անունովը կու գայ։ 14—Ու Յիսուս առանակ մը գտնելով՝

անոր վրայ նստաւ, ինչպէս գրուած է, 15—մի՛ վախնար, ով Սիոնի աղիկ, ահա քու Թագաւորդ կու գայ իշու ամանակի վրայ նստած։ 16—Ու անոր աշակերտները առաջ չիմացան այս բաները, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, այն ատեն միտքերնին բերին թէ այս բաները անոր համար գրուած էին, և թէ իրենք այս բաները րրին անոր։ 17—Ու իրեն հետ եղող ժողովուրդը վկայութիւն կու տար թէ Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց, ու մեռելներէն յարուց զանիկա։ 18—Ասոր համար ալ ժողովուրդը զանիկա դիմաւորեց, վասն զի լսեցին թէ անիկա այս հրաշքը րրած էր։ 19—Ուստի փարիսեցիները իրարու կ'ըսէին, Կը տեսնէ՞ք որ օգուտ մը չկայ։ Ահա բոլոր աշխարհ անոր ետեւէն գնաց։

20—Ու հոն քանի մը Յոյներ կային ուսին երկրպագութիւն ընելու եկողներուն մէջ։ 21—Ասոնք Փիլիպպոսի եկան, որ Գալիլեայի Բեթսայիդայէն էր, և կ'աղաչէին անոր ու կ'ըսէին, Տէր, կ'ուզենք Յիսուսը տեսնել։ 22—Փիլիպպոս եկաւ, ու Անդրէասի բսաւ, և նորէն Անդրէաս ու Փիլիպպոս Հէյթէ Յիսուսի բսին։ 23—Յիսուս ալ պատասխան ուսուաւ անոնց ու բսաւ, Ժամանակը հասաւ որ փառաւորուի Որդին մարդոյ։ 24—Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Եթէ ցորենին հատ հողին մէջ իյնալով չմեռնի, ինք միայնակ կը մնայ։ Բայց եթէ մեռնի, շատ պտղաբերութիւն կը բերէ։ 25—Ան որ իր անձը կը սիրէ, պիտի կորնչցնէ զանիկա։ և ան որ իր անձը այս աշխարհին մէջ կ'ատէ, յաւիտենական կեանքի համար պիտի պահէ զանիկա։ 26—Եթէ ինձի կը ծառայէ, Քրդ իմ հետեւէս գայ։ ու հոն ուր որ եմ, իմ ծառան ալ հոն պիտի ըլլայ։ Եթէ ինձի կը ծառայէ, Հայրը պիտի պատուէ զանիկա։ 27—Հիմա իմ հոգիս խռոված է, և ի՞նչ բսեմ։ Հայր, զիս ազատէ այս ժամին։ բայց ես ասոր համար եկայ այս ժամին։ 28—Հայր, փառաւորէ քու անունդ։ Այն ատեն ձայն մը եկաւ երկինքէն, փառաւորեցի ալ, ու նորէն պիտի փառաւորեմ։ 29—Ու ժողովուրդը որ կայներ էր ու կը լսէր, կ'ըսէին, Որոտաց կ'ըլլայ։ ուրիշներ ալ կ'ըսէին, Հրեշտակ խօսեցաւ իրեն հետ։ 30—Յիսուս պատասխան առաւ ու բսաւ, Ան ձայնը ինձի համար չեկաւ, հապա ձեզի համար։ 31—Հիմա է այս աշխարհին դատաստանը, հիմա այս աշխարհին իշխանը դուրս պիտի ձգուի։ 32—Ես ալ երբ երկրէ բարձրանամ, ամէնն ալ ինձի պիտի քաշեմ։ 33—Ան բանը կը զրուցէր՝ իմացնելով թէ ի՛նչ կերպ մահով պիտի մեռնէր։ 34—Ժողովուրդը անոր պատասխանեց, Մենք օրէնքէն լսեցինք որ Քրիստոս յաւիտեան կը մնայ։ և դուն ի՞նչպէս կ'ըսես թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ։ ո՞վ է այդ Որդին մարդոյ։ 35—Ու Յիսուս անոնց բսաւ, Փիչ մը ատեն ալ լոյսը ձեզի հետ է։ քանի որ լոյսը ունիք, քալեցէք, որ չբռնէ Թէ մութը ձեր վրայ հասնի։ վասն զի խաւարի մէջ քալողը չգիտեր թէ ո՛ր կ'երթայ։ 36—Քանի որ լոյսը ունիք, հաւատացէք այն լոյսին, որպէս զի լուսոյ որդիներ ըլլաք։ Յիսուս այս բաները զրուցեց, ու գնաց պահուեցաւ անոնցմէ։

37—Ու թէպէտ այնքան հրաշքներ րրած էր անոնց առջեւ, Բ֊ոյց անոնք չէին հաւատար իրեն։ 38—Որպէս զի կատարուի Եսայի մարգարէին խօսքը՝ զոր բսաւ, Տէր, ո՞վ հաւատաց մեր պատմուածքին, և Տէրոջը բազուկը որո՞ւ յայտնուեցաւ։ 39—Անոր համար չէին կրնար հաւատալ, որ դարձեալ կ'ըսէ Եսայի, 40—Անոնց աչքերը կուրցուց, և անոնց սիրտերը քարեցուց, որ չլլայ թէ աչքով նին տեսնեն ու սրտովին խելան և դարձի գան, ու ես զանոնք բժշկեմ։ 41—Այս խօսքը բսաւ Եսայի՝ երբ տեսաւ անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով։ 42—Այսուամենայնիւ իշխաններէն ալ շատերը իրեն հաւատացին, բայց փարիսեցիներուն համար զանիկա չէին դատաներ, որպէս զի Ժողովարանէն դուրս չհզուին։ 43—Վասն զի մարդոց փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին։

44—Իսկ Յիսուս կ'ազաղակէր ու կ'ըսէր, Ան որ ինձի կը հաւատայ, ինձի չհաւատար, հապա զիս զրկողին։ 45—Ու ան որ զիս կը տեսնէ, զիս զրկողը կը տեսնէ։ 46—Ես լոյս եկայ աշխարհ, որպէս զի ամէն ով որ ինձի հաւատայ, խաւարի մէջ չմնայ։ 47—Ու եթէ մէկը իմ խօսքերս լսէ ու չհաւատայ, ես զանիկա չեմ դատեր, քանզի ես չեկայ որպէս զի աշխարհը դատեմ, հապա որպէս զի աշխարհը փրկեմ։ 48—Ան որ զիս կ'անարգէ և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը որ զանիկա կը դատէ. այն խօսքը զոր ես խօսեցայ, այն պիտի դատէ զանիկա վերջին օրը։ 49—Ինծի զի ես ինքիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ զիս զրկեց՝ ինք ինծի պատուիրեց ինչ որ պիտի բսեմ և ինչ որ պիտի խօսիմ։ 50—Ու գիտեմ որ անոր պատուիրածը յաւիտենական կեանք է։ ուստի ինչ որ ես կը խօսիմ, ինչպէս Հայրը ինծի բսաւ, այնպէս կը խօսիմ։

ԳԼ. ԺԳ

Զատիկ ատենն առաջ՝ Յիսուս գիտնալով թէ իր ժամանակը հասեր է որ այս աշխարհէն ելլէ Հօրը քով, սիրելով իրենները որոնք աշխարհի մէջ էին, մինչեւ վերջն ալ սիրեց զանոնք։

2—Ու երբ ընթրիքը կ'ըլլար, (Սատանայ արդէն խակարիովացի Սիմոնեան Յուդայի սրտին մէջ գրեր էր, որ զանիկա մատնէ։) 3—Յիսուս գիտնալով թէ Հայրը ամէն բան իր ձեռքը տուաւ, և թէ ինք Աստուծմէ ելաւ ու Աստուծոյ քով կ'երթայ, 4—Ընթրիքէն ելաւ, և հանդերձները մէկդի դրաւ ու գեղչակ մը առնելով մէջքը փաթթեց։ 5—Ետքը կոնքին մէջ ջուր լեցուց, ու սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ, և այն իր փաթթուած գեղչակովը սրբել։ 6—Ուստի եկաւ Սիմոն Պետրոսի։ ան ալ բսաւ անոր, Տէր, դո՞ւն իմ ոտքերս պիտի լուաս։ 7—Յիսուս պատասխան առաւ ու բսաւ անոր, Ես ինչ որ կ'ընեմ, դուն հիմա չես խմանար, հապա ետքը պիտի խմանաս։ 8—Պետրոս բսաւ անոր, Բնա՛ւ դուն իմ ոտքերս պիտի չլուաս։ պատասխան առաւ անոր Յիսուս, Եթէ քեզ չլուամ, դուն ինծի հետ բաժին չունիս։ 9—Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, ոչ թէ միայն ոտքերս, հապա նաեւ ձեռքերս ու գլուխս։ 10—Յիսուս բսաւ անոր, Լուացուածին՝ ոտքերը լուալէն զատ ուրիշ բան պէտք չէ, այլ բոլորովին մաքուր է։ և դուք մաքուր եք, բայց ոչ բոլորնիդ։ 11—Վասն զի գիտէր զանիկա որ զինք պատրաստէր։ անոր համար բսաւ, Ոչ բոլորնիդ ալ մաքուր եք։ 12—Ու երբ անոնց ոտքերը լուաց, և իր հանդերձները առնելով նորէն անգան նստաւ, բսաւ անոնց, Գիտէ՞ք ի՛նչ րրի ձեզի։ 13—Դուք զիս Վարդապետ ու Տէր կը կոչէք, և ապեկ կ'ըսէք, վասն զի այդ֊պէ՛ս եմ։ 14—Հապա եթէ ես Տէրս ու վարդապետս ձեր ոտքերը լուացի, պէտք է որ դուք ալ իրարու ոտքերը լուաք։ 15—Վասն զի ձեզի օրինակ մը տուի, որպէս զի ինչպէս ես ձեզի րրի՝ դուք ալ րնէք։ 16—Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ծառան իր աէրոջմէն մեծ չէ, ոչ ալ զրկուածը զինք զրկողէն մեծ է։ 17—Եթէ դուք այս բաները գիտէք, երանելի եք եթէ ասոնք կատարէք։ 18—Ոչ թէ ձեր ամէնուն համար կ'ըսեմ, Ջո֊ւէ ես կը ճանչնամ զանոնք որ ես ընտրեցի, հապա որպէս զի այն գրուածը կատարուի թէ Ան որ ինծի հետ հաց կ'ուտէր, ինծի գէմ կրունկ վերցուց։ 19—Հիմակուընէ կ'ըսեմ ձեզի՝ քանի որ չէ եղեր, որպէս զի երբ որ՝ ըլլայ հաւատաք թէ ես ե֊ եմ։ 20—Բուլոյ, Հաւատաք թէ ես ե֊ եմ, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ կ'ընդունի զանիկա զոր ես կը զրկեմ, զիս կ'ընդունի։ և ով որ զիս կ'ընդունի, զիս զրկողը կ'ընդունի։

21—Յիսուս երբ զայս ըսաւ, էր հոգիին մէջ խռովեցաւ, և վկայեց՝ բսելով, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ։ 22—Ուստի աշակերտները տարակուսած իրարու կը նայէին թէ որո՛ւ համար կը զրուցէ։ 23—Ու աշակերտներէն մէկը կար Յիսուսի *գրկով նստած, զոր Յիսուս կը սիրէր։ 24—Ու Սիմոն Պետրոս անոր ակը կ'ընէր հարցնելու թէ ո՛վ պիտի ըլլայ անիկա՝ որու համար կը զրուցէ։ 25—Ան ալ Յիսուսի

*Յուն. գոգը

կուրծքին վրայ իյնալով՝ ըսաւ անոր, Տէր, ո՞վ է ան։ 26—Յիսուս պատասխանեաց, Անիկա է՝ որու պատառը թրջելով կու տամ. և թրջելով պատառը իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի տուաւ։ 27—Ու պատառէն ետքը Սատանայ անոր ներսը մտաւ։ Ու Յիսուս ըսաւ անոր, Ինչ որ պիտի ընես՝ չուտով լրի։ 28—Բայց այս բանը անոնցմէ նստողներէն մէկը չհասկցաւ, թէ ինչո՛ւ համար ըսաւ անոր։ 29—Վասն զի ոմանք կը խորհէին թէ որովհետև գանձանակը Յուդա կը պահէր, Յիսուս ըսած է անոր՝ Զմեզ զոր պէտք է մեզի այս տօնին պէտք է, կամ՝ որպէս զի աղքատներուն բան մը տայ։ 30—Անիկա ալ պատառը առածին պէս չուտ մը դուրս ելաւ, ու դիշեր էր։

31—Ու երբ անիկա դուրս ելաւ, Յիսուս ըսաւ, Հիմա փառաւորուեցաւ Որդին մարդոյ, ու Աստուած փառաւորուեցաւ անով. 32—եթէ Աստուած անով փառաւորուեցաւ, Աստուած ալ զանիկա իր անձովը պիտի փառաւորէ, և չուտով պիտի փառաւորէ զանիկա։ 33—Որդեակներ, փչ մը ատեն ալ ձեզի հետ եմ, զիս պիտի փնտռէք. և ինչպես Հրեաներուն ըսի թէ Ուր ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ, հիմա ձեզի ալ կ'ըսեմ։ 34—Նոր պատուիրան մը կու տամ ձեզի որ միկդմիկ սիրէք, ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք ալ միկդմիկ սիրէք։ 35—Ասով ամենը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս եք, եթէ իրարու վրայ սէր ունենաք։ 36—Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, ո՞ւր կ'երթաս։ Յիսուս պատասխանեց անոր, Ուր ես կ'երթամ, դուն հիմա չես կրնար իմ ետևէս գալ, բայց ետքը պիտի գաս իմ ետևէս։ 37—Պետրոս ըսաւ անոր, Տէր, ինչո՞ւ հիմա չեմ կրնար քու ետևէդ գալ. ես իմ կեանքս ալ քեզի համար պիտի դնեմ։ 38—Յիսուս պատասխանեց անոր, Քա՛ կեանքդ պիտի դնես ինծի համար. ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Հաւը պիտի չկանչէ՝ մինչև դուն երեք անգամ զիս ուրանաս։

ԳԼ. ԺԴ

Սիրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի ալ հաւատացէք։ 2—Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի, Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ։ 3—Ու եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կու գամ և ձեզ ինծի կ'առնեմ, որպէս զի ուր ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք։ 4—Ու ուր ես կ'երթամ՝ գիտէք, ու ճամբան ալ գիտէք։

5—Թովմաս ըսաւ անոր, Տէր, չենք գիտեր ո՛ւր կ'երթաս, և ինչպես կրնանք ճամբան գիտնալ։ 6—Յիսուս ըսաւ անոր, Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը և կեանքը. մէկը Հօրը ինծմով չգայ՝ եթէ ոչ ինծմով։ 7—Եթէ զիս ճանչնայիք, իմ Հայրս ալ կը ճանչնայիք. և ասկէ հետև կը ճանչնաք զանիկա ու տեսաք զանիկա։

8—Փիլիպպոս ըսաւ անոր, Տէր, Հայրը մեզի ցուցուր, ու հերիքէ մեզի։ 9—Ըսաւ անոր Յիսուս, Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և զիս չճանչցա՞ր, Փիլիպպոս. ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ, և դուն ինչպէ՞ս կ'ըսես թէ Հայրը մեզի ցուցուր։ 10—Չե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է. այն խօսքերը զորանք ես ձեզի կը խօսիմ, ոչ թէ ինքիրմէս կը խօսիմ, հապա Հայրը որ իմ մէջս բնակած է, անիկա կը գործէ այն գործերը։ 11—Հաւատացէք ինծի, թէ ես Հօրը մէջ եմ ու Հայրը իմ մէջս է. 12—Ապա թէ ոչ՝ գոնէ գործերուն համար ինծի հաւատացէք։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը զորանք ես կը գործեմ, ինչ որ ալ պիտի գործէ, և անոնցմէ աւելի մեծ էրգեր պիտի գործէ, վասն զի ես Հօրս քով կ'երթամ։ 13—Ու իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կատարեմ զանիկա, որպէս զի Հայրը Որդիովը փառաւորուի։ 14—Եթէ իմ անունովս բան մը խնդրէք, ե՛ս՝ պիտի կատարեմ։ 15—Եթէ զիս կը սիրէք, իմ պատուիրանքներս պահեցէք։ 16—Ես ալ Հօրը պիտի աղաչեմ, և ուրիշ Մխի-

թարիչ մը պիտի տայ ձեզի, որպէս զի յաւիտեան ձեզի հետ բնակի. 17—ճշմարտութեան Հոգին, զոր այս աշխարհը չկրնար ընդունիլ, վասն զի չեն տեսներ զանիկա ու չեն ճանչնար զանիկա. բայց դուք կը ճանչնաք զանիկա, վասն զի ձեր քով կը բնակի և ձեր մէջ պիտի ըլլայ։ 18—Ձեզ որբ չեմ թողուր, կու գամ ձեզի։ 19—Փիլ մը տակաւին հոս ա՛լ աշխարհ զիս չտեսներ. բայց դուք պիտի տեսնէք զիս, վասն զի ես կենդանի եմ, և դուք կենդանի պիտի ըլլաք։ 20—Այն օրը պիտի գիտնաք թէ ես իմ Հօրս մէջ եմ, և դուք իմ մէջս, ես ալ ձեր մէջ։ 21—Ան որ իմ պատուիրանքս կը բռնէ ու կը պահէ զանոնք, անիկա է զիս սիրողը. և ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի. ու ես զանիկա պիտի սիրեմ, և ինքզինքս անոր պիտի յայտնեմ։

22—Ըսաւ անոր Յուդա, (ոչ Իսկարիովտացին,) Տէր, ի՞նչպես կ'ըլլայ որ դուն ինքզինքդ մեզի պիտի յայտնես, և ոչ թէ աշխարհի։ 23—Յիսուս պատասխանեց ու ըսաւ անոր, Եթէ մէկը զիս կը սիրէ, իմ խօսքս պիտի պահէ. ու իմ Հայրս զանիկա պիտի սիրէ, և անոր պիտի գանք ու անոր քով օթևան պիտի բնենք. 24—Ան որ զիս չսիրեր, իմ խօսքերս չպահեր. ու այն խօսքը զոր կը լսէք՝ իմս չէ, հապա Հօրը՝ որ զիս ղրկեց։ 25—Այս բաները ձեզի խօսեցայ, քանի որ ձեր քով եմ։ 26—Բայց Մխիթարիչը, Սուրբ Հոգին, զոր Հայրը իմ անունովս պիտի ղրկէ, անիկա ձեզի բոլորը պիտի սորվեցնէ, և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ։ 27—Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի. ոչ թէ ինչպես աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ. սիրտերնիդ չխռովի ու չվախնայ։ 28—Լսեցիք որ ես ըսի ձեզի Թէ կ'երթամ ու ձեզի կու գամ. եթէ զիս սիրէիք՝ պիտի ուրախանայիք, Թէ ես Հօրը քով կ'երթամ, վասն զի իմ Հայրս ինծմէ մեծ է։ 29—Ու հիմակուընէ գուցա չեղած ըսի ձեզի, որպէս զի երբ ըլլայ՝

*Ոմանք, որ ըսի Թէ

հաւատաք։ 30—Ալ ձեզի հետ շատ պիտի չխօսիմ, վասն զի այս աշխարհին իշխանը կու գայ, և իմ վրաս բան մը չունի։ 31—Միայն Թէ աշխարհ գիտնայ որ ես Հայրը կը սիրեմ, ու ինչպես Հայրը ինծի պատուիրեց, այնպես կ'ընեմ. ելէք, ասկէ երթանք։

ԳԼ. ԺԵ

Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս մշակն է։ 2—Ամէն ճիւղ որ իմ վրաս է ու պտուղ չբերեր, կը կտրէ զանիկա, և ամէնը որ պտուղ կը բերէ, կը մաքրէ զանիկա, որպէս զի ալ աւելի պտուղ բերէ։ 3—Դուք հիմակուընէ մաքուր էք այն խօսքով զոր ձեզի խօսեր եմ։ 4—Իմ մէջս կեցէք, ու ես ձեր մէջ. ինչպես ճիւղը չկրնար ինքզինքմէ պտուղ բերել, եթէ որթին վրայ հաստատուած չըլլայ, նոյնպես դուք չեւ կրնաք, եթէ իմ վրաս հաստատուած չըլլաք։ 5—Ես որթն եմ ու դուք ճիւղերն էք. ան որ իմ վրաս հաստատուած է՝ և ես անոր մէջ, անիկա շատ պտուղ կը բերէ, վասն զի առանց ինծի բան մը չէք կրնար ընել։ 6—Եթէ մէկը իմ վրաս հաստատուած չէ, անիկա ճիւղի մը պէս դուրս ձգուած ու չորցած է. և կը ժողվեն զանոնք ու կրակը կը նետեն, ու կ'այրեն։ 7—Եթէ դուք իմ մէջս կեցնաք, և իմ խօսքերս ալ ձեր մէջ կեցնան, ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք, ու պիտի ըլլայ ձեզի։ 8—Ասով իմ Հայրս փառաւորուեցաւ, որպէս զի դուք շատ պտուղ բերէք, ու իմ աշակերտներս ըլլաք։

9—Ինչպէս Հայրը զիս սիրեց, ես ալ ձեզ սիրեցի. իմ սիրոյս մէջ հաստատ կեցէք։ 10—Եթէ իմ պատուիրներս պահէք, իմ սիրոյս մէջ պիտի կենաք, ինչպես ես իմ Հօրս պատուիրները պահեցի, և անոր սիրոյն մէջ կեցեր եմ։ 11—Այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ, ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ։ 12—Այս է իմ պատուէրս որ միկդմիկ սիրէք, ինչպես ես ձեզ սիրեցի։ 13—Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամ-

ներուն համար դնեմ։ 14—Թուփ իմ բանակիսներս եմ, եթէ ընկալ ըլլաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ։ 15—Ասկէ ետքը ձեզ ծառայ չեմ անուաներ, վասն զի ծառան չգիտեր իր տէրը ինչ կ'ընէ. հապա ես ձեզ բարեկամ անուանեցի, վասն զի այն ամէն բաները զոր Հօրմէս լսեցի, ձեզի իմացուցի։ 16—Ոչ թէ դուք զիս ընտրեցիք, հապա ես ձեզ ընտրեցի, ու դրի ձեզ որպէս զի դուք երթաք և պտուղ բերէք, ու ձեր պտուղը մնայ. որպէս զի իմ անունովս ինչ որ Հօրմէն խնդրէք, ձեզի տայ։ 17—Զայս կը պատուիրեմ ձեզի որ միմեանց սիրէք։

18—Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտցէք որ ձեզմէ առաջ զիս ատեց։ 19—Եթէ աշխարհէն եղած ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր. բայց որովհետև աշխարհէն չէք, հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ։ 20—Մտաբերեցէք բերած այն խօսքը զոր ձեզի ըսի Թէ ծառան իր տէրոջմէն մեծ չէ. եթէ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն. եթէ իմ խօսքս պահեցին, ձերն ալ պիտի պահեն։ 21—Բայց այս ամէն բաները պիտի ընեն ձեզի իմ անուանս համար, վասն զի չճանչցան զանիկա որ զիս զրկեց։ 22—Եթէ ես եկած և անոնց խօսած չըլլայի, անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա իրենց մեղքին պատճառնէր մը չունին։ 23—Ան որ զիս կ'ատէ, իմ Հայրս ալ կ'ատէ։ 24—Եթէ այն գործերը իրենց մէջ բրած չըլլայի, զորոնք ուրիշ մէկը չէ բրած, անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա տեսան, ու ատեցին զիս ու իմ Հայրս ալ։ 25—Սակայն այս եղաւ՝ որպէս զի կատարուի այն խօսքը որ իրենց օրէնքին մէջ գրուած է Թէ, Զուր տեղը զիս ատեցին։ 26—Բայց երբ Մխիթարիչը գայ, զոր ես Հօրմէն ձեզի պիտի դրկեմ, ճշմարտութեան Հոգին՝ որ Հօրմէն կ'ելլէ, անիկա ինծի համար պիտի վկայէ. 27—Ու դուք ալ կը վկայէք, վասն զի սկիզբէն է վեր ինծի հետ եք։

Գլ. ԺԶ

Ա՛յս բաները ձեզի խօսեցայ որպէս զի չգայթակղիք։ 2—Իրենց ժողովարանէն պիտի ձգեն ձեզ. ու ժամանակ ալ պիտի գայ որ ամէն ոք որ ձեզ սպաննէ, այնպէս պիտի սեպէ Թէ Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ։ 3—Ու այս բաները ընելու են, անոր համար որ ոչ Հայրը ճանչցան, ոչ ալ զիս։ 4—Բայց այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի երբ ժամանակը գայ, մտաբերիդ բերէք Թէ ես բսի ձեզի. և այս բաները սկիզբէն չըսի ձեզի, վասն զի ես ձեզի հետ էի։

5—Սակայն հիմա ես կ'երթամ զիս դրկողին քով, և ձեզմէ մէկն ալ չհարցրներ ինծի Թէ Ո՞ւր կ'երթաս։ 6—Բայց որովհետև այս բաները ձեզի խօսեցայ, ձեր սիրտերը տրտմութիւնով լեցան։ 7—Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի. Ազնիւ է ձեզի եթէ ես երթամ. քանզի եթէ ես չերթամ, Մխիթարիչը ձեզի չգար. հապա եթէ երթամ, զանիկա ձեզի կը դրկեմ։ 8—Ու ինք երբ գայ, աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի համար և արդարութեան համար ու դատաստանի համար։ 9—Մեղքի համար՝ որ ինծի չեն հաւատար. 10—Արդարութեան համար՝ որ ես իմ Հօրս քով կ'երթամ, և ալ զիս չեմ տեսներ. 11—Ու դատաստանի համար՝ որ այս աշխարհին իշխանը դատապարտուած է։ 12—Ձեզի ասելիներն չատ բաներ ունիմ բսելու, բայց հիմա չէք կրնար տանիլ։ 13—Իսկ երբ ինք ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի. վասն զի ոչ Թէ ինքնիրմէ պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի ու գալիքները ձեզի պիտի պատմէ։ 14—Անիկա զիս պիտի փառաւորէ, վասն զի իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ։ 15—Ան ամէն բաները զորոնք Հայրը ունի՝ իմն են. անոր համար ձեզի բսի Թէ իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ։ 16—Քիչ մը առնէն ա՛լ զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ մը առնէն զիս պիտի տեսնէք, քանզի ես Հօրը կ'երթամ։

17—Ասոր համար աշակերտներէն

մանոք իրարու կ'ըսէին. Ի՞նչ է այս որ մեզի կ'ըսէ Թէ Քիչ մը առնէն ա՛լ զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ մը առնէն զիս պիտի տեսնէք, և Քանզի ես Հօրը կ'երթամ։ 18—Ու կ'ըսէին, Ի՞նչ պիտի ըլլայ այն Քիչ մըը այր՝ զոր կ'ըսէ. չենք գիտեր ի՞նչ կը զրուցէ։ 19—Իսկ Յիսուս գիտնալով որ կ'ուզեն իրեն հարցնել, բսաւ անոնց, Ասո՞ր համար իրարու կը հարցնէք, որ բսի Թէ Քիչ մը առնէն ա՛լ զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ մը առնէն զիս պիտի տեսնէք։ 20—Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Դուք պիտի լայ ու ողբաք, բայց աշխարհ պիտի ուրախանայ. դուք պիտի տրտմիք, սակայն ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխուի։ 21—Կին մը երբ ծնանելու վրայ է՝ տրտմութիւն կ'ունենայ, վասն զի իր ժամը հասած է. բայց երբ ազան ծնանի, ալ նեղութիւնը մտաբ չերեր ուրախութենէն՝ որ աշխարհ մարդ մը ծնաւ։ 22—Ու յիրաւի դուք հիմա տրտմութիւն ունիք. բայց ես ձեզ նորէն պիտի տեսնեմ, և ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան, ու ձեր ուրախութիւնը մէկը ձեզմէ պիտի չվերցնէ։ 23—Ու այն օրը ինծի բան մը պիտի չհարցնէք. Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ իմ անունովս ինչ որ խնդրէք Հօրմէն, պիտի տայ ձեզի։ 24—Մինչև հիմա իմ անունովս բան մը չխնդրեցիք. խնդրեցէք ու պիտի առնէք, որպէս զի ձեր ուրախութիւնը լման ըլլայ։ 25—Այս բաները առակներով խօսեցայ ձեզի. Բայց ժամանակ պիտի գայ, որ ալ ձեզի առակներով պիտի չխօսիմ, հապա յայտնապէս Հօրը վրայով պիտի պատմեմ ձեզի։ 26—Այն օրը իմ անունովս պիտի խնդրէք. և չեմ ըսեր ձեզի Թէ ես ձեզի համար պիտի աղաչեմ Հօրը։ 27—Քանզի ինք Հայրը ձեզ կը սիրէ, վասն զի դուք զիս սիրեցիք և հաւատացիք Թէ ես Աստուծմէ եկայ։ 28—Հօրմէն եկայ ու աշխարհ եկայ. նորէն կը թողում աշխարհը և Հօրը կ'երթամ։

29—Իսկոյն անոր իր աշակերտները, Ահա հիմա յայտնապէս կը խօսիս, և առակ մըն ալ չես ըսեր։ 30—Հիմա

Յիսուս երբ ասոնք խօսեցաւ, իր աչքերը դէպ ի երկինք վերցուց ու բսաւ, Հայր, ժամանակը հասեր է, փառաւորէ քու Որդիդ, որպէս զի քու Որդիդ ալ քեզ փառաւորէ. 2—Ինչպէս իրեն իշխանութիւն տուիր ամէն մարմինի վրայ, որ յաւիտենական կեանք տայ այն ամենուն զոր իրեն տուիր։ 3—Ու այս է յաւիտենական կեանքը, որ ճանչնան քեզ մի միայն ճշմարիտ Աստուածդ, ու Յիսուս Քրիստոսը զոր դուն զրկեցիր։ 4—Ես քեզ երկրի վրայ փառաւորեցի, այն գործը զոր ինծի տուիր ընելու՝ լմնցուցի։ 5—Ու հիմա, ով Հայր, փառաւորէ զիս քու քովդ այն փառքովը զոր աշխարհի ըլլալէն առաջ քովդ ունէի։ 6—Քու անունդ յայտնի ըրի այն մարդոց զորոնք աշխարհէ ինծի տուիր. քուկդ էին, ու ինծի տուիր զանոնք և քու խօսքդ պահեցին։ 7—Հիմա գիտցան Թէ այն ամէն բաները զորոնք ինծի տուիր, քեզմէ են. 8—Վասն զի այն խօսքերը զորոնք ինծի տուիր, ես անոնց տուի, անոնք ալ ընդունեցին, և ճշմարտութեամբ իմացան որ ես քեզմէ ելայ, ու հաւատացին Թէ դուն զրկեցիր զիս։ 9—Ես անոնց համար կ'աղաչեմ. ոչ Թէ աշխարհի համար կ'աղաչեմ, հապա անոնց համար՝ զորոնք դուն ինծի տուիր, վասն զի քուկդ են անոնք։ 10—Ու ինչ որ իմն է՝ այն բոլորը քուկդ է, և ինչ որ քուկդ է՝

այն իմն է, ու ես անոնցմով փառաւորուած եմ։ 11—Ու ես ա՛լ աշխարհի մէջ չեմ, բայց անոնք աշխարհի մէջ են, ու ես քեզի կու գամ. ով Սուրբ Հայր, քու անունովդ պահէ զանոնք որ դուն ինծի տուիր, որպէս զի մէկ ըլլան, ինչպէս մենք մէկ ենք։ 12—Քանի որ աշխարհի մէջ անոնց հետ էի, ես կը պահէի զանոնք քու անունովդ. զորոնք որ դուն ինծի տուիր, ես պահեցի, և անոնցմէ մէկը չկորսուեցաւ, միայն թէ այն կորստեան որդին, որպէս զի գրուածք կատարուի։ 13—Ալ հիմա քեզի կու գամ, ու աշխարհի մէջ այս բաները կը խօսիմ, որպէս զի իմ ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ ունենան։ 14—Ես քու խօսքդ տուի անոնց տուի, ու աշխարհ զանոնք ատեց. վասն զի աշխարհէ չեն, ինչպէս ես աշխարհէ չեմ։ 15—Չեմ աղաչեր որ զանոնք աշխարհէ վերցնես, հապա որ զանոնք չարէն պահես։ 16—Անոնք աշխարհէ չեն, ինչպէս ես աշխարհէ չեմ։ 17—Սրբէ զանոնք քու ճշմարտութիւնովդ. քու խօսքդ ճշմարտութիւն է։ 18—Ինչպէս դուն ինծի աշխարհ ղրկեցիր, ես ալ զանոնք աշխարհ ղրկեցի։ 19—Ու անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որպէս զի իրենք ալ ճշմարտութիւնով սրբացած ըլլան։ 20—Բայց ոչ թէ միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինծի հաւատացողներուն համար ալ. 21—Որպէս զի ամէնն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն, ով Հայր, իմ մէջս ու ես քու մէջդ, որպէս զի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան, որպէս զի աշխարհ հաւատայ թէ դուն ղրկեցիր զիս։ 22—Ու այն փառքը զոր դուն ինծի տուիր, ես անոնց տուի, որպէս զի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք. 23—(Ես անոնց մէջ և դուն իմ մէջս.) որպէս զի իրենք կատարեալ ըլլան միաբնեան մէջ. ու աշխարհ գիտնայ թէ դուն ղրկեցիր զիս, ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս զիս սիրեցիր։ 24—Ով Հայր, զանոնք որ դուն ինծի տուիր, կ'ուզեմ որ ուր որ ես եմ անոնք ալ ինծի հետ ըլլան, որպէս զի տեսնեն իմ փառքս զոր ինծի տուիր, վասն զի դուն զիս սիրեցիր աշխարհի ակիզբէն առաջ։ 25—Ով արդար Հայր, աշխարհ քեզ չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ, ևասոնք ճանչցան թէ դուն զիս ղրկեցիր։ 26—Ու քու անունդ անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցնեմ, որպէս զի այն սէրը որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ, ու ես ալ անոնց մէջ։

Գլ. ԺԷ

Յիսուս այս բաները րսելէն ետև՝ իր աշակերտներուն հետ Կիդրոն հեղեղատին անդիի կողմը ելաւ, ուր պարտէզ մը կար, որուն մէջ մտաւ ինք ու իր աշակերտները։ 2—Ու Յուդա ալ, որ դաւիչը պիտի մատնէր, գիտէր այն տեղը, վասն զի Յիսուս յաճախ անդամ իր աշակերտներուն հետ հոն ժողվուած էր։ 3—Ուստի Յուդա զինուորներուն գունդը ու քահանայապետներէն և փարիսեցիներէն սպասաւորներ իրեն հետ առնելով՝ այն տեղ եկաւ լուսերով ու ջահերով ու զէնքերով։ 4—Իսկ Յիսուս իր վրայ գալը բոլոր բաները գիտնալով՝ ելաւ ու րսաւ անոնց, Ո՞վ կը փնտռէք։ 5—Պատասխան տուին անոր, Նազովրեցի Յիսուսը. րսաւ անոնց Յիսուս, Ես եմ. Յուդա ալ, որ դաւիչը կը մատնէր, անոնց հետ կայներ էր։ 6—Ու երբ րսաւ Թէ Ես եմ, ետ ետ գացին ու գետինը իյնական։ 7—Ու նորէն հարցուց անոնց, Ո՞վ կը փնտռէք. անոնք ալ րսին, Նազովրեցի Յիսուսը։ 8—Յիսուս պատասխան տուաւ, Ձեզի րսի Թէ Ես եմ. ուստի եթէ զիս կը փնտռէք, Թողուէք տանիք որ երթան։ 9—Որպէս զի կատարուի այն խօսքը զոր ինք րսեր էր Թէ Զանոնք որ ինծի տուիր, ասոնցմէ մէ՛կն ալ չկորսնցուցի։ 10—Այն ատեն Սիմոն Պետրոս, որ սուր մը ունէր, քաշեց զանիկա ու քահանայապետին ծառային վրայեվ՝ անոր ալ ականջը կտրեց հանեց. և այն ծառային անունը Մաղքոս էր։ 11—Իսկ Յիսուս րսաւ Պետրոսի, Սուրդ էր պատեանը դիր. այն գաւաթը զոր Հայրը ինծի տուաւ՝ պիտի չխմե՞մ զանիկա։ 12—Ուստի զինուորներուն գունդը

ու հազարապետը և Հրէից պատասպաները բռնեցին Յիսուսը ու կապկպեցին. 13—Ու առաջ զանիկա Անասի տարին, քանզի ինք այն տարուան քահանայապետին, Կայիափայի, աներն էր։ 14—Ես այս Կայիափան էր, որ Հրէից խրատ տուաւ Թէ Ազէկ է որ մարդ մը կորսուի ժողովուրդին համար։ 15—Ու Յիսուսի հետևելէն կ'երթային Սիմոն Պետրոս և ուրիշ աշակերտ մը. և այն աշակերտը քահանայապետին ճանչուածը ըլլալով՝ Յիսուսի հետ քահանայապետին գաւիթը մտաւ։ 16—Բայց Պետրոս դուրսը դրացը քով կը կենար. ուստի ելաւ միւս աշակերտը, որ քահանայապետին ճանչուածն էր, և րսաւ դռնապանին, ու ներս մտցուց Պետրոսը։ 17—Այն ատեն դռնապան աղջիկը րսաւ Պետրոսի, Մի՞թէ դո՛ւն ալ այն մարդուն աշակերտներէն ես. ան ալ րսաւ, Չեմ։ 18—Իսկ ծառաները ու պատասարները հուր կայներ էին, և կրակ վառած կը տաքնային, քանզի ցուրտ էր. Պետրոս ալ անոնց հետ կայներ էր ու կը տաքնար։ 19—Ու քահանայապետը Յիսուսի հարցուց անոր աշակերտներուն ու վարդապետութեանը վրայով։ 20—Յիսուս պատասխան տուաւ անոր, Ես աշխարհի յայտնի խօսեցայ. ես ամէն ատեն ժողովարաններուն մէջ ու տաճարին մէջ սորվեցուցի, ուր բոլոր Հրեաները կը ժողվուին, ու ծածկաբար բան մը չխօսեցայ։ 21—Ի՞նչու ինծի կը հարցնես, լսողներուն հարցուր Թէ ի՛նչ խօսեցայ իրենց. ահա ինչ որ խօսեցայ՝ գիտեն իրենք։ 22—Երբ զայս րսաւ, պատասարներէն մէկը որ հոն կայներ էր, Յիսուսի ապտակ մը զարկաւ՝ րսելով, Այդպէ՞ս պատասխան կու տաս քահանայապետին։ 23—Յիսուս անոր պատասխանեց, Եթէ չարը խօսեցայ, վկայէ չարին համար. իսկ եթէ բարի է՝ ինչո՞ւ կը զարնես ինծի։ 24—Ես Անանա զանիկա կապած՝ կայիափա քահանայապետին ղրկեց։ 25—Սիմոն Պետրոս ալ հոն կայներ էր ու կը տաքնար. և րսին իրեն, Մի՞թէ դո՛ւն ալ անոր աշակերտներէն ես. անիկա ուրացաւ ու րսաւ Թէ Չեմ։ 26—Քահանայապետին ծառաներէն մէկն ալ, այն հարբուխը ապտակեր որուն ականջը Պետրոս կտրեր էր, րսաւ, Չէ՞ որ ես քեզ տեսայ պարտէզին մէջ անոր հետ։ 27—Այն ատեն Պետրոս նորէն ուրացաւ, և չուտ մը հաւը խօսեցաւ։

28—Ու Յիսուսը Կայիափայի տեղէն Յովհաննէսի պալատը տարին, և առաւօտ էր. ու իրենք պալատը չմտան, որպէս զի չպղծուին, հապա որպէս զի զատիկը ուտեն։ 29—Ուստի Պիղատոս գուրս ելաւ անոնց ու րսաւ, Ի՞նչ մեղադրութիւն կը ներկայացնէք այս մարդուն դէմ։ 30—Պատասխան տուին ու րսին իրեն, Եթէ ասիկա չարագործ մը չըլլար, քեզի չէինք մատներ զանիկա։ 31—Այն ատեն Պիղատոս րսաւ անոնց, Դուք առէք զանիկա, ու ձեր օրէնքին համեմատ անոր դատաստանը տեսէք. Հրեաները իրեն րսին, Մեզի օրինաւոր չէ մարդ մը մեռցնել։ 32—Որպէս զի կատարուի Յիսուսի խօսքը, զոր րսաւ՝ իմացնելով Թէ ի՛նչ մահով ինք պիտի մեռնէր։ 33—Իսկ Պիղատոս նորէն պալատ մտաւ, կանչեց Յիսուսը ու րսաւ անոր, Դո՞ւն ես Հրէից Թագաւորը։ 34—Յիսուս պատասխան տուաւ անոր, Ասիկա դուն քեզմէ՞ կ'րսես, Թէ ինծի համար ուրիշները քեզի րսին։ 35—Պատասխան տուաւ Պիղատոս, Մի՞թէ ես Հրեա՞յ եմ. քու ազգդ և քահանայապետները քեզ ինծի մատնեցին. ի՞նչ գործ ես դուն։ 36—Յիսուս պատասխան տուաւ, Իմ Թագաւորութիւնս այս աշխարհէն չէ. եթէ այս աշխարհէն ըլլար իմ Թագաւորութիւնս, իմ պատառներս կը կռուէին՝ որպէս զի ես Հրէից ձեռքը չմատնուիմ, բայց հիմա իմ Թագաւորութիւնս ասկէ չէ։ 37—Ուստի Պիղատոս րսաւ անոր, Ուրեմն դուն Թագաւո՞ր մէն ես. պատասխան տուաւ Յիսուս, Դուն կ'րսես, քանզի Թագաւոր եմ. ես այս բաներն համար ծնած եմ, և ասոր համար աշխարհ եկայ, որպէս զի ճշմարտութեան համար վկայեմ. այն ամէնը որ ճշմարտութենէն է՝ իմ ձայնիս ականջ կը դնէ։ 38—Պիղատոս ըսաւ անոր, Ի՞նչ է ճշմարտութիւնը. և զայս ըսելով՝ նորէն գուրս ելաւ Հրեաներուն և րսաւ անոնց, Ես յանցանք մը չեմ գտներ

անոր վրայ։ 39—Բայց սովորութիւն ունէք որ հ֊ըշդ մը արձակեմ ձեզի զատկիս։ Հիմա կ'ուզէ՞ք որ Հրէից Թագաւորը արձակեմ ձեզի։ 40—Ան ատեն ամէնն ալ նորէն ազաղակեցին՝ բսելով, Մի՛ ըզՅիսուս ասիկա, հապա Բարաբբան։ Ու Բարաբբա աւազակ մըն էր։

Գլ. ԺԹ

Ան ատեն Պիղատոս առաւ Յիսուս ու ծեծեց։ 2—Զինուորներն ալ փուչիլ պսակ հիւսելով՝ անոր գլխուն դրին, և անոր ծիրանի հանդերձ մը հագուցին։ 3—Ու կ'ըսէին, Ողջոյն քեզ, Հրէից Թագաւոր։ և ապտակներ կը զարնէին անոր։ 4—Պիղատոս նորէն դուրս ելաւ ու բսաւ անոնց, Ահա զանիկա դուրս կը բերեմ ձեզի, որպէս զի գիտնաք Թէ ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ։ 5—Ան ատեն Յիսուս դուրս ելաւ՝ փշեղէն պսակն ու ծիրանի հանդերձը հագած։ և Պիղատոս բսաւ անոնց, Ահա այն մարդը։ 6—Քահանայապետներն ու սպասաւորները երբ տեսան զանիկա, պոռացակեցին ու բսին, Խաչը հան՛, խաչը հան՛։ [ասիկա]։ Պիղատոս բսաւ անոնց, Դո՛ւք առէք ասիկա ու խաչը հանեցէք, վասն զի ես ոտր վրայ յանցանք մը չեմ գտներ։ 7—Հրեաները պատասխան տուին իրեն, Մենք օրէնք ունինք, և մեր օրէնքին համեմատ պէտք է որ մեռնի, վասն զի ինքզինք Աստուծոյ Որդի ըրաւ։ 8—Երբ Պիղատոս այս խօսքը լսեց, ալ աւելի վախցաւ։ 9—Ու նորէն պալատ մտնելով՝ բսաւ Յիսուսի, Ուրկի՞ ես դուն. բայց Յիսուս պատասխան չտուաւ անոր։ 10—Ուստի Պիղատոս բսաւ անոր, Ինծի՞ հետ չի՞ս խօսիր. չի՞ս գիտեր որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչը հանելու, ու իշխանութիւն ունիմ քեզ արձակելու։ 11—Յիսուս պատասխան տուաւ, Դուն իմ վրաս մէկ իշխանութիւն ալ չէիր ունենար, եթէ քեզի վերէն որտւած չըլլար. անոր համար՝ ան որ ինծի մատնեց, անոր մեղքը աւելի մեծ է։ 12—Ալ անկէ ետև Պիղատոս կը փնտռէր Թէ ի՞նչպես զանիկա արձակէ. բայց Հրեաները կ'աղաղակէին ու կ'ըսէին, Եթէ ասիկա արձակես, կայսրին բարեկամը չես. ամէն ով որ ինքզինք Թագաւոր կ'անուանէ, անիկա կայսրին հակառակ կը խօսի։ 13—Իսկ Պիղատոս երբ այս խօսքը լսեց, դուրս հանեց Յիսուսը, ու նստաւ բեմին վրայ, այն տեղը որ Քարայատակ կ'ըսուէր, և Եբրայեցերէն՝ Կապպաթա։ 14—(Զատկին ուրբաթ ուր էր ու ժամը վեցին առաններէն էր։) և Հրեաներուն բսաւ, Ահա ձեր Թագաւորը։ 15—Բայց անոնք աղաղակեցին, Վերցո՛ր, վերցո՛ր, խաչը հանի՛ ասիկա։ Պիղատոս բսաւ անոնց, Ձեր Թագաւորը խաչը հանեմ։ Քահանայապետները պատասխան տուին, Մենք կայսրէն զատ Թագաւոր չունինք։ 16—Ան ատեն անոնց ձեռքը տուաւ զանիկա որպէս զի խաչուի։

17—Անոնք ալ առին Յիսուսը ու կը տանէին. և ինք իր խաչը վերցնելով՝ ելաւ Գագաթ բսուած տեղը, որ Եբրայեցերէն Գողգոթա կ'ըսուի։ 18—Հոն զանիկա խաչը հանեցին, և անոր հետ ուրիշ երկուք ալ՝ մէկ դիէն ու միւս դիէն, և մէջտեղը Յիսուսը։ 19—Տախտակ մըն ալ գրեց Պիղատոս, ու դրաւ խաչին վրայ, և գրուածը էր. Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից։ 20—Ու այն տախտակը Հրեաներէն շատերը կարդացին, վասն զի փոպոխին մօտ էր այն տեղը ուր Յիսուս խաչուեցաւ. ու գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն և Լատիներէն։ 21—Ան ատեն Հրէից քահանայապետները Պիղատոսի բսին, Մի գրեր Թագաւոր Հրէից, հապա Թէ ինք բսաւ, Թագաւոր եմ Հրէից։ 22—Պիղատոս պատասխան տուաւ, Ինչ որ գրեցի՝ գրեցի։

23—Ու զինուորները երբ Յիսուսը խաչը հանեցին, անոր հանդերձները առին ու չորս բաժին ըրին, ամէն մէկ զինուորին բաժին մը. նաև պատմուճանը. իսկ պատմուճանը առանց կարի էր վերէն վար բոլորը հիւսուած։ 24—Ուստի բսին իրարու, Ասիկա չպատառնենք, հապա վիճակ ձգենք տեր վրայ Թէ որո՛ւ պիտի ըլլայ. որպէս զի կատարուի այն գրուածը որ կ'ըսէ, Իմ հանդերձներս իրենց մէջ բաժնեցին, և իմ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին։

Ասոնք զինուորները այս բաները ըրին։ 25—Ու Յիսուսի խաչին քով կայներ էին իր մայրը և իր մօրը քոյրը Մարիամ, Կղեովպասի կինը, ու Մարիամ Մագդաղենացի։ 26—Ուստի Յիսուս երբ տեսաւ իր մայրը, և այն աշակերտը որ կը սիրէր, որ հոն կայներ էր, բսաւ իր մօրը, Ով կին, ահա քու որդի։ 27—Ետքը բսաւ աշակերտին, Ահա քու մայրդ։ և այն ժամուընկէն աշակերտը զանիկա իր քով առաւ։

28—Անկէ ետև Յիսուս գիտնալով Թէ արդէն ամէն բան լմնցած է, (որպէս զի գրուածը կատարուի,) բսաւ, Ծարաւ եմ։ 29—Ու հոն քացախով լեցուն անօթ մը կար. անոնք ալ քացախով սպունգ մը լեցնելով, զոպովի հիւրիւի վրայ փաթթած՝ անոր բերնին մօտեցուցին։ 30—Ուստի Յիսուս երբ քացախը առաւ՝ բսաւ, Ահա՛ կատարուեցաւ. ու գլուխը ծռելով՝ հոգին աւանդեց։

31—Իսկ Հրեաները, որովհետև ուրբաթ էր էր, որ չըլլայ Թէ այն մարմինները խաչին վրայ Շաբաթ մնային. շաբաթ էր։ (վասն զի այն շաբաթը մեծ օր էր։) Պիղատոսի ազաչեցին որ անոնց սրունքները կոտրուին, ու վերցուին։ 32—Ուստի զինուորները եկան և առաջինին սրունքները կոտրատեցին. նաև միւսինը՝ որ անոր հետ խաչը եղած էր։ 33—Բայց երբ Յիսուսի եկան ու տեսան որ արդէն մեռած էր, անոր սրունքները չկոտրատեցին. 34—Հապա զինուորներէն մէկը գեղարդով անոր կողը խոցեց, և յետս մը արիւն ու ջուր ելաւ։ 35—Ու ան որ տեսաւ՝ ես ըսածը՝ վկայեց, ու անոր վկայութիւնը ճշմարիտ է, և ինք գիտէ որ ճշմարիտ կ'ըսէ, որպէս զի դուք [ալ] հաւատաք։ 36—Վասն զի այս բաները եղան որպէս զի կատարուի այն գրուածը Թէ Անոր մէկ ոսկորը պիտի չկոտրուի։ 37—Ու միւսին ալ ուրիշ գրուած մը կ'ըսէ Թէ Պիտի նային անոր՝ զոր խոցեցին։

38—Ասկէ ետև Յովսէփ, որ Արիմաթիայէ էր, (Յիսուսի աշակերտ եղած՝ բայց գաղտուկ Հրեաներուն վախէն,) աղաչեց Պիղատոսի, որ Յիսուսի մարմինը վերցնէ. Պիղատոս ալ հրամայեց։ Անոնք ալ եկան ու վերցուցին Յիսուսի մարմինը։ 39—Նիկոդեմոս ալ եկաւ, (որ առաջուընէ գիշերով Յիսուսի եկեր էր,) ու բերաւ հարիւր լիտրի չափ զմուռսի ու հալուխի խառնուրդ մը։ 40—Ու Յիսուսի մարմինը առին, ու խունկերով փաթթելին զանիկա կտաւներու մէջ. ինչպես Հրեաները սովորութիւն ունին թաղելու։ 41—Ու այն տեղը ուր խաչուեցաւ, պարտէզ մը կար, ու այն պարտէզին մէջ նոր գերեզման մը, որուն մէջ ուրեմն ոեւէ մարդ դրուած չէր։ 42—Հրեաներուն ուրբաթին համար հոն դրին Յիսուսը. վասն զի գերեզմանը մօտ էր։

Գլ. Ի

Ու մէկշաբթի երբ Մարիամ Մագդաղենացի առաւոտուն գոն լուսացած գերեզմանը կու գայ, ու կը տեսնէ որ քարը գերեզմանին դռնէն վերցուած է, 2—Ետքը կը վազէ կու գայ Սիմոն Պետրոսի և միւս աշակերտին գոր Յիսուս կը սիրէր, և կ'ըսէ անոնց, Տէրը գերեզմանէն վերցուցին, ու չենք գիտեր ո՛ւր դրին զանիկա։ 3—Ուստի ելաւ Պետրոս և միւս աշակերտը, ու գնաց ի գերեզմանը կու գային։ 4—Ու երկուքն ալ միասին կը վազէին. և միւս աշակերտը Պետրոսէ առելի չուտ վազելով՝ առնէ առաջ գերեզմանը եկաւ։ 5—Ու ծռելով նայեցաւ, ու տեսաւ որ կտաւները հոն կը կենային. բայց ինք ներս չմտաւ։ 6—Սիմոն Պետրոս ալ հասաւ, որ անոր հետէն կու գար, ու գերեզմանը մտաւ, և տեսաւ կտաւները որոնք հոն կը կենային։ 7—Ու վարշամակը որ անոր գլուխն էր՝ կտաւներուն հետ չէր, հապա ծալած զատ մէկ կողմը դրուած էր։ 8—Այն ատեն նորէն մտաւ միւս աշակերտն ալ՝ որ առաջ գերեզմանը եկեր էր, տեսաւ ու հաւատացաւ։ 9—Վասն զի դեռ գրուածը չէին գիտեր, Թէ պէտք է որ անիկա մեռելներէն յարութիւն առնէ։ 10—Ետքը աշակերտները նորէն իրենց տունը գացին։

11—Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կայներ էր և կու լար, ու երբ կու լար՝ գեղ ի գերեզմանը ծռեցաւ

նայելու։ 12—Ու տեսաւ երկու հրեշտակներ ճերմակ հանդերձեալներով, որ նստեր էին ուր Յիսուսի մարմինը դրուած էր, մէկը գլխուն կողմն ու մէկալը ոտքերուն կողմն։ 13—Ու անոնք իրեն ըսին, Ով կին, ինչո՞ւ կու լաս։ Ըսաւ անոնց, Անոր համար որ իմ Տէրս ձիշտ-ևանն վերցուցին, ու չեմ գիտեր ա՛ր դրին զանիկա։ 14—Զայս ար ըսաս՝ նայեցաւ յետեւ ու տեսաւ Յիսուսը որ կայներ էր, ու չէր գիտեր թէ Յիսուս է։ 15—Յիսուս անոր ըսաւ, Ով կին, ինչո՞ւ կու լաս, ո՞վ կը փնտռես։ Ինք կարծելով թէ անիկա պարտիզպանն է, ըսաւ անոր, Տէր, եթէ դուն վերցուցիր զանիկա, ըսէ ինծի, ա՛ր դրիր զայն, որպէս զի ես զանիկա առնեմ։ 16—Յիսուս ըսաւ անոր, Մարիամ։ ան ալ դարձաւ ու [Եբրայեցերէն] անոր ըսաւ, Ռաբբունի, որ վարդապետ ըսել է։ 17—Յիսուս ըսաւ անոր, Ինծի մի դպչիր, վասն զի դեռ Հօրս քով չեմ ելած։ Հապա գնա եղբայրներուս և ըսէ անոնց, Ես կ'ելլեմ իմ Հօրս քով ու ձեր Հօրը քով, և իմ Աստուածս քով ու ձեր Աստուածն քով։ 18—Մարիամ Մագդաղենացի եկաւ ու աշակերտներուն պատմեց թէ ինք Տէրը տեսաւ, և թէ անիկա այս բաները իրեն ըրաւ ցեղ։

19—Ու նոյն օրը, մէկշաբթի իրիկուան, աշակերտներուն ժողոված տեղին դռները գոց ըլլալով՝ Հրեաներէն վախնալնուն համար, Յիսուս եկաւ և անոնց մէջտեղը կայնեցաւ, ու ըսաւ անոնց, Խաղաղութիւն ձեզի։ 20-Ու զայս ըսելով՝ իր ձեռքերը ու կողը ցուցուց անոնց։ աշակերտներն ալ ուրախացան երբ Տէրը տեսան։ 21—Ու Յիսուս նորէն ըսաւ անոնց, Խաղաղութիւն ձեզի։ ինչպես Հայրը զիս ղրկեց, ես ալ ձեզ կը ղրկեմ։ 22—Ու զայս ըսելով՝ անոնց վրայ փչեց, ու ըսաւ անոնց, Առէք Հոգի Սուրբ։ 23—Որոնց մեղքերը քաղուք, քաղուած ըլլայ անոնց, և որոնց դէպիերը ևս բռնէք, բռնուած ըլլայ։

24—Բայց տասներկուքէն մէկը, երկուորեակ բսուած Թովմաս, անոնց հետ չէր՝ երբ Յիսուս եկաւ։ 25—Ուստի մէս աշակերտները կ'ըսէին անոր Թէ Տէրը տեսանք։ ան ալ ըսաւ անոնց, Եթէ իր ձեռքերուն վրայ բևեռներուն նշանը չտեսնեմ, ու մատս բևեռներուն տեղը չխթեմ եմ, և իմ ձեռքս անոր կողը չխթեմ եմ չեմ հաւատար։

26—Ու ութ օրէն եւս դարձեալ աշակերտները ներսն էին, Թովմաս ալ անոնց հետ։ եկաւ Յիսուս, դռներըը գոց ըլլալով, ու կայնեցաւ ենդ ի մէջտեղը և ըսաւ, Խաղաղութիւն ձեզի։ 27—Ետքը ըսաւ Թովմասի, Մատդ հոս բեր և նայէ իմ ձեռքերս, ու բեր քու ձեռքդ և իմ կողս խթէ, ու մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ։ 28—Ու Թովմաս պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Իմ Տէրս և իմ Աստուածս։ 29—Յիսուս ըսաւ անոր, *Որովհետև զիս տեսար՝ հաւատացիր։ երանի՛ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան։

30—Ու Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր աշակերտներուն առջեւ, որոնք այս գիրքին մէջ գրուած չեն։ 31—Բայց սոնք գրուեցան, որպէս զի հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, և որպէս զի հաւատալով կեանք ունենաք անոր անունովը։

ԳԼ. ԻԱ

Ասկէ ետև Յիսուս նորէն ինքզինք իր աշակերտներուն յայտնեց Տիբերիայի ծովուն եզերքը, և այսպէս յայտնեց։ 2—Միկտեղ էին Սիմոն Պետրոս ու Թովմաս, երկու որեակ բսուածը, և Նաթանայէլ որ Գալիլեայի Կանա քաղաքէն էր, ու Զեբեդեոսի որդիները և աշակերտներէն ուրիշ երկուք ալ։ 3—Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, Ես ձուկ որսալու կ'երթամ. ըսին անոր, Մենք ալ կու գանք քեզի հետ. ելան և նստան մէկ նաւը մտան, ու այն գիշերը բան մը չբռնեցին։ 4—Ու երբ ա՛լ առտու եղաւ, Յիսուս ծովուն եզերքը կայներ էր, բայց աշակերտները չճանչցան թէ Յիսուս է։ 5—Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Տղաք, ուտելու բան մը ունի՞ք. պատասխան տուին իրեն, Ոչ։ 6—Ու ըսաւ անոնց, Ուրիշանը նաւին ալ կողմը ձգեցէք ու պիտի գտնէք. ուստի ձգեցին,

*Ոմանք, Թովմաս, որոլհետև.

և ձուկերուն չատութենէն՝ ա՛լ չէին կրնար զանիկա քաշել։ 7—Ան ատեն այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, ըսաւ Պետրոսի, Անիկա Տէրն է. իսկ Սիմոն Պետրոս երբ լսեց Թէ Տէրն է, վրան կապեց վերան ատաս, վասն զի մերկ էր, ու ծովը նետուեցաւ։ 8—Ու միւս աշակերտները նաւակովը եկան, (վասն զի ցամաքէն հեռու չէին, միայն Թէ երկու հարիւր կանգուն չափ,) և ուռկանը ձուկերովը կը քաշէին։ 9—Ու երբ ցամաքը ելան, հոն վառած կրակ տեսան, ու վրան ձուկ դրուած, և հաց։ 10—Յիսուս ըսաւ անոնց, Բերէք այդ ձուկերէն գորովք դուք հիմա բռնեցիք։ 11—Սիմոն Պետրոս Նաւը *մատաւ, և ուռկանը ցամաք քաշեց հարիւր յիսունւթ մեծ խոշոր ձուկերով լեցուն. և այնչափ բան կար ու չպատռեցաւ ուռկանը։ 12—Յիսուս ըսաւ անոնց, Եկէք ճաշ ըրէք. ու աշակերտներէն մէկն ալ չէր համարձակեր անոր հարցնել Թէ Դուն ո՞վ ես. վասն զի գիտէին Թէ Տէրն է։ 13—Ան ատեն Յիսուս եկաւ ու առաւ հացը և անոնց տուաւ, նոյնպես ալ ձուկը։ 14—Ասիկա երրորդ անգամն է որ Յիսուս իր աշակերտներուն երեւցաւ՝ մեռելներէն յարութիւն առնելէն ետև։

15—Ու երբ ճաշը ըրին, Յիսուս ըսաւ Սիմոն Պետրոսի, Սիմոն, Յովհաննի որդի, զիս առանցմէ ասկի կը սիրե՞ս. անիկա ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ. ըսաւ անոր, Արածէ իմ գառնուկներս։ 16—Նորէն երկրորդ անգամ ըսաւ անոր, Սիմոն, Յովհաննի որդի, զիս կը սիրե՞ս. ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես որ քեզ կը սիրեմ. ըսաւ անոր, Արածէ իմ ոչխարներս։ 17—Ըսաւ անոր երրորդ անգամ, Սիմոն, Յովհաննի որդի, զիս կը սիրե՞ս. Պետրոս տրտմեցաւ որ երեք անգամ իրեն ըսաւ Թէ Զիս կը սիրե՞ս. և ըսաւ անոր, Տէր, դուն ամէն բան գիտես, դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ. ըսաւ անոր Յիսուս, Արածէ իմ ոչխարներս։ 18—Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ երբ դուն պատանի էիր, ինքզինքդ գօտի կը կապէիր ու կ'երթայիր ուր որ ուզէիր. բայց երբ ծերանաս, ձեռքերդ վեր պիտի բանես, և ուրիշը քեզի գօտի պիտի կապէ ու պիտի տանի ուր չես ուզեր։ 19—Ասիկա բանը ըսաւ՝ ցուցնելով Թէ անիկա ի՞նչ մահով պիտի փառաւորէ զԱստուած. ու երբ զայս ըսաւ ետև՝ ըսաւ անոր, Եկաւ իմ հետեւէ։ 20—Ու Պետրոս դարձաւ ու տեսաւ այն աշակերտը զոր Յիսուս կը սիրէր, որ հետեւէն կ'երթար, (որ նաև ընթրիքին առեղ անոր կուրծքին վրայ ինկեր և ըսեր էր, Տէր, ո՞վ է որ քեզ պիտի մատնէ։) 21—Պետրոս զանիկա տեսնելով՝ ըսաւ Յիսուսի, Տէր, հապա ասիկա ի՞նչ պիտի ըլլայ։ 22—Յիսուս ըսաւ անոր, Եթէ ես ուզեմ որ ասիկա կենայ մինչև ես գամ, քու ի՞նչ հոգդ է. դուն իմ հետեւէս եկուր։ 23—Ալ այս խօսքը եղաւ եղբայրներուն մէջ Թէ այն աշակերտը պիտի չմեռնի. սակայն Յիսուս չըսաւ անոր Թէ Պիտի չմեռնի, հապա՝ եթէ ես ուզեմ որ ասիկա կենայ մինչև ես գամ, քու ի՞նչ հոգդ է։

24—Ասիկա այն աշակերտն է՝ որ կը վկայէ այս բաներուն համար, որ գրեց ալ այս բաները. ու գիտենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է։ 25- Ու ուրիշ շատ բաներ ալ կան, զորոնք Յիսուս ըրաւ, որոնք եթէ մէկիկ մէկիկ գրուած ըլլային, կարծեմ Թէ աշխարհս ալ բաւական պիտի չըլլար պարունակելու այն գիրքերը որ գրուած ըլլային Ամէն։

*Յոան. եկաւ.

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա

Առաջին պատմութիւնը բրի, ով Թէոփիլոս, այն ամէն բաներուն վրայ զոր գործել սկսաւ Յիսուս և սորվեցնել, 2—Մինչև այն օրը որ Հոգւոյն Սրբոյ միջոցով պատուէր տուաւ իր ընտրած առաքեալներուն, ու համբարձաւ։ 3—Որոնց ինքզինք ցուցուց կենդանի իր չարչարանքներէն ետև շատ ապացոյցներով, քառասուն օրուան մէջ անոնց երեւնալով ու Աստուծոյ Թագաւորութեան վրայ խօսելով։ 4—Ու անոնց հետ միկտեղ *գտնուած ատենը կ'ապսպրէր անոնց որ երուսաղէմէ չհեռանան, հապա սպասեն Հօրը խոստմանը, զոր ինծմէ լսեցիք։ 5—Վասն զի հրաւ Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք ասկէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք։ 6—Անոնք ալ միկտեղ գալով՝ կը հարցնէին իրեն ու կ'ըսէին, Տէր, Իսրայէլի Թագաւորութիւնը այս ժամանակիս մէջ նորէն պիտի հաստատես։ 7—Ու ըսաւ անոնց, Ձեզի չվերաբերիր ժամերը և ժամանակները գիտնալը, զոր Հայրը իր իշխանութեանը մէջ դրաւ։ 8—Բայց Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատեն զօրութիւն պիտի առնէք, ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ և բոլոր Հրէաստանի ու Սամարիայի մէջ ու մինչև երկրի ծայրերը։ 9—Ու երբ այս բաները բսաւ, մինչ անոնք կը նայէին, համբարձաւ, և ամպ մը զանիկա անոնց աչքէն առաւ։ 10—Ու քանի որ աչքերնին անկած դէպ ի երկինք կը նայէին անոր երթալուն

*Կամ, հաց կերած

վրայ, ահա երկու մարդ իրենց քովկայնեցան ճերմակ հանդերձներով։ 11—Որոնք նաև ըսին, Ով Գալիլեացի մարդիկ, ինչո՞ կայներ դէպ ի երկինք կը նայիք։ այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ՝ ինչպես տեսաք անոր երկինք երթալը։ 12—Այն ատեն Ելեոնէ դարձան Ձիթենեաց բսուած լեռնէն, որ չորեքօրեան ճամբու չափ մօտ է Երուսաղէմի։ 13—Ու երբ *հասան, ելան վերնատունը, ուր կը բնակէին Պետրոս և Յակոբոս, Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթողիմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփէոսեան ու Սիմոն Նախանձայոյզ և Յուդա Յակոբեան։ 14—Ասոնք ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին կիներուն հետ, և Յիսուսի մօրը Մարիամի ու անոր եղբայրներուն հետ միկտեղ։

15—Ու այն օրերը ելաւ Պետրոս աշակերտներուն մէջ, (որ հարիւր քսան հոգիի չափ ժողվուած բազմութիւնկար) ու բսաւ, 16—Մարդիկ եղբայրներ, պէտք էր որ կատարուէր այս գրուածը, զոր առաջուընէ Հոգին Սուրբ Դաւիթի բերնով բսաւ Յուդայի համար, որ Յիսուսը բռնողներուն առաջնորդ եղաւ։ 17—Վասն զի անիկա մեզի հետ էր մեր հարմանքին մէջ, և այս պաշտօնէն ալ բաժին առնէր։ 18—Անիկա անիրաւութեան վարձքով ագարակ մը ստացաւ, ու գլխիվար իյնալով մէջտեղէն ձեղքուեցաւ, և իր ամէն փորոտիքը դուրս թափուեցաւ։ 19—Ու այս բանը երուսա-

*Այսինքն, Յակոբոսի եղբայրը, որ ընդհանուր խօսքով։

զէմ բնակողներուն ամէնուն յայտնի եղաւ, մինչև իրենց լեզուովը այն ագարակին անունը Ակէլդամա գրուեցաւ, այսինքն Արեան ագարակ։ 20—Վասն զի Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է Թէ Անոր բնակարանը աւերակ ըլլայ, ու անոր մէջ բնակող մը չըլլայ, և անոր պաշտօնը ուրիշը առնէ։ 21—Ուրեմն պէտք է որ այս մարդոցմէն՝ որոնք մեզի հետ եղած այն բոլոր ատենը, երբ Տէր Յիսուս մեր մէջ մտաւ ու ելաւ, 22—Յովհաննէսի մկրտութենէն սկսած՝ մինչև այն օրը որ մեզմէ համբարձաւ, ատոնցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ անոր յարութեանը։ 23—Ու երկու հոգի կայնեցուցին, Յովսէփը որ Բարսաբա կը կոչուէր, որ Յուստոս ալ մականուանեցաւ, ու Մատաթիան, 24—Ու աղօթք ընելով՝ ըսին, Դուն, ով Տէր, որ ամէնուն սիրտը գիտես, այս երկուքին մէկը, զոր ընտրեցիր, 25—Ստէպ կայնէ։ զի այս պաշտօնին և առաքելութեանը վիճակը առնէ, որմէ Յուդա ինկաւ իր տեղը երթալու։ 26—Ու անոնց համար վիճակ ձգեցին, ու վիճակը Մատաթիայի ելաւ, և անիկա տասնմէկ առաքեալներուն հետ սեպուեցաւ։

ԳԼ. Բ

Ու երբ Պենտեկոստէի օրը հասաւ, ամէնն ալ միասին միկտեղ էին։ 2—Ու յանկարծակի երկինքէն ձայն մը եղաւ տաստակաւնչ հովի մը յորինին պէս, և բոլոր տունը լեցուց՝ ուր նստեր էին։ 3—Ու բաժնուած լեզուներ երեւցան իրենց որպէս Թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ նստաւ։ 4—Ու ամէնն ալ Հոգւով Սրբով լեցուեցան, ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպես Հոգին իրենց խօսիլ կտւար։ 5—Ու երուսաղէմի մէջ բնակած Հրեաներ կային, աստուածավախ մարդիկ երկինքի ամէն ազգերէն ժողվուած։ 6—Ու երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը միկտեղ եկաւ ու խառնվեցաւ, վասն զի կը լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին։ 7—Ամէնն ալ կը սքանչանային ու կը զարմանային և իրարու կ'ըսէին, Չէ՞ որ ատոնք ամէնն ալ որ կը խօսին, Գալիլեացի են։ 8—Ու ի՞նչպես կը լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը՝ որուն մէջ ծնած ենք։ 9—Պարթեներ և Մարեր ու Եղամացիներ, և անոնք որ կը բնակին Միջագետքի մէջ, և Հրէաստանի ու Կապադովկիայի մէջ, Պոնտոսի ու Ասիոյի մէջ, 10—Փռիւգիայի և Պամփիլիայի մէջ, Եգիպտոսի մէջ, և Կիւրենէի մօտ Լիբէացւոց կողմերուն մէջ, նաև Հռովմայեցի պանդուխտներ, 11—Թէ՛ Հրեաներ և Թէ՛ նորադարձներ, կրետացիներ և Արաբացիներ, կը լսենք անոնցմէ որ մեր լեզուներով կը խօսին Աստուծոյ մեծամեծ բաներըն։ 12—Կը զարմանային ամէնն ալ ու տարակուսած իրարու կ'ըսէին, Ի՞նչ պիտի ըլլայ այս։ 13—Ոմանք ալ ծաղր ընելով՝ կ'ըսէին Թէ Անոնք նոր գինիով լեցուեր են։

14—Բայց Պետրոս ելաւ տասնմէկին հետ մէկտեղ, ձայնը վերցուց ու խօսեցաւ անոնց, Ով Հրեայ մարդիկ և դուք ամէնդ որ երուսաղէմ կը բնակիք, այս ձեզի յայտնի ըլլայ, ու ականջ դրէք իմ խօսքերուս։ 15—Քանզի ոչ Թէ սոնոնք գինովցած են, ինչպես դուք կը կարծէք, վասն զի ջ՚ը՝ օրուան երրորդ ժամն է։ 16—Հապա ասիկա այն է որ Յովէլ մարգարէին ձեռքով բսուեցաւ։ 17—Ու պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիէս ամէն մարմնի վրայ պիտի թափեմ, ու ձեր տղաքը և ձեր աղջիկները պիտի մարգարէանան, ու ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն, և ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն։ 18—Ու իմ ծառաներուս վրայ ու իմ աղախիններուս վրայ ալ այն օրերը իմ Հոգիէս պիտի թափեմ, և պիտի մարգարէանան։ 19—Ու վերը երկինքը հրաշքներ պիտի ցուցնեմ, ու վարը երկիրը՝ նշաններ, արիւն ու կրակ և ծուխի մսաախուղ։ 20—Արեւը խաւարի պիտի դառնայ, և լուսինը՝ արիւնի, գէտ Տէրոջը մեծ ու երեւելի օրը չհասած։ 21—Ու պիտի ըլլայ որ ամէն ով որ Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի։ 22—Ով Իսրայէլացի մարդիկ,

լանգիք այս խօսքերը. Յիսուս Նազովրեցին, Աստուծմէ ձեզի ցուցուած մարդ մը զօրութիւններով ու հրաշքներով և նշաններով, զորոնք Աստուած անոր ձեռքով ըրաւ ձեր մէյ, ինչպես դուք ալ գիտէք, 23—Անիկա Աստուծոյ որոշած խորհրդովը և կանխագիտութիւնովը մատնուած ըլլալով՝ առիք և *անօրէններու ձեռքով փայտի վրայ գամելով սպաննեցիք. 24—Զոր Աստուած յարուցի՝ մահուան ցաւերը փակելով, քանզի հնար չէր որ ինք անկէ բռնուի. 25—Վասն զի Դաւիթ անոր համար կ'ըսէ, Ամէն ատեն Տէրը կը տեսնէի իմ առջեւս, քանզի իմ ալ կողմս է, որպէս զի չսասանիմ. 26—Անոր համար ուրախ եղաւ իմ սիրտս, ու իմ լեզուս ցնծաց. նաև իմ մարմինս ալ յուսով պիտի հանգստանայ. 27—Վասն զի իմ անձս դժոխքին մէջ պիտի չթողուս, ու քու Սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չտաս. 28—Կենաց ճամբաները ինծի ծանչցուցիր. քու երեսիդ ուրախութիւնով զիս պիտի լեցնես. 29—Մարդիկ եղբայրներ, արժան է համարձակ ըսելու ձեզի Դաւիթ նահապետին համար, Թէ մեռաւ ու թաղուեցաւ, և անոր գերեզմանը մինչև այսօր մեր մէյ է. 30—Արդ որովհետև անիկա մարգարէ էր, և գիտէր Թէ Աստուած հաստատ երդում ըրաւ իրեն, Թէ իր երիկամունքներուն պտուղէն մարմնի կողմանէ Քրիստոսը պիտի յարուցանէ որ իր աթոռը նստի, 31—Ինք կանխատեսութեամբ խոսեցաւ Քրիստոսի յարութեանը համար, Թէ անոր անձը գերեզմանը չթողուեցաւ, և անոր մարմինը ապականութիւն չտեսաւ. 32—Այս Յիսուսը Աստուած յարուցի, որուն մենք ամէնս ալ վկայ ենք. 33—Ուստի Աստուծոյ աջ ձեռքով բարձրանալով, ու Հոգւոյն Սրբոյ խոստումնը Հօրմէն առնելով՝ այսօրհնց ասիկա, զոր դուք հիմա կը տեսնէք և կը լսէք. 34—Վասն զի Դաւիթ երկինք չելաւ, բայց ինք կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, 35—Մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատառանդան դնեմ. 36—Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս գիտցի, որ Աստուած զանիկա Տէր ալ ըրաւ՝ Յիսուսը ալ, այն Յիսուսը զոր դուք խաչեցիք։

37—Ու երբ որ լսեցին, էրէնց սիրտերուն մէջ զղջացին, և ըսին Պետրոսի ու միւս առաքեալներուն, Մարդիկ եղբայրներ, ինչ ընենք. 38—Ու Պետրոս ըսաւ անոնց, Ապաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը Քրիստոսի Յիսուսի Բրիտասի անունովը հերը տալէ, և անոր մէյ ձեռքին բռնեց վերցուց՝ ու խոյն անոր ոտքին թաքերը ու կռնչերը զօրացան. 8—Ու վեր ցատկելով կայնեցաւ ու կը քալէր, և անոնց հետ տաճարը մտաւ, քալելով ու ցատկելով և գովաբանելով զԱստուած։ 9—Ու բոլոր ժողովուրդը տեսաւ զանիկա որ կը քալէր ու կ'օրհնէր զԱստուած. 10—Ու կը ճանչնային Թէ անիկա էր, որ ողորմութեան համար տաճարին Գեղեցիկ [illegible] դրանը քով կը նստէր. և զարմանքով ու ապշութեամբ լեցուեցան անոր եղած բանին համար։

11—Ու քանի որ *անիկա Պետրոսի ու Յովհաննէսի յարեր էր, բոլոր ժողովուրդը զարմացած մկուռկ վազելին անոնց քով այն սրահը որ Սողոմոնին կ'ըսուէր։ 12—Զայս տեսնելով Պետրոս՝ պատասխան տուաւ ժողովուրդին, Ով Իսրայէլացի մարդիկ, ինչո՞ զարմացեր էք սորա վրայ, կամ ինչո՞ այսքերնիդ անկած մեզի կը նայիք, որպես Թէ մենք մեր զօրութիւնովը կամ բարեպաշտութիւնովը սորան քալել տուած ըլլանք։ 13—Աբրահամի ու Իսահակի և Յակոբի Աստուածը, մեր հայրերուն Աստուածը, փառաւորեց իր †Որդին Յիսուսը, զոր դուք մատնեցիք, և ուրացաք Պիղատոսի առջև՝ երբ ինք վճռեց որ արձակէ։ 14—Բայց դուք այն Սուրբը և Արդարը ուրացաք, ու խնդրեցիք որ մարդասպան մարդ մը ձեզի շնորհուի. 15—Ու կեանց Առաջնորդը սպանեցիք, զոր Աստուած մեռելներէն յարուցց, որու մենք վկայ ենք. 16—Ու անոր անուանը հաւատքով՝ անոր անունը հաստատեց ասիկա, զոր դուք կը տեսնէք ու գիտէք. և այն հաւատքը որ անով է՝ այս առողջութիւնը տուաւ անոր ամէնուն առջև։ 17—Ու հիմա, եղբայրներ, գիտեմ որ չգիտնալով ըրիք, ինչպես ձեր իշխաններն ալ։ 18—Բայց Աստուած ինչ որ առաջուընէ իր բոլոր մարգարէներուն բերնով յայտներ էր Քրիստոսի չարչարանքին վրայով, այսպես կատարեց։ 19—Ուստի ապաշխարեցէք ու դարձի եկէք, որպէս զի մեղքերնիդ ջնջուի. 20—Որպէս զի սփոփանաց ժամանակները գան Տէրոջէ երեսէն, և առաքրկէ *ձեզի քարոզուած Յիսուս Քրիստոսը զրկէ. 21—Զոր պէտք է որ երկինք ընդունի մինչև այն ատենները՝ որ ամէն բաներուն կատարելութեան, որոնց համար Աստուած սկիզբէն ի վեր իր սուրբ մարգարէներուն բերնով խօսած է։ 22—†Մովսէս Հայրերուն ըսաւ Թէ Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներէն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի, անոր մտիկ ըրէք՝ ամէն ինչ որ ձեզի խօսի. 23—Ու պիտի ըլլայ Թէ ամէն ոչ որ այն մարգարէին մտիկ չընէ, ժողովուրդին մէջէն պիտի կորսուի. 24—Ու բոլոր մարգարէները որոնք Սամուէլէ ի վեր խօսեցան, այս օրերուն համար ալ խնայ ցին. 25—Դուք էք մարգարէներուն որդիները և այն ուխտին, զոր Աստուած մեր Հայրերուն հետ ըրաւ, ու ըսաւ Աբրահամի, Ու քու սերունդովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը. 26—Աստուած իր †Որդին յարուցանելով՝ առաջ ձեզի զրկեց զանիկա, որպէս զի ձեզ օրհնէ, ամէն մէկդ ձեր չարութիւններէն դարձնելով։

*Ոմն., անօրէն †կամ, դժոխքին

*Ոմն., այն բժշկուած կազը
†կամ, Ծառան

*Ոմն., ձեզի համար սահմանուած
†Ոմն., Քանզի Մովսէս
‡Ոմն., Որդին Յիսուսը

Գլ. Դ

1 Ել երբ անոնք ժողովրդին կը խօսէին, քահանաները ու տաճարին իշխանը և սադուկեցիները անոնց վրայ հասան, 2—Դժուարելով որ անոնք ժողովրդին կը սորվեցնէին, և Յիսուսի միջոցով մեռելներէն յարութիւն առնելը կը քարոզէին. 3—Ու ձեռք զարկին անոնց և բանտ դրին մինչև հետեւեալ օրը, վասն զի ալ իրիկուն էր. 4—Բայց այն խօսքը լսողներէն շատերը հաւատացին, ու մարդոց թիւը հինգ հազարի չափ եղաւ։

5—Ու եղաւ որ հետեւեալ օրը մեծ ժողովեցան անոնց իշխանները և ծերերը ու դպիրները Երուսաղէմի մէջ, 6—Նաև Աննա քահանայապետը ու Կայիափա և Յովհաննէս ու Ալեքսանդրոս և այն ամէնը որ քահանայապետի ցեղէ էին. 7—Ու զանոնք մէջտեղը կայնեցուցած՝ կը հարցնէին, Ի՞նչ զօրութիւնով կամ ի՞նչ անունով ըրիք դուք այս բանը։ 8—Այն ատեն Պետրոս Հոգւով Սրբով լեցուած՝ բսաւ անոնց, Ով ժողովրդին իշխանները և Իսրայէլի ծերերը, 9—Եթէ մենք այսօր ակար մարդու մը եղած բարիքին համար կը քննուինք, թէ ի՞նչ միջոցով անիկա բժշկուեցաւ, 10—Հայտնի ըլլայ ձեզի ամէնուդ ու բոլոր Իսրայէլի ժողովրդին, որ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունովը, զոր դուք խաչեցիք, և զոր Աստուած մեռելներէն յարուցանեց, ահա անով անիկա ձեր առջեւ բժշկուած կեցեր է։ 11—Անիկա է այն քարը ձեզմէ չինողներէդ անարգուած, որ անկիւնի գլուխ եղաւ։ 12—Ու ուրիշ մէկո՛վ փրկութիւն չկայ. վասն զի անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ մարդոց մէջ արուած, որով կարող ըլլանք փրկուիլ։ 13—Իսկ անոնք Պետրոսի ու Յովհաննէսի համարձակութիւնը նայելով, և հասկնալով որ ոտէտ ու առանց ուսման մարդիկ են, կը զարմանային. և ճանաչեցին որ անոնք Յիսուսի հետ էին. 14—Ու այն բժշկուած մարդը տեսնելով որ անոնց հետ կայներ էր, չէրն կրնար անոնց դէմ բան մը խօսիլ։ 15—Ու հրամայելով անոնց որ տեսնալէն դուրս ելլեն, իրարու հետ խորհուրդ ըրին, 16—Ու ըսին, Ի՞նչ բնենք այս մարդոց. վասն զի նըշանագիմի բոլոր բնակիչներուն յայտնի է թէ ասոնց ձեռքով երեւելի հրաշք մը եղաւ, ու մենք չենք կրնար ուրանալ։ 17—Սիրայն թէ ժողովրդին մէջ ա՛լ աւելի չտարածուելու համար՝ սաստիկ սպառնալիք բնենք անոնց, որ այն անունով մէկ մըն ալ չլլայ որ մարգու բան խօսի։ 18—Ու զանոնք կանչելով՝ պատուիրեցին անոնց որ ամենեւին չխօսին և չսորվեցնեն Յիսուսի անունովը։ 19—Բայց Պետրոս ու Յովհաննէս պատասխան ուին անոնց ու ըսին, Թէ Աստուծոյ առջեւ ուղիղ է որ Աստուծմէ աւելի ձեզի մեզի կընենք, դուք դատեցէք։ 20—Վասն զի մենք զայն որ աչառնք ու լսեցինք՝ չենք կրնար չխօսիլ։ 21—Իսկ անոնք նորէն սպառնալիք ընելէ ետեւ արձակեցին զանոնք, բան մը չգտնելով Թէ ի՞նչպէս պատժեն զանոնք, ժողովրդին համար, քանզի ամէնն ալ զԱստուած կը փառաւորէին եղած բանին համար։ 22—Վասն զի այն մարդը քառասուն տարեկանէ աւելի էր, որուն վրայ այս բժշկութեան հրաշքը եղաւ։

23—Ու անդ արձակուելով՝ իրենցներուն գալ եկան, ու պատմեցին ինչ որ քահանայապետները և ծերերը իրենց բսին։ 24—Անոնք ալ երբ լսեցին, միաբանութեամբ ձայներնին Աստուծոյ վերացուցին՝ բսելով, Ով Տէր, դուն ես այն Աստուածը, որ երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները ստեղծեցիր, 25—Որ քու ծառային Դաւիթի բերնով խօսեցար, Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն ըրին, ու ժողովրդները պարապ բաներ մտածեցին. 26—Երկրի թագաւորները պատրաստ կայնեցան, և իշխանները միկտեղ ժողովեցան Տէրոջը դէմ և անոր Օծեալին դէմ։ 27—Քանզի արդարև [այս քաղաքին մէջ] ժողովեցան քու սուրբ Որդւոյդ Յիսուսի վրայ, զոր դուն օծեցիր, Հերովդէս և Պոնտացի Պիղատոս, ազգերուն հետ ու Իսրայէլի ժողովրդներուն հետ, 28—Ընել՝ ինչ որ քու ձեռքդ և խորհուրդդ սահմանեց առաջուրնէ որ ըլլայ։ 29—Ու հիմա, ով Տէր, նայէ անոնց սպառնալիքներուն, ու շնորհէ քու ծառաներուդ, որպէս զի բոլոր համարձակութիւնով քու խօսքդ խօսինք, 30—Քու ձեռքդ երկնցնելով բժշկելու, և քու սուրբ Որդւոյդ Յիսուսի անունովը նշաններ ու հրաշքներ ըլլալու։ 31—Ու երբ անոնք աղօթք ըրին, չարժեցաւ այն տեղը՝ ուր ժողված էին, և ամէնը Հոգւով Սրբով լեցուեցան, ու Աստուծոյ խօսքը համարձակ կը խօսէին։

32—Ու հաւատացեալներուն բազմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի ունէին. և անոնցմէ մէկը չէր բսեր իր ստացուածքներուն մէկուն համար՝ թէ իրն է, հապա իրենց ամէն բաները համարակաց կը սեպէին։ 33—Ու մեծ զօրութիւնով առաքեալները վկայութիւն կու տային Տէր Յիսուսի յարութեան, և անոնց ամէնուն վրայ մեծ շնորհք կար։ 34—Ու անոնց մէջ կարօտութիւն չկար, վասն զի անոնք որ ագարակներու կամ տուներու տէր էին, կը ծախէին և ծախուածներուն գիները կը բերէին, 35—Ու առաքեալներուն ոտքը կը դնէին. և ամէն մէկուն իր կարօտութեանը նայելով կը բաժնուէր։ 36—Ու Յովսէս, որ առաքեալներէն Բառնաբաս մականուանեցաւ, (որ կը Թարգմանուի Մխիթարութեան որդի,) Ղեւտացի, Կիպրացի, 37—Ագարակ մը ունենալով, ծախեց ու սուակը բերաւ՝ առաքեալներուն ոտքը դրաւ։

Գլ. Ե

Բայց մարդ մը Անանիա անունով՝ իր կնոջ Սափիրայի հետ մէկտեղ ստացուածք մը ծախեց, 2—Ու անոր գինէն խորհրդ կինն ալ գիտէր, ու մէկ բաժինը բերաւ առաքեալներուն ոտքը դրաւ։ 3—Ու Պետրոս բսաւ, Անանիա, ինչո՞ւ Սատանայ քու սիրտդ լեցուց, որ դուն Հոգւոյն Սրբոյ սուտ խօսես, ու ագարակին գինէն խորհուրդ ընես։ 4—Չէ՞ որ քու կեդ էր, ու ծախուած ալ՝ քու իշխանութեանդ տակ էր։ Ի՞նչ է որ քու սրտիդ մէջ այս բանը դրիր. ոչ թէ մարդոց սուտ խօսեցար, հապա Աստուծոյ. 5—Ու Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգի աուաւ. և մեծ վախ ինկաւ ամէնուն վրայ որոնք զայս լսեցին։ 6—Ու երիտասարդները ելան ու պատեցին զանիկա, և գուրս հանելով թաղեցին։ 7—Ու երբ երեք ժամուչափ վրան անցաւ, անոր կինը չգիտնալով ինչ որ եղեր էր, ներս մտաւ։ 8—Ու Պետրոս բսաւ անոր, Ըսէ ինծի, ագարակը այնչափ գինով ծախեցիք. ան ալ բսաւ, Այո, այնչափ։ 9—Ու Պետրոս բսաւ անոր, Այդ ի՞նչ է որ դուք միաբանեցաք Տէրոջը հոգին փորձելու. ահա քու այրդ թաղողներուն ոտքերը դրսեր գով են, քեզ ալ գուրս պիտի հանեն։ 10—Ու իսկոյն անոր ոտքերուն գով ինկաւ ու հոգի աուաւ. և երիտասարդները ներս մտնելով՝ զանիկա մեռած գտան, ու հանելով իր էրկանը գով թաղեցին։ 11—Ու մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղեցիին վրայ ու ամէնուն վրայ որոնք այս բաները լսեցին։

12—Ու առաքեալներուն ձեռքով շատ նշաններ ու հրաշքներ կ'ըլլային ժողովրդին մէջ. և ամէնը միաբանութեամբ Սողոմոնի սրահին մէջ կ'էին, 13—Ու ուրիշներէն մէկը չէր համարձակեր անոնց յարիլ, հապա ժողովրդը կը մեծարէր զանոնք. 14—Ու Տէրոջը հաւատացողները ա՛լ աւելի կը չատնային, բազմութիւնն այրերու ու կիներու. 15—Այնպէս որ հիւանդները հրապարակները կը հանէին, և պատգարակներով ու մահիճներով կը դնէին, որպէս զի Պետրոսի անցնելու ատենը՝ գոնէ անոր չուքը անոնց մէկուն վրայ հասնի. 16—Ու չրջակայ քաղաքներուն բազմութիւնը Երուսաղէմ կը ժողվուէր, հիւանդներ և պիղծ ոգիներէ նեղութիւն կրողներ բերելով, որոնք ամէնն ալ կը բժշկուէին։

17—Ոտք եղաւ քահանայապետը և բոլոր իրեն հետ եղողները որոնք սադուկեցւոց աղանդէն էին, նախանձով լեցուած, 18—Ու առաքեալներուն ձեռք զարկին և հասարակաց բանտը դրին զանոնք։ 19—Բայց Տէրոջը հրեշտակը գիչերով բանտին դռները բացաւ, ու գուրս հանելով զանոնք՝ բսաւ,

20—Գացէք և ասացարին մէջ կայնեցէք ժողովրդին խօսեցէք այս կենաց բոլոր խօսքերը, 21—Ու երբ ըլլա լսեցին, ասացարը մտան առաւանդց և կը սորվեցնէին. իսկ քահանայապետը եկաւ ու իրեն հետ եղողները, ու ժկտեղ կանչեցին Ժողովը ու Իսրայէլի որդիներուն բոլոր ծերակոյտը, և հրէտ զրկեցին բանտը, որպէս զի զանոնք բերեն, 22—Ու երբ ապասաւորները գացին, զանոնք բանտին մէջ չգտնեցին՝ ետ դարձան, պատմեցին, 23 Ու ըսին Թէ բանտը ամէն զգուշութեամբ գոցած գտանք, ու պահապանները դուռներուն առջև կայնած, բայց բանալով՝ ներսը մարդ չգտանք. 24—Ու երբ հէն քահանան և ասացարին իշխանը ու քահանայապետները լսեցին այս խօսքերը, կը զարմանային անոնց համար Թէ ի՛նչ պիտի ըլլայ այն, 25—Ու մէկը եկաւ պատմեց անոնց Թէ Ահա այն մարդիկը զորանք բանտը դրիք, ասացարը կայներ են և ժողովրդին կը սորվեցնեն։ 26—Այն ատեն իշխանը ապասաւորներովը մէկտեղ գնաց զանոնք բերաւ առանց բռնութեան, քանզի ժողովրդէն կը վախնային, որ չքարկոծուին։ 27—Ու բերին զանոնք ասեարը կայնեցուցին, և քահանայապետը անոնց հարցուց՝ 28—Ըսելով, Չ՚ որ ասոնիկ պատուիրեցինք ձեզի որ այս անունով չսորվեցնէք. և ահա Երուսաղէմը ձեր ուսմունքովը լեցուցիք, և այն մարդուն արիւնը կ՚ուզէք մեր վրայ բերել։

29—Պատասխան ասաւ Պետրոս և ոտքէ առաքեալները ու ըսին, Աստուծոյ հնազանդիլ պէտք է քան Թէ մարդոց։ 30—Մեր հայրերուն Աստուածը Յիսուսը յարուցաւ, զոր դուք փայտէն կախելով սպաննեցիք։ 31—Զանիկա Աստուած իր աջ ձեռքով Առաքինորդ ու Փրկիչ բլլալու բարձրացուց, Իսրայէլի ապաշխարութիւն և մեղքերու Թողութիւն տալու։ 32—Ու մենք այս բաներուն համար անոր վկաներ ենք, ու Սուրբ Հոգին ալ՝ զոր Աստուած իրեն հնազանդ եղողներուն տուաւ։ 33—Ու անոնք լսելով խիստ կատղեցան, ու կը խորհէին որ զանոնք մեռցնեն։

34—Ու ատեանին մէջ փարիսեցի մը անուն վրայ ելլաւ, օրէնսուս Գամաղիէլ կը, օրինաց վարդապետ մը, բոլոր ժողովրդին առջև պատուական մկկը, ու հրաման ըրաւ որ առաքեալները փիչ մը դուրս հանեն. 35—Ու ըսաւ անոնց, Ով Իսրայէլացի մարդիկ, զուշ ձեզի զգուշացէք այս մարդոց համար Թէ ի՛նչ պիտի ընէք։ 36—Քանզի այս օրերէն առաջ Թեւդաս ելաւ, իրեն համար ըսելով Թէ Եղ-Եւէ մէկն է, ու Թուով չորս հարիւր չափ մարդիկ իրեն յարիցան. ինք սպանուեցաւ, և այն ամէնը որ իրեն հնազանդ էին, ցրուեցան ու չինչ եղան։ 37—Անոր ետևէն Յուդա Գալիլեացի ելաւ ազաբշտակը եղած օրերը, և չատ ժողովուրդ իր կողմը ձգեց։ ինք ալ կորսուեցաւ, և այն ամէնը որոնք իրեն հնազանդ էին, ցրուեցան եղան։ 38—Ու հիմա ձեզի կ՚ըսեմ, Այդ մարդոցմէ մէկկի կեցէք ու Թող առէք զանոնք, վասն զի եթէ այդ խորհուրդը կամ գործը մարդոցմէ է՝ պիտի քակուի։ 39—Ապա եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար ատիկա քակել։ չըլլայ Թէ Աստուծոյ դէմ մարտնչող ալ գտնուիք։ 40—Ու անոնք հաւանութիւն տուին անոր. ու առաքեալները կանչելով՝ ծեծեցին, և պատուիրելով որ Յիսուսի անունով չխօսին, արձակեցին զանոնք։ 41—Անոնք ալ ժողովին առջևէն գացին, ուրախանալով որ Տէրոջը անուանը համար արժանի եղան անարգուելու։ 42—Ու ամէն օր ատեանարգուելու։ 42—Ու ամէն օր ատեանարգուելու։ 42—Ու ամէն օր ատեան

մէջ ցորեն կը գտնուի, առաջին անգամին մեր հայրերը զրկեց։ 13—Ու երկրորդ անգամին Յովսէփ իր եղբայրներուն ճանչցուց ինքզինք. ու Յովսէփի ազգը փարաւոնի յայտնի եղաւ։ 14—Ու Յովսէփ զրկեց՝ ու կանչեց իր հայրը Յակոբը ու բոլոր ազգատոհմը, հօթանասունհինգ հոգի։ 15—Ու Յակոբ նգիպտոս իջաւ, ու մեռաւ ինք ու մեր հայրերը։ 16—Ու Սիքեմ տարուեցաւ՝ այն գերեզմանին մէջ դրուեցան, զոր Աբրահամ արծաթի գնով ծախու առեր էր Սիքեմի հօրէն Եմմորի որդիներէն։ 17—Ու երբ մտածեցաւ խոստմունքին ատենը, զոր Աստուած երդումով խոստացեր էր Աբրահամի, ժողովուրդը աճեցաւ ու չատցաւ նգիպտոսի մէջ։ 18-Մինչև ուրիշ թագաւոր մը եղաւ, որ Յովսէփը չէր ճանչնար։ 19—Անիկա հրնաթք բանեցուց մեր ազգին դէմ ու չարչարեց մեր հայրերը, մինչև անգամ անոնց ոտաքը դուրս ձգել ստիպելու զի չապրին։ 20—Այն ժամանակ Մովսէս ալ ծնաւ, և Աստուծոյ առջև գեղեցիկ էր, որ իր հօրը տունը մեծցաւ երեք ամիս։ 21—Ու երբ անիկա դուրս ձգուեցաւ, փարաւոնի աղջիկը զանիկա վերցուց, և իրեն իբրև որդի մեծցուց։ 22—Ու Մովսէս նգիպտացւոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ, և զօրաւոր էր իր խօսքերովը ու գործերովը։ 23—Ու երբ քառասուն տարեկան եղաւ, իր սիրտը բնկաւ իր եղբայրներուն, Իսրայէլի որդիներուն, այցելութիւն ընել։ 24—Ու իբրև չէնէ մէկը հարցահարուած տեսնելով պաշտպանեց, և զրկուածին վրէժը առաւ՝ այն նգիպտացին սպաննելով։ 25—Կը կարծէր թէ իր եղբայրները պիտի իմանային որ Աստուած իր ձեռքով անոնց ազատութիւն պիտի տար, բայց անոնք չիմացան։ 26—Ու հետեւեալ օրը անոնց դիմաց եկաւ երբ կը կռուէին, և խաղաղութիւն ընելու տարպէց զանոնք՝ ըսելով, Մարդիկ, դուք եղբայրներ էք, ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք։ 27—Բայց ան որ ընկերը կը զրկէր, մերժեց զանիկա, ու ըսաւ, Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ։ 28—Չի՞ն ուզեր սպաննել կ՚ուզես, ինչպես երէկ նգիպտացին սպաննեցիր։ 29—Ու Մովսէս այս խօսքին վրայ փախաւ, ու Մադիամ երկրին մէջ պանդխտեաց եղաւ, ուր երկու որդի ծնաւ։ 30—Ու փառասուն տարի անցնելէն ետև՝ Սինա լեռանը անապատին մէջ Տէրոջը հրեշտակը երեւցաւ անոր մարենիի կրակի բոցով։ 31—Մովսէս ալ երբ տեսաւ, զարմացաւ այն տեսիլքին վրայ, ու երբ մտածեցաւ զննելու, Տէրոջը ձայնը եկաւ անոր ըսելով՝ 32—Ես եմ քու հայրերուդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, ու Իսահակի Աստուածը, և Յակոբի Աստուածը. Մովսէս ալ վախէն դողդողալով՝ չէր համարձակեր զննել։ 33—Ու Տէրը բսաւ անոր, Ոտքերուդ կօշիկները հանէ, վասն զի այդ տեղը ուր դուն կայներ ես՝ սուրբ երկիր է։ 34—Ծիրաւի նգիպտոսի մէջ եղող ժողովրդիս չարչարանքը տեսայ, ու լսեցի անոնց հառաչանքը, և իջայ զանոնք ազատելու. և հիմա եկայր՝ քեզ նգիպտոս զրկեմ։ 35—Այն Մովսէսը, զոր ուրացան ու կ՚ըսէին, Ո՞վ քեզ իշխան ու դատաւոր դրաւ, Աստուած զանիկա իշխան և փրկիչ զրկեց այն հրեշտակին ձեռքով՝ որ մարենիին մէջ անոր երեւցաւ։ 36—Անիկա հանեց զանոնք, հրաշքներ ու նշաններ ընելով նգիպտոսի երկրին ու Կարմիր ծովուն մէջ, և անապատին մէջ քառասուն տարի։ 37—Այս Մովսէսն է որ բսաւ Իսրայէլի որդիներուն, Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներուն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի, անոր մտիկ ըրէք։ 38—Անիկա ան է որ անապատը ժողովքին մէջ էր՝ Սինա լեռան վրայ իրեն խօսող հրեշտակին հետ ու մեր հայրերուն հետ, որ կենդանի պատգամներ առաւ մեզի տալու։ 39—Որու մեր հայրերը չուզեցին հնազանդ ըլլալ, հապա մերժեցին և իրենց սիրտերովը նգիպտոս դարձան, 40—ու բսին Ահարոնի, Մեզի աստուածներ չինէ, որպես զի մեր առջեւէն երթան. քանզի այն Մովսէսը որ մեզ նգիպտոսի երկրէն հանեց, չենք գիտեր թէ ի՛նչ եղաւ անոր։ 41—Ու այն օրերը որթ մը չինեցին, ու կուռքին զոհ մատուցին, և իրենց ձեռքերուն գործերովը կը զուարճանային։ 42—Աստուած

ալ երես դարձուց, ու թողուց զանոնք որ երկինքի զօրքը պաշտեն. ինչպես գրուած է մարգարէներու գիրքին մէջ, Միթէ անապատին մէջ քառասուն տարի զոհեր ու պատարագներ մատուցիք ինծի, ով Իսրայէլի տունը. 43—Ու Մոզքի վրանը առիք ու ձեր Հաճմփա աստուծոյն աստղը, այն պատկերները զորոնք չինեցիք անոնց երկրպագելու համար. ես ալ ձեզ Բաբելոնի անդին պիտի փոխադրեմ։ 44—Վկայութեան խորանը անապատին մէջ մեր հայրերուն հետ էր, ինչպես Մովսէսի հետ խօսողը հրամայեց ըրաւ որ անոր օրինակին պէս չինէ զանիկա։ 45—Զոր մեր հայրերն ալ յաջորդաբար առնելով՝ Յեսուի հետ բերին զանիկա այն ազգերուն կալուածքը, զորոնք Աստուած վռնտեց մեր հայրերուն առջեւեն մինչև Դաւիթի օրերը։ 46—Որ Աստուծոյ առջև շնորհք գտաւ, և ուզեց որ Յակոբի Աստուծոյն բնակարան մը գտնէ։ 47—Ու Սողոմոն անոր տուն մը չինեց։ 48—Սակայն Բարձրեալը ձեռքով չինուած տաճարներու մէջ չբնակիր, ինչպես մարգարէն կ՚ըսէ, 49—Երկինքը իմ աթոռս է, ու երկիր իմ ոտքերուս պատուանդանն է. ո՛րպիսի տուն պիտի չինէք ինծի, կ՚ըսէ Տէրը, կամ ի՞նչ պիտի ըլլայ իմ հանգստութեանս տեղը. 50—Չի՞ որ այս ամէնը իմ ձեռքս չիներ է։ 51—Ով խստապարանոցներ ու սրտով և ականջով չթլփատուածներ, դուք ամէն ատեն Հոգւոյն Սրբոյ հակառակ կը կենաք, ինչպես ձեր հայրերը՝ այնպես ալ դուք։ 52—Մարգարէներէն ո՞րը չհալածեցին ձեր հայրերը, ու սպաննեցին զանոնք որ առաջուընէ պատմեցին այն Արդարին գալուն համար, որուն դուք հիմա մատնիչները և սպանողները եղաք։ 53—Դուք որ օրէնքը առիք հրեշտակներուն մատակարարութիւնովը ու չպահեցիք։

54—Ու անոնք այս բաները լսելով՝ սիրտերնուն մէջ կը կատղէին ու ակռաներնին մեր վրայ կը կրճտէին։ 55—Բայց անիկա Հոգւով Սրբով լեցուած՝ երկինք նայեցաւ և տեսաւ Աստուծոյ փառքը, ու Յիսուսն ալ որ Աստուծոյ աջ կողմը կայներ էր, և բսաւ, Ահա կը տեսնեմ երկինքը բացուած, ու Որդին մարդոյ՝ Աստուծոյ աջ կողմը կայնած։ 56—Իսկ անոնք մեծաձայն ազատակիզով՝ ականջներնին գոցեցին, և ամէնը մէկէն վազեցին անոր վրայ։ 57—Ու քաղաքէն դուրս հանելով՝ կը քարկոծէին. և վկաները իրենց հանդերձները դոհ կը դնէին երիտասարդի մը ոտքերուն քով, որ Սօղոս կ՚ըսուէր։ 58—Ու կը քարկոծէին Ստեփաննոս, որ ազօթք կ՚ընէր ու կ՚ըսէր, Տէր Յիսուս, ընդունէ իմ հոգիս։ 59—Ու ծունկի վրայ գալով բարձրաձայն ազատակեց, Տէր, այս մեղքը մի սեպեր անոնց. և զայս ըսելով ննջեց։ Սօղոս ալ համակից էր անոր սպանութեան։

ԳԼ. Ը

Ու այն օրը մեծ հալածանք եղաւ Երուսաղէմի մէջ եղող եկեղեցիին վրայ, և առաքեալներէն զատ ամէնն ալ ցիրուցան եղան Հրէաստանի ու Սամարիայի երկիրներուն մէջ։ 2—Ու աստուածավախ մարդիկՍտեփաննոսը վերցուցին, ու անոր վրայ մեծ ողբ ըրին։ 3—Բայց Սօղոս եկեղեցիին չատ վնաս կու տար, տուներէն կը մտնէր, այրեր ու կիներ կը քաշէր՝ բանտ դնել կու տար։

4—Ու այն ցիրուցան եղածները կը պտրաէին ու խօսքը կը քարոզէին։ 5—Փիլիպպոս ալ Սամարիայի մէկ քաղաքը իջնելով՝ Քրիստոսը կը քարոզէր անոնց, 6—ու ժողովրդները միաբան փիլիպպոսի բսածներուն ուշադրութիւն կու տային՝ լսելով ու տեսնելով այն նշանները զորոնք կ՚ընէր։ 7—Վասն զի չատ դիւահարներէն պիղծ ոգիները մեծաձայն ազատակելով կ՚ելլէին։ 8—Ու չատ անդամալոյծներ ու կաղեր կը բժշկուէին. 9—Ու մեծ ուրախութիւն եղաւ այն քաղաքին մէջ։ Բայց Սիմոն անունով մարդ մը կար, որ առաջուընէ այն քաղաքին մէջ մոգութիւն կ՚ընէր, ու Սամարացւոց ազգը կ՚ապշեցնէր, իրեն համար բսելով թէ մեծ մէկն է. 10—Որու ուշադրութիւն կու տային ամէնն ալ, պզտիկէն մինչև մեծը, և կ՚ըսէին, Ասիկա Աստուծոյ մեծ [բանաձ] զօրութիւնն է։ 11—Շատ ժա-

մանակէ ի վեր կախարդութիւններով զանոնք ապշեցնելուն համար՝ իրեն ուշադրութիւն կու տային։ 12—Բայց երբ Փիլիպպոսի հաւատացին, որ Աստուծոյ Թագաւորութիւնը ու Յիսուս Քրիստոսի անունը վրայով կը փարատէր, կը մկրտուէին թէ՛ այրեր և թէ՛ կիներ։ 13—Ու Սիմոն ինք ալ հաւատաց, ու մկրտուելով՝ միշտ Փիլիպպոսի հետ էր. և տեսնելով այն նշանները ու մեծ զօրութիւնները որոնք կ'ըլլային՝ կը զարմանար։ 14—Իսկ Երուսաղէմի մէջ եղող առաքեալները երբ լսեցին թէ Սամարացիք Աստուծոյ խօսքը ընդուներ են, Պետրոս ու Յովհաննէսը անոնց ղրկեցին. 15—Որոնք իջնելով՝ աղօթք ըրին անոնց համար որպէս զի Սուրբ Հոգին առնեն. 16—(Վասն զի դեռ անոնց մէկ՛ն վրայ իջած չէր, հապա միայն Տէր Յիսուսի անունովը մկրտուած կէին.) 17—Անի առին ձեռքերնին դրին անոնց վրայ, ու Սուրբ Հոգին կ'առնէին. 18—Երբ տեսաւ Սիմոն թէ առաքեալներուն ձեռնադրվայ ձեռք դնելովը Սուրբ Հոգին կը տրուի, անոնց տակ մատուց ու ըսաւ, 19—Ինծի ալ այս իշխանութիւնը տուէք, որպէս զի որո՛ւ վրայ ձեռք դնեմ՝ անիկա Սուրբ Հոգին առնէ։ 20—Բայց Պետրոս ըսաւ անոր, Քու արծաթդ քեզի հետ թող կորսուի, վասն զի Աստուծոյ պարգևը կարծեցիր թէ սակով կ'առնուի. 21—Դուն այդ բանին մէջ ման ու բաժին չունիս, վասն զի քու սիրտդ Աստուծոյ առջև չիտակ չէ։ 22—Ուստի այդ քու չարութենեդ զղջալ եկուր ու Աստուծոյ աղաչէ, թերևս ներուի քեզի քու սրտիդ միտքը խորհուրդը։ 23—Վասն զի ես քեզ դառնութեան մէջ և անիրաւութեան կապին մէջ կը տեսնեմ։ 24—Սիմոն պատասխան առաւ ու ըսաւ, Դուք ինծի համար ազօթք ըրէք Տէրոջը, որպէս զի այդ ձեր ըսածներէն բան մը իմ վրաս չգայ։ 25—Ան ալ վկայութիւն տալով Տէրոջը խօսքը խօսեցին եւս։ դարձան Երուսաղէմ, և Սամարացւոց շատ գեղերուն մէջ աւետարանը քարոզեցին։

26—Ու Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսի խօսեցաւ՝ ըսելով, Ելիր ու գնա դէպ հարաւային կողմը, այն ճամբան, որ Երուսաղէմէ գէպ ի Գազա կ'իջնէ, որ անապատ տեղ է։ 27—Ան ալ ելաւ գնաց. և ահա Եթովպացի ներքինի մարդ մը, Եթովպացւոց Կանդակա Թագուհիին մէկ զօրաւորը, որ անոր բոլոր գանձերուն վրայ էր, որ երուսաղէմ գնելէ էր երկրպագութիւն ընելու. 28—Ու դարձեր էր, ու իր կառքը նստած նայի մարգարէին Եսայիէ կը կարդար։ 29—Ու Հոգին ըսաւ Փիլիպպոսի, Մօտեցիր և այդ կառքին քով գնա։ 30—Փիլիպպոս ալ վազելով հասաւ, ու լսեկ կ'ընէր որ նայի մարգարէին Եսայիէ կը կարդար. և ըսաւ, Կարդացածդ կը հասկնա՞ս արդեօք։ 31—Ան ալ ըսաւ, Ի՞նչպես կրնամ հասկնալ, եթէ մէկը ինծի չառաջնորդէ. ու աղաչեց Փիլիպպոսի, որ ելլէ իր քով նստի. 32—Ու գիրքին մէկ կարգացած տեղը այս էր. Ոչխարի պէս մորթուելու տարուեցաւ, ու իր խուզողին առջև մնձծ կ'եղջ գառնու կի պէս՝ այնպէս իր բերանը չբացաւ. 33—Իր խոնարհութեանը մէջ իր դատաստանը վերցուեցաւ, և անոր սպրդումնէն ո՞վ պիտի պատմէ. վասն զի անոր կեանքը երկրի կը վերցուի. 34—Ներքինին պատասխան առաւ Փիլիպպոսի ու ըսաւ, Կ'աղաչեմ քեզի, մարգարէն որո՞ւ համար կ'ըսէ զայս. իրե՞ն համար թէ ուրիշի մը համար։ 35—Իսկ Փիլիպպոս իր բերանը բացաւ, և գիրքին այս Եւթէն սկսելով՝ Յիսուսը քարոզեց անոր։ 36—Ու երբ էրէնց ճամբան կ'երթային, ջուրի մը քով եկան. ու ըսաւ ներքինին, Ահա ջուր, ու ի՞նչ բան կիս կ'արգիլէ մկրտուելէ։ 37—[Ու Փիլիպպոս ըսաւ անոր, Եթէ դու բոլոր սրտովդ կը հաւատաս՝ կարելի է. անիկա պատասխան առաւ ու ըսաւ, Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է։] 38—Ու հրաման ըրաւ որ կառքը կանգնեցնեն. և երկուքն ալ ջուրը իջան, Փիլիպպոս ու ներքինին, և մկրտեց զանիկա։ 39—Ու երբ ջուրէն դուրս ելան, Տէրոջը Հոգին յափշտակեց Փիլիպպոսը, և ա՛լ ներքինին զանիկա չտեսաւ, ու իր ճամբան կ'երթար ուրախութեամբ։ 40—Բայց Փիլիպպոս

Ազոտոսի մէջ գտնուեցաւ. ու պտըտելով բոլոր քաղաքներուն ատեանտան կը քարոզէր, մինչև ինք Կեսարիա հասաւ։

ԳԼ. Ը

Բայց Սօզոս ատենին Տէրոջը աշակերտներուն դէմ սպառնալիք ու մահ փչելով՝ քահանայապետին գնաց. 2—Ու անկէ Թուղթեր ուզեց Դամասկոս ժողովարաններուն պռնէլու, որպէս զի եթէ այն ճամբան հետեւողներ գտնէր բլլայ, այրեր կամ կիներ, կապած երուսաղէմ բերէ։ 3—Ու երբ կ'երթար ու Դամասկոսի մօտեցաւ, յանկարծ իր բոլորտիքը երկինքէն լոյս մը փայլատակեց. 4—Ու ինք գետինը իյնալով՝ ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն, Սաւ՛ուղ, Սաւ՛ուղ, ինչո՞ւ զիս կը հալածես։ 5—Ու անիկա ըսաւ, Ո՞վ ես դուն, Տէր. և Տէրը ըսաւ, Ես եմ Յիսուս զոր դուն կը հալածես։ *Դժուար բան է քեզի խթանի դէմ կից զարնել։ 6—Ան ալ դողով ու ապշութեամբ ըսաւ, Տէր, ինչ կ'ուզես որ ընեմ։ Եւ Տէրը ըսաւ անոր, Ելիր ու քաղաքը մտիր, և քեզի պիտ զրուցուի ինչ որ պարտիս ընել. 7—Իսկ այն մարդիկը որոնք իրեն հետ կ'երթային, ապշած կեցեր էին, ձայնը միայն կը լսէին, բայց ո՛վ կը չէին տեսներ։ 8—Ու Սօզոս գետնէն ելաւ, ու բաց աչքերով՝ ո՛վ կը չէր տեսներ. ուստի անոր ձեռքէն բռնեցին ու Դամասկոս մտցուցին։ 9—Ու երեք օր կեցաւ առանց տեսնելու, և ոչ կերաւ, ոչ ալ խմեց։

10—Ու Անանիա անունով աշակերտ մը կար Դամասկոսի մէջ. և Տէրը տեսիլքի մէջ անոր ըսաւ, Անանիա. ան ալ ըսաւ, Տէր, ահա հոս եմ։ 11—Ու Տէրը ըսաւ անոր, Ելիր ու գնա այն փողոցը որ Ուղիղ կ'ըսուի, և հոն Ծուղայի տունը մէջ փնտռէ Սօզոս անունով Տարսոնացի մը. վասն զի ահա անիկա ազօթք կ'ընէ. 12—Ու տեսիլքի մէջ մարդ մը տեսաւ Անանիա անունով՝ ներս մտած և ձեռքը իր վրայ դրած, որպէս զի առնէ։ 13—Անանիա ալ պատասխան առաւ, Տէր, շատերէ լսեցի այն մարդուն համար թէ ա՛րյուսի չարիքներ ըրաւ սուրբերուդ Երուսաղէմի մէջ։ 14—Ու հոս ալ քահանայապետներէն իշխանութիւն ունի կապելու այն ամէնը որոնք քու անունդ կը կանչեն։ 15—Ու Տէրը ըսաւ անոր, Գնա գնա, վասն զի անիկա ինծի ընտիր աման մըն է, իմ անունս կրելու հեթանոսներուն ու թագաւորներուն և Իսրայէլի որդիներուն առջև. 16—Ես անոր պիտի ցուցնեմ թէ ա՛րյուսի պէտք է իրեն իմ անուանս համար նեղութիւն կրել։ 17—Ու Անանիա գնաց ու այն տունը մտաւ, և ձեռքերը անոր վրայ գնելով՝ ըսաւ, Սաւուղ եղբայր, Տէրը զիս ղրկեց, այն Յիսուսը որ ճամբան մէջ քեզի երեւցաւ երբ կու գայիր, որպէս զի տեսողութիւնդ առնաս, ու Հոգւով Սրբով լեցուիս։ 18—Ու յաւս մը անոր աչքերէն թիփերու պէս բաներ իյնան, և իսկոյն տեսաւ ու ելաւ մկրտուեցաւ. 19—Ու կերակուր ուտելով ոյժը վրան եկաւ, *ու քանի մը օր Դամասկոսի մէջ եղող աշակերտներուն հետ կեցաւ։

20—Ու անմիջապէս ժողովարաններուն մէջ կը քարոզէր Յիսուսը, թէ անիկա է Աստուծոյ Որդին։ 21—Ու ամէն լսողները մեծապէս զարմացեր էին, ու կ'ըսէին. Ասիկա ան չէ՞ որ Երուսաղէմի մէջ կը կործաներ զանոնք որ այս անունը կը կանչէին. և հոս ալ այն բանին համար եկած էր, որպէս զի զանոնք կապած՝ քահանայապետներուն տանի։ 22—Բայց Սօզոս աւելի կը զօրանար, և Դամասկոսի մէջ բնակող Հրեաները կը պապանձեցնէր, ապացուցանելով թէ Քրիստոսը ասիկա է։ 23—Ու շատ օրեր անցնելէն յետոյ Հրեաները խորհուրդ ըրին որ զանիկա սպաննեն։ 24—Բայց Սօզոսի յայտնուեցաւ անոնց նենգութիւնը. և ցորեկ ու գիշեր գռներէն կը սպասէին, որպէս զի զանիկա սպաննեն։ 25—Իսկ աշակերտները գիշերով առին զանիկա, ու զամբիւղով մը կախելով պատէն վար իջեցուցին։

26—Երբ Սօզոս Երուսաղէմ հասաւ,

*Ոմանք՝ չտանին

*Ոմանք՝ ու Սաւուղ Քրիստոսը

կը լանար աչակերտներուն յարել, բայց ամէնն ալ կը վախնային անկէ, չէին ապահովելով Թէ անիկա աշակերտ էր։ 27—Բայց Բառնաբաս զանիկա առնելով՝ առաքեալներուն տարաւ, ու պատմեց անոնց Թէ ի՛նչպես ճամբան վրայ Տէրը տեսաւ, և Թէ անոր հետ խօսեցաւ, և Թէ ի՛նչպես Դամասկոսի մէջ համարձակ քարոզեց Յիսուսի անունովը։ 28—Ու Երուսաղէմի մէջ անոնց հետ կը մտնէր ու կ'ելլէր՝ Տէր Յիսուսի անունովը համարձակ քարոզելով։ 29—Նաև *Հելլենացւոց դէմ կը խօսէր և կ'ինդրտնէին զանիկա սպաննել։ 30—Իսկ եղբայրները իմանալով՝ զանիկա Կեսարիա իջեցուցին, և ղրկեցին Տարսոն զրկեցին զանիկա։

31—Այն ատեն եկեղեցիները բոլոր Հրէաստանի և Գալիլեայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն ունէին, և չինութիւն կ'ընդունէին, ու Տէրոջը երկիւղովը և Հոգւոյն Սրբոյ մխիթարութիւնովը քալելով կ'աճէին։

32—Ու եղաւ Պետրոս ամէն տեղ կը պտըտէր, Լիւդիա բնակող սրբերուն քով ալ իջաւ։ 33—Ու հոն մարդ մը գտաւ, որուն անունը Ենէա էր, ութ տարիէ ի վեր մահիճը պառկած անդամալոյծ։ 34—Ու բաւ անոր Պետրոս, Ենէա, Յիսուս Քրիստոս քեզ կը բժշկէ. երթը ու քու անկողինդ չիրկէ։ ան ալ չուտ մը երաւ։ 35—Ու Լիւդիայի ու Սարոնի մէջ բնակողներուն ամէնը զանիկա տեսան, ու Տէրոջը դարձան։ 36—Ու Յոպպէի մէջ աշակերտ եղած կին մը կար, անունը Տաբիթա։ (որ Թարգմանուելով Ադեհիկի կ'ըսուի։) ասիկա լեցուած էր բարի գործերով ու ողորմութիւններով զորանք ինք կ'ընէր։ 37—Ու եղաւ որ այն օրերը ինք հիւանդացաւ ու մեռաւ։ լուացին զանիկա և վերի սենեակ մը դրին։ 38—Ու Լիւդիա Յոպպէի մօտ էր։ ուստի աշակերտները լսելով Թէ Պետրոս հոն է, անոր երկու մարդ ղրկեցին, աղաչելով որ չյապտնայ իրենց գալու։ 39—Պետրոս ալ երաւ անոնց հետ եկաւ։ ու երբ եկաւ, վերի սենեակը հանեցին զանիկա։ և բոլոր որբեւարիները անոր բոլորտիքը կայնեցան, կու լային ու կը ցուցնէին այն բաճկոնները և հանդերձները զորանք կ'ընէր Ադեհիկ՝ քանի որ իրենց հետ էր։ 40—Պետրոս ալ ամէնը դուրս հանելով՝ ծունկի վրայ եկաւ ու աղօթք ըրաւ, և դէպ ի մարմինը դառնալով՝ ըսաւ։ Տաբիթա, ելիր կայնէ. ան ալ իր աչքերը բացաւ, ու Պետրոսը տեսնելով՝ երաւ նստաւ։ 41—Ինք ալ ձեռքը անոր տուաւ, ու վերցուց զանիկա, և սրբերը ու որբեւարիները կանչելով՝ անոնց առջև ոտի կացնեցուց զանիկա։ 42—Ու այս բանը բոլոր Յոպպէի մէջ իմացուեցաւ, ու շատերը Տէրոջը հաւատացին։ 43—Ու եղաւ որ ինք շատ օրեր Յոպպէ կեցաւ Սիմոն անուռնավ կաշի բանողի մը քով։

Գլ. Ժ

Կեսարիայի մէջ մարդ մը կար Կոռնելիոս անունով, հարիւրապետ Իտալացի բանակ գունդին։ 2—Բարեպաշտ ու աստուածավախ իր բոլոր տունովը, որ ժողովուրդին շատ ողորմութիւններ կու տար, և ամէն ատեն Աստուծոյ աղօթք կ'ընէր։ 3—Անիկա օրուան ժամը իններն տեսիլքի մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի տեսաւ, որ իր քով մտաւ և իրեն ըսաւ, Կոռնելիոս։ 4—Ան ալ անոր նայելով ու խիստ վախնալով՝ ըսաւ, Ինչ է, Տէր։ ան ալ ըսաւ անոր, Քու աղօթքդ ու ողորմութիւններդ Աստուծոյ առջև եկան յիշատակի համար։ 5—Ու հիմա Յոպպէ մարդիկ ղրկէ, ու կանչէ Սիմոն անուռնավ մէկը որ Պետրոս մականուանուի է։ 6—Անիկա իրեն հիւր կը կենայ Սիմոն անուռնավ կաշի բանողի մը քով, որուն տունը ծովուն մօտ է։ *7—Ու երբ գնաց այն հրեշտակը որ իրեն հետ կը խօսէր, իր ծառաներէն երկուքը կանչեց, ու իր քով սպասաւորներէն ալ բարեպաշտ զինուոր մը, 8—Ու բոլորը ամէնը պատմելով՝ Յոպպէ ղրկեց զանոնք։

9—Ու հետևեալ օրը երբ անոնք ճամբայ երթալով՝ քաղաքին մօտեցան, Պետրոս ժամը վեցին տանիքները ելաւ աղօթք ընելու։ 10—Ու խիստ անօթեցած ըլլալով՝ կ'ուզէր ճաշ ընել, ու քանի որ կերակուրի պատրաստութիւն կը տեսնէին, իր վրայ մաքի յափշտակութիւն մը եկաւ։ 11—Ու տեսաւ երկինքը բացուած, ու չորս ծայրէն կապուած սաման մը մեծ կտաւի մը պէս, որ *իլլուն երկրի վրայ։ 12—Որուն մէջ կային երկրի բոլոր չորքոտանիները ու գազանները և սողուններն ու երկինքի թռչուններն։ 13—Ու ձայն մը եկաւ իրեն, Ելիր, Պետրոս, մորթէ ու կեր։ 14—Բայց Պետրոս ըսաւ, Ի՛նչ, Տէր, վասն զի ես ամենևին պիղծ կամ անմաքուր բան կերած չեմ։ 15—Նորէն ալ երկրորդ ձայն եկաւ իրեն, Զոյն որ Աստուած մաքրեց, դուն պիղծ մի սեպեր։ 16—Ասիկա երեք անգամ եղաւ, և սաման երկինքը վերցաւ։ 17—Ու Պետրոս երբ իր մտքին մէջ կը զարմանար Թէ ի՞նչ պիտի ըլլայ այն իր տեսած տեսիլքը, ահա Կոռնելիոսէ ղրկուած մարդիկը Սիմոնի տունը հարցուցին, ու դրանը առջև կայնեցան։ 18—Ու կանչելով կը հարցնէին Թէ Սիմոն որ Պետրոս կ'ըսուի, հո՞ կը կենայ։ 19—Ու երբ Պետրոս այն տեսիլքին վրայով կը մտածէր, Հոգին Սուրբ ըսաւ անոր, Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն։ 20—Ուստի ելիր իջիր, և անոնց հետ գնա առանց թազմահարութեան, վասն զի ես ղրկեցի զանոնք։ 21—Պետրոս ալ *իլլուն մարդոց քով իջնելով՝ ըսաւ, Ահա ես եմ անիկա զոր դուք կը փնտռէք։ Ի՞նչ բանի համար եկած էք։ 22—Անոնք ալ ըսին, Կոռնելիոս հարիւրապետը, արդար և աստուածավախ մարդ, բոլոր Հրէից ազգէն վկայուած, սուրբ հրեշտակէ մը հրաման առաւ, որ քեզ իր տունը կանչէ և քեզմէ խօսքեր լսէ։ 23—Այն ատեն ներս կանչեց զանոնք և իր քով վար դրաւ։

*Ո՛մանք ՝յ՚ուբէյտէն, Անիկա քեզի պիտի զրուցէ ինչ որ պարտիս ընել։

†Ո՛մանք, Կոռնելիոսէ

*Ո՛մանք, իրեն իջաւ։

†Ո՛մանք, Կոռնելիոսէ իրեն ղրկուած

Ու հետևեալ օրը Պետրոս երաւ, ու անոնց հետ գնաց, և քանի մըն ալ Յոպպէէ եղող եղբայրներէն իրեն հետ գացին։ 24—Ու հետևեալ օրը Կեսարիա մտան. Կոռնելիոս ալ իր ազգականները և մտերիմ բարեկամները կանչած՝ սպասից կը սպասէր։ 25—Ու երբ Պետրոս ներս կը մտնէր, Կոռնելիոս անոր դիմաց եղաւ, ու անոր ոտքը իյնալով երկրպագութիւն կ'ընէր։ 26—Բայց Պետրոս զանիկա կանգնեցուց ու ըսաւ, ելիր կայնէ. Ես ինքս ալ մարդ եմ։ 27—Ու անոր հետ խօսակցելով ներս մտաւ, ու հոն շատ մարդիկ ժողովուած գտաւ։ 28—Ու բաւ անոնց, Դուք գիտէք Թէ ի՛նչպես ապօրինաւոր բան է Հրեայ մարդու մը օտարազգիի հետ հաղորդակցութիւն ընելը կամ անոր մտնելը։ բայց Աստուած ինծի ցուցուց որ մարդուն մէկո՛ւն պիղծ կամ անմաքուր չըսեմ։ 29—Անոր համար ես ալ որ կանչուեցայ, առանց գէմ խօսելու եկայ. բայց հիմա կը հարցնեմ, ի՛նչ բանի համար զիս կանչեցիք։ 30—Կոռնելիոս ալ բաւ, Չորս օր առաջ մինչև այս ժամը ծոմ կը պահէի, ու ժամը իններն տունս մէջ աղօթք կ'ընէի, և ահա փայլուն հանդերձներով մարդ մը կայնեցաւ առջևս ու բաւ, 31—Կոռնելիոս, քու աղօթքդ լսուեցաւ, և քու ողորմութիւններդ Աստուծոյ առջև յիշուեցան։ 32—Ուստի ղրկէ Յոպպէ, ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ կ'ըսուի. անիկա ծովուն մօտ Սիմոն անուռնավ կաշի բանողի մը տունը մէջ իրեն հիւր կը կենայ. որ երբ գայ, քեզի պիտի խօսի։ 33—Ուստի անմիջապես դրկեցի քեզի, դուն ալ ազէկ ըրիր որ եկար։ և հիմա մենք ամէնս Աստուծոյ առջև կեցեր ենք՝ լսելու այն ամէն բաները որոնք Աստուծմէ հրամայուած են քեզի։

34—Պետրոս իր բերանը բացաւ ու բաւ, Ճշմարտութեամբ կը հասկնամ որ Աստուծոյ քով աստուածութիւն չկայ։ 35—Հապա ամէն ազգի մէջ ան որ անկէ կը վախնայ ու արդարութիւն կը գործէ, անոր ընդունելի է։ 36—Այն խօսքը զոր Իսրայէլի որդիներուն ղրկեց Աստուած խաղաղութիւն քարոզելու. (Յի-

սուս Քրիստոսի ձեռքով. (ասիկա է ամէնուն Տէրը.) 37—Թէպէ ազէկ գիտէք այն բանը, որ բոլոր Հրէաստանի մէջ եղաւ Գալիլեայէ սկսած, այն մկրտութենէն հետո զոր Յովհաննէս քարոզեց· 38—Յիսուսը որ Նազարէթէ էր, զոր Աստուած օծեց Սուրբ Հոգիով և զօրութիւնով, որ պարհեցաւ բարիք ընելով ու Աստուանէ բոլոր սատանայածները բժշկելով, քանզի Աստուած իրեն հետ էր· 39—Ու մենք վկայ ենք այն ամէն բաներուն զորոնք բրաւ Հրէաստանի երկրին մէջ ու Երուսաղէմի մէջ, զոր փայտէն կախած սպաննեցին ալ· 40—Աստուած զանիկա երրորդ օրը յարուցց, և յայտնի բրաւ զանիկա, 41—Ոչ թէ բոլոր ժողովուրդին, հապա մեզի, առաջուրնէ Աստուծմէ վկայ բլլալու ընտրաւածներուս, որ իրեն հետ կերանք ու խմեցինք ալ անոր մեռելներէն յարութիւն առնելէն ետքը· 42—Ու ինք պատուիրեց մեզի՝ որ ժողովուրդին քարոզենք ու վկայութիւն տանք, թէ անիկա է Աստուծմէ սահմանուած՝ կենդանիներուն ու մեռելներուն Դատաւորը· 43—Անոր կը վկային բոլոր մարգարէները, թէ ամէն իրեն հաւատացողներուն իր անունով մեղքերու թողութիւն կ'առնեն։

44—Ու երբ Պետրոս այս խօսքերը կը խօսէր, Հոգին Սուրբ իջաւ ամէնուն վրայ՝ որոնք խօսքը կը լսէին· 45—Ու թլփատած հաւատացեալները, որոնք Պետրոսի հետ եկած էին, զարմացան որ հեթանոսներուն վրայ ալ Հոգւոյն Սրբոյ պարգեւը կը լեցուէր· 46—Քանզի կը լսէին անոնցմէ որ լեզուներով կը խօսէին, և զԱստուած կը փառաւորէին· 47—Այն ատեն Պետրոս պատասխան տուաւ, Կրնա՞յ մէկը չխլրտել որ մեռածք չմկրտուին, որոնք Սուրբ Հոգին ալ ընդունեցին մեզի պէս· 48—Ու հրաման ըրաւ որ Տէրոջը անունովը մկրտուին. այն ատեն իրեն աղաչեցին որ քանի մը օր հոն մնայ։

Գլ. ԺԱ

Ու առաքեալները ու եղբայրները որ Հրէաստանի կողմերն էին, լսեցին որ հեթանոսներն ալ Աստուծոյ խօսքը ընդուներ են· 2—Ու երբ Պետրոս Երուսաղէմ եկաւ, թլփատածներէն եղողները անոր հետ կը վիճէին, 3—Ու կ'ըսէին թէ Դուն անթլփատ մարդոց փոխտար, և անոնց հետ հաց կերար· 4—Պետրոս ալ սկսաւ իրեն կարգով պատմել անոնց, ու ըսաւ, 5—Ես Յոպպէ քաղաքը աղօթք կ'ընէի, ու մտքի յափշտակութեան մէջ տեսիլք մը տեսայ. ասանկ մը մեծ կաւէ պէս՝ չորս ծայրերէն երկինքէն կախուած իջաւ, ու մինչև ինծի հասաւ· 6—Որուն վրայ աչք ձգեցի և նայեցի, ու տեսայ երկրի չորքոտանիները ու գազանները և սողուններն ու երկինքի թռչունները· 7—Ու ձայն մը լսեցի որ կ'ըսէր ինծի, Ելիր, Պետրոս, մորթէ ու կեր· 8—Բայց ես ըսի, Ո՛չ, Տէր, վասն զի պիղծ կամ անմաքուր բան մը ամենևին մտած չէ իմ բերանս· 9—Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ այն ձայնը երկինքէն, Զայն որ Աստուած մաքրեց, դուն պիղծ մի սեպեր· 10—Այս երեք անգամ եղաւ, ու նորէն բոլորը երկինք քաշուեցաւ· 11—Ու ահա իսկոյն երեք մարդ կեսարիայէ ինծի ղրկուած՝ եկած էին իմ եղած տանս առջև կեցան· 12—Հոգին ալ ինծի ըսաւ որ անոնց հետ երթամ առանց խղճմտանքի ոեւէ բանի. այս վեց եղբայրներն ալ ինծի հետ գացին, ու մտանք այն մարդուն տունը· 13—Ու անիկա մեզի պատմեց թէ ինչպես իր տանը մէջ տեսեր հրեշտակը տեսաւ, որ կայներ էր և իրեն կ'ըսէր, Մարդ ղրկի Յոպպէ, ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ կը կոչուի· 14—Ան քեզի խօսքեր պիտի խօսի, որոնցմով փրկուես դուն և քու բոլոր տունդ· 15—Ու երբ սկսայ խօսիլ, Հոգին Սուրբ անոնց վրայ իջաւ, ինչպես առաջուրնէ մեր վրայ ալ· 16—Այն ատեն յիշեցի Տէրոջը խօսքը որ կ'ըսէր, Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք· 17—Ուստի եթէ Աստուած միևնոյն չնորհքը տուաւ անոնց, ինչպես մեզի ալ, երբ Տէր Յիսուս Քրիստոսի հաւատացինք, ես ի՞նչ էի որ կարենայի Աստուծոյ դէմ գնել· 18—Այս բաները լսելով՝ ձայնէրնին կարեցին, և գԱստուած կը փառաւորէին ու կ'ըսէին, Ուրեմն Աստուած հեթանոսներուն ալ կեանքի համար ապաշխարութիւն տուաւ։

19—Ու Ստեփանոսի հետևեալ վրայ եկած նեղութենէն ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու Կիպրոս և Անտիոք հասան, ու միայն Աստուծոյ խօսքը չէին խօսեր, միայն թէ Հրեաներուն· 20—Բայց անոնցմէ ոմանք Կիպրացի և Կիւրենացի մարդիկ էին, որոնք երբ Անտիոք հասան, *Հելլենացիներուն հետ կը խօսէին՝ Տէր Յիսուսը քարոզելով· 21—Ու Տէրոջը ձեռքը անոնց հետ էր, և բազմաթիւ մարդիկ հաւատալով Տէրոջը դարձան· 22—Ու անոնց վրայով այս լուրը Երուսաղէմի եկեղեցիին ականջը հասաւ. ու Բառնաբասը ղրկեցին որպէս զի մինչև Անտիոք երթայ· 23—Որ երբ եկաւ և Աստուծոյ չնորհքը տեսաւ՝ ուրախացաւ, ու կը յորդորէր ամէնն ալ՝ որ յօժար սրտով Տէրոջը հետ կառչած մնան· 24—Քանզի ինք բարի մարդ էր, ու Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն. ու Տէրոջը շատ ժողովուրդ աւելցաւ· 25—Ետքը Բառնաբաս Տարսոն երթալ Սօղոսը փնտռելու, և զանիկա գտնելով Անտիոք բերաւ· 26—Ու եղաւ որ տարի մը եկեղեցիին հետ մէկտեղ ժողովելով՝ շատ ժողովուրդի սորվեցուցին. ու ամէնէն առաջ Անտիոքի մէջ աշակերտները Քրիստոնեայ անուանեցան։

27—Ան օրերը Երուսաղէմէ մարգարէներ իջան Անտիոք· 28—Ու անոնցմէ մէկը, Ագաբոս անունով, ելաւ խմացուց Հոգիին զօրութիւնովը, թէ մեծ սով մը պիտի բլլայ բոլոր աշխարհս, որ և եղաւ †Կղովդիոսի օրերը· 29—Ու աշակերտները որոշեցին որ իրենցմէ ամէն մէկը ձեռքէն եկածին չափ Հրէաստանի մէջ բնակող եղբայրներուն օգնութիւն ղրկեն· 30—Զոր կատարեցին ալ, երկչնորհուն ղրկելով Բառնաբասի ու Սօղոսի ձեռքով։

*Ոմանք, Յոյներուն

†Ոմանք, Կղովդիոս կայսրին

Գլ. ԺԲ

Այն ատենները Հերովդէս թագաւորը ձեռք զարկաւ եկեղեցիին մէկ քանիները չարչարել· 2—Ու Յովհաննէսի եղբօրը Յակոբոսը սրով սպանեց· 3—Ու տեսնելով որ Հրեաներուն համեմ է, անոր վրայ Պետրոսն ալ բռնեց· ու բաղարջակերաց օրերն էին· 4—Զանիկա երբ բռնեց, բանտը դրաւ, և չորս կարգ չորսական զինուորներու յանձնեց, որպէս զի պահեն, և կ'ուզէր զանիկա հասարակ ժողովուրդին հանել զատնիկ· 5—Ուստի Պետրոս բանտին մէջ պահուած էր, բայց եկեղեցին անդադար աղօթք կ'ընէր Աստուծոյ անոր համար· 6—Ու երբ Հերովդէս ուզեց զանիկա գուրս բերել, այն գիշերը Պետրոս երկու զինուորներու մէջտեղ կը քնանար կրկին շղթաներով կապուած. ու պահապաններն դրսէն առջև բանոր կը պահպանէին· 7—Ու ահա Տէրոջը հրեշտակը էլաւ վրան կայնեցաւ, ու տանը մէջ լոյս մը ծագեց, և Պետրոսի կողը խթելով՝ արթնցուց զանիկա, ու ըսաւ, Շուտով ելիր. ու շղթաները անոր ձեռքերէն վար իյնեցան· 8—Ու հրեշտակը ըսաւ անոր, Գօտիդ կապէ ու հողաթափներդ ոտքդ հագիր. անիկա ալ այնպէս ըրաւ. և ըսաւ անոր, Հանգերձդ վրադ առ ու եկուր իմ ետեւէս· 9—Ան ալ ելլելով անոր ետեւէն կ'երթար, և չէր գիտեր թէ այն հրեշտակին եղած բանը իրաւ է, հապա կը կարծէր թէ տեսիլք կը տեսնէ· 10—Ու երբ անդամ առաջինն ու երկրորդ պահապաններէն անցան, եկան մինչև երկաթի դուռը՝ որ քաղաքին մէջ կը տանէր, որ ինքիրմէ բացուեցաւ անոնց. և դուրս ելլելով՝ փողոց մը անցան, հրեշտակն ալ իսկոյն անկէ զատուեցաւ· 11—Ու Պետրոս ինքզինքին գալով՝ ըսաւ, Հիմա ճշմարտապէս գիտեմ որ Տէրը իր հրեշտակը ղրկեց, և ազատեց զիս Հերովդէսի ձեռքէն ու Հրէից ժողովուրդին բոլոր ակնկալութենէն· 12—Ու մտածելով՝ եկաւ Մարկոս բսուած Յովհաննէսի մօրը Մարիամի տունը, ուր շատեր ժողված աղօթք կ'ընէին· 13—Ու դռնը գուրսի դուռը երբ

զարկաւ, Հառաջել անուանով ապաքին մը գնաց ականջ դնելու։ 14—Ու երբ Պետրոսի հայրը տանջուտ, ուրախ թե-նին դուռը չբացաւ, հապա նորս վա-զելով պատմեց թէ Պետրոս դրանը առ-ջև կայներ է։ 15—Իսկ անոնք ըսին անոր, Խելքիդ կաս։ բայց ինք կը պնդէր թէ այնպես է։ անոնք ալ կ'ը-սէին, Անոր հրեշտակը պիտի ըլլայ։ 16—Սակայն Պետրոս անդադար կը զարնէր։ ու երբ բացին, զինք տեսնելով ապշե-ցան։ 17—Բայց անիկա ձեռքով նշան կ'ընէր անոնց՝ որ լուռ կենան, ու պատ-մեց անոնց թէ ի՛նչպես Տէրը զինք բանտէն հանեց։ և ըսաւ, Ասիկա Յա-կոբոսի ու եղբայրներուն պատմեցէք։ և ելաւ ուրիշ տեղ գնաց։ 18—Ու երբ առաւօտ եղաւ, մեծ խռովութիւն կար զինուորներուն մէջ՝ թէ արդեօք ի՛նչ եղաւ Պետրոս։ 19—Հերովդէս ալ երբ ուզեց զանիկա ու չգտաւ, պահապան-ներուն հարցաքննելէ ետքը՝ հրաման ըրաւ որ սպաննուին։ և ինք Հրէաստանէ կեսարիա իջաւ, ու հոն կը կենար։

20—Ու Հերովդէս խիստ բարկացած էր Տիւրացիներուն ու Սիդոնացի-ներուն հետ. անոնք ալ միաբանու-թեամբ իրեն եկան, ու Բլաստոսին ըզաստաւս սենեկապետը համոզելով՝ հաշ-ուութիւն կը խնդրէին. վասն զի իրենց երկիրը թագաւորին կերակուր կառնէր։ 21—Ու որոշուած օր մը Հե-րովդէս թագաւորական հանդերձը հա-գած ու աթոռը նստած՝ անոնց առե-նաբանութիւն կ'ընէր։ 22—Ժողովուրդն ալ կ'ազազակէր թէ Աստուծոյ ձայն է ա՛ոչ թէ մարդու։ 23—Ու խա-փան Տէրոջը հրեշտակը զանիկա զար-կաւ, Աստուծոյ փառք չտալուն համար։ և որդնոտից ըլլալով մեռաւ։

24—Ու Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը շատնար։ 25—Ու Բառնաբաս ու Սա-ղոս երբ Երուսաղէմէն պաշտօնը լրացուցին, նորէն դարձան, Մարկոս ըսուած Յովհաննէսն ալ իրենց հետ առնելով։

*Ոմանք, Պետրոս զարկաւ.

ԳԼ. ԻԴ

Ե Անտիոքի մէջ եղած եկեղեցիին քանի մը մարդիկներ ու վարդապետ-ներ կային, Բառնաբաս ու Շմաւոն, որ Նիգեր կ'ըսուէր, և Ղուկիոս Կիւրե-նացի ու Մանայեն, Հերովդէս չորրոր-դապետին ընդհակիցը, և Սաղոս։ 2—Երբ ասոնք Տէրոջը պաշտօնին մէջ էին, և ծոմ կը պահէին, Հոգին Սուրբ ըսաւ, Զատեցէք ինծի Բառնաբասը և Սաղոսը այն գործին համար, որու ես կանչեր եմ զանոնք։ 3—Այն ատեն ծոմ պա-հելով և ազօթք ընելով՝ ձեռք դրին անոնց վրայ ու ղրկեցին։ 4—Անոնք ալ Սուրբ Հոգիէն ղրկուած՝ Սելեւկիա իջան, ու անկէ նաւով կիպրոս գացին։ 5—Ու Սողոմինա հասնելով՝ Հրէից ժողով-բանները ու Աստուծոյ խօսքը կը քարոզէին, ու Յովհաննէսն ալ իրենց սպասաւոր ունէին։ 6—Ու պտըտելով այն [բոլոր] կղզին մինչև Պափոս, հոն գտան սուտ մարգարէ՝ Հրեայ մարդ մը, որուն անունը Բարեյեսու էր։ 7—Որ փոխանորդ բդեշխին հետ էր, որ Էր-սեբ Սերգիոս Պօղոս, խելացի մարդ մը։ ասիկա Բառնաբասը և Սաղոսը հրա-ւիրելով՝ ուզեց Աստուծոյ խօսքը լսել։ 8—Սակայն անոնց դէմ կեցաւ Եղիմաս մոգ, (քանզի այսպես կը Թարգմանուի անոր անունը) որ կ'ուզէր փոխանորդ բդեշխը հաւատքէն դարձնել։ 9—Բայց Սաղոս, որ Պօղոս ալ կ'ըսուէր, Հոգւով Սրբով լեցուած, աչքերը անոր վրայ անկեց, 10—Ու ըսաւ, Ով ամէն խա-բեպատիութիւնով և ամէն խորամանկու-թիւնով լեցուած՝ Սատանայի որդի, թշնամի բոլոր արդարութեան, պիտի չդադարի՞ս Տէրոջը չիսակ ճամբաները ծռելէ։ 11—Ու հիմա Տէրոջը ձեռքը ահա քու վրադ է, ու կոյր պիտի ըլլաս՝ առեն մը արեւը չտեսնելով։ Ու իսկոյն անոր վրայ մէգ ու խաւար մը իջաւ, ու պտրտելով առաջնորդ կը փնտռէր։ 12—Այն ատեն փոխանորդ բդեշխը երբ այս բանները տեսաւ՝ հաւատաց, մեծապէս զարմանալով Տէրոջը վարդապետութեան վրայ։

13—Ու Պօղոս ու իր ընկերները Պափոսէ ելան, ու եկան Պամփիւլիայի Պերգէն. բայց Յովհաննէս անոնցմէ չտաւելով՝ Երուսաղէմ գարձաւ։ 14—Անոնք ալ Պերգէէ գացին ու եկան Պի-սիդիայի Անտիոքը, և շաբաթ օրը ժո-ղովարանը մտնելով՝ նստան։ 15—Ու օրէնքին և մարգարէներուն կարդա-ւութենէն ետև՝ ժողովրդապետները մարդ ղրկեցին իրենց ու ըսին, Մարդիկ եղ-բայրներ, եթէ դուք ժողովուրդին խո-հուքս յորդորական խօսք մը ունիք՝ խօսեցէք։ 16—Այն ատեն Պօղոս ոտքի վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ու ըսաւ, Ով Իսրայէլացի մարդիկ, և դուք որ Աստուծմէ կը վախնաք, մտիկ ըրէք։ 17—Այս Իսրայէլ ժողովուրդին Աստ-ուածը մեր հայրերը ընտրեց, ու ժողո-վուրդը բարձրացուց նեխպատի երկրին մէջ պանդխտութեան ատենը, և բարձր թռուածով զանոնք հանեց։ 18—Ու քառասուն տարուան ժամանակի չափ անապատին մէջ կերակրեց զանոնք։ 19—Ու Քանանու երկրին մէջ եօթը ազգ կորժանեցուց՝ անոնց երկիրը իրենց տալու որ ժառանգեն։ 20—Ու անկէ ետև չորս հարիւր յիսուն տարիի չափ դատաւորներ տուաւ անոնց մինչև Սա-մուէլ մարգարէն։ 21—Ու ետքը թա-գաւոր ուզեցին. և Աստուած կիսի ար-տին Սաւուղը տուաւ անոնց, Բենիա-մինի ցեղէն մարդ մը, քառասուն տա-րի։ 22—Ու երբ զանիկա փոխեց, Դա-ւիթը հանեց իրենց թագաւոր, որու համար վկայութիւն տալով՝ ըսաւ, Ես-սեի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ։ 23—Անոր սերունդէն Աստուած էր խոստանդքին պէս իսրա-յէլի՝ Փրկիչ Յիսուսը հանեց։ 24—Ու դեռ անիկա էր գալուստը չկատարէ՝ Յով-հաննէս առաջուընէ Իսրայէլի բոլոր ժողովուրդին ապաշխարութեան մկըր-տութիւնը քարոզեց։ 25—Ու երբ Յով-հաննէս իր ընթացքը կը կատարէր՝ ըսաւ, Ո՞վ կը կարծէք թէ եմ. ես Քրիստոսը չեմ, հապա անիկա ահա իմ ետևէս կու գայ, որուն ոտքերուն կօշիկ-ները քակելու արժանի չեմ։ 26—Մարդիկ եղբայրներ, Աբրահամի ազ-գին որդիներըը, ու անոնք որ ձեր մէջ աստուածավախ են, այս փրկութեան խօսքը ձեզի ղրկուեցաւ։ 27—Քանզի Երուսաղէմ բնակողները և անոնց իշ-խանները ոչ զանիկա ճանչցան, ոչ ալ մարգարէներուն ձայները՝ որոնք ամէն շաբաթ օրերը կը կարդացուին, հապա դատելով կատարեցին՝ զԻ՛նէ գտատապար-տելով։ 28—Ու մահուան պատճառ մը ալ չգտած՝ Պիղատոսէ խնդրեցին որ անիկա սպաննուի։ 29—Ու երբ ա-նոր համար բոլոր գրուած բաները կա-տարեցին, փայտէն վար իջեցնելով՝ գերեզմանի մը մէջ դրին։ 30—Բայց Աստուած զանիկա յարուց մեռելնե-րէն։ որ շատ օրեր երեցաւ անոնց 31—Որ իրեն հետ Գալիլեայէ Երուսաղէմ եկեր էին, որոնք հիմա անոր վկաներն են ժողովուրդին առջև։ 32—Մենք ալ ձեզի կը քարոզենք այն խոստումնքը որ հայրերուն եղած էր, 33—Զոր Աստ-ուած կատարեց մեզի որ անոնց զաւակ-ներն ենք, Յիսուսը յարուցանելով, ինչպես երկրորդ սաղմոսին մէջ ալ գրուած է, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ։ 34—Ու որ զանիկա մեռելներէն յարուց, ու մէյմըն ալ ա-պականութիւն պիտի չտեսնէ, այսպես կ'ըսէ Քէ Ձեզի պիտի տամ Դաւիթի հաւատարիմ սուրբ խոստումները։ 35—Ուստի ուրիշ սաղմոսի մը մէջ ալ կ'ըսէ, Քու Սուրբիդ ապականութիւն տեսնել պիտի չտաս։ 36—Վասն զի Դաւիթ իր գարուն մէջ Աստուծոյ կամ-քին ծառայելով՝ մեռաւ, ու իր հայ-րերուն քով դրուեցաւ և ապականու-թիւն տեսաւ։ 37—Բայց ան զոր Աստ-ուած յարուց՝ ապականութիւն չտես-աւ։ 38—Ուրեմն յայտնի ըլլայ ձեզի, մարդիկ եղբայրներ, որ սորա միջոցով ձեզի մեղքերու թողութիւն կը քա-րոզուի. 39—Ու այն ամէն բաներէն՝ որոնցմէ Մովսէսի օրէնքովը չկրցաք արդարանալ, սորա ամէն ով որ հա-ւատայ, կ'արդարանայ։ 40—Արդ զգու-շացէք որ չըլլայ թէ ձեր վրայ գայ այն որ մարգարէներուն մէջ բսաւած է, 41—Նայեցէք, արհամարհողներ, և զարմացէք ու ցնդեցէք. վասն զի գործ մը պիտի ընեմ ձեր օրերուն մէջ, այնպիսի գործ մը՝ զոր եթէ մեկը ձեզի պատմէ, պիտի չհաւատաք։

42—Ու երբ անկէ դուրս ելան, *կ'ազապէին որ †խեռնեալ չարաբ՝ ալ նոյն խօսքերը իրենց խօսին։ 43—Ու ժողովուրդը երբ արձակուեցաւ, Հրեաներէն ու նորահաւատ բարեպաշտներէն շատերը Պօղոսի ու Բառնաբասի հետևէն կ'երթային. որոնք կը խօսէին անոնց հետ ու կը յորդորէին զանոնք, որ միշտ Աստուծոյ շնորհքին մէջ հաստատ կենային։ 44—Ու հետևեալ շաբաթ որը գրեթէ բոլոր քաղաքը ժողովուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու։ 45—Իսկ Հրեաները երբ տեսան այն բազմութիւնը, նախանձով լեցուեցան, ու Պօղոսի ըրած ծաղրներուն դէմ կը խօսէին հակառակելով ու հայհոյութիւն ընելով։ 46—Այն ատեն Պօղոս և Բառնաբաս համարձակեցան ու ըսին, Պէտք էր որ առաջ ձեզի խօսուէր Աստուծոյ խօսքը, բայց որովհետև դուք զանիկա կը մերժեք, ու ինքզինքնիդ յաւիտենական կեանքի արժանի չեք սեպեր, ահա մենք հեթանոսներուն կը դառնանք։ 47—Վասն զի Տէրը այսպէս պատուիրած է մեզի. Քեզ հեթանոսներուն լոյս դրի, որպէս զի դուն փրկութեան պատճառ ըլլաս մինչև երկրի ծայրերը։ 48—Հեթանոսները կ'ուրախանային, ու Աստուծոյ խօսքը կը փառաւորէին. և որոնք որ յաւիտենական կեանքի սահմանուած էին, հաւատացին։ 49—Ու Տէրոջը խօսքը բոլոր գաւառը կը տարածուէր։ 50—Բայց Հրեաները գրգռեցին բարեպաշտ և պատուաւոր կիները ու քաղաքին մեծերը, և Պօղոսի ու Բառնաբասի վրայ հալածանք հանելով՝ զանոնք իրենց սահմաններէն դուրս ըրին։ 51—Անոնք ալ իրենց ոտքերուն փոշին անոնց դէմ թօթվելով՝ Իկոնիոն եկան։ 52—Ու աշակերտները ուրախութեամբ և Հոգւով Սրբով կը լեցուէին։

Գլ. ԺԴ

Ու եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք միասին Հրեաներուն ժողովարանը մտան, և այնպէս խօսեցան որ խիստ շատ Հրեաները և Յոյներ հաւատացին։ 2—Բայց չհաւատացող Հրեաները գրգռեցին ու չարութիւնէն գրգռեցին հեթանոսներուն սիրտը եղբայրներուն դէմ։ 3—Իսկ անոնք շատ ժամանակ հոն կենալով՝ համարձակ կը քարոզէին Տէրոջմով, որ իր շնորհաց խօսքին կը վկայէր, և նշաններ ու հրաշքներ ընել կուտար անոնց ձեռքով։ 4—Ու քաղաքին բազմութիւնը մէջ երկպառակութիւն մը եղաւ. ոմանք Հրեաներուն կողմն եղան, ոմանք ալ առաքեալներուն։ 5—Ու երբ հեթանոսները և Հրեաները իրենց իշխաններովը անոնց վրայ յարձակեցան՝ զանոնք նախատելու ու քարկոծելու, 6—Իրենք իմանալով Լիկայոնացւոց քաղաքները փախան, Լիւստրա ու Դերբէ և չրջակայ տեղերը, ու հոն ուրախարար կը քարոզէին։

7—Ու Լիւստրայի մէջ մարդ մը նստած էր ոտքերովը տկար՝ իր մօր արհմնէն կաղ ծնած, որ բնաւ քալած չէր։ 8—Անիկա Պօղոսի խօսքերը մտիկ կ'ընէր. ան ալ այլը անոր անկուելով և տեսնելով Թէ բժշկուելու հաւատք ունի, 9—բարձր ձայնով մը ըսաւ, Ելիր ոտքերուդ վրայ ուղիակաց կայնէ. ան ալ ցատկելով կը քալէր։ 10—Ու ժողովուրդները երբ Պօղոսի ըրածը տեսան, ձայներնին վերցնելով Լիկայոնարէն ըսին, Աստուածները մարդոց նմանութիւնով մեզի իջեր են։ 11—Ու Բառնաբասի Դիոս կը կոչէին, և Պօղոսի՝ Հերմէս, վասն զի անիկա եր գլխաւորը խօսողը։ 12—Իսկ քաղաքին առջև եղած Դիոսի քուրմը ցուլերը և պսակներ բերելով դռներուն առջև, բազմութեանը հետ մէկտեղ կ'ուզէր որ զոհ ընէ։ 13—Բայց Բառնաբաս ու Պօղոս առաքեալները երբ լսեցին, իրենց հանդերձները պատռելով՝ դուրս ցատկեցին բազմութեանը մէջ, կ'աղաղակէին, 14—Ու կ'ըսէին, Մարդիկ, ինչո՞ւ համար այդ բաները կ'ընէք. մենք ալ ձեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ ենք, ու կը քարոզենք ձեզի որ այդ փուճ բաներէն կենդանի Աստուծոյ դառնաք, որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները։ 15—Որ անցած դարերուն մէջ Թող առաւ ամէն ազգերուն իրենց ճամբաները երթալու։ 16—Այսու ամենայնիւ ինքզինք առանց վկայութեան չթողուց, բարերարութիւնով երկինքէն *մեզի անձրևներ ու պտղաբեր եղանակներ տալով, կերակուրներով և ուրախութիւնով փեր սիրտերը լեցնելով։ 17—Ու այս բաները ընելով՝ հազիւ կրցան ժողովրդները դադրեցնել, որ իրենց զոհ չընեն։

18—Ասկոն Անտիոքէ ու Իկոնիոնէ Հրեաներ հասան, ու ժողովրդները համոզեցին, և Պօղոսը քարկոծեցին ու քաղաքէն դուրս քաշեցին՝ կարծելով Թէ մեռած է։ 19—Բայց աշակերտները երբ անոր բոլորուիլը պատեցին, ելաւ քաղաքը մտաւ, ու հետևեալ օրը Բառնաբասի հետ Դերբէ ելաւ։ 20—Ու անոնք այն քաղաքին մէջ աւետարանը քարոզելով, ու շատերը աշակերտ ընելով՝ Լիւստրա և Իկոնիոն և Անտիոք դարձան, 21—Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և յորդորելով որ հաստատ մնան հաւատքի մէջ. և Թէ Աստուծոյ քաղաքութիւնը մտնել, 22—Ու երբ անոնց ամէն մէկ եկեղեցիին երէցներ ձեռնադրեցին, ծոմապահութեամբ աղօթք ընելով զանոնք յանձնեցին Տէրոջը՝ որու հաւատացեր էին։ 23—Ու Պիսիդիայի մէջէն պատեալով՝ եկան Պամփիլիա։ 24—Պերգէի մէջ ալ Տէրոջը խօսքը խօսելէետև Աթալիա իջան։ 25—Անկէ ալ նաւով Անտիոք գացին, ուրկէ Աստուծոյ շնորհքին յանձնուած էին այն գործին համար զոր կատարեցին։ 26—Ու երբ եկան, եկեղեցին մէկտեղ ժողվելով՝ պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ, և որ հեթանոսներուն հաւատքի դուռ բացեր էր։ 27—Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն հետ կեցան։

Գլ. ԺԵ

Եւ մէկ քանիներ Հրէաստանէ իջած՝ եղբայրներուն կը սորվեցնէին որ եթէ Մովսէսի սովորութեան համեմատ չթլփատուիք, չէք կրնար փրկուիլ։ 2—Ուստի Պօղոսի և Բառնաբասի անոնց դէմ շատ մը հակառակութիւն ու վէճ ընելէն ետքը, վճռեցին որ Պօղոս ու Բառնաբաս և մէկ քանիներն ալ տղոնցմէ՝ Երուսաղէմ երթան առաքեալներուն ու երէցներուն այս խնդրին համար։ 3—Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դրուած՝ Փիւնիկէէ ու Սամարիայէ անցնելով, հեթանոսներուն դարձի գալը կը պատմէին, և մեծ ուրախութիւն կը տային բոլոր եղբայրներուն։ 4—Ու երբ Երուսաղէմ հասան, եկեղեցիին ու առաքեալներէն և երէցներէն ընդունուեցան, և պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ։ 5—Փարիսեցւոց ազանդէն հաւատացածներէն ոմանք ելան, ու կ'ըսէին Թէ պէտք է թլփատել զանոնք ու պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն։

6—Ու առաքեալները ու երէցները ժողովեցան այս բանին վրայով խորհելու։ 7—Ու շատ վիճաբանութիւն ըլլալէ ետև, Պետրոս ոտքի վրայ ելաւ ու ըսաւ անոնց, Մարդիկ եղբայրներ, դուք գիտէք որ առաջին օրերէն Աստուած ինձմէնիս մեր մէջէն, որպէս զի իմ բերնովս հեթանոսները աւետարանին խօսքը լսեն ու հաւատան։ 8—Ու սրտագէտ Աստուած վկայեց անոնց՝ Սուրբ Հոգին տալով անոնց, ինչպէս մեզի ալ։ 9—Ու խարութիւն մը չդրաւ մեր ու անոնց մէջտեղ, հաւատքով անոնց սիրտերը մաքրելով։ 10—Ուստի հիմա ինչո՞ւ զԱստուած կը փորձէք, աշակերտներուն պարանոցին վրայ այնպիսի լուծ մը դնելով, զոր ոչ մեր հայրերը և ոչ ալ մենք կրցանք վերցնել։ 11—Բայց կը հաւատանք որ Տէր *Յիսուսի շնորհքովը կը փրկուինք մենք, ինչպէս անոնք ալ։

12—Ու բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ ու մտիկ կ'ընէր Բառնաբասի ու Պօղոսի, որոնք կը պատմէին Թէ Աստուած ո՛րչափ նշաններ ու հրաշքներ ըրեր էր հեթանոսներուն մէջ իրենց ձեռքով։ 13—Ու անոնք խօսքերնին կտրելէն ետև՝ Յակոբոս պատասխանե-

*Ոմանք, հեթանոսները կ'ազապէին †Կամ, չարքոս մէջ

*Ոմանք, ձեզի †Ոմանք, ձեր

*Ոմանք, Յիսուս Քրիստոսի

առաւ ու ըսաւ, Մարդիկ եղբայրներ, ինձի մտիկ ըրէք։ 14—Շմաւոն պատմեց թէ Աստուած ի՛նչպէս առաջ այցելութիւն բրաւ, որպէս զի հեթանոսներէն ժողովուրդ առնէ իր անուանը համար։ 15—Ու այս բանին մարգարէներուն խօսքերն ալ կը միաբանին, ինչպէս գրուած է, 16—Ասկէ եւս պիտի դառնամ ու Դաւիթի ինկած խրանը նորէն պիտի չինեմ, և անոր կործանուած տեղերը նորէն պիտի չինեմ, և կանգնեմ զանիկա։ 17— Որպէս զի մնացած մարդիկը Տէրը փնտռեն, և բոլոր հեթանոսները՝ որոնց վրայ իմ անունս կոչուած է, կ՚ըսէ Տէրը որ այս ամէն բաները կ՚ընէ։ 18—Յայտնի են Աստուծոյ իր բոլոր գործերը աշխարհի սկիզբէն հետէ։ 19—Ասոր համար ես չյարմար կը դատեմ նեղութիւն չտալ անոնց որոնք հեթանոսներէն Աստուծոյ կը դառնան։ 20—Հապա թուղթ մը գրել անոնց՝ որ ես կռոնի կաւգրերու պղծութիւններէն և պոռնկութենէ ու խեղդուածէ և արիւնէ, 21—Վասն զի Մովսէս հին դարերէն ի վեր ամէն քաղաքի մէջ զինք քարոզողներ ունի, և ժողովարաններու մէջ ամէն շաբաթ օր կը կարդացուի։

22—Ա՛յն ատեն առաքեալներուն ու երէցներուն՝ բոլոր եկեղեցիին հետ մէկտեղ ալեկ երեւցաւ որ իրենցմէ մարդիկ ընտրելով Անտիոք դրկեն Պօղոսի ու Բառնաբասի հետ, Բարսաբա մականուանեալ Յուդան և Շիղան, որոնք գլխաւոր մարդիկ էին եղբայրներուն մէջ։ 23—Ու անոնց ձեռքով խոսդ հը դրկեցին այսպէս գրուած.

Առաքեալներ ու երէցներ և եղբայրներ, Անտիոքի ու Սիւրիայի և Կիլիկիայի մէջ հեթանոսներէն եղած եղբայրներուն ողջոյն։ 24—Որովհետեւ լսեցինք թէ ոմանք մեր մէջէն ելլելով՝ ձեզ խօսքերով խռովեցուցեր և ձեր անձերը խախտեր են, ըսելով թէ պէտք է թլփատուիլ ու օրէնքը պահել, որոնց մենք պատճէ չտպաւոր իրեցինք, 25—Մեզի միաբանութեամբ ժողովածներս ալեկ երեւցաւ որ մարդիկ ընտրելով ձեզի դրկենք մեր սիրելիներուն, Բառնաբասի ու Պօղոսի, հետ, 26—Որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը համար անձերնին մատնած մարդիկ են։ 27—Ուստի դրկեցինք Յուդան և Շիղան, որպէս զի իրենք ալ բերնով նոյն բաները ինչէ դրուցեն։ 28—Վասն զի ազիկ երեւցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ ձեր վրայ աւելի բեռ չդնել այս հարկաւոր բաներէն զատ, 29—Որ ես կենաք կռոնքերու զոհուածէ և արիւնէ ու խեղդուածէ և պոռնկութենէ. որոնցմէ ինքզինքնիդ պահելով ազիկ պիտի բնէք։ Ողջ եղէք։

30—Անոնք ալ ճամբայ դրուելով Անտիոք գացին, և ժողովրդը մէկտեղ ժողվելով Թուղթը տուին։ 31—Ու երբ կարդացին, ուրախացան այն մխիթարութեանը վրայ։ 32—Իսկ Յուդա ու Շիղան, որ իրենք ալ մարգարէ էին, շատ խօսքերով յորդորեցին եղբայրները ու հաստատեցին։ 33—Ու ատեն մը հոն կենալէ ետեւ, եղբայրներէն խաղաղութեամբ ճամբայ դրուեցան առաքեալներուն քովէն։ 34—Բայց Շիղայի ազիկ երեւցաւ հոն մնալ։ 35—Պօղոս ու Բառնաբաս ալ Անտիոքի մէջ կը կենային, և ուրիշ շատերու հետ Տէրոջը խօսքը կը սորվեցնէին ու կը քարոզէին։

36—Ու քանի մը օրերէ ետեւ Պօղոս բսաւ Բառնաբասի, Դառնանք ու այցելութիւն ընենք եղբայրներուն՝ ամէն մէկ քաղաքները, ուր Տէրոջը խօսքը քարոզեցինք, և տեսնենք թէ ի՛նչպէս են։ 37—Իսկ Բառնաբաս կ՚ուզէր որ Յովհաննէսն ալ առնեն, որ Մարկոս կ՚ըսուէր։ 38—Բայց Պօղոս արժան չսեպեց որ Պամփիւլիայի մէջ իրենցմէ զատուողը ու իրենց հետ գործի չկողը իրենց հետ առնեն։ 39—Այսպես սոսկ ընդհարումը եղաւ, մինչեւ իրարմէ զատուեցան. և Բառնաբաս առաւ Մարկոսը ու նաւով կիպրոս գնաց։ 40—Պօղոս ալ Շիղան ընտրեց ու ելաւ, եղբայրներէն Աստուծոյ շնորհքին յանձնուելով։ 41—Ու Սիւրիայի ու Կիլիկիայի մէջ կը պարեր ու եկեղեցիները կը հաստատէր։

*Ոմանք, Տէրոջը

ԳԼ. ԺԶ

Ե. հասաւ Դերբէ ու Լիւստրա. և ահա հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անունով, որ հաւատացեալ Հրեայ կնոջ մը զաւակ էր, և Հայրը Յոյն էր։ 2—Որ Լիւստրացի ու Իկոնացի եղբայրներէն ալ բարի վկայուած էր։ 3—Պօղոս ուզեց որ ասիկա իրեն հետ ելլէ, և առաւ թլփատեց զանիկա այն ատեղերը եղած Հրեաներուն համար, վասն զի ամէնն ալ գիտէին թէ անոր Հայրը Յոյն էր։ 4—Ու քաղաքներէն անցնելով, ներկայացուցած եղած առաքեալներէն ու երէցներէն ապօգրուած հրամանները կ՚ուտնդրէին անոնց՝ որ պահեն։ 5—Եկեղեցիներն ալ հաստատի մէջ կը հաստատուէին, և օրէ օր անոնց թիւը կ՚աւելնար։

6—Ու Փռիգիա ու Գաղատացւոց կողմերը պտրտեցան. և Սուրբ Հոգիէն արգիլուելով որ Ասիոյ խօսքը ասիայի մէջ չխօսին, 7—երբ Միւսիայի կողմերը եկան, կը ջանային գնալ ի Բիւթանիա երթալ. և [Յիսուսի] Հոգին Յոգ չտուաւ անոնց։ 8—Ու Միւսիայի քովէն անցնելով Տրովադա իջան։ 9—Ու հոն գիշերը Պօղոսի տեսիլք մը երեւցաւ. Մակեդոնացի մարդ մը կայներ կ՚աղաչէր անոր ու կ՚ըսէր, Մակեդոնիա անցիր և օգնէ մեզի։ 10—Ու երբ այն տեսիլքը տեսաւ, չուտ մը ուզեցինք Մակեդոնիա ելլել, հասկնալով որ Տէրը մեզ կը հրաւիրէ անոնց աւետարան քարոզելու։

11—Ուստի Տրովադայէ ելանք ու չիտակ Սամոթրակէ գացինք, ու հետեւեալ օրը Նէապոլիս։ 12—Ու անկէ ալ Փիլիպպէ, որ է Մակեդոնիայի Առաջին գաւառի քաղաքը՝ *կողոնիա. և այն քաղաքին մէջ քանի մը օր կեցանք։ 13—Ու շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք գետեզերքին քով՝ ուր սովորութիւն ունէին աղօթք ընելու, ու նստելով ժողոված կիներուն կը խօսէինք։ 14—Ու Թիւատիր քաղաքէն ծիրանավաճառ կին մը Լիդիա անուն, որ աստուածավախ մէկն էր, մտիկ կ՚ընէր. որուն սիրտը Տէրը բացաւ Պօղոսի բսածներուն ուշադրութիւն ընելու։ 15—Ու երբ մկրտուեցաւ ինք և իր տունը, ազաչեց ու ըսաւ, Եթէ զիս Տէրոջը հաւատացեալ կը սեպէք, իմ տունս մտնէք բնակեցէք։ և ստիպելով տարաւ մեզ։

16—Ու եղաւ որ երբ մենք աղօթքի կ՚երթայինք, ապտիխն մը պատահեցաւ մեզի որ Հարցուկ ոգի ունէր, որ գուշակութիւն ընելով՝ իր տէրերուն չատ վաստակ կը բերէր։ 17—Ասիկա Պօղոսի և մեր հետեւէն իյնալով՝ կը պոռար ու կ՚ըսէր, Այս մարդիկը Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որոնք մեզի փրկութեան ճամբան կը քարոզեն։ 18—Ու այս բանը չատ օրեր կ՚ընէր. իսկ Պօղոս վշտանալով՝ դարձաւ ու բսաւ այն ոգիին, Յիսուս Քրիստոսի անունովը հրաման կ՚ընեմ քեզի, ելիր ասկէ. և նոյն ժամուն ելաւ։ 19—Երբ տէրտէր անոր տէրերը որ իրենց վաստակին յոյսը կտրեցաւ, Պօղոսը ու Շիղան բռնելին ու հրապարակը քաշելին իշխաններուն առջեւ։ 20—Ու տարին զանոնք զօրապետներուն քով ու բսին, Այս մարդիկը մեր քաղաքը իրար կ՚անցնեն. իրենք Հրեայ են, 21—Ու այնպիսի սովրութիւններ կը քարոզեն, զորոնք արժան չէ մեզի ընդունիլ, ոչ ալ բնել, վասն զի Հռոմէացիի ենք։ 22—Ու բազմութիւնը անոնց վրայ դիմաց ելաւ. զօրապետներն ալ բռնութեամբ անոնց հանդերձները հանեցին, և հրաման ըրին որ ցաւնուե ծեծեն։ 23—Ու անոնց չատ վերքեր տալէ ետեւ բանտը գրին, պատուիրելով բանտապետին որ զգուշութեամբ պահէ զանոնք։ 24—Ան ալ այսպէս հրաման առնելով՝ զանոնք ներսի բանտը դրաւ ու ոտքերնին կոճղի մէջ ամրցուց։

25—Ու կէսգիշերին Պօղոս ու Շիղա աղօթք կ՚ընէին և զԱստուած կ՚օրհնէին, ու բանտարկեալներն ալ անոնց մտիկ կ՚ընէին։ 26—Ու յանկարծական մեծ չարժ մը եղաւ, այնպէս որ բանտին հիմերը սասանեցան, և անմիջապէս բո-

*Ասկէնա, գաղթականներու տեղ

*Ոմանք, ձեզի

յոր դռնները բացուեցան, ու ամէնուն կապերը արձակուեցան։ 27—Ու բանտապետը, երբ արթնցաւ ու բանտին դռները բացուած տեսաւ, Քաղը փաչեց և ինքզինք պիտի սպաններ, կարծելով Թէ կապուածները փախեր են։ 28—Բայց Պօղոս բարձր ձայնով կանչեց ու ըսաւ, Դուն քու անձիդ վնաս մի ըներ, վասն զի ամէնս ալ հոս ենք։ 29—Ու անկից հրագ մը ուզեց ու ներս վազեց, և դողալով Պօղոսի ու Շիղասի առջև իյնաւ։ 30—Ու զանոնք դուրս բերելով՝ ըսաւ, Տէրեր, ինծի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ։ 31—Անոնք ալ ըսին, Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի, ու պիտի փրկուիս դուն և քու տունդ։ 32—Ու Տէրոջը խօսքը խօսեցան անոր, ու այն ամէնուն որոնք իր տանը մէջ կէին։ 33—Ու առաւ զանոնք դիշերուան նոյն ժամուն ու անոնց վէրքերը լուաց, և չուտ մը ինքնաւ եղաւ ու բոլոր իրենները։ 34—Ու զանոնք իր տունը տանելով՝ ուռաց առջև սեղան դրաւ, և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով։ 35—Ու երբ առաւոտ եղաւ, զօրագլուխները զրկեցին սպասաւորները ու ըսին, Արձակէ այդ մարդիկը։ 36—Բանտապետն ալ այն խօսքերը Պօղոսի պատմեց, Թէ Զօրագլուխները զրկեցին որ արձակուիք։ ուստի հիմա ելէք և խաղաղութեամբ գացէք։ 37—Բայց Պօղոս ըսաւ անոնց, Մեզ յայնպսակ ծեծելով՝ որ չդատապարտուած Հռովմայեցի մարդիկ ենք, բանտը դրին, ու հիմա գաղտնի կը հանեն մեզ. ոչ այդպէս, հապա թող իրենք գան ու մեզ հանեն։ 38—Ու սպասաւորները զօրագլուխներուն պատմեցին այն խօսքերը. անոնք ալ երբ լսեցին Թէ Հռովմայեցի են՝ վախցան, ու եկան փաղցրու Թեամբ խօսեցան անոնց հետ. 39—Ու դուրս հանելով՝ կ'աղաչէին որ այն քաղաքէն երթան։ 40—Անոնք ալ բանտէն ելլելով՝ Լիդիայի տունը մտան, ու եղբայրները տեսնելով՝ մխիթարեցին զանոնք և գացին։

Գլ. ԾԷ

Ե Ամփիպօլիսէ ու Ապողոնիայէ պատեալով՝ Թեսաղոնիկէ եկան, ուր էր Հրեաներուն ժողովարանը։ 2—Պօղոս ալ իր սովորութեանը պէս անոնց մէջ մտաւ, և երեք շաբաթ օր խօսեցաւ անոնց հետ գիրքերէն, 3—Մեկնելով և անոնց առջև դնելով Թէ պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, ու մեռելներէն յարութիւն առնել, և Թէ Այն Յիսուսը զոր ես ձեզի կը քարոզեմ, ըսաւ, Քրիստոսն է։ 4—Ու անոնցմէ ոմանք հաւատացին ու Պօղոսի և Շիղասի հետ միացան. ասուածավախ Յոյներէն ալ մեծ բազմութիւն, ու երեւելի կիներէն ալ հազուագիւտ չէին։ 5—Բայց չհաւատացող Հրեաները նախանձեցան, և քանի մը դատարկապորտ անօրէն մարդիկ առնելով՝ ազմուկ հանեցին ու քաղաքը ամբոխուրայ ըրին, և Յասոնի տանը վրայ յարձակելով՝ կ'ուզէին զանոնք ժողովրդին առջև առնել։ 6—Ու երբ զանոնք չգտան, Յասոնը ու մէկ քանի եղբայրներ քաշելով տարին քաղաքապետներուն առջև, կանչելով Թէ Անոնք որ աշխարհը ամբոխուրայ ըրին՝ հոս ալ հասեր են. 7—Զորոնք Յասոն ընդուներ է. և ասոնք ամէնը կայսրին հրամաններուն դէմ կը գործեն, ըսելով Թէ ուրիշ Թագաւոր մը կայ Յիսուս։ 8—Ու խռովեցուցին ժողովուրդը ու քաղաքապետները, որոնք այս բաները կը լսէին։ 9—Բայց երբ Յասոնէ և ուրիշներէն երաշխաւորութիւն առին, արձակեցին զանոնք։ 10—Իսկ եղբայրները չուտ մը գիշերով Պօղոսը և Շիղան Բերիա զրկեցին. որոնք հոն հասնելով՝ Հրէից ժողովարանը գացին։ 11—Ասոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որոնք Ասուածային խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդունեցին, և ամէն օր գիրքերը կը քննէին Թէ այս բաները այսպէ՞ս են։ 12—Ուստի անոնցմէ շատերը հաւատացին. և պատուաւոր Յոյն կիներէն ու այրերէն հազուագիւտ չէին։ 13—Բայց երբ իմացան Թեսաղոնիկեցի Հրեաները Թէ Բերիայի մէջ ալ Աստուծոյ խօսքը քարոզուեցաւ Պօղոսէ, հոն ալ եկան ու ժողովրդը գրգռեցին։ 14—Այն ատեն եղբայրները չուտ մը Պօղոսը զրկեցին՝ որ մինչև ծովեզերքը երթայ. բայց Շիղա ու Տիմոթէոս հոն մնացին։ 15—Ու անոնք որ Պօղոսը կը տանէին, մինչև Աթէնք բերին զանիկա. և երբ հրաման առնելով Շիղասի ու Տիմոթէոսի համար որ շուտով իրեն գան, գացին։

16—Ու Պօղոս Աթէնքի մէջ անոնց սպասելով՝ իր հոգին անհանգիստ էր ներսիդին, վասն զի քաղաքը բոլորովին կռապաշտութեան մէջ բնկղմած կը տեսնէր։ 17—Ուստի ժողովարանին մէջ կը խօսէր Հրեաներուն ու բարեպաշտ մարդոց, և ամէն օր հրապարակներուն մէջ՝ որոնց պատահէր։ 18—Ու Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներէն մէկ քանիները իրեն հետ հակաճառութիւն կ'ընէին. և ոմանք կ'ըսէին, Ան ի՞նչ կ'ուզէ ասել այս սերմանաքաղը։ ուրիշներն ալ՝ Օտար աստուածներու քարոզիչ է. վասն զի Յիսուսը ու յարութիւնը կ'աւետարաներ անոնց։ 19—Ու զանիկա Արիսպագոս առին ու կ'ըսէին, Կրնա՞նք իմանալ Թէ ի՛նչ է այդ նոր վարդապետութիւնը զոր դուն կը գրուցես. 20—Քանզի մեր ականջներուն օտար բաներ կը բերես. ուրեմն կ'ուզենք իմանալ Թէ ի՛նչ պիտի ըլլան ասոնք. 21—(Վասն զի Աթենացիները ամէնն ալ, ու հոն կեցող օտարականները ուրիշ բանի չէին պարապեր, բայց միայն նոր բան գրուցելու կամ լսելու։)

22—Այն ատեն Պօղոս Արիսպագոսի մէջ կայնեցաւ ու ըսաւ, Ով Աթենացի մարդիկ, ամէն կողմանէ խիստ կրօնասէր կը տեսնեմ ձեզ։ 23—Քանզի ես պտրաեալով ու ձեր պաշտամունքը զննելով՝ սեղան մը գտայ, որուն վրայ գրուած էր, ԱՆԴԱՆՕՔ ԱՍՏՈՒԱԾՈՑՆ. ուստի զանիկա զոր դուք չճանչնալով կը պաշտէք, ես նոյնը ձեզի կը քարոզեմ։ 24—Աստուած որ աշխարհը ստեղծեց, և անոր մէջի բոլոր բաները, ան նիկա երկինքի ու երկրի Տէրն բլլալով՝ ոչ ձեռագործ տաճարներու մէջ կը բնակի, 25—Ոչ ալ մարդոց ձեռքով կը պաշտուի՝ բանի մը կարօտի պէս, քանզի ինք կու տայ ամէնուն կեանք ու չունչ և ամէն բան. 26—Ու բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ ըրաւ, որպէս զի բոլոր երկրի երեսին վրայ բնակին. և որոշուած ժամանակներ հաստատեց, ու անոնց բնակութեան սահմանները՝ զԱստուած փնտռելու. 27—Որ ըլլայ Թէ խարխափելով գինք գտնեն. Քեպէս մեր ամէն մէկէն ալ հեռու չէ. 28—Վասն զի անով կ'ապրինք և կը շարժինք ու կանք, ինչպէս ձեր բանաստեղծներէն մէկ քանիներն ալ ըսին, Քանզի մենք ալ անոր ցեղէն ալ ենք. 29—Ուստի, որովհետև Աստուծոյ ցեղէն ենք, պէտք չէ որ այնպէս սեպնինք Թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի, որ մարդու վարպետութիւնով ու խելքով քանդակուած է. 30—Արդ Աստուած տգիտութեան ատենները անտես ընելով՝ հիմա ամէն տեղ կը պատուիրէ բոլոր մարդոց որ ապաշխարեն. 31—Վասն զի ինք օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մարդուն ձեռքով՝ զոր որոշեց, ու ամէնուն հաւատացուց՝ զանիկա մեռելներէն յարուցանելով։

32—Երբ մեռելներուն յարութիւնը լսեցին, ոմանք ծաղր կ'ընէին, ոմանք ալ կ'ըսէին, Այդ բանին համար ուրիշ անգամ մտիկ պիտի բնենք քեզի. 33—Ու այսպէս Պօղոս անոնց մէջէն ելաւ. 34—Սակայն քանի մը մարդիկ իրեն յարելով հաւատացին, որոնց մէջ էր Դիոնեսիոս Արիսպագացի և Դամարիս անուանով կին մը, ու անոնց հետ ուրիշներ ալ։

Գլ. ԾԸ

Ա Ետքէ հասև Պօղոս Աթէնքէ գաւառելով՝ կորնթոս եկաւ, 2—Ու Հրեայ մը գտաւ Ակիւղաս անուանով, Ծնունդով Պոնտացի, որ իր Պրիսկիլլա կնոջ հետ նոր եկեր էր Իտալիայէն, (Կղօդիոս հանած հրամանին համար որ բոլոր Հրեաները Հռովմէ հեռանան,) ու անոնց քով գնաց, 3—Ու որովհետև ինք արհեստակից էր, անոնց քով կե-

ցան և կը բանէր, վասն զի արհեստավ վրանագործ էին։ 4—Ու. ամէն չարաճճի օրերը ժողովարանին մէջ կը խօսէր, և Հրեաները ու Յոյները կը համոզէր։ 5—Ու երբ Շեղա և Տիմոթէոս Մակեդոնիայէ իջան, Պօղոսի հոգին եռանդով վառուած բլլալով, Հրեաներուն վկայութիւնով կը հաստատէր թէ Յիսուս Քրիստոսն է։ 6—Անոնք ալ երբ դէմ կեցան ու կը հայհոյէին, ինք հանդերձները թօթուելով՝ ըսաւ անոնց, Ձեր արիւնը ձեր գլխուն, ես անպատ եմ. ասկէ հետեւանքներուն պիտի երթամ։ 7—Ու անկէ երթալով՝ մտաւ մէկուն տունը, որուն անունը *Յուստոս էր, աստուածավախ մարդ էր, որուն տունը ժողովարանին կից էր։ 8—Ու ժողովրդապետը, Կրիսպոս, իր բոլոր տունովը հաւատաց Տէրոջը. և Կորնթացիներէն շատերը լսելով հաւատացին, ու մկրտուեցան։ 9—Ու գիշերը տեսիլքի մէջ Տէրը ըսաւ Պօղոսի, Մի վախնար, հապա խօսէ և լռու մի կենար, 10—վասն զի ես քեզի հետ եմ, և մէկը քեզի դէմ պիտի չելլէ՝ քեզի վնաս մը հասցնելու. քանզի այս քաղաքին մէջ ես շատ ժողովուրդ ունիմ։ 11—Ու հոն տարի մը ու վեց ամիս կեցաւ, ու Աստուծոյ խօսքը անոնց մէջ կը սորվեցնէր։

12—Ու Աքայիայի փոխանորդ Գաղիոնին, Գաղիոնի, օրերը Հրեաները միաբանելով՝ Պօղոսի դէմ ելան, և զանիկա առեանը տարին, 13—Ըսելով թէ Աստիկա կը հրապուրէ մարդիկ օրէնքին դէմ պաշտամունք։ 14—Ու երբ Պօղոս իր բերանը բանալու պատրաստ էր, Գաղիոն բաւ Հրեաներուն, Եթէ անիրաւութեան մը կամ չար գործ մը համար բլլար, օվ Հրեաներ, արժան կը ինձի որ ձեզի մինչ ընէի։ 15—Բայց եթէ վէճը խօսքի ու անուններու և ձեր օրէնքին վրայով է, դուք ձեզմէ տեսէք. վասն զի ես այդպիսի բաներու դատաւոր բլլալ չեմ ուզեր։ 16—Ու զանոնք առեանէն վռնտեց։ 17—Այն ատեն բոլոր Յոյները Սոսթենէս ժողովրդապետը բռնեցին ու առեանին առջեւ կը ծեծէին, և այս բաներուն վրայով Գաղիոն բնաւ հոգ չէր ընէր։

18—Պօղոս ալ ասկէ յետոյ շատ մը օրեր հոն մնալէ ետքը, եղբայրներէն հրաժարելով՝ նաւով գնաց ի Սիրիա գնաց, ու իրեն հետ ալ Պրիսկիլլա և Ակիւղաս, †որ կէնքրէայի մէջ էր գլուխը փոքրած, վասն զի ուխտաւոր էր։ 19—Ու երբ Եփեսոս հասաւ, զանոնք հոն ձգեց, և ինք ժողովարանը մտնելով՝ Հրեաներուն հետ կը խօսէր։ 20—Ու իրեն կ'աղաչէին որ մ'աւելի ժամանակ իրենց քով մնայ, բայց չանձնաւոր չեղաւ։ 21—Հապա հրաժարելացաւ անոնցմէ՝ ըսելով, *Պէտք է որ անպատճառ այս առաջիկայ տօնը Երուսաղէմի մէջ ընեմ, բայց Աստուծոյ կամքովը նորէն ձեզի կը դառնամ. ու Եփեսոսէ նաւով ճամբայ ելաւ։ 22—Ու կեսարիա հասնելով՝ Երուսաղէմ ելաւ, ու եկեղեցիին բարեւ առաւ, ու Անտիոք։ 23—Ու առեն մը հոն կենալէ ետքը, ան կարգաւ Գաղատացւոց երկիրը ու Փռիգիա կը պտրէր, ու բոլոր աշակերտները կը հաստատէր։

24—Ու Ապողոս անունով Հրեայ մը, ծնունդով Ալեքսանդրացի, ճարտասան մարդ մը, եկաւ հասաւ Եփեսոս, որ զօրաւոր էր †գիրքերով։ 25—Ասիկա Տէրոջը ճամբան մէջ վարժուած էր, և ջերմեռանդ հոգի ունենալով՝ կը խօսէր ու կը սորվեցնէր ճշդութեամբ Տէրոջը վրայով. բայց ինք միայն Յովհաննէսի մկրտութիւնը գիտէր։ 26—Ասիկա սկսաւ ժողովարանին մէջ համարձակ խօսիլ։ ու երբ Ակիւղաս ու Պրիսկիլլա լսեցին անկէ, ալ զանիկա իրենց քով առին, և աւելի ճշդիւ Աստուծոյ ճամբան անոր հասկցուցին։ 27—Ու երբ անկից ուզեց Աքայիա երթալ, եղբայրները քաջալերեցին ղՆիէ, ու էէր գրեցին որ երեւ աշակերտներուն որ զանկից ընդունին. որ հոն հասնելով՝ շատ օգտակար եղաւ շնորհքով՝ հաւատացեալներուն։ 28—Քանզի հրապարակաւ աստիկ կը յանդիմաներ Հրեաները, †գիրքերէն ցուցնելով թէ Յիսուսը Քրիստոսն է։

*Ոմանք, Տիտոս Յուստոս

*Ոմանք Կրիսպոս

ԳԼ. ԻԹ

Ե. ֆանի որ Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պօղոս վերի կողմերը պտրտելով եփեսոս եկաւ, և քանի մը աշակերտներ գտնելով՝ 2—Ըսաւ անոնց, Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին առի՞ք արդեօք. անոնք ալ ըսին իրեն, Բայց մենք լսած ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ։ 3—Ու ըսաւ անոնց, Հապա ինչո՞վ մկրտուեցաք. անոնք ալ ըսին, Յովհաննէսի մկրտութիւնովը։ 4—Պօղոս ալ ըսաւ, Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւնով մկրտեց, ժողովուրդին ըսելով թէ ան որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան, այսինքն Քրիստոս Յիսուսի։ 5—Ու երբ ասոնք լսեցին, Տէր Յիսուսի անունովը մկրտուեցան։ 6—Ու Պօղոս երբ անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին անոնց վրայ եկաւ, և լեզուներ կը խօսէին ու կը մարգարէանային։ 7—Ու այն բոլոր մարդիկը տասներկուքի չափ էին։ 8—Ու ժողովարանը մտնելով՝ երեք ամիս համարձակութեամբ Աստուծոյ թագաւորութեանը վրայով կը խօսէր ու կը համոզէր։ 9—Իսկ երբ մէկ քանիները կը յամառէին ու դէմ կը դնէին՝ բազմութեան առջեւ այն ճամբան բամբասելով, ինք անոնցմէ հեռացաւ և աշակերտները զատեց, ու ամէն օր Տիւրաննոսի մէկուն դպրատանը մէջ կը խօսէր։ 10—Ու ասիկա երկու տարի տեւեց, մինչեւ բոլոր Ասիոյ մէջ բնակող Հրեաները ու Յոյները *Տէրոջը խօսքը լսեցին։ 11—Ու Աստուած նշանաւոր հրաշքներ կ'ընէր Պօղոսի ձեռքով։ 12—Այնպէս որ անոր մարմինէն թաշկինակներ ու գոգնոցներ կը տանէին հիւանդներուն, և իրենց ցաւերն կը բժշկուէին, ու չար ոգիները կ'ելլէին։ 13—Բայց աստանգական Հրեաներէն մէկ քանիները, որոնք երդմնեցուցիչ էին, †հանդգնեցան Տէր Յիսուսի անունը կանչել անոնց վրայ որոնք չար ոգիներ ունէին, և կ'ըսէին, Ձեզ կ'երդմնցնենք Յիսուսով, զոր Պօղոս կը քարոզէ։ 14—Ու այս բանը բնդները Սկեւա քահանայապետի մը եօթը որդիները էին։ 15—Իսկ չար ոգին պատասխան առաւ ու ըսաւ, Յիսուսը կը ճանչնամ ու Պօղոսը գիտեմ, բայց դուք ո՞վ եք։ 16—Ու այն մարդը որուն ներսիդին էր չար ոգին, անոնց վրայ ցաքկելով՝ բռնեց զանոնք ու յաղթեց, մինչեւ որ այն աւուրն մերկ ու վիրաւորուած գոյրս փախան։ 17—Ու այս բանը եփեսոսի մէջ բնակող բոլոր Հրեաներուն ու Յոյներուն յայտնի եղաւ. և անոնց ամէնուն վրայ վախ մը իյնկաւ, ու Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր։ 18—Ու հաւատացեալներէն շատերը կու գային, ու կը խոստովանէին ու կը պատմէին իրենց րրածները։ 19—Ու կախարդութեան հետեւողներուն շատերը գիրքերնին ժկհաւաք բերելով՝ ամէնուն առջեւ կ'այրէին. և անոնց գինը հաշուեցին ու յիսուն հազար արծաթ դրահիւն գտան։ 20—Ա՛յսպէս Տէրոջը խօսքը մեծապէս կ'աճէր և կը զօրանար։

21—Ու երբ այս բաները լմնցան, Պօղոս միտքը դրաւ որ Մակեդոնիայէ ու Աքայիայէ պտրտելով՝ Երուսաղէմ երթայ. ու կ'ըսէր թէ հոն երթալէ ետքը պէտք է ինծի որ Հռոմ ալ տեսնեմ։ 22—Ու իրեն սպասաւորութիւն ընողներէն երկուքը, Տիմոթէոսը ու Երաստոսը, զրկեց Մակեդոնիա, ու ինք տասն մըն ալ Ասիայի մէջ կեցաւ։

23—Ու այն առենները չատ խռովութիւն եղաւ Տէրոջը ճամբուն համար։ 24—Քանզի Դեմետրիոս անունով արծաթագործ մը Արտեմիսի էտէրէլ տաճարներ կը շինէր արծաթէ, ու փիլսոյ չէր բերեր վարպետներուն. 25—Զորոնք ասիկա ժկհեղ ժողվեց նոյն արհեստին բանուորներուն հետ, ու ըսաւ, Մարդիկ, դուք գիտէք որ այս գործէն է մեր շահը. 26—Ու կը տեսնէք ու կը լսէք որ այս Պօղոսը ոչ միայն եփեսացւոց, հապա գրեթէ բոլոր Ասիացւոց չատ ժողովուրդները համոգելով՝ միտքերնին դարձուց, ըսելով թէ Ձեռքով չինուածները աստուածներ չեն։ 27—Ուստի վտանգ կայ որ ոչ միայն այս մեր *կազմը պիտի նախատ-

*Կամ, արհեստը

ութ, հապա մեծ ասուածուհւոյն Արտեմիսի, տաճարն ալ ոչինչ պիտի սեպուի, և անոր մեծափառութիւնը պիտի խափանուի, զոր բոլոր Ասիա ու աշխարհ կը պաշտեն։ 28—Ու երբ լսեցին, բարկութեամբ լեցուած կը կանչուըռտէին ու կ'ըսէին, Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը։ 29—Ու բոլոր քաղաքը խռովութեամբ լեցուեցաւ. և յափշտակելով Գայիոս ու Արիստարքոս Մակեդոնացիները, Պօղոսի ճանապարհորդակիցները, ամենը մէկէն թեատրոնը վազեցին։ 30—Իսկ Պօղոս կրկ ուզեց ժողովուրդին մէջ մտնել, աշակերտները թոյլ չտուին զինք։ 31—Ասիապետներէն ալ անոնք որոնք իր բարեկամներն էին, խրկրտ ղրկելով իրեն՝ կ'աղաչէին որ չհամարձակի թեատրոնը երթալ։ 32—Ուստի մէկը մէկ կերպ ու միւսը ուրիշ կերպ բան կը կանչըռտեին, վասն զի ժողովքը չխոհութեան մէջ էր, և շատերը չէին գիտեր թէ ինչ բանի համար ժողված են։ 33—Ու բազմութեանը միէն յառաջ բերին Աղեքսանդրոսը, զոր Հրեաներ յառաջ քշեցին. Աղեքսանդրոս ալ ձեռքը շարժելով՝ կ'ուզէր որ ժողովուրդին պատասխան տայ։ 34—Իսկ երբ գիտցան թէ անիկա Հրեայ է, ամենը մէկ բերան եղած՝ երկու ժամու չափ կը կանչըռտեին թէ Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը։ 35—Ուստի ատենադպիրը բազմութիւնը հանդարտեցնելով՝ ըսաւ, Ով Եփեսացի մարդիկ, ո՞ր մարդն է որ չգիտնայ թէ Եփեսացւոց քաղաքը *մեծ Արտեմիսի և Դիոսէ ինկած կուռքին տաճարին պաշտօնեան է։ 36—Ուրեմն այս որ անվիճելի բան մըն է, պէտք է ձեզի հանդարտ կենալ, և չանգգնութեամբ բան մը չընել։ 37—Քանզի գուք այդ մարդիկը հոս բերիք, որոնք ոչ տաճար կողոպտողներ են, ոչ ալ ձեր աստուածուհւոյն հայհոյանք ըրեր են։ 38—Ուստի եթէ Դեմետրիոս և իրեն հետ եղած վաճառականը մէկուն հետ բան մը ունին, դատի օրեր կան ու փոխանորդ ալ կայ. թող իրարու դէմ ամպաստանութիւն ընեն։ 39—Իսկ եթէ ուրիշ բաներու համար է ձեր պահանջմունքը, օրինաւոր ժողովքի մէջ թող որոշուի։ 40—Վասն զի մենք ալ այսօրուան եղածին համար իրրև խռովարար մարդիկ ամբաստանուելու վտանգի մէջ ենք, քանզի պատճառ մը չկայ որով կարող ըլլանք այս խառնամբոխ բազմութեանը համար պատասխան տալ։ Ու այսպէս ըսելով ժողովքը արձակեց։

Գլ. Ի

Ե. ապստամբին գադարելէն ետև Պօղոս աշակերտները իրեն կանչեց, ու հրաժարական ողջոյն տալով՝ ելաւ որ Մակեդոնիա երթայ։ 2—Ու այն կողմերը պտրտելէ ու շատ խօսքերով զանոնք յորդորելէ ետև Ելլադա եկաւ։ 3—Ու հոն երեք ամիս կենալէ ետքը, Հրեաները իրեն դէմ նենգութեան խորհուրդ ըրին երբ կ'ուզէր Սիրիա երթալ։ Ուստի հետ որոշեց Մակեդոնիայի վրայէն դառնալ։ 4—Ու մինչև Ասիա իրեն հետ կ'երթար Բերիացի [Պիւռոսի որդին] Սոպատրոս, և Թեսաղոնիկեցիներէն Արիստարքոս ու Սեկունդոս, և Գայիոս Դերբացի ու Տիմոթէոս, և Ասիացիք, Տիւքիկոս ու Տրոփիմոս։ 5—Ասոնք առաջ գացին ու Տրովադայի մէջ մեզի կը սպասէին։ 6—Մենք ալ բազարջակերքի օրերէն ետև Փիլիպպէ նաւեցինք, և հինգ օրուան մէջ Տրովադա եկանք անոնց քով, ու հոն եօթը օր կեցանք։

7—Ու մէկշաբթի օրը երբ *ժողովուրդը հինք հաց կոտրելու, Պօղոս անոնց կը քարոզէր, վասն զի հետևեալ օրը ճամբայ պիտի երթար. և խօսքը երկնցուց մինչև կէսգիշեր։ 8—Ու շատ լապտերներ կային այն վերի սենեակը՝ ուր մենք ժողված էինք։ 9—Ու երիտասարդ մը, Եւտիքոս անուն, պատուհանին վրայ նստած՝ խորունկ քունի մէջ մնար էր. երբ Պօղոս խօսքը երկնցուց, անիկա խորունկ քնով բռնուած՝ երբորդ դասիկռնէն վար ինկաւ, ու գանիկա մեռած վերցուցին։ 10—Ու Պօղոս

*Ոմն., մեծ աստուածուհւոյն

*Ոմն., աշակերտները ժողովուրդը էին

վար իջնելով՝ ածոր վրայ ինկաւ ու գրկեց ըսելէ— ու կ'ըսէր, Մի խռովիք, վասն զի ասոր հոգին իր մէջ է։ 11—Ու վեր ելլելով՝ հացը կոտրեց ու կերաւ. ու երկար խօսելով մինչև առաւօտ, ետքը ելաւ գնաց։ 12—Ու այն պատանին ողջ բերին. ու մեծապէս միխիթարուեցան։ 13—Իսկ մենք նաւը մտնելով՝ ճամբայ ելանք դէպի Ասոն, ուրկէ Պօղոսը պիտի առնէինք, վասն զի այնպէս ապատրեր էր, որովհետև ինք *ցամաքով պիտի երթար։ 14—Ու երբ Ասոնի մէջ մեզի հանդիպեցաւ, առինք զանիկա և Միտիլինի եկանք։ 15—Անկէ ալ նաւելով հետևեալ օրը Քիոսի դիմաց հասանք. և միւս օրը Սամոս հասանք, ու էնչբէը Տրոգիլիոն կեցանք. միւս օրը Միլիտոս հասանք։ 16—Վասն զի Պօղոս միտքը դրեր էր որ նաւով անցնի Եփեսոսի քովէն, որ չըլլայ թէ Ասիոյ մէջ ժամանակ անցնի, որովհետև կ'արագուր որ եթէ կարելի է իրեն, Պենտեկոստէին օրը Երուսաղէմ ըլլայ։

17—Ու Միլիտոսէ *իրր ղրկեց Եփեսոս ու եկեղեցիին երէցները կանչեց։ 18—Ու երբ իրեն եկան, ըսաւ անոնց, Դուք գիտէք որ այն առաջին օրէն հետ որ ես Ասիա եկայ, ի՛նչպես ձեզի հետ վարուեցայ բոլոր ժամանակը. 19—Ամենայն խոնարհութեամբ Տէրոջը ծառայելով, և շատ արցունքով ու փորձութիւններով որոնք Հրէից նենգութիւններուն բնաւ պատահեցան. 20—Ի՛նչպէս վ†ւ†լով ես չկեցայ օգտակար բաներուն բնաւ մէկը ձեզի զրուցելէ, ու ձեզի հրապարակաւ և տան մէջ սորվեցնելէ. 21—Վկայութիւն տալով Հրէից և Յունաց †լ՝ դէպի Աստուած ապաշխարութեան համար, ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ հաւատքին համար։ 22—Ու հիմա ահա ես Հոգիով կապուած՝ Երուսաղէմ կ'երթամ, և հոն ինչ որ ինձի պիտի պատահի՝ չեմ գիտեր. 23—Միայն Քէ Հոգին Սուրբ ամէն քաղաքի մէջ ինձի կը վկայէ ու կ'ըսէ Քէ կապեր ու նեղութիւններ ինձի կը սպասեն։ 24—

*Կամ, քալելով

*Ոմն., Տէրոջը

†Կամ, ընտսակաը

Սիրաեղբիսին կը ցաւէր մանաւանդ այն խօսքին համար՝ որ կ'ըսէր Քէ ա՛լ պիտի չտեսնեն իր երեսը. և զանիկա ճամբայ դրին մինչև նաւը Խէօլէվ։

ԳԼ. ԻԸ

Ու երբ ելանք ու անոնցմէ զատուեցանք, չիտակ նաւելով Կով եկանք, և միւս օրը Հռոդոս, ու անկէ Պատարա՝ 2—Ու հոն մը գտանք որ Փիւնիկէ կ'երթար, ու անոր մէջ մտնելով՝ ճամբայ ելանք։ 3—Ու երբ Կիպրոս երեւցաւ, զանիկա ձախ կողմերնիս թողլով՝ դեպ ի Սիւրիա նաւեցինք և Տիւրոս ելանք, վասն զի նաւը հոն պիտի թափէր էրբեռը։ 4—Ու աշակերտները գտնելով՝ եօթը օր հոն կեցանք, որոնք Սուրբ Հոգիով կ'ըսէին Պօղոսի որ երուսաղէմ չելլէ։ 5—Ու երբ այն օրերը անցուցինք, ելանք ու կ'երթայինք. ամէնն ալ կիներով ու զաւակներով մինչև քաղաքէն դուրս մեզ ճամբայ դրին. և ծովուն եզերքը ծունկի վրայ գալով աղօթք ըրինք։ 6—Ու իրարու հրաժարական ողջոյն տալով՝ մենք նաւը ելանք, անոնք ալ տեղերնին դարձան։ 7—Իսկ մենք Տիւրոսէ վար-ւէլ և ծովու ճամբորդութիւնը լրացնելով՝ Պտողեմայիս հասանք, ու եղբայրները բարեւելով օր մը անոնց քով կեցանք։ 8—Ու հետեւեալ օրը Կեսարիա եկանք, և Փիլիպպոս աւետարանչին տունը մտնելով՝ որ եօթնէն մէկն էր, անոր քով կեցանք։ 9—Անոր չորս կոյս աղջիկ ունէր, որոնք մարգարէութիւն կ'ընէին։ 10—Ու երբ հոն շատ օրեր կեցանք, Հրէաստանէ մարգարէ մը իջաւ Ագաբոս անունով։ 11—Ու երբ մեզի եկաւ, Պօղոսի գօտին առնելով իր ձեռքերը ու ոտքերը կապեց, և ըսաւ, Այսպէս կ'ըսէ Հոգին Սուրբ. Այն մարդը՝ որուն է այս գօտին, այսպէս պիտի կապեն Հրեաները Երուսաղէմի մէջ, ու հեթանոսներուն ձեռքը պիտի մատնեն։ 12—Ու երբ զայն լսեցինք, աղաչեցինք մենք ալ և տեղացիք ալ որ Երուսաղէմ չելլէ։ 13—Իսկ Պօղոս պատասխան տուաւ, Ի՞նչ կ'ընէք, Ընչ՞ կու լաք ու իմ սիրտս կը ճմլէք, քանզի ես ոչ Քէ միայն Երուսաղէմի մէջ կապուելու, հապա նաև մեռնելու պատրաստ եմ Տէր Յիսուսի անունը համար։ 14—Ու երբ ինք մեզի չլսուեր՝ լուռ կեցանք, ու ըսինք, Տէրոջը կամքը թող ըլլայ։

15—Ու այն օրերէն ետև պատրաստուելով Երուսաղէմ ելանք։ 16—Կեսարացի աշակերտներէն ալ մեզի քաղուածները մեզի հետ եկան, և հիւ մասրին Նասիոն աշակերտի մը, Կիպրացի Մնասոնի, որուն քով պիտի կենայինք։ 17—Ու երբ Երուսաղէմ մտանք, եղբայրները ուրախութեամբ մեզ ընդունեցին։ 18—Ու հետեւեալ օրը Պօղոս մեզի հետ Յակոբոսի քով գնաց, ու բոլոր երէցներն ալ եկան։ 19—Ու զանոնք բարեւելով մի քսան միայն կը պատմէր ինչ որ Աստուած հեթանոսներուն մէջ բրաւ իր ծառայութիւնովը։ 20—Անոնք ալ լսելով՝ փառք կու տային Տէրոջը. և ըսին իրեն, Կը տեսնես, եղբայր, քանի՛ բիւրաւոր Հաւատացեալ Հրեաներ կան, ու ամէնն ալ օրէնքին նախանձաւոր են։ 21—Բայց քու վրայովդ խնացան Քէ դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած Հրեաներուն Մովսէսէ ապստամբել կը սորվեցնես, ըսելով որ զաւակներն չթլփատեն, և սովորութիւններուն համեմատ չվարեն։ 22—Արդ ինչ պիտի ըլլայ. անշուշտ բազմութիւն պիտի ժողվուի, վասն զի պիտի լսեն Քէ եկեր ես։ 23—Ուստի այս բանը րրէ զոր քեզի կ'ըսենք. Մեր քով չորս մարդ կայ, որոնք իրենց վրայ ուխտ դրած են։ 24—Զանոնք առ, իրենց հետ մաքրուէ, և անոնց համար ծախք րրէ, որ իրենց գլուխը ածիլեն. որպէս զի ամէնն ալ գիտանան Քէ քու վրայովդ խնացած բաներնին ոչինչ է, հապա դուն ալ Հիւ հետ կը քալես օրէնքը պահելու մէջ։ 25—Բայց հաւատացի եկող հեթանոսներուն համար մենք թուղթ զրկեցինք՝ ինչպէս որոշեցինք, որ անոնք բնաւ այսպիսի բաներ չպահեն. միայն Քէ զգուշանան կռոտքերու զոհատէ ու արիւնէ և խեղդուածէ ու պոռնկութենէ։ 26—Այն ատեն Պօղոս այն մարդիկը առաւ, ու հետեւեալ օրը անոնց հետ մաքրուած՝ տաճարը մտաւ, մաքրութեան օրերուն լմնալը ցուցնելու համար, մինչև որ ամէնց համար պատարագ մատուցուեցաւ։

27—Ու երբ եօթը օրերը լմնալու վրայ էին, Ասիացի Հրեաները զանիկա տաճարին մէջ տեսնելով՝ բոլոր բազմութիւնը խռովեցուցին, և անոր ձեռք զարկած՝ կը կանչէին, 28—Իսրայէլացի մարդիկ, օգնութեան հասէք. սա այն մարդն է՝ որ ամէն տեղ ժողովրդին և օրէնքին ու այս տեղին դէմ բան կը սորվեցնէ ամէնուն. մինչև տաճարին մէջ Յոյներ ալ մտցուց, և այս սուրբ տեղը պղծեց։ 29—(Վասն զի առաջուընէ Եփեսացի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջ տեսեր էին, և կը կարծէին Քէ Պօղոս զանիկա տաճարը մտցուց։) 30—Ու բոլոր քաղաքը շարժեցաւ և ժողովուրդը դիպուեցաւ, ու բռնեցին Պօղոսը տաճարէն դուրս քաշեցին. և չուտ մը դռները գոցուեցան։ 31—Ու երբ անոնք կ'ուզէին զանիկա սպաննել, լուր հասաւ գունդին հազարապետին Քէ բոլոր Երուսաղէմ իրար անցեր է։ 32—Ան ալ անմիջապէս զինուորներ և հարիւրապետներ առած՝ անոնց վրայ վազեց, անոնք ալ հազարապետը և զինուորները տեսնելով՝ Պօղոսը դադրեցան։ 33—Ան ատեն հազարապետը մտանելով բռնեց զանիկա, և հրաման բրաւ որ կրկին չգթայով կապեն. ու կը հարցրնէր Քէ անիկա ո՞վ է ու ի՞նչ բրեր է։ 34—Ու բազմութեանը մէկէն մէկը մէկ կերպ ու միւսը ուրիշ կերպ բան կը կանչռտէին. իսկ երբ չկրցաւ այն չփոթութենէն ստոյգ գիտնալ, հրաման բրաւ որ զանիկա բերդը տանին, 35—Ու երբ սանդուխը հասաւ, այնպէս պատահեցաւ, որ զինուորները վեր վերցնեն զանիկա, ժողովրդին բռնութեանը համար։ 36—Վասն զի ժողովրդին բազմութիւնը հետևէն կ'երթար, ու կ'ըսէին, Վերցուր տուիկա։

37—Ու երբ Պօղոս բերդը տանելու վրայ էր, հազարապետին ըսաւ. Արգեօք կրնա՞յ ես որ քեզի բան մը խօսիմ. Ան ալ ըսաւ, Յունարէն գիտե՞ս. 38—Չէ՞ որ դուն այն Եգիպտացին ես, որ այս օրերէն առաջ չորս հազար *սրիկայ մարդիկ ապստամբեցուցիր, ու անապատը հանեցիր։ 39—Պօղոս ալ ըսաւ, Ես Հրեայ մարդ մըն եմ Կիլիկիոյ Տարսոնէն, ոչ թէ անծանօթ քաղաքի մը քաղաքացի, ու կ'աղաչեմ քեզի թոյլ տալ հրաման առը որ ժողովրդին խօսիմ։

40—Ու երբ անիկա հրաման առաւ, Պօղոս սանդուխին վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ժողովրդին, ու երբ ազնկ մը լռութիւն եղաւ, Եբրայական լեզուով խօսեցաւ անոնց, ու ըսաւ,

ԳԼ. ԻԹ

Մարդիկ եղբայրներ և Հայրեր, թոյլ մեզի լրկը որ հիմա ձեզի պատասխան կու տամ։ 2—(Երբ լսեցին որ Եբրայական լեզուով կը խօսէր իրենց, ալ աւելի լռեցին.) 3—Ու անիկա ըսաւ, Ես Հրեայ մարդ մըն եմ Կիլիկիոյ Տարսոնի մէջ ծնած, և այս քաղաքին մէջ Գամալիէլի ոտքը մեծցած, ու Հրէից կրթութեան օրէնքին ճշգութիւնը պէս կրթուած, նախանձաւոր էի Աստուծոյ, ինչպես այսօր դուք ամէնդ ալ։ 4—Ու այդեր ու կիներ կապելով, ու բանտերու մատնելով այս Ճամբան հալածեցի մինչև ի մահ. 5—ինչպէս քահանայապետն ալ կը վկայէ ինծի համար, և բոլոր ծերակոյսը. որոնցմէ Քառգիեր ալ առնելով եղբայրներուն Դամասկոս կ'երթայի, որպէս զի հոն եղածներն ալ կապուած Երուսաղէմ բերեմ որ պատժուին։ 6—Ու եղաւ որ երբ կ'երթայի ու Դամասկոսի մտեցայ, կէս օրուան դէմ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը փայլատակեց իմ բոլորտիքս։ 7—Ու գետինը ինկայ, ու ձայն մը լսեցի որ ինծի կ'ըսէր, Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես։ 8—Ես ալ պատասխան տուի Քէ Դուն ո՞վ ես, Տէր. ան ալ ինծի

*Ոմանք Յոյներէն, մենք որ Պօղոսի ընկերներն ենք՝

*Ոմանք, Ասորեցոյ

*Յոյն. սիկարեան, ոյսիկոյ, դաշնակ կակիր մարդասպան

բաւ, նա Յիսուս Նազովրեցին եմ, զոր դուն կը հալածես։ 9—Բայց անոնք որ ինծի հետ էին, լոյսը տեսան ու վախով լեցուեցան, սակայն ինծի խօսողին ձայնը չլսեցին։ 10—Ես ըսի, Ի՞նչ ընեմ, Տէր։ և Տէրը ինծի ըսաւ, Ելիր գնա Դամասկոս, ու հոն քեզի պիտի պատմուի այն ամէն բաներուն համար, որ սահմանուած է որ ընես։ 11—Ու երբ չէի տեսներ այն լոյսին փառքէն, ինծի հետ եղողները ձեռքս բռնած՝ Դամասկոս տարաւ։ 12—Ու Անանիա անուն մարդ մը, օրէնքին համեմատ աստուածավախ, ու Հրէաներ բնակող բոլոր Հրեաներէն լաւ վկայուած, 13—ինծի եկաւ, ու քովս կայնելով ինծի ըսաւ. Աստուդ եղբայր, վեր նայէ։ 14—Ես ալ նոյն ժամուն վեր նայեցայ իրեն, և անիկա ըսաւ, Մեր հայրերուն Աստուածը առաջնորդել քեզ ընտրեց, որպէս զի իր կամքը ճանչնաս ու այն Արդարը տեսնես, և անոր բերնէն ձայն լսես։ 15—Քանզի բոլոր մարդոց առջև անոր վկայ պիտի ըլլաս այն բաներուն համար, զորս տեսար ու լսեցիր։ 16—Ու հիմա, ալ Ի՞նչ կ'ուշանաս. ելիր, մկրտուէ ու մեղքերդ լուա՝ անոր անունը կանչելով։ 17—Ես եղայ որ երբ Երուսաղէմ դարձայ, ու տաճարին մէջ աղօթք կ'ընէի, մոքի յափշտակութիւն մը եկաւ վրաս, 18—ու զինք տեսայ, որ ինծի կ'ըսէր, Արագցիր, չուտով Երուսաղէմէ ելիր, վասն զի քու ինծի համար ըրածդ վկայութիւնդ պիտի չընդունին։ 19—Ես ալ ըսի, Տէր, իրենք գիտեն թէ ես եի որ քեզի հաւատացողները բանտը կը դնէի, և ժողովարաններուն մէջ կը ծեծէի։ 20—Ու երբ քու Մարտիանոս վկայիդ արիւնը կը թափուէր, ես ինքս ալ ներկայ էի և համակերպ էի՝ անոր սպանուելուն*. ու զանիկա սպանողներուն հանդերձները ես կը պահէի։ 21—Ու ինծի ըսաւ, Գնա, վասն զի ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պիտի ղրկեմ։

22—Ու անոնք մինչև այս խօսքը ականջ դրին իրեն, եւ քը ձայներնին վերցուցին ու ըսին, Վերցուր աշխարհէ այդպիսի մարդը, քանզի չվայելեր տառ ողջ ապրիլ։ 23—Ու երբ կը կանչըռտէին ու հանդերձներնին կը նետէին և փոշին դէպ ի օդը կը ցանէին, 24—Հազարապետը հրաման ըրաւ որ զանիկա բերդը մտցնեն, ու ըսաւ որ ծեծով հարցաքննեն անոր, որպէս զի գիտնայ Թէ ի՛նչ յանցանքի համար անոր դէմ այնպէս կը կանչըռտէին։ 25—Ու երբ կռիւ կապերով զինք կապեցին, Պօղոս վերնացաւ հարիւրապետին ըսաւ, Աբժա՞ն է ձեզի Հռովմայեցի ու չդատապարտած մարդ մը ծեծել։ 26—Հարիւրապետը երբ ղ՚ա ըսեց, գնաց հազարապետին պատմեց ու ըսաւ, *Ի՞նչ պիտի ընես, վասն զի այս մարդը Հռովմայեցի է։ 27—Հազարապետն ալ գովը գնաց ու ըսաւ անոր, Ըսէ ինծի, դուն Հռովմայեցի՞ ես, ան ալ ըսաւ, Այո։ 28—Հազարապետը պատասխան տուաւ, Ես շատ սակով ձեռք բերի այս քաղաքացիութեան իրաւունքը։ և Պօղոս ըսաւ, Ես ծնած եմ։ 29—Ու անոնք որ իրեն հարցաքննելու պիտի ընէին, չուտ մը եղ կեցան իրմէ։ և հազարապետն ալ վախցաւ երբ իմացաւ Թէ Հռովմայեցի է, և որովհետև զանիկա կապեր էր։

30—Ու հետեւեալ օրը ուզելով որ չիտակը գիտնայ Թէ ի՛նչ է Հրեաներուն ըրած մեղադրութիւնը անոր դէմ, †արձակեց զանիկա, և հրաման ըրաւ որ քահանայապետները ու բոլոր ժողովքը հաւաքուին, և Պօղոսը իջեցնելով անոնց առջև կայնեցուց։

ԳԼ. ԻԳ

Ու Պօղոս իր աչքերը ժողովքին վրայ դարձնելով՝ ըսաւ, Մարդիկ եղբայրներ, ես բոլորովին բարի խղճմտանքով կեանք վարեր եմ Աստուծոյ առջև մինչև այսօր։ 2—Անանիա քահանայապետն ալ հրաման ըրաւ իր քով կայնողներուն՝ որ անոր բերնին զարնեն։ 3—Այն ատեն Պօղոս ըսաւ անոր, Աստուած քեզի պի-

*Յոյն՝ Ստեփանոս
†Յոյն՝ Նազովրեցին

*Յոյն՝ Նայէ ի՛նչ
†Յոյն՝ կապերէն արձակեց

մէ զարնէ, ծեփած պատ. և դուն նըստած ես օրէնքին համեմատ զիս դատելու, և օրէնքին դէմ հրաման կ'ընես որ ինծի զարնեն։ 4—Ու բոլորտիքը կայնողները ըսին, Աստուծոյ քահանայապե՞տը կը նախատես։ 5—Պօղոս ալ ըսաւ, Եղբայրներ, չէի գիտեր որ քահանայապետ է. վասն զի գրուած է, Քու ժողովրդիդ իշխանին գէմ չխօսիս քու մի ըսեր։ 6—Ու Պօղոս գիտնալով որ մէկ կողմը սադուկեցիներ են ու միւսը փարիսեցիներ, կ'ազազակէր ժողովքին մէջ, Մարդիկ եղբայրներ, ես փարիսեցի եմ, փարիսեցիի որդի. մեռելոց յարութեանը յոյսին համար կը դատուիմ։ 7—Ու երբ զայս ըսաւ, փարիսեցւոց և սադուկեցւոց մէջ երկպառակութիւն ինկաւ, և բազմութիւնը բաժնուեցաւ։ 8—Քանզի սադուկեցիք կ'ըսեն Թէ յարութիւն չկայ, և ոչ հրեշտակ, ոչ ալ հոգի. բայց փարիսեցիք երկուքն ալ կը դաւանին։ 9—Ու մեծ ազազակ մը եղաւ. ու փարիսեցւոց կողմէն եղող դպիրները ոտքի վրայ ելլելով դէմ կը կենային ու կ'ըսէին, Մենք այս մարդուն վրայ չարութիւն մը չենք գտներ. հապա եթէ հոգի մը կամ հրեշտակ մը անոր խօսած է, Ի՞նչ։ 10—Ու երբ ազմուկը չատցաւ, հազարապետը, վախնալով որ չըլլայ Թէ Պօղոս անոնցմէ պատառուի, զինուորներուն հրաման ըրաւ որ իջնեն զանիկա անոնց մէջէն յափշտակեն ու բերդը բերին։ 11—Ու հետեւեալ գիշերը Տէրը անոր քով կայնեցաւ ու ըսաւ, Քաջալերա՛ եղիր, Պօղոս, վասն զի ինչպէս Երուսաղէմի մէջ ինծի համար վկայեցիր, այնպէս պէտք է քեզի որ Հռովմայ մէջ ալ վկայես։

12—Ու երբ առաւօտ եղաւ, Հրեաներէն մանաւանդ միաբանեցան, ու ինքզինքնին անէծքի տակ դրին՝ ըսելով որ չուտանեն ու չխմեն մինչև որ Պօղոսը սպանեն։ 13—Ու քառասունէ աւելի էին որ այս երդումը իրարու հետ ըրին։ 14—Որոնք քահանայապետներուն և ծերերուն գացին ու ըսին, Անէծքով անիծեցինք անձերնիս որ բան մը չուտենք մինչև որ Պօղոսը սպանենք։ 15—Ուստի դուք ժողովքին հետ ազկատ հազարապետին իմացուցէք որ վաղը զանիկա ձեզի իջեցնէ, որպէս Թէ դուք աւելի ճիշդ քննութիւն ընել կ'ուզէք անոր վրայով. և մենք անոր մօտ գալէն առաջ պատրաստ ենք զանիկա սպաննելու։ 16—Ու Պօղոսի քրոջ որդին երբ այս դաւադրութիւնը լսեց, եկաւ բերդը մտաւ ու Պօղոսի պատմեց. 17—Պօղոս ալ հարիւրապետներէն մէկը իրեն կանչելով ըսաւ, Այս պատանին հազարապետին տար, վասն զի բան մը ունի անոր իմացնելու։ 18—Ան ալ առաւ զանիկա և տարաւ հազարապետին ու ըսաւ, Բանտարկեալ Պօղոս զիս կանչեց, և աղաչեց որ այս պատանին քեզի բերեմ, որ քեզի խօսելիք ունի։ 19—Ու հազարապետը անոր ձեռքէն բռնելով մէկդի գնաց, ու հարցուց Թէ Ի՞նչ բան ունիս ինծի իմացնելու։ 20—Ու անիկա ըսաւ, Հրեաները միաբանեցան քեզի աղաչելու որ վաղը Պօղոսը տանեսը իջեցնես, որպես Թէ կ'ուզեն աւելի ճիշդ քննութիւն մը ընել անոր վրայով։ 21—Բայց դուն անոնց մտիկ չընես, վասն զի անոնցմէ քառասունէ աւելի մարդիկ դարանամուտ եղած են անոր համար, որոնք ինքզինքնին անէծքի տակ դրին որ չուտեն ու չխմեն մինչև զանիկա սպաննեն. ու հիմա պատրաստ են, և քու հրամանիդ կը սպասեն։ 22—Ան տուն հազարապետը պատանին ճամբեց, պատուիրելով Թէ Մարդո՛ւ մի բանը որ այս բաներ ինծի իմացուցիր։

23—Ու հարիւրապետներէն երկուքը կանչեց ու ըսաւ, Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, ու եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր գեղարդուաւոր, որպէս զի մինչև կեսգիշեր երթան գիշերուան ժամը երեքին։ 24—Ու գրաստներ պատրաստեցէք, որպէս զի Պօղոսը հեծցնեն ու ապահովաբար փելիքս կուսակալին տանին։ 25—Ու Թուղթ մը գրեց այս օրինակին պէս։ 26—Կղօդիոս Լիւսիաս, պատուական փելիքս կուսակալիդ ողջոյն։ 27—Այս մարդը Հրեաներէն բռնուեր էր, և անոնցմէ պիտի սպաննուէր, իսկ ես զինուորներով վրայ հասած՝ ազատեցի զանիկա, իմանալով

*Յոյն՝ Աստուծոյ հետ չմաքառիլնիք

որ Հռոմայեցի է։ 28—Ես ուզելով պատճառը գիտնալ, որու համար ասոր վրայ ամբաստանութիւն կ'ընէին, իջեցուցի ատիկա անոնց ատեանը։ 29—Զոր գալով ամբաստանուած իրենց օրէնքին վերաբերեալ խնդիրներու համար, և մեռնելու կամ կապուելու արժանի յանցանք մը չունէր։ 30—Ու երբ լուր առի որ Հրեաները այդ մարդուն համար դաւադիր պիտի լարեն, իսկոյն ղրկեցի, հրաման ընելով ամբաստանողներուն ալ՝ որ ինչ առիւծ խօսին ասոր վրայով։ Ողջ եղիր։

31—Զինուորներն ալ իրենց հրամայուածին համեմատ առին Պօղոսը ու գիշերով Անթիպատրա տարին։ 32—Ու հետեւեալ օրը թողուցին ձիաւորները անոր հետ երթալու, ու իրենք բերդը դարձան։ 33—Անոնք ալ կեսարիա մտան, ու թուղթը կուսակալին տուին, և Պօղոսը անոր առջեւ կանգնեցուցին։ 34—Երբ *կարդաց, հարցուց թէ ո՞ր գաւառէն է, և իմանալով որ Կիլիկիայէ է, 35—Ըսաւ, Պիտի լսեմ քեզի՛ երբ ինքնակալդ ալ գան։ և հրաման ըրաւ որ զանիկա Հերովդէսի պալատը պահեն։

Գլ. ԻԴ

Ե. հինգ օրէ ետքը Անանիա քահանայապետը ծերերուն հետ ու Տերտիլոս անուն ճարտասանի մը հետ իջաւ, և ասոնք կուսակալին խնդացուցին էրէնց ոճրագործութիւնը Պօղոսի դէմ։ 2—Ու երբ կանչեցին զանիկա, Տերտիլոս սկսաւ ամբաստանել ու ըսել, Որովհետեւ քու ձեռքդով շատ խաղաղութիւն, ու քու խնամքովդ այս ազգին բանեւորն ազէկ կարգադրութիւնը կը վայելենք, 3—Ամէն կերպով ու ամէն տեղ բոլորովին գոհ ըլլալով, շնորհակալ ենք, ով պատուական Փելիքս։ 4—Բայց չուզեմ որ ալ աւելի ձանձրութիւն տամ քեզի, կ'ազաչեմ որ քու քաղցրութիւնովդ մէկ ակնթարթ մը լսես մեզ։ 5—Վասն զի մենք այս մարդը գտանք ապականիչ և խռովարար բոլոր Հրեաներուն երանելի աշխարհի մէջ են, և Նազովրեցոց աղանդին առաջնորդ։ 6—Որ ատաճարն ալ ուզեց պղծել։ զոր բռնեցինք ու մեր օրէնքին համեմատ ուզեցինք դատաստանը ընել։ 7—Բայց Լիւսիաս հազարապետը եկաւ մեծ բռնութեամբ մեր ձեռքէն առաւ, 8—Ու հրաման բրաւ որ անոր դատաստանները քեզի գան, զոր դուն քննելով՝ կարող պիտի ըլլաս անկէ եանալ այն ամէն բաներուն, որոնց համար մենք ամբաստանութիւն կ'ընենք ասոր վրայ։ 9—Հրեաներն ալ ամէնը մէկ եղած՝ ըսին թէ այդպէս է։

10—Պատասխան ատաւ Պօղոս, (երբ կուսակալը անոր ալ բրաւ որ խօսի,) Գիտնալով որ շատ տարիներէ հետէ դուն այս ազգին դատաւորն ես, ուրախ յօժարութեամբ ինձի վերաբերեալ բաները հաստատելու համար պատասխան կու տամ։ 11—Որովհետեւ կրնաս գիտնալ որ ես տասներկու օրէ աւելի չէ՝ քանի որ երուսաղէմ երկրպագութիւն ընելու։ 12—Ու զիս ատեարին մէջ մէկ՛ն հետ վիճաբանութիւն ընելու վրայ, կամ բազմութիւնը մէկտեղ ժողված չգտան, ոչ ալ ժողովարաններուն մէջ, 13—Ու ոչ քաղաքին մէջ. ոչ ալ կրնան ապացուցանել այն բաները, որոնց համար հիմա ամբաստանութիւն կ'ընեն ինծի դէմ։ 14—Բայց զայս կը խոստովանիմ քեզի՝ թէ այն ճամբուն համեմատ զոր անոնք հերձուած կ'ըսեն, ես այնպէս կը պաշտեմ իմ հայրերուն Աստուածս, հաւատալով այն ամէն բաներուն որոնք օրէնքին և մարգարէներուն մէջ գրուած են։ 15—Ու յոյս ունիմ առ Աստուած, (ինչպէս ասոնք ալ ակնկալութիւն ունին,) որ մեռելներու յարութիւն պիտի ըլլայ, թէ՛ արդարներուն և թէ՛ մեղաւորներուն։ 16—Ու ես այս բանին համար կը ջանամ, որ ամէն ատեն մաքուր խղճմտանք ունենամ Աստուծոյ առջեւ ու մարդոց առջեւ։ 17—Երբ ես շատ տարիներէ հետէ եկայ իմ ազգիս ողորմութիւններ բերելու ու ընծաներ գալու։ 18—Այսպէս գտանի մը Ասիացի Հրեաներ զիս ատեարին մէջ մաքրուած գտան, ոչ բազմութիւնով և ոչ ամբոխով, 19—Որոնց պէտք էր առջեւդ գալ ու ամբաստանութիւն ընել, եթէ իմ վրայով ընելիք բան մը ունէին։ 20—Կամ թէ ասոնք իրենք թող բանն, ինչ անիրաւութիւն գտան իմ վրաս, երբ ատեանը կայներ էի. 21—Միայն թէ այս մէկ խօսքիս համար, որ երբ իրենց մէջ կայներ էի, կանչեցի թէ Մեռելներու յարութեանը համար ես այսօր ձեզմէ կը դատուիմ։ 22—Ու փելիքս *ուրիշ անգամի քաղց զանոնք, վասն զի ազէկ անդեկութիւն ունէր այն ճամբուն վրայով. ու բաւ, երբ Լիւսիաս հազարապետը էս իջնէ, պիտի քննեմ ձեր գործը։ 23—Ու հարկաւորապետին հրաման բրաւ որ զանիկա պահէ, և ընդարձակութիւն ասյ, ու իրենիներէն մէկը չարգիլէ անոր պատասխութիւն ընելէ կամ անոր գովերթալէ։

24—Ու քանի մը օրէն հետ փելիքս եկաւ իր Դրուսիլա կնոջ հետ որ Հրեայ էր, ու Պօղոսը կանչել տուաւ, և լսեց անկէ այն հաւատքին համար որ Քրիստոս Յիսուսի վրայ է։ 25—Ու երբ անիկա արդարութեան ու ժուժկալութեան և գալու դատաստանին վրայով կը խօսէր, փելիքս զարհուրելով պատասխան տուաւ, Դուն հիմա գնա, ու երբ ժամանակ ունենամ, ես քեզ նորէն կը կանչեմ. 26—Նաև յոյս ունէր որ Պօղոսի կողմէն իրեն տուակ †տրուի, անոր համար շատ անգամ կանչել կու տար զանիկա ու անոր հետ կը խօսակցէր։ 27—Բայց երբ երկու տարի եղաւ, փելիքսի տեղ Փարկիոս Փեստոս եկաւ. Փելիքս ալ Հրեաներուն շնորհք ընել ուզելով՝ Պօղոսը կապուած թողուց։

Գլ. ԻԵ

Արդ երբ Փեստոս էր էլեւսանդրիա գտաւ տասը կամ տասներկու օրէն հետու կեսարիայէ երուսաղէմ ելաւ։ 2—Ու քահանայապետը ու Հրէից գլխաւորները անոր իմացուցին էրէնց ոճրագործութիւնը Պօղոսի դէմ, 3—Ու կ'ազաչէին

*Ոմանք, կուսակալը կարգաց

*Ոմանք, այս բաները լսելով ուրիշ

†Ոմանք, արուի, որպէս զի զանիկա արձակէ

իրեն և շնորհք կը խնդրէին անոր գէմ, որպէս զի զանիկա երուսաղէմ բերել տայ. ու իրենք գաման կը պատրաստէին ճամբուն մէջ զանիկա սպաննելու։ 4—Բայց Փեստոս պատասխան տուաւ, որ Պօղոս Կեսարիայի մէջ պահուի, և որ ինք շուտ չանցած հոն պիտի երթար։ 5—Ուստի ձեզմէ զօրաւոր որ կարող են, բաւ, էնէն հետ քազ իջնեն, և եթէ այն մարդուն վրայ յանցանք մը կայ, քազ անոր գէմ ամբաստանութիւն բնեն։ 6—Ու հոն *աւելի չկենալով", կեսարիա իջաւ. ու հետեւեալ օրը տատառաջ նստելով՝ հրաման բրաւ որ Պօղոսը բերեն։ 7—Ու երբ անիկա եկաւ, երուսաղէմէ իջնող Հրեաները շուրջ բոլորիքը կայնելով, շատ ու ծանր ամբաստանութիւններ կը բերէին Պօղոսի գէմ, զորանք չէին կրնար ապացուցանել։ 8—Վասն զի Պօղոս պատասխան կու տար թէ ես ոչ Հրեաներուն օրէնքին, և ոչ տաճարին, ոչ ալ Կայսրին դէմ յանցանք մը գրած եմ։ 9—Բայց Փեստոս ուզելով որ Հրեաներուն շնորհք ընէ, պատասխան տուաւ Պօղոսի ու բաւ, Կ'ուզե՞ս երուսաղէմ երթալ, և հոն այդ բաներուն վրայով իմ առջեւս դատուիլ։ 10—Պօղոս ալ բաւ, Կայսրին տատեանը կայներ եմ, ուր պէտք է ինծի դատուիլ. ես Հրեաներուն անիրաւութիւն մը գրած չեմ, ինչպէս գուն ալ ազէկ գիտես։ 11—Քանզի եթէ անիրաւութիւն մը և մահուան արժանի բան մը գրած եմ, ես մեռնելէ չեմ փախչիր, բայց եթէ չկայ էն էրես այն բաներէն մէկին ալ՝ որոնց համար տատեանը ինծի դէմ ամբաստանութիւն կ'ընեն, ոչ ոք չկրնար զիս տատից չնորհել. Կայսրին կը բողոքեմ։ 12—Այն տատեն Փեստոս խորհրդականներուն հետ խօսելով՝ պատասխան տուաւ թէ Կայսրին բողոքեցիր, Կայսրին պիտի երթաս։

13—Ու քանի մը օր անցնելէն ետեւ՝ Ագրիպպաս թագաւորը և Բերնիկէ կեսարիա եկան Փեստոսը ողջունելու։ 14—Ու երբ շատ օրեր հոն անցուցին, Փեստոս Պօղոսի համար թա-

*Ոմանք, տասը օրէ աւելի կենալով

գաւարին իմացաց ու բաւ, Հա՛ մարդ մը կայ զոր փեղքս քանաարկուած թաղացեր է։ 15—Որուն վրայով, երբ Աբեսաղէմ գացի, փառաւոյգեակներդ ու Հրեաներուն ծերերը իմացուցին ինծի, և կը խնդրէին ոչ անոր դէմ դատապարտութեան վճիռ ուղէ։ 16—Որոնց պատասխան ատի Քէ Հռոմայեցւոց սովորութիւնը չէ մարդ մը կորսուանն չհարկել, մինչև ամբաստանուածը ամբաստանողները դիմացը չունենայ, ու այն ամբաստանութեանը պատասխան առնու պատճառութիւն չտրուի իրեն։ 17—Ուստի երբ անոնք հոս հոս եկան, ամենեւին չուշացուցի, հապա հետեւեալ օրը նստելով՝ հրաման ըրի որ մարդը բերուի։ 18—Անոր դատաւորները ալ ներկայանալով, իմ կասկած ըրած յանցանքներս մ՚ինչ ալ չտեսան բերին։ 19—Հապա մէկ քանի խնդիրներ ունէին անոր հետ իրենց կրօնքին վրայ, և Յիսուս մեռածով մեռածի մը վրայ, որու համար Պօղոս կ՚ըսէր Քէ կենդանի է։ 20—Ու երբ տարակուսանքի մէջ էի այս բաներն քննութեանը վրայով, ըսի Քէ կ՚ուզե՞ս Երուսաղէմ երթալ, և հոն այս բաներուն համար դատուիլ։ 21—Բայց Պօղոս երբ բողոքեց որ պահուի վէհափառ Կայսրին *գիտաց եղէլու, հրաման ըրի որ զինք պահեն մինչև Կայսրին զրկեմ։ 22—Ու Ագրիպպաս ըսաւ Փեստոսի, Ես ալ կ՚ուզէի այդ մարդը մտիկ ընել. ան ալ ըսաւ, Վաղը մտիկ կ՚ընես։

23—Ու հետեւեալ օրը երբ Ագրիպպաս ու Բերնիկէ մեծ հանդէսով եկան, ու սանեանը մտան հազարապետներով և քաղաքին պատուաւոր մարդոցմովը մէկտեղ, Փեստոս ալ հրաման ընելով բերին Պօղոսը։ 24—Ու ըսաւ Փեստոս, Ագրիպպաս արքայ, և դուք ալ բոլոր մարդիկ որ մեզի հետ եք, տեսիկա կը տեսնէք. սոսը վրայով Հրեաներուն բոլոր բազմութիւնը ինծի ներկայացան երուսաղէմի մէջ և հոս ալ, ու կ՚աղաղակին Քէ պէտք չէ որ ա՛լ տեսիկա ողջ մնայ։ 25—Բայց ես որ հասկըցայ Քէ անիկա մեռնելու արժանի

*Յոյն. գիտութիւնը

գործ մը չգործեց, ու ինք որ վէհափառ Կայսրին բողոքեց, որոշեցի որ զրկեմ զանիկա։ 26—Որու համար հաստատ բան մը չունիմ գրելու իմ տէրոջս. ուստի տեսիկա ձեր առջեւ բերի, և մանաւանդ քու առջեւդ, ով Ագրիպպաս արքայ, որպես զի քննութիւն ըլլալէ ետև գրելու բան մը ունենամ։ 27—Վասն զի ինծի անվայել կ՚երեւնայ որ բանտարկեալ մը զրկեմ, և անոր վրայ չդատաստանները չիմացնեմ։

Գլ. ԻԶ

Ու Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Հրաման է քեզի որ դուն քեզի համար խօսիս։ Այն ատեն Պօղոս ձեռքը երկնցնելով իրեն համար պատասխան առաւ։ 2—Հրեաներուն իմ վրաս բերած բոլոր ամբաստանութիւններուն համար, ով Ագրիպպաս արքայ, ես ինս երանելի կը սեպհ՚ի, որ այսօր քու առջեւդ պատասխան պիտի առ՚ի։ 3—Մանաւանդ որ դուն Հրեաներուն բոլոր սովորութիւնները և խնդիրները ազէկ գիտես, անոր համար կ՚աղաչեմ որ երկայնմտութեամբ ինծի մտիկ ընես։ 4—Արդ իմ մանկութենէս ի վեր իմ ինչպես ապրելուս, սկիզբէն սրբասէրէ իմ ազգիս մէջ բլլալովս, բոլոր Հրեաները տեղեակ են, 5—Քանզի առաջուընէ ի վեր զիս գիտանն, (եթէ ուզեն վկայել,) որ մեր կրօնքին ամենէն զգուշաւոր ճամբան պէտ՝ փարիսեցի ապրեր եմ. 6—Ու հիմա առ՚ենէ կեցեր կը դատիմ Աստուծմէ մեր հայրերուն եղած խոստմունքին յոյսին համար. 7—Որու, մեր տասներկու ցեղր անդադար գիշեր ու ցորեկ պաշտելով, կը յուսան հասնիլ. ես այս յոյսին համար Հրեաներէն կ՚ամբաստանուիմ, ով Ագրիպպաս արքայ։ 8—Ինչ. չհաւատա՞ն բան կ՚երեւնայ ձեզի Քէ Աստուած մեռելները կը յարուցանէ։ 9—Ես ինքս ալ ինծի պարտք կը սեպհ՚ի Յիսուս Նազովրեցիի անուան դէմ շատ բաներ բնել։ 10—Զոր ըրի ալ Երուսաղէմի մէջ, և քահանայապետներէն իշխանութիւն առած՝ սուրբերէն շատերը բանտարկեցի, ու անոնց սպանուած ատենը հաւանութիւն տուի,

11—Ու բոլոր ժողովարաններուն մէջ շատ անգամ պատժելով՝ կը բանադատէի որ հայհոյեն, և անոնց դէմ սաստիկ կատաղ՝ մինչև օտար փազաքները կը հալածէի։ 12—Այսպէս երբ Դամասկոս ալ կ՚երթայի, քահանայապետներէն իշխանութիւն ու հրաման առած, 13—կէսօրուան ատենը ճամբան վրայ, ով արքայ, երկինքէն լոյս մը տեսայ արեւէն լուսաւորութենէն աւելի՝ բոլորտիքս ծագած, նաև անոնց բոլորտիքը որոնք ինծի հետ կ՚երթային։ 14—Ու երբ մենք ամենս գետինը իջնելնիս, ձայն մը լսեցի որ Եբրայական լեզուով ինծի կ՚ըսէր, Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես. դժուար բան է քեզի խիծի դէմ կիզ զարնել։ 15—Ես ալ ըսի, Դուն ո՞վ ես, Տէր. և անիկա ըսաւ, Ես եմ Յիսուս զոր դուն կը հալածես։ 16—Բայց ելիր ու ոտքիդ վրայ կայնէ. վասն զի սոսր համար քեզի երեւեցայ, որ քեզ ձեռք առնեմ պաշտօնեայ և վկայ բնելու այն բաներուն զորոնք տեսար, ու այն բաներուն որոնցմով պիտի երեւնամ քեզի։ 17—Քեզ ազատելով այդ ժողովրդէն ու հեթանոսներէն, որոնց հիմա քեզ կը զրկեմ, 18—Անոնց աչքերը բանալու, խաւարէն լոյսի, ու Սատանայի իշխանութենէն Աստուծոյ դարձնելու, որպես զի անոնք մեղքերու թողութիւն առնեն, և սուրբերուն հետ ժառանգիկ բլլան ինծի հաւատալով։ 19—Ուստի, Ագրիպպաս արքայ, այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ ես. 20—Հապա առաջ Դամասկոս ու Երուսաղէմ եղողներուն, և բոլոր Հրեաստանի երկիրը ու հեթանոսներուն քարոզեցի որ ապաշխարեն ու Աստուծոյ դառնան. և ապաշխարութեան արժանաւոր գործեր գործեն։ 21—Այս պատճառաւ Հրեաները զիս տաճարին մէջ բռնեցին, և կը ջանային որ սպաննեն։ 22—Սակայն Աստուծմէ օգնութիւն հասնելով մինչև այսօր ոչ մեծի՝ պզտիկի ու մեծի վկայութիւն ալալով, բան մը չգրուցելով այն բաներէն զատ՝ զորոնք մարգարէները և Մովսէս խօսեցան Քէ պիտի բլլային։ 23—Թէ Քրիստոս պիտի չարչարուէր, և Քէ անիկա առաջ մեռելներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէր ժողովրդին ու հեթանոսներուն։

24—Ու ինք որ ասիկա այսպէս պատասխան կու տար իրեն համար, Փեստոս բարձր ձայնով մը ըսաւ, Կը խելագարիս, Պօղոս. չատ կարդացողութիւնդ քեզ կը յիմարեցնէ։ 25—Պօղոս ալ ըսաւ, Ես չեմ խելագարիր, ով պատուական Փեստոս, հապա ճշմարտութեան և զգաստութեան խօսքեր կը զրուցեմ։ 26—Քանզի այս բաներէն թագաւորը գիտէ, որուն ազնի ես ալ համարձակ կը խօսիմ. քանզի չեմ կարծեր Քէ ասոնցմէ բան մը անկէ ծածկուած բլլայ, վասն զի այս բանը անկիւնի մը մէջ եղած չէ։ 27—Մարգարէներուն կը հաւատաս, Ագրիպպաս արքայ. գիտեմ որ կը հաւատաս։ 28—Ու Ագրիպպաս ըսաւ Պօղոսի, Քիչ մնաց որ դիս համոզես քրիստոնեայ բլլալու։ 29—Պօղոս ալ ըսաւ, Աստուծմէ կը խնդրէի որ քիչ քիչով և քիչ չատով, ոչ Քէ միայն դուն, հապա ամենն ալ որոնք այսօր ինծի կը լսեն, այնպէս բլլան ինչպէս ես եմ, այս կապերէն զատ։

30—Ոտքի վրայ եղաւ թագաւորը և կատակալը ու Բերնիկէ, և անոնք որ իրենց հետ նստեր էին։ 31—Ու գնաց ելլէլէ ետև, իրարու հետ խօսացան ու ըսին Քէ Այս մարդը մեռնելու կամ կապուելու արժանի բան մը չըներ։ 32—Ագրիպպաս ալ Փեստոսի ըսաւ, Կարելի էր այս մարդը արձակել, եթէ կայսրին բողոքած չըլլար։

Գլ. ԻԷ

Երբ որոշուեցաւ որ նաւով Իտալիա երթանք, Պօղոս և ուրիշ քանի մը կատուածներ յանձնեցին Հարիւրապետի մը, որուն անունը Յուլիոս էր, Աբգաստեան գունդէն։ 2—Ու Ադրամիտեացի նաւ մը մտնելով նստելու էինք, ու Աթիսլի կողմերէն պիտի նաւէինք. Թեսաղոնիկէ եղող Արիստարքոս Մակեդոնացի ալ մեզի հետ էր։ 3—Ու հետեւեալ օրը

*Ոմանք, ու երբ այս բաները ըսաւ, ոտքի

Սիդոն իջանք. և Բալթաս մարդասիրութիւն ցուցնելով Պօղոսի, հրաման առաւ որ բարեկամներուն երթայ ու գաղտնի գտնէ, 4—Ու անկէ ելլելով՝ Կիպրոսի վրայ կազմն նաւեցինք՝ դէմ բլլալուն համար. 5—Եւ ծովը Կիլիկիայի ու Պամփիլիայի ծովուն մէյ մ'անկէն նաւելով՝ Լիկիոյի Միւռա քաղաքը իջանք. 6—Ու հարիւրապետը հոն Ալեքսանդրացի նաւ մը գտնելով, որ Իտալիա կ'երթար, մեզ անոր մէջ մտցուց. 7—Ու շատ օրեր կամաց կամաց նաւելով՝ հազիւ Քնիդոսի քովերը հասանք. հովը մեզի դէմ բլլալով՝ Սալմոնէի քովէն նաւեցինք. 8—Ու գժուարաւ անկէ անցնելով՝ Կաղ մը եկանք, որ Գեղեցիկ Նաւահանգիստ կ'ըսուէր, որուն մօտ էր Ղասեա քաղաքը։

9—Ու երբ շատ ժամանակ անցաւ, և նաւին ճամբայ ելլելն ալ վտանգաւոր էր, Ծովին ատենն ալ արդէն անցած բլլալով, Պօղոս խրատ կու տար, 10—Ու կ'ըսէր անոնց, Մարդիկ, ես կը տեսնեմ որ այս նաւին ճամբայ բնալը տառապանքով ու շատ վնասով պիտի բլլայ, ոչ Թէ միայն բեռնին ու նաւին՝ հապա մեր անձերուն ալ։ 11—Բայց հարիւրապետը աւելի նաւապետին և նաւավարին մասին կ'ընէր՝ քան Թէ Պօղոսի խօսքերուն. 12—Ու որովհետև այն նաւահանգիստը յարմար չէր ձմեռը հոն անցընելու, շատերը խորհեցան անկէ երթալ, որ Թերեւս կարող բլլան Փենիկէ հասնիլ ու ձմեռը հոն կենալ, որ Կրետէի նաւահանգիստ մըն է, ու դէպ ի հարաւ և արեւմտեան հնոտիս կը նայի. 13—Ու երբ հարաւային մեղմ հով մը փչեց, կարծելով Թէ իրենց դիտաւորութեանը հասեր են, ճամբայ ելան ու Կրետէի քովերէն կ'անցնէին. 14—Եւ շատ ատեն չանցած՝ մրրկալից հով մը ելաւ անոր դէմ, որ Եւրակիղոն կ'ըսուի. 15—Երբ նաւը յափշտակուեցաւ և հովին դէմ չկրցաւ դիմանալ, Թող տուած կ'երթայինք կու գայինք. 16—Ու դէպ ի փոքր կղզիի մը հասնելէ կողմը դիմելով, որ Կլօդա կ'ըսուէր, հազիւ կրցանք մակոյկը բռնել. 17—Զոր առնին ու օգնութիւններ գործածելով՝ նաւը տակէն կապեցին. և վախնալով որ չըլլայ Թէ Սիրտէս ափունքին, առագաստը իջեցուցած՝ այնպէս կ'երթային ու կու գային. 18—Ու որովհետև սաստիկ ալեկոծութեան մէջ էինք, հետեւեալ օրը բեռները դուրս նետեցին. 19—Ու երրորդ օրը նաւին գործիքները ձեռքերնիս դուրս նետեցինք. 20—Ու երբ շատ օրեր ալ արեւ ալ աստղեր կ'երեւնային, և փոթորիկը փիչ չէր մեր վրայ, ալ բոլորովին մեր ազատուելու յոյսը վերցաւ. 21—Ու որովհետև շատ օրերէ ի վեր անօթի էին, այն ատեն Պօղոս անոնց մէյ կայնելով՝ բսաւ, Ով մարդիկ, պէտք էր ձեզի որ ինծի մտիկ բնէիք ու Կրետէ չելլէիք, և այս տառապանքը ու վնասը չքաշէիք. 22—Ու հիմա ձեզ կը յորդորեմ որ սիրտ առնէք, քանի ձեզմէ մէկ'ուն անձին վնաս մը պիտի չըլլայ, բայց միայն նաւին. 23—Վասն զի այս գիշեր երեւցաւ ինծի հրեշտակը այն Աստուծոյն, որուն եմ ես և զոր կը պաշտեմ, 24—Ու բսաւ, Մի վախնար, Պօղոս, կայսրին դիմաց պէտք է որ ելլես դուն. և ահա Աստուած քեզի չնորհեց այն ամէնը, որոնք քեզի հետ նաւին մէջ են. 25—Ուստի, մարդիկ, սիրտ առէք, վասն զի ես կը հաւատամ Աստուծոյ՝ որ այսպէս պիտի բլլայ, ինչպէս ինծի գրուցուեցաւ. 26—Միայն Թէ պէտք է որ կղզի մը իյնանք։

27—Ու երբ տասնչորսերորդ գիշերն էր որ Ադրիական ծովուն մէջ կը տարուբերէինք, կէս գիշերին նաւավարները կը կարծէին Թէ երկրի մը մօտեցեր են. 28—Ու գնաւակը ձգելով՝ գտան գրկաչափ գոան. ու փչ մըն ալ յառաջ երթալով՝ նորէն ձգեցին, և տասնչրհինգ գրկաչափ գտան. 29—Ու վախնալով որ չըլլայ Թէ քարոտ տեղեր իյնանք, հեռուէ կողմէն չորս խարիսխ ձգեցին, և առտու բլալուն կը փափաքէին. 30—Իսկ նաւավարները նաւէն փախչիլ ուզելով՝ մակոյկը ծովը իջեցուցին, պատճառելով որպէս Թէ առջևի կողմէն ալ խարիսխներ պիտի ձգեն, 31—Բայց Պօղոս բսաւ հարիւրապետին

---

*կամ, ծանծաղուտը

ու զինուորներուն, Եթէ սոսկք նաւին մէջ չկենան՝ դուք չէք կրնար ազատիլ։ 32—Ա՛յն ատեն զինուորները մակոյկին չուանները կտրեցին, և թողուցին որ գոտս իյնայ. 33—Ու երբ առաւօտ բլալու վրայ էր, Պօղոս կ'աղաչէր ամէնուն որ կերակուր առնեն, բսելով, Այսօր տասնչորս օր է որ գուք սպասելով անօթի մնացեր էք, ու բան մը կերած չէք. 34—Ուստի կ'աղաչեմ ձեզի որ կերակուր առնէք, վասն զի այս ալ ձեր ազատութեանդ համար է. քանզի ձեզմէ մէկ'ուն գլխէն մազ մը պիտի չկորսուի. 35—Ու այսպէս բսելով՝ հաց առաւ, ու ամէնուն առջև Աստուծմէ գոհացաւ, և կտրելով սկսաւ ուտել. 36—Ու ամէնն ալ սիրտ առին, ու իրենք ալ կերակուր կերան. 37—Ու նաւին մէջ ամէնս երկու հարիւր եօթանասունհինգ հոգի էինք. 38—Երբ կշտացան կերակուրով, նաւը թեթեւցուցին՝ ցորենը ծովը թափելով։

39—Ու երբ առաւօտ եղաւ, ցամաքը չէին ճանչնար, միայն Թէ ծոց մը կը նշմարէին որ ծովեզերք ունէր, ու կը խորհէին որ եթէ կարելի է նաւը անոր մէջ մտնեն. 40—Ու խարխափները կտրելով՝ ծովը ձգեցին, ու զիկերան կապերը Թուլցուցին, և առագաստը հնոտիին բանալով՝ դէպ ի այն ծովեզերքը կ'երթային. 41—Ու այնպիսի տեղ մը իյնալով որուն երկու կողմը ծով էր, նաւը նստեցուցին. և նաւին առջևի կողմը խրելով՝ անշարժ մնաց, ու ետեւի կողմը ալիքներուն աստիճանէն կը փակուէր. 42—Զինուորներն ալ խորհուրդ բրին որ կապուածները սպանանեն, որ չըլլայ Թէ մէկը լողայ ու փախչի. 43—Բայց հարիւրապետը, որ Պօղոսը ազատել կ'ուզէր, արգիլեց զանոնք այն խորհուրդէն, և հրաման բրաւ Թէ որոնք որ կրնան լողալ, Թող անոնք առաջ նետուին ու ցամաքը ելլեն. 44—Ու մնացածները, ոմանք տախտակներով և ոմանք նաւին ուրիշ բաներովը. և այսպէս ամէնը ազատեցան, ցամաք ելան։

ԳԼ. ԻԸ

Ու երբ ազատեցան, գիտցան որ այն կղզիին անունը Մելիտէ էր. և բարբարոսներէն փիչ մարդասիրութիւն չցուցուցին մեզի. 2—Վասն զի կրակ վառեցին, և մեզ ամէնս ալ ընդունեցին՝ մեր վրայ հասած անձրեւին համար ու ցուրտին համար։ 3—Ու երբ Պօղոս շատ մը խոտ ժողվեց և կրակին վրայ դրաւ, տաքութենէն իժ մը ելաւ, անոր ձեռքը բռնեց. 4—Բարբարոսներն ալ երբ այն գազանը տեսան անոր ձեռքին կախուած՝ իրարու կ'ըսէին, Անշուշտ մարդասպան մարդ է, որ Թէպէտ ծովէն ազատեցաւ, Իւստ իրաւունքը Թող չտար որ ապրի. 5—Իսկ անիկա գազանը կրակին մէջ Թօթվեալ՝ իրեն ինծա մը չեղաւ. 6—Ու անոնք կը սպասէին որ անիկա ուռնայ, կամ յանկարծակի մեռած իյնայ. բայց երբ շատ մը սպասեցին, ու տեսան որ իրեն ինծա մը չեղաւ, կարծիքնին փոխելով՝ կ'ըսէին Թէ աստուած մըն է։ 7—Ու այն տեղին բոլորտիքը կղզիին գլխաւոր մարդուն ագարակները կային, որուն անունը Պուղիոս էր, որ մեզ ընդունեց և երեք օր հիւրասիրութեամբ իրեն գով պահեց. 8—Ու եղաւ որ Պուղիոսի հայրը չհիմնմ ու Թանչիմով հիւանդացած պառկած էր. ու Պօղոս անոր գով մտաւ, և աղօթք ընելով ձեռքերը անոր վրայ դրաւ ու բժշկեց զանիկա։ 9—Ու երբ ասիկա եղաւ, ուրիշ հիւանդներն, որոնք այն կղզիին մէջ էին, կու գային և կը բժշկուէին. 10—Որոնք շատ պատիւներով ալ մեզ պատուեցին, ու մեր երթալու ատենը պէտք եղած բաները տուին։

11—Ու երեք ամիսէն ետև Ալեքսանդրացի նաւով մը ճամբայ ելանք, որ ձմեռը այն կղզին անցուցեր էր, ու Դիոսկուրացոց նշանը ունէր. 12—Ու Սիրակուսա իջնելով՝ երեք օր հոն կեցանք. 13—Անկէ ալ պտոյտ մը ընելով՝ Հռեգիոն հասանք. և մէկ օրէն ետև երբ հարաւ փչեց, երկրորդ օրը Պուտիողա եկանք. 14—Ու հոն եղբայրներ գտանք, որոնք ազաչեցին որ եօթը օր իրենց քով մնանք. ու եաքը

Հռոմի կանք։ 15—Եւ անկէ եղբայրները, երբ մեր վրայով լսեցին, մեզ դիմաւորելու եկան մինչեւ Ապիփոսի վաճառանոցը ու Երեք պանդոկները։ Եւ Պօղոս զանոնք տեսնելով՝ գոհութիւն տուաւ Աստուծոյ եւ սրտ առաւ։

16—Ու երբ Հռոմ մտանք, հարիւրապետը կապուածները զօրապետին յանձնեց. իսկ Պօղոսի հրաման եղաւ որ իր պահապան զինուորին հետ զատ կենայ։ 17—Ու եղաւ որ երեք օրէն ետև անիկա Հրէից գլխաւորները կանչեց. ու երբ ժողովեցան, ըսաւ անոնց, Մարդիկ եղբայրներ, ես ժողովուրդին կամ հայրենական սովորութիւններուն դէմ բան մը չգործած, նրաւադէմ կապուած՝ Հռոմայեցւոց ձեռքը մատնուեցայ. 18—որոնք երբ զիս քննեցին, ուզեցին որ արձակեն, վասն զի իմ վրաս մեռնելու յանցանք մը չկար։ 19—Բայց երբ Հրեաները հակառակ կեցան, պէտք եղաւ որ կայսրին բողոքեմ, ոչ թէ իմ ազգիս դէմ ամբաստանութիւն մը ունենալով պէտ։ 20—Ուստի այս պատճառաւ ապաչեցի որ ձեզ տեսնեմ ու ձեզի խօսիմ. վասն զի Իսրայէլի յոյսին համար ես այս չղթան վրաս ունիմ։ 21—Անոնք ալ ըսին իրեն, Մենք քու վրայովդ Հրէաստանէ ոչ թուղթեր առինք, եւ ոչ եղբայրներէն մէկը հոս գալով՝ քու վրայովդ չարութիւն մը պատմեց կամ խօսեցաւ։ 22—Բայց կ'ապաչինք որ քեզմէ լսենք թէ դուն ի՛նչ միտքի վրայ ես. վասն զի մենք այդ աղանդին վրայով տեղեկացած ենք՝ որ ամէն տեղ առարկեմ կը խօսին։ 23—Ու օր մը որոշելով անոր, շատերը անոր գացին իր բնակած տեղը, որոնց Աստուծոյ թագաւորութիւնը կը ծանուցանէր վկայութիւնով, և կը համոզէր զանոնք Յիսուսի վրայով Մովսէսի օրէնքէն ու մարգարէներէն՝ առաւօտեան մինչեւ իրիկուն։ 24—Ու անոնք կը հաւատային բաներուն, ու անոնք չէին հաւատար։ 25—Ու իրարու հետ չմիաբանած գացին, երբ Պօղոս խօսք մը բսաւ, թէ Հոգին Սուրբ ազէկ խօսեցաւ մեր հայրերուն, նսայի մարգարէին ձեռքով 26—ու բսաւ, Գնա այս ժողովուրդին, ու բսէ, Լսելով պիտի լսէք՝ ու չիմանաք. և տեսնելով պիտի տեսնէք՝ ու չտեսնէք։ 27—Վասն զի այս ժողովուրդին սիրտը բանձրացաւ, և էրէնց ականջներովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ չըլլայ թէ էրէնց աչքերովը տեսնեն, ու ականջներովը լսեն, և սիրտերովը իմանան, ու դարձի գան, և ես բժշկեմ զանոնք։ 28—Ուստի յայտնի ըլլայ ձեզի որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսներուն ղրկուեցաւ, և անոնք մտիկ պիտի բնեն։ 29—*Ու երբ զայս ըսաց, Հրեաները գացին հետերնին վէճ ընելով։

30—Ու բնան երկու տարի իր վարձքով բռնած տունը կեցաւ։ 31—Ու իրեն եկողներուն ամէնը կ'ընդունէր, 32—կը քարոզէր Աստուծոյ թագաւորութիւնը, և Տէր Յիսուս Քրիստոսի վրայով առանց արգելքի կը սորվեցընէր ամենայն համարձակութեամբ։

*Ոմանք լսածին տեղ 29 համարը

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՒ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Յիսուսի Քրիստոսի ծառայ, առաքեալ բլլալու կանչուած, Աստուծոյ աւետարանին համար որուած, 2—(Որ առաջուընէ իր մարգարէներուն ձեռքով սուրբ գիրքերով խոստացաւ.) 3—Իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայով, որ մարմնի կողմանէ Դաւիթի սերունդէն եղաւ, 4—Որ սրբութեան հոգիին կողմանէ Որդի Աստուծոյ յայտնեցաւ զօրութեամբ՝ մեռելներէն յարութիւն առնելով. 5—Որով շնորհք և առաքելութիւն առինք՝ հնազանդութեան համար բոլոր ազգերուն մէջ, անոր անուանը համար. 6—Որոնց մէջ դուք ալ Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք. 7—Ձեր ամենուն որ Հռովմայ մէջ էք, Աստուծոյ սիրելիներուդ, սուրբ բլլալու կանչուածներուդ, շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

8—Նախ կը գոհանամ իմ Աստուծմէս Յիսուս Քրիստոսի ձեռքով ձեր ամենուն համար, որ ձեր հաւատքը բոլոր աշխարհ կը պատմուի. 9—Քանզի վկայ է ինծի Աստուած, զոր ես կը պաշտեմ իմ հոգիովս անոր Որդւոյն աւետարանին մէջ, 10—թէ ի՛նչպէս անգադար ձեզ կը յիշեմ, ամէն ատեն իմ աղօթքներուս մէջ խնդրելով՝ որ թերեւս անգամ մը Աստուծոյ կամքովը ինծի յաջողութիւն մը բլլայ ձեզի գալու։ 11—Քանզի կը փափաքիմ ձեզ տեսնել, որ ձեզի հոգեւոր շնորհք մը հաղորդեմ, որպէս զի հաստատուիք. 12—Այսինքն ձեզի հետ ես ալ միխիթարակից բլլամ իմ ու ձեր փոխադարձ հաւատքին միջոցով։ 13—Սակայն չեմ ուզեր որ չգիտցած բլլաք, եղբայրնե՛ր, որ շատ անգամ ձեզի գալ ձեզի, (և մինչև հիմա արգիլուեցայ,) որպէս զի ձեր մէջ ալ պտուղ մը ունենամ. ինչպէս ուրիշ հեթանոսներու մէջ ալ։ 14—Յոյներուն ու բարբարոսներուն, իմաստուններուն ու անմիտներուն ալ պարտական եմ։ 15—Ուստի որչափ որ ձեզի կրնամ գոյ, յօժարութիւն ունիմ ձեզի ալ, որ Հռովմայ մէջ էք, աւետարանը քարոզելու։

16—Վասն զի ես ամէնքն չեմ ամչցեր *աւետարանը, քանզի Աստուծոյ զօրութիւնն է այն՝ բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար, առաջ Հրեային ու ետքը Յոյնին. 17—Վասն զի անով Աստուծոյ արդարութիւնը, որ է հաւատքէն, հաւատքի համար կը յայտնուի. ինչպէս գրուած է թէ Արդարը հաւատքէն պիտի ապրի։

18—Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութիւններու և անիրաւութիւններուն վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռներ են. 19—Վասն զի Աստուծոյ վրայով գիտնալու բանը իրենց մէջ յայտնի է, որովհետև Աստուած անոնց յայտնեց։ 20—Քանզի աներեւոյթ բաները աշխարհի սկիզբէն ստեղծուածներովը կ'իմացուին, կը տեսնուին, այսինքն է իր մշտնջենաւոր զօրութիւնը ու աստուածութիւնը, որպէս զի անպատասխանի ըլլան։ 21—Վասն զի իրենք զԱստուած ճանչնալով՝ Աս-

*Ոմանք՝ Հռոմայ աւետարանը

աուածոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան. հապա իրենց խորհուրդներուն մէջ անայնացան, և *սիրաերին անմտութիւնով՝ խաւարեցաւ։ 22-իրենք իմաստուն ենք՝ ըսելով յիմարեցան։ 23—և անեղծ Աստուածոյ փառքը փոխեցին, նմանցնելով եղծանելի մարդու և թռչուններու ու չորքոտաներու և սողուններու պատկերին։ 24—Անոր համար Աստուած ալ զիրենք անմտութեան մտածնեց զանունք իրենց սիրաերուն ցանկութիւններովք՝ իրենց մարմինները իրենց մէջ խայտառակելու։ 25—Որոնք Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին, ու երկրպագութիւն և պաշտօն մատուցին ստեղծուածներուն քան թէ Ստեղծողին, որ յաւիտեան օրհնեալ է. Ամէն։ 26—Անոր համար Աստուած զանունք անարգ կիրքերու մատնեց, որ իրենց էգերը անգամ բնական պէսքը բնութեան գէմ եղող պէրէ փոխեցին։ 27—Նոյնպէս ալ արուները կնոջ բնական պէսքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան. արուները արուներու հետ խայտառակութիւն կը գործէին, և իրենց մոլութեանը վայելած հատուցումը իրենց վրայ կ'ընդունէին։ 28 — Ու որովհետև չուզեցին զԱստուած էջերը գիտութեանը մէջ պահել, Աստուած ալ զանունք անարգ խորհուրդներու մատնեց անվայել բաներ ընելու. 29—Որունք լեցուած էին ամէն անիրաւութիւնով, պոռնկութիւնով, անգթութիւնով, ագահութիւնով, չարութիւնով, նախանձով լեցուն, մարդասպանութիւնով, հակառակութիւնով, նենգութիւնով, չարաբարութիւնով, Ն ԷՀ քսուներ, 30—Զարհամասներ, զԱստուած ատողներ, նախատողներ, հպարտներ, ամբարտաւաններ, չար բաներ հնարողներ, ծնողաց անհնազանդներ, 31—Անմիտներ, ուխտ չպահողներ, անգութներ, անհաչաներ, անողորմներ. 32 — Որոնք գիտնալով Աստուծոյ դատաստանը, թէ անոնք որ այսպիսի բաներ կ'ընեն՝ մահուան արժանի են, ոչ թէ միայն այն բաները կ'ընեն, հապա ընդհերառն հաւանութիւն ալ կու տան։

*Ցաւ. անմիտ սիրտերնին

ԳԼ. Բ

1 Ատ, ով մարդ, ով որ ըլլաս դուն որ կը դատես, պատասխան չունիս տալու. քանզի ի՛նչ բանով որ ուրիշը կը դատես, —ինչ որ անդր կը դատապարտես. վասն զի դուն ալ որ կը դատես՝ նոյն բաները կ'ընես. 2—Բայց գիտենք որ Աստուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կ'ըլլայ անոնց վրայ՝ որ այնպիսի բաներ կը գործեն. 3—Արդ, ով մարդ, դուն որ այսպիսի բաներ ընողները կը դատես, և դուն նոյն բաները կ'ընես, զայս միտքդ կ'անցընե՞ս թէ դուն Աստուծոյ դատաստանէն ազատ պիտի ըլլաս. 4—կամ թէ անոր անչափ քաղցրութիւնը և համբերութիւնը ու երկայնմտութիւնը կ'արհամարհե՞ս, չգիտնալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպի ապաշխարութիւն կ'առաջնորդէ. 5—Բայց դուն քու խրոխտութիւնովդ և անզղջ սրտովդ քու անձիդ բարկութիւն կը դիզես՝ բարկութեան և Աստուծոյ արդար դատաստանին յայտնելու օրուանը համար. 6—Որ ամէն մէկուն իր գործերուն փոխարէնը պիտի հատուցանէ. 7—Յաւիտենական կեանք՝ անոնց որոնք բարի գործերու մէջ համբերութեամբ յարատեւելով փառք ու պատիւ և անմահութիւն կը խնդրեն. 8—Բայց անոնց որ հակառակ են, և ճշմարտութեան անշնազդող ու անիրաւութեան հնազանդած՝ բարկութիւն և սրամտութիւն, 9—Նեղութիւն և տառապանք ամէն մարդու վրայ որ չար կը գործէ, առաջ Հրէային ու հետքը Յոյնին։ 10—Իսկ փառք ու պատիւ և խաղաղութիւն այն ամէնուն որ բարի կը գործէ, առաջ Հրէային ու հետքը Յոյնին։ 11—Վասն զի Աստուծոյ քով աչառութիւն չկայ։ 12—Քանզի անոնք որ առանց օրէնքի մեղք գործեցին, առանց օրէնքի պիտի կորսուին, և անոնք որ օրէնքի տակ մեղք գործեցին, օրէնքով պիտի դատուին. 13—(Վասն զի ոչ թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջև արդար են, հապա օրէնքը կատարողները պիտի արդարանան։ 14—Քանզի հեթանոսները, որոնք օրէնք չունին, երբ բնականաբար օրէնքին գործերը կը գործեն, օրէնք չունենալով՝ իրենց անձերուն օրէնքը բան իրենք կ'ըլլան, 15—Որոնք օրէնքին գործը իրենց սրտին մէջ գրուած կը ցուցնեն իրենց խղճմտանքին վկայութիւնովը, և իրենց խորհուրդներուն իրար յաջիմանելովը կամ իրաւունք ալովը.) 16—Այն օրը երբ Աստուած մարդոց ծածուկ բաները պիտի դատի Քրիստոսի Ձեռքով՝ իմ Աւետարանիս համեմատ։

17—Ահա դուն Հրեայ բան եր ես, և օրէնքին կը հիմներ ես, ու Աստուծով կը պարծենաս, 18—Ու ուզը կամքը գիտես, ու աւրբեր բաները կը զանազանես՝ օրէնքէն խրատուած ըլլալով. 19—Ու քու անձիդ վրայ վստահութիւն ունես՝ թէ կոյրերուն առաջնորդ ես, խաւարած ներուն լոյս, 20—Անմիտներուն խրատ աուող, ոտոյոց վարժապետ, և թէ գիտութեան ու ճշմարտութեան կերպարանքը օրէնքին ունիս՝ 21—Իսկ արդ՝ դուն որ ընկերիդ կը սորվեցնես, քու անձիդ չե՞ս սորվեցներ. ո՛վ կը քարոզես գողութիւն չընել, կը գողնա՞ս. 22—Որ կ'ըսես չնութիւն չընել, չնութիւն կ'ընես. որ կը զզուիս կուռքերէն, սրբապղծութիւն կ'ընես. 23—Որ օրէնքով կը պարծենաս, օրինազանց ըլլալով՝ զԱստուած կ'անարգե՞ս. 24—Վասն զի Աստուծոյ անունը ձեր պատճառաւ հեթանոսներուն մէջ կը հայհոյուի, ինչպես գրուած է։

25—Արդ թլփատութիւնը շահ կ'ունենայ, եթէ օրէնքը պահես. իսկ եթէ օրէնքին դէմ յանցաւոր ես, քու թլփատութիւնդ անթլփատութիւն եղաւ. 26—Ուստի եթէ անթլփատութիւնը օրէնքին իրաւունքները պահէ, չէ՞ որ անոր անթլփատութիւնը թլփատութիւն պիտի սեպուի. 27—Ու ի բնէ եղած անթլփատութիւնը օրէնքը կատարելով՝ պիտի դատապարտէ քեզ, որ գիրով ու թլփատութիւնով օրէնքին յանցաւոր ես. 28—Վասն զի Հրեայ չէ ան որ դրսուընջ է, և թլփատութիւն չէ այն որ դրսուընջ մարմնով է. 29—Հապա Հրեայ ան է որ ներսուընջ է, և թլփատութիւն՝ սրտինը հոգիով, ու ոչ թէ գրով, որուն գովքը Աստուծմէ։

ԳԼ. Գ

1 Ուրեմն Հրեան ի՞նչ աւելի բան ունի, կամ թլփատութենէն ի՞նչ չոյ կայ. 2—Շատ՝ ամէն կերպով. ամէնէն առաջ այն՝ որ Աստուծոյ պատգամները անոնց հաւատացուեցան. 3—Քանզի եթէ —Հրեաներէ ոմանք չհաւատացին, ի՞նչ. միթէ անոնց անհաւատութիւնը Աստուծոյ հաւատարմութիւնը կը խափանէ՞ր. քա՛ւ լիցի։ 4—Սակայն Աստուած ճշմարիտ քաղ ըլլայ, և բոլոր մարդիկ՝ ուսու. ինչպէս գրուած է, Որպէս զի քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատուելու ատենդ դուն յաղթեաս։ 5—Ու եթէ մեր անիրաւութիւնը Աստուծոյ արդարութիւնը յայտնի կը ցուցնէ, ի՞նչ ըսենք. միթէ անիրա՞ւ է Աստուած որ էր բարկութիւնը չէր վրդ կը բերէ. 6—(Մարդկօրէն կ'ըսեմ.) քա՛ւ լիցի. ապա թէ ոչ՝ ի՞նչպէս Աստուած պիտի դատէ աշխարհը։ 7—Վասն զի եթէ Աստուծոյ ճշմարտութիւնը իմ սուտութիւնովս կ'առելնոյ իր փառքին համար, ալ ես ինչ՞ւ մեղադրի մէ պէս կը դատուիմ։ 8—Ու ինչ՞ համար չէ՞ ըսէլ, ինչպէս անանք մեր վրայ չարաբոսութիւն բնելով՝ կ'ըսեն թէ մենք կ'ընենք. Զարը գործենք որպէս զի բարին գայ. որոնց դատապարտութիւնը իրաւունքով է։

9—Ուստի ալ ի՞նչ ընէ՞ք. բանով մը առելի՞ ենք հեռուներէն. Քրա. որ բանով մեն ալ չենք. վասն զի առաջ մեղադրեցինք Հրեաները և հեթանոսները թէ ամէնը մեզքի տակ են. 10—Ինչպէս գրուած է թէ Արդար մը չկայ, և ոչ մէկ. 11—Մէկը չկայ որ հասկնայ, մէկը չկայ որ զԱստուած փնտռէ. 12—Ամէնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան. ազէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ։ 13—Անոնց կոկորդը բաց գերեզման է, իրենց լեզուներէ նենգութեր եղան, իժերու թոյն կայ անոնց շրթներուն տակ. 14—Որոնց բերանը անէծք եւ դառնութիւն լեցուն է. 15—Անոնց ոտքերը արագ են արիւն թափելու համար. 16—Աւերում և տառապանք անոնց ճամբաներուն մէջ է. 17—Ու խաղաղութեան ճամբան չեն ճանչցած. 18—Անոնց աչքերուն առջև Աստուծոյ երկիւղ չկայ։ 19—Հիմա գիտենք որ Օրէնքը ինչ որ կը խօսի՝ Օրէնքին տակ եղողներուն կը խօսի, որպէս զի ամէն բերան գոցուի, և ամբողջ աշխարհը Աստուծոյ դատաստանին տակ յանցաւոր ըլլայ. 20—Վասն զի Օրէնքի գործերով ամէն մարդ անոր առջև պիտի չարդարանայ. Քանզի Օրէնքով մեղքին գիտութիւն կու գայ։ 21—Բայց հիմա Օրէնքէ զատ Աստուծոյ արդարութիւն մը յայտնուեցաւ, որուն վկայ են Օրէնքն ու Մարգարէները. 22—Այսինքն Աստուծոյ արդարութիւնը Յիսուս Քրիստոսի հաւատքովը բոլոր հաւատացողներուն վրայ. Վասն զի տարբերութիւն չկայ. 23—Քանզի բոլորը մեղանչեցին և Աստուծոյ փառքէն զուրկ մնացին. 24—Ու անոր շնորհքովը պատուական արեամբ Քրիստոս Յիսուսի մէջ եղած փրկութեամբ արդարացուելով՝ պարգեւաբար. 25—Զոր Աստուած նուիրեց քաւութիւն ընելու համար իր արեան մէջ հաւատքով. որպէս զի ցոյց տայ իր արդարութիւնը անցեալ մեղքերուն համար՝ որոնք Աստուծոյ համբերութենէն ներում գտան. 26—Որպէս զի ցոյց տայ իր արդարութիւնը այս ժամանակ. որպէս զի ինքն արդար ըլլայ և Յիսուսի հաւատացողը արդարացնէ։ 27—Ուրեմն ուր է պարծանքը. ան դուրս եղաւ. ինչ օրէնքով՞. գործոց օրէնքո՞վ. ոչ, հապա հաւատքի օրէնքով. 28—Վասն զի կը դատենք թէ մարդ հաւատքով կ'արդարանայ առանց օրէնքի գործերուն. 29—Թէ Հրեաներուն Աստուած միայն է՞ հապա հեթանոսներուն ալ չէ՞. Ասոնց ալ Աստուած է. 30—Որովհետև մէկ է Աստուած որ թլփատութիւնը հաւատքով և անթլփատութիւնը հաւատքով պիտի արդարացնէ. 31—Ուրեմն օրէնքը հաւատքով կ'անգործենք՞. քա՛ւ լիցի. հապա օրէնքը կը հաստատենք։

Թունդներուն առ. 14—Անոնց բերա-
նը անէծքով ու դառնութիւնով լե-
ցուն է. 15—Անոնց ոտքերը չուտ են
արիւն թափելու. 16—Կործանումի և
թշուառութիւն կայ իրենց ճամբանե-
րուն մէջ. 17—Ու խաղաղութեան ճամ-
բան չճանչցան. 18—Աստուծոյ վախը
չկայ անոնց աչքերուն առջև։ 19—Սա-
կայն գիտենք որ օրէնքը ինչ որ կ'ըսէ,
անոնց կ'ըսէ՝ որոնք օրէնքին առկ են.
որպէս զի ամէն բերան գոցուի, և բոլոր
աշխարհ դատապարտուած բլլայ Աստու-
ծոյ առջև։ 20—Վասն զի անոր առջև
մարմին մը պիտի չարդարանայ օրէնք-
քին գործերովը, քանզի օրէնքով է մեղքը ճանչնալը։

21—Բայց հիմա առանց օրէնքի Աս-
տուծոյ արդարութիւնը յայտնուած է,
օրէնքէն և մարգարէներէն վկայուած
բլլալով. 22—Այսինքն Աստուծոյ ար-
դարութիւնը, որ Յիսուս Քրիստոսի հա-
ւատքէն է, ամէն հաւատացողներուն
ու անոնց ամէնուն վրայ կ'բլլայ. քանզի
խտրութիւն չկայ. 23—Վասն զի ամէնը
մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն
պակսած են. 24—Ու անոր շնորհքովը
ձրի կ'արդարանան Քրիստոս Յիսուսով
եղած փրկութիւնովը. 25—Զոր առաջ-
ուրնէ սահմանեց Աստուած՝ քաւութիւն
բլլալու անոր արիւնին հաւատքով, Աս-
տուծոյ երկայնմտութեան առհնիները
առաջուրնէ գործուած մեղքերուն քա-
ւութիւնն ասլովը՝ իր արդարութիւնը
ցուցնելու համար. 26—Այսինքն իր
արդարութիւնը այս ժամանակին մէջ
ցուցնելու համար, որպէս զի ինք ար-
դար բլլայ, և արդարացնէ Յիսուսի հա-
ւատքէն եղողը։ 27—Ուրեմն ո՞ր մեծ
պարծենալը. խափանեցաւ. ո՞ր օրէնք-
քէն, գործերո՞վ. ոչ, հապա
հաւատքի օրէնքէն։ 28—Վասն զի կը
սեպենք թէ մարդ հաւատքով կ'արդա-
րանայ առանց օրէնքին գործերուն։
29—Միթէ Աստուած միայն Հրեաներո՞ւն է ու հեթանոսներուն չէ՞. այո,
հեթանոսներուն ալ։ 30—Որովհետև
Աստուած մէկ է՝ որ թլփատութիւնը
հաւատքէն կ'արդարացնէ, և անթլփա-
տութիւնը՝ նոյն հաւատքով։ 31—Ուս-
ուի մենք հաւատքով օրէնքը կը խա-
փանե՞նք. փա՛ս լիցի. հապա օրէնքը
կը հաստատե՞նք։

Գլ. Դ

Ուրեմն ի՞նչ պիտի բանիք թէ գտաւ
Աբրահամ մեր նահապետը մարմնի կող-
մանէ։ 2—Վասն զի եթէ Աբրահամ
գործով արդարացած բլլար, էր-ցընէ
պարծանք կ'ունենար, բայց ոչ թէ Աս-
տուծոյ առջև։ 3—Գրածի գիրքը ի՞նչ
կ'ըսէ. Աբրահամ Աստուծոյ հաւատաց,
և այն իրեն արդարութիւն սեպուեցաւ։
4—Բայց ան որ գործ մը կ'ընէ, վարձքը
շնորհքի եղած չսեպուիր անոր, հա-
պա պարտքի։ 5—Իսկ ան որ չգործեր,
բայց կը հաւատայ անոր որ ամբարիշտը
կ'արդարացնէ, անոր հաւատքը իրեն
արդարութիւն կը սեպուի։ 6—Ինչպես
Դաւիթ ալ կը գրէ այն մարդուն ե-
րանելութիւնը, որու Աստուած արդարու-
թիւն կը սեպէ առանց գործերու. 7—
Երանի՛ անոնց, ո՛ր անօրէնութիւնները ներուեցան, և որոնց մեղ
քերը ծածկուեցան։ 8—Երանի՛ այն
մարդուն որու մեղք չսեպեր Տէրը։ 9—
Ուստի այս երանելութիւնը թլփատութեա՞ն վրայ է, թէ անթլփատութեան
վրայ ալ. քանզի կ'ըսենք թէ Հաւատքը Աբրահամի արդարութիւն սեպուեցաւ։ 10—Ուրեմն ի՞նչպէս սեպուեցաւ.
թլփատութեան մէջ եղած ատեն, թէ
անթլփատութեան մէջ. ոչ թէ թլփատութեան մէջ, հապա անթլփատութեան։ 11—Ու նշանը առաւ՝ էբ-ը
անթլփատութեան ատեն ունեցած հաւատքին արդարութեան կնիք մը, որպէս զի ինք հայր
բլլայ այն բոլոր հաւատացողներուն ո-
րոնք անթլփատութենէ են, (անոնց ալ
արդարութիւն սեպուելու համար ;)
12—Ու հայր թլփատութեան՝ ոչ թէ
միայն թլփատութենէ եղողներուն, հա-
պա անոնց ալ՝ որոնք մեր հօրը Աբրա-
համի անթլփատութեան ատեն հա-
ւատքին չափերուն մէջ կը քալեն։
13—Վասն զի Աբրահամի և անոր սե-
րունդին՝ աշխարհը ժառանգելու համար
որ-ոճ խոստումնը ոչ թէ օրէնքով
եղաւ, հապա հաւատքին արդարութիւ-

նովը։ 14—Ջանզի եթէ օրէնքէն եղողները ժառանգ բլլային, հաւատքը փուճ
պիտի բլլար, և խոստումնքը պիտի խա-
փանուէր։ 15—Վասն զի օրէնքը բար-
կութիւն կը գործէ. քանզի ուր օրէնք
չկայ, օրինազանցութիւն ալ չկայ։ 16—
Ասոր համար ՚ՀՈՎ-ԱՆ ըլլալը հաւատքէն
է, որպէս զի շնորհքով եղած բլլայ,
խոստումնքը հաստատուն բլլալու հա-
մար բոլոր սերունդին, ոչ թէ միայն ա-
նոր որ օրէնքէն է, հապա անոր ալ՝ որ
Աբրահամի հաւատքէն է, որ մեր ամ-
ենուն հայրն է, 17—(Ինչպես գրած է
թէ զիս չատ ազգերու հայր ըրի,) Աս-
տուծոյ առջև, որու ինք հաւատաց,
ան որ մեռելները կ'ապրեցնէ, և չեղած
բաները եղածներու պէս կը կանչէ։
18—Որ չյուսացուելու բանին յուսով
հաւատաց՝ թէ ինք չատ ազգերու հայր
պիտի բլլայ, (ինչպես բսուեցաւ ալ, թէ
քու սերունդդ այսպէս պիտի բլլայ.)
19—Ու ինք հաւատքի մէջ չտկարացաց՝ չնայեցաւ իր մարմինին արդէն
մեռածի պէս բլլալուն, (որովհետև ինք
հարիւր տարեկանի չափ էր,) ոչ ալ Սա-
ռայի արգանդին մեռած բլլալուն. 20—
Ու անհաւատութիւնով չտարակուսեցաւ Աստուծոյ խոստմանքին, հապա
հաւատքով զօրացած՝ Աստուծոյ փառք
տուաւ, 21—Ու իր մտքին մէջ հաս-
տատ պահեց թէ ան որ խոստ տուաւ,
կարող է ընելու ալ։ 22—Ասոր համար
իրեն արդարութիւն սեպուեցաւ։

23—Բայց ոչ թէ միայն անոր հա-
մար գրուեցաւ որ իրեն սեպուեցաւ.
24—Հապա մեզի համար ալ՝ որոնց պի-
տի սեպուի, որ կը հաւատանք անոր որ
մեռելներէն յարուցց մեր Տէր Յիսուս,
25—Որ մեր յանցանքներուն համար
մատնուեցաւ, և մեզ արդարացնելու
համար յարութիւն առաւ։

Գլ. Ե

Ուստի մենք հաւատքով արդարա-
ցած բլլալով՝ խաղաղութիւն ունինք
Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիս-
տոսի միջոցով. 2—Որուն միջոցով ըն-
դունելութիւնք հաւատքով այս շնորհքին
մեջ որուն մէջ կեցեր ենք,
և Աստուծոյ փառքին յուսովը կը պար-
ծինք. 3—Ու ոչ միայն այսպէս՝ հապա
նաև նեղութիւններու մէջ կը պար-
ծինք. գիտնալով զի գիտենք թէ նեղու-
թիւնը համբերութիւն կը գործէ, 4—
Ու համբերութիւնը՝ փորձառութիւն,
և փորձառութիւնը՝ յոյս. 5—Ու յոյսը
ամօթով չձգեր. վասն զի Աստուծոյ սէրը
մեր սիրտերուն մէջ ապտուածած է Հոգ-
ւոյն Սրբոյ միջոցով, որ մեզի տրուե-
ցաւ։ 6—Վասն զի երբ մենք գէթ տկար
էինք, յարմար ժամանակին Քրիստոս
ամբարիշտներուն համար մեռաւ։ 7—
Վասն զի արդարի մը համար հազիւ
կ'բլլայ որ մեռնի. (բայց բարի
մարդու մը համար՝ կարելի է որ մեռ-
նելու համարձակի մեռնի.) 8—Սակայն Աս-
տուած իր սէրը չատ մեր վրայ ուներ՝
յայտնեց, որ երբ գէթ մեղաւոր էինք,
9—Քրիստոս մեզի համար մեռաւ. ա-
րդեն հիմա որ իր արիւնով արդա-
րացանք, ո՛րչափ աւելի իրմով պիտի ա-
զատինք բարկութենէն։ 10—Վասն զի
եթէ մեր թշնամի եղած ատենը Աստու-
ծոյ հետ հաշտուեցանք իր Որդւոյն մա-
հովը, ո՛րչափ աւելի մեր հաշտուած ա-
տենը պիտի ապրինք անոր կեանքովը։
11—Ու ոչ միայն այս, հապա Աստու-
ծով կը պարծենանք ալ մեր Տէրոջը
Յիսուս Քրիստոսի միջոցով, որով հիմա
հաշտութիւնը ընդունեցինք։

12—Վասն զի ինչպես մարդէ մը
մեղքը աշխարհ մտաւ, և մեղքին
մտիր, և անպես ամէն մարդոց վրայ
տարածուեցաւ մահը, քանզի ամէնը
մեղանչեցին։ 13—(Վասն զի մինչև օ-
րէնքին տանը աշխարհի մէջ մեղք
կար. բայց մեղք չսեպուիր ուր օրէնք
չկայ։ 14—Սակայն մահը Ադամէ մինչև
Մովսէս թագաւորեց, նաև Ադամի յան-
ցանքին նման չմեղանչողներուն վրայ
ալ, որ օրինակ էր անոր որ եկոք պի-
տի գար։ 15—Բայց ոչ թէ ինչպես յան-
ցանքը՝ այնպես չնորհքն է. վասն զի
եթէ մեկուն յանցանքովը շատեր մե-
ռան, ալ ո՛րչափ աւելի Աստուծոյ շնորհ-
քը և այն պարգեւը որ Յիսուս Քրիս-
տոս մեկ մարդուն շնորհքով է, շատե-

---

¹Կամ, որով

բու վրայ աւելցաւ։ 16—Ես ոչ քէ այս պարզեւը չընդունիմ, որպէս զի ինծի ալ մեղանչեց. վասն զի դատաստանը ինկ հրէից դատապարտութեան մէջ չէին, բայց չնորհքը շատ մեղքերէ արդարացուցած էր։ 17—Վասն զի եթէ մէկ մարդուն մեղքովը մահը թագաւորեց այն մէկովը, ո՛րչափ աւելի անոնք որ չնորհքի ու արդարութեան պարգեւին առատութիւնը կ՚առնեն, կեանքի մէջ պիտի թագաւորեն մէկ Յիսուս Քրիստոսի ձեռքով։) 18—Ուրեմն ինչպէս մէկուն յանցանքովը բոլոր մարդոց դատապարտութեան եկաւ, այնպէս մէկուն արդարութիւնովը բոլոր մարդոց կեանքի արդարութեան ընդհանրացաւ։ 19—Վասն զի ինչպէս մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր եղան, այնպէս մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի բլլան։ 20—Մակայն օրէնքը միջնակ մտաւ, որպէս զի յանցանքը շատնայ. բայց ուր աւելի եղաւ մեղքը, այն աւելի եղաւ չնորհքը։ 21—Որպէս զի ինչպէս մեղքը թագաւորեց մահով, այնպէս չնորհքը թագաւորէ արդարութիւնով մինչև յաւիտենական կեանքը մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով։

Գլ. Զ

Ա՛ հիմա ի՞նչ պիտի ըսենք. մեղքի մէջ մնա՞նք արդեօք, որպէս զի չնորհքը շատնայ։ 2—Բա՛ւ լիցի. մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս դեռ անոր մէջ կեննանք։ 3—Չէ՞ք գիտեր, թէ մենք որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուեցանք։ 4—Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար. որպէս զի ինչպէս Քրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն, այնպէս մենք կեանքի նորոգութեան մէջ պարթեւնք։ 5—Վասն զի եթէ մենք անկակից եղանք անոր մահուանը նմանութիւնովը, նաև անոր յարութեանը նմանութիւնովը ալ եղուքը պիտի բլլանք։ 6—Զայս գիտնանք որ մեր հին մարդը անոր հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը փճանայ, որպէս զի ան‌կէետև մեղքի չծառայենք։ 7—Վասն զի ան որ մեռաւ է, մեղքէ արդարացած է։ 8—Արդ եթէ մենք Քրիստոսի հետ մեռանք, կը հաւատանք որ անոր հետ պիտի ապրինք ալ։ 9—Գիտնալի գիտենք որ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած բլլալով՝ նորէն չմեռնիր, ալ մահը անոր վրայ իշխանութիւն չունի։ 10—Վասն որ զոհի որ մեռաւ՝ մեղքի մեռաւ մէկ անգամ, և որ կենդանի է՝ Աստուծոյ կենդանի է։ 11—Այսպէս դուք ձեր անձերը մեղքի մեռած սեպեցէք, բայց Աստուծոյ կենդանի՝ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով։ 12—Ուստի մի՛ մեղքը չիշխատրէ ձեր մահկանացու մարմինին վրայ, որ անոր ցանկութիւններուն հնազանդիք։ 13—Ու ձեր անդամները անիրաւութեան գործիք բլլալու մի բնծայէք մեղքի, հապա ձեր անձերը Աստուծոյ բնծայեցէք, որպէս թէ մեռելներէն ողջնցած, և ձեր անդամները արդարութեան գործիք՝ Աստուծոյ։ 14—Քանզի մեղքը ձեր վրայ պիտի չիշխէ. վասն զի օրէնքի տակ չէք, հապա չնորհքի տակ։

15—Ուրեմն ի՞նչ. մե՞ղք գործենք վասն զի օրէնքի տակ չենք, հապա չնորհքի տակ։ Քա՛ւ լիցի։ 16—Չէ՞ք գիտեր թէ որուն որ անձնէնիդ ծառայ կ՚ընծայէք հնազանդելու, ծառայ էք անոր՝ որուն որ կը հնազանդիք, թէ՛ մեղքի՝ որ մահուան կ՚երթէ, և թէ՛ հնազանդելու՝ որ արդարութեան։ 17—Բայց գոհանալի՜ Աստուծոյ, որ երբեմն դուք մեղքի ծառայ էիք, սակայն որդանց հնազանդեցաք այն վարդապետութեան գազափարին որ ձեզի յանձնուեցաւ։ 18—Ուստի դուք մեղքէ ազատ բլլալով՝ արդարութեան ծառայ եղաք։ 19—(Մարդու սովորութեան պէս կ՚ըսեմ՝ ձեր մարմինին տկարութեանը համար.) քանզի ինչպէս ձեր անդամները անօրէնութեան համար ընծայեցիք՝ պղծութեան և անօրէնութեան ծառաներ բլլալու, այնպէս հիմա ձեր անդամները արդարութեան համար ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ բլլալու։ 20—Վասն զի երբ դուք մեղքի ծառաներ էիք, արդարութենէ ազատ էիք։ 21—Ուրեմն այն ժամանակ

ի՞նչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնցմով հիմա կ՚ամչնաք. վասն զի անոնց վերջը մահ է։ 22—Բայց հիմա մեղքէ ազատուած և Աստուծոյ ծառաներ եղած՝ ձեր պտուղը ունիք սրբութիւնով, ու վերջը յաւիտենական կեանք։ 23—Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով։

Գլ. Է

Մթե՛ չէ՞ք գիտեր, եղբայրներ, (քանզի ես օրէնքը գիտցողներուն կը խօսիմ,) որ օրէնքը մարդուս վրայ կ՚իշխէ՝ որչափ ժամանակ որ ապրի է։ 2—Վասն զի այր ունեցող կինը իր ողջ երկանքը կապուած է օրէնքով։ բայց եթէ այրը մեռնի, արձակուած է երկանքը օրէնքէն։ 3—Ուրեմն քանի որ այրը ողջ է, չառն պիտի բսի՝ եթէ ուրիշ երկան մը բլլայ։ բայց եթէ այրը մեռնի, այն օրէնքէն ազատ կ՚բլայ, այնպէս որ չնացող չբլլար՝ եթէ ուրիշ երկան մը բլլայ։ 4—Ուստի դուք ալ, իմ եղբայրներս, Քրիստոսի մարմնովը օրէնքին մեռաք. որպէս զի ուրիշի մը բլլաք, անոր՝ որ մեռելներէն յարութիւն առեր է, որպէս զի Աստուծոյ պտուղ բերող բլլանք։ 5—Քանզի քանի որ մենք մարմնով էինք՝ մեղքերու կիրքերը օրէնքով կ՚բլլային, մեր անդամներուն մէջ կը ներգործէին, որպէս զի մենք մահուան պտուղ բերինք։ 6—Բայց հիմա այն օրէնքէն արձակուեցանք. վասն զի մեռանք անոր՝ որով բռնուած էինք, որպէս զի մենք ծառայենք հոգիին նորոգութիւնովը, և ոչ թէ գրին հնութիւնովը։

7 — Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քա՛ւ լիցի. բայց ես մեղքը չէի ճանչնար, եթէ ոչ՝ օրէնքով. ինչպես ցանկութիւնն ալ չէի գիտեր, եթէ օրէնքը բսած չբլլար, Մի ցանկար։ 8—Բայց մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ իմ մէջս բոլոր ցանկութիւնները գոյացուց. վասն զի առանց օրէնքի մեղքը մեռած է։ 9—Ես ալ առանց օրէնքի առեն մը կենդանի էի. բայց երբ պատուիրանքը վրա՜ հասաւ, մեղքը ոգի՛նցաւ, 10—ես ալ մեռայ. ու այն պատուիրանքը որ կեանքի համար էր, ինծի բնաւ մահուան համար եղաւ։ 11—Վասն զի մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ զիս խաբեց, ու անով մեռցուց։ 12—Ուստի օրէնքը սուրբ է, ու պատուիրանքը սուրբ և արդար ու բարի։

13—Ուրեմն բարին ինծի մա՞հ եղա՞. քա՛ւ լիցի. հապա մեղքը, որպէս զի երեւնայ մեղքը որ այն բարի բանով ինծի մահ գործեց, որպէս զի մեղքը պատուիրանքով աւելի մեղաւոր բլլայ։ 14—Վասն զի գիտենք որ օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ մեղքի ստկ ծախուած։ 15—Քանզի ինչ որ կ՚ընեմ՝ չեմ ճանչնար. այ քէ ինչ որ կ՚ուզեմ՝ զայն կ՚ընեմ, հապա ինչ որ կ՚ատեմ՝ զայն կ՚ընեմ. 16—Բայց եթէ չուզածս կ՚ընեմ, հաւանութիւն կու տամ օրէնքին թէ բարի է։ 17—Իսկ արդ ալ քէ ես կ՚ընեմ զանիկա, հապա մեղքը՝ որ իմ ներսիդիս կը բնակի։ 18—Քանզի գիտեմ որ իմ ներսիդիս, այսինքն իմ մարմինիս մէջ, բարի բան մը չբնակիր. վասն զի կամեցողութիւն կայ քովս, բայց բարին ի գործ դնելը չեմ գտներ։ 19—Քանզի ոչ քէ բարին զոր կ՚ուզեմ, կ՚ընեմ, հապա չարը զոր չեմ ուզեր, զայն կ՚ընեմ։ 20—Իսկ եթէ չուզած բանս կ՚ընեմ, ալ ոչ քէ ես կ՚ընեմ զանիկա, հապա մեղքը՝ որ իմ ներսիդիս բնակած է։ 21—Ուստի ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ բարին ընելու կը կամենամ, չարը իմ քովս է։ 22—Վասն զի ներսի մարդուն հաճելով՝ Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ. 23—Բայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ իմ անդամներուս մէջ, որ իմ մտքիս օրէնքին դէմ կը պատերազմի, և զիս գերի կ՚ընէ մեղքի օրէնքին որ իմ անդամներուս մէջ է։ 24—Ի՞նչ խղճալի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի ազատէ այս մահացու մարմինէն։ 25—Գոհանք Աստուծոյ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով։ Ուրեմն ես ինքնս մտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, ու մարմնով՝ մեղքի օրէնքին։

Գլ. Ը

Իսկ արդ զաստապարտաբքիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր՝ 2—Քանզի Քրիստոս Յիսուսով կեանքի հոգիին օրէնքը զիս ազատեց մեղքի և մահուան օրէնքէն։ 3—Վասն զի այն որ անկարելի էր օրէնքին, որովհետև տկար էր մարմնով, Աստուած իր Որդին զրկից մեղանչական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար, և զատապարտեց մեղքը այն մարմնին մէջ։ 4—Որպէս զի օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջ, որ մարմնաւորապէս չենք գիրեր, հապա հոգևորապէս։ 5—Քանզի մարմնաւոր եղողները մարմնին բաներըը կը մտածեն, ու հոգևոր եղողները՝ հոգիին բաներըը։ 6—Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգևոր խորհուրդը կեանք ու խաղաղութիւն։ 7—Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, վասն զի Աստուծոյ օրէնքին չհնազանդիր, մանաւանդ չկրնար ալ։ 8—Վասն զի մարմնով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ։ 9—Բայց դուք մարմնով չէք՝ հապա հոգիով, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, անոնկա անոր չէ։ 10—Ու եթէ Քրիստոս ձեր մէջ է, ալ մարմինը մեռած է մեղքի համար, ու հոգին կենդանի է արդարութեան համար։ 11—Իսկ եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջ բնակած է, ալ անոնկա որ Քրիստոսը մեռելներէն յարուցց, պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմիններըը իր Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի։

12—Ապա ուրեմն, եղբայրներ, պարտապան ենք, ոչ թէ մարմինին՝ մարմնաւորապէս ապրելու։ 13—Վասն զի եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք, պիտի մեռնիք. բայց եթէ Հոգիով մարմինին գործերը սպաննէք, պիտի ապրիք։ 14—Վասն զի որոնք որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին, անոնք Աստուծոյ որդիներն են։ 15—Քանզի դուք ծառայութեան հոգին չառիք կրկին վախնալու, հապա որդեգրութեան հոգին առիք, որ անով կը կանչենք Աբբա Հայր։ 16—Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներն ենք։ 17—Ու եթէ որդիներ, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգակիցներ. որպէս զի, եթէ իր չարչարանքներուն կցորդ ըլլանք, իր փառքին ալ հաղորդ ըլլանք։

18—Վասն զի ես այսպէս կը դատեմ որ այս ժամանակին չարչարանքները բան մը չեն գալու փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի։ 19—Քանզի ստեղծուածները եռանդուն ակնկալութիւնը Աստուծոյ որդիներուն յայտնուելուն կը սպասէ։ 20—Վասն զի ունայնութեան հնազանդեցան ստեղծուածները, (ոչ թէ իրենց կամքովը՝ հապա անոր համար որ հնազանդեցուց) 21—Այն յուսով, որ ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծառայութենէն ազատուելով, Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը հասնին։ 22—Քանզի գիտենք որ ամէն ստեղծուածները մինչեւ հիմա միասին կը հառաչեն ու ծնունդներու ցաւ կը քաշեն։ 23—Ու ոչ միայն այս, հապա մենք ալ որ Հոգիին առաջին պտուղը ունինք, մենք մեզմէ մեր անձերուն մէջ կը հառաչենք որդեգրութեան, այսինքն մեր մարմինին ազատութեանը, սպասելով։ 24—Վասն զի յուսով փրկուեցանք. բայց յոյսը որ կը տեսնուի, յոյս չէ. վասն զի այն բանին, զոր կը տեսնէ մէկը, ալ ինչո՞ւ պիտի յուսայ։ 25—Իսկ եթէ չտեսած բաներնուս կը յուսանք, ու համբերութիւնով կը սպասենք ան։ 26—Նոյնպէս Հոգին ալ օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն. քանզի ի՛նչ բանի համար որ ազօթելու ենք բուն պիտանին՝ չենք գիտեր. բայց ինք Հոգին բարեխօսու կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով։ 27—Ու սիրտերը քննողը գիտէ Հոգիին ի՛նչ խորհիլը, քանզի Աստուծոյ համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար։

28—Մակայն գիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ կ'Աստուած կը սիրեն, որոնք ան-ը նախասահմանութիւնովը կանչուած են։ 29—Վասն զի զանոնք որ առաջ կը ճանչնար, առաջուընէ ալ սահմանեց իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու. որպէս զի անիկա անդրանիկ ըլլայ շատ եղբայրներու մէջ։ 30—Ու զորոնք առաջուընէ սահմանեց, նաեւ կանչեց զանոնք. և զորոնք կանչեց, նաև արդարացուց զանոնք. և զորոնք արդարացուց, նաև փառաւորեց զանոնք։ 31—Ուրեմն ի՞նչ բանը պիտի բանենք այս բաներուն համար. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ։ 32—Ան որ իր Որդւոյն չխնայեց, հապա մեր ամէնուն համար մատնեց զանիկա, ալ ի՞նչպէս անոր հետ ամէն բաները մեզի չպարգեւեր։ 33—Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ. Աստուած է որ կ'արդարացնէ։ 34—Ո՞րն է ո՞վ է որ կը դատապարտէ. Քրիստոս է որ մեռաւ. մանաւանդ եւ յարութիւն ալ առաւ, ու Աստուծոյ աջ կողմն է, որ նաեւ մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ։ 35—Ո՞րն է ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն. տառապա՞նքը, կամ նեղութի՞ւնը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ վտանգը, կամ սո՞ւրը։ 36—(Ինչպէս գրուած է, Ամէն օր քեզի համար կը սպանուինք. մորթուելու ոչխարի պէս կը սեպուինք.) 37—Հապա այս ամէն բաներուն մէջ ա՛լ աւելի յաղթող կ'ըլլանք անով որ մեզ սիրեց։ 38—Վասն զի ես հաստատ գիտեմ թէ ոչ մահը, և ոչ կեանքը, ու ոչ հրեշտակները, և ոչ իշխանութիւնները, ու ոչ ներկայ բաները, ու ոչ գալու բաները, 39—Ու ոչ բարձրութիւնը, ու ոչ խորութիւնը, և ոչ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է։

Գլ. Թ

Ճշմարտութիւն կ'ըսեմ Քրիստոսով — չեմ սուտեր, (իմ խիղճս ալ ինծի կը վկայէ Հոգւով Սրբով,) 2—Որ մեծ տրտմութիւն է ինծի, ու իմ սրտիս անպակաս ցաւ։ 3—Քանզի ես ինքս կը խնդրէի նզովուած ըլլալ Քրիստոսէ, իմ մարմնի կողմանէ եղբայրներուս ու ազգականներուս համար, 4—Որոնք Իսրայէլացի են. որոնց է որդեգրութիւնը ու փառքը և ուխտերը ու օրինադրութիւնը և պաշտօնը ու խոստումնըները. 5—Որոնց են նահապետներըը, որոնցմէ է—Քրիստոս ալ մարմնի կողմանէ, որ է ամէնուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեան։ Ամէն։ 6—Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը գետին ինկած է. քանզի ոչ թէ ամէն Իսրայէլէ եղողները Իսրայէլացի են. 7—Ու ոչ թէ Աբրահամի սերունդ ըլլալնուն համար ամէնը որդիներ են. հապա Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի։ 8—Այսինքն՝ ոչ թէ անոնք որ մարմնի որդիներ են՝ Աստուծոյ որդիներ ալ են, հապա խոստումնքի որդիները սերունդ կը սեպուին։ 9—Վասն զի խոստումնքին խօսքը այս էր, Թէ Այս ատեն պիտի գամ, ու Սառա որդի պիտի ունենայ։ 10—Ու ոչ միայն այսքան, հապա Ռեբեկկայէ ալ յղացուեր է որ յղացաւ մեկէն, այսինքն մեր Իսահակ հօրմէն։ 11—Վասն զի ծնած, և գեռ չծնած, և գեռ ազէկ կամ գէշ բան մը չգործած, (որպէս զի Աստուծոյ նախասահմանութիւնը հաստատուի ընտրութեամբ պէս, 12—Ոչ թէ գործերէն, հապա անկէ որ կանչոց,) իրեն բսուեցաւ Թէ, 13—Մեծը պզտիկին պիտի ծառայէ. ինչպէս գրուած է Թէ Յակոբը սիրեցի, բայց Եսաւը ատեցի։

14—Ուրեմն ի՞նչ բանը. միթէ Աստուծոյ քով անիրաւութի՞ւն կայ. քա՛ւ լիցի։ 15—Վասն զի Մովսէսի կ'ըսէ, Որու որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, ու որու վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ, 16—Ուրեմն ոչ անկէ է որ կը կամի, ու ոչ անկէ՝ որ կը վազէ, հապա Աստուծմէ՝ որ կ'ողորմի։ 17—Քանզի գիրքը Փարաւոնի կ'ըսէ, Անոր համար քեզ վերցուցի, որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ, ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի։ 18—Ուստի որու որ կ'ուզէ՝ կ'ողորմի, և զոր կ'ուզէ՝ կը խստացնէ։ 19—Ուրեմն ինծի պիտի ըսես Թէ Ա՛լ ինչո՞ւ մեղադիր

*Ոմանք կ—Եւ ըսէին, այլ հոգևոր կերպով

կ'ըլլայ· վասն զի ո՞վ անոր կամքին դէմ դրաւ։ 20—Բայց դուն ո՞վ ես, ով մարդ, որ Աստուծոյ դէմ պատասխան կու տաս. միթէ առեղծուածը չէ Առեղծողին կրնա՞յ ըսել թէ Ձես ինչո՞ւ այդպէս չինեցիր։ 21—Բրնաւ իշխանութիւն չունի՞ կաւին վրայ՝ նոյն չուազանգէն աման չինելու, մէկը պատուի՝ և միւսը անարգանքի համար։ 22—Հապա ի՞նչ ըսելէ ուզէ թէ Աստուած չէ բարկութիւնը ցուցնել՝ ու իր զօրութիւնը յայտնել ուզելով, չատ երկայնամտութեամբ համբերեց կորուսելու պատրաստուած բարկութեան ամաններուն։ 23—Ու և՛ որպէս զի իր փառքին մեծութիւնը յայտնի ընէ ողորմելու ամաններուն վրայ, զորոնք փառքի համար առաջուընէ պատրաստեց։ 24—Այսինքն մեզ զորոնք կանչեց, ոչ թէ միայն Հրեաներէն, հապա հեթանոսներէն ալ։ 25—Ինչպես Ովսէէի մէջ ալ կ'ըսէ, Իմ ժողովրդս չեղողին իմ ժողովրդս պիտի կանչեմ, ու սիրելի չեղողին՝ սիրելի։ 26—Ու պիտի ըլլայ թէ այն տեղ ուր անոնց բսուեցաւ թէ Դուք իմ ժողովրդս չէք, հոն անոնք կենդանի Աստուծոյ որդիները պիտի բսուին։ 27—Եսայի ալ Իսրայէլի համար կ'աղաղակէ, Թէև Իսրայէլի որդիներուն Թիւը ծովու աւազին պէս ըլլայ, Հաւ՝ միացորդ մը պիտի ազատի։ 28—Բանզի Տէրը համառօտ և կարճ բան մը կ'ընէ երկրի վրայ։ 29—Ու ինչպէս Եսայի առաջուընէ բսաւ, Եթէ զօրաց Տէրը մեզի սերունդ մը Թողուցած չըլլար, մենք Սողոմի պէս պիտի ըլլայինք, ու Գոմորի պիտի նմանէինք։

30—Ուրեմն ի՞նչ բանք. Թէ հեթանոսները որոնք արդարութեան չէին հետեւեր՝ արդարութեան հասան, այն արդարութեան՝ որ հաւատքէն է։ 31—Բայց Իսրայէլ որ արդարութեան օրէնքին կը հետեւէր, արդարութեան օրէնքին չհասաւ։ 32—Ինչո՞ւ համար. վասն զի ոչ թէ հաւատքէն, հապա որպէս թէ օրէնքին գործերէն ուղէց արդարանալ։ վասն զի գայթակղութեան վէմին վրայ գլորեցան։ 33—Ինչպես գրուած է, Ահա Սիոնի մէջ գայթակղութեան քար մը կը դնեմ ու գլորելու վէմ մը. և ամէն ով որ անոր հաւատայ, պիտի չամչնայ։

ԳԼ. Ժ

Եղբայրներ, իմ սրտիս փափաքը ու աղօթքը առ Աստուած *Իսրայէլի փրկութեան համար է։ 2—Վասն զի ես կը վկայեմ անոնց համար, Թէ Աստուծոյ նախանձաւորութիւնը ունին, բայց ոչ Թէ գիտութեամբ։ 3—Վասն զի անոնք Աստուծոյ արդարութիւնը չգիտնալով, ու իրենց արդարութիւնը հաստատել ուզելով, Աստուծոյ արդարութեան չհնազանդեցան։ 4—Քանզի օրէնքին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալի արդարութեան համար։

5—Վասն զի Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը կը տարագրէ Թէ, Զանոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի։ 6—Բայց հաւատքէն եղած արդարութիւնը այսպէս կ'ըսէ, Մի ըսեր քու սրտիդ մէջ, Ո՞վ պիտի ելլէ երկինք, (այսինքն Քրիստոսը վեռելներէն հանելու։) 7—Կամ Թէ Ո՞վ պիտի իջնէ անդունդը, (այսինքն Քրիստոսը մեռելներէն հանելու։) 8—Հապա ի՞նչ կ'ըսէ. Խօսքը քեզի մօտ է, քու բերնիդ մէջ և քու սրտիդ մէջ է· այսինքն հաւատքին խօսքը զոր մենք կը փարոզենք։ 9—Վասն զի եթէ քու բերնովդ Յիսուս Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջ հաւատաս Թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուցց, պիտի փրկուիս։ 10—Վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկութեան։) 11—Քանզի գիրքը կ'ըսէ, Ամէն ով որ անոր հաւատայ, պիտի չամչնայ։ 12—Վասն զի խարութիւն չկայ Հրեային ու Յունին մէջտեղ· վասն զի ամէնուն Տէրը նոյնն է, առատ ամէնուն որոնք իրեն կը կանչեն։ 13—Քանզի ով որ Տէրոջը անունը կանչէ, պիտի փրկուի։

14—Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն անոր՝ որու չհաւատացին. կամ ի՞նչպէս պիտի հաւատան անոր՝ որուն վրայով չլսեցին. կամ ի՞նչպէս պիտի լսեն՝ առանց մէկուն քարոզելուն։ 15—Կամ ի՞նչպէս պիտի քարոզեն՝ եթէ չղրկուին. ինչպէս գրուած է, Ի՜նչպէս գեղեցիկ են խաղաղութեան աւետարանողներուն ոտքերը։ 16—Բայց ամէնը հնազանդ չեղան աւետարանին. քանզի Եսայի կ'ըսէ, Տէր, ո՞վ հաւատաց մեր լուրին։ 17—Ուրեմն հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն։ 18—Բայց կ'ըսեմ, Միթէ չլսեցի՞ն. Մանաւանդ Բոլոր երկիր ելաւ անոնց Ձնչիւնը, ու անոնց *խօսքը՝ մինչև աշխարհի ծայրերը։ 19—Բայց կ'ըսեմ, Միթէ Իսրայէլ չգիտցա՞. առաջ Մովսէս կ'ըսէ, Ես ձեզ նախանձի պիտի գրգռեմ *անպիտան ժողովուրդով մը, ու անմիտ ազգով մը ձեզ պիտի բարկացնեմ։ 20—Բայց Եսայի կը համարձակի ու կ'ըսէ, Ես անոնց գտնուեցայ՝ որոնք զիս չէին փնտռեր, յայտնի եղայ անոնց՝ որոնք զիս չէին հարցներ։ 21—Սակայն Իսրայէլի վրայով կ'ըսէ, Բոլոր օրը իմ ձեռքերս երկնցուցի անհնազանդ ու հակառակող ժողովուրդի մը։

ԳԼ. ԺԱ

Ուրեմն կ'ըսեմ, Միթէ Աստուած իր ժողովուրդը մերժե՞ց. քա՛ւ լիցի· վասն զի ես ալ Իսրայելացի եմ, Աբրահամի սերունդէն, Բենիամինի ցեղէն։ 2—Չմերժեց Աստուած իր ժողովուրդը զոր ինք առաջուընէ ճանչցաւ. միթէ չէ՞ք գիտեր եղիայի դարձուածքին մէջ գիրքը ի՛նչ կ'ըսէ. ի՜նչպես անկեալ Իսրայէլի համար գանգատ կ'ընէ Աստուծոյ, ըսելով, 3—Տէր, քու մարգարէներդ մեռցուցին ու քու սեղաններդ փլցուցին, ու միայն ես մնացեր եմ, և իմ անձս կը փնտռեն։ 4—Բայց ի՞նչ կ'ըսէ անոր՝ աստուածային պատասխանը. Ինծի Թողուցի, կ'ըսէ, եօթը հազար մարդիկ՝ որոնք Բահաղի ծնրադրութիւն չըրին։ 5—Նոյնպես ալ այս ատեն ներկայի բնաւրութեանը համեմատ մնացորդ մը կայ։ 6—Ու եթէ շնորհքով, ուրեմն *ոչ գործերէն չէ. ապա Թէ ոչ՝ շնորհքը ա՛լ շնորհք չըլլար. *իսկ եթէ գործերէն է, ա՛լ շնորհք չէ. ապա Թէ ոչ՝ գործը ա՛լ գործ չըլլար։ 7—Ուրեմն ի՞նչ. Իսրայէլ չգտաւ այն բանին զոր կը փնտռէր. բայց ընտրածները գտան, ու միացածները կուրցան, 8—(ինչպես գրուած է, Աստուած անոնց թմրութեան ոգի տուաւ, այնքան՝ որ ոչ պիտի տեսանեն, ու ականջներ՝ ոչ լսելու պիտի, մինչև այսօր։ 9—Ու Դաւիթ կ'ըսէ, Անոնց սեղանը իրենց որոգայթ ու որս և գայթակղութիւն ու հատուցում ըլլայ։ 10—Անոնց աչքերը մթնած, որպէս զի չտեսնեն, ու անոնց կռնակը միշտ վար ծռէ։ 11—Ուրեմն կ'ըսեմ, Միթէ անոնք հետեւ անոնք յանցանք ըրին որ կործանին. քա՛ւ լիցի. հապա իրենց յանցանքովը հեթանոսներուն փրկութիւն եղաւ, որպէս զի զիրենք նախանձի գրգռեմ։ 12—Ուստի եթէ անոնց յանցանքը աշխարհի մեծութիւն եղաւ, ու անոնց նուաստութիւնը՝ հեթանոսներուն մեծութիւն, ալ ո՛րչափ աւելի անոնց լրութիւնը։ 13—Բայց ձեզի կ'ըսեմ հեթանոսներուն, Որովհետև հեթանոսներուն առաքեալ եմ, իմ պաշտօնս կը մեծարեմ, 14—Որպէս զի թերեւս իմ մարմինս եղողները նախանձի գրգռեմ, ու անոնցմէ մէկ քանիները ապրեցնեմ։ 15—Վասն զի եթէ անոնց մերժուիլը աշխարհի հաշտութիւն է, հապա անոնց ընդունուիլը ինչ պիտի ըլլայ, բայց եթէ՝ մեռելներէն կենդանի ըլլալ։ 16—Արդ եթէ երախայրին սուրբ է, նաև զանգուածը. և եթէ արմատը սուրբ է, ոռիթն ալ։ 17—Եթէ այն ձիւղերէն մէկ քանիները կտրեցան, ու դուն որ վայրենի հիթենիի էիր՝ անոնց մէջ պատուաստուեցար, ու ձիթենիին արմատին և պարարութեանը հաղորդ եղար, 18—ձիւղերուն դէմ մի պարծենար. իսկ եթէ պարծենաս, ոչ թէ դուն արմատը վեր բաներ ես, հապա արմատը քեզ։ 19—Ուրեմն պիտի ըսես, ձիւղերը կտրեցան որպէս զի ես պատուաստուիմ։

*Ոմանք, անոնց

*Յաճ. ոչ

*Ոմանք չառնին

20—Ակի՛կ, անոնք անհաւատութիւնով կտրուեցան, ու դուն հաւատովդ հաստատուեցար. մի հպարտանար, հապա վախցիր· 21—Վասն զի եթէ Աստուած բնական ճիւղերուն չխնայեց, գուցէ քեզի ալ չխնայէ· 22—Ուստի տես Աստուծոյ քաղցրութիւնը ու խստութիւնը. կործանուածներուն վրայ խստութիւնը, և քու վրադ քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութեանը մէջ կենաս. ապա թէ ոչ՝ դուն ալ պիտի կտրուիս· 23—Ու անոնք ալ եթէ չհնազանդին անհաւատութեանը մէջ չկենան, պիտի պատաստուին, վասն զի կարող է Աստուած զանոնք նորէն պատաստել· 24—Քանզի եթէ դուն ի՛ւղէ բնական ձիթենիէն կտրուեցար, ու այն բարի ձիթենիին վրայ, որ ի՛ւղէ բնական չէր, պատաստուեցար, ալ ո՛րչափ աւելի անոնք որ բնական ճիւղերն են, պիտի պատաստուին իրենց ձիթենիին վրայ· 25—Վասն զի չեմ ուզեր, եղբայրներ, որ չգիտնաք այս խորհուրդը, (որպէս զի ինքզինքնիդ իմաստուն չսեպէք,) որ բա՛ մասին կատարութիւն եղաւ Իսրայէլի, մինչև հեթանոսներուն լրութիւնը մտնէ· 26—Ու այսպէս բոլոր Իսրայէլ պիտի փրկուի· ինչպէս գրուած է, Սիովնէ պիտի գայ Փրկիչը, ու Յակոբէ ամբարշտութիւնները մէկդի պիտի դարձնէ· 27—Ու այս է իմ ուխտս անոնց, երբ անոնց մեղքերը վերցնեմ· 28—Աւետարանին նայելով՝ անոնք Քրիստոսին են ձեր սիրոյն համար· բայց ընտրութեանը նայելով՝ սիրելի են Էրէնց հայրերուն սիրոյն համար· 29—Վասն զի Աստուծոյ պարգեւները ու կոչումը առանց ղղջանալու են· 30—Վասն զի ինչպէս դուք ալ առաջ մը Աստուծոյ չէիք հնազանդեր, ու հիմա ողորմութիւն գտաք *անոնց անհնազանդութեանովը, 31—Նոյնպէս անոնք ալ հիմա անհնազանդեցան, որպէս զի ձեր ողորմութիւն ընդունելովը՝ անոնք ալ ողորմութիւն գտնեն· 32—Վասն զի Աստուած ամենուն ալ անհնազանդութեան մէջ արգիլեց, որպէս զի ամենուն ողորմի·

33—Ո՛վ Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան և գիտութեան խորութիւնը· ի՛նչպէս անքննելի են իր դատաստանները, ու անքննելի են իր ճամբաները· 34—Վասն զի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը, կամ ո՞վ անոր խորհրդակից եղաւ· 35—Կամ ո՞վ առաջուբեն անոր բան մը տուաւ, որ փոխարէնը իրեն տրուի· 36—Վասն զի ամէն բաները անկէ ու անով և անոր համար են. իրեն փառք յաւիտեանս· Ամէն·

ԳԼ. ԺԲ

Աղէկ կ՚ազաչեմ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը· 2—Ու մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուելէք, որպէս զի քննէք թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հաճելի և կատարեալ է· 3—Քանզի ինծի տրուած *շնորհքով զայս կ՚ըսեմ ձեր մէջ եղող ամէն մէկուն, որ սրժան եղածը մտածելէն աւելի բան չմտածէ, հապա զգաստ կենալ մտածէ, ինչպէս Աստուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին չափը· 4—Վասն զի ինչպէս մէկ մարմնի մէջ շատ անդամներ ունինք, ու այն ամէն անդամները միևնոյն գործը չունին· 5—Նոյնպէս մենք շատերնիս մէկ մարմին ենք Քրիստոսով, և ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք· 6—Ուստի մենք զանազան պարգեւներ ունենալով այն շնորհքին համեմատ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն՝ հաւատքին չափովը գործենէ· 7—եթէ սպասաւորութիւն՝ սպասաւորութեան մէջ բլլանք· եթէ ան որ կը սորվեցնէ՝ սորվեցնելու· եւեթ բլլայ· 8—եթէ ան որ կը յորդորէ՝ յորդորելու եւեթ, ան որ կը բաշխէ՝ պարզութեամբ թող ընէ· ան որ վերակացու է՝ ջանքով, ան որ կ՚ողորմի՝ յօժարու-

*Ոմանք, Աստուծոյ շնորհքով

*Կամ, անոնց անհնազանդութեան առթիվը, նոյնպէս անոնք ալ հիմա անհնազան եղան ձեր ողորմութիւն գտած առթիվը՝ որպէս զի անոնք

թեամբ· 9—Սէրը առանց կեղծաւորութեան ըլլայ, չարէն զզուելով, բարիին յարելով· 10—Ղեկտյրութեան մէջ իրարու վրայ գորովալից եղէք· պատուելու մէջ իրարմէ անցէք· 11—Ջանքի մէջ թուլացած չըլլաք· հոգիով բորբոքեցէք· Տէրոջը ծառայեցէք· 12—Յուսով ուրախ եղէք· նեղութեան մէջ համբերեցէք· աղօթքի կեցէք· 13—Սուրբերուն պէտքերուն հաղորդ եղէք· հիւրասիրութեան հակէ եղէք· 14—Հալածողները օրհնեցէք, օրհնեցէք ու մի անիծէք· 15—Ինդացողներուն հետ ինդացէք, և լացողներուն հետ լացէք· 16—Իրարու վրայ միևնոյն խորհուրդը ունեցէք· ամբարտաւանութիւն մի ընէք, հապա խոնարհներուն հետ խաժարհեցէք· ինքզինքնիդ իմաստունի տեղ մի գնէք· 17—Չարութեան փոխարէն մէկու՛ն չարութիւն մի հատուցանէք· ամէն մարդոց առջև բարի բաներ ընելո՛ւ հոգ տարէք· 18—Որչափ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք· 19—Սիրելիներ, վրէժխնդրութիւնը մի ընէք ձեր անձերնուն համար, հապա բարկութեան տեղ տուէք· վասն զի գրուած է, Վրէժխնդրութիւնը ինծի է, ես պիտի հատուցանեմ, կ՚ըսէ Տէրը· 20—Ուստի եթէ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց տուր անոր, և եթէ ծարաւ է՝ ջուր տուր անոր· քանզի զայս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կոյտեր պիտի դիզես· 21—Չարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին·

ԳԼ. ԺԳ

Ամէն մարդ իր վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի· վասն զի չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ· և *անոնք որ կան՝ Աստուծմէ կարգուած են· 2—Ուրիշին ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանին դէմ կը կենայ· և անոնք որ դէմ կը կենան, անձերնուն դատապարտութիւն կ՚ընդունին· 3—Վասն զի իշխանները բարի գործերու վախ պատճառ չեն, հապա չարերու· կ՚ուզե՞ս չվախնալ իշխանութենէն, բարի գործէ, ու անկէ գովութիւն պիտի ընդունիս· 4—Վասն զի անիկա Աստուծոյ սպասաւորն է քեզի բարիի համար· բայց եթէ դուն չար կը գործես՝ վախցիր· վասն զի պատարկ տեղ մէկդի Թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ սպասաւորն է, և վրէժխնդիր՝ բարկութիւն հանդիսացնելու անոր վրայ որ չար կը գործէ· 5—Ասոր համար պէտք է հնազանդ բլլալ, ոչ թէ միայն բարկութեանը համար, հապա խղճմտանքի համար ալ· 6—Այս պատճառաւ է որ տուրք ալ կու տաք· վասն զի Աստուծոյ սպասաւորներն են այն նոյն բանին հոգ տանելու· 7—Ուստի հատուցէք պէտք եղածը ամենուն· որուն որ տուրքը տրուելու է՝ տուրքը, որուն որ մաքսը՝ մաքսը, որուն որ վախ՝ վախնալը, որուն որ պատիւ՝ պատիւը·

8—Ոեւէ մէկուն պարտական մի գտնուիք, միայն թէ մէկզմէկ սիրելու· վասն զի ով որ ընկերը կը սիրէ՝ օրէնքը կը կատարէ· 9—Վասն զի այն Մի շնար, Մի սպանաներ, Մի գողնար, Մուս վկայութիւն մի ըներ, Մի ցանկար, և ուրիշ ինչ պատուէր որ կայ՝ ԲԱՐԵԸ այս խօսքին մէջ կը բովանդակուի, թէ Դուն ընկերդ սիրես քու անձիդ պէս· 10—Սէրը ընկերին գէշութիւն չըներ· ուրեմն օրէնքին լրումը սէր է·

11—Ու այսպէս ըրէ, գիտնալով այս ատեն, որ հիմա ժամանակ է մեզի քունէ արթննալու· վասն զի հիմա մեր է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ հաւատացինք· 12—Գիշերը շատ անցած է ու ցորեկը մօտեցած· ուստի մեզմէ ընենք խաւարին գործերը, ու մեր վրայ հագնինք լոյսով զէնքերը· 13—Որպէս թէ ցորեկ ատեն՝ պարկեշտութեամբ պարտինք, ոչ թէ անառակութիւններով ու գինովութիւններով, և ոչ թէ խառնակ անզգամներով ու պղծութիւններով, և ոչ թէ հակառակութիւնով ու նախանձով· 14—Հապա Յէսու Քրիստոսը, ու մարմնի խնամք մի տանիք ցանկութիւններու համար·

*Ոմանք, այն իշխանութիւնները

ԳԼ. ԺԲ

Հաւատաքի մէջ տկար եղողը ընդունեցէք՝ ոչ թէ *տաքակաւսական որոշմանցներով։ 2—Մէկը կը հաւատայ որ ամէն բան կրնայ ուտել, և ան որ տկար է՝ կանաչեղէն կ'ուտէ։ 3—Ան որ կ'ուտէ՝ չարհաղթ թող չդատէ զան որ չուտեր՝ ուտողը թող չդատէ, վասն զի Աստուած զանիկա ընդուներ է։ 4—Դուն ո՞վ ես որ ուրիշին ծառան կը դատես։ իր Տէրոջը կը կանգնի կամ կ'իյնայ։ բայց պիտի կանգնի, վասն զի †Աստուած կարող է զանիկա կանգնեցընել։ 5—Մէկը մէկ օրը մըրիշ օրէ աւելի կը սեպէ, մէկն ալ ամէն օրը հետ կը սեպէ։ Թող ամէն մարդ իր միտքը հաստիցնէ։ 6—Ան որ կը հաղայ օրը, Տէրոջը կը հաղայ, և ան որ չհաղար օրը, Տէրոջը չհաղար. ու ան որ կ'ուտէ, Տէրոջը կ'ուտէ, քանզի Աստուծմէ կը գոհանայ. և ան որ չուտեր, Տէրոջը չուտեր, ու Աստուծմէ կը գոհանայ։ 7—Վասն զի մեզմէ մէկը իր անձին համար չապրիր, ու մէկը իր անձին համար չմեռնիր։ 8—Քանզի եթէ ապրինք Տէրոջ համար կ'ապրինք, և եթէ մեռնինք, Տէրոջը համար կը մեռնինք. ուրեմն թէ՛ ապրինք և թէ՛ մեռնինք, մենք Տէրոջն ենք։ 9—Վասն զի Քրիստոս ալ անոր համար մեռաւ էր ապրեցաւ, որ ու հոգոց մեռելներուն ու կենդանիներուն իշխէ։ 10—Իսկ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը դատես, կամ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կ'անարգես. վասն զի ամէնս ալ Քրիստոսի առեանին առջև պիտի կայնինք։ 11—Վասն զի գրուած է, Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինձի պիտի ծգի, և ամէն լեզու Աստուծոյ պիտի խոստանայ։ 12—Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր անձին համար։ 13—Ուստի ալ զիրար չդատենք, հապա աւելի այս որոշումը ըրէք միտքերնուդ մէջ՝ խոչ կամ գայթակղութիւն չդնել եղբօրը։ 14—Ձայս գիտեմ ու հաստատուած եմ Տէր Յի-

*Յառն. կարծեաց

†Ոմանք, Տէրը [նորէն

‡Ոմանք, ու յարութիւն առաւ, և

սուսով, որ բան մը ինքիրմէ պիտի չէ, բայց ով որ պիտի կը սեպի բան մը, անոր պիտի է այն։ 15—Իսկ եթէ եղբայրդ համար քու եղբայրդ տրամին, այ դուն սիրով չվարուիցար. քու կերակուրովդ մի կորսնցներ զանիկա՝ որուհամար Քրիստոս մեռաւ։ 16—Ապ չլուլայ որ ձեր բարիին համար չար խօսին։ 17—Վասն զի Աստուծոյ արքայու թիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն և խաղաղութիւն ու խրնդութիւն Հոգւով Սրբով։ 18—Քանզի եթէ մեզի այս բաներով Քրիստոսի կը ծառայէ, անիկա Աստուծոյ հաճելի է՝ ու մարդոց գովելի։ 19—Ապա ուրեմն խաղաղութեան և իրարու շինութեան եանէ բլլանք։ 20—Զբլլայ որ կերակուրի պատճառաւ Աստուծոյ գործը քակենս. ամէն բան մաքուր է. միայն թէ այն մարդուն է գէշ, որ ուրիշի պատճառ կ'ուտէ։ 21—Ազնիւ է միս չուտել և գինի չխմել, ոչ ալ բան մը որ քու եղբայրդ կը գայթակղի կամ կը սկանդալի։ 22—Դուն հաւատք ունի՞ս. զանիկա քեզի պահէ Աստուծոյ առջև. երանի՛ անոր որ իր անձը չդատապարտեր անով, զոր ինք *կ'ընդունի։ 23—Բայց ան որ խրդն կ'ընէ, եթէ ուտէ՝ կը դատապարտի, վասն զի ոչ թէ հաւատքով է՝ որ չուտեր, քանզի ինչ բան որ հաւատքով չէ՝ մեղք է։

ԳԼ. ԺԳ

Պէտք է մեզի որ կարող ենք՝ տկարներուն տկարութիւնը վերցնել, և ոչ թէ դուն մեր անձին հաճոյ բլլալ։ 2—Հապա մեզմէ ամէն մէկը չինութեան համար իր ընկերին հաճոյ բլլայ բարի բաներու մէջ։ 3—Քանզի Քրիստոս ալ ոչ թէ իր անձին հաճոյ եղաւ, հապա ինչպես գրուած է, Քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս ինկան։ 4—Վասն զի ինչ որ առաջուընէ գրուեցաւ, մեր սորվելուն համար գրուեցաւ, որպէս զի համբերութիւնով ու Գիրքերուն մխիթարութիւնովը յոյս ունենանք։ 5—Ու համբերութեան ու մխիթարութեան Աստուածը ձեզի իրարու հետ

*Կամ, կը փորձէ

միաբանութիւն ընծայէ Քրիստոս Յիսուսի համեմատ։ 6—Որպէս զի մէկ բերնով մեկ բերնով փառաւորէք զԱստուած ու մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի Հայրը։ 7—Ասոր համար մէկզմէկդ ընդունեցէք, ինչպէս որ Քրիստոս ալ *մեզ ընդունեց Աստուծոյ փառքին համար։ 8—Բայց կ'ըսեմ թէ Յիսուս Քրիստոս թլփատութեան պաշտօնեայ բլլաւ ճշմարտութեանը համար, որպէս զի նախահայրերուն տրուած խոստումները հաստատէ։ 9—Սակայն հեթանոսները ողորմութեան համար գովաստ փառաւորին. ինչպէս գրուած է, Ասոր համար ազգերուն մէջ քեզ պիտի գովեմ, և քու անուանդ սաղմոս պիտի երգեմ։ 10—Ու դարձեալ կ'ըսէ թէ, Ով ազգեր, անոր ժողովուրդին ուրախութիւն եղէք։ 11—Ու դարձեալ թէ, Օրհնեցէք Տէրը, ով բոլոր ազգեր, ու գովեցէք զանիկա, ով բոլոր ժողովուրդներ։ 12—Ու դարձեալ Եսայի կ'ըսէ, Յեսսէի մէկ արմատը պիտի բլլայ, ու ան որ ազգերուն իշխան պիտի կանգնի, ազգերը անոր պիտի յուսան։ 13—Արդ յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւնով հաւատալուն մէջ, որպէս զի առատանաք յուսով Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը։

14—Ես ինքնս ալ հաւատացած եմ ձեզի համար, իմ եղբայրներս, որ դուք լեցուն էք բարութիւնով, լեցուած էք ամէն գիտութիւնով, և կրնաք ու կզուկ խրատել։ 15—Սակայն մէկ կողմանէ համարձակաբար գրեցի ձեզի, իմ եղբայրներս, որպես թէ միտքերնիդ ձգելով՝ ես շնորհքը այն շնորհքին պատճառս որ Աստուծմէ ինծի տրուած է, 16—Որպէս զի ես Յիսուս Քրիստոսի սպասաւորը բլլամ հեթանոսներուն մէջ, և Աստուծոյ աւետարանը մատակարարեմ, որպէս զի հեթանոսներուն ընծայուելիք ընդունելի բլլայ՝ Սուրբ Հոգիով սրբուելով։ 17—Ուստի Աստուծոյ քով պարծանք ունիմ Քրիստոս Յիսուսով։ 18—Վասն զի չեմ համարձակիր խօսիլ այն բաներէն մէկը, զոր Քրիստոս իմ ձեռքս գործած չէ հեթանոսները հնազանդեցնելու համար՝ խօսքով ու գործով, 19—Նշանաներու ու հրաշքներու զօրութիւնով, *Աստուծոյ Հոգւոյն զօրութիւնովը. այնպէս որ ես Երուսաղէմէ †մինչև Իլլիւրիկոս շրջան ընդունելի մինչև Աւետարանը լեցուցի։ 20—Այդպէս խանդաղատ աւետարանը քարոզել, ոչ թէ ուր որ Քրիստոսի անուանը յիշուած էր, որ չրլլայ թէ ուրիշի մը ‡շէնած վրայ չինեմ։ Հապա ինչպէս գրուած է թէ, 21—Որոնց չպատմեցաւ անոր վրայով՝ պիտի տեսնեն, ու որոնք չլսեցին՝ պիտի խելամտին։ 22—Անոր համար ալ շատ անգամ եղայ ձեզի գալէ. 23—Բայց հիմա որ այս կողմերը ա՛լ բնծի տեղ չկայ, ու շատ տարիներէ ի վեր խիստ կը փափաքիմ ձեզի գալ, 24—երբ գնամ ի Սպանիա երթալու, ձեզ կը յուսամ որ անցնելու ատենս ձեզ տեսնեմ, ու ձեզմէ յառաջիմ հոն երթալուս, եթէ առաջ քիչ մը ձեզմով լեցուիմ։ 25—Բայց հիմա Երուսաղէմ կ'երթամ սուրբերուն պաշտօնավարելու։ 26—Վասն զի Մակեդոնացիք և Աքայեցիք յօժարեցան որ Երուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ մը նուագարանութիւն բնեն։ 27—Յօժարեցան, քանզի անոնց պարտական ալ են. վասն զի եթէ անոնց հոգեւոր բաներուն հաղորդ եղան հեթանոսները, կը պարտաւորին որ հաղորդութիւն բնեն անոնց՝ մարմնաւոր բաներու մէջ ալ։ 28—Ուրեմն ասիկա կատարելով, ու կնքելով անոնց այս պտուղը, ձեզմէ Սպանիա պիտի անցնիմ։ 29—Ու գիտեմ որ իմ ձեզի գալս առենս Քրիստոսի †աւետարանին լեցուն օրհնութիւնովը պիտի գամ։

30—Ձեզի կ'աղաչեմ, եղբայրներս, մեր Տէր Յիսուս Քրիստոսով ու Հոգւոյն սիրովը, որ ինծի հետ պատերազմիկիդ բլլաք յԱստուած ինծի համար, 31—Որպէս զի Հրէաստանի մէջ հաւատքի չհնազանդողնե-

*Ոմանք, Սուրբ

†Ոմանք, ձեզի պիտի գամ. վասն զի

‡Ոմանք ըսածին [կը յուսամ

բէն ապաստիմ, ու իմ նրանագիմ ընչ-
ից ապաստարան թիւնս աւրբերան ըն-
դունելի լլայ, 32—Որպես զի Աստուծոյ
կամքովը ուրախ թիւմբ ձեզի գալով՝
ձեզի հետ հանգչիմ։ Ու խաղաղութեան
Աստուածը ձեր ամենուն հետը լլայ։ Ամէն։

Գլ. ԺԶ

Ձեզի կը յանձնեմ մեր քոյր փիբէ քոյրը,
որ կենդրոյի եկեղեցւոյն սպասաւորն է։
2—Որպես զի ընդունիք Տէրոջմով՝ ինչպէս սուրբերուն արժան է։ ու
անոր խնամք տանիք ինչ բանի մէջ որ
ձեր աջոյնիը կարօտի. քանզի ինքը ալ
շատերու խնամք տարաւ, ու ինծի ալ։

3—Բարև ըրէք Պրիսկիլի ու Ակիւղա-
սի՝ Քրիստոս Յիսուսով իմ գործակից-
ներուս։ 4—Որոնք իմ կեանքիս համար
իրենց պարանոցները տուին. որոնցմէ
ոչ թէ միայն ես շնորհակալ կ'ըլլամ,
հապա հեթանոսներուն բոլոր եկեղեցի-
ներն ալ։) 5—Ու անոնց տանը մէջի
եկեղեցիին ալ։ Բարև ըրէք նպենետոս
իմ սիրելիիս, որ *Ասիոյ առաջին
պտուղն մըն է Քրիստոսի։ 6—Բարև ըրէք
Մարիամի, որ մեր վրայ շատ աշխատե-
ցաւ։ 7—Բարև ըրէք Անդրոնիկոսի ու
Ցունիասի, իմ ազգականներուս և գե-
րութեան ընկերներուս, որոնք առաք-
եալներուն մէջ երեւելիներ են, որոնք
ինծմէ ալ առաջ Քրիստոսի եղան։ 8—
Բարև ըրէք Ամպղիա իմ սիրելիիս Տէ-
րոջմով։ 9—Բարև ըրէք Ուրբանոս մեր
գործակիցին Քրիստոսով, ու Ստաքիս իմ
սիրելիիս։ 10—Բարև ըրէք Ապելէսի
որ ընտրեալ է Քրիստոսով։ 11—Բարև
ըրէք անոնց որոնք Արիստոբուղոսի
տունէն են։ Բարև ըրէք Հերովդիոն իմ
ազգականիս։ Բարև ըրէք անոնց որոնք
Նարկիսի տունէն են, Տէրոջմով։ 12—
Բարև ըրէք Տրիփոնեի ու Տրիփոսէի,
Տէրոջմով աշխատողներուն։ Բարև ըրէք
Պերսիդէ սիրելիին, որ շատ աշխատեցաւ
Տէրոջմով։ 13—Բարև ըրէք Ռուփոսի,
Տէրոջմով ընտրեալին, ու անոր մօրը
և իմին։ 14—Բարև ըրէք Ասինկրիտոսի,
Փլեգոնի, Երմասի, Պատրոբասի,
Երմիսի ու անոնց հետ եղող եղբայր-
ներուն։

*Ոմանք, Ասիայէ

15—Բարև ըրէք Փիղոդոգոսի
ու Յուլիայի, Ներէոսի ու անոր քրոջը,
և Ողիմպասի ու անոնց հետ եղող բոլոր
սուրբերուն։ 16—Բարև ըրէք իրարու
սրբութեան համբոյրով։ Բարև կ'ընեն
ձեզի Քրիստոսի [բոլոր] եկեղեցիները։

17—Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ,
որ գիտէք այնպիսիները որոնք մեր
սորված վարդապետութենէն դուրս
հերձուածողութիւններ ու գայթակղու-
թիւններ կ'ընեն, և անոնցմէ հեռ կե-
ցէք։ 18—Վասն զի այնպիսիները մեր
Տէրոջը *Քրիստոսի չեն ծառայեր, հա-
պա իրենց որովայնին. և անոյշ խօսքե-
րով ու գովութիւններով պարզամիտ-
ներուն սիրտերը կը խաբեն։ 19—Բան-
զի ձեր հնազանդութիւնը ամենուն հա-
սած է. ուստի ձեր վրայ ուրախ եմ.
բայց կ'ուզեմ որ դուք խելացի ըլ-
լաք բարիին, ու միամիտ չարին։ 20—
Ու խաղաղութեան Աստուածը խորտակէ
Սատանան չուտով ձեր ոտքերուն տակ։
Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձե-
զի հետ ըլլայ։ †

21—Բարև կ'ընէ ձեզի Տիմոթէոս
իմ գործակիցս, և Ղուկիաս ու Յասոն
և Սոսիպատրոս, իմ ազգականներս։
22—(Բարև կ'ընեմ ձեզի Տէրոջմով ես
ալ Տերտիոս, որ այս Թուղթը գրեցի։)
23—Բարև կ'ընէ ձեզի Գայիոս, իմ ու
բոլոր եկեղեցիին հիւրընկալը։ Բարև
կ'ընէ ձեզի Երաստոս, քաղաքիս գան-
ձապետը, ու Կուարտոս եղբայրը։ 24—
Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր
ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

25—Աղօ. անոր, որ կարող է ձեզ
հաստատել իմ ետանգարանիս պէս ու
Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս,
այն խորհուրդին յայտնութեան պէս՝ որ
յաւիտենական ատեններէն ի վեր ծած-
կուած էր, 26—Ու հիմա յայտնուեցաւ,
ու մարգարէական գիրքերով յաւիտե-
նական Աստուծոյ հրամանով բոլոր հե-
թանոսներուն ճանչցուելու հնազանդելու համար, 27—Մի միայն
իմաստուն Աստուծոյ, Յիսուս Քրիստո-
սի միջոցով, փառք յաւիտեանս։ Ամէն։

*Ոմանք, Յիսուս Քրիստոսի
†Ոմանք կ'ասեն Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՒ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Աստուծոյ կամքովը Յիսուս
Քրիստոսի առաքեալ լլալու կանչուած,
ու Սոսթենէս եղբայրը, 2—Կորնթոսի
մէջ եղած Աստուծոյ եկեղեցւոյն, Քրիս-
տոս Յիսուսով սրբացածներուն, ուր-
բեր լլալու կանչուածներուն, այն ա-
մենուն հետ՝ որոնք ամէն տեղ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունը կը կանչեն, Ի-
րենցը ու մերը։ 3—Ձեզի շնորհք և խա-
ղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն ու
Տէր Յիսուս Քրիստոսէ։

4—Ամէն տեսէն իմ Աստուծմէս ձե-
զի համար կը գոհանամ Աստուծոյ շնորհ-
քին վրայ, որ ձեզի տրուած է Քրիս-
տոս Յիսուսով։ 5—Որ դուք ամով ա-
մէն բանի մէջ հարստացաք ամէն խօս-
քով և ամէն գիտութիւնով։ 6—Ինչ-
պէս Քրիստոսի վկայութիւնը ձեր մէջ
հաստատուեցաւ։ 7—Որպէս զի դուք
բնաւ չնորհքով մըն ալ չետպակիք՝ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի յայտնուելուն
սպասելով։ 8—Որ նաև ձեզ պիտի հաս-
տատէ մինչև վերջը՝ անմեղադրելի լլա-
լու մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը։
9—Հաւատարիմ է Աստուած, որով
կանչուեցաք հաղորդ լլալու իր Որդ-
ւոյն, մեր Տէր Յիսուս Քրիստոսի։

10—Ձեզի կ'աղաչեմ, եղբայրներ,
մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը,
որ միաբանի խօսքը ունենաք ամենդ,
ու երկպառակութիւններ չլլան ձեր
մէջ. հապա դուք մէկ միտքի ու մէկ
խորհուրդի վրայ *հաստատուած լլաք։
11—Վասն զի ձեզի համար ինծի յայ-
տնուաւ, եղբայրներ, Քղոէի տուներէն
եղողներէն, Քէ ձեր մէջ հակառակու-
թիւններ կան։ 12—Չիմ ըսիս կը զրու-
ցեմ, որ ձեզմէ ամէն մէկը կ'ըսէ եղբ
Քէ ես Պօղոսեան եմ, ու ես՝ Քէ ես Ա-
պողոսեան, և ուրիշը՝ Քէ ես Կեփա-
եան, ու ես՝ Քէ ես Քրիստոսեան։
13—Միթէ Քրիստոս բաժնուա՞ծ է.
միթէ Պօղո՞ս խաչը եղաւ ձեզի համար,
կամ Քէ Պօղոսի անունով մկրտուե-
ցաք։ 14—Կը գոհանամ Աստուծմէ որ
ձեզմէ մէկը չմկրտեցի, միայն Քէ Կրիս-
պոսը ու Գայիոսը. որպէս զի մէկը չըսէ
15—Քէ իմ անունովս մկրտեցի։ 16—
Իրաւ, Ստեփանեսի ընտանիքն ալ մկրտ-
եցի. ալ ուրիշ մէկը չեմ գիտեր ա-
մենեւին Քէ մկրտեցի։

17—Վասն զի Քրիստոս զիս մկրտե-
լու չղրկեց, հապա աւետարանը քարո-
զելու, ոչ թէ խօսքերու ճարտարու-
թիւնով, որպէս զի Քրիստոսի խաչը ա-
չինչ չըլլայ։ 18—Քանզի խաչին քարո-
զութիւնը կորուստներուն յիմարու-
թիւն է, բայց մեզի փրկուածներուս Աս-
տուծոյ զօրութիւնն է։ 19—Վասն զի
գրուած է, Խնամուններուն խնամու-
թիւնը պիտի կորնչեմ, ու հանճա-
րեղներուն հանճարը պիտի խափանեմ,
20—Ո՞ւր է խնամուն, ո՞ւր է գպիր-
րը, ո՞ւր է այս աշխարհին փնդռտը. չէ՞
որ Աստուած յիմարեցուց այս աշխար-
հին իմաստութիւնը։ 21—Քանզի որով-
հետև Աստուծոյ իմաստութիւնովը աշ-
խարհ չճանչցաւ զԱստուած էր իմաս-
տութիւնովը, Աստուած հաճեցաւ քա-
րոզութեան յիմարութիւնովը հաս-

*Յոան. կատարեալ գործուած

առաքեալները ապրեցնել։ 22—Վասն զի Հրեաները նշան կ'ուզեն, և Յոյները իմաստութիւն կը փնտռեն. 23—իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, Հրեաներուն գայթակղութիւն, ու Յոյներուն յիմարութիւն. 24—Բայց ա-նոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն և թէ՛ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ իմաստութիւնը, 25—վասն զի Աստուծոյ յիմարը մարդոցմէ աւելի իմաստուն է, և Աստուծոյ տկարը մարդոցմէ աւելի զօրաւոր է. 26—Արդարև դուք ձեր կոչումը կը տեսնէք, եղբայրներ, որ ոչ թէ մարմնի կողմանէ շատ իմաստուն-ներ, և ոչ թէ շատ զօրաւորներ, և ոչ թէ շատ ազնուականներ կանչուեցաք. 27—Բայց Աստուած աշխարհս յիմար-ները ընտրեց, որպէս զի ամօթով բնէ իմաստուններըր. ու աշխարհիս տկար-ները ընտրեց Աստուած, որպէս զի ա-մօթով բնէ զօրաւորները. 28—և ու-խարհս ցածագիները ու անարգները ընտրեց Աստուած, և այնիններ, որ-պէս զի բան մը եղողները խափանէ. 29—Որպէս զի մարմին մը չպարծի Աստուծոյ առջև. 30—Իսկ դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ մեզի Աստուծմէ իմաստութիւն, արդարու-թիւն, սրբութիւն և փրկութիւն եղաւ. 31—Որպէս որ, ինչպէս գրուած է, Ան որ կը պարծենայ, Տէրոջմով թող պարծենայ։

Գլ. Բ

Ե. Ես, եղբայրներ, որ ձեզի եկայ, ոչ թէ խօսքի կամ իմաստութեան գե-րազանցութիւնով մը Աստուծոյ վկա-յութիւնը ձեզի յայտնելու եկայ։ 2—Վասն զի ես միտք չդրի ձեր մէջ ու-րիշ բան մը գիտնալ, բայց միայն Յի-սուս Քրիստոսը, ու զայն՝ խաչը եղած։ 3—Ես ես տկարութիւնով ու վախով և շատ դողով ձեր քով կեցայ. 4—Ու իմ խօսքս և քարոզութիւնս ոչ թէ *մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, հապա Հոգւոյն և զո-

*Յոռնե՛ լեզուին

բութեան ապացուցութիւնովը. 5—Որ-պէս զի ձեր հաւատքը մարդոց իմաս-տութիւնովը չըլլայ, հապա Աստուծոյ զօրութիւնովը։ 6—Սակայն կատարեալ-ներուն հետ իմաստութիւն կը խօսինք, բայց ոչ թէ այս աշխարհի իմաստու-թիւնը, և ոչ այս աշխարհի այնչասա-լու իշխաններուրը. 7—Հապա Աստու-ծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք խորհուրդով, զոր աշխարհէ առաջ սահ-մանեց Աստուած մեր փառքին համար. 8—Զոր այս աշխարհի իշխաններէն մէ՛կը չճանչցաւ. քանզի եթէ ճանչցած ըլլա-յին, ալ փառաց Տէրը խաչը չէին հաներ. 9—Հապա ինչպէս գրուած է, Աչն բա-ներըր զոր նը աչք չէ տեսեր և ականջ չէ լսեր ու սրտով մարդու սրտին մէջ չեն բնկներ, Աստուած զինք սիրողներուն պատրաստեց։ 10—Բայց Աստուած մեզի յայտնեց իր Հոգիովը, վասն զի Հո-գին ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորանկ բաներն ալ։ 11—Վասն զի մարդոցմէ ո՞վ գիտէ մարդուն բաները, բայց միայն մարդուն հոգին որ իր մէջ է. նոյնպէս ալ Աստուծոյ բաները մէ՛կը չգիտեր, բայց միայն Աստուծոյ Հոգին։ 12—Իսկ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, հապա այն Հոգին որ Աստուծմէ է. որպէս զի մենք ճանչ-նանք այն բաները որոնք Աստուծմէ արուեցան մեզի. 13—Զորոնք նաև կը խօսինք, ոչ թէ մարդկային իմաստու-թեան սորվեցուցած խօսքերովը, հապա *Հոգիին սորվեցուցածներովը, և Հոգեւոր բաները Հոգեւորի հետ կը յարմարցնենք։ 14—Իսկ չնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունի, վասն զի անոնք իրեն յիմարութիւն են, ու չկրնար ալ գիտնալ, վասն զի Հոգե-ւոր կերպով կը քննուին։ 15—Բայց ան որ Հոգեւոր է՝ ամէն բան կը քննէ, ու ինք մէկէ՛ն չքննուիր։ 16—Քանզի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը, որ անոր խրատ տուզ ու ըլլայ, բայց մենք Քրիստոսի միտքը ունինք։

*Յոռնե՛ Սուրբ Հոգիին

Գլ. Գ

Ե. Ես, եղբայրներ, չկրցայ խօսիլ ձեզի՝ որպէս թէ հոգեւորներու, հապա որպէս թէ մարմնաւորներու, շատ որպէս թէ Քրիստոսով ոտոյտց. ձեզի կաթ կեր-ցուցի և ոչ թէ կերակուր, վասն զի դեռ կարող չէիք, ու հիմա ալ տակա-ւին կարող չէք, վասն զի դեռ մարմնա-ւոր էք. 3—Որովհետև տակաւին ձեր մէջ նախանձ ու հակառակութիւն և բաժանումներ կան, չէ՞ որ մարմնաւոր էք, ու մարդկօրէն կը քալէք. 4—Քանզի երբ մէկը կ'ըսէ թէ ես Պօղոսեան եմ, և միւսը՝ թէ ես Ապո-ղոսեան, չէ՞ որ մարմնաւոր էք. 5—Ու-րեմն ո՞վ է Պօղոս կամ ո՞վ է Ապողոս, պաշտօնեաներ են, որոնցմով հաւատա-ցիք, և ինչպէս Տէրը տուաւ անոնց ա-մէն մէկուն. 6—Ես տնկեցի, Ապողոս ջուր տուաւ, բայց Աստուած աճեցուց. 7—Ուստի ոչ տնկողը բան մըն է, և ոչ ջուր տուողը, հապա Աստուած՝ որ աճե-ցուց. 8—Տնկողը ու ջուր տուողը մէկ են, և ամէն մէկը իր վարձքը պիտի առնէ իր աշխատութեան չափովը. 9—Վասն զի մենք Աստուծոյ գործակից ենք. դուք Աստուծոյ հնակութիւնն էք, Աստուծոյ շինութիւնն էք. 10—Աստու-ծոյ շնորհքին չափովը, որ ինծի տուեց-ցաւ, իմաստուն վարպետապետի մը պէս հիմ դրի, բայց ուրիշ վրայ շինողը ու-րիշ է. միայն թէ ամէն մէկը թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ. 11—Վասն զի մէկը ա՛լ ուրիշ հիմ չկրնար դնել, զոր արդէն դաս, որ է Յիսուս Քրիստոս. 12—Եթէ մէկը այս հիմին վրայ կը շինէ ոսկի, արծաթ, պատուա-կան քարեր, փայտ, խոտ, եղէգ. 13—Ամէն մէկուն գործը յայտնի պիտի ըլ-լայ. քանզի օրը երևան պիտի հանէ, վասն զի կրակով պիտի յայտնուի. և ամէն մէկուն գործին ինչ տեսակ ըլլալը կրակը պիտի փորձէ. 14—Եթէ մէկուն շինած գործը ձեղլու ըլլայ, ինք վարձք պիտի առնէ. 15—Ու եթէ մէկուն շի-նածը այրելու ըլլայ, անիկա ձեղաս պիտի կրէ. բայց ինք պիտի ազատի, սակայն այնպէս՝ իբր թէ կրակի միջէն. 16—Չէ՞ք գիտեր որ Աստուծոյ տաճար էք դուք, և Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնա-կած է. 17—Եթէ մէկը Աստուծոյ տա-ճարը կ'ապականէ, Աստուած զանիկա պիտի ապականէ, վասն զի Աստուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք։

18—Ձրլլայ որ մէկը ինքզինք խա-բէ. եթէ ձեզմէ մէկը գինք իմաստուն կը սեպէ այս աշխարհի մէջ, թող յի-մար ըլլայ՝ որպէս զի իմաստուն ըլլայ. 19—Վասն զի այս աշխարհի իմաստու-թիւնը Աստուծոյ առջև յիմարութիւն է. վասն զի գրուած է թէ Անիկա իմաստուններըր իրենց խորամանկու-թեան մէջ կը բռնէ։ 20—Ու պարձալ՝ թէ Տէրը գիտէ իմաստուններուն խոր-հուրդներըր, որոնք ունայն են. 21—Ուրեմն մէ՛կը թող չպարծենայ մարդոց-մով. 22—Վասն զի ամէն բան ձերն է. թէ՛ Պօղոս, թէ՛ Ապողոս, թէ՛ կեփաս, թէ՛ աշխարհ, թէ՛ կեանք, թէ՛ մահ, թէ՛ ներկայ բաներըր և թէ՛ գալիքնե-րըր. ամէն բան ձերն է. 23—Դուք ալ Քրիստոսի էք, և Քրիստոս՝ Աստուծոյ։

Գլ. Դ

Թող մարդիկ մեզ այսպէս սեպեն, որպէս թէ Քրիստոսի սպասաւորները ու Աստուծոյ խորհրդներուն անտեսները. 2—Ուստի անտեսներուն մէջ կը փնտռ-ուի որ մէկը հաւատարիմ գտնուի. 3—Բայց ինծի ասիկա աչքիս բան մըն է, որ ձեզմէ դատուիմ, կամ մարդոց *դա-տաստեքենէն, մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր. 4—(Վասն զի ես իմ անձիս վրայով բան մը չեմ գիտեր. բայց ոչ թէ ասով կ'արդարանամ.) Հա-պա ինծի դատողը Տէրն է. 5—Ուրեմն ժամանակին առաջ դատաստեքիւն մի ընէք, մինչև գայ Տէրը՝ որ խաւարին գաղտնիքը ի լոյս պիտի հանէ, ու սիր-տերուն խորհրդները յայտնի պիտի բնէ. և այն ատեն ամէն մէկուն գովա-քիւնը Աստուծմէ պիտի ըլլայ։

6—Ասոնք օրինակ բերի, եղբայրներ, իմ վրաս ու Ապողոսի վրայ ձեզի հա-մար, որպէս զի դուք մեզմէ սորվիք

*Յոռնե՛ օքուրձնէն

հաչդ-ը չգայ-վ գրաւածէն առնլի բան մը չխորհիլ, որ չլլայ քէ ձեզմէ մէկը հպարտանայ մէկուն համար ուրիշի մը դէմ. 7—Քանզի ա՛վ է ան որ քեզ տարբեր կ'ընէ «էրէնէէն». և ի՞նչ ունես զոր չես առեր դուն. և եթէ առեր, ինչո՞ւ չառածի պէս կը պարծենաս։

8—Արդէն կշտացած եք, արդէն հարստացաք, առանց մեզի թագաւորեցիք. և երանի՛ քէ թագաւորէիք, որպէս զի մենք ալ ձեզի հետ թագաւորէինք։ 9—Քանզի կարծեմ քէ Աստուած յառիններ բրաւ մեզ առաքեալներս մահապարտներու նման. վասն զի տեսարան եղանք աշխարհի և հրեշտակներուն ու մարդոց։ 10—Մենք յիմարներ ենք Քրիստոսի համար, և դուք իմաստուններ՝ Քրիստոսով. մենք տկար՝ և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝ ու մենք անարգեալ։ 11—Մինչև այս օրուան տահս կ'անօթենանք ալ, կը ծարաւենք ալ, մերկ ալ կը մնանք, կը ծեծուինք ալ, աստանդական ալ կը պարապինք։ 12—Ու մեր ձեռքերով գործելով կ'աշխատինք. երբ մեզ կը նախատեն՝ կ'օրհնենք. երբ կը հալածեն՝ կը համբերենք։ 13—Երբ գէշ կը խօսին՝ կ'ազաչենք. իբրև աշխարհի ապտակուածքներ՝ ամէնուն անարգը բլլալով մինչև հիմա։ 14—Այս բաները կը գրեմ՝ ոչ թէ ձեզ ամչցնելու համար, հապա կը խրատեմ չեղ սիրելի որդիներուս պէս։ 15—Վասն զի Քրիստոսի մէջ տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով, բայց ոչ թէ շատ հայրեր ոռնչէ, վասն զի Քրիստոս Յիսուսով ես ձեզ ծնայ աւետարանով։ 16—Ուրեմն կ'ազաչեմ ձեզի, ինծի նմանող եղէք։ 17—Ասոր համար ձեզի զրկեցի Տիմոթէոսը, որ իմ սիրելի որդիս է, ու Տէրոյմով հաւատարիմ. որ ձեր միտքը պիտի ձգէ Քրիստոսով իմ ճամբաներս, ինչպէս ամէն տեղ ամէն եկեղեցիներուն մէջ կը սորվեցնեմ։ 18—Մէկ քանիները հպարտացան, որպէս թէ ես պիտի չգամ ձեզի։ 19—Բայց չուտով պիտի գամ ձեզի, եթէ Տէրը կամենայ, և պիտի հասկնամ ոչ թէ հպարտացողներուն խօսքերը, հապա զօրութիւնը։ 20—Վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը ոչ թէ խօսքով է, հապա զօրութիւնով։ 21—Ի՞նչպէս կ'ուզեք. գաւազանո՞վ գամ ձեզի, թէ սիրով և հեզութեան հոգիով։

Գլ. Ե

Ա՛ն հասարակ կը լսուի ձեր մէջ պոռնկութիւն բլլալ. և այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսներուն մէջ ալ չկայ, որպէս թէ մէկը իր հօրը կինը առնէնայ։ 2—Ու դուք հպարտացեր եք, և ոչ մանաւանդ սուգ բրիք, որ ձեր մէջէն վերցուի այս բանը։ 3—Վասն զի թէպէտ ես մարմնով հեռու եմ, բայց հոգիով ներկայ եմ. ուստի հիմա որպէս թէ ներկայ բլլալով՝ որոշեցի, որ այս բանը ընողը, 4—երբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը մեկտեղ ժողովիք դուք ու իմ հոգիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնովը, 5—Սատանային մատնէք, մարմնին կորուստը հասնելու համար, որպէս զի հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը։ 6—Ձեր պարծանքը ազէկ չէ. չէ՞ք գիտեր որ փիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ։ 7—Մաքրեցէք հին խմորը մէկդի, որպէս զի բլլաք նոր զանգուած, ինչպես անխմոր էք. վասն զի Քրիստոս մեր զատիկը մեզի համար զոհուեցաւ։ 8—Ուստի սան կատարենք, ոչ թէ հին խմորով և ոչ թէ չարութեան ու անզգամութեան խմորովը, հապա անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացովը։ 9—Ինչպէս ձեզի թուղթին մէջ, որ պոռնիկներուն հետ չխառնուիք։ 10—Ու էրտե՛ ոչ թէ այս աշխարհի պոռնիկներուն հետ, կամ ագահներուն հետ, կամ յափշտակողներուն հետ, կամ կռապաշտներուն հետ. ապա թէ ոչ՝ պէտք էր որ դուք աշխարհէ դուրս ելլէիք։ 11—Բայց հիմա ձեզի գրեցի չխառնուիլ, այսինքն եթէ մէկը եղբայր բռնուած՝ կա՛մ պոռնիկ բլլայ, կա՛մ ագահ, կա՛մ կռապաշտ, կա՛մ նախատող, կա՛մ գինով, կա՛մ յափշտակող, այնպիսին հետ հաց ալ չուտել։ 12—Վասն զի ի՞նչ պէտք է ինծի դատելու*ներս փորձ ալ կերակրելուները. բայց Աստուած զայս ալ, գանգէտ ալ պիտի խափանէ. իսկ մարմինը պոռնկութեան համար չէ, հապա Տէրոջը, ու Տէրը՝ մարմինին համար։ 14—Ու Աստուած որ Տէրը յարուցանեց, մեզ ալ պիտի յարուցանէ իր զօրութեամբ։ 15—Չէ՞ք գիտեր որ ձեր մարմիններդ Քրիստոսի անդամներն են. ուստի Քրիստոսի անդամները առնելով՝ պոռնիկի անդամնե՞ր բնեմ. քա՛ւ լիցի։ 16—Չէ՞ք գիտեր թէ ան որ պոռնիկի կը մտերնայ, մե՛ր հետ մէկ մարմին կ'ըլլայ. քանզի ՝էրէ՛ը կ'ըսե, երկու ալ մէկ մարմին պիտի բլլան։ 17—Իսկ ան որ Տէրոջը կը մտերնայ, մե՛ր հետ մէկ հոգի կ'ըլլայ։ 18—Պոռնկութենէ փախէք. ամէն մեղք զոր մարդ կը գործէ, իր մարմինէն դուրս է. բայց ան որ կը պոռնկի, իր մարմինին դէմ կը մեղանչէ։ 19—Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջ է, զոր Աստուծմէ ունիք, ու դուք ձեր անձին տէրը չէք. 20—Քանզի գնով ծախու առնուեցաք. ուստի փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ, որոնք Աստուծոյ են։

Գլ. Զ

Ձեզմէ մէկը, եթէ բան մը ունենայ իր բնկերին հետ, կը համարձակի՞ անիրաւներուն առջև գառնալ, ու ոչ թէ սուրբերուն առջև. 2—Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի գառնեն աշխարհը. ու եթէ աշխարհ ձեզմէ կը գառնայ, արեւմի արժանի չէ՞ք գուք չնչին գառեր դատելու։ 3—Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակները պիտի գառնենք. ա՞ր կը մնան հապա աշխարհային բաները։ 4—Ուրեմն եթէ ձեր մէջ աշխարհային գառեր ունիք, եկեղեցիին անարգները զեզի գառնալ կը տեսնեք։ 5—Ձեզ ամչցնելու համար կը գրացնեմ. այդչափ եղաւ որ ձեր մէջ իմաստուն մը չկայ, որ կարող բլլայ իրաւունքը որոշել իր եղբայրներուն մէջ. 6—Հապա եղբայր եղբօր հետ գառի կը մտնէ, այն ալ անհաւատներուն առջև։ 7—Արդարև բոլորովին չանցուածք մըն է այս ձեր մէջ, որ իրարու հետ գառեր ունիք. ինչո՞ւ մանաւանդ զուք անիրաւութիւն չէք կրեր, ինչո՞ւ մանաւանդ զուք զրկանք չէք քաշեր։ 8—Հապա դուք անիրաւութիւն ու զրկանք կ'ընէք, և այն ալ եղբայրներուն։ 9—Չէ՞ք գիտեր որ անիրաւները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն. մի խաբուիք. ոչ պոռնիկները, ոչ կռապաշտները, ոչ շնացողները, 10—ոչ իգացածները, ոչ արուագործները, ոչ գողերը, ոչ ագահները, ոչ գինեմոլները, ոչ նախատողները՝ ոչ յափշտակողները Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն։ 11—Ու դուք մէկ ժամանակ այնպիսիներ էիք. բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք, բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը ու մեր Աստուծոյ Հոգիովը։

12—Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ես բանի մը իշխանութեան տակ պիտի չըլլամ։ 13—Կերակուրները փորին համար են, փորն ալ կերակուրներուն. բայց Աստուած զայս ալ, գանգէտ ալ պիտի խափանէ. իսկ մարմինը պոռնկութեան համար չէ, հապա Տէրոջը, ու Տէրը՝ մարմինին համար։ 14—Ու Աստուած որ Տէրը յարուցանեց, մեզ ալ պիտի յարուցանէ իր զօրութեամբ։ 15—Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները անդամներն են. ուստի Քրիստոսի անդամները առնելով՝ պոռնիկի անդամնե՞ր բնեմ. քա՛ւ լիցի։ 16—Չէ՞ք գիտեր թէ ան որ պոռնիկի կը մտերնայ, մե՛ր հետ մէկ մարմին կ'ըլլայ. քանզի ՝էրէ՛ը կ'ըսե, երկու մարմին պիտի բլլան։ 17—Իսկ ան որ Տէրոջը կը մտերնայ, մե՛ր հետ մէկ հոգի կ'ըլլայ։ 18—Պոռնկութենէ փախէք. ամէն մեղք զոր մարդ կը գործէ, իր մարմինէն դուրս է. բայց ան որ կը պոռնկի, իր մարմինին դէմ կը մեղանչէ։ 19—Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջ է, զոր Աստուծմէ ունիք, ու դուք ձեր անձին տէրը չէք. 20—Քանզի գնով ծախու առնուեցաք. ուստի փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ, որոնք Աստուծոյ են։

Գլ. Է

Արդ այն բաներուն համար որ գուք ինծի գրեցիք, ազէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ։ 2—Բայց պոռնկութիւնը եր՛էչէ՛չ՛ե՛ Համար ամէն մարդ քազ իր կիներ ունենայ, ու ամէն կին իր այրը քազ ունենայ։ 3—Այրը իր կնոջ քազ պարտքը վճարէ, նոյնպես կինն ալ իր երկան. 4—Կինը իր մարմինին չիշխանե, հապա այրը. նոյնպես այրն ալ իր մարմինին չիշխանե, հապա կինը. 5—Մէկզմէկ մի զրկէք, եթէ ոչ՝ միաբանութեամբ ատեն մը, ազօթքի պարապելու համար, ու նորէն իրարու գարձէք, որպէս զի Սատանայ ձեզ չփորձէ ձեր անժուժկալութեան համար։ 6—Զայս կը գրացնեմ քազ տալով՝ և ոչ թէ հրամայելով։ 7—Քանզի կ'ուզէի որ ամէն մարդիկ ինծի պէս բլլային. բայց ամէն մեկը իր պարգեւը ունի Աստուծմէ, մեկը այսպէս ու միւսը այնպէս։ 8—Բայց չամուսնա-

*Ոմանք՝ չդիտէք

ցածներուն ու արբեւաբինեբուն կ'բսեմ, Ադիկ է անոնց՝ եթէ ինծի պէս կինային։ 9—Հապա եթէ ժուժկալութիւն չունին՝ Աղ ամուսնանան, վասն զի ապիկ է ամուսնանալ քան թէ բորբոքիլ։ 10—Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ ոչ թէ ես, հապա Տէրը, որ կինը այրէն չզատուի։ 11—(Իսկ եթէ զատուի ալ՝ առանց ամուսնանալու մնայ, կամ իր երկան հետ հաշտուի.) ու այրը իր կինը Աղ չձգէ։ 12—Բայց ուրիշներուն ես կ'բսեմ, ոչ թէ Տէրը. եթէ եղբայր մը անհաւատ կինն ունենայ, ու անոր հաճելի բլլայ իրեն հետ բնակիլ, Աղ չձգէ զանիկա։ 13—Եւ կինն որ անհաւատ այր ունենայ, ու անոր հաճելի բլլայ իրեն հետ բնակիլ, Աղ չձգէ զանիկա։ 14—Վասն զի անհաւատ այրը սրբուած է կնոջմովը, և անհաւատ կինը սրբուած է այրովը. ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ պիտի բլլային, բայց հիմա սուրբ են։ 15—Իսկ եթէ անհաւատը զատուի՝ Աղ զատուի. եղբայր մը կամ քոյր մը այնպիսի պարագաներու մէջ գերի չէ, սակայն Աստուած խաղաղութեան կանչեց մեզ։ 16—Քանզի ի՞նչ գիտես դուն, ովկին, թերեւս փրկես պիտի ապրեցնես. կամ դուն ի՞նչ գիտես, ովկայր, թերեւս փրկեդ պիտի ապրեցնես։ 17—Միայն թէ ամէն մէկուն ինչպես Տէրը բաժնեց, ամէն մէկը ինչպես Աստուած կանչեց, այնպես Աղ երթայ, ու ամէն եկեղեցիներուն մէջ ես այսպէս պատուէր կու տամ։

18—Եթէ թլփատած մէկը հաւատի կանչուեցաւ, Աղ նորէն անթլփատ չբլլայ. չթլփատած ներն մէկը կանչուեցաւ, Աղ չթլփատուի։ 19—Վասն զի թլփատութիւնը բան մը չէ, ու անթլփատութիւնը բան մը չէ. հապա Աստուծոյ պատուիրաններուն պահպանութիւնը ահագին է։ 20—Բայց ամէն մէկը ի՛նչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, Աղ անոր մէջ կենայ։ 21—Ծառա՞յ կանչուեցար, հոգ չընէս քեզի. բայց եթէ կրնաս ազատ բլլալ, զայն բնաւրէ։ 22—Վասն զի այն ծառան որ Տէրոջմով կանչուած է, Տէրոջը ազատացեալն է անիկա. նոյնպէս այն ազատ որ կանչուած է, Քրիստոսի ծառան է։ 23—Գնով գնուած էք ասուածացաք, մարդոց ծառայ մի բլլաք։ 24—Եղբայրնե՛ր, ամէն մէկը ի՛նչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, Աղ անոր մէջ կենայ Աստուծոյ առջեւ։

25—Բայց կոյսերուն համար Տէրոջմէն հրաման մը չունիմ, միայն թէ Տէրոջմէն հաւատարիմ բլլալու պարգեւը ունեցած մը կու խրատեմ։ 26—Ուրեմն ես կը սեպեմ որ ասիկա ապիկ է հիմակուան նեղութեանը համար, այսինքն ապիկ է մարդուս որ այսպէս բլլայ։ 27—Կապուած ես կնոջ, մի փնտռեր արձակուիլ. արձակուա՞ծ ես կնոջմէ, մի փնտռեր կին։ 28—Իսկ եթէ ամուսնանաս՝ չմեղանչեցիր, և եթէ կոյս ամուսնանայ՝ չմեղանչեց. բայց այնպիսիներուն մարմնի նեղութիւն պիտի ունենան. սակայն ես ձեզի կը խնայեմ։ 29—Բայց զայս կ'բսեմ, եղբայրներ, որ ժամանակը կարճցած է. ալ անոնք որ կին ունին՝ այնպէս բլլան որպէս թէ չունին. 30—Եւ անոնք որ կու լան՝ որպէս թէ չեն լար, ու անոնք որ կը խնդան՝ որպէս թէ չեն խնդար, և անոնք որ ծախու կ'առնեն՝ որպէս թէ չեն կրնար պահել. 31—Եւ անոնք որ աշխարհս կը գործածեն՝ որպէս թէ գէշ կերպով չեն գործածեր. վասն զի այս աշխարհի կերպարանքը կ'անցնի։ 32—Բայց ես կ'ուզեմ որ գուք անհոգ բլլաք. Վասն զի չամուսնացած մարդը Տէրոջը բաներով կը հոգայ, թէ ի՛նչպէս Տէրոջը հաճելի բլլայ։ 33—Իսկ ամուսնացածը աշխարհիս բաներով կը հոգայ, թէ ի՛նչպէս իր կնոջ հաճելի բլլայ։ 34—Եւ ամուսնացած կինը ու կոյսը կը տարբերին իրարմէ. Վասն զի կոյսը Տէրոջը բաներով կը հոգայ, որպէս զի ինք սուրբ բլլայ հոգւով ու մարմնով. իսկ ամուսնացած կինը աշխարհիս բաներով կը հոգայ, թէ ի՛նչպէս իր երկան հաճելի բլլայ։ 35—Բայց այս բանը ձեր օգուտին համար կը զրուցեմ, ոչ թէ ձեր վրայ վարմ մը ձգելու, հապա պարկեշտութեան համար ու առանց զրպանքի Տէրոջը ծառայելու համար։ 36—Իսկ եթէ մէկը ամօթ կը սեպէ իր կոյսին համար՝ եթէ չափը անցնէ և պէտք է այնպէս բլլայ, ինչ որ ի՛ուզէ՝ թող բնէ, մեղք չգործեր. թող ամուսնանան։ 37—Բայց ան որ իր սրտին մէջ հաստատ կը կենայ, ու իր վրայ հարկ մըն ալ չկայ, հապա իր կամքին վրայ իշխանութիւն ունի, ու իր սրտին մէջ այպէս որոշեր է որ իր կոյսը պահէ, աղէկ կ'բնէ։ 38—Ուստի ան որ իր կոյսը կ'ամուսնացնէ, աղէկ կ'բնէ. ու ան որ չամուսնացներ, աւելի աղէկ կ'բնէ։ 39—Կինը *կապուած է՝ այնչափ ժամանակ որ իր այրը ողջ է. ապա եթէ իր այրը մեռնի, ազատ է ամուսնանալու որու որ ուզէ, միայն թէ Տէրոջմով։ 40—Բայց իմ գաղափարս նայելով՝ աւելի երանելի է եթէ այնպէս կենայ. և կարծեմ թէ ես ալ Աստուծոյ Հոգին ունիմ։

ԳԼ. Ը

Բայց կուռքերու զոհերուն վրայով՝ գիտենք որ ամէնս ալ գիտութիւն ունինք. գիտութիւնը կը հպարտացնէ, բայց սէրը չինուքիւն կ'բնէ։ 2—Եւ եթէ մէկը կը կարծէ թէ բան մը գիտէ, դեռ բնաւ բան մը չգիտեր՝ ինչպէս պէտք է գիտնալ։ 3—Իսկ եթէ մէկը զԱստուած կը սիրէ, ինք անկէ ճանչցած է։ 4—Ուստի կուռքերու զոհ ուածներուն ուտելու վրայով՝ գիտենք որ կուռք ոչինչ է աշխարհի մէջ, և որ մէկէն զատ ուրիշ Աստուած մը չկայ։ 5—Քանզի թէև բլլան ալ անուանով աստուածներ, թէ՛ երկինքը և թէ՛ երկրի վրայ, (ինչպէս կան շատ աստուածներ ու շատ տէրեր.) 6—Բայց մենք մէկ Աստուած ունինք, Հայրը, որմէ են ամէն բաները, և մենք ալ *անով. ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս, որմէ են ամէն բաները, ու մենք ալ անով։ 7—Բայց ամէնուն գով գիտութիւնը չկայ. և ոմանք կուռքի վրայով խղճմտանքի անկնելով՝ մինչև հիմա ի՛ուսանեն կուռքերու զոհուածի պէս, և իրենց խղճմտանքը, որովհետև տկար է, կը պղծուի։ 8—Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ

*Ոմանք, օրէնքով կապուած

†Կամ, անոր համար

առնէն չկիցներ. քանզի ոչ եթէ ուտենք՝ կ'աւելնանք. և ոչ եթէ չուտենք՝ կը պակսինք։ 9—Բայց զգոյշ կեցէք, որ չբլլայ թէ այդ ձեր իշխանութիւնը տկարներուն գայթակղութիւն բլլայ։ 10—Քանզի եթէ մէկը տեսնէ քեզ, որ գիտութիւն ունիս, կառաւնի մէջ տեղած նստած, չէ՞ որ այն տկար մարդուն խղճմտանքը հանդգնութիւն պիտի առնէ կուռքերու զոհուածը ուտելու, 11—Ու քու գիտութիւնովդ այն տկար եղբայրը կորսուի, որու համար Քրիստոս մեռաւ։ 12—Եւ այսպէս եղբայրներուն դէմ մեղանչելով՝ ու անոնց տկար խղճմտանքը վիրաւորելով՝ Քրիստոսի դէմ կը մեղանչէք։ 13—Ուստի եթէ կերակուրը կը գայթակղեցնէ իմ եղբայրս, մի պիտի չուտեմ յաւիտեան՝ որպէս զի իմ եղբայրս չգայթակղեցնեմ։

ԳԼ. Թ

Չէ՞ որ ես առաքեալ եմ. չէ՞ որ ես ազատ եմ. չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ուշքէն տեսայ. չէ՞ որ գուք իմ գործս Տէրոջմով։ 2—Թէպէտև ուրիշներուն առաքեալ չբլլամ ալ, բայց անտարակոյս ձեզի եմ. վասն զի իմ առաքելութեանս կնիքը գուք էք Տէրոջմով։ 3—Իմ պատասխանս ան ոնց որ զիս կը քննեն, այս է. 4—Մի՞թէ մենք իշխանութիւն չունի՞նք ուտելու և խմելու։ 5—Մի՞թէ մենք իշխանութիւն չունի՞նք Քրիստոսով քոյր եղոգ կին մը ձեզի հետ պտրտցնելու, ինչպես ուրիշ առաքեալները ու Տէրոջը եղբայրները ու Կեփաս Ի՞ընէն։ 6—Մի՞թէ ես ու Բառնաբա՞ս միայն իշխանութիւն չունինք չգործելու։ 7—Ո՞վ իր ապրուստով զինուորութիւն կ'բնէ. ո՞վ այգի կը տնկէ ու անոր պտուղէն չուտեր. կամ ո՞վ ոչխարներ կ'արածէ ու ոչխարներուն կաթէն չուտեր։ 8—Միթէ մարդկօրէ՞ն կը զրուցեմ այս բաները, կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը զրուցէ։ 9—Քանզի Մովսէսի օրէնքին մէջ ալ գրուած է, Կալի մէջ ոչխատող եզնին դունչը չկապես։ Միթէ եզներո՞ւն համար Աստուծոյ հոգն էր. 10—Չէ՞ որ մանաւանդ մեզի համար կ'ըսէ. վասն զի մեզի հա-

մաբ գրուեցաւ. արդհեան ան որ կը հերկէ՝ պէտք է յուսով հերկէ, և ան որ ցորենը կը ծեծէ՝ հետ է որ *վայելելու յուսով" ըլլ: 11—Եթէ մենք ձեզի հոգեւոր բաներ սերմանեցինք, մի՞ բան մըն է՝ եթէ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք: 12—Եթէ ուրիշները ձեր վրայ այս իշխանութիւնը ունին, չէ՞ որ ալ աւելի մենք. բայց մենք այս իշխանութիւնը չգործածեցինք, հապա ամէն բանի կը համբերենք, որպէս զի Քրիստոսի աւետարանին արգելք մը չըլլանք: 13—Չէ՞ք գիտեր որ սուրբին մէջ ծառայողները սուրբէն կ'ուտեն, — սանդակ որ սեղանին պաշտօնեաներն են՝ սեղանէն բաժին կ'առնեն: 14—Նոյնպէս ալ Տէրը հրաման տուաւ, որ աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին: 15—Բայց ես այս բաներուն մէ՛կը չգործածեցի, ոչ ալ այդ բաները գրելի որ ինծի այսպէս ըլլայ. քանզի աւելի ապրիլ է ինծի որ մեռնիմ, քան թէ մէկը իմ պարծանքս պարապ հանէ: 16—Վասն զի եթէ ես աւետարանը քարոզեմ, ինծի պարծանք մը չկայ, վասն զի իմ վրաս հարկ մըն է. մանաւանդ վայ է ինծի՝ եթէ աւետարանը չքարոզեմ: 17—Քանզի եթէ սիրկս կամաւ բնեմ, վարձք կ'ունենամ. իսկ եթէ ակամայ՝ այն ինծի յանձնուած անտեսութիւն մըն է: 18—Ուրեմն ի՞նչ վարձք կ'ըլլայ ինծի. այս է՝ ըլլայ որ քարոզելու ատենս Քրիստոսի աւետարանը ձրի ասամ, որ չըլլայ թէ աւետարանին մէջ իմ իշխանութիւնս զէշ կիրարուի գործածեմ: 19—Քանզի թէև ես ամէնէն ազատ էի, իմ անձս ամէնուն ծառայ ըրի, որպէս զի շատերը շահիմ: 20—Հրեաներուն հետ Հրեայի պէս եղայ, որպէս զի Հրեաները շահիմ. 21—Օրէնքի տակ եղողներուն հետ օրէնքի տակ եղողի պէս եղայ, [ոչ թէ ես օրէնքի տակ էի,] որպէս զի օրէնքի տակ եղողները ալ շահիմ. օրէնքի տակ չեղողներուն հետ օրէնքի տակ չեղողի պէս եղայ, (ոչ թէ ես Աստուծմէ օրէնք չունենի, հապա Քրիստոսի օրէնքին տակ էի,) որպէս զի օրէնք չունեցողներն ալ չշահիմ. 22—Տկարներուն հետ տկարի պէս եղայ, որպէս զի տկարները շահիմ. ամէնուն հետ ամէն բան եղայ, որ բնաւ կերպով մը քանիներ փրկեմ. 23—Ես ասիկա աւետարանին համար կ'ընեմ, որպէս զի անոր կցորդ ըլլամ. 24—Չէ՞ք գիտեր որ մարզարկին մէջ վազողները բոլոր կը վազեն ամէնը, բայց մէկը կ'առնէ մրցանակը. այնպէս վազեցէք որ հասնիք: 25—Եւ ամէն ոք որ կը մրցի, ամէն բանի մէջ չափաւորութիւն կը պահէ. անոնք եղծանելի պսակ առնելու համար, ես մենք՝ անեղծանելին: 26—Ուստի ես այնպէս կը վազեմ, ոչ թէ որպէս թէ անստոյգ բաներու համար. ես այնպէս բռնամարտութիւն կ'ընեմ, ոչ թէ որպէս թէ հովը ծեծելով. 27—Բայց իմ մարմինս կը ճնշեմ ու կը նուաճեմ, որպէս զի չըլլայ թէ ուրիշներուն քարոզելէս ետև՝ ես ինքս խառնի գտնուիմ:

Գլ. Ժ

Զէմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, որ մեր հայրերը ամէնն ալ ամպին տակ էին, ու ամէնն ալ ծովին անցան, 2—Ես ամէնն ալ Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ, 3—Ես ամէնն ալ նոյն հոգեւոր կերակուրը կերան, 4—Ու ամէնն ալ նոյն հոգեւոր խմելիքը խմեցին, վասն զի կը խմէին այն հոգեւոր վէմէն որ անոնց հետ կ'երթար. ու այն վէմը Քրիստոս էր: 5—Բայց ոչ թէ անոնցմէ շատերուն հաճեցաւ Աստուած, վասն զի անապատին մէջ փռած բնկան: 6—Ու այն բաները մեզի օրինակ եղան, որպէս զի չար բաներու ցանկացող չըլլանք, ինչպէս անոնք ցանկացան: 7—Ոչ ալ կռապաշտ ըլլաք, ինչպէս անոնցմէ ոմանք. ինչպէս գրուած է, Ժողովուրդը նստաւ ուտելու և խմելու, ու կանգնեցան խաղալու: 8—Ու պոռնկութիւն չընենք, ինչպէս անոնցմէ ոմանք պոռնկեցան, ու մէկ օրուան մէջ քսաներեք հազար հոգի ինկան: 9—Ու Քրիստոսը չփորձենք, ինչպէս անոնցմէ ոմանք փորձեցին, ու օձերէն ջարդուեցան: 10—Ու տրտունջ չընէք, ինչպէս անոնցմէ ոմանք տրտունջ

*Ոմանք՝ իր յոյսը վայելելու համար

ըրին, ու սատակիչէն չարգուեցան: 11—Բայց այս ամէն բաները իրենց օրինակ կը պատահէին անոնց. բայց մեզի, որոնց դարերուն վերջը հասաւ, խրատ ըլլալու համար գրուեցան: 12—Ուստի ան որ կը սեպէ թէ հաստատուն կեցած է, թող զգուշանայ որ չըլլայ թէ իյնայ: 13—Զեզի մարդկային փորձութիւնէ զատ ուրիշ չէ պատահած. բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողուր ձեր կարողութենէն աւելի փորձուիլ, հապա փորձութեան հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի ասէ, որպէս զի կարող ըլլաք համբերելու:

14—Ուստի հոգեր, իմ սիրելիներս, կռապաշտութենէ փախիք. 15—Որպէս թէ խելացիներու հետ կը խօսիմ. դուք դատեցէք ինչ որ կը պրպտեմ: 16—Օրհնութեան գաւաթը զոր մենք կ'օրհնենք, չէ՞ որ Քրիստոսի արիւնը հաղորդութիւնն է. Հացը զոր մենք կը կոտրենք, չէ՞ որ Քրիստոսի մարմինին հաղորդութիւնն է: 17—Քանզի մենք շատերս մէկ հաց մէկ մարմին ենք, վասն զի ամէնս ալ այն մէկ հացէն կը վայելենք: 18—Նայեցէք մարմնաւոր Իսրայէլի. չէ՞ որ այն զոհասեղանը ուտողները սեղանին հաղորդ են: 19—Ուրեմն ի՞նչ կ'ըսեմ, թէ կուռքը բան մըն է, կամ թէ կուռքերու զոհասէր բան մըն է: 20—Հապա ըսեմ՝ Հեթանոսներուն զոհածները դեւ կ'զոհեն, դեւերուն կը զոհեն ու ոչ թէ Աստուծոյ. ու չեմ ուզեր որ դուք դեւերուն հաղորդ ըլլաք: 21—Չէք կրնար խմել Տէրոջը գաւաթը ու դեւերուն գաւաթը, 21—Չէք կրնար վայելել Տէրոջը սեղանէն ու դեւերուն սեղանէն: 22—Նախանձ գրգռանք Տէրը. միթէ մենք անկէ զօրաւոր ենք:

23—Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան չինաթիւն կ'շինէ: 24—Ոչ ոք իր անձին չհոգայ, հապա իր բնկերին: 25—Ամէն ինչ որ ապանդովտին մէջ կը ծախուի կերէք, ու խղճմտութեան մի ընէք հարցմանքի համար. 26—Վասն զի երկիրը իր լիութիւնովը Տէրոջն է: 27—Ես եթէ անհաւատներէն մէկը ձեզ հիւրասիրէ ու երթալ կ'ուզէք, ամէն ինչ որ ձեր առջև դրուի՝ կերէք, ու խղճմտութեան մի ընէք հարցմանքի համար, 28—Ապա եթէ մէկը ձեզի ըսէ թէ Ասիկա կուռքի զոհուած է, այն ատեն երթեն համար որ յիշէք հարցուցողը՝ ու խղճմտանքի համար մի ուտէք: 29—Սակայն խղճմտանք կ'ըսեմ՝ ոչ թէ ձերը, հապա բնկերինը: Բայց ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի գատուի ուրիշին խղճմտանքէն: 30—Եթէ ես երախտակալութեամբ կը վայելեմ՝ ինչո՞ւ հայհոյուիմ, որուհամար կը գոհանամ: 31—Արդ թէ՛ ուտէք, թէ՛ խմէք և թէ ի՛նչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք: 32—Գայթակղութեան պատճառ մի ըլլաք՝ ոչ Հրեաներուն, ոչ Հեթանոսներուն և ոչ Աստուծոյ եկեղեցիին: 33—Ինչպէս ես ալ ամէն կերպով ամէնուն հաճոյ կ'ըլլամ, ու չեմ փնտռեր իմ անձիս օգուտը, հապա շատերունը՝ որպէս զի փրկուին:

Գլ. ԺԱ

Ինծի նմանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի: 2—Արդ ձեզ կը գովեմ, եղբայրներ, որ ամէն բանի մէջ զիս կը յիշէք, ու ապրպրածներս կը բռնէք՝ ինչպէս ես ձեզի աւանդեցի: 3—Բայց կ'ուզեմ որ գիտնաք թէ ամէն այր մարդու գլուխը Քրիստոս է, ու կնոջ գլուխը՝ այր մարդը, և Քրիստոսի գլուխը՝ Աստուած: 4—Ամէն այր մարդ որ գլուխը գոց ագօթքի կը կայնի կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը: 5—Ու ամէն կին որ գլուխը բաց ագօթքի կը կայնի կամ մարգարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը. վասն զի մէնակոյն բանը իրեն պէս է որ կին ածիլած ըլլայ: 6—Վասն զի եթէ կինը չծածկուիր, թող իր մազերն ալ կտրէ. իսկ եթէ ամօթ է կնոջ մը իր մազերը կտրել կամ

*Ոմանք՝ ի՛նչ ըսենք, վասն զի երկիրը իր լիութիւնովը Տէրոջն է:

†Կամ, չնորհքով ՀՅուռն. Յայնհրաւն

ածիլուիլ, քոյ ծածկուիլ։ 7—Ա՛յր մարդս պէտք չէ իր գլխոյն ծածկել, վասն զի Աստուծոյ պատկերը ու փառքն է. բայց կինը է՛ր կիսանը փառքն է։ 8—Քանզի այր չէ եկեր այր մարդը կնոջմէն է, հապա կինը՝ այր մարդէն։ 9—Վասն զի այր մարդը չստեղծուեցաւ կնոջը համար, հապա կինը՝ էրկանը համար։ 10—Ա՛յս պատճառաւ պէտք է որ կինը իր գլխուն *չափ դնէ հրեշտակներուն համար։ 11—Բայց ոչ կինը առանց այր մարդոյ կ'ըլլայ, ու ոչ այր մարդը առանց կնոջ։ 12—Վասն զի ինչպէս կինը այր մարդէն է, նոյնպէս այր մարդը կնոջ միջոցաւ, բայց ամէնը Աստուծմէ։ 13—Դուք ձեզի դատեցէ՛ք. կը վայլէ՞ կին մարդու գլուխը բաց ազդրի կանչել Աստուծոյ առջեւ. 14—Չի՞ որ բնութիւնն ալ կը սորվեցնէ ձեզի որ այր մարդ մը եթէ երկար մազերով է, իրեն անարգանք է։ 15—Բայց կինը եթէ երկար մազերով է, իրեն փառք է. վասն զի մազերը ծածկոցի տեղ արուած են իրեն։ 16—Ասկայն եթէ մէկը հակառակող ըլլալ կ'ուզէ, մենք այնպիսի սովորութիւն չունինք, ոչ ալ Աստուծոյ եկեղեցիները։

17—Բայց զոյս պատուիրելով՝ Տէրս չեմ գովեր, վասն զի ձեր ժողովը ոչ թէ ապեկի՝ հապա գէշ արդիւնք կ'ունենայ։ 18—Քանզի նախ՝ երբ մէկտեղ կը ժողովիք եկեղեցիին մէջ, կը լսեմ որ բաժանումներ կան ձեր մէջ, և բան մասին կը հաւատամ։ 19—Վասն զի հարկաւ ձեր մէջ հերձուածողութիւններ ալ պիտի ըլլան, որպէս զի ձեր մէջ եղող բնաւորները երեւան։ 20—Ուստի դուք որ մէկտեղ կը ժողովիք, ատիկա Տէրունական ընթրիքը ուտել չէ։ 21—Վասն զի ուտելու առեն ամէն մէկը առաջ իր ընթրիքը կ'առնէ. ու մէկը անօթի կը մնայ ու միւսը կը գինովնայ։ 22—Մի՞թէ ուտելու և խմելու համար տուն չունի՞ք, կամ թէ Աստուծոյ եկեղեցին կ'անարգէք, և ամօթով կ'ընէք չքաւորները. ձեզի ի՞նչ բսեմ, ձեզ գամի՞մ. այդ բանին մէջ չեմ գովեր։ 23—Վասն զի ես Տէրոջմէն ընդունեցի զոյն որ ձեզի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուս իր մատնուած գիշերը հաց առաւ. 24—Ու գոհանալով՝ կոտրեց ու բսաւ, Առէք — կերէք, այս է իմ մարմինս որ ձեզի համար կը կոտրի. ասիկա ըրէք զիս յիշելու համար։ 25—Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն ետև — — — ու բսաւ, Ա՛յս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս. ասիկա ըրէք քանի անգամ որ խմելու ըլլաք՝ զիս յիշելու համար։ 26—Վասն զի քանի անգամ որ այս հացը ուտէք ու այս գաւաթը խմէք, Տէրոջը մահը կը պատմէք՝ մինչեւ ինք գայ։ 27—Ուստի ով որ այս հացը ուտի կամ Տէրոջը գաւաթը խմի անարժանաբար, պարտական պիտի ըլլայ Տէրոջը մարմինին և արիւնին։ 28—Ուրեմն քոյ մարդ իր անձը փորձէ, ու այսպէս այն հացին ուտի և այն գաւաթէն խմի։ 29—Վասն զի ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ, իր անձին դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ, վասն զի Տէրոջը մարմինը չզբաղեր։ 30—Ասոր համար ձեր մէջ շատ հիւանդներ ու ցաւագարներ կան, և շատեր ալ կը նիրհեն. 31—Վասն զի եթէ ինքզինքնիս գատեր ըլլայինք, պիտի չդատուէինք։ 32—Իսկ երբ կը դատուինք, Տէրոջմէ կը խրատուինք, որպէս զի աշխարհի հետ չդատապարտուինք։ 33—Ուստի, իմ եղբայրներս, երբ ուխտով կը ժողովիք ուտելու, իրարու սպասեցէ՛ք։ 34—Իսկ եթէ մէկը անօթի է՝ քոյ էր տանը մէջ ուտէ, որ չըլլայ թէ դատապարտութեան համար ժողովիք։ Ու ուրիշ բաները չէ՛ն եկած առենս պիտի պատուիրեմ։

ԳԼ. ԺԲ

Բայց հոգեւոր պարգեւներուն վրայով չեմ ուզեր, եղբայրներ, որ չգիտցող ըլլաք։ 2—Դուք գիտէք որ երբ հեթանոս էիք, մունջ կուռքերուն կը տարուէիք՝ ինչպէս կ'առաջնորդուէիք։ 3—Ուստի զձեզ կ'իմացնեմ թէ մէկը չըլլար որ Աստուծոյ Հոգիովը խօսի՝ ու Յիսուսը նզովեալ կոչէ. և մէկն ալ չկրնար Յիսուս Տէր կոչել՝ եթէ ոչ Հոգւով Սրբով։ 4—Ու պարգեւները զանազան են, բայց նոյն Հոգին է։ 5—Նաև պաշտօնները զանազան են, բայց նոյն Տէրն է։ 6—Նոյնպէս ներգործութիւնները զանազան են, բայց նոյն Աստուածն է՝ որ կը ներգործէ ամէնը ամէն բանի մէջ։ 7—Բայց ամէն մէկուն Հոգւոյն յայտնութիւնը արուած է օգուտի համար։ 8—Մէկուն՝ Հոգիով իմաստութեան խօսք արուած է, ուրիշին գիտութեան խօսք՝ նոյն Հոգիին *համեմ։ 9—Միւսին հաւատք՝ նոյն Հոգիով, ուրիշին բժշկութեան պարգեւներ՝ նոյն Հոգիով. 10—Ու ուրիշին՝ հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգիներու բնորոշութիւն, ուրիշին՝ զանազան լեզուներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն։ 11—Բայց դոյս ամէնը միեւնոյն Հոգին կը ներգործէ, և ամէն մէկուն զոյս զոյս կը բաժնէ՝ ինչպէս կ'ուզէ։

12—Քանզի ինչպէս մարմինը մէկ է ու շատ անդամներ ունի, և *այն մարմինին բոլոր անդամները, որքան շատ են, մէկ մարմին են, նոյնպէս Քրիստոս ալ։ 13—Վասն զի մենք ամէնս մէկ Հոգիով մէկ մարմին ըլլալու մկրտուեցանք, թէ՛ Հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ազատներ, և ամէնս այ մէկ Հոգիէ խմցինք։ 14—Վասն զի մարմինը մէկ անդամ չէ, հապա շատ։ 15—Եթէ ոտքը ըսէ, Որովհետեւ ես ձեռք չեմ՝ մարմինէն չեմ, ոչ թէ անով այն մարմինէն չէ։ 16—Ու եթէ ականջը ըսէ, Որովհետեւ ես աչք չեմ՝ մարմինէն չեմ, ոչ թէ անով այն մարմինէն չէ։ 17—Եթէ բոլոր մարմինը աչք ըլար, լսելիքը ո՞ր պիտի ըլար. և եթէ բոլորը լսելիք ըլար, ո՞ր պիտի ըլար հոտառելիքը։ 18—Բայց հիմա Աստուած անդամները դրաւ՝ անոնց ամէն մէկը մարմինին մէջ, ինչպես ինք ուզեց։ 19—Ապա եթէ ամէնը մէկ անդամ ըլար, մարմինը ո՞ր պիտի ըլար։ 20—Բայց հիմա անդամները շատ են, ու մարմինը՝ մէկ։ 21—Չկրնար աչքը ըսել ձեռքին թէ Դուն ինծի պէտք չես. և ոչ գլուխը ոտքերուն թէ Ինծի պէտք չէք։ 22—Մանաւանդ մարմինին այն անդամները որոնք չատ տկար կ'երեւան, անհրաժեշտ են։ 23—Ու մարմինին այն անդամները որոնք մեզի պատուական չեն երեւար, անոնց աւելի պատիւ կու տանք, անոնց վրայ աւելի պատիւ կը գնենք. ու *տգեղ մեր անվայելչ անդամները աւելի վայելչութիւն ունին։ 24—Ու մեր վայելչ անդամներուն համար մը պէտք չէ. Բայց Աստուած մարմինը բարեխառնեց, ու պակսած մասին աւելի պատիւ տուաւ, 25—Որպէս զի մարմինին մէջ երկպառակութիւն չըլլայ, հապա անդամները միեւնոյն հոգը ունենան իրարու վրայ։ 26—Ու եթէ մէկ անդամ ցաւ կրէ, բոլոր անդամները կը ցաւակից անոր հետ. և եթէ փառաւորուի մէկ անդամ, բոլոր անդամները կ'ուրախանան անոր հետ։ 27—Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամներ։ 28—Ու Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քանիներդ, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը հրաշքներ, ետքը բժշկութիւններու պարգեւներ, օգնութիւններ, կառավարութիւններ, լեզուներու տեսակներ։ 29—Միթէ ամէնը առաքեալնե՞ր են. միթէ ամէնը մարգարէնե՞ր են. միթէ ամէնը վարդապետնե՞ր են. միթէ ամէնը հրաշքներ կը գործեն։ 30—Միթէ ամէնը բժշկութեան պարգեւներ ունին. միթէ ամէնը լեզուներ կը խօսին. միթէ ամէնը թարգմանե՞ր են։

31—Բայց գուք նախանձուտ եղէք այն չնորհքներուն որոնք լաւագոյն են. և ես՝ ալ աւելի *ոտի ճամբայ մը կը ցուցնեմ ձեզի։

ԳԼ. ԺԳ

Եթէ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ, և սէր չունենամ, ես ձայն ուսուց պղինձի *պէս եղայ, կամ հնչեցող ծնծղաներու *պէս։ 2—Ու եթէ մարգարէութիւն ունենամ, ու համբերամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, և եթէ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ։ 3—

*Յոան. իշխանութիւն

*Իմաստ, այն մէկ

որանք չատ տկար կ'երեւան, աւելի հարկաւոր են. 23—Ու մարմինին *տգեղ անդամներուն զորանք չատ յարգանք անպատշաճ բան կ'ունենք, անոնց վրայ աւելի պատիւ կը գնենք. ու *տգեղ մեր անվայելչ անդամները աւելի վայելչութիւն ունին։ 24—Ու մեր վայելչ անդամներուն համար մը պէտք չէ. Բայց Աստուած մարմինը բարեխառնեց, ու պակսած մասին աւելի պատիւ տուաւ, 25—Որպէս զի մարմինին մէջ երկպառակութիւն չըլլայ, հապա անդամները միեւնոյն հոգը ունենան իրարու վրայ։ 26—Ու եթէ մէկ անդամ իրարու վրայ, բոլոր անդամները ընդունին հոգը ունենան անոր հետ. և եթէ փառաւորուի մէկ անդամ, բոլոր անդամները կ'ուրախանան անոր հետ։ 27—Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամներ։ 28—Ու Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քանիներդ, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը հրաշքներ, ետքը բժշկութիւններու պարգեւներ, օգնութիւններ, կառավարութիւններ, լեզուներու տեսակներ։ 29—Միթէ ամէնը առաքեալնե՞ր են. միթէ ամէնը մարգարէնե՞ր են. միթէ ամէնը վարդապետնե՞ր են. միթէ ամէնը հրաշքներ կը գործեն։ 30—Միթէ ամէնը բժշկութեան պարգեւներ ունին. միթէ ամէնը լեզուներ կը խօսին. միթէ ամէնը թարգմանե՞ր են։

31—Բայց գուք նախանձուտ եղէք այն չնորհքներուն որոնք լաւագոյն են. և ես՝ ալ աւելի *ոտի ճամբայ մը կը ցուցնեմ ձեզի։

ԳԼ. ԺԳ

Եթէ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ, և սէր չունենամ, ես ձայն ուսուց պղինձի *պէս եղայ, կամ հնչեցող ծնծղաներու *պէս։ 2—Ու եթէ մարգարէութիւն ունենամ, ու համբերամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, և եթէ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ։ 3—

ու ևթէ իմ բոլոր առաքեալքս ըզ-
ինքեանս կերդնեմ, ու իմ մարմինս
այրուելու տամ, և սէր չունենամ, օգուտ
մը չեմ ունենար։ 4—Սէրը երկայնա-
միտ է, քաղցր է. սէրը չնախանձիր,
սէրը չդոռոզանար, չհպարտանար, 5—
Անվայել վարմունք չունենար, իրենը
չփնտռեր, բարկութեան չդրգռուիր,
չարը թիւն չհաշիւր, 6—Անիրաւու-
թեան վրայ չինդար. հապա ճշմարտու-
թեան խնդակից կ՚ըլլայ։ 7—Ամեն բա-
նի կը դիմանայ, ամեն բանի կը հաւա-
տայ, ամեն բանի կը յուսայ, ամեն
բանի կը համբերէ։ 8—Սէրը բնաւ չկը-
նար. բայց ևթէ մարգարէութիւններ
ըլլան՝ պիտի դադրին, ևթէ լեզուներ՝
պիտի դադրին, ևթէ գիտութիւն՝ պի-
տի խափանի։ 9—Վասն զի չասինն փչրը
գիտենք, ու չասինն փչրը կը մարգա-
րէանանք։ 10—Բայց երբ կատարեալը
գայ, այն ատեն չասինն փչրը պիտի
խափանի։ 11—Երբ ոտայ էի, ոտայի
պէս կը խօսէի, ոտայի պէս կը խորհէի,
ոտայի պէս համարատ ունէի. բայց երբ
այր եղայ, ոտայութեան բաները մէկդի
ձգեցի։ 12—Քանզի հիմա մենք պղպէ
ի հակիրճ մէջ կը տեսնենք անյայտ
կերպով, բայց այն ատեն երես առ
երես։ հիմա չասինն փչ մը ճանչակ եմ,
բայց այն ատեն այնպէս պիտի ճանչ-
նամ՝ ինչպէս ճանչցուած եղայ։ 13—Ուստի
հիմա կը մնայ հաւատք, յոյս, սէր,
այս երիքը. ու ասոնց մեծագոյնը
սէրն է։

Գլ. ԺԴ

Սիրոյ հետեւէն գացէք, ու հոգեւոր
պարգեւներուն նախանձաւոր եղէք,
մանաւանդ մարգարէութիւն ընելու։
2—Վասն զի ան որ ուրիշ լեզուով կը
խօսի՝ ոչ թէ մարդոց կը խօսի, հապա
Աստուծոյ. վասն զի մէկը չկայ որ խա-
նայ, բայց անիկա հոգիով խորհուրդ-
ներ կը խօսի։ 3—Մակայն ան որ կը
մարգարէանայ, մարդոց կը խօսի՝ չին-
նութիւն ու յորդորանք և մխիթարու-
թիւն ունի։ 4—Ան որ ուրիշ լեզուով
կը խօսի՝ ոչ թէ մարդոց կը խօսի, հապա
Աստուծոյ. վասն զի մէկը չկայ որ խա-
նայ, բայց անիկա հոգիով խորհուրդ-
ներ կը խօսի։ 3—Մակայն ան որ կը
մարգարէանայ, մարդոց կը խօսի՝ չին-
նութիւն ու յորդորանք և մխիթարու-
թիւն ունի։ 4—Ան որ ուրիշ լեզուով
կը խօսի՝ իր անձին չինութիւն կ՚ընէ,
ու ան որ կը մարգարէանայ՝ եկեղեցիին
չինութիւն կ՚ընէ։ 5—Կ՚ուզեմ որ դուք
ամէնդ լեզուներ խօսիք, բայց մանա-
ւանդ որ մարգարէութիւն ընէք, վասն
զի մ՚ւ ալկէ ան՝ որ կը մարգարէա-
նայ, քան թէ ան՝ որ լեզուներ կը խո-
սի. միայն եթէ թարգմանէ ըլլայ,
որպէս զի եկեղեցին չինութիւն առնէ։
6—Ես հիմա, եղբայրներ, եթէ ես
ձեզի գամ լեզուներ խօսելով, ի՞նչ
օգուտ պիտի ընեմ ձեզի՝ եթէ չխօսիմ
ձեզի կա՛մ յայտնութիւնով, կա՛մ գի-
տութիւնով, կա՛մ մարգարէութիւնով,
կա՛մ վարդապետութիւնով։ 7—Ու
ձայն առանց անկենդան բաներու ան-
գամ, թէ՛ սրինգ և թէ՛ քնար, եթէ
ձայներու զանազանութիւն չընեն, ի՞նչ-
պէս պիտի ճանչցուի սրինգով կամ
քնարով նուագածը։ 8—Վասն զի եթէ
փողն ալ անորոշ ձայն հանէ, ո՞վ պի-
տի պատրաստուի պատերազմի։ 9—
Նոյնպէս դուք ալ եթէ լեզուով բացա-
յայտ խօսք չտրուիցէք, խօսուածը ի՞նչ-
պէս պիտի հասկցուի. վասն զի օդին
խօսացներ պիտի ըլլաք։ 10—Ան աշ-
խարհի մէջ այնքան տեսակ ձայներ
կան, և անոնց մէկը առանց նշանա-
կութեան չէ։ 11—Ուստի եթէ այն
ձայնին զօրութիւնը չգիտնամ, ես խօ-
սողին բարբարոս մը պիտի ըլլամ, խօ-
սողն ալ ինծի բարբարոս մը պիտի ըլ-
լայ։ 12—Նոյնպէս դուք ալ, որովհե-
տեւ հոգեւոր պերճութեանց նախանձա-
ւոր էք, եկեղեցիին չինութեանը հա-
մար խնդրեցէք որ աւելնաք ձեզ պեր-
ճութեանը։ 13—Անոր համար ան որ
ուրիշ լեզուով կը խօսի, աղօթք թող
ընէ որ թարգմանէ։ 14—Քանզի
եթէ ես աղօթք ընեմ ուրիշ լեզուով,
իմ հոգիս աղօթք կ՚ընէ, բայց միտքս
անպտուղ է։ 15—Ուրեմն ի՞նչ է. ա-
ղօթք ընեմ հոգիով, աղօթք ընեմ
մտաւ թեամբս ալ. սաղմոս երգեմ հո-
գիով, սաղմոս երգեմ մտաւ թեամբ
ալ։ 16—Ապա թէ ոչ՝ եթէ դուն հո-
գիով օրհնութիւն ընես, անիկա որ
ագահ տեղ կայներ է, ի՞նչպես Ամէն
պիտի ըսէ քու գոհութիւնդ տալու ա-
տենդ. վասն զի ան քու զրուցածդ չի-
մանար։ 17—Թէպէտ դուն աղէկ գո-
հութիւն կ՚ընես, բայց միւսը չինաւ-

թիւն չառներ։ 18—*Աստուծմէ կը գո-
հանամ որ ձեր ամէնէն աւելի լեզու-
ներով կը խօսիմ. 19—Բայց եկեղե-
ցիին մէջ կ՚ուզեմ հինգ խօսք մտաւո-
քեամբ խօսիլ, որպէս զի ուրիշներուն
ալ սորվեցնեմ, քան թէ բիւրաւոր
խօսքեր ուրիշ լեզուով։
20—Եղբայրներ, միտքով տղայ մի
ըլլաք, հապա չարութիւն էնդունե-
լութեան տղայ եղէք, ու միտքով չափա-
հաս եղէք։ 21—Օրէնքին մէջ գրուած
է թէ Օտար լեզուներով ու օտար շրթ-
թունքներով այդ ժողովրդին հետ
պիտի խօսիմ, ասկայն և այնպէս ինծի
մեկի պիտի չլսեն, կ՚ըսէ Տէրը։ 22—
Ուրեմն լեզուները նշանի համար են՝ ոչ
թէ հաւատացեալներուն, հապա ան-
հաւատներուն, բայց մարգարէութիւնը
ոչ թէ անհաւատներուն, հապա հաւա-
տացեալներուն։ 23—Արդ եթէ բոլոր
եկեղեցին միասին գայ, ու ամէնն ալ
ուրիշ լեզուներով խօսելու ըլլան, և հո-
ներէն ապերանոր կամ անհաւատներ,
պիտի չըսե՞ն թէ գուք խելքնիդ եր-
24—Իսկ եթէ ամէնն ալ մարգարէա-
նան, ու հոն անհաւատ մը կամ ապե-
րանոր մտնէ, ամէնէն ալ կը յանդիմանուի,
ամէնէն ալ կը քննուի, 25—Ու անոր
սրտին ծածուկ բաները յայտնի կ՚ըլ-
լան, և այսպէս երեսի վրայ իննկած՝
Աստուծոյ երկրպագութիւն պիտի ընէ,
ու խոստովանի թէ իրաւ ցրեղ Աստուած
ձեր մէջ է։

26—Ուստի ի՞նչ է, եղբայրներ. երբ
ժողով կը գտնուիք, ձեզմէ ամէն
մէկը սաղմոս ունի, վարդապետութիւն
ունի, լեզու ունի, յայտնութիւն ունի,
թարգմանութիւն ունի. ամէնը չինա-
թեան համար թող ըլլայ։ 27—Եթէ
մէկը ուրիշ լեզու կը խօսի, երկու հոգի,
և թէ չաւելի երեք թող ըլլան, և այն
ալ՝ մէկիկ մէկիկ, ու մէկը թող թարգ-
մանէ։ 28—Բայց եթէ թարգմանող չըլ-
լայ, եկեղեցիին մէջ լուռ թող կենայ,
և ինքնիրեն ու Աստուծոյ թող խօսի։
29—Իսկ մարգարէները երկու կամ
երեք հոգի թող խօսին, ու միւսները
թող քննութիւն ընեն։ 30—Իսկ եթէ
նստացներէն ուրիշ մէկուն ալ բան հը
յայտնուելու ըլլայ, առաջինը թող լռէ։
31—Վասն զի ամէնդ ալ կրնաք մէկիկ
մէկիկ մարգարէանալ, որպէս զի ամէնն
ալ սորվին ու ամէնն ալ միխիթարին։
32—Ու մարգարէներուն հոգիները մար-
գարէներուն հնազանդ են։ 33—Վասն
զի Աստուած խռովութեան Աստուած
չէ, հապա խաղաղութեան, ինչպէս սուր-
բերուն բոլոր եկեղեցիներուն մէջ։
34—Ձեր կիներդ եկեղեցիներուն
մէջ լուռ կենան, վասն զի անոնց հրա-
ման չկայ խօսելու, հապա հնազանդ
ըլլալու, ինչպէս օրէնքն ալ կ՚ըսէ։
35—Բայց եթէ բան սորվիլ կ՚ուզեն,
տանը իրենց այրերուն քով հարցնեն.
վասն զի կիներուն անվայել է եկեղեցիի
մէջ խօսիլ։ 36—Միթէ Աստուծոյ խօս-
քը ձեզմէ՞ ելաւ, կամ թէ միայն ձեզի՞
հասաւ։ 37—Եթէ ոևէր կը կարծէ թէ
ինք մարգարէ է, կամ հոգեւոր, քող
հասասա գիտնայ թէ ինչ որ ձեզի
գրեցի՝ Տէրոջը պատուէրներն են։ 38—
Բայց եթէ ոևէր չուզէ՝ քող ուզէ ա-
րուայ։ 39—Ուստի, եղբայրներ, մար-
գարէութիւնն ընդունելու նախանձաւոր ե-
ղէք, ու լեզուներ խօսիլն ալ մի արգի-
լէք։ 40—Ու ամէն բան վայելչու-
թեամբ և կարգով թող ըլլայ։

Գլ. ԺԵ

Եղբայրներ, ձեզի կ՚իմացնեմ այն ա-
ւետարանը զոր ես ձեզի քարոզեցի, զոր
նաև ընդունեցիք ու անոր վրայ հաս-
տատուած էք. 2—Որով կը փրկուիք
ալ, եթէ ամբոր քանով այն խօսքը զոր
ես ձեզի քարոզեցի, միայն եթէ պարապ
տեղ հաւատացած չէք։ 3—Վասն զի
ամէնէն առաջ ես ձեզի աւանդեցի զա-
նիկա, զոր ես ալ ընդունեցի, թէ Քրիս-
տոս մեր մեղքերուն համար մեռաւ,
գիրքերուն ըստ՝ին համեմատ, 4—Ու-
թէ թաղուեցաւ ու յարուցին երրորդ
օրը, գիրքերուն ըստ՝ին համե-
մատ, 5—Ու թէ երեւցաւ Կեփասի, ու
ետքը տասներկուքին։ 6—Ետքը հինգ
հարիւր աւելի եղբայրներուն մէկտեղ
երեւցաւ, որոնցմէ շատերը մինչեւ հիմա
կան, և ոմանք ալ ննջեցին։ 7—Ո-

*Ոմանք, Իմ Աստուծմէս

եաքը երկցան Յակոբոսի, եաքը բոլոր առաքեալներուն։ 8—Ամենէն եաքը ալ ինծի ի վիժածի մը՝ բնծի ալ երևեցաւ։ 9—Վասն զի ես առաքեալներուն ամենէն յետինն եմ, որ արժանի ալ չեմ առաքեալ բառիս, վասն զի Աստուծոյ եկեղեցին հալածեցի։ 10—Միայն ի՛նչ Աստուծոյ շնորհքովն եմ՝ ինչ որ եմ. և անոր շնորհքը որ իմ վրաս է, զարդուկ չեղաւ, հապա ես անոնց ամենուն աւելի աշխատեցայ. և ոչ ի՛նչ ես, հապա Աստուծոյ շնորհքը որ ինծի հետ էր։ 11—Ուստի ի՛նչ ես և ի՛նչ անոնք այսպէս կը քարոզենք, ու դուք այսպէս հաւատացիք։

12—Ուրեմն եթէ Քրիստոս կը քարոզուի, որ մեռելներէն յարութիւն առած է, ինչպէս ձեզմէ մեկ քանիներդ կ'ըսեն թէ Մեռելներու յարութիւն չկայ։ 13—Եթէ մեռելներու յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ։ 14—Ու եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է, ու ձեր հաւատքն ալ պարապ է։ 15—Ու մենք ալ Աստուծոյ սուտ վկաները դառած կ'ըլլանք. որովհետև Աստուծոյ համար վկայութիւն տուինք թէ ինք յարուցեր է Քրիստոսը. որ իրու չյարուցած զանիկա, եթէ մեռելները յարութիւն չեն առներ։ 16—Քանզի եթէ մեռելները յարութիւն չեն առներ, Քրիստոս ալ յարութիւն առած չէ։ 17—Ու եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր հաւատքը պարապ է, ու տակաւին ձեր մեղքերուն մէջ եք։ 18—Նոյնպէս Քրիստոսով ննջողներն ալ կորսուած են։ 19—Եթէ միայն այս կեանքին համար Քրիստոսի յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէն աւելի խղճալի ենք։ 20—Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է. ննջեցեալներուն առաջին պտուղը։ 21—Քանզի որովհետև մարդով եկաւ մահը, մարդով ալ մեռելներու յարութիւնը։ 22—Վասն զի ինչպէս Ադամով ամէնը կը մեռնին, նոյնպէս ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի բլլան։ 23—Բայց ամէն մէկը իր կարգովը. առաջին պտուղը Քրիստոս, ետքը Քրիստոսինները՝ իր գալստեանը։ 24—Անկէ ետև՝ վախճանը, երբ Քրիստոս թագաւորութիւնը պիտի տայ Աստուծոյ ու Հօրը ձեռքը, երբ խափանէ ամէն իշխանութիւնը և ամէն պետութիւնը ու զօրութիւնը։ 25—Վասն զի անոր պէտք է թագաւորի՝ մինչև բոլոր թշնամիները իր ոտքերուն տակ դնէ։ 26—Վերջին թշնամին որ պիտի խափանի՝ մահն է։ վասն զի ՅԷՐԸ Ն'ընթ։ Ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուց։ 27—Բայց երբ կ'ըսէ թէ ամէն բան անոր հնազանդացած է, յայտնի է թէ բացի ի՛ անկէ՝ որ ամէնը անոր հնազանդեցուց։ 28—Ու երբ ամէնը անոր հնազանդ ըլլայ, այն ատեն Որդին ինք ալ պիտի հնազանդի անոր՝ որ իրեն հնազանդեցուց ամէնը, որպէս զի Աստուած բլլայ ամէնը ամէն բանի մէջ։ 29—Ապա թէ ոչ՝ ի՞նչ պիտի բնեն անոնք որ մեռելներուն համար կը մկրտուին, եթէ մեռելները բնաւ յարութիւն չառնեն. ինչո՞ւ ուրեմն անոնց համար կը մկրտուին։ 30—Ինչո՞ւ համար մենք ալ վտանգի մէջ կը մտնենք ամէն ժամ։ 31—Վկայ կը բերեմ այն պարծանքը՝ զոր ձեր վրայ ունիմ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով, որ ես ամէն օր կը մեռնիմ։ 32—Եթէ Եփեսոսի մէջ մարդոց նման գազաններու հետ մարտնչեցայ, ի՞նչ օգուտ է *ինծի, եթէ մեռելները յարութիւն չառնեն. առնենք ու խմենք, վասն զի վաղը կը մեռնինք։ 33—Մի խաբուիք. չար բնկերակցութիւնները ազնիւ բարքը կ'ապականեն։ 34—Արդարութեան զգաստացէք ու մեղք մի գործէք, վասն ՅԻՆՔԻ ոմանք Աստուծոյ գիտութիւնը չունին. ձեզ ամչցնելու համար կը գրեմ։

35—Բայց պիտի ըսի մեկը թէ ինչպէս մեռելները յարութիւն կ'առնեն, կամ թէ ինչ մարմնով կու գան։ 36—Անմիտ, անիկա զոր դուն կը սերմանես, եթէ չմեռնի՝ չկենդանանար։ 37—Ու զայն որ կը սերմանես, ոչ թէ այն մարմինը որ պիտի բուսնի՝ կը սերմանես, հապա մերկ հատ մը՝ թէ՛ ցորենի բլայ և թէ՛ մեկ ուրիշ ՈՒՐՑ։ 38—Ու Աստուած անոր մարմին կու տայ ինչպէս կ'ուզէ, և ամէն մկի սերմին իր յատուկ մարմինը։ 39—Ամէն մարմին մկ մարմին չէ։ Հապա մարդոց մարմինը ուրիշ է, ու անասուններուն մարմինը ուրիշ, ձուկերունն ալ ուրիշ, և թռչուններունը ուրիշ։ 40—Երկնաւոր մարմիններ ալ կան, երկրաւոր մարմիններ ալ, բայց երկնաւորներուն փառքը ուրիշ է, ու երկրաւորներունը ուրիշ։ 41—Արեւուն փառքը ուրիշ է, ու լուսնին փառքը ուրիշ, և աստղերուն փառքը ուրիշ։ ու մկ աստղը միւս աստղէն տարբեր է փառքով։ 42—Այսպէս է մեռելներուն յարութիւնն ալ. Սերմնը ապականութեամբ կը սերմանուի, ան անապականութեամբ յարութիւն կ'առնէ։ 43—Անարգութեամբ կը սերմանուի, ան փառքով յարութիւն կ'առնէ. սկսրութեամբ կը սերմանուի, ան զօրութեամբ յարութիւն կ'առնէ։ 44—Կը սերմանուի չնչաւոր մարմին, և յարութիւն կ'առնէ հոգեւոր մարմին։ Չնչաւոր մարմին կայ, հոգեւոր մարմին ալ կայ։ 45—Ու այսպէս գրուած է, Առաջին մարդը Ադամ կենդանի չունչ եղաւ, վերջին Ադամը՝ կենդանարար հոգի։ 46—Բայց ոչ թէ առաջ հոգեւորը, հապա չնչաւորը, ան ետքը հոգեւորը։ 47—Առաջին մարդը երկրէ է՝ հողեղէն, երկրորդ մարդը Տէր է՝ երկինքէն։ 48—Ինչպէս էր հողեղէնը՝ նոյնպէս ալ հողեղէններըն, ու ինչպէս երկնաւորը՝ նոյնպէս ալ երկնաւորները։ 49—Ու ինչպէս հողեղէնին կերպարանքը հագեր ենք, երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնինք։ 50—Բայց ձայս կ'ըսեմ, եղբայրներ, որ մարմին ու արիւն Աստուծոյ թագաւորութիւնը չեն կրնար ժառանգել. ոչ ալ ապականութիւնը կը ժառանգէ անապականութիւն։

51—Ահա ձեզի խորհուրդ մը կը զրուցեմ. Ամէնս պիտի չննջենք, բայց ամէնս ալ պիտի փոխուինք, 52—Ծանր կարծակի աչք գոցել բանալու մէջ՝ վերջին փողին հնչուելուն ատենը. որովհետև փողը պիտի հնչուի, ու մեռելները յարութիւն պիտի առնեն առանց ապականութեան, և մենք ալ պիտի փոխուինք։ 53—Վասն զի պէտք է որ այս ապականացու հագնիս անապականութիւն հագնի, ու այս մահկանացուն անմահութիւն հագնի։ 54—Բայց երբ այս ապականացուս հագնիս անապականութիւն հագնի, և այս մահկանացուն անմահութիւն հագնի, այն ատեն պիտի կատարուի այն խօսքը որ գրուեցաւ թէ Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ։ 55—Ո՛ր է, ով մահ, քու խայթոցդ. ո՛ր է, ով գերեզման, քու յաղթութիւնդ։ 56—Մահուան խայթոցը մեղքն է, ու մեղքին ոյժը՝ օրէնքը։ 57—Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով։ 58—Ուստի, իմ սիրելի եղբայրներս, հաստատ եղէք, անշարժ լինե՛ք և ամէն ատեն աւելցէք Տէրոջը գործին մէջ, գիտնալով որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջմով։

ԳԼ. ԺԶ

Բայց սուրբերուն համար ողբրմութեան ժողովքը վրայով, ինչպէս պատուէր տուի Գազատացւոց եկեղեցիներուն, դուք ալ այնպէս ըրէք։ 2—Ամէն մէկդ ձեզի մօտ գիտնայ ամէն մկը իր փոյթ թող դիմէ ինչ որ կը յաջողի, 3—Որ չըլլայ թէ երբ գամ, այն ատեն ժողովներ ըլլան. ու երբ գամ, որոնց որ դուք *հաճիք, ես զանոնք թուղթերով՝ պիտի զրկեմ ձեր պարգևները տանելու։ 4—Ու եթէ իմ երթալս ալ արժան տեսնի, ինծի հետ պիտի գան՝ երբ Մակեդոնիայէ անցնիմ. (քանզի Մակեդոնիայէ կ'անցնիմ.) 6—Ու կարելի է որ ձեր քով մնամ, կամ ձմեռն ալ անցնեմ. որպէս զի դուք զիս ճամբայ դնէք, ուր որ ես պիտի երթամ։ 7—Վասն զի չեմ ուզեր ձեզ հիմա հաբեռնցի մը տեսնել, բայց յոյս ունիմ որ տանեն մը ձեր քով կենամ, եթէ Տէրը հրաման տայ։ 8—Սակայն հինգ ես Եփեսոս պիտի մնամ մինչև Պենտեկոստէ. 9—Վասն զի ինծի մեծ

*Կամ, ինծի. եթէ մեռելները յարութիւն չառնեն, ուտենք, ևլն.

*Կամ, յանձնարարութիւն ընեմ թուղթերով, ես զանոնք

ու արդիւնաւոր գուռ մը բացուած է, ու շատ հակառակորդներ կան։

10—Արդ, եթէ Տիմոթէոս գայ, նայեցէք որ ձեր քով առանց վախի ըլլայ. քանի անիկա Տէրոջը գործը կը գործէ, ինչպես եւս։ **11**—Ուստի չըլլայ որ մէկը զանիկա արհամարհէ, հապա խաղաղութեամբ զանիկա ճամբայ դրէք, որպէս զի ինծի գայ. վասն զի անոր կը սպասեմ եղբայրներով մէկտեղ։ **12**—Իսկ Ապողոս եղբօրը համար, շատ ապաչեցի անոր, որ ձեզի գայ եղբայրներուն հետ մէկտեղ. ու բնաւ կամք չունեցաւ որ հիմա գայ, բայց պիտի գայ՝ երբ յարմար ժամանակ գտնէ։

13—Արթուն կեցէք, հաստատ մնէ հաստատ կեցէք, ժիր եղէք, զօրացէք։ **14**—Ձեր ամէն բաները սիրով ըլլան։

15—Կ'ապաչեմ ձեզի, եղբայրներ, (գիտէք գուք Ստեփանէսի բնտանիքը Թէ Աքայիայի առաջին պտուղն է, ու անձերնին սուրբերուն սպասաւորութեանը նուիրեցին.) **16**—Որ հնազանդ ըլլաք այնպիսիներուն, և ամէնուն որ գործ հետ մէկտեղ կը գործեն ու կ'աշխատին։ **17**—Ուրախ եմ հոս Ստեփանէսի ու Փորտունատոսի ու Աքայիկոսի գալուն վրայ, որ ձեր պակասութիւնը անոնք լեցուցին։ **18**—Քանզի հանգստացուցին իմ հոգիս ու ձերը. ուստի այնպիսիները ճանչցէք։

19—Բարև կ'ընեն ձեզի Ասիոյ եկեղեցիները. շատ բարև կ'ընեն ձեզի Տէրոջմով Ակիւլաս ու Պրիսկիլլա՝ իրենց տանը մէջի եկեղեցիով մէկտեղ։ **20**—Բարև կ'ընեն ձեզի բոլոր եղբայրները. բարև տուէք իրարու սուրբ համբուրով։

21—Ահա բարեւը իմ ձեռքիս Պօղոսին է։ **22**—Եթէ մէկը Տէր Յիսուս Քրիստոսը չսիրեր, նզովեալ ըլլայ՝ Էրէմ մը Տէրը գայ՝։ **23**—Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ։ **24**—Իմ սէրս ձեր ամէնուն հետ ըլլայ Քրիստոս Յիսուսով։ Ամէն։

---

*Յոյն. (Աստիբէնէն) Մարան աթա

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՒ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ կամքովը, ու Տիմոթէոս Դէ եղբայրը. կարնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, և բոլոր Աքայիայի մէջ եղող ամէն սուրբերուն, **2**—Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէն։

3—Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, գթութեան Հայրը և ամէն մխիթարութեան Աստուածը. **4**—Որ մեզ կը մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որպէս զի մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նեղութիւններու մէջ են, այն մխիթարութիւնովը՝ որով մենք Աստուծմէ կը մխիթարուինք. **5**—Քանզի ինչպէս Քրիստոսի չարչարանքները մեր վրայ շատ եղան, նմանապէս Քրիստոսի ձեռքով մեր մխիթարութիւնն ալ շատ կ'ըլլայ։ **6**—Ուստի եթէ նեղութիւն քաշենք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը համար է, և եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը համար է, որ կը յաջողի համբերելով այն չարչարանքներուն՝ որոնցմով մենք ալ կը չարչարուինք. **7**—Ու մեր յոյսը հաստատուն է ձեզի համար, վասն զի գիտենք Թէ ինչպէս չարչարանքներուն հազորդ եք, նոյնպէս ալ մխիթարութեանը պիտի ըլլաք։ **8**—Վասն զի Ասիոյ մէջ մեզի պատահած նեղութիւններուն վրայով՝ չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, Թէ Դը կարողութենէն չատ աւելի ծանրաբեռնեցանք, մինչև կեանքերնէս ալ անյոյս եղանք. **9**—Հապց մեռնողի վճիռը մենք մեր վրայ պահեցինք, որպէս զի ինքզինքնուս չապաւինինք, հապա Աստուծոյ որ մեռելները կը յարուցանէ. **10**—Որ այնպիսի մեծ մահէ մեզ ազատեց ու կը փրկէ. **11**—Որուն կը յուսանք Թէ տակաւին պիտի փրկէ, մեզի համար ձեր ըշխ- աղօթքին օգնականութիւնովը. որպէս զի շատերուն շնորհքին համար՝ շատերն գոհութիւն տրուի մեզի համար։

12—Վասն զի մեր պարծանքը այս է, մեր խղճմտանքին վկայութիւնը, Թէ մենք Աստուծոյ —ը պարզամտութեամբ ու անկեղծութեամբ, և ոչ Թէ մարմնաւոր իմաստութիւնով մը, հապա Աստուծոյ շնորհքովը աշխարհի մէջ վարուեցանք, բայց աւելի դէպ ի ձեզ։ **13**—Քանզի ուրիշ բան չենք գրեր ձեզի, հապա զոյն որ գուք կը կարդաք ու կը ճանչնաք. և կը յուսամ Թէ մինչև վերջը պիտի ճանչնաք. **14**—Ինչպէս քիչ շատ ճանչցաք մեզ, որ ձեր պարծանքն ենք, ինչպես գուք ալ մերը՝ Տէր Յիսուսի օրը։

15—Ու այս վստահութիւնով կ'ուզեի առաջ ձեզի գալ, որպէս զի գուք երկրորդ անգամ շնորհք ընդունիք. **16**—Ու ձեզմէ անցնիլ դէպ ի Մակեդոնիա, և դարձեալ Մակեդոնիայէ ձեզի գալ, ու ձեզմէ ճամբայ դրուիլ դէպ ի Հրէաստան։ **17**—Ուստի զայս որ ես մտածեցի, միթէ թեթեւութիւնով չարժեցայ. կամ Թէ զոյն որ ես կը խորհիմ, մարմնաւորապէս կը խորհիմ,

*որպէս զի իմ կոչմանէս այս այս ե ոչ ոչ լիայ։ 18—Սակայն հաւատարիմ է Աստուած, որ մեր խօսքը ձեզի ոչ հաճա՝ այո և ոչ չէր։ 19—Վասն զի Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս, որ մեզմով ձեզի քարոզեցաւ, (ինձմով և Սիղուանոսով ու Տիմոթէոսով,) այո ու ոչ չեղաւ, հապա իր մէջ եղաւ այոն։ 20—Քանզի որչափ որ Աստուծոյ խոստմունքները կան՝ իր մէջ Այո են, ու իր մէջ Ամէն են Աստուծոյ փառքին համար մեր ձեռքով։ 21—Բայց ան որ մեզ ձեզի հետ միկաեղ Քրիստոսով հաստատեց, ու մեզ օծեց, Աստուած է։ 22—Որ մեզ կնքեց ալ, և Հոգւոյն գրաւը մեր սիրտերուն մէջ։ 23—Բայց ես զԱստուած վկայ կը կանչեմ իմ անձիս, որ ձեզի խնայելուս համար տակաւին Կորնթոս չեկայ։ ասիկա ոչ թէ ձեր հաւատքին վրայ կը տիրապետենք, հապա գործակից ենք ձեր ուրախութեանը. վասն զի դուք հաւատքով կը կենաք։

ԳԼ. Բ

Սակայն ես ինծմէ զայս որոշեցի, որ նորէն արամութիւնով չգամ ձեզի։ 2—Վասն զի եթէ ես ձեզ արամեցնեմ, ալ ո՞վ է որ զիս պիտի ուրախացնէ, եթէ ոչ ան՝ որ ինծմէ կը տրամի։ 3—Ու զայս գրեցի, որ չըլլայ թէ երբ գամ, արամութիւն մը կրեմ անոնցմէ, ուրկից պէտք է ինծի ուրախ ըլլալ. քանզի ձեր ամէնուն վրայ վստահ եմ, որ իմ ուրախութիւնս ձեր ամէնուն է։ 4—Վասն զի չատ նեղութենէ և սրտի տագնապէ ես ձեզի գրեցի չատ արցունքով. ոչ թէ՝ որպէս զի դուք տրամիք, հապա որպէս զի գիտնաք այն սէրը զոր ես ունիմ աւելի ձեր վրայ։

5—Բայց եթէ մէկը արամեցուց, ոչ թէ զիս արամեցուց, հապա էքսա մասին (որպէս զի չծանրանամ) ձեզ ա-

*Կամ, ոչ. հապա որպէս զի իմ կոչմանէս այն այո ըլլայ ու ոչը ոչ

†Ոմանք, գրեցի ձեզի

‡Կամ, քան մասին, որ ձեր ամէնուն վրայ ծանրութիւն չդնեմ

մէնդ՝։ 6—Հերիք է այնպիսի մարդուն այն պատիժը, որ չատերէ եղաւ։ 7—Ուստի ընդհակառակն պէտք է աւելի ներել անոր ու մխիթարել, որ չըլլայ թէ այնպիսին աւելի տրամութենէն ըլլի։ 8—Ուստի կ'աղաչեմ ձեզի, որ անոր վրայ յիշ սէրը հաստատէք։ 9—(Քանզի ասոր համար ալ գրեցի, որպէս զի ձեզ փորձելով գիտամ թէ ամէն բանի մէջ հնազանդ էք։ 10—Ու որուդ բան մը կը ներէք, ես ալ ի՛նչ-ին-չի՛. վասն զի եթէ ես ալ ներեմ, որուդ որ ներեմ՝ ձեզի համար է Քրիստոսի *կռմանիւ.) 11—Որ չըլլայ թէ գրկանք մը կրենք Սատանայէ. քանզի անոր խորհուրդները չգիտցող չենք։

12—Արդ երբ ես Տրովադա հասայ Քրիստոսի աւետարանը տարածելու, և բնիկ դուռ մը բաց կը Տէրոջմով, 13—իմ հոգւոյս մէջ հանգստութիւն չունեցի վասն զի իմ Տիտոս եղբայրս հոն չգտայ. հապա անոնցմէ հրաժարելով՝ Մակեդոնիա գացի։

14—Բայց գոհութիւն Աստուծոյ, որ միշտ յաղթող կ'րնէ մեզ Քրիստոսով, ու զինք ճանչնալուն հոտը մեզմով յայտնի կ'րնէ ամէն տեղ։ 15—Վասն զի մենք Աստուծոյ առջև Քրիստոսի անոյշ հոտն ենք փրկուածներուն մէջ և կորսուածներուն մէջ։ 16—Մէնոց մէնաւն հոտ դէպ ի մահ, և մէնոց կենդանութեան հոտ դէպ ի կեանք. և այս բաներուն ո՞վ բաւական է։ 17—Քանզի մենք չատերուն պէս չենք, որոնք Աստուծոյ խօսքին խարդախութիւն կ'րնեն. հապա որպէս թէ անկեղծութենէ, հապա որպէս թէ Աստուծմէ՝ Աստուծոյ առջև Քրիստոսով կը խօսինք։

ԳԼ. Գ

Կը սկսի՞նք նորէն անձերնիս յանձն րնել. կամ թէ մէնոց պէտք է մեզի յանձնարարութեան Թուղթեր ձեզի կամ ձեզմէ։ 2—Հապա մեր Թուղթը դուք էք մեր սիրտերուն մէջ գրուած, Ճանչցուած ու կարդացուած մէնեն մարդոցմէ։ 3—Ցայտնի ըլլալով որ դուք

*Կամ, առջև

Քրիստոսի Թուղթն էք մեր ապաստարութիւնովը, ոչ թէ մելանով գրուած, հապա կենդանի Աստուծոյ Հոգիովը, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա սրտին մարմնեղէն տախտակներուն վրայ։ 4—Ու այսպիսի վստահութիւն ունինք մենք Աստուծոյ վրայ Քրիստոսի ձեռքով։ 5—Ոչ թէ մենք բնութիւնովս բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ, հապա մեր բաւականութիւնը Աստուծմէ է։ 6—Որ մեզ բաւական ալ բրաւ նոր կտակարանին պաշտօնեաներ ըլլալու, ոչ թէ գիրին հապա Հոգիին. վասն զի գիրը կը սպանանէ, բայց Հոգին կ'ապրեցնէ։ 7—Իսկ եթէ քարերու վրայ գրուած մահուան պաշտօնը փառքով եղաւ, որ իսրայէլի որդիները կարող չեղան Մովսէսի երեսը նայելու՝ անոր երեսին փառքին համար, որ պիտի խափանուէր. 8—ու-րեմն Հոգիին պաշտօնը ինչպէս աւելի փառքով պիտի չըլլայ։ 9—Վասն զի եթէ դատապարտութեան պաշտօնը փառքով էր, ո՛րչափ աւելի արդարութեան պաշտօնը փառքով պիտի ըլլայ։ 10—Վասն զի այն որ փառաւորուէր՝ այս մասին փառաւորուած չէ գերազանց փառքին պատճառաւ։ 11—Քանզի եթէ այն որ պիտի խափանուէր՝ փառքով էր, ո՛րչափ աւելի այն որ կը կենայ՝ փառքով պիտի ըլլայ։ 12—Ուստի այսպիսի յոյս ունինք, չատ համարձակութեամբ կը վարուինք հէր Էսէյէն հէն։ 13—Ու ոչ թէ ինչպէս Մովսէս իր երեսին վրայ ծածկոց կը ձգէր, որպէս զի Իսրայէլի որդիները չնայէին այն խափանուելու բաներուն վախճանին։ 14—Սակայն անոնց միտքերը կարծրացան. վասն զի մինչև այսօր նոյն ծածկոցը ձգուած է հին կտակարանին ընթերցուածքին վրայ. ու չվերնաւ, (վասն զի Քրիստոսով կը խափանուի.) 15—Հապա մինչև այսօր, երբ Մովսէսի գիրքը կարդան, անոնց սրտին վրայ ծածկոց մը կը կենայ։ 16—Բայց երբ Տէրոջը դառնան, այն ատեն պիտի վերնայ այն ծածկոցը։ 17—Արդ Տէրը Հոգին է. և ուր Տէրոջը Հոգին կայ, հոն ազատութիւն կայ։ 18—Բայց մենք ամէնս, բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, նոյն

պատկերին կը նորոգուինք փառաց է փառս, որպէս Թէ Տէրոջը Հոգիէն։

ԳԼ. Դ

Ուստի այս պաշտօնը ունենալով՝ ինչպէս ողորմութիւն գտանք, չենք ձանձրանար։ 2—Հապա հրաժարեցանք ամօթալի ծածուկ բաներէն, ու խորամանկութեամբ չենք վարուիր, և խրատութիւնն չենք բնար Աստուծոյ խօսքին մէջ. հապա ճշմարտութիւնը յայտնելով՝ անձերնիս մարդոց ամէն խղճմտանքին կ'ցնծացնենք Աստուծոյ առջև. 3—իսկ եթէ մեր աւետարանը ծածկած ալ է, կորսուածներուն մէջ ծածկած է։ 4—Որոնց մէջ այս աշխարհին աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց, որպէս զի Քրիստոսի փառաց աւետարանին լոյսը անոնց վրայ չծագէ, որ է Աստուծոյ պատկերը։ 5—Վասն զի ոչ թէ անձերնիս կը քարոզենք, հապա Քրիստոս Յիսուս Տէրը, ու մեզ՝ ձեր ծառաներըը Յիսուսի համար։ 6—Վասն զի Աստուած որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագիլ՝ ինք մեր սիրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը։ 7—Արդ մենք այս գանձը հողի անոթներու մէջ ունինք, որպէս զի զօրութեան առաւելութիւնը Աստուծմէ ըլլայ, ու ոչ թէ մեզմէ։ 8—Ամէն կողմանէ վշտացած ենք, բայց նեղը չենք. կասկածել ենք, բայց յուսահատ չենք. 9—Հալածուած ենք, բայց երբեք ձգուած չենք. փոր ձգուած ենք, բայց կորսուած չենք. 10—Ամէն ատեն *Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի։ 11—Վասն զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի համար միշտ մահուան կը մատնուինք, որպէս զի Յիսուսի կեանքն ալ մեր մահկանացու մարմիններուն մէջ յայտնի ըլլայ։ 12—Ուստի մահը մեր մէջ կը ներգործէ, և կեանքը՝ ձեր մէջ։ 13—Բայց հաւատքին նոյն հոգին ունինք, ինչպէս գրուած է. Հաւատացի, անոր համար խօսեցայ. մենք ալ կը հա-

*Ոմանք, Տէր Յիսուսի

ատանք, ու անոր համար կը խօսինք։ 14—Զայս գիտալով քէ ան որ Տէր Յիսուս յարուցի՝ մեզ ալ Յիսուսով պիտի յարուցանէ, ու *մեզ պիտի կայնեցնէ ձեզմով միասին։ 15—Վասն զի ամէն բան ձեզի համար է, որպէս զի այն չնորհքը առատացած՝ յաւելցուն գոհաբանութիւն բնակիչ աւելոյ Աստուծոյ փառքին համար։

16—Վասն որոյ չենք ձանձրանար. բայց թէպէտ այս մեր դուրսի մարդը կ'ապականի, սակայն մեր ներսի հոգին օրէ օր կը նորոգուի։ 17—Վասն զի մեր վայրկենական քնքուշ թեթև նեղութիւնը աւետ քան զաւետ փառաց յաւիտենական գերազանցութիւն կը գործէ մեզի։ 18—Վասն զի մենք երեւցած բաներուն չենք նայիր, հապա չերեւցածներուն. քանզի երեւցած բաները ժամանակաւոր են, բայց չերեւցածները՝ յաւիտենական։

Գլ. Ե

Վասն զի գիտենք որ եթէ մեր վրանի նման երկրաւոր տունը փակուի, շինուածք մը ունինք Աստուծմէ, անձեռագործ յաւիտենական տուն մը երկինքի մէջ։ 2—Ու յիրաւի տաք մէջ կը հառաչենք՝ մեր երկնային բնակութիւնը հագնելու փափաքելով։ 3—Միայն թէ երբ զայն հագնինք՝ բոլորովին մերկ չգտնուինք։ 4—Վասն զի մենք որ այս վրանին տակ ենք, կը հառաչենք ծանրութիւն քաշելով. վասն զի չենք ուզեր մեր վրայէն հանել, հապա *հագնիլ՝ որ վրայէն հագնել, որպէս զի մահկանացուութիւնը ընկղմի կեանքին։ 5—Իսկ ան որ մեզ այս բանին կը պատրաստէ, Աստուած է, որ նաև մեզի տուաւ Հոգւոյն գրաւը։ 6—Ուստի միշտ առնէն վստահութիւն ունինք, և գիտենք թէ որչափ մարմնի մէջ կը կեանք, Տէրոջմէ հեռու ենք. 7—(Վասն զի հաւատքով կը քալենք, ու ոչ թէ երեւութով։) 8—Ուստի վստահութիւն ունինք՝ և ալ աւելի կ'ուզենք մարմնէն հեռանալ ու Տէրոջը քով կենալ։ 9—Ասոր համար կը ջանանք ալ, որ թէ՛ կենանք և թէ՛ հեռանանք՝ անոր հաճոյ ըլլանք։ 10—Վասն զի պէտք է որ ամէնս ալ Քրիստոսի առջեւը յայտնի ներկայանանք, որպէս զի ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն համեմատ՝ ընդունի՝ թէ՛ բարի և թէ՛ չար։

11—Ուստի Տէրոջը վախը գիտնալով՝ մարդոց միտքը կը համոզենք. սակայն մենք Աստուծոյ առջեւ յայտնի ենք, և կը յուսամ որ ձեր խղճմտանքին մէջ ալ յայտնի ենք։ 12—Ոչ թէ նորէն անձերնիս ձեզի կ'ընծայենք. հապա առիթ կու տանք ձեզի՝ մեր վրայով պարծենալու. որպէս զի ըսածնիս ունենաք ընդդէմ անոնց՝ որ ուշքի երեւցածով կը պարծենան, ու ոչ թէ սրտով։ 13—Վասն զի եթէ խելագած ենք՝ այն Աստուծոյ համար է, և եթէ զգաստ ենք՝ այն ձեզի համար է. 14—Վասն զի Քրիստոսի սէրը մեզ կը սեղմէ. քանզի մեր դատումը այս է որ եթէ մէկը ամէնուն համար մեռաւ, ուրեմն ամէնն ալ մեռան։ 15—Ու ամէնուն համար մեռաւ, որպէս զի կենդանի եղողները ա՛լ իրենց անձերուն կենդանի չըլլան, հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ։ 16—Ուստի ասկէ եւս մենք մարմինով չենք գիտեր. ու թէև Քրիստոս մարմնով ճանչցանք, բայց հիմա ա՛լ այնպէս չենք ճանչնար։ 17—Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մրն է. հինները անցան, և ահա ամէն բան նոր եղաւ։ 18—Սակայն ամէն բան Աստուծմէ է, որ մեզ իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքով, ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը. 19—Այսինքն Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ հաշտեցուց, և անոնց յանցանքները իրենց չհսկեց, ու հաշտութեան խօսքը մեր մէջ դրաւ։ 20—Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանու թիւն կ'ընենք, իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզմով. կ'աղաչենք Յիսուս Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Աստուծոյ հետ։ 21—Վասն զի Անմեղ զանիկա որ մեզի չէր գիտեր, մեզի համար *մեղաւոր

*Յոյն. մեզ ըրաւ

ածորդեաց քեան հետ, և ինչ հոգածութիւն ունի լաւը խառնելն հետ, 15—ու ինչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարի հետ, կամ ինչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ, 16—ու ինչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերու հետ. վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպէս Աստուած ըսաւ, թէ Անոնց մէջ պիտի բնակիմ, ու անոնց մէջ պիտի քալեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ, ու անոնք իմ ժողովուրդ պիտի ըլլան։ 17—Ասոր համար ելէք անոնց միջէն ու զատուեցէք, կ'ըսէ Տէրը, և պիտի բան մի դպչիք. 18—Ու ես ձեզ պիտի ընդունիմ, և ես ձեզի Հայր պիտի ըլլամ, ու դուք իմ ազգականներ ու ազջիկները պիտի ըլլաք, կ'ըսէ Ամենակալ Տէրը։

Գլ. Զ

Ասոր համար մենք ալ գործակից ըլլալով՝ կ'աղաչենք որ Աստուծոյ շնորհքը պարապ տեղ ընդունած չըլլաք։ 2—Վասն զի՝ Ընդունելի ժամանակի մէջ լսեցի քեզի, կ'ըսէ, և փրկութեան օրը օգնեցի քեզի. ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը։ 3—Բնաւ բանով մը դպչիկ քիւն չենք տար, որպէս զի չըլլայ պաշտօնը չարատարուի. 4—Հապա ամէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք Աստուծոյ ապաստարաներ. պէս՝ շատ համբերութեամբ վիշտերու մէջ, տագնապներու, նեղութիւններու, 5—ծեծերու, բանտերու, խռովութիւններու, աշխատութիւններու, հսկումներու, ծոմերու մէջ։ 6—Մաքրութիւնով, գիտութիւնով, երկայնմտութիւնով, քաղցրութիւնով, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, 7—Ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւնով, արդարութեան զէնքերով՝ որ աջ կողմն ու ձախ կողմն է. 8—Փառքով ու անարգութիւնով, պարսաւանքով և գովութիւնով. մոլորեցնողներու պէս՝ ու ճշմարտութիւն. 9—Անծանօթներու պէս՝ և ծանօթներ, մեռնողներու պէս՝ և ահա կենդանի ենք. պատժուածներու պէս՝ ու չսպանուածներ. 10—Տրտմածներու պէս՝ ու միշտ ուրախ ենք. աղքատներու պէս՝ ու շատերը կը հարստացնենք. բան մը չունեցողներու պէս՝ և ամէն բան տացած ենք։ 11—Մեր բերանը ձեզի բացուած է, ով Կորնթացիք, և մեր սիրտը լայնցած. 12—Դուք մեր կողմէն չէք նեղուիր, հապա *ձեր ներքին գութերն կողմէ՝ կը նեղուիք։ 13—Ուստի անոր հատուցումը ընելու համար (իբրև որդիներուս կ'խօսիմ ձեզի) դուք ալ ըլլաք լայնցէք։

14—Անհաւատներուն հետ օտարաթառն լծակից մի ըլլաք. քանի՞ նմանակցութիւն ունի արդարութիւնը

*Կամ, ձեր նեղութիւնն

ահռելի՝ որպէս զի մենք անոր միջոցով Աստուծոյ արդարութիւն ըլլանք։

Գլ. Է

Ուստի սիրելիներ, որովհետև մենք այս խոստումներն ունինք, մեր անձերը մարմնի ու հոգւոյ ամէն ներկայ պղծութենէ մաքրենք, և արդութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը։ 2—*Ընդունեցէք մեզ՝. մարգ՝. ձեռս չատիք, ոչ մէկը եղծեցինք, և ոչ մէկը գրկեցինք։ 3—Ոչ թէ ձեզ դատապարտելու համար չըսա կը զրուցեմ. որովհետև ես առաջուընէ ըսեր եմ որ դուք մեր սիրտերուն մէջ էք՝ մեռնելու և ապրելու միասին հաւ։ 4—Շատ է իմ համարձակութիւնս ձեր վրայ. չատ է իմ պարծանքս ձեզի համար. լեցուեցայ մխիթարութիւնով, առելցած եմ ուրախութիւնով մեր ամէն նեղութիւններուն մէջ։ 5—Վասն զի երբ մենք Մակեդոնիա հասանք, բնաւ մեր մարմինը հանգստութիւն չունեցաւ, հապա ամէն կողմանէ նեղութիւն կը քաշէինք. դուրսէն պատերազմներ կային, ներսէն՝ վախեր։ 6—Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալովը։ 7—Ու ոչ թէ միայն անոր գալովը, հապա այն մխիթարութիւնովն ալ՝ որով ինք մխիթա-

*Կամ, Համբերեցէք մեզի

ուներ էր ձեզմով, երբ մեզի պատմից ձեր բազձանքը, ձեր ոգին, ձեր ինձի համար եռեռանդ նախանձաւորութիւնը, այնպէս որ ալ աւելի ուրախ եղայ։ 8—Վասն զի եթէ ձեզ ապաւկացի այն թուղթով, չեմ զղջար, (թէև զղջացեր էի,) փաղդի կը տեսնեմ որ այն թուղթը ձեզ ապաւկացոց, թէև քիչ մը ատեն։ 9—Արդ ուրախ եմ, ոչ թէ՝ որ ապաւկացաք, հապա որ ապաշխարութեան համար ապաւկացաք. որովհետև դուք Աստուծոյ եռեռանդին պէս ապաւկացաք, այնպէս որ բանով մըն ալ մեզմէ վնաս չքաշեցիք։ 10—Վասն զի Աստուծոյ եռեռանդին պէս եղած ապաւկութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ, որ զղջանալու բան չէ. բայց աշխարհի ապաւկութիւնը մահ կը գործէ։ 11—Քանզի տես այս բանը որ դուք Աստուծոյ եռեռանդին պէս ապաւկեցաք, ձեր մէջ ո՛րչափ ջանք գործեց, ո՛րչափ չքմեղութիւն, ո՛րչափ ապաւկութիւն, ո՛րչափ վախ, ո՛րչափ բազձանք, ո՛րչափ նախանձաւորութիւն, ո՛րչափ վրէժխնդրութիւն. ամէն կերպով ինքզինքնիդ ցոյց ցուցիք թէ այդ բանին մէջ մաքուր էք։ 12—Ուրեմն այն որ ես ձեզի գրեցի, ոչ թէ զրկանքը ընողին համար էր, և ոչ թէ զրկանքը կրողին համար, հապա որպէս զի ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի ըլլայ ձեզի Աստուծոյ առջև։ 13—Ուստի այն ձեր մխիթարութեանը համար մենք մխիթարեցանք. շատ աւելի ալ ուրախացանք Տիտոսի ուրախութեանը համար, վասն զի անոր հոգին ձեր ամէնէն հանգստացուցիր է։ 14—Վասն զի ինչ որ ես անոր առջև ձեզի համար պարծեցայ՝ ամօթով չելայ. հապա ինչպես ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպես Տիտոսի առջև պարծենալնիս ալ ճշմարիտ եղաւ։ 15—Նաև անոր սիրտ աւելի է ձեր վրայ, երբ կը յիշէ ձեր ամէնուն հնազանդութիւնը, թէ ի՛նչպես վախով ու դողով զանիկա ընդուներ էք։ 16—Ուստի ուրախ եմ որ ամէն բանի մէջ ձեր վրայ վստահութիւն ունիմ։

Գլ. Ը

Արդ, եղբայրներ, ձեզի կը ծանուցանենք Աստուծոյ շնորհքը, որ Մակեդոնացւոց եկեղեցիներուն արուած է. 2—Որ նեղութեան մեծ փորձին մէջ իրենց ուրախութեանը առատութիւնը և իրենց ծանր աղքատութիւնը ամենի մեծ առատաձեռնութիւն եղաւ։ 3—Վասն զի ես կը վկայեմ որ իրենց կարողութեան չափովը՝ ու կարողութենէն ալ աւելի յօժարակամ ըլլալով, 4—Շատ ազաչանքով ի՛մեզմէն որ սուրբերուն ու սրբերուն համար եղած պաշտօնին մասնակցութիւնը ընդունինք։ 5—Եւ ոչ թէ որչափ մենք կը յուսայինք, հապա անձերնին ալ առին առաջ Տէրոջը ու Էֆէզ մեզի՝ Աստուծոյ կամքովը։ 6—Որ Տիտոսի ապշնեցինք թէ ինչպես անիկա սկսաւ ուրախութիւնը, ո՛րչափ սրամտութիւն, ո՛րչափ վախ, ո՛րչափ բազձանք, ո՛րչափ նախանձաւորութիւն, ո՛րչափ վրէժխնդրութիւն. ամէն կերպով ինքզինքնիդ ցոյց ցուցիք թէ այդ բանին մէջ մաքուր էք։ 12—Ուրեմն այն որ ես ձեզի գրեցի, ոչ թէ զրկանքը ընողին համար էր, և ոչ թէ զրկանքը կրողին համար, հապա որպէս զի ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի ըլլայ ձեզի Աստուծոյ առջև։ 13—Ուստի այն ձեր մխիթարութեանը համար մենք մխիթարեցանք. շատ աւելի ալ ուրախացանք Տիտոսի ուրախութեանը համար, վասն զի անոր հոգին ձեր ամէնէն հանգստացուցիր է։ 14—Վասն զի ինչ որ ես անոր առջև ձեզի համար պարծեցայ՝ ամօթով չելայ. հապա ինչպես ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպես Տիտոսի առջև պարծենալնիս ալ ճշմարիտ եղաւ։ 15—Նաև անոր սիրտ աւելի է ձեր վրայ, երբ կը յիշէ ձեր ամէնուն հնազանդութիւնը, թէ ի՛նչպես վախով ու դողով զանիկա ընդուներ էք։ 16—Ուստի ուրախ եմ որ ամէն բանի մէջ ձեր վրայ վստահութիւն ունիմ։

Հաստատութիւնով՝ հիմնուած ասեղը ձեր ուխտին անանց պսակութիւնը չէ՞ջէ, որպէս զի անանց ուխտին ալ ոչ մէ էջէ՞ւթիւն ըլլայ ձեր պսակութեանը, որպէս զի հաստատութիւն ըլլայ։ 15—Ինչպէս գրուած է, թէ Ան որ շատ ձեզ չհաւելցաւ, ու ան որ քիչ չպակսեցաւ։ 16—Բայց գոհութիւն Աստուծոյ, որ նոյն հոգը ձեր վրայ Տիտոսի սիրտը ձգեց։ 17—Վասն զի ոչ միայն չընդունեց, և իր յօժարութեամբ ինքը շատ ըլլալով՝ իր կամքովը եկաւ ձեզի էֆէսոս։ 18—Ու անոր հետ զրկեցինք այն եղբայրը, որուն գովութիւնը աւետարանին մէջ է՝ բոլոր եկեղեցիներուն մէջ։ 19—Ու ոչ միայն այսքան, հապա նաև եկեղեցիներէն ընտրուեցաւ մեզի հաւրեղբայրեան բնիկը ըլլալու այս սուրբերուն մէջ, որ մենք կը ծառայենք Տէրոջը փառքին համար, ու *ձեր յօժարութիւնովը։ 20—Որպէս զի մեզմէն զգուշանանք ինչ որ չընդունինք, որ չըլլայ թէ մենք սրտաց մը գնէ մեր վրայ այս առատութեանը մէջ, որ մենք կը ծառայենք։ 21—Քանզի ոչ թէ միայն Տէրոջը առջև, հապա մարդոց առջև. ալ բարի բաներ ընելու հոգ կը տանինք։ 22—Ու անոնց հետ մեր եղբայրը զրկեցինք, զոր շատ բաներու մէջ փորձեցինք՝ շատ անգամ յօժարասիրտ գտեր ենք, ու հիմա՛ւ աւելի յօժարասիրտ՝ այն մեծ վստահութիւնովը որ ձեր վրայ ունի։ 23—Բայց եթէ Տիտոսի համար ինչ հարցնէ, անիկա իմ բնկերս է, և ձեր մէջ իմ գործակիցս. իսկ եթէ մեր եղբայրներուն համար՝ անոնք եկեղեցիներուն զրկուածներն են, ա՛ Քրիստոսի փառքը։ 24—Ուստի ձեր սիրոյն և մեր ձեր վրայով պարծենալուն ապացոյցը առանց վրայ ցուցուցէք եկեղեցիներուն առջև։

Գլ. Թ

Քանզի աւելորդ ըլլալու պաշտօնին վրայով ինծի աւելորդ է ձեզի գրել։ 2—Վասն զի գիտեմ ես ձեր յօժարութիւնը, որուն վրայով կը պարծենամ ձեզի համար Մակեդոնացւոց մէջ, թէ Աքայիացիք անցած տարուընէ պատրաստ են. ու ձեր եռանդը շատերը գրգռեց։ 3—Եւ սակայն եղբայրները զրկեցի, որպէս զի մեր ձեզի համար պարծենալը այդ տեղին մէջ պարապ չելլէ, հապա պատրաստ գտնուիք, ինչպէս ըսեր եմ. 4—Որ չըլլայ թէ երբ Մակեդոնացիք ինծի հետ գան ու ձեզ անպատրաստ գտնեն, ալ մենք (որ չըսենք թէ դուք,) ամօթով ջնջուինք այս *պարծանքին վստահութեանը մէջ։ 5—Ուստի հարկաւոր սեպեցի եղբայրները առաջել, որ առաջուընէ ձեզի գան, ու առաջուընէ կարգի գնեն այն ձեր առաջուընէ ժամու ցուած բաժան, որպէս զի պատրաստ ըլլայ, այնպէս որ բաժան պէս ըլլայ, ու ոչ թէ ագահութեան պէս։ 6—Բայց սակայն էջ ծառայեմ թէ Ան որ խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձէ, ու ան որ առատութեամբ կը սերմանէ՝ առատութեամբ պիտի հնձէ։ 7—Ամէն մէկը ինչպէս իր սրտովը կը յօժարի՝ նէզ տալ, ոչ թէ տրտմութեամբ կամ ստիպմամբ. վասն զի Աստուած յօժարակամ առուոր կը սիրէ։ 8—Բայց կարող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի առատացնել տալ, որպէս զի ամէն բանի մէջ ամէն տեղ ձեզի պէտք եղածը ունենալով՝ ամէն բարի գործով առատանաք։ 9—Ինչպես գրուած է, Տարածեց ու ապշտանեղաց տուաւ, անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ։ 10—Ու անիկա որ սերմ ցանողին սերմ կը պարգեւէ, դէ կերակուր ալ հացը հաց, ձեր սերմանիքը պարգեւէ և աւելցնէ՛, ու ձեր արդարութեան պտուղները չաւացնէ։ 11—Որպէս զի ամէն բանի մէջ հարստանալով ամէն կերպ առատութիւնով, որ մեր ձեռքով կը պատճառէ գոհութիւն Աստուծոյ։ 12—Վասն զի այս պաշտօնին մատակարարութիւնը ոչ թէ միայն սուրբերուն

*Ոմանք՝ մեր

*Ոմանք՝ չատցնէ

պակասթիւնը լեցնելու համար է, հապա նաև ուրիշ չացնելու Աստուծոյ գոհութիւն տալու։ 13—Որը այս ԻՐ պաշտօնին փոքրագոյնն զԱստուած՝ Քրիստոսի աւետարանը խոստովանելու հնազանդութեանը համար, և այն առաքելութեանը համար՝ որով հաղորդակցութիւն կ'ընէք անոնց ու ամէնուն։ 14—Ու իրենց ապրիքը մեզի համար Հոգացողներն, փոխանակ անոնցմով մեր վրայ՝ Աստուծոյ գերազանց շնորհքին համար որ մեզ մէջ է։ 15—Ալ գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպատում պարգեւին համար։

Գլ. Ժ

Բայց ես Պօղոս մեզի կ'ապաչեմ Քրիստոսի հեզութիւնովը ու քաղցրութիւնովը, որ երես առ երես ներկայ ատեն խոնարհ եմ ձեր մէջ, բայց հեռուն կը համարձակիմ մեզի։ 2—կ'ապաչեմ որ չըլլայ թէ մօտն ալ համարձակիմ այն վստահութիւնովը՝ որով միտք ունիմ յանդգնիլ մէկ քանիներուն վրայ, որոնք մեր վրայով այնպես կը կարծեն թէ մարմնաւորապես կը փարինք։ 3—Թանզի թէպէտ մարմնի մէջ կը փարինք, բայց ոչ թէ մարմնաւորապես զինու որութիւն կ'ընենք։ 4—Վասն զի մեր զինու որութեան զէնքերը մարմնաւոր չեն, հապա Աստուծմէ զօրութիւն առած՝ ամրոցներ քակելու. մենք խորհուրդներ կը քակենք, 5—Ու Աստուծոյ գիտութեանը դէմ բոլոր հպարտացած բարձր բաներըն, ու բոլոր միտքերը Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընենք։ 6—Ու պատրաստ ենք ունենք վրէժ առնելու ամէն անհնազանդութենէ, երբ ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ։ 7—Դուք երեսնիդ կը նայիք. եթէ մէկը վստահ ըլլայ իր անձին վրայ՝ թէ ինք Քրիստոսին է, զայս նորէն ինքիրմէ խորհի՝ որ ինչպէս ինք Քրիստոսին է, նոյնպես ալ մենք՝։ 8—Թանզի եթէ աւելի ալ պարծենայ ըլլամ այս մեր իշխանութեանը վրայով՝ զոր Տէրը մեզի տուաւ՝ ձեզ չինելու և ոչ թէ քակելու համար, պիտի չամչնամ. 9—Որպէս զի այնպէս չտեսնուիմ՝ որպէս թէ ես թուղթերով ձեզի ծանր մը կը ձգեմ. 10—Թանզի Անոնք թուղթերը, կ'ըսէ հիւծ. ծանր ու զօրաւոր են, բայց անոր մարմինին երեւոյթը ակար է, ու խօսքը՝ անարդ. 11—Այնպիսի մարդը զայս թող խորհի, որ մենք հեռուն ինչպես ենք խօսքով մեր թուղթերովը, մտնէն ալ այնպէս պիտի ըլլանք գործով։ 12—Վասն զի մենք չենք համարձակիր մեր անձը կլինփի դնել ու բաղդատել անոնց հետ, որ ինքզինքնին կը գովեն. բայց անոնք իրենցմով իրենց անձերը չափելով, և զիրենք իրենց հետ բաղդատելով՝ չեն հասկնար։ 13—Բայց մենք չափ գործ բաներով պիտի չպարծենանք, հապա այն կանոնին չափովը՝ զոր Աստուած մեզի բաժին տուաւ մինչև ձեզի հասնելու։ 14—Որ թէ որպես թէ մենք ձեզի հասած չենք, ու ինքզինքնիս չափն աւելի կ'երկնցնենք. վասն զի Քրիստոսի աւետարանովը մինչև ձեզի հասանք։ 15—Ու ոչ թէ չափ դուրս բաներով՝ ուրիշներուն աշխատանքովը կը պարծենանք. հապա յոյս ունինք որ ձեր հաւատքը աւելնալուն՝ մեր կանոնին չափովը ձեզմով աւելի ընդարձակինք, 16—Ձեզմէ անդին երկիրը աւետարանը քարոզելու, և ոչ թէ պատրաստ բաներու վրայ պարծենալու ուրիշի մը կանոնով։ 17—Բայց ան որ կը պարծենայ՝ Թող Տէրոջմով պարծենայ, 18—Վասն զի ոչ թէ ան որ իր անձը կը գովէ՝ ան[1] ակնի է ընտրուածը, հապա ան զոր Տէրը կը գովէ։

Գլ. ԺԱ

Երանի՛ թէ փիչ մը ներեիք իմ անմտութիւնս. և իրաւցընէ համբերեցէք ինծի։ 2—Վասն զի ձեր վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովը. վասն զի ես ձեզ երկան մը նշանեցի՝ մաքուր կոյս մը պէս Քրիստոսի դիմաց հանելու։ 3—Միայն թէ կը վախնամ՝ չըլլայ թէ ինչպէս օձը նենգ խաբեց իր խորամանկութիւնովը, նոյնպէս ալ ձեր միտքերը ապականին Քրիստոսի վրայ եղած միամտութենէն։ 4—Վասն զի եթէ մէկը գալու ըլլայ և ուրիշ Յիսուս քարոզէ՝ զոր մենք չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի առնէք՝ զոր չառիք, կամ ուրիշ աւետարան՝ զոր չէք ընդունած, հանդուրժելու ալէկ կը հարիեիք։ 5—Թանզի ես այսպես կը սեպհ՝ որ ամէնեն երեւելի առաքելոյներէն բան մըն ալ պակաս չեմ։ 6—Ու թէպէտ խօսքի կողմէ անկիրթ եմ, բայց ոչ թէ գիտութեան կողմէ. սակայն ամէն բանի մէջ բոլորովին անձերնիս ձեզի յայտնի ըրինք։ 7—Մի՞թէ յանցանք գործած եղայ՝ որ Աստուծոյ աւետարանը ձեզի ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցուցի, որպես զի դուք բարձրանաք։ 8—Ուրիշ եկեղեցիները կողոպտեցի, ծառայի՛ք առնելով ձեզի ծառայելու համար։ 9—Ու ձեր քով գտնուած ատենս երբ պակասութիւն մը ունեցայ, Յիսուի Քրիստոսի եղբայրները. և ամէն կերպով ձեզի ծանրութիւն տալէ իմ անձս պահեցի ու պիտի պահեմ ալ։ 10—Քրիստոսի ճշմարտութիւնը իմ ներսիդիս է, որ այս իմ պարծենալս պիտի չխափանուի ինծի Աքայիայի կողմերը։ 11—Ինչո՞ւ. որպես թէ չե՞մ սիրեր ձեզ. Աստուած գիտէ։ 12—Բայց ինչ որ կ'ընեմ՝ պիտի ընեմ ալ, որպէս զի կտրեմ առնոց պատճառը՝ որպէս պատճառ կը փնտռեն, որպէս զի ի՛նչ բանով որ կը պարծենան, իրենք ալ մեզի պէս գտնուին։ 13—Վասն զի այնպիսիները սուտ առաքեալներ, խաբեբայ բանուրներ, ըլլալով, Քրիստոսի առաքեալներուն կերպարանքը իրենց վրայ կ'առնեն։ 14—Ու զարմանք մը չէ. վասն զի ինք Սատանայ ալ լուսաւոր հրեշտակի կերպարանք կ'առնէ. 15—Ալ մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն. որոնց վերջը իրենց գործերուն համեմատ պիտի ըլլայ։ 16—Դարձեալ կ'ըսեմ, Չըլլայ որ մէկը զիս անմիտ սեպէ, ապա թէ ոչ՝ գոնէ անմիտի մը պէս զիս ընդունեցէք, որպէս զի ես ալ փիչ

մը պարծենամ։ 17—Ինչ որ ես կը խօսիմ, ոչ թէ Տէրոջը խօսիմ, հապա որպէս թէ անմտութիւնով մը՝ այդ պարծենալուն վստահութիւնովը։ 18—Որովհետև շատերը մարմնի կողմանէ կը պարծենան, ես ալ պիտի պարծենամ։ 19—Թանզի դուք իմաստուն ըլլալով, յօժարութեամբ կը համբերէք անմիտներուն։ 20—Վասն զի կը համբերէք, եթէ մէկը ձեզ ծառայեցընէ, եթէ մէկը ձեզ կուլ տայ, եթէ մէկը ձեզ կ'առնէ, եթէ մէկը ինչ որ ունիք կ'առնէ, եթէ մէկը ձեր երեսին զարնէ։ 21—Ամօթանքի ձեւով կը խօսիմ, իբր թէ մենք ակար էինք։ Բայց ինչ բանով որ մէկը դօրէնուր կը համարձակի, (անմտութեամբ կը խօսիմ,) ես ալ կը համարձակիմ։ 22—Ամենք Եբրայեցի՞ են, ես ալ. Իսրայելացի՞ են, ես ալ. 23—Աբրահամի՞ սերունդ են, ես ալ. Քրիստոսի՞ պաշտօնեաներ են, (յիմարութիւն կը խօսիմ,) ալ աւելի ես. աշխատանքներով՝ աւելի, ծեծերով՝ ալ աւելի, բանտարկութիւններով՝ աւելի, մահուան վտանգներով՝ յաճախ։ 24—Հրեաներէն հինգ անգամ քառասունէն մէկ պակաս ծեծ կերայ. 25—Երեք անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ անգամ քարկոծուեցայ. երեք անգամ նաւաբեկութիւնէ հանդիպեցայ. գիշեր մը ու ցերեկ մը ծովուն մէջ անցուցի. 26—Շատ անգամ ճամբորդութիւններու մէջ՝ գետերէ վտանգներ, աւազակներէն վտանգներ, իմ ազգէս վտանգներ, հեթանոսներէն վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ, ծովու վրայ վտանգներ, սուտ եղբայրներու մէջ վտանգներ լրեցէ։ 27—Ջանքի ու աշխատանքի մէջ, շատ անգամ քնահատութեան մէջ, անօթութեան ու ծարաւութեան մէջ, շատ անգամ ցամ կենալու մէջ, ցուրտի ու մերկութեան մէջ եմ. 28—Զգէ արտաքին դէպքերը, ամէն օրուան գրազնոցը, բոլոր եկեղեցիներուն հոգը, վրաս կը գիզուէր։ 29—Ո՞վ կը տկարանայ, ու ես չեմ տկարանար. ո՞վ կը գայթակղի, ու իմ սիրտս չայրիր։ 30—Թէ պար-

[1] Ուրեմն կ'ասէ Յիսուսին, Քրիստոսին ձեռք

ծննալ պէտք բլլայ, ակարտիճանս բաներուն վրայ պարծենամ։ 31—Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ սուտ չեմ գրեր։ 32—Դամասկոսի մէջ Արետաս թագաւորին ազգապետը պիտ բռնել ուզելով՝ Դամասկացոց քաղաքը պահապանները դրեր էր։ 33—Ու ես պատուհանի մը զամբիւղով պարսպէն վար թող արուեցայ, ու անոր ձեռքէն փախայ։

Գլ. ԺԲ

Պարծենալ *իրաւցնէ ինծի անօգուտ է. միայն թէ Տէրոջը տեսիլքներուն ու յայտնութիւններուն գալ։ 2—Մարդ մը գիտեմ Քրիստոսով տասներչորս տարի առաջ, (եթէ մարմինով էր՝ չեմ գիտեր, և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) որ այնպիսի մէկը յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը։ 3—Ու գիտեմ այնպիսի մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) 4—որ դրախտը յափշտակուեցաւ ու լսեց չպատմելու խօսքեր, զորոնք մարդու արժան չէ խօսիլ։ 5—Ես այնպիսիին համար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ։ 6—Վասն զի եթէ պարծենալ ալ ուզեմ, անմիտ պիտի չըլլամ, որովհետև ճիշտը պիտի ըսեցի. բայց կը խնայեմ Եսայիէ՝ որ չըլլայ թէ ինկը իմ վրաս աւելի համարում ունենայ, քան որչափ իմ վրաս կը տեսնէ կամ ինծմէ կը լսէ։ 7—Ու որ չըլլայ թէ ես հպարտանամ խիստ շատ յայտնութիւններուն համար, ինծի մարմնի խայթոց մը տրուեցաւ, Սատանայի հրեշտակ մը, որ զիս նեղելու համար, որ չըլլայ թէ հպարտանամ։ 8—Անոր համար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մեկնի ինկէ ինծմէ։ 9—Ու ըսաւ ինծի, Իմ շնորհքս հերիք է քեզի, վասն զի իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի։ ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պարծենամ, որպէս զի Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս հանգչի։ 10—Անոր համար հաճոյք համարիմ տկարութիւններու, նախատինքներու, տառապանքներու, հալածանքներու և նեղութիւններու՝ Քրիստոսի համար. վասն զի երբ կը տկարանամ, այն ատեն զօրաւոր եմ։ 11—Ես անմիտ եղայ *պարծենալով. դուք ստիպեցիք զիս. վասն զի ինծի պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել, քանզի ես երևելի առաքեալներէն բանով մը պակաս չգտանուցայ, թէև ոչինչ եմ։ 12—Քիրտի ձեր մէջ առաքեալի նշաններ գործուեցան ամէն համբերութիւնով, նշաններով և սքանչելիքներով ու զօրութիւններով, 13—վասն զի ուր ինչ կայ, որով պակաս գտնուեցաք ուրիշ եկեղեցիներէն, միայն թէ անոնց մարմինի՝ չեմ գիտեր, և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) որ այնպիսի մէկը յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը։ 3—Ու գիտեմ այնպիսի մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) 4—որ դրախտը յափշտակուեցաւ ու լսեց չպատմելու խօսքեր, զորոնք մարդու արժան չէ խօսիլ։ 5—Ես այնպիսիին համար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ։ 6—Վասն զի եթէ պարծենալ ալ ուզեմ, անմիտ պիտի չըլլամ, որովհետև ճիշտը պիտի ըսեցի. բայց կը խնայեմ Եսայիէ՝ որ չըլլայ թէ ինկը իմ վրաս աւելի համարում ունենայ, քան որչափ իմ վրաս կը տեսնէ կամ ինծմէ կը լսէ։ 7—Ու որ չըլլայ թէ ես հպարտանամ խիստ շատ յայտնութիւններուն համար, ինծի մարմնի խայթոց մը տրուեցաւ, Սատանայի հրեշտակ մը, որ զիս նեղելու համար, որ չըլլայ թէ հպարտանամ։ 8—Անոր համար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մեկնի ինկէ ինծմէ։ 9—Ու ըսաւ ինծի, Իմ շնորհքս հերիք է քեզի, վասն զի իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի։ ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պարծենամ, որպէս զի Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս հանգչի։ 10—Անոր համար հաճոյք համարիմ տկարութիւններու, նախատինքներու, տառապանքներու, հալածանքներու և նեղութիւններու՝ Քրիստոսի համար. վասն զի երբ կը տկարանամ, այն ատեն զօրաւոր եմ։ 11—Ես անմիտ եղայ *պարծենալով. դուք ստիպեցիք զիս. վասն զի ինծի պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել, քանզի ես երևելի առաքեալներէն բանով մը պակաս չգտանուցայ, թէև ոչինչ եմ։ 12—Քիրտի ձեր մէջ առաքեալի նշաններ գործուեցան ամէն համբերութիւնով, նշաններով և սքանչելիքներով ու զօրութիւններով, 13—վասն զի ուր ինչ կայ, որով պակաս գտնուեցաք ուրիշ եկեղեցիներէն, միայն թէ անոնց մարմինի՝ չեմ գիտեր, և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) որ այնպիսի մէկը յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը։ 3—Ու գիտեմ այնպիսի մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) 4—որ դրախտը յափշտակուեցաւ ու լսեց չպատմելու խօսքեր, զորոնք մարդու արժան չէ խօսիլ։ 5—Ես այնպիսիին համար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ։ 6—Վասն զի եթէ պարծենալ ալ ուզեմ, անմիտ պիտի չըլլամ, որովհետև ճիշտը պիտի ըսեցի. բայց կը խնայեմ Եսայիէ՝ որ չըլլայ թէ ինկը իմ վրաս աւելի համարում ունենայ, քան որչափ իմ վրաս կը տեսնէ կամ ինծմէ կը լսէ։ 7—Ու որ չըլլայ թէ ես հպարտանամ խիստ շատ յայտնութիւններուն համար, ինծի մարմնի խայթոց մը տրուեցաւ, Սատանայի հրեշտակ մը, որ զիս նեղելու համար, որ չըլլայ թէ հպարտանամ։ 8—Անոր համար երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մեկնի ինկէ ինծմէ։ 9—Ու ըսաւ ինծի, Իմ շնորհքս հերիք է քեզի, վասն զի իմ զօրութիւնս տկարութեան մէջ կը կատարուի։ ուստի մեծ յօժարութեամբ աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պարծենամ, որպէս զի Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս հանգչի։

*Ոմանք պէտք է, քայց

*Ոմանք չառնին

չըլլայ թէ չէր ճեղ ֆոռուի վճիռ, նախատինքներ, սրամտութիւններ, գրգռութիւններ, չարախօսութիւններ, բամբարկութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ։ 21—Ձըլլայ թէ երբ նորէն գամ, իմ Աստուածս զիս նկատէ ընձէ ձեր քովէ, ու սուգ ընեմ շատերուն համար, որոնք առաջուընէ մեղք գործեցին, ու չապաշխարեցին իրենց գործած պղծութիւնը և պոռնկութիւնը ու գիշերութիւնը վրայ։

Գլ. ԺԳ

Այս երրորդ անգամ է որ ձեզի կուգամ. երկու կամ երեք վկաներու բերնէ պիտի հաստատուի ամէն բան։ 2—Առաջուընէ կ'ըսեմ և նորէն առաջուընէ կ'ըսեմ (որպէս թէ երկրորդ անգամ ներկայ կը գտնուիմ՝ թէև հիմա հեռուն կը գրեմ) առաջուան մեղանչողներուն և ուրիշ ամէնուն, որ եթէ նորէն գամ՝ պիտի չխնայեմ. 3—որովհետև Քրիստոսի իմաստով խօսելուն ապացոյցը կը փնտռէք, որ ձեր վրայ տկարացած չէ, հապա ձեր մէջ զօրացած է. 4—որ թէպէտ խաչուեցաւ տկարութիւնով, բայց կենդանի է Աստուծոյ զօրութիւնով. քանզի մենք ալ թէպէտ կը տկարանանք անով, բայց կենդանի պիտի ըլլանք անոր հետ Աստուծոյ զօրութիւնովը ձեր մէջ։ 5—Փորձեցէք ձեր անձերը թէ հաւատքին մէջ էք. քննեցէք ձեր անձերը. չէ՞ք գիտեր ինքզինքիդ, որ Յիսուս Քրիստոս ձեր մէջ է, միայն եթէ խառնակ չըլլաք։ 6—Բայց կը յուսամ որ պիտի գիտնաք թէ մենք խառնակ չենք։ 7—Ու կը խնդրեմ Աստուծմէ որ գուք չարութիւն մը չընէք, ոչ թէ որպէս զի մենք ընտիր երեւինք, հապա որպէս զի գուք բարին գործէք, թէև մենք իբրև խառնակ ըլլաք։ 8—Վասն զի ճշմարտութեան դէմ կարողութիւն մը չունինք, հապա ճշմարտութեան համար։ 9—Ուրախ ենք՝ երբ մենք կը տկարանանք ու գուք զօրաւոր կ'ըլլաք, և մենք ալ այդ ձեր հաստատութեանը համար կ'աղօթենք։ 10—Ուստի զայս կը գրեմ ձեզի հեռուէն, որ չըլլայ թէ երբ գամ՝ սաստկութեամբ վարուիմ այն իշխանութեանը համեմատ, զոր Տէրը ինծի տուաւ չքնեալ և ոչ թէ քանդելու համար։

11—Վերջապէս, եղբայրներ, ուրախ եղէք, հաստատ կեցէք, միաբանուեցէք, միտքերնիդ եղէք, խաղաղութիւն ըրէք. և սիրոյ ու խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ։ 12—Իրարու տուէք իրարու տարբ համբոյրով. բարև կ'ընեն ձեզի բոլոր տէրերը։ 13—Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և Աստուծոյ սէրը ու հաղորդութիւնը ձեր ամէնուն հետ ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՒԹ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պողոս, առաքեալ Ի֊ն, ոչ ՔԷ մարդացմէ ու ոչ ՔԷ մարդու միջոցով, հապա Յիսուս Քրիստոսի միջոցով, և Հօր Աստուծոյ՝ որ զանիկա մեռելներէն յարուցց, 2—ու բոլոր եղբայրները որոնք ինծի հետ են, Գաղատիոյ եկեղեցիները՝ 3—շնորհք և խաղաղութիւն ձեզի Հօր Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսէ, 4—Որ իր անձը ատաւ մեր մեղքերուն համար, որպէս զի մեզ փրկէ հիմակուան չար աշխարհէն՝ Աստուծոյ ու մեր Հօրը կամքին համեմատ, 5—Որուն փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

6—Կը զարմանամ որ այդպէս չուտով ուրիշ աւետարանի կը փոխուիք անկէ՝ որ ձեզ Քրիստոսի շնորհքին կանչեց։ 7—Որ չկայ ուրիշ —ԻԲԲ—Ը։ միայն ՔԷ կան մանուկ՝ որոնք ձեզ կը խռովեցնեն, ու կ'ուզեն Քրիստոսի աւետարանը խանգարել։ 8—Բայց ԵԹԷ մենք կամ երկինքէն հրեշտակ մը ես֊ս, աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ զոր մենք աւետարանեցինք ձեզի, նզովեալ ըլլայ։ 9—Ինչպէս առաջ ըսինք, հիմա ալ նորէն կ'ըսեմ, ԹԷ մէկը ձեր մէջ կը նզովեցնէ ուրիշ աւետարան քարոզելու ըլլայ ձեզի, նզովեալ ըլլայ։ 10—Քանդի հիմա մարդի՞կ կը հաճեցնեմ ՔԷ Աստուած. կամ մարդո՞ց հաճելի ըլլալ կը փնտռեմ. քանդի ԵԹԷ ես տակաւին մարդոց հաճելի ըլլայի, ալ Քրիստոսի ծառայ չեի ըլլար։

11—Կը ծանուցանեմ ձեզի, եղբայրներ, այն աւետարանը որ ինծի քարոզուեցաւ, ՔԷ անիկա մարդու բան չէ։ 12—Որովհետև ես ալ մարդէ չառի զանիկա, և չսորվեցայ, հապա Յիսուս Քրիստոսի յայտնութենէն։ 13—Վասն զի լսած եք դուք իմ առաջուան ժամանակի վարմունքս Հրէութեան մէջ, ի՝նչպէս չափէ դուրս կը հալածէի Աստուծոյ եկեղեցին, ու կը կործանէի զանիկա. 14—Ու իմ հայրենի ազգութիւններուս խիստ նախանձաւոր ըլլալով՝ իմ ազգիս մէջ եղած չատ հասակակիցներէս աւելի յառաջադէմ էի Հրէութեան մէջ։ 15—Բայց երբ ուզեց Աստուած, (որ որոշեց զիս իմ մօրս որովայնէն, և իր շնորհքովը ինձ կանչեց,) 16—Ինծի իր Որդին յայտնել, որպէս զի զանիկա հեթանոսներուն մէջ քարոզեմ, ես ալ ՈՒՂԻՂ մարմին ու արիւնին, 17—Ոչ ալ Երուսաղէմ երթալ ինծմէ առաջ առաքեալ եղողներուն քով, հապա Արաբիա գացի, ու նորէն Դամասկոս դարձայ։ 18—Ետքը երեք տարիէն հետո Երուսաղէմ երթալով Պետրոսը տեսնելու, և տասներհինգ օր անոր քով կեցայ. 19—Սակայն առաքեալներէն ուրիշ մէկը չտեսայ, բայց միայն Յակոբոս, Տէրոջը եղբայրը։ 20—Բայց զոր որ կը գրեմ ձեզի՝ ահա Աստուծոյ առջև կ'ըսեմ՝ որ սուտ չեմ գրեր։ 21—Անկէ ետքը եկայ Սիրիայի ու Կիլիկիայի կողմերը։ 22—Ու դէմս առ դէմ չէին ճանչնար այն եկեղեցիները՝ որոնք Հրէաստանի մէջ էին Քրիստոսով. 23—Միայն ԲԷ անոնք լսած էին ԹԷ Ան որ առաջ

---

*Կամ, ինծմով

մեզ կը հալածէր, հիմա ինք այն հաւատքը կը քարոզէ՝ զոր առաջ մը կը կործանէր։ 24—Ու ինծմով կ'փառաւորէին։

ԳԼ. Բ

Ետքը տասնչորս տարիէն նորէն Երուսաղէմ եկայ Բառնաբասի հետ՝ Տիտոսն ալ մէկտեղ առնելով։ 2—Ու ելայ յայտնութենով, և անոնց խնդացի այն աւետարանը՝ զոր հեթանոսներուն մէջ կը քարոզեմ, բայց առանձին անոնց՝ որոնք երեւելիներ էին, որ չըլլայ ԹԷ պարապ տեղ վազեմ կամ վազած ըլլամ։ 3—Բայց ոչ ՔԷ ինծի հետ եղող Տիտոսն ալ, որ Յոյն էր, պարտաւորեցաւ ԹլփաւուԹլ։ 4—Մանաւանդ նորա սպրդած սուտ եղբայրներուն համար՝ որոնք սահեցուկ ներս մտած Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու համար, որպէս զի մեզ ծառայեցնեն։ 5—Որոնց ձիկ մը տանք անգամ մտիկ չըրինք հնազանդելու, որպէս զի աւետարանին ճշմարտութիւնը հաստատուն մնայ ձեր մէջ։ 6—Բայց անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ, (ինչ որ էին՝ այն իմ հոգս չէ. Աստուած մարդոց աչառութիւն չընծեր,) վասն զի ինծի նորութիւն կարծածները բան մը չիմացուցին ինծի։ 7—Հապա անոր հակառակը՝ երբ տեսան որ անթլփատներուն աւետարանը ինծի յանձնուած է, ինչպես Պետրոսի՝ թլփատածներուն, 8—(Վասն զի ան որ Պետրոսի յաջողեց թլփատածներուն առաքելութիւնն ընել, ինծի ալ յաջողեց հեթանոսներուն։) 9—Ու երբ ինծի որուած չնորհքը գիտցան Յակոբոս ու Կեփաս և Յովհաննէս, որոնք սիւներ սեպուած էին, ալ ձեռքերնին տուին ինծի ու Բառնաբասի ի նշան հաղորդակցութեան, որպէս զի մենք հեթանոսներուն մէջ երթանք, ու անոնք՝ թլփատածներուն։ 10—Միայն ԹԷ չ֊փչէ որ աղքատները յիշենք, զոր ես ալ փութ ունեցայ այն բանը ընելու։ 11—Բայց երբ Պետրոս Անտիոք եկաւ, ես անոր դէմ կեցայ, որովհետև ինք մեղադրելու էր։ 12—Վասն զի դեռ Յակոբոսի քովէն մէկ քանի հոգի չեկած, ինք հեթանոսներուն հետ ուտելու կ'սովրէր, բայց երբ եկան՝ ետկէտի կ'քաշուէր, և ինքզինք կը զատէր, վախնալով անոնցմէ՝ որոնք թլփատածներէն էին։ 13—Ու ուրիշ հետ կեղծաւորեցան միւս Հրեաներն ալ, այնպէս որ Բառնաբասս ալ անոնց կեղծաւորութեանը ձգնցաւ։ 14—Բայց ես երբ տեսայ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ չիսակ չեն քալեր, ամէնուն առջև Պետրոսի պրուցեցի, ԹԷ դուն, որ Հրեայ ես, հեթանոսի պէս ապրիս ոչ ՔԷ Հրեայի պէս կ'ապրիս, ի՞նչպէս հեթանոսները կը ստիպես Հրեայի պէս վարուելու։ 15—Մենք որ բուն Հրեայ ենք, և ոչ ՔԷ հեթանոսներէն մեղաւորներ, 16—Գայս գիտնալով՝ որ մարդ օրէնքին գործերէն չի՛րդար արգարանար, հապա Յիսուս Քրիստոսի հաւատքին, մենք ալ Քրիստոս Յիսուսի հաւատացինք՝ որպէս զի արդարանանք Քրիստոսի հաւատքէն, և ոչ ՔԷ օրէնքին գործերէն, որովհետև օրէնքին գործերէն մարմին մը պիտի չարդարանայ։ 17—Իսկ ԵԹԷ մենք, որ կ'ուզենք Քրիստոսով արդարանալ, մեզմով գտնուեցինք՝ որ մեղաւոր ենք, ուրեմն Քրիստոս մեղքի պաշտօնեա՞յ եղաւ. քա՛ւ լիցի։ 18—Քանզի եԹԷ իմ քակած բաներս նորէն կը չինեմ, իմ անձս յանցաւոր կը ցուցնեմ։ 19—Վասն զի ես օրէնքով մեռայ օրէնքին, որպէս զի Աստուծոյ կենդանի ըլլամ։ 20—Քրիստոսի հետ խաչը ելայ, և ալ կենդանի եմ ոչ ՔԷ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս։ բայց ես որ հիմա մարմնովս կ'ապրիմ՝ Աստուծոյ Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ, որ զիս սիրեց ու իր անձը ինծի համար մատնեց։ 21—Ես Աստուծոյ չնորհքը չեմ խափաներ. վասն զի ԵԹԷ արդարութիւնը օրէնքէն էր, ուրեմն Քրիստոս պարապ տեղ մեռաւ։

ԳԼ. Գ

Ով անմիտ Գաղատացիներ, ո՞վ ձեզ հրապուրեց՝. որոնց աչքերուն առջև

---

*Որուն կ'սուլցնէին, ճշմարտութեանը չհնազանդիլ

Յիսուս Երիսաս ձեր մէջ խայր եկած պիտի նկատպրուեցաւ։ 2—Ասիկա միայն կ՚ուզեմ ձեզմէ սորվիլ։ Օրէնքին գործերովը դուք Հոգին առիք՝ թէ հաւատքին լսելովը։ 3—Այդչափ անմիտ էք. հոգիով սկսեցիք, ու հիմա մարմնո՞վ կը վերջանաք։ 4—Այնչափ դիպուածները պարա՞գ տեղ ձեր վրայէն անցան, (եթէ պարագ ըլլայ ալ)։ 5—Ուստի ան որ ձեզի Հոգին բաշխեց և ձեր մէջ զօրութիւններ գործեց, օրէնքի՞ գործերովն էր՝ թէ հաւատքին լսելովը։ 6—Ինչպէս Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու անոր արդարութիւն սեպուեցաւ։ 7—Ուրեմն գիտցէք թէ անոնք որ հաւատքէն են՝ անոնք են Աբրահամի արդիները։ 8—Ու գիրքը առաջուընէ դիտնալով թէ Աստուած հեթանոսները հաւատքով կ՚արդարացնէ, առաջուընէ աւետեաց Աբրահամի, թէ Բնդմէդ պիտի օրհնուին բոլոր ազգերը։ 9—Ուստի անոնք որ հաւատքէն են, կ՚օրհնուին հաւատացեալ Աբրահամի հետ։ 10—Վասն զի անոնք որ օրէնքին գործերէն են, անէծքի տակ են. վասն զի գրուած է թէ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը ամէն գրուածներուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ։ 11—Ու թէ օրէնքով մ՚որ չկըրնար արդարանալ Աստուծոյ առջեւ, այն յայտնի է. քանզի Արդարը հաւատքէն պիտի ապրի։ 12—Բայց օրէնքը հաւատքէն չէ, հապա Ան որ կը կատարէ այն բաները՝ անոնցմով պիտի ապրի։ 13—Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ ինք մեզի համար անէծք ըլլալով. (վասն զի գրուած է թէ Անիծեալ է ան ամէնը՝ որ փայտէ կը կախուի.) 14—Որպէս զի Աբրահամի օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով. որպէս զի մենք ալ Հոգւոյն խոստումը առնենք հաւատքով։ 15—Մարդիս սովորութեան պէս կը խօսիմ. եղբայրներ, թէև որ մարդու մը հաստատած կտակը մ՚որ չխափաներ, ոչ ալ անոր վրայ ուրիշ պատուէր մը կ՚աւելցնէ։ 16—Արդ խոստումները Աբրահամի ու անոր սերունդին եղան. չըսեր, Եւ հոս սերունդներուն՝ որպէս թէ շատերու համար, հապա որպէս թէ մէկի համար, Եւ քու սերունդիդ, որ Քրիստոս է։ 17—Բայց զոյս կը պնդեմ. Աղն կտակը, որ առաջուընէ Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով, օրէնքը չորս հարիւր երեսուն տարիէն ետեւ որ գրուեցաւ, չկրնար անպետ ընել խոստումը խափանելու համար։ 18—Վասն զի եթէ ժառանգութիւնը օրէնքէն կ՚ըլլայ, ուրեմն ա՛լ խոստումնէն չէ. բայց Աբրահամի խոստումնով շնորհեց Աստուած։

19—Հապա ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանքի համար վրայ աւելցուց, (մինչեւ գայ այն սերունդը՝ որու խոստացեր էր,) հրեշտակներով ուղուած՝ միջնորդի մը ձեռքով։ 20—Բայց միջնորդը մէկի հետ չէ. սակայն Աստուած մէկ է։ 21—Ուրեմն օրէնքը հակառա՞կ է Աստուծոյ խոստումնե՞րուն. քա՛ւ ըլլի։ Աստուծոյ խոստացած օրէնքը կրնար կենդանի բնել, անշո՛ւշտ իրաւցընէ արդարութիւնը օրէնքէն կ՚ըլլար։ 22—Բայց գիրքը ամէնը մեղքի տակ գոցեց, որպէս զի խոստումնքը Յիսուս Քրիստոսի հաւատքովը ուրուի հաւատացեալներուն։ 23—Բայց քանի որ հաւատքը չէր եկած, օրէնքին տակ դոցուած կը պահուէինք, ապագային այն հաւատքին որ պիտի յայտնուէր։ 24—Ուրեմն օրէնքը մեր դաստիարակը եղաւ՝ հո՛ս Քրիստոսի ընդունելու, որպէս զի մենք հաւատքով արդարանանք։ 25—Բայց երբ հաւատքը եկաւ, ալ դաստիարակի տակ չենք։ 26—Վասն զի ամէնդ ալ Աստուծոյ որդիներ էք, Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով։ 27—Քանզի դուք ամէնդ որ Քրիստոսով մկրտուեցաք, Քրիստոսը հագած եք։ 28—Այլեւս չկայ հրեայ կամ յոյն, ոչ ալ ծառայ կամ ազատ, ոչ արու կամ էգ, վասն զի դուք ամէնդ ալ մէկ էք Քրիստոս Յիսուսով։ 29—Ապա եթէ դուք Քրիստոսին էք, ուրեմն Աբրահամի սերունդն էք, ու խոստումնքին նայելով ժառանգներ։

Գլ. Դ

Բայց կ՚ըսեմ կը զգուշեմ, որչափ ժառանգ որ ժառանգը ազգ է, ծառայի տարբերութիւն մը չունի, թէև ամէնուն ալրն է։ 2—Հապա խնամակալներու ու հոգաբարձուներու տակ է, մինչեւ հօրը որոշած ժամանակը։ 3—Նոյնպէս մենք ալ երբ ազգ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ծառայ եղած էինք։ 4—Բայց երբ ժամանակը լիցուննցաւ, դրկեց Աստուած իր Որդին՝ որ կնոջմէ եղաւ, ու օրէնքին տակ մնաւ։ 5—Որպէս զի օրէնքին տակ եղողները փրկէ, որպէս զի մենք որդեգրութիւնը ընդունինք։ 6—Ու որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած իր Որդւոյն Հոգին՝ ձեր սիրտերուն մէջ դրկեց, որ կ՚աղաղակէ Արբա Հայր։ 7—Ուստի ա՛լ ծառայ չես, հապա որդի. և եթէ որդի, ա՛լ Աստուծոյ ժառանգը Քրիստոսով։ 8—Բայց այն ատեն որ չէիք գիտեր զԱստուած, կը ծառայէիք անոնց՝ որոնք ի բնէ Աստուածներ չեն։ 9—Սակայն հիմա որ Աստուած կ՚ընդունիք, մանաւանդ որ դուք Աստուծմէ ընդունուեցաք, ի՞նչպես նորէն կը դառնաք այն տկար ու չարաչար սկզբունքներուն, որոնց նորէն կ՚ուզէք ծառայութիւն բնել։ 10—Օրերը կը զանազանէք, ու ամիսները և ժամանակները ու տարիները։ 11—Կը վախնամ ձեզմէ, որ գուցէ պարապ տեղ ձեր վրայ աշխատած ըլլամ։

12—Ինծի պէս եղէք, վասն զի ես ալ ձեզի պէս եղայ, եղբայրներ, ձեզի կ՚ապտչեմ. դուք ինծի ՛ձեռս մը հասուցած չէք։ 13—Գիտէք դուք որ մարմնոյ տկարութիւնովը ձեզի առաջին անգամ աւետարանը քարոզեցի. և իմ մարմինիս վրայ նշո՛ւմ փորձութիւնս 14—Զանարգեցիք ու չարհամարհեցիք, հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս զիս ընդունեցիք՝ Քրիստոս Յիսուսի պէս։ 15—Ուրեմն ի՞նչ եղ այն ձեր երանութիւնը. քանզի ես կը վկայեմ ձեզի, որ եթէ կարելի էր, ձեր աչքերը պիտի հանէիք ու ինծի տայիք։ 16—Ուստի ձեր թշնամի՞ եղայ ձեզի ճշմարիտը խօսելուս համար։ 17—Ձեզի նախանձառորեն ուզեն՝ ոչ թէ բարիին, և կ՚ուզեն ՛ձեզ արգիլել, որպէս զի իրենց նախանձառոր ըլլաք։ 18—Մանաւանդ ազիկ է ամէն ատեն բարիին նախանձառոր ըլլալ, ու ոչ թէ միայն երբ ձեր մէջ ըլլամ։ 19—Իմ որդեակներս, որ ձեզմով նորէն ծննդական ցաւ կը քաշեմ, մինչեւ Քրիստոս ձեր մէջ ձեւաւորի։ 20—Ա՛ւելի հիմա ձեր մէջ ներկայ ըլլայ, ու փոխել իմ ձայնս. վասն զի ես ձեր վրայով տարակուսած եմ։

21—Ըսէք ինծի, դուք որ օրէնքին տակ կ՚ուզէք ըլլալ, օրէնքը չէ՞ք լսեր։ 22—Վասն զի գրուած է թէ Աբրահամ երկու որդի ունէր, մէկը՝ ազախինէն, ու միւսը՝ ազատ կնոջմէն։ 23—Բայց ան որ ազախինէն էր, մարմնի կազմուեր ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն՝ խոստումնքին համեմատ։ 24—Այս բաները ալլաբանօրէն կը մեկնուին. վասն զի սոքա երկու կտակարաններ, մէկը Սինա լեռնէն՝ որ ծառայութեան համար կը ծնանի, որ է Հագար. 25—վասն զի Հագար Արաբիոյ մէջ Սինա լեռն է, և կը համեմատի հիմակուան Երուսաղէմի, որ իր զաւակներով մեկտեղ կը ծառայէ։ 26—Բայց վերի Երուսաղէմը ազատ է, որ մեր Թաղուհուն մայրն է։ 27—Վասն զի գրուած է, Ով չծնանող ամուլ, ցնծա. ով ծննդական ցաւ չքաշող, գոչէ և ազաղակէ. քանզի երեսէ ձգուածին զաւակները այր ունեցողին զաւակներէն շատ պիտի ըլլան, 28—Ուստի ա՛նձդ, եղբայրներ, Իսահակի պէս խոստումնքին զաւակներն էնք. 29—Բայց ինչպէս այն ատեն մարմնի կազմուեր ծնածը կը հալածէր զանիկա որ Հոգիին կազմուեր էր, նոյնպէս հիմա ալ։ 30—Սակայն գիրքը ի՞նչ կ՚ըսէ. Դուրս հանէ այդ աղախինը ու անոր որդին, վասն զի աղախինին որդին ազատ կնոջը որդւոյն հետ ժառանգութիւն պիտի չառնէ։ 31—Ուստի, եղբայրներ, մենք ազախինին զաւակները չենք, հապա ազատին։

՛Ոմանք, մեր †Կամ, ո՞ւր է

՛Ոմանք, մեզ †Ոմանք չունին

Գլ. Ե

Ա.սած ամեր կեցէք այն ապաւա-
քիւնով, որով Քրիստոս մեզ ապաւեց. և
նորին ծառայութեան լուծի տակ մի
մանէք. 2—Ահա ես Պաւղոս կը զգուշա-
ձեզի որ եթէ թլիքաւիք, Քրիստոս
ձեզի օգուտ մը չընէր. 3—Ու զարձ-
եալ ամէն թլիքաւոզ մարդու կը
վկայեմ թէ պարտական է բոլոր օրէնքը
կատարել։ 4—Դուքանուած եք դուք
Քրիստոսէ, որ օրէնքով արդարանալ
կ'ուզէք. ես շնորհքէն ինկած եք։ 5—
Վասն զի մենք Հոգիով կը սպասենք
արդարութեան յոյսին՝ հաւատքով.
6—Վասն զի Քրիստոս Յիսուսի քով ոչ
թլիքաւութիւնը բան մը կարող է, ոչ
ալ անթլիքաւութիւնը, հապա հաւատ-
քը, որ սիրով է գործ կը գործէ. 7—
Դուք աղէկ կը վազէիք. ո՞վ ձեզ ետ
կեցուց՝ որ ճշմարտութեան չհնազան-
դիք. 8—Այս գրգռումը անկէ չէ՝ որ
ձեզ կանչեց. 9—Քիչ մը խմորը բոլոր
զանգուածը կը խմորէ. 10—Բայց ես
յոյս ունիմ ձեր վրայ Տիրոջմով, որ ու-
րիշ կերպ բան մը պիտի չհասկնաք. և ան
որ ձեզ կը խռովեցնէ, դատապարտու-
թիւն պիտի կրէ՝ ով որ ըլլայ։ 11—
Սակայն, եղբայրներ, եթէ ես տակա-
ւին թլիքաւութիւն կը քարոզեմ, ալ
ինչո՞ւ կը հալածուիմ. ուրեմն խաչին
գայթակղութիւնը խափանուած է։ 12—
Երանի՛ թէ բոլորովին կտրէին անոնք
որ ձեզ կը խռովեցնեն.

13—Վասն զի դուք ազատութեան
կանչուած եք, եղբայրներ. միայն թէ
Ձեր ազատութիւնը մարմնի ցանկա-
ցութեանը պատճառ չըլլայ, հապա սի-
րով իրարու ծառայութիւն ըրէք. 14—
Վասն զի բոլոր օրէնքը այս մէկ խօս-
քին մէջ կը կատարուի, թէ դու ըն-
կերդ սիրես քու անձիդ պէս։ 15—Ապա
եթէ իրար խածնէք և ուտէք, զգույշ
կեցէք որ չըլլայ թէ իրարմէ ապաւթիք։
16—Միտքս թէ ըսած կը զգուշացնէ. Հո-
գիով գացէք, ու մարմինին ցանկու-
թիւնը պիտի չկատարէք. 17—Վասն զի
մարմինը կը ցանկայ հոգիին հակառակ,
ու հոգին՝ մարմինին հակառակ. և ա-
նոնք իրարու հակառակ են, որ չըլլայ
թէ ինչ որ կ'ուզէք՝ զայն ընէք. 18—
Բայց եթէ հոգիին կ'առաջնորդուիք,
ալ օրէնքին տակ չէք. 19—Արդ մար-
մինին գործերը յայտնի են, որ սոսկ
են. շնութիւն, պոռնկութիւն, պղծու-
թիւն, գիճութիւն, 20—կռապաշտու-
թիւն, կախարդութիւն, թշնամութիւն-
ներ, կռիւներ, նախանձներ, բարկու-
թիւններ, հակառակութիւններ, երկ-
պառակութիւններ, բաժանումներ, 21-
Նախանձներ, մարդասպանու-
թիւններ, գինովութիւններ, անառա-
կութիւններ, ու ինչ որ սոսկ նման
են. որ հիմակուընէ ես ձեզի կը զգու-
շեցնեմ, ինչպես առաջ ալ կը զգու-
շեցի, որ այսպիսի բաներ գործողները
Աստծոյ արքայութիւնը պիտի չժա-
ռանգեն. 22—Բայց Հոգիին պտուղը
այս է. սէր, խնդութիւն, խաղաղու-
թիւն, երկայնմտութիւն, 23—Քաղց-
րութիւն, բարութիւն, հաւատարմու-
թիւն, հեզութիւն, ժուժկալութիւն.
այսպիսի բաներու դէմ օրէնք չկայ։
24—Ու անոնք որ Քրիստոսինեն են՝
էշխեցին մարմինը խաչ հանեցին իրենց
կիրքերով ու ցանկութիւններով միա-
ւին։ 25—Եթէ Հոգիով կ'ապրինք,
Հոգիին համեմատ քալենք։ 26—Մեծ-
պարծ չըլլանք՝ միկզմիկ զրգռելով ու
իրարու վրայ նախանձելով։

Գլ. 2

Եղբայրներ, եթէ մեկը յանկարծ
ինչ և իցէ յանցանքով բռնուելու ըլ-
լայ, դուք որ հոգեւոր էք, այնպիսին
հեզութեան հոգիով ուղղութեան բե-
րէք. քու անձիդ ալ զգուշութիւն ըրէ
որ չըլլայ թէ փորձութեան մէջ իյնաս։
2—Իրարու նեղութիւնները կրեցէք, և
այնպես Քրիստոսի օրէնքը կատարե-
ցէք։ 3—Քանզի եթէ մեկը ինքզինք
բան մը ըլլալ կը սեպէ ու չէ, անիկա
իր անձը կը խաբէ։ 4—Բայց ամէն
մարդ իր գործը թող հետազոտէ, ու եւքը
միայն իր անձին վրայ պարծանք ունե-
նայ, և ոչ թէ ուրիշի վրայ։ 5—Վասն
զի ամէն մեկը իր բեռը պիտի կրէ։

6—Խօսքին աշակերտութիւն ընողը
էէ վարդապետը ամէն բարի բաներու

մասնակից ըլլէ։ 7—Մի խաբուիք. Աս-
տուած ծաղր չըլլար. 8—Վասն զի ինչ
որ մարդ կը սերմանէ, զայնը պիտի հնձէ-
ան որ իր մարմինին կը սերմանէ,
այն մարմինեն ապականութիւն պիտի
հնձէ. ան որ Հոգիին կը սերմանէ,
այն Հոգիեն յաւիտենական կեանք պի-
տի հնձէ։ 9—Բայց բարի գործելէն
չձանձրանանք, քանզի յարմար ժամա-
նակին պիտի հնձենք՝ եթէ չհրաժեքք.
10—Ուստի քանի որ ժամանակը ձեռ-
քերնիս է, բարիք ընենք ամենուն,
մանաւանդ հաւատքին բնտանիներուն։

11—Նայեցէք ի՛նչպիսի գիրերով
գրեցի ձեզի իմ ձեռքովս։ 12—Որոնք
որ կ'ուզեն մարմնի կողմանէ բարի ե-
րեւնալ, անոնք ձեզ կը ստիպեն որ
թլիքաւիք, միայն որ Քրիստոսի խա-
չին համար չհալածուին։ 13—Քանզի
անոնք ալ որ թլիքաւած են, իրենք
օրէնքը չեն պահեր, հապա կ'ուզեն որ
դուք թլիքաւիք, որպէս զի իրենք
ձեր մարմնով պարծենան։ 14—Բայց
ես՝ քա՛ւ լիցի որ պարծենամ, հապա
միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խա-
չովը, որով աշխարհ ինծի խաչը եկած
է, ես ալ աշխարհի։ 15—Վասն զի
Քրիստոս Յիսուսով ոչ թլիքաւութիւնը
բան մըն է, ոչ ալ անթլիքաւութիւնը,
հապա նոր ստեղծուած ըլլալն է։
16—Ու ան ամէնը որ այս կանոնին հա-
մեմատ կը քալեն, խաղաղութիւն ու
գթութիւն ըլլայ անոնց վրայ, ու Աս-
տուծոյ Իսրայէլին վրայ։ 17—Ասկէ ետև
ա՛ի կը թող չտրտմեցնէ. վասն զի ես
Տէր Յիսուսի վէրքերը իմ մարմնիս վրայ կը կրեմ։ 18—Եղբայրներ,
մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր
հոգիին հետ ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՒ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստուծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն և Քրիստոս Յիսուսի հաւատացողներուն. 2—Շնորհք և խաղաղութիւն ձեզի՝ Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3—Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամէն հոգևոր օրհնութիւններով երկնաւորներուն մէջ Քրիստոսով. 4—ինչպես մեզ անով ալ ընտրեց, որպէս զի մենք սուրբ ու անարատ ըլլանք իր առջև. սիրով. 5—ու առաջուընէ մեզ սահմանեց իրեն որդեգիր ըլլալ Յիսուս Քրիստոսի ձեռքով իր կամքին հաճութեանը պէս, 6—իր փառաւոր շնորհքին գովութեանը համար, որով մեզ զարգարեց Սիրելիին ձեռքով. 7—որով փրկութիւն ունինք մենք իր արեանը միջոցով, մեղքի թողութիւնը՝ իր շնորհքին ճոխութեան չափովը. 8—զոր մեր վրայ առատացուց բոլոր իմաստութեամբ ու գիտութեամբ, 9—մեզի յայտնելով իր կամքին խորհուրդը իր հաճութեանը պէս, զոր *իր մէջ նախասահմաներ էր. 10—որպէս զի ժամանակներուն լրանալուն անոնք ամբողջութեան մէջ ամէն բան բովանդակէ Քրիստոսով, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ կայ, անով՝ 11—որով մենք ալ ժառանգութիւն առնինք, առաջուընէ որոշուած ըլլալով անոր նախասահմանութիւնովը, որ ամէն բան իր կամքին խորհրդովը ի գործ կը գործէ. 12—որպէս զի մենք անոր փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուընէ Քրիստոսի վրայ յուսացողներս. 13—որուն վրայ դուք ալ յոյսնուցէ՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, որու նաև հաւատալով՝ խոստացեալ Սուրբ Հոգւոյն ընդունէն կնքուեցաք. 14—որ մեր ժառանգութեան գրաւն է մինչև առացուածքին փրկութիւնը՝ իր փառքին գովութեանը համար։

15—Ուստի ես ալ երբ լսեցի Տէր Յիսուսի վրայ ունեցած հաւատքիդ, ու բոլոր սուրբերուն վրայ ունեցած սէրը, 16—Չեմ դադարիր ձեզի համար գոհութիւն ընելէ՝ ձեզ իմ պաղատանքս մէջ յիշելով. 17—որպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը, փառաց Հայրը, տայ ձեզի խոհեմութեան ու յայտնութեան հոգին իր գիտութեանովը. 18—որպէս զի սիրտերնուդ աչքերը լուսաւորուելով՝ գիտնաք թէ ինչ է անոր ձեզ կանչելուն յոյսը, ու ինչ է անոր ժառանգութեանը փառքին ճոխութիւնը սուրբերուն մէջ։ 19—Ու ինչ է իր զօրութեան գերազանց մեծութիւնը հաւատացեալներուս մէջ՝ իր կարող զօրութեանը գործադրութեանովը, 20—Զոր Քրիստոսի վրայ ի գործ դրաւ, երբ զանիկա մեռելներէն յարուցաւ, ու նստեցուց իր աջ կողմը երկինքի մէջ 21—Ամէն իշխանութեան ու պետութեան և զօրութեան ու տէրութեան վրայ, և ամէն անուն որ կ'անուանի, ոչ թէ միայն այս աշխարհին մէջ, հապա գալիքին մէջ ալ. 22—Ու ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուց և զանիկա ամէն բաներու վրայ եկեղեցիին գլուխ դրաւ, 23—Որ անոր մարմինն է, անոր լրումը՝ որ կը լեցնէ ամէնը ամէն բանի մէջ։

ԳԼ. Բ

Ե. դուք որ յանցանքներու և մեղքերու մէջ մեռած էիք, էր ՅԻՆ ԼԻՆ-ԴՈՆՈՅԻՆ. 2—Որոնց մէջ ատենօք կը քալէիք այս աշխարհին բանած ճամբովը, այս օդին իշխանութեանը իշխանին ոգւոյն պէս, այն ոգիին՝ որ հիմա ապստամբութեան որդիներուն ներքին կը ներգործէ. 3—Որոնց մէջ ատենօք մենք ամէնս ալ կը պարապէինք մեր մարմինին ցանկութիւններովը, և մարմինին ու միտքին ուզածը կը կատարէինք. և բնութեամբ բարկութեան որդիներ էինք՝ ինչպէս ուրիշները. 4—Բայց Աստուած, որ մեծ է ողորմութիւնով, իր առատ սիրոյն համար, որով մեզ սիրեց, 5—Երբ յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ Քրիստոսի հետ կենդանացուց, (շնորհքով փրկուած էք,) 6—Ու անոր հետ մեզ յարուցց, ու անոր հետ նստեցուց երկնաւորութեան մէջ Քրիստոս Յիսուսով, 7—Որպէս զի գալու դարերուն մէջ ցոյց տայ իր շնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսով մեզի ցոյցնուած քաղցրութիւնովը։ 8—Վասն զի շնորհքով փրկուած եք դուք հաւատքի միջոցով. և այս ոչ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է. 9—Ոչ թէ գործերէն, որ մէ՛կը չպարծի. 10—Վասն զի մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար, որոնց Աստուած առաջուրնէ պատրաստեց դէպ, որպէս զի անոնց մէջ քալենք։

11—Ուստի միտքերնիդ բերէք որ դուք ատեն մը մարմնով հեթանոսներ էիք՝ (որոնք անթլփատութիւն կ'ըսուին անոնցմէ՝ որ թլփատութիւն կ'ըսուին մարմինի մէջ ձեռքով եղած,) 12—Որ այն ատեն դուք առանց Քրիստոսի էիք, ու հեռացած էիք Իսրայէլի քաղաքակցութենէն, և օտարացած խոստումներուն ուխտերէն, ու յոյս չունէիք, և աշխարհի մէջ անաստուած էիք. 13—Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ առեն մը հեռու էիք, մերձաւոր եղաք Քրիստոսի արիւնովը. 14—Վասն զի անիկա է մեր խաղաղութիւնը, որ երկուքը մէկ ըրաւ, ու միջնորմի բաժանոց պատը, պատնէշը էրաւ հէտ եղած թշնամութիւնը, իր մարմնովը փակեց, 15—Ու հրամանքներով եղած պատուիրանքներուն օրէնքը խափանեց. որպէս զի իրմով այն երկուքը նոր մարդ մը հաստատ, ու խաղաղութիւն բնէ. 16—Ու երկուքն ալ մէկ մարմնին եղած հաշտեցնէ Աստուծոյ հետ իր խաչովը. վասն զի անով սպանեց թշնամութիւնը. 17—Ու եկաւ խաղաղութիւն քարոզեց ձեզի որ հեռուն էիք, ու անոնց՝ որ մօտ էին, 18—Քանզի անոր ձեռքով մենք երկուքս ալ մէկ Հոգիով՝ Հօրը մօտենալու ուղիղ հիմք ունինք։ 19—Ուրեմն ա՛լ օտարներ ու պանդուխտ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները և Աստուծոյ բնտանիքը՝ 20—Առաքեալներուն ու մարգարէներուն հիման վրայ շինուած, որուն անկիւնադիր գլուխը Յիսուս Քրիստոս է. 21—Որով բոլոր շէնքը միասին յարմարութեամբ կապուած՝ կ'ածի սուրբ տաճար մը Տիրոջմով. 22—Որով դուք ալ միասին կը շինուիք՝ Աստուծոյ բնակարան ըլլալու Հոգւով Սրբով։

ԳԼ. Գ

Ուստի ես Պօղոս, Յիսուս Քրիստոսի կապուածը ձեզի հեթանոսներուդ համար. 2—Դուք ալ ըստ իս շատ էք Աստուծոյ շնորհքին տնտեսութիւնը, որ ինձի արուած է ձեզի համար. 3—Թէ ինձի այն խորհուրդը յայտնութիւնով ցուցուեցաւ. (ինչպէս առաջուընէ ձեզի համառօտաբար գրեցի, 4—Որով կրնաք կարդալ ու միտք առնել իմ տեսակ բլլալս Քրիստոսի խորհուրդին վրայով.) 5—Որ ուրիշ գարերուն մէջ մարդոց որդիներուն չերեւցաւ, ինչպէս հիմա Հոգւով Սրբով յայտնուեցաւ իր սուրբ առաքեալներուն ու մարգարէներուն. 6—Որպէս զի հեթանոսները Քրիստոսի մէջ

*Ի՛մաւթ, անով

առաջ ժառանգակից ու մարմնակից և անոր խոստմանդքին հաղորդ ըլլան ու եղած։ 7—Որու ես ապաստար եղայ՝ Աստուծոյ չնորհագ պարգևին համեմատ՝ որ ինծի արուեցաւ իր զօրութեան ներգործութիւնովը, 8—(ինծի՝ որ ամէն սուրբերուն փոքրագոյնն եմ, այս չնորհքը արուեցաւ,) հեթանոսներուն մէջ Քրիստոսի անքննելի հարստութիւնը քարոզելու, 9—ու ամենը լուսաւորելու, տեսնել թէ ի՛նչ է այն խորհուրդին անօրինութիւնը՝ որ ի յաւիտենից ծածկուած էր Աստուծոյ մէջ, որ ամէն բան ստեղծեց։ 10—Որպէս զի հիմա Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը եկեղեցիին ձեռքով յայտնի ըլլայ երկինքը եղող իշխանութիւններուն ու պետութիւններուն, 11—իր յաւիտենական նախասահմանութեանը համեմատ, զոր ըրաւ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով։ 12—Որով մենք ալ համարձակութիւն ու մտնելնուս ուրախութիւն ունինք վստահութեամբ՝ իրեն հաւատալով։

13—Ուստի կ՚ազաչեմ որ չհանգրանաք իմ նեղութիւններուս պատճառաւ, որոնք ձեզի համար են, և որոնք ձեր փառքն են։ 14—Ասոր համար ծունկի վրայ գալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը առջև, 15—Որմէ ամէն ազգատոհմ երկինքի մէջ ու երկրի վրայ անուն կ՚առնէ, 16—կ՚ուզեմ որ ձեզի իր փառքին հոխոտութեանը չափովը՝ զօրութիւնով հաստատուիլ իր Հոգիովը ներքին մարդուն մէջ։ 17—Որպէս զի Քրիստոս հաւատքով ձեր սիրտերուն մէջ բնակի, և զուարթ սիրով արմատացած ու հաստատուած ըլլաք, 18—Որպէս զի կարենաք հասկնալ բոլոր սուրբերուն հետ մկրատով, թէ ի՛նչ է լայնութիւնը ու երկայնութիւնը և խորութիւնը ու բարձրութիւնը։ 19—Այսինքն ճանչնալ Քրիստոսի սէրը, որ գիտութենէ զերազանց է, որպէս զի լցուիք Աստուծոյ ամէն լրութիւնովը։ 20—Արդ անոր որ կարող է առատութեամբ բնել ամէն բաներէն աւելի՝ զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործէ, 21—Իրեն փառք եկեղեցիին մէջ Քրիստոս Յիսուսով բոլոր դարերուն մէջ յաւիտեան յաւիտենից։ Ամէն։

Գլ. Դ

Ուստի կ՚ազաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար կապուած եմ, որ գոնէ այնպէս վարուիք՝ ինչպէս կը վայլէ այն կոչումին որով կանչուեցաք, 2—Բոլոր խոնարհութիւնով ու հեզութիւնով, երկայնմտութեամբ. սիրով իրարու նեղսրտութիւն բերելով։ 3—Ջանալով հոգւոյն Միջոց միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահել։ 4—Մէկ մարմին ու մէկ հոգի, ինչպէս կանչուեցաք ձեր կոչումին մէկ յոյսովը։ 5—Տէրը մէկ է, հաւատքը մէկ, մկրտութիւնը մէկ։ 6—Մէկ է Աստուած և ամենուն Հայրը՝ որ ամենուն վրայ ու ամենուն հետ և՝ ձեր ամենուն մէջ է։ 7—Բայց մեր ամէն մէկուն ալ չնորհք տրուած է Քրիստոսի պարգեւին չափովը։ 8—Անոր համար կ՚ըսէ Թէ բարձրը ելլալ, գերութիւնը գերի բռնեց ու մարդոց պարգեւներ տուաւ։ 9—Ալ ելլալ ըսելը ի՛նչ է, միայն Թէ՝ որ ինք առաջ երկրի վարի կողմերը իջաւ։ 10—Ան որ իջաւ՝ նոյն ինքն է, որ բոլոր երկինքներէն վեր ելաւ, որպէս զի ամէն բան լեցնէ։ 11—Ու ինք մէկ քանին առաքեալներ եղաւ, մէկ քանին մարգարէներ, մէկ քանին աւետարանիչներ, մէկ քանին հովիւներ ու վարդապետներ։ 12—Սուրբերուն կատարելութեանը համար, պաշտօնին գործին համար, Քրիստոսի մարմնին չինութեանը համար։ 13—Մինչև ամենս ալ հասնինք հաւատքին միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի բոլն հասակին չափը ունենալու։ 14—Որպէս զի ա՛լ տակէ հետ տատիր չըլլանք, երեսած ու վարդապետութեան ամէն հովերէն ապին անդին տարուելու՝ մարդոց խարեբայութիւնովը, որոնք խարամանկու-

*Ոմանք, Յիսուս Քրիստոսով ստեղծեց

*Ոմանք, մեր

թեամբ կը խաբեն մոլորեցնելու։ 15—Հապա սիրով ճշմարտութեան հետեւելով՝ ամէն բան Անով աճեցնենք, որ գլուխ է, այսինքն Քրիստոս։ 16—Որմէ բոլոր մարմինը մէկտեղ կազմուած, և ամէն յօդաւածներէը իրարու հազորդակցելով կցուած՝ ամէն մէկ մասին չափով ներգործելով՝ մարմինին աճում կու տայ իրեն չինութեանը համար սիրով։

17—Ուստի զայս կ՚ըսեմ ու Տէրոջմով վկայութիւն կ՚ընեմ, որ գոնէ մեյմէն ալ չերթաք, ինչպէս ուրիշ հեթանոսները կը գնան իրենց մտքին անսնութեանը մէջ։ 18—Որոնց խնդացքը խաւարած է, ու օտարացած են Աստուծոյ կեանքէն, իրենց մէջ եղած տգիտութեան պատճառաւ իրենց սրտին կուրութեանը համար։ 19—Որոնք անզգայ ըլլալով, ինքզինքնին անառակութեան տուին, ամէն կերպ պղծութիւն գործելու խագահութիւնով։ 20—Բայց դուք այսպէս չսորվեցաք Քրիստոսը, 21—Սրթէ անոր վրայով լսեցիք ու անկէ սորված եք, ինչպէս ճշմարտութիւնը Յիսուսի մէջ է. 22—Որպէս զի ձեր վրայէն ձկնքի հանեք այն յին առաքեան վարմանքին պէս եղած հին մարդը, խարեբայ ցանկութիւններով ապականածը։ 23—Ու ձեր միտքին հոգիովը նորոգուիք, 24—Ու նոր մարդը ձեր վրայ հագնիք, որ Աստուծոյ դրուելիքի պէս ստեղծած է արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով։ 25—Ուստի ապա քիթը ձկնքի ձգելով՝ ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին հետ, վասն զի մենք իրարու անդամներ ենք։ 26—Բարկանաք՝ մեղք մի գործէք. արեւը ձեր բարկութեանը վրայ մնրը չմանէ։ 27—Ու Սատանային տեղ մի տաք։ 28—Ան որ գողցողը ի՛ր գողնալ չգողնայ. այլ ընդհակառակն ալ աշխատելով՝ իր ձեռքերովը աշխատի, որպէս զի կարող ըլլայ հասու կարօտեալին տալու։ 29—Բնաւ ձեր բերնէն ապականութիւն դուրս չելլէ, հապա ինչ որ աղեկ է՝ պէտք եղած չինութեանը համար, որպէս զի լսողներուն շնորհք տայ։ 30—Ու Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրտմեցնէք, որով դուք կնքուեցաք փրկութեան օրուանը համար։ 31—Ամէն գառնութիւն և բարկութիւն ու սրտմտութիւն և ազաղակ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ ամէն չարութիւնովը միասին։ 32—Ու իրարու հետ քաղցր եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի։

Գլ. Ե

Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակներու պէս։ 2—Ու սիրով վարուեցէք, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց, ու իր անձը մեզի համար մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ։ 3—Բայց պոռնկութիւն և ամէն ներկ պղծութիւն կամ ագահութիւն անունը անգամ չլսուի ձեր մէջ, (ինչպէս կը վայլէ սուրբերուն,) 4—Ու գարշելի բաներ կամ յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն, որ չվայլեր, այլ մանաւանդ գոհութիւն. 5—Ձեզի զայս գիտէք՝ որ ամէն պոռնիկ կամ պղծի կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստոսի ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի. 6—Ձեզ ոչ ոք մեկը ձեզ խաբէ փուճ խօսքերով. վասն զի այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ. 7—Ուստի անոնց հաղորդ մի ըլլաք։ 8—Ձեզի ԹԷ առեն մէ գոնէ խաւար եիք, բայց հիմա լոյս եք Տէրոջմով. լուսոյ որդիներու պէս քալեցէք. 9—Վասն զի †Հոգւոյն պտուղը ամէն ինչ բարութիւնով, և արդարութիւնով ու ճշմարտութիւնով է։ 10—Քննեցէք ի՛նչ է Տէրոջը հաճելին. 11—Ու կեղտոտ մի ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ մանաւանդ դատեցէք յանդիմանեցէք։ 12—Վասն զի անոնց մէջ գաղտուկ գործուած բաները խօ-

*Կամ, Ձայս իմանալով գիտնաք
†Ոմանք, լուսոյ

*Ցառ. բիծութիւնը
†Կամ, անկագութիւնով
‡Ցառ. հազորդել

սիրն ալ ամէթ է։ 13—Բայց ամէն բան յանգիմանուած՝ լուսով յայտնի կ՚ըլլայ. վասն զի ամէն բան որ յայտնի կ՚ըլլայ՝ լոյս է։ 14—Անոր համար կ՚ըսէ, Արթնցիր դուն որ կը քնանաս, և կանգնէ մեռելներէն, ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ։

15—Ուստի նայեցէք թէ ինչպես զգուշութեամբ պիտի քալէք, ոչ թէ անխմանեալ պէս, 16—Հապա խնայուելով պէս. ժամանակը ծախու առէք, վասն զի օրերս չար են։ 17—Անոր համար անմիտ մի ըլլաք, հապա խնդրէք թէ ինչ է Տէրոջը կամքը։ 18—Ու մի գինովնար գինիով, որուն մէջ անառակութիւն կայ, հապա Հոգիով լեցուեցէք։ 19—Ու սաղմոսներով ու օրհնութիւններով և հոգեւոր երգերով ձեր մէջ խօսակցելով՝ երգեցէք ու սաղմոս ըսէք Տէրոջը ձեր սիրտերուն մէջ։ 20—Միշտ ամէն բանի համար գոհութիւն տուէք Աստուծոյ ու Հօրը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը։

21—Իրարու հնազանդ եղէք Աստուծոյ վախովը։ 22—Կիները իրենց այրերուն հնազանդ ըլլան՝ որպես թէ Տէրոջը։ 23—Վասն զի այրը կնոջ գլուխն է, ինչպես Քրիստոս ալ Եկեղեցիին գլուխն է, ու ինք մարմինին փրկիչն է։ 24—Ուստի ինչպես Եկեղեցին հնազանդ կ՚ըլլայ Քրիստոսի, նոյնպես ալ կիները ամէն բանի մէջ իրենց այրերուն։ 25—Այրեր, սիրեցէք ձեր կիները, ինչպես Քրիստոս ալ սիրեց Եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար։ 26—Որպէս զի զանիկա սրբէ ու մաքրէ աւազանին ջրովը՝ խօսքով։ 27—Որպէս զի ինք իր դիմաց փառաւոր կեցնէ Եկեղեցին, որ սրատ մը կամ խրշտմութիւն կամ ասոնց պէս բան մը չունենայ, հապա որ սուրբ ու անարատ ըլլայ։ 28—Նոյնպէս ալ պէտք է որ այրերը իրենց կիները սիրեն իրենց մարմիններուն պէս։ Ան որ իր կինը կը սիրէ, իր անձը կը սիրէ։ 29—Վասն զի մէկը բնաւ իր անձը չատեր, հապա կը սնուցանէ ու կը խնամէ զանիկա, ինչպես †Տէրն ալ Եկեղեցին, 30—Վասն զի մենք անոր մարմինին անդամներն ենք, անոր մարմինէն ու անոր ոսկորներէն։ 31—Ասոր համար մարդը պիտի ձգէ իր հայրը ու մայրը, և իր կնոջ պիտի յարի, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։ 32—Այս խորհուրդը մեծ է, բայց ես կը զրուցեմ Քրիստոսի ու Եկեղեցիին վրայով։ 33—Սակայն ձեզմէ ամէն մէկն ալ իր կինը այնպէս սիրէ՝ որպես թէ իր անձը, ու կինը իր այրէն ակնածութիւն ընէ։

ԳԼ. Ջ

Որդիներ, ձեր ծնողներուն հնազանդ եղէք Տէրոջմով, վասն զի այն է արժանը։ 2—Պատուէ քու հայրդ ու մայրդ, (որ առաջին պատուիրանքն է խոստմանքով,) 3—Որպէս զի քեզի բարի ըլլայ, ու երկար կեանք ունենաս երկրի վրայ։ 4—Ու դուք, հայրեր, ձեր որդիները մի բարկացնէք, հապա զանոնք մեծցուցէք Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը։ 5—Ծառաներ, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն ահով ու դողով՝ ձեր սրտին միամտութիւնովը, որպես թէ Քրիստոսի։ 6—Ոչ թէ մարդահաճոյի պէս աչքի առնի ծառայելով, հապա Քրիստոսի ծառաներու պէս՝ սրտանց Աստուծոյ կամքը ընելով։ 7—Յօժարութեամբ ծառայելով որպես թէ Տէրոջը ու ոչ թէ մարդոց։ 8—Գիտնալով որ ամէն մէկը ինչ բարիք որ ընէ, նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի, թէ՛ ծառայ ըլլայ և թէ՛ ազատ։ 9—Դուք ալ, տէրեր, նոյնը ըրէք անոնց, ու սպառնալիքը թող առէք, գիտնալով որ †նոյն ալ ձեր ալ Տէրը երկինքն է. ու անոր քով աչառութիւն չկայ։

10—Ուրիշ ասկէ հետև, եղբայրներս, զօրացէք Տէրոջմով ու անոր զօրութեան կարողութիւնովը։ 11—Ձեր վրայ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպես զի կարող ըլլաք Սատանայի հնարքներուն դէմ դնել։ 12—Վասն զի մեր պատերազմը արիւնի ու մարմինի հետ չէ, հապա իշխանութիւններու ու պետութիւններու հետ և այս *խաւար

*Ոմանք, Քրիստոսի։ †Ոմանք, Քրիստոս

*Յոյն. աչխարհիս խաւարին

աչխարհին՝ իչխանիներուն հետ, երկնաւոր տիեզերքին մէջ եղող չար ոգիներուն հետ։ 13—Ասոր համար ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպես զի կարող ըլլաք չարութեան օրը դէմ դնել, և ամէն բանը լմնցնելէ ետև՝ հաստատուն կայնիլ։ Ուստի չոր գօտի կայնեցէք, ու իրաւունքի ճշմարտութեամբ ամրացնելով, ու արդարութեան զրահը հագնելով։ 15—Ու ոտքերնուդ հագցնելով խաղաղութեան աւետարանին պատրաստութիւնը։ 16—Ու ամէն բանին վրայ հաւատքին վահանը առէք, որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրակեա նետերը մարել։ 17—Ու փրկութեան սաղաւարտը առէք, ու Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է։ 18—Ամէն տեսակ աղօթքով ու խնդրուածքով ամէն ատեն աղօթք ընէք Հոգիով, ու այս բանին վրայ հսկելով կատարեալ յարատեւութեամբ ու պաչտօնքով՝ բոլոր սուրբերուն համար, 19—Ինձի համար ալ, որպէս զի ինծի խօսք տրուի որ բերանս բանամ համարձակութեամբ ուտեստանին խորհուրդը յայտնելու։ 20—Որու համար ես գեսպանութիւն կ՚ընծայեմ կապանքով, որպէս զի անով համարձակութիւն ունենամ խօսելու՝ ինչպես պէտք է։

21—Բայց որպէս զի դուք ալ գիտնաք իմ վիճակս՝ թէ ինչ կ՚ընեմ ես, ամէն բանը պիտի ցուցնէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաչտօնեան Տէրոջմով։ 22—Զոր յատկապէս այդ բանին համար ձեզի զրկեցի, որպէս զի գիտնաք դուք մեր վիճակով, ու ինք ձեր սիրտերը մխիթարէ։

23—Խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատքով Հայրենէ Տէր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ։ 24—Շնորհք այն ամենուն հետ՝ որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կը սիրեն։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Տիմոթէոս, Յիսուս Քրիստոսի ծառաները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն որոնք Փիլիպպեացոց կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւագներով. 2—Շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3—Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն անգամ որ ձեզ կը յիշեմ, 4—(Միշտ իմ ամէն ինդրատաւքիս մէջ, ձեր ամէնուն համար ուրախութեամբ աղօթք կ'ընեմ,) 5—Աւետարանին հաղորդ ըլլալնուդ համար սկսեալ առաջին օրէն մինչեւ հիմա. 6—Այս մասին վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջ բարի գործ մը սկսաց, մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ. 7—Ինչպէս ինծի արժան ալ է ձեր ամէնուն վրայ այս բանը խորհիլ՝ *ձեզ իմ սրտիս մէջ ունենալուս համար իմ կապերուս մէջ, և ուրուագրուելիքներ ու հաստատուելիքներ մէջ, և ամէնդ ինծի եղած շնորհքին հաղորդ ըլլալնուդ համար։ 8—Քանզի վկայ է ինծի Աստուած, որ ի՛նչպէս փափաք ունիմ ձեր ամէնուն վրայ Քրիստոս Յիսուսի գութովը։ 9—Եւ այս աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ աւելի չափազանց գիտութիւնով ու բոլոր ընտրողութիւնով, 10—Որպէս զի դուք տարբեր բաները զանազանէք, որպէս զի Քրիստոսի օրը անկեղծ և առանց գայթակղութեան ըլլաք. 11—Արդարութեան պտուղներով լցուած Յիսուս Քրիստոսի ձեռքով՝ Աստուծոյ փառքին ու գովեստին համար։

12—Ա՛ռաջիկ որ գիտնաք, եղբայրներ, թէ ինչ որ ինծի պատահեցաւ՝ աւելի ուեւտարանին յառաջդիմութեան պատճառ եղաւ։ 13—Մինչեւ իմ կապերս, որոնք Քրիստոսի համար են, բոլոր պալատին մէջ և ուրիշ ամէնուն ալ յայտնի եղան։ 14—Եւ Տէրոջմով եղբայրներուն չատերը սիրտ առին իմ կապերովս՝ աւելի համարձակիլ Աստուծոյ խօսքը խօսելու առանց վախի։ 15—Ոմանք նախանձէ ու հակառակութենէ և ոմանք բարեսիրութենէ կը քարոզեն Քրիստոսը կը քարոզեն։ 16—Անոնք հակառակութեան համար Քրիստոսը կը պատմեն, ոչ թէ անկեղծութեամբ, կարծելով վիշտ ուելցնել իմ կապերուս վրայ։ 17—Իսկ ասոնք սիրոյ համար, վասն զի գիտեն թէ ես աւետարանին համար պատասխան տալու կեցեր եմ։ 18—Ասոր ի՞նչ է. ա՛ր կերպով որ ըլլայ, թէ՛ պատճառաւնգով և թէ՛ ճշմարտութիւնով, Քրիստոս կը պատմուի, ու ասոր վրայ ուրախ եմ և ուրախ ալ պիտի ըլլամ։ 19—Քանզի գիտեմ որ ասոր վախճանը իմ փրկութեանս համար պիտի ըլլայ ձեր ԹՂԹ-ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԱՂՕՏՔԻՆ ԵՒ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՈԳՒՈՅ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՈՎ, 20—Իմ հառնդուն ակնկալութեանս ու իմ յոյսս համաձայն, որ բան'վ մը ամօթով պիտի չըլլամ. հապա կատարեալ համարձակութիւնով ինչպէս ամէն առած՝ Նոյնպէս ալ հիմա Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի փառաւորի՝ թէ՛ ապրելովս և թէ՛ մեռնելովս։ 21—Վասն զի ինծի համար՝ ապրիլը Քրիստոս է, ու մեռնիլը՝ օգուտ։ 22—Ապա եթէ մարմինի մէջ ապրիլը իմ գործիս պտուղ կը բերէ, ալ չեմ գիտեր ո՛րը ընտրեմ։ 23—Երկու կողմանէ ալ ձգտը ձեռացած եմ, մեկնելու ու Քրիստոսի հետ ըլլալու փափաք ունենալով. քանզի այն շատ աւելի ապեկէ է, 24—Բայց մարմինի մէջ կենալը ձեզի համար աւելի հարկաւոր է։ 25—Եւ այս բանին համոզուած ըլլալով՝ գիտեմ որ ձեր ամէնուն հետ պիտի կենամ ու ձեռքէ, որպէս զի դուք յառաջդիմութեամբ և ուրախ ըլլաք հաւատքով։ 26—Որպէս զի ձեր պարծանքը իմ վրայովս աւելի ըլլայ Քրիստոս Յիսուսով՝ իմ երթալս ձեզի գալուս պատճառաւ։

27—Միայն քէ Քրիստոսի աւետարանին ինչպէս կը վայլէ՝ այնպէս վարուեցէք. որպէս զի եթէ գամ ու ձեզ տեսնեմ, և կամ հեռու ըլլամ, ձեր վրայով լսեմ որ դուք հաստատուն կը կենաք մէկ հոգիով, ու մէկ չունչով պատերազմելիով կ'ըլլաք աւետարանին հաւատքին համար։ 28—Եւ բանով մէնի ալ մի զարհուրիք հակառակորդներէն, որ անոնց կորուստին ապացոյց մըն է, ու ձեզի՝ փրկութեան. 29—Այն ալ Աստուծմէ է. վասն զի ձեզի արուեցաւ Քրիստոսի համար՝ ոչ թէ միայն անոր հաւատալ, հապա անոր համար չարչարուիլ ալ, 30—Նոյն պատերազմը ունենալով՝ զոր իմ վրաս տեսաք ու հիմա իմ վրայովս կը լսէք։

ԳԼ. Բ

Ուստի եթէ Քրիստոսով մխիթարութիւն մը կայ, եթէ սիրոյ սփոփանք մը, եթէ Հոգիի հաղորդութիւն մը, եթէ գթութիւն ու ողորմութիւն մը, 2—իմ ուրախութիւնս զատ լեցուցէք, նոյն խորհուրդը ունենալով, միեւնոյն սէրը ՅԻՐ ՀԱ ունենալով, մէկ չունչ, մէկ մտածմունք։ 3—Բան մը գրգռութիւնով կամ անպարծութիւնով մի ընէք. հապա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք. 4—Մէյնդ անձերուդ չ՚նայիք մի նայիք. հապա ամէն մէկը իր ընկերին։ 5—Զի ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջ էր. 6—Որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, չյափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը. 7—Հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կերպարանքովը մարդու պէս գտնուելով, 8—Ինքզինքը խոնարհեցուց, մինչեւ մահ ան ալ խաչին մահուան։ 9—Ասոր համար Աստուած ալ զանիկա խիստ բարձրացուց, ու անոր անուն մը տուաւ՝ որ ամէն անունէ վեր է. 10—Որպէս զի Յիսուսի անունին ամէն ծունկ ծռի, երկնաւորներուն ու երկրաւորներուն և ստորգետնեայներուն, 11—Ու ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքին համար։ 12—Ուստի, իմ սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդ եղաք՝ ոչ միայն իմ ներկայութեանս, հապա ա՛լ աւելի հիմա, իմ բացակայութեանս ատեն, ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք. 13—Վասն զի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու բնելը իր հաճութեանը համար։ 14—Ամէն բան առանց տրտնջմունքու ու վիճաբանութիւններու բրէք. 15—Որպէս զի ըլլաք անբիծ ու անաչառ, Աստուծոյ որդիներ առանց ծռոգրանքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ դուք լուսաւորիչներ պէս կը փայլիք աշխարհի մէջ, 16—Կեանց խօսքը ամուր բռնելով՝ ինծի պարծանք ըլլալու համար Քրիստոսի օրը, թէ պարապ տեղ չվազեցի, և պարապ տեղ չյոգնեցայ։ 17—Բայց թէ եպետև ձեր հաւատքին պատարագին ու պաշտօնին վրայ ընծայուիմ, կ'ուրախանամ և ձեր ամէնուն ուրախակից կ'ըլլամ. 18—Նոյնպէս ալ դուք ուրախացէք ու ինծի ուրախակից եղէք։

19—Աբդ կը յուսամ Տէր Յիսուսով

*Կամ, փոխատակելու քան

որ Տիմոթէոսը չուտով ձեզի գրկեմ, որպէս զի իմ սիրտս ալ հանգչի, երբ ձեր վիճակը գիտնամ։ 20—Վասն զի ոչ-ոէ նմա որակից մէկը չունիմ, որ մասնաւորաբար ձեզի համար հոգ տանի։ 21—Քանզի ամէնը իրենցը կը փնտռեն՝ ոչ թէ Յիսուս Քրիստոսին։ 22—Բայց գուք անոր փորձը գիտէք, որ ինչպես որդի մը հօրը հետ՝ այնպէս ինծի հետ ծառայութիւն բրաւ աւետարանին մէջ։ 23—Ուստի կը յուսամ զանիկա գրկել չուտ մը՝ իմ ինչպէս բլլալիքս տեսնեմ պէս։ 24—Բայց վստահութիւն ունիմ Տէրոջմով՝ որ ես ալ փիլ ասենեն պիտի գամ։ 25—Միայն թէ հարկաւոր սեպեցի հղի ձեզի դրկել Եպափրոդիտոս իմ եղբայրս և գործակից ու զինուորակից, ձեր գրկածը ու իմ պէտքիս ծառայողը։ 26—Որովհետև ինք ալ շատ փափաք ունէր ձեզ ամէնդ ալ [տեսնելու]։ ու կը տրտմէր, որ դուք լսած էիք թէ ինք հիւանդացաւ։ 27—Ու արդարև ինք հիւանդացաւ մահուան մօտ, բայց Աստուած ողորմեցաւ անոր. ոչ թէ միայն անոր՝ հապա ինծի ալ, որպէս զի տրտմութեան վրայ տրտմութիւն չունենամ։ 28—Ասոր համար աւելի փութով զրկեցի, որպէս զի դուք զանիկա տեսնելով նորէն ուրախ բլլաք, ու ես առանց տրտմութեան բլլամ։ 29—Ուրեմն ընդունեցէք զանիկա Տէրոջմով ամէն ուրախութեամբ, ու այնպիսիները պատուականներու կարգը բռնեցէք։ 30—Քանզի Քրիստոսի գործին համար մինչև մահուան մօտեցաւ՝ իր կեանքը վտանգի մէջ ձգելով, որպէս զի ձեր ինծի ծառայելու պակասութիւնը ինք լեցնէ։

Գլ. Գ

Ուստի, իմ եղբայրներս, ուրախ եղէք Տէրոջմով. նոյն բաները ձեզի գրել ինծի ձանձրութիւն չէ, ու ձեզի ապահովութիւն է։ 2—Զգուշացէք չունեբէն, զգուշացէք կրճատութենէն։ 3—Վասն զի թլփատութիւնը մենք ենք, որ Հոգիով պաշտանք, ու կը պարծենանք Քրիստոս Յիսուսով, և մարմնի վրայ չի վստահութիւնենք։ 4—Թէպէտ ես ալ նոյն վստահութիւնը ունիմ մարմնի վրայ, եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմնի վրայ, ալ աւելի ես։ 5—Ութ օրուան թլփատուած, իսրայէլի ազգէն, Բենիամինի ցեղէն, Եբրայեցի՝ Եբրայեցիներէն, օրէնքին նայելով փարիսեցի։ 6—Նախանձաւոր բլլալու կողմանէ՝ եկեղեցին կը հալածէի. օրէնքին արդարութեան կողմանէ անարատ էի։ 7—Բայց ինչ որ ինծի չահ էր, զանիկա Քրիստոսի համար վնաս սեպեցի։ 8—Ու իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը սեպեմ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսի գերագանց գիտութեանը համար. որու համար ամէն բանէն զրկուեցայ, և ապականութիւն կը սեպեմ, որպէս զի Քրիստոսը շահիմ, 9—ու իր մէջ գտնուիմ, ոչ թէ իմ արդարութիւնս ունենամ որ օրէնքէն է, հապա Քրիստոսի հաւատքովը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէ է հաւատքով։ 10—Ձանձնալու զանիկա և անոր յարութեանը զօրութիւնը ու անոր չարչարանքներուն հաղորդ բլլալը, անոր մահուան կերպարանքը առնելով։ 11—Որ բլլայ թէ մեռելներուն յարութեանը հասնիմ։ 12—Ոչ թէ ես արդէն առեր եմ, կամ արդէն կատարեալ եղեր եմ, հապա եաւէ ինկած եմ որ բռնեմ հշ-ՈՒԼ, որու համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէ։ 13—Եղբայրներ, ես չեմ սեպեր որ բռներ եմ. բայց բան մը կայ, որ եաւէի եղածներուն մոռցած եմ, ու առջևի եղածներուն կը դիմեմ. 14—Նպատակը դիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազեմ։ 15—Ուստի մենք ամէնս որ կատարեալ ենք՝ այսպէս խորհինք, և եթէ բան մը ուրիշ կերպով խորհելու բլլաք, զանիկա ալ Աստուած պիտի յայտնէ ձեզի։ 16—Միայն թէ ինչ որ հասեր ենք, նոյն կանոնին համեմատ քալենք, նոյն խորհուրդը ունենանք։ 17—Ինծի նմանող եղէք, եղբայրներ, ու նայեցէք անոնց որ այնպէս կը քալեն, ինչպես մեզ չեզ օրինակ ունիք։ 18—Վասն զի շատերը կը քալեն, որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսէի, և հիմա լալով ալ կը ըսեմ, այսինքն Քրիստոսի խաչին թշնամիներուն համար։ 19—Որոնց վերջը կորուստ է, որոնց Աստուածը իրենց որովայնն է, ու ամօթոց փառքը իրենց ամբոխն է, որոնք գիտ երկրաւոր բաներըը կը մտածեն։ 20—Բայց մեր *քաղաքականութիւնը երկինքն է, ուրկէ ալ Փրկիչին կը սպասենք, Տէր Յիսուս Քրիստոսի։ 21—Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմնին կերպարանակից բլլալու, այն զօրութիւնովը որ կարող է ամէնը իրեն տակ հնազանդեցնելու։

Գլ. Դ

Ուստի, իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս, իմ ուրախութիւնս ու պսակս, այսպէս հաստատուն կեցէք Տէրոջմով, սիրելիներս։

2—Եւոդիայի կ'ապատեմ ու Սինտիքի կ'ապատեմ, որ միևնոյն խորհուրդը ունենան Տէրոջմով։ 3—Իրաւ քեզի ալ կ'ապաչեմ, իմ հարազատ ընկերս, գուն ալ օգնական եղիր անոնց, որոնք ինծի հետ աշխատեցան աւետարանին մէջ կղեմէսի և իմ ուրիշ գործակիցներուս հետ, որոնց անունները կենաց դիրքին մէջ են։ 4—Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեմ, ուրախ եղէք։ 5—Ձեր ժպտցութիւնը ամէն մարդոց թող յայտնի բլլայ. Տէրը մօտ է։ 6—Բանի մը համար հոգ մի ընէք. հապա ամէն բանի մէջ աղօթքով ու պաղատանքով, գոհութիւնով մեկնեց, ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի բլլայ։ 7—Ու Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերը ու միտքերը Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ։ 8—Վերջապես, եղբայրներ, ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն և ինչ գովութիւն որ կայ, այն բաները խորհեցէք։ 9—ինչ որ սորվեցաք ու առիք և լսեցիք ու տեսաք իմ վրաս, զայն ըրէք. և խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի բլլայ։

10—Մեծապէս ուրախացայ Տէրոջմով, որ իմ վրաս ունեցած հոգածութիւնդ հիմա նորոգուեցաւ, ինչպես կը հոգայիք ալ, միայն թէ պատեհութիւն չունէիք։ 11—Ոչ թէ կարօտութենէն համար կ'ըսեմ. վասն զի ես սորվեցայ գոհ բլլալ իմ գտածած վիճակիս մէջ։ 12—Գիտեմ չքաւորութիւն քաշելը, գիտեմ շատ ունենալը. ամէն բանի մէջ ամէն կերպով ազէկ սորվեր եմ թէ՛ կշտանալը, թէ՛ անօթենալը, թէ՛ շատ ունենալը և թէ՛ պակսութիւն քաշելը։ 13—Ամէն բանի կարող եմ *ուժով՝ որ զիս զօրացնէ։ 14—Բայց ազէկ ըրիք որ իմ նեղութենէս մէջ ինծի հաղորդ եղաք։ 15—Դուք ալ գիտէք, փիլիպպեցիներ, որ աւետարանին սկիզբը երբ ես Մակեդոնիայէ ելայ, եկեղեցի մըն ալ ինծի հետ հաղորդութիւն չբրաւ տալու և առնելու կողմէ, հապա միայն դուք։ 16—Որ Թեսաղոնիկէի մէջ ալ մէկ երկու անգամ ինծի պէտք եղածը զրկեցիք։ 17—Ոչ թէ ես տուրք կը փնտռեմ, հապա պտուղ կը փնտռեմ՝ որ ձեր հաշիւին վրայ աւելնայ։ 18—Բայց ես ամէն բան առած եմ ու առատութեան մէջ եմ. լցուած եմ՝ Եպափրոդիտոսի ձեռքով ձեր *ընծաները ընդունելով, որ անոյշ հոտ մըն է, ընդունելի պատարագ, Աստուծոյ հաճելի։ 19—Ու իմ Աստուածս ձեր ամէն պէտքը պիտի լեցնէ իր *հոխութեանը չափովը փառքով՝ Քրիստոս Յիսուսի ձեռքով։ 20—Արդ Աստուծոյ ու մեր Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

21—Բարև բրէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յիսուսով։ 22—Ձեզի բարև կ'ընեն ինծի հետ եղող եղբայրները, 23—Ձեզի բարև կ'ընեն բոլոր սուրբերը, մանաւանդ անոնք որ Կայսրին տունէն են։ 24—Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամէնուն հետ բլլայ։ Ամէն։

*Կամ՝ կենցաղավարութիւնը

*Որ՝ ես, Քրիստոսով

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, և Տիմոթէոս եղբայրը, 2—Կողոսայի մէջ եղող սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն Քրիստոսով. 3—Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն *և Տէր Յիսուս Քրիստոսէ՝

Ամէն ատեն ձեզի համար աղօթք ընելով՝ կը գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրմէն, 4—լսելով ձեր հաւատքը՝ որ Քրիստոս Յիսուսի վրայ, և այն սէրը՝ զոր բոլոր սուրբերուն վրայ ունիք. 5—Այն յոյսին համար որ երկինքը կը պահուի ձեզի, որուն վրայով առաջուընէ լսեցիք աւետարանին ճշմարտութեան խօսքովը. 6—Որ ձեզի հասաւ՝ ինչպես բոլոր աշխարհ, ու պտղաբեր ըլլալով (կ'աճի), ինչպես ձեր մէջ ալ, այն օրուընէ որ դուք լսեցիք ու ճանչցաք Աստուծոյ շնորհքը ճշմարտութեամբ. 7—ինչպես սորվեցաք մեր սիրելի Թառայակէնէն Եպափրասէ, որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ մըն է Քրիստոսի. 8—Որ ինք ալ մեզի պատմեց ձեր սէրը հոգիով։

9—Անոր համար մենք ալ, այն օրուընէ որ լսեցինք, չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէ ու խնդրուածք մատուցանելէ, որ կատարեալ ըլլաք անոր կամքին գիտութիւնովը բոլոր իմաստութիւնով ու հոգւոր հանճարով. 10—Որպէս զի դուք Տէրոջը արժանի կերպով քալէք ամէն բանի մէջ՝ չնչհաճեցնելով, ամէն բարի գործերու մէջ պտղաբեր ըլլալով, ու աճեցուն Աստուծոյ գիտութիւնովը. 11—Իր փառաւոր զօրութեանը համեմատ ամենայն ուժով ուժացած՝ բոլոր համբերութեան ու երկայնմտութեան համար ուրախութեամբ. 12—Գոհանալով Հօր Աստուծմէ, որ մեզ լսեցոյ մեզի բաժին եղած բոլոր սահմանուածներուն բաժակցելու, սրբոց ժառանգութեան մէջ լոյսի մէջ. 13—Որ մեզ ազատեց խաւարին իշխանութենէն, ու իր սիրելի Որդւոյն թագաւորութեանը փոխադրեց. 14—Որով մենք փրկութիւն ունինք իր արիւնովը, այսինքն մեղքերու թողութիւն. 15—Որ անհրատչի Աստուծոյ պատկերն է, բոլոր առեղծուածներուն անդրանիկը. 16—Վասն զի անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կ'երեւնան և անոնք որ չեն երեւնար, թէ՛ աթոռները, թէ՛ աւերութիւնները, թէ՛ պետութիւնները, թէ՛ իշխանութիւնները. բոլոր բաները անով ու անոր համար ստեղծուեցան. 17—Ու անիկա ամէն բանէ առաջ է, և ամէն բան անով հաստատ կը կենայ. 18—Ու անիկա է մարմինին, այսինքն եկեղեցւոյն, գլուխը. որ սկիզբն է, մեռելներէն անդրանիկը, որպէս զի ինք ըլլայ ամէն բանի մէջ նախապատիւ. 19—Վասն զի Հայրը հաճեցաւ որ Ամբողջութիւնն բոլոր լեցնուի Թիւնը անոր մէջ բնակի. 20—Ու անով ամէնը հաշտեցնէ իրեն հետ, խաղաղութիւն ընելով անոր խաչին վրայ թափած արիւնովը, թէ՛ երկրի վրայ և թէ՛ երկինքի մէջ եղողներըս,

21—Ու ձեզ ալ, որ առեն մը օտարացած էիք, ու չար գործերով թշնամիներ՝ մեր խորհուրդներով, 22—Հիմա հաշտեցուց բան իր մարմինովը՝ մահուամբ, որպէս զի ձեզ անար դիմաց սուրբ ու անբիծ և անթատա կայնեցնէ. 23—Եթէ կենաք հաստատին մէջ հիմնուած ու հաստատ և ատանց խախտելու աւետարանին յոյսէն զար լսեցիք, որ երկինքի տակ եղած բոլոր ստեղծուածներուն քարոզուեցաւ, որու ես Պօղոս պատուար եղայ։ 24—Հիմա ուրախ եմ ձեզի համար կրածներուս վրայ, ու Քրիստոսի կրածներուն պակասութիւնը իմ մարմինիս մէջ կը լեցնեմ անոր մարմինին համար, որ եկեղեցին է. 25—Որուես սպասաւոր եղայ Աստուծոյ անանութիւնովը՝ որ ինծի տրուեցաւ ձեզի համար՝ Աստուծոյ խօսքը լման քարոզելու, 26—Այն խորհուրդը՝ որ ծածկուած էր դարերէն ու ազգերէն հետու, ու հիմա իր սուրբերուն յայտնուեցաւ. 27—Որոնց ուզեց Աստուած գիտցնել, թէ ի՛նչ է այս խորհուրդին փառաւոր ճոխութիւնը հեթանոսներուն մէջ. որ է Քրիստոս ձեր մէջ, փառաց յոյսը. 28—Զոր մենք կը քարոզենք, ու ամէն մարդ կը խրատենք, և կը սորվեցնենք ամէն մարդ բոլոր իմաստութիւնով, որպէս զի ամէն մարդ կատարեալ կեցնենք Քրիստոս Յիսուսով. 29—Որու համար ես ալ կ'աշխատիմ, ըստ ընելով իր ներգործութեանը համեմատ, որ զօրութիւնով իմ մէջս ի գործ կը գործէ։

ԳԼ. Բ

Քանզի կ'ուզեմ որ գիտնաք թէ ի՛նչպէս մեծ անձկութիւն ունիմ ձեզի համար ու Լաւոդիկեացւոց համար, ու ամէն անոնց համար՝ որոնք իմ երեսս մարմնով չեն տեսեր. 2—Որպէս զի անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով միացած, ու կատարեալ իմացողութեան բոլոր ճոխութեանը հասնին, այսինքն Հօր Աստուծոյ և Քրիստոսի խորհուրդին գիտութեանը. 3—Որուն մէջ իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը պահուած են։ 4—Ես զայս կ'ըսեմ, որ չլլայ թէ մեկը հրապուրական խօսքերով ձեզ մոլորեցնէ. 5—Որ թէպէտ մարմնով հեռու եմ, բայց հոգւով ձեզի հետ եմ, և կ'ուրախանամ երբ ձեր բարեկարգութիւնը կը տեսնեմ, ու ձեր հաստատութիւնը՝ Քրիստոսի վրայ. 6—Ուստի ինչպես ընդունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը, անով քալեցէք, 7—Արմատ կապած ու անոր վրայ շինուած, ու հաստատին մէջ հաստատուած՝ ինչպէս սորվեցաք, և անոր մէջ առատցէք գոհութիւնով. 8—Զգուշացէք, չլլայ որ մեկը ձեզ գերի վարէ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւնով, որ մարդոց աւանդութեան պէս է — աշխարհի սկզբնաւորութեան պէս, և ոչ թէ Քրիստոսի վերաբերութեամբ պէս. 9—Վասն զի անոր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցնութիւնը մարմնապէս. 10—Ու դուք ալ անով լցուած էք, որ գլուխն է բոլոր իշխանութեան ու պետութեան. 11—Որով դուք անձեռագործ թլփատութիւնով թլփատեցաք *մեզաց մարմինը մերկանալով, Քրիստոսի թլփատութիւնովը. 12—Թաղուելով անոր հետ մկրտութիւնով, որով նաև անոր հետ յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը հաւատալով, որ զանիկա մեռելներէն յարուցանեց. 13—Ու ձեզ, որ ուրեն մեռած էք յանցանքներու մէջ ու ձեր մարմնին անթլփատութեանը մէջ մեռած էիք, կենդանացուց անոր հետ. Ձեր ամէն յանցանքները ներեց մեզի, 14—Ու հրամաններով եղած մեզի հակառակ եղող ձեռագիրը, որ մեզի դէմ կը կենար, ջնջեց, զանիկա մէջտեղէն վերցուց, ու խաչափայտին վրայ գամեց. 15—Ու իշխանութիւնները ու պետութիւնները մերկացուց, ու յայտնապէս խայտառակեց՝ յաղթելով անոնց †անով։

16—Ուստի ոչ ոք կը դատէ ձեզ ուտելու կամ խմելու, կամ տօնի բան կամ ամսագլուխներու կամ շաբաթներու կարգանէ. 17—Որոնք գալու բաներուն չուքն են, բայց Քրիստոսինը

21—Եւ ձեզ ալ, որ առեն մը օտարացած էիք, ու չար գործերով թշնամիներ՝ մեր խորհուրդներով, 22—Հիմա հաշտեցուց բան իր մարմինովը՝ մահուամբ, որպէս զի ձեզ անար դիմաց սուրբ ու անբիծ և անթատա կայնեցնէ. 23—Եթէ կենաք հաստատին մէջ հիմնուած ու հաստատ և ատանց խախտելու աւետարանին յոյսէն զար լսեցիք, որ երկինքի տակ եղած բոլոր ստեղծուածներուն քարոզուեցաւ, որու ես Պօղոս պատուար եղայ։ 24—Հիմա ուրախ եմ ձեզի համար կրածներուս վրայ, ու Քրիստոսի կրածներուն պակասութիւնը իմ մարմինիս մէջ կը լեցնեմ անոր մարմինին համար, որ եկեղեցին է. 25—Որու ես սպասաւոր եղայ Աստուծոյ անանութիւնովը՝ որ ինծի տրուեցաւ ձեզի համար՝ Աստուծոյ խօսքը լման քարոզելու, 26—Այն խորհուրդը՝ որ ծածկուած էր դարերէն ու ազգերէն հետու, ու հիմա իր սուրբերուն յայտնուեցաւ. 27—Որոնց ուզեց Աստուած գիտցնել, թէ ի՛նչ է այս խորհուրդին փառաւոր ճոխութիւնը հեթանոսներուն մէջ. որ է Քրիստոս ձեր մէջ, փառաց յոյսը. 28—Զոր մենք կը քարոզենք, ու ամէն մարդ կը խրատենք, և կը սորվեցնենք ամէն մարդ բոլոր իմաստութիւնով, որպէս զի ամէն մարդ կատարեալ կեցնենք Քրիստոս Յիսուսով. 29—Որու համար ես ալ կ'աշխատիմ, ըստ ընելով իր ներգործութեանը համեմատ, որ զօրութիւնով իմ մէջս ի գործ կը գործէ։

ԳԼ. Բ

Քանզի կ'ուզեմ որ գիտնաք թէ ի՛նչպէս մեծ անձկութիւն ունիմ ձեզի համար ու Լաւոդիկեացւոց համար, ու ամէն անոնց համար՝ որոնք իմ երեսս մարմնով չեն տեսեր. 2—Որպէս զի անոնց սիրտերը մխիթարուին՝ սիրով միացած, ու կատարեալ իմացողութեան բոլոր ճոխութեանը հասնին, այսինքն Հօր Աստուծոյ և Քրիստոսի խորհուրդին գիտութեանը. 3—Որուն մէջ իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը պահուած են։ 4—Ես զայս կ'ըսեմ, որ չլլայ թէ մեկը հրապուրական խօսքերով ձեզ մոլորեցնէ. 5—Որ թէպէտ մարմնով հեռու եմ, բայց հոգւով ձեզի հետ եմ, և կ'ուրախանամ երբ ձեր բարեկարգութիւնը կը տեսնեմ, ու ձեր հաստատութիւնը՝ Քրիստոսի վրայ. 6—Ուստի ինչպես ընդունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը, անով քալեցէք, 7—Արմատ կապած ու անոր վրայ շինուած, ու հաստատին մէջ հաստատուած՝ ինչպէս սորվեցաք, և անոր մէջ առատցէք գոհութիւնով. 8—Զգուշացէք, չլլայ որ մեկը ձեզ գերի վարէ փիլիսոփայութիւնով ու փուճ խաբէութիւնով, որ մարդոց աւանդութեան պէս է — աշխարհի սկզբնաւորութեան պէս, և ոչ թէ Քրիստոսի վերաբերութեամբ պէս. 9—Վասն զի անոր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցնութիւնը մարմնապէս. 10—Ու դուք ալ անով լցուած էք, որ գլուխն է բոլոր իշխանութեան ու պետութեան. 11—Որով դուք անձեռագործ թլփատութիւնով թլփատեցաք *մեզաց մարմինը մերկանալով, Քրիստոսի թլփատութիւնովը. 12—Թաղուելով անոր հետ մկրտութիւնով, որով նաև անոր հետ յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը հաւատալով, որ զանիկա մեռելներէն յարուցանեց. 13—Ու ձեզ, որ ուրեն մեռած էք յանցանքներու մէջ ու ձեր մարմնին անթլփատութեանը մէջ մեռած էիք, կենդանացուց անոր հետ. Ձեր ամէն յանցանքները ներեց մեզի, 14—Ու հրամաններով եղած մեզի հակառակ եղող ձեռագիրը, որ մեզի դէմ կը կենար, ջնջեց, զանիկա մէջտեղէն վերցուց, ու խաչափայտին վրայ գամեց. 15—Ու իշխանութիւնները ու պետութիւնները մերկացուց, ու յայտնապէս խայտառակեց՝ յաղթելով անոնց †անով։

*Յոյժ. չառնէն

*Ուրիշ մեզաց

†Կամ. իր անձովը

մարմինը Քրիստոսին է։ 18—Զըլլայ որ մեկը զրկէ ձեզ մրցանակէն, որ ուզէ խոնարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով չհետաքրքրուելով իր մարմինին մեռքով փուճ տեղ հպարտանալով· 19—ու չբռնել Գլուխը՝ ուրկէ բոլոր մարմինը յօդուածներով ու խոպոիով հաղորդուած ու միկտեղ կցուած՝ Աստուծոյ աճումովը կ՚աճի։ 20—Իսկ եթէ դուք Քրիստոսի հետ այս աշխարհին սկզբունքներէն մեռաք, ու ինչո՞ւ համար աշխարհի մէջ կենդանի եղողներու պէս ոյզերէն կանոններու կը հնազանդիք, ըսելով՝ 21—Մի մօտենար, համբ մի առներ, մի դպչիր, 22—(Որոնց ամէնը ապականութեան համար են գործածուելու) մարդոց պատուիրանքներուն ու ուսմունքներուն համեմատ, 23—Որոնք իմաստութեան կերպարանք մը ունին ինքնահաճ կրօնքով ու խոնարհութիւնով և մարմինի չխնայելով, Իսյց ոչ թէ պատիւ մը ուրճանէ ին, հոգւոյ մարմինը յագեցնելու ետ ծառայէ։

Գլ. Գ

Արդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաներէն փնտռեցէք, ուր Քրիստոս կը նստի Աստուծոյ ձախ կողմը։ 2—Վերի բաները մտածեցէք, ոչ թէ այս երկրին վրայինները։ 3—Վասն զի դուք մեռաք, ու ձեր կեանքը պահուած է Աստուծոյ քով Քրիստոսի հետ։ 4—Երբ Քրիստոս, մեր կեանքը, յայտնուի, այն ատեն դուք ալ անոր հետ փառքով պիտի յայտնուիք։

5—Ուստի ձեր երկրաւոր անդամներէն սպանեցէք· պոռնկութիւնը, պղծութիւնը, անասուն կիրքը, չար ցանկութիւնը և ագահութիւնը, որ կռապաշտութիւն է։ 6—Որոնց հետևանքով Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան որդիներուն վրայ կու գայ։ 7—Որոնց մէջ ատեն մը դուք ալ կը քալէիք, երբ անոնց մէջ կ՚ապրէիք։ 8—Բայց հիմա ձեզմէ ձգեցէք դուք ալ այն ամէնը· բարկութիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, անամօթ խօսքերը ձեր բերանէրնին։ 9—Իրարու սուտ մի ըսէք· հին մարդը իր գործերովը ձեր վրայէն հանեցէք։ 10—Ու հագէք այն նորը որ գիտութիւնով նորոգուած՝ իր Ստեղծողին պատկերին պէս։ 11—Ուր Յոյն ու Հրեայ, Թլփատութիւն ու անթլփատութիւն, Բարբարոս, Սկիւթացի, ծառայ կամ ազատ չկայ։ Հապա Քրիստոս է ամէնը՝ և ամէն բանի մէջ։ 12—Ուստի Աստուծոյ ընտրեալ սուրբերու և սիրելիներու պէս ձեր վրայ հագէք գութը, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, երկայնամտութիւնը։ 13—Իրարու համբերելով և իրարու ներելով՝ եթէ մէկը մեկուն դէմ պատճառ մը ունենայ։ ինչպես Քրիստոս ձեզի ներեց, նոյնպես ալ դուք։ 14—Ու այս ամէն բաներուն վրայ սէրը հագեր, որ կատարելութեան կապն է։ 15—Ու *Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սիրտերուն մէջ թագաւորէ, որու դուք կանչուեցաք մէկ մարմինով։ ու գոհացող եղէք։ 16—Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի առատապէս ամէն իմաստութիւնով՝ իրար սորվեցնելու ու խրատելու՝ սաղմոսներով և օրհնութիւններով ու հոգևոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհով զԱստուած օրհնելու։ 17—Ու ամէն ինչ որ կ՚ընէք թէ՛ խօսքով և թէ՛ գործով՝ բոլորը Տէր Յիսուսի անունովը ընէք, Աստուծոյ ու Հօրը գոհութիւն մատուցանելով անոր ձեռքով։

18—Կիներ, հնազանդ եղէք ձեր այրերուն, ինչպես կը վայլէ Տէրոջմով։ 19—Այրեր, սիրեցէք ձեր կիները, ու դառն մի ըլլաք անոնց։ 20—Որդիներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողներուն, վասն զի այն է Տէրոջը առջև հաճելի։ 21—Հայրեր, ձեր որդիները մի բարկացնէք, որպէսզի չվհատին։ 22—Ծառաներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն, ոչ թէ աչքի առջև ծառայելով մարդահաճոներու պէս, հապա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախնալով։ 23—Ինչ որ կ՚ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջը ու ոչ թէ մարդոց, 24—Գիտնալով որ Ժառանգութեան հատուցումը

*Ոմանք, Քրիստոսի

Տէրոջմէ պիտի առնէք· վասն զի Տէր Քրիստոսի կը ծառայէք· 25—Բայց ամբարիշտը, իր ամբարիշտութեան դատաստանը պիտի ընդունի, և աչառութիւն չկայ։

Գլ. Դ

Տէրեր, ձեր ծառաներուն իրաւունք ու հաւասարութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը։

2—Շարունակ ազօթքի հաւատիք եղէք, անոր մէջ արթուն մնալով գոհութեամբ։ 3—Ազօթք ըրէք նաև մեզի համար, որպէս զի Աստուած խօսքին դուռը բանայ մեզի Քրիստոսի խորհուրդը խօսելու, որու համար կապուած ալ եմ, 4—Որպէս զի յայտնի ընեմ զայն՝ ինչպես ինձի կը վայլէ խօսիլ։ 5—Իմաստութեամբ վարուեցէք դուրսինները հետ՝ ժամանակը ծախու առնելով։ 6—Ձեր խօսքը ամէն ատեն շնորհքով, աղտեղ ըլլ ազով, համակցած ըլլայ, ու գիտնաք թէ ինչպես կը վայլէ ձեզի ամէն մէկուն պատասխան տալ։

7—Ալ իմ վրայովս բոլորը պիտի իմացընէ ձեզի Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօնեան ու ծառայակիցը Տէրոջմով։ 8—Զոր այդ բանին համար ձեզի դրկեցի, որպէս զի *գիտնայ ձեր վրայով, ու ձեր սիրտերը մխիթարէ, 9—Ընկերակցա հաւատարիմ ու սիրելի եղբօր հետ Մէկաեղ, որ ձեզմէ ելէ։ իրենք ամէն բաներ ձեզի պիտի իմացընեն՝ ինչ որ հոս կայ։ 10—Բարև կ՚ընէ ձեզի Աբիստարքոս, իմ գերութեան ընկերս, և Մարկոս, Բառնաբասի եղբօրորդին, (որու համար պատուէր առիք, եթէ ձեզի գայլ ըլլայ,* ընդունեցէք զանիկա,) 11—Ու Ցիսուս՝ որ Ցուստոս ըսուած է, որոնք թլփատութենէն են. սոսկ ինքն՝ իմ գործակից եղած Աստուծոյ թագաւորութեան մէջ, ու բոնք ինձի մխիթարութիւն եղան։ 12—Բարև կ՚ընէ ձեզի Եպափրաս, Քրիստոսի ծառան, որ ձեզմէ ելէ է, ամէն ատեն ապօքի մէջ ձեզի համար չտնք ընելով, որպէս զի գուք կատարեալ ու լրացեալ կենաք Աստուծոյ բոլոր կամքին մէջ։ 13—Քանզի ոնոր վրայով ես կը վկայեմ, թէ շատ ջանքով կրնէ թէ ձեզի համար ու Լաոդիկիէի և Յիերապոլիսի մէջ եղողներուն համար։ 14—Բարև կ՚ընէ ձեզի սիրելի Ղուկաս բժիշկը ու Դեմաս։ 15—Բարև ըրէք եղբայրներուն, որոնք Լաոդիկիա են, և Նիմփասի ու անոր տանը մէջի եկեղեցիին։ 16—Ու երբ այս թուղթը ձեր մէջ կարդացուի, Լաոդիկեացոց եկեղեցիին մէջ ալ կարդալ տուէք. և դուք ալ Լաոդիկիայէ եկածը կարդացէք։ 17—Ու բսէք Արքիպպոսին, Զգոյշ եղիր քու պաշտօնութեանդ զոր Տէրոջմով առիր, որ զանիկա կատարես։ 18—Այս բարեւը իմ ձեռքիս՝ Պօղոսին է. իմ կապերս միտքերնիդ բազ ըլլան։ Շնորհքը ձեզի հետ։ Ամէն։

*Ոմանք, գիտնաք մեր վրայով, ու ինք ձեր

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցիդ Հայր Աստուծով ու Տէր Յիսուս Քրիստոսով. 2—Շնորհք և խաղաղութիւն ձեզի *Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝

3—Կը գոհանանք Աստուծմէ ամէն ատեն ձեր ամէնուն համար՝ ձեզ յիշելով մեր աղօթքներուն մէջ. 3—Անդադար յիշելով ձեր հաւատքին գործը ու սիրոյ աշխատութիւնը և մեր Տէր Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօրը առջև. 4—Ու գիտնալով, Աստուծմէ սիրուած եղբայրներ, ձեր ընտրութիւնը. 5—Որ մեր աւետարանը ոչ թէ միայն խօսքով եղաւ ձեզի, հապա զօրութիւնով ալ և Հոգւով Սրբով ու շատ ապդութիւնով, ինչպէս գիտէք ալ թէ ի՛նչպէս կեցանք ձեր մէջ ձեզի համար. 6—Դուք ալ մեզի ու Տէրոջը նմանող ըլլալով՝ ընդունեցիք խօսքը շատ նեղութեան մէջ Հոգւոյն Սրբոյ ուրախութիւնովը. 7—Այնպէս որ դուք օրինակ եղաք բոլոր հաւատացեալներուն, որոնք Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ են. 8—Վասն զի ձեզմէ հռչակուեցաւ Տէրոջը խօսքը, ոչ թէ միայն Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ, հապա նաև ամէն տեղ ձեր հաւատքը, որ դէպի Աստուած է, տարածուեցաւ, այնպէս որ ա՛լ պէտք չէ մեզի բան մը խօսիլ. 9—Քանզի իրենք կը պատմեն մեզի համար, թէ ի՛նչպէս եղաւ մեր ձեր քով մտնելը, և ի՛նչպէս դուք կուգաքերէն Աստուծոյ դարձաք՝ կենդանի ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու, 10—Ու սպասելու անոր Որդւոյն՝ երկինքէն. զոր բնաւ մեռելներէն յարուցաւ, այսինքն Յիսուսը, որ կ'ազատէ մեզ գալու բարկութենէն։

ԳԼ. Բ

Քանզի, եղբայրներ, դուք ինքնիրենիդ գիտէք ձեր մէջ մտնելնիս՝ որ պարապ տեղ չեղաւ. 2—Հապա առաջ Փիլիպպէի մէջ չարչարանք կրելով ու անարդուելով, ինչպէս գիտէք, համարձակութիւն ըրինք մեր Աստուածովը ձեզի պատմել Աստուծոյ աւետարանը մեծ հակառակութեան մէջ. 3—Վասն զի մեր յորդորանքը ոչ մոլորութենէ է ու ոչ պղծութենէ և ոչ խարէութեամբ. 4—Հապա ինչպէս մենք Աստուծմէ ընտրեցանք ու աւետարանը դրէ հաւատացուցաւ, այնպէս կը խօսինք, ոչ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար, հապա Աստուծոյ՝ որ մեր սիրտերը կը քննէ. 5—Վասն զի մենք բնաւ չոզորմութեան խօսքեր չգործածեցինք, ինչպէս գիտէք, ոչ ալ ագահութեան պատճառանք, Աստուած վկայ է. 6—Ու մարդոցմէ փառք չփնտռեցինք, ոչ ձեզմէ՛ ոչ ալ ուրիշներէն, 7—Թէև կրնայինք իբրև Քրիստոսի առաքեալներ ծանրութիւն տալ. բայց մենք հեզ եղանք ձեր մէջ, ինչպէս դայեակ մը իր երախաները կը խնամէ. 8—Նոյնպէս ալ մենք ձեր վրայ փափաք ունենալով՝ կը յօժարէինք, ոչ միայն Աստուծոյ աւետարանը ձեզի տալ, հապա մեր անձերն ալ. վասն զի դուք մեզի սիրելիներ եղաք. 9—Քանզի կը յիշէք, եղբայրներ, մեր աշխատութիւնը ու ջանքը, որ ձեզմէ մէկ՛ուն ծանրութիւն չտալու համար գիշեր ու ցորեկ գործելով՝ ձեզի Աստուծոյ աւետարանը քարոզեցինք. 10—Դուք վկայ եք, և Աստուած ալ՝ թէ ի՛նչպէս սրբութեամբ ու արդարութիւնով և անարատութիւնով վարուեցանք ձեզի հնա՛ որ հաւատացիք. 11—Ինչպէս գիտէք —, որ ձեզմէ ամէն մէկը, ինչպէս հայր մը իր որդիները՝ 12—Ա՛ղերս կը յորդորելինք ու կը միխիթարէինք և վկայութիւն կը գնէինք, որպէս զի դուք Աստուծոյ վայլուածին պէս քալէք, որ ձեզ իր թագաւորութեանը ու փառքին կանչեց. 13—Ասոր համար մենք ալ անդադար կը գոհանանք Աստուծմէ, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լսելով ընդունեցիք, ոչ թէ էրէ՛ մարդոց խօսք, հապա, ինչպէս ճշմարտապէս է, Աստուծոյ խօսք, որ նաև կը ներգործէ ձեր մէջ որ կը հաւատաք. 14—Քանզի դուք, եղբայրներ, նմանեցաք եղաք Աստուծոյ եկեղեցիներուն, որոնք Հրէաստանի մէջ են Քրիստոս Յիսուսով. վասն զի դուք ալ նոյն չ՚՚՚

ասդիւռ։ 13—Հաստատելով ձեր սիրտերը անարատ, սրբութեան մէջ Աստուծոյ և մեր Հօրը առջև, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալուստեանը իր բոլոր սուրբերուն հետ մէկտեղ։

ԳԼ. Գ

Ալ հիմա, եղբայրներ, ձեզի կ'աղաչենք ու կը յորդորենք Տէր Յիսուսով, որ ինչպես մեզմէ առիք՝ թէ ինչպես պէտք է ձեզի քալել ու Աստուծոյ հաճոյ ըլլալ, ալ աւելի մեծ չափով։ 2—Քանզի գիտէք թէ ի՛նչ պատուիրներ տուինք ձեզի Տէր Յիսուսով։ 3—Վասն զի Աստուծոյ կամքը այս է, այսինքն ձեր սուրբ ըլլալը, որ դուք ետ կենաք պոռնկութենէ։ 4—Ձեզմէ ամէն մէկը գիտնայ իր անօթը սրբութիւնով ու պատուով ստանալ։ 5—Ոչ թէ ցանկութեան կիրքով՝ ինչպես հեթանոսները, որոնք զԱստուած չեն ճանչնար։ 6—Չըլլայ որ *այդ բանին մէջ չափէ անցնի հիւր ու իր եղբայրը զրկէ, վասն զի Տէրը այդ բոլոր բաներուն համար վրէժխնդիրն է, ինչպես առաջուընէ ըսինք ձեզի ու վկայութիւն տուինք։ 7—Վասն զի Աստուած մեզ պղծութեան չկանչեց, հապա սրբութեան։ 8—Ուստի ան որ կ'անարգէ՝ ոչ թէ մարդ մը կ'անարգէ, հապա զԱստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ կու տայ ձեզի։

9—Բայց եղբայրասիրութենէն վրայով պէտք չէ ձեզի բան գրել, վասն զի դուք ինքներնիդ Աստուծմէ սորված էք միմիայն սիրել։ 10—Ու իրաւ այդ բանը կ'ընէք դուք բոլոր Մակեդոնիայի մէջ եղող ամէն եղբայրներուն։ սակայն կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, որ ա՛լ աւելի առաջանաք։ 11—Ու ջանք ընէք որ հանդարտ կենաք, ու ամէն մէկդ իր գործը գործէ, ու ձեր ձեռքերովը աշխատիք, (ինչպէս ձեզի պատուիրեցինք,) որպէս զի դուրսիններուն հետ պարկեշտութեամբ վարուիք, ու էրանի մը՝ կարօտ չըլլաք։

12—Ձենք ուզեր, եղբայրներ, որ ձեզի բոլոր ննջեցեալներուն վրայով, որպէս զի չտրտմիք ինչպէս ուրիշները՝ որոնք յոյս չունին։ 13—Քանզի եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ, ու յարութիւն առաւ, նոյնպէս ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ։ 14—Վասն զի զայս կը պատճենք ձեզի Տէրոջը խօսքովը, թէ մենք որ մինչև Տէրոջը գալուստը ողջ կը մնանք, բնաւ նախ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք։ 15—Վասն զի Տէրը ինք ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն։ 16—Ետքը մենք – ու ողջ մնացած ենք՝ անոնցմով միասին պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջև ելլելու օդին մէջ, և այնպես յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք։ 17—Ուստի մէկզմէկ մխիթարեցէք այս խօսքերով։

ԳԼ. Ե

Բայց այն ժամերուն ու ժամանակներուն համար, եղբայրներ, պէտք չէ բան մը գրել ձեզի։ 2—Քանզի դուք ինքներնիդիդ ալիկ գիտէք՝ թէ Տէրոջը օրը գիշերուան գողի պէս այնպես կը հասնի։ 3—Երբ ըսեն ըլլան թէ խաղաղութիւն ու ապահովութիւն է, այն ատեն կորուստը յանկարծակի անոնց վրայ պիտի հասնի յղիին երկունքին պէս, ու պիտի չազատին։ 4—Բայց դուք, եղբայրներ, խաւարի մէջ չէք, որ այն օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի։ 5—Վասն զի դուք ամէնդ լուսոյ որդիներ եք, ու ցորեկուան որդիներ. գիշերուանը չենք, խաւարինը չենք։ 6—Ուրեմն չքնանանք ինչպես ուրիշները, հապա արթուն ու զգաստ ըլլանք։ 7—Քանզի անոնք որ կը քնանան, գիշերը կը քնանան, և անոնք որ կ'արբենան, գիշերը կ'արբենան։ 8—Բայց մենք, որ ցորեկուան ենք, զգաստ ըլլանք, և հաւատքի ու սիրոյ զրահը մեր վրայ հագնինք, ու փրկութեան յոյսին սաղաւարտը գլուխնիս դնենք։ 9—Վասն զի Աստուած մեզ

---

*Կամ, բանէ մը դէմ։ †Կամ, ձեզի

բարկութեան համար չտրաշեց. հապա փրկութիւն ստանալու համար մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով։ 10—Որ մեզի համար մեռաւ, որպէս զի թէ՛ արթուն ըլլանք և թէ՛ քնացածներ, իրեն հետ միասին ապրինք։ 11—Ուստի համոզեցէք միմիանց և իրարու չնմանութիւն ուսէք, ինչպես կ'ընէք ալ։

12—Ու ձեզի կ'աղաչենք, եղբայրներ, որ ճանչնաք ձեր աշխատաւորները ու վերակացուները Տէրոջմով, ու ձեզի խրատ տուողները։ 13—Ու գնահատեք մեծապես պատուեցէք սիրով իրենց գործին համար. իրարու հետ խաղաղ կեցէք։ 14—Ու ձեզի կ'աղաչենք, եղբայրներ, անկարգ վարուողները նախատեցէք, վհատոտները մխիթարեցէք, տկարները հետամուտ եղէք, ամէնուն ալ երկայնամիտ եղէք։ 15—Զգուշացէք, չըլլայ որ մէկը չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէ մէկուն. հապա ամէն ատեն բարիք ընելու եռանդ եղէք իրարու և բոլորին ալ։ 16—Ամէն ատեն ուրախ եղէք։ 17—Անգադար աղօթք ըրէք։ 18—Ամէն բանի մէջ գոհութիւն ուսէք. վասն զի այս է Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսուսով ձեր վրայ։ 19—Սուրբ Հոգին մի մարէք։ 20—Մարգարէութիւնները մի արհամարհէք։ 21—Ամէն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք։ 22—Ամէն տեսակ գէշ բաներէ ետ կեցէք։ 23—Ու ինք խաղաղութեան Աստուածը ձեզ բոլորովին սուրբ ընէ, ու ձեր բոլոր հոգին և հոգին ու մարմինը անարատ պահուի Քրիստոս Յիսուսի մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստեանը։ 24—Հաւատարիմ է նա որ ձեզ կանչեց, որ պիտի կատարէ ալ։

25—Եղբայրներ, աղօթք ըրէք մեզի համար։ 26—Բարև տուէք բոլոր եղբայրներուն սուրբ համբոյրով։ 27—Ի՛րդ ձեզմէ ձեզ Տէրոջմով, որ այս թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն կարդացուի։ 28—Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզի հետ ըլլայ։ Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյդ մեր Հայր Աստուծով ու Տէր Յիսուս Քրիստոսով։ 2—Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէ։

3—Պարտիմք ամէն ատեն Աստուծմէ զոհանալ ձեզի համար, եղբայրներ, ինչպէս կը վայլէ· քանզի ձեր հաւատքը շատ աճելու վրայ է, և ձեր ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը շատնայ։ 4—Այնպէս որ մենք ալ ձեզմով կը պարծենանք Աստուծոյ եկեղեցիներուն մէջ՝ ձեր համբերութեանը ու հաւատքին համար ձեր բոլոր հալածանքներուն ու նեղութիւններուն մէջ՝ որոնց դուք կը համբերէք։ 5—Որ է Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցը՝ որպէս զի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեանը, որու համար ալ նեղութիւն կը կրէք։ 6—Քանզի Աստուծոյ առջև իրաւունք է՝ ձեզի նեղութիւն տուողներուն նեղութիւն հատուցանել, 7—ու ձեզի նեղութիւն կրողներուդ՝ մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի երկինքէն յայտնուելու ատենը իր զօրաւոր հրեշտակներովը։ 8—Բոցբոցած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ զԱստուած չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր։ 9—Որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն, 10—երբ ինք գայ փառաւորուիլ իր սուրբերուն մէջ, և հիանալի ըլլալ բոլոր հաւատացեալներուն մէջ, (վասն զի մեր վկայութիւնը ձեր մէջ հաւատացաք եղաւ։) այն օրը։ 11—Այս պատճառաւ ալ միշտ ատեն ձեզի համար աղօթք կ՚ընենք, որ մեր Աստուածը ձեզ արժանի ընէ ՅԻՒ կոչումին, և իր բարութեան բոլոր հաճութիւնը կատարէ, ու հաւատքին գործը՝ զօրութիւնով։ 12—Որպէս զի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը փառաւորի ձեր մէջ, և դուք ալ անոր մէջ՝ մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին համեմատ։

ԳԼ. Բ

Կ՚աղաչենք ձեզի, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստին ու մեր անոր քով ժողովուելուն համար, 2—Չըլլայ որ չուտ մը խախտիք ՅԻՐ միտքէն, ու չըլլայ որ խռովիք՝ ոչ հոգիով ու ոչ խօսքով, ոչ ալ Թուղթով մը իբր թէ մեզմէ էր—ած, որպես թէ Քրիստոսի օրը եկած հասած ըլլայ։ 3—Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ կերպով մը· վասն զի ՆՅԷ ՏԷՐ ՉԷ՝ եթէ ապստամբութիւնը առաջ չգայ, ու յայտնուի մեղաց մարդը, կորսեան որդին, 4—Ան հակառակորդը հպարտացած ամէնուն վրայ, որ Աստուած կ՚ըսուի կամ կը պաշտուի, մինչև անիկա Աստուծոյ տաճարին մէջ *պիտի նստի, և ինքզինք ցուցնէ թէ Աստուած է։ 5—Չի՞ք յիշեր որ երբ ձեր քով էի, այս բաները կ՚ըսէի ձեզի։ 6—Եւ հիմա դուք

*Ոմանք, Աստուծոյ պէս պիտի

Բայց Տէրը հաւատարիմ է, որ ձեզ պիտի հաստատէ, ու չարէն պահէ։ 4—Եւ ձեր վրայ վստահութիւն ունինք Տէրոջմով, թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք՝ կ՚ընէք, ու պիտի ընէք ալ։ 5—Եւ Տէրը ձեր սիրտերը Աստուծոյ սիրոյն ու Քրիստոսի համբերութեանը ուղղէ։

6—Եւ ձեզի կը պատուիրենք, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, որ ետ քաշուիք ամէն եղբօրմէ՝ որ անկարգութեամբ կը վարուի, ու ոչ թէ այն աւանդութեանը պէս՝ զոր մեզմէ առաւ։ 7—Վասն զի դուք ինքնիրենիդ գիտէք թէ ինչպէս պարտիք մեզի նմանիլ։ քանզի մենք ձեր մէջ անկարգութեամբ չվարուեցանք, 8—Ոչ ալ մէկուն հացը ձրի կերանք, հապա չանգիստ և աշխատանքով գիշեր ու ցորեկ կը գործէինք՝ ձեզմէ մէկուն ծանրութիւն չտալու համար։ 9—Ոչ թէ՝ որ մենք իշխանութիւն չունէինք, հապա որ անձերնիս ձեզի օրինակ ընենք՝ որպէս զի մեզի նմանիլ ըլլաք։ 10—Վասն զի երբ մենք ձեր քովէն կ՚ելնէինք՝ այս ձեզի կը պատուիրէինք, թէ Ան որ չուզեր գործ գործել, հոյ ալ թող չուտէ։ 11—Արդ կը լսենք որ ձեր մէջէն ոմանք անկարգութեամբ կը վարուին, ու գործ մը չեն գործեր, հապա հետաքրքիր կը պտրտին։ 12—Այնպիսիներուն պատուէր կու տանք ու կ՚ապտինք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ հանգարտութեամբ գործեն և իրենց հացը ուտեն։ 13—Բայց դուք, եղբայրներ, մի ձանձրանաք բարիք գործելէ։ 14—Իսկ եթէ մեկը չհնազանդիր մեր խօսքին այս Թուղթով, գուք նշանակեցէք զանիկա, ու ոչ հետ մի խառնուիք, որպէս զի ամչնայ։ 15—Բայց չըլլայ թէ թշնամիի պէս սեպէք զԱյն, հապա եղբօր պէս խրատեցէք։ 16—Եւ ինք խաղաղութեան Տէրը ամէն կերպով ձեզի խաղաղութիւն տայ ամէն ատեն։ Տէրը ձեր ամենուն հետ ըլլայ։

17—Այս ողջոյնը իմ ձեռքիս՝ Պօղոսին է, որ ամէն Թուղթերուն մէջ նշան է· այսպէս կը գրեմ։ 18—Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԱՒ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼ. Ա

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, մեր փրկիչ Աստուծոյ և մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի՝ հրամանով, 2—Տիմոթէոսի, Իմ հարազատ զաւակիս հաւատքով, շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն և Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն։

3—Ինչպէս քեզի աղաչեցի Եփեսոս մնալ, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որ պատուիրես մէկ քանիներուն ասոր ուսմունքը չսորվեցնել, 4—և չհոյիլ առասպելներու ու ազգահամարներու՝ որոնք վիճք չտնկեն, որոնք աւելի վճռեր կը պատճառեն քան թէ Աստուծոյ հաւատքով՝ էլինութիւնը՝ որ կ'ըլլայ հաւատքով։ 5—Իսկ պատուիրանքին վախճանը սէր է սուրբ սրտով ու բարի խղճմտանքով և անկեղծ հաւատքով։ 6—Որոնցմէ խոտորելով ոմանք փուճ խօսքերու եռեւէ գացին։ 7—Օրինաց վարդապետ ըլլալ կ'ուզեն, Է՛այց իրենք չեն հասկնար ինչ որ կը խօսին, ոչ ալ այն բաները՝ որոնց համար ուժ կը կոխեն։ 8—Արդ գիտենք որ օրէնքը ազէկ է, եթէ մէկը զանիկա օրինաւոր կերպով գործածելու ըլլայ։ 9—Բայց զայս քաղ գիտնալ որ արդարներուն համար չէ օրէնքը, հապա անօրէններուն ու անհնազանդներուն համար, ամբարիշտներուն և մեղաւորներուն, անսուրբներուն և պիղծերուն, հայր ու մայր զարնողներուն, մարդասպաններուն, 10—պոռնիկներուն, արուագէտներուն, մարդ գաղցողներուն, սուտ երդում ընդունելներուն, և թէ ուրիշ ինչ որ հակառակ է աղէկամիտ վարդապետութեան, 11—Որ եռանկիւի Աստուծոյ փառաւոր աւետարանին համեմատ է, որ ինծի յանձնուեցաւ։ 12—Ես շնորհակալ եմ անոր՝ որ զիս զօրացուց, այնինքն Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը, որ հաւատարիմ սեպելով զիս՝ այս պաշտօնութեան մէջ դրաւ։ 13—Որ առաջ հայհոյիչ կի ու հալածող և բռնաւոր եղայ։ Բայց ողորմութիւն գտայ, վասն զի անհաւատութեան մէջ չգիտնալով ըրի։ 14—Ես մեր Տէրոջը շնորհքը խիստ չատ եղաւ Ինծի հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է։ 15—Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց գլուխը ես եմ։ 16—Բայց անոր համար ողորմութիւն գտայ, որ ամենէն առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս ցուցնէ բոլոր երկայնմտութիւնը՝ օրինակ ըլլալու անոնց որոնք պիտի հաւատային իրեն յաւիտենական կեանքի համար։ 17—Արդ յաւիտենական թագաւորին, որ անեղծ ու աներեւոյթ է, մի՝ միայն Աստուծոյն փառք ու պատիւ յաւիտեանց յաւիտենից։ Ամէն։

18—Այս պատուէրը կ'աւանդեմ քեզի, իմ որդեակս Տիմոթէոս, փոխադրելով առաջուընէ եղած մարգարէութիւններուն համեմատ, որ անոնցմով պատերազմիս այն բարի պատերազմը,

*Ոմանք, միայն խմաստուն

19—և ունենաս հաւատք ու մաքուր խղճմտանք, զոր մէկ քանիները իրենցմէ մէկդի ձգելով՝ նաւակոծութիւն կրեցին հաւատքին կողմանէ։ 20—Որոնցմէ են Հիմենաս ու Աղեքսանդրոս, զորոնք ես Սատանային մատնեցի, որպէս զի սորվին հայհոյութիւն չընել։

ԳԼ. Բ

Արդ կ'աղաչեմ ամէն բանէ առաջ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամէն մարդոց համար, 2—Մանաւանդ թագաւորներուն և բոլոր իշխանաւորներուն համար. որպէս զի խաղաղ ու հանգարտ կեանք վարենք բոլորովին աստուածպաշտութիւնով ու պարկեշտութիւնով։ 3—Վասն զի այն է ազէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջև, 4—Որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին ու ճշմարտութիւնը ճանչնալու գան։ 5—Քանզի մէկ Աստուած կայ, ու մէկ միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջտեղ, Քրիստոս Յիսուս մարդը։ 6—Որ իր անձը ամէնուն տեղ փրկանք տուաւ՝ իր ատենին վկայութիւնը ըլլալու։ 7—Որուն ես քարոզիչ ու առաքեալ դրուեցայ, (Ճշմարիտ կ'ըսեմ Քրիստոսով և սուտ չեմ խօսիր,) հեթանոսներուն վարդապետ եղայ հաւատքով ու ճշմարտութեամբ։ 8—Արդ կ'ուզեմ որ այր մարդիկ ամէն տեղ աղօթք ընեն՝ սուրբ ձեռքեր վերցնելով առանց բարկութեան և երկմտութեան։ 9—Նոյնպէս ալ կիները վայելուչ հագուստով, ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ ինքզինքնին զարդարեն, ոչ թէ հիւսուածքներով կամ ոսկիով կամ մարգարիտներով կամ մեծաժաս հանդերձներով, 10—Հապա բարի գործերով՝ ինչպէս կը վայլէ աստուածպաշտութիւն գաւանող կիներուն։ 11—Կին մարդը քաղ սորվի լուռութեամբ՝ ամենայն հնազանդութիւնով։ 12—Բայց կին մարդու հրաման չեմ տար սորվեցնելու, ոչ ալ այր մարդուն իշխելու, հապա լուռ կենալու։ 13—Վասն զի առաջ Ադամ ստեղծուեցաւ, ապա Եւա։

*Ոմանք չտանին

14—Եւ Ադամ չխաբուեցաւ, հապա կինը խաբուեցաւ ու յանցանքի գործեց։ 15—Սակայն պիտի փրկուի անդիկա որ գիծեռնութեամբ, եթէ կենան հաւատքի և սիրոյ ու սրբութեան մէջ պարկեշտութիւնով։

ԳԼ. Գ

Այս խօսքը հաւատարիմ է. Եթէ մէկը եպիսկոպոսութեան կը ցանկայ, ազէկ գործի կը ցանկայ։ 2—Ուստի պէտք է եպիսկոպոսին անարատ ըլլայ, մէկ կնոջ այր, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրասէր, սորվեցնելու յարմար, 3—Ոչ գինեմոլ, ոչ զարնող, Հապա հանգարտ, ոչ կռուող, ոչ արծաթասէր, 4—Որ իր տանը ազէկ վերակացութիւն ընող ըլլայ, իր զաւակները հնազանդութեան մէջ պահելով՝ բոլոր ծանրաբարոյութեամբ։ 5—(Ապա եթէ մէկը իր տանը վերակացութիւն ընել չգիտնայ, ի՞նչպէս Աստուծոյ եկեղեցիին հոգածութիւն պիտի ըլլայ։) 6—Ոչ ալ նորահաւատ ըլլայ, որ չըլլայ թէ հպարտանալով Սատանային գատապարտութեանը մէջ իյնայ։ 7—Հապա պէտք է անոր գովելի եղջիւրներն ալ բարի վկայութիւն ունենայ, որ չըլլայ թէ նախատինքի մէջ ու Սատանային որոգայթին մէջ իյնայ։

8—Նոյնպէս ալ սարկաւագները ըլլան ծանրաբարոյ, ո՛չ երկլեզու, ո՛չ գինեսէր, ո՛չ անարգ չահախնդրութեան եռեւէ եղող։ 9—Հապա հաւատքին խորհուրդը պահեն մաքուր խղճմտանքով։ 10—Ու ասոնք ալ առաջ քաղ փորձուին, ետքը՝ եթէ անմեղադրելի գտնուին, սարկաւագութեան պաշտօնը կատարեն։ 11—Նոյնպէս ալ ծերակոյսները ծանրաբարոյ ըլլան, ոչ չարախօս, հապա զգաստ, ամէն բանի մէջ հաւատարիմ։ 12—Սարկաւագները մէկ կնոջ այր ըլլան, և իրենց զաւակներուն ու իրենց տանը ազէկ վերակացութիւն ընող ըլլան։ 13—Քանզի անոնք որ սարկաւագութեան պաշտօնը ազէկ կը կա-

*Ոմանք, ոչ անարգ չահախնդրութեան եռեւէ եղող, հապա

աթեն քարի աստիճան մը իրենց կը չտնին, ու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքին մէջ չատ համարձակութիւն,

14—Ասոր համար կը գրեմ քեզի, յուսալով մտերս քեզի գալ։ 15—Բայց եթէ ուշանալու ըլլամ, որպէս զի գիտնաս թէ ինչպէս պէտք է քեզի Աստծոյ տանը մէջ պարտիլ, որ կենդանի Աստծոյ եկեղեցին է, ճշմարտութեան սիւնը ու հաստատութիւնը։ 16—Ու յայտնապէս մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը. Աստուած մարմինով յայտնուեցաւ, Հոգիով արդարացաւ, հրեշտակներուն երեցաւ, հեթանոսներուն մէջ քարոզուեցաւ, աշխարհի մէջ հաւատացուեցաւ, — փառքով համբարձաւ։

Գլ. Դ

Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ վերջին ատենները մէկ քանիները հաւատքէն պիտի ապստամբին, և մոլորեցուցիչ ոգիներու ու դեւերու ուսմունքներու ուշադրութիւն պիտի տան, 2—Սուտխօսներուն կեղծաւորութիւնովը, որոնց խղճմտանքը խանձուած է. 3—Որոնք ամուսնանալ պիտի արգիլեն, — ու կը պիտի պահեն կերակուրներէն՝ զորոնք Աստուած ստեղծեր է որպէս զի հաւատացեալները և ճշմարտութիւնը ճանչցողները գոհութեամբ վայելեն։ 4—Վասն զի Աստծոյ ամէն ստեղծածը բարի է, ու մերժելու բան մը չկայ, եթէ գոհութեամբ ընդունուի. 5—Քանզի Աստծոյ խօսքովը ու աղօթքով կը սրբուի։ 6—Ասոր բաները եղբայրներուն յիշեցնելով՝ Յիսուս Քրիստոսի բարի պաշտօնեայ մը պիտի ըլլաս, ու պիտի սնանիս հաւատքին խօսքերովը և այն բարի վարդապետութիւնովը՝ զոր հետևած եղար։ 7—Բայց պիղծ ու պառաւական առասպելներէն հեռ կեցիր, և քու անձդ աստուածպաշտութեան վարժեցուր։ 8—Վասն զի մարմինին վարժութիւնը փիչ բանի օգտակար է, բայց աստուածպաշտութիւնը ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ և թէ՛ ապառնի կեանքին խոստումնքը ունի։ 9—Ասոր խօսքը հաւատարիմ է և բոլորովին ընդունելութեան արժանի։ 10—Վասն զի բանն ասոր համար կ'աշխատինք ու նախատինք կը կրենք, քանզի կենդանի Աստծոյ յուսացեր ենք, որ ամէն մարդոց Փրկիչն է, մանաւանդ հաւատացեալներուն։ 11—Ասոր բաները պատուիրէ ու սորվեցուր։ 12—Ձրլլայ որ մէկը քու մանկութիւնդ անարգէ, հապա դուն օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարմունքով, սիրով, հաւատքով և մաքրութեամբ։ 13—Մինչև ես գամ՝ միտք դիր կարդալու, յորդորելու, սորվեցնելու։ 14—Անհոգ մի ըլլար քու վրադ եղած պարգեւին վրայով, որ մարգարէութեամբ քեզի արուեցաւ՝ երկնցնելուն ձեռքերը տ— վրադ դրուելովը։ 15—Ասոնց վրայ խորհէ ու ասոնց մէջ պարապէ, որպէս զի քու յառաջադիմութիւնդ † ամենուն յայտնի ըլլայ։ 16—Զգուշացիր քու անձիդ ու վարդապետութեանդը, — միշտ ասոնց մէջ կեցիր. քանզի այդպէս ընելով՝ քեզ ալ պիտի ապրեցնես, ու զանոնք ալ որոնք քեզի մտիկ կ'ընեն։

Գլ. Ե

Մերը աստիճ մի յանդիմաներ, հապա հոր պէս յորդորէ ջահիլ։ երիտասարդները՝ եղբայրներու պէս, 2—Պառաւները՝ մայրերու պէս, դեռահասակ կիներըը՝ քոյրերու պէս ամէն [իբ] մաքրութիւնով։ 3—Որբևայրիները պատուէ՝ զանոնք որ ճշմարտապէս որբևայրի են։ 4—Իսկ եթէ որբևայրի մը զաւակներ կամ թոռներ ունենայ, թող անոնք առաջ սորվին իրենց տանը մէջ որդիական գութ ցուցնել, ու փոխարէն հատուցանել իրենց ծնողներուն. վասն զի այն է բարի և ընդունելի Աստծոյ առջև։ 5—Բայց ան որ ճշմարտապէս որբևայրի է ու միևնակ Աստած, իր յոյսը Աստծոյ վրայ դրած է, և գիշեր ցորեկ աղօթքի ու պաշտօնքի կը պարապի։ 6—Բայց փափկասէր ոբևայրէն կենդանւոյն մեռած է. 7—Ու այս բաները պատուիրէ որպէս զի անարատ ըլլան։ 8—Բայց եթէ մէկը իրենիներուն

*Ոմանք, հոգւով, հաւատքով եկամ, ամէն բանի մէջ

ու մանաւանդ իր ընտանիքին հոգ չտանիր, անիկա հաւատքը ուրացած է, ու անհաւատ մըն ալ գէշ է։ 9—Որբևայրին ոբևայրուհի կարգը թող տպատի, որ վաթսուն տարեկէն պակաս չէ, մէկ կրկան կին եղած, 10—Բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած ըլլայ, եթէ հիւրեր ընդունած ըլլայ, եթէ սուրբերուն ոտքերը լուացած ըլլայ, եթէ նեղեալներուն օգնութիւն ըրած ըլլայ, եթէ ամէն տեսակ բարեգործութեան մէջ յառաջացած ըլլայ։ 11—Բայց դեռահասակ որբևայրիները մերժէ. քանզի երբ Քրիստոսի դէմ յանդգնելով՝ հնչասիրութեան անձնասուր կ'ըլլան, ամուսնանալ կ'ուզեն։ 12—Ու դատապարտութիւն կ'ընդունին, վասն զի առաջնան հաւատքնին մէկդի ձգեցին։ 13—Նաև ծոյլ ըլլալ կը սորվին, տուն տուն պտրտողներ. և ոչ միայն ծոյլ, հապա չատախօսներ ու հետաքրքիրներ, և անպատեհ բաներ կը խօսին։ 14—Ուստի կ'ուզեմ որ դեռահասակ կիները ամուսնանան, զաւակներ ծնանին, անոչէն ըլլան — նախատինքի պատճառ չտան հակառակորդին։ 15—Քանզի արդէն ոմանք Սատանայի հետևէն երթալ-խոտորեցան։ 16—Եթէ հաւատացեալ այր մարդ մը կամ կին մը որբևայրներ ունենայ, թող օգնութիւն ընէ անոնց, և եկեղեցին չծանրաբեռնէ, որպէս զի ճշմարտապէս որբևայրներուն օգնութիւն ընէ։

17—Ազնիւ վերակացութիւն ընող երէցները կրկին պատուոյ արժանի թող սեպուին, մանաւանդ անոնք որ կ'աշխատին խօսքը տ—ովարեւ ու սորվեցնելով։ 18—Վասն զի գիրքը կ'ըսէ թէ կսպի մէջ ուխտադէզ եզին դունչը չկապես. և թէ Մշակը իր վարձքին արժանի է։ 19—Երէցի վրայով ամբաստանութիւն մի ընդունիր, բայց միայն երկու կամ երեք վկաներով։ 20—Զանոնք որ մեղք կը գործեն, ամենուն առջև յանդիմանէ, որպէս զի ուրիշներն ալ վախնան։ 21—Վկայութիւն կը դնեմ Աստուծոյ առջև. և Յիսուս Քրիստոսի ու

*Ոմանք, Տէր Յիսուս

ընտրեալ հրեշտակներուն, որ այս բաները պահես առանց նախապաշարման, բան մը ուշադրութեամբ չընելով։ 22—Շուտով ոեւէուն վրայ ձեռք չդնես, և ուրիշներուն մեղքերուն հաղորդ չըլլաս. դուն քեզ մաքուր պահէ։

23—Ասկէ ետև լոկ ջուր չխմես, հապա քիչ մըն ալ գինի գործածէ քու աստենքերուդ ու յաճախ հիւանդութիւններուդ համար։

24—Ոմն մարդկի՝ որոնց մեղքերը յայտնի են, ու առաջուըէ գատաստանի կ'երթան. և ոմն՝ որոնց ետևէն կ'երթան։ 25—Նոյնպէս ալ գործերն ալ յայտնի են. ու անոնք որ ուրիշ կերպ բան մըն են, չեն կրնար ծածուկ մնալ։

Գլ. Զ

Այն ոմիները որ ծառայութեան լծի տակ են, իրենց տէրերը ամէն պատուոյ արժանի սեպեն, որպէս զի Աստծոյ անունը ու վարդապետութիւնը չհայհոյուի։ 2—Ու անոնք որ հաւատացեալ տէրեր ունին, թող չարհամարհեն՝ եղբայրներ ըլլալնուն պատճառաւ, հապա աւելի ծառայութիւն ընեն, վասն զի անոնք հաւատացեալ են ու սիրելի, որոնք բարերարութիւն ընելու մէջ մասնակից են. այս բաները սորվեցուր ու յորդորէ։ 3—Եթէ մէկը ուրիշ կերպ բան մը սորվեցնէ, ու մտիկ չընէ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ոգեշունչ խօսքերուն, և այն վարդապետութեանը որ աստուածպաշտութեան համեմատ է, 4—Ամբարիշտ հպարտացած է ու բան մը չգիտեր, հապա վէճերով ու հակառակութիւններով ախտացած է. որոնցմէ կ'ըլլայ նախանձ, կռիւ, հայհոյութիւններ, գէշ կասկածներ, 5—Միտքով ապականած ու ճշմարտութենէն հեռացած մարդոց զրպարտութիւններ, որոնք աստուածպաշտութիւնը չտես-վաճառութիւն մը կը սեպեն. այնպիսիներէն մէկդի կեցիր։ 6—Սակայն աստուածպաշտութիւնը գոհունակութիւնով մէկտեղ մեծ շահավաճառութիւն մըն է, 7—Վասն զի բան մը չբերինք այրարն, ու յայտնի է որ չենք կրնար անկէ բան

մը ասելէ։ 8—Հապա կերակուր ու հանդերձ ունենալով՝ անոնցմով բաւականանանք։ 9—Բայց անոնք որ հարստանալ կ'ուզեն, կ'իյնան փորձութեան ու որոգայթի և շատ յիմարական ու վնասակար ցանկութիւններու մէջ, որոնք սատակումի ու կորստեան մէջ կ'ընկղմեն մարդիկ։ 10—Վասն զի ամէն չարութիւններուն արմատը արծաթասիրութիւն է. որու մէկ քանիները անձնասուր ըլլալով՝ հաւատքէն մոլորեցան, ու ինքզինքնին շատ ցաւերով խոցոտեցին։

11—Բայց դուն, ով մարդ Աստուծոյ, փախիր այս բաներէն, ու գնա արդարութեան, աստուածպաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան ու հեզութեան ետեւէն։ 12—Պատերազմի հաւատքին բարի պատերազմէ, բռնէ յաւիտենական կեանքը՝ որու կանչուեցար, և շատ վկաներու առջև դաւանեցար բարի դաւանութիւնը։ 13—Կը պատուիրեմ քեզի Աստուծոյ առջև, որ կենդանի կ'ընէ բոլորը, և Քրիստոս Յիսուսի առջև, որ Պոնտացի Պիղատոսի առջև վկայեց բարի դաւանութիւնը, 14—Որ դուն այն պատուէրը անբիծ, անարատ պահես՝ մինչև մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը։ 15—Զոր իր ատենին պիտի ցուցնէ նրանը՝ որ օրհնեալ և միմիայն Հզօրը, թագաւորներուն թագաւորը ու տէրերուն Տէրը։ 16—Որ միայն ունի անմահութիւն՝ անմերձենալի լոյսի մէջ բնակած, զոր մարդոցմէ մի՛կը չտեսաւ, ոչ ալ տեսնելու կարող է, որու պատիւ և զօրութիւն յաւիտեան։ Ամէն։

17—Այս աշխարհին մէջ հարուստ եղողներուն պատուէր տուր որ չհպարտանան, և անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Աստուծոյ վրայ, որ ամէն բան մեզի առատօրէն կու տայ վայելելու։ 18—Բարիք գործեն, բարի գործերով հարստանան, առատաձեռն, և ուրիշներ ալ օգտակարեցնող ըլլան։ 19—Որպէս հիմ գանձեն անձերնուն համար լաւ հիմ յաւիտենական կեանքը ձեռք ձգեն։

20—Ով Տիմոթէոս, փո՛ղ պրոծ աւանդը պահէ, փախչելով պիղծ ու նայնարաններ ու հակառակութիւններէն գիտութեան հակառակութիւններէն, 21—Զորոնք մէկ քանիները դաւանելով՝ հաւատքէն մոլորեցան։ Ընդհանր քեզի հետ ըլլայ։ Ամէն։

---

*Ռոմէ, Ճշմարիտ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ կամքովը կենաց խոստումին պէս՝ որ Քրիստոս Յիսուսով է, 2—Տիմոթէոսի. Իմ սիրելի որդիիս, շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն Հօր Աստուծմէ ու Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն։

3—Շնորհակալ եմ Աստուծոյ, զոր կը պաշտեմ իմ նախնիքներիս՝ մաքուր խղճմտանքով, (երբ անպակաս քեզ իմ աղօթքներուս մէջ կը յիշեմ գիշեր ու ցորեկ, 4—Յանկալով քեզ տեսնել, ու մէկ բերելով քու արցունքներդ, որպես զի ուրախութիւնով լեցուիմ,) 5—Մատնելով քու վրադ եղած անկեղծ հաւատքը, որ առաջ քու մեծ մօրդ Լաւդիայի ու քու մօրդ Եւնիկէի վրայ բնակեցաւ, և համոզուած եմ որ քու վրադ ալ կայ։ 6—Ասոր համար քու միտդ կը ձգեմ որ արծարծես Աստուծոյ պարգեւը, որ քեզի պրոծ է իմ ձեռքերուս տես վրադ գրուելովը։ 7—Վասն զի Աստուած մեզի երկչոտութեան հոգի չտուաւ, հապա զօրութեան ու սիրոյ և զգաստութեան։ 8—Ուստի մի՛ թէ մի ամչնար մեր Տէրոջը վկայութիւնէն, ոչ ալ ինծի համար կապուածս. հապա մասնակից եղիր աւետարանին չարչարանքներուն, Աստուծոյ զօրութեամբը համակուած։ 9—Որ մեզ փրկեց ու սուրբ կոչումով կանչեց, ոչ թէ մեր գործերուն նայելով, հապա իր նախասահմանութեանը ու շնորհքին նայելով, որ Քրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ. 10—Բայց հիմա յայտնուեցաւ մեր Փրկիչին Յիսուս Քրիստոսի երեւելովը. որ մահը խափանեց, և ի լոյս հանեց կեանքը ու անմահութիւնը ու եւաւրաւմին միջոցաւ։ 11—Որու ես քարոզիչ ու առաքեալ դրուեցայ ու հին ուսուցչութեան վարդապետ։ 12—Ասոր համար այս չարչարանքներն ալ կը կրեմ. բայց ամօթ չեմ անիր, վասն զի գիտեմ թէ որո՛ եմ հաւատացեր, և համոզուած եմ որ իմ տրածս բանս կրնայ պահել մինչեւ այն օրը։ 13—Ամո՛ր բռնէ այն ոգեշունչ խօսքերուն օրինակը զոր ինծմէ լսեցիր, հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է։

14—Այն բարի աւանդը պահէ Հոգւոյն Սրբոյ ձեռքով որ մեր մէջ բնակած է։ 15—Ձայս գիտես որ ինծմէ երես գարձուցին այն ամէնը որոնք Ասիա էին, որոնցմէ են Փիգելոս ու Հերմոգինէս։ 16—Տէրը ողորմութիւն տայ Ընեսիփորոսի տանը, վասն զի շատ անգամ զիս հանգստացուց ու իմ շղթայիս ամօթ չտեսաւ։ 17—Հապա երբ Հռոմ եկաւ, շատ կամքով փնտռեց զիս ու գտաւ։ 18—(Տէրը իրեն տայ որ այն օրը Տէրոջմէն ողորմութիւն գտնէ.) և Եփեսոսի մէջ ալ որչափ սպասաւորութիւն որ ըրաւ ինծի, դուն գիտիկա չատ աղէկ գիտես։

ԳԼ. Բ

Արդ դուն, իմ որդեակս, զօրացիր այն շնորհքովը որ Քրիստոս Յիսուսով է։ 2—Ու այն բաները զորս ինծմէ լսեցիր շատ վկաներով՝ հաւատացիր մարդ-

գոց յանձնել, որոնք կարող լլլան ուրիշներու ալ օգտվեցնել։ 3—Աբդ դուն նեղութիւններու համբերել Յիսուս Քրիստոսի բարի զինուորի մը պես։ 4—Ձինուորիալ մը այս կեանքին գործառնութիւններովը չզբաղիր, որպես զի զօրավարին հաճոյ լլլայ։ 5—Եւ եթէ մէկը մրցի, չպսակուիր՝ եթէ ըստ օրինի չմրցի։ 6—Աշխատող երկրագործին պէտք է առաջ պտուղներէն վայելել։ 7—Խոնջիր ինչ որ կ'ըսեմ. Տէրը քեզի խոհութիւն տայ ամէն բանի մէջ։ 8—Միտդ բեր Դաւիթի ցեղէն եղող Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարութիւն առած, իմ ԷՈՒԳԵԼԻՈՆ ատեստաբանիս համեմատ։ 9—Որուն մէջ չարագործի մը պէս կը չարչարուիմ մինչև անգամ կապուած, բայց Աստուծոյ խօսքը կապուած չէ։ 10—Ուստի ամէն բանի կը համբերեմ ընտրեալներուն համար, որպէս զի անոնք ալ հասնին այն փրկութեանը որ Քրիստոս Յիսուսով է յաւիտենական փառքով։ 11—Այս խօսքը հաստատուած է. վասն զի եթէ անոր հետ մեռանք, անոր հետ պիտի ապրինք ալ։ 12—եթէ համբերենք, անոր հետ պիտի թագաւորենք ալ. եթէ չուզե ուրանանք, ինք ալ մեզ պիտի ուրանայ։ 13—եթէ չհաւատանք, ինք հաւատարիմ կը մնայ, իր անձը չկրնար ուրանալ։ 14—Այս բաները անոնց միտքը դիր՝ Տէրոջը առջև վկայութիւն դնելով, խօսքերու վրայ վէճ չընել՝ որ բանի մը օգտակար չէ, հապա լսողներուն կործանումին համար է։ 15—Ջանք բրէ քու անձդ ընտիր ցուցնել Աստուծոյ առջև, այնպիսի բանուոր մը ըլլալով որ պիտի չամչնայ, ճշմարտութեան խօսքը չիտակ բացատրելով։ 16—Բայց պիղծ ու փուճ խօսքերէն մէկդի կեցիր, քանզի անոնք աւելի յառաջ կ'երթան ամբարշտութեան մէջ։ 17—Ու անոնց խօսքը փայդկեղի պէս կը ճարակէ. որոնց կարգն են Հիմենոս ու Փիլիտոս. 18—Որոնք ճշմարտութենէն մոլորեցան, ու կ'ըսեն թէ Յարութիւնը արդէն եղած է, և կը կործանեն մէկ քանիներուն հաւատքը։ 19—Բայց Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ, ու այս կնիքը ունի, թէ Տէրը կը ճանչնայ զանոնք որ իրն են. և՝ Անիրաւութենէ մէկդի քաշ կենայ այն ամէնը որ *Քրիստոսի անունը կ'անուանէ։ 20—Սակայն մեծ տան մէջ ոչ թէ միայն ոսկիէ ու արծաթէ անօթներ կան, հապա փայտէ ու հողէ—մանաւանդ ալ կան. և ոմանք պատուոյ համար են ու ոմանք անպատուելի համար։ 21—Ուստի եթէ մէկը իր անձը այնպիսի բաներէն մաքրէ, անիկա պատուական անօթ մը պիտի ըլլայ, սրբուած ու էդ Տէրոջը պիտանի, ամէն բարի գործերու համար պատրաստուած։ 22—Երիտասարդական ցանկութիւններէն ալ փախիր, ու գնա արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան հետև անոնց հետ որ Տէրոջը անուանը կը կանչեն մաքուր սրտով։ 23—Բայց յիմարական ու անխելամտ վէճերէն մէկդի քաշուէ, գիտնալով որ անոնցմէ կռիւներ կը ծնանին։ 24—Ու Տէրոջը ծառային պէտք չէ կռիւ բնել, հապա հեզահոգի ըլլալ ամէնուն, սորվեցնող, չհանդուրժող։ 25—Խոնջութեամբ խրատել հակառակ կեցողները, որ ըլլայ թէ Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու համար, 26—Ու Սատանայի որոգայթէն զգաստանան, որմէ բռնուած են իր կամքին ծառայելու։

Գլ. Գ

Ե. զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան։ 2—Վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, մանրախնդիր, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, պղծութիւն, անսէր, 3—Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, 4—Մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր. 5—Որոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են. և դուն ասոնցմէ մէկդի կեցիր։ 6—Վասն զի ասոնցմէ են որ տուներէն ներս կը մտնեն, ու գերի կ'ընեն

*Ոմն, Տէրոջը

մեղքով բեռնաւորուած տկարամիտ կիներըը զանազան ցանկութիւններէ վարուած, 7—Որ միշտ կը սորվին, ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնալու չեն կրնար հասնիլ։ 8—Հապա ինչպես Յաննէս ու Յամբրէս հակառակ կեցան Մովսէսի, նոյնպէս ասոնք ալ ճշմարտութեանը հակառակ կը կենան. ապականած միտքով մարդիկ, հաւատքի մէջ անպիտանները են։ 9—Բայց աւելի յառաջ պիտի չերթան, վասն զի ասոնց անմտութիւնը ամէնուն յայտնի պիտի ըլլայ, ինչպես անոնցը եղաւ։ 10—Իսկ դուն անհետակ եղար իմ վարդապետութեանս, վարմունքիս, դիտաւորութեանս, հաւատքիս, երկայնմտութեանս, սիրոյս, համբերութեանս, 11—Հալածանքներուս, չարչարանքներուս, ինչպես ինծի եղան Անտիոքի և Իկոնիոնի ու Լիւստրայի մէջ. ի՛նչպես հալածանքներու համբերեցի, ու ամէնէն ալ ազատեց Տէրը։ 12—Ու ամէն ոք որ կ'ուզէն աստուածպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով՝ հալածանք պիտի կրեն։ 13—Բայց չար ու խարեբայ մարդիկ չարութեան մէջ պիտի յառաջանան՝ մոլորեցնելով ու մոլորելով։ 14—Սակայն դուն հաստատուն կեցիր այն բաներուն մէջ զորոնք սորվեցար ու հաւատացիր, վասն զի գիտես թէ որմէ՛ սորված ես։ 15—Նաև տղայութենէդ ի վեր սուրբ գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով։ 16—*Բոլոր Գիրքը Աստուծոյ չունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, ուղղելու և արդարութեան խրատելու համար, 17—Որպէս զի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործերու պատրաստուած։

Գլ. Դ

Այս վկայութիւնը կը գնեմ Աստուծոյ առջև և Յիսուս Քրիստոսի, որ պիտի դատէ կենդանիները ու մեռելները

*Կամ, Բոլոր աստուածաշունչ Գիրքը օգտակար ալ

ալ վիս Թոզուցին. այս իրենց չսեպե՛ր։ 17—Բայց Ձերը իմ քովս կայնեցա՛ւ ու վիս զօրացուց, որպէս զի քարոզութիւնը իմ միջոցովս լման ըլլայ, ու բոլոր հեթանոսները լսեն. և ես առիւծին բերնէն ազատեցայ։ 18—Ու Ձերը ամէն չար գործէ պիտի ազատէ վիս, և ապահովութեամբ իր երկնային Թագաւորութեանը պիտի հասցնէ. իրեն փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

19—Բարե ասուր Պրիսկէի և Ակիւղասի, ու Անեսիփորոսի տանը։ 20—Երաստոս կորնթոսի մէջ մնաց. և Տրոփիմոսը Մելիտոսի մէջ Թոզուցի հիւանդացած։ 21—Ջանք ըրէ ձմեռէն առաջ գալ։ Բարև կ'ընեն քեզի Եւբուղոս ու Պուդէս և Լինոս ու Կղօդիա և բոլոր եղբայրները։ 22—Ձեր Յիսուս Քրիստոս քու հոգիիդ հետ ըլլայ։ Շնորհքը ձեզի հետ։ Ամէն։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

Պօղոս, Աստուծոյ ծառայ և Յիսուս Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու ասոնց պաշտամունքեան հետ կից եղող ճշմարտութեան գիտութեանը համեմատ, 2—յոյսով յաւիտենական կեանքի յուսով, զոր ինք անսուտ Աստուած խոստացաւ յաւիտենական դարերէն առաջ, 3—բայց իր խօսքը իր ժամանակին յայտնեց քարոզութիւնով, որ ինծի յանձնուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամանովը, 4—Տիտոսի իմ հարազատ որդւոյս հաւատքով։ Շնորհք և խաղաղութիւն Հօր Աստուծմէն ու մեր Փրկչէն, Տէր Յիսուս Քրիստոսէ։

5—Ասոր համար ես քեզ կրեակ թողուցի, որ ինչ պակաս բան որ կայ, շիտակես, ու ամէն մէկ քաղաքի մէջ եկեղեցիներ կարգես, ինչպէս ես քեզի պատուիրեցի. 6—Եթէ մէկը անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր, հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեան համար մեղադրանք կամ անհնազանդ չըլլան։ 7—Վասն զի եպիսկոպոսին պէտք է անմեղադրելի ըլլայ Աստուծոյ տնտեսին պէս. ոչ յանդուգն, ոչ բարկացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ անարգ շահադիտութեան հետեւող, 8—Հապա հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, 9—հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէս զի կարող ըլլայ ողջմտութիւնով յորդորել, և հակառակ կեցուածքը յանդիմանել։ 10—Քանզի շատ են անհնազանդները, ունայնաբանները խաբողները ու միտք խարդները, մանաւանդ որ թլփատութենէն են. 11—Զորոնք պէտք է պապանձեցնել, որոնք ամբողջ տուներ կը կործանեն, ու անպատեհ բաներ կը սորվեցնեն անարդ շահադիտութեան համար. 12—Անոնցմէ մէկը զրուցեց, որ իրենց բուն մարգարէն էր, Կրետացիները միշտ սուտ պրոյց են, չար գազաններ, փառասիրողներ։ 13—Այս վկայութիւնը ճշմարիտ է. ուստի համար ատոնիկ յանդիմանէ զանոնք, որպէս զի առողջանան հաւատքին մէջ։ 14—Ու չնայեն հրէական առասպելներուն և ճշմարտութենէն հեռացող մարդոց պատուիրաններուն։ 15—Ամէն բան մաքուր է մաքուրներուն, բայց պիղծերուն ու անհաւատներուն բան մը մաքուր չէ, հապա անոնց միտքն ալ խղճմտանքն ալ պղծուած են։ 16—Կը խոստովանին թէ կ'Աստուած կը ճանչնան, և իրենց գործերովը կ'ուրանան, պիղծ ու անհնազանդ ըլլալնուին, և ամէն բարի գործի անպիտան։

ԳԼ. Բ

Բայց դուն խօսէ ինչ որ կը վայլէ առողջ վարդապետութեանը. 2—Որ ծերերուն զգաստ ըլլալ, ժանրաբարոյ, խոհեմ, ողջմիտ՝ հաւատքով, սիրով, համբերութիւնով։ 3—Նոյնպէս ալ պառաւներուն այնպիսի վարմունք ունենալ, ինչպէս կը վայլէ սրբութեան,

*Ողջմտութիւն և.

ոչ բանաւոր ըլլալ, ոչ ՙգինեմ, հա-
դո բաբի խրատ առաց. 4—Որ խրա-
տեն նոքահասակ կիները՝ այրերնին սի-
րող, զաւակներնին սիրող ըլլալ, 5—
Խոհեմ, ողջախոհ, անարատ, բարեգործ,
իրենց այրերուն հնազանդ, որ չըլլայ
Քէ Աստուծոյ խօսքը հայհոյուի. 6—
Նոյնպէս ալ երիտասարդները յորդոր
խոհեմ ըլլալ. 7—Ամէն կողմէ քա-
նզդ բարի գործերու օրինակ ցուցնե-
լով, վարդապետութեան մէջ անեղծու-
թիւն, պարկեշտութիւն, 8—Ողջամիտ
ու անմեղադրելի խօսք, որպէս զի հա-
կառակ կեցողը ամչնայ, ու մեր վրայով
դէշ բան մը չկրնայ ըսել. 9—Ստա-
նաւներուն ենթակայ իրենց այրերուն
հնազանդ ըլլալ, և ամէն բանի մէջ հա-
ճելի. ոչ հակառակախօսներ. 10—Ոչ
խորտակներ, հապա բոլորովին բարի հա-
ւատարմութիւն ցուցնեն, որպէս զի մեր
Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը
ամէն բանի մէջ զարդարեն. 11—Գան-
գի Աստուծոյ փրկարար շնորհքը բոլոր
մարդոց երեցաւ. 12—Որ մեզ կը խրա-
տէ՝ որ ամբարշտութիւնը ու աշխարհա-
յին ցանկութիւնները ուրանանք, և
զգաստութիւնով ու արդարութիւնով
և բարեպաշտութիւնով ապրինք այս
աշխարհին մէջ. 13—Ու սպասենք այն
երջանիկ յոյսին, և մեծ Աստուծոյ ու
մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին
յայտնուելուն. 14—Որ իր անձը մեզի
համար առաւ, որպէս զի մեզ ամէն
անօրէնութենէ ազատէ, ու մաքրէ ի-
րեն սեպհական ժողովուրդ ընէ՝ բարի
գործերու նախանձաւոր. 15—Այդ բա-
ները խօսէ և յորդորէ ու յանդիմանէ
բոլորովին սաստկութեամբ. ըլլայ որ մեզի
քեզ անարգէ.

ԳԼ. Գ

Անոնց միտքը ձգէ իշխանութիւնե-
րուն և պետութիւններուն հնազանդիլ
ու հպատակ ըլլալ, ու ամէն բարի գոր-
ծերու պատրաստ գտնուիլ. 2—Մեկ՛ուն
հայհոյութիւն չընել, կռուասէր չըլլալ,
հեզ հեզութիւն, ամէն մարդոց բոլո-
րովին քաղցրութիւն ցուցնել. 3—Վասն
զի մենք ալ առեն մը անմիտ ևինք,
անհնազանդ, մոլորեալ, և զանազան
ցանկութիւններու ու հեշտութիւններու
կը ծառայինք. չարութիւնով ու նա-
խանձով կը վարուինք, ատելի ևինք
և մէկզմէկ կ՛ատէինք. 4—Բայց երբ
մեր Փրկիչ Աստուծոյն քաղցրութիւնը
ու մարդասիրութիւնը յայտնուեցաւ,
5—Ոչ թէ արդարութեան գործերէն՝
զորոնք մենք ըրինք, հապա իր ողոր-
մութեանը համեմատ մեզ փրկեց նորին
ծնունդեամբ սրտագործութեամբ ու Սուրբ
Հոգիին նորոգելովը. 6—Զոր առատա-
բերն Քրիստոս մեր վրայ Յիսուս Քրիստոս
մեր Փրկչին միջոցով. 7—Որպէս զի ա-
նոր շնորհքովը արդարացած՝ յաւիտե-
նական կեանքի յոյսով ժառանգ ըլ-
լանք. 8—Այս խօսքը հաւատարիմ է.
և կ՛ուզեմ որ ասոնք հաստատես, որ-
պէս զի Աստուծոյ հաւատացողները հոգ
տանին բարի գործեր ընելու. վասն ըլ-
լալ. ասոնք են բարի ու մարդոց օգ-
տակար բաները. 9—Բայց գուն յիմա-
րական վիճերէն ու ազգահամարներէն
ու հակառակութիւններէն և օրէնքի
վրայով եղած կռիւներէն մէկզի կեցիր,
վասն զի անօգուտ են ու սնոտի. 10—
Հերձուածող մարդ՝ առաջին ու երկ-
րորդ անգամ խրատելէ ետև. 11—Գիտնալով որ այնպիսին խո-
տորած է, և մեղք կը գործէ ինքզինք
դատապարտելով.

12—Երբ Արտեման կամ Տիւքիկոս
քեզի դրկեմ, ջանք ըրէ ինծի գալ. Նի-
կոպոլիս, վասն զի միտք դրի ձմեռը
հոն անցնել. 13—Զենոնա օրինակար
ու Ապողոս փութով ճամբայ դիր, հոգ
տարէլով որ անոնց բան մը չպակսի.
14—Ու մերիններն ալ Քոյ սորվին բա-
րի գործեր ընելու վրայ ըլլալ հարկա-
ւոր պարագաներու մէջ, որպէս զի ան-
պտուղ չըլլան. 15—Բարև կ՛ընեն քեզի
ամէնն ալ որ ինծի հետ են. բարև տուր
անոնց որ մեզ կը սիրեն հաւատքով.
շնորհքը ձեր ամէնուն հետ ըլլայ. Ամէն։

Յառ. Հատ գինեի ծառայ եղած

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՒ ՓԻԼԻՄՈՆ

Պօղոս, Յիսուս Քրիստոսի կապեալը,
և Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոնի, մեր
սիրելիին ու գործակիցին, 2—ու Ապֆիա
սիրելիին, ու Արքիպպոս մեր զինուորակի-
ցին, ու քու տանդ մէջի եկեղեցիին.
3—Շնորհք և խաղաղութիւն մեզի Աս-
տուծմէ մեր Հօրմէն և Տէր Յիսուս
Քրիստոսէ։

4—Կը գոհանամ միշտ իմ Աստուծ-
մէս՝ քեզ իմ ազօթքներուս մէջ յիշե-
լով, 5—երբ կը լսեմ քու սէրդ ու
հաւատքդ՝ զոր ունիս Տէր Յիսուսի վրայ
և բոլոր սուրբերուն վրայ, 6—Որպէս
զի քու հաւատքիդ հաղորդակցութիւնդ
պազարեր ըլլայ՝ Քրիստոս Յիսուսով՝ մեր
վրայ եղած ամէն բարութիւնը ճանչ-
ցուելովը. 7—Քանզի չատ ուրախու-
թիւն և մխիթարութիւն ունինք քու
սիրոյդ վրայ, որ սուրբերուն սիրտերը
քեզմով հանգստացած են, եղբայր.

8—Ասոր համար Քրև չատ համար-
ձակութիւն ունիմ Քրիստոսով՝ վայելու
եղածը քեզի հրամայելու, 9—Բայց յա-
ւելա սիրոյ համար կ՛ազաչեմ, այնպիսի
մէկը ըլլալով՝ ինչպես եմ ես Պօղոս ծե-
րացած, ու հիմա Յիսուս Քրիստոսի հա-
մար կապուած ալ. 10—Կ՛ազաչեմ քեզի
իմ որդւոյս Ոնեսիմոսի համար, զոր
իմ կապանքներուս մէջ ծնայ. 11—Որ
առեն մը անպիտան էր քեզի, բայց հի-
մա քեզի ալ ինծի ալ պիտանի է. 12—
Զանիկա ետ զրկեցի. գուն ալ ընդունէ
զանիկա, որ է իմ սիրտս. 13—Զոր
կ՛ուզէի իմ քովս պահել, որպէս զի քու
տեղդ ինծի սպասաւորութիւն ընէ ա-
ւետարանին կապանքներուն մէջ. 14—
Բայց առանց քու կամքիդ չուզեցի բան
մը ընել, որպէս զի քու բարեբարո-
քութիւնդ իբր Քէ ստիպմամբ եղած չըլ-
լայ, հապու կամաւ. 15—Գուցէ քիչ
ատեն զատուեցաւ, որպէս զի գանիկա
յաւիտեան ունենաս, 16—Ոչ Քէ ալ
ծառայի մը պէս, հապա ծառայէ վեր,
սիրելի եղբայր պէս. Ե՛րէխ ինծի այսպէս
երեւի է, ա՛րտսի ատելի պիտի ըլլայ
քեզի՝ Քէ՛ մարմինի կողմանէ ու Քէ՛
Տէրոջմէ. 17—Ուստի եթէ դիս ընկե-
րոջդ կը սեպես, ընդունէ գանիկա՝
որպէս Քէ զիս. 18—Ու եթէ քեզի անիր-
ատութիւն մը ըրած է կամ պարտք
մը ունի, զայն իմ հաշիւս ածցուր.
19—Ես Պօղոս իմ ձեռքովս գրեցի, ես
կը վճարեմ. որ չըսեմ քեզի Քէ գուն
ալ քու անձդ ինծի պարտական ես.
20—Այո, եղբայր, քաղ քեզմէ ունենամ
այս օգուտը Տէրոջմով. Հանգչեցուր
իմ սրտիս Տէրոջմով. 21—Քու հնա-
զանդութեանդ վստահանալով քեզի
գրեցի, գիտնալ գիտեմ որ բան ալ
աւելի պիտի ընես.

22—Ասկէ զատ ինծի քնակարան մըն
ալ պատրաստէ, վասն զի կը յուսամ
Քէ ձեր ազօթքներուն միջոցաւ ձեզի
պիտի շնորհուիմ. 23—Բարև կ՛ընէ
քեզի Եփապրաս, իմ գերութեանս ըն-
կերս Քրիստոս Յիսուսով. 24—Նոյ-
Մարկոս, Արիստարքոս, Դեմաս, Ղուկաս
իմ գործակիցներս. 25—Մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին
հետ ըլլայ. Ամէն։

Ոմանք, մեր

Ոմանք, Քրիստոսով

ԹՈՒՂԹ
[ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ]
ԱՒ ԵՒՐԱՑԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

Շատ մասերով ու շատ կերպերով առաջուընէ խօսելով Աստուած հայրերուն հետ մարգարէներով, 2—Այս վերջին օրերս էջ Որդիովը խօսեցաւ մեզի հետ, զոր ամէն բանի ժառանգ դրաւ, որով աշխարհն ալ ստեղծեց. 3—Որ իր փառաց լոյսն է և իր էութեան բուն պատկերը. որ իր զօրութեան խօսքովը ամէն բան կը բռնէ, իր անձով մեր մեղքերը սրբելով՝ բարձրերը, Ամենաշնորհ մեծութեան աջ կողմը, նստաւ. 4—Ու այնչափ աւելի եղաւ հրեշտակներէն, որչափ անոնցմէ աւելի ազնիւ անուն ժառանգեց. 5—Վասն զի հրեշտակներէն որո՞ւ բսաւ երբեք, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. և դարձեալ՝ Ես անոր Հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի Որդի պիտի ըլլայ. 6—Ու դարձեալ՝ երբ անդրանիկը աշխարհ կը մտցնէ՝ կ'ըսէ, Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն. 7—Ու հրեշտակներուն վրայով կ'ըսէ, Որ իր հրեշտակները հոգիներ կ'ընէ, ու իր պաշտօնեաները՝ կրակի բոց. 8—Սակայն Որդիին կ'ըսէ, Քու աթոռդ, ով Աստուած, յաւիտեանս յաւիտենից է. Քու թագաւորութեան գաւազանդ ուղղութեան գաւազան է. 9—Արդարութիւնը սիրեցիր ու անօրէնութիւնը ատեցիր. անոր համար, ով Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծից քեզ քու բնկերներդ աւելի. 10—Ու՝ Դուն, ով Տէր, սկիզբէն երկրի հիմերը դրիր, ու երկինք քու ձեռքերուդ գործն է. 11—Անոնք պիտի կորսուին, բայց դուն կը կենաս ու կը մնաս. ու ամէնը լաթի պէս պիտի մեշին, 12—Ու վերարկուի պէս պիտի գոցուիս զանոնք, և պիտի փոխուին. բայց դուն նոյն ինքն ես, ու քու տարիներդ պիտի չպակսին. 13—Ու հրեշտակներէն որո՞ւ բսաւ երբէք, Իմ ալ կողմս նստէ, մինչև քու թշնամիներդ ոտքերուդ պատառանդան դնեմ. 14—Չէ՞ որ անոնք ամէնը սպասաւորող հոգիներ են, որոնք սպասաւորութեան կը զրկուին անոնց համար՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն.

ԳԼ. Բ

Անոր համար պէտք է մեզի մ'ը աւելի ուշադրութիւն տալ հէր լսած բաներուն, որ չըլլայ թէ երբէք պակսինք, 2—Վասն զի եթէ այն խօսքը որ հրեշտակներուն ձեռքով զրուցուեցաւ, հաստատուն եղաւ, և ամէն յանցաւորութիւն ու անհնազանդութիւն արդար հատուցում առաւ, 3—Հապա մենք ինչպէ՞ս պիտի ազատինք՝ եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը, որ խօսելուն սկիզբը Տէրոջմէն առաւ, ու լսողներուն ձեռքով մեզի հաստատուեցաւ. 4—Աստուած ալ վկայեց նշաններով ու հրաշքներով և զանազան զօրութիւններով ու Սուրբ Հոգիին պարգեւներովը, ինչպէս ինք կամեցաւ.

5—Վասն զի ոչ թէ հրեշտակներուն հնազանդեցուց այն գալու աշխարհը, որուն վրայով մենք կը խօսինք. 6—Հապա մեկը տեղ մը վկայեց ու բսաւ, Մարդը ի՞նչ է՝ որ դանիկա կը յիշես, կամ մարդու որդին՝ որ անոր այցելութիւն կ'ընես. 7—Ինչ մը վար բերիր զանիկա հրեշտակներէն. փառքով ու պատուով պսակեցիր զանիկա, և քու ձեռքերուդ գործերուն վրայ կեցուցիր զանիկա. 8—Ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուցիր. ուստի ամէնը որ անոր հնազանդեցուց, անոր չձգեց զանիկա բան մը չհնազանդեցուց. բայց դեռ հիմա չենք տեսներ ամէնը անոր հնազանդած. 9—Սակայն Յիսուսը փառքով ու պատուով պսակուած կը տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած էր մահուան չարչարանքին համար, որպէս զի Աստուծոյ շնորհքովը ամէնուն համար մահ ճաշակէ. 10—Որովհետև կը վայելէր Անոր, (որու համար ամէնը, և անով ամէն բաները եղած են,) շատ որդիներ փառքին մէջ մտցնելու ատեն՝ անոնց փրկութեան Առաքնորդը չարչարանքով կատարել.

11—Վասն զի ան որ կը սրբէ ու անոր կը սրբուի, ամէնն ալ մէկէ են. ուստի համար ինք անկէ չեռներ եղբայր կոչել զանոնք՝ ըսելով, 12—Քու անուանդ եղբայրներուս պիտի պատմեմ, ժողովքին մէջ քեզ պիտի գովեմ. 13—Ու դարձեալ՝ Ես անոր պիտի յուսամ. ու դարձեալ՝ Ահա ես ու այն զաւակները զոր Աստուած ինծի տուաւ. 14—Ուստի որովհետև զաւակները մարմինէն ու արիւնէն հաղորդ եղան, ինք ալ նմանապես անոնց բաժանորդ եղաւ, որպէս զի էջ մահովը փճացնէ զանիկա որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է Սատանան. 15—Ու ապատի զանոնք որ մահուան վախովը միշտ ծառայութեան մէջ կ'ապրէին. 16—Քանզի բնաւ հրեշտակներուն ձեռք չտանեցաւ, հապա Աբրահամի սերունդին ձեռք կը բռնէ. 17—Անոր համար պէտք էր ամենայն բոլորովին եղբայրներուն նման ըլլալ, որպէս զի ինք ողորմած ըլլայ ու հաւատարիմ քահանայապետ՝ Աստուծոյ կողմանէ, ժողովուրդին մեղքերը քաւելու համար. 18—Քանզի ինչ բանով որ ինք չարչարուեցաւ փորձութիւն կրելով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլլալ.

ԳԼ. Գ

Ուստի, սուրբ եղբայրներ, երկնային կոչումին մասնակիցներ, նայեցէք մեր գաւանութեանը Առաքեալին ու Քահանայապետին, Քրիստոս Յիսուսի. 2—Որ հաւատարիմ է անոր՝ որ զինք գրաւ, ինչպես Մովսես ալ՝ անոր բոլոր տանը մէջ. 3—Վասն զի ինք Մովսէսէ աւելի փառքի արժանացաւ, որչափ աւելի պատիւ կ'ունենայ տունը չինողը քան թէ տունը. 4—Քանզի ամէն տուն մեկէ կը չինուի. բայց ան որ ամէն բանները շինեց՝ Աստուած է. 5—Ու յիրաւի Մովսես անոր բոլոր տանը մէջ հաւատարիմ էր ծառայի մը պէս՝ զրուցուելու բաներուն վկայ ըլլալու համար. 6—Բայց Քրիստոս որպէս մը պէս իր տանը վրայ, որուն տունը մենք ենք, հիայն թէ այն համարձակութիւնը և յոյսին պարծանքը մինչև վերջը հաստատ բռնենք.

7—Ուստի ինչպէս կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, 8—Ձեր սիրտերը մի խստացնէք բարկացնելու ատենին պէս անապատին մէջ փորձութեան օրը, 9—Ուր ձեր Հայրերը զիս փորձեցին, քննեցին զիս, իւիրեանց գործերս տեսան տարի իմ գործերս տեսան. 10—Անոր համար զգուեցայ այն ազգին ու բսի, Միշտ մոլորած են սրտովին, և իմ ճամբաներս չճանչցան անոնք. 11—Ուստի երդումով երդում իմ բարկութեանս մէջ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն. 12—Նայեցէք, եղբայրներ, չըլլայ որ ձեզմէ մէկուն ներսիդին անհաւատութեան չար սիրտ ըլլայ՝ ապրատալ ըլլալու կենդանի Աստուծմէն. 13—Հապա ամէն օր մեկզմեկ յորդորեցէք, քանի որ Այսօր կըսուի, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը խստանայ մեղքին խաբեութենովը: 14—Քանզի մենք Քրիստոսի մասնակից եղած ենք, միայն թէ այն հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինդ բռնենք. 15—Քանի որ կ'ըսուի, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խստացնէք բարկացնելու ատենին պէս. 16—

Քանզի *ամանք լսեցին ու բարկացան, բայց ոչ թէ՝ ամէնը որ Նգիպտոսէ եկած էին Մովսէսի հետքով։ 17—Բանցմէ՞ զգուեցաս այն քառասուն տարին. չէ՞ որ մեղանչողներուն, որոնց ոսկորները անապատին մէջ թնկան։ 18—Ու որոնց համար երդում ըրաւ իր հանգիստը չմտնել, եթէ ոչ՝ անհնազանդութեան համար։ 19—Ու կը տեսնենք որ չկրցան մտնել էրէից անհաւատութեանը համար։

Գլ. Դ

Երեսին ա՛լ վախնանք, որ չըլլայ թէ անոր հանգիստը մտնելու խոստումնալեն, որ հիմ մնացեր է, ձեզմէ մէկը ըրկուած գտնուի։ 2—Վասն զի մենք ալ անոնց պէս աւետիս առած ենք. բայց անոնց չտի մը չըրաւ այն խօսքը լսելը, քանզի հաւատքով խառնուած չէր լսողներուն մէջ։ 3—Իսկ մենք որ հաւատացինք, հանգիստը կը մտնենք. ինչպէս բսաւ, Ուստի երդում ըրի իմ բարկութեանս մէջ թէ՝ իմ հանգիստս պիտի չմտնեն. թէեւ էր գործերը աշխարհի սկիզբէն կատած էին։ 4—Վասն զի էէրէը այսպես կ'ըսէ տեղ մը եօթներորդ տրուան հետ, Ու Աստուած եօթներորդ օրը հանգչեցաւ իր բոլոր գործերէն։ 5—Ու հոս նորէն կ'ըսէ թէ՝ իմ հանգիստս պիտի չմտնեն։ 6—Ուստի որովհետեւ ատոնց կը մնայ հոն մտնել, և անոնք որ առաջուընէ աւետիս առած էին, անհաւատութեան համար չմտան, 7—Նորէն որ մը կը սահմանէ՝ ու կ'ըսէ Այսօր Դաւիթի բերնով այնքան ժամանակետեւ, ինչպես բսուեցաւ, Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խստացնէք։ 8—Վասն զի եթէ Յեսու հանգչեցուցած ըլլար զանոնք, ալ անկէ ետքը ուրիշ օրուան համար չէր պրսուեր։ 9—Ուրեմն Աստուծոյ ժողովրդին դեռ հանգիստ մը կը մնայ։ 10—Վասն զի ան որ անոր հանգիստը մտաւ, ալ հանգչեցաւ իր գործերէն, ինչպես Աստուած ալ իրեններէն։ 11—Ուրեմն ջանանք այն հանգիստը մտնել, որ չըլլայ թէ մէկը նոյն անհնազանդութեան օրինակին պէս իյնայ։ 12—Վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ, և ամէն երկսայրի սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչև շունչը ու ոգին և յօդուածներէն ու ծուծը բաժնելու, և կը քննէ սրտին խորհուրդները ու մտածմունքները։ 13—Ու չկայ արարած մը անոր դիմաց չերեւցած, հապա ամէն բան բաց ու յայտնի է անոր աչքերուն առջև, որու պէտ պըտէ մեր հաշիւը։

14—Արդ մենք որ մեծ քահանայապետ մը ունինք երկինքը անցած, Յիսուսը, Աստուծոյ Որդին, ամուր բռնենք հետ դաւանութիւնը։ 15—Քանզի ոչ թէ այնպիսի քահանայապետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալ, հապա ինք ամէն կերպով փորձ առած է հէպ նման, բայց առանց մեղքի։ 16—Ուստի ա՛լ համարձակութիւնով մտնենանք շնորհաց աթոռին առջև, որպես զի ողորմութիւն ընդունինք ու շնորհք գտնենք պէտք եղած ատեն ձեզ օգնելու։

Գլ. Ե

Վասն զի ամէն քահանայապետ մարդոց միջէն առնուած՝ մարդոց համար կը կենայ Աստուծոյ կողմը, որպես զի պատարագներ ու զոհեր մատուցանէ մեղքերու համար։ 2—Ու կարող է կարեկից ըլլալ անոնց՝ որ տգէտ ու մոլորեալ են, վասն զի ինք ալ տկարութիւնով պատրաստ է։ 3—Ու այս պատճառաւ պարտաւոր է ինչպես ժողովրդին համար՝ նոյնպես ալ իր անձին համար մեղքի պատարագ մատուցանել։ 4—Ու ոչ թէ մէկը ինքիրմէ այս պատիւը կ'առնէ, հապա ան՝ որ Աստուծմէ կանչուած է, ինչպես Ահարոն։ 5—Նոյնպես ալ Քրիստոս ոչ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու, հապա անիկա՝ որ պրսեց անոր թէ Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ։ 6—Ինչպես ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ, Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս։ 7—Որ իր մարմինին օրերը սաստիկ գոչումով ու արցունքով ազօթք և աղաչանք մատուցաներ որ կարող էր զինք մահուանէ ազատել, ու լսուեցաւ էր *բարեպաշտութեանը պատճառաւ։ 8—Թէպէտ ինք Որդի է, բայց իր չարչարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ։ 9—Ու երբ կատարեցաւ, բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ։ 10—Ու Աստուծմէ կոչուեցաւ Քահանայապետ Մելքիսեդեկի կարգին պէս։ 11—Որուն վրայով շատ բաներ ունինք, որ դժուարին ալ է մեկնել, վասն զի ձեր լսելիքները ըմբռնած են։ 12—Վասն զի թէպէտ պէտք էր ձեզի ժամանակին վարդապետ ըլլալ, բայց դարձեալ պէտք է ձեզի սորվիլ թէ ինչ են Աստուծոյ պատգամներուն առաջին սկզբունքները։ ու դուք կարի կարօտ եղաք՝ և ոչ թէ հատատուն կերակուր։ 13—Քանզի այն ամէնը որ կթնիկներ է՝ արդարութեան խօսքին անհմուտ է, որովհետեւ մանր է։ 14—Բայց հատատուն կերակուրը կատարեալներուն է, որոնց զգայարանքները սովորութեամբ կրթուած են բարին ու չարը զանազանել։

Գլ. Զ

Ուստի Քրիստոսի վրայով առաջին սորվելիքները ձգելով՝ կատարեալին դանք, առանց նորէն հիմ ձգելու մեռած գործերէն ապաշխարելու, ու առ Աստուած հաւատք ունենալու, 2—Ու մկրտութիւններուն վարդապետութեանը, ու ձեռք դնելուն և մեռելներուն յարութեանը, ու յաւիտենական դատաստանին։ 3—Ու զայս պիտի ընենք՝ եթէ Աստուած հրաման տայ։ 4—Վասն զի անհնար է մէկ անգամ լուսաւորուածներուն, որոնք երկնաւոր պարգեւին համը առին, ու Հոգւոյն Սրբոյ հաղորդ եղան, 5—Ու Աստուծոյ բարի խօսքին ու գալու աշխարհին զօրութիւններուն համը առին, 6—Եթէ իյնան՝ նորէն ապաշխարութիւնով նորոգուիլ. որովհետեւ կրկին Աստուծոյ Որդին խաչը կը հանեն իրենց անձին, ու կը ցուցնեն զայն հանրօրէն։ 7—Վասն զի այն երկիրը որ իր վրայ շատ անգամ եկած անձրեւը կը խմէ, և որ պիտանի անոնց՝ որոնց համար կը մշակուի, Աստուծմէ օրհնութիւն կ'ընդունի. 8—Բայց ան որ փուշեր ու տատասկներ կը բերէ՝ անպիտան է ու անէծքի մօտ, և անոր վերջը այրուիլ է։ 9—Իսկ մենք, սիրելիներ, ձեր վրայով լաւագոյն և փրկութեան վերաբերեալ բաներ ունինք, թէեւ այսպէս կը խօսինք. 10—Քանզի Աստուած անիրաւ չէ, որ ձեր գործը մոռնայ, ու այն սէրը զոր իր անուանը համար ցուցուցիք, որ սուրբերուն ծառայեցիք ու կը ծառայէք։

11—Բայց մենք կը բաղձանք որ ձեզմէ ամէն մէկը նոյն ջանքը ցուցնէ յոյսին հաստատութեան մինչև վերջը. 12—Որպէս զի դուք չնզդեցնեք, հապա նմանող ըլլաք անոնց որ հաւատքով ու համբերութիւնով խոստումները ժառանգեցին։ 13—Վասն զի երբ Աստուած Աբրահամի խոստումները ըրաւ, որովհետեւ իրմէ մեծը չկար՝ որ անոր վրայ երդում ընէր, 14—Իր անձին վրայ երդում ըրաւ ու բսաւ, Այո, օրհնելով պիտի օրհնեմ քեզ, ու չատցնելով պիտի չատցնեմ քեզ։ 15—Ու այսպէս համբերելով խոստումներին հասաւ։ 16—Քանզի մարդիկ իրենցմէ մեծին վրայ երդում կ'ընեն, ու անոնց բոլոր հակառակութեանը համար վերջ գտնելու երդումն է։ 17—Որով Աստուած իր խորհուրդին անփոփոխ ըլլալը ա՛լ աւելի ցուցնել ուզելով խոստումներուն ժառանգաւորներուն, երդումը մէջ ձգեց։ 18—Որպէս զի երկու անփոփոխելի բաներով, որոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ գրուիլ, հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք, որ ապաստանեցանք մեր առջև դրուած յոյսը ամուր բռնելու։ 19—Զոր ունինք իբրև հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին, որ վարագուրին ներսի կողմն ալ կը մտնէ։ 20—Ուր Յիսուս իբրև Առաջնորդ մտաւ մեզի համար՝ յաւիտենական քահանայապետ ըլլալով Մելքիսեդեկի կարգին պէս։

*Կամ, որոնք լսեցին ու բարկացան, չէ՞ որ

*Կամ, երկիւղէն ազատուելով

ԳԼ. Ե

Քանզի այս Մելքիսեդեկը Սադմի թագաւորն էր, Բարձրեալ Աստուծոյ քահանան, որ Աբրահամը դիմաւորեց՝ երբ անիկա թագաւորներուն կոտորածէն կը դառնար, ու օրհնեց զանիկա. 2—որու Աբրահամ ալ տասանորդ տուաւ բոլոր բաներէն. որ նախ Ազատութեան թագաւոր կը թարգմանի, եւթը Սադմի թագաւոր՝ որ է խաղաղութեան թագաւոր. 3—Առանց հօր, առանց մօր, ազգահամար չունենգող, որուն ոչ օրերուն սկիզբը կայ, ոչ ալ կեանքին վերջը. և Աստուծոյ Որդւոյն նման ըլլալով, կը կենայ ու կը մնայ միշտ քահանայ.

4—Արդ նայեցէք թէ ա՛րլւոք մեծ մէկին էր ասիկա, որու Աբրահամ նահապետն ալ տասանորդ տուաւ ստացուածքին. 5—Ու. Ղեւիի որդիներէն եղողները, որոնք քահանայութիւնն կ՚առնեն, պատուէր ունին որ ժողովուրդէն տասանորդ առնեն օրէնքին համեմատ, այսինքն իրենց եղբայրներէն. թէպետև անոնք Աբրահամի երանքէն ելեր են. 6—Բայց անիկա, որուն ազգահամարը անոնցմէ չէր, Աբրահամէ տասանորդ առաւ, ու օրհնեց զանիկա՝ որ խոստմանքները առած էր. 7—Մակայն ասիկա անհակառակելի բան մըն է, որ պզտիկը մեծէն կ՚օրհնուի.

8—Ու հոս մահկանացու մարդիկ տասանորդ կ՚առնեն, բայց հոն անիկա կ՚առնէ, որու համար վկայուած է թէ կենդանի է. 9—Ու. կրնայ ըսուիլ թէ Ղեւի ալ, որ տասանորդ կ՚առնէ, Աբրահամի ձեռքով տասանորդ տուաւ. 10—Վասն զի տակաւին իր հօրը երանքն էր, երբ Մելքիսեդեկ զանիկա դիմաւորեց.

11—Արդ եթէ կատարելութիւնը Ղեւատցւոց քահանայութեան ձեռքով ըլլար, (որովհետև ժողովուրդը անոր առնէր օրէնքին տակ դրուեցաւ,) ալ ինչ պէտք էր որ Մելքիսեդեկի կարգին պէս ուրիշ քահանայ մը ելլէ, ու չըսուի Ահարոնի կարգին պէս. 12—Արդ քահանայութիւնը փոխուելունպէս՝ հարկ էր որ օրէնքին ալ փոփոխութիւն ըլլար. 13—Ու- նրա- նէ- ան՝ որու համար այսպէս կ՚ըսուի, ուրիշ ցեղի հաղորդութիւն ունեցաւ, որմէ բնաւ մէկը սեղանին չմատեցաւ.

14—Քանզի յայտնի է թէ Յուդայի ցեղէն յառաջ եկաւ Տէրը, որ ցեղին վրայով Մովսէս բան մը չդրաւ քահանայութեան համար. 15—Ու. ալ աւելի յայտնի է՝ ե- ի- ո- ա-, քանի որ Մելքիսեդեկի նմանութիւնով ուրիշ քահանայ մը կ՚ելլէ. 16—Որ ոչ թէ մարմնաւոր պատուիրի օրէնքին պէս եղաւ, հապա անմահական կեանքին զօրութեանը պէս. 17—Վասն զի կը վկայէ թէ Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս. 18—Քանզի առաջին պատուիրը կը խափանուի իր անկարութեանը ու անշահութեանը համար. 19—(Վասն զի օրէնքը բան մը կատարեալ չդրաւ,) և անոր տեղ կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով Աստուծոյ կը մօտենանք.

20—Ու. որքան որ Երեմ ոչ թէ առանց երդումի հաստատ եղաւ, (վասն զի անոնք առանց երդումի քահանայ եղած են. 21—Բայց ասիկա երդումով՝ անոր ձեռքով որ իրեն րսաւ, Տէրը երդում ըրաւ ու պիտի չդղջայ, Դուն յաւիտեան քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս.) 22—Ա.յնքան աւելի աղեկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս.

23—Ու անոնք չատ քահանաներ եղած են՝ էրէնց միշտ մնալուն մահը արգելք ըլլալուն համար. 24—Բայց ասիկա յաւիտեան կենալուն համար անանցանելի ունի քահանայութիւնը. 25—Ուստի բոլորովին կարող ալ է ապրեցընելու զանոնք որ իրմով Աստուծոյ կու գան, որովհետև ինք միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու.

26—Վասն զի մեզի էէէ այսպիսի քահանայապետ մը կը վայլէր, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներէն զատուած ու երկինքին վեր բարձրացած. 27—Որու- ամէն օր հարկ չէ ինչպես ուրիշ քահանայապետներուն՝ առաջ իր մեղքերուն համար պատարագ մատուցանել, ու ետքը ժողովուրդին դէպի- քառ համար. վասն զի ինք մէկ անգամ ըրաւ. ասիկա՝ իր անձը պատարագ մատուցանելով. 28—Վասն զի օրէնքը տկարութիւնով պաշտօնած մարդիկը քահանայապետ կը կարգէ, բայց երդումին խօսքը, որ օրէնքէն ետև էր, Որդին՝ որ յաւիտեան կատարեալ է.

ԳԼ. Ը

Եւ զրուցած խօսքերուս բովանդակութիւնը այս է. այնպիսի քահանայապետ մը ունինք մենք՝ որ երկինքը Աստուծոյ մեծութեանը աթոռին աջ կողմը նստաւ. 2—Սրբարանին պաշտօնեայ, ու ճշմարիտ խորանին՝ զոր Տէրը կանգնեց և ոչ թէ մարդ. 3—Քանզի ամէն քահանայապետ պատարագներ ու զոհեր մատուցանելու համար օրօրած է. ուստի հարկ է որ ասիկա ալ բան մը ունենայ մատուցանելու. 4—Որ եթէ երկրի վրայ ըլլար, քահանայ անգամ պիտի չըլլար, վասն զի կան քահանաներ՝ օրէնքին համեմատ 5—(Որոնք երկնային բաներուն նմանութիւնով ու չուքվով կը ծառայեն, ինչպես Մովսէսի հրամայուեցաւ, երբ խորանը պիտի չիներ. քանզի բաւ, Նայէ որ ըլեր քեզի ցուցուած օրինակին պէս չիներս ամէնը.) 6—Բայց հիմա Յիսուս ա՛յ աւելի գերազանց պաշտօնի մը հասաւ, որչափ որ լաւագոյն խոստումներով հաստատուած լաւագոյն ուխտի մը միջնորդ է.

7—Վասն զի եթէ առաջինը անմեղադրելի ըլլար, տեղի երկրորդին անգ չէր փնտռուեր. 8—Քանզի կը յանդիմանէ զանոնք ու ա՛րաւ, Ահա օրեր կու գան, կ՚ըսէ Տէրը, որ Իսրայէլի տունը հետ ու Յուդայի տանը հետ նոր ուխտ պիտի ընեմ. 9—Ոչ թէ այն ուխտին պէս՝ զոր անոնց հայրերուն հետ ըրի, այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք Եգիպտոսի երկրէն հանելու համար. վասն զի անոնք իմ ուխտիս մէջ չկեցան, ես ալ անոնց հոգ անոնց վրայով, կ՚ըսէ Տէրը. 10—Քանզի այս է այն ուխտը՝ զոր Իսրայէլի տանը հետ պիտի ընեմ այն օրերէն ետքը, կ՚ըսէ Տէրը. իմ օրէնքներս անոնց միտքերնին պիտի դնեմ, և անոնց սրտին վրայ պիտի գրեմ զանոնք, ու ես անոնց Աստուած պիտի ըլլամ, և անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան. 11—Ու. բնաւ պիտի չսորվցնեն ամէն մէկը իր ընկերին, և. ամէն մէկը իր եղբօրը, ըսելով Թէ Տէրը ճանչցիր. քանզի անոնց պզտիկէն մինչև մեծը ամէնը զիս պիտի ճանչնան. 12—Վասն զի ես անոնց անիրաւութիւններուն ներող պիտի ըլլամ, և. անոնց մեղքերը ու անօրէնութիւնները ա՛լ պիտի չյիշեմ.

13—Նոր ո-ի- ըսելովը առաջինը հինցուց. ու այն որ կը հինուայ և կը ծերանայ, ա՛լ կորուստի մօտ է.

ԳԼ. Թ

Արդարև առաջին ո-ի- ալ ունէր պաշտամունքին կանոնադրութիւնները ու աշխարհային սուրբ տեղը. 2—Վասն զի առաջին խորանը, որ Սրբութիւն կ՚ըսուէր, սկզբնական կազմուեցաւ, որուն մէջ կար աչտամակը ու սեղանը և առաջադրութեան հացը. 3—Ու. երկրորդ վարագոյրին ետեն այն խորանը՝ որ Սրբոց Սրբութիւն կ՚ըսուէր. 4—Որուն մէջ էր ոսկի բուրվառը, և տխրին ամապատնակը, ամէն կողմէն ոսկիով պատած, որուն մէջ էր ոսկիե սափորը մանանայով լիցուն, և Ահարոնի գաւազանը որ ծաղկեցաւ, և ուխտին տախտակները. 5—Ու. անոր վրայէն փառաց քերովբէները՝ որ քաւութիւնին վրայ հովանի կ՚ընէին. որոնց համար պէտք չէ հիմա մէկիկ մէկիկ զրուցել.

6—Ու- այս բաները այսպէս կարգադրուած ըլլալով, առաջին խորանը ամէն առեն կը մտնէին քահանաները՝ պաշտամունքը կատարելու. 7—Բայց երկրորդը՝ տարին անգամ մը միայն քահանայապետը կը մտնէր, ոչ թէ առանց արիւնի, զոր իրեն համար ու ժողովրդին սխալմանքներուն համար կը մատուցանէր. 8—Հոգին Սուրբ զայս ցուցնելով՝ թէ սրբարանին ճանապարհը յայտնի եղած չէր, քանի որ առաջին առաջին խորանը կը կենար. 9—Որ օրինակ մըն էր այն ժամանակին՝ որ պատարագներ ու զոհեր կը մատուցանուէին, որոնք չէին կրնար

ուէին, որանք խղճմտանքի կզմտնել չէին կրնար կատարեալ բնել պաշտան մատուցանողը, հապա միայն կերակուրներով ու խմելիքներով, 10—Ե. կերով կերպ լուացումներով՝ մարմնաւոր արդարութիւններ էին, որանք մինչև ուղղութեան ատենը կը կենային։ 11—Բայց երբ Քրիստոս եկաւ, գալու բարիքներուն գլխաւոր վարդապետ, աւելի մեծ ու կատարեալ և անձեռագործ խորանով՝ այսինքն անով որ այս ստեղծուածներէն չէ, 12—Ոչ ալ նոխազներու ու զաւակներու արիւնով, հապա իր արիւնովը մէկ անգամ սրբարանը մտաւ՝ յաւիտենական փրկութիւն առնելով։ 13—Վասն զի եթէ ցուխերուն ու նոխազներուն արիւնը և երինձին մոխիրը սրսկուելով՝ պղծեալները կը սրբէր մարմնին մաքրութեան կզմտնէ, 14—Ալ ո՛րչափ աւելի Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Հոգիին ձեռքով իր անձը անարատ պատարագ մատուց Աստուծոյ, պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած գործերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու։

15—Եւ ասոր համար ինք նոր ուխտին միջնորդն է, որպէս զի երբ մահը առաջին ուխտին յանցանքներուն փրկութեանը համար եղած բլլալով, հրաւիրուածները յաւիտենական ժառանգութեան խոստումը առնեն։ 16—Քանզի ուր կտակ մը բլլայ, հարկ է որ կտակը ընդունողին մահը ալ տեղի ունենայ։ 17—Վասն զի կտակը մեռելներէն եւս հաստատ կ'ըլլայ. քանզի բնաւ վաւերականութիւն չունենար քանի որ կտակը բնողը ողջ է։ 18—Անոր համար առաջին ուխտն ալ առանց արիւնի չէր հաստատուեր. 19—Վասն զի երբ Մովսես օրէնքին ամէն պատուիրները բոլոր ժողովուրդին պատմեց, ցուլերուն ու նոխազներուն արիւնը առնելով՝ ջուրով ու կարմիր բուրդով և զոպայով բան գիրքին և բոլոր ժողովուրդին վրայ սրսկեց։ 20—Եւ ըսաւ, Ասիկա է այն ուխտին արիւնը, զոր Աստուած ձեզի պատուիրեց։ 21—Եւ խոռանին վրայ ու պաշտօնին բոլոր գործիքներուն վրայ նոյնպէս սրսկեց արիւնը։ 22—Եւ գրեթէ ամէն բան արիւնով կը մաքրուի օրէնքին նայելով, ու արիւն չթափուած թողութիւն չըլլար։

23—Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրինակները ասոնցմով մաքրուէին. բայց բուն երկնաւորները՝ առանցմէ աւելի ազնիւ զոհերով։ 24—Քանզի Քրիստոս ոչ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ ճշմարիտին օրինակն է, հապա բուն երկինքը՝ որպէս զի հիմա մեզի համար Աստուծոյ առջեւ ներկայանայ։ 25—Ոչ թէ՝ որպէս զի շատ անգամ իր անձը զոհուէ մտաւ քանի, ինչպէս քահանայապետը՝ որ ամէն տարի սրբարանը կը մտնէ իրը չեզած արիւնով։ 26—Ապա թէ ոչ՝ պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն հետ շատ անգամ չարչարուէր։ բայց հիմա մէկ անգամ դարերուն վերջը իր անձին պատարագովը յայտնուեցաւ՝ մեղքը մեկնի ձգելու համար։ 27—Եւ ինչպես մարդոց համնեցած է մէկ անգամ մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան, 28—Նոյնպէս ալ Քրիստոս մէկ անգամ պատրաստուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցնելու համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնուի փրկութեան համար առնողներուն որանք անոր կը սպասեն։

Գլ. Ժ

Քանզի օրէնքը գալու բարիքներուն չուքը, ու ոչ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունենալով, միշտ ամէն տարի մատուցուած նոյն զոհերով երբեք չկրնար կատարեալ ընել զանոնք որ կը մօտենան։ 2—Ապա թէ ոչ՝ պիտի չդադրէի՞ն մատուցուելէն, պաշտօն մատուցողները մէկ անգամ մաքրուելնէն ետեւ՝ մեղքի գիտութիւն մը չունենալնուն համար։ 3—Բայց անոնցմով ամէն տարի մեղքերու յիշատակութիւն կ'ըլլայ։ 4—Վասն զի նոխազներուն ու ցուլերուն արիւնը չկրնար մեղքերը վերցընել։ 5—Անոր համար իր աշխարհ մտնելու ատենը կ'ըսէ, Զոհ ու ընծայ չուզեցիր դուն, հապա ինծի մարմին մը պատրաստեցիր։ 6—Ողջակէզներու ու մեղքի պատարագներու չհաճեցար, 7—Այն ատեն ըսի, Ահա կու գամ (դիրքի ատեն մէջ ինծի համար գրուած է,) քու կամքդ ընելու, ով Աստուած։ 8—Վերը ըսելով թէ Զոհ ու ընծայ և ողջակէզներ ու մեղքի պատարագներ չուզեցիր՝ ու անոնց չհաճեցար, (որոնք օրէնքին համեմատ կը մատուցանին,) 9—Ետքը կ'ըսէ, Ահա կու գամ քու կամքդ ընելու, ով Աստուած. առաջինը կը վերքի որպէս զի երկրորդը հաստատէ։ 10—Որ կամքով մենք ալ սրբուած ենք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին մէկ անգամ պատարագովը։

11—Ու ամէն քահանայ օր ըստ օրէ իր պաշտօնին մէջ կը կենայ, և նոյն զոհերը յաճախ անգամ կը մատուցանէ, որոնք երբէք չեն կրնար մեղքերը վերցընել։ 12—Բայց ասիկա մէկ զոհ մատուցանելով մեղքերու համար, յաւիտենապարտական Աստուծոյ աջ կողմը նստաւ, 13—Ու ասկէ ետեւ կը սպասէ, մինչև իր թշնամիները իր ոտքերուն պատուանդան գրուին։ 14—Վասն զի մէկ պատարագով յաւիտենապարտ կատարեց սրբուածները։

15—Բայց Հոգին Սուրբ ալ մեզի վկայութիւն կու տայ, քանզի առաջուրնէ ըսելէն ետեւ. 16—Թէ Այս է այն ուխտը՝ զոր ես անոնց հետ պիտի բնեմ այն օրերէն ետքը, (կ'ըսէ Տէրը,) իմ օրէնքներս անոնց սրտին մէջ պիտի դնեմ, ու անոնց միտքին մէջ պիտի գրեմ զանոնք. 17—Նաեւ կ'ըսէ թէ Անոնց մեղքերը և անոնց անօրէնութիւնները ա՛լ պիտի չյիշեմ։ 18—Իսկ ուր ասոնց թողութիւն կայ, ա՛լ մեղքի համար պատարագ պէտք չէ։

19—Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունենալով մուտք ունենալու Յիսուսի արիւնովը, 20—Այն նոր ու կենդանի ճամբովը՝ զոր բացաւ մեզի վարագուրին միջէն, որ է իր մարմինը, 21—Ու մեծ քահանայ մը ունենալով Աստուծոյ տանը վրայ, 22—Մօտենանք ճշմարիտ սրտով, լեցուն համոզմամբ, սիրտերնիս չար խիղճէն մաքրուած, ու մարմիններնիս մաքուր ջրով լուացուած. 23—Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, վասն զի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ, 24—Ու իրարու հոգ տանինք՝ սիրոյ և բարեգործութիւնի գրգռելով. 25—Ու մէկտեղ ժողովիլը չմոռնանք, ինչպես սանոնք սովորութիւն ունին. հապա միւնուն յորդորելով, ու այնչափ աւելի՝ որչափ այն օրուան մօտենալը կը տեսնէք։

26—Վասն զի եթէ ճշմարտութեան գիտութիւնը ընդունելէ ետեւ կամովին մեղք գործենք ըլլանք, ալ անկէ ետեւ մեղքերու համար զոհ մը չմնար, 27—Հապա զարհուրելի սպասել մը դատաստանին, ու կրակի բարկութիւն մը կը ճաշ, որ պիտի լափէ հակառակորդները. 28—Մեկը եթէ Մովսէսի օրէնքը անարգէր, առանց ողորմութիւն երկու կամ երեք վկաներով կը մեռնէր. 29—Ալ ո՛րչափ աւելի պատժի արժանի պիտի սեպուի կը կարծէք անիկա, որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ, և ուխտին արիւնը անմաքուր սեպեց, ու որով ինք սրբուեցաւ, և Շնորհաց Հոգին նախատեց. 30—Քանզի գիտենք զանիկա որ ըսաւ, Իմն է վրէժխնդրութիւնը, ես պիտի հատուցանեմ, կ'ըսէ Տէրը. և դարձեալ՝ Տէրը պիտի դատէ իր ժողովուրդը. 31—Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը։

32—Արդ միտքերնիդ բերէք այն առաջին օրերը, որոնց մէջ լուսաւորուելէ ետեւ չատ առաջիկ չարչարանքներ կրեցիք. 33—Երբեմն նախատինքներով ու վիշտերով խայտառակուած, երբեմն ալ այսպիսի վիճակի մէջ եղողներուն կցորդ ըլլալով. 34—Վասն զի *իմ կապերուս մէջ ինծի՝ չարչարակից եղաք, ու ձեր ստացուածքին կողոպտումը ուրախութեամբ ընդունեցիք, գիտնալով որ ըստ ապրն և ձեզի աւելի ստացուածքներ ունիք ձեզի երկինքը. 35—Ուստի չենջէ ի ձեզ ձեր վստահութիւնը, որ մեծ վարձքի հատուցում ունի, 36—Վասն զի պէտք է ձեզի համբերութիւն, որպէս զի Աստուծոյ կամքը բնելով՝ խոստումը վայելէք. 37—Քանզի ալ սակի քիչ մը ատենէն ան որ գալու է՝ պիտի գայ ու պիտի չուշանայ։ 38—Ու Արդարը հաւատքէն պիտի ապրի. ու եթէ ինկը ետ քաշուի,

*Ոմանք, կապուածներուն

իմ հագիս անոր չհաճիր։ 39—Բայց ինձ ևս չինձ քաշուիր որ կարտնինք, հապա կը հաւատանք որ Ձէզ հոգին փրկուի։

ԳԼ. ԾԱ

Արդ հաւատքը յայտացած բաներուն հաստատութիւնը ― չերևցած բաներուն ապացոյցն է։ 2—Վասն զի անով առաջինները վկայութիւն ընդունեցին։

3—Հաւատքով կ'իմանանք թէ աշխարհ Աստուծոյ խօսքովը հաստատուեցաւ, ու աներեւոյթ բաներէն այս երևցածները եղան։

4—Հաւատքով Աբէլ կայնեալ աւելի ազնիւ զոհ մատուց Աստուծոյ, որով վկայուեցաւ արդար ըլլալը. վասն զի իր պատարագներուն վրայ Աստուծմէ վկայութիւն եղաւ էրէն. և անով, թէպէտ մեռաւ, էլայ ասկից կը խօսի։

5—Հաւատքով Ենովք էրէփ փոխադրուեցաւ որպէս զի մահ չտեսնէ. ու Ձէզ չէր գտնուիր, վասն զի Աստուած փոխադրեց զանիկա. քանզի առնոր փոխադրուելէն առաջ վկայուեցաւ թէ Աստուծոյ հաճելի էր։ 6—Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ. վասն զի ան որ Աստուծոյ կը մօտենայ, պէտք է որ հաւատայ թէ Աստուած կայ, և թէ վարձահատոյց կ'ըլլայ անոնց որ զինք կը փնտռեն։

7—Հաւատքով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ՝ դեռ չերևցած բաներուն համար, վախնալով տապանը շինեց իր առնը փրկելու համար, որով աշխարհս դատապարտեց, և Ժառանգաւոր եղաւ այն արդարութեանը որ հաւատքով կ'ըլլայ։

8—Հաւատքով, երբ Աբրահամ կանչուեցաւ, մեկ ըրաւ այն տեղը ելլելու, զոր Ժառանգութիւն պիտի առնէր. և ելաւ գնաց, ու չէր գիտեր թէ ո՛ւր կ'երթայ։ 9—Հաւատքով պանդխտացաւ աւետեաց երկրին մէջ որպէս թէ օտարութեան մէջ, և վրաններու մէջ բնակեցաւ Իսահակի ու Յակոբի հետ մեկտեղ, որոնք իրեն հետ Ժառանգորդ էին նոյն խոստումներուն։ 10—Վասն զի ինք կը սպասէր այն հիմերով հաստատուած քաղաքին, որուն հարթարարհեստ ու արարիչը Աստուած է։

11—Հաւատքով ինք Սառա ալ զօրութիւն ընդունեց, և տանը ածած հասակի մէջ զաւակ ծնաւ. վասն զի հաւատարիմ սեպեց զանիկա որ խոստանալը իրեմ տեսակ կ'ելլէ։ 12—Ուստի այն մեկէն ծնան, (այն ալ մեռածի պէս,) չատերէն կազմ երկինքի աստղերուն պէս, ու ծովեզերքը եղած ասպին պէս առատ համրանքի։

13—Ատոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոստումներուն չառած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին, և խոստովանեցան թէ երկրի վրայ։ 14—Բանզի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն թէ գաւառ մը կը փնտռեն։ 15—Ու յիրաւի եթէ զանիկա յիշէին՝ որկէ որ ելան, ժամանակ ունէին հոն դառնալու։ 16—Բայց հիմա լաւագոյն երկիր մը կը փափաքին, այսինքն երկնաւորին. ուստի ամօթ չեզեր Աստուած անոնց Աստուածը բառիլ, վասն զի ինք անոնց քաղաք մը պատրաստեց։

17—Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատեն Իսահակը զոհաբերէ մատուց. և ան որ խոստումները առած էր, իր մէկ հատիկ որդին կը մատուցանէր։ 18—Որուն բանեցաւ թէ Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի։ 19—Բանզի կը մտածէր թէ Աստուած մեռելներն ալ կարող է յարուցանել, ուրկէ օրինակով մը ընդունեց զանիկա։

20—Հաւատքով Իսահակ գալու բաներուն համար Յակոբն ու Եսաւ օրհնեց Յակոբը ու Եսաւ։ 21—Հաւատքով Յակոբ իր մեռնելու ատեն՝ Յովսեփի որդիներէն ամէն մէկը օրհնեց, ու երկրպագութիւն բրաւ իր գաւազանին գլխուն վրայ։ 22—Հաւատքով Յովսեփ իր վախճանելու ատեն յիշեցաւ Իսրայէլի որդիներուն նշխարքը երթալու, ու իր ոսկորներուն համար պատուէր տուաւ։

23—Հաւատքով, երբ ծնաւ Մովսէս, հաստատուած ողջունեցին

*Ոմանք, հաւատալով ողջունեցին

ութ, իր ծնողներուն ձեռքով երկար ատեն գաղտուկ պահուեցաւ. վասն զի տղան գեղեցիկ տեսան, ու չվախցան թագաւորին հրամանէն։ 24—Հաւատքով Մովսէս, երբ մեծցաւ, չընդունեց փարաւոնի աղկան որդի բսուիլ։ 25—Քանզի աւելի ազէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը վայելել։ 26—Ու աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը՝ քան թէ Եգիպտոսի գանձերը. վասն զի դիտելով կը սպասէր վարձքի հատուցմանին։ 27—Հաւատքով Եգիպտոսը թողուց, ու չվախցաւ թագաւորին բարկութենէն. վասն զի համբերեց՝ որպէս թէ Անտեսանելին կը տեսնէր։ 28—Հաւատքով բրաւ զատիկը և արիւնը սրսկելը, որպէս զի անդրանիկները սասկեցնողը իրենց չդպչի։

29—Հաւատքով կարմիր ծովէն անցան որպէս թէ ցամաքէ. որուն փորձը ընելով Եգիպտացիները ընկղմեցան։

30—Հաւատքով Երիքովի պարիսպները ինկան՝ եօթը օր անոնց բոլորտիքը պտըտելով։

31—Հաւատքով Ռահաբ պառնիկը անհնազանդներուն հետ չկորսուեցաւ, որ լրտեսները խաղաղութեամբ ընդուներ էր։

32—Ու ալ ի՞նչ բսեմ. վասն զի ժամանակը բաւական չէ որ պատմեմ Գեդէոնի ու Բարակի և Սամփսոնի ու Եփթայէի և Դաւիթի ու Սամուէլի և մարգարէներուն համար. 33—Որոնք հաւատքով թագաւորութիւններ յաղթեցին, արդարութիւն գործեցին, խոստումներու հասան, առիւծներու բերաններ գոցեցին, 34—կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերնէ ազատեցան, տկարութենէ ուժգնացան, պատերազմի մէջ զօրաւոր եղան, օտարներու բանակներ ցրուեցին, 35—կիներ իրենց մեռելները ըմբուռնեցին յարութիւն առած. ուրիշներ չարչարուեցան և չընդունեցին ազատութիւնը, որպէս զի լաւագոյն յարութեան հասնին. 36—Ուրիշներ ալ նախատինքներու ու ծեծերու, նաև կապերու ու բանտերու փորձը առին. 37—քարկոծուեցան, սղոցուեցան, փորձանքի մէջ բնկան, սրով սպանուելով մեռան, ոչխարի մորթերով ու այծի մորթերով պտըտեցան, կարօտութիւն քաշելով, նեղը բնկնելով, չարչարուելով, 38—(Որոնց արժանի չէր աշխարհս,) անապատներու ու լեռներու ու այրերու ու երկրի խոռոչներու մէջ մնալով։

39—Ու ասոնք ամէնը հաւատքով վկայուած՝ խոստումնէրը չառին. 40—Քանզի Աստուած մեզի համար աւելի ազէկ բան մը նախատեսութեամբ, որպէս զի անոնք առանց մեզի չկատարուին։

ԳԼ. ԺՒ

Ուստի մենք ալ, որ այսչափ վկաներուն *թագմութիւնը մեր բոլորտիքը պատած ունինք, ամէն ծանրութիւն մեր վրայէն մեկդի ձգենք, և դիւրաբաս պաշարոց մեզմէ, ու համբերութիւնով վազենք մեր առջև դրուած ասպարէզի ընթացքը. 2—Յիսուսի նայելով, Ձեր հաւատքին առաջնորդին ու կատարողին, որ այն ուրախութենէնը համար որ իր առջև կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթոռին մէջ կոզմը նստաւ։

3—Արդ մտիկ բերէք զանիկա, որ այսպէս համբերից մեզմէ որձերուն իրեն դէմ հակառակ խօսքերուն, որ չըլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու ի՛նկնաք։ 4—Տակաւին արիւն չթափելա՛ չափ պատերազմելով հակառակ չկեցաք մեզմէն 5—Ու մոռցաք այն յորդորանքը որ ձեզի հետ կը խօսի որպէս թէ որդիներու հետ, Որդեակ իմ, Տէրոջը խրատը մի անարգեր, ու անկէ յանդիմանուելով՝ մի թուլնար։ 6—Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ, և կը ծեծէ ամէն որդին զոր կ'ընդունի։ 7—Եթէ խրատի համբերէք, Աստուած ձեզի հետ որպէս թէ որդիներու հետ կը վարուի, քանզի ո՞ր որդին է ան՝ զոր հայրը չպատժէր։ 8—Իսկ եթէ զուրկ առանց խրատի ըլլաք, որու ամէնը մասնակից եղան, ապա ձեր խորթ կը զուրկ ու ոչ

*Ոմանք. ամկը

քէ օրդիներ։ 9—Նաև մեր մարմնաւոր հայրերը ունէինք խրատիչ, եւ նոյնիսկ կ՚ամչնայինք։ Չէ՞ որ ալ աւելի պիտի հնազանդինք հոգիներուն Հօրը եւ ապրինք։ 10—Վասն զի ասոնք փչէր օրերը ինչ կը խրատէին իրենց համար ըն-քնցածին պէս, բայց անիկա մեր օգուտին համար՝ որպէս զի իր սրբութեանը հաղորդ ըլլանք։ 11—Եւ յիրաւի ամէն խրատ նոյն ատեն ուրախարար չ՚ըլլար, հապա տրտմական, բայց ետքը արդարութեան խաղաղաբար պտուղը կը հատուցանէ անոնց՝ որոնք անով վարժուցուներուն։

12—Ուստի քաղցած ձեռքերը ուղղեցէք հասատատելիք։ 13—Եւ շիտակ համբաններ ըրէք ձեր ոտքերուն, որ չ՚ըլլայ քէ ան որ կաղ է՝ խոտորի, այլ մանաւանդ բժշկուի։ 14—Խաղաղութեան եւանէ եղէք ամենուն հետ եւ սրբութեան, առանց որոյ մէկը պիտի չտեսնէ Տէրը։ 15—Զգուշացէք, չ՚ըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ։ Չ՚ըլլայ որ դառնութեան արմատ մը վեր բերելով՝ չ՚ենդնէ, ու անով շատերը պղծուին։ 16—Չ՚ըլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ, կամ անառակ՝ ինչպէս որ կերակուրի մը համար իր անդրանկութիւնը ծախեց։ 17—Քանզի գիտէք որ թէկուզ ետքը ուզեց օրհնութիւնը ժառանգել, չ՚ոյժ մերժուեցաւ. վասն զի ապաշխարութեան տեղ չգտաւ հնչը ձլա, թէկուզ արցունքով խնդրեց զանիկա։

18—Վասն զի դուք մօտեցած չէք շօշափելի լեառնը, որ կրակով կը վառէր, ոչ ալ մկրճն ու խաւարին ու մրրիկին, 19—Ու փողին հնչուելուն, ու խօսքերուն ձայնին, զոր լսողները ապաչեցին որ մէյմն ալ այն խօսքը չ՚ըսուի իրենց, 20—Վասն զի չէին կրնար տանիլ այն հրամանին, Եթէ գազան մըն ալ լեառնը դպչի՝ պիտի քարկոծուի։ 21—Ու այնպէս ահագին էր այն երեւոյթը՝ որ Մովսէս բաւ, Սասիկ կը վախնամ ու կը դողամ։ 22—Բայց դուք Սիոն լեառնը մօտեցեր էք, ու կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմ, ու բիւրաւոր հրեշտակներուն, 23—Ու երկինքը գրուած անդրանկներուն հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին, եւ Աստուծոյ՝ որ ամենուն Դատաւորն է, ու արդարներուն հոգիներուն՝ որոնք կատարեալ են, 24—Ու Միջնորդ՝ որ Նոր ուխտին միջնորդն է, ու սրսկուելու արիւնին՝ որ Աբէլի ուրէ-նէ աւելի ազնիւ կը խօսի։

25—Զգուշացէք, չ՚ըլլայ որ մերժէք զանիկա որ չէշ կը խօսի։ Քանի որ եթէ անոնք երկրի վրայ Աստուծոյ պատգամները խօսողը մերժելով չպատժուեցան, ա՛րդեօք աւելի մենք՝ եթէ երկինքէն խօսողին երես դարձնենք։ 26—Որուն ձայնը այն ատեն երկիրը չարժեց, եւ հիմա խոստացեր է ու կ՚ըսէ, Նորէն պիտի չարժեմ, ոչ թէ միայն երկիրը, հապա նաև երկինքը։ 27—Ու այն նորէն քառը կը ցուցնէ չարժուած բաներուն յեղափոխութիւնը չ՚ենուած բաներու պէս, որպէս զի անշարժ բաները հաստատուն մնան։ 28—Ուստի անշարժ թագաւորութիւնը առած ըլլալով՝ երախտապարտ ըլլանք մեզի, որով պաշտօնք հաճոյական կերպով, ակնածութեամբ եւ բարեպաշտութեամբ։ 29—Վասն զի մեր Աստուածը մաշող կրակ է։

Գլ. ԺԳ

Եղբայրսիրութիւնը չէ դէպ հատատուն մնայ։ 2—Հիւրասիրութիւնը մի մոռնաք, վասն զի անով անոնք հրեշտակներ ընդունելին չգիտնալով։ 3—Միութեանը մէջ կապուածները որպէս թէ անոնց հետ դուք ալ կապուած էք. Ե չարչարուածները՝ որպէս թէ դուք ալ մարմնին ունեցող էք։ 4—Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, ու անկողինը անարատ է. բայց պոռնիկները ու չնացողները Աստուած պիտի դատէ։ 5—Առտիրերնիդ առտիութեան չ՚ըլլայ, բաւական սեպեցէք որչափ բան որ ձեռքերնիդ կայ. վասն զի ինք ըսաւ թէ Բնաւ քեզ երեսէ պիտի չթողում, ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ։ 6—Այնպէս որ համարձակ ըլլանք ըսելու, Տէրը իմ օգնականս է, ու ես պիտի չվախնամ. մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ։ 7—Ձիրեցէք ձեր առաջնորդներուն որոնք Աստուծոյ խօսքը ձեզի խօսեցան, և ամենց վարուելութիւնին վախճանին նայելով՝ էրէնց հաւատքին նմանուիլ ջգէք։ 8—Յիսուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր և յաւիտեանս։

9—Կերպ կերպ և օտարածայն ուսմունքներով մի տարուիրիք, քանզի աղէկ է որ սիրտը շնորհքով հաստատուի ու ոչ թէ կերակուրներով. որոնցմով օգուտ մը չունեցան անոնք որ այնպէս գացին։ 10—Մեզան մը ունինք մենք, ուրկէ իշխանութիւն չունին ասելու անոնք որ խորանին ծառայութիւն կ՚ընեն։ 11—Քանզի ո՛ր անասուններուն արիւնը որ սուրբ տեղը կը տարուի մեղքի համար քահանայապետին ձեռքով, անոնց մարմինները բանակին դուրս կ՚այրուին։ 12—Ուստի Յիսուս ալ, իր արիւնովը ժողովուրդը սրբելու համար, դռնէն դուրս չորցաւ։ 13—Ուրեմն երթ եկինք անոր դուրս, մեր վրայ առնելով անոր նախատինքը։ 14—Վասն զի մենք հոս հաստատուն քաղաք չունինք, հապա հանդերձեալը կը փնտռենք։ 15—Ուստի անոր ձեռքով միշտ ասեն Աստուծոյ օրհնութիւնն պատարագ մատուցանենք, այսինքն շրթունքներուն պտուղը, որոնք իր անունը կը գաւանին։ 16—Իսկ բարեգործութիւնը ու հաղորդութիւնը մոռցուիլ մի ըներ, վասն զի Աստուած այնպիսի պատարագներու կը հաճի։ 17—Հնազանդեցէք ձեր առաջնորդներուն ու հնազանդեցէք անոնց, վասն զի անոնք կը հսկեն ձեր հոգիներուն համար՝ որպէս թէ հաշիւ պիտի տան, որպէս զի խրատիչով ընեն այն էրէնը, և ոչ թէ հառաչելով, վասն զի այն ձեզի օգտակար չէ։ 18—Մեզի համար աղօթք ըրէք, վասն զի մենք հաւատացած ենք թէ ազէկ խղճմտանք ունինք, և ամեն բանի մէջ կ՚ուզենք ազէկ վարուիլ ընենալ։ 19—Եւ մանաւանդ կ՚աղաչեմ որ զայն ըրէք, որպէս զի աւելի չուտով ձեզի դառնամ։

20—Եւ խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն յարուցց մեր Տէր Յիսուսը, որ յաւիտենական ուխտին արիւնովը ոչխարներուն մեծ Հովիւն է, 21—Ձեզ ամեն բարի գործի մէջ հաստատ իր կամքը բնելու, և ձեր մէջ իր առջեւ հաճոյ եղածը բնել Յիսուս Քրիստոսի ձեռքով, որու փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն։

22—Կ՚աղաչեմ ձեզի, եղբայրնե՛ր, այս յորդորական խօսքիս համբերել, վասն զի համառօտապէս գրեցի ձեզի։ 23—Գիտցէք որ մեր եղբայրը Տիմոթէոս արձակուած է, որու հետ, եթէ չուտով գայ, պիտի տեսնեմ ձեզ։ 24—Ողջո՛ւյն ըրէք ձեր բոլոր առաջնորդներուն ու բոլոր սուրբերուն։ Ձեզի բարե՛ւ կ՚ընեն անոնք որ Իտալիայէ են։ Շնորհքը ձեր ամենուն հետ ըլլայ։ Ամէն։

---

*Կամ, գլորի

†Ոմանք կ՚ուզեն, կամ նեռով զարնուի

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

Յակոբոս, Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ, տասներկու ցեղերուն, որ ՚ի նշխ ցրուած կը գտնուիք, ողջոյն։

2—Եղբայրներ, բազմազան փորձութիւններու մէջ ինկած ատենիդ բան մի՛ սեպեցէք, երբ կիմանաք փորձութիւններու մէջ կ՚ելլենաք, 3—ինչուան որ ձեր հաւատքին փորձառութիւնը համբերութիւն կը գործէ։ 4—Բայց համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ, որպէս զի կատարեալ ու ամբողջ ըլլաք, ու բանի մը պակաս չունենաք։

5—Ապա եթէ ձեզմէ մէկը իմաստութենէ պակաս ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ, որ ամէնուն առատապէս կուտայ ու չնախատիր, և անոր պիտի արուի։ 6—Միայն թէ հաւատքով թող խնդրէ ու չերկմտի. վասն զի ան որ երկմիտ է, ծովուն հոսմունքով ու տատանուող ալիքներուն նման է. 7—Այն մարդը թող չկարծէ որ Տէրոջմէ բան մը պիտի առնէ. 8—երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ։

9—Խոնարհ եղբայրը իր բարձրութենէն վրայ թող պարծենայ, 10—ու ան որ հարուստ է, իր խոնարհութենէն վրայ, վասն զի անիկա խոտի ծաղկին պէս պիտի անցնի. 11—Քանզի արեւը առտիկ առտու բիւրով մը կը ծագի ու կը ցամքեցնէ խոտը, և անոր ծաղիկը կը թափի, ու անոր երեւութին գեղեցկութիւնն ալ կը կորսուի. Նոյնպէս ալ հարուստը իր ճամբաներուն մէջ պիտի թառամի։

12—Երանելի է այն մարդը որ փորձութեան կը համբերէ. վասն զի եթէ փորձուելով ընծաը գտնուի, կեանց պսակը պիտի առնէ, զոր Տէրը զինք սիրողներուն խոստացաւ։ 13—Չըլլայ որ մէկը, որ փորձութեան մէջ է, իւր եթէ Աստուծմէ կը փորձուիմ իմ. վասն զի Աստուած չար բաներով չփորձուիր, ոչ ալ ինք մէկը կը փորձէ։ 14—Սակայն ամէն մէկը կը փորձուի՛ իր ցանկութիւնէրէն հրապուրուած ու խաբուած. 15—Ապէ եան ցանկութիւնը յղանալով՝ մեղք կը ծնանի, և մեղքը որ կատարուի՛ մահ կը ծնանի. 16—Մի խաբուիք, իմ սիրելի եղբայրներս. 17—Ամէն բարի պարգեւ և ամէն կատարեալ պարգեւ վերէն է, և լուսոյ Հօրմէն կ՚իջնէ, որուն մէջ բնաւ փոփոխութիւն կամ դառնալու չուքի մը չկայ։ 18—Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը, որպէս զի մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք։ 19—Ուստի, իմ սիրելի եղբայրներս, ամէն մարդ թող չուտ լսելու, ու ծանր՝ խօսելու, և ծանր՝ բարկանալու. 20—Վասն զի մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չգործեր։

21—Ուստի ամէն պատեհութիւնը ու չարութեան առատութիւնը մէկդի ձգելով, հեզութեամբ ընդունեցէք մեր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել։

22—Բայց խօսքը կատարողներ եղէք, և ոչ թէ միայն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով։ 23—Վասն զի եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կատարող չըլլայ, անիկա նման է մարդու մը՝ որ հպարտի մէջ աչքերը անկած իր բնական երեսը կը դիտէ. 24—Վասն զի դիտելով անսա ինքզինք ու անցաւ գնաց, և չատ մը մոռցաւ թէ ի՛նչպիսի մէկն էր։ 25—Բայց ան որ ազատութեան կատարեալ օրէնքին ուշ սրտիկով կը նայի, և անոր մէջ կը կենայ, անիկա նորէ լսող ու մոռցող չըլլալով, հապա գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր կատարելութեան մէջ։ 26—Եթէ՝ մէկը ձիրք կրօնաւոր կը սեպէ ու իր լեզուին սանձ չդնէր, հապա իր սիրտը կը խաբէ, այդիքսեան կրօնաւորութիւնը փուճ է. 27—Աստուծոյ ու Հօրը քով մաքուր ու անարատ կրօնաւորութիւնը այս է. Որբերուն ու այրիներուն անոս նրանց նեղութեան ատեներնին, ու անձը անարատ պահել աշխարհէ։

ԳԼ. Բ

Իմ եղբայրներս, չըլլայ որ այսպիսի քանի բանիք հաւատքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, փառաց Տէրոջ՝ 2—Քանզի եթէ ձեր ժողովքին մէջ մարդ մը մանեայ ըլլայ, որ ունենայ ոսկի մատանի և փառաւոր հանդերձներ, հոն աղքատ մըն ալ մտնելու ըլլայ ապատ հանդերձներով, 3—Ու դուքիք անոր վրայ որ փառաւոր հանդերձներ ունի, ու ըսէք թէ Դուն հոս նստիլ պատուով, և այն աղքատին ըսէք թէ Դուն հոգ ոտքի վրայ կայնէ, կամ նիկոր նստէ պատուանդանիս քով, 4—Չէր միչ խարխափիներ ընդ ու չար խորհրդներու դատաւոր չե՞ք ըլլար։ 5—Սիրելի ըրէք, սիրելի եղբայրներս, չէ՞ որ Աստուած աշխարհի ազքատները ընտրեց, որոնք հաւատքով հարուստ են, ու ժառանգաւորը արքայութեանը զոր ինքը սիրողներուն խոստացաւ։ 6—Բայց դուք աղքատները անարգեցիք. Հարուստները չե՞ն որ ձեզ կը հարստահարեն, ու ձեզ դատաստանարաններուն կը քաշեն. 7—Անոնք չե՞ն որ կը հայհոյեն այն բարի անունը որ ձեր վրայ կանչուած է, 8—Արդ եթէ դուք արքունական օրէնքը կը կատարէք գիրքին ըստ՝ Ընկէր համեմատ, թէ Դուն ընկերդ սիրես քու անձիդ պէս, աղէկ կ՚ընէք. 9—Բայց եթէ աչառութիւն կ՚ընէք, մեղք կը գործէք, և օրէնքէն կը յանդիմանուիք օրինազանցներու պէս։ 10—Քանզի ով որ բոլոր օրէնքը պահէ, ու մէկ բանի մէջ յանցաւոր ըլլայ, անիկա ամէնուն պարտական կ՚ըլլայ։ 11—Վասն զի ան որ ըսաւ թէ Շնութիւն մի ընէր, ըսաւ թէ Մի սպաններ. ուստի եթէ շնութիւն չընես բայց սպաննես ընես, օրինազանց կ՚ըլլաս։ 12—Այնպէս խօսեցէք և այնպէս ըրէք՝ որպէս թէ ազատութեան օրէնքովը պիտի դատուիք։ 13—Վասն զի դատաստանը անողորմ պիտի ըլլայ անոր որ ողորմութիւն չընէր, և ողորմութիւնը կը պարծենայ դատաստանին դէմաց։

14—Ի՞նչ օգուտ է, եղբայրներս, եթէ մէկը ըսէ թէ հաւատք ունի, ու գործ չունենայ. միթէ հաւատքը կրնա՞յ փրկել զանիկա։ 15—Եթէ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլայ, կամ օրուան կերակուրին կարօտ, 16—Ու ձեզմէ մէկը անոնց ըսէ, Գացէք խաղաղութեամբ, տաքցէք ու կշտացէք. և մարմինին պէտք եղած բաներըը անոնց չտաք, ի՞նչ օգուտ է, 17—Այսպէս ալ հաւատքը եթէ էրէն ետ գործ չունենայ, ըստ ինքեան մեռած է. 18—Նոսկ կրնայ մէկը ըսել թէ Դուն հաւատք ունիս, ես ալ գործեր ունիմ. դուն քու հաւատքդ ցոյց բնաւ առանց գործերու, ու ես քեզի ցուցնեմ իմ հաւատքս իմ գործերուս։ 19—Դուն կը հաւատաս որ Աստուած մէկ է. աղէկ կ՚ընես. դեւերն ալ կը հաւատան և կը սարսափին։ 20—Բայց կ՚ուզե՞ս գիտնալ դուն, ով անմիտ մարդ, որ հաւատքը առանց գործերու մեռած է։ 21—Աբրահամ մեր հայրը գործերով չարդարացա՞ւ, երբ իր որդին Իսահակը սեղանին վրայ հանեց զոհ ընելու։ 22—կը տեսնե՞ս որ հաւատքը անոր գործերուն հետ միասին գործեց, ու այն գործերով հաւատքը կատարեալ եղաւ։ 23—Ու գիրքին խօսքը կատարուեցաւ, որ կ՚ըսէ, Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու այն իրեն արդարութիւն սեպուեցաւ. և ինք Աստուծոյ բարեկամ ըսուեցաւ։ 24—Կը տեսնե՞ք որ մարդ գործերով կ՚արդարանայ, ու ոչ թէ միայն հաւատքով։ 25—Նոյնպէս ալ Րահաբ պոռնիկը չէ՞ որ գործերով արդարացաւ, երբ լրտեսները ներս առաւ, և ուրիշ ճամբայով արձակեց զանոնք։

26—Քանզի ինչպես մարմինը առանց հոգւոյ մեռած է, նոյպես ալ հաւատքը առանց գործոց մեռած է։

Գլ. Գ

Եղբայրներս, շատ վարդապետներ մի ըլլաք, գիտնալով որ աւելի մեծ դատաստան պիտի բռնուինք։ 2—Վասն զի ամէնս ալ շատ յանցանքներ կ'ընենք։ Եթէ մէկը խօսքով յանցանք չընէ՝ անոնիկ կատարեալ մարդ է, որ կարող է բոլոր մարմինն ալ սանձել։ 3—Ձիու որ ձիերուն բերանը սանձ կը դնենք, որպէս զի անոնք մեզի հնազանդին, ու անոնց բոլոր մարմինը կը կառավարենք։ 4—Ահա նաւերն ալ ա'րտաք մեծ բաներ են, և աստիկ հովերն կը փչեն, բայց ամենափոքր ղեկով մը կը կառավարուին՝ ղեկավարին կամքը ա'ր կողմը որ ուզէ։ 5—Այսպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, ու մեծ բաներ կը խօսի։ Ահա փիչ մը կրակը ա'րտաք բան բոցի կու տայ։ 6—Լեզուն ալ կրակ մըն է, անիրաւութեան աշխարք մը։ լեզուն մեր անդամներուն մէջ այնպես դրուած է, որ բոլոր մարմինը կ'ապականէ, և բնութեան չրջանը կը բռնկցնէ, ու ինք գեհենէն կը բռնկի։ 7—Բոլոր գազաններուն ու թռչուններուն և սողուններուն ու ծովու մէջ եղածներուն բնութիւնը կը նուաճի՝ և նուաճուած է մարդկային բնութենէն։ 8—Բայց լեզուն մարդոց մէկը չկրնար նուաճել։ անիկա անզսպ չար է, ու մահաբեր թունով լեցուն։ 9—Անով կ'օրհնենք Աստուած ու Հայրը, և անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք Աստուծոյ նմանութեանը ստեղծուած են։ 10—Մէկ նոյն բերնէն կ'ելլէն օրհնութիւն ու անէծք։ եղբայրներս, պէտք չէ որ այսպէս ըլլայ։ 11—Մէթէ աղբիւր մը միևնոյն բերնէն անոյշ ու լեղի կը բղխի՞։ 12—Մէթէ կարելի՞ է, եղբայրներս, որ թզենին ձիթապտուղ բերէ, կամ որթի՝ թուզ. նմանապէս կրնէ չէ որ աղբիւրէ մը ալի ու անոյշ ջուր կելլէ։ 13—Ձեր մէջ իմաստուն ու խելացի ո՞վ կայ. քող անիկա բարի վարմունքովը ցուցնէ իր գործերը իմաստութեան հեզութիւնով։ 14—Ապա եթէ դառն նախանձ և հակառակութիւն ունենաք սիրտերնուդ մէջ, մի պարծենաք ու ճշմարտութիւնը սուտ հանէք։ 15—Այս իմաստութիւնը վերէն իջած չէ, հապա երկրաւոր, չնչաւոր և դիւական է։ 16—Քանզի ուր նախանձ ու կռիւ կայ, հոն է անկարգութիւնը և ամէն չար բաներըր։ 17—Հապա վերին իմաստութիւնը նախ սուրբ է, ետքը խաղաղարար, հեզ, հնար, ողորմութիւնով ու բարի պտուղներով լեցուն, անկեղծաւոր ու անկեղծ։ 18—Ու արդարութեան պտուղը խաղաղութիւնով կը սերմանուի անոնց՝ որոնք խաղաղութիւն կ'ընեն։

Գլ. Դ

Ո՞րկի՞ն պատերազմները, և ո՞րկի՞ կռիւները ձեր մէջ։ չի՞ որ ձեր ցանկութիւններէն՝ որոնք ձեր անդամներուն մէջ կը պատերազմին։ 2—Կը ցանկաք ու չունիք, կը սպաննէք ու կը նախանձիք, և չէք կրնար չէր ուզածին հասնիլ։ կը պատերազմիք ու կը կռուիք, բայց չունիք, վասն զի չէք խնդրեր. 3—կը խնդրէք ու չէք առներ, վասն զի չարաչար կը խնդրէք՝ որպէս զի ձեր ցանկութիւններուն բանեցնէք։ 4—Շնացողներ, չի՞ք գիտեր որ այս աշխարհին սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուստի ով որ կ'ուզէ աշխարհի բարեկամ ըլլալ, ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ։ 5—Կամ քէ կը կարծէք որ գիրքը պարա՞պ տեղ կ'ըսէ Թէ նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին՝։ 6—Սակայն աւելի շնորհք կու տայ. ուստի կ'ըսէ, Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ։ 7—Ուստի հնազանդեցէք Աստուծոյ. Սատանայի հակառակ կեցէք, և անիկա ձեզմէ պիտի փախչի։ 8—Աստուծոյ մօտեցէք, ու անիկա ձեզի պիտի մօտենայ. սրբեցէք ձեռքերնիդ, մեղաւորներ, և մաքրեցէք սիրտերնիդ, երկմիտներ։ 9—Տառապանք քաշեցէք, սուգ բռնէք ու լացէք. ձեր ծիծաղը սուգի դառնայ, ու ձեր ուրա-

*Կամ, կը խօսի. նախանձի՞ կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին

խութիւնը՝ արտասուքեան։ 10—Տէրոջը առջև խոնարհեցէք, ու ան ձեզ պիտի բարձրացնէ։

11—Մէկզմէկ մի բամբասէք, եղբայրներ. ան որ իր եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դատէ, օրէնքը կը բամբասէ և օրէնքը կը դատէ. ուստի եթէ օրէնքը դատես, ալ դուն օրէնքը կատարող չես, հապա դատաւոր։ 12—Մէ՛կն մէկ Օրէնադիր [ու Դատաւոր] կայ, որ կարող է փրկելու և կորնցնելու. դուն ո՞վ ես որ ուրիշը կը դատես։

13—Հիմա մարիկ ըրէք դուք որ կ'ըսէք, Այսօր կամ վաղը երթանք այս անուն քաղաքը ու հոն տարի մը կենանք, և առուտուր ընենք ու վաստկինք։ 14—(Դուք որ վաղը չէք գիտեր. 15—Քանզի ինչ է ձեր կեանքը. չէքուր չոգի մըն է, որ քիչ մը առեն կ'երևնայ ու հետքը կորնչանայ.) ուստի ձեզ ըսելու էիք. Եթէ Տէրը կամենայ ու ապրինք, այս կամ այն բանը ընենք։ 16—Բայց հիմա ձեր ամբարտաւանութիւնով կը պարծենաք. բոլոր այսպիսի պարծանքները չարութիւն են։ 17—Ուստի ով որ բարին ընելը գիտնայ ու չընէ, այն մեզք է անոր

Գլ. Ե

Ա՛ղէ հիմա, հարուստներ, լացէք ու ողբացէք այն թշուառութիւններուն համար՝ որոնք ձեր վրայ պիտի գան։ 2—Ձեր հարստութիւնը ապականած է, ու ձեր հանդերձները՝ ցեցի կերակուր եղած։ 3—Ձեր ոսկին ու արծաթը ժանգոտած է, և անոնց ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ, ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պես. վերջին օրերուն համար գանձ դիզեցիք։ 4—Ահա ձեր արտերը հնձող բանուրներուն վարձքը զոր ետ պահեցիք՝ կ'ազաղակէ, ու հնձողներուն բողոքը զօրաքանց Տէրոջը ականջներուն հասաւ։ 5—Երկրի վրայ փափկութեամբ և հեշտութեամբ ապրեցաք, սիրտերնիդ սնուցիք՝ որպէս թէ մորթատելու օրուան համար։ 6—Դատապարտեցիք ու սպաննեցիք արդարը, որ ձեզի հակառակ չկենար։

7—Ուստի համբերող եղէք, եղբայրներ, մինչև Տէրոջը գալուստը. ահա երկրագործը կը սպասէ երկրի պտուղին պատճին՝ անոր համար համբերով, մինչև առաջին ու վերջին անձրևը առնէ։ 8—Դուք ալ համբերութիւն ըրէք, սիրտերնիդ հաստատ բռնեցէք. վասն զի Տէրոջը գալուստը մօտ է։ 9—Իրարու դէմ մի հառաչէք, եղբայրներ, որպէս զի չդատապարտուիք. ահա Դատաւորը դրան քով կայներ է։ 10—Եղբայրներս, չարչարանքներու և համբերութեան օրինակ առէք մարգոլներըը, որոնք Տէրոջը անուանովը խօսեցան։ 11—Ահա համբերողները երանի կու տանք. Յոբի համբերութիւնը լսեցիք դուք, և Տէրոջը վերջ ըրած վախճանը տեսաք, որ Տէրը բազմագութ ու ողորմած է։

12—Աբդ ամէն բանէ առաջ, եղբայրներս, երդում չընէք, ոչ երկինքի վրայ, ոչ երկրի վրայ, ոչ ալ ուրիշ երդում մը. հապա ձեր այոն այո ըլլայ, և ոչը՝ ոչ, որ չըլլայ Թէ դատապարտութեան տակ իյնաք։

13—Եթէ ձեզմէ մէկը նեղութեան մէջ է, ապրի՛ք Թող ընէ. եթէ մէկը ուրախ է, ապրնա Թող երգէ։ 14—Եթէ ձեզմէ մէկը հիւանդ է, եկեղեցիին երէցներըը Թող կանչէ, ու անոր վրայ ապրի՛ք Թող ընեն, ու Տէրոջը անուանովը իւղով օծեն զանիկա։ 15—Ու հաւատքով եղած ապրի՛քը պիտի փրկէ հիւանդը, ու Տէրը զանիկա ոտք պիտի հանէ, և եթէ մեղք ալ գործեր է, պիտի ներուի անոր։ 16—Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք, ու ապրի՛ք ըրէք իրարու համար, որպէս զի բժշկուիք. արդարին ներկուածը ապրի՛քը չատ ազդութիւն ունի։ 17—Եղիա մեզի պէս կիրքերու ենթակայ մարդ մըն էր, ու ապրի՛ք բրաս որ անձրև չգայ, և երկի՛ք տարի ու վեց ամիս երկրի վրայ անձրև չեկաւ։ 18—Ու նորէն ապրի՛քը բրաս, ու երկինքը անձրև տուաւ և երկիր իր պտուղը բուսցուց։

19—Եղբայրներ, եթէ ձեզմէ մէկը ճշմարտութենէն մոլորի, ու մէկը զանիկա գարձի բերէ, 20—Գիտցած ըլլայ Թէ ան որ մեղաւորը իր մոլորութեան ճամբայեն կը գարձնէ, հոգի մը մահուանէ կ'ազատէ, ու մեղքերու բազմութիւնը կը ծածկէ։

ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

Պետրոս, Յիսուս Քրիստոսի առաքեալ, առաքականներուն որ ցրուած են Պոնտոսի, Գաղատիայի, Կապադովկիայի, Ասիայի ու Բիւթանիայի մէջ, ընտրուած 2—Հօր Աստուծոյ կանխագիտութեանը համեմատ՝ Հոգիին սրբացնելովը, հնազանդութեան և Յիսուս Քրիստոսի արիւնին սրսկուելուն համար. Շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ չատնայ։

3—Օրհնեալ է Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմութեանը համեմատ մեզ նորին ծնաւ կենդանի յոյսի համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը, 4—Անեղծ ու անարատ և անթառամ ժառանգութեանը համար՝ որ երկինքը պահուած է ձեզի, 5—Որ Աստուծոյ զօրութիւնովը պահպանուած եք հաւատքով այն փրկութեանը համար՝ որ պատրաստուած է վերջին ժամանակը յայտնուելու. 6—Որով կ'ուրախանաք, թէև հիմա, ինչպէս հարկը կը պահանջէ, քիչ մը ատեն տրտմած եք զանազան փորձութիւններով. 7—Որպէս զի ձեր հաւատքին փորձառութիւնը (որ կորնչական ոսկիէն աւելի պատուական է, թէև անիկա կրակով կը փորձուի) գտնուի գովութիւնով ու պատիւով և փառքով Յիսուս Քրիստոսի յայտնուելուն ատեն. 8—Զոր դուք չտեսած՝ կը սիրէք, զոր հիմա չէք տեսներ, բայց կը հաւատաք, և ուրախ եք անպատմելի ու փառաւորեալ ընդունելութիւնով. 9—Ձեր հաւատքին վախճանը ընդունելով, այսինքն հոգիներնուդ փրկութիւնը. 10—Որ այն փրկութեանը համար փնտռեցին ու քննեցին մարգարէները՝ որոնք մարգարէացան ձեզի ըլլալու շնորհքին համար. 11—Ու կը քրննէին թէ ե՛րբ կամ ի՛նչպիսի ատեն կ'իմացնէր իրենց մէջ եղած Քրիստոսի Հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի չարչարանքը, ու անկէ ետև փառաւորութիւը։ 12—Որոնց յայտնեցաւ, որովհետև ոչ թէ իրենց՝ հապա մեզի մատակարարելին այն բաները, որոնք հիմա ձեզի պատմեցան անոնց ձեռքով՝ որ աւետարանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով որ երկինքէն ղրկուեցաւ. որ այն բաներուն՝ հրեշտակները կը ցանկան ակնկառոյց նայիլ։

13—Ուստի ձեր միտքերուն մէջը գօտեւորած՝ արթուն կեցած, կատարեալ յուսացէք այն ձեր վրայ հասնելու շնորհքին, Յիսուս Քրիստոսի յայտնուելուն ատեն. 14—Հնազանդ զաւակներու պէս, ոչ թէ ձեր ագահութեան առեներն առաջին ցանկութիւններովը վարուելով, 15—Հապա ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարմունքներուն մէջ. 16—Վասն զի գրուած է թէ Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ. 17—Ու եթէ Հայր կը կոչէք զանիկա՝ որ առանց աչառութեան կը դատէ ամէն մէկուն գործին համեմատ, ուրեմն ձեր պանդխտութեան ժամանակը վախով անցուցէք. 18—Գիտնալով որ դուք ոչ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցաք ձեր հայրերէն ստացուած ունայն ճամբաներէն, 19—Հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝ որպէս

թէ տարիի ու անարատ գառի մը. 20—Որ առաջարքէ ճանչցուած էր աշխարհի սկիզբէն առաջ, ու վերջին ատեններուը յայտնուեցաւ ձեզի համար, 21—Որուն միջոցով Աստուծոյ հաւատացիք, որ զանիկա մեռելներէն յարուցաւ, և անոր փառաւորութիւն տուաւ. որպէս զի ձեր հաւատքը ու յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ. 22—Ձեր անձերը մաքրելով հնազանդութեան միջոցաւ՝ չնչաբաւութեանը հնազանդելով, եղբայրասիրութեան մէջ անկեղծ ըլլալով, աւելի սրտով միկզմիկ պինդ սիրեցէք. 23—Նորէն ծնած ըլլալով՝ ոչ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը. 24—Վասն զի ամէն մարմին խոտի պէս է, և մարդուն բոլոր փառաւորութիւը՝ խոտի ծաղկի պէս. խոտը կը չորնայ ու անոր ծաղիկը կը թափի փի. 25—Բայց Տէրոջ խօսքը յաւիտեան կը մնայ. այսինքն է այն խօսքը որ աւետարանով ձեզի քարոզուեցաւ։

ԳԼ. Բ

Ուրեմն ամէն չարութիւը ու ամէն խաբէութիւը ու կեղծաւորութիւնները, և նախանձը ու ամէն չարախօսութիւը, 2—Նորածին մանուկներու պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որպէս զի անով մեծնաք (միտք. փրկութիւը), 3—Եթէ Տէրոջը քաղցր ըլլալուն համը առիք. 4—Որու մօտենալով, այն կենդանի վէմին, որ թէպէտ մարդոցմէ անարգուած է, բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական է, 5—Դուք ալ կենդանի քարերու պէս շինուիք Հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը, Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ համճլի հոգեւոր պատարագներ մատուցանելու. 6—Որովհետև գիրքին մէջ ալ կայ թէ Ահա Սիոնի մէջ ընտիր, պատուական անկիւնի վէմ մը կը դնեմ, և ով որ անոր հաւատայ՝ չնաս պիտի չամչնայ. 7—Ուստի ձեզի հաւատացեալներուդ պատուական է ան, բայց անհաւատներուն՝ այն քարը զոր չիշողները անարգեցին՝ անիկա անկիւնին գլուխը եղաւ. 8—Ու գլորման վէմ ու գայթակղութեան քար անոնց՝ որ չհնազանդելով խօսքին կը գայթակղին, որուն նշանակուած ալ էին. 9—Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, քահանայական թագաւորական ժողովուրդ մը, սեպհական ժողովուրդ մը, որպէս զի քարոզէք անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց. 10—Որ ատեն մը ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա ողորմութիւն գտաք։

11—Սիրելիներ, կ'աղաչեմ, պանդուխտներու և օտարականներու պէս մկրէի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն, որոնք հոգիի դէմ կը պատերազմին. 12—Ձեր վարմունքը հեթանոսներուն մէջ բարի պահելով, որպէս զի ինչ բանով որ ձեզ չարագործներու պէս կը բամբասեն, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառաւորեն զԱստուած այցելութեան օրը. 13—Ուստի հնազանդեցէք ամէն մարդկային սահմանադրութեան Տէրոջը համար, թէ՛ թագաւորին՝ վերադոպրն մէկուն պէս, 14—Թէ՛ կուսակալներուն՝ անոր կողմն ղրկուածներու պէս, չարագործներուն պատիժ ելլու և բարեգործներուը գովելու համար. 15—Վասն զի Աստուծոյ կամքը այսպէս է, որ բարեգործ ըլլալով՝ անխիլք մարդոց տգիտութիւնը պապանձեցնէք. 16—Ազատներու պէս ըլլալով, և ոչ թէ չէր ազատութիւնը չարութեան ծածկոցի մը պէս գործածելով, հապա Աստուծոյ ծառաներու պէս. 17—Ամէնը պատուեցէք. եղբայրութիւնը սիրեցէք. Աստուծմէ վախցէք. թագաւորը պատուեցէք։

18—Տնտէրները ամէն բանի մէջ վախով հնազանդ ըլլան ի՛րենց տէրերուն, ոչ թէ միայն բարիրարքներուն ու հեզերուն, հապա ժանտաբարքներուն ալ. 19—Քանզի այս շնորհք մըն է, եթէ մէկը առ Աստուած ունեցած խղճմտանքովը ածիրատ տեղ կրած վիշտերուն համբերելու ըլլայ. 20—Վասն զի ի՞նչ գովութիւն կ'ըլլայ չէ՛, եթէ մեղք գործելով ծեծուիք ու համբերէք. այլ եթէ բարիք գործելով չարչարուիք ու

համբերեցք, ասիկա Աստուծոյ փառ չբնորհք մըն է։ 21—Քանզի դուք այս բանին համար կանչուեցաք. վասն զի Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ, ու ձեզի օրինակ թողուց՝ որպէս դի իր շաւիղներուն հետեւիք. 22—Որ մեղք մը չգործեց, ու իր բերնին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ. 23—Որ կը նախատուէր, և փոխարէնը չէր նախատեր. կը չարչարուէր, ու սպառնալիք չէր բներ. հապա ինքզինք արդարութեամբ դատողին կը յանձնէր. 24—Որ մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց, որպէս զի մենք մեղքերուն ազատինք, ու արդարութեան համար ապրինք. որուն վիրքերովը դուք բժշկուեցաք. 25—Վասն զի մոլորեալ ոչխարներու պէս էիք, բայց հիմա ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք.

Գլ. Գ

Նմանապէս կիներըդ հնազանդ ըլլան իրենց այրերուն, որպէս զի եթէ ոմանք խօսքին հնազանդ չըլլան ալ, առանց խօսքի շահուին կիներուն վարուելովը, 2—Տեսնելով ձեր երկիւղած պարկեշտ վարքը։ 3—Որոնց զարդարանքը ըլլայ դրսէն մազերու հիւսուածքներով և ոսկիներու չորթերով կամ չէզ հանդերձներ հագնելով. 4—Հապա սրտին ծածուկ մարդը՝ անեղծութիւնով հեզ ու հանդարտ հոգիին չքնաղ ըլլալ, որ Աստուծոյ առջեւ խիստ պատուական է։ 5—Վասն զի առանձնօք սուրբ կիներըդ, որոնք իրենց յոյսը Աստուծոյ վրայ դրած էին, անձերնին այսպէս կը զարդարէին՝ իրենց այրերուն հնազանդ ըլլալով. 6—Ինչպէս Սառա հնազանդ էր Աբրահամի, և զանիկա տէր կը կոչէր. որ դուք բարեգործ ըլլալով ու երկիւղ մը չվախնալով՝ անոր զաւակները կ'ըլլաք։

7—Նմանապէս այրերը խոհեմութիւնով անոնց հետ բնակին, տկար անօթի պէս պատիւ տալով կիներուն, իբրև կենաց շնորհքին ժառանգակիցներու, որպէս զի ձեր աղօթքներուն արգելք չըլլայ։

8—Վերջապէս ամէնդ մէկ միտքի վրայ ըլլաք, կարեկից, եղբայրասէր, ողորմած ու *քաղցրաբարոյ։ 9—Չըլլալ որ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէք, կամ նախատինքի փոխարէն նախատինք. այլ ընդհակառակն օրհնեցէք, գիտնալով որ այս բանին համար կանչուեցաք, որպէս զի օրհնութիւն ժառանգէք. 10—Վասն զի ան որ կ'ուզէ կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, իր լեզուն թող դադրեցնէ չարութենէ, ու իր շրթունքները՝ նենգութիւն խօսելէ. 11—Չարութենէ հեռանայ ու բարութիւն ընէ, խաղաղութիւն փնտռէ և անոր հետեւի երթայ։ 12—Վասն զի Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են, ու իր ականջները՝ անոնց ազօթքին. բայց Տէրոջը երեսը չարագործներուն վրայ է. 13—Ու ո՞վ ձեզի չարիք մը պիտի հասցնէ՝ եթէ դուք բարիին հետեւող ըլլաք. 14—Բայց եթէ արդարութեան համար չարչարիք ալ՝ երանելի եք. և անոնց ահէն մի վախնաք ու մի չխոթիք. 15—Հապա Տէր Աստուածը սրբեցնեցէք ձեր սրտերը պահելէք. և միշտ պատրաստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ պատասխան տալու ամէնուն որ ձեր ունեցած յոյսին պատճառը ձեզի կը հարցնեն. 16—Ու բարի խղճմտանք ունենաք, որպէս զի ի՛նչ բանով որ ձեզ կը բամբասեն իբրև չարագործներ, ամօթով ձեան անոնք՝ որ Քրիստոսով եղած ձեր բարի վարմունքը կը պախարակեն. 17—Վասն զի աւելի պզտիկ է բարեգործութիւն ընելով չարչարուիլ, եթէ Աստուծոյ կամքը այն ըլլայ, քան թէ չարագործութիւն ընելով. 18—Վասն զի Քրիստոս ալ մեղքի համար մէկ անգամ չարչարուեցաւ, Արդարը անարդարներուն վրայ, որպէս զի մեզ Աստուծոյ մտուցնէ. որ թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի եղաւ հոգիով. 19—Որով բանտի մէջ եղած հոգիներուն ալ գնաց ու քարոզեց. 20—Որոնք առեն մը ապստամբ էին, երբ Աստուծոյ երկայնմտութիւնը կը համբերէր անոնց նոյն օրերը՝ երբ տա-

*Ոմանք, խոնարհ

պանը կը շինուէր, որուն մէջ քիչ անձեր, այսինքն ութ հոգի, ջուրէն ապրեցան. 21—Որ մեզ ալ այն օրինակին պէս մկրտութիւնը հիմա կ'ապրեցնէ, (ոչ թէ մարմինէն ազտը մեկնի ձգելը, հապա բարի խղճմտանքին փկայութիւնը առ Աստուած,) Յիսուս Քրիստոսի յարութիւնովը. 22—Որ երկինք գացած՝ Աստուծոյ աջ կողմն է, հրեշտակներուն ու իշխանութիւններուն և զօրութիւններուն իրեն հնազանդելովը։

Գլ. Դ

Ուստի որովհետեւ Քրիստոս մեզի համար չարչարուեցաւ մարմնով, դուք ալ նոյն միտքով զինուեցէք. վասն զի ան որ մարմնով չարչարուեցաւ, մեղքէն գադարած է. 2—Որպէս զի ա՛լ չեն մարդոց ցանկութիւններուն պէս՝ հապա Աստուծոյ կամքին պէս ապրիք մարմնին մէջ մնացած ատեն. 3—Վասն զի հերիք է մեզի կեանքի անցեալ ժամանակը, որուն մէջ հեթանոսներուն կամքը կատարեցինք, ու գիտութիւններով, ցանկութիւններով, գինեմոլութիւններով, անառակութիւններով, արբեցութիւններով ու անօրէն կապուտութիւններով վարուեցանք. 4—Ու այս բանին կը զարմանան՝ որ դուք նոյն չափազանց անառակութեան մէջ անոնց հետ չեք վազեր, ու հայհոյութիւն կընեն. 5—Որոնք պատասխան պիտի տան անոր՝ որ պատրաստ է դատել կենդանիները ու մեռելները. 6—Քանզի սուրբ հաստ մեռելներուն ալ աւետարանը քարոզուեցաւ, որպէս զի դատուին մարդոց կողմանէ մարմինով, ու կենդանի եղաւ հոգիով. 7—Սակայն ամէն բանի վախճանը մօտեցեր է. ուստի զգաստ եղէք ու աղօթքի մէջ արթուն կեցէք. 8—Ու ամէն բանէ առաջ իրարու հետ սրտանց սէր ունեցէք. վասն զի սէրը մեղքերու բազմութիւնը կը ծածկէ. 9—Իրարու հիւրասիրութիւն ցուցուցէք առանց տրտունջ ընելու. 10—Ամէն մէկը ինչ տեսակ շնորհք որ առաւ, զանիկա իրարու

*Ոմանք կ'ուզէ

ալ ծառայեցնելով՝ Աստուծոյ գանագան շնորհքին բարի տնտեսներուն պէս. 11—Եթէ մէկը խօսի, Աստուծոյ պատգամներուն պէս խօսի. եթէ մէկը ծառայէ, Աստուծոյ զօրութենէն ծառայէ. որպէս զի ամէն բանի մէջ Աստուած փառաւորուի Յիսուս Քրիստոսի ձեռքովը. որուն փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից, Ամէն.

12—Սիրելիներ, ասոր բան մի տեսնէք այն նեղութիւն բորբոքը, որ ձեզ փորձելու համար կ'ըլլայ, որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած է. 13—Հապա ուրախ եղէք՝ քանի որ Քրիստոսի չարչարանքներուն հաղորդ եղած եք, որպէս զի անոր փառքին յայտնուելու առեն ալ ցնծութեամբ ուրախանաք. 14—Եթէ Քրիստոսի անուանը համար նախատուիք, երանելի եք. վասն զի փառաց [և զօրութեան] և Աստուծոյ Հոգին ձեր վրայ հանգչած է. *արդարև անանց կողմանէ կը հայհոյուի անիկա, բայց ձեր կողմանէ կը փառաւորուի. 15—Չըլլայ որ ձեզմէ մէկը չարչարուի իբրև մարդասպան, կամ գող, կամ չարագործ, կամ իբրև ուրիշին բանին խառնուող. 16—Բայց եթէ Քրիստոսեան իբրև Քրիստոսեան՝ թող չամչնայ, հապա այս մասին թող Աստուծոյ փառք տայ. 17—Քանզի ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ առնէն սկսի. և եթէ առաջ մեզմէ իշ ալ, հապա անանց վերջը ինչ պիտի ըլլայ՝ որոնք Աստուծոյ աւետարանին չեն հնազանդիր. 18—Ու եթէ արդարը դժուարաւ կը փրկուի, հապա ամբարիշտը ու մեղաւորը ո՞ւր պիտի գտնուի. 19—Ուստի անոնք որ Աստուծոյ կամքին համեմատ կը չարչարուին, բարիք գործելով իրենց հոգիները քեզ ուրանչանեն, իբրև հաւատարիմ Ստեղծողին.

Գլ. Ե

Ձեր մէջ եղող երէցներուն կ'ազաչեմ, ես ու անանց պես երէց ըլլալովս, ու Քրիստոսի չարչարանքներուն վկայ,

և յայտնութիւն հանդերձեալ փառքին մասնակից։ 2—Աստուծոյ հօտ որ ձեր մէջ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ոչ թէ ակամայ՝ հապա կամաւ, ոչ թէ անարգ չահախնդրութեամբ՝ հապա յօժարութեամբ։ 3—Ոչ թէ վիճակներուն վրայ տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլալով։ 4—Եւ Հովապետին երեւցած ատենը փառաց անթառամ պսակը պիտի ընդունիք։

5—Նմանապէս դուք, երիտասարդներ, հնազանդ եղէք ծերերուն. և ամէնդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. վասն զի Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն չնորհք կուտայ։ 6—Ուրեմն Աստուծոյ հզօր ձեռքին տակ խոնարհեցէք, որպէս զի ձեզ ժամանակին բարձրացնէ։ 7—Ձեր ամէն հոգը անոր ձգեցէք, վասն զի անիկա ձեզի համար կը հոգայ։

8—Արթուն կեցէք, հսկեցէք, վասն զի ձեր հակառակորդը Սատանայ, մռնչող առիւծի պէս կը պտտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ։ 9—Որու դիմ կեցէք հաստատուած հաւատքով, գիտնալով որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչարանքները կը կրեն։

10—Եւ բոլոր չնորհաց Աստուածը, որ մեզ իր յաւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսի ձեռքով, քիչ մը տանն նեղութիւն կրելէդ ետքը, ինք ձեզ կատարեալ ընէ, հաստատէ, զօրացնէ ու հիմնէ։ 11—Իրեն փառք և զօրութիւն յաւիտեան յաւիտենից։ Ամէն։

12—Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռքով, (ինչպէս ես կը կարծեմ,) համառօտ մը ձեզի գրեցի, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ չնորհքը, որուն մէջ հաստատ կեցեր էք։ 13—Բաբել կ'ընտրեալ ձեզի Բաբելոնի մէջ եղած Եկեղեցին որ Յէհէ հետ բնարտած է, ու իմ որդիս Մարկոս ալ։ 14—Բարեւ տուէք իրարու սիրոյ համբոյրով։ Խաղաղութիւն ձեր ամէնուն հետ որ Քրիստոս Յիսուսի մէջ էք։ Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

Ես Սիմէոն Պետրոս, Յիսուս Քրիստոսի ծառայ և առաքեալ, Յէհէ՝ որ մեզի հետ նոյն պատուական հաւատքին հասած մեր Աստուծոյ ու Փրկչին Յիսուս Քրիստոսի արդարութիւնովը։ 2—Շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ աճելոյ Աստուծոյ ու մեր Տէրոջ Յիսուսի գիտութիւնովը։

3—Ինչպէս իր աստուածային զօրութիւնը կենաց և աստուածպաշտութեան վերաբերեալ ամէն բաները մեզի տուաւ անոր գիտութիւնովը՝ որ մեզ փառքով ու առաքինութիւնով հրաւիրեց։ 4—Որոնցմով ամենամեծ ու պատուական խոստումնքներ արուած են մեզի, որպէս զի անոնցմով աստուածային բնութեանը հաղորդ ըլլաք՝ աշխարհի մէջ ցանկութենէ եկած ապականութենէն փախչելով։ 5—Եւ այս բաներն համար բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքին վրայ առաքինութիւն աւելցուցէք, ու առաքինութեան վրայ գիտութիւն, 6—Ու գիտութեան վրայ ժուժկալութիւն, ու ժուժկալութեան վրայ համբերութիւն, և համբերութեան վրայ աստուածպաշտութիւն, 7—Ու աստուածպաշտութեան վրայ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան վրայ սէր։ 8—Վասն զի քանի որ այս բաները ձեր վրայ կը գտնուին ու կ'աճին, պարապ ու անպտուղ չեն ըներ Յէհէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գիտութեանը մէջ։ 9—Բայց որուն քով որ այս բաները չկան, անիկա կոյր է ու կարճատես, որ մոռցեր է իր առաջուան մեղքերուն մաքրութիւնը։

10—Ասոր համար, եղբայրնե՛ր, աւելի ջանք ըրէք որ ձեր կոչումը ու ընտրութիւնը հաստատուի, վասն զի զայս բնեցլով՝ բնաւ պիտի չվրիպիք։ 11—Քանզի այսպէս ձեզի առատապէս պիտի չնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը մտնել։

12—Ուստի ես միշտ այս բաները միտքերնիդ ձգելու վրայով պատրաստ պիտի չըլլամ, թէև գիտէք և հաստատուած եք ներկայ ճշմարտութեան վրայ։ 13—Եւ իրաւունք կը սեպեմ, քէ քանի որ այս *մարմինին մէջ եմ, միտքերնիդ ձգելով ձեզ արթնցնեմ։ 14—Քանզի գիտեմ որ ես չուտով այս իմ մարմինս պիտի մերկանամ, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսը յայտնեց ինծի։ 15—Ուստի պիտի ջանամ որ իմ այրեալ ելլելէս ետքն ալ միշտ կարող ըլլաք այս բաները յիշել։ 16—Վասն զի ոչ թէ մեծ վարպետութեամբ հնարուած առասպելներու հետեւ երթալով՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը ու գալուստը ձեզի ցուցուցինք, հապա անոր մեծափառութեանը ականատես ըլլալով։ 17—Վասն զի ինք Հօր Աստուծմէ փառք ու պատիւ առաւ, այն մեծավայելչութենէն ձայն մը գալով, թէ Աւետիկ է իմ սիրելի Որդիս, որու հաւներ եմ։ 18—Եւ այս երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք, որու հետ էինք սուրբ լեռանը վրայ։ 19—Եւ մարգարէական խօսքն ալ ունինք՝ որ աւելի հաստատուն է, ու ազէկ կ'ընէք՝ երբ անոր մտադրութիւն ընէք, որպէս թէ մութ տեղ լոյս

*Յոյն. վրանին

առաջ երգի մը, մինչև ցօրկը լուսնայ ու արեւածագը սիրաերնդ մէջ ծագի։ 20—Բայց առաջ զայս գիտացք, որ գրոց ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի։ 21—Վասն զի մարգարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չբերուեցաւ, հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան։

Գլ. Բ

Բայց սուտ մարգարէներ ալ կ'ըլլային ժողովրդին մէջ, ինչպէս ձեր մէջ ալ սուտ վարդապետներ պիտի ըլլան, որոնք գաղտուկ պիտի մտցնեն կորստական հերձուածողութիւններ, ու զիրենք ծախու առնող Տէրը ուրանալով՝ իրենց վրայ պիտի բերեն արագահաս կորուստ։ 2—Ու չատերը անոնց *կորստական բնաւորութիւնն եւեւէն պիտի երթան, որոնց համար ճշմարտութեան ճամբան պիտի հայհոյուի։ 3—Ու ագահութենով՝ խորամանկութեամբ հնարուած խօսքերով ձեզ վաճառականութեան պիտի գործածեն. որոնց դատապարտութիւնը չուանգալի դատաստանով՝ չի յանար, ու անոնց կորուստը չմթիփեր։

4—Վասն զի եթէ Աստուած մեղք գործող հրեշտակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել տուաւ։ 5—Ու առաջուան աշխարհին ալ չխնայեց. միայն թէ Նոյ ութերորդ՝ ՀՂՇ, արդարութեան քարոզիչը, պահեց, երբ յորհնեղը ամբարիշտներուն աշխարհին վրայ բերաւ։ 6—Ու Սոդոմի ու Գոմորի քաղաքները մոխիր դարձնելով՝ կործանելով դատապարտեց, եւ քիչ ամբարշտութիւն ընելու մարդոց օրինակ ընելով զանոնք։ 7—Ու ազատեց արդար Ղովթը, որ անօրէններուն անառակ վարմունքին ձանձրացեր էր. 8—(Վասն զի այն արդարը անոնց մէջ կենալով՝ այքովը տեսնելով ու լսելով, օրէ օր էր արդար հոգին կը տանջէր անոնց անօրէն վարմունքովը.) 9—Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատել, և անիրաւները տանջանքի համար դատաստանի օրուան պահել։

10—Մանաւանդ անոնք որ պղծութեան ցանկութեամբ մարմնի ետեւէ կ'երթան, և տէրութիւնը կ'անարգեն, ինքնահաճ ու յանդուգն են, չեն փախար փառաւորներուն դէմ հայհոյել։ 11—Երբ հրեշտակները, որ ուժովութեամբ ու զօրութիւնով մեծ են, Տէրոջը առջեւ հայհոյութեամբ դատապարտութիւն չեն բերեր անոնց վրայ։ 12—Բայց սոսկ անբան անասուններու պէս, (որ բնականաբար որսի ու ապականութեան համար եղած են,) չգիտցած բաներուն դէմ կը հայհոյեն, և իրենց ապականութիւնովը պիտի ապականին, 13—Անիրաւութեան վարձքը ընդունելով. որ ցորեկուան մէջ եղած զեղումները զուարճութիւն կը սեպեն. արատ ու րիծ են, իրենց խաբէութիւններովը զուարճանալով՝ երբ ձեզի հետ կերակուր մի կը նստին։ 14—Շնութեամբ լեցուն աչքեր ունին, որ մեղքէ չեն դադարիր. անհաստատ հոգիները կը խաբեն. ագահութեան սովրած սիրտեր ունին. անիծեալ զաւակներ են. 15—Երեսակ ճամբան ձգելով մոլորեցան՝ Բէովրեան Բաացամի ճամբան հետեւելով, որ անիրաւութեան վարձքը սիրեց։ 16—Բայց իր անօրէնութեանը յանդիմանութիւնը առաւ. անխօս էշը մարգկային ձայնով խօսելով՝ մարգարէին յիմարութիւնը արգիլեց։ 17—Ասոնք լուր չունեցող աղբիւրներ են, ու փոթորիկէ քշուած մէգեր, որոնց համար քաւեր խաւարը պահուած է յաւիտեան։ 18—Քանզի ունայնութեան հպարտ խօսքեր ընելով՝ գիտութիւններով, մարմնի ցանկութիւններով կը խաբեն զանոնք որ փիչ մը առաջ փախեր էին անոնցմէ՝ որ մոլորութեան մէջ կը պտըտին։ 19—Անոնց ազատութիւն կը խոստանան, և իրենք ապականութեան ծառաներ են. վասն զի ի՛նչ բանէ որ մէկը յաղթուի, անոր ծառայ ալ կ'ըլլայ։ 20—Վասն զի եթէ Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի գիտութիւնովը աշխարհի պղծութիւններէն հրաժարելէ ետեւ՝ դարձեալ այն բաներուն բռնուած յաղթուին, անոնց վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ։ 21—Վասն զի ապրկ էր անոնց՝ որ ճանաչութեան ճամբան ճանչցած չըլլային, քան թէ ճանչնալով ետ դառնային սուրբ պատուիրանէն՝ որ իրենց յանձնուեցաւ։ 22—Սակայն անոնց հանդիպեցաւ ճշմարիտ առակին բանը, թէ Շունը դարձեալ իր փսխածին կը դառնայ, ու լուացած խոզը՝ ցեխի մէջ թաւալգլորելու։

Գլ. Գ

Սիրելիներ, այս երկրորդ թուղթը հիմա ձեզի կը գրեմ, որով ձեր անկեղծ միտքը կ'արթնցնեմ յիշելու, 2—որպէս զի սուրբ մարգարէներէն առաջուընէ գրուցած խօսքերը, և մեր, այսինքն Տէրոջը ու Փրկիչին առաքելներուն, պատուիրները միտքերնիդ բերէք։ 3—Բայց առաջ զայս գիտացք, որ վերջին օրերը ծաղր բնդացնիր պիտի գան, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի գային։ 4—Ու պիտի ըսեն, Ո՞ւր է անոր գալուն խոստումնը, վասն զի քանի որ հայրերը քնացան, ամէն բան այնպէս կայ կը մնայ արարածներուն սկիզբէն հետե։ 5—Քանզի անոնք (որոնց ուշադրը այս է,) այն բանը մոռցեր են, թէ երկինք առաջուընէ եղան, ու երկիր ջուրերէն և ջուրերով հաստատ կեցեր է Աստուծոյ խօսքովը։ 6—Որով հին աշխարհը ջրհեղեղով ապականուած կորսուեցաւ։ 7—Ու հիմակուան երկինքը ու երկիրը նոյն խօսքով պահպանուած են, մինչև դատաստանին ու ամբարիշտ մարդոց կորստին օրը կրակի համար պահուած, 8—Ու այս մէկ բանը ձեզմէ ծածուկ չմնայ, սիրելիներ, որ Տէրոջը քով մէկ օրը հազար տարուան պէս է, ու հազար տարին՝ մէկ օրուան պէս։ 9—Տէրը չուշացներ էր խոստմունքը, ինչպէս անանք ուշացուցած կը սեպեն, հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ, կամ զի չուզեր որ մէկը կորսուի, հապա որ ամէնը ապաշխարութեան գան։ 10—Սակայն Տէրոջը օրը *գողի պէս պիտի գայ, որ ատեն երկինք սաստիկ շառաչիւնով պիտի անցնին, ու տարերքները բռնկած պիտի լուծուին. երկիր ալ, ու ինչ գործեր որ անոր մէջ կը գտնուին, պիտի այրուին։ 11—Ուստի որովհետեւ այս ամէն բաները պիտի լուծուին, ձեզի ինչպիսի մարդերով ըլլալ կը վայելէ սուրբ վարմունքով ու բարեպաշտութեամբ, 12—Ու արագացնել Աստուծոյ օրուանը գալուն, որուն մէջ երկինք կրակով այրուած պիտի լուծուին, ու տարերքները բռնկած պիտի հալին։ 13—Մակայն իր խոստմունքին համեմատ, նոր երկինքի ու նոր երկրի մը կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը բնակի։

14—Ուստի, սիրելիներ, ասոնց սպասելով ջանացէք, որ ան ձեզ սրբի ու անարատ գտնէ խաղաղութեամբ։ 15—Ու մեր Տէրոջը երկայնամտութիւնը փրկութիւն սեպեցէք. ինչպես մեր սիրելի եղբայրը Պօղոս ալ իրեն տրուած իմաստութիւնովը գրեց ձեզի. 16—Ինչպես ամէն թուղթերուն մէջ ալ այս բաներուն վրայով կը խօսի. որոնց մէջ քանի մը դժուարիմաց խօսքեր կը գտնուին, զորոնք տգէտները ու անհաստատները ծուռ կոպմը կը դարձնեն, ինչպես ուրիշ գիրքերուն ալ՝ իրենց անձին կորուսանի համար։ 17—Ուրեմն դուք, սիրելիներ, առաջուընէ գիտնալով զգոյշ եղէք, որ չրլլայ թէ անօրէններուն խաբէութենէն բռնուած՝ ձեր հաստատութենէն իյնաք. 18—Հապա աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը. անոր փառք հիմա ալ ու միշտ յաւիտենական օրն ալ։ Ամէն։

*Ոմանք, գիշերուան գողի

*Ոմանք, անառակութիւններուն

ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

Կենաց Բանին վրայով որ սկիզբն էր, որու համար լսեցինք, զոր մեր աչքերովը տեսանք, որու նայեցանք ու մեր ձեռքերը չոշափեցին. 2—(Ու կեանքը յայտնուեցաւ, ու տեսանք և կը վկայենք ու ձեզի կը պատմենք այն յաւիտենական կեանքը, որ Հօրը քով էր ու մեզի յայտնուեցաւ.) 3—Զայն որ տեսանք ու լսեցինք, ձեզի կը պատմենք, որպէս զի դուք ալ մեզի հետ հաղորդութիւն ունենաք. և մեր հաղորդութիւնը Հօրը հետ է՝ ու իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ. 4—Ու այս բաները կը գրենք ձեզի, որպէս զի մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ.

5—Ու սա՛կս է այն պատգամը զոր իրմէ լսեցինք ու ձեզի կը պատմենք, թէ Աստուած լոյս է, ու անոր մէջ բնաւ խաւար չկայ. 6—Եթէ ըսենք թէ Անոր հետ հաղորդութիւն ունինք, ու խաւարի մէջ պարունք, սուտ կը դուրցենք և ճշմարտութիւնը չենք բներ. 7—Ապա եթէ լոյսի մէջ քալենք, ինչպես անոր լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք, ու անոր որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ. 8—Եթէ ըսենք թէ Մենք մեղք մը չունինք, ինքզինքնիս կը խաբենք, ու մեր մէջ ճշմարտութիւն չկայ. 9—Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր մեղքերուն թողութիւնն տալու, և մեզ բոլոր անիրաւութիւնէ սրբելու. 10—Եթէ ըսենք թէ Մեղք մը չգործեցինք, սուտցուցած կ'ընենք զանիկա, ու անոր խօսքը մեր մէջ չէ,

ԳԼ. Բ

Իմ որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, որպէս զի մեղք չգործէք. և եթէ մէ՛կը մեղք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարը. 2—Ու անիկա մեր մեղքերուն քաւութիւն է, և ոչ թէ միայն մերին, հապա բոլոր աշխարհի ալ.

3—Ու սապէ դիտենք թէ զանիկա ճանչցանք, եթէ անոր պատուիրանքներն պահենք. 4—Ան որ կ'ըսէ թէ ես զանիկա ճանչցայ, ու անոր պատուիրանքները չպահեր, սո՛ւտ է, ու անոր մէջ ճշմարտութիւն չկայ, 5—Բայց ան որ անոր խօսքը կը պահէ, իրաւցն իր մէջ կատարեալ է Աստուծոյ սէրը. սապէ կը ճանչնանք թէ անոր մէջ ենք. 6—Ան որ կ'ըսէ թէ անոր մէջ կը բնակի, այնպէս պէտք է քալէ՝ ինչպէս անիկա քալեց.

7—Ո՛ղբայրներ, ոչ թէ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի, հապա այն հին պատուիրանքը զոր սկիզբէն ի վեր ունէիք. և հին պատուիրանքը այն խօսքն է, զոր դուք սկիզբէն լսեցիք. 8—Դարձեալ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի, որ ճշմարիտ է անոր մէջ ու ձեր մէջ. վասն զի խաւարը կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կ'երեւնայ. 9—Ան որ կ'ըսէ թէ լոյսի մէջ է, ու իր եղբայրը կ'ատէ, անիկա տակաւին խաւարի մէջ է. 10—Ան որ իր եղբայրը կը սիրէ, լոյսի մէջ կը բնակի, ու իր մէջ գայթակղութիւն չկայ. 11—Բայց ան որ իր եղբայրը կ'ատէ, խաւարի

*Ո՛ռնե, Սիրելիներ

մէջ է ու խաւարի մէջ կը քալէ, ու չգիտեր թէ ո՛ւր կ'երթայ, վասն զի խաւարը անոր աչքերը կուրցուցեր է.

12—Կը գրեմ ձեզի, որդեակներ, վասն զի ձեր մեղքերը թողուած են անոր անունին համար. 13—Կը գրեմ ձեզի, Հայրեր, վասն զի դուք ճանչցաք զանիկա որ սկիզբէն է. Կը գրեմ ձեզի, երիտասարդներ, վասն զի դուք յաղթեցիք. 14—Կը գրեմ ձեզի, տղաքներ, վասն զի դուք ճանչցաք Հայրը. Գրեցի ձեզի, Հայրեր, վասն զի դուք ճանչցաք զանիկա որ սկիզբէն է. Գրեցի ձեզի, երիտասարդներ, վասն զի դուք ուժով էք, և Աստուծոյ խօսքը ձեր մէջ կը բնակի, ու յաղթեցիք. 15—Մի սիրէք աշխարհը, ոչ ալ բնչ որ աշխարհի մէջ է. 16—Եթէ մէ՛ք աշխարհը կը սիրէ, անոր Հօրմէն չէր սէրը չկայ. քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը և այս կեանքին ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է. 17—Աշխարհս ալ կ'անցնի, անոր ցանկութիւնն ալ. բայց ան որ Աստուծոյ կամքը կը կատարէ, յաւիտեան կը մնայ.

18—Որդեակներ, վերջին ժամանակն է, ու ինչպէս լսեցիք թէ Նեռը պիտի գայ, և արդէն շատ նեռներ եղած են, անկէ կիմանանք թէ վերջին ժամանակ է. 19—Մեզմէ ելան դուրս, բայց մեզմէ չէին. վասն զի եթէ մեզմէ ըլլային, մեզի հետ պիտի մնային. Հապա դուրս ելան, որպէս զի յայտնի ըլլան թէ անոնք ամէնը մեզմէ չէին. 20—Բայց դուք օծութիւն ունիք Սուրբէն, ու ամէն բան գիտէք. 21—Չգրեցի ձեզի՝ իբր թէ ճշմարտութիւնը չէք գիտեր, հապա թէ գիտէք զանիկա, ու նաև թէ ամէն սուտ ճշմարտութենէն չէ. 22—Ո՞վ է սուտաւոր, եթէ ոչ ան որ կ'ուրանայ թէ Յիսուս՝ Քրիստոս չէ. անիկա է Նեռը որ կ'ուրանայ Հայրը ու Որդին. 23—Ամէն ով որ կ'ուրանայ Որդին, անիկա Հայրն ալ չունի. [Բայց ան որ կը խոստովանի Որդին, անիկա Հայրն ալ կ'ունենայ.] 24—Ուրեմն ինչ որ դուք սկիզբէն լսեցիք, թող անիկա ձեր մէջ բնակի. եթէ այն սկիզբէն լսածնիդ ձեր մէջ բնակի, դուք ալ Որդւոյն ու Հօրը մէջ պիտի բնակիք. 25—Ու սա՛կս է այն խոստմանքը զոր ինք մեզի խոստացաւ, այսինքն յաւիտենական կեանքը. 26—Այս բաները ձեզի գրեցի՝ ձեզ մոլորեցնողներուն համար. 27—Ու այն օծութիւնը զոր դուք իրմէ ընդունեցիք, ձեր մէջ կը մնայ, ու պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցնէ. հապա ինչպես նոյն օծութիւնը ձեզի կը սորվեցնէ ամէն բանի վրայով, ճշմարիտ է ու սուտ չէ, ինչպես անիկա ձեզի սորվեցուց, անոր մէջ կեցէք.

28—Ու հիմա, որդեակներս, անոր մէջ կեցէք, որպէս զի երբ անիկա յայտնուի, մենք համարձակութիւն ունենանք, ու անկէ չամչնանք իր գալստեանը. 29—Եթէ գիտէք թէ անիկա արդար է, կ'իմանաք թէ ամէն ով որ արդարութիւն կը գործէ, անկէ ծնած է.

ԳԼ. Գ

Տեսէք, Հայրը ի՛նչպիսի սէր շնորհեց մեզի, որպէս զի մենք Աստուծոյ որդիներ բսուինք. ասոր համար աշխարհ մեզ չճանչնար, վասն զի զանիկա ալ չճանչցաւ. 2—Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիներն ենք, և տակաւին յայտնի չէ թէ ի՛նչ պիտի ըլլանք. բայց գիտենք որ երբ անիկա յայտնուի, անոր պէս պիտի ըլլանք, վասն զի զանիկա պիտի տեսնենք՝ ինչպես է.

3—Ու ամէն ով որ այս յոյսը անոր վրայ ունի, ինքզինքը կը մաքրէ, ինչպես անիկա մաքուր է. 4—Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա անօրէնութիւն ալ կը գործէ, և Քառ մեղքը անօրէնութիւն է. 5—Ու գիտէք որ անիկա անոր համար յայտնուեցաւ, որ մեր մեղքերը վերցնէ. ու իր մէջ մեղք չկայ. 6—Ամէն ով որ անոր մէջ կը կենայ, մեղք չգործեր. ամէն ով որ մեղք կը գործէ, զանիկա տեսած չէ ու զանիկա ճանչցած չէ. 7—Որդեակներս, մէկը ձեզ չխաբէ. ան որ արդարութիւն կը գործէ, արդար է, ինչպես Անիկա արդար է. 8—Ու ան որ մեղք կը գործէ, Սատանայէ է, վասն զի Սատանայ սկիզբէն ի վեր կը մեղանչէ. ասոր համար

Աստուծոյ Որդին յայտնուեցաւ, որ Սատանայի գործերը քակէ։ 9—Ամէն ով որ Աստուծմէ ծնած է, մեղք չգործեր, վասն զի անոր սերմը իր մէջ կը մնայ, ու չկրնար մեղք գործել, քանզի Աստուծմէ ծնած է։ 10—Առով յայտնի են Աստուծոյ որդիները ու Սատանայի որդիները։ Ամէն ով որ արդարութիւն չգործեր, անիկա Աստուծմէ չէ, և ան ալ՝ որ իր եղբայրը չսիրեր։ 11—Վասն զի սկիզբէն այն պատգամը եղաւ մեզի, որ միմեանց սիրենք։ 12—Ոչ թէ Կայէնի պէս որ չարէն էր, ու իր եղբայրը սպաննեց. և ինչո՞ւ համար զանիկա սպաննեց. անոր համար որ իր գործերը չար էին, ու իր եղբօրը՝ երկրնէզը՝ արդար։ 13—Մի զարմանաք, եղբայրնե՛ր թէ աշխարհ ձեզ ատէ։ 14—Մենք գիտենք որ մահէն կեանքի փոխադրեցանք, վասն զի եղբայրները կը սիրենք. ան որ եղբայրը չսիրեր՝ մահուան մէջ կը մնայ։ 15—Ամէն ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան է, ու գիտէք որ ամէն մարդասպան իր մէջ բնակած յաւիտենական կեանք չունի։ 16—Առով գիացանք Քրիստոսի սէրը, որ անիկա իր կեանքը մեզի համար դրաւ. մենք ալ պարտաւոր ենք մեր եղբայրներուն համար դնել մեր կեանքը։ 17—Բայց ան որ աշխարհի բարիքը ունի, և իր եղբայրը բանի մը կարօտ կը տեսնէ ու իր գութը անկէ կը գոցէ, ինչպէս Աստուծոյ սէրը նոյնպէս մէջ բնակած կ'ըլլայ։ 18—Որդեակներս, ոչ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու ճշմարտութիւնով։

19—Ու առով կը ճանչնանք թէ ճշմարտութենէն ենք, ու մեր սիրտերուն համարձակութիւնով անոր առջև պիտի երևնանք։ 20—Քանի որ թէ մեր սիրտերը մեզ կը մեղադրեն, հապա Աստուած մեր սիրտերէն մեծ է՝ և ամէն բան գիտէ։ 21—Սիրելինե՛ր, եթէ մեր սիրտերը մեզ չմեղադրեն, համարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջև։ 22—Ու ինչ որ խնդրենք՝ կ'առնենք անկէ, վասն զի իր պատգամներները կը պահենք, ու իր առջև հաճոյ եղած բաները կ'ընենք։ 23—Ու ասիկա է անոր պատգամը, որ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի անունը հաւատանք ու մեկզմեկ սիրենք, ինչպէս մեզի պատգիր տուաւ։ 24—Ու ան որ անոր պատգամները կը պահէ՝ անոր մէջ կը կենայ, ու անիկա ալ անոր մէջ։ և ասկէ գիտենք որ անիկա մեր մէջ կը կենայ, այսինքն այն Հոգիին զոր մեզի տուաւ։

Գլ. Դ

Սիրելինե՛ր, ամէն հոգիի մի հաւատաք, հապա հոգիները փորձեցէ՛ք թէ արդեօք Աստուծմէ՛ են. վասն զի աշխարհի մէջ շատ սուտ մարգարէներ ելած են։ 2—Առով կրնանք ճանչնալ Աստուծոյ Հոգին. ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմնով եկած կը խոստովանի, անիկա Աստուծմէ է։ 3—Ու ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմնով եկած չխոստովանիր. անիկա Աստուծմէ չէ. ու ասիկա Նեռի հոգին է, որու համար լսեցիք թէ պիտի գայ, ու հիմակուընէ ալ աշխարհի մէջ է։ 4—Դուք Աստուծմէ՛ եք, որդեակներ, ու անոնց յաղթեցիք. քանզի մեծ է անիկա որ ձեր մէջ է, քան թէ անիկա որ աշխարհի մէջ է։ 5—Անոնք աշխարհէ են. անոր համար աշխարհի վրայով կը խօսին, և աշխարհ մարի կ'ընէ անոնց։ 6—Մենք Աստուծմէ ենք. ան որ գիտած կը ճանչնայ, մեզի մարի կ'ընէ. ան որ Աստուծմէ չէ, մեզի մարի չընէ. առով կը ճանչնանք ճշմարտու թեան Հոգին ու խաբեու թեան հոգին։

7—Սիրելինե՛ր, մեկզմեկ սիրենք, վասն զի սէրը Աստուծմէ է. ու ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է, ու կը ճանչնայ գիաստած։ 8—Ան որ չսիրեր՝ գիաստած չճանչնար. վասն զի Աստուած սէր է։ 9—Ասիս բանին մէջ Աստուծոյ սէրը մեր վրայ յայտնի եղաւ, որ Աստուած իր միածին Որդին աշխարհ դրկեց, որպէս զի անոր միջոցով ապրինք։ 10—Ասիս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած, հապա որ անիկա մեզ սիրեց, ու իր Որդին դրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու։ 11—Սիրելինե՛ր, եթէ Աստուած մեզ այսպէս սիրեց, ուրեմն մենք ալ կը պարտաւորինք մեկզմեկ սիրել։ 12—Մէկը երբէք գիաստած տեսած չէ. եթէ մեկզմեկ կը սիրենք, Աստուած մեր մէջ կը բնակի, ու անոր սէրը մեր մէջ կատարեալ է։ 13—Առով գիտենք թէ մենք անոր մէջ կը բնակինք, ու անիկա մեր մէջ, որ իր Հոգիէն մեզի տուաւ։ 14—Ու մենք տեսանք ու կը վկայենք որ Հայրը իր Որդին զրկեց աշխարհի Փրկիչը ըլլալու։ 15—Ով որ կը խոստովանի թէ Յիսուս Որդի Աստուծոյ է, Աստուած անոր մէջ կը բնակի, ան ալ՝ Աստուծոյ մէջ։ 16—Ու մենք ճանչցանք ու հաւատացինք այն սէրը զոր Աստուած մեր վրայ ունի. Աստուած սէր է. և ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աստուծոյ մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջ։ 17—Առով սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլլայ, որպէս զի Համարձակութիւն ունենանք դատաստանին օրը, վասն զի ինչպէս է ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ։ 18—Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը վախը միկդի կը ձգէ. վասն զի վախը տանջանքի ենթակայ է. ուստի ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ։ 19—Մենք զանիկա կը սիրենք, վասն զի առաջ անիկա մեզ սիրեց։ 20—Եթէ մէկը կ'ըսէ թէ ես զԱստուած կը սիրեմ, ու իր եղբայրը ատէ, անիկա սուտաւոր է. քանզի ան որ իր եղբայրը չսիրեր՝ զոր կը տեսնէ, զԱստուած՝ զոր չտեսներ, ինչպէ՞ս կրնայ սիրել։ 21—Ու անկէ այս պատգիրը ունինք, թէ ան որ զԱստուած կը սիրէ՝ իր եղբայրն ալ կը սիրէ։

Գլ. Ե

Ամէն ով որ կը հաւատայ թէ Յիսուս Քրիստոսը Աստուծմէ ծնած է. և ամէն ով որ ծնողը կը սիրէ՝ անկէ ծնածն ալ կը սիրէ։ 2—Առով կը ճանչնանք թէ Աստուծոյ որդիները կը սիրենք, երբ զԱստուած սիրենք ու անոր պատգիրները պահենք։ 3—Վասն զի սա է Աստուծոյ սէրը, որ անոր պատգիրները պահենք. և անոր պատգիրները ծանր բան չեն։ 4—Վասն զի ամէն ինչ որ Աստուծմէ ծնած է՝ աշխարհը կը յաղթէ. և ասիկա է յաղթութիւնը որ աշխարհը կը յաղթէ. այսինքն մեր հաւատքը։ 5—Ո՞վ է որ աշխարհը կը յաղթէ, եթէ ոչ անիկա որ կը հաւատայ թէ Յիսուս Որդի Աստուծոյ է։

6—Ասիկա է որ եկաւ ջուրով և արիւնով, այսինքն Յիսուս Քրիստոս, ոչ թէ միայն ջուրով, հապա ջուրով ու արիւնով. և Հոգին է որ կը վկայէ, վասն զի Հոգին ճշմարտութիւն է։ 7—Վասն զի երեք են որ *երկինքի մէջ կը վկայեն. Հայրը, Բանը ու Սուրբ Հոգին, և այս երեքը մէկ են։ 8—Ու երեք են որ երկրի վրայ՝ կը վկայեն. Հոգին, ջուրը ու արիւնը, և երեքը միասին են։ 9—Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք, Աստուծոյ վկայութիւնը աւելի մեծ է. վասն զի ասիկա է Աստուծոյ վկայութիւնը, որ իր Որդւոյն համար վկայեց։ 10—Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ՝ վկայութիւնը իր մէջ ունի. ան որ Աստուծոյ չհաւատար՝ սուտաւոր կ'ընէ զանիկա, վասն զի չհաւատար այն վկայութեանը՝ զոր Աստուած իր Որդւոյն համար վկայեց։ 11—Ու վկայութիւնը այս է, որ Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ, ու այս կեանքը անոր Որդւոյն մէջ է։ 12—Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի, և ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ՝ կեանք չունի։

13—Այս բաները գրեցի ձեզի՝ որ գիտէք զի յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդւոյն անունը կը հաւատաք։ 14—Ու այն համարձակութիւնը զոր մենք անոր քով ունինք՝ այս է, որ ինչ բան որ խնդրենք իր կամքին համեմատ, որ կը լսէ մեզի։ 15—Ու եթէ գիտենք որ ինչ բան որ խնդրենք կը լսէ մեզի՝ գիտենք թէ խնդրածնիս զոր կը խնդրենք իրմէ։

16—Եթէ մէկը տեսնէ որ իր եղբայրը մեղք մը գործեց, ոչ թէ մահացու, քոզ խնդրէ, ու Աստուած անոր կեանք պիտի տայ այն մահացու չեղած մեղքը

*Շատ հին յունարէն ընդհ.

էնտեղ է՝ յունարէնին, և որպէս զի Աստուծոյ Որդւոյն անուան հաւատացած

գործողին. մեղք կայ որ մահացու է, չեմ բանը որ անոր համար խնդրել։ **17**—Ամէն անիրաւութիւն մեղք է, և մեղք կայ որ մահացու չէ։

18—Գիտենք որ այն ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չգործեր. հապա ան որ Աստուծմէ ծնած է՝ իր անձը կը պահէ, ու չարը իրեն չդպչիր։ **19**—Գիտենք որ մենք Աստուծմէ ենք, ու բոլոր աշխարհ չարին մէջ է։ **20**—Ու գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ, ու մեզի միտք տուաւ, որպէս զի ճշմարիտը ճանչնանք. և այն ճշմարիտին մէջ ենք, իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ. ասիկա է ճշմարիտ Աստուած ու յաւիտենական կեանք։ **21**—Որդեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահեցէք։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

Երէցն Գայիոս սիրելիին, զոր ես կը սիրեմ ճշմարտութեամբ։ **2**—Սիրելի, ողջո՛վ կ'ըլլամ որ ամէն կողմէ յաջողութեան մէջ ու առողջ ըլլաս, ինչպէս հոգիդ ալ յաջողութեան մէջ է։ **3**—Վասն զի շատ ուրախացայ, երբ քանի մը եղբայրներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով վկայեցին, ինչպէս դուն ճշմարտութեամբ կը քալես։ **4**—Ասկէ մեծ ուրախութիւն մը չունիմ, որ կը լսեմ քէ իմ զաւակներս ճշմարտութեան մէջ կը քալեն։ **5**—Սիրելի, դուն հաւատարմաբար կ'ընես, ինչ որ կ'ընես եղբայրներուն և օտարներուն. **6**—որոնք եկեղեցիին առջև վկայեցին քու սիրոյդ վրայով. որ եթէ աստուածահաճոյ կերպով զանոնք ճամբայ գընես, ազէկ պիտի ընես։ **7**—Վասն զի Անունին համար ելան, ու հեթանոսներէն բան մը չեն առներ։ **8**—Ուստի մենք պարտաւոր ենք այդպիսիները ընդունիլ, որպէս զի ճշմարտութեանը գործակից ըլլանք։

9—Եկեղեցիին գրեցի. բայց Դիոտրեփես, որ անոնց մէջ առաջին ըլլալ կ'ուզէ, մեզ չընդունիր։ **10**—Անոր համար եթէ գամ, անոր ըրած գործերը պիտի յիշեմ, որ մեզի դէմ չպոկրատելով չարախօսութիւն կ'ընէ. և տակավ ալ զոհ չեզած՝ ինք չընդունիր եղբայրները, ու անոնք որ կ'ուզեն ընդունիլ՝ կ'արգիլէ, ու եկեղեցիէն ալ կը հանէ։ **11**—Սիրելի, չարին նմանողի մի ըլլար, հապա բարիին. ան որ բարիք կը գործէ, Աստուծմէ է. բայց ան որ չարիք կը գործէ, անիկա զԱստուած տեսած չէ։ **12**—Դեմետրիոսի համար ամէնն ալ կը վկայեն, բուն իսկ ճշմարտութիւնն ալ. մենք ալ կը վկայենք, և գուք գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է։

13—Շատ բան ունէի գրելու, բայց չեմ ուզեր մելանով ու գրիչով քեզի գրել։ **14**—Սակայն յոյս ունիմ շուտով քեզ տեսնել, ու բերան առ բերան պիտի խօսինք։ **15**—Խաղաղութիւն քեզի. բարեկամները քեզի բարեւ կը ղրկեն. բարեւ ըրէ հոն բարեկամներուն ամէն մէկուն անուամբ։

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ

Ես Յովհաննէս, ձեր եղբայրը, ու Յիսուսի նեղութեան, արքայութեան և համբերութեան մէջ ձեր ընկերը, Պատմոս կղզին եղայ Աստուծոյ Խօսքին ու Յիսուսի վկայութեան համար։ **10**—Տիրոջ օրը Հոգիին մէջ էի, ու ետևէս մեծ ձայն մը լսեցի, որ եղանակի պէս կ'ըսէր. **11**—Ինչ որ կը տեսնես, գրէ՛ գրքի մը մէջ, ու ղրկէ՛ եօթը եկեղեցիներուն, Եփեսոս, Զմիւռնիա, Պերգամոս, Թիատիրա, Սարդիս, Փիլադելփիա և Laodicea։

12—Ետևս դարձայ տեսնելու թէ ո՞վ էր որ ինծի հետ կը խօսէր. ու դարձած տեսայ եօթը ոսկի մոմակալներ, **13**—ու մոմակալներուն մէջտեղ մարդու Որդւոյ նման մէկը, որ ոտքերուն վրայ հասնող զգեստ մը հագած էր, ու կուրծքին շուրջը ոսկի գօտի մը կապած էր։ **14**—Անոր գլուխն ու մազերը սպիտակ բուրդի պէս սպիտակ էին, ինչպէս ձիւն, ու աչքերը կրակի բոց էին։ **15**—Ոտքերը նման էին շիկացած պղինձի, որ փուռի մէջ թրծուած ըլլայ, ու ձայնը շատ ջուրերու ձայնի պէս էր։ **16**—Աջ ձեռքին մէջ եօթը աստղեր կը բռնէր, ու բերնէն սուր երկսայրի սուր մը կ'ելլար, ու երեսը կը փայլէր ինչպէս արեւը իր զօրութեան մէջ։

17—Երբ զինք տեսայ, անոր ոտքերուն առջև մեռելի պէս ինկայ. ու աջ ձեռքը իմ վրաս դնելով ըսաւ ինծի. Մի՛ վախնար, ես եմ առաջինն ու վերջինը, **18**—ու կենդանի եմ, մեռած էի, ու ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից, ու դժոխքին ու մահուան բանալիները ունիմ։ **19**—Գրէ՛ ուրեմն ինչ որ տեսար, ինչ որ կայ, ու ինչ որ պիտի ըլլայ յետոյ։ **20**—Եօթը աստղերուն գաղտնիքը, որ իմ աջ ձեռքիս վրայ տեսար, ու եօթը ոսկի մոմակալները. եօթը աստղերը եկեղեցիներուն հրեշտակներն են, ու մոմակալները որ տեսար՝ եկեղեցիներն են։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

Յուդա, Յիսուս Քրիստոսի ծառայ ու Յակոբոսի եղբայրը, ձեզի որ Հայր Աստուծմէն սրբուած էք, և Յիսուս Քրիստոսէ պահուած ու կանչուած. **2**—Ողորմութիւն ու խաղաղութիւն և սէր ձեր վրայ չատնայ։

3—Սիրելիներ, բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի գրելու համարակաց փրկութեանը համար, էմ ստիպո՛ւած եղայ ձեզի գրել ու յորդորել, որ մրցիք այն հաւատքին համար որ անգամ մը սուրբերուն աւանդուեցաւ։

---

*Ոմանք՝ Լ'ուսկաներէն, Ամէն։
†Ոմանք՝ Լ'ուսկաներէն։ Ամէն

4—Քանզի մէկ քանի մարդիկ գաղտուկ մտան, որ ատենօրէն այս գատապարտութեանը համար արդէն կոչուած էին, ամբարիշտներ, որունք մեր Աստուծոյ շնորհքը անառակութեան դարձուցին, և միմիայն *Իշխանը ու մեր Տէր Յիսուս Քրիստոսը ուրացան։ 5—Արդ կ'ուզեմ միտքերնիդ բերել, թէև արդէն գիտէք ասիկա, թէ Տէրը որ ժողովուրդը Եգիպտոսի երկրին ազատեց, ետքը չհաւատացողները կորնչեցուց։ 6—Ու այն հրեշտակները, որունք իրենց իշխանութիւնը չպահեցին, հապա իրենց բնակութիւնը ձգեցին, մշտնջենաւոր կապերով խաւարի մէջ պահեց մեծ օրուան դատաստանին։ 7—Ինչպես Սոդոմ ու Գոմորը և անոնց բոլորիքը եղած քաղաքները, որունք ասոնց նման պոռնկեցան ընկերներուն մարմինին հետևէն երթալով, մեր առջև օրինակ կեցեր են՝ յաւիտենական կրակին դատապարտութիւնը ընդունելով։ 8—Նմանապէս այս ցնորածներն ալ մարմինը կը պղծեն, տէրութիւնը կ'անարգեն, փառաւորութեան դէմ կը հայհոյեն։ 9—Բայց Միքայէլ հրեշտակապետը երբ Սատանայի դէմ դնելով՝ Մովսէսի մարմինին համար կը վիճեր, չհամարձակեցաւ հայհոյութեան դատապարտութիւն բերել անոր վրայ, հապա ըսաւ, Տէրը յանդիմանէ քեզ։ 10—Իսկ ասոնք այն բաներուն զրպարտ չեն հանիւներ, հայհոյութիւն կ'ընեն. և այն բաները զորունք բնականաբար անբան անասուններու պէս գիտեն, անոնց մէջ կ'ապականին։ 11—Վա՛յ անոնց, որունք Կայէնի ճամբովը գացին, ու Բաղաամի մոլորութեանը դէմ ցանկութեամբ վազեցին և անկէ գացին, ու Կորխի հակառակութեանը պէս կորսուեցան։ 12—Ասոնք ձեր սիրոյ խնճոյքներուն մէջ պատռուածք են, ու երբ ձեզի հետ կերուխումի կը նստին, աներկիւղ իրենց անձը կը կերակրեն. անլուր ամպեր՝ հովերէն քշուած. պտուղներն կորնցուցած ծառեր, երկու անգամ մեռած, արմատէն խլուած։ 13—Ովկիա կատաղած ալիքներ, որունք իրենց անձերուն ամօթը կը փրփրցնեն. մոլորական աստղեր, որոնց համար խաւարին մէգը պահուած է յաւիտեան։

14—Անոնց վրայ մարգարէացաւ Ենովք ալ, որ եօթներորդ երը Ադամէ, ու ըսաւ, Ահա Տէրը իր բիւրաւոր սուրբերովը եկաւ, 15—Ամէնուն դատաստան ընելու, ու բոլոր ամբարիշտները յանդիմանելու իրենց ըրած ամբարիշտութեանը բոլոր գործերուն համար, և բոլոր խիստ խօսքերուն համար, զորունք ամբարիշտ մեղաւորները անոր դէմ խօսեցան։ 16—Ասոնք արտէզներ ու փրթմնիչներ են, որունք իրենց ցանկութիւններուն համեմատ կ'երթան, և իրենց բերանները ամբարտաւան խօսքեր կը գրուցեն, և շահի համար երեսպաշտութիւն կ'ընեն։ 17—Բայց դուք, սիրելիներ, միտքերնիդ բերէք այն խօսքերը որունք մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալներէն առաջ բան ըսուցան։ 18—Որոնք ձեզի կ'ըսէին թէ վերջին ժամանակը ծաղր բնդունող պիտի ըլլան, որունք իրենց ամբարիշտ ցանկութիւններուն համեմատ պիտի երթան։

19—Ասոնք ինքզինքնին զատող չընչաւարներ են, որունք Հոգին չունին։ 20—Բայց դուք, սիրելիներ, անձերնիդ չինելով ձեր ամենասուրբ հաւատքին վրայ, և Սուրբ Հոգիով աղօթք ընելով, 21—Անձերնիդ Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութիւնը սպասելով յաւիտենական կեանքի համար։ 22—Ու խորհութիւն ընելով՝ անոնց ողորմեցէք. 23—Ու ամանք վախով ազատեցէք՝ կրակին յափշտակելով զանոնք, ատելով մարմինին ապականած հանդերձն ալ։

24—Ու անոր՝ որ կարող է ձեզ անբիծ պահել, և իր փառքին առջև ուրախութեամբ կանգնեցնել զձեզ անբիծներով, 25—Մեր Փրկչին, միմիայն *Աստուծոյ, [մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով] փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն [բոլոր դարերէն առաջ,] և հիմա ու բոլոր դարերու միջ։ Ամէն։

*Ոմանք, Աստուած իշխանը

*Ոմանք, իմաստուն Աստուծոյ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼՈՒԽ Ա

Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, զոր Աստուած անոր տուաւ իր ծառաներուն ցուցնելու թէ որ չտեսով պիտի բլլալ։ և իր հրեշտակին ձեռքով զրկելով՝ իր Յովհաննէս ծառային իմացուց, 2—Որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը բրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը՝ ինչ որ տեսաւ։ 3—Երանի՛ անոր որ կը կարդայ, ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է։ վասն զի ժամանակը մօտ է։

4—Յովհաննէս եօթը եկեղեցիներուն որունք Ասիոյ մէջ են. շնորհք և խաղաղութիւն ձեզի Անկէ որ է և որ էր և որ պիտի գայ, ու եօթը Հոգիներէն՝ որունք անոր աթոռին առջև են, 5—Ու Յիսուս Քրիստոսմէ հաւատարիմ վկային, որ մեռելներուն անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը. անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, 6—Ու մեզ թագաւորներ ու քահանաներ բրաւ Աստուծոյ ու իր Հօրը. անոր փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

7—Ահա ամպերով կու գայ. ու ամէն աչք պիտի տեսնէ զանիկա, և անոնք որ զանիկա խոցեցին, և անոր վրայ կոծ պիտի բնեն երկրի բոլոր ազգերը։ Այո, Ամէն։ 8—Ես եմ Ալֆա և Օմեգա, * կ'ըսէ Տէր [Աստուած], որ է և որ էր և որ պիտի գայ, Ամենակալը։

9—Ես Յովհաննէս ձեր եղբայրը, և Յիսուս Քրիստոսի նեղութիւնը ու արքայութիւնը և համբերութիւնը մէջ ընկերակիցը, Պատմոս բսած կղզին էի՝ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը համար։ 10—Ես †կիրակի օրը Հոգիի իմ վրաս եկաւ, ու հետևէս մեծ ձայն մը լսեցի փողի ձայնի պէս, որ կ'ըսէր, 11—Ինչ որ կը տեսնես, գիրքի մը մէջ գրէ, ու դրկէ չեթքը եկեղեցիներուն, որունք Եփեսոսի, ու Զմիւռնիոյ, և Պերգամոնի, ու Թիւատիրի, և Սարդիկէի, ու Փիլադելփիոյի, և Լաոդիկիոյի մէջ են։ 12—Ու գարձայ այն ձայնը տեսնելու՝ որ ինծի կը խօսէր. ու երբ դարձայ՝ եօթը ոսկեայ աշտանակներ տեսայ։ 13—Ու եօթը աշտանակներուն մէջ՝ մէկը Որդւոյ մարդոյ նման, զգեցեալ պատմուճան մը հագած ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կապած. 14—Ու իր գլուխը ու մազերը՝ բուրդի պէս ճերմակ ու ձիւնի պէս, ու իր աչքերը՝ կրակի բոցի պէս. 15—Ու իր ոտքերը՝ ոսկեպղինձի նման, որպես թէ հնոցի մէջ կրակի գարձած, ու իր ձայնը՝ շատ յորդերու ձայնի պէս. 16—Ու իր աջ ձեռքին մէջ եօթը աստղ ունէր, ու իր բերնէն սրած երկրեքան սուր մը կ'ելլէր, և իր երեսը արեւու պէս էր՝ որ

*Այսինքն, ակրաւնեական

†Ոմանք, Ես եմ Ալֆա և Օմեգա, Առաջինը և Վերջինը. և ինչ

‡Ոմանք, Ասիա եզած եօթը

*Ոմանք ՝Ասիոյ եկեղեցիին, Առաջինը ու Վերջինը,

իր ըզբաւթիւնովը կը փայլի։ 17—Ո՛եր սեռայ զանիկա, իր ոտքը ինկոյ մեռանի պէս, ու իր ալ ձեռքը իմ վրաս գրաւ ու ըսաւ ինծի, Մի վախնար, ես եմ Առաջինը ու Վերջինը։ 18—Ու ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ, և ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից.* և ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները։ 19—[Ուստի] գրէ՛ ինչ որ կը տեսնես, զայն որ կայ ու զայն որ ետքը պիտի լլլայ։ 20—Եօթը աստղերուն խորհուրդը՝ զոր իմ ալ ձեռքս մէջ տեսար, և եօթը ոսկեղէն աւանակները. այն եօթը աստղերը եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են. և եօթը աւանակներըդ եօթը եկեղեցիներն են։

ԳԼ. Բ

Ե՛փեսոսի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ իր ալ ձեռքին մէջ եօթը աստղերը ունի, ու եօթը ոսկեղէն աւանակներուն մէջ կը պտըտի. 2—Գիտեմ գործերդ և քու աշխատութիւնդ ու քու համբերութիւնդ, և որ չկրնար չես կրնար տանիլ, ու փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ իրենք առաքեալ են, ու չեն, և գտար թէ սուտ են. 3—Ու համբերութիւն ունեցար՝ Նէզատիկեան կրնայիր չիմ անուանս համար՝ ու չհուլցար։ 4—Բայց քեզի դէմ բան մը ունիմ, որ քու առաջուան սէրդ ձգեցիր։ 5—Միտդ բեր հիմա ուրկէ որ ինկար, ու ապաշխարէ և քու առաջուան գործերդ ըրէ. եթէ ոչ՝ չուտով կու գամ քեզի, ու քու աւանակդ իր տեղէն պիտի չտիժեմ՝ եթէ չապաշխարես։ 6—Բայց սակայն ունիս, որ Նիկոդայտեանց գործերը կ'ատես, զորոնք ես ալ կ'ատեմ։ 7—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ, անոր ուտել պիտի տամ կենաց ծառէն որ Աստուծոյ դրախտին մէջ է։

*Ոմանք կ'աւելցնեն, Ամէն.

†Ոմանք կ'աւելցնեն, զորոնք ատեցար, Ոմանք, և իմ անուանս համար աշխատեցար

8—Ու Զմիւռնիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Առաջինը ու Վերջինը, որ մեռաւ ու կենդանացաւ. 9—Գիտեմ գործերդ ու նեղութիւնդ և աղքատութիւնդ, (բայց հարուստ ես,) ու անոնց հայհոյութիւնը՝ որ կ'ըսեն թէ իրենք Հրեայ են, ու չեն, հապա Սատանայի ժողովք մըն են։ 10—Մի՛ վախնար այն բաներէն զորոնք պիտի կրես. ահա Բանաբերկուն ձեզմէ մէկ քանիները բանտ պիտի ձգէ որպէս զի փորձուիք, և տասը օր նեղութիւն պիտի ունենաք. մինչև ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ։ 11—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ, երկրորդ մահէն պիտի չվնասուի։

12—Ու Պերգամոնի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ սրած երկբերան սուր ունի. 13—Գիտեմ քու գործերդ, և քէ՛ր կը բնակիս, այսինքն Սատանայի աթոռն եղած տեղը, ու իմ անունս կը պահես, և իմ հաւատքս չուրացար այն օրերը անգամ՝ որ Անթիպաս իմ հաւատարիմ վկաս սպանուեցաւ ձեր մէջ, ուր Սատանայ կը բնակի։ 14—Բայց քեզի դէմ փէյ մը բան ունիմ, որ հոն Բաղաամի վարդապետութիւնը բռնադներ ունիս, որ Բաղակի սովրեցուց Իսրայէլի որդիներուն առջև գայթակղութիւն դնել, որպէս զի անոնք կուապրաշտութիւն ընեն. 15—Այսպէս ալ դուն Նիկոդայտեանց վարդապետութիւնը բռնադներ ունիս, զոր ես կ'ատեմ։ 16—[Ուստի] ապաշխարէ. եթէ ոչ՝ չուտով կու գամ քեզի, ու իմ բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց հետ։ 17—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ով որ կը յաղթէ, պահուած մանանայէն ուտել պիտի տամ անոր, ու ձերմակ խիճ մը պիտի տամ անոր, և այն խիճին վրայ նոր անուն մը գրուած, զոր մէկը չգիտեր բայց միայն ան՝ որ կ'ընդունի։

18—Ու Թիւատիրի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին, որ կրակի բոցի պէս աչքեր ունի, ու իր ոտքերը ակներկի նման են. 19—Գիտեմ գործերդ և սէրդ ու ծառայութիւնդ, և քու հաւատքդ ու համբերութիւնդ, և քէ՛ք գործերդ առաջինէներէնն շատ են. 20—Բայց քեզի դէմ *բան մը՝ ունիմ, որ Քոզ կու տաս Ծիւզաբէլ կիները, որ ինքզինք մարգարէուհի կ'ընծայեն, ու իմ ծառաներս մոլորեցնելով՝ կը սորվեցնէ պոռնկութիւն ընել և կուապրաշտութիւն ընել։ 21—Ու ես անոր ժամանակ տուի իր պոռնկութենէն վրայ ապաշխարելու, ու չապաշխարեց։ 22—Ահա ես զանիկա անկողնի պիտի ձգեմ, ու անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ նեղութեան մէջ, եթէ իրենց գործերուն վրայ չապաշխարեն։ 23—Ու անոր զաւակները մահով պիտի սպանեմ. ու բոլոր եկեղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ երիկամուններն ու սիրտերը կը քննեմ. և ամէն մէկուդ ձեր գործերուն համեմատ պիտի հատուցանեմ։ 24—Բայց ձեզի կ'ըսեմ միւսներուդ որ Թիւատիրի մէջ եք, ու այս վարդապետութիւնը չունիք, որ չճանչցած Սատանայի խորունկ բաները, (ինչպես կ'ըսեն,) ձեր վրայ ուրիշ ծանրութիւն չեմ ձգեր. 25—Հապա միայն որ ունիք՝ պահեցէք մինչև ես գամ։ 26—Ու ան որ կը յաղթէ ու իմ գործերս մինչև վերջը կը պահէ, անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ, 27—(Ու պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով. անոնք բրուտի ամաններու պէս պիտի փշրուին.) 28—Ինչպես ես ալ իմ Հօրմէս առի. ու անոր պիտի տամ առաւօտեան աստղը։ 29—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն։

*Ոմանք, քիչ մը բան

ԳԼ. Գ

Ե՛. Սարդիկեի մէջ եղած, եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ ունի Աստուծոյ եօթը Հոգիները ու եօթը աստղերը. Գիտեմ գործերդ՝ որ գուն անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես։ 2—Արթնցի՛ր և հաստատէ մնացած բաները որոնք մեռնելու վրայ են, վասն զի քու գործերդ Աստուծոյ առջև կատարեալ չգտայ։ 3—Հիմա միտդ բեր թէ ի՛նչպես ընդունեցիր ու լսեցիր, ու պահէ և ապաշխարէ. բայց եթէ արթնցուցու չըլլաս, գողի պէս քու վրադ պիտի գամ, ու քեզ պիտի չգիտնաս թէ ո՛ր ժամուն քու վրադ պիտի գամ, 4—Սակայն քանի մը անձեր ունիս Սարդիկէի մէջ, որոնք իրենց հանդերձները չպղտորեցին, և ձերմակներով պիտի պտրտին ինծի հետ, քանզի արժանի են։ 5—Ան որ կը յաղթէ՝ ձերմակներ պիտի հագնի, ու ես անոր անունը կենդանի գիրքէն պիտի չջնջեմ. և անոր անունը պիտի գաւանիմ իմ Հօրս առջև ու անոր հրեշտակներուն առջև։ 6—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն։

7—Ու Փիլադելփիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ սուրբը, սուտ ձշմարիտը որ Դաւիթի բանալին ունի. կը բանայ ու ոմ՛կը չկայ որ գոցէ, և կը գոցէ ու ոմ՛կը չկայ որ բանայ. 8—Գիտեմ գործերդ. ահա քու առջևդ բացուած դուռ մը դրի, զոր ոմ՛կը չկրնար գոցել. վասն զի դուն քիչ մը կարողութիւն ունիս, և իմ խօսքս պահեցիր ու իմ անունս չուրացար։ 9—Ահա ես քեզի կու տամ Սատանայի ժողովքէն եղողներ, որոնք կ'ըսեն թէ իրենք Հրեայ են ու չեն, հապա սուտ կ'ըսեն. ահա պիտի ստիպեմ զանոնք որ գան ու երկրպագութիւն ընեն քու ոտքերուդ առջև, և ճանչնան թէ ես քեզ սիրեցի։ 10—Որովհետև իմ համբերութեանս խօսքը պահեցիր, ես ալ քեզ պիտի պահեմ փորձութեան ժամանակէն, որ պատրաստ է գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրի երեսը բնակիչները փորձելու համար։ 11—Ահա ես չուտով կու գամ. ունեցածդ՝ համրաձեռնէ, որպէս զի ոմ՛կը չառնէ քու պսակդ։ 12—Ան որ կը յաղթէ, անիկա իմ Աստուծոյս տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ, ու ալ դուրս պիտի

չէլլէ. և անոր վրայ իմ Աստուծոյս անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյս քաղաքին անունը, այսինքն նոր Երուսաղէմի, որ երկինքէն իմ Աստուծմէս կ'իջնէ, և իմ նոր անունս. 13—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն։

14—Ու լաւգիկիէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Ամէնը, հաւատարիմ ու ճշմարիտ վկան, Աստուծոյ արարածներուն Սկիզբը. 15—Գիտեմ գործերդ, որ ո՛չ պաղ ես ու ո՛չ տաք. երանի՛ թէ պաղ ըլլայիր կամ տաք։ 16—Ուստի դուն որ գալի ես, ու ո՛չ տաք՝ ո՛չ ալ պաղ, քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ. 17—Քանզի կ'ըսես, Ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի մը կարօտ չեմ. ու չես գիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես, և աղքատ ու կոյր ու մերկ։ 18—Ես քեզի խորհուրդ կու տամ. ինծմէ կրակի մէջ փորձած ոսկի ծախու առ, որպէս զի հարստանաս, ու ճերմակ հանդերձներ՝ որպէս զի հագնիս, որպէս զի քու ամօթալի մերկութիւնդ չերեւնայ. և աչքերդ դեղ դիր որպէս զի տեսնես։ 19—Ես իմ սիրած մարդիկս կը յանդիմանեմ ու կը խրատեմ. ուստի նախանձաւոր եղիր ու ապաշխարէ։ 20—Ահա ես դուռը կայնած եմ ու կը դարնեմ. եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ և անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինծի հետ։ 21—Ան որ կը յաղթէ, ինծի հետ իմ աթոռս նստիլ պիտի տամ անոր, ինչպէս ես ալ յաղթեցի ու իմ Հօրս հետ անոր աթոռը նստայ։ 22—Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն։

ԳԼ. Դ

Ա յս բաներէն ետքը տեսայ, և ահա երկինքի մէջ բացուած դուռ մը կար, և առաջին ձայնը զոր լսեցի՝ փողի նման էր. որ ինծի հետ կը խօսէր ու կ'ըսէր, Հոսելիր ու ասկէ ետքը պիտի ըլլալու բաները քեզի ցուցնեմ։ 2—Ու հոգիս մը Հոգիին իմ վրաս եկաւ. և ահա աթոռ մը դրուած էր երկինքի մէջ. 3—Ու աթոռին վրայ մէկը նստած էր. և նստողը յասպիս ու սարդիոն քարերու երեւութին նման էր. 4—Ու աթոռին բոլորտիքը ծիածանի զմրուխտի երեւութի նման. ու աթոռին բոլորտիքը քսան աթոռներ, և այն աթոռներուն վրայ քսան երիցներ նստած էին՝ հերմակ հանդերձներ հագած, ու գլուխնին ոսկի պսակներ ունէին։ 5—Ու աթոռէն փայլակներ ու ձայներ և որոտումներ կ'ելլէին, ու աթոռին առջեւ եօթը հատ բորբոքած կրակի ջահերներ կային. որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են։ 6—Ու աթոռին առջեւ իրկնամած ապակիի ծով մը՝ ակնվանիի նման, և աթոռին մէջ ու աթոռին բոլորտիքը՝ չորս կենդանիներ, որոնք ա՛չքերով լեցուն կին առջեւ ու ետեւ։ 7—Ու առաջին կենդանին առիւծի նման էր, ու երկրորդ կենդանին՝ զուարակի նման, և երրորդ կենդանին մարդու երես ունէր, ու չորրորդ կենդանին՝ թռչող արծիւի նման։ 8—Ու չորս կենդանիներուն ամէն մէկը չորս՝ ա՛չքերով լեցուն էին. և ներսէն ա՛չքերով լեցուն էին. ու չեն հանգչիր ո՛չ գոնկէը ո՛չ ալ գիշերը՝ ըսելով, Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Աստուած Ամենակալ, որ էր և որ է և որ պիտի գայ։ 9—Ու երբ այն կենդանիները փառք ու պատիւ և գոհութիւն կու տային աթոռին վրայ նստողին, որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից, 10—Քսանչորս երիցները աթոռին վրայ նստողին առջեւ կ'իյնային ու երկրպագութիւն կ'ընէին յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին, և իրենց պսակները աթոռին առջեւ կը ձգէին՝ ըսելով, Արժանի ես, Տէր, փառք ու պատիւ և զօրութիւն առնելու, վասն զի ամէն բան դուն ստեղծեցիր, և քու կամքովդ եղան ու ստեղծուեցան։

ԳԼ. Ե

Ե ւ աթոռին վրայ նստողին ալ ձեռքը գիրք մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրուած, և եօթը կնիքով կնքուած։ 2—Ու զօրաւոր հրեշտակ մը տեսայ՝ որ

*Ոմանք, նստած տեսայ

մեծ ձայնով կը կանչէր, Ո՞վ արժանի է այդ գիրքը բանալու և անոր կնիքները քակելու։ 3—Ու ոչ երկինքի մէջ, ոչ երկրի վրայ ու ոչ երկրի ապի ներքեւը մէկը՝ որ կարող ըլլար այն գիրքը բանալ, ոչ ալ անոր նայիլ։ 4—Ես ալ սաստիկ կու լայի՝ որ մէկը արժանի չգտնուեցաւ այն գիրքը բանալու, ոչ ալ անոր նայելու։ 5—Ու երիցներէն մէկը ըսաւ ինծի, Մի լար. ահա Յուդայի ցեղէն եղող Առիւծը, Դաւիթի Արմատը, յաղթեց այն գիրքը բանալու ու անոր եօթը կնիքները քակելու։ 6—Ու տեսայ որ աթոռին ու չորս կենդանիներուն մէջտեղ և երիցներուն մէջտեղ կայնած Գառնուկ մը կար, որպէս թէ մորթուած, որ եօթը եղջիւր ու եօթը աչք ունէր, որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են՝ որ բոլոր երկիր կը ղրկուին։ 7—Ու անիկա եկաւ ու աթոռին վրայ նստողին աջ ձեռքէն գիրքը առաւ։ 8—Ու երբ գիրքը առաւ, չորս կենդանիները ու քսանչորս երիցները Գառնուկին առջեւ իյնային, և ամէնն ալ քնարներ ունէին, ու ոսկիէ բաժակներ՝ խունկով լեցուն, որ սուրբերուն աղօթքն է։ 9—Ու նոր երգ մը կ'երգէին՝ ըսելով, Արժանի ես դուն այդ գիրքը առնելու և անոր կնիքները բանալու. վասն զի մորթուեցար, ու մեզ Աստուծոյ՝ քու արիւնովդ ամէն ցեղէ ու լեզուէ և ժողովուրդէ ու ազգէ. 10—Ու մեզ մեր Աստուծոյն թագաւորներ ու քահանաներ ըրիր, ու երկրի վրայ պիտի թագաւորենք։ 11—Ու նայեցայ՝ ու շատ հրեշտակներու ձայն լսեցի, որոնք աթոռին ու կենդանիներուն և երիցներուն բոլորտիքն էին. ու անոնց քիւն էր բիւրեակ բիւրեաց և հազարք հազարաց։ 12—Որոնք մեծ ձայնով կ'ըսէին, Այդ մորթուած Գառնուկը արժանի է զօրութիւն ու հարստութիւն և իմաստութիւն ու կարողութիւն և պատիւ ու փառք և օրհնութիւն առնելու։ 13—Ու բոլոր արարածները, որ երկինքի մէջ ու երկրի վրայ ու երկրի ապիկ և ծովու մէջ, ու ամէն իրենց որ անոնց մէջ կայ՝ լսեցի որ կ'ըսէին, Աթոռին վրայ նստողին և Գառնուկին օրհնութիւն ու պատիւ և փառք ու զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ 14—Ու չորս կենդանիները կ'ըսէին, Ամէն. ու երիցները իյնան ու երկրպագութիւն ըրին։

ԳԼ. Զ

Ե ւ տեսայ, երբ Գառնուկը էկնիքներէն մէկը՝ բացաւ, ու չորս կենդանիներուն մէկէն որոտումի պէս ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես։ 2—Ու տեսայ, և ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը ունդ մը ունէր. և պսակ մը տրուեցաւ անոր, և անիկա յաղթող էր ու յաղթելու եկաւ։

3—Ու երբ երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես։ 4—Ու ուրիշ ձի մը ելաւ՝ շագանակագոյն, ու անոր վրայ հեծնողին երկրէն խաղաղութիւնը առնել, որպէս զի իրար սպաննեն. ու անոր մեծ սուր մը տրուեցաւ։

5—Ու երբ երրորդ կնիքը բացաւ, երրորդ կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես։ ու տեսայ, և ահա սեւ ձի մը, ու անոր վրայ հեծնողը իր ձեռքը կշռոյ մը ունէր։ 6—Ու չորս կենդանիներուն մէջէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Կապիճ մը ցորենը մէկ դահեկանի ու երեք կապիճ գարին մէկ դահեկանի. և ձէթին ու գինիին վնաս չընես։

7—Ու երբ չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կենդանիէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես։ 8—Ու տեսայ, և ահա դեղին ձի մը, ու անոր վրայ հեծնողին անունը Մահ էր, և Դժոխքը անոր հետեւէն կ'երթար. ու անոնց իշխանութիւն տրուեցաւ երկրի չորրորդ մա-

*Ոմանք, քսանչորս երիցները
†Ոմանք՝ Յաւիտենից, յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողին
‡Ոմանք, եօթը կնիքները
||Ոմանք, Եկուր ու տես

*Ոմանք՝ Յաւիտենից, և կարգալը.
†Ոմանք, ասանք
‡Ոմանք, Քաղաքացիներն

սին վրայ, որ որով ու սովով և մահով ու երկրի գազաններով սատկեցնեն.

9—Ու երբ հինգերորդ կնիքը բացաւ, տեսանին տակ սեսայ այն մարդոց հոգիները, որոնք սպանուած էին Աստուծոյ խօսքին համար, ու անոր վկայութեանը համար՝ զոր իրենք ունէին. 10—Ես մեծ ձայնով ազաղակեցին ու ըսին, Ով սուրբ ու ճշմարիտ Տէր, մինչև ե՞րբ չես դատեր ու մեր արիւնին վրէժը երկրի բնակիչներէն պահանջեր. 11—Ու ճերմակ հանդերձներ տրուեցան անոնց, ու ըսուեցաւ անոնց որ քիչ մը ատեն ալ հանգչին, մինչև անոնց ծառայակիցներուն ու անոնց եղբայրներուն լման ըլլան, որոնք իրենց պէս պիտի սպաննուէին.

12—Ու սեսայ, երբ վեցերորդ կնիքը բացաւ, ու մեծ շարժ մը եղաւ, ու արեւը սեւցաւ մազեղէն փոքրի մը պէս, և լուսինը [բոլորովին] արիւնի պէս եղաւ. 13—Ու երկինքի աստղերը գետինը թափթփեցան, ինչպես սաստիկ հովին չարժուած թզենին իր անհաս պտուղները կը թափէ. 14—Ու երկինք գալարուող տոմար մը պէս կը քաշուէր. ու բոլոր լեռները և կղզիները իրենց տեղերէն չարժեցան. 15—Ու երկրի թագաւորները և մեծամեծները ու հարուստները, հազարապետները և զօրաւորները, ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները այրերուն և լեռներու ապառաժներուն մէջ պահուըտեցան. 16—Ու լեռներուն ու ապառաժներուն կ'ըսէին, Մեր վրայ իյնէք ու մեզ ծածկեցէք անոր երեսէն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին բարկութենէն. 17—Վասն զի անոր բարկութեանը մեծ օրը եկաւ, և ո՞վ կրնայ դիմանալ.

ԳԼ. Է

Ե ետեւ սեսայ չորս հրեշտակներ՝ որոնք երկրի չորս անկիւնը կեցեր էին, ու երկրի չորս հովերը բռներ էին, որպէս զի երկրի վրայ հով չփչի, ու ոչ ծովու վրայ, ոչ ալ ծառի մը վրայ. 2—Ու ուրիշ հրեշտակ մը սեսայ որ արեւելքէն կ'ելլար, ու կենդանի Աստուծոյ կնիքը ունէր. և մեծ ձայնով որ չորս հրեշտակներուն՝ որոնց որ երկիրն ու ծովը վնասելու իշխանութիւն տրուեցաւ, 3—ըսաւ, Երկրի վնաս մի բնէք, ոչ ծովուն, ոչ ալ ծառերուն, մինչև մեր Աստուծոյ ծառաներուն հակառակները կնքենք. 4—Ու կնքուածներուն համրանքը լսեցի՝ որ էր հարիւր քառասունըչորս հազար՝ Իսրայէլի որդիներուն բոլոր ցեղերէն կնքուած. 5—Յուդայի ցեղէն տասներկու հազար կնքուած, Ռուբինի ցեղէն տասներկու հազար կնքուած, Գադի ցեղէն տասներկու հազար կնքուած. 6—Ասերի ցեղէն տասներկու հազար կնքուած, Նեփթաղիմի ցեղէն տասներկու հազար կնքուած, Մանասէի ցեղէն տասներկու հազար կնքուած, 7—Շմաւոնի ցեղէն տասներկու հազար կնքուած, Ղեւիի ցեղէն տասներկու հազար կնքուած, Իսաքարի ցեղէն տասներկու հազար կնքուած, 8—Զաբուղոնի ցեղէն տասներկու հազար կնքուած, Յովսէփի ցեղէն տասներկու հազար կնքուած, Բենիամինի ցեղէն տասներկու հազար կնքուած.

9—Ասկէ ետքը սեսայ, և ահա մեծ բազմութիւն՝ զոր մարդ չէր կրնար համրել, բոլոր ազգերէն ու ցեղերէն և ժողովուրդներէն ու լեզուներէն, որոնք աթոռին առջև ու Գառնուկին առջև կեցեր էին ճերմակ հանդերձներ հագած և ձեռքերնին արմաւենիներ բռնած. 10—Ու մեծաձայն կ'ազաղակէին՝ ըսելով, Փրկութիւն մեր Աստուծոյն՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին. 11—Ու բոլոր հրեշտակները աթոռին ու երիցներուն և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին, ու իրենց երեսներուն վրայ աթոռին առջև բնկան ու Աստուծոյ երկրպագութիւն ըրին, 12—Ըսելով, Ամէն. օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և կարողութիւն մեր Աստուծոյն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն. 13—Ու երիցներէն մէկը պատասխան տալով՝ ինծի ըսաւ, Ասոնք որ ճերմակ հանդերձներ հագած են՝ ո՞վ են, և ուրկո՞ եկան. 14—Ես ալ ըսի անոր, Տէր իմ, դուն գիտես. ու ըսաւ ինծի, Ասոնք են մեծ նեղութենէ եկողները, որոնք իրենց հանդերձները լուացին, ու զանոնք Գառնուկին արիւնովը ճերմկցուցին. 15—Անոր համար Աստուծոյ աթոռին առջև են, և իրեն կը ծառայեն գորեկ ու գիշեր իր տաճարին մէջ. և աթոռին վրայ նստողը իր վրանը պիտի տարածէ անոնց վրայ. 16—Այլևս ոչ պիտի անօթենան ու ոչ ծարաւին, ոչ ալ արեւը կամ տաքութիւն մը անոնց վրայ պիտի իյնայ. 17—Վասն զի Գառնուկը որ աթոռին մէջ է, պիտի հովուէ զանոնք, ու կենդանի ջուրերու աղբիւրներուն պիտի առաջնորդէ զանոնք. և Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց աչքերէն.

ԳԼ. Ը

Ու երբ եօթներորդ կնիքը բացաւ, յաւիտենից երկինքը կէս ժամու չափ, 2—Ես սեսայ այն եօթը հրեշտակները, որոնք Աստուծոյ առջև կը կայնէին. ու անոնց եօթը փող արուեցաւ. 3—Ես ուրիշ հրեշտակ մը եկաւ սեղանին առջև կայնեցաւ, ու ոսկեայ խրճանոց մը ունէր. և իրեն շատ խունկ արուեցաւ, որպէս զի բոլոր սրբոց աղօթքներուն հետ աթոռին առջև եղող ոսկի սեղանին վրայ մատուցանէ. 4—Ու խունկերուն ծխոյը սրբոց աղօթքներուն հետ հրեշտակին ձեռքէն Աստուծոյ առջև ելաւ. 5—Ու հրեշտակը առաւ խնկանոցը ու զանիկա սեղանին կրակէն լեցուց, ու ձգեց երկրի վրայ. ու ձայներ և որոտումներ ու փայլակներ ու երկրաշարժ. 6—Ես եօթը հրեշտակներուն, որոնք եօթը փողերը ունէին, պատրաստուեցան որ հնչեցնեն.

7—Ու առաջին հրեշտակը փողը հնչեցուց, ու եղաւ կարկուտ ու կրակ արիւնով խառնուած, ու երկրի վրայ ձգուեցաւ, [ու երկրի երրորդ մասը այրեցաւ,] և ծառերուն երրորդ մասը այրեցաւ, ու ամէն կանաչ խոտ այրեցաւ.

8—Ու երկրորդ հրեշտակը փողը հնչեցուց, և որպէս թէ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝ ծովը ձգուեցաւ, ու ծովուն երրորդ մասը արիւն եղաւ. 9—Ու ծովուն ունի չունար արարածներուն երրորդ մասը մեռաւ, ու նաւերուն երրորդ մասը կորսուեցաւ.

10—Ու երրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու երկինքէն մեծ աստղ մը ինկաւ ջահի պէս բորբոքած, և գետաւերուն ու ջուրի աղբիւրներուն երրորդ մասին վրայ ինկաւ. 11—Ու այն աստղին անունը Օչինդր էր. ու ջուրերուն երրորդ մասը օշինդր եղաւ, և շատ մարդիկ ջուրերուն մեռաւ, քանզի դառն եղան.

12—Ու չորրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու արեւին երրորդ մասը և լուսնին երրորդ մասը ու աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ, այնպէս որ անոնց երրորդ մասը խաւարի, և օրուան երրորդ մասը լոյս չտայ, նոյնպէս ալ գիշերուընէ.

13—Ու նայեցայ՝ ու երկինքի միջ թռչող հրեշտակի մը ձայն լսեցի, որ մեծ ձայնով կ'ըսէր, Վա՛յ, վա՛յ, վա՛յ երկրի վրայ բնակողներուն՝ այն միւսացած փող ձայներուն համար, զորոնք երեք հրեշտակները պիտի հնչեցնեն։

ԳԼ. Թ

Ե հինգերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու սեսայ որ երկինքէն աստղ մը ինկաւ երկրի վրայ. և անդունդի գործին բանալին անոր տրուեցաւ. 2—Ու անդունդին գործը բացաւ, ու այն գործէն ծուխ կ'ելլէր մեծ հնոցի մը ծուխին պէս. ու խաւարեցաւ արեւը ու օդը գործին ծուխէն.

3—Ու ծուխէն մարախներ կ'ելլէին երկրի վրայ, ու անոնց զօրութիւն տրուեցաւ երկրի կաթիճներուն ունեցած զօրութեանը պէս. 4—Ու անոնց ըսուեցաւ որ չվնասեն երկրի խոտին, ոչ ալ կանաչեղէնի մը և ոչ ծառի մը, հապա միայն այն մարդոց, որոնք իրենց ճակատներուն վրայ Աստուծոյ կնիքը չունին. 5—Ու անոնց հրաման տրուեցաւ որ չսպաննեն զանոնք, հապա չարչարուին զանոնք հինգ ամիս. ու անոնց տուած չարչարանքը կաքիսի խածած

*Ոմանք, արծիւի

չաբաթանքին պէս էր՝ երբ մարդը կը գարնէ։ 6—Եւ այն օրերը մարդիկ մանր պիտի փնտռեն ու պիտի չգտնեն. և պիտի ուզեն մեռնիլ, ու մահը անոնցմէ պիտի փախչի։ 7—Եւ մարախներուն նմանութիւնը՝ պատերազմի պատրաստուած ձիերու պէս, ու անոնց գլուխներուն վրայ *ոսկեղէն պսակներու պէս, և անոնց երեսները մարդոց երեսներու պէս էին։ 8—Ու անոնք մազեր ունէին կիներու մազերուն պէս, ու անոնց ակռաները առիւծներու պէս էին։ 9—Ու զրահներ ունէին երկաթէ զրահներու պէս. ու անոնց թեւերուն ձայնը պատերազմի վազող շատ ձիերու կառքերու ձայնին պէս էր։ 10—Ու կարիճներու նման պոչեր ունէին, ու պոչերնուն վրայ խայթոց. և իշխանութիւն ունէին հինգ ամիս մարդոց վնասելու։ 11—Ու իրենց վրայ թագաւոր ունէին անդունդին հրեշտակը, որուն անունը Եբրայեցերէն Աբադոն, և Յոյն լեզուով՝ կ'ըսուի Ապողլիոն։ 12—Մէկ վայը անցաւ. տակի եւս ահա երկու վայեր ալ կու գան։

13—Ե վեցերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու ձայն մը լսեցի Աստուծոյ ոսկի եզոց ասկի սեղանին չորս եղջիւրներէն, 14 Որ կ'ըսէը վեցերորդ հրեշտակին որ փողը ունէր, Եփքատ մեծ գետին վրայ կապուած չորս հրեշտակները արձակէ։ 15—Ու այն չորս հրեշտակները արձակուեցան, որ պատրաստուած էին ժամի ու օրուան և ամիսի ու տարիի համար, որպէս զի մարդոց երրորդ մասը մեռցնեն։ 16—Ու ձիաւորներու համրանքը երկու բիւրք բիւրեայ էր, ու լսեցի անոնց համրանքը։ 17—Ու տեսիլքին մէջ այսպէս տեսայ ձիերը ու անոնց վրայ հեծնողները՝ որոնք ունէին հրեզէն ու յակինթէն ու ծծմբեզէն զրահներ. և ձիերուն գլուխները առիւծներու գլուխներուն պէս էին, ու անոնց բերնէն կրակ ու ծուխ և ծծումբ կ'ելլէը։ 18—Այս եռքիք [հարուած]ներէն մարդոց երրորդ մասը մեռաւ, այսինքն կրակէն ու ծուխէն ու ծծումբէն, որոնք անոնց բերնէն կ'ելլէին։ 19—Վասն զի *անոնց զօրութիւնը բերաններնուն մէջ է ու պոչերնուն մէջ. քանզի անոնց պոչերը օձերու նման էին, ու գլուխներ ունէին որովնցմով կը վնասէին։ 20—Ու ուրիշ մարդիկ որոնք այս հարուածներէն չսպաննուեցան, իրենց ձեռքերուն գործերէն չապաշխարեցին, որ երկրպագութիւն չընեն դեւերուն, ու ասկիլ և արծաթէ ու պղնձէ և քարէ ու փայտէ չկրնաս կարգերուն, որոնք ոչ կրնան տեսնել, ոչ ալ լսել ու ոչ քալել։ 21—Նաև չապաշխարեցին իրենց մարդասպանութիւններէն, ոչ ալ իրենց կախարդութիւններէն, ոչ ալ իրենց պոռնկութիւնէն և ոչ իրենց գողութիւններէն.

Գլ. Ժ

Ե. տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը որ երկինքէն կ'իջնէր, ու ամպ հագած էր և իր գլխուն վրայ ծիածան կար. ու իր երեսը արեւի պէս էր, և իր ոտքերը՝ կրակի սիւներու պէս։ 2—Ու իր ձեռքը գրքոյկ մը ունէր բացուած, ու իր այ ոտքը ծովուն վրայ դրաւ, և ձախ ցամաքին վրայ։ 3—Ու մեծ ձայնով ազաղակեց առիւծի մը գոչելուն պէս. ու երբ ազաղակեց, հոգերը արձակուեցան իրենց ձայներովը խօսեցան։ 4—Ու երբ հոգերը արձակուեցան՝ պիտի գրէի. ու երկինքէն ձայն մը լսեցի որ էի՝ կ'ըսէր, Կնքէ այն բաները զորոնք հոգերը արձակուեցան խօսեցան, ու զանոնք մի գրեր։ 5—Ու այն հրեշտակը զոր ծովուն վրայ ու ցամաքին վրայ կայնած տեսայ, իր [ալ] ձեռքը երկինք վերցուց։ 6—Ու երդուաւ բուռ յաւիտենից յաւիտենից կենդանի եղողին վրայ, որ ստեղծեց երկինքը ու ինչ որ անոր մէջ է, ու երկիրը և ինչ որ անոր մէջ է, և ծովը ու ինչ որ անոր մէջ է, թէ ա՛լ ժամանակ պիտի չըլլայ։ 7—Հապա հոգերորդ հրեշտա-

*Ոմանք, ոսկի նման
†Այսինքն, կատարէ

*Ոմանք, այն ձիերուն
†Ոմանք, իրենց ձայներովը խօսեցան
‡Ոմանք՝ ինձի կ'ըսէը

կին ձայնին օրերը՝ երբ փողը հնչեցնէ, Աստուծոյ խորհուրդը պիտի կատարուի, ինչպէս իր ծառաներուն, մարգարէներուն տուաւ։

8—Ու այն ձայնը զոր երկինքէն լսեցի, նորէն խօսեցաւ ինծի ու ըսաւ, Գնա առ այն բաց գրքոյկը՝ որ ծովուն ու ցամաքին վրայ կայնող հրեշտակին ձեռքն է։ 9—Ես ալ հրեշտակին գացի ու ըսի անոր, Տուր ինծի այդ գրքոյկը։ Ու ըսաւ ինծի, Առ ու կեր. և քու փորիդ մէջ դառնութիւն պիտի պատառէ, բայց բերնիդ մէջ մեղրի պէս անուշ պիտի ըլլայ։ 10—Ու գրքոյկը հրեշտակին ձեռքէն առի ու կերայ զանիկա. և իմ բերնիս մէջ մեղրի պէս անուշ էր, և ուտելս ետքը փորիս մէջ դառնութիւն եղաւ։ 11—Ու ըսաւ ինծի, Զուարթ է որ դուն նորէն մարգարէութիւն ընես՝ շատ ժողովուրդներու և ազգերու ու լեզուներու և թագաւորներու *վրայով։

Գլ. ԺԱ

Ե. ինծի եղէգ մը արուեցաւ գաւազանի պէս, և հրեշտակը կայներ էր ու կ'ըսէր, Ելիր ու չափէ Աստուծոյ տաճարը ու սեղանը, և անոր մէջ երկրպագողները։ 2—Ու գաւիթը որ տաճարին դրսի է, զայն թող և մի չափեր զանիկա, վասն զի անիկա հեթանոսներուն տրուած է, ու անոնք սուրբ քաղաքը պիտի կոխոտեն քառասուներկու ամիս։ 3—Ու իմ երկու վկաներուս ալ թոյլ պիտի տամ, և անոնք քառասուերկու հարիւր ու վաթսուն օր մարգարէութիւն պիտի ընեն, հագած հագուստ երկու հարիւր ու վաթսուն օր մարգարէութիւն պիտի ընեն, 4—Ասոնք այն երկու ձիթենիներն ու երկու աշտանակներն են, որոնք երկրի Տիրոջ առջեւը կը կենան։

5—Ու եթէ մէկը ուզէ անոնց վնաս տալ, անոնց բերանները կրակ կ'ելլէ, և իրենց թշնամիները կ'ուտէ. և եթէ մէկը ուզէ անոնց վնաս բնել, պէտք է որ անիկա այսպէս սպանուի։ 6—Ասոնք իշխանութիւն ունին երկինքը գոցելու, որպէս զի իրենց մարգարէու-

*Գաւ, ազգի

ներքուն վրայ նստած էին Աստուծոյ առջեւ, իրենց երեսներուն վրայ ինկան և Աստուծոյ երկրպագութիւն ըրին՝ ըսելով, 17—Քեզի գոնութիւն կը տանք, Տէր Աստուած, Ամենակալ Տէր Աստուած, որ կաս և որ կիջ*, որ քու մեծ զօրութիւնդ առիր ու թագաւորեցիր։ 18—Ու ազգերը բարկացան. ու քու բարկութիւնդ եկաւ, և մեռելներուն ժամանակը՝ որպէս զի դատուին, ու վարձք տաս քու ծառաներուդ, մարգարէներուն, և սրբերուն ու քու անունիդ վախցողներուն, պզտիկներուն ու մեծերուն, և երկրի ապականիչները ապականես։

19—Ու երկինքի մէջ Աստուծոյ տաճարը բացուեցաւ, և տանը ուխտին տապանակը իր առաջերին մէջ երեցաւ. ու եղան փայլակներ ու ձայներ և որոտումներ ու երկրաշարժ և խոշոր կարկտուա։

ԳԼ. ԺՒ

Ու երկինքի մէջ մեծ նշան մը երեւցաւ. կին մը արեւը իր վրայ ստած, ու լուսինը իր ոտքերուն տակ. և իր գլխուն վրայ աստուներկու աստղ պսակ մը։ 2—Ու յղի կր, ու երկունքի մէջ բլլալով և ծնանելու համար շատ նեղութիւն քաշելով՝ կր պոռար։

3—Ու երկինքի մէջ ուրիշ նշան մը երեւցաւ, և ահա մեծ շառագոյն վիշապ մը, որ եօթը գլուխ ու տասը եղջիւր ունէր, և իր գլուխներուն վրայ եօթը թագ։ 4—Ու անոր պոչը երկինքի աստղերուն երրորդ մասը կը քաշէր, ու զանոնք երկրի վրայ ձգեց. և վիշապը կեցաւ կր այն կնոջ առջեւ որ ծնանելու վրայ էր, որպէս զի երբ ծնանի, անոր զաւակը կլլէ։ 5—Ու ինք արու զաւակ մը ծնաւ, որ երկաթէ գաւազանով պիտի հովուէր բոլոր ազգերը. և անոր զաւակը յափշտակուեցաւ Աստուծոյ քով ու անոր աթոռին քով։ 6—Ու կինը անապատը փախաւ, ուր անոր տեղ պատրաստած էր Աստուծմէ, որպէս զի հոն կերակրեն հազար երկու հարիւր ու վաթսուն օր։

7—Ու երկինքի մէջ պատերազմ եղաւ. Միքայէլ ու իր հրեշտակները վիշապին հետ պատերազմեցան. վիշապն ալ իր հրեշտակներովը պատերազմեցաւ. 8—Ու չկրցան զէմ կենալ, ու երկինքի մէջ ալ տեղ չգտնուեցաւ անոնց։ 9—Ու վռնտուեցաւ մեծ վիշապը, այն առաջուան օձը որ Սատանայ կ'ըսուի, որ բոլոր աշխարհս մոլորեցուց. ու իր հրեշտակները իրեն հետ վռնտուեցան երկրի վրայ։ 10—Ու մեծ ձայն մը լսեցի երկինքի մէջ՝ որ կ'ըսէր, Հիմա եղաւ մեր Աստուծոյ փրկութիւնը ու զօրութիւնը և թագաւորութիւնը, ու անոր Օծեալին իշխանութիւնը. վասն զի մեր եղբայրներուն դէմ չար խօսողը վար ձգուեցաւ, որ անոնց դէմ չարախօսութիւն կ'ընէր մեր Աստուծոյն առջեւ ցորեկ ու գիշեր։ 11—Ու անոնք անոր յաղթեցին Գառնուկին արիւնովը, ու իրենց վկայութեանը խօսքովը. և իրենց կեանքը չսիրեցին մինչեւ ի մահ։ 12—Ասոր համար ուրախացէք, ով երկինք ու անոր մէջ բնակողներ. վա՛յ երկրի ու ծովու*, վասն զի Բանսարկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՝ գիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ։

13—Ու երբ վիշապը տեսաւ որ ինք երկրի վրայ ձգուեցաւ, արու զաւակ ծնանող կնոջ հետեւեցաւ։ 14—Ու այն կնոջ մեծ արծիւի երկու թեւեր տրուեցան, որպէս զի անապատ իր տեղը թռչի, ուր պիտի կերակրուի ժամանակ ու ժամանակներ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն։ 15—Ու օձը իր բերնէն գետի պէս ջուր վազցուց կնոջ հետեւէն, որպէս զի զանիկա հեղեղով բնկզմէ։ 16—Ու երկիրը օգնեց կնոջը. ու երկիր իր բերանը բացաւ և կլլեց այն գետը զոր վիշապը իր բերնէն վազցուց։ 17—Ու վիշապը բարկացաւ կնոջ դէմ, և գնաց պատերազմելու անոր ուրիշ զաւակներուն հետ, որոնք Աստուծոյ պատուիրանքները կը պահեն, ու Յիսուսի վկայութիւնը ունին։

18—Ու կեցաւ ծովուն ափին վրայ։

ԳԼ. ԺԳ

Ու տեսայ որ ծովէն գազան մը կ'ելլէր, և ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր. և անոր եղջիւրներուն վրայ տասը թագ, ու անոր գլուխներուն վրայ հայհոյութեան անուններ կային։ 2—Ու այն գազանը զոր տեսայ, ընմանը ընտան էր, ու իր ոտքերը արջու ոտքերու պէս, և իր բերանը առիւծի բերանի պէս. ու վիշապը անոր տուաւ իր զօրութիւնը և իր աթոռը ու մեծ իշխանութիւն։ 3—Ու անոր գլուխներէն մէկը մահու չափ վիրաւորուած պէս էր. ու անոր մահուան վէրքը առողջացաւ. և բոլոր երկիր գազանին հետեւեցաւ։ 4—Ու երկրպագութիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխանութիւն տուաւ, ու երկրպագութիւն ըրին գազանին՝ ըսելով, Ո՞վ է այդ գազանին նման. և ո՞վ կրնայ անոր հետ պատերազմ բնել։ 5—Ու անոր մեծ բաներ ու հայհոյութիւններ խօսող բերան տրուեցաւ. և գոռալու ու երկու ամիս անոր իշխանութիւն տրուեցաւ իր ներշը բնելու։ 6—Ու իր բերանը հայհոյութեան Աստուծոյ դէմ բացաւ, անոր անունը ու անոր խորանը ու երկինքը բնակողները հայհոյելու։ 7—Ու անոր էլէնոթիւնի տրուեցաւ սուրբերուն հետ պատերազմ բնելու ու անոնց յաղթելու. և անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու [և ժողովուրդներու] ու լեզուներու և ազգերու վրայ։ 8—Ու անոր երկրպագութիւն պիտի բնեն երկրի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները աշխարհի սկիզբնէն ի վեր մորթուած Գառնուկին կեանց գիրքին մէջ գրուած չեն։ 9—Ով որ ականջ ունի, թող լսէ։ 10—Ով որ կերութեան փչէ, ինք գերի պիտի տարուի. ով որ սրով սպաննէ, պէտք է որ սրով սպաննուի։ Հոս է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը։

11—Ու ուրիշ գազան մը տեսայ՝ որ երկրէ կ'ելլէր, ու գառնուկի նման երկու եղջիւր ունէր, ու կը խօսէր վիշապի պէս։ 12—Ու առաջին գազանին բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջեւ, ու երկիրը և անոր բնակիչները կը ստիպէր որ երկրպագութիւն բնեն առաջին գազանին՝ որուն մահուան վէրքը առողջացաւ։ 13—Ու մեծ նշաններ կ'բնէր, ու մինչեւ անգամ երկինքէն կրակ կ'իջեցնէր երկրի վրայ մարդոց առջեւ։ 14—Ու երկրի վրայ բնակողները կը մոլորեցնէր այն նշաններով, որ իր տրուած էր գազանին առջեւ բնելու. ու երկրի բնակիչներուն կ'ըսէր որ պատկեր շինեն այն գազանին, որ սրով վիրաւորուած էր ու առողջացաւ։ 15—Ու էլէնոթիւնի արուեցաւ անոր, որ գազանին պատկերին հոգի տայ, որպէս զի գազանին պատկերը խօսի, և ով որ գազանին պատկերին երկրպագութիւն չընէ, զանիկա սպաննել տայ։ 16—Ու կը տեսնէր ամէնը, այսինքն պզտիկներուն ու մեծերը և հարուստները ու աղքատները և ազատները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին վրայ կամ իրենց ճակտին վրայ գրոշմ ընդունին. 17—Ու որ մէկը չկրնայ գնել կամ ծախել, բայց միայն ան՝ որ ունի գրոշմը կամ գազանին անունը կամ անոր անուանը թիւը։ 18—Հոս է իմաստութիւնը. ով որ միտք ունի, թող հաշուէ գազանին թիւը. քանզի մարդու մը թիւ է, ու անոր թիւը վեց հարիւր վաթսունըվեց է։

ԳԼ. ԺԴ

Ու տեսայ, և ահա Գառնուկը կայներ էր Սիօն լեռանը վրայ, ու անոր հետ հարիւր քառասունչորս հազարը, որոնք ունէին [անոր անունը և] անոր Հօրը անունը իրենց ճակտանց վրայ գրուած։ 2—Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրերու ձայնի պէս ու մեծ որոտումի ձայնի մը պէս, ու լսած ձայնս

*Ոմանք՝ Ի՛ասելոյնէն, և որ պիտի գաս
†Ոմանք՝ Յէրոյէ

*Ոմանք՝ Ի՛ասելոյնէն, բնակիչներուդ

*Ոմանք՝ Յիսուսի վկայութիւնը
†Ոմանք՝ կայնեցաւ
‡Ոմանք՝ տեսայ

*Ոմանք՝ և բոլոր

քնաթաղներուն իրենց փնտրածը գտնելու յոյսին կը նմանէր։ 3—Ե։ *Նոր երգ կ'երգեին սիոնին մէջ ու չորս կենդանիներուն ու երէցներուն առջեւ. և մէկը չէր կրնար այն երգը սորվիլ բայ ի այն հարիւր քառասուներկուքս հազարին, որոնք երկրէ գնուած էին։ 4—Ասոնք անոնք են որ կիներու հետ չխառնակեցան, քանզի կոյս են. ասոնք Գառնուն կուգան հետեւիլ կ'երթան՝ ուր որ ան երթայ. ասոնք մարդոց միջէն գնուեցան Առաւօտուն ու Գառնուն երախայրք բլլալու. 5—Ե։ անոնց բերանը սուտ չգտնուեցաւ, վասն զի անբիծ են։

6—Ե։ ուրիշ հրեշտակ մը տեսայ, որ կը թռչէր երկինքի մէջ, և ունէր յաւիտենական աւետեաց՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովրդներուն որոնք երկրի վրայ կը բնակին. 7—Ե։ մեծ ձայնով կ'ըսէր, Առաւօտմէ վախցէք ու փառք տուէք անոր, վասն զի անոր դատաստանին ժամը եկաւ. ու երկրպագութիւն բրէք անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու յորդորուն ազբիւրները։

8—Ե։ անոր ետեւէն ուրիշ հրեշտակ մը եկաւ ու ըսաւ, Ինկաւ, ինկաւ մեծ Բաբելոն, վասն զի բոլոր ազգերը արբեցուց իր կատաղի պոռնկութեանը գինովն. 9—Ե։ անոնց ետեւէն Երրորդ հրեշտակ մըն ալ եկաւ, ու մեծ ձայնով մը ըսաւ, Ով որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէ, և դրոշմը իր ճակատին վրայ կամ իր ձեռքին վրայ կ'ընդունի, 10—Անիկա Առաւօտյ սրտմտութեան գինովն պիտի խմէ, որ անխառն լեցուած է անոր բարկութեանը գաւաթին մէջ, և կրակով ու ծծումբով պիտի տանջուի սուրբ հրեշտակներուն առջեւ ու Գառնուն առջեւ. 11—Ե։ անոնց տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից. և ցորեկ ու գիշեր հանգստութիւն չունին անոնք՝ որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընեն, և անոր անուանը դրոշմը կ'ընդունին։ 12—Հոս սուրբերուն համբերութիւնը, *որոնք Առաւօտյ պատուիրանքները ու Յիսուսի հաւատքը կը պահեն։ 13—Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ որ †Ի'ըսէր. Գրէ. Այսուհետեւ երանելի են այն մեռնելը՝ որ տէրոջմով կը ննջեն. այո, կ'ըսէ Հոգին, որ իրենց աշխատութենէն հանգչին. ու իրենց գործերը իրենց հետեւէն կ'երթան։

14—Ե։ տեսայ, և ահա ճերմակ ամպ մը, ու այն ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ մարդոյ նման. և իր գլուխը ոսկիի պսակ մը՝ ու իր ձեռքը սուր մանգաղ մը ունէր։

15—Ե։ տաճարէն ուրիշ հրեշտակ մը կ'ելլէր, որ ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ'ազաղակէր ու կ'ըսէր, Երկնցուր քու մանգաղդ ու հնձէ. վասն զի հնձելու ժամանակը հասնելոց է. վասն զի երկրի հունձքը հասունցած է։ 16—Ե։ ան որ ամպին վրայ կը նստէր, իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկիր հնձուեցաւ։

17—Ո։ երկինքին մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, և ասիկա ալ սուր մանգաղ մը ունէր։ 18—Ո։ ան որ զօրանն ուրիշ հրեշտակ մը եկաւ, որ կրակի վրայ իշխանութիւն ունէր, ու մեծ ձայնով կանչեց անոր՝ որ սուր մանգաղը ունէր, ու ըսաւ, Երկնցուր քու սուր մանգաղդ, ու երկրի այգիին ողկոյզները կքէ, վասն զի անոր խաղողները հասունցած են 19—Ե։ այն հրեշտակը իր մանգաղը երկրի վրայ երկնցուց, ու երկրի այգիին խաղողները կքէց, ու Առաւօտյ բարկութեան մեծ հնձանին մէջ ձգեց։ 20—Ե։ հնձանը քաղաքին դուրսը կոխուեցաւ ու հնձանէն արիւն կ'ելլէր, ը մինչև ձիերուն սանձերը ան հազար վեց հարիւր ասպարեզ կը հասնէր։

*Ո՛հաննէ, որպէս թէ նոր
†Ո՛հաննէ ի՛սաւրշէնին, Առաւօտյ աթոռին առջեւ
‡Ո՛հաննէ, Բաբելոն քաղաքը
§Ո՛հաննէ, ուրիշ

Գլ. ԺԵ

Ե։ ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ երկինքի մէջ, եօթը հրեշտակներ՝ որոնք եօթը վերջին հարուածները ունէին, որովհետեւ անոնցմով կը կատարուէր Առաւօտյ բարկութիւնը։ 2—Ո։ տեսայ ապակեայ ծով մը կրակով խառնուած. և անոնք որ յաղթեցին գազանին ու անոր պատկերին ու անոր անուան թիւին, ապակեայ ծովուն վրայ կայներ կին, ու Առաւօտյ քնարները առեր։ 3—Ե։ Առաւօտյ ծառային, Մովսէսի, երգը կ'երգէին, ու Գառնուն երգը՝ ըսելով, Մեծ ու զարմանալի են քու գործերդ, ով Տէր Առաւօտ Ամենակալ. արդար ու ճշմարիտ են քու ճամբաներդ, ով Թագաւոր էտերոց։ 4—Տէր, ո՞վ պիտի չվախնայ քեզմէ, ու քու անունդ չփառաւորէ, վասն զի դուն միայն սուրբ ես. քանզի բոլոր ազգերը պիտի գան ու քու առջեւդ երկրպագութիւն պիտի ընեն, վասն զի քու արդար դատաստաններդ յայտնուեցան։

5—Ե։ ասկէ հետո տեսայ, ու բացուեցաւ վկայութեան խորանին տաճարը որ երկինքի էր։ 6—Ո։ եօթը հարուածները ունեցող եօթը հրեշտակները մաքուր ու պայծառ կտաւ հագած՝ և իրենց կուրծքերուն վրայով ոսկեզօծ գօտի կապած՝ տաճարէն ելան։ 7—Ե։ չորս կենդանիներէն մէկը եօթը հրեշտակներուն եօթը ոսկեզօծ սկաւառակներ տուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանի եղող Առաւօտյ բարկութիւնովը լեցուն։ 8—Ե։ տաճարը Առաւօտյ փառքէն ու անոր զօրութենէն ծխովը լեցուեցաւ. ու մէկը չէր կրնար տաճարը մտնել, մինչև կատարուէին եօթը հրեշտակներուն եօթը հարուածները։

Գլ. ԺԶ

Ե։ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ եօթը հրեշտակներուն կ'ըսէր, Գացէք

*Ո՛հաննէ, և անոր գթութիւն և
†Ո՛հաննէ, ազգաց

Առաւօտյ բարկութեան [եօթը] սկաւառակները երկրի վրայ թափեցէք։

2—Ա։ առաջին հրեշտակը գնաց ու իր սկաւառակը երկրի վրայ թափեց. ու չարաչար պալարներ եղան այն մարդոց վրայ որոնք գազանին դրոշմը ունէին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէին։

3—Ո։ երկրորդ հրեշտակը իր սկաւառակը ծովուն վրայ թափեց, ու նորէրէը մեռածի հոգւոյ արիւն գարձաւ, և ծովուն մէջի բոլոր կենդանիները մեռան։

4—Ո։ երրորդ հրեշտակը իր սկաւառակը գետերուն ու յորդոյ աղբիւրներուն վրայ թափեց, ու անոնք արիւն գարձան։ 5—Ե։ յորդոյ հրեշտակին ըսելը լսեցի՝ որ կ'ըսէր, Արդար ես դուն, որ ես և որ էիր, և սուրբ ես, որ այսպէս գատաստաններ բրիր. 6—Վասն զի անոնք սուրբերուն ու մարգարէներուն արիւնը թափեցին. և դուն անոնց արիւն խմել տուիր, քանզի արժանի են։ 7—Ե։ սեզանէն ելլելը լսեցի՝ որ կ'ըսէր, Այո, Ամենակալ Տէր Առաւօտ, քու գատաստաններդ արդար ու ճշմարիտ են։

8—Ե։ չորրորդ հրեշտակը իր սկաւառակը արեւին վրայ թափեց. 9—Ու անոր ջերմեցնել տուաւ մարդիկ կրակով. և մարդիկ խորշակահար եղան մարդկի, և հայհոյեցին Առաւօտյ անունը, որ այս հարուածներուն վրայ իշխանութիւն ունի. ու չապաշխարեցին որ անոր փառք տան։

10—Ե։ հինգերորդ հրեշտակը իր սկաւառակը գազանին աթոռին վրայ թափեց, ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ. և ցաւէն լեզուներնին կը ծամէին. 11—Ու երկինքի Առաւօտյ հայհոյեցին իրենց ցաւերուն և իրենց պալարներուն պատճառաւ. ու իրենց գործերէն չապաշխարեցին։

12—Ե։ վեցերորդ հրեշտակը իր սկաւառակը մեծ գետին, Եփրատ, վրայ թափեց, ու անոր ջուրերը ցամքեցան, որպէս զի արեւելքի թագաւորներուն

*Ո՛հաննէ, ով Տէր, որ
†Ո՛հաննէ, ուրիշ մը լսեցի

համեան պատրաստուի։ 13—Եւ սեռայ ոչ վիշապին բերնեն ու գազանին բերնեն և սուտ մարգարէին բերնեն երեք պիղծ ոգիներ ի՝ԵԼԼԷՆ գորտեր նման. 14—վասն զի անոնք դեւերու ոգիներ են՝ որ նշաններ կ՚ընեն, *ու բոլոր աշխարհի թագաւորներուն կ՚երթան, որպէս զի զանոնք Ամենակալ Աստուծոյ այն մեծ օրուան պատերազմին համար ժողվեն. 15—(Ահա գողի պէս կու գամ. երանի՛ անոր որ արթուն կը կենայ ու իր հանդերձները կը պահէ, որպէս զի մերկ չպտըտի ու իր ամօթը երեւնայ.) 16—Եւ զանոնք տեղ մը ժողվեցին, որ Եբրայեցերէն Արմագեդոն կ՚ըսուի.

17—Ու եօթնեերորդ հրեշտակը իր սկաւառակը օդին վրայ թափեց, ու երկինքի տաճարին, աթոռէն, մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով, Եղաւ։ 18—Եւ †փայլակներ ու ձայներ և որոտումներ՝ եղան ու մեծ երկրաշարժ մը եղաւ, այնպէս որ մարդոց երկրի վրայ ըլլալն ի վեր այնպիսի մեծ երկրաշարժ մը եղած չէր։ 19—Եւ մեծ քաղաքը երեք մաս եղաւ, ու ազգերուն քաղաքները կործանեցան, և մեծ Բաբելոնը Աստուծոյ առջեւ յիշուեցաւ, որպէսզի իր սաստիկ բարկութեան գինիին գաւաթը անոր տայ. 20—Ու ամէն կղզի փախաւ, ու լեռները չգտնուեցան. 21—Եւ խոշոր կարկուտ գրեթէ տաղանդի մը կիշռոյք երկինքէն կ՚իջնէր մարդոց վրայ. ու մարդիկ հայհոյեցին զԱստուած կարկտին հարուածին համար, վասն զի խիստ մեծ էր այն հարուածը.

Գլ. ԾԷ

Ե Եօթը սկաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն մէկը եկաւ, ու ինծի հետ խօսեցաւ՝ ըսելով, Եկուր, ու քեզի ցուցնեմ այն մեծ պոռնիկին դատաստանը, որ շատ ջուրերու վրայ կը նստի. 2—Որու հետ երկրի թագաւորները պոռնկեցան, ու երկրի

*Ոմանք, ու երկրի և

†Ոմանք, ձայներ և որոտումներ ու փայլակները

կիներըը անոր պոռնկութեան գինովը գինովցան։ 3—Եւ զիս ՚ՈՒՆ անապատ տարաւ հոգիով. ու տեսայ կին մը՝ որ կարմիր գազանի մը վրայ նստեր էր. և այն ՖՂՁՈՂ լեցուն էր հայհոյութեան անուններով, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունէր։ 4—Ու կինը ծիրանի ու կարմիր հագած էր, և ոսկիով ու պատուական քարերով և մարգարիտներով, և իր ձեռքը ոսկիէ գաւաթ մը ունէր պղծութիւններով ու իր պոռնկութեանը անմաքրութիւններով լեցուն. 5—Ու անոր նակատին վրայ անուն մը գրուած էր. Խորհուրդ՝ ՄԵԾ ԲԱԲԻԼՈՆ, պոռնիկներուն ու երկրի պղծութիւններուն մայրը։ 6—Ու տեսայ այն կինը որ սուրբերուն արիւնովը ու Յիսուսի վկաներուն արիւնովը գինովցած էր. ու երբ տեսայ զանիկա, մեծ զարմանքով զարմացայ։ 7—Ու հրեշտակը ինծի ըսաւ, ԻՆՉՈ՞ զարմացար. ես քեզի բսեմ այն կնոջ խորհուրդը, ու այն գազանին՝ որ զանիկա իր վրայ կը կրէ, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունի։ 8—Այն գազանը զոր տեսար, կար ու չկայ, և անդունդէն ելլելու ու կորստոյ կերթայ. Թալս վրայ է. ու երկրի վրայ բնակողները, որոնց անուններըը աշխարհի սկիզբէն ի վեր կենաց գիրքին մէջ գրուած չեն, պիտի զարմանան երբ տեսնեն այն գազանը թէ կար ու չկայ, *ԹԷՒ կայ՝։ 9—Հոս ՊԵՏՔ Է իմաստութիւն ունեցող միտք մը. այն եօթը գլուխը եօթը լեռներ են, ուր կինը անոնց վրայ կը նստի. և եօթը թագաւորներ են. 10—Հինգը ինկած են, մէկը կը կենայ, և միւսը դեռ եկած չէ, ու երբ գայ՝ փիչ տաճն պիտի մնայ։ 11—Եւ այն գազանը որ կար ու չկայ, անիկա ալ ութերորդ է, ու եօթնէն է, ու դէպ ի կորուստ կ՚երթայ. 12—Եւ տասը եղջիւրը զորանք տասը թագաւորներ են, որոնք դեռ թագաւորութիւն առած չեն, հապա գազանին հետ մէկ ժամու չափ թագաւորներու պէս իշխանութիւն կ՚առնեն։ 13—Անոնք մէկ կամք ունին, ու իրենց զո-

*Ոմանք, և մատ է

չութիւնը և իշխանութիւնը գազանին կու տան։ 14—Անոնք Գառնուկին հետ պիտի պատերազմին. և Գառնուկը անոնց պիտի յաղթէ, քանզի անիկա տէրերուն Տէրն է ու Թագաւորներուն Թագաւորը. և անոր հետ եղողները կանչուած ու ընտրուած և հաւատարիմ են։ 15—Ու ինծի ըսաւ, Այն ջուրերը զորոնք տեսար, որոնց վրայ պոռնիկը նստեր էր, ժողովրդներ են ու բազմութիւններ և ազգեր ու լեզուներ. 16—Ու տասը եղջիւրները զորոնք գազանին վրայ տեսար, անոնք պիտի ատեն պոռնիկը, ու զանիկա ամայի ու մերկ պիտի բնեն, և անոր մարմինը պիտի ուտեն, ու զանիկա հրկիզով սրբեն։ 17—Վասն զի Աստուած անոնց սրտին մէջ դրաւ որ իր կամքը կատարեն ու մէկ կամք ըլլան, և իրենց թագաւորութիւնը գազանին տան, մինչեւ Աստուծոյ խօսքերը կատարուին։ 18—Ու կինը զոր տեսար, այն մեծ քաղաքն է, որ կը թագաւորէ երկրի թագաւորներուն վրայ։

Գլ. ԾՐ

Ե Ասկէ ետքը [ուրիշ] հրեշտակ մը տեսայ որ երկինքէն կ՚իջնէր, և մեծ իշխանութիւն ունէր, ու երկիրը անոր փառքովն լուսաւորեցաւ։ 2—Ու *զօրաւոր ձայնով ազաղակեց՝ ըսելով, ԻՆԿաւ, ինկաւ մեծ Բաբելոն, և դեւերու բնակարան եղաւ, ու բոլոր պիղծ ոգիներու արգելանոց, և բոլոր պիղծ ու ատելի թռչուններու վանդակ. 3—Վասն զի անոր կատաղի պոռնկութեանը գինովն խմեցին բոլոր ազգերը, ու երկրի թագաւորները անոր հետ պոռնկեցան, և երկրի վաճառականները անոր չափազանց զեղութենէն հարստացան։ 4—Ու երկինքէն ուրիշ ձայն մը լսեցի որ կ՚ըսէր, Ելէք անոր միջէն, իմ ժողովրդս, որպէս զի անոր մեղքերուն հաղորդ չըլլաք, ու անոր հարուածներէն չառնէք. 5—Վասն զի անոր մեղքերը մինչեւ երկինք հասան կուտակեցան, ու Աստուած անոր անիրաւութիւնները յիշեց։ 6—Հատուցէք ա-

*Ոմանք, զօրութեամբ՝ մեծ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ 297

նոր՝ ինչպէս ինք հատուց, ու իր գործերուն համեմատ կրկնապատիկ փոխարինեցէք անոր. այն գաւաթը, զոր ինք լեցուց՝ կրկնապատիկ լեցուցէք իրեն։ 7—Որչափ որ փառաւորեց զինք և զեղխութեամբ ապրեցաւ, այնչափ ալ տանջանք և սուգ հատուցէք անոր. վասն զի իր սրտին մէջ կ՚ըսէ Թէ նստած կը նստիմ, ու թագուհի չեմ, ու բնաւ սուգ պիտի չտեսնեմ։ 8—Անոր համար մէկ օրուան մէջ պիտի գան անոր հարուածները, մահ ու սուգ և սով, ու կրակով պիտի այրի. վասն զի Տէր է Տէր Աստուած որ զանիկա դատեց։ 9—Ու երկրի թագաւորները, որ անոր հետ պոռնկեցան ու հեշտացան, պիտի լան ու կոծեն անոր վրայ երբ անոր հրկիզութեանը ծուխը տեսնեն. 10—Ու անոր տանջանքին վախէն հեռուն պիտի կայնին ու ըսեն, Վա՛յ, վա՛յ մեծ Բաբելոն քաղաք, հզոր քաղաք, որ մէկ ժամու մէջ եկաւ քու դատաստանդ։ 11—Ու երկրի վաճառականները պիտի ազան ու սուգ ընեն անոր վրայ. վասն զի ալ մէ՛կը ծախու չառնեն անոնց վաճառքը. 12—Ոսկիի, ու արծաթի, և պատուական քարերու, ու մարգարիտներու, և բիսոնի, ու ծիրանիի, և մետաքսի, ու արդան կարմիրի վաճառքը, և ամէն խունկի փայտերը, ու ամէն փղոսկրեայ անօթները, և ամէն պատուական փայտէ ու պղծէ և երկաթէ ու մարմարիոնէ անօթները, 13—Ու կինամոնը, [ու անուռնը] և խունկերը, ու անուշահոտ իւղը, ու կնդրուկը, և գինին, ու ձէթը, և նուշիհոր, ու ցորեան, և արջառները, ու ոչխարները, և ձիերը, ու կառքերը, և մարմիններուն ու մարդոց հոգիները. 14—Ու քու հոգիդ ցանկացած պտուղները քեզմէ գացին, ու բոլոր չքնդ ու փայլուն բաները քեզմէ կորսուեցան, և ա՛լ բնաւ պիտի չգտնես զանոնք։ 15—Այս բաներուն վաճառականները, որոնք անկէ հարստացած էին, հեռուն պիտի կայնին անոր տանջանքին վախէն՝ լալով ու սուգ ընելով. 16—Ու պիտի ըսեն, Վա՛յ, վա՛յ, մեծ քաղաք, որ բիսոնէ ու

*Ոմանք, ձեզի հատուց

ծիրանի և արդուն կարմիր հագած էիր, ու ոսկիով և պատուական քարերով ու մարգարիտներով զարդարուած էիր. 17—Ուստի ի այնքան հարստութիւնը մէկ ժամու մէջ փճացաւ։ Ու ամէն նաւավարները, և այն ամէնը որ նաւով տեղ տեղ կ'երթան, ու նաւասաններն և որոնք ի ծովս մէջ կը բնակին, հեռուն կայնեցան. 18—Ու տեսնելով զտեղ հրկիզութեան ծուխը՝ կ'ազաղակէին՝ ըսելով, Ո՞վ նման է այս մեծ քաղաքին. 19—Ու իրենց գլուխներուն վրայ հող ցանեցին, և լալով ու սուգ բնելով՝ կ'ազաղակէին՝ ըսելով, Վա՜յ, վա՜յ այն մեծ քաղաքին, որուն մէջ իր պատուականաութենէն հարստացան ամէնը որոնք նաւեր ունէին ծովուն վրայ. վասն զի մէկ ժամու մէջ աւերացաւ։ 20—Ո երկնայոյզ անոր վրայ, երկինք ու սուրբ առաքեալներ և մարգարէներ, որ Աստուած ձեր վրէժը անկէ առաւ։

21—Ու զօրաւոր հրեշտակ մը քար մը առաւ աղօրիքի մեծ խոչի նման, ու ծովը ձգեց՝ ըսելով, Այսպէս ուժով պիտի ձգուի Բաբելոն մեծ քաղաքը, ու ա՛լ պիտի չգտնուի. 22—Ու փիլաւահարներուն ու երաժիշտներուն և շիթխահարներուն ու փողահարներուն ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. և արհեստի վարպետ մը ա՛լ պիտի չգտնուի քու մէջդ. ու աղօրիքին ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. 23—Ու հրագին լոյսը ա՛լ պիտի չերեւնայ քու մէջդ. ու փեսային ձայնը և հարսին ձայնը ա՛լ պիտի չլսուի քու մէջդ. քանզի քու վաճառականներդ երկրի մեծամեծներն էին. վասն զի քու կախարդութիւնովդ բոլոր ազգերը մոլորեցան. 24—Ու մարգարէներուն ու սուրբերուն ու երկրի վրայ բոլոր սպանուածներուն արիւնը անոր մէջ գտնուեցաւ։

Գլ. ԺԸ

Ե ու անկէ ետքը լսեա բազմութեան մեծ ձայն մը լսեցի երկինքը՝ ըսելով, Ալէլուիա։ փրկութիւն ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր *Աստուծոյն. 2—Վասն զի ճշմարիտ ու արդար են անոր դատաստանները, քանզի դատեց այն մեծ պոռնիկը, որ իր պոռնկութիւնովը երկիրը ապականեց, ու իր ծառաներուն արեան վրէժը անոր ձեռքէն պահանջեց։ 3—Ու կրկին ըսին, Ալէլուիա։ ու անոր ծուխը յաւիտեանս յաւիտենից կ'ելլէ։ 4—Ու քսանչորս երիցները ու չորս կենդանիները իյնան ու երկրպագութիւն բրին Աստուծոյ՝ որ աթոռոյն կը նստի, ըսելով, Ամէն, Ալէլուիա։ 5—Ու աթոռէն ձայն մը եկաւ՝ ըսելով, Մեր Աստուծոյն օրհնութիւն ասէք, իր բոլոր ծառաները, ու գոնք որ իրմէ կ'վախնաք, պզտիկներ ու մեծեր։ 6—Ու լսեցի չորս բազմութեան ձայնի պէս, ու չորս յորդեալ ձայնի պէս ու սաստիկ որոտաձայնի պէս, որոնք կ'ըսէին, Ալէլուիա։ վասն զի [մեր] Ամենակալ Տէր Աստուածը թագաւորեց։ 7—Խնդանք և ուրախանանք ու փառք տանք անոր, քանզի Գառնուկին հարսնիքը հասաւ, ու անոր կինը ինքզինք պատրաստեց, 8—Ու իրեն արուեցաւ որ հագուր ու լուսափայլ բեհեզ հագնի, (քանզի այն բեհեզը սուրբերուն արդարութիւնն է։) 9—Ու ինձի ըսաւ, Գրէ։ Երանելի են անոնք որ Գառնուկին հարսնեացը ընթրիքին կանչուած են. ու ինձի ըսաւ, Ասոնք են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը։ 10—Ես ալ անոր ոտքերուն առջեւ ինկայ, որպէս զի անոր երկրպագութիւն ընեմ. ու ըսաւ ինձի, Զգուշացիր, մի ըներ. վասն զի ես քու ընկերակիցդ եմ ու քու եղբայրներուդ՝ որոնք Յիսուսի վկայութիւնը ունին. Աստուծոյ երկրպագութիւն բրէ. (վասն զի Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է։)

11—Ու տեսայ երկինքը բացուած. և ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը Հաւատարիմ ու ճշմարիտ կ'ըսուի, և արդարութեամբ դատաստան կ'ընէ ու կը պատերազմի. 12—Ու անոր աչքերը կրակի բոցի պէս էին, ու անոր գլխուն վրայ շատ թագեր կային, ու գրուած անուն մը ունէր՝ զոր մէկը չգիտեր, բայց միայն ինք. 13—Ու արիւնով ներկուած հանդերձ մը հագեր էր. ու անոր անունը Բան Աստուծոյ կ'կոչուի։ 14—Ու երկինքի մէջ եղող զօրքերը անոր հետեւէն կ'երթային ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեզը հագած։ 15—Ու անոր բերնէն սրած սուր մը կ'ելլէր, որպէս զի անով ազգերը զարնէ. ու ինք երկաթէ գաւազանով պիտի հովուէ զանոնք, ու Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեանը գինիքին հնձանը ինք պիտի կոխէ։ 16—Ու իր պատմոս հանին վրայ ու իր ազդրին վրայ գրուած գիր մը ունէր, ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ՈՒ ՏԷՐ ՏԵՐԱՆԱՑ։

17—Ու հրեշտակ մը տեսայ, որ արեւին մէջ կայներ էր, ու մեծ ձայնով ազազակեց երկինքի մէջ թռչող բոլոր թռչուններուն՝ ըսելով, Եկէք, *Աստուծոյ մեծ ընթրիքին՝ ժողմուեցէք, 18—Որպէս զի ուտէք թագաւորներուն մարմինները, ու հազարապետներուն մարմինները, զօրաւորներուն մարմինները, ձիերուն և անոնց վրայ հեծնողներուն մարմինները, ու ամէնուն մարմինները, թէ՛ ազատներուն և թէ՛ ծառաներուն, թէ՛ պզտիկներուն և թէ՛ մեծերուն։

19—Ու տեսայ գազանը ու երկրի թագաւորները ու անոնց զօրքերը միուած ժողմուած պատերազմ բնելու անոր հետ՝ որ ձիուն վրայ հեծնէր էր, ու անոր զօրքերուն հետ. 20—Ու գազանը բռնուեցաւ, ու անոր հետ սուտ մարգարէն՝ որ անոր առջեւ նշաններ բրաւ, որոնցմով մոլորեցուց գոգանիճ դրոշմը ընդունողները, և անոր պատկերին երկրպագութիւն բնողները. երկուքն ալ ողջ ողջ ծծումբով վառուած հրակին լիճը ձգուեցան. 21—Ու ուրիշներն ալ սպանուեցան ձիուն վրայ հեծնողին սուրէն՝ որ իր բերնէն կ'ելլէր, ու բոլոր թռչունները անոնց մարմիններէն կշտացան։

Գլ. Ի

Ե հրեշտակ մը տեսայ, որ երկինքէն կ'իջնէր, ու անդունդին բանալին և մեծ չղթայ մը ունէր իր ձեռքը. 2—Ու բռնեց վիշապը, այսինքն սատանան, և կապեց զանիկա հազար տարի. 3—Ու անդունդը ձգեց զանիկա, և գոցեց ու վրայէն կնքեց, որ ա՛լ չմոլորեցնէ ազգերը՝ մինչեւ հազար տարին լմննայ, և անկէ ետքը պէտք է որ արձակուի ա՛ծիկա քիչ մը ժամանակ։

4—Ու աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ. և անոնց դատաստանը տրուեցաւ. նաև Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ խօսքին համար գլխատուածներուն հոգիները տեսայ, և զանոնք որ երկրպագութիւն չրրին գազանին, ոչ ալ անոր պատկերին, ու անոր դրոշմը իրենց ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ չընդունեցին. և ապրեցան ու Քրիստոսի հետ հազար տարի թագաւորեցին։ 5—Ու մնացեալ մեռելները չապրեցան մինչեւ հազար տարին կատարուեցաւ. ասիկա է առաջին յարութիւնը։ 6—Երանելի և սուրբ է անոր որ առաջին յարութեանը մէջ բաժին ունի. ասոնց վրայ երկրորդ մահը իշխանութիւն չունի, հապա ասոնք Աստուծոյ և Քրիստոսի քահանաները պիտի ըլլան, ու անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն։

7—Ու հազար տարուան լմննալուն՝ պիտի արձակուի Սատանայ իր բանտէն. և պիտի ելլէ ու մոլորեցնէ երկրի չորս անկիւնները եղող ազգերը, Գոգը ու Մագոգը, որպէս զի զանոնք պատերազմի ժողվէ, որոնց հարիւրքը ծովու աւազին չափ են։ 8—Ու երկրի ընդարձակութեանը մէջ եկան, և սուրբերուն բանակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն պատեցին. 9—Ու երկինքէն Աստուծմէ կրակ իջաւ ու ապառնց զանոնք. և բանաքրիսն որ զանոնք մոլորեցուց, ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին մէջ, ուր իր գազանը. 10—Ու տանջուելու են պիտի չորիւտուին յաւիտեանս յաւիտենից։

11—Ու մեծ ճերմակ աթոռ մը տեսայ, ու անոր վրայ մեկը նստած, որուն երեսէն երկիրը ու երկինքը փախան, և տեղ չգտնուեցաւ անոնց։ 12—Ու տեսայ պզտիկ ու մեծ մեռելները, որոնք *Աստուծոյ ընթրիքին

*Յոյնե., Տէր Աստուծոյն

*Յոյնե., մեծ Աստուծոյ ընթրիքին

*Յոյնե., աթոռին

առածոյ առնէ կայնած էին. ու գերեզմանը բացուեցաւ, և ուրիշ գերեզ մը բացուեցաւ, այսինքն հինգ հոգւոյ. և գերեզմանն մէջ գրուածներէն մեռելները դուրս եկան իրենց գերեզմանն համեմատ։ 13—Ու ծովը իր մէջի մեռելները տուաւ, ու մահը և դժոխքը իրենց մէջի մեռելները տուին. ու ամէն մէկը իրենց գործերուն համեմատ դատուեցան։ 14—Ու մահը ու դժոխքը կրակի լիճին մէջ ձգուեցան. ասիկա է երկրորդ մահը։ 15—Ու ով որ կենաց գիրքին մէջ գրուած չգտնուեցաւ, կրակի լիճին մէջ ձգուեցաւ։

ԳԼ. ԻԱ

Ես նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ. վասն զի առաջին երկինքը ու առաջին երկիրը անցան, և ա՛լ ծով չկար։ 2—Ու սուրբ քաղաքը, նոր Երուսաղէմը, տեսայ, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր, իր ամուսնացեալ կնոջ պէս պատրաստուած։ 3—Ու երկինքէն մեծ ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր, Ահա Աստուծոյ խորանը մարդոց մէջ, ու անոնք անոնց հետ պիտի բնակի. և անոնք անոր ժողովուրդը պիտի ըլլան, և Աստուած ինք անոնց հետ պիտի ըլլայ էքէօ անոնց Աստուածը. 4—Ու ինք անոնց այքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, և ա՛լ մահ պիտի չըլլայ, ա՛լ սուգ և ա՛լ աղաղակ և ա՛լ ցաւ պիտի ըլլայ ասկէ առաջ։ վասն զի առաջնոյն բաները անցան։ 5—Ու ան որ աթոռին վրայ կը նստէր՝ ըսաւ, Ահա ամէն բաները նոր կ'ընեմ. ու ըսաւ ինծի, Գրէ. վասն զի այս խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ են։ 6—Նաև ըսաւ ինծի, Եղաւ. ես եմ Ալֆա և Օմէգա, Սկիզբը ու վերջը. ես ծարաւին ձրի պիտի տամ կենաց յուրին աղբիւրէն։ 7—Անոր որ կը յաղթէ, էտմէն բաները պիտի ժառանգէ. ու ես անոր Աստուած պիտի ըլլամ, ան ալ ինծի որդի պիտի ըլլայ։ 8—Բայց վախկոտ-

*Ոմանք, Եւ ես Յովհաննէս
†Ոմանք, Աստուած
‡Ոմանք, այս

ներուն, ու անհաւատներուն, և պիղծներուն, ու մարդասպաններուն, ու պոռնիկներուն, և կախարդներուն, ու կռապաշտներուն, և բոլոր սուտասաններուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը։

9—Ու եօթը վերջին հարուածներով լեցուն եօթը սրատակները ունեցող եօթը հրեշտակներէն մէկը ինծի եկաւ, և ինծի հետ խոսեցաւ ու ըսաւ, Եկուր ցուցնեմ քեզի հարսը, Գառնուկին կինը։ 10—Ու հոգիով մեծ ու բարձր լեռան մը վրայ տարաւ զիս, և ցուցուց ինծի սուրբ Երուսաղէմ *քաղաքը, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր. 11—Ու Աստուծոյ փառքը ունէր, և անոր լուսաւորութիւնը խիստ պատուական քարի նման էր, ակնվաճիի երեւութով յատկապէս փարի պէս։ 12—Ու անոր պարիսպը մեծ ու բարձր էր, և տասն երկու դռներ ունէր, ու դռներուն վրայ տասն երկու հրեշտակներ կային, և գրուածներ վրայ անուններ գրուած էին՝ այսինքն Իսրայէլի որդիներուն տասն երկու ցեղերուն անուններէն։ 13—Արեւելեան կողմէն երեք դուռ, ու հիւսիսային կողմէն երեք դուռ, և հարաւային կողմէն երեք դուռ, ու արեւմտեան կողմէն երեք դուռ։ 14—Ու քաղաքին պարիսպը տասն երկու հիմեր ունէր, ու անոնց վրայ Գառնուկին տասն երկու առաքեալներուն [տասն երկու] անուններն էրտած էին։ 15—Ու ինծի հետ խոսողը ձեռքը ոսկիէ եղէգ մը ունէր, որպէս զի մեռ քաղաքը և անոր դռները ու անոր պարիսպները չափէ։ 16—Ու քաղաքը քառակուսի էր, ու անոր երկայնութիւնը լայնութեան չափ էր. և քաղաքը նոր եղէգով տասներկու հազար ասպարէզ չափեց, անոր երկայնութիւնը ու լայնութիւնը և բարձրութիւնը հաւասար էին։ 17—Ու անոր պարիսպը հարիւր քառասունչորս կանգուն չափեց, մարդու չափով, այսինքն հրեշտակին չափովը։ 18—Ու անոր պարիսպին շինուածքը յասպիս էր, ու քաղաքը դուռ ոսկի էր մաքուր ա-

*Ոմանք, մեծ քաղաքը

պակիի նման։ 19—Ու քաղաքին պարիսպին հիմերը ամէն տեսակ պատուական քարերով զարդարուած էին. առաջին հիմը յասպիս էր, երկրորդը՝ լաժուարտ, երրորդը՝ քալկեդոն, չորրորդը՝ զմրուխտ։ 20—Հինգերորդը՝ եղջերնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթներորդը՝ ակնքար, ութերորդը՝ բերիլ, իններորդը՝ տոպազիոն, տասներորդը՝ քրիսոպրասոս, մեսասաներորդը՝ յակինթ, երկոտասաներորդը՝ ամեթիստ։ 21—Ու տասներկու դռները տասներկու մարգարիտ էին. ամէն մէկ դուռ մէյմէկ մէկ-մէկ մարգարիտէ էր. ու քաղաքին հրապարակը մաքուր ապակի էր թափանցիկ ապակիի նման։ 22—Ու անոր մէջ տաճար չտեսայ, վասն զի Տէր Աստուած Ամենակալն ու Գառնուկը անոր տաճարն են։ 23—Ու քաղաքը արեւի ու լուսնի պէտք չունի, որ զանոնք լուսաւորեն, վասն զի Աստուծոյ փառքը զանիկա կը լուսաւորէ, ու անոր ճրագը Գառնուկն է։ 24—Ու [փրկուածք] ազգերը անոր լուսովը պիտի քալեն, ու երկրի թագաւորները իրենց փառքը ու պատիւը անոր մէջ պիտի բերեն։ 25—Ու անոր դռները ցորեկը պիտի չգոցուին. (վասն զի հոն գիշեր պիտի չըլլայ։) 26—Ու ազգերուն փառքը ու պատիւը անոր մէջ պիտի բերեն։ 27—Ու հոն բան *անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու սուտ գործող մը, հապա միայն անոնք՝ որ Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած են։

ԳԼ. ԻԲ

Ու ինծի կենաց ջուրի †գետ մը ցոյց ակնվաճիի պէս պայծառ, որ կ'ելլէր Աստուծոյ ու Գառնուկին աթոռէն։ 2—Ե՛ այն †տաշտին հրապարակին մէջ, ու այն գետին մէկ կողմէն ու միւս կողմէն կենաց ծառ կար՝ որ տասներկու տեսակ պտուղ կը բերէր, ու ամէն ամիս իր պտուղը կու տար. և այն ծառին տերեւները հեթանոսներուն բժշկու-

*Ոմանք, անմաքրութիւն ընող
†Ոմանք, մաքուր գետ

քիւն կ'ըլլար։ 3—Ու ա՛լ բան մը պիտի չըլլայ. ու անոր մէջ պիտի ըլլայ Աստուծոյ ու Գառնուկին աթոռը, և անոր ծառաները պիտի պաշտանե զանիկա. 4—Ու անոր երեսը պիտի տեսնեն, ու անոր անունը իրենց ճակատներուն վրայ պիտի ըլլայ. 5—Ու հոն ա՛լ գիշեր պիտի չըլլայ, և ճրագ ու արեւուն լոյս պէտք չէ. վասն զի Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք, և յաւիտեանս յաւիտենից պիտի թագաւորեն։

6—Ու բաւ ինծի, Այս խօսքերը հաւատարիմ են ու ճշմարիտ. և *սուրբ մարգարէներուն՝ Տէր Աստուածը իր հրեշտակը զրկեց՝ իր ծառաներուն ցուցընելու թէ որ շուտով պէտք է ըլլալ։ 7—Ահա ես չուտով կու գամ. երանի՛ անոր որ կը պահէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը։

8—Ու ես Յովհաննէս լսեցի ու տեսայ այս բաները. և երբ լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպագութիւն ընեմ այն հրեշտակին ոտքերուն առջեւ՝ որ այս բաները ինծի կը ցուցնէր։ 9—Ու բաւ ինծի, Զգոյշացիր, մի ըներ. վասն զի ես քու եղբայրներուդ, մարգարէներուն, և այս գիրքին խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ. Աստուծոյ երկրպագութիւն ըրէ։ 10—Ու բաւ ինծի, Այս գիրքին մարգարէութեան խօսքերը մի կնքեր, վասն զի ժամանակը մօտ է։ 11—Ան որ անիրաւութիւն կ'ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ, ու ան որ պղտոտ է՝ ալ պղտոտ ըլլայ, և ան որ արդար է՝ ալ արդար ըլլայ, ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ ըլլայ։ 12—Ահա ես չուտով կու գամ, և իմ վարձքս ինծի հետ է՝ ամէն մէկուն իր գործին համեմատ հատուցանելու։ 13—Ես եմ Ալֆա և Օմէգա, Առաջինը ու վերջինը, Սկիզբը և Վախճանը։ 14—Երանի՛ են անոնք որ անոր պատուիրանքները կը կատարեն, որպէս զի իշխանութիւն ունենան կենաց ծառին վրայ, և դռներէն ներս քաղաքը մտնեն։ 15—Բայց դուրս պիտի ձան *շուները ու կախարդները և

*Ոմանք, մարգարէից հոգիներուն

պառնիկներբ ու սպանութիւն ընդհներբ
և կռապաշտներբ ու այն ամենը որ
սուտ թիւն կը սիրէ և կ'ընէ։

16—Ես Իիսուս իմ հրեշտակս ղրկե-
ցի՝ այս բաներբ ձեզի վկայելա եկեղե-
ցիներուն *ի՛ւ։ Ես Դաւիթի արմատը
ու ցեղն եմ, ու առաւօտեան պայծա-
ռատոգը։ 17—Եւ Հոգին ու հարսը կ'ը-
սեն, եկուր։ և ան որ կը լսէ՝ թող ըսէ,
եկուր։ ու ան որ ծարաւ է՝ թող գայ, և
ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ։
18—Ես կը վկայեմ ամենուն՝ որ
այս գիրքին մարգարէութեան խօսքերբ
կը լսեմ. եթէ մէկը աւտնց վրայ բան մը
աւելցնէ, Աստուած ալ անոր վրայ պէ-
տք է աւելցնէ այն հարուածներբ որոնք
այս գիրքին մէջ գրուած են. 19—Եւ
եթէ մէկը այս մարգարէութեան գիր-
քին խօսքերէն բան մը պակսեցնէ,
Աստուած ալ անոր բաժինը պիտի պակ-
սեցնէ կենաց †գիրքէն և սուրբ քաղա-
քէն՝ †որ այս գիրքին մէջ գրուած են։
20—Այս բաներուն վկայ Քիւն ասոր
կ'ըսէ, Այո, չուտով կու գամ եմ։
Ամէն, եկուր, Տէր Իիսուս։ 21—Մեք
Տէրոջը Իիսուս Քրիստոսի չնորհքը ‡ձեք
ամենուն՝ հետ ըլլայ. Ամէն։

*Որ՝, վրայով
†Որ՝, գանգի

*Որ՝, ծառէն
†Որ՝, և այն բաներէն որ
‡Որ՝, բոլոր սուրբերուն

1306

<< Ազգային գրադարան

NL0028151

1304